ԼԵՕ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ

„Հայաստան“
Հրատարակչություն
Երևան 1967

ԼԵՕ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

„Հայաստան“
Հրատարակչություն
Երևան 1967

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Համաշխարհային պատմության մեջ մի շատ ընդարձակ դարաշրջան, որ սկսվում է մոտավորապես 5-րդ դարից (մ. թ.) և բռնում է շուրջ 1000 տարիների մի տարածություն, կրում է իր հատուկ անունը—**Միջին Դարեր**: *Այդ շրջանը, հաջորդելով Հին Դարերին կամ Հին Պատմության, տեղի է տալիս երրորդ մեծ դարաշրջանին, որ կոչվում է Նոր ժամանակներ և որ սկսված են համարում մոտավորապես 15-րդ դարի երկրորդ կեսից։*

Այս բաժանումները պայմանական են։ Մարդկային կյանքի երևույթները, ունենալով իրենց երկար նախապատրաստական շրջանները և իրենց զարգացման բարդ պայմանները, չեն կարող սեղմվել այս կամ այն ժամանակագրական շրջանակների մեջ։ Չի կարելի ասել, իհարկե, և այն, թե մարդկության համար ամեն տեղ միևնույն կերպարանքն ունեին բոլոր մեծ դարաշրջանները—Հին Դարերը, Միջին Դարերը, Նոր ժամանակները։ Այս պայմանական բաժանումները բնորոշվում են միայն քաղաքական-կուլտուրական որոշ հանգամանքներով, որոնք տիրապետող են հանդիսանում։ Եվ իրավ, այդ խոշոր ժամանակաշրջանները տարբերվում են իրարից իրենց ոգով, իրենց քաղաքական-հասարակական ձգտումներով, իրենց տնտեսական գաղափարներով։[1]

Միջին Դարերը Եվրոպայի մեջ ունեն իրենց խիստ բնորոշ դիմագծերը, որոնք մի ամբողջ առանձնահատուկ աշխարհ են կազմում շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ենթարկված են մի որոշ աշխարհայացքի[1]*։ Լիակատար հաղթանակն այդ աշխարհայացքի մեջ պատկանում էր առանձնական, մասնավոր շահերին, որոնք տիրապետում էին* **ավատական դրության** *(ֆեոդալական սիստեմի) միջոցով։ Ավատական պետությունը կալվածատեր ազնվականներին պատկանող երկրների մի հավաքածու էր։ Այդ ազնվականներն ինքնագլուխ և անկախ տիրողներ էին և միայն ճանաչում էին ավա-*

---

[1] *Գրականություն.* а) **Н. Кареев,** «Поместье—государство и сословная монархия средних веков», СПБ, 1909, в) **А. Дживелегов,** «Средневековые города Западной Европы», СПБ, 1902, с) Г. Эйкен, «История и система средневекового миросозерцания», пер. Линд, СПБ. 1907, d) **E. Lavisse,** Vue générale de l'Histoire politique de l'Europe", Paris, 1890, e) **Ch. Seignobos,** „Histoire moderne", Paris, 1908, f) **Н. Кареев,** «История Западной Европы в новое время», т. I, СПБ, 1893.

տական պետության գլխավորի, ավատական թագավորի գերիշխանությունը։ Հասարակական կարգն այդ պետության մեջ հիմնված էր դասակարգային խոր խտրությունների վրա։ Ազգաբնակության մի փոքրիկ մասը, «հողատեր ազնվականություն» անունով, տիրում էր մյուս ստվարագույն մասի վրա։ Հողագործ ժողովուրդը նրա ճորտն էր։ Կալվածատերն իր ճորտին կարող էր «և՛ խփել, և՛ խորովել», ինչպես ասված է միջնադարյան մի առածի մեջ։ Տիրողը, ավատատերը, միանգամայն ազատ էր իր դասակարգային արտոնությունների շրջանում։

Ավատական դրության բնորոշ հատկությունն այն էր, որ ամենուրեք տիրում էր բնական տնտեսության ձևը։ Գյուղացի ընտանիքն իր սեփական միջոցներով իր տանը պատրաստում էր այն ամենը, ինչ հարկավոր էր նրա կյանքում։ Նա ո՛չ միայն երկրագործ էր, այլև արհեստավոր։ Այսպես էր ավատական իշխանի տնտեսությունը։ Վաճառականություն համարյա գոյություն չուներ, շրջանառության մեջ գտնվող փողի քանակությունը շատ աննշան էր։ Քաղաքներ դեռ շատ չկային Միջին Դարերի սկզբներում։ Հարստությունը միայն հողն էր, ուստի երկրի ամբողջ հարստությունը հավաքված էր կալվածատեր ազնվականության ձեռքում։

Սակայն առանձնական շահերի այս համատարած տիրապետությանը հակադրված էր և միաբարական մի ուժեղ ձգտում։ Նա կենտրոնացած էր եկեղեցու մեջ։ Ամբողջ Արևմտյան Եվրոպան կազմում էր մի ազգություն, քրիստոնյա ազգություն, որ ուներ մի հատ գլուխ, և դա Հռոմի պապն էր։[2] Կաթոլիկ եկեղեցին իրականացրել էր «աստուծու թագավորությունը երկրի վրա», որ քրիստոնեության նշանաբանն էր դեռ Հիսուսի ժամանակներից, ինչպես տեսանք իր տեղում[1]։ Կաթոլիկ աշխարհում հաստատվել էր աստված—պետությունը, որ տեր ու դատավոր էր ոչ միայն հոգևոր, այլև աշխարհական հարցերում։ Այդ գերագույն դատավորին և օրենսդրին, որ պապն էր, ենթարկվում էին աշխարհական իշխողները—թագավորներ, ավատական տերեր։ Եկեղեցու տիրապետությունն ամենուրեք էր։ Եկեղեցու մեջ էր և՛ դաստիարակությունը, և՛ գիտությունը, և՛ արվեստը։ Հասարակությունը կրթություն ստանում էր վանքերում։ Վանքերից դուրս թեև բացված կային համալսարաններ, բայց դրանք դարձյալ գտնվում էին վարդապետների և քահանաների ձեռքում։ Եկեղեցին էր այն միակ ասպարեզը, ուր կարողանում էր ճաշակ և տաղանդ ցույց տալ նկարիչը, արձանագործը, ճարտարապետը, քանդակագործը, ոսկերիչը։[3] Գիտությունը եկեղեցու ստրուկն էր։ Տիրում էր սխոլաստիկան, որ զբաղված էր սնամեջ վերացական վեճերով։ Եկեղեցական ձգտումներին ստրկացրած Արիստոտելի լուծն էր բռնացած մտքերի վրա։ Ամեն ինչ հպատակվում էր դավանական ձևին։ Աստվածապաշտությունն ուժեղ ու տիրական էր շնորհիվ այն հանգամանքի, որ եկեղեցին ամեն կերպ ժողովրդականացնում էր ճգնավորական-անապատական գաղափարը (ասկետիզմ)։ Այդ այն գաղափարն էր, թե երկնքի համար պետք է ուրանալ, ատել աշխարհը, հոգու համար պետք է անարգել մարմինը։ Աստծուն մոտենալ կարելի է միայն աշխարհից հրաժարվելով։ Ամեն ինչ, որ աշխարհային է, անեծքի տակ է գտնվում։ Մարմնային, աշխարհական սերը զզվելի բան է, որովհետև նա մահացնում է միակ օրինավոր, միակ կենդանարար սերը—սեր դեպի աստված։ Ճգնավորությունը

[1] «Հայոց պատմութ.», հ. Ա, մ. Ե, գլ. Գ, § 1։

լցված էր կատաղի ատելությամբ դեպի կինը, որին ներկայացնում էր իբրև վերին աստիճանի մի չար արարած, բոլոր մեղքերի և դժբախտությունների անոթ։ Մերժելով աշխարհային սերը, ճգնավորությունը մերժում էր ամուսնությունը, ընտանիքը, սեփականությունը, արդյունաբերող աշխատանքը։ Աղքատություն—այս էր լավագույնը, երջանիկ վիճակը, որ և պիտի դառնա ամեն մի մարդու իդեալը։

Ավատական-կղերական այս համատարած իրականության մեջ առանձնապես նշանավոր երևույթներ են կազմում միջնադարյան քաղաքները իրենց վաճառական և արհեստավոր ազգաբնակությամբ։ Այստեղ թագավորում էին արդեն իրական կյանքի, աշխարհական կենցաղի շահերը, որոնք հետզհետե զարգանալով և ուժեղանալով, ի վերջո պիտի դառնային հզոր գործոններ՝ մարդկությունը եկեղեցու լծից ազատելու համար։ Այստեղ, քաղաքների իրականության մեջ էր զարգանում փողի ազնվականությունը, որ պիտի բռներ հողի ազնվականության տեղը, ստանալով իրեն հատուկ անունը—բուրժուազիա։ Վաճառականության ընդարձակումը, նրա հայթայթած հարստությունների խոշորությունն առանձնապես աչքի էին ընկնում իտալական մեծ առևտրական քաղաքների (Ջենովա, Վենետիկ) մեջ, ուր նույնպես հաստատված էին մնում հանրապետական կարգեր, մինչդեռ նրանց շուրջն ամեն տեղ տիրողն ավատական ամրոցն էր ճորտատիրական պաշտամունքներով։

Բավականանալով այս ընդհանուր ուրվագծերով, որոնք խստորեն բնորոշում են Արևմտյան Եվրոպայի Միջնադարը, մենք կարող ենք այժմ մի թեթև համեմատություն անել նրա և Հայաստանի միջև։ Այստեղ ուրիշ է միջավայրը։ Տարբեր են քաղաքական պայմանները, տարբեր են ընթանում մարդկային շարժումները, բայց և այնպես՝ այստեղ էլ տեսնում ենք նույն Արևմտյան Միջնադարի հատկություններից շատերն իբրև տիրապետող կարգ ժամանակի գրեթե միևնույն տևողությամբ, ինչպես Արևմտյան Եվրոպայում։

Ամենագլխավորը—ավատական դրությունը հատուկ էր Հայաստանին, ինչպես գիտենք, նրա պատմության սկզբից։ Նույն հողատիրական պետականությունը, նույն ճորտային իրավակարգը տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև նրան շրջապատող երկրներում—Պարսկաստան, Բյուզանդիա, Վրաստան։ Բայց այս հին արևելյան հիմնարկությունը, մենակ վերցրած, բավական չէ Միջնադարի միանմանությունն Արևմուտքում և Արևելքում միանգամայն անկասկածելի համարելու համար։ Մերձակցության և միանմանության ամենագլխավոր տարրը մտցնում էր քրիստոնեությունը։ Նրա մշակած աշխարհայացքները Հայաստանի մեջ էլ արմատանում և ընդհանրանում են շնորհիվ այն հանգամանքի, որ քրիստոնեության հետ հայկական կյանքի մեջ մուտք է գործում և մայրենի գրականությունը, որ դաստիարակում է հայ ժողովուրդն ընդհանուր եվրոպականության միջնադարյան սկզբունքներով։ Հայաստանի մեջ էլ գրականությունը, դաստիարակությունը եկեղեցու մենաշնորհն են։ Այստեղ էլ ամենախոշոր հիմնարկությունը վանքն է։ Ահա՛ ինչ հանգամանքներ էին միացնում և ընդհանրացնում միջնադարյան ամբողջ կուլտուրան բոլոր քրիստոնյա երկրներում։ Նույն հասկացողությունն «աստուծու թագավորության» մասին, նույն ճգնավորական իդեալները, աշխարհատյացությունը, նույն բացասական վերաբերմունքը դեպի մարմնավոր սերը և այլն։ Արտաքուստ Հայաստանի

քաղաքական ճակատագիրը շատ խախուտ էր, երերուն։ Երկիրը ենթարկվում էր տեսակ-տեսակ նվաճողների տիրապետության, հաճախ զրկվում էր թըշ-վառության անդունդները, բայց ներքուստ պահպանում էր միջնադարյան կուլտուրայի ամբողջական տիպը։ Մի երկիր էր դա, որ արտաքին հարված-ների տակ եռանդուն կերպով կազմակերպում էր իր հայացքներն ու պաշտա-մունքները, իր գրականությունը, գիտությունը, արվեստն այն ձևերում, որոնք մշակվում էին միջնադարյան քրիստոնեության մեջ։ Այս կողմից մի սերտ եղբայրակցական կապ կա բոլոր քրիստոնյա ժողովուրդների միջև, անկախ այն հանգամանքից, թե ո՛ւր են նրանք ապրում—Արևմուտքո՞ւմ, թե՞ Արևելքում։

Նմանության մի խոշոր փաստն էլ այն է, որ Հայաստանի մեջ ևս Միջին Դարերում սկսում է զարգանալ, թեև համեմատաբար շատ համեստ չափերով, քաղաքների իրականությունը, որ ընդհանուր ավատական-ճգնա-վորական աշխարհակարգի քայքայման սկզբունքն էր կրում իր մեջ։

Զուգադիպություն է, բայց ոչ կյանքի բնաշրջումից բխած անխու-սափելիություն, հայ ավատական ազնվականության կատարյալ անկումը համարյա միաժամանակ՝ Արևմտյան Եվրոպայի հետ։ Թեև մեր կյանքի այս չափազանց կարևոր երևույթը բոլորովին այլ տեսակ հանգամանքների արդյունք էր, այլ տեսակ կերպարանքի մեջ էր ձուլվում, բայց նրա առա-ջացրած հետևանքը միևնույնն էր, ինչ և Եվրոպայում։ Այդ այն է, որ ավա-տական հողատիրության տեղը մեզանում էր, մեր ներքին ազգային կյան-քի շրջանակների մեջ, բռնում էր նույն վաճառականական դասակարգը, բուրժուազիան, որ մեզանում էլ դառնում է մի հզոր գործոն և տանում է կյանքը դեպի աշխարհականացում, դեպի Նոր ժամանակները։

Այսպես ահա՛ հայկական Միջնադարը, ընդհանուր առմամբ, համըն-թաց ու համարժեք էր եվրոպական Միջնադարին։ Ուստի հայոց պատմու-թյան այն շրջանը, որ սկսվում է 5-րդ դարից, մենք բաց ենք անում նույն Միջին Դարեր վերնագրի տակ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՊԱՐՍԿԱ-ՀՈՒՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
428—643

Գլուխ առաջին

«ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ»

1. Նոր կառավարություն: Վերացնելով հայ Արշակունիների թագավո-րությունը, Պարսից Բահրամ Գոռ (Վռամ Ե) թագավորը Հայաստանի կա-ռավարության գլուխ կարգում էր մի պարսկական պաշտոնեություն, որ հայտնի է մարզպանություն անունով։ Առաջին մարզպանը, որ արքայից արքայի հրամանով նշանակվեց Արտաշես Գ թագավորին գահընկեց անե-լուն պես (428), մի պարսիկ էր՝ Վեհմիհրշապուհ անունով։

Մարզպանը, իբրև Սասանյան շահնշահի փոխանորդ և ամբողջ Հայ երկրի ընդհանուր կառավարիչ (կուսակալ), վայելում էր իր այդ բարձր դիրքի համապատասխան իշխանական կարողություն և շուք։ Նա ապրում էր Հայոց մայրաքաղաքում և սովորաբար, խաղաղության ժամանակ, հա-մարվում էր քաղաքացիական իշխանության բարձր ներկայացուցիչ։ Պար-սիկ մարզպանն իր հետ Հայաստան էր բերում, իհարկե, իր ամբողջ հարե-մը, մեծ քանակությամբ ծառաներ և պաշտոնյաներ, այնպես որ այս փոխ-արքայական հիմնարկությունը բավական խոշոր ծախս էր նստում պարսկա-կան գանձարանին։ Մարզպանական դուռն իր շուքով ու դիրքով պիտի հիշեցներ, բայց, անշուշտ, ավելի փոքր չափերով, արքայից արքայի դու-ռը։ Մարզպանությունը հին սատրապության սասանյան ձևն էր։

Մարզպանի առաջին պարտականությունն էր, հարկավ, պահպանել Պարսից պետության շահերը, հսկել երկրի վրա, հավաքել և արքունի գան-ձարանը հասցնել պետական այլևայլ հարկերն ու տուրքերը, որոնք, որ-քան կարելի է հետևցնել մեր մատենագրության մեջ մնացած թույլ ակ-նարկներից, բավական բազմատեսակ էին[1]։ Այս բանի մեջ մարզպանին կա-տարյալ աջակցություն պիտի ցույց տար ոչ միայն հայոց հազարապետը, որ, ինչպես տեսանք, Հայաստանի ավատական կառավարության մեջ կատա-րում էր ելևմտական բարձր պաշտոնյայի դերը[2], այլև նույնիսկ հայոց կա-թողիկոսը, որ, ինչպես երևում է, իր վիճակավոր եպիսկոպոսների միջոցով հավաքել էր տալիս եթե ոչ բոլոր պետական հարկերը, գոնե նրանց մի որոշ

[1] «Եղիշէի Պատմութիւն Վարդանանց», Թեոդոսիա, 1861, եր. 32։ Հիշելով, թե ո՛րքան մեծ չափերի էին հասցրել հարկերը, Եղիշեն բացականչում է. «Նա բնաւ ով իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից եւ սակից, բաժից եւ հասից, լերանց եւ դաշտաց եւ մայրեաց»:
[2] «Հայոց պատմ.» հ. Ա, եր. 494։

մասը[1]։ Նշանակելի հանգամանք է, որ Հայաստանի մեջ մշտական պարսիկ
զորաբանակ չէր գտնվում ո՛չ մարզպանի մոտ, մայրաքաղաքում և ո՛չ գըլ-
խավոր բերդերի մեջ։

Հայաստանն Իրանի համար շատ կարևոր էր իբրև մի մեծ և հարուստ
երկիր, բայց և այնպես, նա բռնում էր մի տեսակ ներքին նահանգի դիրք
իր մեծագույն մասով։ Սասանյան պետության հյուսիսային ընդարձակ
սահմանի մի մասը կազմում էին Կովկասյան գլխավոր լեռնաշղթան և
Կասպից ծովը։ Այս կողմից սահմանագլուխ կազմողը Հայաստանը չէր, այլ
Վրաստանն ու Աղվանից աշխարհը, որոնք նույնպես ենթարկված էին Հա-
յաստանի վիճակին և նույնպես կառավարվում էին մարզպանների միջոցով։
Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի կողմից իրանական պետությանը մշտա-
պես սպառնում էին անհաշտ թշնամիները—թե՛ այդ լեռներում և թե՛ Հյու-
սիսային Կովկասի տափաստաններում ապրող վայրենի և գիշատիչ ազգերը։
Նրանց հանկարծական արշավանքներին արգելք դնելու համար հատուկ
բերդ կար շինված այն նեղ անցքում, որ բաժանում է Կովկասյան շղթան
Կասպից ծովից (Դերբենդի անցքը)։ Այդ բերդը կոչվում էր Ճորա պահակ և
նրա մեջ մշտապես պարսկական զորք էր մնում, որ իր կողմից հենվում
էր 10 հազար ձիավորից բաղկացած այն սահմանապահ զորաբանակի վրա,
որ զետեղված էր Աղվանից երկրում և որի պարտականությունն էր նաև
հսկել Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա[2]։

Գլխավորապես արևմտյան կողմից էր, որ Հայաստանը կարևոր սահ-
մանագլուխ էր կազմում Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության
միջև։ Բայց այստեղ Պարսից կառավարությունը սահմանապահ բերդեր չու-
ներ, իր պետության պաշտպանողական գիծն ավելի Միջագետքի արևմը-
տյան դյուրամատչելի սահմաններն էր դարձնում, որտեղից ավելի մեծ և
անմիջական հարվածներ կարող էր ստանալ Պարսկաստանը, ի նկատի ունե-
նալով նրա մայրաքաղաքի դիրքը Տիգրիսի վրա։

Եվ այսպես, 428 թվի մեծ հեղաշրջումը հետևած կառավարչական ձևն
իսկապես նոր չէր, այլ այն հին պետական սկզբունքն էր ներկայացնում,
որ Արևելքը գործադրում էր իր բոլոր մեծ նվաճողական պետությունների
մեջ։ Հայկական առանձին թագավորության ջնջումը դեռ չէր նշանակում
հայ ժողովրդի ինքնօրենության կատարյալ ջնջում։ Եթե երբեք չմոռա-
նանք այդ ժողովրդի մեջ տիրող ավատական իրականությունը, կտեսնենք,
որ նրա ահագին մեծամասնության համար հազիվ թե առանձնապես մեծ
փոփոխություն դարձած լիներ Արշակունյաց թագավորության անկումը։
Ղազար Փարպեցին այս անկումը համարում է մեծ աղետ։ «Եւ յայնմհե-
տէ,— գրում է նա,— եղեն ի սպառ ի սպուռ անկեալք ընդ լծով ծառայու-
թեան անօրէն ազգին Պարսից»[3]։ Այս այսպես էր ընդհանուր ազգային տե-
սակետից, առաջավոր և ղեկավար դասակարգերի համար։ Բայց ժողովրդի
խոշոր զանգվածը կարող էր այդպես չմտածել։ Բոլորովին անձեռնմխելի
էր մնում նախարարությունը, որ այդ մեծ զանգվածի համար դարերից ի
վեր եղել էր իրական ազգային իշխանությունը, թեև, ճիշտ է, պարփակ-
ված գավառական առանձնության մանր ու նեղ շրջանակների մեջ։ Նախա-

[1] Մովսէս Խորենացի, «Պատմ. Հայոց», Գ, կե—կզ։

[2] Միքայել փաշա Փորթուգալ, «Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և քննադատութիւնք», Վենետիկ, 1903, եր. 41։

[3] Եր. 25։

րարությունը նույնիսկ ավելի ուժեղանում, ավելի կենտրոնախույս էր դառ-
նում թագավորական գահի խորտակումից հետո։ Եղիշեն շատ ճիշտ է ներ-
կայացնում այդ ժողովրդական հասկացողությունը, երբ ասում է. «Եւ իբրև
զնա ևս [վերջին Արտաշեսին] մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն
Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսից
երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջ-
նորդէր ի պատերազմի»[1]։ Գլխավոր հանգամանքն այս էր.—հայկական
զինվորությունը մնում էր առաջվա պես և պարտավոր էր պարսից բանակի
հետ կռվի գնալ Պարսկաստանի թշնամիների դեմ։ Զորքը միանգամայն
ինքնավար էր, պահպանում էր իր ազգային կազմակերպությունը և նրա
գլխավոր հրամանատարությունը, սպարապետությունը մնում էր նախկինը,
նույնիսկ ժառանգական սեփականություն էր միևնույն տոհմի, Մամիկո-
նյանների ձեռքին, որոնք և այդպիսով շարունակում էին պահպանել իրենց
նախկին ազդեցիկ նշանակությունը, իբրև զինվորական ուժի կարգադրիչ-
ներ։ Այս էր հայկական ներքին ինքնօրենության ամենագլխավոր նեցուկը։

Գալով քաղաքացիական վարչության, տեսնում ենք, որ այստեղ էլ
Վռամի հաստատած կարգերն արմատապես հեղափոխիչ չէին։ Անփոփոխ էր
մնում, ինչպես տեսանք, և հազարապետության պաշտոնը։ Բայց ավելի
նշանավոր է այն հանգամանքը, որ պարսից թագավորները նույնիսկ մարզ-
պանության պաշտոնը հաճախ հանձնում էին հայ նախարարներին։

Բոլորովին այլ ընթացք ստացավ հայոց եկեղեցական կառավարու-
թյունը, որ թագավորության անկումից հետո մնում էր միակ համազգային
կենտրոնացնող իշխանությունը։ Սահակ Պարթևը գահընկեց եղավ Արտա-
շես թագավորի հետ, իսկ նրա տեղ հոգևոր միապետության գլուխն էր անց-
նում Սուրմակ քու երեցը, Բզնունյաց Արծկե գյուղից, իբրև գործակից
դավադիր նախարարների։ Ալբիանոսի տոհմից էր նա, և Վռամի արքունի-
քում էլ կաթողիկոս ընտրվեց իր դասակիցներից և հաստատվելով շահըն-
շահի կողմից, գնաց Հայաստան։ Այսպիսով եկեղեցական բարձր իշխանու-
թյունը, որ կարողացել էր այնքան մեծ հեղինակություն վաստակել երկրի
մեջ, դառնում էր խաղալիք, պատահականություններին մատնված։ Պարս-
կական կառավարությունն ամենից շատ այս հիմնարկությունից էր եր-
կյուղ կրում, և հասկանալի է, որ պիտի օգտվեր այս հարմար առիթից՝
նրան մահացու հարվածներ հասցնելու համար։ Այս կողմից պարսկական
քաղաքականությունը խոշոր հաղթանակներ էր տանում։ Այսպես, Սուրմակ
կաթողիկոսը մի շատ կարճ միջոցում անհանդուրժելի դարձավ մինչև իսկ
պարսկական կուսակցության համար։ Նրան հեռացրին նախարարները։
Բայց այս քայլը եկեղեցական իշխանության նախկին հարգն ու պատիվը
վերականգնելու համար չէր արվում։ Պարսկական կուսակցությունն այժմ
ավելորդ համարեց թեկուզ Սուրմակի ընտրության պես մի ընտրություն
կատարել, այլ ուղղակի խնդրեց Վռամին, որ նա ինքն իր կողմից կաթողի-
կոս նշանակե ում կամենում է։ Եվ արքայից արքան, իհարկե, հավատարիմ
մնալով պարսկական քաղաքականության, դիմեց սիրիացիներին և Բրքիշո
անունով մեկին ուղարկեց Հայաստան՝ Գրիգոր Լուսավորչի տոհմային
աթոռը գրավելու համար։ Սակայն այս սիրիացին ավելի ևս ծանր փորձանք
դարձավ երկրի համար։ Իր հետ նա բերեց այնպիսի բարքեր, որոնք ան-

[1] Եղիշէ, եր. 6։

հանդուրժելի եղան հայկական միջավայրում։ Կաթողիկոսն ու նրան շրջապատողներն ունեին իրենց հետ բազմաթիվ կանայք և այլ ձրիակերներ, որոնց տիրապետությունը մանավանդ հայ հոգևորականության համար անտանելի պիտի լիներ։ Եվ հավանորեն նրա ջանքերով էր, որ պարսկական կուսակցությունը Բրքիշոյին էլ գահընկեց արավ։ Նորից Վռամին էր թողնըվում տնօրինել հայ եկեղեցական վարչության ճակատագիրը։ Կաթողիկոս նշանակվում է մի ուրիշ սիրիացի, Շամուել կամ Շմուել անունով, որ Բրքիշոյի նման էր իրեն պահում։ Բայց Հայոց աշխարհն այս անգամ սիրիացու դեմ երկար մաքառելու կարիք չունեցավ, քանի որ նա շուտով մեռավ[1]։

Իսկ ի՞նչ եղավ Սահակ Պարթևը։—Ղազար Փարպեցին պատմում է, թե նա հեռու մնաց կաթողիկոսական աթոռից, թեև նախարարներն ու հոգևորականները շատ անգամ թախանձեցին, որ նա նորից ստանձնե կաթողիկոսական պաշտոնը։ Վշտահար ծերունին անկարելի համարեց այդպիսի բանը և մինչև իր մահը մնաց մասնավոր մարդ։ Սակայն Մովսես Խորենացին այլ պատմություն է անում։ Նրա ասելով, Սահակն էլ Արտաշես թագավորի հետ արգելվեց Պարսկաստանում, ուր և մնաց մինչև որ Բրքիշոն գահընկեց եղավ նախարարների ձեռքով։ Երբ թափուր մնաց կաթողիկոսական աթոռը, հունական կուսակցությունն էլ սկսեց գործել, աշխատելով վերադարձնել գահը նորից Լուսավորչի տոհմին։ Հայաստանից երկու պատգամավորություն գնաց Վռամի մոտ, մեկը պարսկական կուսակցության անունից խնդրում էր, որ արքայից արքան ինքն ընտրություն անե միանձնաբար, իսկ մյուսը միջնորդում էր, որ կաթողիկոս վերահաստատվի Սահակ Պարթևը։

Բոլորովին արհամարհել այս երկրորդ պատգամավորությունը չկարողացավ Վռամը, որովհետև միաժամանակ պատգամավորություն հասավ Պարսից արքունիքը և Կարինից, Հունական Հայաստանի կայսերական զորքերի հրամանատար Անատոլ զորավարից, որ խնդրում էր Վռամին ուղարկել արգելված կաթողիկոսին Հունական Հայաստան, եթե չի ուզում վերադարձնել նրան Պարսից բաժին Հայաստանը։ Այս հեղինակավոր միջնորդությունը, որ անշուշտ պատահմամբ չէր զուգադիպում Պարսկական Հայաստանի պատգամավորության, հաշվի առավ արքայից արքան։ Նրա համար, իհարկե, ձեռնտու պիտի լիներ թողնել Սահակին իր իշխանության տակ, քան տալ նրան հույներին և այսպիսով ավելի ևս լայն հնարավորություն բաց անել, որ Պարսկական Հայաստանը գրավվի դեպի հունական խիստ ազդեցության գիրկը, մի վտանգ, որ Պարսկաստանը միշտ նկատի ուներ իբրև անթույլատրելի։ Եվ Վռամը շատ ճարպիկ կերպով լուծեց ստեղծված կնճիռը, վճռելով դնել Պարսկական Հայաստանում, երկու իրար հակառակ կաթողիկոսական աթոռ. Շմուելին նա տալիս էր բուն կաթողիկոսական իշխանությունը նրա վարչական բոլոր գործառնություններով։ Սիրիացու իրավասության էր ենթարկվում դատաստանական գործը, ինչպես և արքունի հարկերի ու տուրքերի գանձումը։ Իսկ Սահակը դառնում էր նրա ստորադրյալը, առանց գործադիր իշխանության, լոկ իբրև կրոնի վարդապետական և դավանական մասի ղեկավար-բացատրող։ Նրան էր թողնվում եպիսկոպոսական ձեռնադրությունը, սակայն այն կարևոր սահմանափակումով, որ թեկնածուների վերաբերմամբ իր հավանությունը տա Շմուելը։

[1] Ղազ. Փարպեցի, եր. 26։

Սահակը, եթե միայն այստեղ պետք է հավատալ Խորենացուն, համաձայնություն է տալիս այս տեսակ մի անփառունակ դիրք գրավելու, որ արատավորում էր նրա տոհմի բոլոր անկախական կորովը։ Եվ Ներսես Մեծի որդին այսպես վարվում էր կարծեք թե ավելի աշխարհական, ազգակցական շահերի համար։ Վռամը նրան երդվեցնում է իր հավատով, որ հավատարիմ մնա պարսից կառավարության, ապստամբական փորձեր չանե հույս դնելով հույների հետ ունեցած հավատակցության վրա և այդպիսով չդառնալ «կորստեան պատճառ Հայոց աշխարհին ի մէնջ,— ասում է արքայից արքան,— փոխել զբարերար անուն մեր ի չարարար»։ Սահակի բացատրությունները գոհացնում են Վռամին, որ և, իբրև վերջին միջոց, փորձում է շահել Հայոց կաթողիկոսի սիրտը դրամական մի խոշոր ընծայով։ Սահակը հրաժարվում է արծաթ ընդունելուց, բայց փոխարենը միջնորդում է, որ մարզպաններն իրենց իշխանությամբ իրավունք չունենան փոփոխել նախարարական բարձերը, այսինքն՝ ավագության կարգը։ Այս միջնորդությամբ նա, անշուշտ, նկատի ուներ պահպանել Մամիկոնյան տան դիրքը ինչպես և ուրիշ ազգակից նախարարությունների տիրապետական շահերը։ Բացի դրանից՝ նա հաջողեցնում է, որ իր ազգական Գազավոն Կամսարականին տեղ տրվի նախարարական շարքերի մեջ և իր թոռը՝ Վարդան Մամիկոնյանն էլ ստանում է սպարապետության բարձր պաշտոնը[1]։

Այս էր ահա կարողանում Հայոց ծերացած կաթողիկոսը շահել Պարսից արքունիքում։ Այստեղ նա հանդես է գալիս իբրև ավատական մի իշխան, որ հարուստ կալվածներ ուներ և ուզում էր իր ազգական իշխանների համար լավ դիրք ստեղծել, որպեսզի նրանց կարգեր իր ժառանգ, քանի որ ինքն արու զավակ չուներ։ Հայոց աշխարհի հանրության չէր վերաբերում Սահակի միջնորդությունը, այլ գլխավորապես իր սեփական շահերին։ Եվ այս գնով դառնալով մի հակաթոռ կաթողիկոս, Սահակը լուռ ականատես էր, թե ինչպես Շմուելը կեղեքում էր, ինչպես էր նա իր չսիրած եպիսկոպոսներին հեռացնում առաջնորդական պաշտոնից, պատրվակ բռնելով, թե նրանք անհավատարիմ են գտնվել արքունական հարկերը գանձելիս, և օգտվելով այս առիթից, հափշտակում էր եպիսկոպոսների ունեցած հարստությունները։ Շմուելի հետ նա որևէ ընդհարում չունեցավ, թեև իրար բավական մոտ էին այդ հակաթոռները։ Շմուելը նստում էր Վաղարշապատի կաթողիկոսարանում, իսկ Սահակը՝ Բագրևանդ գավառի Բագավան գյուղում։

2. Թարգմանիչները։ Բայց այդ անփառունակ համակերպումները, աշխարհային շահերից թելադրված թուլությունները միայն այն են ցույց տալիս, թե Սահակ կաթողիկոսը վարչական ընդունակություններ, քաղաքական մարտնչողի հատկություններ գրեթե չուներ։ Եվ հայ ժողովրդին նա իր գործունեության այդ կողմերով չէ մեծ երախտիքներ արել։ Կարծեք այդ բոլոր պակասությունները հարկավոր էին նրան, որպեսզի ժամանակ և հարմարություն տային բոլորելու այն իսկապես անզուգական գործը, որի նման մեծ երևույթ հայ կյանքը չի ստեղծել իր ամբողջ անցյալում և որի մեծ հեղինակներից մեկն էլ նա ինքն էր։ Դա հայերեն դպրության գործն էր։

Երկրի քաղաքական և բարոյական անկումը կատարյալ էր և սպառ-

[1] Խորեն., Գ, կե—կզ։

նում էր վերջնական կորուստ բերել հայ ազգությանը։ Եվ ահա այդ խորխորատի ծայրին ստեղծագործական մի մեծ երկունք է առաջ գալիս հայ լեզվից ու մտքից, որ և դառնում է ազգային փրկության խարիսխ։ Սահակ Պարթևն իր երևութական կաթողիկոսությունն էլ նվիրաբերեց այդ մեծ մտավոր երկունքին և նրան աջակցում էր, ինչպես և առաջ, հայ մյուս հանճարը, Մաշտոց (Մեսրոպ) վարդապետը։ Այս երկու մարդիկ իսկապես մեծ հանդիսացան հայության մռայլ և հուսահատական ճգնաժամին։ Նրանք էին, որ դարձան հայ մտքի առաջին դյուցազները, առաջին հայ մեծ թարգմանիչները:

Թարգմանության արվեստը, իհարկե, անծանոթ չէր Հայաստանում։ Բայց երբեք նա այնքան խոշոր շարժում չէր դարձել, ինչպես 5-րդ դարի առաջին կեսում։ Այդ ժամանակ էր, որ թարգմանչությունը դառնում էր հայ կյանքի մի նոր և լուսափայլ երևույթի—ազգային հարուստ գրականության ծնող։ Թարգմանությունները կատարվում էին մեծ եռանդով և այնքան արդյունաշատ էին, այնքան մեծագործ, որ գոյություն ստացավ, իբրև գրական մի ամենաբարձր հասկացողություն, թարգմանիչների դար անվանումը։ Մի դար էր դա, որ հազիվ մի քանի տասնյակ տարիների տեվողություն ուներ։ Բայց իր բովանդակությամբ մի դար էր այդ կարճ ժամանակամիջոցը, որ ձուլեց իր մեջ հայ կյանքի բոլոր հետագա դարերը, և ինքը մնաց գլուխ և մեծություն, ոսկեդար հայոց գրականության։4 Կյանքի խոշորագույն երևույթն է նա և ստեղծում է ոչ միայն մտավոր, այլև քաղաքական հզոր հոսանքներ։ Հասկանալ այդ շարժումներն առանց մանրամասնորեն ծանոթանալու Սահակի և Մաշտոցի գործին՝ անկարելի է։ Ուստի Արշակունյաց թագավորության անկումից անմիջապես հետո քաղաքական պատմությունը տեղի է տալիս գրական պատմության։

Պարսկաստանից Սահակ Պարթևը վերադարձավ, ինչպես կարծել է տալիս հավանականությունը, 432 թվականին[1]։ Այնուհետև նրան վիճակված էր ապրել աշխարհի վրա միայն վեց տարի։ Այս տարիները հայոց պատմության մեջ մի խուլ ժամանակամիջոց են կազմում, երբ քաղաքական փոքր ի շատե նշանավոր շարժում չի նկատվում, երկիրն ընկղմված է խորհրդավոր լռության մեջ։ Եվ հենց այս ժամանակ էլ հայ թարգմանիչները զբաղված էին իրենց անմահ գործով։ Թույլ տալով, որ պարսկական սանձարձակ բռնակալությունը վարվի հայ ժողովրդի քաղաքական ստացվածքների հետ ինչպես ուզում է, Սահակն ու Մաշտոցը, իբրև ժամանակի հասունացած պահանջների արտահայտիչներ, հանճարեղ կանխատեսությամբ կազմակերպում էին հայ ազգությունը, մտցնելով նրա կիսակենդան, մահացող երակների մեջ գիտակցության ջերմությունը, զենքի ու զրահի փոխարեն ազգային ինքնապաշտպանության ահեղ մրցարանը հանելով մտավոր ստեղծագործող ուժերի ամբողջ մի բանակ։

«Թարգմանիչների դարի» մասին մենք առհասարակ քիչ հավաստի տեղեկություններ ունենք։ Գործողների և գործի շուրջը կուտակվել են շատ ավանդություններ, արդյունք ապագա սերունդների սքանչացման, բայց ավանդություններ, որոնց արժեքը սաստկապես խախտել են մեր օրերի քննադատությունները։ Մի բան միայն շատ պարզ է—ամեն ինչ արվում էր քրիստոնեության օգտին և եկեղեցու ուժեղացման համար։ Հարկավոր

[1] Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 309։

էր մի լիովին հայացած քրիստոնեություն, իսկ դրա համար էլ պետք էր մի մեծ գրականություն, որ պարունակեր իր մեջ այլևայլ ճյուղեր— և՛ պատմություն, և՛ գիտություն, և՛ բանաստեղծություն։ Սահակն ու Մաշտոցն իրենց աշակերտների հետ աշխատում էին մեղուների ժրաջանությամբ, այդպիսի մի բազմաճյուղ գրականություն ստեղծելու համար, մի գրականություն, որ համարյա բացառապես թարգմանական պիտի լիներ՝ ինքնըստինքյան հասկանալի պատճառներով։ Այս մեծ աշխատանքի պատմության մեջ ամենից առաջ փնտրելի են Սահակի և Մաշտոցի գործակիցների անունները։ Երկու մեծ ուսուցիչների դպրոցի պտուղներն էին այդ գործակիցները։ Ո՞րքան շատվոր էին նրանք։ Մեր մատենագրության մեջ (Կորյուն, Ղազար Փարպեցի, մասամբ և Մովսես Խորենացի) ցաքուցրիվ ընկած տեղեկություններից կարելի է կազմել մի, իհարկե ոչ-ամբողջական, ցուցակ այն աշակերտների, որոնք հայտնի են «երիցագոյն» անունով, որ նշանակում է, թե դրանք Սահակ-Մաշտոցյան դպրոցի առաջին սերունդն էին։ Ավելի կամ պակաս հավաստիությամբ կարելի է ասել, թե այդ աշակերտները հետևյալներն էին. Վարդան և Հմայակ Մամիկոնյան եղբայրներ, Վահան Ամատունի[1], Հովսեփ երեց Հողոցիմ գյուղից, Աբրահամ Խոստովանող, Անանիա եպիսկոպոս, Գինթ կամ Գնիթ եպիսկոպոս, Եզնիկ կամ Եզնակ եպիսկոպոս Կողբացի, Երեմիա եպիսկոպոս, Կորյուն եպիսկոպոս, Մովսես եպիսկոպոս, Մուշե կամ Մուշեղ եպիսկոպոս, Սամուել եպիսկոպոս, Տեր եպիսկոպոս Խորձենացի, Աղան Արծրունի, Արձան, Գինտ կամ Գյուտ, Դանան, Ենովք, Երեմիոս երեց, Թադիկ կամ Թոդիկ, Խոսրովիկ Թարգման, Ղևոնդ երեց կամ Ղևոնդես Վանանդեցի, Մուշե Տարոնեցի, Հովհան, Հովհան Եկեղեցացի, Հովնաթան քահանա, Հովսեփ Պաղնացի, Տիրայր[2]։ Մենք չգիտենք, թե սրանք ամե՞նքն են արդյոք գրական գործով զբաղվել, թե ոչ։ Հայտնի են միայն մի քանի անուններ։ Հայաստանի մեջ ստացած ուսումը, իհարկե, միանգամայն բավարար չէր կարող լինել գրական ծանր և պատասխանատու գործի համար։ Սահակը և Մաշտոցը շատ լավ էին զգում այդ, ուստի և զարդարեցին իրենց կատարած մեծագործությունը մի փառավոր ձեռնարկությամբ ևս։ Իրենց աշակերտներից ամենաընդունակներին ուղարկեցին արտասահման ուսման և լեզվագիտության մեջ կատարելագործվելու համար։ Մի մասը գնաց Միջագետք՝ սիրիական գրականությունից թարգմանություններ անելու համար, մյուս մասը՝ Կ. Պոլիս, հունական ուսման ընտելանալու համար։

Այսպես, ուրեմն, Սահակ-Մաշտոցյան դպրոցը նորից կենդանացնում էր հայ ուսանողությունն արտասահմանում, ինչպես այդ տեսանք 4-րդ դարում[3]։ Մեծ տարբերությունն այն էր այժմ, որ մինչդեռ 4-րդ դարում հայ ուսանողները Աթենքի մեջ հունական լեզվով էին կրթվում, այժմ հունարենը յուրացվում էր իբրև միջոց՝ հելլենականությունը հայացնելու համար։ Թե ո՛րքան բազմամարդ էր հայ ուսանողությունը Կ. Պոլսում, մենք հաստատապես չգիտենք։ Կորյունը պատմում է, որ ինքն ու Ղևոնդն ուղարկվեցին Կ. Պոլիս և այդտեղ գտան Եզնիկին, որ իրենցից առաջ ուղարկված

[1] «Կորիւն վարդապետի Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրովպայ», Վենետիկ, 1833, եր. 14, 27։

[2] Յով. վ. Միսքճեան, «Սրբոցն Սահակայ կաթողիկոսի և Մեսրովբայ վարդապետի ձեռնասուն և երիցագոյն աշակերտք», Վիեննա, 1902։

[3] «Հայոց պատմ.», հ. Ա, եր. 572։

էր Հովսեփ Պաղնացու հետ Եդեսիա՝ թարգմանություններ անելու համար։ Վերջացնելով այդ հանձնարարությունը, նրանք գնացել էին Կ. Պոլիս[1]։ Մոտավորապես 432 թվին էր, Սահակի Հայաստան վերադառնալուց անմիջապես հետո, որ աշակերտներն ուղարկվեցին արտասահման։ Ենթադրվում է, որ ուսանողները հայրենիք վերադարձան 3—4 տարուց հետո։ Նրանք իրենց հետ բերին բազմաթիվ ընտիր հունարեն ձեռագրեր։

Այս ժամանակից է, անշուշտ, որ Հայաստանում տիրող ազդեցություններից վերջնական հաղթանակ տանում է հունականը, հետզհետե դուրս մղելով սիրիական ազդեցությունը, որ չափազանց մեծ էր նաև գրականության շրջանում։ Բնական էր հունականի հաղթանակը։ Սիրիական գրականությունը համարյա ամբողջապես թարգմանություն էր հունականից։ Եվ շատ արդարացի պիտի լիներ Սահակի և Մաշտոցի ձգտումը դիմել իսկական աղբյուրին, առանց միջնորդներով ղեկավարվելու։ Եվ առաջին գործը Սահակը դարձնում է վերաքննել և ուղղագրել իր և իր աշակերտների ձեռքով թարգմանված Աստվածաշունչը։ Առաջին, անկատար թարգմանությունը, ինչպես կարծում են, կատարված է եղել սիրիական թարգմանությունից։

Հայացած Աստվածաշունչը, առաջին հայերեն գիրքը, որի մասին կասկած չկա, դարձավ մի հոյակապ և ամուր պատվանդան, որի վրա հաստատվում էր հայոց գրականության սքանչելի շենքը։ Մեծ տաղանդով էր կատարվել այդ խոշոր գործը, արդյունք երկար տարիների անխոնջ ջանքերի ու տքնությունների։ Վերջնական խմբագրությունը կատարվեց հունական այն թարգմանության վրա, որ հայտնի է «Եօթանասնից թարգմանութիւն» անունով։5 Հայոց լեզուն իր մեծ հաղթանակն էր (տոնում) այդ մեծատաղանդ թարգմանության միջոցով, հանդես բերելով նրա մեջ իր ամբողջ հարստությունը, իր կորովն ու զարգացման բարձր աստիճանը։ Այս կողմից Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը միշտ մեծարանքի զգացմունք է գրգռել նույնիսկ եվրոպական գիտնականների մեջ։ Անհավատալի է թվում, թե այդքան նրբորեն զարգացած լեզուն ունեցած չլիներ իր գրականությունն այդ թարգմանությունից առաջ։ «Անլուծանելի հանգույց մը,— գրում է մեր օրերի լեզվագետներից մեկը[2],— մանավանդ թե կնճիռ մըն է, թե ինչպես 406—450 կարճատև, կիսադարյան շրջանի մը մեջ՝ նորաստեղծ գրերով, նորակերտ հնչյուններով, նորուսույց աշակերտությամբ՝ այնպիսի ուղղաձև դասականության ամեն առավելություններով օժտված գրականություն մը հրամցվի, առանց նախընթաց փուլերեն անցած ըլլալու։ Եթե անցած է, ո՞ւր են վավերական ապացույցներ. եթե անցած չէ՝ իրավունք ունենք անըմբռնելի առեղծվածի մը առջև տեսնելու զմեզ»։

Եվ այսպես, մեր դասական լեզուն ներկայանում է մեզ, առանց նախնական զարգացման աստիճանները ցուցադրելու, իր կատարելության ծայրագույն աստիճանի վրա։ Աստվածաշնչի մեջ կա թե՛ պատմություն, թե՛ օրենսդրություն, թե՛ հրապարակախոսություն, թե՛ մանավանդ բանաստեղծություն։ Հայերեն լեզուն այս բոլոր ասպարեզներում միապես նուրբ և ազդու արտահայտիչ է. դասական լեզվի ամբողջ վսեմությունը, զմայլեցուցիչ պարզությունը, կուռ կորովն է հանդես բերում։ Ահա, օրինակ, անա-

[1] Կորիւն, եր. 20, 21։

[2] Հ. Գաբրիել Մենեվիշյան, «Գրիգոր Մագիստրոսի «Գամագտական»-ի ամբողջական լուծումը», Վիեննա, 1912, եր. 1—2։

պատի որդիների վճիտ ու անարվեստ հովվերգությունը, որ այնքան միամիտ սիրային տարփանք է երգում—Սողոմոնին վերագրվող «Երգ Երգոց»-ը։ Հեռավոր տեղերից է բերված այդ սիրերգը, հեռու գտնվող օտար աշխարհն ու օտար կենցաղն են խոսում նրա մեջ։ Թխագույն է նրա գեղեցկուհին, ինչպես թուխ են անապատի վրանները, ինչպես թուխ են գեղեցկուհու արածացրած ուլերը։ Եվ հայերեն լեզուն նույն չքնաղ, հովվական պարզությունն է հագնում՝ այդ երգը բնագրի թեթևությամբ արտահայտելու համար։ Ահա մի նմուշ.

«Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց։ Իբրև շուշան ի մէջ փշոց, այնպէս մերձաւորդ իմ ի մէջ դստերաց»[1]։ Կամ՝ «Յանկողնի իմում ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա՝ և ոչ գտի. կոչեցի՝ և ոչ ետ ինձ ձայն։ Յարեայց և շրջեցայց ընդ քաղաքն, ընդ փողոցս և ընդ հրապարակս, և խնդրեցից զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա՝ և ոչ գտի. կոչեցի զնա՝ և ոչ ետ ինձ ձայն»[2]։

Այս չարաճճի սիրերգից եթե անցնենք Հոբի գրքին, որ մի ամբողջ ընդարձակ քերթված է, կտեսնենք այստեղ այնպիսի խոր և բարդ հատկություններ, որոնք իսկապես մեծ խոչընդոտներ պիտի դառնային մի թույլ, աղքատ և անզարգացած լեզվի համար։ Բայց հայոց ոսկեղենիկ դասականությունը դարձյալ արտահայտիչ է այստեղ, ունի մեծ ճկունություն, ձևերի հմայիչ ճոխություն, ելևէջների գունագեղ նրբություն՝ բարձր հոգեկան տրամադրություններ, մտքի փիլիսոփայական թռիչքներ ներկայացնելու համար։ Բավական է վերցնել Հոբի գրքի հենց միայն 38 և 39 գլուխները։ Ահա, օրինակ, ինչպես է պատկերացվում տիեզերաստեղծությունը.

«Ո՞ւր էիր մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա՛ ինձ եթէ խելամուտ իցես հանճարոյ։ Ո՞վ եդ զչափ դորա՝ թէ գիտիցես, կամ ո՞վ արկ ի վերայ դորա լար։ Յէ՞ր վերայ հաստատեցան աղխք դորա, ո՞վ է որ արկ զվէմն անկեան ի դմա։ Յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստղեաց օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին։ Փակեցի զծով դրամբք, յորժամ ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել։ Եդի նմա զմէգ ի հանդերձ, և զմառախուղ նմա ի խանձարուրս։ Եդի նմա սահմանս՝ եդեալ փականս և դրունս։ Ասացի, Ցայդ վայր եկեսցես և այլ մի՛ անցանիցես, այլ այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո»։

Պակաս գեղեցիկ չեն և կենդանական աշխարհի բանաստեղծական պատկերները.

«Եթէ գիտիցե՞ս զժամանակ ծննդեան յամուրաց քարանձաւաց, զգուշանայցե՞ս երկանց եղանց։ Թուիցե՞ս լիով զամիսս ծննդեան նոցա, լուծանիցե՞ս զերկունս նոցա։ Սնուցանիցե՞ս զմանկունս նոցա առանց երկիւղի, մերժիցե՞ս ի նոցանէ զերկունս։ Փրծանիցին որդիք նոցա, բազմանայցեն ի ծննդեան իւրեանց, ելանիցեն՝ և անդրէն ոչ կրկնեսցին։

Ո՞ եթող զցիռ ազատեցեալ, ո՞վ եկոյծ զկապանս նորա։ Եդի նմա կայանս զառապարս, և բնակութիւն նմա զաղտաղտուկս։ Ծաղր առնէ կրազմամբոխ քաղաքաց, զբամբասանս հարկահանաց ոչ լսէ։ Դիտէ զլերինս արօտի իւրոյ, և զհետս ամենայն դալարւոյ շրջի խնդրել։ Եթէ կամիցի՞ քեզ մի եղջերուն ծառայել, կամ հանգչել առ մսուր քո։ Կապիցե՞ս սամետիւք

[1] «Երգ Երգոց», գլ. Բ։

[2] Անդ, գլ. Գ։

լռծ նմա, կամ ձգիցէ՞ ակօս ի դաշտի քում։ Յուսայցե՞ս ի նա՝ զի բազում է զօրութիւն նորա, և թողցուս ի նա զամենայն գործս քո։ Հաւատայցե՞ս եթէ հատուցանիցէ քեզ զսերմանիս, և ամփոփիցէ զկալ քո։

Դո՞ւ ագուցեր ձիոյ զօրութիւն, և զգեցուցեր զրահ ընդ պարանոցաւ նորա. արկեր զնովաւ սպառազինութիւն, և փառս լանջաց նորա զայնդըգնութիւն։ Որոտայ ի դաշտի և դափր հատանէ, ելանէ ի դաշտ զօրութեամբ։ Ի պատահել նետից՝ արհամարհէ, և ոչ դարձցի յերկաթոյ։ Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, և շարժիւն վահանի և նիզակի։ Եւ բարկութեամբ ապականէ զերկիր. և ոչ հաւատայ՝ մինչև փող հարկանիցի։ Եւ իբրև փող հարկանի, նա Վաշ վաշ կարդայ. ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի՝ վազս առնելով և փռնչելով»։

Եթե բանաստեղծական պատկերավորման երկնային բարձունքներից գանք այն խոսքին, որ մերկացնում և խարազանում է հասարակական արատները, որ հեգնանքի թույնով և արդար զայրույթի մտրակով զինված՝ մեռած գիտակցությունն է զարթեցնում, ուղղություն, ղեկավարող սկզբունքներ է ցույց տալիս, կտեսնենք, որ մեր ոսկեղեն դարի հայերենը դարձյալ չափազանց զորեղ է, ճկուն։ Աստվածաշնչի հայերեն թարգմանության ամենաճոխ զարդերը մարգարեություններն են, որոնք ունեն իրենց միայն հատուկ ոգին, շեշտը։ Հայտնի է, որ մարգարեությունների մեջ վառ գույներով ներկայանում է հրեական ազգի վիճակը, քաղաքական տառապանքների հետ մերկացվում են և բարոյական արատները։ Այստեղ ջերմ հայրենասիրությունը ողբում է ժողովրդի թշվառությունները, հալածանքները, գերեվարությունները։ Իսկ ջերմ կրոնասիրությունը, հավատարմությունը պապերի պաշտամունքին հուր և երկաթ է թափում հրեության ճանապարհից շեղվող ժողովրդի վրա։ Ընդհանուր առմամբ ստացվում է այն, ինչ մենք հասկանում ենք «բանաստեղծական հրապարակախոսություն» անունով։ Ահա մի պատահական օրինակ, որ ցույց է տալիս, թե հայերեն լեզուն առաջին իսկ քայլերից որքան գեղեցիկ կերպով էր գործիք դառնում այդպիսի հրապարակախոսության։

«Զի ահաւասիկ օր Տեառն հասեալ է անհնարին լի բարկութեամբ, ոխակալութեամբ և սրտմտութեամբ, առնել զտիեզերս անապատ, և զմեղաւորս սատակել ի նմանէ։ Զի աստեղք երկնից՝ Հայկիւն հանդերձ և ամենայն զարդուն երկնից լոյս մի՛ տացեն, և խաւարեսցի արեգակն ի ծագել իւրում, և լուսին մի՛ տացէ զլոյս իւր։ Եւ հրաման տաց ընդ ամենայն տիեզերս զչարիս, և ամպարշտաց զմեղս իւրեանց. և կորուսից, զհպարտութիւն զանօրինաց, և զբարձրութիւն ամբարտաւանից խոնարհեցուցից։ Եւ եղիցին մնացեալքն պատուականք առաւել քան զոսկի անհուր, և մարդն պատուական եղիցի քան զականս պատուականս Սոփերայ։ Զի երկինք զայրասցին և երկիր սասանեսցի ի հիմանց իւրոց՝ վասն սրտմտութեան բարկութեան Տեառն զօրութեանց, յաւուր յորում հասեալ իցէ սրտմտութիւն նորա»[1]։

Աստվածաշնչի հետ և նրանից հետո թարգմանվում են և այլ, բազմաթիվ գրվածքներ հունարենից և ասորերենից։ Այս թարգմանական ճոխ և ընտիր գրականությունը նախ և առաջ մի ցուցմունք էր հետագա ժամանակների համար, թե հայոց գրականության գլխավոր տարրը պիտի կազմի թարգմանականը։ Ոսկեդարի թարգմանիչները նախահայրեր էին հանդիսանում այն անթիվ գործիչների, որոնք այնուհետև, մինչև մեր օրերը, օտար գրականությունների ծաղիկներն էին հայացնում՝ մեր պակասը լրացնելու, մեր պահանջներին որքան կարելի է լայն չափերով բավարարություն տալու համար։ Այսօր մենք չենք էլ կարող լիակատար հասկացողություն կազմել այն հսկայական աշխատանքի մասին, որ մեր նախորդ սերունդները գործադրել են թարգմանությունների ասպարեզում, որովհետև մեր ամբողջ հին գրականությունը չի հասել մեզ, անթիվ ձեռագրեր են կորել և մնացածներն էլ դեռ լավ չեն ուսումնասիրված, անգամ բոլորը չեն հավաքված[1]։

[1] Եսայի, գլ. ԺԳ, 9—14

Դիմելով այն հարցին, թե 5-րդ դարի թարգմանությունները գրական ի՛նչ սեռեր էին ընդգրկում, մենք նախ և առաջ պիտի նկատի առնենք, որ քրիստոնեական եկեղեցին գնալով զարգացնում և շքեղացնում էր ծիսական մասը, և արարողությունների հետ ճոխանում էր կրոնական բանաստեղծությունը երգերի, աղոթքների, ներբողների ձևով։ Հայոց եկեղեցին շատ ծեսերի և արարողությունների հետ յուրացնում է և եկեղեցական բանաստեղծության շատ հատվածներ։ Թարգմանվում են ծիսական կանոններ և ցուցմունքներ (ժամակարգություն կամ ժամագիրք)։ Բայց ամենակարևորը մայր-պաշտամունքն էր, պատարագը, որի համար թարգմանվում են նախընթաց դարերում կազմված և զանազան անուններով հայտնի «Պատարագամատույցներ»[2], որոնք կրոնական բանաստեղծության պատկանող երկեր են և գեղեցիկ ու վսեմ ոճով հայացվում են թարգմանիչների ձեռքով։

Հին և Նոր Կտակարանների հետ եկեղեցին կարոտ էր և այն գործերին, որ ստեղծել էին նախորդ դարերում արևմտյան (գլխավորապես հույն) եկեղեցու հայրերը՝ քրիստոնեական կրոնը հիմնավորելու, բացատրելու, ջատագովելու և ներբողելու համար։ Այս մի ընդարձակ գրականություն էր, որ արդեն եկեղեցու խարիսխն էր դարձել և առանց որի չէր կարող գոյության կռիվ մղել և հայ եկեղեցին։ Իսկ այսպիսի կռվի մի շատ դաժան անհրաժեշտություն, ինչպես գիտենք, այդ միջոցին կախված էր Հայաստանի քրիստոնեության վրա։ Եվ հայ թարգմանիչները մեծ եռանդ ցույց են տալիս մանավանդ եկեղեցական հայրերի մատենագրության թարգմանությունների մեջ։ Այսպես, բավական շատ բան թարգմանվում է ժամանակի ամենամեծ հռչակով պսակված Հովհան Ոսկեբերանից, և այս թարգմանությունները, ինչպես երևում է, ամենից շատ հարգված, ամենից շատ կարդացվող գրական գործերն էին։ Ոսկեբերանի հետ հայացվում էին մի շարք նշանավոր հեղինակներ—Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիազանցի, Դիոնիսիոս Աղեքսանդրացի, Եփրեմ Խուրի Ասորի, Իգնատիոս Աստվածազգյաց, Կյուրեղ Աղեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Սեբերիանոս Գաբաղացի և այլն։ Այսպիսով զարգանում էր զուտ կրոնական մի ընտիր, բարձր տեսակի գրականություն, բաղկացած մեկնաբանություններից, դավանական տեսություններից ու ապացույցներից, փիլիսոփայական խորհրդածություններից, ճառական ներբողներից, աստվածագիտական և քրիստոսագիտական

[1] Թե ո՛րքան ընդարձակ էր հայ թարգմանական գրականությունը 5—13-րդ դարերում, այդ մասին կարելի է մերձավոր հասկացողություն կազմել Հ. Գ. Զարբհանալյանի «Մատենադարան հայկական թարգմանութեանց» աշխատությունից (Վենետիկ, 1889)։ Նկատի առնելով, որ այդ դեռ շատ թերի մի ցուցակ է։

2 Հ. Յ. Գաբրենեան, «Սրբազան պատարագամատոյցք Հայոց», Վիեննա, 1897, եր. 81—318։

բացատրություններից։ Այս տեսակ գործերի վրա էր հիմնավորվում այն ժամանակների բարձր գիտությունը։ Միայն այս գրականության մանր ու նուրբ ուսումնասիրությամբ և յուրացմամբ էր հոգևոր գործիչը բարձրանում սովորական միջակություններից ու հասարակաց մեծարանքը գրավում իբրև «գիտնական»։ Բայց այդ վարդապետական գրականության հետ զուգընթացաբար հարկավոր էր և լավատեղյակություն քրիստոնեական եկեղեցու անցյալի վերաբերմամբ։ Այստեղ էլ խորաթափանց է հայ թարգմանիչների կանխատեսությունը։ Ընդհանուր եկեղեցու և առհասարակ ազգերի պատմության վերաբերմամբ լավագույն հեղինակ համարվում էր այն ժամանակ Եվսեբիոս Կեսարացին, որ ապրել էր 4-րդ դարում և մոտիկ լինելով բյուզանդական արքունիքին, հավատարիմ աղբյուրներից էր քաղել իր պատմագրական աշխատությունների նյութը։ Այդ աշխատությունները երկու հատ էին, երկուս ստվար հատոր, գրված հունարեն լեզվով։ Ավելի գնահատված և արժեքավոր էր եկեղեցական պատմությունը, որ թարգմանվեց հայերեն, բայց ոչ թե հունարեն բնագրից, այլ սիրիական թարգմանությունից, մի հանգամանք, որ ցույց է տալիս, մի ավելորդ անգամ ևս, սիրիական ազդեցության ուժը[1]։ Թարգմանվեց, դարձյալ 5-րդ դարում, Եվսեբիոսի և մյուս գործը՝ Ժամանակագրությունը, բայց արդեն հունարենից[2]։

Այս լուրջ և պատկառելի աշխատությունների հետ չմոռացվեց եկեղեցական գրականության մի ճյուղն էլ, որ մի կողմից հարում էր պատմագրության, իսկ մյուս կողմից՝ ժողովրդական թեթև ընթերցանության նյութ էլ էր հայթայթում, փոխարինելով հին հեթանոսական զրույցներին, դյուցազներգություններին, վեպերին։ Այսպես էին եկեղեցու հայրերի կենսագրությունները (հայտնի են մեր գրականության մեջ «Հարանց Վարք» ընդհանուր անունով) և հավատի համար նահատակվածների, սրբերի վկայաբանությունները, այսինքն նրանց կրած տանջանքների, նրանց սպանման մանրամասնությունները, զարդարված գերբնական երևույթների, հրաշքների առասպելներով։ Այս տեսակ գրական երկերի նշանակությունն էլ ահագին էր եկեղեցու հաղթանակը բարձր պահելու տեսակետից, ուստի և նրանք սկսում են երևան գալ քրիստոնեության շատ վաղ ժամանակներից թե՛ բերանացի ավանդությունների և թե՛ գրավոր հրաշապատում վկայաբանությունների ձևով՝ պարզամիտ հավատացյալներին դաստիարակելու և եկեղեցական հզոր հեղինակություններ ստեղծելու համար։ Մեզանում դարձյալ թարգմանիչների դարն էր, որ դրեց այս տեսակ գրականության հայացման սկիզբը[3]։ Թարգմանվում էին այդ վարքերն ու վկայաբանությունները նույնպես սիրիական և հունական լեզուներից։ Հատկապես հայոց եկեղեցու սահմանափակման և ամրապնդման համար 5-րդ դարը կարևոր համարեց

[1] «Եւսեբիոսի Կեսարացւոյ, Պատմութիւն եկեղեցւոյ՝ յեղեալ յԱսորւոյն ի հայ ի հինգերորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բաբբառն ձեռամբ Հ. Աբրահամ վ. Ճարեան», Վենետիկ, 1877։

2 «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ» ի հայերէն թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց, թարգմանեալ ի լատին լեզու, աշխատութեամբ Հ. Մկրտիչ վ. Աւգերեան», Վենետիկ, 1818։ Այս թարգմանությունը նշանավոր է մանավանդ այն պատճառով, որ հունարեն բնագիրը կորած է, այնպես որ նրա միջոցով է միայն, որ ժամանակակից գիտությունը ծանոթանում է Եվսեբիոսի այդ գործի հետ։

[3] «Վարք և Վկայաբանութիւնք սրբոց», հ. Ա, Վենետիկ, 1874, եր. 9։

հայերենի վերածել և Քրիստոսի աշակերտների անունով գոյություն ստացած, բայց միանգամայն անվավեր կանոնագրությունը, որ այսօր էլ դեռ գործադրության մեջ է և կոչվում է «Առաքելական կանոնք»։ Այս կանոնագրությունը, որ որոշում է եկեղեցու վարչության ձևերը, պաշտոնյաների պարտավորություններն ու իրավունքները և այլ կարգեր (օր. ամուսնություն, ծեսեր և այլն)[1], սիրիական եկեղեցու ծոցում էր կազմակերպվել և անհայտ էր նույնիսկ հունական եկեղեցուն[2]։ Հայերը վերցնում էին իրենց առաջին քրիստոնյա ուսուցիչներից այն, ինչ իրենք չունեին, այսինքն օրենսդրություն, որ հարկավոր էր իրենց եկեղեցու մեջ կարգապահություն և միանման վարչական ձևեր հաստատելու համար։

Շատ ուշագրավ է, իբրև գրական երևույթ, որ մեր ոսկեդարի ամբողջ թարգմանական գրականությունը միատեսակ և միատարր չէ իր լեզվական կազմով։ Թեև թարգմանիչները մի դպրոցի սաներ էին, թեև գրաբարը, ինչպես տեսանք, չափազանց կանոնավորված, իր հաստատուն քերականությունն ունեցող մի լեզու էր, բայց և այնպես, մեր ժամանակների հմուտ հայերենագետները պարզ նկատում են այդ թարգմանությունների մեջ չորս առանձին գունավորումներ, չորս մասնավոր դպրոցներ, եթե կարելի է այսպես ասել։ Այս տարբերությունները բացատրել այժմ, իհարկե, դժվար է, բայց ամենայն հավանականությամբ այս երևույթի մեջ էլ, ինչպես հայկական կյանքի բոլոր այլ երևույթների մեջ, խոսում էր գավառական տեղայնությունը, ավատական առանձնացումը։ Որքան և մի ու ընդհանուր լիներ լեզուն, բայց նա գավառներում ենթարկված էր տեղական ուրույն պայմանների, ստանում էր առանձին գունավորում, և թարգմանիչները, որոնք Հայ երկրի զանազան կողմերից էին, գրականության մեջ էին մըտցնում իրենց լեզվային գավառականությունը։

Հայկաբանության ամենամաքուր և կատարելագույն տեսակը համարվում է այն, որով գրել է Եզնիկ Կողբացին։ Արարատյան նահանգը, որ Հայաստանի քաղաքական-կուլտուրական կյանքի սիրտն էր կազմում, հարկավ, բոլոր մյուս տեղերից ավելի լավ, ավելի նուրբ կերպով էր հղկել ու մշակել հայերենը։ Այդ կենտրոնական, մայր լեզվի ներկայացուցիչն էր Կողբում ծնված Եզնիկը, որի հեղինակած «Եղծ աղանդոց» աշխատությունը6 համարվում է մի աննման գլուխ-գործոց ոչ միայն բովանդակության, այլև լեզվի կողմից։ Եվ թարգմանչական առաջին դպրոցը, առաջին դասը հենց Եզնիկի անունով էլ կոչում են «Եզնիկյան»։ Այս ոսկեղենիկ լեզվով են կատարվել Աստվածաշնչի շատ գրքերի, ինչպես նաև ուրիշ բազմաթիվ գրվածքների թարգմանությունները։ Ենթադրել կարելի է, որ դա Սահակ Պարթևի լեզուն էլ էր։ «Հայերեն լեզվի բովանդակ գեղեցկությանցն ու հատկությանց գանձ, և ամենայն նկատմամբ հայկաբանության կիրթ ճաշակի օրինակ»,— ասում է հին հայերեն լեզվի հետազոտողներից մեկը[3]։ Իսկ մի ուրիշն ավելացնում է. «Կանոնաւոր, դաշնակաւոր, յընտրութեան և ի շարուածս բառից ամենաճարտար, ասացուածովք, բացատրութեամբք և նոյնանշանոք շատ հարուստ, մերթ պարզ՝ բայց այնպիսի պարզութեամբ

[1] «Կանոնագիրք Հայոց», խմբ. Արսեն Ղլտճյանի, Թիֆլիս, 1914, եր. 205—255։

[2] Հ. Յակոբոս Տաշեան, «Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց Մատեանը», Վիեննա, 1896, եր. 185։

[3] Հ. Թ. Թոռնեան, «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց», հատ. Ա, Վիեննա, 1866, եր. 12—18։

յոր քաջ արուեստագէտք միայն կը հասնին, մերթ զարդարուն առանց բռնազբօսութեան, և ի վեր քան զամենայն՝ յստակ»[1]։

Երկրորդ դասի թարգմանությունները սիրիական լեզվից են արված և աչքի են ընկնում գլխավորապես նրանով, որ կրում են իրենց մեջ բնագրի խիստ ազդեցությունը։ Այս «հայկաբանութիւնն է ընդհանրապէս հարթ և պարզ, բայց ոչ անմասն ի զարդուց և յաւելադրութեանց. միայն թէ ունին գլխաւոր թերութիւն մի՝ որ է յաճախ նիւթապէս թարգմանել զասորերէն [սիրիական լեզուն], օտարանալով յոգւոյ Հայ լեզուի. այս է պատճառ որ շատ անգամ աշխատութիւն կը կրենք առ ի հասու լինել սոցա գրուածոց, և իւրեանց երկարաբան ու ճապաղ ոճն ծանրատաղտուկ կը դառնայ մեզ»[2]։ Երրորդ դասի թարգմանությունները գլխավորապես հունարենից են։ «Սոքա,— ասում է նույն հմուտ բանասեր Նորայր Բյուզանդացին,— հաւասար են առաջին Դասուն իւրեանց ճոխ և ընդարձակ լեզուաւ, այլ կ'առաւելուն զարդուք և մանաւանդ աւելադրութեամբք, և ընդհակառակն, ուրեք ուրեք կնուազին յստակութեամբ»[3]։ Չորրորդ դասը կոչվում է Կորյունյան, որովհետև նրա ամենատիպիկ ներկայացուցիչն է Կորյունը։ Եվ որովհետև Կորյունն իրեն անվանում է Մաշտոցի աշակերտը, ուստի հավանական են համարում, որ Մաշտոցի լեզուն է այդ, այսինքն Տարոնի գունավորումը կրող լեզուն։ Ահա ինչպես է բնորոշում նրան Նորայր Բյուզանդացին. «Ճոռոմ, պերճ, վսեմ... ի՜նչ յորդութիւն քաջահնչիւն բառերու, ո՞րպիսի ճախարակեալ պարբերութիւնք. ո՜րքան զարդք, ո՜րչափ ձևք և պէսպէսութիւն ասացուածոց. ինչպէ՜ս ձայնդ կը հանգչի յաւարտ մէն մի նախադասութեան՝ որպէս թէ ողորկ ոտանաւոր մի կարդայիր. միանգամայն իւր պաճուճաբան առատութեան հետ՝ ի՜նչպէս լաւ գիտէ դերբայներով հատու և սեղմ դարձուած տալ իւր գաղափարաց արտայայտութեան, և ո՜րչափ մեծ արուեստիւ կը զուգէ մատենագրական բարձր լեզուին յատուկ ձևոց և շարուածոց՝ ընտանեկան խօսից ձևեր և շարուածներ»[4]։ Հետաքրքրական է համեմատել Կորյունի լեզուն Եզնիկի լեզվի հետ, ուրիշ խոսքերով՝ երկու հանճարեղ լծակիցների—Սահակի և Մաշտոցի կամ Արարատյան դաշտի և Տարոնի լեզուները։ «Եզնիկ և Կորիւն,— ասում է Բյուզանդացին,—ոչ միայն ժամանակակիցք են, այլև սննդակիցք և ուսումնակիցք. բայց ոճով կը զանազանին մեծապէս։ Զարդագիր են և երկոքին, այսու տարբերութեամբ որ Եզնիկ ոչ երբէք կ'ախորժի սեթևեթել՝ տուժելով զյստակութիւն. մինչդեռ Կորեան զարդերն կ'աղօտացնեն յաճախ զմիտս բանին։ Առաջինն՝ ի սկզբանէ ցկատարած իւր գրութեան՝ կը նմանի հեզասահ վտակի, որոյ ականակիտ ջրերուն միջէն պայծառապէս կը տեսնենք զյատակն. իսկ երկրորդն՝ շատ անգամ կարծես ուղխ մի է որ կը հոսի ծածկեալ ծաղկներով, և այս պատճառաւ աչք մեր չկարեն թափանցիկ լինել ընդ խորութիւնն։ Առ Եզնկայ միշտ կանոնաւոր է քերականութիւնն, իւրաքանչիւր մասն բանի՝ որոշ պաշտօն մի կը կատարէ և անսայթաք ի նպատակն կը դիմէ. իւր ամէն բարդութիւնքն՝ յայտնի նշանակութիւն ունին. կարճ ըսեմ, ի վերջակիտէ ի վերջակէտ՝ բայ, գոյական, վերադիր, ձև, դարձուած, ամենայն ինչ վճիտ է իբրև զվանակն (cristal)։ Այսորիկ

[1] Նորայր Բիւզանդացի, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Թիֆլիս, 1900, եր. 18։

[2] Անդ,

[3] Անդ, եր. 19։

[4] Անդ, եր. 10։

աղագաւ անաշխատ կհասկանանք զիւր գիրսն, և դիւրաւ կարող ենք թարգմանել յամենայն արևմտեան բարբառս։ Իսկ առ Կորեան չեն պակասիր ասացուածք, որ չըլլան կամ անկանոն կամ տարտամ (vaque), բացատրութիւնք և բարդութիւնք զորս անհնար է նոյն իսկ աշխարհաբար հայերէնի դարձնել, թող թէ օտար լեզուի»[1]։

Այսպես էր ընթանում հայոց գրաբար լեզվի պատմությունը, որ հատուկ է ամեն մի գրական լեզվի։ Նա ընդունում էր զանազան ազդեցություններ թե՛ ներսից և թե՛ դրսից, որոնք հաղորդում էին նրան տեսակ-տեսակ գունավորումներ։ Լեզուն, բացի դրանից, դառնում էր արտահայտիչ գրական անհատականությունների, որոնց գումարն էլ կազմում է այն, ինչ անվանվում է կենդանություն և կենսունակություն։ Բայց այսքանը դեռ բավական չէ բնորոշելու համար այն մեծ գրական շարժումը, որ սկսվեց Հայաստանում Սահակի և Մաշտոցի ղեկավարությամբ։ Մեր Ոսկեդարը բացառապես թարգմանական չէր։ Անկարելի էր, որ այնքան տաղանդավոր գրական մշակներ լինեին, և ինքնուրույն միտքը նույնպես չծաղկեր թարգմանական Ոսկեդարի նման։ Եվ իրավ, շատ շնորհալի թարգմանիչներ, շնորհալի հեղինակներ էլ հանդիսացան, ցույց տալով այս ասպարեզում էլ մտքի կորով, բարձր զարգացում, տաղանդ։ Այս կողմից էլ 5-րդ դարը մեծ հմայք էր ստանում, որ եզակի էր հետագա դարերի համեմատությամբ։ Թեև այսպես, բայց 5-րդ դարը թողեց իր վրա «թարգմանիչների դար» անունը, որովհետև թարգմանական աշխատանքն ինքնուրույնից բարձր դասվեց եկեղեցական տեսակետով։

Ազգային ավանդությունների այս ինքնուրույն գրականության գլխին էլ, նախաձեռնողների և ուսուցանողների դերում, կանգնեցնում են Սահակին ու Մաշտոցին։7 Նրանք առաջինն էին,— հավատացնում է դարերի ավանդական խոսքը,— որ իրենց ձեռքով հայացված եկեղեցու համար հայերեն երգեր գրեցին ու երգեցին[2]։ Այսպիսով մեր գրականության սկզբի օրերին են հասնում այն հոգևոր երգերը, որոնք հռչակված են մեզանում շարական անունով։ Ավանդությունը հական հանվանե ցույց է տալիս, թե որոնք են Սահակի և Մաշտոցի հեղինակած շարականները։ Նրանց սկսածը շարունակեցին նրանց աշակերտները, այնպես որ Ոսկեդարը հանձնեց իր հաջորդ դարերին հոգևոր բանաստեղծությունների մի մեծ շարք։ Այդ երգերն ունեին խիստ որոշված ձև ու չափ, ներկայացնում էին բոլորովին առանձին, ինքնուրույն մի տիպ։ Եվ այս հատկություններին ամենայն հարազատությամբ հնազանդ մնալով, հետագա դարերի հոգևոր երգիչներն էլ ավելացրին շարականների թիվը և այսպիսով երկար ժամանակների սերունդներն ամբողջացրին մի խոշոր բանաստեղծական գանձարան, մեր «Շարականը»։

Դիմելով այդ գանձարանի նշանակության և արժեքին, պետք է ամենից առաջ նկատել, որ շարականները քրիստոնեական կրոնի բացառիկ սեփականությունը չէին, այլ ծնունդ առան հայերի մեջ վաղուց գոյություն ունեցած պատրաստ հողի վրա, որ հայկական հեթանոսությունն էր։ Այս փաստի հեռավոր արձագանքն է այն հանգամանքը, որ մեր եկեղեցական երգեցողությունն իր եղանակներով մոտիկ ազգակցություն ունի

[1] Անդ, եր. 11։

[2] «Շարական հոգևոր երգոց», Կ. Պոլիս, 1853, եր. Ա։

պարսկական երգեցողության հետ: Հայտնի է, որ կրոնական գաղափարական կապակցություն Հայերն ունեին Իրանի հետ իրենց հեթանոսության ժամանակ, երբ շատ մեծ դեր կատարողը պարսկական զրադաշտականությունն էր, իսկ սա, ինչպես ցույց է տալիս Զենդ-Ավեստան, հարուստ հոգևոր երգեցողություններ ուներ, նվիրված աստվածներին, բարի ոգիներին, ծիսակատարություններին: Պարսկական եղանակների սերտ կապակցությունը հայկական եղանակների հետ կարող էր առաջանալ միմիայն սրբազան արարողությունների պաշտամունքների միանմանությունից: Եվ այսպիսով հայերի մեջ, քրիստոնեության մուտքի ժամանակ, արդեն կար ընդարձակ կրոնական բանաստեղծություն և երգեցողություն, որ հավատարիմ մնալով պարսկական օրինակին, ազգայնացած էր: Ահա այդ տարրերն էլ մտնում էին քրիստոնեական եկեղեցու բանաստեղծության մեջ: Երգեցողության եղանակները հունականից կամ սիրիականից չէին փոխ առնում հայ եկեղեցու գործիչները, այլ վերցնում էին երկրի մեջ գոյություն ունեցող ազգայնացած երգերից, իսկ այս ապացույց է, որ քրիստոնեաբար երգող հայի մեջ խոսում էին հին ազգային հեթանոսական բանաստեղծության շեշտերը, երանգները, տոգորումները: Այսօր էլ մեր եկեղեցիներում հնչում են այս հին եղանակները, և մեր առաջին ձայնը պարսկական ճեֆտեգյահ-ն է, մեր երրորդ ձայնը՝ պարսկական ճեչազն է, իսկ վերջին ձայնը՝ պարսկական սաբահին կամ սիհարի-ն, ավագ կողմը՝ սեգյահը և այլն: Նույնիսկ պահվել է պարսկական «գանգ» բառը մեր եկեղեցական երգերի մի տեսակի անվան մեջ—գանձ[1]:

Այսպիսով հայ ինքնուրույն բանաստեղծության մեջ, որ գալիս է բարձրացնելու օտար աղբյուրներից փոխ առած կրոնը, գլխավոր հատկանիշն է հարազատություն ազգային ոգուն, բնավորության: Այսպես էր պահանջում ստեղծագործության օրենքը և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Հայ եկեղեցական բանաստեղծությունը գերազանցորեն արևելյան է և իր հարազատ տեղն ունի հնդկական Վեդաների, իրանական Զենդ-Ավեստայի, եգիպտական, բաբելա-ասորական օրհներգների շարքում: Եթե համեմատենք[2] այդ բոլոր քնարական բանաստեղծությունները, հեշտ կգտնենք մի ընդհանուր հարազատություն, մի լեզու, որ, իհարկե, բառացիորեն շատ չի կրկնվում բոլոր ազգերի մոտ, բայց իր մի ընդհանուր ծագումը, իր եղբայրակցությունն է մատնում ամեն մի քայլում: Հայ եկեղեցական բանաստեղծությունը, իբրև արևելյան մեծ արվեստի մի ճյուղ, գունագեղ է, արևոտ: Նա խոր հավատացողի, անկեղծ հափշտակվողի, վերին գաղափարի ահավորության տակ իսկ որ ընկճվածի հարազատ տրամադրությունն է, որ հաճախ փայլեցնում է նույնիսկ և խոշոր տաղանդ աղոթքի, հայցվածքի, հիացական փառաբանության մեջ: Այլաբանությունները, համեմատությունները, նմանեցումները ճոխ ու բազմերանգ են, ստեղծում են աշխույժ, երբեմն շատ վառ պատկերավորումներ, որոնք և լցնում են հավատացողի սիրտը վարակիչ բերկրանքով: Նույնիսկ կարելի է պնդել, առանց չափազանցության մեջ ընկնելու երկյուղի, որ հայոց հոգևոր բանաստեղծությանն առանձ-

---

[1] Գ. Խաչկոնց, «Հայոց կրոնական բանաստեղծությունը», Թիֆլիս, 1904, եր. 7, 23:

[2] Համեմատության համար կարելի է վերցնել՝ 1. „Avesta", livre sacré du Zoroastrisme", trad. par C. Harlez, Paris, 1881, 2. „Rig-Veda", trad. de A. Langlois, Paris, 1890, 3. Monde Ancien.—Poésie Lyrique, Jude—Perse—Egypte—Assyrie—Chine". Paris, 1870.

նապես հատուկ է լուսապաշտության մի շատ բարձր աստիճան, որ համարյա բոլորովին անզուգական մի երևույթ է արևելյան գրականությունների մեջ:8 Լույսը, հարկավ, ամեն տեղ էր առաջնակարգ պաշտամունքի առարկա: Հենց միայն զրադաշտականությունը լույսի այնպիսի մի խոշոր մեծարանք է, որ հիացնում է մեզ այսօր էլ: Բայց եթե մեր շարականները դնենք Զենդ-Ավեստայի օրհներգների մոտ, կտեսնենք, որ մեր բանաստեղծությունն ամբողջապես ապրում է լույսի սրբությամբ ու մաքրությամբ և հարյուրավոր սքանչելի հյուսվածքներ է կերտում լույսի զանազան դիրքերից, երկնային լուսատուներից և ամենից շատ, իհարկե, արևից: Այսպիսի բան պարսկական բանաստեղծության մեջ չենք նկատում: Եվ այս հոյակապ լուսապաշտությունը քրիստոնեական Հայաստանը ժառանգել է, անշուշտ, հեթանոսականից: Զուր չէր, որ հայերն այնքան մեծ պաշտամունք էին դարձրել արեգակը, որ տեսակ-տեսակ անուններ ուներ և որի ծագման ժամերը քրիստոնեությունն անգամ պաշտամունքի ժամեր էր դարձրել եկեղեցիներում: Զուր չէր, որ հայերն իրենց անվանում էին արևորդի:9 Արեգակաստծու (Վահագնի) անուններից մեկը, Արփի, շատ հաճախ է պատահում հայոց կրոնական բանաստեղծության մեջ իբրև մաքրության, փայլի, նազանքի ամենաբարձր և վեհագույն մարմնացում:

Հետևելով «Շարականի» ավանդական ցուցմունքներին, մենք կարող ենք գտնել մի քանի երգեր, որոնք հնագույնները պիտի լինեն, 5-րդ դարի առաջին չորս տասնամյակներից մնացած: Այսպես է, օրինակ, «Կանոն Մեծի Շաբաթու», որ վերագրվում է Սահակ Պարթևին: Ահա այդ հոգևոր բանաստեղծության սկիզբը:

«Պարգևատուն ամենեցուն այսօր խնդրի պարգևս ի Պիղատոսէ, և արկողն զլոյս որպէս զօթոց հաւանի պատել ի Յովսէփայ: Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր գերեզմանի և գանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն: Արարածոց փրկութիւն Քրիստոս այսօր եդաւ ի նորափոր վիմի, զոր օրհնեն զօրք երկնից երգով, պահպանի ի զինուորացն»:

Այսպիսի պարզություն, այսքան սրտաբաց հափշտակություն մենք գտնում ենք և ուրիշ շարականների մեջ, որոնք, ըստ նույն ավանդության, վերաբերում են մեր Ոսկեդարին:

Անցնենք այժմ ինքնուրույն գրականության ոչ բանաստեղծական, արձակ ճյուղին: Այս ճյուղն ամենից ուժեղ կերպով ներկայանում է մեզ պատմագրական հեղինակությունների ձևով: Առաջին գործն այս տեսակ երկասիրությունների մեջ Մաշտոցի կենսագրությունն է, որ գրել է նրա աշակերտ Կորյունը:10 Այս թարգմանչի լեզվի և ոճի հատկություններին մենք արդեն ծանոթ ենք: Մի շատ խոշոր գրական դեմք է նա, որի երախտիքները շատ են, մանավանդ պատմագրության ասպարեզում: Իր անունը կրող աշխատությունը միայն Մաշտոցի մանրամասն կենսագրությունն է[1]:

Այս գործն ավելի մի սուրբի վարքագրություն է, քան մի կանոնավոր կենսագրություն: Աշակերտը հափշտակված է իր ուսուցչով, միալար գովասանք ու փառաբանություն է նվիրում նրան, զոհելով իր այդ խանդավառ զգացմունքին գործեր պատմելու ընդունակությունը: Տարաբախտաբար, մեր այս անդրանիկ պատմագրական փորձը հասել է մեզ

---

[1] «Կորիւն վարդապետի Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրովպայ», Վենետիկ, 1833:

շատ տեղերում աղավաղված դրության մեջ։ Բայց, չնայած այս բոլոր պակասություններին, Մաշտոցի կենսագրությունը շատ թանկագին է ոչ միայն իր գրաված տեղով՝ իբրև առաջին պատմագրություն հայ հողի վրա, այլև իր ներկայացրած նյութի կողմից։ Առաջին ազգային աղբյուրն է այս, որ տեղեկություններ հանում է ազգային իրականության խորքերից և հնար եղածին չափ լայն ծանոթություններ է մատակարարում, մինչդեռ հայոց ամբողջ պատմությունը մինչև 4-րդ դարը բացառապես օտար աղբյուրներից է քաղում իր վավերական նյութերը։

Կորյունի անվան հետ նորագույն քննադատությունը կապում է մի շատ հետաքրքրական գրական երևույթ, որ առանձնապես ուշագրավ է. հենց այն պատճառով, որ միակը չէ մեզանում։ Հաստատում են[1], որ Կորյունն էր, 5-րդ դարի կեսում, այն պատմագրության խմբագրողը, որ մեր գրականության մեջ հայտնի է Ագաթանգեղոս11 անունով և որ պարունակում էր իր Գրիգոր Լուսավորչի, Տրդատ թագավորի և քրիստոնեության Հայաստան մուտք գործելու պատմությունը։ Այս գործը, ինչպես կարծում են, Կորյունը կատարել է, օգտվելով տարբեր գրավոր աղբյուրներից, որոնք գոյություն ունեին նրա ժամանակ, այն է՝ վկայաբանություններից[2], վարդապետություններից և պատմական նյութերից[3]։ Բայց, հետևելով իր դարի հասկացողություններին, նա իր անունով չէ լույս հանել այդ խմբագրական աշխատությունը, այլ որպեսզի ցույց տա, թե պատմությունը միանգամայն հավաստի է և նրան գրողը ժամանակակից և ականատես մեկն է եղել, հնարել է Ագաթանգեղոս անունով մի առասպելական անձնավորություն, որ իբր թե Տրդատ թագավորի քարտուղարն էր և գրել է այդ պատմությունը նույն թագավորի հրամանով։ Այս նշանակում է բարեպաշտական նպատակով կեղծիք կատարել։ Հոգևորականությունը լավ վարժված էր այդ կեղծարարության, սուրբերի հրաշագործ մասունքներ հնարելով և վաճառքի հանելով։ Կորյունը, ինչպես հոգևորական, չքաշվեց գրական կեղծիք կատարելուց։

Բայց Ագաթանգեղոսի նշանակությունը շատ կարևոր է 4-րդ դարի մեր պատմության համար, քանի որ պարունակում է իր մեջ, բացի հրաշապատում վկայաբանություններից, որոնց նշանակությունը շատ սահմանափակ է, նաև շատ արժեքավոր նյութեր հայոց հեթանոսության մասին։ Կորյունի այս աշխատությանը վիճակվում էր և մի այլ, եզակի բախտ։ Առաջին հայերեն գիրքն էր այդ, որ թարգմանվում էր օտար լեզուներով։ Մեզ հասել են Ագաթանգեղոսի հունարեն և արաբերեն թարգմանությունները՝ տարբեր խմբագրություններով։

Նմանօրինակ մի երևույթ, բայց ավելի հետաքրքրական, ավելի սիրելի և մեծարժեք՝ մեր գրական ինքնուրույնությունը բնորոշելու տեսակետից՝ ներկայացնում է այն պատմական հիշատակարանը, որ հասել է մեզ Փավստոս Բյուզանդացու անունով[4]։ Ինքը գիրքը վկայում է, թե հեղինակը

---

[1] Նորայր Բիւզանդացի, «Կորիւն վարդապետ», եր. 35։

[2] Գալուստ Տեր-Մկրտչյան, «Ագաթանգեղոսի աղբյուրներից»—«Յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից», Վաղարշապատ, 1896։

[3] Հ. Յ. Տաշեան, «Ագաթանգեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսաւ», Վիեննա, 1891։ Տե՛ս նաև Հ. Բ. Սարգիսյան, «Ագաթանգեղոս և յուր բազմադարյան գաղտնիք», Վենետիկ, 1890։

[4] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832։

Փավստոս անունով մի եպիսկոպոս էր, որ գործում էր Հայաստանում 4-րդ դարի երկրորդ կեսում, Ներսես Մեծի գործակիցն էր, հետևաբար դարձյալ հանդիսանում էր իբրև ժամանակակից և ականատես վկա։ Հենվելով այս ցուցմունքի վրա, միշտ ընդհանրացած կարծիք էր մեզանում, թե Փավստոսը հույն է եղել, գրել է իր Պատմությունը հունարեն լեզվով, որ և հետո վերածվել է հայերենի։ Բայց նորագույն հետազոտությունները[1] ժխտում են Փավստոսի, իբրև պատմագրի գոյությունը և նրա անձի հետ կապված ցուցմունքները համարում են լոկ հերյուրանքներ, որոնք սարքվել են նույն բարեպաշտական կեղծիքի նպատակով, ինչպես այդ եղել է Ագաթանգեղոսի վերաբերմամբ։ Եվ իրավ, քննադատորեն մոտենալով Փավստոսի բնագրի էությանը, դժվար չի լինի նկատել, որ նրա գլխավոր աղբյուրն է ժողովրդական գրականությունը և հատկապես այն ավանդությունները, որոնք կազմվել են 4-րդ դարում զանազան կրոնական և քաղաքական գործիչների շուրջը։ Առանձնապես առատ նյութեր այս պատմության տվել են նախարարական և արքունի տների վեպերը։ Այս բոլոր աղբյուրներից, դարձյալ 5-րդ դարի կեսում, դարձյալ, ոմանց կարծիքով[2], նույն Կորյունի ձեռքով, խմբագրվել է Փավստոս Բյուզանդացին մի պարզ և շատ որոշակի միտումով—հայ եկեղեցու շահերը հունական կուսակցության ուղղությամբ պաշտպանելու համար։ Այս մի ստիպողական մեծ պահանջ էր այն ժամանակի համար, երբ խմբագրվում էր Փավստոսի Պատմությունը։

Հայաստանի մեջ գործող արևմտյան կամ հունական կուսակցությունը քրիստոնեության մուտքի I-ին դարում, ինչպես գիտենք, մարմնացնում էր Գրիգոր Լուսավորչի տոհմը, որ ուներ իր առջև, իբրև հզոր մրցակից, պարսկական կուսակցությունը։ Եվ ահա Փավստոսի Պատմությունը, միակողմանի և դիտավորյալ կերպով օգտագործելով ժողովրդական ավանդություններն ու տոհմային վեպերը, ծառայում էր հունական կուսակցության, բարձրացնելով և սրբության լուսապսակով զարդարելով Լուսավորչի տոհմի հոգևորական գործիչներին և նրանց կողմնակից նախարարներին էլ (գլխավորապես Մամիկոնյաններին) ժողովրդասեր, քաջ ու անձնազոհ հանդիսացնելով, իսկ հակառակ կուսակցությունը կամ մթության մեջ թողնելով, կամ անհրապույր գույներով լուսավորելով։ Այսպիսի մի վերաբերմունք դեպի գործերն ու գործիչները, ամրապնդված 4-րդ դարի կրոնական մեծ հեղինակությամբ, շատ հարկավոր էր հունական կուսակցությանը մանավանդ 5-րդ դարի առաջին կեսում, երբ հունական կուսակցությունը չափազանց սուր և վտանգավոր բնավորություն էր տվել պարսկական ազդեցության դեմ իր մղած պայքարին և երբ կռվի ամբողջ ծանրությունը դարձյալ պիտի ընկներ հունասերների ռազմական ուժի ներկայացուցիչ Մամիկոնյան տոհմի վրա։

Սակայն, չնայած այս պակասություններին, Փավստոսի անունը կրող գրական գործը մի անգնահատելի անզուգականություն է մեր գրականության մեջ։ Առաջին հայերեն գիրքն է այդ, գոնե քրիստոնեության շրջանում, որ ժողովրդից է ներշնչվել, ժողովրդական բանահյուսության է մոտեցել և ընդունել իր մեջ նրա բազմազան դրվագները, համարյա առանց գրական վերամշակման, հարազատորեն։ Եվ այս սիրալիր վերաբերմունքը

---

[1] Ստեփան Մալխասյան, «Ուսումնասիրություն Փավստոս Բյուզանդի Պատմության», Վիեննա, 1896։

[2] Նորայր Բիւզանդացի, «Կորիւն վարդապետ», եր. 35։

դեպի ժողովրդական վեպը լիովի վարձատրել է գրքի հեղինակին, ով և
եղած լինի նա,— մեր հին գրականության և ոչ մի հիշատակարան, կարելի
է ասել հաստատապես, չունի այն մշտաթարմ, թովիչ գեղեցկություն-
ները, որոնցով գրավում է այս իր տեսակի մեջ միակ և անհամեմատելի
գիրքը։ Նահապետական հմայիչ պարզություն է բուրում այդ ժողովրդա-
կան հերոսների դեմքերից։ Մենք մտնում ենք Մամիկոնյանների մի շարք
կան հերոսների դեմքերից։ Մենք մտնում ենք Մամիկոնյանների մի շարք
հաջորդական սպարապետ-հերոսների հոյակապ պատկերասրահը։ Մեր առ-
ջև են Վասակի, Մուշեղի, Մանվելի մեծ ստվերները։ Մենք արդեն մանրա-
մասնորեն ծանոթ ենք այդ դեմքերին Փավստոսի նկարագրած ձևով ու կեր-
պարանքով[1] և կարիք չկա, որ այստեղ նորից վերադառնանք նրանց։ Կա-
սենք այսքանը, որ այդ դեմքերի չափազանց կենդանի և աշխույժ նկարա-
գրության միանում են և այլ պատմվածքներ Փավստոսի գրության մեջ, և
այս՝ շնորհիվ կենսական փաստերի առատության, որ այս երկի մեծագույն
զարդն է և որ թույլ է տալիս մեզ շատ հաճախ շոշափել երկրի ներքին,
ժողովրդական կյանքի ջերմ զարկերակը, մի բան, որի վերաբերմամբ այն-
քան ժլատ են մեր մյուս հին մատենագիրները։

Եթե ընդունենք, որ Փավստոսի գիրքն էլ, ճիշտ որ, Կորյունի ձեռքով
կատարված մի խմբագրություն է, այն ժամանակ կստանանք մեր նախնա-
կան պատմագրության մի այսպիսի պատկեր։ Մատենագրության այս
ճյուղը ծառայում է որոշ նպատակի և լայն չափերով գործադրում է վար-
քագրության և վկայաբանության բոլոր միջոցները—հրաշքներ, առասպելա-
կան չափազանցություններ, որոնք նվազեցնում են պատմական փաստերի
արժեքն անգամ։ Այս չափազանցությունները շատ են մանավանդ Փավստո-
սի մեջ։ Ժողովրդական զրույցներն այստեղ օգտագործված են առանց որևէ
քննական վերաբերմունքի, և ահա այս պատճառով մեր այդ հին պատմա-
գրությունը լրջորեն հավատացնում է մեզ, օրինակ, որ հայերն ամբողջ
երեսուն տարի, անընդհատ, պատերազմեցին պարսից մեծագույն և հզորա-
գույն բռնակալներից մեկի՝ Շապուհ Բ-ի դեմ և ամեն անգամ հաղ-
թող հանդիսացան, կոտորելով թշնամուն ոչ թե հարյուրներով ու հազար-
ներով, այլ տասնյակ և հարյուր հազարներով։ Եվ միշտ էլ հաստատապես
պնդում է, թե պարսիկ սպարապետն էր, որ միաձի փախչում էր հայերի
առջևից։ Զարմանալի է, որ երեսնամյա այս անօրինակ հաղթությունները
չկարողացան կատարյալ ազատություն տալ Հայաստանին, որ շարունակեց
մնալ Շապուհից կախված դրության մեջ, այնպես որ հաղթական Արշակ
թագավորն էր, որ շղթայակապ բանտարկվեց Անհուշ բերդում։ Այս առաս-
պելապատում վեպերի մեջ, անշուշտ, խոսում են որոշ պատմական շար-
ժումներ, որոնց իրական բովանդակությունը, սակայն, դեռ անկարելի է եղել
պարզել։ Մի բան միայն չափազանց պարզ է նրանց մեջ—ձգտում բարձ-
րացնելու հայերի մեջ ազգային ոգին, գիտակցություն և ինքնավստահու-
թյուն ներշնչելու ժողովրդին, որ պիտի դաստիարակվեր այն ուղղությամբ,
թե պարսիկի դեմ, որքան և ուժեղ լինի նա, կարելի է կռվել, թե քաջու-
թյունը հաղթող է նույնիսկ և անհավասար կռիվների մեջ և մեծ բռնա-
կալներին չէ տված միշտ անխորտակելի մնալ։ Այսպիսի քարոզչությունը,
կրկնում ենք, շատ հարկավոր էր մանավանդ 5-րդ դարում, երբ պատ-
րաստվում էր ուժեղ շարժում Պարսկաստանի դեմ։

---

[1] Տե՛ս առաջին հատորում։

Որոնելով մեր հնագույն պատմագրության ուրիշ առանձնահատկու-
թյուններն էլ, մենք այստեղ շեշտում ենք դրանցից մեկը, որ շատ կարև-
վոր է՝ նրա արժեքը գնահատելու համար։ Ընդհանրապես լայն մտքով
հասկացված պատմություն չէ, որ տալիս են մեզ մեր ազգային պատմագիր-
ները 5-րդ դարում, այլ ավելի կենսագրություն։ Եթե Մաշտոցի վար-
քը առավելապես մի անհատի, հայերեն տառերի անմահ հեղինակի կենսա-
գրությունն է, Ագաթանգեղոսն ու Փավստոսն էլ այդպիսի մասնակի դեր
կատարում են մի կամ մի քանի տոհմերի վերաբերմամբ—առաջինը Գրի-
գոր Լուսավորչի տոհմային կենսագրությունն է, իսկ երկրորդը՝ արդեն
երկու տոհմի—Լուսավորչի և Մամիկոնյանց։ Երևում է, որ իշխանական
տոհմերը, գոնե խոշորները, ունեն իրենց պաշտոնական պատմությունները,
իհարկե, բանավոր, վիպական ձևի մեջ։ Հայկական դպրության զարգացման
հետ ազդեցիկ տոհմերն աշխատում էին ունենալ իրենց գրավոր պատմու-
թյունը։ Եվ մենք տեսնում ենք, որ մինչև 11-րդ դարը մեր պատմագրու-
թյունը, մեծագույն մասամբ, սահմանափակված է տոհմային պահանջների
մեջ։ Այս հանգամանքն էլ նվազեցնում է մեր այդ աղբյուրների պատմա-
կան արժեքը։ Տոհմային շահերը հաճախ խեղդում են ընդհանուր շահերը, և
պատմագրողը, իր կոչմամբ պարտավորված լինելով չհեռանալ տոհմի դրվա-
տողի, ջատագովողի դիրքից, զոհում էր այդ պարտականությանը շատ
մանրամասնություններ և շատ ճշմարտություններ։ Այստեղից է առաջա-
նում մեր պատմական աղբյուրների գլխավոր պակասությունը—միակող-
մանիությունը։

Այսուամենայնիվ, Կորյունի այս երեք աշխատություններն էլ չա-
փազանց կարևոր նշանակություն ունեն մեզ համար, իբրև առաջին ազ-
գային գրավոր աղբյուրներ, որոնք մեր առջև պատկերացնում են Հայաս-
տանի կրոնական, մտավոր և քաղաքական շարժումների շատ նշանավոր և
կենսական հանգամանքները։ Առասպելներն ու վիպական չափազանցու-
թյունները որքան և շատ լինեն խճողած այդ գրավոր հիշատակարանները,
նրանք, այնուամենայնիվ, չեն խանգարի, որ քննադատությամբ զինված
միտքը թափանցի մինչև փոքրիշատե հավաստի ճշմարտությունները։

Այսքանով չէ սահմանափակվում Կորյունի խոշոր դերը 5-րդ դարի
մտավոր շարժման մեջ։ 7-րդ դարում ապրած Սեբեոս եպիսկոպոսը թողել
է մի պատմագրություն, որի վերնագիրն է «Պատմութիւն ի Հերակլն»։ Այդ
գործը մի ժամանակագրություն է, որ պարունակում է իր մեջ 6—7-րդ
դարերի անցքերը։ Բայց նրա սկզբում դրված է մի հատված, որ հայոց
հին, հեթանոսական պատմության համառոտությունն է։ Գործի հե-
ղինակ համարվում էր Մարաբա Մծուրնացին, որ իբր թե գրել էր Մծբի-
նում, օգտվելով Սանատրուկ թագավորի պալատի առջև դրված մի սյունի
վրա փորագրած հունարեն արձանագրությունից, որ ամփոփում էր իր
մեջ հայոց հնագույն պատմությունը։ Այս պատմությունն էապես միև-
նույնն է, ինչ ավելի ընդարձակ չափերով բերված է Մովսես Խորենացու
գրած Հայոց պատմության մեջ—Հայկի և նրա ժառանգների գործերը,
Բելի պատերազմը, Շամիրամ և Արա Գեղեցիկ և այլն։ Երկար ժամանակ
վեճի առարկա էր, թե ինքը Սեբեոսն ի՛նչ մասնակցություն ուներ այս
հատվածի խմբագրության մեջ։ Կային հաստատողներ, թե Սեբեոսն է գրել
այդ պատմությունն էլ։ Բայց գերակշիռ է հանդիսանում այն կարծիքը,
թե այդ նշանավոր բեկորը պատահաբար է ընկել Սեբեոսի Պատմության

սկիզբը, արտագրողների անզգուշության պատճառով, թե այդ բոլորովին անկախ մի աշխատություն է, որի հեղինակը հավանաբար Փավստոս Բյուզանդացին է եղել, կամ այն մարդը, որ գրել է այդ անվան տակ, այսինքն՝ դարձյալ մեր Կորյունը։ Շատ հավանական է, որ Փավստոսի Պատմությունը միայն 4-րդ դարի անցքերի ժողովրդական նկարագրությունները չէր պարունակում իր մեջ, այլ սկսվում էր հին ժամանակներից, հայ ազգի անվանադիր (էպոնիմ) Հայկից։ Այնպես որ այս հին պատմական շրջանն էլ ժողովրդական ավանդություններից, ազգային հերոսների վեպերից է հանված։

Այս ենթադրության կողմն է խոսում և այն նկատառումը, որ 5-րդ դարի գրական զարթոնումը և քաղաքական մեծ շարժումը, բնական հետաքրքրություն պիտի հարուցանեին դեպի ազգի անցյալը, դեպի նրա սկզբնավորությունը։ Ազգային գիտակցության հասած, իր համար նոր ուղիներ պատրաստող մի ժողովուրդ ամենից առաջ հարցնում է, թե ո՛վ է ինքը, որտեղի՛ց է գալիս և ո՛ւր է գնում։ Այդ կարևոր և կենսունակ հարցերին պատասխանում էին ազգային ավանդությունները, դյուցազներգություններն ու վեպերը։ Դրանց հավաքողն ու համառոտողը, եթե ճիշտ է վերոհիշյալ ենթադրությունը, Կորյունն էր, այս՝ իսկապես մեծ մատենագիրը, որի կատարած դերն իր և ապագա ժամանակների վերաբերմամբ անհուն է։ Ինչպես Ագաթանգեղոս, Փավստոս անունները նա հնարել էր իր հավաքած ավանդությունները հավաստի պատմության հեղինակությամբ պսակելու համար, այնպես էլ հին ժամանակներից խոսող բանավոր գրականության փաստերը մի որևէ հեղինակության հովանու տակ դնելու համար նա հնարեց Մարաբա Մծուրնացու անունը։ Նպատակը դարձյալ նույնն էր—բարեպաշտական, ազգասիրական։ Հայկի և ուրիշ առասպելական դյուցազների նրանց գալը դարերի խավարի միջից պիտի նմանապես ոգևորեր մեծ պայքարի պատրաստվող երկիրը, թև ու թիկունք տար նրան։ Այդ դերը մեր մեծ հեղինակը կատարել է և ապագա դարերում, մինչև մեր օրերը։

Նույն այս մեծ մատենագրին ենք մենք պարտական, որ մեր գրականության սկզբից առջևներս բաց արած ենք տեսնում մեր գրական հարցերից ամենակարևորն ու կենսականը։ Գեղեցիկ դասական հայերենը Փավստոսի պատմագրության մեջ երբեմն ճեղքվածքներ է տալիս և այդ ճեղքերից գլուխ են հանում, նայում մեզ լեզվական այնպիսի ձևեր ու դարձվածքներ, որոնք արդեն գրաբարին չեն պատկանում, այլ ժողովրդական լեզվին, առօրեականին կամ, այժմյան խոսքով, աշխարհաբարին։ Ահա ինչպես է լուսաբանում այս չափազանց կարևոր երևույթը մեր հմուտ լեզվագետներից մեկը. «Ասոր (Փավստոսի) ստուգիվ ոսկեղեն լեզուն, որ գրողին բանաստեղծական անզուսպ ցնորիցը թափովն ամեն գրավոր օրինաց կապանքեն ապստամբ կելլե, ամեն տեղ կրկին իրարու հակառակ հատկություններ միանգամայն գիտե ճարտարությամբ լծակցել։ Ինչպես որ հիներու սեպհական ամփոփ կարճաբանության հետ միացած են անհավատալի կերպով կրկնաբանություններ, նմանապես ընտիր և խորին հայկաբանության հետ բնական կերպով մը հյուսված է ընտանեկան բարբառը՝ առանց գռեհկանալու. հարթ ու դյուրուկ խոսվածքի մեջ ճշգրիտ նկարներ, կենդանի պատկերներ. մանկական պարզությանց մեջ առույգ ոգի և հաճախ՝ խայթող

[1] Հ. Ա. Մատիկյան, «Անանունը կամ Կեղծ Սեբեոս», Վիեննա, 1913։

սրամտություն մը.— թող որ բովանդակ մատյանն ավելի զվարճացնել դիտած կերևա՝ քան թե հավատացնել։ Բայց ամենայն ինչ բնական է, առանց արվեստի և արվեստականության, և հարկ է ըսել՝ թե հոն լոկ բնություն է խոսող։ Վերջապես լեզվավը խորին հայկաբան, քերականական տրամաբանությամբը ճշտիվ ռամիկ, ոճովն ամենևին արևելյան՝ այս եզական գործը բազմապատիկ արժեք ունի»[1]։

Որ Հայաստանի մեջ գործածական էին երկու լեզուներ12—այդ արդեն հայտնի մի իրողություն է, որ մենք պարզել ենք այս գործի առաջին հատորի մեջ։ Գրականության լեզուն դառնում էր ավելի բարձր զարգացման և մշակման հասածը, ավելի կանոնավորվածը, այն է՝ գրաբարը։ Հասկանալի լինել ազգի ընդհանրության, հայ ժողովրդի բովանդակ զանգվածին նա չէր կարող, քանի որ իր էությամբ դասակարգային մի լեզու էր, ազնվականության, իշխողների լեզու։ Բացի դրանից՝ այդ հարուստ և ճոխ լեզուն արդեն կանգ էր առել իր զարգացման մեջ, լճանալ էր սկսում, դառնալով լոկ գրավոր։ Եվ ահա առաջանում էր մեր գրականության համար վերին աստիճանի բնորոշիչ մի դրություն։ Ճոխ ու նուրբ է նրա լեզուն, դասական վեհության է կարողանում հասնել, բայց ունի իրեն հատուկ, ինչպես և ամեն մի հնացող և արվեստականացող լեզվին հատուկ, ծանր ու պաղ բնավորությունը։ Ժողովրդական լեզուն, ընդհակառակն, աղքատ, անզարգացած, բայց կենդանի է, հափշտակիչ իր բնականությամբ, իր պարզ ձևերով։ Նա ինքը կյանքն է, երերուն, թրթռուն, ժպտուն, հեղհեղուկ և վարակիչ է իր կենսունակությամբ։

Այս երկու լեզուները, երկու հակառակորդներ, իրար դեմ են, իրար հակադրված, մի տեսակ մրցության մեջ։ Պաշտոնական, հրամայող լեզուն գրականության մեջ դառնում է գրաբարը, որ հնուց ուներ նաև նվիրական-կրոնական հեղինակություն և այդ հեղինակությունն ամբողջովին ընդունել էր և քրիստոնեությունը։ Իսկ առօրեական լեզուն, որ խոսվում և ծեծվում էր կյանքի մեծ ժխորի մեջ, առանձնացավ ժողովրդական բանահյուսության անձուկ և թաքնված շրջանակում, բայց հաճախ իր գոյության նշանները մտցնում էր գրաբարի մեջ, որքան հանդուրժող էր հանդիսանում վերջինս։ Հայաստանցի ռամիկը, իհարկե, չէր էլ կարող մտածել իր իշխանին տապալելու մասին։ Այսպես էր և նրա լեզուն իշխանական լեզվի հանդեպ։ Եվ դարերով ձգձգվում է խուլ պայքարը երկու լեզուների միջև։ Այդ միայն լեզվական երևույթ չէր, այդ գրական հեղաշրջումների մեծ խորհուրդն էր, որ պատրաստվեց հետզհետե, երկար ժամանակների ընթացքում, սկսած Սահակի և Մաշտոցի ժամանակից, մինչև որ վերջնական լուծումը ստացավ մեզանից ոչ այնքան հեռու ժամանակներում՝ աշխարհաբարի հաղթանակով։

3. Սահակի և Մաշտոցի մահը։ «Թարգմանիչների դարի» սահմանները որոշակի դնել անկարելի է՝ տեղեկությունների պակասության պատճառով։ Հաստատապես հայտնի է այն, որ նրան ստեղծող երկու մեծ գործիչները—Սահակ կաթողիկոս և Մաշտոց վարդապետ—իրենց աշակերտների հետ երկար չգործեցին՝ վերջիններիս կրթական առաքելությունից վերադառնալուց հետո։

[1] Հ. Արսեն Այտընյան, «Քննական Քերականություն արդի հայերեն լեզվի», Վիեննա, 1866, եր. 58—59։

438 թվականի սեպտեմբերի 7-ին, մի չորեքշաբթի օր, ս. Հովհաննեսի վանքի իր կաթողիկոսարանից քիչ հեռու, նույն Բագրևանդ գավառի Բլուր գյուղում, վախճանվեց Սահակ կաթողիկոսը, ինչպես ենթադրում են, 90 տարեկան հասակի մեջ[1]։ Իբրև Գրիգոր Լուսավորչի տոհմի ներկայացուցիչ՝ նա միանգամայն անզոր հանդիսացավ բուռն հանգամանքների դեմ, իսկ բնությունը զլացավ նրան միջոց հայթայթել, որ շարունակվի նրա տոհմի ստեղծած կաթողիկոսական միապետությունը։ Թե ո՛րքան մեծ վիշտ էր պատճառում այս զրկանքը հռչակավոր ծերունուն, ցույց է տալիս այն տեսիլը, որ նրա մահից հետո ստեղծվեց և որի մեջ նկարագրվում է, թե ինչքան ծանր էր նրա մտատանջությունը, որ արու զավակ չունի և չի կարող կաթողիկոսությունը հանձնել իր ուղիղ ժառանգին[2]։ Սակայն մեռնելիս նա կարող էր մասամբ մխիթարված լինել նրանով, որ իր փոխանորդն ունի Վաղարշապատում և դա իր մեծ գործակիցն էր—Մաշտոց վարդապետը։ Մնում էր կարգավորել Լուսավորչի տան նյութական հարստությունների հարցը։ Այստեղ էլ Սահակը հավատարիմ մնաց տոհմային եսականության։ Բոլոր հարստությունները, գլխավորապես, իհարկե, հողային կալվածներից բաղկացած, նա թողեց իր թոռներին, որոնք ծնվել էին իր Սահականույշ աղջկանից, այն է՝ Վարդան Մամիկոնյանին և նրա երկու եղբայրներին ի մշտնջենական սեփականություն։ Այսպիսով տեղի էր ունենում մի ավատական երկրի համար շատ կարևոր նշանակություն ունեցող մի երևույթ—հողային խոշոր հարստությունների փոխանցումը մի տոհմի, որ այդ նոր սեփականությունից ավելի ևս ուժեղանում էր, առաջ բերելով նախանձ, շահերի սուր հակասություն, հետևաբար և խիստ թշնամություն մյուս հողատեր իշխանավորների մեջ։ Այս գրգռումը շուտով երկպառակություն պիտի առաջացներ՝ հայ երկրի սովորական դժբախտությունն ավելի ևս աղետալի դարձնելու համար։ Սակայն մոռացվեց և պետք է մոռացվեր Սահակ Պարթևի այս թուլությունը, որ հատուկ էր նրան իբրև ավատական մի իշխանի։ Ամբողջ հայության նա անհամեմատ մեծ ժառանգություն թողեց, որ չի կարելի նյութական որևէ հարստության նմանեցնել։ Այդ իր անմահ գործն էր։

Ընդմիշտ փակվեց Բագրևանդի կաթողիկոսարանը, որ արքունի մեծ ճանապարհի վրա էր շինված, Արածանի գետի ափին։ Սահակը մեռավ լուռ մենության մեջ։ Նրա մոտ գտնվում էին միայն Վարդան Մամիկոնյանի կինը՝ Դուստր կամ Դստրիկ անունով և Երեմիա սարկավագապետը, որ մեռնողի մտերիմ աշակերտն էր։ Սրանք էլ տեղափոխեցին դիակը Տարոն, ուր և թաղեցին Աշտիշատում, որ Լուսավորչի տան սիրած դաստակերտն էր։ Այսօր էլ Մուշի դաշտի ժողովուրդը մի լեռան վրա ցույց է տալիս մի անշուք ու խեղճ շինության ավերակ և նրա մեջ մի քար, որի տակ,— պատմում է նա ավանդաբար,— թաղված է հայ լուսավորության անմահ հեղինակներից մեկն ու գլխավորը։

Վեց ամսից հետո, 439 թ. փետրվարի 17-ին, Վաղարշապատի կաթողիկոսարանում վախճանվեց մյուս մեծ հայը, Մաշտոց վարդապետը։ Մեռնում էր նա, ինչպես ենթադրվում է, համարյա հասակակից Սահակին, կաթողիկոսական տեղապահի պաշտոնում, բայց միշտ վարդապետի համեստ աստիճանում։ Հայ մեծ ուսուցչի և կրթական առաքյալի սնարը շրջապատում էին նրա աշակերտներից շատերը, որոնց մեջ էին երկու իշխաններ—Վահան Ամատունի, Օշական բերդի տերը, որ և հայոց հազարապետ էր, և Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակը. Մաշտոցն էլ, իբրև Տարոնի զավակ, պիտի հանգիստ գտներ նույն հողում, որ իր մեջ էր առել Սահակ Պարթևին։ Սակայն այս առիթով Վաղարշապատի կաթողիկոսարանում համաձայնություն չկայացավ։ Ամեն մեկն ուզում էր իր երկրում թաղել իր ուսուցչին։ Բայց հաղթանակեց Վահան Ամատունին, որ կամեցավ թաղել իր ուսուցչին իր իշխանական ոստանի մեջ։ Մեծ հանդեսով թաղման թափորը Վաղարշապատից բարձրացավ Օշական գյուղը։ Երեք տարուց հետո Վահան իշխանը Մաշտոցի գերեզմանի վրա մի գեղեցիկ եկեղեցի շինեց։ Այսօր էլ Օշականն ազգային ուխտատեղի է։ Նրա եկեղեցու սեղանի տակ, մութ ու անձուկ ներքնահարկում սպիտակ մարմարյա մի գերեզմանաքար կա, որ նոր ժամանակների գործ է։ Այդ էլ անվանվում է Մաշտոցի (Մեսրոպի) գերեզման։

4. «Հինգերորդ դար»: Սահակի և Մաշտոցի մահը չէր կանգնեցնում կամ նույնիսկ չէր թուլացնում այն գերազանցորեն գրական շարժումը, որ մինչև այստեղ մեզ ներկայացավ «Թարգմանիչների դար» անունով։ Երկու մեծ գերեզմանները միայն կայան էին այն լայն ճանապարհի վրա, որով ընթանում էր նրանց գործի արագ զարգացումը։ Զուտ գրական շարժումը, այդ գերեզմաններից առաջանալով, ընկնում էր քաղաքական մեծամեծ դեպքերի ազդեցության տակ և ստանում ավելի բարդ և ընդարձակ բովանդակություն, որի համար այլևս լիապես բնորոշիչ չէ «Թարգմանիչների դար» անունը։ Գրական շարժումը, որն ազդում է կյանքի վրա և կրում նրա ազդեցությունը, կանգնում է մեծ խնդրի առաջ—դա սասանյան քաղաքականությունն էր։ Մշակվում է վերաբերմունք դեպի այդ քաղաքականությունը, որ և լցնում է համարյա ամբողջ 5-րդ դարն առանձնահատուկ շարժումներով։ Այս պատճառով էլ Սահակի և Մաշտոցի մահից հետո պետք է թողնել «Թարգմանիչների դար» անվանումը իբրև մասնավոր-անհատական մի հասկացողություն և ընդգրկել «Հինգերորդ դար» անվանումը, քանի որ այս հասկացողության մեջ միանում են թե՛ թարգմանիչների դարը և թե՛ նրա զարգացրած քաղաքական շարժումները։

Դիմենք այժմ այն քաղաքական հանգամանքներին, որոնց մեջ բացվում էր 5-րդ դարը և տեսնենք, թե ինչ միջավայր էր պատրաստվում ապագա դեպքերի համար։

Սահակի մահից գրեթե մի ամիս առաջ մեռավ Բահրամ Գոռը (Վռամ Ե)։ Պարսկական ավանդությունների մեջ այս թագավորը հանդես է գալիս իբրև շատ մեծ ուժի տեր մի հերոս, սաստիկ որսասեր և արկածախնդիր։ Ֆիրդուսին այս վիպական թագավորին շատ մեծ տեղ է հատկացրել իր «Շահնամե»-ի մեջ[1]։ Այսպես, ավանդությունը պատմում է, թե Բահրամ Գոռը, լոկ արկածներ որոնելու համար, մենակ ու ծածկանուն գնում է Հնդկաստան, ուր մենամարտում է մի վիթխարի փղի հետ, որ սարսափի մեջ էր պահում ամբողջ աշխարհը, սպանում է նրան և ապա ազատում է Հնդկաստանը նաև չինաց թագավորի արշավանքից։ Իրանի մասին Բահ-

---

[1] Օրմանյան, «Ազգապատում», եր. 321։

[2] Ղազար Փարպեցի. «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1904, եր. 29։

[1] „Le livre des Rois par Aboul Kasim Firdousi", trad. par Jules Mohl, Paris, 1877, t. V et VI.

րամ Գոռը կարող էր միանգամայն ապահով լինել իր երկարատև բացակայության միջոցին, որովհետև իրեն փոխանորդ էր թողել այնտեղ Միհրներսեհին, որ իր մեծ վեզիրն էր։ Այս այն Միհրներսեհն է, որ հանդէս է գալիս 5-րդ դարի պատմությունն անող հայ մատենագիրների (Ղազար Փարպեցի, Եղիշե) մոտ։ Դարձյալ պարսկական ավանդությունները Միհրներսեհ մեծ վեզիրին իր շահնշահին հավասար մի մարդ են ներկայացնում։ Միհրներսեհն արքայական ծագում ուներ և համարվում էր Դարեհ Վշնասպյա սերնդից։ Բարձր ծագման հետ նա միացնում էր և մեծ հռչակ իր խելքով և հարստությամբ։ Նրան տալիս էին **Հեզարբենդե** անունը, որովհետև ծառաների մի շատ մեծ թիվ ուներ։ Կոչվում էր նաև Հիրպատան Հիրպատ, որ նշանակում է «իմաստունների իմաստուն»։ Պետության մեջ նրա պատիվը հավասար էր թագավորի պատվին։ Երեք որդի ուներ նա, որոնք պետական բարձր պաշտոններ էին կատարում։ Առաջինը, Զարավանդ անունով, «մովպետան մովպետ» էր, այսինքն ամբողջ հոգևորականության գլուխ, և համարվում էր զրադաշտական աստվածաբանության մեջ խոշոր հեղինակություն։ Երկրորդն արքունի համարակալ էր և քարտուղար, իսկ երրորդն աչքի էր ընկնում իր քաջությամբ և սպարապետ էր պարսից բանակում[1]։ Միհրներսեհն էլ, իբրև մեծ վեզիր, բանակի գլխավոր հրամանատարն էր և հարկավոր դեպքում ինքն էր պատերազմ գնում։ Որսասեր և արկածասեր Բահրամն իր ծերունի վեզիրի ազդեցության տակ էր գտնվում և նրան էր հանձնել պետական գործերի ղեկավարությունը։ Իմանալու համար, թե ինչ տեսակ քաղաքականություն կարող է զարգացնել այնքան հռչակված մի պետական գործիչ, մենք պիտի նկատի առնենք նախ և առաջ այն, որ Միհրներսեհը մի շատ ջերմեռանդ, նույնիսկ ֆանատիկոս զրադաշտական էր։ Ավանդության պատմելով, Բահրամ Գոռը, Հնդկաստանից վերադառնալուց հետո, Միհրներսեհին պատերազմի ուղարկեց հռոմների դեմ։ Վերջացնելով երկու պետությունների միջև եղած վեճը հաշտությամբ, Միհրներսեհը մեծ պատիվներ ստացավ բյուզանդացիներից և հայրենիք վերադառնալուց հետո խնդրեց իր թագավորին արձակել իրեն ծառայությունից, որովհետև ծեր է ինքը, և թույլ տալ իր կյանքի մնացորդն անցկացնել իր հայրենի Արդեշիրխատ քաղաքում։ Այդտեղ նա չորս ավան շինեց և ամեն մեկի մեջ մի ատրուշան, մեկն իր անունով, իսկ մնացած երեքը՝ իր երեք որդիների անունով։ Ամեն մի ավանում շինեց չորս այգի և ամեն մի այգու մեջ տնկեց հազար նոճի, հազար ձիթենի ու հազար արմավենի և կտակեց այդ բոլոր այգիները ատրուշաններին[2]։

Իբրև մոլեռանդ զրադաշտական և պարսից ազնվականության բարձր ներկայացուցիչ՝ Միհրներսեհը մասնավոր ատելություն ուներ դեպի քրիստոնեությունը, նկատելով նրան Իրանի թշնամի, և այդ պատճառով աշխատում էր չեզոքացնել Պարսկաստանին հպատակ քրիստոնյա ազգությունները, թուլացնել նրանց այն աստիճան, որ նրանք չկարողանան միանալ իրար հետ կամ արևմտյան իրենց հավատակից մեծ պետության հետ ընդդեմ Պարսկաստանի։

Այս քաղաքականության տեսակետից անշուշտ շատ վտանգավոր պի-

---

[1] Փորթուգալ փաշա, «Եղիշէ», ներածություն։

[2] „Chronique de Tabari", trad. par Hermann Zotenberg. Paris, 1869, t. II, p. p. 128, 125—126.

տի նկատվեր այն հունասիրական շարժումը, որ ժողովրդականություն էր ստանում Հայաստանի մեջ Սահակ-Մաշտոցյան գործունեության հետևանքով։ Եվ անկասկած, մեծ վեզիրի միտքն էր, որ գործադրում էր նրան անպայման վստահացած որսասեր Բահրամ Գոռը, ջնջելով Արշակունյաց թագավորությունը և Լուսավորչի տան հոգևոր միապետությունը։ Եվ եթե այդ ծանր հարվածները կրելուց հետո էլ հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում իր «Թարգմանիչների դարը» շարունակելու և զարգացնելու, այդ անշուշտ այն պատճառով էր, որ Միհրներսեհն այդ ժամանակ քաշվել էր պետական գործերից, զբաղված էր իր հայրենիքում ատրուշաններ շինելու և հարստացնելու գործով։

Բահրամ Գոռին հաջորդում է նրա որդի Հազկերտ Բ-ն (438—547)։ Սա առհասարակ մի անգույն թագավոր էր, մեկն այն սովորական միջակություններից, որոնք գահի վրա մնում են լոկ ժառանգության իրավունքով։ Ֆիրդուսին հազիվ մի քանի տող է նվիրում նրան «Շահնամե»-ի մեջ, և այս հանգամանքը նրա ֆրանսիացի թարգմանիչը բացատրում է նրանով, որ Հազկերտի բնավորության մեջ չեն եղել այնպիսի գծեր, որոնք նյութ տային ժողովրդական վեպին և ավանդություններին[1]։ Ֆիրդուսին իր սակավավոր տողերի մեջ Հազկերտին ներկայացնում է իբրև փիլիսոփայաբար մտածող, որ խրատներ էր տալիս լավ մարդ լինելու համար։ «Նա կառավարեց աշխարհն արդարությամբ»,— ասում է Արևելքի մեծ բանաստեղծը[2]։ Այս վկայության համամիտ է և Տաբարին, որ նույնիսկ հավատացնում է, թե Հազկերտին անվանում էին **Բարեգութ**[3]:

Մինչդեռ այսպես են պարսից ազգային ավանդությունները, քրիստոնեական աղբյուրները և մասնավորապես հայ մատենագիրները ներկայացնում են այդ «բարեգութին» իբրև մի դաժան բռնակալի, որ հալածում էր քրիստոնյաներին։ Այս ճիշտ է, բայց այստեղ պետք է որոնել մի ուրիշին։ Եվ դարձյալ Միհրներսեհն էր։ Հազկերտը, գահ բարձրանալուն պես, բերել տվեց հայրենիքում հանգիստ վայելող ծերունուն և նրան հանձնեց մեծ վեզիրի պաշտոնը։ Այսպիսով, պարսկական արքունիքում նորից գլուխ բարձրացրեց այն խիստ ազգայնական քաղաքականությունը, որի ներկայացուցիչներն էին Շապուհ Բ-ն, Բահրամ Գոռ։ Սկզբում, քանի որ դեռ չէին պարզվել հարաբերությունները, և Միհրներսեհը գուցե դեռ չէր էլ երևացել Տիզբոնի արքունիքում, Հազկերտ Բ-ն նույնիսկ բարյացակամ վերաբերմունք ուներ դեպի քրիստոնյաները[4]։ Առանձնապես բարյացակամություն ուներ նա հայերի վերաբերմամբ, և այս հանգամանքի լավագույն ապացույցն է այն, որ նա 442 թվին, ետ կանչելով Հայաստանի մարզպան Վեհմիհրշապուհին, նրա տեղը տվեց հայ նշանավոր նախարարներից մեկին, Սյունյաց Վասակ իշխանին։ Սակայն այս բարյացակամությունը մի կարճ միջոցում տեղի տվեց մի կատաղի բարկության։ Այստեղից արդեն Հազկերտը դառնում է քրիստոնյաների, հետո և հրեաների հալածող։

Առաջին հալածանքը պայթեց 446 թվականին Պարսկաստանի քրիստոնյաների (սիրիացիների) դեմ, որոնք ապրում էին Միջագետքի քա-

---

[1] **Mohl**,—«Le livre des Rois», t. VI, p. III.

[2] Jbid. p. 66.

[3] «Chronique de Tabari", t. II, p. 127.

[4] **Labourt**—«Le christianisme dans l'Empire Perse», p. 126.

ղաքներում։ Դրանից առաջ Հազկերտը ցույց տվեց իր երկրին հատուկ բռնավորական անգթություն, սպանելով իր աղջկան, որ միևնույն ժամանակ իր կինն էլ էր, ամուսնության մի տեսակ, որ չէր դատապարտվում զրադաշտական կրոնի տեսակետից[1]։ Բայց քրիստոնյաների հալածանքների առիթներն իրենք քրիստոնյաներն էին տալիս։ Ինչպես երևում է, նրանց անհավատարմությունը բացվել էր նախ զորքի մեջ մի արշավանքի ժամանակ։ Բացվել էին և այն դավադրական հարաբերությունները, որ Պարսկաստանի քրիստոնյա եկեղեցու հոգևորականները, ինչպես և աշխարհական նշանավոր մարդիկ պահպանում էին բյուզանդական կայսրության սահմաններում ապրող հոգևորականների հետ։ Քրիստոնյաները հեռացվեցին պարսկական բանակից, իսկ մի քանի քաղաքների եպիսկոպոսները, մետրոպոլիտներն ու առաջնակարգ աշխարհականները ձերբակալվեցին և բանտարկվեցին, և որովհետև շատերը մերժեցին ուրանալ քրիստոնեությունը, ուստի և նահատակվեցին (456 թ. ամառը)։ Պարսիկ նշանավոր պաշտոնյաներից մեկն այդ նահատակությունների ժամանակ քրիստոնյա դարձավ և թագավորի հրամանով խաչ հանվեց։ Հալածանքները կրկնվեցին և հետևյալ տարին։ Այս անգամ պատճառը մի քրիստոնյա քարոզիչ էր, որ տարածել էր քրիստոնեությունը Մարաստանի և Տիգրիսի հովտում գտնվող լեռնային աշխարհում, ուր շատ հեթանոսներ կային։ Քրիստոնյա քարոզիչը հանցանք էր գործել տիրող պարսկական կրոնի դեմ, նրա հավատացյալներին էլ կրոնափոխ անելով։ Դրանց թվում էին և տեղային պետական նշանավոր պաշտոնյաները, օրինակ՝ ոստիկանության գլխավորը, զինվորական հրամանատարը։ Քարոզիչը դատապարտվեց մահվան[2]։

Այս շարժումները, գրգռելով պարսից կառավարությանն առհասարակ իր հպատակ քրիստոնյաների դեմ, անշուշտ, արձագանք էին տալիս և Հայաստանում, ուր նրանք առաջ էին բերում անբավականություն և վրդովմունք հալածանքների և հալածողների դեմ։ Թվում է, թե նույնիսկ հայերն էլ այդ ժամանակները տվել են նահատակներ հավատի համար։ Գոնե Կորյունը շատ մութ, գրեթե անհասկանալի դարձվածներով ակնարկում է, որ Մաշտոցի աշակերտներից մեկը, Հովհան անունով, հավատի համար մեծ տանջանքներ կրեց Տիզբոնում և դրա համար էլ «Խոստովանող» անունն ստացավ[3]։ Հայ մտավորականությունը, հանձինս թարգմանիչների, հակառակորդի դիրք է բռնում հալածող զրադաշտականության դեմ, և այս առիթ է տալիս Միհրներսեհին նորից ձեռք առնել հայոց հարցը, այս անգամ այն վերջնականապես լուծելու համար։

Մեր գրականությունը պահել է այդ ժամանակներին վերաբերող մի շատ թանկագին հիշատակարան, որ բացի իր գրական առաջնակարգ նշանակությունից՝ ունի իր ժամանակի մեծամեծ խորհուրդների թարգմանն ու բացատրողը լինելու բացառիկ բախտը։ Այդ ժամանակներն էր, 441—448 թվականների մեջերը[4], երբ լույս հանվեց Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» անունով փոքրիկ աշխատությունը[5], որ հիշատակեցինք վերևում։ Մենք

[1] Noeldeke — „Etudes historiques sur la Perse Ancienne", Paris, 1896, p. 162.

[2] Labourt, 126—128.

[3] Կորիւն. եր. 28։

[4] Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագրութիւն և հանդիսարան հայ կյանքի», Վենետիկ, հ. Ա, 1909—1912, էջ 560։

[5] Եզնկայ Կողբացւոյ, «Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826։

արդեն տեսանք, թե ինչ տեղ է բռնում Եզնիկը թարգմանիչների դարում և թե ինչ է ցույց տալիս նրա լեզուն։ Ավելացնենք այստեղ, որ միայն «Եղծ աղանդոց»-ն է Եզնիկի անունը կրող գրական գործը, բայց այդ էլ բավական է եղել, որ նա անկասկածորեն առաջինը լինի հայ մեծ գրողների մեջ։

Այդ աշխատությունը գրված է, ինչպես ցույց է տալիս և վերնագիրը, զանազան աղանդներ, կրոնական սիստեմներ հերքելու համար։ Եզնիկը վերցրել է իր ժամանակի աղանդներից չորսը, ուստի և նրա գործը բաժանված է չորս մասի. ա) «Եղծ աղանդոց հեթանոսացն», բ) «Եղծ քէշին Պարսից», գ) «Եղծ կրօնից Յունաց իմաստնոցն» և դ) «Եղծ աղանդոյն Մարկիոնի»։ Այսպիսի մի գործ հաջողությամբ կատարելու համար հարկավոր էր ունենալ քննադատական-վերլուծական ուժեղ կարողություն, զինված գիտության հայթայթած միջոցներով, լավատեղյակ փիլիսոփայական և աստվածաբանական տեսություններին և գրականության։ Եվ Եզնիկը հենց այդպիսի մի երևույթ է ներկայացնում մեզ, եզակի և անհամեմատելի՝ մեր ամբողջ գրականության մեջ։ Նա խտացումն էր այն բոլոր մտավոր նվաճումների, որ հայ ժողովուրդը ձեռք էր բերել արտասահմանում՝ ուսանողության միջոցով։ Եվ Եզնիկի աշխատությունն արդեն անհերքելի ապացույց էր, որ եվրոպական միտքը հաստատված է Հայաստանի հողի վրա, խոր վիհեր գոյացնելով նրա և մնացած Ասիայի միջև, որ մի ժամանակ այնքան մոտ էր նրան, այնքան հարազատ, եղբայրակից։ Հայ երկնակամարի տակ ծագում էր գիտական գրականությունը, որ բերում էր իր հետ բանականության խոսքը, բնությունը քննող ու գիտական հիմքերով լուսաբանող միտքը։ Սակայն շտապենք ասել, որ ժամանակի անխառն գիտությունը չէր, որ ներկայանում էր Եզնիկի մեջ, այլ միայն այն, ինչ ընդունել էր քրիստոնեական եկեղեցին Արևմուտքում և ինչ թույլատրելի էր մի եկեղեցականի՝ կրոնական նախապաշարմունքների և միամիտ ըմբռնումների մեջ։ Այսպես, գիտե Եզնիկը, որ բժիշկները հաստատում են, թե դևերը և սատանաները չեն հիվանդացնում մարդուն, բայց չի կարողանում անվերապահորեն ընդունել գիտության խոսքը։ Չէ՞ որ նա ավետարանի աշակերտ էր, իսկ ավետարանը քանի-քանի տեղ առասպելաբանում է, թե Հիսուսի հրաշքների հետևանքով դևեր դուրս եկան մարդկանց ներսից, որոնք և այսպիսով բժշկվեցին։ Հին և Նոր Կտակարանները Եզնիկի համար անհերքելի հեղինակություններ են և նա ներկայանում է ավելի իբրև եկեղեցու և կրոնի ջատագով։ Բայց այս պակասությունները միայն հայ Եզնիկին չէին պատկանում։ Այսպես էր և ուրիշ կերպ չէր կարող լինել քրիստոնեական գիտությունը։ Նորագույն հետազոտությունները[1] ապացուցել են, որ Եզնիկն իր բոլոր էջերում չէ ինքնուրույն, որ նա փոխառություններ արել է արևմտյան հեղինակներից, հաճախ նույնիսկ բառ առ բառ թարգմանելով, բայց երբեք իր աղբյուրը չհիշատակելով։

Սակայն և այս պակասություններով հանդերձ՝ «Եղծ աղանդոցը» հայ մտքի ամենաբարձր հուշարձաններից մեկն է, որ մեծ տպավորություն է արել իր ժամանակին, մեծ հեղինակություն եղել է և հետագա դարերում, իսկ մեր ժամանակներում եվրոպական գիտնականներն անգամ մեծ գովեստներով են խոսում այս գրքի մասին։

[1] Գ. Հ. Գալեմքերեան, Նորագույն աղբերք «Եզնկայ» («Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1893)։

«Եղծ աղանդոցի» կարևորագույն մասը երկրորդ գլուխն է, ուր Եզնիկը բոլորովին ինքնուրույն կերպով քննադատում և հերքում է պարսից «քէշը», այսինքն զրադաշտականությունը, տիրող պետության, հզոր արքայից արքաների կրոնը, որ պետական կազմակերպության խարիսխն էր և իրանականության ոգին։ Արդ՝ ի՞նչպես է նրան մոտենում Եզնիկը, այդ պետության հպատակը. ի՞նչպես է նա վերաբերվում իր արքայից արքայի սրբություն սրբոցին, այն ստացվածքին, որից վեհ բան չկար ամբողջ Սասանյան Իրանի համար։ Այդ վերաբերմունքը կատարյալ արհամարհական է, ինչպես և պետք էր սպասել մի բարձր զարգացած մտքից՝ հանդեպ զրադաշտականության պես մի շատ միամիտ նախնական կառուցվածքի։ Եզնիկն ասում է. թե չարժե նույնիսկ հերքել այդ կրոնի վարդապետությունը։ «Այսպիսի անհաւատ և դանդաչանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի. զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդստին ի նոցին բանից՝ որ ընդ միմեանս կռուին, և միմեանց հակառակ են»։ Բայց երբ այսպես է, էլ ինչո՞ւ է հերքում գրում Եզնիկը։ Այստեղ նա բերում է մի պատճառաբանություն, որ շատ խուլ կերպով ակնարկում է հենց այն ժամանակը, երբ Միհրներսեհն սկսել էր գործադրել իր քաղաքականությունը։ Հերքման պատճառն այն է, որ զրադաշտականության առաջնորդները մեծարո են երևում իրենց հնազանդվածներին և տանում են նրանց դեպի կորուստ[1]։

Այնուհետև Եզնիկը բերում է աստվածածնության հետևյալ պատկերը, որ մուծվել էր զրադաշտականության մեջ անշուշտ Սասանյանների ժամանակ։ Մինչդեռ, ասում էին, դեռ ոչինչ չկար, ո՛չ երկինք և ո՛չ երկիր, ո՛չ էլ որևէ արարած, գոյություն ուներ մեկը, որի անունն էր Զրվան։— Այս անունը թարգմանվում է «բախտ» կամ «փառք»։ Զրվանը հազար տարի «հաշտ» էր անում (զոհ էր բերում), որ գուցե իրեն մի որդի լինի, Որմիզդ անունով, որ ստեղծի երկինքն ու երկիրը և ամեն ինչ, որ գտնվում է նրանցում։ Հազար տարի հաշտ անելուց հետո նա երկմտեց և սկսեց մտածել, թե արդյոք օգուտ կլինի՞ այս զոհաբերություններից և կունենա՞ նա, Զրվանը, Որմիզդ անունով որդի, թե՞ զուր է աշխատում։ Եվ մինչդեռ նա այսպես էր մտածում, ահա Որմիզդն ու Արհմնը հղացան իրենց մոր արգանդում՝ Որմիզդը հաշտ անելուց, իսկ Արհմնը՝ երկմտելուց։ Այս իմանալով, Զրվանն ասաց, թե դրանցից ով վաղ գա իր մոտ՝ նրան թագավոր կկարգի։ Որմիզդն իմանալով հոր խորհուրդը, հայտնեց Արհմնին, ասելով. մեր հայր Զրվանը մտքի մեջ դրել է, որ ով մեզանից շուտ գնա նրա մոտ, նրան պիտի թագավորեցնի։ Արհմնը, այս լսելով, ծակեց մոր փորը և դուրս եկավ կանգնեց հոր առջև։ Զրվանը չիմացավ, թե ով է դա և հարցրեց՝ Ո՞վ ես դու։ Նա պատասխանեց. Ես քո որդին եմ։ Զրվանն ասաց. Իմ որդին անուշահոտ և լուսավոր է, իսկ դու խավարային ես և ժանտահոտ։ Մինչդեռ նրանք իրար հետ այսպես խոսում էին, Որմիզդը, ծնվելով իր ժամանակին, լուսավոր և անուշահոտ, եկավ կանգնեց Զրվանի առջև։ Զրվանը ճանաչեց, որ դա իր որդի Որմիզդն է, որի համար այնքան ժամանակ հաշտ էր արել և տալով նրան իր ձեռքում բռնած բարսումները[2], որոնցով հաշտ էր անում, ասաց. Մինչև այժմ ես եմ քեզ համար հաշտ արել, այսու-

[1] Եզնիկ, Բ, բ։

[2] Փայտե ճիպոտներ (գավազան՝ ըստ բացատրության Եզնիկի) սրբազան կրակն անշեջ պահելու համար (տե՛ս այս գործի Ա հատորը)։

հետև դու ինձ համար կանես։ Եվ երբ Զրվանն Որմզդին էր տալիս բարսումները և օրհնում էր նրան, Արհմնը մոտեցավ նրան և ասաց. Չէ՞ որ այնպես ուխտեցիր դու, թե ով իմ երկու որդիներից վաղ ինձ հասնի, նրան թագավոր կդնեմ։ Եվ Զրվանը, իր խոստումը չջրելու համար, ասում է Արհմնին. Ա՛յ սուտ և չարագործ, քեզ կտրվի թագավորությունը՝ միայն ինն հազար տարով և Որմիզդն էլ քեզ վրա թագավոր կնշանակվի. ինն հազար տարուց հետո կթագավորի Որմիզդը և ինչ ուզի անել, կանի։ Այն ժամանակ Որմիզդն ու Արհմն սկսեցին արարածներ ստեղծել։ Եվ ամեն ինչ, որ ստեղծում էր Որմիզդը, բարի էր և ուղիղ, իսկ ինչ անում էր Արհմնը՝ չար էր և ծուռ։

Ահա այս փոքրիկ, վերին աստիճանի միամիտ պատմությունը, որ համարվում է մի նախնական հովիվ ժողովրդի հասկացողություններին միայն, մանրամասն, անխնա, ոչնչացնող քննադատության է ենթարկում Եզնիկը և չի թողնում այդ կառուցվածքի մեջ քարը քարի վրա։ Ամենից առաջ նա հարց է դնում, թե ի՞նչ է հավիտենականության սկզբից գոյություն ունեցող այդ Զրվանը.— արդյոք կատարյա՞լ էր նա, թե անկատար։ Եթե ասեն, թե կատարյալ էր, այն ժամանակ ի՞նչպես կարող էր մի կատարյալ էակ ուրիշից խնդրվածք անել. ի՞նչպես կարող էր նա իր համար որդի խնդրել, որ երկինքն ու երկիրը ստեղծեր։ «Ապա եթէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա, նմա պարտ էր առնել զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առ ի ցուցանելոյ իւր բարերարութիւնն և զօրութիւն»։ Զրադաշտականներն ասում էին, թե կատարյալ էր Զրվանը և եթե հաշտ էր անում, փառքին էր անում։ Սակայն փառքն ումի՞ց էր տրվում նրան։ Եթե նա հավիտենական էր, այդ նշանակում է, որ նա ըստինքյան փառավոր էր։ Իսկ եթե նրանից բարձր էակ կար, զուր էր հազար տարի նրան հաշտ մատուցանելը, որովհետև փառքն անձնավոր բան չէ, այլ բխում է հաջողությունից, ինչպես որ անհաջողությունից բխում է թշվառությունը։ Երկուսն էլ—բախտ և թշվառություն—դիպվածական բաներ են։

Անհեթեթություն է և հազար տարիների հաշիվը։ «Զի եթէ արեգակն ու լուսին չև ևս էին լեալ, որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարգին, հազար ամն ուստի՞ երևէր. զի չէին ի միջի լուսաւորքն, որք զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին»։ Սրա պես անմտություն է և զոհաբերության խոսքը։ Եթե երկինք և երկիր դեռ չէին ստեղծված, ո՞ւր և ինչո՞վ կարելի էր հաշտ անել։ Տունկեր չկային, էլ ո՞րտեղից կարող էին լինել բարսումներ, որ բռնած ուներ Զրվանն իր ձեռքում։ Ի՞նչ էր զոհ բերում, երբ կենդանիներ դեռ չէին ստեղծվել։ «Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար, և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, և եթէ չլինիցի, և ի զուր ինչ վաստակիցեմ»։ Այս տատանումները ցույց են տալիս, թե տկար մի բան էր այդ Զրվանը, կարոտ ուրիշի օգնության և առանց գիտության։ Չարիքի պատճառը նա ինքն է և ոչ թե Արհմնը, որովհետև եթե սա երկմտած չլիներ, Արհմնը չէր լինի, որին համարում են բոլոր չարիքների արարիչ։ Երկմտելուց առաջացած երկու, իրար ծայրահեղորեն հակառակ սկզբունքները նույնպես անգիտության արդյունք են։ Երբեք միևնույն աղբյուրից երկու տեսակ բխումներ չեն դուրս գալիս, մեկը՝ քաղցր և մյուսը՝ դառն։ «Եւ ոչ ի միոջէ ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան։ Արդ եթէ քաղցր գիտեն զԶրուանն, ոչ պարտին զդառն պտուղն զԱրհմն ի նմանէ

համարել. և եթէ դառն հաշուին, չէ պատճառ զքաղցր պտուղն զՈրմիզդ ի նմանէ դնել»։ Ստեղծագործության բնական օրենքի դիմաց, որով կառավարվում է ամբողջ աշխարհը, Զրվանը մի անհնարին անկարգություն է ներկայացնում։ «Զի ոչ երբէք տեսաք,— ասում է Եզնիկը,— թէ կովք էշս ծնան, և էշքս եզինս, և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս. բայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել ի ձիոյ և յիշոյ ջորիս. և նոյնք անսերմն և անծնունդ են»։ Եթե Զրվանն իմացավ, թե երկուսը կան արգանդի մեջ, ի՞նչպես չիմացավ, որ նրանցից մեկը չար է և միջոց ձեռք չառավ նրանից ազատվելու համար։ Ոչ միայն այդ, այլ երբ չարը ծակելով արգանդը, դուրս եկավ, և հայրը տեսավ նրան խավարային և գարշահոտ, դարձյալ ոչ միայն չհեռացրեց նրան, այլև թագավորեցրեց նրան։ Ասել է նորից, թե չարագործն ինքը Զրվանն է։ Ո՞ւմ վրա թագավորեցրեց Արհմնին, եթե ոչ Որմզդի ստեղծածների վրա՝ նրանց չարչարելու համար։ Բայց կա ավելի խոշոր հակասություն էլ։ Ասում են, թե Որմզդին էլ թագավորեցրեց Արհմնի վրա։ Եթե այսպես է, ինչո՞ւ Որմիզդը թույլ է տալիս, որ Արհմնը չարչարի իր ստեղծած բարի արարածներին։ Եթե տկարությունից է, ապա ուրեմն թագավոր չէ նա և չի կարող թագավորել հետո էլ, երբ կվերջանա Արհմնի թագավորությունը։ Իսկ եթե չարակամությունից է նա թույլ տալիս չարչարել իր ստեղծածներին, նշանակում է, թե նա էլ չարի գործակից է։ Որմզդի չարակամությունն ապացուցում է և այն, որ նա էր իր եղբորը հայտնում Զրվանի դիտավորությունը։ Եթե նա արգանդի մեջ գիտեր, թե ինչ է մտածում հայրը, պիտի իմանար և այն, որ իր հետ միևնույն արգանդում գտնվող եղբայրը չար է, իրեն հակառակորդ։ Պատմելով նրան, թե հայրը մտածում է տալ թագավորությունը նրան, ով շուտ կգնա իր մոտ, Որմիզդը դրանով նպաստում էր, որ չարը թագավորի և այսպիսով չարության գործակից է դառնում։

Տարօրինակ էր և ծիծաղելի նաև այն, որ Որմիզդը հազիվ էր հազար տարիների մատաղներից հետո գոյանում, մինչդեռ Արհմնը գոյանում է մի րոպեում, երկմտության ծագելուն պես։ Զրվանն իր ձեռքում բռնած բարսումները տալիս է Որմզդին և ասում. Մինչև այժմ ես էի քեզ համար հաշտ անում, այսուհետև դու կանես ինձ համար։ Հայտնի է, որ Զրվանը մատաղ անում էր որդեծնության համար, որպեսզի աշխարհն ստեղծվի։ Իսկ ինչի՞ համար պիտի մատաղ աներ Որմիզդը։ Պարզ է, որ թե՛ հայրը և թե՛ որդին իսկական աստվածներ չէին, այլ ճանաչում էին մի ուրիշին, որ բարձր էր իրենցից և որին էլ նրանք զոհեր էին մատուցանում։

Դարձյալ դիմելով այն հարցին՝ թե կարո՞ղ են մի արմատից իրար թշնամի սկզբունքներ առաջանալ, Եզնիկը դիմում է մարդկային բնախոսության և սաղմնախոսության ապացույցներին։ Մի արգանդում, ասում է նա, չեն կարող ընդունվել երկու տարբեր ծնունդներ, ինչպես մի մարդու սերմից չեն կարող առաջանալ և՛ լավ, և՛ վատ արարածներ։ Մի կնոջ հետ շատ տղամարդիկ կարող են հաղորդակցություն ունենալ, բայց բոլորի սերմերը միևնույն արգասավորող ներգործությունը չունեն կնոջ արգանդում, այլ առաջին անգամ հաղորդակցություն ունեցած տղամարդու սերմը դուրս է մղում մյուս մնացածների սերմերը։ Հարց է ծագում այն մասին, թե Որմիզդն ու Արհմնը մայր ունեի՞ն և ի՞նչ արգանդ էր, որի մեջ նրանք գոյացան։ Մայր նրանք ունեցած չպիտի լինեին, քանի որ ասվում է, թե

Զրվանը միայն ինքն էր և բացի նրանից ուրիշ ոչինչ չկար, ո՛չ նույնիսկ երկինք և երկիր։ Այսպիսով դուրս է գալիս, թե Զրվանը միաժամանակ և՛ հայր էր, և՛ մայր։ «Մեծի ծաղու արժանի՝ եթէ ինքն հայր իցէ և ինքն մայր, և նոյն սերմնարկու և նոյն սերմնընկալ»։ Այս ծաղրին Եզնիկն ավելացնում է. «Եւ որ ևս վատթարագոյնն է, իբրև ծակեաց, ասեն, Արհմնն զորովայնն և եկն եկաց առաջի հօրն, ոչ ծանեաւ զնա հայրն։ Արդ զիա՞րդ ոչ ճանաչէր, զի ոք ուրեք չէր՝ մինչ ինքն միայն էր. ո՛չ ապաքէն յայտ էր, թէ որ առ այն եկն, մի ոք յորդոցն նորա էր. և գտանի վատթարագոյն ևս քան զվատթարն, զի նա զսա ծանեաւ և սա զնա ոչ ծանեաւ, և՛ յուրաստ էր յորդոյ անտի՝ թէ իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»։

Ապա հայ քննադատը մերկացնում էր, թե ո՛րքան անմտություն կա Արհմնի բնավորությունը որոշող պատմվածքի մեջ։ Իբր թե Արհմնը չար է ոչ թե ի բնե, այլ որովհետև այդպես է կամենում։ Նա էր, որ ստեղծեց երկնքի լուսատուները։ Տեսնելով, որ իր եղբայր Որմիզդը շատ գեղեցիկ բան է ստեղծել, բայց չգիտե, որ լույս էլ է հարկավոր աշխարհին, Արհմնը պառկում է իր մոր հետ, և ծնվում է արեգակը, ապա պառկում է իր քրոջ հետ, և ծնվում է լուսինը։ Այս ստեղծագործությունները նա պահում է մեծ գաղտնիքի մեջ. իբր հայտնի էր միայն նրա դևերին։ Բայց ահա դրանցից մեկը, Մահմի անունով, գնում է Որմզդի մոտ և բաց է անում այդ գաղտնիքը, այս պատճառով էլ մոգերը տարին երեք անգամ զոհ էին մատուցանում այդ դևին։ «Ո՜վ անմտութիւն և անհամ մորոսութիւն,— բացականչում է Եզնիկը։— Եւ այսու ոչ միայն զՈրմիզդ անմիտ առնեն, այլ և զԱրհմնն»։ Նա գտնում էր, որ այս առասպելը հնարված է, որպեսզի մարդիկ ազատ խառնվեն իրենց մայրերի և քույրերի հետ։

Մազդեզականությունը հեռավոր ապագային էր թողնում բարի սկզբունքի հաղթանակը չարի վրա։ Եվ այդ հաղթանակը տանողն ինքը Որմիզդը չպիտի լինի։ Այս աստծուն վիճակված էր մեռնել. բայց մեռնելուց առաջ նա իր սերմը թափում է մի աղբյուրի ակում։ Ժամանակին այդ սերմից պիտի հղանա մի կույս աղջիկ և ծնի մի որդի, որ և կկոտորի Արհմնի զորքերից շատերին։ Սրա դեմ Եզնիկն առարկում է ամենից առաջ, թե «ջուր՝ սերման ոչ պահիչ է, այլ կորուսիչ»։ Երկրորդ՝ «քան աղբերն զսերմնն և կենդանի տայր պահել՝ զինքն ընդէ՞ր ոչ զօրեաց պահել կենդանի»։

Բարի և չար արարածները չի կարելի տարբեր, իրար հակառակ արարիչների գործ համարել։ «Առ տխմարութեան կարծեցին՝ թէ Որմիզդն զանասունս, զչորքոտանիս և զթռչունս և զձկունս և զամենայն ինչ, որ բարի և գեղեցիկ է՝ արար. և Արհմնն զգազանս չարս և զթռչունս պիղծս և զսողունս և զօձս և զկարիճս և զամենայն վնասակար ճճիս։ Եթէ երկինք և երկիր և օդք և ջուրք Որմզդի արարածք իցեն, զիա՞րդ վնասակարքն արարեալք յԱրհմենայ ի նմին երկրի բնակիցեն և զնոյն օդս ծծիցեն, և նովին կերակրովք՝ որ յերկրէ են՝ բուծանիցին, և ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունսն սնանիցին, և իր նոյն օդս գիշակեր թռչունքն ընդ ազնուագոյն թռչունսն շրջայցեն զորս պարտ էր Որմզդի բարիոք արարածոցն սատակել և ոչ սնուցանել. քանզի նորա է երկիր և ջուրք և օդք»։ Այստեղ հայ քննադատը դնում է մի շատ հետաքրքրական հարց։ Եթե գազանները, իրենց վնասակարության պատճառով, մի չար արարչից ստեղծված պիտի

համարվեն, հարկավոր է, որ մարդն էլ ճանաչվի իբրև չար արարչից ստեղծված՝ գազաններից էլ մեծ չափով։ «Զի սոքա (մարդիկ) աւելի վնասակար են գազանացն՝ քան թէ գազանքն սոցա. զի սոքա ելեալ ի քաղաքաց և ի գիւղից՝ հետամուտք լինին կոտորելոյ զգազանս, և նոքա սրացեալք ի լերինս և յափափայս ճեպեն անկանել փախստականք. յորոց կիսոցն և մորթքն արտաքոյ ընտելութեան մարդկան են։ Նոյնպես և սողնոցն զխօշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ ղօղեն, և եթէ ի կարի նեղելոյ զնոսա մարդկան՝ մեղանչիցեն, այն մարդկան վնաս է և ոչ նոցա»։ Եվ իբրև քրիստոնյա ջատագով, մեր հեղինակը հավատացնում է, թե բոլոր կենդանիները մի բարի արարչից են ստեղծված, մի մասը՝ կարիք լցուցանելու համար, մի մասը զարդի համար, իսկ մի մասն էլ վախեցնելու համար։ Այս վերջին տեսակների միջոցով է, որ բարի արարիչն իջեցնում է մարդու հպարտությունը։ Ո՜րքան թույլ ու խեղճ են լուն, մուկը։ Բայց մարդը նրանց ջնջել, ոչնչացնել չի կարողանում, որովհետև նրանք ստեղծված են, որպեսզի մարդը տանջվի նրանցից և զգա իր տկարությունը։

Մինչև այստեղ Եզնիկի հերքումներն առարկա ունեին պարսկական պաշտամունքին միայն հատուկ անհեթեթությունները։ Բայց «Եղծ քէշին Պարսից»-ն ուներ և ավելի ընդարձակ նշանակություն այնտեղ, ուր Եզնիկի հերքումները վերաբերում էին այնպիսի նախապաշարմունքների և հայացքների, որոնք պարսիկներին չէին միայն պատկանում, այլ ամբողջ հին աշխարհին։ Այստեղ գիտնական հեղինակը հարվածում է նույնիսկ և իր սեփական ժողովրդին, ծաղրելով և ջրելով նրա հավատալիքներն էլ։ Այսպես է, օրինակ, ճակատագրականությունը, ֆատալիզմը, որ ընդհանուր հավատք էր։ Հավատում էին, որ մարդու վիճակը նախասահմանված է, որ նրա վերաբերմամբ կյանքի մեջ կատարվում է այն հրամանը, որ գրված է նրա ճակատին կամ առհասարակ տրված է այլ և այլ նշաններով։ Ահա այս թուլացնող, մարդուն ամեն տեսակ նախաձեռնությունից զրկող, նրան միանգամայն անօգնական դարձնող սկզբունքը Եզնիկը ջրում էր եռանդով, լուսավորված մարդու լայնախոհ հայացքներով. «Հրամանա՞ւ, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց»։ Այս հարցը տանում է նրան քննադատելու հին աշխարհի մեծագույն սուտ գիտությունը—աստղագիտությունը[1]։ «Մինչդեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի ոք, թագաւոր լինելոց է,— գրում է նա,— և մինչդեռ եզն է՝ և ծնանիցի ոք, հզօր և բարենշան գալոց է. և մինչ դեռ խոյն է՝ և ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է, և որպէս նայն՝ թաւ և ասուեղ է. և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի ոք, չար և մեղանչական լինելոց է։ Եւ այլքն ևս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին։ Որպէս թէ յորժամ Կռոնոսն յաստեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի. որ եղեն իսկ երկիցս, որպէս ասենն, առ Թէոդոսիւ կայսերբ. և քաղդեայքն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօթ լիցի սափասուտ արուեստգիտութիւնն։

Արդ նախ զայն ասասցեն. ո՞ եհան զայնպիսի երկրական անուանս՝ զգիշակեր և զխոտակերս յերկինս, զի պատճառք ծննդեան մարդկան լինիցին. զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել, նա ի վեր քան

[1] Աստղագիտության մասին մանրամասն տես այս գործի առաջին հատորը։

զնա՝ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ։ Արդ՝ հասարակաց մտօք հայեցեալ, տեսցուք ո՞ ի վեր իցէ, մա՞րդն՝ որ անասնոյն տիրէ, թէ անասունն՝ որ մարդոյն ի հարկի կայ. և ոչ միայն ի հարկի կայ, այլ և կերակուր նորա է։ Եւ գազանացն զկէսսն փախստականս եղեալս տեսանեմք, և զկէսսն յանտառախիտ մայրիս ամրացեալս՝ յորժամ զբարբառ միայն մարդոյն լսիցեն»։ Եվ ահա այսպիսի հպատակական դիրքի մեջ դրված անասուններն ու գազաններն ինչպես կարող են երկինք բարձրանալ և իրենց բնությունից շատ բարձր մարդկանց ծննդյան և ապագա բախտի պատճառ դառնալ։ Մանավանդ որ երկնակամարի այդ անասունները կենդանի էլ չեն։ Բայց ասում էին, թե նրանք շարժվում են երկնակամարի վրա, հետևաբար և կենդանի են։ Եվ Եզնիկը պատասխանում է այդպիսիներին. «Եթէ ամենայն ինչ որ գնայուն է՝ կենդանի իցէ, ապա և ջուրք որ գնան՝ կենդանի համարեսցին. և կրակ վասն շարժելոյն՝ կենդանի կարծեսցի... Եւ արդ որպէս ոչ ամենայն գնայուն՝ կենդանութիւն մտաւոր և բանաւոր ունի, նոյնպէս և ոչ արեգակն, և ոչ լուսին և աստեղք, և ոչ երկինք իսկ՝ ընդ որով նոքա շրջին՝ կենդանութիւն ինչ մտաւոր և բանաւոր ունին։ Այլ երկինք և երկիր անօթք ետեղակալք են հաստատեալք յարարչէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն՝ որ ի միջի նոցա է. և լուսաւորքն իբրև ճրագունք լուցեալք, վասն զխաւարն ի միջոյ մեծի տանս փարատելոյ. և են հարկաւորք բնակաւորք, հրամանաւ արարչին իւրեանց, ի վայելս ամենայն կենդանեաց. և իւրեանց ինքեանք չեն, քանզի ոչ գիտեն՝ թէ իցեն և թէ չիցեն։ Որպէս և երկինք և երկիր և ջուրք և փայտք և քարինք են վասն որոց եղենն, և իւրեանց ինքեանք չեն. քանզի ոչ գիտեն՝ եթէ ի ցեն և թէ չիցեն, այնու զի չեն մտաւորք և բանաւորք։

Դարձեալ, որպէս ասենն, թէ յորժամ առիւծն իցէ յաստեղատանն՝ թագաւոր ծնանելոց է. թէ այնպէս էր, բազում անգամ բազում թագաւորաց պարտ էր ծնանել. զի ոչ մի միայն ծնանի՝ յորժամ առիւծն յաստեղատանն իցէ, այլ բազումք։ Եւ եթէ արդարև առիւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ ոյր ուրուք և դիպէր ծնունդն մտանելոյ առիւծուն յաստեղատունն։ Իսկ եթէ տեսանեմք՝ եթէ թագաւորի որդի թագաւոր լինի, որպէս Դաւթայ որդի Սողոմոն ի հօրն աթոռ նստաւ, և նորա որդին ի նորա աթոռ. և մի ըստ միոջէ կարգ թագաւորացն Յուդայ ձգեցաւ մինչև ցՄակաբէացիսն։ Նոյնպէս զասորեստանեայցն և զբաբելացւոցն՝ որդի ի հօրէ առնուին կարգաւ զթագաւորութիւնն։ Որպէս և ի Սասանայն ումեմնէ՝ սասանականքն որդի ի հօրէ կարգաւ առին մինչև ցայսօր զթագաւորութիւնն սասանականացն. և չգտաւ առիւծն յերկինս մտեալ յաստեղատունն. զի զթագաւորութիւնն յայլ ազգ ուրեք կարասցէ փոխել յերկրին արևելից։

Եւ յայտ է՝ թէ որպէս թագաւորութեանն չէ աստղն պատճառ, նոյնպէս և ոչ զօրութեանն, և ոչ մեծատուն առնելոյ. մանաւանդ իսկ զի տեսանեմք զմեծատունս աղքատացեալս, և զաղքատս մեծացեալս։ Մի՛թէ զա՞յն ևս կարիցեն ասել՝ թէ մի և նոյն աստղ մեծութեան և աղքատութեան կարէ պատճառք լինել, և զօրութեան և տկարութեան. քանզի և զհզօրս երբեմն երբեք տկարացեալս տեսանեմք և զտկարսն զօրացեալս. և զչարսն զգօնացեալս, և զզգօնս չարացեալս։ Եւ ո՞ւր իցէ այն, զոր ասենն, եթէ որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն գրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ. և ուր հրամանքն իցեն և յումմէ

հրամանքն, ըստ այնմ և մեռանին, և վրիպել չէ հնար ի սահմանելոյ հըրամանէն։

Ո՞ հրաման տկար, և անզօր սահման, զոր և գողքն և աւազակքն կարեն խախտել, յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն յընչից և յարեէ արկանիցեն։ Եւ եթէ ի սահմանելոյ ինչ հրամանէ իրքն գործիցին, չէ պարտ՝ ոչ թագաւորաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն. որք զպատուհասն ի վերայ ածելով յայտ առնեն, թէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանացն եղանին մեղքն մեղանչականացն, այլ ի բռնաւորութենէ չարագործութեանն։

Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ՝ տեռազերծ առնել և կոտորել զմարդիկ, մի՛ զօրս ժողովեսցեն և մի՛ գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ. այլ իրաւունս տացեն՝ թէ հրամանք են աշխարհին ի հինէ կոտորել, մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն. այլ գումարելով զզօրսն և հանելով զթշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթե ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին, այլ ի բռնաւորութենէ հինին՝ որ եկեալ ժլատութեամբ կոտորէ զաշխարհ, և մերկանայ յընչից և յստացուածոց»։

Բայց այսպիսի համարձակությամբ ճակատագիր հերքող Եզնիկը հանկարծ թուլանում է այն նախապաշարմունքների առջև, որոնք կապված էին մարմնի զանազան մասերի խաղի կամ կծկումների հետ։ Այստեղ գիտնական հոգևորականը հերքում է միայն այն, թե այդ շարժումները դևերի գործն են և ապացուցում է, թե բնական ազդեցություններից են դրանք առաջանում և հատկացված են մարդու մարմնին՝ գալիք բաները գուշակելու համար։ Դևերը չեն նույնպես, որ զանազան հոգեկան երևույթներ են առաջացնում մարդու մեջ։ Հոգեկան խանգարումները հիվանդությունների հետևանքով են լինում և կախում ունեն այլևայլ պատճառներից, օրինակ՝ ուղեղի և ստամոքսի դրությունից։ Հասկանալի է և երազների նշանակությունը։ Գիտությունը փորձեր է անում բացատրելու, թե ինչից են լինում երազները, իսկ Եզնիկը հրեական սուրբ գրքի պատմվածքներից չի կարողանում ամբողջովին գիտության կողմն անցնել։ Այդ բանը նկատվում է և այնտեղ, ուր Եզնիկը փորձում է բացատրել երկնքի և երկնային մարմինների դիրքն ու շարժումները։ Առհասարակ հայ քննադատող միտքը թուլանում է ամեն անգամ, երբ աշխատում է հաշտեցնել գիտությունը հրեական ավանդությունների և կրոնական ձևակերպումների հետ։ Բայց այսպես էր ոչ միայն Եզնիկը Հայաստանում։ Այսպես է առհասարակ քրիստոնեացրած գիտությունը նույնիսկ հունական աշխարհում։

Եվ հայ ժողովրդի մեջ կատարվող մեծ մտավոր հեղաշրջման տեսակետից կարևորն այս չէ։ Այնքանն էլ, ինչ պարունակված էր «Եղծ քէշին Պարսից»-ի մեջ, մի այնպիսի մտավոր հարստություն էր, որին այլևս չհասավ Հայաստանը հետագա դարերում։ Այդ հարստության, բայց մանավանդ նրա աննման լեզվի առջև տկարանում էր զրադաշտական կրոնի ամբողջ միամիտ աստվածաբանությունը. իրերի բնական զարգացումը տանում էր հայերին դեպի ընդհարում պետական կրոնի հետ։ Եզնիկի գիրքը, որ այն ժամանակ մղվող քարոզչության մի գրավոր հիշատակարանն է, անշուշտ հայտնի դարձավ և պարսից կառավարության, որ և, իբրև ինքնապաշտպանության միջոց, առաջ քաշեց իր ազգայնամոլ կույր քաղաքականությունը, այն է՝ գործել զենքի ուժով, հարկադրել բռնի կրոնափոխություն։

Միհրներսեհն սկսում է գործել մեծ եռանդով։ Նրա պահանջները, իհարկե, հայ նախարարության և եկեղեցական դասին էին ուղղված, որոնք երկրի առաջավոր, ղեկավար տարրերն էին։ Բայց այս միջավայրում «Թարգմանիչների դարը» արդեն հաստատուն հիմքեր էր դրել, մեծամասնության գրավել։ Անհնարին էր, որ հայ լուսավորությունը կարողանար ընդգրկել պարսկական տգետ հետամնացությունը։ Մի երկիր, որ հոգեկան պահանջ էր դարձրել Եզնիկի գրականությունը, չէր կարող վախենալ հրամաններից և ենթարկվել նրանց, Սասանյան ահեղ պետությանն ամենից առաջ պատերազմ էր հայտարարում Եզնիկի փոքրիկ և ոսկեղենիկ «Եղծ աղանդոց»-ը։

Գլուխ Երկրորդ

ՎԱՐԴԱՆԱՆՔ

1. Աղբյուրներ: Հայ-պարսկական այն մեծ ընդհարումը, որ տեղի ունեցավ նախընթաց գլխում նկարագրված հանգամանքների բերմունքով և որ հայտնի է **Վարդանանց պատերազմ** անունով, հայոց պատմության մեջ ամենից շատ հռչակված, ամենից շատ ընդհանուր ազգային նվիրական հասկացողություն դարձած, ինչպես նաև ամենից խորհրդավոր փաստն է։ Ըստ երևույթին, այդ շարժումը շատ պարզ և որոշակի սկզբնավորություն, զարգացում և վախճան է ունեցել, որոնք և ամենայն մանրամասնությամբ արձանագրված են ժամանակակիցների և ականատեսների ձեռքով։ Բայց երևույթի խորհրդավորությունը հենց այն բանի մեջ է, որ իրերի ընթացքն իրականության մեջ այնպես չի տեղի ունեցել, ինչպես նա ներկայացվում է գրավոր հիշատակարանների մեջ։ Ուստի անհրաժեշտ է նախ ծանոթանալ Վարդանանց պատերազմի պատմության աղբյուրներին։

Այս պատերազմը, անկասկած, մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա և այդ պատճառով էլ անցել է հետագա սերունդներին վկայության ձևով, որի մեջ Վարդանը և նրա բոլոր գործակիցներն արդեն եկեղեցու համար նահատակված սուրբեր են։ Այս պատկերավորման շուրջն էլ կազմվում է զանազան ժողովրդական ավանդություններ, որոնք, բերանացի մշակվելուց հետո՝ մտել են գրականության մեջ։ Ընդհանուր առմամբ, Վարդանանց պատերազմի պատմության վերաբերյալ տեղեկությունները դասավորված են մեր հին մատենագրության մեջ այսպիսի կարգով.

1. Ղազար Փարպեցի, որ գրել է իր Պատմությունը 5-րդ դարի վերջում կամ 6-րդի սկզբում։ Ինքն ականատես չի եղել, բայց, ինչպես երևում է, ունեցել է գրավոր աղբյուր և լսել է պատմություններ Վարդանի ժամանակակիցներից։

2. Եղիշե վարդապետի անունով մեզ հասած մի Պատմություն, որի հեղինակը մեզ մի քանի տեղ հավատացնում է, թե եղել է իր նկարագրած դեպքերի ականատես, և այս հավաստիացումն անում է ամենադրական, անվերապահ կերպով։ Օրինակ. «Ոչ ի կարծ ընդոստուցեալ, և ոչ ի լուր դարթուցեալ. այլ ե՛ս ինքնին անձամբ անդէն ի տեղւոջն պատահեցի և տեսի, և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ՝ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազ-

մութիւն զօրացն իւրոց»[1]։ Այս հավաստիացումներից է, անշուշտ, առաջացել այն ավանդությունը, որ իբր թե Եղիշեն Վարդանի անձնական քարտուղարն էր և գրել է իր Պատմությունը Վարդանի հրամանով[2]։ Չնայած, սակայն, այս բոլոր հավաստիացումներին, ներկայումս ապացուցված է, որ Եղիշեն կամ նրա անունով գրած հեղինակը Վարդանի ժամանակակից չէր[13] և հեղինակել է իր Պատմությունը 6-րդ դարում, նույնիսկ գուցե այս դարի երկրորդ կեսում[3]։ Նրա համար գլխավոր աղբյուրներից մեկը եղել է Ղազար Փարպեցին. Եղիշեի գործն ավելի մի դյուցազներգական վեպ է, քան լուրջ մի պատմություն։ Եվ եթե ճիշտ է, թե նա ապրում էր 6-րդ դարի երկրորդ կեսում, այն ժամանակ նրա աշխատությունը, ինչպես կտեսնենք իր տեղում, գրված պիտի լինի որոշ քարոզչական նպատակով։

3. Սեբեոսը[14] (7-րդ դարի պատմագիր) Վարդանանց պատերազմի մասին շատ քիչ է խոսում, բայց հաղորդում է մի շատ կարևոր հանգամանք—այն, որ Վարդանը կոչվում է Կարմիր[4]։ Այս ենթադրել է տալիս, թե գոյություն ուներ մի ավելի հին գրավոր աղբյուր—գուցե հենց «Պատմութիւն Կարմիր Վարդանայ» անունով, որ աղբյուր է ծառայել թե Ղազար Փարպեցու և թե Եղիշեի համար[5]։

4. Հովհաննես կաթողիկոս և Թովմա Արծրունի, երկուսն էլ 9—10-րդ դարերում ապրած մատենագիրներ, թողել են Վարդանի մասին մի բոլորովին տարբեր պատմություն, որ թվում է, թե գոյություն ուներ, իբրև գրավոր աղբյուր[6], 9-րդ դարում և կազմված էր Հարավային Հայաստանում, ժողովրդական ավանդություններից։ Այս պատմությունը մի շատ հետաքրքրական փոփոխակ է (վարիանտ), որ ամենից առաջ ցույց է տալիս մի խոշոր հանգամանք—այն, որ Վարդանանց պատմությունն այնպես, ինչպես ավանդված է Ղազար Փարպեցու և Եղիշեի գործերի մեջ, առնվազն համազգային չէր և զանազան տեղերում զանազան կերպ էր պատմվում։ Հարավային Հայաստանի այս պատմվածքի մեջ, որ տալիս են Հովհաննես կաթողիկոսն ու Թովմա Արծրունին, Վարդան Մամիկոնյանը տեղացի մի գործիչ է։ Նա պարսիկների վախից փախչում ամրանում է Մոկաց աշխարհի Ջաղայլ անունով անառիկ բերդում։ Իսկ Շավասպ Արծրունի իշխանը, կամենալով տիրանալ Հայոց աշխարհին, ուրանում է քրիստոնեությունը և Վնդո անունով պարսիկ մոգպետի հետ գալիս է Հայաստան ամբողջ հայ ժողովուրդը զրադաշտական դարձնելու համար։ Տեսնելով երկրի այս տագնապը, Վարդանը մի զինակցություն է կազմում Հարավային Հայաստանի երկու լեռնային իշխանություններից, այն է՝ Ռշտունյաց և Անձևացյաց գավառներից, որոնց տերերը՝ Տաճատ և Վահրիճ միացնում են իրենց զին-

[1] Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Թէոդոսիա, 1861, էր. 20։

[2] Թովմա Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեաց», Կ. Պոլիս, 1852, էր. 89։

[3] Այս հանգամանքները պարզված են մի շարք հետազոտությունների մեջ. 1. Գ. Տեր-Պողոսյան, «Եղիշեի պատմական աղբյուրը» («Հանդէս Ամսօրեայ», 1895), «Նկատողություններ Եղիշեի Պատմության վերաբերմամբ» («Հանդէս Ամսօրեայ», 1896), 2. Գ. Խալաթյան, «Նամակ առ խմբագրութիւն» («Հանդէս Ամսօրեայ», 1895, էր. 113)։ 3. Գալուստ Տեր-Մկրտչյան, «Դավիթ Հարքացի», Վաղարշապատ, 1903, էր. 4։ 4. Բարգեն ծ. վ. Կյուլեսերյան, «Եղիշե», Վիեննա, 1909, էր. 209։ 5. Ստեփան Կանայան, «Անհայտ գավառներ հին Հայաստանի», Վաղարշապատ, 1914, էր. 43—46։

[4] «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Պետերբուրգ, 1897, էր. 22։

[5] Н. Адонц, «Марзбан Васак перед судом историков», СПБ, 1904, с. 0130.

[6] Թովմա Արծրունին հիշատակում է, իբրև աղբյուր, Աբրահամ Խոստովանողի «Համառոտութիւնը» (էր. 88)։

վորական ուժերը Վարդանի մարդկանց հետ։ Կազմվում է 1200 հոգուց բաղկացած մի խումբ, որի գլուխն անցած՝ Վարդանն ու իր դաշնակիցներն արշավում են Արտաշատի վրա։ Կռվի մեջ սպանվում է Շավասպ Արծրունին, իսկ Վնդո մոգպետը, որ մարզպան էր նշանակված, և նրա որդի Շիրոն ընկնում են Տաճատի ու Վահրիճի ձեռքը և տարվում են Դվին, ուր Շիրոյին կախեցին ատրուշանում, որ շինել էր տվել Շավասպ Արծրունին։ Ապա հալածեցին բոլոր պարսիկներին մինչև Նախճավան քաղաքը, քանդեցին ատրուշանը և նրա քարերից շինեցին մի մեծ եկեղեցի՝ Գրիգոր Լուսավորչի անունով։ Դվինը վերանորոգվում է, զարդարվում նախարարների կառուցած ապարանքներով։ Ապա մտածում են թագավորեցնել Վահան Արծրունի իշխանին, «զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախոհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ»։ Բայց նախարարների մեջ այս առիթով համաձայնություն չի կայանում։ Ուստի ամենքը գնում են Վարդան Մամիկոնյանի մոտ՝ «տալ նմա զվերակացութիւն Հայոց և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»[1]։

Հովհաննես կաթողիկոսը համառոտ պատմելով Հարավային Հայաստանի այս ավանդությունը, մտցնում է մի քանի փաստեր, որոնք գործող անձերին ուրիշ դիրքեր են տալիս։ Այսպես, Վնդոն պարսիկ մոգպետ չէ, այլ հայ նախարար Դվին քաղաքից, իսկ սրա որդին՝ Շերո (և ոչ Շիրո) մոգպետ է։ Երկուսին էլ Վարդանը սպանել է տալիս Դվինի մեջ, հորն այրելով նրա շինած ատրուշանների կրակների մեջ, իսկ որդուն կախելով փայտից նույն ատրուշանում[2]։

5. Վարդան Բարձրաբերդցին,[15] 13-րդ դարում ապրած պատմագիր, համառոտակի կրկնելով նախընթաց երկու աղբյուրների պատմածը, ավելացնում է մի մանրամասնություն, որ, անշուշտ, քաղել է իր ժամանակ գոյություն ունեցող մի գրավոր աղբյուրից, մի մանրամասնություն, որ Վարդանի վեպին հաղորդում է մեր հին ժողովրդական վեպին հարազատ գունավորում։ Նա ասում է.

«Հնազանդեցան սրբոյն Վարդանայ նախարարքն Հայոց ամենեքեան, որովք պատերազմ ընդ Պարսս զամս ինն և տասն յաղթեալ քառասուն երկու պատերազմաց մինչև ցկատարումն իւր մարտիրոսութեամբ»[3]։ Այստեղից ակնհայտ է դառնում, որ Վարդան Մամիկոնյանն էլ մտնում էր այն ավանդավեպի շրջանի (cycle) մեջ, որը 4-րդ դարից սկսած՝ ներկայացնում է մեզ երկարատև պատերազմներ հայերի և պարսիկների միջև։ Այդ վիպական զրույցների մեջ հերոսացած է հայոց կողմը, որ և միշտ հաղթում է, թեև ունենալով չնչին զինվորական ուժ, պարսից մեծամեծ բանակները։ Մամիկոնյան նախարարական տունն առանձնապես պատվավոր տեղ ունի այս դյուցազնական ավանդավեպերի մեջ[4], և նա իր այդ դիրքը պահպանեց 5-րդ, 6-րդ դարերում, նույնիսկ և 7-րդի առաջին կեսում։

Վարդան Մամիկոնյանի հետ կապված ավանդությունների աղբյուրների մասին խոսելիս՝ անհրաժեշտ է նկատի առնել, որ մեր պատմության մեջ Վարդանանց պատերազմը կրկնվել է ճիշտ 120 տարի հետո՝ 571 թվա-

[1] Թովմա Արծրունի, էր. 81—87։

[2] «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղէմ, 1867, էր. 77—78։

[3] Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էր. 75։

[4] Տե՛ս այս գործի Ա հատորը։

կանին։ Այս անգամ էլ ապստամբության գլուխ կանգնած էր Մամիկոնյան տունը և նրա ներկայացուցիչն էր դարձյալ Վարդան անունով իշխանը։ Այս ապստամբությունը 451 թ. ապստամբության հետ շատ նմանություններ ուներ, բայց և տարբերվում էր նրանից, որովհետև միջազգային երկարատև պատերազմների դուռ բաց արավ։ Ահա այս երկրորդ Վարդան Մամիկոնյանի գործերից գուցե շատերը ժողովրդական ավանդությունը խառնել է առաջին Վարդանի գործերի հետ։ Այդ խառնուրդի հետքերը նկատելի են վերևում բերված պատմվածքների մեջ։

Բայց երկրորդ կամ կրտսեր Վարդան Մամիկոնյանի ապստամբական շարժումը խոր ազդեցություն է արել առաջին կամ Կարմիր Վարդանի պատմության վրա էլ։ Եթե միանգամայն ճիշտ է, որ Եղիշեի Պատմությունը գրված է 6-րդ դարի երկրորդ կեսին, մինչև 7-րդ դարի սկիզբը, այն ժամանակ, ըստինքյան ներելի է դառնում որոնելու այդ Պատմությունը գրելու ուժեղ շարժառիթները հենց նույն այս երկրորդ Վարդանի ապստամբության մեջ։ Հարկավոր է եղել, անշուշտ, ժողովրդականացնել այդ ապստամբությունը՝ քարոզչական միջոց ընտրելով 5-րդ դարի Վարդանանց շարժումը, որ ազգի մեջ շատ մեծ հեղինակություն ուներ, իբրև նվիրական լուսապսակ անցյալ։ Ստուգապես հայտնի է, որ 571-ի ապստամբությունն էլ մեծ ոգևորություն և միակամություն էր առաջ բերել հայերի մեջ, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե նա էլ վաղօրոք լավ պատրաստված էր քարոզչությամբ, ինչպես Վարդանանց շարժումը։ Այդ քարոզչության մեջ Եղիշեի Պատմությանը վերապահված էր այն դերը, ինչ կատարել է Վարդանանց Պատերազմի պատրաստության մեջ Եզնիկ Կողբացու աշխատասիրությունը։ Հավանական է, որ մի անծանոթ, բայց տաղանդավոր հեղինակ Եղիշե անունով գրեց Վարդանանց պատերազմի կես վիպական պատմությունը, տալով նրան ծայրահեղ միակողմանի և միտումնավոր (տենդենցիոզ) բովանդակություն։ Քարոզչական նպատակների համար է, որ նա շարունակ հավատացնում է, թե ինքը ականատես է եղել հայոց ապստամբության։ 571-ին էլ Վարդան Մամիկոնյանի հակառակորդ և պարսկասեր հոսանքի գլուխ էր Սյունյաց մի իշխան։ Եվ հասկանալի է, որ Եղիշեն մռայլ ու բացասական գույները չխնայեր 5-րդ դարի Վասակ Սյունեցու համար։ Քարոզչական նպատակով էր դարձյալ, որ նա Վասակի մահը ներկայացնում էր «իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ» խոսքերով և վերջացնում էր այդ հայհոյանքն այսպիսի խրատականով. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովեսցի յետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»[1]։

Եվ ահա այս տեսակ հատկություններ ունեցող գործը, շնորհիվ նրա հեղինակի գրական անսովոր տաղանդի, ետ է մղում բոլոր մյուս աղբյուրները և դառնում է համարյա միակ անվիճելի հեղինակությունը 5-րդ դարի առաջին մեծ շարժումը հասկանալու և գնահատելու համար։ Դարերի ընթացքում ամրապնդվում էր այն հայացքը, որ Եղիշեն էր թելադրում իր միակողմանի նեղ կուսակցական գրվածքով, որ շոյում էր ժողովրդի ազգասիրական և կրոնասիրական զգացմունքները, փառաբանելով ոմանց իբրև հայրենիքի և եկեղեցու անբիծ նահատակների, իսկ ոմանց ներկայացնելով

[1] Եղիշէ, եր. 221։

իբրև ամենազզվելի դավաճանների։ Ստացվում էր այն տպավորությունը, որ Հայոց աշխարհում մարդիկ չէին կանգնած իրար դեմ, այլ հրեշտակներ և դևեր։ Դևերի գլխավորն էր Հազկերտը, որից հետո գալիս էին «դառնացեալ ծեր» Միհրներսեհը և Սյունեցի խան Վասակը։ Վերջինս մի ցած դավաճան և ուրացող էր, որ գործակիցներ ուներ ոչ միայն նախարարության, այլև հոգևորականության մեջ։ Այս դիվային կողմն էր, որ ամեն տեսակ չարիք էր նյութում Հայոց աշխարհին։ Իսկ հակառակ կողմը—«երկնային առաքինություններով լցված» հայ-քրիստոնյա կուսակցությունն էր, որի շարքերում ամեն ոք—տղամարդ, թե կին, չափահաս, թե երեխա, անմարմին էակների նմանություն էր բերում, լցված լինելով նահատակվելու և այս փուչ աշխարհից հեռանալու տենչանքով։ Ամբողջ երկիրն այս նահատակների շուրջն էր միացած։ Ղեկավարը, Վարդան Մամիկոնյան, մի սրբություն է, երկնային մի հերոս։ Ուրիշ բան չեն և նրա կողմնակիցները, մանավանդ հոգևորականները, որոնք հրդեհում են երկիրը ապստամբության կրակով և ապա գնում են Պարսկաստան դահիճների ձեռքով նահատակվելու։ Կալանավոր նախարարների և նրանց «փափկասուն տիկնանց» անօրինակ անձնազոհությունը գալիս ծածկում է «երկնային սիրո» համար կործանված երկրի ընդհանուր տեսարանը։

Սակայն այժմ Եղիշեն զրկվել է իր բացառիկ հեղինակավորության մենաշնորհից և կարող է միայն օժանդակ աղբյուրի նշանակություն ունենալ, քանի որ նա իր գործի համար օգտվել է և այնպիսի աղբյուրներից, որոնք մեզ չեն հասել և որոնց մեջ, անշուշտ, շատ են և Մամիկոնյան տան վեպի զրույցները։ Եղիշեի տեղն այժմ բռնում է Ղազար Փարպեցին, որ թեև նույնպես կուսակցական գրող է, թեև նույնպես շատ է դիմում սրբերի վկայությունների սիրած ձևերին, բայց և այնպես, ավելի մոտիկ է Վարդանանց պատերազմի ժամանակին, իր խառնվածքով ավելի պատմաբան է, ավելի հակված դեպի պատմական ճշմարտությունը, և այս հակումը նրան հաճախ տանում է դեպի այնպիսի վկայություններ, որոնք բաց են անում շատ հետաքրքրական և բնորոշ իրողություններ։ Եվ միայն այս աղբյուրին քայլ առ քայլ հետևելով է, որ կարելի է փոքրիշատե լայն և ճշտորեն լուսաբանել 5-րդ դարը։

2. Կողմեր։ Իրերի դրությամբ անխուսափելի դարձած պարսկա-հայկական ընդհարման դիմաց վճռական նշանակություն պիտի ունենար, թե ուժերի ի՛նչ փոխհարաբերություն կարող է հրապարակ բերել նախ և առաջ Հայաստանի հին իրականությունը, այն է՝ երկու հակառակ կուսակցության բաժանված նախարարությունը։ Երկրի ճակատագիրը, ինչպես ցույց տվեց մեզ ամբողջ հին պատմությունը, կախված էր այդ կուսակցությունների մրցությունից. մեկի տկարացումը կամ կատարյալ անկումը մյուսի բարձրացումն ու հաղթանակն էր առաջացնում և դրա համեմատությամբ նաև արևմտյան (հռոմեական-բյուզանդական) և արևելյան (պարսկական) քաղաքական ազդեցությունը։ 5-րդ դարի առաջին քառորդը վերջացավ Արշակունյաց թագավորության անկումով, որ պարսկասեր կուսակցության կատարյալ հաղթանակ էր և հունասեր կուսակցության կատարյալ ջախջախումը։ Սակայն հունական կուսակցությունը մի կարճ միջոցում սկսեց նորից ձեռք բերել տիրապետող դիրք։ Նրա հեղինակավոր ներկայացուցիչ Մամիկոնյան տունն ուժեղացավ Լուսավորչի տոհմից ժառանգած խոշոր կալվածներով, մի հանգամանք, որ, անկասկած, պիտի ուժեղացներ և նրա

քաղաքական դիրքը։ Այս իրողությունն արդեն ըստինքյան բավական էր, որ հուզում ու շարժում առաջացներ հայոց ավատական աշխարհում։ Բացի դրանից, հոռոմասերների ուժն էր կազմում եկեղեցական իշխանությունը, որ այնքան ազդեցիկ-հրամայողական դիրք էր բռնել հայ ժողովրդի ներքին կյանքի մեջ «թարգմանիչների դարի» միջոցով և հենվում էր երկրում տարածվող լուսավորության վրա։ Եվ բնականաբար, նորից պիտի կենտրոնանար մաքառումը երկու հակառակ կուսակցությունների միջև։ Միհրներսեհն իր քաղաքականությունն առաջ մղելու համար այնքան պարսկական բանակների և ռազմիկ փղերի վրա չէր հենվում, որքան պարսկասիրության մեջ իրական շահեր որոնող նախարարների վրա։

Առաջին անգամն է, որ պատմական տեղեկությունները դառնում են այնքան պարզ ու առատ, որ մենք կարողանում ենք տեսնել, թեև աղոտ կերպով, երկու մրցակից կողմերի դեմքերը, նրանց միջև շփումներ առաջացնող շահերն ու ձգտումները, որոնք հակադիր և տարամերժ հոսանքներ են առաջացնում 5-րդ դարի առաջին խոշոր ընդհարման կամ Վարդանանց պատերազմի նախօրյակին։ Թեև մեր մատենագիրները, ամենքն էլ կրոնավոր, հավատացնում են, թե միայն գաղափարը, միայն կրոնն էր բաժանում և թշնամության առիթներ ստեղծում երկու կողմերի միջև, բայց մենք պարզ տեսնում ենք, որ ամենից առաջ երկրային շահերն էին, որ խոսում էին և կարող էին հրամայաբար խոսել Հայաստանի իրականության մեջ։ Թագավորության վերացումը փառասիրական և տիրապետական տենչերի համար լայն ասպարեզ էր հարթել հայ կալվածատիրության մեջ և ամեն մի իշխող, բնականաբար, պիտի աշխատեր հնար եղածը ձեռք բերելու—գահերեցությունից սկսած մինչև նույնիսկ թագավորական ծիրանին։ Այս ձգտումը, կարելի է հաստատապես ասել, հատուկ էր երկու մրցող կողմերին էլ։

Դիմելով յուրաքանչյուրին առանձին-առանձին, մենք կանգ ենք առնում նախ պարսկական կուսակցության վրա, որի ուժեղ ներկայացուցիչը այժմ Հյուսիսային Հայաստանն էր տալիս իր ամենակարևոր մասերից մեկի՝ Սյունիքի նախարարական տան միջոցով։ Պարսկասիրության շատ ուժեղ օրինակներ, ինչպես գիտենք,[1] մինչև այդ տվել էր Հարավային Հայաստանը (Արծրունիների, նույնիսկ և Մամիկոնյանների տոհմը)։ Սակայն Սյունիքն այս կողմից ավելի տևական, ավելի համառ ու հուժկու պատկեր էր ներկայացնում հայ ժողովրդի պատմության մեջ։ Շատ կարևոր է, թե Վարդանանց ժամանակի և թե ապա երկար ժամանակների պարզաբանության համար որոնումներ կատարել Սյունիքի հնագույն անցյալի մեջ, որքան և նա, տարաբախտաբար, մութով ծածկված է մասնավորապես մինչև 4-րդ դարը։ Գուցե միջոցների հնար եղածին չափ լուսաբանումը կարող լինի օգնել հասկանալու համար Սյունիքի կատարած այդ դերը։

Սյունիքը, ինչպես հայտնի է, Հայկական Բարձրավանդակը, հյուսիսարևելյան ուղղությամբ եզերող լեռնային բավիղների մի ընդարձակ մասն է կազմում, Սևանա լճից մինչև Արաքսի քարավազները։ Լեռնային անհեթեթ պարավորումներն այստեղ ավելի խոր ու լավապես անջրպետված էին դարձնում գավառական առանձնացումները։ Ընդհանրապես անհյուրասեր, ժլատ բնությունը գոյության կռվի պայմաններն ավելի ևս դժնդակ է դարձ-

[1] Տե՛ս այս գործի առաջին հատորը։

նում այս բարձրությունների վրա, ուր տարվա կեսը պատկանում է ձմեռվա ձյուներին։ Ցրտահար սարահարթերը հազիվ էին կարողանում բավարարել տեղացի երկրագործների համեստ պահանջները, և միայն գետերի խոր հովիտներն են պտղավետ և արգավանդ հողեր։ Երկրի ընդհանուր կլիմայական և տեղագրական պայմաններն ավելի նպաստավոր են անասնապահության համար, որ զարգացնում են հովվական արկածալից կենցաղը, այն է՝ մշտական հարձակողական և պաշտպանողական կռվի դաժան սկզբունքները։ Մարդը, բնությունից երես չառած, ամբողջապես իր ջղերի տոկունությանը, իր սրտի ամրությանն է թողնված՝ իր համար ապրուստ ճարելու ամենօրյա հոգսի մեջ։ Դեռ Ուրարտական թագավորության ժամանակ Սյունիքի ազգաբնակությունը հանդես է գալիս իբրև առանձին ցեղային կազմակերպությունների մի ընդհանուր խմբավորում, որ ունի իր խմբական «Սիունիա» անունը։ Այս Սիունիան բաժանված է բազմաթիվ գավառների, որոնք կրում են իրենց առանձին անունները և առանձին-առանձին իշխանություններ են ներկայացնում[1]։ Եվ այս ցույց է տալիս, թե այդ լեռնաստանն էլ, Հայաստանի բոլոր մյուս կողմերի նման, ցեղական իշխանությունների մի դաշնակցություն էր կազմում...

Դառնալով Հայաստանի մի մասը, Սյունիքն իր կողմից մտցնում էր պետական կյանքի մեջ իր ուժեղ ցեղային և տեղագրական անհատականությունը։ Եվ մենք տեսնում ենք, որ հենց սկզբից ևեթ նրա դիրքը՝ իբրև իր շահերով և պահանջներով պետական կյանքի մեջ միջամտողի դիրք՝ շատ ամուր էր և հեղինակավոր։ Պատճառն ամենից առաջ, իհարկե, այն էր, որ Սյունիքը շատ մոտիկ էր Հայաստանի քաղաքական և կուլտուրական սիրտը կազմող Արարատյան դաշտին։ Եթե այդ դաշտում կարող էին տիրող հանդիսանալ, իրենց համար բախտ կերտել Մամիկոնյաններն իրենց հեռավոր Տարոնից, Բագրատունիներն իրենց ավելի ևս հեռավոր Սպերից, նույն ձգտումն ավելի մեծ հեշտությամբ կարող էին իրագործել սյունեցիները, որոնք իրենց Գեղարքունի և Վայոց Ձոր գավառների լեռների գլխից կախված էին հայոց մայրաքաղաքների վրա։ Այս մերձավորությունը, այս տիրապետող դիրքը, այսպես ասած, պարտավորեցնում էին սյունեցիներին ուժեղ ձեռք ունենալ հայոց մայրաքաղաքներում, իրենց պետական բաժինը վերցնելու համար։ Այդ մայրաքաղաքներում, լիներ դա Արտաշատը, Դվինը թե Վաղարշապատը, ավատական կարգը նվիրագործել էր այն դրությունը, որ նախարարական տոհմերից մեկը պիտի լիներ տիրապետողը։ Եվ մրցությունն այդ տիրապետության համար միշտ կար։ Սյունեցիները միայն մեկն էին մրցողներից։

Եվ առաջին անգամ Սյունյաց աշխարհը պատմության ասպարեզն է իջնում գահերեցության սաստիկ պահանջներով։ Ուզում է նա գահերեց լինել ոչ միայն աշխարհական, այլև կրոնական իշխանության աստիճաններում, գուցե հենվելով իր հին իրավունքների վրա։ Կրոնական աշխարհում գահերեցական ձգտումը հեշտ իրագործվեց և Սյունյաց եպիսկոպոսությունը 4-րդ դարից ի վեր առաջնություն ստացավ (մետրոպոլիտություն)։ Այնքան հեշտ չէր աշխարհական գահերեցությունը, ուստի և նա դարձավ երկարատև մրցությունների պատճառ, հաղորդելով Սյունյաց նախարարության բոլորովին առանձնակի մի դեր հայոց պատմության մեջ։

[1] Տե՛ս այս գործի առաջին հատորը։

Այս իշխանապետական պայքարի մեջ շատ բնորոշ է այն հանգամանքը, որ Սյունիքը շատ մոտ է պարսից արքունիքին։ Պարսկական ազդեցության ամենազորեղ ներկայացուցիչն էր Սյունյաց ավատական տունը երկար ժամանակների ընթացքում։ Առաջին խոշոր օրինակը տալիս է մեզ 4-րդ դարում Անդովկ կամ Անդոկ իշխանը, որ իր Փառանձեմ աղջկա միջոցով խնամիացել էր հայ Արշակունիների հետ։ Այս մերձավոր ազգակցությունը, սակայն, չկարողացավ Անդոկի համար մեծ դիրք ստեղծել հայոց արքունիքում։ Թեև Արշակ Բ.-ն նրա փեսան էր, բայց թագավորից հետո առաջին մարդը Վասակ Մամիկոնյանը մնաց։ Եվ Անդոկին մենք տեսնում ենք իր հայրենիքը թողած՝ Շապուհի պալատում ապրելիս, գուցե հենց նրա միջոցով Հայաստանում տիրապետական բարձր դիրքի հասնելու համար։ Թե ո՛րքան մեծ էր սյունեցու պատվասիրությունը, թե ի՛նչ նշանակություն ուներ սյունեցու համար աստիճանը, բարձը, ցույց է տալիս այն աներևակայելի հանդուգն գործը, որ Անդոկը կատարեց Տիզբոնում և որ պատմում է, քաղելով հին տոհմային ավանդություններից, Սյունիքի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը 13-րդ դարի վերջում։ Շապուհը, ասում է նա, մեծ ճաշ է տալիս իր ավագանուն և այդտեղ Անդոկի համար նշանակում է նստելու մի ստորադաս տեղ։ Խորապես վիրավորվում է Սյունյաց նահապետը, մինչ այն աստիճան, որ մի պատառ հաց էլ չի դնում իր բերանում։ Շապուհն ուշադրություն չի դարձնում այդ հանգամանքի վրա, թեև սպասավորներն իմաց են տալիս, թե որքան դժգոհ ու խռոված է Սյունյաց տերը։ Անդոկը վրեժը հանում է Շապուհից, երբ նա պարսկական բանակի գլուխն անցած, գնում է պատերազմելու խազիրների դեմ, որոնք անցել էին Կովկասյան լեռնաշղթայի անցքը։ Տիզբոնը մնացել էր անպաշտպան։ Օգտվելով այդ հանգամանքից, իր 1700 քաջազեն և քաջաձի մարդկանց գլուխն անցած հանկարծակի ներս է խուժում Տիզբոն մայրաքաղաքը, ասելով, թե Շապուհ թագավորի մոտ է եկել և անակնկալ հարձակվում, մեծ թալան է կատարում քաղաքի մեջ և մանավանդ Շապուհի պալատում, որի հարստությունները բեռներով տանում է Սյունիք։

Սյունեցուն հանդգնություն տվողն ամենից շատ նրա երկրի բնությունն է, որ կերտել է լեռների մեջ բազմաթիվ անառիկ բերդեր, «որ ի մարդկան հնարից հեռացեալ են,— ասում է Ստեփանոս Օրբելյանը,— բայց միայն թէ Տէր մատնեսցէ»։ Դրանց մեջ առաջինն էր Բաղաբերդը, ուր և ամրացավ Անդոկն իր թալանած արքայական գանձերի հետ, նախապես հրաման հանելով, որ ամբողջ Սյունիքը դատարկվի և ժողովուրդը ապաստանվի լեռներում։ Շապուհը, խազիրների արշավանքից վերադառնալով, պաշարում է Բաղաբերդը՝ Անդոկին պատժելու համար, բայց վերցնել այդ ամրությունը չի կարողանում։ Պաշարվածներն ահագին քարեր գլորելով կոտորում են գոռոզ և բազմահաղթ արքայից արքայի շատ զորքերը։ Երեք անգամ, ասում է ավանդությունը, Շապուհն ահագին բանակներ բերել տվեց Պարսկաստանից, բայց իզուր. Բաղաբերդը մնաց անմատչելի, իսկ նրա գլխից գլորվող մեծամեծ քարերով շատ ջարդեր եղան պարսկական բանակում։ Վերջապես զորքի հրամանատարները խնդրեցին արքայից արքային դադարեցնել կռիվները, որոնք միայն կոտորած են պատճառում պարսիկներին, և պաշարման փոխարեն՝ ասպատակել և ավերել երկիրը։ Բայց Անդոկն էլ հարմար առիթ է գտնում իր անառիկ բերդից դուրս գալու հա-

մար։ Եվ վերցնելով բոլոր գանձերը, փախչում է Բյուզանդիա, Թեոդոս կայսրի մոտ, ուր և մեռնում է, մի առ ժամանակ անցնելուց հետո[1]։

Անդոկը սյունեցու բնության և բնավորության ամենացայտուն խտացումն է։ Եվ հասկանալի է, թե ինչ պիտի լիներ այդ իշխանի սերունդը։ Որդին՝ Բաբիկը, արտասովոր քաջության տեր մի մարդ, չկարողացավ ապրել առանց հայրենիքի, օտարության մեջ, և գնաց Պարսից արքունիքը, ուր, չհայտնելով իր ով լինելը, սպասում էր հարմար առիթի՝ արքայից արքային մի նշանավոր ծառայություն մատուցելու և դրանով իր հոր հանցանքը ջնջելու համար։ Նշանակում է, որ Բաբիկն իր հոր չափով ընդունակ էր հանդուգն հղացումների։ Առիթ ընծայում է հոնների մի արշավանքը։ Բաբիկը մենամարտում է նրանց մի վիթխարի և անհեթեթ հսկա առաջնորդի հետ, սպանում նրան և այսպիսով ազատում է երկիրը մեծ վտանգից։ Ի վարձատրություն այդ խոշոր քաջագործության՝ Շապուհ թագավորը վերադարձնում է նրան հայրենի իշխանությունը, և նա հաստատվելով Սյունիքում, վերանորոգում ու շինում է նրան և կառավարում ամբողջ 21 տարի, մինչև իր մահը։

Այս Բաբիկի որդին էր Վասակը, որ ծնվել էր հավանորեն 387 թվին[2], իր պապից նա լիուլի չափերով ժառանգել էր և՛ խիզախ հանդգնություն, և՛ տոհմային պատվասիրություն, և՛ անձնական քաջություն։ Այս հատկությունները ամրացրին նրա մեջ զրկանքներով լի մանկությունն ու պատանեկությունը։ Հայրը, չկարողանալով վերջնականապես ազատվել պարսկական կասկածամիտ վերաբերմունքից դեպի իրեն, ստիպված եղավ Վասակին 10—11 տարեկան հասակում ուղարկել Պարսից արքունիքը, ուր նա ապրում էր անշուշտ իբրև պատանդ։ Պարսկական դաստիարակությունը շատ չփոփոխեց սյունեցի երեխային, մանավանդ չկարողացավ խլել նրա հոգուց դարերով ժառանգված գլխավոր ստացվածքը—լեռնցու ինքնասիրությունը։ Թագավորում էր Տիզբոնում Վռամը։ Բաբիկ իշխանը մեռավ Սյունիքում։ Լուրը Տիզբոն է տանում սենեկապետ Սամ Գնթունին։ Վռամը վճռեց Վասակին ուղարկել հայրենիք՝ հորը հաջորդելու համար։ Երբ Սամը գնում է Վասակին աչքալույս տալու, Վասակը ոչ միայն չի ուրախանում, այլև ցուցադրում է իր հպարտ տոհմային ինքնասիրությունը, հայտնելով, թե Սյունյաց իշխանությունը իր հայրական ժառանգությունն է, և Վռամը չպիտի լինի նրան շնորհողը։ Սամն շտապում է հաղորդել Վռամին Վասակի արտասանած արհամարհական խոսքերը, ուստի արքայից արքան այլևս Վասակին չի ուղարկում Սյունիք, այլ թողնելով նրան արքունիքում, նրա տոհմային ժառանգությունը տալիս է նույն Սամ Գնթունուն։ Թեև այս օտարականը մի տարի է միայն վայելում իր քսության արդյունքը և մեռնում է թունավորվածի մահով, բայց նորից Վասակը չէ Սյունյաց նահապետությունն ստանում, այլ նրա հորեղբայր Վաղինակը, ինչպես և սահմանում էր հին նախարարական ժառանգական կարգը։ Այս մի դաս էր չափազանց հպարտ և ինքնասեր երիտասարդի համար։ Ակամա նա ստիպված է լինում տոկալ, համբերել, քաղաքագիտություն ցույց տալ անխորտակելի հանգամանքների առջև։ Վաղինակի իշխանությունը, որքան և օրինա-

[1] «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի արքեպիսկոպոսի Օրբելեան», Փարիզ, 1859, հ. Ա, գլ. Գ—Ժ։

[2] Ակինեան, «Եղիշէ», եր. 255—256։

կան, խորապես խոցում էր նրա ինքնասիրությունը, բայց և այդպես, կարողացավ տոկալ ու դիմանալ ամբողջ ինը տարի։ Այս ժամանակամիջոցը վճռական հեղաշրջումների մի շրջան էր նրա բնավորության մեջ։ Անդոկը տոկալ ու համբերել չգիտեր, իսկ նրա թոռին սովորեցրին այդ բանին։ Լեռնցու շիտակությունն ու պարզամտությունը տեղի էին տալիս Պարսից արքունիքի սնուցած քաղաքագիտական առաքինություններին—ճկուն ու գալարուն միտք, հաղթանակներ վաստակելու ճարպկություն։ Այստեղ էր, որ նա սովորեց ամեն միջոց սուրբ համարել՝ նպատակին հասնելու համար։ Այստեղ նա սովորեց ոչնչացնել, ինչ գնով էլ լինի, ամեն մի խոչընդոտ, որ կանգնում էր նրա առջև։ Եղիշեն հավաստացնում է, թե նա, ամբաստանություն բարդելով իր հորեղբայր Վաղինակի վրա, սպանել տվեց նրան՝ և այս ոճիրն արքունիքին օգտակար մի բան ներկայացնելով («քրպիկար յարքունիս»),[1] իբրև վարձատրություն ստացավ իր տենչացած իշխանությունը։ Այս առաջին քայլն էր, որ ազատում էր պատվասեր լեռնցի երիտասարդին գերությունից և վերադարձնում էր նրան իր սիրած հայրենիքը, իր սիրած իշխանության։ Վաղինակն ուներ երկու որդի—Բաբկեն և Բակուր։ Իրենց հոր արյան և իրենց ժառանգության հափշտակման վրեժխնդիր՝ նրանք դառնում են Վասակի թշնամիները և Վարդանի կողմնակիցները։

Սյունյաց նահապետությանը Վասակը տիրանում է դեռ շատ երիտասարդ հասակում, ուստի և Մովսես Խորենացին անվանում է նրան «Մանուկն Վասակի Սիւնեաց տէր»[2]։ Իբրև երկրի իշխան՝ Վասակը մեկն էր Մաշտոցի եռանդոտ օգնականներից Հայոց երկրում լուսավորություն տարածելու համար և աջակցում էր Մաշտոցին Սյունիքում դպրոցներ բաց անելիս։ Կորյունը խոսում է նրա մասին մեծ հրճվանքով. «Յորում ժամանակի,— ասում է նա,— պարգևեալ յԱստուծոյ հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիւսական Վասակ. այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրև որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին, վայելչութեան. մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր»[3]։ Այդ վարչական գեղեցիկ համբավն էլ, երևի, պատճառ դարձավ, որ Վասակը, չնայած իր երիտասարդ հասակին, նշանակվեց արքայից արքայի կողմից Վրաստանի մարզպան։ Այստեղ նա, ավելի ևս միջոցներ գտնելով իր փառասիրական տենչերը զարգացնելու, գաղտնի հարաբերություններ է սկսում կովկասյան լեռնաբնակ ցեղերի հետ։ Մի քանի աղոտ ակնարկներ թույլ են տալիս ենթադրելու, որ նա փորձում էր Բաղասական թագավորի հետ միասին ապստամբություն կազմակերպել արքայից արքայի դեմ, որի հետևանքը պիտի լիներ Սյունյաց երկրից կազմված մի թագավորություն։ Սակայն Բաղասական թագավորի դիտավորությունը բացվեց և նա սպանվեց արքայից արքայի հրամանով[4]։ Վասակը մի հասարակ կասկածի տակ անգամ չընկավ, այնքան վարպետորեն էր տարել իր այս ծայրահեղորեն հանդուգն ձեռնարկությունը։ Պարսից արքունիքը ոչ միայն դատապարտելի բան

[1] Միf. փաշա Փօրբուզալ, «Եղիշէ», եր. 389։

[2] Խorեն, Գ, ծդ։

[3] Փօրբուզալ փաշա, «Եղիշէ», եր. 41։

[4] Անդ, եր. 41։

չնկատեց իր մարզպանի վրա, այլև գոհ մնալով նրա ծառայությունից, ավելի բարձր պաշտոնի կանչեց, տալով նրան Հայաստանի մարզպանությունը։

Այս մեծ ուշադրությունն ավելի ևս խրախուսեց փառատենչ սյունեցու ձգտումները։ Հայաստանի մարզպանից մինչև Հայաստանի թագավորությունը մի քայլ էր մնում և Վասակի պես մի բնավորություն չէր կարող արհամարհել այդ հնարավորությունը։ Հայ երկիրը նոր էր կորցրել իր թագը, և նրա մեջ շատ շատերն էին աչք դրած, թե իրենք կլինեն հայ Արշակունիների ժառանգները։ Վերևում մենք Թովմա Արծրունու պատմածից տեսանք, որ Հայաստանում թագավորել ուզում էր և Վահան Արծրունին և նույն այդ ցանկությունը խորթ չէր Վարդան Մամիկոնյանին։ Անբնական բան չկար, որ թագավորելու տենչը մեծ էր Վասակ Սյունեցու մեջ։ Նրա բնավորությունը, նրա ամբողջ անցյալը միանգամայն հասկանալի են դարձնում նրա մեջ վառված իշխանապետական ձգտումը, որի համար նա կարող էր նույնիսկ դավադրություններ սարքել։

Այժմ նա սկսեց գործել ուրիշ ուղղությամբ, այն է՝ պարսկական քաղաքականության մեջ նեցուկներ որոնելով։ Հարկավոր էր նրան հարստություն դիզել, և ահա մարզպանական իշխանությունը նրան հնարավորություն է տալիս գանձ հավաքելու և հայ ժողովրդից։ Հարկավոր էր և մի երկրորդ կարևոր միջոց—հավատարիմ կողմնակիցներ գտնել նախարարների մեջ, այդ էլ հաջողեցնելու համար պատրաստ կար պարսկական քաղաքականությունը, որ առանձնապես հետևողական կերպով գործադրում էր Միհրներսեհի պես պետական հմուտ գործիչը։ Բոլոր ավատական երկրներում, սկսած ամենահին ժամանակներից, կիսանկախ հողատեր ազնվականների մեջ ամենաուժեղ և իրական արժեքը ներկայացրել է հողը և նրա հետ կապված պատիվը։ Թագավորները հենց այդ ուժի միջոցով էին ազդում տեղական հզոր իշխանապետությունների վրա։ Այս կերպով էր, որ Հայաստանի համար մշտապես մրցող արևմտյան և արևելյան մեծ պետությունները իրենց շահերին նվիրված կուսակցություններ էին կազմում հայ նախարարությունների մեջ։ Եղիշեն մանրամասն նկարագրում է, թե ինչպես էր սնուցվում պարսկական կուսակցությունը Հայաստանի մեջ։ «Պատրէր,— ասում է նա Հազկերտի մասին,— զոմանս ի նոցանէ (նախարարներից) ոսկւով և արծաթով, և զբազումս այլով ևս առատ պարգևօք. իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք։ Եւ այլ ևս սնոտի յոյս ոգւոց առաջի դնէր. և այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ»[1]։ Այս ակնարկից երևում է, որ պարսկական քաղաքականությունը նույնիսկ խրախուսում էր, որ նախարարների մեջ կազմվի թագավոր դառնալու ակնկալություն։ Մի ուրիշ տեղ նույն աղբյուրը վերադառնում է այդ միևնույն դրության. «Հեղոյր արկանէր (Հազկերտը) առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահսն նորոգէր, յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն։ Եւ անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միում միում նոցա յարքունուստ շնորհէր. սիրելիս և բարեկամս կարդայր զնոսա»[2]։

Ահա այսպես էին մրցակցական, շահի, նախանձի շարժումներ ստեղծ-

[1] Եղիշէ, եր. 22։

[2] Անդ, եր. 75։

վում հայ ավատական իրականության մեջ։ Այս հողերն ու ավանները, այս պատիվներն ու բարձերն էին հայ նախարարներին ավելի պարզ հասկանալի և հեշտ յուրացնելի մնում, քան կրոնի, քաղաքակրթության գերազանցության հարցերը։ Վասակը, իբրև երկրի կառավարության գլուխ, պարսկական այս քաղաքականության գործիքն էր և գործադրողը։ Եղիշեն ասում է, թե այդ քաղաքականությունը բաժանում էր որդուն հորից։ Եվ այս ճիշտ է։ Եթե համեմատենք երկու հակառակ կուսակցությունների բաժանված նախարարությունների ցանկերը, որ բերում են Ղազար Փարպեցին և Եղիշեն, կգտնենք յոթը նախարարություններ, որոնք թե Վասակի կողմն էին և թե Վարդանի[1]։ Տոհմերը բաժանվել էին, իրար հակառակ էին գնում։ Եթե Ռշտունյաց կամ Խորխոռունյաց տոհմի մի մասը հարած էր Վասակին, իսկ մյուս մասը՝ Մամիկոնյաններին, այս պարզապես ցույց է տալիս, որ միևնույն տոհմի իշխողները ստացել էին կամ պիտի ստանային պարսից կառավարությունից ավելի պատիվ և կալված, և այս ի հաշիվ տոհմի մյուս մասի, տոհմակից մյուս իշխանի։ Այնպիսի միջոցներով էր ստեղծվում այն երկպառակված դրությունը, որ նույն Եղիշեն ներկայացնում է այսպիսի խոսքերով. «Ջնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»[2]։

Մի երկու խոշոր փաստ ցույց են տալիս, թե ինչ հարաբերություններից էին ծնվում թշնամական տրամադրությունները։ Վահան Ամատունի նախարարը, որ, ինչպես տեսանք, Օշական բերդի տերն էր, Մաշտոցի աշակերտը և նշանավոր դեր էր կատարում իբրև Հայաստանի հազարապետ, սաստիկ թշնամացած էր Վասակ Սյունեցու հետ[3] և այս հավանորեն այն պատճառով, որ Վասակի առաջադրություններով էր, որ նա արձակվեց հազարապետի պաշտոնից և նրա տեղ նշանակվեց մի պարսիկ[4]։ Ամատունին Մամիկոնյան կուսակցության ամենաուժեղ ներկայացուցիչներից մեկն էր, և Վասակին ձեռնտու չէր ազատվել այդպիսի մի մարդու մրցակցությունից պաշտոնական աշխարհում։ Սակայն այսպիսի գործողությամբ զրկանք կրողը Հայոց երկիրն էր, որի համար Վահանը «հայր վերակացու» էր։ Բացի դրանից՝ Վահանը թշնամացավ մարզպանի հետ ավելի մեծ չափերով և նրա վերաբերմամբ լցվեց անողոք վրիժառության զգացմունքով, և այս, իհարկե, դարձյալ վնասակար էր երկրի համար։ Մի ուրիշ օրինակ էլ տալիս էր Բագրատունյաց նշանավոր տոհմը։ Նա ամբողջովին Վասակ մարզպանի կողմն էր, որովհետև Խոսրով թագավորի ժամանակ, ինչպես գիտենք[5], սպարապետությունն անցել էր Սահակ Բագրատունուն, բայց երբ սա մեռավ, այդ պաշտոնը նրա ժառանգներին չանցավ, քանի որ Սահակ Պարթևի միջնորդությամբ նորից Մամիկոնյան տոհմն էր, որ ստացավ սպարապետությունը։ Այս հանգամանքը դժգոհություն էր հարուցել, որ Վարդան Մամիկոնյանը մի ժամանակ ապահովություն որոնել էր՝ Մոկաց աշխարհի ամուր տեղերը փախչելով[6]։

Այսպես են մեզ հասած փաստերը ներկայացնում Հայաստանի մեջ

---

[1] Համ. Եղիշեի ցանկերը, եր. 142, 154, 188, 310։
[2] Եղիշէ, եր. 31։
[3] Ղազար Փարպեցի, եր. 60։
[4] Միք. փ. Փորթուգալ, «Եղիշէ», եր. 53։
[5] Տե՛ս այս գործի Ա հատորը։
[6] Թովմա Արծրունի, եր. 82։

պայքարող կողմերից մեկը, ուժեղը և նախահարձակը։ Նրա դիմաց կանգնած էր Մամիկոնյան իրականությունը, որ մի դարից ավելի իր բացարձակ ազդեցության տակ էր պահել հայ երկիրը և հաղորդել էր նրա քաղաքական և կուլտուրական կյանքին իր ինքնուրույն գույնն ու բովանդակությունը։ Նրա վրա էր այժմ արշավում հյուսիսային լեռնական խրոխտ ու դաժան իրականությունը, ձգտելով խլել նրա գերագահությունը, բռնել նրա տեղը և թագավորական թագ ստեղծել։ Վասակն այդ սյունական հախուռն արշավանքի առաջին ղեկավարն էր։ Նրա սկսածը երկար ժամանակ շարունակեցին նրա հաջորդները։ Սյունիքը շարունակ ներկայանում էր հարավային Հայաստանի միության հակառակորդ և սաստիկ պարսկասեր. մինչև որ 6-րդ դարի վերջին քառորդում Վահան իշխանը բոլորովին անջատվեց Հայաստանից, Սյունյաց դիվանը տեղափոխեց Փայտակարան, իսկ վարչական կենտրոն, որի հետ այնուհետև պիտի հարաբերություններ ունենար Սյունիքը, ընտրվեց Ատրպատականի Շահրմար քաղաքը, «զի,— ասում է պատմիչը,— մի՛ ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա»[1]։

Մենք արդեն մանրամասն ծանոթ ենք Սյունիքին հակադրվող Մամիկոնյան իրականությանը[2]։ Նա մարմնացնում էր նոր, այսինքն քրիստոնյա Հայաստանի ամբողջ կուլտուրան։ Բավական է ասել, որ Տարոնը, նրա հայրենիքը, կոչվում էր «Տուն Հայոց»[3], և այս միանգամայն իրավացի կերպով, եթե աչքի առաջ ունենանք այն խոշոր ազգային դերը, որ կատարել է այդ երկիրն ամենահին դարերից, նախ իբրև ազգային պաշտամունքի աշխարհահռչակ կենտրոն հեթանոսության ժամանակ և ապա իբրև քրիստոնեության, ազգային դպրության և լուսավորության օրրան։ Հյուսիսային մեծ, բայց դեռ չկարգավորված, դեռ լուսավորության ու հայության կաղապարներով չտոգորված լեռնաստանի հետ ընդհարվելիս՝ Մամիկոնյան իրականությունը դարձյալ հայության գործն էր պաշտպանում։ Վարդան Մամիկոնյանը, իբրև այդ իրականության ղեկավար-ներկայացուցիչ, արդեն Վասակի պես մի բարդ բնավորություն, մի ուժեղ և ինքնուրույն անհատականություն չէր։ Նրան փառաբանողները նրան վերագրում են երկու արժանիք—քաջություն և առաքինություն։ Քաջություն Վարդանը ցույց է տվել պարսից զորքերի շարքերում, Հայաստանի սահմաններից շատ հեռու, գլխավորապես Իրանի հյուսիս-արևելյան մասերում, ուր Հազկերտը երկար տարիներ պատերազմում էր հեփթաղների և այլ ցեղերի դեմ։ Այսպես, Վարդանի քաջություններին վկա էր պարսկական բանակը Մարվիռոտի (այժմյան Մերվ քաղաքի գետը) մոտ։ Հազկերտ թագավորը անգամ անձամբ ճանաչում էր Վարդանին իբրև քաջ զորավարի։ Բացի այսքան քաջ, Վարդանը շատ ենթարկվող բնավորություն ուներ և վճռական րոպեին նույնիսկ թուլամտություն էր ցույց տալիս։ Գուցե այս հանգամանքի մեջ մեծ դեր է կատարում այն, որ ամբողջ նախարարական կազմի մեջ աչքի ընկնող բացառություններից մեկն էր կազմում Վարդանը իբրև լավ գրագետ, ուսում առած մարդ։ Նա շատ լավ ծանոթ էր եկեղեցական գրականության, առավելապես, իհարկե, ս. Գրքին, և նրան շատ անգամ կարելի է տեսնել ս. Գրքի վկայություններով դատողի ու ղեկավարվողի, մինչև իսկ քարոզություն անողի, դերում։ Այս կողմից

---

[1] Սեբէոս, «Պատմ. ի Հերակլն», եր. 26։
[2] «Հայ. պատմ.», հատ. Ա, Ե, գլ. 4 և 5։
[3] Թովմա Արծրունի, եր. 265։

նա Սահակ Պարթևի արժանավոր և գիտակից ժառանգն էր։ Նրան եկեղեցական գրողները ներկայացնում են իբրև հավատքի համար նահատակվելու և երկնային փառքը ժառանգելու մեծ տենչանքով լցված մի անձնավորություն և հենց այս անզուսպ ձգտումով էլ բացատրում են նրա գործած ճակատագրական սխալները։ Այս, իհարկե, շատ մեծ չափով վկայաբանական պաճուճանք է։ Բայց առհասարակ հավաստի է, որ Վարդանը, իբրև Մամիկոնյան, հեշտ ոգևորվող մի բնավորություն էր, դաստիարակված քրիստոնեական կարգապահության խիստ ոգով։ Ուրիշ խոսքով՝ նա մի լավ հայ քրիստոնյա էր, որ հավատարիմ մնալով իր բուն տոհմի և ստացած ժառանգության ավանդություններին, փորձության րոպեին կարող էր բարձրանալ մինչև կատարյալ ինքնազոհություն։

Վարդանի կողմնակից նախարարների թիվը գրեթե կրկնակի շատ էր Վասակի կողմնակիցներից։ Այս կողմնակիցների մեջ ամենից շատ աչքի էր ընկնում Վահան Ամատունին, Վարդանի և նրա եղբոր դասակիցը Սահակ-Մաշտոցյան դպրոցում, հայոց հազարապետը, «որ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից»[1] և որ ճակատագրական դեր կատարեց ամբողջ երկրի համար իբրև ապստամբության գլխավոր դրդիչներից մեկը։ Այնուհետև գալիս էր Կամսարականների տունը, որ, ինչպես տեսանք, շարունակ Գրիգոր Լուսավորչի տան հետ էր և Մամիկոնյանների դաշնակից։ Իր քաջությամբ և եռանդով աչքի էր ընկնում մանավանդ Արշավիր Կամսարականը, որ Վարդանի փեսան էր, ամուսնացած լինելով նրա աղջկա հետ։ Խնամիական կապը Մամիկոնյան տան հետ կապում էր և Արծրունի իշխանների նշանավոր տոհմը, որին փեսայացել էր Վարդանի եղբայր Հմայակը, կնության առնելով Արծրունի օրիորդներից մեկին, Ձվիկ անունով, որի եղբայր Աղան Արծրունին Սահակի և Մաշտոցի աշակերտներից էր և Ղազար Փարպեցու ուսուցիչը։ Աղանի և Ձվիկի մյուս քույրը, Անուշվռամ, վրաց (Գուգարքի) բդեշխ Աշուշայի կինն էր, և սրանց Վասգեն կամ Վազգեն որդին էլ ամուսնացած էր Վարդան Մամիկոնյանի մյուս աղջկա հետ, որի անունն էր Վարդենի կամ Շուշանիկ։ Այս կրկնակի խնամիական կապերով Մամիկոնյանների հետ կապված Աշուշան էլ Վարդանի հեղինակավոր և ազդեցիկ կողմնակիցներից մեկն էր։

Բայց Մամիկոնյան, Վարդանանց կուսակցության ամենագլխավոր ուժը հայ լուսավորված եկեղեցականությունն էր։ Կաթողիկոսության տեղապահն էր, Մաշտոցի մահից ի վեր, Հովսեփը, Վայոց Ձորի (Սյունիք) Հողոցիմ գյուղից, ասել է՝ թարգմանիչներից մեկը։ Առաջնորդական աթոռներն էլ մեծագույն մասամբ այդ դպրոցի ներկայացուցիչների ձեռքին էին։ Այս հոսանքն էր իսկապես, որ անհաշտությունը տիրող պետության մտավոր աշխարհայեցողությունների նկատմամբ հասցրեց անողոք կռվի։ Հայոց եկեղեցին այդ միջոցին այնքան էր ուժեղացել, իշխանություն ձեռք բերել հայ ժողովրդի մեջ, որ կարողանում էր իր տիրապետական շահերը պաշտպանելու համար ցույց տալ նույնիսկ ամենանեղ կրոնական անհամբերողություն։ 5-րդ դարի եռանդոտ և տաղանդավոր գործիչները միայն լուսավորության շահով չէին առաջնորդում իրենց ժողովուրդը։ Նրանք խորթ չմնացին աշխարհի մեջ գոյություն ունեցող կարգերին, որոնք բռնությունն ու կոպիտ ուժն են գործադրում մարդկանց զսպելու, մարդկանց

[1] Եղիշէ. եր. 32։

մտածողության եղանակը փոխելու համար։ Այս կողմից վերին աստիճանի հետաքրքրական պատկեր է տալիս Շահապիվանի եկեղեցական ժողովը, որ գումարվեց Վարդանանց շարժման նախօրյակին, 455 թվականին։ Այս ժողովի գումարման գլխավոր շարժառիթներից մեկն այն էր, որ Հայաստանի մեջ շատացել էին մծղնե կոչված աղանդի կողմնակիցները։

Հատկապես կարելի է ասել, թե այս անունով հայտնի էր այն աղանդը, որի հիմնադիրն էր պարսիկ Մանին[1] և որ ներկայացնում էր զրադաշտական և քրիստոնեական սկզբունքներից շաղախված մի վարդապետություն։ Ինչպես գիտենք, այդ աղանդը հիմնվեց 4-րդ դարում և այն ժամանակ էլ մուտք գործեց Հայաստան, ուր նրա համար պատրաստ կար նպաստավոր հող, քանի որ հայությունը դեռ բոլորովին չէր լքել իր հին հեթանոսական կրոնը։ Մանիի վարդապետությունը կամ մանիքեականությունը տարածվեց նաև արևմտյան քրիստոնյա աշխարհում, բաժանվեց բազմաթիվ ճյուղավորությունների, որոնք բոլորն էլ պաշտոնական եկեղեցու համար անհանդուրժելի հրատարակվեցին և սաստկապես հալածվում էին մանավանդ բյուզանդական կայսրների կողմից[2]։ Մանիքեականությունը մերժում էր եկեղեցական խորհուրդները, ազատություն էր տալիս սեռական հարաբերությունների վերաբերմամբ և առհասարակ ներկայացնում էր ազատ մտածողությունը իբրև հակադրություն չափազանց զարգացող եկեղեցական կանոնագրված հայացքների[3]։ Եվ որովհետև մծղնեությունը հայ ժողովրդի մեջ մեծ չափեր էր ընդունում, այնպես որ նույնիսկ եկեղեցականներն ու նախարարական տներն ազատ չէին մնում նրա հրապույրներից, ուստի հայոց եկեղեցին էլ հալածանքներ սկսեց նրա դեմ, անշուշտ, օրինակ վերցնելով արևմտյան եկեղեցիներից։ Շահապիվանի ժողովում խիստ պատիժներ սահմանվեցին մծղնեության աղանդին հարողների համար։ Եթե դրանք եպիսկոպոսներ կամ քահանաներ էին, այդպիսիները կարգազուրկ էին դառնում և ապաշխարության ուղարկվում, իսկ նրանց ճակատներին խարանվում էր աղվեսադրոշմ, որպեսզի ամենքը տեսնեն և զգուշանան։ Պատժից չէին խուսափում նույնիսկ երեխաները, եթե նրանք գիտակցորեն էին հետևում իրենց աղանդավոր ծնողներին։ Դարձի չեկողներին սպասում էր ծանր տանջանք։ Կտրում էին նրանց երկու ոտների ջիլերը, անդամալույծ դարձնում և ուղարկում ուրկանոցները, ուր բորոտներ և այլ այսպիսի հիվանդներ էին ապրում։ Ահա ինչ լեզվով է խոսում Շահապիվանի ժողովի 19-րդ հոդվածը. «Ապա եթէ արք կանամբք և որդովք գտցին յաղանդին, զարանց և զկանանց և զիրաքէտ մանկանց զջիղսն կտրեսցեն, աղուէսադրոշմ ի ճակատն դիցեն և ի գոդենոց [ուրկանոց] տարցին յապաշխարութիւն»։ Իսկ անգիտակ երեխաները խլվում էին իրենց ծնողներից և հանձնվում էին եկեղեցու պաշտոնյաներին՝ դաստիարակելու համար[4]։

Առհասարակ հայոց եկեղեցու վերաբերմունքը դեպի օրինազանցները շատ խիստ էր, և այս ցույց է տալիս, թե ինչպես նա գիտեր գործել վճռականապես, իշխանության ամբողջ անողոքությամբ։ Շահապիվանում հավաքված հոգևոր հայրերը սահմանում էին պատիժներ ծեծով և տուգանք-

[1] Լեո, «Հայ. պատմ.», Ա հատ., Թիֆլիս, 1917, եր. 561։

[2] Հ. Բ. Սարգիսյան, «Ուսումնասիրութիւն Մանիքեա-Պավղիկյան Թոնդրակեցիներու աղանդին», Վենետիկ, 1893, եր. 28։

[3] Կարապետ ծ. վարդ., «Հայ. եկեղեցւոյ պատմ.», Վաղարշապատ, 1908, եր. 134։

[4] «Կանոնագիրք Հայոց», հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, եր. 80։

ներով։ Մեծը ռամիկների համար էր, այսինքն ոչ ազնվական դասակարգի համար, և լինում էր խիստ կամ համեմատաբար մեղմ՝ նայած հանցանքի չափին։ Խիստ բնորոշ է, որ հայոց եկեղեցին էլ, ինչպես և սասանյան զրադաշտականությունը, հավատուրացությունը պատժում էր մահով։ Շահապիվանի ութերորդ հոդվածը հրամայում էր այդպիսիներին քարկոծ անել[1]: Հասկանալի է, որ այսքան նեղ և ծայրահեղ անհամբերություն ընդգրկած եկեղեցին չէր, որ կարողանար հաշտ ու խաղաղասեր ընթացքի հետևել Սասանյանների հովանավորած մոգության սրարշավ անհաշտության հանդեպ։ Հալածելով մծղնեությունը, հայոց եկեղեցին իսկապես հալածանք էր սկսում Հայաստանի պարսկասիրության դեմ, նույնիսկ չսպասելով, որ Հազկերտի կառավարությունն սկսե իրագործել իր հավատափոխական ծրագիրը հայերի վերաբերմամբ։ Իր զրադաշտական պաշտամունքներով (արևն ու կրակը աստվածացվում էին) մծղնեությունը մոտ էր կանգնած պարսիկներին, և հենց այս աղանդավորների մեջ էր, որ մոգությունը կարող էր իր համար խարիսխներ որոնել։ Այսպիսով, աղանդավորների դեմ հարուցած հալածանքը կողմնակի կերպով ուղղված էր պարսից կառավարության դեմ։

Այս բոլորից պարզ հետևում է, որ հայերի մեջ ապստամբական տրամադրություն հրահրողը թարգմանիչների եկեղեցին էր։ Եվ այս գործը միայն գրական քարոզչություններով չէր առաջ մղվում, ինչպես Եզնիկ Կողբացու աշխատությունն է, այլև կենդանի քարոզություններով ժողովուրդը ոգևորելով։ Այսպես է գործում ավագ թարգմանիչներից մեկը, Ղևոնդ երեցը, որ հանդես է բերում ահագին եռանդ և կազմակերպչական ու պայքարող թափ։ Թեև արտասահմանյան կրթություն ստացածներից էր այս անխոնջ հոգևորականը, բայց մինչև վերջը բավականացավ գյուղական քահանայի, երեցի համեստ պաշտոնով, որ վարում էր Վանանդ գավառում։

Ղազար Փարպեցին ստվերի մեջ է թողնում հոգևորականության կատարած դերը Վարդանանց շարժման մեջ։ Այստեղ ավելի լավատեղյակ է երևում այն աղբյուրը, որից օգտվել է Եղիշեն և որի հաղորդածները միանգամայն համապատասխանում են Շահապիվանի ժողովի տրամադրություններին։ Իսկապես հոգևորականությունն էր, որ համարձակորեն իր ձեռքն առավ երկրի ամբողջ կառավարությունը, տալով նրան կատարյալ հեղափոխական բնավորություն։ Հոգևորականությանն էլ անտրտունջ հպատակվեց Վարդան Մամիկոնյանը։16

3· Հազկերտի նամակը: Ընդհարումն անխուսափելի դարձնող բոլոր հանգամանքները հասունացել էին, մնում էր միայն մի պատրվակ, որ կարող էր նույնիսկ շատ աննշան լինել, սկզբնապատճառ դառնալու համար։ Այդ պատրվակը հայթայթեց Վասակ մարզպանի ընտանիքը։ Սյունյաց կրտսեր իշխաններից մեկը, Վարազվաղան անունով, ամուսնացած էր Վասակի աղջկա հետ, բայց երկու ամուսինների միջև մեծ գժտություն կար, որ հասավ փոխադարձ սաստիկ ատելության։ Վասակն իր աղջկա պատվի պաշտպան հանդիսացավ և իր անարժան փեսայից ազատվելու համար՝ ուզում էր սպանել նրան։ Վարազվաղանը, իմանալով, թե իր աներոջ ոխակալությունն ինչ անհնարին չափերի է հասնում, հեռացավ Սյունիքից։ Վասակը նրան վտարեց ամբողջ Հայաստանից։ Այն ժամանակ կատաղած սյունեցին թողեց ամեն ինչ, գնաց Պարսկաստան, զրադաշտականություն ընդունեց։ Միհրներսեհի նման պետական մարդկանց համար թշնամությամբ լցված, անձնական հաշիվներից կուրացած դավաճանների աշխատակցությունը շատ ցանկալի և կարևոր էր։ Ուստի Վարազվաղանը մոտեցավ մեծ վեզիրին, նրա սիրալիր վերաբերմունքին արժանացավ և տեղեկություններ էր տալիս Հայոց երկրի մասին, աշխատելով պարսից կառավարության կասկածամտությունը գրգռել ամենից շատ մարզպանի դեմ, որին ոչնչացնելը, որի իշխանությունը խլելը նա դարձրեց իր գործունեության գլխավոր նպատակը։ Չափազանց զգույշ և խելացի Միհրներսեհին նա խորհուրդ էր տալիս փութացնել նրա պետական ծրագրի գործադրությունը Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վերաբերմամբ, հավատացնում էր, թե դժվարը միայն հայերին ստիպելն է, այնուհետև մնացած երկու երկրներն իրենք իրենց կընկնեն պարսից ձեռքը։

Վարազվաղանը պարզ տեսնում էր, թե ինչ հաշիվ ունի ինքն այդ ձեռնարկության մեջ։ Երկու ելքի կարող էր հանգել պարսկական քաղաքականությունը. հայերը կա՛մ պիտի ընդունեին զրադաշտականություն, կա՛մ թե պիտի ըմբոստանային պարսիկների դեմ։ Առաջին դեպքում ինքը պիտի մեծ պարգևների տիրանար, իսկ երկրորդ դեպքում՝ կոչնչանար Վասակ մարզպանը։ Այսքան փոքրիկ չէին Միհրներսեհի ակնկալությունները։ Պետք է մի անգամ ընդմիշտ լուծվեր հայոց հարցը. պետք է որոշվեր, թե Հայաստանն ո՞ւմ պիտի պատկանի—Արևելքի՞ն արդյոք, թե Արևմուտքին։ Այս մտքով էլ նա զեկուցում ներկայացրեց Հազկերտ թագավորին, որ, իհարկե, տվեց իր կատարյալ համաձայնությունը։ Մոգերին հրաման տրվեց գրել մազդեզական դենի դավանաբանությունը և այդ գրվածքից մի մի օրինակ ուղարկվեցին Հայաստան, Վրաստան և Աղվանք։ Առանձին մի հրովարտակով, որ գրված էր Հազկերտի անունից, հայտարարվում էր այդ երկրների բնակիչներին, թե պարսից տերությունը գոհ է իր հպատակների հավատարմությունից և ընդունում է, որ նրանք օգուտներ շատ են տվել, բայց ուզում է, որ այդ հպատակները պարսիկների հետ մի լինեն նաև կրոնական հայացքներով։ Թագավորը, սիրելով իր հպատակներին, չի կարող անուշադրության մատնել նրանց հոգու փրկության հարցը, որովհետև ինքն է պատասխանատու Իրանի աստվածների առջև։ Ուստի առաջարկում է, որ ամենքը կարդան պարսկական դենի մասին գրվածքը, որ ուղարկվում է հրովարտակի հետ և սիրով ու հոժարությամբ ընդունեն այդ կրոնը։ Սպառնալիքներ Պարսից արքունիքը չէր կարդում, և այս պահանջում էր ամենից առաջ պետական իմաստությունը։ Հազկերտի հրովարտակը մի վերջնագիր չէր, այլ նախնական մի փորձ։ Եվ դրա ապացույցն այն էր, որ թագավորը պահանջում էր, որ քրիստոնյաներն էլ իրենց կրոնի դավանությունը գրել տան և ուղարկեն նրան՝ քննադատության համար։ Այսպիսով, դեռ կրոնական վիճաբանության դուռն էր բացվում։

Սակայն հպատակ քրիստոնյա ժողովուրդների համար շատ պարզ էր, որ այս զիջողականությունը միայն մի քաղաքագիտական ձև էր, որի տակ թաքնված էր պարսից կառավարության քաջածանոթ ձգտումը։ Պետք էր պատասխանել Հազկերտին, և այստեղ խոսքը, իհարկե, պատկանում էր ամենից առաջ հոգևորականության։ Կաթողիկոսական տեղապահ Հովսեփ երեցը միանձնյա վճիռ կայացնելը իր իրավասությունից դուրս համարելով,

[1] Անդ. եր. 67։ Տ. և Գալուստ Տեր-Մկրտչյան, «Գրիգոր—Մանաճիհր Ռաժիկ՝ Միհրան տոհմից», Վաղարշ., 1902, եր. 15։

եկեղեցական ժողով հրավիրեց, որին ներկա եղան և շատ նախարարներ։ Միայն Բագրատունյաց տոհմն էր բացակայում, և այս ցույց էր տալիս, թե նա անտարբեր դիրք էր բռնել, չկամենալով, համենայն դեպս, լինել այնպիսի դրության մեջ, որ թույլ տար կասկած տարածելու, թե նրա և Մամիկոնյան տոհմի միջև համերաշխություն կա։ Այս մի տոհմի բացառությամբ՝ Հայոց աշխարհը եկեղեցական այս ժողովին, որ կայացավ հավանորեն Արտաշատ մայրաքաղաքում, ներկայացված էր բավական միաբան կերպարանքով։ Այսպես, կաթողիկոսական տեղապահից հետո աթոռ էր գրավում Սյունյաց եպիսկոպոս Անանիան։ Վասակ մարզպանն էլ իր նախագահ տեղն ուներ գրաված նախարարների մեջ, և նրա հետ էր նաև Վարդան սպարապետը։ Ժողովը լուրջ և հեռատես քննություններով որոշեց իր քաղաքականությունը։ Նա ամենից առաջ բացարձակ հայտարարում էր, թե երկիրը քաղաքական անջատողականության որևէ հարց չունի իր առջև, թե նա շարունակում է խղճի մտոք և հավատարմությամբ հպատակ մնալ Սասանյան գահին և պիտի շարունակի այնուհետև էլ կատարել իր հպատակական բոլոր պարտավորությունները առանց թերանալու։ Գալով կրոնի հարցին, ժողովը գտնում էր, որ այդ ներքին գործ է, խղճի հարց, որ ոչինչ կապ չունի քաղաքական հպատակության հետ և որի շրջանում մարդը պիտի կատարելապես ազատ լինի։ Վեր բարձրացնելով այս երկու սկզբունքները, ժողովն ավելորդ համարեց քննել մասնավոր առաջարկները։ Զրադաշտական կրոնի վարդապետությունը, որ ուղարկված էր արքունիքից, ավելորդ էլ համարեցին բաց անել ու կարդալ և վճռեցին այդպես էլ վերադարձնել թագավորին։ Պատճառաբանությունը շատ բանավոր էր։ Այսպես արվում էր, ինչպես գրում էին հայերը, հենց թագավորի պատվի համար։ Կարդալ ու լսել պետք չէր զրադաշտական կրոնի մասին, որպեսզի հերքելու համար ստիպված չլինեն գործածել խիստ քննադատություն, որից դուրս պիտի գար արհամարհանք և ծաղր, վիրավորական՝ մի տիրող ազգի համար։ Այսպես էր ժողովի ընդհանուր տրամադրությունը։ Բայց, ինչպես երևում է, նրա մեջ բավական ուժեղ էր և դիմադրական-հեղափոխական հոսանքը։ Այս պատճառով էլ ժողովի կողմից գրված պատասխանի մեջ, որ ամենակտրուկ կերպով մերժում էր կրոնափոխությունը, մնացին խիստ դարձվածքներ պարսկական կրոնի մասին։ Բնականաբար, պատասխանը գրգռիչ տպավորություն թողեց Պարսից արքունիքում, և հրաման ուղարկվեց այնտեղից, որ բոլոր երկրների իշխանները գնան արքունի դուռը՝ անձամբ բացատրություններ տալու և թագավորի խոսքը լսելու համար։ Այդ հրամանի հետևանքով երեք բախտակից երկրները՝ Հայաստան, Վրաստան և Աղվանք փոխադարձ բանակցություններով կատարյալ համաձայնություն են կայացնում իրենց միջև։ Վճռում են զիջողություն չանել Հազկերտին, ընդհանուր ուժերով պաշտպանել իրենց իրավունքները։

Հայոց աշխարհից արքունի դուռը գնացին հետևյալ 10 նախարարները. Վասակ Սյունի մարզպան, Ներշապուհ Արծրունի, Արտակ Ռշտունի, Գադիշո Խորխոռունի, Վարդան Մամիկոնյան սպարապետ, Արտակ Մոկացի, Մանեճ Ապահունի, Վահան Ամատունի, Գյուտ Վահևունի, Շմավոն Անձևացի։ Իսկ Վրաստանից՝ Աշուշա բդեշխը և այլ ավագ իշխաններ (449)։

Հազկերտը պարսկական ավագանուց մի մեծ ժողով գումարեց և նրա առջև սկսեց անձամբ հարց ու փորձ անել նախարարներին։ Ամենից առաջ նա հարցնում էր՝ ի՞նչ է ինքը և ի՞նչ են նախարարները։ Սրան պատասխա-

նում են, թե այդ հարցը խոսք էլ չի վերցնում, պատասխանն այնքան պարզ է, որ ամեն մեկը գիտե։— Այո՛, ասաց Հազկերտը ոչ առանց գրգիռի.— գիտեն նրանք, որոնք հնազանդ են իմ հրամաններին և կատարում են նրանց անշեղ։ Բայց ես պահանջում եմ, որ դուք ասեք, թե ի՛նչ եմ ես։— Մենք,— պատասխանեցին նախարարները,— ճանաչում ենք ձեզ ինչպես ամենքի, բայց մանավանդ և մեր թագավոր. իշխանություն ունես աստծու նման թե՛ մեզ վրա և թե՛ ամեն մեկի վրա, որ ապրում է քո թագավորության մեջ, կարող ես սպանել և ապրեցնել։— Բայց այդ միևնույնը չեք ասում դուք ձեր պատասխանի մեջ,— ասաց թագավորը.— ձեզ թվում է, թե կան բաներ, որոնց վերաբերմամբ դուք անպայման հնազանդ եք ինձ, բայց կան և այնպիսի բաներ, որ ոչ ես պիտի հրամայեմ ձեզ և ոչ էլ դուք պիտի ընդունեք։ Արդ՝ մինչև այժմ արածներիդ համար գոհ եմ։ Բայց հիմա պահանջում եմ, որ դառնաք կորստյան ճանապարհից և ընդունեք մեր կրոնը։ Այս է իմ կամքը։ Եթե հակառակվեք, ոչինչ պիտի համարեմ մինչև այժմ ձեր մատուցած ծառայությունները և տված օգուտներն ու պիտի կորցնեմ ձեզ ձեր կանանց, երեխաների և տոհմերի հետ։

Մեր կրոնական գրողները, որոնք, հարկավ, չեն կարող անտարբեր մնալ Վարդան Մամիկոնյանի վերաբերմամբ, հավատացնում են, թե միակ նա էր, որ հենց սկզբից ևեթ, առանց վերապահումների, իր կողմից մերժեց կրոնափոխությունը, հայտնելով Հազկերտին ճակատ առ ճակատ, թե ինքը հավատի ճշմարտությունը մարդկանցից չի սովորել, որպեսզի կարողանա դավաճանել նրան, այլ այդ ճշմարտությունը աստված ինքն է սովորեցրել իրեն, ուստի և «վաճառել ընդ երկիւղի մարդոց և սնոտի փառաց՝ քա՛ւ լիցի»։ Սակայն ավելի բնական է ընդունել, որ նախարարները, չկարողանալով վճռական պատասխան տալ արքայից արքայի ահեղ սպառնալիքին, խնդրեցին մի քանի օր ժամանակ տալ մինչև որ կմտածեն և մի վճռի կգան։

Սկսվում են նախարարական խորհրդակցությունները։ Դրությունն անելանելի էր, եթե կարելի չլիներ մի կերպ խաբել Իրանի բռնավորին։ Եվ գտնում են, որ միակ ճարը կեղծորեն, առերես զրադաշտականությունն ընդունելն է։ Հազկերտին մերժողական պատասխան տալու դեպքում բոլոր նախարարները հենց այստեղ, արքունիքում, պիտի ձերբակալվեին, և այն ժամանակ ոչնչացնել երկրի դիմադրությունը շատ հեշտ պիտի լիներ։ Անհրաժեշտ էր, որ յուրաքանչյուր նախարար վերադառնա իր տունը։ Եվ այս ոչ թե որևէ դիմադրություն կազմակերպելու համար։ Ապստամբության մասին նախարարները չէին էլ մտածում։ Եթե ամեն մեկը կկարողանա իր երկրում ապրել՝ պահելով քրիստոնեությունը, այդ կլինի լավագույն ելքը, բայց եթե այդ անհնարին կլինի, այն ժամանակ ամեն մեկը կվերցնի իր ընտանիքը և կերթա օտար աշխարհ։ Այս առաջին հայտնի օրինակն է, որ հայը վտանգի առջև իր տկարությունը նկատելով, ընդգրկում էր գաղթելու գաղափարը, որ հետագա դարերում այնքան ընդարձակ չափերով արտահայտվեց, դառնալով հայության համար մի տեսակ հավիտենական վիճակ, մի տեսակ «թափառական հրեայի» ճակատագիր։ Եվ այս թափառականությունը հայը պատճառաբանում էր Քրիստոսի ասածով, թե «Յորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէ յայսմանէ՝ փախիջիք ի միւսն»։ Գաղթականի մաղախն էր սա, որի մեջ հայը դնում էր և իր ձևակերպած իմաստությունը՝ «Որտեղ հաց, այնտեղ կաց», ինչպես տեսնում ենք նրան

ազգային առածի ձև ստացած: Վկայաբանական պահուճանք է, անշուշտ, Ղազար Փարպեցու այն պատմությունը, թե Վարդան Մամիկոնյանը չէր մասնակցում այդ խորհրդակցություններին և թե նախարարները չըհանդգնեցին անգամ հայտնել նրան իրենց որոշումը առերես կամ կեղծորեն հավատ ուրանալու մասին: Ուստի սպարապետին համոզելը նրանք հանձնեցին Արտակ Մոկացուն, որ նրա մտերիմն էր, և Աշուշա բդեշխին, որ իր դիրքով ու խելքով պատկառելի հեղինակություն ուներ: Սակայն սպարապետը, մեր հեղինակի ասելով, անդրդվելի էր մնում երկար ժամանակ: «Հայեա՛ց,— ասում էին նախարարները,— ի մեզ անընդոստ մտօք. հայեա՛ց և յառաջիկայ դիպմունս բազմութեան բիւրոց մարդկան պատահելոց չարաչար աղետից. յիշեա՛ զհառաչանս մարց, զմտա՛ւ ած զաղայոց ողբումն, զծերոց ստիպով և զպառաւանց վարելոց յօտարութիւն, և այլ ամենեցունց դիպելոց այսպիսի անհնարին և չար վշտաց»: Իսկ այս աղաչանքներին հայոց սպարապետը պատասխանում է ճգնավորին վայել անողոքութեամբ. «Մի՛ լիցի ինձ ստել Արարչին՝ իմում՝ պատճառանօք և կամ ճշմարտութեամբ, և մի՛ ուրանալ զայն առաջի անօրէն և մահկանացու ազգի, որ ուրանայ զուրացողս իւր առաջի Հօր և հրեշտակաց սրբոց: Քա՛ւ լիցի ինձ յաղագս ըզմտաւ ածելոյ զկարիս և զվիշտս զկնոջ և զորդւոց և զազգի՝ տալ ի մոռացումն զոր ասէն, թէ «Որ սիրէ զկին և զորդիս առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի»[1]: Հարկավոր է լինում ամբողջ մի աստվածաբանական մըրցույթյուն սարքել համոզելու համար խիստ գրասեր սպարապետին, թե երբ հարցը Քրիստոսի հոտի ազատության է վերաբերում, կարելի է և ժամանակավորապես ուրացություն կեղծել: Միայն այստեղ համոզվում է և համաձայնություն է տալիս Վարդանը:

Եթե մի կողմ դնենք այդպիսի պահուճանքներ, կունենանք պարզ ճըշմարտությունը, այն՝ որ բոլոր նախարարները հարկավոր համարեցին դիմել խաբեության այդ միջոցին, որ նոր չէր գտնվում, այլ շատ սովորական էր Արևելքում, սանձարձակ բռնապետությունների մեջ: Եվ բռնապետությունն էլ վաղուց սովորել էր հասկանալ, թե իրեն խաբում են կեղծ ուրացություններով: Ուստի, երբ Հայոց, Վրաց ու Աղվանից նախարարները հայտնեցին, թե հեռանում են քրիստոնեությունից և դառնում են ուղղահավատ մազդեզական, Միհրներսեհն ամենից առաջ պարտք է համարում չհավատալ այդ դարձի անկեղծության և արքունիքում պատանդ է պահում Վասակ մարզպանի երկու որդիներին՝ Բաբիկին և Ատրներսեհին, ինչպես նաև վրաց Աշուշա բդեշխին: Եթե սուտ լինեին կրոնափոխության խոստումները, իրենց գլխով պատասխանատու պիտի լինեին այդ պատանդները: Բայց թե ինչու պատանդներ տալը պարտադիր եղավ հայոց մարզպանի համար, այս էլ հասկանալի է, եթե չմոռանանք, որ Միհրներսեհը շարունակ իր քովն ուներ Վարազվաղանին, որ միշտ չարախոսում էր իր նախկին աներոջ վրա և նրան էր ներկայացնում իբրև անհաջողության միակ պատճառ:

Սուտ ուրացության միջոցով ազատություն գտած նախարարները կատարում են այն բոլոր ծեսերն ու ձևականությունները, որոնք կարող էին շողոքորթել պարսից արքունիքին: Նրանք մինչև իսկ շնորհակալություն հայտնեցին Հազկերտին այն պատճառով, որ մինչդեռ Իրանի նախկին շահերը իրենց քրիստոնյա հպատակների անձնական բարեկեցության

1 Ղազար Փարպեցի, Դր. Բ, Իէ,

մասին էին հոգում, Հազկերտն ահա բարերարություն է անում և նրանց հոգիներին, դարձնելով նրանց ճշմարիտ հավատին: Ստրուկներն ու ստրուկների տերերը սիրում են իրար խաբել[1]: Նախարարների հետ յուրաքանչյուր երկիր ուղարկվում են բազմաթիվ մոգեր՝ մազդեզական կարգեր ու ծեսեր մտցնելու և տարածելու համար: Եղիշեն իր լեզվով պատմում է այն հրահանգը, որ բերել էին մոգերը Հայաստանում գործադրելու համար և որ կրադաշտական իրավակարգի մի ճիշտ «հանդանակ հաւատոյ» էր: Ահա ինչ էր ասված այդտեղ. «Մինչև ի նաւասարդէ ի նաւասարդ յամենայն տեղիս՝ որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին և կնքեսցին դրունք սուրբ տաճարացն, գրով համարով տացին նուիրեալ սպասքն յարքունիս, լռեսցեն ձայնք սաղմոսացն և դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն: Քահանայք մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, և հաւատացեալքն ի Քրիստոս՝ արք և կանայք, որ բնակեալ են յիւրաքանչիւր մենանոցս, փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց: Դարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն: Ուստերք և դստերք ազատաց և շինականաց՝ կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց: Կարճեսցին և արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն, զի աճեցեալ բազմասցին ազգքն Հայոց: Դստերք՝ հարանց լինիցին, և քորք՝ եղբարց. մարք մի՛ ելցեն յորդւոց, այլ և թոռունք ելցեն յանկողինս հաւուց: Պատրուճակք մի՛ մեռցին անյաղ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց: Հայսք առանց փանդամի մի՛ զանգցին. ծիրտք և քակորք ի կրակ մի՛ եկեսցեն. ձեռք առանց գումիզոյ մի՛ լուասցին. շնջրիք և աղուէսք և նապաստակք մի՛ մեռցին: Օձք և մողէսք, գորտք և մրջմունք, և որ այլ ևս խառնափնդոր բազմաճճիք են՝ մի՛ կացցեն. այլ վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն: Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ տարեոր թուականին, և ըստ կապճաթիւ մոխրաչափ կարգին»[2]:

Նախարարներն ու մոգերը գալիս հասնում են Հայաստան: Պետք էր սպասել, որ կեղծ ուրացության փաստը իսկույն կհայտարարվեր և երկիրը ուրախությամբ կդիմավորեր այդ գնով ազատություն գտած և այժմ դարձյալ քրիստոնեության գիրկը մտած իր իշխաններին: Բայց մեր փոքր ի

1 Փարպեցին այստեղ էլ պսակում է Վարդանին վկայաբանական մի պահուճանքով, որ հետագա ժամանակներում էր հերյուրված: Իբր թե Հազկերտին հրաժեշտի ժամանակ նա ասաց, թե իր նախնիքներն էլ մեծամեծ ծառայություններ են մատուցել արյաց արքային, իսկ ինքը, թեև իր նախնիքներից նվազ է, բայց էլի շատ բան է արել իր քաջություններով օգտակար լինելով արքային արքային: Բայց այսուհետև նա իր բոլոր ուժն ու կարողությունը պիտի մի տեղ հավաքի՝ կատարելու համար այնպիսի մի գործ, որի մասին միշտ պիտի խոսվի ոչ միայն արյաց արքունիքում, այլև կայսրի պալատում: Այս խոսքերով,— ավելացնում է Փարպեցի մատենագիրը,— Վարդանն ակնարկում էր իր մոտագա նահատակությունը:

2 Դնում ենք այս կտորի թարգմանությունը, քանի որ նրա մեջ շատ պարզ որոշված են զրադաշտականության պահանջները: «Նավասարդից (տարեգլխի ամսից) մինչև Նավասարդ մեծ թագավորի իշխանության տակ գտնված բոլոր տեղերում վերանան եկեղեցու կարգերը, սուրբ տաճարների դռները փակվեն և կնքվեն, նրանց նվիրված անոթները գրով ու համարով թագավո-

շատե հավատի աղբյուրը, Փարպեցին, միշտ հավատարիմ քրիստոնեության ջատագովի պարտավորության, հավատացնում է, թե նախարարները Հայաստան վերադարձան «ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք»։ Նրանց դիմավորում են հոգևորականները եկեղեցական երգեցողություններով, սակայն ուրախության փոխարեն լաց ու սուգ էր տիրում։ Երեխաները անգամ փախչում էին իրենց վերադարձած հայրերի գրկից, որովհետև առաջվա կերպարանքը չէին տեսնում նրանց վրա և սարսափում էին, իսկ դայակներն ու դաստիարակները զուր էին աշխատում հավատացնել այդ մանուկներին, թե նորեկները իրենց հայրերն են։ Ո՛չ ոք,— ասում է Փարպեցին,— չէր համաձայնում ուրացողների հետ սեղան նստել, «ոչ կին, ոչ որդի, ոչ ազատ, ոչ ծառայ ոք և ոչ սպասաւորք»[1]։ Այս բոլորը մեջ է բերվում այն պատճառով, որպեսզի ցույց տրվի, թե քրիստոնեությունը որքան խոր արմատներ էր հաստատել հայ ժողովրդի բոլոր խավերի մեջ և

րական առնվեն, լռեն սաղմոսերգության ձայները և դադարեն անսուտ մարգարեությունների ընթերցումները։ Քահանաները չվստահանան իրենց տներում ուսուցանել ժողովուրդը, և մենաստաններում բնակվող հավատացյալ քրիստոնյաները՝ այր թե կին՝ փոխեն իրենց հանդերձը և աշխարհականի շորեր հագնեն։ Դարձյալ՝ նախարարների կանայք ընդունեն մոգերի ուսմունքը։ Ազատ ու շինական մարդկանց որդիքն ու աղջիկները կրթվեն նույն մոգերի ժողովանոցներում։ Արգելվին ու կարճվին սուրբ ամուսնության կարգերը, որ ունին նախնիքներից քրիստոնեության օրենքի համաձայն, այլ մի կնոջ փոխարեն շատ կանայք առնեն, որ աճի ու բազմանա Հայոց ազգը։ Աղջիկներն ամուսնանան իրենց հայրերի հետ, քույրերն եղբայրների հետ, մայրերը չքաշվեն իրենց որդիների հետ պառկելուց և թոռներն իրենց պապերի անկողինը մտնեն։ Մսացու անասուններն առանց հազվելու (կրոնական ծեսով մորթելու) չմորթվին, ոչխար լինի թե այծ, արջառ թե թռչուն, թե խոզ։ Խմորն առանց փանդամի (բերանին կապվող սպիտակ շոր, տե՛ս այս գործի առաջին հատորը) չհունցվի, ծիրտն ու քակորը կրակի մեջ չգցվին (կրակը չպղծելու համար), ձեռքերն առանց գումիզի (կովի կամ եզան մեզ) չլվացվին, ջրշունները, աղվեսներն ու նապաստակները չսպանվին (որովհետև նրանք ոչնչացնում են վնասակար միջատները)։ Օձերը, խլեզները, գորտերը, մրջյունները և ուրիշ այս տեսակ խառնափնթոր ճճիներ սպանվին (իբրև վնասակար արարածներ, Արհմնի ձեռքով ստեղծվածներ) և թվով համարով մեջ բերվին շուտ՝ արքունի չափին համեմատ։ Եվ ինչ այսպիսի պաշտոններ ևս կան զոհերի կամ սպանդի վերաբերյալ՝ տոների կամ տարեթվերի կարգով՝ և կոպճաթիվ մոխրաչափ (ատրուշանների մոխիրը չափելու հատուկ ամաններ՝ չափ որոշող) կարգով՝ թող բոլորը կատարվին» (Հմմտ. «Եղիշեի Պատմությունը Վարդանի և Հայոց պատերազմի համար», թարգմ. Հ. Ղուկասյան, Թիֆլիս, 1891, եր. 68—69)։

[1] **Փարպ.**, Դր. Բ, ԻԹ։ Եղիշեն Փարպեցու այս նկարագրությունը վերածել է մի բանաստեղծական բողոքի, որ արտահայտվում է հայաստանցիների կողմից ուրացյալ նախարարներին։ Ահա մի երկու կտոր այդ բանաստեղծությունից. «Վարդապետք էիք առաքելական քարոզութեանցն. արդ աշակե՞րտք լինիցիք մոլար խաբէութեանն։ Ուսուցիչք էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խաբէութիւն մոգաց։ Քարոզք էիք արարչական զօրութեանն. արդ զտարերս աստուածս խոստովանիք։ Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զուստ ստագո՞յնք լինիցիք։ Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճի՞ւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճե՞ր զոհից և ի շարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք։ Տաճար էին Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւա՞ց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաբար արեգակա՞ն կաքաւիցէք։ Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի, յորժամ աստի վտանգ հասանէր՝ առ ձեզ յանդորր եւանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ։ Դուք էիք մեր պարծանս առ թշնամիսն ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս։ Ցայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին. և արդ, ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին։ Ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ ի ձեր պատճառս և զնոսա եւ չարչարեսցեն» (Եղիշէ, Թեոդոսիա, եր. 80—83)։

թե որքան աններելի է ուրացությունը, թե նա նույնիսկ ժամանակավոր լինի, նույնիսկ առերես։ Բայց որ Հայոց աշխարհն այսպիսի թշնամական ցույցերով չի վերաբերվել ուրացած նախարարներին, որ նա պահել է իրեն հանդարտ և նույնիսկ անտարբեր, ցույց է տալիս այն, որ Վարդան Մամիկոնյանը, շրջապատի համակերպվող տրամադրությունից դրդված՝ վերցնում է իր և իր եղբայրների ընտանիքները և ճանապարհվում է դեպի Հունական Հայաստան։ Այդ մի փախուստ էր։ Սպարապետն ի կատար էր ածում այն վճիռը, որ կայացրել էին նախարարները Պարսկաստանում։ Այս քայլով Մամիկոնյան տոհմը վճռում էր հօժարակամ հրաժարվել իր դիրքից ու նշանակությունից, իր խոշոր հարստություններից՝ օտարության մեջ հանգիստ գտնելու համար։ Եվ այս, կարելի է ասել, հուսահատական վճիռը բխում էր իրերի վհատեցուցիչ դրությունից, որ տիրում էր երկրի մեջ։

Լսելով Մամիկոնյանների փախուստը, Վասակ մարզպանը եռանդուն միջոցներ է ձեռք առնում նրանց համոզելու համար, որ ետ դառնան։ Այս նպատակով մի ամբողջ պատգամավորություն է ուղարկում Վարդանի մոտ, որ կանգ էր առել Բասենի սահմանում, Արամանայ գյուղի մեջ։ Պատգամավորության մեջ էին Ղևոնդ Երեցը և սպարապետի փեսա Արշավիր Կամսարականը, ինչպես և երկու իշխաններ ու երկու քահանաներ։ Նրանք տանում էին հայոց իշխանների համախոսականը, որի մեջ խնդրում էին Վարդանին վերադառնալ և խոստանում էին հպատակվել նրա հրամաններին։ Այս թուղթը կնքված էր Ավետարանին։ Առանձին նամակ սպարապետին ուղարկում էր և Վասակ մարզպանը։ Այս նամակի բովանդակությունը այսպես էր պատմում պատգամավոր գնացած Արշավիր Արշարունին (Կամսարականը) պարսից դատարանում։ «Ինչո՞ւ ես փախել,— գրում էր մարզպանն սպարապետին,— կամ ի՞նչն է քո վախը, որից երկյուղ ես կրում,— այս մասին ոչինչ չես հայտնել։ Արդ՝ մի փախիր և ոչ ոքից մի վախեցիր, որովհետև եթե արքայից տիրողից և նրա ուժից ես զարհուրել՝ մի՛ վախիր, ետ դարձի՛ր, մենք նամակ կգրենք կայսրին և մեր անձերը նրա ծառայության կնվիրենք, և նա կհավատա, թե այսպիսի մի մեծ աշխարհ մենք մեր կամքով ենք նրա ծառայության տալիս, և նա ուրախությամբ կընդունի և մեզ զորք կտա. և մենք միաբանված այդ զորքի հետ՝ շատ դժվարություններ կպատճառենք արքայից տիրոջը և արքայից ազգին։ Իսկ եթե կայսրն ուրիշ կերպ է մտածում և իր օգուտը չի ճանաչում, ես Վրաստանում մարզպան եղած ժամանակս, երբ իմ ձեռքի մեջ ունեի Աղվանից դուռը, հոնաց շատ զորագլուխներ հետս բարեկամացան դաշինքով և երդումով. և այսօր էլ նրանք, հավատարիմ այն ուխտին, գնալ-գալ ունին ինձ մոտ։ Հայոց ամբողջ աշխարհի հարկերը ինձ մոտ են և բոլոր պաշտոնյաներն էլ իմ ձեռքի տակ են և շատ էլ գույքեր, որ ես խլել եմ պարսիկ պաշտոնյաներից, իմ գանձարանում են հավաքված. և եթե դրանց մի մասն ուղարկեմ հոներին, այնտեղից այնքան շատ հոներ կհանեմ, որ նույնիսկ Պարսից հողը բավական չի լինի՝ նրանց ավերանքների համար»[1]։

Դատարանի առջև այսպես պատմելով Վասակի գրած նամակի բովանդակությունը, Արշավիր Կամսարականը, ինչպես հավատացնում է Ղազար Փարպեցին, ցույց տվեց և բուն նամակը, որի վրա դեռ մնում էր մարզպանի կնիքը։ Վասակը տալիս է իր բացատրությունները այդ առիթով դա-

[1] **Ղազար Փարպեցի**, Դր. Բ, ԽԵ։

տարանին, բայց, տարաբախտաբար, այդ բացատրություններից մի քանի անգամ չի բերում Փարպեցին, ուստի և անկարելի է բազմակողմանի լույս սփռել այն վերին աստիճանի կարևոր հանգամանքների վրա, որոնք հիշատակված են Վասակի նամակի մեջ։ Հազկերտի դատաստանի առջև Վասակը և ապստամբության գլուխ կանգնած նախարարները փոխադարձաբար իրար մեղադրող կողմեր էին։ Նախարարներն ամեն կերպ աշխատում էին համոզել Հազկերտին, որ ապստամբության գլխավոր և միակ պատճառը Վասակ մարզպանն էր։ Եվ քանի որ մենք ուրիշ աղբյուր չունենք, պիտի հետևենք այս միակողմանի ցուցմունքներին, որոնք առաջ ու առաջ հավատացնում են, թե մարզպանի նամակը մեծ ազդեցություն արավ Վարդանի վրա, որին թուլացրեց, մանավանդ պատվիրակների արած ավետարանը։ Փարպեցին բերում է և այն խոսակցությունը, որ տեղի ունեցավ պատվիրակության և Վարդանի միջև։ Պատվիրակներն ասացին. «Դու աւասիկ հանգերձ եղբարբքդ և հաւանեալ ընտանեօքդ, որք հոգացեալ են ապրեցուցանել ընդ քեզ զինքեանս՝ անձնապուրք լինիք. բայց մեք ամենեքեան կորնչիմք զանվախճան կորուստն։ Վասն զի ոչ է հնար մեզ առանց ձեր, և ոչ կարակի մերում՝ երբէք պատահել փրկութեան և կեալ։ Բայց որպէս հոգացեալ խնամ տարէք ձեզ՝ նոյնպէս և զայսչափ զբազմութեան ոգիս մի՛ թողուք կորնչել, քանզի եմք աստ բազումք, որք և ազգախառն և արիւն ձեր եմք. պսակեցարո՛ւք և ընդ մեզ ի Քրիստոսէ, որպէս ցանկացեալ ջանայք ընդ ձեր միայն պսակիլն»։ Իսկ Վարդանի պատասխանը հետևյալն էր. «Ես և եղբայրք իմ և ընտանիք կարևոր ընտրելագոյն քան զամենայն ինչ որ է յաշխարհի՝ հաստատեալ եմք ընտրել և կտանել զոգւոցն փրկութեան գիւտ, և ունել եմք հաստատուն և զանշարժ բանն, որ ասէ,— յոր և հաւատացեալ եմք անսխալութեամբ,— թէ «Զի՞նչ օգուտ է մարդոյ, թէ զաշխարհ ամենայն շահեսցի, և զանձն իւր կորուսցէ։ և կամ զի՞նչ տայցէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ»։ Եւ ոչ զմեր եւեթ զոգւոյ խնդրեմք զօգուտն, այլ և ընդ այլոցն խնդամք ընդ փրկութիւն։ Եւ ո՛չ՝ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ սրոյ կարծիցէ զայս զմէնջ, յորմէ ոչ ոք երբէք զանգիտեալ յազգիս մերում և ոչ երբէք. և թէ ո՛րպէս ի վերայ ընկերի բարւոյ առաւել քան յանձին միշտ հոգալով զանձն եդեալ է այսմ տոհմի՝ զայն և ամենայն դուք՝ Հայք, գիտէք ստուգութեամբ ի պատմութենէ գրոց և լսելոյ ձեր յաւագաց։ Բայց ի նենգաւոր խաբէութենէ ձերմէ, զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ՝ զայն ամենայն յիշելով գնացեալ եմք լինել անձնապուրծք. որպէս ցանկ ձեր մղեալ է զմեզ ի նեղ, և զձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուց։ Բայց սուրբ և երկնաւոր հրավիրակիդ Աւետարանի ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք. քա՛ւ լիցի։ Դուք թէ միամտութեամբ վարիք և կամ երկմտութեամբ՝ դուք գիտէք, և սուրբ Աւետարանդ՝ որ ճանաչէ զամենայն և դատի ըստ իւրաքանչիւր գործոցն»[1]։

Հավատավոր, հեշտ ենթարկվող Մամիկոնյաններին հեշտությամբ համոզեցին վերադառնալ, և Արշավիր Կամսարականն իրավունք ուներ Հազկերտի դատարանի առջև ասելու, թե Վասակ մարզպանն էր, որ բռնի կերպով վերադարձրեց Վարդանին։ Այս փաստերը պարզ ցույց են տալիս, թե Հայաստանի մեջ Հազկերտի եռանդուն և ուժեղ քաղաքականությունը

[1] Ղազար Փարպեցի, Բ, Լ։

առեղծել էր մի տարտամ դրություն։ Նկատվում էր մի տեսակ լքում, գլուխկորցրածություն, մի տեսակ երերուն կացություն։ Եվ ահա այդ միջոցին, երբ նույնիսկ Մամիկոնյան տան գլուխն էլ լքել էր երկիրը, փախչում էր, ինչպես ասում է նույն Արշավիր Կամսարականը[1], պարսիկների ահից, Վասակ մարզպանն էր միայն, որ խոսեց այրական ձայնով և ցույց տվեց, թե ինչ պիտի անի երկիրը Սասանյան ահի առաջ ինքն իրեն պաշտպանելու համար։ Նա ուղղակի ծրագրում էր մի մեծ ապստամբական շարժում, որի մեջ վճռական դեր կատարողներ կարող էին լինել կամ բյուզանդացի հույները, կամ հոները, եթե դրանցից մեկնումեկը համաձայներ դաշնակցել հայերի հետ։ Սյունյաց իշխանը դեռ միայն միտք էր առաջարկում սպարապետին, դեռ միայն գործողությունների մի ուրվագիծ, որ դեռ պետք էր մշակել, գործադրել։ Բայց հենց այս գլխից նա ցույց էր տալիս, թե ինքը պիտի լիներ ձեռնարկության գլուխն ու հոգին։ Ուրիշ տեսակ գործունեության ընդունակ լինել չէր կարող Վասակ մարզպանի պես մի բնավորություն։ Նա պիտի դրության տերը լիներ, ղեկավարող և ուղղություն տվող, որպեսզի վստահ լիներ հաջողության վրա, որ անշուշտ հայոց գործի հաջողությունը չպիտի լիներ միայն, այլև իր փառասիրական տենչերի հաջողությունը։ Այնքան էր այս միջոցին ոգևորվել Վասակը, որ նրան չէր սարսափեցնում այն հանգամանքը, որ իր երկու որդիները պատանդ էին Հազկերտի մոտ։ Ամեն ինչ կախված էր գործելու շնորհքից ու եղանակից։ Նա մտածում էր, նախքան թշնամական գործողություններ սկսելը, կալանավորել Հայաստանի մեջ ապրող բոլոր պարսիկներին և այդպիսով հարկադրել Հազկերտին բաց թողնել Բաբիկին և Ատրներսեհին։ Եթե իրերին վիճակված լիներ ընթանալ այն կարգով, ինչ Սյունյաց իշխանն էր լավագույնը համարում, այն ժամանակ մենք գուցե կունենայինք ավելի հմուտ ձեռքով ղեկավարված և ավելի կարող կազմակերպությամբ գործած մի Հինգերորդ Դար։ Բայց շարժումն այլ կերպարանք ստացավ և նրա մեջ Հայոց մարզպանի համար ստեղծվեց մի բոլորովին ուրիշ դիրք։ Վարդանին Վասակը հարկադրում էր վերադառնալ, որովհետև այդպես էին պահանջում իր ծրագրի շահերը։ Մի կողմից պարսից կառավարության առաջ նա հանցավոր կլիներ, եթե թույլ տար, որ Վարդանի պես մի նշանավոր մարդ, որին անձամբ ճանաչում էր և Հազկերտը, անցներ հունաց բաժինը և գործիք դառնար բյուզանդական կառավարության ձեռքում Իրանի դեմ հայերի միջոցով գործելու համար։ Մյուս կողմից Վարդանի տեսակցությունը բյուզանդական հրամանատարների, գուցե նույնիսկ և կայսրի հետ, կարող էր միանգամայն չեզոքացնել Վասակին, խլել նախաձեռնությունը և գլխավոր ղեկավարությունը նրա ձեռքից։ Բայց ճարպիկ քաղաքագետը չկարողացավ նախատեսել ամեն ինչ։ Եվ Վարդանին ետ կանչելը դարձավ անկյունաքար այն դեպքերի, որոնք եկան իրապես չեզոքացնելու Վասակին։

4. Հայոց ապստամբությունը (450): Վարդանի վերադարձից հետո սկսվում են անհամաձայնությունները նախարարների միջև։ Վասակը, ինչպես երևում է, հակառակ էր, որ անմիջապես և շտապով գործողություններ սկսվեն, առանց նախապես պատրաստություններ տեսնելու։ Չափազանց կարևոր էր մանավանդ դաշնակիցների հարցը։ Սակայն զգուշության և

[1] Անդ, Բ, ԽԵ։

խռհեմության քաղաքականություն չէր, որ ընդգրկում էին Վարդանն ու նրա կողմնակիցները։ Անժամանակ ապստամբություն հայտարարվեց։ Եվ հայտարարողը, ինչպես պատմում է Եղիշեն, հայ եկեղեցականությունն էր, որ վտանգի րոպեին դուրս էր գալիս հրապարակ, զինված անխնա և անողորմ կռվի ուխտով։ Նա ոտքի էր կանգնեցնում շատերին՝ նախարարներին, ազատ և շինական մարդկանց, մինչև իսկ կանանց։ Կռիվն անխտիր ամենքի դեմ էր, ով եկեղեցու կողմից էր։ Ահա այդ ապստամբության նշանաբանը, ինչպես բերում է Եղիշեն. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ»[1]։ Կռվի այս զարհուրելի ձևը, կատաղի, անխնա, միաժամանակ հաստատում էր և հոգևորականության կատարյալ դիկտատուրան երկրում։ Վերացվում էին պետական և սովորութական օրենքները և նրանց տեղ հաստատվում էին «աստվածային», այսինքն եկեղեցական օրենքները, որոնցից և պատիժ էին ստանում հանցավորները։ Շահապիվանի ժողովի մեջ արտացոլված ոգու ծայրահեղ զարգացումն էր այս կղերական կառավարությունը, որին հպատակվում էին ամենքը, և ամենից առաջ՝ Վարդանը։

Ապստամբությունն առժամանակ ծածուկ էր պահվում, և Վասակ մարզպանն արդեն այն մարդկանցից է, որից հարկավոր են համարում ծածուկ պահել խորհրդակցությունները և իրերի նոր դրությունը։ Այստեղ գլխավոր գործիչը Վահան Ամատունին էր, մարզպանի անհաշտ թշնամին։ Փարպեցին ասում է, թե նա կատարելապես հանգիստ ու դադար չէր տալիս Վարդան սպարապետին, թախանձում էր, որ բացարձակորեն պարզվի ապստամբության դրոշակը։ Այս բանից երկու հետևանք էր սպասում Օշականի տերը, երկուսն էլ միանգամայն բավարար՝ իր անձնական վրեժխնդրությանը հագուրդ տալու համար,— կամ Վասակն ապստամբության հակառակ կլինի և կսպանվի նախարարների ձեռքով, կամ թե ապստամբության կողմը կլինի, և այդ դեպքում էլ Հազկերտը նրա երկու որդիներին կսպանի կամ շղթայակապ կաքսորի։ Սակայն Վարդանը կարողացավ առժամապես սանձել իր ընկերակցի անհամբերությունը, մինչև որ հոգևորականությունը բոլորովին կազմակերպեց ապստամբության ծրագիրը։ Վասակի վերաբերմամբ կասկածամտություն ծագում էր ոչ միայն այն պատճառով, որ նրա որդիները պատանդ էին Հազկերտի մոտ, հետևաբար և նա չէր կարող ամբողջովին նվիրված լինել ազգային շարժման, այլև առհասարակ նկատի առնելով նրա բնավորությունը և մանավանդ փառասիրությունը։ Եվ խորհրդապահությունն այնքան մեծ էր, որ երբ նախարարներից մեկը, Ջանդաղան Ոստանիկը, Վասակին հայտնեց այն ամենը, ինչ կատարվում էր նրա շուրջը, այդ մարդը նկատվեց իբրև լրտես և քարկոծվելով սպանվեց Բագրևանդ գավառի Բերդկունք գյուղում։ Այս արդեն մի ահավոր ազդանշան էր Վասակի համար։ Նա օտարացվում էր սկսված շարժման մեջ և իր դիրքն ու իր տոհմային գործը փրկելու համար սկսեց աշխատել ուրիշ ուղղությամբ, կանգ չառնելով ծայրահեղությունների և չափազանցությունների առջև, ինչպես կանգ չէր առել երբեք իր կյանքում, ինչպես կանգ չէին առնում և նրա հակառակորդները։ Ապստամբական շարժման հետ սկսվում էին բորբոքվել և հայ ավատական անջատականության կրքերը։ Որոշված էին կողմերը։ Մեկի անպայման արդարության և մյուսի անպայման մեղավորության մասին խոսք չի կարող լինել։ Վարդանանց կուսակցությանը հոգով նվիրված պատմագիրների ասածից անգամ պարզ կարելի է հետևցնել, որ երկպառակություն սկսողը հենց այդ կուսակցությունն էր։ Սյունեցիությունն այն աստիճան ջերմեռանդ քրիստոնյա չէր, որ կարողանար գոհացում պատճառել կղերական կառավարության, ուստի հենց նրա դեմ էր ուղղվում «եղբայրը եղբոր դեմ, որդին հոր դեմ» նշանաբանով հանդես եկած անողոք կռիվը։ Վասակին այս հանգամանքների մեջ մնում էր հենվել իր մարզպանական իշխանության վրա. առաջ քաշել պարսկական ուժը։ Վաթսունը վաղուց անցկացրած ծերունին արտասովոր ճկունություն ու եռանդ է ցույց տալիս։ Բայց այս կողմից պակաս չէր և Վարդանը, որ գուցե հասակակից էր իր ախոյանին։

Ջանդաղան իշխանի «մատնությունից» հետո այլևս ավելորդ էր ծածկել Հայոց ապստամբությունը։ Վարդանը, հավաքելով նախարարներին և հոգևորականներին, համարձակ մտավ մարզպանի մոտ և ցույց տվեց նրան երկրի դրությունը։ Ապստամբությունը հանկարծակիի էր բերում Վասակ իշխանին։ Նա իրեն տեսավ կազմակերպված ուժի դեմ հանդիման, և իբրև ճարպիկ քաղաքագետ, փրկություն որոնեց համակերպման մեջ։ Նա ինքն էլ համաձայն էր, ինքն էլ մասնակցում էր շարժմանն իբրև հայ իշխան։ Նորից միաբանության դաշն է կնքվում, որ հաստատվում է Ավետարանի վրա կատարված երդումով։ Իսկույն սկսվեցին բռնությունները, ուղղված, իհարկե, նախարարների հետ եկած պարսկական մոգերի դեմ։ Ամբոխը, բաղկացած մեծ մասամբ ռամիկ զինվորներից, հարձակվեց զրադաշտական ատրուշանների վրա, ոչ միայն ավերեց նրանց, հանգցնելով սրբազան կրակը, մի բան, որ ամենածանր սրբապղծություն էր պարսկական դենի համար, այլև կոտորեցին բավական թվով մոգեր։ Եղիշեն պարծանքով հիշատակում է, որ այս շարժումները ղեկավարում էին հայ հոգևորականներից մի քանիսը, ինչպես, օրինակ, Ղևոնդ երեցը։ Մոգերը, իհարկե, իսկույն մարդ ուղարկեցին Պարսկաստան՝ ապստամբությունը արքունիքին ծանուցանելու համար։

Վրա էին հասել ամառվա շոգերը, ուստի Արարատյան դաշտում դադար առավ ամեն մի շարժում։ Հայոց բանակը, ըստ սովորության, տեղափոխվեց իր ամառանոցը, Ծաղկանց լեռները, ուր և հանգստություն էր վայելում։ Բայց հենց այդ միջոցին էլ պարսից կառավարությունը ձեռք էր առնում իր միջոցները։ Միհրներսեհը հրամայեց Փայտակարանի պարսից զորքին առաջ շարժվել դեպի Աղվանք, և միաժամանակ իր ձեռքն էր առնում Հայոց մարզպանին, պահանջելով նրանից եռանդ և աչալրջություն։ Հայոց բանակը, լուր առնելով պարսից շարժման մասին Աղվանքում, շտապեց ժամանակից առաջ իջնել լեռներից։ Աղվանից իշխանները խնդրում էին անհապաղ օգնություն՝ արշավող պարսիկներին դիմադրելու համար։ Եվ Վասակը փութացնում էր զորքի մի մասի առաքումը, Վարդան սպարապետի առաջնորդությամբ։ Ինքը չգնաց այդ զորքի հետ, որովհետև լավ պատրվակ էր գտել, ասելով, թե իր ներկայությունը շատ հարկավոր է երկրին, որովհետև Միհրներսեհը, ո՛վ գիտե, ինչեր կանի, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Հայոց զորքերը հեռացել են երկրից։ Բայց ճարպիկ մարզպանը դրանով իսկապես իր համար էր գործողությունների ազատություն

[1] Եղիշէ. եր. 85։

պատրաստում, հեռացնելով Վարդանին և նրա կողմնակիցներին։ Եվ անշուշտ նրանց քնեցնելու համար էր, որ Վասակը համաձայնեց քաղաքական պատվիրակություններ ուղարկել զանազան տեղեր՝ հայոց ապստամբության աջակցելու խնդրանքներով։ Մի հատուկ պատվիրակություն, որի մեջ մտնում էին Վահան Ամատունին և սպարապետի եղբայր Հմայակ Մամիկոնյանը, ուղարկվեց Կ. Պոլիս, Թեոդոս Փոքր կայսրի մոտ։ Նամակներ ուղարկվեցին և Բյուզանդական Հայաստանի իշխաններին, ինչպիսիք էին Եկեղյաց, Հաշտենից, Ծոփաց իշխանները։ Արդ՝ Հայաստանի հարավային կողմերում տիրում էր Մամիկոնյանների մի ճյուղը, որի գլխավորն էր Վասակ Մամիկոնյանը։

Վարդան սպարապետը Աղվանից արշավանքն սկսեց այն ժամանակ, երբ Վասակ մարզպանը իր մատանիով կնքեց այդ բոլոր դիմումները։ Եվ այսպիսի հանգամանքների մեջ էր, որ Հայաստանը պատերազմ էր հայտարարում Պարսկաստանին։ Ուժերի անհամաչափությունը ավելի քան ակներև էր, և Վասակը չէր, որ պիտի հավատար, թե այդքան հապճեպով սկսված, այդքան վատ պատրաստությամբ պայթեցրած պատերազմը կարող էր որևէ շոշափելի օգուտ բերել հայ ժողովրդին։ Եվ այս բավական էր, որ նա ավելի ևս համոզվեր, թե լավագույնն այդ պայմանների մեջ իր քաղաքականությունն էր, այսինքն թույլ չտալ, որ ապստամբությունը չափազանց ընդարձակվի և ստիպի պարսից կառավարությանն ավերանքի մատնել ամբողջ երկիրը։ Ամեն ինչ կախված էր իր եռանդից։ Օգտվելով երկրի մեջ տարածված բարեհաջող հանգամանքներից, նա լիակատար հնարավորություն էր ստանում իր հակառակորդների հետ հաշիվներ վերջացնելու և իր փառասիրական նպատակներն էլ արագացնելու։ Եվ իրավ, մի կարճ միջոցում Վասակն իր կողմն ուներ մի ամբողջ նախարարական կուսակցություն։ Հայոց զորքի մեծ մասը նա կարողացել էր պահել երկրի զանազան կողմերում, այնպես որ կարող էր վստահ լինել, թե Վարդանը իր բանակով կջարդվի, գուցե նույնիսկ և կոչնչանա Աղվանից երկրում։ Նախարարների հետ[1] Վասակն իր կողմը գրավեց նաև շատ շինական ժողովուրդ։ Երկրի պառակտումը կատարյալ էր։ Եվ պայթեց մի կատաղի ապստամբություն ապստամբության դեմ։ Եթե Վարդանանց շարժումը մի հեղափոխություն էր, Վասակը նրա դեմ առաջ էր բերում հակահեղափոխություն, որ նույնպես միջոցների խտրություն չէր ճանաչում, ինչպես այդ անում էր հեղափոխությունը։ Հակահեղափոխությունը գործում էր պարսից կառավարության հետ սերտ հարաբերություններ հաստատելով և նրա հրահանգները գործադրելով։ Ամենից առաջ նա տիրացավ Հայաստանի նշանավոր բերդերին, կալանավորեց Մամիկոնյանների, Կամսարականների և այլ իշխանների ընտանիքները, փակեց նրանց Սյունիքի բերդերում, իսկ տղա երեխաներին հրամայեց պատրաստ պահել՝ Հազկերտին ուղարկելու համար։ Այս դաժան միջոցը գործադրվում էր ապստամբության գլխավորներին զսպելու համար։

Բայց հայոց ապստամբությունը այդ ընտանի դավաճանությունից ոչ միայն չէր ընկճվում, այլև զորեղացման նոր գրգիռներ էր ստանում։ Եվ

1 Ահա այդ նախարարների ցանկը. Տիրոց Բագրատունի, Գադիշո Խորխոռունի, Մանեճ Ապահունի, Գյուտ Վահունի, Վարազշապուհ Պալունի, Արսեն Արեղենից և Ներսեհ Ուրծեցի։ Սրանցից երեքը (Գադիշո, Մանեճ, Գյուտ) Պարսկաստան գնացածներից և քրիստոնեություն ուրացածներից էին։

պատճառն այն էր, որ Վարդանը Աղվանից աշխարհում պարտության չհանդիպեց, ինչպես սպասում էր Վասակը, այլ հաղթություն տարավ։ Ճակատամարտը տեղի ունեցավ Խաղխաղ անունով ավանի[1] մոտ, Կուր գետի ափին։ Սկզբում անհաջողության հանդիպեց հայոց մի թևը, որի հրամանատարներն էին Արշավիր Կամսարականը և Մուշ Դիմաքսյանը, որոնք սաստիկ արագ արշավելով՝ իրենց ձիերի հետ խրվեցին ճահիճների մեջ։ Մուշ իշխանը այստեղ էլ սպանվեց պարսիկներից, բայց Արշավիրը, սպարապետի փեսան, հերոսական ջանքեր գործ դնելով, կարողացավ ազատվել այդ թակարդից։ Իջնելով տիղմի մեջ խրված ձիուց, նա, ինքն էլ տիղմի մեջ թաթախված, կարողացավ դուրս սողալ, ցեխի մեջ թողնելով իր մի մույկը (երկարաճիտ ոտնաման) և իր ետևից քաշելով ձին՝ նրան էլ դուրս հանեց և հեծնելով՝ նետվեց պատերազմի մեջ, սպանեց Լփնաց թագավորի եղբայր Վուրկին, ապա հավաքելով իր զորքը, քշեց պարսիկներին։ Այդ միջոցին նրա աներ Վարդանն էլ մյուս կողմից էր հալածական քշում պարսիկներին։ Հաղթությունը կատարյալ եղավ։ Նույն Արշավիրը փայլուն կերպով կատարեց սպարապետի հանձնարարությունը, հալածելով պարսիկ զորավարներին, որոնք նավակներում նստած՝ ապաստան էին գտել մեծ գետի վրա։ Հաջողակ նետաձգությամբ Արշավիրն սպանեց նավավարներին և առաջացած շփոթից կործանվեցին նավակներն ու շատ պարսիկ մեծավորներ խեղդվեցին ջրի մեջ։ Այս հաղթանակը մեծ ոգևորություն պատճառեց հայոց փոքրիկ բանակին, որ կռվել էր իրենից մի քանի անգամ մեծ բանակի դեմ։ Այս պիտի ցույց տար նախ և առաջ, որ ուժը միայն թվի մեջ չէ։ Այսպես էր զորքի տրամադրությունը, երբ Արարատյան աշխարհից գուժկան հասավ և պատմեց, թե Վասակը և նրա կողմնակիցները դրժել են իրենց երդման և անցել պարսից կողմը։ Բայց այս լուրը, ոչ էլ նույնիսկ այն, որ նախարարական տղաները գերի են տարված, վհատություն կամ լքում չառաջացրին հայ զորքի շարքերում։ Տարած հաղթանակը նրանց առույգ ու ինքնավստահ առաջնորդեց մինչև Հայոց երկիրը, ուր արդեն ձյուն էր սկսվել, հետևաբար ոչ մի գործողություն չէր կարելի սկսել։ Վասակը քաշվել էր Սյունիք և այդտեղից էր գործում իրեն հատուկ եռանդով։ Նրա բազմաթիվ գործակալների մեջ կային և հոգևորականներ, որոնցից հականե հանվանե հայտնի են Ջանդակ երեցը, Սահակ Ջայնողը և Պետրոս Երկաթի քահանան։ Ինչպես երևում է, Աղվանքի պարտությունը հարկադրել էր Միհրներսեհին զիջումներով պակասեցնել ապստամբական շարժումը Հայաստանում, կղզիացնել Վարդանին ու նրա ընկերակիցներին և այդպիսով հեշտացնել նրանց նվաճումը։ Այդ զիջումների մասին Վասակը հայտնում է հայ ժողովրդին բազմաթիվ նամակներով, որոնք ուղարկվում էին ոչ միայն իշխաններին, այլև շինականներին և ամեն դասակարգի մարդկանց։ Արքայից արքայի անունից հայտարարվում էր, թե նա քրիստոնեություն էր շնորհում աշխարհին, ասել է՝ կրոնի ազատություն, մոգերի կոտորածի մասին պահանջ չունի, իսկ ապստամբության վերաբերմամբ կատարյալ ներում էր հայտարարում, բայց այն պայմանով, որ ամենքը հեռանան Վարդանից, որպեսզի նրա հետ չկորչեն։ Այս հայտարարությունը թուլություն և լքում մտցրեց հայկական ապստամբության շարքերի մեջ, բայց չկանգնեցրեց

1 Ենթադրվում է, որ Խաղխաղը գտնվում էր այժմյան Գանձակից քիչ հեռու, Ջագամ գետի վրա, այնտեղ, որ նա թափվում է Կուրի մեջ։

շարժումը։ Եվ պարսից կառավարությանը ոչինչ չէր մնում, բայց թե ավելի ընդարձակ պատերազմական գործողությունների վրա հենվել։

5. Ավարայրի ճակատամարտը: 451 թվականի վաղ գարնան պարսից զորքերը սկսեցին կենտրոնանալ Հեր և Զարևանդ գավառներում։ Այդ միջոցին, զատկական տոնի պատճառով, ապստամբության կողմնակից կամ ուխտապահ նախարարներից ոմանք հեռացել էին բանակից, գնացել էին իրենց երկրները։ Նրանց շտապով հետ կանչեցին։ Վարդանը վճռել էր պարսից բանակին հանդիպել Հայաստանի սահմանագլխում, որպեսզի թույլ չտա նրան մտնել երկիրը և ավերել։ Բայց Մուշկան Նիսալավուրտն էլ, որ պարսկական բանակի գլխավոր հրամանատարն էր, շտապեց մտնել Հայոց երկիրը, որպեսզի թույլ չտա հայ նախարարներին միանալ։ Երկու հակառակ կողմերը, իրար ընդառաջ գնալով, իրար հանդիպեցին Արտազ գավառում, Տղմուտ գետի ափին, Ավարայր գյուղի մոտ, որին վիճակվում էր մի բացառիկ նվիրական հուշակ ստանալ հայոց պատմության մեջ։

Եվ այսպես, հայկական ապստամբությունը վերջիվերջո գալիս հանգում է մի զինված մենամարտության, Հայաստանի և Պարսկաստանի միջև։ Այսպիսի մի մենամարտություն հայ երկրի համար անհնարին չէր լինի, եթե նա դաշնակիցներ ունենար, որոնք մեծացնեին նրա ուժը։ Ամբողջ 4-րդ դարում, քրիստոնեություն ընդունելուց հետո, Հայաստանը կարծում էր, թե միմիայն իր կրոնակցությունը բավական է, որ քրիստոնյա Արևմուտքը օգնության ձեռք կարկառի նրան ամեն անգամ, երբ նրա գոյությանը վտանգ էր սպառնում ասիական բռնակալությունը։ Բայց մենք շատ անգամ տեսանք[1], որ Բյուզանդիան, արևմտյան քրիստոնեությունը կամ, ուրիշ խոսքերով, քրիստոնյա եվրոպականությունը ներկայացնող քաղաքական մեծ ուժը, Հայաստանի վերաբերմամբ գործադրում էր իր շահերի քաղաքականությունը, որ, ոչ մի կապ չունենալով կրոնակցության կամ քրիստոնեության հետ, սիրում էր հաճախ վարագուրվել այդ գաղափարական անուններով։ Սակայն հայ գործիչների կրոնակցական հանգամանքն այնքան հիմնավոր նախապաշարմունք էր գոյացրել, որ նրանք շարունակ հավատում էին, թե իրենց կրոնակից Արևմուտքը երբեք չի թողնի, որ ահավոր Պարսկաստանը իր ոտների տակ ճմլի թույլ Հայաստանը։ Այս նախապաշարմունքը մեծամեծ աղետներ է պատճառել հայ ազգին, և այժմ էլ, Վարդանի օրով, կրկնվում էր նույն մեծ սխալը։ Մենք տեսանք, որ ապստամբության սկզբում հայերն առաջ ու առաջ դրին իրենց հույսը Բյուզանդիայի վրա և հատուկ պատգամավորություն ուղարկեցին Կ. Պոլիս։ Թե ո՛րքան Վարդանն ու իր կողմնակիցները թույլ քաղաքագետներ էին, ցույց է տալիս այն, որ նրանք նույնիսկ չկարողացան ըմբռնել, որ արևելյան մեծ կայսրությունը, վտանգված լինելով Դանուբ գետի կողմից 441 թվականից ի վեր, չէր կարող որևէ գործոն դեր կատարել Արևմտյան Ասիայում։ Այդ՝ այն ժամանակամիջոցն էր, երբ Դանուբի ձախ ափին կազմակերպվեց, իր անգթություններով հռչակված Ատիլլայի ղեկավարությամբ, հոների պետությունը, որ հանգիստ ու դադար չէր տալիս Բյուզանդիային։ Այստեղ 408 թվականից թագավորում էր Թեոդոս Փոքրը, մի ողորմելի և թույլ կրոնամոլ, որ ամբողջապես գտնվում էր իր քույր Պուղքերիայի, կուսության ուխտ արած մի ավելի մեծ կրոնամոլի խնամակալության

[1] Տես այս գործի առաջին հատորը, Ե մաս, գլ. 4—5։

տակ։ Ատիլլան իր արշավանքները հասցրեց մինչև Կ. Պոլսի դռները, և Թեոդոսն ստիպված էր ընդունել նրա թելադրած պայմանները, այն է՝ տալ միանվագ պատերազմական տուգանք և ամեն տարի էլ՝ հարկ։ Հանգստություն չուներ Թեոդոսը. շարունակ կամ Ատիլլայի արշավանքներն էր հետ մղում, կամ նրա դեսպաններին ընդունում[1]։ Ահեղ թշնամուց ազատվելու համար Թեոդոսը սպանության փորձ կազմակերպեց նրա դեմ, բայց դավադրությունը բացվեց և Ատիլլան հատուկ դեսպանություն ուղարկեց Կ. Պոլիս՝ հայտարարելու համար կայսրին, թե նա մի «զզվելի ստրուկ» է։

Ահա այսպիսի դրության մեջ գտնվող մի կայսրության և այսպիսի մի կայսրի վրա հույս դնելով էր հունական կուսակցությունը Հայաստանում ապստամբություն սկսում Պարսկաստանի դեմ։ Բայց երբ հայ պատգամավորությունը հասավ կայսրության մայրաքաղաքը, Թեոդոս Փոքրն արդեն մեռած էր։ Պուղքերիա կույսն իր անվանական ամուսին դարձրեց զառամյալ ծերունի Մարկիանոսին, որ և կայսր դարձավ և իր նախորդից անհամեմատ բարձր հանդիսացավ հոգեկան արիության կողմից։ Հայ պատգամավորությունն այս վճռական ու կամքի տեր ծերունում դիմեց, բայց իզուր։ Հենց այդ միջոցին Մարկիանոսը սաստիկ մրցության մեջ էր Ատիլլայի հետ։ Կայսրը մերժեց հարկ տալ հոների բազմահռչակ թագավորին և ասաց, թե նրա հետ կխոսի երկաթով, այսինքն՝ պատերազմով։ Եվ Ատիլլան, այս կտրուկ սպառնալիքի ազդեցությա՞ն տակ արդյոք, թե ստիպված և ուրիշ պատճառներից, թողեց Դանուբի հովիտը և անցավ Արևմտյան Եվրոպա։ Պարզ է ուրեմն, որ Մարկիանոս կայսրը, եթե կամենար անգամ, չէր կարող՝ հայերին օգնելու համար՝ պատերազմ սկսել Արևելքում։ Ղազար Փարպեցուն հայտնի են մի շարք մանրամասնություններ այն բանակցություններից, որ հայ պատգամավորությունը վարեց բյուզանդական արքունիքի հետ։ Մարկիանոսը խորհուրդ հարցրեց,— ասում է նա,— Անտիոքի սպարապետ Անատոլից և Փլորենտ անունով սիրիացի պալատականից, թե ի՛նչ դիրք պետք է բռնել հայերի դիմումի առիթով։ Երկու կարևոր պաշտոնյաներն էլ պատասխանեցին, թե կայսրը ոչ մի կարիք չունի խառնվելու հայ-պարսկական վեճի մեջ։ Բյուզանդիան բարեկամական դաշինքներով կապված է պարսից թագավորների հետ, չի կարող պատերազմի բռնվել նրանց հետ և մանավանդ չպիտի նպաստի, որ մի ամբողջ երկիր դուրս գա իր թագավորի ծառայությունից։ Կայսրը հավանեց այս խորհուրդը։ Իսկ Եղիշեն ավելացնում է և հետևյալը. «Իսկ անարիս այս (Մարկիանոսը) լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան՝ քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան։ Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից զնոյն Փղորէնտիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ»[2]։

Անհաջող անցան հայերի բանակցությունները և ուրիշ տեղերի հետ։ Հունական Հայաստանի իշխաններից ոչ մեկն էլ չկամեցավ օգնություն հասցնել ուխտապահ նախարարներին։ Եղիշեն հավատացնում է, որ այդ բոլորի պատճառը դարձյալ Վասակ Սյունին էր, որ կարողացավ իր նամակ-

[1] **Э. Лависс и А. Рамбо**, Всеобщая история, т. I, М., 1897, стр. 74.

[2] Եղիշէ, եր. 111։ 5-րդ դարի այս դիվանագիտական պատկերը չափազանց բնորոշ է եվրոպական քաղաքականության վերաբերմունքը դեպի Հայոց հարցը պարզելու համար։ Այս պատկերը կրկնվել է և այնուհետև անթիվ անգամ, մինչև նույնիսկ մեր օրերը։

ների և գործակալների միջոցով ներկայացնել դրությունն այդ իշխողներին այնպես, որ նրանք ավելորդ համարեցին պաշտպանել Վարդանին։ Հարավային Հայաստանի իշխող Վասակ Մամիկոնյանը Վասակ Սյունեցու գործակիցը հանդիսացավ, և Եղիշեն ասում է. «Եգիտ այս Վասակն զայն Վասակն իւր գործակից ի մեծամեծ չարիսն՝ յոր միաբանեցին երկոքեանն»[1]։ Նույնպես Վասակ մարզպան էր, որ քանդեց հայոց միաբանությունը վրացիների հետ։ Միայն լեռնական հոներն էին, որ հավատարիմ մնացին իրենց նախկին խոստման և գնդեր ուղարկեցին, բայց ոչ թե հայոց բանակին միանալու համար, այլ պարսկական գավառները թալանելով ու ասպատակելով վերադարձան իրենց տեղերը, այսպիսով ցույց տալով պարսիկներին իրենց համերաշխությունը հայերի հետ։

Վասակը շատ լավ էր զգում, որ վայրկյանը միանգամայն հարմար էր իր ծրագրած բոլոր նպատակների համար և մի ուրիշ անգամ այլևս չպիտի կրկնվի։ Ուստի աշխատում էր ամբողջ եռանդով, բաց արած իր բոլոր խաղաթղթերը, կանգ չառնելով և ոչ մի արգելքի առջև։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նրա և նրա կողմնակից նախարարների գնդերը խառնվեցին պարսից բանակի հետ՝ հայրենի երկրի դեմ կռվելու համար։ Երևույթը չափազանց վատ վկայություն կլիներ Վասակի և նրա ընկերակիցների համար, եթե նա եզակի լիներ հայոց պատմության մեջ և եթե տեղի ունեցած չլիներ մի ավատական երկրում, որի ամբողջ իրականությունը հյուսված է ազգամիջյան կռիվներից և առանձնական շահերի հրեշավոր բորբոքումից։

Թվում է, թե Վարդանն ու իր կողմնակիցները պիտի համարեին իրենց գործը պարտության մատնված։ Եվ իրավ, երկու պատմագիրների ցուցմունքները միաբան են, որ հաղթանակի վրա Վարդանանք ոչ մի հույս չունեին։ Նրանց այնուհետև ոգևորում էր միայն նահատակվելու ցանկությունը։ Փարպեցին մանավանդ, համարյա ամեն տողում, շեշտում է այս հանգամանքը։ Մենք իրավունք ունենք չհավատալու, թե իրողությունն այնպես էր ամենքի համար։ Այսպես, չի կարելի հավատալ, թե ճիշտ որ, երբ զատկական տոների առիթով իրենց տները գնացած նախարարներին հրավերներ ուղարկվեցին, որ շտապեն հավաքվելու հայոց բանակի մեջ, այդ հրավերների մեջ այն միայն ասված լիներ, ինչ հիշատակում է Փարպեցին, այն է, թե՝ «Գունդ բաղում հասեալ դայ, բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ՝ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեսցէ՛ք, զի մի վրիպեսցի ոք և զղջանայցէ։ Եւ եթէ ոք խորհի այլազգ ինչ, որպէս և այլքն, որք խոտորեցան զկնի սատանայի՝ դադարեալ հանգիցէ՝ ուր և թուեսցի հաճոյ ումեք»[2]։ Ճիշտ չէ և այն, թե ամենքը գնում էին այդ հրավերը կատարելու, ինչպես ոչխարների հոտը, որ վազում է դեպի աղը և թե ամենքը մի սիրտ և մի հոգի էին դառել։ Հայոց աշխարհի նույնիսկ այն մասը, որ վճռել էր կռվել հայկական լուսավորության համար, սովորական մի մարդկային զանգված էր, որ ապրում էր առօրյա շահերով և գործում էր իր կյանքը կարգավորելու համար։ Ուխտապահ նախարարների մեծ մասը նույնիսկ անգրագետ էր։ Եթե լոկ նահատակվելը լիներ ընդհանուր ցանկությունը, այն ժամանակ կարիք էլ չէր մնա պատերազմի պատրաստվելու, զորք ու բանակ կազմակերպելու համար։ Մինչդեռ մենք տեսնում ենք,

[1] Եղիշէ, եր. 144։
[2] Փարպեցի, Բ, Լէ։

որ Վարդանը շատ աշխատեց իր բանակին բարեկարգ դիրք տալու համար։ Նրա հրամանատարության տակ հավաքված զորականների թիվը, հետևակ թե ձիավոր, Եղիշեն հաշվում է 66 հազար։ Բայց այս, անկասկած, չափազանցրած մի թիվ է։ Հայոց աշխարհի զանազան կողմերից հավաքվել էին խառնիճաղանջ բազմություններ, մեծագույն մասամբ, անկասկած, շինականներ, և Վարդանն իր տրամադրության տակ մնացած կարճ միջոցը գործ դրեց այդ բազմությունները կրթելու, վարժելու և խրախուսելու համար։ Այսպես, նա հագուստ էր բաժանում չունեցողներին, ով զենք չուներ՝ նրան զենք էր տալիս, և առհասարակ ռոճիկ էր կապում զորականներին[1]։ Այս նյութական խրախույսներին ընկերանում էր և խոսքի խրախույսը։ Թե՛ ինքն սպարապետն էր անձամբ խոսում զինվորների հետ, ոգևորում նրանց քաջաբար կռվելու գաղափարով, թե՛ հոգևորականները և նրանց մեջ մանավանդ Ղևոնդ երեցը խոսք խոսում, քարոզում ու քաջալերում։

Եվ այսպես, ամբողջ հայ ժողովուրդը ոչխարային զգացմունքով չէր դեպի աղ վազում։ Այդ ժողովրդի մեջ մինչև հետին ժամը տիրում էին աշխարհային շահերն ու ձգտումները։ Եվ եթե ճիշտ որ կար և գաղափարական անձնազոհության մղումը, այդ մենք պիտի որոնենք շարժումը ղեկավարողների մեջ։ Եղիշեն այս մասնավոր շրջանակների տրամադրությունը գեղեցիկ կերպով է նկարագրում հետևյալ տողերի մեջ. «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկեւղս առնէ զմարդիկ՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս։ Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրև զանարի՝ գոլով վատասիրտք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն, ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն յօտարութեան. առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. և ամենայն երևելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց։ Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիտից»[2]։ Եղիշեի սխալն այն էր միայն, որ այս բարձր տրամադրությունը վերագրում էր Հայոց ամբողջ աշխարհին։ Ապացույց՝ հենց ինքը Ավարայրի հռչակավոր պատերազմը, որ տեղի ունեցավ 451 թվականի մայիսի 26-ին, շաբաթ օր։

Վարդանի հետ այս պատերազմին մասնակցում էին քսաներեք նախարարներ։ Սպարապետը հարդարեց պատերազմական ճակատը, բաժանելով իր զորքը, ըստ սովորության, երեք մասի. աջ թևի հրամանատարությունը հանձնեց Խորեն Խորխոռունուն, որին օգնականներ էին տրվում Թաթուլ Վանանդեցին և Ներսեհ Քաջբերունին. կենտրոնի հրամանատար կարգվում էր Ներշապուհ Արծրունին և նրա օգնականներ՝ Միհրշապուհ իշխանը Մարդպետական տոհմից, Արշավիր Կամսարականը և Արտակ Մոկացին։ Ինքը սպարապետը վերցնում էր ձախ թևը, որ պիտի գործեր գլխավորապես Սյունյաց գնդի դեմ, և նրա օգնականն էր Փափագ Առավե-

[1] Եղիշէ, եր. 151—152։
[2] Անդ, եր. 161—162։

ղյանը։ Վերջապահ զորամասի հրամանատար նա թողնում էր իր եղբայր Համազասպյանին, պատվիրելով նրան բռնություններ չգործադրել այն մարդկանց վերաբերմամբ, որոնք չեն ուզում պատերազմել։

Պարսկական բանակը, ինչպես երևում է, շատ ուժեղ էր։ Այս ցույց էր տալիս նախ և առաջ այն հանգամանքը, որ բերվել էին նաև ռազմիկ փղեր, ինչպես նաև Մատյան գունդը, որ անպարտելի էր համարվում. պարսից բանակի մեջ գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտը ղեկավարում էր պատերազմական գործողությունները մի բարձր տեղից։ Ուժերի անհավասարությունը չափազանց ակներև էր, և մի բուռն հայ ոգորողներին իսկապես կարելի էր համարել անձնազոհներ, որոնք վճռել էին մեռնել։

Պատերազմն սկսվեց վաղ առավոտից։ Միաժամանակ երկու կողմերը հարձակվեցին իրար վրա, և եղավ մի ժամանակ, երբ հայերն առաջ մղվեցին և փախցրին պարսիկներին, որոնք հավանորեն առաջապահ խմբերից էին։ Ստանալով օգնական ուժ, պարսիկները մեծ թափով հարձակվեցին հայերի վրա, որոնց դիմադրությունը շատ կարճ եղավ։ Լքում առաջացավ նրանց շարքերի մեջ, և նրանք սկսեցին փախչել։ Շատերը, ասում է Փարպեցին, ստիպմամբ էին մասնակցում կռվին և ոչ թե հոժարակամ։ Կային և այնպիսիները, որոնք մտել էին հայոց շարքերը դիտմամբ, կազմալուծություն և վհատություն տարածելու համար։ Սրանք, անշուշտ, Վասակի և նրա կողմնակիցների գործակալներն էին։ Տեսնելով հայերի փախուստը, պարսից զորքը սկսեց շրջապատել նրանց և կոտորել, իսկ շատերին էլ վրա հասավ պատերազմի դաշտից դուրս, արգելեց ամուր տեղերում և՛ կոտորեց, և՛ գերի բռնեց։ Հայերի պարտությունը կատարյալ էր։ Թե ո՛րքան քիչ էր նրանց թիվը, բայց միևնույն ժամանակ ո՛րքան ուժեղ նրանց դիմադրությունը, ցույց են տալիս նրանց կորուստները։ Պատերազմի դաշտում սպանվեցին ընդամենը միայն 286 մարդ, իսկ փախստականներից և լեռներում ամրացածներից սպանվածների և փղերի ոտների տակ տրորվածների թիվն էր արդեն 750 մարդ, մի թիվ, որի համեմատական խոշորությունը հասկանալի է։ Ընդամենը միասին հայերը կորցրին 1036 մարդ, որոնք և համարվում են հայ եկեղեցու համար զոհված մարտիրոսներ։ Բայց հայոց կորուստների ամենամեծ ծանրությունն այն էր, որ սպանվեց և Վարդան սպարապետը երկար ու քաջ կռվելուց հետո։ Նրա հետ ընկան պատերազմի դաշտում և ութ ուրիշ նախարարներ։ Եղիշեն հետևյալ կերպով է թվարկում այդ կորուստները. «Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարեւր երեսուն և երեք արամբք։ Յազգէն Խորխոռունեաց Խորէնն կորովի ինն և տասն արամբք։ Յազգէն Պալունեաց արին Արտակ յիսուն և ութն արամբք։ Յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ իննևտասն արամբք։ Յազգէն Դիմաքսենից իմաստունն Հմայեակ քսան և երկու արամբք։ Յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ ութն արամբք։ Յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք։ Յազգէն Ընծայնոց արդարն Արսէն ութն արամբք։ Յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն և ութուտասն արամբք»[1]։ Վարդանանց զորավարներին և նրանց հետ սպանված 1036 զինվորներին հայոց եկեղեցին սրբերի դասն է կարգել և տոնում է ամեն տարի Բարեկենդանին։

Ինչ վերաբերում է պարսից կորուստներին, Փարպեցին հավատացնում

[1] Եղիշէ, էջ. 187—188։

է, թե ինքը լավ տեղեկացել է և հաստատ աղբյուրներից իմացել է, որ պարսկական բանակը կորցրել է Ավարայրի դաշտում 3544 հոգի։ Եթե այս ճիշտ է, այն ժամանակ մենք մի նոր վկայություն կունենանք, թե որքան քաջաբար կռվեցին հայոց մի բուռն ուխտապահները և որքան թանկ գնով ծախեցին իրենց կյանքը այն 286 մարդիկ, որոնք մեռան Ավարայրի ճակատամարտում 451-ի մայիսի 26-ին։ Այդ ճակատամարտի մի բանաստեղծական նկարագրությամբ, որ թողել է Եղիշեն, մենք լրացնում ենք մինչև այժմ մեր տված պատկերը. «Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նա և ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային։ Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին։ Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեան՝ զգետն ի մէջ փակէին... Եւ յերկարեալ գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք մահու հասանէին. մանաւանդ ի թանձրութենէ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց։

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց։ ․․․Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմռնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարհումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն»[1]։

6. Հետևանքներ: Ընդհանուր առմամբ Ավարայրի ճակատամարտը խոշոր պատերազմական գործողության կերպարանք ստացավ։ Մուշկան Նիսալավուրտն շտապում էր հայտնել Հազկերտին, որ կատարյալ հաղթանակը պարսիկների կողմն է։ Բայց պատերազմն իր ընդունած չափերով և իր տարած զոհերով շատ ճնշող տպավորություն է թողնում Պարսից արքունիքի վրա։ Հայերը զուրկ չէին մնացել բարոյական հաղթանակից, ապացուցելով, թե ինչպես կարող են նրանք դիմադրել։ Եվ բացի դրանից, Ավարայրի դաշտում վեճն ամբողջովին չէր վերջացել և հայկական ապստամբությունը, դուրս գալով դաշտային ճակատամարտի դրությունից, ընդգրկում էր լեռնային մանր պատերազմների բնավորություն։ Հայոց միջնաշխարհը պարսիկների ձեռքում էր մնում։ Բայց Վարդանի զորքի մնացորդները քաջ-

[1] Եղիշէ, էջ. 183—187։

վել էին Հայաստանի ամուր և անտառոտ ծայրագավառները՝ Տայք, Արցախ, Տմորիք, և այդտեղ պաշտպանվում էին և հարձակվում։ Վասակ մարզպանը պատերազմից հետո ավելի կատաղեցրեց իր հալածանքների թափը։ Նա ձերբակալեց և իր Սյունիքի բերդերում արգելեց հոգևորականության ամենանշանավոր ներկայացուցիչներին, որոնք ապստամբության հոգին էին եղել—Հովսեփ կաթողիկոսին, Ղևոնդ երեցին, Սամվել և Աբրահամ քահանաներին, Ռշտունյաց եպիսկոպոս Սահակին, Արծրունյաց Ներշապուհ իշխանի դրան երեց Մուշեին, Բասենի եպիսկոպոս Թաթիկին, Արշեն երեցին, Քաջաջ սարկավագին։ Սրանք բոլորն ուղարկվեցին Պարսկաստան իբրև պետական հանցավորներ։ Վասակը նմանապես արքունի դուռն ուղարկեց Մամիկոնյան, Կամսարական և այլ տոհմերի նախարարական տղաներին։ Նրանց մեջ էին Վարդան սպարապետի եղբայր Հմայակ Մամիկոնյանի երեք զավակները—Վահան, Վասակ և Արտաշես։

Այլևս կարիք չէր մնում, որ պարսից բանակը շարունակի գրավել Հայաստանը, և Մուշկան Նիսալավուրտը հրաման է ստանում Հազկերտից իր զորքով վերադառնալ Պարսկաստան։ Խոշոր կորուստները, որ կրել էին երկու կողմերը, հարկադրեցին Միհրներսեհին հաշտեցնող քաղաքականության դիմել։ Ամենամեծ զիջումը, որ արվում էր հայերին, այն էր, որ Վասակ իշխանը հանվում էր մարզպանության պաշտոնից։ Նա այլևս հարկավոր չէր պարսից քաղաքականության, և ինչպես լինում է միշտ համանման դեպքերում, Սյունյաց գոռոզ ու փառամոլ իշխանին թողնվում էր լիուլի վայելել դեն շպրտվածի և արհամարհվածի վիճակը։ Բայց հասկանալի է, թե ո՛րքան մեծ բավականություն պիտի պատճառեր Վասակի այս անփառունակ անկումն ուխտապահներին և առհասարակ Հայոց ամբողջ ավերված աշխարհին։ Նոր մարզպան նշանակվում էր Հայոց աշխարհում գտնված պարսկական նախարարներից մեկը, որի անունն էր Ատրորմիզդ Արշական։ Պարսից կառավարությունը ներում չէր շնորհում ապստամբության գլխավորներին, բայց և չէր ուզում ամբողջ երկիրը ահաբեկման ենթարկված պահել։ Ուստի հրամանագրում էր նոր մարզպանին շարունակել հալածանքը ապստամբների դեմ, բայց սիրաշահել ազգաբնակությանը, կրոնական հարցեր չհարուցանել և առհասարակ ամեն կերպ խրախուսել, որ ժողովուրդը վերադառնա իր խաղաղ շինարարական պարապմունքներին։

Իսկ Վարդանի գործակից նախարարներից շատերը իրենց զորագնդերի հետ հեռացան Տայոց աշխարհն, ուր Պարխար անունով մեծ լեռներում ամրացել էր Հմայակ Մամիկոնյանը։ Ինչպես տեսանք, նա գլուխ էր այն պատգամավորության, որ ուղարկվեց Կ. Պոլիս՝ խնդրելու կայսրի օգնությունը։ Բանակցությունները ուշացրին այդ պատգամավորությունը Բոսֆորի մայրաքաղաքում։ Իսկ երբ վերադառնում էր նա, արդեն սկսվել էր պարսկական պատերազմը։ Թեև Հմայակը շատ էր աշխատում, որ շտապով հասնի իր եղբորը օգնության, բայց ուշացավ և ստիպված եղավ քաշվել մի լեռնային ամրություն՝ Որջնհաղ գյուղի մոտերքում։ Այդտեղ ժողովվեցին Վարդանի բանակի մնացորդները և այդտեղ գնաց նաև պարսից ու սյունյաց գնդերից կազմված մի զորաբաժին, որի հրամանատարներ էին կարգվել Արտեն Գաբեղյանը և Վարազշապուհ Պալունին, Վասակի կողմնակիցներից։ Ատրորմիզդ մարզպանն էլ գտնվում էր այդ պարսկա-սյունի բանակում, որին հանձնարարված էր հետապնդել լեռներում ամրացած իշխաններին։ Վերջապես մի օր իջնում են իրենց թաքստոցից Որջնհաղ գյուղը և

մնում են այնտեղ գիշերելու։ Պարսիկներն ու սյունեցիներն իմանում են այդ և վաղ առավոտյան հարձակվում են քնած գյուղի վրա։ Հանկարծակիի եկած իշխանները հազիվ կարողանում են, ոմանք նույնիսկ բոլորովին առանց զենքի, հասնել իրենց ձիերին։ Կռիվ է սկսվում գյուղամիջում և այգեստաններում։ Շատերն են ազատվում փախչելով, բայց ընկնողներ էլ են լինում։ Սրանց մեջ էր և Հմայակ Մամիկոնյանը, որի մահը լքում է առաջացնում ապստամբների զորաբաժնի մեջ, որ և քաշվում է լեռների ամրությունները։ Հետապնդող պարսիկներն ու սյունեցիները այլևս չեն կարողանում շարունակել իրենց գործողությունները։

Անընկճելի են մնում հայ ապստամբները և ուրիշ լեռնագավառներում։ Այսպես, Արցախի թանձրախիտ անտառներում ամրացածները, իրենց դավանակից աղվանների միջոցով, անշուշտ, բանակցություններ են վարում Կովկասյան լեռների հոն ցեղերի հետ, նրանցից օգնական գունդ են ստանում և հարձակումներ գործում պարսկական գավառների վրա։ Հաջողակ էին և հարավային ծայրագավառներում գործողները։ Այստեղ էր Կորդվաց աշխարհը, որը, ինչպես և Արցախն ու Տայքը, բուն հայկական երկիր չէր և կոչվում էր նաև Տմորիք։ Այժմյան Քրդստանի այդ լեռնոտ մասը 5-րդ դարում այնքան լավ հայացված ու քրիստոնեացված էր, որ Վարդանանց գործի մեջ ինչպես թելադրում են և Թովմա Արծրունու ու Հովհաննես կաթողիկոսի վերևում մեր հիշատակած ավանդությունները, կատարեց շատ նշանավոր դեր։ Տմորիքում ամրացածները, անկասկած, տեղական ազգաբնակության հուժկու աջակցությամբ, իջնում էին Միջագետքի դաշտը և ավերում պարսկական հողերը։

Լեռնային ապստամբության այս հաղթական հաջողությունները ցույց էին տալիս, թե որքան մեծ սխալ էր գործել Վարդան Մամիկոնյանը, դաշտային մեծ ճակատամարտ տալով պարսից բանակին։ Եթե չլիներ այս սխալը, եթե Ավարայրի պատերազմը տեղի ունեցած չլիներ և երկիրը դիմած լիներ ուղղակի այն պատերազմական ձևին, որ հատուկ էր նրան դեռ հռոմայեցիների ժամանակից, Ատրորմիզդ մարզպանը զինվորական միջոցներ, ինչպես և ժամանակ շատ պիտի վատներ հայերի դեմ մաքառելու համար։ Բայց այժմ, երբ երկիրը ծանր կորուստներ էր տվել, լեռնային նույնիսկ հաջողակ ապստամբությունն էլ երկար չէր կարող օգնել հայերին։ Ուստի, երբ Ատրորմիզդ մարզպանը, դեն դնելով զենքը, խաղաղ բանակցությունների միջոցին դիմեց, հայ նախարարներին այլևս ոչինչ չմնաց, բայց միայն համաձայնության գալ։ Նրանք հաստատ խոստում էին ստանում, թե իրենց կալվածները հարքունիս չեն գրավվի և իրենք էլ անձնապես ոչ մի պատասխանատվության չեն ենթարկվի։ Այս պայմանով էլ նախարարներն իջան լեռներից, բայց նրանց սպասում էր Արևելքում այնքան սովորական ուխտադրժությունը։ Ամենքին մարզպանը կալանավորում է և ուղարկում Հազկերտին՝ նրանց, իբրև ապստամբների, դատելու համար։ Թակարդի մեջ ընկած նախարարներին մնում էր իրենց մեղքը գոնե թեթևացնելու համար բաց անել Վասակ մարզպանի արարքները, ապացուցել, որ նա ոչ միայն իրենց մեղսակիցն է եղել, այլև ամբողջ շարժման սկզբնապատճառը։ Վասակն էլ կանչվեց արքունի դուռը, ինչպես արդեն տեսանք։

Այստեղից Վարդանանց շարժման պատմությունը տեղափոխվում է Պարսկաստան և ընդունում է համարյա բացառապես վկայաբանական կեր-

պարանք, լի, ինչպես կարգն է, միտումնավոր պաճուճանքներով, հրաշքներով։ Այս շատ մանրամասն, միաժամանակ և շատ միակողմանի նյութը տալիս է մեզ մի քանի հետաքրքրաշարժ պատկերներ Իրանում տեղի ունեցած դեպքերից։

7. Դատաստան։ *Ամենից գլխավորն էր, իհարկե, հայոց ապստամբության դատը, որ տեղի ունեցավ Տիզբոնում։ Դատում էր ինքը Հազկերտը։ Մեղադրվում էին ութ քահանաներ և երեսուն և մեկ նախարարներ*[1]*։ Վասակն արքունիքին ներկայացավ սկզբում ոչ իբրև մեղադրվող։ Նրան Տիզբոնում ընդունել էին պատշաճավոր պատվով, ինչպես վայել էր մի շատ բարձրաստիճան պաշտոնյայի, որ վարձատրված էր արքայից արքայի ուշադրության և բարյացակամության ամենաբարձր նշաններով։ Փարպեցին հավատացնում է, թե Վասակին պակասում էր միայն թագավորական պատիվը, իսկ Եղիշեն նկարագրում է և նրա զգեստն ու զարդարանքը. «...արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբն»*[2]*։ Առհասարակ Վասակն ամեն հիմք ուներ սպասելու, թե արքայից արքան այս անգամ էլ իրեն կանչել է վարձատրելու համար այն բոլոր ծառայությունները, որ նա մատուցել էր արյաց ազգին իր այնքան հավատարիմ մարզպանությամբ*[3]*։*

Հազկերտը բաց անելով դատարանի նիստը, հարց է տալիս մեղադրվող հայ նախարարներին. «Ի՞նչ համարձակությամբ կամ ի՞նչ մտածելով, ի՞նչ

---

[1] Ահա դրանց ցանկը. Սյունյաց տոհմից երկու եղբայրներ՝ Բաբկեն և Բակուր (Վասակի հորեղբոր որդիները, որոնց նա դուրս էր արել Սյունիքից, նրանց հորը սպանելուց և իշխանությունն այդպիսով հափշտակելուց հետո), Արծրունյաց տոհմից՝ Ներշապուհ, Շավասպ, Շնգին, Գարգե և Տաճատ, Մամիկոնյան տոհմից՝ Համազասպյան (Վարդանի եղբայրը), Համազասպ, Արտավազդ և Մուշեղ, Կամսարականների տոհմից՝ Արշավիր, Թաթ և Վարձա, Ամատունյաց տոհմից՝ Վահան, Առանձար և Առնակ, Գնունյաց տոհմից՝ Ատոմ, Դիմաքսյան տոհմից՝ Թաթուլ և Սատո, Անձևացյաց տոհմից՝ Շմավոն և Առավան, Առավեղյան առաջին տոհմից՝ Փափակ, Վարազդեն և Դատ, Արծրունիներից՝ Ապրսամ, Մանդակունիների տոհմից՝ Սահակ և Փարսամ, Տաշրացիների տոհմից՝ Վրեն, Ռոփսենից տոհմից՝ Բաբիկ և Հոհան։ Եղիշեն սրանց վրա ավելացնում է Մեհրուժան Արծրունի, Ներսեհ և Աշոտ Կամսարական, Ջուարեն Անձևացի։

[2] Եղիշէ, *եր. 214։*

[3] Ղազար Փարպեցու պատմելով՝ Վասակը ճանապարհին հանդիպում է կալանավոր քահանաներին, որոնք խոսակցություն են սկսում նրա հետ, կարծես, բոլորովին մոռացած՝ թե ինչ է պատահել։ Իջևանում նրանք նույնիսկ միասին ճաշում են։ Եվ երբ Վասակը հրաժեշտի ողջույն տալով, ուզում էր հեռանալ, միայն այդ միջոցին Ղևոնդ երեցը կանչում է նրան «Սյունյաց տեր, Սյունյաց տեր», և երբ նա պատասխանում է՝ «Ի՞նչ եք կամենում, տյարք», Ղևոնդը հարցնում է, թե ո՛ւր է նա գնում։ Վասակը պատասխանում է, թե գնում է իր տիրոջից, այն է՝ արյաց արքայից պատիվներ ստանալու։ Եվ Ղևոնդ երեցն ասում է. «Այդպես քեզ կարծել է տալիս այն դևը, որ խաբեց քեզ և դրդեց դրժել սուրբ Ավետարանի վրա արած երդումդ, մոլորեցնելով, թե միայն Հայոց աշխարհի թագավորությունն է, որ արիները կարող են տալ քո վաստակների արժանի հատուցումը։ Բայց ոչ մի բան նրանք քեզ տալ չեն կարող, և եթե դու մեկ էլ գլուխդ ուսերիդ վրա կենդանի տանես Հայաստան, ապա ուրեմն ինձ հետ տեր աստվածը չէ խոսեցել»։ Եվ Ղևոնդի այս, ըստ Փարպեցու, ամենասուրբ մարդու գուշակությունը կատարվեց։ Բայց կարիք չկա ասելու, թե այս բոլորը վկայաբանական հերյուրանքներ են։

պատրանքով կամ օգնականության ի՞նչ ուժ տեսնելով էր՝ դուք դիմեցիք այդ ահավոր գործին, որի մեջ տեսնում էիք ձեր անձանց և աշխարհի կորուստը, ինչպես որ էլ եղավ իրոք և դուք տեսաք»։ Նախարարները մի շատ խղճուկ դիրք են բռնում դատող բռնակալի առջև։ Հազկերտը նորից կրկնում է իր հարցը, և միայն այս անգամ նախարարները խնդրում են, որ իրենց բոլորի կողմից խոսելու թույլտվություն տրվի Արշավիր Կամսարականին։ Եվ երբ այդ խնդիրքը կատարվում է, Արշավիրը, Վասակի նամակները ձեռքին, ինչպես տեսանք վերևում, հանդես է գալիս լոկ նրան մեղադրելու։ Այդ մեղադրանքները մեզ արդեն հայտնի են—Վասակն էր բուն սկզբնապատճառը, նա էր, որ հետ դարձրեց Վարդան Մամիկոնյանին փախուստից, նա էր, որ նամակ գրեց կայսրին։ Եվ արդարացման ուրիշ միջոցներ չեն հաղորդում Փարպեցին ու Եղիշեն։ Չէ՞ որ Վասակի կատարած առաջին քայլերից հետո նրանք, այդ նախարարներն էին ապստամբություն բարձրացնողները, Ավարայրի դաշտում կռվողները։ Այս և սրանց պես ուրիշ շատ եղելությունների մասին խոսք չունեցա՞ն արդյոք հայոց նախարարները։ Թեև Վասակ Սյունին բացատրություններ տվել է արքայից արքային, բայց այդ բացատրություններից մի հատն էլ չեն բերում նրա թշնամի պատմագիրները, և մենք արդեն նկատեցինք, որ այդ դատաստանական գործն էլ միակողմանի կերպով է ներկայացված։ Չի կարելի չնկատել առհասարակ, որ նախարարների դիրքն այս դատարանում բոլորովին վայել չէր ապստամբության պարագլուխ եղած և այնքան մեծ իրարանցումների պատճառ հանդիսացած մարդկանց։ Զարմանալի են թվում նահատակության տենչով լցված այդ գործիչները, որոնք մի բառ անգամ չեն արտասանում պարսկական ռեժիմի դեմ, որ երկիրը հասցրել էր ապստամբական դրության։ Վարդան Մամիկոնյանի համհարզները վախկոտների կերպարանքով են կանգնած դատարանում, աշխատում են մեղն ուրիշների վրա գցել, ձևանալ չքմեղ և արդարացում որոնել ուրիշին մատնելու և մեղադրելու մեջ։ Այսպես չեն հոգևորական մեղադրվողները։ Համարձակ են նրանք, ոչինչ չեն ուրանում և բացարձակ կերպով ցույց են տալիս, թե ի՞նչ անարդարությունների դեմ են նրանք բողոքել։ Եվ խկույն երևում է, որ շարժման հեղինակներն իսկապես թարգմանիչներն ու նրանց աշակերտներն են եղել։ Իսկ նախարարական տոհմերը այդ պայքարի մեջ բռնել են այն դիրքը, ինչ հետևում էր նրանց տիրապետական շահերի տեսակետից։

Հազկերտի դատարանը մահվան դատապարտեց ապստամբներին։ Ջինայեցին և Վասակին։ Նրանից խլվեցին բոլոր պատվանշանները, զարդարանքները։ Բացի դրանից՝ նա ենթարկվում էր ահագին տուգանքի, որովհետև նրա վրա բարդվում էր և այն մեղադրանքը, թե նա յուրացրել է արքունի հարկերը։ Այդ տուգանքը վճարելու համար Վասակը ստիպված եղավ ծախել իր բոլոր անձնական և տոհմային հարստությունները։ Պարսից արքունիքում կատարվում էր մեկը շատ սովորական դեպքերից, երբ միապետի մի ակնարկով աղքատության, անհայտության, հաճախ նաև մահվան փոսն էր գլորվում երեկվա ամենակարող սատրապը, որ թագավորական փառք էր վայելում իր կառավարության հանձնված երկրի մեջ։ Վասակը ոչնչանում էր իբրև տիրող։ Եղիշեն ասում է, թե նրա համար նույնիսկ հաց էին մուրում նրա ծառաները։ Բայց կարելի է այստեղ և չհավատալ Եղիշեին, այնքան անզուսպ է նրա թշնամությունը դեպի Վասակը։ Նա է, որ շարունակ Վասակին ուրացող է անվանում, այսինքն քրիստոնեու-

ծյունը թողած և զրադաշտականությունն ընդունած։ Բայց Փարպեցին, որ պակաս թշնամական վերաբերմունք չունի, ոչ մի տեղ նույնիսկ ակնարկով չի հիշեցնում, թե Վասակը ճիշտ որ ուրացել էր քրիստոնեությունը։ Այսպես էլ մնաց նա Պարսկաստանում, արքունի դրանը, մինչև որ մեռավ 68 տարեկան հասակում, ինչպես ենթադրվում է, 455 թվականին։ Իզուր էր նա այնքան մեծ ջանքեր գործ դրել հայկական շարժումը կանգնեցնելու համար։ 451-ի պատերազմը ճակատագրական եղավ և՛ նրա համար։ Նրա անկումը միայն կալանավորված հայ նախարարները չպատրաստեցին։ Միհրներսեհը հասել էր իր նպատակին, ջլատելով և թուլացնելով Հայոց աշխարհը, թեև Հայոց աշխարհն էլ իր կործանման գնով հաղթել էր նրան, պահպանելով իր եկեղեցու գոյությունը։ Վասակն այնուհետև պիտի հեռանար ասպարեզից, որովհետև այդ բանին էր սպասում նրա բազմամյա բարեկամ և աշխատակից Վարազվաղան Սյունին, Վասակի փեսան և արյունարբու թշնամին։ Հազկերտը դատապարտելով նրան, զրկում էր և Սյունյաց նահապետությունից, իսկ նրա տեղը նշանակում էր Վարազվաղանին։ Այս պարտությունն ավելի ևս մաշեց ծերունուն, որ համենայն դեպս մի շատ ինքնատիպ խոշոր ավատական բնավորություն էր և քաղաքական գործիչ՝ պարսկական կուսակցության մեջ հին հայկական ոգով տոգորված։

Մնացած մեղադրվածներին, հոգևորական թե աշխարհական, Հազկերտը մահապարտ հայտարարեց, և որովհետև այդ միջոցին պատերազմ էր պատրաստվում քուշանների դեմ, նա հրամայեց քահանաներին և նախարարներին, ինչպես նաև նրանց մանր երեխաներին, որոնք նույնպես մահապարտ էին ճանաչված իրենց ծնողների հանցանքի համար, քշել տանել Վրկան, Կասպից ծովի հարավ-արևելյան ափերը, մինչև որ ինքն էլ իր բանակի հետ կգնա այն կողմերը։ Պատերազմն սկսվեց 454 թվականին։ Հազկերտն շտապում էր կռվի դաշտ և բոլոր կալանավորներին տեղափոխել տվեց Ապար աշխարհը (Խորասան), ուր նրանք արգելվեցին Նյուշապուհ (այժմ Նիշապուր) առևտրական քաղաքի միջնաբերդում։ Բայց իր հետ արքայից արքան չմոռացավ տանելու շղթայակապ Սամվել և Աբրահամ քահանաներին, որոնք ամենածանր և միանգամայն աններելի հանցանք էին գործել զրադաշտական կրոնի դեմ, ջրով հանգցնելով նվիրական կրակը Արտաշատի ատրուշանում։

Կալանավոր քահանաների դժբախտությունից էր, որ պարսից զորքը չարաչար պարտություն կրեց քուշաններից։ Հազկերտը վշտացավ սաստիկ և որոնում էր գտնել այդ անհաջողության պատճառը և իբրև ուղղահավատ մազդեզական՝ մտածեց, թե գուցե աստվածներն են բարկացել պարսիկների վրա, և գուցե դրա պատճառն էլ մոգերն են, որոնք լավ չեն կատարում իրենց պաշտոնը։ Եվ մոգերը, հոգևորականներին հատուկ ճարպկությամբ, շտապեցին հեռացնել իրենցից արքայից արքայի բարկությունը, մատնացույց անելով, թե աստվածները, այո՛, բարկացել են, բայց այն պատճառով, որ հայոց քահանաները, որոնք այնքան հանցանքներ են գործել նրանց դեմ, դեռ անպատիժ են մնում։ Եվ դյուրահավատ բռնավորն իսկույն սպանել է տալիս իր բանակում գտնված Սամվել ու Աբրահամ քահանաներին, ապա Նյուշապուհ է ուղարկում Վեհդենշապուհ համբարապետին, տալով նրան իբրև օգնականներ՝ Ջնիկան մայպետին և Մովան

անդերձապետին[1], մյուս քահանաներին մահվան պատժի ենթարկելու համար։ Այդ հանձնարարության հետ թագավորը պատվիրում էր առանձին զգուշություններ ձեռք առնել, որպեսզի քրիստոնյաները չիմանան սպանված քահանաների տեղը և նրանց ոսկորները չվերցնեն՝ երկրպագության առարկա դարձնելու համար, մի բան, որ սոսկում էր ազդում ուղղահավատ զրադաշտականին, քանի որ դիակը Զենդ-Ավեստայի օրենքով պղծություն էր։ Հրամանը կատարվեց ճշտությամբ[2]։ Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և նրանց մյուս ընկերակիցները բաժանվեցին կապված նախարարներից և տարվեցին Նյուշապուհ քաղաքից հեռու մի ամայի տեղ, ուր և սպանվեցին (454 թ. օգոստոսի 5-ին)։ Հայ եկեղեցին իր այդ նշանավոր նահատակներին տոնում է ամեն տարի, Վարդանանց տոնից մի օր առաջ, «Ղևոնդեան քահանայք» անունով։ Մահվան պատժի չենթարկվեցին հոգևորականներից երկուսը միայն, Խորեն և Աբրահամ երեցները։ Սրանց վրա չէր ծանրանում մահով պատժվող հանցանք, ուստի բավականացան երկուսի ականջները կտրելով և աքսորեցին նրանց Բաբելոն կամ Ասորեստան՝ արքունի դաշտերը մշակելու համար։

Իսկ նախարարներին Հազկերտը Նյուշապուհից աքսորեց Հրև քաղաքը (այժմ Հերաթ), ուր նրանք շղթայակապ պիտի սպասեին մահվան պատժի։ Այդպես էլ նրանք մնացին ամբողջ հինգ տարի (մինչև 459 թ.)։ Բանտարկության այդ բոլոր ժամանակը նախարարներին շատ մեծ օգնություն արին վերև հիշված Խորեն և Աբրահամ քահանաները։ Միջագետքի քրիստոնյա համայնքների մեջ նրանք մեծ հեղինակություն ձեռք բերին իրենց վարք ու բարքով և այդ անբիծ համբավի վրա հենված՝ դրամական նվերներ էին հավաքում կապված նախարարների համար, իրենք անձամբ տանում էին Հրև քաղաքը, ասել է՝ կտրում էին Իրանի ամբողջ սարահարթը արևմուտքից արևելք, հոգում էին բանտարկվածների կարիքները և կրկին վերադառնալով Միջագետք, նորից սկսում էին միևնույն ձեռնարկությունը։ Խորեն երեցը մեռավ այդ ճանապարհորդությունների ժամանակ, իսկ Աբրահամն իր աչքով տեսավ նախարարների ազատությունը, որից հետո վերադարձավ Հայաստան և եպիսկոպոս ձեռնադրվեց Բզնունյաց գավառի վրա։ Ավելացնենք, որ Աբրահամը, «Խոստովանող» տիտղոսով պսակված, աքսորի միջոցին իրեն ցույց տվեց իբրև շնորհալի թարգմանիչ։

8. Նոր թագավորություն։ 457 թվին վախճանվեց Հազկերտ երկրորդը։ Գահն անցավ նրա երեց որդի Որմիզդին, բայց մյուս որդին, որի անունն էր Պերոզ կամ Փիրուզ, կռիվ սկսեց եղբոր դեմ, հեփթաղների օգնությամբ հաղթեց նրան և սպանելով, գրավեց Սասանյան գահը 459 թվին[3]։ Պերոզն էլ հետևեց իր հոր և պապի քաղաքականության քրիստոնյաների վերաբերմամբ։ Բայց և այնպես, ստիպված եղավ հենց իր թագավորության առաջին տարին թեթևացնել հայ նախարարների դրությունը Հրև քաղաքում։ Այս վերաբերմունքը հետևանք էր այն անակնկալ շարժման, որ

---

[1] «Մովան անդերձապետ» կամ «անդարձապետ»—պաշտոնի անուն է և նշանակում է մոգերի խորհրդատու կամ առաջնորդ (Միք. փաշա Փարբաւզալ, «Եղիշէ», եր. 417)։

[2] Բայց և այնպես, հայկական վկայաբանությունը հնարել է Խուժիկ անունով մի օտարազգի վաճառականի, որ իբր թե կարողացել է նահատակների հետ լինել մինչև նրանց սպանությունը, իմանալ ամեն ինչ և պատմել հայերին։

[3] А. Крымский, «История Сасанидов и завоевание Ирана арабами», М., 1905, стр. 54.

սկսեց Իրանի դեմ Աղվանից աշխարհը, օգտվելով, անշուշտ, այն անիշխանությունից, որ հաստատվել էր գահաժառանգական կռիվների պատճառով։

Աղվանից աշխարհը, ինչպես տեսանք, հայերի դաշնակիցն էր։ Բայց նրա Վաչե թագավորը, ինչպես երևում է, դուրս էր եկել այդ դաշնակցությունից, նույնիսկ ուրացել էր քրիստոնեությունը Հազկերտի ստիպմամբ և ամուսնացել էր նրա աղջկա հետ։ Ազատվելով իր խստապահանջ աներից և տեսնելով նրա որդիների հարուցած ազգամիջյան կռիվները, Վաչեն ապստամբեց, վերստին քրիստոնեություն ընդունելով և իր կնոջն էլ քրիստոնյա մկրտելով։ Պերոզի առաջին գործը եղավ Իրանի գահակալը դառնալուն պես հարձակվել իր հանդուգն փեսայի վրա։ Սակայն Վաչեն պատրաստվել էր շատ լավ։ Դաշնակցություն կնքելով մազքութների հետ, նա բաց արավ նրանց առջև Ճորա կամ Չողա դուռը (Դերբենդի անցքը)։ Մազքութները միացրին իրենց հետ լեռնական ցեղերը, որոնց առաջնորդները տասնմեկ թագավորներ էին[1], և հարձակվեցին պարսիկների վրա։ Ապստամբությունն ընդունում էր կատաղի կերպարանք, և Պերոզն ստիպված էր իր փեսային խնդրելով-աղաչելով գործել։ Վաչեն անողոք էր և չէր թաքցնում, որ իրեն վրդովեցնողն այն վարմունքն էր, որ ունեցավ Պարսից արքունիքը հայերի վերաբերմամբ։ Հիշեցնում էր նա իր աներորդուն, թե ինչպես կալանավորեցին նախարարներին, ինչպես կոտորեցին քահանաներին։ Չկարողանալով դիմադրել կովկասյան լեռնականների գրոհներին, Պերոզը պիտի Վաչեի սիրտը շահելու միջոցով վտանգը հեռացներ։ Եվ ահա, երևի, հենց այդ նպատակով էր, որ Պերոզն իր թագավորության առաջին տարին, 459 թվին, իր դայակի որդի Հրզատվշնասպին, որին շատ սիրում էր, հատուկ հանձնարարությամբ ուղարկեց Հրև քաղաքը հայ նախարարներին ազատելու կապանքներից և հայտնելու, թե արքայից արքան ներում է նրանց։ Բայց այդ դեռ կատարյալ ազատություն չէր։ Պերոզը, երևի, վտանգավոր էր համարում այդպիսի մի ժամանակ բոլորովին արձակել մահվան դատապարտված ապստամբներին։ Նրանք դեռ պիտի մնային Հրև քաղաքում, բայց արքունի գանձից պիտի ստանային ռոճիկ։ Այդպիսի ռոճիկ հատկացվում էր և նրանց կանանց, որոնք մնացել էին Հայաստանում։ Նախարարները դեռ պիտի գործով ցույց տային իրենց հավատարմությունը արքայից արքային, ուստի ընդունվում էին արքունի ծառայության մեջ և նրանց հանձնվում էին հեծելագնդեր։ Արքայից արքայի անձնական շնորհը դեպի ներման արժանացած նախարարները պատճառ էր դառնում, որ պարսից բարձր պաշտոնյաներն էլ փոխեն իրենց վերաբերմունքը դեպի նրանց։ Հրզատվշնասպը շատ սիրալիր էր նախարարների հետ, բայց մանավանդ շատ սիրեց Արշավիր Կամսարականին։ Իսկ Շնումշապուհը, Հրև քաղաքի իշխանը, հարգելով ու սիրելով հայ իշխաններին իր կողմից, շարունակ խնդիրք էր գրում Պերոզին, որ նրանց բոլորովին ազատեն։

Պերոզը, սակայն, չէր շտապում։ Աղվանից ապստամբությունը դեռ էլի սպառնական դրության մեջ էր գտնվում։ Պերոզը, ի վերջո, ստիպված եղավ գործել Վաչեի ընտրած եղանակով, այսինքն կովկասյան ուրիշ գիշատիչ ցեղեր գնելով։ Շատ գանձ ուղարկեց նա Խայլանդուրների երկիրը,

[1] Եղիշէ, եր. 318։

ուր բացվեց Ալանաց դուռը (այժմ՝ Դարիալի կիրճ), ճանապարհ տալով վարձկան հոներին, որոնք միացան պարսից բանակին։ Այժմ հաջողությունն անցավ արքայից արքային, և Վաչեն ստիպված էր զիջողություններ անել։ Այսպես, նա իր կնոջը վերադարձրեց Պերոզին, որի քույրն էր։ Հետզհետե նոսրացան Աղվանից դաշնակից լեռնականների շարքերը։ Սակայն արի թագավորը չընկճվեց այս հանգամանքից և երկար դիմադրում էր իր աներորդուն՝ ամրացած իր երկրի անմատչելի լեռներում։ Ամբողջ հինգ տարի տևեց պարսկա-աղվանական վեճը, մինչև որ Վաչեն, այլևս ապարդյուն համարելով դիմադրությունը, հոժարակամ հրաժարվեց իր գործից և բավականացավ մի սովորական հողատեր ազնվականի դիրքով, ստանալով այն հազար երդ (ծուխ) գյուղացիներին, որոնք իր անձնական սեփականությունն էին ստացված ժառանգությամբ[1]։

Այս պատճառով էլ ձգձգվեց նախարարների արձակումը։ Բայց այդ հինգ տարվա ազատությունն էլ բավական էր, որ նրանք գեթ մասամբ մոռանային իրենց տանջանքները։ Տեղական ազգաբնակության մեջ նրանք մեծ համարում վաստակեցին իրենց պատերազմական քաջություններով և անձնական առաքինություններով։ Ղազար Փարպեցին ավելացնում է այս բոլորին և մի վերին աստիճանի հետաքրքրական փաստ։ Այս միջոցին էր, որ նախարարներն սկսեցին հայերեն գրագիտություն սովորել (խոսքը, իհարկե, մեծամասնության մասին է) իրենց հետ եղած հայ քահանաներից։ Բայց շատերի համար, ծերության պատճառով, արդեն ուշ էր ուսում առնելը։ Պերոզի թագավորության վեցերորդ տարին էր, 465 թվականին, որ նախարարները, վերջապես, բոլորովին ազատ արձակվեցին և վերադարձան իրենց հայրենիքը։ Տասներեք տարի նրանք բանտ ու աքսոր էին կրել Վարդանանց շարժմանը մասնակցելու համար։ Բայց ավելի անմխիթարական էր երկրի դրությունը։ Նա մեծ պարտություն էր կրել, զրկվել էր իր առաջավոր և լավագույն մարտիկներից։ Պարսկական իշխանությունն ամեն տեսակ ճնշումներ էր գործ դնում ապստամբական մուխը երկրի սրտից ու մտքից միանգամայն վտարելու համար։ Եվ բնականաբար հաստատվել էր մի մռայլ ռեակցիա, որ հեղձուցիչ էր ամենից առաջ և ամենից շատ, իհարկե, հայոց մտավոր շարժման, հայոց «Հինգերորդ Դարի» համար։ Ջարդվել ու պարտություն էր կրել հունական կուսակցությունն իր դպրոցով և գրականությամբ։ Անհետ կորավ և երբեք այլևս չգտնվեց Հայոց Գրական Ոսկեդարը։ Նրա ստեղծողները կամ ընկել էին կռիվների մեջ, կամ պարսկական դահիճների դանակներից, կամ թե սարսափահար հեռացել էին ասպարեզից, տեղ տալով մութ ուժերին, որոնք բազմանում էին օրեցօր և գործում էին սանձարձակ։

Հետադիմությունն առաջ ու առաջ կաթողիկոսական աթոռի վրա էր բազմում։ Հովսեփ կաթողիկոսի մահից հետո իրար ետևից կաթողիկոսանում են երկու հոգի, որոնց մասին մեր ունեցած տեղեկությունն այն է միայն, որ դրանք երկուսն էլ Մանազկերտցիների տոհմից էին։ Չորրորդ դարում կաթողիկոսական այս տոհմը կոչվում էր և Աղբիանոսի տոհմ, և մենք արդեն գիտենք, որ նա հրապարակ էր գալիս իբրև կաթողիկոսական թեկնածու ամեն անգամ, երբ հարկավոր էր Գրիգոր Լուսավորչի տոհմին կամ որ նույն է՝ հունական կուսակցության հակադրել ավելի մեղմ, ազգային-

[1] Մովսէս Կաղանկատուացի, «Պատմութիւն Աղուանից», Փարիզ, 1860, հ. Ա, գլ. Ժ։

պարսկական կուսակցության ուժը։ Աղբիանոսյան կամ Մանազկերտյան հոգևոր դինաստիան երբեք չէր դավաճանում իր տոհմային ավանդություններին։ Նրա տված կաթողիկոսները, ընդհանուր առմամբ, վատ մարդիկ չէին կրոնա-բարոյական տեսակետից, բայց չէին համակրում հունասերներին, ներկայացնում էին ազգային պահպանողականությունն, անշարժ ավանդապահությունը[1]։ Եվ ահա այս երկու կաթողիկոսների—Մելիտե և Մովսես—օրով է, որ պարսկական կուսակցությունն աշխատում է արմատախիլ անել հունական ազդեցությունն ու նրա առաջացրած շարժումը։ Վասակ մարզպանի փոխարեն մեծ ազդեցություն է ձեռք բերում նրա գործակից Գադիշո Խորխոռունին։ Բայց այժմ պարսկասիրությունն այլևս չի բավականանում քրիստոնյայի դիրքով։ Գադիշոն բոլորովին զրադաշտական է դարձել և այդ միջոցով է իր հավատարմությունն անկասկածելի դարձնում ոչ միայն պարսիկ մարզպանի, այլև նույնիսկ արքայից արքայի աչքում։ Կրոնափոխությունը խրախուսվում էր կառավարության կողմից բոլոր միջոցներով։ Կրոնափոխը տիրանում էր պաշտոնների ու պատիվների, իսկ իր հավատին հավատարիմ մնացողը զրկվում էր ու արհամարհվում։ Այս եղանակով պարսից կառավարությունը փչացնում էր ամենից առաջ նախարարական դասակարգը։ Զանազան մութ անձնավորություններ, նույնիսկ այնպիսիները, որոնց կարելի էր նույնացնել լեռնային ավազակներին, առաջ էին քաշվում, նախարարական պատվի էին արժանանում լոկ այն պատճառով, որ ուրացել էին իրենց հավատը։ Եվ բարձրագլուխ պաշտվում էր շահադիտությունը։ Շահի համար վաճառվում էր խիղճ ու պատիվ։ Բարոյապես ընկածները հափշտակում էին ուրիշների կալվածները մատնությունների, չարախոսությունների միջոցով։

Ամեն մի երկիր հեշտ ու շուտ է անառականում, երբ նրան անառականացնողը բռնակալ կառավարությունն է։ Ստությունը, կեղծավորությունը, խաբեբայությունը, մատնությունն են հարաբերությունններ որոշողները։ Թագավորը երկրի ձայնը չի լսում, այլ երկիրը կողոպտողների, ժողովրդի արյունը ծծողների միջոցով է ուզում հասկացողություն կազմել երկրի դրության մասին։ «Եւ էր այնուհետև,— ասում է Փարպեցին,— տեսանել յաշխարհիս Հայոց զլսութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թաքուցեալ»[2]։ Երկիրը կորցրել էր իր պատիվը։ Հայ անունն արհամարհված էր, օրենքից դուրս դրված։ Մի ժամանակ հայոց զորքը պարսից բանակում քաջի անուն ու պատիվ էր վայելում, իսկ հայ զորավարները հաղթող ու անվանի էին, իսկ այժմ ծաղր էր դարձել հայկական գունդը, և Պերոզն իսկ առանց քաշվելու ասում էր բազմականների մեջ. «Անպիտան մարդ և ստոր զորագունդ, որ միանգամ կա իմ պետության մեջ, ասորին է, բայց ասորուց ստորն ու անպիտանը հայն է»։ Այս անարգանքը, ինչպես երևում է, ամենից շատ էր այն ժամանակները ցնցում հայերին։ Եվ Փարպեցին ավելացնում է. «Եւ էր լուրն այն արժանի լալոյ և ողբալոյ»[3]։

Պերոզի այս անառականացնող վարչական կարգը գործադրվեց ավելի լայն չափերով Աղվանից աշխարհում, Վաչեի հրաժարականից հետո։ Արքայից արքան չթույլատրեց, որ մի ուրիշը թագավորի նրա տեղ, երկրի բոլոր

[1] Մանրամասնությունները տե՛ս «Հայ. պատմ.», հ. Ա։
[2] Փարպեցի, Գ, ԿԳ։
[3] Անդ։

մասերում տարածեց իր անսահման կամայականություններն ու բռնությունները, որոնք աջ ու ձախ ավերումներ էին գործում։ «...ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից,— ասում է Աղվանից պատմիչը,— զայրացեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն։ Կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի միանգամայն, շարժել զեկեղեցիս և բառնալ զկարգ քրիստոնէութեան... և յոյժ անթիւանմեղաց անձինք խողխողեալ լինէին սրով չարին, այլ և կանայք տղայօք հանդերձ արտօսրահառաչ ձայնիւ գերեալք լինէին յօտար աշխարհի դառն ստրկութեան. բազում նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից ի մոգութիւն դիւցապաշտութեան առ ի յածել, կործանել, զոմանս բռնութեամբ և զոմանս պարգևօք ի մեծամեծ իշխանութիւնս ընձեռելով, և ի տեղիս տեղիս ատրուշանս կանգնելով, զօրանայր հրալից պաշտամունք դիցն աղտեղութեան»[1]։

Այս համատարած մռայլ իրականության մեջ հայ նախարարների վերադարձն իրենց տները, հարկավ, ոչինչ փոփոխություն մտցնել չէր կարող։ Նրանց մեջ կային ազնիվ գործիչներ, բայց ընդհանուր վատությունը փախցնում էր նրանց հրապարակից, դատապարտում էր լռության և անտարբերության։ Փարպեցին ցույց է տալիս այդպիսի երկուսին—«լավ այր» Բաբիկ Սյունին և «սքանչելի» Առնակ Ամատունին։ Բայց սրանք, ասում է, «մոլեկան թագավորի հոգեսպանությունից և ժամանակի ամբարշտացած իշխանների ձեռքից՝ հպատակների նման, որոնց հալածում են արծիվները, թաքնվել էին ժայռերի ծերպերում կամ մացառների մեջ։ Այսպես մնացին նրանք և նրանց նմանները, մինչև որ վախճանվելով «թաղեցան ի դիրս հարց իւրեանց խաղաղութեամբ»[2]։

9. Հայոց տիկինները։ Եվ եթե վերադարձած նախարարներն իսկ, որ տեսան Հայոց երկրում մի փայլուն երևույթ, այդ նրանց և նրանց սպանված ու մեռած ընկերների կանանց վարքն էր. Նրանք ժամանակի ապականության ձեռքից ապաստանել էին լեռներում և իրենց ենթարկել էին կամավոր մարտիրոսության։ Եղիշեն, Փարպեցուց վերցնելով նյութը, իրեն հատուկ վառվռուն և գունագեղ նկարագրական ավյունով լայնացնում և ընդարձակում է նախարարական կանանց անձնազոհության պատկերը։ Այդ նկարագրությունը շատ թանկագին է հայկական քաղաքակրթության պատմության համար։ Եղիշեն այստեղ հարազատ պատկերացնող է, որովհետև եթե նույնիսկ իր ժամանակի (6-րդ դարի) կենցաղն աչքի առջև ունեցած լինի, դարձյալ այդ կլինի և 5-րդ դարի կենցաղը։ Ուստի բերում ենք այդ նկարագրության էական մասերը։

«Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ.[3] ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրտսերագունաց անտի։ Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին զաշխարհ։ Քանզի աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւասոյ զգեցան։ Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան

[1] Մովս. Կաղանկատուացի, եր. 131—132։
[2] Փարպեցի, Գ, ԿԴ։
[3] Այստեղ էլ Եղիշեն մի ավելորդ անգամ աշխատում է հավատացնել, թե ինքն ականատես նկարագրող է։

մայրենի ազատութեանն՝ այլ իբրև մարդք՝ որք վշտամբերք լեալ իցեն անդրստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց։ Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կային առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յափտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան։ Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկինն իցէ և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս գետնախշտիք երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր. քանզի և չճանաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փսիրայիցն, և մի գոյն սևութեան սնարից բարձիցն։

Ոչ գոյր նոցա համեմ խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր։ Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատի բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եւղ ի զուարթութիւն խրախութեան։ Զեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա՝ թէ գուցէ ոք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց։

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդիոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երեխանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա։ Զօրացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և դաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա։ Աչօք իւրեանց տեսին զյափրշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան գանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահակաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն։ Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք։ Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն։ Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեան... Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն»[1]։

Այսպիսի կյանք վարեցին հայոց ավնվական տիկինները տարիներով, քանի որ նրանց սիրելիները կապված էին Պարսկաստանում։ Եղիշեն շա-

---

[1] Եղիշէ, էր. 321—326.

րունակում է. «Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց. Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։ Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։ Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն»[1]։

10. Քաղկեդոնի ժողովը *(մի էջ արտաքին պատմությունից)*։ Այն ժամանակ, երբ Հայաստանն Ավարայրի պատերազմում առաջացրած աղետի մեջ էր, երբ երկիրը քարուքանդ էր դառել և հայկական ապստամբությունը լեռներում էր ապաստանվել և շարունակում էր հունասիրական մաքառումը, հայկական սահմաններից հեռու, օտար միջավայրում, օտար հանգամանքների ազդեցությունից և շահերի բախումից գոյանալով՝ տեղի էր ունենում մի դեպք, որ հայ ժողովրդի համար անհունապես մեծ, ճակատագրական նշանակություն պիտի ստանար՝ դառնալով մի կախարդական առանցք, որի շուրջը պիտի պտտեր հայ կյանքը 5-րդ դարից սկսած մինչև մեր օրերը։ Այդ դեպքը փոքրիկ էր ըստ ինքյան և վերաբերում էր եկեղեցական պատմության, որի մեջ էլ կրում է **Քաղկեդոնի ժողով** անունը։

---

[1] Անդ. էր. 326—327։—Դնում ենք այս կարևոր և գեղեցիկ հատվածների թարգմանությունը. «Իսկ երանելի առաքինիների և կայյալների և պատերազմի մեջ ընկածների կանանց՝ Հայոց բոլոր աշխարհում ես հաշվել չեմ կարող, որովհետև չճանաչածներս ավելի շատ են՝ քան ճանաչածներս։ Հինգ հարյուրի չափ անուն-անուն ճանաչում եմ. և նրանք ոչ միայն ավագներից էին, այլև կրտսերներից։ Ամենքն էլ միահամուռ երկնավոր նախանձով վառված՝ ամենևին պակաս չմնացին նրանցից, որոնք աշխարհ չէին մտել։ Որովհետև թե՛ ավագագույնները, թե՛ մանկագույնները հավատի մի առաքինություն էին հագած։ Նրանք բնավ չհիշեցին մայրենի ազատության (ազնվականության) անունը, այլ իբրև շինական սովորություններով չարքաշության ընտելացած և տանջանքներով կյանք վարած մարդիկ, որոնցից էլ ավելի հանձն առան ամենայն վշտերի համբերել։ Ո՛չ միայն իրենց հոգիների մեջ մխիթարվելով սպասում էին հավիտենական հույսի աներևույթ զորությանը, այլև մարմնավոր նեղություններով ավելի ևս ծանր բեռ վերցրին։ Թեպետ ամենքն էլ տան մեծացած սպասուհիներ ունեին, բայց չէր երևում թե նրանցից ո՛րն է տիկինը, ո՛րն է նաժիշտը. մի զգեստ էին հագնում առհասարակ և միանման երկուսն էլ պառկում էին գետնի վրա։ Ո՛չ ոք ոչ ոքի համար անկողին չէր գցում, որովհետև՝ խոտեղենների մեջ անգամ ոչինչ խտրություն չէին դնում, միևնույն թխագույն փսիաթն (խսիր) էր տակները, միևնույն սևացած բարձը՝ գլխատակներին։ Նրանց համար առանձին անուշահամ կերակուր պատրաստողներ չկային, և ո՛չ որոշված հացարարներ՝ նրանց ծառայելու համար, ինչպես ազատների սովորությունն էր, այլ առհասարակ միանման էին։ Շաբաթամուտն անց էին կացնում միայնակյաց անապատականների կարգով։ Ոչ ոք ոչ ոքի ձեռքին ջուր չէր ածում, ոչ էլ փոքրերը մեծերին սրբիչ էին մատուցանում, սապոն չդիպավ փափկասուն կանանց ձեռքերին և յուղով չօծվեցին նրանք ուրախության հանդեսների ժամանակ։ Նրանց առաջ մաքուր սկուտեղներ չդրվեցին, ոչ էլ ուրախացուցիչ բաժակակալներ։ Նվիրակներ (արարողապետ-

Իբրև եկեղեցական ժողով նա չորրորդն էր «տիեզերական» և «սուրբ» անուններով կնքված ժողովների մեջ և տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտից գրեթե $4\frac{1}{2}$ ամիս հետո, 451 թվականի հոկտեմբերի 8-ին։ Բայց իր նշանակությամբ համաշխարհային պատմության մեջ, իր հետևանքներով Քաղկեդոնի ժողովը գերազանցում է բոլոր իր նախընթացներից և հետագաներից։ Մանավանդ հայության համար նա դարձավ մի դարավոր աղետ, որից նա ավելի շատ է վնասվել ու տանջվել, քան իր երկիրը կոխկռտած բոլոր բռնակալ նվաճողներից։

451 թվականը տալիս էր հայերին միանգամից երկու պատմական խոշոր շրջադարձեր, որոնց մեջ պիտի ամփոփվեր նրանց ամբողջ ազգային ինքնորոշումը։ Մի կողմից՝ Ավարայրն էր, որ դարձնում էր Հայաստանը գերազանցորեն քրիստոնյա, անջատելով նրան ասիական Արևելքից ու հեթանոսությունից, իսկ մյուս կողմից՝ Քաղկեդոնը, որ այդ քրիստոնյա, եվրոպական ընտանիքի մեջ մտած երկրին բերում էր կղզիացում, մի դրություն, որ կատարյալ անօգնականություն էր քաղաքական տեսակետից և կատարյալ ու խոր ինքնամփոփում՝ ազգային-կուլտուրական տեսակետից։ Ծանոթանալով 451 թվի մեծ գործոններից առաջինի հետ, այժմ գանք մոտիկից տեսնելու երկրորդը, Քաղկեդոնը։ Այս շահեկան է մանավանդ այն պատճառով, որ պատմությունն այստեղ ցույց է տալիս, թե հաճախ մանր աննշան երևույթները ի՛նչ ահեղ ճակատագիր են ստեղծել շատ ու շատ ազգերի և լեզուների համար։

«Հայոց պատմության» առաջին հատորի մեջ մենք մանրամասն վերլուծել ենք քրիստոնեության ծագումը, թե ինչպես նա կրոն դարձավ, ինչպես կազմակերպվեց իբրև համայնք, իբրև պետական հիմնարկություն։ Այնտեղ էլ ցույց տվինք, թե ինչ դեր կատարել սկսեցին այդ կազմակերպչական մեծ աշխատանքի մեջ եկեղեցական ժողովները։ Սրանց գումարման պաշտոնական առիթներն էին հավատի մաքրություն և ուղղափառություն,

ներ) չկանգնեցին ոչ ոքի դռների մոտ և պատվական մարդիկ չկոչվեցին նրանց հացկերույթին։ Այլևս նրանց միտքը չէր ընկնում, թե ունեին մի սիրասունուն դայակ կամ մի սիրելի հարազատ։ Փոշոտվեցին և ծխոտվեցին նորահարսների սրահներն ու առանձնոցները և սարդի ոստայններ ձգվեցին նրանց առագաստների սենյակների վրա. կործանվեցին նրանց սեղանատների փառավոր աթոռները և խանգարվեցին սեղանների անոթեղենները, քանդվեցին ընկան նրանց ապարանքները և ավերվեցին ու թափվեցին նրանց հուսալի ամրոցները։ Ջորացան, ցամաքեցին նրանց ծաղկանոցներն և բուրաստանները և արմատահան եղան նրանց գինեբեր այգիների խաղողենիները։ Իրենց աչքերով տեսան իրենց ունեցածի հափշտակությունը և ականջներով լսեցին իրենց սիրելիների չարաչար վշտերը, նրանց գանձերն արքունիք գրավվեցին և ամենևին էլ չմնացին նրանց երեսի զարդերը։ Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որ գգվանքով ու քնքշությամբ մեծացած էին փափուկ բազմոցների ու դահավորակների վրա՝ ամեն ժամանակ բոբիկ ու ոտով գնում էին աղոթատները, անդադար աղոթելով ու խնդրելով, որ կարողանան համբերությամբ տանել այն մեծ նեղությունը։ Նրանք, որ մանկությունից սնված էին գվարակների ուղեղով և եղնիների փափուկ մսերով՝ մեծ ուրախությամբ իրենց կյանքն անց էին կացնում խոտեղեն քաղելով ուտելով, ինչպես վայրենիներ և ամենևին չէին հիշում այլևս իրենց սովորական փափկությունը։ Նրանց մարմնի մորթերը սև ներկվեցին, որովհետև ցերեկներն արևն էր այրում նրանց, իսկ գիշերները ցուրտ գետինը ջարդում։ Մշտնջենավոր սաղմոսներն էին նրանց բերանի մրմունջներն ու մարգարեների ընթերցվածները՝ նրանց կատարյալ մխիթարությունը։ Երկու-երկու միաբանվեցին նրանք, ինչպես համաձայն և հավասար լծակիցներ, ուղիղ տանելով արքայության ակոսը... Իրենց մատներով աշխատեցին ու կերակրվեցին և թագավորից իրենց համար կարգված հասույ-

ղավանական պարզաբանություններ և մաքառում մոլորեցնող վարդապետությունների դեմ։ Բայց այդ բարեպաշտական նպատակների տակ թաքնըված գործում էին առավելապես քաղաքական ձգտումները, տիրապետական տենչերը, կայսրների պալատական ինտրիգները։ «Սուրբ» էին եկեղեցական հայրերը, որոնք մասնակցում էին այդ ժողովներին, սուրբ և պարտադիր էին նրանց վճիռները, որոնց մեջ խոսողը այնքան երկնքի շահերը չէին, որքան հոգևոր միապետություններ ստեղծելու և մեծացնելու անզուսպ տենչանքը։ Նաղովրեցի համեստ հյուսն Հիսուսի և նրա ավելի համեստ ձկնորս աշակերտների հաջորդներն ու տեղապահները համաշխարհային թագավորություններ էին ստեղծում իրենց համար։ Այսպես, Հռոմում արդեն հիմնավորել էր մի հոգևոր կայսրություն, որ, հետևելով հին հռոմեական կայսրության օրինակին, ձգտում էր իրականացնել իր համար մի համաշխարհային տիրապետություն։ Նրանից հետո փառքն ու իշխանությունը պիտի պատկաներ Կ. Պոլսի աթոռին, որովհետև Կ. Պոլիսը կայսերական մայրաքաղաք էր։ Եվ ահա 381 թվին Կ. Պոլսի տիեզերական սուրբ ժողովը հավատի գործերը կարգավորելու հետ միասին որոշում էր, որ Հռոմի աթոռից հետո պատիվը պատկանում է Կ. Պոլսի աթոռին։ Սակայն հայտնի է, որ իշխանությունը նախանձ և մրցակցություն է առաջացնում։ Եգիպտոսի հռչակավոր Ալեքսանդրիա մայրաքաղաքը քրիստոնեության զարգացման մեջ Կ. Պոլսից անհամեմատ ավելի մեծ դեր էր կատարել և իրեն էլ միանգամայն արժանի էր համարում կրոնական մի փառավորություն ստեղծելու։ Այս ձգտումը նրան հաջողվում է Կ. Պոլսի աթոռի հետ մրցելու միջոցով։ Եվ առաջին հաղթանակը հայթայթում է Ալեքսանդրիային այն արշավանքը, որ նա տարավ Կ. Պոլսի պատրիարք Նեստորի դեմ։

Սա մի շատ ընդունակ հոգևորական հռետոր էր, շատ լավ գիտեր, որ եկեղեցին ազատախոհության դեմ խոսքով կռվելու ընդունակ չէ, ուստի վերջին վճռական քայլը նրա հանգստությունը խանգարող հերետիկոսությունների դեմ՝ կայսրի իշխանությանը դիմելն է, որ միշտ իր տրամադրության տակ բավականաչափ կոպիտ ուժ ունի մարդկանց կոկորդը սեղմելու և նույնիսկ ճշմարտություններն էլ արգելված ու հանցավոր հայտարարելու համար։ Այսպես, Նեստորը, մայրաքաղաքի եպիսկոպոս նշանակվելուց հետո, իր եկեղեցական առաջին իսկ քարոզի մեջ դիմում էր կայս-

թը տարեցտարի թոշակ ուղարկեցին նրանց (կապված նախարարներին) ի մխիթարություն... Շատ ձմեռների սառույցները հալվեցան, գարունը հասավ և նորեկ ծիծեռնակներն եկան. կենցաղասեր մարդիկ տեսան ու խնդացին, բայց նրանք երբեք չտեսան իրենց անձկալիների երեսը։ Գարնանային ծաղիկները նրանց միտքը ձգեցին իրենց պսակասեր ամուսիններին, բայց իրենց աչքը կարոտ մնաց տեսնելու նրանց երեսի ցանկալի գեղեցկությունը։ Որսկան բարակները վերջացան և որսորդական արշավանքները կտրվեցան։ Նրանք միայն բնագիրների մեջ հիշատակվեցան, բայց ոչ մի տարեկան տոն հանդես չբերավ նրանց այն հեռու օտարությունից։ Նրանց վայելչության տեղերին նայեցին, արտասուք թափեցին, և ամեն ատյաններում հիշեցին նրանց անունները։ Շատ արձաններ կանգնեցրին նրանց անունով և յուրաքանչյուրի անունը նշանակեցին նրանց վրա։ Եվ չնայելով, որ այսպես ամեն կողմից ալեկոծվում էին նրանց մտքերը՝ նրանք ամենևին չթուլացան երկնավոր առաքինությունից։ Դրսից նայողին երևում էին ինչպես սգավոր, չարչարված այրիներ, իսկ իրենց հոգիներում զարդարված ու մխիթարված էին երկնավոր սիրով։ Այլևս չէին հարցնում հեռու երկրից եկողներին՝ թե ե՛րբ կլինի, որ տեսնենք մեր սիրելիներին, այլ այն էին աղոթում միշտ բաղձանքով առ Աստված, որ ինչպես սկսել են՝ նույնպես քաջությամբ վերջացնեն լի երկնավոր սիրով» (Հմմտ. Թարգմ. Ղուկասյանի, էր. 254—259)։

րին այսպիսի խոսքերով. «Տո՛ւր ինձ հերետիկոսներից մաքրված երկիր, և ես փոխարենը կվճարեմ քեզ երկնքով. օգնի՛ր ինձ խորտակելու հերետիկոսներին, և ես քեզ կօգնեմ պարսկական պատերազմում»[1]։ Բայց հենց այս մոլեռանդ հակահերետիկոսականին վիճակված էր դառնալ մի խոշոր հերետիկոս, որ հալածվեց եկեղեցու կողմից ամենակատաղի կերպով։

Մենք արդեն գիտենք, որ քրիստոնեական եկեղեցին հաղթանակներ տանում էր նաև շնորհիվ այն հանգամանքի, որ մեծ զիջումներ էր անում հեթանոսության, լայն բաց անելով իր դռները նրա հավատալիքների առջև, և այս ճանապարհով նրա մեջ մտան և հեթանոսական աստվածներ, որոնք միայն փոխեցին իրենց անունները և սրբերի կերպարանք ստացան։ Բազմաթիվ հեթանոս մտածողներ, և մանավանդ կանայք, ուզում էին, որ եկեղեցու մեջ մտնի ու պաշտամունք դառնա նաև բնությունը ներկայացնող աստվածուհին, որ բազմաթիվ անուններ ուներ[2]։ Եվ ահա ստեղծվում է և չափազանց զարգանում կույս Մարիամի պաշտամունքը։ Նա Հիսուսի մայրն էր, և նրան դարձնում են աստված ծնած, ուրեմն աստվածային խորհրդին մասնակից դարձած մի անձնավորություն։ Նա աստվածածին է։ Եվ նրա պաշտամունքը հասնում է այնպիսի չափազանցության, որ անթույլատրելի էր համարվում և ծաղրվում էր նույնիսկ և հեթանոսների կողմից։ Ահա այս չափազանցության դեմ է զինվում Նեստորը, որ և այս պատճառով նորից վերաքննում է Քրիստոսի բնության խնդիրը։ Միանգամայն ընդունելով այն մեծ անհեթեթությունը, թե աստված իր միակ որդուն ուղարկել է աշխարհ, որպեսզի ծնվի իբրև մարդ, չարչարվի մարդկանց ձեռքով, սպանվի և հենց այսպիսով ազատի մարդկությունը մեղքերից, եկեղեցին պիտի ընդուներ և այլ անհեթեթություններ՝ այդ դրույթը պաշտպանելու և հիմնավորելու համար։ Նեստորը գտնում էր, որ Մարիամն աստվածածին չէ, որովհետև նրա ծնածը աստված չէր, այլ մարդ էր, մի մարդ, որ իր հետ աշխարհ էր բերում աստվածային բնություն։ Աստվածը չէ կարող մարդուց ծնվել. նա արարիչ է և չի կարող գոյանալ իր ստեղծածից։ Քրիստոսի մեջ երկու բնավորություն են, իրար հետ անխառն, իրարից անջատ— մեկը մարդկային, մյուսը՝ աստվածային։ Մարիամից ծնվողը աստված— Քրիստոսը չէր, այլ մարդ—Քրիստոսը և հետևաբար Մարիամը աստվածածին չէ, այլ միայն Քրիստոսածին։ Մարիամի մեջ աստվածությունը չէր հղանում, այլ մարդը, և աստվածությունը Մարիամի միջով անցավ։

Եվ ահա մի ամբողջ հուզմունք է առաջանում քրիստոնյա եկեղեցու ծոցում։ Նեստորի դեմ դուրս է գալիս Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս Կյուրեղը, որ սկսում է իր կողմից վարդապետել, հավատարիմ մնալով Նիկիայի տիեզերական ժողովի որոշումներին, թե Քրիստոսի մեջ երկու բնություններն էլ—մարդկայինն ու աստվածայինը—խառնված էին իրար հետ։ Այս վեճը քննելու համար էր, որ 451 թվին Եփեսոսում, Թեոդոս կայսրի հրամանով, գումարվեց եկեղեցական ժողով։ Այստեղ հանդես եկան երկու հակառակ կուսակցություններ։ Կյուրեղ Աղեքսանդրացու կուսակցությունն ավելի ստվարաթիվ էր, և ժողովը մերժեց Նեստորին եկեղեցուց, կայացնելով մի այսպիսի որոշում. Նեստորի վարդապետությունը թե՝ աստվածությունն ու մարդկությունը բաժանված էին Քրիստոսի մեջ՝ չի համապա-

[1] Ф. Успенский, История византийской империи, СПБ, т. I, стр. 202.

[2] Г. Гельцер, Очерк политической истории Византии, СПБ, 1912, стр. 12.

տասխանում եկեղեցական կարծիքին, որ պնդում է Բանն Աստծու ճշմարիտ մարդկությունը և ընդունում է, որ աստվածային և մարդկային բնությունը խառնված են Քրիստոսի մեջ անբաժանելի և անձույլ կերպով[1]։ Թեև Նեստորի կողմնակիցները ժողովներ արին առանձին և աղմուկ բարձրացրին, բայց քրիստոսագիտական այս նոր բանաձևը հաստատվեց Թեոդոս կայսրի կողմից իբրև ուղղափառ, և Նեստորն աքսորվեց հեռու անապատները։

Հայոց եկեղեցին չմասնակցեց Եփեսոսի ժողովին, ինչպես չէր մասնակցել և դրանից առաջ Կ. Պոլսի ժողովին, բայց ընդունելով դրանց որոշումները, գործադրում էր ամենայն հարազատությամբ։ Սակայն շուտով մի նոր քրիստոսագիտական վեճ բարձրացավ։ Նեստորի վարդապետության մերժումից առաջանում էր այն հայացքը, թե Քրիստոսի մեջ աստվածային բնությունը գերակշռեց, և մարդկային բնությունը լուծվեց աստվածային բնության մեջ։ Ասել է՝ թե Քրիստոսին հատկացնում էին մի բնություն։ Այս վարդապետությունն ստացավ միաբնյա կամ միաբնակ[2] անունը։ Այս նոր գյուտ անողն էր Եվտիքես անունով մի մեծ վարդապետ, որը Կ. Պոլսի վանքերից մեկի վանահայրն էր, աչքի չէր ընկնում առանձին ընդունակություններով, ոչ էլ մասնավորապես գիտնականությամբ, բայց շատ ուժեղ էր, որովհետև փող շատ ուներ, այնքան շատ, որ կարող էր իր հակառակորդներին կարգազուրկ անել և աքսոր ուղարկել կայսերական կաշառակեր պաշտոնյաների միջոցով, մանավանդ որ կապեր ուներ արքունիքի հետ։

448 թվին Կ. Պոլսի պատրիարք Փլաբիանոսը տեղային եկեղեցական ժողով էր գումարել, ուր Եվսեբեոս եպիսկոպոսը հայտարարեց, թե Եվտիքեսը հերետիկոսական կարծիք ունի Քրիստոսի բնության մասին և չի ընդունում, թե մարմնանալուց հետո Աստուծո որդին պահպանեց իր մեջ մարդկային բնությունը։ Ժողովը երկար զբաղվեց այս հայտարարությամբ և երկար բանակցություններից հետո միայն կարողացավ ծերունի վարդապետին հարկադրել գալ իր նիստին՝ բացատրություններ տալու համար։ Այդ բացատրությունները, որքան և խուսափողական ու անորոշ, բավական եղան հասկացնելու համար հոգևոր դատավորներին, թե Եվտիքեսը մի բնություն է ընդունում Քրիստոսի մեջ և, իհարկե, դատապարտեցին նրան ու կարգալույծ արին։ Այն ժամանակ Եվտիքեսն սկսեց գործել իր հարստության և կապերի միջոցով։ Նրա պաշտպանության համար ամենից առաջ ձայն բարձրացրեց Ալեքսանդրիայի աթոռը, որը Քրիստոսի մարդկային իրավունքները պաշտպանելուց շատ իր առաջնության, իր հեղինակության իրավունքն էր պաշտպանում։ Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս էր այդ միջոցին Դիոսկորոսը, կոպիտ և կրքոտ բնավորության տեր մի իշխանավոր, որը դուրս եկավ Փլաբիանոսի և նրա ժողովի դեմ։ Խոսեց և Հռոմը, որի պապն էր այն ժամանակ Լևոն առաջինը, որ ստացել է մեծ տիտղոսը, ոչ թե այն պատճառով, որ նա իսկապես մեծ աստվածաբան էր, այլ որովհետև մեծ էր իբրև եկեղեցական քաղաքականություն վարող։ Նկատելով, որ Ալեքսանդրիայի աթոռը, Եփեսոսում տարած իր հաղթանակի վրա հենված, եկեղեցական իշխանապետության մեջ արդեն շատ է բարձրացել Լևոն պապը ցանկալի համարեց, որ Եվտիքեսի խնդրի առիթով եկեղեցական ժողով գումարվի, քանի որ վճռել էր այդտեղ արդեն Հռոմի առաջին եկե-

[1] Успенский, стр. 205.

[2] Հունարեն՝ մոնոֆիզիտ։

ղեցական իշխանապետի լեզվով խոսել։ Թեոդոս կայսրի վրա ավելի մեծ ազդեցություն արավ Լևոնի ցանկությունը, և նա նույն Եփեսոսում ժողով նշանակեց 449 թվի օգոստոսին։ Այդ ժողովի հանգամանքները վաղօրոք ցույց էին տալիս, թե հաղթանակ պատրաստվում էր Եվտիքեսի համար և այսպիսի ուղղություն տվողն արքունի պալատն էր։ Եվտիքեսի կողմնակիցն ու բարեկամն էր Քրյուսափիոս անունով ներքինի սենեկապետը, որ ամենակարողն էր ամբողջ պետության մեջ և իր ձեռքն էր առել բոլոր գործերը։ Այս ներքինին ուժեղ էր մանավանդ նրանով, որ կայսրուհի Եվդոկիան հովանավորում էր նրան։ Այս մի հոսանքն էր պալատական ինտրիգների աշխարհում։ Մյուս, հակառակ հոսանքի ներկայացուցիչն էր Թեոդոսի քույր Պուղքերիան, որ և, ինչպես գիտենք, նրա խնամակալուհին էր։ Փլաբիանոսը և Եվտիքեսի մյուս հակառակորդները Պուղքերիայի պաշտպանության տակ էին գտնվում։ Այնպես որ մի աննշան վարդապետի բարձրացրած իրարանցման մեջ իսկապես պալատական սին մրցություններն էին հանդես գալիս։ Քրյուսափիոսը մեծամեծ խոստումներ արավ Դիոսկորոս Ալեքսանդրացուն, իսկ կայսրին համոզեց, որ նա նշանակվի Եփեսոսի ժողովի նախագահ։

Վեճի ելքը պարզ էր. Եփեսոսի այս ժողովը ձայների մեծամասնությամբ արդարացրեց Եվտիքեսին և վերադարձրեց նրան նրա կոչումն ու պաշտոնը։ Ազատ դատողություններով չէր, որ տիեզերական ժողովն անիծում էր այն մարդկանց, որոնք հանդգնում են ասել, թե Քրիստոսի մեջ երկու բնություն կար.— խոսքի և կարծիքի ազատության տեղ գործում էր նախագահի հարկադրանքը։ Հավաքված խեղճ եպիսկոպոսներին վախեցնում էին կոպիտ անապատականների խմբերը, որոնք թափվել էին Եփեսոս՝ Ալեքսանդրիայի աթոռի իրավունքները պաշտպանելու համար։ Դատապարտվեցին իհարկե, անիծվեցին և եկեղեցուց հեռացվեցին Փլաբիանոսն ու Եվսեբեոսը։ Եվ երբ այս վճիռների դեմ բողոքներ բարձրացան, Դիոսկորոսը կոչ արավ տեղային զորապետին ու հավաքված վանականներին։ Կազմվեց զինվորներից, վանականներից և հասարակ ամբոխից մի խուժան, որ ներս թափվեց ժողովի տեղը, եկեղեցու մեջ, զինված խարազաններով և փայտերով։ Անողորմ կերպով ծեծի ենթարկվեց Փլաբիանոսը, որ և մի երկու օրից հետո մեռավ հարվածներից։ Դիոսկորոսն էլ իրեն չէր զրկել իր հակառակորդին վայրենաբար տանջելու հաճույքից։ Նա էլ ոտներով խփում էր գետին տարածված Փլաբիանոսին։

Այսպես էին ահա եկեղեցական սուրբ հայրերը վճռում երկնքում ապրող Աստուծու տնային գործերը։ Լևոն պապը, որ բոլոր պատճառներն ուներ դժգոհ մնալու իրերի այն դրությունից, որ հաստատվում էր Արևելքում, անվանեց Եփեսոսի այն ժողովն ավազակային ժողով: Եվ այս անունը մնացել է այդ ժողովի վրա եկեղեցական պատմության մեջ։ Բայց եթե այս հորջորջումով շեշտվում են ժողովում տեղի ունեցած բռնությունները, պատմությունը մեզ ուսուցանում է, որ բոլոր «տիեզերական» և «սուրբ» ժողովներում բռնությունը եղել է կայսրների, պապերի, եկեղեցական փաշավոնների թելադրումները գործադրելու լավագույն միջոց։

Եվ այսպես ահա՝ մի նոր ու խոշոր հաղթանակ Ալեքսանդրիայի աթոռի համար։ Այս բանը հավասարաչափ անհանդուրժելի էին համարում Հռոմի և Կ. Պոլսի կղերականները։ Եվ այդ պատճառով սկսեցին նոր ջանքեր գործադրել, որ մի ուրիշ եկեղեցական ժողով գումարվի։ Սակայն Թեոդոս

կայսրը, հաստատելով «ավազակային ժողովի» որոշումները, միշտ Եվտիքեսի և Դիոսկորոսի պաշտպանների ազդեցության տակ, մերժում է այդ առաջարկությունները։ Նույնիսկ Լևոն Ա պապն էլ չկարողացավ կակղեցնել կայսրին իր թախանձանքներով։ Եվ, ինչպես սրամիտ կերպով նկատում է անգլիացի նշանավոր պատմաբան Գիբբոնը, աշխարհի գործերը բոլորովին այլ ընթացք կստանային, թե այդ միջոցին չսայթաքեր Թեոդոս կայսրի ձին։ Որսի ժամանակ նա վայր գցեց կայսրին, որ և մեռավ։ Այս մահի պատահարը մեծ ազդեցություն ունեցավ Քրիստոսի բնությունն որոշելու վրա։ Կայսերական գահն անցնում է Պուղքերիա կույսին, իսկ չէ՞ որ նա Փլաբիանոսի և հակաեվտիքյանների պաշտպանն էր։ Իսկույն հարթվեց նոր ժողով հրավիրելու հարցը։ Լևոն պապի մի նամակով Պուղքերիայի ամուսին Մարկիանոս կայսրը հրաման տվեց գումարելու եկեղեցական ժողով, նրա համար տեղ նշանակելով Բյութանիայի մայրաքաղաք Քաղկեդոնը, որ շինված էր Կ. Պոլսի հանդեպ, ասիական ափի վրա (այժմ կոչվում է Գատը-քեոյ)[1]։

Դերերն այժմ փոխվել էին։ Ինչպես որ Եփեսոսի ժողովից առաջ ամեն ինչ արվում էր Եվտիքեսի հաջողության համար, այժմ էլ կայսերական կառավարությունը անում էր ամեն բան՝ նրա հակառակորդների գործը հաջողեցնելու համար։ Այսպես, Փլաբիանոսի ոսկորները մեծ հանդեսով տեղափոխվեցին Կ. Պոլիս, Եվտիքեսը կարգազուրկ եղավ և հեռացվեց պաշտոնից։ Իսկ եկեղեցական ժողովի նախագահությունը հանձնվեց Հռոմի պապի երկու ներկայացուցիչներին, որոնք ամեն մի քայլում հայտարարել և ընդունել էին տալիս, թե Հռոմը նախաթոռ եկեղեցի է, և պապը բոլոր եկեղեցիների իշխանապետն է։ Քաղկեդոնի ժողովն ամենից առաջ բավարարություն էր տալիս պապական իմպերիալիզմի ձգտումներին։ Ժողովին մասնակցում էին 600-ից ավելի եպիսկոպոսներ, մեծագույն մասամբ հույներ։ Աֆրիկայի եկեղեցին, որ 3-րդ և 4-րդ դարերում առաջնակարգ դեր էր կատարել քրիստոնեության կազմակերպման մեջ, շատ թույլ կերպո՛վ էր ներկայացված, որովհետև այդ ժամանակները վանդալները հարձակվել էին Հյուսիսային Աֆրիկայի վրա և կտրել էին հաղորդակցությունն աշխարհի հետ։ Շատ չէին եկել ներկայացուցիչներ և Սիրիայից, որ նույնպես շատ կարևոր դեր էր կատարել քրիստոնեության պատմության մեջ։ Այս հանգամանքը իր խիստ ազդեցությունը պիտի թողներ ժողովի վրա։ Հունական տարրը բնականաբար հեզ ու համակերպող դիրք պիտի բռներ արքունիքի վերաբերմամբ, որ ժողովի հոգին էր կազմում։ Մարկիանոս կայսրին և Պուղքերիա կայսրուհուն ժողովում ներկայացնում էին 16 լիազորներ, որոնք բարձր պաշտոնյաների շրջանից էին նշանակված։

Քաղկեդոնի սուրբ հայրերն ամենից առաջ շտապեցին վրեժխնդրության գործ կատարել։ Կայսրի հրամանով ժողովին հրավիրված էր և Դիոսկորոսը, որ շարունակում էր գրաված պահել Ալեքսանդրիայի իր աթոռը։ Եվ ահա առաջին իսկ նիստին պապի ներկայացուցիչները հայտարարում էին, թե իրենց և բոլոր քրիստոնյա եկեղեցիների իշխանապետ Լևոնի հրամանով Դիոսկորոսը պիտի դուրս գա ժողովի անդամների միջից, քանի որ դա մեղադրվող է և նրա վրա դատաստան պիտի կատարվի։ Բողոքներ

[1] Հ. Պ. Ցովհաննիսեանց, «Պատմութիւն Տիեզերական ժողովոց եկեղեցւոյ», Վիեննա, 1847, եր. 280։

եղան այս հայտարարության դեմ, բայց Հռոմի պատգամավորները խեղդեցին այդ փորձերը կտրական կերպով։ Այսպես էր հարգվում կարծիքների հավասարությունն այս ժողովում, որ կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիների համար օրինավոր և սուրբ է մինչև այսօր իսկ։ Դիոսկորոսը հեռացվեց, նրա բացակայությամբ դատ կատարվեց, և մեղադրողի, դատախազի պաշտոն կատարողն էր հե՛նց այն Եվսեբեոս եպիսկոպոսը, որ առաջին անգամ խոսք էր բաց արել Եվտիքեսի վարդապետության մասին։ Դիոսկորոսին, ինչ ասել կուզի, կարգընկեց արին ու աքսորեցին, իսկ նրա նախագահությամբ տեղի ունեցած եկեղեցական ժողովը բանադրեցին։

Գալով քրիստոսագիտական վճռին, Քաղկեդոնի ժողովն ընդունում էր Լևոն պապի տումարը կամ բանաձևը, որ միաբանության դեմ հանում էր Երկաբնյա կամ Երկաբնակ[1] վարդապետությունը։ Մեր ժամանակները, բարեբախտաբար, զրկված են աստվածաբանական այդ մանր ու բոլորուն հյուսվածքներն ըմբռնելուց, որոնցով մի ժամանակ աշխարհ իրարով էին տալիս, բռնանում էին ազգերի ու լեզուների վրա, մարդկային արյան և արտասուքի հեղեղներ հոսեցնում։ Պատմության պահանջած փաստացի լուսաբանության պարտքը կատարելու համար դնում ենք այստեղ քաղկեդոնական ուղղափառության հիմքը կազմող այդ քրիստոսագիտական բանաձևը. «Ուսուցանեմք զնոյն (այսինքն Քրիստոսին)՝ կատարեալ յաստուածութեան և զնոյն՝ կատարեալ ի մարդկութեան, զնոյն՝ Աստուած ճշմարիտ և մարդ ճշմարիտ, ի բանաւոր հոգւոյ և մարմնոյ, զնոյն՝ էակից (բնակից) Հօր ըստ աստուածութեան և էակից (բնակից) մեզ ըստ մարդկութեան. ամենայնիւ մեզ նման՝ բաց ի մեղաց. զնոյն՝ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ ըստ աստուածութեանն և ի վերջին աւուրս վասն մեր և վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ յաստուածածին կուսէ՝ ըստ մարդկութեան։ Զմի և զնոյն Քրիստոս՝ որդի, տէր, միածին, յերկուց բնութեանց, առանց խառնակութեան, առանց փոփոխութեան, առանց բաժանելոյ, առանց անջատելոյ ծանուցեալ ոչ ի բաց բարձեալ երբէք այլակերպութեան (տարբերութեան բնութեանց) վասն միաւորութեանն, այլ մանաւանդ առաւել անկորուստ պահեալ սեպհականութեան (հատկութեան) երկոցունց բնութեանցն և ի մի դէմս և ի մի անձն միասին գումարեալ. ոչ երկուս դէմս անջատեալ կամ բաժանեալ, այլ միևնոյն որդի և միածին Աստուած Բան, Տէր Յիսուս Քրիստոս»[2]։

«Երջանկացնելով» մարդկությունն այսպիսի բանաձևով, ժողովն իր վեցերորդ նիստում մեծ հանդեսով ընդունեց Մարկիանոսին և Պուղքերիային։ Կայսրը ողջույնի և շնորհավորության ճառ ասաց, ապա հաստատեց պատժողական օրենքներ՝ այս սուրբ և անսխալական ավանդն անփոփոխ պահպանելու համար։ Միաբնակները հայտարարվում էին հերետիկոսներ, որոնց պետք էր ենթարկել պատիժների։ Ժողովն երկարատև ոգևորված ցույցերով իր խորին երախտագիտությունն էր հայտնում իր կայսրին։ Քրիստոնեական եկեղեցին վտանգից ազատված էր համարվում, հավատի միությունը՝ վերականգնված։ Բայց սրանք սխալ հաշիվներ էին։ Քաղկեդոնի ժողովը չէր միացնում, այլ մեծամեծ ճեղքվածներ էր բաց անում քրիստոնեության մեջ։ Ժողովի վերջին նիստում, նոյեմբերի 1-ին,

[1] Հունարեն՝ դիոֆիզիտ։

[2] Հ. Յ. Գաթրճեան, «Տիեզերական պատմութիւն», հ. Բ, Վիեննա, 1882, եր. 442։

արդեն նկատվում էր ապագա մեծ հակառակությունը Հռոմի և Կ. Պոլսի միջև։ Պապի լիազորների բացակայության միջոցին ընդունվել էր 28-րդ կանոնը, որի մեջ ասված էր, թե քանի որ Կ. Պոլիսը կայսերական մայրաքաղաք է, իբրև եկեղեցական աթոռ պիտի վայելի այն պատիվն ու իրավունքները, որոնք հատկացված են Հռոմի աթոռին, ուստի Կ. Պոլսի պատրիարքությունը պիտի համարվի երկրորդը, Հռոմից հետո, և իրավունք ունենա մետրապոլիտներ և եպիսկոպոսներ ձեռնադրելու արևելյան թեմերի համար։ Լևոն Ա-ի լիազորները բողոքում էին այդ կանոնի դեմ, մանավանդ այն պատճառաբանության տեսակետից, որով հիմնավորվում էր նա։ Ժողովը գտել էր, որ Հռոմը նախապատիվ և գերագահ աթոռ է այն պատճառով, որ նա կայսերական մայրաքաղաք է։ Պապի ներկայացուցիչները պարզ նախատեսում էին, որ եթե Հռոմն որևէ պատճառով դադարի մայրաքաղաք լինելուց, նշանակում է, որ նա, իբրև կրոնական աթոռ, պիտի երկրորդական տեղ գրավի, իր առաջնությունը տալով այն քաղաքին, գուցե հենց նույնիսկ Կ. Պոլսին, որ կայսերական մայրաքաղաք կլինի այդ միջոցին։ Հասկանալի է, որ այսպիսի մի դրության հեռավոր միտքն անգամ չէին կարող ընդունել Հռոմի համաշխարհային տիրապետությունը պատրաստող կղերականները։ Բայց նրանց բողոքը նշանակություն չունեցավ։ Փաստն այն էր, որ Կ. Պոլսի տիրապետական տենչերը կատարյալ բավարարություն էին ստանում, Ալեքսանդրիայի աթոռն եկեղեցական իշխանապետության մեջ զրկվում էր իրեն հատկացրած երկրորդ տեղից և իջնում էր երրորդ աստիճանին, իսկ ապագայում հունաց եկեղեցին Հռոմից բաժանվելու և իր կատարյալ անկախությունը հաստատելու համար հենց այս քաղկեդոնական 28-րդ կանոնի վրա պիտի հենվեր։

Բայց ավելի մեծ էր այն բացասական դերը, որ կատարեց Քաղկեդոնի ժողովն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների վերաբերմամբ։ Նրա ընդունած քրիստոսագիտական նոր բանաձևը մեծ խառնակություններ առաջացրեց Երուսաղեմում, Ալեքսանդրիայում, Անտիոքում։ Միաբնյա վարդապետությունն ավելի համապատասխանում էր արևելյան ազգերի աշխարհայացքներին, հոգեբանության։ Երուսաղեմում ծագեց ապստամբություն, որի ղեկավարները 1000 վանականներ էին։ Նրանք ամեն տեղ ասում էին, թե Քաղկեդոնի ժողովը նեստորականության վարդապետությունն է ընդունել, թե նա որոշել է, որ Քրիստոսի մեջ կային երկու Որդիներ, երկու Քրիստոսներ և երկու անձինք։ Անկարգություններին ձեռնտու էր և Եվդոկիա կայսրուհին, որ Երուսաղեմում էր գտնվում։ Ապստամբները բռնությունների դիմեցին, արյուն թափվեց նույնիսկ Քրիստոսի գերեզմանի վրա։ Ալեքսանդրիայի անկարգություններն ավելի ևս լուրջ էին և ընդարձակ չափեր ընդունեցին։ Կայսերական կառավարությունը երկար ժամանակ մաքառեց այդ անկարգությունների դեմ և կարողացավ ճնշել զինվորական ուժի միջոցով։ Բայց այս արմատական միջոց էր։ Արևելքը կորած էր քրիստոնեության համար։ Քաղկեդոնի պատճառած խլրտումներն ու հուզմունքները շարունակվեցին այնուհետև մոտ 200 տարի ևս։ Աֆրիկյան և սիրիական ընդունակ ցեղերն օտարանում էին Բյուզանդիայից, իսկ այս նշանակում էր, թե կայսրությունը զրկվում էր ուժեղ ստեղծագործող տարրերից։ Այս բանն անդրադառնում էր և Բյուզանդիայի, իբրև պետության, ճակատագրի վրա[1]։ Լևոն Ա պապը, Պուղքերիա կայսրուհին և

[1] **Успенский**, стр. 28.

Մարկիանոս կայսրը[1] իրենց այս ժողովով հող էին պատրաստում իսլամի հաղթական արշավանքների համար։ Երբ այս կրոնը դուրս եկավ իր անապատներից, բյուզանդականությունն այնքան էր զզվեցրել աֆրիկյան և այլ ազգերին, նրանք հոժարությամբ ընդգրկեցին այդ նոր հավատը։

Հայերը մասնակցություն չունեցան Քաղկեդոնի ժողովում։ Մենք չգիտենք նույնիսկ հայոց եկեղեցին էլ հրավեր ստացա՞վ Մարկիանոս կայսրից, թեև, ինչպես գիտենք, հենց այդ ժամանակ Կ. Պոլսում էր գտնըվում Հմայակ Մամիկոնյանի պատվիրակությունը։ Մեզ թվում է, որ հայերը նախորդ երկու եկեղեցական ժողովներին էլ չմասնակցեցին քաղաքական նկատառումներով պարսկական կասկածամտությունը չգրգռելու համար։ Այժմ այդ հանգամանքին ավելանում է ավելի լուրջ պատճառ։ Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում Քաղկեդոնի ժողովը, հայոց կաթողիկոսն կալանավորված էր, նախարարները կամ քաշվել էին զանազան կողմեր, կամ ապստամբական լեռնային կռիվներ էին մղում երկրի ծայրերում։ Այսպիսի մի դրության մեջ հայ եկեղեցին չէր կարող ներկայացուցիչ ուղարկել Քաղկեդոն, մանավանդ որ նա հեռու էր մնացել Նեստորի, Եվտիքեսի և ուրիշների հարուցած շարժումներից։

Մնում էր, որ հայ եկեղեցին ինքն արտահայտեր իր վերաբերմունքը դեպի չորրորդ տիեզերական ժողովը և դեպի Լևոնի տումարը։ Բայց այսպիսի արտահայտության համար դեռ հարմար պարագաներ պիտի ստեղծեին քաղաքական հանգամանքները։ Իսկ մինչև այդ՝ Հայոց երկրին վիճակվում էին երկու նոր շարժումներ սասանյան ռեժիմի դեմ։

Գլուխ երրորդ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

1. Գուգարքում: Պերոզի թագավորության ժամանակ Հայաստանում հաստատված մռայլ և հուսահատական իրականության մեջ առանձնապես գեղեցիկ մի դեր է վիճակվում Գուգարք նահանգին։ Վարդանանց շարժման պատմությունն արդեն մեզ ցույց տվեց, որ Հազկերտը, հայոց, վրաց և աղվանից նախարարների ուրացության անկեղծության վրա հույս չդնելով, պատանդներ պահեց իր մոտ, և որ այդ պատանդներից մեկն էր վրաց Աշուշա բդեշխը։ Այս իշխանավորը հայտնի անուն էր վաստակել ոչ միայն իր երկրում և Հայաստանի մյուս կողմերում, այլև Սասանյան արքունիքում... Արդեն հայտնի է մեզ, որ Գուգարքը Տիգրան Մեծը դարձրեց մեկն այն չորս մեծ կողմնապահություններից, որոնք հայտնի դարձան բդեշխություն անունով և որոնց առաջին գործն էր պաշտպանել Հայաստանի սահմանները։

Գուգարքն այդ դերը կատարում էր հյուսիսային պաշտպանողական գծի վրա, Կովկասյան մեծ լեռնաշղթայի հանդեպ, որ ամենահին ժամանակներից հայրենիք էր վայրենաբարո և գիշատիչ ցեղերի։ Կուրի հովտից այս երկրի միջով են անցնում դեպի Արաքսի հովիտը երկու շատ կարևոր ճանապարհներ, որոնցից մեկն անցնում է Դիլիջանի կիրճով, իսկ մյուսը

[1] Երեքն էլ եկեղեցու կողմից սուրբերի դասն են կարգված։

Լոռու և Ապարանի սարահարթերն է ակոսում։ Բացի դրանից՝ Գուգարքն առանձին կարևորություն ուներ իբրև մի երկիր, ուր իրար հանդիպում, իրար հետ շփվում էին Հայաստանն ու Վրաստանը։ Այդտեղ, այդ դրացիական հարատև շփումներից ստեղծվում էին երկու կողմերի համար չափազանց կարևոր ազգային շահեր։ Հայերը Գուգարաց աշխարհը համարում էին Վրաստան, իսկ վրացիները նրան տալիս էին Հայաստան (Սոմխեթ) անունը։ Ահա այս երկրի տերն էր Աշուշան։ Նրա մայրաքաղաքն էր Ցուրտավը, որ գտնվում էր այժմյան Բոլնիս-Խաչեն տեղը, Թիֆլիսի մոտ, Լալվար լեռների շրջանում։

Ղևոնդյանց քահանաների սպանությամբ և հայ նախարարներին Հրև աքսորելով, Հազկերտը վերջացնում էր այն գործը, որի համար Աշուշան պատանդ էր պահվել Պարսից արքունիքում։ Այնուհետև բդեշխն ազատություն էր ստանում իր երկիրը վերադառնալու։ Բայց չուզեց վերադառնալ առանց գլուխ բերելու մի վերին աստիճանի դժվար գործ, այն է՝ ազատել Հմայակ Մամիկոնյանի երեք երեխաներին, որոնց բռնել և ուղարկել էր Տիզբոն Վասակ մարզպանը՝ նրանց էլ սպանելու համար իրենց հոր և հորեղբոր պատճառով։ Մամիկոնյան այդ երեք մանկահասակ որբերը կոչվում էին, ինչպես ասել ենք, Վահան, Վասակ և Արտաշես։ Նրանց հետ Պարսից արքունիքում նույն վիճակին էին սպասում և Արշավիր Կամսարականի երկու որդիները—Ներսեհ և Հրահատ։ Աշուշայի զգացմունքները դեպի այս գերի և անոք նախարարազունները բխում էին այն բարեկամական կապերից, որոնք կապում էին նրա տունը Մամիկոնյանների և Կամսարականների տների հետ։ Երեք Մամիկոնյան եղբայրները Աշուշայի քենու որդիներն էին, որովհետև նրա կին Անուշվռամը և Հմայակի կին Ձվիկը քույրեր էին, Արծրունիների տանից։ Բացի դրանից, Աշուշայի որդի Վազգենը ամուսնացած էր Վարդան սպարապետի Վարդենի կամ Շուշանիկ աղջկա հետ։ Իսկ Կամսարական երկու երեխաները նույն Վարդան Մամիկոնյանի թոռներն էին, ծնված նրա աղջկանից, որ Արշավիր Կամսարականի կինն էր, բայց որի անունը մեզ չի հասել։

Եվ Աշուշան մեծամեծ ծախսեր է անում արքունիքի մեծավորներին կաշառելու համար և աղաչում է Հազկերտին, որ իրեն բաշխեն Մամիկոնյան երեք երեխաներին։ Հազկերտը, ի պատիվ բդեշխի, կատարում է նրա խնդիրքը (455)։ Բռնապետի այդ շնորհն այնքան բացառիկ էր, որ Աշուշան ընկավ նրա առջև, թավալվում էր, գլուխը գետնին խփում, երկրպագություններ անում։ Եվ երբ թագավորը զարմանում է այդ բանի վրա, Աշուշան ասում է նրան. «Բարերար թագավոր, դուք ինձ նոր շնորհեցիք մի պարգև, որ ոչ մեկն իմ ընկերակիցներից, որոնք ձեր ծառան են, չի ստացել. ինձ էլ արժանի է, որ նոր ձևով երկրպագություն տամ ձեզ, այնպիսի ձևով, որ դուք ձեր մյուս ծառաներից բնավ չեք տեսել»։ Այս արտակարգ ցույցերը վկայում են, որ գերի երեխաներին Հազկերտը չպիտի վերադարձներ իրենց տուն, եթե չլիներ Աշուշան։ Ինչպես երևում է, Կամսարական եղբայրներն էլ բդեշխի աղաչանքներով ազատվեցին։

Այսպես ահա՛, Աշուշա բդեշխը Պարսկաստանից իր հետ բերում էր Հայոց գլխավոր նահատակների նոր սերունդը[1]։ Բայց ազատված երեխաներին նա չթողեց Հայաստանում, և այս նրա երկրորդ բարերարությունն

[1] Պարսկաստանում մեռել էին Վահան Ամատունին և Արշավիր Կամսարականը։

Ջվիկ տիկինն իր քրոջ մոտ էր ապրում,
էր։ Բոլորին տարավ Գուգարք։ Ջվիկ տիկինն իր քրոջ մոտ էր ապրում,
Ցուրտավ քաղաքում։ Հայկական մռայլ իրականության մեջ տեղ չունեին
Մամիկոնյանները։ Վարդանի ապստամբությունը զրկել էր այդ նշանա-
վոր տոհմը նրա մեծամեծ հարստություններից։ Նույնիսկ մի հատ ծառա էլ
չունեին Մամիկոնյանները, որ կերակուր եփեր նրանց համար։ Եվ ահա
այդ պայմանների մեջ, նույնիսկ առանց սեփական օթևանի, իր քրոջ
խնամքի տակ, Ջվիկ տիկինն իր վրա է առնում ոչ միայն իր ազատված
մանուկների դաստիարակությունը։ Նա ուներ և մի չորրորդ տղա, շատ փոք-
րահասակ, Վարդ անունով, որին, սակայն, Վասակ մարզպանը չէր կարո-
ղացել ձեռք գցել, որովհետև նա գտնվում էր Տայոց աշխարհում, իր դա-
յակի մոտ։ Բղեշխի տանը մի ամբողջ դպրոց էր կազմվել։ Բացի Մամի-
կոնյան չորս եղբայրներից՝ այդտեղ էին և Կամսարական երկու եղբայրնե-
րը։ Դրանց հետ էր և պատանի Ղազարը Փարպի գյուղից, ապագա պատ-
մագիրը։ Ջվիկ տիկնոջը դաստիարակության գործում օգնում էր նրա քույրն
էլ, Անուշվռամը։ Անշուշտ, նրանք իրենք էլ դաստիարակություն ստացել
էին իրենց եղբայր Աղան Արծրունուց, որ, ինչպես գիտենք, Սահակ-Մաշ-
տոցյան դպրոցի աշակերտ էր։

Փարպեցին իրեն խնամած Ջվիկ տիկնոջն անվանում է «կին անուանի
և առաւելեալ ամենայն լաւ և մտաւոր մասամբք յամենայն կանայս ի
Հայաստան աշխարհիս»։ Անկասկած, երախտագիտությունը չէ միայն, որ
այսքան բարձր պատվի է հասցրել Հմայակ իշխանի այրուն.— Ջվիկն իսկա-
պես մեկն էր 5-րդ դարի այն «փափկասուն տիկիններից», որոնց առաքի-
նություններն նկարագրված են այնքան խանդավառությամբ։ Ապացույց՝
նրա դաստիարակության պտուղները, որոնք անկման և խավարի ժամա-
նակներում ճրագներ հանդիսացան Հայոց աշխարհի համար։ Այդ համեստ,
իր մայրական պարտականության հլու կնոջ տված կրթությունը բնական
էր և առողջ։ Երեխաներն իրենց ֆիզիկական ուժը զարգացնում էին խա-
ղերի, որսորդության մեջ։ Ղազարը խաղերի ժամանակ Վահանի վերարկուն
տանում էր նրա հետևից։ Ուշիմ և մտացի լինելով, Վահանն ու իր եղ-
բայրներն առաջադիմում էին ամեն բանի մեջ։ Նրանք քաջ նետաձիգներ
էին և շատ հաջողակ որսորդներ։ Գուգարքի լեռները և հավանաբար մանա-
վանդ Հայոց Լալվարը, այնպիսի առատությամբ որսեր էին տալիս, որ Մա-
միկոնյան եղբայրները միշտ կարող էին ամեն մի խնդրողի առատ բաժին
հանել։ Իսկ խնդրողները քիչ չէին։ Զարմանալին այն էր, որ որսաբաժին
խնդրելու համար Մամիկոնյանների դուռը ծեծում էին և այնպիսի նախա-
րարներ, որոնք ծառաներ շատ ունեին, մինչդեռ Մամիկոնյաններն անծա-
ռա էին։ «Նոքօք,— ասում է Փարպեցին,— շքեղանային ընթրիք ամենայն
տանուտէրանց Հայոց. նոքօք զարդարէին յամենայն տունս օտարք և ըն-
տանիքն»[1]։

Թեև այս դաստիարակությունը, որ զարգացնում էր անձնական ուժը,
դյուրաշարժությունը, դիմացկունությունը, չարքաշությունը, հատուկ էր
առհասարակ նախարարական դասակարգին, բայց Մամիկոնյանների և
Կամսարականների ձեռք բերածն այնքան աչքի ընկնող էր, որ նրանց սկսե-
ցին ճանաչել շատերը և ամենից շուտ, իհարկե, պարսիկ պաշտոնյաները,

[1] Վահան Մամիկոնյանի պատմության միակ աղբյուրը Ղազար Փարպեցին է, ուս-
տի ավելորդ ենք համարում համախակի ցույց տալ նրա Պատմության այն երեսները,
որոնցից մենք օգտվում ենք։

որոնք ուշադրությամբ հետևում էին Մամիկոնյաններին, իբրև պետական տեսակետից վտանգավոր մի տոհմի։

Մենք չգիտենք, թե Ջվիկ տիկինն իր սաների հետ ո՛րքան ժամանակ մնաց Գուգարքում և Մամիկոնյան երիտասարդ իշխանները ե՛րբ վերադարձան իրենց կալվածները՝ իրենց ավերված տունը նորից շենացնելու համար։ Փարպեցին միայն հիշատակում է, թե հայ նախարարների մեջ ո՛րքան մեծացավ ատելությունը դեպի այդ երիտասարդները, երբ սրանք երևացին նախարարական շրջանում։ Նախանձն ու չկամությունը պատրաստ էին ամեն վատության՝ նրանց վնասելու, նույնիսկ կործնելու համար։ Օտարների նման էին Հմայակի որդիներն իրենց ազգակիցների մեջ, և այս ատելությունը, իհարկե, միայն ծագումը չէր ստեղծում, այսինքն այն հանգամանքը, թե նրանք Մամիկոնյաններ էին։ Այստեղ խոսում էր, իբրև ստացող ուժ, Ջվիկ տիկնոջ տված դաստիարակության ամենագլխավոր մասը, էականը—ներքինը, բարոյականը։ Մամիկոնյան տիկնոջ մայրական խնամքի տակ մտնող նրա երեխաներից մեկն էր միայն, որ իր մանկության շրջանում ազատ էր մնացել պարսկական ազդեցությունից, մինչդեռ երեքը՝ Վահան, Վասակ և Արտաշես, տարիներ էին անցկացրել պարսկական շրջաններում, արքունիքի մեջ, գուցե նույնիսկ բռնի պարսկական կրոն էին սովորել մոգերից։ Պետք է դուրս մղել մատաղ սրտերից այդ օտար, հայրենի ոգուն խիստ հակառակ ազդեցությունը։ Եվ Ջվիկին միանգամայն հաջողվում էր այդպիսի մի դժվար գործ։ Միաժամանակ նա հաստատում էր այդ սրտերի մեջ զուտ Մամիկոնյան ավանդությունները—սեր դեպի Հայոց երկիրը, դեպի եկեղեցին, դեպի լուսավորությունը։ Ահա ինչն էր այնքան բաժանում Մամիկոնյան եղբայրներին և մանավանդ նրանց ավագագույնին՝ Վահանին, շրջապատող նախարարական միջավայրից, որը շարունակ անառակացվում էր պարսկական կառավարության ընդգրկած անբարոյական ռեժիմով։ Նոր սերունդ էր առաջանում Հայոց աշխարհում, և այս երևույթը գալիս էր ազգային այն ոգուց, այն գործից ու գործիչներից, որոնք ոչնչացված էին համարվում Ավարայրի ռազմադաշտում, պարսկական փղերի ոտների տակ։ Երկիրը նորից սկսում էր վերածնվել։

2. Գյուտ կաթողիկոս: Երևի հենց այս արթնացող տրամադրության գործերից մեկն էր այն, որ Հայոց կաթողիկոսական գահի վրա, Մովսես կաթողիկոսի մահից հետո, երևում է Գյուտը, որ Տայոց աշխարհի Արահեզ գյուղից էր։ Մենք չգիտենք, թե ո՛ր թվին նա ընտրվեց կաթողիկոս և թե ո՛վքեր էին նրան ընտրողները։ Բայց որ այդ գործը մի խոշոր, համարյա հեղափոխական ձեռնարկություն էր, այդ ամենից լավ ցույց էր տալիս այն հանգամանքը, որ Գյուտը կաթողիկոսացել էր առանց Պերոզի գիտության և հավանության։ Պատճառը պարզ հասկանալի կլինի, եթե ասենք, որ Հայոց նոր կաթողիկոսը լավ դաստիարակություն էր ստացել ոչ միայն հայերեն, այլև հունարեն լեզուներով, ասել է՝ մեկն էր Սահակ-Մաշտոցյան աշակերտներից, մեկը հայոց թարգմանիչներից, Ղևոնդ երեցի, Հովսեփ կաթողիկոսի և ուրիշ գործիչների ընկերակիցներից։ Այս գործը հունական կուսակցության գերագույն հաղթանակներից մեկն էր կազմում, մի հաղթանակ, որի համար, ըստ երևույթին, ամենևին հող մնացած չպիտի լիներ Պերոզի վարչական սիստեմին ենթարկված երկրում։

Եվ իսկույն փոխվում է հայ հոգևոր իշխանության վերաբերմունքը դեպի ստեղծված դրությունը։ Գյուտը նախ մի շնորհավորական և հիացա-

կան նամակ է ուղղում Աղվանից Վաչե թագավորին, որն այնքան հաջողու-
թյամբ կռվում էր պարսիկների դեմ՝ երկու հարևան և կրոնակից երկրների
—Աղվանքի և Հայաստանի դատը պաշտպանելու համար[1]։ Իբրև այսպիսի
մի գործիչ՝ Գյուտը հենց սկզբից պիտի ընդհարումներ ունենար հայ ուրա-
ցած և պարսկամոլ նախարարների ու նրանց կողմնակիցների հետ։ Քրիս-
տոնեության հավատարիմ մնացած նախարարներն այնքան տկարացած էին
թե՛ թվով և թե՛ կարողությամբ, այնքան արհամարհված էին պարսիկների
և ուրացած հայերի կողմից, որ Գյուտն այլևս անհանդուրժելի համարեց
այդ դրությունը։ Եվ նորից գաղտնի խորհրդակցություններ էին տեղի ունե-
նում կաթողիկոսարանի շուրջը՝ թե ի՛նչ կարելի է անել այդ անպատիվ
դրությունից դուրս գալու համար։ Թեև երկիրը մի անհաջող ապստամբու-
թյան հետևանքով էր հասել այդ տխուր կացության, բայց հունական կու-
սակցությունը, հենց որ փոքր ի շատե ուժ զգաց իր մեջ, դարձյալ հին
նշանաբանը պարզեց, այսինքն՝ որ քրիստոնեությանը և լուսավորությա-
նը փրկություն կարող է բերել միայն ապստամբությունը։ Եվ նորից ոս
նորից դեպի Արևմուտք էին ուղղում իրենց հայացքը զինված միջամտու-
թյուն ակնկալողները։ Դարձյալ հույներն էին հայերի միակ հույսը։ Եվ
այս սխալ չէր։ Հայերը դեռ շարունակում էին իրենց համարել հույների
դավանակից։ Իրենց վերաբերմունքը դեպի Քաղկեդոնի ժողովը դեռ չէին
ցույց տվել, թեև շարունակում էին մնալ միաբնյա։ Միաբնյա էր և արևե-
լյան քրիստոնեության մեծագույն մասը, իսկ բյուզանդական կառավա-
րությունը Մարկիանոսից և Պուղքերիայից հետո ոչ միայն Քաղկեդոնի օր-
թոդոքսությունը պաշտպանելու և տարածելու բռնի միջոցներ չէր գործա-
դրում, այլև աշխատում էր խաղաղություն և համաձայնություն հաստատել
քրիստոնեության մեջ, խուսափելով վեճերից ու գրգռումներից, որոնք այն-
քան արյունահեղ ընդհարումներ էին առաջացրել կայսրության զանազան
կողմերում։ Բացի դրանից՝ միաբնակությունն այդ միջոցին միացած էր
բյուզանդական օրթոդոքսության հետ մի նոր թշնամու դեմ, որ սկսել էր
տարածվել Սիրիայում։ Այդ նեստորական աղանդն էր, որ դատապարտվել
էր Եփեսոսի առաջին ժողովում և որ հավասարապես անընդունելի էր թե՛
միաբնյաների և թե՛ քաղկեդոնականների կողմից։

Այս պատճառներով էր, որ Գյուտ կաթողիկոսը բանակցություններ
սկսեց Լևոն Ա կայսրի հետ, որ հաջորդել էր Մարկիանոսին (457—474)[2]։
Դիմումներ եղան մի քանի անգամ։ Կայսրը խոստումներ արավ, բայց զա-
նազան պատճառաբանություններով ձգձգում էր այդ խոստումների կատա-
րումը։ Եվ սակայն, ինչպես միշտ, այդ խոստումները Հայաստանի մեջ
ավելի ևս սրեցին հարաբերությունները երկու հակառակորդ կուսակցու-
թյունների միջև։ Գյուտը քաջաբար պաշտպանում էր քրիստոնեությունն
առհասարակ և, մասնավորապես, բյուզանդասեր քրիստոնեությունը։ Նա
մաքառում էր դավանափոխության այն սիստեմի դեմ, որ գործադրում էր
պարսից կառավարությունը Հայաստանում։ Այս հողի վրա անդադար ընդհա-
րումներ էին տեղի ունենում կաթողիկոսի և Գադիշո Խորխոռունու միջև։
Վերջապես Գադիշոն, կորցնելով համբերությունը, գնաց Պերոզի մոտ և

---

[1] Կաղանկատուացի, «Պատմ. Աղուանից», եր. 106—115։

[2] Այս միակ փաստն է, որ ժամանակագրական որոշ հասկացողություն է տալիս Գյուտի կաթողիկոսության ժամանակների վերաբերմամբ։

բաց արավ ամեն ինչ, սկսած այն բանից, որ կաթողիկոսն ապստամբու-
թյուն է պատրաստում և այդ նպատակով էլ բանակցություններ է վարում
կայսրի հետ։ «Այն մարդկանց, որոնք քո կամքն ու հրամանն են ուզում
կատարել, որոնք ուզում են քո կրոնն հանձն առնել և սիրել, կանչում է իր
մոտ,— ասում էր պարսկամոլ նախարարը,— և որին հող կամ կալք տալով,
որին քաղցր խոսքերով խաբելով հեռացնում է նրանց իրենց դիտավորու-
թյունից։ Շատերն են եկել ինձ մոտ, հանձն առել ընդունել քո օրենքը,
բայց նա կանչելով (այդպիսիներին), համոզել է, որ թողնեն իրենց միտ-
քը ու արհամարհեն»[1]։

Կաթողիկոսը կանչվում է Պարսկաստան, Պերոզը նրան հարց ու փորձի
է ենթարկում Հրզատվշնասպի միջոցով։ Գյուտը խոսում է համարձակ,
առանց քաշվելու, ինչպես իր նախորդները։ Գադիշոյի մասին ասում է,
թե նրա խոսածների մեջ բոլոր բաները սուտ չեն, թե նա ճշմարիտ բաներ
էլ է ասել թագավորին։ Հույների հետ ինքը, այո՛, հարաբերություններ
ունի, որովհետև ինքն էլ հունական դաստիարակություն է ստացել և հույ-
ների մեջ շատ ունի դասակից ընկերներ։ Բացի դրանից, հույներից է վերց-
ված հոգևորականների զգեստի ձևը և այդ զգեստի համար հարկավոր բո-
լոր բաները Հունաստանից են բերվում։ Իսկ քաղաքական նպատակ այդ
հարաբերությունների մեջ կաթողիկոսը ժխտեց, ասելով, թե քրիստոնյա-
ները նույնիսկ իրենց կրոնով պարտավորված են հավատարմությամբ ծա-
ռայել իրենց տերերին։ Պերոզը չկամեցավ նոր նահատակության առիթ
տալ, միշտ, իբրև զրադաշտական, մեծ մեղք համարելով, որ մարդիկ մե-
ռածների ոսկորները պաշտում են։ Նա միայն բավականացավ հեռացնելով
Գյուտին կաթողիկոսությունից, ասելով թե՝ նա այդ աստիճանին կոչվել է
«ծառա մարդկանց» ձեռքով, առանց իր վավերացման։ Միաժամանակ
կաթողիկոսը մնաց արքունիքում, հետո վերադարձավ Հայաստան, ուր և
վախճանվեց գործերից հեռացած (478)[2]։

3. Առաջին քայլեր: Բայց զարկ էր տրված մի նոր շարժման։ Սկզբ-
նական փորձերը կատարվում էին գաղտնի, և նրանց մասնակցողներն ամեն
կերպ աշխատում էին վարագուրել իրենց գործը։ Որ չէր կարող ապստամ-
բական որևէ շարժում տեղի ունենալ առանց Մամիկոնյան տոհմի նա-
խաձեռնության կամ, համենայն դեպս, գործուն աջակցության, այդ հաս-
կանալի է ինքնըստինքյան։ Գյուտի գործակիցն էր, անշուշտ, Վահան
Մամիկոնյանը։ Եվ այս պատճառով է, որ կաթողիկոսի մահից հետո նրան
էր, որ պարսկասեր կուսակցությունը շարունակ մեղադրում էր, թե նա պի-
տի կրկնի իր հորեղբոր շարժումը։ Պերոզ թագավորին ամենադրական կեր-
պով ցուցմունքներ էին արվում։ «Անհնարին է, որ նա չապստամբվի»,—
ասում էին հայոց ուրացյալ նախարարները, ունենալով, անկասկած և իրենց
համոզիչ փաստերը։ Վահանն ստիպված էր, իր հակառակորդներին լռեցնե-
լու համար, գնալ Տիզբոնի արքունիքը և այնտեղ ուրանալ քրիստոնեու-
թյունը, դառնալ զրադաշտական։ Բռնավորներին խաբելու այս սովորական
միջոցին էր դիմում և Աղվանից իշխաններից մեկը, Վաչագանը, որ հետո

---

[1] Փարպեցի, Գ, կդ։

[2] Ժամանակագրական հաստատուն տեղեկություններ չեն մնացել, թվականները համարյա միշտ ենթադրական են և այլևայլ կերպ են ներկայացվում զանազան հեղինակների կողմից։

պիտի դառնար իր երկրի մի շատ նշանավոր թագավորը[1]։ Սակայն ուրացությունն էլ չէր ազատում Վահանին կասկածներից։ Պարսից կառավարության կողմից նրան հանձնվեց, անշուշտ փորձելու համար, մի երկրորդական պաշտոն—երկրի հարկահանությունը։ Նա գլխահարկի պետն էր և կոչվում էր Ոսկեհատ[2]։ Նրան օգնական տվին մի քսու սիրիացի, որի անունն էր Վրիվ։ Այս մարդն իսկույն սկսեց մատնություններ, հայտնելով արքունիքին, թե Վահանը հավաքում է բոլոր ոսկիները, պահում է իր մոտ, որպեսզի դրանցով դաշնակիցներ գրավի և ապստամբություն հարուցի։ Տեղեկություն ստանալով այդ մատնության մասին, Վահանն շտապում է իր մոտ հավաքված հարկերը տանել անձամբ Պերոզին։ Այս ձևով, այսինքն՝ պարսից թագավորին գանձ տանելով, Վահանն արդեն կիսով չափ ջախջախում էր իր քսու օգնականին։ Պերոզին շատ հաճելի էր այդ ոսկին, իսկ Վահանն ասում էր բռնակալին. «Ասենք՝ ես այդքան հիմար եմ, բայց մի՞թե կույր էլ եմ, որ չտեսնեմ Արյաց ամբողջ ուժը, ապստամբել նրա դեմ ինչո՞վ կարող եմ, որ չունեմ նույնիսկ մի խոհարար ծառա և երկու կամ երեք պատանիների անգամ տեր չեմ»[3]։ Բացատրում է և այն, որ եթե ինքն ուզենար անհավատարմություն ցույց տալ արքայից արքային, այնքան ոսկին չէր բերի նրան։ Պերոզը հավատաց, բայց ոչ բոլորովին, ուստի իր մոտ պատանդ պահեց նրա փոքր եղբորը, Վարդին, իսկ նրան արձակեց Հայոց աշխարհը, շարունակելու իր պաշտոնը։

Այսպես էր ընթանում նոր շարժման նախապատրաստական շրջանը։ Եվ արտաքին հանգամանքներն էլ գալիս էին հասունացնելու այդ շարժումը։ Ամենից գլխավորն այն էր, որ գժտություն ընկավ Պերոզի և հեփթաղների17 միջև։ Հեփթաղներն այն ռազմիկ անապատային ցեղն էին, որ օգնեցին Պերոզին խլելու գահն իր Որմիզդ եղբորից։ Այս օգնության փոխարեն Պերոզը որոշ տուրք էր տալիս հեփթաղներին։ Արդյոք տուրքի գումարն ավելացնելու համա՞ր էր, թե ուրիշ ինչ պատճառ ծագեց, հեփթաղների ու պարսիկների միջև սկսվեցին կատաղի պատերազմներ։ Պերոզը մի քանի անգամ հաղթեց հեփթաղներին, բայց սրանց անապատ հայրենիքը, որ տարածված էր Կասպից ծովի արևելյան կողմերում, չափազանց դժվարացնում էր պատերազմական գործողությունները։ Պերոզը մինչև իսկ մի անգամ ընկավ թշնամիների ձեռքը և ստիպված եղավ իր Կավատ որդուն երկու տարի պատանդ տալ նրանց, մինչև որ կարողացավ ծանր փրկանք հատուցանել[4]։ Պարսկաստանի այս թուլացումն ամենահարուստ հանգամանքն էր այն ազգերի համար, որոնք ենթարկված էին նրա ծանր լծին։ Մի ուրիշ հանգամանք էլ, որ հայերին հրում էր դեպի ապստամբական շարժում, այն էր, որ Պարսկաստանն այդ միջոցին միայն իր զրադաշտականությամբ էր աշխատում խեղդել իր հպատակ քրիստոնյաներին։ Պարսկաստանում գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցին, որ, ինչպես տեսանք, նույնպես հալածական էր, նույնպես ճնշված, հանկարծ ստանում է ճնշողի, պարսկական զորքի վրա հենված հալածողի դիրք և սպառնալիք է դառնում Հա-

[1] Մովսէս Կաղանկատուացի, եր. 132։

[2] Գլխահարկն այսօր էլ մեր ժողովրդի մեջ կոչվում է «ոսկի», երևի այն պատճառով, որ ոսկով էր վճարվում։ «Ոսկեհատ» պարզապես նշանակում է հարկահան, «ոսկի կտրող»։

[3] Փարպեցի, Գ, կե։

[4] Noeldeke, „Etudes Historiques...", p. 164.

յաստանի քրիստոնեության համար։ Այս զարմանալի կերպարանափոխությունը տեղի ունեցավ այսպես։ Սիրիայի մի խումբ հոգևորականներ, որոնք հարել էին Նեստորի աղանդին, հունական Միջագետքից հալածված, անցան Պարսից երկիրը և սկսեցին նեստորականությունը տարածել Պարսկաստանի քրիստոնյաների մեջ։ Այդ հոգևորականներից մեկը, Բարսումա եպիսկոպոսը, աչքի էր ընկնում իր արտակարգ եռանդով ու խելքով։ Նեստորականությունը նա մեծ հաջողությամբ դրեց պարսից կառավարության հովանու տակ։ Պերոզին նա ասում էր. «Եթե մենք Արևելքում չհայտարարենք մի դավանություն, որ տարբեր կլինի հռոմեական կայսրի դավանությունից, քո քրիստոնյա հպատակները երբեք անկեղծորեն կապված չեն լինի քեզ հետ։ Տո՛ւր ինձ, ուրեմն, քո զորքերը, և ես նեստորական կդարձնեմ բոլոր քրիստոնյաներին քո պետության մեջ։ Այսպիսով նրանք կատեն հռոմայեցիներին, իսկ հռոմայեցիները կգարշեն նրանցից»[1]։ Պերոզը երկու ձեռքով է կպչում այս խելոք մտքին, որ այնուհետև դառնում է թե՛ նրա և թե՛ նրա հաջորդների քաղաքականության անկյունաքար։ Բարսումայի առաջարկությունը կատարվում է. նրան զորքեր են տրվում, և նա գնում է քաղաքից քաղաք, սրով ու երկաթով նեստորականություն է տարածում։ Մի սիրիական գրավոր աղբյուր ասում է, թե Բարսուման կոտորեց 7700 ուղղափառ քրիստոնյա[2]։ Որքան էլ չափազանցություններ գտնենք այս թվի մեջ, այնուամենայնիվ շատ բան կմնա ցույց տալու համար, թե որքա՛ն կատաղի էր Քրիստոսի այս փոխանորդը և ի՛նչ սոսկալի միջոցներով էր սովորեցնում աշխարհին, թե նրա փրկության համար Հիսուսը կրում էր իր մեջ առանձին մարդկային և առանձին աստվածային բնություն։ Հայոց պատմության համար առավել հետաքրքրականն այն է, որ Բարսուման, վերջացնելով իր արյունոտ առաքելությունը Միջագետքում, իր զորքերով ուղևորվեց Հայաստան, այստեղ ևս իր գործը շարունակելու համար։ Բայց հայ եպիսկոպոսների և նախարարների բռնած դիրքը, ինչպես ասում է նույն աղբյուրը, արգելեց նրա առաջխաղացությունը[3]։

Իսկ այդ դիրքը հենց այն էր, որ կազմակերպվում էր Վահան Մամիկոնյանի շուրջը։ Կաթողիկոսական աթոռը Գյուտից հետո անցավ Հովհան Մանդակունուն, որ միևնույն ուղղության, միևնույն դպրոցի մարդ էր, թարգմանիչների աշակերտներից։

Ամեն ինչ պատրաստ էր, սպասելով բարեհաջող դիպվածի։ Իսկ այդպիսի դիպված տեղի ունեցավ Պերոզի թագավորության 25-րդ տարում[4], 481 թվին, և է՛ր վրաց Վախթանգ թագավորի ապստամբությունը պարսից կառավարության դեմ։ Առիթը Գուգարաց բդեշխն էր, Վազգենը, Աշուշայի որդին և Վարդան Մամիկոնյանի փեսան։ Դա մի կոպիտ և բռնակալ մարդ էր, մինչդեռ նրա կին Շուշանիկը, հավատարիմ իր հայրենական տան ավանդություններին, եկեղեցական և ազգային գործերի կարգավորման մեջ էր իր համար մխիթարություն գտնում։ Այսպես, նա էր, որ Ցուրտավի եկեղեցում հաստատեց ժամերգություն հայերեն լեզվով, մի բան, որ

[1] Labourt, „Le Christianisme dans l' Empire Perse", Paris, 1904, P. 135.

[2] Ibid. p. 136.

[3] Labourt, „Le Christianisme dans l' Empire Perse", p. 136.

[4] Փարպեցին, ինչպես երևում է, Պերոզի թագավորությունն սկսում է ոչ թե 439 թվից, այլ 487, երբ Պերոզը դեռ կռվում էր գահի համար իր եղբոր հետ։

մոտիկ ապագայում ահագին կարևորություն պիտի ստանար հայ-վրացական հարաբերությունների մեջ։ Նրա կարգադրությամբ էր դարձյալ, որ Ցուրտավի աթոռի համար եպիսկոպոսներ նշանակվում էին կամ հայերից, կամ թե այնպիսի վրացիներից, որոնք ուսում էին ստացել Հայաստանում[1]։ Վազգենը, ինչպես երևում է, չէր էլ խառնվում իր կնոջ այդ հոգևոր գործունեության մեջ։ Նա տարված էր աշխարհային փառքով և երևի հենց այս շրջանակի մեջ էլ նա ընդհարում ունեցավ վրաց թագավորի հետ, որ և սպանեց նրան։ Հայերեն մի վկայաբանական գրվածք[2] պատմում է, թե Վազգենն ինքնահոժար կերպով ուրացավ քրիստոնեությունը և զրադաշտական դառնալով, ամուսնացավ պարսից թագավորի կնոջ մոր հետ, անշուշտ այդ ամուսնության մեջ որոնելով իր իշխանության հովանավորող և բարձր հեղինակություն տվող մի կռվան[3]։ Եվ իրավ, թե ո՛րքան կարևոր էր այս ուրացած իշխանը Պարսից արքունիքի համար, ցույց է տալիս հենց այն, որ Վախթանգ թագավորը, սպանելով Վազգենին, անմիջապես ապստամբություն բարձրացրեց։

Այդ միջոցին պարսկական մի բանակ, Ջառմիհր Հազարավուխտ զորավարի առաջնորդությամբ, գործում էր Աղվանից աշխարհում Կովկասյան լեռնականների դեմ։ Հազարավուխտի հրամանի տակ գործում էր և հայոց գունդը, և նրա մեջ եղած նախարարները, ինչպես սովորաբար, բաժանված էին երկու ծայրերի. ուրացողների կուսակցությունը, ինչպես միշտ, արհամարհանքով էր վերաբերվում փոքրաթիվ ուխտապահներին։ Վերջիններս, օգուտ քաղելով Վախթանգի ապստամբությունից, սկսեցին խորհել, որ իրենք էլ միանան ապստամբության և այդպիսով վերականգնեն իրենց պատիվն ու նշանակությունը։ Նույն խորհրդակցությունները շարունակվեցին և Հայաստանում, երբ հայոց գունդը վերադարձավ այնտեղ։ Հայաստանի այդ ժամանակվա մարզպանն էր Ատրվշնասպ Հողմանդյանը, իսկ հազարապետը՝ Վեհվեհնամը։ Նրանք գտնվում էին Շիրակի դաշտում, և նախարարական գունդն էլ գնաց այնտեղ։ Շիրակում էլ, հայոց բանակի մեջ, շարունակվեցին խորհրդակցությունները։ Ապստամբության գործը հեշտանում էր նրանով, որ Վախթանգ թագավորն ինքն էր հրավիրում հայերին մասնակցել իր սկսած գործին և հավատացնում էր, թե կռվողները վրացիները կամ հայերը չպիտի լինեն, այլ հոները, որոնք իր հրավերով պիտի գան այնքան մեծ բազմությամբ, որ պարսիկները չպիտի կարողանան

[1] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, եր. 178։

[2] «Վկայաբանութիւն սրբոյն Շուշանկան դստեր Մեծի Վարդանայ» («Սոփերք Հայկականք», հատ. Բ, Վենետիկ, 1853)։

[3] Այս ամուսնությունն էլ, երևի, դարձավ գժտության առիթ Վազգենի և Շուշանիկի միջև։ Վկայաբանությունը հավատացնում է, թե գժտության պատճառն այն էր, որ Վազգենն ուզում էր Շուշանիկին և իրանց երեք տղաներին ու մի աղջկան էլ դարձնել զրադաշտական, որպեսզի կարողանա, պարսկական օրենքով, ամուսնանալ և իր աղջկա հետ։ Սակայն այս բոլորը վկայաբանական կարկատաններ են երևում։ Շուշանիկի հպարտությունը թույլ չտվեց, որ նա, խոր հավատացող մի կին, անկողնակից դառնա մի ուրացողի և իր տիկնության իրավունքներն էլ բաժանեց մի օտար կնոջ հետ։ Վեց տարի տևեց Շուշանիկի մաքառումը Վազգենի դեմ, որ բռնությունների էր դիմում՝ կնոջն իրան հնազանդեցնելու համար և անգթորեն ծեծում էր նրան։ Այդ դրության մեջ էլ մեռավ Շուշանիկը և դասվեց սրբերի կարգում։ Դեռ 10-րդ դարում նրա գերեզմանն ուխտատեղի էր Ցուրտավի եկեղեցում։ Բայց այսօր արդեն Թիֆլիսի Մետեխի բերդի եկեղեցումն են ցույց տալիս մի գերեզման և ասում, որ այդ է Ս. Շուշանիկի գերեզմանը։

դիմադրել նրանց։ Խոսք եղավ նաև, իհարկե, հունաց կայսրի օգնության մասին։ Եվ որովհետև ձեռնարկությունը չէր կարող գլուխ գալ առանց Վահան Մամիկոնյանի մասնակցության, ուստի նրան էլ դիմում էին նախարարները։

Եվ այսպես, նոր ապստամբությունը հարկավոր էր նախ և առաջ ավատական դրության շահերը պաշտպանելու համար։ Խախտվել էր այդ հին ազգային հիմնարկության status quo-ն։ Նախարարական դասակարգը վատանում, փչանում էր պարսից կառավարության ընդգրկած քաղաքականության շնորհիվ։ Հին տոհմերը ոչնչանում էին թուլացման միջոցով։ Քրիստոնեության հավատարիմ մնացած նախարարներից խլվում էին նրանց կալվածները, տները, ծառաները և տրվում էին ուրացող սինլքորներին։ Ամենից խոշոր օրինակը հենց Մամիկոնյան տոհմն էր, որ բոլորովին կողոպտվել էր այդ կերպով։ Վահանը, ոչ էլ նրա եղբայրները, իհարկե, չէին կարող երբեք գոհ մնալ իրենց դրությամբ, բավականանալ անտուն, անծառա և անխոհարար ազնվականների դրությամբ։ Ավատական հողերը հափշտակվում էին, այն էլ ոչ թե ուժի, զենքի իրավունքով, այլ ուրացումների անարգ միջոցով, որը մի լայն ճանապարհ էր դարձել՝ հայոց տոհմիկ ազնվականությունը կողոպտելու և նվաստացնելու համար։ Հայ նախարարության այդ զրկված մասի հետ իր շահերը միացրել էր և հայկական լուսավորությունն իբրև հին դաշնակից։

Վահանը շատ լավ գիտեր իրերի հասունացած անհրաժեշտությունը։ Բայց նա լավ ճանաչում էր և հայկական միջավայրը։ Ուստի՝ ավելի իր ընկերակիցներին փորձելու համար՝ նա սկզբում սաստիկ ընդդիմացավ ապստամբության մտքին, բերելով մի շարք ահավոր ճշմարտություններ։ Առաջին տեղը կանգնած էր արյաց արքայի անխորտակելի ուժը։ Ովքե՞ր են նրա դիմաց, որ պիտի օգնեն հայերին։ Բյուզանդացիները խաբեբա են, վրացիները փոքր ազգ են, իսկ հոները մեջտեղ դեռ չեն երևում։ Եվ, վերջապես, ովքե՞ր են իրենք, այդպիսի առաջարկություն անողները։ Հայոց նախարարները չե՞ն, որոնք իրենց անմիաբանությամբ, ուխտանենգությամբ ծանր վնասներ են պատճառել՝ ամենից շատ՝ Մամիկոնյան տոհմին։ Արդար ցասումով լցված մարդուն պատասխանում են անձնազոհության հավաստիացումներով։ Ոչ ոք, ասում են, հույս չի դրած օտար օգնության վրա, ամեն մեկի վստահությունն իր արյունը մինչև վերջին կաթիլը տալու վրա է։ Կա և այն հանգամանքը, որ ապստամբության նպատակն այժմ պարզապես պարսիկներին «աշխատեցնելն» է, այսինքն նրանց նեղելը, նրանց ուշադրությունն անարդարությունների վրա հրավիրելն է։ Թագավորություն հիմնելու, թագավոր դառնալու միտք այլևս ոչ ոք չունի։

Համաձայնությունը կայանում է։ Վահանը հանձն է առնում գործի ղեկավարությունը, թեև չի մոռանում, որ իր Վարդ եղբայրը պատանդ է Պերոզի մոտ։ Այս բոլոր հանգամանքները ցույց են տալիս, որ Մամիկոնյան իշխանը վաղուց էր պատրաստվում այսպիսի մի գործի։ Շարժման սիրտը Մամիկոնյան-Կամսարական նոր սերունդն է։ Վահանի թիկունքն են նրա եղբայր Վասակը, Ներսեհ և Հրահատ Կամսարականները։ Եվ Բջնի գյուղի երեցն է, Աթիկ անունով, որ նախարարների միաբանության ուխտը հաստատում է ավետարանի վրա տված երդումով։ Բայց այս հանդիսավոր րոպեին էլ, հենց առաջին քայլում, իր տխուր երեսն է ցույց տալիս հայրենի դավաճանությունը։ Եվ այս անգամ նա դուրս է գալիս Ամատու-

նյաց տանից։ Վարազշապուհ անունով մի նախարար, որ մասնակից էր
ապստամբական ուխտին ու երդման, բաժանվելով իր ընկերներից, մտնում
է Ատրվշնասպի մոտ, հայտնում է նրան ամեն ինչ։ Այդ մատնությունն
այն լավ կողմն է ունենում, որ հանկարծակիի չ բերում մարզպանին և
նրա հետ եղածներին։ Նրանք չեն կարողանում նույնիսկ գիշերը լուսացնել
և փախուստի դիմելով, պատսպարվում են Անի բերդի հետևում։ Եվ տեսնե-
լով, որ Վահան Մամիկոնյանն ու իր ընկերները ճիշտ որ սաստիկ թափով
հետապնդում են իրենց, փախուստը շարունակում են Անիից և լավ ուղե-
ցույցների ապավինած՝ հասնում են Արաքսի ափը և իրենց գցում Արտա-
շատի բերդը։ Հետապնդողները թեև մարզպանին չհասան, բայց ճանապար-
հին խոշոր հաջողություն ունեցան։ Նրանց ձեռքն ընկավ ոչ միայն փա-
խըստականների բեռներն իրենց գրաստներով, այլև Գադիշո Խորխոռունին,
պարսկամոլ կուսակցության գլխավորը և ապստամբվածների անհաշտ թըշ-
նամին։ Իրենց այդ արժեքավոր ավարը տանելով Դվին, Վահանն ու նրա
ընկերները, այլևս ժամանակ չկորցնելով, պաշարեցին Արտաշատ բերդը։
Բայց մարզպանն ու հազարապետը կարողացան փախչել բերդից և իրենց
գցել Ատրպատական։ Եվ այսպիսով ապստամբները մի քանի օրում դարձան
երկրի տերը, իրենց ձեռքը գցելով նրա վարչական գլխավոր կենտրոնները։

4. Հեղափոխական կառավարությունը։ 18 *Տիրանալով բացարձակ իշխա-
նության, ապստամբներն առաջ ու առաջ կազմակերպում են ազգային կա-
ռավարություն հեղափոխական ճանապարհով։ «Աստծու կամքով» և հայ
ժողովրդի ցանկությամբ երկրի մարզպան է հայտարարվում Սահակ ասպետ
Բագրատունին, իսկ սպարապետ՝ Վահան Մամիկոնյանը, որ և միաժամա-
նակ, իբրև ավագագույնն իր եղբայրների մեջ, ստանում էր իր տոհմի նա-
հապետությունը։ Այսպիսով, այս երկրորդ ապստամբությունը սկզբից եթ
բարեհաջող ընթացքի նշան էր ցույց տալիս հենց նրանով, որ միացրել էր
հայ նախարարական գլխավոր ներկայացուցիչներին—Բագրատունիներին և
Մամիկոնյաններին։ Այս անգամ էլ Սյունյաց նահապետությունը հոգով և
մարմնով պարսիկներին էր նվիրված և նահապետը, Գդիհոն անունով, գըլ-
խավոր գործիչներից մեկն էր հայերի դեմ։ Ուստի հեղափոխական կառավա-
րությունը նրա տեղ Սյունյաց նահապետ էր ճանաչում Բաբգեն Սյունուն,
իսկ ուրացող Գադիշո Խորխոռունու տեղ, որ ձերբակալված էր և հավանա-
բար մահվան պատժի ենթարկվեց, մաղխազ նշանակվեց Գարջույլ իշխանը՝
նույն Խորխոռունյաց տոհմից։ Հեղափոխական կառավարության հետ էր և
Հովհան Մանդակունի կաթողիկոսը։ Նա գործում էր գրեթե մենակ։ Այլևս
Վարդանանց ժամանակի պես չէր, երբ շատ նշանավոր հոգևոր դեմքեր էին
գործում մեծ եռանդով։*

*Ապստամբությունը դեռ թույլ, անկազմակերպ դրության մեջ էր,
տկար՝ մանավանդ ուժի կողմից։ Եվ հեղափոխական կառավարությունը,
զգալով իր տկարությունը, մտածում էր անցնել Տայոց աշխարհը, որ հու-
սատու ապաստարան էր ոչ միայն իր բնական ամրություններով, այլև
շնորհիվ այն հանգամանքի, որ սահմանագլուխ էր կազմում Հայաստանի
պարսկական և բյուզանդական մասերի միջև և ծայրահեղ դեպքում կարելի
էր անցնել բյուզանդական բաժինը։ Բայց այս մտադրությունը չհաջողվեց։
և հեղափոխական կառավարությունը ստիպված եղավ այդ անկազմակերպ
դրության մեջ էլ նետվել պատերազմի դաշտը։ Բանն այն էր, որ պարսիկ
մարզպանի հետ Ատրպատական փախած հայ ուրացողները խորհուրդ տվին*

*նրան օգտվել հայկական ապստամբության անկազմակերպ դրությունից և
հարձակվել նրա վրա քանի ուշ չէ։ Ատրվշնասպը փութով հավաքում է ինչ
կարողանում է Ատրպատականում և կազմում է մի խառնիճաղանջ բանակ,
թվով մոտ յոթ հազար մարդ և արշավում է դեպի Հայաստան։*

*Հեղափոխական կառավարությունը, տեղեկանալով այդ արշավանքի
մասին, որոշում է մնալ Դվինում, իսկ իր ձեռքի տակ եղած զորքի մի մասը
ուղարկում է դեպի Արաքս գետը, որպեսզի փորձի արգելել պարսիկնե-
րին անցնել այս կողմը։ Այդ զորաբաժնի հետ էր սպարապետի եղբայր Վա-
սակ Մամիկոնյանը, մի խիզախ և կրակոտ երիտասարդ զինվորական, որ
փայլուն ապագայի նշաններ էր կրում իր մեջ։ Իր առաջապահ վաշտով նա
շտապում է հասնել Կովակք գյուղը, ուր պարսիկները պիտի անցնեին
Արաքսը։ Նա մտածում էր պահվել այդտեղ, մինչև որ պարսից զորքի մի
մասը կանցնի գետի այս ափը, որպեսզի արագ հարձակումով ջարդի այդ
մասը։ Բայց նա ուշացել էր և լուր առավ, որ Ատրվշնասպ մարզպանն
արդեն գտնվում էր այդ գյուղում։ Իր փոքրիկ վաշտով նա կարող էր թա-
կարդի մեջ ընկնել։ Բայց մեծ ճարպկությամբ իր զինվորներին երկու-
երկու, երեք-երեք հոգով ետ ուղարկեց դեպի հայոց զորաբաժինը, որ կանգ
էր առել Վարազկերտ գյուղում։ Այս կերպ ազատվելով իր զինվորներին
կորցնելու վտանգից, քաջարի Վասակը դեռ առժամանակ մնում է Արաքսի
ափին, իսկ պարսիկներին քնացնելու համար իմաց է տալիս Ատրվշնասպին,
թե եկել է՝ հայերի կողմից նրա հետ բանակցություններ սկսելու համար։
Այսպիսով վաստակած ժամանակը նա գործադրեց պարսկական բանակը
լավ լրտեսելու վրա։ Եվ վերադառնալով իր ընկերների մոտ, հայտնեց, որ
թեև շատ են պարսիկները, բայց անկազմակերպված ու անվարժ զինվորներ
են, որոնց պատշաճ է ավելի «իշապան» անունը տալ։*

*Հայ զորաբաժինը 400 հոգուց ավել չէր։ Այսպիսի մի բանակով,
իհարկե, անկարելի էր դաշտում չափվել հազարավոր թշնամիների հետ։
Ուստի վճռեցին լեռնային դիրք բռնել։ Այդ դիրքը Մասիսի վրա գտնվող
Ակոռի գյուղն էր։ Այստեղ էլ ահա հայկական ապստամբությունն առաջին
խոշոր հաջողությունն ունեցավ։ Կռվի սկզբում պարսիկների կողմն անցավ
Գարջույլ Խորխոռունին իր հարյուր մարդկանցով։ Բայց այս անակնկալ
դավաճանությունը չհուսահատեցրեց մնացած երեք հարյուրին։ Նրանք ոգե-
վորված էին այն ճշմարտությամբ, թե ուժը միայն թվի մեջ չէ և թե փոքր
ուժերով էլ կարելի է հաղթություններ վաստակել։ Երեք հարյուրի առաջ-
նորդները ժամանակի նախարարական նոր սերնդի ծաղիկներն էին—Վա-
սակ Մամիկոնյան, Բաբգեն Սյունի, Կամսարական եղբայրները։ Նրանք
հարձակվեցին պարսից բանակի վրա այնպիսի բուռն թափով, որ ցրեցին
նրան։ Մեծ էր այդ հաջողությունը մանավանդ այն տեսակետից, որ Ատըր-
վշնասպ մարզպանը և այլ պարսիկ մեծամեծներ սպանվեցին Վասակ Մա-
միկոնյանի, Բաբգեն Սյունու, Ատոմ և Առաստոմ Գնունիների ձեռքով։
Սպանվեցին և մի քանիսը հայ ուրացողներից։ Իսկ նրանց գլխավորը՝ Գդի-
հոն Սյունին, այս անգամ կարողանում էր հազիվ ազատել իրեն Ատոմի և
Առաստոմի ձեռքից։*

*Առաստոմը Մասիսի լանջերից իր ձին քշում է Դվին, տանելով հաղ-
թանակի ավետավոր լուրը։ Բայց տեսնում է հայոց մայրաքաղաքը խոր
տրտմության մեջ ընկղմված։ Բանից դուրս է գալիս, որ հայ պարսկասեր-
ներից երկուսը, Վասակ Ամատունի և Վարդոշ Գնթունի, նրանից առաջ*

էին հասել և հաղորդել Սահակ մարզպանին ու Վահան սպարապետին, թե հայոց գունդը Ակոռիի մոտ ահավոր պարտություն է կրել և կռվի մեջ սպանվել են բոլոր նշանավոր իշխանները, սկսած Վասակ Մամիկոնյանից և Կամսարական երկու եղբայրներից։ Այս ստությունը, որ ցույց էր տալիս, թե ո՛րքան կեղծ ու վաճառվող մարդիկ կային հայոց փոքրաթիվ զորագնդի մեջ, մի րոպեում օդը ցնդեց, երբ երևաց Առաստոմ Գնունին, որ բարձր ձայնով կանչում էր. «Յաղթեա՛ց զօրութիւն սուրբ խաչին, և միշտ յաղթէ»։ Եվ ուրախությունն ու գոհացողական աղոթքներն աղմկեցին հայոց մայրաքաղաքում։ Շուտով հասավ և ինքը հաղթող զորքը, որ և մասնակցեց հաղթական տոնին։

Սակայն Ակոռիի հաղթությունն ավելի ևս պարզ ցույց էր տալիս հայոց հեղափոխական կառավարությանը նրա անկազմակերպ դրության ամբողջ վտանգը։ Որքան և Պերոզը զբաղված լիներ հեփթաղների դեմ պատերազմով, բայց անկարելի էր կարծել, թե նրա համար ոչինչ նշանակություն չի ունենա Հայաստանի ապստամբության այդ խոշոր հաջողությունը, որի նշանակությունը մեծ էր մանավանդ բարոյական տեսակետից։ Կամենալով պատրաստվել՝ ապագա դեպքերից հանկարծակիի չգալու համար, հեղափոխական կառավարությունը դիմեց իր դաշնակից Վախթանգ թագավորին և խնդրեց նրան ուղարկել իր խոստացած հոներին։ Սակայն վրաց թագավորը, ինչպես երևաց, շատ էր չափազանցրել իր հույսը հոների խոստացած օգնության վրա։ Կովկասյան այդ լեռնաբնակները քիչ մարդ տվին Վախթանգին, և Վախթանգը դրանցից հազիվ էր կարողանում մի երեք հարյուր հոգի ուղարկել Վահան Մամիկոնյանին։ Բայց այս փոքրաթիվ օգնությունն էլ, նույնիսկ դեռ մի ամիս էլ չանցած, ետ է կանչում իր մոտ։ Հայերն արդեն պարզ զգում էին, որ մենակ են թողնված և որ միայն իրենց ուժերի վրա պիտի հույս դնեին։ Այս նկատառումով էր, որ հեղափոխական կառավարությունը դիմում էր անում Հարավային Հայաստանի իշխաններին, որոնք մինչև այդ անտարբեր էին մնացել, այն է՝ Արծրունյաց, Անձևացյաց, Ռշտունյաց և Մոկաց նախարարություններին, հրավիրելով նրանց ևս մասնակցել ընդհանուր գործին։ «Ես ոչ մեկին հարկադրելով չեմ քաշում դեպի իր անձի օգուտը,— գրում էր Վահան Մամիկոնյանը,— այլ հորդորելով՝ այսինքն հիշեցնում եմ փրկությունն ու կորուստը, որ պատահելու է այցելության (Քրիստոսի գալստյան) օրը»։ Բայց հարավային այդ նախարարություններից երկուսը միայն հարեցին հայկական ապստամբության, իսկ երկուսը ոչ միայն չընդունեցին այդ հրավերը, այլև դուրս եկան ընդունողների դեմ։ Ապստամբությանը միացողներն էին Անձևացի Հովհան և Երվանդունի Ներսեհ իշխանները։ Երբ նրանք իրենց մարդկանց հետ գնում էին Վահան Մամիկոնյանի մոտ, Մոկաց իշխանը, որը նույնպես Հովհան էր կոչվում, և Անձևացյաց մյուս իշխան Սևուկը հարձակվեցին նրանց վրա, հույս դնելով հաղթել իրենց զորքի թվական առավելության վրա։ Սակայն պարտություն կրողները հարձակվողներն էին, և Հովհան Անձևացին ու Ներսեհ Երվանդունին հասան Դվին, ուր մեծ ուրախություն պատճառեցին հեղափոխական կառավարության։

Այս բանը տեղի ունեցավ գարնան սկզբին (482), երբ լուր հասավ Դվին, թե պարսից մի բանակ է հասել Հեր և Զարևանդ գավառները, պատրաստ հարձակվելու Հայաստանի միջնաշխարհի վրա։ Վահան Մամիկոնյանը շտապում է կանխել թշնամուն, որպեսզի թույլ չտա նրան կատարել իր

մտադրությունը։ Իր ունեցած բոլոր ուժերը նա կենտրոնացնում է Արտազ գավառում, Ներսեհապատ գյուղի մոտ, ոչ հեռու Ավարայրից, ուր նրա հորեղբայրը 31 տարի առաջ դժբախտ ճակատամարտ էր տվել պարսիկներին։ Այժմ, իհարկե, հանգամանքներն այնպես չէին դասավորված, ինչպես Վարդանի ժամանակ։ Պարսից բանակն այնքան ստվարաթիվ չէր, այնքան ընտիր զորագնդերից չէր բաղկացած, ինչպես 451-ին։ Հեփթաղների պատերազմները Պերոզի համար ավելի կարևոր նշանակություն ունեին, և Հայաստանի ապստամբությունը ճնշելու համար գործ էր դրվում ազատ տրամադրելի զինական ուժը։ Այնուամենայնիվ, բավական շատ աչքի ընկնող զինվորական գործիչներ կային պարսկական բանակում—Սուրեն Պահլավ, Ատրներսեհ Փուշտիպանան-Սալար (թիկնապահների վերակացու), Վին-ի-Խոռյան, Ատրվշնասպ-ի-Տապյան, Գդիհոն Սյունի և ուրիշները։ Գլխավոր հրամանատարն էր Փուշտիպանան-Սալարը։ Վահանի պես մի զգույշ և խորաթափանց ռազմագետը միայն կարող էր հաշվել ու վճռել, որ հայոց փոքրիկ բանակը կարող է կռվի բռնվել թշնամու այդ ուժի հետ դաշտային բաց ճակատում։ Այս պատերազմի ելքը կարող էր նույնպես ճակատագրական լինել հայության համար, ինչպես եղավ Վարդանանց ժամանակ Ավարայրի կռվի ելքը։ Բայց Վահանն ավելի հաջողակ ու բախտավոր զորավար հանդիսացավ, քան իր մեծանուն հորեղբայրը, մանավանդ որ ուներ ավելի շատ կարող և ընդունակ օգնականներ։

Դարձյալ մայիս ամիսն էր, երբ տեղի ունեցավ Արտազի այս երկրորդ ճակատամարտը։ Հայոց սպարապետը սովորական կարգով բաժանում էր ճակատը երեք մասի, միջին գունդը տալիս էր Սահակ մարզպանին, աջ թևը հանձնում էր Բաշղ Վահռունուն, կարգելով նրա օգնականներ Բաբգեն Սյունուն, Ատոմ Գնունուն և Փապակ Պալունուն, իսկ ձախ թևը՝ Վահան, Ներսեհ և Հրահատ Կամսարականներին։ Իսկ ինքն իր առանձին ձիավոր գնդով ղեկավարում էր ճակատը։ Նա վճռել էր, որ հայերը լինեն նախահարձակ և այս մտքով էլ հրաման ուղարկեց Պապ Ռստանիկի միջոցով։ Բայց պարսիկները կանխեցին և հարձակվելով հայոց աջ թևի վրա, ցրեցին նրան։ Սահակ մարզպանն սկսեց նիզակով մենամարտել Փուշտիպանան-Սալարի հետ. երկուսի նիզակն էլ վրիպելով, սկսեցին ձեռնամարտը և մոտենալով իրար, ձիաների վրայից իրար մազերը բռնած էին կռվում։ Բայց սպարապետի ամբողջ ուշադրությունն իր զորամասերի խախտված աջ թևի վրա էր։ Պահեստից դուրս կանչելով Վրեն Վանանդացուն, հրամայեց նրան առաջանալ դեպի այդ կողմը և իր վրա դարձնել պատերազմը։ Սակայն լսելով Վրենի հուսահատական պատասխանը, թե «ինձ վրա այս ժամին ոչ մի հույս մի դնիր», Վահանը, առանց տատանվելու, Կամսարականների հետ հարձակվում է թշնամու վրա և փախուստի մատնում նրան։ Կռվի ընթացքը փոխվում է։ Պարսիկները մատնվում են խուճապի, իսկ հայերը, հալածելով նրանց, մեծ կոտորած են անում, վերցնում են մեծ ավար և հաղթականորեն վերադառնում են իրենց բանակը։ Այստեղ հայերի ուրախությունը կրկնապատկվում է, որովհետև հանկարծ հայտնվում է սպարապետի եղբայր Վարդը, որ, ինչպես գիտենք, պատանդ էր արքայից արքայի մոտ։ Հայտնի չէ, թե ի՛նչ կերպով հաջողվում է նրան փախչել Տիզբոնից և Արտազի հայոց բանակը հասնել այնպիսի ժամանակ, երբ ցնծություններով տոնվում էր տարած հաղթանակը։

Սովորականի պես՝ հայոց բանակը տեղափոխվեց Ծաղկոտն գավառը

ամառվա տոթից ազատվելու համար։ Այդտեղ զորքը բանակ դրեց Վարշակի ջերմուկների մոտ[1]։ Հանգստության այդ միջոցին էր, որ վրա հասավ վրաց Վախթանգ թագավորի սուրհանդակը։ Վախթանգը հայերին շտապով օգնության էր կանչում, որովհետև, ասում էր, պարսից մի ուժեղ գունդ եկավ մեր աշխարհը, և ես, տեսնելով, որ չպիտի կարողանամ մենակ դիմադրել նրան, քաշվել եմ Հայոց լեռները՝ Վրաստանի սահմանի մոտ։ Նորից վրաց թագավորը հայերին գրավում էր իր դաշնակից հոների անունով, ասելով, թե ինքն արդեն հրաման է տվել հոներին ուժեղ գնդով օգնության գալ, և նրանց գալուց հասնելուց հետո հայերին ու վրացիներին իսկապես ոչինչ չի մնում անելու, բայց միայն հանգիստ հանդիսատես լինել նրանց կռիվներին։ Վահան Մամիկոնյանը չկարողացավ անտես անել Վախթանգի դիմումը, ելնելով դաշնակցի պարտաճանաչությունից։ Դաշնակցության ուխտն ավետարանի վրա էր արված, և հայերն անկարելի համարեցին դրժել այդ նվիրական ուխտին։ Ուստի ամառվա մեջ թողին իրենց ծաղկափթիթ հովիտը և ամբողջ բանակով ճանապարհվեցին Վրաստան։ Այստեղ նրանց սպասում էին դառն անհաջողություն և ծանր կորուստներ...

Վրաց թագավորն ասում էր, թե երկու օրից հետո կերևան հոները, բայց անցնում էին օրեր, և հոները չէին երևում։ Եվ հայոց սպարապետն ստիպված էր անհարմար պայմանների մեջ, ինքն էլ զգալով իր բանակի թուլությունը, պատերազմն ընդունել Միհրանից, որ պարսից հրամանատարն էր և իր բանակը բերել կանգնեցրել էր հայոց բանակի դեմ։ Պատերազմի տեղը Կուր գետի մոտ էր և կոչվում էր Ճուրմանայնու դաշտ։ Ամառվա տոթն էր տիրում այստեղ։

Վահան սպարապետը կազմեց ճակատը իրեն հատուկ հմտությամբ։ Վրաց զորքերն էլ, թագավորի հետ միասին, նրա հրամանատարության տակ էին։ Սկսելով պատերազմը իր հարձակումով, Վահանն առաջին նվազ խոշոր հաջողություն ունեցավ։ Պարսիկները չկարողացան դիմանալ նրա հարվածին և շատերը փախան անցան Կուր գետի մյուս ափը։ Բայց հենց այդ միջոցին էլ սկսվեց հայ-վրացական բանակի դասալքությունը։ Ամենքն սկսեցին փախչել, և հիմա պարսիկներն էին, որ հալածում ու կոտորում էին։ Պատերազմական ժխորի մեջ սպանվեցին Սահակ մարզպանը և Վասակ Մամիկոնյանը։ Այս երկրորդ հերոսի մասին Ներսեհ Կամսարականը պատմել է Ղազար Փարպեցուն, թե նա մենամարտում էր մի հաղթանդամ պարսիկի հետ, բայց նրա նիզակը կոտրվեց, և նա ուրիշ նիզակ էր որոնում։ Ինքը Ներսեհ Կամսարականն էլ կոտրել էր իր նիզակը և նույնպես որոնում էր նորը։ Վասակը, գտնելով նոր նիզակ, դարձյալ վազեց կռվի մեջ, կանչելով, «Շտապի՛ր, Ներսեհ, նիզակ գտնել և արի՛ այստեղ»։ Մահն այդ րոպեին ոչինչ էր նրա համար, և նա ասում էր Կամսարականին, թե չպետք է մտածել երկար ու բարակ, մարդն անմահական չէ։ Այսպես էլ ընկավ նա պատերազմի դաշտում քաջի մահով։ Վահան սպարապետը չափազանց դժնդակ կորուստ էր կրում այսքան քաջ և կռովի եղբորից զրկվելով։ Բայց Ներսեհ Կամսարականն էլ ծանր վիշտ ունեցավ այս դժբախտ կռվի մեջ։ Նրա եղբայր Հրահատի ձին սպանվեց և նա մնաց հետիոտն. պարսիկները վրա հասան և գերեցին նրան։ Վահան սպարապետը, տեսնելով իր բանակի փախուստը, ինքն էլ հետևեց նրան, բայց ճանապարհին գտնելով Բաբգեն Սյունի իշխանին ծանրապես վիրավորված, վերցրեց նրան իր նժույգի վրա և հանելով պատերազմից, ազատեց նրան[1]։

Այս պարտությունն այլևս փակում էր Վահանի առջև Հայաստան վերադառնալու ճանապարհը։ Նա քաշվեց Տայոց աշխարհի ամուր կողմերը, ուր սկսեցին կամաց-կամաց հավաքվել նրա մոտ փախստական զինվորները։ Իսկ Միհրանն անցավ Հայաստան, տանելով իր հետ Հրահատ Կամսարականին, որին հրամայել էին պահել ամենամեծ զգուշությամբ։ Նա գնաց բանակ դրեց Բասենի Դու գյուղում, ուր պարսկա-բյուզանդական սահմանն էր անցնում։ Նրանից քիչ հեռու, դարձյալ պարսկական հողի վրա, Մկնառինճ գյուղում, Վահան Մամիկոնյանն էր գտնվում և նրա հետ՝ մոտ հարյուր զինված մարդիկ։ Սակայն, չնայած ուժերի այս մեծ անհավասարության, Միհրանը Վահանի հետ պատերազմական գործողություններով չխոսեց, այլ խաղաղ բանակցությունների լեզվով։ «Մի՛ կորնչիր,— խրատում էր Միհրանը Վահանին պատգամավորների միջոցով,— և յարքայից արքայի ի ծառայութենէ մի՛ ելաներ, և զաշխարհս Հայոց մի՛ տար ի վատնումն. ի հնազանդութիւն եկ թագաւորին, և ես միջնորդ լինիմ. քանզի վասն իւրոյ բարերարութեան սիրէ զիս, և բանից իմոց լսէ. և ես աղաչեմ զթագաւորն և հաշտեցուցանեմ ընդ քեզ. և ինչ որ արժան է տալ քեզ՝ ջանամ զի տայ»։ Երկար էր Վահանի պատասխանը այդ առաջարկությանը։ Եվ նրա մեջ ամենագլխավորը հայ նախարարական դասակարգի ցավն էր. այն, որ ռամկանում է, գռեհկանում է նա, քանի որ նրա մեջ են մտցվում անտոհմիկ, հասարակ, կասկածելի և արատավոր մարդիկ։ Այս ցավը, ինչպես տեսանք, այս ապստամբության առաջին շարժառիթներից մեկն էր, միացած Պերոզի կառավարության անբարոյական և կազմալուծող սիստեմի հետ։ Ահա ինչպես է հայոց սպարապետը նկարագրում այդ դրությունը։

«Արեաց տէր որ լինի՝ արդար աչօք պիտի նայել յամենայն մարդ իբրև զթագաւոր, և արդարապէս տեսանել և արդարապէս լսել, ըստ արժանի թագաւորի։ Բայց այր թագաւոր, որ ուղիղ աչօք չհայի ի ծառայս և ուղիղ լսողութեամբ չլսէ ուրուք զբանս, այլ համակ ըստ իշխանութեան վարի, և ոչ ըստ արժանի իրաւանց քննութեան, այլ առաւել ևս որ կարի դժնդակագոյն է և աշխարհի կորստեան պատճառ, և հանապազ զայն առնէ և կամի տեսանել այլոյ աչօք և լսել այլոյ ականջօք՝ ծանր է ծառայութիւնն այն և դառն, և վտանգ՝ որում ոչ ոք կարէ կալ առաջի։ Վասն զի տէր, որ յիւր ի ծառայից զլաւ և զվատթար չգիտէ ընտրել, և ըստ արժանի իւրաքանչիւր ումեք մատակարարել զպիտոյսն ոչ կամի՝ այնպիսին լաւ ծառայի տէր դժուարաւ կարէ լինել։ Արդ՝ Հայոց աշխարհս ո՞րպիսի մեծ և պիտոյի աշխարհ է. և արդ ցո՛յց ինձ այր մի յայսպիսի աշխարհի, որ թէ առաւելաւ թագաւորութեամբ արժանաւորապէս հասեալ է ի տանուտէրութիւն. այլ որեար աւաղակ և անպիտան, հացկատակք և վատտոհմիկք, որ գան զայնպիսի մեծ թագաւորութիւն խառնեն, և ընդ կրակի փառս գնեն և տէրութիւն. և ի ձէնջ ըստ կողմն ելեալ սակաւ մի՝ միզեն ի կրակն, և յանթեղ զաղբ իւրեանց արկանեն, և զվաճառականն և զվաճառն ի միասին թըշ-

[1] Այժմյան Դիաղինի հոշակավոր տաք աղբյուրները, Արածանի գետի ակունքների մոտ։

[1] Վրաց պատմությանը հայտնի չեն այս հարաբերությունները հայերի և վրացիների միջև, ուստի Ղազար Փարպեցին այս բոլոր դեպքերի վերաբերմամբ մնում է միակ և իհարկե, նաև միակողմանի աղբյուրը։ Այս Վախթանգը վրաց պատմության մեջ անվանի Վախթանգ Գորգասալանն է (446—499), որին վերագրվում է Թիֆլիս քաղաքի շինությունը (455 թ.)։

նամանեն։ Եւ այլ լաւութիւն և քաջութիւն և միտք և գիտութիւն, որով աշխարհ շինի և միջի լինի՝ այն շինդրի և արհամարհեալ է. այլ անպիտան և վատատոհմակ մարդկան պատրողութիւնն ի մէջ անցեալ յարգի, և դուք առ ճանաչողս ունիք զձեզ։ Լուեալ է քո, որ Միհրանդ ես, և ամենայն Պարսից՝ զբանս զայս յԱրյաց տեառնէն ի Պերոզէ առաջի ամենեցունց յատենի, թէ «Այր վատ և գունդ անպիտան Ասորի է. բայց քան զԱսորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անպիտան»։ Եւ ո՞չ արդեօք լաւ էր մահ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ։ Եւ արդ՝ իմ երկուս կռիւս արարեալ է ընդ Արի մարդկան, և երրորդն այս է որ ընդ քեզ արարաք. և ընդ որս զերկուս կռիւսն արարաք՝ ընդ այնպիսի երևելի և քաջ մարդկան կռուեցաք, զոր ինքն Արեաց տէրն և ամենայն Արիք ճանաչէին, թէ ո՛րպիսի որեար էին։ Եւ օտար մարդոյ մեզ չէր օգնեալ, Հոնի կամ Հոռոմի և կամ այլ ազգի ուրեք մարդոյ. բայց միայն այս Հայոց, զոր դուք գիտէք, սոյա վճարեալ է զայնպիսի մեծ գործ, զոր դուք ամենայն Արիք լուայք և տեսէք. և ոչ բազում այրուձիոյ, այլ հարիւր արամբ և կամ ևս նուազիւ զհազար և զերկուս հազարս այր փախուցեալ է սոքօք։ Եւ յայսմ կռուի մի՛ զայս մտաւ ածեալ պարծիք, թէ աւելի ինչ քաջութեամբ յաղթեցէք մեզ. այլ ի մեր երկպառակութենէ և ի նենգելոյ եղև մեզ վնաս։ Զի թէ էր այս ձայ գունդ, յորոյ վերայ ահ և երկիւղ էր, որպէս Արեաց տեառն յիւր ծառայի վերայ, և յիմում ձեռին այնպէս էին, որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ, և համարձակապէս իշխէի զվատացեալսն ի կռուի տամբ և կենօք հարցանել և գլխով պատիժ առնել, և քաջացելոցն կարէի բարի առնել և պատիւ տալ՝ ցուցանէի Արեաց տեառն և ձեզ ամենեցուն, թէ ո՞ր կարի գունդ յԱրիս անուանի էր և լաւ. բայց եթէ լաւագոյնք ևս և քաջք չերեւէին՝ այլ ի խոնարհ սակաւ մի և նուազ չտայի երևել։ Բայց արդ՝ զոր ձեր ի վատ տոհմէ և յանպիտան ի մարդկանէ աշխարհիս Հայոց իշխան կարգեալ էք՝ դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն և զանուն բարի և զլաւութիւն։ Զի գնդի, որոյ զօրագլուխն վատ է՝ գնդին լաւ լինել չէ հնար, և աշխարհի, որոյ իշխանքն յետին են՝ աշխարհին այնմ անհնար է յառաջադէմ և անուանի լինել»[1]։

---

[1] Ղ. Փարպեցի, Գ, հե։ Թարգմանություն. «Ով որ Արյաց տեր է, պիտի, իբրև թագավոր, արդար աչքով նայե բոլոր մարդկանց, արդարապես տեսնե և արդարապես լսե, ինչպես վայել է մի թագավորի։ Բայց երբ մի թագավոր ուղիղ աչքով չէ նայում իր ծառաներին և ուղիղ լսողությամբ չէ լսում մեկի բաները, այլ միայն իր քմահաճության հետևելով, առանց արդար իրավունքի քննության, և որ ավելի վատն է ու աշխարհի կորստյան պատճառ է դառնում՝ երբ այդ թագավորը կամենում է ուրիշի աչքերով տեսնել և ուրիշի ականջներով լսել, այդ ժամանակ ծառայությունը ծանր ու դառն է դառնում, այն նույնիսկ վտանգավոր է, և ոչ ոք չէ կարող նրան տանել։ Որովհետև այն տերը, որ չէ կարող իր ծառաների մեջ լավին որոշել վատից և մեկի պետքերը մատակարարել ըստ այնու չէ ուզում, այդպիսին լավ ծառայի տեր դժվար թե կարողանա դառնալ։ Արդ՝ մեր Հայոց աշխարհը որքան մեծ է և արդյունավոր, բայց ցույց տուր ինձ մի մարդ, այս աշխարհում, որ թագավորի ձեռքով արժանավորապես հասած լինի տանուտերության [ավագ նախարարի աստիճանին]։ Այլ ավազակ, անպիտան հացկատակ և վատատոհմիկ [ոչ ազնվական ծագում ունեցող] մարդիկ են [բարձր իշխանության հասնում], որոնք գալիս են այնպիսի մեծ թագավորությունը խաբում, կրակի հետ միասին [այսինքն՝ զրադաշտականություն ընդունելով] փառք և իշխանություն ստանում, իսկ երբ ձեզանից քիչ դեպի մի կողմն են հեռանում, միզում են կրակի վրա և իրենց աղբը թաղում են անթեղի [մոխրի կույտ, որի մեջ կրակ է պահվում] մեջ և վաճառվողին ու վաճառվածին միասին անարգում։ Եվ ընդհակառակն, լավությունը, քաջությունը, միտքը, գիտությունը, որով աշխարհը շեն-

Հետո սպարապետը դառնում էր իր կյանքի հանգամանքներին, հիշեցնում էր, թե ինչպես անցավ իր մանկությունը, երբ նա դեռ անգիտակ էր իր ծնողների գործերին, բայց հանցավոր է համարվում նրանց պատճառով։ Գիտակցության հասնելով, նա վճռեց խղճի մտոք ծառայել արքայից արքային, ինչպես վայել է մի պատվազգաց մարդու։ Բայց նրան կասկածով էր նայում Պարսից արքունիքը, ականջ դնելով քսու և անպատիվ մարդկանց, որոնց իշխանություն էր տալիս և դարձնում իր աչքն ու ականջները։ Այս անվստահությունն այն աստիճան նեղում էր նրան, որ նա ստիպված եղավ նույնպես խաբեության դիմել, նույնպես կեղծ հավատուրացություն ընդգրկել։ Ուրիշ ճանապարհ չէր մնում, քանի որ արքայից արքան միայն ստախոսներին, կեղծարարներին էր հավատում։ Սակայն խղճի դեմ գործած ակամա հանցանքն այն աստիճան ծանրացավ նրա վրա, այն աստիճան մոտեցրեց նրան բարոյական և նյութական կործանման, որ նա մոռացավ ամեն երկյուղ, և ահա կռվում է խղճի ազատության և մարդկային բարոյականության համար։ Այսուհետև,— ասում էր նա,— ոչ մի երկյուղ չունիմ, քանի որ գտել եմ հոգեկան հանգստությունս։ Բայց որովհետև Միհրանն ուզում էր իմանալ, թե իսկապես ի՛նչ են հայ ապստամբների ցանկությունները, Վահան Մամիկոնյանը դնում էր նաև այն պայմանները, որոնց ընդունելությունն անհրաժեշտ էր, որպեսզի հայկական ապստամբությունը ցած դնե իր զենքերը։

վում է և ծաղկում, չէ որոնվում և արհամարհված է։ Անպիտան և վատատոհմիկ մարդկանց խաբեությունն է տեղ անցնում և հարգվում, և դուք ձեզ ճանաչողի տեղ եք դնում։ Լսել ես դու, որ Միհրանն ես, լսել են և բոլոր պարսիկներն Արյաց թագավոր Պերոզի այս խոսքերը, որոնք արտասանված են ամենքի առջև, ատյանում, թե՝ «Վատ մարդ և անպիտան գունդ Սիրիացին է, բայց Սիրիացի մարդուց հայ մարդն է շատ վատթար և անպիտան»։ Եվ արդյոք մահն ավելի լավ չէ՞ր, քան այնպիսի լուրն այնպիսի թագավորից։ Ահա ես երկու կռիվ եմ արել Արիացի [պարսիկ] մարդկանց հետ, երրորդն էլ այն է, որ քեզ հետ արի։ Եվ այն մարդիկ, որոնց հետ երկու կռիվ արինք, այնպիսի երևելի և քաջ մարդիկ են, որ նրանց ճանաչում են ինքն Արյաց տերը և բոլոր արիները, գիտեն, թե որքան էին այդ մարդիկ։ Եվ օտար մարդ մեզ չօգնեց, ոչ հոն, ոչ հոռոմ և ոչ էլ մի ուրիշ տեղացի, բայց միայն այս հայերը, որոնց դուք այդպես եք ճանաչում, կատարեցին այդպիսի մեծ գործ, որ դուք, բոլոր արիներդ, տեսաք և լսեցիք [ակնարկում է Ակոռիի և Ներսեհապատի կռիվները]։ Եվ շատ ձիավոր զորք չունեին հայերը, այլ հարյուր մարդով կամ դրանից էլ պակասով հազար կամ երկու հազար մարդ են փախցրել։ Եվ այս վերջին [Ճուրմանայնու] կռվի վերաբերմամբ չպարծենաք, թե մեզ հաղթեցիք, որովհետև ավելի քաջ էիք մեզանից. մեր երկպառակությունից և դավաճանությունից էր, որ մենք վնասվեցինք։ Որովհետև եթե այս հայ գնդի վրա լիներ այն ահն ու երկյուղը, որ Արյաց արքան ունի իր ծառաների վրա և եթե իմ զինվորներն այնպես լինեին իմ ձեռքի տակ, ինչպես իմ նախնիներն ունեին զինվորներ իրենց ձեռքի տակ, և եթե ես համարձակ կերպով իշխանություն ունենայի կռվի մեջ վատացածներին իրենց ինչքով և կյանքով պատասխանատու դարձնել և պատժել, իսկ քաջացողներին լավություններ անել ու վարձատրել, այն ժամանակ ցույց կտայի Արյաց տիրոջը և ձեզ ամենքիդ, թե պարսից մեջ ի՛նչ գունդ որ քաջ և անվանի է, հայերն այդ գնդերից թե լավագույն և քաջ չերևային, նրանցից ցած կամ նվազ քաջ չէի թույլ տա որ երևան։ Բայց արդ՝ այն իշխանները, որ դուք կարգեցիք վատ տոհմից և անպիտան մարդկանցից, դրանք էին, որ իրենց հետնությամբ վերացրին Հայոց աշխարհից քաջությունը, բարի անունը, լավությունը։ Որովհետև, եթե մի գնդի գլուխը վատ է, գունդը լավ լինել չէ կարող, և եթե մի աշխարհի իշխաններ հետադեմ են, այն աշխարհի համար անհնարին է լինել առաջադեմ և անվանի» (Համ. «Ղազար Փարպեցու Հայոց Պատմություն» թարգմ. Մինքահանա Տեր-Գևորգյան, Ալեքսանդրապոլ, 1895, եր. 293—96, և Lazare de Pharbe „Histoire d'Arménie" (Collection des historiens de l'Armenie, Paris, 1869) p. p. 338—339.

«Բայց դու,— ասում էր նա ի վերջո,— զոր խօսիմդ՝ և արդարև կարես առնել, և հաւանի թագաւորն նուաճել զմեզ՝ և նախ քան զամենայն՝ զքրիստոնէութիւն շնորհէ աշխարհիս Հայոց, և զաղտեղի վաճառդ հատանէ յաշտոնէութիւն խարհէս մերմէ, զոր անպիտան և վատ մարդիկ գնեն ի ձէնջ խաբէութեամբ, և ընկալեալ ծաղր առնեն և զձեզ և զմոխիրն. և զմարդ ճանաչեք զլաւն և զանպիտան, և գործ խնդրէք յիւրաքանչիւր ումեքէ, և ոչ կատակաբանութիւն. և ի գործ հայիք՝ տալ ըստ վաստակոց զհատուցումն, և ոչ ի լկտէ-թիւն. և ի գործ հայիք՝ տալ ըստ վաստակոց զհատուցումն, և ոչ ի լկտէ-բանութեան խաբէութիւն. և կարէք գրել և կնքել, թե ի մերմէ բռնութենէ եղև ձեր յանցումնդ և ոչ ի ձեր ստահակելոյ և յանդգնութենէ, և թողուք. և զտոհմիկն առ տոհմիկս ունիք և զվատատոհմական առ անտոհմակս, և թէ այդպէս նուաճէք զմեզ՝ մեր բնիկ տեարք էք և հարցն մերոց և նախնեաց, և մեք ծառայութիւն առնեմք և հպատակ լինիմք։ Ապա եթէ այնպէս զյետինսն առ լաւսն ունիք և զլաւսն յետս տանիք, և աղտեղի մեղաց վաճառէք զիշխանութիւն աշխարհիս, և ոչ ըստ իրաւանց հայել յարժանաւորսն և ի պիտանիսն տալք՝ մեք որ ապստամբեցաքն՝ ոչ եթէ գիտէաք, եթէ մեք Արեաց առաջի ինչ կարեմք կալ, զի և զմեր տառապանացս ոյժ գիտեմք և զԱրեաց այնպիսի մեծ և անհամար գնդի և ուժոյ զաստկութիւն. բայց միայն զմեռանելն եդաք առաջի, և նմին պատրաստ եմք. և առաւել ես ուրախ եմք, զի զանուանի և զլաւ մահ մեռանիմք քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ գնել զանցաւոր փառս, և զյաւիտենից կորուստ ժառանգել»[1]։

Այս համարձակ դիմումին, որի մեջ դատապարտվում է պարսկական ամբողջ սիստեմը, Միհրանը ժամանակ չունեցավ պատասխանելու, որովհետև հենց այդ միջոցին արքունիքից հրաման ստացավ թողնել ամեն ինչ և անմիջապես գնալ Պարսկաստան։ Կատարելով այդ հրամանը, Միհրանն սկսեց ճեպով վերադառնալ իր ամբողջ բանակի հետ։ Այս շարժումը, եթե այդ րոպեին մեկին Հայաստանում ցավ էր պատճառում, դա Ներսեհ Կամսարականն էր, որովհետև նրա Հրահատ եղբայրը Միհրանը տանում էր իր բանակի հետ մյուս գերիների թվում։ Այն օրից, երբ Հրահատը պարսից ձեռքն էր ընկել, Ներսեհը չէր դադարում լաց լինելուց և բոլորովին կորց-

[1] «Սակայն ես գիտեմ, որ դու իսկապես կարող ես անել ինչ ասում ես և թե թագավորը կամենում է մեզ նվաճել։ Բայց ամենից առաջ պետք է, որ նա շնորհե քրիստոնեությունը մեր Հայոց աշխարհին և վերացնե մեր աշխարհից այն կեղտոտ վաճառքը, որ անպիտան և վատ մարդիկ գնում են ձեզանից խաբեությամբ և ընդունելով՝ ծաղրում են թե՛ ձեզ և թե՛ մոխիրը։ Սովորեցեք ճանաչել լավ մարդուն և վատ մարդուն և ամեն մեկից գործ պահանջեցեք և ոչ թե կատակաբանություն, գործին նայեցեք և վաստակի համեմատ վարձատրություն տվեք և ոչ թե լկտի խաբեություն։ Գրեցեք և կնքեցեք, հայտարարելով, թե եթե մենք մեղավոր ենք եղել, այդ ձեր բռնությունից է և ոչ թե մեր ստահակությունից և հանդգնությունից, և այսպիսով մեզ ներում տվեք, և տոհմիկներին [ազնվականներին] տոհմիկների հետ կպահեք, իսկ վատատոհմիկներին [ռամիկներին] անտոհմիկների հետ։ Եվ եթե այս կերպով հավանեք մեզ՝ մեր, մեր հայրերի և նախնիքների բնիկ տերերն եք և մենք ծառայություն կանենք և հպատակ կլինենք։ Իսկ եթե դարձյալ հետիններին լավերի տեղ ունենաք և լավերին հետ կտանեք և աղտեղի մեղքերի վաճառք կդարձնեք մեր երկրի իշխանությունը և ոչ թե արժանավորին և պիտանիներին տաք այն, ինչ նրանց իրավունքն է, մենք, որ ապստամբված ենք ոչ թե մոռանալով, որ չենք կարող կանգնել Արյաց առջև, որովհետև լավ գիտենք, թե ի՛նչ մեծ ուժ ունի Արյաց բանակը, և մենք ո՛րքան թույլ ենք նրա դիմաց, այլ միայն մեր մեռնելն աչքի առաջ բերելով, այժմ էլ պատրաստ ենք միևնույն բանին, և ավելի ես ուրախ ենք, որ լավ և անվանի մահով կմեռնենք քրիստոնեաբար, քան թե ուրացությամբ գնենք անցավոր փառք և ժառանգենք հավիտենական կորուստ»։

րել էր հանգստությունը, ո՛չ անկողնում էր քնում, ո՛չ կարողանում էր մի կտոր հաց ուտել առանց արտասուքի։ Նա գնաց պարսից բանակի հետևից, մտածելով, թե գուցե մի կերպ հաջողվի փախցնել իր սիրելի եղբորը։ Այս համարձակ մտադրությունը կարելի եղավ իրագործել Բագրևանդ գավառում, Բագավան գյուղի մոտ, ուր կանգ էր առել գիշերելու Միհրանի բանակը։ Հրահատն իր ազատությունը գտավ, բայց փոխարենը զոհ գնաց նրա հետ կապված Հազդ իշխանը, որ Սյունյաց սեպուհներից մեկն էր։ Միհրանը հրամայեց սպանել նրան։

Վահան Մամիկոնյանն էլ ազատություն էր ստանում վերադառնալու Արարատյան նահանգը և նորից կենդանացնելու հեղափոխական կառավարությունը։ Մարզպանության պաշտոնն էլ, սպանված Սահակ Բագրատունու տեղ, նա վերցնում էր իր վրա։ Բայց թշնամությունը երբեք դադար չէր առնում, և մի նոր դավաճանություն, որ սարքված էր շատ նուրբ կերպով, դուրս էր գալիս մի նոր հարված տալու այն գործին, որի էությունը Հայոց արի սպարապետն այնպիսի պարզությամբ բացատրել էր Միհրանին գրած իր նամակի մեջ։ Ձմեռը նոր էր սկսվել, և Վահանը հանգստանում էր Դվինում, երբ ինչ-որ խորհրդավոր մարդիկ եկան նրա մոտ և պատմեցին այնպիսի բաներ, որոնք չէին կարող չգրգռել ընդհանուր հետաքրքրություն։ Նրանք հավատացնում էին, թե կենդանի են և Վրաց աշխարհում են մնացել Սահակ Բագրատունին՝ մարզպանը, և Վասակ Մամիկոնյանը՝ սպարապետի եղբայրը, որոնց հանձնարարությամբ էլ իրենք եկել են խնդրելու, որ զորագունդ ուղարկվի իրենց Հայաստան բերելու համար։ Եվ այդ մարդիկ, իրենց խոսքը համոզիչ դարձնելու համար, պատմում էին վատ կարկատած ու հերյուրած մի պատմություն.— իբր թե երկու նախարարները կռվի մեջ չէին սպանվել, այլ ծանր վիրավորվել էին, հետո մոտիկ մի վանքի վանականներից մեկը գտել էր նրանց՝ տարել իր մոտ խնամելու։ Թեև նրանք այժմ առողջացել են, բայց իրենց երկիրը վերադառնալ չեն կարողանում, վախենալով, թե մարդիկ կգտնվեն, որոնք կսպանեն իրենց՝ պարսից կառավարությունից պարգև ստանալու համար։ Որքան էլ պարզ լիներ, թե պատմածը մի առասպել է, հավատացողներ այնուամենայնիվ շատ գտնվեցին, մանավանդ սպանվածների կանայք թախանձում էին, որ մարդիկ ուղարկվեն, ինչպես համոզում էին պատգամաբերները, որոնք խոսում էին երկու իշխանների անունից, կրկնելով իբր թե նրանց բերանով արտասանված խոսքերը։ Ինքը Վահան Մամիկոնյանն էլ համոզված էր, թե գործ ունի խաբեբաների հետ. բայց չկարողանալով դիմադրել ամեն կողմից լըսվող խնդրանքներին, համաձայնություն տվեց, որ Մուշեղ Մամիկոնյանը վերցնե հայոց զորագնդի մի ընտիր մասը և գնա Վրաստան, Սահակին ու Վասակին որոնելու համար։ Այս արշավանքը տեղի ունեցավ ցուրտ ձմեռվա ընթացքում։ Մուշեղ Մամիկոնյանին երկար ժամանակ այս ու այն կողմերը պտտեցրին խաբեբաները, մինչև որ գլուխ բերվեց մի շատ վտանգավոր դավադրություն հեղափոխական կառավարության դեմ։

Ատրպատականում կազմակերպվել էր պարսկական մի մեծ բանակ, որի հրամանատար նշանակված էր Զարմիհր Հազարավուխտը։ Հայ պարսկասեր նախարարներն իմաց տվին նրան, թե հայոց գնդի մի զգալի մասը Վրաստան է ուղարկված՝ գուցե հենց նրանց դավերով և թե հայոց սպարապետը մի փոքրիկ գունդ ունի այժմ իր հետ Դվին քաղաքում։ Եվ գարունն սկսվելուն պես Հազարավուխտը մեծ շտապողությամբ իր զորքերն

անց էր կացնում Արտաշատի կամուրջով, ամեն կերպով աշխատելով հանկարծակիի բերել Վահան Մամիկոնյանին և թակարդի մեջ գցելով նրան, ոչնչացնել նրան իր փոքրաթիվ զորքի հետ։ Եվ իրավ, այս արշավանքն այնքան անակնկալ էր, որ Հովհան Մանդակունի կաթողիկոսն էլ չկարողացավ հեռանալ մայրաքաղաքից։ Կուտակելով իր զորքերը դաշտի մեջ, Հազարավուխտը բռնեց և այն տարածությունը, որ տանում էր դեպի լեռնակողմը, այն է՝ Ազատ գետի հովտից, ուր Խոսրովակերտ անտառն էր գտնվում, մինչև Ջրվեժ գյուղը, որ հեռու չէ Երևանից։ Վահանը պաշարված դրության մեջ էր։ Բայց նրա սովորական անվախությունը, տոկունությունն այս անգամ էլ ազատեցին նրան։ Իր շուրջը հավաքելով իրեն հավատարիմ մնացած նախարարներին ու զորքը, նա համարձակ և ուժգին հարձակում գործեց պարսիկների վրա, պատռեց նրանց շարքերը և մեծ կոտորած անելով, անցավ դեպի լեռնակողմը։ Նրա հետ էր և Հովհան կաթողիկոսը, որ ձիուց ընկնելով՝ կիսամահ դրության մեջ ընկավ։ Սակայն նրան չթողեցին թշնամու ձեռքն ընկնի, այլ վերցնելով նրան՝ տարան իրենց հետ։ Հետո նա առողջացավ։ Այս հերոսամարտի մեջ Վահանը կորցրեց իրեն հավատարիմ նախարարներից երկուսին—Որդի Դիմաքսյանին և Քաջաջ Ամատունուն, որոնք սպանվեցին։ Նույն այս միջոցին հասնում էր Վրաստանից վերադարձող Մուշեղ Մամիկոնյանն իր ընտիր ձիավոր զորքով։ Բայց տեսնելով դրությունը, նա էլ Վահանի նման վարվեց, այն է՝ ցրելով իր զորքը, նահանջեց դեպի արևմուտք։

Դարձյալ դեպի Տայոց աշխարհը և դեպի Խաղտիք էր դիմում հայոց սպարապետը, իսկ նրան հետապնդում էր Հազարավուխտը։ Այս անգամ Վահանն ուղղակի Հոռոմոց տունն էր մտնում, այսինքն Բյուզանդական Հայաստանը։ Բայց Հազարավուխտն էլ կանգ չէր առնում պետական սահմանագլխի վրա։ Իր ճանապարհին նա ավերել և քանդել էր հայոց շատ ամրոցներ և շատ էլ մարդ էր կոտորել։ Կանգ առնելով Տայոց աշխարհի Ոքաղե գավառում, Գյուղիկ և Վարդաշեն գյուղերի մոտ, նա իմացավ, որ Վահանը հարևան Շաղագոմ գավառումն է, որ հոռոմներին էր պատկանում։ Եվ կարծելով, թե հայոց սպարապետն այդտեղ իրեն շատ ապահով զգալով, զգուշության միջոցներ ձեռք առած չի լինի, նա շտապեց Շաղագոմ՝ Վահանին բռնելու համար։ Այդ նրան չհաջողվեց, բայց Վահանի փոխարեն պարսից ձեռքը գերի ընկան Ներսեհ և Հրահատ Կամսարականների կանայք։ Հազարավուխտն այնքանով էլ շատ ուրախ էր, քանի որ համարում էր, թե այժմ կարող է իրեն հնազանդեցնել Կամսարական եղբայրներին, իսկ այս կնշանակեր կտրել Վահանի և առհասարակ հայոց ապստամբության երկու թևերը։ Այս պատճառով էլ Հազարավուխտը պատվով էր պահում գերի Կամսարական տիկիններին։ Բայց հենց այդ ժամանակ էլ նա Պերոզից ստանում էր հրաման անմիջապես անցնել Վրաստան, եռանդուն միջոցներ գործադրել Վախթանգ թագավորին ոչնչացնելու և նրա հարուցած ապստամբությունը ճնշելու համար։ Հայաստանում գործողությունները Պերոզը հանձնում էր Շապուհին, որ Միհրանյան տոհմից էր և որ ստանում էր մարզպանի պաշտոն։ Միաժամանակ շահինշահը հայտնում էր, թե ինքն էլ պարսից ամբողջ բանակի հետ գնում է հեփթաղների դեմ պատերազմելու։

Շապուհ Միհրանյանը, կատարելով Հազարավուխտի հրահանգները, սկսեց առանձին եռանդով գործել Վահանի դեմ։ Ամենից շատ նա աշխատում էր Կամսարական եղբայրներին հեռացնել հայոց սպարապետից։ Գերի բռնված տիկինները հավատացնում էին պարսից զորավարին, որ իրենց ամուսիններին նա հեշտությամբ կորսա, եթե լավ վարվի իրենց հետ, այս միջոցով միայն կարելի է գրավել երկու եղբայրներին, որոնք ուրիշ կին չեն ճանաչում, բացի իրենց կանանցից և սրանց սիրո համար պատրաստ են ամեն զոհողությունների։ Բայց այս միայն ինքնապաշտպանության միջոց էր Կամսարական տիկինների համար։ Նրանց իսկ որ պատվով և սրբությամբ էին պահում, սպասելով, թե ի՛նչ ազդեցություն կանե այս վարմունքը Ներսեհ և Հրահատ իշխանների վրա։ Իզուր էր, սակայն, պարսիկների ակնկալությունը. Կամսարական եղբայրներին անկարող եղավ ընկճել նույնիսկ և անձնական դժբախտությունը, և նրանք մի հազվադեպ ջերմեռանդությամբ պահպանեցին այն հավատարմությունը, որ վաղուց գոյություն ուներ իրենց տան և Մամիկոնյան տոհմի միջև։ Նրանք իրենց անձնական երջանկությունն էլ զոհեցին ընդհանուր գաղափարի, և Վահանը հենված էր, առաջվա պես, նրանց հզոր աջակցության վրա։

Շապուհի պատերազմական գործողություններն էլ առանձին հաջողություն չունեցան։ Վահանն անընկճելի էր իր փոքրիկ գնդով լեռնային պատերազմի մեջ, ուր նա ցույց էր տալիս զարմանալի աչքաբացություն, զգուշություն և, որ ամենից գլխավորն է, քաջություն։ Այսպիսի կռվի համար մշտական կայան չէր կարող լինել։ Վահանը փոփոխում էր իր դիրքերը, ինչպես թելադրում էին հանգամանքները, որոնցից օգտվելը հաջողության առաջին պայմանն էր։ Ընդհարումները հայ ապստամբների և պարսկական զորքի միջև շարունակվեցին բյուզանդական հողի վրա։ Իրենք հոռոմները չէին խառնվում այդ վեճի մեջ, բայց այս չեզոքությունը չէր խանգարում, որ Վահանն իր օգնության կանչի և տեղացի հայերին։ Շաղագոմքի (այժմյան Թորթումի) իր ամուր ապաստարաններից նա անդուլ և անդադար գործում էր, ամենօրյա հարձակումներով նեղում էր պարսիկներին։ Երբեմն գիշերային հարձակումներն այնքան սաստիկ և անակնկալ էին լինում, որ պարսիկներն իրենց ղակիշի (բանակի շուրջը փորած խրամատի) մեջ շփոթվում էին, ահաբեկվում և սկսում կոտորել իրար։ Պարսիկներն էլ, իհարկե, երբեմն միջոց էին գտնում հանկարծակի հարձակվելու հայերի վրա, բայց միշտ գտնում էին նրանց արթուն և պատրաստ իսկույն, վտանգի միջոցին, թողնելու իրենց դիրքերը և հեռու գնալու։ Վահանը իր փոքրիկ գունդն ուժեղացնելու և ավելի լավ կազմակերպելու համար վճռեց ավելի խոր գնալ հոռոմների Հայաստանում և Կարինի մոտով ուղևորվեց դեպի Չորրորդ Հայքի Հաշտյանք գավառը, մտադրված լինելով այդտեղից էլ անցնել Անձիթի և Ծոփաց աշխարհի կողմերը։ Բայց մեկ էլ տեսնում ենք նրան Կարինից հարավ, Արշամունյաց գավառում, որ Տուրուբերան նահանգի մեջ էր մտնում։ Այստեղ, չհասած Հաշտյանք գավառին, Երեզ գյուղի մոտ կանգ է առնում Վահանը։ Գյուղացիների օգնությամբ նա այստեղ կազմակերպում է մի գիշերային հարձակում պարսիկների վրա, որ, ինչպես միշտ, պսակվում է կատարյալ հաջողությամբ, ահաբեկելով պարսիկներին, շփոթություն գցելով նրանց մեջ, որի ժամանակ նրանք կոտորում են իրար։ Կռիվը վերջանալուց հետո Վահանը իր զորքը տանում է մոտակա Շտյա գյուղը, գիշերվա մնացած մասն անցկացնելու համար։ Բայց Շապուհը, զայրացած իր կրած կորուստներից, մանավանդ որ նրան շարունակ գրգռում էր հայերի դեմ Գդիհոն Սյունին,

շտապ գնաց Վահանի հետևից այնպես, որ դեռ մի քիչ չհանգստացած
Հայոց գունդը տեսնում է, որ պարսիկներն արագ իր վրա են գալիս։
Վահանը տեսավ վտանգի մեծությունը. Թույլ ու փոքր էր նրա գունդը
թշնամու հետ համեմատած, բայց և այնպես՝ երկյուղ ամենևին չզգաց նա.
այլ դիմելով իր զինվորներին, խրախուսեց նրանց։ Սակայն, մինչդեռ նա
ճակատ էր հարդարում արշավող թշնամու դիմաց, անակնկալ մի աղետ
տեղի ունեցավ նրա աչքի առջև։ Նրա ամբողջ զորագունդը, երևի հոգնա-
ծությունից ու վախից ստիպված, սկսեց փախչել։ Վահանը մնաց թշնամու
առաջ մի քանի հավատարիմ զինակիցների և ընկերների հետ, որոնց մեջ
էին Ներսեհ և Հրահատ Կամսարականները։ Ընդամենը հազիվ 30—40 լինել
այն մարդկանց թիվը, որոնք չհետևեցին փախչողների օրինակին։ Ամեն
ինչ թելադրում էր, որ սպարապետն ու իր ընկերներն էլ ազատություն
որոնեն փախուստի մեջ։ Վտանգը մոտենում էր արագ և արդեն մեկը
խմբից ասում էր Վահանին, «Յո՛ւշ, տէր, յո՛ւշ»։ Բայց Վահանը պատաս-
խանում է. «Ինձ այլևս մի զգուշացրեք, ես այսուհետև մարդու վրա հույս
դնել և մարդով պարծենալ չեմ կարող, իմ հույսը Քրիստոսի խաչն է»։
Եվ այս խոսքերով նա հարձակվում է արշավող թշնամու վրա։ 30—40 ըն-
կերները նրան մենակ չեն թողնում և նույնպես հետևում են նրա օրինա-
կին։ Մի բուռն մարդկանց այս խելահեղ հանդգնությունը մի տեսակ
սարսափի ազդեցություն է բերում պարսիկների բազմության վրա։ Բայց
գլխավորը, իհարկե, այս չէր, որ կազմալուծում էր առաջ բերում նրանց
շարքերի մեջ, այլ այդ մի բուռն մարդկանց աներկյուղությունը։ Առյուծնե-
րի նման էին նրանք կռվում, ճեղքելով թշնամու գիծը։ Կոտորվածների թի-
վը մեծ էր։ Բայց այսքանն էլ դեռ բավական չէր՝ մի ստվարաթիվ գունդ
պարտության վիճակին հասցնելու համար։ Տեղի ունեցավ մի պատահմունք,
որ սովորաբար զինվորական բախտ են անվանում։ Այդ այն էր, որ սպան-
վածների մեջ էր նաև Գդիհոն Սյունին, հայոց գործի ամենաչար, ոխերիմ
թշնամին, հպարտ, պարծենկոտ և նենգամիտ։ Այս մի բարիք էր, որ բերում
էր Շտյայի հերոսական գործը։ Սյունյաց հեծելազորքը, մնալով առանց
առաջնորդի, կազմալուծվեց, ցրվեց և սկսեց մաս-մաս վերադառնալ իր
երկիրը։ Իսկ այս բանն այնքան թուլացնում էր պարսից բանակը, որ Շա-
պուհն այլևս անկարելի համարեց շարունակել Վահանին հետապնդելու
գործը, որ վտանգավոր էր դառնում։ Եվ նա վճռեց վերադառնալ Դվին,
իմաց տալ բոլոր հանգամանքները Պերոզին և սպասել նրա կարգադրու-
թյան (484 թ. ամառը)։

Սկսելով նահանջը, նա թողնում էր Կամսարականների կանանց Բասենի
Բողբերդ19 բերդում։ Բայց բախտը շարունակում էր հովանավորել ու փայ-
փայել Վահանին։ Դեռ ճանապարհին էր Շապուհը, երբ նրան հասավ Տիզ-
բոնի արտակարգ սուրհանդակը, որ մեծ գույժ էր բերում Արյաց զորքին։
Հայերի երեքամյա ապստամբությունը Հայաստանի մեջ չէր, որ լուծում էր
ստանում, այլ Կասպից ծովի հարավ-արևելյան կողմերում, ուր 484 թ. հուլի-
սին մեծ պատերազմ տեղի ունեցավ պարսիկների և հեփթաղների միջև և
այդ պատերազմում անհետ կորավ Պերոզ թագավորը։ Սարսափելի էր
Իրանի պարտությունը։ Զորքը կորցրեց ամեն ինչ և անկարգ փախավ պա-
տերազմի դաշտից։ Բազմաթիվ գերիների հետ հեփթաղների ձեռքն ընկավ
և Պերոզի աղջիկը, որին իր հարեմը մտցրեց հեփթաղների թագավորը[1]։

[1] Th. Noeldeke, „Et. hist.", p. 164.

Պատմելով այս մեծ աղետը, արքունի թղթաբերը տալիս էր իր մոտ եղած
հրամանը, որով Շապուհին պատվիրվում էր, առանց ժամանակ կորցնե-
լու, իր գնդով շտապել Տիզբոն։ Նույնպիսի հրաման ուղարկվեց և Վրաս-
տան՝ Զարմիհր Հազարավուխտին։

Եվ այսպես, Պարսկաստանը նորից հարկադրված էր թողնել Հայաս-
տանը, հանելով այնտեղից իր զորքերը։ Վահան Մամիկոնյանն իսկույն
վերադարձավ Դվին և վերականգնեց իր կառավարությունը։ Այժմ նա իսկ
որ կարող էր հանգստանալ երեք տարվա ծանր աշխատանքներից հետո,
որոնց մեջ նա ցույց էր տվել հերոսական անվեհերություն, կամքի անհող-
դողդություն, համարձակություն և զորավարի ու մարդու բարձր առաքինու-
թյուններ։

5. Նվարսակի պայմանադրությունը: Հեփթաղների հարվածների տակ
Իրանն արագորեն մոտեցավ կործանման խորխորատին։ Ամբողջ արևելյան
Իրանն ասպատակվեց։ Ահագին կորուստներ պատճառեցին այդ արշավանք-
ները, որոնցով հեփթաղները փորձում էին անցնել դեպի արևմուտք։ Եվ
պետությունը փրկելու համար դուրս է գալիս մի մարդ—Զարմիհր Հազա-
րավուխտը20, որին տեսանք Հայաստանում։ Սա բարձր ծագում ունեցող մի
ազնվական էր, մեկն Իրանի այն ժամանակվա նշանավոր «Փահլավաննե-
րից»։ Նա կարողանում է հաշտություն կնքել հեփթաղների հետ, պայմա-
նավորվելով տարեկան հարկ վճարել նրանց։ Իսկ Պերոզի տեղ թագավորեց-
նում է նրա եղբայր Բալաշին (484—488)։ Փարպեցին սրան Վաղարշ է
անվանում և ասում է, թե «բարերար և հեզ» էր այս Վաղարշը։ Իսկ այս
նշանակում է, թե Վաղարշն այն Սասանյաններից էր, որոնք չէին ուզում
մոգերի և ազնվականության կույր գործիք դառնալ, ուստի և հալածանք-
ներ չէին հանում պետության այլակրոն հպատակների դեմ։ Այսպիսի մի
թագավոր հարկավոր էր մանավանդ այս կործանման ժամին, որպեսզի
կարողանար հաշտեցնող ու մեղմ քաղաքականությամբ վերջ դնել ներքին
խռովություններին։ Պետական կարևոր խնդիրներից մեկը Զարմիհրը
դարձնում էր հենց հայոց հարցը։ Վաղարշի թագավորության երկրորդ օրն
իսկ խոսք բաց անելով Հայաստանի մասին, Հազարավուխտը և նրա հա-
ջորդ Շապուհ Միհրանյանը մանրամասն զեկուցում տվին թագավորին,
բացատրելով, որ Պերոզի անձնահաճ բռնակալությունն է եղել հայոց
ապստամբության պատճառը, որ Վահան Մամիկոնյանը կռվել է պարսից
իշխանության դեմ մեծ քաջությամբ, և այս բոլորի հետևանքն այն է, որ
այսօր Հայաստանի պես մի մեծ և օգտակար աշխարհ դուրս է եկել պար-
սից տիրապետության տակից։ Խորհրդակցությունը հանգում է այն վճռին,
թե պետք է հաշտեցնող, սիրաշահող քաղաքականությամբ նորից նվաճել
հայերին, իսկ դրա համար պետք է լսել նրանց գանգատներն ու պահանջ-
ները, զիջողություններ անել, մի անգամից ձեռք վերցնելով զրադաշտակա-
նությունը բռնի միջոցներով տարածելու մտքից։ Թագավորի լիազորություն-
ներով օժտված մի ամբողջ բազմամարդ դեսպանություն է ուղարկվում Հա-
յաստան։ Դեսպանության գլխավորն էր Նիխոր Վշնասպդատը, «այր հեզ և
մտացի և աշխարհաշէն», ինչպես անվանում է նրան մեր Փարպեցին։ Քար-
տուղարն էր Շապուհը, «Խորհրդեան դպիր»։ Կային և ուրիշ ազնվական և
բարձրաստիճան պաշտոնյաներ, նրանց հետ էր և մի զորագունդ։ Զգու-
շության համար Նիխորի հրամանատարության էին հանձնվում Ատրպա-
տականի և Զարավանդի ձիավոր զորքերը։ Նիխորին տրված էր հրահանգ՝

հաշտեցնել հայերին Պարսկաստանի հետ։ Օրվա դրությունն էլ այդ էր պահանջում։ Պերոզի որդի Զարեհը21 գահաժառանգության վեճ էր սկսել, և նորից բորբոքվել էր ազգամիջյան պատերազմը, իսկ հեփթաղների արշավանքը բոլորովին դատարկել էր արքայից արքաների գանձարանը. ոչ նոր զորքեր կարելի էր հավաքել, ոչ էլ առհասարակ գահի հեղինակությունը պահպանել։ Շատ կարևոր էր համարվում հայերի օգնությունը, որը միայն կարող էր Վաղարշի թագավորության նեցուկը դառնալ։

Նիխորն սկսեց իր առաքելությունը քաղաքագիտական ներքին զգուշություններով, աշխատելով ամենից շատ չգրգռել հայերի կասկածամտությունը և չվիրավորել նրանց ազգային զգացմունքները։ Այս պատճառով էր, որ նա նույնիսկ չկամեցավ մտնել Հայոց միջնաշխարհը և բանակցությունները սկսել քաղաքական կենտրոնում, որ Դվինն էր։ Ուստի գալով Հեր գավառը, նա կանգ առավ Նվարսակ գյուղում և այնտեղից էլ իր առաջարկներն ուղարկեց Վահանին՝ Դվին։ Պատգամախոսներ էին դեսպանության քարտուղար Շապուհը և Միհր-Վշնասպ Ծվարշացին։ Սրանք, ներկայանալով հայոց զորավարին, հայտարարեցին Նիխորի կողմից, թե նա թագավորից հրովարտակ ունի հայերին հաշտեցնելու մասին, ուստի հրավիրում էր նրան իր մոտ բանակցելու և պայմաններ որոշելու համար։

Այս առաջարկությունը, իհարկե, մեծ ուրախություն է պատճառում հայոց մայրաքաղաքի մեջ։ Այսպիսի մի երևույթի Հայոց աշխարհն առաջին անգամն էր ականատես լինում։ Պարսից կառավարությունը, հաշտության բանակցություններ սկսելով հայ ապստամբների հետ, նրանց, այդպիսով, կռվող կողմ էր ճանաչում։ Բայց այդ անակնկալ հաջողությունը չպտտեցրեց Վահանի ու նրա ընկերների գլուխները։ Հայոց քաջարի զորավարը ինչպես մեծ արժանապատվությամբ իրեն պահել էր երեքամյա մաքառումների միջոցին, այնպես էլ այժմ էր իրեն ցույց տալիս, առանց հղփանալու իր քաջության պտուղներով և հպարտության հովեր առնելու, ինչպես նաև առանց ոգևորվելու և պարսից պաշտոնյային հաճոյանալու համար նրա առաջարկները վազեվազ կատարելու։ Վահանը լավ պատիվներ արավ Նիխորի պատգամավորներին, իսկույն չպատասխանեց նրանց, այլ դեռ խորհրդի կանչեց իր հավատարիմ զինակից նախարարներին։ Հայերի համար իսկապես կարիք էլ չկար իրենց պահանջները նոր ձևակերպելու։ Արդեն Միհրանի հետ բանակցելիս, ինչպես տեսանք, Վահանը մանրամասնաբար գրել էր հայ նախարարության դժգոհությունները, թե ի՛նչն է ապստամբության իսկական պատճառը և թե ի՛նչ պայմաններով ապստամբները կհամաձայնեին նորից հնազանդվել պարսից կառավարության։ Այդ նույն պահանջներն էլ այժմ նախարարական խորհուրդը ձևակերպում էր երեք կետերի մեջ, և Վահան Մամիկոնյանը, ուղարկելով այդ կետերը Նիխորին, հայտնում էր, որ ինքը կգնա նրա մոտ միայն այն դեպքում, եթե պարսից կառավարությունը ստորագրի և կնքի պայմանները։ Ահա թե ի՛նչ էր պահանջում այդ կետերի մեջ.

1. Հայերին թողնել իրենց հայրենի և բնիկ օրենքը (կրոնը). հայ մարդուն մոգ (զրադաշտական) չդարձնել և հավատափոխության համար պարգևներ ու աստիճաններ չտալ։ Ատրուշանները հեռացնել Հայոց աշխարհից և չթույլ տալ, որ ուրացող և վատ մարդիկ անարգեն ու թշնամանեն հայոց եկեղեցին։ Քրիստոնեությունն ազատ և համարձակ պաշտվի ամեն տեղ։ 2. Մարդկանց ճանաչել ոչ թե իշխանավորի քմահաճույքով, այլ ար-

դարությամբ որոշել լավն ու վատը, պիտանին և անպիտանը։ Լավերին և օգտակարներին վարձատրել և առաջ քաշել, իսկ վատերին և անպիտաններին արհամարհել։ Իմաստուն մարդկանց խորհրդով բան տեսնել և անմիտներին մոտ չթողնել և հալածել։ 3. Արյաց աշխարհի տերը (թագավորը) պետք է տեսնի ամեն ինչ իր աչքով, լսի իր ականջով և խոսի իր բերանով։ Միջնորդներ նրա և հայ ժողովրդի միջև չպիտի լինեն. ուրիշների աչքով չպիտի տեսնի նա, և ուրիշների ականջով չպիտի լսի, ուրիշի խոսքով չպիտի ճանաչի լավ և անդավ մարդկանց և ուրիշի բերանով չխոսի ինչ հարկավոր է, այլ ինքը լինի վերահասու, անմիջական հարաբերություններ ունենա մարդկանց հետ։

Այս պայմանները Նիխորին տալու և նրանից պատասխան ստանալու համար Վահանն ուղարկում էր, եկած պատգամավորների հետ, և իր ներկայացուցիչներին, որոնց ընտրել էր իր ուխտակից նախարարներից։ Դրանք էին՝ Հաշկուր Արծրունի, Սահակ Կամսարական, Վասավուրտ Կարքային, Առավան Աղբերկացի և Պաճակ, որ Մարդպետական գնդից էր։ Նիխորը մեծ պատվով ընդունեց այդ հայ պատգամավորներին, ընդունեց նաև նրանց բերած պայմանները և հրավիրեց Վահանին գալ իր մոտ անձնական տեսակցության։ Հայոց սպարապետն անցավ Արաքսի մյուս ափը, բայց չմոռանալով, որ գործ ունի պարսիկների հետ, ուղիղ Հեր գավառը չգնաց, այլ կանգ առավ Արտազ գավառի Ողինդ գյուղում, նորից մարդ ուղարկեց Նիխորի մոտ և պահանջեց, որ նա նշանավոր պարսիկներից պատանդներ տա, որոնք կմնան հայերի մոտ մինչև իր վերադարձը։ Գոռոզ պարսիկներն այս պահանջն էլ ստիպված էին կատարել։ Պատանդներն էին՝ Բազեն, որ «Ատրպատական Շահապ» էր (Ատրպատականի կառավարիչ), Վեհ-Վեհնամը, որին ապստամբության սկզբին տեսանք հազարապետի պաշտոնում Հայոց աշխարհում, և Միհրանի եղբայր Ներշապուհը։ Սրանք հանձնվեցին Ներսեհ Կամսարականին։ Միայն այս զգուշություններից հետո էր, որ Վահանը գնաց Նվարսակ, ունենալով իր հետ մեծ շքախումբ և մի զորագունդ։ Նիխորը դիմավորեց նրան հատուկ պատվիրակների միջոցով։ Վահանը, մոտենալով պարսկական բանակին, զինվորական փողեր հնչեցնել տվեց և սրանով շփոթություն և անբավականություն պատճառեց պարսիկներին։ Նիխորը նորից մարդ ուղարկեց ազդարարելու Վահանին, թե Արյաց բանակը փողեր հնչեցնելով մուտք գործել կարող է միայն Արյաց զորքերի հրամանատարը։ Վահանն արժանապատվությամբ պատասխանեց, որ իրեն շատ լավ հայտնի է այդ կարգը, բայց ինքը դեռևս պարսից հպատակ չէ և պահում է իրեն իբրև մի անկախ մարդ, որ պարտավոր չէ հպատակվել պարսկական կարգերին։

Նիխորի մոտ Մամիկոնյան իշխանը մնաց մի քանի օր։ Արքայից արքայի լիազորն ամեն ինչ անում էր հայ ապստամբությունը սիրաշահելու, հարգանքի ցույցերով գրավելու համար։ Տեղի ունեցան հրապարակական ընդունելություններ. երկու կողմերը համամիտ էին Պերոզի գործը գնահատելու մեջ թե՛ Նիխորը և թե՛ Վահանը ճառեր արտասանեցին, որոնց մեջ պարսից կառավարությունն ընդունում էր հայոց պահանջների իրավացիությունը, իսկ Վահանն ավելի ևս ընդարձակում էր իր տեսություններն ու հայացքները, որոնք մեզ արդեն ծանոթ են։ Իր կատարյալ հաղթանակի օրերին հայկական ապստամբությունը լիուլի վրեժ էր հանում հայ ուրացողներից, որոնք գտնվում էին Նիխորի բանակում։ Այդ մարդիկ, Վահանի

պահանջով, հեռվից նայողի դիրքում մնացին և իրավունք չունեցան մաս-
նակցելու այն մեծ ճաշկերույթին, որ տվեց Նիխորն ի պատիվ Վահանի։
Համաձայնության մանրամասնությունները մշակվեցին Նիխորի և Վա-
հանի միջև անձամբ, առանձին տեսակցության ժամանակ, որ տեղի ունե-
ցավ առանց վկաների ներկայության։ Նիխորը պարսից կառավարության
կողմից պաշտոնապես ընդունում էր հայերի ձևակերպած երեք պայմաննե-
րը, բայց իր կողմից էլ պայման դրեց, որ անհապաղ վերականգնվի հին
սովորությունը, և հայերը հեծելազոր ուղարկեն արքունի դուռը, ուր այդ
գունդը հարկավոր է մանավանդ այժմ՝ Զարեհի դեմ կռվելու համար։ Այս
պայմանը Վահանը կատարեց Դվին վերադառնալուց անմիջապես հետո։
Հայոց հեծելագունդը, որ գնաց Պարսկաստան, գտնվում էր Վրեն Վանան-
դացու հրամանատարության տակ, իսկ Վրենի օգնական էր կարգվում Մա-
միկոնյան մի նոր, երիտասարդ հերոս—սպանված Վասակի որդի Գրիգո-
րը։ Այս գունդը Պարսկաստանում քաջությամբ գործեց։ Նրա միջոցով էր,
որ Վաղարշը վերջնականապես ջարդեց Զարեհի զորքը և նրան բռնելով,
մորթել տվեց հրապարակում։

Եվ այսպես, Վահանի ապստամբությունը վերջանում էր առանց կա-
րողանալու փոփոխություն մտցնել Հայաստանի քաղաքական ճակատագրի
մեջ։ Նվարսակի պայմանագրությունը, վերականգնելով նախկին հպատա-
կական դրությունը, միայն բարոյական հաղթանակ էր բերում հայերին։
Ոչ մի իրական երաշխիք չկար, թե նրա պայմանները կկատարի պարսից
կառավարությունը։ Մի բռնապետական երկրում, ինչպիսին Պարսկաստանն
էր, ամեն ինչ կախված էր տիրողի կամքից ու տրամադրությունից։ Ոչ ոք
չէր կարող, օրինակ, Նվարսակի պայմանագրությանը կատարած լինելու
համար, համարձակություն ունենալ ասելու արքայից արքային, թե ո՛ւմ
չպիտի լսի նա և ո՛ւմ չպիտի հավատա։ Մնում էր, ուրեմն, որ բռնակալի
լավ կամ վատ հատկություններից սպասել այս կամ այն տեսակ վիճակ
երկրի համար։

6. Մարզպանություն: Իր ուղարկած հեծելագնդի պատվավոր և հաղ-
թական վերադարձից հետո էր, որ Վահան Մամիկոնյանը գնաց ներկայա-
նալու Բալաշ կա՛մ Վաղարշ թագավորին։ Պարսից քաղաքականությունը
նույնն էր Տիզբոնի Սասանյան պալատում, ինչ Վահանը տեսել էր Նվար-
սակ գյուղում։ Արքայից արքան ընդունեց նրան սիրալիր կերպով, կրկնեց
Նիխորի խոսքերը, թե բոլոր չարիքների պատճառը Պերոզն է եղել, իր
արքայական արժանավորությունը ցույց տալու համար հիշատակեց, թե
հայերն ապստամբել են և դրա համար պատժի պիտի ենթարկվեին, բայց
որովհետև նրանց այդ քայլին հասցրել է Պերոզի անսահման բռնակալու-
թյունը, ուստի ինքը ներում է շնորհում ապստամբության մասնակցած
բոլոր հայերին։ Հայերի խմբագրած երեք կետերն ընդունվում էին ամբող-
ջությամբ և վավերացվում արքունի կնիքներով։ Ի վերջո Վաղարշն օրի-
նավոր է ճանաչում Հայոց հեղափոխական կառավարությունը, բացի մարզ-
պանությունից։ Վահանն ստանում էր իր տոհմի նահապետությունը,
նույնպես և սպարապետությունը, որ ժառանգական էր իբրև տոհմային
սեփականություն։ Վահանի խնդիրքով Կամսարականների տոհմի նահապե-
տությունն էլ տրվում էր Ներսեհին։ Իսկ Արծրունիների մասին արած
միջնորդությունը մերժում է, ասելով, թե այդ իշխանները դեռ գործով
պիտի ցույց տան իրենց հավատարիմ ծառայությունը։ Պարսից արքու-

նիքը դեռ զգուշություն էր պահպանում հայերի վերաբերմամբ, դեռ միան-
գամայն չէր մոռանում, որ նրանք ապստամբներ են եղել։ Այդ ծածուկ
անվստահությունը նկատվում էր և նույնիսկ Վահան Մամիկոնյանի վերա-
բերմամբ։ Մարզպան նշանակվեց մի պարսիկ պաշտոնյա, որի անունն էր
Անդեկան։

Բայց եղածն էլ իրավունքների նվաճումն էր, և հայերը լիուլի բավա-
րարություն ստացած էին երևում։ Մեծ պատիվներով էր Վահանը մուտք
գործում Դվին մայրաքաղաքը։ Նրան եկեղեցական հանդեսով դիմավորից
Հովհան Մանդակունին, իսկ ժողովուրդը խանդավառ ընդունելություն
ցույց տվեց իր հաղթական զորավարին, որի մեծ ջանքերը կատարյալ հա-
ջողությամբ էին պսակվել, վերականգնելով հայ ազգի պատիվը, որ ոտնա-
կոխ էր եղած Ավարայրի պատերազմից ի վեր։ Վարդանի տանուլ տված
դատը վերստին տանում էր նրա եղբորորդին, որ ավելի քաջություն ու-
ներ, ավելի համարձակություն և կազմակերպչական տաղանդ, բայց առա-
վելապես այն պատճառով էր հաջողության տեր դառնում, որ ժամանակի
քաղաքական պայմանները նպաստավոր էին։ Պարսկաստանի թուլացումը
Հայոց հարցին տալիս էր հայկական շահերի տեսակետից շատ ցանկալի
ընթացք։ Սակայն նկատենք, որ այդ թուլացումը ժամանակավոր էր, ուրեմն
և ժամանակավոր կարող էր լինել նրա առաջացրած հետևանքը։

Անդեկան մարզպանը, ինչպես երևում է, ձևի համար էր նշանակ-
ված, առավելապես Վահան սպարապետին մոտիկից հսկելու համար։ Հա-
մոզվելով նրա տված տեղեկություններից, որ Մամիկոնյան իշխանը միան-
գամայն օրինապահ է և ուղղամիտ, Վաղարշը հրովարտակով նրան էր
հանձնում Հայոց աշխարհի մարզպանությունը, հիմնավորելով այդ կարգա-
դրությունն այն միանգամայն ճիշտ պատճառաբանությամբ, թե տեղացի
կառավարիչը լավ է ճանաչում երկրի ներքին հանգամանքները, կյանքի
պայմաններն ու ազգաբնակության բարքերն ու սովորությունները, մինչդեռ
Պարսկաստանից ուղարկված պաշտոնյան դեռ տարիներ պիտի վատներ՝
իրեն հանձնված երկիրը ճանաչելու համար, սխալներ գործելով և դրանով
ազգաբնակության վնասներ պատճառելով։ Բացի դրանից՝ հային մարզպան
նշանակելը, ինչպես տեսանք վերևում, ձեռնտու էր պարսից կառավարու-
թյան և զուտ դրամական տեսակետից։ Պարսիկ մարզպանն իր հետ Հայաս-
տան էր տանում իր հարեմը, իր մեծ շքախումբը, որոնց պահպանությունը
խոշոր ծախսեր էր պահանջում արքունի գանձից։ Հայ մարզպանը կարիք
չուներ այդպիսի մեծ ծախսերի։ Արդարությունն ու պետական շահերն այս-
պես համերաշխ էին խոսում, որովհետև պետության կենտրոնի և նրան են-
թարկված երկրի միջև հաստատվել էին բնականոն հարաբերություններ և
փոխադարձ վստահություն։

Մարզպանությունը Վահանի նվաճումների գագաթնակետն էր, որ
տոնվեց մեծ շքեղությամբ Դվինի մայր եկեղեցում։ Հավաքված բազմությունն
այնքան շատ էր, որ չտեղավորվելով եկեղեցում, խիտ առ խիտ կուտակվեց
հարևան փողոցներում և հրապարակներում։ Մինչև անգամ առագաստի նո-
րահարսները,— ասում է Փարպեցին,— մոռացել էին իրենց հարսնության
ամոթը և գնացել էին եկեղեցի։ Տիրում էր անսահման ուրախություն։
Վահանը եկեղեցի գնաց երկու ջորիների վրա բարձված պատգարակի մեջ,
որ կոչվում էր անդրավար[1]։ Եկեղեցում Հովհան կաթողիկոսը մի գեղեցիկ

[1] Փոխադրության այս միջոցն այժմ էլ գոյություն է պահպանում Պարսկաստանի մեջ։

ճառ արտասանեց, որ ամբողջովին բերել է Փարպեցին և որ այդ նշանավոր հոգևորականի գրական լավագույն գործերից մեկն է համարվում։ Վահանի մարզպանությունը, ինչպես ենթադրվում է, տեղի ունեցավ Վաղարշի թագավորության երկրորդ տարին, այսինքն 486 թվականին։ Հովհան Մանդակունու ճառով էլ Ղազար Փարպեցին վերջացնում է իր պատմությունը, և այնուհետև մենք ոչ մի տեղեկություն չունենք Վահան Մամիկոնյանի մասին, նույնիսկ հաստատապես չգիտենք, թե մինչև ե՞րբ տևեց նրա մարզպանությունը։ Միայն 506 թվականին տեսնում ենք, որ Վահանը չկար հայ նախարարության կազմի մեջ, ասել է՝ վախճանվել էր, և առաջին անձը նախարարների մեջ արդեն նրա եղբայր Վարդն էր[1]։

Եվ սակայն այդ 26 տարիների ընթացքում, երբ գուցե Վահան Մամիկոնյանը վարում էր անընդհատորեն մարզպանության պաշտոնը, մեծամեծ շարժումներ առաջացրին այն քաղաքական խոշոր դեպքերը, որոնք տեղի ունեցան Պարսկաստանում և Բյուզանդիայում։

Վաղարշի թագավորությունը երկարատև չէր։ Մոգերը կուրացրին նրան (488 թ. կամ 489), որովհետև նա չէր ուզում ենթարկվել նրանց ազդեցության։ Եվ որովհետև օրենքով թագավորել կարող էր միայն բոլոր զգայարաններն ունեցող մարդը, ուստի Վաղարշը հրաժարվում էր, իսկ նրա տեղ թագավորում էր Պերոզի որդի Կավատը (Կավատ, նոր պարսիկների մեջ՝ Կոբատ), որին վիճակված էր մի երկարատև թագավորություն (489—531)։ Սա էլ, իր հորեղբոր նման, հեռու էր պահում իրեն հոգևորականության և ազնվականության ազդեցությունից։ Հոգևորականության հեղինակությունը հարվածելու համար Կավատը նույնիսկ իր հովանավորության տակ առավ Մազդակ22 անունով պարսիկին, որ Մանիից[2] հետո երկրորդ նշանավոր կրոնական վերանորոգիչն էր Սասանյան Պարսկաստանում։ Մազդակը վարդապետում էր, թե բոլոր մարդիկ հավասար են և աստծու կամքն այն է, որ ամենքն էլ միատեսակ վայելեն աշխարհի բարիքները։

---

[1] Վահան Մամիկոնյանի պատմության ամենաարժանահավատ աղբյուրը Ղազար Փարպեցին է, նրա ժամանակակիցն ու սննդակիցը։ Բայց Վահանի շարժումը, ինչպես բնական էր, հետագա ժամանակներում, մտնելով ավանդությունների մեջ, ստացավ Փարպեցու պատմածից տարբեր գունավորումներ։ Այսպես է նա, օրինակ, այն պատմության մեջ, որ տալիս է 7-րդ դարի հեղինակ Սեբեոսը։ Այստեղ Պերոզը, լցված սաստիկ թշնամությամբ հայերի դեմ, քանդում է նրանց եկեղեցիները։ Վահան Մամիկոնյանը, պահելով իր մոտ Հայոց աշխարհի հարկերը, վերականգնում է ավերված եկեղեցիները և ապստամբում է Պերոզի դեմ։ Թագավորը մեծ քանակությամբ հոներ է ուղարկում՝ Վահանին ընկճելու և ոչնչացնելու համար։ Այդ մեծ բանակի դեմ Վահանը գնում է 30 հազարանոց ընտիր մի բանակով։ Ճակատամարտը տեղի է ունենում Գերանա դաշտում։ Բարձրանում է մրրիկ, որ փոշու ամպեր է թափում պարսից բանակի վրա, այնպես որ օրը ցերեկով խավար է պատում պարսիկներին։ Կոտորածը երկու կողմից շատ սաստիկ էր, չէր կարելի որոշել, թե որն է հայ և որն է պարսիկ զորականի դին։ Հաղթող են մնում հայերը, որոնք և հալածում են պարսիկներին։ Ավելի ևս կատաղում է Պերոզը, ավելի ևս մեծ զորությամբ է պատրաստվում հարձակվել հայերի վրա, բայց այդ միջոցին պատերազմ է բացվում քուշանների հետ, և թագավորը գնում է նախ նրանց դեմ, ասելով. «Կերթամ, առաջ այս թշնամուն կխորտակեմ և ապա, ժամանակ գտնելով, կգնամ Հայաստան, և իմ սուրն այնտեղ չի խնայի ո՛չ տղամարդկանց և ո՛չ կանանց»։ Բայց այս սպառնալիքն անկատար է մնում, որովհետև Պերոզն սպանվում է քուշանների պատերազմի մեջ։— Այս ավանդությանը հայտնի չէ, որ Պերոզին հաջորդել է Վաղարշը։ Պերոզից հետո թագավորած է անվանում նրա որդի Կավատին, որ և, իբրև թե, տեսնելով իր երկրի թուլացումը, հաշտվեց Վահանի հետ, նշանակելով նրան Հայոց մարզպան (Սեբեոս եպիսկոպոս, «Պատմութիւն ի Հերակլն», գլ. Ա)։

[2] Մանիի մասին տե՛ս այս գործի առաջին հատորը։

Ուստի նրանք, որոնք շատ հարստություն և շատ կանայք ունեն, պիտի բաժանեն իրենց այդ ստացվածքները բոլոր կարոտների միջև։ Անձնական սեփականությունը նա մերժում էր, ընտանիքը պիտի ոչնչացվեր[1]։ Այսպիսով, Մազդակի մեջ մենք տեսնում ենք նույնպես մի ընկերավարական քարոզչի, որ առաջնորդում էր մտքերը դեպի համայնականություն։ Եվ այս վարդապետությունը միայն երազ չէր մնում, այլև գործադրվում էր իրական կյանքի մեջ։ Տեղի էին ունենում հարստությունների և կանանց բաժանումներ։ Մազդակի հետևողների թիվը մեծանում էր, մանավանդ հասարակ ժողովրդի մեջ։ Մոգությունը համբերությունից դուրս եկավ և Կավատի դեմ դավադրություն սարքեց, որի հետևանքով նա գահընկեց եղավ և բանտարկվեց Անհուշ բերդում, իսկ նրա տեղ թագավոր հռչակվեց նրա եղբայր Ջամասպը։ Սակայն Կավատի կինը կարողացավ կաշառել Անհուշի բերդապահներին և փախցնել նրան հեփթաղների մոտ23, ուր, նա, ինչպես գիտենք, ապրել էր երկու տարի իբրև պատանդ։ Հեփթաղների թագավորն ամուսնացրեց նրան իր աղջկա հետ, որ նրա քրոջից էր ծնվել և մեծ զորք տվեց նրան, որի օգնությամբ նա նորից ետ խլեց իր կորցրած գահը (498 թ. կամ 499 թ.)։ Այս անգամ Կավատն այլևս մազդակյաններին բացարձակ կերպով չէր հովանավորում։ Ընդհակառակը, իր կյանքի վերջում նա նույնիսկ մեծ հալածանք հարուցեց այդ ընկերավարականների դեմ, աշխատում էր բնաջինջ անել բոլորին։ Բայց այդ չհաջողվեց նրան։ Աղանդավորների մի փոքրիկ մասը կարողացավ ազատվել, փախչելով Հայաստանի սահմանակից Ատրպատականի լեռները։ Կոտորածը ղեկավարում էր նրա որդի Խոսրովը, որ և հետո ժառանգեց գահը։ Այս միջոցին դիմեց Կավատն այն պատճառով, որովհետև եկել էր այն համոզման, թե Մազդակի վարդապետությունը, որքան էլ նրա մեջ բարձր գաղափարականություն կար, հասարակական կազմի հիմքերի կործանում էր բերում։

Բայց արևմտյան Ասիայի պատմության համար ավելի նշանավոր էր այն հանգամանքը, որ Կավատի ժամանակ վերանորոգվեցին պարսկա-հռոմեական պատերազմները (502 թ.)։ Ամբողջ 5-րդ դարը խաղաղ էր անցել երկու հարևան մեծ պետությունների միջև։ Հին արյունահեղ վեճը Արևելքի և Արևմուտքի միջև, ինչպես կտեսնենք, շարունակվեց ընդհատումներով հարյուր տարուց ավելի և շատ թուլացրեց երկու կողմերն էլ, կատարյալ հաղթանակ պատրաստելով արաբների արշավանքների համար։ Արդ՝ 502 թվին սկսված պատերազմի գլխավոր պատճառներից մեկը Հայաստանն էր, որի հարաբերությունները Բյուզանդիայի հետ առանձնապես բարեկամական էին դարձել 5-րդ դարի վերջին քառորդից։ Հակաքաղկեդոնական ուղղությունը տիրապետող էր հանդիսանում կայսրության մեջ, և միաբնյա վարդապետությունը, որին պատկանում էին և հայերը, հաղթականորեն գլուխ էր բարձրացնում, հովանավորվելով նույնիսկ կայսրներից։ Այսպես, Զենոն կայսրը (474—491) հրատարակեց 482 թվին մի հրովարտակ, որ հռչակված է Հենոտիկոն24 անունով և որով միաբնյա դավանությունը դադարում էր արգելված և հալածական լինելուց։ Զենոնին հաջորդած Անաստաս կայսրը (491—518) ավելի ևս զարգացրեց միաբնակների այս հովանավորված դրությունը։ Թվում էր, թե քրիստոնեությունը վերջնականապես բաժանվում է երկու մեծ հատվածի. արևելյանը՝ միաբնյա դավանությամբ, իսկ արև-

---

[1] Крымский, История Сасанидов, стр. 58.

մտյանը՝ երկաթնակ։ Առաջինի գլխավոր կենտրոնը պիտի դառնար Կ. Պոլիսը, երկրորդինը՝ Հռոմը, որ արդեն, Զենոնի հրովարտակի հետևանքով, բաժանվել էր արևելյան եկեղեցուց։ Քրիստոնեության այս բաժանումը բնական էր երևում ազգերի շահերի տեսակետից, քանի որ դրանով հաստատվում էր իրական դավանական ազատություն։ Բյուզանդական կայսրությունը պիտի միայն ամրանար այդ բաժանումից, կապելով իր հետ արևելյան ազգերին, իսկ Հռոմի անջատումը եկեղեցական միությունից ոչ մի վտանգ չէր բերում կայսրության[1]։

Այս բարեհաջող հանգամանքները ներշնչում էին հայերին ավելի մեծ վստահություն՝ Սասանյանների հալածանքներին դիմադրելու համար։ Եվ մենք դարձյալ տեսնում ենք հայ հայրենիքն ապստամբությունների ասպարեզ դարձած։ Տարաբախտաբար, մեր ազգային աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն տալիս այդ շարժումների մասին, իսկ օտար աղբյուրների հաղորդած կցկտուր տեղեկությունները չափազանց աղոտ են՝ մի պարզ պատկեր ներկայացնելու համար։ Այսպես, մենք իմանում ենք, որ Մազդակի վարդապետության ենթարկված Կավատն իր թագավորության սկզբում քրիստոնեության դեմ հալածանք է սկսում Հայաստանում և շինում է այդտեղ ատրուշաններ[2]։ Հայաստանը դրան պատասխանում է մի նոր ապստամբությամբ[3]։ Դատելով սիրիական մի աղբյուրի տված տեղեկությունից, այս ապստամբության ղեկավարը դարձյալ Վահան Մամիկոնյանն էր, որ քանդեց Կավատի շինել տված ատրուշանները[4]։ Բայց այս դեպքում անհասկանալի է մնում, թե ինչպես նա այնուհետև էլ շարունակեց մարզպան մնալ։ Համենայն դեպս, անկասկած է, որ այս ապստամբությունն էլ առանձին օգուտներ չէր բերել հայերին։ Այդ կարելի է հետևցնել այն հանգամանքից, որ 5-րդ դարի վերջում հայերը դիմումներ էին անում Անաստաս կայսրին, նրա օգնությունն էին խնդրում, պատրաստակամություն հայտնելով մտնել բյուզանդական հովանավորության տակ։ Այս անգամ էլ դարձյալ ապստամբված է Հայոց աշխարհը։ Եվ որովհետև բոլոր հավանականությունները թույլ են տալիս ենթադրել, որ Վահան Մամիկոնյանը դեռ կենդանի էր այդ միջոցին, պետք է, ուրեմն, ասել, թե այս երրորդ ապստամբության գլուխն էլ նա էր։ Անաստաս կայսրը, համակրելով հայերին և կամենալով օգնել նրանց, վարում էր հակապարսկական քաղաքականություն։ Հենց այդ միջոցին էլ Կավատն սկսեց պահանջել բյուզանդական արքունիքից, որ նա կատարի 363 թվին Պարսկաստանի հետ կապած դաշնադրության[5] այն կետը, որով նա պարտավորվել էր տարեկան որոշ նպաստ տալ պարսից թագավորին՝ Կովկասյան լեռների անցքերը բերդերով պաշտպանելու և, այդպիսով, լեռնաբնակ գիշատիչ ցեղերի առաջն առնելու համար։ Անաստասը մերժեց այդ պահանջը և 502 թվին Կավատը25 պատերազմական գործողություններ սկսեց Բյուզանդիայի դեմ, իր բանակը Պարսկական Հայաստանի միջով տանելով Թեոդոսուպոլսի (Կարինի) դեմ, որ պաշարման ենթարկվելով, անձնատուր եղավ նույն թվականին և հիմնահա-

---

[1] **Гельцер**, стр. 17.
[2] **Успенский**, Ист. Визант. Имп., стр. 353.
[3] **Noeldeke**, p. 166.
[4] Կարապետ Ծ. վարդապետ, «Հայոց եկեղեց. պատմ.», եր. 183։
[5] *Ն հատոր, եր. 702։*

ատկ քանդվեց։ Կարինից Կավատը անցնելով Հայաստանը հյուսիսից հա-
րավ, գնաց պաշարեց Ամիդ մեծ քաղաքը (այժմ Դիարբեքիր)։ Երեք ամիս
շարունակվեց պաշարումը, և պարսիկներն ահագին կորուստներ ունեցան
այդ ձմեռվա սաստիկ սառնամանիքներից ու անհաջող հարձակումներից։
Բերդապահ զորքն ամեն միջոց գործ էր դնում պաշտպանվելու համար, և
Կավատն արդեն հուսահատվել էր ու մտածում էր վերացնել պաշարումը
և հեռանալ, բայց հենց այդ ծանր միջոցին մի բարեհաջող դեպք, որի էու-
թյունը հայտնի չէ, բայց որ թույլ է տալիս դավաճանության, կաշառքի
միջոցով վաճառվելու ենթադրություն, պարսիկների ձեռքը տվեց այդ
ամուր բերդը, որը մատնվեց ահավոր մի ճակատագրի։ Պարսիկների ներս
խուժելուց հետո էլ երեք օր շարունակ կատաղի կռիվ տեղի ուներ փողոց-
ներում։ Կարծում են, որ սպանված բերդականների թիվը հասնում էր 78
հազարի։

Այնուհետև պատերազմական գործողությունները կենտրոնանում են
Եդեսիայի դեմ, որ նույնպես պաշարվում է, բայց պաշտպանվում է հերո-
սաբար։ Միևնույն ժամանակ պարսկական զանազան զորաբաժիններ ավե-
րում էին բյուզանդական Միջագետքը։ Անաստաս կայսրն ուշ միայն կա-
րողացավ լուրջ պատերազմական գործողություններ սկսել պարսիկների
դեմ։ Բայց հոռոմները չէին կարողանում հաջողություն ձեռք բերել, քանի
որ պարսիկների ձեռքումն էր Ամիդը, ուր նրանք թողել էին բերդապահ
զորք։ Ուստի Ամիդը նորից նվաճելու ջանքերը դառնում են անհրաժեշտու-
թյուն։ Բյուզանդական բանակը պաշարում է այդ ռազմական կարևոր կե-
տը։ Պաշարումը երկար տևեց, որովհետև վճռված էր բերդը վերցնել սովի
միջոցով։ Մինչդեռ զորքի մի մասը զբաղված էր այդ գործով, մյուս մասը
բաժանվեց երկու բանակի, որոնք արշավողական շարժումներ սկսեցին՝ մե-
կը դեպի Պարսկաստան, իսկ մյուսը դեպի Պարսկական Հայաստան։ Կա-
վատն այլևս չէր կարողանում կանգնեցնել այդ արշավանքները, որովհետև
նրա պետության հյուսիսային մասերին սպառնում էին հոներն իրենց ար-
շավանքներով։ Այդ պատճառով էլ հոռոմները հաղթություններ էին վաստա-
կում և նրանց անունը, որ Ամիդի անկումով կոտրվել էր Արևմտյան
Ասիայում, նորից ստանում էր իր նախկին հմայքը։

Մեզ համար հետաքրքրականը պիտի լինի բյուզանդական այն բա-
նակը, որ արշավեց պարսկական Հայաստան։ Բայց տեղեկություններ նրա
մասին մենք չունենք։ Անկասկած է թվում, սակայն, որ նա մնաց Հայաս-
տանում մինչև 506 թվի ամառը, երբ պատերազմող երկու կողմերը հաշ-
տություն կնքեցին։ Այսպիսով Հայաստանի պարսկական մասը մոտավորա-
պես երկու տարի ազատ մնաց սասանյան տիրապետությունից, ենթարկ-
ված մնալով բյուզանդական տիրապետության։ Ենթադրվում է, որ Վահան
Մամիկոնյանը պիտի վախճանված լինի հենց այս ժամանակ։ Եվ շատ հա-
վանական է, որ հոռոմները Հայաստանի կառավարությունը հանձնեցին
նրա եղբայր Վարդին, տալով նրան պատրիկի աստիճան[1]։

506 թվի դաշնադրությամբ վերահաստատվում էր նախկին դրությու-
նը, ասել է՝ Հայաստանի պարսկական մասը դարձյալ վերադարձվում էր
Պարսկաստանին։ Երևի այդ դաշնադրական համաձայնության հետևանքով
էր, որ պարսից կառավարությունը Վարդ Մամիկոնյանին մարզպան նշա-

---

[1] Կարապետ Ծ. վարդապետ, «Հայ. եկեղ. պատմ.», եր. 164։

նակեց իր տիրապետության տակ անցած Հայաստանի վրա։ Ուրիշ կերպ անհասկանալի պիտի մնա այս հանգամանքը, քանի որ Վարդը հոռոմների կողմն էր, հայկական գնդով մասնակցել էր Ամիդի բերդապահ զորքի պատերազմական գործողություններին, որոնք մղվում էին Կավատի դեմ՝ բերդը պաշտպանելու համար, իսկ հետո դարձել էր հոռոմների պատրիկ։

Եվ այսպես ահա, պատմությունը, տարաբախտաբար, Վահան Մամիկոնյանի մասին շատ աղքատիկ տեղեկություններ է պահել, և նրա կյանքի երկրորդ մասը, որ սկսվում է մարզպանությունից, ամբողջովին ստվերի մեջ է մնացել։ Մինչդեռ այս նշանավոր գործիչը ամենայն իրավունքով արժանի էր, որ նրա կյանքի այդ երկրորդ մասն էլ ընդարձակ լուսաբանություններով հասներ ապագա սերունդներին, ինչպես հասել է առաջին մասը՝ շնորհիվ Ղազար Փարպեցու։ Բացի զինվորական և վարչական ընդունակ, եռանդուն և պայքարող գործիչ լինելուց՝ Վահան Մամիկոնյանը եղել է և մի շինարար ուժ։ Նա էր, որ շինեց Վաղարշապատի (էջմիածնի) կաթողիկեն, որ, ինչպես երևում է, Մամիկոնյանների տոհմային սեփականության նման մի բան էր։ Քանդելով հին շինությունը, հայոց մարզպանը նոր գեղեցիկ շինություն կառուցեց, որի հատակագիծն այսօր էլ ներկայացնում է էջմիածնի տաճարը։ Առհասարակ Վահանի ժամանակը հայ եկեղեցական ճարտարապետության, մինչև այժմ ծանոթ նյութերին նայելով, հնագույն ժամանակն է ներկայացնում, որի մասին կխոսենք իր տեղում։ Վահանի հետ աշխատակից և աջակից էր Հովհան կաթողիկոս Մանդակունին։ Այս շրջանի գործ է Տեկորի եկեղեցին, որ մինչև 1912 թվականը միակ կանգուն և ամբողջ մնացած հիշատակարանն էր ամենահին ժամանակներից, բայց, տարաբախտաբար, կործանվեց։ Այս տաճարի արևմտյան դռան ճակատին կարդացվում է հետևյալ արձանագրությունը, որ հնագույնն է հայերեն տառերով գրված բոլոր հիշատակարանների մեջ[1]. «Ուրանայ և Հառա... (ե)պիսկոպոսի և Տ...յլոնի Տեկորոյ վանաց երիցու և Մանանայ հազարապետի հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յովհաննու Հայոց կաթողիկոսի և Յովհաննու Արշարունեաց յիւր բարեխաւսութիւն և բոլոր ազգիս և ամուսնի և որդեկաց և սիրելեաց Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի»[2]։ Այստեղ հիշատակված Հովհան կաթողիկոսը Մանդակունին է[3], իսկ Սահակ Կամսարականը՝ Արշավիր Կամսարականի որդին և Ներսեհ ու Հրահատ Կամսարականների եղբայրը։

7. Ոսկեդարի վերջալույսը։ Բայց Վահան Մամիկոնյանի մարզպանության գլխավոր զարդն այն էր, որ նրա ժամանակ մեր գրական ոսկեդարը վերակենդանության նշաններ է ցույց տալիս՝ վերջնականապես մարելու համար։ Հինգերորդ դարի երկրորդ կեսի գրականությունը հարուստ չէ, բայց ընտիր և ճաշակավոր է, միանգամայն արժանի թարգմանիչների գրականության։ Գործիչների թվին է պատկանում Ղևոնդյան քահանաների հետ Պարսկաստան աքսորված Աբրահամ քահանան, որի կատարած դերն աքսորված հայ նախարարներին օգնելու և պահպանելու գործում մենք նկարագրեցինք իր տեղում։ Աքսորավայրում այս քահանան, որ իր կրած տանջանքների համար ստացել է Խոստովանող անունը, թարգմանեց[1] գեղեցիկ ոսկեդարյան լեզվով մի սիրիական վկայաբանություն, որի մեջ պատմված լին Շապուհ Բ-ի հարուցած հալածանքները Պարսկաստանի քրիստոնյա եկեղեցու դեմ։ Այդ գործի հեղինակն էր Մարութա անունով Սիրիացի եպիսկոպոսը, իսկ հայերեն թարգմանության վերնագիրն է «Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի»[2]։

Ավելի խոշոր գրական դեմք ներկայացնում է Հովհան Մանդակունի կաթողիկոսը, որ, ինչպես երևում է, օժտված էր մի շատ բեղմնավոր գրչով[3]։ Բայց Մանդակունին զուտ եկեղեցական հարցերով է զբաղվել և մեծ ծառայություն է մատուցել եկեղեցուն, խմբագրելով նրա համար ծիսական կարգեր։ Այսպես նրանն են համարում Մաշտոց անունով հայտնի ծիսարանի այն բաժինները, որոնք վերաբերվում են մկրտության, պսակի և այլ խորհուրդների արարողություններին։ Նրան են վերագրվում և մի քանի հատ շարականներ։ Իսկ ուրիշ բազմաթիվ գրվածքների մեջ նշանակելի է մանավանդ այն գեղեցիկ ճառը, որով նա, ինչպես տեսանք, ողջունեց Մանդակունին եկեղեցում Վահան Մամիկոնյանի մարզպանությունը[4]։ Դվինի նուն են վերագրվում և զանազան բովանդակությամբ ճառեր, թվով մինչև երեսուն[5]։ Բայց դրանցից շատերի վավերականությունը չափազանց կասկածելի է։ Այդ ճառերի մի մասը, ինչպես կտեսնենք հետո, 7-րդ դարի եկեղեցական գործիչ և մատենագիր Հովհան Մայրագոմեցուն է պատկանում։

Սակայն 5-րդ դարը, դրա հետ և հայոց գրական Ոսկեդարը փակող վերջալույսն էր մեզ քաջածանոթ Ղազար Փարպեցին։ Նա իրեն անմահացրել է երկու գրական գործով, ամենագլխավորն է նրա «Պատմութիւն Հայոց»-ը[6], որ իսկապես պատմական մի մենագրություն է, նվիրված գերազանցորեն Մամիկոնյան տոհմին, բայց որ, այնուամենայնիվ, միակ արժանահավատ և լավատեղյակ աղբյուրն է մեր 5-րդ հուշակավոր դարի պատմությունը լուսաբանելու համար։ Այս գործի համեմատությամբ երկրորդական և մասնավոր նշանակություն ունի Ղազարից մնացած երկրորդ գրական աշխատությունը, մի ընդարձակ նամակ, որ նա գրել է Վահան Մամիկոնյանին Ամիդ քաղաքից[7]։

Ղազարի ծննդյան տեղը ցույց է տալիս նրա «Փարպեցի» մականունը։ Դա Փարպի գյուղն է Արարատյան նահանգի Արագածոտն գավառում, որ մտնում է Արաքսի ավազանի մեջ։ Այսպիսով, Ղազարը երկրորդ մեծ դեմքն էր, Եղնիկ Կողբացուց հետո, որ Արարատյան աշխարհը տալիս էր հայոց գրականության։ Հավանական ենթադրություններով կարելի է ընդունել, որ Ղազարը ծնվել է 440—443 թվականների մեջ[8]։ Տեղեկություններ նրա ծագման և ծնողների մասին մենք չունենք, բայց նրա կյանքի

---

[1] Գալուստ Տեր-Մկրտչյան, «Անանիա Շիրակացի», Վաղարշ., 1896, էր. 17։

[2] Հ. Ալիշան, «Շիրակ», Վեն., 1881, էր. 132 (Համտ. Թ. Թորամանյան, «Տեկորի տաճարը», Թիֆլիս, 1911, էր. 4)։

[3] Կարապետ ծ. վարդ., «Հայ. եկ. պատմութ.», էր. 182։

[1] Բարգէն ծ. վ. Կյուլեսերեան, «Եղիշէ», Վիեննա, 1909, էր. 140։

[2] Տպված է Վենետիկում 1854 թվին («Սոփերք Հայկականք», հատ. Ի)։

[3] Հ. Բ. Սարգիսյան, «Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ և իր երկասիրութեանց վրայ», Վենետիկ, 1895, գլ. Բ։

[4] Ղազար Փարպեցի, Գ, Ճ։

[5] «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք», Վենետ., 1836, 1860։

[5] Առաջին անգամ տպագրվել է Վենետիկում 1793 թվին։

[7] Առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում 1853 թվին «Ղազար Փարպեցւոյ Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնէից» վերնագրով։

[8] Գրիգոր Խալաթեան, «Ղազար Փարպեցի և գործք նորին», Մոսկվա, 1883, էր. 7։

մի քանի հանգամանքները ցույց են տալիս, որ նա բարեկամություն ուներ Մամիկոնյան և Կամսարական տոհմերի հետ։ Այդ հանգամանքներից առաջինն է նրա սկզբնական դաստիարակությունը։ Մենք արդեն տեսանք նրան Գուգարքի Ցուրտավ քաղաքում, Աշուշա բդեշխի տանը, ուր նա Վահան Մամիկոնյանի, նրա եղբայրների և Կամսարական եղբայրների սննդակիցն ու խաղակիցն էր, ինչպես ինքն է ասում, դաստիարակվելով նրանց հետ միասին Ձվիկ տիկնոջ և նրա քույր Անուշվռամ տիկնոջ խնամքներով։ Որ Ղազարի և Մամիկոնյան իշխանազունների մեջ, այնուամենայնիվ, գոյություն ուներ ընկերական դիրքի և ծագման առաջացրած խտրություն, երևում է այն հանգամանքից, որ Ղազարը թեև տարիքով մեծ էր Վահանից, բայց խաղերի մեջ տանում էր նրա ետևից նրա վերարկուն։ Անշո՛ւշտ, Ղազարն էլ մասնակցում էր Վահանի այնքան սիրած որսորդական արշավանքներին, որոնք նկարագրված են նրա Պատմության մեջ գեղեցիկ մանրամասնություններով։

Հայտնի չէ, թե ո՛րքան ժամանակ Ղազարը մնաց Ցուրտավում։ Բայց ինչպես երևում է, հենց այստեղ էլ, Աշուշայի ոստանում, որոշվեց Փարպեցի պատանու ապագա վիճակը։ Այստեղից նա գնաց Գողթն գավառը, ուր մի հռչակավոր վանքում ապրում էր Աղան եպիսկոպոս Արծրունին, որ Սահակ-Մաշտոցյան դպրոցի աշակերտներից էր և Ձվիկ ու Անուշվռամ տիկինների եղբայրը և, անշուշտ, նաև ուսուցիչը։ Միաժամանակ ուսում առնելով նրանից, Ղազարն ի վերջո նրա ձեռքով հոգևորական ձեռնադրվեց։ Այնուհետև նա գնում է Հոռոմստան (Բյուզանդիա, անշուշտ մայրաքաղաքը), ուր հմտանում է հունարեն լեզվի և քրիստոնեական գիտության մեջ։ Հայաստան վերադառնում է այն ժամանակ, երբ Վահան Մամիկոնյանը նոր էր Նվարսակի պայմանագրությամբ ձեռք բերել խաղաղության ժամանակամիջոց իր երկրի համար։ Բայց որովհետև դեռ բոլորովին չէր վերահաստատվել խաղաղությունը, Ղազարը միաժամանակ մնաց Կամսարականների տանը, Շիրակում։ Ապա հետևելով ժամանակի սովորության, նա իրեն նվիրեց ճգնավորական կյանքին և անցնելով Սյունյաց աշխարհը, մի ամբողջ ձմեռ ճգնեց մի այրի մեջ, իսկ ամառը, սաստիկ տոթի պատճառով Սյունյաց Մուշե եպիսկոպոսի հետ հովոց-սար (ամառանոց) գնաց։ Այդ միջոցին Վահան Մամիկոնյանն սկսել էր իր բարեկարգությունների ու շինարարությունը, առաջին հոգսը դարձնելով Վաղարշապատի հռչակավոր կաթողիկեի և վանքի վերաշինությունը։ Եվ երբ հարկավոր եղավ այս հիմնարկության համար մի վերատեսուչ («հոգաբարձու») գտնելու մասին մտածել, Վահանը հիշեց իր խաղընկեր Ղազարին և բերել տալով նրան Սյունիքից, հանձնեց նրան իր տոհմային սրբավայրի կառավարությունը։ Այստեղ Ղազարը չկարողացավ երկար մնալ։ Նրա պաշտոնը, ինչպես երևում է, շատ արդյունավոր և պատվավոր էր, ուստի նախանձորդների մի ամբողջ խումբ կազմվեց նրա դեմ, այդ պաշտոնը նրա ձեռքից խլելու համար։ Բայց քանի կենդանի էր Հովհան Մանդակունին, այդ հակառակությունը չկարողացավ վնասել Փարպեցուն։ Դրությունը փոխվեց, երբ Մանդակունուն հաջորդեց Բաբգեն կաթողիկոսը[1], որ պատկանում էր ազգային

[1] Ժամանակագրական հաստատ տեղեկություններ տալ այս դեպքերի վերաբերմամբ անհնարին է։ Որոշ ցուցմունքներ չեն մնացել, իսկ զանազան հաշիվների վրա հիմնված թվանշանները հակասում են իրար։ Այսպես, ոմանք հաշվում են, թե Մանդակունին վախճանվել է 490 թվին, իսկ ոմանք՝ 498—499-ին։

պահպանողական կուսակցության։ Հայ հոգևորականները կամ ինչպես անվանում է Ղազարը՝ «Հայոց աբեղէնք», հալածանքներ սկսեցին առհասարակ իրենց այն դասակիցների դեմ, որոնք հունական կրթություն էին ստացել և ներկայացնում էին երկրի առաջադեմ, գիտությամբ օժտված տարրը։ Ղազարն իր նամակի մեջ հիշատակում է հալածվողներից մի քանիսին, և մենք տեսնում ենք, որ հայոց աբեղաների ֆանատիկոսական կատաղությունն այն աստիճանին է հասնում, որ հալածվողներից մեկին, որի անունն էր Մովսես փիլիսոփոս, թունավորելով սպանում են, իսկ մյուսի (անունը հայտնի չէ) ոսկորները գերեզմանից հանել տալով, գետը թափեցին։ Շահապիվանի ժողովն արդեն մեզ ցույց տվեց, թե ի՛նչ դաժան անգթությունների էր հասնում հայ եկեղեցականությունը՝ մտքի ազատությունը խեղդելու համար։ Այդ ծայրահեղ հալածանքները 5-րդ դարի վերջերում ուղղվեցին այն մարդկանց դեմ, որոնք հայ մտքի զարդն էին կազմում, այն է՝ թարգմանիչների դեմ։ Այսպես, Խոսրովիկ անունով մեկին «Հայոց աբեղէնքը» նույնիսկ չթողեցին մտնել Հայաստանի սահմանները, երբ նա գալիս էր Արևմուտքից։

Թեև Փարպեցին բացորոշ կերպով չի պարզում հալածանքի հիմնական պատճառը, բայց նրա նամակը մեզ հիմք է տալիս ասելու, որ եթե հալածանքն անողոք էր և կատաղի, պատճառն առաջ ու առաջ այն էր, որ նրա մեջ խոսում էր կրոնական անհամբերությունը։ Հունական դաստիարակություն ստացած հայերը չէին կարող չլինել հունական օրթոդոքսության հետևողներ։ Ղազարի համար ուղղափառ եկեղեցուց վտարված աղանդավոր էր ոչ միայն Նեստորը, որ հենց այդպես էլ ճանաչվում էր Հայաստանում, այլև Եվտիքեսը[1]։ Ահա այս բանը չէր կարող հանդուրժելի լինել հայոց միաբնյա ուղղափառության համար։ Ուրիշ խոսքով՝ Ղազարը հալածվում էր իբրև քաղկեդոնիկ հայ։ Եվ այսպիսի հալածանք կարող էր հարմար գալ միայն Բաբգեն կաթողիկոսի ժամանակին, երբ Հայաստանում արդեն կազմակերպվում էր միաբնյա, հակաքաղկեդոնական հոսանք։ Եվ Ղազարն ստիպված եղավ փախչել Հայաստանից։ Վահան մարզպանը, ինչպես երևում է, չկարողացավ պաշտպանել իր վաղեմի ընկերակցին, որ հայտարարված էր անուղղափառ։ Հայ աբեղաները նույնիսկ խլեցին Ղազարից նրա հունարեն գրքերը։ Հալածական հունասերը գնաց Ամիդ քաղաքը, որտեղից և գրեց իր հռչակավոր նամակը Վահան Մամիկոնյանին։ Այս նամակն ունի մի առաջաբան, որ գրված է մի անհայտ օտարի, գուցե հենց նրա աշակերտներից մեկի ձեռքով։ Այստեղից իմանում ենք, որ այդ նամակը Վահանին տանողը Մամիկոնյան մի սեպուհ էր, Համազասպ անունով, որ և պատճառ դարձավ, որպեսզի մարզպանը իր մանկության ընկերոջը վերադարձնի օտարությունից։ Այս բավական չէ։ Վահանը վերադարձած Ղազարին հանձնարարեց գրել Հայոց պատմություն։ Եվ Փարպեցին այդ «հրամանը» կատարելով է, որ հայոց գրականության տվեց նրա դասական ամենաշքեղ զարդերից մեկը, իր «Պատմություն»-ը։ Եթե Վահան Մամիկոնյանն ուրիշ գործեր կատարած էլ չլիներ, բավական էր այս գրական մեկենասությունը, որ նրա անունն անմահանար հայոց գրականության պատմության մեջ։

Դիմելով Փարպեցու պատմագրական արժանիքներին, մենք ամենից առաջ պիտի կանգ առնենք լեզվական հարցի վրա։ Դա մի ընդհանրապես

[1] Փարպեցի, տպ. Թիֆլիսի, 1903, եր. 419։

պարզ ու վճիտ, կանոնավոր, արտահայտիչ լեզու է, հարուստ կենդանի դարձվածներով, թեև շատ տեղ էլ երկարաբան և խրթին։ Լեզվական կատարելությունները ամենից առաջ պարտական են Ղազարի ծննդավայրին և ապա միայն դաստիարակությանը։ Եթե ճիշտ է, որ հայոց գրաբար լեզուն ազնվական, բարձր դասակարգի լեզուն էր, բնական պիտի լիներ, ուրեմն, սպասել, որ այդ լեզուն առանձնապես բարձր զարգացման հասած լիներ Արարատյան աշխարհի այն մասում, որ Մասիսի և Արագածի մեջ է ամփոփված, որովհետև այդտեղ էին կենտրոնացած արքունի կալվածները և այդտեղ, հայոց մայրաքաղաքներում էր խմբվում ազնվականությունը, որ բարձր կուլտուրական արժեքների ներկայացուցիչն էր։ Հայ արքունիքը, անկասկած, հայ լեզվի մշակման կարող գործիք էլ էր։ Արարատյան լեզվի ամենաբարձր և ամենագեղեցիկ արտահայտիչը, ինչպես տեսանք, Եզնիկ Կողբացին էր։ Նրանից հետո խոշոր վարպետ հանդիսանում էր այս երկրորդ Արարատցին իր ինքնատիպ և ջղուտ լեզվով։ Հայոց պատմագրությունը նրա գրչի տակ զարգացման մի աստիճան է ցույց տալիս, որ բարձր է Ագաթանգեղոսի և Փավստոսի, ուրիշ խոսքով՝ Կորյունի համեմատությամբ։ Իսկապես Ղազարն է, որ մշակել է հատուկ լեզու հայկական պատմագրության համար։

Բայց մի գիծ, որ ամբողջացնում է Փարպեցու գրական դեմքի խոշոր ինքնուրույնությունը, այն վերաբերմունքն է, որ նա ցույց է տալիս դեպի իր հայրենի գավառը։ Արարատյան դաշտի խանդավառ-հիացական և իրոք շատ գեղեցիկ նկարագրությունը ներկայացնում է մեզ Ղազարին իբրև առաջին քաղցրախոս Արարատցի հայրենասերի, իբրև առաջինն այն հայ՝ իրենց ինքնուրույնությամբ աննման գրողներից, որոնք մտցրել են մեր գրականության մեջ մի վառ, հրաշունչ հայրենասիրություն, որ Արարատյան աշխարհի հետ է կապված և հենց այս պատճառով էլ արժանի է անվանվելու արարատյան հայրենասիրություն։ Այս կողմից Ղազար Փարպեցին հանդիսանում է մեր գրականության մեջ իրենց ինքնատիպ արարատյան հայրենասիրությամբ հռչակ ստացած մի շարք հեղինակների—Սիմեոն կաթողիկոս Երևանցու, Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի, Պերճ Պռոշյանի, Հովհաննես Հովհաննիսյանի նախահայր։

Իբրև պատմաբան՝ Փարպեցին ունի անաչառ պատմողի հակումներ և խառնվածք։ Բայց այս թանկագին հատկությունները խլացել են նրա վրա իշխած հանգամանքներից։ Նախ այն հանգամանքը, որ նա հոգևորական էր և հունասեր կուսակցության ներկայացուցիչ, ապա այն, որ նա գրում էր Մամիկոնյան տոհմի պատմությունը մի Մամիկոնյան իշխանի հանձնարարությամբ,— սրանք այնքան հզոր ազդակներ էին, որ Փարպեցին չէր կարող անաչառ և բազմակողմանի պատմագրող լինել մեծ չափերով։ Հինգերորդ դարի վերջերում կամ 6-րդի սկզբներում, երբ նա կատարում էր իր գրական գործը, Վարդանանց պատերազմի ժամանակներն արդեն անցել էին նվիրական ավանդությունների կարգը, որոնց փայլը բարձրացնելու համար արդեն ստեղծվել էին և մարտիրոսական վկայաբանություններ։ Ղազարի ներկայացրած սերնդի համար Վարդանը և մեծ ապստամբության մյուս գործիչներն արդեն սրբեր էին։ Եվ հասկանալի է, որ մի կրոնավորի վերաբերմունքը դեպի այդ սրբերն ու նրանց նահատակությունները կարող էր լինել բացառապես ջատագովական, բացառապես հիացական։ Այս է պատճառը, որ Վարդանանց շարժման նկարագրությունների մեջ մեր պատ-

մագիրը հաճախ դարձնում է իր արժեքավոր պատմագրությունը մի կատարյալ վկայաբանություն, որի ձգտումն է ճգնավորական գաղափար զարգացնել ընթերցողի մեջ, բացատրելով կյանքի երևույթներն այնպես, ինչպես հարկավոր է եկեղեցու հեղինակությունը միակ տիրապետական դարձնելու համար։ Գալով Վահան Մամիկոնյանի ժամանակին, այստեղ Փարպեցին թեև ժամանակակից է, գուցե և շատ բաների ականատես, բայց և այնպես՝ պիտի նույն միամիտ կողմնապահությունը ցույց տար իր այդ հերոսի վերաբերմամբ։ Այսպես պարտավորեցնում էին ոչ միայն վերև հիշած հանգամանքները, այլև գլխավորապես այն անձնական հարաբերությունները, որոնք մանկությունից կապել էին նրան Մամիկոնյան իշխանի հետ։

Բայց և այնպես, Ղազարի Պատմության մեջ պահված են թանկագին նյութեր, որոնք քննական հայացքի առջև բաց են անում և շատ իրական ճշմարտություններ։ Ճշմարտախոսության զգացմունքը Ղազարն ամեն տեղ չի կարողացել ճնշել միտումավոր նպատակների համար։ Թեև նա պայծառ ու վառվռուն գույներով ներկայացնում է մի կողմը միայն, հռոմականը, մինչդեռ մյուսը, հակառակորդ կողմը, պարսկականը, ամեն կերպով ստորացված է, միապաղաղ սև գույնով ներկված, բայց և այնպես, կա մի զսպանակ, որ մեր հեղինակին պահում է այդ ուղղությամբ չափազանցությունների մեջ ընկնելուց։ Այդ այն է, որ նա, այնուամենայնիվ, զգում է պատմագրողի պարտավորությունը և շատ անգամ անկեղծորեն, միամիտ սրտաբացությամբ այնպիսի փաստեր հաղորդում, որոնք թույլ են տալիս ավելի խորը թափանցել իրողությունների մեջ և գոնե մասամբ հասնել իրերի իսկական դրությանը։ Այս հատկությունն է, որ իրավունք է տվել մեր նորագույն քննադատներից մեկին, Միքայել Նալբանդյանին, համեմատել Ղազար Փարպեցուն հռոմեական հռչակավոր պատմագիր Տակիտոսի հետ։ «Փարպեցու Պատմությունը,— ասում է նա,— շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիտոսի հոյակապ տարեգրությանց, թե իր անախտակիր ոգու և թե ճարտարության մասին։ Եվ մեզ թվում է, թե այս համեմատությունը էր ամենամեծ գովասանությունը, որ կարող էինք տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»[1]։

Իր պատմությունը Ղազար Փարպեցին սկսում է համարյա այն տեղից, ուր վերջանում է Փավստոս Բյուզանդացու պատմագրությունը, այն է՝ 4-րդ դարի նախավերջին տասնամյակից, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (380 թ.) և հասցնում է, ինչպես տեսանք, մինչև Վահան Մամիկոնյանի մարզպանությունը։ Ամբողջ աշխատությունը բաժանված է երեք մասի կամ դրվագի։ Առաջին մասը բովանդակում է իր մեջ մոտավորապես 70 տարվա պատմություն (Հայաստանի բաժանումից մինչև Վարդանանց ժամանակը) և ամենից համառոտն է. երկրորդ դրվագը, որ առաջինից ընդարձակ է, Վարդանանց շարժումն է նկարագրում։ Այս երկու մասերից ընդարձակ է երրորդ դրվագը, որ Վահան Մամիկոնյանի շարժումն է նկարագրում։ Մեր հեղինակն իրեն համարում է երրորդը հայ պատմագիրների մեջ։ Առաջինը Ագաթանգեղոսն է, երկրորդը՝ Փավստոսը, երրորդը՝ ինքը։ Այս երեք աշխատություններով ամբողջացած էր հա-

[1] «Ղազար Փարպեցու գրած թուղթը», թարգման. Միք. Նալբանդյանի, Ս. Պետերբուրգ, 1868, էր. 37։

մարում հայոց պատմությունը, որի համար սկիզբ էր ընդունում քրիստոնեության մուտքը Հայաստան կամ Գրիգոր Լուսավորչի ժամանակը։ Նշանակո՞ւմ է այս, որ 5-րդ դարի լուսավորված հայությունը հասկացողություն չուներ հեթանոսական Հայաստանի մասին։ Մենք արդեն գիտենք, որ Սեբեոսի պատմագրության սկզբում դրված և Մարաբա Մծուրնացուն վերագրվող այն պատմությունը26, որ խոսում է հայոց ազգի սկզբնավորման, Հայկի և ազգային մյուս առասպելական հերոսների մասին, խմբագրված է համարվում 5-րդ դարում, Փավստոս Բյուզանդացու պատմագրության հետ միասին, գուցե միևնույն անձի, հավանականաբար Կորյունի ձեռքով։ Եթե այս ճիշտ է, այն ժամանակ մենք, դնելով այս աշխատությունն Ագաթանգեղոսի Պատմությունից առաջ, կստանանք չորս հատ պատմագրություն— Մարաբա, Ագաթանգեղոս, Փավստոս և Փարպեցի, որոնց գործերի մեջ պատկերացած էր հայոց պատմությունը հին ժամանակներից կամ ազգի սկզբնավորությունից մինչև 5-րդ դարի վերջերը։ Այս պատմագրական մատենաշարին պետք է կցել և Մաշտոցի կենսագրությունը, գրված Կորյունի ձեռքով։

Փարպեցու մյուս աշխատությունն էլ, «Թուղթ առ Վահան Տէրն Մամիկոնէից», որ, ինչպես տեսանք, «Պատմություն»-ից առաջ էր գրված, նույնպես մի կարևոր գրական վավերագիր է, շատ թանկագին՝ հայ մտքի պատմության համար։ Այդ առաջին բանավեճն է մեր գրականության մեջ և Ղազարի ոճն այստեղ մանավանդ փայլում է լրջությամբ և արժանապատվությամբ։ Առաջին հայ հեղինակն է Ղազարը, որ դառնապես գանգատվում է իր ճակատագրի վրա, որ ազդու շեշտերով և եռանդուն գունավորումներով պատմում է, թե ի՛նչ անողորմ հալածանքներ է հանում հայ կյանքն իր մտավոր առաջնորդների դեմ։ Փշոտ էր հայ գրականության ճանապարհը նույնիսկ նրա Ոսկեդարի մեջ։ Եվ ո՞վ գիտե, Ղազարի պես մի լավ կրթված հեղինակ արդյոք ավելի բեղմնավոր գրական գործունեություն չէ՞ր ցույց տա, եթե ստիպված չլիներ փախչել հայրենիքից՝ իր մտքի անկախությունը պահպանելու համար։

Գլուխ չորրորդ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 506 թվի ժողովը: Հայեր և վրացիներ: *506 թվին*, երբ պարսկական Հայաստանը գտնվում էր Բյուզանդիայի տիրապետության տակ և Վարդ Մամիկոնյանը, Վահան մարզպանի եղբայրը, կառավարում էր այդ երկիրը պատրիկի պաշտոնով, Դվին մայրաքաղաքում, Բաբգեն կաթողիկոսի հրավերով և ղեկավարությամբ, գումարվեց եկեղեցական ժողով՝ զանազան հարցեր քննելու և կարգավորելու համար։ Այս հարցերից մեկն էր, թե ինչ վերաբերմունք պետք է ցույց տալ դեպի Քաղկեդոնի ժողովը[1]։ Հայոց եկեղեցին առաջին անգամ էր կանգ առնում մի այսպիսի անհրաժեշտության առջև։ Եվ անշուշտ, լոկ իր սեփական կամքով և ցանկությամբ չէր նա հո-

[1] Երվանդ վ. Տեր-Մինասյան, «Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, եր. 72։

գացողության առարկա դարձնում այս խնդիրը։ Մենք տեսանք, որ հայությունն առհասարակ շատ թույլ մասնակցություն ուներ եկեղեցական մեծ վեճերի մեջ, տիեզերական մի ժողովում էր միայն, որ ունեցել էր իր ներկայացուցիչը, մյուս երկու ժողովների վճիռներին հպատակվել էր առանց այլևայլության։ Քաղկեդոնից հետո հիսունից ավելի տարիներ էին անցել, բայց հայոց եկեղեցին կատարյալ անտարբերություն էր ցույց տալիս նրա վերաբերմամբ, թեև նրա հետևանքով ամբողջ քրիստոնյա Արևմուտքն ալեկոծված դրության մեջ էր ապրում։ Այս առանձնացումն իր գոյությունը պարտական էր, անշուշտ, այն հանգամանքին, որ հայոց եկեղեցու կենտրոնական իշխանությունը, ինչպես նաև հայ հոգևորականության մեծամասնությունը գտնվում էին պարսից իշխանության տակ, որ չէր թույլ տալիս արևմտյան եկեղեցական, բայց մանավանդ քաղաքական իշխանություններին միջամտություններ անել, ճնշումներ գործ դնել հայ եկեղեցու ներքին գործերի մեջ։ Այժմ դրությունը քիչ փոխված էր հենց այն կողմից, որ Հայաստանի այս մասում հռոմների տիրապետության իրականությունն էր հաստատվել, ուր վեհապետը, Անաստաս կայսրը, խոր համոզված մի միաբնյա, շարունակում էր, Զենոնի նման, հովանավորել և խրախուսել հակաքաղկեդոնական շարժումը։ Այսպես վարվել թելադրում էր նրան մասնավորապես պետական իմաստությունը։ Անկարելի էր տարբեր հոգեբանություններով, տարբեր պատմություններով ազգերը միացնել մի տեսակ աշխարհայացքի, մի միակ ըմբռնումի մեջ, նույնիսկ բռնի միջոցներով։ Ուստի Անաստասն ազատություն էր տալիս, որ Քաղկեդոնի հակառակ վարդապետությունն էլ իր սկզբունքները պաշտպանի հրապարակային արտահայտությունների միջոցով։ Խոսում էին նույնիսկ մի նոր տիեզերական ժողով գումարելու և Քաղկեդոնի դավանությունը դատապարտելու մասին։ Իսկ մասնավոր ժողովներ, որոնք կազմվում էին զանազան տեղերում Զենոնի Հենոտիկոնին միանալու համար, շատ էին տեղի ունենում։ Հասկանալի է ուրեմն, որ Դվինի ժողովն էլ պիտի զբաղվեր նույն հարցով, գուցե հենց բյուզանդական իշխանություններից թելադրված։ Եվ հուզելով այդպիսի մի հարց, նույն ժողովը պիտի ընդուներ հակաքաղկեդոնական որոշում, թե՛ այն պատճառով, որ դրանով նա հավատարիմ կմնար իր հին դավանական սկզբունքներին և թե այն պատճառով, որ այդպես վարվելով, նա հաճելի դիրք կբռներ հռոմների կառավարության վերաբերմամբ։

Այսպիսով ահա՛ 506 թվին սկիզբ էր դրվում հայության համար մի ահավոր, ճակատագրական վեճի, որի մեջ, ժամանակին հանգամանքների բերմունքով, պիտի ամփոփվեր նրա ազգային ինքնորոշումը։ Բայց այս ժողովին մեծ հետաքրքրություն տվողը միայն այդ հանգամանքը չէր։ Կարևոր էր մանավանդ այն, որ նրան մասնակցում էին նաև Վրաց և Աղվանից կաթողիկոսները, մի երևույթ, որ առաջին անգամն է երևան գալիս քրիստոնեության մուտքից հետո և ցույց է տալիս, թե երկու դարի ընթացքում այս երեք հարևան ազգերն ի՛նչ խոշոր աշխատանք էին կատարել իրար մոտենալու, կուլտուրական կյանքի ընդհանուր պայմաններ ստեղծելու համար ընդհանուր ուժերով։ Տարաբախտաբար, այս վերին աստիճանի հետաքրքրական երևույթն ամբողջապես լուսաբանելու համար առատ նյութեր չեն մնացել։ Բայց պատմական եղելության թողած թույլ հետքերն էլ այսօր հնարավորություն են տալիս, առանց միակողմանիության մեջ ընկնելու վտանգի, ասել, որ քրիստոնեական աշխարհում այն հայ-վրացա-

կան-աղվանական միությունը մի ինքնուրույն անկյուն էր ներկայացնում, ուր մշակվում էին առանձնահատուկ պայմաններ և սկզբունքներ, որոնք երեք երկրների կուլտուրան էին ներկայացնում։

Այս միության մեջ առաջնության դերը, անշուշտ, պատկանում էր հայերին։ Վրաց եկեղեցին առժամյա, իսկ աղվանիցը՝ մշտական կախում ունեին հայոց եկեղեցուց վարչական կողմով։ Այս կախումը, ինչպես գիտենք[1], գալիս էր քրիստոնեության մուտքի օրերից և հիմնված էր Գրիգոր Լուսավորչի հեղինակության վրա, որ հավասարապես ճանաչվում էր կովկասյան քրիստոնյա ազգությունների կողմից իբրև ընդհանուրի առաջին առաքյալի հեղինակություն։ 6-րդ դարում վկայություններ կան, որ վրաց կաթողիկոսները ձեռնադրություն ստանում էին հայոց կաթողիկոսներից[2]։ Բայց վարչական առաջնությունը գլխավոր բանը չէ այն հարաբերությունների մեջ, որոնք գոյություն ունեին Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի միջև։ Գլխավորն այն էր, որ այդ երեք ազգերը մի ընդհանուր եկեղեցական կյանք ունեին և այս կյանքի մեջ Հայաստանը կատարում էր քրիստոնեական քաղաքակրթության միջնորդի դեր, աշակերտելով Արևմուտքին և իր յուրացրածը հաղորդելով իր հարևան և եղբայր ժողովուրդներին։ Նրանց չէր բաժանում խորթության զգացմունքը։ Մի ընդհանուր պաշտամունք, կրոնական մի աշխարհայացք—այս հզոր կապերն էին սերտորեն միացնում նրանց։ Հայ ուխտավորների կարավաններն անցնում էին վրացական սահմանը, գնում էին Մցխեթ՝ այնտեղի ազգային մեծ սրբության՝ Ս. Խաչին երկրպագելու համար։ Եվ փոխադարձաբար, վրացիների կարավաններն էլ անցնում էին հայոց սահմանը՝ հայկական ամենամեծ սրբավայրին, Վաղարշապատի կաթողիկեին ուխտ անելու համար[3]։ Ծեսերն ու սովորություններն էլ մեկ էին։ Այն ժամանակ վրաց եկեղեցին ընդունում էր մատաղի սովորությունը, պահում էր «Առաջաւորաց» ասված (Ս. Սարգսի) պասը[4], կարգեր, որոնք այսօր միայն հայոց եկեղեցու մեջ են մնացել։

Այս սերտ կապակցության, եղբայրական այս միության մեջ միանգամայն հասկանալի և բնական է դառնում այն, որ Մաշտոցը, հայոց այբուբենը կանոնավորելուց և հայ գրականության սկիզբ դնելուց հետո, գրեր է հնարում, ինչպես հավատացնում են հայկական աղբյուրները, նաև վրացիների և աղվանների27 համար։ Սակայն ազգային ինքնամփոփ լուսավորության այդ սերմերը հավասարապես պտղատու հողերի մեջ չընկան։ Վրացիներն անհամեմատ ընդունակ հանդիսացան ազգային գրականության ասպարեզում, քան աղվանները։ Ակադեմիկոս Մառի ուսումնասիրությունները բազմաթիվ փաստեր են տվել, որ վրաց հնագույն գրականության շատ հիշատակարաններ թարգմանված են հայերենից։ Հայաստանն այն միջավայրն էր, որ ընդունում էր իր արևմտյան հարևանների գրական գործերը և տալիս էր իր հյուսիսային հարևանին[5]։

[1] Տե՛ս Ա հատ.։

[2] Հ. Հ. Ակինյան, «Կյուրիոն կաթողիկոս Վրաց.», Վիեննա, 1910, եր. 11։

[3] «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, եր. 164, 171։

[4] Н. Марр, «Предварительный отчет о работах на Синае... 1902 г.», СПБ. 1903. стр. 12—13.

[5] Տե՛ս, օրինակ, Н. Марр, «Ипполит—Толкование Песни Песней», 2) Физиолог, Армяно-грузинский извод («Тексты и розыскания по армяно-грузинской филологии», СПБ, 1901—1904, кн. III, V).

Սակայն հայ-վրացական հարաբերությունների մեջ շուտով առաջացան սուր շփումներ, ինչպես սովորական է այսպիսի հանգամանքներում, ազգայնական ձգտումների բախումից։ Հայ լեզուն ձգտում էր տիրապետող հանդիսանալ Վրաստանի մի քանի կողմերում, հենվելով հայ եկեղեցու վարչական առաջնության իրավասության վրա։ Այդ ձգտման վրաց ազգայնականությունը հակադրեց իր իրավունքները, որոնք ձուլվում էին վրացական եկեղեցին ազգայնացնելու գաղափարի մեջ, որ և, ինչպես կտեսնենք, իրագործվեց 7-րդ դարի սկզբում, անջատելով վրացիներին հայերից և կրոնական նախապաշարմունքների թումբը բարձրացնելով երկու՝ այնքան իրար մոտեցած ազգերի միջև։

2. Հայեր և աղվաններ: Այսպես չէին հայ-աղվանական հարաբերությունները։ Աղվան ժողովուրդը դեռ նախաքրիստոնեական շրջանում, դեռ Արտաշեսյան տոհմի թագավորների ժամանակ, ենթարկված էր հայացման սաստիկ ազդեցության և չկարողացավ դիմանալ այդ ազդեցության, առաջ քաշելով իր ազգային ինքնուրույն կուլտուրական ուժերը[1]։ Քրիստոնեությունն ավելի ևս փութացրեց այդ ժողովրդի հայացումը, թեև Մաշտոցն իր աղվանական այբուբենով տալիս էր նրան ինքնապաշտպանության մի հզոր միջոց։ Աղվանական առանձին գրականություն և լուսավորություն առաջ չեկան։ Երկիրն ուներ իր թագավորությունը, իր կաթողիկոսությունը, բայց և այնպես ամբողջովին հայկական ազդեցության էր ենթարկված։ Հինգերորդ դարի վերջերում Աղվանքը կիսով միայն ազգային ինքնուրույնություն պահպանած մի երկիր էր. մյուս կեսով նա արդեն հայացած էր կամ հայանալու վրա էր։ Եվ որովհետև այդ հայացած ժողովուրդը չափազանց խոշոր և ինքնատիպ դեր է կատարել հայ ժողովրդի պատմական կյանքի մեջ, ուստի հայոց պատմությունը չի կարող անտես առնել նրա անցյալը, նրա հայրենիքը։

Աղվանից աշխարհը28, ինչպես մեզ արդեն հայտնի է այս աշխատության առաջին հատորից, տարածվում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային ստորոտներով, Ալազան գետից մինչև Կասպից ծովը, իսկ հարավում հասնում էր Արաքս գետին, ընդգրկելով Մուղանի ամբողջ դաշտը, և լեռնային այն նահանգները, որոնք հայկական տիրապետության ժամանակ հայտնի դարձան Արցախ և Ուտի անուններով։ Աղվանից երկիրը հայտնի է Ալբանիա անվան տակ Ստրաբոնին, որ ապրում էր 1-ին դարում (մ. թ. ա.) և առաջինն է, որ նկարագրել է այդ երկիրը մանրամասն կերպով[2]։ Նրանից մոտ չորս դար առաջ ապրած Հերոդոտին հայտնի չէ Ալբանիա (Աղվանք) աշխարհը, ոչ նույնիսկ այդ անունով մի ժողովուրդ։ Արևելյան Անդրկովկասը Դարեհի թագավորության ժամանակ կազմում էր պարսից պետության 18-րդ նահանգը (սատրապություն)։ Հերոդոտը, մանրամասն հիշատակելով, թե ի՛նչ ազգություններ էին ապրում պարսկական բոլոր նահանգներում, այս 18-րդ նահանգի մեջ հիշատակում է միմիայն Մոսխեն, Սասպեյր և Ալարոդ ժողովուրդները[3]։ Կարելի է, ուրեմն, ասել, որ հավանորեն Ալբանիա կամ Աղվանք անունով պետությունը կազմվեց Կուր գետի միջին և ստորին հովտում մի ժամանակամիջոցում, որ պետք է որո-

[1] Տե՛ս Ա հատորը։

[2] Géographie de Strabon, Paris, 1914, t. II, p. p. 406—411.

[3] Հերոդոտ, գիրք Գ, 94։

նել Հերոդոտի և Ստրաբոնի ապրած դարերի մեջ։ Այս այն ժամանակն էր, երբ Առաջավոր Ասիայի ազգագրական քարտեզը մեծամեծ փոփոխությունների էր ենթարկվում։ Վաղուց արդեն խորտակվել էր սեմական ցեղերի տիրապետությունը, դրա հետ թուլացել ու երկրորդական նշանակություն էր ստացել այն՝ նույնպես նշանավոր ուժը, որ երկար ժամանակ մաքառել էր սեմական լծի դեմ—հեթիթական կամ հաբեթական ցեղերի միությունը, որ տարածված էր Փոքր Ասիայից մինչև Կասպից ծովը։ Ասպարեզը պատկանում էր արիական ցեղերին, նորելուկ, եռանդով լի այդ ժողովուրդներին, որոնք ձուլում էին իրենց մեջ իրենց հանդիպած զանազան ազգագրական տարրերը, կազմում էին ազգություններ և այդ ազգությունների խառնուրդից կերտում էին մեծ պետություններ։ Այսպես էին Մարաստանը, Պարսկաստանը, Հունաստանը, Հռոմը։ Այս կերպով կազմակերպվեց և Հայաստանն իբրև քաղաքական մարմին։ Այդ շարժումների հետևանքով էր դարձյալ, որ հեթիթական շատ ցեղեր, առաջ մղվելով իրենց ետևից շարժվող արիացիներից, սեղմվեցին Կովկասի Մեծ շղթային ու Կասպից ծովին և այդ տեղերում ստացան այսօրվա «լեռնցի», «կովկասյան ազգեր» անունները։

Արիական շարժումների ազդեցությունից դուրս մնալ չէր կարող և այնպիսի մի բարեբեր, գրավիչ երկիր, որպիսին էր Կուրի ընդարձակ հովիտը՝ նրա միջին և ստորին հոսանքների վրա։ Այս կողմերն էլ խուժեցին վաչկատուն արիական ցեղերը և խառնվեցին տեղական ազգաբնակության հետ։ Պատմությունը պահել է այդպիսի մի ցեղի հիշատակը։ Դա Սակ կամ Շակ ցեղն է, որ մեր թվականությունից մոտ 7 դար առաջ արշավանքներ տարածեց Անդրկովկասում կիմմերացիների հետ և հաստատվեցին Կուրի հովտում, այն բարեբեր և արգավանդ հողի վրա, որ նրա անունով կոչվեց Շակաշեն (այժմ Գանձակ)։ Եվ անշուշտ, այս միակ դեպքը չէր, որ տարբեր ծագում ունեցող ցեղեր միախառնվում էին Կուրի հովտում մինչև Կասպիականի ափերը։ Եվ մենք տեսնում ենք, որ այսպիսի վիճակ ունեցած երկիրը վերջիվերջո, Ստրաբոնի ժամանակ, հայտնի էր քաղաքակիրթ մարդկության Ալբանիա անունով։ Այս անունը բացատրելու շատ փորձեր են եղել, սկսած ամենամիամիտներից[1]։ Բայց և այնպես, աղվան անունով ժողովուրդը եղել է և մնում է մի տեսակ առեղծված, հանելուկ։ Նրա մասին խոսող հին գրողները կարծես չեն տեսել նրան, այլ միայն լսել են, որ կա կամ, ավելի ճիշտ, եղել է այդպիսի մի ժողովուրդ։ Ավելի լավ դրության մեջ չէ հենց ինքը Ստրաբոնը։ Նա տալիս է նույնիսկ մանրապատում տեղեկություններ աղվան ժողովրդի մասին, բայց ուշադիր ընթերցողն իսկույն ըմբռնում է, որ այդ տեղեկություններով ավելի Աղվանք անունով մի երկիր է նկատվում իր առջև, քան աղվան անունով մի ժողովուրդ։ Այսպես է և Աղվանից երկրի միակ պատմիչ Մովսես Կաղանկայտվացին29, որ թեև ինքն էլ աղվան է, գրում է աղվանների պատմությունը, բայց բուն աղվան ժողովրդի ներկայությունը մենք ոչ մի տեղ չենք տեսնում։ Սակայն Աղվանից երկրի վերաբերմամբ կա մի դրություն, որ վերին աստիճանի բնական և իրական է։ Այդ այն է, որ հնագույն ժամանակներից այդ անծանոթ երկիրը բազմաթիվ ցեղերի և լեզուների մի խառնարան էր։ Ստրաբոնը պատմում է, թե Աղվանքում գոյություն ունեին քսանվեց լեզուներ, բայց, ան-

[1] Մեր ժամանակակից գիտությունը, հանձին ակադեմիկոս Մառի, ալբաններին նույնացնում է ալան ցեղի հետ։

շուշտ, հույն աշխարհագիրն այս թիվը նշանակելիս նկատի է ունեցել գլխավոր լեզուները։ Մենք հիմք ունենք կարծելու, որ Աղվանքի մեջ եղած բոլոր լեզուների թիվը անհամեմատ ավելի մեծ պիտի լիներ։ Այդ գլխավոր 26 ազգությունները, ասում է Ստրաբոնը, ունեին իրենց առանձին թագավորները։ Բայց մի պետություն կազմելու համար նրանք բոլորը պիտի ճանաչեին իրենցից մեկի գերիշխանությունը, և այսպիսով լրանում էր ավատական պետության պատկերը, որ հատուկ էր մանավանդ հեթիթական երկրներին։ Ահա այդ գերիշխողը, այդ գահերեցը կարող էր եղած լինել ցեղերից մեկը, որ կրում էր աղվան անունը։ Նա կարող էր շատ հզոր ու բազմամարդ եղած լինել. նա կարող էր ժամանակի ընթացքում վերածված լինել առանձին թագավորներին ավատական պարզ իշխանների կամ նախարարների աստիճանին և այս բոլորի հետևանքով կարող էր իր անունը տված լինել ամբողջ պետության, բայց և հետո թուլացած, ընկած և ցեղերի այդ մեծ խառնուրդի մեջ միանգամայն ձուլված։ Համենայն դեպս, Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ մենք չենք տեսնում բնիկ Աղվան իշխանություն և ցեղ, որ տիրապետող լիներ երկրի մեջ։

Արդ՝ հարց է, ի՞նչ ծագում ունեին այս բազմաթիվ ցեղերը։ Ջափազանց դժվար մի հարց։ Աղվանից հին և մեծ աշխարհը, Դերբենդից մինչև Ալազան և Կովկասյան շղթայից մինչև Արաքսի քարավազները Մեղրի մոտ, ամենից քիչ է ուսումնասիրված հնագիտական և ազգագրական տեսակետներից։ Սակայն եղած սակավաթիվ պրպտումները, ընդհանուր առմամբ, տանում են մեզ դեպի այն ժամանակները, երբ Հայկական Բարձրավանդակի վրա և հարևան երկրներում տիրում էր հեթիթական-հաբեթական ցեղախմբերի իրականությունը[1]։ Գիտության ձեռք բերած փաստերը թույլ են տալիս կարծելու, որ Աղվանից երկրի գոնե հարավային մասերը, որոնցից կազմվեցին հայկական Արցախ և Ուտի նահանգները, բնակեցված էին հավանականորեն այնպիսի ցեղերով, որոնք ազգակից էին Գուգարքից մինչև Վանա լճի ափերը տարածված ցեղերի հետ, ունենալով միևնույն ընդհանուր ծագումը, միևնույն ընդհանուր կուլտուրան, միևնույն լեզվական ընդհանուր կազմությունը։

Հին դարերի խավարից դուրս եկած այդ՝ դեռ աղոտ, դեռ կցկտուր ցուցմունքները մեզ համարձակորեն տանում են դեպի այն ենթադրությունը, թե Աղվանից պետության մեջ իր ստվար թվով և բռնած տարածությամբ առաջնակարգ տեղ գրաված ուներ Ուտի ցեղը, որի մնացորդներն այսօր էլ ապրում են Նուխու գավառում (Նիժ և Վարդաշեն գյուղեր) և որ պատկանում էր հեթիթական ցեղերի խմբին, ազգակցություն ունենալով Վանա լճի ափին հաստատված ուրարտացիների հետ։ Նույն այս հավանականությունը մեզ առաջ է տանում ասելու, թե միայն ուտիացիները չունեին այդ ծագումը, այլ նրանց հետ միասին ապրում էին և ուրիշ շատ փոքրաթիվ, ազգակից ցեղեր, որոնք և կազմում էին Ստրաբոնի հիշած դաշնակցական (ֆեդերատիվ) պետությունը։ Ուտիների կամ ուտիացիների հետ այդպիսի ազգակցություն ունեին և նրանց հարավային հարևանները—գարգարացիները, գարդմանացիները և այն բազմաթիվ մանր ցեղերը, որոնց անունները մնացել են միայն հին գավառների անուններ

[1] Մանրամասնությունները տե՛ս իմ «Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր Դպրոցի», Թիֆլիս, 1914, եր. 20—21։

մեջ, մասնավորապես Արցախի նահանգում։ Պատմության ունեցած տեղեկությունները Աղվանից երկրի միայն այս հարավային, համեմատաբար փոքրիկ անկյունին են վերաբերում, որովհետև Մովսես Կաղանկատվացին էլ հենց այս կողմն է ճանաչում Աղվանից աշխարհ, որի պատմությունն է տալիս։ Մնացած Աղվանքը, մանավանդ դաշտայինը, Մերձկասպյանը, ծածկված է անթափանցելի խավարով։ Ահա այդ փոքր ի շատե ծանոթ անկյունում էլ, այդ Ուտի-Արցախ լեռնաշխարհում, դարերից ի վեր կռում-կռփվում էին հայ-աղվանական հարաբերությունները, որոնց վերջիվերջո վիճակված էր հայացնել այդ երկու նահանգները։ Սկզբում, Արտաշեսյան հարստության ժամանակ, հայացման գործը, որ բխում էր նորակազմ հայկական պետության սրտից, այսինքն Արարատյան նահանգից, տարածվելով դեպի հյուսիս, իր համար մեծ ճանապարհ էր գտնում Սևանա լճի ուղղությամբ, որ Դիլիջանի կիրճով տանում էր դեպի Կուրի հովիտը։ Նույն լճի սահմաններում ճանապարհը ճյուղավորվում էր, և մի ճյուղ գնում էր դեպի արևելք, ուր կտրում էր Արցախ նահանգը Թարթառ գետի հովտի միջով, որ հասնում էր ուղղակի Կուրի տափարակը (Գարգարացոց դաշտը), ու՛ր գտնվում էր Աղվանից թագավորության հռչակված մայրաքաղաք Պարտավը (Ուտի-Առանձնակ անունով գավառում)[1]։ Այսպիսով պարզ է, որ հայ-աղվանական հարաբերությունների մեջ ամենագլխավոր դերը վիճակված պետք է լիներ Արցախին։ Այդպես են իրապես վկայում և մեզ հասած պատմական փաստերը։ Այս պատճառով էլ մենք պարտավոր ենք ուշադրություն դարձնել նրա վրա։

Արցախը կազմում է հարազատ և անբաժան մասն այն լեռնային աշխարհի, որ ամփոփում է իր մեջ Հայկական Բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան ծայրը, սահման ունենալով Կուրի հովիտը հյուսիսում և Արաքսինը՝ հարավում։ Ամբողջ այս տարածությունը, հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք, լցված է լեռնային բավիղներով, որոնք կազմվում են Փոքր Կովկասի զանազան ուղղություններով ձգված ճյուղերի խառնումով։ Արցախը գրավում է այս լեռնաշխարհի գրեթե կենտրոնական տեղը։ Նրանից հյուսիս Ուտի նահանգն է, իսկ հարավի և մասամբ արևմտյան կողմերից սահմանակից է Սյունիքին։ Արևելյան կողմից լեռնակույտերի այս մեծ աշխարհն իջնում է այն ընդարձակ տափաստանի վրա, որ կոչվում է Միլի կամ Ղարաբաղի տափարակ, իսկ արևմուտքում նրա պայմանական եզերագիծ կարելի է ընդունել Սևանա լիճը և նրա արևմտյան կողմի լեռները։ Վերջապես՝ հարավում մեր հիշած լեռնաշխարհը հասնում է Արաքսի հովտին, եզերվելով այս կողմից Բարգուշատի շղթայով։

Իր տեղագրական, լեռնագրական և բնական հանգամանքներով երկու նահանգներ պարունակող լեռնաշխարհը կազմում է մի աշխարհագրական ամբողջություն, որ իր հերթին ամբողջացնում է Հայկական Բարձրավանդակի ընդհանուր լեռնային տեսարանը նրա արևելյան և հյուսիսային մասերում։ Այդ տեսարանի ամենաբնորոշ հատկությունն այն է, որ Ուտի-Արցախ-Սյունիք լեռնաստանը ներկայացնում է մի հսկայական, միապաղաղ զանգված-միջնաբերդ, որի ճակատը դարձած է կուր-արաքսյան և մերձկասպիական անհուն տափաստանների դեմ, բնությունից կոչում ստացած լինելով պաշտպանել Հայկական Բարձրավանդակն այս տափարակների

[1] Տե՛ս Ա հատորը։

կողմից առաջացող շարժումների դեմ։ Հսկայական միջնաբերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային և հարավային ափերով Միջին Ասիայից տանում են կուր-արաքսյան արգավանդ տափաստանները։ Աշխարհագրական քարտեզը, պատմությունն իր բազմադարյան պնդումներով ապացուցում են, որ առանց այս մեծ լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այսինքն Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից։ Նա անմիջական շարունակությունն է այն հզոր պաշտպանողական պատվարի, որ ներկայացնում են լեռնային Տայքը, Գուգարքն ու նրանց հարակից երկրները Բարձր Հայքի և Արարատյան նահանգի մեջ։ Եվ այս է պատճառը, որ հայկական պետության հիմնադիրներ Արտաշեսն ու Տիգրանը Տայքի և Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մեջ մտցրին և Ուտին, Արցախն ու Սյունիքը։

Իբրև տնտեսական գործոն, Ուտի-Արցախ-Սյունիք լեռնաշխարհը միանգամայն առանձնացած և անջատ մի երկիր չէ, այլ ունի իր սահմաններից դուրս տարածված մի մեծ ու ընդարձակ միջավայր, որի հետ կապված է հարազատության և ներդաշնակության անքակտելի կապերով։ Այդ միջավայրը տարածվում է նրա արևմտյան կողմում, ուր Սևանա լճից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք ձգվում են Գուգարքի և Արագածի լեռնաշխարհի մեծամեծ բարձրությունները։ Այս բոլոր լեռնոտ տարածությունները կուր-արաքսյան տափարակներից մինչև Բարձր Հայքի արևմտյան սահմանները միանման են իրենց բնությամբ, որ ամեն տեղ գերազանցորեն միատեսակ տնտեսական երևույթ է հաստատել։ Ամեն տեղ հնարավոր է միայն ալպիական մշակույթը, որ և ստեղծում է միատեսակ տնտեսական ձևեր, ժողովրդական աշխատանքի, ժողովրդական հոգեբանության միատեսակ տեղային պայմաններ։

Բայց մեր նկարագրած աշխարհը, ինչպես և Հայկական Բարձավանդակի համարյա բոլոր լեռնակողմերը կապված են իրենց շրջապատող տափարակների հետ տնտեսական կյանքի մի քանի ուրույն պայմաններով։ Այդ տափարակներում տիրում էր գլխավորապես նախնական տնտեսական ձևը, որի մեծագույն արտահայտիչն է խաշնարածությունը։ Թափառիկ կյանք տրամադրող այդ տնտեսական ձևը չի կարող գոյություն ունենալ առանց լեռնային արոտների և ձմեռոցների։ Լեռնային արոտները թափառական խաշնարածությանը հայթայթում են Հայաստանի լեռները, և այդ պատճառով ամեն ամառ խաշնարած ցեղերը բարձրանում են իրենց տոթակեզ տափաստաններից լեռնային արոտատեղերը, իսկ ամառվա վերջերին վերադառնում են դարձյալ իրենց տափարակները։ Թափառական ցեղերի այս շարժումները մեծ չափերով կատարվում են Միջագետքից, Կուրի և Արաքսի հովիտներից և այլ բազմաթիվ ուղղություններով դեպի Հայոց լեռները և ետադարձ։ Արցախը, Սյունիքը, Ուտին և նրանց հարևան Գուգարքը հիմա էլ շատ կարևոր նշանակություն ունեն կուր-արաքսյան տափարակների համար։

Հին աղվանական կյանքից մնացել են մի քանի տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, թե ո՛րքան կարևոր նշանակություն ուներ մանավանդ Արցախը դաշտային Աղվանքի համար։ Անհյուրընկալ, անտառապատ և մշուշապատ են Արցախի լեռները։ Բայց ամառն այնտեղ էր փոխադրվում

Աղվանից ամբողջ դաշտն իր քաղաքներով ու գյուղերով, իր քաղաքակրթությամբ, իր իշխաններով ու հարուստներով։ Կաղանկատվացու մոտ մենք գտնում ենք հիշատակություններ, թե ե՛րբ և ի՛նչպես էին Պարտավ մայրաքաղաքի իշխանավորները սար բարձրանում և իջնում[1]։ Իսկ թե հասարակ, մանավանդ խաշնարած ժողովուրդն ի՛նչ բազմությամբ էր տեղափոխվում սարերը, երևում է նույն պատմիչի հաղորդած այն փաստից, որ մի ամառ (9-րդ դարի սկզբում) անձրևները գոյացրին սաստիկ հեղեղներ, որոնք Մեծիրանք գավառում ութ հարյուր վրան քշեցին թափեցին գետը[2]։ Եթե մի գավառի մի մասում այնքան վրաններ կային, որ նրանցից ջուրը քշում տանում էր ութ հարյուր հատ, հասկանալի է, թե ամբողջ Արցախի սարերը ծածկող թափառական վրաններն արդեն տասնյակ հազարներով պետք էր հաշվել։

Լեռնաստանի առանձնահատուկ պայմաններից մշակվում է շատ խիստ ընդգծված առանձնահատուկ տեղայնություն։ Արցախում այս հանգամանքն ավելի ևս ուժեղ արտահայտություն էր գտնում շնորհիվ այն դրության, որ այդ երկիրը միատեսակ ազգաբնակություն չուներ, այլ բաժանված էր առանձին ցեղային հատվածների միջև։ Արցախն ուներ 14 գավառ[3], որոնցից գոնե յոթի անունները—Վայկունիք, Մեծիրանք, Մեծկուանք, Հարջլանք, Մոխանք, Պիանք, Պարծկանք— ամենայն հավանականությամբ, ցեղերի անուններ էին։ Այս ենթադրությունը ոչ միայն բխում է ընդհանուր իրականությունից, որ նկատվում է և Հայաստանի շատ կողմերում, այլև հաստատուն կռվան է գտնում Կաղանկատվացու մի երկու հիշատակությունների մեջ։ Այսպես, մենք ունենք «Ի Մխանց տոհմին»[4], «աշխարհ Պարծկանց»[5]։ Իսկ Ուտիք նահանգում ապրող ցեղերից Արցախի սահմանակից էին գարդմանացիները (Սևանա լճի հյուսիս-արևելյան կողմերում, ուր Գարդման գավառն էր) և գարգարացիները (Ուտի-Առանձնակի մեջ, ուր Պարտավ մայրաքաղաքն էր)։ Այս բոլոր ցեղերը, անշուշտ, փոքրաթիվ էին և պատկանում էին միևնույն ընդհանուր ցեղական արմատին—հեթիթականին։ Այս ազգաբնակության քաղաքակրթական-բարոյական կերպարանքի մասին գեթ մի հեռավոր հասկացողություն կազմելու համար մենք պիտի աչքի առջև բերենք Ստրաբոնի մի նկարագրությունը, որ ընդհանրապես աղվաններին է վերաբերում։ «Ալբանիայի ազգաբնակությունը,— ասում է հռչակավոր աշխարհագիրը,— ունի ավելի հովվական սովորություններ, որոնք չհասնելով հանդերձ վաչկատուն ազգերի վայրենության, մոտենում են ավելի այդ տեսակ ազգերի բարքերին, և այս թույլ է տալիս ընդունելու, որ Ալբանիայի ազգաբնակությունը պիտի լինի պակաս պատերազմասեր... Մարդիկ աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ և բարձր հասակով։ Ավելացնենք, որ նրանք անկեղծ են, շատ սակավ են անազնիվ, որպես մարդիկ, որոնք իրենց ժամանակի մեծ մասում դրամ գործածելու սովորություն չունեն, որոնք հարյուրից ավել համրել չգիտեն և բավականանում են փոխանակելով իրենց մթերքները դրսից եկած ապրանքների հետ։ Կյանքի ուրիշ գործերի մեջ նրանք աչքի են ընկնում մի մեծ անփութությամբ, չունեն,

1 Մովսես Կաղանկատվացի, եր. 157։
2 Անդ, եր. 267։
3 Այս Հայ. Պատմ. Ա հատոր, եր. 185։
4 Կաղանկ., եր. 93։
5 Անդ, եր. 167 (տպ. Փարիզի)։

օրինակ, հասկացողություն ճիշտ չափի և կշռի մասին, կարճ ասած՝ վարում են իրենց պատերազմները, իրենց գործերը, իրենց մշակույթը մի կատարյալ անկանխատեսությամբ։ Այս, սակայն, չի խանգարում, որ նրանք ունենան կանոնավոր զորք, հետևակ և ձիավոր»[1]։

Վերին աստիճանի կարևոր կլիներ իմանալ, թե ի՛նչ տեսակ պաշտամունքներ ուներ այս խորհրդավոր ժողովուրդը և ի՛նչ տեսակ հասկացողություններ էր դնում նրանց մեջ, բայց, տարաբախտաբար, շատ չեն տեղեկությունններն այդ մասին։ Ստրաբոնի վկայությամբ՝ աղվանական գլխավոր աստվածներն էին Լուսինը և Արևը, ասել է թե՝ Աղվանքում էլ տիրում էր նույն պաշտամունքը, ինչ գոյություն ուներ ուրարտացիների մեջ։ Արևից շատ Լուսինն էր պաշտվում։ Նրա տաճարը գտնվում էր Վրաստանի սահմանների մոտ։ Թագավորից հետո առաջին մարդն էր քրմապետը, որի հրամանի տակ էր գտնվում ընդարձակ և բազմամարդ սրբազան նահանգը։ Նրան հպատակված քրմական դասակարգը նույնպես բազմամարդ էր։ Քըրմերից շատերը, մոլեգնության մեջ ընկնելով, մարգարեություններ են անում։ Եթե նրանցից մեկն ամենքից շատ է թափառում անտառների մեջ, նրան, քրմապետի հրամանով, բռնում էին և կապում սրբազան շղթաներով և մի ամբողջ տարի կերակրում առատ կերակուրներով. այնուհետև նրան օծում էին իբրև զոհի և զոհաբերում մյուս մատաղացու կենդանիների հետ։ Մարդազոհությունը կատարվում էր այսպես։ Այս գործը լավ գիտցողներից մեկը, սրբազան նիզակը ձեռքին դուրս էր գալիս մարդկանց խմբի միջից և նիզակը խրում էր զոհի կրծքի մեջ։ Քրմերը դիտում էին, թե ինչպես է ընկնում զոհը և նրա շարժումներով գուշակություններ էին անում։ Այս բանից հետո զոհի դիակը տեղափոխում էին մի հայտնի տեղ, ուր ամենքը կոխում են նրան իրենց ոտներով իբրև հաշտության նշան[2]։

Սակայն հույն աշխարհագրի այս նկարագրությունը մարդազոհության մի տեսակն էր միայն։ Մովսես Կաղանկատվացին լրացնում է այս պաշտամունքի ամբողջությունը մի շարք շատ հետաքրքրական մանրամասնություններով։ Նա մեծ սարսափով պատմում է, որ 5-րդ դարի վերջերում, Վաչագան թագավորի ժամանակ, դեռ գոյություն էին պահպանում բազմաթիվ գաղտնի աղանդներ, որոնցից հականե հանվանե հիշատակում է երեքը.— մատնահատների, թունավորող-կուրացնողների և պիտակ դարձնողների աղանդներ։ Որքան կարելի է հասկանալ մութ և կցկտուր նկարագրությունից, դրանք մնացորդներ էին միևնույն հին մեծ պաշտամունքի, որի ամբողջ բովանդակությունն էր սպանել կամ խեղել մարդուն ի հաճույս աստվածների։ Այսպես, մատնահատների աղանդը ծիսական մարդասպանությունը կատարում էր հետևյալ խորհրդավոր պայմանների մեջ։ Բռնվում էր մեկը սովորաբար պատանի հասակում, նրան տարածում էին գետնի վրա և նրա ձեռքերի ու ոտքերի չորս բութ մատները կապվում էին գետնի մեջ տնկած չորս ցիցերի։ Այսպիսով կաշկանդվածին չէին խոցում և չէին սպանում, այլ նախ ողջ-ողջ քերթում էին նրա կաշին որոշված ձևով։ Առաջ կտրում էին աջ թևի բթամատը և նրա հետ մի շերտ կաշի, որ քերթում էին կրծքի վրայով մինչև ձախ ձեռքի ճկույթը, որ նույնպես կտրվում էր։ Այսպես էին վարվում զոհի ոտների հետ էլ։ Հետո

1 Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. Դ. (t. II, p. p. 406 et. Suiv)։
2 Անդ։

նրան սպանում էին, իսկ կաշին «կազմելով» դնում էին սապատի մեջ։ Երբ գալիս էր ծիսակատարության ժամը, պատրաստում էին երկաթե ծալովի մի աթոռ, որի ոտները մարդու ոտների նմանություն ունեին, դնում էին նրա վրա գեղեցիկ զգեստներ։ Գալիս էր քրմապետը (ըստ մեր պատմիչի՝ դևը) և վերցնելով մարդու զենքը՝ դիտում էր քերթած կաշին, նրա հետ կտրված մասներով։ Մարդասպանությունը հաճախ կատարվում էր ավելի մեծ չափերով։ Քրմապետը հավաքված հավատացյալներին հրամայում էր բաժանվել երեք դասի և յուրաքանչյուր դասին—բռնել երեքական մարդ՝ մեր նկարագրած կերպով սպանելու համար։ Եվ եթե լինում էին դեպքեր, երբ հավատացյալները չէին կարողանում կատարել այդ հրամանը, այն ժամանակ քրմապետը կարգադրում էր քերթել ծառի կեղևը և եզ կամ ոչխար մորթելով՝ զոհաբերում էին նրան։ Այնուհետև քրմապետն սկսում էր ուտել և խմել քրմերի հետ։ Բերում էին սանձած ու թամբած ձի, քրմապետը նստում էր նրա վրա և այնքան քշում, մինչև որ նա հոգնած կանգնում էր։ Այնուհետև միայն «դևն» անհայտանում էր։

Քրիստոնեության մուտքից հետո մատնահատությունը կարող էր պահվել Աղվանից աշխարհի խուլ ու պինդ տեղերում, մանավանդ անտառների մեջ։ Վաչագան թագավորը բաց արավ այդ աղանդը Կուրի ափերը ծածկող անտառների մեջ։ Այդ թաքստոցներից էր, որ խորհրդավոր և սարսափելի պաշտամունքի երկրպագուները դուրս էին գալիս մարդ որսալու։ Թակարդ ընկնողները, իհարկե, ավելի թույլերն ու անկարողներն էին լինում, առավելապես երեխաներ։ Մատնահատության նման ծակամուտ ապրում էր և խեղդողների աղանդը։ Այդ համայնքի յուրաքանչյուր անդամ ամեն տարի մի մարդ պիտի խեղդամահ աներ և ցույց տար քրմապետին։ Եթե չկարողանար օտար մեկին գտնել, պարտավոր էր, քրմերի տանջանքներից ազատվելու համար, մահաբեր թույն խմեցնել իր ընտանիքի անդամներից մեկին։ Այսպես էին և կուրացնողներն ու պիտակ դարձնողները։ Վերջին աղանդի պաշտամունքն էր, անշուշտ, խեղանդամ դարձնել մարդկանց։

Այսպես էր աղվան ժողովուրդը։ Տնտեսական և ընկերական հետամնացության հետ նաև մտավոր հետամնացություն էր թագավորում Կուրի արգավանդ հովիտներում։ Իր հարստություններով շռայլ երկրի մեջ ապրում էր մի աղքատ ժողովուրդ, քանի որ նա կառչած էր տնտեսության նախնական ձևերին։ Ստրաբոնն իր տեղեկություններին ավելացնում է նաև այն, որ աղվանցին առհասարակ չափազանց շատ էր հարգում ծերությունը։ Նախնիքների պաշտամունքին այնքան էր նվիրված նա, որ մեռելի հետ թաղում էր գետնի տակ նրա ամբողջ հարստությունը։ Սերնդից սերունդ շարժական հարստություն ժառանգել չկար այս պատճառով։ Եվ ժողովուրդն աղքատ էր մնում, որովհետև սերունդների մթերած հարստությունների կուտակում չկար։ Այսպիսի մի ժողովրդի հետ էր շփվել սկսում հայ ժողովուրդը, որ և ցույց տվեց, թե իր համար դժվար չէ այդքան նախնական, թույլ ու անկազմակերպ մի երկիր իր հզոր ազդեցության ենթարկել և հայացնել։

Հայ գաղթականություն աղվանից աշխարհի մեջ առաջին անգամ հաստատվեց ամենայն հավանականությամբ նույն այն ժամանակ, երբ Արտաշեսյան հարստության գայիսոնի տակ Հայաստանը ոչ միայն ամրանում և միանում էր ներքուստ, այլև ուժեղ պետականացման գործ էր կատարում, դեպի ծայրագավառներն ուղղելով հայկական գաղթականություն-

ներ, որոնք պիտի տարածեին հայոց լեզուն իբրև քաղաքական միության շաղախ։ Ինչպես տեսանք, այն գլխավոր ճանապարհներից մեկը, որոնցով հայ պետական ուժի հետ գնում էր և հայկական կուլտուրան օտարախոս գավառները հայացնելու համար, անցնում էր դեպի հյուսիս՝ Սևանա լճի արևմտյան ափով դեպի Գուգարք և Ալազան գետի հովիտը[1]։ Այս ճանապարհին շատ մոտ է Ուտի-Արցախյան Գարդման գավառը, ուր և հավանաբար առաջին հայ գաղթականությունը կազմվեց։ Այդ առաջին կայանն էր Սևանա լճից Թարթառ գետի հովտով դեպի Աղվանից դաշտը տանող ճանապարհի վրա։ Գարդմանն էլ, անշուշտ, դարձավ հայկական տիրապետության և հայացման գործի միջնաբերդը։ Այստեղ հաստատված հայ նախարարությունը, որ եկել էր Հայաստանից, բերելով իր հետ և իր հպատակներին, անվանի էր հայոց նախարարական կազմի մեջ և գրավում էր առաջնակարգ տեղերից մեկը։ Այս երևում է այն կարևոր հանձնարարություններից, որ կատարում էին Գարդմանի իշխանները հայ Արշակունիների ժամանակ[2]։ Ազգային աղբյուրները, որոնցից օգտվել է Մովսես Խորենացին, ավանդում են, թե Առան անունով մի իշխան էր, որին հանձնվեց Աղվանից աշխարհից գրավված երկրների կառավարությունը[3]։ Խորենացին ցույց է տալիս և այն տեղերը, որոնք ենթարկվեցին Առանի իշխանության և թե ինչ ցեղեր ու տոհմեր առաջացան նրանից։ Այդ ցուցմունքները մեզ թույլ են տալիս ասելու, որ հենց նույն Գարդմանն էր այն տեղը, ուր նախնաբար հաստատվեց Առանի իշխանությունը։ Այս ենթադրությանն ուժ է տալիս և Աղվանից պատմիչը։ Նա ասում է, թե Առանից առաջացած հայկական իշխանական տոհմը կոչվում էր Առանշահիկ կամ Եռանշահիկ[4], իսկ այս տոհմի գործողությունները դարերի ընթացքում կենտրոնացած էին գլխավորապես Սևանից դեպի հյուսիս-արևելք և արևելք տարածված լեռնաշխարհում, որ պարունակում էր իր մեջ թե՛ Գարդմանը և թե՛ հարևան այն երկրները, որոնք հետո հայտնի դարձան Խաչեն անունով։

Եկվոր ժողովուրդն ուժեղ էր ոչ թե իր թվական կազմով, այլ իր կուլտուրական զարգացողությամբ, որ շատ բարձր էր տեղայինից։ Այս երևում է այն արհամարհոտ վերաբերմունքից, որ ունեին հայերը դեպի Աղվանից բնիկները և որի հետքերը մնացել են և մեր գրականության մեջ։ Այսպես, Կորյունն ամբողջ Աղվանից երկիրն անվանում է «վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ»։ Սյունյաց երկիրը նույն մատենագրին ներկայանում է իբրև «գազանամիտ», «վայրենագոյն, ճիւաղաբարոյ»[5]։ Ապահովապես նույն համբավն ուներ և Սյունիքի սահմանակից և ազգակից Արցախն էլ։ Իսկ Խորենացին գարգարացոց լեզուն անվանում է «կոկորդախօս աղխազուր, խժական, խեցբեկագոյն»[6]։ Եվ որ ամենից ուշագրավն է, Կաղանկատվացին էլ, հետևելով Խորենացուն, միևնույն ածականներն է

[1] Տե՛ս այս գործի Ա հատորը։

2 Այսպես, Փավստոս Բյուզանդացին, պատմելով, թե ովքեր էին Շահակ կաթողիկոսին Կեսարիա տանում ձեռնադրություն ստանալու համար, գրում է. «Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեան, որում անուն իւր Հայր կոչէր, և յաւագաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն և առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս» (Գ գլ., ժէ)։

[3] Խորենացի, Բ, լ։

[4] Կաղանկատվացի, եր. 287։

[5] Կորիւն, եր. 14, 19։

[6] Խորենացի, Գ, ծդ։

հաղորդակցվում գաղափարական լեզվին[1], որ գուցե հենց իր մայրենի լեզուն էր, բայց, ապահովապես, վաղուց գործածությունից վտարված։ Բնիկ ցեղերի կուլտուրական անկարողությունն էր պատճառ, որ հայացման գործն այնքան հաջողությամբ հաստատվեց Հայկական Բարձրավանդակի հյուսիսարևելյան լեռնագավառներում, այնպես որ, երբ Հայաստանը 381 թվի բաժանումով սաստիկ տկարացավ և կորցրեց իր ծայրագավառները, Արցախն և Ուտին թեև նորից անցան Աղվանից թագավորության, բայց այլևս կորած չէին հայության համար, քանի որ նրանց նվաճումը լոկ քաղաքական չէր եղել, արտաքուստ միայն, այլ մանավանդ կուլտուրական-ազգային։ Տեղային ազգաբնակությունն ու հայկական գաղութներն արդեն ձուլվում էին իրար հետ, ստեղծելով հայերեն և տեղական լեզուներից մի վերին աստիճանի ինքնահատուկ և կոռովի լեռնային բարբառ, որ հետըզհետե զարգանալով, դառնում էր ժողովրդական հոգեբանության ազդու արտահայտիչը։

Քրիստոնեությունն ավելի ևս ամրացրեց այդ շաղախը, որի մեջ կատարվում էր երկու կողմերի միաձուլումը։ Բայց վերջնական հաղթանակի տեր նա դարձավ միայն այն ժամանակից, երբ հայ ազգայնացած եկեղեցին իր նորաստեղծ գրականության և դպրոցի վրա հենված՝ կարող եղավ միսիոնարական գործունեություն ցույց տալ իր հարևան «անդարձման» և «վայրենագույն» երկրներում։ Աղվանից աշխարհի մեջ հայ եկեղեցին պաշտամունքների նվաճող ուժին միացնում էր այն պատկառանքն ու սքանչացումը, որ անգիր, մութ ժողովուրդը տածում է դեպի գիրը, դեպի դըպրությունը։ Այս մեծարանքների ապացույցն այն է, որ հայոց մեծ միսիոնար և վարժապետ Մաշտոցը բարձր սրբության հեղինակություն էր վայելում իր աշակերտների հետ Աղվանքում, ինչպես ցույց են տալիս Կաղանկատվացու արձանագրած նվիրական ավանդությունները։ Այս ավանդությունները մեզ հնարավորություն են տալիս որոշելու այն տարածությունների շրջագիծը, ուր գործում էր հայկական միսիոնարությունը, հենվելով հայ եկեղեցու հեղինակությամբ ստեղծված կռվանների վրա։ Այդ գծի արևելյան ծայրին մենք տեսնում ենք Աղվանից ամենամեծ սրբավայրը՝ Ամարասը, ուր գտնվում էր Գրիգոր Լուսավորչի թոռան՝ նահատակված Գրիգորիսի գերեզմանը։ Այդտեղից շրջագիծը գնում էր Դիզափայտի սրբավայրը, իր մեջ առնելով Ցոր քաղաքը։ Այս հարավային ծայրակետն էր։ Դիզափայտից Պանտալեոն բժշկի ուխտատեղու վրայով գիծն անցնում էր արևմուտք, ուր Մեծիրանից անտառաշատ գավառի (այժմյան Խաչենի) վանքերն էին և ուր գործունեություն էին հաստատել Մաշտոցն ու իր աշակերտները։ Այս կողմից էր, որ հայոց մեծ միսիոնարներն իջան Աղվանից դաշտը, անցան Կուր գետը և իրենց քարոզչական առաքելությունը տարան հասցրին մինչև Գիս ավանը[2], որ Աղվանից երկրորդ նշանավոր սրբավայրն էր հնուց, բայց որ ավելի ևս հռչակվեց այն ավանդությամբ, որ պատմում էր, թե իբրև թե Մաշտոցն այդտեղ է թողել այն հրաշագործ խաչը, որ ինքը որպես թե բերել էր Երուսաղեմից։ Գիսն արդեն հեռավոր հյուսիսային ծայրակետն էր մեր նկարագրած շրջագծի վրա։

Ահա այս մեծ շրջանի մեջ էր գործում հայկական ազդեցությունը։ Եվ

[1] Կաղանկատվացի, եր. 90։

[2] Այժմյան Նուխի քաղաքի մոտ։

նրա ուժն ավելանում էր նրանով, որ 5-րդ դարի երկրորդ կեսից նույն այդ շրջանի մեջ երևան էր գալիս և Պարտավ մայրաքաղաքը, ուր կենտրոնանում էր երկրի բարձր կառավարությունը։ Մովսես Կաղանկատվացին բերում է Աղվանից թագավորների անունները, որոնք իսկապես միայն անուններ են, առանց գործերի և ժամանակագրական տվյալների։ Այդ թագավորները որպես թե Արշակունի են ծագումով, բայց նրանցից ոչ մեկն էլ պարթևական անուն չունի։ Եթե Աղվանից պատմիչը գիտե որևէ բան իր հիշատակած թագավորների գործերից, այդ միայն այն է, որ նրանք հայեբի հետ են, հայերի համար են գործում, հայերից ղեկավարվում։ Այսպես, Ուռնայր թագավորը մկրտվում է Գրիգորիսից, Վաչեն, ինչպես տեսանք վերևում, ապստամբվում է Հազկերտի դեմ հատկապես այն պատճառով, որ նա Հայոց աշխարհի կորստյան համար է աշխատում և բանտարկած է պահում հայ նախարարներին։ Այս թագավորական հարստությունը վերջանում էր 6-րդ դարի սկզբում և նրա վերջին ներկայացուցիչն էր Վաչագան Երկրորդը կամ Բարեպաշտը, որ հավանորեն դեռ կենդանի էր Դվինի եկեղեցական ժողովի ժամանակ։

Տեղեկություններն առատանում են այս Վաչագանի ժամանակ, և մենք նրան տեսնում ենք երկիրը բարձրացնողի դերի մեջ, խաղաղ շինարար և մանավանդ սաստիկ եկեղեցասեր ու սրբերի նշխարների սիրահար, սաստկապես ենթարկված հայերի ազդեցության։ Թե ո՛րքան մեծ էր հայ եկեղեցու հեղինակությունն Աղվանից աշխարհում, ցույց է տալիս, ի միջի այլոց, և այն, որ Վաչագան Բարեպաշտը, կամենալով անսխալ բացատրություններ ստանալ իրեն հետաքրքրող եկեղեցական-աստվածաբանական զանազան հարցերի վերաբերմամբ, նամակներ էր ուղարկում Հայաստան, իրեն ծանոթ հոգևորականներին։ Այդպիսիներից մեկն էր Մամիկոնեից եպիսկոպոս Աբրահամը, որ Վաչագանի խնդրանքով գրեց Եփեսոսի տիեզերական ժողովի պատմությունը[1]։ Այս իսկ Վաչագանն էր, որ ջնջեց մատնահատների, խեղդողների, կուրացնողների աղանդները։ Բարեպաշտական այդ նպատակին նա հասավ ծայրահեղ խստությունների միջոցով։ Այսպես, բռնված աղանդավորներից իրենց պաշտամունքի մանրամասնություններն իմանալու համար նա ածել էր տալիս նրանց քթերի մեջ բարկ (թունդ) քացախ՝ բորակի հետ խառնած, այնպես որ նրանց աչքերը, ասում է պատմիչը, շրջվում էին։ Բայց այս տանջանքն էլ չէր բաց անում խորհրդավոր «դիւապաշտների» բերանը։ Ամենքը դատապարտված էին մահվան և միայն մի պատանի, որին թագավորը խոստացավ ազատ պահել պատժից, պատմեց ամեն ինչ։ Այսպիսով բացված էին ծիսական մարդասպանության որջերը, և Վաչագանը սուր ու հուր գործադրեց նրանց վերաբերմամբ։ Բայց բավական չհամարելով դաժանությունը՝ չարիքն արմատախիլ անելու համար շինարար թագավորը գյուղական դպրոցներ բաց արավ, հրամայեց դրանց մեջ դաստիարակել մանավանդ աղանդավորների երեխաներին։ Պատմիչը հավատացնում է, որ ինքը թագավորը գյուղերում այցելում էր դպրոցները, խմբում էր երեխաներին իր շուրջը, ինքն անձամբ դաս էր հարցնում[2]։

[1] «Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսն և իւր առ Վաչագան գրած թուղթ», Վենետիկ, 1899։

[2] Կաղանկատվացի (տպ. Փարիզի), եր. 141։

Այս սիրուն տեսարանը վկայում է, որ Վաչագանն իր ներքին քաղաքականության մեջ գիտեր զարգացնել դպրոցական գործն իբրև ամենալավ դաստիարակչական միջոց ժողովրդական զանգվածների համար։ Եվ եթե հարց դնենք, թե ի՞նչ տեսակ դպրոցներ էին դրանք և ո՞րն էր նրանց լեզուն, հազիվ թե կարողանանք որևէ բավարար պատասխան գտնել առանց հայ դպրոցը և հայերեն դասախոսությունը Աղվանքում հաստատված ընդունելու։ Այս տեսակ մի վճռի ճշտությունն ապահովում է հենց այդ ժամանակներից մնացած մի վավերագիր, որ հաստատում է, թե հայոց լեզուն էր գործածականը թե՛ արքունիքում, և թե՛ եկեղեցում։ Այս վավերագիրը հնագույն գրությունն է, որ պահվել է Աղվանից եկեղեցու սկզբնավորությունից ի վեր։ Կամենալով կանոնավորել եկեղեցականների և աշխարհականների հարաբերությունները, Վաչագան թագավորը և Շուփհաղիշա կաթողիկոսը եկեղեցական ժողով հրավիրեցին Արցախում, Աղվեն անունով «Հովոցի տեղում»[1], մայիս ամսին։ Ժողովին ներկա էին զանազան տեղերից եկած հոգևորականներ և Արցախի ազնվականներ։ Մշակվեցին քսան և մեկ կանոններ, որոնք արտագրված են Կաղանկատվացու Պատմության մեջ[2]։ Ուշի-ուշով կարդալով այդ գրությունը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Աղվանից հոգևորականությունն այդ ժամանակ, այն է՝ 5-րդ դարի վերջում կամ 6-րդ դարի սկզբում արդեն շատ գեղեցիկ կերպով յուրացրել էր հայերենը և գործ էր ածում այն իբրև սեփական մայրենի լեզու[3]։ Ահա, օրինակ, ինչպես էր սահմանվում պտղի տուրքը։ «Պտուղք ի ժողովրդենէ երիցուն՝ կարգն այս լիցի. Թուանիկն՝ չորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և վեշտասան փաս քաղցու. և որ տառապեալն է՝ զհացիդ կէսն տացէ և գինի՝ որչափ և կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի՛ տացեն։ Իսկ այնք՝ որ աւելի քան զայս տացեն սակս հոգւոց, բարի առնեն, որպէս Պօղոս ասէ, «Որ առատութեամբ սերմանէ՝ առատութեամբ հնձեսցէ»։ Եւ ոյր ոչխար է ի տան՝ ոչխար մի և երեք գզաթ բուրդ և մէկ պանիր. և ոյր ձիք ի տան իցեն՝ մին յովանակ. և ոյր պախրէք իցեն՝ որթ մի»[4]։

Աղվեն հովոցի կանոնները շատ հետաքրքրական են նաև այն կողմից, որ ցույց են տալիս Աղվանից եկեղեցու ժողովրդական կազմակերպության մի քանի տեղական հանգամանքները, որոնց վրա ապագայում ավելացան շատ ուրիշները և այդպիսով դարձան Աղվանից ինքնավար տեղային պաշտամունքի առանձնահատկությունները։ Այստեղ մենք տեսնում ենք բնական բերքերով հատուցվող տուրքերի սիստեմը, որ ցույց է տալիս նաև, թե ի՛նչպես էր նույն ժողովուրդը հարկ ու տուրք տալիս պետության։ Աղվանից եկեղեցին հարկ ստանում էր թե՛ արմտիքներով և թե՛ անասուններով—ձի, արջառ, ոչխար և այլն։ Նա պարտավորեցնում էր ամեն մեկին, լիներ դա ազատ թե շինական, որ տարին մի անգամ պատարագ մատուցանեն իրենց մեռելների համար և իրենց վաստակից բաժին հանեն այդ մեռելներին իրենց տնտեսության համեմատ, ինչպես կուզեն։ Հովիվ ու երկրագործ ժողովրդի եկեղեցին էլ, ուրեմն, ինչպես և արքունիքը, խոշոր հովիվ ու

[1] Այս հովոցն անշուշտ գտնվում էր Մռավ լեռան վրա, որ Պարտավի դիմացն է։

[2] Մ. Կաղանկատվացի, Ա, ԻԶ։

[3] Նույն հանգամանքն են ցույց տալիս և շատ հատուկ անուններ։ Այսպես, Վաչագանի ժամանակ կա Խոճկորիկ անունով մարդ Ցոր քաղաքում։ Հենց նույն Աղվենի ժողովին մասնակցում էր մի երեց՝ Ուրբաթ անունով։

[4] Կաղանկատ., Ա, ԻԶ, հմմ. Մոսկվայի տպագրությունը։

երկրագործ էր։ Եկեղեցական կարգերը, օրինակ՝ պասերը, պետք է պահպանվեին խստությամբ։ Արգելվում էին կնաթողությունը, կախարդներին դիմելը, մեռելներին հեթանոսաբար ողբալը։ Օրինազանցների համար սահմանվում էին պատիժներ։ Դատավորն ինքը ժողովուրդն էր իր երեցի հետ։ Հետաքրքրական է, որ երբ եկեղեցու քահանան որևէ հանցանք էր գործում, նրան դատում էր ժողովուրդը։ Եկեղեցու մեջ, սեղանի առջև կանգնում էր մեղադրյալ երեցը, իսկ ժողովուրդն իր տեղն էր կանգնում, և այսպես տեղի էին ունենում մեղադրանք ու պատասխան։ Եթե դատապարտվում էր քահանան, նրան անմիջապես հեռացնում էին եկեղեցուց, իսկ եթե մեղադրանքը չէր ապացուցվում, երեցն անիծում էր ժողովրդին և արձակում։ Պատիժները չափազանց խիստ էլ էին լինում։ Այսպես, մահվան պատժի էին ենթարկվում կնաթողները, անպսակ կին պահողները, վհուկներին դիմողները։ Այդպիսիններին ուղարկում էին թագավորի դուռը, որ բարձր դատաստանական հիմնարկությունն էր։ Նա էլ ի կատար էր ածում մահվան դատավճիռը։

Ժողովում եպիսկոպոսներն ու երեցները գանգատ արին թագավորին, թե ազնվականները եկեղեցիները վանք են դարձնում։ Այս ցույց է տալիս, թե Աղվանից երկրում այն ժամանակներն արդեն վանքերը կազմում էին աշխարհականների սեփականություն և նրանց համար արդյունքի աղբյուր էին, մի դրություն, որ գոյություն ուներ ընդհանուր եկեղեցու ծոցում և որ, ինչպես կտեսնենք իր տեղում, ավելի զարգանալ [սկսեց] Շիրակում 11—12-րդ դարերում։ Որ այս գանգատը հենց այդ դրությունն էր մատնանշում, ցույց է տալիս ժողովի վճիռը.— Թողնել վանք դարձրած եկեղեցիներն իրենց նախկին դրության մեջ, իսկ նրանցից ստացած արդյունքները հատկացնել գլխավոր եկեղեցուն։ Տեղական բարքերը բնորոշող մի վճիռ է այն, որ արգելում է մեռելոտի (լեշ) ուտել։ Իսկ թե ո՛րքան խտրություններ կային հասարակական խավերի միջև, վկայում է մի որոշում, որ վերաբերում է ծառաներին։ Կիրակի օրերը ծառաները տերերի հետ կարող էին գնալ գլխավոր եկեղեցին և միասին նվերներ անել եկեղեցուն։ Նշանակում է՝ շաբաթվա մյուս օրերին այդ բանն արգելված էր։

Այսպես էր ընդհանուր գծերով հայ-աղվանական հարաբերությունները 6-րդ դարի սկզբում, հարաբերություններ, որոնք հայ ազգայնական գաղափարի համար հաղթանակ էին, իսկ Աղվանից ինքնատիպ և խորհրդավոր ազգին բերում էին ապաազգայնացում և վերջնական ձուլման անխուսափելիությունը։ Մենք շուտով կտեսնենք, թե ինչպես օտար մի հզոր ազդեցություն, Սասանյանը, միջամուխ է լինում հայ-աղվանական հարաբերություններին, իր ամբողջ ուժն ուղղելով հայկական ազդեցության դեմ։

3. Պարսկական Հայաստանում: Վեցերորդ դարի համարյա ամբողջ երեք քառորդը անցնում է Պարսից Հայաստանում խաղաղ, առանց մեծամեծ շարժումների և ցնցումների։ Գոնե այս է թելադրում ազգային և արտաքին աղբյուրների լռությունն այդ ժամանակի վերաբերմամբ։ Փոքրիշատե լավատեղյակ պատմագիր 6-րդ դարի վերաբերմամբ պետք է համարվի Սեբեոս եպիսկոպոսը, որ ապրում էր 7-րդ դարում։ Բայց նա հազիվ մի քանի հիշատակություններ է անում հայոց կյանքի մասին մինչև 571 թվականը։ Եվ այն, ինչ մենք իմանում ենք թե՛ նրանից և թե՛ ժամանակով նրանից շատ հետագա պատմիչներից, մի քանի չոր ու ցամաք փաստեր են։

Ինչպես գիտենք, Կավատը 506 թվի հաշտությունից հետո, գուցե հենց այս հաշտության հետևանքով, Հայաստանի մարզպան նշանակեց Վահան Մամիկոնյանի եղբայր Վարդ պատրիկին։ Բայց Վարդը շատ քիչ ժամանակ վարեց այս պաշտոնը, ասում են՝ ընդամենը չորս տարի[1] և մեռավ[2]։ Նրանից հետո Պարսից արքունիքն սկսեց պարսիկ մարզպաններ ուղարկել Հայաստան, և այսպես շարունակվեց, եթե կարելի է հավատալ Ասողիկի Պատմած ժամանակագրության, 11 տարի։ Այս ժամանակ Հայաստանը զոհ դարձավ Հոների մի ահավոր արշավանքին, որ տարածվեց նաև հարևան աշխարհներում, մինչև Կապադովկիա։ Ամեն տեղ կոտորածներով և ավարառություններով էր շեշտվում այս աղետալի արշավանքը։ Պարսից իշխանությունն անկարող եղավ իր երկրները, դրանց հետ և Հայաստանը, պաշտպանել։ Գտնվեց մի հայ իշխան միայն, Մժեժ Գնունի, որ Սասունի կողմերում էր տիրում և մեծ արիություն ունեցավ դուրս գալու հյուսիսային ցեղի դեմ, միացնելով իր հետ և մի քանիսին իր դասակից հայ իշխաններից։ Հոները սաստիկ ջարդ կերան Մժեժից և փախան։ Հայաստանն ազատված էր։

Կավատը, վարձատրելով Մժեժի այս հերոսությունը, ետ կանչեց Հայաստանից պարսիկ մարզպանին և նրա տեղ նշանակեց հայ քաջին։ Այսպիսով՝ Հայոց աշխարհի բարձր կառավարությունը նորից անցնում էր հայ իշխաններին։ Մժեժ մարզպանին, բացի քաջությունից, վիճակված էր և երկարակեցության բախտը։ Նրա կառավարությունը տևեց, ինչպես ասում են, 30—33 տարի[3]։ Եվ այս երկար ժամանակամիջոցում, ինչպես կարելի է ենթադրել, Պարսկական Հայաստանը վայելում էր, ընդհանուր առմամբ, խաղաղություն։ Հայոց զորքերը, անկասկած, մասնակցում էին պարսիկների հետ այն պատերազմներին, որոնք մղվում էին Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, բայց Հայաստանի առանձին բախտն այն էր, որ նա երկար ժամանակ այդ պատերազմների թատերաբեմ չդարձավ և կարող էր իր ներքին գործերին նվիրվել։ Մենք այս գործերի մասին էլ առատ տեղեկություններ չունենք։ Նույնիսկ եկեղեցական ավանդությունը հազիվ պահել է Բաբգենին հաջորդած մի շարք կաթողիկոսների անուններ, առանց կարենալու մանրամասնություններ հաղորդել նրանց գործունեության մասին։

Իսկ եկեղեցական հոգսեր այդ միջոցին շատ կային։ 518 թվականին վախճանվեց Անաստաս կայսրը, և նրա հետ արմատապես փոփոխվեց և Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականությունը։ Անաստասին հաջորդեց համարյա անգրագետ Հուստինոսը, որ վերանորոգեց քաղկեդոնական օրթոդոքսության վեճերը և իրեն հայտարարեց այդ ուղղափառության կողմնակից։ Կրոնական շահերը չէին այդ վարմունքի դրդապատճառը, այլ քաղաքական մեծամիտ ձգտումները։ Հուստինոսի հետ էր նրա քեռորդի Հուստինիանոսը, որ ղեկավարում էր նրա քաղաքականությունը և վերջն էլ դարձավ նրա գահակիցը։ Այս շատ եռանդոտ, մեծ ընդունակություններով օժտված մարդը սնուցանում էր իր մեջ քաղաքական մեծամեծ ծրագրեր, որոնց մեջ գլխավորն էր վերահաստատել Հռոմեական հին համաշխարհային կայսրությունը և դառնալ նրա գլուխը, միացնելով իր գայիսոնի տակ

[1] Ասողիկ, «Տիեզերական պատմութիւն», Փարիզ, 1859, եր. 83։

2 Սեբէոս, «Պատմութիւն ի Հերակլն», եր. 25։

3 Ասողիկ, եր. 83։ Տե՛ս Սամուէլ Անեցի, «Ժամանակագրութիւն», Էջմիածին, 1893, եր. 74։

Հռոմն ու Բյուզանդիան, Արևմտյան և Արևելյան կայսրությունները։ Այս մի անիրագործելի և սին փառասիրություն էր, բայց այն իրականացնելու համար գործադրվում էին բոլոր միջոցները։ Ամենից առաջ հարկավոր էր վերականգնել եկեղեցական միությունը Հռոմի հետ, որ խզվել էր, ինչպես տեսանք, Զենոն կայսրի ժամանակ։ Այս հաշտությունը Հռոմի հետ Բյուզանդիան գնում էր իր գոյության համար շատ ծանր գնով, այն է՝ կրոնական հալածանքներ հարուցելով կայսրության մեջ։ Հալածանքները վարվում էին մեծամեծ խստություններով։ Մոտ հիսուն միաբնյա եպիսկոպոսներ, մեծագույն մասամբ պարկեշտ, մաքրակենցաղ, ալիքներով զարդարված մարդիկ, զրկվեցին իրենց աթոռներից և աքսորվեցին։ 525 թվականին Կ. Պոլիսը տեսնում էր իր մեջ մի դեպք, որ այլևս երբեք չկրկնվեց։ Հռոմի Հովհաննես պապն այցելեց արևելյան մեծ մայրաքաղաքը, ուր ընդունվեց մեծամեծ պատիվներով։

Բայց Հուստինոսի կրոնական հալածանքները միայն նախերգանք էին։ 527 թվին նա իր գահակից էր դարձնում Հուստինիանոսին, իսկ 528 թվին վախճանվում էր[30], թողնելով, որ իր քեռորդին միահեծան թագավորե, ունենալով ձեռքի տակ բոլոր միջոցները՝ իր մեծ նվաճողական ծրագրերն իրագործելու համար։ Հուստինիանոսը, որ ստացել էր Մեծ անունը, գործում էր անշեջ եռանդով։ Իսկապես նրա երկարատև թագավորությունն էր (527—577), որ զարգացրեց, բարձրացրեց և ձևակերպեց այն դրությունը, որ կոչվում է բյուզանդականություն: Այդ դրության հատկություններից մեկը, գուցե գլխավորը՝ անհամբերողությունն է, և նա ամենախիստ կերպով արտահայտվեց կրոնական հալածանքների մեջ։ Բայց միաժամանակ Հուստինիանոսը հռչակված էր իր օրենսդրական գործողություններով[31], որոնք կայսրության մեջ մի հայտնի ինքնատիպ կարգ ստեղծեցին, մի կարգ, որի անունը դարձյալ կարող է լինել միևնույնը—բյուզանդականությունը։ Հատուկ բյուզանդական դրոշմով Հուստինիանոսի ժամանակից ճոխանում է և արվեստը։ Ապշեցուցիչ է այս կայսրի շինարարական եռանդը մանավանդ։

Գահ բարձրանալիս Հուստինիանոսը կանգնած էր պարսկական մի նոր պատերազմի (527) առջև, որ սկսել էր Կավատը նրա քեռու դեմ։ Պատերազմի պատրվակն այն էր, որ բյուզանդական կայսրությունը նախկին դաշնադրություններով պարտավորվել էր ամեն տարի որոշ գումար տալ պարսից կառավարության իբրև նպաստ՝ կովկասյան լեռնանցքները (հատկապես Ջողա կամ Դերբենդի անցք) բերդերով և զինվորական պահակներով պաշտպանելու համար։ Հուստինոսը մերժեց կատարել այդ պարտավորությունը, ուստի և պատերազմ ծագեց, որի թատերաբեմը Սիրիան հանդիսացավ։ Պարսկական զորքերը հաղթություններ էին տանում և 531 թվի գարնան մեծ ջարդ տվին բյուզանդական նշանավոր զորավար Բելիսարիոսին։ Բայց այդ միջոցին մեռավ Կավատ թագավորը 92 տարեկան հասակում։ Նրան հաջորդեց որդին, Խոսրով Անուշիրվանը կամ, ճիշտը՝ Անոշակ-Ռվանը (որ նշանակում է՝ «անմահ հոգի»)[1]։ Նոր շահնշահն իսկույն հաշտության բանակցություններ սկսեց Հուստինիանոսի հետ և նույն 531 թվին[32] երկու կողմերի միջև կնքվեց հաշտություն, որ կոչվեց «հավիտենական»։ Բյուզանդիան դարձյալ հանձնառու եղավ իր տարեկան վճարումներն

[1] Крымский, «Истор. Сасан.», стр. 67.

անել, և Խոսրովն ամրացրեց Դերբենդի անցքը, պահակներ և զինվորական գաղութներ հաստատեց։ Ավանդությունը պատմում է, որ նրա անունով բոլոր այդ կողմերը, սկսած Դերբենդից, կոչվեցին Շիրվան։ Նույն անունն ստացավ և այն քաղաքը, որ հետո հայտնի դարձավ Շամախի անունով[1]։

Խոսրով Անուշիրվանը Սասանյան թագավորների մեջ ամենամեծն է իր գործերով և ամբողջ Արևելքում մեծ ժողովրդականություն է ստացել իբրև արդարադատ և շինարար վեհապետ։ Ֆիրդուսիի «Շահնամե»-ի մեջ նա շատ մեծ տեղ է բռնում, և բանաստեղծն ասում է նրա մասին. «Բոլոր թագավորներից, որոնք գահ ու թագ են ստացել, որոնք հզոր են եղել իրենց գանձերով և իրենց զորքերով, ոչ ոք չէ եղել Նուշիրվանից ավելի արդարադատ, ոչ ոք չէ եղել ավելի մարդասեր, ավելի արժանի գահին ու թագին և ավելի իմաստուն»[2]։ Այս մեծ համբավը նա նվաճեց իր երկարատև թագավորության (531—579) միջոցին, երբ նա բարեկարգեց իր երկիրը, կանոնավորելով հարկերը, բազմաթիվ հանրօգուտ շինություններ կառուցելով, հովանավորելով գիտությունն ու գրականությունը։ Պարսիկ աշխարհական և կրոնական ազնվականությունը նա իրեն մոտ պահեց, զրադաշտական կրոնի պաշտպանն էր, բայց չենթարկվեց իշխանների և մոգերի ազդեցության։ Ընդհակառակը, ցույց էր տալիս մի հազվագյուտ համբերողություն օտար կրոնների վերաբերմամբ։ Այսպես, նրա կանանցից մեկը քրիստոնյա էր։ Իսկ երբ տեղական մի քրիստոնյա սիրիացի հոգևորական քրիստոնյա դարձրեց նրա որդիներից մեկին, նա շատ թեթև պատիժ տվեց այդ հոգևորականին։ Այսպիսի վերաբերմունքն էր, անշուշտ, պատճառ դարձել, որ ստեղծվեց առասպել, թե Խոսրովն իր կյանքի վերջում քրիստոնյա մկրտվեց[3]։

Սակայն, հավատարիմ մնալով արևելյան մեծ բռնակալի հոգեբանության, Անուշիրվանը տեղն եկած ժամանակ ցույց էր տալիս և՛ խստություն, նույնիսկ անգթություն։ Նա էր, որ դեռ իր հոր կենդանության ժամանակ ջնջեց մազդակյանների աղանդը, գտնելով, որ նրա վարդապետությունն սպառնում է խորտակել պետական և հասարակական կազմի հիմքերը։ Այսպիսով Արևելքում, իրար կողքի, թագավորում էին երկու՝ իրար արժանի մեծ ինքնակալներ—Հուստինիանոսը և Խոսրով Անուշիրվանը։ Դրանք ախոյաններ էին։ Բայց Հուստինիանոսը, իր գլխավոր ուշադրությունը դարձրած լինելով Իտալիան և Հյուսիսային Աֆրիկան նվաճելու վրա, խուսափում էր պարսիկներին պատերազմի առիթ տալուց, մինչդեռ Խոսրովը երկյուղով էր դիտում կայսրի հաղթությունները Արևմուտքում, որոնք շատ էին ուժեղացնում նրան։ Ուստի և կայսրին թուլացնելու հնարներ էր որոնում, առիթներ ստեղծելով նրան պատերազմ հայտարարելու համար։ Եվ «հավիտենական հաշտությունից» հազիվ ութ տարի անցած, 539 թվին, վերսկսվեց պարսկա-բյուզանդական պատերազմը, որ ընդհատվեց 545 թվին մի ժամանակավոր զինադադարով և ապա դարձյալ վերանորոգվեց 549 թվին, այս անգամ արդեն մինչև 562 թվականը շարունակելու համար։ Այս երկարամյա պատերազմի միջոցին, Հայաստանն էլ, ինչպես կտեսնենք, երբեմն կռվի թատերաբեմ էր դառնում։ Բայց առանձին մեծ տակնուվրայություն-

[1] **Barbier de Meynard,** „Dictionnaire Céographique, Historique et litteraire de la Perse“, Paris, 1861, p. 349.

[2] „De livre des Rois“, trad. par J. Mohl, t. VI. Paris, 1877, p. 134.

[3] Սեբէոս, «Պատմութիւն ի Հերակլն», Գ. Բ,

ներ, ինչպես երևում է, պատերազմական գործողությունները չառաջացրին Պարսկական Հայաստանում։ Այստեղ կատարյալ համաձայնություն էր տիրում հայերի և պարսիկների միջև։ Եվ եթե կան այդ ժամանակամիջոցում հայոց կյանքի մեջ խոշոր նշանակություն ունեցող դեպքեր, դրանցից մեկը **Հայոց թվականն էր:**

Վեցերորդ դարում քրիստոնեական աշխարհում դեռ ընդհանուր գործածության մեջ չէր **փրկչական** (Քրիստոսի ծննդից սկսվող) թվականը, որ նոր էր հնարվել եկեղեցու ծոցում։ Գործածական թվականները շփոթություններ էին առաջացնում զատկական տոների վերաբերմամբ և այդ պատճառով տոմարական վերանորոգումը մի անհրաժեշտություն էր դարձել քրիստոնեության համար։ Անշուշտ այդ անհրաժեշտությունից դրդված էր, որ Քրիստոսի 552 թվականից սկսվեց հայոց տոմարական թվականը, որ այսպիսով, ետ էր մնում փրկչական թվականից 551 տարով[1]։

Հայոց թվականի հաստատումից ավելի խոշոր դեպք պետք է համարել այն, որ տեղի ունեցավ նրա երրորդ տարում, 554 թվին։ Այդ՝ Դվինի երկրորդ եկեղեցական ժողովն էր, որ գումարել էր Ներսես Բ կաթողիկոսը, որին տրվում է Բագրևանդցի, բայց ավելի հաճախ Աշտարակցի մականունը, որովհետև նա Բագրևանդ գավառի Աշտարակաց գյուղից էր։ Թե ո՛րքան մեծ կարևորություն ուներ այդ ժողովը երկրի համար, այդ ցույց է տալիս նրա կազմը։ Նրան վերաբերվող մի պաշտոնագիր հականե հանվանե հիշատակում է 35 նախարարներ, որոնք ներկա էին նիստերին։ Բայց այդ բոլորը չէր, և պաշտոնաթուղթն ավելացնում է. «Եւ ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից և վանականաց, ի ժողովրդականաց, ի բարետոհմից և յամենայն շինականաց»[2]։ Առանձնապես աչքի էր ընկնում միաբնյա սիրիացիների ներկայացուցիչ Աբդիշո եպիսկոպոսը, մի շատ գործունյա և եռանդոտ հոգևորական, որին վիճակված էր կարևոր դեր կատարել ժամանակի հայ-սիրիական հարաբերությունների մեջ։ Սիրիական եկեղեցին միշտ մեծ ազդեցություն է ունեցել հայկականի վրա, և այդ ազդեցությունը պահպանելու համար նա մրցել է հունական եկեղեցու ազդեցության հետ։ Այստեղ, այս մրցության մեջ է, որ սիրիական ազդեցությունը լիովին համապատասխանել է պարսկական քաղաքականության նկատառումներին, ուստի նրա աջակցությունն է վայելել։ Այս անգամ էլ այս միևնույն հանգամանքն էր գործում, և Աբդիշոն մարմնացնում էր պարսկա-սիրիական ազդեցությունը, որի շնորհիվ էլ հեղինակություն ուներ ժողովում։

Հարցն իսկապես մի հասարակ բան էր—նեստորականությունը։ Այս կողմից Ներսես Բ-ի ժողովը Բաբգեն կաթողիկոսի ժողովի կրկնությունն էր։ Վաճառականության համար Հայաստան շատ էին գալիս Խուժիկ (սիրիացի) նեստորականներ, որոնք բնակվելով միաբնյա հայերի մեջ, գայթակղեցնում էին նրանց։ Մանավանդ շատ էին նրանք Դվինում, ուր նույնիսկ իրենց եկեղեցական կազմակերպությունն ունեին, ինչպես նաև հատուկ ժողովատեղի—Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի վանքը։ Ահա այդ «պղծող-

[1] Հայոց թվականի հաստատման պարագաների մասին մենք առհասարակ լիակատար տեղեկություններ չունենք։ Մի ժամանակ կարծվում էր, թե Մովսես Եղվարդեցի կաթողիկոսն է եղել Հայոց թվականի հիմնադիրը, բայց այժմ հաստատված է, որ այդ միջոցին հայոց կաթողիկոսը Մովսեսը չէր, այլ Ներսես Բ-ը։

[2] «Գիրք Թղթոց», եր. 74։

ների» ուղղափառ հավատացյալներին պաշտպանելու համար Դվինի ժողովը նորից բանադրում էր նեստորականությունը, հալածանքի քաղաքականություն էր ընդգրկում նրա դեմ։ Բայց կարևորն այդ չէր։ Նեստորական անվան տակ հայերը հասկանում էին ոչ թե բացառապես Նեստորի հետևողներին, այլ նաև քաղկեդոնականներին, որոնք նրանց պես երկու բնության սկզբունքն էին ընդունում։ Ուստի Դվինի ժողովում դատապարտվում էր և բանադրվում նաև Քաղկեդոնի ժողովը, թեև ոչ իր իսկական անունով[1]։ Իսկ սա անհունապես խոշոր և ծանրակշիռ մի քայլ էր, որ անում էին հայերը։ Ճիշտ է, մենք տեսանք, որ Դվինի առաջին ժողովում էլ տեղի ունեցավ այս միևնույն փաստը։ Բայց այժմ 506 թվի դրությունը չէր։ Այն ժամանակ բյուզանդական պետության մեծագույն մասն էր բանադրում և մերժում Քաղկեդոնը, որովհետև այնպես էր թելադրում կայսերական քաղաքականությունը։ Այն ժամանակ Հայաստանը միայն միանում էր ընդհանուր շարժմանը։ Այժմ քաղկեդոնականությունը տիրապետող, հրամայող և պատժող կրոնն էր ամբողջ կայսրության մեջ, և դեմ լինել նրան՝ նշանակում էր դեմ լինել ամբողջ հունական և լատինական աշխարհին։ Այժմ այլևս միայն սկզբունք չէր ընդունվում ի գիտություն հավատացյալների, այլև պետք էր գործադրել այդ սկզբունքը, իրական կռիվ մղելով թշնամի դավանության դեմ։

554 թվականը ճիշտ որ այն կետն էր, որից շուռ էր գալիս Հայոց պատմության անիվը։ Հայ ժողովուրդը վերջնականապես և անդառնալի կերպով հաստատում էր իր ազգային ինքնորոշումը մի կատարյալ կղզիացման մեջ, որ այնուհետև նրա ճակատագիրը դարձավ քրիստոնյա աշխարհի մեջ։ Այնուհետև երկար դարերի ընթացքում, մինչև նույնիսկ մեր օրերը, նրա առջև կանգնած էր իբրև հզոր խոչընդոտ, իբրև արյունարբու ոսոխ, նրա սեփական գործը—Դվինի երկրորդ ժողովը։ Թեև հաշվով Հայոց թվականի հաստատումը Դվինից երկու տարի առաջ էր տեղի ունեցել, բայց կարելի է ասել, որ այդ ազգային թվականն այդ նշանավոր որոշման, այդ ազգային կղզիացման տարեթիվն է հավերժացնում։ Հայությունը, կարծես, այլևս իրեն բոլորովին անկախ և առանձնացած քրիստոնյա ժողովուրդ էր զգում, ուստի և ընդգրկեց իր սեփական, ազգային թվականը։

Մենք պարտավոր ենք ասել, որ այս մեծ վճռի մեջ միայն դավանական ուղղությունը չէր խոսում, ոչ էլ միայն ազգի հոգեբանությունը, նրա հավաքական ըմբռնումը, որ առանձնահատկություններ, կուլտուրական ինքնուրույնություն է դարբնում ամեն մի ժողովրդի կյանքի համար։ Սաստիկ խոշոր դեր էր կատարում և մի այլ շատ մեծ հրամանատար ուժ—քաղաքական միջավայրը։ Հենց այդ պատճառով, որ վճիռը կայանում էր պարսիկների պատկանող հողի վրա, նա միանգամայն պիտի համապատասխաներ պարսկական այն քաղաքականության, որի առաջին հոգսն էր անջատել պարսկահպատակ քրիստոնյաներին Պարսկաստանի դարավոր ոսոխ Բյուզանդիայից։ Այս հանգամանքը հրամայողական խիստ շեշտ մտցրեց Հայոց դավանական ինքնորոշման մեջ։ Միաբնակությունը, ինչպես և ամեն մի հակաբյուզանդական աշխարհայացք, խրախուսվում էր Խոսրով Անուշիրվանի կողմից և Դվինի այս երկրորդ ժողովում բարձրաձայն խոսողը միայն աստվածաբանական նրբությունները չէին, այլև Խոսրովի հրամանը։

[1] Եր. վ. Տեր-Մինասյան, «Հայ. եկ. հար. ասոր. եկ. հետ», եր. 111։

Այս եղելությունը հաստատում է մի անանուն գրվածք, որ մնացել է մեր հին գրականության մեջ և որ, անշուշտ, 6-րդ դարից հեռավոր ժամանակներին հասած փաստերի մի ազատ արձագանք է։ Նա ասում է. «Վեցերորդ ժողովարար Ներսէս Միջին ի Դուին և բաժանեաց զՀայս ի Հոռոմոց և յԵրուսաղէմ գնալոյ, յորում խոստմունս մեծ արար Խոսրով թագաւորն Պարսից Ներսեսի»[1]։ Մենք չգիտենք, թե այդ ի՛նչ մեծ խոստումներ էին, բայց առանց մարգարե լինելու էլ կարող ենք գուշակել, որ նրանք, անշուշտ, շատ կարևոր ու հրապուրիչ էին և հենց այդ պատճառով էլ Դվինի ժողովը բազմամարդ էր արտակարգ լինելու չափ[2]։ Մնում է ավելացնել, որ Դվինի երկրորդ ժողովի հետևանքներն սկսեցին երևան գալ կամաց-կամաց այն ինքնապաշտպանական միջոցների մեջ, որ հայ եկեղեցին ձեռք էր առնում արշավող քաղկեդոնականության հանդեպ։

4. Հուստինիանոս և Բյուզանդական Հայաստան: Մինչդեռ Պարսկական Հայաստանի վերաբերմամբ 6-րդ դարի առաջին կեսը շատ աղոտ կերպով է լուսաբանված, և մենք ընդարձակ ծանոթություններ նրա մասին առհասարակ չունենք, Արևմտյան Հայաստանը, այն, որ Բյուզանդիային էր պատկանում և որ մինչև այդ սովորաբար անհայտության ավելի թանձր քողով էր լինում ծածկված, Հուստինիանոսի ժամանակ, ընդհակառակն, արտասովոր առատ պատմական լույսի մեջ է հանդես գալիս, և մենք տեսնում ենք այդ լուսավորության մեջ մի շարք վերին աստիճանի կարևոր հանգամանքներ, որոնք մեր պատմության կերպարանքն են փոխում, պատրաստելով հայության համար մի նոր ճակատագրական դրություն, նոր ձգտումների և հոսանքների մի միջավայր։ Այս առատ տեղեկությունների համար մենք պարտական ենք երկու հանգամանքի. մեկն այն է, որ մնացել են Հուստինիանոսի օրենսդրական կարգադրությունները Բյուզանդական Հայաստանի մասին[3], և երկրորդ այն, որ Հուստինիանոսի ժամանակն ունեցել է իր ընդունակ և լավատեղյակ, մեծ մասամբ ականատես պատմագիրը։ Դա Պրոկոպիոս Կեսարացին է,33 որ թողել է երեք պատմական երկեր, ուր շատ մանրամասնություններ է հաղորդում և հայերի մասին[4]։ Ահա այս աղբյուրներն էլ մեզ լիովին հնարավորություն են տալիս տեսնելու, թե ինչպես կազմակերպվեց Բյուզանդական Հայաստանը և թե ի՛նչ անցքեր տեղի ունեցան այստեղ Հուստինիանոսի բարեկարգությունների հետևանքով։

[1] Կարապետ վարդապետ, «Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղվանից կաթողիկոս», Վաղարշապատ, 1896, եր. III։

[2] Որ հայոց դավանական ինքնորոշման մեջ շատ լուրջ դեր կատարել է և պարսից քաղաքականությունը, այս հայտնի է եղել և Հայաստանի հարևան երկրներում նույնիսկ 10-րդ դարում։ Այսպես վրաց Անաստաս կաթողիկոսը հաղորդում է, թե «Պարսից թագավորն առաջարկեց հայերին՝ կամ ընդունել սիրիական որևէ դավանություն, բացի Մելքիտների դավանությունից, որոնք հավատով հույներ են, կամ թե թողնեն հայրենի երկիրը» (Марр Н., «Аркаун монгольское наз. христиан», СПБ. 1905, стр. 39)։ Այստեղ թագավորն անվանված է Պերոզ, բայց եթե այս սխալ կամ շփոթություն էլ լինի, նշանակություն չունի մեզ հետաքրքրող հարցի տեսակետից։

[3] Այդ օրենսդրական կարգադրությունների մանրամասնությունները տե՛ս Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», СПБ, 1908.

[4] Պրոկոպիոսի գործերի մի մասը թարգմանված է ռուսերեն.— Прокопий Кесарийский, «История войн Римлян с Персами», пер. Дестуниса, т. I и II, СПБ, 1876—1880. Ընդարձակ քաղվածքներ հայերի վերաբերմամբ տե՛ս Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Բ, գլ. լե—լթ։

Ձգտելով իր գայիսոնի տակ վերակենդանացնել հին հռոմեական կայսրությունը նրա ամբողջ երկարության վրա, Արաքսի ափերից մինչև Ատլանտյան օվկիանոսը, Հուստինիանոսը, բնականաբար, պիտի ամեն ջանք գործ դներ ստեղծելու մի ամուր միապաղաղություն պետության ներսում։ Այդպիսի մի միության համար շաղախ պիտի կազմեր կրոնական միանմանությունը, այսինքն միատեսակ դավանությունն ամենքի համար։ Ինչ հավատ և դավանանք ուներ մեծազոր կայսրը, նույնը պարտավոր էին ունենալ նրա բոլոր հպատակները։ Եվ այս սկզբունքը գործադրելու համար զանց չէին արվում ամենախիստ միջոցներն անգամ։ Եկեղեցուն հատկացվում էր քաղաքական որոշ նպատակ—ազգերի ձուլում և կայսերական իշխանության ծավալում։ Հուստինիանոսը ջերմեռանդ և ֆանատիկոս օրթոդոքս էր ոչ միայն համոզմունքով, այլ դրանից ավելին՝ քաղաքական անհրաժեշտության ստիպմամբ։ Դեռ նոր գահ նստած, 529 թվին, նա ձեռք բարձրացրեց հին հեթանոսության մնացորդների վրա, ծանր պատիժներով հարկադրելով նրանց կա՛մ քրիստոնյա մկրտվել, կա՛մ թե հեռանալ ուրիշ երկրներ։ Աթենքում դեռ գոյություն ուներ պլատոնական ճեմարանը, ուր ավանդում էին փիլիսոփայություն, աստղաբաշխություն և իրավագիտություն։ Հուստինիանոսը փակեց այդ բարձր դպրոցը, հարքունիս գրավեց նրա գույքերն ու հարստությունները։ Դասատուներից յոթը հոգի34 չկամեցան քրիստոնյա մկրտվելով ստանալ իրենց հայրենիքում մնալու իրավունքը, և իրենց հեթանոսական ազատությունը պահպանելու համար փախան Պարսկաստան, Խոսրով Նուշիրվանի մոտ, որ ոչ միայն հյուրընկալեց նրանց, այլև 531 թվի հաշտության պայմաններից մեկը դարձրեց այն, որ եթե այդ յոթ հեթանոս փիլիսոփաները կամենան վերադառնալ իրենց հայրենիքը, այնտեղ պիտի վայելեն խղճի կատարյալ ազատություն։

Մեծամեծ խստություններով հալածանքի ենթարկվեցին նաև քրիստոնեական աղանդները—արիոսականները, նեստորականները, միաբնակները և այլն։ Այդ հալածանքների հետևանքով ամայի և ավերակ էին դառնում ամբողջ երկրներ։ Այսպես էր, օրինակ, Սիրիան։ Ահա ինչպես է նկարագրում Հովհաննես Եփեսացին35 իր աչքով տեսած հալածանքները. «Հալածանքի միաժամանակ և արագահաս փոթորիկն անգթաբար և անդիմադրելիորեն պայթեց բոլոր երկրների, բոլոր քաղաքների, բոլոր գյուղերի վրա։ Բոլոր եկեղեցիների և վանքերի, քաղաքների և գյուղերի կայքերը, ոչ միայն եկեղեցական, վանքական և վարդապետական, այլև այնպիսիները, որոնք պատկանում էին աշխարհականներին, կանանց և երեխաներին, կողոպտվեցին ագահությամբ, անգթությամբ։ Ամեն կերպ հարստահարված, տանջանքների և լլկանքների մատնված, քշվում էին նրանք ուրիշ երկրըներ, տեղահան էին անվում և ճանապարհին տանում էին ամեն տեսակ տանջանքներ և թշվառություններ, ենթարկվում էին ամեն տեսակ դըժբախտությունների ուղիղ, ճշմարիտ և անարատ հավատի համար։ Այն, ինչ մենք մտադիր ենք նկարագրել այստեղ, գերիվեր է ամեն ըմբռնողությունից և չէ կարող բովանդակվել նույնիսկ բազմաթիվ շարադրությունների մեջ, մանավանդ Պողոսի, Եվփրասիոսի և Եփրեմի[1] ժամանակ պատահածները, երբ Սիրիայի մենաստաններն ու կուսանոցները, արևելյան թե արևմըտյան, մեծ թե փոքր, մեծագույն համբերությամբ տարան ամեն տեսակ

[1] Անտիոքի օրթոդոքս պատրիարքներ, հալածողներից։

հալածանքներ, ամեն տեսակ ծանրություն, տանջանքներ, սով ու ծարավ, սառնամանիք և դաժան մերկություն։ Նրանցից մի քանիսը գտնելով այսօրվա համար օթևան, եթե ոչ երեկոյան, գոնե մյուս օրն արդեն ենթարկվում էին հալածանքի և չէին կարողանում գիշերվա ապաստան գտնել։ Եվ այսպիսով նրանք, գազանների նման, գիշերներն անց են կացնում բաց երկնքի տակ, սար ու ձոր ընկած, իսկ երբ խստաշունչ ձմեռն է գալիս, գիշերում են անձրևի տակ, ձյունի վրա, սառնամանիքի մեջ, նստած ժայռերի վրա, ենթարկված ցրտին և սաստիկ քամիներին, չունենալով ոչ մի բան, որ փռեն իրենց տակ, որպեսզի կարողանային պառկել հողի վրա»[1]։

Հատկապես Եփրեմ պատրիարքի մասին նույն ականատեսն ասում է, թե նա քարուքանդ էր անում սիրիական վանքերը, բարբարոսական միջոցներով դուրս էր քշում նրանց մեջ և սյուների վրա ճգնողներին, և որովհետև իր հետ շրջեցնում էր և զինվորական բանակ, սրով և խարազաններով հարկադրում էր նրանց հաղորդություն ստանալ իրենից։ Այս կատաղի հալածանքների ժամանակներից է, որ Սիրիան ավերակների երկիր է ներկայացնում մինչև այսօր։ Վնասվեց մանավանդ Անտիոք հռչակավոր քաղաքը, որովհետև նրա մեջ էր միաբնակ վարդապետության գլխավոր կենտրոններից մեկը։

Այսպես էր բյուզանդական կղերը, իր մեծ կայսրի օգնությամբ, վըճռում այն հարցը, թե Քրիստոսի մեջ քանի բնություն կար, և աստվածային ու մարդկային բնություններն ի՛նչպես էին իրար վերաբերվում այդ անձի մեջ։ Բայց պետք է նկատի առնել նաև, որ այսպիսի հալածանքների ենթարկված միաբնակները դեռ ամենից լավ պաշտպանված աղանդավորներն էին կայսրության մեջ։ Հուստինիանոսի ամուսին Թեոդորան, որ կայսրուհի դառնալուց առաջ կրկեսի պարուհի էր և մանկությունից հասակ էր քաշել անառակ միջավայրում, միաբնյա վարդապետության կողմնակից էր և իր ամբողջ ճարպկությունն ու ազդեցությունը գործադրում էր իր դավանակիցներին պաշտպանելու համար։ Ասում են, թե նրա պալատում ապրում էին 500 վարդապետներ, որոնք միաբնյա համոզմունքի պատճառով հալածանքի էին ենթարկված և պաշտպանություն էին որոնում նախկին պարուհու հարկի տակ[2]։ Սակայն վերջիվերջո Թեոդորայի ազդեցությունն էլ անկարող եղավ կանգնեցնել բյուզանդական օրթոդոքսության ֆանատիկոսական արշավանքները տարբեր կրոնների և դավանությունների դեմ։

Հայաստանի այն մասում, որ պատկանում էր Բյուզանդիային, այսպիսի անգութ հալածանքներ չկային։ Պատճառների մեջ, անշուշտ, կար և այն, որ հայերը դիմադրություն չէին ցույց տալիս, և քաղկեդոնական վարդապետությունը նրանց մեջ տարածվում էր հեշտությամբ։ Բայց ամենագլխավորն այդ պատճառների մեջ այն էր, որ հայ ժողովուրդը պահպանել էր այդտեղ իր հին ազգային կազմակերպությունը, այսինքն նախարարական սիստեմը, որ և ներքին ինքնավարության, ազգային ինքնապաշտպանության հզոր կռվանն էր։

Բյուզանդական Հայաստանի վարչական դրությունը երեք բաժանմունքներ էր առաջացնում։ Եփրատի արևմտյան կողմում Փոքր Հայքն էր, որ թեև վաղուց կորցրել էր իր կապը Մեծ Հայքի հետ և ենթարկված էր օտար տիրապետությունների, բայց և այնպես, դեռ բոլորովին չէր ապազ-

[1] **Успенский**, «Ист. Визант. госуд.», т. I, стр. 520—521.

[2] P. J. Pargoire, „L'Eglise Byzantine de 527 a 847", Paris, 1905, p. 28.

գայնացել և դեռ պահպանում էր իր հին ազգային առանձնահատկություն-
ները։ Փոքր Հայքը բաժանված էր երկու նահանգի—Առաջին Հայք և Երկ-
րորդ Հայք։ Իսկ Մեծ Հայքի այն մասը, որ 4-րդ դարի բաժանումով ան-
ցել էր Բյուզանդիային[1], կազմում էր երկու մաս—հարավային մասը կոչ-
վում էր Սատրապական Հայաստան, իսկ մնացած մասը, որի մեջ մտնում
էին գլխավորապես Բարձր Հայքի գավառները, կոչվում էր Մեծ Հայք կամ
Ներքին Հայաստան։ Սատրապական Հայաստանն36 իր անունն ստացել էր
հայ նախարարներից, որոնք անկախորեն իշխում էին այդտեղ։ Թվով հինգ
էին նրանք, Եփրատի և Տիգրիսի միջև—Հաշտյանք, Ծոփք, Հանձիթ, Ան-
գեղտուն և Բալահովիտ։ Այս երկրների տերերն իրենց դիրքով փոքրիկ
թագավորներ էին, ունեին իրենց զորքը, և Հռոմ կառավարությունն իրա-
վունք չուներ զորք պահելու այդ կողմերում։ Հայ սատրապների և կայս-
րության միջև գոյություն ունեցած հարաբերությունները դաշնադրական
էին։ Կայսրը հաստատում էր նախարարին իր պաշտոնի մեջ, ուղարկելով
նրան որոշված զգեստներ։ Այնուհետև նախարարն անփոփոխելի պիտի
մնար մինչև իր մահը, իսկ նրա պարտավորությունը դեպի կայսրությունն
այն էր, որ պատերազմի ժամանակ զորք էր տալիս։ Պրոկոպիոսն այսպես
է նկարագրում այդ գավառական արքայիկներին.

«Սատրապական Հայաստանում իշխում էին հինգ հայ սատրապներ,
որոնք իշխանության էին կանչվում ժառանգաբար և մնում էին նրա մեջ
մինչև մահ։ Հռոմեական կայսրից նրանք ստանում էին միայն իշխանու-
թյան նշաններ։ Հետաքրքրական է նկարագրել այդ պատվանշանները,
որովհետև նրանք այլևս չպիտի երևան մարդկանց աչքին։ Քղամիդ, գոր-
ծած բրդից, բայց ոչ թե այն բրդից, որ տալիս են ոչխարները, այլ նա
ստացվում է ծովից։ Պիննու—այսպես է սովորական անունն այն կենդանի-
ների, որոնցից վերցվում է այդ բուրդը։ Ոսկով բանված էր ծիրանիի այն
մասը, ուր սովորություն է կոճկել ծիրանին։ Քղամիդի վերևում ոսկի ճար-
մանդ և նրա մեջտեղը ամրացրած թանկագին քար. այդտեղից էլ կախված
էին երեք հակինթ՝ ոսկե առաձգական շղթաների վրա։ Վերարկուն մետաք-
սից՝ համակ զարդարված ոսկե բանվածքներով, որոնք սովորաբար կոչվում
են փետուրներ: Ոտնամանները մինչև ծնկները, կարմիր գույնի, որպիսին
կրելու իրավունք ունեն միայն հռոմեական կայսրները և պարսից թագա-
վորները։37 Հռոմեական զորք չէր լինում ոչ հայոց թագավորի, ոչ էլ սատ-
րապների մոտ, և նրանք իրենք էին կարգադրում պատերազմական գոր-
ծերը։ Հետին ժամանակներում, Զենոնի թագավորության օրով, սատրապ-
ներից մի քանիսը մտածեցին բացարձակ անցնել Իլլոսի և Լևոնտիոսի կող-
մը, որոնք ապստամբված էին կայսրի դեմ։ Զենոնը բռնեց Լևոնտիոսին և
Իլլոսին, և այդ ժամանակ էլ սատրապներից մեկին, որ ամենաթույլն էր և
ամենից քիչ էր արժանի ուշադրության, և որին պատկանում էր Բալահո-
վիտ անունով գավառը, թողեց նախկին դրության մեջ, իսկ բոլոր մնա-
ցածներին հեռացրեց և թույլ չտվեց, որ նրանք այլևս վայելեն ժառանգա-
կան տիրապետության իրավունք, այլ կարգադրեց, որ այնուհետև այդ
պաշտոնը վարեն կայսրի ընտրած մարդիկ, ինչպես այս սովորություն է
հռոմեական այլ պաշտոնների վերաբերմամբ։ Սակայն նրանց մոտ գտնը-
վում էին ոչ թե հռոմեական, այլ առաջվա պես հայկական զորքեր»[2]։

[1] Ա. Հատ., Ե. գլ. Զ, 1։

[2] Адонц, «Армения...», стр. 108—109.

Գալով Մեծ կամ Ներքին Հայքին, տեսնում ենք, որ սատրապություն-ներից այս աշխարհը տարբերվում էր նրանով, որ այստեղ կայսերական կառավարությունն ուներ իր բարձր ներկայացուցիչը։ Նախարարական ցե-ղերն այստեղ այլևս չունեին իրենց հատուկ տոհմանունները, այլ կոչվում էին իրենց գավառների անուններով։ Այսպես են Սպերի (Մամիկոնյան կալ-ված), Մանանաղիի, Դարանաղիի, Եկեղյաց, Կարինի, Մարդաղիի, Խորձե-նի, Դերջանի իշխանները։ Կային նույնիսկ Կամախ քաղաքի անունը կրող նախարարներ։ Նշանավոր է այն հանգամանքը, որ Բյուզանդական Հայաս-տանի այդ մասի նախարարներն իրենց անվանում էին Արշակունի38, իրենց սերված համարելով Արշակ թագավորից, որը, ինչպես տեսանք, Հա-յաստանի բաժանումից հետո անցավ հունական կամ Բյուզանդական բա-ժինը և թագավորեց Եկեղյաց գավառում մինչև իր կյանքի վերջը[1]։ Այսպի-սի մի ծագում իրենց վերագրելը հարկավոր էր հայ նախարարներին հենց այն պատճառով, որպեսզի կարողանան պահպանել իրենց արտոնված դրությունը նաև կայսրության մեջ։ Դրա համար նրանք պնդում էին, թե Արշակ թագավորն իր հողերը հանձնել էր կայսրին այն պայմանով, որ ինքն ու իր ժառանգները լինեն ինքնավար, ազատ հարկերից։ Այս, իհարկե, չէ նշանակում, թե այդ նախարարներից ոմանք չէին կարող իսկապես սեր-ված չլինել Արշակունյաց տոհմից։ Հայտնի է, որ Արշակունյաց թագավո-րության անկումից հետո էլ, 5-րդ դարում, գոյություն ուներ նախարարա-կան Ոստանիկ տոհմը, որ համարվում էր հենց այդ արքունի տոհմը։

Եվ այսպես, Հայաստանի այն մասում, որ 4-րդ դարի երկրորդ կե-սում անցել էր Բյուզանդիային, դեռ 6-րդ դարի առաջին քառորդում էլ պահպանվում էր այն ավատական կարգը, որ հայ ժողովրդի ինքնամփոփ ազգային կուլտուրայի գլխավոր հենարանն էր կազմում։ Հուստինիանոսը գրեթե իր գահակալության սկզբից ուշադրություն էր դարձրել այս հան-գամանքի վրա և մի շարք օրենսդրական կարգադրություններով սկսել էր ջնջել այդ ազգային առանձնահատուկ կարգը։ Ամենից առաջ կայսրը նոր զինվորական կազմակերպություն էր տալիս Հայաստանին։ Բոլոր հայկա-կան հողերը—Մեծ Հայք, Սատրապական Հայաստան և Փոքր Հայք—նա հավաքում, միացնում էր մի զինվորական հրամանատարի իշխանության տակ։ Այդ հրամանատարն ստանում էր զինվորական ամենաբարձր աստի-ճանը—մագիստրոս կամ ստրատեգ: Նրա իշխանության տակ տրվում էր մեծ զորաբանակ, որ կազմվում էր Հռոմ լեգեոններից։ Հայերն այդ բա-նակի մեջ նետաձիգ գնդեր էին կազմում։ Հայաստանի հրամանատարին, որ կոչվում էր Արևելքի Մագիստրոս, ենթարկվում էին երկրի քաղաքացիական իշխանությունները։ Առաջ Արևելքի սպարապետության կայանը Փոքր Հայքի Մելիտինե քաղաքն էր։ Հուստինիանոսը տեղափոխեց Արևելքի Մա-գիստրոսի բնակությունը Թեոդուպոլիս (Կարին) քաղաքը, պետական սահ-մանի վրա և առանձին խնամքով ամրացրեց այդ բերդը։ Իր պետության սահմանները թե՛ Եվրոպայում և թե՛ Ասիայում լավ պաշտպանելու համար Հուստինիանոսը կառուցանում էր բերդերի և ամրությունների երկկարգ գծեր, և միայն հենց այս կողմից այդ կայսրի շինարարական եռանդը չու-նի իր նմանը բյուզանդական պատմության մեջ, ուստի և իսկական հիաց-

[1] Ա. Հատոր, Ե, գլ. Զ, 6։

մունք է պատճառել ապագա դարերին[1]։ Այսպիսի ամուր շինություններով
գոտևորվեց և Հայաստանի այն տարածությունը, որ կազմում էր պարսկա-
բյուզանդական սահմանագիծը։ Պրոկոպիոսը39 մանրամասն նկարագրել է
Հայաստանի մեջ կատարված շինությունները, և մենք տեսնում ենք մի
վիթխարի աշխատանք, որ միայն պետական պաշտպանության տեսակե-
տից չէր ամենայն զարմանքի արժանի, այլև ահագին քաղաքակրթական
նշանակություն ուներ տեղական ազգաբնակության համար, որ նյութապես
հարստանում էր այդ շինանյութերի վրա աշխատելով և միաժամանակ յու-
րացնում էր բյուզանդական շինարարական մեծ արվեստը։ Նկարագրելով
Կարինի ամրությունները, Հուստինիանոսի պատմագիրն ասում է, որ քա-
ղաքի շուրջը խոր խրամատներ փորվեցին, պարիսպները բարձրացվեցին
մինչև անմատչելի դարձվելը և ատամների կրկնակ շարքերով ամրացվեցին։
Յուրաքանչյուր աշտարակ մի բերդ դարձվեց։ Քաղաքի վրա ցցված բլուրը
կայսրը փորփորել տվեց և դարձրեց անմատչելի լանջեր և վիհեր[2]։ Ապա
տեղափոխելով այստեղ արևելյան բանակի գլխավոր հրամանատարությու-
նը, կայսրը, Պրոկոպիոսի խոսքերով, «դրեց հայերին այնպիսի բարեբախտ
պայմանների մեջ, որ այնուհետև նրանք չպիտի վախենային պարսիկների
հարձակումներից»[3]։ Բացի Կարինից, նույն Բարձր Հայքում շինվեցին և
ուրիշ նոր բերդեր, ինչպես էր Հուստինիանուպոլիսը, նորոգվեցին հին բեր-
դերը։ Այդպիսի նորոգված բերդերից էր Պոմպեոսի ժամանակներից մնա-
ցած Կոլոնիան։ Կայսրը, ասում է պատմագիրը, «անհուն հարստություններ
էր բաժանում այդ կողմերի ազգաբնակության և հարկադրում էր նրան, որ
ամեն տեղ դաշտերում ամրություններ կառուցանե»[4]։ Բայց միայն ռազ-
մագիտական շինարարությունը չէր հետաքրքրում մեծագործ բռնակալին։
Նա զարդարում էր քաղաքները գեղեցիկ շենքերով և մասնավորապես եկե-
ղեցիներով։ Մելիտենե քաղաքին նա «այնպիսի փայլ տվեց,— ասում է
պրոֆեսոր Ադոնցը,— որ ժամանակակիցները նրան անվանեցին Հայաս-
տանի զարդ»[5]։ Թեոդուպոլսում և ուրիշ բերդերում էլ Հուստինիանոսը կա-
ռուցեց եկեղեցիներ։ Ավելորդ է ասել, որ այս կուլտուրական մեծագոր-
ծությունները միայն ուժեղացնել կարող էին բյուզանդական ազդեցու-
թյան հեղինակությունը հայերի մեջ, մի հանգամանք, որ պիտի նպաստեր
Հուստինիանոսին իր 'ծրագրած դրությունը Հայաստանում հաստատելու
համար։

Զինվորական-շինարարական ձեռնարկություններից ավելի կարևոր
նշանակություն ունեցան այն փոփոխությունները, որ կայսրն սկսեց մըտ-
ցընել Բյուզանդական Հայաստանի քաղաքացիական վարչության մեջ
530-ական թվականների սկզբից40։ Ամենից առաջ նա ձեռք էր առնում
Մեծ կամ Ներքին Հայքը։ Բայց դրանք մասնավոր, մանր փոփոխություններ
էին, որոնք, այնուամենայնիվ, դժգոհություն էին պատճառում հայ նախա-

[1] Այս մեծագործությունների մանրամասն և գեղեցիկ նկարագրությունը տե՛ս Charles Diehl, «Justinien et la civilisation Byzantine an VI siécle», Paris, 1901, p. p. 231—246:

[2] **Прокопий Кесарийский**, История войн Римлян с Персами, кн. I, СПБ, 1876, стр: 121.

[3] **Адонц**, стр. 144.

[4] Jbid, 146.

[5] Ibid, 141.

րարներին, քանի որ խախտում էին նրանց հին ավատական իրավունք-
ները։ Սակայն 535—536 թվականներին Հուստինիանոսը վերջնական օրենս-
դրական կարգադրությունն արավ Բյուզանդական Հայաստանի վերաբեր-
մամբ, որով միանգամայն փոփոխում էր նրա կերպարանքը։ Ընդհանուր
պետական տեսակետից այդ կարգադրությունը մի առանձնացած և հատուկ
նշանակություն չուներ։ Կայսրն իր պետության շատ մասերն էր սկսել վե-
րակազմել նոր սկզբունքներով, նպատակ ունենալով գլխավորապես կար-
գավորել դատաստանական գործը և սանձահարել բյուզանդական պաշտո-
նեությունը, որ փչացած էր մինչև ոսկորների ծուծը։ Ինքը Հուստինիանոսն
իր օրենսդրական հրովարտակների մեջ մատնանիշ էր անում, որ ամեն
տեսակ պաշտոնյաների կաշառամոլությունը չափ ու սահման չուներ։ Բյու-
զանդական սովորույթը նվիրագործել էր այն կարգը, որ յուրաքանչյուր
պաշտոն վաճառվում էր համարյա աճուրդով41։ Եվ յուրաքանչյուր պաշ-
տոնյա, փողով գնելով իր տեղը, աշխատում էր ետ ստանալ ոչ միայն այն,
ինչ ծախսել էր մեծերին կաշառելու համար, այլև դրանից շատ ավելին։
Ռոճիկը չէր բավականանում այդ նպատակն իրագործելու համար, ուստի
պաշտոնյան կեղեքում էր ժողովրդին, վաճառքի հանելով իր իշխանությունն
էլ, խիղճն էլ։ Չկար բյուզանդական պետության մեջ այնպիսի մի հան-
ցանք, որ կարելի չլիներ մոռացնել և ծածկել տալ կաշառքի միջոցով։ Հա-
ճախ պաշտոնյաները, փող չունենալով պաշտոն գտնելու համար, ստիպված
էին լինում մեծամեծ տոկոսներով պարտք վերցնել վաշխառուներից և
գնում էին իրենց պաշտոնատեղին իրենց այդ պարտատերերի հետ, որոնք
այսպիսով դարձյալ ժողովրդի վրա էին ծանրանում, քանի որ իրապես
նրանց ձեռքին էր գտնվում իշխանությունը[1]։ Ահա այսպիսի անկարգություն-
ների դեմ էին ուղղված Հուստինիանոսի գավառական բարենորոգություն-
ները։ Բայց և այդպես, պետական ընդհանուր անհրաժեշտությունը լիովի
հարմարություն էր տալիս կայսրին վերացնել այն առանձնակի արտոնված
դրությունը, որ վայելում էին հայերը։ Եվ նա ասում էր իր գրություններից
մեկի մեջ, թե իր ցանկությունն է, «որ հայերն ամեն բանի մեջ հետևեն
հռոմեական օրենքներին և Հայաստանը կայսրությունից չտարբերվի ոչ
մի բանով»[2]։ Գլխավորն ահա այս սկզբունքն էր։

536 թվականին հրատարակված օրենսդրությամբ Հուստինիանոս
կայսրը Բյուզանդիային պատկանող բոլոր հայկական հողերից կազմում էր,
ինչպես ինքն էր ասում, չորս Հայաստաններ: Դրանք ընդարձակ նահանգ-
ներ էին, որոնց հատկացվում էին Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ
Հայք և Չորրորդ Հայք անունները։ Առաջին Հայքի մեջ մտնում էր ամ-
բողջ Մեծ կամ Ներքին Հայքը, որին կայսրը կցում էր և մի շարք հողեր
Պոնտոսի նահանգից՝ Տրապիզոն և Կերասուս քաղաքներով։ Արևմուտքում
այս նահանգը նույնպես ընդարձակվում էր, և նրան կցվում էր նախկին
Առաջին Հայք նահանգի մի մասը։ Երկրորդ Հայքը կազմվում էր նախկին
Առաջին Հայքի մնացած մասից՝ Սեբաստիա և այլ քաղաքներով։ Երրորդ
Հայքը կազմվում էր նախկին Երկրորդ Հայքից առանց փոփոխության և
նրա գլխավոր քաղաքը մնում էր Մելիտինեն, անշանավոր քաղաք, որ ունի

[1] Բյուզանդական այս սիստեմն ամենայն ճշտությամբ ընդօրինակեցին օսմանյան թուրքերը, որոնք բյուզանդացիների հաջորդը հանդիսանալով, վերցրին նրանցից շատ կարգեր։ Այս մասին տե՛ս մեր այս գործի երրորդ հատորը։

[2] **Адонц**, стр. 157.

և որ Եփրատի հոսանքից քիչ հեռու է գտնվում,
հրաշալի տեսարան ու օդ պարունա-
ինչպես ասում էր կայսրն իր թղթի մեջ։ Իսկ Չորրորդ Հայքը
կում էր իր մեջ ամբողջ սատրապական Հայաստանը, այսինքն՝ հինգ ան-
կախ իշխանությունները, որոնք դադարում էին գոյություն ունենալուց,
որովհետև, ասում էր կայսրը, սատրապություն չէ եղել ոչ հռոմեացիների,
ոչ էլ մեր նախնիքների մոտ»։ Անփոփոխ թողնվում է միայն եկեղեցական
վարչությունը։

Նույն 536 թվին հրատարակվեց մի այլ օրենք, որ շոշափում էր հա-
յոց ընտանեկան իրավունքը։ Հայ կյանքը հին ժամանակներից, քանի
տոհմային կազմի դրության մեջ էր գտնվում, նվիրագործել էր մի սովո-
րություն, որ հատուկ էր նաև ուրիշ արիական ազգերին, օրինակ՝ հույնե-
րին և հռոմայեցիներին։ Այդ այն էր, որ կինը ժառանգելու իրավունք
չուներ[1]։ Հույն-հռոմեական աշխարհում կյանքի զարգացումը բերել էր իր
հետ այդ անհավասարության վերացումը, և կանայք տղամարդկանց հետ
հավասար իրավունք ունեին ժառանգելու իրավունքի մեջ։ Իսկ հայ կյանքն
անփոփոխ պահեց իր մեջ այդ հին սովորութական օրենքը։ Պատճառն ան-
շուշտ այն էր, որ այդ կյանքի մեջ անփոփոխ էր մնացել նաև հին հիմ-
նարկությունը—տոհմային կազմը, որի վրա էլ հաստատված էր նախարա-
րական ամբողջ սիստեմը։ Այդ դրության մեջ շատ մեծ նշանակություն
ուներ տոհմային կալվածը, առանց որի չէր կարող պահվել տոհմային
ինքնավարությունը։ Տոհմային կալվածը պիտի միշտ մնար տոհմի սեփա-
կանության, և ահա հենց այս պատճառով էլ կանայք իրավունք չունեին
ժառանգելու իրենց ծնողներին կամ ազգականներին։ Եթե գոյություն չու-
նենար այս արգելքը, նախարարական-տոհմային կալվածների ամբողջու-
թյունը կդառնար անկարելի, որովհետև յուրաքանչյուր կին, ամուսնանա-
լով օտար տղամարդի հետ, պիտի տաներ օտարացներ տոհմային կալվածի
մի մասը։

Հուստինիանոսն իր վերոհիշյալ օրենսդրության մեջ, անտես առնելով
այս կարևոր հանգամանքը, լուսաբանում էր երևույթը նոր բարոյական-
կուլտուրական տեսակետից, և, իհարկե, բոլորովին արդարացի կերպով,
գտնում էր անթույլատրելի, որ գոյություն պահպանե այդպիսի մի անհա-
վասարություն տղամարդկանց և կանանց միջև։ «Մենք նոր իմացանք,—
գրում էր նա,— որ նրանց [հայերի] մեջ գոյություն ունի մի անկուլտուրա-
կան և դաժան օրենք, որ արժանի չէ ոչ հռոմայեցիներին, ոչ էլ մեր պե-
տության արդարության ոգուն, այն է՝ որ ծնողներին ժառանգել թույլա-
տրվում է տղամարդկանց և ոչ երբեք կանանց»։ Այս պատճառով նա արդա-
րացի էր համարում օրենսդրել, որ վերացվի այդ կարգը։ «Մենք հարկավոր
համարեցինք այս օրենքով ուղղել նրանց կյանքի կոպիտ պակասը, որ-
պեսզի անկուլտուրական սովորույթով ժառանգությունները ծնողներից, եղ-
բայրներից և այլ ազգականներից չպատկանեին միայն տղամարդկանց,
նույնպես՝ որպեսզի առանց բաժինքի կանայք չամուսնացվեն և չգնվեն
իրենց նշանածների ձեռքով—մեծ անկուլտուրականության այս նշաններն
այսօր էլ գոյություն ունեն նրանց մոտ։ Ասենք՝ այսպիսի վայրենի բար-
քեր միայն նրանց մոտ չեն ընդունված, կան և ուրիշ ժողովուրդներ, որոնք
նույնպես հարգանքով չեն վերաբերվում բնության և ստորացնում են կա-

[1] Տե՛ս Ա. Հաստրը։

նացի սեռը, կարծես, նրան աստված չի ստեղծել և ցեղի շարունակության
չի ծառայում, այլ իբրև շատ սակավ կարևոր և ատելի բան դատապարտ-
ված է մնալ հարգանքից դուրս»։ Կայսրը դեռ է՛լ ավելի ասելիք ուներ այս
միևնույն սկզբունքը պաշտպանելու համար։ Հայերը, ասում է նա, հպա-
տակվում են մեզ ուրիշ ազգերի պես հավասար կերպով և վայելում են մեր
բարիքները, այս պատճառով նրանց կանայք չպիտի զրկված մնան մեզ
մոտ գոյություն ունեցող հավասարությունից[1]։

Բայց որ բյուզանդական միապետին բացառապես այս գեղեցիկ սկզբ-
բունքները չէին ոգևորում, ցույց է տալիս այն, որ ժառանգելու իրավունք
տրվում էր հատկապես ազնվականության կալվածների վերաբերմամբ։ Այս
արդեն միանգամայն մերկացնում է նրա իսկական նպատակը—քանդել
նախարարական կազմի հողային հիմքերը, որ նշանակում էր քանդել հենց
իրեն՝ նախարարությունը։ Ամուսնությունները բաց էին անում ընդարձակ
հնարավորություն, որ կալվածները կտրատվեն մանր մասերի և օտարաց-
վեն։

5. Հայկական ապստամբություն: Մենք ասացինք, որ իր օրենսդրու-
թյունները հրատարակելուց առաջ էլ Հուստինիանոսը գործում էր Բյու-
զանդական Հայաստանում այնպիսի ուղղությամբ, որ հայ նախարարու-
թյան դժգոհությունն էր գրգռում։ 534 թվականին Պարսկական Հայաստա-
նից մի հայ իշխան, Շմավոն անունով, որ Կավատ թագավորից նշանակ-
ված էր Փառանդիոս42 անունով տեղի[2] ոսկեհանքի կառավարիչ, պարսից
դեմ ունեցած ինչ-որ մի դժգոհության պատճառով անցավ Բարձր Հայքի
բյուզանդական մասը, կայսրին հանձնելով իր կառավարած ոսկեհանքը։
Հուստինիանոսը ընդունեց նրան հոժարությամբ, իշխան կարգեց նրան երկ-
րի մի մասում։ Բայց շուտով գժտություն սկսվեց Շմավոնի և տեղական
երկու հայ իշխանների միջև, որոնք Վարազ անունով մի իշխանի որդիներ
էին, նա բռնությամբ խլեց սրանց պատկանած գյուղերը, և կայսրն էլ հա-
վանություն տվեց այս հափշտակության։ Այն ժամանակ զրկված երկու եղ-
բայրները հարձակվեցին Շմավոնի վրա, սպանեցին նրան ու փախան
Պարսկաստան։ Կայսրը նրանց կալվածները տվեց Շմավոնի քեռորդի Հա-
մազասպ իշխանին, հանձնելով նրան և Մեծ կամ Ներքին Հայաստանի կա-
ռավարությունը։

Այս բոլորը նախերգանք էր միայն ապագա անկարգությունների։
Բյուզանդական Հայաստանում կայսերական ծառայության մեջ գտնվում էր
Ակակիոս43 անունով մեկը, ծագումով հայ, բայց խորթացած իր հայրենիքի
և ժողովրդի շահերից։ Երևի այս խորթության պատճառով էլ նա կայսրի
մտերիմների մեջ էր համարվում։ Օգտվելով այդ հանգամանքից, նա չարա-
խոսեց Համազասպի վրա՝ իբր թե նա նեղում է հայերին և դավաճան է,
մտածում է պարսիկներին մտցնել Կարին և ուրիշ քաղաքներ։ Այդպիսի
լեզվով նա այնքան կարողացավ գրգռել կայսրին, որ նրանից թույլտվու-
թյուն ստացավ սպանելու Համազասպին։ Այդ սպանության գնով էլ Ակա-
կիոսն ստացավ Համազասպի տեղը։ Երբ 536 թվին Բյուզանդական Հայաս-
տանը բաժանվեց չորս մասի, կայսրը նույն այս Ակակիոսին, իբրև լավ և

[1] Адонц, стр. 159.

[2] Պրոկոպիոսի հաղորդած այս անունով տեղի ուր լինելը դժվար է որոշել։ Ամե-
նայն հավանականությամբ այդ ոսկեհանքը գտնվում էր Կարինից դեպի արևելք
(Прокопий Кесарийск., кн. I, стр. 200).

հավատարիմ պաշտոնյայի, նշանակեց Առաջին Հայքի քաղաքացիական կառավարության գլուխ՝ պրոկոնսուլ տիտղոսով։ Եվ Ակակիոսը, կայսերական այդ բարձր շնորհին արժանանալուն պես, ցույց տվեց, թե ինչպես գիտե հավատարմությամբ ծառայել իր բարերարին։ Նա սկսեց անչափ նեղել ժողովուրդը, օգտվելով այն հանգամանքից, որ նախարարական իշխանությունը ջնջված էր, և ամբողջ ժողովուրդն այժմ հպատակվում էր պետական պաշտոնյաներին։

Մեզ չպիտի զարմացնե, որ Հուստինիանոսը թույլ էր տալիս այսպիսի «անկուլտուրական»—խոսենք իր իսկ լեզվով—միջոցներ, ինչպես են սպանություն, կեղեքումներ, հարկերի անչափ ծանրություն և այլն։ Պրոկոպիոսը, գրելով կայսրի պատերազմների, կառուցած շինությունների պատմությունները, գրել է և մի «Գաղտնի Պատմություն», որի մեջ մանրամասն նկարագրել է մեծ միապետի և նրա կնոջ արատները, և մենք տեսնում ենք, որ Հուստինիանոսը, ինչպես և ամեն մի ուժեղ բռնակալ, կանգ չէր առնում ոչ մի միջոցի առջև՝ իր նպատակներին հասնելու համար։ Արտաքին պատերազմները, մեծարժեք շինությունները պահանջում էին դրամական հսկա միջոցներ, և Հուստինիանոսը, այդ միջոցները գտնելու համար, քամում էր ժողովրդի հյութերը դաժան հարկահանությունների միջոցով, չէր քաշվում նույնիսկ մասնավոր մարդկանց հարստությունները խլելուց, հանդիսանալով նրանց ժառանգ կամ հենց ուղղակի հափշտակելով[1]։ Բնավ զարմանալի չէ, ուրեմն, որ այսպիսի ռեժիմից ներշնչվող Ակակիոսը, ինչպես վկայում է նույն Պրոկոպիոսը, կողոպտում էր հայ ազգաբնակչությանն առանց քաշվելու և նրա վրա մի՝ դեռ չտեսնված հարկ դրեց 4 կենտինար (400 լիտր կամ ֆունտ) ոսկի[2]։

Սարսափած ժողովրդի մեջ հուզում ընկավ. Նախարարներից ոմանք փախան պարսից բաժինը, բայց եղան և այնպիսիները, որոնք ըմբռնելով, թե փախուստը հարցի լուծումը չէ, միաբանվեցին՝ դիմադրություն ցույց տալու համար։ Այսպես գործողների գլուխն էին անցնում Հովհաննես Արշակունի իշխանը և նրա երիտասարդ որդի Արտավանը, որ իրեն հայտնի էր դարձրել քաջություններով և կորովով։ Նրանք հարձակվեցին Ակակիոսի վրա և սպանեցին նրան։ Այնուհետև հայրենի հողում մնալն անհնարին էր հոր և որդու համար, որովհետև նրանք գիտեին, որ կայսրը չպիտի ների նրանց այդ գործը։ Եվ նրանք անցան Պարսկական Հայաստան։ Իսկ ժողովրդի հուզմունքն ու խլրտումները ավելի ևս սաստկացան։ Այն ժամանակ Հուստինիանոսը հայերի դեմ ուղարկեց Սիդդա44 անունով քաջ և եռանդոտ զորավարին, բայց սա պատերազմական գործողությունների չդիմեց, այլ աշխատում էր հաշտությամբ ընկճել ապստամբներին, հրավիրելով նրանց ցած դնել զենքերը և խոստանալով միջնորդել կայսրի առաջ, որ ներում շնորհե նրանց և թույլ տա վերադառնալ իրենց տները։ Բայց գործողության այս եղանակը, որ ընտրել էր Սիդդան, դժգոհություն պատճառեց Ակակիոսի որդուն, որ իր հոր սպանության վրեժն էր որոնում։ Նա հավատացրեց Հուստինիանոսին, թե Սիդդան ծուլության է մատնվել և չէ կարող խաղաղ միջոցներով ոչ մի բան անել։ Եվ կայսրը հրաման է ուղարկում իր զորա-

[1] **Г. Панченко**, О тайной истории Прокопия («Византийский Временник»), СПБ, 1897, т. IV.

[2] **Прокопий Кесар.**, кн. II, стр. 17.

վարին պատերազմական գործողություններ սկսել ապստամբ հայերի դեմ։ Վտանգը նորից միացրեց հայ նախարարներին։ Պարսկական Հայաստանից վերադարձան Հովհաննես Արշակունին և նրա քաջարի որդի Արտավանը։ Մի ընդհարման մեջ վերջինս սպանեց Սիդդային, որից հետո բյուզանդական զորքը փախուստի դիմեց։ Երկիրը այսպիսով մաքրվեց կայսերական զինվորներից, և հայ ապստամբները քաշվեցին իրենց ամրոցները։

Կայսրը նորից զորք ուղարկեց՝ այս անգամ Բուզ անունով զորավարի առաջնորդությամբ։ Այս Բուզը հրաման ունենալով ձերբակալել, ինչպես և լինի, Սիդդայի սպանողներին, թողեց բացարձակ կռվելու ճանապարհը և դավադրության միջոցն ընտրեց, հրավիրելով իր մոտ նախարարներին՝ հաշտվելու և խաղաղություն վերահաստատելու համար։ Նրան չհավատացին։ Եվ միայն Հովհաննես Արշակունին էր, Բուզի անձնական մոտիկ բարեկամը, որ ավելորդ համարելով կասկածամտությունը, գնաց նրա մոտ իր փեսա Վասակի հետ։ Գիշերային մի խնջույքի ժամանակ զորքերը պաշարեցին այն տունը, ուր ուտում-խմում էին մոտիկ բարեկամները։ Բայց դեռ ազատվելու հույս կար և Հովհաննեսին խորհուրդ տվին իսկույն փախչել։ Նա, սակայն, միանգամայն վստահ, որ իր բարեկամ Բուզը վնաս չի հասցնի իրեն, արհամարհեց այդ խորհուրդը։ Վասակը, նրա փեսան, փախուստով ազատեց իրեն, իսկ նա մնաց և սպանվեց իր դավաճան բարեկամի ձեռքով։

Մնում էր, որ ապստամբ նախարարները կազմակերպվեին, ավելացնեին իրենց ուժը նոր կողմնակիցներ ձեռք բերելով։ Բայց այս չհաջողվեց նրանց։ Տեսնելով իրենց թուլությունը, որ անհնարին էր դարձնում կայսերական զորքերին դիմադրություն ցույց տալը, տեսնելով նաև, որ Բուզը միանգամայն անհաշտ վարմունք է ցույց տալիս իրենց վերաբերմամբ, ապստամբ նախարարները միաբանելով Վասակի հետ, գնացին Խոսրով թագավորի մոտ՝ նրա օգնությունը խնդրելու համար (538)։ Պրոկոպիոսը պատմելով ամբողջ շարժման մանրամասնությունները, հաղորդում է մեզ և այն ճառը, որ արտասանեցին նախարարները Խոսրովի առջև։ Ահա թե ի՛նչ ասացին նրանք.

«Թագավոր, շատերը մեզանից ծագումով Արշակունիներ են, շառավիղներ Արշակի, որ օտար չէր Պարթևական թագավորներին, երբ Պարսկաստանը Պարթևների իշխանության տակ էր։ Նա պակաս չէր իր ժամանակի թագավորներից և ոչ մեկից։ Այժմ մենք կանգնած ենք ձեր առջև ինչպես ստրուկներ և փախստականներ ոչ թե մեր կամքով, այլ ստիպված։ Եվ ստիպված ենք որպես թե հռոմեական ուժով, բայց իսկապես քո կամքով, մեծ թագավոր,— եթե միայն ճիշտ է այն, թե ով աջակցում է ցանկացողներին ճնշելու ուրիշներին, նա պիտի արդարացի կերպով պատասխանատու լինի նրանց վիրավորանքների համար ուրիշների հանդեպ։ Մենք այստեղ կպատմենք մինչև այժմ եղած բոլոր դեպքերը, սկսելով մի քիչ բարձրից, որպեսզի դուք կարողանաք հետևել նրանց։ Արշակը, վերջին թագավորը մեր նախնիքներից, զիջեց իր թագավորությունը Հռոմի Թեոդոս կայսրին հոժարակամ, բայց այն պայմանով, որ նրան ծագումով մերձավոր բոլոր ժառանգները կարողանան մշտնջենապես ապրել ազատ և չենթարկվել որևէ հարկի։ Այս որոշումը պահպանվեց, մինչև որ դուք կնքեցիք հաշտության այն հռչակավոր դաշնագիրը[1], որ, մեր կարծիքով, անսխալ

[1] 532 թ. հաշտությունը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։

կարելի է անվանել համաշխարհային թշվառություն, որովհետև այդ ժամանակից, այլևս հոգ չտանելով ո՛չ բարեկամների և ո՛չ թշնամիների մասին, ամեն ինչ խառնեց և ամեն ինչ խանգարեց նա, որ անունով բարեկամ է քեզ, թագավոր, իսկ իրապես քո իսկական թշնամին է։ Այս դու կիմանաս ինքդ, հենց որ նրան (կայսրին) կհաջողվի նվաճել արևմտյան ազգերը։ Եվ իրավ, ի՞նչը չի նա արել, որ արգելված լիներ։ Ի՞նչը չի խանգարել նա այն բաներից, որոնք լավ կազմակերպված էին։ Նա՞ չէ մեզ վրա հարկեր դրել, որոնց մենք առաջ չենք ճանաչել։ Նա՞ չէ, որ նվաճեց մեր սահմանակից հոներին, որոնք մինչև այդ անկախ էին։ Նա՞ չէ, որ հռոմայեցի պետ է դրել լազերի դժբախտ թագավորի վրա։ Մի վարմունք, որ չի հաշտվում իրերի բնության հետ և հեշտ չի բացատրվում։ Չի՞ ուղարկել նա հոների հպատակ վոսփորացիների մոտ իր զորավարներին և չէ՞ նվաճել այդ քաղաքն առանց որևէ իրավունք ունենալու։ Չէ՞ կնքել նա դաշնադրություն Եթովպիայի թագավորությունների հետ, որոնց մասին հռոմայեցիներն առաջ նույնիսկ լսած էլ չէին։ Նա արդեն հափշտակում է օմիրիտացիների երկիրը և Կարմիր ծովը, կցում է և Փինիկոնը հռոմեական կալվածներին։ Իսկ լիբիացիների և իտալացիների թշվառությունները չհիշատակենք։ Ամբողջ հողը չէ տեղավորում այդ մարդուն։ Նրա համար քիչ է տիրապետել բոլոր մարդկանց վրա միասին։ Նա ագահ հայացք է ուղղում դեպի եթերը, որոնում է օվկիանոսի ետևում գոյություն ունեցող ծովածոցերը, կամենալով այնտեղ կառուցանել իր համար նոր աշխարհ։ Էլ ինչո՞ւ ես ուշացնում, թագավոր, ինչո՞ւ ես հարգում ամենքի համար կործանարար հաշտությունը[1]։ Չլինի՞ թե նրա համար, որ թշնամին քեզ թողնի մնալ՝ ամենից վերջն ուտելու համար։ Եթե դու ուզում ես իմանալ, թե ի՛նչպես է Հուստինիանոսը այն մարդկանց վերաբերմամբ, որոնք հպատակվում են նրան, մենք և դժբախտ լազերը կարող ենք լինել ամենամոտիկ օրինակները։ Ո՞ւզում ես իմանալ, թե ի՛նչպես է նա վարվում օտարների հետ, նրանց հետ, որոնք ոչ մի բանով վիրավորանք նրան չեն հասցրել։ Հիշի՛ր վանդալներին, գոթերին և մավրուսներին։ Բայց մենք դեռ չենք հիշատակել մի ամենակարևոր առարկան։ Նա չէ՞ր, վեհափառ թագավոր, որ խաղաղության միջոցին գործադրեց բոլոր միջոցները գայթակղեցնելու համար քո Ալամունդար ստրուկին և անջատելու համար քո թագավորությունից։ Նա չէ՞ր, որ ի վնաս քո մոտ ժամանակներումս աշխատում էր իրեն մոտեցնել հոներին, որոնց հետ առաջ ոչ մի հարաբերություն չուներ։ Եղե՞լ է երբևիցե սրանից ավելի անվայել արարք։ Հենց որ նկատեց, թե շուտով կկատարվի արևմտյան ժողովուրդների նվաճումը, իր հայացքը դարձրեց ձեզ, Արևելքի տերերիդ վրա։ Չէ՞ որ միայն Պարսից պետությունն է մնում նրա նվաճման համար։ Եվ այսպես, հաշտությունն արդեն խանգարված է նրա կողմից. նա ինքն է վերջ դրել հավիտենական դաշինքին, որովհետև հաշտություն խանգարողը նա չէ, ով առաջինը զենք է բարձրացնում, այլ նա է, ով խաղաղության մեջ կարող է մերկացված լինել իբրև չարամիտ՝ իր հարևանների վերաբերմամբ։ Ով մտքի մեջ հանցագործություն է դրել, նա արդեն գործել է հանցանքը, թեպետև նրան չի հաջողվել ի կատար ածել իր մտադրությունը։ Ինչո՛վ է վերջանում պատերազմը—հայտնի է ամեն մեկին. սովորաբար հաղթանակ են տանում պատերազմին առիթներ չտվողները։ Այն էլ կա,

[1] Նույն հաշտությունը։

որ պատերազմը ձեր միջև հավասար ուժերով չպիտի վարվի։ Հռոմեական ուժերի մեծ մասը գտնվում է աշխարհի հեռավոր երկրներում։ Երկու գերագույն զորավարներ ունեին, և նրանցից մեկին՝ Սիտտային մենք նոր սպանեցինք, իսկ մյուսին՝ Բելիսարիոսին երբեք չի տեսնի Հուստինիանոսը։ Բելիսարիոսն արհամարհեց նրան և մնաց արևմտյան երկրներում, ինքը տիրանալով Իտալիայի վրա։ Եվ այսպես, գնալով թշնամու դեմ, դու չես հանդիպի որևէ դիմադրության. իսկ մեր մեջ, որ նվիրված ենք քեզ և լավ ճանաչում ենք երկիրը, դու կգտնես հավատարիմ ուղեցույցներ քո զորքերի համար»[1]։

Արտավան իշխանի և նրա ընկերների այս դեսպանությունը զուգադիպում էր հեռու արևմուտքից եկած մի այլ դեսպանության, որ միևնույն խորհուրդներն ու խնդրվածքներն էր բերել Իրանի Շահնշահին։ Իտալիայում տիրող գոթերի թագավորը, չարաչար պարտություն կրելով Հուստինիանոսի զորքերից, իր համար փրկություն էր որոնում այն հանգամանքի մեջ, որ այդ միջոցին Պարսկաստանն ընդհարվի կայսրի հետ և այդպիսով հարկադրի նրան իր զինվորական ուժի մեծ մասը տեղափոխել Արևելք։ Նրա դեսպաններն ասում էին Խոսրովին. «Եթե մեկն ասե թե դու, թագավոր, թագավորությունը և ամբողջ մարդկությունը մատնում ես Հուստինիանոսին, նա կատարյալ ճշմարտություն կլինի ասած. Հուստինիանոսն իբրև ի բնե անհանգիստ մարդ, որ միշտ աչք դրած ունի ամեն բանի վրա, որ ոչ մի կերպով իրեն չէ պատկանում, պիտի գործադրե ամեն տեսակ միջոցներ, որ իրեն հպատակեցնե բոլոր թագավորությունները և հափշտակե ամբողջ տիեզերքը։ Անկարող լինելով միայն իր ուժերով հարձակվել պարսիկների վրա, ոչ էլ գնալ ուրիշների դեմ այնպիսի մի ժամանակ, երբ պարսիկները դիմադրում են իրեն, նա դիտավորություն ունեցավ խաբել քեզ հաշտության պատրվակի տակ։ Կասկած չկա, որ եթե նրան հաջողվի իսպառ խորտակել գոթերի ուժը, այն ժամանակ նա գոթերի և ուրիշ ստրկացած ազգերի հետ իր զենքը կդարձնի Պարսկաստանի դեմ։ Եվ այսպես, քանի որ փրկության հույս ունես, այլևս մեզ չարիք մի պատճառիր քո անգործությամբ, որպեսզի ինքդ էլ չենթարկվես միևնույն դրության։ Մեր թշվառությունների մեջ նախատեսիր այն թշվառությունները, որոնք շուտով կվիճակվեն Պարսկաստանին։ Մի՛ մոռացիր, որ հռոմայեցիները քո պետության բարեկամներ երբեք չպիտի լինին»[2]։

Այս երկու ճառերի մեջ հայերն ու գոթերն ընդհանուր առմամբ ճիշտ էին բնորոշում Հուստինիանոսի քաղաքականությունը, որ այժմ էլ ուժեղ ազգերի նվաճողական գաղափարն է և բացատրվում է իմպերիալիզմ անունով։ Բայց Խոսրով Նուշիրվանն էլ մի մեծ բռնակալ էր և նրան էլ խորթ չէին այդ միևնույն ձգտումները։ Ուստի նա առանց գոթական և հայկական բանագնացների էլ գիտեր, որ Հուստինիանոսը շատ է ուժեղանում Արևմուտքում տարած իր հաղթություններով և որ պետք է նրան մի ուժեղ հարված տալ թիկունքից[3]։ Այս նկատառումներով և մանավանդ հայ ու գոթական պատգամավորների ասածներից ազդվելով, Նուշիրվանը մեծ պետական խորհուրդ կազմեց, որ քննելով դրությունն ու հանգամանքները,

[1] **Прокопий Кесар.**, кн. II, стр. 21—25.

[2] **Успенский**, «Ист. Визант. Гос.», т. I, стр. 467.

[3] **Гельцер**, стр. 34.

րոշեց առաջիկա 540 թվականի գարնանը պատերազմական գործողություն-
ներ սկսել արևմտյան հզոր հարևանի դեմ, հարձակվելով Սիրիայի վրա։
ով Բյուզանդիան անակնկալի էր գալիս։ «Հավիտենական» կոչված հաշ-
տությունը նրան հիմք էր տալիս իրեն ապահովված զգալու պարսկական
սահմանի կողմից, ուստի և պատերազմական մեծ հանդերձանքներ չկային
այդ տեղերում։ Եվ պարսիկների արշավանքը հաղթական էր։ Քաղաք-
ները կամ փրկանքով էին ազատություն գնում իրենց համար, կամ վերց-
վում էին հարձակումով և ավերվում։ Այսպես առաջանալով, Խոսրովը հա-
սավ հռչակավոր Անտիոքին։ Հանկարծակիի եկած հոռոմներն ավելի շուտ հաշ-
տություն կնքելու միջոցների մասին էին մտածում, որպեսզի ազատություն
ստանան Արևմուտքում գործելու։ Կայսրը չկարողացավ մինչև իսկ Անտիոքը
պաշտպանել։ Անուշիրվանը գրավեց այն, կողոպտեց նրա բոլոր հարստու-
թյունները և գերի վերցնելով ազգաբնակության մեծ մասը, վերադարձավ
դեպի Պարսկաստան, ճանապարհին նորանոր փրկանքներ վերցնելով այն
քաղաքներից, որոնք պատերազմական գործողությունների գծից դուրս էին
մնացել։ Իր մայրաքաղաքից ոչ հեռու նա քարուքանդ Անտիոքի փոխարեն
մի նոր քաղաք շինեց, տալով նրան Խոսրովի Անտիոք կամ Վեհ-Անչատոք
խոսրով անունը[1]։ Այդտեղ նա բնակեցրեց իր բերած մեծ գերությունը և
ոչինչ չէր խնայում, որ այս նոր գաղթավայրը դառնա աչքի ընկնող կուլ-
տուրական մի անկյուն...

541 թվականին պատերազմական գործողությունները դարձյալ Սիրի-
այի սահմաններում ամփոփվեցին և կրում էին արդեն փոփոխական հաջո-
ղությունների պատկեր։ Բյուզանդացիներն էլ հավաքվում և կազմակեր-
պում էին իրենց զինվորական ուժերը, հարվածում էին պարսիկներին, և
Խոսրովը հաճախ նեղված դրության մեջ էր գտնվում։ Պարսկական զորքե-
րի մեջ նրանց կայսրի դեմ կռվում էին և Արտավան Արշակունին ու այն
հայ նախարարները, որոնք հոռոմների կեղեքումների դեմ ըմբոստացել էին
և վերջը փախել Խոսրովի մոտ։ Պատերազմների մեջ նրանք ցույց էին տա-
լիս քաջություններ, որոնք նկարագրված են բյուզանդական պատմագրու-
թյունների մեջ։ Բայց և այնպես, նրանք շուտով հիասթափվեցին, ինչպես
մի ժամանակ հիասթափվել էին այն հինգ հեթանոս փիլիսոփաները, որոնք
Հուստինիանոսի հալածանքների պատճառով Աթենքի համալսարանը թողնե-
լով՝ փախել էին Խոսրովի մոտ։ Հայ նախարարներն էլ, անշուշտ, տեսան
նրանց նման, որ պարսկական իրականությունն էլ հեռու է ցանկալի լինե-
լուց։ Խոսրովի վերաբերմունքը դեպի հայ նախարարներն արհամարհոտ
դարձավ, և բացի դրանից՝ պատերազմական բախտն էլ առանձնապես
ժպտուն չէր պարսիկների վերաբերմամբ, որպեսզի կարելի լիներ սպասել,
թե Խոսրովն այն աստիճան ուժեղ կլինի, որ կառնե Հուստինիանոսից Բյու-
զանդական Հայաստանը կամ թե կարող կլինի փոփոխել նրա մեջ մուծված
բյուզանդական սիստեմը։ Ուստի Արտավանն ու իր ընկերներն ստիպված
եղան նորից երես դարձնել դեպի հոռոմները և մտածել նրանց հետ հաշտ-
վելու մասին։ Հուստինիանոսի քաղաքականության համար էլ շատ ձեռնտու
էր, որ Բյուզանդական Հայաստանում ծագած ապստամբությունը հանգի
այնպիսի մի վախճանի, որ պարտություն և ուժերի սպառում էր նշանա-
կում։ Ուստի և համաձայնությունը երկու կողմերի միջև հեշտ իրականա-

[1] Սեբէոս, «Պատմ. ի Հերակլն», գլ. Բ։

ցավ։ Հարց էր միայն, թե ո՞ր կողմն էր հաշտությունն ամենածանր գնով
գնում։ Կասկած չի կարող լինել, որ հայերն էին այդ դրության մեջ, ինչ-
պես և բնական էր։ Եվ իրավ, նախկին դրությունը չէր վերականգնվում և
հին ազգային իրավունքները չէին վերադարձվում նախարարներին։ Նրանք
նույնիսկ իրենց կալվածներում չվերահաստատեցին իրենց բնակությունը,
այլ իրենց ընտանիքներով և իրենց զինվորական գնդերով գնացին Կ. Պո-
լիս, ուր Հուստինիանոսը նրանց ընդունեց քաղցրությամբ և գործելու աս-
պարեզ տվեց համապետական վարչական-զինվորական կյանքի մեջ։ Եվ
այս դրությունն այնքան գոհացրեց նախկին ապստամբներին, որ նրանք
այժմ էլ սկսեցին բյուզանդական զորքերի շարքերում կռվել պարսիկների
դեմ։

543 թվականին Խոսրով Անուշիրվանը, կամենալով վերջ դնել պատե-
րազմին, միջնորդ ընտրեց Հայոց կաթողիկոսին[1], որին հանձնարարեց գնալ
Փոքր Հայք և մասնավոր բանակցություններ սկսել հոռոմների հրամանա-
տարի հետ, որի անունն էր Վալերիանոս։ Կաթողիկոսը, ճանապարհվելով
Դվինից, տարավ իր հետ իր Գեորգ եղբորը։ Վալերիանոսին նա խորհուրդ
տվեց ընդունել հաշտություն կնքելու առաջարկը, հավատացնելով նրան,
թե ինքը, ինչպես քրիստոնյա, հոռոմների օգուտն է որոնում, և կաշխատի
համոզել Խոսրովին ընդունել հաշտության այն պայմանները, որ կառա-
ջարկի կայսրը։ Հռոմ հրամանատարն իրավունք պիտի ունենար զարմա-
նալու պարսից թագավորի այդ աստիճան զիջողականության վրա, եթե
կաթողիկոսի եղբայրը չբացատրեր նրան այդ խաղաղասիրության իսկական
պատճառները։ Նա պատմեց, որ արքայից արքան մեծ նեղության մեջ է.
կասկածներ ունի, թե իր որդին շուտով պիտի ապստամբի իր դեմ, բայց
որ գլխավորն է՝ Պարսկաստանում սաստիկ ճարակել է ժանտախտը։ Վալե-
րիանոսն իսկույն իմաց տվեց այս տեղեկությունները կայսրին, որից և
հրաման ստացավ օգտվել այդ բարեպատեհ հանգամանքներից և իսկույն
արշավել Հայաստան[2]։ Ահա այս արշավանքին մասնակցում էր և Արտավան
իշխանը, ինչպես և մի ուրիշ հայ իշխան, որի անունն էր Ներսես։

Վալերիանոսը երեսուն հազարանոց մի բանակով Բարձր Հայքից ան-
ցավ Արարատյան երկիրը։ Մժեժ Գնունին, Հայոց մարզպանը, կարողացավ
մեծ ընծաներով համոզել հռոմ հրամանատարին, որ նա արգելի իր զին-
վորներին նեղացնել խաղաղ ազգաբնակությանը։ Վալերիանոսն անցավ
Բագրևանդի հովիտը և գնաց հանդիպելու պարսիկներին Անգղ բերդի մոտ։
Բայց նրա զորքը լավ վարժված չէր, իսկ բյուզանդական զորագլուխները,
ըստ իրենց սովորության, իրար դեմ ինտրիգներ լարել միայն գիտեին։
Ցնայած արգելքին, զինվորները թալանով և կողոպուտներով էին զբաղված։
Այս բոլոր պատճառները բյուզանդական բանակի համար մի աղետ պատ-
րաստեցին, որ անսպասելի էր ամենից շատ պարսից հրամանատարի հա-
մար։ Սա արդեն երկյուղով էր դիտում կռվի սկիզբը, երբ հանկարծ տեղի ունե-

[1] Պրոկոպիոսը, որ պատմում է այս առաքելությունը, իսկապես չի ասում, թե Հայոց կաթողիկոսն էր պատգամավորը, այլ գրում է միմիայն «քրիստոնյաների եպիսկոպոս»։ Սակայն հայագետ Սեն-Մարտենը ապացուցանում է, որ խոսքն այստեղ ամենայն Հայոց Հովհաննես կաթողիկոսի մասին է, որ հաջորդեց Ներսես Բ կաթողիկոսին։ Իսկ հայ բանասերներից ոմանք կարծում են, թե այդ առաքելության ժամանակ դեռ կենդանի էր Ներսես Բ-ն, որը, հավանաբար, հենց այն քրիստոնյա եպիսկոպոսն էր, որ գնաց Վալերիանոսի մոտ։

[2] **Прокопий Кесар.**, кн. II, стр. 173—174.

ցավ մեծ շփոթ։ Պարսիկները կռվում էին Անգղ գյուղի նեղ փողոցներում և կարողանում էին ետ կասեցնել անարի հոռոմներին։ Այդ միջոցին Ներսես45 իշխանը իր հայկական գնդով նետվեց պատերազմի տեղը և սաստիկ թափով հարձակվեց պարսիկների վրա, բայց այդ միջոցին էլ ինքը սպանվեց։ Հոռոմների մեջ մեծ շփոթություն սկսվեց։ Ամեն մեկն շտապում էր ազատել իր գլուխը, և փախուստը խուճապի փոխվեց։ Պարսիկները սիրտ առան, ընկան փախչողների վրա և կոտորում էին նրանց[1]։ Ջարդված զորքի մնացորդներին ասպնջականություն տվեց քաջ Ներսեսի եղբայր Սահակը։ Բայց պարսկա-բյուզանդական պատերազմով մենք կարող ենք այլևս չզբաղվել։ Թեև նա այնուհետև էլ շարունակվեց, ընդհատումներով, մինչև 562 թվականը, բայց Հայաստանի մեջ առանձին նշանավոր շարժումներ չառաջացրեց։ 562 թ. Հուստինիանոսը Խոսրովի հետ հաշտություն կնքեց հիսուն տարի ժամանակով։ Այստեղ էլ նա ցույց տվեց, թե ինչպես բյուզանդականությունը, ճարպիկ խաղերի վարժ վարպետ, կարողանում էր ծառայեցնել քրիստոնեության գաղափարը պետության շահերին։ Ամենայն խստությամբ հալածելով ոչ-օրթոդոքս եկեղեցիներն իր կայսրության մեջ, Հուստինիանոսը նույն այդ եկեղեցիների պաշտպան էր հանդիսանում դրսում, օտար պետությունների մեջ։ Այսպես, այս դաշնագրի մի հոդվածով պարսից կառավարությունը պարտավորվում էր թույլ տալ, որ քրիստոնեությունը Պարսկաստանի մեջ ազատորեն կատարե իր ծեսերն ու պաշտամունքները։ Պարտավորվելով հալածանքներ չհարուցանել քրիստոնյաների դեմ, պարսից կառավարությունն էլ մի կողմից պայման էր դնում, որ քրիստոնյաները զրադաշտականներին հավատից չհանեն և քրիստոնյա չմկրտեն։

Հաշտությունից երեք տարի չանցած՝ Հուստինիանոսը մեռավ, իր խոշոր պետությունը թողնելով Հուստինոս Երկրորդին (565—578)։

6. Հետևանքներ։ Վերջնական ի՞նչ հետևանքներ ունեցան Հուստինիանոսի բարենորոգումները Բյուզանդական Հայաստանում։ Մենք տեսանք նրանց գլխավոր ձգտումը—Հայաստանը դարձնել բյուզանդական մի սովորական նահանգ, ջնջելով նրա մեջ գոյություն պահպանող հին ազգային կազմակերպությունը։ Նախարարական ապստամբությունն այս կարգի դեմ ազգային զգացմունքի մի ժամանակավոր բռնկում էր, որ, ինչպես տեսանք, չկարողացավ վերադարձնել հինը, կորցրածը։ Անկարելի էր, որ բյուզանդական պետականությունը, մի ամեհի ուժ, անզոր հանդիսանար մի փոքրիկ, գավառական երևույթի առջև, որպիսին հայությունն էր իր պատմական հայրենիքի այն մասում, որ պատկանում էր Հուստինիանոսի նման մի միապետի կայսրության։ Ազգային ինքնապաշտպանության բնազդը, առաջին տպավորության տակ, բողոքի և ըմբոստացման զենք դնելով հին հայրենի արտոնություններից զրկվող հայ ավատականության ձեռքը, կարող էր ամենաշատը երկարացնել ըմբոստությունը, հաղորդել նրան տոկուն ու համառ մրցության կերպարանք, որ սերնդից սերունդ է անցնում և ուժով ճնշողների ու ճնշվել չկամեցողների դրություն ստեղծում, բայց մենք տեսանք, որ այս կերպարանքի մեջ էլ չմտավ Արտավան իշխանի և նրա ընկերների սկսած շարժումը։ Պատճառը շատ պարզ է։ Հայ ըմբոստացողներին կլանեց բյուզանդական համապետական ասպարեզը, ուր տեղ գտնել և

[1] Diehl „Justinien", p. 154. Տե՛ս և Прокоп. Кесар., кн. II, стр. 185—186.

անչափ զարգանալ կարող էր ամեն մի ընդունակ անհատ։ Հայ նախարարությունը, հավատարիմ մնալով իր ազգայնությունը պահպանող հիմնարկություններին, պիտի բավականանար իր գավառական նեղ ու անձուկ հորիզոնով, իր փոքրիկ տնտեսական շահերով։ Մինչդեռ բավական էր, որ նա բռներ ապազգայնացման ճանապարհը, և մեծ ու հռչակավոր պետությունը բաց էր անում նրա առջև փառքի և հարստության բոլոր հնարավորությունները։ Բյուզանդիան Սասանյան Պարսկաստանը չէր, փակ ու անմատչելի այն ամենի համար, ինչ պարսկական չէր և մանավանդ զրադաշտական։ Բյուզանդական պետությունը ճիշտ այն իրականությունն էր, որ բնորոշել է մեր Մովսես Խորենացին. «Սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»[1] խոսքերով։ Այս հնարավորությունը, իհարկե, Հուստինիանոս կայսրը չէր բաց անում բոլոր ազգերի և լեզուների առջև։ Նա բաց էր վաղուց, և եթե Փոքր Ասիայի կիսավայրենի լեռնաբնակ խավրացիների համար դժվար չեղավ այդ ճանապարհով գնալ բազմել Կոստանդիանոս Մեծի գահի վրա, նույն այդ հեշտությունը մի ուրիշ օր էլ հայերին պիտի առաջնորդեր դեպի իշխանության նույն գագաթնակետը։

Առանց Հուստինիանոսի օրենքների ստեղծած դրության էլ հայերը ճանաչել էին բյուզանդական շքեղ մայրաքաղաքի ճանապարհը։ Ով իրեն ճնշված ու զրկված էր համարում հայրենի երկնքի տակ, պետական անկախությունից զրկված մի երկրում, ով զգում էր իր մեջ խելքի, նախաձեռնության, կամքի, ֆիզիկական ուժի ներկայություն, նա հեռանում էր հայրենիքից, գնում էր օտարություն՝ ասպարեզ որոնելու համար։ Շատերին տնտեսական շահը, առևտրական հաշիվներն էին տեղահան անում։ Այսպես կազմվել սկսում է գաղթական հայությունը զանազան կողմերում։ Հնագույն հայ գաղթականի ճանապարհը մի ուղղության չէ հպատակվում։ Հնագույն հայ գաղութները, ինչպես գիտենք[2], Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում էին տեղավորված, այն է՝ այժմյան Կախեթում։ Վեցերորդ դարում հայ գաղթականություն ենք տեսնում, վաղուց հաստատված, մինչև իսկ իր լեզուն կորցրած, Կասպից ծովի հարավ-արևելյան ափերում, Վըրկանի մեջ և էլ հեռու[3]։ Բայց անհամեմատ ուժեղ էր այն հոսանքը, որ տանում էր գաղթական հայությունը դեպի Արևմուտք, դեպի Բյուզանդիա։ Այս ուղղությամբ գնում էին ոչ միայն Բյուզանդական, այլև Պարսկական Հայաստանից։ Գաղթականությունները լինում էին կամավոր և ակամա։ Ակամա էին հայերը տարվել Վրկան և Թուրքեստանի սահմանները։ Իսկ գաղթականությունները դեպի Բյուզանդիա թե կամավոր էին լինում, թե խրախուսված կայսրներից և թե բռնի, բայց ամենագլխավոր դերը կատարում էր այն գրավչությունը, որ ուներ իր մեջ բյուզանդական քաղաքակրթությունը։ Նրա խոր ազդեցությունը նկատվում էր հայոց գրականության, արվեստի մեջ նույնիսկ շատ խիստ չափերով։ Հայությունը դանդաղ ու կամաց շարժվում էր դեպի Արևմուտք, հասնելով նույնիսկ Կիլիկիայի սահմաններին[4]։ Այս, կարծես, մի ետադարձ շարժում էր, նորից դեպի ետ, դեպի արմենական հին երկրները—Փռյուգիա, Կիլիկիա։

[1] Խորենացի, Ա, ը։
[2] Հատ. Ա, եր. 443։
[3] Սեբեոս, գլ. ԺԴ։
[4] Адонц, стр. 204.

12—Լեո—Երկերի ժողովածու, հ. II

Այս մի շատ խոշոր երևույթ է հայության կյանքում, և հայոց պատմությունը 6-րդ դարից այլևս Հայաստանի պատմությունը չէ միայն, այլև պիտի իր էջերի մեջ առնե Թափառիկ հայությունը։ Այսուհետև հայկական կյանքի մեջ մի ուրիշ խոշոր երևույթ էլ է բարձրանում—հայը օտարների ծառայության մեջ։ Այդտեղ մենք տեսնում ենք նրան զանազան ասպարեզներում, և մասնավորապես զինվորական կոչման մեջ, հռչակված, մեծ փառքի և հեղինակության հասած։ Իր բուն հայրենիքի համար, իր ազգության համար այդպիսի հայը համարյա բոլորովին գոյություն չունի։ Եվ, կարծես, հենց այդ գնով է, որ նա բարձրանում է փառքի և իշխանության աստիճաններով։ Այսպիսի անձնավորությունների մի ամբողջ շարք մենք տեսնում ենք հենց Հուստինիանոսի օրով։46

Դրանց մեջ առաջինն է հռչակավոր ներքինի Ներսես պատրիկը, որ շատ խոշոր տեղ ուներ 6-րդ դարի բյուզանդական պատմության մեջ և որ իր ճակատագրով, իր փայլուն ընդունակություններով հիացմունք է պատճառել ոչ միայն իր ժամանակակից հույն և լատին պատմագիրներին, այլև այն գիտնականներին, որոնք ուսումնասիրել են, մեր ժամանակներում, Հուստինիանոսի դարը։ Անծանոթ է այս մարդու ծագումը։ Գիտենք միայն, որ նա Պարսկահայաստանից էր, երևի նախարարական ցեղից։ Իր սեփական կամքով չէր նա գնացել Կ. Պոլիս։ Պարսիկների հետ ունեցած մի պատերազմի մեջ նա գերի էր ընկել հռոմների ձեռքը, տարվել էր նրանց մայրաքաղաքը, ուր ծառայության մեջ մտցվեց։ Երևի այստեղ էլ նա ներքինացվեց և երկար ժամանակ պալատական ստրուկ էր։ Սակայն բնական ընդունակությունները չթողին նրան այդ դրության մեջ և նա ստացավ պալատական պաշտոններ, արագ բարձրանալով աստիճանից աստիճան։ Այսպես, նրան տեսնում ենք կայսերական գանձի կառավարիչ, սենեկապետ։ Թեև մի վտիտ և փոքրահասակ ներքինի, նա սիրելի է դառնում կայսրին և մանավանդ Թեոդորա կայսրուհուն և այսպիսով ձեռք է բերում մեծ ազդեցություն։ Այդ բացառիկ հաջողությունը, անշուշտ, իր ազդեցությունն ունեցավ Հայաստանի իշխանական շրջաններում։ Ներսեսը դառնում էր մի բախտավոր օրինակ, որ իր հետևից ձգում էր և ուրիշներին՝ փառք ու հարստություն որոնելու համար։ Այսպես, 530-ական թվականներին Պարսկական Հայաստանին պատկանող Բասեն գավառի Բողբերդ ամրոցի տերերը, երեք եղբայր, Ներսեհ, Հրահատ և Սահակ անունով, անցնում են բյուզանդական բաժինը, ինչ որ պատճառով նեղացած լինելով պարսից կառավարությունից[1] և գնում են իրենց ընտանիքներով Կ. Պոլիս՝ Ներսես պատրիկի մոտ, որ իբրև հայրենակից, սիրով ընդունում է նրանց և մտցնում կայսերական ծառայության մեջ։ Այս երեք եղբայրներից Ներսեհը բյուզանդական բանակում հայտնի դարձավ իբրև քաջարի զորապետ և մի ժամանակ նշանակվեց Եգիպտոսի կուսակալ, ուր տարավ և իր հայկական գունդը և շատ քաջություններ ցույց տվեց։ Այս կուսակալը կատարեց և Հուստինիանոսին ու նրա հավատարիմ պաշտոնյաներին վայել մի գործ—քանդեց Նեղոսի ափին շինված մի հին հռչակավոր մեհյան, քուրմերին բանտարկեց, իսկ աստվածների արձաններն ուղարկեց կայսերական մայրաքաղաքը[2]։

Առհասարակ բյուզանդական ծառայության մեջ առաջացած հայերն

---

[1] Ch. Le Beau, „Histoire du Bas. Empire", t. IV, Paris, 1819, p. 297.

[2] Չամչեան, Ն. Բ, եր. 241։

աշքի էին ընկնում իրենց ջերմեռանդ օրթոդոքսությամբ։ Այսպես էր մա-
նավանդ ներքինի Ներսեսը։ Նա սակավապետ էր, չափավոր կյանք էր վա-
րում, իսկ իր հարստություններից, որ դիզում էր իր պալատական պաշ-
տոնների հետևանքով, առատ բաժիններ էր հանում հունական եկեղեցիներ
և վանքեր շինելու կամ վերանորոգելու համար։ Նա իր ամենավատ թշնա-
միներն էր համարում այն բոլոր մարդկանց, որոնց կայսրը հերետիկոս էր
անվանում։ Սակայն այսպիսի առաքինություններով չէր, որ Ներսեսն
այնքան մեծ անուն հանեց։ Թեև իր պալատական պաշտոնների մեջ նա
ցույց էր տալիս շատ նրբամտություն, աշխատում էր մեծ եռանդով, բայց
այդ ասպարեզը չէր, որ պիտի փառավորեր նրան, այլ պատերազմական
դաշտը, այն էլ ոչ թե հայրենի սիրական հողի վրա, այլ Իտալիայում։
Ինչպես գիտենք, Հուստինիանոսը, հին հռոմեական կայսրությունը
վերականգնելու համար, նվաճողական պատերազմներ սկսեց Աֆրիկայում՝
վանդալների դեմ և Իտալիայում՝ այստեղ տիրացած գոթերի դեմ։ Համառ
ու տևական էին մանավանդ իտալական պատերազմները. գոթերը, մի քաջ
և ռազմիկ ցեղ, դիմադրում էին բյուզանդական արշավանքներին կատաղի
տրիությամբ։ Պատերազմն այս պատճառով երեսուն տարի ձգձգվեց և մըղ-
վում էր փոփոխակի հաջողություններով։ Հռոմը մի քանի անգամ անցավ
գոթերի և հռոմների ձեռքը։ Եվ ահա գոթերին վերջնական հարված տալու
և ամբողջ Իտալիան վերջնական Բյուզանդիային միացնելու փառքը վերա-
պահվում էր հռչակավոր հայ ներքինուն։
Կայսերական զորքերի հրամանատարությունը մի քանի անգամ հանձ-
նվեց Հուստինիանոսի մեծանուն զորավար Բելիսարիոսին, որ կամ նշա-
նավոր հաղթություններ էր տանում, կամ պարտություններ կրում։ Հուստի-
նիանոսը, ինչպես սովորաբար լինում են բոլոր ուժեղ բռնակալները, կաս-
կածով էր վերաբերվում իր նշանավոր զորավարին, ուստի միանգամից
այնքան մեծ միջոցներ չէր տալիս նրան պատերազմը հաջողակությամբ և
արագությամբ առաջ տանելու համար։ Վախենալով, թե մի գուցե Բե-
լիսարիոսը չափազանց ուժեղանա և իր ախոյանը հանդիսանա գահի
վերաբերմամբ, կայսրը տալիս էր նրան համեմատաբար փոքրիկ զինվո-
րական բանակներ, իսկ դրամական միջոցներն էլ այնքան անբավարար էին,
որ Բելիսարիոսը նեղվում էր մանավանդ պարենավորման կողմից։ Եվ նա
ստիպված էր հաճախ օգնություն խնդրել կայսրից։ Իսկ կայսրը նրան
երբեմն-երբեմն ուղարկում էր օգնական բանակներ։ Այս բանակներից
մեկն Իտալիա տանողն էր Ներսեհ Բասենցին, որը և մնաց այնտեղ և մաս-
նակցում էր պատերազմին։ Նրանից հետո 540 թվին, Իտալիա ուղարկվեց
մի այլ բանակ, որի հրամանատարությունը Հուստինիանոսը հանձնեց
Ներսես ներքինուն։ Այդ միջոցին դեռ ոչ ոք չգիտեր, թե ի՛նչ խոշոր զին-
վորական տաղանդ է թաքնված այդ պալատական պաշտոնյայի մեջ։
Ուստի երբ Իտալիա հասնելուց հետո նա վիճաբանություններ սկսեց գլխա-
վոր հրամանատար Բելիսարիոսի հետ ռազմագիտական հարցերի առի-
թով և դիմադրում էր նրա ծրագիրներին, այս բանը համարվեց լոկ նա-
խանձի գործ և շուտով ակնհայտ դարձավ, որ երկու հակառակորդները չեն
կարող իրար չխանգարել։ Ուստի կայսրը Ներսեսին Կ. Պոլիս կանչեց, կա-
տարյալ ազատություն տալով Բելիսարիոսին, որ գործի ինչպես գիտե։
Ներսեսի հետ մայրաքաղաք վերադարձավ և Ներսեհ Բասենցին։ Բայց
Իտալիայում կռվող բյուզանդացիների շարքերում իրենց հերոսական քա-

չուθյուններով հայտնի էին դառնում ուրիշ հայեր, որոնք գտնվում էին առանձին հայկական գնդի մեջ։ Այդպիսիներից մեկն էր Արտավազ անունով ազնվականը, որ հայկական գնդի հրամանատարն էր։ Բյուզանդական զորքը պաշարել էր Վերոնա քաղաքը։ Գաղտնի բանակցություններով կարելի եղավ կաշառել քաղաքի դռների պահապաններից մեկին. բյուզանդական զորքը գիշերվա պայմանավորված ժամին պիտի բաց գտներ դռները։ Բայց զորավարները չկամեցան միանգամից ամբողջ պաշարող բանակը մտցնել քաղաքը, վախենալով դավադրությունից։ Վճռվեց միայն մի փոքրիկ գումարտակ ուղարկել առջևից։ Բայց հոռոմներից ոչ ոք հանձն չառավ փոքրիկ խմբով մտնել թշնամու քաղաքը։ Ուստի այդ հանձնարարությունը տրվեց Արտավազին, որ իր հարյուր զինվորների հետ մտավ քաղաք, գրավեց աշտարակներից մեկը։ Գոթերը, կարծելով, թե հոռոմների ամբողջ բանակն է մտել քաղաք, հանեցին իրենց զորքը, որ հեռանան, իսկ Արտավազը հապճեպով իմաց տվեց կայսերական զորքի զորավարներին, որ շտապեն գրավել քաղաքը։ Բայց հոռոմ զորավարները փոխանակ շտապելու, դեռ երկար վիճում էին, թե ի՛նչպես պիտի իրենց մեջ բաժանեն քաղաքի ավարը։ Քաղաքից դուրս եկած գոթերը, տեսնելով, որ բյուզանդական բանակը անշարժ է իր տեղը, հասկացան, որ իրենք խաբված են եղել և նորից վերադարձան քաղաք։ Նրանց և մի բուռն հայ քաջերի միջև սկըսվեց օրհասական կռիվ։ Արտավազը, տեսնելով, որ ազատվելու ուրիշ հնար չկա, ցատկեց պարսպի գլխից և նրա հետ նրա զինվորներից շատերը։ Բայց շատերն ընկան քարերի վրա և ջարդվեցին։ Ազատություն գտան միայն նրանք, որոնք փափուկ հողի վրա էին ընկել։ Այսպիսիների մեջ էր և Արտավազը, որ գնաց կայսերական բանակը և սկսեց խիստ հանդիմանել հոռոմ զորավարներին[1]։ Վերոնան այլևս կարելի չեղավ վերցնել և բյուզանդական զորքը հեռացավ։ Իսկ գոթերի բանակը, միանալով Վերոնայի բերդապահ զորքի հետ, գնաց հոռոմների դեմ։ Նրանք պետք է անցնեին մի գետ։ Արտավազը խորհուրդ տվեց հոռոմ զինվորներին բռնել գետի եզերքը և մաս-մաս ջարդել անցնող թշնամուն, բայց զորավարների միջև երբեք գոյություն չուներ համաձայնություն, և մինչդեռ նրանք վիճում էին իրար հետ, թշնամին անցավ գետը։ Ճակատ կազմեցին կռվելու համար։ Գոթերի կողմից առաջ եկավ մի հսկայակազմ մարդ և հրավիրեց հոռոմներից մեկին մենամարտի։ Կայսերական բանակից դարձյալ Արտավազն էր, որ քաջություն ունեցավ այդ հրավերն ընդունելու։ Նա մեծ հաջողությամբ մենամարտեց գոթացու հետ, մինչև որ իր նիզակը խրեց նրա կողը և խորտակեց ձիուց։ Բայց բարձրացած աղմուկի մեջ չկարողանալով իմանալ, թե իսկ ոչ սպանվել էր իր ախոյանը, Արտավազը ետ դարձավ, որ սրով վերջացնի գործը, բայց այդ միջոցին սպանված գոթացու նիզակը, որ ցցված էր գետնի վրա, ծակեց նրա վզի երակը։ Արյունը կասեցնելու ոչ մի հնար չեղավ, և քաջ մարդը մի քանի օրից հետո մեռավ, մեծ ցավ պատճառելով բյուզանդական բանակին, նույնիսկ և կայսրին։ Արտավազը նույնպես Պարսից Հայաստանից էր և նույնպես գերի էր ընկել հոռոմների ձեռքը մի պատերազմի մեջ, ուր նա մեծամեծ քաջություններով նեղել էր հոռոմներին[2]։

550 թվականին իտալական պատերազմը ներկայացնում էր բյուզանդական թուլացման կատարյալ պատկերը։ Ծերունի և փորձված Բելիսարիոսը, չկարողանալով այլևս մի բան անել իր ձեռքի տակ գտնված բանակով, որ կազմալուծվել էր, կռվի անընդունակ դարձել, հրաժարական էր տվել և վերադարձել Կ. Պոլիս։ Կայսրի հայացքը կանգ առավ Ներսես պատրիկի վրա, որ այն ժամանակ արդեն 80 տարեկան մի ծերունի էր, բայց դեռ լի եռանդով և գործելու անհագ տենչով։ Ստանալով զորքերի գլխավոր հրամանատարությունը, նա սկսեց մի զինվորական գործունեություն, որ նրան դասեց ռազմական հանճարների կարգը[1]։ Պատմագիրներից մեկն անվանում է նրան «մեծ և հզոր հանճար»[2]։ Եվ այդ ապացուցեց նա հենց սկզբից, պայման դնելով կայսրին, թե ինքը կվերցնի իր վրա այդ հանձնարարությունն այն դեպքում միայն, եթե իրեն կտրվեն առատ միջոցներ՝ զորքը վերակազմելու և պատերազմական հանդերձանքների համար։ Հուստինիանոսը կատարյալ համաձայնություն տվեց, և Ներսեսը տեղափոխվելով Փիլիպպուպոլիս, մեծ եռանդով ձեռք զարկեց մի նոր բանակ կազմելու։ Ամենայն հաջողությամբ վերջացնելով այդ գործը ձմեռվա ընթացքում, Ներսեսը 552 թվի գարնանը տարավ իր մեծ և ուժեղ բանակը Իտալիա՝ Վենետիկի վրայով։ Այս քաղաքը թեև իրեն չեզոք էր պահում բյուզանդագոթական պատերազմի մեջ, բայց երբ Ներսեսը նավեր պահանջեց իր բանակի փոխադրության համար, չկարողացավ մերժել այդ պահանջը։ Հասնելով Ռավեննա քաղաքը, որ Իտալիայում գտնվող կայսերական զորքերի կենտրոնատեղին էր, Ներսեսն անմիջապես սկսեց արշավանքների և հարձակումների մի երկար շարք, որ միալար հաջողություններով տևեց երեք տարի։ Գոթական Տոտիլաս թագավորը նվաճել էր ամբողջ Հարավային Իտալիան Հռոմի հետ, դուրս մղելով այնտեղից բյուզանդացիներին։ Ներսեսը որոշել էր մի ահեղ հարվածով կոտրել գոթական ուժը։ Այդ հաջողվեց նրան նույն տարվա ամռանը, երբ Տագին անունով տեղում նա վճռական ջարդ տվեց Տոտիլասի բանակին։ Գոթերի համար օրհասական էր Ներսեսի այս հաղթությունը, իրապես նրանց տիրապետության վերջն էր Իտալիայում։ Բայց այս հերոսական ժողովուրդը, որ սպառվում էր իր մղած պատերազմների մեջ, սուրը պատյանում չդրեց և նվաճվածի դերը չընդունեց, այլ ընդհակառակն, շարունակեց անհավասար մաքառումն ավելի մեծ համառությամբ։

Ներսեսին մնում էր նվաճել ամբողջ երկիրը քայլ առ քայլ, պաշարելով քաղաքները, հարձակումով վերցնելով նրանց։ Այսպես, նույն 552 թվին նա վերցրեց Հռոմ մայրաքաղաքը։ Պատերազմական մանր-մունր գործողություններն անթիվ էին և, որ ամենից զարմանալին է՝ պատերազմական բախտը չէր դավաճանում երբեք հայազգի մեծ զորավարին։ Բյուզանդական պատմագիրները, մանրամասն նկարագրելով բազմաթիվ մանր ու խոշոր ճակատամարտեր, երբեք չեն հիշատակում, որ Ներսեսը պարտություն կրած լինի։ Իսկ գոթերի վնասներն ահագին էին։ Մի պատերազմի մեջ սպանվեց նրանց Տոտիլաս թագավորը, որ մի հերոս էր։ Սրան հաջորդած Տեյասն սպանվեց մի ուրիշ կռվի մեջ։ Անհաջողություններն այնքան նեղեցին հալումաշ եղած և սաստիկ փոքրացած այդ ժողովրդին, որ նրա առաջնորդները ներկայացան Ներսեսին և հաշտություն խնդրեցին նրանից։

---

1 Le Beau, t. V, p. 79.

2 Ibid, p. 82.

---

1 Гельцер, стр. 33.

2 Le Beau, V, p. 11.

Հայ զորավարը պատրաստակամություն հայտնեց դադարեցնելու պատերազմական գործողությունները և հաշտություն կնքելու այն պայմանով, որ գոթերն իրենց ունեցած-չունեցածով թողնեն Իտալիայի սահմանները և հեռանան ուրիշ երկրներ։ Գոթերն այս պայմանը չընդունեցին։ Նրանց օգնության հասան ֆրանկներն ու գերմանացիները, սակայն այլևս շատ ուշացած էր այդ օգնությունը։ Թեև 70 հազարից ավելի էին այդ օգնական զորքերը, բայց լավ վարժված չէին, և Ներսեսն առանց դժվարությունների ջարդեց նրանց մաս-մաս։ Վերջին վճռական պատերազմը տեղի ունեցավ 555 թվին Կապուա քաղաքի մոտ։ Գերմանական ամբողջ բանակը բնաջինջ եղավ և նրանից ազատվածների թիվը, ինչպես հաղորդում են պատմագիրները, հինգ հոգուց ավել չէր։ Ներսեսը բնակություն հաստատեց Հռոմում։ Մրցությունը վերջացել էր։ Ամբողջ Իտալիան ենթարկված էր Հուստինիանոս կայսրի իշխանության։ Իտալիայում բնակված գոթական ազգն անհայտանում է պատմության ասպարեզից։ Կայսրն իսկույն վարչական կարգեր ստեղծեց՝ երկիրը կառավարելու համար և Իտալիայի բարձրագույն կառավարիչ նշանակեց Ներսեսին։

Ինչ որ առանձնապես հմայիչ է Ներսես պատրիկի անձնավորության մեջ, այդ այն էր, որ լինելով իսկապես մի մեծ զորավար[1], շարունակ հաղթության դափնիներ հնձելով ռազմադաշտերում, նա չդարձավ մի դաժան, խստաբարո իշխանավոր, այլ մնաց համեստ, մեղմաբարո մի մարդ։ Գոռոզությունն ու ամբարտավանությունը մնացին նրան անծանոթ։ Ինչպես ջերմեռանդ հավատացող՝ նա ամեն անգամ, պատերազմն սկսելուց առաջ, աղոթքներով և խնդրվածքներով դիմում էր Աստվածածնին։ Ուխտադրուժ թշնամիներին անգամ նա վերաբերվում էր մարդկայնաբար։ Այսպես, պատմվում է, որ իտալական քաղաքներից մեկը հնազանդություն էր հայտնել նրան և իր նշանավոր ազնվականներից պատանդներ էր տվել։ Երբ, պայմանի համաձայն, մի քանի շաբաթ անցնելուց հետո Ներսեսը զորքերով գնաց գրավելու այդ քաղաքը, բնակիչները խիստ դիմադրություն ցույց տվին նրան։ Հարկ եղավ պաշարել քաղաքը։ Ներսեսին շրջապատողները խորհուրդ տվին, բնակիչներին ահաբեկելու համար, պատանդներին կոտորել պարիսպների դիմաց։ Ներսեսը չափազանց անգութ համարեց այդ սպանությունները և դիմեց խորամանկության։ Պատանդների վզերը ծածկեց տախտակներով, որոնց վրայով շոր կապել տվեց։ Ապա ինքն անձամբ տարավ նրանց պարիսպների դիմաց և հայտնեց քաղաքացիներին, թե որովհետև ուխտադրուժ են հանդիսացել նրանք, ուստի նրանց պատանդները մահվան են ենթարկվում։ Պատանդներին չոքել տվին, դահիճները սրերով խփեցին նրանց պարանոցներին, և նրանք գետնի վրա տարածվեցին ինչպես մեռածներ։ Այդպես անել էր հրամայված նրանց, որովհետև նրանք չէին սպանված, տախտակները չէին թողել, որ սուրը կտրի նրանց պարանոցները։ Քաղաքում բարձրանում է լաց ու կոծ։ Բազմությունը բարձրանում է պարիսպների գլուխը և ծանր խոսքերով հանդիմանում է Ներսեսին այդքան անմեղ մարդկանց արյունը թափելու համար։ Տեսնելով, որ պատանդների սպանությամբ քաղաքը չպիտի անձնատուր լինի, Ներսեսը հայտնում է, թե ինքն անմեղ մարդկանց արյուն չէ թափել և իբրև ապացույց՝ հրամայում է սպանված կարծվածներին վեր կենալ։ Ապա արձակում

[1] Diehl—Justin. p. 171.

է նրանց, թույլ տալով վերադառնալ իրենց տները, իսկ քաղաքացիներին հայտնում է, թե ինքն առանց պատանդների էլ կվերցնե քաղաքը։ Այս վեհանձն վարմունքից հետո է, որ քաղաքն անձնատուր է լինում իր հոժար կամքով։

Զորքերի մեջ կարգապահություն և մարդավայել վարք հաստատելու համար Ներսեսը գործադրում էր իմաստուն միջոցներ։ Նրա խոսքը հեղինակություն ուներ և ազդում էր զորականների վրա։ Գերմանացիների դեմ տարած խոշոր հաղթանակը շատ հղփացրեց բյուզանդական զորքը։ Կարգապահությունը կորավ, սանձարձակություն մտավ զինվորականների մեջ, գինեխմությունն ու շռայլությունն այն աստիճան սաստկացան, որ զինվորները ծախում էին իրենց ձիերն ու զենքերը՝ գինի առնելու համար։ Ներսեսն այս բոլոր անկարգություններին վերջ տվեց ոչ թե խստություններով, պատիժներով, այլ սոսկ համոզիչ խոսքի ուժով։ Նա շնորհք ուներ և խոսելու մեջ։ Հավաքելով զինվորներին, նա մի հիանալի ատենաբանություն արավ։ Եթե այս առաջին անգամը լիներ, որ դուք հաղթություն եք տանում,—ասաց նա,—այն ժամանակ հասկանալի կլիներ ձեր այս անզուսպ հափշտակությունը. բայց հաղթությունն արդեն ձեր, քաջերիդ, բնությունն է դարձել, էլ ինչո՞ւ այսպես իրեն կորցնել ուրախությունից։ Ահեղ թշնամուն նվաճողը պիտի կարողանա նվաճել և իր կրքերը։ Եվ եթե զինվորն առանց զենքի մնա, էլ ի՞նչպես պիտի նա զինվոր լինի։ Կազմալուծված զինվորն է, որ հաղթվում ու ջարդվում է։

Մեր պատմության տեսակետից կարևոր է հիշատակել և այն, որ Ներսեսի թիկնապահների շարքում գտնված հայերն էլ, ինչպես և հայկական գնդի հրամանատարներն ու զինվորները, նույնպես անձնական անվեհեր քաջության գործեր էին ցույց տալիս։ Այսպես, բյուզանդական պատմագիրները նկարագրում են այն մենամարտը, որ ունեցավ Ներսեսի թիկնապահ Ընձուղը47 թշնամու բանակի մի ուժեղ հսկայի հետ։ Նրանք մենամարտեցին ձիով, և Ընձուղը, իր նիզակով շամփրելով իր ախոյանի ձախ կողը, գետին խորտակեց նրան։ Նկարագրվում է նաև հայկական գնդից վերցրած մի փոքրիկ խմբի քաջարի հարձակումը գերմանական մի ջոկատի վրա, որ ավարառություններով էր զբաղված և հափշտակել էր տեղական ազգաբնակության ամբարները[1]։

Իբրև մի ընդարձակ երկրի կառավարիչ էլ, Ներսեսը ցույց տվեց եռանդ և ընդունակություն։ Այդ պաշտոնում նա մնաց տասներեք տարի, թեև իննսուն տարեկանն անց մի ծերունի էր։ Նրա կառավարությունն անվանում են իմաստուն[2]։ Բայց երբ 565 թվին վախճանվեց Հուստինիանոսը, և գահն անցավ թույլ ու հիվանդոտ Հուստինոս Բ-ին, մոռացվեց մեծ կայսրի քաղաքականությունը և սկսվեց քանդվել այն ամենը, ինչ նա կառուցել էր իր երկարատև թագավորության միջոցին։ Ինչպես սովորաբար լինում է այս տեսակ փոփոխությունների ժամանակ, ամենից առաջ աչքից պիտի ընկնեին Հուստինիանոսի մերձավորներն ու սիրելիները։ Ներսեսի աստղն էլ սկսեց մարել։ Տեսնելով կենտրոնական կառավարության անուշադիր, գուցե նույնիսկ թշնամական վերաբերմունքը դեպի այդ հռչակավոր զորավարը, Իտալիայում գտնվող բյուզանդական պաշտոնյաները, որոնք ոչ մի առիթ

[1] Չամչեան, Բ, գլ. խբ—խդ։

[2] Le Beau, V, p. 342.

չունեին գոհ լինելու Ներսեսի խիստ կառավարությունից, սկսեցին գործել
Նրա դեմ, և Կ. Պոլիս գրավոր բողոքներ գնացին, թե Ներսեսը թալանում ու
կեղեքում է ազգաբնակչությանը։ Ներսեսին ատում էր մանավանդ Հուստի-
նոսի կին Սոֆյան։ Գոթերի և գերմանացիների հաղթողին հրամայվեց վե-
րադառնալ Կ. Պոլիս։ Հալածանք սկսվեց և մյուս նշանավոր զորավարի՝ Բե-
լիսարիոսի դեմ։ Այս վաստակավոր ծերունին, որ կուրացել էր, զրկվեց բո-
լոր կայքերից և հասավ այն դրության, որ, բռնած իր աղջկա ձեռքից,
դռնեդուռն ողորմություն էր հավաքում։
Ներսեսը չկամեցավ կայսրուհու վրեժխնդրության զոհը դառնալ և
չգնաց Կ. Պոլիս։ Պատմում են, որ Սոֆյան պատվիրել էր ասելու Ներսե-
սին, թե նա թող վերադառնա, որպեսզի թել մանի կանանց համար։ Լսե-
լով այդ վիրավորական խոսքերը, Իտալիայի հերոսը սրտնեղված ասում է.
«Գնա՛ ասա՛ քո տիրուհուն, թե ես այնպիսի մի մանված պիտի անեմ, որի
ծայրերը երբեք չպիտի կարողանաք գտնել»։ Նա վճռում է վրեժխնդիր լի-
նել Հուստինոսից ու նրա կնոջից և նամակ է գրում լանգոբարդների թա-
գավորին, որ գա Իտալիան նվաճի։ Եվ իրավ, լանգոբարդական մի ահագին
բանակ, բաղկացած 200 հազար հոգուց, մտնում է Իտալիա և նվաճում այն։
Այսպիսով, դուրս է գալիս, որ Ներսեսն իր անձնական կրքերին հագուրդ
տալու համար դավաճանում է այն պետության, որի փառքի համար ինքն
այնքան փայլուն հաղթություններ էր տարել։ Այսպես էր պատմության
դատավճիռը։ Սակայն նորագույն հետազոտությունները ցույց են տալիս,
որ Բելիսարիոսի և Ներսեսի հալածանքների պատմությունը հետին ժամա-
նակներում կազմված առասպել է և որ հավանական է, որ Ներսեսը մեռավ
Հռոմում իր պաշտոնի մեջ[1]։ Նա ապրեց 95 տարի։
Ներսես պատրիկից հետո Հուստինիանոսի ժամանակ Բյուզանդիայում
իր ծառայությամբ հռչակված հայն է մեր նախածանոթ Արտավան48 իշխա-
նը, Հովհաննես Արշակունու որդին, որին մենք տեսանք սկզբում Հուստի-
նիանոսի դեմ ապստամբված, ապա Խոսրով թագավորի մոտ ապաստանած
և նրա զորքերի շարքում բյուզանդացիների դեմ կռված, հետո նորից հռո-
մեացիների կողմն անցած և նրանց հետ պարսից դեմ պատերազմած։ Այնու-
հետև նա, ինչպես գիտենք, իր ընտանիքով բնակություն էր հաստատել
Կ. Պոլսում։
545 թվականին կայսրի դեմ ապստամբեց Հյուսիսային Աֆրիկայի
կառավարիչը, հռոմ զորավար Գոնթարը, հենվելով տեղային մավրիտանա-
կան ցեղերի վրա։ Կայսրն ապստամբի դեմ ուղարկեց մի ուժեղ բանակ,
որի մեջ գտնվում էր և մի հայկական գունդ։ Այս գնդի հրամանատարներն
էին Արտավան իշխանը, նրա Վահան եղբայրը, եղբորորդին, որի անունն
էր Գրիգոր, և ազգակիցը, որ կոչվում էր Արտաշիր։ Հռոմ զորաբանակի
գլխավոր հրամանատար Արովիդը Գոնթարից չարաչար պարտություն
կրեց, և նրա զորքերը փախան։ Պատերազմի մեջ սպանվեց Արտավանի եղ-
բայր Վահանը, որ շատ քաջություններ էր ցույց տվել։ Գոնթարն այս
հաղթությունից հետո հաշտություն կեղծեց Արովիդի հետ, խաբեց նրան
իր մոտ ճաշի կանչելով և ճաշի վրա էլ սպանեց նրան։ Մնացին հայ
իշխանները, որոնք և ուխտեցին վրեժ հանել ապստամբ Գոնթարից։ Ամենա-
լավ միջոցը համարվեց նենգությունը, որով գործել էր հենց ինքը Գոնթարը։

---

[1] Diehl, p. 170.

Արտավանը գաղտնի բանակցություններ սկսեց նրա հետ, հավատացնելով,
թե ինքն էլ ուզում է ապստամբվել կայսրի դեմ։ Այսպիսով նա իր գնդով
և ազգական իշխաններով անցավ Գոնթարի մոտ և մտերմություն էր ցույց
տալիս նրա նկատմամբ, և Գոնթարն էլ միանգամայն հավատալով նրան,
ոչ մի կասկած չէր տանում։ Իսկ այս հանգամանքի հովանու տակ հայ իշ-
խանները ծրագրում էին իրենց դավադրությունները։ Այս միջոցին հար-
կավոր եղավ զսպել մի քանի մավրիտան ցեղեր, որոնք ապստամբական
դրության մեջ էին։ Գոնթարն այս բանը հանձնեց Արտավանին՝ որ իր հայ
գնդով գնաց և նվաճեց ապստամբներին։ Կանգ առնելով Կարթագեն քաղա-
քում, Արտավանն այստեղ կանչեց և Գոնթարին, որ ուրախացած Արտա-
վանի հաղթություններով, մեծ խնջույք սարքեց։ Դավադրական սպանու-
թյունը, ինչպես սովորական էր, պիտի կատարվեր այդ խնջույքի մեջ։
Կազմվեց սպանության ծրագիրը, որ ամենայն մանրամասնություններով
նկարագրում են բյուզանդական աղբյուրները։ Ինչպես պայմանավորված
էր, հայկական գնդի մի մասը մտցվեց այն տունը, ուր տեղի ուներ խնջույ-
քը։ Սպանությունը հանձն առավ Արտաշիրը, պայման դնելով, որ եթե իր
հարվածից Գոնթարը մահացու վերք չստանա, այն ժամանակ Արտավանը
պիտի սպանի նրան, Արտաշիրին, որպեսզի սա Գոնթարի ձեռքը չընկնի և
տանջանքների ենթարկվելով՝ստիպված չլինի մատնել իր դավակից ըն-
կերներին։ Ճաշի վրա, երբ Գոնթարն արդեն լավ խմել էր, Արտաշիրը
խփեց նրան սրով, բայց միայն վիրավորեց։ Արտավանը վերջացրեց Արտա-
շիրի գործը, իր սուրը խրելով Գոնթարի կողը։ Նրա տված նշանով հայ զո-
րականները վրա թափվեցին և կոտորեցին Գոնթարի թիկնապահներին ու
կողմնակիցներին։ Ապա Արտավանը հայոց գնդի հետ միացնում է Գոնթա-
րի զորքերի մի մասը և, այսպիսով, վերահաստատում է կայսերական իշ-
խանությունն Աֆրիկայում։ Հուստինիանոսը լուր առնելով հայ իշխաննե-
րի այս գործի մասին, ուրախանում է և Արտավանին նշանակում է Աֆրի-
կայի դուքս։ Ապա, երբ Արտավանը վերադառնում է Կ. Պոլիս, տալիս է
նրան հյուպատոսի աստիճան։ Բայց այստեղ պատահում է մի բնորոշ դեպք,
որը միանգամից թշնամականի է վերածում Արտավանի վերաբերմունքը
դեպի կայսրը։ Ստանալով Հուստինիանոսի հավանությունը, Արտավանը
պատրաստվում էր ամուսնանալ նրա քրոջ աղջկա հետ, որ սպանված Արով-
իդ զորավարի կինն էր։ Բայց քիչ հետո կայսրը և Թեոդորան արգելում
են այդ ամուսնությունը, որովհետև տեղեկանում են, որ Արտավանն ամուս-
նացած էր իր երկրում, բայց արձակել էր կնոջը։
Լսելով այս անցուդարձը, Արտավանի կինը Բարձր Հայքից գնում է
մայրաքաղաք և ներկայանալով կայսրուհուն, պատմում է իր դրությունը։
Արտավանին հարկադրում են, որ նորից ապրի իր արձակած կնոջ հետ։
Բայց նա մի կարճ միջոցից հետո դարձյալ արձակում է կնոջը և հռոմների
ու նրանց կայսրի դեմ ատելությամբ լցված՝ միջոցներ էր որոնում, թե ինչ-
պես վրեժ հանե։ Այս որոնումների մեջ նա հանդիպում է Արշակ անունով
մի հայ իշխանի հետ, որ նրա ազգակիցն էր, նույնպես սերված լինելով
Արշակունյաց տոհմից։ Սա մի խորհրդավոր անձնավորություն էր։ Հայտ-
նի չէ, թե ինչ պատճառով, բայց հավանորեն պարսկական ոսկիներով կա-
շառված, նա փորձել էր դավադրություն սարքել Հուստինիանոսի կյանքի
դեմ և այս մտքով էլ համաձայնություն էր կայացրել Խոսրով Նուշիրվանի
հետ, բայց այդ դավադրությունը բացվել էր, Արշակը սաստիկ ծեծի էր են-

թարկվել թիկունքից, ապա նրան նստեցրել էին ուղտի վրա և շրջեցրել մայրաքաղաքը, հետո ազատ արձակել։ Սակայն անարգ պատիժն ավելի ևս պատգրգռել էր Արշակին և ահա նա, իմանալով Արտավանից, թե մի կնոջ պատճառով ի՛նչ անարգանքի է ենթարկվել նա, սկսում է ավելի ևս բորբոքել նրան։ Եթե ինքը Արշակը անարգվել էր հոռոմների ձեռքով, այդ դեռ այնքան մեծ բան չէր, քանի որ ինքն այնքան հայտնի մարդ չէ, ինչպես Արտավանը։ Մեծամեծ ծառայություններից և պատիվներից հետո այդքա՜ն անարգել, այն էլ մի կնո՞ջ պատճառով։ Արշակը մոռացել էր իր անձնական վիրավորանքը և այժմ մտածում էր, թե ի՛նչպես վրեժ հանել Հուստինիանոսից Արտավանին հասցրած անարգանքի համար։ Վերջապես միայն անձնական վիրավորանքը չէր, որ վրեժ էր պահանջում։ Հոռոմները ճնշում և լլկում էին Հայոց երկիրը. ժողովուրդը չէ կարողանում տանել հարկերի սարսափելի ծանրությունը։ Հայրենիքն էլ, ուրեմն, նույնն էր պահանջում, ինչ անձնական վիրավորված զգացմունքը, այն է՝ վրե՛ժ։[49]

Արտավանը բոլորովին անձնատուր է լինում Արշակին։ Որոշվում է սպանել կայսրին հենց պալատում, այն ժամանակ, երբ նա, ըստ սովորության, մի առանձին սենյակում ընթերցանությամբ էր պարապում մի ալևոր քահանայի հետ։ Դավադիրների համար բարեհաջող հանգամանք էր այն, որ կայսրից անբավական էր և նրա եղբորորդի Գերմանոսը, իսկ սա Արտավանի մտերիմ բարեկամն էր։ Նրան էլ այդ գործի մեջ խառնելու համար Արտավանը խոսեց նրա որդի Հուստինոսի (որ հետո հաջորդեց Հուստինիանոսին) հետ։ Այստեղ էլ ահա բացվեց դավադրությունը, և Արտավանը բանտարկվեց կայսրի հրամանով։ Բայց, ինչպես երևում է, նրա մատուցած մեծամեծ ծառայությունները չմոռացվեցին։ Հուստինիանոսը բավականացավ նրան բանտի մեջ պահելով։ Իսկ երբ գոթացիների պատերազմները հոռոմների դեմ սաստկացան Սիկիլիա կղզում, Հուստինիանոսն Արտավանին հանձնեց այն բանակը, որ ուղարկվում էր այդ կղզին։ Հայ իշխանը մեծ հաջողությամբ կատարեց այդ հանձնարարությունը և Սիկիլիայում ցույց տվեց այնքա՜ն նշանավոր և խոշոր քաջություններ, որ կայսրը ո՛չ միայն մոռացության տվեց նրա դավադրական փորձը, այլև նորանոր պատիվներով փառավորեց նրան։ Անձնապես լիուլի բավարարված հայ իշխանն այնուհետև մոռացավ, որ իր հայրենիքը հարստահարվում է բյուզանդական անհագ հարկահանների ձեռքով։

Մեզ մնում է հիշատակել մի ուրիշ քաջարի հայ իշխանի, որ անուն է թողել բյուզանդական տարեգրությունների մեջ։ Նրա անունն էր Հոհան Թովմայան՝ Քոշ կամ Գուշազ մականունով։[50] Այս ընդունակ պատերազմողի հերոսությունների հանդիսարան դարձավ բյուզանդական կայսրության մի այլ անկյունը, այն, որ գրավում էր Սև ծովի հարավ-արևելյան ափերը և կոչվում էր Լազիստան կամ Լազիկա։ Այս երկիրն ուներ իր առանձին ազգային իշխանությունը և կռվախնձոր էր դարձել Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև։ Ազգաբնակությունը, որ քրիստոնեություն էր ընդունել, նախադասելի համարեց բյուզանդական հովանավորությունը։ Կայսրությունը միջոցներ ձեռք առավ այդ երկիրը պաշտպանելու և շահագործելու համար։ Պաշտպանության համար կառուցվեց Պետրա[51] անմատչելի բերդը Սև ծովի ափին, Ռիոնի գետաբերանի վրա։ Հենվելով այդ ամրության վրա, բյուզանդական պաշտոնեությունն սկսեց այնքա՛ն անգթաբար կեղեքել ազգաբնակությանը, որ սա, իբրև փրկություն, որոնում էր պարսկական

տիրապետությունը։ Խոսրով Նուշիրվանը զորքեր ուղարկեց Լազիկան նվաճելու համար։ Այստեղ էր ահա, որ Հոհան Քոշը ցույց տվեց իր ուժն ու կարողությունը։ Նա հեծելազորի հրամանատար էր և իր հանդուգն հարձակումներով նեղում էր պարսիկներին։ Մի տեղ պարսկական բանակը, քաջաբար պատերազմելուց հետո, նահանջեց մի կիրճով։ Հոռոմները չկարողացան մտնել կիրճը՝ հալածանքը շարունակելու համար, որովհետև կիրճի մուտքը փակել էր մի վիթխարի պարսիկ, որը չէր թողնում ոչ ոքի մոտենալ այդ բնական դռներին։ Ողջ հոռոմ բանակի մեջ միայն Հոհան Քոշն էր, որ մենակ հարձակվեց այդ պարսիկ փահլևանի վրա, կռվեց նրա հետ, սպանեց նրան և այսպիսով ճանապարհ բաց արավ բանակի համար։ Մի ուրիշ անգամ ափխազների թագավորն էր ապստամբվել, և Հուստինիանոսը նրա դեմ ուղարկեց Հոհան Քոշին՝ նրա հայկական գնդի հետ, օգնական տալով և բյուզանդական զորքեր։ Քոշը մեծ հաջողությամբ գլուխ բերեց այս արշավանքը պաշարելով և վանելով ափխազներին։

Բայց ավելի նշանավոր էր այս քաջահաղթ պատերազմողի դերը 551 թվականին տեղի ունեցած պատերազմական գործողությունների մեջ։ Հոռոմներն իրենց բոլոր ջանքը գործադրում էին ետ խլելու Պետրա բերդը, որ պարսիկների ձեռքն էր ընկել տարիներ առաջ։ Կատաղի կռիվ բորբոքվեց բերդի պատերի տակ։ Բյուզանդացիները թեև կործանեցին պարիսպների մի մասը, բայց ներս մտնել չէին կարողանում, որովհետև պարսիկները չափազանց ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս։ Տեսնելով այս անխորտակելի դժվարությունը, Քոշը, վերցնելով իր հայկական գնդից մի փոքրիկ խումբ, գնաց ուրիշ տեղով ճանապարհ բաց անելու։ Նա կարողացավ խուժել իր մարդկանց հետ մի աշտարակի մեջ, ուր բազմաթիվ պարսիկներ կային, և դրանցից մեկը, մի ուժեղ և հաստաբազուկ կռվող, հարձակվեց Հոհանի վրա, սակայն սա մի ակնթարթում սպանեց նրան և ապա դուրս քշելով պահապան զորքը, ճանապարհ բաց արավ բյուզանդական բանակի համար։ Ներս խուժած թշնամու դեմ պարսիկներն այլևս չկարողացան մի բան անել, բայց միայն առաջացնելով հրդեհներ և բոցեղեն պարիսպներ կանգնեցնելով իրենց և հարձակվողների միջև։ Բայց փչեց հակառակ քամի և բոցերը դարձան պարսիկների դեմ, հնարավորություն տալով բյուզանդացիներին առաջանալ և գրավել քաղաքը։ Այս մեծ իրարանցման մեջ մահ գտավ, շատերի հետ, և քաջարի Հոհան Քոշը։ Մի պարսիկ աշտարակի վրայից քարի մի մեծ կտոր գցեց նրա գլխին և ջարդեց։ Հերոսի մահը մեծ ցավ պատճառեց բանակին և նույնիսկ կայսրին[1]։

7. **Հելլենասերներ**։ Նախընթաց բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, թե ո՛րքան հզոր էր բյուզանդականության քաղաքական ազդեցությունը Հայաստանի վրա Հուստինիանոսի ժամանակ։ Այդ ազդեցության քաղաքական կողմը, սակայն, գերազանցորեն միայն Բյուզանդական Հայաստանն էր ընդգրկում և նրա թույլ արձագանքները միայն կարող էին անցնել պարսկա-բյուզանդական սահմանագծից դեպի արևելք։ Այստեղ, հայության այս հոծ զանգվածում, որ հպատակված էր սասանյան շահերին, շատ հասկանալի պատճառներով չէին կարող արմատանալ այնպիսի երևույթներ, որոնց մենք տեսանք Բյուզանդական Հայաստանում իբրև հետևանքներ Հուստինիանոսի ներքին քաղաքականության։ Բայց այստեղ առաջվա պես հզոր

---

[1] Չամչեան, Բ, գլ. ԼԸ։ Le Beau, V, p. 184.

էր մնում Բյուզանդիայի կուլտուրական ազդեցությունը, որի մեծագույն
գործոններն էին քրիստոնեությունը և հելլեն-քրիստոնեական գրականու-
թյունը։

Վեցերորդ դարի առաջին կեսն առանձնապես նպաստավոր էր Պարս-
կական Հայաստանում գրականության զարգացման համար։ Խոսրով Նու-
շիրվանը գրականության հովանավոր էր և նրա ժամանակ պարսկական
գրականությունը նշանավոր չափերով հարստացավ ինքնուրույն, բայց մա-
նավանդ թարգմանական երկերով։ Ինքնուրույն գրականության գլխավոր
հիշատակարանն այն է, որ Զենդ-Ավեստան նորից խմբագրվեց և բացատրը-
վեց պեհլեվի լեզվով։ Խոսրովի ժամանակ էր, որ գրվեց աշխարհական-
կրոնական մի տիեզերագրություն՝ «Բունդեհեշտ» անունով։ Հեղինակվեց
նաև մի խրատական շարադրություն, որի մեջ նկարագրվում էր, թե ինչպես
մի մոգ գնում է հանդերձյալ աշխարհը և ինչեր է տեսնում այնտեղ։ Այդ
հոգևոր խրատների հավաքածուն կոչվում է «Արդա-Վիրաֆ Նամակ»[1]։ Խոս-
րովը մի նշանավոր գործ կատարեց և նրանով, որ հավաքել տվեց պարսից
ժողովրդի մեջ գոյություն ունեցած բոլոր վեպերը Իրանի հին թագավորնե-
րի մասին։ Այդ ժողովածուն Ֆիրդուսիի «Շահնամե»-ի նախակարապետն էր։
Իսկ թարգմանություններ պարսկական գրականությունն անում էր հնդկական
գրականությունից, և այս ես խոշոր դեր է կատարել ընդհանուր գրակա-
նության պատմության մեջ, իբրև առաջին միջնորդ, որի միջոցով հնդկա-
կան վեպերն սկսեցին անցնել դեպի Արևմուտք, տարածվել քաղաքակիրթ
ազգերի մեջ, նորանոր մշակումների ենթարկվելով նոր միջավայրերում։
Այսպես էին, օրինակ, «Կալիլակ և Դամանակ» վերնագիրը կրող բուդդհա-
յական ժողովածուն և վեպերը, որոնցից ապագայում կազմվեցին արաբա-
կան հռչակավոր «Հազար և մեկ գիշերների» մի շարք պատմվածքները[2]։

Այս գրական մեծ շարժումը նպաստավորեց, որ ծաղկման ամենա-
բարձր աստիճանի հասնի սիրիական գրականությունը։ Նա, հավատարիմ
մնալով քրիստոնեական ոգուն և շարունակելով մնալ եկեղեցական, իբրև
գլխավոր աղբյուր ճանաչում էր հունական գրականությունը[3], որից և փո-
խառություններ էր անում թարգմանությունների միջոցով, չնայած որ նես-
տորականությունը և միաբնակությունը բաժանել էին սիրիացիներին հու-
նական եկեղեցուց և նույնիսկ թշնամական հարաբերություններ հաստա-
տել երկուսի միջև։ Այս երևույթը չափազանց բնորոշ է, և այն պետք է
նկատի առնել նաև հայոց գրականության վերաբերմամբ։ Դավանական
տարբերությունը, առաջացնելով նույնիսկ կատաղի անհամբերողություն,
փոխադարձ ատելություն, չէր արգելք դառնում, որ սիրիացիները դար-
ձյալ հունական գրականության վրա դաստիարակվեն և նրա հարստու-
թյուններից օգտվեն։ Այս բնական էր դառնում մանավանդ այն պատճա-
ռով, որ նեստորական միաբնյա դավանությունները հունական աշխարհում
էին ծագել և ունեին իրենց ջատագովական գրականությունը հունարեն
լեզվով, որից և պիտի օգտվեին այդ դավանություններին պատկանող եկե-
ղեցիներն իրենց ուղղափառությունն ապացուցելու համար։

---

1 Ֆրանսերեն թարգմանությունը, „Arta Viraf-Namak, ou livre d'Arda Viraf", trad.
par A. Barthélemy, Paris, 1887.

2 Крымский, стр. 76—79։

3 Սիրիական գրականության այս ոսկեդարի մասին տե՛ս В. Райт, «История Си-
рийской литературы», СПБ, 1902.

Եվ այսպես, մի այնպիսի ժամանակ, երբ Պարսկաստանում և Սիրիա-
յում տեղի ունեին գրական նշանավոր շարժումներ, Հայաստանը չէր կա-
րող հեռու և խորթ մնալ այդ շարժման վերաբերմամբ։ Մենք տեսանք ար-
դեն, որ 6-րդ դարի ամբողջ առաջին կեսում դավանական խտրությունների
պայքար դեռ չէր սկսվել հայերի և հույների միջև, ուստի ոչ մի արգելք
չկար, որ երկու ազգերը մերձավոր գրական հաղորդակցության մեջ գտըն-
վեին։ Եվ հենց 6-րդ դարի այս շրջաններում հայերի մեջ սկզբնավորվում
և սկսում է զարգանալ գրական մի ամբողջ ուղղություն, որը կարելի է ան-
վանել հելլենասիրական:

Թարգմանիչների դարում, ինչպես տեսանք, գոյություն ուներ դպրո-
ցական մի տիպ—Սահակ-Մաշտոցյան։ Վեցերորդ դարից հայ դպրոցն սկը-
սում է ճյուղավորվել և ընդունել տարբեր գունավորումներ։ Ամենանշա-
նավորը Սյունյաց դպրոցն էր, որի առաջին խոշոր ներկայացուցիչը, եթե ոչ
հիմնադիրը, Պետրոս եպիսկոպոսն էր։ Այս դպրոցը պտուղներ տալիս էր
համարյա երեք դար։ Եվ նրա գլխավոր հատկանիշը հունագիտությունն էր,
այնպես որ հելլենասերների գրականությունը գլխավորապես այս դպրոցի
շուրջն էր ճոխանում։ Նրան պատկանող մի շարք հոգևոր գործիչներ կրում
էին «քերթող» գրական տիտղոսը, որ միաժամանակ գիտական տիտղոս էլ
էր։ Սյունյաց դպրոցն ամենից առաջ աչքի էր ընկնում իր հելլենաբանու-
թյամբ: Այս նշանակում էր, թե հունական լեզվի ձևերն ու ոգին մտան հա-
յոց գրականության մեջ։ Այլևս 5-րդ դարի դասական թարգմանություննե-
րը չէին երևում հայոց գրական հրապարակում, այլ ավելի ստրկական
թարգմանություններ, որոնք արհեստական էին դարձնում մեր գրական լե-
զուն, հպատակեցնելով նրան հունարենի ձևերին։

Բայց հելլենաբանությունը միայն գրողների պակասավոր պատրաս-
տականությամբ և գրական ճաշակի թուլացմամբ չպետք է բացատրել։ Հել-
լենասերների գրականության մեծագույն մասը հասկանալի է դարձնում,
թե ինչ զորավոր պայմաններ էլ կային, որոնք համարյա անխուսափելի
էին դարձնում այդ գրական անկումը։ Բանն այն է, որ հելլենասերների
գրականությունը ո՛չ միայն թարգմանական է համարյա ամբողջովին, այլև
այն հատկությունն ունի, որ գլխավորապես նեղ կրոնական հորիզոնների
մեջ չի ապրում, և նրա ձգտումն է մասնավորապես հունաց գիտական մտքի
հայացումը։ Թարգմանվում են հունաց հին մեծ փիլիսոփաներից մի քանի-
սի երկերը և սրանց վերաբերմամբ եղած մեկնությունները։ Հայոց լեզուն
չուներ պատրաստի ձևեր այդ գիտական մտքի ճշգրիտ և լիակատար ար-
տահայտության համար, և հելլենասերներին էր մնում ստեղծել մի նոր գի-
տական լեզու։ Եթե նրանք հելլենաբանություններով էին խճողում իրենց
գործերը, այդ դեռ վկայություն չէր, թե նրանք լավ չգիտեին իրենց մայ-
րենի լեզուն։ Այստեղ, ընդհակառակը, գործում էր լավ գիտակցած անհրա-
ժեշտությունը, մի ամբողջ մշակված սիստեմ[1]։ Թարգմանությունը պիտի
լիներ ճիշտ, մանավանդ երբ նա ներկայացնում էր մի հանճարեղ մտածո-
ղի, օրինակ, մի Արիստոտելի հեղինակությունը։ Ճշտության հարցն այն-
քան ճնշում էր հայ թարգմանիչներին, որ նրանք ստիպված էին լինում
բռնացիություն, ստրկականություն մտցնել և այսպիսով զոհել մայրենի

---

1 Մանանդեան, «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի, ընծայեալ Էլիասի իմաս-
տասէրի», Պետեր., 1911, եր. V։

լեզվի ջահերը հունականի շահերին, և այս մինչ այն աստիճան, որ այդ
թարգմանությունները համարյա միանգամայն անհասկանալի էին դառնում։
Մյուս, ավելի պակաս հռչակ ունեցող հեղինակների գործերը թարգմանվում
էին համեմատաբար ազատ կերպով[1]։

Այսպիսով հելլենասերների դպրոցը մշակել է իր համար շատ ինքնա-
տիպ մի դեմք։ Նրան կարելի է ճանաչել թե՛ իր գրական գործերով և թե՛
իր առանձնահատուկ լեզվով։ Նրա նշանակությունը հայ մտքի և գրակա-
նության զարգացման մեջ շատ խոշոր է եղել։ Առավելապես այդ դպրոցի
աշխատավորների ջանքերով է, որ մեզանում գոյություն է ստանում «ար-
տաքին» անվանված գիտությունը, այսինքն այն, որ սերտորեն չի կապ-
ված կրոնի և եկեղեցու հետ։ Այդ գիտությունը հենց իր խրթին բովան-
դակությամբ և լեզվով դարերի ընթացքում Հայաստանի սահմաններում
հնարավոր բարձր կրթությունն էր ներկայացնում և ահագին դաստիարակ-
չական նշանակություն ուներ հայ մտավորականության համար։ Առանձնա-
պես հիշատակելի է և այն, որ թեև թարգմանությունների մեջ աղճատվում
էր հայոց լեզուն, բայց դրա հետ միասին ստեղծվում էին և բառեր՝ գիտա-
կան տերմիններ արտահայտելու համար։ Այս ստեղծագործություններից
այսօր օգտվում ենք և մենք, 20-րդ դարում ապրողներս։

Վեցերորդ դարի հելլենասերների ինքնուրույն աշխատությունները
թվով շատ մեծ չեն։ Պետրոս Սյունեցուն վերագրվում են շատ գրություն-
ներ[2], բայց դրանցից մի քանիսն են միայն մեզ հասել և ունեն կրոնական
նյութերի բովանդակություն[3]։ Ավելի աչքի ընկնող են այդ տեսակ աշ-
խատությունները փիլիսոփայության (իմաստասիրության) ասպարեզում։
Գալով թարգմանական աշխատություններին, ժամանակագրական հաստա-
տուն տվյալներ չկան բոլորի վերաբերմամբ, բայց ընդհանուր ցուցմունք-
ների վրա հենված՝ կարելի է ասել, թե 6-րդ դարի առաջին գործերից մեկն
է[4] Նոննոսին վերագրվող այն բացատրությունների թարգմանությունը,
որոնցով լուսաբանվում են Գրիգոր Նազիազանցու հինգ ճառերը[5]։ Այս աշ-
խատության մեջ մանրամասն տեղեկություններ են բերված հունաց և եգիպ-
տացիների հին կրոնական պաշտամունքներից և պատմությունից։ Եվ գոր-
ծի ամբողջ նշանակությունն էլ հենց այս բովանդակությունն է, որ հետա-
քրքրական տեղեկություններ է տալիս երկու քաղաքակրթված ազգերի մտա-
վոր և քաղաքական կյանքից։ Հայ զարգացող մտավորականության համար
չափազանց հրահանգիչ պիտի լիներ այսպիսի մի աշխատություն, որ մի
կողմից լուսաբանում էր եկեղեցու հռչակավոր հայրերից մեկի գրվածքը,
իսկ մյուս կողմից էլ պարզ ու դյուրամատչելի լեզվով օտար կյանքն էր
պատկերացնում։

Նոննոսից հետո կարելի է հիշատակել Փիլոն Եբրայեցու իմաստասի-

[1] Н. Адонц, «Дионисий Фракийский и армянские толкователи», Петер., 1915, стр. CLXXXVI.

[2] Հ. Գ. Զարբհանալյան, «Պատմություն հայկական հին դպրության», Վենետիկ, 1897, էր. 409—413։

[3] Գալուստ Տեր-Մկրտչյան, «Պետրոս Սյունյաց եպիսկոպոս», Վաղարշապատ, 1902։

[4] Հ. Ա., «Նոննոսի մեկնութիւնք Գրիգորի Աստուածաբանի հինգ ճառից» («Հանդէս ամսօրեայ», 1904, էր. 167)։

[5] Հրատարակել է Հ. Մանանդյանը „Zeitschrift für armenische Philologie" հանդեսի մեջ (1902, էր. 221—272)։

րական գրվածքի թարգմանությունը[1]։ Փիլոն Եբրայեցին կամ Ալեքսան-
դրացին Քրիստոսի ժամանակակից մի հրեա էր, որ ապրում էր Եգիպտոսի
Ալեքսանդրիա քաղաքում։ Նա աշխատում էր միացնել հունական փիլիսո-
փայությունը հրեական ավանդությունների հետ, այսինքն՝ հունական գի-
տությունը ծառայեցնել Աստվածաշնչին իբրև նրա հեղինակությունը հաս-
տատող և ամրապնդող։ Մեծ նշանակություն ստացավ նրա այս աշխատու-
թյունը ոչ միայն հրեության համար, այլև քրիստոնեության, որ հրեու-
թյունից էր դուրս եկել։ Ապագա քրիստոնեական աստվածաբանությունն իր
գլխավոր հիմքերից մեկն էր դարձնում Փիլոն Եբրայեցուն։ Այս կարևոր
կրոնական-իմաստասիրական աշխատությունը, հայերենի վերածվելով, մեծ
ազդեցություն ունեցավ և հայոց գրականության մեջ[2]։

Մեր հին գրական ավանդությունները 5-րդ դարի թարգմանիչների
շարքում նշանակում են մի շատ նշանավոր գիտնական հայի անուն—Դա-
վիթ Անհաղթ փիլիսոփա, որի գործերն են մի շարք թարգմանություններ
հունաց փիլիսոփայական գրականությունից և դրանցից մի քանիսի վերա-
բերմամբ իր հեղինակած մեկնաբանությունները։ Սակայն նորագույն բա-
նասիրական ուսումնասիրություններն ապացուցել են, որ Դավիթ Անհաղ-
թի անունով մեզ հասած և մեր հին գրականության պարծանքը կազմող
փիլիսոփայական այդ աշխատությունները պետք է բաժանել երկու Դա-
վիթների մեջ.—մեկը հայ է, կրոնական-փիլիսոփայական ուղղությամբ
գրող մի շատ աչքի ընկնող դեմք, որ ապրում էր 6-րդ դարի առաջին կե-
սում, ծագումով Հարք գավառից էր և այս պատճառով էլ կոչվում էր Դա-
վիթ Հարքացի[3], իսկ մյուսը—Դավիթ մեկնիչն է, հավանորեն արևելքցի,
գուցե նույնիսկ հայ, որ, սակայն, գրում էր հունարեն։52 Սրա մեկնություն-
ներն են, որ թարգմանվել են հունարենից հայերենի և սխալմամբ վերա-
գրվել նույն Դավիթ Հարքացուն[4]։

Փիլիսոփայական գրականության գոյությունը Հայաստանի եկեղեցա-
կան հողի վրա մի երևույթ է, որի բացատրության համար կարևոր է չմո-
ռանալ մեզ արդեն շատ լավ հայտնի այն համաքրիստոնեական հանգա-
մանքը, թե ո՛րքան եկեղեցուն անհրաժեշտ էր իր համար նեցուկներ հիմնել
հունական գիտության վրա։ Նույն անհրաժեշտությունը գոյություն ուներ
և հայոց եկեղեցու համար հայ դպրության սկզբից։ Այս եկեղեցական շահին
է ահա պարտական հայ աշխարհն իր մայրենի լեզվով Արիստոտել, Պոր-
փյուր ունենալու պատիվը։ Ճիշտ է, հունական ամբողջ գիտությունը չէր
անխառն մաքրությամբ ներկայացնում այս թարգմանությունների մեջ,
ճիշտ է, այն, ինչ որ հայացվում էր մի շքեղ ու ընդարձակ գիտության
խեղճ փշրանքներն էին միայն, թարգմանված մի խրթին լեզվով, որ
միայն ընտրյալների փոքրիկ շրջաններին կարող էր մատչելի լինել, բայց
և այդպես, այս աղքատիկ պաշարն էլ բավական էր, որ քրիստոնեությու-
նը, իբրև պատճառ այսպիսի գրական երևույթի, համարվեր բարերար
և Հայաստանի պես մի խեղճ ու մութ երկրի։ Եվ եթե նկատի առ-
նենք այդ երկրի մտավոր միջոցները, կհասնենք այն եզրակացության,

[1] Գալուստ Տեր-Մկրտչյան, «Դավիթ Հարքացի», Վաղարշապատ, 1903, էր. 4։

[2] «Փիլոն Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս», Վենետիկ, 1826 (600 երես)։

[3] Տեր-Մկրտչյան, «Դավիթ Հարք.», էր. 4։

[4] Հ. Մանանդյան, «Դավիթ Անհաղթի խնդիրը», Վաղարշապատ, 1904, էր. 17—18։

ար մեր հին փիլիսոփայական գրականությունը, թարգմանական թե ինք-
նուրույն, նույնիսկ բավական առատ է։ Մեզ հասել են բազմաթիվ կտոր-
ներ, որոնց վերաբերմամբ, տարաբախտաբար, անհնարին է որոշ ժա-
մանակագրություն ճշտել, բայց որոնք մինչև այսօր տպված լինելով զա-
նազան տեղերում, ներկայացնում են այսպիսի նյութ։ Դավիթ Անհաղթին
վերագրված են հետևյալ աշխատությունները. «Սահմանք իմաստասիրու-
թեան», «Ներածութիւն Պորփիւրի», «Վերլուծութիւն Ներածութեան Պոր-
փիւրի», «Ստորոգութիւնք Արիստոտելի», «Մեկնութիւն Ստորոգութեանց
Արիստոտելի», «Արիստոտելի յաղագս մեկնութեան», «Պէրիարմենիոս Արիս-
տոտելի» (թարգմանութիւն և մեկնութիւն), «Մեկնութիւն չորեքտասան
գրոց Արիստոտելի ի Վերլուծականն», «Արիստոտելի Թուղթք» («Պատմու-
թիւն յաղագս աշխարհի)»[1]։ Մի քանի կտորներ ևս, հատկապես Դավիթ
Հարքացու գրվածքներից, հրատարակվեցին էջմիածնի Մատենադարանի
ձեռագրերից[2]։ Այսպես են՝ «Դաւթի Հարքացւոյ և Փիլիսոփայի որ յիմաս-
տասիրական և յիմաստասիրելի հարցուածս», «Իմաստութիւն Դաւթի Քեր-
ողողի», «Դաւթի Հարքացւոյ՝ վասն իւրոյն զոր արար Մովսէս», «Նկատումն
Արիստոտելի»։ Վերջերս հրատարակվեց[3] և Արիստոտելի «Ստորոգութիւնք»
երկի մեկնաբանության մի այլ ընդարձակ թարգմանություն։ Այս աշխա-
տության հեղինակ համարվում է էլիաս իմաստասերը։ Նայած թարգմանու-
թյան արտաքին պայմաններին, նա էլ պետք է որ հելլենասերների դըպ-
րոցի գործը լինի։ Իմաստասիրական գրականության պատկանող մի փոք-
րիկ աշխատություն է և «Խօսք Սեկոնդոս Իմաստասիրի առ Անդրիանոս կայ-
սեր»[4], որ թարգմանված է հավանորեն դարձյալ այս 6-րդ դարում[5]։
Գիտական այսպիսի բեղմնավոր գործունեությամբ տարված հելլենա-
սերները չէին կարող մոռացության տալ գիտության այնպիսի մի կարևոր
և ընդարձակ ճյուղ, որպիսին էր Քերականությունը։ Այս առարկան հնում
չէր հասկացվում ներկայի անձուկ մտքով, այլ պարունակում էր իր մեջ և
մի շարք այլ գիտություններ—բառբառագիտություն, պատմություն, քննա-
դատություն, բանաստեղծական արվեստ և այլն։ Քերականական արվեստին
հմուտ մարդկանց էլ, ինչպես և բանաստեղծներին, անվանում էին Քերթող։
Այս գիտական տիտղոսը, ինչպես ասացինք, հաճախ էր հատկացվում Սյու-
նյաց դպրոցին պատկանող գրական գործիչներին, և այս մի ապացույց է,
որ քերականական գիտությունն ավելի զարգացած էր այդ դպրոցում։ Հա-
վանաբար հենց այստեղ էլ 6-րդ դարի հելլենասերները թարգմանեցին
հնում մեծ հռչակ ստացած Դիոնեսիոս Թրակացու «Քերականություն»-ը[6],
որ մեզանում էլ այնքան մեծ նշանակություն ստացավ լեզվագիտական և
հարակից ուսմունքների տեսակետից, ինչպես և հունական աշխարհում։ Կա-

1 «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833։

2 Տեր-Մկրտչյան, «Դավ. Հարք.», եր. 5—39։

3 Հ. Մանանդյանի աշխատությամբ և «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» վեր-
նագրով, Պետեր., 1911։

4 «Սոփերք Հայկականք», գիրք Ա, Վենետիկ, 1858, եր. 63—70։

5 Հ. Հ. Տաշյան, «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք», Հ. Ա., Վիեննա,
1895, եր. 208։

6 Առաջին անգամ հրատարակված է Փարիզում 1824 թվին հետևյալ վերնագրով՝ «Քե-
րականութիւն Դիոնեսիոսի Թրակացւոյ հանեալ ի թագաւորական գրատանէ Փարիզու
և ի լոյս ընծայեալ ի Յոյն, ի Հայ և ի Գաղղիացի լեզուս ի Ցակոբայ Շահան-Ջրպետեան
Սըեաստացւոյ»։

րեոր գիտությունը, որ պարունակված էր այդ աշխատության մեջ, նույն-
պես մեկնություններ էր պահանջում, և ահա մեր հին գրականության մեջ
մենք հանդիպում ենք մի շարք մեկնությունների, որոնցից հնագույնը[1]
պատկանում է Դավիթ փիլիսոփային, որ, անշուշտ, մեզ ծանոթ Դավիթ
Հարքացին է։
Ինչպես նկատեցինք վերևում՝ սիրիական գրականության մասին խո-
սելիս, հունական գրականության դիմում էին և այն եկեղեցականները,
որոնք հունական եկեղեցուց մերժված դավանաբանական դրույթներն
էին ուզում պաշտպանել։ Հակաքաղկեդոնական գաղափարն արդեն այնքան
հաստատուն հող ուներ նվաճած հայության մեջ, որ սկսեց իր սեփական
գրականությունը, իր գաղափարախոսությունը մշակել։ Այս տեսակ գրա-
կանության առաջին գործ է այն ընդարձակ վիճաբանական աշխատու-
թյունը, որ հունարենից թարգմանվեց 6-րդ դարի կեսում և որի ամբողջ
նպատակն է ապացուցել Քաղկեդոնի ժողովի անուղղափառությունը։ Դա
5-րդ դարի հեղինակ Տիմեթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ն[2] էր, ժողո-
վածու հույն եկեղեցական գրականության մեջ հայտնի հեղինակ հայրերի
գրություններից, որոնք դավանաբանական հետաքրքրություն են ներկա-
յացնում և հենց այս պատճառով էլ ղեկավարող նշանակություն են ունեցել
և մեր եկեղեցական կյանքում։
8. Մի գրական գլուխ-գործոց: Մեր 6-րդ դարը մի ժամանակ զարմա-
նալի ամուլ էր համարվում գրական, մանավանդ ինքնուրույն գրական գոր-
ծունեության տեսակետից։ Մի քանի եկեղեցականների պաշտոնական մի
քանի գրությունններն էին, որ զետեղվում էին այն դարում իբրև արդյունք
նրա մտավոր ամբողջ գործունեության։ Սակայն քննական բանասիրու-
թյունն ապացուցեց, որ այդ լոկ անգիտությունից առաջացած մի նախա-
պաշարմունք է։ Մենք արդեն տեսանք, թե ինչ զարմանալի արգասավոր
թարգմանական գործունեություն էր եռում 6-րդ դարում։ Նույն բանա-
սիրական քննությունններն ընծայել են այս նույն դարին և մի մեծ հե-
ղինակ, մի խոշոր ինքնուրույն տաղանդ, որ համարվում էր 5-րդ դարի
զարդերից մեկը, բայց այսուհետև պիտի կազմե 6-րդի պարծանքը53։ Դա
Եղիշեն է, Վարդանանց պատերազմի պատմության հեղինակը։ Զետեղվելով
6-րդ դարում, Եղիշեն ավելի ևս մեծանում է իբրև հեղինակ, դառնում է
մի ամբողջ առանձնացած գրական փառավոր երևույթ։
Իր տեղում[3] մենք արդեն ցույց տվինք, թե ինչ է Եղիշեն կամ նրա
անունով գրած հեղինակն իբրև պատմագիր։ Այստեղ նրա գործը պիտի ներ-
կայանա մեզ իբրև գրական ստեղծագործություն։ Մենք ասել ենք և այն,
որ Վարդանանց պատերազմի պատմությունն ավելի դյուցազներգական
վիպասանություն է, քան լուրջ մի պատմագրություն։ Այս գեղարվեստական
հատկության տեսակետից Եղիշեն մի առանձնացած երևույթ է ոչ միայն
6-րդ դարում, այլ առհասարակ մեր ամբողջ հին գրականության մեջ։ Հե-
ղինակի փայլուն տաղանդը սքանչեցրել է սերունդներ սերունդների հետևից։
Եվ, բնականաբար, այսպիսի մի հեղինակի շուրջը ժողովրդական մեծարան-

1 «Դաւթի Փիլիսոփայի Մեկնութիւն Քերականի» (տե՛ս Н. Адонц, Дионисий Фрак.,
եր. 79—124)։

2 Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Ալեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողո-
վոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ վարդապետի և Երուանդ վար-
դապետի, էջմիածին, 1908։

3 Տե՛ս վերև, գլուխ Բ, 1։

քը պիտի հյուսեր նվիրական ավանդություններ և սրբազան առասպելներ։ Մինչդեռ քննադատությունը չի կարողանում նույնիսկ առանց վերապահումների ընդունել, արդյոք ճի՞շտ է, որ այդ պատմության հեղինակը եղել է Եղիշե անունով մեկը, ազգային ավանդությունը վաղուց, գուցե հենց նույն 6-րդ դարից, նրան ներկայացնում է իբրև մեկը 5-րդ դարի գործիչներից։ Եղիշեն, ասում է, Վարդան Մամիկոնյանի զորապետներից մեկն էր, նույնիսկ և ազգական էր նրան[1]։ Ականատես և մերձավոր մասնակից լինելով այն բոլոր անցուդարձին, որ տեղի ունեցավ Վարդանանց շարժման միջոցին, Եղիշեն նկարագրեց այդ բոլորն իր հռչակավոր աշխատության մեջ, ապա, Ավարայրի ճակատամարտին հետևած լքման և կործանման տարիներում, թողնելով զինվորականի կյանքը, բնակություն հաստատեց նախ Մոկաց լեռների, ապա և Ռշտունյաց երկրի քարայրերում, Վանա ծովի ափին, կերակրվելով խոտով։ Պատմվում է և այն, որ սիրիացի Բարծուման, գալով Հարավային Հայաստան, գտնում է Եղիշեին նրա ճգնարանում, վերցնում է նրա հեղինակությունը և վրեժ հանելով Արծրունիների տոհմից, ոչնչացնում է Վարդանանց պատերազմի պատմության մեջ այն ամենը, ինչ վերաբերում էր այդ տոհմին և հատկապես Վահան Արծրունուն, որ Վարդանին ընկերակից էր և նահատակվել է նրա հետ։ Եղիշեն հնարավորություն չի ունենում նկատել այդ խարդախությունը։ Բարծուման վերադարձնում է իր վերցրած գիրքն այն ժամանակ, երբ վախճանված էր հեղինակը[2]։ Այս մահն էլ հրաշալի էր։ Հովիվները պատահաբար գտան մահացած ճգնավորին։ Մոկաց և Ռշտունյաց իշխանների միջև վեճ է բացվում, թե ո՛ւմ պիտի պատկանի սուրբի դիակը։ Վերջը համաձայնում են բաժանել դին իրենց մեջ։ Հրաշագործ էին այդ մասունքները, հավատացնում է սրբազան առասպելը. հիվանդները բժշկվում էին։ Եվ դեռ այսօր էլ, Վանա ծովի ափին, Ոստան քաղաքի մոտ, մի անշուք վանքում, որի անունն է Ձաղար Ս. Նշան, ցույց են տալիս անգիր ու անհիշատակ մի գերեզման, որի մեջ իբր թե դրվել է այն հեղինակը, որի գրիչը դարեր շարունակ հուզել է հայի սիրտն իբրև Ավարայրի «պլպուլ»։

Այս ավանդությունները միայն այն հետաքրքրությունն են ներկայացնում, որ մեզ տեղափոխում են Հայաստանի հարավը, Մոկաց և Ռշտունյաց երկրները։ Մենք տեսանք, որ Վարդանի ավանդությունն էլ նույն այս կողմերում է կատարվում։ Ապա ուրեմն Եղիշեի ավանդությունն էլ կարող ենք համարել մի ճյուղ այն ավանդավեպի, ուր Վարդանը դուրս է բերվում իբրև Հարավային Հայաստանում գործած մի հերոս[3]։

Բայց ով և լինի Վարդանանց պատմության հեղինակը, նա, անտարակույս, շատ փայլուն մի երևույթ է մեր գրականության մեջ։ Ամենից առաջ նա ցույց է տալիս, թե հելլենասերների դպրոցն իր աղքատ, խրթնացած, հելլենաբանություններով խճողված լեզվով միակ տերն ու տիրականը չէր 6-րդ դարում։ Նա մի գեղեցիկ վկայություն է, թե 5-րդ դարը դեռ ապրում էր հայկական դաստիարակության մեջ, թե տաղանդավոր գրչի տակ լեզվի ինչ վճիտ և հարազատ պարզություն, գրական ի՛նչ նուրբ, զուտ եվրոպական ճաշակ, նկարագրական մեծ շունչ կարող է ծավալել հայ գրա-

[1] «Պատմութիւն սրբոյն Եղիշէի վարդապետի» («Սոփերք Հայկականք», հատ. ԺԱ, եր. 39—45)։

[2] Թովմա Արծրունի, «Պատմութիւն», Կ. Պոլիս, 1852, եր. 89։

[3] Տե՛ս վերև, գլուխ Բ, 1։

կանությունը։ Դա մեծ շարժումների բանաստեղծական ժողովրդականացումն էր։ Հեղինակի համար գլխավոր աղբյուրը Ղազար Փարպեցին է եղել, բայց, ինչպես երևում է, նա սիրով ականջ է դրել և ժողովրդական բանահյուսության, Մամիկոնյան տան վեպերն է հուզել[1], լսել է և վկայաբանական զրույցներ մեծ ապստամբության մեծ նահատակների մասին։ Իր հեղինակական խառնվածքով Եղիշեն կարող է համարվել առաջին արտահայտությունը հայ գրական այն բուռն կրակոտ ինքնուրույնության, որի ամենաբարձր տիպարն է Խաչատուր Աբովյանը։ Եղիշեն էլ ողբացող հայրենասեր է։ Իր պատմությունն սկսելիս նա գրում է. «Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն մերոյ ազգիս ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածն՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով»։ Ջերմ հայրենասիրությունը, կուսակցական եռանդը հաճախ այնքան բուռն թափով են նրան ալեկոծում, որ նա կորցնում է հանգիստ պատմողի դիրքը, երբ բանը գալիս է պարսիկներին, բայց մանավանդ Հազկերտ թագավորին։ Այսպիսի դեպքերում նրա ուժեղ անհատականությունն է առաջ ընկնում և արտահայտում անհամբերություն և զայրույթ։ Օրինակ, մի տեղ Հազկերտի և նրա կառավարության նկարագրությունն ընդհատելով, մեր հեղինակը բացականչում է. «Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ ոչ շիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց զոգին ձեր ի ձէնջ քաղեալ հանեալ է զանապականդ յապականութիւն»։ Իբրև հայ ազգայնական՝ Եղիշեն անխնա է հայ ազգության մասին հայ հունասեր եկեղեցականությունից տարբեր ըմբռնողություն ունեցողների, հակառակորդների վերաբերմամբ, Վասակ Սյունուն սևացրել է որքան կամեցել է, ընկնելով նույնիսկ այնպիսի չափազանցությունների մեջ, որոնք չեն հաշտվում նրա կիրթ ճաշակի հետ։ Օրինակ, Վասակի մահվան վերաբերում է այսպես. «Իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ»։

Ուրիշ է վերաբերմունքը, իհարկե, դեպի հայ ուխտապահները, եկեղեցու կողմնակիցները։ Սրանց համար հեղինակը պահած ունի և՛ սեր, և՛ խանդաղատանք։ Ավարայրի դաշտը նրա համար հայերի պարտության դաշտ չէր։ Հայերը համազոր էին պարսիկներին, երկու կողմն էլ միանման քաջ էին և ոչ ոք հաղթված չէր, այլ «երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան», հավատացնում է նա։ Ընկածները մի-մի հերոս են, և ամեն մեկին նա պսակում է մի գեղեցիկ տիտղոսով. «Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան... Յազգէն Խորխոռունեաց խորէնն կորովի... Յազգէն Պալունեաց արին Արտակ...Յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ... Յազգէն Դիմաքսենից իմաստունն Հմայակ... Յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ... Յազգէն Գնունեաց մանուկն Վահան... Յազգէն Ընծայնոց արդարն Արսէն... Յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին»։

Ավարայրը Եղիշեի, իբրև 6-րդ դարի գրողի համար, արդեն մարմնա-

[1] Եղիշեի ձեռագրերից մեկի մեջ կարդացվում են հետևյալ խոսքերը. «Գրեցաւ ի ստոյգ պատմութենէ տանն Մամիկոնենի հրամանաւ Շմաւոնի Անձևացեաց տեառն, յիշատակ և բարեխաւս աշխարհի»։ Նշանակում է, որ կար Մամիկոնյան տան մի պատմություն, որից արտագրություններ անելը համարվում էր մի տեսակ աստվածահաճո, նվիրական գործ։ Այսպիսի հատկություններ այդ պատմությանը հաղորդում էր մեծագործ տոհմը, որի կատարած դերը շատ մեծ էր հայ կյանքում։ Եվ Մամիկոնյան տան պատմության մեջ շատ կային նաև ավանդավեպեր, երգեր, զրույցներ։

ցումն է մի մեծ համազգային գաղափարի։ «Նովաւ,— կարդում ենք մենք,— և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ ի յարիւնաբուխ վկայից ցանեալ և ցրուեալք սպիտակութիւնք սուրբ ոսկերացն»։ Այսպիսի մի վսեմ պաշտամունքի զգացմունք կարող էր զարգանալ միայն հետագա սերունդների սրտում։ Եվ այս է դարձյալ պատճառը, որ Եղիշեն մեծ ոգևորությամբ, գեղեցիկ պատկերավորությամբ է նկարագրում այդ դաշտի վրա տեղի ունեցած պատերազմը։ Ահա մի նմուշ. «Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւն բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն»։ Բայց նկարագրական ճոխությունն ամենաբարձր չափերի նա հասցնում է իր գրքի վերջերում։ Հոյակապ է նրա «Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն» նկարագրությունը, որ արդեն պատմություն չէ, այլ մի ամբողջ քերթված։ Եվ եթե մենք նկատի առնենք, որ այդ գեղարվեստական սքանչելի կառուցվածքի համար Եղիշեն նյութ ունեցել է Ղազար Փարպեցու մի երկու անարվեստ և համառոտ ակնարկությունները ինքնահոժար զրկանքների ենթարկված նախարարական կանանց մասին, միայն այն ժամանակ մենք կտեսնենք, թե ո՛րքան ուժեղ էր ստեղծագործող թափն այդ բանաստեղծական բնավորության մեջ։

Միաժամանակ Եղիշեն ավելի նեղ կուսակցական գրող է, քան իր նախընթաց պատմագիրները—Կորյուն, Ղազար Փարպեցի։ Կուսակցական նկատառումներով նա սրբագրում է պատմական անցքերը, տալով նրանց իր ուզած ուղղությունն ու բնավորությունը։54 Այնտեղ, ուր հարկավոր է լռել կուսակցական շահը չվտանգելու համար, նա լռում է վարպետորեն, իսկ ուր հարկավոր է նույնիսկ պատկերներ ստեղծել դրությունը կուսակցական տեսակետից զարդարելու համար, նա այդ չի խնայում անել մեծ հմտությամբ։ Մի խոսքով, ամեն տեղ նա իր նյութի հետ վարվում է ազատորեն, ինչպես այս թույլատրվում է բանաստեղծին պատմական քերթվածների մեջ։

Իր մեծ տաղանդի ուժով էր, որ Եղիշեն տասնյակ դարերի ընթացքում անշեջ պահեց հայության մեջ Վարդան Մամիկոնյանի և նրա ժամանակի պաշտամունքը։ Նա գերազանցեց, մոռացության մատնել տվեց իր գլխավոր աղբյուրը—Ղազար Փարպեցուն։ Ազգային գիտակցության զգացմունքը իր զարգացմամբ շատ է պարտական այս եզակի, ինքնատիպ հեղինակությանը։ Ինքը Եղիշեն էլ իր Վարդանի հետ մի վառ ազգային պաշտամունք դարձավ։ Եվ այս մանավանդ 19-րդ դարում, երբ հայությունը, լուսավորված ազգերի օրինակին հետևելով, կռվաններ էր որոնում հայրենասիրական զգացմունքներ, գիտակցություն խարսխելու համար։ 19-րդ դարի մեծամեծ ազգային շարժումների մեջ Եղիշեն կատարել է չափազանց կարևոր դեր։ Նա պաշտվել է ավելի շատ, քան մեր հին գրական որևէ այլ դեմք։ Եվ սրա ապացույցը միայն այն չէ, որ բազմաթիվ հրատարակություններ ունեցավ նա իբրև ամենից շատ պահանջվող և կարդացվող գիրք։ Ազգային գաղափարին նվիրված բանաստեղծները ոգեշունչ տողեր են նվիրել Եղիշեին։ Այսպես, Հ. Ղևոնդ Ալիշանն իր «Պլպուլն Աւարայրի» մեծ

քերթվածի մեջ երկար ու մանր երգել է Եղիշեին[1], իսկ Գամառ-Քաթիպան (Ռափայել Պատկանյան) «Եղիշե» անունով ոտանավորի մեջ գրում էր.

Ոսկեծղի, գեղեցկատիպ,
Ո՛վ իմ գրքույկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբախտ օրը
Դու քարոզող անմռունչ...
...Հայ պատանի, շուտ-շուտ կարդա՛
Այս գրքույկը ոսկետառ,
Որ համոզվիս, թե մեր հայը
Կորչելու ազգ չէ իսպառ[2]։

Գլուխ հինգերորդ

ՀԻՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

1. Պատճառներ և պարագաներ: 562 թվի հաշտությունը Հուստինիանոսի և Խոսրով Նուշիրվանի մեջ կնքվեց 50 տարով, բայց հազիվ միայն 10 տարվա խաղաղություն բերավ Արևելքին։ Անկայուն էր նա, ինչպես անկայուն էին եղել նրա նախընթաց հաշտություններից շատերը, որոնք կնքվում էին ոչ միայն Պարսկաստանի, այլև ուրիշ ազգերի հետ։ Այս անկայունության գլխավոր պատճառներից մեկը դրամական հարցն էր, որ հաշտությունների հիմքերից առաջնակարգը և կարևորագույնն էր։ Բանն այն է, որ պատերազմները միշտ այնքան վերջնական և ջախջախիչ ելքի չէին հանգում, որ միանգամից պարզ լինեին հաղթողների և հաղթվողների իրավունքներն ու պարտավորությունները։ Եվ Բյուզանդիան այն անդադար պատերազմների մեջ, որոնք վիճակվում էին նրան մղելու շրջապատող ազգերի և պետությունների դեմ, ստիպված եղավ, իր դիրքերը պաշտպանելու համար, մտցնել իր քաղաքականության մեջ դրամով հաշտություն գնելու միջոցը։ Թեև նա առաջնակարգ մեծ պետություն էր, բայց իր պատվի տեսակետից նվաստացուցիչ չէր համարում զանազան անունների տակ հարկ տալ իր ուժեղ հակառակորդներին և այս պայմանով ձեռք բերել իրեն հարկավոր հաշտությունը։ Պարսիկներին հարկ տալ Բյուզանդիան սովոր էր վաղուց, դեռ 4-րդ դարից։ Իսկ 562 թվի դաշնադրությամբ Հուստինիանոսը միայն հին իրականությունն էր վերանորոգում, պարտավորվելով տալ Պարսկաստանին տարեկան 30 հազար ոսկի[3]։ Այդ թվին էլ վճարվեց 10 տարվա ամբողջ գումարը։ Բայց բյուզանդական արքունիքն իր ստորագրությունը հարգել առհասարակ չէր սիրում, և հաշտությունը վաղաժամանակ խանգարվում էր, որովհետև նա չէր ուզում իր վճարումները կատարել շիտակությամբ։

Ճիշտ այս պատճառով էլ, երբ անցավ 562 թվի հաշտության առաջին տասնամյակը և պարսիկները պահանջեցին հաջորդ տասնամյակի վճարը,

---

[1] Ալիշան, «Նուագք», հատ. Գ, Վենետիկ, 1867, եր. 323—332։

[2] Գամառ-Քաթիպայի Բանաստեղծությունները, Պետերբուրգ, 1895, եր. 133—134։

[3] Կ. Գյուտերբոք, «Բյուզանդիոն և Պարսկաստան», թարգմ. Հ. Ղամբարյանի. Վիեննա, 1911, եր. 81։

ամեն ինչ արդեն պատրաստ էր մի նոր պատերազմ պայթեցնելու համար Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։ Հուստինոս Բ կայսրը, մի թույլ, հիվանդոտ մարդ, որ, սակայն, շատ էր աշխատում վերականգնել Հուստինիանոսի ժամանակ դատարկված պետական գանձարանի բարեկեցությունը, չուզեց Պարսկաստանին փող վճարել, պատճառաբանելով, թե փողով գնված բարեկամությունը խախուտ է և անվստահ։ Կայսրը գիտեր, որ այդ մերժման հետևում կանգնած է երկարատև և արյունահեղ պատերազմ, բայց այդ բանից նա չէր վախենում, քանի որ բյուզանդական դիվանագիտությունը պատրաստել էր այնպիսի պայմաններ, որոնք հզոր աջակցությամբ պիտի ցույց տային կայսրին պարսկական ուժը խորտակելու համար։ Այս նպաստավոր հանգամանքներից էլ օգուտ քաղել էր շտապում Հուստինոս Բ-ն ոչ միայն իբրև Պարսկաստանի պարտապան, այլև իբրև ներկայացուցիչ այն ուղղության, որ Պարսկաստանի հին և ոխերիմ թշնամին էր։

Այդ նպաստավոր հանգամանքները, որոնք և հզոր դրդիչներ հանդիսացան, ինչպես ասում է ժամանակակից հույն պատմագիր Մենանդր Բյուզանդացին, շատ էին, բայց ամենագլխավորն էր այն դրդումը, որ գալիս էր Միջին Ասիայից, Օքսուս գետի ափերից։ Այդտեղ, ինչպես տեսանք վերևում, շատ ժամանակ չէր, որ հաստատվել էր թուրքական պետություն, սահմանակից դառնալով Պարսկաստանին և բարեկամական համաձայնության մեջ մտնելով Խոսրով Նուշիրվանի հետ։ Համաձայնությունը, սակայն, շուտով տեղի տվեց թշնամական հարաբերություններին, և սկսվեցին դաժան մրցումներն Իրանի և Թուրանի միջև, որոնք շատ խոր հետքեր են թողել պարսից ժողովրդի կյանքում։ Եվ չի կարելի ասել, թե բյուզանդական քաղաքականությունը միանգամայն անմեղ էր այս բանի մեջ։ Նրա ուշադրությունը շատ վաղ գրավեց այդ նոր հրապարակ իջած ազգությունը, որ Օքսուսի ափերից կարող էր Իրանի դեմ մահացու հարվածներ ուղղել։ Եվ որովհետև Բյուզանդիան կարող էր այդ հարվածներին միացնել իր սեփական հարվածները և միաժամանակ հարձակումներով կարելի էր ջախջախել իրանական առյուծին, ուստի Բոսֆորի դիվանագետները դեսպանություններ ուղարկեցին թուրքերի մոտ, նրանց խաքանին հասկացրին բյուզանդա-թուրքական հարձակողական միության բոլոր օգուտները։ Եվ թուրքերը նահապետական ռազմիկ ժողովրդի թափով ընդգրկեցին այդ առաջարկը։

Սակայն այդ մերձեցումով շոշափվում էին երկու կողմերի հարաբերություններն ուրիշ ազգերի հետ, և այդ պատճառով էլ բյուզանդա-թուրքական բանակցությունները ձգձգվեցին։ Թուրքերն առաջին անգամն էին ճաշակում եվրոպական դիվանագիտության կությունը, և հենց այն գլխից տեսան, թե ի՛նչ է նա։ Ընդունելով բյուզանդական մի դեսպանի, խաքանը, իր տասը մատներն իր բերանը մտցնելով՝ ասաց. «Ինչպես որ ես հիմա բերանումս տաս մատ ունիմ, այնպես էլ դուք, հռոմեներդ, բազմաթիվ լեզուներ ունեք։ Մեկով դուք ինձ եք խաբում, մյուսով՝ իմ ստրուկ Բարքոսիտներին։ Պարզ ասած՝ շոյելով բոլոր ժողովուրդները և հրապուրելով նրանց ճառերի փայլով և հոգու նենգությամբ, դուք արհամարհում եք նրանց, երբ նրանք դժբախտության մեջ են ընկնում, իսկ դրանից օգուտ ստանում եք դուք ինքներդ»[1]։ Եվ բյուզանդական դեսպանը, իհարկե, նոր չպիտի ըմբռներ

[1] **Менандр Византиец**, «Продолжение Истории Агафиевой» («Византийские историки», пер. Дестуниса, СПБ, 1860, т. II, стр. 419).

այս ճշմարտությունը։ Իր սրտի մեջ նա կարող էր միայն ծաղրել միջինասիացի այդ բարբարոսի միամտությունը։

Դաշնակից պատրաստելով Հեռավոր Արևելքում, այսինքն Իրանի թիկունքում, բյուզանդական դիվանագիտությունն իր հարձակման համար էլ ընտրում էր հին թատերաբեմը—Հայաստանը։ Այս անգամ սկսողները, առաջին պատճառը հայերը պիտի դառնային, և այս առիթով Բյուզանդիան հանձն էր առնում մի դեր, որ իբրև դիմակ էլ շատ անգամ չէր երևացել նրա դեմքին, մանավանդ հայերի վերաբերմամբ։ Այդ քրիստոնեության պաշտպանի և ազատիչի դերն էր։ Ծրագիրը մշակվել էր, անշուշտ, երկուստեք համաձայնությամբ. քրիստոնյա հայերն ապստամբվում են իրենց նեղիչների դեմ, կայսրն իր զորքերով նրանց օգնության էր հասնում։

Այսպես էին սկսվում այն պատերազմները, որոնք Բյուզանդիայի և Պարսկաստանի ամբողջ ուշադրությունը գրավեցին մոտ կես դար (46 տարի, 571—591, 604—630)։ Անընդհատ չէին այս պատերազմական շրջանները, բայց և այնպես նրանք կազմում են մի ժամանակամիջոց, երբ հասունացավ պատմական խոշոր երևույթը, որ համաշխարհային նշանակություն պիտի ունենար։ Այս պատերազմներն էին, որ վերջնականապես որոշեցին Պարսկաստանի ճակատագիրը, Բյուզանդիային հատկացրին մի առանձնակի դեր Արևելքի պատմության մեջ։ Վերջապես մեծ էր այս պատերազմների ազդեցությունը հայ ժողովրդի վիճակի վրա, քանի որ Հայաստանն էր նրանց գլխավոր բեմը և ժողովրդական կյանքի մեջ շատ նշանավոր երևույթներ այդ պատերազմների ազդեցության տակ էր, որ ընդունեցին այս կամ այն ուղղությունը։

2. Վարդան Մամիկոնյանի ապստամբությունը: Թեև Խոսրով Նուշիրվանի թագավորությունը, ինչպես ասացինք, առհասարակ կրոնական համբերողության սկզբունքն էր վեր հանում, բայց կա այդ թագավորության մեջ մի փոքրիկ շրջան, երբ, ինչպես երևում է, պարսից ազնվական և հոգևորական դասակարգերի փայփայած հալածամոլական ուղղությունը տիրապետող հանդիսացավ Սասանյան արքունիքում։ Գոնե այսպես է բացատրվում հայկական այն ապստամբությունը, որ տեղի ունեցավ Նուշիրվանի կյանքի վերջին տարիներում, 571 թվականին։ Մի շարժում է այս, որ միակ խոշորն է 6-րդ դարի հայոց կյանքի մեջ և որ իր չափերով, բայց մանավանդ իր առաջացրած հետևանքներով ավելի կարևոր է թվում, քան նույնիսկ 5-րդ դարի երկու ապստամբական շարժումները, բայց որը, սակայն, մեր պատմության մեջ մանրամասն լուսաբանված և գնահատված չէ։

Ազգային աղբյուրներից 571 թվականի ապստամբության մասին փոքր ի շատե մանրամասն տեղեկություններ տալիս է Սեբեոս եպիսկոպոսը, որ ապրում էր 7-րդ դարում։ Բայց ավելի շատ են մանրամասնությունները բյուզանդական գրականության մեջ, ուր հայկական այդ շարժումը պատմված է շատերի կողմից[1], որոնք ժամանակով ավելի մոտիկ են դեպքերին, քան Սեբեոսը։ Այս օտար աղբյուրների մեջ իր լավատեղյակությամբ կարևոր է մանավանդ Հովհաննես Եփեսացի հայտնի պատմագիրը, որ պատմել է այն, ինչ անձամբ լսել է հայոց կաթողիկոսից Կ. Պոլսում և նրան ուղեկցող եպիսկոպոսներից։

[1] Մանրամասն տե՛ս Հ. Ն. Ակինյան, Դվնո 572-ի ապստամբությունը և հաջորդ տասնամյա շրջանը («Հանդես Ամսօրյա», 1912, էր. 61—64)։

Ապստամբության պատճառների մասին Սեբեոս պատմագիրը համարյա ոչինչ չի հաղորդում։ Մյուս հայ, բայց շատ հետնագույն աղբյուրներից պատճառների մասին խոսողը միայն Ստեփանոս Ասողիկն է (11-րդ դար)։ Նրա մի անորոշ ակնարկից կարելի է հետևցնել, թե դեր կատարել է և կրոնական հարցը։ Այսպես, Խոսրով Նուշիրվանի նշանակած պարսից մարզպաններից մեկը, Դենշապուհ անունով, ատրուշան է շինում Ռշտունյաց գավառում և հարկադրում է հայերին երկրպագել կրակին։ Բայց այս հանգամանքը չէր կազմում ապստամբության բուն պատճառը։ Եվ սրա ապացույցն այն է, որ ապստամբությունը տեղի է ունենում ոչ թե այդ Դենշապուհի օրով, այլ հետո, երբ Նուշիրվանը մարզպան է նշանակում իր ազգականներից մեկին, որ պատկանում էր Սուրեն տոհմին և որի անունն էր Ճիհովր-Վշնասպ։ Սա էր, որ իր գործողություններով ապստամբական բուռն տրամադրություն ստեղծեց նախարարական դասակարգի մեջ։ Բայց այդ գործողությունների մեջ չկա կրոնական անհամբերողության նշույլ անգամ։ Ասողիկը ապստամբական շարժումը բացատրում է շատ իրական հանգամանքներով։ Սուրենը, ասում է նա, սկսեց հարստահարել նախարարական դասակարգը և այդ հարստահարական միջոցների մեջ վատթարագույնն այն էր, որ նա շնանում էր ազատների կանանց հետ և թույլ չէր տալիս, որ այր ամուսինն իր կնոջ տերը դառնա[1]։ Պարսիկ մարզպանների այդ «շնամոլությունը» գոյություն ուներ վաղուց, և Ասողիկն ասում է, թե վերոհիշյալ Դենշապուհը «շատացրեց» այն։ Այս ճիշտ որ անհանդուրժելի դրությունն ստիպեց հայ ֆեոդալներին ըմբոստանալ պարսիկների դեմ։ Իսկ ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանը, ինչպես պատմում են հույն պատմագիրները, ուներ, բացի այդ բոլորից, և անձնական թշնամություն Սուրենի հետ, որ սպանել էր նրա եղբայր Մանվելին։

Բայց բոլորովին այլ կերպարանք են հաղորդում շարժմանը հույն այն աղբյուրները, որոնք ներշնչումներ ստացել են հայ եկեղեցական գործիչներից։ Սրանց ասելով, հայերի ըմբոստացումն ուներ զուտ կրոնական կերպարանք, ինչպես նախընթաց երկու շարժումները 5-րդ դարում։ Մոգերը, բյուզանդական ազդեցությանը դիմադրելու համար, համոզում են Խոսրով Նուշիրվանին գործադրել սասանյան հին քաղաքականությունը—բռնի միջոցներով քրիստոնյաներին պարսկացնելը։ Դարձյալ նկատի են առնվում երեք դրակից քրիստոնյա երկրներն էլ—Հայաստան, Վրաստան, Աղվանք։ Յուրաքանչյուր երկրի համար որոշվում է, թե պարսկական ի՛նչ զորաբաժին պիտի ուղարկվի այնտեղ, որպեսզի նրա վրա հենվեն մոգերը։ Հայաստանի համար նշանակված էր 2000 ձիավոր, որոնց գլուխն անցած՝ Սուրեն մարզպանն սկսեց գործել Դվին մայրաքաղաքում։ Այդտեղ էր և հայոց կաթողիկոսարանը, որ զետեղված էր քաղաքից դուրս շինված ս. Գրիգոր եկեղեցու բակում։ Դվինումն էր, ըստ սովորականին, և հայոց սպարապետությունը։ Ժամանակի կաթողիկոսն էր Հովհաննես Բ Գաբեղենցին, մի զարգացած և եռանդոտ հոգևորական։ Իսկ սպարապետը դարձյալ Մամիկոնյան տոհմից էր, Վարդան անունով, Վասակի որդին։

Ինչպես սովորական է, Սուրենն իր քաղաքականությունն արտահայտել սկսեց նախ և առաջ հարկերի և տուրքերի ծանրությունը սաստկացնելով և այլ խստություններով։ Միաժամանակ պատրաստություններ էր տեսնում Դվինի մեջ ատրուշան շինելու համար։ Ընտրված էր տեղը, շինության նյութերը բերվում էին։ Այսքանը բավական եղավ, որ ապստամբական խմորում պատրաստվի ժողովրդի մեջ։ Մոռացվում էին մյուս բոլոր շարժումները՝ կրոնական պատճառն առաջ քաշելու համար, քանի որ միայն կրոնի հարցն էր, որ կարող էր ապստամբական լուրջ շարժում բորբոքել ամբողջ հայ ժողովրդի մեջ։ Թեև Սուրենի արածը դեռ մի ատրուշան կառուցելու պատրաստություններից հեռու չէր գնում, բայց հայ հոգևորականությունն ու նրա հետ միացած նախարարությունն այդքանն էլ բավական համարեցին հռչակելու համար ամեն տեղ, թե պարսիկները կրոնական հալածանք են սկսել հայության դեմ։

Այս անգամ էլ, ինչպես և 5-րդ դարում, պարսիկների կողմնակից հանդիսացավ Սյունյաց նախարարությունը, որ շարունակում էր Վասակի սկսած քաղաքականության հետևել, այն է՝ անջատական ինքնագլխության դիրք բռնել Հայաստանի մնացած մասերի վերաբերմամբ։ Մենք արդեն տեսանք, որ Սյունյաց նախարարությունը դուրս էր եկել Դվինի իրավասությունից, որպեսզի գործ չունենա հայերի հետ, և ենթարկել էր իրեն անմիջապես, առանց Հայաստանի մարզպանի հետ հարաբերություն ունենալու, պարսկական կառավարության[1]։ Մնում էր եկեղեցական միությունը, որ մինչև այդ անխզելի էր մնացել, հատկացնելով Սյունյաց աթոռին առաջին տեղը եպիսկոպոսական աթոռների մեջ։ Այդ դիրքի համեմատ էլ, ինչպես տեսանք, Սյունիքն առաջնակարգ դեր էր խաղում և հայոց մտավոր շարժման մեջ։ Բայց հենց այս Հովհաննես կաթողիկոսի (557—574) ժամանակից էլ Սյունիքն ու Աղվանից աշխարհն սկսում են ցույց տալ առանձին ձգտում դեպի կրոնական անջատականություն, որ բացորոշ արտահայտվում էր դեպի նեստորականությունը կամ ավելի ճիշտ ասած դեպի քաղկեդոնականությունը ցույց տված հակման մեջ, այնպես որ Հովհաննես կաթողիկոսն ու հայոց եպիսկոպոսներն առանձին թղթեր և հատուկ պատգամավոր ուղարկեցին երկու երկրները, հորդորելով չքակտել եկեղեցական միությունը։ Այսպիսով, Սյունիքի ձգտումը դեպի քաղաքական և կրոնական անջատումը՝ կատարյալ էր։

Թե իբրև ապստամբական գործ կազմակերպող և թե իբրև սպարապետ, Վարդան Մամիկոնյանը անհամեմատ ավելի ընդունակ էր, քան 5-րդ դարի իր հռչակավոր նախնին։ Նախքան այդ վտանգավոր գործին ձեռնամուխ լինելը, նա, լավ կշռադատելով իր ձեռքի տակ եղած միջոցները պարսկական ուժի համեմատությամբ, բանակցություն սկսեց Հուստինոս կայսրի հետ, և այս բանի համար, ինչպես երևում է, նույնիսկ Կ. Պոլիս գնաց։ Որ բյուզանդական դրդումներն առաջնակարգ դեր էին կատարել ապստամբական տրամադրություն ստեղծելու մեջ, երևում է այն հանգամանքից, որ

[1] Ասողիկ, Փարիզ, էր. 85, «Շնայր ընդ կանայս ազատաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ»։

[1] Թե որքան առանձնացած էր Սյունիքն իբրև երկիր, թե ո՛րքան նա համարվում էր մի տեսակ օտար կողմ, կարելի է հետևցնել 6-րդ դարին վերաբերող մի վկայաբանությունից, ուր հանդիպում ենք այս տեսակ սահմանորոշումի. «Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկնդրութիւն գրոց սրբոց, և լեալ անդ սակաւ ամիսս եառանէ ի Հայս» (Գ. Տեր-Մկրտչյան, «Գրիգոր Մանաճիհր Ռաժիկ», Վաղարշ., 1902, էր. 6)։ Իսկ Հովհաննես Բ կաթողիկոսը գրում էր Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին և Միհր-Արտաշիր իշխանին. «Յիշելով զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զջան որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հասարակաց» («Գիրք Թղթոց», էր. 79)։ Նույնիսկ ամենայն Հայոց կաթողիկոսն էլ չէր կարողանում Սյունիքն էլ իր աշխարհը համարել։

կայսրը կտրական խոստումներ արավ, հաստատելով դրանք ահավոր երդումներով։ Պաշտպանել հայերին զենքի ուժով— ա՛յս էր ամենագլխավոր պարտավորությունը, որ հանդիսավորապես հանձն էր առնում բյուզանդական կառավարությունը։ Փոխարենը՝ Պարսկական Հայաստանն անցնում էր Բյուզանդիային։ Վարդանին և վրացիներին կայսրն ամենահաստատ կերպով խոստանում էր, որ ծայրահեղ դեպքում, երբ ապստամբությունը չհաջողվի և ինքը, հակառակ իր գործադրած ջանքերի, չկարողանա խլել նրանց երկրները պարսիկների ձեռքից, գոնե մի բան կանի պարտավորական կերպով, այն է՝ երբեք պարսիկների ձեռքը չի հանձնի ապստամբության առաջնորդներին[1]։

Հենվելով ահա այսքան հաստատուն կռվանների վրա, հայերն սկսեցին իրենց պահանջները ներկայացնել Սուրեն մարզպանին։ Հովհաննես կաթողիկոսն ու սպարապետը բացարձակապես հայտարարում են, թե հայ ժողովուրդը չի կարող թույլ տալ, որ իր հողի վրա ատրուշան կառուցվի։ Այս, իհարկե, չէր նշանակում, թե հայերը դուրս են գալիս արքայից արքայի ծառայությունից։ Կաթողիկոսն ու սպարապետն այժմ բառացի կրկնում էին այն, ինչ իրենց նախնիքներն ասել էին համանման դեպքում, 450 թվի ապստամբության ժամանակ։ Հայ ժողովուրդը, իբրև արքայից արքայի հավատարիմ հպատակ, պարտավոր է համարում իրեն՝ կատարել նրա բոլոր հրամանները, բացի այնպիսիներից, որոնց մեջ նա, հայ ժողովուրդը, իրեն համարում է միանգամայն անկախ և ինքնագլուխ։ Սուրենը, սակայն առաջին անգամից ոչ միայն որևէ զիջողություն ցույց չի տալիս, այլև, ընդհակառակն, ավելի ևս խստացնում է իր ընթացքը։ Ատրուշանի շինությունը նա սկսում է ավելի ևս փութացնել։ Կաթողիկոսն ու սպարապետը մի անգամ էլ կրկնում են իրենց դիմումը, նույնիսկ աղաչավոր լեզու են գործածում, բայց գոռոզ մարզպանը, իբրև պատասխան, ատրուշանի հիմքն է դնում, միաժամանակ հրաման տալով իր գնդին, որ նա պատրաստ լինի հարկավոր դեպքում զենքով գործելու։

Եվ նորից հայ ժողովրդի մեջ ծայր են տալիս հայրենի եկեղեցին և հոգու ազատությունը պաշտպանելու ջերմեռանդ կոչերը։ Նրանք անպտուղ չեն մնում, և Դվինում հավաքվում են 10 հազարից ավելի զինված մարդիկ։ Հուզումը տարածվեց գավառներում։ Բայց նախքան ընդհարում առաջ բերելը, երկու կողմերը փորձեցին մի վերջին անգամ ևս իրար համոզել։ Հովհաննես կաթողիկոսը նախարարների հետ, նորից և նորից հավաստիացնելով մարզպանին, թե հայերն ապստամբություն չեն ուզում, այլ՝ ծառայել արքայից արքային նախկին հավատարմությամբ, բայց միայն այն պայմանով, որ գայթակղության պատճառ դարձած շինությունը խափանվի, և մարզպանն էլ, եթե ուզում է խույս տալ արյունից ու կոտորածից, թող հեռանա գնա արքայից արքայի մոտ և հայտնի նրան իր հպատակ հայ ժողովրդի ցանկությունները։ Սուրենը, տեսնելով ժողովրդի տրամադրությունը, խոհեմության դասեր տվեց, հանձնարարելով լավ կշռել շարժման հետևանքները և նկատի առնել, որ հայերի վարմունքը պիտի անհուսապես զայրացնի Խոսրով Նուշիրվանին և առիթ ծառայի նրան ցույց տալու իր ահեղ զորությունը։ Ապա, թողնելով Դվինը, Սուրենը գնաց Տիզբոն՝ Խոսրովից հրահանգներ ստանալու համար։

[1] Менандр, стр. 49 (стр. 428).

Պարզ էր հայերի համար, որ արքայից արքան չպիտի խնայի, բոլոր չարիքների պատճառ հռչակելով հայերին։ Եվ երկիրն սկսեց եռանդով պատրաստվել դիմադրության։ Հուզումը տարածվեց և գավառներում, որոնք շտապեցին իրենց օգնությունն ուղարկել սպարապետին, և Վարդանն իր հրամանի տակ հավաքեց 20 հազարանոց մի բանակ, բաղկացած ընտիր հեծելազորից և հետևակ զորականներից[1]։ Դաշն կապվեց վրացիների և աղվանների հետ, որոնց հրամանատարներն էին Գուրգենն ու Շիրոն։ Բանագնացներ ուղարկվեցին և հոների մոտ՝ նրանց աջակցությունն էլ ապահովելու համար։ Բայց ամենագլխավոր նեցուկը կայսրն էր, որի հետ բանակցությունները ավելի հաճախացին, ստանալով միանգամայն գործնական կերպարանք։ Հուստինոսը կազմակերպեց առանձին զորաբանակ՝ հայերին օգնելու համար, այս գործի ղեկավարությունը հանձնելով Բյուզանդական Հայաստանի զինվորական հրամանատար Հուստինոսին, որ նստում էր Կարին (Թեոդուպոլիս) քաղաքում։ Ապստամբությունը պատրաստ էր պայթելու ամեն րոպե։ Ապահովության համար Թեոդուպոլիս տեղափոխվեցին Դվինի գանձարանը, կաթողիկոսարանի արժեքավոր կարասիներն ու անոթները, ինչպես նաև դիվանը։

Սուրեն մարզպանի զեկուցումը ծայրահեղ կատաղություն պատճառեց Խոսրով Նուշիրվանին։ Հանձնելով մարզպանին 15 հազար զորք, Արևելքի մեծ թռնապետը հրամայում էր նրան վերադառնալ Հայաստան և բնաջինջ անել նրա ազգաբնակչությունն այդ հանդգնության համար։ Բայց միևնույն ժամանակ նկատի առնելով, որ հայկական ապստամբությունը չէր կարող գլուխ գալ առանց հոռոմների խրախույսների և աջակցության, նա ուզեց իմանալ, թե կայսրն առհասարակ ի՛նչ վերաբերմունք է ցույց տալիս դեպի Պարսկական Հայաստանը և թե արդյոք հայկական ապստամբությունը հետևանք չէ՞ այն դաշնակցային համաձայնության, որ կայացել է բյուզանդացիների և թուրքերի միջև ընդդեմ Իրանի։ Այս դիտավորությամբ արքայից արքան Կ. Պոլիս դեսպան ուղարկեց իր նշանավոր պաշտոնյաներից մեկին, որի անունն էր Սեբոխտ։ Սակայն նա հրահանգում էր Սեբոխտին, որ սա իր կողմից մի խոսք անգամ չարտասանի պարսկահայերի ապստամբության մասին, թե խոսք չանի ինքը կայսրը։ Սեբոխտին տրվող պաշտոնական հանձնարարությունն էր՝ պահանջել տարեկան 30 հազար ոսկին։

Սակայն ինքը Հուստինոսն էր, որ ունկնդրության ժամանակ խոսք բաց արավ Հայաստանի մասին։ Մերժելով հարկի վճարումը, կայսրը հարցրեց դեսպանին՝ մտադրություն չունի՞ նա արդյոք խոսելու Պարսկաստանին պատկանող Հայաստանի մասին։ Սեբոխտը պատասխանեց, թե իր թագավորին հայտնի է այդ երկրում տեղի ունեցող փոքրիկ շփոթությունը և թե նա արդեն ուղարկել է այնտեղ մի մարդ, որ կարող է դադարեցնել անհանգստությունը և կարգ ու կանոն վերահաստատել։ Այդ ժամանակ Հուստինոսը պարզ կերպով ասաց, որ եթե պարսկահայերը դուրս գան Պարսից տիրապետության տակից, ինքը կընդունի նրանց իր մոտ և կպաշտպանի նրանց ինչպես իր հավատակիցներին, եթե մեկը կսկսի հալածել նրանց։ Սեբոխտն սկսեց թախանձագին խնդրել կայսրին, որ նա չխանգարի գոյու-

[1] Եթե միայն հաստատ է, որ Եղիշեն 6-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ էր, միանգամայն հավանական է դառնում, որ նա հենց այս միջոցին գրած լինի իր Պատմությունը 6-րդ դարի օրինակներով հայերին ոգևորելու և երկրորդ Վարդանի գործն ու ժամանակն առաջին Վարդանին նույնացնելու համար։55

թյուն ունեցող կարգը, հիշեցնելով նրան, որ պատերազմը մի անդավաճան գործ չի և միշտ հայտնի կանոններով չի ընթանում, որ եթե հոռոմները նույնիսկ հաղթություն էլ տանեն, դրա հետևանքները հենց նրանց դեմ կդառնան, որովհետև մտնելով Պարսկաստան և շատ առաջանալով այնտեղ, նրանք կգտնեն, որ այնտեղի բնակիչները նույն հավատն ունեն, ինչ ինքը Հուստինոսն ունի, որ եթե հոռոմները սիրտ անեն նրանց սպանելու, դարձյալ իրենք պիտի պարտություն կրեն. քրիստոնյաներին անվայել է սուր սրել հավատակիցների դեմ։ «Սակայն,— ասում է Մենանդր Բյուզանդացին, —Հուստինոսը հարկավոր չհամարեց համոզվել այս արդարացի և պարկեշտ խոսքերով։ Նա ասաց, թե շարժելով իր մի մատը, նա առաջ կխաղացնի զորքը և կմտնի Պարսկաստան, թե նա հույս ունի, պատերազմ սկսելով, գահընկեց անել Խոսրովին և պարսիկներին տալ մի ուրիշ թագավոր։ Անսելով Սեբոխտին այսպիսի անտեղի խոսքեր, նա արձակեց նրան»[1]։

Իսկ Սուրեն մարզպանը, իր 15 հազարի գլուխն անցած, վերադառնում է Դվին։ Հայերի գրգռումը ծայրահեղ աստիճանի է հասնում։ Նախարարությունները մի բացառիկ փոխադարձ համաձայնության մեջ էին և Վարդանի ձեռքի տակ ունեցած զորքի թիվը հասնում է 20 հազարի։ Բյուզանդական զորքերի գալուստն ուշացավ, և հայերն այլևս ավելորդ համարելով նրանց սպասելը, շտապեցին օգտագործել իրենց թվական գերազանցությունը։ 572 թվականի փետրվարի 2-ին, օրը երեքշաբթի, նրանք հանկարծակի հարձակվեցին պարսիկների վրա նույն իսկ Դվին քաղաքում։ Հարձակման ենթարկվողները անակնկալի գալով, չկարողացան պաշտպանվել և մեծ ջարդ կերան։ Նրանցից կոտորվեց մի մեծ բազմություն։ Լուծվեց և Մանվելի սպանության վրեժը. Զավրակ Կամսարականը սպանեց Սուրեն մարզպանին։ Պարսկական զորքերը փախան, իսկ հայերը, կտրելով Սուրենի գլուխը, տարան Թեոդուպոլիս՝ Հուստինոս զորավարին ցույց տալու համար[2]։

Խոսրով Նուշիրվանը, առնելով իր զորքերի այս սարսափելի պարտության լուրը, ավելի ևս կատաղեց և հրամայեց ավելի մեծ մի բանակ կազմել հայ ժողովուրդը ոչնչացնելու համար։ Այսպիսի մի վճիռ պարսից բռնապետի համար բնական էր մանավանդ իր դեսպան Սեբոխտի վերադարձից հետո։ Այս խելոք և խոհական պարսիկ պաշտոնյան, Հուստինոս կայսրին միջամտության առիթ չտալու համար, համոզեց արքայից արքային հաշտության լեզվով խոսել հայերի հետ և ինքն իսկ հանձն առավ գնալ Դվին և համոզել ապստամբներին, որ նրանք նորից հնազանդվեն Պարսկաստանին։ Սակայն երբ նա այդ առաքելությամբ գնաց Հայոց երկիրը, Վարդան Մամիկոնյանը նույնիսկ թույլ չտվեց, որ նա մտնի Դվին։ Սեբոխտը ետ գնաց, բայց արդեն իբրև հայերի անողոք և կատաղի թշնամի, որ այնուհետև կարող էր միմիայն գրգռել ծերունի Խոսրովի բարկությունը հայության դեմ։

Իսկույն Հայաստան է արշավում պարսկական մի նոր, այժմ քսան հազարանոց բանակ, Միհրան Միհրևանդակի հրամանատարությամբ[3]։ Սա-

---

[1] «Визант. историки», II, стр. 404—405.

[2] Հ. Ակինյան, «Հանդ. Ամսօրյա», 1913, էջ 69—72։

[3] Թվում է, թե այստեղ պիտի լիներ ոչ թե Միհրան, այլ Վահրամ Մերևանդակ, որ հետո էլ հիշատակվում է Սեբեոսի մոտ։ Անշուշտ, այս երկու անձնավորությունները տարբեր մարդիկ չեն։

կայն Վարդան սպարապետը շարաշար ջարդ է տալիս և ա՛յս բանակին Խաղամխյա դաշտում։ Միհրանը քիչ մարդկանցով կարողանում է փախչել Պարսկաստան։ Բայց այս հաղթությունն էլ վճռական չէր, իսկ Պարսկաստանի պատերազմական միջոցներն անսպառ էին։ Հայկական ապստամբությունն սկսեց արագ թուլանալ, որովհետև հենց այդ միջոցին գլուխ բարձրացրեց հայ ավատական կարգին հատուկ հին երևույթը—անհամաձայնություններ և գժտություններ նախարարների միջև։ Այս դառն իրողության հետևանքով էր, որ Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վերցրին իրենց ընտանիքները, Հովհաննես կաթողիկոսի հետ գնացին Կ. Պոլիս։56 Բյուզանդական մայրաքաղաքում հայ գաղթականություն արդեն կար։ Մենք տեսանք դեռ Հուստինիանոս կայսրի ժամանակ տեղի ունեցող մի հոսանք, որ հայ ազնվականներին իրենց ընտանիքներով և գնդերով տանում էր Բոսֆորի ափերը։ Հուստինոս կայսրը, սիրով ընդունելով փախստականներին, առաջին գործը դարձրեց այն, որ նրանք քաղկեդոնական օրթոդոքսությունն ընդունեն, հաղորդվելով ս. Սոֆյայի մայր տաճարում։ Թվում է, թե հենց այս հողի վրա էլ տեղի էր ունեցել գժտությունը Վարդանի հետ գործող նախարարության շարքերում։ Երևի բյուզանդացիներն իրենց օգնությունը տալիս էին հայերին այն պայմանով, որ նրանք վերացնեն դավանական խտրությունը։ Ապստամբության գլխավորները, որոնց, իհարկե, ամենադառն պատիժ էր սպասում, համաձայն էին ընդունել այսպիսի մի պայման, իսկ մյուսները չուզեցին, և միաբանությունը քանդվեց։

Այս կողմից շատ փափուկ էր մանավանդ Հովհաննես կաթողիկոսի դրությունը։ Մենք նրան տեսանք համոզված և պայքարող հակաքաղկեդոնական, որ ամեն ջանք գործ էր դնում հեռու պահել Սյունյաց և Աղվանից եկեղեցիները միաբնյա վարդապետությունը դավաճանելուց։ Այժմ նա իր կրոնական համոզմունքները զոհ էր բերում հայրենիքի փրկության գաղափարին և հաղորդվում էր քաղկեդոնիկների հետ։ Բայց այս քայլն ավելի մեծ անբավականություն հարուցեց Հայաստանում։ Այս առաջին անգամն էր, որ հայ իրականության մեջ բացարձակ ընդհարում էր սկսվում ազգային եկեղեցու և քաղկեդոնական դավանության կողմնակիցների միջև։ Հենց այն հանգամանքը, որ այսպիսի մի ազգամիջյան վեճ երևան էր գալիս այնպիսի մի ժամանակ, երբ երկիրը ենթարկված էր պարսից ահեղ արշավանքների վտանգին և երբ բյուզանդական օգնության էին ապավինել հայկական շարժման գլխավորները, ցույց է տալիս, թե այս նոր պայքարն այնուհետև պիտի գար փոթորկելու Հայոց ներքին կյանքը, առանց նկատի առնելու երկրի վրա ծանրացած քաղաքական պայմանները։ Իսկապես պայքարն ըստինքյան նոր էլ չէր։ Գործողն իսկապես նույն հին իրականությունն էր—ընդհարում արևմտյան և արևելյան ուղղությունների միջև, որ միայն նոր ձևի մեջ էր ձուլվում, ընդունելով դավանաբանական կերպարանք։

Հայ աղբյուրներն այս հանգամանքների մասին ոչինչ մանրամասնություն չեն հաղորդում, իսկ օտար աղբյուրներն ասում են, թե Հովհաննես կաթողիկոսը Կ. Պոլսում նույնիսկ սպառնալիքներ ստացավ Հայաստանից և ստիպված էր առանձնանալ, այսինքն նորից խզել իր կապերը քաղկեդոնականության հետ[1]։ Բայց այս էլ չօգնեց։ Կաթողիկոսը վախճանվեց մայ-

---

[1] Ե. Վ. Տեր-Մինասյան, «Հայ. եկ. հար.», եր. 115։

րաքաղաքում, իսկ նախարարական միությունն այնպես էլ մնաց քայքայ-
ված, և Վարդան Մամիկոնյանին ոչինչ չէր մնում անել, բայց միայն մտնել
բյուզանդական ծառայության մեջ, դառնալ մեկը կայսերական բանակի
զորավարներից և ունենալով իր ձեռքի տակ, ինչպես այս սովորական էր,
թե՛ իր և թե՛ իր կողմնակից նախարարների գնդերը։ Բայց նա շարունա-
կում էր գործել թե՛ իր և թե՛ բյուզանդական զորքերով Պարսկական Հայաս-
տանում, որ և այսպիսով գտնվում էր Բյուզանդիայի իրական տիրապե-
տության տակ։

Եվ այսպիսով, 572 թվի ապստամբությունը դառնում էր մի պատճառ,
որ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բորբոքվի մի համառ պատերազմ,
որ պիտի տևեր ամբողջ քսան տարի անընդհատ։ Այս պատերազմի մեջ
առաջնակարգ դերը պատկանում էր Հայաստանին՝ նրա տեղագրական և
աշխարհագրական հանգամանքների պատճառով։ Թե ո՛րքան մեծ համառու-
թյամբ էր Խոսրով թագավորն աշխատում կրկին իրեն վերադարձնել Պարս-
կական Հայաստանը, երևում է այն իրողությունից, որ երբ 575 թվին պար-
սիկների և հռոմների միջև կնքվեց զինադադար, Հայաստանը դուրս մնաց
այդ համաձայնությունից[1] և պատերազմական գործողությունները շարու-
նակվեցին այդտեղ։ Հայոց երկիրը, իհարկե, միայն վնասվում էր այդ գոր-
ծողություններից։ Նրան ավերում էին թե՛ պարսիկները և թե՛ հռոմները։
Այսպես, Մենանդրը պատմում է, որ երբ Խոսրովն իր բանակով մտավ Տա-
րոն և Բագրևանդ գավառները, ամբողջ հողագործ ազգաբնակությունը թո-
ղեց իր տները և դես ու դեն փախավ։ «Ոչ մի տեղ,— ասում է նա,— չէին
երևում բնակիչներ, ոչ էլ բեռնակիր գրաստ, նույնիսկ եթե մեկն ուզենար
որսալ, չէր կարող այնտեղ գտնել մի հատ կենդանի էակ»[2]։

Այս դրության վրա ավելանում էր և այն դժնդակ հանգամանքը, որ
երկիրն ստիպված էր ինքն էլ պատերազմական գործողություններ մղել իր
սեփական միջոցներով։ Խոսրովն իրար հետևից բանակներ էր ուղարկում
Վարդանի դեմ, որ և մեծ հաջողությամբ գործում էր նրանց դեմ, տանելով
հաղթություններ։ Այսպես, 572 թվին, Միհրանից հետո, Հայաստան եկավ
Վարդան-Վշնասպը, անշուշտ, մարզպանի պաշտոնով, բայց մի առանձին
գործունեություն ցույց տալ չկարողացավ։ Ապա հիշատակվում է մի ուրիշ
Միհրան, որ բերում է իր հետ դարձյալ 20 հազար զորք բազմաթիվ փղե-
րով։ Բանակի մեծ մասը կազմված էր լեռնական հոներից։ Միհրանը, որ
կոչվում էր նաև Գողոն, կարողացավ սարսափ տարածել կոտորածներ անե-
լով ամեն տեղ, որովհետև հրաման ուներ Խոսրով թագավորից «զի անճեա
արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել, յատակել և անխնայ յեր-
կիր կործանել»[3]։ Շատերը փախչում են երկրից և այդպես ազատվում կո-
տորածից։ Բայց Գողոնը վերջը պարտություն է կրում Վրաստանում։

Բնորոշ փաստ է, որ Հայաստանը ճնշելու համար պարսիկների կողմից
ուղարկվում է Սյունյաց իշխաններից մեկը, Փիլիպպոս անունով, որ սա-
կայն երկու անգամ պարտություն է կրում Վանանդ գավառում, բայց մնում
է Հայաստանի մարզպան։ Խոսրովը, տեսնելով, իր զորքերի անհաջողություն-
ները Հայաստանում, վերջապես ինքն է մի մեծ բանակի գլուխ կանգնում

[1] Менандр, стр. 407։
[2] Менандр, стр. 412։
[3] Սեբէոս, Թիֆլիս, 1912, եր. 45։

և 576 թվի վաղ գարնանն արշավում Հայաստան։ Միջագետքից նա Տավ-
րոսի և Բագրևանդի վրայով գնում է դեպի Թեոդուպոլիս, բայց տեսնելով,
որ այդ բերդն առնելը չափազանց դժվար է, թողնում և դիմում է դեպի
հարավ-արևմուտք, որովհետև լուր էր առել, թե Եփրատի արևմտյան կող-
մում հավաքվել է բյուզանդական մի խոշոր բանակ։

Սեբեոսը[1] պատմում է, թե Նուշիրվանը հատկապես Վարդան Մամի-
կոնյանի դեմ էր սկսել այդ արշավանքը։ Ինչպես երևում է, հայ զորավա-
րը, խույս տալով նրա բանակի առջև, շարժվում էր դեպի Եփրատ, բյու-
զանդական բանակին միանալու համար, և այսպիսով տարավ թագավորին
իր հետևից։ Անցնելով Եփրատը, Խոսրովը մոտեցավ Մելիտինե քաղաքին։
Այստեղ նրան կանգնեցրեց բյուզանդական զորքը։ Սկսվեց պատերազմը,
որ շատ տխուր վախճան ունեցավ պարսիկների համար։ Բյուզանդական
զորավարներից մեկը, Կուրս անունով, որ ծագումով սկյութացի էր[2], ճեղ-
քեց պարսկական ճակատը և ուժեղ հարձակումով գրավեց թագավորա-
կան կայանը, ուր գտնվում էին Խոսրովի կանանոցը, Հրատը, որ վեհա-
գույնն էր բոլոր զրադաշտական կրակներից և թագավորը շրջեցնում էր
նրան իր հետ, որպեսզի նա հաղթություն պարգևի։ Փախուստի դիմած
պարսիկները մտնվեցին անհնարին խուճապի և կորցրին իրենց ունեցա-
ծը։ Մեծ քանակությամբ մարդիկ խեղդվեցին Եփրատի մեջ։ Ինքը Նու-
շիրվանը հազիվ ազատվեց, հեծնելով մի փիղ, որ նրան անցկացրեց Եփ-
րատի մյուս կողմը։

Այս ծանր պարտությունը, որ կրեց արքայից արքան, մի լավ պատ-
ճառ էր, որ բյուզանդական արքունիքը հաշտության առաջարկություն
անի նրան։ Չորս տարվա պատերազմներն այնքան սպառել էին կայսրու-
թյան ուժերը, որ հաշտություն փափագում էին ամենքը։ Այս հանգաման-
քը շատ լավ հայտնի էր Խոսրովին, ուստի նա, թեև պարտված, հաշտու-
թյան բանակցություններ սկսելով, ոչինչ զիջողություն ցույց չտվեց։
Առաջվա պես նրա պայմաններն էին՝ տարեկան հարկ 35 հազար ոսկի,
վերադարձնել Պարսկական Հայաստանն ու Վրաստանը, պարսիկների ձեռ-
քը հանձնել ապստամբության առաջնորդ հայերին և վրացիներին։ Հուս-
տինոս կայսրը, որի հոխորտանքներից էր ծնվել այդ աշխարհավեր պա-
տերազմը, ուղեղի հիվանդություն ունեցավ այդ ժամանակները և նրա փո-
խարեն կայսրությունը կառավարում էր Տիբերիոսը Սոֆյա կայսրուհու
հետ։ Տիբերիոսն անկարելի համարեց ընդունել Խոսրովի թելադրած պայ-
մանները, և պարսկա-բյուզանդական պատերազմը 577 թվից վերանորոգ-
վեց նոր թափով։ Թատերաբեմը շարունակ Հայաստանն էր, որ ավերվում
էր ահավոր չափերով։

Այս անգամ էլ բախտը բյուզանդական զորքի կողմը մնաց։ Տիբերիո-
սը Հայաստանում գործող բանակի գլխավոր հրամանատարությունը հանձ-
նեց իր պալատականներից մեկին, որի անունն էր Մավրիկ կամ Մավրի-
կոս, բայց որ հայտնի է հայ մատենագրության մեջ Մորիկ անունով։ Սա
պատերազմական գործողությունների մեջ չէր եղած, բայց առաջին իսկ
անգամից ցույց տվեց ռազմագիտական տաղանդ։ Վերականգնելով հռոմ
զորքերի մեջ կարգապահությունը և ռազմական մոռացված կանոնները,

[1] Եր. 41։
[2] Le Beau, V, p. 387.

Մորիկն սկսեց եռանդով հարձակումներ գործել Արծն գավառում, ուր և
փայլուն հաղթություններ ունեցավ։ Միմյանց հետևից հռոմների ձեռքն էին
անցնում սահմանագլխի գլխավոր գավառները։ Խոսրովը չկարողացավ տա-
նել իր զորավարների կրած պարտությունները և, չնայած իր զառամյալ
հասակին, նորից իր բանակի գլուխն անցավ և գնաց այդ նորելուկ բախ-
տավոր հրամանատարի դեմ։ Սակայն իզուր։ Մորիկը Միջագետք էր մըտ-
ցրել իր զորքերը և առաջանում էր մեծ թափով։ Սակայն նրան կանգնեցրեց
մի կարևոր հանգամանք։ 578 թվին վախճանվեց Հուստինոսը։ Տիբերիոսը,
նրան հաջորդելով, փորձեց հաշտություն կնքել Պարսկաստանի հետ։ Խոս-
րով Նուշիրվանը անողոք մնաց իր պահանջների մեջ։ Բայց 579 թվին նա
էլ էր մեռնում, մահվան անկողնում միայն զգալով, թե ո՛րքան դատարկ
բան է աշխարհային փառքը։
Խոսրովին հաջորդեց նրա որդի Որմիզդը, հախուռն պատերազմասեր
և գոռոզ մի իշխող, որ հորից ժառանգություն ստացած պատերազմը չդա-
դարեցրեց։ Իր գոռոզության մի նշանն էլ այն էր, որ ավելորդ համարեց
հատուկ պատգամավորության միջոցով իմաց տալ կայսրին իր թագավո-
րելու մասին, մի բան, որ վաղեմի սովորություն էր երկու մեծ պետու-
թյունների միջև և կատարվում էր նույնիսկ այնպիսի ժամանակ, երբ նրանք
իրար դեմ պատերազմ ունեին։ Տիբերիոսը փորձեց հաշտության առաջարկ
անել Իրանի նոր վեհապետին, բայց նրանից պատասխան ստացավ, թե իր
հայր Խոսրովը կարող էր հաշտություններ կնքել ինչպես ինքն էր ուզում,
որովհետև երկրները նվաճել էր իր սրով, մինչդեռ ինքը, Որմիզդը, միայն
ժառանգություն է ստացել պետությունը և այդ ժառանգությունն էլ պար-
տավոր է պահպանել։ Բայց և այնպես, հաշտության առաջարկություն նա
կարող էր ընդունել միայն այն պայմանով, որ Բյուզանդիան վճարի
Հուստինիանոսի խոստացած հարկը և բացի դրանից, հանձնի Վարդանին և
նրա դավակիցներին։ Կայսրը նորից մերժեց այդ առաջարկը, և պատե-
րազմը նորից վերսկսվեց։
Բայց ասենք նախապես, որ կռվասեր և գոռոզ Որմիզդը մեկն էր
այն Սասանյան թագավորներից, որոնք իրենց ձեռքով իրենց կործանում
էին պատրաստում։ Նա այն սակավաթիվ թագավորներից էր, որոնք չէին
ուզում ազնվականության և հոգևորականության խաղալիքը դառնալ։ Ընդ-
հակառակը, Որմիզդը դիտմամբ բացարձակապես հովանավորում էր իր բա-
նակի մեջ հասարակ զինվորներին, առատորեն հոգալով նրանց պիտույք-
ները, մինչդեռ ձիավոր ասպետներին, որոնք ազնվական տներից էին, վատ
էր պահում, իսկ դատարանում երբ դատ էր տեղի ունենում մի ազնվակա-
նի և մի ռամիկի միջև, թագավորն իր հովանավորության տակ առնում
էր ռամիկին և առհասարակ բարյացակամ վերաբերմունք ուներ դեպի հա-
սարակ ժողովուրդը։ Մոգերն էլ որևէ ազդեցություն չունեին նրա վրա։
Այսպես, երբ նրանք հայտնեցին Որմիզդին, թե պետք է, վերջապես, սահ-
մանափակել քրիստոնյաների իրավունքները, նա պատասխանեց, թե պե-
տությունն ամուր չի լինի, եթե հպատակ քրիստոնյաները և առհասարակ
բոլոր չտիրապետող կրոնների ներկայացուցիչները թշնամանան։ Թագավո-
րական գահը պահվում է ոչ միայն առաջին երկու նեցուկների, այլև հետևի
երկու նեցուկների վրա։ «Փոխանակ հարձակվելու քրիստոնյաների և այլ
ստարադավանների վրա՝ աշխատեցեք մթացնել նրանց ձեր լավ վարմունք-
ներով, և թող նրանք այս ճանապարհով ճանաչեն մեր կրոնի գերազան-

ցությունը»[1]։ Հենց այս անկախ և ազատախոհ մտածողությունն էլ ցույց
էր տալիս, որ Որմիզդն իր մահով չպիտի մեռնի։ Եվ իրավ, պարսկական
ավագանին և կղերը նրան արդեն իրենց թշնամի էին նկատում։
3. Մորիկ։ Պարսկական պատերազմը, Որմիզդի անչափավոր պահանջ-
ների պատճառով, վերսկսվեց 580 թվի գարնանը։ Տիբերիոս կայսրը նորից
Մորիկ զորավարին հանձնեց Արևելքում կենտրոնացած բյուզանդական
զորքերի գլխավոր հրամանատարությունը։ Այս անգամ ավելի փայլուն
բախտ էր սպասում այդ մարդուն, որ լինելով անհայտ, հասարակ ծագում
ունեցող ընտանիքի որդի,57 պիտի իր հաղթություններով դառնար Բյուզան-
դիայի առաջին մարդը, հասներ նույնիսկ կայսերական գահին։ Հռոմների
իրականության մեջ այս մի շատ սովորական երևույթ էր։ Բայց Մորիկը
հատկապես մեր ուշադրության արժանի պիտի դառնա, որովհետև նա շատ
մեծ քայքայիչ ազդեցություն է ունեցել հայ ազգի ճակատագրի վրա։ Այս
մարդն էր, որ դարձավ առաջին օրինակը հայերին հալածող բյուզանդական
կայսրի։ Եվ ճակատագրի մի դառն հեգնանքով՝ պատմության մեջ ավան-
դություն է մնացել, թե Մորիկը հայ էր,58 Օշական գյուղից, պարտիզպանի
որդի։ Այս ավանդությունը, որ կազմվել է Մորիկից մի քանի դար հետո[2],
ոչինչ արժեք չունի, քանի որ նրան ժամանակակից աղբյուրները շատ
պարզ ցույց են տալիս, որ նա ծնվել է Կապադովկիայի մի փոքրիկ քա-
ղաքում, հույն ծնողներից։ Սակայն, չնայած այս անհերքելի փաստերին,
չնայած որ գիտությունը միանգամայն չի ընդունում Մորիկի հայկական
ծագումը դեռ այսօր էլ, մեզանում երևում են պատմական աշխատություն-
ներ, որոնց մեջ Մորիկը մնում է, ըստ հին հերյուրանքի, «հայազն»[3],
երևի այն պատճառով, որ նա, իբրև քաջ հրամանատար և կայսր, շոյում
է հայ ազգային սնափառությունը։
Այս անգամ հռոմների պատերազմը հարձակողական էր։ Մորիկն այ-
խատեց և հաջողեցրեց, որ պատերազմական գործողություններն անցկաց-
վեին պարսկական հողի վրա։ Արշավանքը երկու ուղղությամբ էր տարվում։
Ինքը՝ Մորիկը հարավային ուղղությունը բռնեց և Հայաստանի վրայով
անցավ Մարաստան, այնտեղից մտավ Միջագետք, իսկ Հուստինիանոս զո-
րավարն ավելի հյուսիսային ուղղություն բռնելով, դարձյալ Հայաստանի
վրայով իջավ Աղվանից դաշտը և հասավ Կասպից ծովի ափերին, ուր մեծ
ջարդ տվեց պարսկական զորքերին։ Իր կողմից Մորիկն էլ Եփրատի վրա
հաղթելով Որմիզդին, իր ձեռքը գցեց ամբողջ Միջագետքը։ Մորիկի բա-
նակումն էր և Ներսես զորավարը, որը համարվում է հայկական ծագում
ունեցող և որը հռչակված էր Տիբերիական անվանված մեծ գնդով. այդ
գունդը Ներսեսն ինքը էր կազմել սկյութացիներից և նրա հետ Արևելքում
շատ քաջագործություններ ցույց տվեց, այնպես որ նորագույն պատմա-
բաններից մեկը նրան անվանում է «պարսիկների պատուհաս»[4]։
Հաղթական դափնիներով զարդարված Մորիկը մուտք գործեց Կ. Պո-
լիս։ Կայսրը նրան դիմավորեց մեծ շուքով, ապա փեսայացրեց, ամուսնաց-

---

[1] Крымский, стр. 105։
[2] Հայ պատմագիրներից այս ավանդությունը պատմում է Շապուհ Բագրատունին, որ
ապրում էր 9-րդ դարում (տե՛ս «Արարատ», Էջմիածին, 1914, էր. 44)։
[3] Հ. Կ. Տեր-Սահակյան, «Հայ կայսերք Բյուզանդիոնի», Վենետիկ, 1905, հատ. Ա։
[4] Гельцер, стр. 46։

նելով նրան իր աղջկա հետ։ Այսպիսով բարեբախտ զորավարը, աստիճա-
նից աստիճան թռչելով դեպի բարձր, հասնում էր գահաժառանգի դրու-
թյան։ Եվ երբ քիչ հետո (582 թ.) վախճանվեց Տիբերիոսը, կայսր հռչակ-
վեց Մորիկը, որ և թագավորեց քսան տարի (582—602)։ Պարսկական պա-
տերազմը Մորիկի թագավորությունից խլեց ութ տարի։ Այս ժամանակա-
միջոցում պատերազմական գործողությունները գլխավորապես Միջագետքի
սահմանների վրա էին կենտրոնացած, Ամիդ—Մծբին—Դարա գծի ուղղու-
թյամբ։ Ընդհարումներ, բայց անշուշտ համեմատաբար ավելի փոքր չափե-
րով, տեղի էին ունենում և Հայաստանի պարսկական բաժնում, սակայն
նրանց մասին մենք մանրամասն տեղեկություններ չունենք։ Սեբեոսը հի-
շատակում է մի շարք պարսիկ զորավարներ, որոնք Հայաստան եկան
մարզպանի պաշտոնով և այստեղ կռիվ ունեցան հռոմների դեմ։ Այսպես,
Վնդոն, որ շատ խելացի մի մարդ էր և Սասանյանների հետ կապված էր
ազգակցությամբ[1], «արար պատերազմ մի մեծ ի Մելիտինէ՝ յորում պարտե-
ցաւ և գնաց»։ Նրանից հետո գալիս է Տամ Խոսրովը, որ երկու հաղթական
կռիվներ ունեցավ, մեկը Բասենում, Բոլորապահակի մոտ, ուր Մուրցն ու
Արաքսը խառնվում են իրար հետ, իսկ երկրորդը՝ Բագրևանդում, Կրթնի
գյուղի մոտ։ Նրան հաջորդեց Վարազ-Վզուրը, որ պատերազմ ունեցավ Վա-
նանդում, Ութմա գյուղի մոտ, ուր նախ հաղթվեց և ապա հաղթեց։ Նրա-
նից հետո գալիս է Պահլավ ասպետը և Շիրակավանում պատերազմ տալով,
հաղթում։ Հետո Հրահատ անունով մարզպանն է գալիս, որ երկու անգամ
հաղթում է հռոմներին. այս պատերազմներից մեկը տեղի ունեցավ Բզնու-
նյաց գավառում, Ծաղկաջուր անվանված տեղում։ Հրահատին հաջորդեց
Հրարդին Դասան մարզպանը[2]։ Այս համառոտ և չոր ու ցամաք ցուցակը
վկայում է, որ Հայաստանի բոլոր կողմերն էին ենթարկված պատերազմի
սարսափներին։ Դվին մայրաքաղաքն անգամ ձեռքից ձեռք էր անցնում,
և մենք տեսնում ենք բյուզանդական զորքը մայրաքաղաքի պատերի տակ,
կռվում է մեքենաներով և քիչ է մնում, որ կործանի պարիսպները[3]։

Ավելորդ է ասել, որ մասնավորապես շատ էին տառապում Հայաստա-
նի հարավային նահանգները, որոնք մոտ էին պատերազմի գլխավոր բեմը
կազմող Միջագետքին։ Այս կողմից դժբախտ էր մանավանդ Աղձնիք նա-
հանգի Արձն կամ Արզն գավառը, որ բառի բուն նշանակությամբ ավերակ-
ների վերածվեց։ Հայ ազգաբնակությունը, չունենալով այլևս ոչ մի հնար
ազատվելու հռոմների հափշտակություններից ու կեղեքումներից, ստիպ-
ված էր թաքնվել գետնի տակ, իրենց ցորենի հորերի մեջ։ Բայց այստեղ
էլ գտան փախստականներին և խլեցին ինչ դեռ մնացել էր[4]։ Այս պատկերը
կարող է Հայաստանի ընդհանուր դրության հարազատ ցոլացումը համար-
վել։ Ամբողջ երկիրը ավերակների կույտեր էր ներկայացնում պարսկա-
բյուզանդական պատերազմների ընթացքում։ Իսկ այդ պատերազմները շա-
րունակվում էին համառությամբ, որովհետև այդպես էր երկու հակառա-
կորդ միապետների կամքը։ Մեջտեղ ահագին դեր էր խաղում և նրանց
անձնական գոռոզությունը։ Որմիզդը հռոմների հետ խոսում էր մի ամբար-

[1] Սեբեոսի ասելով՝ Որմիզդի անեղձացն էր։
[2] Սեբեոս, եր. 53—54։
[3] Անդ, եր. 48։
[4] Le Beau, V, p. 447.

պետության
տավան լեզվով, որ իբր թե պիտի պահպաներ պարսկական մեծ
արժանապատվությունը։ Այսպես, նրա դեսպանը 585 թվին Ամիդ քաղա-
քում ընդունվելով բյուզանդական բանակի մեջ, հետևյալ հայտարարու-
թյունն արավ Փիլիպպիկ զորավարին. «Այստեղ ես տեսնում եմ միայն
թշնամիների. բայց նրանք շուտով մեր բարեկամները կդառնան, եթե կա-
մենան լսել իմաստության խորհուրդը։ Պարսից թագավորը ձեզ առաջար-
կում է հաշտություն։ Խաղաղության սերը վայել է մի արքայական սրտի։
Բայց նա ձեզ առաջարկում է հաշտություն՝առանց պատերազմելուց երկյուղ
կրելու։ Մի՛ հավատաք, թե ձեր թույլ հաջողությունները, ձեր ավերումները
նրան վախեցնում են, բավականաչափ ահեղ է նա վրեժ հանելու համար։
Այս մի աղաչանք չէ, որ նա ձեզ անում է. այս մի խորհուրդ է, որ նա տա-
լիս է ձեզ»։ Իսկ Մորիկը, ստանալով այս հայտարարությունը, որի մեջ
տրված էին և հաշտության պարսկական՝ մեզ արդեն ծանոթ պայմանները,
գրում էր իր զորավարին, որ նա, փոխանակ որևէ պատասխան տալու՝ շտա-
պի պատերազմական գործողությունները մտցնել Պարսկաստանի սրտի
մեջ[1]։

Պատերազմի ընթացքն այնպես էր, որ Պարսկական Հայաստանը, ընդ-
հանուր առմամբ, գրավված էր մնում բյուզանդական զորքերով։ Այստեղ
բյուզանդական զորավարներից անուն հանեցին Հովհաննես պատրիկը, որ
Հայաստանի ընդհանուր զինվորական հրամանատարն էր, Փիլիպպիկը.
Հերակլը, Ներսեսը, որ Սիրիայի հրամանատարն էր։ Իսկ պարսիկների կող-
մից առաջացավ և իր քաջությամբ ժողովրդականություն վաստակեց Միհ-
րանյան հռչակավոր տոհմի ներկայացուցիչներից մեկը, որին մեր Սեբեոսն
անվանում է Վահրամ Մեհրևանդակ, բայց որ հայտնի է պարսիկների մեջ
Բեհրամ Չուբին անունով։

589 թվին պարսից բանակի մի մասը, Վահրամ Չուբինի առաջնոր-
դությամբ, արշավում էր թուրքերի դեմ, որոնց սաստիկ ջարդ տվեց Կասա-
պից ծովի արևելյան կողմերում։ Այս հաղթությունն ավելի ևս բարձրաց-
նելով Բեհրամի (հայերեն ձև՝ Վահրամի) հռչակը զորքերի և ազգաբնա-
կության մեջ, միտք տվեց Որմիզդին՝ արշավանք սկսել հռոմների դեմ
հյուսիսային ուղղությամբ՝ նորից Լազիկան և Վրաստանը նվաճելու, միև-
նույն ժամանակ թշնամուն հարավային ճակատի վրա թուլացնելու համար։
Բեհրամ Չուբինը հրաման ստացավ անցնել Այսրկովկաս. բայց նրա շար-
ժումը նկատեցին բյուզանդացիները, որոնք զորքեր ուղարկեցին դեպի
Աղվանք՝ Չուբինի առաջն առնելու համար։ Պարսիկ հրամանատարը, կա-
մենալով հենակետ ունենալ Ատրպատականի Գանձակ Շահաստանը (այժմ
Թավրիզ), կանգ առավ Արաքս գետի ափին՝ Սյունյաց աշխարհի հարավ-
արևելյան սահմանների վրա։ Այստեղ էլ երկու բանակները հանդիպեցին
իրար։ Չորս-հինգ օր անցավ անգործության մեջ,— ոչ մի կողմը չէր վստա-
հանում անցնել Արաքսը, որ թեև այդտեղ խոր էր, բայց նեղ հուն ուներ,
այնպես որ երկու ափերին կանգնած թշնամի զինվորները խոսում էին
իրար հետ։ Վերջապես Չուբինն առաջարկեց բյուզանդական զորավարին
պայմանավորվել կռիվն սկսելու մասին, իսկ դրա համար հարկավոր էր, որ
կողմերից մեկն անցներ գետը։ Հռոմները թույլ տվին, որ պարսիկները
գետն անցնեն։ Սկսվեց արյունահեղ կռիվ։ Պարսիկները չարաչար պարտու-

[1] Le Beau, V. p. 447.

14*

թյուն կրեցին, Արաքսը լցվեց նրանց դիակներով և նրա ջրերը կարմրեցին թափված արյունից։ Վահրամը պատերազմի դաշտից հանեց իր բանակի մնացած մասը և ետ քաշվեց։

Որմիզդը, առնելով այդ պարտության լուրը, Բեհրամ Չուբինին ուղարկեց մի ձեռք կանացի զգեստ։ Այս վարմունքը վրդովմունք պատճառեց ոչ միայն հրամանատարին, այլև զորքին, որ երկար ճանապարհներ էր անցել, մեծամեծ աշխատանքների մեջ սպառել էր իր ուժերը։ Բեհրամը, իր ստացած վիրավորանքը Որմիզդին վերադարձնելու համար, գրեց նրան մի նամակ, որի հասցեն էր՝ «Որմիզդին, Խոսրովի աղջկան»։ Կատաղած Սասանյանն իսկույն իր բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին ուղարկեց, որ բռնի Բեհրամին և շղթայակապ իր մոտ բերի։ Բայց Բեհրամն այդ պաշտոնյային գցեց իր ռազմական փղերից մեկի ոտների տակ և ինքն իր զորքի հետ ապստամբեց (589 թ.)։ Շուտով նրա բանակին միացավ պարսկական այն զորքը, որ պարտություն էր կրել Մծբինի մոտ հռոմեներից և փախուստի դիմել, բայց որ վախենում էր վերադառնալ Տիզբոն, որովհետև Որմիզդը հրամայել էր նրան չհամարձակվել հաղթված վերադառնալ, թե չէ՝ ամենքն էլ սրի կքաշվեն։

Այս ապստամբական շարժումն իսկույն անդրադարձավ Սասանյան արքունիքում, ուր Որմիզդից անբավական ավագանին և կղերը սովորական հեղաշրջումներից մեկը կրկնեցին։ Հեղաշրջման պարագլուխ հանդիսացան մեր հիշատակած Վնդոն և նրա եղբայր Վստամը։ Որմիզդը Տիզբոնից հեռու էր գտնվում, երբ ստացավ Բեհրամ Չուբինի ապստամբության լուրը։ Նա շտապեց տուն վերադառնալ, բայց այստեղ էլ ապստամբության հրդեհն էր բռնել ամեն ինչ։ Տեսնելով իր կատարյալ անզորությունը, Սասանյան բռնակալը, որպեսզի տպավորություն գործի իր կատաղած ստրուկների վրա, հագավ իր արքայական ամենաճոխ զգեստները, նստեց իր գահի վրա, շրջապատվեց իր պալատական սիրելիներով և հավատարիմ մնացած թիկնապահներով։ Ներս մտավ Վնդոն, որին նա բանտարկել էր, բայց որին ազատել էին պալատական դավադիրները։ Որմիզդն իր սովորական գոռոզ եղանակով գոչեց. «Ո՞ւմ հրամանով ես դու դուրս եկել բանտից, ո՞րտեղից ես ստացել այդ հանդգնությունը, և ի՞նչ է նշանակում այդ թափոքը, որի գլուխն անցած՝ դու համարձակվում ես երևալ իմ աչքին»։ Բայց ամեն ինչ զուր էր։ Վնդոն հիշեցրեց նրան, թե քանի՜-քանի՜ մարդ է նա խեղդել տվել Տիգրիսի մեջ, ապա ցած քաշելով գահից, վերցրեց նրա գլխի խույրը և հրամայեց իր հետևողներին կապել նրան[1]։ Իրանի ահեղ հրամանատարը գահազուրկ էր, փակվեց բանտի մեջ, ուր նրան կուրացրին։ Միևնույն ժամանակ գահ բարձրացվեց նրա փոքրահասակ որդին, որի անունն էր Խոսրով (590 թ.)։ Սա փորձեց ամոքել իր հոր դժբախտությունը, ուղարկելով նրան ընծաներ, որպեսզի ցույց տա, թե չի մոռացել նրան։ Բայց հպարտ Սասանյանը ետ դարձրեց այդ ընծաները, ուստի և սպանվեց որդու հրամանով։

Սակայն Խոսրովի գահն էլ խախուտ էր, քանի որ նրա պետության մեջ գտնվում էր մի ամբողջ ապստամբած բանակ։ Պատանի թագավորը փորձեց մեղմորեն համոզել Բեհրամին, որ նա հնազանդության գա։ Խոստանում էր ոչ միայն մոռացության տալ նրա ապստամբությունը, այլև մեծամեծ պատիվների արժանացնել նրան։ Բեհրամը պատասխանեց կոպիտ

[1] Le Beau, V, p. 479—480,

մերժումով և իր բանակը տարավ թագավորի դեմ, որին չէր ճանաչում Իրանի վեհապետ։ Խոսրովն էլ մեծ զորք հավաքեց և գնաց Բեհրամի դեմ։ Մծբինի մոտ իրար հանդիպեցին երկու բանակները։ Պատանի թագավորը տեսնելով ապստամբների ուժը, վարանման մեջ ընկավ և չէր կարողանում վճռական գործողություններ սկսել։ Այս տատանումներից օգուտ քաղեց Բեհրամը, որի անակնկալ հարձակմանը չկարողացան դիմանալ արքայական զորքերը։ Նրանք ցրվեցին, իսկ Խոսրովը հազիվ կարողացավ երեսուն թիկնապահներով փախչել, տանելով իր հետ և իր հարեմը։ Բեհրամ Չուբինը գնաց Տիզբոն, իրեն թագավոր հայտարարեց, մինչև իսկ դրամ կտրեց իր անունով։ Բայց իբրև թագավոր՝ ժողովրդականություն չունեցավ, որովհետև Սասանյան ծագում չուներ, իսկ Սասանյան տոհմն արդեն վաղուց նվիրական էր դարձել ժողովրդի աչքում, իբրև թագավորական սրբազան և բուն ազգային տոհմ։

Փախստական Խոսրովը, անցնելով բյուզանդական սահմանը, դիմեց Կիրկեսիոն քաղաքը, որի հռոմ հրամանատարն ընդունեց նրան արքայական պատիվներով։ Այդտեղից Խոսրովը նամակ գրեց Մորիկ կայսրին և հայտնելով իր դրությունը, աղաչեց նրան լինել իր հայրը, զորքով օգնել, որ ինքը կարողանա ետ ստանալ իրենից խլված հայրենի գահը։ Այս խնդիրքն ավելի համոզիչ դարձնելու համար՝ Խոսրովը խոստանում էր Մորիկին հողային մեծամեծ զիջումներ. Սիրիայից տալիս էր ամբողջ Արվաստանը մինչև Մծբին քաղաքը, Հայոց աշխարհից՝ Տանուտերական իշխանության երկիրը (Արարատյան աշխարհը) մինչև Դվին, Մասիս, Վանա լիճը և Առեստավան, իսկ Վրաստանից՝ նրա ամենախոշոր մասը, մինչև Թիֆլիս քաղաքը[1]։ Մորիկը գահազուրկ թագավորի այս խնդրագիրը հանձնեց ծերակույտին, որ վճռեց, թե չպետք է ընդունել այդ առաջարկությունը։ Սակայն Մորիկը թե անձամբ շատ էր շողոքորթված Սասանյանի աղաչական դիմումով և թե չափազանց հրապուրիչ էր գտնում այն հողային զիջումները, որոնք երկար ժամանակների ընթացքում արյունահեղ պատերազմների առարկա էին երկու պետությունների միջև։ Ուստի նա միանձնյա վճիռ կայացրեց՝ տալ Խոսրովին նրա խնդրած օգնությունը։ Եվ հրամայում էր Հայաստանի բյուզանդական սպարապետ Հովհան պատրիկին ու Սիրիայի սպարապետ Ներսեսին անցնել սահմանը և տանել Խոսրովին ու վերահաստատել Տիզբոնի գահի վրա։

Մեծամեծ արշավողական պատրաստություններ սկսվեցին։ Առանձնապես եռանդուն կերպով աշխատում էին մանավանդ Խոսրովի երկու քեռիները—Վնդո և Վստամ։ Սրանք վերակազմեցին հայկական զորքերը, թվով մինչև 15 հազար։ Սեբեոսն իրեն անսովոր բանաստեղծական գույներով է նկարագրում այդ գունդը[2]. «Ամենեքեան սոքա,— ասում է նա,— սպառազէնք, ընտիրք պատերազմողք վառեալք քաջութեամբ՝ իբրև զհուր, որ ո՛չ զանգիտեն և ո՛չ զթիկունս դարձուցանէին։ Դէմք առիւծու դէմք նոցա։ Թեթևութիւն ոտից իբրև զթեթևութիւն այծեմանց երագութեամբ ի վերայ դաշտաց. մտադիւրութեամբ և ամենայն հնազանդութեամբ, չու յուղի անկեալ գնացին»։ Հայ գնդի այս փայլուն դրությունն ամենից առաջ

[1] Սեբէոս, եր. 51։

[2] Եր. 57։ Այս անսովոր հանգամանքն էլ թույլ է տալիս ենթադրել, թե այս նկարագրությունը վերցված է մի երգից կամ վիպական պատմվածքից։

ցուցադրում էր, թե ո՛րքան կենսունակ էր հայ ժողովուրդը։ Չնայած որ նրա երկիրը քսան տարիներից ի վեր ավերում էին պարսկա-բյուզանդա- կան պատերազմները, չնայած որ նա Վարդանի ապստամբության ժամա- նակից ինքն էլ գործուն մասնակցություն ուներ այդ պատերազմների մեջ, այնուամենայնիվ նա այնքան կարողություն էր գտնում իր մեջ, որ պատ- բաստում էր այսպիսի զինվորական ուժ։ Եվ այդ ուժի արժեքն ամենից առաջ գնահատում էր այն մարդը, որի դեմ գնում էր կռվելու հայկական գունդը, այն է՝ Բեհրամ Չուբինը։ Տեսնելով իր դեմ շարժվող բանակները, պարսից նորապսակ թագավորը փորձեց չեզոքացնել հայերին և մի նամակ գրեց Մուշեղ Մամիկոնյանին, որ հայ նախարարների մեջ ամենից շատ հարգվածն էր, և առաջարկեց նրան թողնել բյուզանդական բանակը և միա- նալ իրեն։ Փոխարենը խոստանում էր վերականգնել Հայոց թագավորու- թյունը և որոշում էր նույնիսկ, թե ինչ սահմանների մեջ կլինի նա։ Հանձ- նարարում էր չմոռանալ, թե ինչ են եղել Սասանյանները հայերի համար, թե ինչպես նրանք սպանել են հայ ազգության իդեալը։ Ահա այդ շատ հե- տաքրքրական նամակը։

«Ես այսպէս կարծէի՝ եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր մարտնչիմ, և դուք ի կողմանէ այտի եկեալ՝ ինձ աւգնական լինիցիք. զի ես և դուք միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն՝ զտունն Սասանայ։ Իսկ դուք աւադիկ ժողովեալ գայք վերայ իմ պատերազմաւ յաւգնականութիւն դմա. այլ ես ո՛չ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հոռվ- մայեցւոյդ՝ որ եկեալ են ի վերայ իմ։ Բայց դուք, Հա՛յք, որ տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. ո՞չ ապաքէն տունդ Սասանական եբարձ զեր- կիրդ ձեր և զտէրութիւն։ Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին հարքն ձեր և գնացին ի ծառայութենէ նոցա, մինչև ցայսաւր պատերազմեալ ի վերայ աշխարհին ձերոյ։ Եւ արդ՝ դիմեալ գայ ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ խոսրով յաղթեալ էր՝ երկոքին դոքա միաբանեալ բարձցեն զձեզ ի միջոյ։ Բայց զի հաճոյ թուեսցի ձեզ ի բա՛ց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս, և ձեռն տալ ինձ յաւգնականութիւն։ Եւ թէ ես յաղ- թեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և ի Լուսին, ի Հուր և ի Ջուր, ի Միհր և յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. զո՛ր և դուք կամիք, արասջիք ձեզ թագաւոր։ Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցդուռն Աղուա- նից. և յԱսորւոց կողմանէ՝ զԱրուաստան և զնոր Շիրական մինչև ցսահ- մանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արեւմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացւոց։ Եւ ես մի՛ իշխեցից քան զԱրասպ անցանել յայնկոյս. և գանձն Արեաց թագաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ և ձեզ։ Եւ այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաս- տատեսցի»[1]։

Այս թղթի հետ Բեհրամը կնքած աղ էլ դրեց, որ զրադաշտական օրեն- քով երդման ամենաբարձր ձևն էր։ Հայ նախարարները կարդացին այս հրա- դիմումը, որ այնքան ճիշտ էր իր պատճառաբանությամբ և այնքան շողար- պուրիչ իր դրական խոստումներով։ Սակայն նրանք պատասխան չուղար- կեցին Բեհրամին, ոչ նույնիսկ հրապարակեցին նրա առաջարկությունները ու խոստումները, որովհետև վախենում էին, թե անմիաբանություն կծագի

1 Սեբէոս, եր. 58—59։

այս առիթով, այսինքն թե կգտնվեն այնպիսի նախարարներ, որոնք Բեհրա- մի կողմը կանցնեն։ Ուստի Բեհրամը գրեց նախարարներին մի նոր թուղթ, որի մեջ ասում էր. «Գրեցի առ ձեզ ի բաց կալ ի նոցանէ, ինձ և ձեզ բաւա- կան համարելով զամենայն աշխարհս և զամենայն գանձս թագաւորութեանս այսորիկ։ Արեմն ոչ կամեցարուք լսել, զի ոչ արարէք բանիցն պատասխա- նի»։ Ուստի և սպառնալիքներ էր կարդում, ասելով, թե վաղը պատերազմի դաշտում հայերը կտեսնեն իր զորքը, որի մեջ ամենից շատ նշանակություն տալիս էր փղերին և նրանց վրա նստած քաջամարտիկ նետաձիգներին։ Մուշեղը, իհարկե, լավ էր տեսնում, որ Բեհրամը հաջողություն չպիտի ունենա, քանի որ նրա դեմ են պարսիկ ժողովրդի տրամադրությունը և պարսկա-բյուզանդական ուժեղ բանակը։ Այս անգամ նա պատասխանեց Բեհրամին, հանդիմանելով նրա հոխորտանքներն ու ամբարտավանությու- նը, քանի որ նա հույս էր դրել ոչ թե աստծու վրա, ինչպես հարկավոր էր անել, այլ փղերի վրա և ասում էր, թե վաղը նույն պատերազմի դաշտում նա կտեսնի, թե ինչպես կկռվեն հայերը։

Եվ իրավ, պատերազմի մեջ, որ տեղի ունեցավ Ատրպատականում, Բեհրամ Չուբինը չարաչար պարտություն կրեց և թողնելով ամեն ինչ թշնամիների ձեռքում, ինքը հազիվ կարողացավ փախչել դեպի Պարսկաս- տանի արևելյան մասը, ուր հետո սպանվեց Խոսրով թագավորի հրամանով։ Հաղթության մյուս օրից Սեբեոսի Պատմության մեջ մտնում է մի հատված Մամիկոնյան տան վեպից, որի հերոսն է Մուշեղը։ Վեպը պատմում է, թե ինչպես հաղթական Խոսրովն ուրախացած է իր հաջողության վրա և թե ինչպես նրան հիացրել է Մորիկ կայսրի արած լավությունը։ Միայն մի բան է դառնացնում երիտասարդ թագավորին, այն, որ Բեհրամ Չուբինն սպանված չէ և կարող է նորից զորք հավաքել և նորից ապստամբական շարժում առաջացնել։ Այն ժամանակ նրան շրջապատող պարսից մեծամեծ- ները սկսում են չարախոսություն անել Մուշեղի վրա, ասելով, թե իրենց աչքով տեսան, որ պատերազմի մեջ Մուշեղն էր, որ օգնեց Բեհրամին փախ- չել, տալով նրան ձի։ Թագավորը լցվում է բարկությամբ, և իսկույն կազ- մում է մի դավադրություն՝ Մուշեղին ոչնչացնելու համար։ Մարդ է ուղարկում նրան իր մոտ կանչելու, կարգադրում է, որ երբ նա կգա, թույլ չտան նրան սուր կապած մտնել իր մոտ, ասելով, թե թագավորի մոտ զինված մտնել չի կարելի։ Եվ որովհետև գիտեին, որ Մուշեղը կբերի իր հետ և թիկնապահ զորք, կարգադրվեց, որ այդ զորքը թագավորական կա- յանից հեռու պահվի։ Խոսրովի ուղարկած մարդը տեսավ հայ սպարապետին իր զորքը քննելիս, որ հարկավոր էր կռվի մեջ ունեցած կորուստները հաշ- վելու և իրենց քաջությամբ աչքի ընկած զինվորներին որոշելու համար։ Մուշեղը, լսելով պատգամաբերից, որ թագավորն իրեն կանչում է, փութով պատրաստվեց գնալ, բայց պատրաստվեց ինչպես գնում էր պատերազմի, կարծելով, թե ինքը հարկավոր է պատերազմական մի գործողություն սկսե- լու համար կամ թե գուցե պիտի վարձատրվի իր արած քաջությունների փո- խարեն։ Իր հետ նա վերցրեց երկու հազար գեղեցիկ զինված հեծյալներ։ Հասնելով Խոսրովի բանակը, նա հրաման ստացավ հեռացնել այդ զորքը և միայն մի քանի մարդկանցով ներկայանալ արքայից արքային։ Բայց նա արհամարհեց այդ հրամանը և իր ամբողջ գնդով մոտեցավ արքայական վրանին և ընտրելով հիսուն մարդ, գնաց դեպի վրանի մուտքը։ Սարսափ տարածվեց Խոսրովի վրանում և իսկույն բարապանները ելան նրա դեմ և

պաՀանջեցին, որ նա ետ անի իր կամարը և սուրը թողնի դրսում։ Կաս-
կած ընկավ Մուշեղի սիրտը․ արդեն ենթադրում էր, թե Հարձակում պի-
տի չինի և պատրաստվեց պաշտպանվելու։ Բարապաններին պատասխա-
նեց, թե ինքը լավ գիտե արքունիքի կարգերը, քանի որ մանկությունից թա-
գավորների սննդակից է եղել։ «Ե՞ս մերկանամ զենքերից, ե՛ս, որ
այդպիսի բան չեմ անում նույնիսկ իմ տանը, ուրախության ժամանակ ան-
գամ»։ Եվ նա երեսը շուռ տվեց, որ գնա դեպի իր զորքը։ Այս վար-
մունքից Հետո էր, որ Խոսրովը ստիպված եղավ կեղծելու միջոցին դի-
մել և թույլ տվեց, որ Հայ զորավարը ներս մտնի ինչպես ուզում է։
Մուշեղը ներս մտավ յոթ մարդկանց Հետ, պատշաճավոր մեծարանքը
մատուցեց արքայից արքային, երկրպագություն անելով նրան ինչպես
սաՀմանված էր։ Իսկ թագավորը շատ սառն վերաբերվեց նրան, ձեռք չտվեց,
Հակառակ սովորության, մնաց կանգնած և այնքան կորցրեց իրեն, որ
չկարողացավ Հրաման տալ նրան ձերբակալելու Համար։ Տեսնելով այս
բոլորը, Մուշեղը ետ դարձավ և արագ գնաց դեպի վրանի ելքը։ Ավելի ևս
վախեցած թագավորը դուրս եկավ նրա Հետևից ու իր գլխավոր պաշտոնյա-
ներից մեկին ուղարկեց Մուշեղին ետ բերելու։ Եվ որպեսզի նա կասկած
չունենա, ուղարկեց նրան և իր երդումը—կնքած աղ, և Հավատացրեց, թե
պատվով և մեծարանքով պիտի ետ գնա։ Բայց Մուշեղը չլսեց ոչ ոքի,
շարունակեց իր ճանապարՀը։ Իր Հանդիպած ընդունելության առաջին
տպավորության տակ նա վճռեց սպանել Խոսրովին և այս մտքով էլ Հրա-
ման տվեց իր գնդին, որ շրջապատել էր արքայական կայանը։ Բայց Հետո
թե՛ նա և թե՛ զորքը, կշռադատելով այդպիսի մի գործի Հետևանքները, թո-
ղին իրենց դիտավորությունը և Հեռացան։ Մուշեղը ձերբակալել տվեց թա-
գավորի դրանիկներից մեկին, որ և պատմեց նրան, թե ինչ դավադրու-
թյուն էր սարքված նրա դեմ։ Այս բոլորի մասին Մուշեղը տեղեկություն
տվեց բյուզանդական Հրամանատար ՀովՀան պատրիկին։ Ամբողջ բանակը
վրդովվեց պարսիկների նենգության վրա։ Բայց կայսրին տՀաճություն
պատճառելու Համար վճռեցին ոչինչ չՀայտնել նրան։

Խոսրովը, սակայն, մի ուրիշ օրինակով էլ ցույց տվեց, թե ինչպես գի-
տե գնաՀատել Մորիկի արած լավությունը։ ԲեՀրամ Չուբինից վերցրած Հա-
րուստ ավարի մի մասը, բաղկացած արքունի գանձից, բյուզանդական բա-
նակն ուղարկում էր իր կայսրին իբրև փառավոր Հաղթանակի առՀա-
վատչյա, միևնույն ժամանակ, Հակառակ նախկին վճռի, թղթով Հայտնեցին
նրան Խոսրովի դավադրությունը Մուշեղի դեմ։ Այս գանձերը Կ. Պոլիս
էին տանում 400 ձիավորներ, որոնց գլխավորն էր Մուշեղը։ Խոսրովը, տե-
ղեկություն ստանալով այս մասին, վրդովվեց, որ իրեն պատկանող Հարըս-
տությունն ուրիշի են տանում և մի զորաբաժին ուղարկեց գանձերը ետ
խլելու և մանավանդ Մուշեղին սպանելու Համար։ Սակայն բյուզանդացի-
ներն էլ այս զորաբաժնի Հետևից մի ավելի ուժեղ զորաբաժին ուղարկեցին,
որ և բոլորովին ոչնչացրեց պարսիկներին։ Իսկ կայսերական ընծան ան-
վնաս Հասցվեց Կ. Պոլիս։ Այս պատմվածքը Հետաքրքրական է մանավանդ
այն կողմից, որ ցույց է տալիս, թե որոշ Համակրական Հարաբերություն-
ներ, այնուամենայնիվ, գոյություն ունեին Հայ նախարարների և ԲեՀրամ
Չուբինի միջև, և այս Հողի վրա էլ անբավականություն ծագեց Մամիկոն-
յան տոՀմի և պարսից թագավորի միջև։ Մուշեղի վեպի մյուս Հատվածը
պաՀել է իր երկասիրության մեջ 7-րդ դարի Հեղինակ ՀովՀան Մամիկոն-

յանը։ Այստեղ զարգանում և վիպական չափազանցությունների է Հասնում
պարսկա-տարոնական թշնամությունը։ Այս մենք կտեսնենք իր տեղում։
Այստեղ, քանի որ մեր աչքերի առջև գործողությունների Հանգույցն է
սկսում կազմակերպվել, մենք պետք է ասենք, որ ԲեՀրամ Չուբինի դիմումը
Հայ նախարարներին Հիմնված էր իրական Հանգամանքների վրա, և նա կա-
տարյալ իրավունք ուներ ասելու, թե Հայերին ջնջելու Համար Սասանյան-
ների Հետ միացած են և բյուզանդական կայսրները։

4. Նոր ապստամբություն. Հայաստանի բաժանումը: Այս բանը Հաստա-
տելու Համար Հարկավոր էլ չէ դիմել պատմական անցյալին, քանի որ Հենց
այն ժամանակվա կյանքն էլ Հարուստ էր ապացուցական փաստերով։ Եվ
այս Հարստությունը Հայթայթում էր Մորիկ կայսրն իր քաղաքականու-
թյամբ, որ գործադրում էր Հայերի վերաբերմամբ։ Այդ վերաբերմունքն ար-
տաՀայտվում էր ամենից առաջ նրանով, որ նա Հայերին նայում էր իբրև
մի նյութի, որ շատ պիտանի էր մանավանդ ամայի վայրեր բնակեցնելու,
սաՀմանները պաՀպանող զինվորական գաղութներ կազմելու Համար։ Այս
ուղղությամբ գործելով, նա ամեն կերպ խրախուսում էր Հայերի գաղթակա-
նական շարժումները և այս կողմից միայն զարգացնում էր Հուստինիանոս
Ա-ի քաղաքականությունը։ Իսկ երբ խրախուսանքը չէր ազդում, բյուզան-
դական կայսրն ուղղակի դիմում էր ուժով Հարկադրելու միջոցին։ Այսպես,
նա դեռ Հրամանատար էր Հայաստանում, 577 թվին, երբ Արզն գավառից
Հանեց Հայկական գաղթականություն և ուղարկեց Կիպրոս կղզին, որ այդ
միջոցին անմարդաբնակ էր[1]։ Իսկ կայսր դառնալուց Հետո Մորիկը Հայերից
զինվորական տարրեր էր Հանում՝ Բալկանյան թերակղզու պաշտպանողական
գիծը—Մակեդոնիա և Թրակիա—ամրացնելու և այդպիսով մայրաքաղաքը
Հյուսիսային ու արևմտյան ռազմիկ ցեղերից (սլավոններ, ավարներ) պաշտ-
պանելու Համար։ Ինչպես Հուստինիանոսի ժամանակ Հայկական գնդերը
կռվում էին Իտալիայում և Աֆրիկայում, այնպես էլ այժմ նրանք պատե-
րազմական արշավներով Հասնում էին Դանուբին և նույնիսկ անցնում էին
այս մեծ գետի մյուս ափը։ Բայց Մորիկի ծառայությունը ծանր ու ան-
Հանդուրժելի էր դառնում այն պատճառով, որ նա ավելի Հաճախ և ավելի
մեծ չափերով էր շաՀագործում Բյուզանդական Հայաստանի ռազմիկ տար-
րերը, քշելով նրանց Հեռավոր օտարություն, և որ ավելի վատն էր՝ գնա-
ցող զորքերի և իշխանների մեծ մասը մնում էր այնտեղ, բնակեցվում էր
այնպիսի դիրքերում, որոնք կարևոր էին ռազմագիտական նկատառում-
ներով[2]։

Այս տմարդի և կործանիչ քաղաքականությունն արդեն դժգոՀություն-
ներ էր պատճառում նախարարական դասակարգին։ Եվ Համարյա ԲեՀրամ
Չուբինի Հետ միաժամանակ, 589 թվին, ծագեց մի նոր ապստամբություն,
որի Հետևանքով քիչ էր մնում, որ կայսրությունը կորցնի Բյուզանդական
Հայաստանը։ Այս շարժման մասին մեզ Հասած տեղեկությունները, թե՛
բյուզանդական և թե՛ Հայկական աղբյուրներից, շատ են Համառոտ և կցկը-
տուր։ Սեբեոսի պատմելով՝ Մորիկը Հրամայել էր Հայերից 2000 ձիավոր

---

[1] Թեև այսպիսի մի շարժում կայսրի Հավանությամբ միայն կարող էր իրագործվել,
բայց գլխավորը, իՀարկե, Հրամանատարի նախաձեռնությունն էր։

[2] Երևի Հուստինիանոս-Մորիկ ժամանակամիջոցում տեղի ունեցած գաղթականական
շարժումներն էին, որ Հունական աշխարՀում, Հայերի մասին կարծիք կազմել տվին, թե նրանք
մի «շրջմոլիկ և անՀաստատ» ժողովուրդ են (**Успенский**, стр. 652)։

հավաքել՝ Թրակիա ուղարկելու համար։ Կազմվեցին երկու գնդեր, յուրաքանչյուրը հազար հոգուց։ Մի գունդը հանձնվեց Սմբատ Մամիկոնյանին, որ Սեբաստիայի վրայով տարավ նրան Կ. Պոլիս։ Մյուսի հրամանատարն էր Սմբատ Բագրատունին, որ Մանվելի որդին էր։ Երկու նախարարներն էլ Բյուզանդական Հայաստանում մշտական բնակություն ունեցող Մամիկոնյաններից ու Բագրատունիներից էին։ Սմբատը իր գունդը տարավ Խաղտիք գավառի վրայով դեպի Սև ծով։ Բայց ճանապարհին այս գունդն ապստամբեց, չուզեց գնալ օտարություն և ամրացավ լեռներում։ Մորիկն ամեն միջոց գործ դրեց թե՛ Սմբատին և թե՛ նրա զորքը զանազան խոստումներով ընկճելու համար։ Այդ բանը նրան հաջողվեց և գունդն ուղարկվեց Թրակիա, իսկ նրա հրամանատարն ազատ արձակվեց։ Սմբատը, վերադառնալով հայրենիք, դարձավ մի ապստամբական շարժման պարագլուխ։ Բյուզանդական մատենագիր Թեոփիլակտոս Սիմոկատտայը59 հաղորդում է, որ ապստամբների առաջին գործը եղավ սպանել կայսրի կողմից Հայաստանի կառավարիչ նշանակված Հովհաննեսին։ Ի՞նչ նպատակ ուներ այս շարժումը։ Սեբեոսն ասում է, թե հայ նախարարները հավաքվեցին միասին, որպեսզի դուրս գան հունաց կայսրի իշխանության տակից և իրենց թագավոր ունենան, «զի մի՛ և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց»[1]։ Իսկ բյուզանդացի պատմագիրն ասում է, թե ապստամբների միտքն էր պարզապես անցնել Մարաց (Պարսից) կողմը[2]։ Սակայն այս դիտավորություններից ոչ մեկն էլ գլուխ չեկավ։ Ինչպես լինում էր սովորաբար, նախարարական միաբանությունը շուտով քայքայվեց, ոմանք ուղղակի մատնության դիմեցին ու իրենք ցրվեցին զանազան կողմեր։ Կայսրը Հայաստան ուղարկեց պետական սինկղիտոսի ամենանշանավոր անդամներից մեկին, որի անունն էր Դոմենդիոլոս։ Սա վերջ տվեց սկսված խառնակության, իսկ պարագլուխ Սմբատին շղթայակապ տարավ Կ. Պոլիս։ Մորիկը կամեցավ իր արքայական համբերողությունն ու գթասրտությունը ցուցադրել և դրանով նվաճել հայերին։ Սմբատի դատը նա ինքը չտեսավ, այլ հանձնեց դատարանին։ Սմբատը խոստովանեց իր հանցանքը և դատապարտվեց մահվան՝ կրկեսում գազանների մեջ նետելու միջոցով։ Երբ լցված ամֆիթատրոնի առջև հայ իշխանը դուրս բերվեց ասպարեզ և բացվեցին այն դռները, որտեղից պիտի դուրս գային գազանները և հարձակվեին մահապարտի վրա, կայսրը նշան արավ, որ դադարեցնեն ամեն ինչ և ներում շնորհեց Սմբատին։ Կրկեսի հասարակությունը բուռն ցույցերով վեր հանեց կայսրի այդ աննախընթաց գթասրտությունը,— ասում է նույն պատմագիրը։

Սակայն հայ պատմագիրն էլ, օգտվելով ազգային ավանդություններից, ցույց է տալիս, որ Մորիկը ներում շնորհեց Սմբատին ոչ թե խղճալով նրան, այլ հիացմունքի հարկ տալով նրա քաջության։ Սմբատը, ասում է նա, խոշոր և ուժեղ կազմվածքի տեր մարդ էր, «այր անհեթեթ անձամբ և գեղեցիկ տեսլեամբ և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով»։ Մի անգամ նա իր պնդակազմ և ուժեղ ձիու վրա անցնում էր մի անտառի միջով, ուր բարձրահասակ և հաստաբուն ծառեր կային։ Հանկարծ

1 Սեբէոս, էր. 86։
2 Հ. Կ. Տէր-Սահակեան, «Հայ կայսերք Բիւզանդիոյ», հ. Ա, էր. 269—271։ Տե՛ս և Le Beau, p. 476.

վեր ցատկելով, նա երկու ձեռքով բռնում է մի ճյուղից և պինդ սեղմելով ծնկները, նրանցով բարձրացրեց ձիուն գետնից և սրանով ահագին զարմանք պատճառեց իր զորքին։ Ահա այս անհեթեթ հսկան էր, անշուշտ հերոս ժողովրդական առասպելների, որ մերկացված՝ ներս մտցվեց կրկեսի հրապարակը։ Առաջ մի արջ բաց թողեցին նրա վրա, և երբ գազանը հարձակվեց, նա բարձր աղաղակեց, գնաց նրա վրա, և այնպես սաստիկ հարվածեց բռունցքով նրա ճակատին, որ նա սատկեց տեղն ու տեղը։ Հետո մի ցուլ արձակեցին նրա վրա, բայց նա բռնեց նրա եղջյուրներից և սաստիկ աղաղակեց։ Սկսվեց մարտ, ցուլը հոգնեց և երկարացրեց վիզը, իսկ Սմբատը կոտրեց նրա զույգ եղջյուրները։ Թուլացավ ցուլը և հետզհետե քաշվելով դեպի ետ, փախուստի դիմեց։ Բայց Սմբատը վազեց նրա հետևից, բռնեց նրա պոչից և ոտի մի կճղակից. ցուլը ձգեց դեպի իրեն և կճղակը մնաց Սմբատի ձեռքում։ Ցուլը փախավ մի բոբիկ ոտով։ Բայց երրորդ թըշնամին ամենից սարսափելին էր—առյուծ։ Երբ նա հարձակում գործեց, Սմբատը,— ասում է մեր միամիտ պատմագիրը,— աստուծուց հովանավորված՝ իսկույն բռնեց գազանի ականջից և նստեց նրա մեջքին։ Հետո, բռնելով նրա կոկորդից, Սմբատը խեղդեց նրան։ Ահա այստեղ կրկեսի հիացած հասարակությունը ցնծության աղաղակներով ողջունեց հերոսին և խնդրեց, որ կայսրը ներում շնորհի նրան։ Այդ միջոցին Սմբատը նստած էր իր սպանած առյուծի վրա և հանգստանում էր։ Կայսրուհին էլ ընկավ իր ամուսնու ոտները և ներում խնդրեց, որովհետև առաջուց Սմբատին՝ նրա գեղեցկության և ուժի համար, որդեգրել էին կայսրն ու կայսրուհին։ Հերոսին ներեցին, տարան բաղնիս, լվացին ու մաքրեցին, նոր շորեր հագցրին։ Բայց և այնպես, Մորիկը չթողեց նրան իր մայրաքաղաքում, այլ ուղարկեց Աֆրիկա, այնտեղի զորքերի մեջ ծառայելու համար։

Ահա այսպես էր երերի դրությունը Բյուզանդական Հայաստանում, երբ 591 թվին վերջ էր ստանում պարսկական պատերազմը և Խոսրովի ու Մորիկի միջև կնքված դաշնադրությամբ Հայաստանը նորից բաժանվում էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Ըստ այս համաձայնության՝ Բյուզանդիային էին անցնում ամբողջ Տուրուբերան նահանգը և Այրարատյան նահանգի մեծագույն մասը։ Սահմանագիծը դառնում էր Կոտեից գավառը՝ Հրազդան գետի և նրա ձախ օժանդակի գծով, Ազատ գետը, Կոգովիտ գավառը, Մակու, մինչև Վանա լիճը։ Պարսիկների ձեռքում Այրարատյան նահանգից մնում էին միայն Ոստան գավառը Դվին մայրաքաղաքով և Շարուր գավառը։ Պարսկական բաժնի մեջ էր մտնում և ամբողջ Վասպուրական նահանգը։ Այսպիսով՝ տիրանալով Հայաստանի մեծագույն մասին, Մորիկը բարեփոխում է Հուստինիանոսի սահմանած վարչական բաժանումները։ Չորս Հայքերի մեջ փոփոխություններ է մտցնում, Մեծ Հայք անունը տալիս է Այրարատյան նահանգի արևմտյան մասին և Տուրուբերանին մինչև Սիրիա, Տայք նահանգը և Գուգարքի սահմանակից մասերը կոչվում են Խորագույն Հայք, իսկ Դվինի մերձագույն տեղերը, որոնք արևելյան սահմանագլխի վրա էին տարածված, ստանում են Ներսագույն Հայք անունը[1]։ Բացի տնտեսական և ռազմական կարևոր նշանակությունից այս նորանվաճ վայրերը տալիս էին կայսրության և այն առավելությունը, որ կարող էին ավելի մեծ չափերով ռազմական պաշարներ և մա-

1 Յովհաննէս կաթողիկոս, «Պատմութիւն», Երուսաղեմ, 1867, էր. 88։

նավանդ կենդանի (մարդկային) ուժ հայթայթել պատերազմական գործողությունների համար։ Սեբեոսը նոր կարգերով ստեղծված դրությունը բնորոշում է այսպես. «Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Յունաց կողմանէ և սակաւ՝ ի Պարսից»[1]։ Ազդեցությունների այսպիսի դասավորում Հայկական Բարձրավանդակը դեռ չէր տեսել։ Եվ չի կարելի ասել, թե այս դասավորումը շատ էլ գոհացրած լինի հայերին։ Թեև քրիստոնյա տիրապետություն էր տարածվում Պարսկական Հայաստանի մի խոշոր մասի վրա, բայց այդ բյուզանդական քրիստոնեության տիրապետությունն էր, և մենք տեսնում ենք, որ նրա առաջին ևեթ քայլերից Հայաստանի այս մասն էլ բախտակից էր դառնում Բյուզանդական Հայաստանին և այստեղ էլ, ինչպես և այնտեղ, ապստամբական շարժումներ են առաջանում իբրև նոր հպատակների դժգոհության և բողոքի արտահայտություն։ Պետք է ասել, որ նոր հպատակների դրությունը դեռ ավելի ծանր էր, քան հներինը։ Բյուզանդական Հայաստանում գոնե կրոնական սուր հարց չկար։ Այնտեղ քաղկեդոնականության հարցը վաղուց էր լուծված, և հայ առաջնորդներն իրենց եկեղեցիների հետ հպատակեցված էին հույն մետրոպոլիտներին[2]։ Այսպես չէր Հայաստանի նորանվաճ մասը, որ միշտ ազգային եկեղեցու պատվարն էր եղել, հենվելով այն հանգամանքի վրա, որ ինքը պարսկահպատակ էր և ազատ էր բյուզանդական բռնի հարկադրանքի միջոցներից։ Հայաստանի պարսկական մասն էր, որ դիմադրում էր բյուզանդական օրթոդոքսության արշավին։ Հենց որ այդ խոշընդոտն անցավ բյուզանդական բռնցքի իրավասության տակ, Մորիկն իսկույն հրաման արձակեց, որ հայոց բոլոր եկեղեցիներում ընդունվի քաղկեդոնական դավանությունը և ամենքը հաղորդվեն բյուզանդական զորքերի հետ միասին։

Այս կարգադրությունը կայսրն ասում էր, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ 573—574 թթ. Կ. Պոլսում, երբ այնտեղ էր գտնվում Հովհաննես Բ կաթողիկոսը, տեղի էր ունեցել հայոց եկեղեցական ժողով, որը և ընդունել էր դավանական միությունը հույների հետ։ Սակայն այդ ժողովին չէին մասնակցել բոլոր հայ հոգևորականները։ Եղել էին և միությունը մերժողներ, և ամենից առաջ Դվինը, հայոց եկեղեցական կենտրոնը։ Այստեղ Հովհաննեսի տեղ կաթողիկոս ընտրվեց Մովսես Բ Եղվարդեցին, մի շատ սաստիկ հակաքաղկեդոնական։ Նա շարունակում էր կաթողիկոսություն անել և այն ժամանակ, երբ Պարսկական Հայաստանի մի մասն անցնում էր Բյուզանդիային, այն էլ անել դարձյալ Դվինում, որ պարսկական հող էր, ազատ՝ կրոնական մեծ մրցությունների համար։ Այս խոշընդոտն էլ մի հարվածով վերացնելու համար Մորիկը 591 թվի դաշնագիրն ստորագրելուն պես Հայաստանում հաստատեց մի երկրորդ կաթողիկոսական աթոռ, որի իրավասության ենթարկվեց ամբողջ Բյուզանդական Հայաստանը։ Այս հակառակ աթոռի համար տեղ ընտրվեց Ավան գյուղաքաղաքը[3], որ գտնըվում էր Հրազդան գետի արևելյան օժանդակի վրա, սահմանագլխի վրա, Դվինից ոչ հեռու։ Կաթողիկոս նշանակվեց Հովհաննես Բագրևանդցին, որն, իհարկե, քաղկեդոնիկ հայ էր, լավ բարքի տեր մի հոգևորական, բայց գործիք բյուզանդական քաղաքականության։ Ավանի կաթողիկոսարանը պայծառացնելու և Դվինին հավասարեցնելու համար կայսերական գանձա-

1 Սեբեոս, եր. 71։
2 Հ. Ն. Ակինյան, «Կյուրիոն կաթող. Վրաց», եր. 118։
3 Այժմ փոքրիկ գյուղ, Երևանից հյուսիս, Քանաքեռ գյուղի մոտ։

րանը ծախսեր չխնայեց։ Շինվեց մի գեղեցիկ եկեղեցի, գետակի վրա։ Պակաս հոյակապ չպիտի եղած լինի և կաթողիկոսարանը, որ հարկավ այդ եկեղեցու մոտ էր շինված։ Այս հիմնարկությամբ բյուզանդական քաղաքականությունը կարծում էր անդամալուծել Դվինի կաթողիկոսարանը, ոչնչացնել նրա համազգային նշանակությունը և փութացնել հայերի կրոնական միացումը հույների հետ։

Այս միտքը, սակայն, չհաջողվեց լիապես։ Իրական փաստ էր դառնում միայն այն, որ երկու հարևան կղերանոցների մեջ հաստատվում էր անխնա մրցություն։ Եթե մինչև այդ Հայաստանը ճանաչել էր կրոնական կռիվ, այդ միայն օտար-դրսեցիների դեմ էր, հեթանոսության դեմ։ Այժմ բորբոքվում էր ներքին կրոնական կռիվ, որն ավելի վատթար էր, քան արտաքինը, քանի որ իր ամբողջ էությամբ ազգամիջյան, եղբայրասպան կռիվ էր, որից չէր խուսափել Նազովրեցու պաշտամունքը ոչ մի երկրում և որից ի մեծ դժբախտություն յուր, ազատ չմնաց և հայ ժողովուրդը։ Սա առաջին եկեղեցական երկպառակությունն էր հայերի մեջ, բայց հենց առաջին անգամից էլ նա երևան էր գալիս ամեն տեղ միևնույն կերպարանքն ունեցող անհաշտությամբ։ Փոխադարձ թշնամություն, կատաղի հալածանքներ, որոնք ֆանատիկոսական չափերի էին հասցնում կղերական անհամբերողությունը։ Մենք ունենք ազգամիջյան այդ առաջին կատաղի պայքարի նկարագրությունը, որ մնացել է կայսրի կողմից Հայաստանի ստրատելատ և հայոց զորավար նշանակված Սորմենի և Դվինի կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերդողի միջև փոխանակված նամակներում։ Տեսնում ենք, որ Դվինի հոգևորականությունը քանդել է տալիս քաղկեդոնական հայերի շինած սեղանները, նորից մկրտել է տալիս այն քաղկեդոնականներին, որոնք մտնում են ազգային եկեղեցու ծոցը։ Դվինն ու Ավանն իրար սպառնալիքներ են կարդում, իրար անիծում, քահանաներին արգելում են հակառակ կողմին հաղորդություն տալ, որպեսզի անջատումը կատարյալ լինի։ Ավելորդ է ասել, որ այդ հալածանքներն ու խտրականությունը խռովություն և անհաշտություն էին մտցնում նույնիսկ ընտանեկան հարկերի տակ և բաժանում էին մարդուն կնոջից, կնոջը՝ մարդուց։ Հակառակորդ կղերականներն իրար անիծում էին, համարում էին իրար Նեռ ու Նեռի կարապետներ և այլն[1]։ Ազգային եկեղեցու կուսակցությունը, իբրև թույլ կողմ այդ մեծ պայքարի մեջ, ցույց էր տալիս մեծ համառություն և անհամբերողություն։ Այսպես, երբ պարսկական պատերազմը վերջանալուց (այսինքն 591 թվից) հետո բյուզանդական զորքերի հետ հայոց գունդն էլ Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ, գնաց Կ. Պոլիս, այստեղ կատարվում էր խաչի տոնը, որին հայ զինվորները չմասնակցեցին60։ Մորիկ կայսրը ցույց տվեց Մուշեղին, որ 573—574 թվականներին Կ. Պոլսում կայացած հայոց եկեղեցական ժողովն ընդունել է միանալ հունաց եկեղեցուն։ Մուշեղը պատասխանեց, թե այդ ժողովը հայերի համար անընդունելի է, քանի որ նրան մասնակցողները տգետ են եղել և առաջարկեց գումարել մի նոր ժողով։ Կայսրը համաձայնեց և իսկույն հրամաններ ուղարկեց ամեն կողմ, որ մայրաքաղաք հավաքվեն հայ եկեղեցականները։ Հրավեր գնաց և Մովսես կաթողիկոսին։ Բայց սա ամենայն իրավունքով եզրակացնելով, որ Կ. Պոլիսը չի կարող լինել մի չեզոք միջավայր,

1 «Գիրք Թղթոց», եր. 90—97։

առանց որի անհնարին է վիճել դավանաբանական հարցերի վերաբերմամբ, ամենակտրուկ մերժողական պատասխան տվեց, հայտարարելով, թե ինքը չի անցնի Ազատ գետը, այսինքն պարսկա-բյուզանդական սահմանագիծը[1]։ Նրա օրինակին հետևեցին, ինչպես և բնական էր, Պարսկաստանի բաժին մնացած Հայաստանի եպիսկոպոսները, մինչդեռ նորանված մասերի եպիսկոպոսները, բնականաբար, չկարողացան անտես անել կայսրի հրամանը։ Կ. Պոլսում հավաքված այս երկրորդ հայկական ժողովն էլ ընդունեց հունական դավանությունը։ Եվ ազգային եկեղեցու կուսակցության այնուհետև միակ մնում էր ավելի պինդ կառչել պարսկական տիրապետության, իբրև հենարանի, որի վրա նա կարող էր անկախ լինել։

Եկեղեցական այս մեծ տարաձայնությունների հետ, որ մտցնում էր սասաբյուզանդական տիրապետությունը Պարսկական Հայաստանի մեջ, առանձնահակցան դժգոհության շարժումները հայկական կյանքի մյուս տունակ ազգային գործոնը կազմող նախարարության մեջ։ Թրակիական ծրագիրը Մորիկը գործադրում էր հետևողականությամբ և մեծ խստությամբ։ Սեբեոսը հիշատակում է մի շարք հրամաններ, որոնք իրար հետևից գալիս էին Հայաստան՝ նորանոր զորախմբեր կազմելու և Թրակիա ուղարկելու համար։ Արդեն այստեղ և Մակեդոնիայում կազմվել էին հայկական գաղթականություններ[2], իսկ բարբարոսների դեմ մղած պատերազմները շատ զոհեր էին տանում և հայերից։ Նկարագրելով մի պատերազմ, որը տեղի ունեցավ Դանուբ գետի ափին, Սեբեոսն ասում է. «Եւ բազմութիւն նախարարացն և զօրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան»[3]։ Այնքան ծանր էր այն հարկը, որ մարդկային արյունով և մսով վճարում էր հայոց երկիրը բյուզանդական ինքնակալությանը։ Բնականաբար այս առիթով բուն Բյուզանդական Հայաստանում ծագող ապստամբական շարժումներն անցան և նորանված Պարսկական Հայաստանի նախարարական շրջանը։ Շարժումները երբեմն միանում էին իրար հետ, և Մորիկի գործը դժվարացնում էր այն հանգամանքը, որ ապստամբներն անցնում էին պարսից կողմը և պաշտպանություն գտնում այդտեղ։ Այս խոչընդոտը վերացնելու համար Մորիկը կանգ չառավ նույնիսկ և այնպիսի մի ծրագրի առջև, որը հայ ժողովրդի կենսական շահերի տեսակետից կարելի է անվանել դժոխային։

Այդ ծրագիրն էր՝ պարպել Հայաստանը նրա ռազմական տարրերից, այն է՝ նախարարություններից և նրանց զորքերից։ Այս նպատակով կայսրը նախ համաձայնություն կայացրեց Խոսրով թագավորի հետ։ Գործը պիտի կատարվեր այսպես. ինքը կայսրը բոլոր նախարարներին և նրանց զորքերը տեղափոխում էր Թրակիա, իսկ Խոսրովն իր մասի նախարարներին գաղթեցնում էր Պարսկաստանի արևելյան ծայրերը։ Ահա ինչպես էր կայսրը պատճառաբանում իր այդ միտքը. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են (հայերը), կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ աստ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն.[1] և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա երկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»[2]։

Խոսրովն իր «նոր» քաղաքականությունը գործադրում էր շատ թույլ կերպով։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել պարսկական իրականության մեջ։ Բացի դրանից, արքայից արքան շահագործում էր այն հետևանքները, որ առաջացնում էր Մորիկի քաղաքականությունը Բյուզանդական Հայաստանում։ Նա ամեն կերպ աշխատում էր իր կողմը հրապուրել հայ նախարարներին, ընծաներ էր տալիս, հողային մեծ բաժիններ, առաջ էր քաշում պետական ծառայության մեջ։ Մենք նույնիսկ տեսնում ենք, որ նրա հրամանով Վասպուրական Համարակար (ազնվականների հարկահավաք) անունով պաշտոնյան գնում է Հայաստան, տանելով իր հետ գանձեր, որոնք բեռնված էին մի քանի ուղտերի վրա, հայ նախարարներին կաշառելու համար։ Այդ միջոցին ապստամբել էին հայ նախարարներից շատերը[3] և անցել էին Պարսկական Հայաստան, բանակ էին դրել Նախճավան քաղաքի մոտ։ Նրանք հարձակվում են Վասպուրական Համարակարի վրա, խլում են գանձերը, իսկ նրան արձակում անվնաս։ Այս հափշտակության նպատակն այն էր, որ նախարարները կարծում էին, թե այդ գանձերով նրանք կարող են Հայաստանն իրենցը դարձնել, կարելի էր պատերազմել երկու թագավորների դեմ էլ և բռնությամբ երկիրն իր սեփականատերերին դարձնել։ Խոսրովն ստիպված եղավ կայսրի օգնությունը խնդրել՝ ապստամբների դեմ կռվելու համար, և պարսկա-բյուզանդական զորագնդերը շուտով միացան Նախճավանում՝ միասին գործողություններ սկսելու համար։ Բայց այդ միջոցին նախարարներն արդեն կարողացել էին սովորականի պես, գժտություններ և բաժանումներ առաջ բերել իրենց մեջ։ Այս վեճերն առաջացան գանձերի բաժանման հարցից։ Եվ երբ պարսիկներն ու բյուզանդացիներն սկսեցին համոզել, որ ավելորդ արյունհեղության պատճառ չդառնան, նրանցից երկուսը, Ատատ Խոռխոռունի և Սամվել Վահևունի, իրենց զորքերի հետ ազատվեցին և չկամենալով հնազանդվել, գնացին դեպի հյուսիս, անցան Սյունիքն ու Արցախը, իջան Աղվանից դաշտը, անցան Կուր գետը և բանակ դրին մյուս ափին։ Նրանց հետևում էր պարսկական մի գունդ, որ գնաց բանակ դրեց Կուրի հակառակ ափին։ Այսպես մնացին իրար դեմ հանդիման։ Հայ նախարարները հոներից օգնություն էին սպասում, որ կռիվ սկսեն, բայց տեսնելով, որ օգնություն չի գալիս, ցրվեցին և քիչ ժամանակից հետո մտան բյուզանդական կայսրի ծառայության մեջ։ Մորիկը լավ ընդունեց և վարձատրեց Ատատ Խոռխոռունուն և նրան իր գնդի հետ, այնուամենայնիվ, ուղարկեց Թրակիա։ Իսկ Սամվել Վահևունին վերադարձավ հայրենիք, ուր քիչ ժամանակից հետո նրան դարձյալ տեսնում ենք խառնված մի նախարարական ապստամբության մեջ։

1 Հ. Ն. Ակինյան, «Կյուրիոն», եր. 120։

2 К. Патканян, «История императора Геракла, Сочинение епископа Себеоса», СПБ. 1862, стр. 197.

3 Սեբէոս, եր. 83։

1 Այսինքն՝ եթե կռիվների մեջ նախարարներն ու զորքերը մեռնեն, կնշանակի մեր թշնամիներն են մեռնում, իսկ եթե թշնամիներին մեռցնեն, նշանակում է մեր թշնամիներին են մեռցնում։ Ահա ինչ մտածողությունների էր ընդունակ բյուզանդականությունը։

2 Սեբէոս, եր. 75։

3 Սեբէոսն այսպես է դասավորում դրանց անունները. Ատատ Խոռխոռունի, Սամվել Վահևունի, Մամակ Մամիկոնյան, Ստեփանոս Սյունի, Կոտիտ Ամատունի, Թեոդոս Տրպատունի։ Սյունեցի իշխանի ներկայությունն այս խմբի մեջ եթե սխալ տեղեկություն չէ, կարելի է բացատրել և նրանով, որ Բյուզանդական Հայաստանի մեջ էր մտնում և Սյունիքի մի կտորը Սևանա լճի շրջականերում։

Իսկ մնացած նախարարները Նախճավանի բանակում համաձայնու-
թյուն տվին հնազանդվելու Պարսից թագավորին։ Վասպուրական Համարա-
կարը նրանց մասին զեկուցեց Խոսրովին, որը կանչեց բոլորին Տիզբոն,
լավ թոշակներ նշանակեց և ամեն անգամ հրավիրում էր նրանց արքայա-
կան ընթրիքի։ Իսկ նախարարական զորքերի համար կայան նշանակվեց
Սպահան քաղաքում։ Այնտեղից հայկական զորքերը գնում էին կռվելու
Պարսկաստանի հյուսիսային սահմաններում։

Նախարարների այս գաղթը Պարսկաստան տեղի ունեցավ 596 թվա-
կանին, և Խոսրովը փորձով առիթ ունեցավ համոզվելու, թե իսկապես ո[illegible]
քան ձեռնտու էր Մորիկ կայսրի ծրագրած ստիպողական գաղթեցումը։ Այն,
ինչ որ դժվար էր գլուխ բերել ուժով ստիպելով, հեշտ կատարվեց կաշառքի,
մեղմության միջոցներով։ Հայերը, իհարկե, նոր չէին սովորում ծառայել
Պարսկաստանին իրենց զորքերով։ Այս մենք տեսնում ենք դեռ Աքեմենյան
հարստության ժամանակներից[1]։ Բայց Սասանյան թագավորը 6-րդ դարի
վերջում հաջողեցնում էր այսպիսի միջոցներով Բյուզանդիայից խլել շատ
այնպիսի ռազմիկ ուժեր, որոնց բարձր արժեքը շատ հնուց էր գնահատված
Պարսկաստանում։ Երևի հենց այս ժամանակներն էր, որ պարսկական ծա-
ռայության մեջ անվանի դարձավ Սմբատ Բագրատունին[2], որ հյուսիսային
սահմանների վրա իր ցույց տված քաջությունների համար նշանակվեց
Վրկան աշխարհի մարզպան։

Օտար հորիզոնների տակ գործող հայ զորքերի վիճակը մի քանի
գծերով ևս բնորոշելու համար մեզ կմնա բերել մի փոքրիկ տեղեկություն
էլ Սպահանի հայոց բանակի կյանքից։ Խոսրով թագավորը որոշեց իր հոր
մահվան վրեժը հանել, ամենից առաջ իր երկու քեռիներին՝ Վնդոյին և
Վստամին սպանելով։ Վնդոն հանկարծակի ձերբակալվեց և սպանվեց, իսկ
Վստամը պալատից հեռու էր գտնվում և, չուզենալով իր եղբոր վիճակին
ենթարկվել, զորքեր հավաքեց իր շուրջը և սկսեց ասպատակել Ռեյ քաղաքն
ու գավառը։ Խոսրովը զորքով գնաց նրա դեմ, օգնական գունդ ստանալով
նաև կայսրից։ Այդ բանակի մեջ էր և Սպահանի հայկական զորաբաժինը,
որը մեծ քաջություններ ցույց տվեց Ռեյի մոտ Վստամի դեմ մղված կռիվ-
ներում, այնպես որ Խոսրովն էլ զարմացել էր հայ զինվորների վրա։ Բայց
Վստամին ձեռք գցել անկարելի եղավ։ Նա փախավ Պարթևների մոտ, Կաս-
պից ծովի հարավ-արևելյան կողմերում, որպեսզի այնտեղ նոր զորք կազմի
և նորից գա Խոսրովի վրա։ Թագավորը հայ նախարարների հետ Տիզբոն
վերադարձավ, իսկ հայոց զորքը գնաց Սպահան։ Քիչ անցած՝ մեռան նա-
խարարներից մի քանիսը, իսկ մի երկուսին էլ Խոսրովը սպանել տվեց։ Այս
հանգամանքից վրդովված հայ բանակն ապստամբեց և ասպատակեց ամ-
բողջ երկիրը։ Ապա գնաց որոնելու Վստամին և նրա հետ միանալու։
Պարսկական զորքեր գնացին հայերի հետևից, որոնցից մի մասն սպանվեց,
բայց մյուս մասը, այնուամենայնիվ, հասավ Պարթևների երկիրը և մտավ
Վստամի հրամանատարության տակ։

---

1 Տե՛ս «Հայոց պատմ.» Ա հատորը։

2 Այս Սմբատին չպետք է շփոթել այն Սմբատ Բագրատունու հետ, որի հերոսական
տասպելը բերինք վերևում և որը Բյուզանդական Հայաստանից էր։ Նրա հոր անունն էր,
ինչպես տեսանք, Մանվել, իսկ այս մեկը, որ հռչակվեց Պարսկաստանում, Քչիկ Բագրա-
տունու որդին էր և կոչվում էր Քչկանորդի։ Տե՛ս և **Патканян, «История Геракла»**, стр. 199.

Ապստամբական մի ուրիշ շարժում էլ տեղի ունեցավ Բյուզանդական
Հայաստանում, և այս անգամ էլ նույն Սամվել Վահևունու գլխավորու-
թյամբ։ Մասնակցում էին այս տոհմի մյուս սեպուհներն էլ, որոնց անուն-
ներն էին Սարգիս, Վարազ-Ներսեհ, Ներսես, Վստամ։ Դրանց հետ էր և
նախկին ապստամբությունից ծանոթ Թեոդորոս Տրպատունին։ Որոշված էր
առաջ սպանել բյուզանդական կուրատորին61, որ բժշկվում էր Կարինի մոտ
եղած ջերմուկներում։ Բայց նա վաղօրոք փախավ, և ապստամբները,
չգտնելով նրան, թալանեցին ամբողջ շրջակայքը և գնացին ամրանալու
Կորդվաց աշխարհի Ջերմոց բերդում, վաղօրոք քանդելով այդ բերդը տա-
նող մի կամուրջ և կտրելով նրա հաղորդակցությունը դրսի աշխարհի հետ։
Նրանց հետևից բյուզանդական և հայկական զորքեր ուղարկեցին՝ Հերակլի
և Համազասպ Մամիկոնյանի գլխավորությամբ։ Նրանք կարողացան հաս-
նել Ջերմոց բերդին, անցնելով գետը ոչ թե կամուրջով, որ քանդված էր,
այլ հունով, որ ցույց տվեց մի ճանապարհորդ քահանա։ Կռիվն օրհասա-
կան եղավ պաշարվածների համար։ Մեծ քաջությամբ կռվեցին և կոտո-
րածներ արին Սամվելը, Ներսեսը և Վստամը, բայց երեքն էլ սպանվեցին,
իսկ Սարգիսը և Վարազ-Ներսեհը ձերբակալվելով՝ տարվեցին Կարին, ուր
նրանց մահվան դատապարտեցին։ Գլխատման ժամին Վարազ-Ներսեհն
ասում է Սարգսին. «Վիճակ գցենք, թե ո՛վ առաջ սպանվի»։ Իսկ սա պա-
տասխանում է. «Ես ծեր եմ և մեղավոր, աղաչում եմ՝ այդ պարգևն ինձ
տուր. թող մի փոքր առաջ ես հանգստանամ և չտեսնեմ ձեր մահը»։ Եվ
անվախ ծերունին, ճիշտ որ, ընկերոջից առաջ է գլխատվում։ Իսկ Թեո-
դորոս Տրպատունին փախչում է պարսիկների մոտ, բայց սրանք բռնում են
նրան և տալիս բյուզանդացիների ձեռքը, որոնք և սպանում են նրան դառն
տանջանքներով։

Մի վերջին փորձ, Մորիկի մահվանից մի տարի առաջ (601 թ.),
անում է դարձյալ Ատատ Խոռխոռունին, որ արդեն մի անգամ ապստամբ-
վել էր, և, ինչպես տեսանք, ի վերջո հպատակվել էր կայսրին և նրանից
մեծ պատիվներ ստացել։ Թրակիայում կատարած իր քաջագործություն-
ների համար նա հասել էր պատրիկի բարձր աստիճանին։ Մորիկը կանչեց
նրան պատերազմի դաշտից, մեծարեց իր պալատում շքեղ խնջույքներով և
ապա էլի ուղարկեց իր զորքի մոտ։ Ճանապարհին նա մտածեց թողնել
բյուզանդական ծառայությունը և փախչել պարսիկների մոտ։ Եվ իսկույն
կատարում է իր այդ ցանկությունը. նավ է նստում իր մարդկանց հետ և
ցամաք դուրս գալով, ուղևորվում է Հայաստան։ Միայն ծովափից բավական
հեռանալուց հետո իմացվեց, որ նա փախստական է, գնում է ապստամ-
բեցնելու իր երկիրը։ Համարյա բոլոր քաղաքներում փորձում են ձերբակա-
լել նրան, բայց նա պատերազմներ տալով առաջ էր գնում, և ոչ ոք չկարո-
ղացավ կտրել նրա ճանապարհը։ Այսպիսի մանր պատերազմներ տալ նա
ստիպվեց 18 անգամ, մինչև որ Նախճավան հասավ քիչ մարդկանց հետ,
քանի որ այդ ընդհարումների մեջ հալվել էր նրա փոքրիկ գունդը։ Պար-
սիկներն ընդունեցին նրան մեծ հոժարությամբ։ Բայց բյուզանդացիները
փորձեցին այդտեղ էլ ձեռք գցել փախստական իշխանին և պաշարեցին
Նախճավանի բերդը չորս կողմից։ Սակայն Խոսրովը թույլ չտվեց, որ իր
երկրում հյուրընկալություն գտածը վտանգվի և իր կողմից էլ զորք ուղար-
կեց պաշարված բերդը պաշտպանելու համար։ Այն ժամանակ բյուզանդա-
ցիները հեռացան, և Ատատը, ազատվելով, գնաց Խոսրովի մոտ, որ մեծ

սպատիվներ արավ անվանի զորավարին։ Բայց մի տարի հազիվ անցած, Խոռխոռունյաց իշխանն արդեն մտածում էր փախչել գնալ Բյուզանդիա, ուր արդեն նոր կայսր էր նստել։ Սակայն նրա այս մտադրությունը բացվեց և Ատատը Խոսրովի հրամանով բրածեծ սպանվեց։

Այս բոլոր մանր-մունր անցուդարձերը չափազանց լավ են բնորոշում մի ավատական երկրի ամբողջ անկազմակերպ դրությունը։ Քաջություն չէր պակասում Հայոց երկրին, նույնիսկ հանդուգն, հերոսական։ Գիտեին մեռնել ռազմիկին վայել սառնասրտությամբ, գիտեին բողոքել անարդարության, ճնշումների դեմ հանուն հայրենիքի բարօրության և ազատության։ Բայց այս բոլոր առաքինություններն արտահայտում էին առանձնացած, անհատական դեպքերով, առանց կապի, առանց համայնական փոխադարձ պաշտպանության և աշխատակցության։ Այդ պատճառով էլ առանձին-առանձին դեպքերը մնացին մանր, պատահական և, իհարկե, չկարողացան փոփոխել երկրի վրա բռնացած դրությունը։

602 թվականին Կ. Պոլսում բռնկված հեղաշրջումը վերջ էր դնում Մորիկի ո՛չ միայն թագավորության, այլև կյանքին։ Նա և նրա ընտանիքն ընկան սպանողների հարվածների տակ, իսկ գահ բարձրացավ ապստամբության պարագլուխ Փոկասը, որ ստորին աստիճան ունեցող մի սպա էր և միաժամանակ մի կոպիտ և անսիրտ զինվորական։ Հայ կյանքին Մորիկը մեծ հարվածներ տվեց իբրև մի անպատասխանատու բռնակալ, որ խաղում է ազգերի ճակատագրի հետ դաժան և անհոգի հաշվողի սառնասրտությամբ։ Նրա քաղաքականությունը թուլացրեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական կարողությունը, ցրելով ու վատնելով նրա ուժերը բռնի գաղթականությունների միջոցով։ Նա էր դարձյալ, որ բաց արավ ներքին եղբայրասպան պատերազմների դռները և այդ ավերիչ քաղաքականությունը նրա հաջորդները պիտի դարձնեին սիստեմ, քաղաքական իմաստության անկյունաքար։

5. Հայ-վրացական պառակտում։ *Մորիկի սպանությունը պատրվակ դարձավ, որ Խոսրով թագավորը վերսկսի պատերազմները Բյուզանդիայի դեմ։ Այս հարձակողական քաղաքականությունը նա պատճառաբանում էր երախտագիտական պարտականությամբ։ Իբրև թե նա վրեժ էր հանում Փոկաս կայսրից իր «հոր» սպանության համար, մի «հոր», որ տվել էր իրեն, Խոսրովին, թագավորական գահ։ Մարդկային նվաճողական արյունհեղությունները համարյա միշտ էլ բարձր գաղափարների անունով են սկիզբ առել։ Խոսրովի երախտագիտական զգացմունքը, պետք է կարծել, այնքան զորեղ էր, որ նրա վառած հրդեհը լափեց Արևելքը մոտ քառորդ դարի ընթացքում։ Բայց ինչ էլ լինեն պատճառն ու պատրվակը, 13 տարվա խաղաղությունից հետո երկու սահմանակից մեծ պետությունները նորից արյան և ավերակների հրապարակ են դառնում։ Պարսից թագավորի համար—ավա՜ղ, այս վերջին անգամ—հաղթանակների փառքն էր բացվում, հաղթանակներ, որոնց համար նա ստանում էր «Պարուէզ» [հաղթող] տիտղոսը։ Բայց այս փառքը հին Իրանի համար վերջին աղետալի դատավճիռն էր, օրհասի մեջ կենդանության վերջին մարող նշույլը։ Պատերազմի առաջին տարին իսկ (604 թ.) վերադարձրեց Խոսրով Պարվեզին Հայաստանի այն ամբողջ մասը, որ նա տվել էր Մորիկին 591 թվի դաշնադրությամբ։ Հազիվ, սակայն, Հայոց երկիրն սկսեց իրեն քիչ ազատ զգալ բյուզանդականության ճնշումներից, և ահա առաջ է գալիս մի շատ ցավալի եկեղեցա-*

կան ընդհարում վրացիների հետ, որ աղետավոր հանգամանքներ է ունե-
կան ընդհարում վրացիների հետ, որ աղետավոր հանգամանքներ է ունե-
նում և քաղաքական տեսակետից։ Այս ընդհարումը շատ երևան եկավ, շուտ
զարգացավ և շատ էլ վերջացավ, խզելով հարաբերությունները դրացի վի-
ճակակից և բախտակից երկու ազգերի միջև։

Մենք արդեն տեսանք, թե որքան սերտ էին կուլտուրական կապերը
Հայաստանի ու Վրաստանի միջև, բայց և նկատեցինք այն սուր շփումը,
որ անխուսափելիորեն պիտի առաջանար ազգայնական գերակշռության
հողի վրա։ Համաձայնությունը երկու եկեղեցիների միջև կատարյալ էր, և
հարյուր տարի առաջ Վրաց կաթողիկոսը, ինչպես տեսանք, գնում էր Դվին՝
քաղկեդոնական դավանությունը մերժելու համար։ Հենց այդ ճանապար-
հորդությունն էլ ցուցադրում էր Վրաց կաթողիկոսության ստորադասու-
թյունը Հայոց կաթողիկոսի նկատմամբ։ Որքան և անկախ ու համազոր
համարվեր Վրաց եկեղեցին, բայց և այնպես, նա մի տեսակ կախում ուներ
Հայոց եկեղեցուց, մի տեսակ հպատակական դրության մեջ էր գտնվում
նրա առջև[1]։ Այս դրությունը վերջիվերջո պիտի առաջ ներեր ազգային
արժեքների իրավասության հարցը, որ միշտ կրում է իր մեջ ընդհարման
վտանգը։

Հայ-վրացական պառակտման մեջ գլխավոր դերակատարն էր Վրաց
Կյուրիոն կաթողիկոսը, մի եռանդուն, լավ պատրաստված և հայրենիքի
ջահերով տոգորված հոգևորական, որ ծնվել էր Ջավախքի կես-հայկական
կես-վրացական գավառում, վրացի ծնողներից, երկար ապրել էր Փոքր
Ասիայի մի քաղաքում, ուր ստացել էր գեղեցիկ հունական դաստիարակու-
թյուն, ասել է թե՝ տոգորվել էր հունական օրթոդոքսության ոգով, ստա-
ցել էր հոգևորական կոչում։ Բայց կարողանալով թաքցրած պահել իր հա-
մոզմունքները, գնում է Դվին, ուր ընդունվում է Հայոց կաթողիկոսարա-
նում (593—594)։ Ժամանակի կաթողիկոսն էր Մովսես Եղվարդեցին, որ,
ինչպես տեսանք, մի համոզված և անհաշտ հակաքաղկեդոնական էր։
Կյուրիոնը ծերունի կաթողիկոսին այնքան հաճելի է դառնում իր վարք
ու բարքով, որ նրա ամենամոտիկ մարդկանց շրջանն է մտնում և, ինչպես
կարծում են, նույնիսկ կաթողիկոսական դիվանադպրի պաշտոն էլ է վա-
րում։ 598—599 թվականներին մեռնում է Վրաց կաթողիկոսը, և մի ամ-
բողջ պատգամավորություն, բաղկացած մի քանի իշխաններից, գնում է,
ինչպես սովորություն էր, Հայոց կաթողիկոսի մոտ և խնդրում նոր կաթո-
ղիկոս Վրաստանի համար։ Մովսեսն ավելի լավ թեկնածու չի գտնում, քան
իր աջակից և աշխատակից Կյուրիոն եպիսկոպոսը, որին և ձեռնադրում է
կաթողիկոս և ուղարկում Վրաստան։ Նորընծա կաթողիկոսը գտնում է իր
հայրենիքը ներքին խռովությունների մեջ, փութով վերջ է տալիս նրանց
և մրցող ավատական իշխաններին միացնում է ազգային գաղափարի շուրջը[2]։

Մովսես կաթողիկոսին նա, բնականաբար, վերաբերվում էր մեծ հար-
գանքով, և քանի նա կենդանի էր, Վրաց եկեղեցու կողմից չհարուցվեցին
այնպիսի խնդիրներ, որոնք կասկածի տեղիք տային, թե կարող են ան-
համաձայնություններ ծագել հայերի և վրացիների միջև։ Բայց ահա 604
թվականին վախճանվում է Եղվարդեցին, և այս ժամանակին հետևող
դեպքերը գալիս դասավորվում են այնպես, որ 4—5 տարվա ընթացքում

[1] Տե՛ս վերևում, գլ. Դ, 1։
[2] Հ. Ն. Ակինյան, «Կյուրիոն կաթ.», եր. 165—172։

մի ամբողջ խորխորատ են բաց անում երկու եկեղեցիների միջև։ Կաթողիկոսական նոր ընտրություն իսկույն չկատարվեց և Դվինի աթոռն սկսեց կառավարել, տեղապահի կոչումով, Վրթանես եպիսկոպոսը, որ ավելի հայտնի է Քերթող մականունով։ Սա շատ կարևոր դիրք ունեցող և հեղինակավոր մի հոգևորական գործիչ էր։ Հեղինակավորություն նրան տալիս էր նախ և առաջ նրա լավ պատրաստությունը։ Դա մի շատ զարգացած, մատենագրական խոշոր կարողությամբ օժտված եկեղեցական էր, գրչի մարդ, տեղյակ հունարեն լեզվին, մոլեռանդությամբ նվիրված ազգային եկեղեցու շահերին, ասել է՝ մի շատ համառ և ուժեղ հակաքաղկեդոնիկ[1]։ Երկրորդ խոշոր հանգամանքը, որ ավելացնում էր նրա հեղինակությունը, այն էր, որ նա հասարակ ծագում չուներ, այլ Բագրատունյաց իշխանական տոհմից էր, որը մեկն էր հայ նախարարությունների մեջ առաջնակարգ դիրք գրավողներից և նշանավոր պատմական դեր կատարել սկսեց 5-րդ դարից։ Նրա հայրը Քշիկ իշխանն էր և այս պատճառով էլ նա հաճախ անվանվում էր Քշկան որդի։ Այս իշխանական ծագման վրա ավելանում էր և այն, որ Վրթանեսի երկու եղբայրները կարևոր պաշտոնական դիրք ունեին գրաված։ Հռչակված էր դրանցից մանավանդ Սմբատը, որին վերևում տեսանք Խոսրովի ծառայության մեջ, շատ մեծարված իր քաջությունների համար և նրանից ամբողջ Վրկանի մարզպան նշանակված։ Ութ տարի նա վարեց մարզպանության պաշտոնը Վրկանում և ցույց տվեց, որ ինքը քաջ և անխոնջ զորավար չէր միայն, որ կարողանում էր զսպած պահել պարսկական սահմանների վրա ապրող վաչկատուն և գիշատիչ ժողովուրդները, այլև ընդունակ վարչապետ և հայրենասեր հայ։ Սմբատն ստացել էր գեղեցիկ դաստիարակություն մայրենի լեզվով, ազգային ավանդապահության ոգով։ Հատկապես հիշելու արժանի է, որ նա մանուկ հասակից Մցխեթի ս. Խաչի ուխտավոր է եղել և շատ անգամ էր գնացել նրան երկրպագելու իր հոր և մոր հետ։ Շարունակ մեծարվելով Պարսից թագավորից, շարունակ պարսկական ավագանու մեջ ապրելով, տարիներով հեռու հայրենիքից, Քշիկ իշխանի այս որդին մնաց հավատարիմ իր ազգության, սրտի ամբողջ կարողությամբ նվիրված նրա շահերին։ Այսպես, Վրկանում նա գտավ վաղեմի ժամանակներից այդտեղ տարված մի հայկական գաղթականություն, որ արդեն մոռացել էր իր մայրենի լեզուն և քրիստոնեության կարգերը։ Եվ Սմբատն իսկույն կարգադրում է, որ հայ քահանաներ գնան այնտեղ ու դաստիարակեն համարյա արդեն օտարացած ժողովրդին իր մայրենի լեզվի և պաշտամունքի ոգով։

607 թվին Սմբատը Տիզբոնում նորից մեծամեծ պարգևներ է ստանում Խոսրով թագավորից և արձակուրդով գնում է Հայաստան։ Այստեղ նա, ի՛նչ կասկած, դառնում է առաջին ազդեցիկ մարդը, որ անմիջապես նամակագրություն ուներ արքայից արքայի հետ։ Ապրում էր Դվինում, ուր նրա եղբայր Վրթանեսը կաթողիկոսական տեղապահ էր, և իր ձեռքն է առնում համարյա ամբողջ մարզպանական կառավարությունը, շարունակելով, սակայն, կրել «Վրկան» կամ հաճախ և «Գուրկան մարզպան» պաշտոնական անունը և «Տէրանց զինուոր» պատվանունը։ Նրա հետ Դվինումն էր, հարկավ նույնպես ժամանակավորապես, և նրա մյուս եղբայրը, Գիգ

[1] Հ. Ն. Ակինյան, «Վրթանես Քերթող և յուր երկասիրությունները» («Հանդ. Ամսօր.», 1910, եր. 8)։

անունով, որին միշտ կցվում էր «Դաշտակարանի» կամ «Դաշակարանի», որ նշանակում էր, թե նա այսպիսի մի անծանոթ տեղի տեր էր։ Ինքը Վրթանես Քերդողն էլ հաճախ կոչվում է «Վարդապետ Հայոց Տարսաղար»[1]։ Եվ ահա այս եղբայրական երրորդությունն էլ մի կարճ ժամանակով իր ձեռքն է առնում Հայոց երկրի գործերի տնօրինությունը։ Նա էլ հայոց կողմից էր Կյուրիոն կաթողիկոսին հավասարազոր ներկայացուցիչ, բանակցություններ վարող։

Հայրենիք հասնելուն պես, Սմբատ Վրկան մարզպանը շտապեց եկեղեցական ժողով գումարել նոր կաթողիկոս ընտրելու համար։ Դրանից մի տարի առաջ, 606 թվին, կայացել էր այդպիսի մի ժողով, որին մասնակցում էին 50 եպիսկոպոս և 390 վարդապետ ու քահանա։ Այդ ժողովը, մեզ անհայտ պատճառով, չէր կարողացել ընտրություն կատարել, բայց դրա փոխարեն մշակել և վավերացրել էր մի քանի կանոններ, ուղղված այն հոգևորականների դեմ, որոնք գիտությամբ թե անգիտությամբ հարում են այս կամ այն աղանդին, մասնավորապես քաղկեդոնականության։ Կանոնները օրենսդրում էին խիստ վարմունք այդպիսիների նկատմամբ, պատիժներ և հալածանք, նրանք հանձնարարում էին մանավանդ զգույշ լինել, որ այդպիսի հոգևորականներ, նույնիսկ զղջալուց և նորից Հայոց եկեղեցու գիրկը վերադառնալուց հետո պաշտոններ չստանան[2]։

Այսպիսով անխնա պատերազմ էր հայտարարվում քաղկեդոնականության դեմ։ Եվ այս մի հասկանալի ռեակցիա էր բյուզանդականության այն չափազանցությունների դեմ, որոնք Մորիկի ժամանակ գործադրվեցին Հայաստանում։ Դառնալով նորից պարսկական հող, ազատվելով դավանաբանական ճնշումներից, երկիրն ավելի եռանդով էր կպչում իր ազգային ավանդություններին և նրանց նորանոր վտանգներից պաշտպանելու համար ձեռք էր առնում անհաշտության, կռվի միջոցները։ Եվ այդ վտանգները երևութական չէին, այլ իրական։ Արդեն հայտնի էր, որ Կյուրիոն կաթողիկոսը Վրաստանում քաղկեդոնականություն է մտցնում, իսկ Աղվանից և Սյունյաց աշխարհներում շարունակ տեղի էին ունենում հերձվածողական խմորումներ նույն հողի վրա։ Դվինի ժողովը (606 թ.) նախորոշում էր, թե ի՛նչ վերաբերմունք պիտի ունենա Հայոց եկեղեցին դեպի իր այդ դավանակից և ուխտակից եկեղեցիների անջատողական ձգտումները։ Այս նախորոշման վրա էլ հենվում է երեք եղբայրների կառավարությունը Կյուրիոնի հետ բանակցություններ վարելիս։ Անկասկած, Դվինի այս ժողովի ոգին ու ներշնչողը կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերդողն էր, մեկը Քշիկ իշխանի երեք որդիներից։

Հողը, որի վրա առաջ եկավ հայ-վրացական ընդհարումը, մեզ լավածանոթ Ցուրտավ քաղաքն էր, Գուգարաց աշխարհում, Թիֆլիս քաղաքից ոչ հեռու, որ ուներ հայերից և վրացիներից խառն ազգաբնակություն և որ հենց այդ պատճառով ազգայնական սուր շփումների համար բոլոր հարմարությունները ներկայացնող միջավայրն էր։ Ցուրտավը, իբրև Գուգարքի մայրաքաղաք, եպիսկոպոսական աթոռ ուներ, և Կյուրիոնի ժամանակ այդ աթոռը գրավում էր Մովսես անունով մի հայ եպիսկոպոս, որ տեղացի էր, Տաշիրք գավառից, դաստիարակություն ստացել էր հենց նույն Ցուր-

[1] «Գիրք Թղթոց», եր. 149։

[2] Նույն տեղում, եր. 146—148։

տավում, հետևաբար տոգորված էր տեղայնության նախապաշարումներով։ Պատմական շարժումները շատ հաճախ ներկայանում են անթեղված կայծերի օրինակով, որոնց հրահրողները շատ անգամ հանդիսանում են անհայտ մարդիկ։ Ցուրտավի մեջ անթեղված ազգայնական կայծերի հրահրողն էլ այս Մովսես եպիսկոպոսն էր։ Տարիքով էլ նա կրտսեր էր Կյուրիոնից, բայց ուներ համարձակ բնավորություն, իսկ այն հանգամանքը, որ նա ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ էր սահմանագլխի այս շատ կարևոր կետում, ուր շարունակ տեղի էին ունենում միջազգային շփումներ, ներշնչում էր նրան նաև հպարտություն, գուցե և ոչ ներելի չափերով։ Նրա և Կյուրիոն կաթողիկոսի միջև ստեղծվեցին և անձնական վատ հարաբերություններ։ Գոնե Մովսես եպիսկոպոսը հաղորդում էր Դվինի կաթողիկոսարանին, որ երբ ինքն իմացավ, թե Կյուրիոնը քաղկեդոնականություն է տարածում, գնաց նրա մոտ և հանդիմանեց նրան[1]։ Այս արդեն բավական էր, որ բոլոր հանգամանքների վրա ավելանա և մարդկային գործերի հուժկու մի ղեկավարը—անձնական թշնամությունը։ Այս տեսակ հարաբերությունների մեջ էր, որ մեծ, վճռական պայքարի կերպարանք է ընդունում հայերեն և վրացերեն լեզուների հարցը Ցուրտավի եկեղեցում։ Մենք տեսանք իր տեղում, որ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկը հայերեն լեզվով ժամասացություն էր մտցրել Ցուրտավի եկեղեցում։ Կյուրիոնը շատ իրավացի կերպով նկատի էր առնում, որ այդ եկեղեցու ծխականները հայեր չեն միայն, այլև վրացիներ, որոնք չեն հասկանում հայերենը։ Եվ որովհետև Ցուրտավը վրաց կաթողիկոսական թեմ էր, ուստի Կյուրիոնն այլևս թույլ չտվեց, որ շարունակվի այդ կարգը։ Այստեղ էլ ահա տարաձայնությունները հասնում էին կատարյալ խառնաշփոթության։ Մովսես եպիսկոպոսը պնդում էր, թե հայոց լեզուն իսպառ արգելել է Կյուրիոնը, իսկ սա ասում էր, թե ինքը չի արգելել, այլ հայերեն ժամասացությունը թարգմանել է վրացերենի, որպեսզի վրացիներն էլ նույն եկեղեցում ունենան ժամասացություն իրենց մայրենի լեզվով։

Դվինի կաթողիկոսարանը հավատ ընծայեց Մովսես եպիսկոպոսին ամենից առաջ հենց այն պատճառով, որ Կյուրիոնն սկսել էր սաստիկ հալածել նրան։ Մովսեսը գնաց նրա մոտ, Թիֆլիս՝ բացատրություններ տալու, բայց նրան՝ Սիոնի մայր եկեղեցում, որը գտնվում էր արքունի պալատի մոտ, կաթողիկոսի կողմից հայտարարվեց, որ չհամարձակվի նրա աչքին երևալ։ Մովսեսը մի շաբաթ ապրեց Հակոբ անունով մի քահանայի տան, նույն եկեղեցու թաղում, բայց տեսնելով, որ փառասեր կաթողիկոսը չի ուզում ոչ մի զիջում անել և վախենալով նրա հալածանքից, թողնում է Թիֆլիսը և ձյան ձմեռ ժամանակ փախչում է գնում Հովհաննավանք, Արագածոտն գավառում, Կարբի գյուղի մոտ։ Կյուրիոնն ուրիշ կերպ էր բացատրում այս հանգամանքը, ժխտելով որևէ հալածանքի դիտավորություն, բայց երեք եղբայրների կառավարությունը դարձյալ չհավատաց Վրաց կաթողիկոսին։ Առհասարակ նկատվում էր մի բութ անկարողություն՝ այս վեճը խաղաղությամբ կարգավորելու մեջ։ Դվինի կառավարիչները չհասկացան, որ Վրաստանում, Կյուրիոնի ղեկավարությամբ, տեղի ուներ եկեղեցու կատարյալ ազգայնացման մեծ աշխատանքը, և թե այսպիսի մի շարժման պետք է վերաբերվել լրջությամբ, արդարությամբ, առանց լա-

[1] Ուխտանէս եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, հ. Բ, եր. 39։

բելու հարաբերությունները, առանց ցավագար խստություններ հաղորդելու երկու կողմերի փոխադարձ հարաբերություններին։ Այսպիսի մի հնարք գտնելու համար պետք էր մեջտեղից վերացնել Մովսես եպիսկոպոսի միջնորդությունը, ավելի սերտ հարաբերություններ ստեղծել Կյուրիոնի հետ չեզոք անձերի միջոցով, վրացական լեզվին տալ հավասար իրավունք ամեն տեղ, ուր վրացի ժողովուրդը հայերի հետ միասին էր եկեղեցի հաճախում։ Բայց այսպիսի խելացի վարմունք Դվինը ցույց չտվեց։ Քչկան որդիները բավականացան միայն նամակներ գրելով։ Սկզբում, քանի որ կաթողիկոս չէր ընտրվել, Կյուրիոնի հետ նամակագրություն սկսեց Վրթանես Քերթողն իբրև կաթողիկոսական տեղապահ։ Անհաշտության, անզիջողականության շեշտն էր, երևի, պատճառ, որ այս նամակները մնացին անպատասխանի։ Այնուհետև թուղթ գրեց Սմբատ Վրկան մարզպանը, որն իբրև պետական բարձր պաշտոնյա, շատ հայտնի էր և հարգանք էր վայելում նաև Վրաստանում։ Կյուրիոնը պատասխանեց նրան պատշաճավոր մեծարանքով և խուսափողական դիրք բռնելով գլխավոր առարկայի, այն է՝ քաղկեդոնականության հարցի վերաբերմամբ, միայն բանավեճ էր մղում Մովսես եպիսկոպոսի ասածների դեմ։

607 թվին Սմբատ մարզպանի նախաձեռնությամբ գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս ընտրեց Աբրահամ Աղբաթանցուն, որը և շարունակեց նամակագրությունը Կյուրիոն կաթողիկոսի հետ նախկին ոգով, գտնվելով, անկասկած, Վրթանես Քերդողի խիստ ազդեցության տակ։ Սմբատ մարզպանը հայտարարեց, թե սուտ են Վրաց կաթողիկոսի բացատրությունները։ Բայց նա ժամանակ չունեցավ Դվինից պաշտպանելու հայ եկեղեցու իրավունքները։ 608 թվի գարնանը նա կանչվեց Պարսից արքունիքը, ուր նրան սպասում էին կարևոր հանձնարարություններ Վրկանում և հյուսիս-արևելյան Իրանում կատարելու համար։ Մինչև իր ճանապարհվելը՝ մեծանուն պաշտոնակալը կարողացավ մի ծառայություն էլ անել իր եկեղեցուն։ Խոսրովից ստանալով թույլտվություն, նա սկսեց նորից շինել Դվինի ս. Գրիգոր եկեղեցին, որ կործանված էր Վարդան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ։ Իսկ վրաց հարցի վերաբերմամբ նա հանձնարարեց Աբրահամ կաթողիկոսին շարունակել բանակցությունները Կյուրիոնի հետ, և եթե հարկ լինի՝ գրել իրեն արքայից արքային հայտնելու և հարկավոր հրաման ստանալու համար։ Առհասարակ, Վրկանի մարզպանն աշխատում էր հայ-վրացական զուտ կրոնական հարցին տալ քաղաքական նշանակություն։

Բայց հայերի և վրացիների միջև հարց իսկապես այլևս չէր մնում։ Կյուրիոնն առանց Հայոց կաթողիկոսից թույլտվություն ստանալու որևէ պարտավորություն զգալու գլուխ բերեց իր եկեղեցու անկախությունն ու ազգայնացումը։ Այդ իր և իր ժողովրդի անկողոպտելի իրավունքն էր։ Աբրահամ կաթողիկոսը, կորցնելով բոլոր միջոցները, դիմում էր քաղաքական անհավատարմության ուրվականով վախեցնելու միջոցին։ Նա գրում էր Կյուրիոնին, թե Վրաստանը Պարսկաստանին է հպատակված, և արքայից արքան հռոմների, հետևաբար և նրանց կրոնի թշնամին է, ուստի քաղկեդոնականություն ընդունել կնշանակեր անհավատարմություն ցույց տալ արքայից արքայի վերաբերմամբ[1]։ Սակայն այս անվայել միջոցն էլ

[1] «Գիրք Թղթոց», եր. 165։

ոչինչ օգուտ չբերեց։ Այն ժամանակ, երբ բորբոքված էր հայ-վրացական կրոնական վեճը, Խոսրով Պարվեզն ընդարձակ նվաճումներ էր կատարում Բյուզանդիայի ասիական մասում, այնպես որ քաղկեդոնիկ ազգաբնակությունը Պարսկաստանի սեփականություն էր դառնում պատերազմի նվաճման իրավունքով։ Կյուրիոնը, ինչպես ճարպիկ քաղաքագետ, մատնանիշ էր անում այդ հանգամանքը և ասում էր. «Եւ արքայից արքայ նո՛յնպէս տէր է Հոռոմոց, որպէս և տիրեաց աշխարհի. և չէ այնպէս, որպէս դուք գրեսցէքս, թէ որիշ որիշ թագաւորութիւնք են»[1]։

Այսպիսով զուր անցան Հայոց հայրապետի հորդորներն ու խրատները, որ դավանական բաժանումով երկու դրակից ազգերի սերն ու փոխադարձ բարեկամական հարաբերությունները վերացված չլինեն։ Կյուրիոնը երկաթե վճռականությամբ առաջ տարավ իր սկսած հեղաշրջումը։ Նրա համար ավելի կարևոր էր ազգային ինքնորոշման մի խոշոր գործոն դարձնել վրացական եկեղեցին քաղկեդոնականության ծոցում, ինչպես հայկական եկեղեցին դարձել էր միաբնյա դավանականության առանձնացած ծոցում։ Այս բանն էլ լիովին հաջողվեց Կյուրիոնին, որ և այսպիսով իրավունք ստացավ կոչվելու իր ազգի մեծ գործիչներից մեկը։ Վերջնական պաշտոնական բաժանումը հայերի և վրացիների միջև, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ 608 թվի վերջերին, կամ 609 թվի սկզբին[2]։ Աբրահամ կաթողիկոսը բոլորովին կորցնելով հաշտություն կայացնելու հույսը, դիմեց մի միջոցի, որ, բարեբախտաբար, շատ հաճախ չի կրկնվել Հայոց եկեղեցու պատմության մեջ։ Մի շրջաբերական կոնդակով նա պատվիրեց հայերին կտրել բոլոր հարաբերությունները վրացիների հետ։ Ահա մի օրինակ այդ արգելքներից. «Վասն որոյ և զյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, և կացցէ մինչև ցբուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մենք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենևիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաւթս, և մի՛ ի կերակուրս, և մի՛ յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դաեկութիւն, մի՛ աղաւթիւք երթալով ի խաչն, որ ի Մցխեթայի տեղաւքն համբաւի. մի՛ ի Մանգղեաց խաչն և մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենևիմբ հեռանալ, բայց միայն գնել ինչ և կամ գնոյ տալ որպէս Հրէից»[3]։

Կովկասյան մեծ լեռնաշղթայից հարավ տարածված գեղեցիկ երկրներում էլ, ուրեմն, թշնամություն հաստատվեց, շնորհիվ այն հանգամանքի, որ այդ երկրներում ապրող ազգերի առաջնորդները չկարողացան համաձայնվել, թե քանի՛ բնություն կար Քրիստոսի մեջ և ինչպե՛ս էին դասավորվում այդ բնությունները։ Ահա ինչ բաներից էին դժբախտություններ ստեղծվում մարդկության համար։ Մենք, սակայն, պիտի ասենք, որ այնքան էլ հեշտ չէր արմատից խզել երկու ազգերի միջև դարերով մշակված ու զարգացած հարաբերությունները։ Եվ երկար ժամանակ, նույնիսկ մինչև 12-րդ դարի սկիզբը, Աբրահամ կաթողիկոսի արգելքներն իրական մեծ արժեք չունեին հայ-վրացական փոխհարաբերությունների մեջ։ Եկեղեցական կատարյալ համաձայնության և դավանակցության կապերը շարունակեցին գոյություն պահպանել և Աբրահամ-Կյուրիոնի ժամանակներից հետո։

[1] «Գիրք Թղթոց», եր. 167։

[2] Հ. Ն. Ակինյան, «Կյուրիոն», եր. 256։

[3] «Գիրք Թղթոց», եր. 194։

Նույնիսկ փորձեր էլ եղան նորից եկեղեցական միությունը վերականգնելու համար, բայց անհաջող անցան այդ փորձերը։ Այսպես շարունակվեց մինչև այն ժամանակ, երբ վրացական եկեղեցին վերջնականապես ընկավ հունական եկեղեցու ազդեցության տակ և յուրացրեց նրանից անհաշտ թշնամական վերաբերմունք և ֆանատիկոսական նեղսիրտ անհամբերողություն դեպի Հայոց եկեղեցին։ Այս վերաբերմունքի առաջին պաշտոնական արտահայտությունն էր Ռուիս-Ուրբնիսի եկեղեցական ժողովը, որը տեղի ունեցավ 1103 թվականին և որտեղ վրաց եկեղեցականությունը հայտարարեց Հայոց եկեղեցին հերետիկոսական։ Այնուհետև, իբրև հայկական եկեղեցու անհաշտ թշնամի, վրաց եկեղեցին ամեն ջանք ու միջոցներ էր թափում ջնջելու և ոչնչացնելու այն բոլոր հիշատակարանները, որոնք անհերքելի ապացույցներ են, որ մի ժամանակ վրացիները հայերի դավանակիցներն էին և նրանց հետ միատեսակ պաշտամունք ու ծես ունեին[1]։ Այդ տեսակ արհեստական ջնջումների և ոչնչացումների փաստեր շատ է գտնում մեր օրերի քննական բանասիրությունը։

6. Պարսկական հաղթությունները։ Կրոնական վիճաբանությունները Դվինի և Կյուրիոն կաթողիկոսի միջև մի խաղաղ ժամանակ չէին տեղի ունենում, այլ պարսկա-բյուզանդական վերանորոգված պատերազմների սկզբնական շրջանում, երբ պատերազմական բեմը գլխավորապես Հայաստանն էր։ Խոսրովը հարձակողական պատերազմ սկսելով, իր գլխավոր հարվածն ուղղեց Միջագետքի հռչակավոր Դարա62 բերդի դեմ, որ բյուզանդական ուժի գլխավոր հենարաններից մեկն էր պարսկական սահմանագլխի վրա։ Մինչդեռ այդ բերդը պաշարման էր ենթարկված, պարսկական ուրիշ զորաբաժիններ մտան Բյուզանդական Հայաստան և այստեղ փոփոխակի հաջողություններով կռվում էին հոռոմ զորքերի դեմ։ Այսպես, Ջուան-Վեհ զորավարը, 605 թվի ձմեռն անցկացնելով Դվինում, գարնանը հարձակվեց հոռոմական բանակի վրա, որ գտնվում էր Եղվարդ գյուղում, բայց սաստիկ պարտություն կրեց և նույնիսկ սպանվեց կռվի մեջ։ Բյուզանդացիները հալածեցին պարսկական ջարդված զորքն Արարատյան դաշտով և մեծ պատերազմական ավար վերցնելով, վերադարձան իրենց բանակը, որ Հրազդան գետի ափին էր տեղափոխված, Հոռոմոց Մարգ անվանված դաշտում։ Հետևյալ տարին պատերազմական դաշտ է դառնում Շիրակը։ Հոռոմները Շիրակավանում էին բանակ դրած, բայց չդիմանալով պարսկական բախումին, անցան Ախուրյան գետը և ամրացան Երգինա (Արգինա)[2] բերդում։ Այստեղ հոռոմներին օգնում է տեղական հայ ազգաբնակությունը՝ գյուղացի երիտասարդների խմբեր, զինված գերանդիներով ու մանգաղներով, հարձակվում են պարսկական թիկունքի վրա և շատ նեղում են թշնամուն։ Բայց այս հանգամանքը չի օգնում, և պարսիկները, գրոհ տալով, գրավում են բերդը, մեծ կոտորած անելով, մանավանդ երբ պաշարվածների մի մասը փորձում էր փախչել այն դռներով, որոնք տանում էին դեպի Ախուրյան գետը։ Շիրակի համարյա ամբողջ այդ մասը վնասվեց շատ սաստիկ կերպով։ Երեսուներեք գյուղերի բնակիչներին պարսիկները գերի տարան Ատրպատական։

[1] **Л. Меликсет-бек,** «Грузинский извод сказания о посте «Араджавор», Петроград, 1917, стр. 73.

[2] Հ. Ղ. Ալիշան, «Շիրակ», Վենետիկ, 1881, եր. 12։

Այնուհետև բյուզանդացիները պարտություն կրում են Ծաղկոտն գավառի Անգղ բերդում, որ շինված էր Արածանի գետի վրա։ Նրանց հրամանատարն էր Թեոդորոս Խոռխոռունին, որ տեսնելով սարսափի մատնված իր բանակը, ինքն էլ վատաբար լքման է մատնվում և դավաճանում այն պետությանը, որին ծառայում էր։ Սեբեոսի մութ ակնարկներից[1] կարելի է հետևցնել այն,՝ որ Թեոդորոսը թույլ չի տալիս, որ իր զորքը զինվի և թամբի ձիերը, և այս հանգամանքից օգտվելով՝ պարսիկները հարձակվում են, կոտորում զորքը, մնացածներին իրավունք են տալիս հեռանալ։ Իսկ Թեոդորոս Խոռխոռունուն պարսիկ զորավարը բաց չի թողնում, այլ ուղարկում է Խոսրով թագավորի մոտ՝ իր դավաճանության վարձն ստանալու համար։ Խոսրովը պատվում է նրան մեծամեծ շնորհներով, պահում է իր արքունիքում, բայց ժամանակ անցնելուց հետո սպանել է տալիս նրան, երբ նկատում է, որ նա ուզում է հիմա էլ պարսիկներին դավաճանել։

Երրորդ անգամ պարսիկները հաղթում են բյուզանդացիներին Բասյան գավառում։ Այս երեք հաղթությունների հետևանքով նրանց ձեռքն է ընկնում Անգղ, Գայլատուք, Արգինա և Ծխնկերտ բերդերը։ 606 թ. պարսիկները վերցրին Դարան, և Խոսրովն ընդարձակեց պատերազմական գործողությունները Սիրիայի և Հայաստանի կողմերում։ Սիրիական մեծ արշավանքը նա հանձնում է Խոռյան զորապետին, որ կոչվում էր Ըռազման։ Իսկ Հայաստանի կողմերում գործող բանակի հրամանատարությունը հանձնված էր Աշտատ Հեզդահար զորավարին։ Այս բանակում էր գտնվում և մի մարդ, որ իրեն անվանում էր Մորիկ կայսրի որդի Թեոդորոս։ Թեև Մորիկի ընտանիքից ոչ ոք չէր ազատվել, բայց սիրիացի հրամանատար Ներսես զորավարը, որի մասին հիշատակություն արինք վերևում, ընդունեց իր մոտ մի երիտասարդի, որ ասում էր, թե կայսրի ավագ որդին է և հազիվ է փախել սպանողների ձեռքից։ Ներսեսն այս Թեոդորոսին ուղարկեց Խոսրովի մոտ, երբ սա դուրս եկավ իր բարերարի մահվան հատուցումը պահանջելու։ Թագավորն ընդունեց նրան իբրև կայսրորդու, պահում էր նրան արքայական շուքով և ման էր ածում իր բանակում, կամենալով այսպիսով վաստակել ազգաբնակության համակրանքը, իսկ Ներսեսը, իբրև ապստամբ, պաշարվեց իր բերդի մեջ, բայց չհաղթվեց, այլ թուլություն ունենալով հավատալու Փոկաս կայսրի մի մտերիմ ազգականի երդումներին, թե իր կյանքը կխնայվի, անձնատուր եղավ և դավաճանորեն խողխողվեց Փոկասի հրամանով։

Պարսկական երկու բանակներն էլ նշանավոր հաջողություններ ունեցան։ Խոռյանը գրավեց սիրիական բազմաթիվ քաղաքներ և հասավ Անտիոքին։ Իսկ Աշտատը մեծ կռիվ ունեցավ բյուզանդացիների դեմ Բասենի գավառում և մեծ ջարդ տվեց նրանց Դու և Հորդրու գյուղերի մոտ։ Հալածելով ջարդված բանակը, պարսիկները հասան Կարին բերդին և պաշարեցին նրան, բայց վերցնել չկարողացան և շատ կորուստներ ունեցան։ Այն ժամանակ Թեոդոս կոչեցյալը դուրս եկավ առաջ և հայտարարեց պաշարվածներին, թե ինքը, իբրև Մորիկի որդի, նրանց թագավորն է։ Քաղաքացիները, հավատալով այդ բանին, բաց արին դռները, և Պարսից բանակը տիրացավ այդ առաջնակարգ բերդին (608 թ.), մի բան, որ առաջներում չէր հաջողվել նրանց։ Իր դյուրահավատության համար ազգաբնակությունը

[1] Սեբեոս, եր. 119։

պատժվեց շատ խիստ կերպով։ Խոսրովի հրամանով նա գաղթեցվեց Պարսկաստանի Ահմատան քաղաքը։ Շարունակելով այնուհետև իր արշավանքը դեպի արևմուտք, Աշտատը գրավեց բոլոր երկրները մինչև Եփրատ, իսկ Շահեն զորավարը մի այլ բանակով գնաց Կարինի գավառը և այլ մասեր նվաճեց։

Այսպիսով Պարսկաստանի ձեռքն անցավ ամբողջ Հայաստանը։ Անհայտացան Մորիկի բոլոր ձեռնարկությունները։ Վերջինն Ավանի հակաթոռ քաղկեդոնիկ կաթողիկոսն էր, ծերունի Հովհաննեսը, որ փախել էր Կարին, բայց այդտեղից ժողովրդի հետ գերի տարվեց Ահմատան, ուր և մեռավ։ Նրա դիակը տարան թաղեցին Ավան գյուղում, որի կաթողիկոսարանն այնուհետև փակվեց ընդմիշտ։ Հետաքրքրական է, որ Սմբատ Բագրատունին չերևաց արևմտյան ռազմաբեմում, այլ շարունակեց գործել Վրկանում և Իրանի հյուսիս-արևելյան սահմանագլխի վրա, ուր նա մեծ հաջողությամբ պատերազմներ էր մղում քուշանների, թուրքերի և այլ ազգերի դեմ և այդպիսով բարձր պահում պարսկական զենքի պատիվը։ Խոսրովը, հիացած հայ զորավարի քաջագործությունների վրա, պատվեց նրան Խոսրով Շնում կամ Խոսրով Շում տիտղոսով, որ նշանակում է Խոսրովի ուրախություն։ Կարևոր է այն հանգամանքը, որ Սմբատի համար հռչակ ստեղծողը գլխավորապես հայկական գունդն էր, երկու հազար հոգուց բաղկացած, որի հրամանատարներն էին մի շարք նախարարներ, ենթարկված նրա գլխավոր հրամանատարության. Վարազ-Շապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտավազդ, Վստամ, Հմայակ և Մանվել Ապահունի, Վռամ Գողթնացի, Սարգիս Դիմաքսյան, Սարգիս Տրպատունի։ Եվ այսպես, մինչդեռ հայ հայրենիքը մատնված էր հարևան պետությունների միջև ծագած պատերազմների արհավիրքներին, նրա ռազմիկ ուժերը ցրված էին կամ Պարսկաստանի հյուսիս-արևելյան ծայրերը, Թուրանական ռազմաբեմը, կամ գտնվում էին հենց պարսկական և բյուզանդական այն բանակներում, որոնք կռվում էին իրար դեմ։ Օրինակ, մինչդեռ Վարազ-Շապուհ Արծրունին Վրկանում էր կռվում պարսիկների համար մի ուրիշ Արծրունի, Վասակ անունով, որդի Սահակ իշխանի, «Մանուկ ուժեղ և բարձրահասակ», ինչպես բնորոշում է Սեբեոսը, կռվում էր բյուզանդացիների շարքերում պարսիկների դեմ, որոնց և շատ վնասներ հասցրեց։ Այդ պատճառով էլ, երբ նա Շահեն զորավարի ձեռքն ընկավ Կապադովկիայի Կեսարիա քաղաքը գրավելու ժամանակ, մատնվեց դահիճների ձեռքը և սպանվեց քաղաքի դիմաց, կախվելով փայտից։ Նա այնքան քաջ էր և արի, որ անգամ պարսիկներն էլ ողբում էին նրա մահը։

Սմբատ Վրկան մարզպանին Խոսրովն ի վերջո կանչեց Տիզբոն և պահեց իր մոտ, որ այնուհետև այլևս պատերազմ չգնա, այլ հանգիստ ապրի արքունիքում, կատարյալ առատության մեջ։ Եվ ծերունի զորավարն այնուհետև մինչև իր մահը չհեռացավ Տիզբոնից։ Եվ երբ մեռավ, նրա դիակը տարան թաղեցին նրա հայրենի Դարյունս գյուղում, Կոգովիտ գավառի մեջ։

7. Երուսաղեմի առումը: 610 թվին Կ. Պոլսում տեղի ունեցավ մի նոր արյունահեղ հեղաշրջում, որին զոհ գնացողն արդեն Փոկաս կայսրն էր։ Դաժան և անընդունակ մի ինքնակալ, Փոկասը հասցրել էր կայսրությունը կործանման ծայրին։ Մինչդեռ պետությունը միանգամայն անպաշտպան էր արտաքին թշնամիների հանդեպ, ներսում ամեն մի անբավականություն խեղդվում էր արյան վտակների մեջ։ Արևմուտքում սլավոնների և ավար-

ների արշավանքներն էին քարուքանդ անում, իսկ Արևելքում պարսկական հաջողություններն էին գնալով սպառնալից կերպարանք ընդունում։ Այս բոլոր հանգամանքները, միացած Փոկասի ամարդի անգթությունների հետ, մեծ դժգոհություն պատրաստեցին նրա դեմ։ Դեռ երբեք Բյուզանդիան չէր տեսել մի ավելի վատ, մի ավելի բութ և անընդունակ կայսր։ Հեղաշրջում պատրաստող դավադրության հոգին դարձավ Փոկասի ամենամոտիկ մարդը, Պրիսկոս զորավարը, որ նրա փեսան էր։ Ամենքը փրկություն սպասում էին Աֆրիկայի կուսակալ (էկզարք) Հերակլ պատրիկից, որ Մորիկի ժամանակ անուն էր հանել պարսկական պատերազմների մեջ (մանավանդ Հայաստանում) և որի որդին, նույնպես Հերակլ անունով, զինվորական ծառայության մեջ էր իր հոր ձեռքի տակ։ Եգիպտոսը մայրաքաղաքի համար հատկապես այն կարևոր նշանակությունն ուներ, որ նա էր հաց մատակարարողը։ Պրիսկոսը բանակցություններ սկսեց Հերակլ պատրիկի հետ, որը և համաձայնություն տվեց ուղարկելու Կ. Պոլիս իր նավատորմը՝ Փոկասին գահընկեց անելու համար։ Այս ձեռնարկությունը լիովին հաջողությամբ պսակվեց։ Եգիպտական նավատորմը պատրիկի որդու, Հերակլի հրամանատարության տակ էր գտնվում։ Փոկասը կատարյալ անտարբերություն ցույց տվեց, երբ Հերակլը երևաց մայրաքաղաքի առջև։ Նրան ձերբակալեցին դավադիրները, իսկ կատաղած ամբոխն իր դատաստանով դատեց նրան։ Առանց երկար մտածելու՝ նա բռնեց կայսրին և այրեց նրան հրապարակներից մեկում։ Կայսր հայտարարվեց նավատորմի հրամանատար Հերակլը։

Սակայն նոր կայսրն էլ տարիներով անտարբերության և անգործության մատնվեց։ Նա մի կրոնամոլ մարդ էր և, ըստ երևույթին, բոլորովին գլուխ պիտի կորցներ այն հուսահատական դրության մեջ, որին մատնված էր կայսրությունը։ Այսպես, Խոսրովի հարձակումներին պատասխանելու փոխարեն, նա դիմումներ է անում նրան, առաջարկելով հաշտություն կնքել։ Իսկ Խոսրովը նրան կայսր չէր ճանաչում, և պատերազմական գործողությունները շարունակվում էին հետզհետե աճող նվաճումներով։ 611 թվին գրավված էր ամբողջ Սիրիան իր Անտիոք մայրաքաղաքով։ 612 թվին Փոքր Ասիան էր սկսում անցնել պարսիկների ձեռքը, իսկ 613 թվին գրավելով Դամասկոսը, նրանք մտան Պաղեստինի սահմանները և հետևյալ տարին պաշարեցին Երուսաղեմը։ Հրեական բազմահոլակ մայրաքաղաքը չկարողացավ պաշտպանվել և գրավվեց մի քանի շաբաթվա ընթացքում։ Ամբողջ քրիստոնյա աշխարհը ցնցվեց այս աղետալի դեպքից։ Եվ այս հասկանալի կդառնա, եթե նկատի առնենք Երուսաղեմի նշանակությունը։

Այս նշանակությունը բարձրանալ սկսեց 4-րդ դարից, երբ քրիստոնեական կրոնը, դառնալով պետական, իր կազմակերպչական եռանդի ամենավերին աստիճաններն էր թևակոխել։ Ստեղծվում էին կրոնական բարձրագույն հեղինակություններ, երկնային սեփականություններ, որոնք եկեղեցու հաստատության հիմնաքարերը պիտի դառնային։ Եվ բնականաբար այդ շինարարական շարժման մեջ առաջնակարգ դեր պիտի հատկացվեր Պաղեստինի քաղաքական-կրոնական այն մեծ կենտրոնին, ուր քարոզել և մահացել էր քրիստոնեության հիմնադիրը։ Ամբողջ Հրեաստանն էր արդեն մի սուրբ երկիր քրիստոնեության համար, քանի որ նա էր նույն հիմնադրի ծննդավայրը։ Եվ հասկանալի է, թե որքան սուրբ պիտի լիներ մանավանդ այդ երկրի մայրաքաղաքը, ուր այնքան շատ հիշատակարաններ էին թո-

ղել Հին և Նոր Կտակարանները։ Եվ ահա այստեղ էլ 4-րդ դարից ստեղծվում են մեծագույն հիմնարկություններ, որոնք ամբողջ քրիստոնեության համար ամենաբարձր սրբություններ են դառնում այդ աշխարհի վրա։ Դրանց մեջ առաջինն է Քրիստոսի գերեզմանը։ Հետաքրքրական մի երևույթ է այստեղ բացվում մեր առջև։ Քրիստոսի մահից անցել էր գրեթե 300 տարի, այս ժամանակամիջոցում գոյություն ուներ քրիստոնյա եկեղեցի թե՛ Հրեաստանում և թե՛ նրանից դուրս, բայց այն տեղը, ուր թաղված էր Նազովրեցի Հիսուսը, չէր գրավում ոչ ոքի ուշադրությունը, գուցե հենց այն պատճառով, որ հայտնի էլ չէր այդ տեղը։ Ցույց էին տալիս մի վայր, ուր պիտի ամփոփված լինեին ժողովրդական քարոզչի ոսկորները, բայց այդտեղ կառուցված էր մի հեթանոսական տաճար, նվիրված սիրո և կանացի գեղեցկության աստվածուհի Վեներային։ Քրիստոնեության համար այս չափազանց վիրավորական հանգամանքը մի կողմից բացատրվում է նրանով, որ ինքը քրիստոնեությունը քաղաքական ուժ չուներ Հռոմի կայսրներին դիմադրելու համար, իսկ մյուս կողմից՝ եկեղեցին այդ դարերում չէր նվիրագործել նշխարների և սուրբ ավանդությունների պաշտամունքը։ Եվ ահա 300 տարուց հետո միայն գնում են գտնելու այդ անհայտ գերեզմանը։ Գնացողը մեկն էր աշխարհի հզորներից—Կոստանդիանոս Մեծի մայրը, Հեղինեն։ Նա նորադարձ հավատացողի ջերմեռանդությամբ ուղևորվեց Պաղեստին, լողացավ Հորդանանի սրբազան ջրերի մեջ, ապա սկսեց Երուսաղեմում եկեղեցիներ շինել։ Քանդել տվեց Վեներայի տաճարը, որովհետև ավանդություն կար, թե նա հենց այն հողի վրա էր շինված, ուր Հիսուսի գերեզմանն է եղել գտնվելիս։ Ինչպես հոգևորականների և նրանց ստրուկների կարգն էր, հրաշքներ առաջ եկան այդ բանը հաստատելու համար. և մեծ կայսրի մոր խնամքով շինվեց քանդված տաճարի տեղ հաղթական քրիստոնեության մեծագույն կոթողը, այն եկեղեցին, որ կոչվեց Սուրբ Գերեզմանի Տաճար։ Մարդիկ հավատացին, թե Հեղինեն Քրիստոսի իսկական գերեզմանն է գտել դարավոր անհայտությունից հետո։ Եվ այնուհետև բովանդակ քրիստոնյա աշխարհն ուներ մի ընդհանուր սրբություն, երկրպագության, ուխտագնացության մի վեհագույն առարկա, որը շուտով փոխեց իր առաջին անունը և սկսեց կոչվել Սուրբ Հարության Տաճար։

Գերեզմանից հետո պետք եղավ գտնել և այն փայտը, որի վրա խաչվել էր Հիսուսը։ Խաչն արդեն դարձել էր քրիստոնեության խորհրդանշան, և իհարկե, քրիստոնեությունն էլ պիտի ունենար այդ նշանի իսկականը, խաչափայտը, ողողված աստծու, որ և աստվածորդու արյունով։ Այս էլ կարողացավ անել Հեղինե կայսրուհին։ Նրան մեծ օգնություն արավ մի հրեա, որ բանիմաց մարդու համբավ ուներ։ Երկար որոնումներից հետո այդ ճարպիկ իսրայելացին գտավ կամ հնարեց մի փոս, որի մեջ, հողի տակ, իբր թե 300 տարի թաղված և անփտելի մնացել էին Քրիստոսի և նրա մահվան վիճակակից երկու ավազակների խաչափայտերը։ Բայց ի՞նչպես որոշել, թե ո՞րն է Քրիստոսինը։ Այստեղ էլ նորադարձ թագուհու ջերմեռանդությունն օգնություն ստացավ այն ժամանակների համար շատ սովորական միջոցով. նորից գործի հրավիրվեց հրաշքը։ Ինչպես հավատացնում են այսպիսի հեքիաթների մեջ անվիճելի վարպետություն ձեռք բերած եկեղեցականները, երբ խաչերը մոտեցրին մի մեռած մարդու դիակին, երկուսը ոչինչ ազդեցություն չարին, իսկ երրորդը կենդանացրեց մեռածին։ Եվ այսպիսով «հաստատվեց», թե այդ երրորդն էլ Հիսուսի խաչափայտն է։ Մարդկային

զանգվածների կույր ֆանատիզմը հնար է տալիս նրանց խաբվելու։ Այս դեպքում էլ հավատացին ու խաբվեցին։ Իսկ քրիստոնեությունն այսպիսով ստացավ և երկրորդ մեծագույն պաշտամունքը— Կենաց Փայտը։ Բայց Հեղինեն ավելի ևս զարմանալի գյուտեր էլ արավ։ Այսպես, գտնվեց նույնիսկ այն սպունգը, որով քացախ և լեղի էին տվել Քրիստոսին խաչի վրա, նույնիսկ և այն գեղարդը, որով հռովմայեցի զինվորը ծակել էր խաչվածի կողը։ Այս բոլոր գյուտերը տեղի ունեցան 326 թվականին։

Երուսաղեմը նոր կազմակերպվող և վիթխարի հասակ առնող եկեղեցու համար դարձավ մի անսահման մեծ բարոյական ուժ, մի համաշխարհային կենտրոն։ Քրիստոսի գերեզմանը, խաչափայտը, այն բևեռները, որոնցով նա գամված էր խաչափայտին, գեղարդը, սպունգը դեռ իրենք իրենց բավական չէին. Նրանց շահագործելու համար կղերից դեռ շատ հնարիմացություն էր պահանջում, և այս կողմից նա ոչինչ պակասություն չթողեց։ Սուրբ քաղաքը նա դարձրեց համաշխարհային ուխտատեղի, ուր հավատացյալների մեծամեծ խմբեր էին թափվում Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի զանազան կողմերից, արհամարհելով երկար տարածությունները, հաղորդակցության դժվար պայմանները։ Արդեն 333 թվականին կազմված էր գրավոր ուղեցույց Բորդոյից (Ֆրանսիա) Երուսաղեմ գնացողների համար, և ուխտավորների թվում, ինչպես վկայում են ժամանակակիցները, կային և բրիտանացիներ։ Ամեն կողմից հավաքվող ահագին բազմությունը հյուրընկալություն գտնում էր տեղացի հոգևորականության կողմից և փոխարենը շահագործվում էր ջերմեռանդ բարեպաշտության բոլոր հնարքներով։ Ի՞նչպես կարող էին չհրապուրվել նույնիսկ ամենահեռավոր երկրներում ապրող հավատացյալները, երբ յուրաքանչյուր ուխտավոր կարող էր ստանալ, իհարկե որոշ վճարով, Քրիստոսի խաչափայտից մի կտոր։ Երուսաղեմի հոգևորականներն առատությամբ բաժանում էին այդ կտորները, և հավատացյալներն այդ մասունքները դնում էին ոսկուց ու գոհարեղենից շինած պահարանների մեջ։ Կարող էր, իհարկե, ամեն բանի կուրորեն հավատացող մարդու մեջ նույնիսկ կասկած ծնվել, թե ի՞նչպես է, որ խաչափայտը, անդադար մասնիկների կտրատվելով չի սպառվում։ Այս վտանգավոր հարցի դեմ էլ կղերը ձեռք առավ միջոցներ, տարածելով, թե խաչափայտն ունի աճողական հրաշալի հատկություն և միշտ մնում է անփոփոխ՝ հարատև աճման շնորհիվ։ Եվ որովհետև կրոնական ջերմեռանդությունն ավելի և ավելի մեծ չափով էր կերակուր պահանջում, ուստի հնարվեցին ուրիշ զանազանակերպ դյութիչ սրբազան առարկաներ, որոնց մեջ կղերական հնարիմացության ամենից շատ շշմեցնող գոհարն էր կույս Մարիամի ծծերի կաթը։

Այսպիսի սրբազան ջերմեռանդությամբ լցված Երուսաղեմը, սակայն, բոլորովին մաքուր մի սրբավայր չէր, ուր մարդիկ միայն առաքինության և բարոյական վեհության օրինակներ ցույց տային։ Ընդհակառակն, սկզբից ի վեր «սուրբ» քաղաքը քրիստոնյաների անառակ վարքի, արբեցողության, ավազակային արարքների հանդիսավայր էր։ Եվ այդ արատները միայն աշխարհական դասին չէին հատուկ, այլ ավելի շատ՝ Քրիստոսի գերեզմանին ծառայող հոգևորականության։ Սակայն այս հանգամանքը չէր վնասում սուրբ քաղաքի համաշխարհային հմայքին, և նա մնում էր մի միջազգային մեծ ժամադրավայր, ուր իրար հանդիպում էին, պաշտամունքի և

---

[1] Д. Гиббон, «История упад. и разр. Рим. имп.», т. III, стр. 557.

եղբայրության հողի վրա, Արևմուտքի և Արևելքի ժողովուրդները։ Եվ հասկանալի է, որ յուրաքանչյուր եկեղեցի պիտի ահագին ջանքեր գործադրեր իր ազդեցությունն ու ներկայացուցչությունը Հրեաստանի մայրաքաղաքում հաստատելու համար։

Հայերն էլ, քրիստոնեությունն ընդունելու սկզբից ևեթ, ինչպես բնական էր, իրենց տեղը գրավեցին Երուսաղեմում և երկարատև անխոնջ գործունեությամբ հաստատեցին այդտեղ իրենց գաղթականությունը։ Այսպիսով, Երուսաղեմի հայկական գաղութը մեկն է հնագույն հայ հատվածներից, որոնք հաստատվեցին օտար երկնքի տակ։ Եվ բացի դրանից՝ նա գրավում է մի բոլորովին առանձնակի տեղ. զուտ կրոնական շահերով ապրող մի հատված, բայց հենց այդ կրոնական հանգամանքը նրան կապում էր մայր հայրենիքի հետ ամենասերտ կապերով։ Պահպանելու համար իր գոյությունը միջազգային այդ մեծ մրցարանում, որ գործում էին ազգերի հարստությունները, քաղաքական ահարկու ուժի հետ միացած, Երուսաղեմի հայ կրոնական գաղութը մի մշտական սպառողի, մշտական ծծողի դեր էր կատարում բուն Հայաստանի ժողովրդի վերաբերմամբ։ Երկիրը պարտավորված էր իր նվերներով և հոգևոր տուրքերով պահպանել այդ հեռավոր գաղութը։

Պատմական ճիշտ և արժանահավատ տեղեկություններ չկան, թե իսկապես ե՞րբ սկսվեց հայ կրոնական գաղութի հաստատությունը Երուսաղեմում։ Ավանդությունը, որ կազմվել է Երուսաղեմի հայկական շրջանակներում հետին դարերի ընթացքում, անշուշտ հայերի իրավունքները պաշտպանելու նպատակով, հավատացնում է, թե դեռ 4-րդ դարում հայ առաջին քրիստոնյա թագավոր Տրդատը Հեղինե կայսրուհու օրինակին հետևեց և վանքեր կառուցեց Սուրբ Երկրում։ Մենք միայն 6-րդ դարում ենք գտնում վավերական փաստեր, որոնք ցույց են տալիս, թե հայերն ունեին իրենց վանքերը Երուսաղեմում։ Այստեղ էր, որ հույն կղերն առաջին անգամ սաստիկ հալածանք սկսեց հայերի դեմ Քաղկեդոնի ժողովի առիթով։ Այս հալածանքը մանրամասն նկարագրել է Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսը՝ Աղվանից Աբաս կաթողիկոսին գրած իր թղթի մեջ[1]։ Հույն կղերը վճռել էր, որ «հերետիկոսներ» և «հերձվածողներ» չլինեն բյուզանդական կայսրության երկու մայրաքաղաքներում—Կ. Պոլսում և Երուսաղեմում, ուստի Երուսաղեմի հույն պատրիարքը, որ նույն այս Հովհաննես եպիսկոպոսն էր, առաջարկում է այնտեղի հայ համայնքին, որ սա կամ ընդունի Քաղկեդոնի ժողովը, կամ հեռանա սուրբ քաղաքից։ Հայերը գանգատ են ուղարկում կայսրին (երևի Հուստինոս Բ-ին), բայց նա ընդունում է հույն հոգևորականության իրավունքը և գրում է պատրիարքին, որ նա ինքն իր իշխանությամբ լուծում տա այդ տեսակ հարցերին։ Իզուր գաղութի հայ «իշխանները» ապացուցում էին, թե Երուսաղեմի հայկական վանքերը մնացել են հայ թագավորների ժամանակից։ Պատրիարքը միայն մի պատասխան գիտեր, այն, որ հայերը կարող են հեռանալ սուրբ քաղաքից և իրենց «աղանդը» պաշտեն ուրիշ տեղերում։ Այն ժամանակ գաղութը դիմեց Հայոց Հովհաննես Բ կաթողիկոսին։ Թե որքան բազմամարդ էր նա, ցույց է տալիս այն հանգամանքը, որ այդ դիմումին ստորագրել էին 500

---

[1] «Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղվանից կաթողիկոս», Վաղարշապատ, 1896։

հոգի[1]։ Հովհաննես կաթողիկոսը պատասխանեց, խորհուրդ տալով հայերին հեռանալ Երուսաղեմից և այդպիսով պահպանել իրենց դավանական անկախությունը։ Բայց հայ գաղութն այդպիսի վերջնական և անդառնալի քայլ անելուց առաջ փորձեց իր իրավունքները պաշտպանել մի ավելի ապահով միջոցով։ Նա մատուցեց Հուստինոս կայսրին 7 կենտենար կամ 70 հազար դահեկան կաշառք և այդպիսով հայոց վանքերն ազատեց հույն կղերի իշխանությունից։

Մենք ունենք և ավելի մանրամասն տեղեկություններ Երուսաղեմում և առհասարակ Պաղեստինի զանազան կողմերում եղած հայկական սեփականությունների մասին։ Յոթներորդ դարի վերջերին կամ 8-րդի սկզբին Անաստաս անունով մի հայ վարդապետ կազմել է Երուսաղեմ ուխտի գնացող մի հայ իշխանի համար այդ սեփականությունների ցուցակը[2], որից իմանում ենք, թե հայերն ու աղվանները Պաղեստինում, մեծ մասամբ Երուսաղեմում, ունեին յոթանասուն երկու վանքեր և կուսանոցներ զանազան մեծությունների։ Ինչպես վկայում է այդ հեղինակը, վանքերի մեծ մասը շինված է եղել դեռ Արշակունի թագավորների ժամանակ, արքունի գանձարանի հաշվով։ Հետաքրքրական է մանավանդ այն հանգամանքը, որ հայ ավատական դրությունն այստեղ էլ դրել է իր բնորոշ դրոշմը։ Յուրաքանչյուր նախարարություն կառուցել էր իր տոհմի անունով մի կամ նույնիսկ մի քանի վանքեր, օրինակ՝ Սյունյաց, Մամիկոնեից, Ռշտունյաց, Պալունյաց, Անձևացյաց, Վանանդացյաց, Քաջբերունյաց և այլն վանքեր։ Միայն Սյունյաց աշխարհն ուներ վեց վանք։ Վանքեր շինվում էին և Հայաստանի հայտնի եկեղեցիների անունով, օրինակ, Վաղարշապատի կաթողիկեն ուներ իր վանքը։ Ըստինքյան հասկանալի է, որ այդքան վանքեր և կուսանոցներ այդ հեռավոր երկրում պահպանելու համար հարկավոր էր, որ Հայոց երկրից երկսեռ հոգևորականության մի բավական ստվար բազմություն գնար, ունենալով իր հետ ապրուստի բավարար միջոցներ։ Եթե ավելացնենք, թե դեռ ո՛րքան գումարներ էին պետք այդ հիմնարկությունը բարեկարգ, նույնիսկ զարդարուն դրության մեջ պահելու համար, մենք կունենանք մի մերձավոր հասկացողություն, թե ո՛րքան մեծ էր այն հոգևոր տուրքը, որ հայ ժողովուրդը տալիս էր Հրեաստանին։ Այստեղ էլ, ինչպես և երկրի ներքին կյանքում, ծախսերի խոշոր մասն ընկնում էր նախարարությունների վրա, որոնք և հանում էին այդ գումարները ժողովրդի միջից։ Բայց և այնպես, ինքը ժողովուրդն էլ նշանավոր չափով մասնակցում էր այդ ծախսերին, անձամբ այցելելով Սուրբ Երկիրը ստվարաթիվ ուխտագնացությունների միջոցով։ Յոթներորդ դարում մենք հավաստի տեղեկություններ ունենք, թե հայ ուխտավորները որքան ցանկալի և հաճությամբ՝ սպասվող հյուրեր էին առհասարակ Երուսաղեմի կղերական բոլոր հաստատությունների համար։ Չպետք է մոռանալ, որ նրանք առանձին բաժիններ պիտի տանեին և իրենց ազգային վանքերի համար։ Եվ մենք տեսնում ենք, որ նույն 7-րդ դարում հայ ժողովուրդը մեծ սիրով է ուխտավորական ճանապարհորդություններ կատարում դեպի քրիստոնեության սուրբ վայրերը։ Այդ բանի մեջ, ինչպես վկայում է ժամանակակից մի վավերագիր, ժողովուրդը գտնում էր մխիթա-

[1] «Վասն վանօրէից որ ի ս. քաղաքն յԵրուսաղէմ», Վենետիկ, 1896, էջ 11։

[2] «Վասն վանօրէիցս» և այլն։ Տե՛ս նաև ա) Հ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, հ. Ա, էջ 514—521 և բ) Մովս. Կաղանկատ., էջ 423։

րություն իր երկիրը կեղեքող դառնությունների դեմ[1]։ Ասել է, թե քաղաքական թշվառություններն ավելի ևս բորբոքում էին կրոնական զգացմունքը և մարդիկ մեծամեծ խմբերով ճանապարհվում էին Երուսաղեմ՝ հանգստություն և մխիթարություն որոնելու, երկրի վշտերը մոռանալու համար։

Ահա այս աշխարհահռչակ սրբավայրն էր, որ 614 թվին Խոսրով Պարվեզի ձեռքն անցավ։ Կոտորածն ու ավերումն ահռելի չափերի հասան։ Աշխարհի բոլոր կողմերից բարեպաշտական պատրանքներով այստեղ թափված հարստությունները անխնա թալանի ենթարկվեցին, քաղաքը վերածվեց ավերակների կույտի, սպանվածների թիվը տասնյակ հազարներով էին հաշվում։ Այստեղ գործում էր ոչ միայն հաղթություններով հղփացած զինվորական սանձարձակությունը, այլև կրոնական կույր ֆանատիկոսությունը, որ զրադաշտական հոգևորականությունը շարունակ վառ էր պահել պարսկական զորքերի շարքերում և որից այնքան ճարպկորեն օգտվեցին հրեաները։ Այդ ժամանակ կայսրության մեջ կար հրեական հարց, որ Փոկասը և նրանից հետո նույնիսկ Հերակլը կարծում էին լուծել հրեաներին հալածելով և արհամարհելով։ Այս քաղաքականությունը, բնականաբար, հրեաներին պիտի գրգռեր բյուզանդացիների դեմ։ Տեսնելով, որ հասել է վրիժառության հարմար ժամը, հրեությունը տասնյակ հազարներով զինվոր գրվեց Պարսից բանակում։ Ահա գլխավորաբար սրանք էին, որ վայրենի ֆանատիկոսությամբ ընկան Երուսաղեմի քրիստոնեության վրա։ Մոտ երեսուն հազար գերի, որոնց մեջ և Զաքարիա պատրիարքը, քշվեցին Պարսկաստան։ Խոսրովի զորքերը Տիզբոն տարան և Քրիստոսի խաչափայտը։ Ստորացված ու անպատվության ծայրն էր հասցված ամբողջ քրիստոնյա աշխարհը, որ և դառնակսկիծ ողբում էր այդ իր համար մեծագույն դըժբախտությունները։ Արևելյան քրիստոնյա ժողովուրդների գրականությունների մեջ այդ աղետը թողել է խոր հետքեր։ Հայոց գրականությունն էլ պահել է իր մեջ հիշատակարաններ, որոնք ցույց են տալիս, թե հայ ժողովուրդն էլ քրիստոնյա աշխարհի ընդհանուր տրամադրությամբ և զգացումներով էր համակված[2]։ Եվ այլապես, իհարկե, չէր էլ կարող լինել։ Որքան և բյուզանդական կղերը կատաղի անհաշտությամբ էր վերաբերվում հայոց դավանության, այս, այնուամենայնիվ, չէր նշանակում, թե հայերը քրիստոնեական ընդհանուր շահերն ու գաղափարները, ընդհանուր սրբությունները կարող էին մոռանալ հույն եկեղեցու հալածանքների պատճառով կամ նույնացնելով քրիստոնեությունը բյուզանդականության։ Այս վերաբերմունքի պերճախոս ապացույց է այն նամակագրությունը, որ տեղի է ունեցել Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Մոդեստի և Հայոց Կոմիտաս կաթողիկոսի միջև։ Մոդեստը հաղորդում էր, թե սուրբ քաղաքում վերականգնվել է խաղաղությունը և սկսել է վերաշինությունը, ուստի և խնդրում էր նրա աջակցությունը, որ հայ ուխտավորները շարունակեն երկրպագության գնալ նվիրական վայրերին։ Իսկ Կոմիտասն իր մեծ խնդակցությունն էր հայտնում այդ առիթով և ապահովեցնում էր հույն փոխանորդին, որ հայերը չեն մոռանա իրենց քրիստոնեական պարտականությունները աստծու քաղաքի վերաբերմամբ[3]։

[1] Սեբէոս, էջ 138։

[2] Տե՛ս ակադեմիկոս Ն. Մառի առաջաբանը՝ «Антиох Стратиг—Пленение Иерусалима персами в 614 году» թարգմանության մեջ, СПБ, 1909, стр. 48—60.

[3] Սեբէոս, էջ 132—140

Երուսաղեմի նվաճումն առիթ դարձավ, որ Խոսրով Փարվեզը նույնպես խառնվի քրիստոնյաների դավանաբանական վեճերի մեջ: Արևելքի մեծ բռնակալները միշտ իրենց տարօրինակություններն են ունեցել: Բայց Խոսրովին այստեղ կարող էր ղեկավարած լինել և պետական անհրաժեշտականությունը: Այժմ նա իր տիրապետության տակ ուներ մի ավելի ևս ընդարձակ քրիստոնեական աշխարհ, ուր նոր մտել էր, այն էլ շատ խոշոր չափով, և բյուզանդականությունը, որ Սասանյան բոլոր թագավորների կողմից միշտ նկատվել էր իբրև թշնամի: Միանման դավանական ձև ընդունելու և այդպիսով բոլոր քրիստոնյա հպատակներին իրապես միացնելու համար նա 615 կամ 616 թվին Տիզբոնի իր պալատում գումարում է ժողով քրիստոնյա եկեղեցիների ներկայացուցիչներից, որոնց մեջ էր և Երուսաղեմի գերի Զաքարիա պատրիարքը[1]: Իսկ Հայաստանից մասնակցում էին Մամիկոնեից Կոմիտաս եպիսկոպոսը, որ դրանից հետո կաթողիկոս ընտրվեց, և Ամատունյաց Մատթեոս եպիսկոպոսը: Սրանք արքունիք էին գնացել՝ զեկուցելու համար Խոսրով թագավորին, թե ի՛նչ անկարգություններ կան Հայոց աշխարհում վատ կառավարիչների պատճառով:

Այս կրոնական ժողովին առաջարկված էր քննել, թե քրիստոնեական դավանություններից ո՛րն է ամենաուղիղ, որպեսզի այն էլ ընդունվի արքունի հրամանով պարսկական պետության բոլոր քրիստոնյա համայնքների մեջ: Այսպիսի մի եկեղեցական ժողովի տարօրինակությունը փարատվում է ամենից առաջ այն հանգամանքով, որ արքայից արքայի անթիվ կանանցից մեկը, որին նա ամենից շատ էր սիրում, մի քրիստոնյա սիրուհի էր Շիրին անունով, որ և մեծ ազդեցություն ուներ իր ամուսնու վրա: Շատ հետաքրքրական է և այն, որ Շիրինը միաբնյա դավանության էր պատկանում: Նրա հովանավորության շնորհիվ էր, որ արքունիքում մեծ ազդեցության տեր էր դարձյալ միաբնյա Գաբրիել բժշկապետը[2]: Արքունի պալատում էր այդ միջոցին և Սմբատ Վրկան մարզպանը կամ Խոսրով-Շումը, թագավորի առաջին սիրելիներից մեկը, նույնպես միաբնյա և, ինչպես տեսանք, այդ վարդապետության ջերմեռանդ մի պաշտպան և հովանավոր: Այս պալատական ազդեցիկ շրջանի վարքագիծը տարվում էր այն ուղղությամբ, որ պարսից պետության մեջ ամենանպաստավոր դիրքն ստեղծվի միաբնակ եկեղեցու համար: Այսպես, Գաբրիել բժշկապետն աշխատում էր, որ հալածվեն նեստորականները, իսկ Սմբատ Խոսրով-Շումի վերաբերմունքը դեպի քաղկեդոնականությունը մենք արդեն տեսանք վրաց բաժանման պատմության մեջ: Երևի այս ազդեցիկ երրորդությունն էլ ներշնչել էր Խոսրովին այդ ժողովի միտքը և, բացի դրանից՝ նաև նպաստավոր տրամադրություն առաջացրել նրա մեջ դեպի միաբնյա վարդապետությունը: Այս երևում է հենց այն հանգամանքից, որ ժողովի մեջ թագավորի ներկայացուցիչներ և հսկիչներ նշանակվում էին Սմբատ իշխանը և Գաբրիել բժշկապետը: Բայց այս տեսակետից մասնավորապես նշանակալից է այն հանգամանքը, որ Խոսրովն ինքն էլ միջամտում է դավանական կշռադատությունների մեջ, տեղեկություններ է պահանջում տիեզերական բոլոր ժողովների մասին և անձնապես հակում է ցույց տալիս, որ օրինա-

[1] Կարապետ եպիսկոպոս, «Կնիք հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ... յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ», Էջմիածին, 1914, էջ. XI:

[2] Եր. վ. Տեր-Մինասյան, «Հայկ. եկ. հարաբ.», էջ. 146:

վոր պետք է համարել միայն առաջին երեք ժողովները, այսինքն այն, ինչ ընդունում են միաբնակները: Եվ ժողովը — ուրիշ կերպ, իհարկե, չէր էլ կարող լինել — կրկնելով արքայից արքայի միտքը, հաստատեց, թե միակ ուղղափառ դավանությունը Հայոց դավանությունն է, որ և պիտի ընդունվի ամենքի կողմից: Սեբեոսն ասում է, թե հայերի հետ էր և Շիրին թագուհին[1]: Այս փաստն արդեն լավ բացատրում է այս պալատական ժողովի կայացրած վճիռը: Եվ անշուշտ Սմբատ Վրկան մարզպանն էլ այս ժողովով կարծում էր նորից վերականգնած լինել մասնավորապես Հայոց եկեղեցու գերիշխանությունը Վրաստանում:

8. Խոսրով և Հերակլ: Երուսաղեմը պարսկական հաղթանակների վերջին ծայրակետը չէր: Խոսրովի զորավարները, որոնց մեջ հռչակված էին մանավանդ երկուսը — Խոռյամ կամ Շահր-Վարազ[2] և Շահեն[3], ավելի ևս ընդարձակեցին իրենց նվաճումները: 616 թվականին պարսիկներն անցան Աֆրիկա և նվաճեցին Եգիպտոսը, իսկ հետևյալ տարին մի առանձին պարսկական բանակ գրավեց Քաղկեդոնը Կ. Պոլսի դիմաց, Բոսֆորի ասիական ափին: Սասանյան տոհմը մեծ աշխարհակալներ տվել էր, բայց դրանցից միայն Խոսրով Փարվեզին էր հաջողվում վերականգնել Աքեմենյան հարստության ժամանակների պարսկական մեծ պետությունը Նեղոսի ափերից մինչև Հնդկաստան: Պարթևական և Սասանյան շատ շահեր էին իրենց օրորել այդպիսի երազով, բայց միայն Խոսրով Բ-ն էր, որ կարող էր մտածել, թե մի քիչ աշխատանք ևս — և հռոմների պետությունը կարելի է վերջնականապես կործանել: Նա տեսնում էր, որ իր առջև այլևս ախոյան չկա: Քաղկեդոնի գրավումից հետո Հերակլը նորից փորձեր արավ հաշտություն կնքելու: Նա նույնիսկ ինքն անձամբ գնաց պարսկական բանակը և համոզում էր, որ ընդունեն իր առաջարկը: Սեբեոսի պատմելով, Հերակլը [illegible] խոսում էր այսպիսի լեզվով. «Զի՞նչ կամիք առնել կամ է՞ր եկի՛ք ի տեղիս յայս. մի՞թէ զծով իբրև զցամաք համարիք՝ մարտնչել ընդ նմա: Կարող է Աստուած՝ եթէ կամի, ցամաքեցուցանել զսա առաջի ձեր. բայց զգոյշ լերուք՝ գուցէ ոչ հաճեսցի Աստուած և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ ան[illegible] ծովուն: Քանզի ոչ եթէ վասն աստուածապաշտութեան ձերոյ եթ ձեզ յաղթութիւն, այլ վասն մերոյ անաւրէնութեան. մեղք մեր արարին զայս և ո՛չ թէ քաջութիւն ձեր: Եւ կամ զի՞նչ խնդրէք թագաւորն ձեր յինէն՝ որ ոչ անէ ընդ իս զհաշտութիւն. բառնա՞լ կամիցի զթագաւորութիւնս իմ, մի՛ ջանասցի, քանզի զսա Աստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա ոչ ոք կարէ, բայց եթէ յԱստուծոյ այնպէս ինչ թուեսցի, կամք Աստուծոյ կատարեսցին: Եւ կամ ասիցէ, եթէ ես նստուցից ձեզ թագաւոր. արասցէ զո՛վ և՛ կամեսցի, և մեք ընդունիմք: Այլ զքէն արեան Մաւրկա՞յ խնդրիցէ՝ խնդրեաց Աստուած ի ձեռաց Փոկասայ ի ձեռն հաւր իմոյ Հերակղի. այլ տակաւին ծառայի է [illegible]ութեամբ: Մինչև յե՞րբ ոչ յագեսցի արեամբ. մի՞թէ ոչ կարէին հռոմք սպանանել զնա և բառնալ զտէրութիւնն պարսից, յորժամ ետ զնա Աստուած ի ձեռս մեր այլ արար ի վերայ նորա ողորմութիւն: Եւ ես զնոյն խնդրեմ ի նմանէ՝ զհաշտութիւն և զսէր: Եւս ես խնդրեմ ի ձէնջ երիս ինչս, և լուարո՛ւք ինձ. ի բաց արարէք յաշխարհէս՝ զհուր և զսուր և զգե-

[1] Սեբէոս, էջ. 200:

[2] Մ. Կաղանկատվացին շարունակ Շահ-Վարազ է անվանում Խոռյամին: Երևի այս անունն է, որ աղավաղելով, բյուզանդական պատմության մեջ դարձել է Շարբարազ:

լութիւն. և յերեցունցդ աւգուտ գտանէք, զի ոչ դուք նուազիք ի սովու, և ոչ հարկք արքունի կորնչիցին։ Եւ ես առաքեմ աւասիկ թագաւորի ձերոյ հրովարտակ պատարագաւք խնդրել ի նմանէ զհաշտութիւն և ընդ իս զխաղաղութիւն»[1]։

Եվ իրավ, բյուզանդական մի դեսպանություն, բաղկացած 70 հոգուց, ճանապարհվեց Պարսկաստան՝ Խոսրովից հաշտություն խնդրելու համար։ Թե հուսահատության ի՛նչ աստիճանի էր հասել կայսրը, ցույց է տալիս այն, որ միևնույն ժամանակ նա վճռել էր իր մայրաքաղաքը տեղափոխել Հյուսիսային Աֆրիկա, Կարթագեն հին հռչակավոր քաղաքը։ Այս գործը նույնիսկ սկսված էլ էր։ Մի քանի նավեր, բեռնավորված պալատական գանձերով, ճանապարհ դրվեցին դեպի Կարթագեն։ Շուտով հայտնի դարձավ և պարսկական դեսպանության դժբախտ ճակատագիրը։ Խոսրովը, հասած լինելով փառքի գագաթնակետին, որից դենը մի շահնշահի երևակայությունը գնալու տեղ էլ չուներ, ցույց տվեց հուսահատված կայսրին, որ հաղթող մի վեհապետի հետ, մանավանդ երբ նա մի Խոսրով Պարվեզ էր, մի «Արևելքի առյուծ», ինչպես նրան անվանում է Աղվանից երկրի պատմիչ Մովսես Կաղանկատվացին[2], չի կարելի խոսել այդպիսի խոնարհ, ողոքական լեզվով։ Իր խորին արհամարհանքը հռոմեներին ցույց տալու համար Խոսրովը հրամայեց շղթայել դեսպանության բոլոր անդամներին և կալանավորների պես, պահապանների հսկողության տակ, բերել իր մոտ։ Դարձյալ մեր Սեբեոսն է, որ տալիս է գոռոզ բռնակալի պատասխանը, որ ուղարկվեց Հերակլին։

«Աստուածոց պատուական և ամենայն երկրի տէր և թագաւոր և ծնունդ մեծի Արամազդայ Խոսրով՝ առ Երակլէս անմիտ և անպիտան ծառայդ մեր։

Ո՛չ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. և զգանձ իմ որ առ քեզ են, ծախես, և զծառայս իմ պատրես. և զզաւրս աւազակաց ժողովեալ՝ չտաս ինձ հանգչել։ Ո՞չ ապաքէն սպառեցի զյոյնսն։ Եւ դու ասես վստահանալ յԱստուածն քոյ. վասն է՞ր ոչ փրկեցին զԿեսարիա և զԵրուսաղէմ և Աղէքսանդրիա մեծ ի ձեռաց իմոց։ Միթէ և այժմ ո՞չ գիտես՝ եթէ զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի, իսկ արդ՝ միայն զԿոստանդնուպոլիս ո՞չ կարացից բերել։ Բայց արդ՝ զամենայն յանցանս թողում քեզ. արի՛, առ զկին քո և զորդիս, և ե՛կ այսր։ Եւ տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս, որով կեցցես. և մեք սիրով նայեսցուք ի քեզ։ Մի՛ խաբեսցէ զքեզ սնոտի յոյսն ձեր. զի Քրիստոսն այն՝ որ զանձն իւր ոչ կարաց՝ ապրեցուցանել ի հրէիցն. այլ սպանին կախեալ զփայտէ, զքեզ զի՞արդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց։ Զի եթէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զձեռն իմ, և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսցես զիս, որպէս դու ոչ կամիցիս»[3]։

Այս բոլոր հանգամանքներն ապացույց էին, որ Կոստանդիանոսների և Հուստինիանոսների կայսրությունը հոգեվարքի մեջ էր։ Բայց օրհասական տագնապն էլ կենդանացրեց նրան։ Բյուզանդական հույները պետական այս ճգնաժամին մոռացան իրենց սովորական վախկոտությունը և միացան՝ իրենց հայրենիքը փրկելու համար։ Այս տրամադրության արտա-

1 Սեբէոս, եր. 143—144։
2 Մովսէս Կաղանկատ., տպագր. Թիֆլիս, 1914, եր. 166։
3 Սեբէոս, եր. 145—146։

հայտություն հանդիսացավ Սերգիոս պատրիարքը, մի քաջարի և առաքինի մարդ, որ շարժման գլուխ կանգնեց և թույլ չտվեց, որ Հերակլը վերջնականապես կործանվի հուսահատության անդունդի մեջ։ Նրա հորդորներով էր, որ կայսրը թողեց Կարթագեն փոխադրվելու միտքը։ Հերակլի նախապաշարված մտքի վրա մեծ ազդեցություն արավ և այն, որ գանձերով բեռնավորված նավերը խորտակվեցին. այս բանը նա նշան համարեց, որ երկինքն էլ դեմ է մայրաքաղաքի տեղափոխման։ Խոսրովի նամակը, լի անարգանքներով և հայհոյանքներով, լցրեց համբերության բաժակը։ Այդ թուղթը կարդացվեց ժողովրդի առջև։ Տպավորությունը շատ ճնշող էր։ Թուղթը տարան եկեղեցի, փռեցին սեղանի առջև, լաց ու կոծ բարձրացրին, որպեսզի աստված անպատիժ չթողնի այդ նախատինքը։ Բարեբախտաբար, ամեն հոգս աստծուն չթողնվեց։ Այստեղից է ահա, որ Հերակլի կյանքի մեջ սկսվում է մի փայլուն հերոսական տասնամյակ[1], երբ նա, լցված մեծ եռանդով և հրամանատարի խոշոր ընդունակություններով, դուրս է գալիս խորտակելու իր անչափ գոռոզացած հակառակորդին։ Նա սկսում է պատրաստվել։ Մեծ քանակությամբ զորքեր է հավաքում, մարզում, դաստիարակում նրանց։ Ամեն ինչ մոռացվեց՝ ամբողջ ուշադրությունը պարսկական պատերազմի վրա կենտրոնացնելու համար։ Հյուսիսից և արևմուտքից պետության սպառնացող ավարներին և սլավոններին կաշառում էին առատ հարկերով, որպեսզի նրանք հանգիստ նստեն իրենց տեղը։ Հարկավոր էին դրամական մեծամեծ միջոցներ, և այս կարևոր հարցում էլ կայսրը պակասության չհանդիպեց։ Պատերազմը գերազանցորեն կրոնական կերպարանք էր ստանում, քանի որ նրա առաջնակարգ հարցն էր ազատել Քրիստոսի գերեզմանը և խաչափայտը։ Ուստի Կ. Պոլսի և այլ տեղերի եկեղեցիները բաց էին անում իրենց գանձարանները, դնելով դրանք Հերակլի տրամադրության տակ։

622 թվականի գարնանը Հերակլը սկսեց պատերազմական գործողությունները Պարսկաստանի դեմ։ Իրեն գահակից ընտրելով իր Կոստանդին անունով անչափահաս որդուն և նրա վրա խնամակալներ նշանակելով Սերգիոս պատրիարքին և մի պատրիկի, որի անունն էր Վոն, կայսրն անցավ իր զորքի գլուխը և սկսեց իր հռչակավոր արշավանքները, որոնք հինգ տարի տևողություն ունեցան և իրենց հաղթական հանգամանքներով, արագ շարժումներով հիշեցնում են Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները[2]։ Մոտ վեց ամիս անցկացնելով Փոքր Ասիայում՝ բանակը կազմակերպելու և վարժեցնելու համար, Հերակլը աշնանը մտավ Կապադովկիա։ Այս շարժման հետևանքն այն եղավ, որ Քաղկեդոնը գրաված պարսկական զորքը, վախենալով կտրվել Պարսկաստանի հետ իր ունեցած հաղորդակցությունից, ստիպված եղավ նահանջել դեպի նույն Կապադովկիա, ուր ձմեռը տեղի ունեցավ ճակատամարտ, որ վերջացավ պարսիկների պարտությամբ։ Այս արշավանքի64 հետևանքն այն եղավ, որ ամբողջ Փոքր Ասիան մաքրվեց պարսկական զորքերից։ Այնուհետև Հերակլն իր բանակը տարավ Հայաստան, ուր նա մնաց մինչև ձմեռվա վերջը։ Կարճ ժամանակով գնալով Կ. Պոլիս, ուր նրան սպասում էին պետական կարևոր գործեր, Հերակլը 623 թվի զատկից հետո ձեռնարկեց իր երկրորդ արշավանքին, որ տևեց երեք

1 Лависс и Рамбо, «Всеобщая история», т. I, М., 1897, стр. 214.
2 Успенский, стр. 684.

տարի և բյուզանդական զենքին մեծամեծ հաջողություններ բերեց, իսկ հրամանատար կայսրին պսակեց մեծ ռազմագետի փառքով։ Այս արշավանքի գլխավոր հատկությունը նրա ծրագրային նորությունն էր։ Հերակլը վճռել էր Պարսկաստանին հարվածներ տալ հյուսիսից, և դրա համար նա ռազմական հենարան ընտրում էր ոչ միայն Հայաստանը, որ միշտ էլ այդ դերում էր երևան եկել Արևելքի և Արևմուտքի պատերազմների մեջ, այլև այն երկրները, որոնք գտնվում են Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային ստորոտներում, այսինքն՝ Կողքիսը, Վրաստանը և Աղվանից աշխարհը։ Այս տեղերում էր նա գտնում պարենավորման պաշարներ և այնպիսի ռազմական տարրեր, որոնցով կարելի էր լինում լրացնել զորքերի պակասը։

Բյուզանդական բանակը ծովով տեղափոխվեց Լազիստան։ Այստեղ բանակցություններ սկսվեցին տեղային և լեռնաբնակ այլ ցեղերի հետ՝ դաշնակիցներ գտնելու համար, որոնց շնորհիվ բանակի թիվը հասցվեց 120 հազարի։ Այդտեղից Հերակլը Հայաստանի վրայով մտավ Ատրպատական։ Խոսրովը թեև ձեռքի տակ ընտիր զորաբանակ ուներ, չկարողացավ դիմադրություն ցույց տալ հոռոմներին և, նրանց առաջապահ զորամասերից պարտություն կրելով, անցավ Միջագետք։ Իսկ Հերակլը գրավեց Ատրպատականի մայրաքաղաք Գանձակ Շահաստանը (մոտավորապես այժմյան Թավրիզը)։ Պատերազմը, ինչպես ասացինք, կրոնական էր, և Հերակլը, Երուսաղեմի վրեժը հանելով, ավերի և ամայացման մատնեց համարյա ամբողջ նահանգը, իսկ Գանձակի հռչակավոր ատրուշանը հիմնիվեր քանդեց։ Սակայն կայսրն առաջ գնալ չկարողացավ, որովհետև արդեն ձմեռն էր գալիս, և նա վախենում էր այն կիրճերից, որոնք Մարաստանից տանում են Միջագետքի դաշտերը, մանավանդ որ նրա դեմ զանազան կողմերից շարժվում էին պարսկական զորաբանակներ՝ մեծ անուն հանած զորավարների առաջնորդությամբ։ Ուստի ավելի օգտակար համարվեց նահանջել դեպի հյուսիս, դեպի Կովկաս։

Անցնելով Փայտակարան նահանգը, Հերակլը շարժում սկսեց այդտեղից դեպի արևմուտք, միաժամանակ բանակցությունների մեջ մտնելով թե՛ Աղվանից երկրի, թե՛ լեռներում և թե՛ լեռների ետևում, Հյուսիսային Կովկասում ապրող զանազան ցեղերի հետ։ Վճռած լինելով ձմեռել Աղվանից բարեբեր դաշտավայրում, կայսրը հրամաններ ուղարկեց Պարտավ մայրաքաղաքը, իշխաններին և ազգաբնակության, որ նրանք ընդունեն բանակը և մատակարարեն անհրաժեշտ պարենը։ Սակայն Խոսրովն էլ իր կողմից հրաման ուղարկեց, որ ոչ ոք չհամարձակվի հնազանդություն ցույց տալ հոռոմներին։ Աղվանցիները պարսից թագավորին լսեցին, և Պարտավի ազգաբնակության ունևոր մասը, ինչպես միշտ՝ վտանգի ժամանակ, թողեց քաղաքը և բարձրացավ լեռնային Արցախի ամուր տեղերը։ Կայսերական բանակը բռնեց Պարտավի ամբողջ տափարակը մինչև Ուտիքի արևմտյան դաշտային գավառները (այժմյան Գանձակը և նրա շրջակաները) մինչև Կաղանկայտու գյուղը, այսինքն մինչև Մռավ լեռնաշղթայի արևելյան ստորոտը, ուր Տրտու (այժմյան Թարթառ) գետը լեռներից դուրս է գալիս Պարտավի դաշտը[1]։

Իսկ պարսից զինվորական հրամանատարության ծրագիրն էր միաժամանակ սկսված շարժումներով շրջապատել բյուզանդական բանակը և սեղմելով նրան լեռներին, ջարդել։ Այս ծրագիրն սկսվեց և առաջ տարվեց մեծ հաջողությամբ։ Խոռյամ-Շահր-Վարազը մտավ Արարատյան դաշտը և, ուղիղ բարձրանալով դեպի Սևանա լիճը, անցավ Գարդմանի միջով և իջավ Կուրի հովիտը, բյուզանդական բանակի ճակատի առաջն առնելու համար։ Իսկ Շահեն զորավարը, շարժվելով բյուզանդացիների հետևից, բռնեց նրա թիկունքը Տիգրանակերտ ավանի մոտերքը[1]։ Հերակլը, տեսնելով, որ իրեն շրջապատել են պարսիկները, իր ամբողջ ուժով ընկավ թիկունքի բանակի, այսինքն Շահենի վրա, խորտակեց նրան մի ուժգին բախումով և, ցրելով նրան, իր համար ճանապարհ բաց արավ Արցախի գետահովիտներով դեպի Սյունիքի Ծղուկ (այժմյան Սիսիան) գավառը և այստեղից իջավ Արաքսի հովիտը, Նախճավան քաղաքի մոտ[2]։ Այս արագ և հաղթական շարժման դժվարությունն այն էր, որ կատարվեց ձմեռվա մեջ, Հայկական Բարձրավանդակի դժնդակ պայմաններում։ Բայց պարսիկները նույնպես չվախեցան Հայաստանի լեռների բքերից, և նույն մեծ սպարապետ Խոռյամ-Շահր-Վարազը, Սիրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի հաղթողը, դարձյալ գնում էր թշնամու հետևից և այն էլ այնպիսի թափով, որ Հերակլն ստիպված էր Արաքսի ափերին էլ կանգ չառնել։ Վճռած լինելով անցնել Սիրիա՝ այդտեղից նոր հարձակում պատրաստելու համար, կայսրն անցնում է Արաքսի մյուս ափը և Վրնջունիք ու Բագրևանդ գավառների վրայով մտնում է Արածանիի հովիտը և կանգ է առնում Ապահունյաց գավառում, իսկ Խոռյամը, թողնելով իր բանակը Աղիովիտ գավառում, նրանից ընտրում է մի մեծ գումարտակ, 5 հազար հոգուց բաղկացած, որպեսզի դարանամուտ լինելով՝ հանկարծակիի բերի Հերակլին և ջարդի նրան։ Բայց ռազմագիտությունն այնքան բարձր աստիճանի վրա էր կանգնած բյուզանդական բանակում, որ այդ դիտավորությունը չհաջողվեց։ Լրտեսական տեղեկություններ ստանալով թշնամու շարժման և կազմակերպության մասին, Հերակլը նույն ձևով, այսինքն իր բանակի մի ընտիր բաժնով հարձակվեց պարսիկների վրա և ոչնչացրեց նրանց առաջապահ գունդը Արճեշ գավառում։ Իսկույն գուժկան է գնում մեծ սպարապետի մոտ՝ այս իրողությունն իմացնելու համար, բայց այդ դժբախտը ենթարկվում է նրա բարկության, որովհետև հանդգնել էր այդպիսի տխուր լուր բերել։ Հրամայելով, որ բանբերի ոտներն ու ձեռքերը կապոտվեն, Խոռյամն ասաց. «Հերակլը մինչև այժմ փախչում էր իմ առաջից. հիմա՞ պիտի չփախչի, երբ այսպիսի ընտիր զորքով եմ գնում»։ Սակայն հենց այս նույն միջոցին բյուզանդացիները սաստիկ հարձակվում են նրա վրա։ Համարյա ամբողջ բանակը ոչընչանում է, և միայն սպարապետն է կարողանում փախչել մի «նվաստ» ձիու վրա իր գլխավոր բանակը, Աղիովիտ։ Բայց կայսրն իր այս փայլուն հաղթությունից օգտվել չկարողացավ։ Ձմեռային երկարատև արշավները Հայաստանի բքառատ լեռներում այնքան հոգնեցրել և ուժասպառ էին արել նրա բանակը, որ նա, փոխանակ թշնամուն հալածելու, շարունակեց իր ճանապարհը դեպի Տավրոսի լեռնաշղթան, որտեղից իջավ Սիրիա, բայց այս-

[1] Մ. Կաղանկատ., եր. 150։

[1] Այժմյան Ղարաբաղում, Խաչեն գավառի արևելյան սահմանների վրա, Շահբուլաղ անվանված մեծ աղբյուրի մոտ (Մ. Եպ. Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895, եր. 28)։

[2] Այս ճանապարհը մոտավորապես նույնն է, որ այսօր էլ Գանձակից մեկնելով, Շուշի և Գորիս քաղաքների վրայով տանում է ուղիղ Նախճավան։

տեղ էլ չկարողացավ մնալ. սպառնալից լուրեր առնելով Կ. Պոլսից, գնաց դեպի արևմուտք, մտավ Փոքր Ասիա։ Խոռյամ-Շահր-Վարազը թեև հետևում էր նրան Վանա լճի ափից, բայց ոչ մի տեղ չկարողացավ խափանել նրա առաջխաղացումը, սակայն հետո Հերակլը, նորից առաջանալով, գրավեց Ամիդ և Նփրկերտ քաղաքները, որոնք թեև Բյուզանդական Հայաստանին էին պատկանում, բայց պարսիկների ձեռքն էին ընկել։ Այնուհետև պատերազմական գործողությունները ամփոփվում են Հայաստանի այս մասում և Միջագետքի սահմանագլխին, այնպես որ 623 թվին Հերակլն իր կայսրության սահմաններից դուրս չեկավ։

626 թվականին դրությունը պարսկա-բյուզանդական ռազմաբեմում չափազանց լրջանում է։ Երկու կողմերը լարում են իրենց բոլոր ուժերը և պատրաստում են ահեղ, ճակատագրական դեպքեր։ Խոսրովը վճռում է ստեղծել այնպիսի դրություն, որ սպառնար բյուզանդական մայրաքաղաքին և այդպիսով հարկադրեր կայսրին թողնել Հայաստանն ու Պարսկաստանը և գնալ իր մայրաքաղաքն ազատելու։ Այս նպատակով բանակցություններ են սկսվում Բալկանյան թերակղզում տիրող ավարների հետ, որոնց խաքանը համաձայնություն է տալիս արշավելու Կ. Պոլսի վրա։ Պարսիկները պիտի արշավեին Ասիայի կողմից, և ահա նրանց բանակը նորից գրավում է Քաղկեդոնը, իսկ Շահենը հրաման է ստանում բռնել իր բանակով այնպիսի դիրք, որ Հերակլը չկարողանա օգնության ձեռք մեկնել պաշարված մայրաքաղաքին։

Հերակլի առաջին գործը եղավ, այդ ծրագրի դիմաց, շլքել պարսկական ռազմաբեմը, շարունակել գործողությունները ավելի վճռական եռանդով և պարսկա-ավարական դաշնակցության հակադրել մի դաշնակցություն, որի մի կողմը կլինեն բյուզանդացիները, իսկ մյուս կողմը՝ կովկասյան ազգերը։ Ամենից լուրջ ուշադրություն Հերակլը դարձրեց մի վաչկատուն ցեղի վրա, որ ապրում էր Կասպից ծովի հյուսիս-արևմտյան կողմերում, Կովկասյան լեռների այն կողմում և որ կոչվում էր խազար[1]66։ Խոսրովը Կովկասյան լեռներում էլ աշխատանք էր գործադրում՝ դաշնակիցներ գտնելու համար։ Այդ ջանքերն ապարդյուն դարձնել կարելի էր խազարներին գրավելով, որոնք թե՛ կարող էին Կովկասյան լեռնանցքները փակել գիշատիչ ցեղերի առջև և թե՛ կորստաբեր արշավանքներ կատարել դեպի Պարսից երկիրը։ Հերակլի քաղաքականության այս մասն էլ իրագործվեց, բայց ի՞նչ գնով։— Մովսես Կաղանկատվացին թողել է մեզ մի շարք շատ հետաքրքրական մանրամասնություններ, որոնք ցույց են տալիս, թե Հերակլի այդ համաձայնությունն անհուն թշվառությունների դուռ բաց արավ Աղվանից աշխարհի, Վրաստանի և նույնիսկ Հայաստանի համար։ Պատերազմներ մղելով կրոնի համար, ամեն տեղ Մարիամ Աստվածածնի բանակ անվանելով իր զորքը և բոլոր հաջողությունները վերագրելով այդ Կույսի հովանավորության, կրոնամոլ թագակիրը, այնուամենայնիվ, չկարողացավ դիմադրել պատերազմի Մողոքի67 անողոք, արյունոտ պահանջներին և բարբարոս գիշատիչների առջև ճանապարհ հարթեց, որ խաղաղ քրիստոնյա երկրների համար մշտական պատուհաս դառնան։

Վայրենի թափառականներին հրապուրել կարելի էր հարստություններով։ Նրանց առաջուց էլ հայտնի էր ճանապարհը դեպի Աղվանք և Հա-

[1] Ըստ Կաղանկատվացու՝ խազիր։

րևան երկրները, բայց Պարսից թագավորի ահը զսպում էր նրանց։ Այժմ Արևմուտքի կայսրն էր, որ հրավիրում էր նրանց գնալ, առնել, թալանել։ Այս հրավերին արձագանք տվեց, ինչպես երևում է, սկզբում մի խոշոր հրոսակ։ «Սաստիկ ամբոխիւ ելին Խազիրք ասպատակել յաշխարհս մեր՝ հրամանաւ Հերակլի», ասում է Կաղանկատվացին[1]։ Սակայն Խոսրովը սպառնական պատգամ է ուղարկում, որ նրանք հեռանան գնան իրենց երկիրը, և ասպատակող հրոսակը չի կարողանում չկատարել այդ հրամանը, անշուշտ, զգալով իր թուլությունը։ Երբ գիշատիչներն իրենց ավարով ծանրաբեռնված տուն են վերադառնում, նրանց խաքանն է, Ջեբու անունով, որ վեր է կենում անձամբ Անդրկովկաս գնալու, երևի դարձյալ Հերակլի հրավերով։ Մեր պատմիչն առանձնապես աշխույժ շեշտերով և ազդու պատկերավորությամբ է ներկայացնում հյուսիսային գազան ցեղի արշավանքը, նրա ուժը, անգթությունը և ազդած սարսափը։

«Ապա իբրև ետես իշխան տէր նոցա զայս ամենայն աղխ գերութեան աւարայ, մարդոյ և անասնոյ և անօթոց ոսկեղինաց և հանդերձից պատուականաց, խորհեցաւ ի մտի իւրում՝ յայնմ կոյս ինքն իսկ իւրովի գալ ելանել։ Ազդ առնէ այնուհետև ամենեցուն որք ընդ ձեռամբ իւրով էին՝ տոհմից տոհմից և ազգաց ազգաց՝ լեռնականաց և դաշտականաց՝ յարկաբնակաց և բացօթեկաց՝ ծովամխաց և ցամաքայնոց՝ գլխագերծաց և գիսաւորաց, զի ընդ ակնարկել նորա՝ պնդակազմ պատրաստական գտանիցին։... էր նա Ջէբու Խաքան, ունելով ընդ իւր և զորդին իւր, և զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով։ Իբրև եհաս յերկիրս Աղուանից բօթն ահագին, կամեցան ամրացուցանել զաշխարհս մեր ի մեծ մայրաքաղաքին Պարտաւաբերդի. և լինէր այն ի հրամանէ առն միոյ, որում անունն էր Գայշաք՝ որ առաքեալ էր ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս՝ որ փակեաց ի ներքս զբազմութիւն շրջակայ գաւառաց և կամէր պնդեալ զինքն միաբանութեամբ հանդերձ մեծամեծաց աշխարհիս և բնակչաց քաղաքին՝ կալ ընդդէմ նոցա։ Բայց հայեր տեսանել, եթէ զինչ անցք անցանիցեն ընդ պահապանս մեծ քաղաքին Ջողայ և ընդ գումարտակս սքանչելի պարսպաց նորա, զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծածախս գործոյն, որով փակեցին աղխեցին ընդ լեառն Կովկաս և ընդ մեծ ծովն արևելից։ Արդ՝ ի մօտել տիեզերական ցասմանն՝ որ առաջի էր մեզ ամենեցուն, նախ զնա բաղխեցին ալիք ծովուն ծաւալեալ և ի հիմանց տապալեալ. քանզի տեսանելով զահն սաստկացեալ՝ ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ, անարտևանուն բազմութեանն ի ձև իգական գիսարձակս դիմեալս. ի վերայ, դողումն կալաւ զնոսա առաջի նոցա. մանաւանդ տեսանելով զպնդաքարշ կորովաձիգսն, որք իբրև կարկուտ սաստիկ տեղային ի վերայ նոցա, իբրև գայլք գիշախանձք անամօթացեալ դիմէին ի վերայ նոցա և անխնայ կոտորէին յանցս և փողոցս քաղաքին։ Եւ ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես պայծառագեղ մանկահասակս արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և ոչ յանօգուտս, ոչ թողուին զհաշմս կամ զծերս և ոչ գթային կամ գալարէին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որ զկոտորեալ մարքն փարէին և դիէին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն. այլ իբրև

[1] Անդ, եր. 151։

հուր վառեալ յեղէգն մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւսն, գործ գազանաց և թռչնոց թողեալ ի նմա»[1]։

Այսպիսի ավերանքներով ու կոտորածներով նշանակելով իրենց ճանապարհը դեպի Անդրկովկաս, և Անդրկովկասում խազարները գնացին պաշարեցին Թիֆլիս քաղաքը, որ իզուր չէր այն ժամանակները կոչվում «փափկասուն», «վաճառաշահ», «հռչակավոր մեծ քաղաք»[2]։ Այսպիսի մի անկյուն կողոպտելու հաճույքից, իհարկե, իրեն չէր զրկի մեծ խաքանը։ Թիֆլիսի մոտ էլ նրա հետ տեսնվեց Հերակլը, որ նրան գործելու ազատություն էր տվել, և խոստացավ նույնիսկ իր աղջիկը տալ նրան կնության։ Բյուզանդա-խազարական դաշնակցությունն ապահովում էր Հերակլին 40 հազարանոց մի բանակով, որ խաքանը խոստանում էր ուղարկել նրան, երբ հարկավոր կլինի։ Բայց խազարները Թիֆլիսը վերցնել չկարողացան։ Քաղաքի պաշտպանները ոչ միայն քաջ էին, այլև գիտեին շատ կծու ծաղր անել։ Նրանք ծաղրեցին խաքանի մոնղոլական կերպարանքը, գծագրելով նրա դեմքը մի դդումի վրա, որ և հասցրին ըստ պատկանելույն։ Փափկասուն քաղաքի այս ծաղրանկարը մոտիկ ապագայում շատ թանկ պիտի նստեր նրան։ Առայժմ խաքանը բավականացավ նրանով, որ վերցրեց պաշարումը և գնաց իր երկիրը։

Հերակլը 626 թվի ամառը չէր էլ կարող լուրջ պատերազմական գործողությունների ձեռնարկել պարսկական ռազմաբեմում։ Նրա ուշադրությունն այդ միջոցին ամբողջապես կլանել էին Արևմուտքում կատարվող ծանրակշիռ դեպքերը, որոնք պիտի վճռեին Կ. Պոլսի ճակատագիրը։ Ավարների խաքանն իր հպատակ սլավոնների ահագին բազմություններով եկավ պաշարեց մայրաքաղաքը, ինչպես պայմանավորվել էր Խոսրովի հետ։ Վտանգը չափազանց մեծ էր։ Խաքանը վճռել էր Կ. Պոլսի ամբողջ ազգաբնակությունն ստրկացնել և տիրանալ բոլոր մասնավոր մարդկանց հարստություններին։ Սակայն անչափահաս կայսրորդու խնամակալությունը խելացի և աչալուրջ կարգադրություններով թույլ չէր տալիս, որ թշնամու ահագին խմբերը հաջողություն ունենան։ Խաքանը փայտե աշտարակներ շինել տվեց՝ մայրաքաղաքի պարիսպների բարձրության հավասար, որպեսզի և կարողանա պարիսպներին մոտենալ, և գրոհ տալ դեպի քաղաքի ներսը, բայց քաղաքի պաշտպաններն այստեղ առաջին անգամ սկսեցին գործածել իրենց հնարած հունական կրակը68, որով հրդեհում էին փայտե շինությունները և որ մեծ հռչակ ստացավ Միջին Դարերում։ Բայց վճռական դեր կատարողը մի գիշերային հաղթություն էր, որ տարան բյուզանդացիները և որի հետևանքով թշնամու ահագին բանակը (մոտ 300 հազար) սկսեց քայքայվել, և խաքանն ստիպված եղավ հեռանալ մայրաքաղաքից։ Իսկ պարսիկները չկարողացան որևէ գործողություն սկսել, որովհետև բյուզանդական ուժեղ նավատորմիղը թույլ չէր տալիս նրանց մոտենալ քաղաքին։

Երբ այսպիսով վտանգն անցավ, Հերակլը վերսկսեց իր պատրաստությունները։ 627 թվականը վճռական էր։ Այսրկովկաս եկավ խազարների օգնական զորքը, որի հրամանատարն էր խաքանի որդի Շաթը։ Սա մի անպատվալից վերջնագիր ուղարկեց Խոսրով Պարվեզին, պահանջելով նրանից հռոմների կայսրին վերադարձնել այն բոլոր երկրները, որոնք խլված

1 Կաղանկատվացի, եր. 152—154։

2 Անդ, եր. 156։

են նրանից, ինչպես նաև Քրիստոսի խաչը, որ մեծագույն սրբությունն է քրիստոնյաների համար։ «Յայնժամ,— գրում է Կաղանկատվացին,— իբրև լսէր զայս ամենայն մեծ թագաւորն Խոսրով՝ յարուցեալ իբրև հեղեղ անհուն, կամ որպէս առիւծ ընդդէմ որսորդաց և իբրև արջ որդեկոտոր, այսպէս և նա թէպէտ և ինքն միաբանեալս յարուցեալս ի վերայ իւր տեսանէր, սակայն ըստ խորագիտութեան իւրոյ ոչ յայտնէր զերկնչիլն և զդողումն յերեսաց նորա. այլ հպարտութեամբ և մեծաւ սաստիւ առնէր զպատասխանիսն. ե՛րթ, ասա՛ թագաւորին քո և եղբօրն իմում Ջեբու խաքանայ, եթէ ի վաղնջուց հետէ ի նախնեացն իմոց և յինէն մեծարեալ և պատուեալ էր տունդ ձեր իբրև եղբօր մերում սիրելոյ. վասն որոյ ուստերօք և դստերօք ընդ միմեանս պատուաստեալք ի խնամութիւն։ Արդ՝ ոչ էր պարտ և արժան քեզ թողուլ զանդամս քո և խոտորիլ ի բանս ծառային իմոյ կորճին Հռոմայեցւոց»[1]։

Այս անգամ արշավանքի նոր ուղղություն էր ընտրել կայսրը։ Արարատյան դաշտով նա անցավ Հեր և Զարևանդ գավառները, բռնելով այսպիսով այն ճանապարհը, որով Պարսից զորքը սովորաբար գնում էր Միջագետքից Հայաստան, մի ճանապարհ, որը շատ լավ հայտնի էր և հին Ասորեստանին և որը Ուրմիայի լճի հարավային կողմերով, Զաբ գետի հովտով, տանում է Տիգրիսի ափը։ Այստեղ 627 թվի դեկտեմբերի 12-ին երկու թշնամի բանակները հանդիպեցին իրար Նինվե քաղաքի տեղում, այժմյան Մոսուլի մոտ։ Տեղի ունեցավ մեծ և վճռական ճակատամարտ։ Հերակլը ոչ միայն հրամանատարություն էր անում, այլև կռվում էր զինվորների հետ մի շարքում։ Պարսկական բանակը չդիմացավ և մեծ պարտություն կրեց։ Նրա հրամանատարն սպանվեց, ահագին ավար ընկավ հռոմների ձեռքը։ Իրանը մահացու հարված ստանում էր հենց իր սրտի, իր մայրաքաղաքի մոտ։ Այնուհետև Հերակլն իր հարվածներն ուղղում էր այն պալատների դեմ, որ պարսից թագավորները շինել էին մայրաքաղաքից զանազան հեռավորությունների վրա և որոնք լիքն էին հարստություններով ու պաշարներով։ Դրանցից մեկում էլ կայսրը տոնեց Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը։ Խոսրովը շատ վաղուց էր իր բնակությունը Տիզբոնից տեղափոխել իր սիրած դղյակը, որ կոչվում է Դաստակերտ։ Մինչդեռ հռոմներն այդտեղ նոր դիմադրության էին սպասում, լուր ստացան, թե Խոսրովը, համարելով իր այդ պալատն անապահով, վերցրել է իր հարեմն ու հարստությունները և շտապով գնացել է Տիզբոն, մինչև որը մնում էր միայն երեք օրվա ճանապարհ։ Սակայն Հերակլը չգնաց Տիզբոնի վրա, լավ ըմբռնելով, թե ո՛րքան դժվարություններ կան մեծ գետով (Տիգրիս) պաշտպանված մի քաղաք վերցնելու համար։ Նա նույնիսկ իր գրաված պալատների մեջ էլ չմնաց, այլ նրանց կրակի մատնելով և առհասարակ ամբողջ երկիրն ամայացնելով, որպեսզի Խոսրովը զգա, թե ի՛նչ է հռոմների վրեժը, ձմեռվա մեջ Միջագետքի հովտից բարձրացավ Մարաստանի սարահարթը և ճանապարհին ահագին դժվարություններ հաղթահարելով, մտավ Ատրպատականի Գանձակ մայրաքաղաքը։ Այստեղ նա կանգ առավ, սպասելով, թե ի՛նչ ընթացք կընդունեն դեպքերը Պարսկաստանում։

[1] Եր. 163։ Կաղանկատվացու համար Խոսրով Պարվեզը (Ապրվեզը) մի վիպական հերոս է։ Ինչպես երևում է, նա օգտվել է իր ժամանակ գոյություն ունեցած մի վեպից, որ երգում էր Պարվեզի գործերն արևելյան ճոխությամբ։

Իսկ այդ դեպքերը, փոթորկալից և արագավազ, օրհասական էին Խոսրով Պարվեզի համար։ Նրա ամոթալի փախուստը մի կարճ միջոցում գցեց նրա համարումը ժողովրդի մեջ։ Առանց այդ էլ նրա դաժան բռնակալությունը, նրա անգութ հարկահանությունները պետության մեջ դժգոհություն և ատելություն էին առաջացրել։ Առանձնապես ատում էին նրան քրիստոնյաները՝ խաչափայտի գերության պատճառով, իսկ նեստորականները, բացի դրանից, հատկապես այն պատճառով, որ նա հովանավորել էր միաբնակներին։ Այժմ, ճգնաժամի միջոցին, պատրաստ էին պալատական հեղաշրջման բոլոր տվյալները, որոնց մեջ ամենագլխավորը, սակայն, գահաժառանգությունն էր։ Խոսրովի բազմաթիվ կանանցից ծնված բազմաթիվ որդիների մեջ ավագագույնը Կավատն էր, բայց նրան հայրը հեռացրել էր գահաժառանգությունից, փակել էր մի ամրոցի մեջ, իսկ գահաժառանգ հայտարարել էր Շիրին տիկնոջից ծնված որդուն։ Եվ ահա պալատական հեղաշրջումն սկսվում էր հենց նրանով, որ անբավական ավագանին, մի նեստորական սիրիացու գլխավորությամբ, ազատեց Կավատին բանտարկությունից և գահընկեց հայտարարելով Խոսրով Պարվեզին, նրա տեղ գահ բարձրացրեց Կավատին (628 թ.), որի առաջին գործն եղավ սպանել իր հորն ու բազմաթիվ եղբայրներին[1]։

Մովսես Կաղանկատվացին այստեղ էլ վիպական մանրամասնություններով է ներկայացնում իր հիացմունքը շարժած մեծ թագավորի կյանքի ողբերգությունը, որ, ինչպես երևում է, իր ժամանակին ահագին տպավորություն էր թողել Արևելքում, իբրև մարդկային երջանկության և ուժի ունայնության ու ճակատագրի ծայրահեղ հակադրությունների ապշեցուցիչ օրինակ։ Իր պատմությունը նա սկսում է հենց գրույցի կամ ժողովրդական քերթվածքի ձևով. «Բայց անսացէք ինձ սակաւիկ մի, և պատմեցից կարճառօտիւք զխորագիտութիւն ա՛ռն, եթէ զի՞արդ կամ ո՞րով օրինակաւ կամաց արգելուլ ի զաւագեղն մահու զահեղ որսորդն՝ զառիւծն արևելից, յորոյ ի գոչելն միայն ազգք հեռաւորք դողային և մօտաւորք յերեսաց նորա իբրև զմոմ հալեալ պակասէին։ Նա[2] այնպէս ի վայրկեան ժամանակի զողացաւ զամենեցուն սիրտս և յարեաւ ի վերայ նորա իբրև յորբոյ միոյ և առնելով զայս ամենայն, ոչ զայլ թագաւոր և իշխան ի թիկունս կոչէր, ոչ զազգս և զլեզուս հեռաւորս զօրավիգն օգնականութեան սանուն իւրոյ ընդդէմ հօրն պատրաստէր, այլ առաքէր միայն ծածկաբար առ կայսրն Հերակլիոս զետեղանալ նմա անդէն, ուր էրն զօրօքն իւրովք հանդերձ՝ աւուրս ինչ»[3]։

Այս առաջին քայլերից հետո երկրորդ գործն այն է լինում, որ դավադիրները բաց են անում հռչակավոր Անհուշ քաղաքական բերդի դռները, արձակում են այնտեղ կալանավորված մարդկանց, ասելով. «Ելեք դուրս ելեք, ո՛վ Խոսրովի սրտառուչ և թշվառական զոհեր, ձեզ համար կյանքի դուռ է բաց անում նրա որդին, նորընծա Կավատ թագավորը»։ Բանտարկվածները ջարդում են իրենց շղթաները, դուրս գնում՝ «Արքա՛յ, յաւիտեան կե՛աց» գոչելով ի պատիվ նոր թագավորի։ Կազմվում է մի մեծ թափոր։

1 Սպանված եղբայրների թիվը հաշվում են 18—25, իսկ մեր Սեբեոսը (եր. 154) հասցնում է 40-ի։

2 Խոսքը դավադրության գլխավորի մասին է, որ Կավատի դաստիարակն էր և կոչվում էր Շիրույե-Կոբադ։

3 Եր. 165—166։

Կավատը, շրջապատված իր հավատարիմներով, գնում է գահ նստելու Վեհ-Արտաշիր քաղաքի69 պալատում, ուր փակված էր Խոսրովը։ Մունետիկները կանչում էին. «Ինչ մարդ սիրում է կյանքը և ուզում է տեսնել իր օրերը բարության մեջ, թող շտապի Կավատ թագավորի առաջը դուրս գալ, որովհետև նա՛ է արքայից արքան»։ Իսկ Անհուշ բերդից ազատվածները, գեղեցիկ ձիեր հեծած, իրենց կտրատած շղթաները ձեռքերին բռնած, արշավում էին դես ու դեն, օրհնում էին Կավատին և հայհոյում Խոսրովին։ Գահընկեց բռնակալը դեռ չգիտեր, թե ի՛նչ է կատարվում։ Երբ, վերջապես, շրջապատողները հայտնում են ամեն ինչ, «Արևելքի առյուծն» սկսում է աղաղակել, հառաչել, վայ կանչել։ Նա չէր զգում, երբ նստում էր, և չէր իմանում ինչպես վեր կենա, որովհետև նրան թվում էր, թե մի զարհուրելի զորք է հարձակվում նրա վրա։ Իր կյանքի շարունակության համար մի քանի ողորմելի ժամեր էլ գտնելու նպատակով նա փախչում է պալատական ծաղկանոցը, թաքնվում է ծառերի տակ։ Բայց նրան որոնում, գտնում են։ «Վա՜յ ինձ, դժբախտիս», օրհասական տագնապի մեջ գոչում է այն մարդը, որի սարսափելի ձեռքի տակ ամբողջ 38 տարի ազգեր և երկրներ էին հեծում։ Կտրեցին նրա գլուխը։ «Չարը մեջտեղից վերացավ», ասում է Կաղանկատվացին, վերջացնելով այդ սպանության նկարագրությունը։

Բայց Խոսրով Պարվեզի գլխի հետ կտրվում էր և Սասանյան Պարսկաստանի գլուխը։ Նա վերջինն էր Իրանի փառքը կազմող մեծ և աշխարհակալ բռնապետներից։ Պարսկական հեղաշրջման ուշի-ուշով հետևում էր Հերակլը Գանձակ Շահաստանից։ Այսպիսի վերջավորության էլ նա սպասում էր սկզբից։ Առաջին մահացու հարվածը տվողը Նինվեի ճակատամարտն էր։ Բայց այդպիսի հարվածներ շատ էր տեսել ալևոր Իրանը, և եթե այժմ չկարողացավ այլևս հավաքել իր ուժերը և իր նախկին դիրքը բռնել, դրա պատճառն այն անիշխանությունն էր, որ սկսվեց Խոսրովի մահով և կործանեց պետությունը։ Կավատը շատ խաղաղասեր մի Սասանյան հանդիսացավ և իսկույն բանակցություններ սկսեց Հերակլի հետ՝ մշտական հաշտություն կնքելու համար։ Աշխարհակալական ձգտումներ չուներ նոր թագավորը։ Վերականգնվեցին պարսկա-բյուզանդական այն սահմանները, որոնք որոշվել էին Մորիկ կայսրի օրով։ Սիրիան, Պաղեստինը վերադարձվում էին Բյուզանդիային։ Բայց քրիստոնեական աշխարհի համար այս բոլորը գուցե այնքան նշանակություն չուներ, որքան այն, որ պարսիկները պատրաստվում էին վերադարձնել նաև Քրիստոսի խաչափայտը։ Կրոնական պատերազմը, այսպիսով, վերջանում էր, բերելով մի մեծ, մի անօրինակ հաղթանակ։ Ուստի նա միայն մասնավոր բյուզանդական նշանակություն չուներ, այլ ընդհանուր քրիստոնեական։ Հերակլը քրիստոսասեր, բարեպաշտ և երանելի կայսրի լուսապսակով էր զարդարվում ամբողջ քրիստոնեական Արևելքում։ Իսկ նա ինքը, իբրև կրոնամոլ մարդ, բոլոր իր հաջողությունները վերագրում էր երկնային զորություններին և մասնավորապես Կույս Մարիամին, որ Բյուզանդիայի և նրա քրիստոսասեր բանակի հովանավորն էր։ Գանձակ Շահաստանից գրված նրա մի նամակը, որ Կ. Պոլսում կարդացվեց Ս. Սոֆիայի տաճարում, սկզբից մինչև վերջը լիքն էր վերամբարձ փառաբանություններով և կրոնական սքանչացմամբ։

«Աստծուն աղաղակեցեք, բոլոր աշխարհ,— գրում էր նա։— Գործեցեք Տիրոջ համար ցնծությամբ, մտեք նրա առաջ ուրախությամբ և իմացեք, որ

Տե՛րն ինքն Աստվածն է։ Թող ուրախանա երկինքը և հրճվի երկիրը և թող սքանչանա ծովը և ամեն ինչ, որ նրա մեջ է գտնվում և բոլոր քրիստոնյաներս, գովելով և փառաբանելով, գոհություն մատուցանենք միակ Աստծուն, ուրախանալով նրա սուրբ անվան մեջ մեծ ուրախությամբ։ Որովհետև ընկավ ամբարտավան և աստվածամարտ Խոսրովը, ընկավ և խորտակվեց դժոխքի մեջ և աշխարհի վրայից ջնջվեց նրա հիշատակը։ Աղմուկով կործանվեց այն ամբարիշտը, որ գոռոզության ու արհամարհանքի մեջ ժայթքում էր պարսավանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ ճշմարիտ Աստծու վրա և նրա ամենամաքուր մոր, մեր օրհնյալ տիրուհու Աստվածածին և հավերժական Կույս Մարիամի վրա»։ Ապա պատմելով Խոսրովի պարտությունը, պալատական հեղաշրջումը, կայսրը շարունակում էր. «Փետրվարի 28-ին աստվածատյաց Խոսրովը մատնվեց ամենադժնդակ մահվան, որպեսզի ճանաչի, թե Մարիամից ծնված Հիսուսը, հրեաներից խաչվածը, ինչպես նա էր գրում[1], որին նա վատաբանում էր, ամենակարող աստվածն է, որ հատուցեց նրան մեր գրածի համաձայն»[2]։

Թողնելով իր Թեոդոս եղբորը Գանձակում Պարսից արքունիքի հետ խաղաղության բանակցությունները[70] շարունակելու համար, Հերակլն ապրիլ ամսում ուղևորվեց Կ. Պոլիս։ Նրա մուտքը մայրաքաղաք մի ամբողջ ժողովրդական տոն էր։ Իսկ հետևյալ տարին մի ավելի մեծ և ընդհանրական տոն էր սպասում ամբողջ քրիստոնեությանը։ Նեստորական կաթողիկոս Իշոյաբը[3] Տիզբոնից Կ. Պոլիս տարավ խաչափայտը։ Հերակլը կամեցավ անձամբ դնել մեծ սրբությունն իր տեղում և ճանապարհորդեց Երուսաղեմ, ուր 629 թ. սեպտեմբերի 14-ին նորից հաստատեց խաչն իր տեղում։ Այդ օրն էլ այնուհետև դարձավ եկեղեցական տոն, որ մեզանում կոչվում է «Խաչվերաց»։ Հերակլը հասավ փառքի գագաթնակետին։ Նա թե՛ հերոս էր և թե՛ եկեղեցու բարերար։ Եվ եկեղեցու պաշտոնյաներն էլ երախտագիտության պատշաճավոր տուրք էին տալիս նրան, անվանելով նրան աստծու փոխանորդ[4]։

9. Տարոնի վեպը։ Մենք նկարագրեցինք պարսկա-բյուզանդական պատերազմները, որոնց թատերաբեմ դարձավ Հայաստանը մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Թե ի՛նչպես ազդեցին նրանք հայ կյանքի վրա,

---

[1] Այս այն նամակն է, որ մենք բերինք վերևում, վերցնելով Սեբեոսից։ Միայն այս հայ պատմագիրն է, որ պահել է այդ վավերագիրը։ Եվ Հերակլի այս նամակը, ցույց տալով Խոսրովի գրած նամակի իսկությունը, միաժամանակ վկայում է, թե ո՛րքան լավատեղյակ և ճշմարտապատում գրող է Սեբեոսը։

[2] **Успенский**, «История Виз. Империи», стр. 704—705.

[3] **Крымский**, «История Сасанид.», стр. 133.

[4] Հերակլի անձնավորության և խաչափայտի ազատության հետ կապված են մի շարք ավանդություններ, որոնք կազմվել են հայկական հողի վրա հետագա դարերում։ Այսպես, ըստ այդ ավանդությունների, Հերակլն է սպանել Խոսրովին (Յովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», Վենետ., 1832, եր. 72)։ Հերակլն է եղել դարձյալ, որ խաչափայտը տարել է Պարսկաստանից Բյուզանդիա՝ Հայաստանի վրայով։ Պատմվում է մանրամասնորեն, թե ինչպես Սյունյաց տոհմից մի տիկին, Բյուրեղ անունով, անդուլ և անդադար աղաչանքներով կարողացավ կակղեցնել Հերակլին և ստանալ նրանից խաչափայտի մի կտորը, որ այնուհետև կոչվեց Հացունեաց խաչ (Հ. Ալիշան, «Հայապատում», հ. Ա, եր. 498—501)։ Այսօր էլ Երզրումի շրջակա հայերի մեջ ավանդություն կա, թե Եփրատի արևմտյան ճյուղի ակունքը կազմող աղբյուրը գոյացել է այն ժամանակ, երբ Հերակլը, խաչափայտը տանելիս,ստիպված եղավ, ինչ որ վտանգի պատճառով, թաղել նրան այդտեղ հողի մեջ (տե՛ս այս Պատմության առաջին հատորը)։

ի՛նչ դրություններ ստեղծեցին երկրում, մենք այդ մասին գրեթե ոչինչ չգիտենք, այնքան կցկտուր և մութ են այդ ժամանակի միակ պատմագիր Սեբեոսի թողած տեղեկությունները։ Բայց որ ռազմական փոթորկալից դեպքերի ազդեցությունը մեծ է եղել, որ այդ փոթորիկները հայ ժողովրդի գլխով չեն անցել, այլ նույնիսկ ամբողջ շարժումներ են հարուցել, այդ մասին դատելու նյութ մենք ունենք, որ, տարաբախտաբար, շատ է հեռու պատմական վավերագրի նշանակությունից, լինելով սոսկ մի ժողովրդական վեպ։ Նա հայտնի է մեր գրականության մեջ «Պատմութիւն Տարօնոյ» անունով, որ գրել է, թե թարգմանել է իբր թե Խոսրովի և Հերակլի ժամանակակից Հովհան եպիսկոպոս Մամիկոնյանը[71]։ Այդ համառոտ գրությունն իբրև պատմության աղբյուր չի դիմանում նույնիսկ ամենաներողամիտ քննադատության։ Բայց իբրև ժողովրդական վեպ՝ շատ կարևոր է և ուսանելի ոչ միայն գրական, այլև պատմական տեսակետից, որովհետև նրա մեջ պատմված դեպքերը, եթե հարազատորեն պատմական չեն, բայց, անկասկած, ունեն իրենց մեջ պահած պատմական դեպքերի հաճախ խուլ, բայց հաճախ և շատ պարզ արձագանքներ։

Հովհան Մամիկոնյանի «Պատմությունը», որ շատ ավելի ճիշտ կլիներ անվանել «Տարոնի վեպ», տեղայնության և հաջորդականության տեսակետից էլ շատ հետաքրքրական է։ Նա կազմում է մի խոշոր բեկոր այն ընդարձակ և մեծ վեպի, որ դարերի ընթացքում կազմվում էր Հայաստանի հարավում, Տարոն գավառում, գլխավորապես Մամիկոնյան նախարարական տան շուրջը։ Այդ վեպի մի շատ խոշոր մասից, որ բովանդակում է իր մեջ համարյա ամբողջ 4-րդ դարը, ընդարձակ չափերով օգտվել է Փավստոս Բյուզանդացու անունով գրողը։ Բայց Փավստոսի Պատմության մեջ մենք ունենք որոշ չափով վերամշակված ու պատմության պահանջներին հպատակեցրած ժողովրդական վեպ, մինչդեռ Հովհան Մամիկոնյանը գրի է առել Մամիկոնյան վեպի այն կտորը, որ 7-րդ դարին է վերաբերում, առանց խմբագրական աշխատանքի, համարյա նույնությամբ, գուցե միայն լեզուն փոխադրելով աշխարհաբարից գրաբարի։ Իր կառուցման ձևերով, նյութի արծարծման, հերոսների գործունեության եղանակով Տարոնի այս վեպը մոտիկ ազգակցություն ունի «Սասունցի Դավիթ» ազգային վեպի հետ, որ կազմակերպվել է նույն միջավայրում 9—12-րդ դարերի ընթացքում։ Իսկ իր սիրած մոտիվների, իր գլխավոր առարկայի կողմից նա միանում է և 4-րդ դարի Մամիկոնյան վեպի հետ, այնպես որ կարելի է ասել, թե Հովհան Մամիկոնյանը միջին օղակն է կազմում այն մեծ վիպաշարքի մեջ, որի հայրենիքը Մամիկոնյան Հայաստանն էր, Տարոնը... Այստեղ, այս միջին օղակի մեջ էլ, մենք տեսնում ենք փավստոսյան շատ գծեր։ Դարձյալ համարյա թե երեսնամյա պարսկա-հայկական պատերազմներ, դարձյալ պարսկական խոշոր բանակներ, որոնք ոչնչացվում են հայ հերոսների ձեռքով։ Նույն ատելությունը դեպի պարսկությունը, նույն վրեժխնդիր ոգին, որ ժողովուրդն իր պատմվածքի մեջ փայփայում է բազմատեսակ օրինակներով։

Բայց այս միջին վեպն ունի և իր խոշոր առանձնահատկությունը։ Մինչդեռ 4-րդ դարի Տարոնի սրբությունն Աշտիշատն է, որ, չնայած քրիստոնեական վերանորոգումներին, դարձյալ հին հիշատակներ է պահպանում Անահտական Հայաստանից, 7-րդ դարում Մամիկոնյան երկրի փառքն ու հմայքն արդեն սրբավայրի մի այլ անունով է երևում—ս. Կարապետ։ Ամ-

բողջ վեպը, սկզբից մինչև վերջ, սուրբ Կարապետի պաշտամունքին է ծառայում։ Եթե Տարոն կա, եթե նրա մեջ հսկա իշխաններ են ապրում, եթե հաղթում է Տարոնը և երջանիկ է ու կուշտ—այս բոլորը միայն այն պատճառով, որ սուրբ Կարապետ կա այնտեղ, որ տալիս է այն ամենը, ինչ խնդրում է տարոնցին։ Այդքան զարգացած մի տեղային պաշտամունք հազիվ թե կարելի լիներ գտնել Հայաստանի մի ուրիշ կողմում։ Եվ տարոնցիությունը, իբրև ազգային-կուլտուրական ուրույն արժեք անկարելի է հասկանալ առանց ս. Կարապետի։ Նա է, որ ամեն անգամ, երբ տարոնցին նրան կանչում է, փայլուն զգեստներով, լուսեղեն ճաճանչներով պատերազմի դաշտ է իջնում և թշնամուն խորտակում։ Նա նույնիսկ Քրիստոսին էլ է երկնքից իջեցնում, որ իբրև թագավորների թագավոր, թագով պսակված, գալիս է և տարոնցիների համար հաղթություններ վաստակում։ Անկասկած, այսպիսի աստվածային ուժեր հեթանոսական ժամանակների տարոնցին մարմնավորում էր իր Անահիտի, Աստղիկի և մանավանդ Վահագնի մեջ։

Ահա այս ազգային ինքնուրույն տեղայնության մեջ, դարերով ստեղծված հոգեբանական այս աշխարհում էլ տեղի ունի, ծավալվում է 7-րդ դարի վեպը։ Նա սկսվում է Մուշեղ Մամիկոնյանով։ Այս այն Մուշեղն է, որին մենք տեսանք Մորիկի բանակում, որ մարտնչում էր Վահրամ Չոբինի դեմ՝ Խոսրովի բարեբախտության համար։ Մենք տեսանք, թե ինչպես Խոսրովն ուզում էր կալանավորել նրան, ինչպես նա, անբավականությամբ և ցասումով լցված, հեռացավ բանակից։ Ի՞նչ ելք ունեցավ այդ անբավականությունը։ Սեբեոսն ասում է մեզ, թե նա գնաց Կ. Պոլիս և այլևս չվերադարձավ հայրենիք, նույնիսկ ցույց է տալիս, թե նա սպանվեց Դանուբի ափին՝ մի պատերազմի մեջ։ Այդպես չէ, սակայն, Տարոնի վեպի համար։ Մուշեղն իր տանն է և այն ժամանակ, երբ Փոկասն սպանեց Մորիկին, իսկ Խոսրովը, 140 հազար զորքի գլուխ անցած՝ գնում էր հույներից վրեժ հանելու։ Կարինից անցնելիս նա հրաման է ուղարկում Մուշեղին, որ նա էլ իր զորքով գնա իր հետևից։ Բայց Մուշեղը, ինչպես երևում է, չի մոռացել հին ատելությունը։ Ոչինչ պատասխան չի տալիս և, որովհետև համոզված է, որ իր վարմունքը պատերազմի պատճառ պիտի դառնա, սկսում է ամրացնել Տարոնը։ Բայց նա շատ է ծեր։ Հարյուր քսան տարի միայն պատերազմների մեջ էր անցկացրել նա, ութսուներեք ճակատամարտ անձամբ էր կարգավորել ու հարդարել, քանի՞ տարեկան պիտի լինի նա ուրեմն։ Այստեղ վեպն արտացոլում է մի պատմական մեծ երևույթ։ Այդ այն է, որ Մամիկոնյան տոհմը նվազել է սկսում, իր դերն ու նշանակությունն ուրիշներին թողնելու համար։ Մուշեղն անժառանգ է, չունի նույնիսկ մերձավոր տոհմակիցներ։ Կա մի ուրիշ իշխան, Գայլ Վահան վիպական անունով, որի ծագումը հայտնի էլ չէ, բայց որ շատ մոտ է Մուշեղին, հավանորեն նրանից որդեգրված, այնպես որ ծերունի հերոսը նրան իր որդին է անվանում։ Մեր վեպը չափազանց ծեր հերոսներ է սիրում։ Գայլ Վահանն էլ 88 տարեկան է։ Սրան է ահա Մուշեղը հանձնում իր երկրի պաշտպանությունը, երբ Խոսրովը, Բյուզանդիայից վերադառնալիս, ի կատար էր ածում իր սպառնալիքը, այն է՝ Մուշեղին պատժելու համար Տարոնի վրա է ուղարկում իր քեռորդի Միհրանին՝ երեսուն հազար զորքով։ Իսկ Տարոն գավառը և շրջակա երկու-երեք գավառներն իրենց պաշտպանության համար ունեին մի զորք, որ ներկայացնում է 20—25 հազար վիպական թիվը։

Եվ ահա ասպարեզի վրա է Գայլ Վահանը։ Քաջ է նա, անկասկած։ Ս.

Կարապետը նրա հետ է։ Բայց միայն քաջությունը չէ նրա ուժը։ Ավելի սարսափելի մի կարողություն է տրված նրան—խորամանկություն։ Եվ վեպը երկար ու բարակ մանրամասնություններով ներկայացնում է թույլ և փոքրիկ ազգերի երևակայության մեջ առանձնապես սիրված տիպը,—թե ինչպես թվով փոքր մարդիկ կարող են հաղթանակել մեծամեծ բանակներ, ազատել երկիրը դաժան բռնակալներից։ Խորամանկ, ճարպիկ, դավադիր, խաբող—ահա ինչ է Գայլ Վահանն իբրև ժողովրդական պատմվածքի հերոս։ Եվ զինված այդ հատկություններով, նա սկսում է ջարդել պարսիկներին մեծամեծ խմբերով, գցելով նրանց նուրբ մտածված թակարդների մեջ։ 4000 մարդ կոտորվում են Ոձ քաղաքումը, 2000-ը մի ուրիշ տեղում, դարձյալ 1000 և 1000։ Իսկ հայերի կողմից կարծյոք մեկն էլ չի սպանվում, գոնե այդ մասին հիշատակություն չի անում վեպը։ Ամեն ինչ կատարվում է հեշտությամբ և ճշտությամբ, ինչպես հեքիաթի մեջ։ Միհրանը կատարյալ մի ապուշ է, թույլ է տալիս, որ հայոց Գայլ իշխանն անի ինչ ուզում է։ Իսկ Գայլ իշխանը 80-ից ավելի պարսիկ իշխաններ է կոտորում, ապա սպանում է և Միհրան սպարապետին։ Բնորոշ վիպական մանրամասնություններ են, որ կոտորողները մարդկանց քթերն ու թլպատները կտրում են և իրենց մախաղների մեջ գցում, որպեսզի հետո ցույց տան պարսից իշխանին կամ թե նրանցով հաշվեն, թե քանի մարդ են սպանել։ Սպանության սովորական եղանակը գլուխ կտրելն է։ Ընդհանրապես Վահանի խորամանկությունները, որոնք, անշուշտ, շատ են զարմացրել լսողներին մի ժամանակ, երևակայություն են մի շատ պարզ և միամիտ ժողովրդի, ուստի և զարմանում են իրենց ծայրահեղ միամտութեամբ։ Այսպես է, օրինակ, կատարվում գլխավոր հրամանատար և Խոսրովի քեռորդի Միհրանի սպանությունը։ Վահանը նրան ճաշի է կանչում, և նա գնում է մենակ, հիվանդությունը պատճառ բռնելով, նստում է մի սենյակի մեջ և չի թողնում, որ ուրիշները մտնեն այդտեղ։ Վահանը դռնապան է դնում, որ վերադարձնում է ամեն եկողի, ասելով, թե Հայոց մարզպանը (Միհրանը) ճաշի չի եկել։ Իսկ այդ միջոցին Վահանը բաց է անում Միհրանի առջև իր մախաղը, ցույց է տալիս այնտեղ հավաքած քթերն ու թլպատները, և երբ Միհրանը սարսափած բացականչում է—թե այդ ի՛նչ է, նա բաց է անում ամեն բան, այսինքն՝ թե ինչպես է դավադրությամբ կոտորել նրա զորքերը։ Միհրանն ուզում է ծառայի ձեռքից խլել տեգը, որ խփի Վահանին, բայց սա վերցնում է առջևում դրած սուրը և կտրում Միհրանի թլպատը և հայտարարում, որ եթե նա չի ուզում մեռնել, թող հայտնի զինվորական բոլոր գաղտնիքները, որ գիտե ինքը և տա մի նշան, որ ամենքը տեսնելուն պես ճանաչեն, թե նրանն է։ Միհրանը, իհարկե, կատարում է ամեն ինչ, տալիս է և իր մատանին։ «Այդ դո՞ւ էիր, որ թշնամանում էիր աստծուն և իմ կրոնավորներին, որոնք աշխարհիս սյուներն են, կոտորել տվիր», ասում է Վահանը նրան, ապա կտրում է քիթը և ցույց է տալիս, որպեսզի նա աչքով տեսնի։ Հետո միայն սպանում է դժբախտին, դանակը կոխելով նրա սրտի մեջ, պատառոտում է փորը և հրամայում է ծառային հանել լյարդը և դնել նրա բերանում։ Ծառաները վերցնում են Միհրանի արյունոտ շորերը, մաքրում են հողը, որի վրա նույնպես արյուն էր թափվել և Միհրանի դիակը դնում են անկողնի մեջ՝ իբրև թե քնած է։ Վահանը կանչում է նրա պարսիկ գրագրին, «քնած» հրամանատարին ցույց է տալիս և նրա բերանից ասում է գրագրին գրել այս ինչ հրամանը Ապահունյաց

գավառում գտնվող պարսկական զորասասին, որ նա գնա այն ինչ տեղը։
Այս բոլորը նրա համար էր, որ դարան սարքվի և այդ զորաբաժինը ոչըն-
չացնելու համար։ Սակայն Միհրանի դերն այդքանով չի վերջանում, Վահա-
նը կտրում է նրա գլուխը և ուղարկում Խոսրով թագավորին, հրամայելով
ասել նրան, թե որովհետև խաղալու համար գունդ չէին գտել հայերը, ուս-
տի կտրել են այդ գլուխը՝ գնդի խաղալու համար։ Բայց որովհետև լսել են,
թե թագավորը գնացել է մի տեղ, ուր ընդարձակ դաշտեր կան, ուղարկում
են այդ գլուխը, որ թագավորը գունդ խաղա դաշտերում։

Գայլ Վահանը, սակայն, երկար չի ապրում։ Նրան հաջորդում է որդին,
Սմբատը, որ նույնպես ծեր է։ Բայց սա արդեն բոլորովին ուրիշ տիպ է,
համարձակ, բաց-ճակատ կռվող և քաջ, անվախ։ Խոսրով թագավորը նոր
բանակ է ուղարկում, դարձյալ 30 հազար հոգուց։ Նրա հրամանատարն է
Վախթանգը, Միհրանի հորեղբայրը։ Սմբատն առաջ իր հոր օգնությանն է
հասնում պատերազմների մեջ, իսկ նրա մահից հետո արդեն ինքնագլուխ
է հարձակվում և ջարդում։ Սուրբ Կարապետը մանավանդ Սմբատին է սի-
րում և միշտ նրա թիկունքն է։ Այսպես, Սմբատը կռվի մեջ կանչում է.
«Սուրբ Կարապետ, այսօր էլ հայտնիր քեզ քո ծառաներին, որովհետև քեզ
համար ենք մեռնում, Քրիստոսի հավատացյալ սիրուն»։ Ժողովրդական վի-
պըն այնքան հիացած է իր այս դյուցազնի վրա, որ իրեն հատուկ միամը-
տությամբ հավատացնում է, թե Սմբատը մարդ ուղարկեց Խոսրովին և պա-
հանջեց նրանից 12 տարվա հարկ։ Այս, իհարկե, հպատակություն պահան-
ջել չէր նշանակում, այլ պարզապես վնասների հատուցման պահանջ։ Եր-
կիրն այնքան վնասվել է պարսկական պատերազմներից, թագավորի
զինվորներն այնքան կերել են երկրի հացը, այնքան ջուր խմել, փայտ
այրել։ Առանձնապես վաթսուն հազար դահեկան պահանջում է սապոնի հա-
մար, որովհետև սպանված պարսիկների կեղտոտ ու արյունաթաթավ շորերը
լվացել են հայերը ու հետո հագել։—Ապա թե չես տա,— ասում է Սմբա-
տը,— «գամ հարիւր մարդով ի վերայ քո և զամենայն Պարսիկս գերեալ՝ ի
Տարօն ածեմ և ի քո աստուածքդ շուն խառանեմ, որ փոխանակ դոցա հա-
ջեն ի ձեզ»։ Ծիշտ հեքիաթական մի տեսարան՝ աննման իր մանկական
պարզությամբ, որ ավելի ևս զմայլելի է դառնում, երբ վեպն ավելացնում
է, թե Խոսրովը ծաղրեց Սմբատին և պատասխան էլ չգրեց նրան։

Եվ ի՞նչպես վեպն այսպիսի գործեր չվերագրի իր դյուցազնին։ Սմբատը
ահարկու կռվող է։ Ահա նա և Վարազ իշխանը ճակատամարտի մեջ են։
Այնքան արյուն են թափել, որ ոչ միայն իրենք են արյունոտվել, այլև
իրենց ձիերը։ Արյունն այնքան շատ է թափվել Սմբատի սրից, որ սրի
բռնատեղը կպել է ձեռքից, պոկ չի գալիս և նույնիսկ կոտրվում է։ Ուրիշ
սուր բռնել չի կարողանում Սմբատը, որովհետև ամբողջ ձեռքը կոտրած
սրի բռնելատեղի հետ մի զանգված է կազմել, որ քակել չի կարելի։ Այս
նկատում են թշնամիները և շրջապատում են նրան։ «Եվ ինչպես չոր փայ-
տը, որ ճեղքելու ժամանակ ճարճատում է, այնպես էլ Սմբատի գլխի
վրա ճարճատում են զենքերը», պատմում է վեպը։ Ոչինչ, սակայն չեղավ,
և Սմբատը ծաղրում է հարվածողներին. «Վա՜յ քաջութեանդ ձերոյ,— ասում
է,— զի ոչ կարացիք հերձուլ զգլուխ իմ»։ Բայց երբ տեսնում է, որ թշնա-
միներն սկսեցին ավելի եռանդով աշխատել իր գլխի վրա, կանչում է. «Ո՞ւր
ես, բազուկ քաջ և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց, զաւազան իմոյ ծերու-
թեան, իշխան Պալունեաց, յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անգեղք

և բուեջք մատեցին զիս»։ Վրա է հասնում Պալունին, հարձակվում է։
Սմբատն ազատված է։ Բայց ի՞նչ անել ձեռքը։ Ձախով նա մի պարսիկ է
բռնում, նրան մորթել է տալիս, տաք արյունը թափվում է ձեռքի վրա, հա-
լեցնում է զանգվածը, և այսպիսով ձեռքն ազատվում է, և Սմբատը նորից
ահարկու սուր ունի բռնած։ Բայց կա մի ավելի գեղեցիկ վիպական կա-
ռուցվածք, որ պատկերացնում է Սմբատի ահռելի կռիվների հետևանքները։
Պարսից դիակներն այնքան շատ էին,— ասում է վեպը,— որ բոլորը գազան-
ները կերան և կշտացան։ Կուզը կերավ և ուռեց ինչպես արջ։ Աղվես-
հպարտ դարձավ, ինչպես առյուծ։ Գայլը պայթեց, որովհետև ջատակեր էր
և արջը, որովհետև ինչ որ ուտում է՝ չի պահում, սովից մեռավ։ Անգղները,
որովհետև ագահ են, նստեցին և այլևս չկարողացան վեր թռչել։ Մկները,
որովհետև շատ կրեցին իրենց ծակերը, մաշեցին իրենց ոտները։

Երրորդ անգամ Խոսրով թագավորը զորք է ուղարկում Տարոնի վրա,
և այս անգամ քսան հազար է զորքի թիվը։ Սմբատը կռվում է, բայց ար-
դեն ծեր է, և պարսիկները մեղուի պես թափվում են նրա վրա։ Եվ ահա
պատերազմական ասպարեզ է դուրս գալիս նրա որդի Վահանը, որ մոր
կողմից Կամսարական է, ուստի և կոչվում է Վահան Կամսարական։ Տարո-
նի հսկաների այս չորրորդ սերունդն է, որ նույն հաջողությամբ առաջ է
տանում հայրենի գործը։ Չորրորդ պարսկական բանակն է գալիս, այժմ 50
հազար 6 հարյուր։ Այս անգամ ծանր է Տարոնի դրությունը։ Բայց մեծ է
ս. Կարապետի զորությունը։ Երեք հարյուր ութսուն և հինգ վեղարավոր
հոգևորականներ, սև հագած, կանգնում են Արածանիի ափին, յուրաքան-
չյուր տասը հոգին մի ժամահար ունի։ Եվ ձայն են բարձրացնում նրանք
արտասվելով. «Ով Տէր, հա՛ր զմեր պատերազմն, ով Կարապետ, զարթի՜ր ի
ձայն պաշտօնէիցս»։ Եվ Կարապետը զարթնում է ու իր հետ բերում մի
Լերիտասարդ ահագին տեսլեամբ, և թագ ծիրանի ի գլուխ նորա և խաչ, և
ի հանդերձից նորա հուր փայլատակեալ»։ Սա արդեն Քրիստոսն է։ Եվ պա-
տերազմը, ի՞նչ խոսք, նորից հաղթական է դառնում հայերի համար։ Վա-
հան Կամսարականի որդին Տիրանն է։ Եվ դյուցազնավեպը վերջանում է,
ամփոփվելով հինգ անպարտելի հերոսների—Մուշեղի, Գայլ Վահանի, Սըմ-
բատի, Վահան Կամսարականի և Տիրանի շրջանի մեջ։

Տարոնի վեպն ունի ամեն մի ժողովրդական բանահյուսության ամե-
նաբնորոշ հատկությունները։ Ոչ մի հասկացողություն ժամանակագրու-
թյան մասին։ Ինչպես առատ են պարսկական զորքերի թվերը, այնպես էլ
տարիների թվի վերաբերմամբ ոչ մի խնայողություն ցույց չի տալիս պատ-
մվածքը։ Խոսրովը և Հերակլը թագավորում են մինչև 681 թվականը։ Վա-
հան Կամսարականը կառավարում է Տարոնը 30 տարի։ Բայց առատ են
մանավանդ տեղային աշխարհագրական անունների ստուգաբանություն-
ները։ Ժողովուրդն է, որ սիրում է ամեն մի տեղի անուն կապել զանա-
զան անցքերի հետ։ Եվ հենց այս հանգամանքը ցույց է տալիս, թե ո՛րքան
լավ է աշխատել ժողովուրդը Տարոնի վեպի վրա։ Կան տեղեր, որոնց վերա-
բերմամբ ասվում է, թե նրանք այժմ այսպես են կոչվում։ Նշանակում է, որ
ավանդությունները մշակվել, վիպական կերպարանք են ստացել 7-րդ դա-
րից շատ հետո, և բոլորովին հիմք չկա Հովհան Մամիկոնյանին 7-րդ դա-
րի72, այսինքն ժամանակակից գրող համարել[1]։

[1] Պրոֆ. Գ. Խալաթյանը համարում է, թե Հովհան Մամիկոնյանը կարող է գրած լինել և 9-րդ դարում (տե՛ս նրա «Զենոբ Գլակ», Վիեննա, 1893, եր. 77)։

Ահա հերոսների և հերոսական գործերի այս մեծ և ընդարձակ շրջանը, որ այնքան ոգևորել ու վառել է ժողովրդի երևակայությունը, անկասկած, հեռավոր արձագանքներ է այն դեպքերի, որոնք տեղի ունեցան Տարոնում պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ։ Ժողովուրդը միշտ երախտագետ է դեպի իր պաշտպան հերոսները, և գոհությամբ, պարծենկոտությամբ, հպարտ ինքնագիտակցությամբ լի այս բանահյուսությունը պարզ ապացույց է, որ ազգաբնակությունը մեծ վտանգի մեջ է եղել, որ երկրի ռազմիկ տարրերը ճիշտ որ հերոսական ջանքեր են գործադրել՝ իրենց երկիրը պահպանելու համար։ Տարոնը բյուզանդական երկիր էր Մորիկի (591 թվի) բաժանման հետևանքով։ Եվ շատ կարելի է, որ այդ երկիրը երկար ժամանակ, իբրև սահմանագլուխ, թատերաբեմ դարձած լինի խոշոր ու մանր ընդհարումների, որոնց մեջ մասնակցող հարյուրներն ու հազարները վեպի մեջ ամենայն օրինավորությամբ դարձել են բյուրեր և հարյուր հազարներ։ Հերոսների դեմքերն ընդհանրապես հարազատ են մնացել վիպական չափազանցությունների մեջ անգամ։ Գայլ Վահանը քաջ է և ճարպիկ, հնարագետ, Սմբատը՝ անվեհեր, շիտակ մարտնչող։

Նկատենք, վերջապես, Տարոնի վեպի մի առանձնահատկությունն էլ։ Դա ժողովրդի տրամադրության մի չքնաղ հիշատակարան է, որ Փավստոս Բյուզանդացու վեպից հետո, 300 և գուցե ավելի տարի անցած, կրկնում է նրա ամբողջ հոգեբանական շարժումները և կազմում է նրա հետ մի միատարր միություն, որ մեզ ցույց է տալիս, թե հայ ժողովրդի քրիստոնեական մասն ի՛նչպիսի թշնամական տրամադրությամբ համակվեց դեպի մոլեռանդ և հալածասեր Սասանյանների Պարսկաստանը։ Նրա կլանող քաղաքականության դեմ հայ ժողովուրդը դուրս էր հանում սրտառուչ սեր դեպի իր հայրենի երկիրը, աշխույժ ռազմական ինքնավստահություն, թույլի արհամարհանքը դեպի այն ուժը, որ թվի վրա է հենված և անսահման հավատ դեպի իր սեփական համեստ ուժերը, այսինքն՝ դեպի իր ազգային-կուլտուրական այն առանձնահատուկ կարգը, որ հնուց ի վեր մարմնացած էր հայ նախարարական կազմի մեջ։

10. Պարսկական անիշխանությունը: Կավատ Բ-ն լավ նշաններով սկսեց արյունհեղություններով ձեռք բերած իր թագավորությունը։ Մովսես Կաղանկատվացին վկայում է, թե նա «էր բարեխոհ ողորմած առ ամենայն աշխարհս և առ ծառայս իւր»։ Արձակում և իրենց հայրենիքն է վերադարձնում այն բոլոր մարդկանց, որոնց կալանավորել և բանտարկել էր նրա հայր Խոսրովը։ Հրամաններ ուղարկեց ամեն տեղ, որ ամենքն ապրեն ցնծությամբ և ուրախությամբ, այդ պատճառով էլ բաշխեց տերության բոլոր հարկերն ու մաքսերը երեք տարի ժամանակով[1]։ Այս ընդհանուր հաշտ ու խաղաղասիրական քաղաքականությունից առատ բաժին էր հասնում և Հայաստանին ու Աղվանից երկրին։ Հայաստանի մարզպան Կավատը նշանակում է Վարազտիրոց Բագրատունուն, որ Սմբատ Վրկան մարզպանի որդին էր, մեծացել էր Պարսից արքունիքում, հոր պատճառով սիրելի էր Խոսրովին, դաստիարակվում էր իբրև մեկը նրա որդիներից և մեծ պատիվ ուներ Տիզբոնի պալատում։ Հորը պարգևատրելու մի նշան էր, որ Խոսրովը Վարազտիրոցին արժանացրեց թագավորին սեղանի վրա գինի մատուցանելու (մատովակ) պատվին, ապա և անվանեց նրան Ջավիտյան-

[1] Կաղանկատ., եր. 169։

Խոսրով[1], որ մի պատվանուն էր, ինչպես և նրա հորը տրված Խոսրով-Շում
անունը։
Վարազտիրոցին Կավատը Հայաստան է ուղարկում նրա հոր բոլոր
հարստություններով և պատվիրում էր շենացնել երկիրը։ Եվ հայ ժողո-
վրդին մեծ ուրախություն պատճառեց այն հանգամանքը, որ մարզպանու-
թյան պաշտոնը նորից անցնում էր հայերին։ Բայց թե ի՛նչ արավ Վա-
րազտիրոցը՝ խաղաղասեր և շինարար թագավորի կամքը կատարելու հա-
մար,— հայտնի չէ։ Հավանորեն շատ բան անել չկարողացավ նա։ Կավատը
միայն վեց ամիս թագավորեց և մեռավ, իսկ նրանից հետո Սասանյան
գահի վրա սկսվում է մի անիշխանական դրություն, որ տևում է տասը
տարի և ավելի ևս արագացնում պետության անկումը։
Աղվանից երկրին Կավատն այն շնորհն է անում, որ բանտից ազա-
տում է և իր տեղն է վերադարձնում Վիրո կաթողիկոսին, որ արգելված
էր Պարսկաստանում 25 տարուց ի վեր իբրև մասնակից այն ապստամբու-
թյան, որ Աղվանից իշխանները սարքել էին Խոսրովի դեմ, բայց հաջողու-
թյուն չէին ունեցել, որովհետև բոլոր դավադիրները բռնվել էին և սաստիկ
պատիժների ենթարկվել։ Միայն Վիրոն էր, որ, շնորհիվ իր ճարտար լեզ-
վի, կարողացել էր Պարսից արքունիքում իրեն այնքան արդարացնել, որ
նրան թողին իր պաշտոնի մեջ, սակայն առանց հայրենիք վերադառնալու
իրավունքի։ Այժմ նա ազատություն ստանում էր այնպիսի մի ժամանակ,
երբ Աղվանից ժողովուրդը կարոտ էր նրա պես մի գործունյա և կարող
հովվապետի։
Կավատ Բ-ից հետո գահ բարձրացվեց նրա յոթնամյա Արտաշիր որ-
դին։ Իրանի թուլացումը նորից առիթ տվեց խազարներին արշավել Անդր-
կովկաս։ Նրանց առաջնորդն էր դարձյալ Ջեբու խաքանի որդի Շաթըը։
Արշավանքի առաջին նպատակն էր պատժել Թիֆլիսն այն անարգանքի
համար, որ խաքանը կրել էր նրա պարիսպների տակ 626 թվին։ Եվ իրավ.
Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաքն այս անգամ սոսկալի կերպով պաշարե-
վեց։ Նա վերցրեց, կողոպտվեց և ավերվեց այնպես, ինչպես այդ կարող
էր անել մոնղոլական ցեղը։ Այնուհետև խազարները թափվեցին Աղվանից
երկրի վրա։ Պարսիկ մարզպանը չուզեց լսել անգամ Շաթի կողմից արված
առաջարկությունը, որ երկիրը հպատակվի խաքանին առանց արյունհեղու-
թյան, բայց միևնույն ժամանակ, չկարողանալով պաշտպանել երկիրը, թո-
ղեց և փախավ Պարսկաստան։ Խազարները ամեն տեղ ասպատակություն-
ներ տարածեցին։ Կաղանկատվացին դարձյալ գեղեցիկ և սրտաշարժ նկա-
րագրություններ է անում. «... յանկարծակի,— ասում է նա,— պատեաց
մէգն և մառախուղն զամենայն երեսս երկրիս մերում առ հասարակ, զդաշ-
տըս և զգլուխս լերանց, զբլուրս և զխորս ձորոց, և ոչ ուրեք մնաց քայլ մի
ոտին յամենայն սահմանս երկրի մերում, ի շէնս և յագարակս, ի տունս և
յանցս ճանապարհաց։ Բերան ամենեցուն կարդայր վա՜յ, վա՜յ։ Գոչիւն բար-
բառոյ ոչ լռէր. և չէր՝ ուր ոչ ելանէր սաստկիչ բարբառ չար թշնա-
մեացն, և այն ի միում աւուր և միում ժամու։ Քանզի բաժանեցին յա-
ռաջագոյն վիճակաւ ըստ գնդից գնդից զգաւառս և զշէնս, զհեղեղատս և
զգետս, զաղբիւրս և զմօրս, զլերինս և զդաշտս՝ յամենէսին միապէս ըստ
ժամադրին սփռեալ զասպատակն աշխարհակուլ. և ի ծագաց մինչև ի ծագս

[1] Սեբէոս, գլ. ԺԸ։

դողային տաճմանք մեր։ Ապա այնուհետև անդ էր տեսանել նմանապէս կատարել բարբառոյ մարգարէին. «Եթէ զօրօրինակ փախուցու մարդ յերեսաց առիւծու և պատահեսցէ նմա արջ. և զերծեալ ի նմանէ՝ անկանիցի ի տուն իւր և յեցուցեալ զձեռս իւր յորմն՝ յարկանիցէ զնա օձ»։ այնպէս հասին ի վերայ մեր աւուրքն այնոքիկ։ Զի յերեսաց նորոյն, որպէս յահեղ առիւծէ ի մագիլ գիշաքարշ բեկանող արջոյն ի ժանիս սովոյն մատնէին. ի միասին լքեալք, յոգնալոյծք, սովաբեկք, ակամայ դիմեալք ի գերութիւն՝ որպէս ի չարութենէ օձից ի յահէ տեսլեան դառնաշունչ թշնամոյն խածանէին։ Ապա ի ծածկել զմեզ ծովային ալեացն այնոցիկ՝ զհետ մտեալ կաթուղիկոսին մերոյ, հանին զնա ի տեղւոջէ ապաւած վիմայատակ լերանցն ի գեղջն, որ կոչի Կողթագարակ, և թողեալ նորա զկահ և զկարասի իւր և զամենայն գանձուցն՝ հեծեալ ի ձի փախստական լինէր առաջի նոցա։ ...Եւ ոչ արգելին զարշաւանս թշնամւոյն վիմախառն ձորախիտ ապաւածք լերանց Արցախական ամուր գաւառացն. այլ գործեցին մեզ մեր առաջի նոցա զդժուարինսն ի դիւրինս. առանց գայթագղութեան էին գնացք ընթացից երիվարաց նոցա ի վերայ գլխոց լերանց»[1]։

Մոնղոլական այս երկրորդ արշավանքը, առաջինի նման, ամփոփվում էր Կովկասյան լեռների հարավային տափաստաններում։ Դեռ դարեր պիտի անցնեին, որպեսզի խազարների ցեղակից ուրիշ ազգեր Միջին Ասիայից իրենց խորտակիչ օրդուներով հեղեղեն Արևմտյան Ասիայի բոլոր քաղաքակիրթ երկրները։ Մովսես Կաղանկատվացու նկարագրությունները էլ մասնավորապես հենց այն պատճառով են արժեքավոր, որ նրանք մեր գրականության մեջ առաջինն են ըստ ավագության, որոնք կենդանի գույներով ներկայացնում են սարսափները, որ այդ թափառական ձիավորները տարածում էին ամեն տեղ իրենց տեսքով, կենցաղով, կատաղի վայրագություններով։

Վիրո կաթողիկոսը, վերջապես, կանգ է առնում Ջարաբերդ[2] ամրոցում, ուր փակվել էին աշխարհի տերերը — «Թագավորազուններ, երկրի մեծամեծներ, գավառապետներ և գյուղապետներ, երեցներ, սարկավագներ և դպիրներ»։ Նա հորդորում է, որ ամենքը մեջ բերեն իրենց հարստությունները — ոսկի, արծաթ, պատվական շորեր, որպեսզի նրանցով կարելի լինի կաշառել անագորույն թշնամուն։ Ամենքը համաձայնում են։ Հարստությունները բարձվում են սայլերի վրա, և կաթողիկոսը բազմաթիվ հետևորդներով իջնում է Ուտիի մեծ դաշտը, ուր բանակած էր Շաթը, գրավելով Պարտավ քաղաքի հյուսիսային շրջանները։ Աղվանից պատմիչը մեզ տալիս է նաև խազար բանակի հետաքրքրաշարժ նկարագրությունը, մանավանդ այդ անապատաբնակ վաչկատուն ցեղի ճաշը, վերցնելով այդ պատկերը կաթողիկոսի հետ գնացողների պատմածից, այսպիսի խոսքերով.

«Եւ ի հասանել նոցա ի դուռն նորա՝ էին մեծամեծք և նախարարք առաջի նորա. անդ տեսաք զբազմոցս նոցա ի դուճս ի վերայ ծնկաց, ըստ նմանութեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց. իւրաքանչիւր կոնք մի լցեալ մսով յանսուրբ անասնոց. ընտ նմին և սկտեղք, յորում թանային յուտիկ իւրեանց յաղաջուր. և զբռաժակս և զըմպելիս արծաթեղէնս քանդաքիսն յոսկի համակեալս, զորս բերեալ էր յաւարէն Տփղեաց. ընդ նմին և զըմպելոյս եղջերեղէնս և շերեփաձևս փայտեղէնս մեծամեծս, որով զարգանակն լափէին, և նովին պարարտական, սառոյց անլուալ աղտեղիքն յախուռն, յաղդայս ի միոյ միոյ բաժակէ երկու երկու կամ երեք երեք ի նոցանէն զանապակ գինին կամ զկաթն ուղտուց և ձիոց անյագ յորովայնս իւրեանց լիրբ ի տիկս ուռուցիկն չափէին։ Ոչ օրինաւոր մատուակք էին առաջի նոցա. և ոչ սպասաւորք ի թիկանց կողմանէ, և ոչ անգամ որդւոյ թագաւորին. բայց զինուորք, որք զդուռն նորա պահէին շուրջանակի պարափակ, նիզակախիտ զգուշութեամբ։ Եւ իբրև մուծին զնոսա ի ներքս ըստ մի դռնապահան մինչև ցերկրորդսն, և զընծայս ողջունին, որ բարձեալ ի բազկաց մերոց զկնի կաթողիկոսին. ապա ընթացան ընդ առաջ նորա. և հրամայեցին ամենեցուն փոխել ոտն ոտն և երկրպագել երիցս անգամս»[1]։

Վիրո կաթողիկոսը կարողանում է Շաթի բարեհաճության արժանանալ, ամբողջ ժողովրդի կողմից հպատակություն է հայտնում խազարների խանին։ Այս համաձայնության հետևանքով խազարական բոլոր զորախմբերը երկրի զանազան կողմերից կանչվում են բանակ և նրանց վերցրած գերիները վերադարձվում են կաթողիկոսին։ Բայց այսքանով չէր վերջանում երկրի տառապանքը։ Ավերիչ արշավանքին, ինչպես լինում է սովորաբար, հետևում է սարսափելի սովը, որի մանրամասնությունները Կաղանկատվացին նկարագրում է իրեն հատուկ ողբերգական ազդու ոճով. «Ապա ի մի վայր գումարեալք սոսկալի զօրավարքն երեքին՝ սովն և սուրն և մահն՝ գործակիցք նոցա զոյգ ընթացեալք ի միմեանս խուճապէին, և յանխնայ վիրաւորէին և դիաթաւալ տարածանէին... Ո՛հ, դառնութեան ժամանակիս այսորիկ. և եղկելի՛ են աչք նոցա, որք տեսին զվիհն զայն մեծ։ Թշուառացեալ զերծեալքն աղերսէին լերանց եթէ անկերո՛ւք ի վերայ մեր»[2]։

Իսկ խազարներն իրենց ավերիչ արշավանքները տարածեցին և Արաքսից հարավ, Ատրպատականի կողմերը։ Նրանք միայն ավարով չէին բավականանում, այլև կանոնավոր հարկահանություն սկսեցին, տանում էին հարկեր բոլոր արհեստներից ու արդյունավետ պարապմունքներից։ Այս տակնուվրայությունները տառապեցնում էին Սասանյան պետությունը, սաստկացնելով նրա թուլությունը։ Հենց այդ միջոցին էր, որ Սասանյան տոհմից մեկը Խորասանում իրեն թագավոր հայտարարեց՝ Խոսրով Գ անունով, բայց նա շուտով սպանվեց։ Հազիվ էր ազատվել պետությունն այդ վտանգից, մի ավելի մեծ ապստամբություն ծագեց արևմուտքում։ Խոռյամ կամ Շահր-Վարազ զորավարն էր դա, որ կարծում էր, թե Կավատի անշքահաս ժառանգից ավելի ինքն ունի իրավունք բազմելու Տիզբոնի գահի վրա։ Հերակլ կայսրը, անձամբ տեսնվելով այս հռչակված սպարապետի հետ, խրախուսեց նրան այդ ապստամբական ձգտումների մեջ, խոստանալով նրան նույնիսկ զինական օգնություն[3]։ Այսպես անելով, կայսրը կամենում էր, որ Պարսկաստանի մեջ խռովությունները ավելի սաստկանան և, այսպիսով, թշնամի պետությունը թուլության և անկարողության վիճակի մեջ մնա։ Շահր-Վարազը զորքով գնաց Տիզբոնի վրա, դավաճա-

[1] Կաղանկ., եր. 177—179։

[2] Կոչվում է և Ջրաբերդ կամ Ջերմուկ, Մռավ լեռների ստորոտում, Թարթառ (Տրտու) գետի վրա։

[1] Եր. 272—273։

[2] Անդ, եր. 277—278։

[3] Սեբէոս, եր. 158։

նության միջոցով մտավ այնտեղ, թագավոր դարձավ և սպանեց փոքրահասակ Արտաշիրին (630)։

Խազարները, օգտվելով այս խառնակությունից, արշավանք սկսեցին Աղվանքից դեպի հարավ՝ Հայաստանն էլ նվաճելու համար։ Շահր-Վարազը զորք ուղարկեց նրանց դեմ։ Պատերազմը տեղի ունեցավ Սևանա լճի մոտ և պարսիկները, ինչպես կարելի է եզրակացնել Կաղանկատվացու մանրամասն, բայց ոչ բոլորովին պարզ նկարագրությունից, պարտության մատնըվեցին, հարուստ ավար թողնելով հյուսիսային գիշատիչ ցեղի ձեռքում։ Հայաստանը, այնուամենայնիվ, ազատվեց խազարական արշավանքից։ Ազատողը պարսկական զորքերը չէին, այլ մի ինչ-որ խռովություն, որ պատահեց խազարների աշխարհում և որի հետևանքով Ջեբու խաքանը շտապով ետ կանչեց Անդրկովկասից իր զորքերը։

Իսկ պարսկական անիշխանությունը շարունակում էր իր ընթացքը։ Շահր-Վարազը ամիս ու կես միայն վայելեց իշխանությունը. նրան սպանեցին պարսից իշխանները, որոնք չէին կարող թույլ տալ, որ Սասանյանների գահի վրա նստի մի այլ ծագում ունեցող մարդ։ Թագավոր ընտրվեց Խոսրով Բ-ի աղջիկը՝ Բորան անունով (Պուրանդուխտ), առաջին օրինակը պարսկական պատմության մեջ։ Այս թագուհին էլ վերջնական հաշտություն կնքեց Հերակլի հետ 630 թվին։ Բայց նրան էլ կարճ թագավորություն էր վիճակված. 631 թ. աշնանը մի շատ կարճ միջոցով թագավորեց Խոսրովի մյուս աղջիկը՝ Ազերմիդուխտ անունով։ Այս միջոցին (631—632 թթ.) Մծբինում ապստամբած զորքը թագավոր հայտարարեց Խոսրովի թոռն Որմիզդին, բայց նա հենց այստեղ էլ գահընկեց եղավ։

Այս խռովահույզ միջոցին Հայաստանը խաղաղ շինարարական ժամանակներ էր վայելում Վարազտիրոց ասպետի մարզպանական իշխանության տակ։ Բայց այս խաղաղությունը վրդովվեց, որովհետև ծանր անհամաձայնություններ սկսվեցին Վարազտիրոցի և Ատրպատականի կուսակալ Խոռոխ-Որմիզդի միջև։ Վերջինս մի նշանավոր իշխան էր, նշանավոր մանավանդ նրանով, որ նրա որդին իր քաջություններով հռչակված Ռոստոմ զորավարն էր։ Վարազտիրոցը չկամեցավ հպատակվել նրա կամքին, և այս առիթով ծագած գժտությունից օգտվեց Բյուզանդական Հայաստանի կառավարիչ Մժեժ Գնունին, որ բանակցություններ արավ, հավատացնելով Խոռոխ-Որմիզդին, որ եթե Վարազտիրոցը շարունակի մարզպանությունը Պարսկական Հայաստանում, անխուսափելի կդառնան ծանր բարդությունները Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Խոռոխ-Որմիզդն իր Գարեգպետ եղբորն ուղարկում է Դվին՝ ձմեռելու համար, բայց տալով նրան գաղտնի հանձնարարություն՝ ձերբակալել Վարազտիրոցին։ Այս դավադրությունը բաց են անում Ատրպատականի պարսից զորքերը, որոնք սիրում էին Վարազտիրոցին, և իմաց են տալիս նրան, թե ի՛նչ է պատրաստվում նրա դեմ։ Վարազտիրոցը վերցնում է իր ընտանիքը և շտապով փախչում է Տարոն, որ Բյուզանդական Հայաստանին էր պատկանում, և այնտեղից բանակցություններ է սկսում Հերակլի հետ։ Հերակլը մեծ հաճությամբ ընդունում է Վարազտիրոցին, անվանում է նրան պատրիկ և հրավիրելով Կ. Պոլիս, խոշոր պարգևներ է տալիս նրան, որոնց մեջ Սեբեոսը հիշատակում է «Թագավորական ապարանքներ, արծաթի գահույքներ և գանձեր»[1]։ Սակայն Պարսկական Հայաստանը չի մնում առանց ընդունակ

[1] Սեբեոս, եր. 161։

գործիչների։ Վարազտիրոցի ժամանակ սպարապետությունն անցնում է Թեոդորոս Ռշտունուն, որին, ինչպես կտեսնենք հետո, մեծ դեր էր վիճակվում կատարելու արաբական տիրապետության սկզբնական շրջանում։

Ազերմիդուխտ թագուհին ինչ որ պատճառով սպանել տվեց Խոռոխ-Որմիզդին և այդ պատճառով Ռոստոմ զորավարը, սպանվածի որդին, գահընկեց արավ թագուհուն[1]։ Պարսկական ավագանին երկու կուսակցության է բաժանվում։ Մեկը թագավորեցնում է Տիզբոնում Ֆերրոխզադ Խոսրովին, որ երեխա էր, իսկ մյուսը՝ Պերսեպոլիս քաղաքում թագավոր է հայտարարում մի ուրիշ երեխայի, որ Խոսրով Պարվեզի թոռն էր և որի անունն էր Հազկերտ (633 թ.)։ Շուտով, սակայն, առաջինն սպանվեց, և Հազկերտը հաստատվեց Տիզբոնի գահի վրա։ Այս Հազկերտ Գ-ով էլ պիտի վերջանար Սասանյան թագավորությունը, և Պարսկաստանը պիտի ընկներ օտար տիրապետության տակ։

[1] Крымский, стр. 135.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱԲԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին

ԻՍԼԱՄ

1. Իսլամն Արաբիայում: *Յոթերորդ դարի առաջին կեսում, մինչդեռ պարսկա-բյուզանդական պատերազմներն սպառում էին երկու կռվող մեծ պետությունների, երկու հին ախոյանների ուժերը, խոր անհայտության միջից դուրս էր գալիս և կազմակերպչական ապշեցուցիչ թափով պատմության ասպարեզն էր մտնում արաբ ազգը՝ մի նոր իրականություն հաստատելու համար Արևմտյան Ասիայում. մի իրականություն, որ հիմնովին պիտի փոփոխեր համաշխարհային պատմության ընթացքը։ Այդ նոր, հաղթական ազգությունը կազմակերպողը մի նոր կերտված կրոնական սիստեմ էր, որի անունն էր* իսլամ[1]:

Արաբական թերակղզին, ուր կազմակերպվեց այդ նոր ժողովուրդը, յուրատեսակ մի աշխարհագրական միջավայր է ներկայացնում։ Նրան կազմող ծովերն են՝ արևմուտքից Կարմիր ծովը, հարավից Հնդկական օվկիանոսը և արևելքից Պարսկական ծոցը։ Անապատների մի երկիր է այդ, ընդհանրապես աղքատ ու չոր, որ, սակայն, ծովափերում և կենտրոնում ունի պտղաբեր տարածություններ, որոնք և անուն են թողել իբրև համեմատաբար խիստ ազգաբնակություն և մշակույթ ունեցող երկրներ։ Այսպես են, օրինակ, Հեջազն ու Եմենը Կարմիր ծովի ափին, Օմանը՝ Հնդկական օվկիանոսի ափին։ Իսկ կենտրոնական մեծ օազիսների երկիրը կոչվում է Նեջդ։ Ազգաբնակության մեծագույն մասը հովվական կենցաղ է վարում. վրանաբնակ է, իր հոտերով թափառում է տեղից տեղ և ընդհանուր առմամբ կոչվում է բեդվին (անապատի մարդ)։ Քաղաքներում ապրող և այլ հաստատաբնակ ժողովուրդը պարապում է երկրագործությամբ կամ առևտրով։ Սակայն բեդվինական իրականությունն է ընդհանուր կերպարանք տալիս ամբողջ երկրին։ Եվ այդ ընդհանուր կերպարանքի ամենաբնորոշ հատկությունն է հովվական կենցաղին հատուկ նախնական համայնական ձևը— ցեղային կազմակերպությունը։

Պատմության ասպարեզ դուրս գալուց առաջ Արաբիայի ազգաբնակությունը բաժանված էր բազմաթիվ մանր և խոշոր ցեղերի, որոնք ապրում էին իրենց առանձնահատուկ կյանքով, իրենց ավանդություններով անկախ ու ինքնագլուխ…

Այս ժողովրդի կրոնը կոպիտ կռապաշտական ձևից չէր բարձրացել, բայց ստեղծվել էր և ազգային ընդհանուր պաշտամունք, որի կենտրոնն էր Մեքքա քաղաքը, Կարմիր ծովից ոչ շատ հեռու, Հեջազի երկրում։ Այստեղ էր գտնվում հին ժամանակներից համազգային սրբություն դարձած Քաաբ ուխտատեղին, ուր գտնվում էին պաշտամունքի առարկա կուռքերը, բայց ուր ամենագլխավոր սրբությունն էր սև քարը։ Քաաբը ուխտավորների մեծամեծ բազմություններ էր գրավում Արաբիայի զանազան կողմերից և այդ պատճառով եկամուտների հարուստ աղբյուր էր։ Հինգերորդ դարի կեսից (մ. թ. ա.) արաբական ցեղերից մեկը, որ կոչվում էր Կորեյշյան ցեղ, իր ձեռքը գցեց հռչակավոր ուխտատեղին և բնակվեց նրա շուրջը, ուստի և ընդհարումներն այս ցեղի և ուրիշ ցեղերի միջև հաստատել էին մշտական պատերազմների մի դրություն։ Որպեսզի գեթ հնարավորություն արվի, որ մարդիկ շունչ առնեն մշտական կռիվներից, տարվա մեջ սահմանվեցին չորս սրբազան ամիսներ, երբ ընդհատվում էին պատերազմական գործողությունները և ազգաբնակությունը կարողանում էր մի տեղ համախմբվել, բերքերի և ապրանքների փոխանակություն կատարել, զվարճանալ։ Այս ամիսներում էին կատարում ուխտագնացությունները։ Այս ժամանակներն էր, որ բացվում էր ամբողջ երկրում եզակի հռչակ ստացած տոնավաճառը Օքազ անունով տեղում։ Այստեղ գալիս էին ոչ միայն առևտուր անելու, այլև հոգեկան կարողություն ցույց տալու համար։ Արաբ ժողովրդի բանաստեղծությունը ուներ յուրատեսակ արաբական կառուցվածք ու բովանդակություն։ Յուրաքանչյուր հարազատ արաբի համար միայն զենքը չէր կազմում անհրաժեշտություն, այլև ոտանավորը, որի մեջ երգվում էին սեր, հերոսական գործողություններ։ Փայլուն երանգավորումներ, նուրբ զգայնոտություն շատ կար արաբական արվեստի մեջ։ Ամեն մի բանաստեղծ արտասանում էր իր երկը հավաքված ժողովրդի առջև, և եթե այդ գործն արժանանում էր ընդհանուր հավանության, այդպիսի բանաստեղծն իսկապես երջանիկ մարդ էր։ Նրա ոտանավորը ոսկի թանաքով արտագրվում էր առանձին թերթերի վրա և կախվում էր սրբազան Քաաբի կամարներից։ Այս պատվին արժանացած բանաստեղծը և՛ հռչակ ուներ, և՛ հզոր իշխան էր դառնում։

Սակայն ոչ ընդհանուր կրոնական պաշտամունքը, ոչ այս ժողովրդական բանավոր արվեստը չկարողացան դառնալ ընդհանուր ազգային միության միջոց։ Ցեղերն ապրում էին առանձնացած, պետական միապաղաղ կազմակերպությունը հնարավոր չէին դարձնում նույնիսկ երկրի տեղագրական հանգամանքները։ Թույլ, անզարգացած արաբական աշխարհը կտրված էր դրսի աշխարհից իր անապատներով, ապրում էր փակ կյանքով։

Բայց արաբները շարունակ իրենց մայր երկրի մեջ փակված չմնացին։ Ամենահին ժամանակներում անգամ Արաբիան գաղթականություններ էր հանում իր միջից երկու գլխավոր ուղղությամբ—դեպի հյուսիս, այն է՝

---

[1] *Իսլամի պատմությունն ունի մի չափազանց ընդարձակ գրականություն։ Այստեղ մենք ցույց կտանք միայն մի քանիսն այն աղբյուրներից, որ մենք ունեցել ենք մեր ձեռքի տակ.*

[1] **А. Мюллер,** «История Ислама с основания до новейших времен», пер. с немецкого, т. I—IV, СПБ, 1895—1896, 2) L. *A.* S ê d i l o t, „Histoire Générale des **Arabes**", t. I—II, Paris, 1877, **(3) Cl. Huart,** „Histoire des Arabes", t. I—II, Paris, 1912, **4) E. Lavisse** et A. Rombaud, „Histoire Générale du IV-e siecle á nos jours", t. I. Paris. 1896. 5) **Г. Гельмольт,** «История человечества», т. III, СПБ, 1903, 6) Эрнест **Ренан,** «Сочинения», Киев, 1907.

դեպի Սիրիայի կողմերը, և դեպի հյուսիս-արևելք, դեպի Միջագետքի տափարակները։ Այս կողմերում նրանց հիմնած անկախությունները Պարսկաստանի ու Հռոմի, ապա և Բյուզանդիայի իշխանության տակ ընկան և ծառայում էին այդ մեծ պետություններին մանավանդ իբրև ռազմիկ տարրեր, որոնց միջոցով պայքարող Արևելքն ու Արևմուտքը պատերազմական հաշիվներ էին հարդարում իրար հետ։ Նշանավոր էր մանավանդ Հերի արաբական իշխանությունը Եփրատի վրա, որի գոյությանը վերջ դրեց Սասանյան վերջին Խոսրով թագավորը։ Եվ այսպիսով, Արաբիան ճնշված էր իր սահմանների վրա, ենթարկված ուժեղ հարևաններից ոտնակոխ լինելու վտանգին, իսկ ներսում ներկայացնում էր ցեղերի մի անկերպարան խառնարան, որ հեռու էր մի միապաղաղ մեծություն կազմելու կարողությունից։

Ժամանակի ընթացքում, ինչպես այս հատուկ է մարդկային կյանքի առաջադիմության, ծնվեց և զարգացավ համայնական միաձուլման պահանջը և, ինչպես միշտ, ժամանակի հասունացած պահանջի արտահայտությունն ու իրականացումը մարմնացան անհատների մեջ, որոնք և գործիք դարձան կյանքի նոր, ավելի կատարյալ ձևեր ստեղծելու համար։ Արաբիայում այդ տեսակ մարդկանց գլուխ հանդիսացավ Մուհամմեդը։

Այս մարդը, դատելով արտաքին երևույթներից, բոլորովին պատրաստված չէր այնքան մեծ մի առաքելություն կատարելու համար։ Նա ծնվել էր Մեքքա սրբազան քաղաքում մոտավորապես 570 թվականին, ծագումով պատկանում էր Կորեյշյան ցեղին, բայց աղքատ հոր որդի էր և մեծացավ ինչպես մի հարազատ արաբ, և նույնիսկ վիճելի է համարվում՝ գիտե՞ր նա արդյոք գրել։ Պատանի հասակում հովվություն էր անում, ապա գործակատար դարձավ Խադիջա անունով մի հարուստ այրի կնոջ մոտ, որ առևտրական գործեր ուներ։ Այս պաշտոնը հնարավորություն տվեց Մուհամմեդին ճանապարհորդություններ կատարել դեպի Սիրիա և այլ տեղեր, որոնք շատ նպաստեցին, որ նա աշխարհայեցողություն կազմե իր համար։ Խադիջան այնքան հավանեց իր գործակատարին, որ առաջարկեց նրան իր ձեռքը։ Եվ Մուհամմեդը, դառնալով ապահովված կնոջ ամուսին, սկսեց այնուհետև ապրել իբրև մի բարի քաղքենի, բուրժուա, առանց գործի։

Ահա այս տեսակ մի անշուք արտաքինի մեջ էր թաքնված այն բնական հանճարը, որ բարձրացրեց նրան արաբական առօրեության մակերևույթից և կանգնեցրեց համամարդկային մեծությունների շարքում։ Միշտ մտածող, զգայուն, տպավորվող մի բնավորություն, նա որոնում էր առանձնություն և քաշվելով իր քաղաքի մոտ գտնվող լեռները, օրերով անձնատուր էր լինում բնության ազդած տպավորություններին, լռիկ մտածողություններին, անհանգիստ որոնումներին։ Այն ժամանակներում, այն միջավայրում այդպիսի մի բնավորություն կարող էր լոկ կրոնական կերպարանավորումների մեջ գտնել իր որոնածը։ Իր ճանապարհորդությունների և այլ հանդիպումների ժամանակ այդ վաճառականը ծանոթացել էր հրեական և քրիստոնեական վարդապետությունների հետ, որքան կարելի է ծանոթանալ բերանացի և հարևանցի տեղեկությունների միջոցով, այն էլ ոչ լավատեղյակ, այլ ուղղակի աղճատված աղբյուրներից։ Եվ ահա նա իրեն էլ համարում է մեկն ու վերջինն այն մարգարեներից, որոնք խոսում էին աստծու հետ և դառնում էին ժողովրդի առաջնորդներ։ Այսպես են առաջ եկել բոլոր այն մարդիկ, որոնք կրոններ են հիմնել և ամբողջ ազգերի, միլիոնավոր մարդկանց մտքի և զգացմունքի վրա անսահմանորեն թագավո-

րել տասնյակ դարերով։ Նրանք տոգորված են եղել ջերմ հավատով դեպի իրենց երկնային առաքելությունը, և հենց այդ հավատն էլ բեղմնավորում է նրանց հանճարի գործը։

Մուհամմեդն սկսում է քարոզել երկնքի պատգամները, հավատացողներ որոնելով։ Ամենից առաջ իր ընտանիքն է, որ հավատում է, թե նա ալլահի, մեծ և ամենակարող աստծու, մարգարեն է։ Ընտանեկան հարկի տակից հավատը դուրս է գալիս, սկսում է փոքր շրջաններ նվաճել, որոնք հետզհետե ընդարձակվում են, հասարակական շարժում դառնում։ Նոր վարդապետությունը հետզհետե ձևավորվում է, որոշ սիստեմի կերպարանք ընդունում։ Ինչ որ ասում է նոր հայտնված մարգարեն իբրև երկնքի պատգամ, իբրև աստվածային հայտնագործում, նրա շրջապատողները գրում են առանձին պատառիկների, մագաղաթի կտորների, նույնիսկ կենդանիների ոսկոր թիակների վրա։ Նոր ձևակերպվող կրոնն ստանում է իսլամ անունը73։ Մուհամմեդը նրան պատրաստում է իր ժողովրդի համար, Արաբիայի սահմանների մեջ ամփոփվելու համար, սակայն նրան վիճակված էր դառնալ համաշխարհային մի մեծ կրոն։ Հրեությունն իր Աստվածաշունչն ուներ, քրիստոնեությունն՝ իր Ավետարանը, և ահա նորելուկ իսլամն էլ Մուհամմեդի այդ ասածների հավաքույթից իր սրբազան գիրքն էր ստանում, իր Կուրանը (ընթերցվածք), կամ Ղուրանը[1], որ կոչվում է նաև Քիթապ (գիրք)։ Իսլամն ընդունում է, որ այդ գիրքը մարդկային գործ չէ, այլ իջել է երկնքից։ Այդպես են և՛ հրեական Աստվածաշունչը, և՛ քրիստոնեական Ավետարանը, բայց Կուրանը վերջինն է, կատարյալը։ Նույնպես և աստծուց ուղարկված են ընդունում հրեական մարգարեները, Հիսուսը, բայց Մուհամմեդը, իբրև վերջինը, լրացնում է բոլորին և, ուրեմն, բարձր է բոլորից։

Մուհամմեդի վարդապետությունը սկզբից ևեթ մի մեծ կարողություն ցույց տվեց—արագ ժողովրդականանալ, լայն տարածվել։ Նոր մարգարեի հաջողությունն այնքան աչքի ընկնող էր, որ նա դարձավ վտանգավոր՝ Կորեյշյան հեթանոսության տեսակետից։ Սկսվեց այդ դեպքում սովորական երևույթը—հալածանք։ Մուհամմեդն ստիպված եղավ փախչել Յաթրեբ քաղաքը, որ հետո Մեդինա անունն ստացավ։ Այս փախուստը տեղի ունեցավ 622 թվականին և հենց այն ժամանակից էլ ամենայն իրավամբ սկսվում է մահմեդական թվականը (հիջրեթ)։ Իսկապես բուն այդ ժամանակից է, որ իսլամն սկսում է ամրանալ, մեծանալ, տիրապետել։ Եթե Մեքքայում նոր կրոնը միայն սկիզբ էր առել, Յաթրեբը կամ Մեդինան այն երախտիքն ունի իսլամի վերաբերմամբ, որ նա էր այդ կրոնի իսկական տարածողը, նրան վերջնական հաղթանակ պարգևողը։ Եվ այս՝ գլխավորապես այն պատճառով, որ Մեդինան Մեքքայի հակառակորդն էր։ Մինչդեռ Մեքքան բեդվինական իրականության մեջ էր ապրում, գլխավորապես ուխտագնացության հայթայթած միջոցներով էր հարստանում, Մեդինան նստակյաց հողագործների քաղաք էր, որ ուներ և առևտրական դաս։ Մուհամմեդին ընդունելը, նրան քարոզչական ազատություն տալը Մեդինայի համար մի գործ էր, որ կատարվում էր ի հեճուկս Մեքքայի, իբրև թշնամի քաղաքի։ Բայց Մեքքան էլ իր դիրքին համապատասխանող ըմբռնողու-

[1] Հայերեն թարգմանել և հրատարակել է Աբրահամ Ամիրխանյանցը, Վառնա, 1909։

թյուն ցույց տվեց, պատերազմական գործողություններ սկսելով Մեդինայի դեմ՝ այդ հյուրընկալության համար։

Իսլամը մտնում էր կռիվների շրջանի մեջ։ Մուհամմեդը, թեև խաղաղ կրոնական մի քարոզիչ, նետվեց պատերազմների մեջ։ Ընդհարումներ տեղի ունեցան երկու քաղաքների միջև փոփոխակի հաջողություններով։ Մուհամմեդը զորքի հրամանատար էր, թեև ոչ շատ ընդունակ, իսկական արաբի պես նույնիսկ հարձակում էր գործում առևտրական կարավանների վրա և հափշտակած ավարը բաժանում էր մասնակիցների միջև, ժամանակի սովորության համեմատ։ Հաջողությունը պատերազմական գործողությունների մեջ ի վերջո իսլամին էր վերապահված. Եվ Մեքքան, վերջապես, բաց արավ իր դռները մարգարեի առջև, որ մեծ հանդեսով ուխտ կատարեց Քաաբում, նախապես դուրս հանելով այնտեղից բոլոր հեթանոսական կուռքերը և թողնելով միայն սև քարը, որ նոր կրոնի մեծագույն սրբությունը դարձավ։ Այնուհետև իսլամի տարածումը կատարվում էր ոչ միայն խոսքով, այլև հաճախ, նույնիսկ գլխավորապես, հրով և երկաթով։ Հաջողություններով հղփացող մարգարեն պատերազմը դարձրեց իր վարդապետության անկյունաքարը։ Նա քարոզում էր պատերազմ հեթանոսների դեմ, որոնց անվանում էր անճավատ: Պատվիրում էր լինել անխնա այդ սրբազան պատերազմների մեջ, որոնք մղվում են հավատի համար։ Ինքն էլ օրինակ էր տալիս, թե ինչպես պետք է վարվել։ Այսպես, հարձակվելով Մեդինայի մոտ մի հրեական ցեղի վրա, նա կոտորել տվեց բոլոր տղամարդկանց, թվով մոտ 700 հոգի, իսկ կանանց և երեխաներին ստրուկ դարձրեց։ Այս քարոզությունը, այս պատերազմական գործողությունները հետո ավելի ընդարձակ բացատրություն ստացան Մուհամմեդի հաջորդների օրով, և իսլամական սրբազան պատերազմը դարձավ մի սոսկալի աշխարհավեր սկզբունք։

Գաղափարական տեսակետից Մուհամմեդի վարդապետությունը բաժանվում է երկու շրջանի։ Մեքքայում Մուհամմեդը մի համեստ բարոյագետ էր, որ արդարության և ճշմարտության սկզբունքներն էր արծարծում։ Մեդինայում փոփոխվեց դրությունը։ Այստեղ նա արդեն հայտնում է մարդկային բարձր փառասիրական տենչանքին—իշխանության, որ, վերջիվերջո, մարդկանց գործունեության վերջնական նպատակն է հանդիսանում,— և ահա խստապահանջ բարոյագետն ինքն է սկսում շեղումներ անել իր գծած ճանապարհներից, այնպես որ շատ անգամ նույնիսկ դժգոհություններ էր հարուցում իր կողմնակիցների մեջ։ Բայց այս բոլոր հատկությունները մի բան են ապացուցում—որ նա մարդ էր՝ մարդկային հանճարով և մարդկային թուլություններով։ Եվ այս պարզությունը հենց ամենից շատ գնահատելին է իսլամի մարգարեի անձնավորության մեջ։ Նահապետական բացատրությամբ է Մուհամմեդը բավարարություն տալիս իր սեռական զգայնականությանը, հիմնելով իր տանը մի ամբողջ հարեմ և այդպիսով օրինականացնելով բազմակնությունը։ Իրեն արդարացնելու համար նա ասում էր, թե ասված է իրեն այդ բանը թույլատրել իր հայտնություններից մեկի միջոցով։ Նույնիսկ մի երկնային թույլտվություն էր նա բերում իրեն արդարացնելու համար, երբ նրա կանանց մեջ դժգոհություններ ծագեցին այն սիրային հարաբերությունների առիթով, որ նա ուներ մի քրիստոնյա կնոջ հետ։ Այս քաղաքականությունը—հարմարեցնել երկնքի հայտնությունները կյանքի առօրյա դեպքերին՝ առաջացնում էր հակասու-

թյուններ և խառնակություններ Կուրանի մեջ, որոնց բացատրությունները մեծամեծ ջանքեր են պատճառել իսլամ աշխարհի իրավագետներին։

Բայց այս պակասությունները, մարդկային բնավորության թելադրած այս շեղումներն արգելառիթ չհանդիսացան, որ Մուհամմեդի կրոնական սիստեմը դառնա այն ձևը, որ պահանջում էր արաբ ազգի զարգացման աստիճանը և որի մեջ ձուլվելով միայն՝ նրա կյանքը կարող էր գտնել իր հասունացրած պահանջի կատարյալ բավարարումը։ 632 թվականին, այն է, Մեքքայից փախչելուց 10 տարի հետո, Մուհամմեդը վախճանվում է Մեդինայում, իր առաքելության լիուլի իրագործումը տեսնելուց հետո։ Այդ 10 տարիների ընթացքում արմատապես հեղաշրջվել էր Արաբիայի ամբողջ ճակատագիրը։ Նախկին աղքատ, վարձկան հովիվը մեռնում էր իբրև մի ամբողջ երկրի տեր, իբրև մի թագավոր, որ մարմնացնում էր իր մեջ աստծու փոխանորդությունը։ Նա միայն կրոնական գործիչ չէր։ Կրոնի միջոցով նա ստեղծել էր մի ամբողջ քաղաքական կազմակերպություն, մի պետություն, որ միացնում էր ամբողջ արաբական աշխարհը և իրականացնում էր հին դարերի կրոնական իդեալը—աստվածապետություն, այն դրությունը, երբ աստված ինքն է պետության գլուխն ու կառավարիչը։ Իր Կուրանով նա տվել էր այդ պետությանը ոչ միայն կրոնական կանոններ, քաղաքական կազմակերպության հիմունքներ, այլև օրենքներ՝ ներքին քաղաքացիական կյանքը կանոնավորելու համար։ Այս խոշոր կազմակերպչական կարողության շնորհիվ էր, որ Մեքքայի մի ժամանակվա խեղճ, արհամարհանքի ու ծաղրի ենթարկված կրոնական քարոզիչն իր մահից առաջ, իբրև տեր և բարձրագույն հրամանատար, 30 հազար հետևակ և 10 հազար ձիավոր զորք էր ուղարկում Սիրիա՝ բյուզանդական բանակի հետ չափվելու համար։ Իր նվաճողական հայացքը մեռնող մարգարեն ուղղում էր և դեպի Սասանյան Իրանը։

Ինչո՞վ իրագործվեց այս վիթխարի կառուցվածքը։ Նայելով Մուհամմեդի հիմնած կրոնի բոլոր մանրամասնություններին, մենք նրանց մեջ ինքնուրույնություն չենք տեսնում։ Ամեն ինչ փոխառնված է, և փոխառության գլխավոր աղբյուրներն են հրեությունը, քրիստոնեությունը, մասամբ նաև զրադաշտականությունը։ Մուհամմեդը զուրկ էր բանաստեղծական ստեղծագործող երևակայությունից։ Բայց այս միայն արտաքին ձևն է, և մենք շատ կսխալվենք, եթե կարծենք, թե Մուհամմեդը, ուրեմն, լոկ մի կարկատող էր, մի մեքենական գործ կատարող։ Արհեստական կարկատանները չեն կարող դառնալ միլիոնավոր մարդկանց պաշտամունք, համաշխարհային կրոն։ Դեռ մինչև Մուհամմեդի երևան գալը արաբական ազգի մեջ տեղի ունեին կրոնական շարժումներ, որոնք ներկայացնում էին ձգտումն՝ ազատվելու հին փայտե կամ քարե կուռքերից և ընդգրկելու ավելի կատարյալ և բարձր պաշտամունք։ Արաբիայում շատ տարածված էր հրեությունն իբրև կրոն։ Շատ կային և քրիստոնյաներ։ Այնպես որ նայելով այդ կրոնների ունեցած մեծ ազդեցության, կարելի էր եզրակացնել, թե կրոնական պաշտամունք որոնող Արաբիան կամ հրեական կդառնա, կամ քրիստոնեական։ Բայց այսպես չեղավ, և այս բանն արգելողն արաբ ժողովրդի ուժեղ հոգեբանությունն էր։ Արաբը չէր կարող ոչ հրեա դառնալ, ոչ քրիստոնյա։ Այս ճշմարտությունը հայտնի էր Մուհամմեդից առաջ, և հատուկ արաբական մի կրոն գտնելու համար էր, որ գոյացավ ճանիֆների աղանդը, որ մշակեց միաստվածյան պաշտամունքի գաղափարը, բայց մեծ հա-

ջողություն չունեցավ։ Միայն Մուհամմեդն էր, որ փոխառություններից կերտեց մի կրոն, որ համապատասխանում էր արաբի հոգեբանության և որ կրում էր ազգային պաշտամունքի բոլոր հանգամանքները։ Այս է ահա նրա իսկական կոչումը, նրա գործի ամբողջ մեծությունը։

Պարզ և նախնական էր արաբի մտածողությունը, և նրան միանգամայն անմատչելի պիտի մնային աստվածաբանական այն բարդ ու մանվածապատ տեսությունները, որոնք հուզում էին, օրինակ, քրիստոնեական աշխարհը։ Եվ Մուհամմեդը, նույնպես պարզ ու նախնական մտածողության տեր մի բեդվին, տալիս էր միանգամայն պարզ և հանրամատչելի ձևեր։ Նրա ամբողջ դավանաբանական կառուցվածքը բաղկացած էր մի քանի բառերից—«Աստված մի է», «Չկա աստված բացի Աստծուց, Մուհամմեդը նրա մարգարեն է» («Լյա իլա իլ Ալլահ, Մուհամմեդ րասուլ Ալլահ»)։ Այդ աստվածը հարազատ արաբական էր, ազգային հին ալլահը, որ ուներ սեմական աստծու խիստ բնորոշ հատկությունները։ Նա նստած է երկնքում ոչ իբրև մարդկության գթառատ հայր, այլ իբրև հրամայող և խստասիրտ մի միապետ, որից միայն վախենալ կարելի է, որի ահավոր զորության առջև միայն կարելի է դողալ։ Ինչպես հայտնի է, կրոնական աշխարհայացքների մեջ մարդն իր սեփական հասկացողությունները, իր կյանքի մշակած ձևերն ու սկզբունքներն էր դնում։ Երկնքի և երկրի ստեղծողին, տիեզերքը կառավարողին մարդու երևակայությունը կարող էր հավասարեցնել այն ուժին, որ ամենաբարձրն ու ամենից ահարկուն էր մարդկության մեջ—բռնակալ թագավորին։ Եվ իսլամի աստվածն էլ այսպես է։ Նա հրամայում է, որովհետև այդպես է կամենում, նա պատժում է, որովհետև իր կամքն է այդ։ Արաբն ուրիշ կերպ չէր կարող երևակայել ամենակարող և հպատակեցնող իշխանությունը։ Եվ այդ ահավոր իշխանապետի ամենամեծ ուժն այն էր, որ նա պիտի վերջին դատաստան կատարի։ Հրեշտակի փողը պիտի փչի, և բոլոր մեռելները, հարություն առնելով, պիտի դատաստանի կանգնեն ալլահի առջև։ Մեղավորները պիտի դժոխք գնան, որ լիքն է բոլոր սարսափներով, սկսած անդունդների վրա կախված կամուրջից, որ բարակ է թելի կամ սրի բերանի նման և որի վրայով պետք է գնալ։ Իսկ արդարներին սպասում է հեշտության դրախտը։ Դժոխքը ներկայացվում է իբրև մի փոս, որ լիքն է բոցերով։ Դրանց մեջ մեղավորները պիտի այրվեն հավիտյան։ Հենց որ կաշին այրվեց, իսկույն պիտի բռնի նոր կաշի, որ նույնպես պիտի այրվի տանջանքներով։ Եվ այսպես հարատև։ Դժոխքի մարդիկ պիտի խմեն եռացող ջուր, որ պիտի այրի նրանց ներսը։ Իսկ արդար մարդկանց առջև պիտի բացվի դրախտը, լցված այնպիսի բարիքներով, որոնց գնահատել կարող է անապատների մեջ, կիզիչ արևի տակ թափառող բեդվինը։ Դրախտը բարձունքի վրա է շինված։ Դա մի պարտեզ է, ուր խոխոջում են առվակները։ Այնտեղ ոչ արևային տապ կա, ոչ սառցային ցուրտ։ Արդարներն այնտեղ, մետաքս և բեհեզ հագած, պիտի ապրեն ծառերի ստվերի տակ և նրանց ականջները չպիտի լսեն ոչ թեթևամիտ ճառեր, ոչ մեղսագիր արտահայտություններ. Նրանց սպասին պատրաստ պիտի լինեն սևաչյա աղջիկներ (հուրիներ), և նրանք պիտի կերակրվեն հիանալի պտուղներով և արծաթե թասերից պիտի խմեն անուշահոտ ըմպելիքներ։

Որպեսզի այս բերկրանքներին ու հեշտանքներին արժանանա մարդը, նա պիտի պինդ պահպանի ալլահի պատվիրանները, կատարի նրա հրամա-

յած բոլոր արարողություններն ու ծեսերը։ Այստեղ Մուհամմեդը կարգում է այնպիսի պարտադիր արարողություններ, որոնք հավատացյալին պիտի միշտ ենթարկված պահեն կրոնի խիստ ազդեցության, սովորեցնելով նրան անպայման հնազանդության և կարգապահության։ Այսպես էին օրը հինգ անգամ աղոթք (նամազ) անելը, լվացումներ կատարելը, ծոմապահությունը (օրուջ), բայց մանավանդ ուխտագնացությունը Մեքքա որոշ ամսին։ Ամեն մի հավատացյալ պարտավոր էր իր կյանքում գեթ մի անգամ լինել սրբազան քաղաքում, այն էլ անպատճառ ընդհանուր տոներին, յոթ անգամ պտտել Քաաբի շուրջը, համբուրել սև քարը, խմել Զիմզիմ կոչված սրբազան ջրհորի ջուրը, զոհ մատուցել որոշված տեղը և այլն։

Այս բոլոր մանրամասնությունները ցույց են տալիս, որ Մուհամմեդը, ինչպես և յուրաքանչյուր մի կրոնի հիմնադիր, իմացավ, թե ինչպես պետք է բռնի մեջ հավաքել տգետ ու մութ, հետևաբար և վախեցող ու հավատացող զանգվածները։ Նախնական, միամիտ մտածողությունը կրոն է որոնում, որ ուրիշ ոչինչ չէ իր էությամբ, բայց եթե մի աստված՝ երկնքում բազմած և նրա նման մի թագավոր երկրի վրա։ Իսլամն այդպիսի նախնականության, միամիտ մտածողության վրա լավագույն կերպով կոթնող կրոնն էր իր ծագման ժամին։ Եվ որովհետև միայն արաբները չէին կանգնած զարգացման այն աստիճանի վրա, ուր մարդու աղքատ ու կոպիտ ըմբռնումները բավարարություն են գտնում դժոխքի և արքայության նման մանկական հերյուրանքների մեջ, ուստի արաբական նոր կրոնը, պարզ ու հասարակ, հեշտ ընդունելի դարձավ և Արաբիայից դուրս, աշխարհի զանազան կողմերում, ուր մտավոր զարգացման նույն և ավելի ցածր աստիճանի վրա կանգնած ազգեր կային։

Իսլամն այսպիսով դարձավ համաշխարհային կրոն, մանավանդ որ միայն խոսքով չէր տարածվում, այլև զենքով։ Մուհամմեդի ուժն այն բանի մեջ էր, որ նրա վարդապետությունը կարողանում էր ռազմիկ ֆանատիկոսության եռանդ վառել հավատացյալի մեջ և նրան դարձնել հավատի մի տոկուն և անվախ զինվոր։ Իսլամի մեջ առանձնապես զարգանում էր նախորոշումի հավատը։ Ինքը մարգարեն էլ հավատում էր, թե յուրաքանչյուր մարդու վիճակը վաղօրոք որոշված է լինում։ Այս շատ հին մարդկային մի մոլորություն էր, արդյունք մտքի տհասության, որ, ինչպես տեսանք, մեծ վարպետությամբ հերքում էր, դեռ 5-րդ դարում, մեր Եզնիկ Կողբացին։ Ճակատագրի հասկացողությունը իսլամական կրոնի մեջ գնալով ամրապինդ մի հավատ դարձավ, որ հենց այդ անունով էլ կոչվում է ճակատագրականություն (ֆաթալիզմ)։ Այդ հավատով տոգորված մարդն ամենայն պաղարյունությամբ էր վերաբերվում ամեն մի վտանգի, ամեն մի դժբախտության։ Համոզված, որ եթե ճակատագիրը վաղօրոք չէ տնօրինել մեկի համար այս կամ այն տեսակ մահ, նա չի մեռնի և պատերազմական փոթորիկների մեջ, հավատացյալն աներկյուղ նետվում էր կոտորածի դաշտը և իր անվախությամբ տագնապեցնում էր թշնամիներին։ Եվ այս պատճառով հաղթական էր իսլամի առաջխաղացումը։

2. Իսլամ և ոչ-իսլամ։ Մուհամմեդի վերանորոգության հետևանքով արաբ ժողովուրդը, միանգամից չքելով իր ցեղային դրությունը, դարձավ գերազանցորեն կրոնական համայնք։ Իբրև այդպիսի համայնք՝ նա իրեն ընդունում էր «ուղղահավատ», իսկ մյուս ազգությունները՝ «անհավատ»։ Այդ «ուղղահավատների» և «անհավատների» միջև մի անդունդ կար և այդ

անդունդը, ինչպես խորապես համոզված էր արաբը, փորել էր ինքն ալլահը ժամանակների սկզբից ի վեր։

Այս գաղափարով էլ նոր կրոնն իր հիմնադրի մահից հետո մտնում է համաշխարհային նվաճումների շրջանը։ Մուհամմեդն ալլահի մարգարեն էր և ուրիշ տիտղոսներ չուներ։ Իսկ նրա հաջորդներն սկսեցին կոչվել խալիֆ։ Առաջին խալիֆն էր Աբու-Բեքրը, որ միայն երկու տարի ապրեց (632—634)։ Նրան հաջորդեց մարգարեի ամենաեռանդուն և ընդունակ օգնականներից մեկը, Օմարը (634—644)։ Իսլամի զարգացման և տարածման մեջ այս անխոնջ գործիչը համարյա նույնքան խոշոր դեր է կատարել, որքան Պողոս առաքյալը՝ քրիստոնեական եկեղեցու կազմակերպման մեջ։ Օմարի ժամանակ էր, որ իսլամը դուրս եկավ Արաբիայի սահմաններից իբրև զինված ուժ և իր տիրապետությունը տարածեց հրով և սրով Սիրիայում, Իրանում, Պաղեստինում, Եգիպտոսում։ Այս նվաճումները կատարվում էին զարմացնող արագությամբ։ Բյուզանդիայի ուժն էլ չկարողացավ կանգնեցնել այդ նորելուկ բանակները, որոնք ամեն տեղ հաղթանակներ էին սփռում իրենց մարտական «ալլահ աքբար» (մեծ աստված) աղաղակով։ Օմարը, նվաճողական ընդունակության հետ միասին, ցույց տվեց և նվաճված երկրները և առհասարակ իսլամական պետությունը կառավարելու մեծ կարողություն։ Նա Մուհամմեդից հետո առաջին օրենսդիրն էր, որ, իհարկե, հիմնվում էր Կուրանի պարզած սկզբունքների վրա, բայց օգտվում էր և այն ցուցումներից, որոնք դարձյալ մարգարեից էին բխում, բայց Կուրանի մեջ չէին մտել, այլ մնացել էին լոկ բերանացի պատմվածքներ, որոնք հետո Կուրանին համազոր աղբյուրներ դարձան իբրև ավանդություններ (սուննա)։

Ի միջի այլոց, Օմար խալիֆն օրենսդրեց և այն հարաբերությունները, որ պիտի ունենար իսլամ իշխանությունը մյուս, ոչ-իսլամ ազգությունների և կրոնների վերաբերմամբ։ Այս հարցը վերամշակումների և բացատրությունների է ենթարկվել և նրանից հետո, ինչպես և իսլամական օրենսդրության (Շարիաթի) մյուս մասերը։ Հիջրեթի դեռ երկրորդ դարում գոյություն ունեին իրավաբանական դպրոցներ, որոնք իրենց մեկնություններով մեծ հեղինակություն ստացան ամբողջ մահմեդական աշխարհում։ Դրանց մեջ ամենից շատ հռչակված են Աբու-Խանիֆայի (+150 թ. հիջրեթի) և Ալ-Շաֆի (+204 թ.) դպրոցները[1]։ Ահա այդ դպրոցների մեկնաբանական ծանոթություններով պարզաբանված օրենսդրությունների մեջ ինչպես է ներկայանում այն հարցը, թե ինչպես պիտի վերաբերվի իսլամ տերությունը մյուս, օտար ազգերին, մի հարց, որ վերին աստիճանի կարևոր է իսլամի ամբողջ տիրապետության ժամանակները բնորոշելու համար։ Այդ կարևոր է մասնավորապես Հայոց պատմության համար, որ այսուհետև պիտի ընթանա, շատ սակավ ընդմիջումներով, իսլամի տիրապետության ստեղծած իրականության մեջ։

Մենք տեսանք, որ Մուհամմեդը հրամայում էր իր Կուրանի մեջ կռվել անհավատների, այսինքն հեթանոսների դեմ, որոնք երկնքից գիրք չունեին ստացած։ Այդ պատերազմը հավատի պատերազմն էր, սուրբ պատերազմ և պիտի ամենայն սաստկությամբ մղվեր մինչև անհավատներին դարձի բերելը, այսինքն իսլամական կրոնն ընդունել տալը կամ բնաջինջ

[1] М. Караулов, «Основы мусульманского права», Тиф., 1891, стр. 7.

անելը։ Կարելի է, ուրեմն, կարծել, թե քրիստոնյաներն ու հրեաները, իբրև երկնքից տված գրքեր ունեցողներ, անհավատների թվում չէին դասվի և սրբազան պատերազմը նրանց դեմ չէր ուղղվի։ Բայց մենք տեսանք նույնպես, որ ինքը մարգարեն էր, որ հարձակվեց մի հրեական ցեղի վրա և բնաջինջ արավ նրան։ Նա ինքն էր դարձյալ, որ արշավանքներ ուղարկեց քրիստոնյա պետության՝ Բյուզանդիայի դեմ։ Այս գործողությունները, ինչպես նաև հետագա ժամանակների հանգամանքներն ու պայմանները մի որոշ և անվերապահ հասկացողություն կազմել տվին, որ անհավատ են բոլոր նրանք, որոնք իսլամ կրոնը չեն ընդունում։ Այս աշխարհայացքի վրա էլ կառուցվեց սրբազան պատերազմի (ջհադ) մի ամբողջ սիստեմ։ Առանց սրբազան պատերազմի չէր կարող լինել իսլամ պետություն։ Իսլամն իրեն պատերազմի մեջ էր համարում ամբողջ ոչ-իսլամ աշխարհի դեմ։

Իսլամ նշանակում է աստծու կամքին անպայման հնազանդվող։ Միևնույն նշանակությունն ունի և մյուսլիմ (հոգնակի ձևը՝ մուսլիման) անունը, որ դարձյալ Մուհամմեդի կրոնին հետևողին է տրվում[1]։ Իսլամի մեջ գոյություն ունեն զանազան տեսակ հավատալիքներ, աղանդներ, վարդապետություններ, բայց այս հանգամանքը նշանակություն չունի—ամենքն էլ, այնուամենայնիվ, մուսուլման են։ Մնացած ամբողջ մարդկությունը, առանց բացառության, արդեն քյաֆիր է[2], որ պարզապես նշանակում է անհավատ, հայհոյող, անաստված[3]։ Այս քյաֆիրն է, որ չի ընդունում Մուհամմեդի աստվածային առաքելությունը։ Նա ապրում է խավարի մեջ և նրա աչքերը փակ են լույսի և աստվածային շնորհքի առջև[4]։

Այս բաժանումն առաջ է բերում այսպիսի մի քաղաքական հասկացողություն. իսլամի տիրապետության տակ գտնվող երկիրը կոչվում է դար-յուլ-իսլամ, այսինքն՝ իսլամի երկիր. այստեղ թագավորում է իսլամական օրենսդրությունը (շարիաթ), իսկ մնացած բոլոր երկրները կոչվում են դար-յուլ-խարբ, այսինքն՝ պատերազմի երկիր, որովհետև այդտեղ շարիաթ չկա, իսլամը տիրող չէ, ապա ուրեմն պետք է պատերազմել նրանց դեմ, ինչպես հրամայում է Կուրանը և ինչպես այդ բխում է ջիհադի հասկացողությունից։

Իսլամական օրենքների մեկնողներն ասում են, թե ջիհադ նշանակում է «գործադրել պատերազմում ամեն ջանք աստծու համար, թե՛ անձնական մասնակցությամբ, թե՛ դրամական նպաստներով, խորհուրդներով և այլ այսպիսի գործողություններով»[5]։ Երբ պատերազմը հարձակողական է իսլամ երկրի կողմից, նրան պետք է մասնակցի մուսլիմանների բավականաչափ թիվ, այնպես որ հաջողությունն ապահովված լինի։ Այս դեպքում զինվորությունից ազատվում են ծնող ունեցող պատանիները, ստրուկները, կանայք, կույրերը, կաղերը, անդամալույծները, պարտապանները (որոնք պարտավոր են թույլտվություն խնդրել իրենց պարտատերերից), պարտապանների երաշխավորները, նմանապես և հռչակավոր գիտնականները,

[1] В. Гиргас, «Права христиан на Востоке по мусульманским законам», СПБ, 1865, стр. 2.

[2] Այս բառից է գոյացել և գյավուր անունը։

[3] Հ. Հ. Պռզանյան, «Համառոտ բառարան ի տաճկ. հայ.», Վիեննա, 1841։

[4] M. D'Ohsson, „Tableau Général de l'Empire Ottoman", Pars, 1787, p. 12—13.

[5] Гиргас, стр. 11.

որոնց կորուստը վնաս կբերեր իսլամին։ Իսկ երբ քյաֆիրներն են հարձակվում իսլամի երկրի վրա, այն ժամանակ բոլոր մուսիլմանները, բացի միայն ծանր հիվանդներից, պարտավոր են դուրս գալ թշնամու դեմ։

Պատերազմական գործողություններ սկսելուց առաջ քյաֆիրներին առաջարկվում է կամ ընդունել իսլամը, կամ գլխահարկ (ջիզիե) տալ։ Եթե նրանք հոժար կամքով ընդունում են գլխահարկ տալը, այն ժամանակ հարձակում չի լինում և անհավատներն օրենքի պաշտպանության տակ են առնվում։ Իսկ եթե մերժում են երկու առաջարկություններն էլ, այն ժամանակ սկսվում է պատերազմը—պտղատու ծառերը կտրատվում են, ցանքերը ոչնչացվում, տները հրդեհվում։ Եթե քյաֆիրներն իրենց պաշտպանության համար գործ են ածում գերի բռնված մուսիլմաններին, կանգնեցնելով նրանց իրենց շարքերի առջև, այս հանգամանքը չպիտի կասեցնի հարձակվող մուսիլմաններին, որոնք պիտի աշխատեն զարնել քյաֆիրներին, իսկ եթե գերի մուսիլմաններին էլ սպանեն, դրա համար ոչ մի պատասխանատվություն չկա։

Եթե գրաված քաղաքում ապրում են և մուսիլմաններ կամ իսլամին հպատակված ոչ մահմեդական հարկատուներ, այս դեպքում արգելվում է սպանել բնակիչներից և ոչ մեկին։ Բայց եթե քաղաքից դուրս է բերված մուսիլմանների և հարկատու հպատակների թվին հավասար մարդկանց մի քանակություն, այն ժամանակ թույլատրվում է կոտորել մնացած բոլոր բնակիչներին։ Սակայն առհասարակ կարգ է, որ չի կարելի կոտորել կանանց, երեխաներին, ծերերին, հաշմանդամներին, կույրերին, խելագարներին, տկարներին, աշխարհի կյանքից հեռացած կրոնավորներին, բայց այն պայմանով, որ այս տեսակ մարդկանց թվում չլինեն քյաֆիրների երկրի թագավորը, պատերազմական գործը լավ հասկացող և հարուստ մարդիկ։ Սակայն այս արգելքը լոկ բարոյական պարտավորություն է, և չթույլատրված սպանություններ կատարողը պարտավոր է լոկ զղջալ աստծու առաջ, իսկ որևէ տուգանքի չի ենթարկվում, որովհետև քյաֆիրի արյունն արժեք չունի։ Թույլատրվում է շրջեցնել սպանված քյաֆիրների գլուխները՝ ուղղահավատների վրեժը հագեցնելու և միաժամանակ կատաղությունը գրգռելու համար։ Թույլատրվում է նաև քանդել անհավատների գերեզմանները, եթե նրանց մեջ գանձ կա։ Ամբողջ պատերազմական ավարը պատկանում է մուսիլմաններին, որոնց գլխավոր հրամանատարը բաժանում է այդ ավարը կռվողների միջև։ Պատերազմը վերջացնելու համար մուսիլմաններին թույլատրվում է քյաֆիրների հետ հաշտություն կնքել փողով։ Իրենք մուսիլմաններն էլ կարող են փողով հաշտություն գնել, եթե գտնվում են նեղ դրության մեջ։

Քյաֆիրները հաշտություն ստանում են, աման (պաշտպանություն) խնդրելով։ Յուրաքանչյուր մյուսլիմ, որ մասնակցում է պատերազմին, լինի նա նույնիսկ պատանի, ստրուկ, զառամյալ ծեր, կույր, իրավունք ունի աման շնորհել թե՛ մի հատ և թե՛ մի խումբ քյաֆիրների, նույնիսկ և մի ամբողջ քաղաքի։ Աման տալ կարելի է ոչ միայն քյաֆիրներին անծանոթ լեզվով, այլև նույնիսկ նշաններով, ակնարկներով։ Բավական է, որ տվողը լինի պատերազմին մասնակցող մյուսլիմ։ Եվ աման ստացած քյաֆիրին այլևս անկարելի է սպանել։ Բայց ամանը անպայման և անդառնալի չէ։ Իմամն իրավունք ունի քանդելու շնորհված ամանը, եթե նա ձեռնտու չէ

մուսիլմաններին։ Անշահավետ աման պարգևող մյուսլիմը պատժի է ենթարկվում[1]։

Իմամը (ուղղահավատների պետը, որ և մարգարեի հաջորդը) կատարյալ և անսահման տեր էր նվաճված երկրում։ Նա հողերը խոշոր և մանր կտորներով բաժանում էր իր զինվորներին և զորապետներին իբրև պարգև, կարող էր երկրի քյաֆիր կալվածատերերին թողնել իրենց իրավունքների մեջ, ինչպես և կարող էր բոլորովին զրկել նրան այդ իրավունքներից։ Ամեն ինչ նրա կամքին էր թողնված[2]։

Ահա այսպիսի սկզբունքներով մղվող սրբազան պատերազմն էլ որոշում էր դար-յուլ-իսլամի քաղաքական, իրավական և հասարակական ընկերային պայմանները։ Թե՛ հոժարակամ անձնատուր եղած և թե՛ ամանի արժանացած քյաֆիրը կոչվում էր զիմմի, որ պարզապես նշանակում է, հպատակ, հարկատու։ Նա վճարում էր գլխահարկ (ջիզիե), որից ազատ էին բոլոր մուսիլմանները։ Այս հարկն ուներ իր հատուկ նշանակությունը։ Մի փրկանք էր այդ, որ տալիս էր զիմմին պետությանը իբրև իր արյան գին։ Գլխահարկն էր, որ նրան իրավունք էր տալիս ապրելու դար-յուլ-իսլամի մեջ և գտնվել նրա օրենքների պաշտպանության տակ։ Բայց այդ օրենքները շատ խիստ որոշում էին, որ զիմմին մյուսլիմի հետ հավասար չէ իբրև միևնույն պետության հպատակ։ Ընդհակառակն, զիմմիի պարտավորությունն էր մյուսլիմից խոնարհ լինել, մյուսլիմի առջև գլուխ խոնարհել։ Շարիաթը ծայրահեղ նախանձախնդրությամբ պահպանում էր այդ կարգը մի շարք որոշումներով, որոնք սահմանում էին հարաբերությունները պետության այդ երկու կարգի բնակիչների միջև այնպես, որ մեկը լինի տիրող, մյուսը՝ խոնարհ հպատակ։ Այսպես, ամեն մի զիմմի պարտավոր էր անձամբ ներկայացնել իր գլխահարկը տերության պաշտոնյային. ո՛չ մի հավատարմատար և ներկայացուցիչ չէր ընդունվում, հարկահանն անպատճառ նստած պիտի լիներ, իսկ զիմմին՝ կանգնած։ Հարկահանն ասում էր. «Յա՛ զիմմի, վճարիր գլխահարկդ»։ Դատապարտելի չէր համարվում, եթե հարկահանն այդ խոսքերին ավելացնում էր. «Յա ադու-ալլահ» (Ո՛վ աստծու թշնամի)[3]։ Եվ այս խոսքերի հետ հարկահավաքը խփում էր զիմմիի վզին[4]։

Զիմմիներին արգելվում էր դար-յուլ-իսլամի մեջ կառուցել նոր եկեղեցիներ, սինագոգներ, վանքեր, ատրուշաններ։ Թույլատրվում էր միայն վերանորոգել շատ հնացածները և խարխուլ դրության հասածները, այն էլ մի պայմանով, որ վերանորոգությունը կատարվի միևնույն նյութով, միևնույն տեղը, միևնույն մակարդակով։ Հագուստի կողմից էլ զիմմին պարտավոր էր տարբերվել մյուսլիմից։ Նրա համար սահմանված էր գոտի բրդից կամ մազից, և այդ գոտին նա պիտի կապեր այնպես, որ նկատելի լիներ ամենքին։ Նրա փաթթոցը (չալմա) պիտի սև գույնի լիներ և ավելի երկար, քան ուղղահավատինը։ Արգելվում էր կրել մետաքսե գոտիներ, շքեղ հագուստներ։ Զիմմի կանայք բաղնիսում պիտի առանձին գույնի գոգնոցներ կապեին, որպեսզի զանազանվեին մահմեդական կանանցից։ Ձի հեծնելը զիմմիներին թույլատրվում էր միայն այն դեպքում, երբ նրանք

[1] Гиргас, стр. 13—16.
[2] D'Ohsson, t. III, p. 26.
[3] D'Ohsson, t. III, p. 49.
[4] Гиргас, стр. 34.

համաձայնում էին պատերազմ գնալ անհավատների դեմ։ Այդ դեպքերից դուրս նրանց արգելվում էր գործածել հեծնելու որևէ կենդանի։ Իսկ եթե հիվանդության կամ մի այլ ստիպողական պատճառով հարկադրված էին լինում էշ հեծնել, այս դեպքում էլ պարտավոր էին ցած իջնել, երբ անցնում էին միասին հավաքված մահմեդականների մոտով[1]։ Թամբ գործածելու իրավունք չկար, կարելի էր միայն համետի (փալան) վրա նստել։ Զիմմին իրավունք չուներ զենք կրելու. նրան չէր կարելի հանձնել այնպիսի պետական պաշտոն, որի պատճառով մուսիլմաններն ստիպված լինեին նրան հարգանքներ մատուցել։ Երբ մյուսլիմը կանգնած էր, զիմմին չպիտի համարձակվեր նստել։ Մյուսլիմը չպիտի ձեռք տար զիմմիին, որովհետև դա կլիներ հարգանքի և սիրո նշան։ Փողոցով անցնող զիմմիին մուսիլմանները պարտավոր էին նեղել և թույլ չտալ, որ նա իրենցից առաջ գնա։ Զիմմին չէր կարող իր համար այնպիսի տուն շինել, որ մյուսլիմի տանից բարձր լիներ։ Մուսիլմաններն իրավունք ունեին քանդել այդպիսի բարձր տունը և հավասարեցնել իրենց տներին։ Եթե զիմմին գրավեր դար-յուլ-իսլամի մի կտորը, եթե գնար դար-յուլ-խարբ երկիրը, եթե հրաժարվեր գլխահարկ վճարելուց, եթե լրտեսություն աներ թշնամիների համար, այս դեպքերում նրա հետ կապած դաշինքը համարվում էր ոչնչացած և, հետևաբար, նրան պետք էր սպանել[2]։ Զիմմին իրավունք չուներ դատարանում վկայություն տալ մյուսլիմի դեմ։ Այս օրենքը մեկնելու համար մահմեդական օրենսգետներն ասում էին, թե քրիստոնյա թագավորն անգամ չի կարող վկայություն տալ մահմեդական մի բեռնակրի դեմ[3]։

Հիշատակենք, ի վերջո, և այն, որ միայն գլխահարկ չէր տալիս զիմմին, այլ, բացի դրանից, ենթարկված էր և պետական այլ հարկերին։ Այսպես, հողից օգտվելու համար նա տալիս էր խարաջ (տասնորդական հարկ), որ կազմում էր բերքի մի հինգերորդ մասից սկսած մինչև կեսը։ Հետագա դարերում մենք հաճախ ենք տեսնում, որ տուրքեր են սահմանվում՝ հատուկ զիմմիների համար։

Վերևում մենք ասացինք, որ առաջին անգամ Օմար խալիֆն էր, որ ձևակերպեց զիմմիների դրությունը մահմեդական պետության մեջ։ Պատմությունը պահել է մի շատ հետաքրքրական վավերագիր, որ վերաբերում է այս հարցին։ Երբ Օմարը նվաճեց Սիրիան, այստեղի քրիստոնյաների հետ նա դաշնագիր կնքեց այն պայմանների մասին, որոնցով խալիֆն ընդունում էր սիրիացիների հայտնած հպատակությունը։ Բերում ենք այստեղ այդ պայմանագիրն ամբողջովին, որովհետև նրա մեջ կան շատ մանրամասնություններ, որոնք լրացնում են մեր նկարագրած զիմմիական դրությունը։

«Այս է թուղթն Աբդուլլահ Օմարին, ուղղահավատների հրամանատարին, այսինչ քաղաքների քրիստոնյաներից։

Երբ դուք եկաք մեզ վրա, մենք ձեզանից աման խնդրեցինք մեզ համար, մեր ընտանիքների և մեր հավատակիցների համար։ Մենք պարտավորվում ենք չշինել մեր քաղաքներում, ոչ էլ նրանց շրջականերում,

[1] Թուրքիայում մի ժամանակ թույլատրվեց գյավուրներին ձի հեծնել, բայց նրանք պարտավոր էին ցած իջնել, երբ հանդիպում էին նշանավոր մուսիլմանների (**D'Ohsson**, t. III, p. 48)։

[2] Гиргас, стр. 38.

[3] **И. Нофаль**, «Курс мусульманского права», вып. I, СПБ, 1886, стр. 220.

վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և ճգնավորական օթևաններ. մենք չենք վերականգնի նրանցից քանդվածները, ոչ էլ կվերանորոգենք այնպիսիները, որոնք գտնվում են մահմեդականների թաղերում։ Մենք չենք արգելի, որ մուսիլմանները, ցերեկով լինի թե գիշերը՝ մտնեն մեր եկեղեցիները. մենք կլայնացնենք նրանց դռները անցորդների և ճանապարհորդների համար, մենք մեզ մոտ կընդունենք մեր մոտով անցնող մուսիլմաններին և նրանց կկերակրենք երեք օրվա ընթացքում։ Մենք չենք թաքցնի լրտեսներին մեր եկեղեցիների ու բնակարանների մեջ, ոչ էլ ծածկել մուսիլմաններից խաբեբայությունները. մենք մեր երեխաներին Կուրան չենք սովորեցնի, չենք հրապարակի մեր անհավատությունը, ոչ էլ դեպի նրան կկանչենք որևէ մեկին. մենք չենք արգելի մեր բարեկամներից և ոչ ոքին ընդունել իսլամը, եթե նրանք կկամենան այդ։ Մենք պարտավորվում ենք հարգանք մատուցել մուսիլմաններին և մեր նստած տեղից վեր կենալ նրանց առջև, երբ նրանք կկամենան նստել։ Մենք նրանց չենք նմանվի հագուստեղենի մեջ, ինչպես են գոտի, փաթթոց, ոտնաման, ոչ էլ մազերի սանրվածքի կողմից։ Մենք չենք գործածի նրանց խոսքերը (ինչպես են՝ սելամ ալեյքում, մարխաբա, խադրետիկ), ոչ տալ մեզ նրանց մականունները։ Մենք չենք նստի թամբերի վրա, ոչ սուր կկրենք, ոչ գործ կածենք և կամ կկրենք առհասարակ որևէ զենք. մենք մեր կնիքների վրա չենք փորագրի արաբերեն, ոչ էլ կծախենք արբեցնող ըմպելիքներ։

Մենք պարտավորվում ենք ածիլել մեր գլխի առջևի մասը, պահել մեր առաջվա զգեստավորումը, գոտևորել մեջքը գոտով, մեր եկեղեցիների վրա խաչեր չցուցահանել, չտանել այդ խաչերը կամ սուրբ գրքերը մուսիլմանների փողոցները կամ շուկաները, հավասարապես պիտի կոչնակներ զարնենք մեր եկեղեցիներում միայն շատ թույլ կերպով, չպիտի ձայն բարձրացնենք եկեղեցիներում, մահմեդականների ներկայությամբ, ընթերցանության միջոցին, ոչ էլ մեր արմավենիների ճյուղերը դուրս բերել (ծաղկազարդին), ինչպես նաև մեր կուռքերը (սրբերի արձանները)։ Մենք չենք բարձրացնի մեր ձայները, երբ տանում ենք մեռելներին, ոչ նրանց հետ մոմեր կտանենք մուսիլմանների փողոցներով, ոչ էլ կթաղենք մեռելներին մուսիլմանների հարևանության մեջ։ Մենք չենք ձեռք բերի մուսիլմանների բաժին ընկած ստրուկներին, ոչ էլ կաշխատենք տեսնել նրանց իրենց բնակարաններում»[1]։

Այսքան անողոք և դաժան էր հանդիսանում իսլամի ալլահն իրեն ենթարկված անհավատների մեջ։ Բայց պետք է նկատել, որ միշտ չէին այս բոլոր կանոններն ամբողջովին և ամենայն ճշտությամբ գործադրվում։ Ամեն ինչ կախված էր տիրող միապետների բնավորությունից։ Եթե նրանք խստասիրտ և կրոնամոլ էին, զիմմիներն իրենց վրա զգում էին այս բոլոր արգելքների և ստորացումների ամբողջ ծանրությունը։ Սակայն չի կարելի ասել և այն, թե թույլ ու ներողամիտ տիրողների ժամանակ էլ ոչ մինն այս ճնշումներից չէր գործադրվում։ Շարիաթի տիրապետության ներքո չէր կարող լինել ժամանակ, երբ ոչ-իսլամ հպատակները չզգային իրենց ստորադրված, անասնական դրության հասցրած վիճակը։

3. Իսլամի նվաճումները։ Մենք տեսանք, որ դեռ մարգարեի կենդանության ժամանակ նոր կրոնը, զինված սրբազան պատերազմի գաղափա-

[1] Гиргас, стр. 67—68.

րով, արշավանքներ էր հանում Արաբիայի սահմաններից դուրս, ամենից առաջ ժամանակի առաջնակարգ զինվորական ուժի, բյուզանդական բանակների հետ չափվելու համար Սիրիայում։ Մուհամմեդից հետո Աբու-Բեքրը, վերսկսելով սիրիական արշավանքները, միացրեց դրանց և պատերազմական գործողությունները Պարսկաստանի դեմ, որոնց թատերաբեմ հանդիսանում էին հին Բաբելոնի սահմանները, ամփոփված Եփրատի ու Տիգրիսի ներքին հոսանքների միջև, մինչև Պարսից ծոցը,— մի երկիր, որ այդ ժամանակ կոչվում էր Իրաք։ Սակայն պատերազմական գործողությունները Սիրիայում այնպիսի ընթացք ստացան, որ Աբու-Բեքրն ստիպված էր առժամանակ թուլացնել Պարսկաստանի դեմ ուղղած հարվածները և ուշադրությունը կենտրոնացնել բյուզանդական ճակատի վրա։

Այստեղ արաբներն առաջին անգամ պիտի բախվեին մեծ և լավ կազմակերպված բանակների հետ, որոնց գործողություններին հետևում էր հատկապես այդ նպատակով Սիրիա գնացած Հերակլ կայսրը։ Սակայն և այդպես, թափառական բեդվիններից կազմված նոր կրոնական զորքը մեծ ձախորդությունների չհանդիպեց այդ մեծ պատերազմների մեջ։ Դրությունը փոխվեց մանավանդ այն ժամանակից, երբ խալիֆության աստիճանին հասավ Օմարը։ 634 թվից հետո արաբական խոշոր հաջողությունները հաջորդում են իրար։ Այդ տարին իսլամն առաջին անգամ հաղթահարում էր եվրոպական զինված ուժը և գրավեց Բոսիան, 635 թվին Դամասկոսը, որ Սիրիայի մայրաքաղաքն էր և որի անկումը նշանակում էր ամբողջ Սիրիայի նվաճումը։ 636 թվին արաբները փայլուն հաղթություն տարան Յարմուկ գետի ափին։ Բյուզանդական բանակը թեև մեծամեծ քաջություններ ցույց տվեց, բայց արաբները պակաս տոկուն չէին։ Պատերազմը չափազանց արյունահեղ էր, կայսերական զորքը համարյա ոչնչացավ։ Այնուհետև արաբների առջև ճանապարհ էր բացվում դեպի Պաղեստինի խորքերը։ Հերակլը, կորցնելով հույսը, թե կարող կլինի կանգնեցնել թշնամու հաղթական արշավը, հոգ տարավ, որ այս անգամ էլ Քրիստոսի խաչափայտը չընկնի անհավատների ձեռքը, ուստի վերցնելով Երուսաղեմից խաչափայտը, որ հինգ տարի առաջ իր ձեռքով էր հաստատվել սուրբ քաղաքում, տարավ իր հետ Կ. Պոլիս։ Հեռանալով Սիրիայից դեպի Բոսֆորի ափերը, կայսրը, ինչպես պատմում են, ասաց. «Մնաս բարով, Սիրիա, հավիտյան մնաս բարով»։ Այժմ նա այլևս այն Հերակլը չէր, որ պարսկական արշավանքներում այնքան շատ էր ցույց տվել պատերազմական տաղանդ։ Մի անկարողություն էր պատել նրան, և նա չէր կարողանում իր ձեռքի տակ եղած ահագին պետական միջոցները գործադրել՝ հաղթական թշնամուն կանգնեցնելու համար։ Իբրև կրոնամոլ և նախապաշարված մարդ, նա կորցրեց հոգեկան հավասարակշռությունը, հանդիպելով անհաջողությունների։ Պաղեստինում տարածված սարսափելի սովը և գիսավոր աստղը, որ այդ միջոցին երևաց երկնքում և ուներ նիզակի ձև, իր սուր ծայրով ուղղված դեպի Կ. Պոլիս, ավելի ևս երկյուղ ներշնչեցին նրան, և նա հասավ նույնիսկ այն դրության, որ սկսեց համոզվել, թե իր անձնական մեղքերն են այդ բոլոր դժբախտությունների պատճառը։

Սակայն ամեն ինչ չի կարելի բացատրել կայսրի այս հոգեկան դրությամբ։ Արաբական մեծ հաղթանակները պատրաստել էին և մի շարք ընդհանուր հանգամանքներ, որոնց մեջ առաջին տեղը բռնում էր բյուզանդական պետական սիստեմը, այն, որ կոչվում է բյուզանդականություն։ Կրո-

նական անհամբերողությունից առաջացած հալածանքները հրեաների և ոչ օրթոդոքս քրիստոնյաների դեմ, անգութ հարկահանությունը, որի միջոցով ծծվում էին հեռավոր նահանգների բոլոր հյութերը — ահա այս արատներն էին, որ վտանգի րոպեին կանգնեցին հարվածվող պետության դեմ։ Հրեաներն իրենց կրած հալածանքների վրեժն էին հանում, ընդարձակ չափերով աջակցություն ցույց տալով արաբներին։ Սիրիայի նեստորական քրիստոնյաները գտնում էին, որ արաբական տիրապետության տակ իրենք ավելի կրոնական ազատություն կվայելեին։ Եվ իրավ, արաբներն այս միջոցին քաղաքական մեծ հեռատեսություն ցույց տալով, ամենաթեթև պայմաններ էին առաջարկում քաղաքների ազգաբնակության, և քաղաքները միմյանց հետևից իրենց դռներն էին բաց անում նրանց առջև։ Այս բոլորից պակաս ավերիչ չէր բյուզանդական վարչության մեջ բուն դրած ապականությունը։ Դավաճանությունը, ամեն պարտավորություն վաճառքի դնելը քայքայում էին պետական կարգը։ Հիշատակենք և այն, որ Հերակլը շուտ հասկացավ, որ իր բնական դաշնակիցը նոր երևան եկած ընդհանուր թշնամու դեմ պիտի լինի Պարսկաստանը, ուստի նրան դիմեց միաբան ուժերով կռվելու համար, բայց Պարսկաստանն արդեն բոլորովին հալումաշ էր եղել պարսկա-բյուզանդական պատերազմներից, որոնց մեջ ամենավերջին և ամենածանր հարվածներ տվողը հենց ինքը Հերակլն էր եղել։ Իրանը մի տոկուն և ուժեղ դաշնակից չէր կարող լինել մանավանդ այն պատճառով, որ Սասանյան գահն այդ միջոցին, ինչպես գիտենք, ճարճատում էր ներքին երկպառակություններից։

634 թվին պատերազմը պարսկական սահմանների վրա տեղափոխվեց դեպի հյուսիս, ուր Եփրատի ափին, այն կամուրջի մոտ, որ շինված էր Տիզբոնից Հիրա տանող շահական ճանապարհի վրա, պարսիկներն ահավոր ջարդ տվին արաբներին և փախցրին նրանց։ Սակայն օգտվել այս հաղթությունից պարսիկները չկարողացան, որովհետև այդ ժամանակ տեղի ունեցավ արյունահեղ պալատական հեղաշրջում։ Օմարը կարգադրեց արագությամբ նոր զորքեր փոխադրել պարսկական սահմանագլուխը, հրամանատար նշանակելով մի փորձված և հեղինակավոր մարդու, որ Մուհամմեդի ազգականն էր և որի անունն էր Սաադ իբն-Աբի-Վաքքաս։ Այս նշանակումից հետո արաբական խոշոր հաղթանակները Պարսկաստանում զուգակշիռ են հանդիսանում նույն տեսակ հաղթանակների, որ արաբական մյուս բանակը տանում էր Սիրիայի և Պաղեստինի կողմերում։

Տիզբոնի պալատական հեղաշրջումը հանգում է այն վախճանին, որ կոտորված թագավորազունների թվից ազատված մեկը, Հազկերտը, դեռ պատանի, ստանում է Սասանյան թագը։ Նա կարողանում է բավական մեծ զորք հավաքել և ուղարկել արաբների դեմ։ 636 թվականին պարսիկները ծանր պարտություն կրեցին, որ հարկադրեց նրանց առժամանակ մոռանալ իրենց տնային երկպառակությունները՝ դրսի թշնամուն դիմադրելու համար։ Արքունիքում մրցող կուսակցություններից մեկի գլխավորն էր մեզ ծանոթ Ռոստոմ սպարապետը, մեր Վարազտիրոց Բագրատունու թշնամին, իսկ մյուսինը՝ Փիրուզանը, որ ծերունի մի հրամանատար էր՝ ազդեցիկ մի ցեղից։ Երկու ախոյանները միացան իրար հետ։ Բայց 637 թվի սկզբին, Յարմուկի մոտ տարած մեծ հաղթությունից վեց ամիս միայն անցած, արաբները փառավոր հաղթություն տարան Քադեսիա անվանված տեղում, չորս օր շարունակ պարսիկների դեմ ճակատամարտելուց հետո։ Արաբները

թվով 38 հազար էին, պարսիկները՝ 60 հազար։ Երկու կողմերն էլ հերոսության հրաշքներ ցույց տվին։ Կռվի մեջ ընկավ Ռոստոմ սպարապետը։ Վերջին օրն արաբները թարմ օգնական զորք ստացան, մինչդեռ պարսիկները հոգնած էին։ Եվ նրանց պարտությունը կատարյալ եղավ։ Այս մեծ հաղթությամբ ամբողջ Միջագետքն անցնում էր արաբների ձեռքը, որոնք նվաճեցին և բյուզանդական մասը, այսինքն Եդեսիան, Մծբինը, Դարան։ Այնտեղ, ուր միացած Եփրատն ու Տիգրիսը (Շատ-էլ-Արաբ) մտնենում են Պարսից ծոցին և այնքան լայնանում են, որ ծովային նավեր կարող են մտնել, շինվեց Բասրա ամրոցը, որ հետո դարձավ համաշխարհային հռչակ ունեցող առևտրական նավահանգիստ։

Նույն 637 թվին արաբական զորքերը փառավորեցին իրենց զենքը երկու խոշոր հաղթանակներով։ Արևմուտքում Երուսաղեմը, երկու տարի պաշարման ենթարկված լինելուց հետո, անձնատուր էր լինում Օմար խալիֆին, իսկ արևելքում Սաադ իբն-Աբի-Վաքքասը մտնում էր Սասանյանների շքեղ մայրաքաղաքը։ Սովն էր, որ ստիպեց երուսաղեմցիներին անձնատրության պայմանների մասին բանակցություններ սկսել արաբների հետ։ Գլխավոր դերը կատարում էր հունաց պատրիարք Սոփրոնիոսը, որ, ինչպես ասում են, պահանջեց, որ անձնատրության պայմաններն ստորագրի անձամբ ինքը խալիֆը։ Երուսաղեմը, իբրև Քրիստոսի գերեզմանի տեղ, սրբազան նշանակություն ուներ և մուսլիմանների համար, ուստի Օմարն շտապեց այնտեղ և մուտք գործեց սուրբ քաղաքն այնպիսի մի պարզությամբ, որ զարմանք ազդեց ամենքին։ Ուղղահավատների տերն ու հրամանատարը ճանապարհորդում էր ուղտի վրա, իսկ նրա կերակուրը բրինձ էր և արմավ, լցված մի քսակի մեջ։ Արաբները դեռ նահապետական կենցաղով ապրող մի ժողովուրդ էին, բարբարոսներ՝ քաղաքակիրթ աշխարհի մեջ։ Բայց Օմարն ցույց տվեց, որ այդ դրության մեջ լինելով էլ կարելի էր շինարարական մեծ ճաշակով հանդես գալ։ Ընդունելով քրիստոնեական մեծագույն սրբավայրի հպատակությունը, Օմարը մի մզկիթ շինել տվեց Սողոմոնի տաճարի տեղը, որ մուսլիմանական արվեստի հրաշակերտներից մեկն է համարվում։ Թե ի՛նչ պայմաններ շնորհեց Օմարը Երուսաղեմի քրիստոնյաներին, հաստատապես հայտնի չէ[1]։ Կարելի է միայն այնքանն ասել, որ խալիֆը թույլ տվեց ազատ պաշտել քրիստոնեական կրոնը և դաստիարակել երեխաներին նույն կրոնի մեջ, բայց և չարգելել, որ ով կամենա՝ իսլամն ընդունի։

Երուսաղեմի հայ գաղութի համար Օմարի նվաճումն ազատություն էր հույն կղերի հալածանքներից։ Մենք տեսանք, թե Հուստինիանոսի ժամանակ Հովհաննես պատրիարքն ինչպես էր բողոքում հայերին հեռանալ սուրբ քաղաքից, քանի որ չեն ընդունում Քաղկեդոնի ժողովը։ Այսքան անողոք հալածող էր և Սոփրոնիոս պատրիարքը միաբնակների վերաբեր-

[1] Հույն հոգևորականությունը, Երուսաղեմում իր ունեցած իրավունքներն ապացուցելու համար, ցույց է տալիս մի ֆերման, գրված Օմարի անունից, որ վկայում է, թե ո՛ր վանքերի և եկեղեցիների, հյուրանոցների և այլ հաստատությունների սեփականության իրավունքն է պատկանում հունաց եկեղեցուն։ Բայց այդ հրովարտակը, որ իբր թե տված է Սոփրոնիոս պատրիարքին 637 թվին, ոչ մի վավերականություն չունի և ներկայացնում է մեկն այն կեղծիքներից, որոնցով քրիստոնյաները կարծում էին օգնություն գտնել իսլամի երկրում (տե՛ս César Famin, „Histoire de la rivalité et du protectorat des Eglises Chrétiennes en Orient", Paris, 1853, p. p. 147—148, 465):

մամբ[1]։ Եվ մեր հին հիշատակարաններից մեկում ավանդվում է, թե երբ արաբները նվաճեցին Երուսաղեմը, հայերը, որոնք հալածական փախել էին հույն կղերականների ձեռքից, վերադարձան սուրբ քաղաքը և թե առհասարակ արաբական տիրապետությունը Պաղեստինում և Սիրիայում դավանական ազատություն բերեց քրիստոնյաներին[2]։

Իսկ Տիզբոնի անկումը տեղի ունեցավ առանց որևէ դիմադրության։ Քադեսիայի ճակատամարտում պարսկական բանակը ոչնչացավ, իսկ մի ուրիշ զորք չկար մայրաքաղաքը պաշտպանելու համար։ Արաբները ժամանակ չտվին, որ Հազկերտ Գ-ն նոր զորաժողով անի։ Նրանց թիվն արդեն հասել էր 60 հազարի և մանր կռիվներ տալով պարսկական բանակի մնացորդներին, նրանք մոտեցան Սելևկիա քաղաքին, որ Տիզբոնին կցված էր՝ Տիգրիսի արևմտյան ափին։ Սասանյան արքունիքում խուճապ սկսվեց։ 13 տարեկան Հազկերտ թագավորը չփորձեց էլ կանգնեցնել արաբներին, թեև այդպիսի հնարավորություն տալիս էին մայրաքաղաքի ամրությունները։ Արքունիքը հապճեպ փախուստի դիմեց դեպի Մարաստանի լեռները։ Պետական գանձից կարելի եղավ տանել միայն այն մասը, որ բաղկացած էր կտրած դրամներից։ Մնացած հարստությունները, որոնք դիզվել էին դարերի ընթացքում, մնացին անտեր ու անպաշտպան։ Արաբները գտան Տիգրիսի անցքը, անցան մյուս ափը, մտան հռչակավոր մայրաքաղաքը, որի մեծագույն զարդն էր փառահեղ «Սպիտակ Ամրոցը»։ Տիզբոնը, որի ձեռքին էր գտնվել հազարավոր տարիների ընթացքում անթիվ այլևայլ ազգերի հետ նաև հայ ազգի բախտը, մատնվեց բարբարոս նվաճողների կամքին և կողոպտվեց ու ավերվեց։ Պարսկական բռնակալության հզոր միջնաբերդը վերջին օրերն էր ապրում։ Արաբները չգոհացան Սասանյան գանձարանի անհուն հարստություններով, և Սաադի թույլտվությամբ կողոպտեցին նաև հարուստ թաղերը։ Ավարը չտեսնված ճոխություն էր ներկայացնում, նրա ընդհանուր արժեքը հաշվում են 200 միլիոն ռուբլի։ Յուրաքանչյուր զինվորի բաժին ընկավ մոտ 3 հազար ռուբլի։ Հաղթողների ձեռքն էին անցնում Սասանյան թագավորների թանկագին գահերը, խույրերը և պալատական այն ճոխությունները, որոնք ժամանակի ճաշակի և շռայլության ամենաբարձր աստիճանն էին ներկայացնում։ Այսպես էին, օրինակ, արծաթից շինած բնական մեծությամբ ուղտը, որի վրա նստած մարդը շինված էր ոսկուց, և ոսկեձույլ ձին, որի աչքերը թանկագին քարերից էին։ Բայց բոլոր ճոխությունների թագն ու պսակն էր արքունի դահլիճի հատակը ծածկող գորգը, որի երկարությունն էր 45 արշին և լայնությունն էլ նույնքան։ Այդ գորգը, արվեստի մի հրաշք, պատկերացնում էր մի ծաղկած այգի, նրա տափը (ֆոն) մետաքսից էր և ոսկեթել բանվածքից, ուղիները՝ արծաթե, ջրավազանները՝ ադամանդներից և ամեն տեսակ գույնզգույն թանկագին քարերից։ Այս հրաշալիքի արժեքը չհասկացան անապատի որդիները։ Այդ գորգը տարան Մեդինա և այդտեղ,

[1] Успенский, I, стр. 844.

[2] Հ. Ալիշան, «Հայապատում», հ. Ա, եր. 520։ Հայերն էլ ունեին մի կեղծ հրովարտակ Օմար խալիֆից իրենց եկեղեցիների սեփականության իրավունքը պաշտպանելու համար։ Հայերը նույնիսկ ավելի հեռու էին գնում, քան հույները։ Նրանք որպես թե պաշտպանության հրովարտակ ունեին ինքն իսկ Մուհամմեդից, ինչպես նաև մի քանի հետագա մահմեդական նշանավոր գործիչներից (տե՛ս Աստվածատուր եպիս. Տեր-Հովհաննիսյանց, «Ժամանակագրական Պատմություն Ս. Երուսաղեմի», հ. Ա, Երուսաղեմ, 1890, եր. 160—162)։

զորավարների մեջ բաժանելու համար, կտոր կտոր արին։ Տիզբոնն անցնում էր ավերակ քաղաքների կարգը, իսկ նրանից ոչ հեռու, Եփրատի վրա, արաբները հիմնում էին Քուֆ քաղաքը իրենց տիրապետությունն ապահովելու համար։

Հազկերտի փորձը՝ զորքեր ուղարկելու իր մայրաքաղաքի վերստին նվաճման համար, ոչ մի հաջողություն չունեցավ։ Իսկ Օմար խալիֆը հրաման էր ուղարկում իր բանակին՝ անցնել Իրանի մյուս կողմերը՝ նվաճումները շարունակելու համար։ Սակայն մեծ պետությունը դեռ ուժ էր գտնում իր վերջին ոգորումները դիմադրական հզոր թափի մեջ դնելու համար։ Հազկերտը նորից մի մեծ բանակ կազմակերպեց, և երկու թշնամի կողմերը մեկ անգամ էլ պատահեցին իրար, վերջին անգամ, Համադան քաղաքից դեպի հարավ, Նեհավենդ գյուղի մոտ (642 թ.)։ Հազկերտ Գ-ն դեռ խակ ու անփորձ, գլխավոր հրամանատարությունը հանձնեց ծերունի Փիրուզանին։ Երկու ամիս թշնամի բանակները կանգնած էին իրար դեմ հանդիման և պատրաստվում էին վերջին օրհասական ընդհարման։ Արաբ հրամանատար Նոման իբն-Մուխարիսը շատ լավ էր զգում, որ այս ճակատամարտի ելքից էր կախված Իրանի բախտը, ուստի ոգևորում էր իր զորքերը կռվել ի փառս մարգարեի։ «Բարեկամներս,— այսպես կոչ արավ նա իր զինվորներին,— ձեզ պատրաստեցեք կամ հաղթելու, կամ նահատակության քաղցր շերբեթը խմելու համար»[1]։ Եվ նա անձամբ տարավ «ալլահ աքբար» կոչվող զորամասերը դեպի կռվի դաշտը։ Երեք օր երեք գիշեր տևեց կատաղի, արյունահեղ կռիվը։ Նոմանը խմեց իր առաջարկած քաղցր շերբեթը, ընկնելով կռվողների շարքում։ Խոդհեյֆա զորավարը, ինչպես վաղօրոք կարգադրել էր Օմարը, փոխարինեց սպանված հրամանատարին։ Վերջին պահին, ինչպես և Քադեսիայում, օգնական զորքեր հասան արաբներին, ուստի և հաղթությունը վճռական կերպով անցավ նրանց կողմը։ Հին Իրանը վերջնականապես ջախջախված էր։ Հազկերտը փախստական դարձավ, իսկ արաբների առջև բացվում էր ճանապարհ մինչև Միջին Ասիա։ Եվ նրանք շտապեցին օգտագործել իրենց հաջողությունները։ Միևնույն տարին Ռեյ, Զինջան, Ղազվին, Թավրիզ քաղաքները և ամբողջ Ատրպատականը գլուխ իջեցրին հաղթողների առջև, իսկ հետևյալ տարին միևնույն վիճակին ենթարկվեցին Համադանը, Քուշանը, Սպահանը[2]։ Հազկերտը շարունակ փախչում էր դեպի արևելք։ Տաբարիստանի լեռնաշխարհում (Կասպից ծովի հարավ-արևելյան ափին) նա կարող էր ապահովություն գտնել, բայց չուզեց օգտվել նրանից, որովհետև շարունակ այն միտքն էր փայփայում, թե իրեն դեռ կհաջողվի ոտքի կանգնեցնել Իրանի ժողովուրդները նորելուկ թշնամիների դեմ։ Իր հետ նա տանում էր զրադաշտական սրբազան կրակը, իր հարեմի մի մասը և թիկնապահ զորքերի մի փոքրիկ գումարտակ։ Դժբախտ թագավորը կատարելապես բերում էր նմանությունը Դարեհ Կոդոման թագավորի, որ նույնպես փախչում էր Ալեքսանդր Մակեդոնացու առջև դեպի Արևելյան Պարսկաստան։ Նա գնաց Քիրման նահանգը, ապա Սիջիստան, այստեղից անցավ Խորասան։ Կարծում էր, թե կարելի կլինի օգնություն ստանալ Օքսուսի թուրքերից կամ նույնիսկ Չինեդից։ Սակայն այդ ակնկալությունն ապարդյուն անցավ։ Հազկերտն էլ Դարեհի բախտակիցը դարձավ։ Խորա-

[1] John Malcolm, „Histoire de la Perse", t. I, Paris, 1821, p. 261.

[2] Huart. „Hist. des Arabes". I. p. 232.

սանի սատրապը դավաճանեց նրան և սովորեցրեց թուրքերին սպանել նրան։ Մերվ քաղաքի մոտ, Մուրգաբ գետի վրա, Հազկերտն ստիպված էր կռվի բռնվել մի թուրքական հրոսակի հետ։ Կռվի մեջ նա կորցրեց համարյա իր բոլոր զինվորներին և ապաստան գտավ մի ջրաղացում, ուր և սպանվեց[1]։ Նրա հետ մեռնում էր և Հին Զրադաշտական Իրանը, իբրև պետություն։

4. Հին Իրանը: Բայց Հին Իրանը, իբրև կուլտուրական աշխարհ, իբրև ազգային ինքնորոշում, մնում էր դարձյալ հզոր ու ինքնամփոփ, ինչպես առաջ։ Եվ այլապես չէր կարող լինել։ Մի երկիր, որ հազարավոր տարիներ մի մեծ պետություն էր Արևմտյան Ասիայում, մեկն աշխարհի ճակատագիրը տնօրինողներից ոչ միայն իր քաղաքական ուժով, այլև իր քաղաքակրթական հանգամանքներով, չէր կարող կորչել առանց որևէ հետք թողնելու այն ժողովրդի գիտակցության մեջ, որ ստեղծել էր նրան։ Իսլամն Իրան մտնում էր, ինչպես կտեսնենք, նրա կուլտուրական-ազգային կենսունակությունը նոր ձևերի մեջ դնելու համար։ Մահ նա բերում էր, այն էլ ժամանակավորապես, միայն քաղաքական կյանքին և ոչ բոլորովին ժողովրդի ոգուն։

Հին Իրանը, գրեթե իր սկզբնավորության օրից, շփման մեջ էր հայերի հետ, և մենք մեր այս աշխատության սկզբից երկար ու երկար տեսանք, որ հայկական կյանքն էլ իր գոյության ընթացքում սերտորեն կապված էր նրա հետ, խիստ կերպով ենթարկված նրա ազդեցության։ Միայն Սասանյան տոհմի տիրապետությունից հետո է, որ Հայաստանը, քրիստոնեության միջոցով, բոլորովին տարբեր կուլտուրական միջավայր է փոխադրվում և հարազատ մնալով իր այս նոր դիրքին, հակամարտություն է առաջ բերում Իրանի դեմ մտավորականության ասպարեզում։ Այս ազատագրական կռիվը, սակայն, հեռու էր հայերին միանգամայն պարսկականության շրջանակից դուրս բերելու կարողությունից։ Այդ անկարելի էլ էր, քանի որ Հայաստանի մի խոշոր հատվածի վրա տարածված էր Սասանյան տիրապետությունը։ Եվ ահա քրիստոնեական հակամարտության ժամանակ էլ հայկական կյանքի հասարակական-ընկերական պատկերն ընդհանրապես շարունակում է մնալ միևնույնը, ինչ էր առաջ, երբ հեթանոսական գրեթե միատեսակ պաշտամունքը եղբայրացնում էր նրան պարսկականի հետ։ Այս շատ հասկանալի է։ Կրոնական տարբերությունը հասարակական կազմի տարբերություններ չառաջացրեց երկու երկրներում։ Սասանյան Իրանը պահպանում էր այն պետական-հասարակական կազմը, որ ստացել էր նախկին ժամանակներից, այն է՝ ավատական դրությունն՝ ազնվականության (աշխարհիկ և հոգևորական) բացարձակ տիրապետությամբ։ Միևնույն հիմքերի վրա հնուց հաստատվել էր և հայկական կյանքը, վերցնելով և խորապես ազգայնացնելով շատ ձևեր պարսկական կյանքից։ Կրոնական

[1] Պարսից պատմության այս ողբերգական էջը կազմում է հռչակավոր «Շահ-Նամեի» վերջին գլուխը, ուր Ֆիրդուսին առանձնապես սրտառուչ շեշտերով է նկարագրում Հազկերտի երևալը ջրաղացում, մի խորոմ չոր խոտի վրա քնելը, չոր հացով կերակրվելը և մահացումը թուրք ջրաղացպանի—մի միամիտ և պարզ մարդու—ձեռքով։ Որքան և թույլ ու խեղճ լիներ Հազկերտը, բայց նա ազգային անկախության մարմնացումն էր, ուստի և մեծ բանաստեղծը ներբողներով է զարդարել այդ վերջին Սասանյանին, որից բաժանվում է, կոչ անելով արդարության և վրեժխնդրության (տե՛ս Le Livre des Rois par Aboul Kasim Firdoussi, trad. par J. Mohl, t VII, Paris, 1878)։

խտրությունները, որքան և խոր ու անջատիչ, այնքան ուժեղ չհանդիսացան, որ միանգամայն կերպարանափոխեն հասարակական կարգը մինչ այն աստիճան, որ նմանություն չմնար երկու դրակից երկրների միջև։ Եվ հայ կյանքը քրիստոնեության ժամանակ էլ պարսկականին գերազանցորեն հարազատ գծեր շատ պահպանեց, այնպես որ, օրինակ, Պարթևական Պարսկաստանի պետական-հասարակական կյանքի մանրամասնությունները ճշտելու համար այսօրվա գիտությունը դիմում է մեր 4-րդ, քրիստոնեական դարի իրականության, համարելով այն մի հայելի, որի մեջ ցոլանում էր պարթևական հասարակարգը[1]։ Այսպիսի մի զուգակշիռ հայկական կյանքը պարսկականի վերաբերմամբ շարունակում էր պահպանել և Սասանյանների օրով, երբ Պարսկաստանը դարձյալ Պարթևների ժամանակի ավատական ազնվապետական իրականությունն էր ներկայացնում, ավելի խտացած ազգային առանձնացման պաշտամունքով։ Թագավորը դարձյալ հինն է— ամենակարող իր էությամբ, բայց ավատական իշխողների և հոգևորականության խիստ ազդեցության ենթարկված։ Հասարակ ժողովուրդը ոչինչ նշանակություն չուներ։ Նրան բաժին էր ընկել միայն նյութական բարիքներ արտադրելը։ Երկրի մտավոր և կուլտուրական շահերի ներկայացուցիչներն էին նույն ավատական իշխողներն ու հոգևորականությունը։

Սասանյան թագավորները, մանավանդ վերջին շրջանում, իրենց նախորդներին անհունապես գերազանցում էին շքի և փայլի կողմից։ Նրանք ծածկում էին երկիրը, մինչև իսկ հեռավոր գաղթավայրերը, պալատներով և ամրոցներով, որոնց մեջ շռայլությունը հասնում էր երևակայության մատչելի աստիճաններից էլ վերբերին։ Մանավանդ շատ էր այդ կողմից երես առած Խոսրով Բ Փարվեզը, որ շինեց հրաշակերտ պալատներ, լցրեց նրանց մեջն ամեն տեսակ ճոխություններով։ Պատմում են, որ նրա շքախումբը բաղկացած էր 960 փղերից, երկու հազար ուղտերից, վեց հազար ձիուց և երեք հազար հարճերից[2]։ Ժողովրդի մեջ ապրողները, ժողովուրդը կառավարողները դեհկաններն էին, ազնվական կալվածատերերը, մեր նախարարների նման, և հոգևոր իշխանները, որոնք կոչվում էին մոբեդ (մովպետ, ինչպես գրում են մեր հին մատենագիրները)։ Դրանք էլ քաղաքակրթության, մտավոր զարգացման և ազգային ինքնապաշտպանության ներկայացուցիչներն էին։ Հարավային Պարսկաստանի Ֆարս նահանգն էր պետության սիրտը և ազգային ուժի գլխավոր օջախը։ Այդտեղ էլ ահա բազմաթիվ էին իշխանական ամրոցները, որոնց մեջ ապրողները, երկրի տերեր, միայն կյանքի հաճույքները չէին վայելում, այլև ազգային մեծ գործն էին կատարում։ Այդ ամրոցների մեջ էին ազգային հերոսները վեպերի և երգերի նյութ դառնում։ Այստեղ էին գրի առնվում և պահպանվում ավանդությունները, որոնց մեջ Իրանի հին փառքն էր ապրում։ Սասանյան թագավորները, նախանձախնդիր, որ չկորչեն երկրում կատարված մեծ գործերի հիշատակները, հավաքել էին տալիս գավառական անկյուններում ժողովրդի մեջ պատմվող ավանդությունները։ Այդ գործը կատարել տվողներից մեկն էր վերջին Սասանյանը, դժբախտ Հազկերտ երրորդը։ Եվ այս ժողովրդական նյութերից էր, որ Ֆիրդուսին 10-րդ դարում հրաշակերտեց իր «Շահնամե»-ն։

---

[1] A. Christensen, „L'Empire des Sassanides", Copenhagen, 1907, p. 6.

[2] Dieulafoy, „l'Art Antique de la Perse", t. V, p. 94.

Իշխանական ամրոցի հետ իրանական գործ կատարում էր և տեղային ատրուշանը։ Համարյա յուրաքանչյուր գյուղում կառուցված էր կրակի տաճար և այդտեղ էլ կրոնավոր ազնվականն էր դաստիարակողի, գրագիտության ավանդողի, գրողի և օրենքներ բացատրողի դերում։ Այսպես ահա, ամրոցն ու տաճարն էին, իրար ձեռք-ձեռքի տված, հանդիսանում պարսկական ազգային ավանդությունների ջերմեռանդ պահապանները[1]։ Այսպիսի մի դեր մենք տեսանք և Հայաստանում, ուր նույնպես նախարարական դղյակներն ու քրմական կազմակերպությունները ոչ միայն ավանդություններ էին զարգացնում, այլև պահպանում էին եղածները[2]։

Բայց ազգային առանձնահատկությունների ամուր պատվանդանի վրա հենվելը Սասանյան Իրանի համար չէր նշանակում կատարյալ ճահճացում ընդհանուր քաղաքակրթական տեսակետից։ Կուլտուրական աշխարհի մեջ Սասանյանների ժամանակը զուրկ չէ մեծագործություններից, այնպես որ նա կատարել է մի մեծ պետության արժանի դեր ոչ միայն Ասիայի այս կողմերի, այլև նույնիսկ համաշխարհային զարգացման գործի մեջ։ Օրինակի համար վերցնենք Սասանյան շինարարական արվեստը։ Թեև այդ արվեստից հիշատակարաններ քիչ են հասել մեր ժամանակները, բայց այդ մնացորդներն էլ չափազանց ուշագրավ են պարսիկ ժողովրդի ստեղծագործական հանճարը գնահատելու համար։ Շինարարական մեծագործություններով ամենից շատ զարդարված էր, իհարկե, Տիզբոնը, Սասանյան այն մեծափարթամ մայրաքաղաքը, որ թեև Պարթևների ժամանակ էլ արքունիստան էր, բայց պարթևական արվեստը, սասանականի հետ համեմատած, այնքան ինքնուրույնություն չուներ և այնքան բեղմնավորություն չէր ցույց տալիս։ Շինությունների մեջ առաջին տեղը բռնում են թագավորական պալատները, և դրանց թագն ու պարծանքը Տիզբոնի պալատն էր, որ այսօր էլ զարմանք է հարուցում, թեև բոլորովին ավերակ դրության մեջ, իր ընդարձակ դահլիճներով, իր հսկա կամարներով և գեղարվեստական արժանիքներով։ Սասանյան Իրանը, մի մեծ պետություն, որ բազմաթիվ աշխարհներ ուներ իր տիրապետության տակ և շարունակ շփվում էր արևմտյան մեծ քաղաքակրթությունների հետ (Հռոմ, Բյուզանդիա), իր ճարտարապետական ոճերի մեջ այդ երկրների ազդեցությունն էր կրում, օրինակ, քաղդեա-ասորական, եգիպտական, հունա-հռոմեական տարրեր։ Բայց և այդպես, իրանական արվեստը պահպանում և զարգացնում էր նաև իր սեփական ինքնուրույնությունը, և այս կողմից այնքան ուժեղ էր, որ նրա սկզբունքներն ու արտահայտության ձևերն ընդօրինակվեցին ուրիշ ազգերից, և այսպիսով պարսկական արվեստը գնաց նույնիսկ Եվրոպա, և գիտությունն արդեն ապացուցել է, որ, օրինակ, միջին դարերի ֆրանսիական արվեստը պարսկական ծագում ունի[3]։

Սասանյանների շինարարական մեծ հուշարձաններն են կամուրջները, որոնցից շատ նշանավոր են մանավանդ երկուսը՝ Դիզֆուլի կամուրջը և Շուշթերի կամուրջը՝ Քարուն գետի վրա։ Վերջինս ունի 516 մետր երկարություն և հաստատված է քառասուն և մեկ կամարի վրա։ Այս մեծագործություններին համազոր են և այն արհեստական թումբերը, որ Սասա-

---

[1] К. Иностранцев, «Сасанидские этюды», СПБ, 1909, стр. 5.

[2] Տե՛ս այս գործի Ա հատոր, Ե., գլ. Բ։

[3] Djeulafoy, t. V, § X.

նյանները կառուցում էին գետերի ընթացքը կանոնավորելու, նույնիսկ փոփոխելու համար։ Այսպիսի շինություններից այսօր էլ իր չափերով և ամրությամբ զարմացնում է նույն Քարուն մեծ գետի կամուրջի թումբը։ Հիշատակություն կա, որ այդ կամուրջները, Սասանյան շահերի հրամանով շինել են հռոմայեցի ճարտարապետները։ Բայց այս, իհարկե, չի նշանակում, թե բուն պարսկական երկիրը չէր մասնակցում այս մեծագործություններին մեջ իր նյութերով, իր վարպետներով և այլ տեսակի աշխատավորներով։

Սասանյան արվեստի մի վերին աստիճանի ուշագրավ ճյուղն էր կազմում քանդակագործությունը։ Այս արվեստը Պարսկաստանում գոյություն ուներ և Աքեմենյանների ժամանակ, Քրիստոսից 4—5 դար առաջ։ Բայց այն ժամանակ պարսիկ քանդակագործները ներշնչումներ ստանում էին Բաբելոնի արվեստագետներից, ուստի և այն ժամանակվա բարձրաքանդակները քաղդեական և եգիպտական արվեստի հետ շատ առնչություններ ունեին։ Իսկ Սասանյանների ժամանակ քանդակագործությունը հռոմեական արվեստին էր աշակերտում, ուստի թե՛ ավելի շատ գեղարվեստական արժանավորություններ ունի և թե՛ անհամեմատ ավելի շատ հարուստ է իր ճոխություններով։ Սասանյան թագավորները, Աքեմենյանների օրինակին հետևելով, իրենց գործերը ներկայացնում էին ժայռերի վրա բարձրաքանդակ նկարներով, բայց այն տարբերությամբ, որ այդ պատկերներն առանց արձանագրությունների էին։ Այստեղ ահա, պարսկական կյանքի այս պատկերացումների մեջ, անկարելի է չնշմարել զուտ տեղային, զուտ պարսկական ինքնուրույնություն։ Այսպես են, օրինակ, իրանական ձևերը, խոշոր, մսոտ, ամուր գծերով, կարծես, իրենց թագավորների մեծությունը մարմնացնող։ Վերին աստիճանի նուրբ և գեղեցիկ են բազմահարուստ դրվագները (օրնըման), որոնք, սակայն, արևելյան ճաշակ շատ չեն կրում իրենց մեջ և ավելի շուտ եվրոպական արվեստի պատճեններ են[1]։ Եվ որովհետև այդ բարձրաքանդակները զարմանալի ճիշտ և բնական են իբրև պատկերացումներ, ուստի նրանք շատ կարևոր նշանակություն ունեն և այն կողմից, որ ցույց են տալիս, թե թագավորներն ու մեծամեծներն ի՛նչ տեսակ շորեր էին հագնում, ի՛նչ զենքեր էին գործածում և ինչպես էին իրենց զարդարում[2]։ Բարձրաքանդակներ շատ թողել են Շապուհ Բ-ն (4-րդ դար), որ հաղթություններ էր տարել հռոմայեցիների դեմ, և Խոսրով Պարվեզը, որին, ինչպես գիտենք, վիճակված էին ավելի մեծ պատերազմական հաջողություններ Բյուզանդիայի դեմ։ Բացի այդ հաղթանակները ներկայացնող քանդակներից՝ կան և այնպիսիները, որոնք պատկերացնում են արքայական որսի տեսարանները։ Մի կարևոր հանգամանք, որ պարզում են այդ բարձրաքանդակ նկարները, այն է, որ Իրանում էլ, ինչպես և հայ Արշակունիների ժամանակ, նախարարները նստում

---

[1] Dieulaioy, t. V, pl. XIV—XV.

[2] Մեր հին անցյալից, տարաբախտաբար, այդպիսի հիշատակարաններ շատ քիչ են մնացել, և մենք չգիտենք հայ նախարարների, հասարակ ժողովրդի հագուստները, տնային կահավորումը և առհասարակ նիստ ու կացին վերաբերող մանրամասնություններ։ Այս կողմից մեզ առաջնորդել դեպի հավանական ենթադրություններ կարող են այս սասանյան հուշարձանները, այնքանի որ, անկասկած, հայ տիրող դասակարգերը, հատկապես Պարսկական Հայաստանում, աշխատում էին յուրացնել պարսիկ ազնվականության ոչ միայն սովորությունները, այլև նիստ ու կացը։

էին բարձերի վրա և այդ բարձերի կարգն արքունիքում որոշում էր և
տոհմի ազնվական բարձրության աստիճանը։ Պարսկաստանում էլ թագա-
վորը հաստատում էր «Գահնամակ» (այսպես կոչվում էր Հայաստանում,
իսկ Իրանում հայտնի էր «Գահ-Նամե»[1] անունով), որ որոշում էր յուրա-
քանչյուր ազնվական տոհմի տեղը արքունիքում։

Բարձրաքանդակ նկարի արվեստի հետ հավասար չափով բարձր զար-
գացման էր հասել և խորաքանդակ նկարի արվեստը, որ գլխավորապես
կնիքներ փորագրելու մասնագիտության էր ծառայում[2], Ենթադրվում է,
որ շատ զարգացած էր և նկարչական արվեստի մի այլ ճյուղը—որմնա-
նկարը։ Նկարչական արվեստի եզակի հոյակապ հիշատակարան էր հենց այն
մեծ գորգը, որ ինչպես տեսանք, արաբները հափշտակեցին Տիզբոնի թա-
լանի ժամանակ և այնպես կտոր-կտոր արին՝ իրար մեջ բաժանելու համար։
Գորգագործության արվեստն այսօր էլ անզուգական է դարձնում Պարս-
կաստանն իր հարևան բոլոր երկրների շարքում։ Ուրիշ արվեստներ էլ
ծաղկած էին գորգագործության նման։ Այսպես էր, օրինակ, խեցեգործու-
թյունը[3]։ Սասանյան ժամանակների սափորները (վազ) ներկայացնում են
արվեստի մի շատ բարձր աստիճան։ Հիշատակության արժանի է և ջուլհա-
կագործությունը, որ զանազան կտավեղեններ էր պատրաստում, մետաքսե
գործվածքներ։ Հնագիտական որոնումներին նույնիսկ հաջողվել է Սասա-
նյանների ժամանակ գործվող չթերի նկարները ձեռք բերել[4]։

Եվ այսպես, Սասանյան Իրանն ազգային սկզբունքի հետ պետական
իդեալի բարձունքն էր հանել և երկրի կուլտուրական զարգացումը։ Նրա
քաղաքակրթական առաքելության ամենագեղեցիկ հուշարձանը Տիգրիս գե-
տի հովիտն էր, ծածկված գյուղերով և քաղաքներով, որոնք հարստահա-
րում էին այդ պարարտ հողի բնական հարստությունները շահագործելով։
Երկրագործության բոլոր ճյուղերը բարձր աստիճանի էին հասնում Սա-
սանյան թագավորների ջանքերով, որոնց շնորհիվ արհեստական ջրանցքների
ների մի խիտ ցանց էր պատում ամբողջ հովտի մակերևույթը։ Սասանյան-
ների անկումը վայրենացման անեծքով ծածկեց այս ծաղկած և արգավանդ
դաշտերը, որոնք այն ժամանակներից մինչև այսօր անապատ են մնում,
ծածկված վաղեմի փառքի ավերակներով։

Հասկանալի է, ըստինքյան, որ այսպիսի մի բարձր քաղաքակրթու-
թյան աստիճանի վրա գտնված երկրում չէին կարող արհամարհված լինել
գիտությունը, գրականությունը։ Մենք արդեն առիթ ունեցանք ծանոթա-
նալու այն գրական շարժման հետ, որ սկսվեց Իրանում Խոսրով Նուշիր-
վանի ժամանակ։ Այստեղ կնկատենք, որ մյուս թագավորների ժամանակ էլ,
մանավանդ Սասանյան տիրապետության վերջին երկու տարում, Իրանը
կատարում էր իր հատուկ դերը գրական շարժումների պատմության մեջ։
Այդ դերն ամենից լավ բնորոշում է Իրանի աշխարհագրական դիրքը, որ
տալիս է նրան մի տեսակ կամուրջի նմանություն արևելյան և արևմտյան
կուլտուրական աշխարհների միջև։ Հավատարիմ իր այս դիրքին, Իրանը

---

[1] Иностранцев, стр. 28.

[2] Dieulafon, t. V, p. 124.

[3] Ibid, p. 104.

[4] J. de Morgan, „Mission scientifique en Perse", t. IV, Paris, 1894. Արևելքում չթեղենի նկարները միատեսակ են, այնպես որ կարելի է ասել, թե այդպիսի չթեր հավանորեն գործ էին ածում նաև Հայաստանում։

կուլտուրական գրական ազդեցություններ ընդունում էր թե՛ Հնդկաստանից և թե՛ արևմտյան ազգերից։ Հնդկական և առհասարակ արևելյան ազդեցությունները մասնավորապես շեշտված են հեքիաթների հարուստ գրականության մեջ։ Միջազգային այս թափառիկ գրական ստեղծագործությունները Իրանում էլ, ինչպես և ամեն երկրում, կանգ էին առնում վերամշակումների ենթարկվելու, տեղայնանալու համար, որպեսզի այդպես գունավորված՝ անցնեն մի ուրիշ տեղ, այստեղ նոր վերամշակումների առարկա դառնալու համար։ Այսպես են, օրինակ, այն հեքիաթներից շատերը, որոնք հայտնի են հռչակավոր «Հազար և մի գիշերներ» ընդհանուր անվան տակ։ Դրանց մի մասը հնդկական ծագում ունի, Իրանում ստացել է նոր խմբագրական ձև, իսկ արաբները, թարգմանելով այն ժողովածուից, որ կազմվել է Սասանյանների ժամանակ, նորից և նորից վերամշակել են, ավելացնելով իրենց տեղական հեքիաթներն ու առասպելներն էլ, որոնց վերջնական խմբագրությունն արդեն կատարվել է եգիպտական հողի վրա[1]։

Իսկ արևմտյան գրական ազդեցությունները, որոնք արձագանք են գտել Իրանում, գլխավորապես գիտական բովանդակություն ունեին և արտահայտվում էին հունարենից կատարված թարգմանություններով։ Այսպես են փիլիսոփայության, բժշկության վերաբերյալ թարգմանությունները։ Նկատենք, սակայն, որ այս գիտական գրականության մեջ բուն պարսիկները ոչ մի մասնակցություն չունեին, և թարգմանություններ կատարողները քրիստոնյա սիրիացիներն էին։ Պարսկաստանը եթե կարող էր տալ մի տեսակ «գիտական» գրականություն, այդ կարող էր վերաբերվել միայն աստղագիտության և առհասարակ գուշակողական արհեստին, որոնք Իրան էին անցել Բաբելոնից և Ասորեստանից։ Արաբները հիջրեթի առաջին դարերում պարսիկներին էին աշակերտում գրական դաստիարակության մեջ և շատ բան թարգմանեցին Սասանյան ժամանակների պարսկական գրականությունից[2]։ Գուշակողական արհեստի վերաբերյալ գործերից մեկը, որ պարսկերենից թարգմանվել է արաբերենի, շատ նմանություն ունի մեր «Մարմնախաղաց» և «Գուշակութիւն օդոց» գրվածքներին[3] և ապացույց է, թե հայ միտքը նույնիսկ քրիստոնեության ժամանակ որքան խիստ է եղել ենթարկված իրանական մտքին։

Բայց Սասանական Իրանը լոկ գրական փոխառություններով և վերամշակություններով չէր ապրում։ Նա ուներ և ինքնուրույն գործունեություն, որ արտահայտվեց գլխավորապես ազգային ավանդությունների մշակման ճյուղում—վեպի, դյուցազներգության մեջ։ Այս կողմից, ինչպես տեսանք, նյութի պակասություն չէր զգացվում, քանի որ շատ էին ժողովրդական հերոսները և Իրանի թագավորների գործերը երկար պատմություններ էին կազմում։ Սասանյան թագավորներից շատերն էլ հենց Սասանյանների ժամանակ քերթվածների և ընդարձակ վեպերի հերոսներ էին դարձել։ Այսպես

[1] **А. Горстер,** К литературной истории «Тысячи и одной ночи» («Юбилейный сборник в честь В. Миллера», М., 1900, стр. 225—231).

[2] *Այս մասին մանրամասնություններ շատ է տալիս արաբ գրող Աբու-Յակուբ-ալ-Վարրաքին իր «Ֆիհրիստ» անունով աշխատության մեջ։*

[3] *Արաբերենից թարգմանված է ռուսերենի.—* **К. Иностранцев,** «Материалы из арабских источников для культурной истории Сасанидской Персии, приметы и поверья», СПБ, 1907.

էր հենց ամենից առաջ Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիրը[1], սակայն նրա վեպից ավելի շատ ընդարձակ էր Բահրամ-Գուրի (Վռամ Ե) վեպը[2]։ Բացի դյուցազներգություններից և վեպերից, Սասանյան Իրանի ինքնուրույն արվեստը շատ էր սիրում խրատական-դաստիարակչական բովանդակությունը, և արաբ գրողները հաճախ էին դիմում այդ տեսակ գործերի թարգմանության[3]։

Այս գրականությունն է ահա, որ խոր ազդեցություն է թողել հայ կյանքի մեջ և մանավանդ լեզվի վրա։ Հին պարսկերենից փոխառած բառերի թիվն ահագին է մեր լեզվի մեջ։ Ճիշտ է, այդ փոխառությունները տեղի են ունեցել ամենից շատ Պարթևների ժամանակ, բայց պահլավերեն լեզուն, Սասանյան Իրանի լեզուն էր, նույնպես շատ է ազդել հենց իր ժամանակի հայերեն լեզվի վրա։ Դրա լավագույն ապացույցն է Եղիշեն, որի հարուստ և հյութալից հայերենի զարդերը սակավավոր դեպքերում չէ, որ կազմվում են պարսկերեն բառերից։ Սակայն հարցն առանձին բառերի փոխառության մեջ չէ։ Կա ավելին։ Երկու լեզուները մերձակցությունից իրար սաստիկ մոտեցել էին, սաստիկ նմանության հանգել։ Ահա ինչ է ասում պահլավերեն լեզվի ուսումնասիրությամբ երկար զբաղված դոկտոր Թիրյաքյանը. «Իրանական ճյուղերուն մեջ պահլավիկ մատենագրությունը միակը՝ եզականն է, որչափ ես տեսա, որ ա՜յն չափ սերտիվ ընդգրկե հայերենը։ Կրնամ ըսել թե մինչև այս օրս, օր չունեցա, որ նոր հանդիպման մը, նոր հայտնության մը և մին քան զմյուսն ավելի հետաքրքրաշարժ առնչության, նոր շոշափմանց հանդիպած չլինիմ։ Որ ավելի զարմանալին է, այս աղերսանքը, այս առնչությունները հասարակ բիրտ (grossier) հանդիպումներ չէին երևնար, այլ մեծավ մասամբ, այնպիսի ներքին, հյութական՝ հյուլեական, ըսենք, զուգախառնություններ էին, որ խորունկ մտածության և լուրջ և անպաշար և անաչառ դիտողության տեղի կուտային։ Եվ թեպետ կվարանիմ, բայց եթե իսկը, ճիշտը և բովանդակն ըսել պետք և ներելի է, պիտի հայտարարեմ թե մինչև իսկ զարհուրելի թվեցավ ինձ այսչափ սերտ (intime) չգիտեմ ինչությունն ըսեմ Պահլավի և Հայու մեջ»[4]։

5. Նոր Իրանը: Ահա այս հին խոշոր պետական-կուլտուրական երևույթին էր վերջ տալիս արաբական իսլամի հաղթական սուրը։ Բայց այս չէր նշանակում, թե Իրան այլևս չկա, թե նա այլևս դեր չունի մարդկային պատմության մեջ և թե մանավանդ այլևս միանգամայն ընդ միշտ դադարում է նրա ազդեցությունը հայ ազգի վրա։ Արաբական հարվածից միայն երևույթների փոփոխություն էր առաջանում։ Հին Իրանից պիտի ծնվեր Նոր Իրան, որպեսզի շարունակեր իրանական ցեղի պատմական դերն Արևմտյան Ասիայում։ Իսկ սրա համար պետք է նոր ձևեր մշակեր իր ազգային ինքնուրույնությունը ձուլելու համար։

Արաբական հարվածների տակ Իրանը կորցնում էր ոչ միայն իր քաղաքական անկախությունը, այլև իր ազգային գոյության հենարանը կազ-

[1] Պահլավ բնագրից այս վեպը հայերենի թարգմանել է դոկտոր Հ. Թիրյաքյանը, «Արտաշիր Բաբական Կարնամակ», Փարիզ, 1907։

[2] Այս վեպը մանրամասնորեն վերարտադրել է Ֆիրդուսին իր «Շահնամեի» մեջ (տե՛ս «Բահրամ Գուռ» գլուխը)։

[3] Այս խրատական գրվածքներից մեկն է «Ատրպատ Մարասպանդայ Անդարձ», որ թարգմանել է պահլավերենից դոկտ. Հ. Թիրյաքյանը։ Տպված է Նյու-Յորքում 1909 թվին։

[4] «Արտաշիր Բաբական Կարնամակ», եր. Ը։

մող հին կրոնը, զրադաշտականությունը։ Նեհավենդի պարտությունից հազիվ մի հարյուր տարի անց՝ ազգաբնակության ահագին մեծամասնությունն էր արդեն, որ վերջնականապես ընդգրկել էր իսլամը[1]։ Փոքրամասնությունը, որ հավատարիմ էր մնացել մազդեզական դենին, ստիպված եղավ հեռանալ հայրենի երկրից, իսկ եթե կարողացավ էլ փոքրիկ համայնքներով պահվել հարավային Պարսկաստանի մի քանի վայրերում (Շիրազ, Եզդ, Քիրման), այլևս ոչ մի ազդու դեր չէր կարող կատարել։ Կորցնելով իր ազգային պաշտամունքը, Իրանը կորցնելու վրա էր և իր մյուս մեծ հարստությունը—իր լեզուն։ Նոր կրոնն արաբական լեզվով էր. Նույն լեզուն էր բացառապես տիրապետում և պաշտոնական հարաբերությունների մեջ։ Արևմտյան Պարսկաստանը, որ Արաբիայի անմիջական ազդեցության տակ էր, արագ արաբանում էր։

Այսպիսով, հին Իրանի համար ստեղծվել էր նույն օրհասական դրությունը, որ նա ինքը մի ժամանակ ստեղծեց Հայաստանի համար, ջնջելով նրա քաղաքական անկախությունը և այնուհետև ջանքեր թափելով, որ ոչնչացնի և նրա լեզուն։ Այժմ ինքն էլ մի ավելի հզոր նվաճողի ձեռքով ենթարկվելով միևնույն մեծ զրկանքներին, նա բախտակից էր դառնում հայ ժողովրդին։ Բայց հայերը, ինչպես տեսանք, վերջնական կործանումից ազատվեցին նրանով, որ ազգայնացրին իրենց ընդգրկած քրիստոնեական եկեղեցին և իրենց ամբողջ դիմադրական կարողությունը լարեցին պաշտպանելու համար իրենց լեզուն, որ դարձրել էին իրենց ազգային կուլտուրայի հզոր գործիք։ Իրանն էլ ահա հենց այդ ազգային ինքնապաշտպանության ճանապարհը բռնեց, որ միակն էր վերջնական խորտակումից ազատվելու համար։ Եվ ինքնապաշտպանության այս գործի վրա նա աշխատեց երկարատև, համառ տոկունությամբ։

Անշուշտ, տիրապետող արաբների համար ամենացանկալին այն կլիներ, որ իրանական ինքնուրույնությունը հավասար հաջողությամբ և արագությամբ ջնջվեր և երկրի մյուս մասերում, ինչպես ջնջվել էր արևմտյան նահանգներում, և այդպիսով ամբողջ ազգաբնակությունը ձուլվեր արաբականության մեջ։ Այդ դիտավորությամբ էր, որ նրանք ջնջեցին պարսից լեզուն պաշտոնատներում, բարձր դասակարգերի շրջանում։ Բայց հասարակ ժողովուրդը, գյուղացին պահեց իր ծոցում այդ լեզուն, պահեց նաև իր հին ազգային ավանդությունները, որոնք և մի օր պիտի դուրս գային խոսելու իրենց հարազատ լեզվով, բայց արդեն ոչ թե մազդեզնի դենի ժողովրդի, այլ իսլամացած պարսկության հետ։ Անզոր էր հանդիսանում արաբական լեզուն իրանականությունը կլանելու տեսակետից։ Նույնպես անզոր հանդիսացավ և արաբական իսլամը։ Նա, այո՛, դարձավ պարսից ժողովրդի կրոն, բայց ազգայնանալով, գերազանցորեն պարսկացնելով իրեն։ Պարսիկների պես բարձր քաղաքակրթության հասած մի ժողովուրդ չէր կարող կույրորեն ընդունել—թեկուզ հենց հարկադրանքով—մի կրոն, որ ստեղծել էին հետամնաց արաբները։ Պատմում են, որ Հազկերտ Գ թագավորը զարմացավ, իմանալով, որ արաբները պետություն են ստեղծել և նույնիսկ ուզում են կռվի բռնվել Իրանի հետ. չէ՞ որ,— հարցնում էր նա,— արաբները Պարսկաստանում հայտնի են լոկ իբրև վաճառականներ և մուրացկաններ։ Սասանյան ժամանակների իրանական քաղաքակրթությունը կատար-

[1] D. Menant, „Les Parsis", Paris, 1898, p. IX.

յալ իրավունք ուներ բարձրից, արհամարհանքով նայելու անապատի որդիներին, որոնք քաղաքակրթության ասպարեզում դեռ մանուկներ էին։ Ամենից շատ արհամարհելու և ատելու իրավունքը պատկանում էր մազդեզական բարձր հոգևորականության, այն է՝ «մոբեդներին», որոնց արաբները զրկել էին իշխանությունից և հարստություններից։ Իսլամը կղերական կազմակերպություններ այդ ժամանակ դեռ չէր ընդունում, ուրեմն և մոբեդները, երբեմնի ամենակարող տերերը, պիտի դուրս մնային ժողովրդի վրա ազդելու շրջանակներից և նույնիսկ անհետանային։ Իսլամն իր նվաճած ամեն մի երկրին առաջարկում էր կամ ընդունել իր դավանությունը և վայելել տիրողի բոլոր իրավունքները և կամ գլխահարկ տալ ու հպատակ դառնալ։ Եթե Իրանի ահագին մեծամասնությունն էր, որ ընդունեց իսլամը, այդ բանի մեջ շատ խոշոր դեր կատարեց այս իսկ հանգամանքը, այսինքն շատերն ընդունեցին նոր կրոնը հենց այն պատճառով, որ գլխահարկ չտան և արաբների հետ հավասար իրավունքներ ունենան[1]։ Մոբեդների կրոնափոխությունն էլ, անկասկած, ավելի այս նկատառումներով էր, քան համոզմունքով։ Իրենց սրտի խորքում նրանք ատում էին այս նոր կրոնը, բայց ստիպված լինելով տեղի տալ ուժին, նրանք զինվեցին համբերությամբ ու խորամանկությամբ և միմյանց հետևից նորություններ մտցրին իսլամի մեջ։ Ահա մի օրինակ։ Կուրանը գրված էր արաբական լեզվով, որ բոլորովին անծանոթ էր պարսիկ ժողովրդին։ Թարգմանել այն անկարելի էր, համարվում էր սրբապղծություն, ուստի մնում էր, որ լինեն մարդիկ, որոնք մշտապես կարդային Կուրանը մզկիթներում, նույնիսկ թարգմանեին և բացատրեին բերանացի։ Այս արդեն մի կատարյալ հերետիկոսություն էր իսլամական ուղղահավատության տեսակետից, բայց պարսիկները իրականացրին այդ։ Այստեղից էլ ահա առաջ էր քաշվում կղերական կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը[2]։

Առհասարակ Պարսկաստանն սկզբից աշխատում էր ունենալ մի իսլամ, որ հակառակ լիներ արաբական իսլամին[3]։ Այս ձգտումն իրականացնելու մեծ պատեհություն կար հենց այն միջոցին, երբ Իրանը նվաճվեց արաբների ձեռքով։ Դա խալիֆական գահի ժառանգության հարցն էր, որ ալեկոծում էր իսլամական աշխարհը։ Նոր կրոնի հիմնադիրը, ինչպես տեսանք, մեռել էր առանց արու ժառանգ ունենալու և առանց կարողանալու մի խոսք անգամ արտասանել։ Ոչինչ կարգադրություն նա չէր թողել, թե ո՛վ պիտի իրեն հաջորդե։ Եվ ահա, դեռ նույնիսկ նրա թաղումը չկատարած՝ բորբոքվեցին ժառանգական վեճերը։ Ըստ երևույթին, հարցը պիտի վճռվեր հօգուտ Մուհամմեդի հորեղբորորդի Ալիի, որ բացի դրանից՝ նաև նրա միակ զավակ, հետևաբար և միակ ժառանգուհի Ֆաթմայի ամուսինն էր։ Ալին հայտնի էր իբրև քաջարի զորավար և առաքինի մարդ, բայց շատ թույլ՝ իբրև քաղաքագետ։ Մահմեդական համայնքը, սակայն, նրան չընտրեց մարգարեին հաջորդելու համար, այլ Մուհամմեդի հին աշխատակից և աներ Աբու-Բեքրին։ Պետք է ասել, որ այստեղ էլ, ինչպես ամենուրեք, ուր իշխանության հարց կա, գործում էին կուսակցություններ, անպակաս էին ին-

[1] А. Крымский, «История Персии, ее литературы и дервишской теософии», ч. I, М., 1909, стр. 41.

[2] M. Nicolas, „L'Islam Chiit ou Islam Persian", P., 1908, p. 119—120.

[3] Мюллер, «История Ислама», т. III, стр. 6—8.

տրիգներն ու դավերը։ Մենք արդեն գիտենք, որ Աբու-Բեքրը երկու տարի միայն ապրեց իբրև խալիֆ, իսկ նրա մահից հետո Օմարն էր, որ խալիֆության գահը բարձրացավ։ Բայց այս ուժեղ և նշանավոր գործիչն սպանվեց դավադրությամբ և նրան հաջորդեց դարձյալ ոչ թե Ալին, այլ թույլ Օսմանը, որի ժամանակ կուսակցական կրքերը, գահի թեկնածուների մրցությունները ավելի ևս սաստկացան։ Ալիի կուսակիցներն այդ ժամանակ շատացան և պահանջում էին, որ ճանաչվեն նրա ժառանգական իրավունքները։ Իսլամն իր վաղ մանկության օրերում, ինչպես և ամեն մի ուրիշ կրոն, աղանդներ էր ծնեցնում իր միջից, որոնք Մուհամմեդի ժառանգության շուրջը կռվող կուսակցություններից էին բաղկացած և որոնք միայն կրոնական գաղափարներով չէին ոգևորվում, այլև քաղաքական որոշ ձգտումների ներկայացուցիչներն էին։ Ալիի կողմնակից հանդիսացողն այն աղանդն էր, որ արդեն անուն էլ էր ստացել և կոչվում էր շիա (նշանակում է կողմնակից)։ Այս աղանդի մեջ աչքի ընկնող դեր սկսեցին կատարել պարսիկները, որոնք և հետո, սերունդների եռանդուն աշխատանքների միջոցով, նույն աղանդը դարձրին իրենց ազգային կրոն։

Պարսիկներին Ալիի կողմնակից դարձնում էր, բացի ուրիշ պատճառներից, և զուտ ազգային մի հանգամանք.— Ալիի որդի Հուսեինը ամուսնացել էր դժբախտ Հազկերտ Գ-ի դուստր Բիբի-Շեհերբանուի հետ։ Այսպիսով, պաշտպանել Ալիի դինաստիական իրավունքները, նշանակում էր նպաստել, որ Սասանյան դինաստիան շարունակի, գոնե կողմնակի հաջորդականության միջոցով, իր գոյությունը խալիֆական գահի վրա։ Ալին էլ իրեն մոտ էր պահում պարսիկներին։ Այսպես ահա Իրանի ազգային-քաղաքական շահերը նույնանում էին Ալիի և նրա տոհմի տիրապետական շահերին։ Եվ ահա Օսման խալիֆն սպանվում է մի դավադրության միջոցով, որին մասնակցում էր և ինքն Ալին, թեև ոչ անմիջապես։ Այս անգամ խալիֆ ընտրվեց Ալին, որ և իր համար մայրաքաղաք դարձրեց Քուֆը, մի քաղաք, որ, ինչպես տեսանք, արաբները նոր էին հիմնել Պարսկաստանի սահմանի վրա, Տիզբոնից ոչ շատ հեռու։ Բայց նրա թագավորությունը կարճատև էր (656—661)։ Խռովությունները անզուսպ կերպարանք ընդունեցին խալիֆաթի մեջ. ծագեցին ազգամիջյան արյունահեղ պատերազմներ։ Ալին ստիպված էր իր հակառակորդների դեմ զենք հանել, ճակատամարտեր հարդարել։ Սակայն որքան և քաջ լիներ նա ու հաջողակ պատերազմող, նրա հակառակորդներն ավելի ուժեղ հանդիսացան, և նա սպանվեց Քուֆի փողոցում, երբ գնում էր մզկիթ աղոթելու։

Քուֆի ժողովուրդը հպատակության երդում արավ Ալիի ավագ որդի Հասանին, սակայն սա մի թույլ, կրոնամոլ և կնամոլ մարդ էր, շուտով պայմանավորվեց իր հոր հակառակորդ Մուավիայի հետ և ստանալով դրամական մեծ օգուտներ, հեռացավ քաղաքական կյանքից։ Խալիֆայությունն անցավ Մուավիային, որ հիմնեց Դամասկոսում Օմայան հարստությունը։ Մուավիան իր ժառանգական իրավունքն ապացուցում էր նրանով, որ մարգարեն էլ պատկանում էր միևնույն Օմայան ցեղին։ Բայց Ալիի տան կողմնակիցների (շիաների) դատը, այնուամենայնիվ, կորած չէր։ Ալիի երկրորդ որդի Հուսեինը ժառանգել էր հոր դրական և բացասական հատկությունները—ազնվություն, քաջություն, բայց և անընդունակություն ըմբռնելու քաղաքական հանգամանքները։ Ալիի սպանությունից 19 տարի անցած տեղի ունեցավ մի նոր արյունահեղ ողբերգություն, որի զոհը դար-

ձավ Հուսեինը և որ ահագին նշանակություն ունեցավ պարսկական իսլամի համար։

Յազիդ Ա խալիֆի ժամանակն էր, 680 թվին, երբ շիաների մեջ, Քուֆում, նորից սկսվեց շարժում, դարձյալ նշանաբան ունենալով այն վիճելի հարցը, թե ո՞վ պիտի համարվի մարգարեի օրինավոր ժառանգ։ Հուսեինն այդ ժամանակ ապրում էր Մեքքայում։ Շիաները նրան Քուֆից բազմաթիվ նամակներ գրեցին, հրավիրելով իրենց մոտ, որպեսզի գրավի իր հոր և պապի (Մուհամմեդի) գահը։ Հուսեինն իր մտերիմներից մեկին ուղարկեց Քուֆ՝ իմանալու, թե ո՛րքան լուրջ է այդ շարժումը։ Այս մարդը ոգևորված ընդունելություն գտավ Քուֆում և մի կարճ միջոցում 12 հազար մարդ հավաքեց, որոնք պատրաստ էին կռվելու Ալիի տան համար։ Սակայն Յազիդ խալիֆի փոխանորդը Քուֆում, Ուբեյդուլլահ անունով, իրազեկ դառնալով պատրաստվող ապստամբության, սպանել տվեց Հուսեինի ուղարկած մարդուն, և 12 հազար կամավորները ցրվեցին զանազան կողմեր։ Դավադրությունը վիժեց։ Իսկ Հուսեինը իր կողմնակիցների մի փոքրիկ խմբով, իր կանանցով և երեխաներով Մեքքայից ճանապարհվեց Քուֆ։ Իզուր ազդեցիկ բարեկամներից մի քանիսը և նույնիսկ կառավարչական պաշտոնյաները թե՛ Մեքքայում և թե՛ ճանապարհին խորհուրդ էին տալիս նրան ետ կենալ այդ աղետալի ձեռնարկությունից։ Ավելի նշանակություն ստացան կեղծ բարեկամների խոսքերն ու խոստումները։ Կառավարությունը, պետք է ասել, կույր թշնամությամբ չէր վերաբերվում Հուսեինին, հասկանալով, որ նա ժողովրդականություն ունի իբրև մարգարեի թոռն և խալիֆի որդի։ Ուբեյդուլլահը մի զորաբաժին ուղարկեց նրա դեմ, բայց պատվիրելով հարձակում չգործել, այլ միայն քայլ առ քայլ հետևել Հուսեինին մինչև Քուֆ։

Մոտենալով այդ քաղաքին և իմանալով, որ ապստամբական ձեռնարկությունը չի հաջողվել, Հուսեինը չուզեց վերադառնալ, այլ գնաց հանդիպելու իր թշնամիներին, մանավանդ իր լիազորի սպանության վրեժը հանելու համար։ Կառավարչական զորքը, թվով մոտ 1000 հոգի, գտնվում էր Օմար անունով մի սպայի հրամանատարության տակ։ Օմարն ամեն միջոց ձեռք էր առնում, որ ընդհարում տեղի չունենա, ուստի խաղաղ բանակցություններ սկսեց Հուսեինի հետ և երկուստեք համաձայնությամբ որոշվեցին երեք պայմաններ, որոնցով Հուսեինը բավարարված էր համարում իրեն և պատրաստ էր վերջ տալ իր ձեռնարկության։ Պայմաններն ուղարկվեցին Ուբեյդուլլահին։ Մնում էր նրանցից մեկն ու մեկին ընդունել։ Բայց Ուբեյդուլլահի մերձավորներից մեկը, Շումր անունով, որ իսկապես մահմեդական էլ չէր, այլ հեթանոսներից էր և լցված էր ատելությամբ դեպի մարգարեն և նրա հաջորդները, համոզեց նրան, որ Հուսեինից պահանջվի անպայման անձնատրություն, հակառակ դեպքում բռնությամբ տիրանալ նրան և ողջ թե մեռած՝ տանել Քուֆ։ Այս հրամանի գործադրությունը հանձնվեց հենց իրեն՝ Շումրին։ Հիջրեթի 61 թվի մուհարրեմ ամսի 10-ին (680 թ. հոկտեմբերի 10-ին) Քերբելա անունով տեղում կռիվ սկսվեց Հուսեինի և կառավարական զորքերի միջև։ Հուսեինին շրջապատող կողմնակիցները 150 հոգի էին, այնինչ նրա դեմ գործում էր 5 հազարանոց մի բանակ։ Այնուամենայնիվ, Օմարն աշխատում էր չվնասել մարգարեի թոռան։ Կռիվը շարունակվում էր նրա անձի շուրջը և 150-ի խումբը հետըզհետե հալվում էր զինվորների հարվածների տակ։ Շումրը, ձանձրանալով

այս տեսակ կռվից, հարձակվեց Հուսեյնի վրա, որը և ընկավ սրերի ու նիզակների հարվածներից։ Կանանց ու երեխաներին ձեռք չտվին, միայն գերի վերցրին և ուղարկեցին Յազիդ խալիֆին, Դամասկոս, նմանապես և Հուսեյնի գլուխը։ Սակայն խալիֆն անկեղծապես վշտացավ այդ արյունահեղ և տխուր դեպքի վրա։ Այդ տեսակ վերաբերմունքի ապացույց էր այն, որ Յազիդը Հուսեյնի կանանց ու երեխաներին բնակեցրեց Մեքքայում, հատկացնելով նրանց հատուկ թոշակներ և պատվավոր կացության բոլոր միջոցները։

Ընթերցողը տեսնում է, թե՛ որքան հասարակ և սովորական է այս ամբողջ պատմությունը։ Մարդկային մանր հաշիվներ ու ինտրիգներ, փառատենչ ձգտումներ, ուժեղի և թույլի հակադրություն, անհավասար մի կռիվ, որ ուրիշ դեպքերում անպատճառ անխելքություն պիտի համարվեր։ Սակայն 680-ի այս դրաման երկու մեծ մասի էր բաժանում իսլամական ամբողջ աշխարհը, երկու՝ իրար հակառակ, իրար հետ անհաշտ մասերի։ Այդ դրամայի վրա էր ամուր կերպով հաստատվում շիա աղանդը, դարձնելով այն հակամարտ մի հերձված, որ միաբերան վրեժ էր կանչում. անմեղ արյան սուգն էր կատարում արևելյան արյունոտ և աղեխարշ տեսարաններով[1]։ Իրանն այս աղետով ձեռք է բերում մի շատ նվիրական ուխտատեղի, որ շիաների համար նույնիսկ ետ էր մղում համիսլամական մեծ ուխտատեղին՝ Մեքքան։ Քերբելայում թաղվեց Հուսեյնի անգլուխ մարմինը, և այնուհետև այդ նահատակի գերեզմանը դարձավ շիա մի հռչակավոր ուխտավայր, ուր աշխարհի բոլոր կողմերից գալիս հավաքվում էին իրար տեսնելու, իրար լսելու համար՝ արաբական լծից անբավական բոլոր տարրերը։

Բայց չնայած այսպիսի ոգևորության, շիաներին չհաջողվեց վերադարձնել խալիֆաթն Ալիի տոհմին։ Նրանք, այո՛, հաջողություն ունեցան, այն էլ խոշոր հաջողություն, բայց մի ուրիշ ուղղությամբ։ Նրանց աջակցությամբ էր, որ տապալվեց նրանց կատաղի թշնամի Օմայան հարստությունը, մոտ 90 տարի գոյություն պահպանելուց հետո։ Բայց և այդպես, խալիֆաթը մնաց դարձյալ սյուննի մուսիլմանության ձեռքում։ Չկարողանալով իրենց դավանակիցների նստեցնել մարգարեի գահի վրա, շիաները և հատկապես պարսիկները ջանք էին թափում, որ Օմայաններին հաջորդող տոհմը գոնե իրենց թշնամիներից չլինի։ Այս բանը նրանց լիուլի հաջողվեց։ Նրանց օգնությամբ էր, որ թագավորել սկսեց Աբբասյան հարստությունը, որ թեև ուղղափառ (սյուննի) էր, բայց ամբողջապես պարսիկների ազդեցության տակ էր գտնվում։ Այս հարստությունը, որ սերված էր մարգարեի հորեղբայր Աբբասից, իր համար մայրաքաղաք դարձրեց Բաղդադը, որ շինված էր Տիգրիսի վրա, բոլորովին մոտիկ Իրանի սահմաններին։ Աբբասյան արքունիքում տիրապետում էր պարսիկ տարրը՝ սկսած մեծ վեզիրներից։ Եվ այս բարեհաջող հանգամանքն իսկույն հրապարակ հանեց այն երևույթը, որ օտար կրոնը չէ կարող ջնջել մի կուլտուրական, կենսունակ ազգի հոգեկան ինքնուրույնությունը, ստեղծագործական հանճարը։ Աբբաս-

[1] Այդ սուգը կոչվում է «մուհարրեմ», որ այսօր էլ կատարվում է շիա աշխարհի բոլոր կողմերում իբրև անեծքի, զայրույթի ցույցեր Յազիդի, Օմարի և մանավանդ Շումրի դեմ։ Մեր գրականության մեջ այդ ցույցերը և նրանց հետ կապված արյունահեղ տեսարանները, որոնք ահ ու սարսափ էին ազդում քրիստոնյաների վրա, մանրամասն նկարագրել է Խաչատուր Աբովյանը (տե՛ս նրա «Վերք Հայաստանի» վեպը)։

յան խալիֆների հովանու տակ պարսիկները Բաղդադում ծաղկեցրին Սասանյան ժամանակների իրենց քաղաքակրթությունը, վերակենդանացրին իրենց հին ազգային ոգին, բայց, իհարկե, իսլամական կրոնի քողի տակ[1]։ կային նույնիսկ այնպիսի բարձրաստիճան պարսիկներ, որոնք դեռ չէին էլ թողել զրադաշտական կրոնը և Էրնեստ Ռենանն իր «Իսլամ և գիտություն» ճառի մեջ վաղուց է ապացուցել, որ եթե Աբբասյանների ժամանակ զարկ ստացավ գիտությունն արաբերեն լեզվով, այդ՝ պարսիկների շնորհիվ էր, որոնց հետ գործում էին և նեստորական սիրիացիները։ Զուտ արաբական բան, եթե կա այդ գիտության մեջ, համարյա միմիայն լեզուն է, իսկ ինքը գիտությունը հունական-սասանյան է[2]։

Այս մտավոր շարժման հետ էլ պարսիկներն ազգայնացրին իսլամական վարդապետությունը, մշակելով աստվածաբանության այն հիմունքները, որոնք շիա աղանդին հաղորդում էին գերազանցորեն պարսկական ոգի, ներշնչելով նրան այնպիսի գաղափարներ և հայացքներ, որոնք պարսիկ ժողովրդի հոգեբանության էին համապատասխանում և որոնց ներկայությունը կարելի է գտնել նույնիսկ և զրադաշտականության մեջ[3]։

Աստվածաբանական այս ինքնուրույն կառուցվածքի հենակետն Ալին էր, որի մահից հետո, շիա մուսիլմանների մեջ հետզհետե առաջ եկավ և սկսեց ավելի ու ավելի արծարծվել այն միտքը, թե նա հասարակ մահկանացու չէր, այլ նույնպես անոթ աստվածային հայտնության, համահավասար Մուհամմեդ մարգարեին։ Այսպիսի մեկնություններ տալու համար շիաներն օգտվում էին այն բազմաթիվ ավանդություններից («հադիս»), որոնք մնացել էին Մուհամմեդի ժամանակներից և որոնց մեջ շատ հաճախ երևան էր գալիս և Ալին։ Այդ ավանդություններն էլ ընդունվեցին անսխալական, Կուրանին համազոր։ Այս կերպով մարգարեն այլևս մի հատ անձնավորություն չէր մնում, այլ բաժանված մի քանի անձերի, և նրա գաղափարներն արդեն միայն նա չէր լինում աշխարհ բերած, այլ նրա նման շատ մարգարեներ[4]։ Ալին դառնում էր շիաների համար մի կես-աստված[5]։ Եվ պարզելով այսպիսի սկզբունքներ, շիաներն իրենց ձեռքին ունենում էին շատ հզոր միջոցներ՝ ավելի լայն աշխարհայացքներ և գաղափարներ քարոզելու։ Իսկապես էլ շիա աղանդի պարսկական վարդապետությունը կազմում էր իսլամի մեջ գոյացած տեսակ-տեսակ աղանդների ձախ թևը։ ներշնչումներ նա ստանում էր և հին արիական գաղափարներից, օրինակ, հնդիկ բուդդհայականությունից։ Այստեղ էր բազմազան գունավորումներ ունեցող միտքը, սկսած նույնիսկ արմատական գունավորումներից։ Եվ այդ ինքնատիպ մտավոր շարժումներն արտահայտվեցին Իրանում այն միստիկ փիլիսոփայության մեջ, որ հայտնի է սուֆի անունով։

Ալի խալիֆի և նրա տան պաշտամունքը գնալով ավելի և ավելի բարձր

[1] **Крымский**, «История Персии», ч. II, стр. 58.

[2] **Э. Ренан**, «Сборник мелких статей и речей», СПБ, 1895, стр. 36.

[3] Քննական ուսումնասիրությունները շատ հետաքրքրական տեսություններ են տալիս այն ազդեցությունների մասին, որ իրանական հին կրոնն ունեցել է իսլամական ավանդությունների կազմակերպման վրա։ Հետզհետե պարզվում է պարսիկների կատարած նշանավոր դերը իսլամի դավանական զարգացման մեջ։ Տե՛ս, օրինակ, **E. Brochet**, „Etudes sur l'histoire religieuse de l'Iran", Paris, 1899.

[4] **Nicolas**, p. 131.

[5] **Stanislas Guyard**, „La civilisation musulmane", Paris, 1884, p. 40.

ու նվիրական դառնալով, ձուլվեց այնպիսի ձևերի մեջ, որոնք հին իրանական պաշտամունքի ոգին էին ցոլացնում։ Պարսիկներն իրենց հիմնավորապես բաժանում էին մնացած իսլամից, հատկացնելով նրան անհարազատության կնիքը։ Մարգարեին հաջորդած Աբու-Բեքրը, Օմար ու Օսմանը ժառանգություն հափշտակողներ էին, ինքնակոչներ։ Միակ օրինավոր հաջորդն Ալին էր։ Միայն նա էր կարող մարգարեից հետո թագավորել ու պատել, քահանայապետ և զորագլուխ լինել և նրանից հետո, հաջորդության կարգով, նրա ժառանգները որդուց որդի։ Այս տեսակետից Օմայան և Աբբասյան հարստությունների խալիֆները նկատվում էին լոկ իբրև աշխարհիկ վեհապետներ, այլ ոչ երբեք իբրև **իմամներ**, այն է՝ մարգարեի իշխանության ժառանգորդներ, մի իշխանություն, որ գերազանցորեն կրոնական հանգամանք ուներ։ Շիաները դավանում էին, որ իրենք միայնակ են, որ իսկական իմամներ ունին—առաջինն Ալին էր, և այնուհետև հաջորդաբար նրա սերունդներից 11 հոգի։ Տասներկու իմամների[1] պաշտամունքն ավելի ևս առանձնացնում է պարսկական շիան իսլամական աշխարհում, քանի որ պարունակում է իր մեջ իսլամին խորթ սրբապաշտության հանգամանքներ։

Այս էր ահա Նոր Իրանը։ Այս շարժումներն էին, որ նրան թույլ չտվին ձուլվել արաբական ծովի մեջ։ Եվ այս շարժումների մեջ արագ վերակենդանացնելով իր ազգային ոգին, Իրանը համեմատաբար կարճ միջոցում Սասանյանների կործանումից ընդամենը մի դար ու կես հազիվ անցած, նորից պարզում էր ազգային անկախության դրոշակը։ Սակայն այս անգամ էլ ուրիշ քաղաքական փոթորիկներ էին, Միջին Ասիայի անապատներում պատրաստված, գալիս նրա ճանապարհի վրա բռնանալու։ Այդ մենք կտեսնենք իր տեղում։ Այստեղ նկատենք, որ Նոր Իրանն էլ, իր պատմության ամբողջ ընթացքում, շարունակում էր ազդել Հայաստանի ճակատագրի վրա, մերթ իբրև վիճակակից, մերթ բարձրանալով իր անկումից և մեծ պետության հին փառքը վերստանալով։

Գլուխ երկրորդ

ԻՍԼԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Թեոդորոս Ռշտունի: Սասանյան տիրապետության ջնջումը բնական կերպով ճանապարհ է բաց անում, որ նրան հաջորդող պետությունը Հայաստանի վերաբերմամբ գրավի այն դիրքը, որ դարերով պատկանում էր Իրանին։ Պարսկական պետություն չկար այլևս։ Եվ նրա տեղը բռնած Արաբիային ճակատագրականորեն պատկանում էր նրա բաժինը Հայաստանում։ Սակայն արաբական տիրապետությունը դեռ Հայկական Բարձրավանդակում էլ պիտի հաստատվեր նույնպես նվաճողական արշավանքի մի-

---

[1] Ահա 12 իմամների ցուցակը. 1) Ալի, 2) Հասան, 3) Հուսեին (Ալիի որդիները), 4) Ալի (Հուսեինի որդին), 5) Մուհամմեդ (Ալիի որդին), 6) Ջաֆեր էս-Սադեք (Մուհամմեդի որդին), 7) Մուսա (Ջաֆերի որդին), 8) Ալի Ռիզա (Մուսայի որդին), 9) Մուհամմեդ (Ալիի որդին), 10) Ալի (Մուհամմեդի որդին), 11) Հասան (Ալիի որդին), 12) Հոդջեթ-Ուլլահ Մուհամմեդ (Հասանի որդին), մականվանված Մահդի, որ անհայտացավ հիջրեթի 260 թվականի մոտերը (**Nicolas**, p. p. 87—88):

ջոցով, ինչպես այդ տեղի էր ունեցել Պարսկաստանի ուրիշ մասերում։ Իսկ մինչև այդ՝ մեր երկրի դրությունը ներկայացնում էր հետևյալը։

Ինչպես տեսանք, Պարսկաստանի հետ կայացրած հաշտության պայմաններով Բյուզանդական Հայաստանն ստանում էր այն սահմանները, որոնք որոշված էին Մորիկ կայսրի ժամանակ, ասել է թե հայ երկրի մեծագույն մասը կայսրության հողն էր կազմում, ուրեմն և, ըստ երևույթին, արաբական արշավանքների դիմաց պիտի ունենար նույն բախտը, որ վիճակված կլիներ կայսրության բոլոր ասիական նահանգներին, այսինքն, որ նրա պաշտպանության համար կայսրությունը գործ կդնի իր ամբողջ ուժը։ Բայց այսպես չեղավ։ Արդեն գիտենք, որ իսլամական հենց առաջին գրոհները գալիս էին ցույց տալու, թե բյուզանդական պետական սիստեմն էլ, սասանականի նման, փխրուն հանդիսացավ «ալլահ աքբար» պաշտամունքով ոգևորված նոր ու թարմ ազգի կուռ հարվածների առջև։ Հայաստանն իր սեփական պաշտպանողական միջոցների վրա միայն կարող էր հույս դնել։ Իսկ որո՞նք էին նրա միջոցները։

Պարսկական Հայաստանում վերջին մարզպանը, որքան մեզ հայտնի է, Վարազտիրոց Բագրատունին էր, որին մենք տեսանք պարսկական բաժնից հալածական եղած և բյուզանդական մասը փախած, ուր և Հերակլի ուշադրության և մեծարանքներին արժանացած։ Վարազտիրոցից հետո Պարսկական Հայաստանում մնում էր Թեոդորոս Ռշտունին, որ և երկրի պաշտպանության գործն առնում է իր ձեռքը և միանգամից անուն հանում հայության մեջ։ Առաջին անգամն է, որ տեսնում ենք Ռշտունյաց նախարարական տոհմը սպարապետության պաշտոնում։ Թեոդորոսն այդ պաշտոնն ստացել էր պարսից թագավորից, որի արքունիքում էլ նա մեծացել էր, շատ նախարարական տոհմերի նման։ Ուրիշ մանրամասնություններ չգիտենք այս իշխանի անցյալի մասին։ Հայտնի է միայն այն, որ Պարսից արքունիքում նա Վարազտիրոց Բագրատունու հետ «սննդակից» էր[1]։ Թե ո՛րքան մեծ ազդեցություն էր ձեռք բերել Ռշտունին հայերի մեջ, երևում է այն հանգամանքից, որ, երբ 628 թվին վախճանվեց Կոմիտաս կաթողիկոսը, նրա տեղ, Թեոդորոսի առաջարկությամբ, կաթողիկոս ընտրվեց Քրիստափորը[2]։

Վարազտիրոց Բագրատունին, որին Սեբեոսը հաճախ միայն «Ասպետ» անունով է հիշատակում, Կ. Պոլսում խառնվեց մի ծանր հանցանքի մեջ և դրանով փչացրեց իր գործունեության ասպարեզը։ Հերակլ կայսրի որդին դավադրություն սարքեց իր հոր դեմ՝ նրան սպանելու և գահը խլելու համար։ Բայց դավադրությունը բացվեց և հայտնի դարձավ, որ հայ իշխանին էլ դավադիրները կամեցել են մասնակից անել իրենց գործին, բայց նա դիմադրել է կայսրի և նրա ընտանիքի սպանության մտքին։ Դավադրության հեղինակները մահվան դատապարտվեցին, և միայն Վարազտիրոցին էր, որ Հերակլը կյանք պարգևեց, բայց ուղարկեց նրան աքսոր։ Իսկ Հայաստանի կառավարիչ նշանակվեց Մժեժ Գնունին, որ Վարազտիրոցի թշնամին էր և որին Հերակլը մի շատ կարևոր հանձնարարություն էր տվել։

Մենք արդեն գիտենք, որ դավանաբանական վեճերը և նրանց հետե-

---

[1] Սեբէոս, եր. 186։
[2] Անդ, եր. 156։

վանքով առաջացած կրոնական հալածանքները կայսրության ասիական և աֆրիկյան նահանգներում երկար ժամանակից ի վեր տեղական ազգաբնակության մեջ ստեղծել էին սաստիկ ատելություն դեպի բյուզանդական կառավարությունը։ Այդ զգացմունքի վրա ավելանում էին այն անբավականությունները, որ առաջացնում էին վարչական կեղեքումները և հարկերի ծանրությունը։ Արհամարհել այս հանգամանքը չէր կարող բյուզանդական պետականությունը, և մենք տեսնում ենք, որ դեռ Հուստինիանոսը միջոցներ էր որոնում՝ քաղկեդոնական վեճերից գոյացած խռովությունները հանդարտեցնելու համար։ Միևնույն հոգսն զբաղեցնում էր և Հերակլին։ Խոսրով Պարվեզի հաղթանակները Սիրիայում, Պաղեստինում և Եգիպտոսում ցույց էին տալիս, թե ո՛րքան խախուտ է կապն այդ երկրների և կայսրության միջև։ Եվ որովհետև այդ հանգամանքի գլխավոր պատճառը դավանական երկպառակություններն էին, ուստի կայսրը Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքի հետ խորհրդակցություններ էր անում, թե դավանական ի՛նչ նոր ձևակերպում կարելի է գտնել, որ հավասար չափով ընդունելի լինի քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների կողմից։ Այդ բանաձևը գտնվեց, և նա ասում էր, թե Քրիստոսի մեջ երկու բնություն կային, բայց կամքը մեկ էր[1]: 626 թվին Կ. Պոլսի եկեղեցական ժողովն ընդունեց այդ բանաձևն իբրև ուղղափառ74։ Այնուհետև այլևս խոսք ու վեճ չպիտի լիներ Քաղկեդոնի մասին, ոչ քաղկեդոնականները պիտի անիծեին հակաքաղկեդոնականներին, ոչ հակաքաղկեդոնականները՝ քաղկեդոնականներին։ Պարսկական արշավանքների ժամանակ Հերակլը տեսնվում էր միաբնյա դավանության պատկանող եպիսկոպոսների հետ և միաբանությունը թվում էր ապահովված։ Արաբական շարժումները, որոնք դեռ նոր-նոր էին ծայր տալիս, գալիս էին ավելի ևս շեշտելու այն վտանգը, որ սպառնում էր կայսրության ասիական երկրներին, որոնք բնակեցրած էին հունաց եկեղեցուց հալածվող և անիծվող ազգերով։

Այս նկատառումներով էր, որ կայսրը, ուղևորվելով Սիրիա՝ արաբների արշավանքը ետ մղելու համար, հանձնարարեց Մժեժ Գնունուն, որ հայոց կաթողիկոսին իր մոտ ուղարկի դավանական միություն հաստատելու համար։ Գնունին, կատարելով այս հրամանը, կայսրի կողմից այն հայտարարությունն էլ արավ Եզր կաթողիկոսին, որ եթե նա չգնա կատարելու Հերակլի կամքը, այն ժամանակ Հայաստանի բյուզանդական մասում կնշանակվի հակաթոռ կաթողիկոս։ Եզրը խնդրում է, որ իրեն ուղարկվի դավանական նոր բանաձևը, որ և իսկույն կատարում է կայսրը։ Այդ բանաձևի մեջ նզովվում էին Նեստորը և ուրիշ աղանդավորները, բայց Քաղկեդոնի ժողովը չէր նզովվում։ Եզրը գնում է Սիրիա, այնտեղ տեսնվում է կայսրի հետ (հավանորեն 633—634 թ.) և հաղորդվում է նրա հետ միասին, հետո մեծ փառքով վերադառնում է, կայսրից պարգև ստանալով Կողբի աղահանքը75։

Այսպես է պատմում ժամանակակից և ստուգապատում Սեբեոսը, որ Եզրի մասին տալիս է այսպիսի մի վկայություն. «Սա էր այր խոնարհ և հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել, և ոչ ելանէր ի բերանոյ նորա բան տգեղ»[2]։ Բայց կաթողիկոսի արած ճանապարհորդությունը և կատարած

[1] С. Шестаков, «Лекции по истории Византии», т. I, Казань, 1915, стр. 355։

[2] Եր. 157։

գործը բոլորովին այլ տեսակ մեկնություն գտան, ինչպես որ պետք էլ էր սպասել։ Հերակլի և Սերգիոսի միարարական ջանքերը ոչ մի արդյունք չունեցան։ Թշնամությունն այնքան խոր էր երկու դավանական հերձվածների միջև, որ մերձեցման և համաձայնության յուրաքանչյուր քայլ կարող էր որակվել միմիայն իբրև դավաճանություն։ Զուր չէր, որ Եզրը հեշտությամբ ընդունեց նոր դավանական բանաձևը—արևելյան միաբնակ մյուս եկեղեցիներն էլ համակրանքով էին վերաբերվում նրան։ Բայց հակառակություն առաջացավ քաղկեդոնականության մեջ. «Քաղկեդոնը, ճանաչելով մի կամք, հաղորդակից էր դառնում միաբնակության», ահա այս կարծիքն էր կազմվել քաղկեդոնիկ աշխարհում[1]։ Եվ հակառակությունն այնքան սաստկացավ, որ Հերակլը հրաժարվեց հետևել իր այդ քաղաքականությանը։ Եզրի վարմունքն էլ հայ միաբնակների մեջ սկսեց մեկնվել իբրև քաղկեդոնականության ընդունում։ Այսպես էր մանավանդ հունական ազդեցության հակառակվող և առավելապես դեպի պարսկասիրությունը հակված հոսանքների կարծիքը։ Այդ հակառակության գլուխն էր ինքը Թեոդորոս Ռշտունին, իսկ հոգևորականներից իր հակառակությամբ առանձնապես աչքի էր ընկնում Հովհան վարդապետ Մայրագոմեցին։ «Հեզ ու խոնարհ» կաթողիկոսն այնքան նեղված էր այդ հակառակությունից, որ Դվին վերադառնալ չկարողացավ, այլ նստում էր հունաց բանակում, «մինչև զորավարին հաճոյանալ ըստ կամաց նորա», ասում է Սեբեոսը։ Այս խոսքերը պետք է, անշուշտ, հասկանալ այն մտքով, թե բանակում Եզրը մնաց մինչև որ հաճոյացավ զորավարին (Թեոդորոս Ռշտունուն)՝ նրա կամքի համաձայն։

Ահա այս հանգամանքից ծագեց և հետագա ժամանակների ավանդությունների մեջ զարգացավ այն ամբաստանությունը, թե Եզր կաթողիկոսն էր, որ առաջին անգամ միաբանվեց հույների հետ, ընդունելով քաղկեդոնական դավանությունը։ Եզրը դարձավ դավաճան, իսկ Մայրագոմեցին՝ հայրենի կարգի ավանդապահ և նախանձախնդիր։ Պատմությունն ընդունեց ընդարձակ, նույնիսկ վիպական կերպարանք—որպես թե Եզրի տեսակցությունը կայսրի հետ տեղի է ունեցել Կարին քաղաքում, ուր երկար բանակցություններ են վարվել Քաղկեդոնի վերաբերմամբ և այլն[2]։ Այս տեսակ վերաբերմունքի մեջ, անշուշտ, ամենից շատ դեր կատարել են Մայրագոմեցու անձնական հակումները և պայքարող կողմերի կրքերը[3]։ Թե չէ՝

[1] Успенский, I, стр. 713.

[2] Ավանդական զրույցների մի շարք մանրամասնություններ պատմում է 14-րդ դարի մատենագիր Ստեփանոս Օրբելյանը, մի առ մի բերելով այն խոսակցությունները, որոնք իբր թե տեղի էին ունեցել Հերակլի և Եզրի միջև։ Այս խոսակցության մեջ հետաքրքրական է մի կտոր, որ եթե չի էլ ներկայացնում պատմական զուտ ճշմարտություն, գոնե լավ բնորոշում է վանական բարքերն ու հասկացողությունները։ Եզրը, Օրբելյանի ասելով, չկարողացավ ապացուցել կայսրի առջև Քաղկեդոնի վարդապետության սխալականությունը և ասաց, որ հայերն էլ ընդունում են այդ վարդապետության մի մասը, բայց հեռու են պահվում նրանից, որովհետև տեսնում են հույն հոգևորականության ապականված վարքը։ «Զի եկեղեցականքն համարձակ են ի պոռնկութիւն և յայլ պղծութիւն և հաղորդին օրինաց անխտիր»։ Կայսրը պատասխանում է. «Մեր բանս վասն հաւատոյ է և ոչ վասն գործոց քննության. դուք Հայքդ ունիք զանբնական պղծութիւնս ընդ արուս և ընդ անասունս և այլս յոլովս, բարձէք դուք զայն ի Հայոց, բառնամ և ես զայդ ի Հոռոմոց զրոզանոցն և զմունին Քաղկեդոնի ժողովն չէ կարգեալ զոր յիշերդ այժմ. վասն այս եդին իշխանք զի մի՛ այլանդակ չարիք երևեցին» («Պատմութիւն Սիւնեաց», Թիֆլիս, 1911, եր. 116)։

[3] Օրմանյան, «Ազգապատում», էջ 700։

բացարձակ և անվերապահ քաղկեդոնիկ էր Եզրի հաջորդը, Ներսես Շինող, սակայն նրա վերաբերմամբ այն արհամարհանքն ու թշնամությունը չկա, ինչ Եզրի վերաբերմամբ, որ քաղկեդոնականություն չէր ընդունել, այլ միայն այն հաշտեցնող բանաձևը, որ այդ ժամանակները մի շատ խոշոր հարց էր արևելյան քրիստոնյաների մեջ։

Հայաստանում պատահած այս փոքրիկ դեպքը, շատ լավ բնորոշում է քրիստոնյա աշխարհի դրությունն իսլամի ծագման և առաջին շարժումների միջոցին։ Անկարելի էր այլևս միություն ստեղծել քրիստոնյա ազգությունների միջև, և բյուզանդականության անհաշտ ու եսամոլ ոգին փառավոր հաղթանակներ պատրաստեց ալլահի և նրա մարգարեի համար։ Սիրիայի քաղաքները միմյանց հետևից անձնատուր էին լինում, որովհետև այդպես էր կամենում տեղական ազգաբնակչությունը, որ արաբների տիրապետության մեջ իրավամբ տեսնում էր, գոնե սկզբում, թե՛ հարկերի թեթևություն և թե՛ մանավանդ գլխահարկով ապահովված կրոնական որոշ ազատություն։ Եգիպտոսում արաբներն ավելի եռանդուն և ավելի բացարձակ օգնություն ստացան քրիստոնյա ղպտիներից, որոնք իրենց կրած կրոնական հալածանքների վրեժն էին հանում, իսլամական տիրապետությունը տարածելով Նեղոսի ամբողջ հովտում։

Հայաստանի ճակատագիրն էլ այդպիսի հեշտ նվաճողություն էր պատրաստում, բայց ոչ հայերի ցանկությամբ։ Բյուզանդականությունն էր դարձյալ, որ գալիս է այստեղ էլ կատարյալ անտերություն հաստատելու Հարավից սպասվող արշավանքների նախօրյակին պաշտպանողական ոչինչ պատրաստություններ չկային Հայկական Բարձրավանդակում։ Միակ կարգադրությունը, որ արավ Հերակլը, վերաբերվում էր ընդհանուր կառավարության։ Վարազտիրոցի կալանավորումից և աքսորումից հետո Մժեժ Գնունին հարմար առիթ գտավ ոչնչացնելու իր հակառակորդներից մեկին ևս, որի անունն էր Դավիթ Սահառունի։ Ձերբակալելով նրան իբրև ապստամբի, Մժեժն ուղարկեց նրան Կ. Պոլիս։ Բայց ճանապարհին Սահառունին խորտակում է իր կապանքները, սպանում է իր պահապաններին և նորից միանում հայոց զորքին, որի գլուխն անցած՝ հարձակվում է Մժեժի վրա, կռվի մեջ հաղթում ու սպանում է նրան և Վարազ-Գնել Գնունուն։ Զորքը Դավթին էլ անվանում է իր հրամանատար։ Հերակլն ստիպված է լինում ընդունել այդ ընտրությունը և նշանակում է Սահառունուն ամբողջ երկրի կառավարիչ։ Բայց շատ կարճ եղավ այդ իշխանությունը։ Նա կառավարեց երկիրը, ինչպես վկայում է Սեբեոսը, «մեծաւ ճոխութեամբ»[1]։ Բայց չորս տարուց հետո նա «անարգվեց զորքերից և որովհետև բոլոր ազատներն անմիաբան էին, ուստի և կորցրին Հայոց երկիրը»։ Պատմագրի այս խոսքերը պարզ են, բայց չգիտենք, թե ի՛նչ անցքեր են ակնարկվում։ Համենայն դեպս ակներև է, որ եթե Դավիթ Սահառունու պես մի քաջարի գործիչ մնացած լիներ իշխանության գլուխ, երկիրն ավելի լավ կլիներ պաշտպանված հարավային արշավանքներից, որոնք շատ երկար սպասել չտվին իրենց։ Սահառունու ճոխ կառավարության ամենագեղեցիկ մի հուշարձան է մնացել մինչև մեր օրերը—Մրենի եկեղեցին հարավային Շիրակում, որ նրա շինածն է[2]։

1 Սեբէոս, էջ 311։

2 Յովհաննէս կաթողիկոս, «Պատմութիւն», Երուսաղեմ, 1867, եր. 104։

Գալոց մեծ վտանգը միայն հայոց սպարապետն էր զգում, Թեոդորոս Ռշտունին, որ և շարունակ պատրաստվում էր, կազմակերպելով իր զորքերը։ Նրա գլխավոր բանակատեղին Աղթամար կղզին էր, ուր և ապաստան էին գտնում վտանգված գավառները։

2. Առաջին արշավանքները։ Հայերն արաբական զորքերը նոր, իրենց երկրում չպիտի ճանաչեին։ Իրենց հին քաղաքական դժբախտ ճակատագրի բերումով նրանք Սասանյանների կործանման ժամանակ էլ գնացել էին կռվելու Իրանի պաշտպանության համար, ինչպես մի ժամանակ կռվում էին Դարեհ Կոդոմանի բանակում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ[1]։ Քադեսիայի օրհասական ճակատամարտի մեջ (637) հայերն ունեին երկու զորաբաժին—մեկը՝ 3000 հոգուց բաղկացած՝ Դավիթ Մամիկոնյանի որդի Մուշեղի հրամանատարության տակ, իսկ մյուսը՝ 1000 հոգուց՝ Սյունյաց Գրիգոր իշխանի հրամանատարության տակ։ Այս զորքերն էլ, իհարկե, պարսիկների հետ սաստիկ պարտության մատնվեցին և երկու հայ նախարարներն էլ սպանվեցին կռվի մեջ[2]։ Այստեղ էր նաև Աղվանից զորաբաժինը, որի հրամանատարն էր Վարազ Գրիգոր իշխանի երիտասարդ որդին՝ Ջվանշիրը[3]։

Բայց հայերը միայն Իրանի հպատակներ չէին և միայն պարսկական ռազմաճակատի վրա չէր, որ կռվեցին արաբների դեմ։ Ավելի խոշոր էր, ինչպես երևում է, նրանց մասնակցությունը բյուզանդական բանակի մեջ, որ կռվում էր Սիրիայում։ Այսպես, հայտնի է, որ Յարմուկի ճակատամարտում բյուզանդացիների հետ ջարդ կերան և հայերը։ Արաբացի մատենագիր Բելազորին գրում է.

«Հերակլիոս կայսրը մեծ զորաբանակ մը գումարեց Հունաստանեն, Միջագետքեն, Սիրիայեն և Հայաստանեն, ընդամենը 200,000 մարդ և անոնց հրամանատարությունն իր խորհրդականներեն մեկուն հանձնեց... Այս բանակը մեծ ճակատամարտ մը տվավ իսլամ Արաբաց դեմ Եարմուկ գետին եզրը։ Իսլամները 24,000 պատերազմող ունեին։ Հույնք և իրենց դաշնակիցք հաղթվելով ի փախուստ դարձան։ Աստված 7000 մարդ ջարդեց անոնցմե. մնացյալները Պաղեստին, Անտիոք, Հալեպ, Միջագետք և Հայաստան քաշվեցան»[4]։

Գրավելով Սիրիան, տեր՝ դառնալով Միջագետքին, Տիզբոնին, Արաբիան Հայաստանի լեռնաշխարհի վերաբերմամբ գրավում էր այն դիրքը, որ հին ժամանակ ուներ Ասորեստանը, նրանից հետո՝ Պարսկաստանը։ Տիգրիս-Եփրատյան տափարակներում ապահով տիրապետություն հաստատել չէր կարելի առանց նրանց առջև բարձրացած Հայկական Բարձրավանդակն ամուր կերպով ձեռքի մեջ ունենալու։ Այս հանգամանքը կատարելապես անհրաժեշտ էր դարձնում, որ արաբները նվաճեն Հայաստանը։ Իսկ մի անգամ հաստատվելով այս բարձրավանդակի վրա, նրանք պիտի շարունակեին իրենց նվաճողական շարժումները դեպի հյուսիս, մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան։

Տարաբախտաբար, մենք մանրամասն և որոշակի տեղեկություններ

1 Տե՛ս առաջին հատորը։

2 Սեբէոս, եր. 173։

3 Կաղանկատ., եր. 289։

4 Մորման, «Հատուածք Պատմութեան Հայաստանի քաղեալք յԱրաբացի պատմագրաց», Թարգմ. Կ. Իւթիւճեան, Կ. Պոլիս, 1874, էր. 43։

չունենք այն առաջին արշավանքների մասին, որ արաբները կատարեցին դեպի Հայաստան։ Հայ աղբյուրները, Սեբեոս և Ղևոնդ վարդապետ, որոնք մոտիկ են այդ ժամանակներին, բավականանում են միայն դեպքերի նկարագրություններով, թվականներ չեն տալիս և երբեմն նաև հակասում են իրար։ Ավելի լավ դրության մեջ են արաբական աղբյուրները, բայց նրանք էլ զերծ չեն հակասություններից, քանի որ դեպքերին ժամանակակից պատմագրողներ չկան, իսկ նրանք, որոնք նկարագրել են հայկական արշավանքները, ավելի ուշ ժամանակներում էին ապրում և գրել են իրենց տեղեկությունները, աղբյուր ունենալով, մեծ մասամբ, բերանացի պատմությունները։

Մի բան, սակայն, կարելի է հաստատ համարել այդ նախնական ժամանակների վերաբերմամբ։ Արաբական արշավանքներն սկզբում հաստատ նվաճողական ծրագիր չունեին, այլ ավելի ասպատակություններ էին, որոնք կատարվում էին թալանի նպատակով, որ միևնույն ժամանակ և հարմար միջոց էր՝ երկրի դիրքն ուսումնասիրելու համար։ Այդ հարձակումները կարող էին սկսվել, իհարկե, միայն Սիրիայում և Միջագետքում հաստատվելուց հետո, ուստի իսլամի ճանապարհները կարող էին լինել կամ Տիգրիսի արևմտյան ճյուղի հովտով (Դիարբեքիրի վրայով), կամ թե նույն գետի այն հովտով, որ Սղերդի և Բաղեշի վրայով տանում է Տարոն և կամ, վերջապես, Պարսկաստանի (Ատրպատականի) կողմից։ Այս վերջին երկու ճանապարհների վրա էլ մենք տեսնում ենք արաբական զորքերը Հայաստան դիմելիս։ Ժամանակը ճշտել դժվար է, բայց կարելի է ասել ընդհանրապես, թե արշավանքներն սկսողը Օմար խալիֆն էր։ Արաբական աղբյուրներին նայելով, ամենավաղ արշավանքը պետք է եղած լինի հիջրեթի 19 (=640) թվականին և սկսվել է Ամիդ (Դիարբեքիր) քաղաքի նվաճումով, որից հետո արշավանքն անցել է Արծն գավառով Բաղեշ, իսկ այստեղից էլ, Տարոնի միջով, դեպի Խլաթ[1]։ Այս արշավանքն էր, անշուշտ, որ նկարագրված է Տարոնի ավանդական պատմության կամ, ինչպես մենք անվանեցինք վերևում, Տարոնի վեպի մեջ։

Ժամանակի Մամիկոնյան իշխանը, ըստ այդ ավանդության, Տիրանն էր, Վահանի որդին։ Արաբական զորքի հրամանատարն էր Աբդռահիմը, Մուհամմեդ մարգարեի քեռորդին։ Տիրանն անմիջապես զորաժողով է հայտարարում ամբողջ Հայոց աշխարհում, բայց վրաց Վազդեն իշխանի որդի Ջոջիկը, չգիտենք ինչպես, արգելք է հանդիսանում ընդհանուր զորահավաքին, և Տիրանը մնում է իր սեփական զորաբանակի հետ, որի թիվն էր 8 հազար, մինչդեռ թշնամին ուներ 18 հազար ձիավոր զորք։ Տեսնելով, որ ամեն ինչ «ի վերջ հասեալ է», Տիրանը հավաքում է իր զորքը և ասում. «Ով Քրիստոսի ժողովուրդք, լաւ է ինձ մեռանել՝ քան զեկեղեցի Աստուծոյ հարկատու լինել Տաճկաց»[2]։ Պատերազմը,— ասում է ավանդությունը,— հաջողակ էր տարոնցիների համար։ Բայց ահա երևան է գալիս դավաճանություն։ Անձևացյաց իշխան Սահուռն անցնում է արաբացիների կողմը և սուրը դարձնում է հայերի դեմ։ Տիրան Մամիկոնյանը, պատռելով ռազմաճակատի երկարությունը, հասնում է դավաճանին և ասում. «Կա՛ց, ուրացեալ Սահուռ, զի ըմբռնեաց զքեզ Քրիստոս ի ձեռս իմ»։ Եվ սրով թռց-

1 Մորդման, եր. 43։

2 «Տաճիկ» անունով մեր հին մատենագիրները հասկանում էին արաբներին։

նում է նրա գլուխը, բայց ինքն էլ սպանվում է երկու իշխանների հետ։ Այնուհետև արաբները շրջապատում են նրա զորքը և կոտորում։ Իսլամական առաջին գրոհի զոհերը թաղվում են մի տեղ, որի անունն էր «Բահակ»։ Աբդռահիմն այնուհետև արշավում է Հարք գավառը, Բասյան, անցնում է Վրաստան և ասպատակելով ամեն տեղ, ստանում է հարկ և վերադառնում իր տեղը[1]։

Երկրորդ արշավանքը Հայոց աշխարհը մտավ Պարսկաստանի սահմանից։ Այս տեղի ունեցավ, երևի, Նեհավենդի պատերազմից հետո, երբ արաբական հաղթանակները տարածվեցին մինչև Կասպից ծովը։ Այս անգամ արշավանքը հարվածեց Գողթան գավառը և Նախճավանը, Ջուղայից անցավ Արաքսը և մտավ Կոգովիտ գավառը, ուր գտնվում էր բյուզանդական զորաբաժինը Պռոկոպ զորավարի հրամանատարության տակ։ Պռոկոպն ամենայն անտարբերությամբ էր վերաբերվում արաբների կատարած ավարառումներին և ավերումներին։ Այս վերաբերմունքից վշտանում է Թեոդորոս Ռշտունին, որ և անմիջապես բանակցություններ է սկսում բյուզանդական զորավարի հետ, և երբ տեսնում է, որ իր նամակներն ագդեցություն չեն անում, գնում է անձամբ խոսելու նրա հետ։ Սակայն Պռոկոպը վերին աստիճանի գոռոզ և ամբարտավան կերպով է նրան ընդունում։ Ինչպես երևում է, տեղի է ունենում խիստ խոսակցություն, որովհետև բանը վերջանում է նրանով, որ Պռոկոպը դուրս է անում Թեոդորոս իշխանին[2]։ Առանց այս էլ Ռշտունյաց տերը մի առանձին համակրանք չուներ դեպի հույները։ Այս միջադեպն ավելի ևս պիտի համոզեր նրան, թե զուր է կարծել, որ բյուզանդացիները պատրաստ կլինեն վտանգի ժամանակ իրական օգնություն հասցնել՝ Հայոց աշխարհը փրկելու համար։ Եվ գոռոզ Պռոկոպը լավ պատժվեց իր ամբարտավանության համար։ Մինչդեռ նա, հույսը դրած իր բանակի խոշորության վրա, արհամարհում էր արաբներին, վերջիններս հարձակում գործեցին և մի խիստ հարված տալով բյուզանդական բանակին, հեռացան գնացին Սիրիա։

Մի երրորդ արաբական արշավանք էլ տեղի ունեցավ Եզր կաթողիկոսի վերջին տարում (641—642)։ Այս արշավանքը դարձյալ Տարոնի վրայով եկավ, տարածվեց Վանի լճի արևմտյան ու հյուսիսային ափերով և, Բերկրի ձորով դուրս գալով Կոգովիտ գավառը, այնտեղից թափվեց Արարատյան դաշտը, գնաց ուղղակի Դվին մայրաքաղաքի վրա։ Այգեկութի ժամանակն էր, և Դվինը շրջապատող այգիներում հավաքված էր մարդկանց մեծ բազմություն։ Թեոդորոս Ռշտունին այդ միջոցին գնացել էր Նախճավան, և մայրաքաղաքը մնացել էր անպաշտպան։ Արաբական զորքն առաջնորդում էր մի նոր հայ դավաճան—Մոկաց Վարդիկ կամ Ակնիկ իշխանը[3]։ Դվինը վերցվեց, կողոպտվեց և սարսափելի ավերումների տեսարան դարձավ։ Վայրագությունների այս առաջին տեսարանն է, որ մանրամասն նկարագրում է Ղևոնդ պատմագիրը, որ այդ կողմից առաջինն է հայ հեղինակներից.

«Արդ, ո՛վ արդեօք արժանաւորապէս ողբասցէ զթշուառութիւն աղետիցն. քանզի ամենայն ուստեք անհնարին էր վտանգն։ Զի սուրբ եկեղե-

1 Յովհան Մամիկոնեան, «Պատմութ. Տարօնոյ», եր. 58։

2 Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Պետերբուրգ, 1887, եր. 7—8։

3 Ղեւոնդ, եր. 9—10։

ցիք, յորս ոչ էր արժան հեթանոսաց մտանել՝ քանդեալ և քայքայեալ կոխան պիղծ ոտիցն անօրինաց լինէին, և քահանայք հանդերձ սարկաւագօք և պաշտօնէիւք խողխողեալ սրով ժպիրհ և անողորմ թշնամեացն. և բազում տիկնայք փափկասունք, որոց ոչ էր առեալ զփորձ նեղութեան՝ գանալից քքօք թշնամանեալք և քարշեալք ի հրապարակս՝ զկականումն ողբոցն բարձրացուցանէին վասն յեղակարծումն օրհասին։ Այլ և աշխարհախումբ բազմութեանն ըմբռնեալք ուստերօք և դստերօք ի նոյն վտանգս՝ յաճախէին զհառաչանս և զհեծութիւնս. զի ոչ գիտէին՝ զո՛ր առաւել ողբասցեն, զխողխողեա՞լսն յանօրէն սրոյն, եթէ զկենդանւոյն անջատեալսն զուստերս և զդստերս, օտարացուցանել ի հաւատոյն որ ի Քրիստոս և ի հոգևոր յաստուածային փառատրութեանցն։ Եւ զոմանս ողորմելի տեսլամբ անկեալ դիակունս ի վերայ դիականց ընդ արիւն թաթաւեալք թէպէտ և ողբովք աշխարէին՝ այլ ոչ էին ձեռահաս ամփոփել զմարմինսն և տալ գերեզմանի։ Եւ ի դէպ էր զմարգարէականն առնուլ ողբս, որ ասէ «Աստուած, մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո և արկին զդիակունս ծառայից քոց՝ զէշ թռչնոց երկնից և զմարմինս սրբոց քոց՝ զգազանաց երկրի, ոչ ոք էր որ թաղէր զնոսա»[1]։

Այս հարվածն ահաբեկիչ ազդեցություն ունեցավ զորքի և նախարարների վրա, երբ նրանք վերադարձան և տեսան արաբական գերությունը։ Սարսափահար, անկարող որևէ բան անելու իրենց կանանց և երեխաների փրկության համար, տղամարդիկ բավականանում էին միայն լաց լինելով։ Այս տեսակ մարդկանցից չէր միայն Թեոդորոս Ռշտունին, որ իր փոքրիկ գնդով գնաց թշնամու հետևից և, Կոգովիտ գավառում դարանամուտ լինելով՝ հարձակվեց նրա վրա։ Բայց այս խիզախ փորձը ոչինչ օգուտ չբերեց։ Արաբները ջարդեցին Ռշտունու գունդը, որի մնացորդները փախան գնացին Գառնի։ Արաբներն այնուհետև միանգամայն անարգել շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Սիրիա, տանելով իրենց հետ հարուստ ավարը և 35 հազար գերի[2]։ Այս ծանր դրության մեջ երկիրը տեսնում էր իրեն միանգամայն անօգնական։ Վերացել էր բոլորովին պարսկական թագավորների իշխանությունը և փրկության հույսը մնում էր միմիայն բյուզանդական իշխանությունը։ Ուստի Պարսկական Հայաստանի մնացորդն էլ միանում էր կայսրության։ Նույն տառապանքի տարին կաթողիկոս է ընտրվում Ներսես Գ-ն, որ Տայոց աշխարհից էր և հունական լավ կրթություն ստացած հոգևորական։ Նա խնդրում է Կոստանդին Գ (Կոստանդ Բ) կայսրին (641—668), որ նա իր կողմից էլ ճանաչի Թեոդորոս Ռշտունուն Հայոց սպարապետ։ Կայսրը հաճությամբ կատարում է այս խնդիրքը, Ռշտունուն կարգում է Հայաստանի իշխան, պարգևելով նրան պատրիկի տիտղոս և այլ ընծաներ ուղարկելով նրան իբրև ապացույց իր բարձր ուշադրության։

Բայց չորս տարի հազիվ անցած՝ Ռշտունին զոհ է դառնում բյուզանդական մի ինտրիգի։ Հայաստան է գալիս Թումա անունով մի պաշտոնյա, որ հանձնարարություն ուներ, ի միջի այլոց, և բանակցություն վարելու Մարաց իշխաններից մեկի հետ, որ Ատրպատականի սահմանների վրա էր ապրում։ Այս իշխանը, ինչպես երևում է, անձնական հաշիվներ ունե

---

1 Ղևոնդ, եր. 9—10։

2 Սեբեոս, եր. 176։

Թեոդորոս Ռշտունու հետ և համոզում է Թումային, գուցե և ոչ առանց
կաշառքի, վնասել Ռշտունուն և ստանում է նրանից խոստում, թե կձեր-
բակալի Հայոց սպարապետին և կուղարկի Կ. Պոլիս։ Այս բանը Թուման
հաջողացնում է Կոտեից գավառում։ Թեոդորոսը կալանավորված ուղարկվում
է կայսրի մոտ։ Նրա վրա բարձված էր մի ամբաստանություն, որի էու-
թյունը մեզ հայտնի չէ։ Սակայն Կոստանդին կայսրը, քննելով ամբաս-
տանությունը, արդարացնում է Ռշտունուն և իր անբավականությունն է
հայտնում Թումային։ Այդ ժամանակ Կ. Պոլիս էր վերադարձված իր աֆ-
րիկյան աքսորից Վարազտիրոց ասպետը։ Նա և Ռշտունին, երկու վաղեմի
մտերիմներ, իրար պատահելով, երկուսն էլ գրեթե միևնույն դրության
մեջ, իրար լանջով են ընկնում և արտասվում։ Տեսնելով, որ կայսրը Թեո-
դորոսին մեծ փառքով ետ է ուղարկում Հայաստան, Վարազտիրոցն էլ,
հայրենիքի կարոտից դրդված, ծպտյալ փախչում է Կ. Պոլսից Տրապիզոն,
իսկ այնտեղից էլ արագությամբ, «թռչունի նման», ինչպես ասում է Սե-
բեոսը, գնում հասնում է Տայոց աշխարհը, ուր Բագրատունիների մի
ճյուղն էր ապրում։ Կ. Պոլսից հրամաններ են թռչում փախստականին
բռնելու համար։ Բայց ասպետը կարողանում է նամակով համոզել կայս-
րին, թե ինքը փախստական չէ, ոչ էլ անհավատարմության որևէ միտք
ունի։ Այն ժամանակ կայսրը տալիս է նրան կյուրապաղատի աստիճան և
նշանակում է Հայաստանի կառավարիչ։ Բայց Վարազտիրոցը վախճան-
վում է, ուստի կայսրը կյուրապաղատության աստիճանը տալիս է նրա
Սմբատ որդուն։

Իսկ Թեոդորոս Ռշտունին, Հայաստան վերադառնալուց և սպարապե-
տությունը վերստանձնելուց հետո, ցույց է տալիս, թե պատրաստ է մոռա-
նալ բյուզանդական խարդախություններն ու ինտրիգները, ամենից բարձր
դասելով երկրի շահերը։ Առիթը տվին արաբները, որոնք բավական ժամա-
նակ իրենց արշավանքները դադարեցնելուց հետո, 651 թվին նորից, և
այս անգամ ավելի մեծ ուժերով, Հայաստան մտան Ատրպատականի կող-
մից։ Նրանք տարածվեցին երեք ուղղությամբ, և նրանց զորաբանակներից
մեկը, բռնելով սովորական ուղղությունը, երևաց Կոգովիտ գավառում, ուր
պաշարեց Արծափ բերդը։ Բերդականներն զգուշությամբ չէին պահել իրենց,
և արաբները, տեսնելով, որ նրանցից մի քանիսը ելումուտ են անում
մի առանձին ճանապարհով, իրենք էլ այդ տեղով ներս են խուժում և կո-
տորում բերդապահների մի մասը։ Բայց ահա վրա է հասնում Թեոդորոս
Ռշտունին և հարձակվում է արաբների վրա, որոնք թվով երեք հազար հոգի
էին, բոլորն էլ ընտիր սպառազեն զինվորներ։ Սկսվում է մեծ կոտորածը։
Հայերը հաղթում են, ոչնչացնում են արաբական ամբողջ զորամասը, սպա-
նելով և նրանց երկու գլխավորներին։ Պատերազմական հարուստ ավարից
Թեոդորոսը կայսրին ընծա է ուղարկում 100 արաբական ձի։ Կայսրը շատ
է ուրախանում այդ հաղթության վրա։

Բայց բյուզանդականությունը հենց այդ միջոցներին նորից հրապարակ
է նետում կրոնական միության հարցը։ Կոստանդինը խանդոտ և հաստա-
տակամ մարդ էր։ Նա այլևս ավելորդ էր համարում շահել հակաքաղկեդո-
նականների սիրտը, քանի որ արաբներն արդեն նվաճել վերջացրել էին
Սիրիան և Եգիպտոսը։ Այսպիսով, Բյուզանդիայի տիրապետության տակ
մնում էին մեծագույն մասամբ զուտ հույն ազգաբնակություն ունեցող
երկրներ, ուր ազգային միությունը պիտի իրականանար օրթոդոքսության

միջոցով։ Մնում էր Հայաստանը, և Կոստանդինն արաբական վտանգի առջև շտապում էր գլուխ բերել և նրա միացումը հունական եկեղեցուն։ Այս պատճառով նա օգուտ էր քաղում այնպիսի մի ծանրակշիռ հանգամանքից, որպիսին էր բյուզանդական զորքերի տրտունջը։ Հայաստանում գտնվող զորքերը գանգատվում էին, թե հայերն իրենց վերաբերվում են իբրև անօրենների, անարգանքով, համարելով Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տումարը մի տեսակ պղծություն։ Կայսրն այս առիթով հարուցում է եկեղեցիները միացնելու պահանջ, և այս հանձնարարությամբ Հայաստան է ուղարկում Դավիթ անունով մի հայի, որ Բագրավան գյուղից էր և Կ. Պոլսում փիլիսոփայական գիտություն էր ուսումնասիրել։ Անելով այսպիսի առաջարկություն, կայսրը, իհարկե, գիտեր, որ Հայոց կաթողիկոսն էլ քաղկեդոնիկ է և, ուրեմն, կարող է հեշտացնել եկեղեցական միությունը։ Սակայն Ներսես Գ-ն չկարողացավ նույնիսկ պարզ համակրություն ցույց տալ հունական եկեղեցու առաջարկությանը։ Եվ դրա պատճառը հայ ազգային կուսակցության պարագլուխն էր, Թեոդորոս Ռշտունին, որի ահը հարկադրեց նրան նույնիսկ ընդդիմացողի դեր հանձն առնել, մի երկար գրությամբ նա, հայ եպիսկոպոսների և նախարարների հետ, պատասխանում է կայսրին և ապացուցելով հայ եկեղեցու կատարյալ ուղղափառությունը, մերժում է կայսերական առաջարկությունը։

3. Հայաստանի նվաճումը: Մինչդեռ բյուզանդական կայսրը հավատացնում էր հայերին, թե ուզում է փրկել նրանց հոգիները, արաբները հաստատ վճռել էին վերջնականապես նվաճել ամբողջ Հայկական Բարձրավանդակը, և նրանց այն արշավանքը, որի դեպքերից մեկն էր Արծափի կռիվը, այլևս պատահական կամ ասպատակողական բնույթ չուներ։ Հայաստանի նվաճման պատկերը թերատ և համառոտ է հայ աղբյուրներում։ Փոքր ի շատե մանրամասն ու հաջորդականորեն նկարագրում են արաբացի հեղինակները, գլխավորապես Բելազորին և Թաբարին, որոնց վկայություններին էլ[1] կդիմենք մենք։

Արշավանքի գլուխն էր Հաբիբ իբն Մեսլեմե անունով զորավարը, որին մեր Սեբեոսն անվանում է «անողորմ դահիճ»[2]։ Նա Սիրիայումն էր գտնվում, երբ Օսման (Օթման) իբն Աֆֆան խալիֆը (ամիրապետը) հրամայեց Սիրիայի կառավարիչ Մոավիային զորք ուղարկել՝ Հայաստանը նվաճելու համար։ Հաբիբը, ստանալով այսպիսի հանձնարարություն, վեց կամ ըստ ոմանց ութ հազար զորք վերցրած՝ Սիրիայի և Միջագետքի կողմից մտավ Հայաստան և ուղղակի դիմեց Քալիքալա (Կարին) քաղաքի վրա։ Քաղաքը պահպանող զորքը (անշուշտ բյուզանդական) հարձակվեց նրա վրա, բայց պարտություն կրեց։ Բնակիչներն անձնատուր եղան գլխահարկ (ջիզիե) վճարելու կամ ուրիշ երկրներ գաղթելու պայմանով։ Հաբիբը մի քանի ամիս նստեց այդ քաղաքում, մինչև որ լուր առավ, թե Արմենիքոս իշխանը (Հայաստանը կառավարող իշխանի, ներկա դեպքում Թեոդորոս

[1] Տե՛ս ա) Մորթման, «Հատուածք. Պատմ. Հայ.», բ) Բ. Խալաթյան, «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին» («Հանդէս Ամսօր.», 1903, 1904, 1905, 1906 թ.), գ) **Н. Караулов**, «Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане» (сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. XXIX, XXXI, XXXII).

[2] Եր. 242։

Ռշտունու, հունական տիտղոսը) զորք է ժողովում ոչ միայն հայերից, այլև կովկասյան ցեղերից և խազարներից՝ արաբների վրա հարձակվելու համար։ Այս տեղեկությունը նա իմաց տվեց Օսման ամիրապետին և օգնական զորք խնդրեց։ Իսկ Մոավիային էլ գրեց, որ Միջագետքից և Սիրիայից իրեն օգնության ուղարկի այնպիսի զորքեր, որոնք սրբազան պատերազմի և կողոպուտի փափագ ունեն։ Մոավիան նրան 2000 մարդ ուղարկեց, որոնք բնակեցվեցին Քալիքալա քաղաքում, ստանալով բնակարաններ և հողեր։ Իսկ խալիֆը հրամանագրեց Քուֆայի կառավարչին, որ Հայաստան ուղարկի Սելման զորավարին։ Դա մի քաջ և նշանավոր պատերազմող էր և հենց այդ պատճառով էլ ստացել էր էլ-Խայիլ մականունը, որ նշանակում է «գերազանց»։ Նրա հրամանատարության տակ դրվեց 6000 զորք։ Բայց մինչև նրա տեղ հասնելը հունական զորքը (հայերի հետ) հարձակվեց արաբների վրա։ Հաբիբը հաղթեց նրան և ավար վերցրեց։ Երբ Սելմանը միացավ Հաբիբի զորքին, ամեն ինչ արդեն վերջացած էր։ Այնուամենայնիվ, Սելմանն ավարից բաժին պահանջեց, և որովհետև Հաբիբը մերժեց տալ, երկու զորավարների միջև լուրջ գժտություն սկսվեց, որ հասավ նույնիսկ ամիրապետին։ Սա կարգադրեց, որ Սելմանն ամեն ինչ թողնի Հաբիբին ու ինքը գնա Արրանը (Աղվանքը) նվաճելու։

Իսկ Հաբիբը, Քալիքալայից դուրս գալով, արշավեց Մարդալա (Մարդաղի գավառ), ուր Խիլաթի (Խլաթ) հայ իշխողը գնաց նրա մոտ, տանելով մի մյուսլիմի տված թուղթը, որով նրան ապահովություն («աման») էր շնորհված՝ գլխահարկ տալու պայմանով։ Նույն նախարարն արաբ նվաճողին նորից ներկայացավ Հերեք (Հարք) և Տեշթյուվերք (Տասնավորք) գավառներում և ընծաներ մատուցեց Հաբիբին, բայց սա չընդունեց։ Մոքսի (Մոկաց) հայ նախարարն էլ նույն կերպ հպատակություն հայտնեց և «աման» ստացավ։ Ապա Հաբիբն իր զորքերի մի մասն ուղարկեց Արճեշի և Բոջոներսի (հավանորեն՝ Բզնունյաց) երկիրը՝ հարկ հավաքելու համար։ Գյուղացիները գնացին նրա մոտ՝ հողային հարկի (խարաջ) հարցը կարգավորելու համար։ Այս բանակցությունների ժամանակ Նոհայիրե-յուլ-Թիրիխ (Աղի ձկների, այսինքն Վանա լիճ) ծովակը մնաց հասարակաց սեփականություն, այսինքն ձկնորսության համար առանձին տուրք չնշանակվեց։ Այս կողմերից արաբացի զորավարը գնաց Աղտխաթ (Աշտիշատ), իսկ այդտեղից ուղղելով իր ընթացքը դեպի հյուսիս, մտավ Արարատյան դաշտը և կանգ առավ Դեբիլ (Դվին) քաղաքի առջև։ Քաղաքապահ զորքը, փակվելով ներսում, սկսեց նետեր արձակել արաբների վրա։ Հաբիբը «բաբան» կոչված մեքենաներով սկսեց քարեր արձակել քաղաքի վրա, մինչև որ քաղաքացիները դուրս եկան և անձնատուր լինելու խնդիրք արին, որ և ընդունվեց։ Դվինին շնորհված պայմանագիրը հետևյալ բովանդակությունն ուներ։

«Հանուն Աստուծո գթածին և ողորմածին, այս է գիրն, որ Հաբիբ որդի Մեսլեմեի շնորհեց Դեբիլի քրիստոնյաներին, մոգերին (զրադաշտականներին) և հրեաներին, թե ներկաներին և թե բացականերին։ Ձեր անձինքների, ինչքի, եկեղեցիների, տաճարների և ձեր քաղաքի պարիսպների ապահովությունը ձեզ շնորհեցի, և դուք ապահովված եք, և մենք այս դաշնադրությունը հաստատ պիտի պահենք, քանի որ դուք հաճություն հայտնեցիք և խոստացաք գլխահարկ և կալվածատուրք վճարել։ Աստված վկա է և իր վկայությունը բավական է։

Հաբիբ Մեսլեմեի որդի իր ձեռքով կնքեց այս դաշնագիրը»։

Դվինից հետո Հաբիբը գնաց Ջորնի (Գառնի), Աշուղ (Աշոցք), Ցաթ-յու-Լիջում (թուցե հայ պատմագիրների «Ծաղկանց լեռան»), Ջեբբել Քյուրթի (Կոգովիտ) և Վադի էլ-Ահրար (Ազնուաց Ձոր) գավառները գրավեց։ Դարձյալ Դվինից նա գնաց և նվաճեց Նեշեվե (Նախճավան) քաղաքը և բնակիչներին նույն տեսակ դաշնագրություն տվեց, ինչ տվել էր Դվինին։ Այստեղ նրա մոտ եկավ Բասֆուրաջանի (Վասպուրականի) նախարարը և կամովին հնազանդություն հայտնեց և տարեկան հարկ (գլխահարկ) տալու պայմանով հաշտություն կնքեց։ Նախճավանից արաբական զորքն անցավ Սիսաջան (Սիսական, Սյունիք)։ Արաբացի պատմագիրներն առհասարակ շատ քաջ և պատերազմասեր են հռչակում Սիսաջան ցեղը։ Հաբիբն այդտեղ ընդդիմության հանդիպեց։ Գրավելով Վայիսի (գուցե Վայոց Ձորի) բերդը, արաբները մյուս սիսական բերդապահ զորքերի հետ հաշտություն կնքեցին՝ դարձյալ գլխահարկ վճարելու պայմանով։ Սյունիքից Հաբիբի նվաճողական արշավանքն անցնում է արևմուտք, գրավում է Ջյուրծանը (Դերջան?) և նրա գավառը։ Բնակիչներին տված թղթի մեջ արաբ հրամանատարն ասում էր.

«Ձեր պատգամավորն ինձ մոտ և հետս եղող իսլամների մոտ հասավ, և դուք հասկացաք, որ մենք մի այնպիսի ազգ ենք, որին Աստված պատվեց և նշանավոր արավ, և մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այսպես է արել։ Աստված օրհնե իր Մուհամմեդ մարգարեին։ Դուք հայտնում եք, թե սիրում եք մեր հաշտությունը։ Ձեր ընծան հասավ և ես էլ ընդունեցի իբրև թերհաշիվ ձեր վճարելիք գլխահարկի։ Ձեզ ապահովություն շնորհեցի և այս ապահովությունները կարգադրեցի։ Եթե ընդունեք, գործը վերջացած է, եթե ոչ, պիտի պատերազմենք ձեզ հետ հանուն Աստծու և նրա մարգարեի։ Ողջույն նրանց, որոնք խրատ են ըմբռնում»։

Հաբիբին էր պահված և ամբողջ արևմտյան Վրաստանն ու Թիֆլիսը նվաճելու գործը։ Թիֆլիսցիների հետ նրա ունեցած նամակագրությունը շատ հետաքրքրական է և իբրև պատկեր այն պարտավորությունների, որոնք բխում էին սրբազան պատերազմից։ Ահա թե ինչ էր գրում նվաճողը։

«Հանուն Աստուծո գթածին և ողորմածին։ Այս է այն գիրը, որ Հաբիբը, որդի Մեսլեմեի, տվեց Թիֆլիսի, Մենջելեսի, Ջորջանի և Կիրմիզի բնակիչներին, իրենց անձի, ինչքերի, տաճարների, վանքերի, աղոթարանների և կրոնի ապահովության համար, այս պայմանով, որ իրենց ստոր հանաշեն և յուրաքանչյուր ընտանիքի հայր մի դենար[1] տուրք վճարեն։ Ներելի չէ ձեզ բազմությամբ տների մեջ լցվել՝ գլխահարկը նվազացնելու համար, ինչպես նաև ներելի չէ բաժանել միևնույն ընտանիքի անդամներին՝ գլխահարկն ավելացնելու համար։ Մեր պարտքն է ուսուցանել ձեզ և պաշտպանել ընդդեմ Աստուծու և նրա մարգարեի թշնամիների, քանի որ հնազանդ եք։

«Իսլամի աղքատն երեկոյան իր տունը պիտի հրավիրե և ինչ կերակուր որ ս. գրքի հավատացող մարդկանց ներելի է, այն կերակուրը պիտի տա նրան։ Եվ երբ մի իսլամ հիվանդությունից ստիպված ձեր տանը մնա, պարտավոր եք նրան բժշկել իսլամների մեջ սովորական եղած ամենաէժան

[1] Արաբական դրամ, որի արժողությունը մոտավորապես 13 ֆրանկ էր (տե՛ս Ղևոնդ պատմագիր, հառաջաբան Կ. Եզյանի, եր. ժէ)։

գնով։ Եթե մեր հավատն ընդունեք և մեր աղոթքները կատարեք մեզ եղբայր կլինեք. ապա թե ոչ՝ գլխահարկ կվճարեք։ Եթե իսլամներն, ուրիշ զբաղմունք ունենալով, չկարողանան ձեզ պաշտպանել և ձեր թշնամիները ձեզ հաղթեն, այս բանը չպիտի համարվի այս դաշնադրության դեմ գործված»։

Սրանք են ձեր իրավունքներն ու պարտականությունները։ Աստված և իր հրեշտակները վկա են, և այս վկայությունը բավական է»։

Նույնպես հաղթական էր Սելմանի արշավանքն Արրանի երկրում (Աղվանք)։ Ամենից առաջ Բեյլական[1] քաղաքն էր, որ հպատակություն հայտնեց արաբներին։ Այդտեղից Սելմանը գնաց Բերդաա (Պարտավ) մայրաքաղաքի վրա։ Բնակիչները դռները փակեցին և դիմադրություն ցույց տվին։ Արաբները պաշարեցին քաղաքը և ասպատակեցին գյուղերը։ Բայց որովհետև հասել էր հնձի ժամանակը, ազգաբնակությունն ավելորդ համարեց այլևս դիմադրել և հպատակություն հայտնեց Սելմանին։ Հաստատվելով Աղվանից մայրաքաղաքում, Սելմանը ձիավոր զորքեր ուղարկեց շրջակա գավառները և այսպիսով նվաճեց ամբողջ Ուտի նահանգը։ Այսպես էին Շաքշին (Շակաշեն), Մեսխվան (Մեծկվանք), Ուտի (Ուտի Առանձնակ), Մարասպան (գուցե Մեծիրանք), Հերջելիան (Հարջլանք), Թոբաղ, ինչպես նաև Շեմքուր (այժմյան Շամքոր գետի վրա) քաղաքը։ Իրեն հպատակեցնելով և այն տարածությունները, որոնք ձգվում էին մինչև Կուր և Արաքս գետերի խառնարանը, այն է՝ Բերդիջեն[2], Քաբալա (այժմ Ղաբալա), Շեքինի (Շեքի), Սելմանն առանց կռվի տիրացավ և Շիրվանշահի երկրներին, մի քանի լեռնաբնակ ցեղերի և այսպիսով հասավ Բաբ (Դուռ, Դերբենդ) քաղաքին, որ փակում էր անցքը Կովկասյան լեռների և Կասպից ծովի միջև։ Այստեղ արաբներն ընդհարվեցին բուլղար անունով ցեղի հետ, և կռվի մեջ սպանվեց Սելմանը։ Առաջխաղացումը կանգ առավ, համարյա ամբողջ Այսրկովկասը հպատակված էր իսլամին, և Հաբիբը նշանակվեց բոլոր այդ երկրների ընդհանուր կառավարիչ։

4. Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը։ Արաբական նվաճումների ընթացքում հայոց սպարապետի համար պարզվում էր այն դրությունը, որ ստեղծում էր իսլամի հաղթական թուրն Արևմտյան Ասիայում։ Նախկին երկու մեծ պետություններից, որոնք աշխարհի այդ մասի տերերն էին, մնաց միայն մեկը, բյուզանդական կայսրությունը, այն էլ թուլացած. արաբական հարվածներին ենթարկված, Սիրիայի և Եգիպտոսի պես հարուստ երկրներից զրկված։ Պարզ էր, որ կայսրությունն այլևս չպիտի կարողանար պահպանել Հայաստանն իր տիրապետության տակ։ Այդ անկարողությունը հետևանք էր մանավանդ այն պետական սիստեմի, որ, ինչպես տեսանք շատ անգամ, պատճառ դարձավ մեծամեծ երկրների կորստյան։ Նույնիսկ այն միջոցին, երբ Հայաստանն ամբողջովին վտանգված էր արաբական արշավանքներով, բյուզանդական կառավարությունը երկրի մեջ կուռ ինքնապաշտպանություն չէր զարգացնում, այլ, ընդհակառակն, նորից բորբոքում էր քաղկեդոնական վեճերը, մեծ անբավականություն հարուցելով իրենց ազգային ավանդություններին հարազատ մնալ ցանկացող

[1] Մուղանի դաշտում, Արաքս գետի վրա (տե՛ս Караулов, «Карта Кавказского края по данным арабских географов»)։

[2] Պարտավից դեպի արևելք։

հայերի մեջ։ Միանգամայն անբնական չէր, որ այս միջավայրում էլ ստեղծվեր այն տրամադրությունը, որ ցույց տվեց Սիրիայի և Եգիպտոսի ազգաբնակության արաբական հարձակումների ժամանակ, այսինքն՝ որ հայերի համակրությունն էլ թեքվի դեպի արաբների կողմը։

Այս տեսակ տրամադրության առաջին ներկայացուցիչը հենց ինքը Թեոդորոս Ռշտունին էր, որին սկզբից մենք տեսանք ազգային շահերի պաշտպան, պարսկական կրթություն ստացած և հակահունական ձգտումներով լցված։ Տեսանք նաև, որ բյուզանդական բյուրոկրատիան շատ առիթներ էր տալիս, որ հայ զորավարի մեջ ատելության զգացմունք զարգանա դեպի այն ամենը, ինչ բյուզանդականության կնիք էր կրում։ Համբերության բաժակը, թվում է, լցրեց Դավիթ փիլիսոփայի առաքելությունը՝ Հայաստանի մեջ քաղկեդոնականություն տարածելու համար։ Սակայն անձնական տրամադրություններից ավելի հրամայողական էին հայ ժողովրդի իրական շահերը։ Պարսկաստանի պես մի մեծ, աշխարհակալ պետություն արաբները վերածել էին «ամանի» դրությամբ գոյություն պահպանող մի երկրի։ Ջնջելով ազգային-քաղաքական ինքնուրույնության ամեն մի նշույլ, արաբները դրել էին պարսիկների առջև միայն մի հնարավորություն—կամ անպայման հպատակվել իսլամին, կամ թե կռվել մինչև վերջին շունչը։ Միևնույն իրականությունն էր հաստատվում և Հայաստանում։ Ազգային հին կուլտուրական-քաղաքական ինքնորոշումը մարմնացնող ձևը—նախարարությունը, մի կողմ էր նետվում արաբական տիրապետության ձեռքում։ Եվ որովհետև չկար մի ուժ, որ կարողանար պահպանել այդ ազգային կարգը, հակառակ արաբների ցանկության, ուստի մնում էր մի ելք—կամ հաշտվել հայ ժողովրդի ներքին ինքնավարության ջնջման հետ, կամ համաձայնություն կայացնել նոր տիրողների հետ։

Այս վերջին ճանապարհն էլ ընտրեց Թեոդորոս Ռշտունին։ Ամբողջ Հայաստանն ինքնահոժար երես էր դարձնում բյուզանդական կայսրությունից և կատարյալ հպատակություն էր հայտնում Օսման խալիֆին (653 թ.)։ Բանակցությունները, որոնց մանրամասնությունները, դժբախտաբար, մեզ հայտնի չեն, վարվում էին բոլոր հայ նախարարների անունից։ Հայտնի է միայն դաշնագրության էությունը, որ բացատրված է խալիֆի հետևյալ թղթի մեջ. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիցիք, և ոչ առնում ի ձէնջ սակ զերկեամ մի. ապա յայնժամ տացիք երդմամբ, որչափ և դուք կամիցիք. և հեծեալ կալէք յաշխարհիդ ժե (15) հազար. և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս և ոչ Տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ։ Թշնամի մի՛ մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիցիք։ Եւ երդնում ի մեծն Աստուած եթէ ոչ ստեմ»[1]։

Այս համաձայնությունը շատ նշանավոր մի քաղաքագիտական գործ էր,76 որ հայերի համար ավելի լավ դրություն էր ստեղծում, քան նույնիսկ բյուզանդական տիրապետության տակ։ Այդ մի կատարյալ ինքնավարություն էր արաբական հովանավորության տակ՝ հոժարակամ հարկ վճարելու

1 Սեբէոս, եր. 224։

պայմանով։ Տիրապետող պետության համար հարկից ավելի գին ուներ հայկական հեծելազորի ծառայությունը։ Բայց այս կողմից էլ, ինչպես գիտենք, հայերը մի նոր դրության մեջ չէին դրվում, քանի որ սկզբից ևեթ նրանք պարտավորված են եղել հեծելազոր տալ իրենց վրա տիրողներին պատերազմների ժամանակ։ Եվ, վերջապես, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել ինքնավար մի երկիր, որի պաշտպանությունը հանձն էր առնում հովանավորող պետությունը։

Բայց նշանավոր էր այս համաձայնությունը մանավանդ իբրև պետական լայն ըմբռնողության մի գործ։ Թեոդորոս Ռշտունին մեկն էր այն, տարաբախտաբար, չափազանց սակավաթիվ հայ քաղաքական գործիչներից, որոնք զգացմունքով չէին ղեկավարվում, նախապաշարմունքների տակ չէին ճնշվում, այլ գործում էին այնպես, ինչպես երկրի իրական շահերն էին թելադրում։ Դաշնակցել մի մահմեդական պետության հետ ընդդեմ մի քրիստոնյա պետության—այս մի շատ խիզախ ձեռնարկություն էր, որի նմանը հայոց պատմության մեջ շատ քիչ է կրկնվել, գուցե մի կամ երկու անգամ[1]։ Եվ գուցե հայ ազգի ճակատագիրն այլ կերպ ընթանար, եթե Թեոդորոս Ռշտունու նման քաղաքական մտածողներ շատ լինեին հայ կառավարող շրջանների մեջ։ Թե ո՛րքան հանդուգն էր Ռշտունու այդ քայլը, կարելի է հասկանալ հենց նկատի ունենալով այն, որ ժամանակի ամենաուժեղ դասակարգը, հոգևորականությունը, ֆանատիկոսական ատելությամբ էր լցված դեպի Մուհամմեդն ու նրա կրոնը։ Սեբեոս եպիսկոպոսը թեև մեծարանքի զգացմունքով է լցված դեպի հայոց «բարեպաշտ» սպարապետը, բայց չէ կարողանում առանց կսկծի խոսել այն դաշնագրության համաձայնության մասին։ «Եդին,— ասում է նա,— ուխտ ընդ մահու և ընդ դժոխոց դաշինս կռեցին Թեոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց, ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւն»[2]։ Նրա համար նեռի արբանյակ է Օսման խալիֆը, որ և հեռացրել է հայերին հոռոմների միաբանությունից։

Սակայն «դժոխքի հետ կռած» այդ դաշնագրությունն այն իրական օգուտն էր բերում Հայաստանին, որ նրա բարձր կառավարությունը հանձնվում էր հայ նախարարներին և այսպիսով պահպանված էր լինում հին կառավարական ձևը, ազգայինը։ Թեև արաբական պատմագիրները Հաբիբից հետո էլ հիշատակում են, թե ովքե՛ր նշանակվեցին Հայաստանի կառավարիչներ, բայց դրանք, երևի, Պարսից մարզպանների չափ էլ իշխանություն չունեին ազգաբնակության վրա։ Ահագին նշանակություն ուներ և այն, որ Հայաստանի բերդերում արաբական զորքեր չէին մնում։ Միայն մի զորաբաժին, այն էլ ոչ խոշոր, գտնվում էր, ինչպես երևում է, արաբ կառավարչի մոտ, որին մեր մատենագիրները տալիս են **ոստիկան** անունը և որ նստած էր կամ Դվինում, կամ թե Պարտավում։ Իսլամ ազգաբնակություն Հայաստանի նույնիսկ խոշոր քաղաքներում շատ չկար, այնպես որ արաբական իշխանությունը շատ առիթներ չէր կարող ունենալ հայկական ներքին գործերի մեջ խառնվելու՝ իսլամների պաշտպանության պատրվակով։

1 Այսպիսի մի խոշոր օրինակ էլ ներկայացնում էր Ռուբինյան Մլեհը Կիլիկիայում։

2 Սեբէոս, անդ. «Աստուածային դաշնաւորութիւն» պետք է իմանալ այն համաձայնությունը, որ հայերն ունեին հոռոմների հետ։

Կոստանդին Գ-ի համար անակնկալ էր հայերի դաշնակցությունն արաբների հետ։ Բյուզանդական զորքը Հայաստանում սաստիկ դժգոհ էր Թեոդորոս Ռշտունուց և գանգատներ էր ուղարկում կայսրին։ «Հայերն,— ասում էին զինվորները,— միացել են իսմայելացիների հետ։ Նրանք հուսադրեցին մեզ և ցրվեցին Ատրպատականի զանազան կողմերում, ապա անակնկալ կերպով մեզ վրա բերին արաբներին և խորտակեցին մեզ։ Ինչ ունեինք այստեղ, կորցրեցինք։ Թույլ տուր մեզ գնալ Հայաստան և վրեժ հանել մեր կրած վիրավորանքների համար»։ Կայսրը նախ փորձեց հայ իշխաններին կանչել իր մոտ, համաձայնություն կայացնել բոլոր անցած դեպքերի վերաբերմամբ։ Խոստանում էր նույնիսկ օգնական զորք տալ, որպեսզի նրանք կարողանան ետ կենալ արաբներից։ Բայց ամեն ինչ ապարդյուն անցավ։ Թեոդորոս Ռշտունին չդավաճանեց իր խոսքին, որ տվել էր արաբներին, և նախարարներից ոչ ոք չգնաց կայսրի մոտ։

Այն ժամանակ Կոստանդինն ինքը գնաց Հայաստան, բայց գնաց մի ստվար բանակով, որի թիվը Սեբեոսը որոշում է 100 հազար։ Այս ուժն արդեն բավական էր, որ պառակտվի նախարարական միությունը։ 654 թվականին կայսրը մոտենում էր Հայաստանի սահմաններին։ Արաբները, պայմանի համաձայն, պիտի պաշտպանեին հայերին, բայց շատ թույլ գործունեություն ցույց տվին։ Դերջանում արաբ մի քանի պատգամավորներ ներկայացան կայսրին և տվին նրան խալիֆի նամակը, որի մեջ ասված էր. «Հայաստանն իմն է. մի՛ գնա այնտեղ, եթե գնաս, ես կգամ քեզ վրա և այնպես կանեմ, որ դու փախչելու կարողություն չես ունենա»։ Այս կտրուկ պահանջին կայսրը պատասխանում է. «Երկիրն իմն է և ես գնում եմ, եկ, եթե ուզում ես, ինձ վրա. Աստված արդարադատ է»[1]։ Այսքանով էլ բանը վերջացավ։ Արաբները ոչ մի դիմադրություն ցույց չտվին, և կայսրը հասավ Կարին։ Այդտեղ նրա մոտ գնացին նախ և առաջ Բյուզանդական Հայաստանի իշխանները, որոնք միացած էին Ռշտունուն։ Այսպես էին Սպեր գավառի Բագրատունիները, Մանանաղի, Դարանաղի, Եկեղյաց գավառների իշխողները, կարնեցիները, տայեցիները, Բասենի, Վանանդի, Շիրակի տերերը, Խորխոռունիները, Մուշեղ Մամիկոնյանն ու նրա հետ միացածները և նույնիսկ Արարատյան երկրի մի քանի գավառների տերերը։ Կարին գնաց և Ներսես կաթողիկոսը, որ մինչև այդ միաբանված էր Թեոդորոս Ռշտունու հետ։ Հայոց խիզախ սպարապետը նկատվեց իբրև ապստամբ՝ հոռոմների դեմ։ Նրա գործակիցներն այժմ պատմում էին կայսրին, թե ինչպես էր ապստամբվել նա և ինչպես են նրա մոտ հաճախ երթևեկում արաբական դեսպանները։ Կայսրը և նրա մոտ ժողովածները նզովում են Ռշտունյաց տիրոջը, զրկում են նրան իշխանությունից, ուրիշին են նշանակում նրա տեղ և քառասուն մարդով ուղարկում են նրա մոտ։ Բայց Թեոդորոս իշխանն իսկույն ձերբակալում է այդ մարդկանց, ոմանց ուղարկում է Բաղեշ, ոմանց կալանավորության է ենթարկում Վանա լճի կղզիներում, իսկ ինքը քաշվում է Աղթամար կղզին, հրաման տալով, որ իրեն հավատարիմ մնացած զորքերը ցրվեն իրենց գավառները և ամրանան լեռներում, սպասելով իր կարգադրություններին։ Նրա հետ միացած էին և Վրաստանը, Աղվանից և Սյունյաց երկրները։ Նրանց վերաբերմամբ էլ Թեոդորոսը նույն տեսակ կարգա-

[1] Սեբէոս, եր. 225։

դրություն արավ, այսինքն՝ որ յուրաքանչյուր երկրի զորքերը գնան ամրանալու իրենց սահմաններում։

Այսպիսով պատրաստվում էր մի հայ-հոռոմական պատերազմ։ Եվ Թեոդորոս Ռշտունու կողմնակիցները նույնիսկ սկսեցին էլ այդ պատերազմը։ Թեոդորոս Վահունին, որի որդի Գրիգորը սպարապետի փեսան էր, գրավեց Արփայս բերդը, իսկ Դաշտկարանի տեր Վարազ-Ներսեհը, ամրանալով մի բաց տեղ, իր ձեռքը գցեց աշխարհի բոլոր գանձերը։ Կայսրը, ստանալով այս բռնությունների լուրը, պատրաստվեց, որ գնա Հայաստանի արևելյան կողմերը և պատերազմական գործողություններ սկսե։ Սակայն Ներսես կաթողիկոսը և մյուս իշխաններն ընկնում են նրա ոտները և աղաչում են խնայել երկիրը, քարուքանդ չանել այն մի քանի անձանց պատճառով։ Եվ Կոստանդինը, զիջանելով այդ թախանձանքներին, բաց է թողնում իր զորքերի մեծ մասը, իսկ մնացածի հետ (ըստ Սեբեոսի՝ 20 հազար) գնում է Դվին, ուր իջնում է կաթողիկոսարանում և նորից բարձրացնում է քաղկեդոնականության հարցը։ Ներսես կաթողիկոսն այս անգամ դեն է գնում դիմակը և բացարձակորեն ընդունում է քաղկեդոնական դավանությունը։ Դվինի ս. Գրիգոր եկեղեցում պատարագ է մատուցվում հունական ծեսով, և ոչ միայն կաթողիկոսը, այլև նրա հետ բոլոր եպիսկոպոսները հաղորդվում են կայսրի հետ միասին։ Այսպիսով, Հայոց աշխարհը համարվում էր պաշտոնապես հարած հունական օրթոդոքսության։

Այս ծեսի ժամանակ տեղի ունեցավ մի դեպք, որ շատ լավ պատկերացնում է, թե ի՛նչ հանգամանքների մեջ էր կատարվում քաղկեդոնականության հաղթանակը։ Եպիսկոպոսներից մեկը, ինչպես պատմում է Սեբեոսը[1], չհաղորդվեց, և իջնելով սեղանից, խառնվեց ամբոխի մեջ։ Պատարագից հետո, երբ կայսրն իր սենյակն էր գնացել, նրան պատմեցին այդ եպիսկոպոսի մասին, և նա հրամայեց իր մոտ բերել այդ ըմբոստին։ Եվ երկուսի միջև տեղի է ունենում այսպիսի խոսակցություն։ Կայսրը հարցնում է. «Քահանա՞ ես դու»։— «Եթե աստված կամենա, մեկ էլ ձեր փառքը», պատասխանում է եպիսկոպոսը։ «Ի՞նչ ես դու, որ ես՝ քո թագավորը և դա՝ քո կաթողիկոսն ու մեր հայրը, և դու արժանի չես համարում ինձ՝ քեզ հետ հաղորդվելու, ոչ էլ դրան»։— «Ես մի մեղավոր և անարժան մարդ եմ, ձեզ հետ հաղորդվելու արժանի չեմ, բայց եթե աստված արժանի աներ ձեզ հետ հաղորդվելու, այնպես կհամարեի, թե Քրիստոսի սեղանից և նրա ձեռքից եմ վայելում»։— «Այդ թո՛ղ և ինձ այն ասա՝ սա հայոց կաթողիկո՞ս է թե ոչ»։— «Այնպես, ինչպես սուրբ Գրիգորը»։— «Կաթողիկոս ընդունո՞ւմ ես սրան»։— «Այո՛»։— «Կհաղորդվի՞ս սրա հետ»— «Այնպես, ինչպես սուրբ Գրիգորի հետ»։— «Իսկ այսօր ինչո՞ւ չհաղորդվեցար»։— «Բարեբար թագավոր, մենք այն ժամանակ, որ ձեր պատկերը պատի վրա նկարած էինք տեսնում, էլի ահուդողի մեջ էինք ընկնում. ի՞նչ կլինի այժմ, երբ մենք իրար դեմ հանդիման ենք և բերանից բերան ենք խոսում։ Մենք տգետ և տխմար մարդիկ ենք, ոչ լեզու գիտենք, ոչ գիր։ Առաջ սովորում ենք, հետո միայն հասկանում, թե բանն ինչումն է, բայց քո բարեբար հրամանդ իշխում է բուժելով։ Մեր այս աշխարհում կաթողիկոսից ամեն տեսակ հրամաններ էին արձակվում, հենց այս իսկ տեղից, նրա ձեռքով հրապարակված։ Չորս տարի սրանից առաջ նա ժողով գումարեց և հավաքեց այստեղ

[1] Եր. 230—322։

բոլոր եպիսկոպոսներին, հավատի մասին գիր գրեց, կնքեց նախ իր, ապա մեր, վերջը նախարարների կնիքներով։ Այդ թուղթն այժմ իր մոտ է գտնվում։ Հրամայեցեք գտնել և տեսեք»։ Ներսեսն այս համարձակ մերկացման առջև մնաց պապանձված։ Կայսրն էլ, իհարկե, հիշեց, որ Դավիթ փիլիսոփայի առաքելությունը մերժված էր հենց Ներսեսի միջոցով։ Բայց և այնպես, գոհ լինելով, որ կաթողիկոսն այժմ գործում է բաց և համարձակ հօգուտ հոռոմների, բավականացավ նրանով, որ համարձակախոս եպիսկոպոսին էլ հաղորդել տվեց հունական ծեսով։

Բայց կարճատև եղավ քաղկեդոնականության հաղթանակը։ Կայսրը Հայոց աշխարհում երկար մնալ չէր կարող, կարևոր պետական գործերը կանչում էին նրան Կ. Պոլիս։ Թեոդորոս Ռշտունու տեղ Հայաստանի իշխան կարգելով Մուշեղ Մամիկոնյանին, նրան 3 հազար զորքով ուղարկեց Վասպուրական՝ այդ աշխարհը, նրա հետ նաև Ռշտունուն նվաճելու համար։ Առանձին գնդեր ուղարկվեցին նաև Վրաստան, Աղվանք և Սյունիք՝ հարկադրելու համար, որ հեռանան Թեոդորոս Ռշտունու հետ կնքած միաբանությունից։ Ինքը Կոստանդինն շտապով ուղևորվեց իր մայրաքաղաքը, տանելով իր հետ այն համոզմունքը, որ իրեն, այնուամենայնիվ, չհաջողվեց հայերին միացնել հունական եկեղեցուն։ Այս բանի անսխալ ապացույցն այն է, որ նրա հետ Դվինից հեռացավ և Ներսես կաթողիկոսը, որովհետև Թեոդորոս Ռշտունին և մյուս նախարարները սաստիկ զայրացել էին նրա վրա Դվինում կատարած միարարական գործողությունների համար։ Կաթողիկոսը քաշվեց իր Իշխան գյուղը Տայոց աշխարհում և հեռու էր պահում իրեն եկեղեցական գործերից։

Իսկ Թեոդորոս Ռշտունին իր փեսա Համազասպ Մամիկոնյանի հետ սպասում էր Աղթամար կղզում, թե ե՛րբ արաբները կուղարկեն խոստացած զինվորական օգնությունը։ Եվ իրավ, շուտով արաբական մի բանակ, թվով 7 հազար, կանգ առավ Աղիովիտ և Բզնունիք գավառներում, պատրաստ շարժվելու նրա հրամաններով։ Գարունը բացվելուն պես Թեոդորոսը, թողնելով իր կղզին, մի մեծ արշավանք սկսեց Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ իր դեմ ուղարկված զորքը հալածական անելու համար։ Հոռոմներն ամեն տեղ փախչում էին այդ արշավանքի առջև, և Թեոդորոսը քշեց նրանց մինչև Տայք նահանգի ծովեզրյա կողմերը, այստեղից էլ հարձակվեց Տրապիզոնի վրա, գրավեց այդ քաղաքը և մեծ քանակությամբ ավար և գերիներ տարավ իր հետ։ Այս քաջագործություններից հետո էր, որ Թեոդորոսը հարուստ ընծաներով գնաց Դամասկոս՝ խալիֆի փոխանորդ Մուավիային ներկայանալու համար։ Սիրիայի մայրաքաղաքում հայ իշխանը, իբրև դաշնակից, շքեղ ընդունելության արժանացավ։ Մուավիան նրան շատ թանկագին ընծաներ տվեց և հանձնեց նրան նաև Վրաստանի ու Աղվանից երկրի գլխավոր կառավարությունը։

Սակայն Թեոդորոսի քաղաքականության հաղթանակը երկարատև չէր։ Եվ այս ոչ թե այն պատճառով, որ արաբներն իրենց խոսքի տերը չհանդիսացան։ Դարձյալ հայ ավատական իշխաններն էին, որ երկպառակության դուռ բացին։ Ռշտունին հիվանդանում է և թողնելով կառավարչական գործերը, նորից քաշվում է իր Աղթամար կղզին։ Իսկ նախարարները, թե բյուզանդական բաժնից և թե արաբներին ենթարկված տեղերից, հավաքվում են, միաբանում իրար հետ, որպեսզի կարողանան գյուղացի ժողովրդի դրությունն ապահովել։ Հենց այդտեղ էլ վճռվում է, Թեոդորոսի հիվան-

դության պատճառով, բաժանել աշխարհը, ձիավորներ նշանակելով զանազան մասերի կառավարության համար և հարկապահանջներ նշանակելով ոսկի և արծաթ հավաքելու համար։ Բայց այս կարգադրությունը մեծ չարիք դարձավ հայ ժողովրդի համար։ Սկսվեցին սաստիկ կեղեքումներ, որոնք աղետալի կացության մեջ դրին հարկատու ժողովուրդը։ Սեբեոսը ժողովրդի դրությունը նմանեցնում է ծովում խեղդվողի դրության[1]։ Թեոդորոս Ռշտունին ուրիշ ճար չի գտնում այս աղետի դեմ, բայց եթե նորից զորք խնդրել արաբներից՝ այս անգամ արդեն իր հայրենակիցների դեմ, «զի հարց է զհայն և հալածական արասցէ», ինչպես բացատրում է նույն պատմիչը։ Ապստամբել էին և վրացիները, այնպես որ նրանց դեմ էլ պատժողական արշավանք սկսելու կարիք էր զգում հայոց սպարապետը։ Հայ նախարարների վարմունքի մեջ Թեոդորոսը կատարյալ իրավունք ուներ տեսնելու ոչ միայն անձնական չկամություն իր դեմ, այլև մի ամբողջ շարժում, որ իր քաղաքականության հակառակ էր գնում։

Եվ այս անգամ էլ եկան արաբական զորքերը։ Հարկերն էր, «անողորմ դահիճը», որ հսկում էր Հայաստանի վրա։ Արաբները մեկ անգամ էլ նվաճեցին Հայոց երկիրը ծայրե ծայր, իսկ բյուզանդական զորավար Մավրիանոսի ջանքերը՝ այդ հաղթական արշավանքը կանգնեցնելու համար՝ ոչինչ արդյունք չունեցան։ Այս անգամ Հայոց աշխարհի կատարյալ հնազանդությունն ապահովելու համար արաբները նշանավոր նախարարական տներից պատանդներ վերցրին, տղամարդ, կին թե երեխա, որոնց թիվը հասնում էր 1775-ի[2]։ Դրանց մեջ էին Գրիգոր Մամիկոնյանը և Սմբատ Բագրատունին։ Թեոդորոս Ռշտունին էլ ինքնակամ հետևեց այդ բազմության, երևի նորից Մուավիային ներկայանալու և նորից հայ-արաբական հարաբերությունները շտկելու համար։ Բայց Դամասկոսում նա վախճանվեց[3], և նրա դիակը տարան իր հայրենիքն ու այդտեղ թաղեցին։

5. Արաբա-բյուզանդական հարաբերությունները։ Թեոդորոս Ռշտունու մահից հետո Հայաստանում հաստատվում է մի դրություն, որ հատուկ էր այդ երկրի, իբրև քաղաքական մի թույլ կազմակերպության, ճակատագրին։ Հայ ժողովուրդը նորից և նորից սկսում է տարուբերվել իր հայրենիքի վրա իրավունքներ տարածող երկու մեծ պետությունների փոխհարաբերությունների միջև, հակվելով դեպի այն կողմը, որ ուժեղ էր հանդիսանում փոխադարձ մրցությունների մեջ։ Այդպես նա պարտավորված էր անել իր կյանքն ու խաղաղությունն ապահովելու համար, բայց դժբախտությունն այն էր, որ ուժեղացած կողմին հնազանդվելը գրգռում էր թու-

---

1 Եր. 239։

2 Յովհաննէս կաթողիկոս, եր. 113։

3 Ռշտունու մահվան տարեթիվը դժվար է ճշտել։ Ոմանք դրականապես հայտարարում են, որ նա մեռել է 656 թ. (Կ. Եզյան՝ Ղևոնդի առաջաբանի մեջ, կղ.), մինչդեռ, եթե հավատանք Ղևոնդին, Թեոդորոսն ապրում էր և Մոավիայի թագավորելուց (661 թ.) հետո էլ (եր. 13)։ Ղևոնդը պատմում է, որ Կոստանդին կայսրը մի քանի անգամ հրամայեց Ռշտունուն գնալ արաբների դեմ Սիրիա կռվելու, իսկ նա ստիպված եղավ հպատակվել այդ հրամանին այն ժամանակ, երբ կայսրն սպառնաց ջնջել նրա ընտանիքը։ Այդ ժամանակ միայն նա գնում է պատերազմ իր Վարդ անունով որդու հետ։ Այս մի հակասություն է Սեբեոսի պատմածներին և մանավանդ անհավատալի է երևում, եթե նկատի ունենանք Թեոդորոսի բնավորությունը, որ այնքան լավ ամբողջացած է Սեբեոսի նկարագրության մեջ։ Հավանական է թվում, որ Թեոդորոսը վախճանված լինի 659 թվին։

լացած կողմի դժգոհությունը, որ և աղետալի էր դառնում, երբ այդ կողմն էր սկսում ուժեղանալ։

Այն քաղաքականությունը, որի հեղինակն էր Թեոդորոս Ռշտունին, կարելի չեղավ պահպանել նրա մահից հետո, չնայած որ նրա փեսա Համազասպ Մամիկոնյանն էր, որ նրա տեղ Հայաստանի կառավարիչ նշանակվեց արաբների կողմից։ Պատճառներից մեկը, եթե ոչ գլխավորը, Ներսես կաթողիկոսն էր, որ նորից վերադարձավ իր պաշտոնին, հենց որ լսեց Ռշտունու մահը (659 թ.)։ Իր հետ նա նորից բերավ հունասիրական ձգտումները։ Հայաստանն այդ միջոցին ներկայացնում էր այդ տեսակ ուղղության նպաստող միջավայր։ Արաբական խստությունները, որոնց պատճառով, հավանորեն, Դամասկոս էր գնում Ռշտունին, արդեն այնքան նեղում էին հայերին, որ նորից հասունացավ և ստիպողական անհրաժեշտություն դարձավ բյուզանդական կայսրի հովանավորության դիմելը։ Ներսեսն էր, որ դարձյալ կատարում էր այդ միջնորդությունը Համազասպ Մամիկոնյանի համաձայնությամբ։ Կոստանդինն ուրախությամբ ընդունում էր այդ խնդիրը։ Այս դիմումին արաբները պատասխանեցին կոտորելով իրենց տարած պատանդներին, որոնց թիվն էր, ինչպես գիտենք, 1775, ազատվեցին միմիայն 20 հոգի։ Բայց այդքան թանկ գնով Հայաստանը ձեռք էր բերում մի համեմատաբար նախանձելի անդորրություն։ Արաբները չկարողացան ավելի դաժան պատժի ենթարկել երկիրը, որովհետև այդ միջոցին նրանք զբաղված էին ներքին ազգամիջյան կռիվներով։ Ալիի խալիֆի ժամանակն էր այդ (656—661 թթ.), երբ, ինչպես տեսանք, արյունահեղ պայքար էր մղվում մարգարեի ժառանգության համար, նրա և Մուավիայի միջև, մի պայքար, որ վերջացավ Ալիի սպանությամբ և Մուավիայի կատարյալ հաղթանակով։ Մուավիան, մի շատ ուժեղ, երկաթե կամքի տեր մարդ, հիմնում էր Օմայան հարստությունը, որի մայրաքաղաքը դառնում էր Դամասկոսը։ Այն ժամանակները համարյա ամբողջ Սիրիայի ազգաբնակությունը բաղկացած էր քրիստոնյաներից, և այսպիսի մի միջավայրում իսլամական աստվածապետություն հիմնել կարելի էր գործադրելով մի լայնահայացք քաղաքականություն։ Մուավիան այդ բանի մեջ էլ խոշոր ընդունակություն ցույց տվեց։ Նրա կրոնական համբերողությունը հասնում էր այն աստիճանին, որ նրա ամենաազդեցիկ խորհրդականներից մեկը մի սիրիացի քրիստոնյա էր[1]։

Դրությունն Արևելքում փոփոխվում էր, ուժը նորից արաբների կողմն էր անցնում։ Եվ այս հանգամանքն իսկույն անդրադառնում է Հայաստանում։ Համազասպ Մամիկոնյանը, որ Կոստանդին կայսրի կողմից ճանաչված էր Հայաստանի կառավարիչ՝ կյուրապաղատ տիտղոսով, վախճանվեց, և երբ խորհրդակցություն կազմվեց, թե ո՛վ պիտի հաջորդե նրան, նախարարները եկան այն եզրակացության, թե այժմ պետք է անցնել արաբների կողմը և խալիֆից խնդրել, որ կառավարիչ նշանակվի Համազասպի եղբայր Գրիգոր Մամիկոնյանը։ Այս համաձայնության հարում է և Ներսես կաթողիկոսը, որ և այսպիսով իր կյանքի վերջում երես է դարձնում հույներից և հետևում իր հակառակորդ Թեոդորոս Ռշտունու քաղաքականության։ Հաղթող հանդիսանում էր, վերջիվերջո, երկու հզոր տերերից մեկը, արաբական խալիֆաթը։ Ամիրապետին դիմելու անհրաժեշտությունը բխում

[1] Huart, „Hist. des Arabes“, I, p. 261.

էր և այն հանգամանքից, որ Գրիգոր Մամիկոնյանը Դամասկոս տարած պատանդներից մեկն էր, մեկը նաև այն քսանից, որոնք ազատվեցին կոտորածից։ Մուավիան կատարում է հայերի խնդիրը, և սկսվում է Գրիգոր Մամիկոնյանի երկարատև կառավարությունը (661—682 թթ.)։ Բայց հենց նույն 661 թվին վախճանվում է Ներսես կաթողիկոսը։ Դա մեկն էր հայ եկեղեցական նշանավոր գործիչներից, որ ավելի հռչակ ստացել է իր գեղեցիկ շինություններով, ուստի և կոչվում է Շինող։ Այդ շինությունների մեջ նշանավոր է մանավանդ Զվարթնոց եկեղեցին Վաղարշապատում, ուր նա տեղափոխեց իր աթոռը Դվինից, կառուցելով իր եկեղեցու մոտ ապարանք՝ իր բնակության համար[1]։

Որքան ժամանակ որ իսլամի ղեկը գտնվում էր Մուավիայի ձեռքին, Հայաստանը վայելեց խաղաղություն, անձնամուր լինելով, ինչպես միշտ էր այն նկատվում, շինարարական աշխատանքի։ Այս շրջանը քսան տարուց ավելի մի ժամանակամիջոց է, երբ Գրիգոր Մամիկոնյանը մի կորովով, որ իր տոհմին էր հատուկ, կառավարում է երկիրը։ Մեր պատմագիրները միայն գովասանքի խոսք ունեին նրա մասին։ «Բարեպաշտ և երկյուղած Աստուծոյ,— ասում է նրանցից մեկը,— և առաջնորդ գտեալ յոքնապատիկ կարգաց և ուղղութեանց, շինութեան և խաղաղութեան, ի ապահովութեան և ի բոլոր մասն լրութեան»[2]։ Տարաբախտաբար, մենք չգիտենք, թե այդ ի՛նչ կարգեր և ուղղություններ են, որ Մամիկոնյան իշխանը մտցրել է հայ կյանքի մեջ։ Հայտնի է միայն, որ նա ապահովեց իր հայրենիքի խաղաղությունը, ազատ պահելով նրան դրսի հարձակումներից և ավազակություններից[3]։ Իսկ այս այնպիսի մի երջանկություն էր Հայաստանի համար, որ հասկանալի էր դարձնում նրա հեղինակի վերաբերմամբ տածած երախտագիտությունը։ Բնավորությամբ Մամիկոնյան իշխանը մեղմ ու քաղցրաբարո էր, եղբայրասեր։ Եվ խաղաղ ու շինարար ժամանակն ամենից առաջ հենց իրան, Գրիգոր իշխանին էր անհրաժեշտ, նրա մեջ նստած խոշոր կուլտուրական հակումներին բավարարություն տալու համար։ Այդ հակումների հայտարարներն էին Արուճ գյուղում (այժմ Թալիշ, էջմիածնի գավառում) նրա կառուցած եկեղեցին և իր բնակության հատկացրած ապարանքը («արքունիքը»), ինչպես նաև Եղվարդ գյուղի մոտ շինած վանքը։ Հովհաննես կաթողիկոսն այսպես է նկարագրում Արուճի շինությունները. «Հիմնադրեալ զշքնաղագեղ եկեղեցին՝ որ ի մեծ դաստակերտին Արուճ, շինէ զնա ստիպով երկնային իմն ճեմարան յարդարեալ ի վերայ երկրի. և ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիսն իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպս վիմարդ քարացն»[4]։

Հայաստանի այս բարեբեր և շինարար քաղաքականությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ երկիրն առժամանակ արաբների և բյուզանդացիների մրցակցության դաշտից դուրս էր մնացել77։ Մուավիան

[1] Օրմանյան, «Ազգապատում», էջ 737։

[2] Յովհաննէս կաթողիկոս, եր. 115։

[3] Ղևոնդ, եր. 15։

[4] Եր, 116։ Ներկայումս եկեղեցու ավերակներն են միայն մնացել, որոնք պահել են Շինողի հետևյալ արձանագրությունը՝ «Ի և Թ ամի Կոստանդնի Մարերի ամսոյ որ աւր Ժ և Ե հիմն արկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի և Հեղինէի նորին զուգակցի ի բարեխաւսութիւն շինողաց զսա» (Գարեգին վարդ. Հովսեփյան, «Քարտեզ Հայ Հնագրութեան», էջմիածին, 1913, եր. 6)։

շարունակ մտածում էր Բյուզանդիան ոչնչացնելու մասին, բայց իր հար-
վածներն ուղղում էր նրա մայրաքաղաքի դեմ ծովից և Փոքր Ասիայի ցա-
մաքի կողմից։ Հայաստանն այսպիսով պատերազմական բեմ չէր։ Ծովային
արշավանքները Մուավիան առաջ էր տանում մի համառ խիզախությամբ,
որ իսկապես արժանի էր ամենայն զարմանքի։ 673 թվականից արաբա-
կան ուժեղ նավատորմը պաշարում էր, ամառվա ընթացքում, Կ. Պոլիսը,
իսկ ձմեռը հեռանում էր։ Եվ այսպես անփոփոխ շարունակվեց մինչև 677 թ.,
երբ փոթորիկը ոչնչացրեց նավատորմի մեծ մասը, իսկ մնացածը սաստիկ
պարտություն կրեց բյուզանդացիներից։ Անհաջողությունն այնքան մեծ
էր, որ Մուավիան շտապեց հաշտություն կնքել Կոստանդին կայսրի հետ
30 տարի ժամանակով և նույնիսկ հանձն առավ տարեկան խոշոր հարկ
վճարել նրան։ Անխոնջ և եռանդոտ խալիֆի մահը (680 թ.) ավելի ևս
նպաստում է բյուզանդական ազդեցության բարձրացման։ Մուավիային հա-
ջորդում է որդին՝ Եզիդը, որի ժամանակ դարձյալ ծայր են տալիս ազգա-
միջյան արյունահեղությունները մարգարեի ժառանգության շուրջը (Հու-
սեինի սպանությունը և այլն)։ Եզիդը միայն երեք տարի է թագավորում։
Նրան հաջորդած երկու խալիֆներին միասին, նույնիսկ այդքանն էլ չվի-
ճակվեց։ Խալիֆաթը նորից թուլացած է և չի կարող արտաքին հարաբերու-
թյունների մեջ ուժ ու կարողություն ցուցադրել, այնպես որ Հայաստանը,
Վրաստանը և Աղվանքը դադարում են հարկ վճարելուց[1]։

Բայց այս երեք հարևան և բախտակից երկրները 680 թվականին
ենթարկվեցին մի ուրիշ մեծ վտանգի։ Թուրքական այն ցեղերը, որոնք
ապրում էին Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմում և միշտ պատրաստ
էին Այսրկովկասի խաղաղ ազգաբնակության համար, իրենց արշավանք-
ներից մեկը կրկնեցին այդ տարին78։ Դրանք խազարներն էին, որոնց հետ
պատերազմի բռնվեցին հարձակման ենթարկված երկրները։ Մեծ կոտորած-
ներ և խառնակություններ եղան և մի մեծ ճակատամարտի մեջ սպանվե-
ցին թե Գրիգոր Մամիկոնյանը և թե ուրիշ շատ նախարարներ, նաև վրա-
ցիների և աղվանների կողմից։ Այս տակնուվրայություններն անհաստատ,
խառնաշփոթ դրություն են ստեղծում Հայաստանում։ Բայց երկրի բախտն
էր, որ Մամիկոնյանին կարող էր հաջորդել նրան արժանի մի կարող իշխան՝
այս անգամ Բագրատունյաց տոհմից։ Դա Աշոտ իշխանն էր, Սմբատի որ-
դին և Վարազտիրոցի թոռը, ասել է՝ շառավիղը Վրկանա մարզպան Սմբատ
Բագրատունու կամ Խոսրով-Շումի։ Հայտնի չէ, թե ի՛նչ պատճառով նա
այս անգամ միայն երեք տարի կառավարեց Հայաստանը (682—685 թթ.),
բայց այդ կարճ ժամանակն էլ բավական պիտի լիներ, որ նա կարողանար
նշանակելի ծառայություններ մատուցել իր հայրենիքին։ «Ծոխ և պերճ
յիշխանութեանն,— ասում է պատմիչը նրա մասին,— և յամենայն վար-
երկրայինս զգաստ և առաքինամէր և ազնուական քան զամենեսեան և ծա-
նօթ երկիւղին Աստուծոյ, և հոգաբարձու ամենայն բարեգործութեան, փոյթ
յուսումնասիրութեանն»։ Այս հատկություններով նա դարձել էր ամբողջ
աշխարհում «այր երևելի և նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց»[2]։
Աշխատելով աշխարհի շինության համար, նա ինքն էլ շինարարական գե-
ղեցիկ ձիրք ցույց տվեց, կառուցելով մի եկեղեցի իր հայրենի Դարոնք

---

[1] Ղևոնդ, եր. 15։

[2] Ղևոնդ, եր. 16։

խամ Դարյունք գյուղում (այժմ Հին Բայազետ), ուր գտնվում էր Բագրատու-
նիների տոհմային գերեզմանատունը։

Սակայն Հայաստանին վիճակված խաղաղ շրջանը մոտենում էր իր
վախճանին։ 685 թվին, երբ Աշոտ Բագրատունին թողեց իր կառավարչա-
կան պաշտոնը, Դամասկոսի և Կ. Պոլսի գահերի վրա նշանավոր փոփոխու-
թյուններ էին տեղի ունենում։ Ամիրապետության իշխանությունն անցնում
էր Մրվանի որդի Աբդ-էլ-Մելիքին (685—705), որ մի ուժեղ և եռանդոտ
միապետ էր, իսկ Բյուզանդիայի կայսերական գահի վրա նստում էր 17
տարեկան Հուստինիանոս Բ-ն (685—695 և 705—711), որը գազանային դա-
ժանության հասնող անգթությամբ և արյունռուշտ հակումներով տոգորված
մի մարդ էր, կամքի տեր, պատերազմասեր։ Այսպիսի վեհապետներ, մա-
նավանդ որ երկուսն էլ լցված էին կրոնական ֆանատիկոսությամբ, աշխարհ
էին եկել իրար հետ ընդհարվելու համար։ Առիթներ որոնողը երիտասարդ
կայսրն էր, մինչդեռ խալիֆը, դեռ զբաղված լինելով իր երկրի մեջ շարու-
նակվող ներքին կռիվներով, պատրաստ էր նույնիսկ ավելի մեծ հարկ տալ
Բյուզանդիային, միայն թե ապահով լինի նրա կողմից։ Բայց Հուստինիա-
նոսը չկամեցավ նույնիսկ իր հոր ստորագրած դաշնագիրը հարգել, որով
30 տարվա հաշտություն էր հաստատում երկու պետությունների միջև և
իր առաջին գործերից մեկը դարձրեց Հայաստան մի խոշոր բանակ ուղար-
կելը, որի գլխավոր հրամանատար նշանակվեց Լևոնտիոս (մեր պատմագիր-
ների Ղևոնդիոս) զորավարը։ Եվ այսպես, Հայաստանի վայելած խաղաղու-
թյունը խանգարողները քրիստոնյա հույներն էին։ Այդ ժամանակ, Աշոտ
Բագրատունուն հաջորդելով, Հայաստանի կառավարիչ էր մի ուրիշ նշանա-
վոր նախարար—Ներսեհ Կամսարականը։ Բայց նա, իհարկե, ոչինչ չէր կա-
րող անել կայսերական բանակի դեմ, իսկ արաբները թողեցին Հայաստանն
անպաշտպան։ Հուստինիանոսն իր զորավարին հրահանգել էր վարվել Հա-
յաստանի հետ իբրև թշնամուն պատկանող մի երկրի հետ, մանավանդ որ
ինքն էլ, իբրև հարազատ բյուզանդական օրթոդոքս, նկատի ուներ պատ-
ժել հերձվածող հայերին և նրանց կրոնական միության բերել ահ ներշնչե-
լու միջոցով։

Եվ կայսերական բանակը, մտնելով Հայաստան (688), սկսեց ավե-
րել, քանդել, հրդեհել, չխնայելով մանավանդ «գեղեցկահարմար շինու-
թյունները»[1]։ Ոչ մի դիմադրության չէր հանդիպում քրիստոնյա բանակը,
ուստի նրա ավերիչ արշավանքներն ընդունում էին ավազակության կեր-
պարանք[2]։ Պատմվում է, որ բյուզանդական զորքը քարուքանդ արավ 25
գավառ և գերի տարավ 8 հազար տուն հայ ժողովուրդ[3]։ Աբդ-էլ-Մելիքն
ստիպված եղավ նույնիսկ ավելացնել ստորացուցիչ հարկը, որ տալիս էր
ինքը և Հայաստանը[4] վերադարձնել հույներին։

Այս դաշնադրությունը կնքվում էր 689 թվականին և Աբդ-էլ-Մելիքը
կատարյալ հնարավորություն էր ստանում իր ամբողջ ուժը կենտրոնացնե-
լու իր ներքին թշնամիների դեմ։ Սրանից հետո է, որ Հուստինիանոսը մի
մեծ բանակով գալիս է Հայաստան և կանգ առնելով Թասենում, բաժանում

---

[1] Ղևոնդ, եր. 17։

[2] Г. Ф. Герцберг, «История Византии», М., 1897, стр. 55.

[3] Ստեփանոս Ասողիկ, «Պատմութիւն Տիեզերական», Փարիզ, 1959, եր. 101։

[4] Мюллер, «История Ислама», т. II, СПБ, 1895, стр. 57.

է բանակը երեք մասի և ուղարկում է Վրաստան, Աղվանք և Հայաստանի զանազան կողմերը՝ բյուզանդական տիրապետությունը հաստատելու համար։ Այս նպատակով նա իր մոտ է հավաքում այդ երեք երկրների նախարարներին, որոնք, սակայն, ակամա, հարկադրված են կատարում այդ հրամանը։ Կայսրը դրանց մեջ ընտրում է պատանդներ և ուղարկում է Կ. Պոլիս[1]։ Հայերից նա աշխարհական պատանդներ չի վերցնում, այլ ժամանակի կաթողիկոս Սահակ Ձորոփորեցուն և նրա հետ հինգ եպիսկոպոսների գուցե հենց այն դիտավորությամբ, որ նրանց միջոցով հայերին հարկադրե ընդունել քաղկեդոնականություն։ Իսկ Հայաստանի կառավարությունը նա հանձնում է Աշոտ Բագրատունուն79, տալով նրան և պատրիկ տիտղոսը։

Այս անգամ էլ Աշոտ պատրիկը կարճատև իշխանություն պիտի ունենար։ Հազիվ էր չորս տարի կառավարել հայրենի աշխարհը, և ահա նորից սարսափ տարածվեց Արևելյան Հայաստանում։ Արաբական մի զորաբաժին, Պարսկաստանից խուժելով Արաքսի հովիտը, հրոսակային շահատակությունների ասպարեզ դարձրեց մի քանի վայրեր—Խրամ, Ջուղա և Խոշակունիք։ Բնակիչներին կեղեքում էին ծանր հարկապահանջությամբ, ավերում ու հափշտակում էին։ Աշոտ պատրիկն իր գնդով գնում է այդ հրոսակային արշավանքի դեմ, ջարդում է արաբներին և փախուստի մատնում։ Փախչողները, իրենց ազատելու համար, դաշտի մեջ թափում են իրենց հափշտակած գանձերը, և հայերը, գրավվելով այդ ավարով, կանգ են առնում նրան տիրանալու համար։ Մի փոքր մասը միայն, Աշոտ պատրիկի հետ միասին, ուշադրություն չդարձնելով թափված հարստության վրա, շարունակում է հետապնդել թշնամուն։ Արաբները, տեսնելով, որ իրենց խորամանկությունը հաջողվել է, ետ են դառնում և հարձակվում Աշոտի վրա։ Փոքրիկ խումբը, քաջաբար դիմադրելով, մենակ չէ մնում անհավասար կռվի մեջ, որովհետև թիկունքում ավարով տարվածները, հենց որ լսում են պատերազմական ճիչերը, թողնում են ամեն ինչ և իրենց ընկերներին օգնության հասնելով, ջարդում են հրոսակի մնացորդները և փախցնում։ Սակայն հայ գունդը խոշոր կորուստ է կրում։ Աշոտ պատրիկը ծանր վերք է ստանում կռվի մեջ։ Նրան տանում են Դարյունք, ուր և վախճանվում է նա (692 թ.)։

Նրան հաջորդում է նորից Ներսեհ Կամսարականը, որ նույնպես ստացել էր բյուզանդական «պատրիկ» կոչումը (692—695)։ Այս իշխանն էլ իր ժամանակի նշանավոր կուլտուրական դեմքերից մեկն էր։ Նա էլ մասնակցել է իր դարի վերին աստիճանի եռանդուն շինարարական շարժման և իր համար հիշատակարան է թողել Թալինի (Էջմիածնի գավառ) եկեղեցին[2]։ Բայց նա դրանից ավելի աչքի էր ընկնում իր գրասիրությամբ։ Այս հանգամանքը հատուկ էր առհասարակ Կամսարականների տանը, և մենք արդեն տեսանք 5-րդ դարի երկրորդ կեսում, որ Կամսարականների մոտ էր ապրում Ղազար Փարպեցին։ Այժմ էլ համանուն Ներսեհ Կամսարականը հովանավորում էր 7-րդ դարի հայ նշանավոր մատենագիրներից մեկին, Անա-

[1] Ասողիկ, եր. 102։

[2] Ահա այդ եկեղեցու վրա մնացած արձանագրությունը. «Ես Ներսեհ ապոհյպատ պատրիկ, Շիրակայ և Աշարունեաց տէր, շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Աստուածածնին ի բարեխաւսութիւն ինձ և Շուշանայ ամուսնոյ իմոյ և Հրահատայ որդւոյ մերոյ» (Գար. վարդ. Հովսեփյան. «Քարտ. Հայ Հնագր.»)։ Ներսեհ անունը հիշատակվում է և նրա ժամանակ շինված ուրիշ մի քանի եկեղեցիների արձանագրությունների մեջ։

նիա Շիրակացուն, որ կոչվում էր նաև Անեցի։ Բացի դրանից՝ նա, ինչպես կտեսնենք, մեկենաս էլ է հանդիսացել մի քանի թարգմանությունների համար։

Սակայն Շիրակի և Արշարունյաց տիրոջ այս խաղաղ-շինարարական հակումները չկարողացան խաղաղություն արդյունավորել Հայաստանի համար, և նրա կարճատև կառավարությունն անցավ վերին աստիճանի դժբախտ քաղաքական հանգամանքների մեջ։ Այս դժբախտությունն ամենից քիչ կախված էր հայ ժողովրդի և նրա իշխանի կամքից։ Հայաստանի համար ճակատագիր կռողը, ինչպես միշտ, այս անգամ էլ նրան տիրող մեծ պետությունների փոխհարաբերություններն էին։ Հուստինիանոս Բ-ն մի կամ ամենաշատը երկու տարի կատարեց այն պայմանը, որ կապել էր Աբդ-էլ-Մելիքի հետ 689 թվին։ Այնուհետև նա ինքը խախտեց այդ դաշնադրությունը մի շատ դատարկ պատճառաբանությամբ[1]։ Հենց այդ միջոցին էլ, երբ սկսվում էին պատերազմական գործողությունները, Աբդ-էլ-Մելիքը վերջացնում էր կռիվն իր ներքին թշնամիների դեմ կատարյալ հաղթանակով, ուստի և կարող էր ներսից իրեն ապահովված զգալ բյուզանդական ուժի հետ չափվելու համար։

Պատերազմական գործողությունների դաշտ դարձան Սիրիայի հյուսիսային սահմանները։ Հուստինիանոսը չկարողացավ անցնել այդ սահմանները, և ընդհարումները տեղի ունեին բյուզանդական հողի վրա, Կապադովկիայում և Կիլիկիայում։ Արաբական զորքի գլխավոր հրամանատարն էր խալիֆի եղբայրը, Մուհամմեդ իբն Մերվանը, որ ճարպիկ գործողություններով հաջողեցրեց իր կողմը գրավել բյուզանդական բանակի գլխավոր ուժը կազմող սլավոնական զորքը, որ 30 հազար հոգուց էր բաղկացած։ Այս բանից հետո 692 թվին Հուստինիանոսի բանակը շատ ծանր պարտություն կրեց Կիլիկիայում, Սևաստոպոլիս բերդի մոտ։ Այս պարտությունն ահագին նշանակություն է ստանում ամբողջ Արևմտյան Ասիայի ճակատագրի համար։ Արաբները ձեռք են բերում այնպիսի գերակշռություն, որ այնուհետև արաբա-բյուզանդական պատերազմների մշտական դուռ է բաց անում, և մի շարք սերունդներ այդ պատերազմները մղելու ծանր պարտականություն էին կատարում։

Ճակատագրական էր 693 թվի պարտությունը մանավանդ Հայաստանի համար։ Օգուտ քաղելով իր խոշոր հաջողությունից, Աբդ-էլ-Մելիքը վճռում է միանգամ ընդմիշտ ամուր կերպով հաստատվել այդ երկրում, դարձնել նրան արաբական նահանգ, որ այնուհետև պիտի դադարեր կռվախնձոր լինելուց երկու մեծ պետությունների միջև։ Այս ծրագրի իրագործումն էլ հանձնվում էր նույն Մուհամմեդ իբն Մերվանին, որ և կործանում է մտցնում Հայաստանի մեջ։ «Հետևյալ տարուց ևեթ (73 կամ 74 թ. հիջրեթի=693) արաբները,— գրում է իսլամի պատմագիրը,— խուժում են դժբախտ երկրի մեջ, տարածելով իրենց գիշատիչ արշավների բոլոր սարսափները։ Կեղեքվելով ներքին անհամաձայնություններից, որոնք նախարարների փոխադարձ հակառակությունների անխուսափելի հետևանքներն էին, երկիրն անօգնական էր։ Յուրաքանչյուր մեկը ղեկավարվում էր իր անձնական շա-

[1] Աբդ-էլ-Մելիքը Հուստինիանոսին հարկ վճարում էր բյուզանդական ոսկիներով, բայց հետո ինքն էլ սկսեց ոսկի դրամներ կտրել, որոնց [վրա] տպված էին Ղուրանից մի քանի տողեր։ Այս էլ պատճառ դարձավ արաբ-բյուզանդական պատերազմի համար։

հով. ոմանք բյուզանդացիների կողմն էին պահում, ոմանք՝ արաբների։ Անջատ ուժերը կորչում էին աննպատակ և անջատ ապստամբությունների մեջ»[1]։ Դարձյալ բյուզանդական զորավարներից մեկն էր, որ հաջողակ մի շարժումով դնում էր արաբներին այնպիսի դրության մեջ, որ նրանք ստիպված էին թողնել Հայաստանը։ Սակայն հետևյալ տարին (695 թ.) Մուհամմեդ իբն Մերվանը նորից վերանորոգում էր իր արշավները դեպի Հայաստանի ներսերը։ Այդ ժամանակ էլ նա, երևի, նշանակվեց Միջագետքի և Հայաստանի ընդհանուր կառավարիչ[2]։ Բայց վերջնական հաջողության հասնելու համար նա դեռ մի քանի տարի էլ պիտի աշխատեր։

695 թվին Կ. Պոլսում պայթեց պալատական հեղաշրջում Հուստինիանոսի դեմ։ Շարժման գլուխ էր անցել Լևոնտիոս զորավարը, որ և գահընկեց արավ արյունռուշտ կայսրին, կտրել տվեց նրա քիթը և աքսոր ուղարկելով Քերսոն քաղաքը, ինքը նստեց նրա տեղ գահի վրա։ Պատճառը միայն 692 թվի պարտությունը չէր—ժողովուրդը շատ էր զզվել Հուստինիանոսի անգթություններից։ Սակայն այս գահակալական փոփոխությունը քաղաքական շահավետ հետևանքներ չունեցավ Բյուզանդիայի համար։ Ընդհակառակը, հենց Լևոնտիոս կայսրի օրով էր, որ արաբները գրավեցին Աֆրիկայի հյուսիսային ափերը։ Հայաստանի ճակատագրի վրա էլ Լևոնտիոսի թույլ կառավարությունը ոչինչ ազդեցություն չարավ, և նրա ձեռքով կատարված հեղաշրջման միակ հետևանքը, հայկական տեսակետից, եղավ այն, որ Սահակ կաթողիկոսն ու հինգ եպիսկոպոսները, ազատություն ստանալով, վերադարձան հայրենիք։ Եվ Լևոնտիոսը, եթե ընդունակություն էլ ունենար, չէր կարող աչքի ընկնող մի գործ կատարել, քանի որ երեք տարի միայն կարողացավ պահվել իր հափշտակած գահի վրա։ 698 թվին մի նոր թեկնածու զորեղացավ և գահընկեց անելով նրան, կայսր հռչակվեց՝ Տիբերիոս Գ անունով (698—705)։

Այս նոր իշխողն էլ անկարող եղավ կանգնեցնել արաբական առաջխաղացությունները, և Մուհամմեդ իբն Մերվանը կատարյալ ազատություն ստացավ իրականացնելու Հայաստանի վերջնական ընկճումը հրով և սրով։ Նրա արյունոտ գործունեության ամբողջ պատմությունը չի տալիս ժամանակակից մատենագիր Ղևոնդը։ Եվ նրա հաղորդած կցկտուր տեղեկությունները փոքր-ինչ լրացնում են այն ավանդական պատմությունները, որ անում է 10-րդ դարում ապրած մի մատենագիր, այն է՝ Մովսես Կաղանկատվացու Պատմագրության շարունակողը։ Եթե հավատանք ուշ ժամանակների այդ աղբյուրին, Մուհամմեդ իբն Մերվանը 696 թվին գնում է Հայաստան իբրև կառավարիչ, բայց թողնելով իր զորքերի մի մասը Դվինում, շտապով անցնում է Աղվանից աշխարհը, արշավելով դեպի Ճողա, Կովկասյան անցքը (Դերբենդ), որ միշտ վտանգ էր սպառնում Այսրկովկասին իբրև միակ հարմար ճանապարհ հյուսիսային գիշատիչ ցեղերի, հատկապես խազարների և հոների արշավանքների համար։ Մինչդեռ այդտեղ զբաղված էր արաբ զորավարը, Հայաստանում տեղի է ունենում մի ահավոր շարժում։ Հայերը, հոռոմներից մեծ օգնություն ստանալով, հարձակվում են Դվինում մնացած արաբների վրա և նրանց ամենքին կոտո-

¹ Мюллер, «Ист. Ислама», т. II, стр. 91.

² Huart, "His. des Arabes", t. I, p. 266.

րում են։ Սպանվածների թիվը ավանդությունը որոշում է վաթսուներկու հազար, բայց այս ակնհայտնի չափազանցություն է[1]։

Մուհամմեդը շտապում է վերադառնալ և պատժում է հայերին սոսկալի դաժանությամբ։ Սարսափահար իշխանները և ժողովուրդը չեն կարողանում դիմադրել, որովհետև հոռոմների օգնական զորքը, պարտություն կրելով, հեռացել էր Հայաստանից։ Մնաց բերդերի ամրության ապավինել։ Բայց Մուհամմեդը կանգ չառավ այդպիսի արգելքների առջև։ Վրիժառությունը սոսկալի էր։ Ժողովրդական տագնապն այնքան մեծ էր, որ ապրողները, Ղևոնդի ասելով, երանի էին տալիս մեռածներին։ «Արյունարբու և այսակիր» Մուհամմեդը, ինչպես անվանում է նրան նույն պատմիչը, միանգամից պաշարման ենթարկեց այն բերդերը, ուր ամրացել էին նախարարները։ Առաջինն այն բերդն էր, որը շինված էր Սևանա կղզում և որն ամենից շատ դիմացավ։ Մուհամմեդին տեսնում ենք կամ այդտեղ, կամ Հայաստանի հարավային ծայրում, Մոկս նահանգի Ջերմաձոր գավառում, ուր, երևի, փախել էին նախարարներից շատ շատերը։ Պաշարելով այդ գավառի ամուր բերդերը, արաբ հրամանատարը, վրեժի զգացմունքը հագեցնելու համար, կանգ չառավ և խորամանկությունների, երդմնազանցության առջև անգամ։ Այս կերպ խաբելով պաշարվածներին, բոլորին դուրս հանեց բերդերից, տղամարդկանց սրի քաշեց, իսկ կանանց և երեխաներին գերի տարավ։ Միևնույն վիճակին ենթարկվեց և Սևանը, երբ սա երկու տարվա պաշարումից հետո ստիպված եղավ անձնատուր լինել։ Բերդն էլ հիմնահատակ կործանվեց։ Կսկծեցուցիչ էր մանավանդ տնտեսական խորտակումը։ Երկիրը կողոպտելու, հարստությունները պլոկելու համար ոչ մի միջոց չէր խնայվում։ Բագրևանդի ս. Գրիգոր վանքի մեծամեծ հարստություններից շլացած մի խումբ զինվորներ, օգուտ քաղելով, որ ասպնջականություն են գտել գիշերելու համար, սպանում են իրենց ծառաներից մեկին և այդ ոճիրը միաբանների վրա գցելով, թույլտվություն են ստանում իրենց զորապետից միաբաններին կոտորելու և բոլոր եկեղեցական սպասները, զարդերը, ոսկին ու արծաթը հափշտակելու։

Երկու տարի այսպես աշխատելուց հետո Մուհամմեդ իբն Մերվանը թողնում է Աբդլա անունով մեկին իր գործը շարունակելու, իսկ ինքը գնում է Սիրիա (հավանորեն 700 թվականին)[2]։ «Իսկ բնակիչք աշխարհիս,— ասում է Ղևոնդը,— մնացին իբրև զխանձող ծխեալ ի հրոյ»[3]։ Այս ուժեղ պատկերավոր համեմատությունը շատ լավ բնորոշում է Հայաստանում ստեղծված նոր դրությունը։ Փոխվում էր արաբական տիրապետության բնավորությունը։ Այնուհետև Հայաստանը ենթարկվում էր արաբական իշխանության իրականապես և անմիջապես։ Հայոց պատմությունը նոր գունավորումներ է ստանում, նոր կերպարանավորումների հանդիսավայր դառնում։

Իսկ ժողովրդական վրեժխնդիր ավանդությունը չխնայեց Հայոց աշխարհի դժբախտության հեղինակի հիշատակը։ Նա պատմում էր, թե Մուհամմեդ իբն Մերվանը Սիրիայում բռնվեց մի դժնդակ հիվանդությամբ, որ յոթն ամիս նրան հոգեվարքի մեջ պահեց և ապա հազիվ միայն սատկեցրեց։

¹ Կաղանկատվացի, եր. 366։

² Կաղանկատվացու Պատմության շարունակության մեջ ասված է, թե Մուհամմեդը հավաքեց նախարարներին Նախճավան ու Խրամ քաղաքներում և այրեց հարյուրավոր հոգիներ։ Բայց այս մեծ աղետը Մուհամմեդից հետո է տեղի ունեցել։

³ Եր. 22։

Երեք անգամ թաղեցին նրան, բայց հողը չուզեց ընդունել նրան և երեք անգամն էլ դուրս ձգեց նրան։ Ուստի մի շուն բռնեցին և շամփրեցին շար Մուհամմեդի հետ։ Եվ միայն այժմ հողը հաճեց ծածկել նրան իր շերտերի մեջ[1]։ Այս առասպելը ցույց է տալիս, թե Մուհամմեդը ո՛րքան զզվանք էր պատճառել ժողովրդին իր անգթություններով։

6. Հայաստան և Աղվանք: Այս նոր կերպավորումներից մեկը կարելի է տեսնել հայ-աղվանական հարաբերությունների մեջ։ Արաբական տիրապետությունն ավելի ևս նպաստում էր հայ և աղվան ժողովուրդների մերձեցման։ Կրոնակցությունը, քաղաքական միօրինակ ճակատագիրը երկու դրացի ժողովուրդների համար կացության միատեսակ պայմաններ էին ստեղծում իսլամի ուժեղ տիրապետության տակ։ Եվ ընդհանուր թշնամու դեմ փոքր ի շատե հաջող կերպով ինքնապաշտպանության հնարավորություններ հաստատելու համար հայերն ու աղվանները պիտի ավելի ևս զարգացնեին իրար մոտ լինելու, իրար փոխադարձաբար պաշտպանելու միջոցները։ Այս հրամայողական պարագաների մեջ ավելի արագանալ, ավելի խորանալ ու հիմնավորվել կարող էր ձուլման գործողությունը, որ, ինչպես տեսանք[2], սկսված էր վաղուց և արդեն զարգացման բավական երկար ճանապարհ էլ էր անցել։ Եվ իրավ, արաբական տիրապետությունը շուտով մեզ ցույց կտա, թե որ ժամանակ է, որ վերջանում է աղվան ժողովրդի մի շատ խոշոր մասի ձուլումը հայերի հետ և հայության այս նորակազմ զանգվածը մի վերին աստիճանի ինքնատիպ կյանք է ցոլացնում իր լեռներում։

Իսլամի հաղթական արշավանքը գտնում է Աղվանից աշխարհը նրա պատմության մի հետաքրքրական ժամանակամիջոցում, երբ թվում էր, թե այդ երկիրը կանգնած է քաղաքական անկախության մի նոր շրջանի առջև։ Հին ազգային թագավորական հարստությունը վերջացավ, ինչպես տեսանք, 6-րդ դարի սկզբում և երկիրը, Հայաստանի նման, կառավարվում էր պարսիկ մարզպանների ձեռքով, իսկ ազնվական դասակարգը կատարում էր նույն դերը, ինչ պատկանում էր Հայոց երկրում նախարարներին։ Բայց 6-րդ դարում աղվանական նախարարների մեջ առաջ անցավ և գերակշռող դիրք ստացավ մի տոհմ, որ կոչվում էր Միհրանյան և որի մասին ավանդություն կար, թե նա սերած է Միհրան անունով մեկից, որ պարսիկ ծագում ուներ, Սասանյան թագավորների ազգակից էր։ Իբր թե այդ Միհրանը, ինչ-որ դժգոհության պատճառով, թողնում է Իրանը և հատված գնում դեպի հյուսիս, տանելով իր հետ իր հպատակներին, որոնց թիվն էր երեսուն հազար տուն։ Այս մեծ գաղթականությունը որպես թե դիտավորություն ուներ անցնել Հյուսիսային Կովկաս, միանալ խազարների հետ, որպեսզի կարողանա, նրանց հետ միանալով, հարձակումներ գործել Պարսկաստանի վրա ու այդպիսով վրեժ հանել Սասանյաններից՝ Միհրանին հասցրած վիրավորանքի համար։ Սակայն այս պարզապես մի առասպել է, որին հավատացել է ամեն բանի մեջ դյուրահավան Կաղանկատվացին, և որ մենք կարող ենք դեն գցել, նկատելով Միհրանի տեղափոխությունը մի գաղթականական շարժում, որ սովորական երևույթ էր հին ժամանակներում։ Մի շարք հանգամանքներ նույնիսկ շատ հավա-

1 Կաղանկատ., եր. 367։

2 Տե՛ս վերև, Ա մաս, գլ. Դ,2։

նական են դարձնում, որ այդ գաղթականությունը ոչ թե բուն Պարսկաստանից դուրս եկավ, այլ այն նահանգից, ուր գտնվում է Ձողա կամ Ճորա դուռը (Դերբենտի) անցքը։ Այդ ամբողջ նահանգը, ինչպես գիտենք, կոչվեց Շիրվան։ Հռչակավոր դռների պահպանության համար պարսից կառավարությունը մշտական զորք էր պահում, որի շուրջն էլ ժամանակի ընթացքում, հավանորեն, կազմվել էր պարսիկ ազգաբնակություն։ Ահա այդ ազգաբնակության մի մասը մնում է Շիրվանում և հիմնում է մի փոքրիկ թագավորություն, որ երկար ժամանակ գոյություն պահպանեց։ Նրա թագավորները կոչվում էին Շիրվանշահեր։ Իսկ մյուս հատվածը գնաց դեպի արևմուտք, կանգ առավ Կուրի հովտի այն մասում, ուր Պարտավ քաղաքն էր գտնվում, բայց այդ երկրում տեղ չգտնելով իր համար, շարունակեց իր շարժումը Կուրի հովտով և վերջնականապես կանգ առավ Գարդման լեռնագավառի ստորոտում։

Սակայն գավառը, ինչպես գիտենք, հնուց հայերին էր պատկանում և հայկական գործի միջնաբերդն էր ներկայացնում։ Միհրանյան տոհմն այդ հանգամանքն իր համար արգելք չի համարում և սկսում է մրցություն Գարդմանի հայ ազնվական տոհմի հետ, որ կոչվում էր Եռանշահիկ կամ Առանշահիկ։ Մովսես Կաղանկատվացին տոհմաբանական մի քանի համառոտ տեղեկություններ է տալիս Միհրանյան ցեղի մասին, որոնք լուսաբանում են այն արյունահեղ պայքարը, որ տեղի ուներ Միհրանյանների և Եռանշահիկների միջև։ Միհրանը, ասում է նա, տեսնելով Գարդմանի բարեխառնությունը, վճռում է իր բնակությունը հաստատել այնտեղ։ Շինում է դաշտային մասում Միհրավան անունով մի քաղաք, հետո բարձրանում է լեռնակողմը և դավով իր մոտ կանչելով բնիկ տիրողներից տասներկու հոգի, կոտորում է նրանց և տիրում նրանց երկրին։ Միհրանին հաջորդում է որդին Արմայել, սրա որդին էր Վարդը, իսկ Վարդի որդին էր քաջ Վարդանը։ Մինչև այս Վարդանը Միհրանյանները գրավում էին Գարդմանի մի մասը միայն, և ահա քաջ Վարդանը, ամբողջ երկիրը խլելու համար, դիմում է նույն դավադրական միջոցին, ինչ գործադրել էր իր մեծ պապ Միհրանը։ Մեծ ճաշ է սարքում և Առանշահիկներից կանչում է մինչև վաթսուն հոգի։ Իսկ Առանշահիկները մոռացան Միհրանի դավադրությունը երևի այն պատճառով, որ իրենցից մեկը, Արմիհրը, արդեն փեսայացել էր Միհրանյաններին։ Քաջ Վարդանը բոլորին կոտորել է տալիս, բացի, իհարկե, իր փեսայից և հափշտակում է ամբողջ երկիրը, շինում է Գարդման բերդը և այնքան ուժեղանում է, որ նույնիսկ նվաճում է Կովկասյան լեռներում ապրող մի ցեղ։

Այսպիսով, քաջ Վարդանն էր իսկապես, որ դրեց Միհրանյան տան ուժի ու փառքի հիմքը։ Նրան հաջորդում է որդին, Վարդ անունով, իսկ սրանից ծնվում են Վարազման, Շուշիկ տիկին և Վարազ Գրիգոր։ Այս վերջինը Միհրանյան տան մեջ առաջինն էր, որ ընդունեց քրիստոնեություն։ Բայց Եռանշահիկ տոհմն անհետ չկորավ, ոչ էլ մոռացավ իր պայքարն այդ եկվորների դեմ, որոնք հափշտակել էին իր սեփականությունները։ Եռանշահիկները դուրս են մղվում Գարդմանից հարևան լեռնային գավառները։ Երկու տոհմերի միջև հաստատվեց հին աշխարհի նվիրագործած արյան վրիժառությունը։ Այդ մի դարավոր արյունահեղ պայքար էր, որ իր վերջնական լուծումն ստացավ 9-րդ դարում Եռանշահիկների հաղթությամբ։ Բայց մրցությունը միայն արյունոտ կռվի կերպարանք չուներ։

խաղաղ միջոցներն էլ՝ կուլտուրական ազդեցություն, խնամիական կապեր և այլն — մեծ դեր էին կատարում։ Վարազ Գրիգորի քրոջ անունը — «Շուշիկ տիկին» — արդեն հայկական ազդեցության բարձր աստիճան է ցույց տալիս։ Նույնպիսի ազդեցություն է ցուցադրում և Վարազ Գրիգորի քրիստոնեացումը։ Քրիստոնեանալը մի խոշոր քայլ էր, որով Միհրանյան իշխանը ոչ միայն կորցնում էր իր զրադաշտականի անկախ կերպարանքը, այլև ենթարկվում էր հայկական կուլտուրային, ինչպես ենթարկված էր առհասարակ ամբողջ Աղվան քրիստոնեությունը։ Եվ ուրեմն Միհրանյան տոհմն էլ, որքան և ուժեղ ու տիրապետող, քրիստոնեության հետ մտնում էր ձուլման այն հունի մեջ, որը տանում էր դեպի հայացում։

Միհրանյան տոհմի փառքը գագաթնակետին հասցնողը Վարազ Գրիգոր իշխանի երկրորդ որդին էր, Ջուանշիր անունով։ Սա այն Ջուանշիրն է, որին մենք տեսանք Քաղեսիայի օրհասական ճակատամարտում, պարսիկների շարքերում արաբների դեմ կռվելիս։ Աղվանից աշխարհն էլ, Հայաստանի նման, հպատակված էր Պարսկաստանին և պարտավոր էր իր զորքերով օգնել նրան պատերազմի ժամանակ։ Ջուանշիրը, դեռ բոլորովին երիտասարդ, աղվանական զորքերի հրամանատարն էր և ավելի բախտավոր հանդիսացավ, քան այն ճակատամարտի մեջ եղած երկու հայ նախարարները։ Մինչդեռ սրանք իրենց կյանքն էին տալիս Հազկերտ Գ-ի համար, երիտասարդ աղվանցին ոչ միայն անվնաս էր մնում, այլև իր գործած քաջությունների համար ստանում էր պարսից թագավորից սպարապետի աստիճան։ Այնուհետև էլ նա, թե՛ Պարսկաստանում և թե՛ իր երկրում, քաջություններ շատ ցույց տվեց, որոնց վկաներն էին նրա ստացած տասնմեկ «դժնդակ» վերքերը։ Դառնալով աղվանական բանակի հրամանատար, նա միաժամանակ, դեռ հոր կենդանության միջոցին, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը։ Իր այդ գործերի համար երիտասարդ իշխանապետը ժողովրդական հերոս դարձավ։

Հերոս է նա մանավանդ Մովսես Կաղանկատվացու համար։ Աղվանից պատմիչը միալար փառաբանություններով բարձրացնում է նրան մինչև մի տեսակ պաշտամունք դարձնելու աստիճանը։ «Արևելքի իշխան» վեհ տիտղոսով է պսակում նրան, անվանում է իր տեր, թագավորների հավասար և թագավորի պատիվների արժանի է հռչակում նրան։ Ծաղրում է նա այն մարդկանց, որոնք միամտություն կունենան ասելու, թե Ջուանշիրը թագավոր չէր հենց այն պատճառով, որ թագ չուներ, հավատացնում է, թե հռոմների կայսրը և իսլամի խալիֆն արքայական պատիվներ էին անում նրան, իրենց հավասար էին ընդունում։ Ո՞ւմ, եթե ոչ իրական թագավորի մասին կարելի է գրել այսպիսի բան. «Եւ ի ծագել արուսեկին մեծի՝ առնուր զարքունական զարդն իւր և նստէր ի գահոյս»։ Եվ միայն քաջությունը, միայն տասնմեկ վերքերի հեղինակությունը չէին, որ տարածում էին նրա հմայքը հայրենի սահմաններից դուրս անգամ։ Խելքով և իմաստությամբ էլ Ջուանշիրն օժտված էր այնքան մեծ չափերով, որ նույնիսկ Հնդկաստանից[1] մարդիկ էին գալիս լսելու և տեսնելու նրա «բազմահանճար խորհրդակցությունը»։

. . . .

[1] «Հնդկաստան» այստեղ չպետք է հասկանալ բառացի մտքով։ Այս մի ժողովրդական արտահայտություն է՝ հրաշքի նման մի երևույթ շեշտելու համար։ Այսօր էլ ժողովրդական խոսքի մեջ Հնդկաստանը համանիշ է անհուն և զարմանալի հեռավորություն արտահայտող գաղափարին։

Այս ներբողների և չափազանցությունների աղբյուրը, անշուշտ, ինքը Ջուանշիրն էր, որի ձգտումներն էին ներշնչում այսպիսի վերաբերմունք դեպի մի գահերեց իշխան։ Ինքը Ջուանշիրն էր, որ իրեն մոտ էր համարում Աղվանից մի նոր թագավորություն ստեղծելու բախտին։ Բայց այս ձգտումն անիրագործելի էր դարձնում արաբական համատարած հաղթանակը[1]։ Որպեսզի իր հերոսին չնսեմացնի այդ հանգամանքով, Կաղանկատվացին չի էլ ուզում բացորոշ կերպով հիշատակել, թե Աղվանից աշխարհը կախում ուներ արաբներից, այսինքն նվաճված էր նրանց ձեռքով, հարկ էր տալիս նրանց, մի խոսքով՝ գտնվում էր ճիշտ այն դրության մեջ, ինչպես Հայաստանը։ Բայց որ Աղվանից աշխարհն իսկապես ոչնչով չէր գանազանվում Հայաստանից, այս մի փաստ է, որ մենք միայն արաբացի հեղինակներից չենք իմանում, այլ նաև հենց այն հանգամանքներից, որոնց պատմիչ է հանդիսանում ինքը Կաղանկատվացին։ Ջուանշիր իշխանը, չնայած իր ամբողջ մեծության, արաբական իշխանության հանդեպ իրեն այնպես է պահում, ինչպես Թեոդորոս Ռշտունին։ Մենք նրան տեսնում ենք հայոց զորավարի հետ միացած՝ հունաց կայսրից խնդրում է հովանավորություն և պաշտպանություն, փոխարենը խոստանալով հպատակություն։ Այս այն ժամանակն էր, երբ արաբական արշավանքները դեռ տարերային բնավորություն չէին ստացել։ Մենք արդեն տեսանք, որ Թեոդորոս Ռշտունին ստիպված եղավ նոր քաղաքականություն ընդգրկել, այն է՝ թողնել բյուզանդացիներին և դաշնակցել արաբների հետ։ Տեսանք նաև, որ այս քաղաքականության մեջ հայ զորավարի հետ կամակից և գործակից հանդիսացան նաև վրացիները, աղվանները և սյունեցիները։ Այս իրողությունը կողմնակի կերպով հաստատում է և Աղվանից պատմությունը։ Երբ Կոստանդին կայսրը գնում է Հայաստան՝ Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը ջնջելու համար, նա, ինչպես գիտենք, բանակցություններ սկսեց վրացիների, աղվանցիների և սյունեցիների հետ։ Եվ ահա Աղվանից պատմության մեջ նկարագրվում է, որ Ջուանշիր իշխանը գնաց Վաղարշապատ՝ կայսրին ներկայանալու և նրանից մեծամեծ պատիվներ ու ընծաներ ստացավ, մի բան, որ անպատճառ պիտի լիներ, քանի որ կայսրը ուզում էր նրան իր կողմը գրավել։ Բայց, թե ո՛րքան ուժեղ էր հանգամանք-

[1] Ոմանք կարծել են, թե Միհրանյան տոհմի իշխանները ուրիշ ոչ ոք չեն, բայց եթե Շիրվանշահերը (տես՛ք, օրինակ, «История Агван Моисея Каганкатваци», перевод Патканяна, СПБ, 1861, стр. 339—343)։ Բայց այս մենք համարում ենք թյուրիմացություն։ Որ Շիրվանշահերը կարող են առաջացած լինել նույն Միհրանյան ցեղից, այս միանգամայն հնարավոր է։ Բայց որ Կաղանկատվացու Միհրանյանները Շիրվանշահեր չեն, սրա ամենամեծ ապացույցն այն է, որ այդ տոհմը միշտ ամփոփված է Արցախում և Ուտիում, Կուրի աջ ափին, որ և նրանց երկրի համար սահման է։ Պարտավը և լեռնային Արցախը Միհրանյան իշխանների բնակության վայրերն են։ Նրանցից ոչ ոք, նույնիսկ փառավորված Ջուանշիրը, թագավոր (շահ) չի հիշվում։ Պրոֆեսոր Պատկանյանը բերում է տոհմագրական մի ցանկ, որ հասցնում է Միհրանյաններին մինչև 9-րդ դարը, բայց անվանում է նրանց Աղվանքում թագավորած, չգիտենք՝ ի՛նչ փաստերի վրա հիմնվելով։ Արաբացի ճանապարհորդ Աբու-էլ-Կասիմը, այցելելով Շիրվանը 10-րդ դարի կեսում, հիշում է, որ այդ ժամանակ Շիրվանշահ էր Եզիդի որդի Մուհամմեդը, մինչդեռ Միհրանյան տոհմի այդ ժամանակվա ներկայացուցիչները, հենց նույնիսկ Պատկանյանի տոհմաբանական ցանկին նայելով, քրիստոնյաներ են։ Դրանք նույն իշխաններն էին, որոնք ապրում էին Արցախի լեռներում, Շիրվանից շատ հեռու և բոլորովին անջատված նրանից, քանի որ այդ ժամանակ այդ լեռնաստանն ուներ իր սեփական թագավորությունը։

ների պահանջը, երևում է նրանից, որ աղվանները, այնուամենայնիվ, չհեռացան հայերից ու վրացիներից և չլքեցին Թեոդորոս Ռշտունուն։

Աղվանից աշխարհը, արաբների երևալու հետևանքով, երկու հարվածների միջև էր դրված։ Հյուսիսից, լեռներից, նրա վրա կախված էր մշտական մղձավանջը—հոն և խազար անուններով հայտնի թուրք ցեղերը, իսկ հարավից, Պարսկաստանն ու Հայաստանը ոտի տակ տալով, գալիս հասնում էր իսլամի սուրը։ Ջուանշիր իշխանին շատ հեշտ կերպով հաջողվեց իր կողմը դարձնել հյուսիսային ցեղերի ուժը և դրանով միանգամայն բարձր կարևորություն ստանալ խալիֆաթի աչքում։ Հոնաց թագավորն արշավում է Աղվանից աշխարհը և ըստ սովորականին հիմնավորապես կողոպտում է այն։ Ջուանշիր իշխանը գնում է այդ ահեղ արշավանքի դեմ և, ինչպես համարյա միշտ, տեսնում է հոներին բանակած Կուր գետի ափին։ Սակայն զենք ու կռիվ չէր տանում Արևելքի իշխանը։ Տասնյոթ մարդկանց հետ նա անցնում է գետը և խնդրում թագավորի աղջկա ձեռքը։ Այս ամուսնությունն իսկույն, տեղն ու տեղը, այն օգուտն է բերում, որ հոնական ավարից ազատվում են 120 հազար ոչխար, 7 հազար ձի և արջառ, ինչպես նաև 1200 գերի մարդիկ։ Բայց ավելի խոշոր էր կատարվածի քաղաքական նշանակությունը։ Արաբական ուժն իսկապես միայն Կովկասյան լեռների ցեղերին ընդհարվելիս էր փշրվում, և այս հանգամանքը խալիֆաթի համար այնքան ծանրակշիռ էր, որ միշտ միջոցներ էին որոնում խազարների և հոների հետ խոսելու ոչ թե զենքով, այլ հաշտության և համաձայնության լեզվով։ Ջուանշիրը բավական հմուտ կերպով օգտագործում էր այս քաղաքական հանգամանքը։

Հոների ձեռնտվությամբ Աղվանից աշխարհը չէր կարող բոլորովին թոթափել արաբական լուծը, բայց երբ Ջուանշիրի համար էլ աներկբայելի դարձավ, որ իսլամի տիրապետությունն է ուժեղ իրականությունը, մինչդեռ արևմտյան կայսրությունը շարունակ գնում էր դեպի թուլացում, նա էլ, Թեոդորոս Ռշտունու նման, գնաց Դամասկոս անձամբ տեսակցելու ամիրապետի հետ։ Այս ճանապարհորդությունը տեղի էր ունենում Թեոդորոս Ռշտունու մահից շատ հետո, Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ, որովհետև Ջուանշիրը վերադարձին գեղեցիկ հյուրընկալություն[1] գտավ նրա Արուճի ապարանքում, ուր ներկա էր և Անաստաս կաթողիկոսը (661—667 թթ.)։ Մուավիան շատ շոյեց «Արևելքի իշխանին», նրանից հպատակական հավաստիացումներ ստացավ, հանձնեց նրան բոլոր արաբական հողերի կառավարությունը մինչև մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն-խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը։ Երևի նույն այս սահմանային գործերով էր, որ Ջուանշիրը երկրորդ անգամ գնաց Դամասկոս (666 թ.), և Մուավիան այնքան բարձր գնահատեց նրա ծառայությունները, որ նրան այս անգամ այնպիսի ընծաներ արավ, որոնք միայն թագավորող անձերը կարող էին ստանալ, այն է՝ բացի արաբական գեղեցիկ նժույգներից, մի փիղ և մի թութակ, որոնք մեծ զարմանք և հիացմունք պատճառեցին Աղվանից աշխարհում և մանավանդ նրա պատմիչ Կաղանկատվացուն։

Ողբերգական էր Ջուանշիր իշխանի վախճանը։ Նա սպանվեց մի կազմակերպված խմբի ձեռքով։ Բայց այդ մի դավադրություն չէր քաղաքական կամ փառասիրական նպատակներով։ Թեև Կաղանկատվացին վեր է հանում իր հերոսի կրոնական ջերմեռանդությունն ու բարոյական արժանիքները, բայց հենց նրա պատմածներից էլ երևում է, որ Ջուանշիրը միանգամայն հեռու չէր զեղխ ու ցոփ կյանքից։ Ամառը, նա, սովորականի պես, զվարճանում էր Արցախի գեղանկար հովիտներում, երբ Պարտավի տափարակը դատարկվում էր դժոխային տոթերի պատճառով։ Բայց հենց որ մեղմանում էր ջերմությունը և աշնանային լիառատությունն էր թագավորում դաշտերի անծայր այգեստաններում, իշխանն իջնում էր լեռներից դաշտի մեղմ եղանակները վայելելու համար։ Այս բանը տեղի էր ունենում սովորաբար խաչի տոնին, ասել է՝ սեպտեմբերի կեսին։ Մեծ տոնին ներկա լինելու համար էր նա դաշտ իջնում, բայց այս չէր արգելում, որ նա միաժամանակ և գիշերային գինարբուքների մեջ գտնվի, իր ապարանքից հեռու։ Մի այդպիսի գիշեր Պարտավի այգիների միջով տուն վերադառնալիս՝ Ջուանշիրը հենց իր բաժակակիցների հարձակման ենթարկվեց, և որովհետև միայն սուր ուներ իր հետ, իսկ վահան չէր վերցրել, ուստի չկարողացավ պաշտպանվել և սպանվեց։ Երկիրը, Կաղանկատվացու պատմելով, մեծ սուգ արավ։ Դավթակ անունով բանաստեղծը գրեց մի ողբ, որ նույնպես մնացել է Աղվանից պատմության մեջ։

Իշխանապետությունն անցնում էր Ջուանշիրի եղբորորդուն, որի անունն էր Վարազ-Տրդատ։ Սրա ժամանակ Աղվանից աշխարհը Հայաստանի վիճակն ստացավ։ Երեք ուժեղների էր հարկ տալիս Աղվանքը—հոներին, բյուզանդացիներին և արաբներին։ Առաջինների հարձակումներից և կեղեքումներից ազատվելու մի միջոց գտավ Վարազ-Տրդատը, մի միջոց, որ նույնպես սրամիտ էր, ինչպես Ջուանշիրի գործադրածը։ Եթե Ջուանշիրի օրով հոներին աղվանցիների հետ բարեկամացնողը խնամիությունը դարձավ, Վարազ-Տրդատը մտածեց ավելի երկարատև մի բարեկամություն հաստատել՝ հոներին աղվանցիների կրոնակիցը դարձնելով։ Այս ծրագիրն սկզբում շատ հաջող իրագործում ունեցավ։ Իսրայել անունով մի եպիսկոպոս, որ սրբակեցության համբավ էր վաստակել երկրում, ուղարկվեց Հոնաստան[80]։ Այդտեղ նրան իսկապես հաջողվեց քրիստոնյա դարձնել թագավորին և իշխաններին։ Եվ իսկապես, բարեկամական հարաբերություններ սկսվեցին հոների, աղվանների և նույնիսկ հայերի միջև։ Բայց այս մի ժամանակավոր երևույթ հանդիսացավ։ Քրիստոնեությունը Հոնաստանում հաստատուն արմատներ չբռնեց, և Վարազ-Տրդատը հոնական հարկապահանջության տակ ճնշված մնաց։

Ավելի անողորմ էր բյուզանդական հարկապահանջությունը։ 705 թվին Կ. Պոլսի գահի վրա նորից հաստատվեց Հուստինիանոսը, որ թեև զրկվել էր իր քթից, բայց հավատարիմ էր մնացել իր դաժան բնավորության։ Աղվանից աշխարհի հարկատվությունն ապահովելու համար նա Կ. Պոլիս կանչեց Վարազ-Տրդատին, որ գնաց իր Գագիկ և Վարդան որդիների հետ։ Կայսրն արգելեց նրանց իր մոտ։ Հինգ տարի մնալուց հետո՝ Վարազ-Տրդատը խաբեությամբ միայն հնար գտավ վերադառնալու իր հայրենիքը, և այդտեղ դառն փորձերն աչքի առաջ բերելով, հասավ այն եզրակացության, որ ամենից իրականն արաբական ուժն է, ուստի և վերջնական հպատակություն հայտնելով արաբներին, երկիրը հանձնեց նրանց, որպեսզի գոնե դրանով նա ազատվի հոների և բյուզանդացիների կեղեքումներից։ Բայց այս վճռի մեջ Աղվանից իշխանապետի բարի կամքից և անձնական տրա-

[1] Գրիգոր Մամիկոնյանի ամուսին Հեղինեն աղվանցի էր։

մագրությունից ավելի քաղաքական անողոք անհրաժեշտությունն էր խոսում։ Կարիք էլ չկար, որ մեկը մատուցաներ արաբներին Աղվանից երկիրը։ Նա առանց այդ էլ նրանց էր պատկանում։

Հուստինիանոսը, լսելով Վարազ-Տրդատի անձնատրությունը Դամասկոսի խալիֆին, իրեն միայն վայել անգթությամբ վրեժ հանեց նրանից, փակելով նրա երկու որդիներին միանգամայն անլույս մի բանտում։ Բայց այս դաժանությամբ այլևս ոչինչ ուղղել չէր կարելի։ Աղվանից աշխարհը միանգամայն բախտակից էր դառնում Հայաստանին։ Աղվան իշխաններն ստանում էին երկրորդական նշանակություն արաբների անմիջական իշխանության տակ։

Գլուխ Երրորդ

ՄՏԱՎՈՐ ԿՅԱՆՔ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏ

1. Մտավորական շարժումներ։ Յոթներորդ դարը, չնայած որ քաղաքական տեսակետից նույնիսկ իր նախընթացի համեմատությամբ էլ շատ աննպաստ էր, մտավոր-կուլտուրական տեսակետից ներկայացնում է շատ հետաքրքրական և հարուստ մի ժամանակամիջոց։ Մենք տեսանք, որ դարի սկզբից պարսկա-բյուզանդական արշավանքներն էին ահեղ տակնուվրայություններ մտցնում Հայկական Բարձրավանդակի ամբողջ տարածության վրա, ապա դրանց հաջորդեցին արաբական աշխարհասասան շարժումները։ Երկիրը հետզհետե կորցնում էր իր ազգային ինքնավարության նախկին ներքին ուժը, բայց այս անկումը չէր խանգարում, որ ժողովրդի մեջ տեղի ունենան մտավոր խմորումներ, գոյանան ամբողջ հոսանքներ, որոնք առաջ բերին հակամարտություններ, մրցություն, նույնիսկ հալածանքներ։ Զափազանց հետաքրքրական մի երևույթ, որ ցույց է տալիս, թե հայ ժողովուրդը գնալով զարգացնում էր իր ճակատագրից թելադրվող մի մեծ ունակություն—մտավոր և կուլտուրական առաջացում արտաքին դժբախտ հանգամանքների մեջ։

Մտքի շարժումները գտնում են ասպարեզ, իհարկե, դարձյալ կրոնական հողի վրա։ Հայաստանում այդ շարժումները ընթանում էին երկու ուղղությամբ—մեկը կազմակերպվում էր եկեղեցուց դուրս և եկեղեցուն հակառակ էր գնում, իսկ մյուսը դուրս էր գալիս պաշտոնական եկեղեցուց, հակառակ եկող հոսանքի հետ եթե ոչ միանալու, գոնե համերաշխելու համար։

Մենք գիտենք արդեն, որ Պարսկաստանում դեռ 3-րդ դարում ծնվել էր մի վարդապետություն, որ զրադաշտականության և քրիստոնեական աղանդավորության մի խառնուրդ էր և իր հիմնադիր Մանիի անունով կոչվեց մանիքեություն[1]։ Այս վարդապետությունը հենց այն ժամանակներից էլ մտավ Հայաստան, ուր և պահվեց երկար ժամանակ, մինչև որ 7-րդ դարում երևան եկավ ուժեղ թափով, այս անգամ վերանորոգված և արդեն պողիկյան կամ պավլիկյան անուն ստացած[81]։ Մի քանի աղբյուրներ ասում են, թե այդ անունն առաջացել է Պողոս (Պող) անունով մի արատցի հայից, որ առևանգել է Պարսկաստանից եկած Շեթի անունով մանիքեական աղանդավոր մի կնոջ և նրանից սովորելով մանիքեության վարդապետությունը, վերականգնում է այն իր ամբողջությամբ[1]։ Եթե այս ճիշտ է, մենք, ուրեմն, ունենք հայկական հողի վրա գոյացած, հայ մտքի ծնունդ հանդիսացող մի ամբողջ վարդապետություն, որ ներկայացնում է ազատ խորհելու, փիլիսոփայական տեսությունները քննադատելու և նորերը կառուցելու այնքան մի հաջողակ փորձ, որ նա տարածվեց ոչ միայն Արևմտյան Ասիայում, այլ հետո անցավ և Եվրոպայի մի քանի տեղեր ու ընդարձակորեն տարածում ստացավ։

Բոլորովին պարզ չեն այս աղանդի մանրամասնությունները, բայց նրա դեմ հարուցված հալածանքներից և գրված հակաճառություններից կարելի է իմանալ մի քանի էական կառուցվածքներ։ Ամենից առաջ նշանակելին այն է, որ պողիկյան աղանդը դարձյալ ձգտում էր միացնել քրիստոնեությունն ու զրադաշտականությունը[82]։ Այս վերջինից վերցվում էր երկվության սկզբունքը, այսինքն այն՝ որ բարի և չար աստվածներն են կառավարում աշխարհը։ Առաջ ընթանալով այս սկզբունքից, պողիկյան վարդապետությունն ասում էր, թե պետք է երկրպագել և չար սկզբունքին[83], որպեսզի նա խղճա մարդկանց և չարություններ չանի[2]։ Բայց այս ինքնատեղծ մի դավանություն չէր պողիկյանության մեջ։ Զարին երկրպագություն մատուցելու պաշտամունքը մնացել է և քուրդ ժողովրդի մի հատվածը կազմող եզիդիների մեջ, անշուշտ, իբրև մի շատ հին պաշտամունք, որին մի ժամանակ պատկանել են բոլոր քրդերը, գուցե նույնիսկ և Հայաստանի բնակիչներից շատերը։ Բարի սկզբունքը պողիկյանության մեջ կոչվում էր «Տէր Երկրից», իսկ չարը—«Զօրութիւն կամ Արարող Աշխարհի»։ Չարն ստեղծել է մարդու մարմինը, իսկ բարին՝ հոգին։ Բարի աստվածն աշխատում է մարդուն մղել դեպի բարին, իսկ չարը հակառակն է գործում։

Գալով քրիստոնեության, պողիկյանները ընդունում էին Երրորդությունը, բայց գտնում էին, որ երեք անձինքը հավասար չեն, այլ Հայրը բարձր է Որդուց և Հոգուց։ Քրիստոսն իր մարմինը բերավ երկնքից և ոչ թե այս աշխարհում ստացավ, որովհետև այս աշխարհում բոլոր մարմինները, ինչպես գիտենք, չար աստծու ստեղծածներն են։ Երկնքից գալով, Քրիստոսը ոչ թե ծնվեց կույսից, այլ անցավ նրա միջով, ինչպես խողովակի միջով։ Քրիստոսի մայրը Մարիամը չէ, այլ երկինքն է, որ կոչվում է և Վերին Երուսաղեմ։ Այնուհետև պողիկյանները մերժում էին բոլոր ծեսերն ու խորհուրդները, ընդունելով միայն երկուսը—մկրտություն և հաղորդություն, որ, սակայն, կատարում էին ոչ թե զգալի նյութերով, այսինքն ջրով և հացով, այլ խոսքով և ձևով։ Մերժվում էր սրբերի բարեխոսությունը և նրանց պաշտումը։ Արհամարհում էին խաչը իբրև չոր փայտ[84], որ զուրկ է աստվածային զորությունից։ Չէին ընդունում եկեղեցական նվիրապետությունը[85], այսինքն պաշտոնյաների դասակարգությունը։

Այս մանրամասնությունները մեզ ցույց են տալիս, որ Լյութերից շատ ու շատ առաջ, Հայաստանում կամ գոնե հայկական շրջանակում են առա-

---

[1] «Հայոց պատմ.», հ. Ա։

[1] Հ. Բարսեղ Սարգիսյան, «Ուսումնասիրություն Մանիքեա-Պավղիկյան Թոնդրակեցիներու աղանդին», Վենետիկ, 1848, եր. 47։

[2] Անդ, եր. 54։

չին անգամ ձևավորվել այն սկզբունքները, որոնցից մի քանիսը բողոքական եկեղեցու դավանանքներն են կազմում։ Եվ Հայաստանում էլ այս նախնական բողոքականությունն առաջին իսկ քայլերից պաշտոնական եկեղեցու սաստիկ ատելությունը գրգռեց իր դեմ և ենթարկվեց հալածանքների։ Բայց այստեղ պողիկյանների հետ միանում էր պաշտոնական եկեղեցուց առաջացած աղանդը։

Վեցերորդ դարի առաջին քառորդում միաբնակ (մոնոֆիզիտ) եկեղեցու մեջ էլ առաջ եկավ մի հերձված, որովհետև երկու եպիսկոպոսներ Ալեքսանդրիա քաղաքում վեճ բաց արին դարձյալ Քրիստոսի մասին։ Վեճի ձևակերպումն այս էր. Քրիստոսի մարմինն ապականացո՞ւ էր արդյոք, թե՞ անապական։ Վիճողներից մեկն էր Անտիոքի պատրիարք Սևերոսը, իսկ մյուսը՝ Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիանոսը։ Առաջինը, Սևերոսը, դավանում էր այսպես. Քրիստոս մեզ համար է եկել աշխարհ և մեզ փրկելու համար պիտի առներ ճիշտ մարդկային մարմին, որ ապականացու է, ենթարկված կարիքների (ծարավ, քաղց, հոգնություն, քուն, քրտինք և այլն)։ Իսկ Հուլիանոսը դրա դեմ առարկում էր, թե Քրիստոսի մարմինը, ընդհակառակն, անապական էր։ Եվ եթե նա ենթարկված էր մարդկային մարմնին հատուկ կարիքների և կրքերի, այդ ոչ թե այն պատճառով, որ նա ստիպված էր այդպես անել, հարկադրված լինելով բնությունից, այլ որովհետև այդպես էր կամենում, այսինքն կարող էր և չենթարկվել մարդկային մարմնի կարիքներին ու կրքերին, բայց իր հոժար կամքով ենթարկվեց, որպեսզի կարողանա փրկել մարդկային ազգը։

Վիճող կողմերը, ինչպես այս միշտ է պատահում, չկարողացան իրար հաղթել կամ համոզել և ամեն մեկը բռնեց իր անկախ ուղղությունը։ Այսպիսով, միաբնակ եկեղեցին բաժանվում էր երկու մասի—Հուլիանոսի հետևողներին կոչում էին հուլիանյան կամ հուլիանիտ, իսկ Սևերոսի հետևողներին՝ սևերյան: Հուլիանիտ էր Սիրիայի միաբնակ եկեղեցին, և որովհետև սիրիական ազդեցությունը միշտ շատ զորեղ էր Հայաստանում, ուստի նույն այդ հուլիանյան վարդապետությունը ընդգրկեց և հայոց եկեղեցին։ Յոթներորդ դարում հուլիանիտությունը, ինչպես այս հաճախ պատահում է ամեն մի վարդապետության մեջ, խոտորվում է իր սկզբնական շավղից և զանազան մեկնությունների միջոցով հասնում է այնպիսի չափազանցությունների, որ նույնիսկ այստեղ էլ կազմվում է ուղղափառության և հերձվածողության դրություն և առաջանում է ընդհարում միևնույն վարդապետության հետևողների միջև։ Հայաստանում հուլիանականության հերձվածողական բնավորություն տվողն էր այն շարժումը, որի նախահայրն էր Հովհան վարդապետ Մայրագոմեցին։ Սա մի շատ ազդեցիկ և ընդունակ հոգևորական էր, որ, ինչպես տեսանք, մեծ անուն հանել սկսեց Եզր կաթողիկոսի ժամանակ, երբ Հերակլ կայսրն աշխատում էր համաձայնություն կայացնել հայկական և հունական եկեղեցիների միջև։ Մայրագոմեցին հակառակվեց Եզրին, պաշտպանելով հուլիանիտ վարդապետության վրա հիմնված ազգային եկեղեցին։

Իր այդ հուլիանիտ ուղղափառական նախանձախնդրության մեջ Հովհան Մայրագոմեցին սկսեց ավելի ևս զարգացնել Հուլիանոս Հալիկառնացու տեսությունը և հասավ այն աստիճանին, որ նրան մեղադրում էին, թե նոր աղանդ է նա ստեղծում։ Այսպես, Քրիստոսի մարմնի անապականության պաշտպանությունը հարկադրում էր նրան դուրս գցել Ղուկասի

ավետարանի 22-րդ գլխից 43 և 44 տները, ուր պատմվում է, թե ինչպես Քրիստոս իր մատնության գիշերն առանձնանալով իր աշակերտներից, մեծ տագնապի մատնվեց, այնպես որ քրտինքը նրանից թափվում էր «ոլոռն ոլոռն», ինչպես արյան կայլակներ։ Այս նկարագրությունը համարվում էր անհարազատ, օտարամուտ, որ և միանգամայն հակասում էր անապական մարմնի տեսությանն[1]։

Հովհան Մայրագոմեցու այս վարդապետությունը շարունակեց և ավելի մեծ չափազանցությունների հասցրեց նրա աշակերտ Սարգիս Մայրագոմեցին, որ և հայտնի դարձավ նույնիսկ օտար գրականությունների մեջ իբրև մի «չար» աղանդապետ[2]։ Այս աղանդի մեջ տիրապետում էր այն հասկացողությունը, որ կոչվում էր երևութականություն: Սևերյաններին վերջնականապես զինաթափ անելու համար հուլիանիտ վարդապետությունն սկսեց ուսուցանել, թե Քրիստոսի վրա երևացած մարմնական կարիքներն իսկապես տեղի չունեին, այլ այնպես էին երևում արտաքուստ։ Օրինակ, եթե Քրիստոս ծարավում էր, այդ միայն առերևույթ, արտաքուստ և ոչ իրապես։ Ահա այս վարդապետությունը, որ ծնվել էր Հայաստանից դուրս, դարձավ Սարգիս Մայրագոմեցու աղանդի գլխավոր հիմք և նրա միջոցով տարածվեց հայ ժողովրդի մեջ[3]։

Այս ժամանակներն էլ ահա հայ երևութականները միանում են պողիկյանների հետ։86 Շարժումը գնալով վտանգավոր ընթացք էր ստանում հայ եկեղեցականության համար, ուստի և Ներսես Գ կաթողիկոսը նրա դեմ եռանդուն միջոցների ձեռնարկեց։ Տեսնելով, որ խրատներն ու հորդորները չեն անում և ոչ մի ազդեցություն, նա դիմեց աշխարհական իշխանության (անշուշտ, Թեոդորոս Ռշտունու) օգնության և բռնի միջոցներով վտարեց աղանդավորներին իրենց հաստատված տեղերից[4]։ Բայց այս, իհարկե, չէր նշանակում, թե վտանգավոր աղանդները բոլորովին ոչնչացան։ Հալածվողները միաժամանակ թաքնվեցին ուր կարող էին, սպասելով հարմար առիթի։ Այդ հարմարությունը տվեց Աղվանից կաթողիկոսը, հալածելով իր երկրից պատկերամարտների աղանդը, այսինքն այն մարդկանց, որոնք չէին երկրպագում եկեղեցական պատկերներին և համարում էին նրանց պաշտամունքը կռապաշտություն։ Հալածականներն անցան Հայաստան և միացան պողիկյաններին[5], որոնք ոչ միայն պատկերամարտներ էին, այլև խաչամարտներ, որովհետև խաչապաշտությունն էլ նրանք համարում էին կռապաշտություն[6]։ Աղանդավորները, կազմելով համայնքներ, տեղափոխվում են Հայաստանի մի քանի կողմերը, մասնավորապես Հարավ-արևմտյան կողմերում, Աղձնյաց նահանգի Նփրկերտ քաղաքի մոտերքը։ Այդ տեղը կոչվում էր Ջրիկ և գտնվում էր մի գեղեցիկ լճի ափին։ Աղան-

---

[1] Կարապետ եպիսկոպոս, «Հովհան Մանդակունի և Հովհան Մայրագոմեցի» («Շողակաթ» ժողովածու, էջմիածին, 1913, եր. 105)։

[2] Սարգիսյան, «Ուսումնասիրություն», եր. 50։

[3] Օրմանյան, «Ազգապատում», էջ 794։

[4] Սարգիսյան, «Ուսումնասիրություն», եր. 52։

[5] Յովհաննու Իմաստասէրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետ., 1833, եր. 39։

[6] Բյուզանդիայում պատկերամարտությունը շատ խոշոր շարժում դարձավ 8-րդ դարում։ Աղվանից աշխարհի և Հայաստանի միջև դեռ 7-րդ դարում գոյություն ունեցած այդ արշավանքը սրբազան պատկերների դեմ ցույց է տալիս, որ բյուզանդական շարժումը վերցրել էր իր սկզբունքները Արևելքից։

դավորական համայնքը վայելում էր արաբների հովանավորությունը, ուստի և կարողանում էր անարգել գործել՝ իր գաղափարները տարածելու համար։ Տարաբախտաբար, մենք հաստատ տեղեկություններ չունենք հասարակական մտքի ծայրահեղ ձախ թևը կազմող այս համայնքի նիստ ու կացի, սովորությունների մասին։ Ճիշտ է, մի շարք մանրամասնություններ հաղորդում են թե՛ հայ և թե՛ օտար մատենագիրները, բայց դրանց անպայման հավատ ընծայել չէ կարելի, քանի որ այդ նյութեր թողնողները պավլիկյանների անհաշտ թշնամիներն էին, որոնք և ներկայացնում էին այդ աղանդն իբրև բարոյական ամեն մի սկզբունք բացասող հրեշավոր կազմակերպություն։ Հետաքրքրական է այստեղ նշել, որ այդ համայնքների մեջ իրականացված էր սեփականազրկության այն ձևը, որ գիտության մեջ կոչվում է հին կամ նախնական կոմունիզմ և որի գլխավոր հատկություններից մեկն էր կանանց համայնացումը։87 Հայ պավլիկյանների մասին ասված է, թե նրանք անխտիր խառնակվում էին իրենց մայրերի և քույրերի հետ անգամ։

Այսքան հետաքրքրական է հայ մտքի պատկերը 7-րդ դարում։ Այս շարժումներն ապագայում ավելի ևս պիտի ընդարձակվեին և գործոն դեր ստանձնեին երկրի կյանքում։ Յոթներորդ դարի վերջերում դրությունն արդեն այնպես էր, որ հայ պաշտոնական եկեղեցին, հուլիանիտական ծայրահեղություններից ազատվելու համար, որոնում էր մերձեցման հնարներ սևերյանականության հետ։ Բայց այս երևույթն իրական կերպարանք ընդունում է 8-րդ դարում և նրա մասին մենք կխոսենք իր տեղում։ Առայժմ, 7-րդ դարի մտավորական շարժումների պատկերը լրացրած լինելու համար, հիշատակենք և այն, որ փիլիսոփայական մտքի զարգացում երևան էր գալիս և քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական դավանությունների կամ միաբնակության և երկաբնակության վեճերի շրջանում։ Այսպես, մենք տեսանք Բագավանցի Դավիթ փիլիսոփային, քաղկեդոնիկ աշխարհայացքի տեր մի գիտնական հայի, որ Կոստանդին կայսրի կողմից ուղարկվում էր Հայաստան, որպեսզի համոզի հայերին թողնել իրենց միաբնակ դավանանքը։ Կա, գրեթե այդ միևնույն ժամանակ, և մի ուրիշ հայ փիլիսոփա, դարձյալ Դավիթ անունով, որ արդեն միաբնակ է և պաշտպանում է հայրենի եկեղեցու դավանությունը քաղկեդոնականության դեմ[1]։

Այս բոլորը նշաններ են, որ 7-րդ դարում, նույնիսկ ավելի շատ, քան նախընթացում, տարածված էր լուսավորությունը հայ ժողովրդի մեջ։

2. Գրականություն: Բայց այս իրողության ամենագեղեցիկ ապացույցը հայոց գրականությունն է, որ մի շատ խոշոր հարստություն է ներկայացնում մանավանդ նախընթաց դարի համեմատությամբ։ Ժիր ու ստեղծագործող է մանավանդ ինքնուրույն գրականությունը, իսկ թարգմանականը շարունակում է գնալ հելլենասերների ուղղությամբ։

Կոմիտաս կաթողիկոս: Ինքնուրույն ստեղծագործությունը 7-րդ դարում ուժեղ արտահայտություն է գտնում նախ և առաջ արվեստի մեջ։ Կոմիտաս կաթողիկոսը (615—628 թթ.) շինում է Հռիփսիմյան կույսերի վկայարանն Էջմիածնում, հայ ճարտարապետության հնագույն հոյակապ հուշարձաններից մեկը, որի վրա այսօր էլ մնում է երկրորդը հնագույն մեր

[1] Գարեգին վարդ. Հովսեփյան, «Դավիթ փիլիսոփա, է դարու մատենագիր» («Արարատ» Էջմիածնի, 1907, հունվար—մարտ)։

վիմաքանդակ արձանագրություններից, որ ասում է. «Ես Կոմիտաս եկեղեցպան սրբոյ Հռիփսիմէի կոչեցայ յաթոռ սրբոյն Գրիգորի. շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի»[1]։ Այդ առիթով էլ նա գրում է «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը, որ համարվում է մեր բոլոր շարականների թագն ու պսակը։ Եվ իրավ, բարձր և վեհ է այն տրամադրությունը, որով տոգորված է այդ երկար հոգևոր երգի 36 տան, այբուբենի կարգով, յուրաքանչյուր տողը։ Ճաշակավոր չափը, վճիտ պարզությունը, նուրբ համեմատությունները նրա բանաստեղծական գոհարներն են։ Նյութը նեղ է ու սահմանափակ—կույսերի նահատակություն։ Բայց կանացի մեծագործությամբ ոգևորված երգիչն այդ միանման նյութն անց է կացնում այնպիսի ճարտարահյուս կրկնությունների միջով, որոնք աննկատելի են մնում իբրև կրկնություն և նորանոր անկախ պատկերացումներ են տալիս։ Ահա մի քանի նմուշներ։

«Զօրք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին և կանայք ի յերկինս գրեցան զինուորք, կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին. խաչակից լինելով կուսածին Արարչին։

«Ղեկավարք ճարտարք հոգևոր հմտութեամբ, թեթևաբեռն մարմնով և մտօք սլացեալք, ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս անվնաս նաւեցիք և հասիք առ Քրիստոս։

«Շինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք, և արձանք լուսեղէնք ի յերկինս կանգնեալք. ինքեանք եղեն և այլոց ցուցին զճանապարհս ցանկալի զվերին Երուսաղէմի։

«Սոքա են քարինք սուրբք հիմնացեալք ի յերկրի, զոր կանխաւ տեսեալ գուշակեաց մարգարէն։ Ի նոյն ի նիւթոյ շինեցաւ կաթողիկէ եկեղեցի, բարձրացեալ փառօք ի պարծանս խաչին։

«Վասն ձեր, երանեալ նահատակք, զօրք հրեշտակաց անմարմին զուարթնոցն ի յերկնից ի յերկիր հեղան և մարդիկ խառնեցան ի գունդս զինուորաց Քրիստոսի Աստուծոյ»։

Կրոնական վեճերի փոթորիկն այս տաղանդավոր արվեստագետին էլ պաշարեց իր Հռիփսիմյան վկայարանի գեղեցկադիր դաշտում, և նա ստիպված եղավ հայ եկեղեցու դավանական սկզբունքները պաշտպանել իր թղթերով, որոնցից մեկը հասել է մեզ[2]։

Հովհան Մայրագոմեցի: Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ եկեղեցական վարչության մեջ կարևոր դեմք էր դարձել մեզ ծանոթ Հովհան վարդապետ Մայրագոմեցին, որ բացի նշանավոր գործիչ լինելուց՝ շատ ընդունակ գրող էլ էր։ Իր գրիչը նա ամենից շատ պիտի գործածեր, իհարկե, կրոնական վիճաբանությունների մեջ, որոնց նա մասնակցում էր ամենայն եռանդով։ Եվ իրավ, դեռ Կոմիտասի ժամանակ, նա հայ եկեղեցու դավանական հեղինակությունը հիմնավորելու և հզորապես պաշտպանելու համար կրկնեց այն փորձը, որ արդեն մի անգամ կատարվել էր 6-րդ դարում՝ Տիմոթեոս Կուզի թարգմանությամբ։ Այս անգամ էլ Հովհան Մայրագոմեցին հավաքեց և խմբագրեց ընդհանուր եկեղեցական հայրերի գրվածքներից բազմաթիվ կտորների թարգմանություններ, ինչպես նաև հայ եկեղեցու նշանավոր հեղինակների գրությունները, որոնք հակաքաղկեդոնական

[1] Գար. Վ. Հովսեփյան, «Քարտեզ Հայ Հնագր.», եր. 3։

[2] «Գիրք Թղթոց», եր. 212—219։

ուղղափառությունն էին հաստատում։ Այս ժողովածուն կոչվում էր «Հաւատարմատ», բայց նա մեզ հասել է ոչ թե այս, այլ մի ուրիշ, փոփոխված անունով, այն է՝ «Կնիք Հաւատոյ»[1]։ Բայց սրանից ավելի գնահատելի է Մայրագոմեցու «Խրատ Հաւատոյ» աշխատությունը, բաղկացած մի շարք ճառերից[2], որոնց մեջ հեղինակը ոչ միայն բարոյական սկզբունքներ է զարգացնում քրիստոնեական վարդապետության տեսակետից, այլև քննադատում է կյանքի պակասությունները, մարդկանց մեղքերը և այսպիսով տալիս է իր ժամանակի բարքերի և հավատալիքների վերին աստիճանի հետաքրքրական պատկերը։ Այսպես է, օրինակ, այն ճառը, որի մեջ նկարագրված են կախարդությունները և նրանց հետ կապված նախապաշարմունքները։ Այս գործի մեջ Մայրագոմեցին ցույց է տվել ինքնուրույն մտքի կորով և հեղինակական կարողություն։ Նշանավոր կրոնական գործիչը գիտեր գրել այնպիսի մի ընտիր հայերենով, որ երկար ժամանակ նրա գրությունները համարվում էին 5-րդ դարի գործ։ Սակայն, ապագա սերունդներն անարդար գտնվեցին այս արժանավոր գործչի վերաբերմամբ։ Մայրագոմեցին համարվեց աղանդավոր, և նրա անունը ջնջվեց նույնիսկ նրա աշխատությունների վրայից, և որ ավելի վատն է՝ նրա գրչի արդյունքները վերագրվեցին ուրիշներին։

Սեբեոս: Ներսես կաթողիկոսի ժամանակակից էր Բագրատունյաց Սեբեոս եպիսկոպոսը, որ մեկն էր ազգային կուսակցության ներկայացուցիչներից, այսինքն՝ հակաքաղկեդոնիկ ուղղության պատկանողներից, և թողել է մի հետաքրքրական աշխատություն՝ «Պատմութիւն ի Հերակլն» անունով։88

Հեղինակի մասին այս միայն գիտենք, որ նա, իբրև Բագրատունյաց տոհմի եպիսկոպոս, մասնակցել է Դվինի եկեղեցական ժողովին (695 թ.)։ Իսկ նրա գործը մի ժամանակագրություն է, որի մեջ պատմված են 6-րդ դարի մի քանի անցքերը և մանրամասնաբար 7-րդ դարի ամբողջ առաջին կեսը։ Սեբեոսն առաջին հայ պատմագիրն է, որ խոսում է արաբների և իսլամի մասին։ Միաժամանակ նա առաջինն է և այն կողմից, որ, լինելով համառոտագիր և սակավախոս՝ քաղաքական և հասարակական անցուդարձերի վերաբերմամբ, ծանրաբեռնում է իր էջերը կրոնական-դավանաբանական հակաճառություններով, որոնք բավական ընդարձակ տեղ են բռնում։

Մի հանգամանք, որ բացառիկ հետաքրքրություն է հաղորդում Սեբեոսի գործին, այն է, որ նրա սկզբում դրված է Մարաբա Մծուրնացուն վերագրվող մի հատված, ուր համառոտորեն տրված է հայոց հնագույն պատմությունը, սկսած առասպելական նախահայր Հայկից։ Սակայն, ինչպես տեսանք[3], նորագույն քննադատությունը ենթադրում է, որ այդ հատ-

[1] Հրատարակվել է Կարապետ եպիսկոպոսի ընդարձակ առաջաբանով էջմիածնում, 1914 թվին.— «Կնիք Հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ և ի ս. հոգևոր հարցն մերոց դաւանութեանց՝ յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ»։

[2] Մինչև 1914 թիվն այդ ճառերը համարվում էին 5-րդ դարի վերջում ծաղկած Հովհան Մանդակունի կաթողիկոսի հեղինակություններ, և այդպես էլ հրատարակված են Վենետիկում 1836 և 1860 թվականներին՝ «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք» վերնագրով։ Բայց էջմիածնի միաբան Կարապետ եպիսկոպոսը ցույց տվեց, որ այդ ճառերը գոնե մեծագույն մասամբ, Մայրագոմեցուն են պատկանում և կազմում են նրա «Խրատ Հաւատոյ» աշխատությունը (տ. «Շողակաթ» ժողովածու, 1914, եր. 34—113)։

3 Տե՛ս վերև, Ա մաս, գլ. Ա, 2։

վածը պատահաբար է մտցված՝ արտագրողների անուշադրության հետևան-
քով, Սեբեոսի Պատմության մեջ և իր ձևով ու լեզվով ավելի հարմար է, որ
համարվի Փավստոս Բյուզանդի կամ, ավելի ճիշտ, այդ անունով գրող Կո-
րյունի աշխատություն։

Իբրև պատմագրող՝ Սեբեոսն առանձին լավատեղյակություն ունի և
միանգամայն ճշմարտապատում և հեղինակավոր է մանավանդ իր ժամա-
նակի (7-րդ դարի) վերաբերմամբ։ Նրա ոճը շատ նրբությունների կողմից
հիշեցնում է Կորյունի ոճը։ Նրա գործի մեջ կենտրոնական դեմքը, հերոսը
Հերակլ կայսրն է։89 Պատմական եղելությունների նկարագրության և լուսա-
բանության մեջ Սեբեոսը զարմանալի ճշտությամբ համաձայն է գնում
հունական պատմագիրների հետ։

Մովսես Կաղանկատուացի: Բոլորովին այլ աշխարհ է բաց անում մեր
առջև 7-րդ դարի մի այլ նշանավոր գրող—Մովսես Աղվանցին կամ Կաղան-
կատուացին (գրվում է և Կաղանկատվացի)։ Այստեղ այլևս հայ աշխարհը
չէ, այլ հայացած մի աշխարհ՝ Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրը կազ-
մող լեռնաստանում, այն է՝ Աղվանից երկիրը։ Մենք արդեն նկարագրել ենք
այդ խորհրդավոր աշխարհի քաղաքական ճակատագիրը և թե ինչպես հա-
յությունը, հաստատվելով գլխավորապես նրա լեռնային մասերում, ուր
Արցախ և Ուտի գավառներն են, ենթարկեց աղվան ժողովուրդն իր հզոր
ազդեցության և սկսեց հայացնել նրան։ Ահա այս հայացած աղվաններից
մեկն է Մովսես Կաղանկատուացին։ Նրա մասին այսքանը միայն գիտենք,
որ նա Ուտի նահանգի Կաղանկայտու կամ Կաղնկատու գյուղիցն էր։ Այս
գյուղը գտնվում էր Տրտու (այժմ՝ Թարթառ) գետի ափին, Պարտավ մայ-
րաքաղաքից դեպի արևմուտք։ Մովսեսը, ինչպես երևում է, Աղվանից Վիրո
կաթողիկոսի փոքրավորն էր։

Նրա վերին աստիճանի հետաքրքրական, մեր գրականության մեջ իր
տեսակով եզակի երկը բաղկացած է երեք մասերից[1]։ Առաջին և երկրորդ
մասերը պարունակում են իրենց մեջ Աղվանից երկրի պատմությունը հին
ժամանակներից մինչև 7-րդ դարի վերջը, իսկ երրորդ մասը՝ այդ Պատմու-
թյունը շարունակում է մինչև 10-րդ դար[2]։

Այս գրական գործը զարմանալի տպավորություն է թողնում նախ և
առաջ իր ընդհանուր բնավորությամբ։ Զգում ես, որ նա պիտի բովանդա-
կի մի օտար, այլատարր ազգի կյանքն ու գործը։ Բնորոշ խորհրդավոր
առանձնահատկություններ է ներկայացնում միջավայրը։ Անսովոր, տեղա-
կան են գործող անձերի անունները։ Նկարագրվում է **մատնահատների**

[1] Տպված է առաջին անգամ Փարիզում, Կարապետ վարդապետ Շահնազարյանի հրատարակությամբ, 1860 թ. (երկու հատոր), հետևյալ վերնագրով. «Պատմութիւն Աղուանից աշխարհի Մովսիսի Կաղանկատուացւոյ»։ Երկրորդ տպագրությունը Մոսկվայում (էմինի) 1860 թվին («Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհին»)։ Երրորդը, սրա արտատպություն, Թիֆլիսում, 1913։

[2] Ոմանք (օր. պրոֆեսոր Ք. Պատկանյան) կարծում են, թե Կաղանկատուացին 10-րդ դարում էր ապրում և ամբողջ գործն ինքն է գրել։ Մեզ, ընդհակառակն, անկասկածելի է թվում, որ Աղվանից պատմության գլխավոր մասը, միջուկը, գրվել է 7-րդ դարում։ Անկասկած է և այն, որ այդ գործը 10-րդ դարում ենթարկվել է ոչ միայն լրացման, այլև խմբագրության տակ։ Եվ 10-րդ դարի այդ շարունակողը նույնպես Մովսես էր կոչվում, բայց արդեն Դասխուրանցի։ 7-րդ դարի վերաբերյալ մասը Կաղանկատուացին ժամանակակցի և ականատեսի դերում է։ Հեշտ կարելի է նկատել և այն, որ շարունակությունը 7-րդ դարից մինչև 10-րդ գրված է ուրիշ լեզվով և ոճով։

աղանդը, տեղական խորին ինքնուրույնության կնիք կրող մի պաշտամունք։ Բայց 7-րդ դարում, երբ ապրում էր պատմագրողը, ազգային կյանքի հին, ուրույն, բուն տեղական հանգամանքներն արդեն մեծ մասամբ մոռացված էին։ Հազիվ պահվել էր ազգային թագավորների անվանացուցակը։ Եվ զուտ ազգային ավանդությունների տեղ տիրապետում են հայ եկեղեցական ավանդություններ, որոնց մեջ գործում են գլխավորապես հայ սրբերն ու նահատակները։ Ավելին՝ կարելի է ասել—կարծեք հետք չի մնացել նույնիսկ և աղվանական լեզուներից։ Գոնե պատմագիրը չի տալիս և ոչ մի տեղական բառ, արտահայտության մի առանձնահատուկ ձև։ Աղվան հեղինակը, կարծես, ոչինչ կապ չունի տեղական կյանքի հետ, կարծես, նույնիսկ տեղացի չէ, թեև նա ապրում էր Մռավ լեռնաշղթայի արևելյան ստորոտներում։ Այդտեղից էլ նա, խոր հավատացող մի հայրենասեր, վերառաքում էր դեպի երկինք մի հայցվածք, որ շատ բնորոշ է. «Որոց բարեխօսութեամբ միշտ գթասցի Աստուած Աղուանից աշխարհիս և Հայաստանեայց երկրին»[1]։ Ահա ինչպես միասնաբար էին դիտվում երկու երկրներ, երկու ազգություններ։

Եվ Կաղանկատուացին հայացած աղվան գրողի միակ օրինակը չէ։ Նա հիշում է իրեն ժամանակակից մի բանաստեղծի, Դավթակ անունով, որ մեծ իշխան Ջուանշիրի մահը երգել էր մի քերթվածի մեջ։ Պատմիչը բերում է և ամբողջ քերթվածքը[2], առաջին օրինակը հայ գրական բանաստեղծության, որ կրոնական չէ և գրված է աշխարհական մարդու ձեռքով։ Ինչպես երևում է, այս Դավթակը շատ հայտնի բանաստեղծ է եղել—Կաղանկատուացին նրա մասին մեծամեծ գովասանքներով է խոսում. «Հնարագիտական վարժիւքն յաջողակ և վերծանական քերթութեամբ յառաջադէմ,— ասում է նա,— յառատաբեր բանից պաճուճանացն ճարտարութեամբ և քաջապէս հրատարակող, լեզու ունելով նման երագագիր գրչի»[3]։ Եվ իրավ, ողբը բավական արտահայտիչ է ու ճաշակավոր, և հայոց գրականության պատմությունը հաճությամբ կարող է ցույց տալ հայ ընթերցողին աղվան երգչի այդ տողերը.

«Աստուածային բանին արուեստաւոր հոգի,— բացականչում է քերթողը երգի սկզբում,— յօրինեա՛ իմաստիւ զտիրական երգմունս, զի սգալի ձայնիւ անդադար ողբասցուք ի վերայ դժնդակ կորստեան մերում»։ Իսկ այդ կորուստը նա ներկայացնում է այսպես. «Թեկումն մեծ, որ եղև արևելից աշխարհիս և աղաղակ կործանման հնչեաց ընդ երկիր, ազգք և ազինք լուիցեն զբարբառս իմ և երկրածինքս ամենայն ողբասցեն ընդ իս։ Գլորեցաւ վէմն կենդանի և հզօր, և պարիսպն ամրութեան խորտակեցաւ, և ցանկըն շինութեան խրամատեալ քակեցաւ։ Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր և դրունք հինից տեղացին ի մեզ, զի մեծասքանչ տէրութիւնն կործանեցաւ և հրաշալի պետութեանն շիջաւ ճառագայթ»։

Երկու աղվանցի հեղինակների հայերենը, հստակ, կանոնավոր և հարուստ, ցույց է տալիս, թե 7-րդ դարում հայացումը որքա՛ն խորն էր արմատացել Աղվանից երկրի հին ժողովրդի մեջ։

Զարմանալի տպավորություն է թողնում Կաղանկատուացու գործը նաև

---

[1] Եր. 92 (Մոսկվ. տպագր.)։
[2] Եր. 354—359 (Փարիզի տպ.)։
[3] Եր. 257 (Թիֆլ. տպ.)։

իր ձևի կողմից։ Շատ տեղերում նա մի անձի հեղինակություն է, որի մեջ դուք տեսնում եք և՛ ոճի միանմանություն, և՛ ընդհանուր տրամաբանական ամբողջություն։ Բայց շատ են և այն տեղերը, ուր Աղվանից պատմությունն ընդունում է մի անկապ ժողովածուի կերպարանք։ Թվում է, թե հեղինակն այդ տեղերում բավականացել է միայն արտագրելով իր ձեռքում եղած թղթերը, առանց կապի, հաճախ և առանց ժամանակագրական կարգի։ Կաղանկատուացին մանավանդ չափազանց սիրում է մասունքների գյուտի հրաշապատում մանրամասնությունները, այդ առիթով տեսնված երազները և այլն։ Բայց մենք իր տեղում տեսանք այն էլ, որ Աղվանից պատմիչը նյութեր վերցնում է և ժողովրդական վեպերից (ինչպես, օրինակ, Խոսրով Փարվեզի վախճանը) և պատմում է վիպական անցքերը, ինչպես նաև երկրի կրած աղետները գեղեցիկ պատկերավորությամբ և բանաստեղծական ավյունով։ Այս բոլոր երևույթները բերում են այն եզրակացության, որ Կաղանկատուացու գործը հարազատությամբ չի հասել մեզ, այլ ենթարկվել է փոփոխությունների և խմբագրությունների։

Անանիա Շիրակացի: Յոթներորդ դարի բոլոր հեղինակների մեջ առանձնակի կանգնած է մի շատ նշանավոր, ինքնատիպ դեմք ևս, որ տարբերվում է մյուսներից նրանով, որ անզուգական մի երևույթ է, չուներ իր նմանն անցյալում և չունեցավ նաև ապագայում։ Դա Անանիա Անեցին կամ Շիրակացին է, բազմակողմանի հմտություններով օժտված հայ գիտնականը։

Բախտի բարեհաճ բերմունքով մեզ հասել է այս աննման գրական գործչի վերին աստիճանի հետաքրքրական ինքնակենսագրությունը[1]։ Անանիան90 Շիրակից էր և ծնվել էր Շիրակավան (կոչվում է և Երազգավորս, այժմ՝ Բաշ Շորագյալ) գյուղում։ Անանիան կոչվում է նաև Անեցի, թերևս այն պատճառով, որ երկար ժամանակ ապրել է Անի քաղաքում, Կամսարական իշխանների տանը։ Ծննդյան թվականը հայտնի չէ, գիտենք միայն, որ նա ապրում էր 7-րդ դարի սկզբներում։91 Հայրենի երկրում նա ստանում է կրթություն մի համեստ չափով, որպիսին հնարավոր էր այդտեղ, և որ գլխավորապես Աստվածաշնչի գիտության հմտության մեջ էր կայանում։ Այդ ժամանակ նրա վրա խոր տպավորություն թողնում է մանավանդ Սողոմոնի խրատներից մեկը—«Ստացիր զգիտութիւն և զիմաստութիւն»։ Տգիտությունը խավար է։ «Դու գիտությունն ես մերժում, կմերժեմ ես էլ քեզ»։

Ահա ինչ ճշմարտություններ է իմանում Անանիան։ «Եւ ես զարհուրեալ յայս սպառնալեաց և երանութեան կամէի ժամանել, փափաքելով իմաստութեան»։

Գիտության հիմք համարելով «համարողական ուսումը» (մաթեմատիկա), նա միջոցներ է որոնում այդ ուսմունքին աշակերտելու համար։ Սակայն իզուր։ «Ի Հայս,— ասում է նա,— ոչ գտի մարդ որ գիտակ էր իմաստասիրութեան և ոչ գիրք արուեստից գտի յաշխարհիս»։ Ուստի գնում է դրսում որոնելու իր տենչացածը։ Հայաստանի հունական բաժինն է անցնում, Կարին քաղաքը, ուր տեղեկանում է, որ համարողական արվեստին հմուտ մի անձ, Քրիստափոր անունով, ապրում էր Չորրորդ Հայք նահանգում։ Ուղևորվում է այնտեղ, գտնում է այդ մարդուն, մի վեց ամիս մնում

---

[1] Անանիայի Շիրակացւոյ Մնացորդք բանից, ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1877, եր. 1—4։

է մոտը, բայց տեսնում է, որ իր ուսուցչի իմացածն ամբողջ թվաբանությունը չէ, այլ միայն մի քանի կտորներ։ Ուստի թողնում է նրան և ճանապարհվում Կ. Պոլիս։ Այստեղ ծանոթներն իմանալով, թե ի՛նչ է նա որոնում, ասում են, որ զուր էր այսքան ճանապարհի նեղություն քաշել, որովհետև Տրապիզոնում ապրում էր նրա որոնածը, մի վարդապետ, որի անունն էր Տյուքիկոս, լի իմաստությամբ, տեղյակ և հայերեն դպրության, քանի որ երկար ժամանակ ապրել էր Հայաստանում, լինելով զինվոր հունական բանակի մեջ։ Անանիան վերադառնում է Տրապիզոն։ Միևնույն նավով գնում էր և Կ. Պոլսի պատրիարքի սարկավագը, որ շատ աշակերտներ էր տանում միևնույն գիտնական վարդապետի մոտ։

Տյուքիկոսը սիրով է ընդունում ուսումնատենչ հային և ուրախություն է հայտնում, որ նրա միջոցով կարող է գիտություն մտցնել Գրիգոր Լուսավորչի երկիրը։ «Զի ես,— ասում է, —ի մանկութեանն իմում շատ կացի ի Հայս և տգիտութիւն էր ի նմա»։ Անանիան մնում է գիտնական վարդապետի մոտ ամբողջ ութ տարի։ Վարդապետը սիրում էր նրան հոր պես, աշակերտն առաջադիմություն էր ցույց տալիս և հմտացավ համարողական արվեստի մեջ, գրգռելով դրանով իր աշակերտակիցների նախանձը։ Մեծ գործ կատարում էր մանավանդ ուսուցչի գիտական հարուստ գրադարանը։ Տյուքիկոսն այնքան վարժ էր հայոց լեզվին, որ հունարեն գիտական գրքերը թարգմանում էր առանց որևէ դժվարության։

Վերջացնելով ուսումը, Անանիան վերադառնում է հայրենիք։ «Եւ ես տրուպս ի Հայաստանեայց ուսայ ի նմանէ զհզօր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի և բերի յաշխարհն մեր, առանց ուրուք լինելով ձեռնտու, միայն ջանիւ՝ օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիւք սուրբ Լուսաւորչին»։ Սակայն հայրենի իրականությունը, ինչպես և պետք էր սպասել, սառնությամբ ընդունեց հայ բազմահմուտ մաթեմատիկոսին։ «Ոչ ոք եղև շնորհակալ իմոյ աշխատութեանս,— շարունակում է նա,— և ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք»։ Շատերը գնում են նրան աշակերտելու, բայց ուսումը կիսատ թողնելով, դուրս են գնում և սկսում են ուսուցանել ուրիշներին իրենց խակ ու թերի սովորածը։ «Կեղծաւորք և սնափառք, ցուցանել կերպարանս գիտութեան և կոչիլ ի մարդկանէ ռաբբի։ Եւ ասեն ի վերայ իմ պարսաւանս, որք յինքենէն յերիւրեալք»։ Բայց ինքը, Անանիան, ուշադրություն չդարձնելով այդ չարախոսությունների վրա, շարունակում էր իր ուսուցչությունը, թողնելով, որ աստված լինի վրեժխնդիր։

Անձնուրաց հայ գիտուն ուսուցիչը շատ բեղմնավոր հանդիսացավ և իբրև գրող։ Իր սովորած գիտությունը նա մտցրեց հայոց գրականության մեջ, և որովհետև ոչ ոք չկարողացավ նրա նմանը լինել, ուստի նա մեծ գիտական հեղինակություն դարձավ հայ իրականության մեջ դարերի ընթացքում, և նրան միշտ որոնում էր Հայոց աշխարհը՝ փոքր-ինչ գիտություն սովորելու համար։ Ամենագլխավոր հատկությունը, որ այնքան հանրամատչելի էր դարձնում Շիրակացու գրությունները, այն էր, որ նա գրում էր պարզ, համարյա ժողովրդական լեզվով։ Ստվար ու անմատչելի հատորներ չգրեց նա, այլ համառոտ տեսություններ մաթեմատիկական գիտություններից, որոնք հարկավոր էին մանավանդ գործնական կյանքի մեջ։

Շիրակացու աշխատությունների լիակատար ժողովածուն չունենք մենք։[92] Զանազան ժամանակ հրատարակված են նրա մի քանի գրություններ, որոնց մեջ աչքի են ընկնում հետևյալները. «Յաղագս կշռոցն և չափոց», «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց»[1], մի շարք կրոնական տոմարական տեսություններ («Ի յայտնութիւն Տեառն», «Ի Զատիկն Տեառն», մի շարք աստղաբաշխական և աշխարհագրական բացատրություններ) «Յաղագս երկնի», «Յաղագս երկրի», «Յաղագս ծովու», Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի շարժմունք», «Յաղագս Կաթին ծրոյ», «Յաղագս հիւսիսային աստղեաց», «Յաղագս Լուսնի», «Յաղագս կենդանատեսակաց», «Յաղագս Աստղաբաշխութեան»[2], «Յաղագս ամպոց և նշանաց»[93], «Յաղագս Հարցման և Լուծման», «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ»[3], «Թիւք որչափութեան տանց Հին Կտակարանաց»[4]։

Առանձնապես ուշադրության արժանի է «Յաղագս Հարցման և Լուծման» աշխատությունը։ Թվաբանական խնդիրների մի ժողովածու է այդ, որ կազմել է Շիրակացին հայ իրական կյանքից վերցրած օրինակներով և որհենց այդ պատճառով պարունակում է իր մեջ շատ հետաքրքրական վավերագրեր՝ 7-րդ դարի ներքին կյանքի երևույթները ճանաչելու համար։ Բերենք մի երկու նմուշ։

«Թ. Հարցումն։ Որս էր Կամսարականցն ի Գէն և կալեալ էր երէ բազում. և ինձ որսամասն ետուն բերել վարազ մի։ Եւ վասն զի անհնարին էր տեսլեամբն՝ կշռեցի և գտաւ փորոտին դ. մասն ամենայն կշռոյն և գլուխն ժ. մասն, ոտքն՝ ի., ժանիքն ղ, անձն՝ մ. և ծբ. լիտր։ Արդ գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՞ լիտր էր վարազն»։

«Ժ. Հարցումն։ Լոք մի կալան ի Մարմետի ի գետ Երասխ և ես կըշռեցի զնա և գտաւ գլուխն չորս մասն ամենայն կշռոյն և տուտն գ. և մէջքն ճխ. լիտր։ Արդ գիտեա՝ թէ ընդամենն քանի՞ լիտր...»։

«Ի. Հարցումն։ Ներսեհի Կամսարականի Շիրակայ և Արշարունեաց տեառն բուն կանգնէր առ ստորոտով լերինն, որում Արտին կոչեն։ Եւ ի գիշերի միոջ մտին երամակք ցռուց բազումք։ Եւ ոչ լեալ ատակ որսորդացն՝ ընթացեալ պատմեցին նմա ի գիւղն Թալին։ Եւ նորա իւրովք ելեալ հանդերձ եղբայրօքն և ազատօքն և մտեալ կոտորէին զերէսն։ Եւ եղեն կալեալք ի թակարդի հասարակ երէոցն. և եղեն սպանեալքն նետիւ չորս մասն. և զմատաղերէն ողջ կալան, որ եղև իբ. մասն և եղեն մեռեալք ի նիզակէ յկ. երէ։ Արդ գիտեա՛ թէ ընդ ամենայն քանի՞ լեալ էին»։

Կամսարականների տան հաճախ հիշատակությունն այս թվաբանական խնդիրների մեջ պարզ ապացույց է, որ Շիրակացին հովանավորված էր իր երկրի տերերից և նրանց տան ցանկալի հյուրերից մեկն էր։ Նրա մոտիկությունը Կամսարականներին ապացուցում է և այն փաստը, որ Անանիան միայն ժամանակակից, առօրյա կյանքից չէր օրինակներ վերցնում թվական վարժությունների համար, այլև իշխանական տան պատմությունից։ Հետևյալ կտորը պատմական նշանակություն էլ ունի.

«Իա հարցումն։ Ներսեհ Կամսարական որդի Արշաւրի անուանակից և նախնի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ Բահղճացն առնու գերի սատիկ յոյժ։ Եւ հանեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ թագաւորին

[1] Հ. Յ. Ավգերեան, «Բացատրութիւն Չափուց և Կշռոց նախնեաց», Վենետիկ, 1821, եր. 21—32, 37—39։

[2] Անանիայի Շիրակաւնոյն «Մնացորդք Բանից»։

[3] Հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի, «Արարատ» ամս., 1896, №№ 2, 3, 6։

[4] Հրատ. Հ. Ն. Ակինյանի, «Հանդէս Ամսօրեայ», 1908, եր. 20։

Պարսից զհասարակ գերոյն։ Եւ թուեալ զհասարակն՝ ես ընծայէ որդւոյ արքայի՝ զէ, մասն։ Եւ հրաժարեալ ի նոցանէ դառնայ յաշխարհն իւր։ Եւ եկեալ ի տուն գարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ ոչ որպէս զնախարար, այլ որպէս զմի ոք ի թագաւորաց։ Եւ սա տայ նմա զը. մասն գերոյն։ Եւ եկեալ առ սպարապետն զօր Խորաւորանն կոչեն և առաւել ևս ի նմանէ մեծարեալ՝ տայ նմա զժդ. մասն գերոյն։ Եւ ևս յառաջ եկեալ՝ ընդ առաջ լինին նմա ազատքն Հայոց և տայ նոցա զինն մասն գերւոյն։ Եւ եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցին զժ. մասն գերոյն։ Եւ եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝ տայ նմա զի. մասն գերոյն։ Եւ իւր մնաց շճ. անձն։ Արդ գիտես՛ թէ ընդ ամենայն քանի՞ է լեալ»[1]։

Անանիա Շիրակացու անվան հետ նորագույն քննադատությունը կապում է և մի հետաքրքրական աշխատություն, որ միակն է մեր հին գրականության մեջ և հասել է մեզ առանց հեղինակի անվան։ Մի համառոտ ընդհանուր աշխարհագրություն94 է այդ, որի մեջ զետեղված է հին Հայաստանի վարչական աշխարհագրությունը, այսինքն նահանգների և գավառների ցանկը[2]։ Հին ավանդությունն այդ եզակի երկը վերագրում էր Մովսես Խորենացուն, որին համարում է 5-րդ դարի գրող։ Սակայն քննադատությունը կարողացավ ապացուցած համարել, որ այդ աշխատությունը խմբագրված է 7-րդ դարից ոչ վաղ։ Եվ որովհետև 7-րդ դարում ամենաձեռնհաս մարդը, որ կարող էր կատարել այդպիսի մի գործ, ապահովապես Անանիա Շիրակացին էր, ուստի հավանականությունների կարգը դասվեց, որ աշխարհագրության անանուն հեղինակը հայ գիտնական մաթեմատիկոսն է եղել[3]։ Բայց առաջանում է մի հարց.— խմբագրված լինելով 7-րդ դարում, այնպիսի մի ժամանակ, երբ Հայաստանը վաղուց էր կորցրել իր անկախությունն ու բաժանվել երկու մեծ պետությունների միջև, կարող էր այս աշխարհագրությունը պահպանած լինել իր մեջ այն իրականությունը, որ գոյություն ուներ Հայաստանի անկախության ժամանակ, Արտաշեսյան և Արշակունի հարստությունների օրով։ Այս հարցին պատասխանել կարելի է հավանականության օրենքով։ Անկասկած, Անանիա Շիրակացին,—եթե, իհարկե, նա է աշխարհագրության հեղինակը,— իր տեղեկությունները քաղել է մի հին պաշտոնական աղբյուրից[4], թեև մյուս կողմից քննադատությունը հաստատում է, որ աշխարհագրությունն ամփոփում է իր մեջ միայն այն տեղեկությունները, որոնք իրականություն են եղել Արշակունյաց թագավորության անկումից հետո, Պարսից մարզպանական կառավարության տակ[5]։ Այսպես թե այնպես, Շիրակացուն վերագրվող այս գործը միակն է հին Հայաստանի վարչական բաժանումների մասին հասկացողություն կազմելու համար։

Հիշատակենք, վերջապես, և այն, որ Շիրակացու գրական վաստակներից մեկն է համարվում նույն 7-րդ դարում խմբագրված մի ժամանա-

1 «Արարատ» ամսագիր, 1896, եր. 145—149։

2 Լավագույն հրատարակությունը (հայերեն բնագիր և ֆրանսերեն թարգմանություն)— «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Հ. Արսեն Սյուքրյանի, Վենետիկ, 1881։

3 **К. Патканов**, «Армянская География VII в. по р. X (приписываемая Моисею Хоренскому), СПБ, 1877, стр. XVII.

4 **Патканов**, стр. 42.

5 **Н. Адонц**, «Армения в эпоху Юстиниана», стр. 235.

կագրություն95, որ կոչվում է նաև «Կայսերաց Գիրք»։ Այդ մի համառոտ աշխատություն է, որի մեջ ընդհանուր պատմության վերաբերյալ ժամանակագրական տեղեկություններ են ամփոփված՝ աշխարհի սկզբից մինչև 7-րդ դարի երկրորդ կեսը[1]։

Կրոնական գրողներ: Ինքնուրույն գրականության շրջանում 7-րդ դարն ունի դարձյալ մի քանի հեղինակներ, որոնց ամբողջ գործունեությունն ամփոփված էր ժամանակի կրոնական և եկեղեցական-վարչական հարցերի մեջ և այդ պատճառով էլ դրանց նշանակությունը սահմանափակված է նրանց օրերի նեղ շահերի միջավայրում։ Այս ասպարեզում գրիչ շարժած հեղինակներից է Վրթանես Քերթողը, որ, ինչպես գիտենք, Բագրատունյաց տոհմից էր, Սմբատ Վրկան մարզպանի եղբայրը, ազգային եկեղեցու ամենաեռանդոտ և հեղինակավոր պաշտպաններից մեկը, որ և մեծ ու վճռական դեր կատարեց մանավանդ Հայոց և Վրաց եկեղեցիների բաժանման գործում։ Բազմաթիվ գրություններ են վերագրվում Վրթանես Քերթողին[2], որոնցից մեկն է մի շատ ընդարձակ նամակ կամ թուղթ, որ նա ուղղել էր Աղվանից եկեղեցուն[3]։

Քերթողի համբավ վայելում էր և Մաթուսաղան, Սյունյաց դպրոցի խոշոր դեմքերից մեկը։ Ավանդությունն ասում է, որ երբ Հերակլ կայսրը կանչեց Եզր կաթողիկոսին իր մոտ՝ եկեղեցական միություն կայացնելու համար, նախարարները Մաթուսաղային խնդրեցին, որ նա, իբրև հմուտ գիտնական հավատի գործերի մեջ, գնա կաթողիկոսի հետ։96 Բայց նա իր փոխարեն ուղարկեց իր աշակերտ Թեոդորոս Քռթենավորին, որ և եկեղեցական միության կողմնակից հանդիսացավ։ Այս Քռթենավորն ունի վիճաբանական մի գրվածք «Ընդդէմ Մայրագումացւոյն» անունով և մի երկու էլ ներբողական ճառեր[4]։ Այս Քռթենավորի աշակերտն էր Սահակ Ձորափորեցին, որ կաթողիկոս դարձավ և, ինչպես պատմում է ավանդությունը, գրել է մի քանի շարականներ ու ճառեր[5]։

Յոթներորդ դարի երկրորդ կեսում էր ապրում և մեզ ծանոթ Դավիթ փիլիսոփան, որ Անաստաս կաթողիկոսի և Աշոտ պատրիկի հանձնարարությամբ գրել է մի քանի թղթեր՝ միաբնյա վարդապետությունը պաշտպանելու համար[6]։

Թարգմանիչներ: Դիմելով այժմ թարգմանական գրականության, մենք տեսնում ենք, որ այստեղ էլ նույնպես տեղի է ունեցել բավական եռանդոտ գործունեություն։ Թարգմանական աշխատությունների մեջ աչքի է ընկնում Սոկրատ Սքոլաստիկոսի սովոր եկեղեցական պատմությունը, որ թարգմանել է կրճատումներով հունարեն բնագրից Փիլոն Տիրակացին՝ Ներսես Կամսարականի հրամանով[7]։ Թարգմանությունը կատարված է բա-

1 «Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինել յ է դարու ի հնագոյն ժամանակագրաց», հրատ. Հ. Բարսեղ Սարգիսյան, Վենետիկ, 1904։

2 Հ. Ն. Ակինյան, «Վրթանես վրդ. Քերթող և յուր երկասիրությունները», «Հանդ. Ամս.», 1910, եր. 11,37։

3 «Արարատ», 1896, եր. 477—488։

4 «Տ. Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, եր. 147—185։

5 Անդ. եր. 185—193։

6 Հրատարակել է Գարեգին վ. Հովսեփյանը, «Արարատ», 1906, եր. 261—272, 1916, եր. 907—911։

7 «Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն», հրատ. Մեսրոպ Վ. Տեր-Մովսիսյանի, Վաղարշապատ, 1897։

ռացի կերպով, ինչպես այդ հատուկ էր հելլենասերների դպրոցին։ Ուստի մի անհայտ գրող, հավանորեն նույն Կամսարական իշխանի հրամանով, համառոտել է այդ աշխատությունը, փոփոխությունների և լրացումների ենթարկել։ Այս համառությունը կոչվում է Փոքր Սոկրատ[1]։ Նույն ժամանակները, դարձյալ նույն գրական մեկենաս իշխանի առաջարկությամբ, Գրիգոր Ջորափորեցի եպիսկոպոսը, «Աբաս» գիտական տիտղոսով պատվըված, թարգմանել է «Պատմութիւն վարուց Սեղբեստրոսի» կենսագրությունը[2]։ Այս երեք թարգմանություններն էլ մեծ ազդեցություն են ունեցել հայոց գրականության մեջ։

7-րդ դարի վերջերում և 8-րդի սկզբում Սյունյաց դպրոցն առաջ բերեց մի նշանավոր գրող, որ կոչվում է **Մովսես Քերթող** կամ նույնիսկ **Քերթողահայր**: Սակայն այս խոշոր դեմքն այսօր էլ դեռ մնում է մշուշի մեջ։ Մի քանի նկատառումներ թույլ են տալիս նույնացնելու այս՝ անունով մեծ, բայց գործերով տակավին անծանոթ գրողին մեր հռչակավոր Մովսես Խորենացու հետ։ Երևի այս Մովսես Քերթողն էր, որ թարգմանեց կամ խմբագրեց հռետորական մի դասագիրք, որ հայտնի է «Գիրք Պիտոյից» վերնագրով[3]։ Գուցե նույն թարգմանչի գործն է և Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրությունը, որ վերագրվում էր Կալիսթենես հույն հեղինակին[4]։

Մովսես Խորենացի: Մովսես Քերթողի ժամանակներում էլ, այն է՝ 7-րդ դարի վերջերում և 8-րդի սկզբներում, կարելի է զետեղել այն հեղինակին, որի գրած Հայոց Պատմությունը հասել է մեզ Մովսես Խորենացու անունով97։ Այս գիրքն ու այս հեղինակը մեր գրականության խոշորագույն հարցերն են կազմում—հարցեր, որոնք երկար զբաղեցրել են եվրոպացի հայագետներին և հայ բանասերներին։ Քննադատությունն աշխատել է ամենայն եռանդով, որպեսզի կարողանա լուսաբանել այն դարավոր առեղծվածը, որ ներկայացնում էր հայոց գրականության այս զարմանալի հիշատակարանը։ Առեղծվածը հյուսվում էր հեղինակի անձնավորությունից և նրա գրվածքից։ Հեղինակն իրեն ներկայացրել էր Սահակի և Մաշտոցի աշակերտ, այսինքն մեկը 5-րդ դարի գրական գործիչներից, որ մյուս թարգմանիչների հետ ստացել էր բարձրագույն կրթություն արտասահմանում (գլխավորապես Ալեքսանդրիա), մինչդեռ նրա գրած Պատմությունը ցույց է տալիս, թե 5-րդ դարի գրող չէ նա, այլ ապրել է այդ ժամանակից շատ ուշ։ Այս հանգամանքն ապացուցելու համար ամենից առաջ և ամենից շատ աշխատեց ֆրանսիացի հայագետ Կարրիերը։ Գոյացավ ամբողջ մի գրական հոսանք։ Խորենացու կեղծիքը մերկացնողների դեմ հանդես եկան և Խորենացուն պաշտպանողներ, որոնք ապացույցներ էին բերում հաստատելու համար, թե նա ճիշտ որ 5-րդ դարի գրող էր։ Մի ընդարձակ գրականություն ստեղծվեց այս վեճերի շուրջը։ Գրվեցին նույնիսկ խոշոր

[1] «Սոկրատայ Պատմութիւն Եկեղեցական և վարք Սրբոյն Սեղբեստրոսի», հրատ. Մեսրոպ վարդ. Տեր-Մովսիսյանի, Վաղարշ., 1897։

[2] Տպված է Փիլոնի թարգմանած Մեծ Սոկրատի հետ։ Տե՛ս և «Պատմութիւն Սեղբեստրոսի», հրատ. Հ. Ք. Սարգիսյանի, Վեն., 1893։

[3] «Սրբոյ Քերթողահօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Նախակրթութիւն հռետորական ասացեալ Գիրք Պիտոյից», հրատ. Հ. Հ. Զոհրապյան, Վենետիկ, 1796։

[4] «Պատմութիւն Մեծի Ալեքսանդրի», Վենետիկ, 1842։ Տե՛ս և Հ. Հ. Տաշյան, «Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի», Վիեննա, 1892։

հատորներ[1]։ Վիճաբանությունը մինչև իսկ կրքոտության էլ էր հասնում երբեմն, և խեղճ Խորենացին նույնիսկ հայհոյությունների և անվանարկությունների առարկա էր դառնում։

Այս բոլոր քննությունները վերջիվերջո հաստատեցին, որ Մովսես Խորենացին կամ այն անձը, որ գրել է այս անունով, չէր կարող 5-րդ դարում ապրած լինել։ Անհերքելի ապացույցներից մեկը հենց այն է, որ Խորենացին բառ առ բառ օգտվել է Սոկրատ Սխոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» և Սեղբեստրոսի կենսագրության այն թարգմանություններից, որոնք կատարվել են, ինչպես հենց նոր տեսանք, 7-րդ դարում[2]։ Այսպիսով՝ Խորենացին էլ կրկնություն է այն երևույթի, որ արդեն պարզվեց մեր առջև մի քանի անգամ—Ագաթանգեղոս, Փավստոս, Եղիշե։ Տարբերությունն այն է միայն, որ այս անունները շահագործվել են այն նպատակով, որ ապացուցեն, թե նրանք ականատեսներ և ժամանակակիցներ էին և նրանց վերագրված գործերը միանգամայն ճիշտ և անսխալական են, մինչդեռ Մովսես Խորենացու վերաբերմամբ այս արդարացուցիչ հանգամանքը գոյություն չունի, և նրա անվան շուրջը կազմված քննադատական մեծ շարժման դեռ մնում է նաև պարզել այն դրդապատճառները, որոնք ստիպեցին 7—8-րդ դարերի մարդուն կեղծել իրեն 5-րդ դարի մարդ, թեև նրա գրած Պատմությունը 5-րդ դարի պատմություն չէ, և նա կարիք չուներ ականատես ժամանակակցի հեղինակությամբ զինվելու։ Առհասարակ թվում է, թե քննադատության դեռ շատ բան է մնում անելու՝ Խորենացու գործի ներկայացրած առեղծվածը վերջնականապես լուծելու համար։ Եվ պետք է հավատալ, որ նրան մի օր կհաջողվի բացատրել, թե ի՞նչպես է գոյացել այդ հռչակավոր գիրքը, ի՞նչ տարրեր են մտել նրա մեջ և ի՞նչ տեսակ խմբագրությունների է ենթարկվել նա մինչ այն աստիճան, որ անկարելի է դարձել նրան մի որոշ հեղինակի գործ համարել։

Մովսես Խորենացու Պատմությունը մի առաջնակարգ մեծ երևույթ է եղել մեր գրականության մեջ սկզբից ևեթ։ Նրանով դաստիարակվել են ամբողջ դարեր, նրա հեղինակությունը մեծ ու անխախտելի է եղել մինչև վերջին ժամանակներս։ Կարելի է ասել, թե այդ գիրքը եղել է հայոց ազգային սրբազան գիրքը, իսկ Խորենացին—ազգային մի առաքյալ, նվիրական մի հասկացողություն դարերի և սերունդների համար։ Եվ ոչ մի տարօրինակություն չկա այս պաշտամունքի մեջ։ Գրական տեսակետից Խորենացու գործը հայ մտքի կոթողն է։ Այսօր էլ զարմացնում են պատմագրողի կուռ, ազդու, վերին աստիճանի ինքնատիպ ոճը, իրեն միայն հատուկ սեղմ արտահայտությունը, ճաշակը, քննական հայացքները, որոնումները։ Այնպիսի խիզախ մեծագործություն, որ կատարել է Խորենացին, ոչ ոք չի կարողացել կատարել նրանից առաջ էլ, նրանից հետո էլ։ Նա էր, որ հասկացավ, թե մի ազգ պիտի ունենա իր ամբողջական պատմությունը։ Հայ հոգևորականների մեջ նա երկրորդն էր, որ փորձեց անցնել Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ժամանակներից դենը, խորասուզվել հնության խավարի մեջ և դուրս կանչել այդտեղից ստվերներ։ Եթե ճիշտ

[1] Օրինակ, պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանի երկու ստվար աշխատությունները, 1) «Армянский эпос в Истории Моисея Хоренского», М., 1896, 2) «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского», М., 1903.

[2] Գր. Խալաթյան, «Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին քննական ուսումնասիրություն», Վիեննա, 1898։

է, որ Սեբեոսի Պատմության սկզբում զետեղված Մարաբա Մծուրնացու համառոտությունը պատկանում է Փավստոս Բյուզանդացուն, այն ժամանակ մենք գեղեցիկ նյութ ունենք համեմատելու, թե ո՛րպիսի մեծ կարողությամբ էր օժտված Խորենացին, երբ նույն կերպով հետախուզում էր հայ հեթանոսական անցյալի խորքերը։ Այնքան լուսավոր և լայն հայացքի տեր էր այս հոգևորականը, որ կարողացավ ըմբռնել, թե իր սքեմը չի բողոքի, եթե ինքը մոտենա հեթանոս հայության, սիրի նրան, ականջ դնի նրա երգերին ու զրույցներին։ Առանց մանրամասն բացատրությունների էլ հեշտ կարելի է ըմբռնել, թե ի՛նչ մեծ դժվարությունների պիտի բախվեր Խորենացին իր խիղախ միտքն իրագործելիս։ Գրավոր հիշատակարաններ չէին մնացել երկրի մեջ այն հին ժամանակներից, իսկ բանավոր ավանդությունները, երգերն ու առասպելները, եթե բոլորովին չէին անհետացել, գոնե շատ մաշվել ու նոսրացել էին քրիստոնեութեան ազդեցության տակ, շնորհիվ մանավանդ այն անողոք թշնամության, որ գործադրում էր եկեղեցականությունը հեթանոսության վերաբերմամբ։ Հայաստանը չուներ մտավոր խոշոր կենտրոններ, զուրկ էր հարուստ գրադարաններից։ Հավաքել եղածը, մշակել, դասավորել, քաղել գեթ հավաստիության նշաններ կրող կցկտուր տեղեկություններ—այս էլ վիթխարի աշխատություն էր։ Եվ այսպիսի մի գործ թերություններ շատ պիտի ունենար, հակառակը հրաշք կլիներ։ Միջավայրն էր աղդում, միջավայրն էր թելադրում։ Ավելի բարեհաջող հանգամանքների մեջ Խորենացին միանգամայն ընդունակ կհանդիսանար ավելի կատարյալ մի գործ տալու։ Առհավատչյա են նրա նուրբ և զգայուն հեղինակական ճաշակը, նրա վերլուծական կարողությունները, հոտառությունը։ Նա ընդունակ էր լայնորեն ընդգրկելու մեր ամբողջ պատմության ոգին, ձևակերպելու նրա փիլիսոփայությունը խորաթափանց հայացքի ամբողջ հմտությամբ։ Մենք ունենք այդ հատկության մի հոյակապ հուշարձանը։ Նա ասում է. «Թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհի, և արժանի գրոյ յիշատակի»[1]։ Այս՝ Հայ աշխարհի և նրա պատմության ամբողջ հոգեբանության խտացումն է ոչ միայն մինչև Խորենացու ժամանակները, այլև նրանից հետո եկած դարերի վերաբերմամբ, մինչև նույնիսկ մեր օրերը։ Եվ տեսնել մեր անցյալն ամբողջությամբ, ծայրից մինչև ծայր, կարող էր Խորենացու նման մի բարձր, գիտականորեն դաստիարակված միտքը։

Տարաբախտաբար, դժվարություններն ու պակասություններն այնքան մեծ են եղել և անհաղթելի, որ նրանց հետ մրցել անկարող են հանդիսացել նույնիսկ և Խորենացու խոշոր ընդունակությունները։ Մենք տեսնում ենք, որ նա ամեն ջանք թափում է ժամանակագրություններ ճշտելու համար։ Նա գիտե, որ չկա պատմություն առանց ժամանակագրության։ Բայց տեղեկությունների պակասությունը, կարևոր աղբյուրների բացակայությունը, չնայած նրա զգուշավորության, շփոթությունների մեջ են գցում նրան, խառնելով իրողություններն ու ժամանակները, հարկադրելով նրան հերյուրումների և կարկատանների օգնության դիմել։98 Այս արմատական պակասությունն արդեն բավական է ապացուցելու համար, որ Խո-

[1] Գ, Ա, գլ. Գ։

րենացու հաղորդած պատմական նյութերին պետք է վերաբերվել առհասարակ մեծ զգուշությամբ։ Իսկապես Խորենացին իր երկրին մի հատիկ միայն մեծ ծառայություն է մատուցել—այն, որ հավաքել ու ամփոփել է իր գործի մեջ հայ ժողովրդի պատմական ավանդությունները, բանահյուսության կտորներն այն կերպարանքով, ինչպես նրանք հասել էին իր ժամանակին։ Այս նյութերն են, որ շատ թանկարժեք են դարձնում Խորենացու գրական գործն այժմյան գիտության աչքում[1]։ Մի պակասություն էլ, որ նկատվում է Խորենացու աշխատության մեջ, այն է, որ նա գրել է Սահակ Բագրատունու առաջարկությամբ, ուստի և ձգտում է ամեն տեղ բարձրացնել Բագրատունիների տոհմը, ի վնաս նույնիսկ պատմական ճշմարտության։ Սակայն այս միմիայն Խորենացուն հատուկ մեղք չէ։ Մենք ունենք և այլ պատմագիրներ (Փավստոս Բյուզանդացի, Ղազար Փարպեցի, Եղիշե), որոնք, ինչպես նկատել ենք իրենց տեղերում, գերազանցորեն տոհմային շահերով են ղեկավարվել իրենց գործերի մեջ։

Բայց Խորենացու գործը, իր բոլոր պակասություններով հանդերձ, ահագին դեր է կատարել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության մշակման և ամրապնդման մեջ։ Եթե չմոռանանք, որ ազգերն իրենց վերածնության միջոցին ամենից առաջ իրենց պատմությունն են որոնել, եթե աչքի առաջ ունենանք, որ ինքնաճանաչության, գիտակցության առաջին պայմաններից մեկն է իմանալ, թե ի՛նչ էր մի ժողովուրդ երեկ, անցյալ օր, ո՛րտեղից է նա գալիս և ո՛ւր է գնում, ի՛նչ ազդեցություններ է կրել ընդհանուր պատմության ասպարեզում, այն ժամանակ հեշտ կլինի ընդունել, որ հայ ժողովրդի համար մի ամբողջ հայտնագործում պիտի լիներ ալևոր հնության այդ պատկերը, ուր կանգնած էին Հայկեր, Արամներ, Տիգրաններ, Արտաշեսներ և այլ ազգային առասպելական, թե պատմական հերոսներ։ Խորենացին ավանդեց հայերին հայրենասիրություն, որ կապում է մարդուն երկրի հետ, բաց է անում նրա հոգու առաջ երկրավոր գործերի խորհուրդը, հասկացնում է, թե երկինքը, երկնաքաղաքացիությունը չէ միայն, որի համար պետք է ուրանալ անձը, զոհել կարողությունը, քրտնել, աշխատել։ Ո՛րքան վսեմ է այն ողբը, որով Խորենացին վերջացնում է իր Պատմությունը։ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող, վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն»։ Մեր գրականության մեջ այս առաջին նմուշն է այն հայրենասիրության, որ մերկացնում է հասարակական արատները, խարազանում է ապականված բարքերը։ Ճիշտ այն հրապարակախոսության տեսակն է այս, որին դիմում էին հրեական մարգարեները։ Ղազար Փարպեցին արարատյան հայրենասիրության ներկայացուցիչն էր իր վառ սիրով դեպի հայրենի աշխարհի գեղեցկությունները։ Եղիշեն օտար բռնության դեմ բողոքող հայրենասիրությունն էր։ Մովսես Խորենացին այս երկու մեծ օրինակներին ավելացնում էր իր դժգոհ մտրակողական հայրենասիրությունը։ Ահա նա գանգատվում է, որ հին հայ թագավորները գրավոր հիշատակարաններ չեն թողել իրենց գործերի մասին և այս առիթով սաստիկ պախարակում է նախնիքների անուսումնությունը, գործ ածելով նույնիսկ այսպիսի խոսքեր. «Վասն

[1] Խորենացու տված բոլոր պատմական ավանդություններն ու ժողովրդական բանաստեղծության հիշատակարանները մենք քննել ենք մեր այս գործի առաջին հատորում։

որոյ ածելորդ է մեզ և այլ յաղագս աներանից աչանց Թուլամտաց վայրենեաց ճառել»։

Իր ոգու մեջ Խորենացին չի գտնում և ոչ մի դասակարգ, որ ծածկված չլինի արատներով։ Օրինակ.

«Վարդապետք տխմարք և ընդ ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով. ոսկեսէրք, նախանձոտք, Թողեալ զհեզութիւն, յորում Աստուած բնակէ, և գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով»։

«Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան Թե աստուածասէրք։

«Վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց։

«Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն՝ աստուածաբանք։

«Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ։

«Զօրականք անարիք սնապարծք, զինատեացք, ծոյլք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, գինարբուք, յուզարկուք համաբարոյք աւազակաց։

«Իշխանք ապստամբք. գողակիցք գողոց, կծլիք, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերք, աղտեղասէրք, ծառայիցն համամիտք։

«Դատաւորք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք։

«Եւ բարձումն առհասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ»։

Հայ իրականությունը շատ ու շատ անգամ է անկման և կազմալուծման այսպիսի տխուր պատկերներ ներկայացրել։ Եվ Խորենացին միշտ երևացել է հայ ժողովրդին իբրև հայ երկրի մեծ մարգարե։ Նա եղել է և մեծ հայրենասերի տիպար։ Համարյա յուրաքանչյուր քայլում նա ցույց է տալիս իր անձնական տրամադրությունները, արտահայտում է իր ներկայացրած պատկերներով ապրողի զգացմունքները։ Այսպես, խոսելով հին, բնիկ հայ Թագավորների (Արտաշեսյան հարստության) մասին, նա չի կարողանում ծածկել իր սրտի մեջ հուզվող զգացմունքը, որին և արտահայտություն է տալիս հետևյալ տողերով. «Արդ այժմ անյից ի Թիւ մերոց արանց, մանաւանդ Թագաւորաց, մինչև ցտէրութիւնն Պարթևաց։ Քանզի ինձ ա՛յսոքիկ արք ի մերոց Թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան սռուք և հաւաստի հարազատք։ Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս։ Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն, Թե արդեօք և վիճակ»[1]։

Այս դիմագծերի վրա ավելացնենք և այն, որ Խորենացին հելլենասեր էր, հունական հին, հեթանոսական գրականության սիրահար և իր ճաշակով հանդիսանում էր եվրոպացի մի մարդ հայ իրականության մեջ։ Այս հանգամանքը ցայտուն կերպով արտահայտվում է նրա գործի այն տեղում, ուր նա վերաբերմունք է ցույց տալիս դեպի պարսկական առասպելները։ Նրա մեկենաս Սահակ Բագրատունին, իբրև հարազատ զավակ պարսկական

[1] Գ. Ա, իբ։

ազդեցություններով տոգորված հայ իրականության, վառ ցանկություն էր հայտնել, որ նա խոսի և պարսից ազգային առասպելների մասին[1]։ Եվ ահա ինչ է ասում մեր հելլենասեր հեղինակը. «Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ և Բիւրասպեայ Աժդահակայ փծուն և անճոռնի առասպելքն իցեն. և կամ լ՞ր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ Թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ»[2]։ Մինչդեռ հունական առասպելները նա դրվատում է այսպիսի խոսքերով. «Մի՞ արդեօք յունական պերճ և ողորկ առասպելքն իցեն հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին Թագուցեալ»։

Խորենացու աշխատությունը, բացի մինչև այժմ հիշածներից, մի այլ շատ խոշոր հանգամանք էլ է ընդգծում։ Իր տեսակի մեջ միակ և անզուգական է այս գործը, և հենց այս պատճառով էլ նրա վրա է բարդվում մեծ պատասխանատվություն։ Հարկավոր էին շատ այսպիսի ուսումնական, լայն հոգու և հայացքների տեր անձինք, և այն ժամանակ մեր հին պատմությունն այնքան ցավալիորեն աղքատ ու միակողմանի չէր լինի աղբյուրների կողմից։ Մի Խորենացի, որ, ի լրումն ամենայնի, իր մեծ աշխատությունը կատարել է խորին ծերության հասակում, չէր կարող հավաքել և Թղթին հաղորդել այն բոլոր բանավոր նյութերը, որոնք ապրում էին հայ ժողովրդի մեջ իբրև ազգային հիշատակարաններ նրա անցյալի։ Միայն մի «գինեւէտ Գողթան» ինչե՞ր կարող էր տալ, եթե այնտեղ գնային, երմի... կար ժամանակով նստեին մի քանի հատ Խորենացիներ։ Որքան շատ լինեին պատմագիրները, ավելի հարուստ ու բովանդակալից կլիներ հայի հին պատմությունը, ուրեմն և ավելի մոտ ճշմարտության, ավելի հեշտ ուսումնասիրելի։ Բայց հայոց ազգին այսպիսի բախտ չէր վիճակված։ Խորենացուն ընդօրինակում էին, բայց Խորենացու ոգին ոչ ոք չժառանգեց։

Սակայն որքան էլ շատ լինեն Խորենացու պակասությունները, որքան էլ ժամանակակից քննադատությունը նվազեցրած լինի նրա նշանակությունը, անվիճելի պիտի մնա այն հանգամանքը, որ նա «Հայոց Պատմութիւն»-ն առաջինն է իբրև լիակատար պատմություն հայերի՝ սկզբից մինչև 4-րդ դարի վերջը։ Ճիշտ է, նա այլևս չի կարող հեղինակություն լինել այսուհետև, բայց դրա փոխարեն նա միակ տեր ու տիրական է եղել տասնյակ դարերի ընթացքում, լինելով հայ ժողովրդի համար մի տեսակ ազգային Ավետարան։ Եթե միանգամայն ճիշտ է, որ Խորենացին գրել է առնվազն 7-րդ դարի վերջերում կամ 8-րդի սկզբում, այս դեպքում պետք է ավելացնել, որ նրա աշխատությունը լույս էր գալիս այնպիսի մի ժամանակ, երբ հայ ժողովուրդն արաբական արշավանքների սարսափներից առանձնապես կարիք ուներ, իր դժբախտ ճակատագրի հարվածներին դիմանալու համար, ուժ ու հույս որոնելու իր անցյալի մեջ։ Ոչ մի գիրք, բացի Ս. Գրքից, գուցե այնքան շատ չի կարդացվել Հայոց երկրում, ինչպես Խորենացու հռչակավոր աշխատությունը։99 Այս իրողության ապացույց են այն բազմաթիվ ձեռագիր արտագրությունները, որոնք խորտակման մի շարք դարերի միջով եկել, հասել են մեզ, անշուշտ, չափազանց շատ կորածների մնացորդը կազմելով[3]։

[1] Որոնք հետո մտան Ֆիրդուսիի «Շահնամեի» մեջ։

[2] Ա գրքի հավելված, «Ի Պարսից առասպելեացս»։

[3] Բազմաթիվ են «Հայոց Պատմութեան» և տպագրությունները։ Առաջին անգամ նա տպագրվեց 17-րդ դարի վերջում, երբ պատրաստվում էր հայ ժողովրդի մեջ ազատագրական մի

3. Արվեստ։ *7-րդ դարի նշանակությունն ավելի մեծ է հայ արվեստի պատմության տեսակետից։ Այս դարում է, որ իսկապես հանդես է գալիս Հայկական արվեստն այնպիսի ճոխությամբ, որ իրավունք է տալիս հայ ստեղծագործական տաղանդին իր ինքնուրույն տեղը գրավել համամարդկային արվեստի պատմության մեջ։ 7-րդ դարը մի մեծ շինարարական շրջան է ներկայացնում, հարուստ իր բեղմնավորությամբ ու բազմակողմանիությամբ։ Նա ունի մի ընդհանուր կնիք—եկեղեցական և կենտրոնացած էր Հայաստանի քաղաքական և կուլտուրական սիրտը կազմող Արարատյան նահանգում, գլխավորապես նրա երկու սահմանակից գավառներում—Արագածոտն և Շիրակ։ Շինարարների դերում հանդիսանում են հայոց կաթողիկոսները և մի քանի նախարարական տներ, ինչպես են Մամիկոնյանները և Բագրատունիները։ Առանձնապես պետք է հիշատակել Կամսարական իշխաններին, որոնք միայն գրականության հովանավորներ չէին, այլև մեծ գործիչներ էին արվեստի ասպարեզում և իրենց բնագավառ Շիրակը դարձրին մի այնպիսի կենտրոն, ուր հայ արվեստը պիտի հուշակվեր երկար դարերի ընթացքում։*

*Դարի սկզբից Կոմիտաս կաթողիկոսն է (615—628 թթ.), որ բաց է անում եռուն շինարարական շրջանը, կառուցելով, ինչպես տեսանք, Հռիփսիմեի տաճարը էջմիածնի կաթողիկեի մոտ։ Բացի դրանից, նա մի քանի վերանորոգություններ կատարեց նույն կաթողիկեի*100 *մեջ*[1]*։ Շինարար էր և Եզր կաթողիկոսը (636—641 թթ.), որ շինեց, ինչպես ասում են, Գայանեի վանքը էջմիածնի կաթողիկեի հարավ-արևելյան կողմում*[2]*։ Նույն Եզրին է վերագրվում և Բագավանի մեծ տաճարի շինությունը, այժմ Յուչ-Քիլիսե կամ ս. Հովհաննեսի վանք Ալաշկերտի գավառում*[3]*։ Բայց ավելի շատ հռչակված է Ներսես Գ կաթողիկոսը (641—661 թթ.), որ և ստացել է «Շինող» պատվանունը։ Նա շինեց Զվարթնոց հոյակապ եկեղեցին*101 *էջմիածնի արևելյան մասում, ինչպես նաև մի եկեղեցի Խոր Վիրապում և մի մատուռ Դվինում*[4]*, որոնցից, սակայն, հետքեր չեն մնացել։ Ներսեսին հաջորդած Անաստաս կաթողիկոսը (661—667 թթ.) մի եկեղեցի է շինում Ակոռի գյուղում*[5]*։*

խոշոր շարժում։ Ահա այդ տպագրության լիակատար վերնագիրը. «Ազգաբանութիւն Տոհմին Տաքեթեան, յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացւոյ, յեռամեծ վարդապետէ և յոգներախտ Քերթողահօրէ ի խնդրոյ Պայազատապետի Սահակայ Բագրատունւոյ։ Հարազատ և բուն Պատմութիւն Նախնեացն Առաջնոց. Թագաւորաց, Իշխանաց, Նախարարաց և Հայրապետաց Արամեան ազգիս։ Հետևեալ ի Հայկայ Քաջէ մինչև ցԱրտաշիր թագաւորն մեր։ Ի լոյս ածեալ Տպիւք և ծախիւք Թոմայ Վանանդեցւոյ, Վեհափայլի Եպիսկոպոսի և բազմազան վարդապետի։ Ի Հայրապետութեան սրբոյ էջմիածնի Տեառն Նահապետի ամենայն Հայոց կաթողիկոսի։ Յամի մարդեղութեան Բանին 1695։ ՅԱմստէլօդամի»։

[1] **Սեբէոս,** *եր. 142։*

2 **Յովհաննես կաթողիկոս,** *Թիֆլիս, եր. 80։*

3 **И. Орбели,** «Багаванский храм и его надписи» («Христианский Восток», т. V, вып. II, Петер., 1917, стр. 129). *Ահա այդ վանքի արձանագրությունը, որ ցույց է տալիս, թե նա շինվել է 631—639 թվերին. «ԶԳ. Քսան և մի ամսոյն աստուծապահ Երակղի թագաւորի, Հրոտից ամսոյն որ աւր երեսուն էր, ես... հայր... Վանից երեց հաճոյիւք Աստուծոյ հիմնարկի սուրբ եկեղեցւոյս և յերեսներորդ ամի նոյն Երակղի թագաւորի յամսեանն Նաւասարդի... ութ եղև կատարումն նոյն գործոյս տեղւոյս շեն... կամաւ ամենայն իրաւք վարդապետութեամբ Իսրայելի Գոռոդեցւոյ» (**Հ. Ալիշան,** «Այրարատ», եր. 529)։ Այս արձանագրությունը խոշոր տառերով փորագրված է եկեղեցու շուրջ, բոլորը մի տողով։*

4 **Յովհաննէս կաթողիկոս**, *եր. 83։*

5 *Անդ, եր. 91։*

Իսկ շինող իշխաններից մենք արդեն հիշատակել ենք Գրիգոր Մամիկոնյանին, որ եկեղեցի և պալատ շինեց Արուճ (այժմ՝ Թալիշ, էջմիածնի գավառ) գյուղում և մի վանք էլ՝ Եղվարդ գյուղում, Աշոտ Բագրատունուն, որ եկեղեցի շինեց իր հայրենի Դարյունք գյուղում, Դավիթ Սահառունուն, որի շինածն է համարվում Մրենի եկեղեցին, Ներսեհ Կամսարականին, որի շինածն է Թալինի եկեղեցին։ Բացի այս բոլորից, 7-րդ դարում են շինվել Ալաման[1]*, Նախճավան, գուցե և Ագրակ գյուղերի եկեղեցիները, հարավային Շիրակում, նույնպես և Բագրան գյուղի մեծ եկեղեցին, որ ավանդաբար տեղական ժողովրդի մեջ կոչվում է ս. Թեոդորոս։ Այս վերջին եկեղեցու շինողներն են Արսվեղեան տոհմի մեծ իշխան Բուտը և նրա կին Աննան (624—631 թթ.)*[2]*։*

Ահա այս հիշատակարաններն էլ առատ նյութ են մատակարարում հայկական արվեստի այս հարուստ շրջանն ուսումնասիրելու համար[3]*։ Եվ մենք այստեղ էլ, ինչպես կուլտուրական պատմության բոլոր մասերում, տեսնում ենք մի ամբողջական, լրիվ կյանք իր բազմակողմանի երևույթներով, իր օրենքներով, որոնք նրա գոյությունն ու զարգացումն են պայմանավորում։ Այստեղ էլ, ինչպես մարդկային ստեղծագործության բոլոր բնագավառներում, հարց է ծագում, ամենից առաջ, իհարկե, ինքնուրույնության և փոխառումների, տեղայնության, յուրացման, ընդհանրացման և այլ այսպիսի շարժումների մասին։ Եվ այս բոլոր հանգամանքները վերին աստիճանի հետաքրքրական կերպով պարզաբանում են հայ արվեստի երկարատև կյանքը, որ պահպանել է իր վավերագրերի մեջ մի ընդարձակ նկարագրություն, սկսած սաղմնավորությունից մինչև զարգացման գագաթնակետերը և այնտեղից դեպի անկում թեքվելը։*

[1] *Աչքի է ընկնում այս ճարտարապետական հիշատակարանը մանավանդ նրանով, որ նրա շինողները, ինչպես երևում է, իշխանական տոհմից չէին։ Ահա նրա արձանագրությունը. «Քսան և եթներորդ ամի Հերակլի բարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակա և Արշարունեաց տեառն և Թէոփիլոսի Արշարունեաց եպիսկոպոսի ես Գրիգոր Եղուստր և Մարիամ իմ կին շինեցուք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոյ» (**Հ. Ալիշան,** «Շիրակ», եր. 125)։*

[2] **Н. Марр,** «Имя Бут или «Буд» (Записки Вост. отд. Импер. Археолог. общ. т. VII, стр. 323—325).

[3] *Հայկական արվեստի ուսումնասիրությունը համեմատաբար շատ նոր ժամանակների գործ է, բայց և այնպես, գիտությունը նրա վերաբերմամբ արդեն հասել է որոշ եզրակացությունների։ Ուսումնասիրության գործում մինչև այժմ մեծ վաստակ ցույց է տվել ակադեմիկոս Մառը, որ 1904 թվականից սկսելով պեղումներ կատարել Անի քաղաքի ավերակների մեջ, տվեց մի շարք ուսումնասիրություններ թե՛ այդ ավերակ քաղաքի և թե՛ այլևայլ տեղերում գտնվող հնությունների մասին։ Համարյա միևնույն ժամանակից նախ Զվարթնոց եկեղեցու, ապա և Անիի ու նրա շրջակաների հնությունների ուսումնասիրության է նվիրված և ճարտարապետ Թորոս Թորամանյանը, մի անխոնջ և չարքաշ աշխատավոր, որ բնատուր տաղանդով ահագին ծառայություններ է մատուցել հայկական արվեստի պատմության, տալով նրան առատ և մշակված նյութեր և խորազնին հետազոտությունների միջոցով դնելով և պարզելով մեծ ու կարևոր հարցեր։ Գլխավորապես նրա այդ նյութերի և ուսումնասիրությունների աշխատակցությամբ էր, որ Վիեննայի համալսարանի պրոֆեսոր և հայտնի մասնագետ* **Հովսեփ Ստշիգովսկին** *1917 թվին հրատարակեց գերմաներեն լեզվով երկհատոր մի հոյակապ աշխատություն «Հայոց ճարտարապետությունը և Եվրոպան» անունով, որի մեջ գեղեցիկ և հմտալից ուսումնասիրությունների հիմք էր դնում հայկական արվեստի գիտական պատմության։ Պեղումների գործի մեջ աչքի ընկնող ծառայություն մատուցել է և Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանը, որ 1900—1904 թվականներին պեղումներ կատարելով Զվարթնոց եկեղեցու տեղում, բաց արավ այդ նշանավոր եկեղեցու ավերակները, որոնք մեծ հեղաշրջում առաջացրին հայ արվեստի ուսումնասիրության մեջ։ Բերում ենք այստեղ առարկայի վերա-*

Հիմնական գիծը, որի վրա հաստատված են այդ բոլոր կենսական երևույթները, այն է, որ մենք մեր առջև ունենք բացառապես քրիստոնեական մի արվեստ։ Այստեղից արդեն ըստինքյան պարզ է, որ նա պիտի կրեր իր մեջ այն հատկությունը, որ բերում էր ինքը քրիստոնեությունը, այսինքն՝ օտար ազդեցություն, ենթարկված հայկական միջավայրի վերամշակումներին։ Քրիստոնեությունը Սիրիայից և հունական Փոքր Ասիայից եկավ Հայաստան։ Այդ ճանապարհներով էլ քրիստոնեական արվեստը մտցրեց իր ազդեցությունները, ձևերը։ Բայց այս չէր նշանակում, թե միայն կույր ընդօրինակում և ձևերի անշարժացում պիտի տիրեր Հայաստանում։ Երկիրն ուներ իր սեփական գաղափարներն ու արվեստագիտական ավանդությունները, որոնց հետ, բնականաբար, պիտի հյուսվեին օտարամուտները, դրսից եկածները։ Տարաբախտաբար, մենք չգիտենք որոշակի, թե ի՛նչ ձևեր ուներ հեթանոսական Հայաստանի շինարարական արվեստը։ Բայց որ կար այդպիսի արվեստ, այդ անկասկածելի է դարձնում հենց այն հանգամանքը, որ հայ հեթանոսությունը, ինչպես տեսանք մեր այս գործի առաջին հատորում, ուներ իր շատ զարգացած պաշտամունքն ու ծեսը, հետևապես չէր կարող զուրկ լինել իր սեփական տաճարներից, որոնց ձևը զուտ տեղական վերամշակումներ պիտի ներկայացներ այն ազդեցությունների հողի վրա, որոնք գալիս էին, ինչպես հաստատում են նորագույն հետազոտությունները, հատկապես Միջին Ասիայից հյուսիսային Պարսկաստանի վրայով։ Հեթանոսական տաճարներից ոմանք համազգային ուխտագնացությունների առարկա էին, ինչպես, օրինակ, Վահագն—Անահիտ—Աստղիկ երրորդության հարուստ տաճարն Աշտիշատում։ Իսկ Անահիտի մյուս տաճարն Եկեղյաց գավառում, նույնիսկ միջազգային հռչակ ուներ, հարկավ, ոչ միայն իր մեծ հարստություններով։ Անկարելի է, որ այսպիսի մեծ սրբավայրերը չունենային իրենց վայելուչ ճարտարապետական կառուցվածքները։

Հին, նախաքրիստոնեական արվեստի ձևեր պետք է, որ պահպանած լինեն իրենց մեջ Հայաստանի հնագույն եկեղեցիները, որոնց ուսումնասիրությունը, տարաբախտաբար, դեռ շատ է թերի։ Այս կողմից մի շատ նշանավոր հանգամանք ցույց է տալիս Տեկոր գյուղի (Հարավային Շիրակ) հռչակավոր եկեղեցին։ Ինչպես հայտնի է, պայտաձև կամարը Միջագետքի, այսինքն ասորական արվեստի հնագույն սեփականություններից մեկն է,

---

բերյալ գրականությունը, որից օգտվել ենք մենք. 1. **Դr. Հովսեփ Ստշիգովսկի**, *«Էջմիածնի Աւետարանը, ուսումնասիրութիւն հայկական, ասորական և ասորա-եգիպտական գեղարվեստի», թարգ. Հ. Բառնաբաս Պիլեզիկճյան, Վիեննա, 1892։* 2. **Н. Марр**, a) О раскопках и работах в Ани летом 1906 года, СПБ, 1907, в) «Описание дворцовой церкви в Ани», Пет., 1916, с) «Кавказский культурный мир и Армения», Пет., 1915. 3. **И. Орбели**, «Краткий путеводитель по городищу Ани», ПБ, 1910. 4. **Ch. Diehl**: a) „Etudes Byzantines", Paris, 1905, b) Manuel d'Art Byzantin, Paris, 1910. *5.* **Թ. Թորամանյան.** a) *«Հայ ճարտարապետության շրջանները» («Անահիտ» ամսագիր, Փարիզ, 1911, թ. 1—2),* b) *«Նորագույն կարծիքներ հայ ճարտարապետության մասին» (անդ),* c) *«Տեկորի Տաճարը», Թիֆլիս, 1911,* d) *Անի քաղա՞ք թե ամրոց» («Ազգագրական Հանդես», Գ. XXII և XXIII,* e) *«Գավիթ կամ ժամատուն» (Անդ, Գ. XXI),* f) *«Էջմիածնի Տաճարը» (Անդ, Գ. XIX), 6)* **Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյան**, *«Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիներ» (Անդ, Գ. XV և XVI), 7.* Ф. Б. Линч, Армения, т. I, Тиф., *1910., 8.* **Գարեգին վարդ. Հովսեփյան**, *«Քարտեզ հայ հնագրության», Վաղարշապատ, 1913։ Հայ արվեստի մասին անցյալներում խոսել են Դյուբուա դը-Մոնպերեն, Տեքսիե ֆրանսիացիները (վերջինս հատկապես Շիրակի հնությունները քննելով) և ռուս գիտական Կոնդակովը։*

որ յուրացրին և զարգացրին արաբները 7-րդ դարից հետո։ Արդ՝ Տեկորի տաճարն էլ ունի պայտաձև կամարներ, բայց նա կառուցված է արաբական արվեստի ծագումից շատ առաջ, ամենայն հավանականությամբ 5-րդ դարի վերջերում։ Եվ եթե այս այսպես է, պետք է, ուրեմն, ընդունել, որ ասորական կամարի ձևը Հայաստանում պահված է եղել ավելի հին, գուցե հեթանոսական ժամանակներից։

Այսպես, ուրեմն, ներելի է քրիստոնեական արվեստը Հայաստանի իրականության մեջ անվանել **նոր** արվեստ, ըմբռնելով այս հորջորջումն այն մտքով, որ օտարամուտ արվեստի ձևերի վրա պատվաստվում է հինը, տեղայինը, որքան այդ թույլ էր տալիս նոր կրոնն իր նվիրագործված սկզբունքներով և ձևերով։ Սկզբում, իհարկե, տեղայնությունը շատ թույլ կերպով էր արտահայտվում։ Բայց նա շուտ զարգացավ և ձուլվեց առանձնահատուկ, ինքնուրույն ձևերի մեջ, որոնք և գեղարվեստի պատմության մեջ ստացան **հայկական** ոճ անունը։

Արևմուտքում եկեղեցաշինական արվեստը յուրացրեց այն հեթանոսական շինությունների ձևերը, որոնք Կոստանդիանոս Մեծի հրամանով հատկացվեցին քրիստոնյաներին՝ իրենց պաշտամունքին ծառայեցնելու համար։ Երկու տիպ էին կրում այդ շինությունները։ Նրանք կամ հեթանոսական մեհյաններ էին, կամ **բազիլիկ** անունը կրող հասարակական շինություններ։ Հունական մեհյանները սովորաբար ունեին երկար, քառակուսի դահլիճի ձև, որ հաճախ շրջապատված էր լինում սյունազարդ ծածկոցներով (պորտիկ)։ Լինում էին և բոլորովին կլոր ձևի մեհյաններ։ Իսկ բազիլիկ կոչվում էին այն մեծ դահլիճները, որոնք հատկացվում էին հանրային խորհրդակցություններին։ Դրանք նույնպես երկար քառակուսի ձև ունեին, բայց տարբերվում էին նրանով, որ իրենց երկարության վրա բաժանվում էին երեք մասի. կենտրոնը կամ բուն դահլիճը գտնվում էր երկու թևերի միջև։ Բացի դրանից բազիլիկի հատկանշանն էր և այն, որ նրա նեղ կողմերից մեկն ուներ դուրս ցցված կիսաբոլորակ (աբսիդ), ուր սովորաբար նստում էր հավաքույթներին նախագահող իշխանավորը։ Ահա այս երկու տեսակ շինություններն էլ դարձան գլխավոր ձևերը քրիստոնեական եկեղեցաշինության համար։ Այդ ձևերն էլ մտնում են Հայաստան հունա-հռոմեական արվեստի մշակած մանրամասնություններով։ Այսպես, բազիլիկի ձևն ունեն Տեկորի և Երերույք գյուղի (Շիրակ) եկեղեցիները, որոնք յուրացրել են նաև մեհենական սյունազարդ ծածկերը, կցված նրանց երկու կողմերին։ Միևնույն երկար քառակուսի ձևն ուներ և Էջմիածնի կաթողիկեն իր սկզբնական շրջանում։

Քրիստոնեական տաճարների շինությունը Հայաստան մտած պիտի լինի, իհարկե, քրիստոնեության հետ, այսինքն՝ առնվազն 4-րդ դարի սկզբից։ Այս նախնական շրջանի մասին մենք համարյա ոչինչ գաղափար չունենք, քանի որ մինչև այսօր երևան չեն հանված շինություններ այդ ժամանակներից։ Սակայն, հնագույն եկեղեցիների շինությունները տալիս են շատ հետաքրքրական պատկերներ, որոնց մեջ կարելի է փոքր ի շատե մերձավոր հավանականությամբ նշմարել այն փոփոխությունները, որ մտցնում էր նրանց մեջ արվեստը ժամանակի ընթացքում իր զարգացման և ճոխացման շնորհիվ։ Այսպես, Էջմիածնի կաթողիկեն, որ, ինչպես գիտենք արդեն, Վահան Մամիկոնյանը վերանորոգեց 5-րդ դարի երկրորդ կեսում,

խաչի ձև ստացավ հետագա ժամանակներում և այս ձևը գնալով ավելի ու ավելի ընդհանրանում է հայ ճարտարապետության մեջ։

Առաջին, որ և նախնական շրջանը, որի մեջ իր աստիճանական զարգացումն էր ստանում Հայաստանի քրիստոնեական արվեստը, կարելի է համարել 4-րդ, 5-րդ և 6-րդ դարերը։ Յոթներորդն արդեն նոր, երկրորդ շրջանի դարագլուխն է կազմում, երբ զարգացումն արդեն այնքան նշանավոր չափերի է հասնում, որ նույնիսկ մեծագործությունների ուժեղ կարողությունն էլ է ցույց տալիս, հանդես բերելով ստեղծագործական տաղանդի նրբություն և բազմակողմանիություն։ Յոթներորդ դարի սերնդի համար արդեն շատ անբավարար են նախորդ դարերի շինությունները։ Սեբեոսն ասում է, թե Հռիփսիմեի վկայարանը, որ շինել էր Սահակ Պարթևը, «կարի ցած և մթին»[1] էր, ուստի Կոմիտաս կաթողիկոսը նոր վկայարան շինեց, մի, ճիշտ որ, հոյակապ շինություն, որ այսօր էլ գեղարվեստական մեծ հաճույք է պատճառում տեսնողին իր դասական գեղեցկությամբ, արտահայտված պարզ և ուղիղ գծերով, առանց աչք շլացնող զարդարանքների և սեթևեթանքների։ Նույն այդ գծերի վեհությունը պահպանված է և Բագավանի (այժմյան Ցուչ-Քիլիսեի) տաճարի մեջ, ու, բացի դրանից, տեսնում ենք 7-րդ դարի վարպետների մեծ կարողությունը՝ գեղեցկություն ստեղծել լույսերի առատությունից։ Բազմաթիվ մեծ ու փոքր պատուհանների միջոցով նրանք տաճարի ներսը ողողել են առատ լույսերով, որոնց մեջ շինության ընդարձակ չափերը, կամարների դասավորությունը մի վեհ ազդեցություն են գործում։

Կոմիտաս կաթողիկոսն էր դարձյալ, իր դարի գեղարվեստական ըմբռնումների բարձր ներկայացուցիչներից մեկը, որ վերաշինեց և Էջմիածնի կաթողիկեի պակաս մասերը։ Վահան Մամիկոնյանը թողել է իր շինության տանիքը փայտածածկ, առանց գմբեթի, և այս ցուցմունքներն առհասարակ թույլ են տալիս կարծելու, թե 5-րդ դարում հայերին դեռ հայտնի չէր գմբեթը, ոչ էլ քարե տանիքը։ Կոմիտասը շինեց թե՛ մեկը և թե՛ մյուսը։ Առանց գմբեթի էր և Տեկորի տաճարը։ Բայց ժամանակի ընթացքում թե՛ նրա տանիքն ստացավ խաչի ձև և թե՛ այդ կտուրի վրա բարձրացվեց գմբեթ՝ սկզբում բոլորովին նախնական ձևով։

Բայց 7-րդ դարի բոլոր եկեղեցական շինությունների թագն ու պարծանքը Զվարթնոց եկեղեցին էր։ Ներսես Գ-ին հաջողվեց Հայաստանի երկնքի տակ մի այնպիսի գեղարվեստական մեծագործություն, որ միակն էր, չուներ իր նմանը ոչ մի տեղ, ուստի և հիացմունք էր ազդում ամենքին։ Մեր բոլոր պատմագիրները խոսք չեն գտնում այդ փառավոր գեղարվեստական կոթողը գովելու համար։ Միևնույն չքնաղ տպավորությունն այժմ թողնում են նրա ավերակները, թեև սրանք շատ հեռու են հին ամբողջության մասին լիակատար հասկացողություն տալու կարողությունից։ Տարերային մի սոսկալի ուժ, անկասկած, մի երկրաշարժ, պատռել է հսկա շինության ամբողջ մարմինը, ցած գլորել, մանրել ու փոշիացրել շատ բան։ Ներկայումս մնացել է Ներսեսի մեծագործության գրեթե հատակագիծը միայն։ Առաջին անգամ ճարտարապետ Թորամանյանն էր, որ ավերակների մնացորդների ուսումնասիրությամբ վերակազմեց եկեղեցու հին մակարդակը և ցույց տվեց, թե ինչ խիզախ, գրեթե ըմ-

1 Եր. 141։

բռնտ հղացումների և շինարարական հուժկու ձեռներեցության տեր է եղել Ներսես Շինողը կամ նրա ճարտարապետը, մի պարզ վարպետ, անշուշտ, բայց մի ինքնաբույս տաղանդ։ Նրա շինած եկեղեցին կլոր էր, բարձր, երեք հարկանի, ներսից սյունազարդ։ Սյուների մի շարքից դեպի մյուս շարքը գցած կամարները շինարարական արվեստի տեսակետից ներկայացնում են վերին աստիճանի համարձակ, գրեթե անթույլատրելի գործ։ Նանում խատեսելով, որ իր գծագրած ձևով տանիքն ու գմբեթն ահագին ճնշում պիտի գործեն սյուների կամարների վրա և այդպիսով վտանգ պառնան ամբողջության, ճարտարապետն այդ մասերը (տանիք և գմբեթ) շինել է թեթև հրաբխային չեչաքարից, մինչդեռ մնացած մասերը կարծր և ծանր քարերից են։ Այս կողմից աչքի են ընկնում մանավանդ չորս կենտրոնական բարձր սյուները, որոնց վրա հաստատված էր մեծ գմբեթը։ Այս սյուների խոյակների վրա գեղեցկաշեն քանդակված էին թևատարած արծիվներ, որոնց տեսքը, մանավանդ, առանձին վեհություն էր հաղորդում այդ զարմանալի եկեղեցու ներսին։ «Մեզ այնպես է թվում,— գրում է Զվարթնոցը նկարագրողներից մեկը— որ շինարար կաթողիկոսը կամ ինքը ճարտարապետը ցանկացել է դրանց (արծիվների) միջոցով այլաբանական միտք արտահայտել։ Եվ ուրիշ ի՛նչ միտք կարող էինք այդտեղ նկատել, քան աստվածային անսահման մեծության գաղափարի պատկերացումը մարդկային ձեռքի շոշափելի ստեղծագործության մեջ։ Հսկայական թռչունների լայն բացված թևերի ուժգին թափը, որոնք չորս անկյունում կանգնած՝ երկրից երկինք էին սլացնում երկնանման գմբեթը, կարծես, պատկերացնում էր մահկանացուների ջերմ աղոթքների բարձր թռիչքը դեպի բարձրյալի գահը»[1]։

Այս արտասովոր գեղեցկությունների պատճառով էր, որ Զվարթնոցի ճիշտ նմանությամբ եկեղեցիներ շինվեցին 10 և 11-րդ դարերում, մեկը Բանա գյուղում (Արդահանի գավառ), մյուսը՝ Անի քաղաքում։ Նույնիսկ եվրոպական հողի վրա էլ պատահում են Զվարթնոցի տիպի կրկնության օրինակներ։ Այսպես է, օրինակ, Սեն-Լավրենտ եկեղեցին Միլանում[2]։ Շատ կարևոր հարց է դառնում, թե Զվարթնոցի ձևը ո՞րտեղ է ստեղծված և թե առհասարակ ի՛նչ ազդեցությունների արդյունք է այս նշանավոր շինությունը։ Բայց այս հարցին միանգամայն բավարար լուծում տալու համար շատ նյութ չկա։ Ինքը շինությունը ցույց է տալիս մի սաստիկ հունասիրություն, մի հանգամանք, որ այնքան հատուկ էր Ներսես Շինողին։ Սյուների խոյակների վրա կան Ներսեսի անվան սկզբնատառերը հունարեն լեզվով, բացի դրանից՝ և հունարեն համառոտ արձանագրություն, որ թարգմանվում է «Ներսէսի է շինեալ յիշեցէք»։ Իսկ հայերեն արձանագրություն, որի բովանդակություն կազմեին նույն այս շինության հանգամանքները, մինչև այժմ չէ գտնված։ Անշուշտ հունասեր նույնիսկ և քաղկեդոնիկ Ներսեսը շատ բան վերցրել է հունական ճաշակից։ Հենց մի քանի սյուների կողովաձև խոյակները հոնիական ոճն են ներկայացնում և առհասարակ հունա-հռոմեական արվեստի ազդեցությունը շատ է նկատելի։ Բայց և այնպես, Ներսեսի գործն իր ամբողջության մեջ ինքնուրույնություն է ներկայացնում և զուտ արևելյան կնիք ունի[3]։ Կասկած չկա, որ շինու-

1 Մեսրոպ վարդ., «Էջմիածին և Հայ հնագ. եկեղ.» («Ազգ. Հանդ.», XVI, եր. 145)։

2 Diehl, „Man. d'Art Byzan.“, p. 318.

3 Ibid.

թյան վրա աշխատել են և բյուզանդացի վարպետներ, և հունարեն ճարտար արձանագրությունները նրանց ձեռքի գործերն են։ Բայց նույնքան անկասկած է, որ նրանց հետ աշխատել են և հայ վարպետներ[1], որոնց ձեռքի գործն է արևի ժամացույցը, որ փորագրված է տաճարի վրա և ունի արձանագրություն հայերեն լեզվով, «Աղաւթեսցեն առ Տէր ամենայն սուրբք ի ժամ ընդունելի»։ Հունական արվեստի գործ էր և մոզայիկ մեծ խաչը, որի մի կտորն է գտնված ավերակների մեջ։

Այս բոլոր փաստերը պատկերացնում են մեր առջև միևնույն իրականությունը, որ մենք նկատել ենք շատ անգամ, այսինքն՝ օտար ազդեցությունների և տեղային ինքնուրույնության միաձուլումը և նրանից առաջացած նոր արվեստը։ Սակայն պիտի նկատենք և այն, որ ազդեցությունների հարցը դեռ վերջնականապես լուծված չէ եվրոպական գիտության մեջ։ Եվ այսօր դեռ վեճի առարկա է, թե արդյոք հայե՞րն են սովորել բյուզանդացիներից, թե՞ ընդհակառակն, բյուզանդացիներն են սովորել հայերից։ Հայկական արվեստն այնքան գեղեցիկ ուսումնասիրած ավստրիացի անվանի գիտնական Ստշիգովսկին բազմակողմանի տվյալներով ապացուցում է, որ հայ ճարտարապետական ոճը (հատկապես խաչաձև եկեղեցին) բյուզանդացիների միջոցով անցել է նույնիսկ Արևմտյան Եվրոպա, մինչդեռ մյուս կողմից նույն այդ ոճն անցել է Վրաստան, Ռուսաստան և հարավային սլավոնների մոտ[2]։ Ստշիգովսկին հաստատում է, որ եվրոպական արվեստի երկու գլխավոր ոճերը—ռոմանական և գոթական—հայկական ոճի խիստ ազդեցության տակ են ծնվել և զարգացել։

Մինչդեռ եկեղեցական շինարարության հուշարձանները բավականաչափ շատ ու բազմակողմանի են արվեստի այդ ճյուղի մասին պարզ հասկացողություն կազմելու համար, տարաբախտաբար չափազանց աղքատ են այնպիսի հուշարձաններ, որոնք կարող կլինեին ներկայացնել ոչ-եկեղեցական, այսպես ասած՝ աշխարհական շինարարությունը։ Այդ պատճառով էլ մենք շատ քիչ բան գիտենք, թե ի՛նչպես էին շինվում տներ, հասարակական հիմնարկություններ, պալատներ, կամուրջներ և այլն։ Հատկապես բնակարանային շինարարության վերաբերմամբ մի քանի աղոտ փաստեր տվել են երկու հնագիտական պեղումներ և, անշուշտ, ապագայում, երբ գիտական հետազոտությունները հողի տակ ծածկված հիշատակարաններ շատ կհանեն, ավելի հարուստ նյութ կհավաքվի արվեստի այս ճյուղի վերաբերմամբ ևս։ Զվարթնոց եկեղեցու պեղումները լույս հանեցին և կաթողիկոսական ապարանքի մնացորդները, հողից քիչ բարձր պատեր, որոնք շենքի ամբողջության մասին պայծառ գաղափար չեն տալիս, այնպես որ նրանցով կարելի է միայն ապարանքի հատակագիծը կազմել։ Ապարանքը բաղկացած է մի քանի բաժանմունքից և բազմաթիվ սենյակներից, որոնք կառուցված են խնամքով և արտահայտում են ճաշակ և փարթամություն։ Սենյակները զանազան մեծության են, բայց բոլորը սրբատաշ քարերից շինած, հավանաբար կամարակապ էին, իսկ դահլիճները, բացի դրանից, սյունազարդ էլ էին։ Պատուհանները, ինչպես երևում է, բարձրումն էին

[1] Կաղանկատվացին (եր. 362) հավատացնում է, թե Զվարթնոցի վարպետները հայաստանցի էին։

[2] **Diehl, p.** 319.

շինվում, զույգ նույնիսկ միմիայն առաստաղի վրա։ Շինության ամենակարևոր մասը գեղեցիկ ու մեծ դահլիճն էր, ուր պատերի տակ բարձր տեղեր էին շինված (սաքու)՝ բազմականների նստելու համար։ Մեծ տունն ուներ, իհարկե, և բոլոր հարկավոր շինությունները, տնտեսական զանազան պետքերի համար։

Բնակարանային շինության շատ աղոտ հետքեր պահել է Կամսարականների Շիրակը։ Հատկապես Անի բերդում նրանց ապարանքը շինված էր, ինչպես երևում է, այն բարձրադիր ժայռոտ բլուրի վրա, որ հետո Անիի միջնաբերդը դարձավ։ Այդտեղ հետագա ժամանակներում Բագրատունիները պալատ շինեցին իրենց համար, սակայն պահեցին հին պատի մի մասը, որ թույլ է տալիս հասկացողություն կազմել Կամսարականների շինարարության մի տիպի մասին։ Պարիսպը, անշուշտ, 7-րդ դարից էլ հին է և իր կազմով մոտենում է ուրարտական որմնադրության։ Մենք տեսնում ենք քարերի մեծամեծ կտորներ, խնամքով հարթած, իրար հետ կպցրած ոչ թե կրաշաղախով, այլ երկաթե կապերով, որոնք մտցվում էին քարերի մեջ փորած ծակերը։ Գուցե նույն Կամսարականների պալատի մի մասնիկն է այն շինությունը, որ հետո վերածվել է եկեղեցու և որ գտնվում է միջնաբերդի արևելյան ծայրին, դեպի Ախուրյան գետն իջնող լանջի վրա[1]։ Եթե ճշտվի այս ենթադրությունը, այն ժամանակ կպարզվի և Կամսարականների ապարանքի մոտավորապես ճիշտ պատկերը—դրսից կիկլոպյան մեծաքար պարիսպ, ներսից՝ սրբատաշ քարերից դրած պատեր, որոնց վրա դուրս էին բերված ճաշակավոր քանդակներ։

Նույն կիկլոպյան որմնահյուսությունը մասնավորապես շատ հետքեր թողել է հարավային Շիրակում, ուր Կամսարականներն ունեին մի քանի կարևոր բերդեր։ Սրանց պարիսպներն ու ամրությունները շինված են ուրարտականին շատ նման արվեստով, քարերի ահագին բեկորներից։ Նույնպես զարգացած էր և ժայռաշինությունը։ Կամսարականների Շիրակում էլ գիտեին այրեր փորել որձաքարի ժայռերի մեջ, ինչպես ուրարտացիները գիտեին փորփորել Վանի ժայռերը։

Շինարարական արվեստի հետ զարգացած ենք տեսնում և բարձրաքանդակի արվեստը, որ արտահայտության մի միակ ասպարեզ ունի—զարդանկարները։ Բարձրաքանդակ զարդանկարները կամ երկրաչափական գծեր են, կամ բուսական աշխարհից վերցրած օրինակներ։ Այս երկրորդ տեսակի նկարների մեջ շատ տարածված ու հարգված է խաղողը։ Նրան տեսնում ենք Տեկորի տաճարի քանդակների վրա, որոնք հնագույններն են մեր արվեստի պատմության մեջ։ Զվարթնոցի վրա ավելի ճարտար և գեղեցիկ են խաղողի քանդակած ողկույզները, որոնց միանում են և խոշոր նռները, և արվեստը զարգացման մի բարձր աստիճան է արտահայտում։ Հայ արվեստագետները կարողանում էին այսպիսի քանդակների մեջ մեծ չափով բնականություն պահպանել։ Բայց նույնը չի կարելի ասել մարդ ներկայացնող քանդակների մասին։ Այստեղ քանդակող վարպետի անվարժությունը հասնում է հաճախ երեխայության, և սրա ապացույցն է այն բարձրաքանդակ նկարը, որ գտնվում է Մրենի եկեղեցու հյուսիսային դռան ճակատին։ Այդ մի խմբանկար է, ուր նկատվում են մի թամբած ձի և նրա առջև մի մարդ, ըստ երևույթին իշխան, որի առջև չոքած են մի եկեղեցական և մի երե-

[1] **Н. Марр,** «Опис. дворц. церкви в Ани», стр. 36.

խա, որ բռնած ունի ձողաբարձ խաչ. սրանց հետ երևում է մի միրուքավոր մարդ, ձեռքին քսակ բռնած։ Գեղարվեստական որևէ արժանիք չունի այս նկարը և հետաքրքրական է լոկ իբրև իր ժամանակի կենսական մի տեսարան։ Նույնիսկ Զվարթնոց եկեղեցու բարձր արվեստի մեջ էլ մարդկային բարձրաքանդակը միանգամայն անհաջող է իբրև բնականությունը ներկայացնող փոքր ի շատե ճաշակավոր գործ։ Հայ քանդակագործության տկարությունն այս ճյուղի մեջ ժառանգական է դառնում և հետևյալ դարերում։

Դժբախտաբար մենք միջոց չունենք իմանալու, թե արվեստներով այսքան հարուստ 7-րդ դարում կա՞ր արդյոք պատկերագրություն թղթի վրա։ Գրչյա որևէ հիշատակարան թե՛ 7-րդ դարից և թե՛ նրանից ավելի վաղագույն ժամանակներից չէ մնացել[102], *և մենք չգիտենք նաև, թե գրության ի՛նչ ձև էր գործածվում այդ ժամանակները։ Միակ նմուշները, որոնք մերձավոր հասկացողություն են կազմել տալիս այդ մասին, քարերի վրա են փորագրված։ Դրանք Տեկորի, Հռիփսիմեի, Մրենի, Զվարթնոցի, Թալինի, Արուճի, Բագարանի, Ալամանի արձանագրություններն են։*

Եվ այսպես, 7-րդ դարն արվեստի տեսակետից անզուգական է շատ նկատառումներով։ Հայ ճարտարապետական ոճն այդ ժամանակ է իր ձևերն ամբողջացնում և հասնում մի զարգացման, որ գոյություն չուներ այդ դարից առաջ։ Կարելի է ասել, թե քրիստոնեության նախընթաց դարերը նախապատրաստական ժամանակներ էին հայ արվեստի համար, որ 7-րդ դարում մտնում էր իր դասական դարը։

Գլուխ չորրորդ

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

1. Արաբական Հայաստանը: *Ութերորդ դարի սկզբում իսլամը, ընդարձակելով իր նվաճումները, արդեն մի համաշխարհային պետություն էր դարձել։ Արևելքում նա, Պարսկաստանից առաջանալով, գնաց մտավ Միջին Ասիա, Հնդկաստանի պատվարներն անցնելով, իջավ Գանգեսի հովիտը, իսկ արևմուտքում, Հյուսիսային Աֆրիկայի երկարությամբ հասնում էր Ատլանտյան օվկիանոսին և անց էր կացնում իր նվաճողական թափը Եվրոպայի հարավ-արևմտյան ծայրը։*

Այս մեծածավալ տարածումը, որ կարծես գալիս էր մոռացնել տալու նույնիսկ երբեմնի հռոմեական պետությունը, քաղաքական շատ խոշոր երևույթ էր հարկավ, բայց առաջացրեց և գիտական շարժում, որ այնքան լավ ավանդություններով զարդարել է արաբական միջնադարը։ Արաբական գիտության նշանավոր ճյուղերից մեկը դարձավ և աշխարհագրությունը։ Տիրանալով ահագին տարածությունների, արաբները կարիք ունեին իմանալու, թե ի՛նչ երկրներն են դրանք, ի՛նչ ունեն իրենց մեջ։ Այս անհրաժեշտությունը տանում էր նրանց դեպի աշխարհագրական որոնումները, և ահա 9-րդ դարի առաջին կեսում արդեն վերջնականապես հաստատուն հող էր նվաճել աշխարհագրական գիտությունը, բայց նրա առավելագույն ծաղկումը վերաբերում է 10-րդ դարին, երբ մի շարք աշխարհագիրներ տալիս են ընդարձակ և մանրամասն հեղինակություններ։ Այս գրականության

մեջ երևան է գալիս և Հայաստանն իբրև արաբական մեծ պետության մի մասնիկ։ Ճիշտ է, արաբ աշխարհագիրները միշտ չեն միանգամայն լավատեղյակ հանդիսանում իրենց նկարագրած երկրների, ուրեմն նաև Հայ երկրի վերաբերմամբ, բայց ընդհանուր առմամբ նրանց արձանագրած փաստերը բավական պայծառ լույս են պատրաստում 8—10-րդ դարերի ընդհանրապես մութ իրականությունը պարզելու համար։ Հայոց պատմության համար արաբական այդ աղբյուրները չափազանց կարևոր են, ուստի մենք, նախքան արաբական տիրապետության հանգամանքներին դիմելը, կդնենք այստեղ այն աշխարհագրական տեղեկությունները, որ տալիս են արաբ գրողները Հայաստանի, մասամբ նաև նրա դրացի երկրների մասին։ Այս կարևոր է և այն պատճառով, որ հենց արաբական տիրապետության ժամանակից հին աշխարհագրական անունները կամաց-կամաց սկսում են տեղի տալ նոր անունների, որոնք և նոր վարչական բաժանումներ են ներկայացնում[1]*։*

Դիրք և տարածություն: *Արաբական մեծ պետության մեջ Հայաստանը հանդես է գալիս միացած Ադրբեջանի (Ատրպատական) և Արրանի (Աղվանից աշխարհի) հետ*[103]*։ Այս միաձուլումը, երևի, վարչական նկատառումներով էր կատարվել։ Թեև երեք երկրները պիտի կառավարվեին առանձին-առանձին* **վալիներով** *(ընդհանուր նահանգապետ կամ փոխարքա, մեր գրականության մեջ՝* **ոստիկան**[104]*), որոնց համար ամեն մի երկրում շինված էր ապարանք, բայց նրանց կառավարությունը հաճախ միացվում էր մի անձի մեջ։ Սակայն չի կարելի չնկատել, որ կապը Հայաստանի և Ադրբեջանի միջև, եթե ոչ բոլորովին, գոնե գերազանցորեն արհեստական էր, մինչդեռ Աղվանքը միայն վարչականորեն չէր մոտեցած Հայաստանին, այլև ազգագրական և պատմական ուրիշ շատ հանգամանքներով էլ, և այդ պատճառով շատ աշխարհագիրներ Աղվանից աշխարհը համարում են Հայաստանի մի մասը և, այսպիսով, ընդարձակում են Հայաստանի սահմանները մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթան։ Հետաքրքրական է, որ Վրաստանը իբրև առանձին երկիր չի հիշատակվում արաբական աշխարհագրության այն շրջանի մեջ, որ ընդգրկում է 9—10-րդ դարերը։ Ամբողջ արաբական Այսրկովկասը Հայաստան անվան մեջ էր ամփոփվում։ Օրինակ, Թիֆլիսը մտնում էր Արրանի կազմի մեջ և սրա հետ միասին դառնում էր Հայաստանի մի մասը։ Կան նույնիսկ այնպիսի աշխարհագիրներ, որոնք կովկասյան լեռնաբնակ ցեղերն էլ զետեղում են Հայաստանի մեջ։*

---

[1] *Արաբական աշխարհագիրները, որոնք տեղեկություններ են տալիս Հայաստանի մասին, հետևյալներն են. 1. էլ-Բելաձորի (+892 թ.), 2. Ալ-Իստահրի (գրել է 930 թ.), 3. Իբն-ալ-Ֆակիհ ալ Համադանի (903 թ.), 4. Իբն-Խորդադբե (9-րդ դարի վերջում), 5. Կուդամա (948 թ.), 6. Իբն-Ռուստե (903 թ.), 7. Ալ-Յակուբի (9-րդ դարի վերջում), 8. Ալ-Մուկադդասի (985 թ.), 9. Մասուդի (956), 10. Իբն-Խաուկալ (977 թ.)։ Սրանց գրվածքների այն մասերի թարգմանությունը, որոնք վերաբերում են Հայաստանին և Կովկասին, տե՛ս* **Н. А. Караулов,** «Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане», («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифл., вып. XXIX, XXXI, XXXII, XXXIII։ *Այս թարգմանությունն էլ, ճոխացրած թարգմանչի համալից ծանոթություններով և աշխարհագրական քարտեզներով, մեր գլխավոր աղբյուրն է։ Այնուհետև ունենք ձեռքի տակ.* 1. „Géographie d'Aboulfédon", trad. par Stanislas Guyard, t. II, sec. par., Paris. 1883. *2. Մորթմանի վերոհիշյալ աշխատությունը, թարգման. Ցությունճյանի, 3. «Արաբացի Մատենագիրք Հայաստանի մասին», թարգմ. Բ. Խալաթյանի (տես «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1903—1908 թթ.)։*

Սահմաններ: Նայելով զանազան աշխարհագիրների ցուցմունքներին, արաբական Հայաստանի արևմտյան սահմանակետ համարվում էր Քալիքալա քաղաքը, որ եթե այժմյան Էրզրումը չէ, պիտի նրան շատ մոտ եղած լիներ[1]։ Այդտեղից սահմանը գնում էր մինչև Կաբխ (Կովկաս) լեռները։ Հյուսիսային սահմանը հենց այս մեծ լեռնաշղթան էր, որ վերջանում էր Խազարների (Կասպից) ծովի ափին, թողնելով մի նեղ անցք, որ փակում էր բազմահռչակ Բաբ-ուլ-Աբվաբ (Դերբենդ) բերդը։ Արևելքում սահմանագիծը Խազարների ծովի ափով գալիս էր մինչև Ադրբեջանի սահմանը, որ կազմում էր Ար-Ռասս (Արաքս) գետը։ Իսկ հարավում Հայաստանի սահմանը հասնում էր Միջագետքին։ Տարուն (Տարոն) գավառը մի ժամանակ առանձին վարչական շրջան էր կազմում, ուստի Կուդամա աշխարհագիրն ասում է, թե Հայաստանը գտնվում է Տարոնից դեպի հյուսիս, թեև չի ժխտում միևնույն ժամանակ, որ այս գավառն իսկապես Հայաստանի մի մասն է։ Կան ցուցմունքներ, որոնք Հայաստանին վերաբերող տեղ են համարում և Տրապիզոն նավահանգիստը։ Արաբական հեղինակներին անծանոթ չէր և Փոքր Հայքը, որ կոչվում էր պարզապես Արմեն։

Լեռներ, ջրեր: Երեք սահմանակից երկրները—Ադրբեջան, Հայաստան և Արրան—մեծ մասամբ լեռնոտ են։ Հատկապես Հայաստանի մասին Ալ-Մուկադդասին ասում է. «Այս մի ցուրտ երկիր է. առատ ձյունով և անձրևներով։ Այստեղ տարափոխիկ հիվանդությունները ավելի քիչ են, քան որևէ ուրիշ տեղ։ Նրա բնակիչները... աչքի են ընկնում իրենց մեծ միրուքներով։ Նրանց լեզուն տգեղ է»։ Հայկական լեռներից հիշատակված ենք տեսնում երկուսը միայն—Մեծ Մասիսը և Փոքր Մասիսը։ Զարմանալի է, որ Արարատյան երկրի հսկան սրբազան ավանդությունների առարկա է դարձել և արաբների մեջ։ Մեծ Մասիսը կոչվում էր Ալ-Խարիս, Փոքր Մասիսը՝ Ալ-Խավերիս։ Ավանդությունն ասում էր, թե դրանց տեղը դաշտ է եղել և այդ դաշտում ապրելիս է եղել մի ժողովուրդ, որ մոռանալով ալլահին, չարագործություններ էր կատարում։ Ալլահը շատ խրատեց այդ ցեղը, բայց անօգուտ։ Այն ժամանակ նա կործանեց ստահակ ցեղը և նրա բնակության տեղում բարձրացրեց այս երկու լեռները։ Արաբ գիտնականներին էլ հայտնի էր, որ Մեծ Մասիսի գլուխը բարձրանալն անհնարին է նրա լանջերի ուղղաձիգ թեքության պատճառով։ Բայց այս համոզմունքի մեջ, անշուշտ, փոքր դեր չէին կատարում և վերոհիշյալի նման ավանդական պատմությունները։

Գետերից փոքր ի շատե մանրամասնորեն նկարագրվում են Ար-Ռասսը (Արաքս) և Ալ-Կուրը, Տիգրիսն ու Եփրատը մոռացված են, որովհետև նրանց մեծ մասն արաբական Հայաստանից դուրս էր գտնվում։ Ար-Ռասսը սահմանագլուխ էր և զուտ հայկական ներքին գետ համարվում էր Կուրը։ Երկու գետերի գլխավոր հատկությունը նրանով է որակվում, որ նրանց ջրերը բարեհամ են և ունեն իրենց մեջ բազմաթիվ տեսակի ձկներ։ Իբն-ալ-Ֆակիհը գրում է. «Ար-Ռասսը զարմանալի գետ է և նրա մեջ ձկների զանազան տեսակներ կան։ Նրա մեջ է գտնվում Շուրմահի (գրվում է և «Սուրմահի», այժմյան Շուրմահին, որ և Շահմահի) ձուկը, իսկ դրա պես ձուկ ուրիշ ոչ մի գետում չի գտնվում»։ Շուրմահի գերազանց հատկությունն այն է, որ նա շատ շաղ է և հյութալի։ Կուրի մեջ էլ տեսակ-տեսակ ձկներ կան—թառափ (осетр), պերկես (окунь)։

Մի ուրիշ զարմանահրաշ երևույթ նույն Իբն-ալ-Ֆակիհը համարում է Խլաթի (Վանի) լիճը։ «Տասն ամսվա ընթացքում նրա մեջ չեն երևում գորտեր, չկան խեցափառեր ու ձկներ, իսկ տասն ամսից հետո, երկու ամիս ժամանակով, երևում է մի տեսակ ձուկ, որ սատկած է լինում»։ Այս առասպել է, ուրիշ աշխարհագիրներ գիտեն, Վանի լճից է դուրս գալիս «տարրիխ» (տարեխ) ձուկը, որ արտահանվում է աշխարհի բոլոր կողմերը։ Ուրմիայի լճի մեջ, նույն աշխարհագիրների վկայությամբ, գտնվում են ձկներ և մի տեսակ կենդանի, որ կոչվում է «ծովային շուն»[1]։ Տարօրինակ հանգամանք է, որ Սևանի լճի մասին ոչինչ հիշատակություն չկա արաբական հարուստ գրականության մեջ։ Իսկ Խազարների (Կասպից) ծովն իր ափերում ապրող ազգերով երկար ու մանրամասն նկարագրությունների նյութ է դարձել։

Կենդանիներ, բույսեր, հանքեր: Իբն-ալ-Ֆակիհն ասում է. «Ահմեդ իբն-Վատըխ Իսպահանին հաղորդեց, որ ինքը երկար ապրել է Հայաստանում[2] և քարտուղար է եղել նրա շատ թագավորների և կառավարիչների մոտ և չի տեսել մի երկիր, որ ավելի հարուստ լիներ և կենդանիների քանակությամբ ավելի նշանավոր, քան Հայաստանը»։ Ապա, դիմելով այն հարստություններին, որոնք երկրի պարծանքն են կազմում, արաբ հեղինակը գրում է. «Հայերն ասում էին. «Մեզ մոտ առատ է մանանան։ Մենք ունենք «կիրմիզ» (կարմիր գույն, որդան կարմիր, «ղըրմըզ») ոչ մի տեղ չկա, բացի մեր երկրից։ Սա մի կարմիր որդ է, որ երևում է գարնան օրերին։ Նրանք հավաքում են, եփում են և նրանով ներկում են բուրդը։ Հայաստանում կա «աշակ» անունով մի կենդանի, որ նման է կատվի և ունի քնքուշ հոդեր և փափկամազ բուրդ։ Նրա մորթիներից մի քանիսը կարում են իրար և զգեստ պատրաստում, իսկ ժանիքները շատ լավ են սիրային գործերի համար։ Վերցնում են նրա ժանիքներն ու ոսկորները լավ չորացնում են։ Դու կտաս քո սիրած էակին խմել այդ ոսկորների փոշին և նա կսիրի քեզ կրքոտ սիրով։ Մեզ մոտ առատ է տորոնը։ Հայաստանում գտնվում են սնդիկի, արջասպի, պղնձի և արծաթ-անագի հանքեր։ Նրանց մոտ կան հայկական եղներ, շագանակ և մեծ առատությամբ կեչի ծառ, որից շինում են զարմանալի իրեր։ Այս ծառից շատ կա Բերդաայի երկրի թանձր անտառներում, որոնք հարուստ են ծառերով և թփերով»[3]։

---

[1] Այս քաղաքը հաճախ է հիշատակվում արաբական մատենագրության մեջ և, ինչպես երևում է, շատ կարևոր նշանակություն ուներ այն ժամանակներում։ Այս հանգամանքը միայն բավական է, որ մենք նրան նույնացնենք Էրզրումի հետ։ Եվ Մորթմանը, կարծես, հաջողությամբ է դնում Քալիքալա անվան հայերեն զուգահեռը, այն է՝ Կարին քաղաք: Իրենք՝ արաբ հեղինակներն ասում են, որ Ար-Ռասս բխում է Քալիքալայի մոտ։ Այս հիշատակությունն էլ շատ հավանական է դարձնում, որ այստեղ մենք գործ ունենք, ճիշտ որ, Կարինի հետ, քանի որ Սրմանց (Բինգյոլի) լեռների սահմաններում հայտնի չէ մի այլ քաղաք, որ այդքան նշանավոր եղած լիներ իր կատարած դերով։

---

[1] Այս վկայությունը սխալ է։ Ուրմիայի լճում չկա ոչ մի տեսակ ձուկ կամ այլ կենդանի, այնքան չափազանց է նրան աղիությունը։

[2] Այստեղ Հայաստանը պետք է հասկանալ ընդարձակ մտքով, ինչպես ցույց տվինք վերևում, և իրավ, նույն հեղինակն ասում է, թե Հայաստանի մեջ կան 113 թագավորություններ։ Հաշվի են առնված, անշուշտ, Կովկասյան լեռների անկախ ցեղերը, բուն Հայաստանի և Արրանի նախարարությունները։

[3] Անշուշտ, այստեղ մենք ունենք մեր առջև այն իրողությունը, որ մեզ հայտնի է Գրիգոր Մագիստրոսի նամակներից (տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, եր. 221), Տար ավանում, ուրեմն Բերդաայից ոչ շատ հեռու, Մագիստրոսի վկայությամբ՝ գի կամ գիհի ծառից ամբողջ հոյակապ տաճարներ էին շինում։

Իբրև բնական հարստություն՝ էլ-Իստահրին հատկապես հիշատակում է Բաքվի նավթը։

Հայաստանի կենդանիներից իրենց խոշորությամբ աչքի են ընկնում ոչխարը, եզը, շունը։ Ձիերը ցածրահասակ են, ինչպես և ուղտերը։ «Ուղտերի կրծքերը քիչ է մնում, որ դիպչեն գետնին»— ասում է Իբն-ալ-Ֆակիհը։ Երկիրն ընդհանրապես մեծ առատություն ուներ և այդ պատճառով էլ այնտեղ տիրում էր առասպելական էժանություն։ Այսպես, էլ-Ստահրին հավատացնում է, որ քաղաքներում մի ոչխարը ծախվում էր երկու դիրհեմով, որ գրեթե մի ֆրանկի արժեք ուներ, իսկ երկու կամ երեք ման (=4—6 ռուս. ֆունտ) մեղրը ծախվում էր կես ֆրանկով (մոտ 15 կոպեկ)։ Արաբներին առանձնապես դուր էին եկել Հայաստանի ծառապտուղներից երկուսը մանավանդ—«շահիբուլութ» (շագանակ) և «զուկալ» (հոն, «զողալ»)։ Մեծ գովասանքներով են նկարագրում նրանց համը։ Հոնի մասին անպատի որդին զարմանքով պատմում է, թե նա դառն է, քանի խակ է, բայց երբ հասնում է, համեղ է դառնում։ Սակայն Հայաստանի իսկական պարծանքը կազմող խաղողի մասին ոչինչ չեն խոսում, նույն այդ՝ հոնի վրա սիրահարված գրողները։

Ազգաբնակություն: Որոշ թվական տեղեկություններ ազգաբնակության մասին արաբական աղբյուրները չեն հաղորդում, այնպես որ այս կողմից հայ մատենագիրների թողած խավարը, որի մեջ հավիտենապես կորել է հայ ազգի թվական կազմը, գեթ հավանաբար կռահելու ամեն մի կարելիություն, մնում է դարձյալ անփարատելի։ Արաբներից մենք միայն մի թվանշան ենք ստանում, որ չափազանց թանկարժեք է, ի նկատի ունենալով վիճակագրության կատարյալ բացակայությունը։ Իբն-ալ-Ֆակիհը գրում է, թե Հայաստանում 18,000 գյուղ կար, իսկ Արրանում՝ 4000։ Հետաքրքրական է և այն տեղեկությունը, թե ազգաբնակության մեծագույն մասը բաղկացած է քրիստոնյաներից։ Այս, իհարկե, չի նշանակում, թե մնացած մասը բաղկացած էր մահմեդականներից, քանի որ հարցը վերաբերում է ամբողջ արաբական Անդրկովկասին, ուր բազմաթիվ էին այն տարրերը, որոնք տակավին չէին պատկանում ոչ քրիստոնեության, ոչ մահմեդականության։ Գալով բուն Հայաստանին, այստեղ արաբական տիրապետության ժամանակ, մոտ երկու դարի ընթացքում մահմեդական տարրը բավական մեծացավ։ Ճիշտ է, Օմար խալիֆը, կամենալով թույլ չտալ, որ մահմեդականները ձուլվեն ոչ-մահմեդականների հետ, արգելել էր նրանց անշարժ կալվածներ ձեռք բերել նվաճված երկրներում, բայց այս կարգադրությունը մյուս խալիֆները ոչ միայն վերացրին, այլև նվաճված երկրները մահմեդականներով բնակեցնելու առանձին հոգացողություն ունեցան։ Ինչպես կտեսնենք իր տեղում, Հայաստանի մեջ էլ արաբական շատ գաղութներ կային և դրանցից երկուսը, որոնք հաստատվել էին Վանա լճի արևմտյան և հյուսիսային ափերում, բավական խոշոր դեր կատարեցին մեր պատմության մեջ։ Բացի դրանից՝ խոշոր արաբական կամ, առնվազն, մահմեդական գաղութներ կազմվեցին և Հայաստանի ու հարևան երկրների մեծ քաղաքներում։ Այդ մահմեդական համայնքներում նույնիսկ գոյություն ունեին այն կրոնական-փիլիսոփայական կուսակցությունները, որոնց հակաճառություններն այդ ժամանակ հուզում էին իսլամական աշխարհը։ Եվ իսլամ տարրն Այսրկովկասում, իհարկե, միայն արաբներից չէր բաղկացած։ Շատ կային, օրինակ, և պարսիկներ։ Տեղական ազգաբնակության մեջ էլ հաջողությամբ տարածվում էր իսլամը։ Այս կողմից պարարտ հող էր ներկայացնում մանավանդ Աղվանից երկիրը, որի դաշտային մասը, ինչպես երևում է, շատ վաղ ժամանակից իսլամացրին արաբները։

Հայաստանում և Արրանում ապրող ժողովուրդների ազգային ծագումը որոշելու համար արաբ հեղինակները հայտնում են, թե Հայաստանում խոսում են հայերեն, իսկ Արրանում՝ առաներեն։ Բայց այս, իհարկե, չի նշանակում, թե երկու երկրներում միապաղաղ ազգային երկու զանգվածներից էր կազմված ազգաբնակությունը։ Նույն այդ հեղինակների վկայություններից կարելի է հետևցնել, որ հայերը տարածված էին և Աղվանից երկրում։ Այսպես, Իբն-ալ-Ֆակիհը բազմաթիվ ազգաբնակություն է զետեղում նույնիսկ Կովկասյան լեռներում։ Մի ուրիշ ապացույց տալիս է էլ-Իստահրին, հիշատակելով, որ Բերդաա և Շամքոր քաղաքներից այն կողմը, ուրեմն Կովկասյան լեռնաշղթայի ուղղությամբ, ապրում էր Սեվերտիե անունով մի հայ ժողովուրդ։ Այս ժողովուրդը արաբացի մյուս հեղինակ Բելածորիի վկայությամբ, հարձակումներ էր գործում նույնիսկ Հայաստանի վրա[1]։ Նույն հեղինակը հիշատակում է Սիսիջի անունով մի քաջ և կռվի ժողովուրդ։ Եթե ներելի լինի այդ անունը նմանեցնել Սիսաջան անվան, որ Սիսական անվան արաբական սովորական ձևն է, այն ժամանակ մենք կունենանք մի այլ ապացույց, որ Սիսական ցեղը տարածվեց Աղվանից երկրում, մի հանգամանք, որ լիովին համապատասխանում է և հայկական ավանդություններին[2]։ Ավելացնենք և այն, որ արաբ հեղինակների լավատեղյակությունն այս հարցում հաստատում են և ուրիշ օտար աղբյուրներ (հունական և վրացական), որոնք, ինչպես գիտենք[3], տալիս են մեզ վերին աստիճանի հետաքրքրական տեղեկություններ այդ շարժման մասին, որ տանում էր հայերին դեպի Կովկասյան լեռները։

Եթե ճիշտ է, որ Աղվանքում դեռ գոյություն ուներ աղվաներեն լեզուն, այս պետք է հասկանալ այն գավառների վերաբերմամբ, որոնք հեռու էին հայկական ազդեցության շրջաններից և ոչ թե այն լեռնաշխարհների (Արցախ, Ուտիք) վերաբերմամբ, որոնք, ինչպես տեսանք, արդեն հայացել էին։ Մայրենի լեզվից հետո Հայաստանում և Արրանում գործածական էր պարսկերենը։ Իսկ արաբերենը, թեև պետական լեզու, թույլ էր տարածված։

Իսկ ի՞նչպես էին ազգաբնակության և արաբական կառավարության միջև հաստատված հարաբերությունները։

Մենք արդեն գիտենք, որ ոչ-իսլամ ազգաբնակությունը, բացի գլխահարկից, պիտի վճարեր և կալվածական հարկ։ Արդ՝ Իբն-ալ-Ֆակիհի հաղորդելով՝ Հայաստանի հարկն էր 2,330,985 դիրհեմ կամ ռուսական փողով մոտ 350 հազար ռուբլի։ Ավելացնելով դրա վրա կալվածական հարկը, որից, ինչպես կարելի է հետևցնել, ստացվում էր 4,000,000 դիրհեմ (600 հազար ռուբլի), ստանում ենք մի կլորիկ խոշոր թիվ, շուրջ 1 միլիոն ռուբլի, որ Հայաստանն ամեն տարի մտցնում էր արաբական գանձարանը։ Այս քանակությունը, իհարկե, անփոփոխ չէր. երբեմն մեծանում էր, երբեմն էլ փոքրանում։ Մոտավորապես այս դրությունն է ցույց տալիս և այն ընդ-

[1] Մարքվարտ, էր. 24—25։
[2] Անդ, էր. 5։
[3] Տե՛ս այս գործի Ա հատորը։

հանուր հաշիվը, որ կազմված է 10-րդ դարի առաջին կեսում։ Երեք երկրները՝ Ադրբեջան, Հայաստան, Արրան—ըստ այդ հաշվի՝ տալիս էին գլխահարկ $1^1/_2$ միլիոն և կալվածական հարկ՝ դարձյալ $1^1/_2$ միլիոն ռուբլի, ընդամենը, ուրեմն 3 միլիոն։ Այս գումարը երեք երկրի միջև հավասարապես բաժանելու դեպքում միայն Հայաստանին բաժին կընկներ 1 միլիոն, մինչդեռ պետք է վերցնել համեմատական չափն ըստ տարածության և ազգաբնակության, և այն ժամանակ կտեսնենք, որ Հայաստանը նույնիսկ մի միլիոնից ավելի էլ էր տալիս։ Հարկի այս չափը, մանավանդ նկատի ունենալով այն ժամանակների տնտեսական պայմանները, պետք է համարել շատ ծանր։ Գլխավորապես այս հանգամանքն էր, որ սաստիկ լարված դրության մեջ էր պահում հարաբերությունները հայ ժողովրդի և արաբական կառավարության միջև, այնպես որ արաբների տիրապետության ամբողջ ժամանակամիջոցը կարելի է նկատել իբրև շարունակական ապստամբությունների մի շրջան։

Վարչական բաժանումներ: Արաբական աշխարհագիրները Հայաստանը բաժանում են երեք մասի, ոմանք՝ նաև չորս մասի։ Ահա ինչպես է Իբն-Խորդադբեն նկարագրում այդ մասերը. «**Առաջին Հայաստան**—Սիսաջան, Արրան, Թիֆլիս, Բերդաա, Բայլաքան, Կաբալա և Շիրվան։ **Երկրորդ Հայաստան**—Ջուրզան, Սուգդաբիլ, Բաբ—Ֆեյրուզ—Կուբադ և ալ-Վազկի։ **Երրորդ Հայաստան**—Բուսֆուրաջան, Դաբիլ, Սիրաջ—Տայր, Բագրուանդ և Նաշավա։ **Չորրորդ Հայաստան**—Շիմշատ, Խիլաթ, Քալիքալա, Արջիշ և Բաջունեյս»։

Թեև այս բաժանումների մեջ հիշատակված տեղերից շատերն անհայտ են մնում, բայց և այնպես պարզ է, որ ամբողջ Աղվանքը, սկսած Դերբենդից մինչև Արարատյան երկիրը, մտնում էր Առաջին և Երկրորդ Հայաստանների մեջ, իսկ Երրորդն ու Չորրորդը կազմում էին բուն Հայաստանը, մինչև Շիմշատ (Սամոսատ)։ Մի քանի հեղինակներ բուն Հայաստանի մեջ են դնում և հին Պարսկահայք նահանգը (Սալմաստ), ինչպես և Մարաղա ու Մերանդ քաղաքները, որոնք սովորաբար Ադրբեջանին էին վերաբերում։

Գլխավոր քաղաքներն էին. Ադրբեջանում—Արդաբիլը[1], Հայաստանում—Դաբիլը (Դվին) և Արրանում—Բերդաան (Պարտավ)։ Այս երեք խոշոր կենտրոնները, բայց մանավանդ երկրորդն ու երրորդը, մանրամասն նկարագրում են արաբ հեղինակները, հաղորդելով շատ հետաքրքրական մանրամասնություններ։ Այդ մանրամասնություններից մենք կվերցնենք այն, ինչ վերաբերում է Հայաստանին՝ ընդարձակ առումով։

Դաբիլ (Դվին)։ Բուն Հայաստանի այս մայրաքաղաքն Արդաբիլից մեծ էր։ Շրջապատված էր պարիսպներով։ Ազգաբնակության մեծամասնությունը բաղկացած էր քրիստոնյաներից։ Բայց մահմեդականությունը նրա մեջ տիրապետող կրոնին պատշաճ դիրք էր պահում, և մայր մզկիթը եկեղեցու հետ մի շարքում էր շինված, բլրի վրա։ «Այս քաղաքում գործում են բրդե զգեստներ և գորգեր, բարձեր, բազմոցներ, խոնջաններ»։ Գործում էին և թանկագին երփներանգ դիպակներ մետաքսից՝ աննման, ոչ մի տեղ չտեսնված գեղեցկությամբ։ Այս բոլոր առարկաները հայտնի էին Արևելքում «հայկական արդյունաբերություն» անվան տակ։ «Հայերը,—ասում է Ալ-Իստահրին,—պատրաստում են և ներկ, որ կոչվում է «կիրմիզ» և որով ներկում են մահուդը։ Ես իմացա, որ դա մի տեսակ որդ է, որ իր շուրջը

---

1 Թավրիզն այդ ժամանակ հայտնի քաղաք էր, բայց վարչական կենտրոն չէր։

շերամի նման բոժոժ է գործում։ Բացի դրանից, ես իմացա, որ այստեղ գործում են շատ մետաքսե կտորներ։ Դաբիլը Հայաստանի մայրաքաղաքն է և նրա մեջ ապրում է Սունբատը Աշոտի որդին։ Քաղաքը մշտապես գտնըվում էր իշխանավոր քրիստոնյաների ձեռքին, իսկ քրիստոնյաները կազմում են մեծամասնություն Հայաստանում, որ կոչվում է «Հայոց թագավորություն»։ Մայրաքաղաքը շինված էր այգիների մեջ, ուներ անմատչելի ամրություններ և միջնաբերդ։ Նրա անունը հին է։ Նրա մահուդները հռչակված էին։ Շատ հարուստ քաղաքի համբավ էր վայելում, գեղեցիկ դիրք էր գրաված և ուներ արվարձաններ։ «Նրա գետը ջրառատ է, վարելահողերն սքանչելի են։ Բնակիչների շինությունները կավից են և քարից։ Քաղաքն ունի շատ դռներ, ինչպես են՝ Բաբ-Կեյտար, Բաբ-Թիֆլիս, Բաբ-Անի»[1]։ Այսպես է նկարագրում Ալ-Մուկադդասին, մի լավատեղյակ և վառվռուն հեղինակ։ Դաբիլի գեղեցկությունները մանրամասն նկարագրելով, նա չէր կարող մոռացության տալ նրանից երեք փարսախ (մոտ 17 վերստ) հեռու գտնվող ճարտարապետական գեղեցկությունը, որ ներկայացնում էր քրիստոնեական մի եկեղեցի։ Եվ թվելով Արրանի ու Ադրբեջանի զարմանալիքները, Հայաստանի մեջ գտնում է միայն այդ «սպիտակ տաշած քարերից շինած վանքը, որ կոնաձև գդակի տեսք ունի, ութ սյուների վրա. Նրա մեջ Մարիամ կույսի պատկերներն այնպես են տեղավորված դռների դիմաց, որ ինչ դռնով մտնում ես, տեսնում ես Մարիամ կույսին»։ Այս նկարագրությունից երևում է, որ արաբ գրողին հիացնողը եղել է Զվարթնոց եկեղեցին։

Դաբիլից դուրս հիշատակվում են հետևյալ գավառական քաղաքները. Նաշավա (Նախճավան), Բերկերի (Բերկրի), Բիտլիս (Բաղեշ), Քալիքալա, Արզն, Մայաֆարինկին (Մուֆարղին), Խիլաթ (Խլաթ), Արջիշ։ Սրանք խոշոր քաղաքներ չեն, մեծությամբ իրար նման են, բայց ծաղկած քաղաքներ են և նրանց ազգաբնակությունը հարուստ է։ Դաբիլում ծաղկած արհեստները կան և այս քաղաքներից շատերի մեջ։

Բերդաա: Արաբ հեղինակները անհամեմատ ավելի մեծ գովասանքներով են խոսում Արրանի մայրաքաղաք Բերդաայի (Պարտավի) մասին։ Նա ավելի մեծ էր, ավելի գեղեցիկ ու բարեբեր, քան մյուս երկու մայրաքաղաքները։ Ալ-Մուկադդասին այսպես է նկարագրում նրան։ «Բերդաան մայրաքաղաք է, մեծ, քառակուսի, շինված է դաշտի վրա։ Նրա մոտ կա մի ահագին ամրություն. Նրա շուկաները հովանավորվում են խիտ ծածկերով։ Շուկայի ետևում մայր մզկիթն է։ Այս քաղաքը—այս երկրի Բաղդադն է։ Տները շատ գեղեցիկ են, շինված են թրծած աղյուսից և գաջից։ Ախորժելի, գեղեցիկ և պտուղներով հարուստ քաղաք։ Մայր մզկիթի սյուների մի մասը գաջից ու աղյուսից է, մի մասը՝ փայտից։ Բերդաայի մեջ կա մի գետ, որ կտրում է քաղաքը[2], իսկ Կուր գետը գտնվում է քաղաքից երկու փարսախ հեռու։ Գետերը մոտիկ են նրան։ Բերդաան գեղեցիկ քաղաք է, բայց նրա արվարձաններն արդեն քանդվել են, ազգաբնակության թիվը պակասել է և բերդը կիսով չափ քանդվել է»[3]։ Ալ-Իստահրին գտնում է, որ Բերդաան երկարությամբ և լայնությամբ մի փարսախից ($5^1/_2$ վերստ) ավելի տա-

---

1 Բաբ նշանակում է դուռն։

2 Այդ գետը Տրտուն է (այժմ՝ Թարթառ), որ թափվում է Կուրի մեջ։

3 Այժմ նրանից մնացել է Բարդա անունով մի գյուղ, որ Բաքու-Գանձակ երկաթուղու Եվլախ կայարանից 25—30 վերստ հեռու է, Շուշի տանող խճուղու վրա։

րածություն ունի։ «Իրաքում և Խորասանում,— ասում է նա,— Ռեյից և Սպահանից հետո, չկա ավելի նշանավոր, ավելի ծաղկած և իր դիրքով ու բերքերով ավելի գեղեցիկ քաղաք, քան Բերդաան»։ Գեղեցիկ ու հարուստ էին նաև շրջակաները. Բերդաայից մի փարսախից էլ քիչ տարածության վրա,— շարունակում է նույն հեղինակը,— կա մի տեղ, որի անունն է Անդարաբ[1] և որը գտնվում է Կերնեի, Լասուբի և Յակտանի մեջտեղը։ Նրա երկարությունն ու լայնությունը մի օրվա ճանապարհի (46—50 վերստ) տարածություն է։ Այս տեղը լցված է այգիներով և բանջարանոցներով, որտեղ բսնում են ամեն տեսակ պտուղներ[2]։ Այդ պտուղների մեջ առանձնապես հիշատակվում են ընկույզի մի տեսակը, շագանակը, որ հասած արմավի համ ունի, թուզը, հոնը և այլն։ Գերազանց հատկություններ ունի մանավանդ թուզը։

Բերդաայի արդյունաբերության ամենագլխավոր ճյուղն էր շերամապահությունը։ Դրա համար երկիրը ծածկված էր թթենու անտառներով։ Այս ծառերը համայնական էին և ոչ ոքի սեփականությունը չէին կազմում։ Մեծ քանակությամբ մետաքս Բերդաան արտահանում էր Պարսկաստան։ Նրա մեջ էլ զարգացած էր մետաքսից զանազան գործվածքներ պատրաստելու արհեստը։ Բերդաան մի խոշոր առևտրական կենտրոն էր։ Եվ Ալ-Իստահրին գրում է. «Բերդաայի այն դռան մոտ, որ կոչվում է «Քրդերի դուռ»[3], գտնվում է մի շուկա, որի անունն է Ալ-Կյուրկի[4] և որի մեծությունն է մի քառակուսի փարսախ։ Այդտեղ ամեն կիրակի օր մեծ տոնավաճառ է լինում, ուր գալիս են վաճառականներ նույնիսկ Իրաքից»[5]։ Բերդաան հռչակված էր և իր ջորիներով։

Բերդաայի գրաված աշխարհագրական դիրքը, մանավանդ նրա բնական հարստությունները, պատճառ դարձան, որ նա առաջնակարգ նշանակություն ստանա արաբական մեծ պետության մեջ։ Ութերորդ դարի երկրորդ կիսումն էր, որ Աղվանից իշխաններն ընդմիշտ զրկվեցին իրենց գեղեցիկ Պարտավից, որ անցնում էր ամբողջապես արաբներին, չնայած որ Աղվանքը զենքի ուժով նվաճված երկիր չէր, այլ հոժարակամ ընդունել էր խալիֆի տիրապետությունը՝ գլխահարկ տալու պայմանով։ Առաջին կուսակալը կամ ոստիկանը, ինչպես երևում է, արքայական ընտանիքի անդամներից էր[6], որի համար Պարտավում կառուցվեց ապարանք և նրա մոտ՝ մի հոյակապ մզկիթ, որի մեջ գտնվում էր և պետական գանձարանը[7]։

---

[1] Պարսկերեն նշանակում է «Գետամեջ»։

[2] Այս այգեստաններն ու բանջարանոցներն սկսվում էին Բերդաայի հարավային կողմում և տարածվում էին մինչև Յակատան, որ այժմյան Աղդամն է, Շուշու խճուղու վրա։ Ներկայումս այդ ահագին ծառաստաններից մնացել են Աղդամ գյուղի այգիները, իսկ մնացած տարածության վրա երևում են միայն հին ջրանցքների հետքերը։

[3] Քրդերի անունը տեսնում ենք և Դվինում, ուր նրանք պահակներ էին տալիս քաղաքի պաշտպանության համար։ Արաքսի վրա, Դվինի և Նախճավանի միջև, քրդական բնակություններ կային, ինչպես ենթադրել են տալիս արաբ հեղինակների մի քանի անորոշ տեղեկությունները։

[4] Այս բառը կազմված է «Կիրակի» բառից։

[5] Արաբները կարծել են, թե կիրակին, իբրև շաբաթվա օր, իր անունն ստացել է այդ շուկայից։ Բայց այս, իհարկե, սխալ է։ Շուկան էր, ընդհակառակն, ստացել իր անունը կիրակի օրվանից։ Այսօր էլ Բարդա գյուղն ունի իր շաբաթական տոնավաճառը, որ շատ անվանի է շրջականերում։

[6] Մովսես Կաղանկատ., եր. 373։

[7] Այժմ մնում է այդ մզկիթի կիսափուլ հոյակապ մինարեն։

Արրանում, Բերդաայից հետո, կային և մի քանի նշանավոր տեղեր։ Այսպես էր Շարուան քաղաքը (Շիրվան), ուր գոյություն ուներ առանձին թագավորություն, որի թագավորներն արաբական աշխարհագիրների ժամանակ էլ կոչվում էին «շիրվանշահ»։ Շիրվանին մոտ էր մեր մի քանի անգամ հիշատակած Բաբ-ուլ-Աբվաբը (Դերբենդ)։ Հյուսիսային ռազմիկ ազգերի ճանապարհը փակող այս բերդը, ինչպես երևում է, հին աշխարհի ամենահռչակավոր վայրերից մեկն էր համարվում շնորհիվ հենց իր այս կարևոր դերի։ Միաժամանակ այդ մի բավական մեծ քաղաք էր, որ իբրև նավահանգիստ՝ առևտրական նշանակություն էլ ուներ։ Նրա տեղական արդյունաբերությունը կազմում էին քաթանի գործվածքները, որոնք ուրիշ որևէ տեղ չէին պատրաստվում, բացի այդտեղից։ Բաբ-ուլ-Աբվաբում կար և ստրկավաճառության շուկա, որ շատ անվանի էր Արևելքում։ Ծովափի անցքը փակող պարիսպը զարմացնում էր ամենքին իր հսկայական չափերով։ Իբն-ալ-Ֆակիհն այսպես է նկարագրում այդ հսկա շինությունը։ «Բաբ-ուլ-Աբվաբը մի պատ է, որ շինել է Նուշիրվանը. նրա մի ծայրը մտնում է ծովը, իսկ հակառակ ծայրը դուրս է բերված այնպիսի մի տեղ, ուր ոչինչ չես կարող անել նրա դեմ։ Եվ ձգվում է այդ պատը 7 փարսախ մինչև անտառապատ և ուղղաձիգ մի սար, որն անցնել չի կարելի։ Պարիսպը շինված է քառանկյունի տաշած քարերից. այս քարերից մեկը չեն կարող վերցնել 50 մարդ։ Նրանք դրված են միմյանց վրա և իրար հետ կապված են երկաթե ձողերով։ ...Ասում են, թե Հայաստանի բնակիչներից տղամարդիկ պարտավոր են պահպանել այդ պատը և նրա մեջ շինած դռները։ Պատի լայնությունն այնքան է, որ նրա վրայով կարող են գնալ 20 ձիավոր մի շարքով»։ Իսկ հետագայի մի այլ արաբ աշխարհագիր (Յակուտին) այս չափազանցության վրա ավելացնում է մի ուրիշը։ Նա ասում է, թե Բաբ-ուլ-Աբվաբի մոտ գտնվում է մի բարձր սար, Ջիբ անունով. ամեն տարի նրա վրա հավաքում են շատ փայտ և մեծ խարույկներ են վառում, որպեսզի Արրանը, Ադրբեջանը և Հայաստանը տեսնեն նրանց և իմանան, որ թշնամին պատրաստվում է հանկարծակի հարձակվել նրանց վրա։

Արևելյան Արրանում եղած քաղաքներից հիշատակվում են Բաքու, Շարվան, Շամախիա, Կաբալա (ամրացրած քաղաք), Շաքի, Վերսան, Բայլաքան (Արաքսի վրա՝ Մուղանի դաշտում), Մուկան, Աբխազ (այժմյան Ղուբա), Շաբիրան, Բերզանջ (Կուրի վրա, Բերդաայից ոչ հեռու)։

Իսկ Արևմտյան Արրանի սահմանագլուխն էր Թիֆլիս քաղաքը, որ Բաբ-ուլ-Աբվաբից փոքր էր։ Իբն-Խաուկալն ասում է. «Այս քաղաքի շուրջը երկու պատ կա շինած կավից և նրանց մեջ երեք դուռ։ Այս մի արգավանդ քաղաք է, ամրացրած, մթերքներով հարուստ, էժան՝ գների կողմից և իր բարեկեցությամբ գերազանցում է մյուս հարուստ տերությունները և արգավանդ երկրները։ Ինձ մի անգամ մեղր գնող մեկն ասաց, թե 20 ռիտլից (10 ֆունտ) ավելի մեղր նա գնել է մի դիրհեմով (15 կոպեկ»)։ Հիշատակվում է այնուհետև Թիֆլիսի գլխավոր հարստությունը—հանքային բաղնիսները, ուր ջուրը եռում է առանց կրակի։ Չի մոռանում և Թիֆլիսի լողացող ջրաղացները, որոնք գործում են Կուրի վրա։ Սրտաբաց և հյուրասեր է այդ քաղաքը։ Թիֆլիսի և Բերդաայի միջև կային մի շարք քաղաքներ, որոնցից հիշատակության արժանի են Ջանզա (Գանձակ, Քանզա), Շամքոր, Խանուռ։

Ճանապարհներ: Արաբ աշխարհագիրների աշխատության մի հետաքրքրական մասն էլ հաղորդակցության ճանապարհների նկարագրությունն է, որից իմանում ենք, թե գլխավոր քաղաքների միջև ի՛նչ տարածություններ կային և ո՛րքան ժամանակ էր հարկավոր մի տեղից մյուս տեղը գնալու համար։ Այս ուղեցույցի կենտրոնը կազմում է Բերդաան, որտեղից ճանապարհներ են գնում դեպի զանազան կողմեր։ Ահա մի երկու նմուշ.

Բերդաա—Արդաբիլ: Բերդաայից Յունան՝ 7 փարսախ։ Յունանից Բայլաքան՝ 7 փարս., Բայլաքանից Վարսան՝ 7 փարս., Վարսանից Բալխաբ՝ 7 փ., Բալխաբից Բերզեսր՝ 7 փ., և Բերզեսրից Արդաբիլ՝ 15 փ.։

Բերդաա—Բաբ-ուլ-Աբվաբ: Բերդաայից Բերզենջ՝ 18 փ., Բերզենջից ձիով Կուրն անցնելով Շեմախիա՝ 14 փ., Շեմախիայից Շարվան՝ 3 օրվա ճանապարհ[1], Շարվանից Աբխազ՝ 2 օրվա ճանապարհ, Աբխազից Ջասար-Սամուր՝ 12 փ. և Ջասար-Սամուրից Բաբ-ուլ-Աբվաբ՝ 20 փարսախ։

Բերդաա—Թիֆլիս: Բերդաայից Ջանզա քաղաք՝ 9 փ., Ջանզայից Շամքուր՝ 10 փ., Շամքուրից Խանուն քաղաք՝ 21 փ., Խանունից Կալա-իբն-Կանդաման՝ 10 փ. և Կալայից Թիֆլիս՝ 12 փարսախ։

Բերդաա—Դաբիլ: Այս ճանապարհը գնում էր Արցախի և Սյունիքի վրայով։ Բերդաայից Կալկագուս՝ 9 փ., Կալկագուսից Մետրիս՝ 13 փ., Մետրիսից Դավմիս՝ 12 փ., Դավմիսից Կիլ-Կու՝ 16 փ., Կիլ-Կուից Սիսաջան քաղաք՝ 16 փ. և Սիսաջանից Դաբիլ՝ 16 փարսախ[2]։

Վաճառականություն: Ներքին առևտրի գլխավոր նյութերն արդեն հիշատակել ենք գլխավոր քաղաքների նկարագրության մեջ։ Այդ նյութերն արտահանության խոշոր առարկաներ էլ էին դառնում—մետաքս և մետաքսե գործվածքներ, հայկական որդան կարմիրը, իսկ Աղվանից աշխարհը տալիս էր նույնպես բազմահռչակ կարմիր ներկ—տորոնը, որ արտահանվում էր մինչև Հնդկաստան։ Իսկ ներմուծման գլխավոր ճանապարհն արևմուտքում Տրապիզոնն էր, ուր Բյուզանդիայի և Արևմուտքի ապրանքներն երկրումի մեծ ճանապարհով փոխադրվում էին խոշոր առևտրական կենտրոնները, գլխավորապես Դվին և այդտեղ արաբ վաճառականները գնում էին այդ ապրանքները՝ Միջագետք փոխադրելու համար։

Պետք է հիշատակել և այն, որ միջազգային առևտրին խոշոր միջոցներ հայթայթում էր անասնապահությունը, որ շատ զարգացած էր երեք սահմանակից երկրներում և մասնավորապես Հայաստանում։ Թե անասունների առևտուրն ի՛նչ խոշոր չափերի էր հասնում, ցույց է տալիս անասնավաճառության մի մեծ շուկա, որ գտնվում էր Ադրբեջանում և կոչվում էր Կուր-Սերե։ Իբն Հաուկալը հավատացնում է, թե անհատներ կային, որոնք այդտեղ վաճառում էին 100,200 հազար, մինչև իսկ միլիոն ոչխար։ Այս ահագին քանակությունները, իհարկե, հավաքվում էին ուրիշ, ավելի փոքր վաճառանոցներից և ծախվում էին հեռավոր աշխարհների վաճառականներին։

---

[1] Մի օրվա ճանապարհը կարելի է հաշվել 7 փարսախ։

[2] Տարաբախտաբար այս ուղղությամբ ցույց տված իջևանները մեզ բոլորովին անհայտ են մնում։ Կա միայն մի անուն, որի հայերեն համանիշը դժվար չէ գտնել—Սիսաջան, որ, անկասկած, Սիսական անվան արաբական ձևն է։ Բայց այս Սիսաջանը քաղաք է, իսկ մենք Սիսական անունով քաղաքի գոյությունը միայն այստեղից ենք իմանում։ Համենայն դեպս, այս անունը ցույց է տալիս ճանապարհի ուղղությունը՝ Արցախ—Սյունիք։

2. Վարդանակերտի կռիվը: Արաբական տիրապետությունը սկզբից ի վեր, ինչպես տեսանք, իր առջև ուներ հայ նախարարական կազմակերպությունը, որ ներկայացնում էր ամբողջ երկրի ներքին ինքնավար ուժը։ Սկզբում արաբական քաղաքականությունը հաշտ էր այդ դասակարգի հետ և նրան էր թողնում երկրի կառավարությունը, իրեն վերապահելով միայն վերին հսկողությունը։ Սակայն այս երկու կողմերի—իսլամ կառավարության և քրիստոնյա ավատականության շահերը շատ էին իրար ներհակ, իրար բացասող, ուստի և համաձայնության քաղաքականությունը չէր կարող երկարատև լինել։ Պատճառը միայն կրոնական տարբերությունից չէր ծագում։ Այս հողի վրա համաձայնություն կայացնելը դժվար չէր լինի, մինչդեռ համաձայնության ոչ մի հնարավորություն չէր տալիս մյուս կարևորագույն հանգամանքը, տնտեսականը։ Տիրողը նվաճվածին կյանք շնորհում էր միայն մի պայմանով—որ նվաճվածն ապրելու իրավունքը գնի բավարար հարկեր տալու միջոցով։ Այդ հարկերը, ինչպես տեսանք, շատ ծանր էին։ Նախարարությունն իր ձեռքում ուներ երկրի ամբողջ հողային հարստությունը, ուստի և կալվածական հարկը (խարաջ), որ, ինչպես տեսանք վերևում, հասնում էր տարեկան 600 հազար ռուբլու, ծանրանում էր իր զգալի մասով նաև նրա վրա։ Եվ հասկանալի է, որ նա պիտի լիներ դժգոհ, հարստահարված կողմ, պիտի աշխատեր, եթե ոչ բոլորովին ազատվել այդ ծանրությունից, գեթ թեթևացնել նրան։ Ուստի և նա միշտ ընդդիմադիր կողմի դրության մեջ էր, իր ուժն զգացող, ծայրահեղ դեպքում զենքի դիմելու խիզախություն ունենալով իր տրամադրության տակ։ Իսկ արաբական կառավարության համար նախարարությունը, իբրև ազգային իշխանություն, միայն արգելք ու խոչընդոտ էր և թույլ չէր տալիս, որ հայ ժողովուրդն անմիջապես իր իշխանության հպատակվի, մի հանգամանք, որ ձեռնտու չէր թե՛ քաղաքական և թե՛ մանավանդ տնտեսական նկատառումներով։

Եվ ահա մենք տեսանք, թե ինչպես 7-րդ դարը վերջանում էր նրանով, որ արաբական կառավարությունը իրեն ապագա խռովություններից և ապստամբություններից ապահովելու նպատակով կռիվ է հայտարարում նախարարության՝ նրան ոչնչացնելու կամ գոնե կատարյալ ուժասպառության հասցնելու համար։ Նախարարությունն ինքնապաշտպանության միջոցներ է ձեռք առնում, ինքն ևս, նպաստավոր հանգամանքներից օգտվելով, հարձակողական դիրք է բռնում, իր իրավունքները պաշտպանելու համար։ Կյանքի և մահվան այս պայքարը լցնում է արաբական տիրապետության այն շրջանը, որ սկսելով 8-րդ դարից, շարունակվում է մինչև 9-րդ դարի կեսը։ Մի ծանր մաքառում է այդ, անհավասար ուժերով, որին թողնված էր որոշելու, թե ո՛վ պիտի հաղթե—աշխարհասասան մեծ պետությո՞ւնն արդյոք, թե՞ մի փոքր երկրի հողատեր դասակարգը, որ երբեք կուռ միություն և կենտրոնացնող կազմակերպություն առաջացնելու հատկությունը չէր ցույց տվել։ Այս ահավոր պայքարը, իհարկե, նեղ դասակարգային հանգամանք չուներ. նրա մեջ խառն էր և ազգային գոյության հարցը, որովհետև հայ հասարակության այն ժամանակվա կացության մեջ ավատական հողատիրությունն էր, որ կազմում էր ազգային-քաղաքական-կուլտուրական ինքնամփոփման հիմքը։

Ղևոնդ պատմագիրը շատ ճիշտ նկատում է, որ Մուհամմեդ-իբն-Մերվանի և նրան հաջորդած Աբդլայի կամ Աբդուլլահի նպատակն էր գրա-

նալ զազատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»[1]։ Այս հողի վրա ծագած պառաջին մեծ ընդհարումը վերաբերվում է 703 թվականի սկզբին։ Հայոց սպարապետն էր Սմբատ Բյուրատյան Բագրատունին, որ և նախարարական ինքնապաշտպանության նախաձեռնող հանդիսանալով, խորհրդի կանչեց իր դասակիցներին, որոնց մեջ հականե հանվանե հիշատակվում են՝ Վասպուրականի իշխան Սմբատը, Աշոտի որդին, Թեոդորոս իշխանի (անշուշտ՝ Ռշտունու) որդի Վարդը, Աշոտ Բագրատունին, որ սպարապետի եղբայրն էր։ Խորհրդակցությունն ուրիշ ելք չկարողացավ գտնել, բացի միայն նրանից, որ նախարարները, ինչպես սովորություն էր հնուց, թողնեն իրենց հայրենիքը և փրկություն որոնեն՝ անցնելով Հայաստանի հունական բաժինը։ Թե ո՛րքան ծանր ու օրհասական էր այս հարցը հայ նախարարների համար, երևում է այն հանգամանքից, որ նրանք, վստահություն չունենալով իրենց խելքի և հեռատեսության վրա, գնացին մի ինչ-որ նշանավոր միայնակյացի (ճգնավորի) մոտ, որ ապրում էր Վանա լճի արևելյան կողմում և հայտնի էր իբրև խելոք և սրբակյաց մարդ, և նրանից էին խորհուրդ հարցնում, թե ի՛նչ անեն իրենց կյանքը փրկելու համար։ Սակայն ժամանակի գերագույն իմաստությունը ներկայացնող ճգնավորն էլ չկարողացավ բավարար պատասխան գտնել։ Նա լաց եղավ Հայոց աշխարհի դժբախտության վրա, աղերսանքներ ուղղեց երկնքին, բայց և այդպես, հայտնեց, որ չգիտե, թե ինչ պիտի լինի ճարը և խորհուրդ տվեց զգույշ լինել, նենգության զոհ չդառնալ։ Այս պատասխանը նախարարներին ավելի ևս հաստատում էր իրենց ընդունած վճռի մեջ։ Միախմբված, իրենց ձիավոր զորքի հետ միասին, որի թիվը 2000-ից պակաս էր, նրանք գնացին Ակոռի գյուղը, Մեծ Մասիսի վրա, որպեսզի այդտեղից ուղևորվեն դեպի արևմուտք։

Բայց նրանց հետևից սկսեց շարժվել Նախճավանի արաբական զորքը, թվով մոտ 5000 հոգի, որ պարտավորություն ուներ արգելել հեռացող նախարարներին։ Այս հետապնդումը հարկադրեց Սմբատ Բագրատունուն թողնել Մասիսի լանջերը և իջնել դաշտը։ Անցնելով Արաքսը, նա և իր հետ եղած իշխանները բռնեցին Վարդանակերտ գյուղը, որ շինված էր գետի ձախ ափին, ուր և ամրացան, փակելով գյուղի փողոցները։ Բայց նախարարները կռիվ չէին ուզում, և Սմբատը փորձեց համոզել արաբական զինվորներին, որ իրեն և իր ընկերներին հանգիստ թողնեն։ Նրա կողմից գնացած պատգամավորն ասում էր արաբներին. «Ինչո՞ւ եք մեր ետևից ընկել. ի՞նչ մեղք ունենք ձեր առջև։ Ահա ձեր առջև է մեր երկիրը. ձեզ ենք տվել մեր բնակությունը, մեր այգիները, անտառներն ու հանդերը. էլ ինչո՞ւ եք ուզում մեր անձերն էլ ձեր ձեռքը գցել։ Թույլ տվեք, որ հեռանանք մեր սահմաններից»։ Արաբները ոչինչ չուզեցին լսել։ Հայերը գիշերը պատրաստվեցին և առավոտյան հարձակվեցին նրանց վրա։

Արաբների մեծ թիվը նշանակություն չունեցավ, որովհետև այս անգամ Հայոց զորքի հետ միացած էր Հայաստանի ձմեռն իր խստաշունչ սառնամանիքներով։ Արաբները կռվել չկարողացան։ Գիշերը նրանք բացօթյա էին մնացել և քնել էին ձյան վրա։ Հայերը սաստիկ բախվեցին և բավական մարդ կոտորեցին։ Մնացածները սարսափահար փախան, բայց նրանց համար էլ կորուստ պատրաստել էր Արաքսը։ Գետը սառած էր։

[1] Ղևոնդ, գլ. Ը։

Արաբները, հույս դնելով սառույցի դիմացկունության վրա, շտապեցին անցնել նրա վրայով, բայց սառույցը կոտրվեց, և փախչողները գետը թափվեցին ու խեղդվեցին։ Արաբական ամբողջ բանակից միայն 300 հոգի կարողացան փախչել, բայց եթե նրանք ազատվեցին անխուսափելի կործանումից, այդ շնորհիվ մի հայ տիկնոջ գթասրտության։ Նրա անունն էր Շուշան[1]։ Փախստականները նրա տունը դիմեցին, իսկ Աշոտի որդի Սմբատը հետամուտ էր լինում նրանց, որպեսզի սրի քաշի։ Շուշան տիկինն աղաչում է նրան խնայել մերկ ու սարսափահար մարդկանց կյանքը, և ապաստան տալով նրանց իր տանը, հագցնում է, կերակրում է, վիրավորներին առողջացնում է և ապա բոլորին գրաստներ տալով իր երամակներից, ուղարկում է խալիֆի մոտ։

Հայ տիկնոջ այս քրիստոնեական գթասրտությունն ավելի ևս ընդգծվում և դառնում է նրա սեռին պատիվ բերող մի առաքինություն, մանավանդ այն պատճառով, որ երևան էր գալիս այնպիսի մի ժամանակ, երբ արաբական ճնշումները հայերի մեջ վառել էին վրիժառության անզուսպ կրքեր։ Արաբական մի ուրիշ զորաբաժին, նույն այդ միջոցին, հանդիպում է Աշոտի որդի Սմբատ իշխանին Ռշտունյաց գավառի Գուկանս գյուղում։ Հայերը դարձյալ փոքրաթիվ էին, բայց սաստիկ հարձակումով ջարդեցին արաբներին, որոնցից միայն 280 հոգի ազատվելով, փախան մտան գյուղի եկեղեցին։ Հաղթությունից ոգևորված հայերը ուզեցին հրդեհել եկեղեցին ու այդպիսով ոչնչացնել նրա մեջ ապաստանվածներին, բայց Սմբատ իշխանը հազիվ կարողացավ ետ կանգնեցնել նրանց այդպիսի սրբապղծությունից և համոզեց նրանց պաշարած պահել թաքնվածներին մինչև որ սրբարանն ինքը կհեռացնե իրենից՝ ապաստանվածներին։ Եվ պաշարվածները, իրավ, շուտով սկսում են բանակցություններ հաշտության մասին։ Դուրս է գալիս մի արաբ և ասում է. «Մենք լսել ենք, որ քրիստոնյա ազգը ողորմած է լինում, երբ տեսնում է մեկին վշտի մեջ՝ խղճում է և գութ է ցույց տալիս։ Արդ՝ մեզ ողորմեցեք և պարգևեցեք մեզ մեր անձը, իսկ մեր բոլոր ստացվածքները ձեզ վերցրեք»։ Իսկ Սմբատ իշխանը պատասխանում է. «Մենք սովորել ենք մեր հայրերից, որ ողորմություն արժե անել նրանց, որոնք գիտեն ողորմել. իսկ դուք անողորմ ազգ եք և ողորմության արժանի չեք»։ Պատգամավորը խնդրում է գոնե կյանք շնորհել։ Եվ, ստանալով այդպիսի խոստում, մտնում է եկեղեցին և այնտեղ ապաստանվածներին համոզում է դուրս գալ և կռվել, քանի որ հայերը ոչ մի պայման չեն ընդունում։ «Եթե կկարողանանք, կապրեցնենք մեզ,— ասում է նա,— իսկ եթե կմեռնենք, մեր մարգարեի խոստացած դրախտը կերթանք»։ Պաշարվածները դուրս են գալիս և բոլորն էլ ընկնում են հայերի սրերի տակ։ Իսկ այն մարդուն, որ պատգամավոր էր եղել և որին խոստացված էր չսպանել, խեղդեցին, լճի մեջ գցելով։

Այսպիսի շարժումներ, ինչպես երևում է, տեղի ունեցան Հայոց երկրի և ուրիշ կողմերում։ Գոնե Հովհաննես կաթողիկոս պատմագիրը հավատացնում է, թե արաբական մի խոշոր զորաբաժին էլ Վանանդի կողմերում

[1] Հայտնի չէ, թե ո՛ր նախարարական տոհմին էր պատկանում այս տիկինը։ Կարծողներ կան, թե նա Կամսարականների տոհմից պիտի լիներ։ Այս ենթադրությունը, անշուշտ, հիմնվում է այն հանգամանքի վրա, որ Կամսարականների տոհմի մեջ հաճախ պատահում են Շուշան անունով տիկիններ։ Բայց այս, իհարկե, ապացույց չէ։

ոչնչացրին Կամսարական իշխաններից մեկը և Վանանդի իշխանները[1]։ Բայց վերջիվերջո ի՞նչ էր դուրս գալիս այս ապստամբություններից։ Հայերը, թեև հաղթական այս անակնկալ հարձակումների մեջ, շատ լավ էին զգում իրենց ուժը, զգում էին և այն, թե ո՛րքան անողորմ պիտի լիներ արաբների վրեժխնդրությունը։ Այս պատճառով նախարարները հնար եղած միջոցներն էին գործադրում ապագա փալիքների առաջն առնելու համար։ Սմբատ սպարապետը Վարդանակերտի հաղթությունից հետո էլ չմոռացավ բյուզանդական երկիրն անցնելու որոշումը։ Վարդանակերտի ավարից նա ընծաներ ուղարկեց կայսրին (Տիբերիոս Գ), որ բնականաբար, միայն ուրախանալ կարող էր թշնամի ազգի կրած պարտության վրա և Սմբատին կյուրապաղատության պատիվ շնորհեց։ Դրանից հետո Սմբատն իր զորագնդով գնաց Տայոց աշխարհը, որ Բյուզանդական Հայաստանի մի մասն էր կազմում, և բնակություն հաստատեց Թուխարք ամրոցում։

Իսկ Աբդ-էլ-Մելիք խալիֆը, լուր առնելով Հայաստանում տեղի ունեցած արյունահեղ դեպքերի մասին, մի մեծ բանակ է ուղարկում այնտեղ՝ ապստամբությունը ճնշելու համար։ Հրամանատարությունը հանձնվում է Մուհամմեդ բեն-Օքբայ անունով զորավարին։ Հենց որ այս լուրը հասնում է Հայաստան, նախարարները, ուրիշ մի ճար չգտնելով երկիրը վերահաս կործանումից ազատելու համար, վճռում են դիմել աղերսանքների և խաղաղարարության միջոցներին։ Այս նպատակով նրանք Դամասկոս են ուղարկում Սահակ կաթողիկոս Ձորափորեցուն մի քանի եպիսկոպոսների հետ, որպեսզի նա իջեցնի Մուհամմեդի վայրույթը և բարեխոսի հայ աշխարհի համար։ Սակայն կաթողիկոսը, հասնելով Խառան քաղաքը, հիվանդանում է և զգալով վերահաս վախճանը, գրում է մի աղերսական նամակ Մուհամմեդին, խնդրելով նրան խնայել հայ ժողովուրդը և հաշտ ապրել նրա հետ, քանի որ այդ ժողովուրդը բոլորովին միտք չունի շեղվելու իր հավատարիմ հպատակությունից և պատրաստ է միշտ հարկ տալ։ Այնուհետև նա վախճանվում է (703 թ.)։

Ծերունի կաթողիկոսի այս ճանապարհորդությունը, անակնկալ մահը հեռավոր օտարության մեջ, թողած աղերսագիրը զրույցների նյութ դարձան և զարդարվեցին շատ ավանդական պաճուճանքներով։ Ասում էին, որ կաթողիկոսն իբր գրել էր Մուհամմեդին, թե ինքը մեռնում է, չտեսնելով նրան՝ իր խնդիրքը մատուցելու համար, թե Մուհամմեդը, լսելով այդ բանը, ինքն է անձամբ գնում տեսնելու մեռած կաթողիկոսին և դիմելով ասում է նրա դիակին, թե պիտի կատարի նրա խնդիրքը։ Իսկ հետագա ժամանակներում այս բոլորի վրա ավելացվեց և հրաշքը։ Իբր թե մեռած կաթողիկոսը ձեռքում բռնած ուներ իր աղերսագիրը, և երբ արաբ հրամանատարը մոտեցավ նրան, նա շարժեց ձեռքը և աղերսագիրը տվեց նրան։ Այս բոլոր զրույցները, անշուշտ, առաջացել են այն հանգամանքից, որ Մուհամմեդ իբն Օքբայը, ճիշտ որ, Հայաստան հասնելով թշնամական գործողությունների չձեռնարկեց, բավական համարելով՝ որ երկիրը դարձյալ տեր էր ճանաչում արաբներին և հարկեր տալու պատրաստակամություն էր հայտնել։ Բայց այս ներողամտության պատճառը պարզապես այն էր, որ Աբդ-էլ-Մելիքը չուզեց նոր արյունահեղություններ սկսել։ Նա իր կյանքի վերջում քրիստոնյաներին վերաբերվում էր համբերողությամբ, և ասում են, որ նրա ազդեցիկ վեզիրներից մեկը նույնիսկ քրիստոնյա էր, նշանավոր իր գործունեությամբ[1]։ Այս հանգամանքի ապացույցն այն էր, որ խաղաղությունը Հայաստանում Մուհամմեդը պահպանեց մինչև 705 թվականը, երբ մեռավ խալիֆը։

3. «Կրակի տարին»: Աբդ-էլ-Մելիքին հաջորդեց որդին, Վլիթ (Վելիդ) անունով։ Եվ իսկույն վերսկսվեց նախկին վերաբերմունքը դեպի հայերը։ Վարդանակերտի պարտությունը չէր մոռացվում, Մուհամմեդ բեն-Օքբայը միշտ կասկածով էր նայում նախարարներին։ Վլիթը նրան լիազորություն տվեց միջոցներ գտնել նախարարական ամբողջ դասակարգը մեջտեղից վերացնելու համար, քանի որ նա միշտ արաբական իշխանության դեմ արգելքներ և դժվարություններ էր հարուցում։ Այս իսկ ժամանակամիջոցին տեղի էր ունենում մի մեծ դեպք, որ ստիպողական էր դարձնում հայ նախարարական հարցին վերջ տալը։ Հուստինիանոս Բ-ն, որ այնքան բացասական դեր էր կատարել Բյուզանդիայի և Հայաստանի ճակատագրի վերաբերմամբ, 705 թվականին նորից տիրացավ իր կորցրած գահին, և Հայաստանը նորից կռվածաղիկ էր դառնում Բյուզանդիայի և Արաբիայի միջև։ Կայսրը մի խոշոր բանակ ուղարկեց Հայաստանը գրավելու համար։ Սմբատ սպարապետը, որ ապրում էր Տայոց աշխարհում, միացավ կայսերական բանակին և նրա հետ միասին արշավեց Մուհամմեդի դեմ։ Վանանդ գավառի Դրաշպետ գյուղում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, որի մեջ բյուզանդացիները չարաչար պարտություն կրեցին, կորցնելով, ինչպես պատմում էին, համարյա 50 հազար մարդ։ Սմբատն իր ընկեր նախարարներով ստիպված եղավ նորից հեռանալ հայրենիքից։ Այս անգամ նրանք խնդրեցին կայսրից մի ուրիշ տեղ իրենց բնակության և իրենց ոչխարների հոտերի համար։ Եվ ստացան Եգերիայի (այժմյան Մինգրելիայի) Փոյթ քաղաքը, որ համապատասխանում է այժմյան Փոթի քաղաքին։

Բայց այս նախարարները, բյուզանդական բանակի առաջնորդներ հանդիսանալով, արաբների համար շատ համոզիչ օրինակներ դարձան, թե սխալ չէ նրանց կազմած հասկացողությունը հայ նախարարության դերի մասին։ Եվ Մուհամմեդն շտապեց ի կատար ածել Վլիթ խալիֆի հրահանգը։ Կազմած ծրագիրը նա հանձնեց Նախճավան քաղաքի իր տեղապահին, որի անունն էր Կաշմ (Կասըմ)։ Սա հրավեր ուղարկեց բոլոր նախարարական տոհմերին, որ ընտանիքներով և ձիավոր զորականներով գան հավաքվեն Նախճավան՝ ցուցակագրվելու համար, որովհետև խալիֆը կարգադրել է ամենքին թոշակ տալ։ Նախարարներից շատերը իրենց պարզամտությամբ հավատացին այդ կոչին և հավաքվեցին Նախճավան։ Կազմվեց այնքան խոշոր մի բազմություն, որ հարկավոր համարվեց մի մասն ուղարկել մերձակա Խրամ ավանը։ Այնուհետև թե Նախճավանում և թե Խրամում կալանավորված հայտարարեցին ամենքին և փակեցին տեղական եկեղեցիներում ու պահապաններ դրին։ Պատմվում է, որ եկեղեցիների դռներն ու պատուհանները ոչ միայն ամուր փակվեցին, այլև հյուսվեցին աղյուսով։ Դուրս բերին միայն գլխավոր նախարարներին և պահում էին նրանց առանձին։ Ապա Կասըմը հրամայեց վառել եկեղեցիների փայտե ծածկերը։ 105
Այսպիսով երկու եկեղեցիների մեջ ոչնչացան հայ ազատներն ու նախարարական ձիավորները (706 թ.)։ Բոլոր այրվածների թիվը հետագա դարերի

[1] Հովճ. կաթող., Երուս., գլ. Իա։

[1] L. A. Sédilot, „Hist. gén. des Arabes", Paris, 1877, p. 184.

մի պատմիչ (Ստեփանոս Օրբելյան) հաշվում է ութ հարյուր։ Եթե այս թվի մեջ նույնիսկ չափազանցություն էլ լինի, դարձյալ պետք է շատ մեծ համարել հայ ավատական դասի կորուստը, մանավանդ որ գլխավոր նախարարները, որոնց դուրս էին բերել եկեղեցիներից, նույնպես չազատվեցին մահից։ Ցույց տալով բոցերի մեջ խորովվող մարդկանց բազմությունը, Կասըմը կալանավորված իշխաններին հայտարարեց, որ եթե նրանք չեն ուզում նույն վիճակին արժանանալ, թող փրկանք տան ոսկով և արծաթով։ Իշխանները տվին իրենց բոլոր գանձերը, որ թաքցրած ունեին թե՛ ծովում և թե՛ ցամաքում։ Բայց և այդպես, կյանք չստացան։ Նրանց բոլորին կոտորեցին։ Ղևոնդ պատմագիրը հիշատակում է միայն մի քանիսին—Սմբատ, որդի Աշոտի՝ Բագրատունյաց տոհմից, Գրիգոր և Կորյուն՝ Արծրունի տոհմից, Վարազ-Շապուհը և իր եղբայրը՝ Ամատունի տոհմից։ Եվ ավելացնում է. «Եւ բազումք այլք ի նախարարաց Հայոց, զորս ոչ բաւեմ մի ըստ միոջէ պատմել»։

Վարդանակերտի վրեժը լուծված էր սարսափելի անգթությամբ։ Զատկի օրերին էր, որ կրակի բոցերի մեջ այրվեցին ամեն սեռի և հասակի մարդիկ։ Արաբները գոհ էին այդ վրեժից և 706 թվականը կնքեցին «Կրակի տարի» անունով[1]։ Ղևոնդն ավելացնում է իր տխուր նկարագրության. «Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զոչխարս ի մէջ գայլոց։ Եւ թշնամեացն ամենօրինակ չարեաց յարձակեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վտանգի պահէին զբնակիչս աշխարհիս Հայոց. որոց տաղտկացեալ յանհանգիստ նեղութեանցն՝ զհառաչանս և զաղաղակ հեծութեան բարձրացուցանէին յերկինս»[2]։

Բայց որքան էլ մեծ լիներ հայ նախարարության հասած վնասը, չէր կարելի, այնուամենայնիվ, ասել, թե Նախճավանի և Խրամի բոցերը լիովին իրագործեցին Մուհամմեդի նպատակը։ Հայ նախարարությունը թուլանում էր ժամանակավորապես, բայց ոչ միայն չէր անհայտանում ասպարեզից, այլև ձեռքից չէր տալիս իր դերը։ Արաբական կառավարությունը դարձյալ հարկադրված էր հաշվի առնել այդ իրական ուժը, հաճախ փոփոխել իր վերաբերմունքը դեպի նա, հաճախ դիմելով մաքառման անողորմ ձևերին։ Պայքարը Կրակի տարով չէր վերջանում։ Այդ միայն մի դեպք էր, գուցե շատ խոշոր դեպք կառավարության և հայ ազնվականության փոխհարաբերությունների մեջ։ Փոխադարձ վերաբերմունքը շատ հաճախ կախում ուներ կառավարիչների և խալիֆների անձնական հատկություններից։ Եվ այս իրողությունը երևան եկավ Կրակի տարուց անմիջապես հետո, այն էլ այնքան անակնկալ, որ արտաքուստ անհասկանալի հակասության ձև է ստանում։

Մուհամմեդի չարագործությունն այնքան սաստիկ բողոք է բարձրացնում Հայոց աշխարհում, որ Վլիթ ամիրապետը, թեև ինքն էր հրահանգել նախարարական տոհմերի ոչնչացումը, ստիպված եղավ ետ կանչել իր ոստիկանին և նրա տեղ նշանակեց Աբդուլ-Ազիզ անունով մեկին, որ բոլորովին ուրիշ քաղաքականություն բերեց Հայոց աշխարհը—խաղաղության, հաշտության և շինարարության քաղաքականություն։ Աբդուլ-Ազիզի առաջին գործը եղավ թղթեր գրել Փոթիում ապաստանված նախարարներին և

[1] Հ. Ալիշան, «Յուշիկք Հայրենի Հայոց», Վենետ., 1870, հ. Ա, եր. 147։
[2] Եր. 35։

համոզել, որ ամեն մեկը վերադառնա իր հայրենի կալվածը։ Նա ամենագրական երաշխիքներ տվեց, որ նրանց կյանքն ապահովված կլինի վտանգից։ Նախարարները հավատացին Աբդուլ-Ազիզին և վերադարձան, նախապես կողոպտելով Փոթիի գանձարանն ու եկեղեցիների սպասները։ Կայսրը, սաստիկ զայրանալով այս սրբապղծության վրա, բայց և անկարող լինելով պատժել այդ արարքը, հրամայում է նզովքի թուղթ գրել և ամեն տարի զատկին կարդալով այդ թուղթը եկեղեցիներում, նզովել հափշտակիչ նախարարներին։

Աբդուլ-Ազիզը բարձր արդարադատության օրինակ էլ ցույց տվեց, զսպելով արաբներին և թույլ չտալով, որ նրանք հոխորտանքով և գոռոզությամբ վիրավորեն հայերի զգացմունքը, մանավանդ հիշեցնելով Կրակի տարին։ Բայց ամենագլխավորը, որ նրա կառավարչական բարեմասնությունններն էր վեր հանում, այն էր, որ նա վերաշինեց և գեղեցկացրեց Դվինը, նորոգեց նրա պարիսպները, ամրացրեց դռներով, խրամատ շինեց պարիսպների շուրջը և լցրեց ջրով, ինչպես վայել էր մի ամուր բերդի։ Եվ անկասկած է, որ այսպիսի մի կառավարչի հովանու տակ Հայոց աշխարհը շուտ մոռացավ իր կրած դառն կորուստները։

Բայց Կրակի տարվա պատմությունը վերջացնելուց առաջ չի կարելի չհիշատակել մի մասնավոր դեպք ևս, որ դարձել է մի սրտառուչ վկայաբանության նյութ։ Այդ Վահան Գողթնացու պատմությունն է։ Գողթան գավառի իշխան Խոսրովը Նախճավանի աղետին զոհ գնացողներից մեկն էր։ Երբ Կասըմի զորքերը ցրվեցին նախարարական կալվածները՝ կալանավորված նախարարների գանձերը հափշտակելու համար, նրանք գերեցին և շատ նախարարական ընտանիքներ, որոնց և ուղարկեցին Դամասկոս։ Այդ գերիների մեջ էր և Խոսրով Գողթնացու չորս տարեկան որդին, Վահանը։ Մանուկը Դամասկոսում դաստիարակվեց մահմեդական կրոնի ոգով, ապրեց արքունիքում և պատանեկության հասակում նշանակվեց արքունի դիվանադպիր։ Նրա անունն էլ փոխեցին և դարձրին Վահապ։ Սակայն նա չմոռացավ իր հայրենիքը, իր ծագումը, ինչպես և այն, որ ինքը քրիստոնյա էր։ Երբ խալիֆ Օմարը (717—720 թթ.) ներում շնորհեց Դամասկոս գերի տարած հայերին և թույլ տվեց նրանց վերադառնալ հայրենիք, Վահանն էլ լցվեց վառ ցանկությամբ գնալու նրանց հետ։ Բայց նրան թույլ չտվին, որովհետև նա իսլամացած էր, հետևաբար իրավունք չուներ հայերի մեջ լինելու։ Վահանն սկսեց թախանձել և երբ կորցրեց հույսը, որ իրեն երբեք չպիտի ազատեն, ժամանակավոր արձակուրդ խնդրեց։ «Արձակեցէք.—ասաց նա,— որ տեսանեմ զորչափութիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեաց»[1] և խոստացավ, հայրենի գավառի կառավարությունը կարգավորելուց հետո, վերադառնալ իր պաշտոնատեղին։ Այդ պայմանով էլ նրան արձակեցին։ Բայց հայրենի տանը նրան փաթաթեցին անթիվ կապանքներ։ Բերանացի ավանդություն է պահվել, թե Վահանը մի քույր ուներ, որ սաստիկ սիրում էր նրան և ինքն էլ բանաստեղծուհի էր։ Հզոր է հանդիսանում մանավանդ քրիստոնեությունը և վաղ մանկությունից նրանից օտարացած Վահանը ջերմեռանդությամբ փարում է նրան։ Եվ ի լրումն ամենայնի, նրան ամուսնացնում են Սյունյաց իշխանի աղջկա հետ։

Վահանը մոռանում է իր խոստումը, որ տվել էր խալիֆին, տարիներ

[1] «Սոփերք Հայկականք», հատ. ԺԳ, Վենետիկ, 1854, եր. 23։

ապրում է հայրենի տանը, մեռնում են Օմար խալիֆն ու իր հաջորդը, որոնող ու պահանջող չկա։ Անցնում է քիչ ևս, և Վահանը լսում է, թե իրեն որոնում են։ Թեև այդ մի լուր է միայն, թեև ոչ մի գործ չի գալիս հաստատելու այդ լուրը, բայց երիտասարդը տարված է այն մտքով, թե պետք է գնալ խալիֆի մոտ, հայտնել, որ ինքը քրիստոնյա է և ուզում է մնալ քրիստոնյա և այդպիսով ազատվել այն կեղծ դրությունից, որի մեջ գտնվում էր իբրև մահմեդականացած։ Երկար որոնումներից ու թափառումներից հետո նա, վերջապես, կատարում է իր այդ մտադրությունը և ներկայանում է խալիֆին։ Բայց անողոք է իսլամական օրենքը։ Նա մահվան պատիժ է սահմանել ամեն մի մյուսլիմի համար, որ ուրանում է իր հավատը։ Խալիֆը շատ է աշխատում Վահանին խելքի բերել, նորից վերադարձնել իսլամության, բայց ապարդյուն։ Ուստի և Վահանը նահատակվում է (737 թ.) և մտնում է եկեղեցու տոնած սրբերի կարգը։

4. Հաշտության տարիներ: Աբդուլ-Ազիզի ստեղծած դրությունը բավական երկար տևեց, համարյա մինչև 8-րդ դարի կեսը։ Այս ժամանակամիջոցը, ընդհանուր առմամբ, կարելի է անվանել հաշտության տարիներ, որովհետև թե՛ տիրողների և թե՛ հպատակների կողմից մի կերպ հաշտ ապրելու տրամադրությունն է, որ տիրապետող է հանդիսանում և թեպետ արաբական հարկապահանջության կեղեքումների իրականությունն է մի-մի անգամ վերահաստատում և դժգոհությունների դռներ բաց անում, բայց և այնպես, այդ զրկանքները փոքրիշատե աչքի ընկնող ապստամբական շարժում չեն առաջացնում։ Եվ արաբներն էլ, պետք է ասել, ավելի դեպի զիջող քաղաքականությունն են թեքվում։ Այս հանգամանքի գլխավոր պատճառը պետք է որոնել հենց Օմայան հարստության դրության մեջ։ Ութերորդ դարի երկրորդ տասնամյակից Օմայան տոհմն արդեն անկման ապացույցներ էր հանդես բերում։ Խալիֆական գահի վրա նստում էին միմյանց հետևից, այն էլ կարճ ժամանակով, անընդունակ մարդիկ, որոնք իրենց քմահաճույքների հետևից էին ընկած, վատնելով պետական գանձը[1]։ Ծանր ու խիստ հարկահանությունն էլ հենց այս անհաշիվ վատնումների հետևանքն էր և, իհարկե, միայն հայերին չէր տագնապեցնում, այլ առհասարակ ընդարձակ պետության բոլոր հարկատու տարրերին։ Ուրիշ միջոց չէր գտնվում՝ դատարկված պետական գանձարանը նորից բարեկարգելու համար։

Մյուս կողմից՝ հայերի մեջ էլ վերակենդանանում էր նախկին ձգտումը հարմարվելու արաբական ռեժիմին և նույնիսկ օգտագործելու նրան ազգային արժեքների պահպանության և զարգացման համար։ Այս ուղղությամբ քաղաքականություն մշակելու մեջ առաջ ու առաջ հայ ազգային եկեղեցականությունն էր առաջապահ լինում։ Քաղկեդոնականության վտանգից, որ շարունակ մնում էր սպառնական, հայ հոգևորականությունը փրկություն որոնել սկսում է արաբական ուժի մեջ, ինչպես մի ժամանակ որոնում և գտնում էր պարսկական ուժի մեջ։ Եվ 8-րդ դարում հայ եկեղեցին եթե կարողացավ իր ազգայնական ինքնամփոփման շրջանում նորանոր նվաճումներ անել, այդ միայն շնորհիվ այն հանգամանքի, որ նրան Բյուզանդիայից անջատում էր արաբական իսլամը։

Այսպես, Եղիա կաթողիկոսի ժամանակ (703—717) Աղվանից երկ-

[1] **Мюллер**, «История Ислама», т. II, стр. 116—119.

րում վերսկսվեց քաղկեդոնական շարժումը, որ այս անգամ ավելի վտանգավոր էր այն պատճառով, որ նրա առաջնորդներն էին թե՛ երկրի կաթողիկոս Ներսեսը և թե՛ գահերեց իշխան Վարազ-Տրդատի ամուսին Սպարամ տիկինը[1]։ Տեսնելով, որ խրատական և հանդիմանական թղթերը չեն օգնում, Եղիան դիմեց փորձված ու կտրուկ միջոցին—քաղաքական մատնության։ Նա գրեց Վելիդ խալիֆին, թե Ներսեսն ու Սպարամը ուզում են Աղվանից աշխարհը հպատակեցնել հոռոմների կայսրին, ուստի նրա դավանությունն են տարածում ժողովրդի մեջ և նրա անունն են հիշատակում աղոթքներում, մինչդեռ հայոց եկեղեցին խալիֆի անունն է հիշատակում։ Վելիդն իսկույն հատուկ պաշտոնյա ուղարկեց՝ «ապստամբներին» իր մոտ տանելու համար։ Նրա հետ Եղիան հաղթականորեն գնաց Պարտավ, աղվան իշխանների օգնությամբ ձերբակալեց Ներսեսին, շղթայով կապել տվեց նրան ու Սպարամ տիկնոջը և ուղտով ուղարկեց Դամասկոս։ Այսքանը բավական էր, որ Աղվանքում վերահաստատվի հայկական ուղղափառությունը։ Իսկ այս հետևանքն էլ բավական է եղել, որ Եղիայի այս սև գործը պատմողը, նույնպես կաթողիկոս[2], իր մեծ գոհունակությունը հայտնի այս առիթով։

717 թվականին խալիֆ դարձավ Օմարը, որի մասին Ղևոնդը գրում է. «Ջսա առնեն ազնուականագոյն քան զամենայն արս ազգատոհմին իւրոյ»։ Եվ իրավ, շատ աստվածասեր և բարեսեր էր Օմարը։ Պետական գանձը ծախսեց բարի գործերի վրա, մինչդեռ ինքը պահեցող էր և պարզասեր։ Նա էր, ինչպես հիշեցինք, որ Կրակի տարին հայերից տարած գերիներին ազատություն տվեց վերադառնալու իրենց հայրենիքը։ Բայց կա նրա ուշադրության մի այլ ապացույց ևս։ Աբդուլ-Ազիզին հաջորդած Վլիթ ոստիկանը, գնալով Դամասկոս, պատմում է Օմարին, թե ո՛րքան շքեղ է հագնվում և առհասարակ գեղեցիկ արտաքին ունի հայոց կաթողիկոսը, որ այդ ժամանակ Հովհան Օձնեցին էր (716—728 թթ.), շատ փառավորված իր գիտնականությամբ և մասնավորապես հռչակված իբրև իմաստասեր, փիլիսոփա։ Այս փիլիսոփան, ճիշտ որ, այնպես գիտեր պճնազարդել իրեն, որ զրույցների առարկա էր դարձել։ Այսպես, պատմում են, որ նա մանր խարտոցով սղոցում էր ոսկին և այսպիսով ստացած փոշին, խառնելով անուշահոտ յուղերի հետ, ցանում էր իր մեծ միրուքի վրա. կրում էր ոսկե գավազան, ամենապատվական կտորներից կարած զգեստներ։ Եվ ահա Օմարն այնքան զարմացավ Վլիթի պատմածների վրա, որ հատուկ մարդ ուղարկելով Հայաստան, հրավիրեց կաթողիկոսին իր մոտ։ Հովհանը խալիֆի հատուկ խնդրանքով հագնվում է այնքան փառահեղ, որքան կարող էր, և ներկայանալով նրան, իսկապես որ խոր տպավորություն է թողնում պարզասեր արաբի վրա։ Հայոց կաթողիկոսի արտաքինը երկար դիտելուց հետո Օմարն ասում է. «Ի՞նչպես ես կարողանում դու այդքան պճնվել, քանի որ ձեր Քրիստոսն ու իր աշակերտները, որքան ես եմ լսել, աղքատ էին հագնվում»։ Այն ժամանակ փիլիսոփա կաթողիկոսը բաց է անում խալիֆի առջև մի ամբողջ փիլիսոփայական տեսություն։ Քրիստոսին ու իր աշակերտներին,— ասում է նա,— տրված էր հրաշք գործելու կարողությունը և դրանով էլ նրանք ազդում էին տեսնողների վրա,

[1] Մովսէս Կաղանկատ., եր. 335։

[2] Հովհաննէս կաթող., Երուս., գլ. ԻԲ։

հեղինակություն և իշխանական հարգանք էին վայելում։ Մենք այդ կարո-
ղությունից զրկված ենք, ուստի մեզ մնում է արտաքին տեսքով, զգեստ-
ների շքեղությամբ ազդեցություն գործել, պատկառանք ներշնչել և առհա-
սարակ իշխանություն ներկայացնել։ Մի՞թե դուք, թագավորներդ էլ այդ-
պես չեք։ Հագնում եք ծիրանի, աշխատում եք ամենից շքեղ լինել արտա-
քուստ։ Ի՞նչ կլինի, եթե աղքատ հագնվեք դուք։ Եվ Օմարը, ասում են,
այնքան հիացավ այս բացատրության վրա, որ «յոթն անգամ» պարգևա-
տրեց նրան, ոսկի ու արծաթ տվեց և պատվով էլ ճանապարհ դրեց։
Այս զրույցը, եթե չունենա իր մեջ պատմական ճշմարտության նշույլ
անգամ[1], համենայն դեպս մի վկայական է, թե ո՛րքան լավ հարաբերու-
թյուններ էին մշակվել խալիֆի և նրա հայ հպատակների միջև։ Բայց այս
բարի ամիրապետին հաջորդած Եզիդ Բ-ն (720—724 թթ.) արդեն մի բութ
և մոլի ֆանատիկոս էր, ուստի թշնամու պես էր վարվում քրիստոնյանե-
րի հետ և հալածում էր նրանց։ Ավելի կատաղի եղավ նրա թշնամությու-
նը խոզերի դեմ, որոնք մահմեդական կրոնի ըմբռնումով անսուրբ կենդա-
նիներ են համարվում։ Ուղղափառ խալիֆը խոզերի ամբողջ երամակներ
կոտորել տվեց, երևի համոզված լինելով իր ֆանատիկոսության կարճա-
մտության մեջ, թե կոտորելով կարելի է ոչնչացնել կամ գոնե փոքրացնել
այդ բազմածին կենդանու ցեղը։
Այդ խոզասպանին հաջորդեց Հիշամը, մեկը Օմայան կարող խալիֆ-
ներից, որին վիճակված էր իր նախորդների համեմատությամբ մի երկար
թագավորություն (724—743 թթ.)։ Նա Հայաստանի և Ադրբեջանի ոստի-
կան նշանակեց իր մոտիկ ազգական Մրվան իբն-Մուհամմեդին։ Սա խա-
ղաղություն և ապահովություն բերեց երկու երկրներին, բայց մանավանդ
բարերար էր նրա գործունեությունը Հայաստանում։ Հիշամը նորոգեց հին
սովորությունը106, որով երկրի կառավարությունը հանձնվում էր հայ իշ-
խաններից մեկին։ Մրվանն այդ բանի համար ընտրեց Վասակ Բագրատու-
նու որդի Աշոտ իշխանին, որ օժտված էր շատ բարեմասնություններով։
Աշոտն ստացավ պատրիկի կոչում և սկսեց խոհեմությամբ ու քաջությամբ
կառավարել երկիրը։ Բայց այս մեծ հաջողությունը, որ շնորհվում էր հայոց
ազգին, դեռ նոր էր իրականություն դառնում, երբ մռայլվեց ընտանի երկ-
պառակության հարուցած խռովություններով։ Եվ խռովությունների, երկ-
րի շահերը վտանգողների դերում հանդես են գալիս—բացառիկ մի երևույթ
հայոց պատմության մեջ—Մամիկոնյան երկու իշխաններ, Սմբատի որդի-
ները—Գրիգոր և Դավիթ։ Սրանք թշնամացած էին Աշոտի հետ, գուցե այն
պատճառով, որ իրենք հույս ունեին ստանալ իշխանությունը։ Եվ այնքան
սաստկացրին իրենց հակառակությունը Աշոտի դեմ, որ Մրվանը բռնել
տվեց երկուսին և ուղարկեց Հիշամի մոտ, գրելով ամբաստանություն հենց
այն մտքով, թե խռովարարներ են և օրինավոր իշխանության հակառա-
կորդներ։ Հիշամն աքսորեց երկուսին մի հեռավոր անապատ, ուր պիտի
մնային մինչև մահ։
Այս բարեհաջող ելքից օգուտ քաղելով, Աշոտը գնաց Դամասկոս՝ թե՛
անձամբ շնորհակալություն հայտնելու խալիֆին և թե՛ մի քանի հարցեր

[1] Այս պատմություն անողն է Հովհաննես կաթողիկոսը, որ Օձնեցուց անվազն հարյուր
տարի հետո էր ապրում։ Ժամանակակից Ղևոնդը չունի այս մասին հիշատակություն անգամ։
Պետք է ասել, որ Հովհան Օձնեցին այսօր էլ դեռ ապրում է ժողովրդական ավանդությունների
մեջ։

կարգավորելու համար։ Ամենից կարևոր էր նախարարական հեծելազորի
ռոճիկի հարցը։ Նախարարները, ինչպես գիտենք, պարտավոր էին իրենց
զնդերով օգնության գնալ պատերազմի դեպքում և փոխարենը ստանում էին
գնդերի պահպանության համար որոշ նպաստ պետական գանձարանից։
Այսպես էր պարսից տիրապետության ժամանակ, այսպես շարունակվեց և
արաբների իշխանության ժամանակ։ Սակայն երեք տարուց ի վեր կարճվել
էր այդ գումարի հատուցումը պետական միջոցներից։ Հիշամը, լսելով Աշո-
տի զեկուցումը, հրամայեց վերսկսել նպաստի հատուցումը և, բացի դրա-
նից՝ տալ և երեք տարվա ապառիկը, յուրաքանչյուր տարվա համար 100
հազար դահեկան։ Ապա խալիֆն ավելի ևս պատվեց Աշոտին և ուղարկեց
իր տեղը։
Հայոց պատրիկը փառքի գագաթնակետին հասավ, մանավանդ այն
ժամանակ, երբ Մրվանի հետ պատերազմ գնաց Հոնաց աշխարհը։ Հայոց
զորքն արաբների հետ միասին կռվեց մեծ քաջությամբ։ Հաղթանակը կա-
տարյալ էր, և Մրվանը վերադարձին, կանգ առնելով Պարտավ քաղաքում,
գերիների ու ավարի մի հարուստ բաժին տվեց հայերին։ Այնուհետև եր-
կիրը կատարյալ խաղաղություն վայելեց մինչև Հիշամի մահը։ Ավազակներն
ու խռովարարները զսպված էին, կարգն էր թագավորում ամեն տեղ։ Բայց
Հիշամից հետո Օմայան հարստությունը հզոր ցնցումների ենթարկվեց։
Նրան հաջորդած Վելիդը մի փուչ մարդ էր, ըմբշամարտերի և այլ զվար-
ճությունների սիրահար, որոնց վրա էլ նա վատնեց պետական գանձերը։
Եվ Վելիդն սպանվեց, իսկ նրա տեղ խալիֆ հայտարարվեց Եզիդ Գ-ն (754 թ.)։
Սակայն Հայաստանի ոստիկան Մրվանը ոչ միայն չընդունեց Եզիդին խա-
լիֆ, այլև գնաց նրա դեմ մեծ զորքով, որի թիվը ճանապարհին ավելի ևս
մեծացավ։ Իր տեղ Մրվանը փոխանորդ թողեց Իսահակ իբն-Մեսլիմին։
Բայց հենց որ հեռացավ Մրվանը, Հայոց աշխարհը մտան Մամիկոնյան
երկու եղբայրները, որոնք Հիշամի մահից հետո ազատվել էին աքսորից։
Նրանք անցան Վասպուրական և սկսեցին նեղել ժողովրդին հարկահանու-
թյամբ և այլ բռնություններով։ Շատ հարմար ժամանակ էր մանավանդ
Աշոտ պատրիկի դեմ վրեժխնդրական գործողություններ սկսելու համար։
Մրվանը Սիրիայում սաստիկ կռիվների էր բռնվել Եզիդի կողմնակիցների
դեմ, ամեն տեղ տիրում էր խառնակ դրություն։ Եվ Գրիգորն ու Դավիթը,
տեղեկանալով, որ Աշոտի զորքը ցրված է զանազան տեղեր, իսկ ինքը հան-
գիստ ապրում է, առանց զգուշությունների, հանկարծակի հարձակվեցին
նրա վրա, կամենալով սպանել նրան։ Բայց պատրիկը կարողացավ ազատ-
վել փախչելով, թշնամիների ձեռքում թողնելով իր հարստությունները,
որոնք և կողոպտվեցին։ Աշոտը չէր կարողանում բացարձակ գործել Գրի-
գորի և Դավթի դեմ, երևի այն պատճառով, որ ուժեղ էր Մամիկոնյան-
ների կուսակցությունը։ Այդ նկատառումով նա իր ընտանիքը թողեց հայ-
րենի Դարյունք ամրացած բերդում, վստահելի պահպանության տակ, ին-
քը վերցրեց իր զորքը և գնաց Մրվանի մոտ, որպեսզի նրա օգնությունը
խնդրե, քանի որ ակնհայտ էր, թե Իսահակ իբն-Մեսլիմն էլ երկու Մամի-
կոնյանների կողմն էր։ Այս հանգամանքը պարզվեց հենց նրանով, որ Իսա-
հակը, օգուտ քաղելով Աշոտի հեռանալուց, նրա տեղ սպարապետ նշանա-
կեց Դավիթ Մամիկոնյանին։
Իսկ Մրվանն այս անգամ ավելի ևս պիտի սիրաշահեր Աշոտ պատրի-
կին, քանի որ նրա գալը մի խոշոր հաղթություն էր բերում նրա բանա-

կին։ Բանն այն էր, որ Աշոտի երևալը Մրվանի բանակում պատճառ դարձավ, որ տարածվի հակառակորդ բանակում, թե հայերն օգնության են հասել Մրվանին և թե այդ օգնությունը բաղկացած է 15 հազար ընտիր ձիավորներից։ Այս լուրը լքում և կազմալուծում է առաջացնում, և Մրվանն օգուտ քաղելով այս հանգամանքից, խոշոր հաջողություն է ձեռք բերում։ Ինչ խոսք, որ Մրվանը, մանավանդ այդ բանից հետո, պիտի պաշտպաներ Աշոտին։ Եվ նա հրամանագրում է Իսահակին վերցնել զորքի հրամանատարությունը Դավթի ձեռքից, ապա հրամայում է նրան ենթարկել ամենատանջալից և անարգ մահվան։ Հրամանը կատարվում է, բայց այս մահն ավելի ևս բորբոքում է թշնամությունը նախարարական երկու նշանավոր տոհմերի միջև։ Գրիգոր իշխանը «ոչ դադարէր,— ասում է Ղևոնդը,— յերկնելոյ զհակառակութիւն վասն քինախնդիր լինելոյ կորստեան եղբօրն»[1]։ Բայց դեռ երկյուղ կրելով Մրվանից, արտաքուստ հաշտ էր Աշոտի հետ։ Արյան վրիժառությունը նախարարական կազմի գլխավոր հիմքերից մեկն էր, և Գրիգորն սպասում էր հարմար առիթի։

Իսկ հարմար ժամը երկար սպասել չտվեց իրեն։ Մրվանը, հաղթելով իր հակառակորդներին, բարձրացավ խալիֆայական գահը։ Դա մի ուժեղ ու համառ մարդ էր և ստացել էր «էլ-Հիմար» (էշ) մականունը և այս ոչ միայն այն պատճառով, որ նա, սիրիացի պատմագիրների ասելով, սիրում էր մի տեսակ ծաղիկ, որ կոչվում էր «էշի վարդ»[2]։ Նրա բնավորության գլխավոր գծերից մեկը կազմող համառությունն էլ, անշուշտ, նպաստել է դրոշմելու այդ մականունը։ Մրվանին վիճակվում էր լինել վերջինը Օմայան հարստության մեջ, որովհետև նրա դեմ կազմակերպված ու սաստիկ ուժեղացած դուրս էր գալիս դինաստիական ահավոր պատերազմը։ Աբբասյան տոհմը, միացած Ալիի տոհմի հետ, զենք էր խաղացնում՝ մարգարեի ժառանգությունն Օմայաններից խլելու համար։ Մեծ մաքառումն սկսվում էր հեռվից, Խորասանից։ Մրվանն ամբողջ ժամանակ իր ուշադրությունը դարձրել էր այդ ահավոր մրցության վրա։ Եվ ահա այդ միջոցին Գրիգոր Մամիկոնյանը կազմակերպում էր ապստամբություն, որ միաժամանակ միջոց պիտի տար վրեժ հանելու թե՛ արաբներից և թե՛ Աշոտ պատրիկից։ Նրա հետ էր արդեն նախարարության մի զգալի մասը։ Այս երկրորդ նպատակը դեռ ծածուկ մնաց։ Հրապարակում գրված էր դեռ գլխավորը, համազգայինը, ապստամբությունը։ Նախարարներն ստիպեցին, որ Աշոտ պատրիկն էլ մասնակցե դավադրության։ Եվ այս, իհարկե, ձեռնտու էր Գրիգորին, քանի որ դրանով Աշոտը պիտի զրկվեր արաբների աջակցությունից։

Եվ ահա նախարարներն սկսում են համոզել Աշոտին, որ միանա իրենց հետ։ Աշոտն ապացուցում է, որ շարժումը հախուռն է, վտանգավոր։ «Ո՛վ եղբայրներ,— ասում է նա,— այդ բանի մեջ ես չեմ տեսնում հասուն միտք, այլ միայն ծուռ դիտավորություն և զուր նպատակ։ Մեր զորքերը սակավաթիվ են իսմայելացիների զորքերի համեմատությամբ և մենք չենք կարող կռվել նրանց դեմ, ոչ էլ վիշապի բերանից ազատել մեր երկիրը, այլ միայն կենթարկենք նրան ամեն տեսակ ճնշումների և վտանգների։ Եթե ուզում եք հետևել իմ խորհրդին, եկեք թողնենք այս ձեռնարկությունը, շարունակենք առաջվա նման հարկ վճարել նրանց և հանգիստ կտիրապետենք մեր կայքերին, այգիներին, անտառներին և հանդերին»։ Սակայն այս խորհուրդը չընդունվեց։ Նախարարները պատասխանեցին. «Եթե դու չհամաձայնես մեզ հետ լինել, քո զորքի մեջ մի հատ մարդ չի մնա, որովհետև մենք չենք կարող տանել այն թշվառությունները, որոնց մեջ գտնվում է մեր երկիրը»։

Եվ Աշոտը համաձայնությունը տալիս է։ Հայտարարվում է ապստամբություն, նախարարները երդմամբ հավատարմության ուխտ են կապում և իրենց ընտանիքները վերցրած՝ անցնում են Տայոց աշխարհը։ Կոստանդին կայսրի հետ վաղօրոք կայացրած համաձայնության հիման վրա հայ ապստամբները պիտի գործեին բյուզանդական այն զորքերի հետ, որոնք գտնվում էին Պոնտոսի ափերին։ Եվ ահա զանազան կողմերից հավաքվում են հասարակության տականքները («որդիք յանցանաց»,107 ինչպես ասում է Ղևոնդը), զորք կազմելու համար։ Այս սրիկաներն սկսում են թալան և կողոպուտ, որովհետև ոչ ոքից ահ ու երկյուղ չունեին։ Իբրև օտարազգիներ՝ նրանք, իհարկե, խնայել և քաշվել չպիտի իմանային։

Այս խաժամուժը գործեց այն, ինչ կարող էր գործել ամեն մի անկարգ և ինքնագլուխ ուժ։ Նա մտցրեց կազմալուծում և հուսահատություն։ Ամենից առաջ քանդվեց նախարարների միաբանությունը։ Կարճ միջոցից հետո Աշոտ պատրիկն իր ընտանիքով և կողմնակիցներով թողեց Տայոց երկիրը և վերադարձավ իր հայրենի Բագրևանդ գավառը՝ նորից արաբների հետ միանալու համար։ Գրիգոր Մամիկոնյանը հարմար առիթ համարեց այս հանգամանքը՝ իր վրեժն իրագործելու համար։ Կարճ ճանապարհներով նա հասավ Աշոտին Հազր գյուղում, շրջապատեց նրան, բռնեց և տվեց նրան իր եղբայր Դավթի ծառաների ձեռքը, որոնք և հանեցին իրենց տիրոջ վրեժը, կուրացնելով Աշոտին։ Ղևոնդը մեծ կսկիծով է խոսում այս բարբարոսության մասին։ «Եւ յայնմ հետէ բառնայր փառք ազգիս Հայոց», ասում է նա։ Եթե աչքի առաջ ունենանք, որ Աշոտ Բագրատունին ամբողջ 15 տարի խաղաղությամբ պահպանել էր Հայոց աշխարհը, միանգամայն հասկանալի կլինի այդ կսկիծը և միանգամայն բնական այն, որ ամբողջ հայ ժողովուրդը ողբաց այդ դժբախտությունը։ Այնուհետև էլ Աշոտն ապրեց 12 տարի։ Իսկ Գրիգոր իշխանը շտապեց Կարին և տոնում էր իր հաղթանակը, ավետիս ուղարկելով զանազան կողմերը։ Բայց հենց այդ ժամանակներն էլ նա մեռավ։ Այսպիսով նրա ձեռնարկած ապստամբությունը միայն Աշոտ պատրիկի կուրացումն ունեցավ իբրև հետևանք։

5. Աբբասյանների հարստահարությունները: Մրվան էլ-Հիմարը, չարաչար պարտություն կրելով Սիրիայում, փախավ Եգիպտոս, ուր սպանվեց 750 թվին։ Այս թվականը մի նոր դարագլուխ է իսլամական Արևելքի պատմության մեջ։ Խալիֆների գոյությունը Դամասկոսում վերջացած է և նրանց գահը փոխադրվում է Իրաք, Տիգրիսի զարմանալի հարուստ և արգավանդ ափը, այն կողմերը, ուր մի ժամանակ ծաղկած էր Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնը։ Նույն այդ թվականից իսլամական աշխարհի տեր և հրամանատար է Աբբասյան տոհմը, որի ներկայացուցիչներն են երկու եղբայրներ—Աբուլ-Աբբաս և Աբու-Ջաֆար։ Գահն անցնում է առաջինին, որ ստացել էր «էս-Սաֆիահ» (Արնախում) տիտղոսը։ Աշխարհը հանձին այդ երկու եղբայրների ստանում էր երկու բռնավորներ, որոնք մարդկության դժբախտության համար են իշխանության և ուժի տեր դառնում։ Հայաս-

[1] Ղևոնդ, գլ. Իե։

[2] Huart, Hist. des Arabes, I, p. 276.

տանն իսկույն այդ բանի դառն փորձն առավ, հենց որ նոր խալիֆական հարստությունը ձեռք առավ կառավարությունը։

Եթե Աբուլ-Աբբասն «արնախում» էր, նրա եղբայր Աբու-Ջաֆարն այդ հատկության վրա ավելացնում էր և անօրինակ ագահությունը։ Հարստություններ դիզելն ուղղակի մի հիվանդություն էր նրա մեջ, և այդ պատճառով նրան անվանում էին «դանգի (փող) հայր», որովհետև, ասում է Ղևոնդը, նա «դանգն Աստծուց ավելի էր մեծարում»։ Հայ պատմագրի պես վկայությունը միանգամայն ճիշտ է. արաբական հեղինակներն էլ մանրամասն նկարագրում են Աբու-Ջաֆարի անորակելի արծաթամոլությունը և թե ինչպես նա կանգ չէր առնում ոչ մի միջոցի առջև՝ իր գանձերը մեծացնելու համար։ Հասկանալի է, որ հարստության առաջին և գլխավոր աղբյուրը հպատակների տված հարկերը պիտի լինեին։ Եվ ահա այս հողի վրա արաբական ամբողջ պետության մեջ սկսվում են անասելի կեղեքումներ։ Թագավորությունը վայելելու համար Աբուլ-Աբբասին տված էր կարճ ժամանակ՝ ընդամենը երեք տարի (750—754 թթ.)։ Բայց այսքան ժամանակն էլ բավական էր, որ Աբու-Ջաֆարը, իբրև թագաժառանգ, պտտի պետության բոլոր հայտնի երկրները և հարկահանության մի անտանելի ծանր սիստեմ հաստատի ամեն տեղ։ Ամենից առաջ նա գալիս է Հայաստան։ «Բազում վշտօք և նեղութեամբք վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն սնանկութեան», գրում է Ղևոնդը։ Տանջում էր այրիներին ու որբերին, հարկ էր պահանջում և մեռածներից, ծեծում ու տանջում էր քահանաներին՝ մեռելների անուններն իմանալու համար։ Յուրաքանչյուր հարկատուի վզից կախ էր անում կապարյա կնիք։ Այնուհետև նա Հայաստանում ոստիկան է թողնում Եզիդ անունով մեկին, իսկ ինքը գնում է ուրիշ երկրներ—Պարսկաստան, Եգիպտոս և այլն՝ միևնույն սիստեմն ամեն տեղ իրագործելու համար։

Միանգամայն ծանր դրություն է ստեղծվում մանավանդ նախարարական դասակարգի համար։ Հայ ազնվականներն ստիպված էին իրենց գանձերը բաց անել, որպեսզի կարողանան ոսկով ու արծաթով և այլ հարստություններով «լցնել վիշապի բերանը», ինչպես ասում է պատմագիրը։ Այս բավական չէ.—կտրվեց և արքունի նպաստը, որ տրվում էր նախարարական գնդեր պահելու համար։ Նախարարները պարտավոր էին իրենց հաշվով պահել ու զինել իրենց գնդերը, որոնք միշտ պատրաստ պիտի լինեին արքունի ծառայության։ Այս հարստահարությունները դժգոհության բոցը միշտ վառ էին պահում հայ ռազմիկ տարրի մեջ։ Թեև Եզիդ ոստիկանն էլ իր կողմից Հայոց աշխարհի պատրիկ էր կարգում Սահակ Բագրատունուն, որ կուրացրած Աշոտի հորեղբորորդին էր և մի ազնիվ, աստվածավախ իշխան, արտաքինով էլ շատ գեղեցիկ, բայց նա, իհարկե, չէր կարող փոփոխել օրինականացրած դրությունը։ Այնպես որ թե՛ նախարարների և թե՛ հասարակ ժողովրդի համար անտանելի նեղություններից ազատվելու մի հնար էր մնում—լքել հայրենիքը, անցնել Բյուզանդիայի սահմանները։ Եվ այնուհետև մենք տեսնում ենք, որ ավելի մեծանում է դժգոհ հայերի հոսանքը դեպի կայսրության զանազան կողմերը, ուր նրանք գլխավորապես զինվորական ծառայությունն էին ընտրում ըստ հին սովորության։

Այսպես էր 752 թվին, երբ Կոստանդին Ե Կոպրոնիմոս կայսրը (741—775 թթ.) արաբների ձեռքից խլեց Կարինը։ Հարձակումը մշտապես նվա-

ճում կատարելու նպատակով չէր, և կայսրը բավականացավ բերդի ամրությունները քանդելով և նրա մեջ պահված հարստությունները գրավելով։ Բերդի և շրջակա գավառների բնակիչներից շատերը, հենց որ իմացան, թե կայսերական զորքերը պիտի հեռանան, խնդրեցին Կոստանդինին, որ իրենց էլ թույլ տա ընտանիքներով և ստացվածքներով տեղափոխվելու քրիստոնյա պետության երկիրը։[108] Բայց այս գաղթականությունն ավելի ևս ծանրացնում էր երկրում մնացողների դրությունը։ Եզիդ ոստիկանը հետևյալ տարին իր զորքն առած՝ գնում է Կարին և մարդահարկ (կոռ) հանելով ամեն կողմից, նորից շինել է տալիս քանդված ամրությունները։[109] Իսկ քաղաքի պահպանությունն ապահովելու համար նա բնակեցնում է այդտեղ արաբներ, պարտավորեցնելով հայերին կերակրել նրանց։

Բայց երկրի դժբախտությունը միայն չափազանց ծանր հարկերը չէին։ Հաճախ նրան կեղեքում էին և հրոսակախմբերը, որոնք արաբական իշխանության կողմից չէին հալածվում։ Եվ նախարարներին էր մնում այս դեպքում ևս իրենց երկրների պաշտպանությունը հանձն առնել։ 754 թվին Պարսկաստանից Վասպուրական խուժեց մի հրոսակախումբ, որ բաղկացած էր հանցավոր տարրերից և որի առաջնորդն էր ոմն Սուլեյման։ Արծրունի իշխաններից երկու եղբայրներ, Սահակ և Համազասպ, իրենց մարդկանցով գնում են այս հրոսակների դեմ, բայց տեսնում են, որ իրենք քչվոր են։ Այնուամենայնիվ, մեծ քաջությամբ հարձակում են գործում և շատերին կոտորում։ Համազասպը, ծանր վերք ստանալով, ձիուց ընկնում է և սպանվում։ Սահակը, տեսնելով իր սիրած եղբոր մահը, թռչում է ձիուց, իջնում և հետիոտն սուրը հանած՝ ընկնում է թշնամիների վրա, եղբոր վրեժը հանելու համար։ Շատերին է նա այդպես կոտորում, բայց վերջապես հաղթվում է և նա ու ընկնում թշնամու սրերի տակ։ Լուրը հասնում է մյուս եղբորը, որի անունն էր Գագիկ։ Սա մեծ սուգով շտապում է կռվի տեղը, բայց տեսնում է թշնամուն հեռացած։ Սակայն հետո նրան հաջողվում է այդ երկու մահերի վրեժը հանել, սպանելով հրոսապետ Սուլեյմանին և կոտորելով նրա մարդկանց։

Ինքը Գագիկ իշխանն էլ շատ ողբալի վախճան ունեցավ։ Հայաստան է գալիս, խալիֆի հանձնարարությամբ, Ծալեհ (Սալեհ) անունով արաբացին, «այր անօրէն և արիւնահեղ, յորմէ բազումք զգուշացեալ անձնապահ լինէին», ասում է Ղևոնդը։ Այս պաշտոնյայի կեղեքումներն այնքան անտանելի էին, որ նախարարներից ոմանք երեսի վրա թողին իրենց ժառանգական կալվածները և փախան Բյուզանդիա, Կոստանդին կայսրի հովանավորությունը որոնելով։ Գագիկը փախուստի տեղ և հնարավորություն չգտավ, ուստի հավաքելով Արծրունի մյուս իշխաններին և նրանց ձիավորներին, ամրացավ Նկան անունով բերդում և, հետևելով ժամանակի ոգուն, ինքն էլ դուրս էր գալիս իր բերդից, արշավանքներ էր գործում, ասպատակություններ անում։ Նրա գործողությունների թատերաբեմն էին Հեր և Զարևանդ գավառները, ուր հայեր էլ էին ապրում։ Նա նույնիսկ ծանր հարկապահանջության ենթարկեց տեղական ազգաբնակչությանը և դրանով անբավականություն հարուցեց իր դեմ նույնիսկ իր ազգակիցների կողմից, որովհետև այն, ինչ իրավունք էր մի մուսլիմ արաբացու համար, ներելի չէր մի քրիստոնյայի։ Այսպես նայեցին եղելության և իրենք արաբները։ Գագիկի դեմ Հեր գավառում դուրս եկավ Ռուհ անունով արաբ զորավարը։ Ընդհարման մեջ Արծրունիները շատ զոհ տվին, և Գագիկն այնուհետև

25—Լեո—Երկերի ժողովածու, հ. II

ստիպված էր փակված մնալ իր Նկանում, որովհետև Ռուհը խիստ հետևում էր նրան։ Ապա Վասպուրական մտավ արաբական մի այլ զորաբաժին, Մուսե զորավարի առաջնորդությամբ, որ պաշարման ենթարկեց Գագիկի բերդը։ Պաշարումը տևեց մի ամբողջ տարի։ Չկարողանալով ուժով վերցնել Նկանի ամրությունները, Մուսեն, ինչպես սովորական բան էր, դիմեց դավադրության, դուրս կանչելով իշխանին բերդից՝ իբր թե խաղաղություն կնքելու համար։ Գագիկը միամտաբար ընկավ Մուսեի ծուղակի մեջ։ Նրան կալանավորեցին և սկսեցին տանջել, պահանջելով դուրս հանել այն բոլոր փողերը, որ նա հավաքել էր ազգաբնակությունից իբրև հարկ։ Ոչ միայն այդ փողերն էր տալիս Արծրունին, այլև իր սեփական գանձը, որպեսզի կարողանա ազատել իր անձը։ Բայց այս էլ չօգնեց, և Գագիկը մեռավ բանտում անտանելի տանջանքներից, ինչպես ասում է պատմագիրը, մի անարդ մարդու պես։ Նրա որդիները, Սահակ և Համազասպ, երկար ժամանակ պահվեցին կապանքների մեջ։

Թե ի՛նչ պատահարներից կարող էին երբեմն քանդվել ամբողջ երկրներ, ցույց է տալիս Եզիդ 110 ոստիկանի մի ձեռնարկությունը։ Կամենալով ապահովել արաբական սահմանները հյուսիսից, նա խազիրների խաքանի մոտ խնամախոսներ ուղարկեց, խնդրելով նրա քրոջ ձեռքը։ Խաքանը համաձայնում է և Եզիդին հարս է ուղարկում իր քրոջը, որի անունն էր Խաթուն։ Դժբախտաբար, նորահարսը շուտով մեռնում է։ Խաքանը, կասկածելով, որ նա բնական մահով չի մեռել, այլ սպանվել է, թշնամական գործողություններ է սկսում, և նրա Ռաժթարխան զորավարը, անցնելով Կովկասյան լեռներից հասավ, գրավում և ավերում է Աղվանից աշխարհը մինչև Կուր գետը և յոթը գավառ՝ Վրաստանում։ Եվ Եզիդը չկարողացավ ոչ մի բան անել այս ահեղ և ավերիչ արշավանքի դեմ։

6. Մեծ ապստամբություն: 754 թվին Աբբասյան նորակերտ գահի վրա նստում էր արդեն ինքը՝ Աբու-Ջաֆարը, որին Հայոց աշխարհը լավ ճանաչում էր դառն փորձով[1]։ Նոր խալիֆն իրեն հատկացնում էր «ալ-Մանսուր» (Հաղթող) տիտղոսը։ Դա իսկապես մի հուժկու և կարող բռնակալ էր, մեկն այն բռնակալներից, որոնց Ասիան դարերից ի վեր առաջ էր քշում մեծ պետություններ ստեղծելու, ազգեր հպատակեցնելու, քաոսի մեջ կարգ մտցնելու համար։ Աբբասյան պետությունը դեռ մայրաքաղաք չուներ, և Մանսուրն էր, որ 762 թվին հիմնեց Բաղդադ քաղաքը Տիգրիսի վրա, այնտեղ, ուր Եփրատը գալիս մոտենում է նրան, կարծես նրա գիրկը նետվել է ուզում, բայց մեկ էլ շուռ է գալիս և հեռանում նրանից։ Մանսուրի միտքն իսկապես մի մեծ կենտրոն ստեղծելը չէր, այլ ավելի շուտ զինվորական մի խոշոր կայան՝ պետությունը և նոր դինաստիան պաշտպանելու համար։ Բայց նոր քաղաքն սկսեց մեծանալ ու հարստանալ առասպելական արագությամբ և շուտով դարձավ մի համաշխարհային քաղաք, որ իր տարածությամբ նմանվում էր Բաբելոնի և Նինվեի պես հսկաներին։

Կար և մի այլ մեծ պետական հարց, որ հանճարեղ լուծում ստացավ Աբու-Ջաֆար Մանսուրի ձեռքով։ Օմայյանները Դամասկոսում բուն արաբ ժողովրդով էին շրջապատված և ըստ ամենայնի հարազատ արաբա-

[1] Աբուլ-Աբբասին և Աբու-Ջաֆարին Ղևոնդ պատմագիրը, բյուզանդական պատմագիրների նման, անվանում է մի անունով — Աբդլա։ Աբու-Ջաֆարին նա անվանում է «մյուս Աբդլա» («История халифов вардапета Гевонда», пер. К. Патканова, СПБ, 1862, стр. 157)։

կան մի միջավայր էին ներկայացնում, հաստատված մնալով բուն ազգային հողի վրա։ Այսպես չէին և չէին կարող լինել Աբբասյանները։ Սրանց պաշտպանողն ու պահպանողն ավելի պարսիկ ժողովուրդն էր և պարսկական ազգայնության իրավունքներն Աբբասյաններն ուրանալ չէին կարող։ Այսպիսով պիտի ստեղծվեր արաբա-պարսկական պետական միջավայր, և Մանսուրը նրան ստեղծեց, պարսկական ազգայնությանը առաջնակարգ և ազդեցիկ դեր տալով իր արքունիքի, հետևաբար, և ամբողջ պետության կառավարման մեջ։ Դրա համար նա ստեղծեց կամ, ավելի ճիշտ, վերակենդանացրեց Արևելքին հատուկ հին պետական բարձրագույն պաշտոնը—վեզիրությունը։ Եվ վեզիրները պարսիկներից էին լինում։

Այս արաբա-պարսկական միջավայրի կառուցումը, սակայն, Մանսուրին տարավ դեպի մի այլ անհրաժեշտության, որ անհունապես կարևորություն էր ստանում ամբողջ Արևմտյան Ասիայի, կարելի է ասել՝ նույնիսկ ամբողջ մարդկության համար։ Այդ պալատական պահնորդ զորքի հարցն էր։ Ոչ արաբները, ոչ պարսիկները չէին կարող հուսալի և տոկուն տարր լինել այսպիսի մի կարևոր գործում, որից կախված էր ամբողջ պետության բախտը։ Եվ Մանսուրն առաջինն էր, որ մտցնում էր վարձկան զինվորությունը հատկապես պալատի պաշտպանության համար։ Բայց ո՞րտեղ որոնել ռազմիկ և կարող տարր այդ դերի համար։ Այս էլ արդեն բավականաչափ հայտնի էր արաբական աշխարհին։ Օմայյանների զորքերը, ինչպես տեսանք, իրենց նվաճումները հասցրին մինչև Միջին Ասիան։ Այստեղ դեռ կիսավայրենի, թափառական կենցաղի մեջ գտնվող թուրք ցեղերն էին այն տարրը, որի համար պատերազմը բնավորության գիծ էր դարձել և որի ամբողջ կյանքը կռիվների ու մրցությունների մեջ էր անցնում։ Ահա այդ տարրից էլ Մանսուրը վերցնում էր իր համար պահապան զինվորներ։ Թուրք զինվորներն Արևմտյան Ասիա բերվում էին մեծ մասամբ իբրև գերիներ։ Դրանցից էլ ընտրվում էին թիկնապահներ թե՛ բարձր պաշտոնատարների և թե՛ նույնիսկ խալիֆի համար։ Գնալով, այս սովորությունն ավելի ու ավելի ընդարձակվեց, մեծ չափեր ստացավ և Միջին Ասիայից ազատ, այսինքն ոչ-գերի թուրքերն էլ իրենց հոժար կամքով, տարված հարստանալու, վայելելու ցանկությամբ, անցնում էին երկար տարածություններ, հասնում էին խալիֆի մայրաքաղաքը և այնտեղ աչքի ընկնող դիրք գրավում իբրև զինվորականներ։ Այս երևույթի մասին մենք մանրամասն կխոսենք իր տեղում, երբ մեր առջև կունենանք ամբողջ ազգերի տեղափոխություններ Միջին Ասիայից։ Այստեղ միայն հիշատակենք, որ արաբները, հատկապես Աբբասյան խալիֆներն էին, որ թուրք ցեղերի առջև ճանապարհ բաց արին Միջին Ասիայից Պարսկաստանի վրայով դեպի Միջերկրական ծովի ավազանը։ Մանսուրի ժամանակներից են իսկապես սկսվում այն շարժումները, որոնք, հետզհետե զարգանալով, աղետալի տակնուվրայությունների զոհ դարձրին ոչ միայն արաբական պետությունը, այլև ամբողջ Արևմտյան Ասիան և իրենց կնիքը դրին նաև համաշխարհային պատմության վրա։

Եվ այսպես, Մանսուրն իբրև պետության գլուխ և դինաստիայի հիմնադիր նույնպիսի մի խոշոր դեմք էր, ինչպես Օմայան նշանավոր խալիֆներից մի քանիսը։ Բայց այս չէր խանգարում, որ նա բնավորությամբ լինի ամենավատ հատկություններով օժտված մի մարդ։ Մեր Ղևոնդ պատմագիրը նկարագրել է միայն նրա անսահման ընչաքաղցությունը,

ագահությունը։ Պատմությանը հայտնի են և այդ լրացնող ու զուգակշռող ուրիշ արատներ էլ։ Նա կատարելապես և անվերապահորեն անխիղճ էր, զզվելի կեղծավոր, որ կարողանում էր սպանություններ կատարել անվերջ շարքերով, բայց ծածկելով այդ բոլորն ամենաջերմեռանդ հոգեսիրության և աստվածասիրության արտաքին ձևի տակ[1]։ Դա, իսկապես, հանճարեղ մի սրիկա էր անսահման իշխանությամբ օժտված։

Ղևոնդ պատմագիրը, ժամանակակից և ականջալուր վկա, ազդու և խորաթափանց գույներ ունի Մանսուրի կեղեքումները111 նկարագրելու համար։ «Յոյժ ծանրացաւ,— ասում է նա,— անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց. քանզի դժոխաձև ագահութիւն անհամբոյր թշնամոյն ոչ շատացաւ ունել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հօտիս և ըմպել զարիւն իբրև զջուր զարհամարհանս նոցա. այլ համօրէն զբոլոր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք»[2]։ Հայ կեղեքվող զիմմիի դժբախտությունն այն էր, որ վերջացավ երկրի ունեցած արծաթի պաշարը։ Բոլորը տարան արաբ հարկահանները և, այնուամենայնիվ, դեռ պահանջում էին վճարել, և տանջում ու կեղեքում էին, առանց նկատի առնելու և այն, որ այլևս մետաղ չկա, և մարդիկ, իրենց վերջին ստացվածքն անգամ տալով, արծաթ չէին գտնում, որ տան հարկահաններին։ Իսկ սրանք իրենց գործն էին կատարում անգթորեն. ենթարկում էին տանջանքների, խստության և անխղճության բոլոր միջոցները գործադրում էին իրենց խալիֆի պաշտած արծաթը դուրս կորզելու համար։ Եվ շատերը չդիմանալով ծեծին ու խոշտանգումներին, փախչում էին իրենց տներից, թաքնվում էին այրերի և կիրճերի մեջ։ Կային նույնիսկ այնպիսիները, որոնք իրենց խեղդում էին ձյան մեջ կամ գետն ընկնելով։ Սնանկության կապանքներով կապկապեցին Հայոց աշխարհը,— ասում է մեր պատմագիրը,— և աղքատացան ամենքը, նախարարներ թե մեծամեծներ։

Եվ պետք է նկատել, որ այս դրությունը մի կամ երկու տարի չէր շարունակվում։ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրը թագավորեց 21 տարի, միշտ գահակից ունենալով իր անսահման ագահությունը[3]։ Հայոց պատրիկ Սահակը և Տրդատ կաթողիկոսը (741—764 թթ.) բողոք բարձրացրին Եզիդ ոստիկանի այս հարստահարությունների դեմ։ Խալիֆը կանչեց Եզիդին իր մոտ և նրա տեղ ոստիկան նշանակեց Բագարին։ Բայց դեռ մի տարի էլ չանցած՝ փոխեց նրան էլ և ուղարկեց մի ուրիշին, որի անունն էր Հասան։ Սա իր հետ ուներ Խորասանի զորքեր և սկսեց նույնիսկ ավելի մեծ խստություններով հարկահանություն կատարել։ Հայ երկրի դժբախտությունն ավելացնում էին և բնական պատահարները—մորեխը, կարկուտը, երաշտը հաջորդում էին իրար։ Եվ այսպիսի դրության մեջ առօրյա դեպքեր էին մարդկանց և մանավանդ ռամիկներին փոկերով ծեծելը,

---

[1] **Мюллер**, «Ист. Ислама», т. II, стр. 142.

[2] Ղևոնդ, գլ. ԸԳ։

[3] Չպետք է չափազանցություն համարել այս գանգատներն ու հուսահատական ճիչերը։ Արաբ հեղինակները տեղեկություն են թողել, թե Մանսուրի մահից հետո երևաց, որ նա մթերել է 900 միլիոն դինար (2700 միլիոն ռուբլի) և 60 միլիոն դիրհեմ (9 միլիոն ռուբլի)։ Ունենալով այսպիսի մի պաշար, նա ասում էր իր ժառանգին, որ եթե պետությունը 10 տարի ոչ մի եկամուտ չունենա, դարձյալ կարող է իր անհրաժեշտ ծախսերն անել **(Патканян,** «Ист. Халифов». стр. 159—160):

փայտի վրա կախելը և այլ տանջանքներ։ Պատմագիրը հիշատակում է և մի նոր բարբարոսական միջոց։ Ձմեռվա անտանելի ցրտերին մերկացնում էին մարկանց, գցում էին լճերի մեջ և պահապաններ էին դնում, որ թույլ չտան նրանց դուրս գալ։ «Եւ այնպէս շարալլուկ կոտանօք կեղէին զկեանս նոցա, զոր պատմել ոչ կարեմք զաղետիցն պատմութիւն», ավելացնում է Ղևոնդը։

Համբերության բաժակը լցվեց։ Եվ Հայաստանի մեջ ծայր է տալիս մի ապստամբական շարժում, որի մանրամասնությունները չափազանց ուսանելի են, քանի որ նրանց մեջ պայծառ արտացոլվում է հայ ազգի ամբողջ ճակատագիրը։ Այդպիսի դրության մեջ Հայաստանը շատ հաճախ է գտնվել մինչև այսօր։ Մարդկային արդարադատությունը միայն արդարացնել կարող է այն ըմբոստացումը, որին հասավ այնքան տանջվող և կեղեքվող մի երկիր։ Բայց մարդկության մեջ կա և սարսափելի հանգամանք—ուժերի փոխհարաբերությունը, որ խեղդում է արդարությունը և խելառության կերպարանք է տալիս այն կռվին, որ հարստահարվող թույլը հերոսաբար հարուցում է հզոր կեղեքիչի դեմ։

Շարժումն սկսվեց 773 թվականին, Մամիկոնյան տանից, ինչպես այս սովորական էր։ Նախարարական երիտասարդությանն էր պատկանում այդ գործը։ Նշանաբանն էր—«լավ է մեռնել, քան այսպես ապրել»։ Հմայակ իշխանի որդի Արտավազդը գնում է Դվին և իրեն մտերիմ ցույց տալով արաբներին, զենքի պաշար է ստանում նրանցից իր գունդը զինելու և կազմ ու պատրաստ պահելու համար։ Բայց հետո, իր խմբի հետ դուրս գալով Դվինից, գնում է Շիրակ գավառը, ուր Կումայրի գյուղում[1], հանդիպելով արաբական հարկահավաքին, սպանում է նրան, խլում է նրա մոտ եղած բոլոր փողերը և ապա, վերցնելով իր ընտանիքը, իր կողմնակից նախարարների հետ անցնում է Վրաստան։ Իսկ նախարարների մյուս մասը, որի մեջ էր և Սմբատ սպարապետ Բագրատունին, կուրացած Աշոտ սպարապետի որդին[2], արաբական իշխանությանը հավատարիմ է մնում, այնպես որ երբ արաբական մի զորաբաժին գնում է Արտավազդին հալածելու, նրան միանում են նաև Սմբատը և ուրիշները։ Արաբները հասնում են Արտավազդին Վրաստանի Սամցխե գավառում, կտրում են կիրճերը, կռվի են բռնվում և նույնիսկ ավարի մի մասը ետ խլում, բայց և այնպես, Արտավազդն իր խմբի հետ կարողանում է անցնել եգերացիների աշխարհը (Մինգրելիա) ու նույնիսկ իշխանության գլուխ է անցնում։

Հասան ոստիկանը, զայրացած այս դեպքի վրա, հրամայում է ավելի անողորմ խստություններով հարկեր ժողովել կամ, ավելի ճիշտ՝ ժողովրդին կեղեքել, քանի որ արծաթ չլինելու պատճառով հարկ ստանալ չէր կարելի։ Այս նոր բռնության հետևանքով նոր դժգոհություն բռնկեց։ Հրահատ իշխանի որդի Մուշեղը, դարձյալ Մամիկոնյան տոհմից, դուրս է գալիս շարունակելու Արտավազդի գործը (774 թ.)։ Եվ նրան հաջողվում է իր անձնական մի գործից ստեղծել մի ընդհանուր շարժում, ընդարձակ մի ապստամբություն։

---

[1] Ամենայն հավանականությամբ այս գյուղն է, որ վերջերում կոչվում էր Գյումրի (Ալեքսանդրապոլ)։

[2] Տես. Մարկվարտ, «Վրական Բագրատունյաց ծագումը», թարգմ. Հ. Հապոզյան («Հանդէս Ամս.», 1912, էջ 335—336)։

Սկիզբն այսպես է լինում։ Մի քանի արաբներ գնում են նրա տունը և արյան հատուցում են պահանջում իրենց սպանված ազգականների համար։ Մուշեղը բոլորին կոտորում է, ինքն իր ընտանիքով և իր հետ միաբանեցրած նախարարներով ամրանում է Արշարունյաց գավառի Արտագերս բերդում։ Այդտեղից, 200 մարդու գլուխ անցած, մտնում է Բագրևանդ գավառը և բռնելով արաբական հարկահան Ապումջուրին, սպանում է նրան և նրա հետ եղած մարդկանց։ Այդպիսով, նա կասեցնում է Հասանի հրամանագրած անողորմ հարկահանությունը։ Այս դեպքը մեծ տպավորություն է թողնում, և բոլոր տանջվածները սկսում են հավաքվել Մուշեղի մոտ։ Բայց արաբներն էլ հուզվում են այդ դեպքից, և ամեն կողմից խմբեր են դուրս գալիս Մամիկոնյանի և նրա ընկերների դեմ։ Ամենից առաջ Կարինի արաբներն են, թվով 200 հոգի, գործողություն սկսում։ Գիշերով Մուշեղը նրանց վրա է հասնում Խարս գյուղում, ուր արաբները պատսպարված էին այգիներում։ Հայերը քանդում են այգիների պարիսպները, որոնք չոր քարերից էին շարված, առանց շաղախի։ Քարերն ահագին դղրդոցով թափվում են, արաբների ձիերը խրտնում են, իրենց հեծյալներից շատերին ոտի տակ են տալիս ու ջարդում։ Հայերի ձեռքը մեծ ավար է ընկնում։ Մուշեղը, ոչնչացնելով թշնամուն, վերադառնում է Արտագերս։

Դվինում Մուշեղի այս նոր հաղթանակը իրարանցում է տարածում։ Հասանն իր ձեռքի տակ եղած զորքը հանձնելով Ապունճիպ անունով զորավարին, ուղարկում է հայ հանդուգն ապստամբների դեմ։ Այդ զորաբաժնի թիվը հասնում էր 4000-ի, և ամենքն էլ ընտիր ձիավորներ էին։ Նրանք արքունական մեծ ճանապարհով գնում են[1] Բագրևանդ գավառի Բաչավան գյուղը։ Այստեղ Մուշեղը վրա է հասնում իր երկու հարյուրով, և ուշադրություն չդարձնելով թշնամու թվի վրա, սաստիկ հարձակում է գործում, շփոթություն գցում արաբների մեջ, կոտորած անում։ Արաբները, չդիմանալով ուժգին գրոհին, փախուստի են մատնվում, և նրանց զորավարն էլ սպանվում է։ Հալածելով թշնամուն մինչև Արուճ գյուղը, Մուշեղը մեծ հաղթանակով վերադառնում է Արտագերս։ Իսկ արաբական գնդերի մնացորդները, հապճեպով իրենց Դվին գցելով, մեծ խուճապ են առաջացնում այդտեղ։ Արաբ կանայք սուգ են բարձրացնում, հող թափելով իրենց գլխին, ճակատ ծեծելով և օձիք պատռելով։ Արաբ ազգաբնակությունը կատարելապես ահաբեկված էր և մեծ քաղաքի փողոցները հուսահատության տեսարաններ էին ներկայացնում։

Ահա այս հաղթությունը և մանավանդ նրա առաջացրած լքումը մեծ ոգևորություն են պատճառում Մուշեղին և նրա կողմնակիցներին։ Նրանք համարում էին արաբական ուժը խորտակված։ Թվում էր, թե մնում է միայն շարունակել ապստամբությունը, և թշնամիներին Հայաստանի սահմաններից դուրս վռնդելը միանգամայն հնարավոր կլիներ։ Այս ուղղությամբ քարոզում էր մի միայնակյաց, որի անունը պատմիչը ավելորդ է համարել պահել, քանի որ հակառակ է նրա մտքին և բացասական է համարում նրա կատարած դերը։ Այս միայնակյացը ոգևորում էր հայերին, ասելով, թե եկել է ժամանակը, երբ պիտի վերականգնվի հայոց թագավորությունը, թե պետք է վրեժ հանել արաբներից, թե չպետք է թուլանալ միայն այն պատ-

[1] Պարսկաստանից Բագրևանդի (Ալաշկերտի) հովտով Կարին և Տրապիզոն տանող մեծ առևտրական ճանապարհը։

ճառով, որ թվով փոքր են հայերը։ «Ձեզանից ամեն մեկը հազար մարդ կհալածի,— ասում էր նա,— ասված է, որ պիտի պատերազմե ձեր պատերազմը»։ Մեր պատմիչը պախարակում է այդ խանդավառ պրոպագանդիստին, ասում է, թե անմիտ էր նրա խորհուրդը, սուտ ու պատիր էին նրա զարգացրած մտքերը, որոնք կրկնվում էին օր-օրի վրա։ Բայց այդպես չէին ամենքը վերաբերվում ապստամբական ժամանակի պատգամախոսին, որին նույնիսկ կանխատեսող գուշակ էին համարում։ Այս բանով պատրված՝ ամենքն ստիպում էին Սմբատ սպարապետին, որ նա էլ միանա ընդհանուր շարժմանը։ Ոգևորությունն այնքան մեծ էր, որ նա էլ, փոխելով իր նախկին ուղղությունը, գնաց միացավ ապստամբներին։ Նրա հետ էր և իր եղբայր Վասակը, որին վիճակված էր դառնալ նախահայր Բագրատունյաց տոհմի մի մեծ և նշանավոր ճյուղի—վրացականի[1]։ «Խաբեբա և մոլեկան» միայնակյացը հաղթեց ամենքին։ Եվ նախարարները, հավաքվելով միասին, ուխտ արին ապրել և մեռնել միասին։ Շարժումը տարածվեց և շինական ժողովրդի մեջ, որ սկսեց լցնել նախարարական գնդերն իբրև զինվոր, թեև անտեղյակ էր պատերազմական գործին։ Այսպիսով, ապստամբական բանակը հասնում էր 5000 հոգու։ Նա գնաց պաշարեց Կարին քաղաքը և ամբողջ ձմեռը կռվում էր նրա մեջ եղած արաբների դեմ, բայց առնել բերդը չկարողացավ։

Հայոց աշխարհում մի հատ մարդ գտնվեց, որը նայում էր դեպքերին սառն հաշվողի տեսակետից և որը ուժերի փոխադարձ հարաբերությունն էր կշռադատում։ Դա դարձյալ Բագրատունի էր, Աշոտ անունով, Սահակի որդին, այն Սահակի, որին, ինչպես տեսանք վերևում, պատրիկ կամ կառավարիչ էր նշանակել Եզիդ ոստիկանը և որը, այս միջոցին, ինչպես երևում է, վախճանված էր։ Աշոտը չմիաբանվեց մյուսների հետ, որովհետև «էր այր խոհական հանճարով», ասում է Ղևոնդը։ Ոչ միայն չմիաբանվեց, այլև խորհուրդ էր տալիս միաբանվածներին ետ կենալ իրենց սկսած գործից, որ վնասակար էր և միանգամայն անհուսալի։ Մենք ունենք և նրա ճառը, որի բովանդակությունն այսպես է ներկայանում։

«Դուք մանկահասակ եք դեռևս և չեք հասել չափահասության, և ես գիտեմ, որ դուք չեք կարող դիմադրել բազմագլուխ վիշապի զորությանը։ Մեծ է նրա ուժը և անթիվ է նրա ձեռքի տակ եղած զորքի բազմությունը, անչափ է զենքի պաշարը նրա զինանոցներում։ Բոլոր այն թագավորությունները, որոնք հակառակեցին նրան, ջարդուփշուր են դարձել, ինչպես բրուտի անոթներ։ Հոռոմների թագավորությունն էլ չհամարձակվեց ձեռք բարձրացնել նրանց վրա և դողում է նրանց առջև և չի համարձակվում գնալ աստծու կամքի դեմ։ Հունաց թագավորի զորության, անձնական քաջության և զորքերի բազմության ու պատրաստության դուք էլ չեք անտեղյակ։ Եվ սակայն նա բոլորովին մտքով անգամ չանցկացրեց խլել Հայոց աշխարհը նրա ձեռքից։ Լևոնի որդի Կոստանդինն է նա, որ մի անգամ, մենամարտելով ահավոր գազանների հետ, մի առյուծ սպանեց ինչպես մի ուլ։ Եթե նա իսկ, այնպիսի ուժ ունենալով, վախենում է չարաթույն գազանից, որ ապականում է երկիրը, դուք ո՞ւմ վրա արդյոք հույս ունեք

[1] Այս Վասակի որդին էր Ատրներսեհը, իսկ սրա որդին էր Աշոտը, որ Վրաստանի արևմըտյան մասի կառավարիչ նշանակվեց խալիֆից և այսպիսով դարձավ վրաց Բագրատունիների նախահայրը (Մարկվարտ, «Հանդ. Ամս.», 1913, էջ 671—672)։

դրած, ի՞նչ ուժ, ի՞նչ զորք կարող եք հակադրել նրանց զորության։ Արդ՝ եթե հաճելի է ձեզ, ընդունեցեք իմ խորհուրդը, որովհետև ես տքնում եմ ձեր օգտի և մեր աշխարհի կարիքների ու անդորրության համար։ Ահա ի՛նչ տեսակ ելք պիտի ունենա ձեր ձեռնարկությունը.— կամ դուք կվերադառնաք և կհպատակվեք նրանց իշխանության և խաղաղ կապրեք մեր աշխարհում, կամ թե փախուստով հարկադրված կլինեք հեռանալ ձեր երկրից ձեր բոլոր ընտանիքների հետ, կլքեք ձեր հայրերի ժառանգությունը—ձեր տները, անտառները, անդաստանները և ձեր նախնիքների գերեզմաններն ու կապրեք օտարության մեջ, հունաց թագավորի իշխանության տակ։ Իսկ եթե ոչ այս կլինի, ոչ այն, դուք անպատճառ կընկնեք ձեր ճնշիչների ձեռքը և դաժան մահով կմեռնեք, որովհետև ես լավ գիտեմ Իսմայելի իշխանի անաստված բարքը. նա չի դադարի, մինչև որ չկատարի իր անձի կամքը»։

Բագրատունիների տոհմը քիչ անգամ չէ քաղաքական տագնապների ժամանակ հանդես եկել այսպիսի զգաստ և շրջահայաց ըմբռնումներով։ Այս կողմից Բագրատունիները Մամիկոնյանների դյուրավառ և հախուռն բնավորության հակադրությունն էին ներկայացնում։ Բայց դավադիր երիտասարդությունը չընդունեց Աշոտ իշխանի այդ խորհուրդը և ուշադրություն անգամ չդարձրեց նրա վրա։ Կասկածի ենթարկվեց նույնիսկ նրա անկեղծությունը։ Ամենքին դյութում էր ոգևորված միայնակյացը, որ շարունակ հրահանգում էր երիտասարդությանը և՛ անվախ լինելու, և՛ գործը ձեռքից չտալու հորդորներով։ Բայց արդեն նկատվում էր հայ ավատական իրականության հատուկ երևույթը։ Դեռ գործի սկզբում նախարարական ուժերի անջատում էր նկատվում։ Արծրունի իշխանները—Համազասպը և իր եղբայրները—Վասպուրականում մնացին իրենց զորքով միասին, Վասակ Բագրատունին, սպարապետի եղբայրը, Ամատունի և Տրունի իշխանները մնացին Կոգովիտ գավառում, Դարյունք բերդում, որ Բագրատունյաց ոստանն էր, Մակուի կիրճում և շրջակայքում։ Դվինի արաբական զորքն, իր սակավության պատճառով, վճռական գործողություններ չսկսեց ապստամբների դեմ, այլ բավականանում էր Արարատյան դաշտն ասպատակելով։ Այսպես վնասվեցին Պողունք, Թալին և Կողբ գյուղերը։

Ձմեռն անցնում է այսպես, իսկ 775 թվի գարնանը արաբական մի ստվար բանակ, բաղկացած Խորասանի ընտիր զորքերից, թվով 30 հազար, Ամր զորավարի հրամանատարությամբ մտնում է Հայաստան։ Մեծ զգուշություններով ու տեսակ-տեսակ պատրաստություններով Ամրն առաջացավ և գրավեց Խլաթ քաղաքը, Վանա լճի արևմտյան ափին։ Այստեղ նա դեռ սկսեց տեղեկություններ հավաքել հայոց ապստամբական ուժերի մասին. թե քանի՛ զինվոր ունեն հայերը, ովքե՛ր են նրանց զորագլուխները, թե արդյոք միաբանությո՞ւն է տիրում այդ զորքերի մեջ, քա՞ջ են զինվորները, զենքի բավական պաշար ունե՞ն, թե ոչ։ Այս տեղեկությունների համեմատ էլ նա կազմակերպում էր իր արշավողական գործողությունները։ Խլաթում էր գտնվում և Աշոտ Բագրատունին։ Նա իր հայրենասիրական պարտքը կատարեց զգուշացնել նախարարներին, ուր և լինեին նրանք, հաղորդելով այն ամենը, ինչ տեղի ուներ արաբական բանակում։ Իր խորհուրդն էր, որ նախարարները միախմբվեն, միասին կռվեն և միասին մեռնեն։ Եվ իրավ, ստեղծված դրության մեջ ուրիշ կերպ գործել, կնշանակեր, որ արաբները գործ ունենան առանձնակի, անջատ գործող զորամասերի հետ և ջարդեն նրանց զատ-զատ։ Բայց այս խորհուրդն էլ չընդունեցին նախարարները։

Աշոտը պարզապես համարվում էր արաբների մարդ և նրա միջամտությունն ապստամբական գործի մեջ ընդունվում էր իբրև դավաճանություն, որ արվում էր հայերին խաբելու և արաբների դրությունն ապահովելու համար։

Սկսվում են անջատ գործողություններ։ Արծրունիներն ու Ամատունիները, միանալով Վասակ Բագրատունու հետ, գնում են Արճեշ ավանի վրա, որ, ինչպես երևում է, կարևոր ռազմական դիրք էր գրավում Վանա լճի հյուսիսային ափին և գրավված էր արաբական մնայուն զորաբաժնով։ Միաժամանակ այս գունդը մնում է Տուրուբերանի գավառում, որպեսզի ստվարացնի իր շարքերը։ Եվ իրավ, բազմաթիվ շինականներ հետևակ զինվոր են գրվում, և բանակը դիմում է Արճեշ՝ նպատակ ունենալով հիմնահատակ քանդել այն և կոտորել արաբական ամբողջ զորաբաժինը։ Բայց Ամրը վաղօրոք տեղեկացել էր այս շարժման մասին և մի ուժեղ զորամաս էր ուղարկել Արճեշի կողմը։ Մի մարդ գնում է Համազասպ Արծրունուն իմաց տալու, թե բազմաթիվ թշնամիներ են եկել և ձեզ են սպասում։ Բայց Արծրունին չի հավատում, այստեղ էլ դավադրություն է տեսնում, մինչև իսկ ծեծում է բանբերին։ Հայերն սկսում են կռվել Արճեշի ամրոցի դեմ։ Այդ միջոցին Ամրի ուղարկած զորամասը, որ դարանամուտ էր եղել, հանկարծ հարձակվում է հայերի վրա, որոնք, անակնկալի գալով, խառնվում են և խուճապի մատնվում։ Սաստիկ կոտորած է լինում, և կոտորվողներն անփորձ և համարյա անզեն գյուղացիներն էին։ Սպանվեցին չորս նախարար, իսկ զորքից կոտորվածների թիվը հասնում էր 1500։ Խուճապն այնքան սաստիկ էր, որ շատերը լիճն ընկան և խեղդվեցին։ Զորքի մնացորդները հալածական փախան մինչև Տայ գյուղը։ Արաբներն աղմկալի ցնծություններով տոնեցին իրենց հաղթությունը։

Կամենալով օգտագործել իրենց այս հաջողության թողած տպավորությունը, արաբները երկար չմնացին անգործ, այլ բռնելով արքունի մեծ ճանապարհը, գնացին Բագրևանդ, գրավեցին Արձնի գյուղը։ Նրանք արշավում էին Կարինն ազատելու, որ, ինչպես տեսանք, պաշարել էին Մուշեղ Մամիկոնյանը և նրա հետ եղած նախարարները։ Պաշարումը հայերի համար բարեհաջող ելքի էր հանգել։ Կարինի բերդապահ զորքը, սովից ստիպված, անձնատուր էր եղել։ Բայց հենց այդ միջոցին հասավ Արճեշի պարտության բոթը, որ և, հուսահատություն պատճառելով պաշարողներին, ստիպեց նրանց դադարեցնել պաշարումը։ Այնուհետև նրանք կարող էին իրենց անձի ազատության մասին մտածել, բռնելով մի որևէ ուղղություն, որ հեռացներ նրանց արաբներից կամ հենց տաներ Բյուզանդիա, ուր ամենքն էլ լավ պաշտպանված կլինեին։ Բայց այս բանը փոքրոգություն համարեցին Մուշեղն ու իր ընկերները և գնացին ուղղակի թշնամու դեմ։ Սա մի հերոսական վճիռ էր, որի վախճանը շատ պարզ էր ամենքին, այն է՝ մահ։ Բայց ոչ ոք կանգ չառավ այդ անխուսափելի վախճանից սարսափած։ Ամենքը լավ համարեցին մեռնել, քան ապրել և տեսնել աշխարհի կորուստը և եկեղեցիների ավերումը։ Անձնազոհության ներշնչած հերոսական վճռականությունը տանում էր այդ փոքրիկ բանակը, բաղկացած 5000-ից ոչ ավելի մարդկանցից, 30 հազարանոց մի ընտիր բանակի հետ չափվելու։ Կարելի էր պախարակել երիտասարդության սկսած այդ ապստամբությունը, համարել գործը և՛ թեթևամտություն, և՛ երազական ոգեվորության արդյունք, բայց չէր կարելի չսքանչանալ այն դյուցազնական վճռականությամբ, որ տանում էր այդ մարդկանց դեպի անհավասար կռիվ,

գաղափարին զոհվելու համար։ Եվ Ղևոնդ պատմագիրը այս տեսարանի առջև փոխում է հակառակորդի, բողոքողի իր դիրքը։ Այնուհետև նա միայն հիացող է, միայն փառաբանող և նրա նկարագրությունը տոգորվում է անկեղծ զգացմունքի ջերմությամբ։ Մենք խոսքը կտանք նրան, վերածելով նրա նկարագրությունն աշխարհաբարի.

«Ուղևորվելով Կարին քաղաքից, նրանք Բասենի գավառով եկան Բագրևանդ գավառը։ Այստեղ նրանք անցան Արածանի գետը և քաջասրտությամբ հարձակվեցին թշնամիների վրա։ Կռվի մեջ մտնելուց առաջ նրանք պատերազմի դաշտից բավական հեռու մի տեղ թողնում էին իրենց ծանրոցներն ու ձիերը. և հետևակ շարքերով, սրտի կատաղությամբ պատրաստվեցին հանդիպել թշնամուն։ Բայց թշնամի զորքն էլ դուրս եկավ նրանց առաջ մեծ պատրաստություններով։ Արևը ծագելուն պես սկսվեց պատերազմը։ Առաջին հարձակումով հայոց գունդը գերակշռություն ձեռք բերեց։ Հայերը թշնամուն փախուստի մատնեցին և նրանցից շատերին կոտորեցին։ Բայց փախչողները, օգնություն ստանալով, կանգ առան ու կատաղությամբ ետ դարձան և սարսափ ազդեցին ռամիկ հետևակներին։ Իշխաններից մի քանիսին նրանք փախուստի մատնեցին նրանց ձիավորների հետ և ռամիկներից շատերին կոտորեցին։

Իսկ քաջահաղթ նահատակները թեև թվով մեծ չէին չարաշուք ոսոխների համեմատությամբ, բայց վախկոտություն ցույց չտվին դառն օրհասի առջև։ Նրանք սեղմեցին իրենց շարքերը և իրար սիրտ էին տալիս ասելով. «Քաջությամբ մեռնենք մեր երկրի և ժողովրդի համար, մեր աչքերը թող չտեսնեն ոտնատակ արված մեր սրբությունները և մեր աստծու փառաբանության տեղերը։ Թող առաջ մեր դեմ՝ ուղղված լինեն թշնամու սրերը, իսկ այնուհետև թող լինի ինչ ուզում են որ լինի։ Զոհվենք մեր ճշմարիտ հավատի համար և ոչ թե երկրային բարիքների համար. մեր մահը ժամանակավոր կլինի, իսկ կյանքը՝ հավիտենական»։ Այսպես խրախուսելով միմյանց, նրանք իրենց աչքերը բարձրացրին դեպի երկինք և աղոթում էին ամենաբարձրյալին, խնդրելով նրա օգնությունը... Գոտևորված վերին օգնությամբ, նրանք ետ չկացան նախորոշած ձեռնարկությունից, թեև հինգ հազար հոգի էին երեսուն հազար թշնամիների դեմ։ Մենք լսեցինք հենց թշնամիներից, որոնք ասում էին, թե «Հայերի հետ մեր դեմ կռվում էին հրեշտակների գնդեր», որոնք մարմնական կերպարանքով երևացին թշնամիներին։ Նրանք հավատացնում էին և այն, թե տեսել են քահանաների, որոնք գնում էին մեր առջևից մոմերով, խնկով և ավետարանով և որոնք խրախուսում էին մեզ։ Այսպիսով հայերն իրենց համար վրեժ էին հանում սարսափելի արյունահեղությամբ, որ կատարեցին թշնամու շարքերի մեջ։ Բայց շուտով նրանց թևերը հոգնեցին զենքի ծանրությունից։ Մյուսները, զրկվելով զենքից, ընկան թշնամիների ձեռքը։ Այսպես հրաժեշտ տվին մեղանչական կյանքին և անցան հանդերձյալը երանելի և քաջ նահատակները, զորքերի առաջնորդները. Բագրատունյաց տոհմից՝ Սմբատ սպարապետը և Սահակը, որ նրա բարձակիցն ու նիզակակիցն էր. Մամիկոնյան տոհմից՝ Մուշեղ զորավարը և Մամիկոնյանների տեր Սամուելը, դեռ երիտասարդ և գեղեցիկ մի տղամարդ, մեծ սպարապետի աները. Գնունյաց տոհմից՝ Դաշնակ Վահանը։ Եվ ուրիշ շատ ընկածներ նախարարներից և ռամիկներից, որոնց ես չեմ կարող անվանապես հիշատակել, թվով 3000։ Նրանց մահը դառն էր և վիճակը ողբալի, որովհետև

հող էլ չգտնվեց թշվառ դիակների թաղման համար. նրանք մնացին դաշտում, զոհ արևին, փոշուն, անձրևին և քամիներին։ Այն ժամանակ Հայաստանում ամեն տեղ բարձրացան ողբ ու հեծեծանքներ. նրա մեծ զորավարները և գլխավոր առաջնորդները ոչնչացել էին մի ակնթարթում, և մեր երկիրը, ընկղմված խորին տխրության մեջ, կոծելով կոծում էր, ողբալով իր քաջ և փառավոր պաշտպանների մահը։ Զրկվելով նրանց օգնությունից, երկիրը թողնվեց գազանաբարո և անգութ թշնամիների կամայականության... Այս դժբախտությունն ավելի ևս սաստկացրեց մեր դժնդակ նեղությունը. արգելված էր նույնիսկ բացարձակ ողբալ մեռածներին, ոչ հոգու հաց կտրել նրանց տներում և ոչ էլ գերեզմանին հանձնել վախճանվածներին»[1]։

Ամրն իր այդ երկրորդ հաղթությունից հետո ասպատակներ փռեց Բագրևանդի զանազան կողմերում և ավերեց շատ տեղեր, այդ պատժողական գործողություններին տալով կրոնական կերպարանք։ Կողոպտվեցին մեծ մասամբ եկեղեցիները, խորտակվեցին շատ խաչեր, իսկ փայտե շինություններն այրվեցին։ Շատ պատժվեցին և քահանաներն ու մենակյաց ճգնավորները, որովհետև նրանք էին եղել ապստամբության առաջնորդները։ Ապա Ամրը, հանելով իր բանակը Հայաստանից, Պարսկաստանի վրայով ուղևորվեց դեպի Բաղդադ։ Նրա հետ էր և Հասանը, հաղթական ոստիկանը, որ ճանապարհին մեռավ։ Արնաքամ Հայաստանին եթե մի մխիթարություն էր մնում, այն էր, որ նա կարծում էր, թե աստվածային վրեժխնդրությունն էր այդ մահվան հեղինակը, որ և այդպիսով հատուցում էր ստանում այնքան անմեղ արյան փոխարեն։

Բագրևանդի ճակատամարտի մի խոշոր հետևանքն էլ այն եղավ, որ նա մահացու հարված դարձավ Մամիկոնյան նախարարության համար, իսկ այս նշանակում էր արմատական փոփոխություն Հայաստանի քաղաքական-կուլտուրական ճակատագրի մեջ։ Մուշեղ Մամիկոնյանը թողել էր չորս աղջիկ և երկու տղա, որոնցից մեկի անունն էր Շապուհ։ Նրանք փախչում են Վասպուրական, բայց Արծրունի իշխաններից մեկը, Մեհրուժան անունով, սպանում է Շապուհին և նրա եղբորը, պատճառ բերելով, թե նրանց հայր Մուշեղն աղետ է բերել իր ապստամբությամբ։ Անպաշտպան մնացած քույրերից մեկն իրեն կնության է տալիս Ջահաբ անունով մի արաբի, որ Կայսիկ112 ցեղից էր, «ի թիկունս առնելով զնա», ինչպես ասում է պատմիչը[2], այսինքն նրա պաշտպանությունը վայելելու համար։ Այդ ամուսնությունից, ինչպես կտեսնենք, ծանրակշիռ հանգամանքներ ծագեցին ապագայում։

Այնուհետև Մամիկոնյանները հազիվ են երևում պատմական ասպարեզի վրա։ Բայց սրանց փոխարեն ավելի ևս ուժեղանում են Բագրատունիները։ Սմբատ սպարապետը թողեց երկու որդի, որոնցից մեկն էր Աշոտ, Մսակեր և Քաջ անվանված, մյուսը՝ Շապուհը։ Դրանց մենք կհանդիպենք կարևոր դերերի մեջ 9-րդ դարի սկզբում։

7. Ժամանակավոր դադար: Նույն 775 թվին, երբ Հայաստանում տեղի էին ունենում վերև նկարագրված դեպքերը, մեռավ և Աբու-Ջաֆար ալ-Մանսուր խալիֆը։ Մեծ և անգութ բռնակալին, որ մեծ պետական գործիչ էր, հա-

[1] Ղևոնդ, եր. 148—152։

[2] Վարդան վարդ. Բարձրբերդցի, «Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, եր. 105.

ջորդեց որդին, Մուհամմեդ էլ-Մահդին (775—785), որ գիտության և գրականության հովանավոր հանդիսացավ։ Ղևոնդը նրան անվանում է Մահմեդ Մահադի և ավելացնում է. «Սա էր ազնվական քան զհայր իւր և լաւագոյն բարուք»¹։ Բայց այս խոսքերն ամենևին չեն նշանակում, թե նոր խալիֆը թեթևացրեց հարկերը կամ պակսեցրեց հարկապահանջության խստությունները։ Այսպիսի բան նա չէր էլ կարող անել։ Իր հոր համեմատությամբ նա հակոտնյա էր, որքան հայրը ժլատ էր և ագահ, այնքան որդին շռայլ էր և առատաձեռն։ Բաղդադը Մահդիի ժամանակից էր, որ սկսեց հարստության, շուքի, ճաշակի նրբության և ամեն վայելքների համաշխարհային կախարդիչ հռչակ ստանալ։ Իսկ այս հեքիաթային շքեղությունն արդեն նշանակում էր, որ հարկատու ազգերի և ստորադրված դասակարգերի մեջքերը պիտի ճարճատեին նրանց վրա դրված հարկային ծանրությունից։ Եվ իրավ, նույն Ղևոնդը, Մահդիին ազնվական անվանողը, շարունակում է, թե նա «զանուր լծոյ հարկին ծանրացոյց»։ Այս միանգամայն հասկանալի է։

Եվ եթե, այնուամենայնիվ, Մահդին առաքինի էր իր հոր համեմատությամբ, այդ բացարձակապես այն պատճառով, որ մարդը գոնե հնարավորություն էր տալիս, որ հպատակները միջոց ունենան իրենց կեղեքելու և այդպիսով հարկեր վճարելու։ Պարզ ասած՝ նա բաց արավ իր հոր գանձարանները, ռոճիկներ բաժանեց զորքերին և առհասարակ պետական ծախսարարության դռները փակ չպահեց։ Եվ շրջանառության մեջ մտավ արծաթ դրամը, որ անհետացել էր։ Ահա ի՛նչն էր բարերարությունը։ Թե ո՛րքան մեծ էր նա, առաքինության աստիճանին հասնելու չափ, այդ կարող էին իմանալ նրանք միայն, որոնք պատրաստ էին ծախել իրենց վերջին շապիկը, հացի վերջին կտորը՝ իրենց հարկը տալու համար, բայց դրամ չինելու պատճառով գնող չկար, իսկ բարեբարոսությունը տանջում էր իրեն հայտնի բոլոր միջոցներով, իմանալով միայն մարդկային մի խոսք— «տո՛ւր»։ Բացի պետական գանձարանից՝ դրամական ճգնաժամի վերացմանը նպաստեց և այն հանգամանքը, որ Հայաստանում էլ գտնվեցին և սկսեցին շահագործվել արծաթի հանքեր։

Կյանքը մտնում էր իր բնական պայմանների մեջ։ Բայց չմոռանանք, որ դրանք արաբական իսլամի կանոնադրած պայմաններն էին, այն էլ Աբբասյան խալիֆների տիրապետության տակ։ Օմայյանների համեմատությամբ Աբբասյաններն ավելի անգութ բռնակալներ էին, քանի որ հենվում էին պարսկական տարրի վրա և պարսկական բռնապետության ավանդություններն էին թագավորում նրանց արքունիքում։ Եվ որովհետև անսահման բռնակալությանը գույն և բովանդակություն տվողն անձնական ռեժիմն է, ուստի չի կարելի ասել, թե Մահդիի ստեղծած փոքր ի շատե տանելի իրականությունը կարող էր և պետք է երկարատև լիներ։ Յուրաքանչյուր տիրող իր քմահաճույքն ուներ թելադրելու, իր կամայականությունները օրենք դարձնելու։ Եվ այդ պատճառով դրությունը Հայաստանում, ինչպես և, իհարկե, իսլամական կայսրության բոլոր կողմերում, փոխվում էր՝ կամ ստանալով Մանսուրի ժամանակի կերպարանքը, կամ մտնելով այնպիսի ընթացքի մեջ, երբ Մահդիի մեղմությունն անգամ արդեն բարերարություն էր ժողովրդի համար։

¹ Գլ. Լե։

Այսպես պետք է ներկայացնել Հայաստանի կյանքը Մահդիի և նրա ժառանգների ժամանակ։ Ընդհանրապես ծանր էին այդ կյանքի պայմանները։ Երկիրը չէր գտնում ապահովություն, վստահության երաշխիքներ և մանդաղ, բայց անընդհատ, մանր մասնիկներով ցրվում էր։ Ծանր էր մանավանդ նախարարության վիճակը, որ մի ավատական երկրի ֆիզիկական և մտավոր կարողությունն էր ներկայացնում։ Այդ դասակարգը կամ մատնվում էր ոչնչացման, կամ հեռանում էր հայրենի երկրից, իսկ նրանք, որոնք մնում էին տանը, դատապարտված էին լռության և անգործության, իրենց գոյությունը խստասիրտ տիրողների համար շատ նկատելի չդարձնելու նկատառումով։ Ուստի և հայ կյանքում այլևս շատ չեն տեսական այնպիսի երևույթներ, որոնք նրա առողջ ինքնուրույնության և ներքին ուժի հայտարարներն են։ Ընդհանուր հոսանքներ հաջորդական զարգացման ուղիներով գրեթե չկան և միայն առանձին դեպքեր, հատ-հատ, առանց իրարից կախում ունենալու, երևում են ընդհանուր մակերևույթի վրա։ Այս դրությունը շատ լավ ըմբռնել է 10-րդ դարում ապրած Հովհաննես կաթողիկոսը, որ և գրում է. «Եւ վասն զի սպառ-սպուռ Հագարացիքն տիրեցին, և մնակլան զՀայաստանեայսս, և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և մնացեալքն զօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա, սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեցաւ ի պատմութենէ աստի զրոյցք իշխանացն մերոց»¹։

Բայց այս մռայլ իրականությունը միանգամայն անհուսատու չէր։ Աբբասյան բռնապետությունը հանում էր իր դեմ ազատարար շարժումներ, որոնք բռնկում էին ահագին կայսրության զանազան կողմերում (Իրան, Սիրիա, Եգիպտոս)։ Ապստամբություններ հարուցում էին և՛ զանազան կրոնական աղանդները, և՛ քաղաքական կուսակցությունները։ Իսկ Աբբասյանները գնալով թուլանում էին։ Նրանց խալիֆության անկումն սկսվում է հենց Մահդիի ժամանակից։ Օմայյանները զուտ ազգային արաբական պետություն էին ներկայացնում, մինչդեռ Աբբասյանների քաղաքականությունն էր իսլամի իշխանությունը բոլոր իսլամ ազգերի սեփականություն դարձնել։ Այս միջազգայնությունն արաբներին խորթ «աջամական», այսինքն ոչ-արաբական հիմքն էր մտցնում պետական գաղափարի մեջ, և արաբներն իրենց խալիֆներին շատ էլ չէին համակրում, այնպես որ Աբբասյաններն ավելի պարսկական հարստություն էին, քան արաբական։ Բայց պարսիկներն էլ չէին շատ հավատ ընծայում Բաղդադի ամիրապետներին, այնքան շատ, որ նրանց պատճառով մոռանային իրենց ազգային իդեալները։ Աբբասյանները, այնուամենայնիվ, հեռու էին պահում իրենց պարսկական շիա աղանդից, որ, ինչպես գիտենք, ամփոփում էր իր մեջ պարսկական անցյալի մշակած ամբողջ ազգայնական քաղաքականությունը։ Այս հանգամանքներից էր ահա պետական թուլություն առաջանում Աբբասյանների համար, որոնք, իրենց հավասարակշռությունը չկորցնելու համար, առաջ էին քաշում մի երրորդ ննցուկ—վարձկան զորքը, որի գլխավոր զանգվածը բաղկացած էր թուրք ցեղից։ Սակայն այս միջին-ասիական տարրը չէր կարող Բաղդադի խալիֆներին ազատել վերջնական անկումից, այլ միայն երկարաձգեց նրանց թույլ գոյությունը, մինչև որ հենց ինքն էլ իր ձեռքով կխեղդեր նրանց իշխանությունը։ Այս թույլ դրության մեջ

¹ Եր. 142։

Աբբասյանները, հասկանալի է, չէին կարող խիստ կենտրոնացման սիստեմը պահպանել։ Եվ առաջանում է ապակենտրոնացման դրությունը, որ և ստեղծում է մի շարք գավառական ինքնավարություններ։

Ահա խալիֆաթի այս ընդհանուր պայմանները վերջիվերջո Հայաստանն էլ պիտի մտցնեին պետական հեղաշրջումների շրջանակի մեջ և նրան ետ տային ազգային լայն ինքնավարություն։ Բայց մինչև այս ժամանակը դեռ կես դար և ավելի կա, և այս ժամանակամիջոցը մեր պատմական հիշատակարանների մեջ շեշտված է բավական թույլ կերպով։ Հիշատակվում են գրեթե միայն ոստիկանների փոփոխությունները և այն տարիները, երբ արաբական հարկահանությունն աղետալի կերպարանք էր ընդունում։

Հասան ոստիկանի տեղ Հայաստան ուղարկվեց դարձյալ Եզիդը։ Նրան հաջորդեցին Օթմանը կամ Օսմանը, Ռոհը։ Սրանք ընդհանրապես դիմագուրկ վարչապետներ են Հայաստանում, առանձին դաժան հուշակ չեն թողել, որովհետև Մահդիի մեղմ քաղաքականության գործադրողներ պիտի հանդիսանային։ Բայց ահա մեռնում է Մահդին, և նրան հաջորդում է, հակառակ հոր կամքին, որդին, Մուսա էլ-Հադին, «այր ժանտ և ապերասան և այսակեր», ինչպես ներկայացնում է նրան Ղևոնդը։ Եվ իսկույն այդ «ժանտությունը» արձագանք է տալիս կայսրության այս կամ այն մասում։ Իր պես ժանտ էր և Խազմ (երևի՝ Քազըմ) ոստիկանը, որին նա ուղարկում է Հայաստան։ Դվինում Խազմին պատշաճավոր ընդունելություն են ցույց տալիս և հայոց նախարարները, որոնց մեջ են և Արծրունի երեք եղբայրներ—Համազասպ, Սահակ և Մեհրուժան։ Սրանց իսկույն ձերբակալել է տալիս ոստիկանը, հայտնի չէ, թե ի՛նչ պատճառով։ Ղևոնդը պատճառը համարում է այդ իշխանների գեղեցիկ տեսքը, փառավոր դիրքը և մանավանդ նրանց գնդի բարեզարդությունը։ Երբ այսքանն է միայն նրանց «հանցանքը», այդ ժամանակ մենք պիտի ընդունենք այդ բռնությունն իբրև մի միջոց, որով ոստիկանն ուզում էր տիրանալ Արծրունիների հարստության, մի հանգամանք, որ ասիական բռնակալությունը նվիրագործել էր շատ հնուց։ Այս նպատակով էր, երևի, որ ոստիկանը երեք եղբայրների վրա ամբաստանություններ բարդեց, որոնց հիման վրա խալիֆը նրանց մահվան դատապարտեց։ Բանտի մեջ Արծրունիներին, ըստ իսլամական սովորության, առաջարկվեց ընդունել Մուհամմեդի կրոնը։ Համաձայնություն տվեց միայն Մեհրուժանը[1], իսկ Համազասպն ու Սահակը ենթարկվեցին տանջալի մահվան և եկեղեցուց ընդունվեցին իբրև նահատակներ քրիստոնեական կրոնի համար (785)։

Մուսա էլ-Հադին, հազիվ 14 ամիս թագավորելով, սպանվեց, որպեսզի իր տեղը տա եղբորը, Հարուն-էլ-Ռաշիդին։ Այս այն Հարուն-էլ-Ռաշիդն է (786—809), որ այնքան հռչակված է արաբական «Հազար և մեկ գիշերներ» հեքիաթների մեջ իբրև պերճության, շնորհքի, արդարադատության մարմնացում։ Պատմությունը, սակայն, հաստատապես կարող է ասել, որ այդ փառաբանությունները հեքիաթային չափազանցություններ են և իրականում Հարունի նշանակությունը սահմանափակ էր։ Մեր Ղևոնդ պատմագիրն էլ ճանաչում է նրան պարզապես իբրև «ագահ և արծաթասեր»։ Բայց ինչ էլ լիներ հռչակավոր խալիֆը, Հայաստանը երկար ժամանակ նրան

[1] Այս այն Մեհրուժանն է, որ Բագրևանդի մեծ ճակատամարտից հետո սպանեց Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներին, որոնք ապաստանել էին նրա մոտ։

անմիջապես ճանաչելու, նրանով կառավարվելու առիթ չունեցավ, և նրա ժամանակ մի տասնամյակ ապրեց, որ լիքն էր դժնդակ հարստահարություններով։ Բանն այն էր, որ նա ուներ Ովբեդլա (Ուբեյդուլլահ) անունով մի եղբայր, որ գահի կռիվ սկսեց նրա դեմ, պահանջելով իր բաժինը կառավարության մեջ, և Հարունը այդ թեկնածուից ազատվելու համար տվեց նրան Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքը։ Ովբեդլան Աբբասյան տոհմի վատություններով համակված մարդ էր և իր բարքին համապատասխանող ոստիկաններ և կառավարիչներ մտցրեց իրեն բաժին ընկած երկրները։ Այսպես էին Եզիդ իբն-Մեզիդը, որ արաբական ընդունակ զորավարներից մեկն էր, հետո և Աբդելկեբիրը։ Սրան մեր պատմագիրն այսպես է բնորոշում. «Ոչ բարի ինչ գործեաց և ոչ չար, այլ պկարծիս լաւ իմն ցուցանէր»[1]։ Ուրիշ բան էր նրան հաջորդած Սուլեյմանը։ Ինքը Ովբեդլան է տանում նրան Պարտավ՝ իշխանության մեջ հաստատելու համար։ Եվ այնուհետև Ովբեդլայի իշխանության ենթարկված երկրներում հաստատվում է նույն և ավելի դժնդակ հարկահանական ահաբեկում, որ գոյություն ուներ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրի ժամանակ։ Սուլեյմանը «քան զամենեսին ժանտ և չարագործող», և քրիստոնյա ժողովուրդը, ասում է Ղևոնդը, նրան է հանձնվում, ինչպես ոչխարը գայլին։ Մի փեսա ուներ Սուլեյմանը, հավատուրաց մի հոռոմ, Իբնդոկե անունով, վատահոգի մի կեղեքիչ, որին և հանձնում է հարկերի հավաքումը։ Եվ երբ նրա ձեռքից ժողովրդի տառապանքները շատ են անտանելի դառնում, Դվինի մեջ հավաքվում են նախարարները, ժամանակի կաթողիկոս Եսային (775—788 թթ.) և հոգևորականներ ու ռամիկներ, որոնք, դիմելով ոստիկանին, աղաչում են նրան թեթևացնել հարկային լուծը։ Բայց այս աղաչանքն ավելի վատթարացնում է հարկատուների դրությունը։ Ցույց տալու համար, թե ինչպես կարելի է արհամարհել մի ժողովրդի հրապարակային աղաչանքները, Սուլեյմանը մարդ է ուղարկում Իբնդոկեին և հրամայում, որ հարկերը կրկնապատիկ ստանա, այն էլ ամենակարճ միջոցում, վայրկենապես։ Եվ նրա կամքը, իհարկե, կատարվեց։ Բացի դրանից՝ նա հարկատվական կապարյա կնիքներ կախել տվեց բոլոր բնակիչների պարանոցներից և այս էլ դարձրեց փողեր կորզելու և հարստահարություններ կատարելու միջոց։

Եվ նորից դժբախտ ազգաբնակության մեջ ստրկական շարժումն էր ծայր տալիս—թաքնվել, հեռանալ՝ անտանելի կեղեքումներից ազատվելու համար։ Ահագին մի բազմություն, 12 հազար հոգուց բաղկացած, ինչպես լսել է պատմիչը, վեր է կենում և գնում հունաց կողմը։ Այս մեծ գաղթականության գլուխ են կանգնած Շապուհ Ամատունին և նրա որդի Համամը։ Բայց Սուլեյմանն էլ քնած չէր, զորքով ընկնում է փախչող հպատակների հետևից, հասնում է նրանց Վրաստանի սահմանների վրա, Կող գավառում։ Բայց այդտեղ գաղթականներն ընկնում են արաբների վրա, շատերին կոտորում են, մնացածներին փախցնում, իսկ իրենք անցնում են Տայոց աշխարհը։ Կայսրի հրամանով նրանց լավ ընդունում են և բնակության տեղ են տալիս մի արգավանդ երկրում, ուր և բնակություն են հաստատում նրանք, բայց տնտեսապես քայքայված, կարոտալի վիճակի մեջ էին գտնվում։ «Անձնատուրք եղեն,— գրում է Ղևոնդը,— ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորք և ջրաբերք ըստ նմանութեան Գաբաւոնացւոց»[2]։

[1] Եր. 166։

[2] Եր. 169։

Բայց այսքանով չէին սահմանափակվում Ովբեդլայի իշխանության
ժամանակամիջոցի (788—789 թթ.) հարստահարությունները։ Նրանք ան-
ցան մինչև իսկ այն սահմանները, որոնք գոյություն ունեին իսլամի տի-
րապետության սկզբից։ Մինչև այդ, հարկերից ու կեղեքումներից ազատ
ված մնացել եկեղեցիները։ Իբնդոկեն ձեռք բարձրացրեց և նրանց հարստու-
թյունների վրա։ Նախօրոք սահմանվեց եկեղեցական բոլոր գույքերի մի
մանրամասն ցուցակագրություն, որ կատարվեց նույնիսկ եկեղեցական-
ների ձեռքով։ Սակայն երբ ցուցակները պատրաստ էին և արաբ ոստի-
կանին հայտնի դարձավ, թե ի՛նչ ունեն հայոց եկեղեցիները, նա չկարո-
ղացավ միանգամից բոլոր հարստությունները հափշտակել։ Իբնդոկեն բա-
վական համարեց առժամանակ միայն ամենաընտիր և ամենաթանկագին
անոթներն ու զարդերը յուրացնել։ Եվ Ստեփանոս կաթողիկոսն էր (788—
790 թթ.), որ մեծամեծ գումարներ ծախսելով՝ կարողացավ ազատել հա-
փշտակված գույքերը և վճարել այդ նպատակով արված պարտքերը։

Այս առթիվ պետք է նկատել, որ Դվինը, լինելով Հայաստանի վար-
չական գլխավոր կենտրոնը, շարունակում էր մնալ և հայոց եկեղեցական
իշխանության մայրաքաղաք։ Սակայն արաբական ռեժիմը, ինչպես երևում
է, այնքան արդեն ծանրապես ճնշող էր կաթողիկոսական աթոռի համար,
որ փորձեր են նկատվում հոգևոր բարձրագույն իշխանությունը հայոց
մայրաքաղաքից դուրս տանելու համար։ Այսպես, Դավիթ Ա կաթողիկոսը
(728—741 թթ.), որ Դվինի հարևան Կոտայք գավառի Արամոն գյուղից
էր, չուզեց մնալ Դվինում և եկեղեցի ու կաթողիկոսարան շինելով իր հայ-
րենի գյուղում, այնտեղ էլ ապրեց մինչև իր մահը։ Թե ո՛րքան անհանդուր-
ժելի էին դառնում արաբական կամայականությունները Դվինում, ցույց է
տալիս Հովսեփ կաթողիկոսի (795—806 թթ.) օրինակը։ Սրա ժամանակ Հայաս-
տանի ոստիկանն էր Խուզիման, որին դուր են գալիս Դվինի կաթողիկո-
սարանին պատկանող երեք գեղեցիկ և արդյունավետ կալվածներ—Արտա-
շատ, Կավակերտ և Հոռոմոց Մարգ և վճռում է տիրանալ դրանց ուժեղի իրա-
վունքով։ Հովսեփը դիմադրում է, իսկ ոստիկանը դրան պատասխանում է
բռնությամբ, բանտարկում է նրան, շղթայով կապում և նույնիսկ ծեծում։
Բացի դրանից, Հովսեփին ահաբեկելու համար սպանում են նրա եղբորը
Մեծամոր գետի ակունքները կազմող լճակի ափին։ Արի կաթողիկոսը մնում
է անդրդվելի և ազատվելով բանտից, մինչև իսկ խալիֆին է բողոք ուղար-
կում։ Վերջիվերջո նրան հաջողվեց ետ ստանալ Կավակերտն ու Հոռոմոց
Մարգը, իսկ Արտաշատը կորցվեց ընդմիշտ[1]։

8. Բյուզանդական Հայություն։ Արաբական տիրապետությունը փոքրա-
ցրեց Բյուզանդական Հայաստանի տարածությունը, խլելով նրանից ամ-
բողջ գավառներ (օրինակ՝ Կարինը)։ Սակայն այս փոքրացումով չէր նվա-
զում այն ռազմագիտական առաջնակարգ դերը, որ բնությունը հատկացրել
է Հայկական Բարձրավանդակի այն մասերին, որոնք դեռ մնում էին
հռոմների տիրապետության տակ։ Այս կարևորությունը ընդգծվում էր
նրանով, որ Բյուզանդական Հայաստանը կազմում էր մեկը խոշորագույն
զինվորական շրջաններից, որոնք կազմակերպվեցին Հուստինիանոս Ա-ի
ժամանակներից և հետո մի շարք կայսրների առանձին հոգացողությամբ՝ պե-
տության դիրքն ամրապնդելու և նրա ինքնապաշտպանությունը նպատա-

[1] Ցովհաննէս կաթ., էջ. 142—143։

կահարմար և տոկուն սիստեմի վերածելու համար։ Այդ զինվորական շրջան-
ները անվանվում էին թեմեր։ «Հայկական թեմ» («Արմենիակոն») անվան
տակ միացված էին Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Պոնտոս և Գոմիրք նա-
հանգները, ինչպես և Չորրորդ Հայքի այն մասերը, որոնք արաբների ձեռ-
քում չէին գտնվում[1]։ Վերջնականապես Հայկական թեմը կազմակերպվեց 7-րդ
դարում։113 Այդ թեմի կարևորությունը իր գրաված դիրքի մեջ էր։ Սահմա-
նապահ մի թեմ էր այդ։ Եվ այս սահմանապահ զորքի մեծագույն մասը բաղ-
կացած էր հայերից։

Ահա այս հայկական բանակն էլ 8-րդ դարում Բյուզանդիայի պատ-
մության մեջ կատարում է նշանավոր դեր։ Հայ ազգաբնակությունը Հայաս-
տանի երկու մասերում էլ դեռ գերազանցորեն ռազմական տարր է և նրան
օգտագործել ձգտում են արաբական և բյուզանդական կառավարություն-
ները։ Հայկական թեմն էլ հենց այն մարզարանն էր, ուր զինվորական
ծառայության ձգտող բոլոր անհատները գտնում էին պատրաստվելու և կրթ-
վելու հնարավորություն։ Եվ անշուշտ, դեպի այդ մարզարանն իրենց
քայլերն ուղղում էին ոչ միայն Բյուզանդական Հայաստանի հայերը, այլև
այնպիսիները, որոնք չկարողանալով տանել արաբական ռեժիմի ծանրու-
թյունը (ինչպես մի ժամանակ այս տեղի ուներ պարսկական ռեժիմի վե-
րաբերմամբ), անցնում էին բյուզանդական սահմանը, տարված հենց այն
հանգամանքից, որ կայսրության զինվորական ասպարեզում կարելի էր
մեծամեծ հաջողությունների հասնել։ Մյուս կողմից՝ նույն հայկական բա-
նակն էր գլխավորապես, որ հնարավորություն էր տալիս իր վրա հենվելու
բոլոր այն ընդունակ մարդկանց, որոնք կարող էին իրենց համար փայլուն
ասպարեզ ստեղծել։ Մենք արդեն տեսանք, թե 6-րդ դարում և գլխավորա-
պես Հուստինիանոս Ա-ի ժամանակ բյուզանդական բանակը ո՛րքան նշանա-
վոր հայազգի զորավարներ ուներ։ Հետևյալ երկու դարերն էլ միևնույն
իրականությունն են ցույց տալիս։ Բյուզանդական պաշտոնեության մեջ
տաղանդ և ընդունակություն մտցնում էին գլխավորապես հայերը և վրա-
ցիները[2]։ Առավելապես հայ նախարարներն ու ազատներն էին մեծամեծ
հաջողությունների տիրանում։

Ութերորդ դարի երկրորդ տասնամյակի սկզբում, շատ կարճ ժամանակով
(711—713 թթ.), բյուզանդական գահի վրա տեսնում ենք Վարդան անու-
նով մի հայի, որ կոչվում էր և Փիլիպպիկ կամ, ավելի կարճ, ըստ հայկա-
կան աղբյուրների, Փիլիկ։ Հայտնի չէ, թե նա ի՛նչ տոհմից էր, բայց ծնվել
էր Զմյուռնիայի մոտ՝ Պերգամոն քաղաքում, ուր 6-րդ դարից գոյություն
ուներ հայ գաղթականություն։ Բյուզանդական աղբյուրները մի քանի հե-
տաքրքրական տեղեկություններ են տալիս նրա մասին։ Պատրիկի որդի
էր նա, գեղեցիկ արտաքինով, լավ կրթություն ստացած, հմուտ աստվածա-
բանական գիտության, բայց վարք ու բարքով փուչ, այն է՝ վայելքների
գերի, կնամոլ ու զեղխ։ Վաղուց նրա տենչանքն էր դառնալ կայսր, իսկ
Բյուզանդիայում, ինչպես գիտենք, ամեն մեկը կարող էր այսպիսի փառա-
սիրական մտածումներ սնուցել իր մեջ։ Վարդանը երազ է տեսնում, որ մի
արծիվ թռավ կանգնեց իր գլխին։ Այդ արդեն կայսր դառնալու նշան էր և

[1] Պրոֆ. Հ. Գելցեր, «Սկզբնաւորութիւնք բյուզանդական բանակաթեմերու դրութեան», թարգմ. Հ. Գ. Գարանֆիլյան, Վիեննա, 1903, էջ. 14։

[2] Գելցեր, անդ, էջ. 12։

այսպես էլ բացատրում է նրա երազը մի վանական։ Նա անզգուշություն է ունենում պատմելու այդ բոլորն իր մի բարեկամին, որ նրան մատնում է։ Նա աքսորվում է, բայց հետո ազատվում։ Երազն իրագործվում է 711 թվականին, երբ մեզ ծանոթ գազանաբարո Հուստինիանոս Բ-ն գահընկեց եղավ զորքի ձեռքով։ Նրա տեղ կայսր հռչակվեց Վարդան Փիլիկը։ Բայց դա մի անընդունակ կայսր էր։ Իբրև բյուզանդական կրթության տեր մի մարդ, նա ամենից առաջ, հետևելով մյուս կայսրներին, խրվեց դավանաբանական վեճերի մեջ, Քրիստոսի բնության մասին էր դատողություններ անում, բայց միևնույն ժամանակ շվայտության էր անձնատուր, կուսանոցների մեջ գեղեցկատեսիլ կույսեր էր որոնում՝ իր հաճույքներին ծառայեցնելու համար։ Այդ անառակություններն էլ ձանձրացրին պոլսեցիներին։ Կազմակերպվեց այնքան սովորական դավադրություններից մեկը, և մի գիշեր, երբ կայսրը քնած էր կերուխումից հոգնած, հենց այդպես էլ, անկողնում, նրան ձերբակալեցին տարան և բյուզանդական բարբարոս սովորությամբ աչքերը փորեցին։ Դավադրության գլխավորը մյուս օրը իրեն կայսր հռչակեց։ Իբրև հայ՝ Փիլիկն իր ազգին ոչ միայն լավություն չի արել, այլև նույնիսկ վնասել է։ Փոքր Հայքն արաբական հարձակումներից պաշտպանելու համար նա հայեր գաղթեցրեց Մեծ Հայքից և բնակեցրեց նրանց Մելիտինեում114 և ուրիշ տեղեր[1]։

Մի երեսուն տարի անցած՝ մի ուրիշ հայ բարձրանում էր նույն գահը, բայց ավելի կարճ ժամանակով։ Լևոն Իսավրացի կայսրը (717—741 թթ.) և նրա որդի Կոստանդին Կոպրոնիմոսը (741—775 թթ.) եկեղեցական մեծ խռովություններ հարուցին, պատկերամարտների (եկեղեցական պատկերները մերժողների) կողմնակից հանդիսանալով և հալածելով պատկերներ պաշտողներին։115 Իսավրացու Աննա աղջկա հետ ամուսնացած էր Արտավազդ անունով մի հայ նախարար, որ կարծվում է, թե Մամիկոնյան տոհմից էր։ Նա շատ ծառայություններ էր մատուցել Լևոն կայսրին և կյուրապաղատի աստիճանին էր արժանացել, միևնույն ժամանակ Ոպսիկիայի[2] կառավարիչն էր։ Կոստանդին Կոպրոնիմոսը, թագավորելու սկզբից, կասկածով էր վերաբերվում Արտավազդին, որովհետև նա պատկերներ հարգողների կուսակցության էր պատկանում և այդ պատճառով էլ զորքերը, ազնվականությունը հարգանքով էին վերաբերվում նրան։ Կոպրոնիմոսը, իրեն իր փեսայի կողմից ապահովելու համար, մի անգամ, երբ անցնում էր Արտավազդի կառավարությանը հանձնված երկրի սահմաններով դեպի Փոքր Ասիա՝ արաբների հարձակման առաջն առնելու համար, մարդ ուղարկեց Արտավազդի մոտ և խնդրեց, որ նա իր երկու որդիներին ուղարկի արքունիք իր, Կոստանդինի մոտ մնալու համար, որովհետև ինքը շատ է սիրում իր քեռորդիներին և կամենում է նրանց ունենալ իր աչքի առջև։ Արտավազդը հասկացավ, որ կայսրն ուզում է պատանդ վերցնել իր երկու որդիներին, ուստի մերժեց նրա առաջարկությունը և հավաքելով իր զորքը, զինվորական խորհուրդ կազմեց և նրա հավանությամբ արշավանք սկսեց Կոպրոնիմոսի դեմ։ Կայսրը վստահություն չունեցավ Արտավազդի դեմ գնալու և երբ լուր ստացավ, թե իր մոտիկ իշխաններից մեկն սպանվել է ճանապարհին Արտավազդի ձեռքով, փախավ և ապաստան գտավ մի հեռա-

[1] Le Beau, „Hist. du Bas-Empire“, t. VI, p. 322.

[2] Չամչեան, Հ. Բ, եր. 404։

վոր ամրության մեջ։ Այն ժամանակ Արտավազդի զորքը նրան կայսր հռչակեց (742 թ.)։ Պետք էր այնուհետև մայրաքաղաքի բնակչությունը պատրաստել։

Այստեղ էլ Արտավազդը մեծ հաջողություն ունեցավ, քանի որ նրա կողմն անցավ պատրիկ Թեոփանես Մոնդեսը, որին կայսրը հանձնել էր քաղաքի կառավարությունը։ Բայց առանց խաբեության անկարելի եղավ մայրաքաղաքին ճանաչել տալ նոր կայսրին։ Թեոփանեսը հավաքեց ժողովուրդը ս. Սոֆիա եկեղեցու մեջ և հայտնեց, թե Կոստանդին Կոպրոնիմոսն սպանված է և թե Արտավազդը կայսր է ընտրված Փոքր Ասիայի ազգաբնակության ձայնտվությամբ։ Հարկավոր եղավ նաև գրգռել ամբոխի կրոնական զգացմունքը, և Անաստաս պատրիարքը, խաչը ձեռքին, բարձրանում է ամբիոն և ասում. «Քրիստոնյանե՛ր, լսեցեք որպեսզի իմանաք, թե ինչ տեսակ կայսր կորցրիք դուք։ Ահա ինչ եմ ես լսել Կոպրոնիմոսի բերանից և սրան ես վկա եմ կանչում այն, որ դուք տեսնում եք կցված այս խաչին։ Զգուշացեք հավատալուց,— ասում էր նա ինձ,— որ Մարիամի որդին, որին Քրիստոս են անվանում, Աստծու որդի է. նա էլ ինձ նման զուտ մարդ էր. ոչ մի տարբերություն չկա նրա ծննդյան և իմի միջև, իմ մայրն էլ Մարիամ էր կոչվում»[1]։ Ամբոխի աստծուն ուղղված այս հայհոյանքն իր պատշաճավոր ազդեցությունն արավ։ Արտավազդն իսկույն կայսր ընդունվեց և մայրաքաղաքի կողմից։ Սակայն Կոպրոնիմոսն էլ կարողացավ զորք հավաքել և շուտով պատերազմ բորբոքվեց երկու կայսրների միջև, զարմանք գրգռելով մայրաքաղաքում, ուր հավատացել էին, թե Կոպրոնիմոսն սպանված է։ Արտավազդի բանակը, բաղկացած հայ և հույն զորքերից, կռվում էր կայսրի բանակի դեմ, որ հավաքված էր արևելյան գավառներից։ Նա պարտություն կրեց, այնպես որ Կոպրոնիմոսը կարողացավ նույնիսկ պաշարել Կ. Պոլիսը։ Մայրաքաղաքի մեջ սով սկսվեց, որ և վճռեց Արտավազդի ճակատագիրը։ Որևէ պարեն նա չկարողացավ մտցնել քաղաքը, որովհետև նրա զորքը մի նոր ծանր պարտություն կրեց հենց նույն քաղաքային պարիսպների տակ։ Սովն ավելի սաստկացավ, բարձրացնելով ժողովրդական տրտունջը... Արտավազդն ստիպված եղավ հրամայել, որ բոլոր դժգոհները հեռանան քաղաքից։ Թեև շատերն շտապեցին օգտվել այս թույլտվությունից և հեռացան՝ ծպտվելով կանանց շորերի մեջ, բայց դրությունը չփոխվեց։ Առհասարակ անհաջողություններն էին շարունակ հալածում հայազգի կայսրին։ Նրա որդի Նիկետը զորաժողով էր կատարում ասիական ափերին և փորձեց հարձակվել իր քեռու բանակի վրա, բայց պարտվեց և ընկավ նրա զինվորների ձեռքը։ Կոպրոնիմոսը նրան շղթայակապ կախեց այնպիսի մի տեղ, որ նրա հայրը տեսներ նրան պաշարված մայրաքաղաքից։ Դրությունը հուսահատական էր դառնում, և վերջը Կոպրոնիմոսը մի ուժեղ գրոհով վերցրեց Կ. Պոլիսը։ Բայց Արտավազդը կարողացավ փախչել հարավ, հետը տանելով իր ընտանիքը, բարեկամներին և կողմնակիցներին։ Հասնելով Նիկիա, նա այստեղ շտապով մի փոքրիկ զորաբաժին հավաքեց և գնաց փակվեց Պուզան բերդի մեջ։ Նրա հետ էր և Վասակ պատրիկը։ Բայց Կոպրոնիմոսի զորքին հաջողվեց և այս վերջին ապաստանը վերցնել։ Ամենքը գերի տարվեցին Կ. Պոլիս, ուր կուրացրին Արտավազդին, նրա երկու որդիներին, Վասակ պատրիկին և շատ ուրիշ

[1] Le Beau, t. VI, p. 393.

կողմնակիցների։ Կոպրոնիմոսը հաղթանակի մեծ հանդես սարքեց կրկեսում։ Անաստաս պատրիարքին, նստեցրած էշի վրա, երեսը դեպի պոչը, անկարգրին կրկեսով, ծաղրելով և անարգելով։ Ծաղրի և անարգանքի առարկա դարձան և դժբախտ Արտավազդն ու իր կուրացված բախտակիցները։ Հայ նախարարի փառասիրական արկածախնդրությունը վերջացավ (743 թ.)։ Կռիվը նրա թշնամուն թողեց իշխանությունը, որի համար այնքան արյուն էր թափվել։

Արտավազդի դավադրությունն արգելք չդարձավ, որ հայերը նախկին կարևոր դերը շարունակեն կատարել բյուզանդական բանակում։ Նույն Կոպրոնիմոսի թագավորության վերջերում մենք տեսնում ենք անուն հանած չորս զորավարներ՝ Արտավազդ, Տաճատ, Վարազտիրոց և Գրիգոր Մուշեղի որդի[1]։ Սրանցից մեկի, այն է՝ Տաճատի մասին մենք ունենք մանրամասն տեղեկություններ[2]։ Սա Անձևացյաց Գրիգոր իշխանի որդին էր, որ ինչ-որ մի դժգոհություն ունենալով արաբներից թողել էր իր հայրենիքը և անցել Բյուզանդիա, ուր և իր քաջություններով նախանձելի դիրք էր ստեղծել իր համար, դառնալով մի ամբողջ նահանգի կառավարիչ։ Կոպրոնիմոսը մեռավ 775 թվին, թագը թողնելով իր Լևոն Դ որդուն, որ սակավակյաց էր իբրև թագավոր (775—780 թթ.)։ Միաժամանակ Բաղդադում գահ էր բարձրանում Մուհամեդ էլ-Մահդին, և պատերազմները արաբների ու բյուզանդացիների միջև ընդունում են համառ և անընդհատ արյունհեղությունների կերպարանք։ Սակայն Լևոն Դ-ին հաջողվում է մի խոշոր հաղթություն տանել արաբների դեմ 778 թվին, Գերմանիկոս քաղաքի մոտ։ Բյուզանդական բանակին այդ հաղթանակը տալիս էին չորս հայ զորավարները։ Խալիֆական բանակը նահանջեց ամոթապարտ, բայց հետևյալ տարիներին պատերազմական գործողությունները նորից վերանորոգվեցին երկու թշնամիների միջև։

Լևոն Դ-ի ժառանգը 10 տարեկան մի երեխա էր Կոստանդին Զ-ն, ուստի նրա խնամակալուհին դարձավ, ամբողջ կառավարությունն իր ձեռքն առնելով, նրա մայրը, Երինե (Իրինե), որ խազարների թագավորի աղջիկն էր, շատ խելոք, բայց միևնույն ժամանակ անչափ ու անսահման փառասեր մի կին, որ ընդունակ էր մոռանալ ամեն ինչ, նույնիսկ մայրական գութ, երբ պետք էր իր կամքն ընդունել տալ։ Այս կայսրուհու սիրելիներից մեկն էր մի ներքինի, որի անունն էր Ստավրակիոս։ Նա պատրիկ նշանակվեց, իր ձեռքն առավ պետության բոլոր գործերը, իսկ Տաճատ Անձևացին դժբախտություն ունեցավ հաճելի չլինել այդ ամենակարող պալատականին։ Հայ իշխանը երկար չկարողացավ տանել ներքինու կատաղի թշնամությունը և վճռեց վրեժ հանել նրանից և նրա տիրուհուց մի սոսկալի միջոցով, որ դժբախտություն պիտի բերեր ամբողջ պետությանը։ 782 թվականին արաբական բանակը նորից արշավեց բյուզանդացիների դեմ, և այս անգամ նրա գլխավոր հրամանատարն էր Մահդիի որդի Հարուն-էլ-Ռաշիդը, որ, ինչպես տեսանք, հետո խալիֆ դարձավ։ Բյուզանդացիները կտրեցին արաբների պարենավորման ճանապարհները և այնքան նեղ դրություն ստեղծեցին, որ մինչև իսկ սով սկսվեց թշնամու շարքերում։

---

[1] Գելցեr, «Սկզբնաւ. Բիւզ. բանակ.», եր. 34։

[2] Ենթադրվում է, որ Արտավազդը և Գրիգորը Մամիկոնյան տոհմից էին։

Ահա այդ ճգնաժամային կացության մեջ էր Հարուն-էլ-Ռաշիդը, երբ Տաճատը գաղտնի բանակցություններ սկսեց նրա հետ։ Հայ նախարարին Հարունը խոստացավ վերականգնել նրա նախկին դրությունը Հայաստանում։ Դրանից հետո Տաճատն իր գնդով անցնում է արաբների կողմը և այնպիսի ընթացք է տալիս պատերազմին, որ բյուզանդացիներն ստիպված են լինում նահանջել, և արաբական զորքը կանգ է առնում Կ. Պոլսի դիմաց։ Երինե կայսրուհին ստիպված է լինում հաշտություն գնել, տալով արաբներին պատերազմական տուգանք՝ 70 հազար ոսկի[1]։

Հարուն-էլ-Ռաշիդը, իհարկե, չափազանց գոհ մնաց Տաճատ Անձևացուց և իր երախտագիտությունն արտահայտում էր՝ անվանելով նրան իր հայր[2]։ Մեծապես պատվելով նրան, ուղարկեց Հայաստան, ուր այդ միջոցին ոստիկանի պաշտոն վարում էր Օթմանը (Օսման)։ Տաճատը նշանակվեց Հայաստանի պատրիկ, բայց Օթմանը չուզեց նրան ճանաչել իբրև այդ պաշտոնի տեր, ունենալով, անշուշտ, իր անձնական նկատառումները։ Իր այդ վարմունքը նա պատճառաբանում էր նրանով, թե հայ նախարարությունը չի ուզում ընդունել մի մարդու, որ անձնատուր էր եղել հոռոմների թագավորին։ Այս գուցե հենց Օթմանի առաջադրած ձևակերպումն էր, որին հայերն ակամա հարել էին երկյուղից։ Բայց Հարունը պահանջեց ոստիկանից կատարել իր տված հրամանը։ Օթմանը հպատակվեց։ Սակայն ամառային արշավանք սկսելով խազարների դեմ, նա իր հետ տարավ և Տաճատ Անձևացուն, ինչպես և Բագրատ սպարապետին ու Ներսեհ Կամսարականին։ Այդ երեքին էլ նա հանձնարարեց պաշտպանել չափազանց վտառողջ և տոթակեզ մի դաշտ, որի անունն էր Քերան։ Ամբողջ ամառը նրանք մնացին իրենց ցույց տրված տեղում, «ի դժնդակ և յանհանդուրժելի ջերմութեան տապոյ խորշակին», ինչպես գրում է Ղևոնդը։ Եվ այդտեղ էլ երեքը գտնում են իրենց մահը։

Իսկ Կ. Պոլսի արքունիքում պատրաստվում էին նորանոր հարաբերություններ փառամոլ և անխիղճ մոր ու անչափահաս որդու միջև։ Կոստանդինն ուզում էր ամուսնանալ ֆրանկների թագավոր Կարլոս Մեծի աղջկա հետ։ Երինեն համաձայնություն տվել էր, բայց հետո սկսեց մտածել, որ եթե իր որդին ունենա այնպիսի հզոր նեցուկ, որպիսին էր արևմտյան մեծ թագավորը, այն ժամանակ իր նշանակությունը կնվազի բյուզանդական արքունիքում այդքան ուժեղացած որդու հանդեպ։ Ուստի վճռեց խանգարել այդ ամուսնությունը, թեպետ և Կոստանդինը շատ էր տարված Կարլոսի աղջկան առնելու ցանկությամբ։ Եվ կայսրուհին Հայաստանից մի գեղեցիկ աղջիկ բերել տվեց, Մարիամ անունով, որ անտոհմ էր[3], և եթե հայտնի էր մի բանով, այդ միայն այն էր, որ ուներ առաքինություններով հռչակված մի հորեղբայր՝ Ֆիլարետ անունով։ Այդ աղջկանն էլ նա ամուսնացրեց Կոստանդինի հետ։ Իր գեղեցկությամբ և հոգեկան ընտիր հատկություններով Մարիամն արժանավոր ամուսին հանդիսացավ, բայց ոչ երջանիկ, քանի որ հենց նրա պատճառով Կոստանդինի հարաբերությունները մոր հետ վատացան։ Այս հանգամանքն ստիպեց Երինեին ավելի խիստ միջոցներով ոչնչացնել որդու նշանակությունը և համարյա բոլորո-

---

[1] Le Beau, VI, p. 485.

[2] Ղևոնդ, գլ. ԼԹ։

[3] Le Beau, VI, p. 501.

վին հեռացրեց նրան պետական գործերից, հրամայելով, որ միայն ինքը ճանաչվի պետության գլուխ։ Նույնիսկ փորձեց երդվեցնել զորքերը, որ նրանք երբեք չեն թողնի, որ Կոստանդինը կայսր դառնա, քանի ինքը կենդանի կլինի։

Այս բանի դեմ անակնկալ կերպով բողոք բարձրացրեց հայկական գունդը, որը կայսերական պալատում պահնորդ զորքի (գվարդիա) պաշտոն էր կատարում։ Գունդը հայտարարեց, թե ինքը երդվել է հավատարմությամբ ծառայել Կոստանդինին և Իրինեին։ Հենց միայն այս ձևակերպումը, երդման այս բովանդակությունը ցույց է տալիս, որ առաջ Կոստանդինը պիտի լինի, հետո միայն նրա մայրը։ Իրինեն հայ զինվորներին խրատելու ուղարկեց իր ախոռապետին, որ և գիշերային պահապանների գլխավորն էր, ծագումով հայ, որի անունն էր Մուշեղ, բայց հույներն այդ անվան կպցնում էին Ալեքս անունը։ Մուշեղ-Ալեքսը, փոխանակ խրատելու, պահնորդ գնդի գլուխն անցավ։ Գունդը ձերբակալեց և շղթայեց իր հրամանատարին, որ կոչվում էր Նիկեփոր։ Մայրաքաղաքից դուրս գտնվող ուրիշ գնդեր, որոնք հայկական ծագում էլ չունեին, հայտարարեցին իրենց համերաշխությունը հայ զինվորների հետ և շարժվեցին դեպի Կ. Պոլիս։ Նրանք էլ հայտարարեցին, թե կայսր ճանաչում են միմիայն Կոստանդինին, ավելացնելով, որ իրենց այս ընտրությունը կհարկադրեն ընդունել զենքի ուժով (790 թ.)։ Իրինեն ստիպված եղավ տեղի տալ ուժին և նրա որդին, ազատություն ստանալով, գնաց քաղաքից դուրս՝ հանդիպելու ապըստամբած գնդերին, որոնց հայտնեց, թե Իրինեն երբեք այլևս կայսրուհի չպիտի ճանաչվի։ Ապա հայկական գնդին,[116] իբրև այս կայսերասեր շարժման սկզբնապատճառի, առանձին շնորհ անելու համար Մուշեղին նշանակեց նրա հրամանատար։ Իսկ մորը հեռացրեց պալատից և մի ուրիշ ապարանք նշանակեց նրա ապրելու համար։

Բայց այդ կինն առանց իշխելու, հրամայելու չէր կարող ապրել։ Եվ իր աքսորի մեջ շարունակեց մի գաղտնի գործունեություն դեռ իրեն հավատարիմ մնացած դրանիկների միջոցով։ Եվ քաղաքական հանգամանքները եկան նրան նպաստելու։ Կոստանդինը, իր կարողությունը ցույց տալու համար, արշավանք սկսեց նախ բուլղարների և ապա արաբների դեմ, սակայն այդ արշավանքները ցույց տվին, որ նա պատերազմական գործերի մեջ կատարելապես անընդունակ մի երիտասարդ է։ Անհաջողությունները թե՛ մեկ և թե՛ մյուս պատերազմական բեմերում ժողովրդական դժգոհություն էին հարուցել, և կայսրը, նեղն ընկած, սկսեց նեցուկ որոնել իր մոր խելքի և անօրինակ եռանդի մեջ։ Իրինեն նորից ստացավ իր «կայսրուհի» անունը, իսկ ժողովուրդը, որ սիրում էր զվարճանալ պալատական հեղաշրջումներով, հաճությամբ ընդունեց կայսրուհու վերադարձը։ Միայն հայկական գունդն էր, որ, հավատարիմ մնալով իր խոսքին, բացարձակ դժգոհություն հայտնեց այս առիթով։ Կոստանդինը, կամենալով ազատվել այս զինվորական ճնշումից, փոխադրեց հայկական գունդը նրա իսկական հայրենիքը, այսինքն Հայկական թեմը։ Մուշեղ զորավարին նա թողեց իր մոտ, պատվելով նրան պատրիկի կոչումով, իսկ հայերին նոր հրամանատար տվեց՝ Թեոդորոս անունով։ Հայկական գնդի այս դժգոհության առիթով հյուսվեց մի ամբողջ պալատական ինտրիգ, որի ղեկավարությունը կայսրուհու ձեռքումն էր գտնվում։ Սկսվեցին զանազան բացատրություններ՝ կայսրի վրա որոշ մտքով ազդեցություն գործելու համար։ Հայ զորքի

ջերմ սերը դեպի իր հրամանատար Մուշեղը կասկածների մեջ դրեց վերջինիս։ Շշնջում էին, որ հայերն ուզում են նրան կայսր հռչակել։ Կոստանդինը, հարազատ մնալով բյուզանդական տմարդի բարքերին, ձեռք բարձրացրեց Մուշեղի վրա։ Նրան նախատելու համար ածիլել տվեց նրա գլուխը, կտրեց նրա պատվո գավազանը և վերջն էլ բանտարկեց նրան իր պալատում։ Այս անմիտ բռնությունը նորից հուզմունք էր առաջացնում հայկական զորքի մեջ։ Բայց կայսրը, փոխանակ այդ խռովության վրա ուշադրություն դարձնելու, մի նոր պատերազմ է սկսում բուլղարների դեմ, խաբվելով մի աստղագետից, որ գուշակել էր նրան հաղթություն։ Սակայն Բուլղարիայում հոռոմները մատնվեցին ամոթալի պարտության. բացի մեծամեծ կորուստներից, նրանք թշնամու ձեռքին թողին իրենց բոլոր ծանրոցները, հանդերձանքները, զինվորական գանձը և գլխիկոր վերադարձան Կ. Պոլիս։ Այստեղ դժգոհությունը մեծ էր, երիտասարդ կայսրը նորից երկյուղով պաշարվեց, իսկ Իրինեն և նրա կողմնակիցներն իրենց հաշիվներն էին մաքրում։ Նորից Ստավրիակոս ներքինին է գործի դնում իր լեզուն՝ հայ զորավարին ոչնչացնելու համար, ինչպես մի ժամանակ արավ Տաճատ Անձևացու վերաբերմամբ։ Կոստանդինին նա հավատացնում էր, թե Մուշեղ-Ալեքսի նյութած վտանգը մեծանում է և թե պետք է նրան դնել այնպիսի դրության մեջ, որ նա անկարող լինի խլել կայսերական թագը։ Այդ արդեն հրավեր էր, որ կայսրը հայ զորքերի պաշտած Մուշեղի վերաբերմամբ գործադրի բյուզանդական գազանային սովորությունը— կուրացումը։ Եվ իրավ, կայսրն անմիջապես կուրացնել տվեց Մուշեղին (792 թ.)։

Այս անգամ հայկական զորագնդերն արդեն բացարձակ ապստամբության են դիմում, միացնելով իրենց հետ և Բարձր Հայքում գտնվող հայկական զորամասերը։ Ամենից առաջ նրանք կալանավորում են իրենց հրամանատար Թեոդորոսին։ Կայսրն իր մնացած զորքերն ուղարկում է նրանց դեմ, հանձնելով հրամանատարությունը երկու զորավարների, որոնցից մեկի անունն էր Կոստանդին Արտաշիր, գուցե նույնպես ծագումով հայ։ Ապստամբած զորամասերը, իրենց դեմ ուղարկվածների համեմատությամբ թեև փոքրաթիվ, քաջաբար առաջ են գնում, և 792 թվի նոյեմբերին տեղի է ունենում մի սաստիկ կռիվ, որի մեջ կայսերական զորքերը խիստ ջարդվում են, իսկ նրանց երկու զորավարներն էլ գերի են ընկնում։ Հանելով Մուշեղի վրեժը, հայ զինվորները կուրացնում են երկուսին էլ։ Կ. Պոլսում կատարյալ հուսահատություն է առաջացնում կայսերական զորքերի այս պարտությունը։ Բայց վտանգն այլևս չծավալվեց։ Ապստամբների մեջ գլուխ բարձրացրեց ներքին անողոք թշնամին—դավաճանությունը։ Մի մասը, միամտաբար խաբվելով պալատից արված խոստումներով, ոմանք էլ կաշառված լինելով, գնացին իրենց ընկերների դեմ, և այս վստահություն տվեց կայսրին, որ նորից ապստամբների դեմ ուղարկի պետությանը հավատարիմ մնացած զորքերը։ 793 թվի մայիսի 26-ին, Պենտեկոստեի օրը, նորից ճակատամարտ տեղի ունեցավ, և այս անգամ պարտություն կրողներն ապստամբներն էին։ Նրանցից մի մասն ընկավ պատերազմի դաշտում, մի մեծ մասը շրջապատվեց և գերի ընկավ, իսկ մի մասն էլ անցավ արաբների կողմը և նպաստեց, որ նրանք գրավեն Բարձր Հայքի մի քանի տեղեր էլ։ Այսպես, արաբների ձեռքն անցավ Դարանաղյաց գավառի Անի բերդը։ Ծանր վիճակի մատնվեցին գերի ընկածները։ Նրանցից յուրաքանչյուրի

ճակատին խարանեցին «Ապստամբ Հայ[117]» բառերը և ապա բոլորին աքսորեցին զանազան տեղեր։

Այսպես վերջացավ Հայկական շարժումը բյուզանդական բանակի մեջ։ Կոստանդին կայսրը կարող էր ասել, թե իրեն հավատարմությամբ ծառայող զորքը, որ շարունակ պահանջներ էր անում իր կայսրի օգտին, նա զոհեց իր մորը։ Թե ո՛րքան դժբախտ էր այդ երախտամոռ թագավորը, ցույց տվեց հենց այն, որ հայկական զորագնդերը ցրելուց հետո նա մնաց բոլորովին անպաշտպան իր սարսափելի մոր առջև։ Կատարելով նրա քմահաճույքները, կայսրը բաժանվեց իր Մարիամ կնոջից, որից մի աղջիկ ուներ, և երկուսին էլ փակեց վանքի մեջ, իսկ դրանից հետո ամուսնացավ իր մոր նաժիշտի հետ։ Բայց իզուր էին այս բոլոր զիջումները։ Իրինեն ի վերջո տանել չկարողացավ իր հարազատ զավակին հենց այն պատճառով, որ նա, այնուամենայնիվ, խլել էր իր իշխանության մի մասը։ Եվ տեղի ունեցավ մի քստմնելի ոճիր, որի նմանը դեռ պետք է որոնել մարդկային գազանությունների տարեգրությունների մեջ.—մայրը հանել տվեց իր որդու զույգ աչքերը (797 թ.)։ Բյուզանդական պատմագիրներն այս առիթով հիշեցնում են, որ հինգ տարի առաջ, միևնույն ժամանակ, միևնույն օրը, այս կայսրը կուրացրել էր Մուշեղին և հայտարարում են, թե այդպես էր կատարվում երկնային արդարադատ հատուցումը։ Դեռ պետք է, ի լրումն ամենայնի, այն էլ ավելացնել, որ օրթոդոքս եկեղեցին Իրինեին սրբերի դասն էր կարգել, որովհետև նա էր, որ վերջ դրեց պատկերամարտության և վերականգնեց «ուղղափառությունը»։ Բայց այդ գազանաբար սրբուհու հերթն էլ հասավ։ Երեք տարուց ավելի նա չկարողացավ վայելել միանձնյա իշխելու հաճույքը։ Սովորական եղանակով, այսինքն պալատական դավադրությամբ նա գահընկեց եղավ 800 թվին, իսկ մի տարուց հետո մեռավ հետին չքավորության մեջ։

Կայսր ընտրվեց Նիկեփորը, որ իր խստություններով և մանավանդ արծաթսիրությամբ լավ համբավ չթողեց ժողովրդի մեջ, թեև գծծության հասնող նրա ժլատությունն էր, որ նպաստեց պետական ֆինանսների բարեկարգմանը։ Նրա ժամանակ (800—811 թթ.) երկու անգամ փորձ եղավ պալատական հեղաշրջում առաջացնելու և երկու անգամն էլ գահի թեկնածուներ հանդիսացողները հայեր էին։ Առաջին անգամը, 802 թվին, Վարդան զորավարն էր, արևելյան բանակի հրամանատարը, որին դժգոհ տարրերը, գլխավորապես, իհարկե, զինվորական, առաջ քաշեցին՝ խստաբարո Նիկեփորից ազատվելու համար։ Վարդանը կրթասեր և առաքինի մարդ էր, բայց, հարկավ, չի կարելի ասել, թե կայսր դառնալու միտքը միանգամայն խորթ էր նրան։ Իր զորքի կողմից կայսր հայտարարվելով, նա իսկույն օգնականներ ընտրեց իր համար, և դրանցից մեկը Լևոն անունով, նույնպես հայ էր, Վարդ պատրիկի որդին, Արծրունյաց տոհմից և ծնված Հայաստանում։ Սա մի քաջ մարդ էր և Վարդանի հետ միացավ Նիկեփորի դեմ գնալու համար։ Միասին էլ նրանք գնացին պաշարեցին Խրյուսապոլիսը, որ Կ. Պոլսի ասիական մասն էր (այժմ Յուսկյուտար)։ Այդտեղ, սակայն Լևոնը և մյուս զորավարը, Միքայել անունով, դավաճանեցին նրան և անցան Նիկեփորի կողմը։ Վարդանը մնալով մենակ և տեսնելով, որ Խրյուսապոլիսը բաց չի անում իր դռները, չուզեց քաղաքացիական պատերազմ սկսել իշխանությունը խլելու համար և վճռեց խաղաղությամբ վերջացնել այդ ձեռնարկությունը։ Բանակցություն սկսելով Նիկեփորի հետ, նա հայտնում էր,

թե ինքը միանգամայն հրաժարվում է գահակալության թեկնածությունից և հեռանում է զինվորական ծառայությունից, առաջարկելով, որ կայսրն էլ մոռացության տա այդ ամբողջ գործը և չհալածի այն մարդկանց, որոնք իր կողմնակիցներն են եղել։ Կայսրը կատարյալ համաձայնություն է տալիս, և Վարդանը գնում է մի հունական վանք, որ ինքն էր շինել և այդտեղ կրոնական է դառնում։ Սակայն Նիկեփորը, ըստ բյուզանդական սովորության, դրժում է իր խոսքը, հարքունիս է գրավում Վարդանի կողմնակիցների կալվածները, իսկ իրեն, Վարդանին կուրացնել է տալիս վանքում։

Արևելքի հրամանատար Վարդանի փոխարեն նշանակվում է Լևոն Արծրունին։[118] Բայց սա իր մի քանի բացասական հատկությունների պատճառով ընկնում է Նիկեփորի աչքից, հեռացվում է պաշտոնից և աքսորվում։ Իսկ Նիկեփորին գահընկեց անելու մի փորձ էլ կատարվում է 807 թվականին։ Այս անգամ իբրև թեկնածու առաջ է բերվում Արշավիր պատրիկը, որին փեսայացրել էր Լևոնը։ Նա զորքի կողմից կայսր է հռչակվում։ Սակայն Նիկեփորը, ժամանակին տեղեկանալով, իսկույն ձեռք առած միջոցներով խեղդում է դավադրությունը։ Արշավիրը ձերբակալվում է, խիստ ծեծի է ենթարկվում, ապա կտրում են նրա մազերը, բռնի կերպով կրոնավոր են դարձնում և ուղարկում են մի վանք։

Նիկեփորն սպանվում է բուլղարների դեմ սկսած պատերազմի մեջ։ Նրան հաջորդում է Միքայել Ա Ռանգաբեն (811—813 թթ.), որ մի բարի մարդ էր, բոլորովին անընդունակ կառավարելու մեջ։ Նրա առաջին գործն է դառնում աքսորից վերադարձնել Լևոն պատրիկին և նրան հրամանատարական բարձր պաշտոն տալ բանակում։ Փառատենչությունն էր բորբոքված այս Արծրունի իշխանի մեջ և նա չէր դադարում կայսերական թագն իր գլխին կրելու մասին մտածելուց։ Անընդունակ Միքայելը շատ շուտով տվեց նրան այդ հնարավորությունը։ Բուլղարների հետ ունեցած մի ճակատամարտում բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց։ Կայսրը թողեց զորքը Լևոնին, իսկ ինքը փախավ Կ. Պոլիս։ Տագնապալից դրության մեջ միայն մի ուժեղ և ընդունակ մարդ էր մնում, որ կարող էր փրկել պետությունը, և դա Լևոնն էր։ Եվ ահա զորքը նրան է կայսր անվանում։ Բայց փառասեր հայը լավ քաղաքագետ էլ էր. հրաժարվում է այդ պատվից և այնպիսի համառությամբ, որ նրա բարեկամներից մեկը, Միքայել անունով մի զորավար, Թլվատ մականունով, սուրը հանած մոտենում է նրան և ասում, որ եթե չընդունի կայսրությունը, պիտի մեռնի։ Լևոնն այդ ժամանակ միայն ընդունեց հռոմների կայսրի գահը։ «Զորքը և ժողովուրդը,— ասում է նորագույն պատմագիրներից մեկը,— խանդավառությամբ խնդրեցին շատ ընդունակ զորավար, հայազն Լևոնին ձեռք առնել ընդհանուր գործը և փրկել քրիստոնյա պետությունը»[1]։

Պատմության մեջ Լևոնը հայտնի է Լևոն Ե Հայկազն անունով։ Նա թագավորեց 7 տարի (813—820 թթ.) և արտաքին հարաբերությունների մեջ իրեն ցույց տվեց ինչպես մի հմուտ և քաջ զորագլուխ։ Մի մեծ հաղթանակ տարավ բուլղարների դեմ, ասիական սահմաններում ետ մղեց արաբներին և նույնիսկ նոր նվաճումներ էլ կատարեց։ Սակայն, իբրև միջավայրի արդյունք, Հայաստանի լեռներում ծնված այդ մարդը ներկայացնում էր բյուզանդական կայսրի ամբողջ կերպարանքը.— Նրա մեջ

[1] Гельцер, стр. 70.

էլ նկատվում են հույն բարբարոս անգթության հակումները, բայց մանավանդ նշանակալից է այն, որ նա էլ չկարողացավ չխառնվել եկեղեցական վեճերի մեջ և հենց սրանով էլ պատրաստեց իր կորուստը։ Նա վերանորոգեց պատկերամարտությունը, հեռացրեց ամենքից հարգված Նիկեփոր պատրիարքին, նշանակելով նրա տեղ մի բոլորովին անհարմար անձնավորություն։ Այս ամենն ընդունվում էր եկեղեցու և ժողովրդի կողմից իբրև ուխտադրժություն, որովհետև Կ. Պոլիսը նրան կայսր էր ճանաչել միայն այն ժամանակ, երբ նա հրապարակային ուխտ արավ, թե պիտի հավատարիմ մնա պաշտոնական եկեղեցուն և չպիտի խախտի եկեղեցական հայրերի սահմանած կարգերը։ Այս պատճառով էլ եկեղեցին պատերազմողի դիրք բռնեց նրա վերաբերմամբ։

Լևոն Հայկազնը չորս որդի ուներ՝ Սմբատ, Բարսեղ, Գրիգոր և Թեոդոս։ Ավագ որդուն, Սմբատին, իրեն գահակից արավ կայսր տիտղոսով, անունն էլ փոխեց դրեց Կոստանդին։ Դժվարությունը միայն այն էր, որ զորքը ճանաչի նոր կայսրին։ Բայց այս էլ Լևոնը հաջողեցրեց, առատ կաշառքներով գնելով ամբոխը և պատվիրելով նրան աղաղակել՝ «Կեցցե՜ Լևոն կայսրը, կեցցե՛ Կոստանդին կայսրը»։ Այսպես ուրեմն, Լևոնը նույնիսկ իր սեփական դինաստիան հիմնելու ջանքեր էլ էր անում։ Բայց իզո՛ւր։ Թշնամական մթնոլորտ էր ստեղծվել և դավադրությունը հեշտ կազմակերպվեց։ Նրա հոգին էր կայսրի նախկին բարեկամ Միքայել Թլվատը։ Իմանալով այս բանը, Լևոնը կատաղեց, հրամայեց ձերբակալել Միքայելին և շղթայակապ անելով՝ բանտարկել։ Ծննդյան ճրագալույցին նա ուզեց դավադրին բերել և իր առջև ողջ-ողջ այրել նրան, բայց կայսրուհի Թեոդորան համոզեց նրան չկատարել այդպիսի մի ծանր գործ այնքան հանդիսավոր մի գիշեր, ինչպիսին էր Քրիստոսի ծննդյան գիշերը։ Լևոնը լսեց նրան և այսպիսով փութացրեց իր իսկ դատաստանը։ Միքայել Թլվատը յուր դավակիցներին կանչեց իր մոտ և ասաց նրանց, որ եթե այդ միևնույն գիշերը նրանք չազատեն իրեն, մյուս օրն ինքը պիտի նրանց բոլորին էլ մատնի կայսրի ձեռքը։ Դավադիրները, սարսափած այդ սպառնալիքից, գնացին կայսրին սպանելու, քանի որ ուրիշ կերպ Թլվատին ազատել անկարելի էր։ Նրանք քահանայական զգեստներ հագան և գնացին պալատի եկեղեցին. խառնվեցին քահանայական խմբին։ Կայսրը եկավ եկեղեցի, դավադիրները հանեցին իրենց զգեստների տակ թաքցրած սրերը և հարձակվեցին նրա վրա։ Հանկարծակիի եկած, բայց արիությունը չկորցնելով, Լևոնը վազեց ներսի խորանը, վերցրեց մի խաչ և նրանով, ինչպես զենքով, սկսեց դիմադրել հարձակվողներին։ Բայց նրանք շատվոր էին, հարվածներ թափեցին ամեն կողմից և կտոր-կտոր հոշոտեցին նրան։ Այնուհետև հանելով բանտից Միքայել Թլվատին, ծիրանիներ հագցրին նրան և կայսր հռչակեցին, թեև նրա ոտները դեռ շղթայված էին, որովհետև շղթայի բանալին կայսրի մոտ էր պահվում և գտնել կարելի չեղավ, իսկ մի ուրիշ հնար չեղավ այդ գիշերվա մեջ շղթաները ջարդելու։

Նոր կայսրը Լևոնի չորս որդիներին էլ ներքինացնել տվեց և ուղարկեց վանք՝ կրոնավոր դառնալու համար։ Նրանց հետ էր և նրանց մայրը։ Ավանդությունը, որ հորինվել է բարեպաշտական հայտնի միտումով, ասում է, որ Սմբատը շատ գեղեցիկ և բարձրահնչուն ձայն ուներ, որ, սակայն, կորվեց ներքինացումից հետո։ Զափազանց վշտացած՝ կայսրորդին, թեև պատկերամարտ էր համոզմունքով, դիմեց վանքի պատկերներից

մեկին և խնդրեց նրա միջնորդությունը, որ երկինքը վերադարձնի իրեն կորցրած ձայնը։ Եվ երկինքը, շեշտում է ավանդությունը, կատարեց պատկերի միջնորդությունը։ Բայց այս էլ չհամոզեց ամենքին, թե պատկերները չպետք է արհամարհել, այլ պետք է նրանց պաշտել։ Միքայել Բ կայսրը, Թլվատը, որ իր բարեկամի դիակի վրա հիմնում էր իր դինաստիան[1], ամենաթունդ պատկերամարտն էր իր թագավորության ընթացքում[2]։

Հայ զինվորականության կարևոր դերը Բյուզանդիայում, հայ կայսրները Կ. Պոլսի գահի վրա՝ մեծ ազդեցություն չարին հայ ազգի ընդհանուր ճակատագրի վրա։ Այս կողմից ավելի նշանավոր էին այն շարժումները, որոնց թատերաբեմ հանդիսանում էր Արևելյան Հայաստանը։ Այդ շարժումների նկարագրության էլ կդիմենք մենք այժմ։

9. Աշոտ Մսակեր։— Երկու շարժում։ Բագրևանդի մեծ ճակատամարտում սպանված Սմբատ Բագրատունի սպարապետից հետո մենք երկար ժամանակ, համարյա երեսուն տարի, տեղեկություն չունենք հայկական սպարապետության մասին, մինչև իսկ չգիտենք՝ եղա՞ն արդյոք հայ իշխաններ, որոնք վարեցին այդ ազգային շատ կարևոր պաշտոնը. և եթե եղան՝ ովքե՞ր էին հարստահարություններով և կեղեքումներով այնքան հարուստ այդ ժամանակամիջոցում։ Այս անհայտության մեջ էլ լուսանում է 9-րդ նշանավոր դարը. նշանավոր՝ ուրիշ շատ ազգերի հետ նաև հայերի համար իր մեծամեծ շարժումներով, խոր տակնուվրայություններով և քաղաքական նոր կերպարանավորումներով։ Այս դարի գրեթե սկզբին, 806—807 թվականին, նորից վերանորոգված է հայկական սպարապետությունը, և նրան մենք նորից տեսնում ենք Բագրատունյաց տոհմի ձեռքին։ Բագրևանդի կռվի հերոս Սմբատ սպարապետի որդին էր Աշոտը, որ այդ ժամանակից ստանձնում է սպարապետի բարձր պաշտոնը, գահերեց իշխանի կոչումով։

Մեր պատմության մեջ Աշոտը հայտնի է «Մսակեր» անունով։ Բայց դրանից ավելի որոշ և արտահայտիչ է նրա մյուս մականունը—«Քաջ»։ Իր քաջություններով էլ գլխավորապես, որ Աշոտն առանձին ուժ և փայլ հաղորդեց իր տոհմին։ Նա կառավարեց Հայոց աշխարհը մոտ 20 տարի (806—807—825—826)։ Ուներ չորս որդի՝ Դավիթ, Սահակ, Բագարատ և Սմբատ, իսկ աղջիկներից հականե հանվանե հայտնի է մեկը—Հռիփսիմե, որ դարձավ Վասպուրականի տիկինը[3]։ Առանձնապես աչքի է ընկնում Աշոտ Մսակերի հոգսը Բագրատունյաց կալվածները շատացնելու մասին,— մի բան, առանց որի անկարելի էր հասնել քաղաքական գերիշխանության, իսկ այս գերիշխանությունը, անկասկած, վերջին տեղը չէր բռնում Աշոտի ձգտումների մեջ։ Այս նպատակով է, որ նա դեռ 783 թվականին իր եղբայր Շապուհի հետ Կամսարական իշխաններից փողով գնում է Արշարունյաց գավառը, ուր և փոխադրում է իր ապարանքը Բագրատունյաց հին ոստան Դարյունք ավանից[4]։ Բացի դրանից՝ նա հաստատվում է և Տարոնում, Մամիկոնյանների հայրենիքում։ Թե ինչպես կատարվեց այս գործը, մենք հաստատ չգիտենք։ Թվում է, թե դարձյալ Բագրևանդի ճակատա-

[1] Կոչվում է Ամորիացիների հարստություն։
[2] Հ. Չամչեան, Բ, եր. 434։
[3] Մարկվարտ, «Հանդէս Ամս.», 1912, էջ 335—336։
[4] Ասողիկ, եր. 106։

մարտի՝ Մամիկոնյանների համար այնքան աղետալի հետևանքների մեջ պետք է որոնել դրդապատճառները։ Հայտնի է, որ այդ կռվի մեջ սպանվեց և Սամուել Մամիկոնյանը, իսկ սա Սմբատ սպարապետի աներն էր[1]։ Կարելի է, ուրեմն, ենթադրել, թե Սամուելը, բացի Սմբատի կնոջից, ուրիշ ժառանգ չուներ (նա սպանվեց երիտասարդ հասակում) և նրա կալվածներն անցան նրա թոռներին Բագրատունյաց տոհմից, այն է՝ Աշոտին և Շապուհին։ Գուցե հենց այս կալվածատիրական հողի վրա էլ գժտություն ծագեց Մուշեղ Մամիկոնյանի որդիների և Բագրատունիների միջև, որի հետևանքով Մամիկոնյանները փախան Վասպուրական, ուր և երկու եղբայրներն սպանվեցին Մեհրուժան Արծրունու ձեռքով։ Այսպես թե այնպես՝ 9-րդ դարի երկրորդ տասնամյակում Տարոնի մեջ իշխում է Աշոտ Մսակերի որդի Սահակը[2]։ Քիչ հետո Տարոնի Բագրատունիները գրավում են առաջնակարգ դիրք, իսկ Մամիկոնյանների մնացորդները երևան են գալիս արդեն Բագրևանդ գավառում։

Սակայն Աշոտի և Շապուհի կալվածատիրական լայն ձգտումները ուժեղ դիմադրության են հանդիպում Մամիկոնյանների մի ժառանգի կողմից։ Դա Ջահապն էր, այն արաբացին, որին, ինչպես տեսանք, կնության գնաց Մուշեղ Մամիկոնյանի աղջիկներից մեկը, պաշտպանություն գտնելու համար։ Այս Ջահապը, անշուշտ, արաբական հեղինակների հիշատակած Աբդուլ-Մալիֆ իբն Ջահհաֆն էր[3]։ Նա պատկանում էր Կայսիկ կամ Քայսիկ անունով արաբական ցեղին, որ հայտնի էր Արաբիայում դեռ Մուհամմեդի ժամանակներից և Օմայան ու Աբբասյան խալիֆների ժամանակ էլ շատ գործոն դեր էր կատարում, ընդդիմադիր ուղղություն ընդգրկելով մանավանդ Աբբասյանների դեմ[4]։ Այս Ջահապը, ձեռք առնելով իր կնոջ կալվածական իրավունքների պաշտպանությունը, վեճ է սկսում Աշոտ Մսակերի ու նրա եղբոր դեմ և հափշտակում է, զենքի ուժով, Արշարունյաց գավառի մի մասը, որի վրա Մամիկոնյանները կարող էին իրավունք ունենալ, քանի որ Կամսարականների հետ շատ մերձավոր ազգակցական

1 Ղևոնդ, եր. 151։

2 Մարկվարտ, «Հանդէս Ամս.», 1913, էջ 163։

3 Տեղեկություններ այս անձնավորության մասին թողել է արաբ մատենագիր Յաքուբին («Հանդէս Ամս.», 1907, եր. 140)։

4 Այս ցեղաբանությունը մենք ապացուցում ենք հետևյալ նկատառումներով.— Աշոտ Մսակերից հետո Հայաստանում երևան է գալիս և Բագրատունի մի օրիորդի հետ ամուսնանում Սևադա անունով մի արաբ, որ արաբական մատենագիրների հիշատակած Սավադ-իբն-Աբդուլ-Համիդ Ջահհաֆն էր, հետևաբար մեր Մամիկոնյանների փեսա Ջահապի մոտիկ ազգականը, գուցե հենց նրա եղբորորդին (տ. Յաքուբի, «Հանդէս Ամս.», 1907, եր. 140)։ Այս ազգակցությունը վկայում է և մեր Վարդան Բարձրաբերդցին (եր. 108)։ Արդ՝ այս Սևադայի մասին Հովհաննես կաթողիկոսի Պատմության երկու տպագրությունների մեջ (Մոսկվա, 1853, եր. 64 և Երուսաղեմ, 1867, եր. 145) ասված է «Սևադայ ումն անուն ի Պարսիկ տոհմէ»։ Այստեղ մենք գործ ունենք պարզապես ձեռագրական սխալ արտագրության հետ։ Ուղիղ ընթերցվածքը տալիս են այն ձեռագիրները, որոնցից օգտվել են Չամչյանը և Սեն Մարտենը. առաջինն իր «Պատմութիւն Հայոց»-ի և երկրորդն իր ֆրանսերեն թարգմանության համար (տ. Չամչյան, հ. Բ, եր. 429 և «Histoire d'Armenie par Patriarche Jean VI», Paris, 1841, p. 101), ուր «Պարսիկ» բառի հետ գրված է «Կայսիկ» բառը։ Ստ. Օրբելյանն աղբյուր ունեցել է Հովհաննես կաթողիկոսին, իսկ նրա Պատմության մեջ «Կայսիկ տանէ»-ն դարձել է արդեն «կայսերական տանէ», որ ամենայն իրավունքով սխալ է համարում ակադեմիկոս Բրոսսեն (տ. «Histoire de la Siounie par Stephanos Orbelian», St. Peterb., 1864, p. 101)։

5 Բնագրում այսպես է։

կապեր ունեին դարերից ի վեր։ Այս դեռ քիչ համարելով, նա մտածում էր գրավել և ուրիշ երկրներ, որոնց վրա իր կինը կարող էր տարածել Մամիկոնյանի ժառանգական իրավունքները։ Բայց Աշոտ Մսակերն այնպիսի հակառակորդ չէր, որ տեղի տար բռնության։ Թե ինչպես գիտեր նա կռվել և ինչպես էր ժառանգել «Քաջ» անունը, ցույց է տալիս հենց մի դեպք, որ պատմում է Վարդանը։ Մի անգամ, ասում է նա, թշնամիները հարձակվեցին և պաշարեցին Աշոտին այն ժամանակ, երբ նա աղոթում էր։ Բայց նա ամենևին չշփոթվեց այդ անակնկալից։ Ամենայն հանգստությամբ շարունակեց իր աղոթքը և միայն այն ժամանակ, երբ վերջացրեց աստծու հետ խոսելը, զենք վերցրեց և հարձակվելով թշնամու վրա, կոտորեց հինգ հարյուր հոգի և երկու կես արավ նրանց հրամանատարին, որի անունն էր Լիպավին Աբլլա։ Ջահապն արաբական զորքերով էր գործում Արշարունյաց գավառում։ Բայց այս պատճառ չդարձավ, որ Աշոտը կանգ առնի և թույլ տա, որ հակառակորդը տիրանա իր սեփականությանը։ Շիրակի կողմով առաջ գնալով, նա հարձակվեց Ջահապի արաբական զորքերի վրա և ջարդեց նրանց, ապա տիրացավ ոչ միայն Արշարունյաց գավառին, այլև Շիրակ, Աշոցք և Տայք գավառներին։

Գործն այսքանով չի վերջանում։ Ջահապը, ինչպես ցույց են տալիս Վարդանի մութ ակնարկները, կազմում է իր կողմնակիցների մի մեծ բազմություն, որ, անշուշտ, բաղկացած էր արաբներից։ Նա էր, երևի, որ Հայաստան մտցրեց Կայսիկ ցեղից մի գաղթականություն և բնակեցրեց նրան Վանա լճի հյուսիսային կողմում, Արճեշի մեջ և շրջակայքում։ Այս իրողությունն է ակնարկում Վարդանի պատմածը, թե Գնունյաց ազգը (որ այդ ժամանակներն ապրում էր Աղիովիտ գավառում) խնդրում է Աշոտ Մսակերին փրկել նրան արաբների ձեռքից, և Աշոտը հազար հոգով գնում է Աղիովիտ և իր մոտ հավաքելով Գնունյաց ամբողջ ցեղը՝ բոլոր ունեցած-չունեցածով, գաղթեցնում է Տայք նահանգը[1]։ Այսպիսով, այս առաջին հայտնի դեպքն է, երբ մահմեդական գաղութ է հաստատվում Հայաստանի հողի վրա։ Կայսիկները 9-րդ դարում, ինչպես կտեսնենք, տարածված էին Վանա լճի եզերքով Մանազկերտից մինչև Բերկրի և կազմում էին առանձին ինքնավար համայնք։

Երևի իր այս գործողությունների համար էր, որ Աշոտ Մսակերը խալիֆի տհաճությունը գրգռեց և նա ստիպված եղավ իր որդի Սմբատին պատանդ ուղարկել Բաղդադ, ուր նա մնաց արքունիքում իբրև գրավական, որ իր հայրն այլևս հակապետական շարժումների մեջ չի խառնվի։ Բայց շուտով խալիֆաթի մեջ սկսած խռովությունները գրավեցին արաբական կառավարության ուշադրությունը, և Հայաստանը կարողացավ հանգստություն վայելել, այնպես որ, Վարդանի վկայելով[2], հայոց իշխանները զորեղացան իրենց երկրներում։

Այս մեծ խռովություններից մեկն սկսվել էր Հայաստանի սահմանակից Ատրպատական նահանգում և ներկայացնելով մի շատ հետաքրքրական երևույթ հասարակագիտական տեսակետից, կրկնակի ուշադրության արժանի է մեզ համար մանավանդ այն պատճառով, որ խոր արձագանքներ

1 Եր. 10։

2 Վարդան Բարձրաբերդցին թեև գրել է 13-րդ դարում, բայց ունեցել է ձեռքի տակ մի հին աղբյուր, որ մեզ չի հասել (Մարկվարտ, տե՛ս «Հանդէս Ամս.», 1913, էջ 160)։

է տվել նաև Հայաստանում։ Այս շարժումը, որին վիճակված էր դուրս գալ տեղական երևույթի նեղ շրջանակից և գրավել այն ժամանակվա քաղաքական աշխարհի առանձին ուշադրությունը, արաբական գրականության մեջ հայտնի է **խուրրամյան** կամ **քուռամյան** անունով[1]։ Նրա հիմնադրի մասին տեղեկություններ շատ չեն մնացել։ Հայտնի է արաբական գրականությունից, որ նա կոչվում էր Ջավետան-բին Սահակ կամ Սահլ, որ ապրում էր 9-րդ դարի սկզբում և որի գործողության տեղն էր Ատրպատականի Բատ սարը։ Այնտեղ, ինչպես երևում է, մնացել էր զրադաշտական միջավայր, ազգաբնակությունը բաղկացած էր մի ցեղից, որ այն ժամանակվա գրավոր աղբյուրներն անվանում են **քուրդուն**[2]։ Այս ցեղը հայտնի էր իր ավազակային հակումներով, բայց այդ արգելք չեղավ, որ նրա Բատ սարը դառնա օրրան և միջնաբերդ մի շատ հզոր մտավոր շարժման և պահպանի իր այդ նշանակությունը մոտ երկու տասնամյակ[3]։

Ջավետանի վարդապետությունն իր էությամբ վերանորոգումն էր այն կոմունիստական-ընկերավարական վարդապետության, որ ծաղկեց Պարսկաստանում 6-րդ դարի սկզբում, Կավատ թագավորի ժամանակ և որի հիմնադիրն էր, ինչպես գիտենք, Մազդակը։ Խուրրամյան վարդապետությունն էլ, իր նախորդի նման, կրոնական սիստեմի կերպարանքով էր երևան գալիս, ինչպես որ միանգամայն բնական էր այն ժամանակների համար, և ներկայացնում էր մազդեզականության, իսլամի և քրիստոնեության մի խառնուրդ, որի նպատակն էր ուսուցանել, թե մարդիկ հավասար են, միասին պիտի վայելեն աշխարհի բոլոր բարիքները, առանց մասնավոր սեփականության։ Բատ լեռան ազգաբնակության մեջ էլ տարածված էր այն հավատալիքը, թե այդ հավասարությունը պիտի երկրի վրա հաստատի Մահդին, մի սուրբ մարդ, իմամ, որ պիտի դուրս գա իբրև թագավոր և ընդունվի իբրև աստված։ Նրան հավատացողները, եթե մեռնեն, քառասուն օրից հետո պիտի հարություն առնեն և իրենց ընտանիքների գիրկը վերադառնան։ Ահա հենց այս Մահդիի դերում երևան էր գալիս Ջավետան բին-Սահլը։ Եվ առաջին իսկ քայլերից նա ունեցավ շատ մեծ հաջողություն։ Նրան ընդունեցին աստվածային էակի տեղ[4]։ Ժողովրդի բոլոր խավերից, սկսած իշխաններից մինչև ռամիկները, մեծամեծ խմբեր հավաքվեցին նրա շուրջը։ Այս բազմությունը լավ զինված և կուռ մի ուժ էր, որ սկսեց հարձակումներով և նվաճումներով իրագործել Մահդիի թագավորությունը։ Ինքը Մահդին (Ջավետանը) քողով ծածկած դեմքով առաջնորդում էր իր զորքը, երկյուղ ազդելով նույնիսկ թագավորներին։

Արաբական մատենագիրներն առաջին անգամ խուրրամյան շարժման մասին խոսք են բաց անում 807—808 թվականներին։ Խալիֆաթը, իհարկե, մեծ վտանգ էր տեսնում պարսկական այս աղանդի մեջ, թե՛ կրոնի և թե՛, հետևաբար, և իր իշխանության տեսակետից։ Ուստի և անխնա պատերազմ

1 Աղանդին հետևողներն իրենց անվանում էին «ալ-խուրրամի», որ, ինչպես ենթադրողներ կան, պարսկական «խուրրամեա» բառից պիտի լինի կազմված և որ նշանակում է «լուսավոր», «փայլուն»։ Աղանդավորները կարմիր զգեստ էին հագնում (А. Василев, «Византия и Арабы», СПБ. 1900. стр. 78)։

2 Այս անունը, անշուշտ, կապ ունի այժմյան **քուրդ** անվան հետ։

3 **Մարկվարտ**, «Հանդ. Ամս.», 1913, էջ 160—162։

4 Քրիստոսի կամ սուրբ հոգու տեղ, ինչպես նմանողաբար ասում է մի քրիստոնյա հեղինակ (**Մարկվարտ**, անդ, էջ 160)։

հայտարարեց նրա դեմ, մի պատերազմ, որ, սակայն, տասնյակ տարիներ պիտի տևեր ամենայն համառությամբ։ Այդ թվականներին էր, որ Հարուն-էլ-Ռաշիդ խալիֆը 10 հազար հոգուց բաղկացած զորք ուղարկեց Մահդիի դեմ, որ, ինչպես երևում է, հաջողություն չունեցավ։ Ութ—ինը տարուց հետո մենք դարձյալ տեսնում ենք երկու կողմերը պատերազմի մեջ։ Այս անգամ (815—816 թթ.) արաբացի զորավար Հասան բին-Սահլը ջարդում է Մահդիին, որ ստիպված է լինում փախչել Հայաստան, Տարոնի կողմերը, ուր այդ միջոցին իշխում էր Աշոտ Մսակերի որդիներից Սահակ Բագրատունին[1]։ Սիրիական աղբյուրների մեջ մնացել է մեզ համար մի շատ հետաքրքրական հատված, որ ներկայացնում է պարսիկ աղանդապետի փախստյան հետևանքները։

Իր երեսի քողը վերցրած՝ Մահդին անձնատուր է լինում Սահակին, որը, սակայն, կալանավորում է նրան և շղթաներով կապում։ Քուրդանները հարձակում են գործում նրա վրանի վրա՝ իրենց մեծ մարգարեին ազատելու համար։ Այն ժամանակ Սահակը, նեղն ընկած, շտապելով ազատում էր, ինչ կարելի էր, կտրում է Մահդիի գլուխը և տանում իր հետ։ Քուրդանները, տիրանալով վրանին, գտնում են նրա մեջ Մահդիի դիակը։ Զայրացած այս դեպքից, նրանք վրեժխնդրության միջոց էին որոնում։ Եվ օգտվելով այն հանգամանքից, որ Սահակը շուտով պատերազմ գնաց արաբների դեմ, նրանք դարան սարքեցին այն գյուղի շուրջը, ուր գտնվում էր իշխանի ընտանիքը՝ սրան ձեռք գցելու համար։ Դավադրությունը բաց է անում գյուղի հեթանոս կանանցից մեկը։ Սահակի ընտանիքը փակվում է բերդում, որ և պաշարվում է քուրդանների կողմից։ Պաշարվածների դրությունը հուսահատական է դառնում, բայց Սահակի կինը մի ջերմեռանդ քրիստոնյա է, իսկ նրա եղբայրը, մի կրոնավոր, նույնպես պաշարվածների մեջ է և աղոթքներ ու խնդրվածքներ է անում սուրբերի մասունքներ բռնած ձեռքում և երկրպագություններ անելով։ Իշխանուհին իր ծծկեր մանուկին դնում է Հիսուսի պատկերի առաջ և ասում. «Քրիստոս, գոնե այս մանուկի համար, որ մկրտության անմեղությունն ունի, օգնիր ծառաներիդ»։ Հասավ վերջին տագնապալից րոպեն։ Բերդը թշնամու ձեռքն անցնելու վրա էր։ Նրա դուռն արդեն այրվում էր։ Բայց օրհասն առժամ հեռացրեց բերդում գտնված մի այլ կրոնավորի անտարբերությունը դեպի կատարվող դեպքերը և վառեց նրա հերոսությունը։ Մենակ դուրս գալով բերդից, նա գնաց հասավ քուրդանների գլխավորին, սպանեց նրան նիզակով և կարողացավ անվնաս փախչել։ Սակայն այս հանդուգն քաջագործությունը պիտի ավելի ևս գրգռեր պաշարողներին։ Եվ ահա պաշարվածները ահավոր վախճանի նախօրյակին են ապրում։ Գալիս է երեկոն։ Ամենքն արթուն են մնում այդ գիշեր և եկեղեցական հսկում են կատարում։ Սահակի բարեպաշտ կինը վճռում է չընկնել անհավատ թշնամու ձեռքը և պատրաստվում է վերջին հարձակման միջոցին զոհվել նրա հարվածների տակ։ Մտնում է զինատուն, վերցնում է մի ոսկեզօծ սուր, որպեսզի նրա փայլով թշնամու ուշադրությունը գրավի և սպանվի։ Սպասում էր առավոտին, որ դուրս գնա մահվան ասպարեզ։ Բայց գիշերը մի բան է պատահում, որ նախապաշարված միտքը կարող էր երկնքի հրաշք համարել։ Քուրդանները, բերդն արդեն առնված համարելով,

1 **Մարկվարտ**, անդ, էջ 163։

գնում են գավառը թալանելու, շտապելով այնպես անել, որ բնակիչները ժամանակ չունենան փախչելու։ Վայրենի օրդուի այս ախորժակն էլ փրկում է բերդեցիներին։ Սահակ իշխանը, լուր առնելով, թե ինչ վտանգի է ենթարկված իր ընտանիքը, շտապում է օգնության։ Առջևից մի խումբ է ուղարկում, որ կարողանում է մտնել բերդը և սաստկացնել դիմադրությունը։ Ինքն էլ հարձակվում է դրսից և քուրդանները, երկու հարվածի միջև դրված, փախչում են։ Դեպքը տեղի է ունենում ձմեռ ժամանակ։ Փախչողները թաղվում են ձյան մեջ և, այսպիսով, պաշարողների ամբողջ բանակը ոչնչացվում է։

Մահդիին հաջորդում է Հարունը, որը, սակայն, շուտով սպանվում է արաբացի Ալի զորավարի ձեռքով։ Սրան հաջորդում է (մոտավորապես 817 թվականին) Բաբեկը, որը մեր հին գրականության մեջ հայտնի է Բաբան (գրվում է նաև Բաբ) անունով և որը խուրրամյան աղանդի պատմության մեջ ավելի շատ է հռչակված, քան նույնիսկ հիմնադիր Մահդին։ Այս ընկերավարական մտածողը նշանավոր ընդունակություններ ցույց տվեց և պատերազմական արվեստի մեջ։ Նրանով խուրրամյան աղանդը մտնում էր արաբական պետության դեմ սկսված մաքառման ամենաուժեղ շրջանը։ Բաբեկի անունը հռչակվեց այն խոշոր հաղթությունների շնորհիվ, որ նա տանում էր խալիֆական զորքերի հետ ունեցած մեծ ճակատամարտերի մեջ։ Մի անգամ նա նույնիսկ բոլորովին ոչնչացրեց արաբական մի ամբողջ բանակ՝ նրա գլխավոր հրամանատարի հետ։ Խալիֆաթն ստիպված եղավ լարել իր բոլոր ուժերը, նույնիսկ երբեմն անտես անել ներքին ուրիշ խլրտումներ, խուրրամյան շարժումը ոչնչացնելու համար։ Բայց այս բանը շատ դժվար էր։ Բաբեկը կռվեց խալիֆների դեմ քսան տարուց ավելի։

Բայց Բաբեկ-Բաբանի պատերազմական գործողությունները դեռ Հայաստանի հողը չէին անցել։ Այստեղ, երկրի ներսում, մնացել էր միայն Ջահապի շարժումը, և Աշոտ Մսակերը կարող էր նրա հետ գործ տեսնել ազատ, քանի որ արաբական արքունիքն ուներ ավելի ծանր ու լուրջ հոգսեր։ Այդ դրությունն էր, անշուշտ, նպաստում, որ Բագրատունյաց տոհմն այդ միջոցին, այն է՝ 9-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսում, մի նշանավոր տիրապետական հաջողություն էլ ձեռք բերեց։ Աշոտ Մսակերի հորեղբայր Վասակի թոռ Աշոտը խալիֆից ստացավ Վրաստանի կառավարությունը և Լևոն Հայկազն կայսրից էլ՝ կյուրապաղատության տիտղոսը։ Այսպիսով, Բագրատունիների մի ճյուղը հաստատվում էր Վրաստանում և հիմք դնում մի իշխանության, որ ժառանգական է դառնում և տալիս է այդ տոհմին նաև թագավորական գահ։ Աշոտ կյուրապաղատը, հաստատելով իր իշխանությունը Գուգարաց աշխարհի Կղարջք գավառից մինչև Թիֆլիս, չի մոռանում իր պապի եղբորորդուն, պատրաստակամ լինելով օգնելու նրան դժվար ժամին։ Այսպիսի դժվարություն Աշոտ Մսակերի համար ստեղծում է Ջահապը, որ ապստամբելով խալիֆից, հավաքում է Հայաստանում և հարևան երկրներում մեծ թվով (մինչև 5 հազար) կողմնակիցներ և ամրանում է Դվին քաղաքում։ Հայ իշխանապետը հազիվ թե առիթ ունենար դժգոհ լինելու այս ապստամբությունից, եթե Ջահապը միայն արաբական կառավարության հետ կամենար գործ ունենալ։ Բայց նա առաջ ու առաջ Հայաստանում բռնանալու ձգտումն է ցույց տալիս, միշտ հիմք ունենալով իր կնոջ կալվածատիրական իրավունքները։ Աշոտ կյուրապաղատը, տեսնելով այն վտանգը, որ սպառնում էր հայերին Ջա-

հապից, դիմում է Լևոն կայսրին և խնդրում, որ նա օգնի հայերին։ Բայց հենց այդ միջոցին է լինում, որ Լևոնն սպանվում է, ինչպես տեսանք, եկեղեցու մեջ (820 թ.)։ Սակայն Աշոտ Մսակերն առանց դրսի օգնության էլ կարողանում է չափվել իր հակառակորդի հետ։ Ջահապն արշավում է Տարոնի վրա, կամենալով, անշուշտ, խլել այդ գավառը Բագրատունիների ձեռքից իբրև Մամիկոնյան կալված։ Սակայն Աշոտ Քաջը և նրա եղբայր Շապուհը հավաքում են իրենց ձեռքի տակ եղած փոքրիկ ուժերը (200 ձիավոր և 300 հետևակ զինվորներ) և չսպասելով, որ մնացած զորքերն էլ գան հասնեն, հարձակվում են Ջահապի վրա, կոտորում են նրա զորքից 3000 մարդ, վերցնում են մեծ ավար, տանում են մեծ հաղթանակ։ Այնուհետև Աշոտը վերադառնում է Տարոն, իսկ Շապուհը, շարունակելով հալածել թշնամուն, հասնում է Դվինի շրջակայքը, ասպատակում է և նահանջում, որովհետև քաղաքացիները դուրս են գալիս նրա հետևից, սակայն հաջողություն չգտնելով, վերադառնում են[1]։

Իսկ ապստամբ Ջահապին զսպելու համար Մամուն խալիֆը Հայաստանի ոստիկան նշանակեց Թահիրին, որ բնակություն հաստատեց Պարտավ մայրաքաղաքում։ Դժվար էր Թահիրին միանգամից կարգ հաստատելը, որովհետև ապստամբությունը կողմնակիցներ շատ ուներ, որոնք և առանձին խմբերով կռիվ էին մղում նրա դեմ։ Այդ խմբերի մեջ պատահում էին և հայ ու աղվանցի իշխաններից ոմանք։ Իսկ Ջահապը, ապստամբեցնելով ամբողջ Բեյլաքանը (Փայտակարան), այնքան առաջ տարավ իր հանդուգն գործողությունները, նույնիսկ պաշարեց Թահիրին Պարտավի մեջ և այդպես պահեց մի քանի ամիս, մինչև որ եկավ մի նոր ոստիկան, Սուլեյման անունով, որ ազատեց Պարտավը, իսկ Ջահապն ստիպված եղավ հաշտություն խնդրել և ներում ստացավ[2]։ Պետք է ասել, որ այս առաջին կամ միակ դեպքը չէր, որ արաբները Հայաստանում ապստամբում էին խալիֆների դեմ։ Այստեղ ևս, հայկական լեռնաստանում, տիրում էր համապետական իրականությունը—թույլ կենտրոնի դիմաց՝ ըմբոստացող սատրապներ, հավիտենական երևույթն Արևելքում։ Եվ այս ըմբոստացողներից պաշտպանվելու միակ միջոցը խալիֆները համարում էին հաճախակի փոփոխումները։ Համարյա յուրաքանչյուր տարի մի նոր ոստիկան էր գալիս Հայաստան, և արաբ մատենագիրներն այնքան հաճախ են հիշատակում այստեղ եղած ապստամբությունները, որ թվում է, թե դժբախտ երկրին որոշ ժամանակաշրջաններում հանգստություն բոլորովին չէր տված։ Հատկապես Ջահապին գալով, նրա հաշտություն խնդրելն ու ներում ստանալը վերջ չէր դնում Կայսիկյան ցեղի ապստամբական շարժումներին։

Նրա տեղ երևան է գալիս Սևադա անունով մի նոր ապստամբ, որ, ինչպես վկայում է Վարդանը, միևնույն տոհմից էր[3]։ Սա արաբ պատմագիրների հիշատակած Սավադ բին-Աբուլ-Համիդ Ջահհաֆին էր, գուցե առաջինի եղբորորդին[4]։ Այս Սավադ—Սևադան, իր նախորդի գործողության եղանակին հետևելով, նրանից էլ ճարպիկ է գտնվում նախարարական կալվածներ հափշտակելու գործում։ Նա ամուսնանում է Բագրատունյաց տոհմի

---

1 Վարդան, եր. 107։

2 Յաքուբի («Հանդէս Ամս.», 1907 թ., եր. 140)։

3 Վարդան, եր. 108։

4 Յաքուբի («Հանդէս Ամս.», անդ)։

մի օրիորդի հետ, որի անունն էր Արուսյակ։ Այս միջոցով նա, ինչպես ասում է Հովհաննես կաթողիկոսը, «գլորով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր»[1]։ Այս վարմունքը պատերազմ է առաջացնում նրա և Աշոտ Մսակերի ու Շապուհի միջև։ Սևադան ուներ 4000 մարդ։ Բագրատունիները այս անգամ առանձին հաջողություն չեն ունենում։ Շապուհն սպանվում է պատերազմի մեջ, իսկ Աշոտ Մսակերը մեռնում է երկու տարուց հետո[2]։

Աշոտին հաջորդում է որդին, Սմբատ սպարապետը։ Սա, տեսնելով, որ Սևադայի հետ չի կարելի խոսել զենքի լեզվով, հաշտության միջոցին է դիմում և նույնիսկ միանում է նրան, երբ նա ապստամբական գործողություններ է սկսում և՛ Հոլ ոստիկանի կամ, ավելի ճիշտ, խալիֆի դեմ։ Այս ապստամբական շարժման մեջ Սևադայի հետ էին, բացի Սմբատ սպարապետից, նաև Սյունյաց Սահակ իշխանը և մի քանի այլ նախարարներ։ Հոլը խաղաղասեր մարդ էր և, չկամենալով արյունահեղություն անել, Դավիթ կաթողիկոսին (806—833 թթ.) միջնորդ բռնեց՝ խաղաղ բանակցությունների մեջ մտնելու համար։ Սակայն նրա այս ձեռնարկությունն ապարդյուն անցավ, և Հոլ ոստիկանն ստիպված եղավ 2000 մարդով գնալ ապստամբների դեմ, որոնք ամրացել էին Հրազդան գետի վրա գտնված Կավակերտ անունով բերդում։ Արաբների հարձակումն աղետաբեր է լինում Սևադայի և նրա ընկերների համար. Սահակ Սյունին սպանվում է, մնացածները փախչում են։ Սմբատ սպարապետն այնուհետև միանգամայն փոխում է իր քաղաքական ուղղությունը։ Կավակերտի կռիվը ցույց է տալիս, որ այդպիսի փորձերով ոչինչ չի կարելի վաստակել, ուստի նա այնուհետև հավատարիմ հպատակության և օրինապահության քաղաքականություն էր վարում իբրև միակ միջոց՝ երկրում խաղաղություն պահպանելու համար։ Իսկ Սևադան դիմում է Սյունիք և այդտեղ ամրանալով Ծղուկք գավառի Շաղատ գյուղում[3], սկսում է իր ունեցած գնդով ասպատակել շրջակա աշխարհը և ամեն տեսակ նեղություն տալ մարդկանց։ Սահակ իշխանի տեղ անցավ նրա որդի Գրիգոր Սուփանը, որի հետ, ինչպես երևում է, բարեկամական հարաբերություններ էր պահպանում Սևադան։ Բայց Սյունյաց մյուս մեծ իշխան Վասակը, տեսնելով իր երկրի ավերումը, այլևս չի համբերում և գալով Ատրպատական, բերում է Բաբեկ-Բաբանին, որ ջարդում է Սևադային և փախցնում Սյունյաց աշխարհից։

10. Բաբեկ (Բաբան)։ Այսպիսով ահա Հայաստանի մեջ տեղի ունեցած կայսիկյան շարժումը վերջանում է նրանով, որ այդ երկիրը նորից դարձնում է խուրրամյան շարժման թատերաբեմ։ Բաբանը, իհարկե, նկատի ուներ իր գործի օգուտը, երբ ընդունում էր Վասակ իշխանի հրավերը Արաբների դեմ կռվելու համար, անշուշտ, նա հաշվի էր առել և Սյունյաց երկրի փոխադարձ օգնությունը։ Բայց Վասակ իշխանը վախճանվեց հենց միևնույն տարին։ Բաբանը կնության առավ նրա աղջկան և այդպիսով իրավունք ստացավ Սյունիքի մի մասն իրեն հպատակեցնելու։ Բայց, ինչպես երևում է, Սյունյաց մյուս իշխանները դիմադրություն էին ցույց տալիս Բաբանին, ուստի և նա 829 թվականին հարձակվեց Գեղարքունի գավառի վրա, որ Սյունիքի մի մասն էր կազմում, ահագին կոտորած արավ. քանդեց Մաքենացոց մեծ և հռչակավոր վանքը, այնպես որ մնաց միայն մի ջրաղաց։ Կոտորված մարդկանց թիվը հասնում էր 15 հազարի։

Բաբանի այս արշավանքներն արձագանք գտան և հարևան Արցախի նահանգում, ուր այդ միջոցին կատարվում էր մի կարևոր պատմական հեղաշրջում։ Դարավոր ժառանգական մրցությունը Միհրանյան պարսիկ և Առանշահիկ հայ տոհմերի միջև հասել էր գագաթնակետին։ Միհրանյան տոհմը թուլացել էր, սպառվելու վրա էր, իսկ Առանշահիկ տոհմն արդեն գերակշռող դիրք էր գրավել և իր ձեռքում ուներ լեռնային գլխավոր բերդերը։ Այդ անդուլ մրցությունների մի պատկերն էր այն, որ հենց նույն տարին, երբ Բաբանը բերվեց Սյունիք, Ներսեհ անունով մի իշխան, որ Սյունեցի է անվանված[1], սպանեց Միհրանյան տոհմին պատկանող Վարազ-Տրդատ իշխանին և նրա որդի Ստեփանոսին՝ Դադոյի վանքի խորաձորում, Վերինխաչենում։ Սպանությունը կատարվեց արու սերնդին հարվածելու հաշվով։ Ստեփանոսը դեռ մանուկ էր, և նրան մորթեցին մոր գոգում։ Մայրը, այդ սարսափելի դեպքից զարհուրած, վերցնում է իր աղջկան, որին ձեռք չէր տվել սպանողը և որի անունն էր Սպրամ, գիշերով, տաժանելի ուղևորություն կատարելով Արցախի լեռնային բավիղի մեջ, փախչում մտնում է Խաչենի բերդը, ուր իշխում էր Ատրներսեհ իշխանը՝ դարձյալ Սյունյաց տոհմից։ Սպրամն ամուսնանում է այդ իշխանի հետ և այսպիսով Միհրանյան տոհմը միախառնվում է հայ իշխանական տոհմի հետ։ Մի ուրիշ ճյուղ, նույն Միհրանյաններից, խնամիությամբ միացած էր Արցախի հարավային մասերում իշխող Առանշահիկ տան հետ։

Սակայն Դադոյի վանքի խորաձորի սպանությունը Միհրանյան տան վերջին ներկայացուցիչների կողմից առանց վրեժխնդրության չի մնում։ Դրանցից մեկը, Ստեփանոս Միհրանյան, որ կոչվում էր և Աբլասադ, հետևելով Սյունյաց Վասակ իշխանի օրինակին, գնում ու բերում է Բաբանին, որը կոտորում է Սյունիքի և Արցախի մի քանի գավառները, օրինակ՝ Բաղաց աշխարհ, Բերձոր։ Վերջինիս մեջ առանձնապես վնասվեցին Ուռյաց, Կոռնակաշ, Հակարի և Տափաս ավանները։ Ազատվածների մի մասը բռնեց Գորոզու բերդը և կարողացավ երկար դիմադրություն ցույց տալ, իր ձեռքում պահելով շրջակա մի քանի գավառներ։ Այս հանգամանքը նորից հարկադրում է Բաբանին անցնել Արաքսը։ Բանակ դնելով Ամարասում, որ Հաբանդ գավառի մի ավանն էր, նա խաղաղ բանակցություններ է սկսում Գորոզու բերդի հետ, հորդորելով այնտեղ ամրացածներին անձնատուր լինել։ Հաշտության ջանքերը, սակայն, շատ չնչին արդյունք են տալիս։ Քչերն են ընդունում Բաբանի առաջարկը։ Եվ վերջինս նորից վերադառնալով Ատրպատական, պատվիրում է իր զորավարին հարձակումների չդիմել, այլ միայն պաշարման պատերազմ շարունակել։ Զորավարը, Ռոստամ անունով, զանց է անում այդ պատվերը և փորձում է բերդը վերցնել բացարձակ ուժով։ Բայց չարաչար պարտություն է կրում և ստիպված է լինում վերացնել պաշարումը, հեռանալ։ Այս բոլոր չարիքների սկզբնապատճառը Ստեփանոս Աբլասադն էր։ Եվ ահա նրան էլ սպանում են։ Սպանողները երկու հոգի էին, և նրանք չազատվեցին Աբլասադի մերձավորների ձեռքից, բայց հենց սրանց սպանությամբ էլ վերջանում էր ամեն ինչ։ Ար-

[1] Յովհաննէս կաթող., Երուս., եր. 145։
[2] Վարդան, եր. 108։
[3] Մովս. Կաղանկատ., եր. 374—375։

[1] Ստ. Օրբելյան, Թիֆ., եր. 158։

լասադի քրոջ որդին, Երեցի որդի անվանված[1] Եսային, որ արաբներին շատ լավ հայտնի էր Աբու-Մուսե անունով, խաղաղասեր մարդ էր, թեև միաժամանակ և երևելի կռվող։ Իր ձեռքի տակ առնելով քեռու կալվածները, նա տիրեց ամենքին[2]։

Մինչդեռ Հայաստանը Բաբեկյան արյունոտ շահատակությունների թատերաբեմ էր դարձել, բյուզանդական կայսրությունը պակաս չէր վտանգված ներքին խլրտումներից։ Դեռ Լևոն Ե Հայկազնի ժամանակ Փոքր Ասիայում գլուխ էր բարձրացրել Թոմայի մեծ ապստամբությունը, որ գնալով սաստիկ մեծ չափեր ընդունեց, այնպես որ Միքայել Բ Թլվատն ստիպված էր իր թագավորության առաջին երեք տարիներն ամբողջապես զբաղվել այս շարժումով։ Թոման իրեն անվանում էր Իրինեի որդի Կոստանդին, հավատացնելով, թե Իրինեի հրամանով կուրացվածը Կոստանդինը չէր։ Բայց հայտնի է, որ Թոման օտար ծագում ուներ, ինչպես կարծում են ոմանք՝ Փոքր Ասիայում բնակություն հաստատած սլավոններից էր[3]։ Արկածախնդրական հանգամանքներ այդ մարդու անցյալի մեջ շատ կային։ Այսպես, նա փախել էր արաբների մոտ, երկար ժամանակ ապրել էր նրանց մեջ, վայելելով խալիֆի մեծամեծ պատիվները։ Այս հանգամանքը նրան չափազանց մեծ ծառայություններ արավ այն ժամանակ, երբ նա, վերադառնալով Փոքր Ասիա, կազմակերպեց համատարած մի ապստամբություն։ Նրա այս ձեռնարկությունն սկզբից ևեթ մեծ ժողովրդականություն գտավ։ Դրա պատճառներից գլխավորն այն էր, որ Թոման պատկերապաշտության կողմնակից էր և այդպիսով իր կողմն ուներ հույն հոգևորականության և ժողովրդի մի նշանավոր մասի համակրանքն ու աջակցությունը։ Իսկ հասարակ ժողովուրդն էլ ամբողջապես նրա կողմն անցավ, զզված լինելով կայսրների բռնակալությունից, հարկերի ծանրությունից։ Եվ բնական էր, որ Թոման ունենար իր հետևում ահագին բազմություն։ Այնպես որ նա կարողանում էր 100 հազար մարդուց բաղկացած բանակներ հանել կայսրի դեմ։ Բայց պատերազմական միջոցների առատություն Թոման ուներ և այն պատճառով, որ Մամուն խալիֆը նրան օգնում էր ամեն կերպ, թե՛ դրամ հայթայթելով, թե՛ նույնիսկ իր զորքերը նրա տրամադրության տակ դնելով։ Եվ Թոման մեծ հաջողություններ ձեռք բերեց ասիական հողի վրա։ Նա իր իշխանության տակ գցեց Բյուզանդական Հայաստանը, Փոքր Ասիայի համարյա ամբողջ տարածությունը։ Նրա զորքերի մեջ կռվում էին զանազան ազգություններ, օրինակ՝ վրացիներ, հայեր, աբխազներ։ Նույնիսկ ուժեղ նավատորմ էլ շինել տվեց նա և այդպիսով հնարավորություն ստացավ պաշարելու Կ. Պոլիսը թե՛ ծովից և թե՛ ցամաքից։ Բայց Թոմային վերջիվերջո անհաջողություն էր սպասում։ 823 թվին նա ջարդվեց Կ. Պոլսի պատերի տակ, գերի ընկավ Միքայել կայսրի ձեռքը և, իբրև պարտված, ստացավ իր արարքների հատուցումը՝ մահապատժի ենթարկվելով։

Այս պարտությունը մի մեծ անհաջողություն էր դառնում մանավանդ Մամունի համար, որը այնուհետև մենակ պիտի շարունակեր զինված պայքարը Բյուզանդիայի դեմ։ Արաբական աշխարհը սեղմում էր իր շարքերը,

---

1 Թովմա Արծրունի, Պետերբուրգ, եր. 191։

2 Մովս. Կաղանկատ., եր. 375—376։

3 Բյուզանդական տարեգիրներից մեկը հաղորդում է, թե Թոման հայ էր (Васильев, «Византия и Арабы», стр. 24)։

բազմապատկում իր եռանդը՝ կայսրությանը մահացու հարվածներ տալու համար։ Արևելքում այս միտքն ամենայն համառությամբ և եռանդով աշխատում էր իրագործել Մամունը։ Եվ երբ 829 թվին մեռավ Միքայել Թլվատը, նրան հաջորդած որդին, Թեոփիլոսը (829—842 թթ.) ժառանգություն էր ստանում արաբական հարձակումներից թուլացած և մի քանի նշանավոր երկրներ (Կրետե, Սիկիլիա) կորցրած մի պետություն։ Արաբաբյուզանդական պատերազմները նրա օրով ավելի ևս համառ ու արյունահեղ կերպարանք են ստանում, դառնալով ազգերի փոխադարձ ոչնչացման մի ահռելի գործ։ Այս հսկայական պայքարի մեջ Բաբանը և բյուզանդացիները դառնում էին բնական դաշնակիցներ, որոնց առջև կանգնած էր մի ընդհանուր թշնամի։ Եվ Թեոփիլոսն աշխատում էր օգտագործել նշանավոր աղանդապետի շարժումը, այնպես, ինչպես Մամունը մի ժամանակ օգտագործում էր Թոմայի ապստամբությունը։ Բյուզանդա-պարսկական դաշնավորման սկիզբը դրված էր դեռ Լևոն Հայկազնի ժամանակ, երբ Բաբանի զորքերի մի մասը, թվով մոտ 14 հազար, պարտություն կրելով արաբներից, անցավ Բյուզանդիա։ Նրանց գլխավորը հույներից ստացավ Թեոֆոբ անունը և դարձավ բյուզանդական նշանավոր զորավարներից մեկը, իսկ զինվորները բնակության հաստատ տեղեր ստացան և մի առանձին զորամաս կազմեցին բյուզանդական բանակում։

Առաջին արշավանքն արաբների դեմ Թեոփիլոսն սկսեց 830 թվականին։ Նրա հետ էր հայազգի Մանվել զորավարը, Մամիկոնյան տոհմից, որ բյուզանդական արքունիքում անուն էր հանել դեռ Լևոն Հայկազնի ժամանակից իբրև տաղանդավոր և քաջ զորավար, առաքինի և բարեպաշտ քրիստոնյա։ Պատերազմի դաշտում Մանվելը նկատեց կայսրին վտանգավոր պայմանների մեջ։ Նա մենակ էր մնացել, և վստահ պարսիկ զորքի հավատարմության վրա, չէր հեռանում դաշտից։ Շատ լավ իմանալով արաբերեն լեզուն, Մանվելը լսում էր, թե ինչպես պարսիկներն ու արաբները բանակցում են իրար հետ, որ առաջինները բռնեն կայսրին ու հանձնեն արաբներին, և այս բանի փոխարեն արաբները խոստանում էին թույլ տալ պարսիկներին վերադառնալ իրենց հայրենիքը։ Ուստի հայ զորավարն շտապեցնում է կայսրին, որ նա հեռանա պատերազմի դաշտից։ Բայց Թեոփիլոսը, ոչ մի վտանգ չնկատելով պարսիկների շրջանում, ընդհակառակն, ավելի մոտենում է նրանց։ Այն ժամանակ Մանվելը, հանելով իր թուրը, գնում է կայսրի վրա և, այսպիսով, բռնությամբ դուրս է բերում նրան վտանգավոր դրությունից։ Թեոփիլոսն իմանում է, որ իր կյանքն ազատել է Մանվելը և երախտագիտական շատ նշաններ է ցույց տալիս, պարգևատրելով նրան առատորեն։ Սովորական է արքունիքի նեխված մթնոլորտում, որ այսպիսի բացառիկ ուշադրությունը նախանձ և չարակամություն վառի դրանիկների և ավագանու մեջ։ Եվ սովորականի պես չարախոսություններ են շշնջում ինքնակալի ականջին, լավ իմանալով, որ ինքնակալությունն իր բնությամբ ենթակա է երախտամոռության, գիտե խաբվել և վատ գործեր անել։ Մանվելը զգաց, որ անիրավացի կերպով իրեն անվանարկում, բամբասում են։ Եվ նկատելով, որ նախանձողներն արդեն հաջողության հասնելու վրա են, թողնում է Կ. Պոլիսը և փախչում Սիրիա։ Այստեղից իմաց է տալիս խալիֆին, որ եթե իրեն ազատություն կտրվի մնալ իր կրոնին, ինքը պատրաստ է անցնել նրա կողմը և ծառայել նրան։ Մամունը, որ շատ լավ էր ճանաչում Մամիկոնյան իշխանին, ընդունում է

նրան արքայական պատիվներով և պահում է իր մոտ։ «Բյուզանդական Աքիլլեսը»[1], ինչպես անվանում է Մանվելին մի հույն պատմիչ, շատ նպաստեց, որ Մամունը հաղթություններ տանի Բյուզանդիայում և Պարսկաստանում։ Նրա ծրագրով էր, որ արաբները 830 թվին Համադանի մոտ ջարդեցին Բաբանի զորքից 60 հազար հոգի[2]։

Թեոփիլոս կայսրը շատ էր մտածում Մանվելի մասին և խորհրդակցություններ էր անում, թե ինչպես կարելի կլինի նրան նորից Բյուզանդիա վերադարձնել։ Նրան մոտիկ հոգևորականներից մեկը, Հովհաննես Գրամատիկոս120, հանձն առավ դեսպան գնալ Բաղդադ և խոսել հայ իշխանի հետ, եթե կայսրն առանձին նամակով կերաշխավորի, որ Մանվելը ոչ մի քննության չի ենթարկվի և կատարյալ ապահովություն կվայելի Բյուզանդիա վերադառնալու դեպքում։ Այս իմաստով գրավոր հավաստիացում ստանալով, Հովհաննեսը գնում է Մամունի մոտ, պատրվակ բռնելով, թե ուղարկված է կայսրից իբրև հոգևորական՝ գերի և բանտարկված հույներին այցելելու համար։ Գտնելով, սակայն, հարմար միջոց, նա առանձին խոսում է Մանվելի հետ, համոզում է նրան վերադառնալ իր նախկին պաշտոնին, վստահ լինելով, որ կայսրը ոչինչ չի անի նրան վնասելու համար։ Մանվելը համաձայնում է։ Եվ մի անգամ, երբ արաբական զորքն արշավում էր դեպի բյուզանդական սահմանները, նա գաղտնի բանակցություններ սկսեց բյուզանդական զորավարների հետ, պայմանավորվելով, թե երբ ինքը կարող էր անցնել նրանց կողմը։ Բայց և այնպես, չկամենալով գաղտնի փախած լինել, նա հեռանում է արաբական բանակից խալիֆի որդու հետ որսի։ Երբ բավական հեռանում են, Մամիկոնյանը հայտնում է նրան, թե ինքը գնում է նորից բյուզանդացիների մոտ։ Եվ արտանակելով իր նժույգը, արագ անցնում է Կապադովկիայի սահմանն ու դիմում Կ. Պոլիս։ Թեոփիլոս կայսրը նրան, ճիշտ որ, ընդունում է անկեղծ ուրախությամբ և առաջվանից ավելի շատ պատիվներ է անում իր քաջ զորավարին[3]։

837 թվին Թեոփիլոսն ստիպված է լինում մի նոր արշավանք սկսել արաբների դեմ։ Պատճառը դարձյալ Բաբանն էր։ Խուրամյաններն նեղ տեղ էին ընկել։ Խալիֆ Մուհամմեդ էլ-Մոթասիմը, որ չորս տարի առաջ հա-

[1] **Васильев,** «Византия и Арабы», стр. 129.

[2] Ibid, стр. 127.

[3] Ibid, прим., стр. 128—129. *Բայց այսպես չվերաբերվեց Թեոփիլոս կայսրը մի ուրիշ հայ իշխանի, որ կոչվում էր Մուշեղ-Ալեքս, և հավանաբար, դարձյալ Մամիկոնյան տոհմից էր։ Սիրահարվելով Մուշեղի գեղեցիկ արտաքինի վրա, կայսրը նրան ամուսնացրեց իր աղջկա հետ և որովհետև դեռ արու զավակ չուներ, նրան նշանակեց իր թագի ժառանգ և կեսար անվանեց։ Մուշեղն էլ, իբրև չափազանց բացառիկ բախտի արժանացած մարդ, պալատական ինտրիգների ցանցի մեջ է ընկնում։ Կայսրին շատ բան են ասում նրա մասին, բայց նա լռում է իր աղջկա պատվի համար։ Տարաբախտաբար, մեռնում է Մուշեղի կինը և կայսրն էլ արու զավակ է ունենում։ Եվ ահա հարկավոր է հեռացնել թագաժառանգ հային։ Կայսրը փոխում է իր վերաբերմունքը, և Մուշեղը, զգալով, որ վատություն է պատրաստվում, հեռանում է արքունիքից։ Կայսրը մի եպիսկոպոսի միջնորդությունն է խնդրում Մուշեղի հետ հաշտվելու համար։ Եվ երբ եպիսկոպոսը, ազնիվ խոսք տալով Մուշեղին, տանում է կայսրի մոտ, սա դրժում է իր խոստումը, ծեծել է տալիս Մուշեղին և նրա կալքը հարքունին գրավում։ Եպիսկոպոսը եկեղեցում հիշեցնում է Թեոփիլոսին իր ուխտադրժությունը և այս հանդիմանության համար սաստիկ ծեծվում է ու աքսորվում։ Բայց հետո կայսրը ներում է թե՛ եպիսկոպոսին և թե՛ Մուշեղին։ Վերջինս, սակայն, հրաժարվում է աշխարհից և վանք գնում* (Չամչեան, *Բ, եր. 435—437)։*

ջորդել էր Մամունին (833—842 թթ.), ամենաեռանդուն միջոցներ ձեռք առավ պարսկական ապստամբության դեմ, կենտրոնացնելով մի ահագին բանակ և գլխավոր հրամանատար նշանակելով իր երևելի զորավար Աֆշինին, որ թուրքական ծագում ուներ, նույնիսկ մահմեդական էլ չէր, այլ զրադաշտական էր։ Բաբանը դեսպան ուղարկեց Թեոփիլոսի մոտ, խնդրում էր, որ նա մտնի արաբական սահմաններից ներս և խստությամբ առաջ տանի արշավանքը։ Ընկերավարական աղանդավորը հավատացնում էր, թե Մոթասիմը ինչ զորք ունեցել է, ուղարկել է իր դեմ, ուղարկել է նույնիսկ իր դերձակին ու խոհարարին, որովհետև այլևս մարդ չունի. կայսրը թող, ուրեմն, շտապի օգտվել այս բարեպատեհ հանգամանքից։ Որպեսզի ավելի ևս գրավի Թեոփիլոսին, Բաբանը դրական խոստում էր անում, թե պատերազմից հետո ինքն ու իր բոլոր հետևողները քրիստոնեություն կընդունեն։ Համաձայնություն տալով իր դաշնակցի առաջարկին, Թեոփիլոսը, մի ահագին բանակի գլուխ անցած՝ արշավեց դեպի Սիրիա։ Ոչ մի դիմադրություն չտեսավ նա.— խալիֆը, ճիշտ որ, իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Բաբանի դեմ և առժամանակ թույլ տվեց, որ բյուզանդացիներն անեն ինչ ուզում են։ Կայսրի միտքն էր Բաբանին օգնության գնալ, այս պատճառով էլ նրա զորքի մի մասն առաջանում է մինչև Մելիտինե և այդ կողմերից, երևի, շարժվում է Հայաստանի վրայով դեպի Արևելք։ Հավանաբար այս շարժման խուլ և անորոշ արձագանքն է, որ մնացել է մեր պատմագրություններից մեկի մեջ[1]։ Այս անորոշությունից կարելի է կռահել այնքանը, որ հոռոմները հասան մինչև Գեղարքունի գավառը, ավերելով շատ ավաններ և անխնա կոտորելով ազգաբնակությունը։ Նույնպիսի ավերումներ կատարեցին և Բասենում։ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն էր տրորվել իր երկրում կռվող մեծ պետությունների ոտքերի տակ։ Հոռոմների անգթությունները հայերի վերաբերմամբ ուրիշ բանով բացատրել չի կարելի, բայց միայն նրանով, որ հայ իշխանները պարտավորված էին արաբների շարքերում կռվել նրանց դեմ։ Բյուզանդացիները խոշոր կորուստներ ունեցան, մանավանդ Վանանդ գավառում, և այս հանգամանքն ավելի ևս նրանց պիտի կատաղեցներ երկրի ազգաբնակության դեմ, որքան և սա ընդհանրապես խաղաղ և անմեղ լիներ։ Թեոփիլոս կայսրն այս արշավանքի ժամանակ առհասարակ մեծ անգթություններ էր ցույց տալիս։ Այսպես, վերցնելով Սիրիայի Զապետրա քաղաքը, բյուզանդացիները այրեցին, բոլոր տղամարդկանց կոտորեցին, իսկ կանանց և երեխաներին գերի տարան։ Այսպիսի վիճակի ենթարկվեցին և Մելիտինե ու Սամոսատ քաղաքները։ Բյուզանդական այս անգթությունների վրեժն արաբները հետո պիտի հանեին ավելի սարսափելի գազանություններով[2]։

Սակայն պարսկական ապստամբությունը ոչ մի օգուտ չստացավ Թեոփիլոս կայսրի այս հաղթությունից։ Բաբանը, Աֆշինից հաղթված, իր ամրությունները կորցրած, ապաստան էր որոնում, և ավելի լավը չէր կարող գտնել, քան Հայաստանի այն ամուր լեռնաստանում—Սյունիք և Արցախ,— ուր նա ուներ ազգակցական կապեր, ծանոթություններ և, դուցե, նույնիսկ գաղափարական կողմնակիցներ։ Եվ 837 թվականի վերջին նա

[1] Ստեփանոս Ասողիկ, *«Պատմ. Տիեզեր.», Պետեր., 1885, եր. 144։*

[2] **Васильев,** «Виз. и Арабы», стр. 113—115.

փախավ այդ կողմերը։ Արաբական աղբյուրները, որոնք առհասարակ շատ լավատեղյակ են, մի շարք մանրամասնություններ են հաղորդում հռչակավոր աղանդապետի վերջին օրերից։ Այսպես, Յաքուբին ասում է, թե Աֆշինը մի միլիոն դրամ խոստացավ Հայաստանի և Ատրպատականի իշխաններին, եթե նրանք կգտնեն և կբռնեն Բաբանին[1]։ Իսկ Տաբարին ավելացնում է, թե Աֆշինը միաժամանակ հրամայեց հայ իշխաններին, որ իրենց լեռներում խիստ հսկողություն ունենան ճանապարհների վրա և անցնողներին բռնելով, իրեն իմաց տան։ Սմբատի որդի Սահլ[2] իշխանը (Սահլ իբն-Սմբատ) իմանալով, թե որտեղ է թաքնված Բաբանը, գնաց նրա մոտ և ասաց. «Ե՛կ ինձ մոտ՝ իմ ամրոցը, որ քեզ ապաստան կլինի, իսկ ես՝ քո ծառան. մնա այնտեղ քո ուղեկիցների հետ, ապա կմտածես քո անելիքը»։ Բաբանի հետ էր և իր եղբայր Աբդուլլահը։ Պայմանավորվում են, որ եղբայրը գնա Ստեփանոսի որդու ամրոցը, իսկ ինքը՝ Սահլի մոտ։ Սահլը իմաց է տալիս Աֆշինին, որը և մարդիկ է ուղարկում Բաբանին ձերբակալելու համար։ Սահլը մի օր ասում է Բաբանին. «Տեղս ախորժալի է, իսկ ամրոցի օդը քեզ համար ծանր է, առավոտյան ժամին գնանք որսի»։ Բաբանը համաձայնություն է տալիս։ Որսատեղում դարան մտած էին Աֆշինի մարդիկ, որոնք և ձերբակալեցին նրան։ Իսկ Աբդուլլահը, որ ապաստանած էր Իսայ իբն-Յուսուփ իբն Ստեփանոսի մոտ[3], նույնպես ձերբակալվեց Աֆշինի հրամանով և հանձնվեց արաբներին[4]։ Սահլ իշխանն ստացավ Աֆշինի խոստացած միլիոնը[5]։ Իսկ Բաբանն իր եղբոր հետ տարվեց Բաղդադ և այնտեղ տանջալի մահվան ենթարկվեց[6]։ Ընկերավարական շարժումը Պարսկաստանում վերջնականապես խեղդված էր։

11. Տարոն-Վասպուրականի ապստամբությունը։ *Չնայած ներքին և արտաքին հաջողություններին, որոնք ցույց էին տալիս, թե Աբբասյանների ուժը շատ մեծ է, խալիֆայության անկումը գնալով ավելի և ավելի ակներև փաստ էր դառնում։* Հարցը պետության ներկայացրած ուժի մեջ չէր, այլ այն քայքայիչ հանգամանքների, որոնք առաջանում էին զինվորական հզորություն ստեղծելու ջանքերից։ Մութասիմն եթե ահարկու բանակներ էր ուղարկում բյուզանդացիների դեմ, Եգիպտոսի և Պարսկաստանի ապստամբների դեմ—այդ՝ շնորհիվ այն բանի էր, որ նա վերջնականապես կազմեց մի խոշոր վարձկան բանակ, որի մեջ 70 հազար մարդ կար, գլխավորապես, ինչպես արդեն նկատել ենք, թուրքեր։ Այդ բանակը մի մեծ և հաստ սուր էր, բայց երկսայրի։ Ինչպես պրետորյան զինվորները հին Հռոմում, Բաղդադի վարձկան զորքը հաղթություններ էր տալիս իր տիրոջը, բայց չափազանց թանկ գնով։ Միայն նրա ռոճիկն ու ընթացիկ ծախսերը կազմում էին տարեկան 2 միլիոն ոսկի դինար (ասել է՝ մոտ 6 միլիոն ռուբլի), իսկ այսպիսի մի գումար ստանալու համար պետք է վերց-

[1] «Հանդ. Ամս.», 1907, էր. 141։

2 Սահլը Խաչենի բերդի տեր Առրներսեհի հայրն էր, Սյունյաց տոհմից։

3 Անշուշտ, սա այն իշխանն էր, որ հայտնի է Թովմա Արծրունու և Կաղանկատվացու Պատմությունների մեջ «Որիցու որդի Եսայի», բայց ավելի հաճախ՝ Աբու-Մուսե անուններով մի հերոս, ինչպես կտեսնենք շուտով։

[4] Տաբարի, «Հանդ. Ամս.», 1906, էր. 215։

[5] Վարդան Բարձրբերդցին գրում է. «Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱշնէն պարգևս հազարացն հազար կշիռ արծաթոյ և այլևս հարիւր հազար առնու ի նմանէ» (էր. 109)։

6 **Васильев**, стр. 118.

նել երկու տարվա ամբողջ հողային տուրքը (խարաջ)[1]։ Ամենից առաջ, ուրեմն, տուժում էր պետական գանձարանը։ Բայց վարձկանները, բնականաբար, իբրև ուժի ներկայացուցիչներ, պիտի իշխանություն էլ ունենային։ Հետզհետե նրանց ձեռքն անցավ պետության վարչական մեքենան և խալիֆներն էլ դառնում էին նրանց ձեռքին խաղալիք։ Եվ գոռոզ ու հաղթական իսլամի խալիֆաթը այնպիսի ստորացումների էր ենթարկվում, որոնք քայքայում էին նրա հեղինակությունը թե՛ դրսում և թե՛ ներսում։

Մենք արդեն նկատեցինք, որ խալիֆաթի այս աստիճանական անկումը տանում էր դեպի անխուսափելի մի ելք—դեպի մեծ պետության անդամահատումը, բաժանումը մանր մասերի, առանձին-առանձին անկախությունների։ Այս փաստն սկսել էր իրականանալ Պարսկաստանում 9-րդ դարի քսանական թվականներից, այն էլ առանց ցնցումների, նույնիսկ առանց արյունհեղության։ Առաջին օրինակ տվողը Խորասանն էր, այն երկիրը, որ Աբբասյանների թև ու թիկունք էր հանդիսացել՝ խալիֆաթը ձեռք գցելու համար։ 821 թվականին Մամուն խալիֆը Խորասանի կառավարիչ էր նշանակում իր երևելի զորապետներից մեկին, որի անունը Թահիր էր և ուներ պարսկական ծագում։ Թահիրի առաջին գործը եղավ ուրբաթ օրվա խուդբեի (աղոթքի) մեջ խալիֆի անվան հիշատակությունը արգելել։ Թեև Թահիրը դրանից հետո շատ չանցած մեռավ, բայց նա իրապես անկախության գործ էր հանձնում իր ժառանգներին, որոնք պինդ բռնեցին այդ ժառանգությունը, և խալիֆն ստիպված եղավ ճանաչել Թահիրյան հարստությունը՝ լոկ այն ձևական սահմանափակումով, որ այդ տոհմի ամեն մի նոր վեհապետ պիտի ճանաչվեր Բաղդադի արքունիքի կողմից։ Այսպիսով, գոյություն էր ստանում առաջին գավառական անկախությունն արաբական մեծ պետության մեջ։ Այդ մի նախատիպ էր, որին տարիների ընթացքում հետևեցին ուրիշ օրինակներ։ Ժամանակագրական կարգով երկրորդ անկախությունը հիմնվեց առաջինից չորս տարի հետո (825 թ.), բայց ավելի համեստ չափերով, Պարսկաստանի արևմտյան մասում, Համադան քաղաքի մեջ։ Հիմնադիրն էր Դուլեֆ անունով մեկը, որի ժառանգներին հաջողվեց իրենց կալվածներին միացնել նույնիսկ Սպահանն ու Նեհավենդը[2]։ Այսպիսով կազմվեց Դուլեֆյան հարստությունը։

Նույնանման ձեռնարկություններ, հարկավ, ուրիշ տեղերում էլ գոյություն ունեին։ Այսպես, օրինակ, Վրաստանում Բագրատունիների ճյուղը տեղային ընդարձակ իշխանություն կազմելու աշխատանքների վրա էր։ Զարմանալի չէր, իհարկե, եթե այդպիսի ձգտում կենդանի լիներ և Հայաստանում, ուր մենք տեսնում ենք շարունակական ապստամբություններ արաբական լուծը թեթևացնելու համար։ Մի նոր փորձ անելու հարմար միջոց ներկայացնում էր Մութասիմի մահվան հետևած կարճ ժամանակը (842—847 թթ.), երբ գահն անցնում էր Հարուն-էլ-Վաթիք Բիլլահին (նշանակում է՝ աստծու վրա հուսացող)։ Այս անընդունակ և ապականված մարդը գիտեր միայն իր մոլություններին հագուրդ տալը, և եթե դրանից դուրս մնում էր մի այլ բան, որ կարող էր հետաքրքրել նրան, այդ միայն ստանավորներ և զվարճալի պատմություններ լսելն էր[3]։ Նա զզվանք հա-

[1] Мюллер, т. II, стр. 216.

[2] Стэнли **Луи-Пуль**, «Мусульманские династии», СПБ, 1899, стр. 102

[3] **Мюллер**, т. II, стр. 216—217.

րուցեց Բաղդադի ազգաբնակության մեջ և նրա դեմ պատրաստվեց մի ընդհանուր ապստամբություն, որ, սակայն, շպայթեց բոլորովին պատահական պատճառով։ Վախեցած խալիֆն ինքնապաշտպանություն որոնեց, բոլորովին անձնատուր լինելով վարձկան թուրքերին, որոնք այն ժամանակից դառնում էին խալիֆայության իսկական տերերը։

Ահա այս միջոցին է, որ Հայաստանում նորից ծայր է տալիս ազատագրական շարժումը։ Մանրամասնորեն չգիտենք, թե ինչ ընդհանուր պահանջներ և նպատակներ էր դնում իր առջև այս նոր խմորումը։ Հայտնի է այսքանը, որ ապստամբական տրամադրություն հրահրողը դարձյալ հարկապահանջությունն էր։ Հայաստանն ուզում էր մնալ խալիֆներին հարկատու, բայց պայմանով, որ հարկահանությունը չկատարվի արաբների ձեռքով, արաբական զորքերի օգնությամբ։ Երկիրը կտա այն, ինչ պիտի տացվի նրանից, բայց կտա ինքն իր միջոցներով, առանց ոստիկանների և զորականների։ Մի խոսքով, Հայաստանն ուզում էր վերադառնալ իր ներքին, վարչական ինքնավարության, որ նա ուներ անցյալում, արաբական տիրապետությունից առաջ ու արաբական տիրապետության սկզբին և իրագործում էր իր նախարարների միջոցով։

Դիմելով այն ուժին, որ Հայոց աշխարհը կարող էր առաջարկել իր այս պահանջները պաշտպանելու համար, մենք տեսնում ենք մի շատ նպաստավոր դասավորություն, որ հազվագյուտներից կարելի է համարել հայ ավատական իրականության մեջ։ Բագրատունյաց տոհմն է դրության տերը, նա միացնում է իր ձեռքի տակ Հայաստանի կարևոր նահանգներն ու գավառները։ Աշոտ Մսակերի երկու որդիները—Բագրատ և Սմբատ— կարևոր դիրք են գրավում։ Բագրատը Տարոնում է իշխում և իր ձեռքի տակ ունի նաև Սասունը։ Նա «հրամանատար էր» և «իշխան իշխանաց Հայոց»[1]։ Եվ նրա հեղինակությունը մինչև այն աստիճան մեծ էր, որ հրամայեց կաթողիկոս չճանաչել Հովհաննես Կոտայեցուն (833—855 թթ.), քանի որ նա ընտրվել էր առանց իր հավանության։ Եվ այս հրամանն այն աստիճան բարձր էր, որ կաթողիկոսն ստիպված եղավ քաշվել Այրից վանքը, մինչև որ քննություն կատարվեց, և իշխանապետը ետ վերցրեց իր արգելքը։ Նրա կրտսեր եղբայր Սմբատը Հայոց սպարապետն էր և բնակության տեղ էր հաստատել Շիրակի Անիում, ուր զբաղված էր իր ընտանեկան գործերով։ Ուրեմն, Հայաստանի կարևորագույն գավառներից մեկն էլ, Շիրակը, կարող էր անմիջապես կապված համարվել Տարոնի հետ և, բացի դրանից՝ սպարապետության հրամանի տակ միացնել իրեն նաև շատ ուրիշ գավառներ Այրարատյան նահանգից։ Այս երկու մեծ խմբերին հարում էր Վասպուրականի մեծ նահանգը, բաժանված Արծրունյաց և այլ տոհմերին պատկանող բազմաթիվ նախարարների միջև, որոնք, սակայն, ճանաչում էին մի գահերեց իշխան, և դա իր դիրքով և քաջություններով շատ հռչակված Աշոտն էր, Համզայի[2] որդին և Բագրատի ու Սմբատի քրոջ որդին, քանի որ Համզայի կինն Աշոտ Մսակերի աղջիկ Հռիփսիմեն էր, որ այդ միջոցին դեռ կենդանի էր և խոշոր դեր էր կատարում երկրի վարչության մեջ, փոխարինելով իր հանգուցյալ ամուսնուն։ Թովմա Արծրունին այսպիսի խոսքերով է վեր հանում նրա որդի Աշոտի փառքը. «Այր քաջայայտ և ճոխ ի բարձրագոյնս. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատացելոց ի միայնամարտիկ զինուորութեան։ Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեացս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ. մանաւանդ որ ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս»[1]։ Աշոտի ուժը գլխավորապես նրանում էր, որ նա կարողանում էր Վասպուրականի և հարևան երկրների բազմաթիվ նախարարությունները հավաքել մի կուռ միության մեջ։ Թե ո՛րքան մանր մասերի էին կտրատված այդ երկրները, կարելի է հետևցնել այն հանգամանքից, որ միայն Արծրունիների տոհմից այդ միության մեջ մտնում էին 16 իշխաններ[2]։

Այսպես էին հնարավորությունները։ Սակայն իրականում հաստատուն փաստ էր դառնում այն, որ ապագա գործողությունների մեջ միայն Տարոնն ու Վասպուրականն են կարող միացնել իրենց ուժերը։ Շիրակի Բագրատունին իրեն առանձնացնում էր իր եղբորից և քեռորդուց։ Սմբատ սպարապետն ուրիշ հայացքներ ուներ, որոնց մեջ չէր մտնում արյունհեղությունը։ Բագրատունյաց քաղաքականությունը բաժանված էր երկու ճյուղի. մեկը, հանձին Բագարատի, ընթանում էր նախկին, փորձված ճանապարհով—ըմբոստության և արյունհեղության, մյուսը, հանձին Սմբատի, դարձյալ հին, բայց դատապարտված ճանապարհով—հաշտության և համաձայնության։

Դուրս բերելով գավառական միությունների հնարավորությունից Սմբատյան Շիրակը, մնում էր, այնուամենայնիվ, բավականաչափ խոշոր մի դաշնակցություն՝ լեռնային երկրում ինքնապաշտպանության զորեղ միջոցներ զարգացնելու համար։ Բայց տարաբախտությունն այն էր, որ հայկական այս նոր ապստամբությունը գլուխ էր գալիս այնպիսի մի ժամանակ, երբ էլ-Վաթիք-Բիլլահը վերջացրել էր իր անտավոր կյանքը, իսկ գահն անցել էր նրա եղբայր Ջաֆարին (ըստ մեր պատմագիրների՝ Ջափր), որ սկսեց ինքն իրեն անվանել «էլ-Մոթավաքիլ-Ալալլահի» (իր գործերի մեջ աստծուն ապավինած)։ Սակայն այս հորջորջումը մեկն էր այն տմարդի սրբապղծություններից, որոնք այնքան առատ են մարդկային պատմության և մանավանդ աշխարհի տեր հանդիսացած մարդկանց պատմության մեջ։ Այս Մոթավաքիլ-Ալալլահին (847—861 թթ.) իր չարագործություններով և գազանային բռնակալությամբ այնքան վատ համբավ է ստացել, որ նրան անվանում են «Արաբների Ներոն»[3]։ «Դա ամենաանախորժ տիպի մի Աբբասյան էր,— ասում է իսլամի նորագույն պատմագիրներից մեկը,— ուխտա-

[1] Յովհաննէս կաթ., եր. 147։

[2] Այսպես՝ ըստ արաբական աղբյուրների (Աշոտ իբն-Համզա)։

[1] Թովմա Արծրունի, եր. 107 (տպ. Պետերբ.)։

[2] Ահա մեծ և մանր ավատական տերերի այդ դաշնակցության ցուցակը. 1. Արծրունյաց տոհմից— 1. Աշոտ և իր եղբայրները՝ Գուրգեն և Գրիգոր, ապա Վահան, Վասակ, Մուշեղ. Ապուպելճ, Գուրգեն, Վասակ, Ապուչափր, Մուշեղ, Ապումայա, Վասակ, Վահան, Համազասպ, Վասակ՝ որդի Գրիգորի, Ապումկդեմ, Մեհրուժան, Գրիգոր. 2. Բագրատունյաց տոհմից՝ Թոռնիկի որդին, 3. Ամատունյաց տոհմից՝ Շապուհ իր ութ եղբայրներով. 4. Գնունյաց տոհմից՝ Հազոյի որդի Գրիգոր իր վեց եղբայրներով. 5. Ընտրունյաց տոհմից՝ Արտավազդ իր յոթն եղբայրներով. 6. Սմբատ Ապահունի. 7. Գրիգոր Քաչբերունի. 8. Վահան Հավնունի. 9. Դավիթ Սեպուհ. 10. Գագրիկ Ապուհարապ. 11. Թոդորոս Վարագխ. 12. Խոսրով Վահեւունի. 13. Խոսրով Ակեացի. 14. Վարդան Գարայեղեն. 15. Սմբատ Մարացյան. 16. Սահակ Սեպուհ. 17. Պատրիկ Անձևացի, 18. Գորգ Հարմացի. 19. Դավիթ Գունգաղար (Թով. Արծ., եր. 109)։

[3] Sédilot, „Hist. des Arabes“, t. I, p. 246.

դրուժ, ապերախտ և անգութ՝ ինչպես Աբբասյաններից շատերը, նոր խալիֆըն աչքի էր ընկնում այնպիսի կամայականությամբ և անառակությամբ, որոնք այդ գարշելի ընտանիքի շատ անդամներին չէին հատուկ»[1]։ Անգթությունը նրա մեջ անցնում էր ամեն մի չափ։ Այսպես, իր մի վեզիրին պատժելու համար նրան ողջ-ողջ այրեց։ Իր պալատը լցրել էր վայրի գազաններով ու օձերով և թույլ չէր տալիս իր դրանիկներին փախչել նրանցից կամ պաշտպանվել։ Անդադար երկյուղ կրելով դավադրությունից, Մոթավաքիլը մի օր ճաշի կանչեց իր դրանիկներին և կոտորել տվեց ամենքին, ինքն էլ մասնակցելով կոտորածին[2]։ Միաժամանակ նա մարմնացնում էր ամենամռայլ մի ռեակցիա իսլամական առաջադիմության դեմ։ Տեսնելով, որ միայն վարձկան զինվորության վրա հիմնվել չի կարելի, քանի որ այդ դեպքում ժողովուրդն էր երես դարձնում խալիֆական գահից, նա, հավասարակշռություն ստեղծելու համար, մյուս կողմից հենվել սկսեց արաբական ուղղահավատության վրա, որպեսզի դրանով գրավի ժողովրդին ու հոգևորականությանը։ Այս նպատակով հալածվում էր այն ամենը, ինչ ազատ միտք էր ներկայացնում, իբրև ընդունված ավանդությունների ներհակություն։ Նախընթաց Աբբասյաններից մի քանիսի ժամանակ Բաղդադի արքունիքն ազատ մտածության, նույնիսկ և անհավատության վայր էր հանդիսանում և այդ պատճառով էլ հովանավորություն էին վայելում փիլիսոփայությունը և գիտության այլ ճյուղերը։ Կուրանը պաշտոնապես հայտարարված էր ստեղծված գիրք և ոչ թե երկնքից իջած, ինչպես հավատացնում էր արաբական ուղղահավատությունը։ Ահա այս ազատական կարծիքների դեմ զինվեց Մոթավաքիլը։ Նա հալածեց ազատ մտածողներին, գիտնականներին։ Բայց կատաղի էր նրա թշնամությունը մանավանդ քրիստոնյաների և հրեաների դեմ։ Մենք գիտենք արդեն, որ Օմար խալիֆի ժամանակ մշակված էին մի շարք ստորացուցիչ կանոններ ոչ-իսլամների համար, որպեսզի մուսլիմները տարբերվեն նրանցից։ Այսպես, քրիստոնյաները և ուրիշ այլակրոն հպատակներն իրավունք չունեին ձի հեծնել, զենք կրել, թանկագին շորեր հագնել, բարձր ու գեղեցիկ տներ շինել և այլն։ Այս կանոններն ուրիշ խալիֆների ժամանակ զանց էին առնված, բայց Մոթավաքիլը նորից վերականգնեց դրանք ամենայն խստությամբ։ Եվ այսպիսով, նորից բռնկվելու դյուրավառ նյութեր ստացավ մահմեդական ֆանատիկոսությունը։

Ահա այսպիսի մի թագավորի հրամանով էր, որ 850 թվականին ոստիկանի պաշտոնով Հայաստան էր գնում Աբուսեթը (Աբու-Սաիդ)։ Իր հետ, ըստ սովորականին, նա տանում էր մի զորաբաժին և հրաման՝ հավաքելու բոլոր հարկերը։ Նրա ճանապարհն Աղձնյաց նահանգով էր անցնում, այսինքն Միջագետքից Սղերդի և Բաղեշի ուղղությամբ։ Բագարատ իշխանապետը, լուր առնելով այդ մասին, նախարարական մի պատգամավորություն է ուղարկում համոզելու ոստիկանին, որ ետ դառնա, չմտնի Հայոց սահմանները։ Իբրև ապացույց, թե այս խոսքերով ապստամբություն չէր հայտարարվում, պատգամավորությունն իր հետ տանում էր ընծաներ ոսկուց, արծաթից ու թանկարժեք կտորներից, միևնույն ժամանակ հավատացնում էր նոր ոստիկանին, թե Հայոց աշխարհն իր հարկը կուղարկի անմիջապես պետական գանձարանը։ Աբուսեթը պատգամավորության հետ

[1] **Мюллер,** т. II, стр. 217.
[2] **Sédillot,** t. I, p. **246.**

խոսելիս ուզում է իմանալ, թե ո՛ւմ հետ գործ ունի ինքը և տեսնում է իր առջև հարավային Հայաստանի մի սերտ դաշնակցություն, որ չէր էլ կարելի բաժանել պառակտումների միջոցով։ Ուստի նա չի շարունակում իր ճանապարհը։ Իր հետ եղած զորքը բաժանելով երկու մասի, նա մի մասը հանձնում է Աղձնիքի կառավարիչ Մուսային, մյուսը՝ Ծովափի կոչված Ալայ անունով մեկին։ Վերջինիս հրամայում է մտնել Վասպուրական և հարկահանություն կատարել, իսկ Մուսային ուղարկում է Տարոն՝ Բագարատին պատժելու համար։ Ինքն Աբուսեթն Աղձնիքում հաստատված արաբական գաղթականության ներկայացուցիչներից և Պարսկաստանի կողմերը կառավարող արաբ պաշտոնակալներից թղթեր առնելով, որոնց մեջ հայերի ցույց տված վարմունքը որակված էր իբրև ապստամբություն, գնում է խալիֆի մոտ, Սամառա, որ Բաղդադից հեռու չէր և որ Մոթավաքիլն իր համար բնակության տեղ էր ընտրել։

Իսկ այդ միջոցին Ծովափի Ալայը Պարսկաստանի կողմով մտնում էր Աղբակ գավառը, ուր Արծրունիների ոստան Ադամակերտը կամ Հադամակերտն[1] էր գտնվում և իսկույն ասպատակներ է փռում երկրի զանազան կողմերում, կողոպտում է Անձևացյաց գավառը։ Աշոտ Արծրունին նրան թուղթ է ուղարկում, որի մեջ ասում էր. «Հայոց աշխարհն ես եկել արքունի հրամանով, որպեսզի ստանաս արքունի հարկերը։ Մի՞թե արքունիքից հրաման էլ ունես, որ գերես ու գոփես, ավերակ դարձնես մեր աշխարհը։ Բայց մենք երբեք թագավորի հրամանը զանց չենք արել և ապստամբների, ստահակների կամ տերերին ծառայելուց խուսափողների նման արքունի հարկերը խափանող չենք եղել։ Ապա ուրեմն վեր կաց գնա այստեղից Հայոց մի քաղաք, ինչպես օրենք է աշխարհակալների համար, և մենք կուղարկենք քեզ հարկերը և քո միտքն էլ կքաղցրացնենք, իսկ դու իմ երկիրն անխնա ասպատակելով ավերակ չես դարձնի»։ Սակայն Ալայը նույնիսկ պատասխան էլ չկամեցավ տալ Վասպուրականի գահերեց իշխանին և շարունակեց իր զորքով շրջել երկրի զանազան կողմերը, ասպատակել ու ավերել։ Ապա գալիս կանգ է առնում Արճուճ գյուղում, բլուրների վրա դիտող պահակներ դնելով։

Աշոտը, սաստիկ վրդովվելով այս արհամարհական վերաբերմունքից, հավաքում է իր և դաշնակից իշխանների զորքերը, արշավում է Ալայի վրա։ Արաբական պահակներն իմաց են տալիս իրենց զորապետին հայոց շարժումը, և սկսվում է ճակատամարտը։ Աշոտը, բաժանելով իր բանակը երեք մասի և մեկը վերցնելով իր հրամանի տակ, միաժամանակ իրեն է վերապահում ամբողջ ճակատի ղեկավարությունը։ Կռիվը շատ արյունահեղ էր։ Հայերը վնասներ շատ չունեցան, հովիտը լցրին թշնամու դիակներով, այնքան ահավոր էր նրանց հարձակողական թափը։ Իրենց քաջություններով առանձնապես աչքի ընկան Աշոտի եղբայր Գուրգենը և Վահան Հավնունին։ Ալայը հազիվ կարողացավ քիչ մարդկանցով փախչել Բերկրիի կողմը, թողնելով հայերի ձեռքին իր բանակի ամբողջ հարուստ ավարը։ Այս կռվում միայն Վահան Արծրունին էր, մեկն այն չորս Վահաններից, որոնք գտնվում էին Աշոտի բանակում, խանգարում նախարարական միությունը, նենգությամբ անցնելով արաբների կողմը և սաստիկ պատերազմ մղելով հայոց բանակի դեմ։ Պատճառն այն էր, որ նա իր ապարանքի

[1] Հավանորեն այժմյան Բաշ-կալեի մոտ, ուր Բարդուղիմեոս առաքյալի վանքն է։

ներքնահարկում, գետնի տակ թաղված կարասներ ուներ, լիքը գանձերով և վախենում էր, թե արաբները կքանդեն գետինը, կգտնեն կարասները և կհափշտակեն իր հարստությունները[1]։

Այս հաղթության վրա էր Աշոտ Արծրունին, երբ լուր առավ, թե իր քեռին Տարոնում նեղված դրության մեջ է։ Բագարատ իշխանը կանչում էր նրան շտապ օգնության հասնելու։ Աղձնիքի կառավարիչ Մուսան, որին Աբուսեթը հանձնել էր իր բանակի մյուս մասը, մտել էր Տարոն և արդեն խիստ ընդհարումներ էր ունեցել Բագարատի հետ։ Այս Մուսան, արաբական հեղինակների ասելով, կոչվում էր Մուսա իբն-Զուրաթ, ապրում էր Բաղեշում և, որ գլխավորն է, Բագարատ իշխանի փեսան էր, ամուսնացած լինելով նրա աղջկա հետ։ Ինքն արաբ էր և ուներ վեց եղբայր[2]։ Արաբների թիվը շատ էր, ուստի Բագարատը, չկարողանալով նրանց առաջն առնել, նահանջել էր, և թշնամին, անցնելով հայոց իշխանի ձմեռոցը կազմող քաղաքի (Մուշ) առջևով, բռնել էր ամբողջ դաշտը։ Աշոտը, առանց ժամանակ կորցնելու, շտապեց օգնության գնալ Տարոնին, տանելով իր հետ և դաշնակից նախարարական զորքը։ Այս արշավանքը, բայց մանավանդ Աշոտի գործողությունները, ինչպես երևում է, ժամանակին մեծ տպավորություն են թողել ժողովրդի վրա, և Թովման, արձագանք տալով այդ իրողությանը, մեծ ոգևորությամբ է նկարագրում հայ բանակն ու նրա կռիվը. «Ի մի վայր խաղացեալ,— ասում է նա,— գնացին հասին յայն վայր, մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զուազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազսն առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային»[3]։ Իսկ Աշոտ Արծրունին ներկայացնում է իբրև դյուցազն, որ առյուծաբար գոչելով, հարձակվում է թշնամու ընտիր հեծելազորի վրա և, ջարդելով նրա աջ թևը, պարտության է մատնում ամբողջ ճակատը։ Հանդուգն հարձակումը մեծ իրարանցում է գցում արաբական շարքերի մեջ, և նրանք փախուստի են դիմում։ Հայերը հալածում են նրանց մինչև Բաղեշ, և եթե կանգ են առնում այդտեղ, պատճառն այն էր, որ Մուսայի կինը[4], հետիոտն դուրս գալով քաղաքից, խնդրեց հայերին, որ բավական համարեն իրենց տարած հաղթությունը և հանգիստ թողնեն արաբներին։ Բագարատն, իհարկե, չկարողացավ մերժել իր աղջկա[5] խնդիրքը։ Երևում է, որ այս միջնորդությունն ավելի խաղաղ ազգաբնակության այն մասի համար էր, որ բաղկացած էր արաբ գաղթականներից, որովհետև նա էր, որ շատ մեծ վնասներ էր կրել հայերի արշավանքից։ Այսպես է ներկայանում դրու-

[1] Թովմա Արծրունու Պատմության այս տեղից (եր. 113) հետևում է, թե Վահան Արծրունին, բացի այդ դավաճանական գործից, գնացել է խալիֆի մոտ և ամբաստանել հայ իշխաններին, մանավանդ Աշոտին։ Բայց շատ պարզ է, որ բնագիրն այստեղ խառնված է արտագրողների անուշադրությունից, և խոսքն այստեղ Աբուսեթի մասին է, ինչպես նկատել է և ակադեմիկոս Բրոսեն (Histoire des Ardzrouni, St. Peterburg, 1874, p. 100, n. 4)։ Այս երևում է հենց այն ամբաստանություններից, որ տարել էր իր հետ Աբուսեթը։

2 Տաքարի, «Հանդես Ամս.», 1906, եր. 276։

3 Եր. 109—110։

[4] Թովմա Արծրունին մութ կերպով հիշում է, թե տիկինը գնաց խնդրելու, բայց չի տալիս նրա անունը։ Բայց արաբական աղբյուրների օգնությամբ հեշտ է գալ միանգամայն հավանական եզրակացության, թե դա Մուսայի կինն էր և ուրիշ ոչ ոք լինել չէր կարող։

5 Թովմա Արծրունին ասում է, թե Բաղեշի տիկինը Բագարատի քույրն էր։

թյունը մանավանդ այն պատճառով, որ երբ Մուսան գուժկան ուղարկեց Բաղդադ՝ արաբների դրությունը նկարագրելու համար, նրա հետևից գնացին և Աղձնիքի շատ բնակիչներ, որոնք չէին կարողացել տանել պատահած դեպքերը։ Դրանց հետ էին և կոտորվածների կանայք, «մերկացած,— ասում է մեր պատմիչը,— և կանացի բնության ձևը դեն դրած, բողոք բարձրացրած, ձեռքերն օձիքի մեջ դրած, մազերը խուզած, դեմքերը պատառոտած», բարձրաձայն լաց էին լինում, սուգ կանչում, բոլոր եղած չարիքները Աշոտի վրա գցելով և նրան համարելով իրենց ամբողջ դժբախտության պատճառը։

Հասկանալի է, թե այս բոլորն ի՛նչ տեսակ ազդեցություն պիտի գործեր Մութավաքիլի նման մի բռնավորի վրա։ Նա հրամայում է նոր բանակ կազմել և նույն Աբուսեթին հանձնել՝ Հայաստանը պատժելու համար։ Բայց ճանապարհին Աբուսեթը մեռնում է։ Խալիֆը գլխավոր հրամանատարությունը հանձնում է նրա որդուն, որի անունն էր Հովսեփ (Յուսուֆ)։ Սա բանակը տանում է Ատրպատականի ճանապարհով։ Ուրմիայի լճի ափերով մտնելով Աղբակ, գրավում է Հադամակերտը։ Աշոտ իշխանը տեսնում է, որ արաբական բանակին այլևս չի կարելի դիմադրել զենքով, որովհետև նա ստվարաթիվ էր, ուստի վերցնելով իր զորքը, ընտանիքը և նույնիսկ երկրի մյուս տերերին էլ, գնում է ամրանալու Մարդաստանի ու Ձորի կողմերում և միևնույն ժամանակ խաղաղ բանակցություններ է սկսում Յուսուֆի հետ, փորձելով համոզել նրան, թե ասպատակություններով, ավարառություններով և հարկային կեղեքումներով չի կարելի երկիրը բարեկարգ դրության մեջ պահել, մի բան, որ անպատճառ հարկավոր է, որպեսզի պետության հարկերն անխափան վճարվեն։ Այս իմաստով նա նամակ գրեց Յուսուֆին։ Բայց արաբ զորավարին այս գեղեցիկ խոսքերից ավելի գրավեցին այն ընծաները, որ այդ նամակի հետ միասին տարավ նրան Աշոտի մայրը՝ Հռիփսիմե տիկինը։ Այս դիվանագիտական առաքելությունն Արծրունյաց տիկինը գլուխ բերեց ամենայն հաջողությամբ։ Նա կարողացավ համոզել, որ դադարեցվեն ասպատակությունները։ Յուսուֆը բավականացավ պատանդներ վերցնելով հայտնի մարդկանցից և պատվով ճանապարհ դնելով Հռիփսիմե տիկնոջը, ինքն էլ գնաց Վասպուրականից, ուղղվելով դեպի արևմուտք։

Բանակ դնելով Խլաթում, Յուսուֆը մարդ է ուղարկում Բագարատ իշխանի մոտ և հրավիրում է գալ իր հետ տեսակցելու։ Այդ դիմումը բարեկամական էր, առանց որևէ նշանի, թե արաբական կառավարությունը դժգոհություն ունի Տարոնի իշխանի վերաբերմամբ։ Ընդհակառակն, Յուսուֆն իմաց էր տալիս նրան՝ թե այդ տեսակցությունը հարկավոր է, որովհետև ինքն ուզում է գնալ Բաղդադ և մտադիր է իր պաշտոնի կատարումն էլ հանձնել նրան։ Իր հեռանալու պատճառն էլ այն էր հայտարարում, որ սկսվել է սաստիկ ձմեռը, որի ցուրտն ինքը տանել չի կարող։ Բագարատը, մոռացած ամեն ինչ, գնում է Յուսուֆի մոտ, բայց իսկույն ձերբակալվում է իր բոլոր հետևորդների հետ, որոնք Բագրատունյաց տոհմից էին և ամենքն էլ շղթայակապ ուղարկվում են Սամառա, ամիրապետի մոտ։ Միայն Բագարատի երկու որդիները, Աշոտ և Դավիթ, կարողանում են փախչել Սասունի լեռները[1]։

[1] Յովհան. կաթ., եր. 151։

Այս դեռ սկիզբն էր այն ահաբեկման, որ տարածեց Յուսուֆը Տարոնի հայության մեջ։ Տեղափոխվելով Մուշ, ուր պիտի անցկացներ ձմեռը, նա բազմաթիվ գերիներ վերցրեց Մուշի դաշտից, որպեսզի ուղարկի վաճառելու Սիրիայի և Միջագետքի շուկաներում։ Այդ գերիների մի մասը նա պահում էր իր բանակում և բանեցնում էր ամեն տեսակ ծառայությունների համար։ Սաստիկ ձմեռվա պայմաններում այդ բռնի աշխատանքները տառապեցնում էին թշվառ գերիներին, և նրանք փորձեր էին անում փախչելու։ Յուսուֆը գարնան բացվելուն էր սպասում, որպեսզի նույն սարսափն ու ահաբեկումը տարածի Հայոց ամբողջ աշխարհում։ Խալիֆից նա հատուկ հանձնարարություն ուներ անխնա, ոչնչացնող հարվածներ ուղղելու մանավանդ հայ նախարարների դեմ։ Վերակենդանացել էր ազնվական դասի բնաջնջման նախկին ծրագիրը։

12. Սասունի շարժումը: *Հարավային Հայաստանը խեղդող արաբական ահաբեկումը և առհասարակ ամբողջ երկիրն սպառնացող վտանգն առաջացնում է մի երևույթ, որ շատ հազվադեպներից է մեր պատմության այս շրջաններում։ Դա մի բուռն ժողովրդական շարժում էր, վերին աստիճանի հետաքրքրական մանավանդ այն տեսակետից, որ գալիս էր պայծառ լույսի մեջ հանելու Հայկական լեռնաշխարհի ամենամութ և ամենաանհայտ անկյուններից մեկը, թույլ տալով տեսնել ոչ միայն մի խիզախ լեռնական ըմբոստացում, որ ահավոր հետևանքներ ունեցավ ամբողջ հայության համար և դարձավ միևնույն ժամանակ ազատագրական մի գեղեցիկ արշալույս, այլև լեռնային կենցաղի շատ ուշագրավ մի պատկեր։*

Այդ անկյունը բռնում էր Հայկական Տավրոսի այն մասը, որը կազմում է Սիմ լեռը և բարձրացած է Աղձնյաց և Տուրուբերան նահանգների սահմանի վրա, այնպես որ նրա հարավային երեսը վերաբերում էր Աղձնիքին և կոչվում էր Սանասում կամ Սասունք, իսկ հյուսիսային երեսը նայում էր Տուրուբերանին և կազմում նրա առանձին գավառը՝ Խույթք կամ Խութ անունով, Տարոնին սահմանակից։ Ներկայումս այս ամբողջ լեռնային երկիրն ընդհանրապես Սասուն է կոչվում։ Սիմ լեռը և նրա շրջանը, ինչպես գիտենք, տեղ են բռնում հայկական ամենահին ավանդությունների մեջ, ուր հայ ժողովրդի սկզբնավորման առաջին ժամանակներն են ներկայացվում շատ աղոտ կերպով[1]։ Եթե հարց լինի, թե ի՛նչ ժողովուրդ էր ապրում այդ լեռներում, մենք պիտի նկատի առնենք այն հին իրականությունը, երբ դեռ հայ ժողովուրդը չէր կազմակերպվել վերջնականապես։ Ուրարտական ժամանակներում Հայկական Տավրոսի շրջանի մեջ ասորական շատ գաղութներ էին հաստատված՝ սահմանագլուխը պահպանելու համար։ Առհասարակ Աղձնիք նահանգը և Տուրուբերանից Տարոն գավառը ենթարկված էին ասորական խիստ ազդեցության։ Ուստի և զարմանալի չէ, որ դեռ 9-րդ դարում, ինչպես գրում է Թովմա Արծրունին, այն հասկացողությունն էր տիրում, թե Սիմ լեռներում ապրող ժողովուրդն ասորական ծագում ուներ։ Բայց ասել, թե ամբողջ ժողովուրդն էր, որ ուներ այդպիսի մի ծագում, անկարելի է, և դրա ապացույցն այն է, որ օտար հեղինակների հաղորդած կցկտուր տեղեկություններից կարելի է հետևցնել, թե Սանասունք և Խույթք անուններն այդտեղ ապրող գլխավոր ազգագրական տարրերի անուններն էին[2]։ Բացի սրանից՝ Թովմա Արծրունին էլ ասում է, թե միատեսակ մի լեզու չէր տիրում այդ լեռնաստանում։ Կային տարբեր լեզուներ, այն էլ այնքան տարբեր, որ մի տեղի բնակիչները մյուսների հետ խոսում էին թարգմանի միջոցով։ Արդ, երբ ասորական տարրերից դուրս ուրիշ ազգագրական խմբակցություններ էլ էին ապրում Սիմ լեռան վրա, ովքե՞ր կարող էին լինել այդ ուրիշները, եթե ոչ ուրարտական ցեղերը։ Վերջում այս երկու տարրերի—սեմականի և հաբեթականի վրա ավելանում է և երրորդը՝ արիականը, բաղկացած արմեններից, որոնք իրենց լեզուն են տարածում տեղացիների մեջ և այդպիսով միացնում են բոլորին իրենց հետ։ Հայացման գործին ծառայում էր և քրիստոնեական եկեղեցին։ Թովմա Արծրունու ժամանակ նկատվում էր այսպիսի երևույթ. լեռնցիներն իրար դժվարությամբ են հասկանում, բայց անգիր գիտեն սաղմոսներ և կարդում են իբրև աղոթք։

Սակայն այս տարրերի ձուլման ամենամեծ աշխատանքը մնում էր միջավայրին, բնությանը։ Նա էր, որ միանման կենսական պայմաններ էր ստեղծում ամենքի համար, մի լեռնական հոգեբանություն, մի կենցաղական մակերևույթ էր հարթում ամենքի համար։ Լեզուները կարող էին տարբեր էլ լինել, բայց զգացմունքը, հայացքը, անողոք տրամաբանությունը, գոյության օրենքը մի՛ էին։ Ամառ և ձմեռ,— ասում է Արծրունին,— մի տեսակ հագուստ էին հագնում լեռնցիները և մի տեսակ կերակուր ուտում։ Տառապալից և ծանր է այն աշխատանքը, որով ապրուստ են հայթայթում։ Ապրում են առանձին տոհմերով, ցաք ու ցրիվ, իրարից այնքան հեռու, որ երբ ուզում են իրար խոսք հասցնել, զորեղ ձայն ունեցող տղամարդիկ բարձրանում են մի քարի գլուխ և գոռում են, և այդ ձայնը հասնում է հեռուն իբրև ժայռերի մեջ թնդացող արձագանք։ Հաղորդակցությունը, մերձավորությունը սերտ չեն, այնպես որ օտարանում են իրարից և լեզվով։ Այնքան խրթին է նրանց բարբառը և այնքան աղքատ, որ շատ տեղեր առանց թարգմանի իրար չեն հասկանում։ Կերածները մի տեսակ սերմ է[1], բայց առավելապես կորեկ, որ սովի ժամանակ հաց է կոչվում։ Այս սերմերը լեռան ժողովուրդը վարում և ցանում է անտառների պուրակների բացատներում, քարափների վրա՝ կացնով։ Հագնում է բրդե շորեր, իսկ ոտնամաններ կարում է այծի մորթից։ Գազաններից պաշտպանվելու համար ամեն մի լեռնցի մշտապես կրում է իր վրա մի փոքրիկ սուր (աշտե)։ Թշնամու հարձակում լինելուն պես ամենքը միանում են՝ իրենց իշխաններին պաշտպանելու համար, որովհետև տիրասեր են։ Փխրուն ձյունի վրա ման գալու համար հնարել են մի տեսակ փայտի կտորներ, որ ամրացնում են իրենց ոտներին չվաններով և այնուհետև արագ ու հեշտ շրջում են։

Բագարատ իշխանի երկու որդիները—Աշոտ և Դավիթ, փախչելով այս լեռնականների մոտ, գրգռեցին նրանց արաբների դեմ, այնպես հասկացնելով, թե Յուսուֆը դաշտեցիների հետ իր գործը վերջացնելուց հետո պիտի հաշիվ տեսնի լեռան մարդկանց հետ։ Եվ Խութի ազատ զինվոր-սուրհանդակները ոտքի ելան՝ իրենց Բագարատ իշխանի վրեժը հանելու և երկիրն արաբներից ազատելու համար։ Նրանց առաջնորդում էր Հովհան անունով մեկը, հավանաբար տեղական ազդեցիկ մի ցեղապետ։ Իջնելով ձյունապատ լեռներից, ինչպես սովոր էին արագ շարժվել ձյան վրա իրենց փայտե ոտ-

[1] Տ. հատ. Ա, եր. 365։

[2] Վ. Տոմաշեկ, «Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները», Վիեննա, 1896, եր. 10։

[1] Հավանաբար ակնարկվում է այն, ինչ այժմ կոչվում է կկել։

28—Լեո—Երկերի ժողովածու, հ. II

նամաններով, նրանք շրջապատեցին Մուշը և հանկարծակիի բերելով արաբներին, կոտորեցին նրանց։

Յուսուֆը չկարողացավ անգամ ինքնապաշտպանություն կազմակերպել կամ փախուստի ապահով ճանապարհ գտնել իր անձն ազատելու համար։ Շրջապատված ամեն կողմից, ամեն տեղ միայն թշնամիներ տեսնելով, գոռոզ հրամանատարը, որ գարնան համար նորանոր ծրագիրներ էր հղանում Հայաստանի ժողովրդին անգթորեն խոշտանգելու համար, վերջին րոպեին փրկության մի հնար միայն գտավ.— վազեց Մուշի ս. Փրկիչ մեծ եկեղեցին, որ Բագարատ իշխանն էր շինել, և թաքնվեց նրա գմբեթի տակ։ Բայց իզո՛ւր։ Խութեցիները բարձրացան այնտեղ և նրանցից մեկն իր աշտեով սպանեց նրան։ Արաբներից քչերին հաջողվեց ազատվել կոտորածից և փախչել՝ արյունահեղ դեպքերի և ոստիկանի սպանության գույժը Սամառա հասցնելու համար։

Յուսուֆ ոստիկանի սպանությունը տեղի ունեցավ 851—852 թվականների ձմեռը։

Գլուխ հինգերորդ

ՔԱՌԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

1. Բուղա: Սասունի պարտությունը: *Մուշի կոտորածն արդեն չափազանց մեծ, անմարսելի մի հանդգնություն էր արաբական մեծ կայսրության հանդեպ, և Մոթավաքիլը ձեռնարկեց մի նոր արշավանքի՝ հայերին պատժելու այնպիսի սոսկալի եղանակով, որին ընդունակ էր մի Աբբասյան, այն էլ Ջաֆարի պես մի չար և ֆանատիկոս Աբբասյան։ Հայաստանը խեղդելու գործը նա հանձնեց իր թուրք զորքերի գլխավոր հրամանատար Բուղա Շարաբիին, որը եղել էր նրա ստրուկներից մեկը, բայց ազատություն էր ստացել և իր վարձկան զորքի շնորհիվ ամենակարող մարդն էր դարձել պետության մեջ, այնպես որ ինքը խալիֆն էլ ստիպված էր լսել նրան*[1]*։ Այդ պատժողական արշավանքի համար հատուկ զորաժողով է կատարվում և Բուղայի հրամանատարության տակ դրվում է մի բանակ, որի քանակությունը Թովմա Արծրունին որոշում է 200 հազար։ Այս թիվը որոշ չափով չափազանցված պետք է համարել, նկատի առնելով այն հանգամանքը, որ Բուղային տված հանձնարարությունը միայն Հայաստանին չէր վերաբերում, այլ ընդհանրապես ամբողջ արաբական Այսրկովկասին։ Պետք էր կարծել, թե արաբները գործ կունենան միայն Վասպուրականի և Տարոնի հետ, քանի որ միայն այդ երկրներում էր տեղի ունեցել ապստամբություն։ Եվ իրավ, 852—855 թվականների արաբական պատերազմներն առանձնապես մանրամասնորեն նկարագրող Թովմա Արծրունին Մոթավաքիլի բերանում դնում է այսպիսի խոսքեր, որ նա իբր թե արտասանել է զինվորական մեծ խորհրդում. «Մեր նախնիքների թագավորությունից սկսած, երբ աստված շատ թագավորների աթոռները տվեց նրանց ձեռքը, այդ ժամանակներից մինչև այսօր ոչ ոք չհամարձակվեց մեր դեմ դուրս գալ ոչ հեռավոր և ոչ մերձավոր աշխարհներից. և ոչ ոք այնքան աղետ և*

[1] Թով. Արծր., էր. 126։

տարակուսանք չթափեց մեր գլխին, մեր ազգի, մեր զորքի և մեր զորավարների գլխին, որքան Վասպուրականի իշխան Աշոտը»[1]։ Բայց այս չափազանցություն է, անկասկած, զրույց, որ Արծրունիների տոհմային պատմագիրը դնում է ընթերցողի առաջ՝ իր անչափ բարձրացրած տոհմային հերոս Աշոտ իշխանին փառավորելու համար։ Եվ իրական ճիշտ ըմբռնումը, որ ցույց է տալիս Թովման, այստեղ է, ուր նա ասում է. «Այստեղ լալումը, կոծումը և ողբումը ոչ թե մի աշխարհի և մի ազգի վրա է, այլ Հայաստանի բոլոր ազգերի և աշխարհների վրա»։ Ճիշտ այսպես, 852 թվականի գարնանը Հայկական Բարձրավանդակի հարավային սահմանների վրա երևան եկած թուրք-արաբական բանակը բերում էր ընդհանուր մի աղետ, համատարած ավեր ու ջարդ։

Նախ և առաջ անխնա վրիժառության առարկա էր դառնում, ինարկե, Սասունը։ Բուղան բարձրանում է Խույթ, ջարդում է լեռնցիներին։ Արաբ հեղինակներից Տաբարին կոտորված խութեցիների թիվը հաշվում է 30 հազար[2]։ Կենդանի մնացածներին Բուղան տեղափոխում է Հայաստանի զանազան կողմերը և բնակեցնում այնտեղ։ Եվ իրավ, քիչ ժամանակից հետո մենք տեսնում ենք խութեցիներին Թիֆլիսում, ուր նրանք բերդապահ զորք են։ Մի խոսքով, լեռնային արծվաբույնը հիմնովին ոչնչացվում է, որպեսզի այլևս վտանգավոր չլինի տիրողների համար։ Ապստամբության առաջնորդները — Աշոտ և Դավիթ Բագրատունիներ և Խութեցի Հովնան — ձերբակալվեցին և ուղարկվեցին Սամառա։

Այնուհետև պատժողական գործողությունները տարածվում են Մուշի դաշտի վրա։ Այստեղ ոչ ոք չէր դիմադրել արաբներին, բայց սա նշանակություն չուներ։ Ամբողջ երկրի վերաբերմամբ Բուղան գործադրում էր արքունիքից բերած դաժան բնաջնջման մի ծրագիր, որ պիտի գլուխ բերվեր երկիրը զինաթափ անելու, միանգամայն մերկացնելու միջոցով։ Խալիֆի հրամանն էր հեռացնել Երկրից կամ ոչնչացնել փոքրիշատե կասկածելի բոլոր նախարարներին և չթողնել առհասարակ որևէ ռազմիկ ուժ։ Բոլոր այն մարդիկ, որոնք ընդունակություն ունեին սուր կրելու իրենց ազդրի վրա կամ արդեն կրում էին, պիտի ոչնչացվեին անխնա[3]։ Եվ այս ծրագիրը ի կատար էր ածվում մի դաժան հետևողականությամբ։ Բոլոր այդ տեսակ մարդկանց ձերբակալում էին, և նրանց, ովքեր գեղեցկադեմ, ումեղ և աշխույժ էին, պահում էին իբր գերիների՝ շուկաներում վաճառելու համար, իսկ մնացածներին անխնա սրի էին քաշում։ Բայց կար ավելի անգութ մի միջոց էլ՝ Հայոց երկիրն սպանելու համար։ Մոթավաքիլն իր զորականների եռանդն ավելացնելու, ապստամբ երկիրն անմարդաբնակ դարձնելու համար նրանց իրավունք էր տվել որպես սեփականություն իրենց տիրապետության տակ առնել այն բոլոր հողերը, որ նրանք կնվաճեն իրենց սրով։ Եվ արաբական զորքին հետևում էին բազմաթիվ ընտանիքներ, որոնք պիտի բնակվեին ազգաբնակությունից այդ կերպով մաքրված հողերի վրա[4]։ Այսպիսով, Բուղայի արշավանքը միաժամանակ և ազգերի տեղափոխություն էր, բռնի գաղթարարություն՝ հայ ժողովուրդը ջարդելու համար։

[1] Էր. 125.

[2] «Հանդէս Ամս.», 1906, էր. 276։

[3] Յովհ. կաթ., էր. 151։

[4] Թով. Արծր., էր. 152։

Դրությունը վատացնում էր մանավանդ այն հանգամանքը, որ այդ ահավոր վտանգի դիմաց Հայոց աշխարհը թույլ էր, անկազմակերպ, չէր կարողանում հավաքել ու կենտրոնացնել նույնիսկ այն ինքնապաշտպանական միջոցները, որոնք գտնվում էին նրա տրամադրության տակ։ Հին դժբախտությունն այս անգամ էլ ծանրացած մնաց հայ իրականության վրա։ Նախարարությունների միջև եղած թույլ կապն անգամ չպահվեց ամեն տեղ։ Այսպես, հենց այս ժամանակին է վերաբերում այն ազգամիջյան պատերազմը, որ բորբոքվեց Սյունյաց նախարարության երկու գլխավոր ճյուղերի միջև։ Գրիգոր Սուփան իշխանը, ներկայացուցիչ մի ճյուղի, կռվի մեջ սպանվեց մյուս ճյուղի ներկայացուցիչ Բաբգեն իշխանի ձեռքով։ Եվ առհասարակ Բուղայի արշավանքի ահը հայ ավատական կալվածատիրության մեջ ավելացնում էր կենտրոնախույս ձգտումները։ Մասնավորապես թուլացել էին կապերը Վասպուրականի նախարարական դաշնակցության մեջ որ, ինչպես տեսանք, կազմել էր Աշոտ իշխանը։ Եվ Թովմա Արծրունուց մենք իմանում ենք, որ դասալքությունն այդտեղ հասավ այն աստիճանին, որ իշխաններից ոմանք գաղտնի բանակցություններ սկսեցին Բաղդադի արքունիքի հետ։ «Թուղթս և դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկս ի միմեանց. այլ և ընդ միմեանս արկանէին բանս քսութեան, և ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին»[1]։

Մոթավաքիլին ծածուկ թուղթ ուղարկող նախարարներից էր և Սմբատ սպարապետը։ Նա, դեռ արաբական պատրաստությունների լուրը միայն առած, առանց սպասելու, որ արշավանքն իրական փաստ դառնա, հայտնում էր, թե ինքն ապստամբների կողմը չէ, մնում է հավատարիմ հպատակ։ Իսկ Հայաստանի սահմանների վրա Բուղային ողջույնի և բարեկամության խոսքով դիմավորում էր Սմբատի ավագ որդին, 32-ամյա Աշոտը[2], որ և հետո հաջորդեց իր հորը և Բագրատունյաց թագավորության հիմնադիրը եղավ։ Ինքը Սմբատն այդ միջոցին հատուկ կառավարչական պաշտոն ուներ և Մոկաց աշխարհում, ուստի, բացի իր սեփական տիտղոսից, որ սպարապետությունն էր, կոչվում էր և «Մոկաց իշխեցող»[3]։ Նա գնում է Բուղայի մոտ, ընդունվում է պատվով և այնուհետև մնում է թուրք հրամանատարի մոտ, Շիրակի կառավարությունը իր Աշոտ որդուն թողնելով։ Մեր աղբյուրների մեջ չի հիշվում մի ուրիշ հայ իշխան, որ արաբական բանակի վերաբերմամբ բռնած լիներ Սմբատ սպարապետի դիրքը։ Աշոտ Մսակերի որդին չեզոք չմնաց, այլ Բուղային ամենաիրական աջակցությունն էր ցույց տալիս, իբրև խորհրդատու և իբրև ուղեցույց, Հայոց երկիրն ընկճելու համար։ Հայտնի է, որ նրա հետ արաբական բանակում գտնվում էր և նրա որդի Մուշեղը։ Կարելի է կարծել, որ Բագրատունյաց գնդի գոնե մի մասն էլ այդտեղ էր՝ իշխաններին պահպանելու համար։

Այս բոլորը ցո՞ւյց է տալիս արդյոք, թե Հայոց սպարապետը պարզապես մի դավաճան էր իր հայրենիքի հանդեպ։ Հայոց պատմությունն այսպիսի մի դատավճիռ չի կայացրել այս մարդու մասին։ Նա մեզ ցույց է տալիս, որ Սմբատն իր ստանձնած դերում մնում էր հայրենասեր, իր ազգի համար ցավող, նրա բարիքը մտածող։ Թովմա Արծրունին մեզ բացատրում

1 Թով. Արծ., եր. 122—123։
2 Հ. Ալիշան, «Յուշ. Հայր. Հայ.», Ա, Վենետ., 1869, եր. 139—140։
3 Մաւկվարտ, «Հանդ. ամս.», էջ 165։

է, թե ինչ էր Սմբատի մտածողությունը. «Իբրև գիտաց,— գրում է նա,— թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա (Բուղայի) լինել՝ փութացաւ եկն առ նա և ընկալեալ ի նմանէ՝ բնակաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց»[1]։ Այս բացատրությամբ Սմբատի վարմունքը կոպիտ եսականության կերպարանք է ընդունում։ Պիտի ընդունենք, որ Արծրունին ներկա դեպքում անկողմնապահ չէ, քանի որ Արծրունյաց տոհմի պատմագիր է, Բագրատունիների հակառակորդ։ Եվ ահա Հովհաննես կաթողիկոսը, Բագրատունիների կողմնակից, մտցնում է մի ուղղում, որը ցույց է տալիս, թե Սմբատի համար ո՛րքան ծանր էր այդ ուղղությունն ընդունելն ու գործադրելը։ «Զմահ ի կեանս խառնեալ սակն աշխարհին իւրոյ փրկութեան», ասում է նա։ Բայց արդյոք չափազանց շատ մեծ զոհաբերություններով չէ՞ր նա այսպես գործում։ Մի անագորույն թշնամի, մի «ծովային վիշապ», ինչպես անվանում է Արծրունին Բուղային, մտել էր երկիրը՝ այն կործանելու, անմարդաբնակ դարձնելու համար։ Եվ այդ երկրի սպարապետը նրան առաջնորդում էր գավառից գավառ, ցույց էր տալիս ճանապարհները, թե յուրաքանչյուր տեղի իշխան ի՛նչ ուժ ունի, թե ի՛նչպես են նրա բերդերը, ի՛նչպես կարելի է դրանք վերցնել և այլն։ Արարքներ են սրանք, որոնց վատությունը ծածկելու համար, ըստ երևույթին, հնարավորություն բոլորովին չի մնում։ Բայց դժվար իրականությունն այն է, որ Սմբատը, ինչպես բացատրում է պատմաբան կաթողիկոսը, միայն այդ միջոցով էր կարողանում իր կողմը գրավել նրա «անհաստատ և սնոտի միտքը», վստահություն ներշնչելով դեպի ինքը[2]։ Իսկ թե բռնավորի միտքը գրավելով նա կարողանում էր գոնե մի քանի բան անել, այդ ապացուցում են մի քանի գործեր, ինչպես կտեսնենք շուտով։ Եվ այսպիսով ահա, Սմբատ Բագրատունին մարմնացնում է մեր պատմության մեջ՝ միայն Հայ երկրի հոգեբանությանը հատուկ այն երևույթը, որի ներկայացուցիչները եղել են Վասակ Սյունին և նրա պես մտածող ու գործող շատ ուրիշները։ Այս երևույթը մեր կյանքի մեջ խոսել է ամեն անգամ, երբ հրապարակի վրա դրվել է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը։ Ինչպես արդեն շատ անգամ տեսանք, բնական և արդարացի կլինի նկատել այդ երևույթն իբրև հոսանք, կարելի է ասել՝ մասնակի հոսանք։ Նույն ֆիզիկական գոյության հարցն ամեն անգամ զարթեցնում էին և ավելի խոշոր հոսանքներ, որոնք երկիրը հերոսական ոգորումների գիրկն էին գցում։ Այսպես էր և այժմ։ Սմբատ սպարապետի հետևից գնացողներ չեղան։ Բայց երկիրը, չնայած իր նեղված դրության, իր թուլության ըմբոստ պայքարի դրոշակն էր նորից պարզում, այս անգամ գրեթե չորս տարվա պատերազմների մի հանդիսարան բաց անում։ Այդ պատերազմներին էլ մենք կդիմենք այժմ։

2. Նկան բերդում։ Տարոնից իր գործողությունները փոխադրելով Վասպուրական, Բուղան այստեղ դիմեց ռազմական ճակատներ կազմելու միջոցին, քանի որ համառ դիմադրության էր սպասում Աշոտ Արծրունու կողմից։ Բաժանելով իր բանակը երկու մասի, նա մի մասը հանձնեց Ժիրաք անունով իր զորավարին, որ պիտի գործեր հարավային Վասպուրականում,

1 Թով. Արծր., եր. 173։
2 Յովհ. կաթ., եր. 153։

իսկ ինքը մյուս մասի հետ գնաց Աշոտի վրա։ Ժիրաքը մտավ Ռշտունյաց և Մոկաց գավառները, և թեպետ այստեղ որևէ դիմադրության չհանդիպեց, բայց կոտորեց ժողովրդը շատ տեղերում, կատարյալ անապատների վերածելով գյուղերն ու ավանները։ Այստեղ էլ, ինչպես և Տարոնում, ընտրըվեցին քաջառողջ ու գեղեցիկ մարդիկ, որոնք գերի տարվեցին։ Ընդհանուր սարսափի մեջ երկու հոգի միայն գտնվեցին, երկու եղբայրներ, որոնք իմացան իրենց քաջությունը միացնել լեռնային բնության տված միջոցներին և ցույց տալ հրաշագործության նման մի արտակարգ հաջողություն։ Նրանք, ինչպես ասում է Արծրունին, «վահան ի թիկունս, նիզակ ի ձեռին ունենալով», կտրում են մի կիրճի բերան և մի քանի հովիվներ իրենց օգնության բերելով շփոթություն են պատճառում գերեվարող թշնամուն և ազատելով գերիներին, նրանց տանում պահպանում են լեռնային ամուր տեղերում։ Տարաբախտաբար այդ քաջ եղբայրներից միայն մեկի, ավագի անունն է մնացել Վասպուրականի պատմագրության մեջ—Շապուհ։

Աշոտ իշխանն իր ձեռքի տակ այլևս չուներ նախարարական այն ուժեղ միությունը, որ կազմվել էր Բագարատ իշխանի ժամանակ։ Կարճ միջոցում այդ միությունը քայքայվել էր. նախարարներից և ազատներից շատերն իրենց համար ավելի ձեռնտու համարեցին մի կողմ քաշվել, նույնիսկ արաբների կողմը բռնել, և այդպիսով ապահովել նրանց կալվածատիրական դիրքը։ Աշոտի հետ մնացին մի քանի նախարարներ միայն, որոնց ուժերը միացնելով իր ուժերին, նա դարձյալ ամրացավ Թոռնավան գավառի իր Նկան ամրոցում, բայց գրավելով ոչ թե ամբողջ բերդը, քանի որ, երևի, շատ ստվարաթիվ չէր նրա զորքը, այլ մի մասը միայն, որ հայտնի էր Դղյակ անունով։ Իր Գուրգեն եղբորը նա ուղարկեց Ատրպատական (երևի Հեր և Զարևանդ գավառները), այնտեղ օգնական զորք կազմակերպելու համար։ Բուղան պաշարեց Նկանը։

Թովմա Արծրունին շատ մանրամասն կերպով է նկարագրում այս բերդի մոտ եղած պատերազմական գործողությունները, և այս, անշուշտ, իր սիրած հերոսին, Աշոտ Արծրունուն, մի անգամ ևս փառավորելու համար։ Նա պատմում է, թե ինչպես Բուղան անձամբ իր զորքերի գլուխն անցավ՝ Նկանի դեմ մարտնչելու համար և թե ինչքան վեհատեսիլ էր Աշոտ իշխանը, երբ երևում էր պաշարված բերդի պարիսպների վրա, պատրաստ՝ իր ահարկու թշնամուն արիաբար հանդիպելու։ Նկարագրում է արաբական զորքերի զենքերը, հանդերձանքները, պատերազմական մեքենաները և այլն։ Այսպես, մենք տեսնում ենք, որ արաբներն ապակե սրվակների մեջ ունեն մի տեսակ հեղուկ, պատրաստված ծծումբից և նավթից, որը վառելով գցում են պարիսպները պաշտպանողների վրա և բերդի մեջ։ Նույնպիսի մանրամասնություններով պատմագիրը նկարագրում է և հայ զորքը, թե ի՛նչ միջոցներ էր նա ձեռք առնում արաբական հնարքների դեմ։ Հիշատակվում է բրդե մի տեսակ զգեստ, որ սպունգի պես ծծում էր ջուրը և այդպիսով պաշտպանում պարիսպների առջևում կռվողներին՝ նրանց վրա թափվող կրակից։ Սակայն այսքան մեծաղղորդ հանդերձանքներով մղվող մարտը մի շատ տխուր վախճան է ունենում հայերի համար։ Բերդի մեջ միաբանություն չկար, և ահա այս հանգամանքը խոցոտում էր Աշոտ իշխանին թիկունքից։ Բերդում նրա հետ փակված իշխաններից Արծրունին հիշատակում է վեց հոգու. Մուշեղ և Վահան Արծրունի, Մուշեղ Վահնունի, Վահրամ Սեպուհ, որ Աշոտի թիկնապահն էր, Վահրամ Տրունի և Հասան

Սրանցից առաջին երկուսին տեսնում ենք Աշոտ իշխանի հետ խորհրդակցելիս, թե ի՛նչ կարելի է անել իրերի այդ դրության մեջ և թե ի՛նչ պայմաններով է հնարավոր հաշտության մասին խոսել Բուղայի հետ։ Մնացածներն միանում են իրար հետ դավադրական նպատակով և գաղտագողի իրենցից մեկին, Վահրամին, ուղարկում են պաշարող թշնամու բանակը՝ հայտնելու իրենց անձնատուր լինելու պատրաստակամությունը։ Պայման էր առաջարկվում—Բուղայի ձեռքը տալ Աշոտ իշխանին, փոխարենը ազատություն ստանալով ապրելու իրենց կալվածներում խաղաղ ու ապահով։

Երբ Աշոտը, նկատելով այդ իշխանների կասկածելի վարմունքը, որ արտահայտվում էր նրանով, որ իր կարգադրությունները չէին կատարվում, բացատրություն պահանջեց նրանցից, խոսակցության մեջ պարզվեց ամեն ինչ։ Այն ժամանակ Աշոտն առաջարկեց նրանց գնալ Բուղայի մոտ և իմանալ, թե ի՛նչ պայմաններով կարելի է հաշտություն կնքել, բայց նրանք պատասխանեցին, թե թագավորի դեմ ապստամբվածն ինքն է, Աշոտը, թող ինքն էլ գնա պայմաններն իմանալու։ Եվ իզուր էր Վասպուրականի գահերեցը խրատում և համոզում, թե ինքն ինչե՛ր է արել նրանց պաշտպանության համար։ «Չէ՞ որ—ասում էր,—իբրև հայր գրկել և գգվել եմ ձեզ և հավի նման հավաքել եմ ձեզ իմ թևերի տակ պաշպանելու համար»։ Հիշեցնում էր նույնպես, թե համարյա ամեն տարի ինչպես էր իր հարստություններից մեծամեծ բաժիններ հանում նրանց, ինչպես էր լիացնում ամենքին, սիրում, փայփայում նրանց երեխաներին։ Այս բոլորի փոխարե՞նն է, հարցնում էր, որ այժմ ուզում եք ինձ իմ երեխաների հետ ձգել վիշապի բերանը։ Զուր անցան այս բոլոր խոսքերը։ Դավադիրների պատասխանն էր. «Չենք կարող դիմադրել արքունի բռնության և ահագին ուժին, այս բերդի ամրությունները բավական վստահելի չեն, ինչպես կարծում էինք, և պաշարն էլ, ինչպես նաև հասարակ պահապան զինվորները, բավական չեն»։

Եվ Աշոտը, ի վերջո, փշրված ընտանի անկարգությունից, հրաժեշտ է տալիս իր մերձավորներին, իջնում է բերդից և անձնատուր լինում Բուղային, որը կրկնակի շղթաներ է հագցնում նրան, նստեցնում է ուղտի վրա և ուղարկում Սամառա։ Բայց Արծրունիների մեծ իշխանը երջանիկ կլիներ, եթե ինքը միայն դառնար արաբական վրիժառության առարկա։ Բուղան, միշտ միևնույն ծրագիրն իրագործելով, կալանավորեց և նույն եղանակով արաբական մայրաքաղաքն ուղարկեց և ուրիշ շատ նախարարներ, իրենց ընտանիքների հետ, ինչպես նաև մեծ թվով գերիներ, որոնք նրա բանակի մեջ, ինչպես ասում է Արծրունին, կիտված էին հողի պես։ Աշոտի հետ գերի գնացին նրա փոքրահասակ որդին, Գրիգոր անունով, որ կոչվում էր նաև Դերենիկ կամ Դերանիկ[1], Վահան Արծրունին իր Գագիկ կամ Ապումրվան որդու հետ, Վահանի եղբայր Մուշեղը և տիկին Հրանուշը։ Գերեվարությունը կատարվում էր մեծ զգուշությամբ, որովհետև վախենում էին, թե Աշոտի եղբայր Գուրգենը կամ ուրիշ քաջեր ճանապարհին կհարձակվեն և կխլեն նրանց։ Սակայն, որքան և բազմաթիվ էր գերեվար պահապան զորքը, լեռնցու քաջությունը երկյուղ չկրեց նրանից և ցույց տվեց վերին աստիճանի խիզախ ձեռներեցություն։ Գերի բռնված ազատներից մի քանիսը, տեսնելով, որ կապվածների ու հեռու երկիր քշվողների մեջ են և իրենց ընտանիքները, փախան և, մարդիկ հավաքելով իրենց շուրջը, կռ-

[1] Դերանիկ թարգմանվում է «Աստծուց ուխտով խնդրված», Թ. Արծ., եր. 280։

բեցին մի կիրճ, որով անցնում էր գերիների կարավանը, ազատեցին ոչ միայն իրենց ընտանիքները, այլև ուրիշ շատերին, որոնց և փախցրին լեռները։ Բայց իրենք, քաջերը, շրջապատվելով արաբներից, ընկան նրանց ձեռքը։ Բուղան պայման դրեց, որ նրանց կյանքը կխնայվի միայն այն դեպքում, երբ նրանք կընդունեն իսլամը։ Քաջերը, սակայն, մերժում են և իրենց գլուխները տալիս են դահճին։ Հայտնի չէ, թե քանի հոգի էին դրանք, գիտենք միայն երկուսի անունները—Գեորգ Ակեացի և Խոսրով Գաբաեղյան։

Վասպուրականի այս աղետներին ականատես էր Բուղայի բանակում պատվավոր դիրք վայելող Սմբատ սպարապետը։ Նրա քրոջ ընտանիքն էր այդպես քայքայվում, մի ամբողջ երկրի տանջանքներն էին ամեն օր ներկայանում նրան հարյուրավոր տեսարաններով։ Եվ նա, թեև Բուղայի խորհրդական և ուղեցույց, չէր կարողանում լինել սառն, անտարբեր հանդիսատես։ Նա շատ էր ուզում մի բան անել այդ անօգնական բազմությունների համար. «Այրէր և խռովէր ի սիրտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամեացն», ասում է Թովմա Արծրունին։ Չկարողանալով, վերջապես, տանել այդ դրությունը, նա մի օր համարձակություն է ստանում մտնելու Բուղայի մոտ և, հիշեցնելով նրան իր ծառայությունները, խնդրում է շնորհ անել իրեն։ Բուղան, մեծ ուշադրությամբ վերաբերվելով նրան, առաջարկում է խնդրել ինչ որ ուզում է, և խոստանում է կատարել նրա բոլոր ցանկությունները, որքան և մեծ լինեն նրանք։ Այն ժամանակ սպարապետը խնդրում է թույլ տալ իրեն ազատել գերիներին։ Ստանալով այդ թույլտվությունը, նա ազատում է բավական թվով ժողովուրդ, ինքն անձամբ տանում է ազատվածներին իրենց տեղերը։ Բայց ազատվածների մեջ չկային, իհարկե, կարևոր դիրք ունեցող անձինք։ Բուղան Սմբատին արձակուրդ է տալիս, պատվիրելով վերադառնալ ձմեռը, երբ ինքը կլինի Դվինում։

3. Արյան լիճ: Գուրգենը գերի: Բայց Աշոտ Արծրունու գերեվարությունը չէր նշանակում, թե արաբների առջև այլևս ոչ մի դժվարություն չկար։ Վասպուրականում դեռ մնում էր Աշոտի եղբայր Գուրգենը, որ կարողացել էր կազմակերպել 900 հոգուց բաղկացած մի գունդ, միացնել իր հետ մի շարք նախարարներ։ Այս ուժը լեռնային մի երկրում դեռ շատ դժվարություններ կարող էր պատճառել մի մեծ բանակի։ Ուստի Բուղան մի հատուկ զորաբաժին հանեց Գուրգենի դեմ, հանձնարարելով նրան, ինչպես էլ լինի՝ ուժով թե դավով, ձերբակալել նրան և իր մոտ բերել։

Այս անգամ գործողությունների բեմ էր դառնում մի ուրիշ աշխարհ, որ նույնիսկ Վասպուրականին չէր վերաբերում, այլ նրա հարավային սահմանակից Կորճեք նահանգին, այն է՝ Որսիրանից գավառը, որ գուցե այդ ժամանակները միացված էր Վասպուրականին։ Այդտեղ, Թով գյուղի մոտ, մի բարձր սարի վրա, կար մի տեղ, որ կոչվում էր Արյան լիճ։ Ինչպես բացատրում է Թովմա Արծրունին, Արյան լիճ էր կոչվում այն պատճառով, որ սովորաբար այդ վայրում էին տեղի ունենում Վասպուրականի իշխանների պատերազմները։ Մի քանի հանգամանքներ թույլ են տալիս ենթադրելու, որ Որսիրանքի այդ անկյունը մի շատ ամուր լեռնային բավիղ էր, ուր սովորաբար ապաստան էր գտնում թշնամու արշավանքից փախած հայ ժողովուրդը, և նախարարական զորքերն էլ, պաշտպանելով այդ մեծ բազմությունը, կռվի էին բռնվում հարձակվողների հետ։ Այդ լեռնային երկրով

է անցնում Զավ (Զաբ) գետը, և նրա ափին բանակ դրեց արաբական զորքը, որի թիվն Արծրունին հաշվում է 10 հազար։ Այստեղ էլ նորից շեշտվում էր այն հանգամանքը, որ հայ նախարարները խաղաղասեր տրամադրությամբ էին տոգորված և առհասարակ չէին ուզում բարդություններ առաջ բերել, ուստի ամեն կերպ աշխատում էին հաշտություն խնդրել անողոք և դժնդաբարո թուրք զորավարից։ Այսպես էր և Գուրգեն Արծրունին, որին այս տեսակ հաշտեցնող տրամադրությունը ներշնչում էր հենց գուցե այն հանգամանքը, որ իր առջև տեսնում էր մի թշնամական բանակ, որ գերազանցում էր իր բանակին տասն անգամ։ Այս էր պատճառը, որ նա ուղարկեց իր մորն Բուղայի մոտ՝ հաշտություն կնքելու համար։

Բուղան Հռիփսիմե տիկնոջն ընդունեց պատիվներով։ Սակայն տիկինը նրա մոտ այն հաջողությունը չունեցավ, ինչ մի ժամանակ Յուսուֆ ոստիկանի մոտ էր ունեցել։ Բուղայի խոստումն այն էր, թե կքննի տիկնոջ բերած առաջարկությունը և կպատասխանի։ Բայց մինչդեռ այդ պատասխանին էր սպասում Արծրունյաց տիկինը, Զավ գետի ափին բանակ դրած արաբական զորքը բանակցություններ սկսեց Գուրգեն իշխանի հետ, գործի դնելով առայժմ միայն խաբեական միջոցներ։ Աբդլա անունով մի դեսպան ուղարկեց Գուրգենի մոտ, որ առաջուց ճանաչում էր նրան։ Դեսպանն սկսեց հավատացնել իշխանին, թե արաբական բանակը լցված է խաղաղ տրամադրությամբ և ուզում է հենց խաղաղությամբ էլ վերջացնել այս ընդհարումը, ուստի և առաջարկում էր Գուրգենին գնալ բանակ և պայմանների մասին խոսել զորավարների հետ։ Աբդլան ավելացնում էր և այն, թե Գուրգենի անձը զերծ կլինի ամեն մի վտանգից և նա, գործը վերջացնելուց հետո, նորից կվերադառնա իր բանակը։ Եվ որպեսզի արաբ զորավարները ցույց տան իրենց կատարյալ անկեղծությունը, վճռել են հեռացնել իրենց բանակը, որպեսզի հայ իշխանն էլ կարողանար սակավախումբ մարդկանցով գնալ նրանց մոտ։

Գուրգենը հավատում է Աբդլային և վճռում է գնալ արաբական բանակը։ Նախարարները, զգալով, որ այստեղ դավադրություն է պատրաստվում, խնդրում-թախանձում են իրենց զորավարին չգնալ, մինչև իսկ լաց են լինում. բայց Գուրգենը գնում է։ Իսկ նախարարներից մեկը, որ կոչվում էր Աբումկդեմ և որին հանձնարարված էր դիտելու շրջակայքը, նկատելով, որ արաբական բանակն այդ միջոցին արշավանք է սկսել հայերի դեմ, շտապում է Գուրգենի բանակը, իսկույն կարգադրություններ է անում, որ զորքերը ճակատամարտի պատրաստվեն, իսկ ինքը ձին քշում է Գուրգենի հետևից, որպեսզի կարողանա նրան ետ դարձնել կորստյան ճանապարհից։ Նա հանում է սուրը, վերցնում է սաղավարտը, որպեսզի նրանց շողշողոցն էլ Գուրգենի ուշադրությունը գրավի։ Գնում է այսպես Աբումկդեմը, կանչում է Գուրգենին, և ձին էլ իր բարձր խրխնջոցով էր ձայնակցում իր տիրոջը՝ առջևից գնացող իշխանին կանգնեցնելու համար։ Եվ Գուրգենը, ճիշտ որ, կանգ է առնում, կարծելով, թե իր հետևից արշավողը գուժկան էր։ Աբումկդեմը հասնում է, ետ դարձնում Գուրգենին։ Սա մի անգամ էլ փորձում է կանգնեցնել արաբների հարձակումը և մարդ ուղարկելով առաջարկում է դեռ կռիվ չսկսել, մինչև որ իր մայրը կվերջացնե բանակցությունները Բուղայի հետ, մինչև իսկ կաշառք է առաջարկում զորավարներին։ Բայց այդ բոլոր առաջարկությունները մերժվում են։ Եվ միայն

այս ժամանակ Գուրգենը հրաման է տալիս իր զորքին պատրաստվել կռվի։

Արյան լճի պատերազմը շատ հաջողակ էր հայերի համար։ Այդ պատերազմում հայությունը ներկայանում էր մի կուռ միաբանական կազմվածքով։ Մասնակցում էին Արծրունի, Գնունի, Գազրիկ, Ամատունի, Վարաժնունի, Ռշտունի, Ակեացի, Անձևացի, Վահևունի տոհմերը, որոնք ներկայացված էին երեսունից ավելի նախարարներով և ազատներով։ Աշխարհական ազնվականության հետ ձեռք-ձեռքի տված էր հայ հոգևորականությունը, որ կռվում էր զինվորների շարքերում, որովհետև, ասում է Թովմա Արծրունին, պատերազմը հոգևոր էր և ոչ թե մարմնավոր։ Այս մի ապացույց է, որ արաբներն իրենց արշավանքին տվել էին կրոնական պատերազմի կերպարանք, ուստի հայերն էլ, պատասխանելով միևնույն կերպով, իրենց դիմադրությանը հաղորդեցին կրոնական գունավորում։ Ռազմական ճակատը հարդարելուց հետո Գուրգեն իշխանն իր համար տեղ ընտրեց զորքի ձախ թևը։ Հոգևորականությունն սկսեց ոգևորել կռվողներին կրոնական արարողություններով, խաչ ու ավետարան բարձրացրած՝ քահանաները երգում էին և գոչում. «Տէր, խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա»։

Բախումը շատ ուժգին էր, և պատմագիրը մեծարում է հայերի խիզախությունն ու քաջությունը, ասելով. «Գոչէին վիշապաձայն և բեկանէին առիւծաբար և հարկանէին վարազաբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտութիւն, և իւրաքանչիւր այր զախոյեան իւր յերկիր հարեալ՝ և ինքն զգլխի միւսոյն հեալէր։ Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փեյլեոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց հայթմանէ և լեառնն իբրև ի հրոյ վառեալ երևէր»[1]։ Պատերազմը տևեց մինչև երեկո։ Թշնամիներից ընկան 1800 հոգի, այնպես որ ամեն մի հայի ընկնում էր երկու սպանված արաբ։ Երեկոյան մութն էր միայն, որ կանգնեցրեց այդ լեռնային մեծ ճակատամարտը։ Հայերը հալածեցին թշնամուն մինչև Վասպուրականի սահմանագլուխ տեղերը։ Ժամանակի հասկացողությունների տեսակետից միանգամայն բնական էր, որ հրաշապատում զրույց էլ ստեղծվեր՝ Արյան լճի հաղթությունը լուսազարդարելու համար։ Եվ Արծրունին, ինքը մի ջերմեռանդ հավատացող, ասում է, թե միայն Հայոց քաջերը չէին, որ այդ պատերազմի մեջ իրենց բազուկների ուժը ցույց տվին։ Նրանց հետ միասին կռվում էին և երկնային անմարմին զորքերը։ Զուր չէր, անշուշտ, որ պատերազմը կրոնական էր հայտարարված։ Երբ երկու կողմերը խառնվեցին իրար,— ասում է բարեպաշտ առասպելը,— սպիտակ ձի հեծած մի մարդ երևաց հանկարծ, որ լուսեղեն մի երևույթ էր, հագած ուներ լուսեղեն շորեր, որոնք փայլում և այրվում էին արուսյակի նման։ Աջ ձեռքին նա սուր ուներ, ձախ ձեռքին՝ խնկով լիքը բուրվառ, որի ծուխը ցանում էր թշնամիների դեմ։ Երբ սաստկանում էր ծուխը և թշնամիների դեմքին էր խփում, Հայոց գնդերն էին զորեղանում, իսկ երբ ծուխը հանդարտվում էր, մի քիչ ույժ էին առնում թշնամիները։

Սակայն պատերազմական գործի մեջ շատ պայծառ ճշմարտություն է, որ հաղթություն տանելուց ավելի դժվար է տարած հաղթությունից օգտվելը։ Այս կողմից Արյան լճի խոշոր հաղթությունը ցույց տվեց, որ Վասպուրականի լեռնցիները, որքան քաջ էին իբրև կռվողներ, այնքան խեղճ ու կրակ միամիտներ էին քաղաքական հարաբերությունների մեջ։ Բուղան, ստանալով իր խոշոր զորաբաժնի ոչնչացման լուրը, մի րոպե մատնվեց ցասման և կատաղության, բայց շուտով նրա մեջ գերակշիռ հանդիսացավ այն միտքը, որ հաղթությունը միայն զենքին չի պատկանում, այլև այն միջոցներին, որոնցով մարդիկ խաբում են իրար։ Եվ առժամ մոռանալով Արյան լճի պատճառած սուր ցավը, նա հագավ ճարպիկ քաղաքական ձեռնածուի դիմակ. Գուրգեն իշխանին թուղթ ուղարկվեց, լի մեծամեծ խոստումներով, հավաստիացումներով և երդումներով։ Բուղան համաձայն էր, որ Գուրգենն իր եղբայր Աշոտի փոխարեն դառնա Վասպուրականի մեծ իշխան և հրավիրում էր նրան իր մոտ՝ պատիվներ ստանալու և պայմանավորվելու համար։ Եվ պարզամիտ լեռնցի իշխանը գնում է։ Արաբական բանակում նա ընդունվում է այնպիսի պատիվներով, որոնք ոչ մի կասկած չէին թողնում, թե գլխավոր հրամանատարի բարեկամական տրամադրությունն անկեղծ է։ Մի ամբողջ զինվորական հանդես կազմվեց, որ ընդունեց հայ իշխանին փողփողող դրոշակներով, նվագածությամբ և թմբուկներով։ Մունետիկը կանչում էր բանակի մեջ, թե Գուրգեն իշխանն է այժմ Վասպուրականի տերը։

Երեք օրից հետո, սակայն, սկսվեց կատակերգության վերջին գործողությունը, որ արդեն մի կատարյալ ողբերգություն էր ոչ միայն անձնապես Գուրգենի, այլ մանավանդ ամբողջ երկրի համար։ Արաբական բանակում սարքվեց մի թուղթ, որ իբր թե Մոթավաքիլ խալիֆն էր ուղարկել Բուղային և որ հենց իբր թե նոր էր ստացվել։ Իսկ այդ թղթի մեջ Իսլամի հրամանատարը կտրուկ կերպով պահանջում էր ձերբակալել Գուրգենին և ուղարկել իր մոտ։ Այս կեղծ թուղթը, իհարկե, միանգամայն արձակում էր Բուղայի ձեռքերը, եթե նրանք ճիշտ որ կապված էին խոստումներով և երդումներով։ Խորամանկ թուրքը հիմա կարող էր հավատացնել այնքան դյուրահավատ Գուրգենին, թե ինքն այլևս ուրիշ մի բան չի կարող անել, բայց միայն ճշտությամբ կատարել իր տիրոջ հրամանը։ Եվ իսկույն Գուրգենն ու Արծրունի մյուս իշխանները կապվում են, ուղտերի վրա բարձվում և ուղարկվում Սամառա։ Արյան լճի փայլուն հաղթությունն այսպես փոխվում է կատարյալ պարտության։ Հռիփսիմե տիկինը, տեսնելով իր որդիների գերեվարությունը, ինքն էլ գնաց նրանց հետևից «մազերը խուզած, օձիքը պատռած, լալով ու կոծելով», ինչպես ասում է Թովմա Արծրունին։ Աշոտ Մսակերի այս դուստրը հայ կնոջ բարձր տիպարն է ներկայացնում մեզ 9-րդ դարում, իբրև մայր և գործիչ։

Այնուհետև էր, որ եկավ Վասպուրականի իսկական դժբախտությունը։ Գուրգենի հետ միացած նախարարները հեռանում են իրարից, ցրվում զանազան կողմեր, ապաստան որոնելով լեռնային անմատչելի ամրությունների մեջ։ Նրանց զորքերն էլ, լքված ու ցիրուցան, գնացին ուր կարողացան, և երկիրը մնաց բաց ու անպաշտպան, Բուղայի գթասրտության ապավինած։ Արյան լճի պարտության վրեժը խաղաղ ազգաբնակությունից հանվեց սոսկալի չափերով։ Վասպուրականի պատմագիրը, ավելորդ համարելով երկար մանրամասնությունների մեջ մտնել, ամեն ինչ ասած է կարծում, գրելով այսպիսի տողեր. «Եւ էր նեղութիւն մեծ ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղև ի սկզբանէ աշխարհի և մի՛ այլ լիցի»։ Ավերված ու կործանված գյուղերի, ավանների և ագարակների տեղում նույնիսկ բույս էլ չէր

[1] Թովմա Արծրունի, էջ. 147։

բռնում։ Վասպուրականը Տարոնի հարազատ վիճակակիցն էր դառնում։ Հազարավոր գերիներ ուղարկվեցին զանազան երկրներ՝ վաճառվելու համար։

4. Հյուսիսում։ Ձմեռը վրա էր հասել, և Բուղան, թողնելով Վասպուրականի սահմանները, անցավ Դվին մայրաքաղաքը։ Սակայն ավերումն ու արյունհեղությունը դադար չառան այդ ձմեռ։ Դվինի շրջակա գավառները, բացի իհարկե, Սմբատ սպարապետի Շիրակից, ասպատակվեցին Բուղայի սահմանած սիստեմով։ Զինված կամ զենք կրելու ընդունակ տղամարդիկ բռնվում էին, զինաթափ արվում. նրանցից լավերին և ուժեղներին գերի էին տանում, իսկ մնացածներին «իսմաիլյան երկաթին» կերակուր տալիս, ինչպես արտահայտվում է Հովհաննես կաթողիկոսը[1]։ Վասպուրականից էլ շատ կապյալներ էին բերել Դվին։ Առնելով դրանց հետ Արարատյան երկրում բռնածներին, Բուղան ուզեց պակասեցնել նույնիսկ ընտրյալների, քաջ ու գեղեցկատեսիլ գերիների թիվը։ Ուստի առաջարկեց նրանց մահմեդականություն ընդունել, և մերժողներին կոտորել էր տալիս։ Այդ զոհերի մեջ հատկապես հիշատակված են յոթն անձիք, որոնք բերված էին Վասպուրականի Որսիրան գյուղից և որոնք աչքի էին ընկնում իրենց քաջառողջ կազմվածքով, զենքերի գործածության մեջ ունեցած հաջողությամբ։ Նրանց գլխավորի անունն էր Ատոմ։ Ստանալով կրոնափոխ դառնալու առաջարկություն, նրանք հերոսաբար մերժեցին և ամենքն էլ նահատակվեցին։ Ժամանակի Հովհաննես Դ կաթողիկոսը (833—855 թթ.) այս յոթին էլ սրբերի դասում կարգեց և կարգադրեց, որ նրանց հիշատակը տոնվի եկեղեցում «Ատոմեան վկայք» անունով։ Քիչ չէին, իհարկե, և այնպիսիները, որոնք կյանք պահպանեցին ուրացության գնով։ Միաժամանակ չէր մոռացվում Հայաստանի հողի վրա, դուրս քշված հայ ազգաբնակության տեղ, արաբ գաղթականություններ հաստատելու ծրագիրը։ Այս ժամանակ էր, անշուշտ, որ արաբական բանակին հետևող ընտանիքներից գաղթականություն հաստատվեց Վանա լճի հյուսիս-արևելյան անկյունում, Բերկրիի շրջանում։ Այստեղ բնակված ցեղը կոչվեց Ութմանիկ։ Գիտենք արդեն, որ նույն լճի հյուսիսային կողմում էլ Կայսիկ արաբական ցեղն էր իշխանություն հաստատել։

Եվ ահա 9-րդ դարում բավական խիստ ընդգծված ենք տեսնում այն անհունապես աղետալի իրականությունը, որ վիճակվում էր հայ ազգին՝ նրա քաղաքական դրությունն իսպառ տկարացնելու և խորտակելու համար։ Այդ աղետը, որ այնուհետև զարգացավ դարից դար, այն էր, որ օտար տարրեր նստում էին հայկական հողի վրա, կտրատում էին հայ ժողովրդի ազգագրական միաշաղաղությունը, դարձնելով նրան իր տան մեջ օտար տարրերի հետ խառնված, իր ազգային միությունը կորցրած, հետևաբար և զրկված իր քաղաքական ինքնուրույնությունը պահպանելու կարողությունից։

Հետևյալ տարվա (853 թ.) գարնանը Բուղան վերսկսեց իր ավերիչ արշավանքը, այս անգամ ընտրելով հյուսիսային ուղղությունը։ Սկսեց Սյունիքից, կարգադրելով, որ բռնեն և իր մոտ բերեն Փիլիպեի որդիներից Վասակին, Իշխանիկ անվանված, Աշոտին և մի քանի այլ իշխանների։ Սակայն իշխանները փախան Բաղաց անմատչելի բերդը։ Վասակ իշխանն էր միայն, որ չհավատաց այդ բերդի պաշտպանության և գնաց

[1] Եր. 154։

Կոտայք գավառը, այսինքն Դվինի ուղղությամբ։ Այդտեղ արաբներն ընկան նրա հետևից, բայց նա հանկարծորեն դառնալով իրեն հալածողների դեմ, շատերին սպանեց և ինքը փախչելով Գարդման գավառը, ապաստան գտավ տեղական իշխանի մոտ, որի անունն էր Կտրիճ։ Սակայն այս Կտրիճը, դավաճանելով հյուրընկալության օրենքին, բռնում է Վասակ Իշխանիկին և ուղարկում Բուղային, հուսալով, թե այդպիսով իր անձն ազատած կլիներ, մի ակնկալություն, որ, ինչպես կտեսնենք, բոլորովին զուր էր։ Վասակից հետո ձերբակալվեցին նրա մայրը և Աշոտ եղբայրը, որոնք և ենթարկվեցին կապանքների։

Այնուհետև արաբական բանակն արշավեց Թիֆլիսի վրա, որի կառավարիչն էր այդ ժամանակ Իսահակ իբն-Իսմայիլ արաբ իշխանավորը, որ ապստամբական դրության մեջ էր գտնվում Մոթավաքիլի վերաբերմամբ։ Իսահակը վերաշինել և ամրացրել էր Թիֆլիսը, որտեղ, ինչպես երևում է Տաբարիի նկարագրությունից[1], հայեր էին ապրում և նրանց հետ խառն՝ արաբներ ու պարսիկներ։ Սմբատ սպարապետը (որ արաբների մեջ կոչվում էր նաև Աբու-Աբաս) դարձյալ Բուղայի բանակումն էր և ուղարկվում է հայերի մոտ՝ համոզելու համար, որ նրանք դիմադրություն ցույց չտան։ Իսկ որ հայերը կարող էին շատ օգնություններ անել ապստամբ Իսահակին և դժվարացնել Բուղայի գործը, այս երևում է այն հետաքրքրական հանգամանքից, որ Թիֆլիսի բերդապահ զորքը բաղկացած էր մեծ մասամբ խութեցիներից։ Բայց Սմբատի առաքելությունը հաջողություն չի ունենում։ Իսահակ իբն-Իսմայիլը պատրաստվում է պատերազմի։ Այն ժամանակ արաբները դրսից վառած կուպր են նետում քաղաքի մեջ։ Եվ որովհետև բոլոր տները փայտաշեն էին, ուստի սկսվեց մեծ հրդեհ, որի մեջ այրվեցին 5000 բնակիչ։ Քաղաքը, այսպիսով, վերցվում է, Իսահակը բռնվում է և գլխատվում, իսկ բերդապահ զորքն իրավունք է ստանում, զինաթափ լինելով, գնալ ուր որ ուզում է։ Իսահակի կայքերի հետ Բուղան տիրացավ և նրա կանանցից մեկին, որ աչքի էր ընկնում իր արտասովոր գեղեցկությամբ։ Բայց գեղեցկուհին մի գեղեցիկ միջոց գտավ Թուրքի գրկից ազատվելու համար։ Նա շարունակ կրկնում էր, թե ինքը խալիֆին արժանի գեղեցկուհի է և պահանջում էր, որ իրեն ուղարկե նրա մոտ։ Բուղան վերջիվերջո չկարողացավ արհամարհել այս պահանջը և երկյուղ կրելով Մոթավաքիլի դժգոհությունից, նրան ուղարկեց գեղեցիկ կնոջը։ Այս էլ պիտի դառնար հղիացած Թուրքի կործանման պատճառ։

Թիֆլիսից Բուղան արշավեց Ծանարների երկիրը, որ համապատասխանում է այժմյան Կախեթին[2]։ Ծանարները մի քաջարի ցեղ էին, արաբների հակառակորդ, ուստի և հաճախ հարձակվում էին Թիֆլիսի վրա։ Բուղան գնում էր նրանց նվաճելու, բայց այստեղ էլ ցույց տվեց, որ առանձին ռազմագիտական ընդունակություններ չունի և միայն մանր կռիվների մեջ կարող էր փոքրիշատե հաջողություն գտնել, այն էլ մեծ մասամբ խորամանկությունների և ուխտադրժության միջոցով։ Մի բան, որ Հայաստանում Բուղային մինչև այդ տվել էր ուժի դիրք ու հեղինակություն,— հնարավորություն տալով գերելու, սպանելու, տանջելու—դա անկազմակերպ վիճակն էր, միանալու անկարողությունը։ Եվ այս բանն ապացուցեցին

[1] «Հանդ. Ամս.», 1906, եր. 276։

[2] Մարկվարտ, «Հանդ. Ամս.», 1913, էջ 661։

ծանարները, սաստիկ ջարդ տալով Բուղային, որն ստիպված եղավ ամոթով փախչել պատերազմի դաշտից և այդ պարտության փոխարինություն որոնել դարձյալ Հայաստանի լեռնային մասի մանր վիճակներում։

Ուստի նա գնաց Պարտավ և հիմա էլ սկսեց Աղվանից իշխանների հետ հաշիվ տեսնել։ Լեռնային մասի (Արցախ և Ուտի) հայ իշխաններին մեկը մեկի հետևից ձերբակալել տվեց և բանտարկեց իր բանակում։ Դեռ Թիֆլիս եղած ժամանակ նա մի զորաբաժին էր ուղարկել Գարդման։ Կորիճ իշխանը, որ իր մոտ ապաստանած Վասակ իշխանին վատաբար մատնել էր արաբների ձեռքը, պաշարվեց իր բերդի մեջ և թեպետ ընդդիմադրություն ցույց տվեց, բայց վերջն ստիպված եղավ անձնատուր լինել։ Խաչեն բերդի տերը, մեզ ծանոթ Ատրներսեհ իշխանը, իր ազգակիցների հետ նույն վիճակին ենթարկվեց։ Ձերբակալվեց և նրա հայրը, Սահլ իշխանը, Բաբանին բռնողը, որին մենք հետո տեսնում ենք ապստամբվածների շարքում։ Վերջապես, ընդհանուր վիճակից չէր խուսափում և Ուտիի Ստեփանոս Կոն իշխանը, որի ամրոցը գտնվում էր Տուս գյուղում։ Այսպիսով, լեռնային Աղվանքը, որ, ինչպես տեսնում ենք, արդեն գլխովին հայացած էր այդ ժամանակ, իր մեծագույն մասով հպատակվեց Բուղային։

5. Աբու-Մուսե Եռանշահիկ: *Մնում էր հարավային Արցախը, լեռնային մի աշխարհ, որ ամփոփում էր իր մեջ այժմյան Դիզակ և Վարանդա գավառների մի մասը Քիրս և Դիզափայտ լեռների շրջանում։ Այդտեղ իշխում էր վերևում հիշատակված Եսային, «Երիցու որդի» անվանված։ Նրա հայրը, ուրեմն, քահանա էր, մի բան, որ, իհարկե, չէր արգելում, որ նա լինի տիրապետող ազնվական տոհմից։ Արաբական աղբյուրները տալիս են և այդ երեցի անունը—Հովսեփ, իսկ Եսայու որդին էր Մուսեն (Մովսես?), որի անունով էլ նա ստացել էր, ըստ արաբական սովորության, «Աբու-Մուսե» (Մուսեի հայր) մականունը։ Այս Եսայի-Աբու Մուսեի կալվածները, ինչպես երևում է, շատ ընդարձակ էին, քանի որ նա, բացի իր տոհմային կարողությունից, իր քեռի Աբլասադից ժառանգություն էր ստացել և Միհրանյան տոհմի կալվածներից շատերը։ Այս հանգամանքի շնորհիվ էր, անշուշտ, որ Աբու-Մուսեն, մյուս լեռնային իշխանների համեմատությամբ, ռազմական խոշոր ուժի տեր էր։ Հենված իր զինվորության, բայց ռավելապես իր լեռների դժվարակոխ բնության[1] վրա, «Երիցու որդին» տիպար լեռնական տիրողի անվախության և ազատասիրության, վճռից դիմադրություն ցույց տալ Բուղային։ Նրա այս գործը բացառիկ մի բախտի է արժանացել և այն տեսակետից, որ մտել է Թովմա Արծրունու Պատմության մեջ շատ մանրամասնություններով, որոնք և դարձնում են Աբու-Մուսեին մի այնպիսի հերոս, որ ավելի բարձր էր Արծրունի հերոսներից և իսկապես ամենախոշոր մխիթարական երևույթն էր կազմում Հայոց աշխարհի այդ ժամանակվա արյունոտ նահատակումների մեջ։*

Աբու-Մուսեին խրախուսողը, իհարկե, Ծանարների երկրում Բուղայի կրած ծանր պարտությունն էր։ Մի՞թե,—ասում էր—ծանարներից խեղճ ենք մենք, որ տեղի տանք բռնավորին, կամ մի՞թե մեր լեռները պակաս

---

[1] Պիտի ասենք, որ Աբու-Մուսեի երկրի մասին հաստատ աշխարհագրական տեղեկություններ չեն մնացել։ Մի քանի հնագիտական զուգակշիռներ են միայն, որ թույլ են տալիս հավանական կարծելու, թե Աբու-Մուսեի բնակավայրն այժմյան Տումի գյուղն էր, Դիզափայտ լեռան հյուսիսային ստորոտներում, Շուշու գավառի հարավային ծայրին (տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895, եր. 421)։

ամուր են ծանարների լեռներից, իսկ մեր կիրճերը պակաս հեշտություն են ներկայացնում թշնամուն նրանց մեջ փակելու համար։ Եվ սկսում է եռանդուն պատրաստություններ տեսնել։ Իր զորքերը, ինչպես և ժողովուրդը նա հավաքում է Քթիշ անունով բերդի մեջ, որ շինված էր մի բարձր և մեծ սարի գլխին[1]։ Իսկ պատերազմական գործողությունների սկզբնավորումը Թովմա Արծրունին ներկայացնում է այսպես։ Բուղան իր սովորական հոխորտանքով հրաման է ուղարկում Աբու-Մուսեին, պահանջելով գալ իր մոտ և հնազանդություն հայտնել։ Լեռնցի իշխանը պատասխանում է նրան մի նամակով, որի ամբողջ բովանդակությունը բերում է Արծրունին։ Այդ մի շատ հետաքրքրական վավերագիր է, որի իսկությունը կասկածի տակ դնելու լուրջ հիմք չկա՝ նախ այն պատճառով, որ նրա հաղորդողը Վասպուրականի պատմիչն է, մի շատ վստահելի և լավատեղյակ աղբյուր, և երկրորդ՝ հենց իր բովանդակությունն ունենալով ի նկատի, որ մի զարդարուն օրինակ է այն սպառնական և ինքնագովական ոճի, որով արևելյան իշխաններն ու վեհապետները խոսում են այսպիսի դեպքերում։ Համենայն դեպս, 9-րդ դարի մի ուշագրավ շարադրություն է այս, կապված մի հերոսական լեռնաշխարհի մտավոր ըմբռնումների հետ։ Եվ արժե, որ այդ թուղթն էլ դրվի պատմության էջերում նրա հեղինակի գործերի հետ միասին։ Ահա ի՛նչ էր գրում Եսայի Աբու-Մուսեն Բուղային.

«Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև գխնամարկուս, և ոչ աւազակաբար աւերել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել։ Եւ դու եթե ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւեր և զխռովութիւն։ Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա՛ ի սահմանաց իմոց։ Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս քո ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ կամք քո լիցին, և ես քաւեալ իմ յարենէ քումմէ, մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ և Դաւիթ զԳողիաթ[2] և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն, և հաճեցաւ ընդ նոսա Աստուած. նոյնպէս արարից ընդ քեզ և ընդ զօրս քո։ Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատախօսութիւն ընդ քեզ. ի ձեռս քո է խաղաղութիւն և խռովութիւն։ Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յի-

---

[1] Ամենայն հավանականությամբ այս բերդն այժմյան Տող գյուղի (Շուշու գավառ) սարն էր։ Այս ենթադրության օգտին խոսում է այն, որ այդ սարի վրա շինված վանքը այսօր էլ ժողովրդի մեջ կոչվում է Թեշ (Թեշա վանք), որ, անշուշտ, նույն Քթիշ անունն է։ Վանքը հնագույն ժամանակների մի արձանագրության մեջ անվանված է Կտիչ, որ թվում է նույն անունից առաջացած մի անհաջող գրավոր հերյուրում։ Ներկայումս այդ անունն արդեն «Գտիչ»է դարձել (տ. անդ, եր. 82)։

[2] Շարելով Աստվածաշնչի այս անունները մի նամակի մեջ, որ ուղղված էր մի մահմեդականի, հեղինակը կարող էր անպատեհ և անըմբռնելի չհամարել, քանի որ Բուղայի մոտ հայեր շատ կային և ամենից առաջ՝ կրոնասեր Սմբատ սպարապետը։

նէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ։ Եւ դու նպատակ՝ և աղեղն իմ խոցոտիչ, դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոխ՝ և զօրք իմ դատապարտիչք. քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. քո ստացուածք՝ և մեք ժառանգորդք, քո աւար՝ և մեք աւարառուք. դու աւազակ՝ և մեք կողոպտիչք, դու եղէգն՝ և մեք հուր դիւրածախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրափուշ, դու ծաղիկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պտղալից՝ և մեք կարկուտ ապականարար, դու շինուած առանց հիման՝ և ես հեղեղ հիմն ի վեր տապալիչ, դու գէշ՝ զօրքն իմ պատառիչ գազան, որ պատառեն զառագաստ սրտի քո. դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. դու վիշապ ծովական՝ և մեք կարթ ի քիմս քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մենք արծուիք ի վերոյ քո, կուրացուցիչք աչաց քոց և գէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ։ Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել չանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս»[1]։

Բուղան պաշարեց Քթիչը և այդտեղ համոզվեց, որ լեռնցի իշխանի գրածները դատարկ հոխորտանքներ չէին։ Աբու-Մուսեն ուներ լավ պատրաստություն և գիտեր կռվել անվեհեր հերոսությամբ։ Լեռնային բերդի շուրջը բոլորվեցին պատերազմներ, որոնց մեջ արաբները չունեցան ոչ մի հաջողություն։ Բուղան ստիպված եղավ ավելի լուրջ պաշարողական աշխատանքներ սկսել։ Իր զորքերի մի մասը կենտրոնացրեց հյուսիսային կողմում, իսկ մյուս մասը կուտեց լեռան արևելյան կողի վրա։ Պատնեշներ կանգնեցին բերդի դեմ, քարակույտեր շինեցին, մինչև իսկ բարձր պարիսպներով շրջապատված ապարանքներ։ Միաժամանակ թուրք հրամանատարը, մի շարք անհաջողությունների հանդիպած լինելով, պարտք համարեց հայտնել Մոթավաքիլին, թե ո՛րքան դժվարություններ կան Քթիչն ընկճելու համար։ Այսպիսով, պաշարումը տևեց մոտ մի տարի։ Այս ժամանակամիջոցում Աբու-Մուսեն քսանութ անգամ ընդհարումներ ունեցավ Բուղայի հետ և այդ բոլոր կռիվներից դուրս եկավ հաղթանակով։ Ոչինչ չէր կարելի անել։ Արաբական զորքերը մեծ բազմությամբ և լավագույն պատրաստություններով գրոհ էին տալիս, բարձրանում մինչև սարի գլուխը, բայց ամեն անգամ Աբու-Մուսեի զորքը հանդիպում էր նրանց ադամանդյա բլուրի նման, հակահարձակում էր գործում և նորից թշնամին դեպի ցած էր հոսում լեռան լանջերով։ Մի խոշոր անհաջողություն Բուղային այնքան մեծ տրտմություն պատճառեց, որ նա փակվեց իր վրանում տասն օր, ոչ ոքի չէր ընդունում։ Եվ ահա Հայոց սպարապետն է, որ սիրտ է անում մտնել հուսահատված հրամանատարի մոտ և սփոփել նրան, նորից արիության ոգի ներշնչել նրան։ Նույնիսկ այսպիսի մի պաշտոն էլ իր համար պարտականություն համարեց Սմբատ Բագրատունին։ Եվ ասում էր Բուղային. «Ինչո՞ւ ես թուլացնում քո ձեռքը և նրա արիության հետ վատություն ես խառնում և քաջության անունը, որ վաստակել ես, կորստի ես

[1] Թով. Արծ., էջ. 178—179։

մատնում։ Աշխարհը քեզանից զարհուրած դողում է։ Ոչ ոք չհամարձակվեց քո դեմ դուրս գալ։ Ինչո՞ւ տկարացնում ես քո հզոր բազուկը։ Մի՞թե դու առաջինն էիր, որ հաղթվեցիր և զարհուրեցիր թշնամուց կամ մի՞թե միայն քո զորքն էր, որ ջարդվեց և միայն քո ավարն էր, որ բաժանվեց։ Չմտածեցի՞ր, արդյոք, թե սկզբից մինչև այսօր ամենուրեք, ուր որ զորք է գումարվել և եղել է պատերազմ և՛ սուր, և՛ ճակատամարտ, այնտեղ երբեմն հաղթություն է եղել, երբեմն պարտություն։ Աշխարհակալներից ո՞րն էր, որ սրի չմատնվեց։ Ազգերի իշխաններ կան, որոնք կամ ուժեղանում են, կամ տկարանում»։ Հայ սպարապետի այս խրախուսիչ խոսքերը միանգամայն բավական եղան, որ լքված զորավարը նորից ուժ ստանա և իր գործը շարունակի։ «Եւ ելեալ արտաքս ի սենեկէն,— ասում է Արծրունին,— և նստան ուրախ լինել»։

Պատերազմական գործողությունները վերսկսվեցին նոր թափով։ Բուղան գործադրում էր իր բոլոր հնարիմացությունը՝ լեռների իշխանի հերոսական ուժը խորտակելու համար։ Այդ պետական անհրաժեշտությունն էր, որ ցույց էր տվել և Մոթավաքիլը։ Պատասխանելով Բուղայի գրավոր զեկուցման, նա պահանջում էր կռվել Քթիչի դեմ ամենայն ուժգնությամբ։ Եվ ահա հարդարվում է մի մեծ ճակատամարտ ևս, վերջինը։ Նա սկսվեց մի ընդհանուր հարձակումով, որին մասնակցում էին արաբական բոլոր զորքերը։ Մինչդեռ նրանք փողահարությամբ և թմբուկներով բարձրանում էին սարի լանջերով դեպի վեր և այդպիսով հասան նույնիսկ գագաթին, Աբու-Մուսեի բանակն իր բերդի առջև կանգնած էր անշարժ ու լուռ, բաժանված չորս թևի, խաչանման։ Երբ արաբները բոլորովին մոտեցան բերդին, այդ ժամանակ միայն լեռնցիների շարքերը շարժվեցին, ընկան արշավողների վրա, և սկսվեց ահավոր կռիվ։ Երկու կողմերն էլ իրար հանդիպում էին և հարվածում քաջաբար, և ստացվում էր մի ահեղ տեսարան, որ խոր տպավորություն գործեց Սմբատ սպարապետի որդի Մուշեղի վրա։ Սա էլ Բուղայի բանակումն էր իր հոր հետ և պատերազմին նայում էր հեռվից, մի բլրի գլխից։ Եվ այնքան ցնցվեց իր առջև փռված տեսարանից, որ մի ամբողջ ոտանավոր գրեց, նմանեցնելով նրա մեջ Քթիչի այս օրը Քրիստոսի երկրորդ գալստյան և ահեղ դատաստանին։ Ոտանավորը հինգ տուն ուներ, բայց Արծրունին բերում է միայն առաջին տողը—«Անզբաղելական սրտի հայեցող անձն իմ ի միւս անգամ գալուստն»։ Եվ իրավ, զորքերի թիվն անհուն էր. գնդերը հետևում էին գնդերին, զարմացնելով իրենց փայլուն զենքերով, իրենց ահավոր հանդերձանքներով։ Լեռնային ժողովրդի մեջ հասկացողություն էր կազմվել, թե այդպիսի պատերազմ դեռ չէ եղել աշխարհիս վրա։ Ամենից շատ զարմանք պատճառում էին, իհարկե, Աբու-Մուսեի կանոնավոր, քաջավարժ զորաշարքերը, որոնք չշտապելով, իրարից առաջ չընկնելով, ոչ էլ ետ մնալով գրոհ տվին թշնամու վրա մի անդիմադրելի թափով և նրա անհուն շարքերը ցած հոսեցրին, նորից լանջերն ի վայր, նորից դեպի ստորոտը։

Բուղան մի անգամ ևս պարտված էր։ Եվ կորցնելով հույսը, թե կարելի է զենքով նվաճել լեռնցուն, նա դարձյալ փորձված միջոցին դիմեց —բանակցություններին։ Քթիչի տերն ավելի փորձառու քաղաքագետ հանդիսացավ, քան Արծրունի իշխանները։ Նա հայտարարեց, թե իր սկզբունքները նույնն են մնում, ինչ ցուցադրել էր իր նամակի մեջ, այսինքն՝ զենք բարձրացնելով Բուղայի դեմ, ինքը միմիայն ինքնապաշտպանություն

գործ է կատարել և երբեք չի մտածել ապստամբել արաբական տիրապետության դեմ։ Համաձայնություն կայացավ, որ երկու կողմերն առանձին-առանձին պատգամավորություններ ուղարկեն Մութավաքիլի մոտ, նրա կարգադրությանը թողնելով պայքարի լուծումը։ Իբրև շիտակ և օրինապահ հպատակ, Աբու-Մուսեն հայտարարում էր, թե կկատարի խալիֆի ամեն մի հրամանը, եթե այդ լինի նույնիսկ Քթիշը թողնելու և արքունիք գնալու հրաման։

Պատերազմական գործողությունները դադար առան մինչև խալիֆից պատասխան գալը։ Լեռնցի քաջ կռվողի պայմանները միանգամայն ազնիվ, ասպետական մի ցույց էին, բայց նա մոռանում էր միայն մի բան, որ դատավորը, վճիռ արձակողը Մութավաքիլի պես մի բարոյական այլանդակություն էր։ Նրանից ստացվեց կարգադրություն, որ Աբու-Մուսեն ապստամբ չնկատվի, բայց գնա Բուղայի մոտ, որ չպիտի նրան պատասխանատու համարե որևէ վնասի համար։ Երկու կողմերն էլ ճշտությամբ կատարեցին խալիֆի կամքը։ Աբու-Մուսեն իջավ իր արծվի բույնից, արձակեց իր քաջ զորքերը, գնաց արաբական բանակը, ուր ընդունվեց զինվորական պատիվներով։ Բայց ոչ մի հանդիսավորություն, ոչ մի շուք չէր կարող, իհարկե, փոխել իրերի իսկական դրությունը—այն, որ Քթիշի հերոսը գերի էր, թեև պատվավոր գերի, Բուղայի մոտ։

6. Նորից Վասպուրականը: Աբու-Մուսեի անձնատրությունը գալիս էր Բուղայի թևերն արձակելու այն դժվար հանգամանքների մեջ, որոնք ստեղծվել էին ոչ միայն լեռնային Աղվանքում, այլև Հայաստանի հարավում։ Ծանարների երկրում նրա կրած սաստիկ պարտությունը միաժամանակ զարթեցնող փողի արձագանքները տարածեց Վասպուրականում, այսինքն այն իսկ երկրում, որ Բուղան համարում էր վերջնականապես ընկճված ու մեռելային լռության դատապարտված։ Նորից այդ ավերված երկիրն էր, որ շարժվում էր ազատագրական շնչից և ապստամբության դրոշն էր պարզում, դուրս բերելով 4000 զինվոր։ Իրենց տներում մնացած նախարարների գործն էր այդ, և դարձյալ Արծրունի տոհմն էր, որ հանդիսանում էր առաջնորդ ու ղեկավար։ Այս անգամ Աբու-Ջաֆր Արծրունին էր ապստամբության գլուխը, իսկ զորավարն էր նրա քրոջ որդին, Աբու-Մկդեմ անունով, «այր քաջ և պատերազմող», ինչպես հանձնարարում է մեզ Թովմա Արծրունին։ Այս անունն էր կրում, ինչպես գիտենք, այն նախարարը, որ Գուրգեն Արծրունուն ետ դարձրեց, Արյան լճի մոտ, երբ նա գնում էր արաբական բանակը՝ հաշտություն կնքելու համար, որից հետո տեղի ունեցավ Արյան լճի հաղթական ճակատամարտը։

Վասպուրականի գործերը Բուղան հանձնել էր Սմբատ սպարապետին։ Սա, երևի, հենց այն պատճառով, որ Բուղայի հետ Քթիշ բերդի տակ էր գտնվում, Նախճավանի կառավարիչ Իբրահիմին է հանձնում վասպուրականցիներին զսպելու հոգսը։ Իբրահիմն շտապում է Բերկրի քաղաքը, միանում է այդտեղ ապրող Ութմանիկ արաբների հետ և գնում է հայոց զորքի դեմ։ Բայց Աբու-Մկդեմը Խոզաբերք գյուղի մոտ սաստիկ ջարդ տվեց Իբրահիմին և փախցրեց նրան։ Սակայն այս քաջ մարդն ինքն էլ զոհ դարձավ մի դժբախտ պատահարի, որ աղետալի նշանակություն ունեցավ ապստամբության համար։ Նրա վիրավորված ձին վայր է գցում նրան, թշնամիները վրա են հասնում և կտրում նրա գլուխը։ Այս դիպվածը լքում է տարածում հայ զորքի մեջ, որից և օգտվում է Իբրահիմը, նորից հարձակվելով նրա վրա։ Սկսվում է փախուստ և իրարանցում։ Ամեն մի նախարար դարձյալ իր լեռնական ամրություններն է քաշվում, իսկ նրանց հետևակ զորքը, մեծ ջարդ ուտելով, համարյա ոչնչացվում է։ Հաղթական Իբրահիմն առաջանում է մինչև Ռշտունյաց Ոստանը։ Իսկ Աբու-Ջաֆր իշխանը բոլորովին չի հուսահատվում իր ձեռնարկության վիճակված անհաջողություններից։ Ընդհակառակն, անցնելով իր հայրենի Աղբակ գավառը, մեծ եռանդով նոր կազմակերպչական գործի է ձեռնարկում։ Նոր-նոր գնդեր են հավաքվում զանազան կողմերից, նոր ապստամբական բանակ է կազմվում, որ գնում է Ռշտունիք, գրավում Ոստանը և այդտեղ հրամանատար կարգում մի իշխանի, երևի դարձյալ Արծրունիներից, Վասակ Կովակեր անունով։

Այս միջոցին ահա հանդես է գալիս Վասպուրականում մի նոր հերոս, որի մասին հիացմունքով և ոգևորությամբ է խոսում Թովմա Արծրունին։ Նա ասում է, թե իր համար ախորժելի է մեծ ուրախությամբ գրել բարեհաղթ Գուրգենի պատմությունը և ներողություն է խնդրում ընթերցողից, որ չի պատմում նրա բոլոր գործերը, որովհետև շատ-շատ են դրանք և եթե մի ուրիշը մի, երկու կամ մի քանի գործ ունի կատարած, նրա գործերը շատ շատերի գործերից գերազանց են։ Այս Գուրգենը նույնպես Արծրունի էր, Աբու-Բելճի որդին։ Երբ Բուղան գործում էր Վասպուրականում, նա չմիացավ նախարարներին և նույնիսկ չմնաց հայրենիքում։ Պատճառն անձնական էր։ Աշոտ Արծրունին նրան զրկել էր հայրական կալվածներից, և նա մենակ ու հալածական մնացած՝ գնում է Բագրևանդ գավառը, Քուրդիկ Մամիկոնյան իշխանի մոտ, որ իր քեռին էր։ Իսկ երբ Բուղան Վասպուրականից անցավ Արարատյան երկիրը, նա թողեց Բագրևանդը և գնաց Բագրատունիների արևմտյան բնագավառը, Սպեր, Իշխանիկ անունով Բագրատունի նախարարի մոտ։ Այդտեղ նա ցույց է տալիս մի շարք քաջագործություններ բյուզանդացիների դեմ մղած պատերազմների մեջ, ինչպես, օրինակ, 40 հոգով հազար մարդու վրա հարձակվել և հաղթել։ Այնքան շատ է նա զարմացնում բյուզանդացիներին իր քաջություններով, որ Միքայել կայսրը հրավիրում է նրան իր մոտ՝ բարձր պաշտոններ ստանալու համար, բայց նա չի համաձայնում։ Նույն տեսակ քաջություններ նա անում է և այն ընդհարումների մեջ, որոնք տեղի ունեցան Բուղայի ուղարկած մի զորաբաժնի և բյուզանդացիների միջև։ Այս բոլորից հետո Սմբատ սպարապետը միջնորդում է Բուղայի մոտ, որ Գուրգենը, իբրև քաջ պատերազմող, որ բազմաթիվ անգամ բյուզանդացիների արյունն է թափել, իրավունք ստանա մնալու իր՝ սպարապետի մոտ։ Բուղան թույլատրում է։ Այս ժամանակ էր ահա, որ Վասպուրականում տեղի ունեցան վերևում նկարագրված ապստամբական դեպքերը։ Լսելով, որ վասպուրականցիները հաղթվել են արաբներից և Վասակ Կովակերն է ստանձնել զորավարությունը, Գուրգենը Սմբատ սպարապետի կամակցությամբ գնում է այնտեղ, գրավում է Ջղմար և Սրինգ բերդերը, ամրանում է և իր ձեռքն առնում ամբողջ երկրի իշխանապետությունը։

Այնուհետև Վասպուրականը դառնում է ներքին և արտաքին պատերազմների թատերաբեմ։ Ներքին պատերազմները մի ավատական երկրի ընորոշ պատկերն էին ներկայացնում։ Դա պատերազմ էր գահի և կալվածների համար, որ բորբոքվեց այն ժամանակից, երբ իշխանները գերության գնացին, թողնելով իրենց կալվածները անպաշտպան։ Այս պատերազմների

մեջ հաջողակ էր Գուրգեն Աբու-Բելճը, և նրա հարևանները միշտ տանուլ էին տալիս իրենց վեճերը։ Նույնպիսի հաջողակությամբ պսակվում էր նրա քաջությունը և արտաքին կռիվների մեջ, որոնք դարձյալ սակավաթիվ չէին։ Բանն այն էր, որ Գուրգենը, Վասպուրական մտնելուն պես, անխնա կռիվ սկսեց և այն արաբական զորաբաժինների դեմ, որոնք այնտեղ թողնըվել էին Բուղայի կարգադրությամբ։ Մի կարճ միջոցում Աբու-Բելճի որդին բոլորովին մաքրեց Վասպուրականն արաբներից և իր իշխանությունը հաստատեց ամեն տեղ։ Բուղան մի երկու անգամ զորք ուղարկեց նրան զըսպելու համար, բայց Գուրգենն ամեն անգամ մեծ քաջությամբ վանեց նրանց, այնպես որ Թուրք հրամանատարը վերջիվերջո ստիպված էր հաշտության քաղաքականություն վարել և Գուրգենին ճանաչելով Վասպուրականի իշխանապետ, ուղարկեց նրան սուր և պատվի այլ նշաններ, որոնք նրա այդ նոր դիրքի հայտարարներն էին։ Բայց այստեղ էլ չէր վերջանում այս քաջամարտիկ իշխանի ասպարեզը։ Ինչպես հետո կտեսնենք, դեռ մի երկար և ուժեղ դեր էր վիճակված նրան Վասպուրականի կյանքում։

7. Բուղայի հեռանալը Հայաստանից: Մոթավաքիլ խալիֆը 855 թվականին Հայաստանից ետ կանչեց Բուղային։ Այս վճիռը նախորոշել էր դեռ այն ծանր պարտությունը, որ կրել էր Բուղան Ծանարների երկրում։ Սույն դեպքերից հետո Հայաստանում տեղի ունեցած անհաջողությունները կարող էին միայն փութացնել այդ որոշման գործադրությունը։ Առհասարակ արաբական այս մեծ արշավանքը, որ տևեց մոտ չորս տարի, չկարողացավ հասնել իր բուն նպատակին։ Թեև Հայաստանը քարուքանդ էր եղել, թեև Բուղան սարսափ էր տարածել, բայց վերջիվերջո երկիրը միանգամայն պարտված չէր և իր ծայրահեղ թուլացման մեջ անգամ ցույց էր տվել ջղուտ դիմացկունության ահագին ուժ։ Թուրք հրամանատարը հեռանում էր Հայաստանից, չկարողանալով նույնիսկ Վասպուրականը դնել ընկճվածի դրության մեջ։ Այնքան կորուստներից, այնքան ավերանքներից հետո՝ Գուրգեն Աբու-Բելճի քաջարի գործողություններով Վասպուրականում հաստատվում էր այն դրությունը, որ գոյություն ուներ Բուղայի արշավանքից առաջ։ Իր ազգային ինքնուրույնությունը ներկայացնող հին հասարակական կազմը հայ ժողովուրդը պաշտպանել էր մի կարողությամբ, որ միանգամայն հերոսական էր։ Պարզ էր, որ արաբական ամբողջ ահեղ զորությունը, այնուամենայնիվ, իր անկարողությունն էր ցույց տվել Հայաստանում և 9-րդ դարի կեսում այս հանգամանքը մեծագույն փաստն էր, որից պիտի ծնվեր Հայաստանի քաղաքական վերանորոգությունը։

Այս մեծագույն փաստի կովանը, անկասկած, Եսայի Աբու-Մուսեի հերոսական դիմադրությունն էր Արցախի լեռներում, և երբ այն վերջացավ, արաբները հարմար ժամանակը գտան իրենց զորքերը Հայաստանից դուրս բերելու համար։ Եվ միշտ արտաքին ձևը պահպանելու հոգսերով տարված՝ Բուղան իր հեռանալը Հայաստանից դնում էր հաղթանակի շատ ազդու արտահայտությունների կեղևի մեջ։ Քթիշից վերադառնալով Պարտավ, նա իր բանակում արգելափակված լեռնցի իշխաններին մի գիշերվա մեջ շղթաներով կապոտեց և ուղտերի վրա բարձած՝ ուղարկեց, ըստ սովորության, խալիֆի մոտ։ Բացի մեզ հայտնի գերիներից՝ այդ խմբի մեջ էին նաև Մամիկոնյան Քուրդիկ իշխանի որդի Գրիգորը, Գարիթայանքի իշխան Ներսեհը, Սյունյաց իշխաններից դարձյալ երկուսը—Գրիգոր և Փիլիպպեն։

Նույն այդ խմբին միացվեց և մի իշխան, որ իր մեծամեծ ծառայություններով իրավունք էր ստացել բոլորովին չմտածելու երկաթե կապանքի, բանտի կամ աքսորի մասին։ Դա Սմբատ Բագրատունին էր, Հայոց սպարապետը, Բուղայի հավատարիմ խորհրդականը, ավելին—Բուղային Հայոց երկրի ծոցն առաջնորդողը։ Իր այս հավատարիմ ծառայության համար ապավածավախ և հլու իշխանը միշտ ստացել էր Բուղայից խոստում, թե պիտի ստանա իշխանապետություն։ Ինչո՞ւ էին, ուրեմն, այս կապանքները։ Սև ապերախտություն մի՞թե, որ այնքան սովորական է բռնակալի համար։ Թվում է, թե պատճառը Գուրգեն Աբու-Բելճի փառավոր հաջողությունն էր Վասպուրականում։ Չէ՞ որ Սմբատն էր նրա համար բարեխոսություն արել, պահել էր նրան իր մոտ, և չէ՞ որ Գուրգենը հենց նրա կամակցությամբ, գուցե և դրդմամբ էր գնացել Վասպուրական։ Համենայն դեպս ակներև է, որ Սմբատը վերջին ժամանակ այնպիսի գործ էր կատարել, որ Բուղան, նրա հետ և արաբական բարձր կառավարությունը համարեցին ծանր պետական հանցանք, որ և պատժվեց երկարատև շղթայակապ բանտարկությամբ[1]։

Կապվածների խմբից առանձին, ոչ իբրև գերի, արաբական պահակի ուղեկցությամբ Բաղդադ գնաց Աբու-Մուսե Եռանշահիկը։ Խալիֆի հրամանն այդպես էր՝ Քթիշի տիրոջ քաջությունը և հավատարիմ հպատակությունը վարձատրելու համար։ Բացի այդ պատվից՝ նա ստացել էր և շատ ուրիշ պարգևներ—սուր, թանկագին հանդերձներ, նժույգներ, վրան և այլն։ Բուղան էլ, հաղթողի հովեր առած, ճանապարհվեց Բաղդադ։ Նրա վիճակը սխուր վախճանի հանգեց։ Ստրկությունից հրամանատարության գագաթին հասած այդ մարդը, որից դողում էր ամբողջ պետությունը, զոհ գնաց Թիֆլիսի արաբական էմիր Իսահակի գեղեցիկ կնոջ վրեժխնդրության։ Ինչպես տեսանք, այդ կնոջը նա ուղարկել էր Մոթավաքիլին։ Այսպիսով, Սամառայի հարեմում Թուրք զորապետը վաստակեց մի կատաղի հակառակորդուհի, որի ներշնչումներով էր, որ Մոթավաքիլը նրան ուղարկեց Խորասան կառավարչի պաշտոնով, բայց ճանապարհին սպանել տվեց նրան։ Այսքան անփառունակ էր Հայաստանն ավերողի վախճանը։

Գլուխ վեցերորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

(Կուլտուրական-գրական տեսություն)

1. Ազդեցություն: Բուղայի արշավանքը մի նոր էջ էր բաց անում հայոց պատմության մեջ ոչ միայն քաղաքական, այլև կուլտուրական-մտավոր տեսակետից։ Այս խոշոր երևույթը կանգնած է 9-րդ դարի գրեթե ուղիղ կեսում և երկու շրջանների անջրպետն է կազմում։ Բուղայի գնալուց հետո էլ արաբական տիրապետությունը շարունակվում էր, բայց և այդպես,

---

[1] Գերի գնալուց առաջ Սմբատը շտապեց, իբրև ջերմեռանդ հավատացող քրիստոնյա, իր պարտքը կատարել հայ եկեղեցու վերաբերմամբ։ Վախճանվել էր Հովհաննես կաթողիկոսը, և Սմբատը, կրոնական վարչապետության գահը թափուր չթողնելու համար, մեծ փութով ժողով գումարեց, ուր կաթողիկոս ընտրվեց Զաքարիա Զագեցին (855—876)։

մենք մտնում ենք մի դարաշրջան, ինքնուրույն, իրեն հատուկ առանձին ոգով ու ձգտումներով ապրող մի շրջան։ Այնպես որ կարելի է ասել, թե 9-րդ դարի երկրորդ կեսում իսկապես պատմության հնադարանն էր անցնում մի ժամանակաշրջան, որ ներկայացնում էր արաբների անմիջական տիրապետությունը Հայաստանում, մի շրջան, որ, ընդհանուր առմամբ, մեկ ու կես դարի տևողություն ուներ, ընդգրկելով ամբողջ 8-րդ դարը և 9-րդի ամբողջ առաջին կեսը։ Թեև դրանից հետո էլ Հայաստանը բավական ժամանակ (մոտ 80 տարի) շարունակեց մնալ արաբական տիրապետության տակ, բայց հայկական կյանքն իրապես այլ ուղղություն, այլ բովանդակություն ուներ իբրև ինքնավարական ինքնուրույնության արգասիք։ Նախքան այդ ինքնավարական շրջանին անցնելը, կարևոր է իմանալ, թե ի՛նչ կուլտուրական և մտավոր միջավայր էր ներկայացնում Հայաստանը 8-րդ դարում և 9-րդի առաջին կեսում, երբ նա անմիջապես ենթարկված էր արաբական իշխանության։

Այդ միջավայրի արտաքին հանգամանքները բնորոշելու կարիք չկա։ Մենք տեսանք, որ այդ 150 տարիների մեծագույն մասը, աննշան բացառություններով, լցված էր ապստամբություններով, որոնք ստեղծում էին երկրի համար արյունհեղությունների և խլրտումների իրականություններ։ Տեսանք նույնպես, որ նախարարական դասակարգն ահավոր մրցություններ էր մղում իր գոյությունը պահպանելու համար, քանի որ արաբական տիրապետությունը շարունակ ձգտում էր նրան բնաջինջ անել։ Տիրապետող դասակարգի այդ դրությունը խեղդող ազդեցություն էր անում երկրի ներքին կյանքի և մանավանդ նրա կուլտուրական աշխատանքի վրա, քանի որ նախարարությունն էր ուժի և հարստության տերը և գոյություն ունեցող հասարակական պայմանների մեջ միայն նա էր իր ուսերի վրա տանում մի ավատական համայնքին մատչելի ամբողջ առաջադիմությունը։ Եվ իրավ, եթե համեմատելու լինենք 8—9-րդ դարերը նախընթացի, 7-րդի հետ, կտեսնենք հետամնացություն շատ խոշոր չափերով։ Աղքատանում է կյանքն ամեն կողմից։ Բայց և այդպես, չի կարելի ասել, թե նա վայրենանում էր։ Կյանք, այնուամենայնիվ, կար և առաջանում էր, ցուցադրելով այնքան աշխատանք, որքան այդ հնարավոր էր քաղաքական դաժան հանգամանքների մեջ։ Այդ աշխատանքի մեջ աչքի է զարնում նախ և առաջ այն խոշոր գիծը, որ հայը, իբրև հպատակ, չնայած անդուլ հակառակություններին, ենթարկված է արաբների, իբրև տիրողների խիստ ազդեցության։ Ըստ երևույթին, բացի քաղաքական հակադիր շահերից, հզոր անջրպետներ տիրողների և հպատակների միջև պիտի գոյացնեին նրանց կրոնները, իրար անհաշտ և կատաղի թշնամիներ։ Սակայն բոլոր այս բացասող պայմանների մեջ անհրաժեշտ ու անխուսափելի էին շփումները երկու կողմերի մեջ, որոնք գնալով, ժամանակի ընթացքում, ավելի ու ավելի խտանում են կյանքում, թափանցում են ոչ միայն հասարակական առօրյայի սահմանները, այլև ընտանիքի, նույնիսկ և մտավոր գործունեության գավառները։ Արաբը տիրում է, ապա ուրեմն և ազդում է, գույն է տալիս։ Հայ երկրում, հայ կյանքի մեջ նա առավելապես իշխանության ներկայացուցիչ է, հրամանատար ու կարգադրիչ և շատ շփումներ ունի տեղացիների հետ։ Եվ անհնարին է, որ նրա այս գործը առանց ազդեցության մնա իրեն անպայմանորեն, ստրկորեն հպատակվածի վրա։

Բացի այս բնական ներգործությունից, արաբական իշխանությունը

պետք է խոր հետքեր թողներ նաև այն պատճառով, որ նա անտարբեր տիրապետող չէր, այլ միաժամանակ և որոշ գիտակցական ծրագիր էր պարտավոր իրագործել, իրեն հպատակված ժողովուրդն ապազգայնացնելու, արաբացնելու ծրագիրը։ Ուստի և արաբական գաղթականություններ էին հաստատվում հարավային սահմանների վրա, Աղձնիք նահանգում և Վանի լճի ափերին։ Բայց այս գաղթականություններից ավելի խոշոր դեր խաղում էին անշուշտ մեծ կենտրոնները—Դվին և Պարտավ, ուր արաբ ազգաբնակությունը գնալով ստվարանում էր և շփվում էր տեղացի ազգաբնակության հետ, որը թեև մահացու պայքար էր մղում գոյություն պահպանելու համար, բայց և այդպես ամեն տեղ հանդես էր գալիս իբրև տիրողների ազդեցության ենթարկվող մի տարր։

Բայց եթե Արաբիան գալիս էր Հայաստան, Հայաստանն էլ հաճախ գնում էր Արաբիա։ Բաղդադի և Սամառայի փողոցներում շատ հաճախ էին երևան գալիս կամավոր և ակամա հայ այցելուներ, այն էլ ոչ թե անհատներ, այլ մեծ բազմություններով։ Դրանք գերիներ էին երկու սեռից էլ, պատանդներ, վերջապես, իրենց գործերով արքունիք գնացողներ։ Շատ շատերը երկար մնում էին շքեղ մայրաքաղաքում, տոգորվում էին արաբական ճոխության հմայքով և երբ վերադառնում էին հայրենիք, իրենց հետ բերում էին տիրող ազգի նիստ ու կացի, բարքերի, մի խոսքով՝ ամբողջ արաբական քաղաքակնության ազդեցությունը։ Այս փոխադարձ շփումները տարիների ընթացքում այնքան մաշեցրին կրոնական խտրությունները և անջրպետներն անգամ, որ արաբների և հայերի մեջ տեղի էին ունենում ամուսնություններ, իսկ արաբական անուններ կրելը, ինչպես երևում է, մանավանդ բարձր հասարակության համար մի տեսակ բարեկրթության (bon ton-ի) նշան էր։ Մեր պատմության ընթացքում արդեն շատ տեսանք արաբական անուններ կրող հայերի։ Մի քանի աղոտ ցուցմունքներ, որոնք նոր են պատմագրության սեփականություն դարձել, հաստատում են, որ արաբական ազդեցությունը շատ խիստ է եղել զգեստների (գոնե տղամարդկանց) ձևի և տարազի վրա։

Արդ, երբ այնքան շատ են արաբական ազդեցության նշանները հայ կյանքի առօրյա երևույթների մեջ, ըստինքյան ծագում է և մի շատ կարևոր հարց—ազդո՞ւմ էր արդյոք և արաբական միտքը, որ արտահայտվում էր գրականության, գիտության և արվեստների մեջ։ Իսլամի պատմությունը մեզ ցույց է տալիս, որ արաբական քաղաքակրթության ամենաշողկած շրջանն Աբբասյան հարստության ժամանակն էր։ Բաղդադի արքունիքը մի քանի խալիֆների օրով ներկայացնում էր ազատ մտքի, գիտական ուսումնասիրությունների մի մայրաքաղաք։ Ի՞նչպես վերաբերվեց այդ մտավորական շարժմանը հայ միտքը։ Տարաբախտաբար, մեր գրականությունը, չնայած արաբական վարչական կարգը մեծամեծ մանրամասնություններով նկարագրող հեղինակներ քիչ չունի, ճիշտ և որոշ ցուցմունքներ այս հարցի վերաբերմամբ չի տալիս։ Պատճառը, անշուշտ, այն է, որ մեր մատենագիրները, իբրև կրոնավորներ, ամենայն խնամքով խույս էին տալիս այնպիսի փաստերից, որոնք կարող էին թուլացնել նրանց քարոզած և ամեն բանի մեջ պահպանած կրոնական անհամբերողությունը։ Իսլամի տիրապետությունը դժնդակ էր քաղաքականապես, հետևաբար ուրիշ կերպ նա չէր կարող լինել և կուլտուրապես։ Այս էր բխում եկեղեցական ըմբռնողությունից։ Մինչդեռ հայտնի է, որ արաբական քաղաքակրթությունը

եթե հասավ շքեղ զարգացման, այդ հենց միայն շնորհիվ այն հանգամանքի, որ նա համարյա թե չուներ զուտ արաբական կամ իսլամական գունավորում։ Գործողը պարսկական ոգին էր, որ և պատրաստում էր իր աշխատանքի համար նպաստավոր միջավայր, հեռացնելով խալիֆական պալատներից իսլամի ազդեցությունը և հաստատելով նրա տեղ կատարյալ անհավատություն[1]։ Հայ միտքը շատ հնուց էր մերձավոր ազգակցության կապեր հաստատել իր և պարսկական մտքի միջև, և Բաղդադի մտավոր շարժումները չէին կարող խորթ լինել նրա համար, ապա ուրեմն և ոչ մի արգելք չկար, որ նա ևս ենթարկվեր այդ շարժումներին։ Եվ իրավ, հայ կյանքի մեջ, չնայած տեղեկությունների աղքատությանը, մենք գտնում ենք ամբողջ երևույթներ, որոնք եթե չէին ներշնչվում, գեթ խրախուսվում էին արաբական ազատ մտածողությունից։ Այսպես է, օրինակ, այն ծայրահեղ ընկերավարական վարդապետությունը, որ, ինչպես շուտով կտեսնենք, սկսեց ծավալվել հայության մեջ 9-րդ դարում։ Ավելի պարզ են արաբական ազդեցության հետքերը հայոց գրականության և արվեստի մեջ։ Բայց այստեղ հետաքրքրական հանգամանքն այն է, որ այդ ազդեցությունն արտահայտվում է ոչ թե անմիջապես արաբական տիրապետության ժամանակ, այսինքն 8—9-րդ դարերում, այլ բավական հետո,121 նույնիսկ այն ժամանակ, երբ արաբական պետությունից ոչինչ չէր մնացել։

2. Հասարակական հոսանքներ: Մենք արդեն նկատել ենք, որ արաբական տիրապետությունը հայ եկեղեցականության համար արտաքին ձեռնտու հանգամանք էր այն տեսակետից, որ նպաստավոր հող էր պատրաստում նրա ազգային պայքարը քաղկեդոնականության դեմ հաջողությամբ մղելու համար։ Այդ հաջողության գրավականն այն էր, որ բյուզանդականությունը, իբրև քաղաքական ուժ, ետ էր մղված Հայաստանի մի մեծ մասի սահմաններից և չէր կարող բռնության աջակցությամբ պաշտպանել պատերազմող քաղկեդոնականության արշավանքները։ Եվ օգտվելով այս դրության հովանավորությունից, հայ եկեղեցին շարունակեց իր ներքին ինքնորոշման աշխատանքը, որ այնքան եռանդուն կերպով սկսեց առաջ տանել 7-րդ դարը։

Այս աշխատանքի մեջ խոշոր տեղ ունեցավ մանավանդ Հովհան Օձնեցի կաթողիկոսը (717—728 թթ.), որը եկեղեցու դիրքը ամրապնդելու և նրա ազգայնական սկզբունքները հաղթական դարձնելու համար ձեռք առավ մի շարք եռանդուն միջոցներ։ Առաջին և ամենաիրական միջոցն այն էր, որ նա, ինչպես տեսանք, գնաց Օմար խալիֆի մոտ և մի քանի արտոնություններ ստացավ քրիստոնեության համար, փոխարենը խոստանալով պահել հայ ազգը հլու հպատակության մեջ։ Արաբական ուժի վրա հենված՝ կաթողիկոսը պայքար սկսեց այն բոլոր հոսանքների դեմ, որոնք հակառակ էին հայ ազգային եկեղեցուն։ 720 թվականին նա Դվինում գումարեց եկեղեցական ժողով, որն ընդունեց նրա խմբագրած 32 կանոնները, որոնցով վերականգնվում էին եկեղեցու ծիսական խանգարված կարգերը։ Մեզ համար առանձնապես կարևոր է այդ կանոնների վերջին, 32-րդ հոդվածը, որ սատիկ հալածանք էր օրենսդրում մեզ արդեն ծանոթ Մանիքեա-Պավլիկյան ազատ մտածող աղանդի դեմ։ Ահա թե ինչ է ասված այդտեղ. «Ոչ է պարտ չարաղանդ մծղնէիցն, որ կոչին Պաւլիկեանք, տեղի օթել ումեք և կամ

¹ Ern. Renan, „L'Islamisme et la Science", Paris, 1883.

յարիլ և խօսակից լինել և երթևեկութիւնս առնել. այլ ամենևին հեռանալ ի նոցանէ, փայշիլ և ատել զնոսա, զի որդիք սատանայի են և լուցկիք յաւիտենական հրոյն և օտարացեալ են ի սիրոյ կամաց Արարչին. եթէ ոք իցէ, որ յարիցէ ի նոսա և ի սիրելութեան և ի բարեկամութեան իջեալ է, պարտ է զայնպիսին խոշտանգել և ծանր պատուհաս ի վերայ ածել, մինչև զգաստասցին և առողջասցեն, և ի հաւատս։ Ապա թէ վերստին ի նմին եցին, զայնպիսին հրամայեմք ամենևին հատանել և արտաքս ընկենուլ, իբրև ժանտախտս յանդամոց եկեղեցւոյ Քրիստոսի, զի արմատ դառնութեան ի վեր երևեալ նեղիցէ և նովաւ բազումք պղծիցին»[1]։ Այս դաժան հալածանքը հայ եկեղեցականությունը կարողացավ գործադրել իր համար լավագույն հետևանքներով ոչ միայն Օձնեցու ժամանակ, այլև հետո։ Այնպես որ 8-րդ դարում «սատանայի որդիները», կարծես ճիշտ որ, անհայտանում են արաբական Հայաստանից։122 Անշուշտ, հայ Պավլիկյանները, տեղի տալով կազմակերպված հալածանքներին, անցան Փոքր Հայք, ուր Մելիտինեից սկսած՝ արաբա-բյուզանդական սահմանագլխի ամբողջ երկարությամբ ապրում էին մեծ համայնքներով և հոչակ էին ստացել իբրև ռազմիկ և քաջարի տարր։

Պակաս ուժեղ չէր Օձնեցու պայքարը և քաղքեդոնականության դեմ։ Այստեղ նրա գործողությունները խիստ արձագանք են գտել նաև հայ ժողովրդական ավանդությունների մեջ։ Այսօր էլ ժողովուրդը պատմում է, թե ինչպես իր սրբացրած Օձնեցին պահպանում էր իր ժողովուրդը հոռոմների ամարդի բռնությունների դեմ[2], թե ինչպե՛ս և ինչո՛ւ համար Օձնեցին գնաց Բաղդադի խալիֆի մոտ։ Շատ հետաքրքրական է, թե ի՛նչպիսի այլաբանական ձև էին ստանում ժողովրդի մտքի մեջ քաղկեդոնական և հակաքաղկեդոնական վեճերը։ Ավանդությունն ասում է[3], թե հայ ժողովուրդը մեծ նեղության մեջ էր հույների (հոռոմների) ձեռքին։ «Ուռումի թագավոր շատ խատըցավ, բոլոր կողեր զավթեց, մեր խայու ազգ էն հըմալ նեղութըմ քաշեց էնդոց ձեռ օ խակի չեղեր ա. տախտակ կը ծակեն կընցուցեն խայու վիզ, կելլին տախտակի վրեն ու կեր ու խում կենեն։ Օխան Օծնելին[4] էլ Մանզկերտու էրկիր առաջնորդ էր. գիշեր ու ցերեկ ուր ազգի յարով Աստծն աղոթք կեներ. «Յա Աստված, իմ խայու ազգ Կոստանդ թագավորի ձեռքեն ազատ էնա»։ Մեկ Մեհմետ մելա կեր տաճկին, Շամ[5] կնստեր, աներ ուրին սեքանջան ասկար։ Աստվածությունն էդ Օխան Օծնելին ու Մեհմետ սիրելի աղբեր էրաց խըտ իրարու, էրզի մեջ»։

Մի դեպք հարկադրում է Հովհան Օձնեցուն դուրս գալ աստված կանչողներից և գործի անցնել։ Մի հայ կնոջ տղան հիվանդանում է և հանկարծ աչքերը բաց անելով, ասում է. «Մարե՛, վասն ի Ասու սիրուն, ձի կտոր մի խաց»։ Բայց ցորեն հաց չկա ոչ մի տեղ, հոռոմը խլել է ցորեն հացը հայերի ձեռքից։ Եվ մայրը, երկար ժամանակ հայոց թաղում որոնումներ անելուց հետո, գալիս, ասում է որդուն. «Լաո՛, ես իմա՞լ էնիմ, դորվի օ գացի, ցորեն խաց ձեռքս չկպավ»։ Ծարահատյալ, մայրը վերջապես դիմում

¹ «Կանոնգիրք Հայոց», Թիֆլիս, 1914, էր. 148։

² Քաջբերունի, «Ճանապարհորդական նկատողութիւնք» («Փորձ» ամսագիր, 1881, № 4, էր. 83—86)։

³ «Օխան Օծնելի» («Արարատ» ամս., 1898, էր. 412—414)։

⁴ Օխան Օծնելի=Օհան Օձնեցի (ավանդությունը պատմված է Խլաթի բարբառով)։

5 Դամասկոս։

է մի հոռոմ հացթուխի։ «Վասն ի Աստւ սիրոյն, իմ տղեն խիվանդ ա, ցորենի խաց կուզա»։ Ցրնճին ասաց. «Խա՛, արի էս բան խր ձի էրա, խաց տամ տուր քո տղին»։ Լկիրշ առաջարկությունից վրդովված կինը բացականչում է. «Հողեր տամ այս ազգի և այս առաջնորդի գլխին որ հոռոմ հացթուխն էլ այսպիսի խոսք է ասում ինձ»։ Եվ գնում է Օձնեցու մոտ, նույն դառն շեշտով պատմում է նրան իր կրած անպատվությունը։ Եվ Օձնեցին, համբերության բաժակը լցված համարելով, ճանապարհվում է Դամասկոս, երթում իր հետ մտերմացած Մեհմեդի մոտ։ Նա համաձայնում է օգնել հայերին, բայց փողով և ո՛չ զորքով։ Հարցնում են, թե ո՛րքան փող է հարկավոր, Օձնեցին վերցնում է մի կտոր թուղթ, վրան մի աղոթք է գրում և ասում է, որ այդ թղթի կշռով ոսկի տան։ Ծիծաղում են խալիֆի աստիճանավորները, կարծելով, թե այդ մի կտոր հասարակ թուղթ է, բայց երբ սկսում են կշռել, տեսնում են, որ խալիֆի ամբողջ գանձն էլ չէ կարողանում նրան գերակշռել իր ծանրությամբ։ Այնքան, ուրեմն, զորավոր և ծանրակշիռ էր Օձնեցու աղոթքը, որ գրված էր թղթի վրա։ Եվ վճռում են փողով չօգնել նրան, այլ զորքով։ Բայց հիմա էլ մի ուրիշ պայման են դնում, որ զորքից պակասած ամեն մի արաբի փոխարեն յոթը հայ տրվի։ Օձնեցին զորքը վերցնում է գալիս Հայաստան։ Ճանապարհին զորքը պիտի անցներ մի կամուրջով։ Օձնեցին խնդրում է աստծուց ցույց տալ իրեն, թե զինվորներից ո՞ւմն է վիճակված մեռնել առաջիկա պատերազմի մեջ։ Այսպիսիների պատկերները պիտի երևային ջրի մեջ առանց գլուխների։ Աստված կատարում է իր սրբի խնդրանքը, և Օձնեցին հենց այդտեղից ետ է դարձնում այն զինվորներին, որոնք ջրի մեջ երևացել էին առանց գլուխների։ Ապա տեղ հասնելով, հույներին հալածում է, Հայաստանն ազատում։ Ավանդությունն ասում է և այն, թե Օձնեցին հավաքեց բոլոր հույն «եպիսկոպոսներին ու հայրապետներին» և ամենքին խաշել տվեց պղնձի մեջ[1]։ Իսկ խալիֆի զորքերից մի հոգի էլ չի մեռնում և սուրբ մարդն ստիպված չի լինում մի օտարի փոխարեն յոթը հայ տալ։

Այս ավանդությունների մեջ, անկասկած, խոր արձագանքներ են թողել այն հասարակական խոշոր շարժումները, որոնք տեղի ունեին Հայաստանում 8-րդ դարի առաջին քառորդում։ Արաբական զորքերի աջակցությամբ հայոց եկեղեցու թշնամիների դեմ կռվելու ավանդությունը պահված է և՛ հետագա դարերի գրավոր աղբյուրների մեջ, օրինակ՝ Կիրակոս Գանձակեցու մոտ, որ 13-րդ դարի գրող էր[2]։ Հալածանքը, այս հեղինակի պատմելով, այնքան հանկարծահաս և սաստիկ էր, որ հույները գլուխ կորցրին ու փախան Հայաստանից, թողնելով իրենց գանձերը և բոլոր ստացվածքները։ Այսպիսով, առաջանում էր մի տեսակ հայ-արաբական գինակցություն կրոնական հողի վրա, մի վերին աստիճանի հազվադեպ երևույթ, որ նույնիսկ հետքեր է թողել ժողովրդական ավանդության մեջ այսպիսի մի ուշագրավ օրինակով. «Յուրաքանչյուր արաբ, պատահելով որևէ քնած հայի, պարտավոր էր կանգնել և իր հանդերձի փեշով (քղանց) արևգակի ճառագայթների դեմ ստվեր արձակեր հայի վրա՝ մինչև նա կզարթներ։ Իսկ դրա փոխարեն հայը, պատահելով ճանապարհի վրա արաբին,

[1] Ավանդության նյութի բարբառով պատմված փոփոխակի (վարիանտի մեջ) պատմական եղելությունները շփոթված են։ Պետք է նկատի առնել և մյուս փոփոխակը (Քաջբերունու պատմածը)։

[2] Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Վենետ., 1865, եր. 38։

պարտավոր էր դուրս գալ ճանապարհից և թույլ տար անցնելու, ի պատիվ արաբական ցեղի»[1]։ Այս ամբողջ եղելությունը, եթե սա, իսկապես, պատմական անցքերի անդրադարձում է ժողովրդի հիշողության մեջ, տեղի է ունեցել, իհարկե, մի կարճ ժամանակով, Օձնեցու օրով, իբրև հասարակական մտքի մի նոր ձևակերպման արդյունք։ Մենք արդեն տեսել ենք, որ 7-րդ դարում հայ իշխաններից Թեոդորոս Ռշտունին, ճիշտ այս կերպով էր հայ եկեղեցու համար պաշտպանողական գիծ ստեղծում քաղկեդոնականության դեմ։ Հովհան Օձնեցին էլ այդպես տարավ իր ժամանակի միտքը, այն է՝ դեպի համերաշխություն արաբների հետ։ Բայց նա միայն այդքանով չբավականացավ։ Արաբացու հովանավորող փեշից ավելի զորավոր էր այն կապը Սիրիայի միաբնակ եկեղեցու հետ, որի հիմքը դրված էր նախորդ դարերում և որն ավելի ևս ամրացնելու համար Օձնեցին, Դվինի ժողովից վեց տարի հետո, 726 թվին, մի երկրորդ եկեղեցական ժողով գումարեց, այս անգամ Մանազկերտում։ Այստեղ հայ հոգևորականության հետ հանդիպում էր, համաձայնություն կայացնելու համար, Սիրիայի միաբնակ եկեղեցու այն թևը, որ կոչվում է հակոբիկ։ Հայերը, ինչպես գիտենք, հարած էին հուլիանյան կամ հուլիանիտ վարդապետությանը և ընդգրկել էին նույնիսկ նրա չափազանցումը, որ ստացել էր երևութականություն անունը։ Հակոբիկ եկեղեցին, ընդհակառակն, սևերյան վարդապետության էր հետևում և այս կողմից հանդիսանում էր հուլիանիտների հակոտնյան[2]։ Համաձայնությունը Մանազկերտում գլուխ եկավ, երկու կողմերը կարողացան գտնել իրանց միանգամայն գոհացնող դավանաբանական բանաձևեր, որոնք և բավարար համարվեցին երկու ներհակ վարդապետությունները միացած ցույց տալու համար[3]։

Այսպիսով, նորից միություն է ստեղծվում հայ և սիրիական եկեղեցիների միջև, որ և մի ընդհանուր ռազմական ճակատ էր հարդարում քաղկեդոնականության դեմ։ Գլխավորն այս նպատակն էր, որովհետև Մանազկերտի համաձայնությամբ հայոց եկեղեցին չէր դառնում հակոբիկ, այլ շարունակում էր մնալ իր ինքնուրույն կազմակերպման, իր յուրացրած դավանական առանձնության, իր երևութականության մեջ[4]։ Բայց կայացած համաձայնության հետևանքները ցուցադրող մի փաստ հասել է մեզ։ Իններորդ դարի առաջին քառորդում հայտնի հոգևորականներից մեկը, Թեոդորոս Աբուկուրա, գնաց Հայաստան, Աշոտ Մսակերի մոտ, և քարոզում էր նրան երկաբնակ վարդապետությունը։ Հայ հոգևորականության մեջ չգտնվեց և մեկը, որ կարողանար հակաճառել Աբուկուրային զորավոր կերպով, վերահաստատել հայ իշխանին իր հայրենի դավանության մեջ։ Այդ պատճառով Սիրիայից Հայաստան եկավ Նանա անունով Հակոբիկ սարկավագը, որը միաբնակ եկեղեցու հեղինակավոր պաշտոնյաներից մեկն էր և որը հակաճառություն սկսելով Աբուկուրայի հետ, այնպես հերքեց վերջինիս աստվածաբանական տեսությունները, որ Աշոտ Մսակերն անխախտ մնաց իր նախկին դավանանքի մեջ, իսկ Աբուկուրան, սաստիկ պարտություն

[1] Քաջբերունի («Փորձ», եր. 85)։

[2] Տե՛ս վերև, մասն Բ, գլ. Բ, § 1։

[3] Ե. վ. Տեր-Մինասյան, «Հայ. եկեղ. հար. Ասորոց եկ. հետ», եր. 205—209։

[4] Թեև Օձնեցին մի ամբողջ ճառ է գրել երևութականության դեմ, բայց մասնագետ աստվածաբաններից մեկը գտնում է, որ հենց այդ ճառի մեջ Օձնեցին ցույց է տվել, թե ինքն էլ երևութական էր (անդ, եր. 208)։

կրած, հեռացավ Հայաստանից[1]։ Այս նույն Նանա սարկավագն էր, որ հայ եկեղեցու պաշտպան հանդիսացավ և մի ուրիշ, շատ կարևոր հանգամանքի մեջ։ Աշոտ Մսակերի թոռան, Աշոտ իշխանաց իշխանի (որ և հետո թագավոր) ժամանակ Կ. Պոլսի Փոտ պատրիարքը մի եպիսկոպոս ուղարկեց Հայոց Զաքարիա կաթողիկոսի մոտ՝ համոզելու համար, որ հայերն ընդունեն քաղկեդոնիկ դավանությունը։ Պատրիարքը միևնույն ժամանակ նամակ գրեց և Աշոտին։ Այս առիթով եկեղեցական ժողով կայացավ Շիրակավան կամ Սրազգավորս ավանում (862 թ.) և այդտեղ հակաքաղկեդոնիկ եկեղեցու ջատագով հանդիսացավ Նանա սարկավագը։ Այս անգամ էլ նա հաղթանակող եղավ, և Փոտի առաջարկությունը մերժվեց։

Այսպիսով, քաղկեդոնիկ հայությունը, որ, անշուշտ, փոքրաթիվ չէր, հետզհետե դրվում էր պարտվածի դրության մեջ և ստիպված էր լինում տեղի տալ հաղթական ազգայնականներին։ Բայց այս պարտությունը մեծամեծ վնասներ է հասցնում հայությանը, որովհետև ետ մղված քաղկեդոնիկ հայ զանգվածներն սկսում էին հետզհետե ապազգայնանալ, ձուլվել իրենց հարևան քաղկեդոնիկ ազգերի, այն է՝ վրացիների, հույների և ասորիացիների հետ։ Մասնավորապես մեծ էին այս կողմից վրացական նվաճումները։ Քաղկեդոնականության միջոցով վրացացան այժմյան Կախեթի մի մասի և Տայքի ու Կղարջքի հայ բնակիչները։ Հայության կորուստը չափազանց զգալի էր մանավանդ այս վերջին երկու երկրներում, որովհետև այդտեղի հայերն առանձնապես աչքի էին ընկնում իրենց կուլտուրական ընդունակություններով։ Շինարարական արվեստը նրանց մեջ մեծ զարգացման էր հասել։ Բավական է չմոռանալ, որ Զվարթնոց եկեղեցին կերտող Ներսես կաթողիկոսի հայրենիքն էր Տայքը։ Այսօր էլ դեռ եկեղեցիների և վանքերի բազմությունը, որ փռված է Տայքում և Կղարջքում, վրաց ազգային արվեստի ամենագեղեցիկ հուշարձաններն են կազմում, թեև անկասկած է և այն, որ վրացացած հայերն էին այդ տեղերում բնակվում, ինչպես ցույց են տալիս և այսօր էլ դեռ անաղարտ մնացած աշխարհագրական անունները—Իշխանաձոր, Շատբերդ, Միջինձոր, որոնք այսօր էլ արտասանվում են լեզվով միանգամայն վրացի ազգաբնակության մեջ[2]։ Այս ապազգայնացման և ձուլման գործողությունը, իհարկե, մի կարճ ժամանակի բան չէր, այլ կատարվեց աստիճանաբար, համարյա մի ամբողջ դարի ընթացքում (մինչև 10-րդ դարի կեսը)։

3. Թոնդրակեցիներ։ Մինչդեռ հայ մտքի մի ճյուղավորումը, որ արտահայտվում էր քաղկեդոնականության մեջ, ծանր հարվածներ էր ստանում 9-րդ դարում Հայաստանի հողի վրա, մյուս ճյուղավորումը, որ թե՛ քաղկեդոնականության և թե՛ հակաքաղկեդոնականության կատաղի հակառակորդն էր, այն է՝ մանիքեա-պավղիկյան ուսմունքը, 9-րդ դարի առաջին կեսի վերջին տասնամյակում ընդունում է մի խիստ բնորոշ և ինքնուրույն ազգային կերպարանք։ Այդ ժամանակները Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից մի մարդ, Սմբատ անունով, երևան է գալիս հարևան Ապահունյաց գավառի Թոնդրակ կամ Թոնրակ գյուղում և սկսում է քարոզել իր սեփական վարդապետությունը, որ այնուհետև գյուղի անունով էլ կոչվեց Թոնդրակեցիների կամ Թոնրակեցիների աղանդ։ Շատ ցավալի է, որ այս նշանավոր մարդու մասին միայն կցկտուր և անորոշ մի երկու տեղեկություններ են մնացել։ Նրա գործը միայն սարսափ և ցասումն է պատճառել հայ եկեղեցականության, որը և աշխատել է մթության մեջ թաղել նրան, ներկայացնել նրան իբրև ճիվաղ[1]։ Մինչդեռ այդ գեղջուկ աղանդապետը հայ մտքի պատմության մեջ մի եզակի երևույթ է, որ կրում է իր մեջ նաև համամարդկային գծեր։

Ասում են, թե Սմբատ Զարեհավանցին մոգական դաստիարակություն էր ստացել, սովորել էր աստղագիտություն, կախարդություն և բժշկություն։ Ասում են նաև, թե Թոնդրակում նա իր վարդապետությունը հիմնում էր պարսկական հրապաշտության վրա։ Այս բոլորը շատ բնական է, միանգամայն հավանական և արդարացի։ Սմբատի վարդապետությունը դուրս էր գալիս այն ընդհանուր միջավայրից, ուր կազմվել էին պարսկական աշխարհի ուսմունքները (օրինակ՝ Մանիի, Մազդակի վարդապետությունները)։ Հայ միտքն էլ, այսպիսով, 9-րդ դարում վերադառնում էր դեպի այն հին պաշտամունքը,123 որից նա հրաժարվել էր վեց դար առաջ, բայց որի հետ վերջնականապես չէր կտրել իր կապերը։ Այսպիսի կապեր հանդիսանում էին պարսկական հողից առաջացած աղանդները, օրինակ՝ Մանիի վարդապետությունը, որ ապրում էր Հայաստանում պավղիկյան աղանդի հետ միացած։ Սմբատին, անկասկած, խոր ներշնչումներ էր անում պարսկական այն ազատ միտքը, որ մի կողմից Բաղդադի արքունիքում անաստվածություն էր հաստատում, մյուս կողմից՝ խուռամյանների ընկերավարական վարդապետությունն էր տարածում Ատրպատականի լեռներում։ Այս վարդապետության հռչակավոր և քաջարի ներկայացուցիչ Բաբանի ժամանակակիցն էր Զարեհավանցին, որ և, անկասկած, շատ բան է առել և յուրացրել նրա աղանդի քարոզություններից։

Թոնդրակում Սմբատ Զարեհավանցին բնության ուժերն էլ էր իրեն աշխատակցելու կանչում՝ զրադաշտականության հին սկզբունքները ժողովրդի մեջ վերակենդանացնելու համար։ Թոնդրակ գյուղի անունն իսկ ենթադրել է տալիս, որ նա գտնվում էր համանուն մեծ հրաբխային կենտրոնի շրջանում, որի նկարագրությունը մենք տվինք իր տեղում[2]։ Ստորերկրյա կրակի ներկայությունը, որ արտահայտվում է սարերից ժայթքող գոլորշիների, տաք ջրերի միջոցով և որ հաճախ որոտալից թնդյուններով էր բախում մեծ հրաբխի կուրծքը, պիտի, անշուշտ, բնակչության մեջ պահպանած լիներ հին հրապաշտության հմայքը։ Բայց որ Սմբատ Զարեհավանցին միայն զրադաշտականության վրա չէր հիմնում իր վարդապետությունը, երևում է հենց նրանից, որ նա իրեն անվանում էր Քրիստոս և նրա հետևողները հենց այնպես էլ հավատում էին, թե նա նոր մարմին առած Քրիստոսն էր։

Հավաքելով այն բոլոր տեղեկությունները, որոնք մնացել են մեր գրականության մեջ այդ նշանավոր մարդու կյանքի և գործի մասին, մենք

---

[1] **Н. Марр**, «Аркаун монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонидах», СПБ, 1905, стр. 9.

[2] **Марр**, «Аркаун», стр. 7, 17—23։ Նշանակելի է և այն հանգամանքը, որ այդ կողմերի վրացերեն արձանագրությունների մեջ երբեմն վրացական մամասախլիս անվան տեղ գործ է ածվում հայերեն տանուտեր համանիշ բառը (անդ)։

---

[1] Թոնդրակեցիների դեմ գրել են շատերը, ինչպես՝ Գրիգոր Նարեկացի և Գրիգոր Մագիստրոս։ Վերին աստիճանի անհաշտ ոգով է վերաբերվում Թոնդրակեցիներին և 19-րդ դարի հայ հոգևորականներից մեկը՝ Հ. Բարսեղ Սարգիսյանը իր ուսումնասիրության մեջ, որից քաղվածքներ բերում ենք ներքևում։

[2] Տե՛ս հատոր Ա։

ստանում ենք մի պատկեր, որի նկարագրությունը թողնում ենք հատկապես այս հարցն ուսումնասիրած և դեպի աղանդապետը սաստիկ նախապաշարված հայ եկեղեցական մի հեղինակի: «Այս բազմահնար կեղծավորս,— գրում է նա,— զոր Փոտի և Պետրոս Սիկիլացվո հետ՝ Նարեկացին և Մագիստրոս իսկ միաբերան Գերաքրիստոսի կարապետ և Նեռն կը կոչեն, ոչ միայն արտաքուստ քրիստոնյա և քրձազգյաց ճգնող կը ձևանար, այլ նույնիսկ ինքզինքը լույս, կյանք և ճշմարտություն կանվաներ, այլովք հանդերձ, բայց ներքնապես ոխերիմ թշնամի էր ամենայն քրիստոսական օրենաց և գործով կը ջանար կործանել զայն: Աշխարհական մ՚էր լոկ, և եպիսկոպոս կը ձևանայր: Սադուկեցվոց պես կուրանայր հանդերձյալ կյանքն և հոգվո անմահությունը: Էպիկուրյան թանձր նյութապաշտությամբ կուրանայր աստվածային նախախնամությունն և ինք զինքը բաղդից և բաշխից տեր կանվաներ: Պեղադիոսեն ավելի չարաչար կուրանայր ոչ միայն Հոգվույն սրբո շնորքները, այլ նույնիսկ Հոգվույն Աստուծո գոյությունը՝ հափրշտակությամբ հանդերձ անոր ստորոգելյաց: Հեթանոսաբար կուրանայր և կը մերժեր բոլոր եկեղեցվո սուրբ խորհուրդները: Մարմնասիրությամբ կուրանայր զամենայն վարդապետություն ուղիղ վարուց և բարոյականի: Կուրանայր թե չը կա ոչ մեղք և ոչ ալ պատիժ, ո՛չ օրենք, ո՛չ իշխանություն: Միով բանիվ՝ ամեն բան կարհամարհեր անխղճաբար. ամեն բանի վրա կը ծիծաղեր. և ինչ որ միամիտները խաբելու և որսալու համար արտաքնապես ընդունել կերևցներ՝ նույնը ներքնապես կը մերժեր»[1]:

Այս են ահա այն մեղադրանքները, որ ձևակերպել է հայ եկեղեցականությունը Թոնդրակի համարձակ վերանորոգչի դեմ:124 Բայց հենց դրանք են, որ վեր են հանում ազատ մտածողության խիստ և պայծառ բռնկումը Հայաստանի խուլ լեռնաշխարհի մի անկյունում: Հանգամանքները, որոնց մեջ առաջ էր գալիս այդ երևույթը, շատ ուսանելի են: Ամբողջ Հայոց երկիրը, կարծես, հոգնել էր իր վրա ծանրացած կարգերից: Արաբական լուծը հասցրել էր նրան նյութական և բարոյական աղքատության: Ժողովուրդը տանջվում էր հարկերի ծանրությունից, միտքը դադարել էր ստեղծագործելուց: Արաբական լծին ավելանում էր հայ ավատական կարգի լուծը: Երկիրը միություն և համակամություն չէր գտնում, ընդհակառակը, ներքին եղբայրասպան կռիվներից էր կեղեքվում: Կրոնը քարացել էր, դարձել ձև միայն: Եկեղեցականությունը ոչինչ չէր տալիս, իր հեղինակությունը պահպանում էր հալածանքներով: Պայմանականությունն ամեն ինչ մտցրել էր անշարժության շրջանակների մեջ: Զարգանում էր վանականությունը, որ պայմանականության գլխավոր պահապանն էր դարձել: Այսպիսի հանգամանքներում ծագում է ազատ միտքը, իբրև ռեակցիա մտավոր և ֆիզիկական աղքատության դեմ: Նա ցույց է տալիս, որ կենսունակ է հայ ժողովրդի միտքը, որ նա միանգամայն չի տափակացել և ընդարմացել ներքին և արտաքին տխուր պայմանների բռնադատության տակ: Եվ բնական է, որ այդպիսի հանգամանքներում ծնված միտքը լիներ ծայրահեղ արմատական, ամեն ինչ ժխտող, համայնական կարգեր ու պաշտամունքներ կործանող, ամեն տեսակ իշխանության, ամեն տեսակ պայմանական կարգի դեմ ծառացող: «Միով բանիվ,— շարունակում է վերոհիշյալ ուսումնասիրող վարդապետը,— նորահնար բառիս ճիշտ նշանակությամբ՝ (Թոնդրակեցիները) հին աշխարհի ճշմարիտ ոչնչականներն[1] էին և ընկերավարականներ[2], և ամեն բան կուզեին ոչնչացնել: Անկրոնք և անաստվածք էին, ոչ միայն ի գործնականին, այլև տեսական սկզբամբք: Այնպես որ նմանությամբ կրնանք ըսել թե Թոնդրակեցվոց աղանդը, նկատելով իբրև պարառություն մ՚ ամենայն մոլորությանց և հերետիկոսությանց, վերջին ժամանակաց Սոկինյանության նախածնողը և նախագաղափարն եղած է, իսկ իբրև բացառություն ամենայն կրոնից և աստվածապաշտության՝ կարելի է այժմյան Մասոնության կամ ազատ որմնադրաց աղանդին իբրև նախկին ներկայացուցիչ անվանել զայն»[3]:

Իր լեռնային ժողովրդի մեջ Սմբատ Զարեհավանցին խոշոր հաջողություն ունեցավ: Նրան լսում էին հաճությամբ: Խոսքի հետ զուգընթացաբար գնում էր և գործը: Բայց ծայրահեղ միտքը ինքն իր հետ ունի իր սեփական թշնամին—չափազանցությունը: Նա կյանքի մեջ գործադրվում է ծայրահեղ չափազանցություններով. այսպես է մարդկային բնավորությունը, բայց և այս է մեծ հեղաշրջումների անհաջողության պատճառը: Այս չափազանցությունների մեջ Սմբատ Զարեհավանցին, գուցե մասամբ և ստիպված լինելով միևնույն զենքով կռվել իր հակառակորդների դեմ, ցույց էր տալիս մեծ անգթություններ անգամ: Ահա, օրինակ, ինչ են պատմում նրա թշնամիները. «Սմբատ իր կախարդական պատրողություններով և մեծ հեղինակությամբ անգամ մը ժողովրդյան վրա բռնանալեն վերջ, սկսավ այնուհետև քաղաքական ամեն անլուր ոճիրներ ևս գործել: Բազմաթիվ ամուսիններ իրարմե քակելով՝ անոնց անկողիններն իր անառակ և պակշոտ աշակերտներուն արձակ համարձակ պղծել կուտար. շատ աղածրի մանուկներ իրանց մարց գրկեն և ի ստյանց հափշտակելով՝ իր արքանեկաց ձեռքով կխողխողեր և շատ գեղանի պատանիներ ի պղծություն անհավատ ազգերու կվաճառեր: Եղբարս և քորս,— ինչպես նաև սիրասուն ազգականներ և բարեկամներ—իրանց բնակութենեն հանելով՝ ի տար աշխարհ կաքսորեր, որոնց ողբերն և աղի արտասուքը զերկինս և զերկիր բավական էին շարժել, բայց ոչ նույնպես անոր սատանայասեր և սալացյալ սիրտը: Միայնակյացս և միանձնուհիս, ույք իրանց կուսությունը Քրիստոսի նվիրած էին՝ մշտնջենավոր զենմամբ, իր աշակերտներուն պղծել կուտար և իրանց կրոնավորական կյանքեն և լուսավոր ճանապարհեն հետ կը դարձներ և յԱստուծո կօտարացներ: Շատ սրբակյաց քահանաներ և ժառանգավորներ ուղղատառ կյանքեն խոտորելով, ի գառանց՝ գայլս կը յարդարէր մարդախողխողս: Շատերը բանտից և արգելանաց մեջ փակելով՝ յանուշ արևեն կենաց կը զրկեր: Միով բանիվ՝ ուր որ իշխանապետությունը կը հասներ կամ ոտքը՝ հոն եղեռնագործությամբ կլեցներ. ամենուն ահավոր և սարսափելի էր. ամենուն իբրև Նեռի մարմնացյալ անձնավորություն կներկայանար»[4]:

Այս մեղադրանքներից մի քանիսն են միայն, որ թվում են անհասկանալի չափազանցություններ, քանի որ մենք չգիտենք նրանց դրդապատ-

---

[1] Հ. Բ. Սարգիսյան. «Ուսումնասիրություն Մանիքեա-պավլիկյան Թոնդրակեցիներու աղանդին», եր. 62—63:

[1] Նիհիլիստ:

[2] Սոցիալիստ: Հավասար չափով կարելի է գործածել նաև անարխիզմ (անիշխանականություն) հասկացողությունը:

[3] Հ. Սարգիսյան, եր. 66:

[4] Անդ, եր. 68:

ճառները։ Այսպես է, օրինակ, տղա մանուկներին օտարների պղծության տալը կամ քույրեր ու եղբայրներ իրարից բաժանելը և հեռու աշխարհներ աքսորելը։ Մնացած արարքները ներկայացնում են գործադրություն այն կոմունիստական և հակակրոնական վարդապետության, որ քարոզում էր Ջարեհավանցին։ Առհասարակ, պետք է զգուշությամբ վերաբերվել այս մեղադրանքներին։ Որ նրանք շատ են չափազանցված, երևում է հենց այն հանգամանքից, որ Ջարեհավանցին քաղաքական իշխանության տեր չէր, որպեսզի այդ տեսակ սարսափեցնող միջոցներով ահաբեկեր ազգաբնակությանը։ Ոչ մի աղբյուր չի ասում, թե նա նույնիսկ Թոնդրակ գյուղի տերն էր։ Ուրիշ բան է, եթե Ապահունյաց գավառի իշխանը նրա հլու հետևողը լիներ և նրա տրամադրության տակ դրած լիներ իր ամբողջ իշխանությունը։ Բայց այս դեպքում էլ հազիվ թե միանգամայն անպատիժ մնար Ջարեհավանցին։ Նա գործում էր ոչ միայն Բուղայից առաջ և Բուղայի ժամանակ, այլև հետո, երբ երկիրը կառավարում էր Աշոտ Բագրատունին «իշխանաց իշխան»-ի կոչումով։ Իսկ Աշոտը, ինչպես կտեսնենք իր տեղում, աչալուրջ և կարգ սիրող իշխանավոր էր և չէր թողնի, անշուշտ, որ մի ամբողջ գավառ տանջվի մի անտոհմ գեղջուկ աղանդապետի ձեռքին։

Բայց այս բոլոր պատմությունները, անկասկած, վկայություն են, որ թոնդրակեցիությունը ժողովրդականություն էր գտնում, մի հանգամանք, որ կատաղություն էր պատճառում նրան անխնա հալածող, բայց անզոր եկեղեցուն։ Սմբատ Ջարեհավանցուց շատ հետո, 11-րդ դարի սկզբում, հռչակավոր Գրիգոր Նարեկացին գրում էր թոնդրակեցիների մասին. «Եւ շարք շանց, և գումար գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց, և ագինք սատակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց և երամք թունաւոր օձից և փառք մարդադէմ գազանաց և կաճառք, հախարդասարաս աղանդաւորաց»։[1]

Թոնդրակեցիների Քրիստոսի բախտը եթե պակասություն ուներ, այն էր, որ հեռավոր սերունդների ձեռքը հասել են միայն նրա թշնամիների գրվածքները։ Նույնիսկ այնպիսի մի խոշոր կրոնական և գրական հեղինակություն, ինչպիսին է Գրիգոր Նարեկացին, իր այդ տեսակ վերաբերմունքով չի կարողանում թաքցնել իր նախապաշարմունքի կրքոտությունը և կուսակցական մեղանչականությունը։ Թոնդրակեցիության ամենագլխավոր պաշտպանն այդ հարձակումների դեմ այն է, որ նա դարձավ ժողովրդական կրոն։ Իսկ այսպիսի բան չէր կարող պատահել, եթե իրավ որ նա բաղկացած լիներ միմիայն ոճիրից։ Անհնարին է, որ ոճիրը դառնա ժողովուրդների պաշտամունքի առարկա երկար դարերի ընթացքում։ Ինքը՝ հիմնադիր Սմբատը, ինչպես կարելի է հետևցնել մի քանի ակնարկներից, սպանվեց իր հակառակորդներից մեկի ձեռքով, այսպես ասած՝ փորձի համար։ Սպանողն ասում էր, թե սպանում է այն մտքով, որ եթե Սմբատն իսկապես Քրիստոս է, պետք է, ուրեմն, հարություն առնի եթե ոչ երեք, գոնե երեսուն օրից հետո։ Նրան հաջորդեցին ուրիշները, որոնք պակաս ընդունակություններ չցույց տվին իրենց գործի մեջ։ Օրինակ, նույն Գրիգոր Նարեկացին իր հակաճառական թղթի մեջ ասում է, թե իր ժամանակի աղանդապետ էր **գիտնականի** անուն վայելող Մուշեղը[2]։ Ժամանակի ընթացքում չափազանցությունները մեղմացան, հայ ժողովրդական զանգվածներն առանձնապես սիրեցին և պահպանեցին հայ ըմբոստ մտքի այդ ինքնատիպ և հարազատ արտահայտությունը։ Թոնդրակեցիությունն իր դեմ հանեց մշտական հալածանքները, և մենք նրան դեռ կտեսնենք այդ գրության մեջ հետագա դարերում։ Բայց այնքան կենսունակ էր, որ նրա հետքերը ժողովրդական կյանքի մեջ խոր դրոշմված էին մինչև իսկ 19-րդ դարում։ 125

[1] Հ. Սարգիսյան, եր. 112։

[2] Անդ, եր. 107։

4. Գրականություն: Արաբների անմիջական տիրապետության շրջանը (6-րդ դար և 9-րդի առաջին կեսը) առանձին հարստություն չի ներկայացնում գրական տեսակետից։ Ութերորդ դարի սկզբում մի քանի գրողներ կան, որոնք նախընթաց դարին են պատկանում, հետևաբար և չեն կարող նկատվել իբրև արաբական ազդեցության տակ կազմակերպված գրական բնավորություններ։

Հովհան Օձնեցի: Այս նշանավոր գործչին պետք է համարել գլուխ այն գրական դպրոցի, որ 7-րդ դարից էր գալիս։ Իր մատենագրական գործունեությամբ նա պակաս նշանավոր չհանդիսացավ և կոչվում էր նաև **Իմաստասեր** (փիլիսոփա), մի հորջորջում, որ վկայում էր նրա բարձր գիտական պատրաստության մասին։ Իսկ Օձնեցի կոչվում էր նա այն պատճառով, որ նրա ծննդավայրն էր Գուգարաց աշխարհի Տաշիրք (այժմ Լոռի) գավառի Օձուն (այժմ Ուզունլար) գյուղավանը։ Սյունյաց դպրոցի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկն էր նա։ Դաստիարակություն ստացել էր Թեոդորոս Քռթենավորից, որ Արագածոտն գավառում գտնված վանքերից մեկի վանահայրն էր։ Վանական դպրոցն սկզբից ևեթ ճգնավորական դպրոց էր, որ գնալով ավելի և ավելի խստացրեց իր պահեցողական կարգերը Միջին Դարերի ոգով։ Աշակերտը վանական դպրոցում, վանքի մյուս միաբանների նման, պիտի ենթարկեր իրեն ամեն տեսակ զրկանքների՝ հագուստի, ուտելիքի, սակավապետ կենցաղի կողմից։ Զրկել ու տանջել իրեն պետք էր ոչ միայն երկնքի արքայությունը ժառանգելու համար, այլև ս. հոգու շնորհքն այս աշխարհում վայելելու համար։ Իսկ առանց սրան՝ չէր կարող արդյունավոր լինել որևէ ուսում։ Օձնեցին էլ այդպիսի ճգնավոր աշակերտ եղավ։ Ավանդությունը, ինչպես տեսանք իր տեղում, հավատացնում էր, թե նա կյանքի մեջ հասնելով իշխանության և փառքի գագաթնակետին, մնաց, այնուամենայնիվ, ներքուստ ճգնավոր։ Բնատուր մի տաղանդ էր նա։ Չնայած որ Հայաստանի վանական լուսավորությունն էր նրա միակ դաստիարակը, նա սեփական աշխատանքով, ինքնազարգացմամբ այնքան մեծ հմտություն ձեռք բերեց, այնքան լավ մշակեց և ընդարձակեց իր ընդունակությունները, որ դարձավ հայ եկեղեցու ամենանշանավոր հայրերից մեկը, որ գործում էր և գրչով։

Հովհան Օձնեցու թողած գրական ժառանգությունը մեծ չէ և ամբողջովին եկեղեցական գրականության է պատկանում։ Այստեղ նա մեծ հարց ունի իբրև բարձր և նուրբ մտածող միտք, փիլիսոփա ատենաբան, ասացվածաբան և երգիչ։ Հայտնի են նրա Ճառերը[1], ինչպես նաև մի ընդարձակ գրություն ի պաշտպանություն հայկական միաբնակության ընդդեմ

[1] «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք», Վեն., 1833. 1. Յառաջին կենցաղն իւր և հաստատել բազմապատիկ կարգս և կանոնս եկեղեցւոյ. 2. Ընդդէմ Պաւլիկեանց. 3. Ընդդէմ երևութականաց. 4. Յաղագս կարգաց եկեղեցւոյ

քաղկեդոնական երկաբնակության[1]։ Բացի դրանից՝ նրա գրչին է պատկանում և եկեղեցական ժողովներին վերաբերող մի պատմական բացատրական տեսություն[2]։ Ավանդաբար նրան են վերագրվում և մի քանի շարականներ[3]։ Նրա ոճը համարվում է ընտիր հայկաբանություն, որի մեջ շատ քիչ տեղ ունի հելլենաբանությունը, մանավանդ եթե համեմատենք նրա գրվածքները նրա ուսուցիչ Թեոդորոս Քռթենավորի գրությունների հետ։

Օձնեցին, բացի սեփական ինքնուրույն աշխատություններից, կատարել է, ինչպես կարծում են, նաև խոշոր խմբագրական աշխատանք, այն է՝ հավաքել է զանազան եկեղեցական ժողովների կանոնները, կազմելով, այսպիսով, մի եկեղեցական օրենսգիրք, որով ղեկավարվում էր հոգևոր իշխանությունը։126 Այսպիսով, մի խմբագրական գործ էր նաև զանազան ժամանակներ եկեղեցական զանազան հարցերի և գլխավորապես դավանաբանական վեճերի առիթով փոխանակված թղթակցությունների և պաշտոնական այլ տեսակ գրությունների ժողովածուն, որ հայտնի է «Գիրք Թղթոց»[4] անունով։ Այս գործն էլ ոմանք վերագրում են Օձնեցուն[5]։

Ստեփանոս Սյունեցի: Հովհան Օձնեցու ժամանակակից էր Ստեփանոսը և վերջին խոշոր ներկայացուցիչը Սյունյաց դպրոցի։ Նրա համառոտ կենսագրությունը կարելի է ամփոփել «որոնող» բառի մեջ։ Նա շարունակ որոնում էր ուսում, կատարելագործում։ Սկզբնական դաստիարակությունն ստացավ Դվինի կաթողիկոսարանում, ապա գնաց ուսանելու իր դպրոցով հռչակված Մաքենյաց կամ Մաքենացոց վանքը, Սևանա լճի հարավ-արևելյան կողմում։ Այդտեղից նա գնաց Սյունյաց վարդապետանոցը, ուր նա ուսուցանում էր և ուր նրան պահեցին՝ Սյունյաց վիճակի առաջնորդ դարձնելու համար։ Բայց նա չտարվեց իշխանական փառքով։ Իր որոնումները շարունակելու համար Անանիա վարդապետի հետ գնաց Դվին, ուր եպիսկոպոս ձեռնադրել տվեց նրան և ուղարկեց Սյունիք՝ առաջնորդի պաշտոնով, իսկ ինքը, ստիպված այն հալածանքից, որ հարուցեց նրա դեմ հայ իշխաններից մեկը, գնաց Արևմուտք, անցավ Կ. Պոլիս, ուր սկսեց ուսումնասիրել հույն և լատին լեզուները, եղավ Աթենքում և Հռոմում, երկար պարապում էր այդ մեծ քաղաքների հարուստ մատենադարաններում, հետաքրքրվելով գլխավորապես կրոնական և մասնավորապես՝ դավանաբանական խնդիրներով։ Պետք է իմանալ, որ շատ էլ հեշտ չէր Սյունեցու գործը, որովհետև նրան հալածող հայ իշխանն իմաց էր տվել Կ. Պոլիս, թե նա ուղղափառ չէ, հերձվածող է, ուստի և նա ստիպված էր շարունակ իրեն ծածկել։ Լևոն կայսրը, տեղեկանալով այդ մասին, թույլ տվեց Ստեփանոսին օգտվել կայսերական մատենադարաններից այն պայմանով, որ նա համոզի հայերին քաղկեդոնականություն ընդունել։ Սյունեցին խոստացավ, բայց երբ գնաց Հռոմ՝ այնտեղի գրադարաններում էլ երկաբնակության օգտին խոսող գրքեր գտնելու համար, ուղղակի Հայաստան վերադարձավ,

[1] Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս («Արարատ» ամսագիր, 1896, էր. 192—199)։

[2] Հովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց որ ի Հայս («Գիրք Թղթոց», էր. 220—233)։

[3] «Կարգ մեծի Տօնից» կոչված (տե՛ս Շարական)։

[4] Տպված է Թիֆլիսում 1901 թվին։

[5] Օրմանյան, «Ազգապատում», էջ 834։

առանց այլևս Կ. Պոլիս մտնելու, որպեսզի ստիպված չլինի կատարել իր խոստումը։ Հայաստանը նա տեսավ սաստիկ ավերված արաբների ձեռքով։

Ասում են, թե Սյունեցին իմաստասերի մեծ համբավ ստացավ և Արևմուտքում։ Չնայած, սակայն, այնքան ընդարձակ պատրաստության, նա ուշադրության արժանի ինքնուրույն երկեր չի թողել և նրա գրական գործունեությունը, որքան մեզ հայտնի է, գրեթե միայն թարգմանական է։ Այսպես, նա թարգմանել է Դիոնիսիոս Արիսպագացու **Թղթերը**[1], Կյուրեղ Աղեքսանդրացու **Պարապմանց** անունով աշխատությունը[2]։ Առանձնապես հիշատակելի է Սյունեցու թարգմանություններից մեկը—մարդակազմության, մարդու բնախոսության վերաբերյալ մի ձեռնարկ, գործ Նեմեսիոս հույն փիլիսոփայի[3]։ Իր բովանդակությամբ այս գրական վաստակը մի բոլորովին առանձնացած տեղ է բռնում մեր հին գրականության մեջ, նույնիսկ գիտական այն գործերի շարքում, որ թարգմանել էին Դավիթ Հարքացին և ուրիշները։ Նյութը բոլորովին մարմնավոր, աշխարհական է, կրոնական այդ դարի համար անսովոր մի երևույթ։ Նա տալիս է մարդկային բնության զանազան երևույթների բացատրությունը, մարմնի գործարանների գործառնությունը։ Եվ խոսողն ինքը Նեմեսիոսը չէ, այլ ամբողջ հին հունական գիտությունը հանձինս երևելի փիլիսոփաների, բժիշկների և այլն։ Այս գործի թարգմանությունը Սյունեցին կատարել է Կ. Պոլսում, Դավիթ Հյուպատ անունով մի հայի աշխատակցությամբ։ Սյունեցուն է վերագրվում և Գեորգ Պիսիդես հույնի մի ընդարձակ ոտանավոր քերթվածի չափածո թարգմանությունը[4]։ Պիսիդեսը 7-րդ դարում հռչակված բանաստեղծ էր և իր այս քերթվածի նյութ էր դարձել աշխարհի ստեղծագործությունը վեց օրում։ Այդ մի վիճաբանական-փիլիսոփայական բանաստեղծություն է Աստվածաշնչի ավանդությունները պաշտպանելու համար ընդդեմ գիտության, որ չէր կարողանում հաշտվել այդ առասպելների հետ։ Այս թարգմանությունն արդեն ապացույց է, որ Սյունեցին հաղորդակից էր և բանաստեղծության։ Եվ իրավ, նրա շարադրությունն է համարվում Քրիստոսի խաչին նվիրված շարականներից մեկը, որից բերում ենք կտորներ՝ նրա ճաշակի մասին գաղափար կազմելու համար.

«Սրբութիւն սրբոց շնորհեցեր եկեղցւոյ սուրբ զխաչ քո, Տէր, քանզի հեղուսիւք ձգմամբ անարատ ձեռքին քո ի սմա համահավաքեալ առ քեզ զհամօրէն սեռս բանական կենդանեաց. աղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ... Փայտ կենաց զսա հոգւովն վերագրեաց գերահրաշ իմաստունն. քանզի արարիչն արարածոց բարձրացաւ ի սմա, և կողահոս շիթք անապական արեանն զկողածնին ջնջեաց զմեղս. աղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչիկ քո սուրբ»[5]։

Ավելի մեծ ծառայություն Սյունեցին մատուցել է եկեղեցուն, իբրև հմուտ ձայնագրագետ և երգասաց։ Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Բաժանեաց և զութն ձայնսն և կարգեաց, շարժեաց զՅարութեան օրհնութիւնսն. երգեաց կցուրդս քաղցրահամս, յարմարեաց զստողոգիս Յինանց եօթն

[1] Հ. Գ. Զարբհանալյան, «Մատենադարան Հայկական թարգմանութեանց», Վենետ., 1889, էր. 381։

[2] «Կիւրեղի Աղեքսանդրացւոյ Պարապմանց Գիրք», Կ. Պոլիս, 1717։

[3] «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», Վեն., 1889։

[4] «Վեցօրեայք Գէորգայ Պիսիդեայ Իմաստասիրի», Վենետ., 1900։

[5] Շարական, Կ. Պոլիս, էր. 553։

եղանակօք յոյժ խորհրդաւոր»[1]։ Նույն հեղինակը վկայում է, որ Սյունեցին գրել է նաև մի քանի մեկնություններ, ճառեր, և ուրիշ շատ գործեր, բայց դրանք մեզ չեն հասել։

Այս գիտնական գրողն ու հմուտ երգահանը մի շատ ողբերգական վախճան ունեցավ։ Դառնալով Սյունյաց եպիսկոպոս, նա մեծ ժողովրդականություն էր վայելում իր վիճակում։ Ամառը գնալով շրջագայելու իր վիճակը, նա իջավ Ծղեգյաց գավառի Մոզան գյուղում։ Այստեղ նա հանդիմանեց տեղացի մի պոռնիկ կնոջ, որ սաստիկ կատաղելով, վերցրեց իր տարփածուին և գնաց գյուղի մոտ եղած աղբյուրը, ուր օրվա տապին հանգիստ էր առնում Ստեփանոսը, անկողին հարդարելով մի ուռի ծառի վրա։ Կինն իր մարդու ձեռքը սուր դնելով, երկու անգամ բարձրացրեց նրան ծառը, հրամայելով սպանել քնած եպիսկոպոսին։ Բայց հոմանին երկու անգամն էլ չհամարձակվեց սպանություն կատարել։ Ուստի կինն ինքը բարձրացավ ծառը և կոխեց սուրն Ստեփանոսի փորը (736 թ.)։

Սահակդուխտ բանաստեղծուհի: Բանաստեղծության և երգահանության արվեստի մեջ Ստեփանոս Սյունեցու հետ է մի փայլուն գրական երևույթ— նրա քույր Սահակդուխտը։ Ութերորդ դարն իր աղքատությամբ հանդերձ այն բացառիկ պատիվն ունի հայոց գրականության պատմության մեջ, որ առաջին անգամ նա ցույց է տալիս հականե հանվանե գրական ասպարեզում գործող հայ կնոջը։ Բանաստեղծուհի էր Սահակդուխտը, թե՛ երգում էր և թե՛ երգեր հորինում, իհարկե, միշտ նույն եկեղեցական շրջանակի մեջ։ Ճգնավոր էր կույս Սահակդուխտը Գառնի գեղանկար ձորի մի այրի մեջ։ Այդ մենության մեջ, բնության ծոցում, ուր երեք գետակներ գալիս խառնվում են իրար, իրենց կարկաչով լցնելով խորանդունդ ձորերը, կույսը հորինում էր երգեր ու մեղեդիներ, գեղեցիկ եղանակներ էր հարդարում։ Նրա մոտ գնում էին սովորելու բաղաձայնները։ Եվ ամոթխած կույսը, հլու հպատակ իր սքեմին և ժամանակի հասկացողություններին, մարդկանց աչքի առջև չէր երգում, այլ նստում էր վարագույրի հետևում և այդպես էր ունկնդիրներին հաղորդում իր երկնային շնորհքը, ուսուցանելով նրանց երգերի եղանակները։ Այդտեղ էլ, իր ճգնարանում մեռավ սևազգեստ հայ բանաստեղծուհին։ Տարաբախտաբար, նրա հորինած երգերից մեզ գրեթե ոչինչ չի հասել[2]։ Ցույց են տալիս միայն երեք տող և ասում են, թե դրանք Սահակդուխտի այն երգի սկիզբն են, որ հիշում է Սյունյաց պատմիչ Օրբելյանը. «Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի և տապանակ կտակարանաց, որ զի վերուստ զհացն կենաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս, առ նա միշտ բարեխօսեա՝ վասն քաւութեան մեղաց մերոց»[3]։

Խոսրովիդուխտ: Սահակդուխտի կողքին ավանդությունը կանգնեցնում է մի այլ հայ բանաստեղծուհու, Խոսրովիդուխտ անունով։ Դա նահատակ Վահան Գողթնացու քույրն էր[4], որի բանաստեղծական տաղանդը, ասում են, այժմ էլ ցոլում է և նրան տեսնելու համար պետք է կարդալ այն նուրբ ու քնքուշ ողբը, որ, ինչպես կարծվում է, նա է գրել իր եղբոր հիշատակին և որ պահվել է շարականների մեջ այսպիսի հյուսվածքով.

[1] Օրբելեան, «Պատմ. Սիւնեաց», Թիֆլ., եր. 138։

[2] Օրբելեան, եր. 139։

[3] Հ. Ալիշան, «Յուշիկք Հայրենեաց», հ. Ա, եր. 291։

[4] Տ. վերև, մասն Բ, գլ. Դ, § 2։

«Զարմանալի է ինձ քան զերգս երաժշտականաց ձայնս ողբոց քոց հնչմունք, ով երանելի տէր Վահան, ընտրեալ յԱստուծոյ։ Առաւել յորդորէ այս զհոգւոյս մասունս, յօրինել քեզ երգս ոչ զգչականս, այլ հոգևորս և ուրախարարս, յորդորականս և ներբողեանս, ով երանելի տէր Վահան, ծառայ Քրիստոսի։ Զարհուրեցուցանէ քո ճոխութիւնդ զմարմնոյս բնութիւնս, իսկ դու առաւել գտար, ով երանելի տէր Վահան, սիրող Քրիստոսի։ Արտաքնոցն զգաստքն, ստեղծիչ բանք սնոտեացն ի պատրութիւն։ Իսկ քոյդ սիրայնոյ աստուածարեալ և ոգեշահ, ով երանելի տէր Վահան, ընտրեալ յազատաց։ Որպէս զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ կատարեցեր զընթացս քո արիաբար յազգացն հարաւայնոց, դասաւորեալ ընդ անմարմնականսն, ով երանելի տէր Վահան, Գողթնեացն իշխեցող»[1]։

Արտավազդ վարդապետ: Վահան Գողթնացու կյանքը մի ողբախառն և սրտառուչ վկայաբանության մեջ նկարագրել է ժամանակակից հոգևորականներից մեկը, Արտավազդ վարդապետը, որի մասին կենսագրական տեղեկություններ չունենք։ Իր գործը նա սկսում է մի ողբով, որ արաբական բարբարոսություններն են ներշնչում նրա գրչին.

«Ահա մերկացաւ սուրն վաղակատր ի պատենիցն, զոր տեսանող ականբն յառաջագոյն սպառնացեալ ողբայր մարգարէն։ Սո՛ւր ծարաւի արեամբ՝ զարթեալ և ի մեզ ազգն Իսմայէլի, ընդ չորեսեան կողմանս երկրի գոչեալ առիւծաբար. կամ իբրև չորեքին հողմովք բախելով զծով, զաշխարհիս մեծութիւնս։ Որ արդեօք թէև առ Իսրայէլ լինէր մարգարէութիւնս, բայց և առ մերն առնու ձայնն. մանաւանդ Երուսաղէմ մինչև ի հիմն քակեալ լինէր և մեր՝ բոլոր աշխարհս քակեալ աւերեցաւ։ Զվայելչութիւն երկրիս՝ օտարազգիք կալան. և ազատութիւն և տէրութիւն և իշխանութիւն նախարարացն՝ անարգութեամբ յերկիր կործանեցաւ։ Անդ մանկունք տղայք գքարի հարեալք. և մերքս՝ առհասարակ ծնողք և մանկունք ի գերութիւն, որ և զմարցն առեալ ողբայր Երեմիա, այն և մեզ իսկ դիպեցան ի դէպ ելանել։

...Արդ որպէս յայնժամ և այժմ առ մեզ՝ ճանապարհքն Սիովնի սգան, զի ապականեալ բարձաւ լոյս պայծառազարդութեան սուրբ սպասուց և զարդուց եկեղեցեաց. ուրախութիւն հոգեզարդ տօնից և ցնծութիւն աստուածային հոգևորական երգոց, քահանայից և պաշտօնէից և միանգամայն իսկ առհասարակ վայելչութիւն աշխարհիս. վասն զի մրրիկ տապախանի տխրաբեր շնչեալ օդովն հարաւոյ, բարձ զառագաստն փափկութեան, բարձեալ զպատուականութիւն և զնրբութիւն լուսազարդափայլ ծածկութեան, զոր փոխանակ դրախտին շնորհեցաւ մեզ ի կենաց փայտէ խաչին Քրիստոսի և յայտնեցաւ թխութիւն թանձրութեան կտաւոցն. խաւարազգած թանձրութիւն անհնարին սևութեան. գո՜յն, որ առնելոց էր զամենայն աշխարհս Հայաստան երկրիս»[2]։

Արտավազդ վարդապետի այս գործն ունի նշանակություն իբրև պատմության նյութ։ Նրա մեջ նկարագրված են հետաքրքրական մանրամասնություններ 8-րդ դարի առաջին կեսի կյանքից։

Խոսրովիկ Թարգմանիչ: Միևնույն ժամանակների գրող է և Խոսրովիկ Թարգմանիչը, որ երբեմն կոչվում է և Հռետոր։ Թարգմանիչ անունը տըր-

[1] Շարական, Կ. Պոլիս, եր. 634—635։

[2] «Ողբք վասն չարեացն աշխարհիս Հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանա Գողթնացւոյ» («Սոփերք Հայկականք», ԺԶ, Վեն., 1859)։

ված է նրան այն պատճառով, որ նա հայտնի էր իբրև մեկնող, բացատրող[1]։ Թողել է մի քանի ինքնուրույն գրություններ, որոնք ունեն զուտ եկեղեցական-դավանաբանական բովանդակություն[2]։ Լինելով Հովհան Օձնեցու և Ստեփանոս Սյունեցու ժամանակակից, Խոսրովիկը շատ եռանդուն մասնակցություն է ունեցել այն դավանական վեճերի մեջ, որոնք 8-րդ դարի առաջին կեսում հուզում էին արևելյան միաբնակ եկեղեցին և որոնք լուծում ստացան Մանազկերտի ժողովում։ Իբրև վիճաբանող՝ Խոսրովիկն առանձին մեծ հմտություն չէր ցույց տալիս և իր գրական պատրաստությամբ թույլ էր Օձնեցուց էլ, Սյունեցուց էլ։ Ազգային եկեղեցու կուսակցության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկն էր, ավելի պահպանողական, քան Օձնեցին, և հենց այդ պատճառով էլ, երևի, վիճաբանություն ունի և Օձնեցու դեմ, թեև ուրիշ հանգամանքներում, երբ հարցը վերաբերում է երևութականներին, միանում է Օձնեցու հետ, միասին մարտնչում այս վարդապետության ծայրահեղությունների դեմ։

Ուշադրության արժանի մի վիճաբանական գրվածք է մնացել նույն այս ժամանակներից։ Օձնեցին և Խոսրովիկը գրեցին երևութականների կուսակցության դեմ, բայց երևութականներն էլ գիտեին գրել, փաստաբանել իրենց տեսությունները։ Ահա այս տեսակ մի գրություն պահպանել է մեր գրականությունը, որ իր տեսակի մեջ միակն է և պատկանում է Ստեփանոս Իմաստասերի գրչին։ Այս Ստեփանոսին հայ բանասերներից մեկը նույնացնում է Ստեփանոս Սյունեցուն։

Անվավեր կտակարաններ: 8-րդ և հետևյալ դարերի գործ է համարվում այն բազմաթիվ գրությունների թարգմանությունը, որոնց կարելի է հավաքել «Անվավեր կտակարաններ» ընդհանուր անվան տակ[3]։ Գրականության այս ձևը շատ խոշոր դեր է խաղացել մի քանի ազգերի մտավոր կյանքի մեջ, և մեզանում էլ, անշուշտ, մի շատ խոշոր երևույթ էր, որ

[1] «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի», հատ. Ա, Վենետ., 1836, եր. 12։

[2] Թվով հինգ հատ են դրանք. ա) Խոսրովկայ Թարգմանչի Հայոց առ այնոսիկ որ ասեն բնութեամբ անձն, անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուածն բան ի կուսէն։

բ) Յաղագս թէ պա՞րտ է զմարմինն տէրունական համագոյ ասել Աստուածն բանի կամ մարմնոյն և բան ի մի բնութիւն ասե՞լ թէ ոչ։ գ) Առ այնոսիկ, որք յերկուս զմարդկայինսն անջատեն բնութիւն, այլ գոլ ասեն յառաջ քան զյանցանսն և այլ զկնի յանցանաց։ դ) Առ այնոսիկ, որ տարակուսին ի վերայ փրկչական կրից մարդկայնոց, թէ բնական պա՞րտ է ասել թե անբնական։ ե) «Նորին Խոսրովու Թուղթ առ Տէր Սարգիս եպիսկոպոս Գերադիկարայ»։ Հրատարակել է Գարեգին վ. Հովսեփյան, Վաղարշապատ, 1899 (տ. և Հ. Ն. Ակինյանի «Խոսրովիկ Թարգմանիչ», «Հանդէս Ամս.» (1904—1905)։

[3] Հին Կտակարանի կամ Աստվածաշնչի անվավեր գրքերն են. «Գիրք Ադամայ, Մահ Ադամայ, Կտակ Նահապետաց (Ռուբէնի, Շմաւոնի, Ղեեայ, Յուդայի, Իսաքարայ, Զաբուղոնի, Դանայ, Նեփթաղիմայ, Գադայ, Յովսէփայ, Բենիամինի, Պատմութիւն Ասանեթայ, Մահ Մարգարէից (Եսայեայ, Ովսէի, Ամովսայ, Միքեայ, Յովելայ, Աբդիու, Յոհանու, Նաւումայ, Ամբակումայ, Սափոնիա, Անդէի, Զաքարիա, Մաղաքիա, Դանիէլի, Երեմիա, Եզեկիէլի), Վասն Սողոմոնի Արքայի (Հարցմունք դշխոյին և պատասխանիք Սողոմոնի որդւոյ Դաւթի, Վասն Գրեանցն Սողոմոնի), Աղօթք Մանասէի թագաւորի, Տեսիլ Դանիէլի, Գիրք Եզրի երրորդ, Պատմութիւն ստեղծման և յանցմանն Ադամայ, Պատմութիւն ելանելոյն Ադամայ ի դրախտէն, Պատմութիւն որդոցն Ադամայ Աբէլի և Կայէնի, Վասն աւետեացն Սեթայ զոր պարտ մեզ ուկնդնել, Պատմութիւն ապաշխարութեան Ադամայ և Եւայի, Բանք Ադամայ առ Սէթ, Պատմութիւն համառօտ Եղիայի մարգարէին, Քարոզ Յօնանու մարգարէին որ ի Նինուէ քաղաքին, Վասն Երեմիայի մարգարէի ի գրոցն Բարուքայ, Պատմութիւն սրբոյն Երեմիա մարգարէին և աշակերտաց նորա՝ Բարուքայ և Աբիմելիքայ, Տեսիլ Ենովքայ արդարոյն»։ Հրատարակված են Վենետիկում 1896 թվին, «Անկանոն գիրք Հին Կտակարանաց» վերնագրով։

օտար լեզուներից վերցվելով հայացվեցին անհայտ հեղինակներին պատկանող այս գրվածքները, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ մի տեսակ վիպական պատմություններ կամ պատմական վեպեր՝ ժողովրդական ընթերցանության հատկացված։ Այդ ընթերցանության նպատակը, իհարկե, գերազանցորեն կրոնական էր, այսինքն հոգեշահ-խրատական, որ պիտի ամրացներ ս. գրքերի, եկեղեցական ավանդությունների հեղինակությունը հետաքրքրաշարժ պատմվածքների միջոցով։ Նյութը վերցվում էր Հին և Նոր կտակարաններից։ Չի կարելի որոշակի ցույց տալ, թե յուրաքանչյուր պատմվածք ե՞րբ, ո՞ւր և ի՞նչ լեզվով է հեղինակված։ Սակայն մերձավոր հավանականությամբ թույլատրելի է ենթադրել, որ Հին Կտակարանի վերաբերյալ պատմվածքների մի մասը հրեական և նախաքրիստոնեական ծագում ունի, իսկ մյուսը, ավելի խոշոր մասը ծագել է քրիստոնեական միջավայրում, ինչպես, իհարկե, և ամբողջ անվավեր Նոր Կտակարանը։ Հայերեն թարգմանությունները կատարված են հունարեն և սիրիական լեզուներից։ Ինչպես պարզ երևում է, ամեն մի պատմվածք ընթերցող հասարակության մատուցվել է այլևայլ խմբագրություններով։ Այսպիսի ծագումից առաջ եկած գրականությունը բաժանվում է, ըստ իրենց աղբյուրների, երեք խոշոր կարգի։ **Առաջին կարգի** պատմվածքները Հին Կտակարանի նյութերն են շոշափում։ Նրանք միայն գոյություն ունեցող պաշտոնական բնագիրը չեն լուսաբանում հանրամատչելի ձևերով, այլև լրացնում են նրան, հերյուրելով հաճախ ամբողջ վիպական անցուդարձեր։ Այսպես է, օրինակ, Ադամի պատմությունը դրախտից արտաքսվելուց հետո, թե ինչպես է նա աղաչում Աստծուն, որ ների իրեն և նորից մտցնի փափկության դրախտը, իսկ խստասիրտ Ցահվեն մերժում է այդ աղաչանքը. թե ինչպես մահվան անկողնում պառկած Ադամն իր որդուն ուղարկում է դրախտը պահպանող հրեշտակի մոտ, խնդրում, որ «կենաց պտուղ» քաղի դրախտի ծառերից և իրեն ուղարկի բժշկվելու համար։ Այս վերջին խնդիրքն էլ մերժվում է, Ադամը մեռնում է, և Ցահվեն երկնքից իր հրեղեն կառքով իջնում է նրան թաղելու համար, որպեսզի հենց իր ձեռքով կատարել տա իր պատվերը. «Հող էիր հող դարձցիս»։ Հաճախ պատմվածքների մեջ այլաբանորեն խոսում են հայտնի ժամանակամիջոցների պատմական մեծ դեպքերը։ Այսպես, «Տեսիլ Դանիէլի» և «Տեսիլ Ենովքայ» պատմությունների մեջ նախագուշակումների ձևով ներկայացված են Բյուզանդիայի և արաբների փոխադարձ մրցություններն ու ընդհարումները 7—9-րդ դարերում[1]։ Իր գեղարվեստական ձևերով առանձին ուշադրություն է գրավում «Պատմութիւն Ասանեթայ» սիրավեպը, որ վերցված է Հովսեփ Գեղեցկի կյանքից, երբ նա Եգիպտոսում հասել էր իր իշխանության բարձրագույն աստիճանին։ Քուրմի աղջիկ է Ասանեթը, անասելի գեղեցիկ և հպարտ, որ իրեն արժանի փեսա համարում է միայն փարավոնի որդուն և մերժում է բոլոր նշանախոս երիտասարդներին, չնայած նրանց բարձր դիրքին և պատվին։ Մի օր քուրմը լուր է առնում, թե Հովսեփը, որ ճանապարհորդում էր արքունական գործով, պիտի մտնի Արեգ քաղաքը և ճաշի ժամն անցկացնի նրա տանը։ Հայրն առաջարկում է Ասանեթին ամուսնանալ Հովսեփի հետ։ Բայց կույսը մերժում է, արհամարհելով Հովսեփի ստոր ծագումը։ Այնուհետև երևում

[1] Հ. Բարսեղ Սարգիսյան, «Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվավեր գրոց վերա», Վենետ., 1898, եր. 137—145։

է Հովսեփը, և աղջիկը, տեսնելով նրան, սաստիկ սիրահարվում է նրա վրա։ Հայրը ծանոթացնում է նրան գեղեցիկ հյուրի հետ և առաջարկում է, որ իբրև քույր համբուրվի նրա հետ։ Բայց ավանդապահ հրեան հեռացնում է նրան իրենից, ասելով, թե իր հայրերի աստվածը չի ներում, որ նա համբուրվի մի կռապաշտ աղջկա հետ։ Այնուհետև Հովսեփը շարունակում է իր ճանապարհը, խոստանալով վերադարձին, յոթն օրից հետո, ավելի երկար հանգիստ առնել քուրմի տանը։ Այդ մի շաբաթը տանջանքի օրեր եղավ Ասանեթի համար։ Տանջվում էր սիրախորով աղջիկը գիշեր և ցերեկ և ամենայն եռանդով պատրաստվում էր «դառնալ Հովսեփի հավիտենական աղախինը»։ Որովհետև վեպի գլխավոր նպատակն է աստվածապաշտություն սովորեցնել, ուստի և Ասանեթն ամենայն ջերմեռանդությամբ և անձնուրացությամբ պատրաստվում է դառնալ այդ կարճ միջոցում ուղղահավատ հրեուհի, որպեսզի Հովսեփն այլևս չհեռացնի նրան իր գրկից։ Նա անդադար աղոթում է, լաց է լինում, դեն շպրտում իր հայրենի կուռքերը, օտարանում է իր հարազատներից, իր ժողովրդից, շարունակ կլանված մի միակ մտքով—տիրել Հովսեփին։ Եվ այդ նրան հաջողվում է։ Ութերորդ օրվա վաղ առավոտին, երբ աքաղաղները կանչում էին և շներն սկսել էին հաչել ճանապարհորդների վրա, Ասանեթը ոտի վրա է, ահ ու դողով սպասում է, թե ի՛նչ կբերի օրը։ Հրաշք է կատարվում։ Երևում է մի սքանչելի մարդ, երկար խոսակցություն է սկսում նրա հետ և քաջալերում է, ասելով, թե ինքը հենց հիմա կգնա խոսելու նրա մասին Հովսեփի հետ, որովհետև վճռված է, որ նա պիտի լինի նորադարձ հավատավոր աղջկա փեսան։ Մեկնելիս խորհրդավոր հարսնախոսը տալիս է Ասանեթին մի ոչ-երկրային գեղեցկություն, որ այսպես է նկարագրում վեպը. «Եւ տեսեալ զդէմս իւր ի ջուրն՝ զի էին որպէս զարեգակն և աչք նորա որպէս զարուսեակ զի ծագէ, և գնացք ոտից նորա որպէս զակօսս հարթ և գեղեցիկս. այտք նորա կարմիր որպէս հատորս նռան և շրթունք իւր որպէս զվարդ փթթեալ, յորժամ ի հակուկացն ի դուրս վաղէ, ատամունք նորա որպէս զաշտարակ գեղեցիկ»[1]։ Այլևս ոչինչ չէ պակասում, որ Հովսեփը վերջնականապես դյութվի։ Եվ նրա ու Ասանեթի հարսանիքը կատարվում է յոթն օր։ Բայց վեպն այստեղ դեռ չէ վերջացած։ Փարավոնի որդին, տեսնելով Ասանեթի գեղեցկությունը, վճռում է տիրանալ նրան, սպանելով նրա ամուսնուն և իր հորը, որ անչափ սիրում էր Հովսեփին։ Դավեր, կռիվներ և կոտորածներ են տեղի ունենում, բայց Ասանեթը հավատարիմ է, ի վերջո սպանվում է փարավոնի որդին, կսկիծից մեռնում է և ինքը, փարավոնը, իսկ նրա տեղ թագավոր է նստում Հովսեփը։ Եվ հոգեշահ սիրավեպը լիուլի հասած է իր նպատակին։ Այսքան բարիք ու բախտ, չքնաղ աղջիկ ու թագավորի գահ ինչո՞ւ համար։ Լոկ Յահվեին երկրպագելու, նրան ճշմարիտ «Աստուած բարձրելոյ» ճանաչելու համար։

Անվավեր Կտակարանների **Երկրորդ կարգի** պատմությունները Հիսուսի կյանքի հետ են կապված և նպատակ ունեն լրացնելու այն կենսագրական պակասները, որ թողել են չորս ավետարանիչները։ Քրիստոնեության առաջին դարերի մասին խոսելիս մենք տեսանք, որ այդ ժամանակները խմբագրվեցին բազմաթիվ ավետարաններ, որոնք, սակայն, անվավեր հայտարարվեցին։ Դրանց մեջ էր և Հիսուսի մանկության ավետարանը, որ

[1] Եր. 183։

պատմում էր նրա կյանքը մինչև երեսնամյա հասակը։ Ահա այդ ավետարանի թարգմանությունն էր, վերցված զանազան խմբագրություններից, որ ստանում էր հայոց գրականությունը «Գիրք Տղայութեան»[1] վերնագրով։ Չի կարելի ասել, թե նրա մեջ դրված պատմությունները միաժամանակ կամ մի որոշ տեղում են ծագել։ Այդ ցույց է տալիս հենց բովանդակությունը։ Այդ պատմություններն ստեղծվում էին գործնական նպատակով, այն է՝ որպեսզի պատասխանեն այն հարցերին, որոնք հուզում էին քրիստոնեությունը։ Այսպես է, օրինակ, Մարիամի կուսության հարցը։ Թերահավատներին հավատացնելու համար էր, որ պատմվում էր, թե Հովսեփը, նկատելով Մարիամի հղիությունը, զրպարտեց նրան, ասելով, թե նա մեղանչել է կուսությունն անվթար պահելու օրենքի դեմ և թե վեճն երկուսի միջև վերջացավ նրանով, որ երկուսին էլ խմեցրին «փորձության ջուր», որ և ապացուցեց Մարիամի կուսությունը։ Կամ թե հարկավոր էին ավելի ծանրակշիռ ապացույցներ, թե Հիսուսը ճիշտ որ խաչվել է ու հարություն առել։ Եվ ահա խմբագրվում են մի շարք վկայություններ ականատես հռոմայեցիների անունից[2]։ Ի վերջո անվավեր Ավետարանը տալիս

[1] Նրա բովանդակության մասին բավականաչափ հասկացողություն տալիս են գլուխների անունները. «Ա. Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ որ եղև ի տանն հօր իւրում. զոր ասացեալ է սրբոյն Յակոբայ տեառնեղբօրն։ Բ. Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան որ եղև ի տան հօր իւրում։ Գ. Վասն սրբոյ կուսին սննդեանն, որ եղև ի տաճարն սրբութեան զամս երկոտասան։ Դ. Վասն սրբոյ կուսին Մարիամու տալ զնա Յովսէփայ ի կնութիւն՝ ըստ օրինի աւանդութեան իւրեանց պահել զկոյսն սուրբ զգուշութեամբ ի յանձնելոյ զնա հաւատով ի Տէր. ամէն։ Ե. Վասն աւետաւոր հրեշտակի ձայնին, որ քարոզեաց զյղութիւն սրբոյ կուսին Մարիամու։ Զ. Վասն տրտմութեան Յովսէփայ և զրպարտելոյ զկոյսն սուրբ անմեղութեամբ և դատապարտելոյ զնա։ Է. Վասն Մարիամու յանդիմանելոյ զկուսութիւնն սուրբ, և պարկեշտութեանն Յովսէփայ, և տալ երկոցունց զջուրն փորձութեան։ Ը. Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յայրին։ Թ. Վասն նախամօրն Եւայի և Յովսէփայ փութով հաւանել նոցա, և տեսանել զծնունդ ամենագովեալ սուրբ կուսին Մարիամու։ Ժ. Վասն հովուացն, որ տեսին զծնունդ Տեառն մերոյ։ ԺԱ. Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին մանկան Յիսուսի։ ԺԲ. Վասն քառասնօրեայ գնալոյն ի տաճարն բազում ընծայիւք։ ԺԳ. Վասն Հերովդէի և կոտորելոյ նորին զմանկունս ի Բեթղեհեմ և խաբելոյ ի մոգուցն։ ԺԴ. Վասն սպանման Հերովդէի զԶաքարիա քահանայապետն ի տաճարին։ ԺԵ. Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսէփայ՝ գնալ նոցա փախստական ի ձեռաց չար Հերովդէի յերկիրն յԵգիպտոս։ ԺԶ. Վասն գնալոյ յերկիրն Իսրայէլի և բնակելոյ յաշխարհ Գալիլեացւոց ի Նազարէթ։ ԺԷ. Վասն փոխելոյ անտի և գնալոյ յերկիրն Ասորոց։ ԺԸ. Վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու և տղայութիւնն զոր առնէր Յիսուս։ ԺԹ. Վասն երթալոյ նոցա յերկիրն Իսրայէլի և տալոյ յուսումն դպրութեան։ Ի. Վասն տալոյ զՅիսուս Գամաղիելի յուսումն գրոց։ ԻԱ. Վասն գնալոյ ի քաղաքն Տապարիա և տալոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան։ ԻԲ. Վասն գալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զտղայութիւնն զոր առնէր Յիսուս մահու և յարութեան։ ԻԳ. Վասն գնալոյ նորա յԱրտեան լերին. տղայութիւն զոր առնէր Յիսուս։ ԻԴ. Վասն գնալոյ նորա ի գիւղն յԷմաւուս, և բժշկել զհիւանդս և զսքանչելիսն, զոր առնէր Յիսուս։ ԻԵ. Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսէփայ գնալ ի քաղաքն Նազարէթ։ ԻԶ. Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յիսուս ի քաղաքն և ի գիւղն և այլ տեղիս, զոր առնէր բժշկութիւն Յիսուս։ ԻԷ. Վասն մարգարէիցն աւանդութեան զգրեալսն կատարելոյ և օրինացն, զոր առնէր Յիսուս։ ԻԸ. Վասն դատաւորութեան զոր առնէր ի մէջ երկու զինուորաց» («Անկանոն Գիրք Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1898)։ Մեր գրականության մեջ մնացել են այս գլուխների ուրիշ խմբագրություններ էլ, որոնք տարբերվում են ոչ միայն ոճով, այլև բովանդակությամբ։ Կան և հատակոտորներ, որոնք ցույց են տալիս, թե այդ խմբագրությունները շոշափել են և տարբեր նյութեր, բայց միշտ Հիսուսի կյանքից։

[2] Այս տեսակ «վավերագրերը» երեք կարգի են բաժանվում. ա. **Յիշատակարանք Պիղատոսի**: Յիշատակարանք որ եղեն վասն Քրիստոսի առաջի Պոնտացւոյ Պիղատոսի, իշխանի Հրէաստանի։ Պատմութիւն վասն թաղման և յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ բ. Թուղթ

էր Մարիամ Աստվածածնի անվավեր «Տեսիլները», որոնց մեջ նկարագրվում էր, թե ինչպես պիտի տանջվեն մեղավորները[1]։

Իսկ անվավեր Կտակարանների երրորդ տեսակը կազմում են «Առաքելական անկանոն Գրքերը», որոնց մեջ պատմված են առաքյալների կյանքն ու վկայաբանությունները վիպական, մտացածին մանրամասնություններով[2]։

Ահա թե ո՛րքան առատ նյութ էին մատակարարում անվավեր Կտակարանները։ Այդ ամբողջ նյութը պետք է նկատել իբրև հոգեշահ ընթերցանություն, որ նշանակվում էր գլխավորապես ժողովրդի համար։ Մենք տեսանք, որ քրիստոնեության սկզբի դարերից հանրամատչելի դաստիարակչական ընթերցանության համար գրվում և տարածվում էին սրբերի հրաշապատում վկայաբանություններ։ Այս անվավեր Կտակարանները ներկայացնում էին նույն այդ ժողովրդական գրականության զարգացումը, որ արտահայտվում էր փրատական, հոգեշահ վեպի ձևով, ուր մտացածինը, երևակայականը բռնում էր խոշոր տեղ։ Այսպիսի գրվածքներ հետագա դարերում պիտի ավելանային, ընդգրկելով ուրիշ նյութեր, բայց էությամբ մնալով միևնույնը—բարոյավեպեր, որոնց մեջ պատմական մասը հետզհետե տեղի էր տալիս մտացածին հերյուրանքին։ Նկատենք այստեղ և այն, որ միջազգային լայն շրջանառություն ունեցած այս ժողովրդական գրականությունը վերին աստիճանի հետաքրքրական տեսարան է ներկայացնում համամարդկային մտքի պատմության տեսակետից, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես են պատկերներն ու գաղափարները փոխանցվում մի ազգից մյուսին, ինչպես են նյութերը մշակվում և վերամշակվում այս կամ

Պիղատոսի: *Թուղթ Պիղատոսի դատաւորի զոր գրեաց յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և առաքեաց առ Տիբերիոս կայսրն ի Հռոմ։ Այլ օրինակ թղթոյն Պիղատոսի առ Տիբերից.* Թուղթ Լենտուլեայ Պուբլիոսի զՅիսուսայ Նազովրեցւոյ: *Թուղթ Լենթուլոսի Հռոմայեցի բդեշխափոխին՝ որ է Պրոկուլին, զոր գրեալ է նա հեթանոս գոլով դատաւոր ի Հրէաստան, ի ժամանակի քարոզութեան Փրկչին մերոյ, առ ոմն բարեկամ իւր ի Հռովմ, ըստ որում Նիկեփորոս։*

[1] Տեսիլ ս. Աստուածածնի: *Տեսիլ ամենասրբուհւոյ Աստուածածնին, զոր ետես ամենօրհնեալն՝ յաղագս տանջանաց մեղաւորայց։ Տեսիլ ս. Աստուածածնին, զոր ետես սուրբ Կոյսն վասն դժոխոցն։ Տեսիլ ս. Աստուածածնին, զոր յայտնեաց նմա հրեշտակն զտեղի տանջոցն, թե որպէս տանջին մեղաւորքն։ Տեսիլ սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնին, զոր գրեաց ս. առաքեալն և աւետարանիչն Քրիստոսի Յովհաննէս, զի նա սպասաւորէր ս. Կուսին մինչև փոխեցաւ յաստեացս ի վերին Երուսաղէմ։*

Ննջումն ս. Աստուածածնի: *Երանելոյն Նիկոդիմոսի ասացեալ յաղագս ննջման Մարիամու Աստուածածնին և միշտ կուսին։*

[2] *Ահա համառոտ բովանդակությունը. Ա. Գործք Պետրոսի և Պօղոսի առաքելոյ, զիարդ կատարեցան ի Հռոմ։ Տեսիլ առաքելոյն Պաւղոսի յորժամ տարան զհոգին։ Բ. Յաղագս Անդրէի առաքելոյ և նորին սքանչելեացն զոր Տէր արար ի ձեռն նորա և Մատթէի ի մարդակերաց աշխարհն։ Գ. Պատմութիւն առաքելոյն Յակոբայ թէ որպէս գնաց ի Սպանիա և դարձեալ եկն Երուսաղեմ և գլխատեցաւ և մեռեալ մարմնով գնաց դարձեալ ի Սպանիա, ուր և այժմ ս. Յակոբ կոչի։ Դ. Վարք Յովհաննու Աւետարանչի։ Ե. Վկայաբանութիւն սուրբ առաքելոյն Փիլիպպոսի որ վկայեաց յՅպիդիսէ քաղաքի։ Զ. Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի։ Է. Ի յիշատակ ս. առաքելոյն Թովմայի թէ որպէս յԵրուսաղեմէ ի Հնդիկս չոգաւ։ Ը. Վկայաբանութիւն ս. առաքելոյն և Աւետարանչին Մատթէոսի, Թ. Վկայաբանութիւն Յակոբայ Տեառնեղբօրն։ Ժ. Սուրբ առաքելոյն Թադէոսի յաղագս Գիւտի սուրբ խաչին։ ԺԱ. Վկայաբանութիւն ս. առաքելոյն Սիմովնի Նախանձայուզի։ ԺԲ. Յաղագս սրբոց առաքելոցն թէ ույք էին որպէս կալեալ յառաքելութիւն («Անկանոն Գիրք Առաքելականք», Վենետիկ, 1904)։*

այն ազգային միջավայրում, ինչ տեսակ շերտավորումներ են ընդունում պատմական շարժումների ազդեցության տակ[1]։

Ղևոնդ վարդապետ: Իսկապես 8-րդ դարին պատկանող միմիայն մի ինքնուրույն հեղինակ կա, և դա Ղևոնդ վարդապետն է, որ ապրում էր 8-րդ դարի երկրորդ կեսում և գրել է 661—788 թթ. ժամանակաշրջանում Հայաստանի մեջ տեղի ունեցած անցքերի պատմությունը[2]։ 127 տարվա մի ժամանակագրություն, որ անփոխարինելի մի աղբյուր է արաբական արշավանքների և տիրապետության գրեթե առաջին դարի հանգամանքները ճանաչելու համար։ Մենք արդեն ծանոթ ենք նրա ամբողջ գործի բովանդակության, գիտենք, թե որպիսի սրտամորմոք շեշտերով է նա նկարագրում Հայոց աշխարհի տառապանքները, արաբական կեղեքումները։ Հասուն և շրջահայաց խելքի տեր մարդ է նա, քաղաքական զգաստություն է ցույց տալիս այն ահավոր և աղետալի ապստամբական շարժման վերաբերմամբ, որ բերեց հասցրեց երկիրը Բագրևանդի մեծ ճակատամարտին։ Գրական դաստիարակության տեսակետից Ղևոնդը ունի կիրթ ճաշակ, նկարագրական կարողություն, պատկերավորման գեղեցիկ ձիրք։ Առանձնապես մանրամասն և աշխույժ նկարագրություններ է նվիրում Ղևոնդն իր ժամանակի դեպքերին։ Գործը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ և իբրև պատմագրություն ունի այն աննման գեղեցկությունը, որ միանգամայն ճշմարտապատում է։ Հեղինակի մասին, տարաբախտաբար, ոչ մի տեղեկություն չունենք։ Նույնիսկ հաստատապես չգիտենք՝ վարդապե՞տ է եղել, որովհետև նա կոչվում է և Ղևոնդ երեց։ Բայց ինչ էլ եղած լինի նա, հայոց գրականության պատմությունը պարծանքով կպահի իր էջերում նրա անունը։

Արաբական ազդեցության հարցը: Արաբական ազդեցությունը երկար ժամանակ չարտահայտվեց հայոց գրականության մեջ բովանդակության կողմից, այլ կրում էր արտաքին կերպարանք, ուներ ավելի ոճային և լեզվական հանգամանք։ Հայ բանասերներից մեկն այսպես է բնորոշում այն ազդեցությունը, որ ունեցավ արաբական միտքը հայ գրողների արտահայտության եղանակի վրա. «Արաբական մատենագրությունը բանաստեղծական սեռն ավելի մշակելով՝ ճոխ ու ճոռոմ ասացվածոց, թարմատար ձևերու և սեթևեթյալ բառերու մասնավոր բերում մ'ուներ, նույն այդ ազդեցության ներքև ասիական ճոռոմաբանությունը մուտ գտավ հայկական բացատրությանց մեջ, և ինչ որ կարող էր լեզուն բացատրել պարզ և հստակ ձևի մը տակ, բառից կույտեր խրթնացուցին զայն և խեղդեցին իմաստն ու հոգին. այնուհետև գրիչն հոր ինչ և հպեր՝ մեծություն, զորություն կամ փայլ կը փնտռեր»[3]։

Այս մի երևույթ էր, այո։ Բայց սխալ կլիներ ճոռոմ և սեթևեթ ոճի, արհեստական կուտակումների, խրթին և մութ արտահայտության պատճառը միմիայն արաբական ազդեցության մեջ որոնել։ Գործում էր և ավելի

---

[1] *Հին Կտակարանի անվավեր գրքերի վերաբերմամբ տ.* Հ. Բարսեղ Սարգիսյանի *«Ուսումնասիրությունք Հին Կտակարանի անվավեր գրոց վրայ», Վենետ., 1898։*

[2] *Առաջին տպագրությունը «Արշաւանք Արաբաց ի Հայս. արարեալ Ղևոնդ վարդապետի», Փարիզ, 1857, երկրորդ տպագրություն՝ «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Պետերբ., 1887։*

[3] Եղիշե վ. Դուրյան, *«Պատմություն Հայ Մատենագրության», Կ. Պոլիս, 1885, եր. 53։*

ուժեղ ներքին հանգամանք, այն, որ գրաբար լեզուն գնալով ավելի և ավելի արհեստական էր դառնում, հեռանում գործածական լեզվից, հետևաբար և զրկվում այն կենսատու նյութերից, որոնք մշակվում են ամեն մի կենդանի լեզվի գանձարանում, ճկուն և թարմ պահելով նրա ամբողջ կազմությունը։ Արաբական ազդեցության ժամանակ է, գուցե հենց և արաբական ազդեցության հետևանքով, որ մեր գործածական կամ աշխարհաբար լեզուն սկըսում է տիրապետական ձգտումներ ցույց տալ մեր գրականության մեջ։ Այս մի շատ մեծ երևույթ էր, որին, սակայն, դեռ երկար դարերի մրցություն էր մնում վերջապես իրականություն դառնալու համար։

Հովհան Մամիկոնյան: Ոչ միայն ժողովրդական լեզվի, այլև ժողովրդական հարազատ ստեղծագործական ձևերի մեր գրականության մեջ մուտք գործելու պատմությունն սկսվում է Հովհան Մամիկոնյանից, որ մոտավորապես 9-րդ դարի գրող է համարվում։

Հայոց հին մատենագրությունն ունի երկու բավական հետաքրքրաշարժ երկեր, որոնք, ընդհանրապես, Տարոն գավառի հռչակավոր սրբությունը կազմող ս. Կարապետ վանքի պատմությունն են տալիս։ Եթե նայենք իրենց, այդ զույգ փոքրիկ երկերի վկայության, նրանցից մեկը, այն, որ նկարագրում է վանքի ծագումը և առաջին վանահոր ժամանակը, գրել է Զենոբ Գլակ անունով մի սիրիացի հոգևորական, որ և վանքը շինող Գրիգոր Լուսավորչի կողմից նշանակված առաջին վանահայրն է եղել։ Հետո մեզ պատմվում է, թե այդ Զենոբն իր այդ գործը գրել է իր մայրենի սիրիական լեզվով, ապա թարգմանել է հայերեն[1]։ Իսկ երկրորդ երկը, որ անվանված է Տարոնի պատմություն, ասում է, թե իր հեղինակն է Հովհան եպիսկոպոս Մամիկոնյանը, որ նույն ս. Կարապետի վանքի վանահայրն էր և ապրում էր 7-րդ դարում, Ներսես Շինողի ժամանակ, որի հրամանով էլ գրել է այդ պատմությունը[2]։ Սակայն հայ քննական բանասիրության համար այլևս գաղտնիք չէ, որ Զենոբին վերագրված Պատմությունն էլ Հովհան Մամիկոնյանն է գրել և գիտական տեսակետից արժեքավոր աշխատություն չէ[3]։ Զենոբ Գլակի անունը հարկավոր է եղել, ինչպես սովորություն էր մեր գրականության առաջին դարերում, իբր թե ականատես օտար հոգևորական գործչի հեղինակությամբ վավերականություն հաղորդելու համար այն ավանդություններին, որոնց պատառիկները դեռ մնացել էին ս. Կարապետի վանքի մեջ և որոնցից հերյուրվում էր պատմությունը։ Ապա բացահայտվում է, որ Հովհան Մամիկոնյանը 7-րդ դարի հեղինակ չէ, ինչպես ինքն է հավատացնում, որպեսզի ցույց տա, թե Գայլ Վահանի և մյուս հերոսների ժամանակակից էր, գուցե և ականատես։ Հենց ինքը գործը վկայում է, որ նա ականատես կամ ժամանակակից մարդու գրածը չէ։ Այսպես, «երբեմն,— ասում է քննողներից մեկը,— հարյուր տարվան մեջ հանդիպած դեպքերը՝ իբրև մի կամ երկու տարվան դիպված կհիշատակե, երբեմն ալ անոր հակառակ՝ քանի մը տարվան դիպվածոց երկայն ժամանակ կուտա, անձինքը շատ անգամ իրարու հետ կը շփոթե. անոր համար մեկուն ձեռքով եղած գործ մը իբրև ուրիշի ձեռքով եղած կավանդե։ Առանց հերկուանալու՝ առասպելախառն դեպքեր՝ իբրև ճշմարիտ պատմություն

[1] «Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոբ Ասորի», Վենետիկ, 1832։
2 «Յովհաննու Մամիկոնենի Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832։
3 Գ. Խալաթյան, «Զենոբ Գլակ», Վիեննա, 1893։

կպրուցե, և ընդհակառակն առասպելաց կերպարանք կուտա այնպիսի դեպքերու՝ որոնց ճշմարտությունն ուրիշ պատմագրաց գրվածներեն հայտնի է։ Երբեմն ալ իր գրոցը մեջ այնպիսի դիպվածոց հիշատակություն կգտնվին՝ որ իր մահվնեն ետքը պատահած են»[1]։ Պարզ է, ուրեմն, որ Հովհան Մամիկոնյանի այս գործը գրական մի ուրիշ ճյուղի կերպարանք է կրում, այն է՝ բացարձակապես մի ավանդավեպ, ժողովրդի բերանում բավական երկար ժամանակ ծեծված և առասպելական չափազանցություններով խճողված,— մի կամ մի քանի գլուխ Մամիկոնյան տան վեպից։

Իր տեղում մենք տվել ենք այս վեպի մանրամասն բովանդակությունն ու վերլուծումը[2]։ Այստեղ, նկատի առնելով միայն գրական հանգամանքները, պիտի ասենք, որ Հովհան Մամիկոնյանի այս գործով ժողովրդական գրականությունն էր առաջին անգամ գրի առնվում՝ դեռ մինչև այդ չտեսնված ամբողջությամբ։ Հայ հեղինակավոր լեզվագետներից մեկը, որ գրում էր դեռ այն ժամանակ, երբ Հովհան Մամիկոնյանը համարվում էր 7-րդ դարի հեղինակ, ասում է. «Գրաբարը այս դարուս (7-րդի) մեջ Վրթանես Քերթողի մը վրայեն վերջին ճառագայթները ցոլացնելեն ետքը կսկսի հորիզոնեն վար աներևույթ ըլլալ։ Այս է կկարծենք երկու հայերեն լեզվաց նկատմամբ միջին դարուն առաջին ժամանակներուն վրա ըլլալու տեսությունը։ Այս որոշ գաղափարը մեզի տվողն է այն դարուն կեսերեն Հովհ. Մամիկոնյան անուն եպիսկոպոս մը, որուն գրությունները մեծապես կարևոր են խնդրույս նկատմամբ։ Ալ այս ժամանակներս՝ ապահովությամբ պետք ենք համարել՝ որ զուտ գրաբար քչերու միայն ձիրք մըն էր եղած։ Լեզվին կրելու այլայլությունները հառաջացած, ռամիկ բարբառ մը արդեն կորացած և ըստ բավականի իր կերպարանքն առած էր... Մամիկոնյան պատմագրին գիրքը թեև ոչ ժամանակակից լեզվավ, այլ իրմե երկու դար հառաջ ի գիր առնվածով շարադրված կամ շարադրելու ջանացված, թեև ըստ զանգվածին փոքրիկ մատյան մը, ի վերա այսր ամենայնի այն գրաբարի նվիրական քողույն տակէն բավական որոշ կերևցնե իր ժամանակվան հայերենին դիմաց գծագրությունները»[3]։ Այս խոսքերը, անտարակույս, ճըշմարիտ են մնում Հովհան Մամիկոնյանի վերաբերմամբ, երբ նրան հանում ենք իրեն չպատկանող 7-րդ դարից և տանում ենք նրա իսկական ժամանակները, այսինքն մոտավորապես 9-րդ դարը։

Մուշեղ Բագրատունի: Մենք արդեն ճանաչում ենք այս իշխան գրողին։ Գիտենք, որ նա Սմբատ սպարապետի որդին էր, իր հոր հետ գտնվում էր Բուղայի բանակում, Քթիշ բերդի տակ։ Տեսանք նրան առանձնացած մի բլրի գլխին, թե ինչպես այդտեղից հիացմունքով դիտում էր պատերազմական ահեղ տեսարանը, ուր Բուղայի զորքերն ու Աբու-Մուսե քաջ իշխանի լեռնցիները բախվում էին իրար հետ, և թե ինչպես նա, այդ տեսարանի թողած խորին տպավորության տակ, ոտանավոր գրեց, որի մեջ նմանեցնում էր իր տեսածը վերջին ահեղ դատաստանին։ Ոչ մի ուրիշ տեղեկություն այս հեղինակի մասին մենք չունենք, բացի Թովմա Արծրունու հետևյալ խոսքերից. «Եւ զի էր վարժեալ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմա-

[1] Հ. Գ. Զարբհանալյան, «Հայկական հին դպրության պատմություն», Վեն., 1897, եր. 433։
[2] Տ. վերև, մասն Ա, գլ. Ե, 8, «Տարոնի վեպը»։
[3] Հ. Ա. Այտնեան, «Քննակ. Քեր. արդի Հայ լեզուի», Վիեն., 1866, եր. 122—124։

ցական տեսութիւնն զերգս որոյ սկիզբն է «Անզբաղել ական սրտի հայեցող անձն իմ ի միւս անգամ գալուստն», 5 տուն ի յութերորդ վանգէ»[1]։

Այս հեղինակով էլ սպառվում է արաբական շրջանի ընդհանրապես աղքատ գրականությունը։

5. **Արվեստ։** Բայց առանձնապես աղքատ էր արաբների անմիջական տիրապետության ժամանակամիջոցն արվեստի տեսակետից։ Հայ շինարարական արվեստի պատմությունն այդ մեկ ու կես դարի ընթացքում չունի արձանագրելու և ոչ մի փոքր ի շատե աչքի ընկնող շինություն, որ կարելի լիներ համեմատել 7-րդ դարի ճարտարապետական կոթողների հետ։ Թվում է, թե կյանքը բոլորովին մոռացել էր հին շինարարական ավանդությունները, մտել էր մի տեսակ վայրենացման շրջան, երբ սերունդները զարմանքով են նայում իրենց պապերի գործերին, չկարողանալով ըմբռնել, թե ինչպես էին մարդիկ գեղարվեստ ստեղծում։

Կանգ առնել այս երևույթի պատճառների վրա, կնշանակեր նորից կրկնել այն, ինչ մանրամասորեն բացատրել ենք այդ մեկ ու կես դարի պատմության մեջ։ Այս դիտողությամբ էլ փակում ենք արաբական շրջանի մեր տեսությունը։

---

[1] Եր. 182։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
ԳԱՎԱՌԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ առաջին

ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.— ԱՇՈՏ Ա

1. Շիրակ: *Արարատյան նահանգի 20 գավառների մեջ Շիրակը գրավում է գրեթե կենտրոնական տեղ, սահմաններ ունենալով. արևելքից՝ Արագածոտն, արևմուտքից՝ Վանանդ, հյուսիսից՝ Աշոցք և հարավից՝ Արշարունիք գավառները։ Այս ընդհանուր սահմանագծերի մեջ Շիրակն ունի մի տարածություն, որ մոտավորապես, հավանական հաշվով, կարելի է ընդունել 1500 քառակուսի աշխարհագրական մղոն (10 հազար քառակուսի վերստից ավելի)։ Սկսվելով Աշոցքի և Գուգարքի լեռնախմբերից, նա գնում է, եզերվելով արևելքից Արագածի լեռնաշխարհով, դեպի հարավ, չհասնելով Արաքսի ձորին։ Այս ուղղությամբ Շիրակ գավառի երկարությունն է մոտ 60 մղոն, իսկ լայնությունը, Արագածոտն գավառից մինչև Վանանդի սահմանները, մոտավորապես 25 մղոն է հաշվվում*[1]*։*

Իր մակերևույթի ընդհանուր գծագրություններով Շիրակը դաշտային տեսք ունի։ Այդ մի բավական ընդարձակ լեռնադաշտ է, որ արևմուտքում միանում է Վանանդի դաշտի, իսկ արևելքում՝ Արարատյան դաշտի շարունակությունը կազմող հարթությունների հետ։ Եվ բավական բարձրացած է այդ դաշտը։ Մի քանի կետերում (Լենինական և Անի) նա ունի ծովի մակերևույթից 1500 մետր բարձրություն։ Այս տեսակետից Շիրակի լեռնադաշտը կազմում է միջին աստիճանն այն ուղղության մեջ, որով Վանանդի և Բասենի լեռնադաշտերը իջնում են Արաքսի միջին հովտի (Մասիսի ստորոտների) վրա։ Սակայն լեռնադաշտ ասելով, չպիտի հասկանալ գլխովին հարթ մի տափարակ։ Հյուսիսային և արևելյան սահմանագիծ լեռնաշխարհներն իրենց բարձրություններն են մտցնում Շիրակի մեջ. բայց ինքը երկիրն էլ ունի իր երեսի վրա բազմաթիվ մեծ ու փոքր բարձրություններ, որոնք կամ առանձին-առանձին են դասավորված և բլուրների տեսք ունեն և հաճախ այնքան մեծ բարձրության են հասնում, որ նրանց տալիս են գագաթ *(թափա) անունը։ Մակերևույթի կազմավորման վրա մեծ ազդեցություն արել են երբեմնի հրաբխային շարժումները։ Շիրակն ամբողջովին ենթարկված է եղել Արագածի պես մի հսկայական հրաբխային կենտրոնի ներգործության, որի հուժկու արտահայտություններն*

[1] Հ. Ալիշան, *«Շիրակ», Վենետիկ, 1881, եր. 1։*

այսօր էլ նկատելի են նրա չորս կողմում ընդարձակ տարածությունների վրա։ Այս տեսակ արտահայտությունների թվին են պատկանում, անշուշտ, այդ մեծ ու փոքր բլուրները, ինչպես նաև մեծ ճեղքվածքները (օրինակ՝ Ախուրյան գետի ձորը), անհամար քարերով ծածկված դաշտերը, լավայի դաշտերը, հրաբխային չեչաքարի և այլ կարծրանյութերի առատությունը։ Շիրակն ունի և իր սեփական լեռնաշխարհը։ Նրա միջին մասում բարձրանում է Արջո-Առիճ (այժմ Ալաջա) լեռնաշղթան, որ արևմուտքում խառնվում է Վանանդի լեռների հետ, իսկ հարավում կազմում է մի ամբողջ մեծ լեռնային տեսարան, ուր առանձին գագաթները հասնում են 2000—2700, մինչև իսկ 2900 և ավելի մետր բարձրության։

Երկրի ընդհանուր աշխարհագրական տեսքին առանձնահատուկ գծեր հաղորդում է և ջրային սիստեմը։ Նա շատ պարզ է, բաղկացած լինելով միայն մի գետից, որ Արաքսի ձախ ափի մի մեծ օժանդակն է Երասխաձոր գավառից դուրս գալուց հետո։ Երկու խոշոր ճյուղերից է կազմված Շիրակի գետը, որոնցից մեկը, արևմտյանը, բխելով Սողանլուղի լեռներից, իջնում է Վանանդի դաշտը և կտրում է նրան հարավից հյուսիս ուղղությամբ, բայց հետո շուռ է գալիս դեպի արևելք և թողնելով Վանանդի դաշտը, պտույտներ է տալիս Շիրակի դաշտում, բռնելով շարունակ դեպի հարավ թեքվող ընթացք, և այսպես հասնելով Ղազարապատ գյուղի մոտ, խառնվում է հյուսիսային ճյուղի հետ, որ սկսվելով Շիրակի հյուսիսային լեռնասահմաններում, Աշոցքի հարևանությամբ գտնվող Արփա լճից, գնում է շարունակ դեպի հարավ։ Ներկայումս ամբողջ գետը, մինչև Արաքսի մեջ թափվելը, այս ճյուղի անունն է կրում—Արփաչայ, մինչդեռ հին ժամանակ, ընդհակառակն, արևմտյան ճյուղն էր տալիս իր անունը գետին—Ախուրյան, որ մնացել է ուրարտացիներից։ Երկու ճյուղերն էլ ընդունում են իրենց աջ և ձախ ափերից շատ գետակներ և առվակներ։ Բայց իրար հետ խառնվելուց և մի գետ կազմելուց հետո, այսինքն Ղազարապատից մինչև Արաքս, Ախուրյանը ձախից ոչ մի փոքր ի շատե աչքի ընկնող ջուր չի ընդունում, իսկ աջ կողմից, բացի մանր-մունր առվակներից, նրա մեջ թափվում են Մավրակի և Տեկորի ջրերը։

Ախուրյանի ջրային սիստեմն առանձնապես հարմար պայմաններ չի տալիս՝ Շիրակի տնտեսական կյանքի վրա խոշոր ազդեցություն գործելու համար։ Բայց նրա դերը շատ խոշոր է եղել ռազմագիտական տեսակետից։ Իր աշխարհագրական դիրքով Շիրակը բոլոր հարմարություններն ունի բազմամբոխ բանակներից ոտնակոխ լինելու համար։ Նրա սահմանները մեծ մասամբ բաց են՝ դաշտային։ Նա ընկած է այն վերին աստիճանի կարևոր ռազմական ճանապարհների վրա, որոնք տանում են արևելքից արևմուտք, Արարատյան դաշտից դեպի Բարձր Հայք, և հյուսիսից հարավ, Վրաստանից դեպի Արաքսի և Եփրատի ավազանները։ Անկախ այս հանգամանքից՝ ինքը Շիրակն էլ ներկայացնում է համեղ պատառ, քանի որ ընդհանրապես բարեբեր երկրի համբավ էր վայելում։ Ահա այսպիսի հանգամանքների մեջ Ախուրյանի սիստեմն էր միայն, որ գերազանցորեն դաշտային երկրին պաշտպանողական միջոցներ էր տալիս։ Պատերազմական արվեստի և զենքերի կատարելագործման այն դրության մեջ, որ ներկայացնում էին հին և միջին դարերը, լեռնային պաշտպանությունից զրկված երկրներում առաջին դերը պատկանում էր ձորաբերդերին։ Այս տեսակ բերդերի հարմարություններ շատ էին տալիս Շիրակի գետի երկու ճյու-

ղերն էլ՝ իրենց օժանդակ վտակներով։ Բայց և այդպես՝ պաշտպանության տեսակետից Շիրակի հյուսիսային մասն ավելի աննպաստ պայմանների մեջ էր գտնվում, քան միջին և հարավային մասերը։ Եվ այս՝ շնորհիվ այն հանգամանքի, որ գետերը հյուսիսային դաշտային մասերում ամեն տեղ բավականաչափ խոր ձորեր չունեն, մինչդեռ միջին և հարավային մասերում Ախուրյանն ավելի հզոր և անխորտակելի պատվար է ներկայացնում։ Երկու ճյուղերի միախառնումից համարյա անմիջապես հետո, այն է՝ Ղեղաչ անունով գյուղի մոտից, գետը, որ արդեն դժվար անցնելի ջրային մի հոսանք է, մտնում է խոր ձորը և այնուհետև մինչև Արաքսի մեջ թափվելը նրա հունը ժայռոտ և անձուկ ճեղքվածքների միջով է, որոնք օձապտույտ գալարումներով պատում են Շիրակի կուրծքը, սեղմվելով բարձրաբերձ ժայռոտ կողերի միջև։ Ահա մանավանդ այս տարածության վրա է ուժեղ Շիրակի մեծ գետի պաշտպանողական գիծը։ Նրա անդադար քմահաճ պտույտները շատ տեղերում են երեք կողմից ձորապատ թերակղզիների դիրքով բերդեր ստեղծում։ Երբեմն մայր գետի խոր հունին մասնակցում են աջ կողմից նրա հետ խառնվող փոքրիկ առվակներ, որոնք բնությունից նույնպես անդնդախոր ճեղքվածքներ են ստացել՝ իրենց կայտառ կոհակները գահավիժաբար առաջ տանելու համար։ Այս փոքրիկ ջրերի խոր ձորերը, միանալով Ախուրյանի մեծ ձորի հետ, անառիկ ամրություն են տալիս տեղին։ Եվ ձորաբերդի սովորական տիպը մի է ամբողջ Շիրակում,— երեք կողմից ձոր և ջուր, մի կողմից հարթություն, և այս կողմից պարիսպներն են, որ պաշարում են բերդը։

Բայց միջին և հարավային Շիրակի ինքնապաշտպանությանը ծառայում է և մի այլ տեղագրական հանգամանք։ Այդ այն է, որ նա արևմտյան կողմում լեռնոտ է, և լեռնային բարձրությունները շատ հեշտացնում են դիմադրությունն ուժեղացնելու գործը։ Այս պաշտպանողական երկկարգ հուժկու գծերի (ջրային և լեռնային) շնորհիվ էր անշուշտ, որ քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացումն ավելի շատ ապահովված էր Շիրակի այս մասերում, քան թե հյուսիսային մասում։

Շիրակում կլիմայական պայմանները ունեն Հայկական Բարձրավանդակի օդերևութաբանական ընդհանուր հատկանշական գծերը։ Ընդհանրապես ցուրտ է Շիրակն իր երկարատև, բքալից և ձյունառատ ձմեռներով, իսկ ամառն առհասարակ զով և կարճատև է լինում։ Միայն հարավային Շիրակի մի քանի մասերում և մանավանդ Ախուրյանի ձորի մեջ, ամառվա շոգերը հիշեցնում են Արարատյան դաշտը։ Բուսական աշխարհը բազմահարուստ չէ։ Անփայտ է ամբողջ Շիրակը. անտառներ չկան, իսկ այգիների և ծառապտուղների մասին հասկացողություն ունեն միայն հարավային Շիրակի բնակիչները։ Շինության փայտ արևմտյան Շիրակին մատակարարում են Վանանդի անտառները (Սողանլուղի լեռներում), իսկ արևելյան Շիրակը փայտ է ստանում Գուգարքի և Աշոցքի լեռներից։ Այս պատճառով վառելափայտը սաստիկ սուղ է, և ազգաբնակությունը կրակ ստանում է իր անասունների աղբից (աթար)։ Փայտի աղքատությունը փոխարինվում է խոտաբույսերի առատությամբ, որ և Շիրակի իսկական հարստությունն ու գեղեցկությունն է կազմում։ Դաշտերը, բլուրներն ու լեռները գարնանից ծածկվում են կանաչներով, որոնք կապուտակ ու ժըպտուն երկնքի տակ վերին աստիճանի գեղեցիկ և հոգեպարար տեսարաններ են փռում։ Ուրիշ բնական հարստություն երկիրը չունի, և այս հանգա-

մանքն իր խիստ դրոշմն է դնում ազգաբնակության տնտեսական կյանքի վրա, դարձնելով նրան գերազանցորեն երկրագործական և մասամբ անասնապահական։ Իր երկրագործությամբ Շիրակը հռչակված է շատ հնուց։ Նա հացահատիկների ամբարների հայրենիք էր, որ իր առատությամբ նույնիսկ ժողովրդական զրույցի նյութ էր դարձել։ Այսպես, հին ավանդությունը պատմում էր, թե կար մի շատակեր և որկրամոլ իշխող՝ Շարա անունով, որին կշտացնել կարողացավ միայն Շիրակը։ Ուստի ամեն մի շատակեր և որկրամոլ մարդու ասում էին. «Թե քո Շարայի որկորն է, մեր Շիրակա ամբարքն չեն»[1]։

Սակայն չպետք է կարծել, թե այս հացաշատությունը միայնակ կարող էր շատ բարձրացնել երկրի տնտեսական ուժը, դիզելով մեծամեծ հարստություններ։ Ցորենի արդյունաբերությունն այնքան ընդարձակ չափեր չէր կարող ստանալ, որ բացի տեղական առատությունից՝ խոշոր չափերով առևտրի նյութ դառնար արտահանության համար։ Շիրակի երկրագործության ուժերից վեր էր այսպիսի մի դեր կատարել նախ և առաջ հենց այն պատճառով, որ երկրի մակերևույթը մեծ չէր, ընդհանրապես առատորեն ոռոգված չէր, մանավանդ ունենալով ցուրտ կլիմա, երկիրը շատ էլ լիառատ կերպով չէր կարողանում վարձատրել երկրագործի աշխատանքը։ Շիրակի լեռնադաշտը հաճախ ենթարկվում է ցրտահարության, իսկ նրա ցորենն առաջնակարգերից չէ, լինելով մանր ու սև տեսակից։ Երկրագործության նշանակությունն առավելապես տեղական պետքերով սահմանափակող մի ուժեղ հանգամանքն էլ այն էր, որ Հայաստանն ուներ ավելի պտղաբեր և հարուստ հացադաշտեր—Արարատյան հարթությունը, Բագրևանդ և առհասարակ Արածանիի հովիտը մինչև Արևմտյան Եփրատ։

Եվ ահա, մինչդեռ բնական պայմանները Շիրակին տալիս էին բարեկեցության շատ սահմանափակ հնարավորություններ, երկրի դարավոր կուլտուրական պատմությունը և ոչ մի կասկած չի թողնում, որ ժողովրդի մեջ դիզված են եղել խոշոր հարստություններ, առանց որոնց չի կարելի երևակայել այն բացառիկ դիրքը, որ Շիրակը գրավում էր հայ ժողովրդի անցյալում։ Իսկ այդ հարստությունները կարող են դիզվել գլխավորապես առևտրի միջոցով։ Առևտրական ոգին հայ ավատական այս անձուկ աշխարհում զարգացավ աստիճանաբար, մինչև որ առաջացրեց տնտեսական մի խոշոր երևույթ—միջնադարյան առևտրական քաղաքը, որ ազդում էր իր խանութներով, առևտրական կարավաններով և դաստիարակում էր վաճառականական մեծ ընդունակություններով օժտված մի ժողովուրդ, որ հետո, իբրև այդպիսին պիտի հռչակվեր աշխարհի զանազան կողմերում։ Տարաբախտաբար, դեռ բավարար նյութեր չկան Շիրակի վաճառականական դեմքը միանգամայն պարզաբանելու համար։ Բայց այսքանն անհերքելի է թվում, որ ավատական կալվածատիրության հետ և ի վնաս նրա, Շիրակում ուժեղանում էր և միջին դասակարգը, որը և այդ գյուղացիական երկրի համար պատրաստում էր մի բոլորովին այլ ճակատագիր։

Այսպիսով, գավառական ուժեղ անհատականություններով այնքան հարուստ Հայաստանում Շիրակը ներկայացնում էր առանձնապես շեշտված մի տեղայնություն, որը, իբրև կուլտուրական տիպ, գրեթե չունի իր նմանն ու հավասարը։ Այս հանգամանքն առաջ է քաշում Շիրակի ազգաբնակության ծագման հարցը։ Տարաբախտաբար, այստեղ մենք կատարյալ մթության մեջ ենք և միայն հենց գավառի անունը—Շիրակ—տեղ է թողնում մի ենթադրության համար։ Մովսես Խորենացին, հավատարիմ իր սովորության, փորձում է տալ և Շիրակ անվան ստուգաբանությունը։ Նա ասում է, որ իբր թե հենց վերոհիշյալ շատակեր Շարայից էլ հացավետ գավառն ստացել է իր Շիրակ անունը։ Անհամեմատ ավելի վստահելի կըռվան տալիս են օտար մատենագիրները (Ստրաբոն, Պտղոմեոս և ուրիշները), որոնք ճանաչում են Շիրակ անունն իբրև երկրի և ազգության անուն, բայց ոչ թե Հայաստանի սահմանների մեջ, այլ իրարից հեռու տեղերում—Կասպիական ծովափին, Հյուսիսային Կովկասում և ավելի ևս դեպի հյուսիս[1]։ Հենվելով այս ցուցմունքի վրա, կարելի է ասել, թե Շիրակ անունը կրող ցեղը Հյուսիսային Կովկասից գաղթելով Այսրկովկաս, բնակություն է հաստատել զանազան տեղերում, ի միջի այլոց և Արարատյան նահանգի այն մասում, որ հետո ստացավ այդ գաղթականներից Շիրակ անունը[2]։ Որ Հյուսիսային Կովկասում ապրող ցեղերին հայտնի է այս գաղթականական ճանապարհը, ցույց է տալիս հենց ինքը Մովսես Խորենացին, որ հաղորդում է, թե Շիրակի սահմանակից Վանանդ գավառում բնակություն հաստատեցին բուլղարները, մի ցեղ, որ, ինչպես հայտնի է, ապրում էր Կովկասյան լեռներում[3]։ Վերջապես, Շիրակի ազգագրական կազմի մասին արտահայտված է և մի հավանական կարծիք, որ արդեն հայտնի է մեզ[4]. Այնիան անունով ցեղը, որ, Ստրաբոնի վկայությամբ, Պարսկաստանից էր գաղթել Հայաստան, բնակություն հաստատելով Շիրակ և Դարանաղի գավառներում, այդտեղ շինեց երկու քաղաք, որոնք ստացան նրա անունը և կոչվեցին Անի[5]։ Եթե ընդունենք, որ այս բոլոր հավանականությունները հաստատուն հիմք ունեն, այն ժամանակ ակնհայտնի կլինի, որ Շիրակում էլ տեղի է ունեցել հայ տարրի ձուլում օտար տարրերի հետ։ Այս խառնուրդից էր, երևի, որ կազմվեց Շիրակի ժողովուրդը, ընդունակ և մեծագործ՝ խաղաղ մշակույթի ասպարեզում, օժտված ստեղծագործական մեծ թափով։

Թե երբ են տեղի ունեցել Շիրակ և Այնիան ցեղերի գաղթականությունները և ում էր պատկանում գավառն ավելի հնագույն ժամանակներում,—մենք չգիտենք։ Միայն 4-րդ դարում, երբ Հայոց պատմությունը տեր է դառնում ազգային գրավոր հիշատակարանների, տեսնում ենք Շիրակը Կամսարական հայ նախարարների ձեռքին։ Այդտեղ էլ այս տոհմը մնաց մինչև 8-րդ դարի վերջին քառորդը։ Այս տոհմային տիրապետությամբ էլ բնորոշվում է այն կուլտուրական միջավայրը, որին պատկանում էր Շիրակը գրեթե հինգ հարյուր տարիների ընթացքում։ Որպեսզի պարզենք այդ հանգամանքը, պիտի մի քիչ քրքրենք այն տոհմային ավանդությունները, որոնց մեջ Կամսարականների ծագումն է բացատրված։

Այս իշխանական տան տոհմաբանությունը տալիս է Մովսես Խորե-

---

1 Խորենացի, Ա, ժԲ։

1 Հ. Ալիշան, «Շիրակ», եր. 2։ Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում, Ալազան և Իորա գետերի միջև ընկած ընդարձակ սարահարթը այսօր էլ կոչվում է Շիրակի դաշտ։

2 К. Патканов, «О месте, занимаемом армянским языком в кругу индо-европейских», Тифлис, 1879, стр. 21.

3 Խորենացի, Բ, Ձ։

4 Ա հատոր, եր. 170։

5 Н. Адонц, «Армения в эпоху Юстиниана», СПБ, 1907, стр. 56.

նացին, հիմնվելով այն ընտանեկան ավանդությունների վրա, որոնք գոյություն ունեին նրա ժամանակ, այսինքն 7—8-րդ դարերում։ Դրանց մեջ տոհմային պատվի և առաջնության համար հերյուրված առասպելներ էլ կան։ Կամսարականներն էլ, ուրիշ առաջնակարգ նախարարական տոհմերի նման, պարծենում էին իրենց օտար ծագումով, որը նրանց արքայական և արքազան շուք էր հաղորդում։ Իբր թե Կամսարականները Պարսկաստանում տիրած Պարթևներից էին։ Դրանցից մեկը, Արշավիր արքայից արքան, ուներ երկու եղբայր—Սուրեն և Կարեն։ Որպեսզի գահի համար նրանք չկռվեն Արշավիրի հետ, երեք եղբայրների միջև համաձայնություն է կայանում այն մտքով, որ Սուրենն ու Կարենը բավականանան, գրավելով ամենաբարձր տեղը պարսկական նախարարությունների մեջ, ուստի և ստանում են Պահլավ կամ Պահլավիկ տիտղոսը, որ վերցվում էր, իբր թե, Պարթևների հին մայրաքաղաք Պահլավի (Բահլ) անունից։ Երբ Արտաշիր Սասանյանը գահընկեց է անում Պարթևական հարստությունը, Սուրենի կամ Սուրենյան Պահլավի տոհմն անցնում է նրա կողմը, ճանաչում է նրան օրինական թագավոր, մինչդեռ մյուսը, Կարենի կամ Կարենյան Պահլավի տոհմն ապստամբական դիրք է բռնում Սասանյանի վերաբերմամբ։ Հայ Արշակունի Խոսրով թագավորը, պատերազմական գործողություններ սկսելով Արտաշիր Սասանյանի դեմ՝ իր տոհմի վրեժը հանելու համար մտնում է Պարսկաստան և իր մոտ է կանչում Պահլավիկ երկու ցեղերը, որպեսզի միասին, իբրև Պարթևներ, կռվով ետ խլեն հափշտակված տոհմային գահը։ Բայց միայն Կարենյան Պահլավի ցեղն է արձագանք տալիս այդ հրավերին, որի պատճառով էլ մատնվում է կորստի, որովհետև Արտաշիր Սասանյանը, տեղեկանալով, որ իր հակառակորդ նախարարական տոհմը գնում է միանալու Հայոց թագավորի հետ, ճանապարհին հարձակվում է նրա վրա և բնաջինջ անում նրա հետ եղած բոլոր մարդկանց, նրան և նրա ընտանիքը։ Ազատվում է, ինչպես սովորական է այսպիսի զրույցների մեջ, միայն մի արու մանուկ, որին փախցնում են քուշանների մոտ։ Դրա անունը Պերոզամատ էր։ Այդ Պերոզամատը մեծանում է, դառնում շատ քաջ և նշանավոր զորավար։ Նրա որդին էր Կամսարը, նույնպես մեծ քաջությամբ պատերազմող մեկը։ Մի ճակատամարտում, ինչպես հավատացնում է նույն ավանդությունը, գլխի վրա սրի մի հարված է ստանում նա, որ կտրում է նրա ճակատի մի մասը, բայց մահացու չի լինում, և վերքը բժշկվում է դեղերի միջոցով։ Այդպիսի թերատ գլխով էլ նա ապրում է և ստանում «Կամսար», այսինքն «Կիսատ գլուխ» անունը[1]։ Եթե հավատանք այս պատմությանը, պիտի ընդունենք, որ այս քաջ մարդու իսկական անունը չունենք մենք, այլ հետո ստացած մականունը միայն։ Ավանդությունը, շարունակելով տոհմային պատմությունը, ասում է թե՝ երբ Խոսրով թագավորի որդի Տրդատը պատերազմով գնում է Հյուսիսային Պարսկաստան, այս Կամսարը ներկայանում է նրան և շատ սրտագին ընդունելություն է գտնում նրանից իբրև ազգական և հարազատ։ Եվ այսպիսով, Կամսարը մտնում է հայ նախարարությունների շարքը և սկիզբ դնում հռչակավոր տոհմին, որ տարօրինակաբար նրա անունն է սկսում կրել, մի կողմ թողնելով իր իսկական տոհմային և ավելի հայտնի ու պատվավոր անունը—Կարենյան Պահլավ։

[1] Կամսար բառը կազմված է համարվում պարսկերեն kam (պակասավոր, կիսատ) և sar (գլուխ) բառերից։

Այս ավանդության հետ պետք է կապել մյուս Պահլավ տոհմի, այն է՝ Սուրենյանի ավանդությունը։ Հայտնի է, որ Սասանյաններին հավատարիմ մնացած այդ տոհմի ներկայացուցիչ Անակն էր, որ եկավ Հայաստան և իբրև ազգական մոտենալով Խոսրով թագավորին, սպանեց նրան, որի պատճառով ինքն ու իր ամբողջ ընտանիքը սրի քաշվեցին, և դարձյալ միայն մի արու մանուկ ազատվեց, որ հետո եղավ Գրիգոր Լուսավորիչ։

Այսպիսով, ավանդությունը, եթե նրա միջից հանենք ավելորդ պաճուճանքները, պահել է իր մեջ որոշ պատմական ճշմարտություն, այն, որ երեք տոհմերը—Արշակունի, Լուսավորչի և Կամսարական—կապված էին իրար հետ ազգակցությամբ, որ կարող էր բխած լինել և խնամիական հարաբերություններից։ Այդ մերձակցության նշաններից մեկն էլ այն պետք է համարել, որ ավանդությունը մատնանշում է, թե տոհմապետ Կամսարը քրիստոնեական մկրտություն ընդունել է ուղղակի Գրիգոր Լուսավորչից[1]։ Արդ՝ այս երեք մերձակից տոհմերին հարած ենք տեսնում և Մամիկոնյանների հռչակավոր նախարարական տոհմը։ Այս խումբն էլ ահա ներկայացնում է այն կուլտուրական միջավայրը, ուր հաստատություն և զարգացում գտավ քրիստոնյա Հայաստանն իր ամբողջ ինքնուրույնությամբ։ 4-րդ դարում Մամիկոնյաններն ու Կամսարականները Գրիգոր Լուսավորչի տան ջերմեռանդ աջակիցներն էին՝ Հայաստանում նոր, այսինքն եվրոպական քաղաքակնություն հաստատելու գործում։ Իսկ հայ Արշակունիներն այս աշխատանքի մեջ մտցնում էին հայ երկրի քաղաքական և կուլտուրական անկախության ու նրա համար կռվելու գաղափարը։ Երբ վերջացան Լուսավորչի և Արշակունիների տոհմերը (5-րդ դարի առաջին կեսում), Մամիկոնյաններն էին, որ հանձն առան այդ ազգային քաղաքականությունը պաշտպանելու և զարգացնելու գլխավոր դերը, իսկ Կամսարականները նրանց հավատարիմ և անփոփոխ դաշնակիցներն էին և աջակիցները։

Այնուհետև, երբ 7-րդ դարից Մամիկոնյաններն սկսում են հետզհետե դուրս մղվել պատմական ասպարեզից, Կամսարականներն են, որ մենակ տանում են Մամիկոնյանների դարի ավանդությունները, մինչև որ իրենք էլ ստիպված են լինում իրենց տեղը տալ Բագրատունյաց տոհմին, որ հայոց պատմության մեջ նոր և բոլորովին ինքնուրույն դարագլուխ է բաց անում, ոչ միայն քաղաքական, այլև, մանավանդ, կուլտուրական ըմբռնումով։

Այս պատկերն արդեն ինքնըստինքյան բավական է, որ ցույց տա, թե ինչ դեր էր կատարում Շիրակն այդ հինգդարյա շրջանում իբրև Կամսարականների կալված։ Ավելորդ է ցույց տալ այստեղ այդ միջավայրի գործունեությունը, քանի որ մենք համապատասխան տեղերում արդեն լայնորեն բնորոշել ենք Շիրակի տերերի կատարած դերը հայ քաղաքական կյանքի, արվեստի և գրականության մեջ։ Այստեղ կարևոր է լուսաբանել, թե ի՛նչ տեսակ ազդեցություններ է կրել Շիրակն իր կուլտուրական կյանքի այն խոշոր շրջանում, ուր նրան արդարացի կլիներ անվանել Կամսարականների Շիրակ։ Այս հարցը լուծելու համար մենք բավական նյութ ունենք, որ ցույց է տալիս, թե Շիրակը Կամսարականներից առաջ և Կամսարականների ժամանակ էլ ենթարկված էր այն հզոր կուլտուրայի ազդեցության, որի օրրանն էր Արաքսի ձորը, այն գավառը, որ հենց իր

[1] Խորենացի, Բ, Ղ։

այդ դիրքի պատճառով էլ կոչվում էր Երասխաձոր, հետո և Արշարունիք։ Երբ Կամսար իշխանը Տրդատ թագավորից ստացավ այդ գավառը, այստեղ գոյություն ուներ բարձր զարգացման հասած մի կուլտուրա, որի մեծագույն արտահայտությունը շինարարական արվեստն էր։ Այստեղ էր իր անառիկ դիրքով և արհեստական ամրություններով Պարսկաստանում, Հռոմում և Բյուզանդիայում անգամ հռչակված Արտագերս բերդը։ Այստեղ, Ախուրյանի գետաբերանի երկու կողմերին, Հայոց թագավորներից մեկը, որին մեր ազգային ավանդությունները տալիս են Երվանդ անունը, շինեց երկու քաղաք—աջ ափին՝ Երվանդաշատ, որ իր մեծության պատճառով մայրաքաղաքի անունն էլ վաստակեց, իսկ ձախ ափին՝ Երվանդակերտ։ 127
Գեղեցիկ էր մանավանդ այս վերջինը։ Նրա դիրքն ու շինությունները այնքան չքնաղ էին, որ, կարելի է ենթադրել, երգ հորինվեց նրա վրա, ուր բանաստեղծական սիրուն համեմատություններով էին դրվատվում քաղաքի շուքն ու գեղը։ Այսպես է թելադրում Մովսես Խորենացու տված հետևյալ նկարագրությունը. «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք լուսաւոր որպէս ական բիբ։ Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական։ Իսկ զբազմութիւն այգեստանոյ իբր զարտևանաց խիտ և գեղեցիկ ծիր, որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարևանդաց համեմատ։ Իսկ և հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւնն։ Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն զերկթերթիսն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտ»[1]։ Պակաս աչքի ընկնող չէր Ախուրյան գետի ժայռոտ ափին շինված Բագարան քաղաքը, ուր զետեղված էին մեհյանները հատուկ նպատակով, որպեսզի, ինչպես բացատրում է Խորենացին, բազմաթիվ ուխտավորները և զոհաբերությունները չվնասեն Երվանդաշատի գեղեցիկ տեսքին ու մաքրությանը։

Կամսարականներն այս մեծ և հին քաղաքակրթության արժանավոր ժառանգորդներ հանդիսացան և նրանց ոստանը երկար ժամանակ հենց նույն այդ Երվանդաշատ մայրաքաղաքն էր, որ հետո կոչվում էր Մարմետ։ Իրենց ստացած գեղեցիկ ավանդը մոռացող ու խլացնող չհանդիսացան Կամսարականները, այլ շարունակող և զարգացնող։ Եվ նրանց աջակցու-

[1] Խորենացի, Բ, խբ։ Ոճի խրթնության պատճառով դնում ենք և թարգմանությունը. «Քաղցր է ինձ ասել և Երվանդակերտ գեղեցիկ դաստակերտի մասին, որ շինեց նույն ինքն Երվանդը գեղեցիկ և հոյակապ հորինվածներով։ Որովհետև մեծ հովտի մեջտեղը մարդկանցով և փառավոր շինություններով լցրեց, որոնք փայլում էին ինչպես աչքի բիբը, իսկ մարդկանց բնակության շուրջը ծաղկոցներ և բուրաստաններ շինեց, ինչպես որ բիբի շուրջը աչքի բոլորակությունն է։ Իսկ այգիների բազմությունը կարծես թերթերունքների խիտ և գեղեցիկ գիծն էր, և նրա հյուսիսային կողմի կամարաձև դիրքն արդարև, գեղեցիկ կույսի բարձր հոնքերին էր նմանվում։ Իսկ հարավի կողմից տարածվում են հարթ դաշտեր՝ գեղեցիկ, ողորկ ծնոտների նման, և բերանի պես բացված գետն իր ափերի բարձրություններով երկու բաց շրթունքների է նմանվում։ Եվ այսպիսի գեղեցիկ դիրքը կարծես հայացքն անշարժ հառած ունի դեպի բարձրավանդակ թագավորանիստ քաղաքը (Երվանդաշատ)։ Արդարև բերրի և թագավորավայել էր այս դաստակերտը» (Թարգմ. Խ. Վ. Ստեփանի)։

թյամբ ու հովանավորությամբ էր, որ Երասխաձորի ճոխ կուլտուրական ավանդություններին հաղորդակից դարձավ և հարևան Շիրակ գավառը, որ նույնպես նրանց տոհմային սեփականությունն էր։ Որ Շիրակի ուսուցիչը Երասխաձորը կամ Արշարունիքն է եղել, ապացուցվում է այն փաստով, որ ամենից առաջ հարավային Շիրակում զարգացավ տեղային շինարարական արվեստը։ Ամենագեղեցիկ հուշարձանը, որ ապացուցում է այս իրողությունը, Տեկորն է իր հոյակապ տաճարով։ Եվ հարավից դեպի հյուսիս գնալով էր, որ Կամսարականների կուլտուրական դարն իր նվաճումների շրջանն էր մտցնում Միջին Շիրակը—Ալաման, Երերուք, Անի։ Որքան հայտնի է մինչև այժմ եղած հետազոտություններից, Միջին Շիրակի այս կետերից դեպի հյուսիս Կամսարականների դարը առաջ չի գնացել։ Եվ թվում է, թե Անին պետք է համարել այն կայանը, ուր կանգ առավ հայ ժողովրդի կուլտուրական առաջխաղացման այդ շատ խոշոր և ինքնուրույն շարժումը, որ Լուսավորչի տոհմի, Մամիկոնյանների և Կամսարականների դարն է բովանդակում իր մեջ։ Այս կուլտուրական հողի վրա էր, այս դարավոր ավանդներով կազմակերպված ու կուռ միջավայրում էր, որ Շիրակը մտնում էր իր ինքնուրույն ստեղծագործության երկրորդ և ավելի ևս մեծագործ շրջանը—Բագրատունիների դարը։ Ախուրյանի աջ ափին, Արջոառիճ լեռների ստորոտում, մի բարձր բլրի գլխին, Կամսարականների դղյակն էր շինված—Անին։ Սա դեռ 5-րդ դարից հայտնի էր իբրև մի շատ ամուր, գրեթե անառիկ ամրոց։ Այդ ամրոցի վրա թագավորում էր Կամսարականների բարձրադիր դղյակը, որ հետո դարձավ Անի մայրաքաղաքի միջնաբերդը։ Նրա առջևի մասում, երեսը դեպի հյուսիս-արևելք, դեպի մեծ դաշտը և չքնաղատեսիլ Արագածը, բարձրացած էր Կամսարականների հոյակապ, դրվագներով և քանդակներով զարդարված ապարանքը։ 783 թվին, ինչպես գիտենք, Կամսարականները ծախեցին իրենց Արշարունիքը, ինչպես երևում է՝ Շիրակն էլ հետը։ Այս ժամանակներից հետո Կամսարական անունն անհայտանում է հայոց պատմության ասպարեզից։ Հայաստանում Կամսարականները միշտ իրենց հայտնի էին դարձրել իրենց անվեհեր քաջություններով։ Տեղափոխվելով Բյուզանդիա, նրանք այնտեղ էլ հռչակ ստացան իրենց այս տոհմային հատկությամբ թե՛ Ասիայի և թե՛ Եվրոպայի զանազան կողմերում։

2. Բագրատունիներ։ Այնուհետև Արշարունիք-Շիրակ նշանավոր միջավայրում առաջ են գալիս գնողները, Բագրատունի իշխանները։ Աշոտ Մսակերը լքում է հին տոհմային ոստանը՝ Դարյունք, Կոգովիտ գավառում, լքում է տոհմային սրբություններն ու հանգստարանը, բնակվում է Արշարունիքում, հավանաբար Մարմետ քաղաքում, Կամսարականների ապարանքի մեջ։ Թվում է, թե հենց այդ Կոգովիտ գավառն էլ պիտի եղած լինի Բագրատունիների ամենահին ստացվածքը, ուր և նրանք կազմակերպվել են որպես հայ նախարարական մեծ ընտանիքի մի անդամ։ Բագրատունիների տոհմաբանությունն էլ զարդարված է շատ ավանդություններով։ Մովսես Խորենացին, Սահակ Բագրատունուց հանձնարարություն ստանալով, գրել է հայ ազգի պատմությունը, անշուշտ, նրանից մասնակի ցուցմունք էլ ուներ արձանագրելու մասնավորապես Բագրատունիների տոհմային պատմությունը։ Եվ իրավ, հռչականուն պատմագիրն իր գործի ընթացքում առանձին սիրով կանգ է առնում իր մեկենասի տոհմի վրա, առաջ է քաշում նրա անդամներին՝ առաջնության և խոշոր առաքինությունների լույ-

ռի մեջ։ Տոհմային հոյակապության հարցում շատ մեծ նշանակություն պիտի ունենար, իհարկե, դարձյալ բարձր և նվիրական ծագումը։ Եվ ահա, Բագրատունիներին էլ վերագրվում էր օտար ծագում։ Իբր թե հայոց մի թագավոր, Հրաչյա անունով, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորի դաշնակիցն էր, և երբ այս թագավորը, նվաճելով Պաղեստինը, հրեական մեծ գերություն հանեց այնտեղից, Հրաչյան այդ գերիներից Շամբաթ անունով մեկին վերցրեց Նաբուգոդոնոսորի թույլտվությամբ և բնակեցրեց Հայաստանում։ Այս Շամբաթից էլ իբր թե առաջացել է Բագրատունիների տոհմը[1]։ Հարկավ, Շամբաթը պիտի լիներ ականավոր ծագում ունեցող հրեա։

Թվում է, թե այս ավանդությունն ստեղծվել է Խորենացու դարում կամ այդ դարին մոտ ժամանակներում, այն է՝ մոտավորապես 7-րդ դարում, երբ Բագրատունիներն առանձին թափով գործունեություն էին սկսել ցույց տալ՝ առաջնությունը Մամիկոնյանների տոհմից խլելու համար։ Հրեական ծագման զրույցն ամբողջությամբ չի օգտագործված հայկական աղբյուրների մեջ և նրա լրիվ նշանակությունն ըմբռնելու համար պիտի նկատի առնել, թե ի՛նչ ձև ստացավ այդ զրույցը Վրաստանում, ուր Բագրատունիների մի ճյուղը թագավորական գահ ստեղծեց իր համար։ Այդտեղ բանը հասավ այն աստիճանին, որ Բագրատունիների ծագումը հասավ մինչև Դավիթ մարգարեն, իսկ այս մարգարե-թագավորի շառավիղը լինել, նշանակում էր ազգակցություն ունենալ և Մարիամ Աստվածածնի հետ[2]։ Ահա և կրկնակի բարձր ու նվիրական հեղինակություններ՝ ժողովրդի սերն ու համակրանքը գրավելու և գահն ամրացնելու համար։

Որ հրեական ծագման զրույցը կարող էր մեր ակնարկած ժամանակում կազմված լինել, երևում է այն հանգամանքից, որ Հայաստանում գոյություն ուներ և մի հին ավանդություն, որը պարզապես ասում էր, թե Բագրատունիները բնիկ հայեր են, սերված Հայկ նահապետից[3]։ Խորենացուն հայտնի էր այս ավանդությունը, բայց նա հրեական ծագման ջերմեռանդ կողմնակից է և հանձնարարում է Սահակ Բագրատունուն՝ չհավատալ հայկական ծագման, որի մասին եղած խոսքը նա անվանում է հիմարություն։ Եվ ամենամեծ ապացույցը, որ կա նրա ձեռքում, այն է, թե Բագրատունյաց տոհմում այնքան հաճախ կրկնվող Սմբատ անունը հենց Շամբաթ անվան հայացած ձևն է։ Սակայն այստեղ էլ օտար աղբյուրները մեզ բերում են ցուցմունքներ, որոնք հարցը պարզաբանում են ավելի մեծ հավանականությամբ։ Այդ աղբյուրներից մենք իմանում ենք, որ Տիգրան Մեծի զորավարներից մեկը, որ նրա կողմից նշանակվեց Սիրիայի, Կիլիկիայի և մինչև Պաղեստին տարածված տեղերի կուսակալ և մնաց այդ պաշտոնում ամբողջ 14 տարի, կոչվում էր Բագադատ: Այս անունն էլ համարվում է հայկական Բագարատ անվան նախնական ձևը, որ առաջացած է Բագա և դատա (Աստծուց տված, Աստվածատուր) բառերից, որոնք նույնիսկ սեմական լեզվին չեն պատկանում։ Ահա այս Բագադատ զորավարն էլ պիտի համարվի Բագրատունյաց տոհմի նախահայր[4]։ Գուցե այն հանգամանքը, որ Բագադատը երկար ժամանակ պաշտոնավարել է Հրեաստանին մոտիկ երկրներում, դարձել է ապագայում մի խուլ արձագանք, որ հրեական ծագման զրույցի հիմքն է կազմել։ Մեր ամենահին պատմական աղբյուր Փավստոս Բյուզանդացին Սպեր գավառն է ցույց տալիս իբրև Բագրատունյաց տոհմի բնագավառ։ Բայց թվում է, թե նախնական բնագավառն այդ չէր, այլ Արարատյան նահանգի Կոգովիտ գավառը, որ Արշակունի թագավորների ժամանակ արքունի կալված դարձավ, իսկ նրանց անկումից հետո նորից անցավ Բագրատունիներին։ Եվ առհասարակ կարելի է ենթադրել, որ Արածանիի ակունքների երկրում է կազմակերպվել Բագրատունի տոհմը։ Այս ենթադրության օգտին խոսում է մի լեզվական փաստ, այն, որ Բագարատ և Բագրավանդ անունների միջև կարելի է գտնել մոտիկ ազգակցություն[1]. Բագրատունիները կրում էին ասպետ տիտղոսը128, որ, լեզվագետների բացատրությամբ, նշանակում է տոհմի գլուխ, տոհմապետ[2]։

Արդեն այն հանգամանքը, որ Բագադատը Տիգրանից ստացավ այնքան կարևոր պաշտոն՝ ինքնըստինքյան մի ապացույց է, թե ո՛րքան առաջնակարգ դիրք էր բռնում այդ տոհմը հին ժամանակներից։ Նույնպիսի նշանակություն Բագրատունիները շարունակեցին պահպանել և հայ Արշակունիների ժամանակ, երբ նրանք արքունիքում թագադիրների ժառանգական պաշտոնն էին կատարում։ Բացի այս պաշտոնից՝ նրանք հաճախ ստանում էին և սպարապետության բարձր պաշտոնը։ Սակայն 4-րդ դարի սկզբից քրիստոնեությունն առաջ է քաշում Մամիկոնյան տոհմը, որի բնագավառն էր Տայք նահանգը, բայց որ սեփականացրեց նաև Տարոն գավառը։ Սպարապետությունն անցնում է այդ տոհմին, և Բագրատունիները քիչ անգամ են կարողանում վերստանալ զորքերի գլխավոր հրամանատարության պաշտոնը։ Նկատելի է մի խուլ մրցություն այդ երկու տոհմերի միջև, որի պատճառով Բագրատունիները հաճախ, նույնիսկ շատ երկար ժամանակով, ասպարեզից դուրս մղվածների նման են և նույնիսկ հակառակորդի դիրք են բռնում Մամիկոնյանների վերաբերմամբ։ Բայց այս անփոփոխ մի երևույթ չէ, և մենք ականատես ենք նաև այնպիսի ժամանակների, երբ հայրենիքի ընդհանուր շահերը միացնում են երկու տոհմերը՝ արտաքին թշնամուն դիմադրելու համար։ Այսպես էր, օրինակ, Վահան Մամիկոնյանի ժամանակ, 5-րդ դարում։ Բայց առհասարակ պետք է նկատել, որ Բագրատունիներն ավելի սառնարյուն և հաշվով գործիչներ էին, քան Մամիկոնյանները, որոնք, ինչպես շատ անգամ առիթ ունեցանք դիտելու, առանց վարանումների, անվեհեր կերպով ամեն անգամ նետվում էին մարտի դաշտը, երբ հայրենի ազատությանը վտանգ էր սպառնում։ Այս տեսակ ոգորումների մեջ Մամիկոնյաններն սպառեցին իրենց նյութական կարողությունը, թուլացան, մինչդեռ Բագրատունիները, շատ սակավ մասնակցություն ունենալով հախուռն գործողությունների մեջ, պահպանում էին իրենց տոհմային ուժը, ավելացնում էին իրենց նյութական բարեկեցությունը։

Մենք արդեն տեսանք, որ 9-րդ դարի առաջին կեսում էր, Աշոտ Մսակերի և նրա եղբայր Շապուհի եռանդուն ջանքերով, որ Բագրատունիները Հայաստանում շատ մեծացրին իրենց ուժն ու ազդեցությունը։ Բացի

---

[1] Խորենացի, Ա, իը։

[2] M. Brosset, „Additions et éclaircissements à l'Histoire de la Georgie“, Petersb, 1851, p. 140.

[3] Սեբեոս (Պետեր. տպ.), եր. 6։

[4] Адонц, «Армения в эпоху Юстин.», стр. 412.

[1] Ibid, стр. 307.

[2] Ibid, стр, 402.

Սպերից, որ տոհմային հին կալված էր, նրանք իրենց ձեռքում ունեին Շիրակն ու Արշարունիքը, Տարոնը, տիրում էին նույնիսկ և Վասպուրականի մի մասին, ինչպես նաև նրա հարևան Մոկաց աշխարհին։ Այդ ժամանակ էր, որ Մսակերի հորեղբոր թոռը՝ Աշոտը Վրաստանի կյուրապաղատություն ստացավ։ Տեսանք նույնպես, որ Հայաստանի Բագրատունիների մեջ առաջնությունը պատկանում էր, գոնե 9-րդ դարի երկրորդ քառորդում, այն ճյուղին, որ Տարոնում էր հաստատվել։ Բագարատ իշխանապետի ժամանակ Շիրակի ճյուղը թեև սպարապետությունն ուներ իր ձեռքում, բայց ետ էր քաշված, և Սմբատ սպարապետը զբաղված էր իր հորեղբոր որբերին խնամելով ու դաստիարակելով և դրա համար բնակության տեղ էր ընտրել Անին, իբրև ամուր և ապահով տեղ։ Սակայն Բուղայի արշավանքն ու դրան հաջորդած դեպքերը բարձրացնում են Անիի այդ համեստ ու խաղաղ ընտանիքը։

3. Աշոտ սպարապետ Հայոց (855— 862 թթ.): Աշոտ Բագրատունին մի շատ խոշոր պատմական դեմք է Հայաստանի իրականության մեջ, ծնվել է, ամենայն հավանականությամբ, 820 թվականին, հետևաբար 35 տարեկան հասակումն էր, երբ անցավ իր հոր տեղը սպարապետության պաշտոնում։ Բացի նրանից՝ Սմբատ սպարապետն ուներ չորս արու զավակ՝ Աբաս, Մուշեղ, Շապուհ և Սմբատ[1]։ Սրանցից երկուսի մասին պատմությունը թողել է վկայություններ, թե դրանք էլ ընդունակ մարդիկ էին, մանավանդ Աբասը, որ բացառիկ դիրք գրավեց իբրև կարող և քաջարի զինվորական հրամանատար։ Իսկ Մուշեղն այն էր, որին մենք տեսանք արաբական բանակում Քթիշ բերդի տակ, թե ինչպես նա, առանձնացած մի բլրի գլխին, հիացմունքով դիտում էր պատերազմի ահեղ տեսարանը և ինչպես իր զգացածն արտահայտեց բանաստեղծության մեջ։ Մի հանգամանք է այս, որ ցույց է տալիս, թե Սմբատ սպարապետի այս որդուն տրված էր գրական շնորհք, իսկ այս բանն այն ժամանակ, անշուշտ, ավելի փայլուն պիտի համարվեր, իբրև հազվագյուտ երևույթ, քան զինվորական տաղանդը, որ ավելի ընդհանրացած էր նախարարական դասի մեջ, այն պարզ պատճառով, որ պատերազմի գործն էր ժամանակի դաստիարակության առաջնակարգ և ամենակարևոր առարկան։ Գալով Աշոտին, պիտի ասենք, որ նրա մասին գրված մանրամասն պատմությունը մեզ չի հասել։ Սակայն կան կողմնակի վկայություններ, որոնք ապացուցում են, թե Աշոտն առաջադեմ և զարգացած է եղել երկու ասպարեզներումն էլ—թե՛ մտքի և թե՛ զենքի։ Այսպես, հունաց պատրիարք Փոտը, կամենալով վերացնել հայերի և հոռոմների միջև գոյություն ունեցող դավանական խտրությունը, Աշոտին էր ուղղում իր թուղթը, որի մեջ նրան անվանում էր «հանճարեղ իմաստի» տեր, «ճշմարտություն որոնող», «Աստծու գիտության մեջ հաստատված»[2]։ Իսկ Աշոտի ժամանակակից Հովհաննես կաթողիկոսը, հիշատակելով Շապուհ Բագրատունու գրած պատմությունը, որի մեջ Աշոտի մասին էլ շատ էր պատմված, ընդհանուր դարձվածքներով բերում է այդ գործի բովանդակությունը, որի մեջ կային և Աշոտի քաջագործությունները զանազան պատերազմների մեջ[3].

---

[1] Մարկվարտ, «Հանդ. Ամս.», 1912, էջ 335—336։

[2] «Գիրք թղթոց», եր. 279—281։

[3] Յովհաննէս կաթ., «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, եր. 168։

Սակայն զինվորական հրամանատարի տաղանդը չէր, որ պիտի բարձրացներ Աշոտին իր ժամանակակիցների մեջ, նրան կարողություն տար ստեղծելու մի նոր մեծ երևույթ, որ հրաշքի նման մի բան էր երևում։ Այս գործչին ավելի շատ տրված էր մտքի ասպարեզում, և վարչական-քաղաքագիտական ընդունակությունն էր այն հզոր գործիքը, որի միջոցով նա 9-րդ դարը դարձրեց հայ ժողովրդի քաղաքական վերածնության դար։ Իր քաղաքական հայացքներով նա հետևող էր ճիշտ այն ուղղության, որի ներկայացուցիչն էր նրա հայրը, և մենք արդեն տեսանք նրան Հայաստանի սահմանագլխի վրա Բուղային դիմավորելիս, իբրև արաբական հավատարիմ հպատակ, որ միայն բարյացակամություն կարող էր ունենալ խալիֆական իշխանության ներկայացուցիչների վերաբերմամբ։ Միևնույն վերաբերմունքը, նույնիսկ ավելի եռանդուն չափերով, նա սկսեց ցույց տալ և այն օրվանից, երբ ինքը դարձավ հայ ժողովրդի պատասխանատու առաջնորդը։ Հանդարտեցնել երկիրը, նրան տալ կատարելապես օրինապահ հպատակի կերպարանք,— ա՛յս էր նրա եռանդուն և խոհեմ գործունեության ամենագլխավոր առարկան։ Այսպիսի խաղաղարար դեր Աշոտը կատարում էր և հարևան Վրաստանում ու Աղվանքում, ուր, ինչպես երևում է, բավականաչափ բարոյական հեղինակություն էր վայելում՝ տեղական գործերի վրա ազդելու համար։ Այս զգուշությունն ու շրջահայեցությունը թելադրում էին և այն բոլոր հանգամանքները, որոնք Բուղայի արշավանքի հետևանք հանդիսացան։ Թուրք զորավարը թողել էր Դվինում մի ոստիկան, Իբրահիմ անունով, որ թեև չէր խառնվում երկրի ներքին գործերին, բայց աչալուրջ հսկում էր, լրտեսում էր ապստամբության մեջ գտնված ժողովրդին։ Մի րոպե չէր մոռացվում, որ Հայոց աշխարհը բազմաթիվ պատանդներ ուներ Մոթավաքիլ խալիֆի ձեռքին։ Դրանք կապված հայ իշխաններն էին, որոնց գլխին կախված էր մահվան մատնվելու ահավոր սպառնալիքը։ Աշոտին դրությունը ներկայանում էր այնպես, որ այդքան փափուկ կացության մեջ միայն կատարյալ և անվերապահ արաբասիրությունը կարող էր փրկել կապվածներին, որոնց թվում, իհարկե, և իր հորը, իսկ դրանց միջոցով՝ նաև հայրենիքը։ Եվ այս ջանադրության մեջ Հայոց սպարապետը, պետք է խոստովանել, նույնիսկ չափը կորցրեց, ինչպես ցույց տվեց Գրիգոր Մամիկոնյանի դեպքը։

Այս իշխանը նույնպես կապված ու տարված էր Բաղդադ, մյուս կալանավորների հետ, բայց կարողացավ փախչել և գնալ իր տունը, Բագրեվանդ գավառը։ Արաբական կառավարությունը, ըստ սովորականին, գնահատեց փախստականի գլուխը, գրավված հայտարարեց նրա կալվածքը։ Աշոտը հրաման է ստանում ոստիկանից, որ նրան ձերբակալի։ Բայց Գրիգոր իշխանը մեռնում է տուն վերադառնալուց յոթ օր հետո։ Աշոտը կտրում է մեռածի գլուխը, ուղարկում ոստիկանին, ասելով, թե փախչելու ժամանակ ինքն սպանեց նրան։ Ոստիկանը շատ ուրախանում է, և Աշոտը ստանում է Գրիգոր իշխանի գլխի համար նշանակված խոշոր գումարը և նրանից գրաված կալվածը։ Այս տգեղ գործն արդարացնել չի կարելի, իհարկե, և ոչ մի նկատառումով։

Իսկ գերի տարված հայ նախարարներին բանտի մեջ բավական պահելուց հետո՝ Մոթավաքիլը մի օր դատաստան նստեց՝ նրանց դատելու համար։ Կրկնվում էր, համարյա բառացի ճշտությամբ, այն, ինչ 5-րդ դարում տեղի ունեցավ Սասանյան արքունիքում, Վարդանանց ապստամբության հե-

տևանքով։ Խալիֆը, Հազկերտի նման, արհամարհական շեշտով խոսեց նախարարների մասին, որոնք նույնպես պատասխանեցին հպարտ արժանապատվությամբ։ Եվ Մոթավաքիլն էլ արձակեց միևնույն վճիռը.—կյանք և իրավունքներ կարելի է պահպանել միայն պետական կրոնն ընդունելով։ Եվ նախարարներն առանց դիմադրության ընդունեցին իսլամը։ Առաջուց տարվածներն էլ—Բագարատ Բագրատունի, Աշոտ և մյուս Արծրունիները արդեն թլպատված էին և ապրում էին Բաղդադում։ Մի քանի հոգի միայն չկամեցան բաժանվել իրենց հավատից և նահատակվեցին։ Այսպես էին Հովհանը, Խութի ապստամբության առաջնորդը, Ստեփանոս Կոն իշխանը և Արծրունյաց տոհմից Գրիգոր անունով մեկը։ Կրոնական ջերմեռանդ արիության սքանչելի օրինակ տվեց և Սմբատ սպարապետը։ Հրաժարվելով դավաճանել իր կրոնական համոզմունքին, նա մնաց բանտում։ Միևնույն վիճակին ենթարկվեց և նրա քույրը, Արծրունյաց Հռիփսիմե տիկինը։

Կրոնափոխությունն արդեն ազատություն էր տալիս նախարարներին, և նրանք սկսեցին հետզհետե վերադառնալ հայրենիք (857—859 թթ.)։ Եվ ահա այս վերադարձի հետևանքով Վասպուրականում նորից սկսվում են կռիվներ, որոնք այնքան սուր կերպարանք են ընդունում, որ առաջ են բերում Աշոտի միջամտությունը։ Գուրգեն Աբու-Պելճից իր հայրենի կալվածները ետ խլելու համար արխազ և վրացի զորքերով Վասպուրական գնաց Աշոտ Արծրունու եղբայր Գրիգորը։ Սակայն նրա բերած վարձկան զորքերը, լսելով, թե ի՛նչ քաջ մարդու հետ պիտի գործ ունենան, թողնում են փախչում։ Այնուհետև գերությունից վերադառնում է Աշոտի որդի Վահան Արծրունին և իսկույն զորք հավաքելով, գնում է Գուրգենի դեմ, բայց չարաչար պարտվում է Ոստանի մոտ և գնում է Սամառա՝ իր հորը լուր տանելու համար։

Մոթավաքիլն Աշոտ Արծրունուն վերադարձնում է նրա նախկին իրավունքները, այսինքն՝ Վասպուրականի իշխանապետությունը։ Բայց որովհետև նա դեռ հարկավոր էր արաբական կառավարությանը՝ պատերազմական մի քանի արշավանքներին մասնակցելու համար, ուստի նա չի կարողանում անմիջապես ուղևորվել Հայաստան և ուղարկում է իր մանկահասակ Գրիգոր-Դերենիկ որդուն, որ և գալիս տիրապետում է իր տոհմային բոլոր կալվածներին, դառնալով միևնույն ժամանակ առաջինը Վասպուրականի հայ իշխանների մեջ։ Գուրգեն Աբու-Պելճը նրան որևէ դիմադրություն ցույց չի տալիս, քանի որ նա խալիֆից էր իշխանապետ նշանակվել, և հակառակվել նրան, կնշանակեր ըմբոստանալ պետության դեմ։ Բայց ահա գերությունից վերադառնում է և Աշոտի եղբայր Գուրգենը, որ մեզ ծանոթ է Արյան լճի հերոսական գործով։ Նա թշնամական գործողություններ է սկսում Գուրգեն Աբու-Պելճի դեմ, կամենալով նրանից խլել Ջղմար և Սրինգ բերդերը։ Սակայն կռիվը տեղի չի ունենում, և երկու կողմերը հաշտվում են իրար հետ։ Գուրգենն առաջարկում է Աբու-Պելճին միասին հարձակվել Գրիգոր-Դերենիկի վրա և խլելով նրա իշխանությունը, բաժանել իրենց միջև։ Բայց առաքինի Աբու-Պելճը չի ուզում այդպիսի մի գործի մեջ մտնել և նույնիսկ հեռանում է Վասպուրականից, գնում է Կարին, մտադրություն ունենալով իր ծառայությունն առաջարկել Միքայել կայսրին։ Սակայն ճանապարհին նա ձերբակալվում և հանձնվում է Աշոտ սպարապետին։ Սա թեև վրդովվում է այդ բռնությունից, բայց իր բռնած ուղղության տեսակետից անկարելի է համարում պաշտպանել հայ իշխա-

նին, որովհետև, ինչպես բացատրում է Թովմա Արծրունին[1], երկյուղ ունեի արաբներից, «զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին»[2]։ Այս նկատառումներով նա Գուրգեն Աբու-Պելճին հանձնում է Թիֆլիսի արաբական կառավարչին, վերջինս բանտարկում է նրան և սկսում է բռնադատել, որ նա ուրանա քրիստոնեությունը։ Գուրգենը, քաջամարտիկ զինվոր պատերազմի դաշտում, նույնպիսի անվեհերություն ցույց է տալիս և հոգու ասպարեզում, դիմադրում է բռնավորին ամենայն արիությամբ, ուստի և շղթաներով կապկապված՝ Ատրպատականի վրայով ուղարկվում է Բաղդադ, ուր նույնպես բանտ է նետվում։ Այդ ժամանակ այդտեղ դեռ բանտի մեջ էին Սմբատ սպարապետն ու նրա քույր Հռիփսիմեն։ Աշոտ սպարապետի ծայրահեղ հավատարմական ցույցերը, հպատակական անձնվիրությունը չկարողացան թեթևացնել նրա հոր կապանքները։ Եղբայր ու քույր, տարիներից հետո, մեռան բանտում (859 կամ 861), և Սմբատը հայ տարեգրությունների մեջ ստացավ Խոստովանող անունը, քանի որ նկատվում էր իբրև նահատակ քրիստոնեական կրոնի համար։

4. Աշոտ՝ իշխանաց իշխան Հայոց Մեծաց (862—887 թթ.)։ Թուրք վարձկան զինվորությունն արաբական արքունիքում, ինչպես բնական էր սպասել, վերջիվերջո անտանելի ծանրություն էր դառնում և Մոթավաքիլի համար, որ այնքան երես էր տվել այդ վտանգավոր զինվորական տարրին։ Տեսնելով, որ խալիֆաթն օրեցօր ավելի և ավելի ստորացվում է վարձկանների խնամակալության տակ, նա մտածեց պայքար սկսել նրանց դեմ և այդ պայքարի մեջ մտցրեց իրեն հատուկ դաժան անխղճությունը։ Բայց մրցությունն այդ պատճառով էլ շատ աղետաբեր եղավ թե՛ նրա և թե՛ նրա հաջորդների համար։ Վարձկան զինվորությունն էլ գիտեր կռվել բոնի ուժի բոլոր հնարքներով։ Մոթավաքիլը մի հուսահատական ճիգ էր անում, թողնելով Սամառան և մի ուրիշ տեղ կառուցելով մի շքեղ պալատ, որի մեջ բնակություն հաստատեց, տալով նրան իր անունը—Ջաֆարիա։ Բայց սա փրկություն չէր։ Մրցությունը սարսափելի էր իր արյունոտ զոհերի բազմությամբ։ 861 թվին Մոթավաքիլի որդի Մունթասիրը միացավ թուրքական հրամանատարների հետ, գրգռված լինելով իր հոր դեմ, որովհետև նրա կողմից զրկվել էր գահաժառանգության իրավունքից։ Տեղի ունեցավ պալատական հեղաշրջում, և որդին, հորն սպանելով, թագավորեց նրա տեղ, բայց միայն մի քանի ամիս, որովհետև մեռավ հայրասպանության պատճառած հոգեկան խոր տանջանքներից։ 862 թվին նրան հաջորդեց Մուսթաինը (862—866 թթ.)։ Բայց պետությունը սաստիկ թուլացել էր ներքին անկարգություններից, կորցրել էր իր հեղինակությունը։ Այս հանգամանքից էր, երևի, որ օգտվեցին Հայոց այն նախարարները, որոնք հավատուրացության գնով ազատություն էին ստացել և հայրենիք վերադարձել։ Նրանք նորից քրիստոնեություն ընդգրկեցին, մի բան, որի համար մահմեդական օրենքով մահապատժի էր դատապարտվում ուրացողը։

Աշոտ սպարապետն էր, որ չօգտվեց խալիֆաթի այդ նեղ դրությունից և շարունակեց նույն անփոփոխ հավատարմությամբ ծառայել արաբական կառավարությանը։ Իր վարվեցողությամբ, քաղաքագետ վերաբերմունքով և

[1] Վասպուրականի դեպքերի վերաբերմամբ լավատեղյակ և մանրապատում աղբյուր շարունակում է մնալ այս պատմագիրը («Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887)։
[2] Եր. 203։

առատաձեռնությամբ նա արդեն և մեծ ժողովրդականություն էր ձեռք բերել Հայաստանում, այնպես որ բոլոր նախարարները լսում էին նրան և կատարում նրա խոսքը։ Այս բարեմասնությունների վրա ուշադրություն դարձրին և Աբբասյանների արքունիքում։ Եվ դրա պատճառն էր մի արաբական կառավարիչ, որ դեռ 859 թվականից էր գտնվում Հայաստանում։ Սա կոչվում էր Ալի-իբն-Յահյա, վերաձայնված Արմանի, որովհետև նրա հայրը գերի տարված մի հայ էր։ Իր ծագումը չմոռացած այս բարի մարդը, ասում են, շատ բարիքներ էր արել իր հայրենիքին[1]։ Բայց ամենամեծ բարիքը եղավ այն, որ նրա միջնորդությամբ Աշոտ սպարապետը նշանակվեց իշխանաց իշխան129 Հայաստանում և նրա հսկողության ենթարկվեցին նաև Վրաստանն ու Աղվանքը։ Այս պաշտոնի կարևորությունն ավելի նշանակալից էր դառնում նրանով, որ երկրի ամբողջ հարկահանությունն էլ նրան էր հանձնվում, մի բան, որ մինչև այդ երբեք տեսնված չէր մի այլ քրիստոնյա իշխանի կառավարմանը հանձնված Հայաստանում։ Ճիշտ է, Դվինում այնուհետև էլ մնում էր արաբական ոստիկան, բայց նա արդեն լոկ խալիֆի ներկայացուցիչ էր, լոկ վերահսկող, առանց ներքին գործերի մեջ խառնվելու իրավունքի։ Այսպիսով, իրականանում էր գրեթե կատարյալ ինքնավարական մի կարգ, որի շրջանակում Աշոտը կարողացավ ծավալել մի ընդարձակ վարչական գործունեություն։ Այդ խոշոր ընդունակությունն արգասավոր հանդիսացավ, մանավանդ, շնորհիվ այն հանգամանքի, որ նրան բախտ էր վիճակվել երկար գործելու շատ նպաստավոր պայմանների մեջ։ Իշխանաց իշխանի պաշտոն նա վարեց քառորդ դար և ձեռք բերեց թե՛ ընդհանուր համակրանք և թե՛ պատկառելի հեղինակություն։ Փոտ պատրիարքը վերոհիշյալ նամակի մեջ նրան անվանում է «քաջայայտդ բարետոհմութեամբ, հզօրագոյնդ ճոխութեամբ, բարձրագոյնդ ի համասեռս», դիմում է անում նրան իբրև «մեծութեան», իբրև «վսեմագոյնի»[2]։ Երկրի համար բացառիկ բարեբախտություն էր, որ արտաքին թշնամիների հարձակում չկար և այդքան երկար ժամանակ այդ տեսակետից կատարյալ խաղաղություն էր վայելում։ Ահա այս դրությունն էլ նպաստում էր, որպեսզի Աշոտի նման մի խաղաղասեր և շինարար բնավորություն լայն չափերով գործադրի իր ընդունակությունները, կարգ և օրինականություն պահպանելու համար։ Նրա ուժն այնքան բռնությունը չէր, որքան քաղցր ու հաշտ վարվեցողությունը։ Եվ այս միջոցով էր, որ նա կարողացավ կատարյալ խաղաղության մեջ պահել Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքը և այդպիսով անգնահատելի ծառայություն մատուցել արաբական կառավարությանը՝ նրա համար շատ ծանր ու վտանգավոր ժամանակներում։ Բայց այս չէր նշանակում, թե Աշոտը միանգամայն արհամարհում էր զինվորական ուժը։ Ընդհակառակն, բանակն էլ նա փայլուն դրության հասցրեց, սպարապետ նշանակելով իր երիտասարդ եղբորը, Աբասին, որ հենց մի տարի անցած-չանցած՝ ցույց տվեց հաղթողի հուժկու կարողություն։ Կայսիկ ցեղի մեջ ծանոթ առաջնորդ Սևադայի որդի Շահապը, երևի շարունակելով նույն կալվածական վեճն իր քեռի Բագրատունիների հետ, մեծ զորքով մտնում է Արշարունիք։ Արաքսի ձորում, Կաղզվանի մոտ, նրան հանդիպում է Աբաս սպարապետը 40 հազար ընտիր զորքով, ճակատամարտում ջարդում է հա-

[1] **Saint Martin,** „Mémoires sur l'Arménie", t. I, Paris, 1818, p. 348.

[2] «Գիրք Թղթոց», էջ. 279—281։

կառավորդին, որը կորցնելով ամբողջ իր բանակը, ստիպված է լինում
փախչել 26 մարդկանցով (863 թ.)[1]։
Աշոտի իշխանապետությունն սկսվում էր մի մեծ աղետի մեջ, որ Հա-
յաստանում, իբրև գերազանցորեն հրաբխային կազմվածք ունեցող երկրում,
հազվադեպ չէր։ 862 թվին Դվին մայրաքաղաքը մեծ երկրաշարժի զո՞հ
դարձավ։ Մեծ ավերումներ եղան և փլատակների տակ մեռան, ինչպես հա-
ղորդում են, 12 հազար հոգի։ Եվ, որովհետև Դվինը թեև արաբական ոստի-
կանների նստավայրն էր, բայց կազմում էր Աշոտի անմիջական կառավա-
րության ենթարկված մի հողամաս, ուստի հասկանալի է, թե ո՛րքան
մեծ հոգսեր պիտի պատճառած լինի այդ բնական աղետը Հայոց իշխանաց
իշխանին։
Վերոհիշյալ դեպքերի հետ միասին նոր խլրտումներ սկսվեցին Վաս-
պուրականում, նյութ ունենալով միշտ միևնույն կալվածատիրական վեճե-
րը։ Բանն այն է, որ Գուրգեն Աբու-Պելճին հաջողվում է ազատվել արա-
բական բանտից և վերադառնալ հայրենիք՝ բռնությամբ խլված իր տոհմա-
յին ստացվածքը՝ Մարդաստան գավառը ետ ստանալու համար։ Այս նպա-
տակով էլ նա գունդ կազմեց։ Գրիգոր-Դերենիկը, որի դեմ էր դուրս
գալիս Գուրգենը, հարձակում գործեց նրա վրա և առաջին անգամ պարտու-
թյան մատնվեց։ Բայց երբ երկրորդ անգամ էլ կրկնեց իր հարձակումը,
Գուրգենն արդեն անկարող էր կռվել, որովհետև ընկել էր ձիուց։ Այդպես
հիվանդ դրության մեջ էլ նա գերի ընկավ Գրիգոր-Դերենիկի ձեռքը և բան-
տարկվեց Հադամակերտ բերդում։ Սակայն բանտապահը կաշառքով անց-
նում է կալանավորի կողմը և գիշերը հանելով նրան բանտից, տանում
մտցնում է իշխանական ապարանքի այն սենյակը, ուր քնած էր Դերենիկը։
Մերկացրած սուրը ձեռքին՝ Գուրգենը մոտենում է քնածին և կանչում է.
«Որդյա՛կ իմ Դերենիկ, ողջույն քեզ, ես գնացի Հունաց երկիրը»։ Արթնացած
իշխանն ասում է սարսափահար. «Հա՛յր իմ, խնայի՛ր ինձ»։ Բայց աղաչան-
քըն իզուր էր, որովհետև Գուրգենը չէր էլ մտածում վնասել նրան։ Ու հե-
ռացավ Գուրգենը Հադամակերտից, հաստատ դիտավորություն ունենալով
թողնել Վասպուրականը, հեռանալ։ Մինչև այդ ճանապարհորդության պատ-
րաստություններ տեսնելը նա թաքնվեց Երագանի անունով փոքրիկ գյուղի
վանքում, բայց վանահայր վարդապետը մատնեց նրան Դերենիկին, որ և
երկրորդ անգամ կալանավորել տվեց նրան, բայց հրամայեց, որ լավ պա-
հեն, առանց զրկանքների։ Այս մի տեսակ երախտագիտություն էր այն
լավության փոխարեն, որ արել էր նրան Գուրգենը, խնայելով նրա կյանքը
գիշերային այցելության միջոցին։
Աշոտ իշխանապետն այդ միջոցին նոր էր վերջացրել Վրաստանի
կողմերում եղած խռովությունները և ձեռնարկեց վերջ տալու նաև Վաս-
պուրականի կալվածատիրական կռիվներին։ Այս նպատակով նա ինքն ան-
ձամբ գնաց Վասպուրական, և որովհետև նա չէր սիրում զորքով ու բռ-
նությամբ գործ տեսնել, ուստի տարավ իր հետ և Զաքարիա կաթողիկո-
սին, որը և բանակցություններ սկսեց Դերենիկի հետ։ Գուրգեն Աբու-Պելճն
իսկույն ազատ արձակվեց։ Վերացվեց և վեճի առարկան.—Մարդաստան
գավառը վերադարձվեց Գուրգենին։ Բայց այս քաջարի կռվողին հատուկ
էր մի տեսակ արկածախնդրություն։ Եվ ահա փոխանակ իր գավառը վե-

[1] Ասողիկ, «Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, էջ. 110։

րադառնալու և այնտեղ հանգիստ ապրելու, նա անցնում է Տարոնի կողմերը, որովհետև երկյուղ էր կրում, թե Աշոտ իշխանաց իշխանն իրեն կներկայացնի խալիֆին իբրև մի ապստամբ։ Շուտով նա դարձյալ ցույց տվեց, թե որքան շատ էր սիրում Դերենիկին։ Երբ Աշոտը բանտարկում է վերջինին մի ինչ-որ պատճառով, Աբու-Պելճը 400 զինված մարդկանց գլուխ անցած՝ սպառնալիքներ է ուղարկում իշխանապետին և պահանջում, որ Դերենիկն ազատվի։ Աշոտը խոհեմություն է համարում գործը կռվի չհասցնել և արձակում է իր կալանավորին։ Բայց այս միջամտությունը մի անակնկալ հետևանքի է հասցնում։ Նույն Գուրգենը, ազատել տալով իր ազգակցին, խնամախոս է դառնում Աշոտի մոտ և հաջողեցնում է նրան Սոփի անունով աղջկա ամուսնությունը Դերենիկի հետ, որի կինը մեռած էր։ Այսպիսով՝ Բագրատունիների և Արծրունիների միջև նորից հաստատվում էր խնամիական կապ (862 թ.), որ շատ նշանավոր հետևանքներ պիտի բերեր։ Աշոտ իշխանապետի ներքին քաղաքականության մի խոշոր գիծըն էլ այն էր, որ նա աշխատում էր ազգակցական կապերի վրա հիմնըված մի ավատական դաշնակցություն առաջացնել իր իշխանության շուրջը։ Իր մյուս աղջկան, Մարիամ անունով, նա ամուսնացրեց Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի հետ և այդպիսով իր հետ կապեց այդ նշանավոր և ազդեցիկ նախարարությունն էլ։ Բացի սրանից, խնամիության կապ ուներ Աշոտը և Վրաստանի Բագրատունի տան հետ, քանի որ նրա մի այլ աղջիկը, որի անունը հայտնի չէ, Գուարամ իշխանի կինն էր։

Վասպուրականի հարցը կարելի էր համարել լավագույն կերպով վճռված։ Բայց խաղաղությունն այնտեղ երկարատև չեղավ։ Այս անգամ պատճառն արդեն Վասպուրականի մեծ իշխան Աշոտն էր, այն, որ Բուղայի առաջին գերին էր դառել։ Արաբական բանտից նա էլ ուրացությամբ ազատվեց, ուրիշների նման, դեռ 857 թվականին, բայց ստիպված եղավ մնալ Բաղդադում դարձյալ վեց տարի, որովհետև նրա քաջությունը հարկավոր էր արաբական զորքին։ Այսպես, երբ խալիֆի դեմ ապստամբեց Կզուին (Կազուին) քաղաքը, արաբական զորքի հրամանատարը, որ Բուղայի որդին էր, Մուսա անունով, իր հետ արշավանքի վերցրեց և Աշոտին՝ նրա հայ գնդի հետ։ Եվ այդ արշավանքի մեջ, ճիշտ որ, հայերը մեծ քաջություն ցույց տվին։ Իր ձիավոր գնդի առաջն ընկնելով, Աշոտը խրոխտ ձայնով կանչեց. «Հապա, Հայոց քաջեր, թող այստեղ էլ ճանաչեն մեզ և մեր արիությունը»։ Եվ մի հանդուգն հարձակումով Աշոտն ու իր մարդիկ ջարդեցին թշնամուն և փախուստի մատնեցին։ Սակայն այսպիսի գործերով Արծրունի իշխանն իր դրությունն էր ծանրացնում, որովհետև արաբները չէին ուզում ձեռքից տալ նրան։ Ուստի մնում էր առանց հարցնելու թողնել արաբական մայրաքաղաքն ու վերադառնալ հայրենիք։ Այդպես էլ արավ նա, իսկ արաբական կառավարությունն արգելք չհարուցեց նրա դեմ, ընդհակառակը, վերադարձրեց նրան բոլոր նախկին իրավունքները։ Եվ նորից Աշոտ Արծրունին էր հայրենի երկրում, շրջապատված նախկին հմայքով ու մեծ հեղինակությամբ։

Բայց տանը նա գտավ մի կռվապատճառ։ Կալվածական նոր վեճ էր բացվել նրա որդի Գրիգոր-Դերենիկի և Գուրգեն Աբու-Պելճի միջև։ Անձևացյաց Մուշեղ իշխանը մեռել էր, թողնելով մի ծծկեր մանուկ միայն։ Դերենիկը, կամենալով տիրանալ Անձևացյաց ամուր բերդերին, կարողացել էր Մուշեղ իշխանից, դեռ նրա կենդանության ժամանակ, խոսք առնել,

թե նրա երկրի կեսը կմնա որդուն, մյուս կեսը՝ իրեն, Դերենիկին։ Սակայն Մուշեղի կինը, կանչելով Գուրգենին, ամուսնանում է նրա հետ և նրա ձեռքն է տալիս Անձևացյաց կառավարությունը։ Այս հողի վրա շատ սուր կերպարանք է ընդունում վեճը Դերենիկի և Գուրգենի միջև, իսկ Աշոտը բռնում է իր որդու կողմը։ Եվ մեծ զորքի գլուխ անցած՝ գնում է գրավում Անձևացյաց գավառի Բյրակին գյուղը։ Ապա Գուրգենի մոտ ուղարկելով վահան Արծրունուն և Հոգյաց վանքի վանահայր Թեոդորոսին, ասում է նրան. «Ես եկա խաղաղությամբ արքունիքի հրամանով և ոչ թե քեզ նման ապստամբություն գործ դնելով։ Արդ՝ Անձևացյաց երկրի երկրորդ մասը թող իմ որդի Դերենիկին և այլևս հակառակություն մի անիր, ապա թե ոչ, եթե հոժար կամքով այսպես չես անի, ակամա կստիպեմ քեզ ունեցածդ էլ թողնել»։ Այս գոռոզ պատգամին Գուրգենը տալիս է շատ համեստ պատասխան. «Իմ հայրենական ժառանգությունից հեռացրել եք ինձ և բռնությամբ զրկել. մի՞թե այս էլ պիտի բռնության առարկա դարձնեք, որ աստված ինձ ժառանգություն է տվել։ Մի՞թե դու միայն պիտի բնակվես այս երկրում։ Թող աստված տեսնի ու դատ անի, իրավունք տալով ինձ որպես արդար դատավոր»[1]։

Ապա Գրիգոր անունով իր եղբորորդու հետ Գուրգենը կազմակերպում է մի շատ փոքրիկ գունդ, 200 հոգուց ոչ ավելի։ Աշոտը, արհամարհելով այդ փոքրիկ խումբը, ոչինչ տեղ է դնում նրան և զգուշության միջոցներ ձեռք չի առնում։ Իսկ Գուրգենը գեղեցիկ կերպով օգտվում է այդ հանգամանքից և կեսգիշերին Գրիգորը հանկարծակի հարձակվելով Աշոտի բանակի վրա, այնպիսի մեծ թափով է զարնվում և ջարդում, որ Աշոտը հազիվ կարողանում է մեն-մենակ ձի հեծնել և փախչել Ռշտունյաց Ոստանը։ Շուտով մի խոշոր գնդով օգնության է գալիս Դերենիկը, բայց տեսնելով, որ բանը վերջացած է, թողնում է ու ետ քաշվում։ Աշոտը նոր մեծ զորք է հավաքում, թվով 5 հազար։ Նրա հետ միանում են և ուրիշ նախարարներ։ Մինչև իսկ Աշոտ իշխանաց իշխանն էլ ուղարկում է իր Սահակ որդուն։ Սակայն այս մեծ պատրաստությունն էլ չահաբեկեց քաջամարտիկ Գուրգենին, և Կանգուար բերդի մոտ երկու կողմերը պատերազմ մղեցին երկու ամիս, որ, սակայն, ոչ մի արդյունք չտվեց։ Սահակ Բագրատունին և ուրիշները մեջ ընկան և հաշտություն կնքեցին։ Աշոտն ու Գուրգենը հանդիպեցին իրար, ողջունեցին և ուխտեցին միշտ խաղաղությամբ մնալ։ Եվ այս՝ ի մեծ բարեբախտություն ժողովրդի, որ միակ վնասվողն էր իր ավատական տերերի կալվածական անընդհատ պատերազմներից։

Շուտով Աշոտ Արծրունին պատերազմի բռնվեց Ութմանիկ անունով արաբների հետ, որոնք, ինչպես գիտենք, Վանա լճի հյուսիսային ափն էին գրաված։ Պատճառն այն էր, որ Ութմանիկներն սպանել էին Ռստոմ Վաչուտունուն, որ Վասպուրականի ավագ իշխաններից էր։ Աշոտը պաշարում է նրանց Ամյուկ անունով բերդը, բայց որովհետև նա միանգամայն անառիկ էր, թողնում և գրավում է Վարագի սարը, ուր նույնպես տիրում էին Ութմանիկները։ Բայց այս հաջողություններին վերջ դրեց արաբացի Հիսե Շեհի որդին (Իսա Շեյխի որդի), որը Հայաստանի ոստիկան էր կարգված և որին օգնության էին կանչել Ութմանիկները։ Նրա ձեռքի տակ կար 15 հազար ձիավոր զորք, որի մեջ էին և Մանազկերտի արաբ զորքերը (Կայ-

[1] Թովմա Արծրունի, էջ. 212։

սիկները)։ Այս բազմության դեմ գնաց Աշոտն իր բանակով, որ 2 հազարից ավելի չէր և որի մեջ էր նաև Գուրգեն իշխանը։ Բայց գտնվեցին հայ իշխաններ, որոնք շուտ ըմբռնեցին, թե ի՛նչ վախճանի կարող էր հանգել Աշոտի այս հախուռն և խիզախ արշավանքը, ուստի հաջողեցրին հաշտությամբ գործը վերջացնել։ Իսան համաձայնություն տվեց և Վանում կնքվեց հաշտություն.—հայերը պատանդներ տվին, խոստացան հարկերը վճարել և այսպիսով թույլ չտվին, որ Իսայի բանակը տարածվի Վասպուրականում։ Նա հեռացավ Հայաստանից և գնաց Պարտավ։ Վասպուրականը խաղաղվեց, և Աշոտն այնուհետև պատերազմական գործողություններ չունեցավ ոչ ոքի դեմ։ Նա վախճանվեց 874 թվականին։

Այս խռովությունների միջոցին էր (868 թ.), որ նորից կրկնվեց երկրաշարժը Դվինում և շրջականերում, այս անգամ ավելի ահեղ չափերով և անհամեմատ ավելի մեծ զոհերով։ Ժողովրդի սարսափը ծայրահեղ էր։ Երկրի տատանումները տևեցին համարյա մի ամբողջ տարի և հաճախակի ընդունում էին մեծածավալ աղետի կերպարանք։ Կոտորված մարդկանց թիվը հասնում էր, ինչպես պատմում է մի գրավոր աղբյուր, 120 հազարի[1]։ Այսպես հարվածվում էր Արարատյան նահանգը, որ բոլոր քաղաքական պարագաների մեջ շարունակում էր մնալ Հայաստանի սիրտը։ Եվ եթե կար գեթ մի հանգամանք, որ կարող էր բուժիչ նշանակություն ունենալ մեծ դժբախտության մեջ, այդ այն էր, որ երկիրը Շահապի արշավանքից, այն է՝ 863 թվականից հետո վայելում էր կատարյալ խաղաղություն, որ և լիուլի հնարավորություն էր տալիս երկրաշարժի կոտորածից ազատ մնացած ազգաբնակությանը շինարարական աշխատանք զարգացնել իր տնտեսական բարեկեցությունը վերականգնելու համար։ Վասպուրականն էլ Աշոտի մահից հետո, հաղորդակից եղավ այդ խաղաղության։ Իշխանական գահերեցությունը մնաց միայն Դերենիկին, որ և հետզհետե ձեռք բերեց հեղինակություն, վարչական փորձ, այնպես որ Թովմա Արծրունին սրտի գոհունակությամբ արձանագրում է. «Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք»[2]։

Այս բարեբեր խաղաղությունը փորձեց խանգարել արաբների կողմից սարքված մի նոր դավադրություն, բայց Աշոտ իշխանաց իշխանը զգաստ, շրջահայաց և եռանդուն միջոցներով կարողացավ խեղդել այն։ Այս դավադրությունը գալիս էր Պարտավ քաղաքից։ Ինչպես գիտենք, Շեյխի որդի Իսան, հեռանալով Վասպուրականից, գնաց հաստատվելու Պարտավում։ Այդտեղ նա քաղաքապետ նշանակեց մի արաբ պաշտոնակալի, որ Եմենից էր՝ Մուհամմեդ Էբյուլվեր անունով, որին մեր պատմագիրներն անվանում են Եմենիկ կամ Համանիկ Մահմեդ որդի Ապլվիտա։ Սա հաջողացրեց իր կողմը գրավել քաղաքացիներից շատերին և ապստամբություն բարձրացնել Հիսեի (Իսայի) դեմ։ Վերջինս օգնության կանչեց հայ նախարարներին, որոնց հետ գնաց և Աշոտ իշխանաց իշխանը։ Պատերազմական գործողությունները շարունակվեցին մոտ 13 ամիս, Աղվանից մայրաքաղաքը պաշարված էր։ Սակայն տեսնելով, որ գործը շատ դժվարությունների հետ է կապված, Հիսեն հեռացավ Աղվանքից և գնաց Սիրիա, որի կուսակալն էր

---

[1] Ալիշան, «Յուշիկք Հայրենեաց Հայոց», Վեն., 1867, հ. Ա, եր. 463։
[2] Եր. 217—218։

նշանակված։ Այս հաջողությունից ավելի ևս ինքնավստահություն ստացած
Եմենիկը Պարտավից առաջարկություն ուղարկեց հայ նախարարներին, որ
իրեն ճանաչեն Հայաստանի ոստիկան։ Բայց նախարարները չուզեցին
նրան և պատգամավորություն ուղարկելով խալիֆի մոտ, խնդրեցին ոստի-
կան նշանակել Ահմադ իբն-Խալդին (մեր պատմագիրների մոտ՝ Ահմադ
որդի Հալթի կամ Համադա), որ քիչ առաջ վարել էր նույն այդ պաշտոնը
Հայաստանում։ Խալիֆը կատարեց այդ խնդիրքը, և Ահմադը Հայաստան
եկավ Բաղեշի ճանապարհով։ Ինչպես սովորություն էր, հայ նախարարները
հարուստ ընծաներով դիմավորեցին նրան սահմանագլխին, Դատուանում,
որ գտնվում էր Վանա լճի հարավ-արևմտյան անկյունում և այդ ժամա-
նակները նույնպես մտնում էր այն երկրների մեջ, ուր հաստատված էր
արաբական ազգաբնակություն՝ իր սեփական առանձին իշխանական կազ-
մակերպությամբ։ Դիմավորելու գնացել էին, ի միջի այլոց, Արծրունյաց
գահերեց Գրիգոր-Դերենիկը, իշխանաց իշխան Աշոտի կողմից նրա եղբայր
Շապուհը։ Դատուան էին և Մանազկերտի Կայսիկների ցեղապետը, ինչպես
նաև Վանա լճի ափին եղած ուրիշ այլազգի տիրողներ։
Եվ ահա մինչդեռ հայ իշխանները միամտությամբ իրենց հպատակա-
կան պարտքն էին կատարում՝ մեծարանքներ մատուցելով խալիֆի ներ-
կայացուցչին, նրանց թիկունքում սկսեց հյուսվել մի դավադրություն,
որն սպառնում էր նոր արյունհեղությունների թատերաբեմ դարձնել Հա-
յաստանը։
Դավադրությունը նորից գալիս էր Պարտավից, նույն Եմենիկ Մահ-
մեդից։ Նա էլ ողջունել էր նոր ոստիկանին, բայց ոչ թե անձամբ
ան գնալով, այլ մարդ և թուղթ ուղարկելով։ Բայց միաժամանակ նա
գրգռում էր Դատուանում հավաքված իր կրոնակիցներին՝ միանալ, ջարդել
հայ նախարարությանը և տիրանալ Հայոց երկրին։ Այս միտքը համակրու-
թյուն է գտնում, և Մանազկերտի Կայսիկ էմիրն ու մյուսները կարողա-
նում են այդ նպատակին կողմնակից դարձնել և նորեկ ոստիկան Ահմադին,
որը, այսպիսով, հենց առաջին քայլից ևս ապերախտություն էր ցույց տա-
լիս հայ նախարարների վերաբերմամբ։ Վտանգը սակայն հեռացվում է
Աշոտ իշխանաց իշխանի վարչական զգաստության շնորհիվ։ Տեղեկություն
առնելով մահմեդական իշխանների միջև կատարվող գաղտնի բանակցու-
թյունների մասին, նա խիստ հսկողություն է նշանակում ճանապարհների
վրա՝ թղթատարներ բռնելու համար։ Մինչդեռ նոր ոստիկանը պատրաստ-
վում էր նախարարների հետ գնալ Դվին, ուր պետք է ի կատար ածվեր
դավադրությունը, Աշոտի պահակները ձերբակալեցին մի թղթատարի, որից
խլված թուղթը բաց արեց ամբողջ դավադրությունը։ Ոստիկան Ահմադը
գրում էր Պարտավի Մահմեդին, որ նա իր դեմ մի կեղծ արշավանք սկսի
այն ժամանակ, երբ ինքը Դվին կհավաքի Հայոց բոլոր նախարարներին՝
հարկեր ժողովելու համար։ Այդ ժամանակ էլ, ուրեմն, տեղի պիտի ունենա
բոլոր դավակիցների հարձակումը հայերի վրա։ Աշոտն իսկույն կարգադրում
է, որ Դատուան հավաքված բոլոր նախարարներն իրենց գնդերով ցրվեն
իրենց երկրները, այնպես որ ոստիկանին Դվին տանողներն արդեն միայն
Մանազկերտի և հարևան մահմեդական էմիրներն էին։ Իսկ ինքն իշխանաց
իշխանը գնաց ոստիկանի մոտ, պահպանելով օրինականություն և սառ-
նասրտություն։ Ընծաներ էլ տարավ նրան և չզարմացավ, տեսնելով, որ
նա լցված է ոխով և գոռոզությամբ։ Միաժամանակ պահպանեց իր պաշ-

տոնական հարգալից վերաբերմունքը դեպի ամիրապետի ներկայացուցիչը և տեսնում էր, որ ոստիկանի սպառնական տրամադրությունը սաստկանում է օրեցօր։ Երբ այս առնչությամբ բավականաչափ հարուստ փաստեր հավաքեց, այլևս մի կողմ թողեց դիտողի դիրքը և կտրուկ միջոցի դիմեց։ Մի տոնական օր Ահմադը հանդիսավոր կերպով իջավ իր զարդարուն վրանը՝ մեծամեծներից շնորհավորություններ ընդունելու համար։ Հայոց իշխանաց իշխանը չէր, որ երևան էր գալիս այդ հանդիսավոր ասպարեզում, այլ նրա եղբայրը, Աբաս սպարապետը, զինավառ և կորովի։ Վրանը նա շրջապատել էր իր զորաբաժնով։ Ահմադն զգաց, որ իրեն վտանգ է սպառնում, բայց ոչինչ չէր կարող անել, ամբողջապես քաջարի սպարապետի ձեռքին էր։ Մինչդեռ կորագլուխ և վախեցած չգիտեր ինչ անել, Աբասը տվեց նրան մի թուղթ։ Այդ այն նամակն էր, որ Ահմադը գրել էր Պարտավի Եմենիկին և որ բռնել էին Աշոտի հետախույզ պահապանները։ Պարզ էր, որ ոստիկանը պիտի պատասխան տար իր ապերախտության, իր դավադրական ձեռնարկության համար։ Դատավճիռը կայացավ իսկույն, առանց նույնիսկ մեղադրյալին հարց ու փորձ անելու, քանի որ ապացույցն անհերքելի էր և լռության մատնեց մեղադրվողին։ Բռնելով նրա ձեռքից, սպարապետը դուրս հանեց նրան վրանից, նստեցնել տվեց այդտեղ պատրաստ պահված ջորու վրա, և հրամայեց նրան գնալ որտեղից եկել է և այլևս չվերադառնալ։ Ահմադը և իր հետևորդ էմիրները զորքերի հսկողության տակ տարվում են մինչև Մանազկերտ, ուր մնում են տեղացիները, իսկ ոստիկանին Աշոտի որդի Շապուհը տանում է մինչև սահմանագլուխ[1]։ Այսպես երկրից վռնդվում է նրա բարձր կառավարիչը։ Այդպիսի հանդգնություն, առանց պատիժ կրելու վախի, կարող էր ցույց տալ միայն Աշոտը, քանի որ նրա անկեղծ հավատարմությունը դեպի արաբական գահը, կասկածի առարկա դառնալ չէր կարող։ Եվ իրավ, արաբական արքունիքը պատասխանատու չհամարեց Աշոտին այս գործի համար, որ մի ուրիշի նկատմամբ գուցե պետական ամենածանր հանցանք համարվեր։ Եվ իհարկե, հայ ժողովուրդը հիանալով պիտի հիանար իր իշխանաց իշխանի այս մեծ շնորհքի վրա, և ճիշտ որ հենց այստեղ է, որ Թովմա Արծրունին Աշոտին անվանում է «բարձրագոյն և հանճարեղագոյն քան զբնաւ Հայաստանեայս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից»։

Հեռացնելով դավաճան ոստիկանին, Աշոտը, առանց ժամանակ կորցնելու, ձեռք զարկեց այս խռովության մեջ մասնակցողներին էլ զսպելու։ Առաջ իր ուշադրությունը դարձրեց Գուգարքի և Վրաստանի հարավային սահմանագլուխ գավառների վրա, որոնք բաժանված էին մանր իշխանությունների, մեծագույն մասամբ Բագրատունիների տոհմին էին պատկանում և ճանաչում էին Աշոտի գերիշխանությունը։ Այդ իշխանների մեջ էր Աշոտ Կյուրապաղատի որդի Գուարամը, որ բացի տոհմային կապից՝ խնամիական մերձակցությամբ էլ էր կապված Աշոտի հետ, լինելով նրա հորաքրոջ ամուսինը։ Սրա աջակցությամբ իշխանաց իշխանը ձերբակալեց և Վրաստանի սահմաններից դուրս վտարեց Թիֆլիսի ամիրային (880 թ.)։ Այնուհետև նա գնաց Մանազկերտի և Վանա լճի արևմտյան ափի ուրիշ արաբ ցեղապետներին նվաճելու համար, որոնք, ինչպես տեսանք, Ահմադ ոստիկանի գլխավոր աշխատակիցներն էին նյութվող դավադրության մեջ։

[1] Թով. Արծր., եր. 222։

Մանազկերտի Կայսիկ ամիրան, բացի դրանից, քսությամբ թշնամական
հարաբերություններ էր գրգռել Վասպուրականի ու Տարոնի միջև և այստե-
ղից ծագած խռովությունները հանկարծակի խանգարել էին այն խաղա-
ղությունը, որ հաստատվել էր երկրում նախարարների միաբանությամբ։
Դարձյալ Գրիգոր-Դերենիկն էր, որ անձնական նկատառումներով ազ-
գամիջյան խլրտումներ էր առաջացնում։ Մենք արդեն ճանաչում ենք Տա-
րոնի իշխանապետ Բագարատ Բագրատունու երկու որդիներին—Աշոտին և
Դավթին, և տեսանք, որ դրանք էլ Բուղայի ձեռքով կալանավորված էին
և ուղարկված Բաղդադ։ Վերադառնալով գերությունից, երկու եղբայրները
վերստացան իրենց հայրենի ժառանգությունը, և Աշոտը, իբրև ավագա-
գույնը, դարձավ Տարոնի իշխանապետ՝ կյուրապաղատի տիտղոսով։ Դավիթն
ամուսնացավ Դերենիկի քույր Մարիամի հետ, և ահա այս հանգամանքն
տիթ դարձավ, որ կռվարար և կամակոր Դերենիկը բռնի ջանքեր անի՝
Տարոնի իշխանապետությունն Աշոտից խլելու և իր փեսային տալու հա-
մար։ Այս բանը հաջողվեց նրան, բայց, իհարկե, թշնամական հարաբերու-
թյուններ ստեղծեց նրա և Աշոտ կյուրապաղատի միջև։ Մանազկերտի
ամիրա Աբլբատը, հաշիվ ունենալով գրգռել Դերենիկի կասկածամտությու-
նը Աշոտ կյուրապաղատի դեմ, երկուսին կանչեց Մանազկերտ՝ որսի պա-
տրվակով և այստեղ կատարելապես հասավ իր նպատակին, կարողանա-
լով համոզել Դերենիկին, թե Աշոտը պատրաստվում է նրանից սաստիկ վրեժ
հանել։ Այն ժամանակ Դերենիկը, կալանավորելով Աշոտին, ուղարկում է
նրան Վասպուրականի բերդերից մեկը, որի անունն էր Սևան և որի տերն
էր պատանի Հասան կամ Հասանիկ Արծրունին։ Ժամանակի Գևորգ Բ կա-
թողիկոսը (877—897 թթ.), որ Աշոտ կյուրապաղատի անձնական բարե-
կամն էր, գնաց Վասպուրական՝ անձամբ խնդրելու, որ Դերենիկն արձակի
բանտարկվածին, բայց որևէ հաջողություն չունեցավ, Դերենիկն անողոք
մնաց։
Գործն այս դրության մեջ էր, երբ Աշոտ իշխանաց իշխանը, հնա-
զանդության բերելով Խլաթը և Բերկրին, գնաց պաշարելու Մանազկերտը։
Այստեղ նա լուր առավ, որ Դերենիկի և Աշոտ կյուրապաղատի վեճը սուր
կերպարանք է ընդունել։ Կյուրապաղատը, տեսնելով, որ Սևանի բերդից
ազատվել չի հաջողվում, իր ջանքերն ուրիշ ուղղությամբ տարավ։ Օգտվե-
լով Հասանիկի տղայական միամտությունից, սկսեց հավատացնել նրան,
թե Դերենիկը մտածում է հենց նրան էլ, Հասանիկին, վնասել, ուստի պի-
տի բանտարկի և նրան։ Երևի հենց դարձյալ Աշոտի խորհրդով էր, որ Հա-
սանիկը, իրեն պաշտպանելու համար, դավադրություն լարեց իր քեռու
դեմ։ Ձևանալով խիստ հիվանդ, նա մարդ ուղարկեց Դերենիկի մոտ և աղա-
չեց, որ գա իրեն տեսնելու։ Դերենիկը նրան այցելելու է գնում, բայց
Սևան մտնելուն պես թակարդի մեջ է ընկնում։ Գիշերը, երբ ամենքը քնած
էին և բերդի մեջ անշարժություն էր տիրում, իբր թե հիվանդ Հասանիկը,
զինված մարդկանց գլուխ անցնելով, մտնում է Դերենիկի մոտ, կալանա-
վորում է նրան և փակում բերդի մի մասում։ Իսկ Աշոտ կյուրապաղատն
ազատվում է և հեռանում բերդից։ Մանազկերտի տակ գուժկանից լուր
առնելով այս բոլորի մասին, Աշոտ իշխանաց իշխանն շտապեց իր փեսային
ազատության հասնել։ Եվ հաշտությամբ վերջացնելով գործը Աբլբատ ամի-
րայի հետ, աճապարեց Վասպուրական։ Այս անգամ էլ նրա հետ էր Գևորգ
կաթողիկոսը, որ հիմա էլ Դերենիկի համար պիտի միջնորդեր Հասանիկի

մոտ։ Եվ իրավ, Աշոտը պատերազմական գործողությունների չդիմեց, և Սևանի պատանի տիրոջը հեշտությամբ կարելի եղավ համաձայնեցնել, որ արձակի իր քեռուն։ Սակայն Հասանիկն իր ապահովության համար պատանդ պահանջեց, ուստի նրա մոտ թողնվեց Դերենիկի որդիներից Գագիկը, որ հետո պիտի հռչակվեր իբրև Վասպուրականում թագավորության հիմնող։ Սակայն այս պատանդը Դերենիկի համար արգելք չհանդիսացավ իր կիրքն առաջ տանելու համար, և մենք, այս նախարարական մանր-մունր վեճերի ու հակառակությունների պատկերը լրացնելու համար՝ պիտի ասենք և այն, որ Դերենիկը ձերբակալեց Հասանիկին, հափշտակեց նրա Սևանը, բայց հետո, ակնածելով իր աներոջից, արձակեց նրան և բերդն էլ վերադարձրեց։

5. Աշոտ Ա թագավոր Հայոց (887—891 թթ.): Այս ազգամիջյան փոքրիկ պատահարից հետո նոր խաղաղություն տիրեց երկրում, և Աշոտը համար միջոց ուներ զբաղվելու իր գլխավոր գաղափարով, այն է՝ իր համար թագավորական գահ պատրաստելով։ Այս մի բնական հետևանք էր նրա ամբողջ երկարատև գործունեության, որի մանրամասնությունները մեզ արդեն քաջածանոթ են։ Պատրաստության գլխավոր և ամենահաստատ հենարանը երկրի ներսում, ավատական իշխողների շրջանում ստեղծված միակամությունն էր։ Աշոտի գլխավոր աջակիցներն էին փեսան՝ Գրիգոր-Դերենիկ Արծրունի, թոռը՝ Գրիգոր Սուփան Սյունյաց իշխան և նրա հետ միացած՝ Սյունյաց մյուս մեծ իշխանը, Վասակ Իշխանիկ անունով։ Հոգևոր իշխանությունն էլ ամբողջովին նրա ձեռքին էր, քանի որ Գևորգ կաթողիկոսին նա ինքն էր նշանակել։ Ներքին շատ կարևոր ուժ էր և զորքը՝ իր քաջարի սպարապետի հետ։ Աշոտն ազգակցական կապերով և խելացի ու մեղմ վարվեցողությամբ շատ համակրանք էր նվաճել և հարևան երկրներում, մանավանդ Վրաստանում։ Այս բոլոր ուժերն էլ Աշոտը շարժողականության մեջ կարող էր դնել երբ և կամենար՝ խալիֆին դիմում անելու և նրանից թագ խնդրելու համար։ Այդ ժամանակները չափազանց նպաստավոր ընթացք ունեին նաև արտաքին քաղաքական հանգամանքները, որոնք պակաս զորեղ ներգործություն չարին այս հարցում։ Զգտումն ուղղակի և անուղղակի կերպով խրախուսվում էր թե՛ Բյուզանդիայի և թե՛ Արաբիայի ներկայացրած պայմաններով։

867 թվականին բյուզանդական գահը բարձրացավ Վասիլ Ա կայսրը, որ կոչվում էր Մակեդոնացի, որովհետև ծնվել էր Ադրիանապոլսում։ Բայց նա ծագումով հայ էր։ Վասիլը մեկն էր բյուզանդական փառավոր կայսրներից, մի զինվորական հանճար, որին կարելի են համարում դնել Նապոլեոն Ա-ի շարքում[1]։ Նա հիմք դրեց մի ամբողջ հարստության (դինաստիայի), որ տևեց համարյա 160 տարի և կոչվում է Հայկական: Վասիլը—հազվադեպ երևույթ՝ չէր մոռացել իր իսկական հայրենիքը և հարաբերություններ սկսեց իշխանաց իշխան Աշոտի հետ։ Հայ աղբյուրներից մեկն այդ հարաբերություններին սոսկ անձնական հանդամանք է տալիս։ Վասիլը իրեն համարում էր ծագումով Արշակունի130 և իմացած լինելով, որ Արշակունի թագավորները թագադրվում էին Բագրատունի իշխանների ձեռքով, 876 թվին Հայաստան ուղարկեց Նիկիտ անունով ներքինուն խնդրելով, որ Աշոտը, իբրև Բագրատունի, թագ ուղարկի իրեն[1]։ Բայց չի կարելի ասել, իհարկե, թե միայն այս էր հայերի հետ կայսրի ունեցած հարաբերությունների բովանդակությունը։ Այս բանն ապահովեցնում է Հովհաննես կաթողիկոսը, որի պատմածից շատ որոշ կերպով հետևում է, թե կայսրի և Աշոտի միջև հաստատված էին շատ մերձավոր, նույնիսկ մտերմական հարաբերություններ։ Նա ասում է. «Այլ և մեծ կայսրն Յունաց Բարսեղ ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և սիրոյ հաստատէր ընդ արքային[2] մերոյ Աշոտոյ, որդի սիրելի զնա անուանելով և հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս թագաւորութեան իւրոյ»[3]։ Բյուզանդիայի շահն էր մոտենալ Արևելքին, մանավանդ Հայաստանին և Վրաստանին, նախկին ազդեցությունը վերականգնելու համար։ Վասիլ կայսրը, իբրև շատ ուժեղ մի ինքնակալ, պետք է որ ունեցած լինի այդ երկու երկրներն արաբական տիրապետությունից հանելու և իր ազդեցության ենթարկելու միտքը։ Անշուշտ, հայ նախարարական դասակարգն էլ հենց այս հեղինակավոր հովանավորության վրա էր հենվում և նրա անունից էր խոսում, երբ արաբական իշխանավորների առջև միջնորդում էր սեփական թագավորություն ունենալու մասին։

Մինչդեռ այսպես էր Բյուզանդիան, արաբական խալիֆաթը ներկայացնում էր կատարյալ անկման տեսարան։ 870 թվականին թագավորեց Մոթավաքիլի որդի Ահմեդ էլ-Մոթամիդը։ Ամեն կողմից իսլամական կայսրությունը հարվածում էին ապստամբությունները։ Ապստամբություն կար Եգիպտոսում, կար և Բասրայում, ահավոր էր մանավանդ այն ապստամբությունը, որը բորբոքվեց արևելյան Պարսկաստանում Սաֆֆարի որդի Յակուբի ղեկավարությամբ և որը շուտով բռնեց նաև Կասպից ծովի հարավային ափերը։ Իսկ խալիֆն իր զվարճություններին էր անձնատուր եղած, և կիսանկախություններ էին ստեղծվում նրա մեծ պետության զանազան կողմերում։ Ահա այս նեղ ժամանակներում էր, որ հայ նախարարներն Իսա իբն-Շեյխի միջոցով խնդրեցին խալիֆին, որ նա Հայաստանում թագավորեցնի Աշոտ Բագրատունուն։ Ինքն Իսան էլ ապստամբական նպատակներ ուներ, ուստի հանձն առավ այդ միջնորդությունը, մանավանդ որ լավ հարաբերություններ ուներ Աշոտի հետ։ Գործը հեշտացնում էր հենց այն հանգամանքը, որ ոչ ոք առհասարակ ամբողջ արաբական պետության մեջ չէր կարող կասկածել, թե Հայոց իշխանաց իշխանը կարող է որևէ վնաս ներկայացնել պետական տեսակետից։ Արաբական արքունիքում ստեղծված դրության հետևանքով, Հայաստանից եկած առաջարկությունը գրգռիչ տպավորություն չարավ, այլ ընդհակառակն, ընդունվեց իբրև պետական շահերին միանգամայն համապատասխանող առաջարկություն։ Հայաստանի թագավորության միջոցով էր կարելի հավաքված, միասին շաղկապված դրության մեջ պահել ամբողջ արաբական Այսրկովկասը և վերջինս պատվար դարձնել այն պարսկական շարժումների դեմ, որոնք հանդես էին եկել Կասպից ծովի հարավային շրջաններում և նույնիսկ Ատրպատականում։ Մոթամիդ-Բիլլահ խալիֆն ընդունեց Իսա իբն-Շեյխի միջնորդու-

[1] Г. Гельцер, «Очерк политической истории Византии», СПБ, 1912, стр. 80.

[1] Վարդան Բարձրբերդցի, «Պատմ. Տիեզերական», տպ. Մոսկ., եր. 116։

[2] Վասիլ կայսրի կենդանության ժամանակ, այսինքն մինչև 886 թվականը, Աշոտը դեռ պաշտոնապես թագավոր չէր հռչակված։

[3] Յովհաննէս կաթող., «Պատմ. Հայոց», տպ. Թիֆլիս, եր. 177։

թյունը և հենց նրան էլ հանձնարարեց արքայական թագ ու զգեստ տանել Աշոտին և հայտարարել նրան Հայաստանի թագավոր։131

Այս դեպքը տեղի ունեցավ 887 թվականին[1]։ Աշոտ Ա-ն հանդիսավոր օծում ստացավ Գևորգ կաթողիկոսից և բնակության տեղ հաստատեց իր տոհմային կալվածում, Շիրակ—Արշարունիքի սահմաններում։ Երկու խոշոր ավաններ—Երազգավորս կամ Շիրակավան (Վերին Շիրակ) և Բագարան (Արշարունիքում) դարձան այն տեղերը, որոնք կարող էին կոչվել նոր թագավորության մայրաքաղաքներ։ Աշոտին Հայաստանի թագավոր ճանաչեց նաև Բյուզանդիան։

Եվ այսպես, Արշակունյաց անկումից (428 թ.) չորս ու կես դար անցած՝ Հայոց աշխարհը նորից մտնում էր սեփական թագավորությամբ կառավարվելու իրականության մեջ։ Այս վերանորոգումն իր մեջ կրում էր հին իրականության հարազատ գծերը, ամենից առաջ այն, որ այդ մի լիակատար քաղաքական անկախություն չէր, այլ գերազանցորեն ներքին ինքնավարություն՝ մի մեծ պետության հովանավորության տակ։ Այս դրությունը հատուկ էր, ինչպես տեսանք Հայոց պատմության ամբողջ ընթացքում, մինչև 5-րդ դարը, այն միջավայրին, որ աշխարհագրորեն և քաղաքականորեն ներկայանում էր Հայկական Բարձրավանդակը։ Այս, իհարկե, մի շատ մեծ նվաճում էր, որ անում էր հայ կյանքն իր զարգացման համար, մանավանդ այն շրջանի համեմատությամբ, երբ երկրի բախտը տնօրինում էին Դվինում նստած մարզպաններն ու ոստիկանները, այսինքն՝ երբ տիրող պետությունն ամեն անգամ հնարավորություն ուներ կոպիտ կերպով միջամտելու երկրի ներքին գործերին և ապստամբության գիրկը նետելու հուսահատության հասած նախարարներին։ Այժմ վերանում էր այդ խնամակալությունը, և այս մի մեծ շարժառիթ էր, որ մղեց հայ կյանքը դեպի խաղաղություն և սրա հետ անմիջապես կապված ներքին բազմակողմանի զարգացում։

Բայց նորահաստատ թագավորությունը հիմնավորապես տարբերվում էր հնից իր իրավասության բնույթով։ Մինչդեռ հինը համազգային իշխանություն էր, որ հնար եղածին չափ միացնում էր ամբողջ երկիրը, Աշոտի թագավորությունը սաղմնավորվում էր գավառական անձուկ տեղայնության ձևի մեջ։ Այս հանգամանքը մի շատ խոշոր արգելք էր նոր կարգի բեղմնավորման և հարատևության համար։ Բայց այս հարցը, ինչպես երևում է, չէր էլ զբաղեցնում Աշոտին, քանի որ նրա իշխանությունը նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս էլ էր տարածվում։ Այս, այնուամենայնիվ, չէր նշանակում, թե Աշոտի թագավորական իշխանությունն ապահովապես համազգային էր և այդպես էլ պիտի մնար։ Այսպես էր թելադրում այն հանգամանքը, որ արաբական իշխանությունը միայն մասնավոր, գավառական թագավորություններ էր թույլ տալիս իր պետության սահմաններում։ Հայաստանը հենց սկզբից էր միևնույն իրականությունը հաստատում իր սահմաններում։ Այսպես, Աշոտի հետ համարյա միաժամանակ, Բագրատունի մի այլ իշխան, Համամ անունով, գնալով Աղվանից աշխարհը այնտեղ թագավորություն է հիմնում, դարձյալ, իհարկե, արաբների թույլտվությամբ[2]։ Սա մի շատ պերճախոս նշան էր, որ Հայաստանում էլ

---

[1] Թով. Արծ., եր. 230։

[2] Մովսէս Կաղանկատուացի, «Պատմ. Աղուանից», տ. Թիֆլիս, եր. 388։

միայն գավառական անջատականությունն է կարողանալու քաղաքական բովանդակություն ստանալ։

Դեռ նոր էր Աշոտը թագով պսակվել, երբ նրա փեսա Դերենիկը զոհ գնաց մի դավադրության և մեծ սուգ պատճառեց նրա դուստր Սոփիին և Վասպուրականին։ Իր անհանգիստ և տաք բնավորությամբ Արծրունի իշխանապետը շարունակ նոր հարցեր ու հուզումներ էր հարուցում։ Այս ժամ Արծրունի մի ուրիշ իշխան էր, Վահանի և Աշոտ թագավորի աղջկա որդի Գագիկը, Աբումրվան կոչված, որ գրգռեց քինախնդիր Դերենիկի թշնամությունը։ Կարծելով, թե իր քենու որդի Աբումրվանն իր թշնամի Աշոտ կյուրապաղատի կողմնակիցն էր, Դերենիկը վճռեց նրան էլ իր ձեռքը գցել և այս բանը հանձնեց նույն հնարիմաց Հասանիկին, որին վերադարձրել էր նրա հայրենի կալվածները (Սևան բերդը) հենց այդ պայմանով։ Հասանիկը գնաց Կորդվաց աշխարհի Ճահուկ բերդը, ուր ամրացած էր Գագիկը, կարողացավ խաբեությամբ բռնել նրան և շղթայակապ՝ տալ Դերենիկի ձեռքը։ Սա բանտարկում է նրան Վանում և հսկողությունն էլ հանձնում է իր Սոփի կնոջը։ Աշոտ թագավորն արդեն ձանձրացել էր իր փեսայի արարքներից և սաստիկ դժգոհ էր մանավանդ վերջին ժամանակները, երբ նա նույնիսկ իր խրատները չէր լսում, այնպես որ մինչև անգամ լուրեր էին կազմվել, թե աներն ուզում է, փեսային կարգի բերելու համար, բանտարկել նրան։132

Բայց հենց այդ միջոցին դավադրություն կազմակերպվեց Դերենիկի դեմ, որին մասնակցում էին Պարտավի Եմենիկը, Մանազկերտի Կայսիկ տիրողը և ուրիշները։ 887 թվի աշնան վերջերին Դերենիկն ուղևորվեց Մաուական ավանը, որ Արաքսի ափին էր գտնվում, Ծուաշ գավառում, և Արծրունիների ձմեռոցն էր։ Ճանապարհը Հեր (այժմ Խոյ) քաղաքովն էր։ Հերի քաղաքապետն այդ միջոցին մի արաբ էր, նույնպես մասնակից Դերենիկի դեմ կազմակերպված դավադրության, որ և հաջողվեց հենց այդտեղ, երբ Արծրունի իշխանապետն անցնում էր այգիների միջով։ Դավն ուշ նկատվեց, բայց և այդպես, դեռ կարելի էր խուսափել վտանգից, եթե փոքր-ինչ սառնասիրտ և շրջահայաց լիներ Դերենիկը։ Չնայած իր հետևորդների զգուշացումներին, նա, բռնված մի քաջարի վճռականությամբ, աշտանակեց իր ձին և առաջ նետվեց։ Սակայն տեղի դիրքն այնպես էր, որ նրա մարդիկ չկարողացան հետևել նրան, ուստի թշնամիները շրջապատեցին նրան և սպանեցին։

Թովմա Արծրունին, որ իր տոհմի իշխանների, մանավանդ Դերենիկի և նրա ընտանիքի ոգևորված փառաբանողն է, երկար նկարագրում է այն սուգը, որ Դերենիկն իր եղեռնական մահով պատճառեց Վասպուրականին։ Այս նկարագրության մեջ Արծրունի տան պատմիչը վերին աստիճանի պերճախոս է, բանաստեղծական տրամադրությամբ լցված, որ, իհարկե, անխուսափելի է դարձնում չափազանցությունները։ Բայց կենցաղական տեսակետից հետաքրքրական են պատմիչի այդ անկեղծ զեղումները, և նրանց օգնությամբ պատմությունը կարող է գոնե մի փոքրիկ անկյուն լուսավորել հայ ավատական բարքերի աշխարհից։ Եվ ահա մեծ և համատարած սուգի առաջին շարքում մենք տեսնում ենք այն ազատագունդ զորքը, որ հետևում էր Դերենիկին, բայց չկարողացավ պաշտպանել նրան։ Կորցնելով իր տիրոջը, նա ցրվում է լեռներն ու դաշտերը, «վայերով, ողբերով և արտասուքներով լցնում էին երկիրը դառնությամբ և աղիքների

խորովման կսկիծից երկրի վրա թավալված՝ թմրել էին մահվան դառնաճաշակ բաժակից խմելով։ Ձեռնասուն մանուկները, որոնց վրա իշխանը հենվում էր իր ձեռքերով, խեղդ գցելով նրանց պարանոցները, թափում էին իրենց արյունը, լավ համարելով մահը, քան ապրելը։ Նաև տիրասերները, հավաքվելով սպանման տեղը և գիշերապահի տրամադրությամբ կատաղած՝ հաչում էին երկինքին նայելով և հալածական էին անում անապատի գազաններին, մինչև որ հողի վրա ընկած արյան կաթիլները չորացրեց արեգակի ջերմությունը»։ Գույժը հասնում է իշխանական ապարանքը։ Մոռացվում է ամեն ինչ, մինչև իսկ մանուկներին կաթ չեն տալիս, ամենքն զբաղված են միայն սգով։ Գեղանի է Սոփի տիկինն ինչպես արփի։ Նրա ապարանքում միայն կուրծք բախելու, ճակատին խփելու ճայթմունքներն են բարձրանում, մեկ էլ սուր ճիչերը։ Այսպես անում են լալկան կանայք, կանչելով միալար. «Վա՜յ, կորավ մեծանուն իշխանը և անտեր մնաց Հայոց աշխարհը»։ Իսկ Սոփին անպատմելի մի ուժ է ստացել, չի ենթարկվում ընդհանուր լքման, չի ուզում հավատալ բոթին։ «Ի՞նչ եք դուք, ով մարդիկ,— ասում է նա,— և ի՞նչպես եք հանդգնում այդպիսի բաներ ասել։ Ոչ մի տեղ թշնամի չի երևում և պատերազմ չկա ոչ մի տեղ։ Եվ ո՞վ համարձակվեց այդպիսի բան անել, ո՞վ էր, որ իմ ոսկեփետուր, առաջամարտիկ վարուժանը հավահար արավ, փոխանակ նրանից պատառպատառ լինելու. ո՞վ կարող էր ձեռնհաս լինել բարձրաթռիչ արծիվը քաջահնչուն և ահարկու ձայնով ցած սուզելու համար. ո՞վ էր, որ կարողանար սանձել անհաղթ վիշապը, մոտենար նրան և ինքն ապրեր»։ Այսպես էր խոսում Վասպուրականի տիկինը և այսպիսի շատ ուրիշ բաներ էլ էր ասում։ Բայց բոթը ճշտվեց։ Եվ այն ժամանակ տիկինն ընկնում է գետին, ճակատը դնում է հողի վրա, մոխիր է ցանում գլխին, հանում է իր պատվական մարգարտաշար քողը, սև շորեր է հագնում, թուխ կտոր է կապում գլխին։ Երգեցիկ և լալկան կանանց խմբեր է կազմում, դաս-դաս դնում, կարգավորում, հրեական կարգով ողբ ու նվագ հարդարում։ Սենյակների դռներից վերցրին կամարաձև ոսկեթել վարագույրները, նրանց տեղ կոպիտ սև գործվածքներ կախեցին։ Հրաշակերտ ապարանքի բոլոր պատուհանները խցեցին։ Այսպես կամեցավ տիկինը։ «Որպեսզի,— ասաց նա,— արեգակն երկնքի անհաս բարձրություններով ճեմելով, երբ իր ճառագայթները ցած գցի, չլուսավորի իմ խավարը, և լրման հասած լուսինն արուսյակի և աստղերի հետ իմ մթությունը չնոսրացնի, մինչև որ աստված կտա իմ որդիներից մեկին ուժ իմ կենդանության ժամանակ կամ մահից հետո նրա հոր արյան վրեժը հանելու համար այն մարդկանցից, որոնք այժմ խավարին հասցրին ինձ»։ Ողբը պատեց և երկրի հողագործներին, արհեստավորներին ու ազատներին։ Ամենքին միացնում էր կսկիծը, և ամենքն ասում էին. «Ո՞ւր կորցրինք պատվական մարգարիտը, Հայոց պարծանքը, այդ անպարտելի քաջին, որ հեշտությամբ մղում էր մեծ պատերազմները և բարձրագույն անուն էր վաստակում իր և մեզ համար։ Ո՞ւր է բարեժպիտ շրթունքների ժպիտը, որ բազմատեսակ հանդիսականների մեջ մեզ զմայլեցնում էր ուրախության բաժակով։ Ո՞ւր է նրա առատ ձեռքը, որ հարուստ պարգևներ բաշխելով մեզ շքեղացնում էր։ Վա՜յ և ավա՜ղ մեր կենդանության։ Ինչո՞ւ այն օրը մեծ պատերազմի մեջ չպատահեց մեզ. գուցե մեր կյանքն էլ վերջանար»[1]։

[1] Թով. Արծր., էջ 255—258։

Աշոտ թագավորն այդ միջոցին գնացել էր Վրաստանի կողմերը՝ ասպատակող և ապստամբ ցեղերին նվաճելու համար։ Ուստի իր Շապուհ որդուն ուղարկեց Վասպուրական՝ Սոփիին մխիթարելու և Դերենիկի ժառանգության գործերը կարգադրելու համար։ Նրա հրամանով կապանքներից ազատվեց Գագիկ Աբումրվանը, որը նրա մյուս աղջկա որդին էր և որը նշանակվեց Դերենիկի անչափահաս որդիների խնամակալ, իսկ երկրի կառավարությունը հանձնվեց Սոփիին։ Ինքը՝ թագավորը, արշավելով մինչև Կովկասի գլխավոր լեռնաշղթան, ամենայն հաջողությամբ վերջացրեց այդ կողմերի ըմբոստ տարրերի նվաճումը և բարեկամական դաշինք կապեց Եգերների (Մինգրելիայի) թագավորի հետ։ Վերադառնալով այդ արշավանքից, նա գնաց Վասպուրական՝ իր այրի աղջկան մխիթարելու։ Դերենիկի ավագ որդուն, որ հազիվ 11 տարեկան էր և կոչվում էր Սարգիս-Աշոտ, նշանակեց Արծրունյաց իշխանապետ։

Այնուհետև թագավորի կյանքի մասին տեղեկություններ չկան։ Նորից հարկավոր եղավ զորք ուղարկել Գուգարաց և Ուտի աշխարհները՝ ավազակային խմբերի դեմ կռվելու համար։ Բայց այս անգամ Աշոտն ինքը չգնաց, այլ ուղարկեց իր Սմբատ որդուն, որին տվել էր իշխանաց իշխանի տիտղոսը։ Մնալով տանը, Աշոտը, անշուշտ, ամենայն եռանդով նվիրված էր շինարարական գործունեության։ Այս ասպարեզում նա, չնայած իր ծեր հասակին, շատ մեծ գործեր կատարեց, ինչպես վկայում է ականատես պատմիչը. «Այնուհետև բազում և երևելի կարգս յարդարէր յաշխարհի տնօրութեան իւրոյ, յօրինուածս տանց ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և հարթ հաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց, և ջերմահովիտ բարեխառն դաշտականց։ Եւ զամենայն տափարակ տեղիս ագարակս և գոմս դնէր, և զմարմանդս յայգիս և ի բուրաստանս զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան և որ ինչ ի թագաւորութեան է որ շուրջ զթագաւորութեամբ, ոչինչ իմիք կասեցուցանէր. և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտանէր»[1]։

Այս անդուլ աշխատանքները, որոնցով նա պայծառացրեց իր երկիրը, պահանջում էին, որ ծերունի թագավորը հաճախ ճանապարհորդություններ կատարեր իր պետության ներսում։ Այս ճանապարհորդություններից մեկի ժամանակ էլ նա ծանր հիվանդացավ և կանգ առավ Քարսպառ անունով քարքարոտ տեղում, և իր մոտ կանչելով Գևորգ կաթողիկոսին, բոլոր հարկավոր կարգադրություններն արավ։ Առանձնապես հոգ տանելով իր հոգու փրկության համար, նա դրամական գումարներ, ձիերի երամակներ և անասունների նախիրներ նվիրեց եկեղեցիներին, որ իր համար պատարագ անեն։ Այդտեղ էլ նա վախճանվեց (890 թվի վերջին կամ 891 թվի սկզբին), չորս տարի թագավորելուց հետո, 71 տարեկան հասակում։

Կաթողիկոսը շքեղ հուղարկավորությամբ մարմինը տարավ թագավորանիստ Բագարան ավանը, ուր գտնվում էր Բագրատունիների տոհմային գերեզմանոցը։ Դագաղը զարդարված էր ոսկեթել զգեստներով և զարդարանքներով։ Հետևից գնում էին զինավառ զորքերի շարքերը, թագավորի ընտանիքը, ապա և երեք որդիները։ Այստեղ էլ կատարվեց հայկական ավանդական սուգը։ «Անդ էր ապա տեսանել կուսանս ողբերգակս,— ասում

[1] Յովհան. կաթ., էջ 176։

է Հովհաննես կաթողիկոսը,— և արտօսրաթոր կականումն և աշխարհատիկնացն և տանտիկնացն և այլ ևս բազմութեան ռամկացն և անռամկացն»[1]։

Այսպես էր ողբում Հայոց աշխարհն իր առաջին Բագրատունի թագավորին, որ իսկապես նրա մեծ մարդն էր։

Գլուխ երկրորդ

ՍՄԲԱՏ Ա (892—914 ԹԹ.)

1. Սմբատ և Աբաս: Բագրատունյաց թագավորությունը հիմնվում էր չափազանց բարեբախտ հանգամանքների մեջ, բարի աստղի տակ, ինչպես սովորություն է ասել։ Քաղաքական այն նպաստավոր հանգամանքները, որ այնքան հովանավորում էին Աշոտին, շարունակվեցին և նրանից հետո, կատարյալ հնարավորություն տալով, որ երկիրը զարգացնի իր քաղաքական կազմակերպությունն այնպես, ինչպես իր բարձրագույն շահերն էին պահանջում։ Մենք ներկա ենք մի չափազանց հետաքրքրական ժամանակի, երբ մեծամեծ հարցեր էին դրվում և լուծվում։ Այդ ժամանակը բացվում էր դեռ ընտանեկան արյունահեղ պայքարով։

Աշոտը, մեռնելիս, եթե հաստատուն որոշում չէր արել, թե ո՛վ պիտի իրեն հաջորդի, այս, անշուշտ, այն պատճառով, որ Բագրատունյաց թագավորությունն ընդգրկել էր հին հայկական թագավորությունների (Արտաշիսյան և Արշակունի) կարգերը, իսկ այդ կարգերով գահաժառանգությունն հորից անցնում էր ավագ որդուն։ Եվ Աշոտի որդի Սմբատը, իշխանաց իշխան անվանված իր հորից, շտապեց թողնել Գուգարաց աշխարհը և վերադառնալ իր Շիրակավան (կամ Երազգավորս) կալվածը՝ ավանդական կարգով իր հոր սուգը կատարելու և ապա նրա տեղն անցնելու համար։ Բայց Սմբատի հորեղբայր Աբասը, մեզ քաջածանոթ արի սպարապետը, մտածեց փոխել ժառանգական կարգը հօգուտ իր անձի, ուստի առանձնացավ Վանանդ գավառը, սպասելով հարմար րոպեի, երբ կարող կլիներ բացարձակ կերպով խոսել իր իրավունքների մասին։ Այս հարմարությունը բերում էր իր հետ Վրաց մեծ իշխան Ատրներսեհը, որ ոչ միայն Բագրատունի էր ցեղով, այլև Սմբատ Խոստովանողի թոռնորդի էր մոր կողմից[2]։ Բացի ազգակցական կապերից՝ Ատրներսեհին Հայոց արքունիքի հետ կապում էր և վասալական դրության մեջ գտնվող իշխանի պարտականությունը։ Աշոտ թագավորը նրա հովանավորն էր հանդիսացել և Վրաստանի մի խոշոր մասի մեջ կարգ հաստատողը[3]։ Թե՛ իր երախտագիտության զգացմունքն արտահայտելու և թե՛ նորից Հայոց արքունիքի հովանավորությունն իր և Վրաստանի վերաբերմամբ ապահովելու համար՝ Ատրներսեհը գնաց Շիրակ իր ցավակցությունն արքայական ընտանիքին հայտնելու համար։ Կարգը նրան պարտավորեցնում էր նախ Աշոտի եղբորն այցելություն տալ։ Եվ Ատրներսեհը գնաց ուղիղ Վանանդ, ուր մեծարանքով ըն-

[1] Եր. 181։

[2] Մարկվարտ. «Հանդէս Ամսօրեայ», 1913, էջ 671—672։

[3] Кн. С. Баратов, «История Грузии», СПБ, 1872, в. III, стр. 18.

դունվեց Աբաս սպարապետից։ Բայց երբ մխիթարելով նրան՝ Ատրներսեհը հրաժեշտ տվեց՝ այժմ էլ Սմբատի մոտ նույն նպատակով գնալու համար, Աբասն սկսեց հավատացնել նրան, թե չպետք է այդպիսի մի քայլ անել։ Ատրներսեհը, ընդհակառակն, ապացույցներ բերեց, թե իր չգնալը զանազան տեսակ բացատրություններ և անախորժություններ պիտի առաջացնի։ Եվ որպեսզի ցույց տա, թե ինքը ոչ մի կանխակալ վերաբերմունք չունի դեպի գահի թեկնածուներից մեկն ու մեկը, խոստացավ, Սմբատին այցելելուց հետո, նորից վերադառնալ նրա մոտ։ Աբասն այլևս առարկություններ չարավ, և Ատրներսեհը գնաց Շիրակավան, մխիթարեց և Սմբատին, սգի սև շորերը հանեց և թագավորական զգեստ հագցրեց նրան։ Փոխադարձաբար Սմբատն էլ նրան մեծարեց թանկագին ընծաներով և ճանապարհ դրեց պատվով։ Ատրներսեհը գնաց Աբասի մոտ և գտավ նրան սաստիկ գրգռված իր դեմ։ Ինչպես սովորական է, թշնամական զգացմունքը հրահրում էին մի քանի քսու մարդիկ, որոնք, երևի, կարողացել էին համոզել Հայոց սպարապետին, թե Վրաց իշխանը, արքայական զգեստ հագցնելով Սմբատին, դրանով կանխորոշել էր, որ նա է օրինավոր թագաժառանգը։ Անչափ գրգռված Աբասը, մոռանալով ամեն ինչ, կալանավորեց Ատրներսեհին, երկաթե շղթաներ հագցրեց և բանտարկեց Կարսի բերդի մեջ։

Այս առիթից կռիվ է ծագում հորեղբոր և եղբորորդու միջև։ Սմբատը զորք է հավաքում և հարձակվում Աբասի վրա։ Ազգամիջյան պատերազմը շատ ավերումներ է գործում Շիրակի և Վանանդի մեջ։ Գևորգ Բ կաթողիկոսը միջամտում է՝ կողմերը խաղաղեցնելու և հաշտեցնելու համար և աղաչում է Աբասին, որ արձակի Ատրներսեհին։ Այստեղ պարզվում է, որ Հայոց սպարապետը Վրաց իշխանից դժգոհություն ունի և ուրիշ, ավելի ծանրակշիռ պատճառով։ Նա համաձայնություն է տալիս կաթողիկոսին արձակել իր շղթայակապ հյուրին, եթե սա կվերադարձնի իրեն այն երկու բերդերը, որ նա խլել էր իր, Աբասի, քրոջ ամուսին Գուրգենից և բացի դրանից՝ իր Դավիթ որդուն էլ պատանդ կտա։ Ատրներսեհն իսկույն կատարում է այդ պահանջը, բայց Աբասը դրժում է իր խոստումը և թողնում է Ատրներսեհին բանտի մեջ։ Կաթողիկոսը դառնացած դիմում է Սմբատին, որ և սաստիկ բարկանալով այս ուխտադրժության վրա, նորից պատերազմ է սկսում իր հորեղբոր դեմ։ Սա, տեսնելով Սմբատի զինվորական գերազանցությունը, փակվում է Կարսի մեջ, իսկ նրա երկրի ամբողջ գյուղական ազգաբնակությունը գաղթում հավաքվում է բերդի շուրջը, ապավինելով նրա պաշտպանության։ Սմբատն իր հարվածներն ուղղում է հենց այս գաղթականության դեմ, մի քանի անգամ ասպատակություններ անելով նրան ցրելու և կողոպտելու համար։ Աբասը պաշարման դրության մեջ էր ընկել. երկիրը քարուքանդ էր դառնում, իսկ նա բավականաչափ ուժ չուներ իր եղբորորդուն ետ մղելու համար։ Այս պատճառով նա հաշտության խոսք է բաց անում։ Եվ որովհետև Սմբատն ամենևին հոժարություն չուներ ազգամիջյան կործանարար կռիվներով զբաղվելու այնպիսի մի ժամանակ, երբ պետական ամենակարևոր հարցերն էին կարգավորման սպասում, ուստի ուրախությամբ համաձայնություն տվեց և ոչ միայն դադարեցրեց թշնամական գործողությունները, այլև կատարեց հորեղբոր բոլոր պահանջները, այն է՝ նրան պատանդ տվեց իր Աբաս որդուն և Շապուհ հորեղբոր մի որդուն։ Այս անգամ հաշտությունն իրապես կնքվեց,

և Ատրներսեհն ազատվեց բանտից։ Սմբատը նրան մեծ պատիվներով ուղարկեց իր երկիրը։

Այն ներքին հուզումը դադարելուց հետո էր, 892 թվականին, երբ Մոհամմեդ-Բիլլահ խալիֆը թագավորական թագ, զգեստներ և այլ ընծաներ ուղարկեց Սմբատին, այսպիսով սրա օգտին վճռելով այն ժառանգական վեճը, որ ազգամիջյան պատերազմի առիթ էր դարձել։ Խալիֆի կողմից թագավորեցման հանձնարարությամբ Հայաստան եկավ մի ամիրա (էմիր), որ այնուհետև ահագին դեր պիտի խաղար Սմբատի և առհասարակ Հայաստանի վիճակի վերաբերմամբ։ Դա Մոհամմեդ-Ափշինն էր, Աբու-Սաջ Դեդադի որդին[1], որ դրանից քիչ առաջ, 889—890 թվականին, նշանակվել էր Ատրպատականի կառավարիչ և օգտվելով խալիֆաթի ընդհանուր քայքայումից, իր համար այդտեղ այնպիսի մի կիսանկախ դրություն էր ստեղծել, որպիսին ունեին ուրիշ շատ էմիրներ Պարսկաստանում և ուրիշ տեղերում, ի միջի այլոց և Հայաստանի Բագրատունիները։ Այսպիսով, Հայաստանի կողքին հիմնվում էր Սաջյան հարստությունը, որ, ճիշտ է, կարճատև պիտի լիներ, բայց և պիտի ահավոր խորտակիչ ուժ զարգացներ Բագրատունյաց թագավորության դեմ։ Եռանդոտ, քաջ պատերազմող և փառասիրական տենչերով լցված մի մարդ էր Արևելքում գլուխ բարձրացրած այս նոր վեհապետը։ Բայց նրան միանգամայն արժանավոր ախոյան էր հանդիսանում և այն հայ իշխանապետը, որի համար նա թագ էր բերել։ Թագադրության հանդեսները կատարվեցին Շիրակավանում։ Հավաքվել էին շատ իշխաններ, դրանց հետ և Վրաց մեծ իշխան Ատրներսեհը։ Սմբատն ու Ափշինը խաղաղությամբ հրաժեշտ տվին իրար, բարեկամության խոսք էլ արին անշուշտ։ Բայց Աբաս սպարապետը չէր մոռացել իր ժառանգական վեճը։ Շիրակի մեծ տոներից ավելի ևս մեծ նախանձով լցված, բայց և չկարողանալով ուժի միջոցով գործել իր եղբորորդու դեմ, նա իր ամբողջ բարկությունն ուղղեց Գևորգ կաթողիկոսի դեմ, ամենայն իրավունքով նրան նկատելով Սմբատի ազդեցիկ կուսակից, որի միջոցով էր Հայոց նորապսակ թագավորը ձեռք բերել հաջողության մեծ մասը։ Աբասը փորձեց մի մեծ շարժում սկսել կաթողիկոսի դեմ՝ նրան գահընկեց անելու համար և այս նպատակով ամբաստանություններ էր տարածում նրա դեմ։ Բայց այս փորձը հաջողություն չունեցավ։ Եվ այնուհետև Աբասին մենք չենք տեսնում։ Անշուշտ, նա միանգամայն հաշտվեց դրության հետ և թույլ տվեց, որ Սմբատը հանգիստ զբաղվի իր թագավորության գործերով։

2. Սմբատի պետությունը: Աշոտ Ա-ն իրեն միանգամայն արժանավոր ժառանգ էր թողնում նորահաստատ պետության շինարարությունը նույն և ավելի ևս ուժեղ թափով շարունակելու համար։ Սմբատն այս մեծ գործի մեջ իրեն ցույց տվեց միանգամայն կարող և ընդունակ։ Ամենայն ճշտությամբ նա իր հոր քաղաքականությանն էր հետևում թե՛ ներքին և թե՛ արտաքին գործերի մեջ։ Ինչպես և Աշոտը՝ նա շատ խաղաղասեր էր և ամենից շատ հաշտության, բարոյական ազդեցության միջոցներն էր գործադրում վեճեր ու անհամաձայնություններ հարթելու և պետական անհրաժեշտության թելադրած գրավումներն անգամ գլուխ բերելու համար։ Բայց այս քաղաքականությունը ռազմական տեսակետից թուլություն չէր կարող նշանակել։ Սմբատը դարձյալ նմանվելով իր հորը, նույնքան կաքաջ և հաջողակ էր պատերազմի դաշտում, որքան խաղաղ աշխատանքներ կատարելիս։ Հին ժամանակներից էր, որ մարդկությունը գիտեր, թե ով ուզում է խուսափել պատերազմից, պիտի պատերազմի պատրաստ լինի։ Այս ճշմարտությունը, ինչպես երևում է, շատ լավ էր յուրացրել և Սմբատը։ Եվ ահա, հենվելով այդ առողջ պետական սկզբունքի վրա, գիտակցելով, որ մի երկիր պիտի բարգավաճ լինի ներքուստ և ուժեղ՝ արտաքուստ, նա ծավալում է մի շատ եռանդուն և հետևողական քաղաքականություն։

Ամենից առաջ նա շտապեց կատարել իր հոր պատվերը[1] Կ. Պոլսի արքունիքի հետ սերտ բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին։ Աշոտը, ինչպես տեսանք, միանգամայն անսխալ ըմբռնողություն ցույց տալով, անկարելի էր համարում, որ երկու հզոր մրցակից մեծ պետությունների միջև գտնվող փոքրիկ պետությունը մեկն արհամարհի մյուսը շահելու համար, ուստի և իր վասալական պարտավորությունները դեպի արաբական պետությունը բոլորովին կասկածելի չէր դարձնում՝ բարի դրացիական հարաբերություններ մշակելով Բյուզանդիոնի հետ։ Բացի դրանից՝ միանգամայն անբնական կլիներ, որ մի քրիստոնյա պետություն, սահմանակից լինելով քրիստոնեական քաղաքակրթության բարձրագույն ներկայացուցիչը հանդիսացող Բյուզանդիայի հետ, կտրվեր նրանից, մերժեր այն բարոյական և քաղաքական աջակցությունը, որ կարող էր ստանալ նրանից։ Այսպիսի մի մերձակցություն Բյուզանդիայի հետ անհրաժեշտ էր դարձնում մանավանդ այն հանգամանքը, որ այդ միջոցին կայսրության տերը հայկական և հայասեր հարստությունն էր։ Վասիլ Ա-ի որդի Լևոն Զ-ն (886—912 թթ.), որ ստացել է Իմաստասեր (Փիլիսոփա) անունը, մեծ հաճությամբ ընդունեց Սմբատի ուղարկած դեսպանությունը, որ ներկայացրեց նրան Հայոց արքունիքից ուղարկված թանկագին ընծաները։ Կայսրն ավելի առատ և մեծարժեք ընծաներով պատասխանեց, Սմբատին անվանեց «սիրելի որդի»։ Դեսպանությունը վերադառնում էր Հայաստան, բերելով նորապսակ թագավորին «...պարգևս և պատիւս,—ինչպես ասում է պատմագիրը,—գեղեցիկ զինուց և զարդուց, և ոսկեհուռ հանդերձ զգեստուց, և ըմպակս և բաժակս, և կամարս ականակապս ի համակ ոսկւոյ»[2]։ Բայց դրանից ավելի իրական և հանրաշահ պետք է համարել այն առևտրական դաշնադրությունը, որ կնքվում էր Բյուզանդիայի և Հայաստանի միջև և որի զորությամբ բյուզանդական առևտրի համար բացվում էր մի նոր շուկա, այն է՝ Հայաստանի վրայով Արաբիա։ Մշտական թշնամությունները Բյուզանդիայի և Արաբիայի միջև արգելման դրություն էին ստեղծել առևտրական հարաբերությունների համար։ Հայերը, ճանապարհ բաց անելով իրենց երկրի վրայով, մեծ շահ էին տալիս երկու հակառակորդ պետություններին, բայց իրենք էլ, իհարկե, պակաս չէին օգտվում։

Սմբատի այս միջազգային ձեռնարկությանը մեծ կասկածամտությամբ վերաբերվեց Մուհամմեդ-Ափշինը, որին Բաղդադի արքունիքը հանձնարարել էր ստանալ Հայաստանի հարկը և հսկողություն ունենալ այնտեղի անցուդարձի վրա։ Ափշինը չէր կարող նկատած չլինել, որ Սմբատը

[1] Стэнли Лэн-Пуль, «Мусульманские Династии», стр. 103.

[1] Այսպես ենթադրել են տալիս Հովհաննես կաթողիկոսի «ըստ հայրենի կարգացն ուխտի» բառերը (եր. 199)։

[2] Յովհան. կաթողիկոս, եր. 200։

ձգտում է իրեն տալ միանգամայն անկախ թագավորի դիրք։ Իսկ նրա դաշնադրությունը Բյուզանդական կայսրի հետ ընդունվեց իբրև մի վտանգ, որ կարող էր սպառնալ ամենից առաջ հենց Ատրպատականին։ Ուստի Աֆշինն սկսեց զորաժողով—պատրաստվելով հարձակման։ Սակայն Սմբատը վաղօրոք իմացավ նրա այս մտադրությունը և շտապեց կանխել այն։ Եվ 30 հազար մարդուց բաղկացած մի բանակի գլուխ անցնելով նա արագ արշավեց դեպի Ատրպատականի սահմանները։ Աֆշինը դեռ չէր էլ կարողացել տեղից շարժվել, երբ տեսավ իր առջև այդ ստվար բանակը։ Իսկ Սմբատը, պատգամավոր ուղարկելով նրա մոտ, հավատացրեց, որ իզուր է նա անհանգիստ լինում, քանի որ կայսրի հետ կայացրած համաձայնությունը ոչ թե հարձակողական, այլ միայն առևտրական բնույթ ունի, իսկ բյուզանդական առևտրից ավելի շատ օգտվելու է խալիֆը և հենց ինքը Աֆշինը։ Ատրպատականի տիրոջ համար, այս բացատրությունից, անշուշտ, ավելի համոզիչ էր Հայոց կազմ ու կուռ բանակը։ Ուստի Աֆշինը բարեկամության կապ հաստատեց Հայոց թագավորի հետ և վերադարձավ իր տեղը։

Իսկ Սմբատը, ետ քաշվելով դեպի Արարատյան երկիրը, սկսեց գործադրել իր գլխավոր ծրագիրը, այն է՝ Հայոց երկրի զանազան առանձնացած մասերը միացնել, նրանցից կազմել ընդհանուր պետական մի զանգված իր կառավարության տակ։ Այդպիսի առանձնացված մասերից էր Դվին մայրաքաղաքը։133 Սմբատը վճռեց մտնել այնտեղ, գուցե հենց այնտեղ էլ հաստատելու համար իր գահը։ Բայց քաղաքը, ուր կառավարիչ էին Մահմեդ և Ումայի անուններով արաբները, իր դռները փակեց թագավորի առջև։ Սմբատը պաշարեց մայրաքաղաքը և ամբողջ երկու տարի ջանք թափելով, վերջապես վերցրեց այն, իսկ երկու արաբ կառավարիչներին ձերբակալելով՝ շղթայակապ ուղարկեց Լևոն կայսրին, ինչպես մի ժամանակ արել էր և նրա հայրը։ Ապա Սմբատն արշավեց հյուսիս՝ այդ կողմի երկրները նորից իրեն հպատակեցնելու համար։ Մենք արդեն գիտենք, որ Աշոտ Ա-ն էլ ճիշտ այդպիսի մի արշավանք կատարեց։ Սմբատին էլ, ինչպես և նրա հորը, հանձնված էր նաև Վրաստանը, և ահա այս հարցի հետ կապված տեղական զանազան վեճերն ու բարդ հարաբերությունները կարգավորելու համար՝ նա իր իշխանության ենթարկեց բոլոր այն երկրները, որոնք գտնվում էին Կուր գետի մյուս կողմում։ Այդ մի ընդարձակ նվաճողական ծրագիր էր, որ հաջողությամբ գլուխ բերվեց մի կարճ միջոցում, այն էլ ոչ թե բացառաբար զենքի ուժով։ Մեջտեղ գործ կատարում էին և խաղաղ բանակցությունները։ Հայոց թագավորին սիրաշահման միջոցով էր հաճախ հաջողվում իր հեղինակությանը ենթարկել նույնիսկ լեռնաբնակ ցեղերը։ Եվ այս զարմանալի կթվար, եթե մեր առջև չունենայինք Աշոտ Ա-ի նույնանման քաղաքականությունը։ Որդին, ուրեմն, ամենայն հաջողությամբ հետևում էր հոր տված օրինակին։ Այսպիսով ընդարձակված պետական սահմանները Հովհաննես կաթողիկոսը գծագրում է այս կերպով.— արևմուտքում Կարին քաղաքից Կղարջք գավառի վրայով Սև ծովի ափը մինչև Մինգրելիայի (Եգերների) սահմանը և այնտեղից հասնելով Կովկասի գլխավոր շղթային՝ իր մեջ էր առնում Ծանարքը (Կախեթ) և Գուգարքը (Քարթալինիա) մինչև այժմյան Դարյալի կիրճը (Ալանաց Դուռ), որի մեջ գտնվող բերդն էլ պատկանում էր Սմբատին։ Սահմանագիծը, անցնելով Կուրի հարավային ափերով, գնում էր մինչև Թիֆլիս և այդտեղից իր մեջ էր առնում Ուտի նահանգը մինչև Տուս (այժմ Թաուզ) և Շամքոր

ինչպես գիտենք, Աշոտն Ա-ն էլ մոտավորապես այս տարածություններն էր իր ձեռքի տակ առել։ Սակայն նորերս (1918 թ.) գտնված մի ձեռագիր, որ համարվում է Շապուհ Բագրատունու Պատմությունը,134 մեզ տալիս է մի քանի լրացուցիչ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, թե Սմբատը չբավականացավ իր հոր թողած ժառանգությամբ, այլ ավելի ևս ընդարձակեց իր Հայաստանի սահմանները, գրավելով նաև Պարտավը, Սյունիքը, Նախճավանը, Երնջակը, Վաղարշավանը, Բասենը, Ապահունիք և Հարք գավառները, Տարոնը և մտածում էր նվաճել նույնիսկ և Ասորոց Միջագետքը[1]։

Հաջողությունը, այսպիսով, Հայոց թագավորի ուղեկիցն էր բոլոր ձեռնարկությունների մեջ. Սմբատը դառնում էր մի մեծ տիրապետող—«այր գոռոզ և պատերազմող և առատամիտ», ինչպես ասում է նույն Շապուհ Բագրատունին։ Նրա թագավորությանը կցած երկրները միայն հարկեր ու մաքսեր չէին տալիս, այլև իրենց զորքերն էին ուղարկում ամեն անգամ, երբ պետությունը նրանց օգնության կարիքն ուներ։ Գեղածիծաղ էր նորահաստատ խոշոր պետության արշալույսը՝ և միայն 894 թվին բնական մի սոսկալի աղետ էր, որ եկավ նրան առժամապես մռայլեցնելու։ Դվին մայրաքաղաքը նորից—և այս անգամ ավելի մեծ չափերով—կործանվեց երկրաշարժից։ Աղետը պատահեց գիշերը, երբ դժբախտ քաղաքը խոր քնի մեջ էր ընկղմված։ Փլվեցին նրա պարիսպներն ու պատվարները, բոլոր խոշոր և հաստահիմն շինությունները—ապարանքներ, եկեղեցիներ և այլ հաստատություններ, իսկ ռամիկ ժողովուրդը կորցնում էր իր տների մեծագույն մասը։ Մարդկային զոհերի թիվն ահռելի էր—70 հազար, ինչպես լսել է Թովմա Արծրունին, որ և, հավատարիմ մնալով իր դարի երգնավորական ըմբռնումներին, հավատացնում է, թե այդ մի երկնառաք պատիժ էր, որ կրում էր իր մեղքերի համար վաճառքներով հղփացած, վայելքներ սիրող մեծ քաղաքը[2]։ Իսկ մյուս ժամանակակից հեղինակը, Հովհաննես կաթողիկոսը, փորձում է ներկայացնել աղետված ժողովրդի տառապանքները. «Թողում ասել,— գրում է նա,—զազգակիցս և զկարեկիցս և պծակից հարազատութիւն մարդկան, որոնց կականումն և ողբումն և աշխարումն գուժից ճչոյ և կանչոյ և կառանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ կուսանաց և սևազգեաց կանանց, և արանց վշտահար հեծութեամբ ողացելոց՝ մինչև յերկինս բարձրացեալ հասանէր... Ու այսպէս ահ բարկութեանն ահափետ զամենեսեան առնէր...»[3]։

Ահաբեկման այս դրությունը, որով հարվածված էր Արարատյան աշխարհի սիրտը, բարեպատեհ մի հանգամանք դարձավ Մուհամմեդ-Աֆշինի համար, որ, չնայած իր կնքած բարեկամական դաշինքին, նախանձով և մեծ կասկածամտությամբ էր դիտում Հայոց թագավորության ընդարձակումն ու զորեղացումը. Իր վախը նա հայտնել էր և խալիֆին, ցույց տալով, թե հարկավոր է միջոցներ ձեռք առնել Սմբատի առաջխաղացման դեմ, և այս նպատակով օգնություն էլ էր խնդրել[4]։ Եվ ահա, հարմար համարելով հանկարծակիի բերել Սմբատին այնպիսի մի ժամանակ, երբ նա ավելի

---

[1] «Արարատ» ամսագիր, 1919, Ա—ԺԲ, եր. 51։

[2] Եր. 231։

[3] Եր. 205։

[4] Saint-Martin, „Mémoires sur l'Arménie", t. I, p. 352.

Ներքին աղետի հոգսերով էր զբաղված։ Աֆշինն սկսեց արշավանքի պատրաստվել, բայց թաքցրեց իր նպատակը, լուր տարածելով, թե ուրիշ կողմերում պիտի պատերազմի։ Այդ միջոցը նրան հաջողվեց, և երբ նա իր բանակով անակնկալ կերպով երևաց Նախճավանի մոտ, այդ ժամանակ միայն Սմբատը հասկացավ ամեն ինչ և շտապով պատրաստություններ տեսնել սկսեց։ Բայց որովհետև ուշ էր արդեն, հարկավոր եղավ թույլ տալ, որ թշնամին առաջանա մինչև Դվին և գրավի այն։ Իսկ ինքը՝ Սմբատը, թիկունք տալով Արագածի լեռներին, իր ունեցած բանակը կենտրոնացրեց Վժան գյուղում, մինչև որ օգնության կգային հյուսիսային ժողովուրդները։ Նրա համար ժամանակ վաստակեց Գևորգ կաթողիկոսը, որ հաշտարարի դեր ստանձնելով, գնաց Աֆշինի մոտ՝ խնդրելու, որ պատերազմ չլինի և երկու կողմը հաշտվեն։ Ատրպատականի տերը հոժարությամբ ընդունեց կաթողիկոսի միջնորդությունը, բայց պայման դրեց, որ բանակցությունների համար Սմբատ թագավորն անձամբ գա իր մոտ։ Գևորգը գնաց համոզելու Սմբատին, բայց որևէ հաջողություն չունեցավ։ Թագավորն ու նրան շրջապատողներն ամենայն իրավունք ունեին կասկածելու, որ Աֆշինը պարզապես թակարդ էր լարում և նրա իսկական միտքն է իր ձեռքը գցել իր ախոյանին։ Սակայն կաթողիկոսը, դարձյալ դեռ հավատացած, թե կարելի է բանակցությունները շարունակելով հաշտություն իրականացնել, վերադարձավ Աֆշինի մոտ։ Սա, անշուշտ, ենթադրելով, որ խաղաղասիրական բանագնացությունները Սմբատի սարքած պատրվակներն են, որքան կարելի է շատ ժամանակ վաստակելու համար, բանտարկեց Գևորգին, շղթաներով կապկպեց և զրկեց կյանքի բոլոր հարմարություններից, այնպես որ նրա մոտ նույնիսկ մի մարդ էլ չպահվեց, որ ձեռքին ջուր ածեր։

Ապա, շարունակելով իր արշավանքը, նա եկավ հանդիպեց Սմբատին նույն Արագածոտն գավառում, Դողս գյուղի մոտ։ Երեք օրից հետո տեղի ունեցավ կռիվ։ Սմբատը, հենվելով մանավանդ հյուսիսային քաջամարտիկ զորքերի վրա, ջարդեց հակառակորդ բանակը, և Աֆշինը, տեսնելով իր համար ստեղծված դժվար կացությունը, ստիպված եղավ նորից հաշտություն առաջարկել Հայոց թագավորին։ Պատրվակ բռնելով, թե դժգոհությունը ծագել է արքունական հարկերի գանձումից, Աֆշինը պահանջեց, որ անմիջապես վճարվի հարկը։ Սմբատն իսկույն կատարեց այդ պահանջը, որից հետո հակառակորդ կողմերը հեռացան իրարից բարեկամության և համաձայնության խոստում անելով։ Բայց կալանավորված կաթողիկոսին Աֆշինը չարձակեց, այլ տանում էր իր հետ շղթայակապ՝ ուր որ գնում էր։ Այսպես տառապեցնելուց հետո մեծ փրկանք պահանջեց նրան ազատելու համար։ Կաթողիկոսարանի եպիսկոպոսները դիմեցին հայ իշխաններին և Սմբատ թագավորին, հավաքեցին մի գումար, ուղարկեցին Աղվանից Համամ թագավորին, որպեսզի նա բանակցություններ սկսի Աֆշինի հետ, որ այդ միջոցին գտնվում էր Փայտակարանում։ Համամն իր կողմից էլ գումար ավելացնելով, ազատեց կաթողիկոսին և պատվով դարձրեց իր աթոռը։

Դողսի կռիվն ավելի ևս ամրապնդում էր Սմբատի մեծ հեղինակությունը, ցույց տալով նրա թշնամիներին, թե հայկական պետությունն ամենից առաջ ուժեղ է իր ընդարձակության հետևանքով, որ բերում էր նրան ռազմական ուժեր՝ պատերազմի դեպքում և լայնարձակ բարգավաճման հնարավորություն՝ խաղաղության ժամանակ։ Իր խաղաղասեր և շինարար հակումները Սմբատը լրացնում և ավելի ընդլայնում էր վերածնու-

թյան, նյութական և մտավոր առաջադիմության այն շարժման մեջ, որ
սկսվել էր Աշոտ Ա-ի օրով և կանգ չէր առնում։ Ցնայած ժամանակի և
հանգամանքների շատ արդելառիթ հատկություններին, Սմբատին իր թա-
գավորության ընթացքում քիչ չէր հաջողվում խաղաղության երկար տա-
րիներ ապահովել իր երկրին՝ նրա ներքին ուժեղ զարգացման համար,
ինչպես կտեսնենք քիչ հետո։

3. Վասպուրականը և Սմբատը: Անհաջողության հանդիպած Աֆշինն
էլ, սակայն, լավ գիտեր, թե ի՛նչ միջոցներով կարելի էր մոտենալ Հայոց
ուժեղ և բարեբախտ թագավորին՝ նրան թուլացնելու համար։ Այսպիսի
գործունեություն նա ցույց էր տվել Ատրպատականում։ Կռվեցնելով տեղա-
յին պարսիկ ավատական տիրողներին, նա թուլացրել էր նրանց մինչ այն
աստիճան, որ կարողացավ բոլորին կատարելապես հպատակեցնել իրեն, իր
տիրապետության տակ առնելով նրանց կալվածները։ Սմբատ թագավորի
բարեբախտությունը հենց այն ուժեղ հանգամանքի վրա էր հաստատված,
որ նրա հետ հաշտ ու համերաշխ էր հայ ավատական աշխարհը։ Ահա այս
երևույթի դեմ էր սկսում գործել Աֆշինը։ Արտաքին թշնամու հաջողու-
թյան համար պետք էր բորբոքել նախարարական ազգամիջյան կռիվներ։
Իսկ այսպիսի մի երևույթ առաջացնելու համար շատ նպաստավոր միջա-
վայր ամենից առաջ կարող էր դառնալ Արծրունիների իշխանական աշ-
խարհը, ուր, ինչպես տեսանք, ամեն տեղից սաստիկ էր զարգացած ուժեղ
ներքին ինքնուրույնության ու անիշխանության զգացմունքը։ Եվ ահա
Վասպուրականն է դարձյալ, որ սկսում է առաջնակարգ դեր խաղալ, մի այն-
պիսի դեր, որ հետզհետե խոշորանալով և բարդվելով, գալիս ծանրանում էր
ամբողջ Հայաստանի վիճակի վրա։ Եթե Սմբատն իր Շիրակից առաջադրում
էր մի համազգային պետության, այսինքն ուժեղ կենտրոնացման գաղա-
փարը, Վասպուրականը նրան հակադրում էր հայ ավատականության, գա-
վառական առանձնացումների սկզբունքները, որքան որ այդ ձեռնտու էր
նրան՝ Բագրատունիներին անվերապահորեն հպատակվելու անհրաժեշտու-
թյունից խուսափած լինելու համար։ Այս հակադիր հոսանքները մրցակ-
ցության մեջ մտան իրար դեմ։ Եվ ինչպես բնական էր սպասել, նրանից
օգտվողն արտաքին թշնամին էր և ո՛չ երբեք հայ ժողովուրդը։

Երկու առաջնակարգ և ուժեղ տոհմերի այս մրցությունն ամենայն
մանրամասնություններով նկարագրել են երկու ժամանակակից և ակա-
նատես պատմագիրներ—Հովհաննես կաթողիկոսը՝ Բագրատունիների կող-
մից և Թովմա Արծրունին՝ Արծրունիների։ Դրանք հակադիր աղբյուրներ են,
կողմեր, ավելին՝ կուսակիցներ։ Եվ այսպիսով, մենք պիտի հաճախ հակոտ-
նյա կուսակցական բացատրությունների մեջ որոնենք ճշմարտությունը.
որ, ինչպես հայտնի է, մեծ դժվարություններով է դրսևորում իր դեմքը
այսպիսի դեպքերում։ Եվ եթե այս հարցի մեջ կա բարեբախտություն, այդ
այն է, որ կողմերից մեկը—Արծրունին—չափազանց շատ է կուսակցական
և հենց սրանով էլ պարտավորեցնում է ավելի շատ անկախություն և անա-
չառություն որոնել մյուսի—Հովհաննես կաթողիկոսի գործի մեջ, որի
պատմվածքների լրացումն ու լուսաբանությունը կարելի է անել անդադար,
համեմատությունների համար դիմելով Արծրունուն։

Մենք արդեն գիտենք, որ Գրիգոր-Դերենիկի երեք որդիները—Սար-
գիս-Աշոտ, Խաչիկ-Գագիկ և Գուրգեն—անչափահաս էին, երբ սպանվեց
նրանց հայրը, և Աշոտ Ա-ն նրանց խնամակալ նշանակեց իր աղջիկ Սոփիին,

որ նրանց մայրն էր, իսկ սրա մահից հետո՝ Գագիկ Աբումրվանը, որ Աշոտի մյուս աղջկա որդին էր։ Սարգիս-Աշոտն ամուսնացավ հենց այս խնամակալ իշխանի, ասել է՝ իր մորաքրոջ աղջիկ Սեդայի հետ։ Այս, իհարկե, արդեն չպիտի հանդիսանար, որ երեք եղբայրներն իրենց համար ինքնագլուխ կյանք ստեղծեն։ Նրանք, իրավ, Վասպուրականը բաժանում են երեք մասի։ Առաջինը, ամենից ընդարձակը, Վանից մինչև Նախճավան, ստանում էր Սարգիս-Աշոտը իբրև ավագ եղբայր։—Այս նույն առաջնության իրավունքով էլ նա ստանում էր և երկրի իշխանապետությունը։ Իսկ Խաչիկ-Գագիկի ընկած բաժինն էր Ռշտունյաց գավառը մինչև Մոկաց աշխարհը, որքան նա կարող էր վերցնել, այնինչ Գուրգենի ստացած բաժինն Արծրունիների բուն վիճակն էր—Աղբակ գավառը Հադամակերտ մայրաքաղաքով և Պարսկահայք գավառի մի քանի մասերը, այն է՝ Կոտուրի և Հերի շրջանները (այժմ Քոթուր և Խոյ)։ Բայց Գագիկ Աբումրվանը չէր ուզում անմաս մնալ այդ բաժանման մեջ, քանի որ ինքն էլ Արծրունի էր։ Ուժեղի իրավունքով նա խլեց իր խնամակալության հանձնված պատանի եղբայրներից երեք նշանավոր և ամուր բերդեր—Նկան, Կոտոր և Սևան։ Այս բռնությունը ներհակ վերաբերմունքներ էր առաջացնում։ Մինչդեռ Վասպուրականի մյուս իշխաններին նա թվում էր անհանդուրժելի, Սմբատ թագավորը կատարյալ անուշադրություն էր ցույց տալիս։ Ինչպես երևում է, դրանից առաջ նրա և Արծրունի երեք եղբայրների միջև հարաբերությունները սառն կերպարանք էին ստացել, և այս կարելի է բացատրել նրանով, որ քեռորդիները չէին ուզում զրկվել իրենց տանը հատուկ ուժեղ ինքնիշխանությունից, մինչդեռ Սմբատը, ամբողջ հյուսիսը և հարավի մեծագույն մասն իր պետությանը միացնելուց հետո՝ չէր կարող բոլորովին ինքնագլուխ թողնել միմիայն Վասպուրականը և այդպիսով թերատ թողնել Հայկական Բարձրավանդակի պետական ամբողջացումը։ Այս տեսակետից նրան ավելի ձեռնտու էր երևում իր մյուս քեռորդուն, Գագիկ Աբումրվանին պաշտպանություն ցույց տալը, քանի որ նա ավելի հավատարիմ էր կենտրոնական իշխանության շահերին և մի տեսակ սանձող նշանակություն ուներ երեք ինքնավստահ և գոռոզամիտ եղբայրների կենտրոնախույս ձգտումների վերաբերմամբ։

Այս հողի վրա ծագած անբավականությունն այնքան է աճում, որ հայտնի է դառնում նաև Մուհամմեդ-Աֆշինին, և սա շտապում է օգտագործել այդ դրությունը, իր կողմը քաշելով Արծրունիներին։ Թե՛ գրություններով և թե՛ հատուկ պատգամավորների միջոցով Աֆշինը կարողանում է բավականաչափ ուժեղ ճնշում գործադրել անդրանիկ եղբոր՝ Սարգիս-Աշոտի վրա, ցույց տալով, թե անհրաժեշտ է անձամբ ներկայանալ իրեն և հպատակություն հայտնել, հակառակ դեպքում Արծրունիների հետ նա կվարվի այնպես, ինչպես վարվել է Ատրպատականի պարսիկ նախարարների հետ, այսինքն՝ կխլի նրանց կալվածները։ Վասպուրականի հարևանությունն Ատրպատականին հաստատում էր, թե այդ սպառնալիքը կկատարվի ամենայն հեշտությամբ, ուստի Աշոտը, իրեն և իր եղբայրներին անպաշտպան զգալով ահեղ թշնամու դիմաց, թեքվեց Աֆշինի առաջարկությունն ընդունելու կողմը։ Սմբատը, լուր առնելով այս մասին, պատվեր ուղարկեց Աշոտին, որ ետ կանգնի այդ դիտավորությունից։ Բայց Սարգիս-Աշոտը չլսեց ոչ ոքի և գնաց Աֆշինի մոտ։ Այս վարմունքի բացատրության համար կա և այն հավանականությունը, որ Աֆշինը, երևի, կողմնակի միջոցներով

ներշնչել էր Սարգիս-Աշոտին, թե նա կարող էր Վասպուրականի վրա թագավորելու հույսն ունենալ։ Այսպիսի մի երկրորդ օրինակ էլ ունենք մենք՝ Սյունի մեծ իշխանը, որ համարյա Սարգիս-Աշոտի հետ միաժամանակ գնաց Աֆշինի մոտ և նրանից ստացավ թագավորական թագ, բայց չկամեցավ Սմբատ թագավորի դեմ ապստամբ նկատվել և հրաժարվեց թագ կրելուց[1]։

Սաստիկ վրդովվում է Սմբատ թագավորն իր քեռորդու այդ արարքի վրա, որ կարող էր վարակել և մյուս իշխաններին և այդպիսով քայքայել հայ նախարարական միությունը։ Ուստի նա վճռեց պատժել այդ հանդգնությունը, բայց մի այնպիսի խստությամբ, որ ավելի ևս պիտի գրգռեր վասպուրականցիների կրքերը։ Թագավորը նամակ է գրում Անձևացյաց մեծ իշխան Գուրգենին, որ մեծ հեղինակություն ուներ Վասպուրականում, և իր քեռորդի Գագիկ Աբումրվանին, թե նրանց է տալիս ամբողջ երկիրը։ «Բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն,— ասում էր նա,— և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի։ Այդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն»[2]։ Այս կարգադրությունն ավելի ևս սաստկացնում է ներքին երկպառակությունը։ Անձևացին ու Աբումրվանը, ճիշտ որ, իրենց ձեռք են առնում երկիրը, երկու մասի բաժանելով։ Իսկ մյուս կողմից՝ Արծրունի եղբայրների ժառանգական իրավունքների պաշտպան են դուրս գալիս մի խումբ տեղացի իշխաններ, որոնց մեջ իրենց քաջությամբ հայտնի էին մասնավորապես Հիսե (Իսա) և Թադեոս եղբայրները, Ակեացի տոհմից, Շերեփի որդիները։ Սրանք Սարգիս-Աշոտի ամուսին Սեդա տիկնոջ հետ ամրանում են Վանի բերդում, որ և պաշարվում է Սեդայի հայր Գագիկ Աբումրվանի և Գուրգեն Անձևացու զորքերով։ Բերդականները երեսուն օր ամենայն հաջողությամբ պաշտպանվեցին պատերազմներ մղելով։ Բայց վերջը պարենի պակասությունը և մանավանդ ջրի չափազանց քչությունը հարկադրեցին նրանց անձնատուր լինել։ Սեդա տիկինն իր և բերդականների վիճակը հանձնեց իր հորը։

Սարգիս-Աշոտը, Աֆշինի բանակում լուր ստանալով այս անցուդարձի մասին, շտապում է վերադառնալ, բերելով իր հետ և Աֆշինի զորքերը։ Միայն այդ ժամանակ Գուրգենն ու Աբումրվանը տեղի են տալիս և հեռանում։ Այնուհետև նորից պատերազմ է պատրաստվում Գուրգենի և Սարգիս-Աշոտի միջև, բայց հենց այն միջոցին, երբ կողմերը պիտի հարձակվեին իրար վրա, Աբումրվանը մեջ է ընկնում և հաշտեցնում է իր փեսային Անձևացյաց իշխանի հետ։ Շուտով մեռնում է Անձևացին, իսկ Աբումրվանը կատարում է մի դավադրական գործ։ Իր մոտ կանչելով Արծրունի եղբայրներին, որոնք իր մորաքրոջ որդիներն էին, իսկ մեկը նաև իր փեսան, նա, բարեկամություն կեղծելով, գողացավ նրանց վստահությունը, հանկարծակի կալանավորեց երեքին և ուղարկեց բանտարկելու՝ Աշոտին Նկան բերդում, Խաչիկ-Գագիկին՝ Սևանի և Գուրգենին՝ Կոտոր բերդում։ Ապա իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը։ Սմբատն այս անգամ էլ անտարբերություն ցույց տվեց։ Թեև նա հակառակ էր Աբումրվանի կատարած բռնության, բայց առանձնապես դժգոհելու հիմք չու-

[1] Ստ. Օրբելեան, «Պատմ. Տանն Սիսական», տպ. Թիֆլիս, եր. 299

[2] Թով. Արծրունի, եր. 233։

ներ, մանավանդ որ Աբումրվանը կատարյալ հպատակություն հայտնեց նրան։ Միայն թագավորի եղբայր Շապուհն էր, որ, գնալով Վասպուրական, բանտից ազատեց միջնակ եղբայր Խաչիկ-Գագիկին և էլի իշխան վերականգնեց նրան, այն էլ, անշուշտ, այն պատճառով, որ Գագիկն իր փեսան էր։

Վասպուրականի դժգոհ իշխաններն այլևս չկարողացան տանել այս կամայականությունները։ Եվ մի խումբ կազմելով, որոշեցին հեռանալ իրենց հայրենիքից, գնալ օտարություն, լավ համարելով, ինչպես ասում է Թովմա Արծրունին, «զկեանս պանդխտութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս, արգելեալս ի բանդիս զորդիս իշխանին իւրեանց»[1]։ Եվ գնում են Ամիդ քաղաքը, Ահմաթ (Ահմադ) անունով արաբ ամիրայի մոտ, որ Միջագետքի կուսակալն էր և նոր էր վերցրել այդ քաղաքը։ Այդ Ահմաթը Շեյխի որդի Իսայի որդին էր, նույն այն Իսայի, որին մեր պատմագիրներն անվանում են Յիսէ որդի Շեխայ[2], և որ, ինչպես տեսանք, մի ժամանակ ոստիկան էր Հայաստանում և թագ բերեց Աշոտ Ա-ի համար։ Ահմաթն ուրախությամբ ընդունեց Շերեփի որդի Թադեոսին և վասպուրականցի մյուս իշխաններին, որոնք եկել էին՝ իր հյուրասիրության ապավինած։ Նրանք շատ հարկավոր էին իրեն, որովհետև այդ իսկ միջոցին մեծ վեճ կար նրա և Սմբատ թագավորի միջև։

Բանն այն էր, որ Ահմաթը, Ամիդից դեպի հյուսիս-արևելք շարժվելով և Աղձնիքի շատ տեղերն էլ գրավելով, անցել էր Տարոն, այս գավառն էլ իր տիրապետության տակ էր առել, պատերազմի մեջ սպանելով երկրի տիրոջը, որ Բագրատունի էր, Աշոտ կյուրապաղատի որդին, Գուրգեն անունով։ Սմբատը չկարողացավ անտարբեր մնալ այս ոտնձգությունների հանդեպ, քանի որ Տարոնը հայկական պետության մի շատ կարևոր մասն էր կազմում, այնքան կարևոր, որ նրան անվանում էին Հայոց Տուն[3], պետք է ենթադրել այն պատճառով, որ հայության ամենանվիրական ավանդությունների երկիրն էր այդ։ Այս հանգամանքի վրա ավելանում էր այն, որ Տարոնը մեկն էր Բագրատունյաց տոհմային կալվածներից և Գուրգեն իշխանի մահից հետո պիտի անցներ նրա հորեղբայր Դավիթ Բագրատունու որդուն, իսկ սա արքայի եղբայր Շապուհի փեսան էր։ Այս բոլոր նկատառումներով Սմբատը պահանջում էր Ահմաթից թողնել Տարոնը և հեռանալ։ Եվ երբ հզոր ամիրան կտրականապես մերժեց այդ պահանջը, թագավորը մեծ արշավանքի պատրաստություններ սկսեց։ Հայոց միաբան նախարարությունը, Վրաստանն ու Աղվանքը միահամուռ դաշտ հանեցին մի ահագին բանակ, որ Հովհաննես կաթողիկոսը հաշվում է 60 հազար, իսկ Թովմա Արծրունին՝ մինչև իսկ 100 հազար հոգի։ Ինքը Սմբատն էր այդ բազմության հրամանատարը և տարավ նրան Վանա լճի արևմտյան ափով։ Բայց նա չգիտեր, որ դա մի դավաճանական ճանապարհ է, որի վրա գլուխ էր բարձրացրել հայ ավատական կազմի հին ճիվաղը—ընտանի մատնությունը։ Այդ ճիվաղը գալիս էր այնպիսի մի անկյունից, ուր ոչ ոք չէր սպասի նրան—բարեբարված հարազատից, հավատարիմ քեռորդուց։ Գագիկ

1 Եր. 235։

2 M. Brosset, „Histoire des Ardzrouni“ par Th. Ardzrouni, St. Petersb., 1874, p. 171.

3 Թով. Արծր., եր. 236։

Աբումրվանն էր դա, որ հայտնի չէ, թե ի՛նչ գնով և ի՛նչ հաշվով համաձայնության մեջ էր մտել թշնամու հետ՝ իր քեռուն կործանելու համար։ Գուցե այս հանգամանքի մեջ պակաս դեր չէր կատարում այն իրողությունը, որ Ահմաթի մոտ էին հավաքված Աբումրվանի անձնական թշնամի վասպուրականցի իշխանները, որոնք վրեժ հանելու առիթ էին որոնում։ Գուցե կամենալով, որ Ահմաթն իր կողմնակիցը դառնա և չօգնի թշնամի իշխաններին, Գագիկը խաբեություններով տարավ իր քեռուն այնպիսի տեղերով, որոնք բանակի շարժման համար բոլորովին հարմարություններ չունեին։ Դա դիտմամբ ընտրված կործանարար մի ուղղություն էր, տանջանքների ճանապարհ լեռնային ապառաժոտ և անջրդի վայրերով։ Անտանելի էր մարդկանց տանջանքը մանավանդ ծարավից, որ և շատերին մեռցրեց։ Կազմալուծված, կիսամեռ դրության մեջ էր բանակը, երբ հասավ Թուխ գյուղը։ Բայց այնտեղ նրան սպասում էր ուրիշ փորձանք։ Դավաճանությունը հենց այս տեղն էր որոշել սարսափելի հարված տալու համար, և թշնամու զորքն իսկույն ընկավ հոգնածությունից տառապող հայ բանակի վրա։ Բայց այս մահացու վտանգը մի հրաշալի հոգեբանական ներգործություն է անում լքված զինվորների վրա։ Նրանք ուժ են ստանում, քաջաբար զենքի են դիմում, հեծնում են ձիերը և ուժեղ գրոհում են հարքաջակվող թշնամուն։ Սմբատ թագավորը քաջության և անվեհերության շատ օրինակներ տվեց բանակին։ Բայց մինչդեռ այս գերագույն ճիգերի մեջ էր հանկարծակիի եկած և հոգնած բանակը, նույն Աբումրվանը, խրախուսված այն հանգամանքից, որ ոչ ոք չէր նկատել իր առաջին դավաճանությունը, մի երկրորդն էլ առաջ քաշեց։ Այս անգամ նա փորձեց խուճապ առաջացնել հենց բանակի մեջ, կռվողների թիկունքում, և հաջողեցրեց նաև այդ վատությունը։ Մի քանի ասպատակներ մտցնելով վրանների մեջտեղը, նա տագնապ բարձրացրեց, թե թշնամին ներս է խուժել. քանդել տվեց իր վրանը, իսկ բեռնակիրները հապճեպով հավաքեցին և փախուստի դիմեցին։ Ամբողջ բանակը բռնվեց այդ միևնույն հոտային զգացմունքով։ Երևի հենց այս տագնապալից ժամին թշնամին սկսեց նեղել Հայոց բանակը։ Ահմաթի մոտ հյուրընկալություն գտած հայ իշխանները, Շերեփի որդի Թադեոսի գլխավորությամբ, հարձակում գործեցին և շփոթություն տարածեցին հայերի շարքերում։ Կորուստները մեծ չափերի էին հասնում, Թովմա Արծրունու ասելով մինչև հինգ հազարի։ Փախուստն ընդհանուր դարձավ։ Սմբատը, տեսնելով, որ այլևս ոչինչ չի կարելի փրկել, դուրս բերեց իր ձին ռազմադաշտից և փախավ Բագրևանդ գավառը (896)։

Իսկ Գագիկ Աբումրվանը, գոհ իր ձեռք բերած հաջողություններով, վերադարձավ Վան՝ իր խլած իշխանությունը վայելելու համար։ Արծրունի եղբայրներից Խաչիկ-Գագիկը, որ, ինչպես գիտենք, հանված էր բանտից, Ամատունյաց տոհմի երկու իշխանների հետ միացած՝ դավադրություն սարքեց իր մորաքրոջ որդու դեմ՝ անձնական և տոհմային վրեժը հանելու համար։ Եվ մի օր, մինչդեռ Աբումրվանը ջրիով ճեմում էր Վանի մեջ, Խաչիկ-Գագիկը մոտեցավ և սպանեց նրան։ Այնուհետև Վասպուրականի իշխանությունը նորից անցնում էր Գրիգոր-Դերենիկի որդիներին։ Սարգիս-Աշոտն ու Գուրգենն ազատվեցին բերդարգելությունից, և կառավարությունը նախկին կերպարանքն ստացավ։ Իշխանապետությունը նորից Սարգիս-Աշոտի ձեռքին էր։ Իսկ Սմբատ թագավորին, Աբումրվանի սպանության լուրն առնելուն պես, մնում էր խոստովանել, թե նա արժանի

էր այդպիսի մահվան։ Սակայն այսպիսի հաճելի խոստովանության մեջ մխիթարական բան շատ չկար։ Պետությունը մեծ հարված էր ստացել ոչ թե սոսկ այդ դավաճանությունից, այլ առհասարակ այն ամբողջ անցուդարձերից, որի թատերաբեմն էր հանդիսացել Վասպուրականը։ Թուլությունը հետևանք էր ամենից առաջ այն իրողության, որ նախարարական միություն այլևս չկար Հայաստանում և, հետևաբար, Սմբատն այլևս ուժեղ թագավոր չէր։

4. Ափշինի հարվածը: Այս իրողությունից շտապեց օգտվել Ափշինը, և Սմբատը նորից իրեն կանգնած տեսավ նրա մի նոր արշավանքի դիմաց։ Եվ զգալով Վասպուրականի վերաբերմամբ իր գործադրած քաղաքականության ամբողջ սխալը, նա, չվհատելով իր կրած ծանր անհաջողությունից, սկսեց եռանդուն կերպով աշխատել որքան դեռ ժամանակ կար, քայքայված միաբանական կապը նախարարական դասակարգի մեջ վերականգնելու համար։ Այս ուղղությամբ նա մի խոշոր, թեև մասնակի, հաջողություն ունեցավ։ Ափշինը կամեցավ, Ահմաթի օրինակն աչքի առջև ունենալով, իր ձեռնարկած արշավանքների մեջ օգտվել Վասպուրականի ուժերից։ Եվ դարձյալ Սարգիս-Աշոտին որոնել սկսեց, թեև բոլորովին մոռացել էր նրան այն ժամանակ, երբ նա բանտարկված էր։ Այս անգամ Սմբատն այլևս ուրիշ միջոց էր գործադրում՝ Վասպուրականի կողմից իրեն ապահովելու համար։ Իր եղբայր Դավթին նա ուղարկեց Վան և իբրև շնորհ խնդրում էր Աշոտից չհեռանալ իրենից, չանցնել իր թշնամու կողմը։ Դավիթը հաջողությամբ է կատարում այս առաքելությունը։ Թեև այդ միջոցին Սարգիս-Աշոտն Ափշինից ստացել էր մեծամեծ խոստումներ, բայց չգնաց նրա մոտ, պատճառ բերելով, որ նա իր բանտարկության միջոցին չի օգնել իրեն։ Եվ այսպիսով, խզելով իր հարաբերություններն Ատրպատականի տիրոջ հետ, Արծրունի երիտասարդ իշխանապետը, անշուշտ իր փնդի հետ, ճանապարհվում է իր քեռու մոտ։

Այս, իհարկե, մի խոշոր առավելություն էր Սմբատի համար, բայց նրա ուժերը տակավին մնում էին թույլ, ուստի նա չկարողացավ եռանդուն ռազմական շարժում սկսել Ափշինի դեմ։ Իսկ վերջինս, արդեն լավ ուսումնասիրած լինելով իր հակառակորդի պատերազմական սովորությունները, որոնց հիմքն էր ամուր թիկունք պատրաստել լեռնային ամրություններից, այս անգամ իր արշավանքը տարավ Աղվանից երկրի կողմից Թիֆլիսի ուղղությամբ, որպեսզի կարողանա Սմբատին զրկել այնպիսի հզոր հենարաններից, որպիսիններն էին Գուգարաց և Տայոց աշխարհների լեռնային գծերը։ Վերցնելով Թիֆլիսն ու շրջակա ամրոցները, Ափշինը Կուր գետի ձախ ափով մտավ Քարթլինիայի խորքը և անցավ դեպի հարավ, Ջավախք գավառը, ուր պաշարեց մի քանի բերդեր[1]։ Հաջողություն չգտնելով այդ լեռնաստանում, նա անցավ Վանանդ գավառը։ Սմբատը, չկարողանալով դիմադրական խոշոր ուժ հանել արշավողի դեմ, խուսափողական պատերազմի միջոցներին դիմեց և հեռացավ Տայոց աշխարհը։ Իսկ Ափշինը, լսելով, թե թագուհին ու նրա հարսը մի քանի ուրիշ ազնվատոհմ կանանց հետ, ունենալով իրենց մոտ և արքունի գանձը, մնացել են Կարսում, գնաց պաշարեց այդ բերդը։ Բերդապահ նշանակված էր Գնթունյաց տոհմից մի իշխան, Հասան անունով։ Սա, տեսնելով, որ դիմադրության միջոցները թույլ են և անհուսալի, բանակցություն սկսեց Ափշինի հետ, առաջարկելով նրան անձնատրություն, բայց այն պայմանով, որ բոլոր բերդեցիներն իրավունք ունենան հեռանալու։ Ափշինը համաձայնություն տվեց, բայց երբ մտավ բերդը, հայտնեց, թե իր ընդունած պայմանը վերաբերում է ռամիկ ժողովրդին։ Ուստի գերի վերցվեցին թագուհին, որ այդ միջոցին հեռացել էր աշխարհից և «խարազանազգեստ» կրոնավոր դարձել, նրա հարսը, որ Մինգրելիայի (եգերացիների) թագավորի աղջիկն էր, մյուս նախարարական կանայք և նույն ինքը բերդապահ Հասանը։

---

[1] Յովհան. կաթողիկոս, եր. 224։

Սա մի ամբողջ անարյուն հաղթություն էր։ Ափշինը բավականացավ այդ ավարով և ուղևորվեց Դվին, ուր և մնաց ձմեռելու։ Սմբատն էլ, վերադառնալով Կարս, տխրությամբ տեսավ ամեն ինչ հափշտակված։ Բայց չհուսահատվեց, ոգու մեջ արիություն ցույց տվեց, չմոռանալով, որ հարվածված թագավորությունը կարոտ է բուժման։ Եվ որովհետև ձմեռը չէր կարելի Կարսում մնալ, նա ուղևորվեց իր ձմեռոցը, Կաղզվան։ Այստեղից նրա և Ափշինի միջև սկսվեցին շատ եռանդուն բանակցություններ՝ մշտական հաշտություն կնքելու համար։ Ափշինն իսկապես հաղթող չէր, բայց հարկավոր էր համարում պահել իրեն մեծ հաղթողի նման։ Հասան Գնթունուն արձակեց գերությունից, առհասարակ Սմբատին էր մեղադրում, ասելով, թե թշնամության առիթ տվել է նա։ Սմբատը հակառակն էր ապացուցում։ Ի վերջո Ատրպատականի տերը չափազանց ծանր պայմաններ առաջարկեց իր հակառակորդին—անվստահելի համարելով խոստումներն ու երդումները, նա պահանջում էր, որ իրեն պատանդ տրվեն Սմբատի ավագ որդի (թագաժառանգ) Աշոտը, նրա հորեղբոր որդի Սմբատը, Սահակի որդին։ Իսկ թագավորի մյուս եղբոր, Շապուհի աղջիկը կնության պիտի տրվի իրեն՝ Ափշինին։ Այս պահանջների մեջ Հայոց թագավորը տեսնում էր ստորացում, իբրև հետևանք իր թուլության։ Եվ որովհետև այդ հանգամանքների մեջ ուրիշ ելք չէր մնում, Սմբատն ստիպված եղավ ընդունել բոլոր պահանջները, որպեսզի կարողանա այդպիսով գեթ երկրի անդորրությունը պահպանել։ Զոհաբերությունը ծանր էր մանավանդ արքաեղբայր Շապուհի համար։ Սակայն նա էլ ուժ գտավ իրեն վիճակված դրությունը տանելու համար։ Շապուհն ինքը տարավ իր աղջկանը և պատանդներին Ափշինի մոտ, որ ընդունեց նրանց պատիվներով, իբրև արդեն ազգականների։ Ձմեռը նա մնաց Դվինում (կամ Պարտավում, ինչպես Թովմա Արծրունին է ցույց տալիս), ուր «զհարսանեաց պարս պարեցին և զկաքաւսն կաքաւեցին» (Հովհաննես կաթողիկոսի ասելով)։ Իսկ երբ գարունը բացվեց, Ափշինը ճանապարհվեց Ատրպատական, թույլ տալով, որ իր աներն էլ իր տունը վերադառնա։ Ափշինը գերությունից արձակում էր Հայոց թագուհուն, բայց նրա հարսին թողնում էր դարձյալ գերի։

Այս դժբախտ դաշնադրությամբ Բագրատունյաց թագավորությունն իսկապես կորցնում էր իր անկախությունը, որքան նա կար Աշոտ Ա-ի ստեղծած պետական կարգի մեջ, և Հայաստանն իրապես հպատակեցվում էր Ատրպատականին։ Եվ այս բանը կատարվում էր, հարկավ, ոչ առանց խալիֆի գիտության, այն նախազգուշացումների հետևանքով, որ Ափշինն անում էր շարունակ, ցույց տալով Հայոց թագավորության ընդարձակումը և Սմբատի ուժեղացումն իբրև պետական վտանգ։ Սմբատը շատ լավ էր զգում այս դրությունը, բայց փոխանակ վհատվելու՝ աշխատում էր մեծ եռանդով, ուղղակի հերոսական ջանքեր էր գործադրում իր նախկին դիրքն

իրեն վերադարձնելու համար։ Ցույց չտալու համար, թե Աֆշինի պայմանները որևէ կերպով պակասեցրել են իր վեհապետական իրավունքները, Սմբատը թագ պարգևեց իր վաղեմի և անփոփոխ հավատարիմ բարեկամ Ատրներսեհին, Վրաց մեծ իշխանին և թագավորեցրեց նրան մեծ հանդեսով։ Սակայն այս քայլը սաստկացրեց ոչ միայն Սմբատի, այլև Ատրներսեհի հակառակորդների նախանձը և ստիպեց նրանց գանգատներ ուղղել Աֆշինին։ Հարկավ, այդպիսիների ձեռքում հասու զենք էր այն, թե Սմբատն իրավունք չուներ թագ տալու, քանի որ այդ միայն խալիֆի իրավունքն է[1]։ Եվ Աֆշինն այս պատճառով թե պատրվակով ոտնակոխ է անում իր կնքած հաշտությունը և նորից արշավանք է սկսում Շիրակի դեմ, ընտրելով միևնույն ճանապարհը, այսինքն Թիֆլիսի ուղղությամբ։ Այս անգամ էլ Սմբատը, հազիվ կարողանալով մի փոքրիկ գունդ հավաքել, խույս տալիս, ըստ իր սովորության, Տայոց աշխարհը, և Աֆշինն էլ, ինչպես անցյալ անգամ, առանց կռվի և արյունահեղությունների, ուղևորվում է Դվին։ Այստեղ նա հայտարարում է, որ Հայաստանը ենթարկված է իր հսկողության, որ իր տեղ կառավարիչ է նշանակում իր որդի Դևդադին և իր ներքինիներից մեկին, որին սիրում էր։ Դվինից գնալիս, Շարուրում, մեծագին ընծաներով նրա առաջն է դուրս գալիս Սահակ Բագրատունու կինը և աղաչում է նրան խնայել իրեն, իբրև մի այրի մոր և ազատել նրա որդի Սմբատին, որը, ինչպես տեսանք, պատանդ էր վերցված։ Աֆշինը կատարում է այրի մոր խնդիրքը։

Վերջացնելով իր գործը Բագրատունիների հետ, Աֆշինը սկսում է հաշիվ տեսնել Արծրունիների հետ։ Մենք տեսանք, որ Սարգիս-Աշոտը գնաց իր քեռու մոտ Աֆշինի երկրորդ արշավանքից առաջ։ Բայց որովհետև Սմբատը պատերազմ չունեցավ, Վասպուրականի իշխանապետը, Կաղզվանի բանակցությունների միջոցին, Բագրևանդի վրայով վերադարձավ տուն։ Այստեղ նա խորհրդակցում է իր եղբայրների և զորքի հետ, թե ի՛նչ վերաբերմունք պետք է ցույց տալ դեպի Աֆշինը։ Խորհուրդը վճռվում է. «Աւուրք սաստկութեան են և գործ պատերազմի, ո՞վ գիտէ ո՛յր ուրուք յաղթութիւն լիցի»[2], ուստի և հարկավոր է համարում, որ Սարգիս-Աշոտը գնա Աֆշինի մոտ՝ հաշտության բանակցություններ վարելու համար։ Այսպես էլ լինում է, Աֆշինը նրանից պատանդ է վերցնում Խաչիկ-Գագիկին, բայց հինգ ամսից հետո նրան փոխարինում է Գուրգենը։ Բայց սա չի կարողանում մնալ Աֆշինի մոտ և ոչնչացնելով համաձայնության պայմանագիրը, փախչում է իր եղբայրների մոտ։ Այդ այն ժամանակ էր, երբ Հայաստանում փոխանորդ էր նշանակվել Դևդադը։ Աֆշինը բարկացած մտավ Վասպուրական։ Երեք եղբայրները փախան հարավային կողմերը և ամրացան մեզ արդեն ծանոթ Որսիրանից ձորում։ Աֆշինը երկու կուսակալ նշանակեց, երկուսն էլ ներքինի, մեկը՝ Վանում, մյուսը Ոստանում, իսկ ինքն անցավ Աղբակ և բնակություն հաստատեց Արծրունիների Հադամակերտ ոստանում, ապա այստեղից գնաց իր տեղը՝ Ատրպատական։ Ներքինի կառավարիչներից մեկը, այն, որ նստում էր Վանում, մի հավատուրաց հույն էր, Սափի անունով, «այր գազանաբարոյ,— ինչպես վկայում է Թովմա Արծրունին,— վայրենամիտ, առատաձեռն առ արբումն արեան մարդկան, այլ զօ-

1 Saint Martin, „Mémoires sur l'Arm.", I, p. 355.

2 Թովմ. Արծրունի, եր. 274։

րաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ»[1]։ Հասկանալի է, թե ինչե՛ր պիտի աներ այսպիսի մի կառավարիչ իրեն հանձնված երկրում։ Բայց հայ ժողովրդի համար պատիժը միայն նա չէր, այլև հայ, նույնիսկ Արծրունի մի իշխան, որին մենք ճանաչում ենք պատանեկության հասակում, Աշոտի հորաքրոջ որդին, Հասանիկը, Սևան բերդի տերը։ Այժմ նա արդեն Հասան էր և մանավանդ «այր անօրէն, ժանտ և ապարասան, աւազակաց հայր, սպանողաց մայր և ամենայն անօրէնութեան ծնօղ»[2]։ Նա անցնում է Աֆշինի կողմը և բազմաթիվ չարիքներ է հասցնում իր հայրենիքին և ժողովրդին։

Այսպես չէր, սակայն, դրությունը Բագրատունիների Հայաստանում։ Սմբատը, վերադառնալով իր երկիրը, Անի ամրոցում հանդիպում է Աֆշինի թողած ներքինապետին, որ ապստամբական դիտավորություններ ուներ իր տիրոջ վերաբերմամբ, ուստի առանձնապես մտերմական կապեր հաստատեց Հայոց թագավորի հետ։ Այդ մտերմությունը Սմբատին այն օգուտն է բերում, որ ներքինապետն արձակում է Աշոտ թագաժառանգին, որ իբրև պատանդ նրա մոտ է գտնվում, ինչպես նաև թագավորի հարսին, որ գերի էր վերցված Կարսում։ Սակայն այս ուրախությունը, որ Հայոց թագավորին բաժին էր ընկնում նրա անհաջողության օրերին, քիչ էր մնում, որ փոխվի նոր աղետի, բայց այս անգամ մի դիպված հանդես եկավ նրան հովանավորելու համար։ Երբ Աֆշինը լուր առավ, թե իր ներքինապետն ապստամբել է, արձակել է իր մոտ եղած պատանդներին և Հայոց թագավորի օգնությամբ անցել է Միջագետք, կասկածն իսկույն բռնում է նրան, կարծել տալով, թե այդ ամբողջ գործի մեջ Սմբատն է եղել խորհրդատուն և ղեկավարը։ Ուստի և մի նոր արշավանք սկսեց Հայաստանի դեմ։ Բայց նրա բանակում աղիքային մի ինչ-որ ծանր համաճարակ է ընկնում (գուցե խոլերա), որին զոհ գնաց զինվորության մեծ մասը, նրա հետ և ինքն Աֆշինը և իր երկու ներքինի կուսակալները,* որոնք կառավարում էին Վասպուրականը։ Բանակը սարսափահար ցաք ու ցրիվ եղավ, միանգամայն հասկանալի ցնծություն պատճառելով ամբողջ հայ ժողովրդին, մանավանդ Վասպուրականում։ Հովհաննես կաթողիկոսը գրում է մեծ սփոփանքով. «Եւ այսպէս ապա աղօթահայց պաղատանացն առ Աստուած՝ թագաւորին Սմբատայ և բովանդակ ընդ մեզ եւս կղերց եկեղեցեաց Քրիստոսի՝ արտօսրաթոր խնդրուածք լսելի լինէր յականջս Տեառն զօրութեանց. և ոչ եկն ի վերայ մեր ոտն ամբարտաւանութեան նորա, և ոչ մեղկաշօշափ ձեռք նորա կարաց դողացուցանել զմեզ, և ոչ ուրախ եղև ի կեանս իւր խաւարասէր թշնամին, այլ կորեաւ յունայնութեան յուսոյ»[3]։ Ավելի վառվռուն է այս դեպքում Թովմա Արծրունու գրիչը։ «Եւ ինքն Աւշին,— ասում է նա,— զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհն. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նման զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով։ Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս և գոհացեալ զգթութեանցն Աստուծոյ. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս

1 Թ. Արծ., եր. 242։

2 Եր. 274։

3 Եր. 238։

կորեավ՝ ասեն «զի՞րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապողն, եթէ ո՞րպես իջին ի դժոխս փառք նորա»[1]։ Թեև պատմությունը ցույց չի տալիս, որ Աֆշինը մեծ կոտորածներ արած լինի Հայաստանում և շատ ավերած լինի այդ երկիրը, բայց այս վերաբերմունքը դեպի նրա մահը մի պերճախոս ապացույց է, թե նա մի դաժան և անգութ բռնավոր էր, և ժողովուրդները շատ էին տանջվել նրա ձեռքին։

Մահն ազատում էր մարդկությունն այդ դաժան բռնավորից, մեր Թովմա Արծրունու ցուցմունքով, 898 թվականին։ Այդ նույն թվականին էր, որ Աֆշինը միացնել էր տվել Հայաստանն Ատրպատականին[2]։ Բայց Սմբատը, օգտվելով իր թշնամու մահից, կարողացավ վերականգնել Աշոտ Ա.-ի ստեղծած իրականությունը։ Ինչպես երևում է, Ատրպատականն Աֆշինից հետո առժամանակ մնաց առանց նրա հաջորդի։ Գոնե եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ Աֆշինին հաջորդել էր նրա որդի Դևդադը, սակայն 901 թվին[3] նրան հեռացնում է Աֆշինի եղբայր Յուսուֆը (ըստ մեր պատմագիրների՝ Հուսուփ), որ ավելի դաժան և տմարդի մի բռնավոր էր, ինքն իր ձեռքն է առնում իշխանությունը։ Ահա այս կարճ միջոցին, երբ Դևդադն էր հորը ժառանգելով կառավարում, Սմբատը բանակցություն սկսեց Բաղդադի արքունիքի հետ, որ Հայաստանն Ատրպատականից կախված դրության մեջ չլինի, այլ ուղղակի հարաբերություն ունենա խալիֆի կառավարության հետ և պետական հարկերն էլ ուղարկի և անմիջապես Բաղդադ ուղարկվեն։ Եվ որովհետև խալիֆաթը համարյա այլևս դադարել էր որևէ ուժ և քաղաքական նշանակություն ունենալուց, ուստի Հայոց թագավորի այդ խնդրանքը հեշտությամբ ընդունվեց։

Այս նոր դրությունն արագ վերականգնեց Շիրակի թագավորության թուլացած ուժերը։ Աֆշինի հարվածը մեծ վնասներ չտվեց հայությանը հենց այն պատճառով, որ նա շատ կարճատև էր, ուստի երկիրը հեշտ կարողացավ դուրս հրավիրել իր ներքին ուժերը՝ խզված կապերը նորից իրար մոտեցնելու, իրար հետ հյուսելու համար։

5. Ներքին հանգամանքներ: — Շինարարություն: *Աֆշինի մահվան հաջորդած ներքին հանգամանքներն ընդհանրապես խաղաղաբեր էին, և Սմբատն աշխատում էր օգտվել այդ բարեբախտ դրությունից՝ իր շինարար գործունեությունն ընդարձակելու համար։* Այդ հանգստության տարիներին էին, երբ նա ընտանեկան երկու հարված կրեց։ Վախճանվեցին նրա երկու եղբայրները՝ Շապուհը, որ սպարապետ էր, և Դավիթը, որ իշխանաց իշխան էր։ Սպարապետ նշանակվեց Շապուհի որդի Աշոտը։ Աչքի էին ընկնում մանավանդ այն մտերմական հարաբերությունները, որոնք արագ զարգանում էին Վասպուրականի և թագավորական գահի միջև։ Սարգիս-Աշոտը Աֆշինի և նրա երկու ներքինի կուսակալների բռնություններից խրատված իր երկրի համար փրկություն որոնում էր համահայկական քաղաքականության մեջ։ Եվ այդ պատճառով էլ մոտեցավ իր քեռուն մինչ այն աստիճան, որ նրա թշնամիներին համարում էր իր թշնամիներ։

Վասպուրականի ներքին կյանքում դադար էին առնում խոշոր ազգամիջյան խլրտումները։ Մոտիկ անցյալից միայն մնում էր մի անհրաժեշտություն—պատժել Վասակի որդի Հասան իշխանին, որ այնքան չարիքներ էր պատճառել իր հայրենի ժողովրդին։ Միաժամանակ շարունակվեց կռիվը Սարգիս-Աշոտի և Հասանի միջև։ Վերջինս ոչ միայն տեղի չէր տալիս, այլև պայքարում էր իր քեռորդու դեմ կրկնապատկած ուժգնությամբ։ Այսպես, մի անգամ, ձմեռվա մեջ իմանալով, որ Սարգիս-Աշոտն իջել է մի գյուղում, նա իր մարդկանցով շրջապատում է այն տունը, ուր քնած էր նրա հակառակորդը։ Կամենալով անհապաղ ձեռք գցել նրան, Հասանը, կոթնելով իր նիզակին, մի սաստիկ թռիչք է գործում և ցատկում տանիքի վրա, որը, սակայն, չի դիմանում այդ ծանրությանը և փլվում է․ իսկ Հասանը ներս է գլորվում և իսկույն ձերբակալվում Աշոտի մարդկանցից։ Նրանից պահանջվում է անհապաղ Աշոտին հանձնել իր Սևան բերդը։ Բայց այս պահանջին դիմադրում են Հասանի մայրն ու եղբայրը, որոնք և դիմում են Սմբատ թագավորին։ Վեճը տեղում խաղաղությամբ կարգավորելու համար թագավորն ուղարկում է Հովհաննես կաթողիկոսին (պատմաբանին, 898—929), որին հաջողվում է համաձայնության բերել երկու կողմերն այն պայմանով, որ Սևանը հանձնվի Աշոտին, իսկ սա ողջ և անվնաս արձակի Հասանին։ Բայց Վասպուրականի իշխանապետը դրժում է իր տված խոսքը և կուրացնում Հասանին, չնայած այդ բռնությանը սաստիկ ընդդիմանում է նրա եղբայր Խաչիկ-Գագիկը։ Հովհաննես կաթողիկոսը, վրդովվելով Սարգիս-Աշոտի ուխտադրժությունից, բանադրում է նրան։ Իսկ Հասանը դժբախտության խիստ հարվածի տակ կերպարանափոխվում է։ Բանից դուրս էր գալիս, նա քանի դեռ չէր կուրացել, չար ու խռովարար էր, բայց կուրանալուց հետո դարձավ հոգեպաշտ, մինչև իսկ կրոնավորություն ընդունեց։ Գոնե այսպես է հավատացնում Թովմա Արծրունին։

Կաթողիկոսական բանադրանքը չփչացրեց հարաբերությունները Սարգիս-Աշոտի և Սմբատի միջև։ Ընդհակառակն, երբ Ապահունյաց գավառի Կայսիկ ցեղը նորից հրաժարվեց ճանաչել Հայոց թագավորի իշխանությունն ու իր հարկը նրան հասցնել, և երբ այս պատճառով թագավորն ստիպված էր զենք բանեցնել Մանազկերտի դեմ, Սարգիս-Աշոտը միացավ այդ արշավանքին։ Թագավորական զորքը, Թովմա Արծրունու ասելով, պարտություն կրեց, և Սմբատն արդեն սկսել էր ետ քաշվել պատերազմի դաշտից, բայց աջ թևի վրա գործող Աշոտը, որի հրամանի տակ կռվում էին և Մոկաց ու Անձևացյաց գնդերը, շատ ուժեղ բախում ունեցավ թշնամու հետ, որին և հարկադրեց լքել իր դիրքերն ու փախչել։ Սմբատը, լուր առնելով այս հաջողության մասին, վերադարձավ և պաշարեց Մանազկերտը։ Բայց Սարգիս-Աշոտը, որպեսզի վերջ տա արյունհեղության, մի ուրիշ խոշոր հաջողություն էլ ունեցավ։ Նա համոզեց Կայսիկներին հաշտություն խնդրել, որ և կայացավ ապստամբների կատարյալ հնազանդության վրա հիմնված։ Սմբատն իր քեռորդուն շնորհակալություն հայտնեց մեծամեծ ընծաներով, որոնց մեջ առանձնապես հիշատակելի է Նախճավան քաղաքը, որի շուրջը շուտով ծագեցին ծանր և ամբողջ երկրի համար աղետաբեր վեճեր։

Տարաբախտաբար, Հովհաննես կաթողիկոսի և Թովմա Արծրունու ցուցմունքները, մանավանդ այստեղ, հակասական են, և եթե կարելի լինի այդ երկուսին մի կերպ համաձայնեցնել, կստացվի այսպիսի մի դրություն։ Նախճավանը, իբրև Վասպուրականի և Սյունյաց աշխարհի սահմանագլուխ, երբեմն անցնում էր Սյունիքի իշխանների, երբեմն էլ Արծրունիների տիրապետության տակ, և այսպիսով, վեճի առարկա էր դարձել

---

[1] Եր. 242—243։

[2] Стэнли Лен-Пуль, «Мусульм. Дин.», стр. 103.

[3] Անդ.

երկու տոհմերի համար։ Նախճավանը տալով Սարգիս-Աշոտին իբրև պարգև նրա ռազմական ծառայությունները վարձատրելու համար, Սմբատ թագավորը խախտում էր Սյունեցիների իրավունքը։ Դժգոհությունն այս բանի դեմ իսկույն արտահայտվեց, այն էլ այնքան սուր կերպով, որ Սյունյաց Սմբատ իշխանը, Թովմա Արծրունու վկայությամբ, մինչև իսկ ապստամբեց թագավորի դեմ, հրաժարվելով նրան հարկ տալ և հայտարարելով, թե իր հարկն այնուհետև պիտի ուղարկի Ատրպատականի էմիրին։ Այս առթիվ ներքին պատերազմ է պատրաստվում։ Սյունեցին 10 հազար, իսկ թագավորը 25 հազար զորքով իջան Շարուրի դաշտը և ճակատամարտ սկսեցին իրար դեմ։ Սմբատ թագավորը մեծ փութով իրեն օգնության կանչել Սարգիս-Աշոտին, որը թեպետև մեծ փորձառություն ուներ, շտապեց այդ հրավերը կատարել և բերելով իր գունդը, անցավ Արաքսը, թուղթ գրեց Սմբատ իշխանին, ցույց տվեց նրան, թե որքան անօգուտ է պատերազմ սկսել ապստամբական նպատակով։ Սյունյաց իշխանը համոզվում է, այդ միջոցին հասնում է նրա եղբայր Սահակը, բերելով հարկը։ Կայանում է հաշտություն։ Բայց ազգամիջյան արյունհեղության դժբախտությունից ազատվածների ուրախությունը տեղի տվեց մեծ տխրության, որովհետև Սարգիս-Աշոտը, տանջվելով փորացավից, գնաց Նախճավան, ուր 40 օր պառկելուց հետո մեռավ (904 թ.)։ Բայց, ինչպես երևում է, Սմբատ իշխանը բոլորովին չէր հաշտվել Նախճավանն ընդմիշտ կորցնելու մտքի հետ, և Սմբատ թագավորը, գուցե հենց իր քեռորդու մահից հետո, նորից նրան վերադարձրեց վեճի առարկա դարձած կալվածը։ Այնուհետև է, ինչպես կտեսնենք, որ ավելի սուր կերպարանք է ստանում այս վեճը։

Ինչ էլ եղած լինի այդ համաձայնության էությունը, Սմբատ թագավորը դրանով ձեռք էր բերում դարձյալ մի երկար ժամանակամիջոց, երբ նրա երկիրը կարող էր հանգստանալ խաղաղ և շինարար աշխատանքի մեջ։ Սմբատի թագավորության մեծագույն մասը (մոտ 18 տարի), թեև հարուստ էր սուր շփումներով և վտանգավոր սպառնալիքներով, բայց, ընդհանուր առմամբ, երկրին չբերեց խոր և մեծամեծ ցնցումներ, ուստի այդ ժամանակամիջոցը կարելի է համարել շարունակություն այն մեծ խաղաղ շրջանի, որ Աշոտ Ա-ի ժամանակ էր Հայաստանի հազվագյուտ բախտը դարձել։ Ոչ Աֆշինի արշավանքները, ոչ էլ Թուխի պարտությունը, բերելով քաղաքական անհաջողություններ, իսկական ժողովրդական աղետներ և թշվառություններ չէին առաջացրել, և Հայոց երկիրը, իր թագավորի ղեկավարությամբ, կարող էր անխռով առաջ տանել իր տնտեսական և կուլտուրական զարգացումը։ Այս բանին նպաստում էր և արտաքին ուժը։ Լևոն Իմաստասեր կայսրը, շարունակելով իր հայասեր քաղաքականությունը, վերաբերվում էր Սմբատ թագավորին անփոփոխ մտերմությամբ և խրախուսում էր նրա ձեռնարկությունները։ Հայ երկրի շեն ու պայծառ դրությունը նկարագրել են թե՛ մեր և թե՛ օտար մատենագիրները։ Հովհաննես կաթողիկոսը գրում է.

«Իսկ աշխարհիս Հայաստանեայց յասուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուբք գինւոյ

ի կուծս այգեստանեայց և լերինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ոչխարաց։ Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք և հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդս հաստահեղոյս ձուլեալ կրով՝ ի մենաստանս և յաւանս և յագարակս։ Բայց առաւել ևս քան զյոլովս Հայկազանցն գրոհի իշխանն Գրիգոր և նորին եղբարք՝ Սահակ և Վասակ, որք հայրենական սեպհականութեամբ՝ տիրէին գաւառացն, որք շրջապատեալ կան շուրջ կեզերբ ծովակին Գեղամայ։ Եւ այսպէս վիճակ ցանկալի՝ լի պտղատածող արգասիւք պարարտութեամբ՝ առհասարակ ամենեցուն տուաւ ձրի նորին շնորհօքն Աստուծոյ և նորին յարմար կազմածոց տանէ Տեառն բղխէր աղբիւր բարեաց ըստ մարգարէին և ոռոգանէր զձորն վիճակաց»[1]։

Ինքը Սմբատը ետ չէր մնում նախարարների շինարարական եռանդից։ Իր Շիրակավանում (Երազգավորս), արքունական պալատի մոտ, նա կառուցեց մի եկեղեցի[2], զարդարեց մեծ ճոխությամբ, ինչպես նկարագրում է նույն պատմագիրը. «Եւ չքնաղ և երևելի զարդուք ոսկեճամուկ հանդերձանաց, եւս ի շղաշատեռ առագաստից զնա պճնեալ պայծառացուցանէր, և կամար եւս ի համակ ոսկւոյ ականակապ յարդարեալ և ի քրիստոսական տրապիզին եդեալ ածեալ»[3]։ Իսկ Աշոտ սպարապետը, թագավորի եղբայր Շապուհի որդին, շինում է երկու եկեղեցի—մեկը Բագարան ավանում, Ախուրյան գետի վրա, ուր Բագրատունիների տոհմային գերեզմանատունն էր գտնվում, մյուսը՝ Կողբ ավանում։ Առաջինին պատմիչը հատկացնում է «պճնապայծառ» անունը, երկրորդն անվանում է շինված «բազմածախ փարթամութեամբ»։ Եվ այս փարթամությունը չպիտի էլ շատ զարմացրած լիներ այն ժամանակները և անօրինակ բան համարված, քանի որ հարստությունները շատ էին դիզվել երկրում։ «Յաւուրս սորա (Սմբատի),— գրում է մի ուրիշ հայ պատմիչ,— և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ։ Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսեայս զգենուլ պատմուճան»[4]։

Որ ազգային աղբյուրների այս ցուցմունքները ոչ միայն չափազանցություններ չեն, այլ, ընդհակառակն, բավական թույլ արձագանք են այն բարեբախտ ժամանակների դրության, վկայում են արաբացի մատենագիրները, որոնք ասում են մեզ, թե առհասարակ ամբողջ Արաբական Հայաստանը կամ, ուրիշ խոսքով, Արաբական Անդրկովկասը, որի մեծագույն մասի վրա, ինչպես տեսանք, տարածվում էր Հայոց թագավորի իշխանությունը, աչքի էր ընկնում իր բարեկեցությամբ և առատությամբ։ Ահա, օրինակ, ինչ է գրում անձամբ այդ երկիրը ճանապարհորդած աշխարհագիրներից մեկը, Իբն-Հաուկալը. «Թագավորներն ու իշխաններն այստեղ ապրում են մեծ առատության մեջ և ունեն գերազանց վարելադաշտեր, ամբարներ, ձիեր։ Նրանց կալվածները կազմող խոտաբնակ խոշոր գավառները հարուստ են։ Այդ երկրներում, սարերում, քաղաքներում և ավանները բում այնպիսի էժանություն, լիառատություն է, այնպիսի արոտներ, այն-

---

[1] Եր. 250—251։

[2] Գոյություն է պահպանել մինչև այսօր (տ. «Շիրակ», Ղ. Ալիշանի, եր. 9)։

[3] Եր. 231։

[4] Ստեփ. Ասողիկ, Պետերբուրգի հրատ., եր. 161։

պիսի գույնզգույն մարմարիոն, հոտերի ու հացի այնպիսի շատություն, այնպիսի ծառեր, գետեր, պտուղներ, թարմ ու չորացած արմավներ, գերանների այնքան մեծ թիվ, որ եթե այս մասին պատմվեր մի մարդու, որ այդ բոլորը չի տեսել իր աչքով, այդպիսին կսկսեր ժխտել այդ բոլորի չափերը։ Այս երկրի թագավորների թագավորություններն ընդարձակ են, ուժերը՝ մեծ։ Նրանք [թագավորները] վայելում են իրենց երկրները, բարեկեցության մեջ են, ունեն այնպիսի տեղեր, որոնք իսկական վայելք են կազմում իրենց գեղեցկությամբ, ինչպես նաև տալիս են գեղեցիկ հագուստներ և ծառաներ, սրընթաց երիվարներ, թանկագին ջորիներ, ամեն տեսակի երեխաներ, որոնց միջից նրանք [թագավորները] միշտ կարող են ունենալ երգչուհի ստրկուհիներ, խոհարարներ, խոհարարուհիներ, ունեն նաև ոսկով և արծաթով զարդարված ամաններ, օրինակ՝ հախճապակյա մատուցարաններ, կոնքեր, կուլաներ (ջրաման), թանկագին քարից թրաշած ամաններ, ինչպես նաև հղկած թանկագին ապակուց, թանկագին բյուրեղից շինած անոթեղեն։ Այս թագավորներն ամեն տարի հասցնում են Ատրպատականի թագավորին սահմանած հարկն ու անհրաժեշտ իրերը, և այս բոլորը նրանց համար այնքան հեշտ է, որ նրանք երբեք չեն դադարեցնում վճարումը և չեն հրաժարվում նրանից»[1]։

6. Սմբատ և Յուսուֆ: Յուսուֆ իբն-Աբու-Սաջ Դևդադ (Յուսուֆ Ապուսաճի որդի՝ ըստ մեր պատմագիրների), որ 884 թվին նշանակված էր Մեքքայի վալի, Աֆշինի մահից հետո կամենալով իր տիրապետության տակ առնել նրա ստեղծած գավառական թագավորությունը, հեռացրեց նրա ուղղակի ժառանգ Դևդադին (901 թ.) և Ատրպատականում հաստատվեց այն ժամանակ, երբ Ալի-էլ-Մոքթաֆի-Բիլահ խալիֆը (902—908 թթ.) բաժանել էր, Սմբատ թագավորի խնդրանքով, Հայաստանն Ատրպատականից, հպատակեցնելով նրան անմիջապես Բաղդադի արքունիքին։ Այս դրության հետ Յուսուֆը հաշտվել չէր կարող, որովհետև եղբորից ժառանգություն ստացել էր թե՛ Ատրպատականը և թե՛ Հայաստանը։ Ուստի խնդրեց խալիֆից ոչնչացնել այդ կարգադրությունը և վերականգնել այն հարաբերությունը երկու երկրների միջև, որ հաստատել էր Աֆշինն իր կյանքի վերջին տարում։ Սակայն էլ-Մոքթաֆին մերժեց այս առաջարկը։ Յուսուֆի համար այս մի նոր առիթ էր խալիֆի դեմ գրգռվելու համար։ Բնավորությամբ նա իր եղբորից ավելի դաժան էր և պահանջկոտ, ավելի եռանդուն և համառ՝ իր ծրագրած նպատակին հասնելու համար։ Փորձեց առանց Բաղդադի միջնորդության համաձայնություն կայացնել Հայոց թագավորի հետ, բայց որովհետև այս էլ հնարավոր չպիտի լիներ հաջողեցնել խաղաղ եղանակով, ուստի Յուսուֆը դիմեց զենքով ճնշում գործ դնելու միջոցին։ Եվ հետևելով եղբոր օրինակին, նա արշավանք սկսեց Փայտակարանից, այսինքն Աղվանքի վրայով դեպի Շիրակի հյուսիսային թիկունքները։ Սմբատն էլ, իր նախկին գործողությունների եղանակը կրկնելով, իր ուժերը կենտրոնացրեց Տաշիր և Աշոցք գավառներում այդտեղի լեռնանցքները կտրելու համար։ Այս բանը, սակայն, չհաջողվեց։ Մինչդեռ հայերն իրենց ուշադրությունը լեռնանցքի վրա էին դարձնում, Յուսուֆը կարողացավ ճանապարհ բանալ այնպիսի մի ուղղությամբ, որ անսպասելի էր

[1] **А. Грин,** «Династия Багратидов в Армении» (Жур. Минис. Просв., 1893, № 11, отд. 2, стр. 89).

Հանկարծակիի բռնված հայ բանակն շտապեց առաջ նետվել թշնամու հետևից, բայց այլևս ուշ էր, և Յուսուֆը, անցնելով լեռան մյուս կողմը, մտավ Շիրակ։ Բայց այս արշավողական հաջողությունը հայերին առանձին վնաս չպատճառեց։ Սմբատի բախտն էր, որ Յուսուֆն այս անգամ բավականանում էր Աֆշինի գործողությունները կրկնելով։ Առանց կանգ առնելու, հապճեպով, նա անցավ գնաց Արարատյան երկիրը, մտավ Դվին մայրաքաղաքը։ Նա բավական էր համարում, որ գրավել է երկրի սիրտը և այժմ կարող է պայմաններ թելադրել։ Սմբատը, առաջվա պես, հենարան դարձրեց Արագածոտնի լեռնային մասերը և բանակ դրեց Արուճ գյուղում. Յուսուֆն անմիջապես բանակցություններ սկսեց նրա հետ մի հարուստ և հայտնի սիրիացու միջոցով, որ ապրում էր Դվինում։

Այս խաղաղասիրությունը, անշուշտ, թելադրվում էր և զգուշության պահանջով, որովհետև Յուսուֆը մոռանալ չէր կարող, որ այս արշավանքը նա սկսել էր առանց խալիֆի գիտության, գուցե և հակառակ նրա կամքի։ Բացի դրանից՝ Յուսուֆը դիտավորություն ուներ ապստամբելու խալիֆի դեմ, հետևաբար չէր կարող թույլ տալ, որ իր թիկունքում մնա թշնամաբար տրամադրված մի Հայաստան։ Այս բոլոր հանգամանքներն ստիպեցին նրան առժամանակ մեղմ ու զիջող լինել Հայոց թագավորի վերաբերմամբ։ Նա միայն մի պայման ուներ—որ Հայաստանը ճանաչի Ատրպատականի իրավունքը հարկ ստանալու և Սմբատն ընդունի Յուսուֆից թագ, մի բան, որ պիտի նշանակեր Հայաստանի կախումն Ատրպատականից։ Հարկ էր պահանջվում ավելի սկզբունքի համար, քանի որ նրա քանակությունն ու վճարելու պայմանները թողնվում էին միանգամայն Սմբատի կամքին։ Հայոց թագավորն ընդունեց այս պայմանները, ուստի պատերազմական գործողությունները վերջացած են համարվում և կողմերից յուրաքանչյուրը ձմեռոց է ընտրում. Յուսուֆը՝ Դվին, իսկ Սմբատը գնում է դարձյալ իր Երասխաձորը, այս անգամ տեղ ընտրելով Նախճրաձոր գյուղը։ Դիվանագիտական բանակցությունները ձմռվա ընթացքում դադար չեն առնում, իսկ երբ բացվում է գարունը և Սմբատը տեղափոխվում է իր Երազգավորս, երկու կողմերի միջև տեղի է ունենում հարուստ ընծաների փոխանակություն։ Ատրպատականի թագավորի կողմից ընծաներն ավելի ռազմական պարագաներ էին ներկայացնում։ «Յուսուֆ,— ասում է Հովհաննես կաթողիկոսը,— բազում երիվարս սրավարս, սուս և ահապարանոցս պատկերաւ՝ բազմազան պճնայարմար զարդուք և զինուք ոսկեսանձ ոսկենկար պաճուճանօք, այլ և թագ ևս յոսկւոյ Սոփերայ կազմեալ, և ի նմա յելուզեալ յեռեալ վարսակալ մարգարտատող տպազարդութիւնս. և այլ ևս ականս պատուականս, և բազում և երեւելի զգեստս արքունականս ոսկեճամուկս և շղաշատեռն հրաշանկարս միանգամայն՝ առաքէ ի պատիւ մեծարանաց արքային Սմբատայ»[1]։ Չէր մոռացվում և թագաժառանգ Աշոտ իշխանը, որին ուղարկվում էր դարձյալ ոսկով և արծաթով զարդարված մի ձի։ Ընծաներ ստանում էր և Հովհաննես կաթողիկոսը։ Դրանք բաղկացած էին հագուստներից և մի ջորուց, որ նույնպես զարդարված էր, իբրև կաթողիկոսի հեծնելու գրաստ, ինչպես և թագավորի համար նշանակված ձիերը։ Բնորոշ են այն ընծաները, որոնք դուրս եկան Շիրակի արքունիքի թանգարանից և ուղարկվեցին Յուսուֆին իբրև պատասխան։ Սրանք մեծագույն մասամբ

[1] Եր. 249։

հայկական ձեռարվեստի գլուխգործոցներ էին։ «Բարեվայելուչ և չքնաղատես և երևելի զարդս հանդերձանաց», հայկական կարմիր ներկով (որդան կարմիր) ներկված ձեռագործ ծածկոցներ բազմոցների համար, ըմպանակներ, բաժակներ։ Տեղական ձեռարվեստի այս գործերին միացվում էր և բյուզանդական մի կամար՝ մեջքին կապելու համար, որ զարդարված էր գույնզգույն ապակիներով։ Եվ հայոց այս ընծաները, նույն պատմաբանի ասելով, ավելի շքեղ և թանկարժեք էին, քան Յուսուֆի ուղարկածները։

Այսպիսով, կնքված հաշտությունը Հայաստանի և Ատրպատականի միջև, այն ժամանակվա հանգամանքներին նայած, բավական բարեբախտ էր և երկարատև էլ եղավ։ Յուսուֆը քաշվեց իր երկիրը, առայժմ բավարար կերպով հարդարված համարելով Հայոց հարցը։ Ապագայի մասին նա, իհարկե, որոշ նկատառումներ ուներ, բայց առայժմ թողնում էր, որ հանգամանքները պատրաստեն այնպիսի դրություն, երբ հասունացած կլիներ Հայաստանի վերջնական հպատակեցումը։ Իսկ որ այդ տեսակ ակնկալությունները զուր չէին, այդ շուտով պիտի ցույց տային այն շարժումները, որոնք հետզհետե սկսեցին գլուխ բարձրացնել Հայոց պետության մեջ։ Եվ սկիզբը դրվում էր հեռավոր մի աշխարհից, որ Հայաստանի հետ կապված էր դաշնակցային հարաբերություններով։ Այս աշխարհը Մինգրելիան էր (Եգերների աշխարհը), որի Կոստանդին թագավորը, ոտի տակ տալով բարեկամական հարևանության դրած պարտավորությունները, պատերազմական գործողություններ էր սկսում այն աշխարհներում, որոնք ճանաչել էին Սմբատի տիրապետական իշխանությունը, հարկ էին տալիս նրան և որոնք Կովկասյան գլխավոր շղթայի հարավային ստորոտներն էին գրավում, այսինքն՝ Գուգարների և Ծանարների աշխարհները մինչև Դարյալի կիրճը (Ալանաց Դուռ)։ Սմբատն արշավանք սկսեց Կոստանդինի դեմ և այդ փորձողությունների մեջ նրան մեծ օգնություն արավ նրա վաղեմի բարեկամ Ատրներսեհ թագավորը, որ Կոստանդինի աներն էր, բայց մեծ գժտության մեջ էր նրա հետ։ Եգերների թագավորը, տեսնելով, որ մեծ ուժ չունի հայվրացական բանակին դիմադրելու, հաշտություն է խնդրում։ Սմբատն ուղարկում է Ատրներսեհին և իր մի քանի նախարարներին՝ բանակցություններ վարելու համար։ Սակայն Վրաց թագավորն այս խաղաղ տեսակցությունը հարմար միջոց է համարում իր անձնական վրեժը լուծելու համար և կալանավորում է իր փեսային։ Թե ինչ տպավորություն է թողնում այս բռնությունը, երևում է այն համեմատությունից, որ անում է Հովհաննես կաթողիկոսը։ Կոստանդինին, ասում է մեր պատմագիրը, բռնեցին ինչպես մի ուլի՝ այծերի հոտից, մինչդեռ նա որջից դուրս եկող մի առյուծ էր, կարող՝ վանելու և ցրելու ազգերը։ Գերի թագավորին Սմբատը, շղթայակապ անելով, բնակեցրեց Անի ամրոցում, բայց հրամայելով, որ նրան պահեն ոչ իբրև կալանավորի, այլ իր դիրքին համապատասխան հարգանքներով։ Եվ այս բերդարգելությունն էլ չորս ամսից ավելի չտևեց։ Մինգրելիայում ծայր տվեց մի շարժում, որ սպառնում էր թագավորական գահ հանել մի ուրիշին, որ ավելի պիտի բորբոքեր թշնամությունը հարևանների, դրանց մեջ և Սմբատի դեմ։ Ուստի Հայոց թագավորը դիմեց իր սիրած հաշտարար միջոցներին։ Արձակելով Կոստանդինին Անիից, նա ուղարկեց նրան իր երկիրը թագավորական պատիվներով։ Եվ, իրավ, այս միջոցը գեղեցիկ հետևանքներ առաջացրեց Մինգրելիայում։ Ներքին հեղաշրջման փորձը կանգ առավ, իսկ վերադարձած Կոստանդինը լցված էր շնորհապարտ բա-

րեկամության զգացմունքով դեպի Հայոց թագավորը։ Բայց այս քայլը, որ պետական իմաստություն էր Հայաստանի համար, մի նոր և բոլորովին անսպասելի հակառակություն հանեց Սմբատի դեմ։ Այս անգամ արդեն Ատրներսեհն էր, որ մոռանում էր հին բարեկամությունը՝ գրգռված այն հանգամանքից, որ Կոստանդինի արձակումը տեղի է ունեցել առանց իր համաձայնության։ Վրաց թագավորը, իհարկե, չէր բավականանում դժգոհության ու ցասման զգացմունքով։ Իր կրած վիրավորանքի փոխարեն հատուցելու համար նա սոսկալի վրեժխնդրության մի առիթ էր որոնում։

Այս միջոցին էր, որ Յուսուֆն ապստամբեց էլ-Մոքթաֆի խալիֆի դեմ։ Խալիֆը չբավականացավ իր զորքերը հանելով՝ ապստամբին պատժելու համար, այլև դիմումներ արավ արաբական հպատակության ենթարկված այն բոլոր երկրներին, որոնք Ատրպատականի հարևաններն էին, պատվիրելով ամենքին դուրս գալ Յուսուֆի դեմ։ Հատկապես այդ նպատակով Հայոց աշխարհը եկավ մի պաշտոնյա, որը «քարտուղար» է անվանված Հովհաննես կաթողիկոսի Պատմագրության մեջ։ Սմբատին նա հայտնում էր, թե սպասված օգնության փոխարեն՝ խալիֆը Հայաստանին զիջում է մի տարվա հարկը։ Սմբատը դրված էր շատ փափուկ դրության մեջ։ Մի կողմից՝ հավատարիմ մնալով Յուսուֆի հետ կռած դաշնադրության, նա չէր ուզում թշնամական գործողություններով խզել բարեկամական հարաբերությունները նրա հետ։ Իսկ մյուս կողմից՝ ավելի հզոր կապեր կային Հայաստանի և խալիֆաթի միջև, և արհամարհել իսլամական աշխարհի բարձրագույն տիրոջ հրամանները բոլորովին ներելի չէր հայ ժողովրդի համար, մանավանդ որ խալիֆից ուղարկված քարտուղարն էլ չհեռացավ Հայաստանից, մինչև որ հայերն իրապես ցույց տվին, որ արքունի զորքին օգնության են գնում։ Հազար հոգուց բաղկացած մի գունդ էր այդ, որ ուղարկվեց Վասպուրականի կողմերը։ Սմբատը, որպեսզի իր համար տանելի դիրք ստեղծի այս կացության մեջ, խաբեության դիմեց, գրելով Յուսուֆին, որ իր ուղարկած զորագունդը նրա դեմ կռվելու համար չէ, այլ նրա համար կռվելու։ Բայց այս փորձը չհաջողվեց։ Ինչպես երևում է, հայերն էլ մասնակցություն ունեցան արաբական զորքերի այն գործողություններին, որոնք վերջիվերջո հարկադրեցին Յուսուֆին ցած դնել զենքը և թողություն խնդրել խալիֆից։ Թողություն նա ստացավ, ստացավ նաև իր Ատրպատականը, բայց այլևս չմոռացավ Սմբատի վարմունքն իր վերաբերմամբ։ Այս զգացմունքը նրա մեջ վառ պահպանում էին Հայոց թագավորի թշնամիները, գրգռելով նրա կասկածամտության և վրեժխնդրության կրքերը։ Արդեն հասունացել էր Հայոց հարցի արմատական լուծման անհրաժեշտությունը։ Յուսուֆին նպաստում էր մանավանդ այն հանգամանքը, որ 908 թվին մեռավ էլ-Մոքթաֆի խալիֆը, որ նրան իր անբարեհաճ վերաբերմունքով հասցրել էր ապստամբության։ Իսկ Մոքթաֆիին հաջորդած Ջաֆար էլ-Մոքթադիրը (908—932 թթ.), մի բոլորովին թույլ և աննշան խալիֆ էր, որի օրով Աբբասյանների քաղաքական նշանակությունը համարյա միանգամայն ոչնչացավ։ Հասկանալի է, որ այս հանգամանքը Յուսուֆին ավելի մեծ համարձակություն պիտի տար՝ Հայաստանի հետ իր հաշիվները վերջացնելու համար։ Եվ իրավ, նա սկսեց գործել նախ քաղաքագիտական միջոցներով՝ իր թշնամական տրամադրության առարկա դարձած երկիրը թուլացնելու համար։

Հենց որ վերջացած էր իր ապստամբության գործը և նորից իր իշ-

իշխանության տեր էր դարձել՝ նա իսկույն և շտապով պահանջեց Սմբատից Հայաստանի հարկը։ Միշտ այսպիսի պահանջ էր ուղարկում Հայաստան և խալիֆը։ Սմբատը, որպեսզի կարողանա թե՛ այդ ստիպողական պահանջները կատարել և թե՛ պաշար կազմել նաև ապագա պարտքերի համար, դիմեց մի հարկահանական միջոցի, որ արտակարգ էր և, ինչպես երևում է, հաճախ չէր գործադրվում, որպեսզի ժողովուրդը ընտելանար նրան։ Այդ միջոցն էր հարկերի կրկնապատկումը։ Սովորական կարգն էր տասանորդ վերցնելը։ Իսկ այժմ Սմբատը կարգադրում էր ստանալ հինգ մասից մեկը թե՛ բերքերից և թե՛ անասուններից, այնպես որ հարյուր գլուխ ոչխար կամ տավար ունեցողը պիտի տար փոխանակ 10 գլխի՝ 20-ը։ Այս միջոցով Սմբատը, իրավ է, կարողացավ իսկույն բավարարել հարկահանության պահանջները, բայց փոխարենը դժգոհություն տարածեց ժողովրդի մեջ։ Առանձնապես դժգոհ պիտի մնար, իհարկե, նախարարական դասը, որի վրա էր ընկնում հարկի մեծագույն ծանրությունը։ Այս հողի վրա գրգռումը գնալով այնքան զորեղ չափերի է հասնում, որ մինչև իսկ թագավորի կյանքի դեմ դավադրություն է կազմվում։ Այստեղ է ահա դուրս գալիս Վրաց Ատրներսեհ թագավորը։ Նա միացած է Սմբատի առանձին սերն ու վստահությունը վայելող և պալատական բարձր դիրք գրաված մի հայ նախարարի հետ, որի անունն էր Հասան։ Դավադիրները, օգտվելով այն հանգամանքից, որ թագավորը գնացել էր Տաշիր գավառը, Շիրակում ծավալեցին մի եռանդուն գործունեություն։ Հասանը Ատրներսեհին մտցրեց Անի ամրոցը։ Սպանության գործը հանձնված էր Հասանի անհրոջը, որ մի իշխան էր Հավունյաց տոհմից և իր գործակիցների հետ հաստատվեց Երազգավորսում։ Թագավորի սպանությունից հետո Ատրներսեհը պիտի ժառանգեր Հայաստանը։

Բայց դավադրությունը բացվեց։ Սմբատն շտապով վերադարձավ Երազգավորս և ձերբակալել տվեց այդտեղ բուն դրած դավադիրներին։ Անիի մեջ հաստատված Ատրներսեհն ու Հասանը, դավադրության անհաջողությունը տեսնելով, սարսափահար եղան և կողոպտելով Անին, փախան Տայոց աշխարհը՝ ամրությունների մեջ պատսպարվելու համար։ Դավադրության լուրն արագ տարածվեց ամեն տեղ, հուզեց ամենքին և ոտքի կանգնեցրեց ժողովուրդը, իր թագավորին պաշտպանելու համար։ Հովհաննես կաթողիկոսը գրում է. «Իսկ իբրև զօժ ազմկի աղաղակին ընդ ոլորտս տէրութեանն արքայի սփռիւր, ամենայն պատերազմող մարդիկ զօրք անցեալք ի հանդէսի, զմի սիրտ առհասարակ յինքեանս բերէին և զմի զինուորութիւն զինուորէին, և զմի զրահ ճշմարտութեան ագանէին, և միագունդ քաջագօտի պնդէին զմէջս. զմահն իւրեանց իբրև զանշուշտ կեանս ի վերայ վրէժխնդրութեան թագաւորին համարէին։ Եւ այսպէս ամա համագունդ հասեալ ժողովեալ առ թագաւորն՝ չուէ գնալ ի դիմի հարկանել ոսոխին չարի և այլոցն ևս ապստամբ դասնացուլաց»[1]։ Այսպես հասնելով Վրաստան, հայ զինվորությունն ուզում էր իր վրեժը հանել ամենքից և ամեն մեկից։ Բայց Սմբատն այս արգելեց խստությամբ, ասելով, թե մեղքի հատուցումը պետք է պահանջել այն անձից, որ գործել է մեղքը, իսկ անմեղներին չի կարելի պատժել ուրիշների մեղքերի համար։ Այսպիսի բարոյական բարձր սկզբունք, որ ուներ Սմբատն այնպիսի մի միջավայրում, ուր եկեղեցին ան-

[1] Յովհ. կաթողիկոս, եր. 261—262։

գամ պաշտում էր մի աստված, որը հայերի մեղքերի համար պատժում էր նրանց որդիներին մինչև յոթը պորտ, պետք է համարել բարձր և վեհ դաստիարակության նշան։ Բայց ահա մեղսագործն էլ նրա ձեռքին է։ Ատրներսեհը մեղայական է ուղարկում նրան և խնդրում է ներել։ Եվ Սմբատը մի նոր առաքինություն է ցույց տալիս—ներում է իր նախկին բարեկամին։ Իսկ դավադրության մասնակցած հայ նախարարներին նա չի խնայում— կուրացնում է նրանց և ոմանց ուղարկում է Լևոն կայսրին, ոմանց էլ Մինգրելիա՝ Կոստանդին թագավորին։ Այստեղ թագավորին առաջնորդողն արդեն պետական սկզբունքն էր. այդ սկզբունքը պարտավորեցնում էր թույլ չտալ, որ արատն անպատիժ մնալով, խոցի պես մտնի օրգանիզմի մեջ։ Տարաբախտաբար, ներքին փտությունն ավելի խորարմատ էր, հնացած, և հնարավոր չէր այն արմատախիլ անել այսպիսի միջոցներով։ 908 թվականից Սմբատի համար սկսվում էր նահատակության մի շրջան, որը պիտի գժբախտացներ նրա երկիրն էլ։ Այդ ժամանակից է Յուսուֆը դուրս գալիս Հայաստանի դեմ, հենված իր հովանավորած և ուժեղացրած ներքին պառակտումների վրա։

7. Խաչիկ-Գագիկ: — Վասպուրականի թագավորությունը: Սարգիս-Աշոտին 904 թվին հաջորդեց Գրիգոր-Դերենիկի միջակ որդին—Խաչիկ-Գագիկը, որ այդ միջոցին 25 տարեկան էր, բայց արդեն աչքի էր ընկնում իր ընդունակություններով։ Սմբատը նրան դեռ Սարգիս-Աշոտի կենդանության ժամանակ նշանակել էր «զորավար Հայոց Մեծաց», իրավունք տալով իր առջևից տանել տալ, հունական սովորությամբ, խաչադրոշ նշան, մի հանգամանք, որ վկայում է, թե Խաչիկ-Գագիկը եթե սպարապետ չէր (սպարապետը, ինչպես գիտենք, թագավորի եղբայր Շապուհն էր, հետո՝ նրա որդի Աշոտը), համենայն դեպս պատկանում էր բանակի բարձր հրամանատարության։ Իսկ կրտսեր եղբայր Գուրգենը նշանակվեց «Մարզպան Հայոց», որ, ըստ երևույթին, քաղաքացիական պաշտոն էր, զուգե հարկապետության պես մի բան։ Երկու եղբայրները բաժանեցին իրենց մեջ Վասպուրականը, որի հարավ-արևելյան մասը, ինչպես Սարգիս-Աշոտի կատարած բաժանման միջոցին, դարձյալ Գուրգեն մարզպանին ընկավ։

Թովմա Արծրունու խառն ու մութ նկարագրություններից երևում է, որ Խաչիկ-Գագիկի և Գուրգեն մարզպանի իշխանության գեթ առաջին երկու տարիները (904—906 թթ.) խառնակ ու անհանգիստ էին Վասպուրականում։ Ինչպես կարելի է հետևցնել, Գուրգենը, իր կալվածները հարավային ուղղությամբ, այսինքն Կորճեք նահանգի (այժմ Քրդիստան) կողմերում տարածելու համար, սահմանային վեճեր սկսեց հարևան տիրողների (անշուշտ՝ քուրդ ծագումով) հետ, որոնք և մանր պատերազմների մի ամբողջ շրջան բաց արին։ Այդ պատերազմները, որոնք երբեմն Կորճեքի ու Աղբակի հողերից տեղափոխվում էին Պարսկահայք նահանգը և գլխավորապես այժմյան Սալմաստ գավառը, հաճախ շատ հաջող էին Արծրունի իշխանների համար։ Դրանց մեջ իրենց քաջություններով շատ հայտնի դարձան մեզ արդեն ծանոթ երկու իշխաններ—Շերեփի որդիներ Շապուհն ու Թադեոսը, որոնք հաղթություններ էին տանում լեռնային պատերազմներում։ Բայց վերջից մեռնում է Շապուհը, և հայերը Սղունիս գյուղի մոտ հանկարծակի հարձակման ենթարկվելով, կորցրին իրենց կազմի (1000 հոգի) կեսը և մատնվեցին սաստիկ պարտության։ Այս խոշոր անհաջողությունը ազդանշան դարձավ, որ Ուրմիայի լճի զանազան կողմերից, ինչ-

պես և Պարսկաստանի ուրիշ անկյուններից Զարևանդ (Սալմաստ) գավառում հավաքվեն մեծ քանակությամբ ցեղեր՝ Վասպուրականի վրա հարձակվելու համար։ Այս ցեղերից առանձնապես հիշատակվում է մեկը—Շեխետի անունով։ Գուրգեն մարզպանը, տեսնելով իր սահմաններին սպառնացող այս մեծ վտանգը, թողեց պատերազմելու միտքը ու ցեղերի գլխավորների հետ բանակցելու և նրանց պահանջները կատարելու միջոցով, թվում է, կասեցրեց արշավանքները։

Իսկ Խաչիկ-Գագիկի գլխավոր հոգսը դարձավ վերացնել իր կալվածներում հաստատված անիշխանությունը։ Դրա համար պետք էր երկիրը մաքրել ավազակներից և հնազանդեցնել մի երկու ապստամբ իշխանների։ Այսպիսիններից մեկն էր Մայմուկի որդի Շապուհը, որ բռնացել էր Ագարակ բերդում, բայց նեղն ընկնելով՝ սկսել էր ներումն խնդրել Գագիկից։ Նրա հետ միաժամանակ ապստամբական շարժման մեջ էր մտել և Գրիգոր Աբուհամզա Արծրունի իշխանը, որ գործում էր իր որդիների հետ, հենվելով Արճուճի ամրոցի վրա։ Այս խռովությանն էլ արագությամբ վերջ դրեց Խաչիկ-Գագիկը, որ, զիջելով ապստամբների խնդրանքին, ներում շնորհեց նրանց, մանավանդ որ Գրիգոր Աբուհամզան նրա աներն էր[1]։

Ավելի ծանր ձեռնարկություն էր այն պատերազմը, որ Խաչիկ-Գագիկն սկսեց Ամյուկ բերդի դեմ։ Մենք արդեն գիտենք, որ բոլորովին անմատչելի և անառիկ բերդի հռչակ վայելող Ամյուկը Վանա լճի հյուսիսարևելյան ափին ցցված մի ժայռ էր և պատկանում էր Ութմանիկ արաբական ցեղին, որի ձեռքումն էր և Բերկրին։ Կռիվ հայտարարելով այդքան ամուր տեղերում պաշտպանվող ուժեղ թշնամուն, Խաչիկ-Գագիկը միանգամայն ընդմիշտ ազատվել էր ուզում ներքին վտանգից, որ սպառնում էր Վասպուրականին ամեն մի դժվար հանգամանքի մեջ։ Եվ այս դժվար ծրագիրն Արծրունի իշխանապետին հաջողվեց իրագործել առանց մեծ զոհերի։ Ամյուկը նա վերցրեց մի գիշերվա մեջ, ինչպես ասում է Թովմա Արծրունին՝ «գողացավ», որ, անշուշտ, նշանակում է հանկարծակիի բերելով ավելի գաղտնի դավադիր միջոցներով, գուցե նույնիսկ կաշառելով, քան թե բացարձակ գրոհով վերցրեց։ Ինչպես էլ եղած լինի, փաստն այն է, որ նա սրի քաշեց Ամյուկի Ութմանիկներին, մնացածներին խեղդել տվեց լճի մեջ։ Այս գործողությունն ահագին տպավորություն արավ ո՛չ միայն Վասպուրականում և առհասարակ Հայաստանում, այլև Ատրպատականի սահմանակից ու հեռավոր վայրերում։ Անմատչելի բերդերի գրավումը և նրա ազգաբնակության բնաջնջումը խոսում էին թե՛ Խաչիկ-Գագիկի զինվորական ընդունակությունների, իշխանապետական ուժեղության մասին և թե՛ միևնույն ժամանակ մուսուլմանական վրեժխնդրությունն էին գրգռում նրա դեմ։ Ուստի սահմանի մյուս կողմում ապրող արաբները, պարսիկները և մարերը (քրդերը), երևի այս երկրորդ անգամ, հավաքվում են Սալմաստի գավառում՝ Խաչիկ-Գագիկի դեմ կրոնական պատերազմ մղելու համար և ներս են խուժում Մարդաստան գավառը։ Բայց այստեղ Գագիկի կողմից զորապետ էր նշանակված մեզ քաջածանոթ հերոս Թադեոս Ալեացին, Շե-

[1] Թովմա Արծրունին մի ուրիշ տեղ (եր. 235) ասել է, թե Խաչիկ-Գագիկն ամուսնացած էր Սմբատ թագավորի (որ և իր մոր) եղբայր Շապուհի աղջկա հետ։ Եթե այստեղ շփոթություն չկա, նշանակում է, որ այս միջոցին Գագիկի առաջին կինը մեռել էր և նա ամուսնացել էր երկրորդ անգամ, առնելով Գրիգոր Աբուհամզայի աղջկան։

րեփի որդին, որ ուժեղ հարձակում գործելով, ետ է քշում արշավողներին, մեծ կորուստներ պատճառելով նրանց։ Այս դիմադրությունն այնքան մեծ թափով էր առաջ մղում, որ արշավող խառնիճաղանջ ցեղերը, զգալով, որ ավելի դժվար պիտի լինի Խաչիկ-Գագիկի հետ գործ ունենալ երկրի խորքում, հրաժարվեցին իրենց ձեռնարկությունից և ցրվեցին իրենց տեղերը։

Այս պատերազմական շարժումները, մանավանդ նկատի առնելով, որ նրանք ուղղված էին արաբների դեմ և ստացան նույնիսկ մասնավոր կրոնական գունավորում, անշուշտ, չէին կարող տեղի ունենալ, այն էլ Ատրպատականի սահմանակից մի երկրում, եթե Յուսուֆը համաձայնություն տված չլիներ կամ առնվազն չեզոքություն և անտարբեր վերաբերմունք արտահայտած չլիներ։ Իսկ այդպիսի մի վերաբերմունք Ատրպատականի թագավորի կողմից կարող էր երևան գալ միայն իբրև հետևանք նրա և Խաչիկ-Գագիկի միջև տեղի ունեցած մերձեցման։ Թեև Թովմա Արծրունին հավատացնում է, թե Ամյուկի գրավումից հետո էր, որ այդ մերձեցումն առանձնապես շեշտված և պարզ ցուցադրված կերպարանք ստացավ, բայց հենց այս վկայությունն էլ ապացույց է, որ վաղօրոք որոշ համաձայնություն էր տեղի ունեցել երկուսի միջև։ Անկասկած է, որ Յուսուֆը, ինչպես իր ծրագրերն ու հեռանկարներն ունեցող մի մարդ, իրեն շատ ձեռնտու և օգտակար հատկություններ էր գտել Վասպուրականի երիտասարդ իշխանապետի մեջ և պատրաստվում էր օգտագործել այդ հատկությունները՝ Սմբատ թագավորին հարվածելու և Հայաստանն իր տիրապետության ենթարկելու համար։ Իսկ Խաչիկ-Գագիկը, ինչպես մեկն առհասարակ ընդունակ մարդկանցից, որոնց սովորաբար խորթ չեն լինում փառասիրական տենչերը, նույնպես իրական օգտի, շահի քաղաքականությունն էր ամենից առաջ դնում, ուստի ինքն էլ իր կողմից օգտագործում էր Յուսուֆի վերաբերմունքն ու ակնկալությունները, որոնց վերաբերմամբ նա գուցե նույնիսկ հավաստիացումներ էլ էր տվել սկզբից։

Սմբատը, իհարկե, չէր կարող չնկատել, թե ո՛րքան վտանգավոր է իր երկրորդ քեռորդու բարեկամությունը հայ թագավորության ուխտյալ թշնամու հետ և, անշուշտ, ամեն կերպ աշխատում էր ներգործություն անել նրա վրա, որպեսզի ետ կանգնի այդ ուղղությունից և շարունակի հետևել այն ազգային քաղաքականության, որ հաստատել էր Սարգիս-Աշոտն իր կյանքի վերջում։ Սակայն ոչ Խաչիկ-Գագիկն էր Աշոտ, ոչ էլ Յուսուֆը՝ Աֆշին։ Համոզիչ միջոցներն սպառելուց հետո էր, երևի, որ Սմբատը դիմեց իրավունքի գործադրության։ Լավ պատրվակ էր հանդիսանում Ամյուկի գրավումը։ Սմբատը, իբրև Հայաստանի ընդհանուր կառավարիչ, իր ձեռքի տակ ուներ ոչ միայն հայ նախարարներին, այլև այն օտար ցեղերը, որոնք բնակություն էին հաստատում Հայոց երկրի սահմաններում։ Այս պատճառով նա պիտի պաշտպաներ Ութմանիկ ցեղի իրավունքը, մանավանդ որ նրա մի նշանավոր մասը բնաջնջված էր, մի բան, որ չպիտի տեղի ունենար խալիֆի կայսրության մեջ։ Բաղդադի արքունիքը, անշուշտ, նրանից պիտի հաշիվ պահանջեր այդ կոտորածի համար։ Եվ ահա Սմբատը, ինչպես հավատացնում է մեր միակ աղբյուրը կազմող Թովմա Արծրունին, ջանքեր է գործ դնում, որ Պարսկաստանի այլազգի ցեղերը նորից հարձակվեն Գագիկի վրա։ Իսկ երբ այս չի հաջողվում, նա կաշառում է Ամյուկի բերդապահ Աբուսակր Վահունուն, որ և նրա ձեռքն է տալիս բերդը։ Որ այստեղ ամեն ինչ այսպես չի անցել, ինչպես պատմում

է Արծրունյաց տոհմային պատմագիրը՝ ցույց է տալիս հենց այն, որ իսկույն ևեթ նա ավելացնում է, թե թագավորը նորից Ամյուկը Գագիկին տվեց, բայց վաճառքի ձևով, ստանալով նրանից «դանձս բազումս», մի հանգամանք, որ նկարագրված դրության մեջ գրեթե անհասկանալի է մնում։ Համենայն դեպս ճիշտ է այն, որ հենց այստեղ է վերջնականապես և անբուժելի դառնում այն ճեղքվածքը, որ գոյանում է Բագրատունյաց և Արծրունյաց տոհմերի միջև։ «Եւ յայնմ օրէ անկանի կասկած չարութեան յերկաքանչիւրոցս միտս, վասն որոյ և ոչ սիրով խաղաղութեամբ զմիմեամբք թեւակոխէին որպէս յառաջագոյնն», ասում է Արծրունին[1]։

Երկուստեք գրգռման հողի վրա կարող էին ամեն ժամ առաջանալ աղետալի պառակտման առիթներ։ Այդպիսիներից գլխավորը դարձավ Նախճավանի հարցը։ Խաչիկ-Գագիկը պահանջում էր, որ այդ քաղաքն իրեն վերադարձվի իբրև տոհմային վաղեմի ժառանգություն։ Բայց թագավորը մերժեց այդ պահանջը, առարկելով, թե Նախճավանն արդեն Սմբատ Սյունու ձեռքին է իր համաձայնությամբ և պարգևագրով, որ ոչնչացնել չի կարող։ Այն ժամանակ Խաչիկ-Գագիկն ուղղակի դիմեց Յուսուֆին, անձամբ նրան ներկայանալով Պարսկաստանում։ Բայց այժմ հարցն արդեն մասնավոր հողային վեճի մասին չէր։ Ատրպատականի և Վասպուրականի տերերն արդեն ամեն ինչ վաղօրոք խոսել-կարգադրել էին։ Յուսուֆը հասած համարեց Հայաստանը երկուսի ճեղքելու ժամանակը, և Խաչիկ-Գագիկին թագ տալով՝ մեծ պատիվներով ուղարկեց նրան իր երկիրը (908 թ.)։ Թե՛ ինքը Գագիկը և թե՛ մյուս նախարարները լավ էին հասկանում, թե ինչ նպատակով էր Հայաստանի թշնամին այդպիսի բարի տրամադրություն ցույց տալիս դեպի Վասպուրականը, բայց և այնպես, իրողությունն ըմբռնվեց ինչպես կարգն է, և նոր թագավորն սկսեց ինքնուրույն կյանքի սկիզբը դնել իր երկրում։ Յուսուֆը բավական թանկ գնով էր տվել նրան թագավորական թագը։ Գագիկը պարտավորվել էր միանալ նրա հետ և միասին հարձակվել Սմբատ թագավորի վրա։ Այսպիսով սկզբնավորվում էր մի շատ աղետալի և արյունահեղ շրջան Հայոց պատմության մեջ, բայց Խաչիկ-Գագիկը քիչ մտահոգություն ունեցավ այդ մասին։ Նա մեկն էր այն սառն հաշվող, ուժեղ բնավորություններից, որոնք իրենց նպատակին հասնելու՝ տիրապետական գահեր ստեղծելու համար զգացմունքը չեն իրենց ղեկավար ընտրում։ Նրա ըմբռնողությամբ տեղի էր ունենում ո՛չ թե երկրի մասնատում, ո՛չ թե համազգային իշխանության թուլացում, այլ լոկ թագավորող տների, դինաստիաների փոփոխություն։ Յուսուֆը նրան տվել էր «ամենայն Հայոց թագավորի» տիտղոս, նշանակում է Սմբատն այլևս թագավոր չպիտի լիներ, Բագրատունիների փոխարեն Արծրունիները պիտի գահ ունենային, և արքունի ոստանը Շիրակից պիտի տեղափոխվեր Վանա լճի արևելյան ափը։ Բայց այս հաշիվը սխալ դուրս եկավ։ Բագրատունիներին ոչնչացնել անկարելի էր, ինքը Խաչիկ-Գագիկը շուտով պիտի տեսներ՝ որ հենվել Յուսուֆի վրա հնարավոր չէ։ Եվ վերջիվերջո նրա գործը գալիս հանգում էր այն բանին, որ վերջնականորեն խորտակվում էր համազգային թագավորության կամ քաղաքական միության գաղափարը՝ որի համար այնքան աշխատել էր նրա քեռի Սմբատը, և գավառական մասնավոր թույլ թագավորությունն էր, որ գալիս էր իրականության տեղ

[1] Թովմա Արծրունի, էր. 282—283։

դառնալու Հայաստանում։ Չի կարելի, իհարկե, ասել, թե այս իրականությունն ստեղծվում էր բացառապես Խաչիկ-Գագիկի ջանքերով կամ նույնիսկ կամքով։ Գործում էին և ուրիշ ուժեղ հանգամանքներ՝ որոնք, ինչպես տեսանք, հայ կյանքի վրա և Հայաստանի շուրջը ներգործող հանգամանքների քերմունքն էին։ Չի կարելի նույնիսկ ասել, թե Խաչիկ-Գագիկն էր միայն, որ բարձրացրեց իր հայրենի Վասպուրականը մինչև գավառական թագավորության աստիճանը։ Ճիշտ է, շատ մեծ էին նրա ջանքերն այս ուղղությամբ, ճիշտ է, որ ամեն մեկին չի տրված դինաստիա հիմնելու կարողությունը, բայց և այնպես՝ մենք, որ ծանոթ ենք Վասպուրականի բոլոր շարժումներին Աշոտ մեծ իշխանի կամ Բուղայի ժամանակներից, կարող ենք պարզ համարել, որ դեպի այսպիսի առանձնացում և բարձրացում տանում էր մի շարք սերունդների գործունեությունը, որի ծայրագույն արտահայտությունը Խաչիկ-Գագիկն էր։

Այսպես թե այնպես, Ուրարտական թագավորության անկումից մոտ 15 դար հետո Վանա լճի արևելյան ավազանը, այս անգամ Վասպուրական անունով, ստանում է նորից՝ թեև ավելի կարճ ժամանակով, իր սեփական թագավորությունը։ Այս անգամ էլ հին Վանն է, որ դառնում է այդ վերանորոգված երկրի քաղաքական կենտրոն, թեև ըստ երևույթին նախապատվություն պիտի տրվեր Հադամակերտին, որը Վանից արևելք էր գտնըվում, դեպի Ուրմիայի լճի ավազանը տանող նշանավոր ճանապարհի վրա, և որը թագավորող Արծրունիների բուն տոհմային ոստանն էր։

Արծրունիների ծագման մասին գոյություն ունեն մի քանի ենթադրություններ։ Դրանցից մեկը ցույց է տալիս, որ Արծրունի անունը սեպաձև արձանագրությունների մեջ երևում է Arծrունի ձևի տակ[1]։ Եթե այս ճիշտ է միանգամայն՝ Արծրունիները, ուրեմն, ունեին նախահայկական ծագում, որ և համապատասխանում է նրանց տոհմային ավանդություններին135։ Եվ այսպիսով, դուրս է գալիս, որ դարձյալ Ուրարտական ցեղն էր, այս անգամ արդեն բոլորովին հայացած, որ վերականգնում էր իր հին թագավորությունը Վանա լճի ափին։ Մենք գիտենք, որ այս հին թագավորությունը շատ ուժեղ էր և՛ ռազմական տեսակետից, բայց մանավանդ իր քաղաքակրթական կարողությամբ՝ իր մեծ կուլտուրայով. Արծրունիների տոհմը եթե առաջինը չէր կարողանում վերանորոգել փոքր ի շատե աչքի ընկնող չափերով, երկրորդի, այն է՝ շինարարական գործունեության կողմից, իրեն ցույց տվեց արժանավոր հաջորդ Վանի հին թագավորների։ Այսպես, նոր թագավորության հիմնադիր Խաչիկ-Գագիկը թե՛ իր զորավարության և թե՛ իշխանապետության միջոցին, նախքան թագավորելը, ցույց էր տվել մի հուժկու շինարարական կարողություն, որ հիշեցնում է հին Մենուասին՝ Սարդուրին և ուրիշ մեծ արվեստագետ ուրարտացիներին։

Թովմա Արծրունին մանրամասն նկարագրել է Խաչիկ-Գագիկի այդ շրջանի շինությունները, որոնք բազմաթիվ են, հարուստ, նվիրված ոչ միայն հոգուն, այլև աշխարհիկ կյանքին, մարդու վայելքներին։ Նորից մենք ծաղկած ենք տեսնում Վանի հին մեծ արվեստը—ճարտարապետությունը, մանավանդ այն, որ ժայռաշինության մեջ էր արտահայտվում։ Եկեղեցիներ են շինվում ոչ միայն սրբատաշ քարերից՝ որոնք հաճախ հեռավոր տեղերից են, օրինակ՝ Մանազկերտից նավերով բերվում Վան, այլև ժայռերի

[1] Տե՛ս այս գործի առաջին հատորը։

մեջ։ Քարակոփությունը 10-րդ դարում գրեթե նույնքան մեծագործ է Վանում, որքան մեր թվարկությունից յոթ դար առաջ։ Առաջին Արծրունի թագավորի, ինչպես և ուրարտական մեծ թագավորների համար, գլխավոր հոգսը Վանի միջնաբերդ մեծ ժայռն էր, Ամրական ժայռը, ինչպես նա կոչվում էր Թովմա Արծրունու ժամանակ։ Այդտեղ Խաչիկ-Գագիկը շինում է ոչ թե մի հատ եկեղեցի, այլ փոքրիկ և մեծ եկեղեցիների, մատուռների, սեղանների մի ամբողջ խումբ, որ ներկայացնում էր քրիստոնեության պատմության մի մասը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը նվիրված էր Քրիստոսի գործերից մեկին ու մեկին։ Եկեղեցիներ շինեցին և ուրիշ կողմերում, բայց նրանցից ավելի հետաքրքրական են ոչ-կրոնական, քաղաքացիական շինությունները։ Այստեղ էլ մեր առջև են Վանի հին, նախահայկական ավանդությունները, վերակենդանացած ու ծաղկած, մեծագործ այն հարստությունների աջակցությամբ, որոնք ամբարված էին երկրի մեջ և որոնց անխնա գործադրությունն էր կարողանում զարմանալի չափերի հասցնել արվեստի հուշարձանները։ Ահա Խաչիկ-Գագիկը ժայռի մեջ հարմար սանդուղք է շինում դեպի ջուրն իջնելու համար, ժայռաշինության մի տեսակ, որ այնքան պատվավոր տեղ էր բռնում ուրարտական արվեստի մեջ։ Այսպես և ջրանցքաշինությունը։ Խաչիկ-Գագիկը Վարագի լեռներից ստորերկրյա քարե գեղեցիկ ջրանցք շինեց մինչև քաղաք։ Առանձնապես հոգս էր անում նա և իր իշխանական զվարճատեղիները բազմացնելու համար։ Եվ դարձյալ ժայռերն են, որ նրան տալիս են տոկուն նյութ և ապահով անկյուններ՝ պալատներ, սենյակներ, որսատեղեր շինելու համար։ Հիշատակվում է մի ապարանք Ամրական ժայռի մեջ, Վանում, որ սկսել էր Գրիգոր-Դերենիկը և վերջացրեց Խաչիկ-Գագիկը, ավելացնելով և պատշգամբներ։

Բայց նշանավոր էր մանավանդ Ճվաշռոտ գավառի Գետն ավանի որսորդական դղյակը. Մի բլուր էր այդ՝ շրջապատված բազմաթիվ սենյակներ պարունակող շինություններով,— «վայելչական տեղի խրախից», ինչպես անվանում է Թովմա Արծրունին։ Բլրի առջև բացվում էին գեղեցիկ տեսարաններ։ Մի կողմում Արաքսի պտույտներն էին, ուր երեների, վայրի խոզերի ամբողջ հոտեր էին թափառում, ուր պատահում էին և առյուծներ ու ցիռեր, այնպես որ «որսի հրճվանքը» պատրաստ էր ամեն ժամ։ Իսկ այս որսառատ ափերին հեռվից նայում էր Մեծ Մասիսը, հիշեցնելով ժողովրդին, որ իր վիհերի մեջ շղթայակապ պահում է առասպելացրած Արտավազդին։ Խաչիկ-Գագիկը չէր մոռանում և իր տոհմային ձմեռոցը, Մարական ավանը, որ շինված էր աջ կողմից Արաքսի մեջ թափվող Կարմիր գետի վրա։ Այստեղ նա շինեց «Ուրախության ապարանքներ», որոնցից մեկը մի ամուր անձավի (քարայրի) մեջ, որ շատ պինդ էր և թշնամիների հարձակումներից միանգամայն ապահով։ Վերջապես հիշատակելի է և այն, որ Խաչիկ-Գագիկը տեղափոխում էր ամբողջ գյուղեր, նորերը շինում բնակության հարմար տեղերում։

Թագավորական գահը չէր կանգնեցնում Խաչիկ-Գագիկի այս զարմանալի եռանդուն շինարարական գործունեությունը, ընդհակառակն, ավելի ևս խրախուսում էր, մղելով նրան դեպի ավելի բարձր աստիճաններ, որ նրան սպասում էր, ինչպես կտեսնենք, և շինարարական-գեղարվեստական գլուխգործոցը, որ իր տեսակի մեջ եզակի էր։ Արևելքը միշտ առանձնապես բարձր է գնահատել հասարակաշահ շինություններով մարդկանց բարերա-

րող վեհապետներին։ Եվ հասկանալի է միանգամայն, որ Վասպուրականի հայ ժողովուրդն էլ իր այս շինարար իշխանին էր դարձրել իր հերոսը։ Թե՛ ինչ պաշտամունք էր դառնում Խաչիկ-Գագիկն իր հայրենիքում, դրա գրական խոշոր հուշարձանն է Թովմա Արծրունին, որի համար թեև բոլոր Արծրունի իշխաններն են հայրենակցական և տոհմակցական հրճվանք առաջացնող գործիչներ, բայց Խաչիկ-Գագիկը, այնուամենայնիվ, առաջինը և աննախընթաց մեկն է այդ տեսակ պաշտամունքի մեջ։ Վասպուրականի ժողովրդի այս տեսակ վերաբերմունքը, ինչ ասել կուզի, ամենաապահով պատվանդանն էր նորակերտ թագավորական գահի համար։ Եվ Սմբատին ուրիշ բան չէր մնում անել, բայց միայն հաշտվել այդ իրողության հետ։ Հայաստանի ձեղքումն երկու մասի՝ անխախտելի փաստ էր դառնում։

8. Հնգամյա մաքառումներ: — Սմբատի նահատակությունը: Զգալով, որ Յուսուֆի նոր ռազմական ծրագիրը, այն է՝ Վասպուրականի հետ Հայաստանի վրա հարձակվելը պիտի չափազանց աղետալի լինի հայ ժողովրդի համար, Սմբատն սկսեց գործադրել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, որպեսզի կարողանա վաղօրոք կանգնեցնել իր ահավոր թշնամուն։ Առաջին գործը հենց այն եղավ, որ նույն 908 թվի երկրորդ կեսին նա մեծամեծ ընծաներով Յուսուֆի մոտ ուղարկեց Հովհաննես կաթողիկոսին՝ խաղաղություն հաստատելու համար։ Այս անգամ միայն արքայական գանձարանը չէր մեծ գումարներ ծախսում ընծայացու իրեր ու անասուններ գնելու և շքեղորեն զարդարելու համար, ինչպես են կանացի գեղեցիկ ձեռագործներ, ձիեր ու ջորիներ,— այլև Հովհաննես կաթողիկոսն էլ եկեղեցական գանձն էր ծախսում՝ այդ ընծաներն ավելի ևս մեծագին անելու համար։ Յուսուֆը, ինչպես սովորություն է, սկզբում լավ ընդունելություն էր ցույց տալիս Հայոց կաթողիկոսին, բայց նրա միջնորդությունը չհարգեց, հաստատ վճռած լինելով Հայոց հարցին տալ իր նախօրոշած ուղղությունը, այն է՝ հեռացնել Սմբատ թագավորին և նրա տեղ առաջ քաշել Խաչիկ-Գագիկին ու այդպիսով Հայաստանը դնել իրեն ենթարկված դրության մեջ։ Առաջին քայլը, որ նա արավ այս ուղղությամբ, այն էր, որ կալանավորեց Հովհաննես կաթողիկոսին, իբրև Սմբատ թագավորի կողմնակից մի մարդու։ Խաչիկ-Գագիկը, որ, ինչպես տեսանք, վաղուց էր պայմանավորված բոլոր մանրամասնությունների վերաբերմամբ, ինքն էր շտապեցնում Յուսուֆին, որ սկսի ծրագրված արշավանքը։ Այս հանձնարարությամբ Յուսուֆի մոտ գնաց նրա եղբայր Գուրգեն մարզպանը։ Քիչ անցած՝ նույն նպատակով գնաց և ինքը Գագիկ թագավորը, ցույց տալու համար, թե ինքը միանգամայն պատրաստ է նրան Հայաստան առաջնորդելու։ Թե մինչև ո՛ր աստիճան Արծրունի նորապսակ թագավորը գիտեր մոռանալ ամեն ինչ քաղաքական նպատակների համար, ցույց է տալիս այն, որ նա, լավ իմանալով, թե ամենայն Հայոց կաթողիկոսը բանտարկված է Յուսուֆի մոտ, ոչինչ չասաց այդ մասին իր դաշնակցին, մինչդեռ կաթողիկոսն սպասում էր, որ նա, քրիստոնեական պարտք կատարելով, կմիջնորդի իր ազատության համար։ Ընդհակառակն, կալանավորն ավելի ևս խիստ կապանքների ենթարկվեց։ Այս էլ, անշուշտ, մի առհավատչյա էր, որ ներկայացնում էր Խաչիկ-Գագիկը՝ իր կատարյալ և անվերապահ հավատարմությունը ցույց տալու համար։

909 թվականի գարնան սկզբին Յուսուֆը, մի ստվար բանակի գլուխ

անցած, մտավ Հայաստան։ Նախճավան քաղաքում նրան դիմավորեցին Խաչիկ-Գագիկը, Գուրգեն մարզպանը և Վասպուրականի մյուս հայ իշխաններն իրենց գնդերով։ Թողնելով Դվինի ճանապարհը, Յուսուֆը իր բանակը տարավ դեպի հյուսիս, մտավ Սյունիք և արշավեց Սյունյաց գահերեց իշխան Սմբատի դեմ, որի հետ, ինչպես տեսանք, Խաչիկ-Գագիկը վեճ ուներ Նախճավանի համար։ Սմբատն իր եղբայրների հետ դիմադրություն կազմակերպեց լեռնային պատերազմի միջոցով։ Բայց Յուսուֆը հաջողություն ունեցավ այդ պատերազմում։ Թեև լեռնցիները կտրում էին լեռնանցքներն ու կիրճերը, կռովի հարձակումներ էին գործում և նեղում արշավողներին, բայց վերջիվերջո նրանք ստիպված եղան տեղի տալ արշավող բանակի ստվարության առջև։ Իշխանները, տեսնելով, որ ամեն ինչ կորչում է, ջանք գործ դրին գոնե իրենց ազատելու համար։ Ամենից առաջ գահերեց իշխանի ընտանիքը, որ բաղկացած էր Սմբատի մայր Շուշան տիկնոջից, ամուսին Սոփիից, որ Խաչիկ-Գագիկի քույրն էր, մի փոքրիկ, կաթնակեր երեխայի հետ, եղբայր Սահակի կնոջից, որ Գուգարաց իշխանի դուստրն էր, փակվեց, իշխանական գանձի հետ միասին, Երնջակ գավառի համանուն բերդում, իսկ իրենք՝ Սմբատն ու Սահակը փախան իրենց աներների մոտ, առաջինը՝ Վասպուրական, երկրորդը՝ Գուգարք։ Սյունյաց մյուս, կրտսեր ճյուղի իշխանները, Գրիգոր Սուփան, Սահակ և Վասակ իշխանները՝ իրենց մայր Մարիամի հետ, որ, ինչպես գիտենք, Սմբատ թագավորի քույրն էր և մեծ անուն էր հանել իր շինություններով, ամրացան լեռներում[1]։ Յուսուֆը, հիմնապես ասպատակելով և ավերելով երկիրը, ազգաբնակության մի մասը կոտորեց, մյուս մասը գերի վերցրեց և գնաց մտավ Դվին քաղաքը, իր հետ տանելով և շղթայակապ Հովհաննես կաթողիկոսին։

Անխնա կոտորածներն ու գազանությունները ահաբեկում էին առաջ բերել Սյունիքում, և իշխանները, չնայած իրենց լեռնային թաքստոցների ամրության, ապահովություն չէին զգում։ Այս պատճառով էր, որ Գրիգոր Սուփանը, ոչ մի կողմից փրկության միջոց չտեսնելով, դիմում է մի հուսահատական միջոցի, որ կարելի է բացատրել երկյուղով և անհայտությամբ պաշարվածի հոգեբանությամբ միայն։ Նա ինքնակամ ուղևորվում է Յուսուֆի մոտ և անձնատուր է լինում, հուսալով, որ այդպիսով կշարժի նրա գութը և կազատի իր ընտանիքն ու երկիրը մահվան վտանգից։ Խաչիկ-Գագիկի անձնատրությունից հետո այս երկրորդ ծանր հարվածն էր, որ կրում էր Սմբատ թագավորը, այս անգամ իր մյուս քեռորդուց։ Եվ Յուսուֆը, շատ ճիշտ գնահատելով այդ հարվածի արժեքը, ընդունում է և մեծ բարեհաճությամբ իր մոտ է թողնում Գրիգոր Սուփանին։ Ինչպես երևում է, Գեղարքունիքի իշխանն Ատրպատականի թագավորի մոտ բարի խոսք չուներ իր քեռու մասին, այլ նոր առիթներ տվեց Յուսուֆին գրգռվելու նրա դեմ։ Գրիգոր Սուփանի օրինակը վարակիչ էր։ Մի ուրիշ սյունեցի իշխան, մանկահասակ Վասակը, տեսնելով, որ Յուսուֆն իր մոտ գնացողներին չի սպանում, այլ դեռ պատիվներ էլ է անում, ինքն էլ գնաց անձնատուր եղավ նրան։

Եվ այսպես, Սմբատ թագավորի համար պարզվում էր, որ ինքը նորից ընկել է այն դրության մեջ, որից հազիվ ազատվել էր մի քանի տարի

1 Ստեփ. Օրբելեան, եր. 185—186։

առաջ։ Դարձյալ չքանում էր հայ նախարարական միությունը, թողնելով թագավորին մենակ ու լքված, անողորմ թշնամու դիմաց։ Գուցե այս անգամ էլ Սմբատը կարծում էր, թե դրությունն անցողական է և իրեն կհաջողվի նորից իր շուրջը հավաքել բավականաչափ ուժեր՝ Յուսուֆին դիմադրելու համար։ Մինչ այդ նա պատրաստվում էր գործել նախկին եղանակով, այսինքն խույս տալով Յուսուֆին պատահելուց։ Այս հանգամանքը, իհարկե, լավ հայտնի էր Յուսուֆին, որ և շտապեց մի խաղ խաղալ իր զոհի հետ։ Սմբատին նա առաջարկեց մի տարվա հարկ տալ իրեն իսկույն, խոստանալով, հարկն ստանալուց հետո անմիջապես հաշտություն կնքել և վերադառնալ իր երկիրը։ Անճարացած թագավորը, չմոռանալով նախընթաց փորձերը, կարծեց, թե կատարում է հենց այն, ինչին ինքն սպասում էր և շտապեց բավարարություն տալ Յուսուֆին, ուղարկելով նրան վաթսուն հազար ոսկի։ Բայց Յուսուֆի պատասխանն այն եղավ, որ դուրս գալով Դվինից, արշավեց թագավորի վրա։ Սմբատն իր ունեցած զորքով հազիվ կարողացավ անցնել Տաշիր գավառի Օձուն գյուղը, այնտեղից՝ դեպի Տայք և Կղարջքի ամուր կողմերը։ Յուսուֆը հետապնդում էր նրան։ Ամբողջ ամառը նա ընկած էր թագավորի հետևից, աշխատում էր բռնել նրան, իսկ նա թաքնվում էր խոր ձորերում և քարանձավներում։ Այս արշավանքը մեր մատենագիրներն ամենայն իրավունքով նմանեցնում են որսորդության, թեև պետք է ավելացնել, որ այդ որսորդությունն անհաջող էր։ Յուսուֆը միայն կարողացավ գրավել Թիֆլիս քաղաքը։ Ձմռան մոտենալը հարկադրեց նրան թողնել լեռնոտ կողմերը և ուղևորվել Դվին։ Նույն հանգամանքն էլ Սմբատին հնարավորություն էր տալիս վերադառնալ Երազգավորս։ Այս անգամ նրան սպասում էր մի ավելի ևս դառն հարված։ Աշոտ սպարապետը, նրա եղբայր Շապուհի որդին, դարձյալ ինքնահոժար գնացել էր Յուսուֆի մոտ և անձնատուր եղել նրան, հուսալով, թե այդպիսով միայն կարելի պիտի լինի փափկացնել վայրագ բռնավորի սիրտը և հարկադրել, որ նա խնայի երկիրը։ Եվ այսպես, կամովին անձնատրությունը դառնում էր մի ամբողջ շարժում, որ սպառնում էր հանրային կերպարանք ընդունել։ Այդ շարժման հանդեպ Սմբատը պահում էր իրեն առանց տատանումների, ինչպես վայել էր փոթորիկների մատնված մի առաքինի և պարտաճանաչ ղեկավարի։ Նա դեռ մաքառելու ուժ, ինչպես և անձնատրական հոգեբանության դեմ կռվելու ընդունակություն էր գտնում իր մեջ, թույլ տալով, որ Յուսուֆը նորանոր զենքեր ձեռք բերի իր դեմ փախստական անձնատրության միջոցով։ Եվ, իրավ, Ատրպատականի թագավորը շատ կարևոր էր համարում Աշոտ սպարապետի անձնատրությունը՝ Սմբատին հարվածելու տեսակետից։ Գուցե հենց այդ դեպքի ազդած բավարարության զգացմունքի տակ էր, որ նա բանտից ու կապանքից ազատեց Հովհաննես կաթողիկոսին։ Տառապագիր հոգևոր պետը չմնաց Դվինում, ուր իր աթոռն էր, այլ հալածական գնաց թափառելու քաղաքից քաղաք, մինչև որ անցավ Աղվանից երկրի հյուսիսարևելյան մասը, Կովկասյան լեռների մոտ, ուր հյուրընկալություն գտավ Սահակ իշխանի և Ատրներսեհ թագավորի մոտ, «զի,— ասում է նա,— և նոքա ի ժողովրդենէ մերմէ և խաշն արօտի մերոյ էին»[1]։ Եվ հենց այդ իրավունքով էլ նա բավական գումարներ ստացավ իր պարտքերը վճարելու և իր հետևորդներին պահելու համար։ Այդտեղից նա գնաց Գուգարաց աշխարհը, ուր մնաց երկար ժամանակ։

1 Յովհ. կաթողիկոս, եր. 273—274։

Հետևյալ գարնանը (910 թ.) Յուսուֆը վերսկսեց պատերազմական գործողությունները, բայց այս անգամ ինքը չէր առաջնորդում բանակը, այլ բավականացավ մի ուժեղ զորաբաժին կազմելով գլխավորապես հայ զորքերից, և հանձնեց նրան Խաչիկ-Գագիկին, նրա եղբայր Գուրգենին և Արծրունի մյուս նախարարներին, որոնք իր մոտ էին գտնվում։ Պատմագիրներից մեկն այդ անունների վրա ավելացնում է և վրաց Ատրներսեհ թագավորին[1], որ, երևի, դարձյալ երախտամոռ գտնվելով Սմբատի վերաբերմամբ, նորից դավաճանել էր նրան, մոռանալով, որ նա մեծահոգությամբ ներել էր իրեն։ Որքան և թագավորի մերձավորներն էլ բռնված էին անձնատրության մտայնությամբ և լքել էին ու պատրաստ էին լքել նրան, բայց նա հոգու մեծ արիություն ունեցավ բոլոր ջանքերը գործադրելու, մի բավական խոշոր բանակ կազմելու։ Կռիվը նրան չէր սարսափեցնում, թեև արդեն ծեր էր հասակով։ Բայց այս անգամ նա անհասկանալի թեթևամտությամբ վերաբերվեց այդ բանակին, որ, ըստ երևույթին, նրա վերջին ուժն էր կազմում։ Նա ինքը չէր այդ բանակն առաջնորդում, այլ նրա հրամանատարությունը հանձնում էր իր երկու որդիներին—Աշոտին և Մուշեղին, պատվիրելով նրանց գլխավորապես պաշտպանողական պատերազմի հետևել, կտրելով թշնամու ճանապարհները։ Այսպիսով կռիվն ազգամիջյան բնույթ էր ընդունում։ Յուսուֆը միանգամայն հասել էր իր նպատակին.—ինքն իր բանակով նստած էր Դվինում, իսկ հայերին կռվեցնում էր իրար հետ։ Աշոտն ու Մուշեղը Խաչիկ-Գագիկին և մյուս նախարարներին հանդիպեցին Նիգ գավառում, Ձկնավաճառ անվանված տեղում։ Դա մի հարթ հովիտ էր, որի խորքում երևում էր հակառակորդ բանակը։ Մոռանալով զգուշությունը, երկու երիտասարդներն աճապարում են պատերազմի բռնվել և նախահարձակ են լինում։ Երկուսն էլ անձնական մեծամեծ քաջագործություններ են ցույց տալիս, նույնիսկ հաջողում են հակառակորդ բանակի մեջ շփոթություն գցել, որ հաղթության հույս էր տալիս։ Բայց այս միջոցին դավաճանում է Սևորդի կոչված Ուտիացիների գունդը։ Նա թողնում է պատերազմի դաշտը, փախչում, և որովհետև թագաժառանգ Աշոտն էլ գտնվում էր Սևորդիների պաշտպանած թևի վրա, ուստի նա էլ փախուստի է դիմում։ Սմբատի զորքի պարտությունը կատարյալ էր։ Եվ այս դժբախտությունը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար։ Հաղթության լուրի հետ Խաչիկ-Գագիկը, Աշոտ սպարապետը տանում էին Յուսուֆին և մի շատ հաճելի ընծա։ Դա թագավորի որդի Մուշեղն էր, որ, չկարողանալով իր եղբոր նման փախչել, շրջապատվել էր և գերի բռնվել։

Ձկնավաճառի պարտությունն այլևս բոլորովին անպաշտպան էր թողնում Հայաստանը, և Յուսուֆն շտապում էր օգտվել այդ դրությունից։ Նրա զորավարները զորքերով տարածվեցին զանազան տեղեր և սկսեցին հարստահարել, քանդել ու կեղեքել։ Հովհաննես կաթողիկոսն իր Պատմագրության այս տեղից ողբերով ու հառաչանքներով է գրիչ շարժում։ Ատրպատականի թագավորը նոր-նոր հանդես է բերում իր նենգավոր արյունռուշտ հակումները։ Նա մեկ-մեկ սպանում է, թունավորելով իրեն անձնատուր եղած կամ իր ձեռքն ընկած իշխաններին։ Այսպես սպանվեցին Գրիգոր Սուփան Սյունին, արքայորդի Մուշեղը, արքաեղբայր Սահակի

[1] Ասողիկ, էջ 64։

որդի Սմբատը, որի մայրը, աղաչելով Աֆշինին, ազատեց նրան պատանդությունից, և ուրիշ իշխաններ։ Ահաբեկումը տարածվեց ամեն տեղ, բայց ամենից առաջ, իհարկե, Յուսուֆի բանակում։ Խաչիկ-Գագիկն ու Աշոտ սպարապետը նոր միայն հասկացան, որ չի կարելի վստահ լինել բռնավորների հետ կապած դաշինքների, երդման խոսքերի վրա։ Նրանք էլ վտանգված էին տեսնում իրենց կյանքը, բայց որովհետև ուրիշ ճար չէր մնում, ուստի նրանք ավելի ևս հլու կամակատարությամբ էին աշխատում գողանալու արյունարբու իշխողի սիրտը և այսպիսով ապրուստի հնարավորություն ստեղծել իրենց համար։ Ահաբեկումը տարածվեց և երկրի այն բոլոր մասերում, ուր գործում էին Յուսուֆի զորավարները։ Ազգաբնակությունը, բայց առավելապես, իհարկե, հողատեր ազնվականությունը, թողնում էր իր բնակության տեղերը, թաքնվում էր լեռների անբնակ վայրերում, ենթարկվելով զրկանքների, սովի։ Եվ դարձյալ նախարարական կանանց քաշած տանջանքներն են, որ գրի են առնում մեր պատմագիրները, հետևելով Ղազար Փարպեցուն, բայց մանավանդ Եղիշեին։ Գերեվարեցին և շատ ազնվատոհմ տիկինների, որոնց տանջեցին այնպես, որ շատ հղի կանայք իրենց զավակների գերեզմանը դարձան, մեռնելով իրենց կրած նեղություններից։ Հովհաննես կաթողիկոսը գրում է մեծ ափսոսանքով. «Եւ սուգ զգեցան սապատք զարդուց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. և ծխոտեցան իսկ միանգամայն սրահակք և սրսկապանք նոցա. և այսպէս ապա զօրացեալ մահու, և կլեալ զբազումս՝ արտօսր հոսեալ կալաւ զամենայն երեսս երկրի»[1]։

Բայց կային և այնպիսի մարդիկ, որոնք չէին ենթարկվում այդ տխուր ժամանակի ընդհանուր լքմանը և կարողանում էին քաջությամբ պաշտպանել իրենց կյանքը։ Հիշատակության արժանի է Սյունյաց իշխաններից մանկահասակ Վասակը, որ Գրիգոր Սուփանի հետ էր բանտարկված, բայց տեսնելով իրեն սպառնացող մահվան վտանգը, սպանում է բանտի պահապաններին, փախչում է, կախվում Դվինի պարիսպներից ու այդպես իջնելով, փախուստը շարունակում է, չնայելով հետապնդող պահապաններին, մինչև որ հասնում է Սյունիք և ապաստան գտնում նրա բերդերից մեկում։ Արիության խոշոր օրինակ էին տալիս և Գրիգոր Սուփանի եղբայրները, Սահակ և Վասակ։ Նրանց երկիրը (Գեղարքունիք) հատուկ զորաբաժին էր ուղարկված Յուսուֆի կողմից։ Եղբայրները որոշեցին պաշտպանվել Սևանի կղզում և իրենց հետ տարան իրենց մորը, Մարիամ տիկնոջը և ուրիշ ազնվատոհմ կանանց։ Բայց երբ հայտնի դարձավ, որ Սևանը չպիտի կարողանա ապահով ապաստան լինել, նրանք, նավակներ նստելով, գնացին Միափորի գավառը։ Սակայն Յուսուֆի զինվորներն այդտեղ էլ հետապնդում էին նրանց։ Եվ փախչողները հանկարծ ետ են դառնում, հարձակվում իրենց հետևից ընկածների վրա, կոտորում են նրանցից շատերին և ճանապարհ բաց անելով, ապաստան են գտնում Գարդմանի և Արցախի անտառապատ լեռներում։ Այստեղ էլ, այս թաքստոցում, վախճանվում է անխոնջ շինարարությամբ գեղեցիկ հիշատակ թողած Մարիամ տիկինը։

Այս ամբողջ ժամանակ Սմբատ թագավորը գերմարդկային ճիգեր էր թափում երկրում ընդհանրացած լքումը կանգնեցնելու համար։ Երբ Ձկնա-

[1] Յովհան. կաթողիկոս, էջ 286։

վաճառի պարտությունը կատարելապես կազմալուծեց նրա զինվորական ուժը, նա տեսավ, որ առանց դրսի օգնության անկարելի պիտի լինի ազատվել ընդհանուր կործանման աղետից։ Ուստի Գրիգոր Մոկացի մեծ իշխանին ուղարկում է Բաղդադ՝ խնդրելու խալիֆին, որ նա եռանդուն միջոցներով սանձի Յուսուֆին։ Սակայն Հայոց դեսպանը տեսավ, որ Աբբասյան արքունիքը տարված է ավելի մեծ հոգսերով։ Վտանգավոր ապստամբություններ էին ծագել Եգիպտոսում և այլ տեղերում, և խալիֆը ոչ մի հնարավորություն չուներ Հայաստանի մասին մտածելու։ Սմբատ թագավորը չէր մոռանում, որ մի հզոր հովանավոր ունի Արևմուտքում—Լևոն կայսրը։ Նրա մոտ էլ նա դեսպան ուղարկեց, խնդրելով պաշտպանություն։ Կայսրը խոստացավ և կկատարեր իր խոստումը, բայց հենց այդ միջոցին (912 թ. մայիսի 11-ին) վախճանվեց, իսկ նրան հաջորդած Ալեքսանդրը, նրա եղբայրը, մի բոլորովին անընդունակ և անտարբեր մարդ էր, որ միայն մի տարի թագավորեց։ Այսպիսով չքանում էր և բյուզանդական օգնության հույսը։ Այնուհետև անօգնական Սմբատին մնում էր իր ձեռքի տակ ունեցած փոքրիկ ու թույլ ուժերով շարունակել մաքառման գործը թե՛ արտաքին ուժեղ թշնամու դեմ և թե՛ ներքին լքման դեմ, որ հետզհետե ավելի և ավելի սպառնական ընթացք էր ստանում։ Նա քաշվել էր իր ամուր Երասխաձորը, իսկ Յուսուֆն աշխատում էր մտնել նրա այդ վերջին ապաստարանն էլ։ Այս նպատակով նա հրամայեց Խաչիկ-Գագիկին և նրա նախարարներին գնալ պաշարել և անպատճառ վերցնել Վաղարշակերտ (այժմ Ալաշկերտ) բերդը, որ արևմուտքից փակում էր Երասխաձոր գավառի մուտքը։ Բայց սա հեշտ բան չէր։ Բերդը պաշտպանվում էր համառորեն և պաշարողների հարձակումները կոտորածով էին վերջանում։ Ազգամիջյան պատերազմի այս երկրորդ արյունաներկ տեսարանն էր, Ջկնավաճառից հետո, երբ հայերը կոտորում էին հայերին օտարի հրամանով և օտարի շահերի համար։ Ամբողջ երկիրը բռնված էր ոչնչացման տենդով։ Յուսուֆի զորաբաժիններն ամեն գավառի մեջ մտցնում էին արյուն և ավերակ, չխնայելով ոչ ոքի։ «Եւ միանգամայն իսկ,—ասում է Հովհաննես կաթողիկոսը,— ազատն և անազատն, զօրաւորն և պատերազմօղն, յիշնապետն և դատաւորն, խորհրդականն և քննիչն, իմաստունն և հանճարեղն, ծերն և տղայն, մեծն և փոքրն մատնեցան ի ձեռս բռնադատ գերչացն»[1]։

Այս տեսարաններն էին, երևի, որ սկսեցին սթափեցնող ազդեցություն անել Խաչիկ-Գագիկի վրա։ Նա սկսեց զգալ իր կատարած դերի ամբողջ դժնդակությունը։ Վասպուրականի թագավորն արդեն լիուլի հասել էր իր նպատակին։ Սմբատն այլևս ոչինչ չէր նշանակում իբրև Հայոց թագավոր։ Բայց կարո՞ղ էր ինքը Խաչիկ-Գագիկը որևէ բան նշանակել իբրև նրա տեղն անցած տիրապետող, իբրև թագավոր ամենայն Հայոց։ Ահա այս հարցն էր, որ այժմ կանգնում էր նրա առջև մռայլ կերպարանքով։ Ուխտադրուժ և նենգամիտ բռնակալն ապահովության ոչ մի երաշխիք չէր ներկայացնում։ Նա կարող էր ամեն ժամ ոչնչացնել և Խաչիկ-Գագիկին, իր դաշնակցին, իր ուղեցույցին և հլու հրամանակատարին։ Հետզհետե այս գիտակցությունը նեղում էր նրան և հասցրեց այն աստիճանին, որ նա մտադրվեց թողնել Յուսուֆին, հեռանալ և պաշտպանել հայրենի երկիրը՝ արդեն իր քեռու հետ միացած։ Այս իմաստով նա գաղտնի բանակ-

[1] Եր. 290։

ցություններ է սկսում Սմբատի հետ։ Խաղաղասեր և անհիշաչար, բայց մանավանդ ուրիշ ընտրություն անելու կարողությունից զրկված թագավորը չի մերժում իր քեռորդու դարձը, որ նրա սաստիկ զղջումն էր արտահայտում։ Նա միայն գործելու համաձայնություն տվեց, և առհասարակ կարելի է հետևցնել, թե քեռու և քեռորդու միջև գաղտնի մի պայմանադրություն կայացավ։

Բայց Խաչիկ-Գագիկը շատ էր ուշացել և դրությունը շատ էր վատացած, որպեսզի կարելի լիներ այն փրկել։ Վասպուրականի թագավորը հարմարություն չէր գտնում իր փախուստն իրագործելու համար, իսկ Յուսուֆն ավելի և ավելի էր նեղում Սմբատին։ Սա իր համար վերջին ապաստան ընտրեց Երասխաձորի ամենաամուր բերդը, Կապույտը, որ հնումն էլ հռչակված էր Արտագերս անունով, այժմյան Կաղզվանի մոտ։ Այս անառիկ քարաժայռերի վրա անօգնական թագավորը մոտ մի տարի պահվում էր Յուսուֆի զորքերի դիմաց, որոնք շրջապատել էին բերդը և գրավելու զուր փորձեր էին անում։ Պաշարման համար Յուսուֆը, հավատարիմ իր սովորության, հայկական զորքեր էր օգտագործում, և առաքինի թագավորը գնալով հոգեպես ավելի և ավելի էր ճնշվում, տեսնելով, թե ինչպես իր ազգակիցների արյունն է հոսում ամեն տեղ։ Եվ նա զգում էր, որ միակ պատճառն ինքն էր, որովհետև համարյա այլևս ոչ ոք չէր մնացել, որ կողմնակից լիներ դիմադրելու Յուսուֆին։ Ամենքը, նույնիսկ մերձավորները, երես էին դարձնում իրենց դժբախտ թագավորից, բռնում էին թշնամու կողմը։ Նույնիսկ դավադրություն էլ էր պատրաստվում Սմբատի դեմ։ Եվ ահա, շրջապատված այսպիսի հանգամանքներով, չկարողանալով այլևս տանել մարդկանց դժբախտությունները, աչքի առաջ ունենալով մանավանդ այն, որ, ինչպես ասում է Հովհաննես կաթողիկոսը, «չոգաւ իւրաքանչիւր ոք զհետ հաճոյից իւրոց չարաց», թագավորը լցվում է անձնազոհության զգացմունքով և պատրաստվում է տալ իրեն անողորմ թշնամուն՝ իր աշխարհը փրկելու համար։ Բանակցություններ են սկսվում Յուսուֆի հետ, որը գրավոր խոստում է տալիս, թե Սմբատի անձին վնաս չի լինի։ Այդ պայմանով էլ Սմբատն անձնատուր է լինում Յուսուֆին և պահվում է նրա բանակում։ Բայց երկար չանցած՝ Խաչիկ-Գագիկին հաջողվում է փախչել բանակից։ Վասպուրականի ամրությունները բավական չհամարելով, նա մտնում է Կորդվաց աշխարհի լեռնային բավիղները և այդտեղ ամրանում, սպասելով, թե ի՛նչ կբերեն հանգամանքները։ Ասողիկի պատմածից երևում է, որ նա նույնիսկ իր ժողովուրդը գաղթեցրեց Ասորեստան (Միջագետք)[1], որպեսզի Յուսուֆը հնարավորություն չունենա իր թույնը նրա վրա թափելու։

Բայց Խաչիկ-Գագիկի փախուստը սաստիկ վատացնում է Սմբատի դրությունը Յուսուֆի բանակում։ Առհասարակ կարելի է հետևցնել, թե Ատրպատականի բռնավորին հայտնի էր դարձել Սմբատի և Գագիկի ծածուկ համաձայնությունը։ Ուստի նա իր ամբողջ բարկությունը թափեց գերի թագավորի վրա։ Կապկպեց նրան շղթաներով և տարավ Դվին։ Այստեղից գնաց վերցնելու Սյունյաց Երնջակ բերդը, ուր, ինչպես տեսանք, պահվում էին Սմբատ իշխանի մայրն ու կինը, ինչպես նաև նրա եղբոր և մի քանի այլ նախարարների կանայք։ Պաշարողների ջանքերը հաջողու-

[1] Եր. 169։

թյուն չունեցան, և Յուսուֆն իր դաժանությունը թափեց ծերունի թագավորի վրա։ Նրան ենթարկեցին երկարատև, գազանային տանջանքների, որ հորինում էին արյունռուշտ բռնավորի դահիճները։ Զարհուրելի տանջանքները գերմարդկային համբերությամբ էր տանում դժբախտ զոհը, մխիթարություն և ուժ որոնելով աղոթքների մեջ։ Նրան տանջում էին հրապարակով, Յուսուֆի և նրա զորքի ներկայությամբ, Երնջակի դիմաց, որպեսզի բերդեցիները, թագավորին խնայելու համար, անձնատուր լինեն։ Նրանք, սակայն, անձնատուր չէին լինում, Սմբատն էլ մի խոսք անգամ չէր ասում բերդեցիներին, որ անձնատուր լինեն, թեկուզ այդ շարունակ պահանջում էին նրանից դահիճները։ Հովհաննես կաթողիկոսը մի քանի քստմնելի մանրամասնություններ էր հաղորդում այդ տանջանքների մասին։ Այսպես, անձեռոցիկը խոթում էին բերանը և բարակ փայտերով ներս էին խրում կոկորդից ցած, մինչև համարյա սիրտը, շնչահեղձ անելով։ Մնոտները պրկում էին թոկերով, հյուսնի մամուլի մեջ սեղմվող առարկաների նման։ Շատ կարասիներ էին դարսում նրա գլխին և տասը մարդ էլ քարի պես ընկնում նրա վրա, խեղդամահ անելու չափ։ Անտանելի տանջանքներ էին պատճառում մանավանդ մարմնի ծածուկ մասերի պրկումները։ Միայն կրոնափոխությունն էր, որ կարող էր զոհին ազատել այդ սոսկալի տանջանքներից։ Բայց ծերունի նահատակը մերժեց և այդ առաջարկությունը։ Վերջը Յուսուֆը, ձանձրանալով մարդկային տանջանքների պատճառած գազանային բավականությունից, հրամայեց կտրել Սմբատի գլուխը։ Իսկ մարմինն ուղարկեց Դվին և այնտեղ խաչի վրա բևեռեց։

Այսպես էր մեռնում (914 թ.), 22 տարի թագավորելուց հետո, Շիրակի երկրորդ Բագրատունի թագակիրը, ընդունակ, առաքինի, պետական իմաստությամբ հմտացած և բարձր շինարարական պաշտամունքով լցված մի գործիչ, որ բավական կլիներ իր երկրին և ժողովրդին ավելի մեծ երջանկություն տալու, եթե հայ ավատական անկարգության և անմիաբանության բազմաթիվ զոհերից մեկը դառնալու ճակատագիրը չունենար։ Նրա անկումը իր կրած մեծ գաղափարի խորտակումն էր։ Ահագին եռանդ գործադրեց նա ամբողջ հայությունն իր պատմական հայրենիքում մի քաղաքական կուռ կազմվածքի մեջ ձուլելու համար։ Եվ նրա մեղքը չէր, որ իր ժառանգներին թողնում էր միայն թուլամորթ փոքրությամբ ապրող գավառայնությունը։

Գլուխ չորրորդ

ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ

1. Աշոտ Բ Երկաթ (914—930 թթ.): *Իր թշնամուն ստորացման բոլոր միջոցներով սպանելն էլ չէր բավարարում Յուսուֆին։ Նա չհեռացավ Հայաստանից, և նրա զորքերը տարածված էին ամեն կողմ, գրավել էին Սմբատի բոլոր բերդերը և շարունակում էին իրենց կեղեքումները։ Հայ ժողովուրդը ստրկության լծի այսչափ ծանրություն չէր տեսել նույնիսկ արաբական անմիջական տիրապետության տակ։ Բայց և այնպես, նրա ուժերը միանգամայն չէին սպառվել։ Եվ նորից ու նորից պատմության հայացքի առջև տարածվում է հին տեսարանը.— դարձյալ շարժումներ ծանր*

թշվառության օրերին, դարձյալ անխնա կորով և հուսահատական ճիգեր՝ անդունդի խորքը չգլորվելու համար։ Ինչպես նկատեցինք նախընթաց դեպքերի նկարագրություններից, Յուսուֆի ժամանակ Հայաստանի ավատական կազմակերպությունը հեղինակավոր և ուժեղ կենտրոնացումներ ուներ երեք կողմում՝ Շիրակի մեջ (կարելի է ասել՝ ընդհանրապես Արարատյան երկրում), Սյունիքում և Վասպուրականում։ Այս կենտրոններն էլ դառնում են ահավոր մաքառումների թատերաբեմ։ Մրցությունը մղվում էր, իհարկե, գլխավորապես Յուսուֆի դեմ։ Բայց որպեսզի ավատական հոգեբանությունն ինքն իրեն հարազատ մնա, մաքառումները հաճախ շեղվում են այս ուղղությունից և ընդունում են ներքին, տնային հանգամանք, ազգամիջյան կռիվների կերպարանք։ Ստացվում է քաոսային մի անիշխանություն, որի մեջ հազիվ կարելի է հետևել, թե ո՛վ ո՛ւմ դեմ է կռվում, իսկ կռվի պատճառները շատ անգամ անհայտ են մնում, և այս անկասկած այն պատճառով, որ ժամանակը սովոր էր առանց ներքին կռիվների չապրել և այդպիսի մի ժամանակի զավակների համար նույնիսկ կարևոր էլ չէր իմանալ, թե ինչից սկսվեց արյունհեղությունն այս կամ այն անկյունում, թե ո՛րքան իրավացի կամ անիրավացի էր այս կամ այն կողմը։

Սմբատի թագն անցնում էր, ինչպես գիտենք, նրա երիցագույն որդուն, Աշոտին։ Դեռ այն ժամանակ, երբ դժբախտ թագավորն ապրում էր իբրև շղթայակապ գերի, Աշոտը փոքրաթիվ զորք հավաքելով, ավելի իր երիտասարդության կորովի և աննկուն քաջության վրա հենված, դուրս եկավ բռնության դեմ՝ վրեժի և հայրենի սեփականությունը ետ դարձնելու նպատակով։ Նրա հետ էր և եղբայրը, Աբասը։ Թռուցիկ էին երկու եղբայրների խմբերը։ Արծվի պես էին սլանում, հասնում, հարվածում, առնում և էլի դես ու դեն թռչում։ Այսպիսով, Բագրատունիները մեկիկ-մեկիկ ետ էին խլում իրենց հոր բերդերը Յուսուֆի զորքերի ձեռքից։ Սարակինոսներին (արաբներին) խնայել չկար։ Կոտորում էին նրանց կամ գերի վերցնում։ Բագրևանդ գավառում Աշոտը, իր ձեռքը գցելով նրանց կրոնապետներից մեկին, հրամայեց քերթել նրա կաշին, տիկ հանել, երևի իր հոր սարսափելի տանջանքների վրեժը լուծելու համար։ Բագրևանդից Շիրակ, Շիրակից Գուգարք,— ամեն տեղ միատեսակ է հաջողությունը։ Աշոտը նույնիսկ Թիֆլիսի վրա է հարձակում գործում, գրավում այն և այնտեղ գտնված պատվավոր մարդկանց գերի վերցնում, որպեսզի նրանց փոխանակի այն հայ գերիների հետ, որոնք պահվում էին Յուսուֆի բանակում։ Վերադառնալով Տաշիր գավառը, նա լուր է առնում, որ մոտակայքում, Աղստև գետի ամուր խորաձորերում, թաքնվել են շատ արաբներ։ Իր մարդկանցից 200 հոգի ընտրելով, սլանում է այնտեղ, կռիվներ տալիս, մեծամեծ քաջություններով հաղթում, ավար վերցնում։ Այստեղից նա իր հոր սիրած Երասխաձորը կամ Արշարունյաց գավառն է թռչում։

Լեռնային թեթև պատերազմներով նա նվաճել էր համարյա իր հայրենի ամբողջ ժառանգությունը։ Եվ Վրաց Ատրներսեհ թագավորը, հայոց զորքի ցանկությամբ, Աշոտին թագավոր պսակեց։ Բայց սրանով հարցը դեռ բոլորովին չէր լուծվում։ Շիրակի թագավորության համար ամենամեծ սպառնալիք մնում էր Յուսուֆի վերաբերմունքը։ Աշոտը թագավորում էր առանց նրա համաձայնության, այս բավական չէր՝ թագավորում էր իբրև նրա հակառակորդ, նրա դեմ պատերազմող կողմ։ Այսպիսի հանգամանքների մեջ ոչինչ, իհարկե, չէր կարող երաշխավորել,

թե Բագրատունյաց այս երրորդ գահակալի թագավորությունը խաղաղ ու փոքր ի շատե բարեբախտ տևողություն կունենա։ Ընդհակառակն, իր թագավորությամբ Աշոտ Բ-ն մտնում էր ավելի մեծ ձախորդությունների և մահացու փորձությունների շրջանը։ Եվ եթե կար գեթ մի հանգամանք, որ փոքր ի շատե մեղմացնում էր նրա ճակատագրի դառնությունը, այդ այն էր, որ նա մենակ չէր կանգնած Ատրպատականի ահեղ բռնակալի դիմաց, քանի որ գրեթե ամբողջ Հայոց երկիրն էր նրա հետ դիմադրում Յուսուֆին։ Սմբատի թագավորության վերջին տարիների դժբախտությունները, կարծես, խելքի էին բերել հայ ավատականությանը, և այժմ Յուսուֆն ստիպված էր կռվել համարյա բոլոր իշխանների դեմ։ Այսպես, Խաչիկ-Գագիկը, ամրանալով Կորդվաց լեռներում, սկսեց սաստիկ բախումներ այն զորքերի հետ, որ Յուսուֆն ուղարկեց նրա դեմ։ Եվ այս կռիվների մեջ, որոնք տեղի ունեցան Կորդվաց աշխարհի և Ատրպատականի սահմանագլխի վրա, Վասպուրականի թագավորը մեծամեծ քաջագործություններ էր ցույց տալիս և հաղթանակներ վաստակում։

Ընդհարումները տեղի ունեին և երրորդ հայկական խոշոր ավատական կենտրոնում—Սյունիքում։ Այս շարժումը կապ ուներ Երնջակ բերդի հետ, որ մենք թողինք պաշարված դրության մեջ։ Յուսուֆը չկարողացավ նրան տիրանալ բացարձակ ուժի միջոցով, քանի որ նա անառիկ էր, ուստի փորձեց «գողանալու» միջոցը, այսինքն գաղտնի դավադրական ճանապարհը, որ և հաջողվեց։ Երնջակում ամրացած նախարարական կանայք և հարստություններն ընկան Յուսուֆի ձեռքը։ Տմարդաբար վարվեց նա և գերի կանանց հետ։ Սմբատ իշխանի մայր Շուշանը, ամուսին Սոփին և այլ նրանց դասակից կանայք փոխադրվեցին Դվին և այդտեղ պահվում էին բանտի մեջ մեծ նեղություններով։ Տիկին Շուշանը և նրա ծծկեր թոռը, չդիմանալով բանտի խստություններին, մեռան, իսկ Սոփին և մյուս կանայք աքսորվեցին Ատրպատական, ուր պահվում էին մի բերդի մեջ։ Սմբատ և Սահակ իշխանները, որոնք ինչպես տեսանք, փախել էին Վասպուրական և Գուգարք, շտապեցին վերադառնալ, որպեսզի գերեթափ անեն իրենց ընտանիքը։ Բայց այս ձեռնարկությունը նրանց չհաջողվեց։ Եվ այնուհետև մենք տեսնում ենք Սյունյաց երկրի ամուր լեռնական վայրերում հաստատված զորախմբեր, որոնք հաճախակի կռվի են բռնվում Յուսուֆի զորքերի հետ, հարվածում են նրանց, թափելով շատ արյուն։

Լեռնաշխարհի այս արիական ոգորումներին Ատրպատականի բռնավորը պատասխանում էր իրեն հատուկ խժդժություններով։ Նրա զորավարները և կուսակալները հրաման ստացան տեղերում գերել ու խոշտանգել ազգաբնակչությանն անխտիր։ Եվ նորից Հայոց աշխարհը հանդիսարան էր դառնում այնպիսի վայրագությունների, որոնք ականատես պատմագրին ողբախառն և ցավագին արտահայտություններ են ներշնչում։ Ժողովուրդը, բռնության սրերով դուրս քշված, թողնում էր իր բնակության տեղերը և փախչում ուր կարողանում էր, ապաստանվելով լեռներում, ձորերում, անապատներում։ Տեղահանությունը կրում էր իր սովորական սոսկումների պատկերը. կատարելապես բոբիկ, մերկ, քաղցած բազմությունը մեռնում էր ցրտից ու տապից։ Այս թշվառ խմբերի վրա էին հարձակվում գիշատիչները, խլում էին նրանցից մեծամեծ հատվածներ, որոնց հետ վարվում էին ինչպես անբան անասունների հետ։ Ընտրում էին լավերին, այսինքն՝ որոնք երիտասարդ էին, թարմ, գեղեցիկ։ Այսպիսիները գերող-

ների ապրանքն էին, որ ուղարկվում էր ստրկավաճառանոցները՝ ծախվելու համար։ Հանրամարդկային է այս դեպքում այն աղետը, որ նկարագրում է Հովհաննես կաթողիկոսը։ Որդին հորից էին բաժանում,—ասում է նա,— եղբորը եղբորից, կնոջն ամուսնուց, մորն աղջկանից, հարսին սկեսուրից, կաթնակեր մանուկին մորից, հափշտակելով նրա ծծերից ու գրկից։ «Եւ անդ էր ապա տեսութիւն ողորմելի. և ողբք անհանդուրժելիք և լալումն անտանելի, և բախումն կրծից և կքումն արտեւանաց, և դողումն անձին, և սարսափումն սրտի, և ճչումն կոծոյ, և ցտումն գեղոյ, և խզումն հերաց»[1]։ Իսկ նրանք, որոնք անպետք էին վաճառելու համար, այսինքն՝ թույլերը, ծերերը կամ այնպիսիները, որոնք չէին կարող անասնական կրքերին բավարարություն տալ, կամ բանտարկվում էին, կամ պարզապես կոտորվում վայրագության բոլոր միջոցներով։ Բավական կլինի Հովհաննես կաթողիկոսի նկարագրություններից մի երկուսը բերել այստեղ։ Միամիտ կանգնած մարդու փորը հանկարծ պատռում էր դահիճը կրծքի տակից և շտապում, քանի որ շունչը դեռ չէր կտրվել, հանում էր լյարդը, որպեսզի բաժանի զինվորներին՝ մի ինչ-որ պաշտամունք կատարելու համար։ Մի ուրիշ տեղ զոհի գլուխն ու ոտները պարան էին գցում, ապա մի խումբ ուժեղ մարդիկ ձգձգում էին պարանի ծայրերը, այնքան մոտեցնում էին գլուխն ու ոտները, որ մեջքը կոտրվում էր կամ եթե ոչ՝ սրի հարվածներով կտրում, կիսում էին մարմինը մինչև մեջքի մի մասը, իսկ իրենք հավաքվում էին գլխի մոտ, որպեսզի տեսնեն, թե մինչև վերջին շունչը դուրս գալն ի՛նչ է խոսում դժբախտը, ինչպե՛ս է արտահայտում իր տանջանքները։ Մի ուրիշ տեսարան։ Մերկացնում էին մարդկանց և արջառների ջղերից հյուսած մտրակներով այնքան ծեծում էին նրանց կողերն ու փորը, որ նրանք կիսամեռ ընկնում էին գետին. և ահա մինչդեռ նրանք գալարվում էին հոգեվարքի մեջ, նրանց քարշ էին տալիս հողի վրա լեշերի նման։ Կային և այնպիսիները, որոնք կարող էին երջանիկ համարել իրենց. խեղճ ու փոքրիկ էին, աննկատելի էին մնում և նույնիսկ գնում-գալիս էին։ Բայց այդպիսիներին էլ ուրիշ վիճակ էր սպասում։ Բռնում էին նրանց, սրով կտրատում էին նրանց ձեռքերն ու ոտները և թողնում այդպես դժբախտ։

Բայց Յուսուֆի զինվորները բավական չէին Հայոց աշխարհի թշվառության համար, և ահա մի նոր փոթորիկ է գալիս։ Այն ազգերը, որոնք Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի ժամանակ հպատակված էին Հայոց իշխանության կամ բարեկամական դաշինքով նրա հետ կապված, ոտքի էին կանգնել։ Որպեսզի Հայաստանի հյուսիսային մասերում շեն քաղաքներ ու գյուղեր չմնան և չգրավեն Յուսուֆի ուշադրությունը, որ կարող էր նրանց վրա գնալ և ապա հարձակվել նաև Հայաստանի սահմաններից դուրս գտնվող երկրների վրա, այդ ազգերը որոշեցին ավերակ դարձնել Հայաստանի սահմանագլուխները և այսպիսով մի քանի անապատային շերտեր տարածելով, ազատել իրենց երկրներն Յուսուֆի արշավանքներից։ Եվ ահա եգերացիները, գուգարները, ուտիացիները միացած ավազակային տարրերի հետ, որոնք բազմացել էին այդ տխուր ժամանակներում, անխնա քանդում և ոչնչացնում են հայկական գյուղերն ու քաղաքները։ Այնքան զարհուրելի չափերի հասավ 'այս արյունահեղ կործանումը, որ Հովհաննես կաթողիկոսն ասում է. «Եւ զբաղումս զաշխարհս իբրև զանապատս անկոխ անշրդի ցու-

[1] Եր. 310։

ցեալ տապալէին. և գրեթէ իբրև զերկիր որ ոչ անց մարդ ընդ նա, և ոչ բնակեցաւ ի նմա որդի մարդոյ, այնպէս զապատն անապատ առնէին։ Եւ վասն ընդ միմեանս բաղխելոյ՝ բազում ճապաղիս արեան հեղեալ, դիակամբք լնուլին զերեսս երկրի մերոյ։ ...Եւ այսպէս անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ, այնուհետև անդաստանք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ և ցամաքեցան բողբոջք բուսոց արտավարաց և արօտից. և քաղաքք մեր կործանեցան առ ի չգոյէ բնակչաց, և երկրագործք մեր՝ սպառեցան, և սուգ զգեցան»[1]։ Դրությունը դեռ այն աստիճան հուսահատական չէր լինի, եթե գոնե այս դժբախտությունների մեջ երկիրը հասկանար միանալու, ուժերը կենտրոնացնելու անհրաժեշտությունը։ Այսպիսի երևույթ չէր նկատվում կեղեքվող երկրի մեջ։ Ավատական կրքերը նորից գրգռված էին և այժմ ավելի՛, քան մի ուրիշ անգամ։ Թագավորները, իշխանները ջանք էին թափում իրարից կալվածներ խլելու, նոր ազատ տոհմեր ու տներ ստեղծելու։ Կալվածական վեճերն անպակաս էին, և մարդկային արյունն էր թափվում առատ։ «Եղբայր ընդ եղբօր,— գրում է մեր նույն պատմագիրը,— և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ՝ ի նախանձ և ի չարակնութիւն և ի գրգռութիւն և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին»[2]։

Վերջապես, բնության հարվածներն էլ մի կողմից եկան պակաս թողածը լրացնելու համար։ Անժամանակ անձրևներից բերքերը փչացան և երկրագործությունը, երկրի կենդանության գլխավոր աղբյուրը, ոչինչ չտվեց։ Գեղեցիկ է այս անբերրիության նկարագրությունը մեր կաթողիկոս պատմագրի մոտ. «Տասն լուծք եզանց գործեցաք, և սափոր մի մեզ տուաւ. սերմանեցաք և ոչ հնձեցաք. տնկեցաք և ոչ կթեցաք. թզենի ոչ ետ զպտուղ իւր, որթ և ձիթենի ոչ ետուն զզօրութիւնս իւրեանց. թէ շտեմարանեցաք ինչ, և զայն ևս այլոց թողաք»[3]։ Այս աղետի հետևանքով սաստիկ սով տարածվեց, որ առանձնապես խիստ էր մանավանդ Արարատյան երկրում։ Մարդկային թշվառության պատկերն ավելի ևս բարդացավ։ Այժմ անոթությունից էին կոտորվում մարդիկ։ Գազանային բնազդը, կարոտության ազդեցության տակ անհնարին չափերի հասնելով, երկրի վրայից վերցրեց մարդկայնության ամեն մի նշույլ։ Միմիայն կյանք պահպանելու համար մարդիկ մոռանում էին ամեն ինչ, որ տվել է նրանց բնությունը՝ անասուններից զանազանվելու համար։ Ծնողները ծախում էին իրենց երեխաներին մի կտոր հացի համար։ Կար և ավելի սոսկալին, որ ահ ու դողով է պատմում Հովհաննես կաթողիկոսը, ասելով. «Դողումն և սոսկումն և սարսափումն աստանօր զիս պատեալ պաշարէ ի բանէս՝ որ առաջի կայ ասել»։ Ինքը պատմիչը չէ տեսել այդ բանը, բայց լսել է հավաստի մարդկանցից իբրև ճշտված իրողություն։ Այդ այն է, որ մի քանի մայրեր իրենց սովամահ եղած երեխաներից կերակուր էին պատրաստում իրենց համար։ Կենդանի մարդիկ էլ մորթվում էին նույն նպատակով։ Նկատենք, սակայն, որ մարդակերության մասին պատմություն լինում է բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում եղած սովերի նկարագրությունների մեջ։ Այսպիսի տեսարանների առջև արդեն նսեմանում են պատմագրի արձանագրած ուրիշ

[1] Եր. 322։

[2] Յովհան. կաթողիկոս, էջ 324։

[3] Ibid, եր. 326

փաստերը։ Օրինակ՝ այն, որ ազնվական և հարուստ կանայք, ծախելով ինչ որ ունեին, բոլորովին մերկ հրապարակներն էին դուրս գալիս՝ ողորմություն հավաքելու համար։ Կամ թե ինչպես փողոցներում թափված մարդիկ նվաղած աղաչում էին անցորդներին գոնե մի փշուր հաց տալ՝ իրենց բերանում դնելու համար։ Անսովոր չէր և այն, որ սովի հետ հիվանդություններ տարածվեցին և մահն առատ հունձ էր անում։

2. Բյուզանդական միջամտություն։ Աշոտ թագավորն այդ տխուր ժամանակներում, գլուխ կորցրած, չէր էլ կարողանում մի տեղ նստել, այլ թափառում էր զանազան կողմերում։ Նրանից լավ դրության մեջ չէր ամենայն Հայոց կաթողիկոսը։ Բանտից ազատվելուց հետո նա չվերադարձավ իր աթոռը, Դվին, այլ, ինչպես տեսանք, առաջ Աղվանից երկրում էր թափառում, հետո գնաց Գուգարք։ Այստեղից նա անցավ Վրաց Ատրներսեհ թագավորի մոտ և նրա ցույց տված սիրալիր հյուրընկալության մեջ էր աշխատում սփոփանք գտնել։

Իսկ Արևելքի քրիստոնեության վրա խտացած ճգնաժամն աննկատելի չմնաց Բյուզանդիայի մայրաքաղաքում։ Քրիստոնեության, բայց մանավանդ հենց կայսրության շահը պահանջում էր միջամտություն՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանից երկրի ժողովուրդներին փրկելու համար։ Որքան թուլանում էր իսլամի նվաճողական ուժը, այնքան ոգի էր առնում և եռանդուն առաջխաղացությունների ոգևորությամբ էր լցվում Արևելքի քրիստոնեական մեծ պետությունը։ Քրիստոնյա ազգություններին գրավելու, ազդեցություններ տարածելու պետական հոգսը հեշտանում էր մանավանդ Հայկական դինաստիայի համար, որ թեև հարազատ օրթոդոքս էր, բայց բյուզանդականության մեջ չէր մտցնում այն անհաշտ ֆանատիկոսությունը, որ այնքան վնասում էր քրիստոնեության ընդհանուր գործին Արևելքում։ Եվ ահա երևան է գալիս մի երևույթ, որ շատ հազվադեպ է Բյուզանդիայի պետական հարաբերությունների մեջ. Կ. Պոլսի Նիկողայոս պատրիարքը (912—925 թթ.) մի նամակ է գրում Հովհաննես կաթողիկոսին, որի մեջ կրոնական և ոչ մի հարց չհարուցելով, խոսում էր բացառապես Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի դժբախտ դրության մասին։ Այս դիվանագիտական գրությունը, որ, անշուշտ, կայսերական կառավարության հանձնարարությամբ էր կազմված, վերին աստիճանի մխիթարական և հուսատու տրամադրություն պիտի առաջացներ անիշխանության և սովի սարսափներին մատնված երկրում։136 Այսպիսի ներշնչում անում էր նախ և առաջ պատրիարքի բարեկամական ոճը։ «Արդ,— ասում էր նա,— եթէ պատշաճ թուեսցի սրբութեանդ ձերում, պարտ է նախ զաստուածային այցելութիւն և զօգնականութիւնն յամենայն ժամ վերակարդալ, և ձեռս ի վեր համբառնալ, և բոլորով սրտիւ ի գութ ողորմութեան կոչել զամենակալն Աստուած քոյոյդ հօտիդ Հայոց, Վրաց և Աղուանից»[1]։ Ամբողջ թշվառության պատճառը նա համարում էր այն, որ այդ դաժան ժամանակներում ոչինչ ներքին համաձայնություն չէր մնացել և տիրողների անմիաբանությունն արտաքին թշնամուց ավելի էր կեղեքում երկիրը։ Այս դրությունը նա ամենայն իրավունքով անվանում էր «վայրենի գազանություն» և թախանձում էր կաթողիկոսին՝ թույլ չտալ, որ այլևս շարունակվի նա. թե՛ ինքը, թե՛ ամբողջ հոգևորականությունը պիտի ոտքի

[1] Յովհ. կաթող., եր. 334։

կանգնեն, խրատեն, հանդիմանեն և պահանջեն, որ ամենքը միանան իրենց հայրենիքի և ժողովրդի փրկության համար։ Այս դեպքում միայն կայսրը համաձայն էր ամեն տեսակ օգնություն անել, նույնիսկ և զենքով, զորքով ու զորավարներով, որպեսզի արևելյան քրիստոնեությունն ազատված լինի վերջնական կորստյան վտանգից։

Հովհաննես կաթողիկոսը, ուրախությամբ ընդունելով այդ հանձնարարությունը, սկսեց հենց Ատրներսեհ թագավորից, խրատելով նրան կազմել հայ իշխանների հետ միաբանական դաշնակցություն։ Իսկ հայ նախարարության մեջ էլ միևնույն մտքերը տարածելու համար նա ընտրեց համեմատաբար մի խաղաղ և հանդարտ անկյուն։ Տարոնն էր այդ, ուր գտնվում էին և կաթողիկոսի բարեկամները։ Անցնելով այդ հարավային գավառը և նորից տեղեկանալով հայ իրականության, կաթողիկոսը գալիս էր այն եզրակացության, որ ինքը երկիրը չպիտի կարողանա այնպիսի ուժ զարգացնել, որ կարողանա ապահովվել ծանր հարստահարություններից, ուստի փրկության լավագույն միջոցը կլիներ այն, որ քրիստոնեական մեծ պետությունն իր հովանավորության տակ առնե Հայաստանը։ Այս մտքով էլ նա մի աղերսական նամակ գրեց Կոստանդին Է կայսրին (913—959 թթ.), որ կոչվում էր Ծիրանածին (Պորփիրոգեն)։ Այս նամակն էլ սկզբից մինչև վերջ քաղաքական մի գրություն էր, առանց կրոնական հարցեր հուզելու։ Կաթողիկոսը խնդրողի և գանգատվողի վայելուչ, արժանապատվություն արտահայտող ոճով նկարագրում էր երկրի դրությունը, ցույց էր տալիս, թե որքան է նա տանջվել քրիստոնեության համար։ Ողջույն մատուցանելով հայ եկեղեցու կողմից, նա ասում էր, որ այդ եկեղեցին «թէպէտ և ի թշնամեաց անտի գերեալ և իբրև զանապատ անջրդի խոպանացեալ ըստ նմանութեան մօր անզաւակացաւ յորդւոյ, սակայն կայ և մնայ ի սէր փառացն Աստուծոյ»։ Մյուս պարծանքը, որ թևավորում էր հայերին իրենց քրիստոնեական առաքինությունները ցուցադրելու, նահատակված Սմբատ թագավորն էր։ «Զի՞նչ բան ապա աստ յառաջ բերից յաղագս Սմբատայ Բագրատունւոյ, և բոլորից արևելեայցս գլխաւորի, որ հոգևորապէս արժանացաւ անուանիլ ի ձէնջ որդի[1] ձեզ ծառայն ձեր. զի առ բարեգործն այն և խնամակալ եկեղեցւոյ ևս չարահատոյց քան առ ամենեսեան գտաւ չար թշնամին։ Վասն զի ըստ մեղաց մերոց մատնեցաւ խնամածուն այն հօտին Քրիստոսի ի մեռաղս անզգամին և ամբարշտին, և վտանգեալ տագնապեալ չարաչար չարչարանօք զնա, որ ի ծերութիւն պարարտութեան հոգւոր խաղաղացուցեալ էր զԱսքանազեան ազգս յամենայն վրդովմանց չարի՝ և սագրելոյ ինքնակալ թագաւորացդ, և ժողովեալ զբանաւոր հօտ Քրիստոսի ի փառս և ի գովեստ Աստուծոյ։ Զի յարգելանս բանտից և ի խաւարային տեղիս և ի վիհս անհնարինս և յանձուկ վայրս և յաղէտս չարաչարս տագնապեալ տառապեցոյց զծերութիւն նորա։ Յետ որոյ ապա և դառն կոչկոճմամբ և փութամահ տանջանօք մատնեաց զնա ի սպառումն սրոյն ծարաւոյ. և առհասարակ մեք զրկեալ մնացաք ի խնամոց հաւատարիմ ծառային ձերոյ»[2]։ Եվ կաթողիկոսը գալիս էր այն եզրակացության, որ երկիրը խաղաղություն կգտնի միայն կայսրի հովանավորության տակ։

[1] Սմբատ թագավորին իր որդի էր անվանում, ինչպես գիտենք, նաև Կոստանդինի հայր Լևոն կայսրը։

[2] Եր. 346—347։

Կ. Պոլսի արքունիքն իսկույն պատասխանում է այդ դիմումին հատուկ մի պատվիրակի միջոցով, որ գնում է Տարոն և հրավիրում է կաթողիկոսին ու Աշոտ թագավորին գնալ մայրաքաղաք, կայսրին անձամբ ներկայանալու համար։ Աշոտը, տեղեկություն ստանալով Հովհաննես կաթողիկոսից, առանց ժամանակ կորցնելու ուղևորվում է Կ. Պոլիս, իսկ կաթողիկոսը, միևնույն ուղղությունը բռնելով Տարոնից, ընդհակառակն, առաջանում էր մեծ դանդաղկոտությամբ, որ դիտավորյալ էր։ Թեև նա զգում էր իր ձեռնարկած քաղաքական գործի մեծ անհրաժեշտությունը, բայց նրա ոտներին փաթաթվել էր Քրիստոսի բնության չարաղետ հարցը։ Այդ կապանքը հայ կրոնավորի համար այնքան անխզելի էր, որ նա, հասնելով Դերջան, իրեն բոլորովին անկարող զգաց շարունակելու ճանապարհը դեպի Տրապիզոն։ Հայոց կաթողիկոսը, իբրև ուղղահավատ միաբնյա, ի՞նչպես կարող էր քաղկեդոնականության ոտը գնալ։137 Չէ՞ն արդյոք ասի, թե նա գնաց դավաճանելու, հայրենի եկեղեցին վաճառելու։ Այնքան սարսափելի եղան նրա համար այս հարցերը, որ նա վճռեց մնալ Դերջանում, մանավանդ որ շատ հաջող բարեպաշտական պատրվակ էլ էր գտել—գնալ այցելել այն տեղերը, ուր ճգնել էր Գրիգոր Լուսավորիչը, ուր մեռել ու թաղվել էր նա։ Այս ջերմեռանդ պաշտամունքով նա երկար զբաղվեց Դերջանում։ Իսկ Կ. Պոլսի արքունիքը նոր և նոր խնդրակներ էր ուղարկում նրան, կրկնում էր իր հրավերը, որ անպատճառ գա մայրաքաղաք։ Ոչինչ, սակայն, չկարողացավ կոտրել նրա միաբնյա համառությունը, և նա վերադարձավ Հայաստան, ուր գտավ, իհարկե, նույն ներքին կազմալուծումն ու անիշխանությունը։

Իսկ Աշոտ թագավորը Բյուզանդական արքունիքում առանձին ուշադրության առարկա դարձավ։138 Նրան փայփայեցին քաղցր վերաբերմունքով, ընծաներով և խոստումներով։ Մեծ նշանակություն ուներ մանավանդ այն, որ նա այնքան բարեհամբավ նահատակ որդի էր։ Եվ այս անգամ բյուզանդական խոստումները լոկ խոստում չէին մնում։ Հազվադեպ զարմանալի երևույթ էր, որ Աշոտի հետ Հայաստան ուղարկվեց և բյուզանդական մի բանակ, որ պիտի պաշտպաներ Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը արտաքին թշնամիներից։ Բայց այս օգնական զորքին չէր վիճակվում առանձնապես մի կարևոր գործ կատարել այս կողմերում, և, ինչպես երևում է, նա կարճ միջոցից հետո նորից իր երկիրը վերադարձավ, մի քանի թեթև ընդհարումներ ունենալով Հայաստանում։ Պատճառը պետք է համարել այն, որ Յուսուֆը, վերջապես, հեռացել էր Հայաստանից՝ իր մի ուրիշ մեծ ձեռնարկությունն առաջ տանելու համար։ 918 թվականին մենք նրան տեսնում ենք Ատրպատականի սահմաններից դուրս, Ռեյ քաղաքի դեմ պատերազմելիս[1]։ Ըստինքյան հասկանալի է, որ Հայաստանն այդ ժամանակ ազատ էր թողնված և կարող էր շունչ քաշել։ Բայց այս, իհարկե, չէր նշանակում, թե նա միանգամայն ձեռքից տվել էր Հայաստանը։ Դվինում նա թողել էր իր ներկայացուցչին, որի միջոցով ամենայն ուշադրությամբ հետևում էր, թե ի՛նչ անցուդարձ է տեղի ունենում Հայաստանի մեջ։ Հայ իշխաններից միայն Շապուհի որդի Աշոտ սպարապետն էր, որ չէր կարողանում հեռու պահվել Յուսուֆից։ Նրա յուրաքանչյուր քայլին հետևում էին խստությամբ, այդ պատճառով էլ նա ստիպված էր հլու կա-

[1] Стэнли Лен-Пуль, «Мусульм. Династии». стр. 103.

մակատարություն ցույց տալ դաժան բռնավորին։ Երբ նա հեռանում էր Հայաստանից, իր հետ պատանդ տարավ Պարսկաստան նրա մորը և երկու քույրերին։ Արդ, լուր առնելով, որ Աշոտ թագավորը գնացել է Բյուզանդիա, նա ամենայն շտապողականությամբ իր մոտ կանչեց Աշոտ սպարապետին, որ և, իհարկե, իսկույն հպատակվեց այդ հրամանին։ Իսկ երբ Աշոտ թագավորը վերադարձավ բյուզանդական զորքերի հետ, Յուսուֆը թագ դրեց Աշոտ սպարապետի գլխին, միանգամայն անսխալ կերպով դատելով, որ այս է ամենաուղիղ միջոցն օտար զորքերի վրա հենված թագավորին թուլացնելու համար, մինչև որ ինքը նորից ազատություն կստանա անձամբ գործելու նրա դեմ։ Սակայն այս անգամ ուրիշ կերպ էր տնօրինվում նրա բախտը։ Ռեյի դեմ տարած արշավանքը մի նոր ապստամբական շարժում էր խալիֆի դեմ, և արաբական մի ստվար բանակ նորից ուղարկվեց Ատրպատական։ Եվ որովհետև Յուսուֆը դրանից առաջ թշնամական գործողություններ էր սկսել Խաչիկ-Գագիկի դեմ, ուստի այս վերջինն ամեն տեսակ աջակցություն ցույց տվեց, որ խալիֆի բանակը հեշտությամբ կատարի իր առաջխաղացությունը, որի համար և ընծաներ էր ստացել նրանից[1]։ Յուսուֆն այնքան հաղթական՝ թույլ և փոքր Հայաստանում, այս անգամ էլ չկարողացավ հաջողությամբ չափվել արաբական բանակի հետ և 919 թվին, պարտություն կրելով, բռնվեց ու տարվեց Բաղդադ և այդտեղ բանտ դրվեց, ուր մնաց մոտ չորս տարի[2]։

3. Ազգամիջյան կռիվներ: Ահա ինչ բարեհաջող հանգամանքներ էին գալիս Հայաստանին արտաքին անդորրություն տալու, ուրեմն և ներքնապես խաղաղացնելու համար։ Դժբախտությունն այն էր, սակայն, որ արտաքին թշնամին էր միայն, առժամանակ, անվնաս դառնում, մինչդեռ ներքին թշնամին ոչ միայն չէր հաղթահարվում, այլ, ընդհակառակն, այդ արտաքին հանգամանքների մեջ ավելի նպաստավոր պայմաններ էր գտնում իր սպանիչ գործունեությունն ընդարձակելու համար։ Այս դրությունը բացառապես Աշոտի թագավորության մեջ էր նկատվում, մինչդեռ Վասպուրականն այդ միջոցին ներքին խաղաղություն էր վայելում, թույլ տալով Խաչիկ-Գագիկին ավելի լայն թափով խաղաղ շինարարություն զարգացնել։

Աշոտ Բ-ն իր քաջակորով բնավորության և համառ դիմացկունության համար ստացել է Երկաթ անունը[3]։ Եվ այս, իհարկե, ո՛չ թե միայն այն շարժումների և կռիվների համար, որոնք մղվում էին Յուսուֆի դեմ։ Պակաս նշանակալի չէ նրա դիմադրական եռանդը և այն ազգամիջյան կռիվների մեջ, որոնք նրա բաժինը դարձան Բյուզանդիայից վերադառնալուց հետո։ Այնպես որ դիմացկունությունն արտահայտող մականունը կարող էր նրան մատակարարել և տնային ռազմաճակատների վրա ցույց տված գործունեությունը։ Նույնիսկ Հայաստանի իրականության մեջ դժվար թե եղած լինի մի այլ թագավոր, որ Աշոտ Բ-ի չափ երկար ու համառ կռված լինի, առանց ընկճվելու ներքին թշնամիների դեմ։ Ազգամիջյան կռիվների բնորոշ գծերն անփոփոխ էր մնում և այժմ։ Ներքին թշնամությունը իրար դեմ էր հանում ոչ միայն հեռավոր, այլև շատ մերձավոր ազգականներին, անգամ եղբորը եղբոր դեմ։ Այս կերպարանքով էլ սկիզբ էին առնում այդ կռիվներն Աշոտի

1 Թովմա Արծրունի, եր. 287։
2 Стэнли Лен-Пуль, «Мусульм. Дин.», стр. 103.
3 Ասողիկ, եր. 169։

ժամանակ։ Առաջին գժտությունը ծագում էր երկու Աշոտների միջև, մեկը, որ Երկաթն էր, մյուսը՝ նորապսակ թագավորը, Աշոտ Շապուհյանը, նա, որ սպարապետ էր։ Արարատյան երկիրը պիտի տեղ ու կալված տար նաև մի երկրորդ թագավորության։ Աշոտ Շապուհյանին պատկանում էր միայն Կողբ ավանը, այն էլ ավերել էր Աշոտ Երկաթը բյուզանդական զորքերի օգնությամբ։ Բնականաբար կալվածական վեճ էր առաջանում երկու հորեղբորորդիների միջև, որ և իսկույն կռվի կերպարանք է ընդունում։ Արդեն հենց այս նպատակով էլ Յուսուֆը թագ էր տվել Աշոտ Շապուհյանին։ Պատերազմի բոլոր պատրաստությունները տեսնված էին, բայց հաշտեցնողի դերում հանդես եկավ Հովհաննես կաթողիկոսը, որին և հաջողվեց կանխել ներքին պատերազմը։ Հաշտության պայմանը, թվում է, այն էր, որ Աշոտ Շապուհյանն իր թագավորության համար ստանում էր Վաղարշապատ քաղաքն իր շրջակայքով։

Այնուհետև ազգամիջյան կռիվ էր ծագում Գուգարաց աշխարհում, Հայաստանի հյուսիսային սահմանների վրա։ Այստեղ դեռ Սմբատ Ա-ն Շամշուլդե բերդի հրամանատար էր նշանակել Գնթունյաց տոհմից երկու իշխանների, Վասակ և Աշոտ եղբայրներին, նրանց հանձնելով և այդ կողմերի կառավարությունը։ Բայց նրանք, օգուտ քաղելով Յուսուֆի արշավանքներից առաջացած անիշխանությունից, ապստամբեցին Հայոց թագավորին հնազանդվելուց, ուստի Աշոտ Երկաթը գնաց նրանց նվաճելու։ Թե հաճախ ի՛նչ չափեր էին ընդունում ներքին պատերազմները, ցույց է տալիս հենց այս Շամշուլդեի դեպքը։ Աշոտը չկարողացավ այնտեղ տանել իր ամբողջ բանակը, քանի որ պարենավորման մեծ դժվարություններ կային։ Ուստի թողնելով բանակը թիկունքում, նա ընտրեց 200 մարդ և դրանց հետ առաջանալով մինչև Շամշուլդե, տեսավ, որ Վասակն ու Աշոտը մոտ չորս հազար մարդ են հավաքել Թիֆլիսից և Կովկասյան լեռների ստորոտներից։ Իր փոքրիկ խմբով Աշոտ Երկաթը, որի հետ էր և նրա Աբաս եղբայրը, խիստ հարձակում է գործում այդ ստվար բազմության վրա, մեծ կոտորած է անում և փախուստի մատնում։ Բայց Շամշուլդեն վերցնել չի կարողանում, և պարտություն կրած Վասակ իշխանը փակվում է նրա մեջ։

Շամշուլդեից հետո Աշոտ Երկաթը նորից հարկադրված է լինում իջնել Արարատյան դաշտը, դարձյալ իր հորեղբորորդու դեմ, որ ոտի տակ էր տվել նրա հետ կայացրած համաձայնությունը, հափշտակել էր Վաղարշապատի շրջանում գտնված մի քանի կալվածներ, որոնք Աշոտ Երկաթին էին պատկանում։ Այս անգամ այլևս ոչինչ չկարողացավ անել Հովհաննես կաթողիկոսը։ «Զի ես էի խաղաղարար, և յորժամ խօսէի՝ մարտնչէին ընդ իս»[1], գրում է նա։ Սաստիկ պատերազմը շարունակվեց երկու տարի։ Սկզբում հաղթող հանդիսացավ Աշոտ Երկաթը, որ գրավեց Վաղարշապատը, իսկ մյուս Աշոտը բնակություն հաստատեց Դվինում։ Երկիրը, իհարկե, մեծամեծ վնասներ կրեց։ Ընդհարումները շարունակվում էին անընդհատ։ «Անհասարակ,— շարունակում է Հովհաննես կաթողիկոսը,— դղրդեալ սասանեալ աւերեալ քանդեալ կործանեալ լինէր՝ սեպհական տէրութիւն աշխարհին իւրեանց և զմեծութիւն և զփառս իւրեանց ազգի օտարի տուեալ ի փարթամութիւն այլոց՝ և յաղքատութիւն ինքեանց տարածեցին զճանապարհս իւրեանց»[2]։ Աշոտ Երկաթն այս միջոցին ամուսնանում է Աղվանից Սահակ

1 Եր. 374։
2 Ibid.

Սևադա անունով քաջ և հռչակված իշխանի աղջկա հետ։ Սևադան տիրում էր Գարդման գավառում և իր իշխանությունը տարածել էր նաև Գուգարքի մի մասի վրա, մինչև Ձորագետ։ Իր աներոջից օգնական զորք վերցնելով, Աշոտը նորից գալիս է իր հորեղբոր որդու դեմ, նորից վերսկսում պատերազմը։ Բայց այս անգամ ինքն է չարաչար հաղթվում Աշոտ Շապուհյանից։ Եվ այստեղ էր միայն, որ Հովհաննես կաթողիկոսին հաջողվում էր նորից հաշտեցնել երկու արյունակից թշնամիներին, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե երկու կողմերից Աշոտ Երկաթն էր, որ զիջումների էր դիմում անհաջողության հանդիպելուց հետո միայն։ Եվ այս միանգամայն համապատասխանում էր նրա հպարտ, ինքնասեր և կտրուկ բնավորության։

Այս հաշտությանը հետևում էր Մովսես իշխանի ապստամբությունը, որ տանում է մեզ Հայաստանի հյուսիսային մի այլ ծայրաշխարհ, Ուտի նահանգը։ Այդտեղ, Գարդմանի հարևանությամբ, Աշոտ Երկաթը կառավարիչ էր նշանակել Մովսես իշխանին, որ, ինչպես երևում է, տեղացիներից էր և ապստամբել էր։ Այստեղ պետք է նկատի առնել, որ Ուտի նահանգը, ինչպես նաև Գուգարքը, Հովհաննես կաթողիկոսի նկարագրության մեջ երևան են գալիս իբրև վայրենի, ավազակաբարո ժողովուրդների հայրենիք, որոնք հաճախ հայերին թշնամի են դուրս գալիս։ Այս երևույթը հասկանալու համար պետք է իմանալ, որ մեր պատմագրի խոսքը չի վերաբերում Ուտի և Գուգարք նահանգների այն մասերին, որոնք գտնվում են Փոքր Կովկասի լեռներում և վաղուց հայացած էին, ինչպես, օրինակ, Գարդման գավառն Ուտի նահանգում և Տաշիր գավառը՝ Գուգարքում։ Խոսքը անշուշտ վերաբերում է այդ նահանգների հյուսիսային, այսինքն Կուրի հովտին պատկանող՝ տափարակ մասերի ազգաբնակության, որ, ինչպես կարելի է կռահել, հին տեղացիներից կամ բնիկներից էր բաղկացած և օտար կուլտուրաներին էր պատկանում, բաժանված հայերից կամ իր հին ազգային պաշտամունքով, կամ գուցե հենց մահմեդական կրոնով, որ, երևի, տարածվել էր այդ տեղերում արաբների ձեռքով։ Այս ենթադրության կողմն է խոսում և այն հանգամանքը, որ Հովհաննես կաթողիկոսը, խոսելով գուգար ժողովրդի մասին, շատ անգամ նրա տարածումը տանում հասցնում է մինչև Ալանաց Դուռը (Դարյալի կիրճը)։ Ինչ վերաբերում է ուտիացի «ճուաղաբարո» (ինչպես անվանում է պատմաբան կաթողիկոսը) ժողովրդին, դրա մի հատվածը, առաջանալով Գուգարքի մեջ, բռնում է լեռնային տարածությունը Ձորագետ գավառից (ուր Սանահնի վանքն է գտնվում) մինչև Ուտի նահանգի հյուսիս-արևմտյան ծայրերը, ուր, օրինակ, Տավուշ (այժմ Թովուզ) գյուղը մտնում էր նրա սահմանների մեջ[1]։ Գլխավորապես այս ցեղն էր, որ կանգնած էր Բագրատունի թագավորների առջև Գուգարքի և Ուտիի այդ մասերում։ Ցեղը, մեր պատմագրի ասելով, իր անունն ստացել էր իր նախահորից, որ կոչվում էր Սև։ Այս անվանադիրի (էպոնիմի) անունով ցեղը կոչվում էր Սևորդիների ցեղ։139 Բայց հավասար չափով հնարավոր է այս ցեղային անունը բացատրել և նրանով, որ ցեղը, իբրև տափարակից սարը բարձրացած, տեղացիների մեջ աչքի էր ընկնում կաշու թխությամբ։ Սևորդիներն էին, որ, ինչպես տեսանք, դավաճանեցին Ձկնավաճառի կռվում և պատճառ դարձան, որ Աշոտի եղբայր Մուշեղը գերի բռնվի։

[1] Հ. Ղ. ԻՆՃԻՃԵԱՆ, «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետիկ, 1822, եր. 306։

Ահա Մովսես իշխանի այս ուտիացի ժողովրդի դեմ էր գնում Աշոտ Երկաթը, միացած իր աներոջ զորքի հետ։ Կռիվը հաղթական էր Հայոց թագավորի համար, և Մովսեսը հազիվ կարողացավ փախչել Սյունյաց Սմբատ իշխանի մոտ։ Բայց հետո, երբ փորձեց անցնել Ծանարների մոտ և նոր զորք հավաքելու փորձ անել, Աշոտն ընկավ նրա հետևից, բռնեց ու կուրացրեց։ Այս հաջողությունից շատ գոհ՝ Աշոտ Երկաթը գնում էր Շիրակ և իր մոտ էր կանչում իր սիրելի եղբայր Աբասին և մի ուրիշ իշխանի, որ նրանից պակաս սիրելի չէր թագավորին։ Դա Վրաց Բագրատունիներից էր, Ատրներսեհ թագավորի քեռորդին, Գուրգեն անունով։ Երկուսին էլ թագավորը մեծարում էր հարուստ պարգևներով և շքեղ ընդունելություններով։ Բայց չգիտեր, որ հենց այդ րոպեին երկուսի կողմից գաղտնի դավադրություն էր սարքված իր կյանքի դեմ։ Տարաբախտաբար, Հովհաննես կաթողիկոսը չի բացատրում, թե ինչ դրդապատճառներ էին ստիպում Աբասին դիմել մի այդպիսի ոճրագործության, որպիսին է եղբայրասպանությունը։ Ինչպես երևում է, Աշոտ Երկաթի կյանքի մեջ առհասարակ խոշոր դեր են կատարել քսու դրանիկները, որոնք խաբում էին թագավորին և տրամադրում այս կամ այն անձի դեմ։ Բայց ներկա դեպքում այս հանգամանքը չէր կարող վճռական դեր կատարած լինել, քանի որ մենք տեսնում ենք, որ հարաբերությունները թագավորի և նրա համար սիրելի երկու անձանց միջև մտերմական են և նախընթաց գժտություններով չէին բարդացած։ Ամենից բնականը կլինի որոնել և այս դեպքի մեջ տիեզերական և համամարդկային երևույթը—իշխանությունը, որ գերաղանցորեն անբարոյականացնող է. Աշոտ Երկաթը թագավոր էր, նրա եղբայր Աբասը մտածում էր, թե ինչո՞ւ ինքը չպիտի լինի թագավոր, իսկ Գուրգեն Վրացին, հավանորեն, գործում էր իր աներոջ դրդմամբ, որ Աշոտ Շապուհյան թագավորն էր։ Այսպես թե այնպես՝ թագավորասպանության գործը Որմանի գյուղում չի հաջողվում և հետաձգվում է մինչև որ Աշոտը վերադառնում է Երազգավորս։ Բայց այստեղ Աշոտին հայտնի է դառնում դավադրությունը և նա, վերցնելով իր հետ Աբասի որդուն, փախչում է Ուտի, երևի իր աներ Սահակ Սևադայի մոտ։ Հեռանում են Շիրակից և Աբասն ու Գուրգենը։ Եվ այնուհետև երեքի միջև սկսվում է սաստիկ թշնամություն։

Այս ազգամիջյան խառնակությունների և մանավանդ Աշոտ Երկաթի բնավորության տեսակետից շատ որոշիչ է մի մասնավոր փաստ։ Գեղարքունու իշխան Վասակը, Աշոտի հորաքրոջ՝ Մարիամ տիկնոջ որդին, կասկած տանելով նրա գրգռված տրամադրությունից և զգալով, որ ինքը չէ կարող ապահովաբար մտնել նրա մոտ, խնդրում է նրանից երդման թուղթ, թե իր կյանքի դեմ փորձ չի արվի նրա կողմից։ Հովհաննես կաթողիկոսի միջնորդությամբ թագավորի կողմից այդ ապահովությունը տրվում է։ Բայց նորից չարախոս մարդիկ գրգռում են Աշոտին, հավատացնելով, թե սուրհանդակի մոտ բռնված է Վասակի գրագրությունն Աշոտ Շապուհյանի հետ և այլն։ Այս բավական է լինում, որ Աշոտը դրժե իր տված խոսքին, կալանավորի Վասակ իշխանին և շղթայակապ բանտարկի նրան Ձորափոր գավառի Կայան բերդում (Դիլիջանի կիրճում)։ Հովհաննես կաթողիկոսը խիստ հանդիմանություններ է կարդում նրան այդ ուխտադրժության համար, և նա խոստանում է մի քանի ժամանակից հետո արձակել կալանավորին։ Բայց հենց այս միջոցին երևան է գալիս մի ուրիշ անակնկալություն, մեկն այն շատերից, որոնցով այնքան հարուստ է Աշոտ Երկաթի

թագավորությունը։ Թշնամությունը հիմա էլ Աշոտի և նրա աներ Սահակ Սևադայի միջև է բորբոքվում՝ դարձյալ մեզ անհայտ պատճառներով։ Հովհաննես կաթողիկոսը շատ է գովում Սահակ Սևադայի խելքն ու իմաստությունը։ Ի՞նչ կարող էր, ուրեմն, պատահել, որ նա լուրջ զինվորական պատրաստություն է տեսնում իր փեսայի հետ արյունահեղ կռվի մեջ մտնելու համար։ Արդյոք պատճառն ընտանեկա՞ն էր, թե դարձյալ ավատական հակադիր շահերի բախումից էր առաջանում։ Գիտենք միայն այն, որ կռիվն առժամանակ չկայացավ և Ախայանք գյուղի մոտ բանակված երկու հակառակորդները, լսելով հայ նախարարների հանդիմանությունները, որոնք կարդացվում էին այդպիսի մի ընդհարման պատճառով, երկու կողմերն էլ, հաշտություն կնքեցին, երդման խոսք արին ու հեռացան։

Աշոտը, սակայն, պարապ չէր մնում։ Դվինի դռների մոտ, ասում է Հովհաննես կաթողիկոսը, շատ արյուն թափվեց, և այսպիսով թագավորն ընկճեց ապստամբներին, որոնց ո՛վ և ի՛նչպես լինելու մասին տեղեկություն չունինք։ Գուցե այստեղ էլ Աշոտ Շապուհյանն էր գործում նրա դեմ։ Այս ենթադրությունը հավանական են դարձնում դրան հաջորդած դեպքերը։ Դվինից Աշոտն արշավում է Վրաստան՝ Գուրգեն իշխանից վրեժ հանելու համար։ Նրա հետ այդ գործի մեջ միացած է և Ատրներսեհ թագավորը, իսկ Գուրգենին օգնելու են գնում Աբաս արքաեղբայրը և Աշոտ Շապուհյանը։ Պատերազմը հաջողակ էր Աշոտ Երկաթի համար, և Գուրգենը, զգալով իր պարտությունը, արդեն հաշտությու՛ն էր խնդրում, հանձնառու լինելով նույնիսկ իր հաշվով վերականգնել այն ամենը, ինչ որ ավերված էր նրա ձեռքով կամ նրա պատճառով։ Բայց հենց այդ միջոցին գուժկան էր հասնում Աշոտին, թե նրա աներ Սահակ Սևադան զորքով խուժել է Զորոփոր գավառը, գրավել է այնտեղի բերդերը և ժողովրդին էլ քշել-տարել է իր երկիրը։ Ատրներսեհն շտապեցնում է Աշոտին իսկույն գնալ այս նոր հարձակման դեմ, իսկ Գուրգենի հետ հաշտություն կնքելը համարել արդեն կայացած, քանի որ պայմաններով ձևակերպելը երկրորդական բան է և կարելի է անել մի ուրիշ ժամանակ։

Հավատ ընծայելով իր դաշնակցին, Աշոտ Երկաթն իսկույն թողնում է ամեն ինչ և կարգադրելով, որ զորքը հետևի իրեն, ինքն ընտրում է 300 մարդ և սլանալով Զորոփոր, տեսնում է գավառն ավերված, անմարդաբնակ դարձած։ Վերցնելով Կայան բերդը, Սահակ Սևադան արձակել էր այնտեղ կալանավորված Վասակ իշխանին, որը գնում է իր գավառը, Գեղարքունիք։ Աշոտը հանդիպում է իր աներոջ զորքին, որը բաղկացած էր ութ հազար մարդուց և որը համարյա շրջապատում է նրա փոքրիկ խումբը։ Աշոտը կարողանում է միայն այն անել, որ գրավում է մի բլրի գագաթ, Տավուշի (այժմյան Թովուզի) ձորի մոտ։ Այստեղից նա մի եպիսկոպոս է ուղարկում իր աներոջ մոտ և ասում նրան. «Ի՞նչ վատ բան եմ արել քեզ կամ ի՞նչ վնաս եմ տվել, որ նրա փոխարեն արժանացա քեզանից այսպիսի ծանր աղետի։ Չէ՞ որ երդման թուղթ ունենք, և ինչո՞ւ այժմ ուզում ես իմ արյունը թափեց առանց պատճառի»։ Թագավորը պատրաստ էր հաշտություն կընքելու, եթե իր աները կհոժարվեր վերադարձնել իրենից խլած երկու բերդերը և քշած-տարած ժողովուրդը։ Այն ժամանակ, ասում էր նա, մենք կլինենք հարազատ հայր և սիրելի որդի։ Սակայն Սահակ Սևադան պատասխանում է եպիսկոպոսին. «Դու այստեղ նստիր, իսկ ես այս րոպեին կերթամ նրան իմ սրով պատասխանելու»։ Եվ պատրաստելով իր ամբողջ

տվար բանակը, նա ամեն կողմից հարձակումներ է ուղղում Աշոտի դեմ։ իսկ սա այդ օրհասական ժամին ամենևին չի կորցնում իրեն, թեև ստիպված էր ավելի ևս փոքրացնել իր խումբը։ Իր զինվորներից շատերը հոգնել էին երկար ճանապարհից։ Այդպիսիներին նա թողեց բլրի վրա, իսկ ինքը երկու հարյուր մարդով ցած իջավ։ Կռվի մեջ մտնելուց առաջ նա տարածեց գետնի վրա երդման թուղթը, որ կնքված էր իր և աներոջ միջև, դառնալով դեպի երկինք, ասաց. «Եթե ես սխալվեցա կամ ստեցի այս երդման, իմ ստության պատիժը, Տեր Աստված, իմ գլխին թափի՛ր։ Իսկ եթե մեղավոր է իշխանը, նրանից պահանջի՛ր վնասը և ինձ ազատիր տարապարտ մահից, որ ուզում են պատճառել ինձ»։ Ապա այդ թուղթը կապելով խաչին, որ միշտ տանել էր տալիս իր առջևից, նա հարձակվում է իր մի բուռն մարդկանցով այդ ամբողջ բանակի վրա։ Հարվածը շեշտակի էր և խիստ, ինքը թագավորն անձնական փայլուն քաջություններ ցույց տվեց և մեծ շփոթություն գցելով Սահակ Սևադայի բանակի մեջ, ցրեց նրան, իսկ իրեն՝ Սահակ Սևադային և նրա որդի Գրիգորին բռնեց։ Եվ որովհետև չէր հավատում, թե սովորական միջոցներով կարող է իր կյանքն ապահովել իր աներոջ վրեժից, քանի որ երդումը ոտի տակ էր գցվում, իսկ բերդարգելությունն էլ, ինչպես ցույց էր տվել Վասակ իշխանի օրինակը, նույնպես թույլ ու անկատար միջոց էր, ուստի Աշոտը, երկար չմտածելով, գործադրեց մեծ անգթություն, կուրացնելով թե՛ հորը և թե՛ որդուն։ Բացի դրանից՝ գրավեց Գարդմանի բերդը և հայտարարեց այն իր սեփականությունը։

Ներքին պատերազմների մեջ ձեռք բերած այս հաջողությունները, անկասկած, ամուր դիրք էին ստեղծում Աշոտ Երկաթի համար, մի դիրք, որ աննկատելի չէր մնում և արաբական կառավարության համար։ Յուսուֆի բանտարկությունից հետո Հայաստանի ոստիկան նշանակվեց Ըսբուք կամ Նըսըր (Նասիր) անունով մեկը, որ Աշոտ Երկաթին մյուս երկու թագավորներից բարձր դիրք տալու համար՝ անվանեց նրան Շահնշահ (թագավորների թագավոր), մի անուն, որ այնուհետև սիրելի է դառնում թե՛ Բագրատունի և թե՛ այլ իշխանական տոհմերի մեջ։ Այս պատվավոր տիտղոսն ավելի ևս թև է տալիս Աշոտին իր անվերջ ներքին մրցությունները հաղթականորեն առաջ տանելու համար։ Այսպես, նա նորից Շամշուլդե բերդը նվաճելու է գնում, որի հրամանատարներից մեկն էր միայն մնացել, Վասակը։ Սա օգնություն ստացավ Վրաց Գուրգեն իշխանից, բայց և այնպես, բերդը պահել չկարողացավ։ Անձնատուր եղած ամբողջ զորքը Շահնշահը խիստ պատիժների ենթարկեց, ոմանց կուրացնելով, ոմանց քիթն ու ականջները կտրելով։ Այսպիսով,— հավատացնում է պատմաբան կաթողիկոսը,— հյուսիսային ազգերը բոլորովին ընկճվեցին և հավատարիմ հպատակությամբ էին ծառայում Աշոտին։ Այնուհետև անխռով ու արի թագավորին մենք տեսնում ենք Կոտայք գավառում, Դվինի մոտ։ Այդտեղից նա առաջարկություն է ուղարկում Աշոտ Շապուհյանին, որ մշտական խաղաղության և հաշտության պայման կնքվի իրենց միջև։ Հովհաննես կաթողիկոսին էլ խնդրում է համոզել Աշոտին, որ և հաջողվում է առանց դժվարությունների։ Կաթողիկոսն ու Աշոտը գնում են Շահնշահի մոտ, բարեկամություն են հաստատում երդումով, խնջույքներով։

Այս մի հարցն էլ կարգավորելուց հետո՝ Աշոտ Շահնշահը նորից ուղևորվում է իր սիրած Ուտի նահանգը։ Սակայն ճանապարհին լուր է առ-

նում, որ ամբողջ Ուտին ապստամբական շարժման մեջ է, իսկ ապստամբության գլուխ կանգնած է Ամրամ իշխանը, որին ուժեղության պատճառով կոչում էին Ցլիկ և որին հենց ինքն Աշոտն էր նշանակել երկրի կառավարիչ։ Անճապարելով տեղ հասնել, թագավորը տեսնում է, որ շարժումը շատ ընդարձակ չափեր է ընդունել, և ինքը չպիտի կարողանա իր ունեցած ուժով կռիվ սկսել շարժումը ճնշելու համար։ Ուստի գնում է Եգերացոց երկիրը (Մինգրելիա), դաշն է կապում նրա թագավորի հետ և օգնական զորք ստանալով, վերադառնում է Ուտի։ Գործողությունները դարձյալ կենտրոնանում են նույն Տավուշի ձորի մոտերքը։ Շահնշահն անզգուշություն է ունենում, առանց նախապես երկիրն ուսումնասիրելու, իր զորքի հետ մտնել մի նեղ և անձուկ, թեև ամուր բերդի շրջանը, ուր նրան շրջապատում են ապստամբների մեծամեծ խմբերը։ Ցլիկը հպատակվել էր Վրաց Գուրգեն իշխանին, որ իր զորքերով ղեկավարում էր ամբողջ ապստամբությունը։ Շահնշահը տեսնում է իրեն շատ վտանգված դրության մեջ։ Բայց նրա ահը փոխվում է սարսափի այն ժամանակ, երբ իմանում է, որ բանակի մեջ գտնվող եգերացիները բանակցություն են վարում ապստամբների հետ՝ իրեն նրանց ձեռքը մատնելու համար։ Եվ թագավորը մի վերջին խիզախ փորձն է անում իրեն ազատելու համար։ Իր շուրջը հավաքելով իրեն հավատարիմ մնացած մարդկանց, նա գնում պատռում է ապստամբների շարքերը և սրաթռիչ ձիերով հասնում է Կաքավաքար բերդը, ուր արդեն ազատված էր վտանգից։ Այս անհաջողություններից հետո,— ասում է Հովհաննես կաթողիկոսը,— բախտը երես դարձրեց Աշոտ Շահնշահից, և նա այլևս հաղթանակներ չէր շահում ներքին պատերազմների մեջ։ Պատճառը հոգևորական մատենագիրը բացատրում է Աշոտի փոխված բնավորությամբ։ Այս մեղադրանքից մենք իմանում ենք, որ թագավորը կորցրել էր իր նախկին ողջախոհությունը, որ եթե նշանակում է, թե նա զեղխ և մեղկ կյանքի վայելքներին էր անձնատուր եղել, այն ժամանակ պարզված կլինի մի շատ հուժկու պատճառ, որ տապալում է առհասարակ բոլոր կարող ռազմիկներին։

4. Յուսուֆ և Խաչիկ-Գագիկ։ Մենք տեսանք, որ այն օրվանից, երբ Վասպուրականի թագավորը դադարեց լինել գործիք այն բռնավորի ձեռքին, որ իրեն թագ էր տվել, հարաբերությունները երկու հարևան երկրների՝ Վասպուրականի և Ատրպատականի միջև ընդունեցին խիստ թշնամական բնավորություն։ Այս դրությունը երկար շարունակվեց, և Յուսուֆը ձեռքից չէր տալիս ամեն մի հարմար միջոց, երբ կարելի էր զորքեր մտցնել Վասպուրականի սահմանները, կողոպտել, գերել և կոտորել։ Խաչիկ-Գագիկն ստիպված էր այդ երկար մաքառումը զորել թշնամու դեմ մղել իր երկրի միջոցներով միայն, առանց կողմնակի օգնության։ Առհասարակ նա առանձնացրեց Վասպուրականը։ Արարատյան աշխարհում գոյություն ունեցող երկու թագավորների հետ նա ոչ միայն որևէ համաձայնության մեջ չմտավ, որևէ պաշտպանողական դաշնակցություն չկազմեց, այլ ընդհակառակն, խլեց Բագրատունիներից նրանց հին ոստան Դարյունքը, ինչպես նաև մի շարք բերդեր Կոգովիտ գավառում, օրինակ՝ Մակուի բերդը, Մասսյացոտն գավառ և այլն[1]։ Եվ կղզիանալով Վասպուրականում, Խաչիկ-Գագիկը պաշտպանվում էր Յուսուֆի դեմ ավելի խելքով և հնարիմացու-

[1] Թովմա Արծրունի, էջ. 256։

թյամբ, քան զենքով։ Զգալով, որ ինքը չպիտի երբեք կարողանա պատեբազմով հաղթել Ատրպատականի բանակը, Արծրունի թագավորն ինքնապաշտպանության միջոցներ էր ստեղծում իր երկրի տված բնական հարմարություններից և օգտագործում էր այդ միջոցները մեծ հաջողությամբ։ Այսպես, մենք գիտենք, որ այս երկրի հին պաշտպանողական միջոցն էր գաղթեցնել ժողովուրդը թշնամու արշավանքի ժամանակ, ամրացնել նրան լեռներում, ապա կազմել թռուցիկ արշավախմբեր, որոնք դարձյալ ամրանում էին լեռներում և չէին թողնում, որ թշնամին մոտենա ժողովրդին։ Առավելապես այս միջոցն էր, որ լայն չափերով գործադրում էր Խաչիկ-Գագիկը, խուսափելով խիզախ պատերազմական գործողություններից, որոնք օգուտ չէին կարող տալ, իսկ վնասել կարող էին մեծ չափերով։ Եվ երբ այս ինքնապաշտպանական միջոցներն էլ չէին օգնում, այն ժամանակ Խաչիկ-Գագիկը խաղաղասիրական քաղաքականությամբ էր շահում պայքարը, այն է՝ տալիս էր թշնամու պահանջած հարկերն ու տուրքերը և այսպիսով ճանապարհ էր դնում նրան իր երկրից։

Յուսուֆի բանտարկությունն էլ չէր ազատում Վասպուրականն Ատրպատականի հալածանքներից։ Ըսբուք ոստիկանը, որ նրա մերձավոր մարդկանցից էր և խալիֆի լիազորությամբ կառավարում էր Ատրպատականն և Հայաստանի հետ, արշավանք սկսեց Վասպուրականում, ասպատակություններ կատարեց և արյունհեղություններ արավ։ Խաչիկ-Գագիկը հաշտություն գնեց նրանից, տալով ոչ միայն հարկերը, այլև շատ ընծաներ։ 922 թվին Յուսուֆն ազատվեց բանտից և նորից իր տեղը վերադարձավ։ Ճանապարհ նա ընտրել էր Կորդվաց աշխարհով և այդ կողմից էլ պիտի մտներ Վասպուրական։ Խաչիկ-Գագիկը նկատելով, որ այժմ վտանգը գալիս է հենց այն կողմերից, ուր սովորաբար ժողովուրդն ապաստան էր գտնում թշնամու արշավանքի ժամանակ, շտապում է նոր ուղղություն տալ գաղթականության։ Դուրս է հանում ժողովուրդը շատ տեղերից և առանձնապես Աղբակ գավառից և ուղարկում է նրան հյուսիս, Կոգովիտ և Ծաղկոտն գավառները։ Իսկ երկրի ռազմական ուժերը, նրա եղբայր Գուրգենի հրամանատարությամբ, կազմ ու պատրաստ՝ պահապան կանգնեցին ժողովրդական զանգվածների առաջապահ մասերում, որպեսզի պաշտպանեն նրանց վտանգի դեպքում։ Յուսուֆը Կորդվաց աշխարհից իջնում էր Անձևացյաց աշխարհը, որի մեծ իշխան Ատոմն արդեն հանել էր իր ժողովուրդը լեռների ամուր գագաթները։ Եվ երբ Յուսուֆը նրանից հարկերը պահանջեց, նա ամենայն պատրաստակամությամբ վճարեց ամբողջ պահանջը, դեռ նույնիսկ շատ բան էլ ավել։ Յուսուֆը գնաց Աղբակ գավառը, որ միանգամայն դատարկված էր ժողովրդից։ Բռնավորը, տեսնելով, որ այս միջոցով Խաչիկ-Գագիկն իրեն միանգամայն անխոցելի էր դարձրել այս կողմերում և չկամենալով պատերազմական գործողություններ տարածել դեպի հյուսիս, ուր ժողովուրդն էր ապաստանած, մանավանդ որ շտապում էր շուտ գնալ Ռեյ քաղաքը, ուստի մարդ է ուղարկում Խաչիկ-Գագիկի մոտ և պահանջում է նրանից մի քանի տարվա հարկեր, ինչպես նաև մեծամեծ ընծաներ իբրև փոխարինություն այն լավության, որ արել էր նա Արծրունի իշխանին, թագ տալով նրան։ Գագիկը բոլորովին չի վրդովվում այդ պահանջներից, տալիս է ամեն ինչ, ոսկի և արծաթ հավաքելով իր ամբողջ ժողովրդից, թե՛ ազատներից և թե՛ անազատներից։ Այսպիսով նա այնպես

է լիացնում ընչաքաղց բռնավորին, որ սա նույնիսկ շնորհակալությամբ է հեռանում Վասպուրականից։

Հովհաննես կաթողիկոսն այսպես է բացատրում Վասպուրականի թագավորի այդ քաղաքականությունը. «Իսկ թագաւորն ծանուցեալ զայսումն խորհրդոյն Յուսփայ, եթէ ոչ գոյ նմա կար հակամէտ լինել ի վաւթարն, եւ կամ ուղղել ինչ զնպատակ չարիմաց խորհրդեանն, սակայն քաջավայելուչ իմաստիւ անխզելի զմիտս իւր ի չարութենէն պահնակեալ պատրաստէր. և վարանակամօք ոմամբք ընտրելի առնէր զերկրորդն, տալ կրկին կամ երեքկին զսակ հարկին՝ բեկարս արքունի, և ոչ հարկանել ընդ միմեանս սուրակոխ կոտորածիւ ի պատճառս քինախնդրութեան վրիժուց. զի պտուղ պատերազմաց մահ է, ասէ, և մահու հրաւիրանս յատակս դժոխոց հայի։ Եւ այնուհետեւ անխնայ զիւրն ստացուածս առաջի արկանէր եւ առհասարակ յամենեցունց ի մերձաւորաց եւ յազատաց եւ յռամկաց եւ յանռամկաց ժողովեալ արծաթ և ոսկի և կարասիս բազումս, և ձիս և ջորիս՝ տայր տանել նմա առատաձեռն ձրիւք»[1]։

Բայց այսպիսի մի քաղաքականություն երկարատև և արդյունավետ դարձնելու համար հարկավոր էր, որ երկրում մթերվեին շատ հարստություններ, որպեսզի նրանք փոխարինեին զինական տկարությանը։ Խաչիկ-Գագիկը շատ լավ էր զգում այս անհրաժեշտությունը և հենց այս պատճառով էլ ամեն կերպ աշխատում էր խաղաղություն տալ ազգաբնակությանը, որպեսզի նա կարող լինի շինարարական աշխատանքին նվիրվել։ Ինքը թագավորն այդ աշխատանքի առաջին դյուցազն էր հանդիսանում։ Մենք արդեն տեսանք, թե նա ինչե՛ր արավ երկիրը բարեզարդելու համար, քանի դեռ իշխանապետ էր Վասպուրականում։ Եթե քաղաքական թուլությունը նրան հարկադրում էր գլուխ խոնարհեցնել Ատրպատականի արյունռուշտ բռնավորի առջև պատերազմի, այսինքն կործանման, ապականության գործում, ապա խաղաղ աշխատանքի, աշխարհ բարեզարդելու, մարդկային կյանքը քաղցրացնելու և երջանիկ դարձնելու մեծ ու հերոսական գործում նա այնպիսի մի հսկա էր, որի առջև ծունկ պիտի չոքեր արդեն ինքը արյունարբու բռնավորը։ Խաղաղության այն տարիներում, երբ Վասպուրականն առանձնացած էր իր համար և լուռ, Խաչիկ-Գագիկը իր շինարարական գործունեության երկրորդ և ավելի մեծ շրջանը բոլորեց։

Թովմա Արծրունին, պատրաստվելով նկարագրել այդ երկրորդ շինարարական շրջանը, բերում է մի այսպիսի համեմատություն։ Ժլատ մարդիկ կան, որոնք պատրաստ են ավելի շուտ թույլ տալ, որ իրենց պարանոցը սրով կտրվի, քան մի դանգ արծաթ տալ։ Ժլատը բավական չէ, որ արեգակը ձրի է տալիս իր ճառագայթներն աշխարհին։ Ինչո՞ւ ոսկի չեն այդ ճառագայթները, որպեսզի նա, այդ ժլատը, հավաքի նրանց։ Կամ տեսնելով վճիտ ու սառն աղբյուրը, ասում է, ես ծարավ չեմ և երբեք քեզանից ջուր չեմ խմի, ինձ արծաթ տուր։ Իսկ Վասպուրականի հայոց թագավորն արծաթասիրություն բոլորովին չուներ։ Իր գանձերը տալիս էր գործավորներին և արհեստավորներին, որ շինություններ շինեն, զարդարեն երկիրը և ամենքը վայելեն բարիքները։ Շատ են Խաչիկ-Գագիկի շինությունները, բայց մեր պատմիչը հիացմունքով նկարագրում է երկու մեծ ձեռնարկություն, որոնք իսկապես Խաչիկ-Գագիկի փառքն են կազմում, այն է՝ Ոստանը և Աղթամարը։ Ոստանը, Ռշտունյաց գավառի այդ գեղեցիկ անկյունը Վանա լճի ափին, առանձնապես գուրգուրված է բնության հարուստ պարգևներով։ Նա շրջապատված է անուշահամ աղբյուրներով, ունի գեղեցիկ ծառաստաններ, իսկ Արտոս սարը, որ բարձրանում է նրա մոտ արևելքում, տալիս է բազմաթիվ ջրեր, կանաչ արոտներ։ Այսպիսով այս ծովահայաց գեղեցիկ տեսարանները նյութ են տալիս, որ մարդն էլ իր ստեղծագործող կարողությամբ մտցնի նրանց մեջ ճոխություն, դարձնի նրանց բարձր բանաստեղծական վայելքների մի կախարդիչ աշխարհ։ Գեղարվեստասեր թագավորը հենց այդ անկյունն էլ ընտրում է իբրև իր ուշադրության առարկա։ Ոստանում նա սկսում է հսկայական քարե աշխատանքներ։ Ծոփ ապարանք է շինում ամրոցի գագաթին այնպիսի դասավորությամբ, որ նա ամփոփում էր իր մեջ ծովահայաց տեսարանի բոլոր հրաշալիքները։ Բայց այս դեռ այնքան անսովոր մի մեծագործություն չէ։ Խաչիկ-Գագիկն առաջին արվեստագետն է, որ սկսում է նվաճել նաև ծովային խորությունները, մի երևույթ, որ եզակի պետք է համարել Հայաստանի պես մի երկրում։ Նույն Ոստանում նա, ահագին քարասալեր ընկղմելով լճի մեջ, կառուցում է քարափ, իսկ նրա վրա՝ մի ուրիշ զարդարուն ապարանք, ուր արվեստագետն արդեն ուրիշ, վերին աստիճանի նուրբ ըմբռնողության հաղթանակ է ներկայացնում։ Սենյակները, ասում է պատմիչը, օդավետ էին և բարձր, ունեին կամարակապ դռներ. բայց կային և առանձին «լուսանցույցներ», որոնք «շողախաղացներ» էին, այսինքն պատուհաններ կամ դրանց նման շինություններ, որոնց միջով սենյակներն էին թափանցում այն լուսեղեն խաղերը, որոնք գոյանում էին լճի ջրերի վրա, երբ արեգակն առավոտյան կամ մայր մտնելիս իր ճառագայթներն էր գցում նրանց վրա։ Լույսերի և գույների այս խաղերը հիացմունք էին պատճառում տեսնողներին։

Ավելի մեծ և դժվար ձեռնարկություն էր Աղթամարը։ Այս կղզու վրա Խաչիկ-Գագիկը կառուցեց մի ամբողջ քաղաք, որ նույն նպատակն ուներ, ինչ և նրա շինած բազմաթիվ բերդերը, այն է՝ ապաստարան դառնալ ժողովրդի պատերազմների և ավազակային հարձակումների ժամանակ։ Դրա համար նա շրջապատեց կղզին բարձր ու հաստ պարիսպներով, որոնց հիմքերը դրված էին ծովի անդունդների մեջ լցված քարակարկառների վրա։ Թովմա Արծրունին, համեմատելով այս ահագին ձեռնարկությունն այն շինությունների հետ, որոնք առասպելական Շամիրամին էին վերագրվում և իրապես ուրարտական մեծ թագավորների գործերն էին, ամենայն իրավունքով գտնում է, որ իր հերոսի ձեռակերտն ավելի բարձր և մեծավունքով գործ արվեստ է, որովհետև, ասում է, այդ հին շինությունները, օրինակ՝ ջրանցքը, միջնաբերդի ժայռերի մեջ փորված սենյակները թեև հիացուցիչ են, բայց հողի վրա են շինված, մինչդեռ Խաչիկ-Գագիկն իր պարիսպների համար հիմք էր բռնում ծովի խորքերում։ Մեր պատմիչը շատ երկրներ տեսած մարդ է, շրջել է համարյա ամբողջ Այսրկովկասը, Սև ծովի ափերից սկսած մինչև Կովկասի լեռնաշղթան, և հավատացնում է մեզ, թե ոչ մի տեղ այնքան վեհատեսիլ և հրաշագեղ շինություններ չի տեսել։ Պարիսպներն ունեին մեծ ու լայնանիստ աշտարակներ, որոնց մեջ շինված էին և զվարճատեղիներ, իսկ կղզում մեծ ժայռը ծածկված էր բուրաստաններով և ծաղկաստաններով։

[1] Եր. 412—413։

Բայց Աղթամար քաղաքի թագն ու պարծանքն էր այն աննման եկեղեցին, որ շինել տվեց Խաչիկ-Գագիկը։ Քարեր այդ շինության համար բերվեցին, ինչպես հավաստացնում է Թովմա Արծրունին, Աղձնյաց աշխարհից, երևի Բաղեշի շրջականերից, ուր Խաչիկ-Գագիկը նվաճում է այլազգիներին պատկանող մի բերդ, բնակիչներին կոտորում է մինչև վերջինը, իսկ բերդի քարերը նավերով փոխադրում է Աղթամար։ Ահա այս քարերից է, որ Մանուել ճարտարապետը հրաշակերտում է Աղթամարի ս. Խաչ վանքը։ Ներկայումս Խաչիկ-Գագիկի բոլոր շինարարական մեծագործություններից միայն այս վանքն է մնացել, մյուսները ոչնչացրել են մարդն ու ժամանակը։ Բայց որ այդ գործերը ժամանակին համարվել են չտեսնըված, հիացուցիչ գեղեցկություններ, այդ երևում է նույն պատմագիր Արծրունու հետևյալ խոսքերից, որոնցով նա սկիզբ է դնում նրանց նկարագրության. «Բայց ինձ ահա յոյժ սիրելի է աստանօր զբարձրագոյն իմն իրէ բուռն հարկանել, առ ի յիշատակ թողլով զկնի եկելոց, ևս և ի պարծանս տանն Արծրունեաց, յիշատակեալ զիմաստակիր խոհականութեան գործս մեծի արքային Հայոց Գագկայ, որ քաջութեամբ և աշխարհաշէն խաղաղասիրութեամբ հոգաբարձէր իբրև զհայր և խնամածու ի վերայ աշխարհիս Հայոց՝ որ և ի վերայ բարեխնամօղ զթութեանց որով զաղքատս զարմանէր, զգերեալս դարձուցանէր, զըրկեալս փրկէր, դատ առնէր որբոց և տայր իրաւունս արյեաց, և զայն ևս աւարտ և գլուխ դնէր ամենայն առաքինասէր վարուց, ևս և մեծի գովութեանց արժանաւոր, զոր և ես քեզ սիրելի քաջ և քաջի արանց նախնական, որ և զպատմութիւնս յինէն պահանջեցեր, ոչ իբրու յայլոց համբաւուց տեղեկացեալ ընծայեալ արձանացուցանեմ քեզ ստայօդ բանից պաճուճեալ առասպելս, այլ ականատես և ականջալուր, և իմով իսկ ձեռօք շօշափեալ՝ պատմեմ քեզ հաւաստապէս զեղելոցն զարմանս»[1]։

5. Նըսր և Բըշր։ Իր իշխանության մեջ վերահաստատվելուց հետո Յուսուֆը Հայաստան ուղարկեց, ոստիկանի կամ իր փոխանորդի պաշտոնով, Նըսր (Նասիր) անունով մեկին, որ դարձյալ Ըսբուք էլ էր կոչվում ինչպես առաջինը, որ Աշոտին Շահնշահի տիտղոս էր բերել, բայց որ հետո վախճանվեց Արդաբիլ քաղաքում։ Այս Նըսրը, անշուշտ, իրեն տված հրահանգները կատարելով, Հայաստան մուտք է գործում կեղեքումներով։ Գեղեցիկ առիթ տալիս էր այն ներքին դրությունը, որի մեջ այդ միջոցին գտնվում էր Սյունյաց մեծ նախարարական տունը։ Մենք տեսանք, որ այդ տան ավագ ճյուղը, այն, որ տիրում էր Սիսականում, ներկայացված էր չորս եղբայրներով՝ Սմբատ, Սահակ, Վասակ և Բաբգեն։ Երնջակ ամրոցի գրավումից հետո, երբ, ինչպես գիտենք, գերի տարվեցին չորս եղբայրների մայրը և Սմբատի կինը, Հայոց աշխարհում Աշոտ Երկաթի թագավորության սկզբին տիրած անիշխանության միջոցին, այս Սիսակյան տոհմը նորից վերադարձավ իր տեղը, գրավեց իր կալվածները, բացի Երընջակից, որ Յուսուֆը տվել էր Գողթն գավառի արաբ էմիրին։ Մյուս կողմից Յուսուֆը վերադարձրեց Սմբատ իշխանին նրա Սոփի կնոջը, որ իբրև գերի Պարսկաստանում էր գտնվում։ Այնուհետև Սյունյաց այս տունը հանգստվում է։ Բայց օգտվելով հարմար առիթից, գուցե հենց Յուսուֆի բանտարկությունից, չորս եղբայրները պատերազմ են սկսում Գողթնի էմիրի դեմ՝ Երնջակը, իբրև իրենց տոհմային կալված, ետ ստանալու համար։ Սակայն պատերազմն անհաջող է լինում, և եղբայրներից մեկը, Վասակը, սպանվում է։ Այնուհետև է, որ խռովություն է ծագում մնացած եղբայրներից երկուսի, Բաբգենի և Սահակի միջև, կալվածական հողի վրա, գուցե հենց սպանված Վասակի բաժինն առիթ դարձնելով։ Եվ ահա, երբ Նըսրը, Պարսկաստանից գալով Նախճավան, առժամանակ ուշացավ այդտեղ իր կնոջ պատճառով, Բաբգենը գնաց նրա մոտ, գանգատվեց Սահակի վրա, կարծելով, թե դրանով կարող է իր այդ եղբորը կորստի մատնել և նրա ստացվածքին տիրանալ։ Նըսրն իր մոտ կանչեց և Սահակին, կալանավորեց երկու եղբայրներին էլ և շղթայակապ իր հետ տարավ Դվին։ Մայրաքաղաքի բարձր դասակարգից մի խումբ մարդիկ գնացել էին դիմավորելու նոր ոստիկանին քաղաքից հեռու։ Նըսրը սրանցից էլ քառասուն հոգու ձերբակալել տվեց և ուղտերի ու ջորիների վրա բարձած՝ իր հետ Դվին մտցրեց։

Այս կոպիտ բռնությունները բացատրվում էին շատ պարզ կերպով, Յուսուֆի գանձարանը, նրա երկարատև բանտարկության միջոցին, դատարկվել էր. պետք էր այն հարստացնել նորից, իսկ այս կարելի էր անել այնպես, ինչպես մենք արդեն տեսանք Վասպուրականում—հարկեր գանձելով և ապօրինի կեղեքումներ կատարելով։ Հովհաննես կաթողիկոսն այդ միջոցին գտնվում էր Այրեվանք կոչված վանքում, Գառնիի մոտ (այժմ Գեղարդ)։ Կաթողիկոսին շրջապատողներն սկսեցին համոզել նրան, որ հեռանա այդտեղից մի ավելի ապահով տեղ, քանի որ բռնության հերթն իրեն էլ պիտի հասնե, և Նըսրը չպիտի զրկե իրեն հարմար առիթից՝ կաթողիկոսարանն էլ հարստահարությունների առարկա դարձնելու համար։ Եվ կաթողիկոսը, ընդհանուր ահաբեկման ազդեցության տակ, կատարում է շրջապատողների ցանկությունը և գնում է Սևանի կղզին։ Բայց այստեղ մտածելով, որ չի կարելի բռնավորի կամքին թողնել կաթողիկոսարանը, նա վճռում է ինչքան որ ավելորդ արժեքավոր իրեր կան՝ տալ Նըսրին և այդպիսով թույլտվություն ստանալ Դվինում վերաբնակվելու։ Այս մտքով բանակցություններ նա սկսում է, տեղափոխվելով Արագածի լանջերի վրա գտնվող Բյուրական գյուղը, ուր նա իր սեփական միջոցներով կառուցել էր մի փոքրիկ ամրոց և վանք։ Նըսրը համաձայնություն տալիս է և նույնիսկ կարգադրում է, որ երդման ուխտ գրվի։ Բայց իսլամ կրոնավորներից մեկը համոզում է նրան ոչ մի զիջում չանել կաթողիկոսին և մի ամբողջ գունդ կազմել՝ նրան բռնելու համար։ Այդ գունդը նախ հարձակվում է Այրեվանքի վրա, կողոպտում-ավերում է, միաբաններին կոտորում և ավարը տանում Նըսրին։ Այս լուրն առնելուն պես Հովհաննես կաթողիկոսը թողնում է Բյուրականը և փախչում Բագարան, Բագրատունյաց ոստանը, ուր այդ ժամանակ ապրում էր Աշոտ Շապուհյանը։ Իսկ Բյուրականը մատնվում է սոսկալի վիճակի։ Կաթողիկոսի հետ եղած Սահակ եպիսկոպոսը հիվանդության պատճառով փախչել չի կարողանում։ Նրա հետ մնում են և կաթողիկոսական եկեղեցու քահանաներն ու սարկավագները։ Երևի հենց սրանք էին, որ վճռեցին դիմադրել արաբներին, ուստի հավաքեցին գյուղում եղած այն բոլոր մարդկանց, որոնք զենք գործածել գիտեին, և ամբողջ գյուղը ամրանալով ամրոցիկի մեջ (ինչպես անվանում է ինքը պատմիչ կաթողիկոսը), սպասում է Նըսրի զինվորներին։ Սրանք գալիս են և պաշարում ամրոցիկը։ Բերդեցիները դիմադրում են յոթ օր մեծ հաջողությամբ։ Բայց այդ փոքրիկ միջավայրում գտնվում են մի քանի դավաճաններ,

[1] Թովմ. Արծրունի, եր. 290—291։

որոնք մատնում են ամրոցը, և կատաղած թշնամին, ներս խուժելով, սրի է քաշում Սահակ եպիսկոպոսին և մյուս հոգևորականներին, կոտորում է նաև ամրոցիկի պաշտպաններին և գյուղացիներից շատերին, թվով մոտ 200։ Իսկ բնակիչների մի մասը, որի մեջ և կանանց, գերի են քշում Դվին, տանելով իրենց հետ և սպանվածների գլուխները։ Սակայն Նըսրը մի անսպասելի դատաստան է անում—աղատում է գերիներին և գլխատել է տալիս այն վատերին, որոնք մատնել էին ամրոցը։ Բյուրականում կոտորվածները, անշուշտ հենց այն պատճառով, որ կաթողիկոսական դաստակերտի բնակիչներ էին, համարվում են նահատակներ կրոնի համար, և Հովհաննես կաթողիկոսը երկար մանրամասնություններով նկարագրում է նրանց սպանությունը։

Նըսրը, Յուսուֆի հրամանով մեկնելով Ատրպատական՝ այնտեղ ծագած մի ինչ-որ ապստամբություն ճնշելու համար, իր պաշտոնը ժամանակավորապես հանձնեց իր մոտ ծառայողներից մեկին, որի անունն էր Բըշր (Բեշիր)։ Սա իր համար գործ դարձրեց Աշոտ Երկաթի դեմ կռվել։ Եվ ահա Հայոց թագավորը մեր առջև երևան է գալիս մի տարօրինակ դրության մեջ։ Նա լքված է ամենքից, համարյա մենակ, իր հետ ունի հազիվ մի հարյուր մարդ թիկնապահ և ստիպված է փակվել Սևանի կղզում։ Լճի շրջականները, ասել է՝ ամբողջ Գեղարքունի գավառը, ավերված ու ամայացած են թշնամիների հարձակումներից, ազգաբնակության խղճուկ մնացորդներն են միայն երևում այս և այն կողմերում։ Ի՞նչ է պատահել—մենք չգիտենք։ Կաքավաքար բերդը փախչելուց հետո, Աշոտ Շահնշահի պատմության աչքից թաքնված է մնացել։ Եվ անկասկած, հզոր տակնուվրայություններ էին պատահել նրա կյանքի մեջ, որոնք, ի վերջո, բերել հասցրել էին նրան փախստականի այս դրության, մենացած մի փոքրիկ կղզում։ Այս տեսակ ցավալի բացեր քիչ չեն մեզ պատահում մեր պատմության ընթացքում, շնորհիվ այն հանգամանքի, որ մեր պատմիչները (և ներկա դեպքում մասնավորապես Հովհաննես կաթողիկոսը) շատ անգամ են տարվում երկրորդական և անարժեք մանրամասնություններով՝ գլխավորը մոռացության տալու համար։

Այսպես թե այնպես, Բըշրը գնում է Շահնշահին նվաճելու, որովհետև,— ասում է պատմիչը,— նա չէր ուզում հպատակվել Յուսուֆի մարդկանց։ Բայց մոտենալ թագավորին ջրերով լավ պաշտպանված նրա ապաստարանում, հեշտ չէր, և Բըշրը բավականություն ստանում էր քանդելով առանց այն էլ ամայացած երկիրը և հարձակվելով անզեն ու խաղաղ մարդկանց վրա։ Այդ շահատակություններին պատասխանելու համար ինքը Շահնշահը կղզուց չէր դուրս գալիս, բայց նրա խմբի մեջ գտնվող «պատվավորներից» (ինչպես անվանում է Հովհաննես կաթողիկոսը) մեկը, որի անունն էր Գևորգ[1], ցամաք էր անցնում մի քանի մարդկանցով և անձնական քաջության հրաշքներ էր ցույց տալիս։ Նա դես ու դեն էր թռչում, կայծակնահար հարձակումներ էր գործում Բըշրի մարդկանց վրա և հաղթություններ տանում իր շեշտակի և վերին աստիճանի հանդուգն հարվածներով։ Այսպես, մի անգամ, իր հետևում ունենալով մի քան մարդ, նա հան-

[1] Հովհաննես կաթողիկոսը, որ այս գրույցի միակ աղբյուրն է, չի հիշատակում, թե ո՛ր տոհմից էր այս Գևորգը։ Բայց Չամչյանը, հ. Բ, եր. 811, անվանում է նրան Մարզպետունի՝ հայտնի չէ, թե ի՛նչ հիման վրա։ Այսպիսի չափազանց ազատ և ինքնահաճ վերաբերմունք դեպի պատմությունը, տարաբախտաբար, շատ կա նրա հռչականուն գործի մեջ։

դիպում է Բըշրին մի ամբողջ գնդի հետ, որ մոտ հազար հոգուց կլիներ բաղկացած։ Նախ ետ է քաշվում, երկմտության մեջ ընկնելով, բայց հետո իր անվախ վճռականության վրա հենված՝ այդ մի բուռն մարդկանցով այնպիսի սաստիկ հարձակում է գործում, այնքան արագ և այնքան ուժեղ զենք է շարժում, որ թշնամին անկարգ ցրվում է ու փախուստի դիմում, թողնելով շատ սպանվածներ։ Բըշրն, այսքան ծաղրելի դրության մեջ ընկնելու վրեժը հանելու համար, բռնում է մոտ քսան հոգի անմեղ և անզեն մարդիկ—քահանա, խաշնարած, մշակ, մինչև իսկ մուրացկան, կտրում է նրանց գլուխները և տանում իբրև հաղթանակի նշաններ։ Երկրորդ անգամ ոստիկանն ավելի լուրջ պատրաստությամբ է դուրս գալիս Շահնշահի դեմ։ Պաշարում է Սևանի կղզին արևմտյան լճափից, կտրում է նրա հաղորդակցությունը ցամաքի հետ, նպատակ ունենալով անպատճառ բռնել այնտեղ ամրացած թագավորին։ Աշոտը պատասխանում է նրան խիզախ քաջության մի շատ խոշոր գործով, որ ահագին բարոյական ազդեցություն է անում պաշարողների վրա։ Պատրաստել տալով տասն և մեկ նավակ, նստեցնում է նրանց մեջ 70 ամենաընտիր և վարժված աղեղնավորներ, որոնց նետերը նույնիսկ մազից էլ չէին վրիպում, ինչպես ասում է Հովհաննես կաթողիկոսը։ Ինքն էլ անցնելով այդ նետաձիգների գլուխը, տանում է նրանց պատերազմի։ Մի տեսակ ծովային պատերազմ, որ, պետք է կարծել, այնքան էլ սովորական երևույթ չէր հայկական իրականության մեջ։ Նավակները սաստիկ նետաձգություն են սկսում։ Ինչպես երևում է, հայերը նշան առնում էին առավելապես Բըշրի մարդկանց աչքերը, որովհետև, պատմիչի ասելով, նրանցից շատերը միականի մնացին, շատերն էլ խոր խոցեր ստացան։ Եվ թշնամին, չկարողանալով դիմադրել ծովակից տեղացող մահաբեր տարափին, սարսափահար թողնում փախչում է։ Բըշրը ճանապարհին մտածում է հանկարծակիի բերել Գեղա անունով բերդը և գրավել այն՝ իր կրած այս անհաջողությունը փոխարինելու համար։ Բայց նրա բախտից պատահաբար այդ բերդն էր մտել այդ միջոցին քաջ Գևորգը։ Եվ ահա իր փոքրիկ խմբով նա դուրս է գալիս բերդից և ուժգին հարձակում գործում մեծ բազմության վրա։ Ինքը միաձի մենամարտելով, հասնում է Բըշրին, ջարդում է նրա ձիու ոտները։ Ոստիկանը հազիվ մի ուրիշ ձի է կարողանում նստել ու փախչել։

Այս միջոցին Պարսկաստանից վերադառնում է Նըսրը և նորից ստանձնում իր պաշտոնը։ Նըսրն էլ Սյունյաց Սմբատ իշխանի դեմ է արշավում։ Սակայն Սմբատը հանկարծակիի չի գալիս, այլ բավականաչափ հեծյալ և հետևակ զորք է հանում իր երկրի պաշտպանության համար։ Նըսրը, տեսնելով, որ դժվար պիտի լինի պատերազմական գործողություններ մղել ստեղծված պայմաններում, ավելի ձեռնտու է համարում դիմել հաշտության, որին Սմբատն էլ համաձայնություն է տալիս։ Պայմաններից մեկն էլ այն եղավ, որ Նըսրը պիտի արձակեր բանտարկված Սահակին և Բաբգենին, բայց ստանալով նրանցից փրկանք։ Եվ այսպես, Յուսուֆի ներկայացուցիչների ամբողջ ջանքն էր, որքան հնարավոր է՝ շատ խլել ու թալանել, գռփել ու կեղեքել։ Անողորմաբար վարվեց Նըսրը մանավանդ ամենայն Հայոց կաթողիկոսության հետ։ Բյուրականի կռվից հետո նա խլեց կաթողիկոսարանի ամբողջ շինությունը Դվինում, ինչպես և նրան պատկանող բոլոր գյուղերը։ Հովհաննես կաթողիկոսը, օգնության ոչ մի ճար չգտնելով, Աշոտ Շապուհյանի մոտ պատսպարված էր մնում, թեև

միշտ լավ վերաբերմունք էր գտնում նրա կողմից, բայց իր աթոռին վիճակված տառապանքները հանգստություն չէին տալիս նրան։ Ի վերջո նա, հետևելով իր հյուրընկալի խորհրդին, գնաց Վասպուրական, Խաչիկ-Գագիկի մոտ, որ վաղուց հրավիրում էր նրան։ Այնտեղ նա գտավ կատարյալ անդորրություն, իր աստիճանին համապատասխանող դրություն և պատիվ։ Բայց և այդպես, ծերունին չէր կարողանում մոռանալ իրեն վիճակված դառն զրկանքը և երազում էր տեսնել դարձյալ իր կաթողիկոսարանը։ Խաչիկ-Գագիկը աջակցություն էր խոստանում, որ կատարվի այդ տենչանքը և հավատացնում էր իր բարձրաստիճան հյուրին, թե նրա ակնկալությունն անպատճառ պիտի իրականանա։ Բայց այդ հույսերի մեջ էլ բազմատանջ ծերունին վախճանվեց և թաղվեց Վասպուրականում, ինչպես կարծում են, 929 թվականին։

Իր կյանքը պատմագիր կաթողիկոսը բոլորովին անսխալ կերպով բնորոշում է «հեգ և թշվառական» խոսքերով։ Նրա հետ Վասպուրական էր փոխվում և կաթողիկոսական աթոռը։ Հավանորեն հետևյալ տարին, այսինքն 930 թվին, վախճանվեց և Աշոտ Երկաթ Շահնշահը։ Իսկ նրանից հինգ տարի հետո, 935 թվին, մեռավ և Խաչիկ-Գագիկը։

6. Նոր դրություն: Որքան և դժնդակ լիներ Հայոց աշխարհի դրությունն այն րոպեին, երբ Հովհաննես կաթողիկոսը վերջ էր տալիս իր լալահառաչ պատմության, այդ անմխիթար ժամանակը, այնուամենայնիվ, հղի էր մի մեծ խորհրդով—նա բերում էր դրության արմատական փոփոխություն։ Արաբական տիրապետությունը վերջանում էր։ Նըսրը և Բըշրը վերջին ոստիկաններն էին և նրանց կեղեքումները վերջին օղակն էին կազմում արաբական ստրկության շղթաների մեջ։ Շատ ցավալի է, որ Հովհաննես կաթողիկոսի կամ Թովմա Արծրունու նման մանրապատում հեղինակներ չտվեց այս շատ կարևոր ժամանակամիջոցը, և մենք չենք կարող քայլ առ քայլ հետևել կատարված փոփոխության ընթացքին և հանգամանքներին։ Քսանհինգ և ավելի տարիների մի շրջան է այժմ եկել կանգնել մեր առջև, որի լուսաբանության համար մենք գրեթե չունենք ազգային աղբյուրներ։ Մնում է հետևել պատմական եղելությունների արտաքին ընդհանուր ընթացքին և նրա մեջ որոնել ուրվագծերն այն հանգամանքների, որոնք իրենց հզոր ազդեցությունն ունեցան նաև Հայաստանի ճակատագրի վրա, բերելով նրան փոփոխված դրություն, որ ամենից առաջ արտահայտվում էր մի տևական խաղաղության մեջ։

Պետք է նախապես նկատել, որ քաղաքական փոփոխությունը տեղի ունեցավ ոչ իբրև հետևանք այնպիսի աշխատանքի, այնպիսի շարժումների, որոնց կրակարանը լիներ Հայաստանը։ Այսպիսի մի դերի համար, ինչպես տեսանք, չափազանց թույլ և կազմալուծված էր այս երկիրն իր երեք հակաթոռ թագավորություններով։ Արտաքին հանգամանքներն էին գործում, ճակատագիր էին ստեղծում նրա համար, լավ թե վատ, և հայ ժողովրդի կամքն այստեղ ոչ մի նշանակություն չուներ։ Նրա բախտից էին, որ այդ հանգամանքները 10-րդ դարի երրորդ տասնամյակից բարեհաջող ընթացք էին ընդունում։ Վերցնենք հենց այն, որ Յուսուֆը, ինչպես պատմվում է, սպանվեց մի պատերազմի մեջ, չթողնելով, բարեբախտաբար, իր նման մեկին իր տեղ։ Եվ ահա խաղաղվեց Հայաստանը։ Հանգամանքների բերումով պակասեց կործանարար և գիշատիչ ուժը, և եթե նա այս անգամ հետք չէր թողնում իր հետևից, պատճառն այն է, որ բոլոր բռնությունների կենտրոնը

—արաբական խալիֆաթը—հանգամանքների հետևողական և բնական զարգացումով եկել-հասել էր այն դրության, երբ այլևս ոչ ոքի տիրել և մանավանդ ճնշել մեկին չէր կարող։ Այդ համաշխարհային վիթխարի ուժի անկումը, որ մենք շեշտեցինք շատ անգամ՝ սկսած 9-րդ դարի կեսից, մեր նկարագրած ժամանակաշրջանում այն աստիճանին էր հասել, որ բազմաթիվ նահանգներ ու աշխարհներ այլևս ոչինչ չէին վճարում խալիֆին, որովհետև ամենքն էլ անկախ էին դարձել։ Արաբական պատմությունն այլևս մի ուրիշ բան չէր, բայց միայն պալատական հեղաշրջումների հասարակության մեջ առաջացող հակահարվածների նկարագրություններ[1]։ Բաղդադի շրջականերն անգամ անկախ իշխանություններ էին ներկայացնում։ Մոսուլի մեջ հաստատվել էր և հետզհետե զորեղանում էր Համդանյան արաբական հարստությունը։ Արևմուտքում Ֆաթմայան հարստությունն էր ընդմիշտ խլում խալիֆաթից Եգիպտոսն ու Սիրիան, իսկ Արևելքում Թաբարստան աշխարհը, Կասպից ծովի հարավային ափերում (այժմ Մազանդարան) հարուցում էր Բուվեյհյան զուտ պարսիկ հարստությունը, որ իր պետության սահմանները տարավ մինչև Հարավային Պարսկաստան և նույնիսկ Բաղդադը նվաճեց, դարձնելով խալիֆին մի խաղալիք իր ձեռքում։

Ահա այս ընդհանուր տակնուվրայությունների մեջ Հայաստանի և Վրաստանի գավառական թագավորություններն էլ դադարում էին մյուսների նման հարկ վճարել խալիֆին[2], այսինքն՝ մտնում էին մի չնվաճված, բայց իսկական անկախության մեջ։ Բայց այս փոփոխությունը դեռ բավական չէր։ Նա առաջ էր քաշում մի ավելի կարևոր հարց, որ շարունակ կապված է եղել Հայաստանի ճակատագրի հետ։ Իր գրաված աշխարհագրական դիրքի պատճառով, բայց մանավորապես իր փոքրաթվության և քաղաքական թուլության հետևանքով, Հայոց երկիրը չպիտի կարողանար խուսափել մի այլ մեծ պետության ազդեցությունից, որ պիտի գար փոխարինելու արաբական ազդեցությանը, Ասիայի այս անկյունում։ Հարցն այն էր, թե ո՛վ պիտի լիներ արաբներին փոխարինողը։ Կործանվողն Աբբասյան խալիֆությունն էր, բայց ո՛չ իսլամն իբրև քաղաքական ուժ։ Խալիֆաթի բեկորներից կազմված համեմատաբար փոքր անկախությունները պատրաստ էին կռվելու հավատի պայծառության և տիրապետության համար։ Եվ ահա այս կացության հանդեպ կատարյալ բարեբախտություն էր Արևելքի քրիստոնյաների համար, որ խալիֆաթի այս օրհասական ջղաձգություններին զուգընթաց ուժեղանում և բարձրանում էր Բյուզանդիան։ Համարյա մի դարի շրջան է բացվում մեր առջև, երբ արևելյան մեծ կայսրությունը հասնում է իր քաղաքական ուժի գագաթնակետին։ Քրիստոնեության զենքը հաղթական է Արևելքի ո՛չ քրիստոնյա ազգերի մեջ, և այս մեծ իրողությունը կարող էր միայն օգուտ բերել Հայաստանին։ Կրկնակի հետաքրքրական է Հայոց պատմության համար Բյուզանդիայի այս փառավոր հարյուրամյակը, մանավանդ այն պատճառով, որ երեք մեծ հերոս հայ կայսրներ կան այդ շրջանում, իսկ բյուզանդական բանակի և նավատորմի բարձր հրամանատարության մեծագույն մասը հայերից է բաղկացած։

10-րդ դարի երկրորդ տասնամյակի վերջերից Կ. Պոլսի Մակեդոնա-

[1] Huart, „Histoire des Arabes“, Paris, 1913, t. I, p, 314.
[2] Sédilot, „Histoire des Arabes“, Paris, 1877, t. I, p. 256.

կան, կամ, ավելի ճիշտ, Հայկական հարստության արքունիքում կատարվեց մի փոփոխություն։ Կոստանդին Է Ծիրանածին կայսրը, որին, ինչպես տեսանք, նամակ գրեց Հովհաննես կաթողիկոսը, ամուսնացավ Ռոմանոս ճնավակալի աղջկա, բարեբարո և սիրող Հեղինեի հետ։ Դեռ երիտասարդ էր կայսրը, առանձին կառավարչական ընդունակություններ չէր ցույց տալիս, բայց դրա փոխարեն շատ գրասեր էր։ Ուստի կատարյալ հնարավորություն էր բացվում, որ մի ուրիշն էլ դառնա կայսրին գահակից, ինչպես որ սովորություն էլ էր Բյուզանդիայում, և իր վրա վերցնե կառավարության մի մասը։ Ծիրանածինին այսպիսի մի գահակից, հենց նրա ամուսնության տարուց (919 թ.) դառնում էր նրա աներ Ռոմանոսը։ Սա էլ հայ էր[1], ծագումով շատ խեղճ։ Վասիլ Ա կայսրը մի պատերազմի մեջ շրջապատվում է թշնամիներից և մահվան վտանգի ենթարկվում, բայց նրան ազատում է Թեոփիլակտոս Ավաստակտոս Լեկաբենոս անունով մի հասարակ զինվոր, ծագումով գյուղացի[2]։ Շնորհապարտ կայսրը նրան պատրիկ է անվանում, իսկ նրա որդի Ռոմանոսին Կ. Պոլիս բերել տալով, նավային զինվոր է դարձնում։ Այստեղից էր ահա Ռոմանոսը բարձրանում մինչև իր Ծիրանածինի փեսային թագակից լինելու աստիճանը։ Ռոմանոսը ուժեղ կամքի տեր մարդ էր, ուներ մի քանի առաքինություններ, որոնք գրավում էին մարդկանց, բայց ուներ և հրեշավոր բացասական հատկություններ, որոնք վերջիվերջո նրա դեմ հանեցին նույնիսկ նրա հարազատ աղջկան։ Այսպես նա կառավարեց կայսրությունը 25 տարի (919—944 թթ.)։ Ամբողջ այս ժամանակ Կոստանդին Է-ն հեռացված էր կառավարական գործերից։ Այս բավական չէր, Լեկաբենոսն աշխատում էր միանգամայն գահազուրկ անել Մակեդոնական տոհմը և հիմնել իր սեփական հարստությունը։ Այս մտքով նա իրեն գահակից դարձրեց իր որդիներին։ Եվ գուցե նրան հաջողվեր այս ձեռնարկությունը, բայց նրա աղջիկ Հեղինեն, Կոստանդինի կինը, այնքան շատ էր սիրում իր ամուսնուն, որ եռանդուն կերպով սկսեց պաշտպանել նրա իրավունքներն իր հոր դեմ։ Նրա հորդորներով էր, որ նրա երկու եղբայրները 944 թվին, երբ Ռոմանոսը հիվանդ պառկած էր, հանեցին նրան անկողնից և տարան մի վանքի մեջ փակեցին։

Ռոմանոս Լեկաբենոսի ժամանակ Մակեդոնական հարստության ձեռնարկած գործուն քաղաքականությունը մահմեդական Արևելքում առանձին զարգացում է ստանում և խոշոր հաղթական հաջողություններով պսակվում։ Զինվորական հուժկու արշավանքներ տեղի ունեցան 20—25 տարիների ընթացքում, որոնք ցույց տվին աշխարհին, թե հին հռոմեական ռազմական ոգին դեռ ապրում է բյուզանդացիների մեջ։ Այս արշավանքների գլուխ էր կանգնած պատերազմական հանճարով օժտված մի հայ, որ մեծագույնն է 10-րդ դարի զորավարների մեջ։ Հովհան Կուրկուաս[3] էր նրա անունը, որ-

[1] Հույն պատմագիրները թե սրան, թե ուրիշներին, որոնք բյուզանդական ծառայության մեջ մեծ անուն հանեցին, իսկապես հայ չեն անվանում, այլ արմենիկոս։ Այս անունն էր, երևի, հատկացված քաղկեդոնիկ հայերին՝ իրենց ազգակիցներից տարբերելու համար։

[2] Կարծում են, թե Ավաստակտոս համապատասխանում է հայկական Վաշտակ անվան, իսկ Լակաբենոս նույնն է, ինչ Գաբեղյան տոհմանունը։ Պետք է ասել, որ այդ մեկնությունները և համեմատությունները, որոնք Չամչյանի ձեռքով են սկիզբ առել և նույնիսկ հեղինակավորություն ստացել, մեծ մասամբ բռնազբոսիկ են։

[3] Ճիշտ վերոհիշյալ կերպով էլ Կուրկուաս անունը նմանեցվում է (դարձյալ Չամչյանի ձեռներեցությամբ) հայկական Գուրգեն անվան։

դի նույնպես Հովհաննես անունով զորավարի, որ հռչակվեց Վասիլ Ա-ի ժամանակ։ Այս երկրորդ Հովհաննեսը, որդին, պատմության մեջ առաջին անգամ հայտնի է դառնում իբրև հենց իր ազգակիցներին ընկճող։ Պոնտոսում ապրող հայերը մի ինչ-որ պատճառով ապստամբում են կայսրի դեմ և գրավում են Բաբերդը։ Հովհան Կուրկուասը ջարդում է ապստամբներին, կալանավորում և Կ. Պոլիս է ուղարկում նրանց պարագլուխներին։ Բայց այս մի շատ փոքրիկ դեպք է նրա գործունեության մեջ։ Ամբողջ 22 տարի (920—942) նա անդադար պատերազմներ էր մղում Ասիայում և կարողացավ վերականգնել հին բյուզանդական սահմանագիծը, որ արաբները երկար կռիվների միջոցով տարել հասցրել էին Հալիս գետին, իսկ այժմ այդ գիծը նորից գնում էր մինչև Եփրատ և Տիգրիս։ Կուրկուասին փառավորող խոշոր հաղթությունների մեջ առաջին տեղը գրավում է Մելիտինեի (Մալաթիայի) գրավումը։ Փոքր Հայքի այս շատ կարևոր առևտրական և ռազմական կենտրոնը նորից բյուզանդական սեփականություն դարձնելու համար հայազգի զորավարը ձեռնարկեց նախապատրաստությունների։ Գրավելով քաղաքի շրջակաները, նա այրեց և ոչնչացրեց բոլոր գյուղերը, ամենայն անգթությամբ բնաջինջ արավ ազգաբնակությունը և այսպիսով դրեց պաշարված Մելիտինեն մի անբնակ անապատի մեջ։ Քաղաքի արաբ էմիրը, որի անունն էր Աբու-Խաֆս, ստիպված եղավ հաշտություն խնդրել, և Կուրկուասը պատերազմական գործողությունները դադարեցնելու համար մի պայման դրեց, այն, որ Աբու-Խաֆսն իր զորքով միանա բյուզանդական բանակին՝ արաբների դեմ պատերազմը շարունակելու համար։ Էմիրը համաձայնություն տվեց և ազնվությամբ կատարեց իր խոսքը։ Զտեսնված մի բան էր, որ մյուսլիման արաբները միանային քրիստոնյա մի ազգի հետ՝ իրենց ցեղակիցների և կրոնակիցների դեմ։ Զարմանք պատեց մանավանդ Կ. Պոլսի բնակիչներին, երբ նրանք մի օր դուրս թափվեցին՝ Կուրկուասի հաղթական մուտքը տեսնելու համար։ Նրա հետևից գնում էին դաշնակից մելիտինեցիները, որոնք, ինչպես գրում է մի բյուզանդացի տարեգիր, «հաղթանակներ տանելուց հետո, բյուզանդացիների հետ միասին, հաղթական մուտք գործեցին մայրաքաղաքը, իրենց հետ տանելով գերի վերցրած հագարացիներին։ Անհավատ հագարացիների կործանման մի հրաշալի և անսպասելի նշան էր այս»[1]։

941 թվականին Կուրկուասը Սև ծովի ափին ջարդում է ռուսաց Իգոր մեծ իշխանի բանակը, որ նավակներով գնացել էր Կ. Պոլիսը կողոպտելու։ Այնուհետև նա նորից անցավ Մելիտինեի կողմը, որ Աբու-Խաֆսից հետո նորից անցել էր արաբների ձեռքը, բայց երկրորդ անգամ նվաճել էր Կուրկուասը Մելիոս141 անունով մի հայ զորավարի աջակցությամբ։ Առաջ տանելով իր արշավանքները, նա բյուզանդական իշխանությանը ենթարկեց Միջագետքի մի նշանավոր մասը, նվաճելով Դիարբեքիրը, Արզնը, Դարան, Մծբինը։ Հայազն զորավարը հասել էր իր փառքի գագաթնակետին։ Ամբողջ Բյուզանդիան պաշտում էր նրան իբրև հերոսի։ «Մեծ զինվոր Կուրկուասը,— գրում է մի այլ հույն մատենագիր,— ամեն տեղ հաղթությունների հուշարձաններ դրեց, ընդարձակեց հռոմեական սահմանները և քանդեց Հագարի որդիների անթիվ քաղաքները»[2]։ Հաշվել էին նրա վերցրած

[1] **Гельцер**, «Очерки Византийской Истории», СПБ, 1914, стр. 87.

[2] Ibid. стр. 88.

քաղաքներն ու այլևայլ տեղերը—դրանց թիվը հասնում էր հազարի։ Քանի կար Հովհան Կուրկուասը, Բյուզանդիան կարող էր ապահով լինել իր հարավային և արևելյան սահմանների համար, որովհետև նա պետության պատվարն էր։ Մանվել անունով մի հույն գրել է նրա մանրամասն կենսագրությունն ութ գրքի մեջ, բայց այդ աշխատությունը կորել է։

Բազմահռչակ զորավարի արժանավոր օգնականն էր նրա եղբայր Թեոփիլեսը, նույնպես իր տաղանդով, անխոնջ աշխատանքով և բարոյական առաքինություններով աչքի ընկնող մի մարդ, որին տվել էին «Արևելքի Սողոմոն» մականունը։ Նա Խաղտիքի պատրիկն էր և դուքսը, իր կյանքն անց էր կացնում ձիու վրա, գործում էր եռանդով ու անդադրում՝ իր եղբոր տեղապահը լինելու համար[1]։ Աչքի ընկնող ընդունակություններ էր ցույց տալիս և Կուրկուասի որդի Ռոմանոսը, որ հետո պիտի հանդես բերեր իր զորավարական տաղանդը։ Բայց մենք բազմաթիվ փորձերից գիտենք, որ բյուզանդական մթնոլորտի մեջ այսպիսի արտակարգ հռչակը հարուցանում է նախանձ և դավեր։ Հովհաննես Կուրկուասը չխուսափեց այդ վիճակից։ Դարձյալ միևնույն փորձված զրպարտությունն էր շշնջում պալատական ինտրիգի մեջ, այսինքն՝ թե հռչակավոր զորավարն ամեն պատրաստություն տեսել է՝ իրեն կայսր հայտարարելու և Ռոմանոսին գլորելու համար։ Լեկաբենոսն այս անգամ մեծ զգուշությամբ վերաբերվեց դեպի այն մարդու պատիվը, որ իր կայսրության փառքն էր կազմում։ Նա հատուկ գործակալներ ուղարկեց Ասիա, որոնք գաղտնի քննություն կատարեցին և հաստատեցին Կուրկուասի կատարյալ անմեղությունը։ Այն ժամանակ Ռոմանոսը, իր զրպարտված զորավարին վարձատրելու համար, կամեցավ ամուսնացնել Կուրկուասի Եվփրոսիմե աղջկան իր թոռն Ռոմանոսի հետ։ Բայց պալատական ինտրիգը կարողացավ արգելել այդ ամուսնությունը, հաղթանակ տարավ այդպիսով, և Կուրկուասը կանչվեց Կ. Պոլիս։ Բայց գնալուց առաջ Կուրկուասը, որ այդ ժամանակ նոր էր վերցրել Մծբինը, մի վերջին քաջագործություն ևս ցույց տվեց։ Ռոմանոս կայսրը շատ էր ուզում իր մայրաքաղաքում ունենալ Քրիստոսի դաստառակը կամ անձեռագործ պատկերը, որ իբր թե Քրիստոսն ինքն էր ուղարկել Աբգար թագավորին և որ պահվում էր Եդեսիա քաղաքում։ Կուրկուասը, պատերազմական գործողություններ սկսելով Եդեսիայի դեմ, հաշտության միակ պայման դրեց դաստառակն իրեն հանձնելը։ Միայն հայազգի մեծ զորավարի ահն էր, որ հարկադրեց եդեսացիներին զրկվել իրենց ըմբռնումով այդքան հռչակված և անզուգական սրբությունից և դաստառակն ուղարկվեց Կ. Պոլիս, ուր այն ընդունեցին արտակարգ հանդիսավորությամբ։

7. Աբաս Ա (930—952 թթ.): Հայաստանը բյուզանդական այս մեծ շարժումների ազդեցության շրջանից դուրս չէր մնում։ Դեռ Լևոն Իմաստունի ժամանակ Տարոնի մի մասը դարձել էր բյուզանդական սեփականություն, և այս հանգամանքը մերձավոր շփումներ էր ստեղծում Տարոնի Բագրատունիների և բյուզանդական արքունիքի միջև։ Այսպես, Գրիգորիս Բագրատունին հպատակություն էր հայտնում Լևոնին, հարկ էր ուղարկում նրան և պարգևներ ստանում նրանից։ Այդ հպատակությունը, սակայն, մնաց անվանական մինչև Ռոմանոսի ժամանակ, երբ այս Գրիգորիսի որ-

[1] Le Beau, „Historie du Bas Empire“, Paris, 1817, t. VII, p. 351.

դի Բագարատ իշխանը գնաց Կ. Պոլիս, ամուսնացավ կայսրի մի ազգականուհու հետ և ստանալով պատրիկի աստիճան, վերադարձավ իր երկիրն իբրև բյուզանդական հպատակ, որին շրջապատող արաբական աշխարհից պաշտպանում էր կայսրի տված խոսքը, թե ինքը միշտ կհովանավորի նրան և չի թույլ տա, որ ուրիշները բռնանան նրա վրա։ Հետևելով այս օրինակին, Բագարատի հորեղբորորդի Թոռնիկ իշխանը նույնպես գնում է Կ. Պոլիս՝ միևնույն պայմանով կայսրի հովանավորության տակ մտնելու համար։ Բայց նա վախճանվում է այդտեղ, իր կալվածները կտակելով կայսրին։ Նրա ամբողջ ընտանիքը տեղափոխվում է մայրաքաղաք, իսկ Վահանը, նրա եղբայրը, մնում է Տարոնում[1]։ Այս մոտիկ շփումները մի ամբողջ հոսանք են բաց անում Տարոնից Բյուզանդիոն, ուր սկսվում է տարոնցիների մի ամբողջ շրջան, երբ նրանք կարևոր տեղեր են գրավում բյուզանդական բանակի մեջ։

Իր կողմից էլ Բյուզանդիան, իհարկե, դեպի Տարոն էր առաջանում և իր այս գավառի ապահովության համար պատերազմական գործողություններ է տարածում նրա սահմաններից դուրս։ Մենք գիտենք արդեն, որ Վանա լճի արևմտյան ափը մինչև Բաղեշ, մի կողմից, և մինչև Արճեշ, մյուս կողմից՝ դուրս էր եկել հայերի ձեռքից և դարձել էր մահմեդական էմիրների սեփականություն (այսպես էին, օրինակ, Կայսիկները142)։ Այդ իշխողների հետ քաղաքական որոշ հարաբերություններ ստեղծելու համար էր, որ բյուզանդական զորքերը, թվով շատ մեծ, երևացին Վանա լճի արևմուտքում, Տավրոսի սահմանների վրա։ Նրանց առաջնորդում էր ինքը՝ Կուրկուասը, որ իրեն հատուկ համարձակությամբ պաշարեց Խլաթ քաղաքը և նրա բնակիչներին հարկադրեց հաշտություն կնքել, բայց այն պայմանով, որ նրանք իրենց մզկիթի մեջ կանգնեցնեն Քրիստոսի խաչը։ Այս կերպով նա նվաճեց և Բաղեշը։ Նրա եղբայր Թեոփիլեսն էլ Կարինն էր վերցրել, իսկ Բասենը Տայոց վրացական իշխանության տակ էր անցել, այնպես որ բյուզանդական կառավարությունը տեղի արաբական էմիրների հետ դաշնագրություն էր կնքում, որով Բասենում Արաքսից դեպի հյուսիս տարածվող երկրների վրա մահմեդականներն այլևս ոչ մի իրավունք չունեին[2]։

Ահա արաբա-բյուզանդական աշխարհի այս մեծ անցուդարձերի հետևանքով էր, որ Հայաստանում հաստատվում էր այն խաղաղ կացությունը, որ հիշեցինք վերևում և որը մոտ քառորդ դար տևեց։ Եվ այս միջոցին Շիրակում մենք թագավորած ենք տեսնում Աշոտ Երկաթի եղբորը, Աբասին, որ, ինչպես տեսանք, սաստիկ թշնամացած էր իր եղբոր հետ։ Թե ի՛նչ եղավ մյուս Բագրատունի թագավորը, այսինքն՝ Աշոտ Շապուհյանը, մենք չգիտենք։ Հաստատ է միայն այն, որ նրա թագավորությունը շարունակություն չունեցավ, այնպես որ Աբասն ընտանի հակառակորդ չուներ և իր անձի մեջ միացնում էր Արարատյան երկրի ամբողջ թագավորությունը։

Շատ քիչ բան գիտենք մենք և այս Բագրատունի չորրորդ թագավորի մասին, երևի, հենց այն պատճառով, որ նրա ժամանակ աշխարհն իրար չէր անցնում, խաղաղ էր։ Այս խոշոր հանգամանքի հետևանքով էր, որ Աբասի թագավորության միջոցին դարձյալ եկեղեցական կյանքը առաջնակարգ տեղ է գրավում, առաջ քաշելով հին վեճերը եկեղեցու ազգայնաց

[1] Չամչյան, հ. Բ, եր. 817։

[2] Le Beau, VII, p. 339.

ման շուրջը և ընդարձակելով կրոնավորական կազմակերպությունը։ Այս շարժումը մենք նկատի կառնենք իր տեղում։ Գալով Աբասին, ընդհանուր առմամբ նա իրեն ցույց տվեց իբրև իր նախորդների արժանավոր ժառանգ։ Դա մի քաջ և անխոնջ թագավոր էր, որի հոգսն էր գլխավորապես երկրի ապահովությունը և որը միաժամանակ լցված էր իր տոհմին հատուկ շինարարական պաշտամունքով։ Ամենից առաջ նա գեղեցիկ մի կանխատեսությամբ թողեց Երազգավորս կամ Շիրակավան գյուղը, որը լինելով դաշտային, չէր կարող լավ պաշտպանված թագավորանիստ մի տեղ դառնալ։ Նա տեղափոխեց իր գահը Վանանդի հռչակավոր Կարս բերդը։ Այստեղ նա կառուցեց մի հոյակապ մայր եկեղեցի, որ այսօր էլ կա և Կարսի միակ գեղարվեստական զարդն է կազմում։

Ստեփանոս Ասողիկը, որ Աբասի ժամանակակիցներից կարող է համարվել, իր «Պատմութիւն Տիեզերական» գործի մեջ նրա մասին գրում է հետևյալ կարճ, բայց բովանդակալից վկայությունը. «Խաղաղութեան և շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց, ըստ քաղցր բարուց իւրոց և ըստ քաջազօր զօրութեանն»[1]։ Իսկ այդ քաջության չափը ցույց տալու համար բերում է մի դեպք։ Հայաստանն այդ ժամանակ հաճախ ենթարկվում էր վրացիների, բայց մանավանդ ափխազների ասպատակություններին։ Վերջիններս այն ժամանակ Կովկասյան լեռների մյուս կողմումն էին ապրում։ Ահա այդ հրոսակային խոշոր արշավանքներին դիմադրում էր Աբասը մեծ հաջողությամբ։ Նրա անձնական թշնամին էր ափխազների Բեր թագավորը, որ իր ցեղի կոպիտ և վայրենի բարքերին միացնում էր և կրոնական մոլեռանդություն։ Լսելով Աբասի կառուցած եկեղեցու գովասանքը, Բերն արշավանք է գործում կրկնակի նպատակներ—ավազակային թալանը և կրոնական բարեպաշտությունը—միացնելու համար։ Իր մեծ բանակով կանգ առնելով Կուր գետի մոտ, նա գոռոզաբար պատգամ է ուղարկում Կարս, թե գալիս է՝ նորակառույց եկեղեցին քաղկեդոնական ծեսով օծելու համար։ Աբասն իր բանակը տանում է նրա դեմ և կանգ է առնում նրա հանդեպ, Կուրի աջ ափին։ Ափխազները մեծ բազմությամբ անցնում են գետը և ասպատակներ փռում։ Աբասը հարձակվում է նրանց վրա, ետ է մղում մինչև գետի մեջտեղը և մեծ կոտորած է անում, որի մեջ ինքն էր առաջամարտիկը և անձնական քաջություններ շատ ցույց տվեց։ Այնուհետև, անցնելով մյուս ափը, նա ցրում է թշնամու բանակը, Բերին գերի է բռնում և տանելով Կարս, ցույց է տալիս նրան իր կառուցած եկեղեցին և ասում է, որ լավ տեսնե, այդ այն եկեղեցին է, որ նա ուզում էր օծել իբրև քաղկեդոնիկ[2] Ապա հանել է տալիս նրա աչքերը։ Ափխազները գնում են իրենց կույր թագավորին և այնուհետև դադարեցնում են իրենց ասպատակիչ արշավանքները դեպի Հայոց աշխարհը։

Աբասի թագավորությունն այն անկյունաքարն է կազմում, որից Բագրատունյաց հարստությունը մտնում է մի այնպիսի իրավական դրության մեջ, որ կարելի է նմանցնել իսկական անկախության։

[1] Ասողիկ, Պետերբուրգ, եր. 171։

[2] Աբասի այս գեղեցիկ ձեռակերտին վիճակվեց մի շատ փոփոխական ճակատագիր։ Հայերի ձեռքից այն խլեցին Օսմանյան թուրքերը և դարձրին մզկիթ, 1877 թվին Կարսն անցավ ռուսներին, որոնք հայկական այդ տաճարը իրենց մայր եկեղեցին դարձրին։ 1918 թվին Կարսը նորից թուրքերին անցավ և ռուսաց մայր եկեղեցին նորից մզկիթ դարձավ։ Բայց հետևյալ տարին հայերը դարձան Կարսի տերը և մզկիթը իրենց եկեղեցին դարձրին։ 1920 թվին Կարսը նորից անցավ թուրքերին և աբասյան շինվածքն այժմ նորից մզկիթ է։

ԱՆԻԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. Աշոտ Դ Ողորմած (952—977 թթ.)։ Աբասին հաջորդեց նրա որդի Աշոտ Դ[1]-ն, որի առաջին գործերից մեկը եղավ փոխադրել թագավորական գահը Կարսից Անի ամրոցը143: Այս գաղափարն իրագործում էր Աշոտ թագավորը մի հանճարեղ շրջահայեցողությամբ և կանխատեսությամբ։ Անին Շիրակի ամենախոշոր կենտրոնն էր և նա՛ միայն կարող էր որոշ գույն հաղորդել Բագրատունյաց թագավորությանը, որոշ կնիք դրոշմել նրա կերպարանքի վրա։ Այս դերը չկարողացան կատարել ո՛չ Բագարանը, ո՛չ Երազգավորսը, ո՛չ էլ Կարսը, ուր փոխեփոխ հաստատվում էր թագավորական գահը։

Անին մինչև այդ մեր մատենագրության մեջ հիշատակվում է միշտ իբրև ամրոց, այն էլ անառիկ ամրոց։ Բայց այդ չի նշանակում, թե նա բաղկացած էր միայն զինվորական նշանակություն ունեցող շինություններից և պատերազմի պետքերին հարմարեցրած ամրություններից։ Իրավ է, Անին ուներ այդ բոլորը։ Ախուրյան գետի հսկայական ձորի և նրա մեջ թափվող Ծաղկաձորի ջրի ու խոր նեղ ձորի կազմած եռանկյունաձև տարածության վրա բարձրացած երկու ժայռոտ ու շատ դժվարամատչելի բլուրները, որոնք, բացի բնական ամրություններից, շրջապատված էին և պարիսպներով, միանգամից բավական էին, որ Անին անառիկ ամրոցի հռչակ ունենա։ Բայց այս ամրությունների շուրջը, դեպի հյուսիս տարածվող տափարակի վրա, Ախուրյանի արևելյան և արևմտյան համեմատաբար փոքրիկ ձորերի մեջ, ապրում էր մի ազգաբնակություն, որ բավականաչափ ստվարաթիվ էր՝ մի խոշոր քաղաք կազմելու համար։ Ահա այս քաղաքն էլ պիտի դառնար Բագրատունյաց թագավորության կենտրոնը։ Այսպես պահանջում էին նրա թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական շահերը։ Այս անհրաժեշտությունը, անշուշտ, զգացել էին և Աշոտի նախորդները՝ բայց իրագործելու բախտը վիճակվեց միայն սրան։ Խոշոր ձեռնարկությունները նախաձեռնող և վճռականությամբ օժտված բնավորություններին են տրված։

Տեղափոխությունը կատարելու համար նախապատրաստական աշխատանքներ էին հարկավոր։ Ամենից առաջ պետք էր ընդարձակել ամրոցը, որպեսզի նա պաշտպանողական ավելի մեծ միջոցներ ունենար։ Սրա համար միջնաբերդի մեծ բլուրի հյուսիսային ստորոտում փռված կիսաթեք հարթոցը, այնտեղ, ուր Ախուրյանի ձորի և Ծաղկաձորի միջև մի նեղ պարանոց է կազմվում, Աշոտը կտրեց ծայրեծայր հաստ և ամուր պարսպով, որի բուրգերն այնքան խոշոր էին, որ նրանց մեջ եկեղեցիներ շինեց[2]։ Կային և այլ շինարարական հոգսեր, որոնք նույնպես կապված էին նոր մայրաքաղաքի բարեզարդության և առաջադիմության հետ։ Այսպես, կար-

[1] Բագրատունի թագավորների թվարկության մեջ մենք չհետևեցինք մինչև այժմ ընդունված կարգին։ Սովորություն է հաշվի առնել միայն «օրինական» հորջորջվող թագավորներին, մինչդեռ օրինականությունը չպիտի խոսի, այլ թագավորելու փաստը։ Աշոտ Ողորմածը կոչվում է երրորդ Աշոտ, որովհետև հաշվի չէ առնվում Աշոտ Շապուհյանը։ Մենք ոչ մի հիմք չենք գտնում այս քմահաճ սովորությունը կիրառելու։ Ուստի Շիրակի և Վանանդի Բագրատունի բոլոր թագավորներին կենթարկենք թվահամարի։

[2] Վարդան Բարձրբերդցի, տպ. Մոսկվայի, եր. 122։

ծում են, որ Աշոտն է կառուցել արքունի պալատի մի քանի մասերը և, որ գլխավորն է, ջրմուղով ջուր է բերել քաղաքը[1]։

Եվ այսպես, Հայաստանի մեջ երևան էր գալիս մի նոր մայրաքաղաք, որ բացառիկ նշանակություն պիտի ստանար հայ ազգի պատմության մեջ։ Այս տեղափոխությամբ սկսվում էր ոչ միայն Բագրատունյաց թագավորության, այլև հայ պատմական կյանքի անիական շրջանը, մի ինքնատիպ շրջան, որ չուներ մասնավոր, գավառական, ոչ նույնիսկ նեղ հայկական բովանդակություն, թեև միաժամանակ նա, անձուկ առումով, գերազանցորեն գավառայնության կնիք էր կրում իր վրա, որովհետև այդ ժամանակից է, որ գավառական թագավորությունների Հայաստանն ավելի ևս մանրանում է, բազմացնելով իր գավառապետ թագավորների կամ, պարզապես, անկախ իշխանների թիվը։ Այսպես, Աշոտի եղբայր Մուշեղը մնաց Կարսում և, օգտվելով այն հանգամանքից, որ իր հայրն այնտեղ թագավորական գահ էր հաստատել, իրեն հայտարարեց նրա ժառանգ, և այսպիսով թագավոր նստեց Աշոտի կողքին, որը չդիմադրեց այդ բանին, քանի որ Մուշեղը նրան կատարյալ հպատակություն խոստացավ։ Անիի թագավորները, իբրև Աշոտ Երկաթի հաջորդներ, շարունակեցին կրել նրա Շահնշահ կամ Շահանշահ տիտղոսը, որ և բավական էր համարվում ցույց տալու համար, որ եթե Հայաստանում շատ թագավորներ կան, դրանցից մեկն է միայն, որ այդ բոլոր թագավորների թագավորն է, և դա այն է, որ նստում է Անիում։ Այս տիտղոսը, որ մեծափառ էր, տիեզերական հմայք դարձած մի ժամանակ, երբ նրանով պարծենում էին Պարսկաստանի աշխարհակալ և ահարկու թագավորները և որ հայերից միայն Տիգրան Մեծին և նրա ժառանգներից մեկին էր վիճակվել իբրև բարձրագույն վեհապետական փառք, այժմ, միջնադարյան հայ իրականության մեջ, չափազանց համեստ բովանդակություն էր ստացել, բայց և այդպես, դարձյալ պետական կազմակերպության լիակատար արտահայտություն էր դառնում անիական շրջանի մեջ։ Ամենից առաջ նա նշանակում էր կատարյալ անկախություն և գահերեցություն ավատական թագավորների շրջանակում։ Ինչպես Աշոտի հայր Աբասը, այնպես էլ ինքն Աշոտն ու նրա ժառանգները միանգամայն ինքնագլուխ էին տիրում, կարող էին իրենց ինքնուրույն քաղաքականությունը զարգացնել, նրանց Հայաստանը չէր հպատակված ոչ մի ուրիշ պետության, հարկ չէր տալիս ոչ ոքի։ Այս կողմից Անիի Բագրատունիների դրությունը նույնիսկ ավելի բարձր էր, քան Հռոմի և Պարսկաստանի մշտական մրցումներին ենթարկված հայ Արշակունիների դրությունը։ Բայց և այդպես, Անիի Բագրատունիները, հայ Արշակունիների նման, չունեին իրենց սեփական դրամները, գոնե մինչև այժմ ոչ մի հետք չի գտնվել, որ ցույց տար, թե Բագրատունյան դրամներ, այո՛, եղել են։

Այս հանգամանքը մեզ պիտի առաջնորդի դեպի մի այլ ըմբռնում։ Չի կարելի ասել, թե քաղաքականորեն միանգամայն արհամարհելի էր Անիի Բագրատունիների ուժը։ Այն ժամանակի մասին է մեր պատմագիրներից մեկն ասում. «Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի Վասպուրականի սահմանն և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման»[2]։

1 Թ. Թորամանյան, «Անի քաղաք, թե՞ ամրոց» («Ազգագրական Հանդէս», XXIII գիրք, եր. 5)։

2 Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն Տանն Սիսական», Թիֆլիս, եր. 300։

Այս տարածությունը փոքր չէր մի ինքնուրույն թագավորության համար։ Մենք տեսանք Բագրատունյաց տոհմի վարչական և ռազմական ընդունակություններ, տեսանք, որ թուլամորթությունը կամ նույնիսկ անվճռականությունը չէր նրան բնորոշող հատկությունը, որ քաջության և տոկունության կողմից որդին հոր արժանավոր հաջորդն էր։ Այսպես են, շատ աննշան բացառությամբ, և այն թագավորները, որոնք հաջորդեցին Աշոտ Գ-ին։ Մենք տեսնում ենք, որ Հայաստանի թագավորների և իշխանների կատարյալ համաձայնության ժամանակ Անիի Շահնշահի տրամադրության տակ գտնվում էր մի շատ պատկառելի զինվորական բանակ, որի քանակը մեր պատմական աղբյուրների մեջ որոշված է մինչև 80 հազար հոգի[1]։ Բայց և այնպես, Անիի թագավորությունը մի զինվորական պետություն չդառավ և դառնալ չէր էլ կարող։ Քաղաքականապես նա, այնուամենայնիվ, թույլ էր։ Եվ սխալ կլիներ առհասարակ այդ թագավորության նշանակությունը որոնել արտաքին փայլի, ուժով ամրապնդված միջազգային հեղինակության մեջ։ Որովհետև այդ ժողովուրդը զինվոր ժողովուրդ չէր, ավատական ազնվականության գիշատիչ տենչերով ապրող ժողովուրդ չէր։ Անին ներկայացնում էր միջնադարյան նոր ծլող իրականությունը —քաղաքային կուլտուրան։ Նա զարգացնում էր և կարող էր զարգացնել միայն խաղաղ աշխատանքի—առևտրի, արհեստների և արդյունագործության քաղաքականությունը, այսինքն՝ զինվորական-հափշտակողական քաղաքականության ներհակությունը, և այս տեսակետից նա գուցե միակ օրինակն էր Առաջավոր Ասիայում։ Եվ զորքը, բերդերը հարկավոր էին նրան լոկ ներքին համերաշխությունը պահպանելու, լոկ խաղաղ աշխատանքը հովանավորելու համար։ Երկիրն ապրում էր իր կենտրոնով, որ Շիրակն էր, իսկ այս կենտրոնը բռնված էր շինարարական հարատև տենդով և այս ընդարձակ գործունեության համար նրան հարկավոր էին նյութական խոշոր միջոցներ, որոնք ձեռք էին բերվում ոչ թե զինված ավարառություններով, այլ «հալալ» աշխատանքով։ Այս տեսակ աշխատանքի պարծանքը Շիրակի ժողովուրդը վաղ ժամանակներից ցուցադրում էր քարերի վրա փորած իր արձանագրությունների մեջ։

Աշոտ Գ-ն հասարակական այս ամբողջ շարժման ուժեղ արտահայտությունն էր ներկայացնում՝ Անիին մայրաքաղաքի դիրք տալու խոշոր գործով։ Մեր տեսությունն արդարացնում է Անանիա Մոկացին, Հայոց կաթողիկոսը, որ իրեն շատ մոտիկ եղած Աշոտ թագավորին բնորոշում է հետևյալ նկարագրությամբ։ «Եւ յաջորդէ զաթոռ թագաւորութեան նորին [Աբասի] որդի տէր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան, հանճարեղ և իմաստուն. այր գեղեցկատեսիլ, կրօնաւորասէր և ուղղափառ, ահարկու աւազակաց և չարագործաց և սիրիչ որբոց, և թագ պարծանաց սրբոյ կուսաւորչի աթոռոյ։ Մանաւանդ՝ զոյ ասել թէ ի վեհ շառաւիղէ զարմանալի պտուղ և հօր աքանչելոյ որդի զարմանալի, պարապեալ մտօք յաստուածային դասիցն, համօրէն մարմնովն ամենևին վայելուչ և կրկին խաղաղասէր։ Վասն զի շարժեաց, սանձեաց, նահանջեաց զարտաքին թշնամիս յիւրաքանչիւր կարգի։ Եւ ի խաղաղութեան Աստուծոյ սկսաք աշխատասէր կամօք ելանել ի խնդիր կորուսեալ ոչխարին, ուսեալք յընտանի բնութենէ թէ վաստակ մտաց ունի

1 Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, եր. 17։

զարմատ բանի և աշխատութիւնն է գիտիցն խնդիր»[1]։ Այս ոգեշունչ ներբողը միաժամանակ մի շատ լավ վկայություն է, թե ի՛նչ վերաբերմունք ուներ Հայոց եկեղեցին դեպի թագավորը, որ նույնպես շատ բնորոշ է։ Բագրատունյաց թագավորությունն էլ ընդգրկում էր այն եկեղեցական քաղաքականությունը, ինչ գոյություն ուներ հայ Արշակունիների ժամանակ, ինչպես այս կբացատրենք իր տեղում։

Անիի թագավորության կատարած մի կենտրոնացնող գործն էլ այն եղավ, որ ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը Վասպուրականից տեղափոխվելով Շիրակ, հաստատվեց Արգինա գյուղում, լքելով այսպիսով և իր հին աթոռանիստ Դվինը144, որ գտնվելով Բագրատունյաց թագավորության սահմանագլխի վրա, հաճախ անցնում էր հարևան Գողթնի, ինչպես երբեմն և Ատրպատականի արաբ էմիրների իշխանության տակ։ Այդ էմիրները, դառնալով տեղական մանր տերեր, այլևս չէին կարողանում նվաճողական ձգտումներ սնուցանել իրենց մեջ ամբողջ Հայաստանի նկատմամբ, ուստի նրանց և Բագրատունիների միջև հաճախ ծագում էին սահմանային կռիվներ, և Հայոց հին մայրաքաղաքը ձեռքից ձեռք էր անցնում։ Կաթողիկոսական աթոռն ամուր պատվանդան էր գտնում հայկական ապահով հողի վրա, Անիի կողքին։ Այս մերձավորության վրա հենված, հայ հոգևորականությունը հարձակողական քաղաքականություն սկսեց ազգային եկեղեցու հակառակորդների դեմ։ Այսպես, Անանիա Մոկացի կաթողիկոսն անձամբ գնաց Սյունիք և Աղվանից երկիրը, որոնք ձգտում էին դուրս գալ ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասությունից, բայց որոնք հարկադրված եղան նորից հպատակվել նրան։ Իսկ երբ Անանիայի հաջորդած Վահան կաթողիկոսի վերաբերմամբ կասկածներ ծագեցին, թե նա հարած է քաղկեդոնականության, տեղի ունեցավ մի երևույթ, որին մենք մի անգամ ականատես եղանք 7-րդ դարում — Անիում գումարվեց եկեղեցական ժողով, որ հրաժարեցրեց նրան աթոռից, և այս որոշմանը իր հավանությունն էր տալիս Աշոտ թագավորը։

Հայոց նոր մայրաքաղաքի նվիրագործումը տեղի ունեցավ Աշոտ Գ-ի թագավորելուց յոթը տարի հետո, 961 թվին։ Այդ կատարվեց նրա օծման հանդեսի միջոցով, որ համազգային բնավորություն ստացավ։ Աղվանից աշխարհից եկան Փիլիպպոս թագավորը, Հովհաննես կաթողիկոսը 40 եպիսկոպոսներով և զորքը։ Իր ներքին քաղաքականության մեջ Աշոտն իր երկարատև կառավարման ընթացքում զբաղված էր բարեկարգություններով։ Իսկ նոր մայրաքաղաքը և առհասարակ իր երկիրը նա գեղեցկացրեց, անշուշտ, և այլ շինություններով ու տնտեսական ձեռնարկություններով, որոնք մեզ չեն հասել և հիշատակություն չեն գտել գրավոր աղբյուրներում։ Բայց թե նրա ժամանակ ո՛րքան մեծ էր հայ երկրի շինարարական ուժը, ցույց է տալիս Հաղպատի ս. Նշան հռչակավոր վանքը, հայ արվեստի այդ խոշորագույն կոթողը, որ շինել է (967 թ.) Աշոտի ամուսին Խոսրովանուշ Հայոց տիկինը[2]։ Նույն տիկնաց տիկինն էր, որ տասը տարի առաջ շինել էր Սանահնի նույնպես հռչակավոր վանքը։ Այսքան ծաղկած երկրում Աշոտն առանձին ուշադրություն էր դարձնում և կրոնական-բարեգործական հաստատությունների զարգացման վրա։ Բագրատունյաց թագավորությունը ծածկըվել էր վանքերի ու եկեղեցիների ցանցով, որ լիուլի չափերով ներկայացնում էր միջնադարյան կուլտուրան և համայնական հասկացողությունները։ Այս հասկացողությունների հանդեպ էլ Աշոտն իր ժամանակի և երկրի առաջին մարդն էր։ Նա շինեց ուրկանոցներ՝ բորոտներին և այլ նմանօրինակ հիվանդություններով (մաշկի) տառապող թշվառներին պատսպարելու համար։ Ինքն էլ անձամբ խնամում էր նրանց և այս գործի մեջ այնքան մեծ ուշադրություն և եռանդ էր ցույց տալիս, որ ամբողջ զրույցներ էին կազմվում թագավորին, իբրև աղքատասեր, փառաբանելու համար։ Այսպես, Ասողիկը մանրամասն պատմում է, թե ինչպես Աշոտը միշտ մեծարում էր իր պալատում զանազան տեղերից հավաքած կույրերին, կաղերին, վերքերով պատած ախտաժետներին։ Դրանք նրա պատվավոր հյուրերն էին, որոնց իր բարձակիցը դարձնելով, ամեն մեկին հատկացնում էր պատվի մի անուն, օրինակ՝ «իշխանաց իշխան», «իշխան», «կյուրապաղատ», և այդ հորջորջումներով էլ դիմում էր նրանց ու զվարճանում նրանց հետ։ «Կարմիր քոսը և վերքերը, — ասում է պատմիչը, — նա համարում էր զարդերին և պատվական ակներին փոխարինողներ»։ Իր արքայական բաժակով էր գինի խմեցնում, ապա նույն այդ բաժակով ինքն էր խմում[1]։ Անկասկած, չափազանցության մեջ է ընկնում նույն պատմիչը, երբ այդ նկարագրության հարակցում է, թե իր անչափ աղքատասիրությամբ և առատաձեռնությամբ նա դատարկեց իր գանձարանը, այնպես որ, երբ մեռավ, մի հատ փող չէր մնացել այնտեղ։ Որ Աշոտը հայերի մեջ իր նմանը չուներ իբրև բարեգործ և աղքատասեր, այդ ցույց է տալիս հենց այն, որ նա ստացել էր Ողորմած անունը, բայց դա մի այնպիսի բարեգործ չէր, որ պետական կարիքները մոռացության տար՝ իր աղքատների և ախտաժետների հետևից ընկնելու համար։ Հարկը պահանջած ժամին Աշոտն իջնում է պատերազմի դաշտը։ Հիշատակվում է Կովկասյան լեռներից եկած հրոսակներին ջարդելն ու ետ դարձնելը։ Միևնույն հաջողությամբ այս Ողորմած թագավորը կռվեց և Համդուն անունով էմիրի դեմ, որ Աղձնյաց աշխարհի կողմից էր մտել Հայաստան, բայց ստիպված եղավ վերադառնալ՝ իր կրած ջարդի հետևանքով[2]։

2. Աշոտ և Չմշկիկ։ Աշոտի ժամանակ Բյուզանդիայում ավելի ևս զարգացան այն գոռ պատերազմական գործողությունները, որոնց թատերաբեմ էր հանդիսանում արաբա-բյուզանդական սահմանագլուխը և որոնք, մեկը մյուսից փառավոր հաղթանակներ պատրաստելով քրիստոնեական զենքի համար, դրանով այնքան նպաստավոր քաղաքական միջավայր էին ստեղծում և հայ պետության համար։ Այս միջոցին, Աշոտի օրով, այդ արաբա-բյուզանդական ռազմադաշտում մեծ հռչակով պսակվում էին մի շարք հայ հերոս զորավարներ, որոնցից երկուսը կայսր նստեցին և դարձան Բյուզանդիայի մեծագույն ինքնակալների փառակից։ Սրանցից մեկն էր Նիկեփոր Փոկաս, որին եվրոպական նորագույն պատմագրության մեջ նվիրված է մի ամբողջ հատոր[3], բայց որը բյուզանդական համառոտ պատմագրության մեջ էլ ունի իր տեղը՝ «մեծ կայսր», «հերոս կայսր» և այլ այսպիսի հորջորջումներով։ Այս հռչակավոր պատերազմողի հետ անբաժան

[1] «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» («Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1897, եր. 140)։

[2] Վարդան Բարձրբերդցի, եր. 122։

[1] Եր. 180—181։

[2] Մատթէոս Ուռհայեցի, տպ. Վաղարշապատի, եր. 3։

[3] Gustave Schlumberger, „Un Empereur Byzantin au Dixième Siéclé Nicephore Focas“, Paris, 1890.

կապված է, բայց նրանից ավելի շատ հռչակված, մյուս հերոսը, որի անունն էր Հովհաննես։ Կուրկուասների հռչակավոր տոհմից էր նա սերում, լինելով Թեոփիլոսի թոռը։ Ծնվել էր 924 թվին Փոքր Հայքի Հիերապոլիս քաղաքում, մոր կողմից Նիկեփոր Փոկասի հետ մերձավոր ազգակցություն ուներ։ Բյուզանդական պատմագիրները մանրամասն նկարագրել են այս երկրորդ հերոսի դիմագծերը համակրելի գույներով. բայց ավելի համակրելի էին նրա հոգեկան բարեմասնությունները։ Շեկ մազերով և երկնագույն աչքերով մի մարդ էր դա, վայելչակազմ, բայց կարճահասակ, և այս պատճառով հայերը տվին նրան Չմշկիկ անունը, որ և գործածական դարձավ ոչ միայն հոռոմների (Ցիմիսես ձևով), այլև արաբների մեջ (Շումուշքեկ)։ Հենց այս անունից էլ Հիերապոլիս քաղաքն ստացավ Չմշկածագ անունը, որը գոյություն ունի այսօր էլ և որը, ոմանց բացատրությամբ, նշանակում է «Չմշկիկի ծագման տեղ» կամ ծննդավայր[1]։ Բացի Չմշկիկ անունից՝ հայ պատմագիրները (մանավանդ նրա ժամանակակից Ասողիկը) անվանում են նրան և «Կյուռ Ժան», որ համարվում է հունական «Քիրիե Ցանի» (Տեր Հովհաննես) բառերի աղավաղված ձևը[2]։

Եթե այս երկու մեծ զորավարները, Փոկաս և Չմշկիկ, կարողացան ասիական խուլ անկյուններից բարձրանալ մինչև կայսերական գահը, այդ, ինչպես առիթ ունեցանք շատ անգամ տեսնելու, մի սովորական երևույթ էր Բյուզանդիայում հաստատված կարգերում։ Մնում է, որ մենք հիշատակենք, թե ի՛նչ տեսակ ողբերգական հանգամանքներ գործեցին այս անգամ՝ երկու բարեկամների համար այդ ընթացքը փութացնելու ճակատագրական շարժման մեջ։ Կոստանդին Ծիրանածինը (Պորփիրոգեն) ուներ Ռոմանոս անունով մի որդի, այլասերման և ոճրագործ անխտրականության մի հազվագյուտ տիպար, որ «Աստծու ողորմությամբ» թագավորների իրավունքով պիտի գահ բարձրանար՝ միլիոնավոր մարդկանց ճակատագիրն իր ուզածի պես կարգադրելու համար։ Հենց այն հանգամանքը, որ նա ամուսնացավ 5 տարեկան հասակում և 10 տարեկանում այրիացավ, ցույց է տալիս, թե մարդկային այլասերման ի՛նչ արտակարգ օրինակ էր նա։ Այրիանալուց հետո նա անձնատուր է լինում անսանձ զվարճությունների և իր անառակ կյանքը պսակում է՝ սիրահարվելով մի գինեվաճառի աղջկա վրա, որի հետ էլ ամուսնանում է, որովհետև Կոստանդինը շատ թույլ մարդ էր և չկարողանալով դիմադրել որդու ցանկության, բավականացավ միայն նրանով, որ երբ իր հարսը մտավ Բյուզանդիոնի կայսերական Սուրբ Պալատը, փոխեց նրա գինետան անունը և անվանեց Թեոփանո։ Բայց հարսը շուտով սկսեց ձանձրանալ, որ Ծիրանածինը չի մեռնում, իսկ ինքը շատ է ուզում կայսրուհի դառնալ։ Ուստի նա սովորեցրեց իր ամուսնուն սպանել հորը և թագավորել նրա տեղ։ Ռոմանոսը թույն խմեցրեց հորը և որպեսզի Սուրբ Պալատում գինեվաճառի աղջիկը մենակ թագավորե, իր հինգ քույրերին փակեց վանքի մեջ։ Մայրը, Հեղինեն, հազիվ կարողացավ աղաչանքներով ազատվել նույն վիճակից։

Ռոմանոս Բ-ն միայն չորս տարի թագավորեց։ Թեոփանոն շուտով ուրիշ ցանկություններով տարվեց։ Ասիական ռազմաբեմում, արաբների դեմ մղած պատերազմների մեջ, աստղի պես փայլել սկսեց մի մեծ հերոս, հայազգի Նիկեփոր Փոկասը, որի զինակիցն էր Չմշկիկը և որ նրա մոտիկ ազգականն էր մոր կողմից։ Ահա այդ հերոսին վայելելու ցանկությունն էր տոչորում Թեոփանոյին։ Նա նամակներ էր գրում Նիկեփորին, իր հիացմունքն արտահայտում և ցանկություն հայտնում, որ նա կայսր դառնա։ Եվ հերոսը, հղփացած իր փայլուն հաղթանակներով, տարվում էր կայսր դառնալու մտքով։ Այդ հնարավորությունը բացվեց նրա առջև, երբ Ռոմանոս Բ-ն մեռավ, ինչպես կարծում են, իր կնոջ խմեցրած թույնից։ Բայց այստեղ նրա առջև մի մեծ խոչընդոտ կանգնեց։ Նրա հակառակորդ Բրինգասը, որ պալատի մեջ ահագին ազդեցություն ուներ և պետության առաջին մարդն էր, նամակներ գրեց Չմշկիկին և Ռոմանոս Կուրկուասին[1], առաջարկում էր նրանց սպանել Նիկեփորին և խոստանում էր ի վարձատրություն նշանակել Չմշկիկին բյուզանդական արևելյան ամբողջ բանակի ընդհանուր հրամանատար։ Չմշկիկը վրդովվեց այս առաջարկությունից և, հարկադրելով Նիկեփորին անպատճառ ընդունել կայսրությունը, բանակի գլուխ անցած՝ տարավ նրան Կ. Պոլիս և հաստատեց գահի վրա (963 թ.)։ Նոր կայսրն իսկույն ամուսնացավ Թեոփանոյի հետ, և սկսվեց բյուզանդական պատմության մեջ մի փառավոր թագավորություն, լցված մեծամեծ հաղթանակներով։ Հայազգի հերոսը, կայսր դառնալուց հետո էլ, չմոռացավ պատերազմական դաշտը, և նրա անձնական ղեկավարությամբ Ասիայի հողի վրա տեղի ունեցան մեծ պատերազմներ, որոնք անփոփոխ բյուզանդական զենքի օգտին էին վճռում դարավոր արյունոտ մրցումներն արաբների հետ։ 964—965 թվականներին նվաճում էր Կիլիկիան, որի գլխավոր քաղաքները, համառ դիմադրությունից հետո, բաց էին անում իրենց դռները հաղթողների առջև։ Բյուզանդական այդ ահեղ բանակի միջուկը կազմում էին հայերն ու վրացիները[2]։ Արևելքի բոլոր ուժերի գլխավոր հրամանատարն էր Հովհաննես Չմշկիկը։ Ահա ինչպես է սրան ներկայացնում ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ Շլյումբերժեն իր մանրամասն կենսագրությունների մեկի մեջ։

«Այս միջոցին անգործ չէր և Չմշկիկը։ Կռիվը Կիլիկիայում անընդհատ և արյունահեղ էր 964 թվի ամբողջ ձմեռը, անվեհեր դոմեստիքոսը (հրամանատարը) սակավաձեռն զորագնդով մեծ քաջություններ գործեց»։ Ժամանակակից տարեգրողների ժլատ տեղեկությունների հիման վրա դժվար է մի շարահարյալ պատմություն տալ այս կռիվների մասին, որոնք ասպատակությունների, պաշարումների, ամրոցներ ու քաղաքներ առնելու և այրելու մի ամբողջ շարք են։ Մեծ պատերազմ տեղի ունեցավ Մսիսի համար, որ այն ժամանակ մի շատ նշանավոր քաղաք էր։ Կայսերական զորքը քաղաքի պարիսպների մեջ վաթսուն տեղից անցք բաց արավ, բայց էլի չկարողացավ տիրել քաղաքին, և շրջակայքն ավերելով, ետ քաշվեց։ Այս կռվի ընթացքում տեղի ունեցավ այն հռչակավոր ճակատամարտը, որի արձագանքն ահագին եղավ այն ժամանակ ամբողջ մահմեդական աշխարհում։ Տարսոն քաղաքի էմիրը 15,000 զորքով շտապել էր Մսիսի օգնության։ Չմշկիկը, իմանալով այս, արագությամբ ընդառաջեց նրան և պատահեց Ադանայի մոտ։ Առաջ կայսերականների կողմը թուլացավ, բայց հետո մահմեդականները, դարանի մեջ ընկնելով, կորցրին իրենց թվի մի եր-

[1] Gustave Schlumberger, „L'Epopée Byzantin alafin du Dixiéme Siecle". Paris, 1896, t. I, p. 2.

[2] Օրմանյան, «Ազգապատում», էջ 1126։

[1] Հռչակավոր Հովհաննես Կուրկուասի որդին։

[2] Гельцер, стр. 92

բորդից ավելի։ Մնացածները հալածվելով ու նեղն ընկնելով՝ իջան ձիերից և բարձրացան մի բլրի գլուխ, ուր հազիվ միայն 500 հոգի հասան։ Անձնատուր լինել չկամենալով, նրանք հերոսաբար մեռնելը գերադասեցին։ Երկու օր շարունակ նրանք ետ մղեցին հույների հարձակումները, իսկ երրորդ օրը Զմշկիկը ոտով, սուրը ձեռքին, անձամբ առաջնորդեց իր գունդը դեպի հարձակում։ Նետերի և քարերի անձրևի տակ հույները[1] վեր բարձրացան և կոտորեցին բոլոր Սարակինոսներին։ Ոչ մեկը չկամեցավ անձնատուր լինել, մինչև վերջին մարդն ամենքն ընկան կռվի մեջ։ Արյան հեղեղ էր հոսում սարն ի վայր, որից և նա կոչվեց «Արյան Լեռ» (Սև լեռ)։ Այս կատարյալ դժբախտության լուրը տարածվեց իսլամի ամենահեռավոր բնակավայրերը։ Կատաղի Դոմեստիքոսի անունը դարձավ սարսափի նշանակ բոլոր արաբական երկրներում, Տիգրիսի ափերից մինչև Նեղոսի ափերը,— ասում է ժամանակագիրը,— Սարակինոս մայրերն իրենց անհանգիստ երեխաներին վախեցնում էին սոսկալի «Զումուշտիգինի» անունով[2]։

Բայց Նիկեփոր կայսրը, որքան և մեծ զորավար ու հաղթական փառքով ծանրաբեռնված, շուտով սկսեց ձանձրացնել շատերին իր բնավորությամբ։ Իշխանությունը նրան կասկածամիտ էր դարձնում և հենց այս պատճառով էլ նա թույլ չտվեց Զմշկիկին շարունակել արաբական պատերազմը և տարավ նրան իր հետ Կ. Պոլիս։ Սառնություն սկսվեց երկու մոտիկ ազգակիցների և զինակիցների միջև, որ գնալով հասավ սուր ատելության։ Մեջտեղ գործողը դարձյալ Թեոփանոն էր։ Վավաշոտ, երիտասարդ, գեղատեսիլ կինը շուտով ձանձրացավ իր ամուսնուց, որը զուրկ էր մարմնական բարեձևությունից, գահի վրա էլ շարունակում էր մնալ պարզասեր, պատերազմի գործով տարված զինվոր։ Այժմ թագուհուն Զմշկիկն էր գրավում իր տեսքով, իր հռչակով, իր գրաված դիրքով։ Սիրային հարաբերություններ են սկսվում երկուսի միջև։ Կայսրը, կասկածներ տանելով այդ մասին, աքսորեց Զմշկիկին Բոսֆորի ասիական ափը։ Սա միայն փութացրեց վճռական և արյունոտ ընդհարումը։ Զմշկիկն իր սիրուհու հետ միացած դավադրություն սարքեց Նիկեփորի դեմ և սպանեց նրան անձամբ 969 թվի դեկտեմբերի 10-ի գիշերը։ Մյուս օրը նա գահ էր բարձրանում, որպեսզի դառնա բյուզանդական մեծ կայսրներից մեկը։ Կատարված ոճիրը չէր կարող արգելք հարուցել նրա առջև։ Նրան շատ լավ ճանաչում էին ամենքը։ Ամենքին հայտնի էին, ասում է պատմաբանը, «նրա քաջության և վեհանձնության, բարության, քաղցրության, շիտակության, ողջամտության գեղեցիկ հատկությունները, որոնք նրան այնքան ժողովրդական էին դարձնում, իր ռազմական զարմանալի քաջությունը, անբաղդատելի ամեհությունը, որոնք դարձնում էին նրան գուցե ամենափայլուն անձնավորումը զինվորական առաքինությունների այս ժամանակներում և դրա հետ նաև կայսրության ամենափայլուն պաշտպանը... Նա ուներ բոլոր այն կախարդիչ հատկությունները, որոնք մոռացնել և ներել են տալիս

[1] Հույներ անունով պետականություն է որոշվում։ Զմշկիկի գլխավոր մասը հայերն էին կազմում։

[2] **G. Schlumberger**, „Un Emereur Byzantin du Dixième Siécle, Nicephoure Focas», Paris, *1890 (Հայերեն համառոտում Հ. Քարամյանի, «Լումայ» հանդես, 1899, Գ. Բ.)։ Այս կռիվների մեջ փայլեց և մի ուրիշ հայ իշխան, Միքայել Բուրգես կամ, ինչպես արաբներն էին անվանում, Ալբուրջի անունով, որ փոքրաթիվ զորքով վերցրեց Անտիոք քաղաքը, բայց հենց այդ պատճառով էլ ընկավ Նիկեփոր Փոկաս կայսրի աչքից։*

մեծ ոճիրները և բոլոր սիրված մոլությունները, որ ժողովուրդը դյուրու-
թյամբ է ներում»։ «Նա չափազանց շատ էր սիրում գինին ու համադամ
կերակուրները,— ասում է Լևոն Սարկավագը, որ նրան ճանաչում է,—նա
ջերմապես սիրում է զվարճությունները և վայելքներին նվիրվում էր շռայ-
լությամբ։ Մանուստես հույն ժամանակագիրը նրան համեմատում է մի նոր
գրախտի հետ, որտեղից բխում են չորս գետեր—արդարադատության, իմաս-
տության, խոհեմության և քաջության»։ «Եթե նա իր ձեռքերը չպղծեր Նիկե-
փորի սպանությամբ—գոչում է տարեգիրը,— երկնակամարի վրա կփայլեր
իբրև մի աննման աստղ»։ Սա իսկապես այն հրապուրիչ, եռանդուն և ռազ-
միկ թագավորն էր, որ պետք էր կայսրության վերածննդյան համար[1]։

Առաջին իսկ քայլերից նրա աջակիցն է հանդիսանում Վասիլ անունով Ներքինին, որ Ռոմանոս Ա կայսրի անհարազատ զավակն էր, հետևաբար դարձյալ ծագումով հայ։ Նույն ֆրանսիացի պատմաբանն այս մարդուն, որ Զմշկիկի մինիստրն էր և պետության ճակատագրի տնօրինողը, բնորոշում է այսպիսի խոսքերով. «Հանդուգն, խելոք, անչափ եռանդի տեր, բայց ապականված, խստասիրտ, անխիղճ և անասելի փառասեր»[2]։ Նոր կայսրի առջև կանգնած մեծ դժվարությունն այն էր, որ մայրաքաղաքի բարձր հոգևորականությունը պիտի համաձայներ կայսր օծել նրան, մի բան, առանց որի չէր կարող, իհարկե, ճանաչված լինել ժողովրդից առհասարակ որևէ թագավորություն։ Այս համաձայնությունը հունաց պատրիարքը բավական թանկ գնով ծախեց։ Վասիլ Ներքինին զիջողությունների ճաnապարհը բռնեց, և Զմշկիկը ջնջեց մի շարք այնպիսի կարգադրություններ, որոնք կայսերական իշխանությանը բարձր հեղինակություն էին տալիս եկեղեցական գործերի մեջ։ Կային և մի քանի այլ պայմաններ, որոնք Ներքինի մինիստրի անամոթությունն էին ցուցադրում։ Այսպես, նա համաձայնում էր, որ Նիկեփորի սպանության մեջ երկրորդական դեր խաղացած մի քանի մարդիկ մահվան պատժի ենթարկվեն, մինչդեռ իսկական սպանողը, Զմշկիկը, եկեղեցու օծումն էր ընդունում։ Նույն պայմանադրությամբ նոր կայսրը պիտի զրկվեր և իր սիրուհուց, որն իր ձեռքերը թաթախել էր ամուսնու արյան մեջ՝ հենց այդ նոր կայսրի հետ ամուսնանալու համար։ Թեոփանոն վանք աքսորվեց։ Զմշկիկը կայսր էր օծվում 45 տարեկան հասակում, երբ այրիացած էր։ Նրա կինը, Մարիամ անունով, քույրն էր Վարդ Սկլերոս պատրիկի, որ հայ էր և շուտով պիտի հռչակվեր իր մեծ ապստամբությամբ։

Պետական ներքին քաղաքականության մեջ էլ Զմշկիկը շատ առաքինություններ ցույց տվեց։ Ռոմանոս Բ-ի երկու անչափահաս որդիներին—Վասիլ և Կոստանդին—պահում էր իր մոտ պատվով, դարձնելով նրանց կայսերակից։ Իր սերը դեպի իր ազգակիցները ցույց տալու համար նա հարկերից ազատեց Բյուզանդիայում ապրող բոլոր հայերին։ Սակայն նրա թագավորության իսկական փայլը կազմում են այն արշավանքները, որ նա մեծ հաղթանակով մղեց պետության թշնամիների դեմ։ Ռուսների իշխան Սվյատոսլավը, նվաճելով Բուլղարիան, անցավ Բալկանյան լեռնաշղթան և մտավ Թրակիա, ահաբեկելով հակառակորդին (970 թ.)։ Կայսրը, իր զորքի գլուխն անցած, գնաց նրա դեմ։ 971 թվին անսպասելի կերպով անցնելով

[1] **Schlumberger**, „L'Epop. Byz.“, t. I, p. 3—4.

[2] **Schlumberger**, „L'Epop. Byz.“, p. 5.

նույն լեռնաշղթան, երևաց Մեծ Պերեսլավլա մայրաքաղաքի մոտ, որ գրավեց, չնայած ռուսների հուսահատական դիմադրության։ Զմշկիկն այդտեղ ազատեց բուլղարական Բորիս թագավորին, որին բանտարկել էր Սվյատոսլավը, և պատվով ուղարկեց նրան Կ. Պոլիս։ Թեև Բուլղարիան, ինչպես գիտենք, Բյուզանդիայի հինավուրց և անհաշտ թշնամին էր, բայց այս անգամ հանգամանքներն այնպես էին դասավորվել, որ բուլղարները նայում էին Զմշկիկին ինչպես իրենց ազատողին, և խմբերով անցնում էին նրա կողմը։ Սվյատոսլավը երկրորդ անգամ սաստիկ ջարդ կերավ Զմշկիկից Դորոստոլ բերդի դռների մոտ և ստիպված եղավ անձնատուր լինել այն պայմանով, որ իրեն թույլ տրվի դուրս գնալ և հեռանալ իր զորքով։ Կայսրը հաղթանակով վերադարձավ մայրաքաղաք։ «Զմշկիկի հաջողությունները,— ասում է Գելցերը—նսեմացրին Նիկեփորի թագավորության ամբողջ փայլը և մեզ համար միանգամայն հասկանալի է, որ ժամանակակիցները ներեցին այդ հերոսին այն արյունը, որ թափել էր գահին տիրանալու ժամանակ»[1]։ Եվ զուր էին կարծում բուլղարները, թե Զմշկիկն իրենց ազատության համար է այդ փառավոր արշավանքը կատարել։ Կայսրը Բորիս թագավորին զրկեց ծիրանիից և տվեց նրան մագիստրոսի պարզ աստիճան։ Թշնամությունը բուլղարների և հռոմների միջև դեռ պիտի շարունակվեր։ Արևելյան Բուլղարիան համարվում էր միացված կայսրությանը՝ իբրև նրա վաղեմի սեփականությունը և բյուզանդական բերդապահ զորքեր դրվեցին այդ երկրի զանազան կողմերում։ Բայց այդ բավական չհամարելով, Զմշկիկը նորից կրկնեց այն փորձը, որ մի անգամ արդեն կատարվել էր, հայերից145 փաղթականություններ հաստատելով Թրակիայում՝ պետական սահմանները պաշտպանելու համար։ Այդ փորձը լավ հետևանքներ էր տվել։ Այժմ գաղթականությունը կազմվեց Փոքր Ասիայի և Բյուզանդական Հայաստանի պավլիկյաններից, որոնց գլխավոր մասը հայերից էր բաղկացած։ Մենք տեսանք, որ այդ աղանդավորները քաջ պատերազմողներ էին Բյուզանդիայի ասիական սահմանագլխի վրա, և նրանք իրենց կրոնական ազատությունը պահպանելու համար, երբեմն նույնիսկ միանում էին արաբների հետ։ Այս հանգամանքն էր, որ թելադրում էր ոմանց, թե պավլիկյաններն անհամեմատ օգտակար կլինեն պետությանը, եթե տեղափոխվեն նրա հյուսիսային կողմերը։ Զմշկիկը, հենց այն պատճառով, որ ինքն էլ պատկանում էր հայ ազգության, միանգամայն խորթ էր այն ֆանատիկոսության, որով պետությունը վերաբերվում էր այդ քաջ աղանդավորներին, ուստի և միանգամայն անկեղծորեն կարծում էր, թե Ասիայում խալիֆաթը վերջնականապես թուլացած է և թե այն անկախ պետությունները, որոնք նրա բեկորներն են կազմում, այլևս վտանգ չեն սպառնում կայսրությանը, այս պատճառով էլ պավլիկյանները կարող են իրենց քաջամարտիկ գնդերով մեծ օգուտ տալ պետության՝ պաշտպանելով նրա հյուսիսային սահմանները։ Նոր գաղթականությունը բնակեցվեց Փիլիպպոպոլիս քաղաքի շրջանում[2]։

Մինչդեռ Եվրոպայում հաղթողը լավագույն կերպով լուծումն էր տալիս

¹ **Гельцер,** стр. 96.

² Գաղափարների միջազգային փոխանակության տեսակետից այս գաղթեցումը մի շատ հետաքրքրական երևույթ էր։ Պավլիկյաններն իրենց վարդապետությունը տարածեցին բուլղարների մեջ, ուր նա ստացավ բոգոմիլ անունը, որովհետև նրա առաջին քարոզը եղավ Բոգոմիլ անունով քահանան։ Բոգոմիլներն այս աղանդը տարան Արևմտյան Եվրոպա, ուր նա ստացավ ալբիգեցիների աղանդ անունը146: Պապականությունը սրով ջնջեց այդ աղանդը։

պետական չափազանց կարևոր հարցերից մեկին, Ասիայում նորից պատերազմական հուրն էր բորբոքվում, որ երբեք չէր էլ մարել։ Նիկեփորի փայլուն հաղթությունները կատարյալ հուսահատություն էին տարածել մահմեդական աշխարհում։ Ամենքը զգում էին իսլամի դարավոր թշնամու անդադար ուժեղացումը, մինչդեռ մահմեդականները թույլ էին և բաժան-բաժան։ 970 թվականին Մանազկերտի բերդը, Վանա լճի արևմտյան կողմում, նորից անցնում էր բյուզանդացիներին։ Արաբական տարեգիրներից մեկը, Աբուլֆեդան, ցավով ու կսկիծով էր մտցնում այս դեպքն իր ժամանակագրության մեջ, գանգատվելով, որ ամեն ինչ թողնված է հույներին, ոչ ոք չկա այլևս, որ ետ մղի նրանց և պաշտպանի երկիրը[1]։ Այս զգացմունքը մի ընդհանուր աղաղակ էր տարածում մահմեդականության մեջ—միանալ՝ քրիստոնյաներին դիմադրելու համար։ Միության գլուխ աշխատում էին կանգնել Ֆաթիմյան եռանդուն և կռվասեր խալիֆները, որոնք տիրում էին Եգիպտոսում, բայց ունեին իրենց ձեռքի տակ և Սիրիան։ Ամեն տեղ պատրաստություններ էին տեսնվում մահմեդականների մի ընդհանուր ապստամբություն բարձրացնելու համար։ 973 թվին Բաղդադից սրբազան պատերազմի ընդհանուր հրավեր է ուղղվում իսլամ աշխարհին։ Բայց հենց այդ տարին էլ բյուզանդական մի արշավանք սկսվեց, առանց կայսրի անձնական մասնակցության, և այս ձեռնարկությունը փութացրեց գալիք դեպքերը։ Այս անգամ բյուզանդական բանակի հրամանատարն էր Մլեհ անունով մի զորավար[2]։ Նա պաշարեց Մելիտինեն, սովի սարսափներին ենթարկեց այն և այսպիսով վերցնելով քաղաքը, անցավ Նփրկերտին, որը նույնպես վերցվեց։ Այնուհետև Մլեհը մոտեցավ Ամիդ քաղաքին, կռվի բռնվեց նրա զորքի հետ, որին ջարդեց և մտավ քաղաքը։ Բայց երկու օրից հետո քաղաքն օգնական զորք ստացավ. և պատերազմը վերանորոգվեց։ Այս անգամ բյուզանդացիները սաստիկ պարտություն կրեցին։ Մատթեոս Ուռհայեցին պատմում է, թե կռվի ժամանակ բարձրացավ մի սոսկալի մրրիկ, բերելով իր հետ թանձր փոշի, որ խավարեցրեց օրը և սարսափեցրեց մարդկանց ու անասուններին։ Բայց, ինչպես երևում է, առանց այդ սարսափի էլ բյուզանդացիները պիտի պարտվեին ուժեղացած թշնամուց։ Եվ այդ պարտությունն այնքան սաստիկ էր, որ Մլեհն ու ուրիշ քառասուն զինվորական հրամանատարներ գերի ընկան և ուղարկվեցին Բաղդադ, ուր, ինչպես ասում են, բոլորն էլ մահվան պատժի ենթարկվեցին։ Բայց Մլեհը մինչև այդ կարողացավ կայսրին նամակ ուղարկել, որի մեջ ասում էր, թե վերջին դատաստանի օրը Հովհաննես Զմշկիկը կպատժվի Քրիստոսից, եթե Ամիդի առջև թափված արյան և իր ու իր ընկերների մահվան վրեժը չհանի։

Բայց առանց այս երդվեցման էլ Զմշկիկն արդեն սկսել էր մի մեծ արշավանքի պատրաստություններ տեսնել իր ամբողջ պետության մեջ։ Ամիդի աղետը և զորավարների գերեվարությունը կարող էին միայն շտապեցնել այդ պատրաստությունները։ Եվ 974 թ. գարնանը կայսրը գնաց Ասիա՝ ամեն կողմից հավաքված իր բանակի գլուխն անցնելու համար։ Այս արշավանքի մանրամասն նկարագրություն չի մնացել բյուզանդական գրականության մեջ։ Միայն մեր Մատթեոս Ուռհայեցին է մի քանի հետա-

¹ **Schlumberger,** t. I, p. 327.

² Այս արշավանքի մասին խոսում են միայն հայ ժամանակագիրները (Ասողիկ, եր. 186, Մատ. Ուռհ., եր. 14—15)։ Մլեհ անունը հիմք է տալիս ենթադրելու, որ զորավարը հայ էր (Schlumberger, p. 228)։

բըրքրական տեղեկություններ հաղորդում, որոնք կապ ունեն Հայաստանի հետ։ Բայց, տարաբախտաբար, այս ժամանակագրության մեջ հաճախակի հանդիպող հակասությունները, անճիշտ թվականները, դեպքերի խառնափնթորումը թույլ չեն տալիս կատարյալ վստահությամբ վերաբերվել այդ աղբյուրին։ Գոնե ներկա դեպքում բավականաչափ պարզ ու բացատրված չէ նրա հաղորդվածը, թե Չմշկիկը Միջագետք գնալու համար ընտրել էր Հայաստանի ճանապարհը, մինչդեռ բյուզանդական աղքատ աղբյուրները ցույց են տալիս, թե բանակը Տավրոսյան լեռներն անցավ Մելիտինեի և Ամիդի ուղղությամբ։ Գուցե Հայաստանի ճանապարհը կայսրը բռնեց իր բանակի միայն մի մասի հետ, այն էլ ավելի երկիրը տեսնելու և այնտեղից Միջագետք տանող ռազմական ճանապարհներն ուսումնասիրելու համար։ Այսպես թե այնպես, Ուռհայեցու ասելով, հայ թագավորները և նախարարները, լուր առնելով, որ հոռոմների հայազգի կայսրը գալիս է, իրենց զորքերով հավաքվեցին Հարք գավառում, գլուխ ունենալով, իհարկե, Աշոտ Գ-ին։ Այդտեղ էին Աղվանից թագավորը, Սյունյաց, Վասպուրականի, Սասունի տերերը։ Նրանց հավաքած ամբողջ բանակը բաղկացած էր 80 հազար հոգուց։ Չմշկիկի կողմից մարդ է գալիս տեսնելու Հայոց հավաքված աշխարհը։ Աշոտն ու մյուս իշխանները այդ այցելության պատասխանում են իշխաններից և վարդապետներից կազմված մի պատգամավորություն ուղարկելով, որ գնում է կայսրի մոտ և սեր ու միաբանություն հաստատում։ Այդ պատգամավորների մեջ առանձնապես հիշատակվում են Սմբատ իշխան Թոռնեցին և Ղևոնդ անունով մի վարդապետ, որ իմաստասերի (փիլիսոփայի) հռչակ ուներ և կոչվում էր նաև Պանտալեոն բժիշկ։ Այս բանակցությունները վերջացան մի համաձայնությամբ, որով Աշոտ Գ-ն տալիս էր Չմշկիկ կայսրին Հայոց բանակից հատկապես ընտրված 10 հազար ամենալավ կռվող զինվորներ, ինչպես և նրանց ուտելիքն ու բոլոր պաշարը։ Բայց երևում է, որ լոկ քաղաքագիտական հանգամանք չուներ այս բյուզանդա-հայկական մերձեցումը։ Չմշկիկի և Աշոտ Գ-ի միջև հաստատվեցին ավելի սերտ մտերմական հարաբերություններ։ Հաղթություններով հռչակված կայսրը նոր տեսակ մտերմական կապեր էր հաստատում վերոհիշյալ երկու պատգամավորների, բայց մանավանդ Պանտալեոն բժշկի հետ։ Այնուհետև կայսրը մտնում է Տարոն, որ, ինչպես գիտենք, Բյուզանդիային էր պատկանում, և կանգ առավ Մուշի մոտ, Այծյաց բերդի դիմաց։ Վերջացնելով բոլոր բանակցությունները հայերի հետ, կայսրը շարունակում է իր արշավանքը դեպի Միջագետք։ Նրա վերջնական նպատակն էր Բաղդադը։ Ուզում էր վերցնել խալիֆաթի հռչակավոր մայրաքաղաքը և այդպիսով կատարյալ դարձնել քրիստոնեության հաղթանակը։ Արշավանքը, ի՛նչ խոսք, միանգամայն փառավոր էր բյուզանդական զենքի համար։ Իսլամը համարյա դիմադրություն չէր ցույց տալիս։ Կայսրի անունը բավական էր, որ քաղաքներն ու բերդերն ահից բաց անեն իրենց դռները նրա առջև։ Այսպիսով, ինչպես ասում են, երեք հարյուր զանազան տեսակ տեղեր—քաղաք, ավան, գյուղ անցան քրիստոնյաների ձեռքը. դրանց մեջ էին Ամիդը, Մծբինը, Եդեսիան։ Բայց Չմշկիկը չկարողացավ հասնել Բաղդադին։ Խալիֆների մայրաքաղաքը շատ լավ էր պաշտպանված կլիմայական անհաջող պայմաններով, ավազոտ ու անջրդի տարածություններով, ուր արշավող զորքը միայն տանջվել ու ոչնչանալ կարող էր։ Ուստի կայսրը ետ դարձավ և ուղիղ գնաց Կ. Պոլիս, ուր հաղթական

մուտք գործեց, ծանրաբեռնված բազմաթիվ հաղթանակների առհավատչյաներով, բայց մանավանդ անհուն ավարով։ Թե ի՛նչ հարստություններից էր մերկացել Միջագետքը, ցույց է տալիս այն, որ կայսրի առջևից տանում էին երեք միլիոնի արժեք ունեցող ոսկի ու արծաթ դրամներ և երեք հարյուր հազար կշիռ դարձյալ նույն ազնիվ մետաղներից[1]։

Հետևյալ տարին (975 թ.) Չմշկիկն իր արշավանքը մահմեդական աշխարհի դեմ վերսկսում էր նոր ուղղությամբ—դեպի Սիրիա և Միջերկրական ծովի ափը (Փյունիկե, Պաղեստին)։ Այս արշավանքի պատմությունն էլ լիակատար չէ բյուզանդական և արաբական աղբյուրների մեջ և այս պատճառով պատմագրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Չմշկիկի երեք նամակները, որոնց պատճենները պահվել են Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ[2]։ Երեքն էլ գրել է կայսրը. մեկը, ամենից ընդարձակը, ուղղված է Աշոտ Գ-ին, երկրորդը՝ Տարոնի բյուզանդական զորավարին և երրորդը՝ մեզ ծանոթ Ղևոնդ իմաստասեր վարդապետին։ Աշոտին գրած նամակը կայսրն սկսում էր այսպես. «Աշոտ Շահնշահ Հայոց Մեծաց և իմ հոգեկան զաւակ, լո՛ւր և իմացի՛ր թէ որչափ ինչ սքանչելիս արար Աստուած առ մեզ և զարմանալի յաղթութիւնս, որ և իմանալն անկարելի է զԱստուծոյ քաղցրութիւնն և զահաւոր մարդասիրութիւնն՝ զոր արար տէր ընդ ժառանգութիւնս իւր»[3]։ Ապա նույն՝ վերին աստիճանի մտերմական՝ ոճով մեկիկ-մեկիկ նկարագրվում էր քրիստոնեության, խաչի տարած հաղթանակները Սիրիայում, Պաղեստինի նվիրական վայրերում։ Ահա մի նմուշ այն լեզվի, որով խոսել են բոլոր ժամանակների ինքնագոհ և փառավորվող հաղթողները, խոսում են և այսօր էլ. «Եւ ելին պատերազմաւ ընդ առաջ մեր, և բազմութիւնք զօրաց մերոց հալածական արարին զնոսա և ի բերան սրոյ կոտորեցին։ Եւ ետ սակաւ աւուրց պաշարեցաք զԱրեգ քաղաք. և բազում գերութիւնս, մանկունս և աղջկունս առին զօրքն մեր և զգանձս ոսկւոյ և արծաթոյ, անասունս բազումս առին»[4]։ Մեզ ներկայանում է կրոնական պատերազմի քաջածանոթ պատկերը։ Երկրներ են կործանվում, երեխաներ և աղջիկներ են գերվում հանուն այս կամ այն աստծու, այս կամ այն մարգարեի, սուրբի, պաշտամունքի։ Այս անխնա և կատաղի ինքնաոչնչացման մեջ մարդկությունը կարողանում էր դնել գաղափար, երկնքին հաճելի ձգտումներ։ «Ոչ մնաց,—ավելացնում էր կայսրը,—մինչև ցՌամլէ և ցԿեսարիա՝ ոչ ծով և ոչ ցամաք, որք ոչ հնազանդեցան թագաւորութեանս մերում, զօրութեամբն Անեղին Աստուծոյ, զի մինչև ցԹաբելոն հնազանդ արարաք թագաւորութեանս մերում և արարաք ծառայս զնոսա մեզ»[5]։

Թե ինչքան մեծ էր կայսրի տարած այս նոր հաղթությունների տպավորությունը, երևում է բյուզանդական մի տարեգրի հետևյալ խոսքերից. «Եվ ազգերը մեծ ահի մեջ էին Չմշկիկի բարկության առջև։ Եվ նա ընդարձակեց Հռոմեական կայսրության սահմանները։ Սարակինոսները և հա-

---

[1] **Schlumberder**, t. I, p. 262.

[2] Եր. 19—28։ Շլումբերժեն («Ep. Byz.», t. I, p. 283) կասկածից դուրս է համարում այս նամակների վավերականությունը և գտնում է, որ Ուռհայեցու ձեռքում եղել են պատճեններն այն նամակների, որոնք պահվում էին Անիի դիվաններում։

[3] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 19—20։

[4] Ibid, եր. 21։

[5] Ibid, եր. 25։

յերը փախչում էին, պարսիկները դողում էին և ամեն կողմից նրան ընծաներ էին տանում, խնդրում էին նրանից գթություն և հաշտություն. Նա անցավ Եդեսիայից մինչև Եփրատի ջրերը, և երկիրը ծածկված էր հռոմայեցիների բանակներով։ Հռոմեական ձիերի ոտների տակ տրորվեցին Սիրիան և Փյունիկեն։ Նա ահագին հաղթություններ էր տանում, և քրիստոնյաների սուրը հնձում էր մանգաղի նման»[1]։ Այս անգամ կայսրն իր հետ Կ. Պոլիս էր տանում, ինչպես հաղորդում է Ուռհայեցին, և այնպիսի նվիրական իրեր, որոնք, այն ժամանակվա հասկացողությամբ, ավելի բարձրարժեք էին, քան նույնիսկ պատերազմական ավարը։ Այդ իրերն էին Քրիստոսի հողաթափերը և Հովհաննես Մկրտչի մազերը։ Այս առիթով էր, որ կայսրը նամակ էր գրել և Ղևոնդ փիլիսոփային։ Նրան հրավիրում էր Կ. Պոլիս, որ մասնակցի այն տոներին, որոնք պիտի կատարվեին այնտեղ սնապաշտության և մանավանդ միամիտ դյուրահավանության նվիրագործած հողաթափերի և մազերի առիթով։ Բայց մայրաքաղաքին չհասած՝ Ջմշկիկը ծանր հիվանդացավ, իսկ երբ Կ. Պոլիս մտավ, և հաղթանակի տոներն արդեն սկսված էին, նա հոգեվարքի մեջ ընկավ և մեռավ (976 թ. հունվարի 10-ին)։ Մեծ հերոս կայսրն իր անձնական ամբողջ կարողությունը կտակել էր աղքատներին, բայց մասնավորապես՝ բորոտներին, որոնց վերաբերմամբ առանձին հոգացողություն էր ունեցել իր կյանքում, ինչպես և նրա մտերիմ Աշոտ Շահնշահը Հայոց երկրում։ Կառավարության գործերում էլ նա մնաց խստապահանջ զինվոր, որ չէր շողոքորթվում նույնիսկ իր մերձավորների մատուցած ծառայություններով։ Այսպես, Կիլիկիայից վերադառնալու ժամանակ նա հրճվանքով դիտում էր ճանապարհի երկու կողմերին տարածվող մշակված դաշտերը։ Բայց այստեղ էլ նա իմացավ, որ այդ բոլոր մեծ կալվածները պատկանում են Վասիլ ներքինուն, որը, ինչպես գիտենք, պետության առաջին պաշտոնյան էր և ուներ վարչական խոշոր տաղանդ։ Չնայած այս հանգամանքին, կայսրը սաստիկ զայրացավ, որ այդքան հարստությունները մի մասնավոր մարդու ձեռք են անցել։ Եվ նա երկար ու երկար իր վրդովմունքն էր հայտնում իրեն շրջապատողներին։ «Ավա՜ղ,—ասում էր,—մի՞թե մեր զինվորների ազնվագույն արյունը թափվել է քանի անգամ, մի՞թե Նիկեփոր Փոկասն և ես, կայսրության ամենաքաջ զորավարների հետ, փառավոր պատերազմներ ենք մղել, որպեսզի այդքան հոգնությունների, այդքան ցավերի և մի ամբողջ ժողովրդի ծյուրման արդյունքը լինի մի անարգ ներքինու հարստացում»[2]։

Գյուստավ Շլյումբերժեն, ֆրանսիացի գիտնականը, Ջմշկիկի մանրամասն կենսագրությունը հասցնելով վախճանին, ասում է. «Այսպես մեռավ, վեց տարի և մի ամիս թագավորելուց հետո այն մեծ կայսրը, «հերոսական ոգի ունեցող այս փոքրահասակ մարդը, հանդուգն, անհաղթելի, վտանգի մեջ աներկյուղ, եզակի քաջության տեր»։ Իր հիշատակը պղծված է մի մեծ ոճրով։ Առանց սրան նա ամենայն իրավունքով կլիներ Արևելքի մեծագույն կայսրներից մեկը։ Նրա քաջահաղթ բազուկը վերադարձրեց կայսրության հռոմեական պատմության լավագույն օրերը։ Հաղթո՛ղ ռուսների, բուլղարների, Բաղդադի և Կահիրեի խալիֆների, նվաճո՛ղ Սիրիայի, Պաղեստինի և Միջագետքի, հա՛շտ Գերմանիայի Օտտոն թագավորի հետ, նույնքան լավ վարչապետ, որքան փայլուն զորավար, մեծահոգի, վեհանձն, ապետական, նա կարողացավ տալ փառքի մի դրություն Բյուզանդիայի պատմության»[1]։

Մի տարի անցած, 977 թվին, վախճանվեց Աշոտ Դ Շահնշահը։ Ջմշկիկի նման համաշխարհային մի անուն չէ՛ր նա, բայց Արարատյան երկրի Բագրատունյաց թագավորության մեջ խոշոր տեղ ունի։ Մահից հետո էլ նա առանձին բախտ ունեցավ։ Առաջին հայ թագավորն է դա, որի գերեզմանը մնացել է մինչև այսօր։ Հոռոմոսի վանքի ձորում, Ախուրյանի աջ ափին, մի փոքրիկ բլուր կա, որի վրա մի քանի մատուռների ավերակներ են մնացել։ Դրանցից մեկը ս. Գևորգ մատուռն է, որի մի արձանագրությունից[2] իմանում ենք, որ նրա շուրջը Բագրատունի թագավորների հանգստարանն էր։ Ներկայումս այդտեղ միայն մի գերեզման է երևում—մի հսկայական օրորոցաձև քար, որ հաստատված է երկու աստիճան ունեցող պատվանդանի վրա։ Այդ քարն ունի արձանագրություն. «Աշոտ Ողորմած թագաւոր Հայոց»[3]։ Բայց տառերի ձևը, փորագրությունը կասկած չեն թողնում, որ գրությունը համեմատաբար նոր ժամանակների գործ է և, ուրեմն, կարող է համարվել լոկ ավանդության արձագանք։ Շիրիմի մոտերքն երևում են պատերի հետքեր։ Գուցե այդ անհետացած պատերից մեկի վրա է եղել իսկական արձանագրությունը և նրա ընկնելուց հետո գտնվել են մարդիկ, որոնք տապանաքարի վրա փորել են թագավորի անունը։

3. Սմբատ Բ (977—990 թթ.): Աշոտ Ողորմածն ուներ երեք որդի՝ Սմբատ, Գագիկ և Գուրգեն, որոնք սիրով եղբայրներ չէին։ Ավագության իրավունքով թագավորում է Սմբատը։ Գագիկը, մի ինչ-որ գժտության հետևանքով չկարողանալով մնալ նրա մոտ, հեռանում է Շիրակից, իսկ Գուրգենը, նշանակվելով Տաշիր գավառի կառավարիչ, այդտեղ իրեն թագավոր է հայտարարում (982 թ.) և այսպիսով հիմք է դնում Գուգարքի Բագրատունի թագավորության, որ հայտնի է նաև Կյուրիկյան անունով, որովհետև Գուրգենը կոչվում էր նաև Կյուրիկե։ Սմբատը ոչինչ չձեռնարկեց իր պետության այս նոր անդամահատության դեմ։ Նա առհասարակ պատերազմասեր թագավոր չէր և նրա իսկական նշանակությունը պետք է որոնել ներքին շինարար քաղաքականության մեջ։ Պատերազմական դաշտը չէր այն ասպարեզը, ուր քաջություններ էր ցույց տալիս Անիի այս թագավորը։ Նա շատ չպատերազմեց, բայց գիտեր, թե ինչպես պետք է պատրաստվել պատերազմի համար։ Անի մայրաքաղաքն իսկապես նրա ձեռքի գործն էր։ Շատ քիչ համարելով իր հոր կառուցած պարիսպը՝ Անիի ընդարձակման, գեղեցկացման և ամրացման համար, նա ձեռնարկեց մի ավելի մեծ գործի, որ անհամեմատ ավելի շատ էր բարդ, դժվարին և բազմածախս։ Այդ այն պարիսպն է, շատ տեղ կրկնակի, որով նա շրջապատեց Անիի ամրոցն ավելի լայն տարածության վրա, այն իսկ պարիսպը, որ այսօր էլ Անիի ավերակ քաղաքի զարդն է կազմում։ Պարիսպն սկսվում է Ախուրյանի ձորի ժայռերից, ձգվում է արևելյան (Գլիձորի) բնական խորության երկարությամբ, հյուսիսային կողմում կտրում անցնում է հարթ

---

[1] Гельцер, стр. 97.

[2] Schlumberger, t. I, p. 310.

[1] Schlumberger, p. 316.

[2] Ալիշան, «Շիրակ», եր. 31։

[3] Անդ.

հավասար դաշտը երկու զուգահեռական պատի ձևով, որոնց պաշտպանության համար փորված էր խոր խրամատ, այնուհետև հյուսիս-արևմուտքում և արևմուտքում պարիսպը եզերում էր Իգաձոր և Ծաղկոցաձոր անունով, իրար հետ միացած ձորերը, իսկ հարավում, շրջան տալով Միջնաբերդի մեծ բլրի ստորոտով, դարձյալ երկկարգ պատերով գնում էր պաշտպանելու քաղաքն Ախուրյանի ձորի կողմից մինչև Գլիձորի գահավեժ էջքն Ախուրյանի ջրի վրա։

Այս մեծագործությունը, որ տարիների աշխատանքով էր գլուխ գալիս, այսպես է նկարագրում Ասողիկը. «Կրով և վիմով մածուցեալ. մահարձանօք և աշտարակօք փրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պարիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբք, երկաթագամ հպստահեղոյս բևեռապինդ ամրացուցեալ»[1]։ Այս հաստ, երկաթով պատած գերաններից և մեծ բևեռներով պնդացրած դռներից այժմ, իհարկե, հետք էլ չի մնացել, բայց պարիսպների մի նշանավոր մասը դեռ կա և իր գեղեցկությամբ հիացրել է օտար, անգամ եվրոպացի այցելուներին։ Սմբատի այս մեծագործության մանրամասնություններն այսպես է նկարագրում մեր ժամանակակից հայ ուսումնասիրողներից մեկը. «Չեմ սխալիր եթե ըսեմ որ մոտավորապես 2500 մեթրեն ավելի երկարությամբ պարիսպ է շինված Սմբատի ձեռքով քաղաքի շուրջը, առնվազն 8—10 մեթր բարձրությամբ և մեկ մեթր թանձրությամբ, ամբողջովին կրաշաղախ մածուցիկ հրաբխային ավազաքարերով, երկու կողմեն սրբատաշ։ Հյուսիսային կողմեն ձեռագործ խրամը մի մեծ աշխատությամբ և զոհողությամբ գլուխ հանված գործ է։ Խրամի մեջ լեցվելիք ջրի մակերևույթին համար որոշված բարձրութենեն ավելի արտաքին փոքր պարսպին հիմերը որձաքարով շինելեն հետո հանդիպակաց կողմը մեծածավալ որձաքարերով պատ շարեր են խրամի ամբողջ երկայնությամբ, ավելի քան 500 մեթր։ Այս երկայնության մեջ ջրի հոսանքը արգելելու և լճացած պահելու համար դեպի լայնության յուրաքանչյուր 10—12 մեթր հեռավորության վրա վերստին նույն խոշոր որձաքարերով պատեր շիներ են, որոնց մեջ ավազանանման ջուրը լճանալով՝ վերեն ավելորդը կթափվեր իրեն հաջորդող ավելի ցածր գտնվողին մեջ և այսպիսով մեկ կողմեն կհասներ մինչև Գլիձորի վերի ծայրը, և մյուս կողմեն մինչև Իգաձոր։ Բայց ջրի առավելագույն մասը կվազեր դեպի Գլիձոր, ուր արդեն պարտեզներ պիտի ոռոգվեին և ջաղացներ դարձնեին այդ ջրով»[2]։ Իսկ այդքան ջուր ունենալու համար հարկավոր եղավ հեռվից մի նոր ջրանցք բերել։

Երկրորդ գործը, որ Սմբատի անվան հետ կապված մի ճարտարապետական գլուխգործոց է, Անիի շքնաղ մայր եկեղեցին է, որ, սակայն, թագավորը կարողացավ միայն «հիմնադրել», ինչպես ասված է արձանագրության մեջ, բայց չկարողացավ շարունակել՝ վրա հասած մահվան պատճառով։ Հայոց աշխարհում այդ ժամանակ ապրում էր մի քարագործ արհեստավոր, բայց իսկապես մեծ արվեստագետ—Տրդատ**147** անունով։ Այդ մեծատաղանդ ճարտարապետն էր, որ շինում էր մայր եկեղեցին։ Դրանից առաջ նա շինել էր Խաչիկ կաթողիկոսի (973—992 թթ.) համար մի գեղեցիկ եկեղեցի Արգինա գյուղում։ Սմբատը երկար ժամանակից ի վեր էր,

---

1 Եր. 187։

2 Թ. Թորամանյան. «Անի քաղաք, թե՞ ամրոց» («Ազգ. Հանդ.», XXIII, 5)։

որ պատրաստվեց փառավորությամբ նմանը չունեցող մի եկեղեցի շինելու համար։ Այսպես, նա այդ եկեղեցու գմբեթի տակից կախելու համար Հնդկաստանից մի բյուրեղյա կանթեղ բերել տվեց, որ 12 լիտր էր կշռում և այդքան էլ ձեթ էր տանում։ Այս հազվագյուտ զարդը նստեց Սմբատին «բիւր մի զանձուց», ասում է ժամանակագիրը[1], ակնարկելով, անշուշտ, մի անհաշիվ գումար։

Այսպիսի մի բեղմնավոր գործունեության համար Սմբատին հարկավոր էր երկարատև հաստատուն խաղաղություն, իսկ այս այնպիսի մի բան էր, որ նրա ժամանակը չէր կարող տալ։ Երբ Սմբատը գահ էր բարձրանում, Փոքր Ասիան նորից հրդեհված էր մի մեծ շարժումով, որ դարձյալ սպառնում էր կայսրության ահավոր երերումներ պատճառել և որի մեջ գլխավոր դերակատարները դարձյալ հայերն էին։ Որքան և անհաղորդ լիներ Անիական Հայաստանն այդ անցքերին, որոնց թատերաբեմ էր հանդիսանում միայն բյուզանդական հողը, բայց և այնպես նա չէր կարող միանգամայն խուսափել իր սահմաններին շատ մոտ կատարվող տակնուվրայությունների ազդեցությունից։ Չմշկիկի մահվան տարին, 976 թվին, ասիական նահանգներում ծայր էր տալիս մի խոշոր ապստամբություն, որի պատճառները թաքնված էին կայսրի մահին հաջորդած պետական իրականության մեջ։ Մենք տեսանք, որ հայազգի հերոսը թագավորում էր Բյուզանդիայում իբրև Ռոմանոս Բ-ի երկու անչափահաս որդիների—Վասիլի և Կոստանդինի գահակից։ Նրա մահը մի լավ առիթ էր, որ այդ որդիներից առաջինը, Վասիլը՝ իբրև օրինավոր կայսր, ինքն իրեն ազատված համարի ուրիշ մարդկանց գահակցությունից և սկսե կառավարել պետությունն իբրև իսկական կայսր, այսինքն՝ իբրև անկախ ինքնակալ։ Այսպիսի մի ինքնակալությունն էր հարմար գալիս այդ ուժեղ ու տոկուն երիտասարդին, որ ժառանգել էր իր տոհմապետի, այն է՝ Հայկական հարստության հիմնադիր Վասիլ Ա-ի ոչ միայն անունը, այլև շատ հատկությունները։ Եվ ահա այս անկախ ինքնակալական ձգտումը, որ հրաժարվում էր բաժանել գահի իրավունքները որևէ կողմնակի, օտար մարդու հետ, որ շատ կողմերով անհրապույր էր դարձնում Վասիլին և զրկում նրան ժողովրդականությունից, պետական տեսակետից այն նշանակությունն ունեցավ, որ կայսրությունն ամրապնդվեց, հասավ իր հզորության գագաթնակետին։ Բայց այսպիսի մի անկախությունն իրագործելը հեշտ չէր այն բարքերի մեջ, որ դարերից ի վեր սնուցել էր բյուզանդական արքունիքը։ Հարկավոր էր դրա համար ընդհարվել ազնվականության հետ, որ ահագին հարստությունների տիրանալով, բնական հետևանքով ձգտում էր և բարձրագույն իշխանության։ Բայց այս ընդհարման առջև էլ կանգ առավ Վասիլը՝ իր անհողդողդ կամքն անցկացնելու համար։ Այս հանգամանքից էր ծնվում այն մեծ ապստամբությունը, որ բռնկվեց նրա գահակալության տարին։ Նրա մեջ երկու կողմ կային։ Մի կողմն էր ամենակարող ներքինի մինիստր Վասիլը, մի մարդ, որ այնքան հարստություն ուներ, որ կարող էր մի ամբողջ բանակ պահել։ Իսկ նրա դեմ հակառակ կանգնած էր Վարդ Սկլերոսը, որ, ինչպես տեսանք, Չմշկիկի աներձագն էր։ Սա պակաս հարուստ չէր, իսկ իր հակառակորդին գերազանցում էր նրանով, որ մինչդեռ նա մայրաքաղաքին հայտնի մի բարձր պաշտոնյա էր, ինքը ռազմական փառքով ծածկված մի զորավար էր, որին ճանաչում և սիրում էր ամբողջ ասիական բանակը։

---

1 Մատ. Ուռհայ., եր. 149։

Երբ երկու հզոր ախոյանների մրցությունը հասավ ծայրահեղության, Վարդ Սկլերոսը թողեց մայրաքաղաքը և ուղևորվեց, ինչպես կարծում են, Բյուզանդական Հայաստան, ուր երևաց կայսերական բանակի մեջ, որ ամենայն հավանականությամբ Խարբերդում էր գտնվում, և իրեն հայտարարեց կայսր (976 թ.)։ Խոսելու մեծ ընդունակություն ուներ այդ երևելի զորավարը, որ մի կարճահասակ և հաստլիկ մարդ էր, ոգևորել, նվաճել զինվորներին խոսքի գեղեցկությամբ՝ նա շատ լավ գիտեր։ Խոսեց կայսրության մասին, որ կարոտ էր խնամքի, քանի որ գտնվում էր երկու անչափահաս տղաների և մի անխիղճ ներքինու ձեռքին, իր դիտավորությունը բացատրեց այն մտքով, թե օրինավոր կայսրներին նա ճանաչում է և նրանց դեմ չի գնում, այլ միայն ուզում է նրանց աշխատակիցը լինել, ինչպես եղել էին Նիկեփոր Փոկասը և Չմշկիկը։ Եվ նա մեծ հաջողություն գտավ բանակի մեջ, գլխավորապես այն հանգամանքի շնորհիվ, որ նրա զգալի մասը բաղկացած էր հայերից, իսկ թե՛ ինքը՝ Վարդ Սկլերոսը և թե՛ իր հիշած կայսրները հայկական ծագում ունեին։ Այս հանգամանքն այնքան ուժեղ նշանակություն ուներ, որ ապստամբական բանակին միացավ, ի միջի այլոց, և այն հայ հեծելագունդը, որ բյուզանդական կանոնավոր զորքերի թվին էր պատկանում[1]։ Սկլերոսի հզոր աջակիցներ հանդիսացան Տարոնի հայ նախարարները, օրինակ՝ Գրիգոր և Բագարատ Բագրատունիները, նույնիսկ և Մոկաց իշխան Զափրանիկը[2]։ Հայազգի ապստամբին պատրաստ էին օգնելու, իհարկե, և բոլոր այն արաբ էմիրները, որոնք բյուզանդական սահմանագլխի վրա էին ապրում և որոնց համար կայսրության թուլացումն ուներ ահագին նշանակություն։

Սկլերոսի ապստամբությունը համառ, երկարատև հաղթական մի շարժում էր, որ համարյա երկու տարվա ընթացքում ճարակեց ամբողջ բյուզանդական Ասիան, հետզհետե դուրս մղելով այնտեղից կայսերական զորքերը և գրավելով բոլոր նշանավոր քաղաքներն ու բերդերը։ Այսպես, Լեկանդոսի մեծ ճակատամարտում կայսերական բանակը սաստիկ պարտություն կրեց և փախուստի դիմեց։ Եվ այս խոշոր հաղթությունը միանգամից Սկլերոսի ձեռքն էր մատնում ամբողջ կենտրոնական Փոքր Ասիան կամ Անատոլիան իր Կեսարիա մեծ մայրաքաղաքով։ Այստեղ էլ Սկլերոսն իր կողմն է գրավում Միքայել Բուրցեսին, որին հիշատակեցինք վերևում, մի հայազգի հերոս, որ մեծ անուն էր հանել Անտիոքի նվաճումով։ Նա Սկլերոսի մոտիկ բարեկամն էր, բայց Վասիլ ներքինին նախատեսելով, դեռ ապստամբությունից առաջ, որ այդ երկու մարդիկ կարող են միանալ ամենայն հեշտությամբ, նրան նշանակեց Անտիոքի դուքս և այսպիսով կապեց նրան կայսերական կառավարության հետ։ Այժմ Լեկանդոսի կռվի մեջ պարտություն կրելով կամ կրած ձևանալով, Միքայելը, որին արաբներն Ալբուրջի էին անվանում, նույնպես փախուստի դիմեց, բայց հեշտությամբ բռնվեց, որից հետո դարձավ Սկլերոսի մերձավոր օգնականը։ Նրա հետ անուն է հանում և մի այլ հայ իշխան, որ Տարոնից էր, Ռոմանոս անունով և Աշոտ Բագրատունի իշխանի եղբայրն էր։ Շուտով Միքայելի հրամանով նրա որդին, որ մնացել էր Անտիոքում իբրև կառավարիչ, բաց արավ այս նշանավոր քաղաքի դռները Սկլերոսի զորքերի առջև։ Եվ այսպիսով ապստամբների կողմն էին անցնում Սիրիան, Կիլիկիան և ուրիշ երկրներ։ Սև ծովի նավատորմն էլ իրեն դրեց ապստամբների տրամադրության տակ իբրև նրանց կողմնակից։ Ասիական հողի վրա համարյա այլևս կայսրություն չէր մնում։ Ամբողջ երկիրը ներկայացնում էր կատաղի պատերազմների տխուր տեսարանը։ Հաստատվել էր աներևակայելի անիշխանություն։ Մեր Ասողիկն ասում է, թե քաղաքը քաղաքի դեմ էր կռվում, գյուղը՝ գյուղի դեմ, որը՝ կայսերական կառավարության կողմնակից, որը՝ ապստամբության։ Տարածվեց սաստիկ սով։ Վերջին հենարանը, որ կարող էր պաշտպանել Կ. Պոլիսն Ասիայի կողմից, Նիկիա քաղաքն էր։ Բայց ահա նրա առջև էլ երևաց Սկլերոսը, պաշարեց և վերցրեց (978 թ.), ապա, շարունակելով իր առաջխաղացությունը, հանձնեց իր Ռոմանոս որդուն առաջապահ գնդերով մոտենալ Կ. Պոլսին և պատրաստել նրա պաշարումը։

---

[1] **Schlumberger**, t. 1, p. 337—339.

[2] Ասողիկ, *եր. 191*։

Մայրաքաղաքի մեջ տարսափ տարածվեց, և ամենակարող Վասիլ ներքինին, որ պետական խոշոր խելքի ամբողջ թափով մինչև այդ դիմադրական բոլոր միջոցները փորձել էր ապստամբների դեմ, բայց անօգուտ,— դուրս եկավ գործի դնելու այն վերջին հնարը, որ մնում էր նրա տրամադրության տակ։ Երբ սպանվեց Նիկեփոր Փոկասը, նրա եղբորորդի Վարդ Փոկասը, նույնպես մի շատ նշանավոր զինվորական հրամանատար, ապստամբություն հարուցեց նույն Ասիայում՝ իր հորեղբոր վրեժը հանելու համար։ Չմշկիկը նրա դեմ ուղարկեց Վարդ Սկլերոսին, որ և ջարդեց նրա բանակը, իսկ նրան գերի բռնեց։ Չմշկիկն իրեն հատուկ մարդկայնությամբ չուզեց մահվան պատժի ենթարկել ապստամբին և բավականացավ աքսորելով նրան Քիոս կղզին։ Ահա այս մոռացված աքսորականին էր ասպարեզ հանում Վասիլ ներքինին՝ պետության սպառնացող ահավոր վտանգը վերացնելու համար։ Վարդ Փոկասը բերվեց Կ. Պոլիս և նրան հանձնվեց կայսերական բանակի ընդհանուր հրամանատարությունը։ Եվ այսպիսով երկու հայազգի ախոյանները նորից դուրս էին գալիս իրար դեմ՝ հաղթանակ խլելու համար։ Բայց նրանց հանդիպումները լավ սկզբնավորություն չունեին աքսորականի համար։ Երկու անգամ նա չարաչար պարտություն կրեց Սկլերոսից։ Ստեղծվեց կատարելապես հուսահատական դրություն, երբ թվում էր, թե փրկություն այլևս չպիտի լինի։

Այս միջոցին է ահա, որ մի նշանավոր դերով համաշխարհային պատմության ասպարեզն է իջնում հայկական Տայք նահանգը, որ հենց այս ժամանակները, ինչպես տեսանք, արդեն վրացիացած էր քաղկեդոնականության հարած լինելու հետևանքով, բայց դեռ պահում էր հայկական ջատ հիշատակներ։ Մենք տեսանք նաև, որ դեռ 9-րդ դարի սկզբներից Տայքում հաստատվեց հայ Բագրատունիների մի ճյուղը, որ ինքնուրույնաբար կառավարում էր երկիրը կյուրապաղատության դիրքով։ Ունենալով իր ներքին ինքնավարությունը, Տայքը Բյուզանդիայի խիստ ազդեցության տակ էր գտնվում և վայելում էր նրա հովանավորությունը, իսկ Վրաստանի հետ, պահպանելով հանդերձ իր անկախությունը, սերտ կերպով կապված էր կրոնական-կուլտուրական կապերով, որի հետևանքով յուրացրել էր վրացական լեզուն։ Հայերն էլ իրենց տայեցի արյունակիցներին անվանում էին վրացի, հետևելով ժամանակի աշխարհայացքին, որ ազգության ամենագլխավոր հատկանիշը կրոնն էր համարում։ Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ Տայքն ավելի ևս պարզ հանգամանքներով էր հանդես բերել իր քաղաքական և ազգային դավանանքները։ Այդ ժամանակ կյուրապաղատ էր Դավիթը, որ Բագրատունի կյուրապաղատների վերջին շառավիղն էր, բայց հա-

կառակ իր հայկական ծագման[1], վրացի էր համարվում և կոչվում էր Վրաստանի կյուրապաղատ և իշխան ոչ միայն բյուզանդացիների, այլև հայերի մեջ։ Դավիթը մեծ հաջողության հասավ, դարձնելով իր փոքրիկ Տայքը մի շատ ուժեղ և հեղինակավոր պետություն, որ վճռական ներգործություն ուներ ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի գործերի վրա։ Այս հեղինակությունը Տայքի զինվորական ուժի վրա չէր խարսխվում, որ չէր կարող շատ մեծ լինել, այլ առավելապես նրա կյուրապաղատի անձնական բարեմասնությունների վրա, Դավթի ուժն առավելապես բարոյական էր։ Եվ այս երևում է այն հիացական տրամադրությունից, որ ցույց են տալիս հայ պատմագիրները, երբ խոսք են բացում նրա մասին։ Այսպես, Արիստակես Լաստիվերտցին (11-րդ դար) գրում է. «Որ էր այր հզօր և աշխարհաշէն, մեծապարգև և աղքատասէր, որ էր արդարև սահման խաղաղութեան»[2]։ Ահա այս իշխողին մեծամեծ օգուտներ էր տալիս Սկլերոսի ապստամբությունը։ Բյուզանդիան իր դժվար դրության մեջ նրա օգնությանն էր դիմում—Վարդ Փոկասի ձեռներեցությամբ։ Սկլերոսի անհաջողակ ախոյանը Տայոց կյուրապաղատին ճանաչում էր այն ժամանակից, երբ ինքը Տայքի սահմանակից Խաղտիք նահանգի կուսակալ էր և գիտեր, որ նա միանգամայն պատրաստված մի իշխանավոր էր այդպիսի մի օգնության համար։

Բանակցություններ վարելու համար բյուզանդական կառավարությունը Տայք ուղարկեց մի տարօրինակ մարդու։ Դա մի աբեղա էր Աթոս լեռան վրա գտնվող մի վրացական վանքում, Թոռնիկ148 անունով։ Այս Թոռնիկն առաջ զինվորական էր և Դավիթ կյուրապաղատի զորքում զորավար էր, բայց հետո թողեց զորքը, հեռացավ աշխարհից և մտավ վանք։ Զորավար-աբեղայի անունը զուտ հայկական է, բայց բոլոր աղբյուրները, նույնիսկ և մեր Ասողիկը, անվանում են նրան վրացի, մի հանգամանք, որ վկայում է, թե նա մեկն էր վրացիացած հայերից[3]։ Գալով Տայք, նա մատուցանում է Դավթին կայսերական կառավարության պայմանները, որոնք իսկապես չափազանց ձեռնտու էին և չէին կարող իսկույն չհամոզել խելոք և շրջահայաց կյուրապաղատին։

---

[1] Գիտությունն արդեն ապացուցել է, որ Բագրատունի տոհմը զուտ հայկական տոհմ էր և Վրաստանի Բագրատունիներն էլ այդ տոհմի մի ճյուղն էին կազմում (տ. վերև, գլ. Ա), տ. և Schlumberger, t. I, p. 414:

2 «Պատմութիւն Արիստակեսայ վարդ. Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, եր. 3։

3 Թոռնիկ անվան մենք մի քանի անգամ ենք հանդիպում մեր պատմության մեջ, և այն գլխավորապես Տարոնում, ուր նա հատուկ էր Բագրատունյաց տոհմին։ Իր տեղում մենք կտեսնենք, որ 11—12-րդ դարերում Սասունում կար մի ամբողջ Թոռնիկյան հարստություն (դինաստիա)։ Մեզ թվում է, որ այս Թոռնիկ աբեղան հենց մեկն էր Տարոնի Բագրատունիներից, որ երկար ժամանակ ծառայել է Տայքում, իր ազգակյան Դավիթ կյուրապաղատի զորքի մեջ և ինչպես ամեն մի քաղկեդոնիկ հայ, Տայքում դարձել էր վրացի։ Մենք ունենք շատ մանրամասն և պարզ վկայություններ, թե ի՛նչպես էր կատարվում հայերի այդ ապազգայնացումը (տ. Н. Марр, «Аркаун Монгольское название христиан» աշխատությունը, որ մենք հիշատակել ենք իր տեղում, այս հատորի առաջին գրքում)։ Մեր այս ենթադրությունը կռվան է գտնում Ասողիկի այն ցուցմունքի մեջ, թե այդ Թոռնիկ աբեղա-զորավարի եղբորորդի Զորդուանելը (մի անուն, որ նույնպես հատուկ է Սասունի Թոռնիկյան շրջանին) կառավարիչ էր Դերջանում և Տարոնում (եր. 265)։ Վրաց աղբյուրները հավաստացնում են, թե այս Թոռնիկոսը (հայ անվան հունացած ձև, որից, իհարկե, էությունը չի փոխվում) Աբուղարբ իշխանի որդին է։ Երևի սա նույն Աբուղա Բագրատունի իշխանն է, Գրիգորիսի եղբայրը, որ ապրում էր Տարոնում և որի որդի Թոռնիկը գնաց Կ. Պոլիս։ Վրաց աղբյուրներին էլ հայտնի է (Brosset, «Addit. et Eclair.», p. 187), որ այս բանը տեղի է ունեցել Ռոմանոս Ա կայսրի ժամանակ։ Ուրեմն վրաց աղբյուրներն էլ հաստատում են մեր պնդումը, որ Թոռնիկ վարդապետը հայ էր։

Սպասված օգնությունը 12 հազար մարդուց ավել չէր, բայց դրա փոխարեն խոստանում էին տալ կյուրապաղատին մի շարք գավառներ՝ Խաղտոյառիճ, Կղեսուրոն, Չորմայրին, Կարինը, Բասենը, Մարդաղին, Հարքը և Ապահունիքը։ Կյուրապաղատը համաձայնվում է, բայց այն պայմանով, որ հրամանատարությունը հանձն առնե ինքը՝ Թոռնիկը, որի օգնական է նշանակվում Ջոջիկ իշխանաց իշխանը։ Այս անունն էլ միևնույն հանգամանքն է ցույց տալիս— մի վրացիացած հայ[1]։ Սակայն Տայքը չափազանց փոքրիկ մի երկիր էր, որպեսզի կարողանար ուրիշի տրամադրության տակ դնել 12 հազար շատ ընտիր զինվորներ։ Ո՞րտեղից էր, ուրեմն, վերցնում Դավիթն այդ ուժը։ Այստեղ բացվում է մի շատ հետաքրքրական հանգամանք։ Կյուրապաղատը, իհարկե, ուներ իր սեփական բանակը, բայց, ինչպես կտեսնենք այսուհետև էլ, նա միայն իր սեփական ուժով չէր գործ տեսնում, քանի որ նա չէր կարող լինել բավական համեստ, այլ համարյա միշտ օգտվում էր իր երկու հարևանների—Հայաստանի և Վրաստանի զորքերով էլ, այնքան մեծ էին նրա հմայքն ու դիվանագիտական հմտությունը։ Եվ իրավ, կյուրապաղատի ուղարկած զորքը բաղկացած էր հայերից էլ, վրացիներից էլ[2]։ Այս հայ զորքը Դավիթն ստացավ, անշուշտ, Սմբատ թագավորից։ Այնպես որ, ստացվում էր այնպիսի դրություն, թե հայերը կռվում էին երկու կողմերում էլ, կայսրի համար և կայսրի դեմ։ Պետք է, սակայն, ասել, որ Տայքի օգնական զորքին վիճակված էր երկար պատերազմներ մղել։ Դավիթ կյուրապաղատն առանձին բախտ ուներ։ Հալիս գետի մոտ, 979 թվի ամառվա վերջում, երկու ախոյանները նորից իրար դեմ կանգնեցին։ Սկլերոսը ռազմագիտական ընդունակություններով բարձր էր Փոկասից, և սկսված պատերազմը նույն հաղթական ելքն էր խոստանում ապստամբներին։ Բայց մարդկային հաջողությունների մեջ միշտ գլխավոր դեր կատարել է պատահականությունը։ Երկու հրամանատարները դուրս են գալիս իրար հետ մենամարտելու։ Փոկասին հաջողվեց ձիուց վայր գցել Սկլերոսին։ Եվ այս բավական եղավ, որ վերջինիս հաղթական զորքը գլուխը կորցնե։ Տեսնելով, որ հրամանատարի ձին առանց հեծյալի վազվզում է բանակի մեջ, զորականները կարծեցին, թե Սկլերոսն սպանված է, և ամեն ինչ թողնելով՝ վայրենի փախուստի մատնվեցին։ Այսպես եղավ Փոկասի հաղթությունը։ Նրա զորքը, բայց մանավանդ Դավիթ կյուրապաղատից ուղարկվածը, սկսեց կողոպտել Սկլերոսի բանակը և ահագին հարստություն վերցրեց, որի ամենամեծ մասը բաժին հանվեց Տայոց աշխարհին։ Բայց Սկլերոսը չէր սպանվել։ Ուշքի գալով, նա տեսավ, որ բանակ այլևս չէր մնացել և փախավ անցավ արաբական հողը, ուր նրան կալանավորեցին և շղթայակապ տարան Բաղդադ։ Ապստամբական շարժումը վերջացած էր։ Վարդ Փոկասը մնաց ասիական բանակի գլխավոր հրամանատար։

Այսպիսով երեք տարվա ահավոր ցնցումները միայն մի կողմնակի մարդու—Դավիթ կյուրապաղատին էին տալիս բոլոր օգուտները, առանց նրանից ծանր զոհեր պահանջելու։ Նա տիրում էր ընդարձակ հողային տարածությունների, որոնք դարձնում էին Տայքը մի այնպիսի պետություն,

---

[1] Այս Ջոջիկ անվան մենք հանդիպում ենք Տայք նահանգի Թորթում գավառի Եօշքա վանքի (որ այսօր թուրքական մզկիթ է, բայց թուրքերն էլ անվանում են վանք, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե հայկական է այդ շինությունը) վրացերեն արձանագրության մեջ (տ. Հ. Ներսես Սարգիսյան, «Տեղագրութիւն ի Փոքր և Մեծ Հայս», Վենետ., 1864, եր. 89)։

[2] Schlumberger, l. t, p. 419.

որ իր չափերով նույնիսկ գերազանցում էր Անիական և Վրացական թագավորությունները, առանձին-առանձին վերցրած։ Արարատյան պետությունը հարավից և արևմուտքից շրջապատվում էր Տայոց պետության պատկանող հողերով, և այս հանգամանքն առանձին նշանակություն էր ստանում հայկական անկախության գոյության տեսակետից անգամ։ Այսքան ուժեղանալու հետևանքով էր, որ մեծ կյուրապաղատն իր ձեռքն էր առնում Հայաստանի և Վրաստանի գործերի կարգադրությունը, հանդիսանալով բարձրագույն դատավոր և միջնորդ։ Առաջին անգամ նրան այսպիսի դերի մեջ Հայաստանի նկատմամբ մենք տեսնում ենք նրա մեծ հաջողությունից հետո, որ ունեցավ բյուզանդական ապստամբության հետևանքով։ Սմբատ թագավորը ինչ-որ հաշիվներ ուներ իր հորեղբայր Մուշեղի հետ, որ նստում էր Կարսում, և խլեց նրանից Շատիկ անունով բերդը, որ գտնվում էր Ծակատք գավառում։ Մուշեղը դիմեց մեծ կյուրապաղատի օգնության։ Դավիթը եկավ Շիրակ, բայց ոչ պատերազմական փողերով, այլ հաշտության ձիթենիով։ Սմբատին նա կանչեց Բավաց ձոր գյուղը և այդտեղ հաշտեցրեց երկու թագավորներին, վերադարձնելով Շատիկն իր նախկին տիրոջը։ Սակայն Մուշեղը, ինչպես նկատում է ժամանակագիրը, «ոչ ունէր զերկիւղն աստուծոյ ի մտի, վասն զի բազմաբոյծ բոզիւք կեայր նա»[1]։ Անառակ մարդու համար անմարսելի եղավ այն հանգամանքը, որ Սմբատն այնքան հեշտ դուրս եկավ կալվածական վեճից, և նրա երկիրը մնաց անվնաս։ Ուստի նա Պարսկաստանից բերել է տալիս Աբլհաճ էմիրին, որ, ինչպես երևում է, պատկանում էր Բուվեյհյան հարստությանը[2]։ Այս էմիրը գալիս գրավում է Դվինը և իր արշավանքը հասցնում է մինչև Անիի դռները, ավերելով և այրելով Հոռոմոսի վանքը և ճոպաններով ցած բերելով նրա խաչը (982 թ.)։ Այսքանով, անշուշտ, չէր բավականանա Աբլհաճը, բայց Սմբատ թագավորը դիմադրական ոչ մի շարժում չգործեց, այլ նրա փոխարեն դուրս եկավ Գողթնի էմիր Աբուսլուփը, որին պատկանում էր և Դվինը։ Պատերազմի մեջ Աբուսլուփը հաղթեց նրան, ետ խլեց Դվինը և ուրիշ քաղաքներ։ Իսկ Աբլհաճն այնուհետև դարձավ մի խեղճ թափառական, որ ման էր գալիս Հայոց և Վրաց աշխարհներում, ամեն մեկին ասում էր, թե ինքն այդպես թշվառացել է, որովհետև ցած էր իջեցրել Հոռոմոսի խաչը։ Բյուզանդիա էլ գնաց այդ ցնդված էմիրը, բայց այնտեղ էլ օգնություն չգտնելով, վերադարձավ Հայաստան, ուր խեղդվեց իր ծառաների ձեռքով Ուխթյաց (այժմ Օլթի) քաղաքում։

Առհասարակ, Արևմուտքում Սկլերոսի ապստամբական շարժումներին իբրև հետևանք՝ դարձյալ վրդովվում է մահմեդական ծովը և զանազան էմիրներ արշավանքներ են սկսում քրիստոնյա աշխարհի դեմ։ Այդ արշավանքներին արևմուտքում հաղթականորեն պատասխանում էր Վարդ Փոկասը։ Բայց այսպես չէր Հայաստանում։ Աբուսլուփը, դուրս մղելով Աբլհաճին, արշավեց Վասպուրական, ուր նրա դեմ Աշոտ թագավորն ուղարկեց իշխանաց իշխան Աբլխարիբին մի քանի ուրիշ իշխանների հետ։ Էմիրը վրա է հասնում հայերին Ճուաշ գավառում և տեսնելով, որ նրանք անհոգությամբ թաց են թողել իրենց ձիերն արածելու, շտապում է ամենից առաջ գրավել այդ երամակները։ Հայերը մնում են հետիոտն ու անօգնական, ամ-

1 Ասողիկ, եր. 188։

2 Այսպես ցույց է տալիս Ասողիկի գործածած Դելմաստան անունը, որ անշուշտ Դեյլեմն է, Բուվեյհյանների հայրենիքը։

րոցի մեջ փակված։ Աբուսլուփը նրանց առաջարկում է զինաթափ լինել, խոստանալով այդ դեպքում ազատ թողնել նրանց, որ գնան։ Եվ երբ հայերը հանձնում են իրենց զենքերը, էմիրի զորքերը նրանց սրի են քաշում, իսկ իշխաններին գերի բռնելով, արձակում են մեծ փրկանք ստանալուց հետո։ Մեծ պատուհաս կրեց այդ ժամանակները և բյուզանդական Տարոնը։ Խլաթի և Նփրկերտի էմիր Բատը, որ կոչվում էր «Քուրդ»[1], նորից շինեց Մանազկերտի բերդը, և հարձակվելով Տարոնի վրա, «անմարդացրեց նրան», ինչպես ասում է Ասողիկը, ավերեց Մուշ քաղաքը և քահանաներին կոտորեց ս. Փրկիչ եկեղեցում։

Մի քանի տարի հազիվ անցած՝ նորից վերսկսվում են Հայաստանի սահմանակից էմիրների արշավանքները։ 987 թվին մի ուրիշ Աբլհաճ, Ռովդա որդի անվանված, որ Ատրպատականի էմիրն էր, թողնելով Գողթնի Աբոսլուփին, գալիս վերցնում է Դվինը և հայերից մի քանի տարվա հարկ է պահանջում։ Սմբատ թագավորն ստիպված է լինում խաղաղություն գնել շատ գանձ տալով և ետ է դարձնում Աբլհաճին։ Սակայն հետևյալ տարին նորից Հայոց երկիրն է մտնում մի պատրվակով, որ բավական հետաքրքրական է ժամանակի բարքերը հասկանալու համար։ Հեր (Խոյ) քաղաքի տերը, որ կոչված է Ալեոր, մի որդի ուներ, որն Ապահունյաց գավառից վերադառնալիս, Վասպուրականի սահմանագլխում, մի գյուղի մեջ տեսնում է մի քանի հայ գեղեցիկ երեխաներ, որոնք խաղում էին։ Նա և իր հետևորդները գայլերի պես հարձակվում են նրանց վրա, հափշտակում և՝ դնելով իրենց ձիերի վրա փախչում են։ Սակայն այդտեղ ապրող մի ազատ, Սարգիս անունով, ընկնում է հափշտակողների հետևից, ետ է խլում երեխաներին, իսկ Ալեորի որդուն սպանում։ Վշտից տոչորված Ալեորը մարդ է ուղարկում Աբլհաճի մոտ, խոստանում է նրան տալ իր Հեր քաղաքը, եթե միայն նա իր որդու վրեժը կհանե Վասպուրականից։ Ատրպատականի էմիրը հաճությամբ հանձն է առնում այդ վարձատրությամբ անմարդացնել Վասպուրականը։ Եվ հավաքելով ահագին խաժամուժ բազմություն, գնաց մտավ երկիրը, բաժանեց իր զորքը երեք մասի, նշանակեց, թե յուրաքանչյուր մաս ի՛նչ ուղղությամբ պիտի շարժվի, որպեսզի շրջապատված լինի Վասպուրականի ժողովուրդը։ Գործողությունները պիտի սկսվեին մյուս օրը, բայց գիշերն Աբլհաճը հանկարծամահ է լինում։ Եվ հայ ժողովուրդը, որ կարող էր մեծ կոտորածի ենթարկվել մի այսպիսի չնչին պատճառով, ազատված էր։ Գողթնի ամիրա Աբուսլուփը, իսկույն օգտվելով իր հակառակորդի մահից, նորից խլում է Դվինը, իսկ Սմբատը հիմա էլ Աբուսլուփի հետ էր ստիպված հաշտության պայմաններ կապել, միջնորդ ունենալով Խաչիկ կաթողիկոսին։

Կա մի ուրիշ դեպք էլ, երբ Սմբատ թագավորը երևում է արտաքին քաղաքականության ասպարեզում, բայց այստեղ էլ նա դարձյալ անկախ չէ, դարձյալ ոչ մի ինքնուրույն ուժ չի ներկայացնում։ Այդ դեպքն Ափխազիայի թագավորական գահի հարցն էր։ Այս լեռնային երկրի բնակիչները կուրացրել էին իրենց Թեոդոս թագավորին։ Դավիթ կյուրապաղատը, հարևան երկրների բախտի այս բարձր կարգադրիչը, գործակցության հրավիրեց Սմբատ թագավորին, և միասին նրանք թագավորեցրին Վրաց Բագարատ թագավորի թոռն Սմբատին, որի հայր Գուրգենն ինչ-որ պատճառով դժգոհ

1 Schlumberger, I, p. 679.

մնալով Դավթից, զորք հավաքեց ափխազներից և լեռնային այլ ցեղերից, որոնք Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմում էին ապրում, և եկավ Դավթի դեմ։ Եվ դարձյալ մենք տեսնում ենք, որ կյուրապաղատը գործում է վրաց և Հայոց բանակներով։ Սմբատը, նրա կոչին հետևելով, գնում է նրա հետ միանալու, տանելով իր հետ Վասպուրականի, Սյունյաց և Աղվանից գնդերը։ Երկու հակառակ կողմերը բանակ են դնում Կուր գետի հակառակ ափերին, բայց Գուրգենը, վախենալով Դավթից և նրա դաշնակիցներից, խաղաղություն է խնդրում և այսպես էլ ամեն մեկը վերադառնում է իր տեղը։

Այսպիսով՝ պատմությունը մեզ չէ ցույց տալիս Սմբատ թագավորին և ոչ մի պատերազմի մեջ։ Նա բոլորովին կռվասեր չէ[1], կատարում է իրենից ուժեղների նույնիսկ ապօրինի պահանջները, որպեսզի կարողանա իր աշխարհում խաղաղություն պահպանել։ Բայց և այնպես, Սմբատը հայ թագավորների մեջ միակն է, որ կրում է Տիեզերակալ մեծադղորդ տիտղոսը, որ պիտի նշանակեր մեծ աշխարհներ նվաճող։ Այս պարզապես մի թյուրիմացություն է, որ առաջ է եկել պատմական աղբյուրներին և երևույթներին ոչ բավականաչափ լուրջ քննական հայացքով վերաբերվելուց[2]։ Սմբատը մի շատ համեստ անուն ունի պատմության մեջ, ուր նա կարող է պարծենալ Անիի պարիսպների շինությամբ։ Եվ նվաճող անվանել այդպիսի մի խաղաղ-շինարար գործչի՝ կնշանակի ծաղրել նրան։

984 թվականին վախճանվեց Կարսի Մուշեղ թագավորը և նրան հաջորդեց որդին, Աբաս Բ-ն (984—1029 թթ.), դեռ պատանի հասակում, Ասողիկի ասելով, այդ տղան մինչև թագավորելը ոչ մի հույս չէր տալիս, թե բարի գործերի հաղորդակից կլինի։ Սակայն թագը բոլորովին ուրիշ մարդ դարձրեց նրան,— «այր շքեղ, լի հանճարով և իմաստուն»։ Ամենամեծ բարիքը, որ նա արավ իր ժողովրդին, այն էր, որ վերացրեց Վանանդի ավանդական ավազակությունները, որոնք այդ ժամանակ ժողովրդական դժբախտության կերպարանք էին ստացել։ Կողոպտում ու սպանում էին ոչ միայն բնակություններից հեռու տեղերում, այլ նույնիսկ և մայրաքաղաքի մեջ, ուր գիշերները կողոպտվողների ճիչերն էին լսվում։ Աբասը եռանդով կպավ այս գործին։ Զինվորական ուժ նա բավականաչափ ուներ։ Հայոց աշխարհում անվանի էր նրա կազմած գունդը, որ կարմիր շորեր ուներ հագած։ Հենվելով այս ուժի վրա, նա սկսեց անխնա հալածել ավազակներին,149 մահվան դատապարտելով ամեն մեկին, որ բռնվել էր գողության մեջ, առանց խնայելու հասակն ու դիրքը։ Այսպիսով կատարելապես խաղաղացրեց աշխարհը, այնպես որ, նույն պատմիչի ասելով, «ի գիշերի իբրև տունջեան և յանապատի իբրև յապարանս շրջէին ամենեքեան. շի-

[1] Ճիշտ է, Ասողիկը, խոսելով Սմբատի եղբայր Գագիկ թագավորի մասին, թե նա շատ բերդեր վերցրեց Վայոց Ձորում, Խաչենում և Փառիսոսում «առաւել քան զեղբայր իւր», բայց այս դարձյալ չի նշանակում, թե Սմբատը մի մեծ նվաճող է եղել, մանավանդ որ չգիտենք էլ թե այդ ո՞ր եղբայրն էր—Սմբա՞տը, թե՞ Գուրգենը, որ և Կյուրիկե (Ասող., եր. 256)։

[2] Մեզ թվում է, թե «տիեզերակալ» մի սովորական հաճոյական խոսք էր, որ մատուցվում էր թագավորին «աշխարհի տեր» առօրյա առումով։ Այսպես, Սամուել Անեցին «տիեզերակալ» է անվանում Սմբատ Ա-ին (Սամուել Անեցի, Վաղարշ., եր. 98)։ Այս մտքով էլ Մատթեոս Ուռհայեցին անվանել է Սմբատ երկրորդին տիեզերակալ (եր. 149), իսկ Վարդան Բարձրբերդցին (եր. 122), օգտվելով այս աղբյուրից, արդեն հեղաշրջել է բանն այնպես, թե Սմբատը կոչվում էր Տիեզերակալ։

նութեան և աշխատութեան գործոց պարապ էին»[1], Աբասը նույնիսկ բարքերի ուղղիչ էլ էր հանդիսանում, հարկադրելով իշխաններին և ազատներին, որ նրանք էլ, ժողովրդի նման, չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահեն։ Այսքան բարեպաշտ մի պատանի, իհարկե, չէր կարող ժամանակի եկեղեցական շինարարության անհաղորդակից մնալ։ Եվ Ասողիկը մեծ գովասանքներով պատմում է, որ նա Արշարունյաց գավառի սահմանագլխի վրա Շիրիմ անունով տեղը, ուր, ինչպես երևում է, վանք կար, շրջապատում է մեծածախս պարիսպներով և միաբանության բնակարաններ է շինում։ Այս բարեպաշտական ձեռնարկությունների մեջ երիտասարդ թագավորին, ինչպես երևում է, ղեկավարում էր նրա մայրը, որ Փառիսոսի Սենեքերիմ և Գրիգոր թագավորների քույրն էր և որ, թողնելով աշխարհը, կրոնավոր դարձավ և վանք մտավ։

Սմբատի թագավորության վերջին երեք տարիներում Բյուզանդական Ասիան նորից հրդեհվեց, նորից մեծ շարժումների ասպարեզ դարձավ, թեև Վասիլ կայսրը բոլորովին այս կողմից չէր իր համար վտանգ սպասում, այլ պատրաստվում էր սկիզբ դնել այն պատերազմներին, որոնք պիտի լուծեին կայսրության համար կենսական նշանակություն ունեցող այն հարցը, թե ո՞վ պիտի տիրի Բալկանյան թերակղզում—Բյուզանդիա՞ն արդյոք, թե՞ Բուլղարիան։ Բուլղարական վտանգը, ինչպես առիթ ունեցանք տեսնելու շատ անգամ, դարավոր մի արյունոտ պայքար էր ահագին կայսրության և մի փոքրիկ, բայց շատ քաջ ժողովրդի միջև։ Զմշկիկն արդեն, ինչպես տեսանք, վերջացած էր համարում բուլղարական հարցը, քանի որ Բորիս թագավորը բերվել էր Կ. Պոլիս և հասարակ մի մարդ էր դարձել մագիստրոսի աստիճանով։ Բայց Բուլղարիան այդ հանգամանքից չհուսահատվեց։ Իսկույն թագավորական մի նոր դինաստիա էր հանդես գալիս նրա արևմտյան մասում, և այս անգամ Շիշման անունով բուլղար իշխանավորի որդի Սամուելն էր (976—1016 թթ.), որ այդ հարստության հիմնադիրը հանդիսանալով, բուլղարական դիմադրությունն է մարմնացնում իր մեջ երկար ու համառ պատերազմներով, որոնց սկիզբը դրեց Վասիլ կայսրը, հենց որ նրա պետությունը փոքր-ինչ հանգստություն գտավ Վարդ Սկլերոսի ապստամբությունից հետո։ Ահա այդ պատերազմների պատրաստություններից մեկն էլ այն եղավ, որ կայսրը Բյուզանդական Հայաստանից հայկական մի խոշոր գաղթականություն տարավ Մակեդոնիա, սահմանները պաշտպանելու համար։ Այդպիսի զինվորական գաղութներ, ինչպես գիտենք, վաղուց էին հաստատվում այդ կողմերում և ինքը կայսրն էլ այդ գաղթականներից սերված մի տոհմի էր պատկանում։ Շատ հետաքրքրական է Ասողիկի հաղորդածը, թե Բուլղարիայի կողմերում կայսերական զորքի մեջ ծառայող հայ իշխաններից մի քանիսը ապստամբեցին կայսրի դեմ ու անցան բուլղարների կողմը և նրանցից շատ բարձր պաշտոններ ստացան։ Այսպիսիներից մեր ժամանակագիրը հիշում է երկու եղբայրների, որոնք Դերջան գավառից էին, կոչվում էին Կոմսաձագ150 ազգանունով և նրանցից ավագի անունն էր Սամուել[2]։

[1] Ասողիկ, եր. 197։

[2] Ասողիկը նույնպես հավատացնում է, թե այս Սամուելն էր, դերջանցի հայը, որ Բուլղարիայի թագավորն էր և Վասիլի հակառակորդը։ Նույնը կրկնում են և բյուզանդական ժամանակագիրներից երկուսը (տ. Ասողիկ, Պետերբ., ծանոթ., եր. 389)։ Բայց մեր օրերի պատմագետները չեն ընդունում այս բանը և, ինչպես երևում է, Ասողիկը հեռվից

Հարձակողական գործողությունների սկզբը Սամուելն էր, որ հաղթական մի արշավանք տարավ դեպի հարավ։ Վասիլը մի հակաարշավանք սկսեց նրա դեմ, բայց 986 թվի ամառը սաստիկ պարտություն կրեց Սամուելից Տրայանոսի դռներ կոչված Բալկանյան կիրճում։ Նրա ամբողջ հեծելազորը ոչնչացավ, և որովհետև բուլղարները կտրել էին նահանջի ճանապարհները, բյուզանդական բանակը խուճապի մատնվեց, որի մեջ կայսրը, միանգամայն անպաշտպան մնացած, պիտի իր մահը գտներ, եթե չլիներ հայ հետևազորը, որ, տեսնելով կայսրին այդ դրության մեջ, շրջապատեց նրան և լեռնային դժվար ճանապարհներով տարավ հասցրեց նրան Մակեդոնիա։ Բայց վտանգը միայն այս չէր։ Պարտության հետևանքներն ավելի աղետաբեր էին երևում։ Ձմեռը կայսերական պալատը սարսափի մեջ էր։ Օր-օրի վրա սպասում էին Վարդ Փոկասի ապստամբության։ Եվ իրավ, այսպիսի մի շարժում պատրաստվում էր։ Վասիլի եռանդուն և ինքնագլուխ կառավարությունը մեծ դժգոհություն էր հարուցել բյուզանդական ազնվականության և բարձր բյուրոկրատիայի մեջ, և Վարդ Փոկասը թվում էր, թե կդառնա այդ շատ տարածված տրամադրության ծառացումը։ Բայց հանկարծ վտանգը, ավելի ահավոր, քան նույնիսկ որքան սպասվում էր, երևան եկավ այն կողմից, որ ամենից ապահովն էր թվում, այն է՝ հարավից։ Դարձյալ Վարդ Սկլերոսն էր, ահարկու Սկլերոսը, որ լույս էր ընկնում արաբա-բյուզանդական սահմանների վրա։ Ինչպես գիտենք, նա բանտարկված էր Բաղդադում։ Այստեղ նրա ականջին հասավ Տրայանոսի դռների պարտության լուրը, որից հետո հուշակավոր հայազգի ապստամբն այլևս չկարողացավ տանել իր կապանքները և սկսեց խնդրել ազդեցիկ մարդկանց, որ իրեն ազատեն։ Այս բանը հաջողվեց գլխավորապես Խլաթի և Նփրկերտի քուրդ էմիր Բատի աջակցությամբ։ Բատը Սկլերոսի տրամադրության տակ էր դնում իր զորքը, որի հետ ապստամբը մտնում է Մելիտինե քաղաքը և սկսում է այնտեղ պատրաստվել՝ նորից ապստամբական արշավանքների ձեռնարկելու համար։ Այս շարժումը պիտի կանգնեցներ Վարդ Փոկասը, որ շարունակում էր մնալ ասիական բանակի գլխավոր հրամանատար, բայց 987 թվի ամառը նրա մոտ հավաքվեցին գավառական բոլոր ազնվականները, որոնք, միանալով զորավարների հետ, հայտարարեցին Փոկասին կայսր։ Այսպիսով Ասիայում իրար դեմ կանգնում էին երկու կայսրներ։ Բայց Փոկասը, փոխանակ զենքով կռվելու իր հակառակորդի դեմ, դիվանագիտական ճարպկությամբ նվաճեց նրան։ Բանակցություններ սկսեց Սկլերոսի հետ և համոզում էր, թե իրենք զուր պիտի իրար դեմ զենք բարձրացնեն, քանի որ երկուսն էլ ունեն մի ընդհանուր թշնամի—կայսրին։ Ավելի լավ է, ուրեմն, միանալ և միասին կռվել, իսկ երբ կայսրությունը խլված կլինի Վասիլի ձեռքից, այն ժամանակ այս երկու դաշնակիցներն իրար միջև համաձայնություն կկայացնեն նրա ժառանգության նկատմամբ։ Սկլերոսը համաձայնում է, չնայած որ նրա որդի Ռոմանոսը սաստիկ դիմադրում է այդ բանին և, տեսնելով, որ իր խոսքը չանցավ, հեռանում է հորից և գնում Վասիլ կայսրի մոտ։ Իսկ Փոկասը, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Սկլերոսն արձակել է իր արաբական զորքը և մնացել է անպաշտպան, կալանավորում է նրան և ուղարկում իր ամրոցը, հանձնարարելով իր կնոջը, որ նա ամենայն խստությամբ հսկի կալանավորին։ Այս դավաճանությունը կատաղեցնում է Սկլերոսի բանակը կազմող արաբներին, որոնք և իրենց բարկությունը թափում են անմեղ երկրների վրա, գերելով հարավային գավառները մինչև Ասպահունիք։

Վարդ Փոկասը, մենակ մնալով, դառնում է դրության տեր։ Նրա հետ միացած էր վրացական զորքը, որ ուղարկել էր Դավիթ կյուրապաղատը։ Նրա բանակում էին գտնվում և Տարոնի իշխաններից երկուսը—Գրիգորիս և Բագարատ, որոնք մի ժամանակ էլ Սկլերոսի ապստամբությանն էին մասնակցել և ունեին պատրիկի կոչում։ Սրանց էր հանձնվում Դավիթ կյուրապաղատի զորքի մի մասը, բաղկացած հազար հոգուց։ Բայց այս չէր ցույց տալիս, թե ամբողջ Տարոնն է ապստամբության հետ։ Տարոնցի մի իշխան, որը մագիստրոսի աստիճան ուներ, բայց որի անունը չի պահվել աղբյուրների մեջ, կայսերական մի փոքրիկ բանակով ուղարկվեց Տրապիզոն, որպեսզի այնտեղից առաջանալով ապստամբների թիկունքի ուղղությամբ, դեպի իրեն քաշե նրանց ուժերը, մի բան, որ այս հայ զորավարը գլուխ բերեց հաջողությամբ, չնայած Դավիթ կյուրապաղատի զորքերի համառ դիմադրության[1]։

Մակեդոնական-Հայկական հարստության գոյությունը դարձյալ վտանգված էր։ Մի տարի և ութ ամիս տևեց Փոկասի ապստամբությունը, և այս ամբողջ ժամանակ նա հաղթական էր, նվաճում էր նորանոր երկրներ, ջարդում էր կայսերական զորքերը։ Այնպես որ նա էլ վերջիվերջո գալիս է բանակ դնում ծովի ափին, մայրաքաղաքի դիմաց։ Բայց Վասիլ կայսրը ցույց է տալիս այս՝ վերին աստիճանի վտանգավոր ժամանակում մի պատասովոր եռանդ։ Նա գտնում է մի հզոր դաշնակից, որի հետ արդեն ոչ միայն Փոկասի դեմ պիտի վճռական գործողություններ սկսեր, այլև բուլղարների դեմ։ Այդ նոր դաշնակիցը ռուս ժողովուրդն էր, որի մեծ իշխան Վլադիմիրը մկրտություն ընդունեց և քրիստոնեություն մտցրեց իր երկրի մեջ (988 թ.)։ Նա ամուսնացավ կայսրի քույր Աննայի հետ, և սրա հետևանքով կազմվեց մի սերտ զինվորական միություն բյուզանդացիների և ռուսների միջև։ Ռուսական «դրուժինաները» երևացին Կ. Պոլսում, միացան կայսերական զորքերի հետ։ Բայց Փոկասին վիճակված չէր պարտություն կրել այդ նոր բանակից։ 989 թ. ապրիլին ճակատամարտ էր հայտարարվել երկու կողմերի միջև։ Վարդ Փոկասը, հավատարիմ իր սովորության, մենամարտի կանչեց Վասիլին։ Բայց մենամարտի գնալուց առաջ ցուրտ ջուր խմեց և իսկույն վար ընկավ ու մեռավ։ Նրա բանակը վայրենի անկարգությամբ փախավ։ Փոկասի գլուխը կտրեցին տարան կայսրին, իսկ անհոգին մարմինը մնաց դաշտում։

Այս ապստամբությունն էլ վերջացավ։ Բայց իսկույն սկսվում էր նորը։ Եվ նորից անխոնջ ծերունին էր, Սկլերոսը՝ դարձյալ, որ բարձրացնում էր ընդվզման դրոշակը։ Վարդ Փոկասի կինը, ստանալով իր ամուսնու մահվան լուրը, արձակեց Սկլերոսին, որ նա վրեժ հանի Վասիլից։ Բայց կայսրն այս անգամ հաշտ միջոցներով էր վերջ դնում ալեոր հերոսի այդ նոր շարժմանը։ Նա առաջարկեց Սկլերոսին հաշտ ու խաղաղ անցկացնել կայսրության մեջ իր ծերության օրերը, խոստանալով իր կողմից ոչ միայն չհալածել որևէ կերպով, այլ պահել նրան արտոնյալ դրության մեջ։ Բանակցությունները վարում էր կայսրի եղբայր Կոստանդինը, որ և հաջողեցրեց ամեն ինչ լավագույն կերպով։ Նա տարավ Սկլերոսին ներկայացնելու

եկած և հենց այդ իսկ պատճառով աղավաղված ու չափազանցրած լուր է հաղորդում մեզ (Schlumberger, „l Epop. Byz.“. t. II, Paris, p. 35, n. 5)։

[1] Schlumberger, t. I, p. 747.

իր եղբորը, բայց խեղճ ծերունին հանկարծակի կուրացավ։ Այս դժբախտությունից միանգամայն խեղճացած և ընկճված էր նա, երբ ներկայացավ կայսրին երկու ծառաների օգնությամբ, որոնք նրա ձեռքը բռնած՝ տանում էին։ Եվ իրավունք ուներ Վասիլը, այդ տեսարանի առջև, ասել. «Ահա նա, որից ես այնքան սարսափում էի, որ մեզ ամենքիս դողացնում էր, նա գալիս է ինձ մոտ աղաչավորի տեսքով և նրան առաջնորդում են ձեռքը բռնած»[1]։ Բայց և այդպես, կայսրը նրա հետ անհիշաչարությամբ վարվեց։ Մի առանձին տեղ նշանակեց նրա բնակության համար, առատ ու խաղաղ ապրուստ ապահովեց նրան։ Բայց դժբախտացած հերոսը երկար չապրեց այդտեղ։ Նա մեռավ 991 թվին։

Վարդ Փոկասին աջակցած բոլոր իշխանների հետ Վասիլը վերջացրեց իր հաշիվները, ամեն մեկին պատժելով այս կամ այն կերպ։ Մնում էր Տայքի կյուրապաղատ Դավիթը, որին պատժելու համար կայսրն ուղարկեց մի ամբողջ բանակ։ Սակայն Դավիթը դիմադրության որևէ փորձ անգամ չարավ, այլ, ընդհակառակն շտապեց իր կատարյալ հնազանդությունը հայտնել կայսրին։ Նրան ներում շնորհվեց, քանի որ արդեն ծեր էր նա։ Բայց, որովհետև անզավակ էլ էր, ժառանգ չուներ, ուստի նրան առաջարկվեց, իբրև պայման, որ նրա մահից հետո բոլոր նրա երկրներն անցնեն կայսրությանը։ Դավիթը համաձայնություն տվեց և այս մտքով կտակ կազմեց։ Այս համաձայնությունը Վասիլի մի առանձնատեսակ քաղաքականությունն էր՝ հարևան փոքրիկ պետությունները կլանելու համար, և այդ քաղաքականության առարկա էր դառնում նաև Հայաստանը։

Դավթի դեմ ուղարկված զորքի մի մասն էլ ուղղվեց Թոռնիկ աբեղայի եղբորորդի Ջորդուանել Մագիստրոսի դեմ, որ Վարդ Փոկասի կողմնակիցներից էր և շարունակում էր ապստամբական դիրք պահպանել, ամրանալով կա՛մ Տարոնում, կա՛մ Դերջանում։ Ջորդուանելը երկու անգամ կովինալով ... հաղթվեց բռնվեց բյուզանդական այս զորաբաժնի հետ, երկրորդ անգամը հաղթվեց և սպանվեց։ Այս դեպքը պատահում էր 990 թվականին։ Սրանից քիչ առաջ, 989 թվին, վախճանվեց Սմբատ թագավորի եղբայր Գուրգենը կամ Կյուրիկեն, Գուգարքի առաջին թագավորը։

4. Գագիկ Ա (990—1020 թթ.): *Ինքը Սմբատը վախճանվեց հաջորդ 990 թվականին (ըստ Ասողիկի՝ նույն 989 թվին)։ Նայելով ժամանակակից և ականատես Ասողիկի պատմած մի քանի խորհրդավոր հանգամանքներին, կարելի է ասել, որ Սմբատը բնական մահով չմեռավ, այլ սպանվեց՝ գուցե կարելի է ասել, որ Սմբատը ... ժամանակակիցների աչքում այսպիսի մի վախճանավորման միջոցով։ Իր ժամանակակիցների աչքում այսպիսի մի վախճան արդարացնելու համար՝ Ասողիկն ասում է, թե Սմբատն իր կյանքի վերջում մի քանի անօրինություններ գործեց, որոնք չէին կարող անպատիժ թողնվել աստծու կողմից։ Այդ վատ գործերից մեկը բնորոշ է ժամանակի բարքերի տեսակետից։ Թագավորն ուներ Անիում խոտի և օրանի (հնձած, դեռ չկալսած հացահատիկներ) դեզեր, որոնք մի օր հրդեհվեցին անհայտ պատճառից։ Քաղաքում կար մի ցնորված մարդ, որ առավոտյան եկեղեցի էր գնացել և տեսնելով կրակը, որով խոտնոց էին ծխում, հավաքում է մի քանի կտոր, որ տանի։ Եվ երբ հարցնում են նրան, թե ինչ է անում, նա պատասխանում է, թե գնում է թագավորի դեզերն այրելու։ Այս բանը պատմում են թագավորին, որ և հետևցնում է, թե դեզեր կրա*կողը, ուրեմն հենց այդ խենթն է եղել։ Ու հրամայում է կուրացնել նրան, ապա և եղեգով ու ծղոտով պատել նրան և այրել։ Հրամանը, իհարկե, կատարվում է։ Խանձված մարդու դիակը դուրս է նետվում քաղաքից։ Մի քանի կրոնավորներ անցնելիս նկատում են դիակը և կատարում են իրենց քրիստոնեական պարտքը դեպի իրենց կրոնակիցը և թաղում են նրան։ Թագավորն իմանում է այս բանը և կատաղած հրամայում է հանել դիակը գերեզմանից և շներին գցել։ Առավոտյան նույն կրոնավորները, դուրս գալով քաղաքի դռնից, որ իրենց վանքը գնան, տեսնում են շների պատառոտած դիակը, լաց են լինում այս տեսարանի վրա և անեծք են արտասանում, որ թագավորի ոսկորներն էլ հանվեն գերեզմանից։

Երկրորդ մեղադրանքն այն էր, որ նա դրժեց Գողթնի էմիրին տված իր երդումը և օգնական զորք էր տալիս մի ինչ-որ Սալարի, որպեսզի ամիրայացնի նրան, եթե չվախենար իր Գագիկ եղբոր նենգությունից։ Այս մութ ակնարկը ցույց է տալիս, թե Սմբատի և Գագիկի միջև շարունակվում էր հին թշնամությունը և Գագիկն այլևս հեռու չէր պահում իրեն, այլ գտնվում էր Անիում, ուր և, ինչպես երևում է, խիստ ընդհարում ունեցավ եղբոր հետ՝ Սալարին օգնություն խոստանալու առթիվ։ Իսկ երրորդ հանցանքը, «սարսափելի ևս», ինչպես ասում է պատմիչը, այն էր, որ նա կնության առավ իր քրոջ աղջկան։

Եվ ահա, ըստ կրոնավորական սովորության, երկնքից իջեցվում է աստվածը՝ այդ հանցանքները մահով պատժելու համար։ Ամենից առաջ պատժվում է կինը։ «Եւ անդէն եհար Աստուած ցասմամբ մեծաւ նախ զկինն զայն և սատակեաց»։ Սմբատը մեծ սուգ է անում կնոջ վրա, և ահա նույն հարվածով գնում է և նա կնոջ հետևից։ «Հարաւ և ինքն,— ասում է պատմիչը,— բորբոքմամբ տապոյ բոցակէզ ցաւոց»։ Այս խոսքերը թունավորման տեսարանն են բերում մեր աչքի առջև։ Երևի հենց այս բանի մահացումն է պատճառ դառնում, որ երբ թաղում են թագավորին Անիում, ժողովրդի մեջ զրույց է սկսում պտտել, թե Սմբատը մեռած չէ, այլ քնած է գերեզմանի մեջ։ Գագիկը, որ հենց մահվան օրն շտապել էր գահ բարձրանալ, հրամայում է բաց անել գերեզմանը, որպեսզի ամենքը տեսնեն, թե Սմբատը հիրավի մեռած է։ Այսպիսով, շեշտում է մեր պատմիչը, կատարվեց կրոնավորների անեծքը։ Բայց հետաքրքրականն այն չէ, թե կատարվե՞ց արդյոք որևէ անեծք, այլ այն, թե ո՞վ էր թագավորին սպանողը։ Ասողիկը խորին լռություն է պահպանում այս մասին, բայց մի քանի տող հետո ինքն իրեն մատնում է, երբ թվելով Գագիկ թագավորի գործերը, փոխանակ հրճվելու՝ ասում է. «Ասա՛ղ միում չարին, որ արգել զբան գովեստի պատմութեան իմոյ»[1]։ Եվ այդ չարը, որ արգելում է գովեստի խոսք ասել, անշուշտ այն էր, որ Սմբատին սպանողը հենց ինքը Գագիկն էր։ Մի եղեռնագործություն, որ ըստ ամենայնի հնարավոր էր երկու եղբայրների միջև ստեղծված հարաբերությունների հետևանքով։ Բայց կարելի է ասել, որ Գագիկն իր երկարատև թագավորության գեղեցիկ գործերով մոռացնել տվեց եղբայրասպանի իր ծանր հանցանքը։

Նա իր հոր արժանավոր ժառանգ հանդիսացավ և Բագրատունի թագավորների մեջ առաջիններից մեկը եղավ։ Իր եղբոր հետ համեմատած՝ նա ավելի քաջ էր, պատերազմասեր ու անվախ։ Այսպես, Արիստակես Լաս-

¹ Ibid, p. 31.

¹ Ասողիկ, եր. 256։

տիվերտցին ասում է, թե նա «այր հզօր էր, յաղթող ի պատերազմի»[1], իսկ Ասողիկը, միևնույն հանգամանքը շեշտած լինելու համար, ասում է, թե Գագիկը շատ բերդեր փչեց Սյունյաց (Վայոց Ձորի) և Աղվանից (Խաչենի[2] և Փառիսոսի) իշխաններից, մի բան, որ, ինհարկե, չէր կարող տեղի ունենալ առանց նրանց հետ պատերազմներ մղելու, որոնց մասին, սակայն, ոչ մի տեղեկություն չի հասել մեզ։ Որ Գագիկն իր իրավունքները պաշտպանել գիտեր նվաճողի բոլոր անգթություններով, չքաշվելով նույնիսկ ամենամոտիկ ազգակցի հետ կռվի բռնվելուց, դրա ապացույցն էլ կտեսնենք շուտով։ Իսկ թե արտաքին հարաբերությունների մեջ ո՛րքան ուժեղ և անկախ էր նա իրեն զգում, ցույց է տալիս այն հանգամանքը, որ երբ Վասիլ կայսրը 11-րդ դարի սկզբում եկել էր Բյուզանդական Հայաստանի սահմանագլուխը, և Վրաց ու Հայոց թագավորներն շտապեցին ներկայանալ նրան, մենակ Գագիկն էր, որ իմանալով հանդերձ, թե կայսրն իրեն է սպասում Բագրևանդում, չգնաց նրա մոտ, համարելով այդ «փոքրություն» իր համար, երևի, այն պատճառով, որ Վասիլը տեղացի թագավորներին վերաբերվում էր ոչ թե իբրև հավասար իշխանավորների, այլ իբրև ստորադրյալների։ Իսկ այսպիսի մի դիրքի մեջ իրեն պահելու համար հարկավոր էր, որ Գագիկն ահ չունենար Վասիլի պես մի կայսրից, կամ, ուրիշ խոսքով, բավականաչափ ուժ զգար իր մեջ։ Տարաբախտաբար մեր ժամանակագիրները—Ասողիկ և Լաստիվերտցի—չափազանց համառոտախոս են նրա վերաբերմամբ, մինչդեռ Գագիկի թագավորությունը, անպայման բեղմնավոր թե՛ ներքին և թե՛ արտաքին գործերի տեսակետից, տևել է ամբողջ 30 տարի։ Հայտնի է միայն ընդհանուր առմամբ, որ այդ երեսնամյակները եղել են խաղաղության և մեծագործ ձեռնարկությունների մի երկար ժամանակամիջոց, երբ Անիի թագավորությունը գտնվում էր իր բարձրության գագաթնակետին և լիուլի իրականացնում էր ժողովրդական բարօրությունը։ «Ոչ ոք չկար,— բացականչում է Ասողիկը,— որ զարհուրեցներ Հայաստանցիներին»։ Իսկ մենք արդեն գիտենք, թե որքան մեծ էր այս բարիքը Հայաստանի բնակիչների համար։ «Զի էր,— շարունակում է նույն վկան,— այր սրամիտ և վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաշխելն. և զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց»[3]։ Աչքի ընկնող մի երևույթ է մանավանդ այս վերջին հանգամանքը—ժողովրդին այս կամ այն տեսակ հարկից ազատելու բարեգործությունը, որ կատարվում էր հոգու փրկության համար ո՛չ միայն թագավորների, այլև թագուհիների և իշխանների կողմից, մի բարեգործություն, որը հաճախանում է մանավանդ այն ժամանակները և որը բազմաթիվ վիմական արձանագրությունների բովանդակությունն է դառնում։

Իսկ դրսում հայաստանցիներին զարհուրեցնել կամեցողներ քիչ չկային։ Բյուզանդական Ասիան խաղաղվել էր ներքուստ, որովհետև ապստամբություններ այլևս չկային, և Վասիլ կայսրը կարող էր ավելի հանգիստ կերպով շարունակել պատերազմները Բուլղարիայի դեմ, որոնք փոփոխակի

[1] Եր. 8։

[2] Արցախի Խաչեն գավառում Գագիկն իր իշխանությունը տարածել է, ինչպես երևում է, մինչև Խաչենագետի այն մասերը, ուր նա դուրս է գալիս դաշտը։ Նրա անունը կրող հուշարձանի մենք հանդիպում ենք Շահբուլաղ անունով մեծ աղբյուրի մոտ (տ. Լեո, «Իմ Յիշատակարանը», Շուշի, 1890, էր. 330)։

[3] Եր. 256։

հաջողություն ունեին և ընթանում էին ընդհատումներով։ Այսպիսով, Ասիայի կողմից Բյուզանդիային սպառնալ շարունակում էին արաբ էմիրները և մանավանդ Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆները, և կայսրը ստիպված էր լինում երբեմն ինքը գնալ Ասիա՝ պատերազմական գործողությունները անձամբ ղեկավարելու համար։ Իսկ Հայաստանին սպառնացող մահմեդական իշխողներից Գագիկի ժամանակ ուժեղ էր միայն մեկը, Ատրպատականի Աբլհաճ էմիրի որդի Մամլունը, որ հորը հաջորդելուց հետո խիստ սպառնական դիրք բռնեց Հայաստանի և Վրաստանի վերաբերմամբ։ Սկզբնապատճառ հանդիսացավ Դավիթ կյուրապաղատը։ Նա թեև բյուզանդացիներից ստացել էր, ի միջի այլոց, և Ապահունյաց գավառը, բայց այստեղի շատ կարևոր Մանազկերտ բերդը կռվախնձոր էր դարձել նրա և տեղական էմիրների միջև, որոնք վաղուց սովոր էին այդ բերդն ու Խլաթ քաղաքն իրենց սեփականություն համարել։ Տայքի կյուրապաղատը, կամենալով միանգամ ընդմիշտ վերջ դնել Մանազկերտի հարցին և օգտվելով այն հանգամանքից, որ այդ կողմերի ամենակարող քուրդ էմիր Բադը մեռել էր, թողնելով իր իշխանությունն իր քեռորդուն,—պաշարեց Մանազկերտը, վերցրեց, և հանելով այնտեղից մահմեդական բնակիչներին, հայ ու վրացի է բնակեցնում նրանց տեղ։ Բայց այս բանը մեծ գրգռում է առաջացնում մահմեդական աշխարհում։ Ատրպատականի Մամլուն ամիրան խիստ պահանջ է ուղարկում Դավթին—կամ ետ վերցնել կարգադրությունը և թույլ տալ, որ մահմեդականներ էլ բնակվեն Մանազկերտում, կամ պատերազմ ընդունել։ Դավիթն ընդունում է վերջինը։ Մամլունն իր բանակով գալիս է Տաղկոտն գավառը, իսկ Դավիթն այս անգամ էլ մենակ չէ։ Նրա հետ են Գագիկ, Աբաս և Վրաց Բագարատ թագավորներն իրենց զորքերով, որոնք հավաքվում են Բագրևանդի Վաղարշակերտ քաղաքում։ Բայց Մամլունի զորքը, տեսնելով դաշնակիցների թվական գերազանցությունը, գիշերով թողնում է իր դիրքերը և վերադառնում իր երկիրը, բայց հրդեհելով ճանապարհին պատահած բոլոր գյուղերը։

998 թվականին նույն Մամլունն ավելի մեծ պատրաստությամբ պատերազմ է հայտարարում Դավիթ կյուրապաղատին, մտադրված լինելով նվաճել թե՛ Հայաստանը և թե՛ Վրաստանը։ Մատթեոս Ուռհայեցին կենդանի գույներով է նկարագրում Մամլունի այս արշավանքը, աղբյուր ունենալով, անշուշտ, այնպիսի մի պատմվածք, որի մեջ անմասն չի եղել ժողովրդական բանահյուսությունը։ Նա գրում է.

«Զօրաժողով արարեալ անօրէն և պիղծ բռնակալն Պարսից Մամլան, ամիրապետն անօրինաց և ժանդաբարոյ գազանութեամբն իւրով իբրև գարինաթբու վիշապ յարձակեալ գայր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի և խորհեցաւ կոտորած մեծ ածել ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ գայր խաղայր ահագին և անհամար բազմութեամբ և ելից զլերինս և զդաշտս զօրօք իւրովք։ Եւ յահէ անօրինին սասանեալ դողայր ամենայն երկիր, և սրով և հրով գերեաց զբազում տեղիս. և զեկեղեցիս հրկէզ արարեալ խափանեաց յօրհնութեանցն և բազում բանս հայհոյութեանց ի վեր ի բարձունս խօսեցաւ առ Բարձրեալն։ Եւ անդ էր տեսանել զմեծ և զահեղ կոտորածն քրիստոնէից ի յահէ չար գազանին այն, զի զբարկութիւն չար թինիցն իւր որպէս զմաղձ դառնաշունչ եհեղ ի վերայ հաւատացելոցն. և գայր հասանէր այսքան բազմութեամբն յԱպահունեաց գաւառին, յերկիրն Դավթի կիւրապաղատին՝ Վրաց իշխանին։ Եւ գրեաց թուղթ առ աստուածասէր և սուրբ այրն

Աստուծոյ Դաւիթ կիւրոպաղատն եթէ չարաչար բանիւք սպառնացեալ նմա և խօսէր զայս ինչ. «Մի՛ խաբեսցէ ոք զքեզ, ո՛վ այր դու Դաւիթ, ամենաքաջ և ժանդ և նենգեալ ալեօքդ, զի ահա՝ թէ ոչ վաղվաղակի առաքեսցես ինձ զհարկս տասն տարւոյ և պատանդ զորդիս ազատաց քոց և գիր ծառայութեան ինձ՝ այժմ հասեալ գամ ի վերայ քո մեծաւ զօրութեամբս իմով և ո՞վ իցէ այն, որ փրկեսցէ զքեզ ի ձեռաց իմոց, զի ահա չարաչար և դառն նեղութիւն ածից ի վերայ քո, պիղծ և դառն ալևոր»։ Եւ այսպիսի բազում սպառնալեօք որոտայր ի վերայ նորա»[1]։

Այս անգամ էլ Դավթի հետ են Հայաստանն ու Վրաստանը։ Բայց այս անգամ ոչ նա, ոչ մյուս երկու թագավորները չկան միացած բանակի հետ[2], որի առաջնորդներն են առանձին-առանձին հրամանատարներ։ Հայոց բանակի հրամանատարն էր Վահրամ իշխան Պահլավունին, մի նշանավոր գործիչ, որի տոհմի և գործունեության մասին մենք կխոսենք առանձին։ Այս զորքը բաղկացած էր վեց հազար հոգուց, իսկ Վահրամ իշխանի օգնականներն էին նրա որդի Սմբատ մագիստրոսը և Աշոտ մարզպանը։ Վրաց թագավոր Գուրգենն ուղարկել էր նույնպես վեց հազար մարդ՝ Փերսի իշխանի հրամանատարությամբ, որ իշխանաց իշխան Ջոջիկի որդին էր։ Իսկ Տայոց զորաբանակի հրամանատարն էր Գաբրիելը, Ոչոպնտիրի որդին։ Այս միացած բանակը հավաքվում է Սուկավ լեռան վրա, իսկ Մամլանը, ահագին խաժամուժ բանակի գլուխ անցած, Թավրիզ քաղաքից, որ իր բնակավայրն էր, Վասպուրականի վրայով անցնում է Ապահունյաց գավառը։ Այստեղ է հարդարվում ռազմադաշտը Ծմբո անունով գյուղի մոտ։ Երկու կողմերը երկար կանգ են առնում իրար դեմ։ Հայ-վրացական բանակը տեսնում է իր սակավությամբ թշնամու դիմաց, որի թիվը հասնում էր, ինչպես ասում էին, հարյուր հազարի, ուստի անվճռական դրության է մատնվում։ Ոչ միայն բանակը, այլև ամբողջ աշխարհը միայն երկնքի օգնության վրա էին հույս դրել, և այս պատճառով ամեն տեղ աղոթքներ էին անում, հայցելով աստծու օգնությունը, իսկ թագավորներն առատությամբ նվերներ էին բաժանում վանքերին ու աղքատներին։ Մամլանի բանակը տեսնում էր այս անվճռականությունը և ավելի ևս ինքնավստահությամբ լցված, թե ինքն է ուժեղը և ինքը պիտի հաղթի, ստիպում էր հայերին և վրացիներին ընդունել պատերազմը։ Բայց երբ սրանք մերժեցին, ասելով, թե պիտի պատերազմեն մի ուրիշ օր, թշնամին, այլևս ավելորդ համարելով սպասելը, ինքը հարձակում սկսեց։ Հայ-վրացական բանակն ընդհանուր հրամանատարություն չուներ։ Յուրաքանչյուր ազգային զորամաս ինքնավար էր և իր պատասխանատվությամբ էլ գործում էր ճակատամարտի մեջ։ Այս անհամարությունը, սակայն, վնասաբեր չեղավ դաշնակիցների համար։ Ընդհակառակն, յուրաքանչյուր ազգային զորամաս կռվեց մեծ քաջությամբ։ Այստեղ էր, որ Վահրամ Պահլավունին ցույց տվեց քաջ և տաղանդավոր զորավարի առաքինությունները, և հայերը նրա ղեկավարությամբ մի շեղակի հարձակում գործելով թշնամու աջ թևի վրա, ուր կուտակված էր խաժամուժ զորքի մեծ բազմությունը, քաջության հրաշքներ ցույց տվեց և իր ուժեղ հարվածներով փախուստի դարձրեց այդ խառնիճաղանջ կույ-

1 Եր. 34—36։

2 Ասողիկը և Մատթեոս Ուռհայեցին տարբեր կերպով են պատմում այս պատերազմի մանրամասնությունները։ Գերադասելին, իհարկե, Ասողիկն է իբրև ժամանակակից վկա

տերը, իսկ ինքը Վահրամը կանգ չառնելով, անխնա հալածում է նրանց։ Փառավոր քաջագործություններ են ցույց տալիս և վրաց զորավարներից Գամրեկելի եղբայրները, որոնք Մոսխունի տոհմին էին պատկանում։ Եվ այսպես՝ դաշնակիցները, ընդհանուր ջանքերով, իրականացնում են մի մեծ հաղթություն, ջրում և հալածում են Մամլանի բանակը մինչև Արճեշի դըռները, իսկ իրենք շատ չնչին կորուստներ են ունենում[1]։

Այս հաղթությունից մի տարի և քիչ ավել անց՝ 1000 թվականի զատկին մեռնում էր Դավիթ կյուրապաղատը։ Թեև նա արդեն խորին ծերության էր հասել, բայց բնական մահով չէր մեռնում, այլ, ինչպես հավաստանում է Ուռհայեցին, սպանվեց վրաց եպիսկոպոս Իլարիոնի ձեռքով։ Ինչպես երևում է, Տայքի իշխաններն էին դավադրություն կազմել նրա կյանքի դեմ, և Իլարիոնը, իբրև այդ դավադրության գործիք, թույն խառնեց հաղորդության մեջ և տվեց Դավթին։ Բայց երբ այս միջոցը չներգործեց, աստծու պաշտոնյան սպանության ավելի բացարձակ միջոցի դիմեց։ Գիշերը, երբ կյուրապաղատը հանգիստ քնած էր, եպիսկոպոսը մտավ նրա մոտ, հանեց բարձը նրա գլխատակից, դրեց նրա բերանին և ինքն էլ, ընկնելով բարձի վրա, խեղդեց իր զոհին։ Այս մահը մեծ ցավ պատճառեց Այսրկովկասի քրիստոնեության, որի համար Դավիթը միշտ լավ դեր էր կատարել իր խաղաղասեր բնավորությամբ։ Ասողիկը, հայտնելով, թե կկամենար երկար ողբերով հիշատակել այդ վախճանը, բայց ստիպված է համառոտախոս լինել և միայն մի կարճ հիշատակով բավականանալ, գրում է. «Զի էր այրն հեզ և հանդարտ, առաւել քան զամենայն թագաւորս, որ ի ժամանակս յայս։ Եւ եղև նա պատճառ խաղաղութեան և շինութեան ամենայն արևելեայց, մանավանդ Հայոց և Վրաց. զի զգոռ պատերազմաց յամենայն կողմանց դադարեցոյց նա, յաղթող եղեալ ամենայն շուրջանակի ազգաց, և ամենայն թագաւորք կամաւ հնազանդեցան նմա»[2]։ Վասիլ կայսրը այդ միջոցին գտնվում է Կիլիկիայում, ուր ընտրել էր իր համար ձմեռոց՝ Սիրիայում եգիպտական զորքերի դեմ պատերազմներ մղելուց հետո։ Լսելով կյուրապաղատի մահը, նա գնաց իր կայսրության արևելյան կողմերը՝ Տայքի ժառանգությունն անձամբ ստանալու համար։

Պետք է ասել, որ այն թվականը, երբ կայսրը կատարում էր իր այս ճանապարհորդությունը, այն է՝ 1000 թվականը, քրիստոնյա աշխարհում, թե արևմուտքում և թե արևելքում, մեծ տագնապ էր ներշնչում։ Միջնադարյան միտքը, դյուրահավան, միստիք, նեղված հարյուր ու մի նախապաշարմունքներով և գուշակություններով, դեռ վաղուց ինքն

1 Վահրամ Պահլավունու եղբորորդի Գրիգոր Մագիստրոսը նրա մահվան առթիվ գրված մի նամակի մեջ պատմում է, թե այդ զորավարի քաջագործությունների վրա տաղեր էին կազմել, որոնք երգվում էին պարերով նույնիսկ Վրաստանում։ Բացի այս ճակատամարտից՝ Վահրամը վրացիների հետ ուրիշ անգամներ էլ եղել է պատերազմների մեջ («Գրիգոր Մագիստրոսի Թըղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, եր. 40)։

2 Ասողիկն այդ կորստի թիվը հինգ հոգի է ասում, որոնք սպանվեցին վրացիների կողմից կռվի սկզբին, երբ միայն առանձին անհատների մենամարտություններ տեղի ունեին։ Առհասարակ այս մեծ հաղթանակը կարելի է բացատրել թշնամի բանակի մեջ տեղի ունեցած մի մեծ խուճապով։ Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ կռիվը տեղի ունեցավ գիշերը, երբ լուսինն էր պարզ լուսավորում, լեռներում քիչ անձրև էր եկել, ուստի բարձրությունները փայլատակում էին իբրև հուր։ Թշնամին կարծեց, թե այդ բոլոր տեղերը լցված են քրիստոնյաներով և փախավ։

3 Եր. 275։

իրեն տրամադրել էր այն սպասողությամբ, թե այդ տարին, երբ լրանում էր Քրիստոսի ծննդյան հազարամյակը, պիտի կործանվեր աշխարհը և վերջին ահեղ դատաստանը պիտի տեղի ունենար։ Այս պատճառով յուրաքանչյուր նույնիսկ սովորական բնական երևույթ ֆանատիկոսական սարսափ էր տարածում հավատացյալների մեջ, իբրև նախազգուշակում, թե ճիշտ որ եկել է կամ գալիս է վերջին ժամը։ Փոթորիկը, որոտը, կայծակի սաստիկ փայլատակումը—ամեն ինչ սոսկում էր պատճառում։ Ամեն մեկն շտապում էր բարի գործերով իր համար արտոնված տեղ պատրաստել վերջին դատաստանի առջև։ Ողորմություն էին տալիս, մեծագին նվերներ էին անում, և ամենից շատ, իհարկե, թագավորները, իշխանները, ունևորները, կալվածատերերը։ Ամեն մեկն աշխատում էր, իր անձն էր ստորացնում, իր եսն էր մոռանում՝ սոսկալի դատավճռից ազատվելու համար։ Եվ Վասիլ կայսրն էր, որ այդ ընդհանուր հուսահատական տրամադրության մեջ շարունակում էր ներկայացնել իրական քաղաքականությունը, հոգալ պետության իսկական շահերը։ Նրա այս ճանապարհորդությունը կարող է ամենալավ ապացույցը համարվել, թե ինչպես էր նա վերաբերվում կրոնական նախապաշարմունքներին։ Հենց այսպիսի մի ժամանակ, երբ ամբողջ աշխարհը մեռնելու էր պատրաստվում, կայսրը նոր հիմքեր էր կերտում իր արևելյան քաղաքականության համար։ Սեբաստիայում ոչ-քաղկեդոնիկ հայերը գանգատվեցին նրան, որ տեղական հույն հոգևորականությունն իրենց հալածում է, արգելելով մինչև իսկ եկեղեցում կոչնակ զարկել։ Կայսրը նրանց կատարյալ կրոնական ազատություն է շնորհում։ Երզնկայում նրան ներկայանում է Նփրկերտի և Խլաթի Քուրդ էմիրը, որ Բատի քեռորդին էր։ Վասիլը տալիս է նրան մագիստրոսի աստիճան և հրամայում է Չորրորդ Հայքի և Տարոնի իր զորքերին ամեն անգամ՝ երբ կուզե էմիրը, օգնել նրան զինակցությամբ։

Գալով Տայք, կայսրը կանգ է առնում Հավճիչ անունով լեռան վրա, ուր գտնվում էր և համանուն քաղաքը։ Այստեղ նրան ներկայացան Տայքի ամբողջ ազնվականությունը, ափխազների Բագարատ թագավորը և նրա հայր Գիորգին, որ Վրաստանի թագավորն էր։ Ամենից մեծ պատիվներ Վասիլն անում է ափխազական թագավորին, որին տալիս է կյուրապաղատության աստիճան, մինչդեռ նրա հորը տալիս էր մագիստրոսի աստիճանը[1] և արձակում էր երկուսին իրենց երկրները։ Իսկ Տայքի ազնվականությունն ենթարկվում է մի ամբողջ աղետի։ Վասիլը տիրանում է Դավիթ կյուրապաղատի բոլոր կալվածներին, համաձայն նրանից առած գրավոր խոստման։ Տայքը, Բասենը, Ապահունիքը կցվում են կայսրության։ Եվ որպեսզի այս երկրներում դժգոհ տարրեր չթողնի, նա ընտրեց տեղական ազնվականներից այնպիսիներին, որոնց հավատարմության մասին կասկած չուներ, և դրանց պաշտոնի դրեց։ Իսկ մնացած ազատներին, հանելով նրանց իրենց կալվածներից, ուղարկեց Կ. Պոլիս՝ այնտեղ մշտապես բնակվելու համար։ Այսպես էր,

[1] Որպեսզի ընթերցողը պարզ հասկացողություն ունենա այս աստիճանների մասին, պիտի ասենք, որ 11-րդ դարում Բյուզանդական կայսրության մեջ գոյություն ունեին 15 աստիճաններ, որոնք տրվում էին պաշտոնյաներին։ Ահա այդ աստիճանների կարգը, հաշվելով վերևից դեպի ցած՝ 1. կեսար, 2. սեվաստ, 3. նովելեսիմոս, 4. կյուրապաղատ, 5. պրոտոպրոեդրոս, 6. պրոեդրոս, 7. մագիստրոս, 8. վեստարքոս, 9. վեստ, 10. անթիպատ, 11. պատրիկ, 12. պրոտոսպաթարիոս, 13. սպաթարիո-կանդիդատ, 14. սպաթարիոս, 15. կանդիդատ (**Н. Склабанович,** «Византийское государство и церковь в XI веке», СПБ, 1884, стр. 149—156).

ինչպես տեսանք շատ անգամ, բյուզանդական սիստեմն այն բոլոր երկրների վերաբերմամբ, որոնք կայսրության հպատակության մեջ էին մտնում, ունենալով իրենց ազգային ինքնուրույն կազմակերպությունը։ Առաջին բանը, որ ձեռնարկում էր բյուզանդականությունն այս տեսակ երկրների վերաբերմամբ, այդ նրանց ապազգայնացումն էր ստիպողական միջոցներով։

Տայոց աշխարհից կայսրն ուղևորվեց դեպի հարավ, դեպի Վանա լիճը։ Երբ Վանանդի սահմանների մոտ էր, որ նրան ներկայացավ Կարսի Աբաս թագավորը, որ երիտասարդական ավյունով ձիավարում էր կայսրի առջև, կրելով քաջության համար իր նշանները։ Վասպուրականի թագավոր Սենեքերիմն էլ իր Գուրգեն եղբոր հետ գնաց տեսնելու Վասիլին։ Ամենքն էլ առատ պարգևներ ստացան կայսրից—ձիեր, ջորիներ, զարդեր։ Այցելելով Մանազկերտը, Վասիլը նորից վերադարձավ Բագրևանդ գավառը և բանակ դրեց Վաղարշակերտ քաղաքի մոտ, դաշտում։ Այստեղ նա սպասում էր Գագիկ թագավորի գալստյան, բայց Գագիկը չգնաց, որովհետև իր համար վիրավորություն էր համարում կայսրի մոտ այնպես ընդունվելը, ինչպես ընդունվել էին մյուս թագավորները։ Այս հանգամանքն առիթ բռնելով, Գագիկի մասին կայսրի մոտ չարախոսություն արավ նրա քեռորդի Աբուսահլը։ Բայց Վասիլը, առանձին ուշադրություն չդարձնելով այդ քսու մարդու վրա, Կարինի վրայով ուղևորվեց Կ. Պոլիս։ Սակայն Գագիկը չմոռացավ իր քրոջ որդու վարմունքը և խիստ պատժեց նրան, ավերելով նրա Կոգովիտ և Ծաղկոտն գավառները։ Այս գործի կատարումը նա հանձնեց իր Հովհաննես Սմբատ որդուն, որ և գահաժառանգն էր։

5. Գագիկը և Գուգարքը։ Նույնպիսի անողոք խստությամբ Գագիկը վերաբերվեց և Գուգարքի թագավորին, որ նրա եղբոր որդին էր։ Գուրգենը, որ, ինչպես տեսանք, Կյուրիկյան կամ Գուգարքի թագավորության հիմնադիրն էր և վախճանվել էր 989 թվականին, ուներ երկու որդի—Դավիթ և Սմբատ։ Դավիթը ժառանգեց այդ փոքրիկ գավառական թագավորությունը և իր եռանդով, երկարատև անխոնջ գործունեությամբ հանդիսացավ մի այնպիսի հարստության հիմնադիր, որի կատարած դերը հյուսիսային Հայաստանում խիստ կարևոր էր։ Գուգարքը, որի խոշոր նշանակությունը հայ-վրացական սահմանագլխի վրա և հայ-վրացական հարաբերությունների մեջ մենք արդեն ցույց ենք տվել, նորից դառնում էր մի կենտրոն, ուր քաղաքական կյանքը հետզհետե զարգանալով, պիտի առաջ բերեր ամբողջ քաղաքական-կուլտուրական մեծ շրջաններ, որոնք արդեն գավառական երևույթներ չէին այլևս, այլ ընդհանուր հայկական և խոր հետքեր թողեցին մեր պատմության մեջ, սկսած այն ժամանակներից մինչև նույնիսկ 19-րդ դարը։

Դավիթը կոչվեց Անհողին, թեև նա էր, որ շատ ընդարձակեց իր հորից ստացած փոքրիկ թագավորությունը, հետզհետե նվաճումներ անելով Վրաստանի և Ոստիքի կողմերում։ Իր մայրաքաղաքը նա դարձրեց Շամշուլդե բերդը, որ, ինչպես գիտենք, Բագրատունյաց թագավորության էր պատկանում։ Այդտեղից նա իր իշխանության տակ առավ և Դմանիք քաղաքը և ընկճելով Թիֆլիսի էմիրին, այս նշանավոր քաղաքն էլ հպատակեցրեց իրեն։ Գուգարքի այս նոր թագավորությունը տարածման բնական մղում ստանում էր արևելյան ուղղությամբ՝ դեպի Ոստիք նահանգը, որ, ինչպես տեսանք, Բագրատունյաց թագավորության օրով մերձավոր կայս-

րով էր կապված Գուգարքի հետ: Այդ կողմերում էին Գարդմանի և Փառիսոսի ուժեղ իշխանները, որոնցից վերջիններս նույնիսկ թագավոր էլ էին կոչվում: Այս մոտիկ հարևանությունը Դավիթ Անհողինին հարմարություն էր տալիս դեպի Ուտիք ուղղելու իր նվաճողական տենչերը: Այնպես որ Կյուրիկյան թագավորությունն այնքան առաջ էր մխվում Աղվանից երկիրը կազմող այդ նահանգի մեջ, որ նրան նույնիսկ սկսում են անվանել Աղվանից թագավորություն: Շարժումն այդ ուղղությամբ թելադրվում էր և այն կարևոր հանգամանքով, որ հենց այդ ժամանակները տեղի էին ունենում Աղվանից աշխարհում այնպիսի փոփոխություններ, որոնք առաջ էին քաշում նոր տիրապետող ցեղեր և ետ էին մղում հներին: Աղվանքում այդ ժամանակ մենք հաստատված ենք տեսնում Շեդդադյան էմիրական հարստությունը, որ ծագումով քուրդ էր[1]: Նրա մի ճյուղն իշխում էր Դվինում, և այդտեղից երեք եղբայրներ, անցնելով Գանձակ, սպանում են տեղական էմիրին և իրենք տիրապետում նրա տեղ[2]: Այդ երեք եղբայրներից մեկն էր Փատլունը, որ իր ձեռքն առնելով էմիրությունը, առաջ ու առաջ Դավիթ Անհողինի դեմ գնաց, իրավացի կերպով վտանգ տեսնելով նրա շարժման մեջ դեպի Գանձակի կողմերը: Բայց հենց առաջին ընդհարման մեջ նա սաստիկ պարտություն կրեց Դավթից և փախչելով հազիվ կարողացավ ազատել իր գլուխը: Բայց այս միջոցին մի նոր վտանգ է բուսնում Դավթի թիկունքում: Գուգարքը Ուտիք նահանգի հետ կապում էր Գագ[3] գավառը, որի կենտրոնն էր նույնանուն բերդը: Այս գավառի տերը, մի հայ իշխան, կամենալով պահպանել իր անկախությունը, դիմեց Վրաց թագավորի հովանավորության, վրացական դավանությունն էլ ընդունեց և կրկին մկրտվելով՝ ստացավ Դեմետր անունը: Բայց նրա այդ հաշիվը չարդարացավ: Դավիթը, ուշադրություն չդարձնելով, որ Դեմետրը վրացիներից ստացել էր «մամփուղ» (արքայիկ) տիտղոսը, նվաճում է նրան ամենայն հեշտությամբ: «Հանճարով,— ասում է Ասողիկը,— հանէ [Դավիթը] զնա բերդէն Գագայ, առեալ ի նմանէ զամենայն ամրոցս նորա և զբոլոր հայրենիսն, որ թափառեալ շրջեալ՝ չարաչար մահուամբ սատակեցաւ. և բարձաւ տոհմ նորա»[4]:

Այսպիսով Անհողին ամբողջացնում էր իր նորակազմ, մեծացրած պետությունը: Բայց հեշտ ձեռք բերված հաջողությունը գլուխ է պտտեցնում: Դավիթն իրեն միանգամայն անկախ հայտարարեց, դուրս եկավ, ինչպես ժամանակագիրն է ասում, հնազանդությունից: Իսկ Գագիկն այսպիսի բան ներել չէր կարող: Ինչպես ուժեղ թագավոր, նա ամենայն աչալրջությամբ հետևում էր, որ իրեն հատկացված «Շահնշահ» հորջորջումը լոկ պատվանուն չլինի, այլ համապատասխանի իրականության: Այս պատճառով նա ինքնագլխություն սիրող գավառական թագավորությունների հետ, անշուշտ, խաղաղասիրական միջոցներն սպառելուց հետո, խոսում էր զենքի լեզվով: Ուրիշ կերպ չէր կարող վարվել իր մեջ ուժ զգացող մի ինքնակալ, որի քաղաքականությունը խարսխված էր երկիրը հավաքելու և կենտրոնախույս կացությունը վերացնելու գաղափարի վրա:

---

1 **Стэнли Лен-Пуль**, «Мусульм. Династии», стр. 294—295.

2 Վարդան Բարձրբերդցի, *եր. 134:*

3 *Այժմ՝ Ղազախ գավառ:*

4 *Եր. 257:*

Եվ իրավ, 10-րդ դարի վերջին կեսում հյուսիս-արևելյան Հայաստանի համարյա յուրաքանչյուր գավառ դարձել էր առանձին թագավորություն: Սյունիքում գոյացել էր Բաղաց թագավորությունը, որի առաջին թագավորն էր Սմբատը: Սրա մասին Սյունյաց պատմիչն ասում է. «Թագ կապեալ Սմբատայ ճոխ և երևելի փառօք յարդարէր զարքայութիւնն ըստ օրինի ինքնակալ թագաւորաց»[1]: Իսկ լեռնային Արցախում, որ մոտավորապես այս ժամանակներից ավելի Խաչեն անունով է հայտնի դառնում, այդպիսի փոքրիկ «ինքնակալներ» արդեն մի քանի հատ էին: Այսպես, Աբու-Մուսեի տոհմը հարավային Արցախում թագավորություն էր հաստատել, վերին Խաչենում և նրա սահմանակից Փառիսոս գավառում նույնպես արքայիկների հարստություններ կան: Նույնիսկ հեռավոր Դերբենդում էլ Աղվանից թագավորական գահ էր հաստատվել[2]: Այս բոլոր մանրիկ պետությունները, իհարկե, մի առանձին աչքի ընկնող դեր չէին կատարում և չէին էլ կարող կատարել: Նրանք բոլորն արդյունք էին այն ընդհանուր անիշխանական դրության, որ տարածել էր Արևմտյան Ասիայում թուլացած, անվանապես միայն գոյություն ունեցող խալիֆաթը: Այդ թագավորությունները մեծ մասամբ միմիայն անուններ են թողել իրենցից հետո, այն էլ ոչ թե պատմության էջերում, այլ հաճախ միմիայն գերեզմանաքարերի վրա և վիմական արձանագրությունների մեջ:

Գագիկը, հավատարիմ մնալով կենտրոնացնող ինքնակալության սկըզբունքներին, մրցում էր գավառական ինքնակալների հետ: Մենք տեսանք արդեն, որ նա Սյունյաց թագավորության դեմ կռիվներ ունեցել է, Վայոց Ձորում, Աղվանից կամ Արցախի թագավորների դեմ՝ Խաչենում: Գուգարքի վերաբերմամբ էլ Գագիկը բացառություն չարավ: Բարեկամությունը քաղաքական գործերի մեջ, ըստ երևույթին, շատ քիչ նշանակություն ուներ: Գագիկն ամուսնացած էր Սյունյաց Վասակ թագավորի (առաջին Սմբատ թագավորի որդու) աղջիկ Կատրանիդեի հետ, բայց այն արգելք չհանդիսացավ, որ թագավորն իր ինքնակալական գահերեցության համար բերդեր գրավի Վայոց Ձորում: Այն դաժան խստությունը, որով նա պատժեց Դավիթ Անհողինի ապստամբությունը, ցույց է տալիս, թե ո՛րքան կարևոր նշանակություն ուներ նրա համար ավատական դրությամբ ապրող մի երկրի կենտրոնացման գործը: 1001 թվականի ձմեռը Գագիկը մտավ Տաշիր գավառը, իջավ Վրաց դաշտը, մի պտույտ գործեց Շամշուլդե բերդի շուրջը և դուրս եկավ Գագ գավառը, որտեղից անցավ Աղստևի ձորը: Այս մի պատժողական արշավանք էր, որ տևեց երեք ամիս և կատարելապես աղետաբեր էր ժողովրդի համար, որովհետև Գագիկը քանդեց ու ավերեց այն տարածությունները, որոնք մատչելի էին նրա բանակին: Եվ Դավիթ Անհողինին վիճակվում էր լոկ ականատեսի դերն իր հորեղբոր այդ բարբարոս վարմունքի դիմաց: Մի քանի անգամ նա ուզեց չափվել Անիի բանակի հետ, բայց միշտ խոհեմությունը բարձր հանդիսացավ: Նրա զորքը չափազանց թույլ էր Շահնշահի բանակի համեմատությամբ: Եվ նա իրավացի կերպով փրկություն որոնել սկսեց հաշտության մեջ, դիմելով Սարգիս կաթողիկոսի (992—1019 թթ.) միջնորդության: Եվ կաթողիկոսին հաջողվեց եղբոր որդու և հորեղբոր միջև լավու-

---

1 Ստեփ. Օրբելեան, *եր. 300—301:*

2 Մատ. Ուռհայեցի, *եր. 231:*

գույն պայմաններ հաստատել։ «Կալ ի հնազանդութեան Դաւթի իբրև որդի առ հայր, և Գագկայ՝ հայրենի խնամով սիրել զնա»[1]։ Եվ Դավիթը հնազանդ մնաց մինչև Գագիկի մահը, մոտ քսան տարի, նվիրելով այդ ժամանակամիջոցը իր երկրի շինության և ամրացման։ Ասում են, որ նա 12 նոր բերդ շինեց, չհաշված նորոգվածները։ Այսպիսով լեռնաստանը զարգացնում էր իր պաշտպանողական միջոցները, խաղաղ բարեկեցության միջավայր էր ստեղծում։ Դավիթ Անհողինի ձեռակերտներից էր Լոռի բերդը, որ այնքան կարևոր դեր կատարեց Գուգարքի պատմության մեջ։

6. Անիական արվեստի գործեր: Վերադառնալով Գուգարքի պատմական արշավանքից, Գագիկն իր մայրաքաղաքում երկու շատ խոշոր կուլտուրական տոներ էր կատարում.— վերջացել էր Անիի հրաշակերտ մայր եկեղեցու շինությունը և անմիջապես սկիզբ էր դրվում մի նոր, ավելի հոյակապ ու մեծափառ շինության—նույնպես մի եկեղեցի, նվիրված Գրիգոր Լուսավորչի անվան։ Առաջին շինությունն սկսել էր, ինչպես գիտենք, Սմբատ թագավորը։ Եթե ճիշտ է, որ այդ հիմնադրությունը տեղի է ունեցել 980 թվականին, այն ժամանակ դուրս կգա, որ շինությունը տևել է ամբողջ 20 տարի։ Շինողը նույն Տրդատ ճարտարապետն էր, որ շինել էր և Արգինայի կաթողիկոսական եկեղեցին, և որի մասին, տարաբախտաբար, շատ քիչ տեղեկություն ունենք։ Գիտենք միայն, որ քարագործ էր այդ մեծ արվեստագետը, ասել է՝ քարտաշ կամ որմնադիր։ Շինարարական արվեստը հին ժամանակներում, ինչպես ասել ենք, այդ հասարակ արհեստավորների ձեռքում էր գտնվում, մի բան, իհարկե, որ չի ժխտում զանազան տեսակ դպրոցների, ուղղությունների, ոճերի գոյությունը։ Նկատի առնելով, որ հայկական ճարտարապետության վրա միշտ նկատելի է բյուզանդական ազդեցությունը, պետք է անկասկածելի համարել, որ այդ ազդեցությունը միայն բյուզանդական վարպետները չէին բերում Հայաստան, այլև հայ արվեստագետները, կատարելագործվելու համար հաճախ գնում էին Բյուզանդիա։ Տրդատ ճարտարապետի մասին մի այսպիսի վկայություն կա։ Նրան մենք տեսնում ենք բյուզանդական մայրաքաղաքում ոչ թե այն դրության մեջ, երբ արհեստավորը լոկ նայող ու սովորող է, այլ երբ նա արդեն հայտնի է իբրև ինքնուրույն ստեղծագործող և անկախ տաղանդ։ Սմբատ թագավորի կյանքի վերջին տարին էր, 989 թ., երբ դադարել էին Անիի կաթողիկեի շինության աշխատանքները, և Տրդատը գնացել էր Կ. Պոլիս։ Այս միջոցին տեղի ունեցավ սաստիկ երկրաշարժ, որը մեծ ավերածություններ գործեց եվրոպական Բյուզանդիայում։ Մայրաքաղաքում շատ եկեղեցիներ կործանվեցին։ Վնասվեց նույնիսկ բյուզանդական արվեստի թագն ու պսակը—ս. Սոֆիայի եկեղեցին, որ ճեղքվածք էր ստացել վերևից վայր։ Վասիլ կայսրի հրամանով հավաքվեցին հույն ճարտարապետները այս մեծ եկեղեցու վնասվածքը վերաշինելու համար։ Դրանց մեջ էր և Տրդատը, որի հանճարն էլ, ինչպես վկայում է Ասողիկը, միակը հանդիսացավ մասնագետների այդ մրցակցության մեջ, որ կատարյալ հաղթանակ տարավ։ Նրա ծրագրով վերաշինված ս. Սոֆիան նույնիսկ ավելի գեղեցիկ էր, քան առաջինը[2]։ Սոսկալի երկրաշարժները Տրդատի շինարարական ժամանակներին հատուկ աղետներ էին, բայց նրանք չվնասեցին հայ

[1] Ալիշան, «Շիրակ», եր. 67։

[2] Schlumberger, t, II, p. 38.

ճարտարապետի ստեղծագործությունները Շիրակում։ Այսպես, Ասողիկը նկարագրում է մի ուրիշ ահավոր երկրաշարժ, որ տեղի ունեցավ 995 թվին, այն ժամանակ, երբ Անիի կաթողիկեն վերջանալու վրա էր, այն էլ Շիրակին բավական մոտ մի տեղ։ Չորրորդ Հայքն էր այս երկրաշարժի հանդիսավայրը և մասնավորապես Հաշտյանք, Խորձյան, Ծոփք, Բալու և Պաղնատուն գավառները։ Սարսափելի էին նրա գործած ավերումները։ «Հերձան,— ասում է պատմիչը,—լերինք և պատառեցան վէմք, բացան աղբիւրք յանջրդին տեղիս և ցամաքեցան ելք սովորական ջուրց. դաշտք ծածանէին և լերինք որպես թէ առ միմեանս խոնարհէին, ծխոյ նմանութեամբ՝ փոշւոյն ծառացելոյ զօդսն լնոյր։ Եւ ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից և ագարակաց տապալեալ՝ զբնակիչսն ի ներքոյ առնէին, մեռեալս և կիսամեռս զնոսա առնելով. և մնացելոցն կենդանեաց ճիչք լալեաց և վայք ողբոց ի վեր բարձրանային»[1]։ Այս խորտակիչ ուժն Անիի տակ չմտավ և ճարտարապետ Տրդատը 1001 թվականին միանգամայն ավարտեց այդ հոյակապ կերտվածքը, որ այսօր անգամ, ավերակ և ավերակներով շրջապատված, հիացնում է ամեն տեսնողի։

Կատրանիդե թագուհին էր, որ իր ծախքով շարունակեց և վերջացրեց կաթողիկեն, գրեց նրա վրա իր հիշատակը[2] և ճարտարապետական գեղեցկությունների վրա ավելացրեց զարդ ու զարդարանքի եզակի գեղեցկություններ։ Ամբողջ Հայաստանում, և հարևան երկրներում, անշուշտ, հրաշք էր համարվում այն բյուրեղյա կանթեղը, որ, ինչպես տեսանք, Սմբատ թագավորն էր բերել տվել Հնդկաստանից, ծախսելով անհուն գանձեր և որ կախվեց եկեղեցու գեղեցիկ գմբեթի միջից։ Դրսից այդ գմբեթի վրա բարձրանում էր մի մարդահասակ արծաթե խաչ[3]։ Թագուհու ձեռակերտը հիացնում էր իր վեհ և գեղապաճույճ կերպարանքով, որ Ասողիկը նկարագրում է այսպիսի խոսքերով. «Եւ զարդարեաց ի զարդ ծիրանենծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց և բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որովք ջահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի քաղաքին Անւոյ»[4]։ Այսպիսի արտասովոր մի չքնաղություն, իրեն շինող թագուհու անվան հետ միախառնված մի բարձրխորհրդավորության մեջ, սաստիկ ազդելով մտքի և երևակայության վրա, անշուշտ, պիտի նվիրական ավանդությունների աղբյուր դառնար։ Եվ իրավ, դեռ 13-րդ դարում պատմում էին, թե մարդկային ջանքերով չէր միայն, որ գլուխ եկավ այդպիսի մի շինու-

[1] Ասողիկ, եր. 263—264։

[2] Ահա թագուհու արձանագրությունը, «Ի ՆԾ (450=1001) թ. Հայոց ՄԺԹ թ. Հոռոմոց... Ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի և ի մեծափառ թագաւորութեան Գագկայ Հայոց և Վրաց Շահանշահի ես Կատրանիդէ Հայոց թագուհի դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի յողորմութիւնն Աստուծոյ ապաւինեցայ և հրամանաւ առն իմոյ Գագկայ Շահանշահի շինեցի զսուրբ կաթողիկէս զոր էր հիմնարկեալ մեծին Սմբատայ և կանգնեցաք տուն Աստուծոյ նորոգ և կենդանի ծնունդ հոգևոր և արձան մշտնջենաւոր. զարդարեցի և զարդիւք պատուականաւք նուէրք ինձ ի Քրիստոս և զարմից և իմ և որդոց Սմբատայ, Աբասայ և Աշոտոյ։ Հրամայեալ եմ և ես Տէր Սարգիս սպասաւորաց եկեղեցւոյս յետ ելից բարեպաշտ թագուհոյս զՎարդավարին յինանկան միով քառասնիւ կատարել անխափան մինչև ի գալուստն Քրիստոսի. եթէ ոք զարձանագրեալդ անփոյթ առնէ դատապարտեալ եղիցի ի Քրիստոսէ»։

[3] Մատթ. Ուռհայ., եր. 149։

[4] Ասողիկ, եր. 256։

թյուն. աստծու հրեշտակն էր, որ հորդորեց Կատրանիդեին ձեռնարկել շինության և խոստացավ նրա աջակիցը լինել և շինությունը վերջանալուց հետո մնալ նրա մեջ մինչև որ Քրիստոս նորից աշխարհ կգա[1]։ Եկեղեցին նվիրված էր Մարիամ Աստվածածնին[2]։ Հետաքրքրական է, որ մահմեդական գրականության մեջ Անին անվանված է Մարիամ Աստվածածնի քաղաք[3]։ Այս հանգամանքը մենք ուրիշ ոչ մի բանով բացատրել չենք կարող, բայց միայն նրանով, որ մայր եկեղեցու անունը դարձել էր քաղաքի անուն։

Կաթողիկեի ավարտման տոնախմբության հետ միասին էր, երևի, որ սկիզբ էր դրվում Անիի մի ուրիշ մեծ զարդի հիմնադրության։ Այս մի ուրիշ եկեղեցի էր, որ արդեն Գագիկի ծախսով և ծրագրով էր շինվում։ Տեղն ընտրվում էր կաթողիկեի դիմաց, նրանից շատ մոտ, Ծաղկոցաձորին նայող մի բարձրավանդակի վրա։ Շինությունը պատճենն էր էջմիածնի մոտ 7-րդ դարում շինված Զվարթնոց կլոր եկեղեցու, որ այդ միջոցին քանդված էր, բայց իր հոյակապությամբ մի եզակի օրինակ էր հայկական արվեստի մեջ։ Թեև այդ սոսկ մի պատճեն էր, և Գագիկին կամ նրա ճարտարապետներին չէր մնում ինքնուրույն ստեղծագործական լայն ասպարեզ, բայց և այդպես, ձեռնարկությունն ուներ տեղային շատ խոշոր առանձնահատկություններ, որոնք, այնուամենայնիվ, տալիս էին նրան շատ ուրույնություն։ Տեխնիկական դժվարությունները Գագիկի այդ գաղափարը դարձնում էին մի ամբողջ մեծագործություն, և միայն Շահնշահի պես մի ինքնակալի կամքը, բայց մանավանդ գանձն էր, որ գլուխ էր բերում այդ հոյակապ վեհությունը, եռահարկ կլոր և մեծ մի եկեղեցի, որ, անշուշտ, սկզբից ևեթ առաջին տեղը գրավեց Անիի բազմաթիվ եկեղեցիների մեջ, մրցելով նույնիսկ և մայր եկեղեցու հետ։ Այս մեծագործությունը Գագիկը կարողացավ գլուխ բերել 14 տարիների անընդհատ աշխատանքներով։ Շինությունն ավարտվեց 1015 թվականին, և Անիի այն տեղը, ուր երկու ամուսինների գեղարվեստական գլուխգործոցներն էին բարձրացած, դարձավ, անկասկած, ամենագեղեցիկը, մայրաքաղաքի աչքը, մանավանդ որ այդ երկու եկեղեցիների մեջ բարձրացած էր մի ուրիշը, որ քիչ առաջ էր շինվել, բայց պարձյալ հոյակապ, զարդարված հինգ գմբեթներով—Առաքելոց եկեղեցին։ Իր եկեղեցու վրա, դրսից, Գագիկը դրեց իր քարե մեծ արձանը, երեսը դարձրած դեպի քաղաքը, երկու ձեռքի վրա պահած իր եկեղեցու մոդելը։

7. Անցուդարձը դրսում: Նույն 1001 թվին, երբ անեցիներն այսպիսի կուլտուրական տոներով էին տարված, բնականաբար համարյա աննկատելի պիտի անցներ այն պատերազմը, որ սկսվել էր Անիի և Կարսի թագավորությունների սահմանակից երկրներում, հատկապես Տայքում։ Վրաց Գուրգեն թագավորը, կամենալով ետ ստանալ Դավիթ կյուրապաղատի կալվածները, հետին թվով իրեն վիրավորված էր համարում այն հանգամանքով, որ կայսրն իրեն ավելի ցած աստիճան էր տվել, քան իր որդուն, որ ափխազների թագավորն էր։ Ուստի նա պատերազմ էր հայտարարում բյուզանդական կայսրության մենակ, առանց նույնիսկ դաշնակիցների, մի

[1] Վարդան Բարձր., եր. 123։

[2] Н. Марр, «Краткий Каталог Анийского Музея», 1906, стр. 17.

[3] N. Khanykof, „Excursion à Ani, en 1848" (տ. M. Brosset, „Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie", S. Petersbourg, 1849, p. 149).

խիզախ ձեռնարկություն։ Վասիլ Բ-ին առանձին մի անհանգստություն չպատճառեց այս շարժումը։ Կայսրը մի բանակ ուղարկեց նրա դեմ և այս բանակը նույնիսկ առանձին հոգսեր էլ չէր անում Վրաց թագավորի հետ բռնվելու համար, որովհետև նրա միակ պատերազմական գործողությունը եղավ մի անհաջող հարձակում Ուխտիք (այժմ Օլթի) բերդի վրա։ Երկու կողքերը բանակ դրին իրար հանդեպ Բասեն գավառի ս. Աստվածածին լեռնային գյուղի մոտ, անգործ մնացին մի ամբողջ տարի և հենց այդտեղ էլ հաշտվեցին իրար հետ և վերադարձան իրենց տեղերը։

Գագիկը չափազանց լավ էր հասկանում իր պետության շահերը, որպեսզի մասնակցեր այս տեսակ ձեռնարկություններին։ Բյուզանդիայի վեպեսզի ... աշխարհամբ նա առհասարակ զգույշ քաղաքականության էր հետևում, աշխատելով չեզոքություն պահպանել և դժգոհություններ չառաջացնել։ Բայց այսպես չէր նա ներքին քաղաքականության մեջ։ 1003 թվականին բացվում էր Փառիսոսի ժառանգության հարցը։ Մեռան Սենեքերիմ և Գրիգոր թագավորները և այսպիսով սպառվում էր այս հին հայկական իշխանությունը։ Գագիկն իսկույն իր իրավունքի տերը կանգնեց, բայց և Գանձակի էմիր Փատլունը, իրենից մոտ գտնվող հարստությունն անտեր տեսնելով, չուզեց հրաժարվել հափշտակողի իրավունքից։ Եվ Գագիկը, ընդհանելով իր խաղաղ շինարարական գործունեությունն Անիում, պատերազմելով մով գնաց Փատլունի վրա։ Պատերազմը բերեց երկուսին համաձայնության, որի հետևանքով Փառիսոսը բաժանվում էր Անիի թագավորության և Գանձակի էմիրության միջև։

1014 թվին, մինչդեռ Գագիկը պատրաստվում էր հաղթանակ տոնել իր եռահարկ եկեղեցու շինության ավարտմանը մոտենալով, Վասիլ կայսրը Բուլղարիայում պսակվում էր բյուզանդական զենքի մի չափազանց խոշոր հաջողությամբ, որ իրավունք էր տալիս նրան ասելու, թե ինքն սպանել է բուլղարներին։ Մի շարք լեռնային ամրոցներ գրավելուց հետո կայսերին հաջողվեց մի նեղ կիրճում շրջապատել բուլղարական վերջին մեծ բանակը և ոչնչացնել նրան։ Բյուզանդացիները 15 հազար բուլղար գերի վերցրին, և Վասիլը հրամայեց ամենքին կուրացնել։ Դժբախտ Սամուել թագավորը[1] կարողացել էր փախչել, բայց երբ տեսավ կուրացրած 15 հազարները, որոնք ազատ էին արձակվել, ուշաթափվեց, ընկավ և երկու

[1] Այս քաջ, հայրենասեր և զգայուն թագավորին շատ դառնություն էր պատճառել և մի հայ։ 996 թվին Բուլղարիայում գործող մի բյուզանդական բանակի հրամանատարն էր Գրիգոր Մագիստրոս Տարոնեցին, որ ուներ մի որդի Աշոտ անունով։ Մի կռվի մեջ երիտասարդ Աշոտը գերի է բռնվում, և հայրը, կամենալով ազատել նրան, հարձակում է գործում, բայց ինքն էլ իր կորքն էլ կոտորվում են։ Աշոտը Սահակ անունով մի ուրիշ իշխանի հետ գերի է տարվում (Ասողիկ, եր. 267)։ Բուլղարիայում նրան տեսնում է Սամուել թագավորի աղջիկը, որ սիրահարվում է Աշոտի արտակարգ գեղեցկության վրա և հայտնում է հորը, որ եթե իրեն թույլ չտան ամուսնանալ գերի հայ իշխանի հետ, ինքն իրեն պիտի սպանի։ Հայրը նրան ամուսնացնում է Աշոտի հետ և ուղարկում է Ադրիատիկ ծովի ափի մի նահանգիստ, որ շատ կարևոր նշանակություն ուներ և որի կառավարությունն էլ հենց Աշոտին էր հավատում։ Բայց Աշոտը, կամենալով վրեժ հանել իր հոր սպանության համար, պատրաստվում է նավահանգիստը հանձնել բյուզանդացիներին։ Իր ծրագիրը հայտնում է ամուսնուն, որ անչափ սիրուց մոտանում է ամեն ինչ և պատրաստակամություն է հայտնում փախչել նրա հետ Կ. Պոլիս։ Այդ ծրագիրը կատարվում է ճշտությամբ, իսկ նավահանգիստն Աշոտի պատրաստած մարդիկ հանձնում են Բյուզանդական նավատորմին։ Բուլղարիայում հայ իշխանի այս վերաբերմունքը բնականաբար որակվեց իբրև դավաճանություն (Schlumberger, t. II, p. 114)։

որից հետո մեռավ սրտի սարսափելի տանջանքներից։ Այնուհետև բուլղարական պատերազմը մի երկու-երեք տարի էլ շարունակվեց։ Բայց սլավոնական ուժեղ պետությունն արդեն միանգամայն տանուլ էր տվել այն քառասնամյա ահեղ վեճը, որ բորբոքված էր նրա և Բյուզանդիայի մեջ։ Ջարդված, փշրված Բուլղարիան ընկած էր Վասիլի ոտների տակ։ Եվ «Բուլղարասպան» տիտղոսն այնուհետև մնաց նրան հատկացված՝ պատմության մեջ։

8. Գագիկի մահը: *Բուլղարիայի կողմից միանգամայն հանգստանալուց հետո Վասիլ կայսրը ձեռնարկում էր իր քաղաքական ծրագիրներն անցկացնել՝ կայսրության արևելյան սահմանների վրա գտնված ազգային անկախությունները աստիճանաբար ոչնչացնելու համար։ Բյուզանդական այս քաղաքականությունը զարմանալի հաջող պայմանների էր հանդիպում։ Եվ առաջին հաջողություններից մեկն այն էր, որ 1020 թվականին Անիում վախճանվում էր Գագիկ Ա-ն, իր հետ գերեզման տանելով Բագրատունյաց վարչական և քաղաքական հանճարը, զինական հեղինակությունը։*

Հավանորեն թաղված է նա ներքին Հոռոմոսի վանքում իր հոր կողքին, թագավորական հանգստարանում։ Նրա շիրիմն է այդ հանգստարանի մատուռը Ս. Գևորգի անունով, որի հարավային պատի վրա այսօր էլ կարդացվում է հետևյալ գեղեցկահյուս արձանագրությունը.

«Ով հուշակաւոր դու և մեծանունդ ի վկայս սուրբ Գէորգիոս, աւգնեա՛ բարեխաւսութեամբ Գագկայ Շահանշահի շինողի զվկայարանս զայս քոյով անուանակոչութեամբ ի քոյդ հաւակնեալ բարեխաւսութիւն. զի ընկալցի զողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալսն ապաշաւանաւք հասանել լուսոյ փառաց Որդւոյն Աստուծոյ ի վերջնում գիշերին ի ծագել մեծի և աներեկ առաւաւտին այցելութիւն գտանել առաջի բեմին և անաչառ դատաւորին, աղաչեմք»[1]։

Գլուխ վեցերորդ

ԱՆԿՈՒՄ

1. Միջին Ասիա:[2] *Պատմության ընթացքն այժմ բերում է մեզ այն տեղը, ուր Արևմտյան Ասիան ընդհանրապես և Հայաստանը մասնավորապես, իբրև այդ Մեծ աշխարհի մի փոքրիկ մասնիկ, մատնվում են անկման և քայքայման։ Առաջին և ամենահզոր պատճառն այս ավերածության այն է, որ այս ժամանակից Արևմտյան Ասիայի ճակատագիրը սերտորեն կապվում է այն՝ վերին աստիճանի ինքնատիպ և յուրատեսակ քաղաքական-կուլտուրական միջավայրի հետ, որի անունն է Միջին Ասիա։ Մինչև այստեղ, Հայոց պատմությունը մեկից ավելի դեպքեր ներկայացրեց, երբ մեր երկիրը շփում ուներ այդ միջավայրի իրականության հետ, այնտեղից գուրս եկած ժողովուրդների միջոցով։ Այսպես էին, օրինակ, հոները Կովկասյան լեռներում, խազարները՝ Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերում, Բուղայի թուրք բանակն 9-րդ դարում։ Բայց այդ շփումները պատահական, անցողակի երևույթների բնույթ ունեցան, ուստի մենք առանձնապես կանգ չառանք՝ բնորոշելու համար Միջին Ասիան իր ընդարձակ նշանակությամբ։ Բայց որովհետև Միջին Ասիան այժմվանից ավելի և ավելի աճող ու հզոր հոսանքներով ճակատագրական փոփոխություններ պիտի մտցնի մեր կյանքի մեջ, դառնալով մեր ամբողջ բախտի տերն ու տնօրենը, ուստի շատ կարևոր է ծանոթանալ այդ խորհրդավոր և մեծ աշխարհի, նրա դարբնած պայմաններին այնքան, որ բավական լինի որոշելու համար, թե Միջին Ասիան ի՛նչ էր բերում իր հետ՝ ամբողջ Արևմտյան Ասիայում տարածելու և դարերով հաստատելու համար։*

Միջին Ասիա *աշխարհագրական անունը մի շատ որոշ ու պարզ հասկացողություն չէ։ Զանազան ժամանակ և զանազան առիթներով այդ անվան տվել են այս կամ այն բովանդակությունը՝ կա՛մ չափազանց նեղ, կա՛մ չափազանց լայն ըմբռնումով։ Պատմական իմաստով լայնորեն հասկացված՝ Միջին Ասիա ասելով պիտի ընդունել այն ամբողջ հսկայական տափարակ տարածությունը, որ ընկած է Կասպից ծովի և բուն Չինաստանի արևմտյան սահմանների միջև։ Այս ամբողջ տարածությունն ունի և մի մասնավոր անուն, որ, սակայն, քիչ է գործածական. նրան անվանում են Թուրքեստան։ Իսկ այն աշխարհագրական սահմանները, որոնք հյուսիսից և հարավից են զատում Թուրքեստանն Ասիայի մնացած ցամաքից, հետևյալներն են՝ հյուսիսից Արալյան և Բալխաշ լճերը, Ջունգարյան լեռնաշղթան, որ Տյան-Շան (Երկնային Լեռներ) լեռնաշխարհի մի ճյուղավորումն է, ապա Ալտայան շղթան և Մոնղոլիայի լեռնադաշտը, իսկ հարավից՝ իրար հետ կապված չորս մեծ շղթաներ, այն է՝ արևմուտքից, Կասպից ծովից դեպի արևելք Խորասանի շղթան, որի մի նշանավոր մասը կոչվում է Կոպետդաղ, ապա Պամիրի հսկայական լեռնաշխարհը, որից դեպի արևելք ձգվում են Կու-էն-Լուն և Ալթին-դաղ շղթաները։ Պամիրի լեռնաշխարհից մինչև Ջունգարյան լեռնաշղթան եղած տարածությունը, հարավից հյուսիս, լցված է արևելքից արևմուտք ձգվող զուգահեռական շղթաներով, որոնք մի ամբողջ մեծ լեռնային սիստեմ են կազմում՝ Տյան-Շան չինական անվան տակ։ Եվ այսպիսով, Տյան-Շանը բաժանում է Թուրքեստանը երկու անհավասար մասերի. Տյան-Շանից դեպի արևելք, մինչև բուն Չինաստանի սահմաններն ընկած մասը, համեմատաբար փոքրը, կոչվում է Արևելյան Թուրքեստան, իսկ դեպի արևմուտք, մինչև Կասպից ծովը տարածվածը, մեծագույնը, կոչվում է Արևմտյան Թուրքեստան։ Տյան-Շանը և Պամիրն իբրև անջրպետներ, որոնք բարձրացած են այդ երկու Թուրքեստանների մեջ, այնքան հզոր են, որ հաղորդակցության շատ քիչ տեղեր են մնում երկուսի միջև, այն էլ ներկայացնելով լեռնային՝ հաճախ դժվարակոխ և անմատչելի անցքեր հյուսիսում և հարավում։*

Միջին Ասիայի կամ Թուրքեստանի այս երկու անջատ մասերը տե-

---

[1] Ալիշան, *«Շիրակ», եր. 30։*

[2] **Աղբյուրներ՝** 1. „Россия, т. XIX—Туркестанский край", сост. кн. Мосалский, СПБ, 1913, 2. *Г. Вамбери*, „История Бохары", СПБ, 1873, 3. **Léon Cahun**, «Inrtoduction a l'Historie de L' Asie—Turcs et Mongols», Paris, 1896, 4. *Элизер Реклю* „Человек и Земля", т. III, СПБ, 1907, 5. *Гельмольт*, „История человечества", СПБ, т. II, 6. *Ратцель*, „Народоведение", т. II, СПБ, 1902, 7. **F. Schrader**, «Atlas de geographie historique", Paris, Hachette, 1907, 8. *Мюллер*, История Ислама, т. III, СПБ, 1896, 9. Հ. Ղ. Ալիշան, *«Յուշիկք հայրենեաց հայոց», Վ. Բ., Վենետիկ*, 1870, 10. A. *de Lamartin*, «Histoire de la Turquie», t. I, Paris, 1854, 11. *Фон Гельвальд*, Земля и ея Народы, т. IV, СПБ, 1879, 12. *E. Blochet*, «Introduction à l'Histoire des Mongols», Leyden, 1901։

դագրական որոշ առանձնահատկություններ ունեն։ Այսպես, Արևելյան Թուրքեստանը երեք կողմից (հյուսիսից, արևմուտքից և հարավից) շրջապատված է մեծամեծ լեռնաշղթաներով—Ալտայան, Տյան-Շան, Կու-էնլուն և Ալթին-դաղ։ Այս շրջապատի մեջ պարփակված հողային մակերեվույթը լեռներին մոտիկ ներկայացնում է բավական բարձր (մինչև 1500 մետր) լեռնադաշտ, որ որքան դեպի արևելք է գնում, այնքան ցածրանում է, մինչև որ դառնում է ընդարձակ մի փոս, որ Գոբի կամ Շամո մեծ անապատն է կազմում։ Մինչդեռ Արևմտյան Թուրքեստանում սարահարթերն այնքան ընդարձակ չեն և այնքան բարձր, իսկ դրա հակառակ՝ մակերևույթի մեծագույն մասը խոր ընկած, փոսացած է, շատ տեղերում նույնիսկ ծովի մակերևույթից ցած է գտնվում։ Բայց ավելի շատ են և հիմնավոր այն բնագրական հանգամանքները, որոնք հարազատության գծեր են հաղորդում երկու երկրամասերին։

Թե՛ Արևմտյան Թուրքեստանը և թե՛ Արևելյանը ներկայացնում են ցամաքած ծովերի հատակ։ Երկուսն էլ գերազանցորեն ցամաքային կազմվածք ունեն։ Չկան գետեր, որոնք երկրի ջրերը հոսեցնեին բաց ծովեր։ Բոլոր գետերը մնում են երկրի մեջ, թափվելով լճերը, նրանք իսկապես աղաջրի ճահիճներ են, կամ թե պարզապես կորչում են ավազների մեջ։ Այս հանգամանքն ահագին դեր է կատարում հողի մակերևույթի վրա ազդող երևույթների տեսակետից, բայց մանավանդ հողի մեջ գտնվող աղերի փոխանակության տեսակետից։ Կլիմայական պայմանները մի ցամաքային, ինքն իր մեջ ամփոփված և ծովերի ազդեցությունից շատ հեռացած երկրին հատուկ երևույթներ են տալիս։ Ձմեռը սաստիկ խիստ, ամառը շոգ ու երկարատև։ Անձրև քիչ է գալիս, արևային օրերը շատ են և արեգակի շողերը կուրացնելու չափ փայլուն են։ Ավազոտ անապատների և անջրդի տափաստանների (ստեպ) իրականությունը հայտնի է երկու մասերին էլ, բայց Արևմտյան Թուրքեստանին՝ անհամեմատ ավելի հսկայական չափերով։ Այստեղ տափարակները երկրի մակերևույթի ամենախոշոր մասն են բռնում։ Արևմտյան Թուրքեստանը, մեր նկարագրած սահմանների մեջ, պարունակում է 1,731000 քառակուսի վերստ և այս տարածության երեք քառորդից ավելին ներկայացնում է շատ քիչ ջուր ունեցող կամ նույնիսկ բոլորովին անջրդի անապատներ և տափաստաններ։ Այս անապատներից իրենց մեծությամբ հայտնի են երկուսը՝ Կարա-կում (Սև ավազ)—Կասպից ծովից դեպի արևելք, և Կիզիլ-կում (Կարմիր ավազ)—Արալյան լճի հարավային կողմերում։ Իսկ Արևելյան Թուրքեստանում հայտնի է Գոբի կամ Շամո անապատը։ Իրենց բնությամբ անապատների զանազան տեղերը զանազան տեսակ երևույթներ են ներկայացնում։ Ավազը շատ տեղերում թափառիկ է, այսինքն ահագին կույտերով քամու հետ այս ու այն կողմն է տեղափոխվում։ Բնության ահեղ տեսարաններից մեկն է այդ, երբ օդը լցվում է թռչող ավազով, մթնեցնելով ցերեկվա լույսն անգամ։ Կարավանները չեն կարողանում շարունակել իրենց ճանապարհը, մինչև որ քամին հանդարտվում է, բայց ճանապարհորդի բերանը, աչքերը, ականջները լցվում են ավազով։ Կան և անշարժ ավազներ, որոնք ոչ մի քամու ազդեցության չեն ենթարկվում։ Արևմտյան Թուրքեստանի տափաստանների մի բնորոշ հատկությունն է ներկայացնում Սոված տափաստան (ստեպ) կոչվածը, որ 10 հազար քառակուսի վերստ տարածություն ունի։ Ամեն տարի վաղ գարնանից նա ծածկվում է խոտերով և դառնում է բազ-

մաթիվ հոտերի արոտավայր։ Բայց հենց որ մոտենում է ամառը, ամեն բուսականություն չորանում է, անասունները հեռանում են ուրիշ տեղեր, և տափաստանը դառնում է բառի բուն նշանակությամբ մահվան հովիտ, ուր սովն է սպասում ամեն մի շնչավորի։ Եվ ուղտերի ու այլ անասունների կմախքներն են, որ ցույց են տալիս, թե ինչո՛ւ է տափաստանը կոչվում Սոված։

Սակայն Թուրքեստանը միապաղաղ անկենդանություն չէ։ Շատ են նրա մեջ և ծաղկած օազիսներ, ուր հարուստ բնությունը մշակող մարդուն առատ տալիս է մի տաք երկրի բուսական հարստությունները։ Այս երջանիկ տեղերի ազգաբնակությունը նստակյաց էր, երկրագործ։ Բայց կեցության այս ձևը չէ, որ գերազանցող երևույթ էր կազմում ամեն տեղ։ Միջին Ասիան, ընդհակառակն, մարդուն դարձնում է գերազանցորեն անասնապահ, մանավանդ նրա արևելյան մասերում, ուր Մոնղոլիան համարյա միմիայն արոտների հայրենիք էր և կոչվում էր «Խոտի երկիր»։ Բնությունը Միջին Ասիայում առհասարակ շլացնում է իր ձևերի և երևույթների ապշեցնող խոշորությամբ։ Այստեղ լճերն այնքան խոշոր չափերի են հասնում, որ նրանց անվանում են ծով (Կասպից ծով, Արալյան ծով)։ Հազարավոր և տասնյակ հազարավոր վերստեր են տարածվում միանման, տխուր, դեղնավուն դաշտավայրերը, որոնք ունեն կամ բոլորովին հարթ, կամ ալիքաձև մակերևույթ։ Ահագին գետերը (Ամու-Դարիա, Սիր-Դարիա) հոսում են ավազոտ տափաստանի միջով, լեռնային բարձրաբերձ շղթաները տարածվում են հազարավոր վերստերի վրա և կազմում են այնպիսի պարեր ու խառնարաններ, որոնք իրենց վայրենությամբ և անմատչելիությամբ հազվագյուտ երևույթներ են, նույնիսկ Ասիայի միջնաշխարհի լեռնապարներում։ Այսպես է, օրինակ, Պամիրը։

Այս տեղագրական և բնագրական ուրվագծերն արդեն բավական են, որ հասկանալի լինի, թե մարդկային հանրակեցության ի՛նչ պայմաններ կարող էին ստեղծվել Միջին Ասիայում դարերի սկզբից։ Գլխավորապես Արևելյան Թուրքեստանն էր, ուր պատմությունը բավական հին ժամանակներից (մեր թվականությունից 15—20 դար առաջ) գտնում է մարդկային մեծամեծ համախմբումներ, որոնք անդադար շարժումների մեջ էին, ընդհարվում էին իրար հետ, հավիտենական պատերազմի դրության մեջ էին գտնվում։ Այս բոլոր երևույթները բխում էին այդ ցեղերի և ազգերի տնտեսական դրությունից։ Նրանք բոլորն անասնապահներ էին, նրանց ամբողջ հարստությունը չափվում էր ոչխարների, կովերի, ձիերի, ուղտերի հոտերի խոշորությամբ։ Անասունների հոտն ամեն ինչ էր նրանով ապրող մարդու համար։ Ղրղըզը, հանդիպելով Ղրղըզին, առաջ նրա հոտի առողջությունն էր հարցնում, ապա միայն նրա առողջությունը։ Ամենից առաջ, իհարկե, կերի հարցը, որ ամբողջ կենդանական աշխարհի առաջին հոգսն է։ Մի որոշ, հաստատ սահմանագծված արոտ նա չի կարող ընդունել, որովհետև շարունակ ուտում է և որոշված տեղի բուսականությունը շատ շուտ է նրա կերը դառնում։ Այստեղից՝ անասնապահության շարժուն կյանքը։ Մի արոտ վերջացնելուց հետո՝ մյուս արոտ, և այսպես շարունակ, տեղից տեղ անցնելով, շարունակ կարիք ունենալով շատ տեղերի, ընդարձակ տարածությունների։ Այստեղից նախնական անասնապահության ամենագլխավոր փաստը—թափառականությունը։ Իսկ այս դրությունն ստեղծում է կյանքի ուրույն պայմաններ, դաստիարակում է մարդու բնավորությունը բոլորովին այլ հիմքերի

վրա, քան այն հիմքերը, որոնց վրա հաստատված է մարդկային քաղաքակրթության ավելի բարձր աստիճանը—հողագործությունը, որ նստակեցությամբ է միայն կենդանի: Թափառական կենցաղը նստակեցության հակառակորդն է, ավելին՝ անհաշտ թշնամին, որովհետև չի կարող հաշտվել նրա պաշտած սկզբունքների հետ—սեփականության իրավունք, սահմանագծում, խաղաղ աշխատանք, պայմանավորված իրավունք: Թափառականն ի բնե զինվոր է, կռվող, եփված ու ամրապնդված այն ամենօրյա կռիվների մեջ, որ նա մղում է շրջապատի դեմ իր հոտը պահպանելու համար, ենթարկվելով բնության այն արգելքներին, ահեղ երևույթներին, որոնց հանդիպում է բաց երկնքի տակ գործող և թաղիքե վրաններում ապրող թափառականը: Նրա ըմբռնած իրավունքը նրա ուժն է և ամենահեղինակավոր դատավորը մարդկանց մեջ՝ զենքը: Նստակյաց քաղաքակրթության մշակած արժեքները նրա համար մեծ նշանակություն չունեն: Այն, ինչ նա հարստություն է համարում իր տեսակետով, իր ըմբռնողությամբ, վերցնում է կողոպուտով, իսկ մնացած բոլոր բաները ոչնչացնում է: Արևելյան Թուրքեստանի անասնապահ ազգաբնակության համար նույնիսկ երկրագործության գլխավոր արտադրությունն էլ—հացը չուներ առաջնակարգ նշանակություն: Հաց նա չափազանց քիչ էր գործածում, և կերակրվում էր համարյա միայն իր անասունների կաթով ու մսով: Այս առողջարար կերակուրը (մասնավորապես հիշատակելի է ձիու կաթից պատրաստվող ղումիզը), մշտական շարժուն կյանքը կլիմայական այլ և այլ պայմանների մեջ, կռվի և պաշտպանության մշտական անհրաժեշտությունը տալիս են թափառական անասնապահին պողպատի դիմացկունություն, անընկճելի ուժ և անողոք, վայրենի դաժանություն: Արևելյան Թուրքեստանի ազգաբնակությունը, որ այսօր գիտության մեջ բնորոշվում է մոնղոլական ցեղանունով, աչքի է ընկնում իր ֆիզիկական ուժով, քիչ զգայուն է կլիմայական ազդեցությունների և ֆիզիկական տանջանքների վերաբերմամբ, միևնույն ժամանակ ներքին զգացմունքը նրա մեջ շատ սուր է զարգացած, և այս պատճառով նա մեկն է ամենաեռանդուն ազգերից:

Ահա այս տեսակ ցեղերի մի անհուն պահեստ էր ներկայացնում Արևելյան Թուրքեստանը հնագույն ժամանակներում: Միլիոնավոր մարդկանց խմբակցություններ, հետևելով իրենց թափառական տնտեսության պահանջներին, շարժումներ էին գործում՝ իրար հետ միանալու, իրարից արոտներ խլելու համար: Իրար հրելով ու սեղմելով, նրանք ստիպված էին երկարացնել և ընդարձակել իրենց թափառումները, որոնք նույնիսկ դուրս էին հանում նրանց իրենց ընդհանուր հայրենիքի սահմաններից, սփռում էին օտար երկրներում: Այսպես սկսվեցին ազգերի մեծ տեղափոխությունները Միջին Ասիայից դեպի զանազան կողմեր,—համաշխարհային նշանակություն ունեցող շարժումներ, որոնք ճակատագրական ներգործություն ունեցան մարդկության բախտի վրա և որոնցից էլ սկսվում է հենց այդ տեղափոխվող ազգերի պատմությունը: Միջին Ասիայի աշխարհագրական ուրույն կերպարանքն էր, որ ղեկավարում էր այդ շարժումները: Արտագաղթերը չէին կարող ուղղվել ոչ դեպի հյուսիս (Սիբիր), ոչ դեպի հարավ (Հնդկաստան), որովհետև այդ երկու ուղղությամբ էլ նրանց առջև կանգնած էին լեռնային անանցանելի միապաղաղ պատվարներ: Բոլոր լեռնաշղթաներն Ասիայի այս մասում արևելքից արևմուտք ուղղություն ունեն, և ուրեմն, թափառականների մեծ բանակները—օրդուները— կարող էին գնալ կամ դեպի արևելք և կամ

դեպի արևմուտք: Այսպես էլ դարից-դար անփոփոխ կատարվում էր պատմական մեծ գործողությունը: Շարժումը դեպի արևելք հեշտ էր և տանում հացնում էր հարուստ քաղաքակիրթ Չինաստան: Ավելի դժվար էր արևմտյան ճանապարհը, որ անցնում էր Ջունգարիայի լեռնանցքներով: Այս նեղ լեռնահովիտները, սակայն, արգելք չեղան, որ մարդկային ծովը կաթիլներով անցնի այդ նեղուցներով և մտնի Արևմտյան Թուրքեստան: Այս մեծ երկիրը դառնում էր տեղափոխվող ազգերի համար առաջին կայան, ուր նրանք կանգ էին առնում երկար կամ կարճ ժամանակներ, ենթարկվում էին նոր կազմակերպությունների, կրում էին զանազան քաղաքական և կուլտուրական ազդեցություններ և այսպիսով կազմավորվելով՝ շարունակում էին իրենց տեղափոխությունն արևմտյան ուղղությամբ, դեպի Եվրոպայի սիրտը կամ Միջերկրական ծովի ասիական ափերը: Պիտի իմանանք և այն, որ ազգերի տեղափոխությունը խաղաղ, անարյուն շարժումների բնույթ չունեին և չէին էլ կարող ունենալ: Թափառականը, երբ գնում է մի տեղ, լինի այդ պատերազմի, կողոպուտի, թե մի այլ, մինչև իսկ խաղաղ նպատակի համար, միշտ մի զինված ձիավոր է, որ սիրում է իր ձին, բայց պակաս քիչ չի սիրում և իր զենքը. բայց մանավանդ բարձր է գնահատվում այն զենքը, որ կամ ժառանգությամբ է ստացված, կամ խլված է կռվով: Եվ ահա բազմաթիվ առիթներ և մղումներ, որոնք ամեն րոպե պատրաստ են, որպեսզի ստեղծեն casus belli-ներ, կռվապատճառներ, չհաշվելով արդեն այն, որ թափառական հովվությունն ամենայն իրավունքով իրեն բարձր է համարում, իբրև ավելիչ ուժ, իբրև ընկճող, քան նստակյաց մշակույթը, նրա այդ թշնամի սկզբունքը: Հասկանալի է, որ այսպիսի կողմերի միջև տեղի ունեցած պատերազմները պիտի լինեին անխնա, այնպես որ թափառական հովվության շարժումները միշտ մեծ դժբախտություն են եղել նստակյաց մշակույթի համար: Շատ հետաքրքրական է այս կողմից համեմատության դնել այն հետևանքները, որոնք առաջացան Արևելյան Թուրքեստանի շարժումներից չինական Արևելքում և Արևմտյան այն երկրներում, որոնք Տյան-Շանից տարածվում են մինչև Ատլանտյան օվկիանոս:

Չինաստանը թեև առաջին երկիրն էր, որ շատ հարվածներ կրեց Թուրքեստանի նոմադներից, երկար ժամանակով ենթարկվեց նրանց տիրապետության, բայց և այդպես՝ չկործանվեց այդ գրոհներից, այլ պահպանեց իր ազգային ինքնուրույն ամբողջությունը, հպատակեցրեց նվաճողներին իր կուլտուրային, այնպես, որ, երբ վերջիվերջո այդ մեծ ազգը կարողացավ ետ շպրտել իր մարմնի վրա նստած թափառականությունը դեպի Տյան-Շան լեռնանցքները, Արևմտյան Թուրքեստան մտնող այդ գաղթականները, տանելով հանդերձ իրենց հետ կործանման և ոչնչացման հիմունքները, հանդիսանում էին միաժամանակ և միջնորդ չինական քաղաքակրթության և արևմտյան ազգերի միջև: Այսպես չէր արևմտյան քաղաքակիրթ աշխարհի բախտը: Նոմադների հարվածներն այդտեղ ոչնչացնում էին ամբողջ ազգեր, ամբողջ քաղաքակրթություններ: Այս դարավոր իրականության պատկերը ցույց է տալիս հենց ամենից առաջ և գուցե ամենից շատ Արևմտյան Թուրքեստանը, ուր անթիվ ավերակներն այսօր էլ լավ ապացույցներ են, որ դժբախտ երկիրը շարունակ հանդիսացել է տակնուվրայությունների, ահավոր պատերազմների և անվերջ արշավանքների մի միջավայր:

Արդ՝ ի՞նչ անուն ունեին Արևելյան Թուրքեստանի այդ թափառակ

ազգերը, որոնք այնքան խոր հնության մեջ լցրել էին Ասիայի այս կողմերն այնքան եռուն և անդիմադրելի շարժումներով։ Ամենահին տեղեկությունը նրանց մասին պահել են չինացիներն իրենց գրավոր աղբյուրների մեջ։ 6-րդ դարում (մ. թ. ա.) բուն Չինաստանի հյուսիսային և մասամբ հյուսիս-արևելյան կողմերում տարածված էր մի մեծ պետություն, որ գոյություն ուներ հնուց (ինչպես կարծվում է՝ մեր թ. ա. 12-րդ դարից) և որի դեմ չինացիները մշտական պատերազմներ էին մղում։ Այդ պետությունը կազմող ազգությունները գուցե և միացեղ չէին, այլ կային նրանց մեջ և նստակյաց ցեղեր, բայց և այնպես՝ չինացիները նրանց բոլորին տալիս էին **Հիունգ-Նու** հավաքական անունը։ Մեր թվականությունից մի դար առաջ չինացիները հարձակողական դիրք բռնեցին այդ Հիունգ-Նուերի դեմ և կարողացան ետ քշել նրանց դեպի արևմուտք, ուր նրանք բաժանվեցին երկու մասի—մի մասն անցավ Տյան-Շան լեռները և բռնեց Արևմտյան Թուրքեստանի հյուսիս-արևելյան մասը մինչև Օքսուս (Ամու-Դարիա) գետը, իսկ մյուս մասը մնաց Արևելյան Թուրքեստանում, և երկար ժամանակ աչքի ընկնող քաղաքական դեր չէր կատարում և չինացիներից կոչվում էր «Արևմտյան Հիունգ-Նու» հավաքական անունով։ Բայց 5-րդ դարի վերջերից այս նույն ազգությունները նորից հավաքվելով, կազմում են մի պետություն, որ տարածվում էր մինչև Ալտայ, բայց արդեն կրում են **Թուրք** (Թյուրք) **151** հավաքական անունը (չինարեն Թու-Քիու)։ Այժմ տեսնենք Արևմտյան Թուրքեստանի Հիունգ-Նուերին։ Պարսիկները, ինչպես գիտենք, Թուրան էին անվանում այն բոլոր երկրները, որոնք Օքսուսից դեպի հյուսիս են գտնվում։ Այդ կողմերում ապրող բոլոր ազգությունները, վաչկատուն թե նստակյաց, թուրանցիներ էին նրանց համար։ Որքան ժամանակ ուժեղ էր մազդեզականությունն Իրանում, Թուրանը չկարողացավ պատռել նրա պատվարը և թափանցել իրանական սարահարթը։ Բայց որովհետև Արևմտյան Թուրքեստանի Հիունգ-Նու ազգերի մղումը դեպի արևմտյան երկրներն անդիմադրելի էր, ուստի նրանց շարժումներն ուրիշ ճանապարհ բռնեցին։ Այդ ճանապարհը տանում էր Կասպից ծովի հյուսիսային ափերը և այնտեղից Եվրոպայի արևելյան մեծ հարթությունը, որ ձգվում է Վոլգա գետից մինչև Դանուբ գետը։ Այս կողմերում ապրող բոլոր ազգությունները հույներին և հռոմայեցիներին հայտնի էին **Սկյութ, Սկյութացի** ընդհանուր անունով։ Եվ ահա, երբ Արևմտյան Թուրքեստանի ազգերն սկսեցին անցնել Եվրոպա, նույն այդ Սկյութ անունը տարածվեց և Թուրքեստանում մնացածների վրա։ Բայց այդ անունը որոշ ժամանակից հետո անհայտանում է, տեղի տալով մի ուրիշ անվան—**Հոն**, որ համապատասխանում է չինական Հիունգ-Նուին։ Այս անունը, ինչպես գիտենք, հայտնի էր և հայերին 5-րդ դարից։ Հոներն ապրում էին Կովկասյան լեռներում և նրանց հետևում, հաճախ հարձակվում էին Հայաստանի վրա, բայց հաճախ և դաշնակցում էին հայերի հետ։ Հոները, ինչպես հայտնի է, իրենց ավերիչ արշավանքը տարան մինչև Արևմտյան Եվրոպա՝ Ատտիլայի առաջնորդությամբ. որ Հոն մի ընդհանուր ցեղական անուն էր, ցույց է տալիս հենց այն, որ նույն ցեղի մի ուրիշ հատված, որ Կասպից ծովի հյուսիսային և հյուսիս-արևմտյան ափերին էր տիրում, կոչվում էր Խազար։ Կային և այլ ցեղային ստորաբաժանումներ։

Բայց 6-րդ դարից հետո Արևելյան Թուրքեստանի պետությունը, որ չինարեն Թու-Քիու (Թուրք) էր կոչվում, սկսում է ընդարձակվել դեպի

արևմուտք, և ահա այդ ժամանակից Թուրք անունն սկսում է գործածությունից դուրս մղել Հոն և Թուրանցի հավաքական անունները։ Ինքը Թուրքը հավաքական անուն դարձավ ավելի ընդարձակ առումով, այնպես որ Թուրք էին կոչվում այն բազմաթիվ ազգերը, որոնք Խաղաղ օվկիանոսի ափերից տարածված էին մինչև Բալթիկ ծովը։ Բայց որ դրանք բոլորն անձուկ մտքով մի հատ միապաղաղ ազգային տիպ չէին կազմում, այդ ցույց են տալիս նրանց լեզուները, որոնք, հաստատելով բոլորի ընդհանուր ծագումը, ներկայացնում են նույն լեզվական և ցեղային ստորաբաժանումները, որոնք հատուկ են մարդկային ամեն մի մեծ ցեղական ընտանիքին։ Չորս գլխավոր լեզվախումբ է նկատվում բոլոր Թուրք ազգությունների մեջ՝ 1) **տունգուզական** կամ մանչու (ծայրագույն Արևելքում), 2) **մոնղոլական**, 3) **բուն թուրքական** և 4) **ֆիննական**։ Նկատենք, որ Մոնղոլ (Մուղալ) անունը Միջին դարերում, այսինքն այն ժամանակ, երբ մեր պատմությունն է կատարվում, գործածական չէր այնքան, որքան Թաթար անունը, որ փոխարինեց նրան։

Թուրքերն իրենց ցեղի և ցեղակիցների ազգաբանությունը բացատրում են հին առասպելաբանությունների մեջ, որոնք ավանդաբար ներկայացնում են այն, ինչ ունի պատմական որոշ ճշտություն և միաժամանակ հիշատակներ են պարունակում այն զրույցներից, որոնց մեջ ժողովուրդը կառուցում էր իր հասկացողությունը տիեզերաստեղծության մասին։ Բոլոր հին հերոսների գլուխ կանգնած է Թուրք անունով մեկը։ Նրա ժառանգներից է Ալինջե-խանը, որից ծնվեցին երկվորյակ որդիներ, մեծի անունը Թաթար-խան, կրտսերինը՝ Մողոլ (Մոնղոլ)-խան։ Մողոլ-խանը թողեց չորս որդի՝ Կարա-խան, Ուզ-խան, Գուզ-խան և Գուռ-խան։ Կարա-խանն ուներ մի հրաշք-որդի՝ Օգուզ (=Օքուզ, Եզ) խան, որ թուրքերի խորհրդանիշն (էմբլեմն) է, Օգուզ կամ Օղուզ ցեղի անվանադիր (էպոնիմ)՝ և որից, բացի դրանից, սերված են համարվում հինգ ուրիշ ազգեր—Ուգուր, անկլի, Ղփչաղ, Կալաչ և Կաիլուկ։ Իսկ այս Օգուզ-խանի որդիներն են՝ Գյուն-խան (Արեգակ), Կեոյուկ-խան (Գեոդ կապույտ, այսինքն երկինք), Տաղ-խան (=Դաղ, սար, այսինքն՝ երկիր) և Տինկիզ (=Դանգիզ—ծով) խան։ Այս ծովի որդին է Իլ-Խանը (ազգերի խան), որ Մոնղոլների հրամանատարն է։ Նա պատերազմի է բռնվում Թաթարների խանի հետ և որովհետև այս վերջինիս հետ դաշնակցած էին ղըրղըզները և մի քանի թուրք ցեղեր, մոնղոլները հաղթվում են։

Այսպես է սկսվում թուրք պետության առասպելական պատմությունը, որ տեղի է ունենում Ալտայի լեռնային շրջաններում։ Ամենահին տեղեկությունները այս պետության մեջ գոյություն ունեցած հասարակական կարգի և բարքերի մասին տալիս են չինական տարեգրությունները։ Նրանց ասելով, Թու-Քիուն Հիունգ-Նուի մի ցեղն է, որի բուն հայրենիքն է Գոբի անապատից դեպի հյուսիս գտնվող երկիրը։ Այս ցեղը թափառական է, պարապում է անասնաբուծությամբ և որսորդությամբ։ Նրա վրանները թաղիքից են։ Թափառականները գիտեն կաշի շինել և բուրդ մանել, որից և հագուստներ են պատրաստում։ Դժնյա են, արհամարհում են ծերերին և պատվում են այն մարդկանց, որոնք գտնվում են այն հասակում, որոնք ուժեղության տարիների մեջ են գտնվում։ Մի կազմակերպված հասարակություն է այդ Թուրքը, որ ունի կարգապետություն (հիերարխի-դիսցիպլինի) և զգացմունք։ Անհնազանդությունը և դավաճանությունը մահով են պատժվում։ Թագավորը,

որ կոչվում է կագան կամ խաքան, կառավարում է ժողովուրդը 28 պաշտոնյաների միջոցով, որոնցից մի քանիսի պաշտոնները ժառանգական են։ Գրավոր օրենքներ չկան, սովորույթի մշակած կարգերն են տիրում իբրև օրենք։ Մարդն ապրում է միայն իր ուժով և իր զենքերով։ «Նրանք փառք են համարում պատերազմի մեջ մեռնելը,— ասում է չինացի հին տարեգիրը,— հիվանդությունից մեռնելը նրանց մեջ ամոթ բան է»։ Խոսք էր դարձել, թե «մարդը ծնվում է տան մեջ, մեռնում է մենամարտի տեղը»։ Զինվորական կյանքը կանոնավորված էր, ուներ հրամանատարության աստիճաններ, որոնցից կհիշատակենք երկուսը—ակա (աղա) և թարխան։ Բացի զինվորականից՝ վարչական պաշտոնավարության անուն է և բեգ-ը։ Իսկ սուրբերին և հոգևորականներին թուրքն անվանում էր աթա (հայր)։

Մի զինվոր-ժողովուրդ ուրեմն, ինչպես և պետք էր սպասել այն աշխարհագրական և կուլտուրական միջավայրում։ Բայց այս ժողովուրդն անգիր խաշնարած չէր և 7-րդ դարից թողել է և գրավոր հիշատակարաններ, որոնց մեջ ավելի ևս պայծառ գունավորումներով են ներկայանում այս հովիվ-ժողովրդի նվաճողական տենչերն ու պաշտամունքները։ Պատերազմն ամենաբարձր կարգն է։ Ամեն ինչ նրան է երկրպագում, որովհետև նա, ամենից առաջ, ապրուստի միջոց է։ Կագանը պարտավոր է առաջնորդել իր ժողովուրդը, գիշերը չպիտի քնի, ցերեկը չպիտի հանգստանա, որպեսզի միջոց տա յուրաքանչյուր աղքատ թուրքին հարստանալ, քիչը շատացնել։ Իսկ երբ ժամանակը վատանում է, կագանն անկարող է դառնում և այլևս պատերազմ չկա, այլևս կողոպտելու միջոց չի մնում, այդ դեպքում թուրքը գնում է ուրիշ թագավորների ծառայելու իբրև զինվոր, ստանալով լավ վարձագին։ Երբ զինվոր թուրքը ձիու վրա է, նա այլևս իր հորը չի ճանաչում, ամեն ինչ փոխարինում է նրա ճանապարհակիցը՝ յոլ-դաշը, որ ընկեր բառի համանիշ է դառնում։ Նույնիսկ ընտանեկան կյանքն էլ անտարբեր չի քաջերի և թույլերի վերաբերմամբ։ Բաժանումների ժամանակ ձիերը քաջերին են տրվում, իսկ թույլերն ստանում են ոչխարներ։

Բայց պատերազմը միայն վաշկատուն հովվի անձնական բարեկեցության տեսակետից չէ այդքան բարձր ու տենչալի մի գործ։ Այս հասկացողության մեջ խառնված է և ջերմաջերմ հայրենասիրություն։ Կագանը պարտավոր է օր ու գիշեր պատերազմի առիթներ մտածել ոչ միայն յուրաքանչյուր աղքատ թուրքին հարստացնելու, նրա քիչը շատացնելու համար, այլև այն պատճառով, որ այդպես է պահանջում թուրքական երկրի պատիվն ու հեղինակությունը։ «Իմ սիրելի լեռնաստանը,—ասված է մի երգի մեջ,— ոչինչ չի տալիս, բայց ես նրան սիրում եմ իմ բոլոր ուժերով և պիտի կռվեմ նրա փառքի համար»։ Զինվորին պատերազմ էր առաջնորդում այն միտքը, թե ինքը սպանում է, իրեն սպանել է տալիս, որպեսզի պահպանի իր երկրի զինվորների վարկը։ Այստեղից է առաջանում և դրոշակների վառ պաշտամունքը, որ այնքան հատուկ է թուրքերին։

Իր կյանքի այս շրջանում Ալտայան թուրք պետությունն աչքի չէր ընկնում առանձին մի կրոնասիրությամբ։ Նրա հին ազգային կրոնի մասին շատ անորոշ են տեղեկությունները։ Գուցե այդ պաշտամունքի մեջ ամենագլխավորն էր Թանղրին (երկինքը)։ Հետո ժողովրդի մեջ տարածվում է բուդդհայականությունը, որին հետևում է քրիստոնեությունը։ Սիրիացի

միսիոնարները, ինչպես գիտենք, իրենց համարձակ առաքելությունները տարածեցին մինչև Չինաստանի սահմանները, ընդունել տալով թուրք նոմադներին նեստորական քրիստոնեություն։ Այս դրությունը շարունակվում է մինչև 9-րդ դարը, և այս ամբողջ ժամանակ թրքությունը Չինաստանի քաղաքակրթության միջնորդն էր, հանդիսանալով այսպիսով Եվրոպայի աջակից, որ տալիս էր նրան ծայրագույն Արևելքում իր փոխառածը։ Դրությունը, սակայն, խիստ փոխվում է, երբ արաբներն իրենց նվաճումների հետ իսլամն են մտցնում Միջին Ասիա։ Այս կրոնը, իբրև ասիական միջավայրի ծնունդ, նախնական հասկացողություններով ապրող, մարդուն ավելի հարմարեցրած, քան կարող էր լինել եվրոպական բարձր ըմբռնումներից գոյացած քրիստոնեությունը, առանց դժվարությունների տարածվում էր վաշկատուն համայնքների մեջ։ Եվ ահա այդ ժամանակներից միջին ասիական ժողովուրդների հոգեկան աշխարհում կատարվում է խոր կերպարանափոխություն։ Իսլամը հաղորդում է նրանց ինքնուրույնության կնիքը և նրան հետևող ժողովուրդներն այլևս Եվրոպայի աշխատակիցները չեն համամարդկային քաղաքակրթության ասպարեզում, այլ նրա հակառակորդները, նրա դեմ կրոնական ֆանատիկոսությամբ բռնկված թշնամիներ։ Պարզասեր, նահապետական կենցաղով տարված թափառիկ ցեղերի համար գրավիչը միայն Իսլամի դյուրըմբռնելի, տարրական խրատներն ու հրահանգները չէին։ Արաբները տանում էին այդ երկրներն իրենց քաղաքակրթությունը, իրենց հարուստ և մեծ պետության շուքը, որի ձգողական ուժը Միջին Ասիայի միանման անապատներում և անջրդի տափաստաններում միանգամայն անդիմադրելի էր։ Արաբներն այդ հովիվներին հիացնում էին մանավանդ իրենց նժույգներով, որոնք Թուրքեստանում ստացան բեիդո (բեդվին) անունը և իրենց ոսկե բարակներով, որոնք դարձյալ թուրքական լեզվով կոչվում էին թազի (արաբ)։ Ամենագեղեցիկ բանը թուրքի մտքի մեջ համեմատվում էր արաբական գեղեցիկ շան հետ։ Թուրքն ասում էր. «Նա գեղեցիկ է ինչպես թազի»։ Եվ միանգամայն բնական էր, որ աշխարհի նոր տերերի շուքով հիացած վայրենի հովիվը ձգվեր իր հեռավոր դաշտավայրերից դեպի այդ լույսն ու փարթամությունը։ Արաբն այդ հարմարություններն էլ տալիս էր նրան։ Դարերով Թուրանի սահմանի վրա կանգնած էր Սասանյան պատվարը, որ պինդ փակված էր պահում նրա առջև արևմուտք անցնելու բոլոր դռները։ Այժմ արաբը խորտակել էր այդ պատվարը, լայն ճանապարհ էր բացել և ոչ միայն չէր արգելում, այլև ինքն էր գրավում տանում այդ քաջ ձիավորներին Բաղդադ, ուր, ինչպես տեսանք, թուրքերը խալիֆների թիկնապահ զորքն էին կազմում և ազդում ամբողջ պետության ճակատագրի վրա։ Խալիֆական զորքի մեջ մտնող թուրքերը կոչվում էին կուլ, որ ստրուկ է նշանակում, բայց այս բառը փոխարինվում էր համահնչուն գոլ բառով, որ արդեն թև է նշանակում, բռունցքով վերջացող թև։ Այսպիսի դրությունների հասնելու տենչը բռնում էր մանր ու խոշոր խմբերով մարդկանց. հաճախ նույնիսկ առանձին անհատներ, մեն-մենակ, հեծնում էին իրենց ձին, վերցնում էին զենքերն ու ընտանիքը և մի 10—12 հատ էլ ոչխար՝ ճանապարհին կերակրվելու համար, և գնում էին Իրանն արևելքից արևմուտք չափելու և խալիֆի կախարդական մայրաքաղաքը հասնելու համար։ Թե ինչ էին դառնում այդ վարձկան թուրք զորքերն արաբական պետության մեջ—այդ արդեն մեզ շատ լավ հայտնի է և մենք գիտենք, որ նրանց պատ-

ճառով էր, որ կործանման հասավ Աբբասյան հարստությունը։ Բայց և այնպես, միջին-ասիական այս վարձկան «թները» դեռ լուրջ վտանգ չէին Արևմտյան Ասիայի քաղաքակրթության համար։ Իսկական վտանգն սկսեց պատրաստվել այն ժամանակից, երբ թուրք ցեղերը, Ալտայան պետության լայնացման հետևանքով, անցան Տյան-Շանի արևմտյան կողմերը և սկսեցին հաստատվել Յաքսարտ (Սիր-Դարիա) և Օքսոս (Ամու-Դարիա) գետերի ավազաններում։ Թրքության այս տեղափոխությունն ընդունում էր նոր և հաստատուն ուղղություն—Արևմտյան Թուրքեստանի միջով դեպի Իրան։ Շարժումը, սակայն, մեծ զանգվածներով չէր կատարվում։ Գործում էին զատ-զատ առանձին ցեղեր, որոնք ճանապարհին ուժով կամ հոժարությամբ միացնում էին ուրիշ թուրք տարրեր և այսպես առաջանում նվաճումներ կատարելու համար։ Այս արշավող ազգությունների համար գործողությունների առաջին թատերաբեմ հանդիսանում է Արևմտյան Թուրքեստանը, ուր նրանք կանգ էին առնում ավելի կամ պակաս երկար ժամանակով, պետական կազմակերպություններ էին ստեղծում։ Այստեղ էլ, ինչպես տեսանք, թուրքական պետությունները մտցվում են արևմտյան քաղաքագիտական հարաբերությունների մեջ, շնորհիվ այն դարավոր արյունոտ պայքարի, որ գոյություն ուներ Բյուզանդիայի և Սասանյան Իրանի մեջ։ Մենք տեսնում ենք բյուզանդական դիվանագետներին թուրք խաքանների հետ բանակցություններ վարելիս՝ երկու կողմից Իրանի վրա հարձակվելու համար, բայց մեր առջև ունինք և այն փաստը, որ Սասանյան թագավորներն էլ, իրենց թիկունքը բյուզանդական պատերազմների մեջ ապահովելու համար, դաշնակցում էին Թուրքեստանի (Թուրանի) տիրողների հետ։ Այսպիսով, ուրեմն, թուրք ցեղերը, դեռ իրենց սկզբնական շարժումների շրջանում, դեռ իրենց նահապետական կենցաղից դուրս չեկած, մտցվում են, իբրև ուժ, Արևմտյան Ասիայի և Եվրոպայի փոխադարձ հարաբերությունների, կամ ուրիշ խոսքերով, Արևելյան Հարցի անցուդարձերի մեջ։

Պատմությունը նյութեր չունի մի առ մի հիշատակելու և նկարագրելու այն բոլոր տեղափոխությունները, որ կատարում էին Արևելյան Թուրքեստանի թուրք ցեղերը դարերի ընթացքում դեպի Արևմտյան Թուրքեստան։ Այս մեծ շարժումներից մի քանիսն են միայն, որոնք արձագանք են գտել Միջին Ասիային վերաբերող վաղագույն հազվագյուտ տարեգրությունների մեջ։ Այսպես, գիտենք, թե 10-րդ դարում էր, որ թուրքական մի ցեղ, Արևմտյան Թուրքեստանից անցնելով Աղվանիստանի հարավային մասը, Հնդկաստանի սահմանի վրա թագավորություն հաստատեց Ղազնի քաղաքում, որի անունով էլ կոչվեց Ղազնևի։ Բայց այս թուրքերը համարյա բոլորովին իրանացած էին և կարողացան նույնիսկ խոշոր ծառայություններ մատուցել Իրանին՝ նրա ազգային վերածնության մեծ գործում։ Ղազնևի թագավորներից ամենահայտնին Մահմուդն էր, Ֆիրդուսի աշխարհահռչակ բանաստեղծի ժամանակակիցը։ Միևնույն դարի երկրորդ կեսում Թուրքեստանի մեջ տեղի է ունենում մի փոքրիկ շարժում, որից պիտի համաշխարհային ահագին իրողություններ ծնվեին։ Ալտայի կողմերից Թոկմակի որդի Սելջուկը կամ, որ ավելի ճիշտն է, Սելջիկը, Պիգու անունով իշխանավորի հրամանատար Սուբաշիի հետ, մի ինչ-որ հանցագործության համար ստիպված է լինում թողնել հայրենի տափաստանները և փախչել Արևմտյան Թուրքեստան։ Նրանց երկուսի հետ կային հարյուր ձիավոր, հազար ուղտ և 50,000

ոչխար։ Փախստականները կանգ են առնում Բուխարայի սահմաններում և այդտեղ Սելջուկը, թողնելով իր կրոնը, որ, ինչպես հավանական են համարում, նեստորական քրիստոնեությունն էր, ընդունում է իսլամը, որպեսզի դրանով պաշտպանի տեղացի մահմեդականներին իր հեթանոս ցեղակիցների (թուրքերի) հարձակումներից։ Այս հողի վրա նա գտնում է մեծ հաջողություն։ Բոլոր հալածվածները նրա մոտ են հավաքվում և ավելացնում նրա ուժը։ Ինչպես սովորական է, շուտով նա կռիվների է բռնվում տեղական խաների հետ և կարողանում է պահպանել իր հաստատած փոքրիկ թագավորությունը։ Վախճանվելով խորին ծերության մեջ, նա թողնում է տերությունն իր Տողրիլ և Չաքար թոռներին, որոնց ինքն էր դաստիարակել պատերազմական գործի մեջ։ Այսպիսով կազմված նոր պետությանը, հիմնադիր Սելջուկի անունով, հատկացվում է Սելջուկյան անունը, իսկ բնակիչները կոչվում էին Սելջուկյան թուրքեր։ Նա չմնաց միջին-ասիական մի պետություն, այլ հենց սկզբից ձգտում էր տարածվել դեպի Իրանի արևելյան ծայրերը, դեպի Խորասան։ Բայց այս նպատակը հեշտ իրագործելի չէր, որովհետև Խորասանի տերը Ղազնևի Մահմուդ Շահն էր։ Երկու եղբայրները, որոնց կապում էր սաստիկ սերը և պատերազմական բուռն ավյունը, երկար ժամանակ պատերազմներ էին մղում թե՛ իրենց շրջապատող խաների և թե՛ Մահմուդի դեմ։ Այս երկարատև և համառ պատերազմների ժամանակ էր, որ Սելջուկյան զորաբաժիններից մի քանիսը, տեղի տալով Մահմուդի զորքերի ճնշումներին, այս ու այն կողմերը գնացին, օրինակ՝ մինչև Ատրպատական, Համադան, Մոսուլ և քարուքանդ արին այդ կողմերը։ Հայաստանն էլ իր բաժինն ունեցավ այս արշավանքների պատճառած աղետների մեջ։

2. Վասպուրականում: Խաչիկ-Գագիկի մահից հետո Արծրունիների տոհմը չառաջացրեց փոքր ի շատե ընդունակ մի մարդ, որ կարողանար փայլ հաղորդել Վասպուրականի թագավորության, այնպես որ ամբողջ 70 տարվա մի շրջանում մենք այստեղ ունինք իրար հաջորդող կամ իրար հետ միասին թագավորող անձանց մի անվանացուցակ միայն[1]։ Այդ ցանկից մենք գիտենք, որ Խաչիկ-Գագիկին հաջորդեցին, ուղղակի գծով, երկու սերունդներ։ Այսպիսով Վասպուրականի թագավորական հարստությունը, սկսելով հիմնադիր Խաչիկ-Գագիկից, ունեցավ ընդամենը վեց թագավոր, որոնցից վերջինն էր Սենեքերիմ-Հովհաննեսը[2], որ թագավորում էր 1003 թվականից, նախ Վասպուրականի մի մասում, որովհետև նրա Աշոտ-Սահակ և Գուրգեն-Խաչիկ եղբայրներն էլ առանձին-առանձին թագավորեցին նահանգի ուրիշ կողմերում, բայց սրանց մահից հետո Վասպուրականն ամբողջովին նորից միացավ Սենեքերիմի տիրապետության տակ։

Այս թագավորի մասին մենք մի քանի աղքատ տեղեկություններ միայն ունինք, որոնք, սակայն, կասկած չեն թողնում, թե դա մի բարեպաշտ և շինարար մարդ էր[3], բայց ամենևին զուրկ զինվորական ընդունակություններից, նույնիսկ և վախկոտ։ Ժամանակի մի երևույթ էր 10-րդ

[1] Թովմա Արծրունու մանրամասն Պատմությունը վերջանում է գրեթե Խաչիկ-Գագիկի հետ միասին, և այնուհետև Վասպուրականի կյանքն այլևս լավ չի լուսաբանվում մեր մատենագրության մեջ։

[2] Սրանք են Արծրունի թագավորները՝ 1. Խաչիկ-Գագիկ (908—935 թթ.), 2. Դերենիկ-Աշոտ (936—953 թթ.), 3. Աբուսահլ-Համազասպ (953—972 թթ.), 4. Աշոտ-Սահակ (972—983 թթ.), 5. Գուրգեն-Խաչիկ (983—1003 թթ.), 6. Սենեքերիմ-Հովհաննես (1003—1026 թթ.)։

[3] Սենեքերիմն ամուսնացած էր Գագիկ Ա-ի դուստր Խուշուշի հետ։

դարում, որ թագավորներն աշխատում էին եթե ոչ կրոնավորներից ավելի, գեթ նրանց չափ զարգացած լինել։ Այսպիսիներից մեկն էր Սենեքերիմը։ Նրա վախկոտությունը գուցե այնքան բնածին մի պակասություն չէր, որքան միջնադարյան կրոնավորության ներշնչած նախապաշարումների մի հետևանք։ Սենեքերիմը, ինչպես երևում է, մեկն էր այն անթիվ մարդկանցից, որոնց ահաբեկել էր 1000 թվականը, որից հետո սպասվում էր աշխարհի կործանումը։ Նա էլ, ուրիշ շատերի նման, իր հոգու փրկության համար շինություններ շինեց։ Այսպես էր Վարագա վանքի շինությունը կամ, ավելի ճիշտը՝ վերաշինությունը։ Եվ ահա այսպիսի մի խաղաղասեր և նախապաշարված մարդու օրով էր, որ թուրքերը երևացին Վասպուրականում։ Սրանք այլևս այն թուրքերը չէին, որոնք մի ժամանակ կռվել էին այստեղ Բուղայի հրամանատարությամբ։ Այն թուրքերն արաբական բանակ էին կազմում, արաբական կարգեր ու բարքեր յուրացրած, որոշ չափով քաղաքակրթված։ Մինչդեռ այժմ Հայոց աշխարհի այս կողմում երևան եկողները, Միջին Ասիայի տափաստանների հարազատ զավակները, սարսափելի ձիավորներ էին, սարսափելի թե իրենց վայրենի հանդգնությամբ և թե մանավանդ իրենց նետաձգությամբ։ Այս դեպքը պատահեց 1019 թվականի ամառը։ Վասպուրականի ժողովուրդը դեռ թուրք նոմադական բանակ չէր տեսել։ Նորեկների միայն արտաքինը ահաբեկիչ էր։ «Նրանք ունեին երկար մազեր կանանց նման», ասում է Մատթեոս Ուռհայեցին։ «Մինչև յայնժամ ժամանակին չէին բնաւ տեսեալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանդիպելն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա. աղեղնաւորս և հերարձակս իբրև զկանայս»։ Տարօրինակ կերպարանքից ավելի սոսկում պատճառողն այդ աղեղնավորների դաժան բարքերն էին։ Նույն ժամանակագիրը, կամենալով բնորոշել թուրքերի ժանտաբարո և խուժադուժ բարքը, անվանում է նրանց «թևավոր օձեր»։ Իսկ Թովմա Արծրունու Պատմության շարունակողն ասում է. «Եւ նոքա ունելով զբնութիւն արիւնարբու գազանի. զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ դիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն և ահարեկ առնէ. և բնակութիւն նոցա ի լերինս և ի դաշտս և յանապատս, որպէս զվայրենի գազանաց. և են շաղղակերք որպէս գազանս. ոչ պատուեն զմեծամեծս, ոչ խնայեն յալիս և հարկիսս ծերոցն, ոչ ողորմին երիտասարդին և տղայոյն, ոչ խնայեն ի մանկութիւն ումեք. ազգ չար և դառնացող ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ Աստուած զհոգի իւր»[1]։ Բարեբախտաբար, առանց քաջ մարտիկների չէր Վասպուրականն այս սարսափի օրերին։ Երիտասարդական խիզախ քաջությամբ լցված էր Սենեքերիմի որդի Դավիթը, որ և թագաժառանգն էր։ Փորձված ու տոկուն կռվող էր Վասպուրականի ծեր սպարապետ Շապուհը, իսկ հայ զորքը միահամայն արժանի հանդիսացավ իր այս երկու հրամանատարներին։ Հայոց բանակը, սրերը մերկացրած, արիաբար հարձակվեց թշնամու վրա և նրա շարքերում կոտորած արավ։ Բայց Շապուհը, իբրև փորձված հրամանատար, շուտ նկատեց, որ պատերազմը, թեև այսքան հաջող կերպով սկսված, անկարելի է շարունակել, որովհետև թուրքերի շեշտակի և անվրեպ նետաձգությունից արդեն շատ վիրավորներ կային Հայոց բանակում։ Եվ նա ասում է թագաժառանգին. «Դարձիր, թագավոր, այս թշնամիների երեսից, որովհետև մեր զորքերի մեծ մասը վիրավորվեց նրանց նետերից, գնանք ու այս զենքի

[1] Թով. Արծր., եր. 306։

դեմ ուրիշ տեսակ զգեստներ պատրաստենք»[1]։ Սակայն թագաժառանգը, իր համար անպատվություն համարելով նահանջն այսպիսի մի պատերազմից, ընդդիմանում է Շապուհին։ Այն ժամանակ Շապուհը նրա վրա բռնություն է գործ դնում, հին ու փորձված հրամանատարի իրավունքից ավելի հենվելով այն հանգամանքի վրա, որ Դավիթն իր սանն էր, մեծացել ու սնվել էր իր ձեռքերի վրա։ Բռնելով արքայորդու թիկունքից, նա ուժով հեռացնում է նրան պատերազմից և ստիպում, որ կատարվի իր ասածը։ Եվ Դավիթը հնազանդվեց նրան։ Երկուսով գնացին Ոշտունյաց գեղեցիկ Ոստանը, ուր գտնվում էր Սենեքերիմ թագավորը, պատմեցին նրան, թե ինչ տեսակ նոր թշնամի էր լույս ընկել Հայոց աշխարհում։ Այս պատմությունը թագավորի վրա միանգամայն հուսահատական տպավորություն գործեց։ «Նա շատ վրդովված էր,— ասում է ժամանակագիրը,— ոչ ուտում էր, ոչ խմում, այլ մտախոհ էր և տրտում»։ Մտածեց նա, որ իր համար փրկության ոչ մի հույս չկա այլևս։ Իրավ է, թուրքերը միայն մի ասպատակություն էին կատարել և վերջացնելով թալանի ու ավերանքի գործը, հեռացել էին։ Բայց ծանր հարց էր առաջ գալիս. ի՞նչ կլինի, եթե նրանք նորից վերադառնան։ Քննելով այս հնարավորությունը, թագավորը գտնում էր, որ ոչ ոք այս դեպքում օգնող չի լինի և, ուրեմն, ամբողջ աշխարհը մատնված կլինի գազանաբարո թշնամու կատաղության։ Հնարավոր վտանգի հեռանկարը սարսափեցնող հանգամանք էր ընդունում, միանալով նախապաշարված մտքի տկարության հետ։ «Ամբողջ գիշերները,— շարունակում է նույն ժամանակագիրը,— նա նստած քննում էր աստվածախոս նախատեսողների և սուրբ վարդապետների գուշակությունները»[2]։ Եվ վայրագ թուրք ձիավորների կատարած ավերանքների մեջ նա տեսնում էր նույն աղետալի գուշակությունների կատարումը։ Գործում էր դարձյալ նույն չարաբախտ հազարամյակի վախը։

Մեզ թվում է, թե մոտավորապես այդ ժամանակները, այսինքն աշխարհին կործանում բերող հազարամյակի նախօրյակին կամ հենց մի քանի տարի հետո, երբ դեռ կրոնական կապանքներով մթնած միտքը շարունակում էր սպասել ահեղ դատաստանին, հայերի մեջ խմբագրվեց մի գուշակողական անվավեր գրություն, որի մեջ Ներսես Մեծը կամ Պարթևը, 4-րդ դարի հայ եկեղեցու ամենախոշոր գործիչներից մեկը, իբր թե մեռնելուց առաջ գուշակում է, թե ինչ պիտի լինի աշխարհի և հատկապես հայ ազգի վիճակն ապագայում։ Այդ գրությունը զետեղվեց Ներսես Մեծի կենսագրության մեջ, որի խմբագրությունը երևաց 10-րդ դարում և վերագրվում է Մեսրոպ երեցին[3]։ Այս անվավեր գուշակությունը հետո էլ նոր խմբագրությունների ենթարկվեց և հետագա դարերում ևս մեծ հեղինակություն էր վայելում հայերի մեջ։ Ահա այս գրությունն էր, որ Սենեքերիմին տրամադրում էր ամենամռայլ կերպով[4], որովհետև Ներսեսի բերանից Հայոց աշխարհի կործանումն էր նկարագրվում սոսկում առաջացնող հանգամանքներով։ Ամենացնող տպավորությունը, անշուշտ, պիտի թողներ գուշակության մի

[1] Մատթեոս Ուռհայեցի, եր. 47։ Այս անօրինակ հաջող նետաձգությունը, որ այնքան սարսափելի էր դարձնում հեռու Արևելքից եկած այդ ձիավորներին, այն գլխավոր պատճառն էր, որ Թուրքաստանի ազգերը և մանավանդ Թաթարները մեր գրականության մեջ սկսեցին կոչվել «Նետողք, Նետողաց ազգ»։

[2] Մ. Ուռհայեցի, եր. 48։

[3] Տ. «Սոփերք Հայկականք», հատ. 9, Վեն., 1853։

[4] Հ. Ալիշան, «Յուշիկք Հայրենեաց Հայոց», հ. Բ, եր. 427։

ժանրամասնությունը, որ վկայում է, թե նրա խմբագրության մեջ մասնակցել է և Սելջուկյան թուրքերի երևան գալը Հայաստանի հողի վրա։ Այդ այն է, որ Ներսես Պարթևը գուշակում է, թե հայկական թագավորության վերջ կդնեն Արևելքից եկած դժնադեմ և անողորմ ազգերը։ Ինքն իրեն համոզելով, որ այդ կործանարար ազգերը հենց նույն թուրքերն են, որոնց հանդիպել էին Շապուհ սպարապետն ու Դավիթը։ Թագավորը փրկության միջոց է որոնում և գտնում է այն ամենայն հեշտությամբ։ Այդ միջոցն էր՝ Վասպուրականը տալ Վասիլ կայսրին, ստանալ փոխարենը հողեր բյուզանդական կայսրության խորքերում, ուր ապրել հանգիստ, Վասպուրականի պես մի սահմանագլուխ երկիր պաշտպանելու ամբողջ ծանրությունը գցելով կայսրության վրա։

Այս ուղղությամբ բանակցություններ նա սկսում է 1021 թվին, ուղարկելով Վասիլի մոտ իր Դավիթ որդուն։ Մեր ազգային աղբյուրները շատ են ծաղկեցնում Սենեքերիմի այս գործը, հաղորդելով նրան չափազանցության գույներ։ Այսպես, պատմում են, թե Դավթի հետ գնացին և շատ ազատներ, ինչպես և Եղիշե եպիսկոպոսը։ Երեք հարյուր բեռնակիր ջորիներ տանում էին Վասպուրականի ընծաները։ Բացի դրանից, Սենեքերիմն ուղարկեց կայսրին և հազար արաբական ձիեր։ Եվ երբ այս ամբողջ կարավանը մտավ Կ. Պոլիս, «դղրդեցաւ քաղաքն,— ասում է Ուռհայեցին,— և ելին ամենեքեան ընդ առաջ նորա և զարդարեցին զփողոցս և զապարանս, և դանձս բազումս ցանէին ի վերայ նորա։ Եւ յոյժ ուրախացաւ թագաւորն Վասիլ ընդ տեսիլն Դաւթի և տարաւ զնա ի սուրբն Սոփի և արար զնա իւր որդեգիր և պատուէին զնա որպէս զորդի թագաւորի»[1]։

Այս կերպարանքի մեջ են ներկայացնում մեր ազգային—պետք է նկատել՝ ոչ ժամանակակից—աղբյուրներն այդ պատմական խոշոր դեպքը, որ ճակատագրական նշանակություն պիտի ունենար ամբողջ հայ հայրենիքի համար։ Տարաբախտաբար, միակողմանի և նույնիսկ շատ միամիտ է այդ լուսաբանությունը, իսկ ուրիշ աղբյուրներ, որոնք փոքր ի շատե ընդարձակեին դիտողության հրապարակն այս հարցի առաջ, չկան։ Եվ սակայն պարզորեն հետևցնել կարելի է, որ մեր աղբյուրների տված գլխավոր պատճառաբանությունը շատ խախուտ է։ Որքան և ահաբեկիչ լիներ Սելջուկյան թուրքերի այն փոքրիկ հատվածը, որ ասպատակել էր Վասպուրականը, որքան և շատ նախապաշարված լիներ Սենեքերիմը և շատ էլ վախկոտ, կայնուամենայնիվ, այն հանգամանքը, որ 1019 թվականից հետո այդ ահարկու ասպատակությունները երկար ժամանակ չկրկնվեցին Վասպուրականում և, հետևաբար, անկարելի է պնդել, որ այդ միակ և մասնակի, առանձին մեծ տակնուվրայություններ չառաջացրած դեպքը բավական էր, որ երկու տարի անցած՝ բանակցությունների միակ առիթ դառնար՝ առանց ավելի խոշոր և հզոր դրդապատճառների։ Թվում է, թե Արևելքը չէր, որ ստիպողաբար թելադրում էր հայրենիք լինելու գաղափարը։ Այս դեպքի մեջ էլ, ինչպես ամեն տեղ, գործում էր այն պատմական օրենքը, որ փոքր ու թույլ ազգերի վիճակը տնօրինում են մեծերը, ինչպես իրենց օգուտն է պահանջում։ Հայ ժամանակագիրները, տարվելով արտաքին նշաններից, աշխատել են ամեն կերպ ոսկեզօծել և արդարացնել այն թագավորներին և իշխաններին, որոնք զոհ գնացին, կամա թե ակամա, Վասիլ Բ-ի իմպերիալիստական քաղաքականության։ Այն, ինչ այժմ կատարվում էր Վասպուրականում, նախորոշվել էր, ինչպես գիտենք, դեռ այն ժամանակ, երբ Տայքի Դավիթ կյուրապաղատն ստիպված էր իր բոլոր երկրները կտակել Բյուզանդիային։ Այս կտակը 1001-ին ի կատար ածելուց հետո՝ հերթը գալիս էր մյուս անկախություններին, որոնք բյուզանդական արևելյան սահմանի վրա շղթա էին կապել։ Կայսրը, ըստ երևույթին, շատ առողջ դատողությամբ էր ղեկավարվում, մտածելով, որ այդ սահմանագլուխն ավելի լավ պաշտպանված կլինի, եթե նա փոխանակ թույլ ու իրար հակառակորդ տեղական իշխանների ձեռքին մնալու՝ անմիջապես կայսրության ուժերով պաշտպանվեր։ Այն ժամանակ, երբ նա այսպիսի ծրագիր էր կազմում, դեռ Արևելքը հանդարտ էր, դեռ ժողովուրդների ահեղ տեղափոխումներ չէր առաջացնում, մյուս կողմից էլ կայսրությունը չէր թուլացել, հետևաբար և տեղական ազգերի, սահմանագլխի փոքրիկ պետությունների ինքնապաշտպանության նշանակությունը հաշվի չէր առնվում, ուրիշ խոսքով՝ մոռացված էր, ինչպես այսօրվա լեզվով ասվում է, «բուֆեր-պետության» ռազմական նշանակությունը։

Ինչևիցե, Վասիլ կայսրը Դավիթ կյուրապաղատի ժառանգության գրավումով սկիզբ էր դնում այն քաղաքականության, որին հետզհետե կուլ պիտի գնային հայ գավառական գլխավոր անկախությունները։ Եվ եթե նա չկարողացավ Դավթի մահից հետո անմիջապես ձեռք առնել մյուս, հարևան ժառանգությունները, պատճառը բուլղարական պատերազմներն էին։ Այժմ միայն, կատարյալ հաղթությամբ վերջացնելով այդ պատերազմները, Վասիլն իրեն հատուկ եռանդով նվիրվում էր իր արևելյան ծրագրին։ Գեղեցիկ առիթ ընծայում էր Ափխազների փոքրիկ թագավորության ապստամբությունը։ Այս անգամ կայսրն այլևս ուրիշին չհանձնեց այս ապստամբության զսպումը, այլ ինքն անձամբ գնաց արևելյան սահմանագլուխը մի բավական պատկառելի բանակով (1021 թ.)։ Ահա այս ժամանակ էլ նրա և Սենեքերիմ թագավորի միջև սկսվում են բանակցություններ։ Եվ անշուշտ կայսրն էր առաջարկություն անողը, օգտվելով և այն հանգամանքից, որ բարեկամական հարաբերություններ ուներ Սենեքերիմի հետ։ Թե՛ այս վերաբերմունքը և թե՛ գուցե այն հանգամանքը, որ Վասիլը հիշում էր իր հայկական ծագումը, պատճառ եղան, որ քաղաքական ձեռնարկությունը կոպիտ նվաճողական կցման ձև չստացավ։ Վասպուրականը չէր խլվում իր տիրոջից, այլ դառնում էր փոխանակության առարկա, և Սենեքերիմը չէր զրկվում իր թագից, այլ իր ժողովրդի հետ տեղափոխվում էր կայսրության ներսը՝ այնտեղ ապահովապես թագավորությունը շարունակելու համար։152 Այսպիսով հարցը միմիայն տեղին էր վերաբերում, իսկ այս դեպքում արդեն միանգամայն հեշտ էր պատճառաբանել փոխանակությունը, շեշտելով, որ Վասպուրականը վտանգված է, որ նրան հանգստություն բերելու համար պիտի այստեղ հաստատվեն կայսերական զորքն ու կարգերը։ Խնդիրը ձևավորվում էր իբրև ինքնահոժար մի գործառնություն։ Խնդրողը նույնիսկ Սենեքերիմն էր։ Դրա համար էին նրան օգնության տվել Ներսես Մեծի գուշակությունը և այլ կրոնական զորավոր ապացույցներ։ Թովմա Արծրունու շարունակողն ասում է, թե Սենեքերիմը Վասպուրականի լքման վճիռն ընդունեց, հենվելով հենց Քրիստոսի այն խոսքերի վրա, թե «եթէ հալածեսցին զձեզ յայսմ քաղաքէ՝ փախիջիք ի միւսն»[1]։

[1] Եր. 49։

[1] Schlumberger, t. II, p. 501.

Եվ Դավիթ արքայորդին կայսրի հետ բանակցություններ վարելու համար չէր կարող Կ. Պոլիս գնալ, քանի որ Վասիլը մայրաքաղաքում չէր գտնվում այդ ժամանակ, այլ Տրապիզոն քաղաքում[1]։ Այստեղ էլ նա ընդունեց Սենեքերիմի որդուն սիրալիր մեծարանքներով։ Այդ միջոցին, ինչպես կտեսնենք շուտով, նույն Տրապիզոնում վճռվում էր և Անիի բախտը։ Կայսրը համաձայնեց տալ Սենեքերիմին Սեբաստիան (այժմ՝ Սվազ) իր գավառներով։

1022 թվականին**153** Հայաստանի հարավ-արևելյան անկյունը կազմող ընդարձակ և հնագույն ժամանակներից շատ հռչակված երկիրը ներկայացնում էր արտագաղթի մի այնպիսի տեսարան, որի նմանը հայ ժողովուրդը դեռ չէր տեսել։ Մինչև այդ եղել էին բռնի գաղթականություններ, ռազմական նպատակներով, որոնք, ինչպես տեսանք, կատարվել էին Մորիկ, Զմշկիկ և Վասիլ Բ կայսրների ձեռքով։ Տեսանք նաև, որ գաղթականական հոսանքը հայ աշխարհից դեպի արևմուտք շարունակվում էր անընդհատ։ Այս գաղթականության երկրորդ տեսակն էր, ինքնահոժար, փոքրիկ խմբերով գաղթելը, դրդված առևտրական կամ այլ օգտավետ ձեռնարկությունների, զինվորական ծառայության հրապույրներով։ Այսպիսով հայ գաղթականների այնքան խոշոր հատվածներ էին կազմվել Սիրիայի արևմտյան կողմերում և Կիլիկիայում, որ Խաչիկ կաթողիկոսը Գագիկ Ա-ի ժամանակ առանձին եպիսկոպոսական աթոռներ հաստատեց Անտիոք և Տարսոն քաղաքներում։ Չնայած որ Հայոց աշխարհն այնքան արդեն սովորել էր գաղթականության, այնուամենայնիվ Սենեքերիմ թագավորի արտագաղթը մի բոլորովին նորանշան երևույթ էր կազմում։ Գաղթում էր երկրի կազմակերպված իշխանությունը, որպեսզի տեղի տա օտար տիրապետության, և գաղթում էր, տանելով իր հետ ժողովրդի մի ստվար մասը։ Սենեքերիմի հետ էին նրա չորս որդիները և Վասպուրականի ազնվականության մի մասը։ Իսկ փախած ռամիկ ժողովուրդը, որ, հարկավ, թագավորի և գաղթող ազնվականների հպատակներից էր կազմված, Թովմա Արծրունու շարունակողը հաշվում է 14,000 հոգի, «թող զկանայս և զմանկտիս»[2], այնպես որ Սեբաստիա և շրջակաները տեղափոխված հայության ընդհանուր թիվը կարելի է հասցնել 30 հազարի[3]։ Վասպուրականը դառնում էր բյուզանդական կայսրության ասիական թեմերից մեկը,**154** ինչպես էին հարևան Տարոնն ու Միջագետքը։ Այս նոր թեմում, եթե հավատանք 12-րդ դարի ժամանակագիր Սամվել Անեցուն, Սենեքերիմը թողնում էր հռոմներին 72 բերդ, 8 քաղաք, 400 գյուղ, 115 վանք։ Վանքերի թիվը, ասում է Անեցին, ոմանք հասցնում են 900-ի։ Բայց պարզ է, որ այս թվերն առհասարակ չափազանցված են։

Այս խոշոր գաղթականության պատմությունը Մատթեոս Ուռհայեցին վերջացնում է հետևյալ խոսքերով. «Եւ անտէրացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց յիշխանաց»։ Բայց այս, իհարկե, չի նշանակում, թե

---

[1] Դավիթ արքայորդու Կ. Պոլիս գնալու տեղեկությունը, անշուշտ, առաջացել է հենց այն հանգամանքից, որ Տրապիզոնը Կ. Պոլսի ճանապարհի վրա է։ Իսկ որ Վասիլը տարել է Դավիթին ս. Սոփի եկեղեցին, այս էլ հնարավոր է, քանի որ Տրապիզոնում էլ կա այս անունով եկեղեցի։

[2] Եր. 308։

[3] **Schlumberger-ը** (t. II, p. *505*) հաշվում է մոտավորապես նույն քանակը—40 հազար։ Մինչդեռ Չամչյանը (հ. Բ, եր. 903) ակնհայտնի առասպելական թիվ է տալիս—400 հազար։

Վասպուրականում հայ ազգաբնակություն և հայ իշխաններ բոլորովին մնացին, որովհետև բյուզանդական տիրապետության ժամանակ էլ, ինչպես և հետո, հայկական կյանքը շարունակվում էր Արծրունիների հայրենիքում։ Աղետալի էր Սենեքերիմի այդ ձեռնարկությունը ոչ թե այն տեսակետից, որ նրա նման մի խեղճ թագավոր էր պակասում Հայոց աշխարհից։ Աղետալի էր այն, որ այդ մեծ գաղթականական շարժումը գալիս էր զրկելու երկիրը ոչ թե թագավորների և իշխանների, այլ, որ ամենից կսկծալին էր, հայ ժողովրդի թվական տիրապետությունից, ընդարձակելով և ավելի ուժեղացնելով մի երևույթ, որ այդ ժամանակներն արդեն բավական սպառնալից ծավալ էր ստացել, առավելապես Հայաստանի արևելյան և հարավ-արևելյան ծայրերում։ Այդ երևույթը հայ ազգաբնակության նվազումն էր և օտար տարրերի ուժեղացումը, մի հոսանք, որ արդեն համարյա թե միանգամայն օտարացրել էր Դվինն ու Գողթնը Արաքսի վրա, Խլաթը, Մանազկերտը և ուրիշ տեղեր Վանի ծովակի արևմտյան շրջանում։ Եվ այսպիսով ավելի և ավելի ամրապնդվում էր հիմքը պատմական այն բազմադեմ դրության, որ մինչդեռ մի կողմից հայ ժողովուրդը գաղթականությունների միջոցով դուրս էր մղվում իր հայրենիքից, մյուս կողմից նրա երկիրը քայլ առ քայլ գրավում էին օտար, եկվոր տարրեր, որոնք և զրկում էին տեղում մնացած հայությունը մեծամասնություն և նույնիսկ ազգագրական միապաղաղություն կազմելու կարողությունից։

Սենեքերիմյան արտագաղթից մի մանրամասնություն էլ են պատմում մեր ազգային աղբյուրները, այն, որ Վասպուրականի բոլոր հայ վանքերը մնացին թագավորի իշխանության տակ և չանցան բյուզանդացիներին։ Այս ցույց է տալիս, որ Սենեքերիմն ու իր հետ գնացած ազնվականները վանքերի աշխարհական մասնավոր սեփականատերեր էին և իրենց այս սեփականության իրավունքից չզրկվեցին։ Իր նոր հայրենիք Սեբաստիայում էլ Սենեքերիմը կառուցեց ս. Նշան անունով մի վանք, որ պիտի փոխարիներ նրա թողած Վարագին։ Բայց երբ 1026 թվին նա մեռավ, նրա մարմինը տեղափոխվեց Վան և թաղվեց Վարագում։ Այսպես էլ վերջացավ Արծրունյաց թագավորությունը, որովհետև հռոմները, ինչպես և բնական էր սպասել, թույլ չտվին, որ Սենեքերիմի ժառանգները շարունակեն թագավորությունը Սեբաստիայում[1]։

3. Քրդեր: Բայց Վասպուրականի մեծ արտագաղթն իր հատուկ և անհունապես կարևոր նշանակությունն ուներ, որ այնուհետև չափազանց խոշոր փոփոխություն պիտի մտցներ ամբողջ հայության ճակատագրի մեջ։ Այդ այն էր, որ մինչդեռ նոսրանում էր Վասպուրականի հայ ազգաբնակությունը, հարավային սահմանակից լեռնաստաններից, որոնք այսօր հայտնի են Քրդիստան ընդհանուր անունով, առաջ էր շարժվում իր համար տարածման նոր գավառներ որոնելու եռանդով բռնված մի ժողովուրդ, որ նոր էր հայտնի դարձնում իր անունը պատմությանը։ Այս ժողովուրդն այդ միջոցին ուներ իր սեփական անունը—Քուրդ, ապրում էր առանձին ցեղերով, որոնք և իրենց համար առանձին տիրապետություններ էին ստեղծում թե հայրենի լեռնաստանում և թե նրանից հեռու, ուր որ տանում էր նրանց թա-

---

[1] Թեև անունով Արծրունիների թագավորությունը Սեբաստիայում շարունակված է համարվում մինչև 1080 թ. Սենեքերիմից հետո Դավիթ, ապա Ատոմ (ապա Աբուսահլ), բայց սա իրական նշանակություն չունի։

փառական կյանքը։ Ամենից առաջ քրդերը, իհարկե, պիտի բռնեին իրենց սահմանակից Վասպուրականի այն վայրերը, ուր հայ ազգաբնակությունը կամ շատ նոսրացել էր, կամ բոլորովին անհայտացել Սենեքերիմյան գաղթականության հետևանքով։ Եվ այսպիսով, այս ժամանակներից Հայաստանում հաստատվում էր մի նոր իրականություն—հայ-քրդական կենակցությունը, որ գնալով պիտի ավելի և ավելի խոր արմատներ տարածեր ոչ միայն իբրև կուլտուրական, կենցաղական, այլ մանավանդ և իբրև քաղաքական ազդեցություն։ Ուստի կարևոր է այստեղ մի քանի ծանոթություններ տալ Հայաստանի կյանքի այս նոր և շատ կարևոր գործոնի մասին։

Ինչպես յուրաքանչյուր մի հին ազգի, այնպես էլ քրդերի ծագումը կորած է հեռավոր դարերի անթափանցելի խավարի մեջ։ Ինքը քուրդ ժողովուրդն իր ծագման մասին մի առասպել է պահել[1], որ կապված է պարսից առասպելների հետ և, ուրեմն, թույլ է տալիս ենթադրելու, որ քրդությունը ներկայացնում է իրանական ցեղի մի ճյուղավորություն։ Այս է վկայում և քրդական լեզուն, մի արիական լեզու, որ պատկանում է իրանական լեզվախմբին։ Բայց այսքանով հարցի համար մի սպառիչ լուծում չի գտնվում։ Բանն այն է, որ քուրդ ժողովրդի մեջ նկատվում են հետքեր, որոնք ցույց են տալիս, թե նա բաղկացած է երկու տարրերից. մեկը տիրող տարրն է, որ ապրում է ցեղերով (աշիրեթներով) և ներկայացնում է բարձր դասակարգը, իսկ մյուսը, որ կոչվում է ռայա (հարկատու), նստակյաց, երկրագործ է, ցեղային կազմակերպություն չունի և ներկայացնում է խոնարհ, ենթարկված դասակարգը[2]։ Այս բաժանումը հիմք է տալիս գիտնականներին ենթադրելու, որ առաջին տարրը, այն, որ ապրում է աշիրեթներով և տիրապետող է հանդիսանում, եկվոր տարր է, իսկ երկրորդը—ռայան բնիկ տարրն է, որ եկվորները զենքի ուժով նվաճել են բնիկներին, ստրկացրել են նրանց և իրենց արիական լեզուն տվել են այդ ստրուկներին, անհետացնելով նրանց մայրենի լեզուն[3]։

Արդ, եթե անսխալ է այս ենթադրությունը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ի՞նչ ծագում ունեին բնիկ քրդերը։ Ձեռքի տակ չունենալով դրական փաստեր, գիտությունն այս հարցի մեջ էլ որոնում է հավանականություններ և հնարավորություններ։ Նրա կարծիքով, բուն քուրդ ժողովուրդն արդեն արիական ծագում չունի, այլ պատկանում է հեթիթական կամ հաբեթական ցեղերի մեծ ընտանիքին[4], ասել է՝ այն ցեղերի, որոնց արևելյան ճյուղավորումները բռնում էին ամբողջ Այսրկովկասը, Հարավային Հայաստանը, Քրդիստանը, Ատրպատականը։ Հավանաբար, հնագույն, ուրարտական շրջանում այս ժողովուրդն ապրում էր Հյուսիսային Պարսկաստանում կամ Ատրպատականում և հենց այն ժողովուրդն է, որին գիտնականներից ոմանք տալիս են Նախամեդացի անունը[5]։ Երբ տեղի ունե-

1 „Chéref-Nameh ou fastes de la nation Kourde par Chéref ou' ddine, prince de Bitlis„, trad. par *F. B. Charmoy*", S. Petersb, 1868, tome I, Sec. par, p. 25.

2 Майор **Троттер,** «Малоазиатские Курды», Тиф., стр. 9, *P. Miller Simonis* „Du Caucase au Golfe Persique a travers l'Armenie, le Kurdistan et la Mesopotamie", Paris, 1892, p. 373.

3 **Эливе Реклю,** «Земля и люди», т. IX, СПБ, стр. 296.

4 **Н. Марр,** «Еще о слове «Челяби» (К вопросу о культурном значении курдской народности в истории Передней Азии»), СПБ, 1911, стр. 43.

5 Տես այս գործի առաջին հատորը։

ցավ արիացի մեդերի կամ մեդացիների գաղթը և Ատրպատականի գրավումը, նախամեդերը կամ հպատակվեցին նրանց և մնալով իրենց երկրում, ձուլվեցին նրանց հետ, կամ քշվեցին դեպի արևմուտք, դեպի Քրդիստանի լեռները և մասամբ դեպի Հայաստան, հատկապես դեպի Արաքսի միջին հովիտը։ Հայերը մեդացիներին ճանաչում են միայն Մար անունով։ Եվ եթե նկատի առնենք Արաքսի հարավային կողմում երկու վայրերի անունները—Մարանդ ու Մարակերտ, կգանք այն եզրակացության, որ Հայաստանի սահմաններում, ուրարտական շրջանից հետո էլ գոյություն ուներ մարական գաղթականություն։ Այս գաղթականության պատմությունը մեծ տեղ է բռնում հայ ժողովրդական դյուցազնավեպերի մեջ։ Մեզ արդեն ծանոթ են այդ վեպերից մի շարք դրվագներ։ Տիգրանի կռիվը Մար Աժդահակ թագավորի հետ, թե ինչպես հաղթվեց ու սպանվեց Մարը, թե ինչպես Տիգրանը մարերի մի գաղթականություն բերեց իր երկիրը և բնակեցրեց Մասիս լեռների մոտ[1]։

Արաքսի հովտում մարերը, թեև գաղթական, շատ կարևոր դիրք գրավեցին հայոց պետության կյանքում, ինչպես ցույց են տալիս Սաթենիկ թագուհու և Արգամի սիրավեպը, Արտաշեսի և Արտավազդի զրույցները[2]։ Մարերն այս հայկական միջավայրում հետզհետե հայացան։ Եվ այս բանի առաջին ապացույցն է այն, որ նրանց ազգային անունն էլ հայացվեց։ Մար պարսկերեն լեզվով նշանակում է օձ, որին համապատասխանում է վիշապ անունը։ Անշուշտ, մարերն այսպիսի անուն կրում էին այն պատճառով, որ նրանց պաշտամունքի մեջ մեծ տեղ էր բռնում օձ-վիշապը։ Եվ ահա նրանք Հայաստանում ստանում են Վիշապազուն անունը, որ կարելի է Մար անվան հայերեն թարգմանությունը համարել[3]։ Բայց սրանով այս անունն իսպառ չէր վտարվում գործածությունից։ Մարական պետության անկումից և մար ժողովրդի, իբրև քաղաքական կազմակերպության անհետացումից հետո էլ հայոց գրականությունը երկար դարեր պահպանում էր այդ անունը, նրա տակ հասկանալով քուրդ ժողովրդը։ Նույնիսկ վերջին դարերի հայոց գրական հիշատակարաններում էլ Մարաց ազգը ժամանակակից, ապրող ազգ է և ուղղակի նշանակում է քուրդ ժողովուրդ։ Հայկական այս հորջորջումն էլ մի խոշոր ապացույց է, որ քրդերը հին մարերի մնացորդներն են։ Այս իրողությունն հայտնի էր և հռոմաց մատենագիրներին[4]։ Այս միևնույն հայացքն են ընդունում և այսօրվա եվրոպացի գիտնականները[5]։

Այսպես, ուրեմն, մարա-քրդական հարաբերությունները Հայաստանի միջնաշխարհի հետ հանգեցին այն կետին, որ այդ գաղթականությունն ամբողջովին ձուլվեց հայության մեջ։ Ուրիշ է այդ հարաբերությունների պատկերը Հայաստանի հարավային մասերում և հատկապես Հայկական Տավրոսի լեռնաշխարհում։ Այստեղ հայոց պատմության ամենավաղ արշալույսին կա նույն ժողովուրդը այն պատճառով, որ Ատրպատականի մարերի

1 Անդ, եր. 369—372։

2 Անդ, եր. 389։

3 Ներկայումս վիշապազունների ապրած երկրում (Գառնիի լեռներում) գտնվել են նրանց պաշտած քարե վիշապները։155 Շարուրի դաշտը, Մասիսի ստորոտներն էլ բնակեցված էին այդ մարերով։

4 Հ. Ինճիճեան, «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց», Վենետ., 1822, եր. 142։

5 **J. de Morgan,** „Mission Scientifique en Perse", Paris, 1894, t. V, p. 6.

հետ միևնույն ծագման և լեզվական խմբին պատկանելով, նա ուներ իր ցեղային առանձնահատկությունները և այս պատճառով էլ տարբեր անուն էր կրում, ինչպես այս շատ սովորական էր մանավանդ հեթիթական բազմաթիվ ցեղերի համար։ Իր տեղում մենք, առաջնորդվելով Քսենոֆոնի «Նահանջ Բյուրոցի» հուշալավոր աշխատությամբ, մանրամասն նկարագրել ենք հայերի և կորդուխների թշնամական հարաբերությունները, որոնք մի կողմից կորդուխների պատերազմասեր և գիշատիչ հակումներով էին հրահրվում և մյուս կողմից էլ այն հանգամանքով, որ հայերն իրենց դանդաղ, բայց հաստատուն առաջխաղացությամբ ետ էին քշում նրանց հեթիթական ցեղերի ընդհանուր միջավայրից և սեղմում էին Տավրոսի լեռներին[1]։ Այս թշնամությունը երկար շարունակվեց, կռիվը փոփոխակի հաջողություն ուներ, բայց վերջը հաղթությունը հայերի կողմը մնաց[2]։ Տիգրան Մեծի ժամանակ կորդուխների լեռնաշխարհի մի նշանավոր մասը միացվեց Հայաստանին, մտնելով նրա Կորճեք և Մոկք նահանգների մեջ։ Այս ծայրաշխարհը մեծ նշանակություն էր ստանում հայ պետության հարավային սահմաններում, և Կորդված աշխարհի իշխանը հայ արքունիքում գրավում էր առաջին տեղերից մեկը և շատ անգամ նրան էր հանձնում նաև հարևան Մոկք ու Աղձնիք նահանգների կառավարությունը։ Ինչպես և ուրիշ ծայրագավառներում, այստեղ էլ սերտ հարաբերություններ սկսվեցին հայերի և բնիկների միջև, հայացման գործն այստեղ էլ, կորդուխների (կորդվացիների) մեջ ևս պակաս փութաջանությամբ չէր առաջ տարվում։ Այսպես, քրիստոնեությունը տարածվում է և Կորդվաց աշխարհում, ուր հիմնվում էր և առանձին եպիսկոպոսական աթոռ[3]։ Կրոնական հողի վրա մերձեցումն այնքան սրտագին կերպարանք է ընդունում, որ 5-րդ դարում, Վարդանանց պատերազմի ժամանակ, Կորճեք նահանգի այն լեռնոտ և ամուր մասը, որ հայտնի էր Տմորիք անունով, դառնում է հայ ապստամբների գլխավոր ապաստարաններից մեկը։ Այստեղ էր, որ հայ նախարարներն իրենց զորքերի մնացորդները հավաքելով, արշավանքներ էին կազմակերպում՝ Պարսից աշխարհի վրա հարձակումներ գործելու համար[4]։

Սակայն 6-րդ դարից Կորդվաց խորհրդավոր աշխարհը կորչում է անհայտության խավարի մեջ։ Այդ անհայտությունը ծածկում է և ամբողջ Քրդիստանը մինչև 10-րդ դարի երկրորդ կեսը,156 երբ այդ լեռների ժողովուրդը պատմության ասպարեզ է իջնում արդեն քուրդ անվան տակ և իր ինքնուրույն ցեղային կազմով, այն է՝ բաժանված երկու մեծ շերտի—ցեղային սկզբունքով (աշիրեթային կյանքով) ապրող բարձր, տիրող դասակարգի և նրա հանդեպ անասնական դրության հասցրած հպատակների (ռայա), զուրկ աշիրեթային կազմակերպությունից։ Գործածական է տիրող դասակարգի բերած լեզուն։ Քրիստոնեական կրոնից համարյա հետքեր չեն մնացել։ Կորած է և հին, վերին պատմանի հետաքրքրական կրոնը։ Քրդերի մեջ պահված ավանդական հիշատակարանները[5] կասկած չեն թողնում, որ նրանց հին հեթանոսական կրոնն այն է եղել, ինչ այժմ պահվել

[1] Տ. Ա Հատորը։

[2] Ագաթանգեղոս, Վենետիկ, 1862, եր. 597։

[3] Փավստոս Բյուզանդացի, Դ, 15։

[4] Եղիշէ, Վենետ., 1842, եր. 223։

[5] „Chéref-Nameh“, t. I, 2 par. St. Peters; 1870, p. 142.

է նրանց ցեղակից եզիդիների մեջ, այսինքն զրադաշտական երկվության, չար և բարի սկզբունքների մի կրոն, այն հետաքրքրական տարբերությամբ, որ այստեղ բարի աստծուն հավասար երկրպագություն տրվում էր և չար աստծուն, որ, ըստ այդ կրոնի վարդապետության, պիտի պաշտվի, որպեսզի խղճա մարդկանց և չարություն չանի կամ գեթ քիչ անի[1]։

Այս հին հավատի տեղ քրդական ժողովուրդն իսլամն ընդգրկած էր պատմական ասպարեզ իջնում։ Արաբների ազդեցությունն սկզբից ևեթ շատ խիստ է եղել քրդական միջավայրում, որ պարունակում է նաև Միջագետքի մի մասը։ Խալիֆները և մանավանդ Բաղդադի Աբբասյանները, բնականաբար, չէին կարող թույլ տալ, որ քրդական լեռնաստանը, ունենալով Միջագետքի վերաբերմամբ այնքան կարևոր դիրք, հեռու մնար իսլամից, ուստի և ամեն միջոց գործ դրին, որ այդ քաջարի լեռնականները կապվեն իրենց հետ կրոնով։ Իսլամը, ինչպես երևում է, քրդերի մեջ տարածվեց վաղ ժամանակներից, պատճառ դառնալով, որ դարավոր կատաղի անհաշտություն մտնի նրանց և եզիդիների միջև, որոնք հավատարիմ մնացին իրենց հայրենի հավատին։ Իսլամն էր նույնպես, որ վերջ էր դնում քրիստոնեության տարածմանն ու տիրապետությանը քուրդ ժողովրդի, հետևաբար և հայացման, որ առհասարակ շատ բան չէր կարողացել հաջողեցնել Հայաստանի հարավային լեռնաշխարհում։ Մենք տեսանք, որ մարական կամ վիշապազուն գաղթականությունը, ընկնելով Հայաստանի միջնաշխարհ Արարատը, չկարողացավ դիմանալ այդտեղի հայկական կուլտուրային և ձուլվեց հայ ժողովրդի հետ։ Սակայն Ատրպատականի փխրուն քրդությունից անհամեմատ ավելի տոկուն հանդիսացան Կորդվաց և հարևան քրդական աշխարհները, որոնք ոչ միայն դիմադրեցին հայացման գործին, այլև իրենք իսկ սկսեցին քրդացնել հայերին։

Առաջին անգամ քաղաքական ասպարեզում երևան եկողը քրդական մի ցեղ է, որի առաջնորդ Հասանվեյհը անկախ էմիրական հարստություն է հաստատում Արևելյան (կամ պարսկական) Քրդիստանում մոտավորապես 959 թվականին[2]։ 984 թվին նրան հաջորդում է Մերվանյան քրդական տոհմը, որի ներկայացուցիչ Բադը մեզ արդեն ծանոթ է։ Այս տոհմը հաստատվեց Հայաստանի հարավ-արևմտյան մասում, Աղձնյաց աշխարհում, ուր Ամիդ (Դիարբեքիր) և Նփրկերտ (Մուֆարղին) քաղաքները նրա գլխավոր կալվածներն էին, բայց այս քրդական թագավորությունը տարածվում էր մինչև Վանա լճի արևմտյան և հյուսիսային ափերը։ Այս կողմերում վերջացած էր Ապահունյաց գավառի Կայսիկ արաբական ցեղը, և Խլաթը, Մանազկերտը, Արճիշը և ուրիշ շատ տեղեր նույն այս քրդական տոհմի սեփականությունն էին կազմում[3]։ Համարյա միաժամանակ, քրդական մի ուրիշ հարստություն էլ, ինչպես տեսանք, ասպարեզ էր գալիս Հայաստանի հյուսիս-արևելյան ծայրերում, Աղվանից երկրի և մասնավորապես Գանձակի միջև։ Դա Շեդդադյան ցեղն էր, որի մի ճյուղը շուտով իր ձեռքն էր առնում և Դվին մայրաքաղաքը։ Այսպես, ուրեմն, քրդական մի ամբողջ շարժում, որի խոշոր հանգամանքներից մի քանիսն են, սակայն, որ հայա-

[1] Այս սկզբունքը, ինչպես գիտենք, գոյություն ուներ և հայ հեթանոսական կրոնի մեջ (տ. Ա հատոր)։

[2] Стэнли Лэн-Пуль, «Мус. Дин.», стр. 144.

[3] **Saint Martin**, „Memoirs sur l'Armenie“, t. I, Paris, 1868, p. 425.

նի են դարձել պատմությանը։ Պիտի նկատել քրդական ցեղերի արտա-
գաղթն իրենց բուն հայրենիքից, որ սկսվում էր այս ժամանակներից և
պիտի շարունակվեր և այնուհետև, ուղղվում էր դեպի աշխարհի զանազան
կողմերը, բայց առավելապես ձգտելով հաստատվել Հայաստանի հողի վրա։
Այնպես որ, կարծես, քրդական այս շարժումը խրախուսելու համար էր, որ
Վասպուրականի հայությունը հեռանում էր այնքան խոշոր թվով, դատարկ
թողնելով հարյուրավոր գյուղեր ու դաշտեր։ Քրդերը, պետք է կարծել,
երկիրը շատ չթողին անտերության մեջ և գրավեցին բոլոր թափուր տե-
ղերը։ Ճիշտ ու մանրամասն տեղեկություններ չեն մնացել, պատմական խո-
շոր պրոցեսը, որ կարելի է անվանել ազգագրական տարրերի տեղափո-
խություն, կատարվել է խոր մթության մեջ, բայց որ նա այն ընթացքն
է ունեցել, ինչպես մենք ենք ենթադրում, ցույց է տալիս այն, որ այդ
ժամանակներից քիչ հետո արդեն շատ հին և հարազատ հայկական վայրեր,
ինչպես են Ռշտունյաց գեղեցիկ Ոստանը, Արծրունիների բնագավառ Աղբա-
կը, նույնիսկ Վանը, քրդական մանր էմիրությունների սեփականություն են
կազմում։

Այսպես անաղմուկ էր այն խաղաղ նվաճումը, որ սկսեցին և հետզհե-
տե ընդարձակեցին քրդական ցեղերը հարավային Հայաստանում։ Այս հեշտ
նվաճումը տիրապետական մի շատ ինքնատիպ կացություն էր ստեղծում
այդ կողմերում մնացած հայ ազգաբնակության կենցաղի մեջ։ Մի շարք
հանգամանքներ թելադրում են մեզ այն միտքը, թե քրդական նվաճումը
հայաբնակ վայրերում այն եղանակով չկատարվեց, ինչպես լինում է սովո-
րաբար, այսինքն՝ լոկ զենքի և բռնության միջոցով։ Մեջտեղ, բացի այդ
ուժից, գործել են և մի շարք այնպիսի տեղական հանգամանքներ, որոնք
այդ նվաճման մեջ խառնել են և մի տեսակ համակերպման, կամակցու-
թյան տարրեր։ Դարավոր մոտիկ հարաբերությունները, անշուշտ, փոխա-
դարձ ուժեղ ազդեցություններ էին տարածել երկու ազգությունների
միջև, նույնացնելով նրանց կուլտուրական կյանքի շատ երևույթները։ Մենք
ունենք 1-ին դարում ապրած Ստրաբոնի վկայությունը, որը գտնում է, թե
հայերն ու մարերը մի ազգ են, այնքան մեծ էր նրա տեսած այս երկու
ժողովուրդների նմանությունը հագուստի, բարքերի, նույնիսկ և լեզվի կող-
մից[1]։ Սրա պես ուրիշ ցուցմունքներ էլ կան, բավարար՝ ապացուցելու հա-
մար, որ դեռ հին ժամանակներից Հայաստանի արևելյան ու հարավային
մասերում ստեղծված էր մի կուլտուրական միջավայր, ուր հայերն ու քըր-
դերը փոխադարձ շփումներով ու ազդեցություններով հարում էին մի ընդ-
հանուր համայնական աշխարհայացքի, մի ընդհանուր կարգի։ Այս միջա-
վայրից է, անշուշտ, ծնունդ առել հայ ավանդական այն հավաստիացումը,
թե քուրդ ժողովրդի մի խոշոր մասը կազմված է հայերից[2], մի հանգամանք,
որ հաստատվում է նաև քրդության մեջ պահվող ավանդություններով։ Այս-
պես, քրդացած մի հայի անուն կա 7-րդ դարին վերաբերող մի ավանդու-
թյան մեջ։ Պատմվում է, որ Թուրքեստանի Օղուզ-խանը Մուհամմեդ մար-
գարեի մոտ դեսպան ուղարկեց մի իշխանի, որի անունն էր Բողդոս-էրմեն
և որ, պատասխանելով մարգարեի հարցին, ասաց, թե ինքը պատկանում է

---

[1] „Geographie“, t. II, p. 454 (Paris, Hachette).

[2] Ինճիճեան, «Հնախօսութիւն Հայաստանեայց», Հ. Ա, Վենետիկ, 1835, եր. 369 (տ. և նույնի «Նոր Հայաստան», Վենետ., 1806, եր. 51—57)։

քրդական ազգին[1]։ Արդ, այս ավանդության թարգմանիչ եվրոպացի գիտնա-
կանը[2] կարծում է, թե Բողդոս-էրմենը հայ էր՝ Պողոս անունով։ Մեր ժամա-
նակներում էլ կան քրդական ցեղեր, որոնք ավանդաբար հիշողություն են
պահել, թե իրենք հայկական ծագում ունեն[3]։ Եթե այս ավանդությունների
մեջ որոշ չափով պատմական իրողություն է ապրում, այն ժամանակ մենք
պիտի ասենք, որ հայերի ձուլումը քրդերի հետ մի հին երևույթ է, որ
ուժեղացավ և ծավալվեց մանավանդ այն ժամանակներից, երբ Հարավային
Հայաստանում հայկական իշխանությունը թուլացավ Սենեքերիմյան ար-
տագաղթի հետևանքով։ Պատմական բացորոշ տեղեկություններ չունենք այս
երևույթը հաջորդականորեն պարզաբանելու համար, բայց անկասկած է
թվում, որ այս հայ-քրդական մերձեցումն ու միաձուլումը պարարտ հող
էր գտնում երկու ազգությունների ազնվական դասակարգի մեջ։ Ծանոթ
են դեպքեր, երբ քուրդ էմիրներն ամուսնանում էին հայ իշխանների աղ-
ջիկների հետ։ Այսպես, Դվինի Շեդդադյան էմիրն իր որդու համար կնու-
թյան առավ Գուգարքի Դավիթ Անհողին թագավորի քրոջը։ Այս ամուս-
նությամբ Շեդդադյանների համար ժառանգական իրավունք էր ստեղծվում
Բագրատունյաց տոհմի կալվածների վերաբերմամբ։ Տիրող դասակարգերի
մերձակցությունն է մատնանշում և կալվածատիրական միանման կարգը։
Նախարարական հողատիրությունը Հայաստանի մեջ, ինչպես հայտնի է,
ճորտատիրական հիմքերի վրա էր հաստատված։ Նույն այս կարգը, որ
հարազատ էր և իրեն, քրդական կալվածատիրությունը պահպանում
էր հայերի մեջ, երբ անհետացել էին հայ նախարարությունները։ Եվ
թվում է, թե քուրդ կալվածատերերը հայ գյուղացիության վերաբերմամբ շա-
րունակում էին լինել այն, ինչ էին հայ նախարարները, իհարկե, հասկա-
նալով այս բանը լոկ կալվածատիրական սիստեմի մեջով։ Այս է երևի
պատճառը, որ քրդական տիրապետությունը հայերի մեջ, դառնալով մի շարք
հանգամանքներով, համարվում էր մի տեսակ մերձավոր, այսպես ասած՝ ըն-
տանի, չնայած քրդությունը, որքան հեռանում էր հին ավանդություններից,
որքան ետ էր մնում քաղաքակրթության ճանապարհին, ենթարկվելով վաչ-
կատուն կենցաղի և մանավանդ վաչկատուն նվաճողների գիշատիչ հակում-
ներին, այնքան ավելի անխնա էր կեղեքում իր հայ հպատակներին։ Այս
դրության լիակատար տեսարանը կբացվի մեր առջև մի քանի դարից հետո,
երբ քրդական տարածումը Հայաստանի հողի վրա ավելի ընդարձակ չափեր
կընդունի, առաջ բերելով աղետավոր հայ-քրդական հարցը։

4. Բջնի։— Պահլավունիների տոհմը։ Սելջուկյան թուրքերի այն հար-
վածը, որ ասպատակեց Վասպուրականը և առաջ բերեց մեր նկարագրած
մեծամեծ շարժումները, հետևյալ տարին (1020 թ.) գործում էր Արաքսի
հովտում, Դվին մայրաքաղաքի շրջանում։ Այստեղից նա իր հարձակումները
տարավ հյուսիսային ուղղությամբ, դեպի Սևանա լճի հարավային կողմերը։
Այստեղ այդ ժամանակները կազմվել էր մի գավառական խոշոր կենտրոն, որ
արդեն անուն էր հանել իր բարեկեցությամբ, և, երևի, հենց այդ պատճառով
էլ թափառական օրդուի ուշադրության առարկան էր դարձել։ Այդ կենտ-
րոնը Բջնին էր, Նիգ գավառի արևելյան մասում՝ Հրազդան գետի ափին։

---

[1] „Chéref-Nameh,“ t. I, sec. par. p. 22։

[2] Պրոֆեսոր Chamoy, տ. անդ, 236։

[3] Троммер, с. 2.

Այսօր Բջնին մի փոքրիկ և աննշան գյուղ է, բայց 11-րդ դարի սկզբում նա ներկայացնում էր քաղաքի տեսք ունեցող մի խոշոր ավան։ Այն դրության հասցնողը Պահլավունիների իշխանական տոհմն էր, որ հենց այդ ժամանակները նոր էր հանդես եկել հայ նախարարական միջավայրում և աչքի էր ընկնում իր խոշոր հարստություններով։ Արագ անուն հանելով և առաջնակարգ տեղ գրավելով Շիրակի թագավորության ազնվականների մեջ, Պահլավունիները վերին աստիճանի կարևոր դեր կատարեցին թե՛ Բագրատունյաց թագավորության ճակատագիրն որոշող անցքերի մեջ և թե՛ այնուհետև, եկեղեցական ասպարեզում։ Այս պատճառով հարկավոր է փոքր-ինչ մանրամասն ծանոթություն ունենալ այդ տոհմի մասին։

Նոր իշխանական ազդեցիկ տոհմի սկզբնավորությունը մենք գտնում ենք Անի քաղաքում, ուր նա թողել է բազմաթիվ հիշատակներ և արձանագրություններ, որոնք տեղեկություններ են տալիս նրա ծագման, ընտանեկան կազմի մասին։ Պահլավունյան ձեռակերտներից ամենահինը հանդիսանում է տոհմային գերեզմանոցը, որ գտնվում էր Անիի արևմտյան ծայրում, Ծաղկոցաձորի վրա։ Այդտեղ այժմ էլ բարձրացած է տոհմային մատուռը, մի փոքրիկ ու գեղեցիկ եկեղեցի, որ կոչվում է Ապուղամրենց։ Այդ տոհմային դամբարանից ոչ հեռու դեպի արևելք, մայր եկեղեցու մոտերը, նույն այդ տոհմի մի ուրիշ, ավելի խոշոր ու հոյակապ ձեռակերտն է Առաքելոց եկեղեցին, որ բացառիկ կարևոր դեր է կատարել Անիի ներքին կյանքում։ Երրորդ հուշարձանը, որ դարձյալ այս իշխանական տոհմի մեծագործությունն է ներկայացնում, մայր եկեղեցուց դեպի արևելք գտնվող կլոր աշտարակաձև եկեղեցին է՝ ս. Փրկիչ անունով։ Այս քարե հիշատակարանների պահած գրականությունը մեզ թույլ է տալիս դիտելու, որ տոհմի նախահայրը հանդիսանում է Ապուղամրը, որն ապրում էր 10-րդ դարի առաջին կեսում։ Նրա անունով է ահա, որ տոհմային գերեզմանոցի եկեղեցին Անիում հայտնի էր Ապուղամրենց ս. Գրիգոր անունով, ինչպես ցույց է տալիս Բագնայրի արձանագրություններից մեկը[1]։ Այս անվանումը մի պարզ ապացույց է, որ ժողովրդի մեջ Ապուղամրի տոհմը հենց այդպես էլ կոչվում էր—Ապուղամրենց։ Ապուղամրի որդին էր Գրիգոր Համզե, որից և սկսվում է տոհմի իշխանական շուքը։ Գրիգոր Համզեն արդեն հիշատակվում է իբրև մեծ իշխան, իսկ նրա ամուսին Շուշանիկը կամ Շուշիկը՝ «տիկնանց տիկին» տիտղոսով։ Այս երկու ամուսինները մեծ անուն հանեցին մանավանդ իրենց հասարակական բարենպատակ գծերով։

Երրորդ սերունդը բաղկացած է Գրիգոր Համզեի և Շուշիկ տիկնոջ որդիներից, որոնց մեջ ավագն է Վահրամը (ծնված մոտավորապես 967 թվին), որին տեսանք Հայոց զորքերի հրամանատարի պաշտոնում 998 թվին, երբ Դավիթ կյուրապաղատի Հայոց և Վրաց բանակները միացած կռվում էին Ատրպատականի Մամլուն էմիրի դեմ։ Վահրամն ապրում էր Անիում, ուր և շատ հիշատակներ է թողել արձանագրությունների մեջ, բայց ոմներ և իր առանձին դղյակն Արփաչայի վերին հովտում, Ալեքսանդրապոլից 7 վերստ դեպի հյուսիս, ուր նա կառուցել է Մարմաշենի հոյակապ վանքը։ Իր գործերով նա մեծ հռչակ ստացավ և կոչվեց իշխանաց իշխան։

Իշխանաց իշխան էր և նրա Վասակ-Հոլում եղբայրը, որ երկրորդն էր

[1] Հ. Ալիշան, «Շիրակ», եր. 120։

Գրիգոր Համզեի որդիների մեջ, կոչվում էր նաև սպարապետ, բայց Բագ-
րատունյաց մայրաքաղաքում հիշատակներ չի թողել, մի հանգամանք, որ
ցույց է տալիս, թե նա համարյա միշտ ապրում էր իր սեփական կալվա-
ծում, որը վերև հիշատակված Բջնին էր, ուր և նա ծավալեց իր շինարա-
րական ամբողջ կարողությունը։ Վասակ-Հոլումն առանձնապես անուն էր
հանել իր քաջությամբ։ Գրիգոր Համզեի երրորդ որդին էր Ապլղարիպը,
որ մարզպանի պաշտոն էր կատարում Անիի արքունիքում և շինել է ս.
Փրկիչ եկեղեցին։ Իսկ չորրորդ և հինգերորդ զավակները, Համզե տղան և
Սեդա աղջիկը, մեռել էին փոքր հասակում։
Չորրորդ սերնդի մեջ հատուկ հիշատակության արժանի է Վասակ-
Հոլումի որդի Գրիգորը, որ 11-րդ դարում շատ խոշոր հռչակ է ստացել
իբրև գրող և գործիչ, Գրիգոր Մագիստրոս անունով։ Որքան Ապուղամրենց
տոհմը մեծանում և հռչակ էր ձեռք բերում, այնքան, անկասկած, անհրա-
ժեշտ էր դառնում որոնել մի հին և հռչակավոր ծագում, մի հանգամանք,
որը յուրաքանչյուր ազնվական ընտանիքի ամենաբարձր իդեալն էր կազ-
մում և որը կազմում էր մանավանդ հայ նախարարությունների հատկա-
նշական գծերից մեկը։ Այս որոնումները կատարվում էին, թվում է, առա-
վելապես Վահրամ իշխանաց իշխանի տան մեջ և նրանց մասնակցում էր
նաև Վասակ-Հոլումի տունը, ունենալով իր մեջ այնպիսի մի կրթված և
ձեռնհաս գիտուն մարդ, ինչպիսին էր Գրիգոր Մագիստրոսը։ Եվ ահա առա-
ջին անգամ 1029 թվին է, որ Վահրամը Մարմաշեն վանքի արձանագրու-
թյան մեջ տալիս է իր տոհմաբանությունը, իրեն անվանելով «որդի Գրի-
գորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղեն Պահլաւունի և ի զարմից սրբոյն Գրի-
գորի Հայոց Լուսաւորչի»[1]։ Այս նոր տոհմանունը— Պահլավունի— դեռ
ընդհանրացած չէ Ապուղամրենց տոհմի մեջ և նույնիսկ ինքը Վահրամն իր
ուրիշ արձանագրությունների մեջ չի գործածում այդ տոհմանունը[2], իսկ
Վասակ-Հոլումի որդի Գրիգորը, նախքան մագիստրոսություն ստանալը,
պարզապես կոչվում էր Բջնեցի, բայց երբ մագիստրոս է դառնում, սկսում
է իր համար ավելի հին ու նշանավոր ծագում որոնել և իրեն կոչում է
Արշակունի և Հայկազն[3]։ Սակայն Ապուղամրենց տոհմի մեջ վերջնական
հաղթությունը տարավ Պահլավունի անունը, որ նրան Գրիգոր Լուսավոր-
չի տոհմի հետ կապում էր զանազան կողմնակի մեկնաբանությունների մի-
ջոցով։ Հայտնի էր, որ Լուսավորչի տոհմն սպառվել էր դեռ 5-րդ դարի
առաջին կեսում Սահակ Պարթևի, այդ տոհմի միակ արու ժառանգի մա-
հով։ Սակայն հայտնի էր և այն, որ Սահակի թոռն էր Վարդան Մամիկո-
նյանը, իսկ սրա աղջիկն Արշավիր Կամսարականի կինն էր։ Այսպիսով, Լու-
սավորչի տոհմի արյունն անցած էր համարվում Կամսարականներին. որոնք
Շիրակի տերերն էին և անհետացան, ինչպես տեսանք, 8-րդ դարի վերջին
քառորդում։ Մնում էր, որ Ապուղամրենց տոհմը, Գրիգոր Լուսավորչի
իբրև նախահայր ստանալու համար, իրեն հայտարարի Կամսարականների
տան շարունակությունը։ Մի ինչ-որ աղոտ և, մեր կարծիքով, անվավեր
հիշատակություն է մնացել, թե Կամսարականների վերջին ժառանգները

[1] Հ. Ալիշան, «Շիրակ», եր. 148։

[2] Անդ, եր. 53։ Ապլղարիպ Ապուղամրենցն Անիի մեջ ունի երեք արձանագրություն («Շիրակ», եր. 53, 82) և ոչ մեկի մեջ իրեն չի անվանում Պահլավունի։ Միայն մի տեղ (եր. 84) Պետրոս կաթողիկոսն է, որ տալիս է նրան այդ անունը։

[3] Կեչառվաց վանքի արձանագրության մեջ (Հ. Ալիշան, «Այրարատ», եր. 260)։

կոչվում էին և Պահլավունի[1]։ Եվ ահա Ապուղամրենք հիշում են, որ իրենց նախնիքների մեջ եղել է «Կամսարեանն Արտակ» ու այսպիսով իրենց կապում են Շիրակի հռչակավոր տերերի հետ, բայց, տարօրինակորեն, հրաժարվելով նրանց տոհմանունից։ Ոմանք համարում են, թե այդ Արտակը Ապուղամրի հայրն էր[2]։

Մենք մանրամասն նկարագրեցինք այս նոր հայ ավատական կազմակերպումը, որպեսզի նորից լուսաբանած լինենք Հայաստանի նախարարական իրականության սաղմնավորումն ու զարգացումը, ինչպես այդ արել ենք շատ անգամ, քննության ենթարկելով նախարարական տոհմերի ծագման հետ կապված զրույցները։ Եվ մենք տեսնում ենք, որ Պահլավունիների ծննդաբանական զրույցը, չնայած որ ծագել է համեմատաբար շատ նոր ժամանակներում, ոչնչով չի տարբերվում հին զրույցներից, մանավանդ անվավեր և բռնազբոսիկ մեկնաբանությունների տեսակետից։ Փաստը, ուրեմն, մնում է այն, որ մոտավորապես 10-րդ դարի վերջերում հարստացած և ուժեղացած մի հայ ընտանիք հաղթականորեն և մեծ փայլով մտնում է ավատական դասակարգի մեջ՝ խոշոր դեր կատարելու համար, մի բան, որ շեշտում է ժամանակի գերազանցորեն ավատական հանգամանքը։

Եվ այս ընտանիքի քաջ անդամներից մեկի գեղեցիկ ու շեն կալվածն էր Բջնի բերդը, որի ուղղությամբ արշավանք էին սկսել թուրքերը։ Այս արշավանքի պատկերը, որ մի քիչ ժողովրդական պատմվածքի ձևով է հասել մեզ, այսպիսի բովանդակություն ունի։ Վասակ-Հոլումն իր Բջնիում մեծ խնջույքի էր նստած, երբ հեռու ճանապարհին երևաց մի մարդ, որ գալիս էր շտապով։ «Այս մարդը գուժաբեր է», ասում է իշխանը, ամենից առաջ ինքը նկատելով հետևակ սուրհանդակին։ Եվ իրավ, հասնելով Բջնիի դռներին, այդ մարդն սկսեց աղաղակել. «Նիգ գավառն ամբողջովին գերվեց»։ Վասակը, ինչպես գրում է Ուռհայեցին, գոչեց առյուծի պես և տեղից վեր կենալով՝ հագավ երկաթապատ զգեստը։ Այսպես արին և նրա հետ ուրախության մասնակցող յոթ ազնվականները։ Բերդում պատահաբար ձիավոր զինվորներ կային, որոնք և հավաքվեցին Հայոց սպարապետի մոտ։ Սովորական ժամանակ Վասակն իր ձեռքի տակ ուներ հինգ հազար զինվոր, բայց այդ բազմությունը ցրված էր նրա երկրի զանազան մասերում և ամենքին հավաքելու համար ժամանակ էր հարկավոր։ Հավաքելու համբերությունը չունեցավ Վասակը։ Նրա հպարտությունը վիրավորված էր, որ անծանոթ թշնամիները[3] հանդգնություն էին ունեցել իր գավառը մտնելու և ավերանքներ կատարելու։ Ուստի, բավական համարելով և այն 500 զինվորները, որոնք Բջնիումն էին գտնվում, նա, նրանց գլուխ

1 Հ. Ալիշան, «Հայապատում», հ. Ա, Վենետ., 1901, եր. 519։

2 Կ. Կոստանյան, «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, եր. ԺԴ։ Բոլորովին անհավանական է երևում, որ Կամսարականները լքած լինեն իրենց հին և այնքան հռչակված տոհմանունը և ընդգրկած Պահլավունի նոր և անհայտ անունը։ Եվ առհասարակ, եթե Կամսարականները մնացած լինեին Շիրակում, անկարելի է, որ անհայտության մեջ թաղված մնային ամբողջ երկու դար։

3 Մատթեոս Ուռհայեցին, որ այս արշավանքի մանրամասն պատմիչն է, իսկապես չի ասում, թե հարձակվողները թուրքեր էին, այլ ասում է, թե «Դելմաց թագավորի» զորքերն էին։ Սակայն մենք գիտենք, որ Թովմա Արծրունու Պատմությունը շարունակողի համար էլ թուրքերն այս անունն ունեն։ Այս հարցում վճռական նշանակություն ունի Մարմաշենի վանքի արձանագրությունը, որի մեջ Վահրամ իշխանաց իշխանն ասում է. «Ես եղբայր իմ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմին» («Շիրակ», եր.148)։

անցած, թռավ թշնամու դեմ։ Նրա հետ էին Փիլիպպեն, Գեորգը և Ջորտուանելը, «արք քաջք և յաղթողք ի պատերազմունս», ինչպես հանձնարարում է ժամանակագիրը։ Մեկնելիս Վասակն իր տունը, ինչպես և Բջնիի պաշտպանությունը, հանձնում է իր սիրելի որդի Գրիգորին։ Ճանապարհին, հանդիպելով թուրքերի մի ջոկատի, որ կոտորել էր մի ամբողջ հայկական գյուղ, Վասակն ուժգին թափով ընկնում է նրա վրա և մի մասը կոտորելով, մյուսը փախցնում է։ Հասնելով թշնամու բանակին, հայ կտրիճները մի րոպե կանգ են առնում, տեսնելով նրա խոշորությունը։ «Անչափ անթիւ տեսանէին զբազմութիւն զօրացն այլազգեաց,— ասում է պատմիչը։— Յայնժամ միաբան զմահ առաջի եդեալ սկսան արիանալ ի պատերազմին և որպէս զգայլս ի մէջ այծեաց և կամ որպէս զարծուիս յերամս ձագուց, այնպէս արիաբար գնացին ի մէջ պատերազմին և զբազումս խոցեալ դիաթաւալ յերկիր ձգէին»[1]։ Բայց կռիվը, ինչպես սովորական էր այն ժամանակները, փոխվում է մենամարտի։ Թշնամու կողմից դուրս է գալիս մի սևամորթ վիթխարի խափշիկ, որին տվել էին «յոթը գայլ» անունը, դրանով արտահայտելով նրա անհեթեթ ուժն ու կատաղությունը։ Նա առաջանում է «իբրև զսեաւ ամպ որոտալով» և հատկապես Վասակին է կանչում մենամարտելու։ Հայոց քաջերից մեկը, խափշիկի ուժի և տեսքի վրա ապշած, բացականչում է. «Ահա մի քաջ և անպարտելի մարդ, որի նմանը չի եղել երկրի վրա»։ Վասակը նրան պատասխանում է. «Ո՛վ առյուծ և քաջ Եմրան, ինչո՞ւ զարհուրեցիր նրա տեսքից. ահա ես դուրս կգամ նրա դեմ և կտամ նրան այն պարգևը, որ տվեց Դավիթն Աստծուն հայհոյող Գողիաթին»։ Սկսվում է մենամարտը երկուսի միջև։ Վասակը հաղթում է, իր սրով ճեղքելով «յոթը գայլի» գլուխը։ Այնուհետև նորից բորբոքվում է ճակատամարտը, որի կատաղությունը պատմիչը բնորոշում է «անհուն և անհնարին» բառերով։ Մեծ կոտորած եղավ։ Վասակը հոգնած, դուրս եկավ պատերազմի դաշտից, երևի տեսնելով, որ այլևս ոչ մի հաջողություն վաստակել չի կարելի և բարձրանալով Սերկևիլ սարը, այնտեղ մի քարի տակ նստեց ու քնով անցավ։ Այն ժամանակ մի գյուղացի, գուցե չճանաչելով, թե ո՛վ է այդ վշտահար զինվորականը, որ քնել էր այդպիսի հանգամանքների մեջ, ցած է գլորում նրան քարերից և սպանում (1021 թ.)։

Սերկևիլի դժբախտ պատահարն ասպարեզ էր բաց անում Վասակ իշխանի որդու, Գրիգորի համար, նրան մտցնելով գործող առաջնակարգ ուժերի շարքը։ Իբրև գործիչ, Գրիգոր Բջնեցին եզակի է իր ժամանակակիցների մեջ, մանավանդ այն պատճառով, որ ահագին ազդեցություն և հեղինակություն ձեռք էր բերում ոչ թե զինվորական տաղանդով կամ անձնական քաջությամբ, ինչպես իր հայրն էր։ Մեր առջև կանգնած է մի ուրիշ կողմով չափազանց հետաքրքրական և արտասովոր դեմք։ Մենք արդեն մատնանշեցինք, որ Բագրատունյաց թագավորներից ոմանք լավ դաստիարակված մարդիկ էին։ Այս, ինչպես երևում է, ժամանակի պահանջ էր բարձր ազնվականության մեջ։ Գոնե մի ուրիշ ժամանակ մենք չենք տեսնում աշխարհական մարդկանց, այն էլ իշխող դասակարգից, որոնք այնքան շատ նվիրված լինեին լուսավորության գործին, ինչպես Անիի թագավորության ժամանակ։ Հայ-բյուզանդական հարաբերությունների ամենալավ ժամանակներն էին։ Եվ հռոմական դաստիարակությունը Հայոց

1 Մատ. Ուռհ., եր. 13։

արքունիքում ու նախարարական ապարանքներում նույնքան գրավիչ մի զարդ էր համարվում, ինչպես, օրինակ, ղինավարժությունը, որսորդությունը։

Եվ հունական քաղաքակրթության այս մեծ ազդեցության ամենաբարձր արտահայտությունն է հանդիսանում Գրիգոր իշխանը։ Եթե նրա ժամանակ Շիրակի թագավորության մեջ իսկապես կազմվել էր մի դասակարգ, որ այժմյան հասկացողություններով կարելի է նույնացնել աշխարհական ինտելիգենցիային, նա ինքն այդ դասակարգի գլուխն էր, մեծ հեղինակություն էր ստեղծում իբրև գիտնական և գրող։ Նրա հմտությունը հունական լեզվի մեջ այնքան մեծ էր և ընդարձակ, որ նա ուսումնասիրել էր ամբողջ հունական գրականությունը, մասնավորապես դասականը, առավելություն տալով իմաստասիրական (փիլիսոփայական) ճյուղին։ Եվ որովհետև այսքան ընդարձակ գիտություն չէր կարող տալ Հայաստանի միջավայրը, ուստի ներելի է դառնում ենթադրել, որ Գրիգոր Բջնեցին, ապագա մագիստրոսը, բարձր ուսում ստացել էր Կ. Պոլսում։ Գուցե նույնքան ճիշտ լինի և մի այլ ենթադրություն՝ այն, որ ազնվականների որդիներն առհասարակ բյուզանդական մայրաքաղաքն էին դիմում կրթություն ստանալու համար։ Իր ձեռք բերած գեղեցիկ դաստիարակության հետևանքով էր, որ Գրիգոր Բջնեցին իր հայրենիքում հանդիսանում էր իբրև մի գիտակից հայ, որը, սակայն, այնքան էր տոգորված բյուզանդական գաղափարներով, որ հեշտությամբ կարող էր մոռանալ հայրենիքի շահերը։ Այս տրամադրությամբ էլ մտնելով քաղաքական գործունեության ասպարեզ, նա իր շուրջը խմբեց մի ամբողջ հոսանք, որ ներկայացնում էր բյուզանդասերների, նույնիսկ կարելի է ասել՝ բյուզանդամոլների կուսակցությունը։

5. Հովհաննես-Սմբատ։—Աշոտ Ե (1020—1041 թթ.)։ Մինչդեռ Արարատյան թագավորության արևելյան ծայրագավառներից մեկում սելջուկյան արշավի այս իրադարձություններն էին կատարվում, շեշտելով ու ցուցադրելով այն ահռելի վտանգը, որ պատրաստվում էր Արևելքում՝ արևմտյան աշխարհները կործանելու համար, թագավորության սրտի մեջ, Անիում տեղի էին ունենում այնպիսի դեպքեր, որոնք այլևս ոչ մի կասկած չէին թողնում, թե պետությունն անկման խորխորատի ծայրին է հասել։ Այս դրությունը շատ արագ և անակնկալ կերպով ստեղծվեց։ Բավական եղավ Գագիկ Ա-ի մահը, որպեսզի միանգամից մի մեծ վիհ բացվի նրա թագավորության հիմքերի տակ։ Եվ այս վիհն արտաքին հարվածները չէին փորում։ Մի դժբախտ պատահականություն կար.—Գագիկն ուներ երկու որդի—Հովհաննես-Սմբատ և Աշոտ[1]։ Հայոց աշխարհի դժբախտությունն այն էր, որ առաջ Հովհաննես-Սմբատն էր ծնվել և ոչ թե Աշոտը։ Բնությունը մի խաղ էր խաղացել. երկու եղբայրները կատարյալ հակասություններ էին ներկայացնում. Հովհաննես-Սմբատը մարմնով խոշոր ու հաստ, դանդաղաշարժ, զինվորական արհեստն ատող, «իմաստուն, շինող և խաղաղարար», ինչպես վկայում է Վահրամ Պահլավունին Մարմաշենի արձանագրության մեջ։ Այս տեսակ մի մարդ բոլորովին անպետք

[1] Հայտնի են Գագիկի երկու աղջիկների անունները՝ Խուշուշ, որ, ինչպես ասացինք վերևում, Վասպուրականի Սենեքերիմ թագավորի կինն էր, և Սոփի, որ ամուսնացած էր Վրաց թագավորի հետ։

էր այդպիսի ժամանակ թագավորելու համար։ Մինչդեռ մյուս եղբայրը, Աշոտը, վառվռուն, ժիր և քաջ մի երիտասարդ էր, լցված տիրելու և կառավարելու տենչով։ Պետական ամեն մի նկատառում թելադրում էր, որ թագավոր լինի Աշոտը։ Բայց միապետությունը, իր բազմաթիվ մահացու մեղքերի մեջ, նվիրագործել էր ոչ թե ընդունակության իրավունքը, այլ ծննդյան կույր պատահականությունը։ Իր ընդունակություններին վերապահված գործունեության մեջ այս Սմբատը շատ նման էր երկրորդ Սմբատին[1] և նրա պես կուլտուրական մի բավական խոշոր դեմք էր։ Նա է շինել Հոռոմոսի վանքը։ Բավական է այսօր էլ դիտել այդ վանքի ժամատան սքանչելի առաստաղը, և միմիայն այս գեղարվեստական տեսարանը ցույց կտա մեզ, թե որքան հոյակապ հիշատակներ թողած կլիներ այդ բարեքրիստոնյա մարդը, եթե թագավորելու դժբախտ միտքն ու համառությունը չունենար։ Բայց նա չուզեց հրաժարվել իր գահակալական իրավունքներից և Շիրակի գեղեցիկ բարգավաճման կործանող պատճառներից մեկը դարձավ։

Գահի համար, ինչպես սովորական է, կռիվ սկսվեց երկու եղբայրների միջև։ Աշոտը, զրկված մնալով թագավորությունից, զենքի ուժին դիմեց։ Եվ որովհետև իր հավաքած մարդիկ քիչ էին, գնաց Վասպուրական, Սենեքերիմ թագավորից, որ դեռ գաղթելու միտքը չէր իրականացրել, օգնական զորք ստացավ, փոխարենը թանկագին ընծաներ տալով նրա Վարագի վանքին, որից հետո գնաց պաշարելու Անին։ Հովհաննես-Սմբատը կարգադրություն արավ, որ զորքը դուրս գա Աշոտի դեմ կռվելու, իսկ ինքը տեղից չշարժվեց, որովհետև, ինչպես ասում է Ուռհայեցին, «անհմուտ էր պատերազմին»։ Անիի մեջ հավաքված զորքը նույն պատմիչը հաշվում է 60,000, որոնցից 20 հազարը ձիավոր։ Եթե չափազանցրած համարենք այս թվերը, դարձյալ կանգնած կլինենք այն փաստի առջև, որ ներքին եղբայրասպան պատերազմի մեջ թշնամի հարազատներն իրար դեմ էին հանել բավական խոշոր զինվորական ուժեր։ Այդ միջոցին Անիում էր գտնվում Ափխազաց թագավորի կողմից դեսպանության պաշտոնով եկած մի իշխան, որ իրեն շատ ուժեղ ու քաջ էր համարում, և առաջարկեց Աշոտին մենամարտ։ «Ո՛վ արքայ Յովհաննէս,—ասում էր նա,—հրամայեա զի ցուցանիցեն ինձ միայն զԱշոտ և ես ձեռբակալ արարից զնա և կապանօք բերից զնա առաջի քո»։ Եվ երբ թագավորն ասում է նրան, թե Աշոտը հզոր մարդ է, ինչպե՞ս կարող ես բերել իմ առջև, ափխազը հոխորտում է, թե նրան ձիուց ողջ-ողջ կվերցնի և կբերի։ «Առյուծի կորյունին մինչև տեսնելդ չարհամարհես», խորհուրդ է տալիս թագավորը և թողնում է, որ նա գնա մենամարտի։ Նա առաջանում է դեպի հակառակորդ բանակը և կանչում է. «Ո՞վ է Աշոտը, թող առաջ գա»։ Աշոտը ընդունում է հրավերը և մենամարտի մեջ, մի թեթև շարժումով ազատվելով հակառակորդի նիզակից, այնպիսի թափով է իջեցնում իր սուրը նրա սաղավարտի վրա, որ ճեղքում է նրա մարմինը մի

[1] Նմանությունը բոլորովին ակնհայտ դարձնելու համար է, կարծես, որ այս երրորդ Սմբատին (Հովհաննեսին) տրված է «տիեզերակալ» տիտղոսը (տ. ս. Փրկիչ եկեղեցու արձանագրությունը, «Շիրակ», եր. 84), որ Սմբատ երրորդին ավելի ևս քիչ է գալիս, քան նույնիսկ Սմբատ երկրորդին։ Այս հանգամանքը մի նոր ապացույց է, որ, ինչպես ասել ենք վերևում, «տիեզերակալը» լոկ մի հարգողական արտահայտություն էր և բոլորովին չի նշանակում, թե այն կրողը, ճիշտ որ, աշխարհներ է նվաճել։

չև մեջքը։ Այնուհետև սաստիկ ճակատամարտ սկսվեց, որի մեջ քաղաքացիները ջարդվեցին և այնպիսի խուճապով ետ փախան, որ նրանցից շատերը խեղդվեցին Ախուրյան գետի մեջ։ Աշոտը մեծ հաղթություն տարավ, բայց Հովհաննես-Սմբատն էլ կորած չէր։ Նրան և Աշոտին հաշտեցնելու փորձեր եղան։ Շատ աշխատում էր մանավանդ Վահրամ Պահլավունին, որի համար հայրենասիրական առաջին պահանջ էր՝ թույլ չտալ, որ անիշխանության մատնվի Հայոց աշխարհը։ Աջակցության է հրավիրվում և ավագ Բագրատունին, Ափխազների և Վրաց թագավոր Գիորգին, որ գալիս է Շիրակ, և այստեղ, բոլոր միջնորդների ջանքերով, հաշտություն է կայանում երկու եղբայրների միջև, պայմանով, որ Հովհաննես-Սմբատը թագավորի Անիի և շրջակա գավառների վրա, իսկ Աշոտը՝ այն գավառների վրա, որոնք սահմանակից էին Պարսկաստանին և Վրաստանին։ Իսկ եթե Հովհաննես-Սմբատը մեռնի Աշոտից առաջ, թագավորությունն անցնի այս վերջինին։ Այսպիսով Անիի թագավորությունը բաժանվում էր չորս մասի։ Եվ բաժանումը հանգստություն էլ չէր բերում։ Աշոտը դժգոհ էր իր բաժնից, ուստի, իր կալվածները շատացնելու համար, օգտվում էր ամեն մի հանգամանքից։ Նրա կողմնակից իշխաններից մեկը գանգատվում է Վրաց Գիորգիին, թե Հովհաննես-Սմբատը խլել է Շատիկը, որ իր կալվածն էր կազմում։ Վրաց և Ափխազների թագավորը լավ պատրվակ է ծառայեցնում այս գանգատը՝ մի քիչ էլ իր գործերը շտկելու համար, և զորք է ուղարկում Անիի թագավորի դեմ, որ այդ միջոցին քաղաքում չէր գտնվում, այլ իջևանել էր մի ինչ-որ տեղ։ Հարձակումը տեղի է ունենում հանկարծակի, և ծանրաշարժ ու թանձրամարմին Հովհաննես-Սմբատը չի կարողանում փախչել և բռնվում ու տարվում է Գիորգիի մոտ։ Իսկ թագավորի հետ եղած իշխանները կռվելով ետ են փախչում մինչև Անի։ Ափխազներն Անիից վերադառնալիս կողոպտում են Արգինայի կաթողիկոսարանի եկեղեցիները և իրենց արհամարհանքը ցույց տալու համար տանում են և խաչի բևեռները, ասելով, թե նրանցով պիտի պայտեն իրենց ձիերը։ Իսկ կալանավոր թագավորն արձակվեց ծանր փրկանքով։ Գիորգին նրանից խլեց երեք բերդ ու այդպես ազատություն տվեց նրան[1]։ Առհասարակ ափխազա-վրացական թագավորը լավ շահագործում էր Հայոց Շահնշահի վախկոտությունը։ Երևի հենց այստեղ էր, որ Հովհաննես-Սմբատը պարտավորվեց պատերազմ լինելու դեպքում օգնել նրան իր զորքերով, մի դաշնակցություն, որ աղետաբեր եղավ հայկական անկախության համար։

Իսկ Աշոտը դրանից հետո մի նոր փորձ արավ իր եղբորից ազատվելու համար։ Հիվանդ ձևանալով Թալին գյուղում, նա մարդ է ուղարկում Հովհաննես-Սմբատին, որ գա իրեն տեսնելու, բայց միևնույն ժամանակ թակարդ է պատրաստում նրա համար, իր բարձի մոտ։ Երբ Հովհաննես-Սմբատը միամտորեն գալիս է իր եղբայրական պարտքը կատարելու և ընկնում է թակարդի մեջ, Աշոտը նրան հանձնում է Ապիրատ անունով մեծ իշխանին, որ տանի նրան սպանելու։ Բայց Ապիրատը, փոխանակ սպանելու, տանում է նրան նորից իր գահի վրա նստեցնում, ասելով. «Ի՞նչպես ես ձեռք տամ Աստուծու օծյալին, և նրա տեղ մի խելագար նստեցնեմ»[2]։ Բայց հետո ինքն Ապիրատը, վախենալով Աշոտի վրեժխնդրու-

[1] Արիստակես Լաստիվերտցի, *եր. 10*։

[2] Վարդան, *եր. 131*։

թյունից, փախչում է Դվինի էմիր Աբուլսվարի մոտ, տանելով իր հետ և իր զորքը—12 հազար հոգի։ Աբուլսվարը լավ ընդունում է նրան, բայց հետո, վախենալով 12 հազար հայ զինվորներից, սպանել է տալիս իր հյուրին։ Ապիրատի զորավարներից մեկը, Սարի անունով, նրա կնոջն ու երեխաներին զորքի հետ հանում է Դվինից և տանում է Անի, Հովհաննես-Սմբատի մոտ։

Պատերազմ մղելով իր եղբոր դեմ, Հովհաննես-Սմբատը միևնույն ժամանակ ստիպված էր, անշուշտ հակառակ իր կամքի, օգնական զորք տալ Գիորգի թագավորին, որ 1020 թվականին ապստամբել էր կայսրի դեմ։ Ափխազ-վրացական զորքերը, հայերի հետ միացած, արշավանքներ էին գործում բյուզանդական հողի վրա[1]։ Պատերազմի պատճառը դարձյալ Դավիթ կյուրապաղատի ժառանգությունն էր, ուստի և թշնամական գործողությունները գլխավորապես Տայոց աշխարհում և նրա շուրջն էին կենտրոնացած։ Վասիլ կայսրը, որ այդ միջոցին արդեն միանգամայն ազատվել էր բուլղարական հոգսերից, ժամանակը հասած համարեց արևելյան գործերը վերջնականապես կարգավորելու համար, և 1020 թվականի վերջերին մի խոշոր բանակի գլուխ անցած՝ գնաց Ասիա, այնպես ցույց տալով, թե պիտի իր սովորական արշավանքներից մեկն սկսի Սիրիայի դեմ։ Գիորգի թագավորն աշխատում էր իր կողմը քաշել և Ֆաթիմյան խալիֆ Հաքեմին։ Այս հանգամանքը, որ գաղտնիք չէր Վասիլի համար, ստիպում էր նրան զգույշ լինել, քնեցնել ափխազների ապստամբ թագավորին։ Եվ երբ միամտացավ Սիրիայի կողմից, այն ժամանակ իր բանակի առաջխաղացությունը ուղղեց դեպի Արևմտյան Եփրատի հովիտը, որտեղից անցավ Բարձր Հայքի արևելյան կողմերը։ Չկամենալով ավելորդ արյունհեղություն առաջացնել, կայսրը երեք անգամ պատգամավորություն ուղարկեց Գիորգի թագավորին, հրավիրելով գալ և կատարյալ հպատակություն հայտնել իրեն։ Այդ պատգամավորություններից մեկն էլ ուղարկվեց Հովհաննես-Սմբատի մոտ, որը Գիորգիի դաշնակիցն էր և պիտի հատուցում տար այն վնասների համար, որ պատճառել էր բյուզանդական կայսրությանը։ Հայոց Շահնշահի հետ էլ խաղաղությամբ հաշիվները վերջացնելու համար կայսրը պահանջում էր, որ իրեն տրվեն Անի և Կարս քաղաքները[2]։ Գիորգին ոչ մի պատասխան չտվեց, և Հովհաննես-Սմբատն էլ, երևի, առժամանակ հետաձգեց անողորմ առաջարկության մասին մի բան ասելը, մինչև որ կպարզվեն հանգամանքները։

Մինչդեռ մի եղբայրն այսպիսի վտանգավոր դրություն էր ստեղծել իր համար հանդեպ կայսրության, մյուս եղբայրը, Աշոտ թագավորը, ընդհակառակն, շատ ճարպիկ կերպով օգտագործեց ափխազների ապստամբությունը և Անիի թագավորի մեղսակցությունը այդ բանի մեջ։ Իր փոքրիկ պետության սահմաններում եղած իշխանները, օգտվելով նրա զինական թուլությունից, չէին ճանաչում նրա իշխանությունը և շարունակ նեղում էին նրան իրենց ապստամբություններով։ Աշոտը, լուր առնելով, որ Վասիլն արշավում է դեպի արևելք, դնում է նրա մոտ, լավ ընդունելություն է գտնում և օգնություն խնդրում։ Կայսրի համար, իհարկե, ձեռնտու էր ուժեղացնել Հովհաննես-Սմբատի հակառակորդին՝ նրան ավելի լավ ճնշե-

[1] **Schlumberger,** t. II, p. 475.

[2] Մատթ. Ուռհ., *եր. 49*։

յու համար, ուստի Աշոտին տալիս է օգնական գնդեր, որոնց հետ Աշոտը գնում է անհնազանդ իշխանների դեմ, ընկճում է նրանց և այնպիսի երկյուղ տարածում, որ նույնիսկ ուրիշ իշխաններ էլ իրենց կալվածները տալիս են նրան և իրենք էլ կատարյալ հնազանդություն հայտնում[1]:

Գիորգի թագավորի արհամարհական լռությունը Վասիլ կայսրին կատաղություն է պատճառում, որի զոհն է դառնում Օկումի մեծ ավանը Բասենի գավառում՝ նրա շրջակա գյուղերի և ագարակների հետ: Հրամայված էր հրի ու սրի տալ ամեն ինչ, և այս հրամանը կատարվեց ամենայն ճշտությամբ: Ազգաբնակությունը գերի տարվեց Խաղտյաց աշխարհը, Սև ծովի մոտերքում: Այսպես պատժելով Ափխազաց և Վրաց թագավորին, Վասիլը գնաց նրան հետապնդելու: Իսկ Գիորգին, իբրև պատասխան, ավերում է Ուխթիք (այժմ՝ Օլթի) քաղաքը, քանդելով և հրդեհելով նրա բոլոր գեղեցիկ շինությունները, որից հետո Վանանդի վրայով քաշվում է դեպի Վրաստանի սահմանները: Պաղակացիս անունով լճի մոտ (այժմ՝ Չըլդըր) բյուզանդական առաջապահ զորքը հասնում է ափխազական զորքին և կռվի է բռնվում: Թագավորի զորքերը հաջողություն են ունենում. բյուզանդական հին, փորձված զինվորները, սաստիկ ջարդվելով, փախուստի են դիմում: Բայց հասնում են կայսերական մյուս զորքերն էլ, և վրացիներն ու ափխազներն այլևս չեն կարողանում զարգացնել իրենց ձեռք բերած հաջողությունը, այնպես որ, վերջիվերջո, կողմերից ոչ մեկը հաղթող չի հանդիսանում: Գիորգին, այնուամենայնիվ, ստիպված է լինում շարունակել իր նահանջը դեպի Վրաստանի խորքերը, իսկ կայսրը քայլ առ քայլ հետևում է նրան, ամայացնելով այն բոլոր տեղերը, որոնցով անցնում էր: Մեծ աղետ իջավ ազգաբնակության վրա: Անխնա կոտորվում էին մարդիկ, իսկ կենդանի մնացածները ենթարկվում էին ամեն տեսակ տանջանքների ու լլկանքների: Արիստակես Լաստիվերտցին, ողբասաց մի պատմիչ, երկար նկարագրում է բյուզանդական գազանությունները և անկեղծորեն ողբում է վրաց ժողովրդի քաշած սոսկալի ցավերը, բայց միևնույն ժամանակ հիշեցնում է, որ այս դժբախտության մեջ երկինքը վրեժ էլ էր դրել այն հանդգնության համար, որով Գիորգիի զինվորները Հայոց եկեղեցու խաչի բևեռները կողոպտեցին, ասելով, թե նրանցով պիտի պայտեն իրենց ձիերը: Ահա մի նմուշ այդ ողբասացությունից, որ ցույց է տալիս, թե մինչ ո՛ր աստիճան էր հասել բյուզանդացիների կատաղությունը.

«Աւա՜ղ պատմութեանս, աւա՜ղ չար արարուածին. զիա՞րդ կարացից ես աղքատս գիտութեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ գրով արկանել զայն ժամու զլեալսն, և կամ ողբալ ըստ արժանւոյն զմեր[2] թշուառութիւնս... Զպատուական և զհարկևոր ալիս ծերոցն ընդ արիւն և ընդ ապաժուժ թաթաւեալ, զերիտասարդսն սրակոտորս, զանթիւ և զանհամար զաշացուսն զորոց զլուսարանս խաւարեցուցին... Աղատ կանայք ի հրապարակս ելեալ, և զքօղն ի գլխոցն ի բաց առեալ. անպատկառ ընդդէմ արևու ի խայտառականս անկեալ՝ և որք հետի ոտիւք ի տես հիւանդաց կամ յուխտի տեղիս հազիւ երթային, այժմ մերկ գլխով և ոտամբ առաջի

---

[1] Արիստ. Լաստիվերտցի, էր. 11:

[2] Մեր հեղինակը կատարյալ իրավունք ուներ Վրաստանի սահմաններում կատարված սարսափներն անվանել «մեր թշվառություն», որովհետև այդ տեղերում հայկական մեծ բնակչություն էլ կար:

ճերմացն գնան, մերկ ի զարդուց, անկեալ ի պատուոյ, մատնեալ ընդ բիւր
անարգանօք: Իսկ զկաթնասուն տղայսն, զկէսն ի գրկաց մարցն առեալ
զքարի հարկանէին. և զայլս ի գիրկսն մարցն աշտէիւք խոցեալ՝ ընդ
կաթն մարցն զարիւն մանկանցն խառնէին. և զկէսն ի կիցս ճանապարհացն ընկեցեալ ի սմբակս երիվարացն՝ առհասարակ սատակէին: Ո՜վ Ասուած քո յայնժամ ներողութեանն. ո՜վ թագաւորին անողորմ հրամանատուութեանն»[1]:

Միայն ձմեռն էր, որ վերջ դրեց բյուզանդական այս սարսափներին.
Վասիլ Բ-ն, որ զուր չէր ստացել «բուլղարասպան» տիտղոսը, քաշվեց դեպի
Սև ծովի ափերը, ձմեռոցի տեղ ընտրելով Տրապիզոն քաղաքը: Գարունը
պակաս սարսափներ չէր սպառնում: Եվ այս հանգամանքը հաշվի առավ
Հովհաննես-Սմբատը, որի նման խաղաղասեր և անընդունակ կառավարիչ
այդ ժամանակ հազիվ մի ուրիշ տեղ գտնվեր, բայց որ հենց այդ անընդու-
նակության պատճառով ընկել էր մեծագույն փորձանքի մեջ: Նա, ան-
շուշտ, սպասում էր, որ հերթը հիմա իրեն է հասել, ուստի շտապեց կայ-
րի հետ նամակագրության մեջ մտնել՝ նրա պարզ արտահայտած պահանջի
վերաբերմամբ:

Այստեղ առաջին անգամ քաղաքական ասպարեզ է գալիս մի նոր
անձնավորություն, որին վիճակված էր գլխավոր և վճռական դերը կատա-
րել այն սև գործի մեջ, որ 1020 թվից հետո գալիս էր ոչնչացնելու Շիրա-
կի անկախությունը և երկիրն աղետների զոհ դարձնելու: Այդ անձնավո-
րությունը կարևոր դիրք ուներ, ոչ պակաս կարևոր և բարձր՝ քան նույն-
իսկ Հովհաննես-Սմբատի դիրքը: Ժամանակի կաթողիկոսն էր դա, Պետրոս
Ա (1019—1059 թթ.), Գետադարձ անվանված: Կաթողիկոսական աթոռը
Վասպուրականից Արգինա փոխադրող Անանիա Մոկացին կարողացել էր
Գրիգոր Լուսավորչի օրինակը հիշեցնող մի փոքրիկ կաթողիկոսական դի-
նաստիայի հիմքը դնել: Նրանից քիչ հետո կաթողիկոսացավ նրա քրոջ որ-
դին, Խաչիկ Արշարունին: Իսկ երբ 1019 թվին պետք եղավ զառամյալ
Սարգիս կաթողիկոսի տեղ մի նոր կաթողիկոս դնել, Գագիկ Ա-ն ընտրեց
այս Պետրոսին, որ Խաչիկի եղբայրն էր և հանդիսանում էր, այդպիսով,
հոգևոր վեհապետության բարձր շրջաններում հասակ առած մի մարդ: Եվ
որովհետև, ինչպես տեսանք, բարձր շրջաններում սաստիկ տարածված էր
հելլենական լուսավորության սերը, ուստի հենց այս պատճառով էր, երևի,
որ Պետրոսը նույնպես գեղեցիկ հունական կրթություն էր ստացել և այս
տեսակետից հանդիսանում էր Գրիգոր Բջնեցու ընկերակից: Հունական
գրականության և մանավանդ փիլիսոփայության մեջ նրա ունեցած ըն-
դարձակ հմտությունը թույլ է տալիս ենթադրելու, որ նա էլ, անշուշտ,
եղել էր Կ. Պոլսում, հաճախել էր այնտեղի դպրոցները: Բնական է, որ
կաթողիկոսն էլ Հայոց արքունիքում գոյություն ստացած հունասեր կու-
սակցության անդամներից մեկը լիներ, անշուշտ, ամենաազդեցիկը, քանի
որ գիտության հետ նա իր ձեռքին ուներ կաթողիկոսության պես մի մեծ
իշխանություն:

Պետրոս կաթողիկոսը շատ գեղեցիկ կերպով օգտվեց Հովհաննես-Սմ-
բատի պես մի խղճուկ թագավորի թուլամորթությունից և կրոնամոլությու-
նից՝ կաթողիկոսական աթոռին նույնիսկ թագավորականից ավելի մեծ

---

[1] Արիստ. Լաստ., էր. 14—15:

շուք և փառք տալու համար։ Եվ Մատթեոս Ուռհայեցին, հատկապես նրա
ժամանակն ի նկատի առնելով, զուր չէ գրում. «Եւ չէր նուաստ աթոռ հայ-
րապետութեանն քան զթագաւորութեանն»[1]։ Այս մեծ ազդեցությունը կղե-
րապետությունը ձեռք էր բերում նախ և առաջ իբրև խոշոր կալվածատեր։
Նույն պատմիչն ասում է, թե կաթողիկոսարանը տեր էր 500 մեծ և շահա-
վետ գյուղերի։ Նրան ստորադասված էին 500 թեմակալ եպիսկոպոսներ։
Բացի դրանից, 12 եպիսկոպոս մշտապես ապրում էին կաթողիկոսարա-
նում, ուր կային նաև 4 վարդապետ, 60 կրոնավոր և 500 աշխարհական
քահանա։ Այսպիսի ճոխություն չուներ, անշուշտ, նույնիսկ արքունի պա-
լատն Անիի միջնաբերդում։ Բայց ապշեցուցիչն այն է, որ այդքան հարըս-
տությունների տեր հոգևոր ինքնակալը հարստությունից կշտանալ չգի-
տեր, արծաթամոլ էր անհնարին չափերով։ Այս ագահությունը հիվանդու-
թյան կերպարանք ուներ նրա մեջ մինչ այն աստիճան, որ նա կանգ չա-
ռավ նույնիսկ իր հայրենիքը վաճառելու ցածության առաջ։ Չնայած այս
հանգամանքին, այդ մարդը մի բացառիկ բախտի տեր էր։ Հայոց պատ-
մությունը պարզ արձանագրել է նրա դավաճանությունը, բայց և այն-
պես, նրա ոճիրը դատապարտող մի խոսք չի ասել։ Ընդհակառակն, նրան
դասել է նույնիսկ այնպիսի մարդկանց շարքը, որոնց ձեռքով եկեղեցին
իբր թե հրաշքներ է ցույց տալիս մարդկանց։ Այս մեծ տարօրինակու-
թյունը կարելի է բացատրել նրա հարստությունների ազդեցությամբ։
Գրիգոր Բջնեցու ամենամոտիկ բարեկամն էր նա։ Եվ եթե նկատի առնենք
այն մեծամեծ գովեստները, որ նա շռայլում է կաթողիկոսի վերաբերմամբ,
կտեսնենք, որ հունասեր կուսակցության համար ամենևին արատ չէին
համարվում այդ կղերական իշխանավորի պակասությունները։ Այն փառա-
բանությունները, որոնք դուրս էին գալիս ժամանակի ամենագիտուն
մարդու գրչի տակից, կարող էին նույնիսկ սուրբի համբավ էլ ստեղծել պըռ-
դալի վաճառքի ընդունակ կաթողիկոսի համար։

Այս մարդուն էր ահա Հովհաննես-Սմբատը պատգամավոր ուղարկում
Վասիլ կայսրի մոտ՝ բարեկամական հարաբերություններ հաստատելու հա-
մար։ Կաթողիկոսը Տրապիզոն հասավ 1021 թվականի դեկտեմբերի վերջե-
րին։ Կայսրը լավ ընդունելություն ցույց տվեց նրան։ Բանակցություն-
ներն արագ անցան, այն էլ, իհարկե, կայսրի ցանկացած ուղղությամբ։
Համաձայնություն կայանում էր միայն Անիի մասին, որովհետև Կարսի
վրա Հովհաննես-Սմբատը ոչ մի իշխանություն չուներ, իսկ կաթողիկոսն
ուներ միայն նրա լիազորությունը։ Ընդունվում էր նույն սկզբունքը, որ
մի ժամանակ Դավիթ կյուրապաղատն էր գործադրել և որով կայսրն էլ
հիմք էր դրել իր արևելյան քաղաքականության։ Հովհաննես-Սմբատին
կայսրը խոստանում էր պաշտպանություն նրա նեղիչների դեմ, որ նշա-
նակում էր ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիներ և հակառակորդ-
ներ։ Թագավորին կատարյալ հնարավորություն էր տրվում հանգիստ ապ-
րել մինչև իր օրերի վերջը և դրա համար նույնիսկ դրամական նպաստ էլ
էր տրվում նրան կայսերական գանձից։ Չէր մոռացվում, իհարկե, և ար-
ծաթամոլ կաթողիկոսը, որ իր բաժին դրամն ուներ այդ վաճառքի մեջ։ Իսկ
այս բոլոր շնորհների և արտոնությունների փոխարեն Բյուզանդիան ստա-
նում էր Անի քաղաքը Հովհաննես-Սմբատի մահից հետո։ Այս արարքը

---

[1] Եր. 154։

պատճառաբանվում էր նրանով, որ Անիի թագավորն անժառանգ է, որով-
հետև նրա միակ որդին վախճանվել էր, ուստի թագավորն իր հոժար կամ-
քով ժառանգ է կարգում կայսրին։

Արիստակես Լաստիվերտցին, նկարագրելով Տրապիզոնի դաշնագրու-
թյունը, ասում է. «Անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ»[1]։ Դրու-
թյունն, ուրեմն, միանգամայն ճիշտ հասկացվում էր և ժամանակակիցների
կողմից։ Բայց և այդպես, կորստյան գիր ստորագրողը դուրս էր գալիս
Տրապիզոնից ոչ թե արատի բիծը ճակատին, այլ դեռ արդարության լու-
սապսակով զարդարված։ Այս բանը մարդկային ճարպկության աչքի ընկ-
նող գործերից մեկն էր։ Բանն այն էր, որ Վասիլ կայսրը, չափազանց գոհ
Հայոց կաթողիկոսի վարմունքից, որի շնորհիվ այնքան հեշտ ու լավ վեր-
ջացել էր Շիրակի հարցը, մեծամեծ պատիվներ արավ նրան, որոնցից մեկն
էլ այն էր, որ Պետրոսը կայսերական հրավեր ստացավ ջրօրհնեքի հանդե-
սը հայկական ծեսով կատարել 1022 թվականի հունվարի 6-ին։ Վասիլը
գնաց ներկա լինելու հայերի արարողության։ Հանդեսը տեղի ուներ Տրա-
պիզոնի փոքրիկ գետակի վրա։ Վերևի մասում հայերն էին կանգնած, իսկ
ներքևի մասում, ծովի մոտ, հույները։ Այն կատաղի թշնամության մեջ,
որով հայերն ու հույները վերաբերվում էին իրար իբրև հակառակ դավա-
նությունների ներկայացուցիչներ, նշանակություն ուներ ամեն մի թեթև
հանգամանք, որ այսպես թե այնպես կարող էր բացատրվել իբրև կայսրու-
թյան ուշադրության նշան, այսինքն թշնամիներից հզորագույնի կողմից
դեպի հալածվողները։ Այս տեսակետից հայոց եկեղեցուն ցույց տված
առանձին պատիվ էր համարվում ոչ միայն այն, որ ինքը կայսրը, իբրև
առանձին բացառություն, անձամբ ներկա էր հերետիկոս համարված հա-
յերի արարողությանը[2], այլև այն, որ Պետրոս կաթողիկոսին գետակի հո-
սանքի վրա ավելի բարձրադիր տեղ էին հատկացրել, մինչդեռ հույներն
իրենց ծեսը կատարում էին ցածրում։ Սակայն ուշադրության այդ երկու
ցույցերն էլ ունեին իրենց բնական բացատրությունը։ Կայսրը լոկ քաղա-
քավարական մի գործ էր կատարում Պետրոս կաթողիկոսին իր բավակա-
նությունը ցույց տալու համար, իսկ հույն հոգևորականությունը գետի
ցած հոսանքն էր ընտրել դիտմամբ, որպեսզի հերձվածող հայերի օրհ-
նած ջուրը մեկ էլ ինքն օրհներ և այսպիսով մաքրեր նրան հերձվածից։
Այս հարաբերությունների մեջ էլ ստեղծվել է այն հայկական առասպելը,
որ սրբության կոչում էր տալիս Պետրոս կաթողիկոսին։

Մրցության դաշտ էր հարդարված երկու դարավոր ոսոխ դավանու-
թյունների միջև և բնականորեն պիտի ամեն մի կողմը հրաշքի միջոցով
ապացուցի իր գերազանց սրբությունն ու ուղղափառությունը։ Եվ ահա
մեր Լաստիվերտցին, որ իր պատմած դեպքերի ժամանակակից է, բայց Տրա-
պիզոնում չէր գտնվում 1022 թվի ջրօրհնեքին, լսել է, որ երբ կաթողիկոսը
մեռոն ածեց գետակի մեջ, հանկարծակի լուսեղեն ճառագայթների ցնցուղ-
ներ փայլեցին ջրի միջից։ Մի երևույթ, որ կարող էր պատահած լի-
նել բնական շատ հասարակ պատճառից, հենց, օրինակ, նրանից, որ այդ

---

[1] Եր. 17։

2 Երևի այստեղից է ծագել այն ավանդությունը, որ պատմվում էր դարեր հետո, իբր թե Վասիլ կայսրը, թողնելով քաղկեդոնական դավանությունը, մկրտվել էր հայկական ծեսով և դարձել էր հայադավան (Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն», Վենետ., 1865, էջ 50)։

նույն միջոցին արևի լույսն ընկել էր ջրի վրա այնպիսի դիրքով և փայլով, որ սովորական հանգամանքներում գուցե և բոլորովին սովորական մի գեղեցկություն համարվեր։ Բայց նախապաշարված, շարունակ հրաշքների սպասող միտքը կարող էր լույսի այս խաղից մի ամբողջ պատմություն ստեղծել զանազան նպատակներով։ Արիստակեսն ավելացնում է, որ այդ երևույթի վրա շատերն ուշադրություն դարձրին և հայոց հավատի հեղինակությունը բարձրացավ։ Ահա հենց մի հատ նպատակ։ Լաստիվերտցու այս խոսքերը բավական էին, որ հետագա ժամանակներում առասպելն ավելի ևս ուռցվի, զարդարվի զանազան գույներով և հանգամանքներով, որպեսզի ավելի ապշեցուցիչ փաստերով վավերացվի հայոց հավատի բարձր գերազանցությունը։ Եվ իրավ, այդ հետագա զրույցների մեջ լույսերն ընդունում են առասպելական գունավորումներ, դուրս է գալիս այն ահեղ պատկերը, որ գետի ընթացքը կանգ է առել և ջրերը հոսել են դեպի ետ, դեպի բարձր, դեպի ակունքները։ Հրաշագործ կաթողիկոսն արդեն Գետադարձ անունն էլ է ստանում, իսկ ավելի վառ երևակայության տեր կրոնավորները Տրապիզոնի փոքրիկ գետակը թողնում են և հավատացնում, որ կանգնողը և ետ դարձնողն այդ գետակը չի եղել, այլ Ճորոխ գետը, այն մեծ Ճորոխը, որ կատաղի սաստկությամբ է հոսում մինչև Սև ծովը։ Եվ այսպիսի մի արտակարգ մեծ հրաշագործություն երկինքը պարգևում էր ո՞ւմ։ Մի մարդու, որի իսկական անունն էր հայրենավաճառ, դավաճան։ Այսպիսի «առաքինությունների» համար աշխարհի վրա հազիվ թե գտնվի մի ամենափոքրիկ ջուր անգամ, որ հոժարեր պատվի նշան անել՝ կանգնեցնելով իր ալիքների կայտառ վազքը։ Եվ հազիվ թե կարելի լինի ավելի տգեղ անհեթեթությամբ վարկաբեկել հրաշքներն էլ, հրաշքներին հավատացողներին էլ։

Ինքը Պետրոս կաթողիկոսը շատ լավ էր զգում, որ չի կարող պարզերեսով Անի վերադառնալ, ուստի, փոխանակ այնտեղ գնալու, ուղարկեց իր իբր թե գործած հրաշքի լուրը։ Իսկ ինքը ամբողջ ձմեռը մնաց Տրապիզոնում։ Այդ միջոցին էր, ինչպես ասացինք, որ Վասիլը վերջացրեց Վասպուրականի հարցը՝ Սենեքերիմի որդի Դավթի հետ վարած բանակցությունների միջոցով։ Գարնանը կայսրը գնաց դեպի Տայք՝ Գիորգիի դեմ պատերազմը շարունակելու համար, իսկ Պետրոս կաթողիկոսը գնաց Սեբաստիա, ուր տեղափոխվել էր Սենեքերիմը Վասպուրականից։ Այդտեղ նա մնաց ամբողջ չորս տարի, մինչև Սենեքերիմի մահը (1025 թ.)։ Եվ երբ վերադարձավ Անի, այստեղ արդեն շատերն էին մոռացության տվել Տրապիզոնի դաշնադրությունը։ Բայց Հովհաննես-Սմբատ թագավորը չէր մոռանում այդ վաճառքը, և հարաբերությունները նրա ու կաթողիկոսի միջև լարված մնացին այնուհետև էլ, մի հանգամանք, որ ցույց է տալիս, թե դժբախտ թագավորը Պետրոս կաթողիկոսին չէր տվել այն լիազորությունները, որ նա գործադրել էր Տրապիզոնում։

Մինչդեռ Վասիլը Տայքի արշավանքն էր առաջ տանում, նրա թիկունքում, հավանորեն Փոքր Ասիայի կենտրոնական մասերում, հանկարծակի մի շատ վտանգավոր շարժում պայթեց։ Ասիական հողերի միշտ խիստ ազդեցիկ և ուժեղ զինվորական ազնվականությունը ժամանակ էր գտել իր դժգոհությունը մի նոր ապստամբությամբ արտահայտելու համար. այդ դժգոհությունը կրկնում էր այն պատճառաբանությունները, որ մենք տեսանք և նախկին ապստամբությունների ժամանակ, այն է, որ կայսրը շատ է

ճնշում ազնվականներին, նրանց շատ է հեռու պահում գործերի վրա ազդեցություն անելու հնարավորությունից, մի բան, որ նրանց հին արտոնությունն էր։ Բացի դրանից՝ կար և մի շատ կարևոր պատճառ։ Վասիլ Բ-ին, նրա անվերջ պատերազմների համար, հարկավոր էին անհուն դրամական միջոցներ, ուստի նա առանձին ուշադրություն էր դարձնում մանավանդ հարկահանության վրա։ Եվ որովհետև հարկերի մեծագույն մասը ծանրանում էր ազգաբնակության աղքատ խավերի վրա, որոնք և չէին կարողանում վճարել պետության ահագին ծախսերը, ուստի Վասիլը, գանձարանի շահն ապահովելու համար, օրենք հրատարակեց, որով աղքատների վրա ապառիկ մնացած հարկերն ամբողջովին ստացվում էին ազնվականների կալվածներից։ Ժամանակին նայած՝ սա մի շատ նշանավոր քայլ էր, իբրև մի շատ թույլ փորձ գեթ մասամբ շտկելու մարդկային ընկերության մեջ հնագույն ժամանակներից տիրող այն անարդարությունը, որ երկրային հարստությունները կենտրոնացնում է մի փոքրիկ դասակարգի ձեռքին, զրկելով ահագին ժողովրդական զանգվածները։ Այս օրենքն էր մանավանդ, որ գրգռում առաջացրեց արտոնված դասակարգի մեջ։ Եվ ահա կազմակերպվում է մի ապստամբություն, որը կայսր է հայտարարում Նիկեփոր Ծովիզին։ Սա Վարդ Փոկասի որդին էր, որ հոր ապստամբությունից հետո շարունակ կասկածի տակ էր և հեռու էր պահվում գործերից։ Շարժումը, ինչպես երևում է, միանգամից ընդարձակ չափեր ընդունեց։ Բավարար տեղեկություններ նրա մասին չեն մնացել, բայց անկասկած է թվում, թե ապստամբության առաջնորդները կարողացել էին իրենց կողմը քաշել շատ դժգոհ տարրեր ո՛չ միայն բուն բյուզանդական ազգաբնակությունից, այլև արևելյան ուրիշ ազգերից։ Դրանց մեջ էր, իհարկե, և ափխազների թագավոր Գիորգին։ Ապստամբությանը մասնակցելու առաջարկություն ուղարկեց նույնիսկ և Հովհաննես-Սմբատին, նրա եղբայր Աշոտին[1], սակայն սրանց չենք տեսնում այդ շարժման մեջ։ Մասնակցություն ունեցավ միայն Սենեքերիմ Արծրունու որդի Դավիթը, այն էլ որոշ դավադրական նպատակով։

Ծովիզի այս շարժումը բավական նեղության մեջ դրեց կայսրին։ Նա մնացել էր իր պետության արևելյան սահմանագլխին, մայրաքաղաքից կտրված։ Զգուշությունն ստիպում էր նրան առժամանակ թողնել Վրաստանի ապստամբությունը և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել Ծովիզի վտանգի վրա։ Ուստի նա քաշվեց մի բերդ և այնտեղից սկսեց գործել։ Պատերազմական գործողությունների փոխարեն նա աշխատում էր ոչնչացնել ապստամբությունը, հարվածելով նրա գլխավորներին։ Այս բանի մեջ նրան մեծ ծառայություն մատուցեց Դավիթ Արծրունին, որը Նիկեփոր Ծովիզի առանձին սերն էր վայելում։ Նրան էլ Վասիլը հանձնարարել էր գլուխ բերել ապստամբապետի սպանությունը։ Մատթեոս Ուռհայեցին այսպես է պատմում Վասպուրականի թագաժառանգի այդ դավաճանությունը։ Ծովիզը, ասում է նա, շատ էր սիրում Դավթին և խոստանում էր նրան նստեցնել Հայոց թագավորական գահի վրա, իսկ Դավիթը չկամեցավ խախտել այն դաշինքը, որ կապել էր Վասիլի հետ։ Մի անգամ Դավիթը, իբր թե խռովելով Ծովիզից, գնում է իր տունը։ Իսկ Ծովիզը մենակ վազում է Դավթի մոտ, գրկում է նրան և խնդրում վերադառնալ։ Բայց այդ մի

[1] Սմբատ սպարապետ, «Տարեգիրք», Փարիզ, 1859, եր. 48։

թակարդ էր ապստամբապետի համար։ Դավիթը նշան է անում, նրա մարդիկ հարձակվում են Նիկեփորի վրա և սպանում նրան։ Ապստամբապետի մահը մեծ շփոթություն և կազմալուծում է առաջացնում նրա բանակում, և ամենքը փախչում են։ Կայսրը, հազիվ ազատվելով մեծ վտանգից, Դավթին, նրա այդ գործի համար, վարձատրում է, ընծայելով նրան Կեսարիա, Ծամնդավ և Խարատանեք քաղաքներն իրենց շրջականերով[1]։

Իսկ ինքը նորից դարձավ Գիորգիի դեմ, որին նորից և նորից հրավիրեց հնազանդության և հաշտության։ Եվ որովհետև այս անգամ էլ զուր անցան համոզելու ջանքերը, ուստի վերսկսվեց պատերազմը, որի բեմն էր դառնում դարձյալ հայաբնակ Բասեն գավառը, որ այդ ժամանակները Տայքի մի մասն էր կազմում, քանի որ Վասիլի կողմից սկզբում ընծայված էր Դավիթ կյուրապաղատին և այժմ Գիորգին չէր ուզում վերադարձնել Բյուզանդիային։ Վերջապես Շղփա անունով տեղում Գիորգիի զորքերը հարձակվեցին բյուզանդացիների վրա։ Ընդհարումը սաստիկ էր և կայսերական զորքը մեծ հաջողություն ունեցավ, ջարդելով մեծ թվով ափխազներ և վրացիներ։ Գիորգին փախուստի դիմեց, իսկ բյուզանդացիները, հալածելով նրան, շարունակեցին կոտորել փախչողներին։ Վասիլը լիուլի վրեժ էր հանում իր հակառակորդից։ Յուրաքանչյուր ափխազի գլխի համար նա հրամայեց տալ մի դահեկան, և այսպիսով կտրված գլուխների այնպիսի մեծ քանակություն հավաքվեց, որ նրանցից մեծամեծ կույտեր կազմեցին ճանապարհի վրա՝ ազգաբնակությանը սարսափ ազդելու համար։ Գիորգին հաշտություն խնդրեց, և կայսրը, ամենևին նկատի չառնելով, որ հաղթությունն իրենն է, իր նախկին չափավոր պահանջներն առաջադրեց, այն է՝ վերադարձնել Դավիթ կյուրապաղատի ժառանգությունը։ Եվ պատանդ վերցնելով թագավորի որդուն, նա ուղղվեց դեպի հարավ ու շրջան տալով Հայաստանի սահմաններով, մտավ Վասպուրական, որ բյուզանդական թեմ էր արդեն, առաջացավ դեպի արևելյան սահմանագլուխը։ Հոռոմ բանակի այս շարժումները մեծ տպավորություն գործեցին Պարսկաստանում, ուր ամենքն ահով սպասում էին, թե ի՛նչ պիտի անի կայսրը։ Հեր քաղաքը, որի առջև բանակ դրին բյուզանդացիները, շտապեց իր հպատակությունը հայտնել Վասիլին։ Բայց այստեղ էլ բանակը ենթարկվեց մի աղետի, որ անհնարին դարձրեց նրա մնալն այդ կողմերում։ Անակնկալ սաստիկ ցուրտ սկսվեց, առատ ձյուն տեղաց, որ դաժան զրկանքներ ու տանջանքներ պատճառեց զինվորներին։ Կայսրն շտապեց հեռանալ Հերից, իր բանակն ամբողջովին թողնելով զարմացած և հանկարծակի ուրախացած ազգաբնակության։ Վասպուրականի վրայով Վասիլը վերադարձավ Կ. Պոլիս (1023 թ.)։ Այս վերջին ասիական արշավանքն էր, որից ծերունի կայսրը վերադառնում էր հաղթանակով։ 1025 թվականի դեկտեմբերին Վասիլը վախճանվեց 60 տարեկան հասակում, 50 տարի թագավորելուց հետո։

Իր հետ նա գերեզման էր տանում Բյուզանդիայի պատմության ամենափայլուն շրջանը։ Հայկական դինաստիան նրա անձով տվել էր իր կարողության ամենաբարձր, ամենաուժեղ արտահայտությունը։ Նրանից հետո, հենց առաջին իսկ օրերից, գալիս էր ահագին կայսրության անկումը։ Վասիլի անդուլ և անդադար գործունեությունը զարմանք է պատճառում

[1] Մատ. Ուռհայեցի, եր. 51։

բոլոր պատմագիրներին և իսկապես նրան պատվավոր տեղ է հատկացնում մեծ կայսրների շարքում։ Այդ անխոնջ գործունեությամբ, որ չգիտեր կանգ առնել ոչ մի դժվարության, նույնիսկ հարատև պատերազմների դժվարության առջև, կայսրը կարողանում էր կենդանի պահել մի գաղափար, այն է՝ պահպանել կայսրության ամբողջությունը, որ շարունակ վտանգված էր բոլոր կողմերից։ Բայց իր հաջորդներին նա թողնում էր ոչ միայն այն, ինչ ստացել էր իր նախորդներից և պաշտպանել կամ ետ էր խլել զենքով։ Կայսրությունը նա ընդարձակել էր արևելքից մի ամբողջ երկիր— Հայաստանը[1] միացնելով առանց արյան և զենքի, լոկ դիվանագիտական ճարպկությամբ։ Այդ ճարպկությունն ըստ արժանվույն գնահատելու համար պետք է նկատի առնել, թե հայերն ի՛նչպես տվին իրենց երկրները։ Վասպուրականի հանձնումն արդարացվում էր և սուրբ հայրերի գուշակություններով և նույնիսկ Ավետարանի հրամանով, իսկ Անին և նրա ամբողջ թագավորությունը վաճառողը նույնիսկ մեծ հրաշագործների թվում դասվեց, գետակ, մինչև իսկ մի մեծ գետ կանգնեցնող։ Վասիլի գործը վատություն չէր համարվում հենց այն պատճառով, որ նա, ինչպես կարծում էր ժողովուրդը, սիրում էր հայերին, ավանդություն էլ կար հորինված, թե նա հայ էր մկրտվել։ Հայասիրական մի այլ ավանդություն էլ Վասիլի մահվան հետ կապվեց։ Իբր թե նա մահվան անկողնում կանչում է իր եղբայր Կոստանդինին, իր թագը տալիս է նրան և դրա հետ կտակում է, որ նա առանձին խնամք ունենա Հայոց աշխարհի վրա և պահպանի հայ ազգը։ Իսկ մասնավորապես եղբոր խնամատարության էր հանձնում Սենեքերիմ թագավորի (որ քիչ առաջ էր մեռել) չորս որդիներին, որոնք էին՝ Դավիթ, որ նստել էր հոր տեղը, Ատոմ, Աբուսահլ և Կոստանդին, ինչպես նաև առհասարակ բոլոր հայ իշխաններին[2]։ Կոստանդին կայսրը արդեն ծեր էր հասակով և թագավորեց ընդամենը մոտ երեք տարի (1026—1028 թթ.)։ Դա վերջինն էր Հայկական հարստության արու ներկայացուցիչներից, որ արու զավակ չէր թողնում։ Եվ ահա նրա մահվան հետ կապվում էր մի նոր, չափազանց միամիտ պատմություն՝ Անիի վաճառումն արդարացնելու և Վասիլի ու նրա եղբոր վրա ոչ մի մեղք չթողնելու համար։ Իբր թե մահվան անկողնում Կոստանդին Ը-ն միտը բերեց Անիի թուղթը, որ գրել էր Պետրոս կաթողիկոսը Հովհաննես-Սմբատ թագավորի անունից, և հրամայեց, որ մայրաքաղաքում որոնեն մի հայ, ով և լինի, բերեն իր մոտ։ Գտնվում է Կիրակոս անունով մի քահանա, որ կաթողիկոսարանի հյուրընկալն էր և այդ միջոցին գնացած էր Կ. Պոլիս։ Կայսրն իբր թե տալիս է նրան Տրապիզոնի դաշնագիրը և ասում է. «Տար այս թուղթը, տուր Հայոց թագավորին և ասա, թե որովհետև ինձ էլ, ինչպես ամեն մի հողածնի, մահվան հրավեր հասավ, վերցրու քո գիրը և տուր քո թագավորությունը քո որդուն, իսկ քո որդին թող տա իր որդուն մինչև հավիտյան»։ Կայսրը մեռնում է, իսկ Կիրակոս քահանան գիրը Հայաստան չի տանում, այլ վաճառում է, մեծ գանձ ստանալով, Կոստանդինի հաջորդներից մեկին, Միքայելին, որ, ինչպես կտեսնենք, սկսում է պահանջել թղթի իրագործումը։

Այս պատմությունը մեզ հաղորդում է ժամանակակից պատմիչը[3], որ

[1] **D. C. Husseling**, „Essa. sur la Civilisation Byzantine“, Paris, 1907, p. 189.

[2] Մատ. Ուռհայեցի, եր. 55։

[3] Արիստ. Լաստիվ., եր. 54։

և բացականչում է, «Ո՞վ դառն վաճառոյն այնորիկ. քանի՞ արեանց զանձն պարտական կացոյց. քանի՞ եկեղեցիք ի ձեռն վաճառոյն այնորիկ աւերեցան. քանի՞ գաւառք անմարդ, ամայի դարձան. քանի՞ մեծանիստ աւանք մարդաթափ ի բնակչաց եղեն»։ Բայց թեկուզև ժամանակակից է հաղորդողը, չի կարելի մի րոպե անգամ կասկածել, թե նրա լսածն ու գրի առածը պարզապես բերանից բերան անցած խոսք է եղել, «ասեկոսե», ինչպես այժմ ենք ասում, զրույց։ Բյուզանդիայի կայսրը, եթե հարկ տեսներ իր կամքը հայտնել Հայոց թագավորին, այդպիսի մի գեղջուկ—նախնական միջոցից ավելի արժանավայել և ապահով եղանակ կգործադրեր ամենայն հեշտությամբ, արքունի սուրհանդակների միջոցով, որոնք պտտում էին աշխարհի բոլոր կողմերը։ Իսկ եթե կայսրը չէր կամենում անհանգստություն պատճառել իր սուրհանդակներին և դեսպաններին, հարցը կարող էր արմատապես վճռել, պատռելով և ոչնչացնելով չարաբախտ թուղթը։ Բայց ամենագլխավորն այն է, որ Կոստանդինը նույնիսկ չէր կարող համակվել այնպիսի զգացմունքով դեպի Անիի վաճառումը, որպիսին ունեին հայերը։ Մենք տեսանք, որ Վասիլի համար այդ գործը մի մեծ հաղթանակ էր, ուրեմն նա ուրիշ կերպարանք չէր էլ կարող ունենալ նրա եղբոր կամ առհասարակ որևէ բյուզանդական կայսրի համար։ Եվ, վերջապես, ծայրահեղ միամտություն կլիներ կարծել, թե Շիրակի թագավորության միացումը բյուզանդական կալվածներին կայսրների անձնական մասնավոր գործերից մեկն էր, որ հայտնի էր միայն առուտուրը կատարողներին և կարող էր ջնջվել լոկ նրանցից մեկն ու մեկի քմահաճույքով։ Տրապիզոնի դաշնագիրը պետական շատ կարևոր վավերաթուղթ էր և նրա տեղը համապատասխան դիվանն էր, ուր նա արձանագրված էր պատշաճավորության բոլոր կանոններով։ Եվ 1022 թվի այդ համաձայնությունը պիտի կատարվեր և կատարվեց առանց մասնավոր ցանկություններ հաշվի առնելու, նույնիսկ հակառակ դավաճան Կիրակոս քահանայի վաճառած թղթի։ Ժողովրդական հոգեբանությունը յուրաքանչյուր աղետի մեջ արդարացնող պատճառ է որոնում—դավաճանական վաճառք, թունավորում կամ պարզապես՝ հատուցում մարդկային մեղքերի համար։ Այսպես է և Կիրակոսի զրույցը։

Ավելի հետաքրքրական է այն հարցը, թե ո՛րքան ձեռնտու է Վասիլի վարած քաղաքականությունը պետական ճշմարիտ, իրական շահերի տեսակետից։ Ճի՞շտ որ հայ անկախությունների և մասնավորապես Շիրակի թագավորության ջնջումը կայսրության համար ռազմական ամուր դիրք էր ստեղծում Արևելքում։ Այս հարցի տեսակետից բացասական է բոլոր նորագույն պատմագիրների վերաբերմունքը դեպի Բյուզանդիայի այս արևելյան քաղաքականությունը։ «Վտանգավոր բան էր և լավ մտածված կառավարչական արևելյան քաղաքականության ապացույց չէր,—ասում է Գելցերը,—ոչ միայն ազգայնապես խորթ, այլ եկեղեցապես բաժանված հայկական իշխանությունների կցումը կայսրության։ Միայն ռազմական բնավորություն ունեցող պատճառները, որոնք ստիպողաբար ուշադրություն էին պահանջում, կարող են արդարացնել այդ կցումը։ Բայց լուրջ վտանգ էր բերում իր հետևից։ Միաբնակությունն այստեղ դեռ իրական ուժ էր, և նրան պետք էր հաշվի առնել»[1]։ Սակայն ռազմական նկատառումներն էլ, ինչպես հայտնի է, սխալ հանդիսացան։ Վասիլը, երևի, կարծում էր, թե իրե-

[1] «Оч. по ист. Виз.», стр. 107.

նից հետո էլ բյուզանդական զինվորական ուժը կմնա նույն բարձրության վրա, որին ինքն էր հասցրել։ Բայց նրան հաջորդեցին տկար և թուլամորթ կայսրներ, որոնք կազմալուծեցին բանակն այնպիսի մի ժամանակ, երբ արևելքից սելջուկներն էին առաջանում ամեն ինչ ոչնչացնող թափով։ Այդ իսկ ժամանակ բյուզանդական կարճատես քաղաքականությունը, ոչնչացնելով հայկական իշխանություններն արևելյան սահմանագլխի վրա, երկիրը թողել էր առանց ինքնապաշտպանության միջոցների։ Այս հանգամանքից էլ գեղեցիկ կերպով օգտվեցին թուրքերը, պատռելով սահմանագիծը և մխվելով կայսրության սրտի մեջ։ Այնպես որ, վերջիվերջո, Տրապիզոնի դաշնագիրը միայն հայկական անկախության ոչնչացումը չէր իրականացնում։ Միևնույն ժամանակ նա բաց էր անում այն ճանապարհը, որով թուրքերը հետզհետե առաջ գնացին և չորս դարի ընթացքում հասան Կ. Պոլսի դռներին։

Վասիլի մահից հետո էր, հավանաբար, որ Պետրոս կաթողիկոսը վերադարձավ Սեբաստիայից։ Բայց բացակայությունը նրա համար ժողովրդական համակրանք չէր ստեղծել։ Ոչ նույնիսկ Հովհաննես-Սմբատն էլ այդ ժամանակամիջոցին մոռացել էր հոգևոր իշխանապետի գործը, և հարաբերություններն այս երկուսի միջև չշտկվեցին և այնուհետև։ Սուր շփումների հող պատրաստում էին, անշուշտ, կաթողիկոսի բարքն ու հակումները, բայց մանավանդ հունական կուսակցության ձգտումները։ Այդ կուսակցության մեջ նույն այդ միջոցին երևան է գալիս և մի երրորդ շատ ուժեղ ու գործունյա անձնավորություն։ Նա հայտնի է մեր պատմության մեջ Վեստ Սարգիս անունով։ Այս «վեստը» նրա ստացած վերջին բյուզանդական աստիճանն էր, դրանից առաջ նա ստացել էր «անթիպատ» և «պատրիկ» աստիճանները, ինչպես նաև «արևելից դուկ» պատվանունը[1]։ Այս անունները արդեն ցույց են տալիս, որ Սարգիսը բյուզանդական տիպիկ մի բյուրոկրատ էր հայկական շրջանի մեջ։ Նա պարծենում էր, որ այդ աստիճաններն ստացել է երեք կայսրներից և իրեն անվանում էր «սիրելի ծորտ երից թագաւորաց Հոռոմոց»[2]։ Այս, իհարկե, չէր խանգարում, որ Վեստ Սարգիսը լինի մի շատ ջերմեռանդ քրիստոնյա հավատացյալ, հայ եկեղեցու զավակ նույնպես։ Նա, ինչպես երևում է, կարևոր պաշտոն էր վարում Բագրատունյաց թագավորության մեջ և նրա կալվածներից մեկն էր կազմում Տեկոր գյուղն իր շրջականերով։ Իբրև հարուստ և ազդեցիկ իշխանավոր, նա իրեն հայտնի դարձրեց մի շարք շինություններով։ Եվ տեղացի պատմիչներից մեկը գրում է նրա մասին. «Մեծապատիւ Վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց՝ բերդից և եկեղեցեաց զհրաշալի զվանս զԽծկօնս շինեաց. պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քւարանն, որ ճանաչի անուն սբ. Սարգիս»[3]։ Այս վանքն այսօր էլ մնում էր Տեկորի մոտ (Բեշքիլիսե) շեն ու կանգուն և ցույց է տալիս, որ, իրավ, երեք կայսրների սիրելի ծորտը շատ զարգացած, իրեն և իր ժամանակին պատիվ բերող ճարտարապետական ճաշակ է ունեցել։ Բայց և այնպես, այս շատ կարող և ազդեցիկ մար-

[1] Տես Խծկոնքի տաճարի արձանագրությունը («Շիրակ», եր. 126)։
[2] Արձանագրությունը գրված էր 1033 թվին, հետևաբար երեք կայսրները կարող էին լինել Վասիլ Բ, Կոստանդին Ը և Ռոմանոս Գ։
[3] Սամուել Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, եր. 106։

դու իսկական ծագումը մեզ հայտնի չէ[1]։ Հայտնի է միայն, որ նա ազատներից էր, այսինքն ազնվական, և ամուսնացած էր Գրիգոր Բջնեցու (Մագիստրոսի) աղջկա հետ[2]։

Հասկանալի է, ուրեմն, որ հունասեր կուսակցությունը, բաղկացած այսքան ուժեղ և ազդեցիկ մարդկանցից, միանգամայն տիրապետող պիտի հանդիսանար Անիի արքունիքում, և Պետրոս կաթողիկոսը, զգալով իր ուժը, շատ էլ չպիտի քաշվեր թագավորից և հասարակական կարծիքից։ Բայց նրա եկեղեցական քաղաքականության դեմ մի սաստիկ բողոք արտահայտվեց շատ խորազդեցիկ հանգամանքների մեջ։ 1033 թվականին տեղի ունեցավ կատարյալ խավարում, որ ահավոր տպավորություն թողեց ամեն տեղ։ Հանկարծակի, օրը կեսօրին, մթնեց երկնքի լուսատուն և կատարյալ խավար պատեց աշխարհը, այնպես որ երևացին աստղերը։ Ինչպես երևում է, միաժամանակ երկրաշարժ էլ եղավ, որ ավելի ևս բազմապատկեց սարսափը։ «Եւ սաստկացաւ խաւարն և մութն,— ասում է Ուռհայեցին,— և գոչեաց առ հասարակ ամենայն արարածք, և հնչեցին ամենայն լերինք և բլուրք, և դողաց սասանելով լերինք և ամենայն ապառաժք, և երերալով ծփայր համատարած մեծ ծովն օվկիանոս և սուգ առեալ լայր զամենայն որդիս մարդկան»[3]։ Չափազանց բնորոշ է ժամանակի հասկացողությունների տեսակետից, որ այս բնական պատահարը գալիք վատությունների նշանակ համարվեց։ Հիշեցին, որ Քրիստոսի խաչելության ժամանակ էլ արեգակի խավարում է տեղի ունեցել։ Նախապաշարված միտքն արդեն նախապատրաստված էլ էր ամենամռայլ ակնկալությունների համար։ Դրանից առաջ Հայոց աշխարհում լույս ընկավ մի տարօրինակ մարդ։ Ոչ ոք նրան չէր ճանաչում, անոք էր նա, հայտնի չէր, թե ո՛րտեղացի է։ Արևելքից գալով, անցավ Ապահունյաց և Հարքա գավառները, Մանանաղի գավառից իջավ Եկեղյաց գավառը և ամեն տեղ միալար, բարձր ձայնով կանչում էր. «Վա՜յ ինձ, վա՜յ ինձ»։ Եվ այլևս ոչինչ։ Եվ եթե մեկը հարցնում էր, թե որտեղից է կամ որ գավառից և կամ ինչու է վայ տալիս, նա չէր պատասխանում։ Միայն և միշտ միևնույն աղաղակը։ Շատերը ծաղրում էին նրան, համարելով խելքից ցնդած։ Բայց այդպես անողներին շուտով սկսեցին անմիտ համարել։ Իմաստուն էին դառնում նրանք, որոնք կարծում էին, թե այդ վայը գալու է ամբողջ աշխարհին[4]։ Այս տարօրինակ հանգամանքն այժմ կապվում էր արևի խավարման հետ, որ և նշան էր համարվում, թե Նեռը պիտի ծնվի։ Բարձր շրջանները, սկսած թագավորից, իրենց սարսափը փոքր ի շատ փարատելու համար երևույթի մեկնության հեղինակավոր մի աղբյուրի անհրաժեշտությունն էին զգում։

Այդ ժամանակ իր գիտնականությամբ և սրբակեցությամբ հռչակված էր Հովհաննես Կոզեռն անունով վանական վարդապետը։ Թագավորի և կաթողիկոսի կողմից նրա մոտ պատգամավորներ գնացին մի խումբ իշխաններ, որոնց մեջ էին Գրիգոր Բջնեցին և նրա փեսա Վեստ Սարգիսը[5]։ Գի-

[1] Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «հայկազն» (եր. 67) և որովհետև այս անունը հաճախ տրվում էր Սյունյաց իշխաններին, ուստի Վեստ Սարգիսն էլ համարվում է Սյունեցի։ Բայց այս խախուտ հիմք է։ Նույն Մատթեոսը «հայկազն» անվանում է և Պահլավունի իշխաններին (եր. 87)։ Վերևում մենք տեսանք, որ Գրիգոր Մագիստրոսն էլ «հայկազն» էր։

[2] Տես Տեկորի արձանագրությունը («Շիրակ», եր. 135)։

[3] Եր. 66։

[4] Արիստ. Լաստիվեր., եր. 43։

[5] Մատ. Ուռհ., եր. 67։

տուն վարդապետը մի ամբողջ տեսարան ցուցադրեց իր բարձրաստիճան այցելուների առջև։ Նա երեսնիվայր ընկած էր գետնի վրա, թացացնում էր գետինն իր արտասուքներով, հառաչում էր և ողբում։ Այցելուները չէին համարձակվում խոսեցնել նրան և նստեցին նրա մոտ ու իրենք էլ սկսեցին լաց լինել և հառաչել։ Այսպես տևեց մի քանի ժամ։ Ապա Հովհաննես Կոզեռնը կարելի համարեց խոսելը և, շարունակելով արտասուք թափել, ողբում էր ամբողջ մարդկությունը։ Սարսափելի վատ բաներ գիտեր նա։ Իր մկրտության ժամանակ Քրիստոս կապել էր սատանային հազար տարի ժամանակով։ Ահա հենց այժմ լրացել էր հազարամյակը, սատանան ազատվել էր կապանքներից և աշխարհը բյուր թշվառությունների մեջ պիտի ընկներ։ Եվ ոչինչ չպիտի կարողանա դիմադրել սատանայի հարձակումներին, քանի որ վերացել է եկեղեցական բարեզարդությունը, մոռացվել են հայրապետական կարգերն ու ավանդությունները, աստվածպաշտությունը խանգարված է, Ավետարանի խոսքերին հակառակվում են, պաս չեն պահում, եկեղեցի չեն գնում։ Երկար այսպես պատմում է ճգնավոր վանականը հանրային մեղքերը, որոնց մեջ ամենագլխավորը նա համարում է եկեղեցականների հանցանքներն ու շեղումները։ Եվ Կոզեռնը բացառություններ չէր գտնում այդ արատավոր դասակարգի մեջ։ Նրա ակնարկները ցույց են տալիս, որ իր մեղադրանքների մեջ նկատի ուներ և կաթողիկոսին, և նրան գուցե ամենքից շատ։

Այս գուշակությունն արևի խավարման և երկրաշարժի սարսափեցուցիչ պայմանների մեջ չէր կարող, իհարկե, անհետ անցնել։ Նա նորից սաստկացնում էր ընդհարումները կուսակցությունների միջև։ Հովհաննես-Սմբատը կարողանում է այնքան կամքի ուժ ցույց տալ, որ միևնույն տարին (1033 թ.) Պետրոսն ստիպված է լինում ծածուկ փախչել Անիից, այս անգամ բռնելով Վասպուրականի ուղղությունը, այսինքն դարձյալ բյուզանդական մի երկիր, բյուզանդական իշխանության հովանավորությունը որոնելու համար։ Թեև ժամանակակից աղբյուրներն այս ընդհարման պատճառները չեն պարզաբանում, բայց հենց այն հանգամանքը, որ արքայական շուրջով ապրող փարթամ կրոնապետը թաքուն փախչում էր իր աթոռից բյուզանդական սահմանները՝ բավական է ցույց տալու համար, թե արքունիքում տեղի ուներ քաղաքական մի հզոր մրցություն, որի հետևանքը եղավ հունամոլների պարագլուխներից մեկի փախուստը։ Դրությունն այնքան լարված էր, որ թագավորը, չնայած իր ջերմեռանդ եկեղեցասիրության, վճռել էր պաշտոնից հեռացնել Պետրոսին։ Բայց որովհետև նա կարող էր բյուզանդական իշխանությունների աջակցությամբ մեծ աղմուկ բարձրացնել այդ առթիվ, գուցե նույնիսկ մի հակառակ աթոռ հաստատել Հայաստանի բյուզանդական բաժնի համար, ուստի ամեն միջոց ձեռք առնվեց, որ կաթողիկոսը վերադառնա իր աթոռը՝ առանց մեծ կասկածների։ Եվ իրավ, Պետրոսը չորս տարուց հետո, 1037 թվին, վերադարձավ Անի։ Բայց այստեղ թագավորի հրամանով նա ձերբակալվեց։ Հունասեր կուսակցությունը, չկարողանալով դիմադրել այդ կարգադրությանը, գոնե ա՛յն հաջողեցրեց, որ կաթողիկոսին հանձնեցին իր հսկողության։ Նա ուղարկվեց Բջնի, ուր և բանտարկվեց, ինչպես ասում են մեր պատմիչները։ Բայց ավելի ճիշտ կլինի ասել, թե Պետրոսն այնտեղ արգելված էր, քանի որ Բջնին պատկանում էր նրա մոտիկ բարեկամ և գործակից Գրիգոր իշխանին

(Մագիստրոս), հետևաբար և չէր կարող խոսք լինել, թե կաթողիկոսն իսկական բանտարկության էր ենթարկված։

Հեռացնելով Պետրոսին, Հովհաննես-Սմբատը նոր կաթողիկոսական ընտրություն կատարեց, և Անի կանչելով Սանահին վանքի վանահայր Դիոսկորոսին, որ լավ հոգևորականի համբավ ուներ, նրան կաթողիկոս օծել տվեց։ Բայց թագավորը շուտով տեսավ, որ սխալ էր իր արած քայլը։ Կրոնական հողի վրա երկպառակություններ ծագեցին, և այդ բանից օգտվեց հունասեր կուսակցությունը, ուժեղ պրոպագանդ մղելով նոր կաթողիկոսի դեմ, որի տապալումը կդառնար նրա համար և քաղաքական հաղթանակ։ Այդ գործունեության մեջ նա խոշոր հաջողություն գտավ, իր կողմը գրավելով բարձր հոգևորականության ներկայացուցիչներից շատերին, որոնք չբավականացան դժգոհների դիրքով, այլ ամենաիրական գործի կպան, անիծելով երկպառակության պատճառները և գրգռելով հասարակ ժողովուրդը։ Միջնադարյան մարդու համար չկար երկյուղի մի ավելի հզոր աղբյուր, քան անեծքը, մանավանդ, երբ նա հոգևորականի բերանից էր դուրս գալիս։ Հովհաննես-Սմբատը, իբրև միջնադարյան տափակության մի հարազատ զավակ, այնքան վախեցավ այդ անեծքներից, որ սկսեց միջոցներ որոնել Պետրոսի հետ հաշտվելու համար։ Նույն անեծքներն ու պատշաճավոր քարոզությունները գրգռեցին Անիի խուժանը մինչև այն աստիճան, որ նա հարձակվեց Դիոսկորոս կաթողիկոսի վրա և պատռեց նրա գլխի քողը, որ հայրապետական իշխանության նվիրական նշաններից մեկն էր։ Հովհաննես-Սմբատը պարտված էր, նրա հետ, իհարկե, և ազգային կուսակցությունը։ Թագավորն սկսեց խնդրել Պետրոսին, որ նա վերադառնա իր աթոռը, բայց կաթողիկոսը մերժում էր այդ դիմումները։ Եվ որովհետև ներքին երկպառակությունը գնալով սաստկանում էր, թագավորը դիմեց Աղվանից Հովսեփ կաթողիկոսին և խնդրեց նրա միջամտությունը։ Հովսեփը գնաց Անի, գումարեց այնտեղ եկեղեցական մեծ ժողով հոգևորական և աշխարհական անձերից, որոնց թիվը, ինչպես ասում են, հասնում էր չորս հազարի[1]։ Ժողովը գահընկեց հայտարարեց Դիոսկորոսին, իսկ Պետրոսին նորից հաստատեց իր պաշտոնի մեջ, գոհացում տալով նրա բոլոր պահանջներին, որոնցից գլխավորն այն էր, որ անվավեր ճանաչվեցին Դիոսկորոսի կատարած ձեռնարկությունները։ Բջնիի աքսորականը, մոտ տարի ու կես հեռացած մնալով կաթողիկոսությունից, հաղթանակով մտնում էր Անի։ Այստեղ նա դեռ մեծ դեր ուներ կատարելու պատմական այն աղետի մեջ, որ գնալով ավելի և ավելի հասունանում էր։

Այս խռովությունները դեռ բոլորովին չէին դադարել, երբ 1040 թվին վախճանվեց Աշոտ Ե-ն, Հովհաննես-Սմբատի եղբայրը։ Քսան տարի թագավորել էր նա դրսի աշխարհում և այդ ժամանակամիջոցում ոչ մի անգամ չէր մտել Անի, որովհետև Հովհաննես-Սմբատը վախենում էր նրանից։ Այժմ միայն մայրաքաղաքը բաց էր անում իր դռները նրա դիակի առջև, որովհետև այնտեղ էր Բագրատունի թագավորների տոհմային գերեզմանատունը, ուր և թաղվեց Աշոտը։ Դժբախտ հանգամանքները թույլ չտվին, որ այդ ընդունակ և քաջ մարդն ազդեցիկ դեր կատարի այն տագնապալից ժամանակներում, երբ դավաճանությունը, թուլամորթ ապիկարությունը և խուժանային անգիտակ տրամադրությունը պետական կործանում էին պատ-

1 Մատթ. Ուռհ., էջ 77։

րաստում Անիի պարիսպների մեջ։ Բայց և այնպես, նրա մահը մի շատ ցավալի երևույթ էր առաջ բերում։ Նա էր, որ իր անձնական քաջությամբ ռազմական ոգի էր պահպանում հայ զորքի մեջ, հաղորդելով նրան կազմակերպված, հաղթական ավանդություններով ապրող ուժի գիտակցությունը։ Եվ ահա նրա մահը բերում էր բանակի հասկացողության կատարյալ կազմալուծում։ Նշանակություն չունի այն հանգամանքը, որ Աշոտ քաջն Անիի բանակի հետ ոչ մի առնչություն չուներ։ Թեև բաժան-բաժան էին Հայոց զորքերը, բայց նրանց, ընդհանուր առմամբ, կապում էր զինվորականությունը, որ դասակարգային ոգի, հոգեբանություն էր մշակում։ Աշոտի բանակի կազմալուծումը չէր կարող համանման երևույթ չառաջացնել Անիի բանակում, քանի որ վերջինիս առաջնորդն էր ապիկար Հովհաննես-Սմբատը։ Ահա ինչպես է նկարագրում այդ դրությունը Մատթեոս Ուռհայեցին. «Եւ եղև զկնի մահուանն Աշոտոյ թուլամորթեցան զօրքն Հայոց և ատեցին զարուեստս պատերազմի, մտին ընդ լծով ծառայութեան ազգին հոռոմոց, նստան ի գինարբուսն, սիրեցին զբարբուտ և զերգս գուսանաց»[1]։

Իսկ Արևելքը շարունակում էր սպառնական նշաններ ցույց տալ։ Աշոտի մեռած ժամանակ Աղվանից աշխարհի արևմտյան գավառները, որոնք, ինչպես տեսանք, Դավիթ Անհողինի տիրապետության տակ էին մտել, լցվեցին Դվինի Քուրդ Աբուլսուար էմիրի զորքերով և ներկայացնում էին ասիական արշավանքների սովորական պատկերը—ավերածություն, կոտորած, գերություն։ Աբուլսուարը Դավթի փեսան էր, քրոջ ամուսինը և ահագին զորքով էր եկել՝ իր աներձագի հետ անշուշտ տնային կալվածական հաշիվներ մաքրելու համար։ Մատթեոս Ուռհայեցին նրա բանակի կազմը հաշվում է 150 հազար մարդ, սակայն այս թիվը շատ ուռցրած է երևում։ Դավիթ Անհողինն ուներ միայն 10 հազար մարդ և որովհետև այդպիսի բանակով ոչինչ հաջողեցնել չէր կարող, ընտրեց սպասողական դրությունը։ Բայց մի ամբողջ տարի այդպես մնալուց հետո մի շարք հուսահատական միջոցներ հնարեց՝ իր ուժեղ թշնամուն վանելու համար։ Ամենից առաջ նա պատգամավոր ուղարկեց Անի և Հովհաննես-Սմբատին հայտնեց հետևյալը. «Աբուլսուարն առավ Հայոց աշխարհի բոլոր գավառները և գալիս է ինձ վրա, եթե ինձ չօգնեք, կերթամ կհնազանդվեմ նրան և, դառնալով նրա առաջնորդը, կբերեմ Շիրակ և խավար կմտցնեմ այդ գավառի մեջ»։ Այսպիսի պատգամավորներ համանման սպառնալիքով ուղարկվեցին Սյունիքի (Կապան) և ափխազների թագավորների մոտ։ Խոսքն ազդեց։ Անին ուղարկեց չորս հազար, Կապանը՝ երկու հազար և ափխազները՝ նույնպես չորս հազար։ Այսպիսով կազմվում էր քսան հազարանոց մի բանակ։ Վերջինս բարոյապես ուժեղացնելու համար Դավիթը հաջողեցնում է պատերազմը դարձնել կրոնական։ Աղվանից Հովսեփ կաթողիկոսին նա ուղարկում էր այսպիսի պատգամ. «Անօրենների այս ազգը քրիստոնեական հավատի համար է գալիս մեզ վրա և կամենում է մեր, խաչապաշտներիս օրենքը խափանել և Քրիստոսին հավատացողների հավատը ջնջել։ Եվ ահա արժան է և իրավացի, որ ամեն մի հավատացյալ սրի դեմ գնա և մեռնի քրիստոնեական հավատի վրա։ Արդ՝ ժողովիր Հայոց աշխարհի եպիսկոպոսներին, որոնք Աղվանքումն են, և բեր մեր բանակը, որպեսզի

1 Եր. 79։

մեզ հետ մեռնենք»[1]։ Հովսեփ կաթողիկոսը երկու հարյուր եպիսկոպոսներով գնում է Դավթի բանակը։ Նույնպիսի հրավերներ ուղարկվում են և բոլոր վանքերն ու եկեղեցիները և դրա հետևանքով հավաքվում են ամբողջ վանական հոգևորականությունը, եկեղեցիների քահանաները, սարկավագները։ «Ամեն մեկը, լինի նա տղամարդ, թե կին, եթե ուզում է մարտիրոսական մահ, թող իմանա, որ ահա եկել հասել է ժամանակը, ում հարկավոր է Քրիստոսը, թող շտապի մեզ մոտ գալ»։ Այսպես էր ընդհանուր կոչը, որ երկրի բոլոր կողմերից մարդիկ էր հավաքում, «հայր «որդւոքն և մայր դստերօքն», ինչպես ասում է Ուռհայեցին։ Այսպիսով մեծ բազմություն հավաքվեց, որ հոգևորականների, կանանց և տղամարդկանց մի ամբողջ բանակ էր կազմում՝ մյուս, իսկական զինվորների բանակից դուրս։ Աբուսուարը ծիծաղում էր այս բանակի վրա և իր անհամեմատ գերազանցությունն զգալով՝ հարձակում գործեց։ Բայց Դավիթ Անհողինը լավ հաշվել էր այն հոգեբանական ներգործությունը, որ պիտի ունենար հոգևորականների բանակը զինվորների վրա։ Եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները՝ որը խաչ վերցրած, որն ավետարան, առաջ անցան։ «Ամենայն բանակն խաչ և աւետարան դարձաւ», գրում է նույն պատմիչը։ Մինչդեռ զինվորներն ընդհարվում էին զինվորների հետ, այդ խաչ-ավետարանավորներն էլ բարձրաձայն լացով խնդրվածքներ էին անում երկնքից. «Արի, Տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուանդ քում սրբոյ»։ Իրենք քահանաներն էլ խառնվեցին ճակատամարտի մեջ, իրենց հետ տանելով և սրտապնդելով զինվորներին։ Եվ կռիվը շահում էր Դավիթ Անհողինը։ Նրա բանակը ջարդեց Աբուլսուարին, հալածեց նրան ահագին կոտորած անելով, որ շարունակվեց ամբողջ հինգ օր։ «Եւ հոտեցաւ Աղուանից աշխարհն ի պիղծ դիակացն իւրեանց», ասում է Ուռհայեցին։ Դավիթը նորից տիրացավ իր կորցրած բոլոր գավառներին։

Այս շարժումը դեռ խոսեցնել էր տալիս Հայոց աշխարհը, երբ Հովհաննես-Սմբատը, իր եղբորից քիչ հետո, 1041 թվի սկզբներում, մեռավ և թաղվեց Անիի արքայական գերեզմանոցում։ Քսան տարի թագավորական թագ կրելու համար այդ խեղճ և անկարող մարդը տարավ իր հետ, գերեզմանի ափը հասցրեց Շիրակի փոքրիկ պետությունը։ Եվ նրանից հետո է, որ ողբերգական հանգամանքներն ընդունում են վճռական և արագ ընթացք, որին այլևս դիմադրելու ոչ մի հնար չէր մնում։

6. Անիշխանություն: Հովհաննես-Սմբատի մահը բաց էր անում մի շատ վտանգավոր անիշխանական դրություն, որ տևեց գրեթե երկու տարի (1041—1042 թթ.)։ Այս դրությունն էլ եկավ վճռականապես հեղաշրջելու բոլոր հանգամանքները, որի հետևանքն այն եղավ, որ նույն այն միջոցին, երբ Արևելքում արագ պատրաստվում էր սելջուկյան մի մեծ և հզոր կայսրություն՝ իսլամի աշխարհը նորից բարձրացնելու համար, հայությունը թողնում էր իր դարավոր անհավասար կռիվը մահմեդականության դեմ և ճակատն էր դարձնում դեպի արևմուտք՝ այս անգամ արդեն բյուզանդական կայսրության դեմ մարտնչելու համար[2]։ Այս շատ բնորոշ հանգամանքը պարզ հասկանալու համար պետք է մի թեթև ակնարկ գցել բյուզանդական պատմության այն շրջանի վրա, որ կոչվում է «անկման շրջան»։

[1] Անդ, եր. 80—81։

[2] Schlumberger, t. III, p. 213.

Կոստանդին Ը կայսրը, Վասիլ Բ-ի եղբայրը, մեռնելով 1028 թվին, ինչպես ասացինք, արու զավակ չթողեց՝ գահը ժառանգելու համար։ Նա ուներ երեք աղջիկ—Եվդոկիա, Թեոդորա և Զոյե, որոնք իբրև ծիրանածիններ (կայսերական ծիրանիի մեջ ծնվածներ), գահի հարազատ և օրինավոր տերերն էին։ Բայց Եվդոկիան վաղուց կրոնավորական սքեմ էր հագել, Թեոդորան ուխտել էր երբեք մարդու չգնալ։ Երկու քույրերի կատարյալ հակապատկերն էր Զոյեն, որ թեև արդեն 48 տարեկան հասակում էր գտնվում, բայց շատ վավաշոտ բնավորության տեր էր։ Կոստանդինը չկամենալով առանց ժառանգի թողնել իր կայսրությունը, կարգադրեց, որ Զոյեն ամուսնանա ծերակույտի անդամ Ռոմանոս Արգիրոսի հետ։ Այս ծերակուտականն էլ երիտասարդ չէր, անցկացրած լինելով 60 տարին։ Բայց գահի և թագի գայթակղության չդիմանալով, հանձն առավ Զոյեի ամուսինը դառնալ և դրա համար նախօրոք բաժանվեց իր կնոջից։ Հույն կղերի համաձայնությունը վաստակելու համար Ռոմանոսը նրան զանազան արտոնություններ շնորհեց, որոնք և նրա կարճատև թագավորությանը (1028—1034 թթ.) հաղորդեցին հին տեսակի բյուզանդական մի կնիք, որ վերացած էր 9-րդ դարի կեսից։ Հույն կղերը, իհարկե, չբավականացավ դրամական հարստություններ բերող արտոնություններով։ Նրան հարկավոր եղավ վերականգնել կայսերական գահի վրա հին քաղկեդոնական մոլեռանդությունը, որ վերացված էր Հայկական դինաստիայի ժամանակ։ Ծերունի Ռոմանոսն ամենայն հոժարությամբ դարձավ կղերի գործիք։ Եվ ահա բյուզանդական քաղաքականության կենտրոնն է դառնում դարձյալ օտարատյացությունը, առանց նկատի առնելու նույնիսկ կրոնական հանգամանքները։

Այսպես, Ռոմանոսը հավասար անբարյացակամությամբ էր վերաբերվում թե՛ հայերին, որոնք հակաքաղկեդոնիկ էին, և թե՛ վրացիներին, որոնք օրթոդոքս էին։ Ափխազների թագավոր Գիորգին, Վասիլ Բ-ի քաջարի հակառակորդը, վախճանվեց երիտասարդ հասակում, թողնելով իննամյա մի մանուկ, Բագրատ անունով։ Այս մանուկն էլ թագավոր անվանվեց իր մայր Մարիամ թագուհու խնամակալության տակ։ Մարիամը Վասպուրականի Սենեքերիմ թագավորի աղջիկն էր, հետևաբար Գագիկ Ա-ի թոռը և Հովհաննես-Սմբատի ու Աշոտ Դ-ի քրոջ աղջիկը[1]։ Մի շատ խելացի և շատ եռանդուն կառավարչուհի հանդիսացավ հայազգի այրի թագուհին։ Տեսնելով, որ երկիրը կործանվում է Բյուզանդիայի հետ մշտական դարձած պատերազմներից, նա ուղևորվեց Կ. Պոլիս՝ Ռոմանոս կայսրի հետ անձամբ բանակցություններ վարելու համար։ Բյուզանդական արքունիքում նա ընդունվում է պատիվներով, կարողանում է գրավել նրա համակրանքը դեպի իր երկիրն ու իր որդին, ամուսին ընտրելով Բագրատի համար կայսերական իշխանուհիներից մեկին, որի անունն էր Հեղինե։ Բայց Հեղինեն շատ

[1] Այս թագուհին է, որ մի գյուղ նվիրելով Մարմաշենի վանքին, նրա վրա գրել է հետևյալ տողերը. «Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Աւխազաց և Հայոց թագուհի, դուստր մեծին Սենեքերիմայ և թոռն Գագկայ Հայոց արքայի, որ ետու զՏարուս ի սուրբ և ի տիեզերական ուխտըս Մարմաշէն առաջնորդութեամբ հայր Ստեփաննոսի վասն Գագկայ իմ պապոյն մեղաց թողութեան և Կատային իմ հանկան և հատացումն բարի ընկալայ ի սրբոցն զսեանն եկեղեցին զսուրբ Պետրոս ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն Կատային իմ հանկանն» («Շիրակ», եր. 149)։

շուտ վախճանվեց և կայսրի վերաբերմունքը դեպի ափխազները նորից վատացավ[1]։

Իսկ կրոնական անհամբերողության գործեր կայսրը ցույց տվեց դեպի Հալեպ գործած արշավանքի ժամանակ, երբ հասավ Կիլիկիայի սահմանները։ Այդտեղ Սև կոչված լեռներում կային բազմաթիվ վանքեր, որոնք պատկանում էին միաբնակներին, այն է՝ հայերին, սիրիացի հակոբիկներին։ Ռոմանոսը հրամայեց այդ վանքերում ճգնող «հերետիկոսներին» հանել և իր զորքի մեջ զինվոր դարձնել։ Հալեպի տակ կայսրը պարտություն կրեց և ետ դարձավ։ Հասկանալի է, որ հալածված միաբնակներն ուրախությամբ վերաբերվեցին այդ պարտության և այն համարեցին աստծու պատիժ՝ իրենց դեմ գործադրած հալածանքների համար։ Ռոմանոսը, ընդհակառակն, բավական չհամարեց Սև լեռան վրա արածը և սիրիացիների պատրիարք Մար-Հոհանին, որ Մելիտինե քաղաքում էր նստում, կանչեց Կ. Պոլիս, ուր, ինչպես ասում է սիրիացի ժամանակագիրը[2], հավաքված էին երկու հարյուր քաղկեդոնիկ եպիսկոպոսներ՝ նրան դատելու համար։ Պատրիարքն ամեն տեսակ ծաղր ու ծանակի ենթարկվեց։ Թույլ չտվին, որ նա հակաճառությունների մեջ մտնի, որովհետև գիտեին, թե ո՛րքան ճարտար ու պերճախոս հռետորներ էին սիրիացիները։ Դատաստան էր կատարվում երկու բնություն չընդունելու պատճառով։ Դատապարտված պատրիարքը, մեր Լաստիվերտցու պատմելով, վայրենի բռնությունների ենթարկվեց։ Նրա մորուքը փունջելով, նստեցրին էշի վրա, շրջեցրին մայրաքաղաքի հրապարակներում ու փողոցներում և ամենքը նրան թքակոծ էին անում։ Հետո ծերունին ուղարկվեց աքսոր[3]։ Պալատում եղած պետական մարդիկ լաց էին լինում այս տեսարանի վրա։ «Եվ միայն կղերն էր,— ասում է Գելցերը,— որ սառը մնաց իբրև պողպատ»[4]։ Տուժողը միմիայն պետությունն էր։ Դժբախտ սիրիացիները, փախչելով բյուզանդական բարբարոսությունից, անձնատուր էին լինում մահմեդականներին։

Եվ այսպես, բյուզանդական արատները դարձյալ սանձարձակությամբ գալիս էին թե՛ սեփական անկումը փութացնելու և թե՛ Արևելքի քրիստոնեության հիմքերը փորելու։ Ռոմանոսի պես մի կայսրից պետությունը շուտ ազատվեց Զոյեի վավաշոտության շնորհիվ։ Բայց հարցն անձնավորությունների մեջ չէր, և դրությունը Ռոմանոսի մահով չփոխվեց։ Իսկ նա պիտի մեռներ, որովհետև Զոյեի տռփանքը նոր առարկա էր գտել իրեն հագցնելու համար։ Դա Միքայել Պափլագոնացին էր, արտաքին բացառիկ գեղեցկության տեր մի մարդ, որ սակայն, ընկնավոր էր։ Պառավական կրքերի ամբողջ կատաղությամբ սիրահարվելով այդ ախտավոր գեղեցկության վրա, Զոյեն շտապեցնում էր նրա հետ ամուսնությամբ կապվելու հնարավորությունը, և Լաստիվերտցին պարզ ասում է, թե Ռոմանոսին Զոյեն էր, որ խեղդել տվեց ոսկե լողանի մեջ «պոռնկական մոլեգին ախտին»[5]։ Ասում են, թե Միքայելն էլ կար խեղդողների մեջ։ Դա հասարակ ծագում ունեցող մի մարդ էր, ոչ մի առանձին շնորհքով աչքի չէր ընկել

[1] Schlumberger, t. III, p. 139.

[2] «Ժամանակագրութիւն Տեառն Միքայէլի Ասորւոյ պատրիարքի», Երուսաղեմ, 1871, եր. 385։

[3] Արիս. Լաստ., եր. 34։

[4] Гельцер, стр. 110.

[5] Լաստիվ., եր. 38։

առանց երկար սպասելու՝ Զոյեն ամուսնացրեց նրան իր հետ և նա իր բազմաթիվ ազգականներով, որոնց մեջ նշանավոր էր մանավանդ նրա եղբայրներից մեկը, Հովհաննես անունով մի ներքինի կրոնավոր, հաստատվեց պալատում, բոլոր բարձր պաշտոնները բաժանեց իր եղբայրներին, ներքինի վարդապետին նշանակելով վարչապետ, որ և սկսեց կառավարել պետությունը հանճարեղ նրբամտությամբ, այնպես, որ Միքայելն իր թագավորության ժամանակ (1034—1041 թթ.) առանձին դժվարությունների չհանդիպեց։ Սակայն չի կարելի ասել, թե բյուզանդական արտաքին ուժը վերածնվեց այս խելացի և ճարպիկ ներքինու ղեկավարությամբ։ Գլխավորը կայսերական բանակն էր, այն էլ այն ասիական սահմանագլուխների վրա, ուր դարավոր պայքար էր մղվում մահմեդականության դեմ։ Իսկ այս կողմից չի կարելի առանձնապես փայլուն համարել բյուզանդական գործերը։ Այն հեղինակությունը, որ ձեռք էր բերել բյուզանդական զենքը մի շարք մեծ զինվոր կայսրների ժամանակ, չվերականգնվեց և Միքայելի ժամանակ։

Զինվորական ուժի դրությունն այս ժամանակներում ցույց է տալիս այն աղետը, որ պատահեց Վասպուրականում։ Բերկրի բերդը, Վանա լճի մոտերքում, վաղուց, ինչպես գիտենք, գտնվում էր մահմեդականների (արաբների) ձեռքին։ Թեև Խաչիկ-Գագիկը այն մի ժամանակ նվաճել էր, բայց, ինչպես երևում է, նրա մահից հետո այս կարևոր բերդաքաղաքը դարձյալ անցել էր մահմեդականներին։ Հաստատապես չի կարելի ասել, թե ովքե՛ր էին Բերկրիի տերերը Միքայել կայսրի ժամանակ։ Արիստակես Լաստիվերտցին պարսիկ է անվանում նրանց։ Բայց որովհետև պարսիկ անվան տակ այդ ժամանակները հաճախ հասկացվում էին Իրանում հաստատված թուրքերը, ուստի կարելի է ասել, թե Բերկրիում տիրողը Սելջուկյան թուրքերի մի հատվածն էր։ Վասպուրականի բյուզանդական կառավարիչը, Կավասիլաս անունով, մեծ զորքով գնում է Բերկրիի վրա և առնում թուրքերի ձեռքից։ Սակայն այդ միջոցին նրան փոխանորդում է մի ուրիշ պաշտոնյա, որ պարենավորման հարմարությունների պատճառով զորքի մեծ մասը տեղափոխում է Արժակ անունով տեղը։ Այս հանգամանքից օգուտ է քաղում Բերկրիի տերը, որի անունն էր Խտրիկ։ Նա իմաց է տալիս Պարսկաստանի զորքերին, որոնք և գալիս են մեծ քանակությամբ և շրջապատելով Բերկրին, հանկարծակիի են բերում արբեցության անձնատուր եղած հոռոմներին և կոտորում են նրանցից մինչև 24 հազար մարդ։ Ապա, ահագին ավար առած, գերիներով միասին, գնում են Պարսկաստան։ Ճանապարհին մի իջևանում Խտրիկն իր հասակով մի փոս է փորել տալիս, նրա վրա մորթում են գերիներ, որոնց արյունով լցվում է փոսը։ Եվ Խտրիկը մտնում է արյան այդ լճակի մեջ, լողանում է՝ սիրտը հովացնելու համար։ Այս գազանային հաճույքը սելջուկյան սովորություն էր և նրա մի ուրիշ կրկնության հիշատակությունը պահված կա մեր պատմագրության մեջ, ինչպես շուտով կտեսնենք իր տեղում։

Միքայել կայսրի կամ ավելի ճիշտ՝ նրա եղբայր Հովհաննես ներքինու քաղաքականությունը հայերի նկատմամբ արտահայտվեց այն վերաբերմունքի մեջ, որ ցույց տվեց բյուզանդական կառավարությունը Սեբաստիայի Արծրունիների հարցում։ 1036 թվականին վախճանվել էր Սենեքերիմ թագավորի որդի Դավիթը, որ դեռ թագավոր էր կոչվում, բայց իրապես բյուզանդական հողատեր ազնվականի պես մի բան էր։ Չունենալով ժառանգ, նա իր «թագավորությունը» թողեց իր եղբայր Ատոմին, որ,

Մատթեոս Ուռհայեցու ասելով, օժտված էր բարոյական բարձր բարեմասնություններով։ Բայց նա նույնիսկ անվանապես էլ «թագավոր» տիտղոսը չէր կրում, մի բան, որ վկայում է, թե Միքայելի կառավարությունը, օգուտ քաղելով Դավթի մահից, շտապել էր ջնջել Արծրունիների թագավորությունը, որքան էլ նա օրինականացված լիներ Վասիլ Բ-ի ստորագրությամբ։ Բայց այսքանը բավական չէր։ Գահազուրկ թեկնածուներ չթողնելու համար, որոնք միշտ դժգոհություն պիտի սերմանեին ժողովրդի մեջ, բյուզանդական կառավարությունն առիթներ էր որոնում Ատոմին և նրա եղբայր Աբուսահլին մեջտեղից վերացնելու համար։ Ինչպես սովորաբար լինում է, միջոցը ընձեռնեց մի մատնիչ, որ այս անգամ մեկն էր Սենեքերիմի տարած նախարարներից, հավանորեն Արծրունի, որ գնաց կայսրի մոտ և հայտնեց, թե Ատոմն ու իր եղբայրը կամենում են ապստամբել և շատ վշտեր պատճառել կայսրությանը։ Կառավարությունն իսկույն 15 հազար զորք ուղարկեց, բաղկացած վարձկաններից[1], պատվիրելով նրան, ինչպես էլ լինի, բռնել երկու եղբայրներին և տանել Կ. Պոլիս։ Սեբաստիան զարմանքով տեսավ այդ բանակը, բայց ամենից շատ զարմացած էին, իհարկե, Սենեքերիմի որդիները։ Այս դառն րոպեին երևան է գալիս Արծրունյաց քաջ սպարապետ Շապուհը, որին տեսանք Դավիթ արքայորդու հետ, թուրքերի առաջին պատերազմի մեջ, Վասպուրականում։ «Կամենո՞ւմ եք,— հարցնում է նա,— Հոռոմների զորքերը ցիրուցան անեմ դաշտերի երեսին»։ Եվ ապացուցելու համար, թե այդ բանը լոկ մի հոխորտանք չէ, նա յոթ երկաթե գրահներ է դարսում իրար վրա, թրի հարվածով մանրում նրանց։ Սակայն Ատոմն ու Աբուսահլը, միանգամայն հասկանալի խոհեմության հետևելով, սուր չեն բարձրացնում կայսերական զորքերի դեմ, այլ հպատակվում են նրանց բերած հրամանին և գնում են Կ. Պոլիս։ Այստեղ նրանք անճարության մի սրտառուչ ցույց են կատարում։ Վասիլ Բ-ի տված թուղթը նրանք տարածում են նրա գերեզմանի վրա և լալով ասում են. «Դու մեզ բերիր Հոռոմների աշխարհը. և ահա մեզ մահ են սպառնում։ Դա՛տ արա մեր թշնամու վրա, ով մեր հայր»։ Կայսրը, իմանալով այս բանը, խղճահարվում է և հրամայում կործանել մատնիչին[2]։ Երկու եղբայրները վերադառնում են իրենց քաղաքը, բայց Արծրունիների թագավորություն ասած բանը Սեբաստիայում միանգամայն ջնջվեց։

Եվ այսպես, հեշտությամբ ոչնչացվում էր այն դաշնագիրը, որ կրում էր Վասիլ կայսրի ստորագրությունը։ Այսպիսի քաղաքականություն վարող Միքայել կայսրը չէր կարող, իհարկե, անտես առնել Շիրակի ժառանգությունը, որ բացվել էր Հովհաննես-Սմբատի մահվամբ։ Հերթը հիմա հասել էր Տրապիզոնի դաշնագրին։ Կայսրն իսկույն պահանջ ուղարկեց Հայոց աշխարհը, որ Անին իրեն տրվի համաձայն այդ դաշնագրի։ Նույնիսկ հիշատակություն կա, թե բյուզանդական զորքերը մտան Հայաստան և բազմաթիվ ավերումներ կատարեցին։ Ճգնաժամը սուր կերպարանք ստացավ։ Առաջ եկան իրար հակառակ կողմեր։ Հունամոլ կուսակցությունը, իհարկե, աշխատում էր ամենայն եռանդով։ Նրա հոգին Վեստ Սարգիսն էր, որի աջ բազուկը հանդիսանում էր Պետրոս կաթողիկոսը։ Այս երկուսը լցված էին հունական տիրապետությունն Անիում հաստատելու տենչով և

[1] **Schlumberger, t. III, p. 200.**

[2] **Մատ. Ուռհ.**, *եր. 83։*

նրանցից յուրաքանչյուրն այդ բանի մեջ ուներ իր հաշիվը։ Հունական կուսակցության երրորդ խոշոր ներկայացուցիչ Գրիգոր Բջնեցին ավելի չափավոր հակումներ էր ցույց տալիս ամենից առաջ հենց այն պատճառով, որ նրա մեջ խոսում էր տոհմային հայրենասիրությունը։

Բացարձակ և անվերապահ կերպով գործում էր Վեստ Սարգիսը։ Պետրոս կաթողիկոսին շատ լավ հաջողվում էր քողարկել իր իսկական ձգտումները։ Եվ այս հարկավոր եղավ նրան մանավանդ այն պատճառով, որ հունական կուսակցությունը հանկարծ իր առջև ծառացած տեսավ մի ամբողջ ժողովրդական շարժում, որ ներկայացնում էր ազգային կուսակցությունը, այսինքն այն տարրերը, որոնց բուռն ձգտումն էր ձեռքից չտալ ազգային անկախության սկզբունքը մարմնացնող թագավորությունը։ Այս շարժումը հուժկու և կարող էր մանավանդ այն պատճառով, որ նրա առաջնորդն էր Հայոց փորձված և հռչակված զորավարը, ծերունի Վահրամ Պահլավունին։ Չտալ Անին և պահպանել թագավորությունը—ա՛յս էր ոգևորում այդ հայրենասեր գործչին։ Իբրև քաջարի զինվոր, նա անխարդախ էր պահում իր անձնվիրության պարտքը թագավորական տան վերաբերմամբ։ Նա մեկն էր այն հին պետական գործիչներից, որոնց համար առաքինություններից առաջինն էր տիրասեր լինելը։ Եվ Վահրամ Պահլավունին զուր չէր Մարմաշենի իր արձանագրության մեջ ասում ոչ միայն իր, այլև իր ամբողջ տոհմի անունից։ «Որք էաք ամենայն տամբ և տոհմիւք հաւատարիմք տէրանց մերոց և նահատակեալ ի վերայ տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մերով և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ամենայն հնարիւք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհիս և զհաստատութիւն եկեղեցեաց»[1]։ Եվ իրավ, Հովհաննես-Սմբատի մահվան հաջորդած անիշխանության միջոցին, որ մեծամեծ աղետներ էր սպառնում Շիրակի պետությանը, Վահրամը մենակ չէր գործում։ Նրա հետ էին նրա բոլոր հարազատներն ու մերձավոր ազգակիցները՝ եղբայրները, որդիները, եղբոր որդիները, թվով մոտ 30 հոգի[2]։ Այս խումբն էլ կազմում էր այն կենտրոնը, որ համախմբում էր երկրի բոլոր հայրենասիրական տարրերը։ Գրիգոր իշխանը, Բջնեցին, չկարողացավ բացառություն կազմել այս տոհմային միության մեջ։ Նա էլ միացավ իր հորեղբորը, որին, ի դեպ ասած, վերաբերվում էր մեծ պատկառանքով։

Հունասեր կուսակցությունն այսպիսով բավական թուլանում էր։ Բայց ուրիշ կերպ չէր էլ կարող լինել այն րոպեից, երբ նրա գլխավոր ղեկավար հանդիսացած Վեստ Սարգիսը բաց արեց իր իսկական դիտավորությունը։ Փութացնելով Անիի մեջ մտցնել բյուզանդական տիրապետությունը, Վեստ Սարգիսն ուզում էր նրա հովանու տակ իրագործել իր փառասիրական տենչանքը—թագավորել, Բագրատունիների տեղ, գեթ Անիի և նրա շրջակաների վրա[3]։ Այս մտքի համարյա կեսը նա իրագործված էր համարում նրանով, որ հափշտակել էր թագավորական գանձը և ամրացել Անիի միջնաբերդում կամ, որ միևնույն է՝ Բագրատունյաց պալատում։ Ահա այս հանգամանքն էր, որ հեռացնում էր նրանից նրա աներոջը՝ Գրիգոր Բջնեցուն։ Բարեկամական կապն անզոր հանդիսացավ տոհմային շահերին դի-

[1] *«Շիրակ», եր. 148։*

[2] **Լաստիվերտ.**, *եր. 54—55։*

[3] *Անդ։*

մադրելու համար։ Պահլավունիները, իբրև առաջնակարգ իշխանական տոհմ, չէին կարող հանդուրժել, որ թագավորական մի նոր հարստություն հաստատվի իրենցից դուրս գտնվող որևէ տոհմի ձեռքով։ Թույլ տալ այդպիսի մի բան, կնշանակեր տոհմապես ինքնասպանություն գործել։

Թափուր գահի համար բորբոքված կռիվը գնալով սուր կերպարանք էր ընդունում, և իշխանաց իշխան Վահրամին հարկավոր էր մեծ աչալրջություն՝ ստեղծված դրության մեջ ուժեր պահպանելու և ամենագլխավոր վտանգի առաջն առնելու համար։ Նա տեսնում էր, որ բյուզանդական քաղաքականությունը միայն իր սեփական զենքով չէր գործում Անին Բագրատունիների ձեռքից խլելու համար, այլև աշխատում էր ներքին պատերազմներ հարուցել՝ նույն նպատակը հեշտացնելու համար։ Վեստ Սարգսի տիրապետական անչափ ձգտումներն առանց բյուզանդական խրախուսանքների չէին, խրախուսանքներ, որոնք գործադրվում էին հենց այդ ներքին պատերազմը փութացնելու համար։ Բայց թեև Վեստ Սարգիսը բյուզանդականության գործիքն էր, կար այն հանգամանքը, որ նա դեռ որևէ լուրջ վտանգ չէր սպառնում, քանի որ բյուզանդական զորքերը դեռ չէին տիրել Շիրակին։ Ուստի և նա առժամանակ հանգիստ թողնվեց Անիի միջնաբերդում։ Ավելի վտանգավոր էր հանդիսանում բյուզանդական մյուս գործիքը, որ գործել սկսեց այդ միջոցին։ Դա Գուգարքի Դավիթ Անհողինի թագավորն էր, որ իբրև Բագրատունի Անիի գահի թեկնածու հանդիսացավ և գնաց զենքով ստանալու իր տոհմային ժառանգությունը։ Սակայն ազգային կուսակցությունը գիտեր, որ Անհողինը գործում էր բյուզանդական թելադրություններով։ Նրանից ավելի Անիի գահի վրա իրավունք կարող էր ունենալ Բագրատունիների այն ճյուղը, որ թագավորում էր Կարսում։ Այս բերդի մեջ, 1029 թվից, հաջորդելով իր Աբաս հորը, թագավորում էր Գագիկ Բ-ն, որ հայտնի էր իբրև լավ զարգացած, գրասեր և ուսումնասեր մարդ։ Բայց նա հանգիստ ու անտարբեր մնաց Անիի ժառանգության վեճի ժամանակ, և այս հանգամանքը ցույց է տալիս, թե նա էլ ազգային կուսակցության համամիտ էր։ Դավիթ Անհողինը հաջողություն չունեցավ, Անին չկարողացավ գրավել, բայց բավական ավերումներ գործեց Շիրակի թագավորության մեջ։ Ուռհայեցին գրում է. «Բազում նեղութեամբ և անթիւ կրակով այրեցան ի զօրաց նորա»։

Այնուհետև գլխավոր վտանգը շարունակում էին մնալ բյուզանդական արշավանքները։ Արիստակես Լաստիվերտցին հիշատակում է չորս այդպիսի արշավանքներ, որոնք հետևեցին իրար և մարդաթափ արին Հայոց աշխարհը, կոտորելով և գերելով։ Երևի այդ արշավանքներից ամենամեծի և ամենավերջինի նկարագրությունն է ա՛յն, ինչ ավանդում է մեզ Ուռհայեցին։ Նրա պատմելով, բյուզանդական բանակը, որի թիվը հասնում էր 100 հազարի, առաջացավ մինչև Անիի պարիսպները։ Հայերն ունեին 30 հազար գորք, որի հրամանատարն էր իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին։ Այս բանակը դուրս եկավ մայրաքաղաքից արևմտյան կամ Ծաղկոցաձորի դռներով և հարձակում գործեց բյուզանդացիների վրա։ Կռիվը ծայրահեղ կատաղության հասավ։ Հայերը սաստիկ կատաղած էին այն հայհոյանքներից, որ բյուզանդական զինվորները, հպարտ ու մեծամիտ, թափում էին նրանց վրա։ Ջարդելով և փախուստի մատնելով թշնամուն, նրանք անխնա կոտորում էին փախչողներին, այնպես որ, մեր պատմիչի ասելով, Ախուրյան գետը ներկվեց արյունով։ «Եւ ի ձայնէ գազանացեալ զօրացն Հայոց

փախստականքն ոչ կարէին փախչել, այլ կային յիմարեալք և մատնեալք ի ձեռս սրոյ։ Եւ անդ էր տեսանել զահեղ և զմեծ օրն ի վերայ զօրացն Հոռոմոց, որ ի քսան հազարէն հարիւր լինէր մնացեալ»[1]։ Բանն այնտեղ հասավ, որ Վահրամը պատգամավորություններ ուղարկեց այս ու այն կողմ, Հայոց զորքերին հաղորդելու, որ դադարեցնեն կոտորածը, և այսպիսով հնարավորություն տվեց, որ հոռոմ բանակի մնացորդները ետ քաշվեն։

Հաղթությունը վճռական էր։ Այնուհետև բյուզանդացիները ձեռք վերցրին Անիից, և դժբախտ հարցը, որի համար այնքան արյուն էր թափվել, առժամանակ հետաձգվեց։ Վահրամ Պահլավունին, այլևս առանց հապաղելու, իրագործեց ազգային կուսակցության բաղձանքը, թագավորեցնելով պատանի Գագիկին, որ Աշոտ Ե-ի որդին էր։ Այս գործի մեջ Գրիգոր Բյնեցին իր հորեղբոր եռանդոտ գործակիցը դարձավ։ Նա արքայորդուն հանդիսավոր կերպով մտցրեց Անի մայրաքաղաքը և Պետրոս կաթողիկոսին առաջարկեց նրան թագավոր օծել։ Կաթողիկոսը հնազանդվեց այդ կարգադրությանը և կատարեց ժողովրդի կամքը։ Ճգնաժամն այսպիսով վերջնական լուծումն ստացած էր համարվում (1042 թ.)։

Նույն տարին, մինչդեռ Շիրակում այս դեպքերն էին կատարվում, Վասպուրականի գավառներից մեկում տեղի ունեցավ մի պատերազմ, որ հետաքրքրական է վիպական գունավորումներ ստացած իր մանրամասնություններով։ Այս գավառը Թոռնավանն էր, Արծրունյաց տոհմի նշանավոր կալվածներից մեկը։ Սենեքերիմ թագավորի գաղթականությունը, ինչպես նկատեցինք իր տեղում, ամբողջ Վասպուրականը բոլորովին չէր սրբել հայ ազգաբնակությունից։ Մնացել էին գավառներ, որոնց տերերը թեև ծագումով Արծրունի, չհեռացան իրենց կալվածներից և պահեցին իրենց ժողովուրդն էլ։ Այսպիսի իշխաններից մեկն էր Խաչիկը, Խուլ մականվանված, անշուշտ Արծրունյաց տոհմից։ Ժողովրդական պատմվածքը կամ ավելի ճիշտ՝ վեպը ներկայացնում է Խաչիկին ծերության հասակում, բայց դարձյալ ժիր ու անպարտելի, ինչպես առյուծ։ Նա ուներ երեք որդի—Հասան, Ճնճղուկ և Իշխան, առաջին երկուսը՝ չափահաս և իրենց հոր նման առյուծասիրտ, իսկ վերջինը՝ դեռ տղա հասակում՝ կորյուն։ Հասանն ու Ճնճղուկն իրենց գնդերով գտնվում էին հոռոմների բանակում, որ Միքայել կայսրի հրամանատարությամբ գնացել էր Արևմուտք՝ գոթերի դեմ պատերազմելու։ Թոռնավանը մնացել էր անպաշտպան։ Այս իմացան Հերի և Սալմաստի «այլազգիները», մի անուն, որի տակ, հավանաբար, պիտի հասկանանք սելջուկյան թուրքերին, որոնք դեռ մանր հատվածներով ցրված էին Ատրպատականում։ Նրանք մտան Թոռնավան։ Խուլ Խաչիկը միայն 70 մարդ կարողացավ զինել նրանց դիմադրելու համար և, առանց տատանվելու, այդ մի բուռ մարդկանց տարավ կռվի դաշտը։ Կրտսեր որդուն, Իշխանին նա թողեց տանը և պատվիրեց չհեռանալ այնտեղից։ Նա բարկացած կերպով արգելեց որդուն պատերազմի գործի մեջ խառնվել, քանի որ դեռ տղա էր։

Եվ ահա ծեր առյուծը թշնամու հետ անհավասար կռվի է բռնվել իր 70 քաջերով։ Հանկարծ նա տեսնում է Իշխանին, որ սպիտակ ձի նստած,

[1] Եր. 86։

պատերազմական բոլոր հանդերձանքներով նետվում է կռվի մեջ։ Առյուծի կորյունը,—պատմում է ժողովրդական խոսքը,—չէր համբերել տանը և անտես անելով հայրական պատվերը, սլացել էր պատերազմի դաշտ։ Թշնամիներն իսկույն շրջապատում են անփորձ պատանուն և սպանում նրան։ Այս բանը տեսնում է դժբախտ հայրը, և նրա ձեռքը թուլանում է, վայր է ընկնում նրա թուրը, որով կոտորած էր անում իր շուրջը։ Թշնամին, օգտվելով հայրական սրտի այս թուլությունից, շրջապատում է և ծերունուն, և նրան էլ սպանում։ Հայերի պարտությունը կատարյալ էր, և հաղթական այլազգիները մեծ ավարով գնում են իրենց երկիրը։ Մի քանի օրից հետո Հասանն ու Ճնճղուկը վերադառնում են իրենց գնդերով։ Տեսնելով իրենց հոր և եղբոր սպանությունը, նրանք վրեժի մի այսպիսի միջոց են հնարում։ Սահմանակից քրդերի[1] ռայիսին (ռես) Հասանն ուղարկում է Հերի և Սալմաստի կողմերը՝ լուր տարածելու, թե Թոռնավան գավառն ամբողջովին դատարկվել է մարդկանցից և կարելի է մեծ ավար տանել։ Եվ ահա կողոպուտի տենչով բորբոքված թափառականները նորից Թոռնավան են թափվում։ Բայց այստեղ նրանք իրենց առջև գտնում են երկու եղբայրների խոշոր զինվորական ուժը, բաղկացած հինգ հազար մարդուց, և ստիպված են լինում պատերազմի բռնվել նրանց հետ, վստահանալով, անշուշտ, իրենց թվական գերազանցության (15 հազար)։ Բայց ճակատամարտից առաջ Հասանը ձայն է տալիս թշնամիներին. «Ձեզնից ո՞վ է այն մարդը, որ սպանել է իմ հայր Խաչիկին, թո՛ղ առաջ գա»։ Եվ թշնամու կողմից առաջանում է մի հզոր սևամորթ մարդ ու ասում. «Ես սպանեցի առյուծ Խաչիկին, և ահա նրա պատերազմական ձին, զգեստները և նշանակը, որ ունեմ հետս»։ Հասանը, հանելով թուրը, առյուծի նման հարձակվում է այդ սևի վրա, մի հարվածով ճեղքում է նրան միջից, առնում է իր հոր ձին ու նշանակը և վերադառնում է իր բանակը։ Հերթը հիմա երկրորդ եղբորն է, Ճնճղուկինը։ Նա էլ առաջ է գնում և կանչում. «Ո՞վ էր, որ սպանեց իմ եղբայր Իշխանիկին, թո՛ղ դուրս գա, որ տեսնեմ»։ Եվ դուրս է գալիս մի քաջ պարսիկ, ձայն է տալիս. «Ես սպանեցի Իշխան կոչվածին, և ահա նրա սպիտակ ձին, նշանակն ու թուրը»։ Այն ժամանակ Ճնճղուկն էլ նույնպես առյուծաբար հարձակվում է, սպանում իր եղբոր սպանողին, խլում նրա սպիտակ ձին, նշանակն ու սուրը և վերադառնում Հասանի մոտ։ Այնուհետև եղբայրներն ընդհանուր հարձակում են սկսում, ջարդում են թշնամուն, կոտորելով չորս հազար հոգի։ Այսպես է լուծվում Խուլ Խաչիկի և նրա որդի Իշխանի մահվան վրեժը։ Հարավային Հայաստանի նախարարական վեպի այս մի դրվագը, անշուշտ, պարունակում է այն ընդհարումների արձագանքները, որոնք տեղի ունեցան Վասպուրականի հողի վրա սելջուկյան առաջավոր հորդաների հետ, նախքան այն խոշոր և աշխարհավեր արշավանքները, որոնք գալիս էին նրանց հետևից՝ ազգերի ճակատագիրը փոփոխելու համար։

7. Գագիկ Գ (1042—1045 թթ.): Տասնութ տարեկան հասակում էր Աշոտի որդի Գագիկը, երբ Պահլավունիները նրան մտցրին Շիրակի մայ-

[1] Վերևում մենք արդեն նկատեցինք, որ Սենեքերիմ Արծրունու տարած հայկական գաղթականությունն այնքան նոսրացրեց Վասպուրականի հայությունը, որ հարավից ու արևելքից առաջացող քրդերը հեշտությամբ գրավեցին թափուր մնացած տեղերը։ Այս քուրդ ռեսը նույն այս փաստն է հաստատում։ Այստեղ մենք ունենք հայ-քրդական հարաբերությունների մի հին երևույթ։

րաքաղաքը և թագավոր օծեցին։ Նա ժառանգել էր իր հոր քաջությունը, բայց դրա հետ միացնում էր և ժամանակի բարձր հասարակության մեջ այնքան հարգված գեղեցիկ դաստիարակությունը։ Գրիգոր Մագիստրոսի նման մի բարձր գիտական հեղինակություն վկայում է, թե նա «հռետորական գիտությամբ զարգացեալ» էր[1], իսկ Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «յոյժ իմաստուն և երկիւղած և աստուածասէր»[2]։ Մի ուրիշ տեղ այս նույն ժամանակագիրը պատմում է, թե ինչպես Գագիկը Կ. Պոլսում աստվածաբանական երկար վեճի բռնվեց հույն կղերականների հետ։ Այս վկայությունները հիմք են տալիս ասելու, որ Աշոտի որդին շատ հմուտ էր և հունարեն լեզվին և, ինչպես երևում է, դաստիարակվել էր, մյուս ազնվական երիտասարդների նման, Բյուզանդիոնում։ Նկատենք, որ Մագիստրոսի վկայությամբ՝ Կարսի Գագիկ Բ թագավորն էլ գիտուն մարդ էր։

Անի մտնելուն պես Գագիկ Գ-ն առաջին հոգսը դարձրեց վերջ տալ վեստ Սարգսի ըմբոստությանը։ Սկզբից նեթ խաղաղության ճանապարհը բռնելով, նա փորձեց հաշտ միջոցներով ընկճել հզոր ազնվականին։ Անձամբ նրա հետ խոսելու և համոզելու համար նա մենակ, նույնիսկ առանց պահնորդների, գնաց միջնաբերդը կամ, ուրիշ խոսքով, իր նախնիքների պալատը, ուր տեսակցություն ունեցավ իր ախոյանի հետ։ Վեստ Սարգիսը թողեց միջնաբերդը և հեռացավ, անշուշտ, հաշտ ապրելու խոստում տալով, բայց շուտով դրժեց այդ խոստումը և դուրս գնալով Անիից, ամրացավ Սուրմառի բերդում, որ իրեն էր պատկանում, և այդտեղից շարունակեց իր նախկին թշնամական ուղղությունը Բագրատունիների դեմ։ Ըմբոստի համառությունը միայն Սուրմառիի ամրության վրա չէր հենվում, այլև այն իրական ակնկալության վրա, թե բյուզանդացիները ձեռք չեն վերցնի Անիից և իրեն կհաջողվի նրանց ձեռքը տալ ամեն ինչ։ Սակայն այս անգամ էլ Գագիկը ցույց տվեց հոգու մեծ արիություն։ Փոքրաթիվ մարդկանցով նա հարձակվեց Սուրմառիի վրա, գրավեց այդ բերդը և ձերբակալելով Սարգսին, տարավ իր հետ Անի։ Բայց այստեղ նա դարձյալ խնայողաբար վարվեց իր թշնամու հետ, որ, ինչպես երևում է, տեսնելով, թե իր ծրագիրն առժամանակ անհաջողության է մատնված, հարկավոր համարեց առերես զղջալ և բարեկամ ձևանալ։ Այս բանում Սարգիսը, անկասկած, շատ էր ճարպիկ և այդ պատճառով էր, որ նրան հաջողվում էր միանգամայն իր ձեռքն առնել երիտասարդ թագավորին։ Արիստակես Լաստիվերտցին ափսոսանքով է հիշատակում Գագիկի այս հաշտարար վարմունքը և ասում է, թե ապստամբին նա պարտավոր էր զրկել կյանքից։ Անշուշտ ժամանակագիրը նկատի ունի, որ եթե Վեստ Սարգիսը կենդանի չմնար, Հայոց աշխարհում տեղի չէին ունենա այնքան կործանարար դեպքեր։

Այսպես թե այնպես, վերջացնելով Վեստ Սարգսի հարցը, Գագիկը եռանդով սկսեց խաղաղացնել երկիրն երկու տարի տևած անիշխանությունից հետո։ Իր զորքերի գլուխն անցած՝ նա ամեն տեղ կարգ էր հաստատում, անհնազանդներին հպատակեցնում էր իր իշխանությանը։ Վերջացնելով այս գործն էլ, նա գնաց սելջուկյան թուրքերի դեմ, կամենալով պատժել նրանց, որովհետև Պարսկաստանից նրանք հաճախ խուժում էին

[1] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», եր. 64։

[2] Եր. 55։

Արարատյան աշխարհը և ավերմունքներ գործում։ Իր բանակը նա դրեց Հրազդան գետի վրա և այստեղ նրան միացավ Գրիգոր Բջնեցին իր զորքով։ Երկուսով էլ նրանք պատերազմ տվին թուրքերին, հաղթեցին, ձերբակալեցին նրանց գլխավորներից մի քանիսին, իսկ մնացածներին փախցրին Պարսկաստան։ Եվ այսպես, թեև դժբախտ հանգամանքները այդ ժամանակ շատ էին ծանրացած Շիրակի թագավորության վրա, բայց երիտասարդ թագավորի բախտից բոլոր արգելքները, կարծես, հեշտությամբ հարթվում էին, և ամեն ինչ ցույց էր տալիս, թե սկսվում է մի թագավորություն, որ առնվազն բարեբախտ պիտի լիներ երկրի համար։ Սակայն այս նշանները խաբուսիկ էին։ Գլխավոր աղետը պատրաստվում էր Արևմուտքում։ Բյուզանդական կառավարությունը մտադիր չէր ձեռք վերցնել իր արյունոտ վեճից, որի առարկան էր հայկական փոքրիկ անկախության անհետացումը։

Գագիկի հետ միաժամանակ, 1042 թվին, բյուզանդական գահի վրա մի նոր փոփոխություն տեղի ունեցավ։ 62 տարեկան Զոյեն մի նոր ամուսին ունեցավ, Կոստանդին Թ Մոնոմախ (1042—1054 թթ.)։ Սա ռազմական գործերի մեջ անընդունակ մի մարդ էր, անառակ կյանքից հյուծված։ Եթե ուներ մի արժանավորություն՝ այն էր, որ սիրում էր գիտությունը։ Պակասեցնելով զորքերի ռոճիկները, նա մեծամեծ ծախսեր էր անում շինությունների և գիտական գործերի վրա, ուստի և կայսրությունը թուլանում էր արտաքուստ։ Եվ այս այնպիսի մի ժամանակ, երբ թե՛ արևելքից և թե՛ արևմուտքից բազմանում էին ահարկու վտանգները։ Ինչպես միշտ, այս անգամ էլ բյուզանդական ֆանատիկոսությունը գալիս էր ավելի ևս ուժ տալու արտաքին վտանգին։ Հույն կղերը ձեռքից բաց չէր թողնում և ոչ մի հարմար առիթ՝ միաբնակ եկեղեցիները հալածելու համար, և ահա նորից ծայր էր տալիս նրա անսահման ատելությունը դեպի հայկական միաբնակությունը։ Այս հանգամանքների մեջ նորից վերանորոգվում էր Անի քաղաքի հարցը։ Եվ այս անգամ բյուզանդական կառավարությունը, նախընթաց փորձերից արդեն խրատված, միայն պատերազմական միջոցներով չէր բավականանում, այլ մանավանդ ուժեղացնում էր իր դիվանագիտական նենգությունները։ Նրա քաղաքական գործիքները Հայաստանում՝ Վեստ Սարգիսը և Դավիթ Անհողինը, զարգացրին ուժեղ գործունեություն։ Մասնավորապես Դավիթն այնքան վնասակար դեր էր կատարում, որ Ուռհայեցին փոխում է նրա անունը և կոչում է «Դավիհդ», որովհետև ասում է «ի վիհն տառապանաց էած զազգս քրիստոնէից»։

Ավելի խոշոր էր այն հաղթանակը, որ տարավ Վեստ Սարգիսը։ Նրան հաջողվեց Գագիկի և Գրիգոր Բջնեցու հարաբերությունների մեջ մտցնել սառնություն, որ շուտով փոխվեց թշնամության։ Այս մի մեծ կորուստ էր ազգային կուսակցության համար, քանի որ Գրիգոր իշխանը, ինչպես տեսանք, Գագիկին պաշտպանող Պահլավունիների մեջ ամենաեռանդուն էր։ Այս սառնության պատճառները պարզ չեն, և մի քանի հեղինակներ իրարից տարբեր ենթադրություններ են առաջարկում[1]։ Մեզ համար ամենից

[1] Ֆրանսիացի գիտնական Շլյումբերժեն ասում է, թե Վեստ Սարգիսը Գագիկին հավատացնում էր, թե Գրիգոր Պահլավունու դրդումներով էր, որ Դվինի Աբուլսուար էմիրը հարձակվեց Շիրակի թագավորության վրա։ Այդ,—ասում է գիտնական բյուզանդագետը,—մի կատարյալ զրպարտություն էր, բայց Գագիկը հավատաց նրան (L'Epopée Byz., t. III, p. 984)։ Տարաբախտաբար, հարգելի հեղինակը ցույց չի տալիս, թե որտեղից է վերցրել այս տեղեկությունը

հավանական է ենթադրել, թե բյուզանդացիներն անմիջապես բանակցություններ սկսել էին և Գրիգորի հետ, որ իբրև արդեն հայտնի հունամոլ, չկարողացավ այլևս առաջվա նման քաջամարտիկ հակառակորդի դեր կատարել։ Հնարավոր է և այն, որ այս բանակցությունների մեջ բյուզանդացիները հավաստիացում տվին Պահլավունի իշխանին, թե նրա փեսա Սարգիսը թագավորական գահ ստեղծելու հնարավորությունից զրկված կլինի։ Գրիգոր իշխանի, ինչպես և մյուս Պահլավունիների ձգտումն էլ հենց այդ էր— չկորցնել սեփական տոհմի առաջնությունը։ Եվ այդ հավաստիացումն ստանալուց հետո նա, բնականաբար, հեշտ կարող էր հաշտվել բյուզանդական տիրապետության հետ։ Ահա ազդեցիկ իշխանի տրամադրության այս փոփոխությունն էր, որ ամենայն ճարպկությամբ շահագործեց նրա փեսա Վեստ Սարգիսը, հավատացնելով թագավորին, թե Գրիգոր իշխանն է բյուզանդական ոտնձգությունների գործուն կողմնակիցն Անիում։

Ինչպես և եղած լինի, փաստն այն է, որ Գագիկը երես է դարձնում իր նախկին հովանավորից ու աշխատակցից, որին և սկսում է հալածել։ Այս հալածանքը, ինչպես երևում է, շատ խիստ է եղել, և Գրիգորը երկար գանգատներ է անում իր նամակներում։ «Ասացին ինձ թշնամիք իմ, ե՞րբ լիցէ զի մեռցի և կորիցէ անուն նորա,—գրում էր նա իր բարեկամներից մեկին,— և զինէն խօսէին, որք նոր էին առ դրանն և այպն առնէին, որ ըմպէին զգինի. և ի վերայ իմ ուրախ եղեն և ժողովեցան յիս տանջանք և ոչ զղջացան. և ի վերայ պատմուճանի վիճակս արկանէին, իսկ ի հակառակել մեղաւորին առաջի իմ լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ, այլ նոքա որպէս առիւծ վարանիմ ի դարանի յափշտակել զիս»[1]։ Այս պատճառով նա ստիպված եղավ հեռանալ Անիից, բայց լցված, իհարկե,— ինչպես և վայելում էր մի ուժեղ ավատական տիրողի,—մեծ ատելությամբ դեպի իրեն հալածողը։ Այս ատելության բուռն զգացմունքը նա չի կարողանում թաքցընել իր այն բոլոր նամակներում, ուր խոսք էր գալիս «Աշոտի որդի Գագկի» մասին։ Այժմ այդ Գագիկը նրա համար մի խակամիտ մանուկ էր, թեև ինքն էր այդ մանուկին թագավորական գահի վրա նստեցրել։ Մի տեղ նա նույնիսկ նկարագրում է, թե մանուկը ենթարկված է մի ինչ-որ հիվանդության, որ թվում է, թե պիտի լինի ժառանգական[2]։ Սակայն պետք է ի պատիվ Գագիկի ասել, որ նա շուտ զղջաց իր արածի վրա, ազդվելով, երևի, մանավանդ իշխանաց իշխան Վահրամից, որ շարունակում էր հակառակ իր եղբորորդու հեղհեղուկ տատանումներին, անհողդողդ հավատարմություն տածել դեպի թագավորող Բագրատունիները։ Անիի Սարգիս վարդապետին Գագիկն ուղարկում է Գրիգոր իշխանի հետևից, հորդորելով, որ նա վերադառնա, մոռացության տալով անցածը։ Վարդապետը Բջնի չի հասնում և նամակ է գրում իշխանին Ամբերդից, իսկ իշխանը պատասխանում է մերժումով։ «Մանկամիտ արքայ», «Վա՜յ քեզ քաղաք, վասն զի թագաւոր քո մանուկ է» և այլ այսպիսի արհամարհական դարձվածքները լավ ապացույց են, որ Բջնիի տերն իր համար այլևս այն կարծիքն էր կազմել, թե ոչինչ չի կարելի անել Գագիկի հետ միասին և թե ամեն ինչ կորած է։ Մի այլ նամակում նա ողբեր է գրում Հայոց աշխարհի թշվառության վրա, մեկիկ-մեկիկ հիշում է հին Հայոց թագավորներին, իսկ գալով Բագրատուն-

[1] «Գր. Մագիստ. Թղթ.», եր. 52։

[2] Անդ, եր. 68։

յաց տոհմին, հիշատակում է, առանց ըստ իր սովորության գովասանքներ գործածելու, միայն երեք անուն—Սմբատ, Աբաս և Աշոտ։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ նա նույնիսկ Բագրատունյաց ամբողջ տոհմի վերաբերմամբ առանձին համարում չուներ։ Արհամարհական զգացմունքի ցոլացում է և այն փոքրիկ, բայց շատ բնորոշ փաստը, որ պահվել է Գրիգորի նամակներում։ Գագիկն իր թագավորության այդ շատ վտանգավոր շրջանում ժամանակ էր գտել իր սիրած գրական զբաղմունքները վերսկսելու և նամակով խնդրել էր Սևանի առաջնորդ Սարգիս վարդապետին գալ իր մոտ, որպեսզի միասին գրքերով պարապեն։ Գրիգոր իշխանն իմանում է այդ և մի հատուկ նամակ է ուղղում Սարգիս վարդապետին, որի մեջ դարձյալ քամահրանքով է խոսում «մանուկի» մասին, վեր է հանում նրա խակությունը և ի վերջո խնդրում է, որ Անի գնալիս նա մտնի իր մոտ, Բջնի՝ միասին խորհրդակցելու համար։

Այսպիսով Գագիկի որոնած հաշտությունը դառնում է մի արհամարհված և մերժված գաղափար։ Եվ բնական է, որ երիտասարդ թագավորն էլ ազատություն տար իր անձնական կրքերին և իր նախարարի արհամարհանքին ու ատելությանը պատասխաներ ավելի սաստիկ հալածանքներով։ Գրիգորի համար այլևս անկարելի է դառնում Շիրակի թագավորության սահմաններում մնալը, և նա գնում է Տարոն, որ այդ միջոցին, ինչպես գիտենք, բյուզանդական կալված էր։ Այս նշանակում էր, թե ականավոր Պահլավունին վերջնականապես անձնատուր էր լինում բյուզանդական քաղաքականության։ Թեև մեզ հասած կցկտուր տեղեկությունները վկայում են, որ Տարոնում իշխանը շինարարական գործերով էր զբաղված[1], բայց չի կարելի ասել, թե նրան միանգամայն խորթ մնացին քաղաքական շահերն ու պայքարը։ Որ այս այսպես է, որ Գրիգորն արդեն բացարձակորեն անցել էր այն ձգտումների կողմը, որ Կ. Պոլսի կառավարությունն այդ միջոցին ուժգնորեն առաջ էր տանում Շիրակում, ցույց է տալիս հենց այն հանգամանքը, որ Վահրամ Պահլավունին այս դեպքից հետո էլ մնաց Գագիկի անկեղծ բարեկամը և պաշտպանություն ցույց չտվեց իր եղբորորդուն, թեև նրան շատ էր սիրում։ Սրանով, ծերունի հերոսը, միշտ պատրաստ ամեն անձնական զգացմունք զոհ բերելու հայրենիքի գաղափարին, իրավունք էր տալիս Գագիկին արդարացի և հիմնավոր համարել իր հալածանքները Բջնեցու դեմ։

1043 թվականին Կոստանդին Մոնոմախը վերջ տալով Կ. Պոլսում իր դեմ պայթած ապստամբությանը, պահանջ ուղարկեց Գագիկ Գ-ին կատարել Տրապիզոնի դաշնադրությունը, Անին անմիջապես հանձնելով բյուզանդացիներին։ Երիտասարդ թագավորը պատասխանեց, թե ինքը պատրաստ է միշտ հավատարիմ մնալ կայսրին, բայց իր հայրենի քաղաքը տալ չի կարող։ Այն ժամանակ բյուզանդական բանակը, Միքայել Իասիտասի157 առաջնորդությամբ, արշավեց Անիի վրա։ Բյուզանդական աղբյուրները մի որոշ բան չեն ասում այս արշավանքի հետևանքների մասին։ Ամենայն հավանականությամբ այդ արշավանքն անհաջողության է հանդիպել Հայոց երկրում։ Ուստի բյուզանդական կառավարությունը մի երկրորդ, այս անգամ ավելի մեծ արշավանք է կազմակերպում, հանձնելով այն մի շատ հայտնի զորավարի, որի անունն էր Նիկողայոս։ Այսքանը բավական չի համարվում։

[1] Այսպես, ասում են, թե նա շինություններ է կառուցել Մուշի ս. Կարապետի վանքում։

կամենալով միանգամից վերջ դնել Հայոց հարցին, այդ կառավարությունը դիմում է մի այնպիսի միջոցի, որի նմանը դեռ չէր եղել այս կողմերում։ Քրիստոնյա մեծ պետությունն իր գիշատիչ հակումներին բավարարություն տալու համար դաշինք է կապում Դվինի Քուրդ էմիրի (Աբուլսուարի) հետ, որ պետք է թիկունքից հարձակվեր Գագիկի վրա և իբրև վարձատրություն՝ պիտի սեփականացներ այն բոլոր տեղերը, որ կխլեր հայերից։ Գագիկի համար ստեղծվում էր չափազանց ծանր դրություն։ Բայց երիտասարդ Բագրատունին ցույց տվեց մի հազվագյուտ անվեհերություն։ Պատերազմական գործողություններն անմիջապես սկսեց Աբուլսուարը, գրավելով բազմաթիվ ավաններ ու բերդեր և բռնությամբ իսլամացնելով ժողովուրդը[1]։ Գագիկը, սակայն, թողեց նրան և գնաց Նիկողայոս զորավարի դեմ։ Սկսվեցին ընդհարումները։ Բայց տեսնելով, որ Դվինի էմիրի շարժումներն ավելի և ավելի վտանգավոր են դառնում, Գագիկը բանակցություններ սկսեց նրա հետ և կարողացավ, մեծ գանձեր տալով, հաշտություն կնքել։ Այնուհետև նա իր բոլոր ուժերով ճակատեց բյուզանդացիների դեմ, որոնք այս անգամ էլ պարտություն կրեցին և ետ դարձան[2]։

Բյուզանդացիներին ցույց տված այս համառ և հաղթական դիմադրությունները վկա են, թե ո՛րքան հեղինակավոր էր ազգային կուսակցությունը և թե Շիրակի ազգաբնակությունը ո՛րքան մեծ վճռականությամբ էր լցված իր գեղեցիկ մայրաքաղաքը պաշտպանելու համար։ Այս հանգամանքը գուցե կարող էր և ձեռնաթափ անել կայսերական կառավարությանը, եթե դարձյալ հայկական դավաճանությունը չհասներ նրան օգնության։ Վեստ Սարգիսը, ազատվելով իր աներոջ հակառակությունից, ինտրիգների ավելի նուրբ ցանցով պատեց Գագիկին։ Նա էր, որ միտք տվեց բյուզանդական կառավարությանը, թե պետք է հրաժարվել թշնամական գործողություններից և առերես պահպանել բարեհաճություն ու քաղցրություն։ Կայսրի կողմից հրավեր ուղարկվեց Գագիկին, որին հյուր էին կանչում Կ. Պոլիս՝ վեճը խաղաղությամբ վերջացնելու համար։ Թակարդը պարզ էր երևում և Գագիկը, իհարկե, այնքան միամիտ չէր, որ իսկույն ընկներ նրա մեջ։ Ուստի նրան շրջապատող բյուզանդամոլները դեռ շատ պիտի աշխատեին՝ կորստյան փոսը վարագուրելու համար։ Բավական է միայն,— ասում էին նրանք,— որ կայսրը տեսնի քեզ, և իսկույն բաց կթողնի, Անին ընդմիշտ վերադարձնելով քեզ։

Գագիկը երկար դիմադրում էր Վեստ Սարգսի և նրա ընկերների հյուսած փորձությանը։ Այս տագնապալից րոպեին էլ թագավորի աջ բազուկը հանդիսացան Վահրամ Պահլավունին և նրա համախոհ նախարարները, որոնք նրան հորդորում էին բոլորովին չընդունել կայսերական առաջարկը և չլսել խորհրդատուներին։ Եվ ահա, իբրև վերջին ամենաուժեղ միջոց, դուրս էր գալիս այն հեղինակությունը՝ եկեղեցին, որի առջև միջնադարյան մարդը կատարյալ ոչնչություն էր։ Գագիկն իր կուսակիցներով անհաղթահարելի էր, քանի որ խնդիրը կրոնական ձևականություններից դուրս էր դրված։ Բայց ահա նորից հրապարակ է գալիս Տրապիզոնի վաճառքի հեղինակն ու միջնորդը—Գետադարձ հորջորջված Պետրոս կաթողիկոսը։ Նա նորից պատրաստ է վաճառքներ կատարելու և Գագիկի հետ խո-

[1] Schlumberger, t. III, p. 482.

[2] Չամչեան, Բ, եր. 926։

սում է երդման լեզվով։ Երդվում է, որ ոչ մի վնաս չի լինի Կ. Պոլիս գնալուց, երդվում է, որ ինքն ու իր արժանավոր գործակից Վեստ Սարգիսը կպահպանեն մայրաքաղաքը մինչև նրա վերադարձը։ Գործի է դրվում ներշնչման և ազդման ամենաբարձր միջոցը։ Գրվում է թուղթ, և գրվում է ոչ թե սովորական թանաքով, այլ պատարագի գինու մեջ թաթախելով գրիչը։ Չէ՞ որ այդ գինին ներկայացնում է Քրիստոսի արյունը։ Կարո՞ղ է լինել ավելի բարձր նվիրականություն, քան մի թուղթ, որ գրված է աստվածության արյունով և հենց նույն այդ աստվածության փոխանորդի գրչով։ Գագիկը միանգամայն զինաթափ է լինում,—նա աստվածաբան և աստվածապաշտ էր, նա նույնիսկ պետական գործերն էր մի կողմ դնում՝ վանքերից եկած վարդապետների հետ աստվածային գրքեր կարդալու, բացատրելու և հակաճառություններ անելու համար։ Եվ խորապես հավատացած, որ աստծու արյունով գրված խոստումը չի կարող ստության և խաբեբայության գործիք դառնալ, նա Անիի բանալիները տալիս է Պետրոս կաթողիկոսին պահպանելու համար և հանգիստ սրտով վճռում է, անտես առնելով ծերունի Վահրամի խրատները, գնալ Կ. Պոլիս։ Արիստակես Լաստիվերտցին, համառոտակի պատմելով այս երդումը, ասում է, կրկնելով հին փիլիսոփաների խոսքերը. «Իմաստուն երդնու և անմիտն հաւատայ»։ Ծածո՞ւկ էր մնացել այս իմաստությունը Գագիկից, թե նա չէր կարող չհավատալ եկեղեցու բարձր հեղինակության։ Հետևանքը միևնույնը եղավ։ Նա գնաց Կ. Պոլիս՝ այնտեղից այլևս չվերադառնալու համար…

Այս դեպքը տեղի ունեցավ, ինչպես վկայում է ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին, 1045 թվականին, որ և, այսպիսով, դառնում է Շիրակի թագավորության վերջին տարին և փակում է Հայոց պատմության մի շատ նշանավոր և ինքնատիպ շրջանը, որի տևողությունն ընդամենը 158 տարի էր, հաշվելով Աշոտ Ա-ի թագավորությունից (887)։ Այս անգամ էլ հայ ժողովրդի քաղաքական անկախությունը խորտակվում էր այնպիսի հուզիչ հանգամանքների մեջ, որոնք մի ամբողջ ողբերգություն էին ներկայացնում։ Այս ողբերգությունը երկու գործողությունից էր բաղկացած, որոնցից մեկը կատարվեց Բոսֆորի ափերին, մյուսը՝ Ախուրյանի ափերին։

Բոսֆորի ողբերգությունն ուներ այսպիսի հանգամանքներ։ Գագիկն արքայական պատիվներով մտավ Բյուզանդիայի մայրաքաղաքը, բայց հենց այդ պատիվների մեջ էլ գլուխ բարձրացրեց բյուզանդական քաղաքականության հատուկ ուխտադրժությունը։ Մոռանալով իր տված հաստատ խոսքը, Կոստանդին Մոնոմախը շրջապատեց իր «հյուրին» այնպիսի պայմաններով, որոնք զգալ տվին նրան, թե նա մի տեսակ պատվավոր գերության մեջ է, և սկսեց ստիպողաբար պահանջել, որ նա իրեն տա Անին։ Երիտասարդ Բագրատունին տեսավ իրեն թակարդի մեջ, բայց իսկույն չհուսահատվեց, այլ կռվի մեջ մենակ մնացած քաջամարտիկի անվեհերությամբ վճռեց դիմադրել, որքան հնարավոր կդարձներին հանգամանքները հայկական պետականության պատիվն ու անկախությունը պաշտպանելու համար։ Նա մերժում էր կայսրի պահանջները և անհողդողդ մնաց, մինչև որ հայրենի դավաճանությունը եկավ ջլատելու և անդամալուծելու նրա երիտասարդական ավյունը։

Այս ժամանակներն էր, որ Գրիգոր Բջնեցին գնաց Կ. Պոլիս և մեծ պատիվների արժանացավ կայսերական պալատում, մի հանգամանք, որ

ցույց է տալիս, թե նա արդեն ճանաչված էր իբրև մի վստահավոր գործ
ճիչ բյուզանդականության համար։ Արքունիքում բարեբարված հայ նախա-
րարը մենակ մնացած ուխտադրժության զոհ դարձած Գագիկի կողմը չան-
ցավ՝ հայրենի շահերը պաշտպանելու համար, այլ բոլորովին հակառակ
ուղղություն բռնեց։ Իր Բջնին և մյուս կալվածները նա հանձնեց կայս-
րին և փոխարենը կալվածներ ստացավ Միջագետքի կողմերում։ Բացի
սրանից, Բջնեցին պարգևատրվեց մագիստրոսի աստիճանով[1] և նշանակվեց
Միջագետքի թեմի կառավարիչ։ Հայ իշխանի այս քայլն առաջին խոշոր և
կործանարար հարվածն էր, որ գալիս էր տապալելու դժբախտ Գագիկի
դատը։ Թեև Լաստիվերտցին այս արարքը բացատրում է այն հանգաման-
քով, թե Գրիգոր իշխանն իր կալվածները կայսրին տվեց այն ժամանակ,
երբ համոզվեց, որ Գագիկը ոչինչ չպիտի կարողանա հաջողեցնել, բայց
սա նշանակություն չունի։ Գլխավորն այն է, որ այն միջոցին, երբ երի-
տասարդ թագավորը հաստատուն կերպով կանգնած էր իր իրավունքների
հողի վրա և չէր հրաժարվում իր գեղեցիկ մայրաքաղաքից, նրա առաջնա-
կարգ նախարարը գալիս էր ցույց տալու կայսրին, թե ո՛րքան հեշտու-
թյամբ կարելի է հայրենի կալվածներ վաճառել փոխանակության ձևով։
Ի՞նչ կարող էր այնուհետև առաջադրել Գագիկն իր հզոր ախոյանին, երբ
նրա ձեռքն անցավ Շիրակի թագավորության արևելյան սահմանագլուխը,
որ պետության կարևոր պաշտպանողական գիծն էր կազմում։ Անին, գըտ-
նըվելով Բջնիի թիկունքում, այնուհետև ստանում էր չորս կողմից մեծ պե-
տության ուժերով շրջապատված մի քաղաքի դիրք, որ բացասում էր ամեն
մի միտք անկախության մասին։ Գագիկը, ինչպես երևում է, շատ
լավ էր ըմբռնել Բջնեցու գործի ամբողջ սպանիչ ազդեցությունը։ Մագիս-
տրոսի նամակների մեջ մենք տեսնում ենք մեկը[2], որ պատասխան է Գա-
գիկի մի հանդիմանական նամակին։ Թագավորն այն աստիճան դառնա-
ցած է եղել Մագիստրոսի վրա, որ նույնիսկ անեծք է գրել նրան։ Ոմանք
ենթադրում են, թե Գագիկի այս նամակը գրված պիտի լինի Բջնին կայս-
րին տալուց հետո։ Եվ այս շատ հավանական է թվում։ Բջնեցին, ըստ
երևույթին, ոչինչ չասելով, բավականանում էր հայտնելով, թե ինքն իր արած-
ների համար հաշիվ կտա իր Աստծուն։ Մի ուրիշ նամակի մեջ, գրված
Տարոնեցի Գագիկին, նա հպարտանում է նրանով, որ Վասպուրականի,
Տարոնի, Մանազկերտի, Արճեշի, Բերկրիի և Միջագետքի տերն է[3], մասնավո-
րապես և նրանով, որ Մոնոմախի մագիստրոսն է[4]։ Ավելացնենք և այն,
որ Մագիստրոսը մինչև իր նամակների մեջ Գագիկին անվանում էր
պարզապես «որդի Աշոտի», «մանուկ», «մանկամիտ արքայ», 1051 թվակա-
նին, այսինքն այն ժամանակ, երբ Անին բյուզանդացիներին էր անցել և
Հայոց թագավորությունը բռնությամբ կործանվել էր, շինել տվեց մի գե-
ղեցիկ եկեղեցի (Կեչառուք, Բջնիի մոտ) հատկապես այս իսկ Կոստանդին
Մոնոմախի արևշատության համար։ Եկեղեցու արձանագրության մեջ ահա
ինչ է ասված Մագիստրոսի անունից. «Ես ոչ այլ ինչ հայցէ բայց միայն

[1] Այս պարգևատրությունից հետո Գրիգոր իշխանը կորցնում է իր բոլոր հորջորջումները (Պահլավունի, Բջնեցի) և կոչվում է Գրիգոր Մագիստրոս։

2 Եր. 208—211։

3 Այս բոլոր տեղերն այն ժամանակ միացված էին բյուզա[illegible]ական մի [illegible]մի մեջ։

4 Եր. 213։

աղօթս առնել սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեայ»[1]։ Այս բոլոր փաստերը ոչ մի կասկած չեն թողնում, որ լավ վճարված բյուզանդամոլությունը Բջնիի իշխանի մեջ խեղդել էր հայրենիքի, իբրև քաղաքական գաղափարի, ամեն մի զգացմունք։

Մինչդեռ նա գործում էր Կ. Պոլսում, նրա մոտիկ բարեկամ և սրտակից Պետրոս կաթողիկոսն Անիում լրացրեց ամեն ինչ մի պժգալի գործով, գուցե նույնիսկ ոչ առանց Մագիստրոսի գիտության։ Առհասարակ թվում է, թե այս միջոցին Վեստ Սարգիսը կարողացել էր հաշտվել իր աներոջ հետ կամ գոնե կաթողիկոսն այն երրորդ անձն էր այս երկու երբեմնի ախոյանների մեջ, որ միացնում էր նրանց։ Գագիկի արգելումը Կ. Պոլսում արդեն որոշ հոգեբանություն էր ստեղծել Անիի ազդեցիկ շրջաններում։ Խոսում էին, որ պետք է հաշտվել այն մտքի հետ, թե Գագիկը կորած է և պետք է որոնել մեկին, որ փոխարիներ նրան։ Ազգային կուսակցությունը, հավատարիմ մնալով Բագրատունյաց տոհմի վեհապետական շահերին, զանազան թեկնածուների անուններ էր տալիս։ Ոմանց համար Դավիթ Անհողինն էր, որ իրավունք ուներ Անիի գահը գրավելու։ Ուրիշներն Ափխազների թագավոր Բագրատի անունն էին տալիս, որի մայր Մարիամը, ինչպես գիտենք, Գագիկ Ա-ի թոռն էր։ Մի ինչ-որ պատճառով, որ մեզ համար անբացատրելի է մնում, Կարսի Գագիկ թագավորի անունը չէր հիշատակվում, մինչդեռ կային և այնպիսիները, որոնք առաջարկում էին Բագրատունյաց թագը Դվինի քուրդ Աբուլսուարին, որովհետև նա, ինչպես տեսանք, ամուսնացած էր Դավիթ Անհողինի քրոջ հետ։

Այս հոսանքների դեմ կանգնեց Պետրոս կաթողիկոսը, որի համար հավետ ցանկալին բյուզանդական տիրապետությունն էր։ Նա վճռեց իրագործել այդ ցանկությունը, բայց նախապես հագեցնելով իր մշտաբորբոք արծաթամոլությունը։ Եվ ահա նա մարդ է ուղարկում Սամոսատ քաղաքի հույն կառավարչի մոտ և խնդրում է իմաց տալ կայսրին, թե ինչ կտա նա, եթե ինքը հանձնի Անին և ուրիշ բերդերը։ Այսպիսով, Հայոց հայրապետը մի երկրորդ և ավելի անպատկառ վաճառք է սարքում դժբախտ քաղաքի վրա։ Մոնոմախը, իհարկե, իսկույն գանձեր և իշխանություն է ուղարկում կաթողիկոսին։ Այս մարդը, որ գիտեր գինի օրհնել և հավատացնել հազարներին, թե նա իր օրհնությամբ աստծու արյուն էր դարձել, ինքն ամենայն ցինիկությամբ այդ արյունով դրած իր պարտավորությունը ցեխի մեջ տրորեց և արծաթ ստանալով, իրեն հանձնված քաղաքի բանալիներն բյուզանդացիներին ուղարկեց։ Հայոց պատմությունը դեռ չէր տեսել այսքան քստմնելի դավաճանություն։

Հասկանալի է, որ նա պիտի շանթահարեր խեղճ երիտասարդ թագավորին, երբ բանալիները, թվով քառասուն հատ, ցույց տվին նրան, նա առաջ երկնքի արդարությանը դիմեց ասելով. «Քրիստոսը դատավոր լինի իմ և ինձ դավաճանողներին միջև»։ Բայց հետո դարձյալ իր իրավունքից խոսեց. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ,— ասաց նա կայսրին,— և ես քեզ չեմ տալիս Հայոց երկիրը, որովհետև ինձ դու խաբեությամբ ես բերել Կ. Պոլիս»[2]։ Այս հաստատ որոշման վրա նա մնում է երեսուն օր։ Բայց դիմադրությունը, իհարկե, այլևս ավելորդ էր։ Դավաճաններով շրջապատված, նա մենակ էր և նրա վառ հայրենասիրությունն էլ ոչ մի արդյունք տալ չէր կարող։ Եվ վերջապես, նա գլուխ խոնարհեցրեց բռնության առջև, հրաժարվեց իր հայրենիքից և համաձայնեց նրա փոխարեն ստանալ մի քանի տեղեր Փոքր Հայքում, ինչպես են Կալոն-Պեղասոն և Պիզու քաղաքները։ Բացի դրանից՝ նա ամուսնացավ Սեբաստիայի վախճանված Դավիթ Արծրունի թագավորի աղջկա հետ և ժառանգեց նաև նրա կալվածները։ Նրան, իհարկե, այլևս թույլ չտվին վերադառնալ Շիրակ, որի սերը, սակայն, միշտ վառ մնաց նրա մեջ։ Եվ մենք դեռ կտեսնենք նրան արևմուտքում երկար ժամանակ հայրենիքի կարոտով ապրելիս, հայության պատվին նախանձախնդիր, խորին ատելությամբ լցված դեպի հույները՝ նրանց նենգավորության համար։

Պատմական այս ողբերգության երեք գլխավոր դերակատարներից վեստ Սարգիսն է միայն, որ լիաբերան դատապարտված է մեր պատմությունից։ Մնացած երկուսը խնայվել են, վարագուրվել, մեկն իբրև եկեղեցու պետ և հրաշագործական առասպելներով զարդարված, իսկ մյուսն իբրև նշանավոր մատենագիր, որ դարձյալ եկեղեցուն է ծառայել։ Բայց որ երեքն էլ միևնույն դատավճռին են արժանի, ցույց է տալիս Սամուել Անեցին, որ գրում է. «Տէր Պետրոս և ազատ Սարգիս և Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ և զԱնի ետուն ի կայսրն Յունաց»[1]։ Այսպես էլ ներկայանում է եղելությունը նաև այն տեղեկությունների մեջ, որոնք հասել են մեզ։ Բյուզանդական շքեղ քաղաքակրթության և պետական փայլի հզոր ազդեցությունն էր, որ գործիք ընտրելով ընչաքաղց և փառամոլ մարդկանց, այսպիսի գործ առաջացրեց Հայոց աշխարհում։ Նա ցնցում էր քաղաքական կյանքը Հայաստանում և այդ ահավոր ցնցումը միանգամից չէր կորցնում իր ուժը, երբ կատարվել, վերջացել էր գլխավոր գործողությունը։ Բյուզանդական բանակն այս անգամ ամենայն վստահությամբ էր դիմում Անի, կարծելով, թե ամենքն արդեն գիտեն, որ ամեն ինչ վերջացած է։ Բայց այդպես չէր Շիրակի հոչակավոր մայրաքաղաքի տրամադրությունը, և բյուզանդական արշավանքը նորից իր առջև տեսավ հուզված քաղաքը, որ զենքը ձեռքին դուրս եկավ մի անգամ ևս պայքարելու իր անկախության համար։ Նորից պատերազմ բոլորվեց և նորից հերոսական քաղաքը հաղթական հանդիսացավ, փախուստի մատնելով իր թշնամիներին։ «Հոռոմները ուզում էին Հայոց աշխարհի վրա կնամարդ պահապան դնել հզոր, քաջ Գագիկի փոխարեն», ասում է Ուռհայեցին[2]։

Անին դեռ լավ իրազեկ չէր անցուդարձին, դեռ մանրամասնություններ չգիտեր և այս ժողովրդական մեծ շարժումով ուզում էր հեշտացնել Գագիկի՝ իրավունքի համար վարած դատը, հավատ ունենալով, որ նա դեռ կարող է, վերջիվերջո, վերադառնալ իր երկիրը։ Բայց երբ պարզվեց մերկ ճշմարտությունը, երբ հայտնի դարձավ կաթողիկոսի և նրա ընկերների դավաճանությունը, մանավանդ, երբ այլևս կասկած չմնաց, որ Գագիկը չպիտի վերադառնա, քաղաքը մատնվեց ընդհանուր լքման և հուսահատության։ Սկսվեց համայնական սուգ։ Ժողովուրդը հավաքվում էր թագավորների գերեզմանների շուրջը և ողբում էր իր անտիրանալը։ Ուռհայեցին գրում է. «Լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց և կոծ եդեալ առհասարակ

1 Հ. Ալիշան, «Այրարատ», եր. 260։
2 Մատ. Ուռ., եր. 95։

1 Սամուել Անեցի, «Հաւաքմունք», եր. 107։
2 Եր. 96։

լային զԹագաւորն իւրեանց զԳագիկ. լային և զամենայն ազգն Բագրատունեաց և անէծս ցաւագին կարդային Նենգաւորացն Գագկայ»[1]։ Մենք հիմք ունենք ասելու, որ ժողովուրդը չբավականացավ միայն լացով, այլ իր բուռն զայրույթն արտահայտեց՝ Պետրոս կաթողիկոսի վրա հարձակվելով։ Այսպես ասել է տալիս Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկը, որ մխիթարական խոսքեր է պարունակում այն առիթով, որ քաղաքի (անկասկած, Անիի) խուժանը հարձակվել էր նրա վրա[2]։ Այսպիսի մի ժողովրդական ցասում կարող էր տեղի ունենալ միայն համայնական սգի և լքման այս օրերին[3]։ Ճգնաժամը վերջացավ նրանով, որ քաղաքացիները, այլևս ոչ մի ճար չտեսնելով, մարդ ուղարկեցին բյուզանդական հրամանատարին, որ Անիի պատերի տակ պարտություն կրելուց հետո քաշվել էր Արծն քաղաքը, հրավիրեցին նրան գալ և գրավել Շիրակն ու նրա մայրաքաղաքը։ Եվ հրամանատարը, իհարկե, իրեն երկար սպասել չտվեց։

Վերջացավ օրհասական և անհավասար մաքառումը փոքրիկ Հայաստանի և իմպերիալիստական վիթխարի Բյուզանդիայի միջև։ Մի մաքառում էր այդ, որ Հայաստանի քաղաքական զորությունը չէր միայն փորտակում, այլև անբուժելի վերքեր էր բաց անում Շիրակի ներքին կյանքում, մեծամեծ քայքայումների ենթարկելով այն կուլտուրական արժեքները, որ ձեռք է բերել այդ գավառի մեծագործ և տաղանդավոր ժողովուրդը մեկ ու կես դարի ընթացքում։ Սեփական բախտը տնօրինելու իրավունքից դավադրությամբ և բռնությամբ զրկված ազգաբնակությունը շատ բան ուներ ողբալու։ Անեցիներին կսկիծ ու մորմոք պատճառած զգացմունքների մասին մենք կարող ենք պարզ հասկացողություն կազմել Արիստակես Լաստիվերտցու ողբախառն ժամանակագրությունից։ Այստեղ մեզ ներկայացվում է մի սուգ՝ կորցրած դրախտի համար,— իհարկե, դրախտ միջնադարյան-ավատական առումով։ Ահա ի՛նչ է ասում մեր հեղինակը, որ, անշուշտ, անձամբ էլ մասնակցել է համայնական լաց ու կոծին։

«Աշխարհ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն և ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք և զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի առնէին ուրախական բերկրանօք։ Անդանօր և ծերք նստէին ի հրապարակս հարկեոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկալեալ, և մայրենի գթովքն աղէխարշեալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտխրական ժամանակս երկանց, զօրէն աղաւնեաց զնորափետուր ձագօքն միշտ թոթռելով։ Զի՞նչ ասացից և զհարսանցն ի սենեկի, և զփեսայիցն և առագաստի զսիրահարուստ ըղձիցն զբոլբոքումն և զանձոյժ բնութեան զհակամիտութիւն։ Այլև ի վեր տանելի է մեզ բանս, առ հայրապետական աթոռն և առ թագաւորական պատիւն. զի մինն զօրէն ամպոյ խտացեալ ի պար-

[1] Եր. 97։

[2] «Գր. Մագ. Թղթ.», եր. 4։

[3] Որ Անիում կարող էր տեղի ունենալ այդպիսի մի ժողովրդական զայրույթի ցույց, այդ հաստատում է այն, որ, ինչպես տեսանք, նույն խուժանը մի ժամանակ հարձակվեց Դիոսկորոս կաթողիկոսի վրա՝ նույն այս Պետրոս կաթողիկոսին պաշտպանելու համար։

ձեաց հողւոյն՝ ի ձեռն վարդապետական շնորհին, ցօղեր զցօղ կենացն. որով պարարտացեալ պտղաբերեր եկեղեցւոյն դրախտ, արթուն պահապանօ ի վերայ սպասպաց նորա կարգելով զառ ի յինքենէ ձեռնադրեալսն։ Իսկ թագաւորն յառաւօտինսն յորժամ ի քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելանէ յառագաստէ իւրմէ, կամ որպէս տունջենային արուսեակն որ ի գլխոյն արարածոց բարձրանալովն զամենայն տեսանելիս յինքն ձգէ, այսպէս և նա պաղպաջէր փաղփուն հանդերձիւք և մարգարտախուռն թագիւն, և զամենայն մարդ ի տեսութիւն և ի զարմանս ցուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ՝ ոսկեզօծ զարդիւք առաջի ընթանալով, ի ճառագայթից արեգականն որ զնովաւ հարկանէր՝ շլացուցանէր զտեսողացն տեսանելիս։ Իսկ զօրացն բազմութիւն խուռն առաջի ընթանալով՝ զօրէն ծովային ալեացն՝ զմիմեամբ կուտակելով։ Նաև անապատական վայրքն լցեալ և խճողեալ էին կրօնաւորական դասուք. մինչ զի զգեօղս և զագարակս առ բարի նախանձ՝ քահեալ առնէին բնակութիւն կրօնաւորաց։ Զայս և որ սոցին նման է, առաւել ունէր աշխարհս մեր։ Եւ զայս զի գրեցի, զի յորժամ զսոցին հակառակն պատմեցից, ամենեցունց շարժեցից զարտասուսն։

Արդ այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան։ Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մուրեն ուր և են իբրև զկորուն առիւծուցն ի խշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ և անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ բարեբանութիւն առ կոխողս հնձանի։ Ոչ խաղան մանկունք առաջի ծնողացն և ոչ նստին աթոռով ծերք ի հրապարակս։ Ոչ լսի ձայն հարսանեաց և ոչ զարդարին առագաստք հարսնարանին։ Պակասեաց այս ամենայն և կորեաւ ոչ ևս յաւելուցու յառնել ըստ սաղմոսողին ձայնին։ Այժմ յողբս փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջնազգեստ խորգ փոխեցաւ։ Ո՞ր լսելիք տանիցին զթշուառութեանս մերոյ զպատմութիւն։ Ո՞ր սիրտ քարեղէն, որ ոչ լքանի հառաչմամբ և բեկանի հեծեծալով։ Ժա՛մ է ինձ յԵրեմիայի ողբոցն խառնել ընդ մեր հառաչանս. «Ճանապարհք Սիովնի, ասէ, սգան, զի ոչ ոք է որ մտանէ»։ Այսօրիկ ասացան յայնժամ յաւերն Երուսաղէմի, բայց կատարեցաւ այժմ։ Արդ այս ամենայն ի վաճառէն յայնմ հանդիպեցաւ Հայոց… Այս վաճառ անմարդագոյն գոլ թուի ինձ քան զՅուդային»[1]։

8. Անին հույների ձեռքին (1045—1064 թթ.): Բյուզանդականության սիստեմի հիմնական հատկություններից մեկը խիստ կենտրոնացումն է, որ ժխտում էր հպատակված ժողովրդի ինքնավարությունը։ Այս սկզբունքն իսկույն ևեթ գործադրվեց Անիի վերաբերմամբ։ Շիրակի մայրաքաղաքը դառնում էր բյուզանդական կայսրության սովորական քաղաքներից մեկը և ստանում էր ընդհանուր պետական վարչության հատուկ ձևը։ Անին այնուհետև կառավարվում էր Բյուզանդիայից ուղարկված պաշտոնյաների ձեռքով, 158 որոնք կոչվում էին «Արևելքի կատապան»[2]։ Բայց տեղական տարրերը,

[1] Եր. 56—59։

[2] «Շիրակ», եր. 70։

ինչպես երևում է, միանգամայն հեռացված չէին վարչության մեքենայից։ Մենք տեսնում ենք Անիի արձանագրություններից, որ անեցի հայերը, «հյուպատոս» և «սպաթար կանկետոս»159 անուններով[1] հարկերի վերակացությունն էին կատարում, դրան միացնելով գուցե և ուրիշ վարչական գործառնություններ։ Այսպիսի երկրորդական, ստորադրյալ դերերին բյուզանդականությունը վերաբերվում էր համբերողությամբ։ Բայց այսպես չէր զորքին վերաբերող հարցը։ Երկիրը միանգամայն հոռոմացնելու համար հետզհետե վերացվեց զինվորական պաշտպանությունը տեղական միջոցներով։ Հայկական զորամասերը, ինչպես տեսանք Լաստիվերտցու ողբից, արձակվեցին և փոխարինվեցին բյուզանդական զորքերով։ Այս անհեռատես քաղաքականության շնորհիվ երկիրը զուր զրկվում էր մի քանի տասնյակ հազար փորձված կռվողներից[2], որոնք վտանգի ժամանակ շատ լավ կարող էին պաշտպանել սահմանները։

Իսկ այսպիսի անհրաժեշտություն բյուզանդացիների առջև կանգնեց հենց Անին գրավելուց հետո անմիջապես։ Իրերի բերմունքը, որ հետևանք էր բյուզանդական նենգության, անխուսափելի դարձրեց ընդհարումը Դվինի Աբուլսուար էմիրի հետ։ Մենք տեսանք, որ անբախտ Գագիկին ընկճելու համար Մոնոմախ կայսրը դաշնադրություն կնքեց այս Քուրդ տիրապետողի հետ, տալով նրան իրավունք սեփականացնելու այն բոլոր տեղերը, որ նա կխլի Շիրակի թագավորությունից։ Աբուլսուարը, ինչպես գիտենք, այս համաձայնության ուժով իր ձեռքն էր ձգել մի շարք ամուր բերդեր։ Բայց, երբ Գագիկն ընկճված ու տարագրված էր, բյուզանդացիներն զգացին, որ իրենց հաղթանակը լրիվ չի կարող լինել, քանի որ այդ բերդերը չեն լինի իրենց ձեռքում։ Ուստի պահանջեցին Աբուլսուարից վերադարձնել։ Նա, հիմնվելով դաշնադրության վրա, մերժեց այդ պահանջը։ Ուստի և պատերազմ սկսվեց Դվինի և նրա նոր հարևանի միջև։ Այդ ժամանակ Անիի կառավարիչն էր Ասիդը, իսկ Արևելքի գլխավոր հրամանատարը, որ նույնպես Անիիում էր նստում, մեզ ծանոթ Նիկողայոս զորավարն էր, ներքինի, կամ, ինչպես ասում են մեր պատմագիրները, կուռտ[3]։ Տեղական զորքերը դեռ ամբողջովին չէին արձակված և նրանցից մնացածներին բյուզանդացիներն իրենց օգնության կանչեցին։ Հայերից գնացին ծերունի Վահրամ Պահլավունին և նրա որդի Գրիգորիսը, իսկ վրացիներից՝ քաջ Լիպարիտը, որ պատկանում էր Օրբելյան հռչակավոր տոհմին։

Այս խոշոր, կանոնավոր կազմակերպված բանակն արշավեց Դվինի վրա։ Աբուլսուարը ոչ միայն չվախեցավ կայսրության ահեղ ուժից, այլև շատ համարձակորեն դուրս եկավ նրան դիմադրելու։ Իմանալով իր թուլությունը, նա շատ ճարպկորեն շահագործեց մի զինվորական խորամանկություն, որ և պսակվեց կատարյալ հաջողությամբ։ Փոխելով Դվինի մոտ հո-

1 Անդ։

2 Այս բյուզանդական սիստեմով Հայաստանի և Վրաստանի սահմաններում արձակվեցին 50 հազար զինվոր (Гельцер, ст. 117)։ Մենք տեսանք, որ Անիի թագավորները պատերազմի ժամանակ դաշտ էին հանում միջին թվով 40 հազար մարդ։

3 Շլյումբերժեն («Epop.», t. III, p. 496), բերելով այս պատերազմի մանրամասնությունները բյուզանդական աղբյուրներից, կարծում է, թե կայսերական զորքերի հրամանատարներից մեկն էր թագավորկ Գագիկ Գ-ն, որ դարձել էր բյուզանդական մի պարզ զորավար։ Բայց սա, անշուշտ, թյուրիմացությունից առաջացած մի սխալ է։ Մեր ժամանակագիրները միաբան վկայում են, որ Գագիկը երբեք չվերադարձավ Անի, իսկ առհասարակ բյուզանդական ծառայության մեջ մտնելու մասին ոչ մի հիշատակություն չեն անում։

սող Ազատ գետի ընթացքը, այդ գետի ջրերով նա հեղեղեց քաղաքի շրջակայքը, որ ծածկված էր խաղողի այգիներով։ Այս այգիներում նա դարաններ սարքեց, թողնելով նրանց մեջ իր զորքից ընտրովի հավաքած աղեղնավորներ, որոնք թաքնված պիտի մնային մինչև այն ժամանակ, երբ ինքը նշան կտար պատերազմական փողով։ Իսկ ինքը, էմիրը, իր մնացած զորքով փակվեց միջնաբերդի մեջ, որ շինված էր բլուրի վրա։ Կայսերական զորավարները, միանգամայն արհամարհական հասկացողություն կազմած լինելով իրենց հակառակորդի ուժի մասին, իրենց զորքը տանում են առանց զգուշությունների, համոզված, որ Դվինն իր դռները բաց կանի առանց դիմադրության։ Արշավը կատարվում էր նույնիսկ առանց կարգապահության։

Հենց որ զորքը մտավ խաղողի այգիների տարածության մեջ և սկսեց շարժվել ջրողող ճանապարհներով, հանկարծ միջնաբերդից լսվեց փողերի ազդանշանը և այգիներում թաքնված աղեղնավորները, դուրս թափվելով, սկսեցին նետերով ծակոտել թշնամուն, որի շարքերում առաջացավ անկարգություն։ Հեղեղումից գոյացած ցեխը մեծ արգելք էր դնում, որ խառնված բանակի կարգը վերականգնի։ Կոտորվողները շատ էին, փախչել քչերին էր հաջողվում։ Դժվար էր մանավանդ հեծելազորի դրությունը։ Ձիերը խրվում էին ցեխի մեջ, որթատունկերը փաթթվում էին նրանց ոտներին։ Բյուզանդական բանակը պարտված էր և հազիվ կարողացավ իր մնացորդները հեռացնել Դվինի պարիսպների տակից[1]։

Այստեղ, այս աղետալի կռվի մեջ էր, որ մահ էր գտնում Հայոց քաջարի սպարապետ Վահրամ Պահլավունին։ Ծերունի հերոսը միակն էր իր ժամանակակիցների մեջ, որ չէր հուսահատված իր հայրենիքի բախտի վերաբերմամբ և այդ պատճառով գնում էր կռվելու բյուզանդացիների շարքերում։ Այս վարմունքով նա ընդունում էր կատարված գործի օրինավորությունը, այսինքն ընդունում էր բյուզանդական բռնությունը, տերությունը, բյուզանդական տիրապետության դեմ նա մատալով ուժի իրավունքին։ Բյուզանդական տիրապետության դեմ նա մաքառեց որքան ժամանակ հնարավորություն կար։ Այնուհետև նա հնազանդվում էր իրողությանը և իր սիրած հայրենիքին, որից հեռանալ չուզեց ոչ մի գնով։ Մնալով հայրենի հողի զավակ, նա ծառայում էր այդ հողին նախկին անձնազոհությամբ։ Դվինի դռների մոտ, ընդհանուր փախուստի միջոցին, նա կռվում էր իրեն հատուկ քաջությամբ։ Բայց երբ նրա կողքին սպանվեց իր որդի Գրիգորիսը, նրա բազուկը թուլացավ և նա էլ ընկավ սպանված։ Գրիգոր Մագիստրոսի մի նամակից, որ նվիրված է այս հերոսի հիշատակին, մենք տեսնում ենք, որ նա Հայոց աշխարհում և նրա սահմաններից էլ դուրս մեծ հռչակ էր վայելում ոչ միայն իբրև քաջ զորավար, այլև մանավանդ իբրև աշխարհի շինության համար հոգացող, իբրև քրիստոնեական առաքինություններով լցված խոշոր կուլտուրական գործիչ։ Նրա այս տեսակ մահն ընդունվեց իբրև մարտիրոսություն։ «Նոր մարտիրոս,— գրում է Մագիստրոսը,—հրաշալի վկայ, ի բազմաց ընտրեալ և ի թշնամեաց խաչին Քրիստոսի խոցեալ, և ի վերայ կաթողիկէ եկեղեցւոյ վկայեալ, այժմ քոյովդ արեամբ զքոյդ մաքրեալ անձն և ի դասս երկնային զօրաց անցեալ»[2]։ Հայոց աշխարհը մեծ սուգ կատարեց նրա վրա։

1 Schlumberger, t. III, p. 498.

2 «Գր. Մագիստ. Թղթ.», եր. 42։

ընդհանուր սիրո և վշտի մի հայտարարն էլ, միջնադարյան ոգով, այն էր, որ առասպել ստեղծվեց, թե նրա գերեզմանի վրա լույս իջավ երկնքից[1]։

Կոստանդին կայսրն իր պարտված զորավարներին իսկույն ետ կանչեց, իսկ նրանց տեղ ուղարկեց երկու նորերին, մեկը՝ Կատակալոն Կեկումենոս անունով[2], որ կայսրության մեջ անուն վաստակած մի պաշտոնյա էր, իսկ մյուսը՝ ներքինի կամ կուրտ Կոստանդինը։ Սրանք, նախորդ դժբախտ փորձից խրատված, այլևս անմիջապես Դվինի վրա չգնացին, այլ նախ սկսեցին գրավել այն բերդերը, որ Աբուլսուարը խլել էր Անիի երկրներից, այն է՝ սուրբ Մարիամ, Ամպեր և Սուրբ Գրիգոր,160 որոնք արծվի բույների նման էին՝ կպած լեռների լանջերին և կախված անդունդների վրա[3]։ Եռանդոտ Աբուլսուարը փորձեր արավ այս բերդերում կռվող իր զորքերին օգնություն հասցնել, բայց ամեն անգամ ետ մղվեց։ Այնուհետև Կոստանդին կուրտը պաշարեց Խելիդոնիոն[4] անունով ամրությունը,161 որ արդեն Դվինին մոտ էր, բայց էլի լեռնային դիրք ուներ։ Պաշարումը երկարեց և բյուզանդական զենքն այստեղ էլ, անշուշտ, հաղթանակ կվաստակեր, բայց այս միջոցին (1047, սեպտեմբեր) կայսրության եվրոպական մասում պայթեց Լևոն Թոռնիկի ապստամբությունը, որ հանկարծակի ստացավ մեծ վտանգի կերպարանք, այնպես որ կայսրն ստիպված էր Ասիայի բանակները կանչել մայրաքաղաքի պաշտպանության համար։ Դվինի դեմ գործող բանակն էլ շտապով հեռացավ արևմուտք։ Աբուլսուարը, ազատություն ստանալով, արշավեց մինչև Անիի դռները, սարսափելի ավերումներ տարածելով իր ճանապարհին։ Բայց նրա հետ շտապեցին հաշտություն կնքել, և այսպիսով միայն երկիրը մտավ խաղաղության մեջ։

Իսկ մինչև որ Անիի բանակը կհասներ Բյուզանդիոն, Կոստանդին Մոնոմախի թագը մեծ վտանգի ենթարկվեց և քիչ մնաց, որ անցնի հայազն Լևոն Թոռնիկի կամ, ըստ հունական ձևի, Թոռնիկիոսի ձեռքը։ Այս իշխանը Բագրատունյաց տոհմի Տարոնի ճյուղին էր պատկանում։ Վերևում մենք տեսանք, որ Ռոմանոս կայսրի ժամանակ (926 թ.) Տարոնի Բագրատունիներից մի քանիսը, որոնց մեջ էր և Թոռնիկ իշխանի ընտանիքը, տեղափոխվեցին Կ. Պոլիս։ Այս Թոռնիկի ժառանգները Բյուզանդիայում, ինչպես երևում է, թողին իրենց ընդհանուր տոհմային անունը և սկսեցին իրենց այս պապի անունով կոչվել Թոռնիկ։ Դրանցից մեկն էր Լևոն Թոռնիկը, որ Թրակիայի կողմերում հաստատված այս իշխանական տոհմից էր և բնակություն ուներ նաև Ադրիանապոլիս քաղաքում։ Այստեղ, այս խոշոր քաղաքական կենտրոնում, հանգամանքների բերմունքով 1047 թվին արագ կազմակերպվեց և հասունացավ զինվորական մի խոշոր ապստամբություն,

1 Վահրամ Պահլավունին թաղված է իր շինած Մարմաշենի դռան մոտ, ինչպես վկայում է այս վանքի մի արձանագրությունը («Շիրակ», եր. 151)։

2 Լաստիվերտցու մոտ՝ Կամենաս։

3 Schlumberger. t. III, p. 497. Այս անունները հիշատակված են միայն բյուզանդական աղբյուրների մեջ և հաստատապես չի կարելի որոշել այդ բերդերի տեղը, եթե հաշվի չառնենք «Ամպերը», որ, անշուշտ, մեր Ամբերդն է և որ, այսպիսով, ցույց է տալիս, թե այդ բերդերը գտնվում էին Արարատյան դաշտի հյուսիսային բարձրությունների վրա, Արագածից մինչև Գառնի։ Սուրբ Մարիամ և սուրբ Գրիգոր անունները ցույց են տալիս, որ դրանք իսկապես բերդեր չէին, այլ բերդ դարձրած եկեղեցիներ կամ վանքեր։ Որ այս տեսակ գործածություն վիճակվում էր մեր վանքերին, ապացուցում է Մարմարաշեն վանքն իր մի արձանագրության մեջ («Շիրակ», եր. 150)։

4 Անհնարին է ճշտել և այս ամրության հայկական անունը։

որի հոգին դարձավ Լևոն Թոռնիկը։ Ապստամբության գլխավոր շարժառիթն այն վերաբերմունքն էր, որ ուներ Կոստանդին կայսրը դեպի բանակը։ Արդեն հիշատակեցինք, որ այդ հիվանդոտ մարդը ոչ միայն զինվորական հակումներ չուներ, այլև հակառակ էր զինվորության սկզբունքին, և մոռանալով բանակի կարիքները, պետական գանձարանի միջոցներն ավելի մտավոր-գրական պետքերի վրա էր ծախսում։ Այս քաղաքականությունը չէր կարող, իհարկե, դժգոհություն չպատճառել, եթե ոչ ամբողջ բանակին, գոնե նրա այն մասին, որ գտնվում էր մայրաքաղաքի մոտ, Թրակիայում։ Ադրիանապոլիսը դառնում է այդ դժգոհության բույն և այդտեղ արագ կազմակերպվում ու հասունանում մի զինվորական մեծ ապստամբություն, որ իսկույն կայսր է հռչակում Լևոն Թոռնիկին։ Այս պատվին հասած հայ զորավարը, բացի ընդհանուր զինվորական դժգոհությունից, ուներ և իր անձնականը։ Նա, իբրև Բագրատունի, չէր կարող մոռանալ այն հարվածը, որ Կոստանդին կայսրը տվեց Հայաստանում թագավորող Բագրատունիներին, զրկելով նրանց թագից և բռնությամբ խլելով նրանց գեղեցիկ մայրաքաղաքը։ Եվ տոհմային վրիժառությունն էլ մտնում էր այն դրդապատճառների մեջ, որոնք տանում էին Լևոն Թոռնիկին, Ադրիանապոլսի բանակի գլուխ անցած, կայսերական մայրաքաղաքը նվաճելու համար[1]։ Եթե հաջողվեր այդ ձեռնարկությունը և Լևոնը հաստատվեր Կ. Պոլսի Սրբազան Պալատում, գուցե փոխվեր և Հայաստանի վիճակը և Գագիկ Բ-ն վերադառնար իր հայրենի ժառանգությունն ստանալու։

Բայց Թոռնիկը, ամենայն հաջողությամբ սկսելով իր գործը, չկարողացավ օգտվել հարմար հանգամանքներից, ուստի և տանուլ տվեց։ Նա պաշարեց Կ. Պոլիսը մի կողմից։ Կոստանդին Մոնոմախը պաշտպանողական շատ թույլ ուժեր ուներ, ուստի լուրջ դիմադրության փորձ էլ չարավ։ Նրա միակ հույսը Հայաստանի բանակն էր, որ, սակայն, շուտափույթ օգնություն հասցնել չէր կարող, թեև շտապով գնում էր դեպի մայրաքաղաք։ Թոռնիկի զորքերը կռվի բռնվեցին մայրաքաղաքի պարիսպները պաշտպանող սակավաթիվ զորականների հետ, հարվածեցին և ոչնչացրին նրանց։ Մայրաքաղաքի դռները բաց էին Թոռնիկի առջև, բայց նա չշտապեց ներս մտնել։ Չէր ուզում քաղաքի մեջ արյունհեղություն տարածել և սպասում էր քաղաքացիների ինքնահոժար և խաղաղ անձնատրության։ Այսպիսով ժամանակ կորցրեց, իսկ Կոստանդինն օգտվեց այդ հանգամանքից, նորից վերակազմեց պարիսպների պաշտպանությունը։ Այսպիսով երկարում էր պաշարումը, մինչև որ հասավ Հայաստանի բանակը։ Նրա շարժումները հարկադրեցին Թոռնիկին ետ քաշվել։ Այնուհետև նրա բանակը շրջապատված էր և նա ստիպված եղավ անձնատուր լինել կայսրին, որ և հրամայեց կուրացնել նրան։

Այս անցքերի հետ, անշուշտ, կապ ուներ այն քաղաքականությունը, որ բյուզանդական կառավարությունը հանկարծորեն հանդես բերեց Անիում։ Մայրաքաղաքի հոռոմ կառավարիչ Կատակալոն Կեկամենոսն[2] ամբաստանություններ է գրում Պետրոս կաթողիկոսի մասին և, անշուշտ, հենց

1 Schlumberger, t. III, p. 504.

2 Մատթեոս Ուռհայեցու մոտ այս զորապետը կոչված է պարզապես Կամեն (եր. 107), իսկ Լաստիվերտցու մոտ՝ Կամենաս (եր. 86)։

կայսրի հավանությամբ հեռացնում է նրան Անիից, բնակության տեղ նշանակելով Կարին գավառի Արծն վաճառաշահ քաղաքը։ Սակայն այստեղ էլ չի պահվում Պետրոսը։ Նրան և նրա քեռորդի Խաչիկին կալանավորում են և ուղարկում Խաղտո Առիճ և Սյավ-Քար բերդերը։ Այստեղից նրան ուղարկեցին Կ. Պոլիս, կայսրի մոտ։

Մենք չգիտենք, թե ինչ պատճառների հետևանք էին այս կալանավորումներն ու աքսորը։ Անշուշտ այստեղ էլ կրկնվում էր հանրածանոթ իրողությունը։ Դավաճանին փայփայում ու կաշառում էին, քանի նա հարկավոր էր։ Այժմ նրա ներկայությունն Անիում համարվում էր անհանդուրժելի։ Շատ հավանական է, որ հոռոմները, վերջ տալով Հայոց թագավորության, կամեցան վերջացնել և Հայոց կաթողիկոսությունն ու այդպիսով հեշտացնել քաղկեդոնականության տարածումը հայերի մեջ, մի հանգամանք, որ նրանց քաղաքականության հոգին էր կազմում դարերից ի վեր։ Հայոց կաթողիկոսին նորից կաշառելու համար էր, որ կայսրն ընդունեց նրան ոչ իբրև կալանավորի, այլ, ինչպես պատմում է Մատթեոս Ուռհայեցին, մեծամեծ պատիվներով։ Այս նույն ժամանակագրի վկայությամբ՝ կաթողիկոսն իր հետ մայրաքաղաք տարավ մի ահագին և հարուստ շքախումբ, որի մեջ կային երեք հարյուր զինված մարդիկ, եպիսկոպոսներ, վարդապետներ, երաժիշտներ, փառավոր ջորիներ հեծած հարյուր քահանաներ, հետևակ պաշտոնյաներ, թվով երկու հարյուր։ Շքեղ ու փառահեղ ապրել գիտեր Պետրոսը, հետևաբար ուներ և անչափ ծախսեր։ Այստեղից և նրա անչափ արծաթապաշտությունը։ Այս ախտի մի նոր նշան երևան էր գալիս հենց այն առաջին ունկնդրության միջոցին, որ շնորհել էր նրան կայսրը։ Կաթողիկոսը նստած էր ոսկե աթոռի վրա։ Երբ ունկնդրությունը վերջանալուց հետո նա դուրս է գալիս, նրա եպիսկոպոսներից մեկը վերցնում է այդ աթոռը, որ տանի իր հետ։ Արքունիքի ծառաներն ընդդիմանում են այդ բանին, վեճը սաստկանում է այն աստիճան, որ կայսրն էլ միջամտում է։ Նրա տված հարցին կաթողիկոսարանի եպիսկոպոսը պատասխանում է. «Սա հայրապետական աթոռ է և ոչ ոք արժանի չէ սրա վրա նստելու»։ Կայսրն ստիպված է լինում համակերպվել այդ հափշտակողական տարօրինակ իրավունքին, թույլ է տալիս, որ եպիսկոպոսը տանի թանկագին աթոռը և միայն հեգնանքով ասում է. «Այդ աթոռի գինը հազար դահեկան է, պահիր այդ աթոռը քո տիրոջ համար և թույլ չտաս, որ մի ուրիշը նստի դրա վրա»[1]։

Արտաքուստ չփոխելով բարեկամական վերաբերմունքը դեպի Հայոց կաթողիկոսը, պատիվներ անելով նրան, կայսրը, այնուամենայնիվ, թույլ չտվեց, որ նա վերադառնա հայրենիք։ Թե ո՛րքան փոխվել էր բյուզանդական քաղաքականության այս հլու գործիքի վերաբերմունքը դեպի կայսրությունը, ցույց է տալիս այն, որ կայսրն այժմ երկյուղ էր կրում, որ եթե Պետրոսը վերադառնա Անի, ապստամբություն կհարուցի իր դեմ[2]։ Այսպիսի տրամադրություն ստեղծվեց բյուզանդական արքունիքում, երևի այն պատճառով, որ Պետրոս կաթողիկոսը որքան և հնհեղուկ ու վաճառվող էր քաղաքական հարցերում, այնքան անհողդողդ ու անզիջող հանդիսացավ կրոնական հարցերում և, ինչպես կարելի է ենթադրել, հույն կղերականությունն այդ միջոցին բոլորովին կորցրեց իր հույսը, թե Հայոց կաթողիկոսին կարելի է այնքան հեշտությամբ գնել և՛ քաղկեդոնական ուղղափառության հարցի մեջ։ Երեք տարի մայրաքաղաքում շքեղության մեջ ապրելուց հետո Պետրոսն ուղարկվեց Սեբաստիա, ուր ապրում էր Սենեքերիմ Արծրունու ժառանգների մոտ։ Այստեղ էլ նա մեռավ 1058 թվին, թողնելով հրաշագործ մարդու (Գետադարձ) և ստոր դավաճանի՝ իրար տրամագծորեն հակասող անունները, առաջինը՝ շինծու, տգիտության և դյուրահավատության տրամաբանությամբ հերյուրած, երկրորդը՝ միանգամայն իրական և հենց դրանով էլ սարսափելի։ Կաթողիկոսական աթոռն Արգինայում մնաց, և Պետրոսի փոխարեն, նրա մահից հետո, կաթողիկոսացավ նրա քեռորդի Խաչիկ Բ-ն (1058—1065 թթ.)։

Իսկ Անին մի քանի տարի խաղաղությամբ վայելեց Բյուզանդիայից ուղարկված կառավարիչների ձեռքի տակ, քանի որ համեմատաբար դա խաղաղ էր Արևելքը։ 1058 թվականին կառավարիչ նշանակվեց Առոն Մագիստրոսը, որ ազգով բուլղարացի էր[1] և Անիի գեղեցկությունից գրավված, մեծ ծախսեր արավ և բարձրացրեց պարիսպները, ինչպես նաև ջրանցք շինեց։ Ջրանցքի հարցը պարզաբանելու համար մենք պիտի նկատի առնենք, որ Անին իր մեջ ջուր չունեցող մի տեղ է գրավում, բայց Բագրատունյաց ժամանակ, դառնալով պարիսպներով շրջապատված բերդ, նա անպատճառ պիտի ունենար ջրմուղ՝ հեռվից ջուր բերելու համար, որ բերդին չափազանց հարկավոր էր՝ դաշտային կողմի պարիսպների շուրջը փորած խոր խրամը լցնելու համար։ Այս հանգամանքը միանգամայն անկասկածելի է դարձնում, որ Անին Առոն Մագիստրոսի ժամանակ ջրանցք ուներ։ Ուստի շատ հավանական է դառնում, որ Առոնի արածը լինի այդ ջրանցքից մի նյուղ տանելը միջնաբերդ. մի ձեռնարկություն, որ այն ժամանակվա տեխնիկական պայմանների մեջ արդարև մի ամբողջ մեծագործություն էր։ Ջրանցքի հետքերն այժմ գտնված են պեղումների միջոցով, և նրանք ցույց են տալիս, որ ջուրը բլրի գլուխը բարձրացնելու համար հարկավոր է եղել շինել երկաթե խողովակներ։ Իր այս գեղեցիկ շինարարության մասին բուլղարացի երիտասարդ կառավարիչը հիշատակություն է թողել այն արձանագրության մեջ, որ նա փորագրել է տվել Անիի մայր եկեղեցու հարավային պատի վրա, այսպիսի բովանդակությամբ. «Կամաւք ողորմութեամբ բարերարին Աստուծոյ ես Առանս Մագիստրոս մեծարեալ ի մեծափառ թագաւորութեանցն իգեղ զարդու և ի տիս մանկութեան իմոյ եկի յարեւելս ի գեղեցկաշէն բերդս յԱնի. բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կանկառոյտ արձանաւք և հաստահեղոյս ամրութեամբ և ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորդաբուխ ի մէջ ամրոցիս յուրախութիւն և ի զովացումն ծարաւեաց»[2]։

Առոն Մագիստրոսին հաջորդում են երկու կառավարիչներ, որոնք արդեն լավ անուն չեն թողել Անիի մեջ, երևի այն պատճառով, որ կրոնական ատելություն ունեին դեպի հայերը։ Մատթեոս Ուռհայեցին նրանց անվանում է «անօրէն իշխանք Հոռոմոց» և ավելացնում է, թե նրանք էին «Վրացի ազգաւ»[3]։ Բայց գոնե երկրորդի, այն է՝ Գրիգոր Բակուրյանի վերաբեր-

1 Մատթ. Ուռհ., էր. 105—106։
2 Արիս. Լաստիվերտցի. էր. 89։

1 «Շիրակ», էր. 97։
2 «Շիրակ», էր. 70։
3 Էր. 148։

մամբ լիապես ապացուցված է, որ նա իսկական վրացի չէր, այլ քաղկեդոնիկ հայ Տայք նահանգից, համարյա արդեն վրացիացած, որովհետև թեև իրեն վրացի էր անվանում, բայց դեռ շարունակում էր գրել հայերեն տառերով։ Իր տեղում մենք մանրամասն խոսել ենք Տայքի քաղկեդոնիկ հայության մասին։ Ներկա հանգամանքը շատ բնորոշ է ցույց տալու համար, թե դավանական խտրությունների բաժանված հայերի մեջ ինչ տեսակ թշնամական հարաբերություններ էին ստեղծվում։ Այս Գրիգոր Բակուրյանը Բուլղարիայում շինել է Պետրիցիոնի վանքը և ինքն էլ կանոններ է գրել նրա միաբանների համար։ Եվ ահա մի շարք հետաքրքրական հանգամանքներ ենք տեսնում այս հիմնարկության մեջ։ Կանոնադրությունը գրված է հունարեն լեզվով, Գրիգոր Բակուրյանն ստորագրել է այդ թուղթը հայերեն տառերով, իսկ վանքն անվանված է «վրացական» վանք։ Միաբանների մեծ մասը, հարկավ, հայեր էին, որոնք Գրիգոր Բակուրյանի նման հայերեն լեզուն էին գործածում, սակայն իրենց համարում էին վրացի[2]։ Այս բնական էր այն դարերում, երբ ազգության նշանը դավանությունն էր համարվում։ Եվ որովհետև քաղկեդոնիկությունն ու հակաքաղկեդոնիկությունը փոխադարձաբար իրար անհաշտ թշնամիներ էին, ուստի հասկանալի է այն թշնամական զգացմունքը, որ երևան էր գալիս Անիի հակաքաղկեդոնիկ հայության և Գրիգոր Բակուրյանի միջև։ Որ այս ատելությունը կրոնական հանգամանք միայն ուներ և այդքան սուր կերպարանք ընդունել էր իսկապես այն պատճառով, որ երկու կողմերն էլ միևնույն ազգության էին պատկանում, ցույց է տալիս այն փաստը, որ Բակուրյանի ընկեր Բագրատ162 Մագիստրոսը[3] ողորմություն է արել Անի մայրաքաղաքին, վերջինս ապատելով մի շարք հարկերից ու տուրքերից, ինչպես գրում է նա իր արձանագրության մեջ, որ փորագրված է մայր եկեղեցու վրա[4]։

Այս տեսակ «ողորմութիւն» արել է և վերոհիշյալ Առոն Մագիստրոսը, բերելով հատուկ գիր՝ թագուհու մատանիով կնքված։ Այնպես որ, կարելի է ասել, թե բյուզանդացիների կարճատև տիրապետությունն Անիում առհասարակ շինարար և բարեկարգչական էր։ Մի հետաքրքրական հանգամանք է բացահայտվում մայր եկեղեցու արձանագրություններից, այն, որ Անիի հարկերն ու տուրքերը հատկացված էին Բյուզանդիայի կայսրուհուն։163

Հիշատակության արժանի է, որ Բյուզանդիայի կառավարիչներից մեկի ժամանակ Անի եկավ Գագիկ Գ-ի որդի Հովհաննեսը։ Այս ճանապարհորդությունը նա, անշուշտ, իր հոր հանձնարարությամբ էր կատարել, գուցե երկրի մեջ նոր համակրության և քաղաքական նպաստավոր հանգամանքներ ստեղծելու նպատակով։ Այս դիտավորությամբ էլ երիտասարդ Բագրատունին ամուսնացավ Անիի հոռոմ կառավարչի աղջկա հետ։ Սակայն, ինչպես երևում է, փորձը ամենևին հաջողություն չունեցավ, և Հովհաննեսը, կորցնելով հույսը, թե կարող է որևէ նպաստավոր դիրք ստեղծել իր տոհմային իրավունքները Շիրակում վերականգնանացնելու համար, ստիպված եղավ, անշուշտ հակառակ իր կամքի, հեռանալ Անիից և գնալ Վրաստան[5]։

---

[1] **Н. Марр**, «Аркаун, Монгольское название христиан», СПБ, 1905, стр. 17—22.

[2] Ibid.

[3] Ուռհայեցին սրան անվանում է «Բագրատ հայրն Սմբատայ»։ Այս հորջորջումը ցույց է տալիս, թե Սմբատը հայտնի էր հայերի մեջ և թե այս «վրացին» էլ, անշուշտ, հայ էր։

[4] «Շիրակ», եր. 70։

[5] «Շիրակ», եր. 97։

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐ

1. Տուղրիլ բեկ[1]: Վերևում[2] մենք տեսանք, որ Արևմտյան Թուրքեստանում պետություն ստեղծած Սելջուկի երկու թոռները՝ Տուղրիլ բեկ և Չաքար բեկ, անցնելով Օքսուս (Ամու-Դարյա) գետի ձախ կողմը, պատերազմներ էին մղում Ղազնիի թագավորների դեմ՝ Իրանի Խորասան նահանգին տիրանալու համար։ Այս պատերազմները, փոփոխակի հաջողություններով, անցին երկար ժամանակ, որի ընթացքում ծաղկած և հարուստ Խորասանը հաճախ ենթարկվում էր թուրքական վայրագ արշավանքներին և ավերվում էր սոսկալի չափերով։ Խորասանն իր հուսահատական ճիչերով լցնում էր Ղազնիի արքունիքը, պաշտպանություն խնդրելով նրանից։ Բայց անապատի ցեղերը անպարտելի էին իբրև խաղաղ երկրներ ավերողներ։ Քամու պես նրանք վրա էին տալիս անապատների խորքերից և քամու պես էլ անհետանում էին անապատներում։

Վերջապես 1039 թվին տեղի ունեցած պատերազմի մեջ երկու եղբայրները վճռական հաղթություն տարան և նրանց առջև իր դռները բաց էր անում բազմահարուստ և հռչակավոր Մերվ քաղաքը։ Այսպիսով, ամբողջ հյուսիսային Խորասանը դառնում էր Սելջուկի թոռների սեփականություն և Հելուսպուր քաղաքն էլ՝ նոր հարստության մայրաքաղաք։ Չաքար բեկը մնաց այդտեղ՝ նորաստեղծ պետությունն ամրացնելու և կարգի բերելու համար, իսկ Տուղրիլ բեկը, բանակի գլուխն անցած, առաջ էր շարժվում աշխարհներ նվաճելու համար։ Նվաճել միշտ նշանակել է կողոպտել, գերել, սրով ու հրով կյանք ոչնչացնել։ Հարուստ ավարի ակնկալությունը նորանոր թուրքական ցեղեր էր գրավում դեպի սելջուկյան բանակը, որը, այսպիսով, հետզհետե մեծանում էր և հետզհետե էլ մեծացնում էր արշավանքների, պատերազմական գործողությունների իր պահանջները։ Տուղրիլ բեկը, մի հզոր և տաղանդավոր կռվող, չէր կարող անտես անել իր զորքի այդ տենչերը, քանի որ հաջողություն էր գտնում ամեն տեղ և ոչ մի լուրջ արգելքի չէր հանդիպում իր նվաճողական ախորժակը չափավորելու համար։

Եվ իրավ, եթե Ղազնիի սուլթանության նման մի ուժեղ պետություն չկարողացավ կանգնեցնել սելջուկների հաղթական ընթացքը, ի՞նչ կարող էին անել մանրացած Իրանը և քաղաքականապես փտած խալիֆաթը։ Հյուսիսային Խորասանի գրավումից հետո գրեթե տասնամյա մի ժամանակաշրջանում Տուղրիլ բեկն իր ձեռքն էր գցում և Իրանի մյուս մասերը մինչև նրա արևմտյան սահմանները, ուր մի կողմից Բաղդադի խալիֆայությունն էր թուրք հերոսի ոտքերի առաջ փռվում, մյուս կողմից՝ «Կայզար-ի-Ռումի» (Հոռոմների կայսրի) պետությունը, որ շատ հռչակված էր ամբողջ Արևելքում իր մեծությամբ և ահեղ ուժով։ Անապատի որդիները, համոզված լինելով, որ վերցնել կայսրի երկրները վեր է իրենց ուժերից, մեծ բան էին համարում և այն, եթե իրենց կհաջողվեր փոքր-ինչ կողոպտել «Ռումի» հարստությունները։ Դեռ չգիտեին նրանք, որ արևմտյան հռչակավոր կայսրությունն էլ Բաղդադի խալիֆայությունից պակաս չի փտած

---

[1] Գրվում է նաև Տողրուլ բեկ։

[2] Գլ. Զ, 1։

ներքուստ, չնայած իր արտաքին փայլին։ Եվ նրանք նախ Բյուզանդիայի սահմանները խուժելու վրա էին ամենից շատ ուշադրություն դարձնում։

Եվ այսպես, Միջին Ասիայի խորքերից, մոտ հիսուն տարվա ընթացքում, առաջ էր խաղացել և կայսրության դռները բախում էր մի ահավոր, վայրենի ուժ, որ իր հետ բերում էր քաղաքակրթության կատարյալ կործանում։ Սա սոսկ զինվորական մի արշավանք չէր, այլ ազգերի մի տեղափոխություն, որ գալիս էր նրանց համար բնակության տեղեր որոնելու և այնտեղ ընդմիշտ բնակվելու։ Այս բավական չէ։ Տեղափոխվող ցեղերը վաչկատուն տնտեսության ձևերի մեջ էին ապրում, ասել է՝ նստակյաց տնտեսությունը նրանց համար խորթ էր, խորթ էր մանավանդ այն բարձր կուլտուրան, որ մշակել էր այդ նստակեցությունը տասնյակ դարերի ընթացքում։ Ուստի տեղափոխվող ցեղերը քանդում էին այդ ամբողջ օտար ու խորթ աշխարհը, կոտորում էին այդտեղ ապրող մարդկությունը, կամենալով, այդպիսով, ամեն տեղ տիրապետող դարձնել իրենց հովվական կենցաղը, երբ երկրի երեսին միայն վաչկատուն հոտերն են թափառում[1]։ Այսպես էր խաչնարած տափաստանի ներկայացուցիչ ցեղերի վերաբերմունքն առհասարակ դեպի Արևմտյան Ասիայում տիրող կուլտուրական իրականությունը։ Բայց կար և մի մասնավոր հանգամանք, որ իր առանձին ներգործությունն էր անում նույն այդ կողմերի ազգաբնակության զանազան մասերի վրա։ Սելջուկները միայն վայրենի տափաստանի զինվորներ չէին, այլև իսլամի զինվորներ, այն էլ նրա ուղղափառության հոգսերով լցված զինվորներ[2]։ Նրանք սյուննիներ էին և աշխատում էին բարձրացնել այդ աղանդը, ուստի և ճնշում էին շիա հավատացյալներին։ Եվ հասկանալի է, որ այդ նեղ, վայրենի աղանդավորությունը միջին-ասիական միջավայրում պիտի գոյացներ առհասարակ անհաշտ և մոլեռանդ իսլամի մի նոր տեսակ—Թուրքական իսլամ, ավելի դաժան ու թշնամի, որ և պիտի պարտավորեցներ վաչկատուններին ավելի անխնա, ավելի դաժան անգթությամբ վարվել իրենց ձեռքն ընկած ոչ-իսլամ ժողովուրդների հետ, ինչպես էին, օրինակ, քրիստոնյաները և այլ կրոնների պատկանողները։

Արդ՝ այսպիսի հատկություններով օժտված մի մեծ ուժի հանդեպ, որ գալիս էր մահահրավեր շպրտելու ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, ի՞նչ պաշտպանողական կարողությունների տեր էր Բյուզանդիան բախման ենթարկված իր արևելյան ծայրամասերում։

Մենք տեսանք, թե ինչ միջոցներով—մեծ մասամբ բռնադատական և խաբեբայական—կայսրությունը տասնյակ դարերի ընթացքում ընդարձակում էր ասիական իր սահմանները, ամբողջ աշխարհներ խլելով գլխավորապես Վրաստանից և Հայաստանից։ Սելջուկյան արշավանքներից առաջ կայսրության արևելյան և հարավ-արևելյան սահմանները բաժանված էին չորս թեմերի կամ նահանգների մեջ. 1. **Միջագետք**, որ նայած իր այս անվան, Տիգրիսի և Եփրատի միջև ընկած դաշտավայրը չէր գրավում, այլ պարզապես Հայաստանի հարավ-արևմտյան մասն էր բռնում, սկսվելով Եփրատից և անցնելով Դիարբեքիրի հյուսիսային կողմով։ Այս թեմը, ինչպես գիտենք, տրված էր Գրիգոր Մագիստրոսին իբրև՝ փոխարինություն նրա կալվածների, որոնք գտնվում էին Շիրակի թագավորության արևելյան

[1] **Г. Ф. Герцберг,** «История Византии», М., 1897, стр. 237.

[2] Ibid.

մասերում (Բջնի և այլն) և որոնք նրա հոժար կամքով անցել էին Բյուզանդիային։ 2. **Տարոն**, Միջագետքի թեմից դեպի արևելք, իր անունն ստացած Հայոց Տարոն գավառից։ Այստեղ էլ կառավարիչների պաշտոնում առավելապես տեղային հայ նախարարական տան (Բագրատունիների) ներկայացուցիչներին ենք տեսնում։ Ինչպես գիտենք, Տարոնի Բագրատունիների մեջ շատ սիրված էր Թոռնիկ անունը, որ և սկսեց նույնիսկ փոխարինել ընդհանուր պետոհմային անվանը։ Տարոնի թեմը շատ նշանավոր տեղ էր գրավում պետական պաշտոնեության գործի մեջ։ Այդտեղ էր գտնվում հռչակավոր Մանազկերտը, լավ ամրացված և զինված բերդը։ 3. **Վասպուրական**, որ ընդգրկում էր հենց հայկական նահանգի այն մասը, որ տարածված է Վանա լճից դեպի արևելք։ Այս թեմը արդեն կառավարվում էր միայն հույն պաշտոնյաների ձեռքով։ Երեք կողմից շրջապատված լինելով մահմեդական երկրներով, այն է՝ հարավից Քրդիստանով, արևելքից՝ Ատրպատականով և հյուսիսից՝ Դվինով, Վասպուրականն ամենից շատ էր ենթարկված վտանգի և եթե ուներ պաշտպանողական փոքր ի շատե ազդու ուժ, այդ այն էր, որ 11-րդ դարի երկրորդ կեսում դեռ չէին վնասվել նրա այն բերդերը, որոնք ամրացված էին Վասիլ Բուլղարասպանի հրամանով, Հայոց մեծ արտագաղթից հետո։ 4. Վերջապես՝ չորրորդ սահմանապահ թեմն էր **Իբերիան** (Վիրք), որ գլխավորապես Տայք նահանգն էր սկզբում պարունակում իր մեջ։ Անիի հափշտակության հետ նրա թագավորությունը նույնպես միացվում էր Իբերիայի թեմին, որ և մեծ կարևորություն էր ստանում։ Թեմի կառավարիչը նստում էր Անի քաղաքում[1]։

Այսպես էին սահմանները։ Բայց հարցը նրանց այս կամ այն տեսակ վարչական դասավորումը չէր, այլ այն, թե ինչ ուժերով պիտի պաշտպանվեին այդ վարչական դասավորումները։ Այս տեսակետից բյուզանդական կարճատես և մոլի քաղաքականությունը չէր մոռացել և ոչ մի բան՝ պետական պաշտպանությունն անկայուն, վտանգված դարձնելու համար։ Խոսելով սելջուկների և բյուզանդացիների միջև տեղի ունեցած առաջին ընդհարման մասին, նորագույն բյուզանդագետներից մեկն ասում է.

«Անշահավետ հետևանքներ ունեցավ այն հանգամանքը, որ դրանից ոչ շատ առաջ Կոստանդին թագավորը կատարեց արևելյան սահմանի վրա երկու փոփոխություն, որոնք զգալի չափով թուլացրին բյուզանդացիների պաշտպանողական ուժերը։ 1045 թվին էր, որ նա ի կատար ածեց Վասիլ Բ-ի դաշնագիրը (1022 թ.), որ շատ կասկածելի արժեք ուներ և Անիի հայ թագավորության կցումով բյուզանդական կայսրության կազմի մեջ մտցրեց անկախ Հայաստանի մի մասը։ Վերջին Բագրատունին, Գագիկ թագավորը, փոխարենը մեծ կալվածներ ստացավ Կապադովկիայում, Հայոց կաթողիկոսությունը տեղափոխվեց Կ. Պոլիս։ Բայց նոր աշխարհին տիրապետելը բյուզանդացիների վրա ծանր պարտավորություն դրեց պաշտպանելու ավելի երկար և ավելի դժվար մի սահմանագիծ, քան առաջ էր։ Մինչդեռ առաջ Հայաստանի ռազմասեր լեռնային շրջաններն իրենք էին մեծ քաջությամբ պաշտպանում իրենց հայրենիքը, այժմ այդ վտանգավոր տեղերի պաշտպանությունը կախված էր առավելապես Կ. Պոլսի կառավարության կանխատեսությունից, ուժից և միջոցներից։ Անմիջական վնաս բերեց այն մեծ

[1] **Скабаланович,** «Византийское Государство и Церковь в XI веке», СПБ, 1884, стр: 198—200.

սխալը, որ արավ Կոստանդին Թ-ն, ամեն ինչից փող հանելու իր վատ հակման հետևանքով։ Նա դրամական հարկ դրեց արևելյան սահմանամերձ բնակիչների վրա, որոնք մինչ այդ ազատված էին բյուզանդական գանձարան ուղիղ հարկեր մուծելուց. նույնպես և արևելյան ու հյուսիս-արևելյան սահմանագծի երկարությամբ ապրող մանր վասալական ապահարկ իշխանների վրա։ Այս դրամական վճարումների փոխարեն Կոստանդինն նրանց ազատեց մշտական զորք պահելու պարտավորությունից, մի զորք, որ մշտապես պատրաստ էր սահմանագլուխը պաշտպանելու։ Այսքան անհեթեթ կարգադրությունների հետևանքով արձակվեցին վրաց և հայոց տեղական զորքի մոտ 50 հազար զինվորները, իսկ բյուզանդական կենտրոնական իշխանության վրա դրվեց մի նոր ծանր պարտավորություն, որ նա, տարաբախտաբար, չկարողացավ կատարել ինչպես հարկն է»[1]։

Դրությունն այսպես էին հասկանում և իրենք, սելջուկյան արշավանքների ժամանակակիցները։ Այսպես, մեր Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յԱրևելից Հոռոմք և կուրտ (ներքինի) զօրապետօք ջանային պահել զաշխարհն Հայոց և զամենայն տունն Արևելից»[2]։ Բայց այսքանը բավական չէր։ Բյուզանդական ազահությունը, ինչպես տեսանք, չկարողացավ փոքրիշատե զսպել ինքն իրեն այս վտանգավոր ժամանակներում անգամ։ Իբերիայի թեմի վրացի ազգաբնակությունը, ինչպես վկայում է մի բյուզանդական աղբյուր, այնքան կեղեքված էր կայսերական հարկահանությամբ, որ խմբերով թողնում էր իր հայրենիքը և գաղթում թուրքաց սուլթանի մոտ։ Այստեղ նրանք հանգիստ չէին նստում։ «Թշվառ վրացիները,— ասում է այդ աղբյուրը,— վրեժ հանելու համար քաշում էին սուլթանին, նրա բոլոր ուժերով, Ռումի կայսրության դեմ և այս բանը դարձավ անթիվ աղետների ազդանշան»[3]։

Ահա այսպիսի ողբալի հանգամանքների մեջ էր սկսվում Արևմտյան Ասիայի պատմության այն չորս հարյուրամյա աղետալի շրջանը, որ լցված է Միջին Ասիայի ցեղերի շարժումներով, շարժումներ, որոնք տակն ու վրա արին մարդկության ճակատագիրը, ասպարեզից անհետացնելով բազմաթիվ կուլտուրական ազգեր, որոնց թվում նաև հենց իրենց, բյուզանդացիներին և նրանց տեղ հաստատելով երկաթի և արյան պաշտամունքը։ Մեծ էր Բյուզանդիայի պատասխանատվությունը քաղաքակիրթ մարդկության առջև։ Մի այսքան վտանգավոր ժամանակամիջոցում նա էր միակ կազմակերպված, քաղաքակրթության բարձր աստիճանին հասած խոշոր ուժը, որ պիտի ոչ միայն կանգնեցներ միջին-ասիական վաչկատուն վտանգի հոսանքը, այլև ետ շպրտեր նրան դեպի նրա հարազատ անապատները։ Բայց եթե նա չկարողացավ կատարել մի այդպիսի մեծ համամարդկային առաքելությունը, պատճառը, եթե ոչ միակը, գոնե ամենագլխավորը, պիտի որոնել նրա ներսում, ուր գործում էր հարաճուն քայքայումը, այն ամարդի և ապականարար սիստեմի մեջ, որ հատուկ էր այդ մեծ պետությանը և որի արտահայտությունը լիապես բովանդակում է իր մեջ «բյուզանդականություն» անունը։

Սելջուկյան ներխուժումները բյուզանդական սահմաններից ներս սկզբում փոքր չափերով էին կատարվում և ունեին ավազակային բնույթ։ Այդ

[1] Герцберг, стр. 227—228.

[2] Եր. 102։

[3] Schlumberger, III, p. 553—554.

մանր արշավանքները հաճախ հաջողությամբ էին վերջանում և այս հաջողությունը տարածվում էր ամբողջ Թուրքական Արևելքում, մինչև Միջին Ասիա, այնտեղ հետաքրքրություն և շարժում հարուցելով, այդ արշավանքներն ավելի հաճախակի դարձնելու ուղղությամբ։ Այսպիսով պատրաստվում էին ավելի խոշոր արշավանքներ։ Իսկ հաջողությունը, որ ընծայում էին բյուզանդացիներն անապատի անզուսպ ձիավորներին, երբեմն ճիշտ որ չափազանց զայթակղեցուցիչ էր, վեր հանելով բյուզանդացիների կատարյալ անընդունակությունը։

Դեռ նոր էին Մոնոմախի կայսրի զորքերը հափշտակել Անին, դեռ նոր էր բյուզանդական կարգը հաստատվում հայերից խլված երկրներում, երբ սելջուկյան արշավանքներն սկսեցին հաճախ կրկնվել։ Վասպուրականի թեմը շարունակ կողոպտվում էր, և այնտեղ գտնված բյուզանդական զորքը չափազանց փոքրաթիվ էր, որպեսզի կարողանար լուրջ դիմադրություն ցույց տալ հարձակվողներին։ 1047 թվականի մոտերքը Վասպուրական մտավ սելջուկյան մի բանակ, որի հրամանատարն էր Տուղրիլ-բեկի մոտիկ ազգական Քութլմըշը[1] և որ գալիս էր Դիարբեքիրի երկրից, ուր սաստիկ պարտություն էր կրել Մոսուլի արաբ ամիրա Կորեյշից[2]։ Ատրպատական անցնելու համար ճանապարհ ընտրելով Վասպուրականը, Քութլմըշը դիմեց երկրի բյուզանդական կառավարիչ (կատապան) Ստեփանոս Լիխուդեսին և առաջարկեց ազատ ճանապարհ տալ իր բանակին, խոստանալով ոչ մի թշնամական գործողություն չկատարել ճանապարհին։ Եվ իրավ, սելջուկյան պարտված բանակը մեծ վտանգ չէր էլ կարող ներկայացնել, նա գրեթե քայքայված էր, զինվորներից շատերը զենք չունեին։ Այս հանգամանքն էլ գրգռեց բյուզանդացի պաշտոնյայի փառասիրությունը։ Նա թեթևամտորեն կարծեց, որ եթե Քութլմըշը երդվում է, թե չի խախտի Վասպուրականի խաղաղությունը, այս միայն այն պատճառով է, որ նա վախենում է բյուզանդական զինվորական ուժից։ Ուստի, կամենալով քաջություն ցույց տալ, նա հավաքեց իր զորքերը և մարտահրավեր ուղարկեց Քութլմըշին։ Սա չհրաժարվեց, և ճակատամարտը տեղի ունեցավ Վանա լճի հյուսիսային ափին, Արճեշ քաղաքի մոտ։ Հակառակ ամենայն ակնկալության, սելջուկները հաղթեցին հոռոմներին և նույնիսկ գերի վերցրին մեծախոս կատապանին։ Քութլմըշը Թավրիզ գնաց իր այդ հաղթությամբ այնքան հպարտացած, որ ծախեց իր բարձրաստիճան գերուն և ինքն ապստամբեց Տուղրիլ-բեկի դեմ։

Ահա այս զարմանալի հաջողությունն էր, որ Սելջուկյան մեծ արշավանքների դուռն էր բաց անում։ Տուղրիլ-բեկը, մի կողմ թողնելով իր ապստամբած ազգականին, նույն 1047 թ. քսան հազարանոց մի բանակ դրեց իր եղբորորդի Աղանի[3] հրամանատարության տակ և նրան ուղարկեց կողոպտելու Հոռոմների երկիրը։ Աղանն իր արշավանքն սկսեց Թավրիզից այն ուղիղ ճանապարհով, որ Արածանիի վերին հոսանքի հովտով (Բագրևանդի գավառով) տանում է դեպի Տրապիզոն։ Այս արշավանքը նկարագրել է միայն մեր ժամանակագիրներից մեկը, Արիստակես Լաստիվերտցին, որ տարաբախտաբար, սառնասիրտ մի պատմող չէ, այլ ավելի մի երկարաբան ողբասաց և

[1] Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Գութլմըշ։

[2] Ըստ նույն հեղինակի՝ Խուրեյշ։

[3] Այս անունը միայն բյուզանդական աղբյուրների մեջ է մնացել և աղավաղված է։

խրատներ տվող հոգևորական, բայց որ լավ ներկայացնում է այն վախն ու սարսափը, որ ազդում էին նրա ժամանակակիցներին սելջուկներն իրենց արշավանքներով։

«Ի սոյն ամս,—գրում է նա,—բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երիվարք արագունք իբրև զարծուիս, և սմբակք նոցա իբրև զվէմս հաստատունք. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, գօտևորեալք քաջապես, և անլուծանելի ունելով զխրացս կօշկաց։ Եւ ելեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառս քան և չորս սրով հրով և գերութեամբ։ Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս։ Որք իբրև զառիւծս ընթացան և իբրև կորիւն առիւծուց անողորմաբար արկին զդիակունս բազմաց գէշ գազանաց և թռչնոց երկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ գալ ի քաղաքն Կարնոյ»[1]։

Այստեղ մեր պատմիչը թողնում է պարզ խոսելու սովորությունը և միայն այն է ասում, թե սելջուկներն առաջ գնալ չկարողացան, որովհետև աստված կտրեց նրանց ճանապարհը՝ ցույց տալու համար, թե առանց իր կամքի չէր, որ կատարվեց այդ արշավանքը։ Բայց բյուզանդական աղբյուրները թշնամու վերադարձի պատճառը բացատրում են շատ հասկանալի և իրական հանգամանքներով։

Վասպուրականի կառավարիչ (կատապան), գերի ընկած Ստեփանոս Լիխուդեսի փոխարեն, ուղարկված էր Ահարոնը, որ կոչվում էր «որդի Բուլղարին»[2]։ Սա իր սակավաթիվ զորքերով, չկարողանալով կանգնեցնել սելջուկներին, նահանջեց դեպի Բասեն և օգնություն խնդրեց Կատակալոն Կեկավմենոսից[3], որ Անիի կառավարիչն էր։ Ներքինի զորավարը, որին մենք տեսանք Դվինի տակ՝ բյուզանդական երկրորդ արշավանքի ժամանակ, շտապեց անհապաղ կատարել Ահարոնի խնդիրքը և հավաքելով ինչքան զորք ուներ՝ գնում միանում է նրա բանակին։ Տեղի է ունենում խորհրդակցություն, որի ժամանակ բյուզանդական զորապետները վճռում են ճակատ առ ճակատ չկռվել, այլ դիմել զինվորական խորամանկության։ Բյուզանդական բանակն իրեն ձևացնում է խուճապի բռնված, փախուստի է դիմում, բանակատեղում թողնելով իր ձիերը, ամբողջ ծանրոցքը և դարանամուտ է լինում մոտիկ մի տեղ։ Աղանը[4] հեշտությամբ ընկնում է ծուղակի մեջ։ Տեսնելով, որ թշնամին չկա այլևս առջևում, նա առաջ է շարժվում և հրաման է տալիս իր զորքին տիրանալ բյուզանդական լքված բանակին։ Սակայն մինչդեռ սելջուկներն զբաղված էին լքված բանակը կողոպտելով, հանկարծակի բյուզանդացիները ետ դարձան և հարձակվեցին նրանց վրա։ Սկսվեց մի անհավասար կռիվ։ Սելջուկները մեծ կորուստ ունեցան։ Ինքն Աղանը, նրա հետ և ուրիշ սելջուկ գլխավորներ, կռվում էին առաջին շարքերում և սպանվեցին։ Մնացած զորքը

[1] Եր. 65։

[2] Բուլղարական Վլադիսլավ թագավորի որդին էր Ահարոնը։ Սա այն Առոնն է (Ահարոն), որ հետո դարձավ Անիի կառավարիչ և արձանագրություն է թողել մայր եկեղեցու վրա, որից երևում է, որ նա երիտասարդ էր և շինեց Անիի ջրանցքը։

[3] Կամենաս նշանակում է կրակ և ցույց է տալիս, որ այդ զորավարն արագաշարժ էր, եռանդոտ։

[4] Աղանը կրում էր Խուլ մականունը։

ետ դարձավ և փախավ Պարսկաստան։ Այս ամոթալի պարտությունը մեծ զայրույթ պատճառեց Տուղրիլ-բեկին, որ արդեն մեծամիտ և հպարտ մի նվաճող էր դարձել։ Նա որոշում է իսկույն ևեթ վրեժ հանել։ Այս անգամ նա հավաքեց մի ահագին բանակ (շուրջ 100 հազար մարդ) և հանձնելով նրան իր համամայր եղբայր Իբրահիմ Ինալին, նորից ուղարկեց Կարինի ուղղությամբ գործելու[1]։

Այս արշավանքը տեղի ունեցավ 1048 թվականին, «որ էր,—ասում է Լաստիվերտցին,—երկրորդ ամ գերութեան մերոյ», այսինքն Շիրակի անկախության վերացման։ Մեր պատմիչը տպավորիչ արտահայտություններով է ներկայացնում այդ մեծ և ահավոր շարժումը, որ մի ճանապարհով չէր ընթանում և մի կետի վրա չէր կենտրոնանում։ «...շարժեալ միւս անգամ մրուր դառնութեան լի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ ահագին ծփանօք և եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ. և ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին. յարևմուտս՝ մինչև ի Խաղտեաց գաւառն. իսկ ի հիւսիսի՝ մինչև ի Սպեր և մինչև յամուրս Տայոց և Արշարունեաց. իսկ ի հարաւ մինչև ի Տարօն և մինչև ի գաւառսն Հաշտենից, մինչև յանտառն Խորձենոյ։ Եւ զետղ առեալ դադարեաց աւուրս չորեքտասան, և ծովացեալ ծածկեաց զլերինս և զմացառ վայրս և կալաւ բնաւ զաշխարհս»[2]։

Սեպտեմբեր ամիսն էր։ Այս հեղեղը կրակ և արյուն էր թողնում իր ճանապարհին։ Ազգաբնակությունը ջնջվում էր, իսկ փախչողները հավաքվեցին Մանանաղյաց գավառի Սմբատա անունով սարի վրա, ուր գտնվում էր նույն անունով բերդը։ Փախստականների թիվն ահագին էր, իսկ նրանց տարած անասուններն անթիվ ու անհամար։ Սելջուկներն այդտեղ էլ հասան, ջարդեցին, ոչնչացրին, հափշտակեցին ամեն ինչ։ Եվ Հայաստանի երկնքի տակ փռվեց անկումների մի տեսարան, որ անսովոր չէր եղել անցյալում, սովորական պիտի դառնար մանավանդ ապագայում։ Այդ տեսարանի հայ նկարագրողն էլ երևան էր գալիս իսկույն և նա էլ պիտի մշտական երևույթ դառնար հայ գրական իրականության մեջ։ Ողբ և հառաչանք—այս էր այդ նկարագրության անունը և նա ուրիշ բան չէր կարող լինել արյան մեջ խեղդվող երկրում։ Արիստակես Լաստիվերտցին է առաջին հայը, որին կարելի է տալ գերազանցորեն ջարդի երգիչ անունը։ Նրա տված պատկերները, նրա արտահայտած կսկիծն ու մորմոքը հայ իրականության տեր ու տիրականը եղան երկար ժամանակ։ Եվ Հայոց պատմությունը չի կարող անտես անել այդ պատկերներից և ոչ մեկը, պիտի ամենքն առնի իր մեջ, քանի որ նրա գլխավոր հոգսը պիտի լինի ցույց տալ դարից դար, թե ինչպես էր սպանվում հայ ժողովուրդը։

Արդ, Լաստիվերտցին Բասենի և Սմբատա սարի աղետների տեսարանը տալիս է այսպես.

«...քաղաքք մեր աւերեալք և տունք այրեցեալք, ապարանք հնոցացեալք, և արքունաշէն սրահք աճիւնացեալք։ Արք ի հրապարակս կոտորեալք, և կանայք ի տանց գերի ելեալք, և կաթնասուն տղայք զքարի հարեալք, և գեղեցիկ դէմք պատանեկաց թառամեալք։ Կոյսք ի հրապարակս ի խայտառականս անկեալք և երիտասարդք առաջի ծերոց սրախողխող եղեալք. պատուական ալիք ծերոց ընդ արիւն և ընդ ապաժոյժ եկեալք, և դիակունք նոցա

[1] **Schlumberger**, III, p. 550.

[2] Արիստ. Լաստ., եր. 69։

թաւալգլոր խաղացեմ'ալք։ Սուրք թշնամեացն շլացեալք և ձեռք նոցա ի զօրութենէ պակասեալք. աղեղանց նոցա լարք հատեալք, և նետք ի կապարճից նոցա սպառեալք. անձինք նոցա ձանձրացեալք, և սիրտք նոցա յողորմութիւն ոչ եկեալք... ո՜հ և ավաղ աւուրն այնորիկ լուսանալոյ... Այսօր միջօրեայ աւուրն այնորիկ՝ մեզ ի խաւար փոխարկեալ գիշերացաւ, գազանաբար ազգն հեթանոսաց որք ի վաղնջուց ի խշտիս իւրեանց մռնչէին... և յԱստուծոյ հօտիցն խնդրէին կերակուր իւրեանց, գիշերանալ մեզ աւուրն այնորիկ՝ ելին և տարածեցան ընդ երեսս երկրի, և գտին որս բազում և յագեցան կերակրովք, և նշխարեցին տղայոց իւրեանց յամս բազումս։ Արդ թէպետ և յամենայն տեղիս որս բաւականապէս պատրաստեցաւ նոցա, քանզի իբրև զդրախտ փափկութեան լի պտղով գտաւ երկիր առաջի նոցա. բայց առաւել ի գաւառն Մանանաղւոյն ի լեառն՝ որ կոչի Սմբատայ բերդ. քանզի անդ ժողովեալ էին բազմութիւն անթիւ փախստէիցն, և անհասուն որ ոչ գոյր թիւ։ Յորոց վերայ հասեալ անօրինացն ապականեցին զամուրս նորա, և մտեալ ի ներքս՝ սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսին։

Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում ողբոց արժանի. զի զոմանս ի նոցանէ որ ի բուռն անկանէին՝ սրամահ սպանանէին. և որք յառապար տեղիս անկանէին և ամրանային, նետիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս յանձաւին վերայ ելեալք մեծամեծ վիմօք գլաջարդ առնէին, որոց դիակունքն գլաթաւալ ի վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ զառաջիկայ զձորն լնուին։ Վա՜յ և աւա՜ղ շատ դառն լուսոյ աւուրն այնորիկ. զի քաջ արքն վառեալ զինու և սրտմտութեամբ եռացեալք, և վատքն թալկանային, կանացիք յիմարէին և երիտասարդք խիզախէին, այլ ելս իրացս ոչ կարէին իմանալ։ Քանզի յամենայն կողմանց պատնէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռացաւ հայր զգութ որդւոց, և մայր զսէր նորածին մանկանց։ Ոչ կարէր յիշել անդ կին նորահարսն զսէր փեսայի, և ոչ զմտաւ ածէր այր զգեղ ցանկալի ամուսնոյն իւրոյ. պակասեցան երգք պաշտօնէից և հատան ձայնք սաղմոսաց ի շրթանց սաղմոսողաց. կալաւ առհասարակ զամենեսեան դողումն և երկիւղ։ Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յղի գոլով վիժէին զմանկունս. և այսպիսօրէն գործով՝ իբր վարմաւ որսորդաց թակարդեալ էին զլեառն. ամենայն մինչև լքան և հատան ի զօրութենէ։

Իսկ ի գալ երեկոյին, առեալ զառ և զգերի և զկապուտ սպանելոցն, չոգան ի տեղւոյն։ Իսկ զկնի ելանելոյն նոցա, անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի, և քան զառաջինն ողորմագոյն և բազում ողբոց արժանի։ Քանզի բազմադիմի էին օրհասք մահուն. զի ոմանք յանկելոցն դեռ յոգիս կէին, և լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքեալք, նեղ և նուրբ ձայնիւ հայցէին հայթայթանս ծարաւոյն գտանել, և ոչ ոք էր որ տայր. իսկ կէսք շարապէս վիրաւորեալք, և ի ձայնէ պակասեալք, ուժգնակի շնչէին. և այլք ընդ փողիցն զենեալք՝ կիսամեռ գոլով, դժուարաւ խռնչէին. իսկ ոմանք ի դժուարին խոցուածոցն մարմանչեալք՝ աքացտէին ոտիւք, և եղնգամբ ձեռացն զերկիր դափր հատանէին։ Բայց առ նոսա և այլ ահագին էր տեսիլ տեսանել, որ և զքարինս անգամ և զայլ անշունչ արարածս շարժէին ի յողբս և ի հառաչանս. քանզի անօրէնքն յորժամ զգերիսն հանին ի լեռնէն, զտղայս առեալ ի գրկաց ծնողացն՝ յերկիր ընկեցին, որովք ի բազմութենէ նոցա եռայր առհասարակ տեղի բանակի նոցա։ Ոմանք յանկելոցն զքարի հարեալ սատակէին և կիսոց կուշտքըն պատառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն զկառաչ

ո՛ր լսելիք տանել կարէին. քանզի որ հետիոտիւք ընթանալ կարէին, այսր անդր յածելով զմարս իւրեանց խնդրէին, յորոց ի բարձրաձայնութենէ լալեացն՝ արձագանք լերինն զհետ հնչէին. իսկ այլ որք չև ևս էին հաստատեալք յոտս, ի գուճս սողալով կառաչէին. իսկ որք քան զնոսա ի տխեղծ հասակին, ոտիւք զերկիր հարկանէին, և ի սողալոյն պակասեալք ի ձայնս, ո՛չ կարէին արտաքս բերել զհագագն. և այսպիսի ողորմագին ձայնիւք և անհատ աղաղակաւ՝ զզառանց բերէին զնմանութիւն, որ դեռադեռ ի մարցն բաժանեալ՝ ի հօրձիցն ելևելս առնէին վասն անժոյժ գոլոյ բնութեանն. և անդադար ղօղանջիւք վիրաւորէին զօդն, և ձանձրացուցանէին զլսելիս լսողացն։

Այսոքիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՜վ լեառն. լեառն ամուր Սմբատայ՝ ոչ ընդ որ հաճեցաւ Աստուած բնակել ի նմա, այլ լեառն արեան, կոխման և կորստեան»[1]։

Չէր կարելի ասել, թե այսպես բնաջնջվող անմեղ ժողովրդի երկրում զինվորական ուժեր չկային, որոնք պարտավոր լինեին նրան պաշտպանելու։ Բյուզանդական բանակը շատ էլ փոքրաթիվ չէր։ Լաստիվերտցու պատմելով՝ նրա թիվը հասնում էր վաթսուն հազարի[2]։ Սակայն այդ ուժը հեռու մնաց Բասենից, փորձ անգամ չարավ թշնամի զորքին դիմադրելու։ Պատճառը, ինչպես ճշտորեն նկատել է մեր հեղինակը, բյուզանդական հրամանատարության մեջ տիրող անհամաձայնությունն էր։ Երկու հրամանատարները նախընթաց տարվանից ծանոթներն էին — Ահարոն Բուլղարի որդին և Կատակալոն Կեկամենասը։ Ավելացել էր մի երրորդն էլ — Գրիգոր Մագիստրոսը, Միջագետքի դուքսը, որ, երևի, իր հետ բերել էր իր հայ զորքը։ Բանակը կառավարվում էր այս երեքի խորհրդակցությամբ, բայց միշտ անցնում էր Ահարոնի ցանկությունը։ Թեև Կատակալոնն ուզում էր անմիջապես գնալ հանդիպել թշնամուն և ճակատել նրա հետ, բայց Ահարոնը ժխտում էր պատերազմական գործողությունների հնարավորությունը, գտնելով, որ բյուզանդական զորքը բավականաչափ ուժեղ չէ, ուստի և պահանջվում էր, որ նախօրոք կայսրից հրահանգներ խնդրվեն։ Թեև Կատակալոնը հավատացնում էր, որ բյուզանդական բանակը ոգևորված է անցյալ տարվա իր տարած հաղթությամբ և պատրաստ է նորից պատերազմի մեջ նետվել, մինչդեռ սելջուկյան զորքերը հոգնած են, վատ (չպայտած) ձիեր ունեն, որոնք չեն կարող երկար ճանապարհ գնալ, բայց և այնպես նա ստիպված եղավ համաձայնել, երբ Բուլղարի որդին նրան հիշեցրեց, որ համենայն դեպս կռվի բռնվել Իբրահիմ Ինալի բանակի նման մի խոշոր ուժի հետ առանց կայսրին իմաց տալու, անկարելի է։ Իսկույն սուրհանդակներ ուղարկվեցին Կ. Պոլիս, իսկ բյուզանդական բանակը քաշվեց Վանանդ գավառի մի կողմը, որ Վրաստանի սահմանի վրա էր գտնվում, և ամրացավ այդտեղ։

Մոնոմախ կայսրը պատասխանում էր իր հավանությամբ, որ եղած զորքերով կռիվ չսկսվի թշնամու դեմ։ Իսկ իր բանակին օգնելու համար նա հրամայում էր վրաց մեծ էրիսթավ Լիպարիտ Օրբելյանին անմիջապես հավաքել իր բոլոր զորքերը և շուտ [illegible] միանալու Կատակալոնի բանակին, որից հետո արդեն բյուզանդական զորքը կսկսեր հարձակողական գործողություններ։ Սակայն մինչև կգար Լիպարիտը, Իբրահիմ Ինալն անգործ չնստեց։ Բյուզանդական զորքի նահանջը համարելով մի փախուստ, նա գնաց նրան

[1] Եր. 71—78։
[2] Եր. 86։

հալածելու և այդպիսով չթույլ տալու, որ նա միանա Լիպարիտի հետ։ Բայց բյուզանդացիներն այնպես էին ամրացրել իրենց բանակը ցիցերով և խոր խրամատներով, որ անկարելի եղավ հարձակվել նրանց վրա։ Բյուզանդական բանակից սուրհանդակներ էին թռչում Լիպարիտի մոտ՝ նրան շտապեցնելու համար։

Սելջուկյան հրամանատարը, այլևս անօգուտ համարելով բյուզանդական զորքի հետևից ընկնելը, առժամանակ մի ուրիշ ձեռնարկության դիմեց։ Նա իր բոլոր ուժերով հարձակվեց Արծն քաղաքի վրա։

Արծնը միջնադարյան Հայաստանում մի շատ աչքի ընկնող և հազվագյուտ քաղաք էր։ Մինչդեռ ամբողջ Հայաստանում տիրում էր ավատական տնտեսությունը և քաղաքները մեծ մասամբ նույն կալվածատիրական տնտեսության ենթարկված բնակավայրեր էին, առանց կարողանալու զարգացնել բուն քաղաքային տնտեսական կյանք, Արծնը[1] իր վաճառականությամբ և բազմամարդությամբ հռչակված մի հարուստ կենտրոն էր։ Թե ինչպես կարողացավ հայ իրականության մեջ առաջ գալ մի այդպիսի երևույթ, մենք կարող ենք բացատրել, նկատի ունենալով նախ և առաջ այն, որ Արծնը Տրապիզոնի նավահանգստից մոտ էր գտնվում, այն մեծ ճանապարհի վրա, որ Սև ծովի ափը կապում էր Պարսկաստանի և Միջին Ասիայի հետ։ Բոլոր դարերում այդ ճանապարհը եղել է միջազգային առևտրական հարաբերությունների կարևոր միջոցներից մեկը։ Այն ժամանակից, երբ Արաբիան և Բյուզանդիան դարձան իրար անհաշտ թշնամիներ և աշխատում էին իրարից խլել Արևելքի առևտրական ճանապարհները, Հայաստանը մի միջնորդ դարձավ արաբա-բյուզանդական առևտրի մեջ։ Սև ծովի բոլոր ապրանքները, որոնք պիտի գնային Միջագետք, արաբական խալիֆայության կենտրոնների համար, Տրապիզոնի վրայով տեղափոխվում էին Դվին քաղաքը, որ արաբական վարչական կենտրոնատեղին էր Արաքսի ափին և որ այդպիսով դառնում էր մի խոշոր պահեստանոց։ Մենք գիտենք արդեն, որ արաբական տիրապետության ժամանակ արաբ վաճառականները գալիս էին Դվին և այնտեղ էին գնում իրենց հարկավոր ապրանքները[2]։ Այսպիսով, ուրեմն, գոյություն ուներ Տրապիզոն—Դվին գիծը, որի վրա առաջին կայանը կազմում էր Արծնը։ Առևտրական ճանապարհը գնում էր Կարինի և Անիի վրայով, և այսպիսով այս քաղաքներն էլ որոշ չափով մասնակցում էին այն ապրանքային շարժմանը, որ տեղի ուներ այդ ճանապարհի վրա։ Կարինը, օրինակ, նայելով Լաստիվերտցու նկարագրության, հարուստ և վաճառաշահ քաղաքի համբավ ուներ սելջուկյան արշավանքների ժամանակ։ Բայց ամենակարևոր կետերը ծայր կայարաններն էին—Արծնը և Դվինը։ Վերջինս հռչակված էր և իր արդյունագործությամբ։ Թե՛ Արծնում և թե՛ Դվինում առևտուրն ուներ միջազգային բնույթ։ Բյուզանդական աղբյուրների վկայությամբ Արծնում առևտուր

[1] Արծն քաղաքն ուրիշ լեզուների մեջ կրում է Արզն անունը։ Եվ որովհետև նա, գտնվելով բյուզանդական Հայաստանում, պատկանում էր հռոմներին, ուստի Արևելքի ժողովուրդները նրան տալիս էին Արզնուռում անունը։ Այստեղից է ծագում այժմյան Արզրումը կամ Էրզրումը։ Բայց սխալ կլինի կարծել, թե հին Արծնը գտնվելիս է եղել այժմյան Էրզրումի տեղում։ Այս ամենից առաջ հաստատում է այն հանգամանքը, որ Արծնը ամրացված քաղաք չէր և Մատթեոս Ուռհայեցին բացարձակապես ասում է, թե «անպարիսպ» էր Արծնը (եր. 102), մինչդեռ այժմյան Էրզրումը շատ ամուր բերդ է եղել հին ժամանակներից։ Ուրեմն այժմյան Էրզրումը (Կարին, Թեոդուպոլիս) իր անունն ստացել է մոտիկ գտնվող Արծնից, նրա կործանումից հետո։

[2] Տ. Բ. հատ. Ա գիրք։

էին անում ոչ միայն տեղացի հայերը, այլև սիրիացիներն ու այլ տեղերից եկած վաճառականներ[1]։ Այսպես էր և Դվինի շուկան։

Արծնի բազմամարդությունը ցույց տալու համար Մատթեոս Ուռհայեցին, հետևելով իր ժամանակի սովորությանը, բերում է այնտեղ գտնված եկեղեցիների թիվը, ասելով. «Եւ կայր յայնժամ ութ հարիւր եկեղեցի ընդ պատարագով»։ Նույնպես, նկարագրելով այն կոտորածը, որ կատարեցին սելջուկները Արծնի մեջ, նա ասում է, թե սրից ընկածների թիվը հասնում էր 150 հազարի[2]։ Մոտավորապես այսպիսի մի թիվ է ցույց տալիս և նույն դեպքը նկարագրող մի բյուզանդական ժամանակագիր[3]։ Բայց այս թվերը չափազանցրած պետք է համարել։ Ինչ վերաբերում է եկեղեցիների թվին, մենք ապացույց ունենք, որ դա իրականության մեջ գոյություն չուներ և չէր կարող ունենալ, այլ պարզապես մի պատկերավոր ոճ էր՝ մի տեղի բազմամարդությունը ցույց տալու համար։ Այսպես, նույն Ուռհայեցին Անիի մասին ասում է, թե այնտեղ հազա՛ր և մեկ եկեղեցի կար, մինչդեռ Անիի գրաված տեղը ցույց է տալիս, որ այդ թիվը չափազանցորեն ուռցված է արևելյան երևակայության մեջ։

Բայց մի բան անժխտելի է՝ այն, որ այդպիսի չափազանցությունները հենց վկայություն են այս կամ այն քաղաքի մեծության, գեղեցկության և հարստության մասին։ Իր ճոխություններով հռչակված Արծնը բնականաբար պիտի գրգռեր անապատի գիշատիչ ցեղերի ախորժակը, և Իբրահիմ Ինալը, բաց թողնելով նրա վրա իր օրդուները, հույս ուներ մի հեշտ և շատ հարուստ ավարի վրա։ Բայց նա իր առջև ծառացած տեսավ վաճառական ժողովրդի քաջարի դիմադրությունը։ Արծնցիները, դատելով վերոհիշյալ բյուզանդական ժամանակագրի վկայությունից, չկամեցան սելջուկյան արշավանքի առջև ցույց տալ, թե իրենք վախկոտներ են։ Հրամանատար Կատակալոնը վաղօրոք նամակ էր գրել նրանց, թախանձելով, որ նրանք իրենց անպաշտպան քաղաքից փոխադրվեն իր ամրություններով անառիկ Թեոդուպոլիս (Կարին) քաղաքը։ Բայց արծնցիները մերժել էին այդ առաջարկությունը։ Իսկ երբ Իբրահիմ Ինալը մոտեցավ Արծնին, քաղաքացիները նրա դեմ դուրս հանեցին իրենց սեփական զորքը, որ և իսկույն կռվի բռնվեց թշնամու հետ։ Բայց նա շատ էր փոքրաթիվ, և սելջուկները մի կարճատև, բայց արյունահեղ կռվից հետո քաղաք թափվեցին։

Այստեղ, բյուզանդական ժամանակագրի ասելով, սելջուկները հանդիպեցին ավելի ևս կատաղի դիմադրության։ Կռիվը շարունակվեց փողոցներում։ Յուրաքանչյուր տուն մի բերդ էր դարձել, որ պետք էր վերցնել առանձին-առանձին։ Կտուրներից սելջուկների վրա էին թափում քարեր, փայտեր, նետեր, նիզակներ։ Եվ այսպիսով կռիվը, առանց մի րոպե դադար առնելու, շարունակվեց վեց օր։ Կատակալոնը, լուր առնելով Արծնի վրա կախված մեծ վտանգի մասին, վառվեց օգնության վազելու ցանկությամբ, բայց դարձյալ Ահարոնն էր, որ կանգնեցրեց նրան, ասելով, թե ինքը մի քայլ անգամ չի անի առանց կայսրի կարգադրության։ Եվ բանակը մնաց իր տեղը, սպասելով Լիպարիտի գալստյան, իսկ դժբախտ արծնեցիները թողնվեցին ճակատագրի կամքին։ Եվ այդ ճակատագիրը սարսափելի էր։

[1] **Schlumberger, III,** p. 554.

[2] Եր. 103։

[3] **Schlumberger, III,** p. 556.

Իբրահիմ Ինալը, տեսնելով, որ հատ-հատ տները վերցնելով գործը շատ է դանդաղում, հրամայեց իր զորքերին կրակ տալ քաղաքը։ Բոցերը բռնեցին տները բոլոր կողմից և շուտով բոլորվեց մի ահռելի հրդեհ։ Այս ժամանակ միայն բնակիչները հասկացան, որ փրկություն այլևս չկա։ Սկսվեց փախուստը, բայց սելջուկ ձիավորները հասնում էին ամեն տեղ և կոտորում փախչողներին։ Շատերը, անարգ մահից ազատվելու համար, իրենց կանանցով և երեխաներով ընկնում էին հրդեհի բոցերի մեջ։ Հրդեհի ուժն ավելացնում էր հանկարծակի բարձրացած սաստիկ քամին[1]։ Եվ այսպես ոչնչացավ փառահեղ և հանրահռչակ Արծն քաղաքը։ «Եւ ահա այս սկիզբն եղև Հայոց կորստեանս,— գրում է Ուռհայեցին,— լուր՝ միտ դիք կոտորածիս և անցմանս արևելից մի ամ յամէ. վասն զի այս է առաջին քաղաք, որ առաւ սրով և գերութեամբ ի Հայոց»[2]։

Արիստակես Լաստիվերտցին ողբ է հորինում և Արծնի վրա, որ իր հայրենի քաղաքն էր։ Կոտորածի և ավերմունքի պատկերները նույնն են, ինչ մենք տեսանք նախընթաց նկարագրության մեջ։ Հետաքրքրականն այն է, որ մեր ողբասացը, հավատարիմ իր սովորության, կամենալով ապացուցել, որ Արծնի աղետը երկնքի պատուհասն էր նրա բնակիչների մեղքերի համար, տալիս է մի քանի գծեր նրանց բարքերից և այդ գծերի մեջ մենք տեսնում ենք առևտրական քաղաքի համար սովորական վլվլուկը, որ մրցությունների է հանում մարդկանց իրար դեմ՝ իրար ձեռքից շահ ու վաստակ խլելու, իրար կեղեքելու համար։ Ճիշտ է, մեր հեղինակը հավատացնում է, թե Արծնի վաճառականներն առաջ բարեպաշտ և բարեսեր են եղել, բայց այս էլ սովորական է խրատի վարդապետության համար—իդեալացնել անցյալը։ Համենայն դեպս այն ժամանակ, երբ Արծնի դռանը կանգնած էր կործանումը, նրա մեջ տիրող բարքերն այսպես էին՝ «Իշխանք սորա գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանային զիրաւունս. և դատաստան որբոց ոչ առնէին, և յիրաւունս այրեաց ո՛չ խոնարհէին։ Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և յոբենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան[3]։ Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր, «Ես հզօր եմ»։ Զտունս տնակից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն... Բարձաւ և ի քահանայից երկիւղ և ընտրութիւն սրբութեան։ ...Զի՞նչ ասացից և որ առ կանայս ամբաստանութիւն է»[4]։ Եվ նա զանգատվում է կանանց պճնասիրության և շռայլության վրա, մի բան, որ շատ պիտի աչքի ընկներ հարստություններով այնքան հոխացած վաճառականական քաղաքի մեջ։ Ոսկու և արծաթի քանակությունն այնքան մեծ էր, որ չնայած հրդեհի ավերումներին, Իբրահիմ Ինալը մեծ ավար տարավ Արծնից։ Բայց մարդկանց հարստությունն այնտեղ միայն ոսկով և արծաթով չէր չափվում, այլև նրանց հետ կապված տնտեսությամբ։ Տեղի եպիսկոպոսը, Դավթուկ անունով, Ուռհայեցու ասելով, ուներ իր տանը ութ հարյուր վեց-

[1] Schlumberger, III, p. 555—557.

[2] Եր. 103։

[3] Այստեղ ակնարկվում է երկրագործական վաշխառությունը, այսինքն այն, որ ցորեն են տալիս չունևորներին՝ հնձի ժամանակ մեկի փոխարեն մի քանի անգամ ավելի ստանալու պայմանով։

[4] Եր. 79—80։

կի[1] եզներ, իսկ նրա գանձը տանելու համար Իբրահիմ Ինալին հարկավորվեց քառասուն ուղտ[2]։ Այս հարստությունը, որքան և առասպելացված լինի, գաղափար է տալիս այն ժամանակվա ավատական տերերի նյութական կարողության մասին։

Արծնի անհետացումից հետո էր, որ բյուզանդական բանակը, վերջապես, դուրս եկավ իր խրամատների միջից, երբ հասավ Լիպարիտ Օրբելյանն իր զորքով։ Նա սելջուկներին հանդիպեց Բասենի դաշտում, Կապուտու բերդի մոտ, ուր և տեղի ունեցավ պատերազմը։ Բյուզանդական աղբյուրները ցույց են տալիս, թե կռվող կողմերից ոչ մեկն էլ հաղթող չեղավ այդ ճակատամարտում։ Բայց մեր Լաստիվերտցին, լավատեղյակ և ժամանակակից մի աղբյուր, ուղղակի ասում է, թե բյուզանդացիներն էին, որ պարտության մատնվեցին[3]։ Եվ իրավ, այդ ճակատամարտի մեջ Լիպարիտ Օրբելյանը, որ հռչակված էր իր քաջությամբ և որի վրա այնքան հույսեր էին դրել հռոմները, գերի ընկավ սելջուկների ձեռքը։ Ավարով ծանրաբեռնված Իբրահիմ Ինալը վերադարձավ Պարսկաստան և Տուղրիլ-բեկին ներկայացրեց այնպիսի մի թանկագին ընծա, որպիսին էր գերի Լիպարիտը։ Սակայն սա երկար չմնաց գերության մեջ։ Տուղրիլը նրան արձակեց և թույլ տվեց, որ վերադառնա իր հայրենիքը։ Բայց Իբրահիմ Ինալը այնքան արբեցած էր 1048 թվի իր հաղթական արշավանքով, որ նա էլ, Քութլմըշի նման, ապստամբեց Տուղրիլ-բեկի դեմ[4]։ Այս հանգամանքն ստիպեց սելջուկ սուլթանին առժամանակ դադարեցնել արշավանքները Բյուզանդիայի դեմ։ Ուրիշ, ավելի կարևոր գործեր կային Իրանում և Տուղրիլ-բեկը հաշտության բանակցությունների մեջ մտավ՝ այդ գործերը կարգավորելու համար։ Մոտավորապես 1049 թվականի վերջերին համաձայնություն կայացավ սուլթանի և կայսրի միջև։ Երկու կողմերին էլ հարկավոր էր զինադադար։ Տուղրիլ-բեկը գնաց պատերազմելու իր ապստամբած եղբոր հետ, ինչպես նաև վերջացնելու Իրանի մի քանի նահանգների նվաճումը։ Բացի այդ բոլորից՝ սուլթանի ամենագլխավոր նպատակն էր հետզհետե նվաճումներով մոտենալ Բաղդադին, ուր գտնվում էր բոլոր հավատացյալների խալիֆի գահը։

Իսկ Մոնոմախն օգտվեց այդ ժամանակից՝ մի արշավանք ուղղելով Դվինի մեզ ծանոթ Աբուլսուար էմիրի դեմ, որը դարձյալ մոռացության էր տվել իր այն պարտավորությունները, որոնք սահմանված էին Բյուզանդիայի հետ կնքված դաշնագրությամբ։ Բյուզանդական զորքերի հրամանատար նշանակվեց կարգաթող եղած, ապա և ներքինացած մի քահանա, Նիկիփոր անունով։ Նա հաղթական մի երկար արշավանք սկսեց։ Մենք արդեն գիտենք, որ Դվինի Աբուլսուարը պատկանում էր քրդական Շեդդադյան տոհմին և նրա եղբայր Փատլունը տիրում էր Գանձակին և Աղվանից երկրին։ Նիկիփորը կռիվ պիտի աներ այդ երկուսի դեմ, ուստի անցավ Արցախի լեռները, վերցրեց ոչ միայն Գանձակը, այլև հասավ նույնիսկ Երկաթե դռներին (Դերբենդին)։ Աբուլսուարը վերջիվերջո իրեն պարտված ճանաչեց և նորից հանձն առավ այն պարտավորությունները, որ մինչև այդ չէր կատարում։ Իսկ իր նոր խոստումների ապահովության համար պատանդ

[1] Վեցկի է ասվում այն գութանը, որին լծվում են վեց եզներ։

[2] Եր. 103։

[3] Եր. 86։

[4] **А. Мюллер**, «История Ислама», III, стр. 88.

տվեց իր եղբայր Փատլունի որդի Արտաշիրին, որին իր հետ վերցրած Կ. Պոլիս գնաց կարգաթող քահանա և ներքինի հրամանատար Նիկիփորը։

Այս միջոցին հոռոմների պետությունը մեծ վտանգի էր ենթարկված պեչենեգների[1] վայրենի, նույնպես միջին-ասիական ցեղի կողմից, որ կողոպտում և քանդում էր ամբողջ Բալկանյան թերակղզին, Դանուբ գետից մինչև գրեթե Կ. Պոլսի դռները։ Պետությունը պիտի լարեր իր բոլոր ուժերը՝ այդ մահացու վտանգից ազատվելու համար։ Նույն այս ներքինի քահանա Նիկիփորն ուղարկվեց պեչենեգների դեմ և հազիվ միայն 1051 թվին կարելի եղավ հաղթել և հեռու քշել բարբարոս թշնամուն։

Բայց հենց որ լռեցին պեչենեգները Եվրոպայում, շարժվել սկսեցին նրանց ցեղակից սելջուկներն Ասիայում։ 1052 թվին Տուղրիլ-բեկը հարձակվեց իր ապստամբ եղբայր Իբրահիմ Ինալի վրա, որ ջարդվեց և փախավ մյուս ապստամբի, Քութլմըշի մոտ։ Թեկուզ այս վերջինն էլ պարտության մատնվեց, բայց կարողացավ մի քանի հազար մարդկանց հետ փախչել և ամրանալ ուրիշ տեղերում։ Իր կողմը զորեղացնելու համար Քութլմըշն Իբրահիմ Ինալի որդի Մելեշին շտապով ուղարկեց Կ. Պոլիս, կայսրի մոտ, որպեսզի առաջարկի նրան իր օգնությունը և այսպիսով վայելի հոռոմների կայսրի բարեկամի պատվավոր համբավը։ Ինքը Քութլմըշն էլ գնաց Վանանդ գավառը և սպասելով Մոնոմախի պատասխանին, պաշարեց Կարս քաղաքը[2]։

Այս գործողությունն է, անշուշտ, որ նկարագրել է Արիստակես Լաստիվերտցին իր Պատմության ԺԵ գլխում։ Դեպքը տեղի ունեցավ ձմեռ ժամանակ, Աստվածահայտնության տոնին։ Վանանդի մայրաքաղաքը, մի հարուստ և վաճառաշահ կենտրոն, որ շատ ժամանակներից ի վեր չէր ենթարկված դժբախտության, անհոգ անձնատուր էր եղած տոնական ուրախություններին և նույնիսկ գիշերապահներ էլ չէր թողել դրսում։ Սելջուկներն օգտվեցին այս անհոգությունից և հանկարծակի ներս խուժելով, կոտորեցին այն ամենը, ինչ թուրքական էր, այն է՝ սկսեցին կոտորել աջ ու ձախ։ Ազատվեցին միայն նրանք, որոնք կարողացան մտնել միջնաբերդը։ Եվ դարձյալ մեր հեղինակն իր ծանոթ արտահայտություններն է առաջ քաշում՝ աղետը պատկերացնելու համար։ «Անդանօր էր,—ասում է նա,— տեսանել տեսութիւն ողորմագին որ զքարինս և զանշունչ արարածս անգամ շարժէր յողբս հառաչանաց, թող թէ զզգայունս և զկենդանիս. քանզի մեծահարկի և պատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրակոտորք. պատուական այրք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք անկեալք»[3]։ Ըստ սովորության՝ սելջուկները հրդեհում են քաղաքը և վերցնելով գերիների բազմություն, հեռանում են։

Սակայն Քութլմըշը հաղթանակող էր այսպիսի դժբախտ անհոգության մեջ։ Շուտով նա ինքն էլ ստիպված եղավ փախչել իրենից ուժեղի առջև։ Դա Տուղրիլ-բեկն էր, որ նրա հետևից էր ընկել։ Հաղթականորեն անցնելով ամբողջ Ատրպատականը, նա արդեն մտել էր Վրաստան։ Քութլմըշը լսեց այս համբավը և շտապով փախավ դեպի Իրանի կողմերը։ Բայց եթե

[1] Ըստ Ուռհայեցու՝ «Պածինակ»։

[2] Schlumberger, III, 595—598.

[3] Եր. 92։

Վանանդի ազգաբնակությունն ազատվում էր իր մայրաքաղաքի դժբախտ ճակատագրին ենթարկվելուց, դրա փոխարեն Վրաստանն էր, որ դառնում էր սելջուկյան սարսափների թատերաբեմ։ Մի անգամ ոտը դնելով Վրաստանի հողի վրա, սելջուկյան սուլթանը չէր կարող չձեռնարկել իր սովորական արհեստին, քանի որ Վրաստանը Բյուզանդիայից կախված մի երկիր էր։ Եվ սուլթանն ամբողջ երկիրը մատնեց սրի և արյան։ Սա մի զուտ թուրքական արշավանք էր, որի մասին լուր առնելուն պես՝ Մոնոմախն շտապով զորքեր ուղարկեց Վրաստան, իր թիկնապահ զինվորների հրամանատարի հետ, հանձնարարելով այս վերջինին շտապով մի տեղ հավաքել Իբերիայի և հարևան խաղտիք թեմի բյուզանդական զորաբաժինները և թույլ չտալ, որ սելջուկները շարունակեն իրենց գազանությունները։ Բայց Տուղրիլ-բեկը չսպասեց, որ տեղ հասնեն բյուզանդական այս խոշոր ուժերը և վերցնելով իր բանակը, վերադարձավ Թավրիզ, բյուզանդացիների դեմ բարկությամբ լցված։ Նա ուզում էր մի խոշոր հաղթությամբ բարձրացնել իր զենքի պատիվը և այսպիսով հագեցնել իր վրեժխնդրության ծարավը, ուստի վճռել էր վերադառնալ ավելի խոշոր ուժերով։

Իրանում սուլթանը վերստին նվաճեց ապստամբած Սպահանը, ուր և տեղափոխեց իր գահը, որ մինչ այդ գտնվում էր Ռեյ քաղաքում։ Իսկ հետևյալ տարին, 1053 թվին, նա նորից գնաց Վրաստանի վրա, այս անգամ իր հետ տանելով մի մեծ բանակ։ Բայց այս անգամ նա մեծ հաջողություն չունեցավ։ Վրաստանի այն կողմը, ուր նա կանգ առավ գործողություններ կատարելու համար, հարուստ էր ամուր բերդերով, և ազգաբնակությունը թաքնվեց նրանց մեջ։ Իսկ Տուղրիլը, լուր առնելով, որ կայսերական զորքերը կենտրոնանում են Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, այլևս վտանգավոր համարեց շարժվել դեպի արևմուտք և գնաց մտավ Վասպուրական[1]։

Սելջուկյան սուլթանի շարժումներն այսպես են բացատրում բյուզանդական աղբյուրները։ Բայց այդ բացատրության մեջ դժվար չէ նկատել մի անհեթեթություն։ Եթե իսկապես Կեսարիայի զորքն էր սուլթանին վախեցնողը, այն ժամանակ պիտի վերադառնար Իրան և ոչ թե մտներ բյուզանդական հող կազմող Վասպուրական, մանավանդ որ նա մտադրություն չուներ այդ նահանգում մնալ, այլ այդտեղից պիտի առաջանար դարձյալ դեպի արևմուտք՝ հարվածելու բյուզանդական կայսրությանը նրա ամենակարևոր պաշտպանողական կետում—Մանազկերտի մոտ, որը բաց էր անելու նրա առջև Արևելյան Եփրատի ամբողջ հովիտը, այսինքն՝ մի ճանապարհ, որ պիտի տաներ նրան դեպի Կապադովկիա։ Եթե Կեսարիայի զորքն էր վախեցնողը, այն ժամանակ Տուղրիլ-բեկը բոլորովին չպիտի երևար Հարավային Հայաստանի ճանապարհների վրա։ Տուղրիլի այս շարժումը պարզապես նշանակում էր, թե նա թողնում էր Վրաստանն իբրև պատերազմական դաշտ և նախընտրում էր Հայաստանը։ Եվ այսպես անել նրան հարկադրում էին, անշուշտ, հարմարությունները։

Մենք կարծում ենք, որ, բացի աշխարհագրական դիրքի ընձեռած հարմարություններից՝ կար և մի այլ հարմարություն, որ սելջուկների համար պատրաստում էր հատկապես բյուզանդական քաղաքականության վերաբերմունքը դեպի հայերը։ Մենք տեսանք 1048 թվականի սարսափ-բաբերանքը

[1] Schlumberger, III, p. 598—599.

ները Բասենում, ուր հայերը կոտորվում էին անպաշտպան հոտերի նման գրեթե բյուզանդական զորքերի աչքի առջև, որոնք ոչինչ չարին այդ ժողովուրդը փրկելու համար։ Մենք տեսանք նաև 1052 թվի սարսափները Վրաստանում, որոնք հարկադրեցին Մոնոմախին արտակարգ միջոցներ ձեռք առնել վրաց ժողովրդի պաշտպանության համար։ Բյուզանդացիները, ուրեմն, գիտեին այսպես եռանդով գործել։ Ինչո՞ւ այդպիսի եռանդ չէր արտահայտվում և հայերի վերաբերմամբ։ Այստեղ երևան է գալիս բյուզանդական քաղաքականության մի զզվելի գաղտնիքը։ Կ. Պոլիսը դիտմամբ թույլ էր տալիս, որ սելջուկները տանջեն հայերին, որպեսզի սրանք հուսահատված հոնադավանություն ընդունեն[1]։ Որ այս հանգամանքը շատ ծանրակշիռ նշանակություն ուներ բյուզանդականության համար և չէր մոռացվում ոչ մի ժամանակ, ոչ մի պարագայում, մենք այս մասին ունենք մի խոշոր փաստ հենց այդ ժամանակից։ 1048 արյունոտ թվականին, այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը սելջուկյան սրին անհամար զոհեր էր տվել, Մոնոմախը, ինչպես տեսանք, Անիից Կ. Պոլիս կանչեց Պետրոս կաթողիկոսին և պահեց նրան այնտեղ։ Հայոց թագավորությանը վերջ տալուց հետո այժմ հերթը հասել էր Հայոց կաթողիկոսության, որ այն կրոնական դարերում թագավորությունից պակաս ազգային նշանակություն չուներ հայերի համար։ Կայսրն առաջ մեծամեծ պատիվներով փորձեց շոյել այդ հոգևորականի անչափ փառամոլությունը և կաշառել նրա կաշառասեր հոգին։ Բայց երբ դրանում հաջողություն չունեցավ, արգելեց կաթողիկոսին վերադառնալ իր աթոռը և պատվավոր աքսորի ուղարկեց նրան Սեբաստիա՝ Սենեքերիմ թագավորի որդիների մոտ ապրելու համար։ Կաթողիկոսական աթոռը թափուր մնաց, բյուզանդական քաղաքականությունը ձգտում էր այն բանին, որ այդ թափուրությունը չվերանա երբեք։ Այնուհետև միայն բյուզանդական կղերը կատարյալ հաղթանակի կհասներ, այսինքն՝ կտիրանար Հայոց եկեղեցու հարստություններին։ Ամենագլխավորն այս էր, երկնքի գործերը, որոնց փաստաբան էին հանդիսանում կղերականները, խաբեբայություն էին։ Մենք տեսանք, թե որքան հարուստ էր Արծնի եպիսկոպոսությունը։ Այդպիսի հարուստ աթոռներ շատ կային Հայաստանում և նրանց վրա աչք էր դրել հունաց ագահ հոգևորականությունը[2]։ Եվ հասկանալի է, որ հայ հոգևորականությունն ատելությամբ պիտի լցվեր բյուզանդական քաղաքականության դեմ։ Այդ ատելությունն է, որ այնքան ցայտուն կերպով արտահայտվում է Արիստակես Լաստիվերտցու և Մատթեոս Ուռհայեցու գրությունների մեջ։ Այդ ատելությունը սաստկացնում էր Բյուզանդական տմարդի քաղաքականությունը, որ անպաշտպան էր թողնում հայ ժողովուրդը թուրքական սրի բերանին՝ նրան հարկադրելու համար, որ կատարի բյուզանդական կղերի շահադիտական բաղձանքները։

Եվ ահա մի կողմից հայկական ատելությունը, իսկ մյուս կողմից բյուզանդական նենգամիտ անպաշտպանությունը հարմարություններ էին ստեղծում սելջուկյան արշավանքների համար, մի հանգամանք, որ, հարկավ, անծանոթ չէր մնում թուրքերին։ Իսլամի առաջին ահավոր գրոհը Բյուզանդիայի դեմ բերում էին արաբական արշավանքները, որոնց հաջողությունը, ինչպես գիտենք, պատրաստեց բյուզանդական կրոնամոլ քաղաքականությու-

1 **Герцберг**, стр. 236.
2 **Гельцер**, «Очерк Полит. Истории Византии», стр. 116.

նը Սիրիայում, Եգիպտոսում և Հյուսիսային Աֆրիկայի ուրիշ կողմերում, կզվեցնելով տեղական քրիստոնյա ժողովուրդներին և նրանց հրելով դեպի իսլամի տիրապետությունը։ Երկրորդ մեծ գրոհը Իսլամը կատարում էր նույն Բյուզանդիայի դեմ միջին-ասիացիների միջոցով, և այս անգամ էլ բյուզանդական նույն կարճատես քաղաքականությունը նվաճման հարմարություններ էր ստեղծում Հայաստանում և Սիրիայում[1]։

Եվ այսպես անցկացնելով պատերազմական գործողությունները Հայաստանի՝ իրեն հարմար հողի վրա, Տուղրիլ-բեկն սկսեց Բերկրիից և Արճեշից, որոնցից առաջինը նվաճեց, իսկ երկրորդը փողով գնեց, որի պատճառով նա չմատնվեց թուրք նվաճողական սարսափներին։ Տուղրիլ-բեկի համար Արճեշն առանձին նշանակություն չուներ էլ։ Նա շտապում էր դեպի գլխավորն ու կարևորը, դեպի Մանազկերտ՝ բյուզանդական ուժի այս առաջնակարգ պատվարը ոչնչացնելու համար։ 1054 թվին նա պաշարեց այդ հզոր բերդը։

Տուղրիլ-բեկի այս արշավանքը նկարագրել են մեր երկու պատմագիրներն էլ, թե՛ Արիստակես Լաստիվերտցին և թե՛ Մատթեոս Ուռհայեցին։ Երկուսն էլ հավասարաչափ սարսափով են վերաբերվում այդ շարժմանը։ Առաջինը գրում է. «...Խաղաց գազանն մահաշունչ արիւնարբու և մարդախոշոշն Սուլտան անհամար զօրօք, փղօք, և կառօք, և երիվարօք, կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ»։ Իսկ երկրորդը. «Յամի և ի թուականութեան Հայոց ազգիս ՇԳ (503+515=1054) զարթեալ եղև օձն դառնաշունչ և մահաբեր ի վերայ աշխարհին Հայոց, վասն զի շարժեալ եղև յաթոռոյն իւրմէ սուլտանն Պարսից Տուղրիլ և գայր ահագին բազմութեամբ՝ իբրև զաւազ ծովու և խաղաղացեալ անթիւ զօրօք հասանէր ի Հայաստան աշխարհն, իջեալ ի քաղաքն, որ կոչի Բերկրի, և պատերազմաւ առեալ զքաղաքն, մաշեաց դառնաշունչ մահուամբ։ Եվ յարուցեալ որպէս զնետ ամպս հրացայտ և գայր հասանէր հանդերձ մահարևր կարկտիւն և պատեալ զքաղաքն, որ կոչի Արճէշ և սաստիկ պատերազմ յարուցանէր ի վերայ քաղաքին զաւուրս ութ. և ի բազմութենէ զօրացն ձանձրացեալ քաղաքացիքն ի դառն պատերազմէն և այնուհետև մեծաւ աղաչանօք գային ի հնազանդութիւն ի ձեռն բազում ընծայիւք ոսկւոյ և արծաթոյ, ձիոց և ջորւոց. և սիրոյ սկիզբն արարին մեծաւ պաղատանօք և ասացին. «Ով աշխարհակալ սուլտան, երթ և ա՛ռ զքաղաքն Մանծկերտ և յայնժամ մենք և ամենայն աշխարհն Հայոց քեզ լիցուք ի ծառայութիւն»[2]։

Սակայն, Լաստիվերտցու նկարագրությունը գերադասելի է, որովհետև Մանազկերտի պաշարումը միայն տեղային, գավառական մի երևույթ չի ներկայացնում նա, այլ ավելի ընդարձակ տարածություններ բռնած մի ժողովրդական պատուհաս։ Տուղրիլ-բեկը Մանազկերտի տակ չէր միայն, այլ ամեն տեղ, ուր նրա զորքերը փռում էին հեռավոր սապատակություններ։ Եվ թուրքավարի արշավանքներն անցնում էին շատ կողմերով, և Լաստիվերտցին պատկերացնում է այդ շարժումներն իր սովորական ողբասաց եղանակով։ «Եւ արձակեաց,—ասում է նա,—ասպատակս յերեսին կողմանս աշխարհին, ի հիւսիս՝ մինչև յամուրն Ափխազաց և մինչև ի լեառն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու. և յարևմուտս՝ մինչև յան-

1 **Гельцер**, «Очерк Полит. Истории Византии», стр. 116.
2 Եր. 118։

տառն Ծանեթոյ, իսկ ի հարաւ մինչև ցՍիմն կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձողք ոճոյ ագարակի»։

Եվ ահա այդ բոլոր տեղերի վրա տեսարանն ընդհանուր գծերով այսպես էր.

«Արդ զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աշխարհիս հասուցին, ո՛վ կարէ ընդ գրով արկանել, կամ ո՞յր միտք բաւեն ի համար ածել. զի ամենայն աշխարհս լի էր դիակամբք, շէնք ու անշէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք և ափափայ վայրք և յամենայն շինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունս և զեկեղեցիս, որոց բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելովնի. և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր, ո՛չ մի անգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց և բարձաւ կառաչ անասնոց։ Զայս արարուած տեսեալ՝ սուգ առ և կործանեցաւ երկիր, վասնզի կործանեցան բնակիչք նորա. բարձաւ ուրախութիւն յերեսաց ամենայն երկրի. յամենայն տեղիս ողբք և հառաչանք. ամենայն ուրեք կոծ և լալականաց հանդէսք. ո՛չ ուրեք քահանայից երգք. ո՛չ ուրեք լսի փառաբանութիւն Աստուծոյ։ Ոչ ուրեք բանին գիրք առ ի խրատ և ի մխիթարութիւն լսողաց. վասն զի ընթերցողքն սրամահ ի հրապարակս, և ինքեանք այրեցեալք և աճիւնացեալք։ Ո՛չ ուրեք լսի ձայն հարսանեաց և ո՛չ աւետիք նորածին մանկաց. ո՛չ նստին ծերք աթոռով ի հրապարակի և ո՛չ խաղան մանկունք առաջի նոցա. ո՛չ երամանան անդեայք ի յարօտս և ո՛չ խայտան գառինք ի մարգս։ Ո՛չ լինու հնձող որայիւ զգիրկս, և ո՛չ լսէ բարեբանութիւն յանցաւորաց. ո՛չ լնուն կալք ցորենով. և ո՛չ զեղուն գինով. ոչ լսին ձայնք ուրախութեան ի կութս այգեաց և ոչ ծանրանան պահառք ի ստոմանաց։ Բարձաւ այս ամենայն, կարեաւ և ոչ երևի»։

Ավերանքների երգիչ պատմաբանը, չբավականանալով այս ընդհանուր պատկերացմամբ, անցնում է մասնավոր գավառներում տեղի ունեցած սարսափներին, պատրաստելով իր ընթերցողներին այսպիսի մի նախաբանով. «Վա՜յ ինձ որ վիպասեմ զայսոսիկ, հիմնացի երիտասարդին նման գալով իմ՝ գուժարկու եղէ, ո՛չ միում գիւղի կամ միում քաղաքի, այլ ամենայն աշխարհաց, ազգաց յազգս, մինչև ի կատարած ժամանակաց. քանզի չիք ինչ ժամանակ կամ գործ որ զմերն հնացուցանել կարէ, բայց թէ որ զպղծոյն անապատի զգուշացուցմանն գիրք։ Արդ զի՞նչ արարից, թողի՞ց ի պատմելոյ զանհնարին չարիսն որ եհաս ի վրայ քրիստոնէից՝ խնայելով ի ձեզ, եթէ շարժեցից ողբս և հառաչանս ամենեցուն, որք հանդիսակից էք այսմ դժոխալուր պատմութեանս. բայց գիտեմ որ կամիք լսել. վասն որոյ և ես ի բաց եդեալ զանձին դանդաղանս, գրեցից զգլխաւոր տեղեաց մի ըստ միոջէ զանհնարին չարիսն»։

Եվ նախ նկարագրում է առաջ Խորձյան և Հանձիթ գավառները։ «Զխորձեան և զՀանձէթն յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հատկլիմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ, և զդողի հարկանի ձեռքս և ոչ կարեմ զոճ տողիս յառաջ խաղացուցանել։ Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս գազանք, սրտմտութեամբ եռացեալք որպէս վրեժխնդիրք, և խիլ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անյագաբար

կոտորեցին զորս և գտին. մինչ զի արիւնն զօրէն գարնանաբեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ ելանէ ի ձեանն առուս առուս վիժելով, զհող երկրին զկնի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեան առուք ի դիականցն անկելոցն ելեալ, ի զառ ի կող տեղիս ի յորդութեան գնացիցն զհող երկրին հեղեղատէին։

Այլ դու յայնժամ եղեալն ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդացն զբազմութիւնս, որոց դեռաբոյս մօրուացն՝ իբրև զնկար գեղեցկայարմար զայտսն զարդարէին, և խոպոպք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ գունով զդիրս երեսացն պայծառացուցանէին, թէ ո՛րպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գլոր խաղային։ Բե՛ր ի մէջ և զտղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծակական հառաչմամբ զմարսն խնդրէին. իսկ զծնօղսն գանալից հարուածովք՝ առ շտապ ի նոցանէ բաժանէին։ Ո՞ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեղձնու արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ։ Կոյսք ի խայտառականս անկեալք, նորահարսունք յարանց բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատութեամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր, կամ գերի։

Իսկ զոր ի Դերջան և յԵկեղեաց և ի միջասահմանս նոցա եղև կոտորումն, զայն և ընդ գրով արկանել չէ ոք բաւական. բայց դու ասացելովքս կշռեա՛ զայն։ Իսկ որ ի Տայոն մտին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ որ կոչի Ոորոխ, և զկնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան»։

Միայն այստեղ, Բաբերդի մոտ, անպատիժ կողոպտող և կոտորող սելջուկները պատահում են հռոմների ծառայության մեջ գտնվող ֆրանկներից[1] կազմված մի զորաբաժնի, որ կռվի բռնվեց և հաղթելով նրանց, հալածական արավ, ետ խլելով նրանց ավարը և գերիների բազմությունը։ Այսպիսի մի դիմադրություն կազմակերպեցին նաև Վանանդի հայ իշխանները, Գագիկ Թագավորի կարգադրությամբ։ Տեղի ունեցած ընդհարման մեջ հայերը քաջությամբ կռվեցին, բայց սելջուկներն ավելի բազմաթիվ էին և կարողացան շրջապատել հայերին։ Եվ որովհետև վերջիններիս ձիերը հոգնած էին, ուստի նրանք չկարողացան պատռել իրենց շրջապատողների շղթան և ճանապարհ բաց անել իրենց համար։ Այս դրության մեջ ընկած հայ ազատներից երեսուն հոգի սպանվեցին, իսկ ոմանք գերի ընկան թշնամու ձեռքը։ Այս գերիներից մեկը, Թաթուլ անունով, տարվեց Տուղրիլբեկի մոտ։ Վանանդի կռվի մեջ ծանր վերք էր ստացել սուլթանին մոտիկ էմիրներից մեկի որդին։ Տուղրիլը, ցույց տալով այդ վիրավորվածին, ասաց Թաթուլին. «Եթե սա առողջանա, քեզ ազատություն կտամ, իսկ եթե մեռնի, քեզ մատաղ կանեմ սրան»։ Իսկ Թաթուլը հանգստությամբ պատասխանեց. «Եթե հարվածն իմն է, չի ապրի, եթե ուրիշինն է, չգիտեմ»։ Վիրավորվածը մեռավ, և սուլթանը սպանել տվեց Թաթուլին և, հետևելով ասիական սովորության, կտրել տվեց նրա ձեռքը, ուղարկեց մեռածի հորը, որպեսզի նա մխիթարվի, տեսնելով, որ վատ բազուկից չի մեռել նրա որդին։

[1] Այս անունով Արևելքում սովորաբար կոչում էին Արևմտյան Եվրոպայի ազգերը։ Այդ ժամանակ Բյուզանդիայում շատ կային մանավանդ նորմաններ։

Կարծես ձանձրանալով սելջուկյան սարսափների նկարագրություններից, Լաստիվերտցին հանկարծ ընդհատում է իր խոսքը, ասելով. «Արդ զի՞նչ է ինձ մի ըստ միոջէ զանկանգնելի կործանումն քրիստոնէից ընդ գրով սահմանել, որ իբրև ծով ի սաստիկ հողմոց յուզեալ՝ ահագին ծփանօք, և փըրփըրադէզ կուտակօքն յամենայն կողմանց գայ ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ։ Զայս և Փրկիչն յառաջագոյն գուշակեաց, իբրև ծովու խռովութեանց նմանեցուցանելով զեղեռնաւոր չարիս, յորս բազումք ի մարդկանէ թալկացեալք՝ ո՛չ կարէին պահել զոգիսն առ ինքեանըս, յերկիւղէ և ի կարծեաց եկելոցն»։

Այսպես վերջացնելով սելջուկյան ասպատակությունների վշտապատումը, մեր հեղինակը գալիս է Մանազկերտի պաշարման։ Բերդը հանկարծակիի էր եկել և պաշարներ չուներ։ Տուղրիլը այդ մասին տեղեկություններ չուներ։ Կարծելով, թե բերդը ներքուստ պաշտպանողական լավ վիճակի մեջ է գտնվում, նա իր հույսը դրեց երկարատև պաշարման վրա, ուստի իր բանակի մի մասը թողնելով բերդի տակ՝ պաշարումը շարունակելու համար, երբ իր այդտեղ գալուց հազիվ երեք օր էր անցել, մնացած մասով գնաց դարձյալ Բասենի վրա, նպատակ ունենալով Կարինը գրավելու մի փորձ անել։ Բայց շուտով համոզվեց, որ այդ մի անհուսալի փորձ է։ Մինչև Կարինին հասնելը դեռ պետք էր գրավել Ավնիկ անունով բերդը, ուր հավաքվել էր փախստական հայերի և նրանց անասունների ահագին քանակություն։ Տեսնելով, որ այս բերդը բոլորովին անառիկ է, սուլթանը հեռացավ նրանից և գնաց Դու գյուղը, որտեղից կարելի էր դիտել Կարինը։ Տուղրիլը, երկար դիտելուց հետո վերջնականապես համոզվելով, որ Կարինն էլ միանգամայն անառիկ է, վերադարձավ Մանազկերտի տակ։

Նրա բացակայությունը, սակայն, միանգամայն բավարար չափով կարգի էր բերել բերդի պաշտպանողական միջոցները։ Բերդի հրամանատար Վասիլը, որ մի բարեխիղճ և գործունյա բյուզանդական պաշտոնյա էր, օգուտ քաղելով բերդի տակ մնացած սելջուկների անհոգությունից, կարողացավ հացի և կենդանիների պաշարներով լցնել Մանազկերտը, քանի որ հենց հնձի ժամանակն էր։ Եթե Տուղրիլը շտապած չլիներ, տեղ հասնելուն պես, ձեռնարկել Կարինի արշավանքին, Մանազկերտն, ինչպես հավատացնում է Լաստիվերտցին, տասն օրից ավելի չէր դիմանա պաշարման։ Այժմ միայն, վերադառնալով արշավանքից, նա տեսավ, թե ո՛րքան մեծ սխալ էր գործել միջոց տալով բերդեցիներին ուժեղանալ։ Ուստի, այդ սխալն ուղղելու համար, նա եռանդուն պատերազմական գործողություններ սկսեց բերդի դեմ։ Օրը երկու անգամ նա հարձակում էր գործում, բայց անօգուտ։ Եվ այսպես շարունակվեց մի ամբողջ ամիս։ Պաշարվածներին մեծ չափով նպաստում էր մանավանդ մի հանգամանք։ Թշնամու բանակի գլխավորներից մեկը, որ շատ մոտ էր սուլթանին և գիտեր նրանից պատերազմական գործողությունների բոլոր ծրագրերը, այդ մասին իմաց էր տալիս պաշարվածներին խոսքով կամ գրով։ Պատերազմական կարգով նա մոտենում էր պարիսպներին, որպես թե կռվում է բերդի դեմ, բայց իր գիտցած գաղտնիքները պատմող թղթի կտորը կապում էր նետի սլաքին և գցում քաղաքի մեջ։ Այդտեղ նա նախազգուշացնում էր, թե մյուս օրն ի՛նչ տեսակ գործողություններ են կատարելու կամ թե ո՛ր կողմից և ե՛րբ պիտի ական փորվի պարիսպների տակ։ Այդ տեղեկությունները, իհարկե, օգտագործում էին պաշարվածները և այսպիսով ի չիք էին դարձնում սուլթանի բոլոր ջանքերը։

Ուստի սուլթանն սկսեց բերդի դեմ կռվել քարաձիգ մեքենայով։ Քարը դրվում էր հատուկ պատրաստված մեքենայի պարսատիկի մեջ, նետվում էր քաղաքի վրա, հեռավոր նմանություն տալով այժմյան թնդանոթաձգության։ Սակայն գտնվեց հնարիմաց մի հայ քահանա, նա մի տեսակ նետող մեքենա շինեց, որը նույնպես քարեր էր գցում։ Եվ ամեն անգամ, երբ սելջուկները քար էին գցում իրենց մեքենայից, քահանան այնպես էր ուղղում իր մեքենայի քարը, որ նա զարնվում էր սելջուկյան քարին և ետ շպրտելով՝ գցում էր թշնամու բանակը։ Այս քարկոծման միջոցն էլ այսպիսով մատնվում էր անհաջողության։ Այն ժամանակ Տուղրիլը դիմեց մի ավելի մեծ մեքենայի օգնության, որ, ինչպես ասում է Ուռհայեցին, նա բերել տվեց Բաղեշից։ Սա մի ահագին մեքենա էր, որին սպասարկում էին չորս հարյուր հոգի և որը կոչվում էր բաբան։ Նրանով քարկոծվում էին բերդի պարիսպները, քարերի ահագին կտորները, նետվելով մեքենայից սաստիկ ուժով, զարնվում և քանդում էին պարիսպները։ Մանազկերտն իսկույն զգաց, թե ի՛նչ սարսափելի թշնամի ունի իր առջև, երբ նրա պարսպի մի կողմը փլվեց նետված քարից։ Հրամանատար Վասիլը միայն մի հնար գտավ այդ մեքենայի դեմ—այրել այն։ Եվ կանչեց քաղաքում, թե ո՛վ է կարող գնալ հրդեհել մեքենան։ Մի ֆրանկ զինվոր էր, որ հանձն առավ այդ հանդուգն գործողությունը։ Նա միայն մի լավ ձի պահանջեց և ապակե ամանների մեջ նավթի և ծծումբի խառնուրդ վերցրած՝ դուրս եկավ բերդից։ Իր ձեռքին նա բռնած ուներ թուղթ և կանչում էր, թե թղթատար է, նամակ է տանում սուլթանին։ Այսպիսով նա խաբեց միամիտ սելջուկներին մինչ այն աստիճան, որ անարգել մոտեցավ բաբանին և իր ապակե ամանները զարկեց նրան։ Վայրկենապես կրակը բռնեց մեքենան մի քանի կողմերից։ Զարմանքից սառած վայրենիները չկարողացան հանգցնել հրդեհը, և մեքենան ամբողջովին ոչնչացավ, իսկ հերոս ֆրանկը քշեց իր ձին և անփորձ մտավ քաղաք։

Այս հերոսությունը վերջնականապես ջախջախեց սելջուկների գոռոզ սուլթանին։ Բաբանը կորցնելուց հետո նա հրամայեց կոտորել նրա չորս հարյուր սպասարկուներին, բայց դրանով, իհարկե, ոչինչ չշահեց։ Նա պարտված էր։ Քաղաքի բնակիչները թափվեցին պարիսպների վրա և հայհոյում ու ծաղրում էին նրան։ Երկու օր անցած՝ նա վերցրեց պաշարումը և ճանապարհ ընկավ Պարսկաստան։ Բայց իր կատաղությունը թափեց Բզնունյաց գավառի Արծկե բերդի վրա, վերցնելով այն և կոտորելով բնակիչներին, որոնք շատ անհոգ էին մնացել, հույս դնելով իրենց բերդի անառիկ ամրության վրա։

Այստեղ ձեռագիրն ընդհատվում է:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Որովհետև երկրորդ հատորը չափազանց ստվարանում էր, ուստի բաժանեցի երկու մասի և անվանեցի ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ, ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ:

Երրորդ հատորն էլ այսպես բաժանեցի:

Չորս գրքերից պակասում է միայն մեկը – Բագրատունյաց թագավորությունից մինչև 16-րդ դարի սկիզբը: Այս գիրքը ձեռքիս է, համարյա կեսը

գրել եմ, և երբ վերջացնեմ, այդպիսով ամբողջացրած կլինեմ Հայոց Պատմությունը մինչև 19-րդ դարը:

Եթե ինձ վիճակված չլինի տպագրված տեսնել իմ գրած այս չորս գրքերը, որոնց վրա տարիների վիթխարի աշխատանք եմ թափել և աչքերիս լույսը կորցրել, իբրև կտակ թողնում եմ հետևյալ բուռն ցանկությունները ու թախանձանքները.

ա. Չմեռցնել իմ գործը, անպայման տպագրել:

բ. Տպագրել անփոփոխ, առանց որևէ սրբագրության, ի սեր ազատ և անկաշկանդ գիտության:

գ. Տպագրել առաջին հատորի դիրքով և նմանությամբ:

դ. Պատկերազարդել հարուստ կերպով, մտցնելով վավերական, ոչ քմածին պատկերներ.—կենդանագիրներ, շինությունների և այլ հուշարձանների նկարներ, քարտեզներ և այլն:

ե. Պարտադիր լինի, որ յուրաքանչյուր գիրք ունենա հատուկ անունների ցանկ:

Վերջակետը դրի 1921 թվականի հունվարի 19-ին (ն. տ.) Ծննդյան թարախման երեկոյան, ժամը 6 և կեսին:

Դառն և նեղ ժամանակ է, աշխարհը տառապում է համաշխարհային պատերազմի հետևանքներից:

Հայաստանում սով է: Ղարա-Բեքիր փաշան գրավել է Կարսի ամբողջ շրջանը, Ալեքսանդրապոլը և շրջակաները: Ժողովուրդը արյուն-արցունք է թափում թուրքի ձեռքին: Կոտորածներ, ավարառություն, տղամարդկանց քշում տանում են Էրզրում և է՛լ հեռու, կանանց ու աղջիկներին բռնաբարում: Քսաներորդ դարում ենք, բայց հային դեռ կրծում և ծվատում է հին արյունոտ իրականությունը:

Ե՞րբ է լինելու հանգստությունը, ո՛վ անողոք և զարհուրելի ճակատագիր...

Թիֆլիս

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ[1]

428. Վեհմիհրշապուհ, առաջին մարզպան Հայաստանի։
432. Սահակ Պարթևի վերադարձը Պարսկաստանից։
— Թարգմանիչները ճանապարհվում են Արևմուտք՝ ուսման մեջ կատարելագործվելու համար։
437—457. Հազկերտ Բ թագավոր Պարսկաստանի։
438 (սեպտ. 7). Սահակ Պարթևի մահը։
439 (փետր. 17). Մաշտոց Վարդապետի մահը։
441 (?). Ղազար Փարպեցու ծնունդը։
442—451. Վասակ Սյունի մարզպան Հայոց։
446. Հազկերտի առաջին հալածանքը քրիստոնյաների դեմ։
447. Շահապիվանի եկեղեցական ժողովը։
448. Հազկերտի նամակը հայերին, վրացիներին և աղվաններին։
449. Հայոց, Վրաց և Աղվանից նախարարները գնում են Հազկերտի մոտ։
450. Նախարարների վերադարձը Պարսկաստանից։
— Հայոց ապստամբությունը։
451 (մայիսի 26). Ավարայրի ճակատամարտը։
— Քաղկեդոնի եկեղեցական ժողովը։
454. Գերի տարված քահանաները (Հովսեփ կաթողիկոս, Ղևոնդ երեց և ուրիշները) նահատակվում են Պարսկաստանում։
455. Վասակ Սյունու մահը Պարսկաստանում։
— Հազկերտը, Աշուշա բդեշխի աղաչանքներին զիջանելով, ազատ է արձակում փոքրահասակ Վահան Մամիկոնյանին և նրա եղբայրներին։
459. Թագավորում է Պերոզը (Փիրուզ)։
465. Գերի տարված նախարարները վերադառնում են Հայաստան։
478. Գյուտ կաթողիկոսի մահը։— Հաջորդում է Հովհան Մանդակունին։
481. Վահան Մամիկոնյանի ապստամբության սկիզբը։
482. Ներսեհապատի ճակատամարտը։
— Զենոն կայսրի «Հենոտիկոն» կոչված հրովարտակը։
— Ճարմանայնու դաշտի ճակատամարտը հայերի ու պարսիկների միջև։
484. Բալաշի (Վաղարշի) թագավորությունը Պարսկաստանում։
— Նվարսակի դաշնադրությունը։
486—506. (?)Վահան Մամիկոնյանը Հայոց մարզպան։
489—531. Կավատի (Կաբատի) թագավորությունը Պարսկաստանում։
502. Պարսկա-բյուզանդական պատերազմ։—Կարինի կործանումը։
506. Հաշտություն պարսիկների և բյուզանդացիների միջև։

---

[1] Ժամանակագրությունը Լեոն կազմել է երկրորդ հատորի առաջին գրքի համար, իսկ երկրորդ գրքի շարադրությունը չի ավարտված և ժամանակագրությունը չի կազմված։

— Վարդ պատրիկ Մամիկոնյան կառավարիչ Հայաստանի։
— Դվինի առաջին եկեղեցական ժողովը։
527—565. Հուստինիանոս Ա կայսր Բյուզանդիայի։
529. Հուստինիանոսի հալածանքները հեթանոսների և նեստորականների դեմ։
531—579. Խոսրով Անուշիրվան թագավոր Պարսկաստանի։
536. Հուստինիանոսի օրենսդրությունը Բյուզանդական Հայաստանի մասին։—Հայերի ապստամբությունը։
539—562. Պարսկա-բյուզանդական պատերազմները։
543. Խոսրով Անուշիրվանի խնդրանքով հայոց Գևորգ կաթողիկոսը գնում է բյուզանդական բանակը՝ հաշտության բանակցություններ վարելու համար։
545. Հայ իշխանների (Արտավան և ուրիշներ) քաջագործությունները Հյուսիսային Աֆրիկայում։
550. Հովհան Քոշ հայ իշխանի քաջագործությունները բյուզանդական բանակում։
— Ներսես պատրիկ Հայկազնի փայլուն հաղթություններն Իտալիայում, գոթերի դեմ։
552. Հաստատվում է Հայոց թվականը։
554. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը։
570. Մուհամմեդի ծնունդը Մեքքայում։
571—591. Պարսկա-բյուզանդական պատերազմներ։
572 (փետր. 2). Վարդան Մամիկոնյանի ապստամբությունը Դվինում։
577. Բյուզանդական հրամանատար Մորիկ Արզն գավառից հայ գաղթականություն է ուղարկում Կիպրոս կղզին՝ շենացնելու համար։
579. Որմիզդը հաջորդում է Խոսրով Անուշիրվանին։
582—602. Մորիկ կայսր Բյուզանդիայի։
589. Հայ նախարարների ապստամբությունը Բյուզանդական Հայաստանում։
— Վահրամ (Բեհրամ) Չուբինի ապստամբությունը Պարսկաստանում։
591. Հայաստանը բաժանվում է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։
596. Բյուզանդական Հայաստանից Պարսկաստան են անցնում ապստամբած հայ նախարարները։
599. Կյուրիոն եպիսկոպոսը Դվինում, Մովսես Եղվարդեցի կաթողիկոսից ձեռնադրվում է վրաց կաթողիկոս։
601. Նախարարական նոր ապստամբություն Բյուզանդական Հայաստանում։
604—630. Պարսկա-բյուզանդական պատերազմներ։
604. Խոսրով Փարվեզը նորից գրավում է Պարսկական Հայաստանը։
607. Սմբատ Բագրատունին, մարզպան Վրկան աշխարհում, արձակուրդով Հայաստան է գնում և իր եղբայր Վրթանես եպիսկոպոս Քերթողի հետ միասին վեճ է վարում Վրաց Կյուրիոն կաթողիկոսի հետ։
608. Պարսիկները վերցնում են Կարին բերդը։
609. Վրաց եկեղեցին բաժանվում է Հայոց եկեղեցուց։
610—641. Հերակլ կայսր Բյուզանդիայի։
611. Պարսիկները գրավում են Սիրիան։
614. Երուսաղեմը նվաճվում է Խոսրով Փարվեզի ձեռքով։
615—628. Կոմիտաս կաթողիկոս։
616. Եկեղեցական ժողով Տիզբոնի արքունիքում, Խոսրովի հրամանով, քրիստոնեական դավանությունները քննելու համար։
622. Մուհամմեդի փախուստը Մեքքայից Մեդինա (Հիջրեթ)։
623. Հերակլը գրավում է Ատրպատականի Գանձակ Շահաստան քաղաքը (Թավրեզ)։
626. Պատերազմական գործողությունները Հայաստանում բյուզանդացիների և պարսիկների միջև։
627. Հերակլը Տիգրիս գետի ափին, հին Նինվեի մոտ, շարաշար ջարդում է պարսիկներին։
628. Խոսրով Փարվեզը գահընկեց է լինում և սպանվում։
629. Հերակլը նորից վերահաստատում է պարսիկների գերի տարած խաչափայտը Երուսաղեմում։
632. Մուհամմեդի մահը։
633. Թագավորում է Հազկերտ Գ-ն, վերջինը Սասանյան տոհմից։
634. Արաբների սաստիկ պարտությունը պարսիկներից՝ Եփրատի ափին։
635. Արաբները գրավում են Սիրիան։

636. Բյուզանդական բանակը շարաշար պարտություն է կրում արաբներից Յարմուկ գետի ափին։
637. Արաբների փայլուն հաղթությունը Քադիսիայի ճակատամարտում։— Տիզբոնն արաբների ձեռքում։ Օմար խալիֆը վերցնում է Երուսաղեմը։
640. Արաբական առաջին արշավանքը Հայաստան։
642. Նեհավենդի ճակատամարտը։ Սասանյան պետությունը վերջանում է։
643. Երրորդ արաբական արշավանքը Հայաստան։
653. Թեոդորոս Ռշտունին դաշնակցում է արաբների հետ՝ ընդդեմ Բյուզանդիայի։
661—682. Գրիգոր Մամիկոնյան սպարապետ և կառավարիչ Հայաստանի։
661. Վախճանվում է Ներսես Գ կաթողիկոսը, Շինող կոչված (Զվարթնոց եկեղեցու շինողը)։
680. Մոավիա խալիֆի մահը։
— Ալի խալիֆի որդի Հուսեինն սպանվում է Քերբելայի մոտ։
682—685, 689—692. Աշոտ պատրիկ Բագրատունի, կառավարիչ Հայաստանի։
692—695. Ներսեհ Կամսարական կառավարիչ Հայաստանի, մեկենաս։
692. Բյուզանդական բանակը ծանր պարտություն է կրում արաբներից Կիլիկիայում, Սևաստոպոլիս բերդի մոտ։
693. Արաբական կործանարար արշավանքը Հայաստանում։
703. Վարդանակերտի կռիվը։
706. «Կրակի տարին»։ Կաշմ (Կասըմ) ոստիկանը Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում այրել է տալիս նախարարներին և նրանց ձիավորներին, թվով 800 մարդ։
711—713. Վարդան Փիլիկ հայազգի կայսր Բյուզանդիայում։
717. Օմարը խալիֆ է դառնում։
717—728. Հովհան կաթողիկոս Օձնեցի։
720. Եկեղեցական ժողովը Դվինում։
742—743. Արտավազդ հայազն կայսր Բյուզանդիայի։
750. Աբբասյան հարստության սկիզբը։
754. Աբու Ջաֆար Ալ Մանսուր խալիֆ է դառնում։
762. Հիմնարկություն Բաղդադ քաղաքի։
773. Հայաստանում սկսվում է մեծ ապստամբական շարժում արաբների դեմ։
775. Բագրևանդի ճակատամարտը։
783. Աշոտ Մսակեր և նրա եղբայր Շապուհ Բագրատունիները փողով գնում են Կամսարական իշխաններից Արշարունյաց գավառը։
790. Հայկական պահնորդ գունդը Կ. Պոլսի արքունիքում հեռացնում է Իրինե կայսրուհուն։
792. Կոստանդին կայսրը կուրացնում է երևելի հայ զորավար Մուշեղին, և այս պատճառով հայկական գունդը, որ ուղարկված է Տրապիզոնի շրջակաները, ապստամբում է և ջարդում իր դեմ ուղարկված կայսերական զորքը։
806—825. Աշոտ Մսակեր սպարապետ Հայոց։
813—820. Լևոն Ե Հայկազն կայսր Բյուզանդիայի։
817. Բաբեկ (ըստ Հայոց պատմագիրների՝ Բաբան) «Խոռայամ» անվանված կոմունիստական աղանդի առաջնորդ է դառնում։
820. Աշոտ Բագրատունու (առաջին Բագ. թագավորի) ծնունդը։
829. Բաբանը նվաճում է Սյունիքը և կոտորած է անում Գեղարքունի գավառում։
838. Սմբատի որդի Սահլ իշխանը բռնում է Արցախի լեռներում ապաստանած Բաբեկին և հանձնում է արաբական զորավար Աֆշինին, ստանալով իբրև պարգև մի միլիոն դրամ։
847—861. Մոթավաքիլ Ալալլահին արաբական խալիֆ։
850. Բագարատ Բագրատունին, Տարոնի նախարար, ապստամբում է՝ չընդունելով խալիֆից ուղարկված Աբուսեթ (Աբու-Սաիդ) ոստիկանին։
— Աշոտ Արծրունին հաղթական պատերազմներ է մղում Վասպուրականում և Տարոնում արաբների դեմ։
851. Յուսուֆ ոստիկանի արշավանքը։— Բագարատ իշխանի գերեվարումը։
852. Սասունի շարժումը։— Մուշը գրավված, Յուսուֆ ոստիկանն սպանված։
— Բուղայի արշավանքը։
853. Աշոտ Արծրունին և Վասպուրականի նախարարները գերի են ուղարկվում Սամառա։
854. Քթիշ բերդի պաշարումը։ Բուղան ծանր պարտություններ է կրում Աբու-Մուսե Եռանշահիկ իշխանից։
855. Բուղան ետ է կանչվում Հայաստանից։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1. Լեոն պատմական դարաշրջանների հիմքում դնում է ժամանակի ոգին, քաղաքական-հասարակական ձգտումները և տնտեսական գաղափարները, մի բան, որ ընդունված է բուրժուական պատմագիտության մեջ։ Մարքսիստական պատմագիտությունը պատմական դարաշրջանները բաժանում է՝ ելնելով տվյալ էպոխայի արտադրության եղանակից, որին իր հերթին համապատասխանում է հասարակական և պետական կարգը։ Մարդկային հասարակությունը անցել է զարգացման հետևյալ փուլերը՝ նախնադարյան-համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական։ Քաղաքական, իրավական, կրոնական, փիլիսոփայական, մշակութային և վերնաշենքային այլ հասկացությունները որպես հիմք ունեն տվյալ ժամանակաշրջանի արտադրության եղանակը։—7։

2. Լեոն նկատի ունի դավանանքի միատարրությունը, և ոչ Եվրոպայի բնակչության էթնիկական ընդհանրությունը։ Եվրոպայում խնդրո առարկա ժամանակաշրջանում անչափ շատ էին պետություններն ու «ազգությունները», որոնք անվերջ պատերազմներ էին մղում իրար դեմ։—8։

3. Ճիշտ է, եկեղեցին հսկայական դեր էր խաղում «դաստիարակության, գիտության և արվեստի մեջ», բայց ամբողջությամբ չէր կլանել այդ բոլորը։ Աշխարհիկ, ժողովրդական մշակույթը, հատկապես քաղաքներում, իր ուրույն զարգացումն ունեցավ։—8։

4. «Ոսկեդար», այսինքն՝ միջնադարյան հայ մշակույթի ոսկեդար ասելով սովորաբար ենթադրվում է 5-րդ դարի սկզբից մինչև նույն դարի 60-ական թվականները ընկած շրջանը։ Հայտնի չէ, թե ով է առաջին անգամ տվել այս անունը։ Չամչյանի մոտ (1784 թ.) դեռ չկա։ 1836 թ. լույս տեսած Հայկազյան բառարանում արդեն հանդես է գալիս (հատ. Ա, էջ 9 ա, տող 5). «Ընտիր հայկաբանութիւն փայլէ յոսկի դարու սրբոց թարգմանչաց մերոց» (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, Երևան, 1951, էջ 603—604)։ Հետագայում հայագետների մոտ այն քաղաքացիական իրավունք է ստանում, այդ թվում և Լեոյի։—16։

5. Աստվածաշնչի այս թարգմանությունը, որ կատարվել է մ. թ. ա. 2-րդ դարում, կոչվում է «յոթանասնից թարգմանութիւն» (լատիներեն՝ Septuaginta) այն պատճառով, որ համաձայն ավանդության յոթանասուն (ավելի ճիշտ՝ 72) թարգմանիչներ միաժամանակ նստել և մեկը մյուսից անկախ թարգմանել են աստվածաշունչը եբրայերենից հունարեն. Նրանց թարգմանությունները իբր իրար համընկել են մինչև վերջին տառը։ Եկեղեցին այդ ձևով փորձում էր ապացուցել աստվածաշնչի աստվածային բնույթը, թեպետև հունարեն թարգմանությունը բավականին տարբերվում է հին եբրայերեն բնագրից։—18։

6. Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը չի դադարում մեծ հետաքրքրություն ներկայացնել գիտության համար նաև այսօր։ Դրան են դիմում բացի հայ ուսումնասիրողնե-

* Ծանոթագրությունները կազմել են պատմական գիտությունների թեկնածուներ Արամ Տեր-Ղևոնդյանը և Հրաչ Բարթիկյանը։

րից, նաև օտարները։ Վերջերս լույս տեսավ «Եղծ աղանդոց»-ի բնագրի գիտական հրատարակությունը՝ ֆրանսերեն թարգմանությամբ. Eznik de Kolb, De Deo, Édition critique du texte arménien par L. Mariès et Ch. Mercier, Patrologia Orientalis, tome XXVIII, fasc. 3, Paris, 1959; Eznik de Kolb, De Deo, traduction française, notes et tables par L. Mariès et Ch. Mercier, Patrologia Orientalis, tome XXVIII, fasc. 4, Paris, 1959. —23.

7. Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատության աղբյուրների թվում յուրահատուկ տեղ է գրավում մի հատված, որն հայտնաբերվել է Գ. Տեր-Մկրտչյանի կողմից և հրատարակվել ֆրանսերեն Ն. Ադոնցի թարգմանությամբ։ Այն հայտնի է «Հարցում» վերնագրով և մինչև այժմ վերագրվում էր Գրիգոր Լուսավորչին։ Լ. Խաչիկյանը վերջերս լույս ընծայած իր մի հոդվածում ապացուցում է, որ «Հարցումը» Մեսրոպ Մաշտոցի հեղինակությունն է և գրված է հայ մատենագրության արշալույսին։ Տե՛ս Լ. Խաչիկյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», (№ 7, 1964, էջ 301—328)։—25։

8. Լեոն միանգամայն ճիշտ է, երբ ցույց է տալիս, որ լուսապաշտությունը (արևապաշտությունը) քրիստոնեական Հայաստանը ժառանգեց հեթանոսականից։ Բայց միջնադարում արևի տակ սկսեցին Քրիստոսին հասկանալ և արևին Քրիստոս անվանել։

(Տե՛ս Գիրք հերձուածոց, հրտ. Միաբանի, «Արարատ», 1892, № 2) և լուսապաշտությունը արդեն նույնանում է քրիստոսապաշտության հետ։—27։

9. Ոչ բոլոր հայերը իրենց արևորդի էին անվանում։ «Արևորդիները» հայ եկեղեցու ներսում առաջացած մի աղանդ էր, որ տարածվել էր Հայաստանում և Միջագետքում հիմնականում 11—13-րդ դդ. ընթացքում, թեև առանձին հիշատակություններ նրանց մասին հանդիպում են և ավելի ուշ ժամանակի հեղինակների աշխատություններում։ Արևորդիների մասին աղբյուրների տվյալները շատ սակավաթիվ են և գլխավորապես այդ է նրանց շարժման քիչ ուսումնասիրված լինելու պատճառը։ Համենայն դեպս, կարելի է հաստատ ասել, որ արևորդիների շարժումը չստացավ այն լայն ծավալն ու ուժը, ինչ պավլիկյան ու թոնդրակյան շարժումները, նա չվերածվեց բացահայտ դասակարգային պայքարի ընդդեմ ֆեոդալական շահագործման։

«Արևորդիների» մասին առաջին հիշատակությունն ենք հանդիպում 11-րդ դարի կեսերին Գրիգոր Մագիստրոսի թղթերում։ Նա ասորոց կաթողիկոսին գրած պատասխան նամակում ի միջի այլոց գրում է. «Ահա և այլ ոմանք ի Զրադաշտ մոգէ՝ մոգպարսկականք. և այժմ ի նոցանէ դեղեալ արեգակնապաշտք զոր Արևորդիսն անուանեն. և ահա՛ են յայդմ գաւառի (այսինքն Ամիդի շրջակայքում) բազումք և ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն» (Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 161)։

Արևորդիների մասին մեր հիմնական գիտելիքները մենք քաղում ենք Ներսես Շնորհալու (1166—1173 թթ.) մի պատասխան նամակից։ Սամոսատցիները նամակով դիմել էին Ներսես Շնորհալուն, ցանկանալով իմանալ, թե ինչ կարգով պետք է եկեղեցու գիրկն ընդունել այն արևորդներին, որոնք կցանկանային հրաժարվել իրենց աղանդից։ Ներսես Շնորհալին պատասխանում է նրանց և ցույց տալիս կարգը, բայց միաժամանակ կանգ է առնում նաև արևորդիների գաղափարախոսությանը վերաբերող հարցերի վրա։ Պարզվում է, որ արևորդիների աղանդը, բացի Ամիդի շրջանից, 12-րդ դարում տարածված էր նաև Սամոսատ քաղաքում, ապա նաև հավանաբար Կիլիկիայի հայկական իշխանության սահմաններում։ Արևորդիներին հետագայում հիշատակում են Դավիթ Ալավկա որդին (տե՛ս Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 102), 14-րդ դարում նրանց հիշատակում է Մխիթար կաթողիկոսը (Ղ. Ալիշան, նույն տեղում, էջ 102), Մխիթար Ապարանցին (տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, էջ 551—552), Թովմա Մեծոփեցին և, վերջապես, Պուտախ վկայի վկայաբանությունը (Հայոց նոր վկաները, հրտ. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 360 և հտ.)։

Ենթադրելով, որ մոգ Զրադաշտը, որ հիշատակվում է Գրիգոր Մագիստրոսի կողմից որպես արևորդիների ուսմունքի հիմնադիր զրադաշտական կրոնքի մարգարե Զրադաշտը չէ, այլ մազդակյան շարժման գաղափարախոս Զրադաշտը, որ իրական անձնավորություն է և ապրել է 3-րդ դարում, կարելի է եզրակացնել, որ արևորդիները իրենցից ներկայացնում էին մազդակյան շարժման վերապրուկները հայկական հողի վրա և որ նրանց գաղափարները մազդակյան շարժման գաղափարներն են՝ հարմարեցրած քրիստոնեության գաղափարներին։ Արևորդիները պաշտում էին արևը, որի տակ ենթադրվում էր Քրիստոսը, նրանք արև և Քրիստոս հասկացողությունները իրար էին միացնում և այդ տեսակետից միանգամայն հասկանալի են դա-

նում Գրիգոր Մագիստրոսի խոսքերը, թե արևորդիները «ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն»։ Նրանք շատ էին հարգում բարդի ծառը, իսկ Քրիստոսի խաչափայտը գտնում էին, որ պատրաստված էր բարդի ծառի փայտից։—27։

10. Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը վերջերս ունեցել է մի քանի հրատարակություն և թարգմանվել է բազմաթիվ լեզուներով. «Կորյուն—Վարք Մաշտոցի» բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ.—դր. Մանուկ Աբեղյանի (Երևան, 1941)։ Վերահրատարակվել է Երևանում 1962 թ.։ Լույս տեսավ նրա ռուսերեն թարգմանությունը. Корюн, Житие Маштоца, перевод Ш. В. Смбатяна и К. А. Мелик-Оганджаняна, предисловие К. А. Мелик-Оганджаняна, комментарий Ш. Б. Смбатяна (Ереван, 1962). Գերմաներեն թարգմանությունը, Վահան Ինգլիզյանի առաջաբանով՝ Leben des heiligen Maschtotz von seinen Schüler Koriun հետևյալ հրատարակության մեջ. Ausbreiter des Glaubens im Altertum Zusammengestellt und eingeleitet von Wilhelm Schamoni, Düsseldorf, 1963, S. 117—146 ծանոթ. էջ 177—182, և անգլերեն. Koriun, The life of Mashtots, Translated by Bedros Norehad, New York, 1964 (Առաջաբանը Մանուկ Աբեղյանի, կրճատ, ընագիրը՝ արտատպություն Մ. Աբեղյանի կազմած)։—27։

11. Բազում վեճեր են ծագել Ագաթանգեղոսի պատմության շուրջը, որի էությունը շատ ավելի բարդ է և բազմակողմանի, քան պատկերացնում էին մեր դարի սկզբին։ Այս երկի Կորյունի ձեռքով թարգմանված լինելու վարկածը (Ներսես Բյուզանդացի) չի ապացուցված։ Նրա հեղինակի կամ խմբագրի անունն անհայտ է, իսկ Ագաթանգեղոս (բարի հրեշտակ) անունը վերաբերում է հավանաբար Գրիգոր Լուսավորչին։

Ագաթանգեղոսի պատմությամբ զբաղվել են մի քանի տասնյակ հայագետներ՝ Մ. Չամչյան, Վ. Լանգլուա Պ. դը Լագարդ, Ա. Ֆոն Գուտշմիդ, Բ. Սարգսյան, Հ. Տաշյան, Ներսես Բյուզանդացի, Գ. Տեր-Մկրտչյան, Ն. Մառ, Ն. Ադոնց, Ժ. Գարիտտ և շատ ուրիշներ։ Այս բոլորի բազմապիսի և հաճախ հակասական կարծիքներն ու վարկածները կարելի է հետևյալ ձևով ամփոփել.

Հինգերորդ դարի կեսերին պատմական ու վկայաբանական տարբեր աղբյուրներից հայ եկեղեցականի ձեռքով խմբագրվել է այն Պատմությունը, որն, ըստ ականատես և ժամանակակից Ղազար Փարպեցու հավաստի վկայության, կոչվում էր «Գիրք Գրիգորիսի»։ Չի բացառվում այն պարագան, թե այս երկը, բացի հայկականից, կարող էր նաև հունալեզու աղբյուրներ (4-րդ դարի երկրորդ կեսի կամ 5-րդ դարի առաջին կեսի) ունեցած լինել։ Ագաթանգեղոսը թեև լի է վկայաբանական տարրերով, այսուամենայնիվ, նրա պատմական տեղեկություններից շատերը հավաստի են և արժեքավոր։

Այս նախնական խմբագրությունը որոշ բնագրային փոփոխությունների ենթարկվելուց հետո, մոտավորապես 6-րդ դարի վերջին թարգմանվել է հունարեն և տարածվել ամբողջ միջնադարյան քրիստոնյա աշխարհում։ Նրանից է կատարված լատիներեն ամփոփ թարգմանությունը, իսկ 10-րդ դարում Սիմեոն Մետափրաստեսը տվել է հունարեն հայտնի ամփոփումը, որը թարգմանվել է վրացերեն։

Հունական Ագաթանգեղոսն ունի մի սկզբնական հատված՝ Առաջաբան (Արտաշիրի ապստամբությունը Արտավանի դեմ), որը չկա հայկական բնագրում, և ինչպես բանասերները ցույց են տվել, հետագայում է կցվել նրան։

Վերջերս հայտնաբերվեց նաև Ագաթանգեղոսի արաբական թարգմանությունը (իր հերթին հունարենից թարգմանված), որի ձեռագիրը Սինայի Ս. Կատարինեի վանքում է գտնվում։ Ձեռագիրը չունի հունական վերոհիշյալ սկզբնական հատվածը, և սկիզբ է առնում այնտեղ, ուր հայկական բնագիրն է սկսում իր առաջաբանից հետո։

Սակայն, բացի մեզ հասած Ագաթանգեղոսի Պատմությունից, եղել է նաև մի ուրիշ հայկական մեզ չհասած խմբագրություն, որի հունարեն և արաբերեն թարգմանություններն են գտնվել։ Բանասիրության մեջ «Վարք» անունով հայտնի այս խմբագրությունը տարբեր է Ագաթանգեղոսի պատմությունից և ունի նույնիսկ նոր նյութեր, ինչպես, օրինակ, Գրիգոր Լուսավորչի կնոջ (Յուղիտայ) մասին (հունարեն Վարքում)։ Սկզբում հայտնաբերվել է արաբական Վարքը և ուսումնասիրությամբ հանդերձ լույս ընծայվել Ն. Մառի կողմից 1905 թվին, իսկ հունականը նույնպես ճոխ ուսումնասիրությամբ հրատարակեց Ժ. Գարիտտը (G Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Վատիկան, 1946)։—28։

12. 5-րդ դարում երկու տարբեր լեզուների՝ գրաբարի և ժողովրդական լեզվի գոյության տեսակետը ժխտված է հայագիտության մեջ։ Անվանի լեզվաբան, ակադեմիկոս Հ. Աճառյանը իր Հայոց լեզվի պատմության մեջ մի ամբողջ գլուխ է հատկացրել (Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951, գլուխ ԺԷ, «Գրաբարը խոսակցական լեզո՞ւ էր») այս հարցին, ապացուցելու համար, որ 5-րդ դարում գրական և խոսակցական լեզուների միջև շեշտված տարբերություն չկար և չէր կարող լինել։

Գրաբարի և 5-րդ դարի ժողովրդական լեզվի միջև այդպիսի տարբերություն դնելու համար ստիպված ենք ընդունել, որ գրաբարը պարզապես արվեստական լեզու էր, քանի որ այլ ճանապարհով նա չէր կարող երևան գալ, իսկ այս դեպքում Սահակի և Մեսրոպի ջանքերը՝ գրի և գրականության միջոցով քրիստոնեությունը ժողովրդի մեջ տարածելու համար, բոլորովին անհասկանալի են դառնում։ Եթե դժվար ըմբռնելի հունարենին ու ասորերենին պիտի փոխարիներ նույնպես անհասկանալի (և նույնիսկ «դասակարգային») գրաբարը, ապա Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը բոլորովին իր նպատակին չէր ծառայի։

Դեռ ավելին, այդպիսի արվեստական լեզու հնարելը 5-րդ դարի Հայաստանում անկարելի էր հենց միայն այն պատճառով, որ չկար մի նախորդ մեռած գրական լեզու, որի հիման վրա կարողանային նորաստեղծ գրաբարը։ 5-րդ դարի դասական գրաբարը կարող էր գոյանալ ու զարգանալ միայն կենդանի խոսակցական լեզվի հիման վրա, իսկ Լևոյի մոտ հիշված իրարից բոլորովին տարբեր և նույնիսկ իրար հակառակ երկու լեզուների գոյությունը ուշ շրջանի երևույթ է։—33։

13. Ներսես Ակինյանը Եղիշեի ժամանակի հարցին նվիրել է մի ամբողջ մենագրություն. «Եղիշե վարդապետ և յուր Պատմությունն Հայոց պատերազմին» քննական ուսումնասիրություն (հատ. Ա, Վիեննա, 1932, հատ. Բ, Վիեննա, 1937), որտեղ փորձ է արել ապացուցելու, որ Եղիշեի պատմության մեջ նկարագրվում են ոչ թե 5-րդ դարի կեսերի դեպքերը, այլ 572 թ., այսինքն՝ Կարմիր կոչված Վարդանի պարսիկների դեմ բարձրացրած ապստամբությունը, որ մեզ հասած Եղիշեի պատմությունը 7-րդ (կամ 9-րդ) դարում կատարված և հակասություններով լի խմբագրություն է։ Պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը, մանրամասն ուսումնասիրության ենթարկելով Եղիշեի աշխատությունն ու հեղինակի կենսագրությունը, գալիս է այն եզրակացության, որ «որքան էլ ավանդական կենսագրության մեջ անհավանական գծեր կան, որքան էլ փորձեր են եղել խախտել բոցաշունչ հայրենասեր Եղիշե վարդապետի 5-րդ դարում ապրած և ականատես պատմագիր լինելու հանգամանքը, այնուամենայնիվ այդ փորձերն... պետք է համարել բոլորովին ձախողված»։ Տե՛ս Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1946, էջ 7։ Եղիշեի պատմության առաջին գիտական հրատարակությունը իրականացրել է պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը։ Եղիշեի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957։ Վերջերս լույս է տեսել նաև նոր արևմտահայերեն աշխարհաբար թարգմանությունը և նրա անգլերեն թարգմանությունը։ Տե՛ս Եղիշէ, Վարդանանց պատմութիւնը, արևմտահայ աշխարհաբարի վերածեց Տք. Յովհաննէս Ծովիկեան. Yeghisheh, The History of Vartanank, English Translation by Dickran H. Boyajian, (New York, 1952)։—48։

14. Սեբեոսի «Պատմության» ուսումնասիրող Գևորգ Աբգարյանը եկել է այն եզրակացության, որ խնդրո առարկա «Պատմություն ի Հերակլն»-ը չի պատկանում Սեբեոսի գրչին։ Ուսումնասիրողը գտնում է, որ սխալմամբ «Պատմություն ի Հերակլն» վերնագրված և Սեբեոսին վերագրված աշխատությունը պատկանում է խոսրով անունով մի հեղինակի, որն ապրել է 7-րդ դարում, որ իսկական Սեբեոսի աշխատությունը դեռ չի հայտնաբերվել։ Տե՛ս Գ. Աբգարյանի «Դիտողություններ Սեբեոսի պատմության մասին», Բանբեր Մատենադարանի, № 4, 1958, նույնի «Երկու տարբեր հեղինակներ Սեբեոսին վերագրվող պատմությունում», Բանբեր Մատենադարանի, № 6, 1962։ Ավելի մանրամասն նրա մենագրության մեջ՝ «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965։—48։

15. Նկատի ունի Վարդան Արևելցուն, որի «Պատմութիւն Տիեզերական»-ը սխալմամբ է վերագրվել Վարդան Բարձրբերդցուն։ Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ Բ, նաև Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ե, Երևան, 1962, էջ 87 և 92, № 113 և 140։—49։

16. Վարդանանց պատերազմը հայկական միջնադարի ամենաշատ ուսումնասիրված, սակայն հույժ վիճելի հարցերից մեկն է, որը միաժամանակ հայ ժողովրդի սրտին շատ մոտիկ պատմական իրադարձություն է։

Երկար դարերի ընթացքում այս նյութը մշակվել է պատմագիտության (և գեղարվեստական գրականության) մեջ, օրքացնելով հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանին, որպես ազգային հերոս, իսկ մարզպան Վասակ Սյունուն դարձնելով դավաճանության մարմնացում։

Այս կարծիքի դեմ առարկեցին Մ. Գարագաշյանը և մանավանդ Ն. Ադոնցը իր «Վասակ Մարզպանը պատմաբանների դատաստանի առջև» (Н. Адонц, Марзпан Васак перед судом историков, СПБ, *1904) աշխատության մեջ։ Վասակը սոսկ դավաճան չէր, այլ քաղաքական պայքարի ինքնուրույն գիծ ունեցող հայ նախարար, որը ձգտում էր իր հասկացած ձևով վերականգնել Հայոց թագավորությունը։ Վասակը Վարդանից ոչ պակաս կողմնակիցներ ուներ հայ նախարարների մեջ՝ Տիրոց Բագրատունի, Արտակ Ռշտունի, Գադիշո Խոռխոռունի և այլն։ Ն. Ադոնցի կարծիքը բնականաբար ունեցավ հետևորդներ (Գ. Գյուզալյան, Հինգերորդ դարի հայոց կրոնական և քաղաքական շարժումները, Բեյրութ, 1947 և մանավանդ Հրանտ Ք. Արմեն, Մարզպանը և սպարապետը, 1952)։ Դժբախտաբար, այս տեսակետն ունեցող պատմաբանները տարվելով իրենց պաշտպանած ուղղությամբ, հաճախ ձգտում են Վասակ Սյունուն արդարացնելուց հետո նույնիսկ նսեմացնել թե Վարդանանց և թե Ավարայրի ճակատամարտը։*

Անկախ այն բանից, թե Վասակին ու նրա կողմնակիցներին ինչպիսի գնահատական կտրվի, Վարդանն ու Վարդանանց պատերազմը մնում են իրենց բարձրության վրա և ավելորդ է որոշ պատմաբանների նկրտումները, նսեմացնելու Վարդանի դերը և կամ նույնիսկ ցույց տալու, որ Ավարայրի ճակատամարտը սոսկ փոքրիկ ռազմական ընդհարում էր (բացի վերոհիշյալներից տե՛ս նաև՝ Խ. Վեմյան, Վասակ Սյունիի պատմական գնահատության շուրջը, Տեղեկագիր (Հասարակական գիտություններ), 1965, № 1)։

*Վարդանանց ապստամբությունը մեկն էր հայ ժողովրդի այն հուժկու պոռթկումներից, որոնք հետևանք էին օտար լծի խիստ ծանրացման։ Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ Հազկերտ արքայի օրոք սասանյան Պարսկաստանը ծանր հարկերի միջոցով ձգտում էր ընկճել հայ ժողովրդի ոգին և ստիպել նրան ենթարկվել իր բոլոր ցանկություններին։ Եղիշեն վկայում է, որ Հայաստան էր ուղարկվել Դենշապուհ պաշտոնյան աշխարհագիր անելու նպատակով, որից հետո հարկերը ծանրացան և հարկադրման ենթարկվեց նույնիսկ հայ եկեղեցին։ Պատմիչի վկայությամբ, այս ամենն արվում էր ժողովրդին տկարացնելու համար, որպեսզի չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը։ Ահա այս կողմի վրա է ուշադրություն դարձրել Ս. Երեմյանը (*Вестник Древней истории, *№ 4, 1951), որը սակայն Վասակի գնահատման հարցում կրկնում է հին տեսակետը։—62։*

17. Հեփթաղները հունարեն աղբյուրներում կոչվում են նաև «սպիտակ հոներ», հաճախ «թուրքեր» և «աբդելներ» (Տե՛ս Theophylacti Simocattae Historiae, ed. C. de Boor, Lipsiae, 1887, lib. VII, cap. 7, 8, p. 257, lib, IV, cap. 6, 10, p. 161): *Հեփթաղների առաջին ներխուժումը Խորասան տեղի ունեցավ 427 թ.։ Նրանց դեմ համառ պայքար մղեցին պարսից Վարահրան Ե (Վռամ կամ Վահրամ Գուր) և Հազկերտ Բ արքաները, որոնց հաջողվեց պարտության մատնել նրանց։ Բայց Հազկերտի մահից հետո հեփթաղները իրենց թագավոր Ակշունվարի գլխավորությամբ գրավեցին Չագանիանը, Բադաշխանը, Բալխը, Տոխարիստանը և Գարչիստանը։ Պարսից արքա Պերոզի արշավանքները (459 և 478 թթ.), ինչպես և վերջին 484 թ. արշավանքը անհաջող էին։ Հեփթաղների հաջողությունները պայմանավորված էին այն սուր դասակարգային պայքարով, որ տվյալ ժամանակաշրջանում ծավալվել էր Պարսկաստանում և որի արտահայտությունը հիմնականում մազդակյան շարժումն էր։ Հայկական աղբյուրներից հեփթաղներին հիշատակում է Եղիշեն (քուշաններ անվան տակ)։ Պերոզի պատերազմների մասին ընդդեմ հեփթաղների մանրամասն նկարագրում է Ղազար Փարպեցին, իսկ օտարալեզու աղբյուրներից Պրոկոպիոս Կեսարացին, Հովհաննես Անտիոքացին և Իեշու Սյունակյացը։ Հեփթաղների մասին նորագույն ուսումնասիրություններից տե՛ս* O. G. Wesendonk, Kušan, Chioniten und Hephtaliten, Klio, 26 (1933), 336—346; R. Ghirshman, Les Chionites—Hephtalites, Le Caire, 1948; A. Christensen, L'Iran sous les Sassanides, 2-e ed., Copenhague, 1944, p. 292 sqq.; А. Н. Бернштам, Очерк истории гуннов, Ленинград, 1951, стр. 183—197, К. В. Тревер, Кушаны, хиониты и эфталиты по армянским источникам IV—VII вв., Советская археология (том 21, 1954, стр. 131—147) – 108:

18. Լեոն «հեղափոխական», «հեղափոխություն» տերմինների տակ ենթադրում է «ապստամբ», «ապստամբություն» հասկացողությունները։—112։

19. Բողբերդը հիշատակվում է Պրոկոպիոս Կեսարացու մոտ τὸ Βῶλον φρούριον *ձևով։ Տե՛ս Պարսկական պատերազմի մասին, գիրք Ա, գլ. 15։ Այնտեղ ասված է. «Այն ժամանակն*

էր, որ հռոմայեցիները Պարսկահայաստանում գրավեցին պարսկական վայրեր՝ Բոլոս ամրոցը և Ֆարանգիոն կոչվածը, որտեղ պարսիկները ոսկի էին հանում հանքերից և բերում արքային»։ Բողբերդ վայրը այժմ կոչվում է Բուղա կալա։—124։

20. Զամիհր Հազարավուխտը պարսկական նշանավոր Կարենյան տոհմին էր պատկանում, ծագումով Շիրազից. կառավարում էր Սակաստանի նահանգը։ «Հազարավուխտ»-ը նրա պատվո տիտղոսն էր։ Իսկ Շապուհը պատկանում էր, նույնպես նշանավոր, Միհրանյանների տոհմին։ Տե՛ս A. Christensen, L'Iran sous les Sassanides, (p. 294—295):—125:

21. Զարեհը ոչ թե Պերոզի որդին էր, այլ նրա եղբայրը։ Տե՛ս A. Christensen, L'Iran sous les Sassanides, (p. 295):—126:

22. Սովետական պատմագրությունը մանրամասն ուսումնասիրել է իրանական միջնադարի սոցիալական հուժկու շարժումներից մեկի՝ Մազդակյան շարժման պատմությունը։ Մազդակյան շարժումը տարածվեց 5-րդ դարում և կապված է Բամդադի որդի Մազդակի անվան հետ, որ Կավատ Ա-ի (488—531 թթ.) ժամանակակիցն էր։ Մազդակյան շարժման մեջ ընդգրկվեցին հասարակության բազմաթիվ շերտեր, բայց հիմնական զանգվածը գյուղացիությունն էր։ Շարժման առաջացման հիմնական պատճառը աշխատավոր մասսաների ծայրահեղ աղքատացումն էր, որ պայմանավորված էր այն երկար պատերազմներով, որ Պերոզ արքան մղեց հեփթաղ հոնների դեմ։ Երբ 484 թ. Պերոզը սպանվեց հոնների դեմ մղած պատերազմում և Իրանի գահը ժառանգեց Պերոզի եղբայր Վաղարշը, դրությունը չփոխվեց։ Ինքը Վաղարշը 488 թ. գահընկեց արվեց և կուրացվեց։ Գահին տիրացավ Պերոզի որդի Կավատը, որի թագավորության ժամանակ մազդակյան շարժումը հասավ իր հզորության գագաթնակետին։ Կավատը ցանկանալով զսպել քրմերին և վերնախավին, թույլ տվեց մազդակյան շարժման ազատ տարածման։ Բայց և այնպես քրմությունն ու վերնախավերը հաղթող դուրս եկան։ Նրանք 496 թ. տապալեցին Կավատին և բանտարկեցին նրան։ Բայց վերջինիս հաջողվեց 499 թ. փախուստի դիմել, վերադառնալ ու գրավել իր գահը, բայց այս անգամ, տեսնելով, որ մազդակյանները սկսել են վտանգ ներկայացնել նաև իր համար, փոխեց իր քաղաքականությունը։ Արյունոտ հաշվեհարդար տեսավ նրանց հետ Կավատի որդի Խոսրովը, դեռ հոր կենդանության ժամանակ։ Ինքը Մազդակը ձերբակալվեց և մահապատժի ենթարկվեց։

Մազդակյան շարժման գաղափարախոսությունը իր արմատներով կապված էր մանիքեության հետ, հատկապես ընդգծելով չարի դեմ մղված պայքարը, որտեղ հաղթող է դուրս գալիս բարին։ Մազդակյաններն ասում էին, որ աստված իր բարիքները տվեց մարդկանց, որպեսզի նրանք տիրեն նրանց հավասարապես, օգտվեն հավասար կերպով և մեկը մյուսից շատ չունենա։ Բայց մարդիկ սկսեցին մեկը մյուսի հանդեպ անարդարություններ գործել, պայքարի բռնվեցին միմյանց հետ և հզորները հաղթելով տկարներին, հափշտակեցին բոլոր բարիքներն ու ունեցվածքը։ Դրա համար, ասում էին մազդակյանները, անհրաժեշտ է վերցնել հարուստներից և տալ աղքատներին, որպեսզի բոլորի բաժինը հավասար լինի։ Այնպես, ինչպես «ջուրը, կրակը և արոտավայրերը» ընդհանուրին են պատկանում, ապա, եզրակացնում էին մազդակյանները, անհրաժեշտ է, որ մնացած ամբողջ նյութական ունեցվածքը լինի մարդկանց համար ընդհանուր։

Մազդակի վարդապետությունը կազմավորվել էր Մազդակից շատ առաջ։ Աղբյուրները այդ գաղափարախոսության հիմնադիր են համարում Խարագանի որդի Զրադաշտին, որը Մանիի ժամանակակիցն էր։

Մազդակյան շարժման մասին մանրամասն տե՛ս հետևյալ կարևոր աշխատությունները՝ A. Christensen, Le règne du roi Kawadh I et le communisme mazdakite. Det Kongelige Danske Videnskabernes Selskabs historisk-filologiske Meddelelser, IX. 6. 1925; Idem, L'Iran sous les Sassanides; Н. В. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, Москва-Ленинград, 1956, стр. 278—316; Otakar Klima, Mazdak. Geschichte einer Sozialen Bewegung im Sassanidischen Persien (Praha, 1957).—130:

23. Կավատին Անհուշ բերդից փրկողը Սիյավուշն էր, ինչպես Պրոկոպիոս Կեսարացին է գրում՝ Սեոսեսը (տե՛ս Պարսկական պատերազմի մասին, գիրք Ա, գլ. 6)։ Կավադի կնոջ մասին առասպելական պատմությունը տե՛ս նույն Պրոկոպիոսի մոտ, նույն տեղում։—131:

24. Զենոն կայսեր Հենոտիկոնի (Միավորության գրի), որի հին հայերեն թարգմանությունը հասել է մեզ (տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 369—371), նպատակն էր սրբացնել միաբնակ Արևելքը, որ Քաղկեդոնի ժողովից հետո գնալով օտարանում էր և հեռանում կայսրությունից, միջին ուղղություն վերցնել։ Բայց արդյունքը եղավ այն, որ Հենոտիկոնի

հրապարակումից հետո Հռոմի և Բյուզանդիոնի միջև 34 տարվա խզում առաջացավ (484—518 թթ.)։—131։

25. 502 թվականին ծագած պարսկա-բյուզանդական պատերազմի մասին արժեքավոր տեղեկություններ է պահպանել Պրոկոպիոս Կեսարացին և ասորի պատմիչ Իեշու Սյունակյացը։ Պրոկոպիոս Կեսարացին պարզապես ասում է, որ Կավատ արքան սկզբում «ինքը անձամբ հարձակվեց Հայաստանի վրա» և մեծ ավար վերցրեց։ Իեշու Սյունակյացը տալիս է արժեքավոր մանրամասնություններ, որ արշավանքը Կավատը կատարել է հոնական զորքով ու նախ և առաջ հարձակվել է Թեոդոսուպոլիս քաղաքի վրա Հայաստանում (502 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերին), և որ մի քանի օր հետո գրավեց այդ քաղաքը այն պատճառով, որ նրա կառավարիչ Կոստանդինը, որը թշնամաբար էր տրամադրված դեպի կայսրը, ապստամբություն էր բարձրացրել հռոմայեցիների դեմ և քաղաքը հանձնել թշնամուն։ Այս դեպքը հիշատակում է նաև բյուզանդական ժամանակագիր Թեոփանեսը, որն այս Կոստանդինին հիշատակում է որպես սենատոր և իլլիրական զորաբանակների հրամանատար (տե՛ս Theophanis Chronographia, t; I, p. 144)։ *Իեշու Սյունակյացը տալիս է ուրիշ մանրամասնություններ էլ, որ Կավատը թալանեց քաղաքը, հրդեհեց այն, ամայացրեց քաղաքի հյուսիսային մասում գտնվող բոլոր բնակատեղիները և գերեվարեց բնակչությունը, որ նա վերոհիշյալ Կոստանդինին իր զորահրամանատարը դարձրեց, ապա քաղաքում թողնելով կայազոր, հեռացավ։ Տե՛ս* Н. В. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв. н. э. Сирийская хроника Иешу Стилита как исторический источник, Москва-Ленинград, 1940, стр 1948. *Իեշուն պատմում է նաև, որ պարսից զորքը Թեոդոսուպոլիսը գրավելուց և ամայացնելուց հետո, ավերակի վերածեց և Ագելը, Սուֆը, Արմենիան և Արաբը (նույն տեղում, էջ 149)։ Ագելը դա Անգեղն է, Սուֆը՝ Ծոփքը, Արմենիան՝ Բյուզանդական Հայաստանը, իսկ Արաբը՝ բյուզանդացիներին պատկանող մի նահանգ՝ Մծբինից արևմուտք։ Տե՛ս* J. Marquart, Eranšahr nach der Geographie des Pseudo-Moses Chorenazi, S. 162—163, *նաև* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С.—Петербург, 1908, стр. 41, прим. 1, *հմմտ.* Н. В. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв., стр. 149. *Նույն Իեշուն մի քիչ հետո պատմում է, որ երբ Կավատի զորքի մի մասը արաբ թագավոր Նաամանի (Նաաման 3-րդ, Իբն ալ Ախվադ, Խիրայի արաբների թագավոր 498—503 թթ.) գլխավորությամբ պաշարում էր Եդեսիա քաղաքը, նրա պաշտպան Եվգենիոսը, տեսնելով պաշտպանության անհնարինությունը, իր զորքը փրկելու համար դուրս եկավ քաղաքից, հարձակվեց Թեոդոսուպոլսում գտնվող պարսկական կայազորի վրա, կոտորեց բոլորին և գրավեց քաղաքը (տե՛ս Ն. Վ. Պիգուլևսկայա, նշ. աշխ., էջ 150)։—132։*

26. Սեբեոսի Պատմության սկզբում կցված հատվածը, որ գիտությանը հայտնի է որպես «Անանուն»-ի ստեղծագործություն, ուսումնասիրության ենթարկվեց վերջերս Գ. Աբգարյանի կողմից (տե՛ս նրա «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965 թ.)։ Գ. Աբգարյանը հանգել է այն եզրակացության, որ խնդրո առարկա հատվածը (որ սխալմամբ է կցվել «Սեբեոսի Պատմությանը») 11-րդ դարում ապրած Հովհաննես Տարոնացու գրչին է պատկանում, որ նրա առանձին մասերը քաղված են Փավստոս Բուզանդի աշխատության մեզ չհասած բաժնից։—140։

27. 1938 թ. Մաշտոցի անվան մատենադարանի № 7117 ձեռագրում հայտնաբերվեց աղվանների այբուբենը, որը խթան հանդիսացավ գիտական ուսումնասիրությունների՝ այդ ուղղությամբ։ Նրանք ավելի ուժեղ թափ ստացան հնագիտական պեղումների ժամանակ աղվանական վիմագիր արձանագրությունների հայտնաբերմամբ։ Այժմ այդ մասին կա բավականին ստվար գրականություն, որոնցից կարելի է նշել հետևյալները՝ И. Абуладзе, К открытию алфавита кавказских албанцев, Тбилиси, 1938. А. Шанидзе, Новооткрытый алфавит кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938. *Հ. Աճառյան, Աղվանից գիրը, «Տեղեկագիր» № 3—4, 1941.* G. Dumézil, Une chrétienté perdue: les Albanais du Caucase, Mélanges Asiatiques, vol. 232, 1940; H. Kurdian, The Newly Discovered Alphabet of the Caucasian Albanians, Journal of the Royal Asiatic Society, 1956; R. H. Hewsen, On the alphabet of the Caucasian Albanians, Revue des Etudes Arméniennes, t. I, Paris, 1964։ *Աղվանական վիմագիր արձանագրությունները հիմնականում հայտնաբերվել են Մինգեչաուրի հնագիտական պեղումների ժամանակ։ Այդ մասին տե՛ս* С. М. Казиев, Новые археологические находки в Мингечауре. "Доклады" Академии наук Азерб. ССР, том V, № 9, 1948 г. *Աղվանական արձանագրությունների ընթերցման փորձ է արել պրոֆ. Աշ. Աբրահամյանը (տե՛ս նրա* Дешифровка

надписей кавказских агван, Ереван, 1964, *հայերեն և անգլերեն ամփոփումներով)։—142։*

28. Աղվանքի պատմությանն (սկզբից մինչև 7-րդ դարը) է նվիրված Կ. Վ. Տրևերի մի մենագրությունը. К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании Москва-Ленинград, 1959.—143։

29. Մովսես Կաղանկատվացու «Պատմությունը» անգլերեն թարգմանությամբ լույս է ընծայել անգլիացի հայագետ Չ. Դովսեթը. The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci, translated by C. J. F. Dowsett, London, 1961։—144:

30. Հուստինոս կայսրը վախճանվեց 527 թ. օգոստոսի 1-ին։ Հուստինիանոսը Օգոստոս հայտարարվեց 527 թ. ապրիլի 1-ին։—157։

31. Հուստինիանոս կայսեր ամենից աչքի ընկնող գործունեությունը ծավալվեց իրավունքի ասպարեզում։ Նա իր ժամանակի խոշորագույն իրավագետ Տրիբոնիանոսի միջոցով այնպես կարգավորեց և կատարելության հասցրեց քաղաքացիական իրավունքը, որ մինչև օրս զարմանք է պատճառում։ Կապիտալիստական ժամանակակից պետությունների քաղաքացիական իրավունքը հիմնականում խարսխված է Հուստինիանոսի իրավագիտական գործի վրա, որ հետագայում ստացավ Corpus Juris Civilis *անունը։ Այն բաղկացած է չորս մասից. 1) Հուստինիանոսի կոդեքսը* (Codex Justinianus), *որի մեջ ի մի բերվեցին Հադրիանոս կայսրից սկսած մինչև 534 թ. հրապարակված կայսերական օրենքները. 2) Դիգեստաներ կամ Պանդեկտաներ* (Digestae, Pandectae), *որն իրենից ներկայացնում է խոշորագույն իրավագետների աշխատությունների սինթեզը և հռոմեական ամբողջ իրավագիտական մտքի ամփոփումը. 3) Ինստիտուցիաները* (Institutiones), *գործնական իրավունքի մի ձեռնարկ և վերջապես 4) նշանավոր Նովելլաները* (Novellae)*—154 օրենսդրական հրաման-կարգադրություններ, որոնք հրապարակվեցին 534 թ. հետո։ Նովելլաները գլխավորապես վերաբերում են քաղաքացիական և եկեղեցական կառավարմանը, ֆինանսական սիստեմին և այլն և Բյուզանդիայի (նաև Բյուզանդական Հայաստանի) սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար անփոխարինելի աղբյուր են։ Միայն այս վերջինը՝ նովելլաները գրված են հունարեն լեզվով. մնացած երեք գործը գրված են լատիներեն։ Այս հանգամանքը պարզ վկայում է, որ Հուստինիանոսը ցանկանո՞ւմ էր այդ թե ոչ, Արևելահռոմեական կայսրությունը վերածվում էր հունական կայսրության, նրա մեջ գլխավոր դերը խաղում էր հունական Արևելքը և ոչ թե Հռոմը։—157։*

32. «Հավիտենական» հաշտության պայմանագիրը կնքվեց Խոսրով Անուշիրվանի և Հուստինիանոսի միջև 532 թ.։—157։

33. Պրոկոպիոս Կեսարացու գործերը հսկայական նշանակություն ունեն հայ ժողովրդի 5—6-րդ դդ. պատմության ուսումնասիրության համար։ Առանց այդ գործերի մենք շատ թերի պատկերացում կունենայինք Հայաստանի, գլխավորապես Բյուզանդական Հայաստանի սոցիալտնտեսական, քաղաքական վիճակի մասին, այնտեղ կատարված քաղաքաշինության և բերդաշինության մասին։ Պրոկոպիոս Կեսարացին և Հուստինիանոս կայսեր Հայաստանին վերաբերող մի քանի օրենսդրական փաստաթղթերը, ահա այդ են մեր գլխավոր աղբյուրները վերոհիշյալ, դեպքերով հարուստ և կարևոր ժամանակաշրջանի ուսումնասիրության համար։ Կոստանդնուպոլսում Պրոկոպիոս Կեսարացին 549—550 թթ. ընթացքում գրում է իր նշանավոր «Պատերազմների մասին» (Ὑπέρ τῶν πολέμων) *աշխատությունը, որը բաղկացած էր 7 գրքից և բովանդակում է Հուստինիանոս կայսեր վարած պատերազմների նկարագրությունը աշխարհագրական սկզբունքով. առաջին երկու գրքում պատմվում է Բյուզանդիայի պարսիկների դեմ մղած պատերազմների մասին, Անաստասիոս կայսեր ժամանակվանից մինչև 549 թ.։ Երրորդ և չորրորդ գրքերում խոսվում է այն պատերազմների մասին, որ կայսրությունը մղել է վանդալների դեմ մինչև 548 թ., իսկ հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գրքերում՝ պատերազմ օստգոթերի դեմ՝ Իտալիայում։ Պրոկոպիոսը 553 թ. լույս է ընծայում իր պատմական երկի ութերորդ գիրքը, որն ի տարբերություն մնացած յոթի, չի գրված աշխարհագրական սկզբունքի հիման վրա։ Այնտեղ շարադրված են 551—553 թթ. դեպքերը, որոնք տեղի ունեցան պետության բոլոր սահմանների վրա։ Պրոկոպիոս Կեսարացին 555 թ. Հուստինիանոս կայսեր պատ-*

վերով գրում է այդ կայսեր ներբողյանը՝ վեց գլխից բաղկացած «Կառուցումների մասին» գիրքը։ Այս աշխատությունը աշխարհագրական, տեղագրական, տնտեսական նաև պատմական գիտելիքների մի անսպառ աղբյուր է։ Պրոկոպիոսը այս գրքում նպատակ է ունեցել շարադրել այն շինարարության մասին, քաղաքացիական, ռազմական, եկեղեցական և այլն, որ տեղի ունեցավ Հուստինիանոս կայսեր ժամանակ Բյուզանդիայի ամբողջ տերիտորիայի վրա։ Պրոկոպիոսը հեղինակն է նաև մի պամֆլետի, «Գաղտնի պատմության», որտեղ Հուստինիանոս կայսրը, նրա կին Թեոդորան, զորավար Բելիսարիոսը և նրա կինը ենթարկված են ծաղր ու ծանակի։ Այդ աշխատությունը թեև գրվել է 550 թ., Հուստինիանոս կայսեր կենդանության ժամանակ, բայց, այնուամենայնիվ, հասկանալի պատճառներով մեջտեղ է եկել կայսեր մահից հետո։ —161։

34. Աղբյուրները պահպանել են այդ յոթ փիլիսոփաների անունները. Դամասկիոս Ասորի, Սիմպլիկիոս Կիլիկեցի, Եվլամպիոս Փռյուգիացի, Պրիսկիանոս Լյուդացի, փյունիկեցիներ Հերմիաս ու Դիոգենիս և վերջապես Իսիդոր Գազացի։—162։

35. Ասորի պատմիչ Հովհաննես Եփեսացու աշխատության Հայաստանին վերաբերող տվյալները ռուսերեն թարգմանությամբ լույս է ընծայել Ն. Վ. Պիգուլևսկայան (տես նրա Сирийские источники по истории народов СССР, Москва-Ленинград, 1941, стр. 109 и сл.).—162.

36. «Սատրապ» և «սատրապություն» տերմինը, որպես վարչական շրջանի և նրա կառավարչի հորջորջում, բացի բյուզանդական աղբյուրներից հանդիպում ենք նաև հայկական աղբյուրներում։ Փավստոս Բուզանդը, հիշատակելով Արշակ 2-րդի մոտ գումարված հայոց մեծամեծների ժողովի մասին, գրում է. «ապա ի մեծ ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, և դրօշուց տեարք, ամենայն սատրապք նախարարք և ազատք, պետք և իշխանք» (Փաւստոս, Վենետիկ, 1933, էջ 77), կամ «զմեծամեծաց նախարարսն սատրապսն Հայոց» (նույն տեղում, էջ 82), «ի մեծամեծաց Հայոց սատրապսն» (էջ 89)։

Հարավային Հայաստանի «սատրապությունների» բնակչությունը բաղկացած էր հիմնականում հայերից։ Բյուզանդական աղբյուրները, երբ խոսում են սատրապությունների ազգաբնակչության մասին, այն անվանում են լատիներեն gentes, հունարեն ἔθνη ազգք, ցեղք բառերով։ Սատրապությունների թվի մասին վկայություն ունի բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին, ինչպես նաև Հուստինիանոս կայսեր օրենսդրությունը։ Պրոկոպիոսը ցույց է տալիս, որ նրանք թվով հինգ էին («Կառուցումների մասին», գիրք Գ, գլ. 1)։ Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլան նույնպես ցույց է տալիս, որ սատրապությունները հինգն են։ Սակայն նույն կայսեր մի այլ հրովարտակում ցույց է տրված, որ սատրապությունները թվով վեց են և համապատասխանում են հայկական սկզբնաղբյուրների Անձիթ, Անգեղտուն, Հաշտյանք, Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք, կամ Ծոփք Շահունյաց և Բալահովիտ գավառներին։ Երբ վերոհիշյալ շրջաններն անցան Բյուզանդիայի ձեռքը, նրանց կառավարման գործում որևէ էական փոփոխություն չկատարվեց։ Նախկինի նման սատրապություններում անմիջական կառավարումը գտնվում էր տեղական հայ նախարարների-սատրապների ձեռքում, որոնց իշխանությունը ցմահ էր և ժառանգական։ Այդ մասին արժեքավոր մանրամասնություններ է տալիս Պրոկոպիոս Կեսարացին. «Մյուս Հայքում,— գրում է նա,—որ գտնըվում է Եփրատ գետից այն կողմ և տարածվում է մինչև Ամիդ քաղաքը, իշխում են հինգ հայ սատրապներ։ Սրանց պաշտոնը ժառանգական էր և ցմահ։ Նրանք հռոմայեցիների կայսրից ստանում են միմիայն իշխանության նշանակներ» («Կառուցումների մասին», գիրք Գ, գլ. 1)։ Քանի հայկական թագավորությունը չէր վերացել, սատրապները ձևականորեն ենթարկվում էին Արշակունիներին։ Անգեղ տունը, օրինակի համար, Արշակունիների նստավայրերից մեկն էր։ Այնտեղ էին գտնվում Արշակունի թագավորների գերեզմանները և պահվում արքունի գանձերը։ Բայց Արշակունիների վերացումից հետո սատրապները փաստորեն ինքնուրույն դարձան։ Նրանք ունեին իրենց սեփական զինված ուժերը։ Պրոկոպիոս Կեսարացին ցույց է տալիս, որ «հռոմեական զորքը երբևիցե օգնություն չի ցուցաբերել ո՛չ հայոց թագավորին, ո՛չ էլ սատրապներին։ Պատերազմական գործերում նրանք անկախ էին» («Կառուցումների մասին», գիրք Գ, գլ. 1)։ Սատրապների զորաբաժինները էթնիկական իմաստով կազմված էին հայերից։ Նույն Պրոկոպիոսը վկայում է, որ Զենոն կայսեր բարենորոգումներից հետո էլ, երբ փաստորեն վերացվեց սատրապների ժառանգական իշխանությունը, ընդհուպ

մինչև Հուստինիանոս 1-ին կայսրը, սատրապություններում եղած զինված ուժերը բաղկացած էին «ոչ հռոմայեցիներից, այլ հայերից, ինչպես հնում» (նույն տեղում)։ Սատրապների կախումը Բյուզանդիայից արտահայտվում էր այն «նվերների» ձևով, որոնք բյուզանդական կայսրը ստանում էր իր հպատակ իշխանությունից։ Այդ նվերները կոչվում էին «պսակի ոսկի» (aurum coronarium)։ Նրանք պարտավոր էին նաև կայսրության զորք մատակարարել և պաշտպանել Բյուզանդիայի սահմանները պարսիկների ասպատակություններից։ Սատրապների սեփական զինված ուժեր ունենալու հանգամանքը Բյուզանդիայի համար այնքան էլ ցանկալի չէր։ Երբ 488 թ. Զենոն կայսեր դեմ բարձրացավ Իլլոսի և Ղևոնդիոսի ապստամբությունը, հայկական սատրապությունների մեծ մասն անցավ ապստամբների կողմը, մի բան, որ ցույց է տալիս, որ Բյուզանդիայի քաղաքականությունը սատրապությունների նկատմամբ այնքան էլ նպաստավոր չէր։ Սատրապների ինքնուրույնության վերացման բյուզանդական քաղաքականությունը, որն իր գագաթնակետին հասավ Հուստինիանոս 1-ին կայսեր ժամանակ, ամենայն հավանականությամբ սկսվել էր շատ ավելի առաջ, գուցե Զենոնից էլ առաջ, մի բան, որ առաջ էր բերել սատրապների դժգոհությունը։ Զենոնին հաջողվեց ճնշել Իլլոսի և Ղևոնդիոսի ապստամբությունը, որից հետո նա որոշեց հաշվեհարդար տեսնել ապստամբությանը հարած նաև հայկական սատրապությունների հետ։ «Երբ Զենոն կայսրը,—գրում է Պրոկոպիոս Կեսարացին,— ճնշեց Ղևոնդիոսի և Իլլոսի ապստամբությունը, մի շատ թույլ և աննշան իշխանություն ունեցող սատրապի՝ Բելաբիտենե (իմա՛ Բալահովիտ) կոչվող երկրում միայն թողեց նախկինի պես իշխել, իսկ մնացած բոլորին զրկեց իշխանությունից։ Նա իշխանությունը չտվեց նրանց ցեղակիցներին, այլ ինչպես հռոմեական բոլոր մյուս իշխանություններում, ըստ կայսեր ցանկության, նշանակեց ուրիշներին։ Սակայն նրանց իշխանության տակ եղած զորքը բաղկացած էր ոչ հռոմայեցիներից, այլ հայերից, ինչպես հնում»։ Պրոկոպիոսի այս վկայությունից կարելի է եզրակացնել, որ վեց սատրապություններից միայն մեկը՝ Բալահովիտի սատրապությունը ռազմական տեսակետից շատ թույլ էր ու աննշան, և հավանաբար նրա անզորության հանգամանքն էր պատճառը, որ նա չմիացավ Զենոնի դեմ բարձրացված ապստամբությանը։ Ահա Զենոնի հրամանով վերացվեց սատրապների իշխանության ժառանգական իրավունքը։ Սատրապը դարձավ կայսրության կողմից նշանակվող մի անձնավորություն, իսկ սատրապությունները՝ Բյուզանդիային հարկատու։ Այս իրավիճակը գոյություն ունեցավ մինչև Հուստինիանոս 1-ին կայսրը, որի օրոք նրանք ստացան վերջնական հարվածը։ 528 թ. հրատարակված մի հրովարտակով ստեղծվեց մի նոր ռազմական նահանգ, որի մեջ մտան Պոլեմոնական Պոնտոսը, Առաջին և Երկրորդ Հայքերը, ինչպես նաև հարավային Հայաստանի սատրապությունները և, անջատվելով Արևելքի զորավարի (Magister militum per Orientem) իրավասությունից, ենթարկվեց նոր նշանակված այդ նահանգի զորավարին, որի պաշտոնական անվանումն էր Magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes։ Հա-Հայաստանի կոմեսի պաշտոնը վերացվեց և գոյություն ունեցող դուքսերը ենթարկվեցին Հայաստանի զորավարին։ Այս օրենքով հայկական սատրապությունները կորցրին իրենց ռազմական նշանակությունը, ռազմական տեսակետից նրանք ենթարկվեցին նոր նշանակված երեք դուքսերին, որոնց նստավայրերն էին Մարտիրոպոլիսը, Կիթառիճը և Արտալեսը։

Սատրապների արձագանքները մենք գտնում ենք դեռ 10—11-րդ դդ. բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում (Այս մասին տե՛ս Р. Бартикян, Заметки о византийском эпосе о Дигенисе Акрите; О сатрапах и об ἔθνη, Византийский Временник, том XXV, 1964, стр. 160—163):—164։

37. Բյուզանդական պատմիչ Մալալասը նկարագրում է կայսրության՝ լազերի թագավորին նվիրաբերած հանդերձանքը։ Այն շատ նման էր հայ նախարարներին ուղարկվածին։ Տե՛ս Ioannis Malalae Chronographia, Bonnae, 1831, p. 413.—164։

38. Պրոկոպիոս Կեսարացու տվյալների համաձայն իրեն Արշակունի էր համարում Հուստինիանոս կայսեր կյանքի դեմ դավադրություն կազմակերպած Արտավանը և նրա ազգական ու գործակից Արշակը, այնպես որ դեռևս 6-րդ դարի կեսերին հայ բարձրաստիճան զինվորականներից ոմանք շարունակում էին իրենց Արշակունիների հարստության շառավիղներ համարել, և հնարավոր է, որ դա իսկապես այդպես էր։ Բայց հետագայում հայ նշանավոր գործիչներ Արշակունի ծագում վերագրելով իրենց պարզապես ուզում էին սեփական վարկը բարձրացնել։ Նրանցից էր Վասիլ 1-ին կայսրը, Մակեդոնական հարստության հիմնադիրը

(867—886 թթ.), թեև ոչ մի առնչություն չուներ նրանց հետ (տե՛ս Theophanes Continuatus, Bonnae, 1838, p. 212)։—165։

39. Բարեբախտաբար բյուզանդական աղբյուրները և գլխավորապես Պրոկոպիոս Կեսարացին հնարավորություն են տալիս պարզ պատկերացում կազմել Հուստինիանոս կայսեր Հայաստանում կատարած շինարարական գործունեության մասին։ Պարսկաստանին սահմանակից շրջաններում կառուցվեց պաշտպանական երկու ամուր գիծ։ Առաջին գիծը ձգվում էր Դարայից մինչև Տրապիզոն։ Այդ գծի վրա կառուցվեցին և ամրացվեցին հետևյալ բերդերը՝ Մարտիրոպոլիսը, Կիթառիճը, Արտալեսը, Թեոդոսուպոլիս-Կարինը, Օրոնը և Ցանցակը։ Թեոդոսուպոլիս-Կարինում նստում էր Հայաստանի զորավարը։ Մնացած հինգ քաղաք-ամրոցներում հաստատված էին հինգ դուքսերը։ Այս առաջին գծի թիկունքում էր գտնվում պաշտպանական երկրորդ գիծը, որի հիմնական կենտրոններն էին Մելիտինեն և Սատաղը։ Շինարարությունն սկսվեց նախ և առաջ սատրապությունների ամրապնդման ուղղությամբ՝ Ծոփքում։ Մեծ ուշադրության արժանացավ Մարտիրոպոլիս քաղաքը, «որը գտնվում է թշնամիներին ամենից մոտիկ վայրում, որովհետև հենց այդտեղ Նիմֆիոս գետն է հանդիսանում հռոմայեցիների և պարսիկների սահմանը» (Պրոկոպիոս Կեսարացի, «Կառուցումների մասին», գիրք Գ, գլ. 2)։ Հուստինիանոսը Ծոփքի պաշտպանության համար հրավարարվեց Մարտիրոպոլիսն ամրացնելով։ Նա այդ քաղաքից արևմուտք, մեկ օրվա ճանապարհ հեռավորության վրա գտնվող Ցիսոն վայրում «անառիկ ամրություններ կառուցեց, հզոր կայազոր հաստատեց և այդպիսով շրջանը բարբարոսների համար միանգամայն անանցանելի դարձրեց» (նույն տեղում)։ Նման աշխատանքներ կատարվեցին նաև Կիթառիճում, որը գտնվում էր Հաշտյանք գավառում։ Պաշտպանական առաջին գծի վրա էր գտնվում նաև Արտալեսոն վայրը՝ Խորձյանքում։ Հուստինիանոսն այն «պարսպապատելով դարձրեց ամրագույն բերդ։ Այնտեղ հաստատեց կայազոր մըշտական զորահրամանատարի գլխավորությամբ, որին հռոմայեցիները լատիներեն լեզվով անվանում են դուքս» (Պրոկոպիոս Կեսարացի, նույն տեղում, գլ. 3)։ Դեպի հյուսիս՝ բյուզանդական Մեծ Հայքում, սահմանի վրա էր գտնվում պաշտպանական առաջին գծի խոշորագույն պատվարը, Թեոդոսուպոլիս-Կարին քաղաքը, որը մեծ ուշադրության արժանացավ Հուստինիանոսի կողմից։ Նա այստեղ, բացի ռազմական շինարարությունից, ուշադրություն դարձրեց և այլ հարցերի վրա ևս։ Նա այստեղ կենտրոնացրեց բոլոր զինված ուժերը ստրատեգոսի՝ ընդհանուր զորահրամանատարի գլխավորությամբ, «այնպես արեց, որ հայերը լինեն ավելի հզոր և չվախենան պարսկական հարձակումներից» (Պրոկոպիոս Կեսարացի, նույն տեղում)։ Այնուհետև ռազմական շինարարություն կատարվեց Ջումինա վայրում, որը Վիզանա-Վժանի մոտ էր գտնվում և ստացավ Հուստինիանոպոլիս անունը, Սատաղ քաղաքում, որտեղ կայսրը քանդեց քաղաքի խարխլած պարիսպը և նորը կառուցեց, ինչպես նաև նախապարիսպ։ Սատաղից ոչ հեռու կառուցվեց մի նոր ամրոց, Օրոսեն կոչված վայրում։ Հուստինիանոսը վերականգնեց նաև Կոլոնիայի ամրոցը, կառուցեց Բայբերդոն (Բաբերդը) կոչվածը և Արեոնը, վերականգնեց Լյուսիորմանը, Լյուտարարիզոնը, իսկ Գերմանոսի Ցուսատոն կոչված վայրում կառուցեց նոր ամրոց։ Կայսրը վերականգնեց նաև Սեբաստիայի և Նիկոպոլսի պարիսպները։ Պակաս աշխատանքներ չտարվեցին նաև Մելիտինեում։ Հուստինիանոսը «հաստատուն կերպով ամեն կողմից պարիսպներով շրջապատեց այն և Մելիտինեն դարձրեց Հայաստանի մեծ ամրություն ու զարդ» (նույն տեղում, գլ. 4)։—166։

40. Հուստինիանոս կայսրը հրապարակեց Հայաստանին վերաբերող չորս հրովարտակ։ Նրանցից մեկը հասցեագրված էր նշանավոր Սիտտասին, համաձայն որի Բյուզանդական Հայաստանում ստեղծվում էր մեկ ռազմական ղեկավարություն։ Նրա մեջ էին մտնում բյուզանդական Մեծ Հայքը, Պողեմոնական Պոնտոսը և հարավային Հայաստանի սատրապությունները։ Երկու հրովարտակ վերաբերում էին հայոց ժառանգական իրավունքին, իսկ չորրորդը՝ 31-րդ նովելլան, Հայաստանի վարչական բարենորոգումներին, որի համաձայն Հայաստանում ստեղծվում էր չորս Հայք։ Հուստինիանոսի օրենսդրությունը հայկական ժառանգական իրավունքի մասին քննության առարկա է դարձել մեր անցյալում Հ. Մանանդյանի կողմից։ Տե՛ս նրա Новеллы Юстиниана о порядке наследования у армян, Известия АН Арм. ССР, 1952 г., № 5 (Ունի հայերեն թարգմանություն. «Յուստինիանոսի նովելները հայերի ժառանգելու կարգի մասին» հետևյալ գրքի մեջ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 125—140)։ Հուստինիանոս կայսեր վերոհիշյալ հրովարտակների նորագույն հրատարակությունը (տե՛ս Corpus Iuris Civilis, vol. II, Codex Iustinianus, recognovit et retractavit Paulus Kreger, Berolini, 1951, p. 82, vol. III, Novellae, p. 144—146, 760—761, 235—239)։—166։

41. Պաշտոններ գնելու պրակտիկան Բյուզանդիայում կոչվում էր suffragium։ Քանի որ այդ երևույթը լայն տարածում էր գտել նաև բյուզանդական Հայաստանում, արժե նրա վրա ավելի մանրամասն կանգ առնել։ Suffragium-ը մուտք էր գործել կյանքի բոլոր բնագավառները։ Դա այն գումարն էր, որի դիմաց կարելի էր տիրանալ պետական ամեն մի պաշտոնի։ Այդ գումարը տվող անձնավորությունը, հասկանալի է, անխնա և ամենադաժան կերպով կեղեքում էր իր հպատակներին տվածի տասնապատիկը և հարյուրապատիկը ետ ստանալու համար։ Այդ պրակտիկան ամենալայն չափերի հասավ Հուստինիանոս կայսեր ժամանակ, որը փորձեց նրա առաջքն առնել։ 535 թ. հրապարակվեց մի նովելլա (8-րդը), ուղղված այդ պրակտիկայի դեմ։ Հուստինիանոսի մտահոգությունն, իհարկե, հպատակների վիճակի բարելավումը չէր, այլ իր գանձարանը։ Նովելլայում ցույց է տրվում, որ իր հպատակների նման կեղեքումը պատճառ է դառնում պետական հարկերի նվազեցման, որովհետև այն, ինչ պետք է մտներ պետական գանձարանը, հոսում է մասնավոր մարդկանց գրպանը։ Հուստինիանոսը վախենում էր նաև ժողովրդական մասսաների խռովություններից և ապստամբություններից, ինչպես նաև այն բանից, որ պետական ունեցվածքը՝ հողը անցնում է մասնավորի ձեռքը (Նովելլա 30)։ Նման պայմաններում քաղաքներում ապստամբություններ էին բռնկվում, իսկ գյուղերում գյուղացիները փախուստի էին դիմում (Նովելլա 8)։ 535 թ. կայսրը փորձում է որոշ չափով արգելել իշխանավորների կամայականությունները, պատճառաբանելով, որ նրանք պետությունից քիչ ռոճիկ են ստանում, տալով շատ մեծ գումար պաշտոնն ստանալու համար և ստիպված են «զողություն անել» (Նովելլա 23)։ Բայց և այնպես Հուստինիանոսը հրաման է արձակում՝ վերացնել այդ պրակտիկան և փորձում վերականգնել նախկին սովորությունը, ըստ որի իշխանավորները պաշտոնն ստանալու կապակցությամբ վճարում էին չնչին մի գումար այն նշանակների և թղթերի ձևակերպման համար, որ պետք է ստանային պետությունից պաշտոնի հետ միասին (Նովելլա 8)։ Պաշտոնների առուծախ կար նաև Բյուզանդական Հայաստանում։ Դա հաստատվում է այն փաստով, որ նույն նովելլայի վերջում, ուր մեկ առ մեկ թվարկված են կայսրության պրովինցիաների ղեկավարների վճարելիք գումարների չափը, հիշատակված են նաև Առաջին Հայքի, Երկրորդ Հայքի և Մեծ Հայքի ղեկավարները (Նովելլա 8)։ Հուստինիանոսին չհաջողվեց վերացնել suffragium-ի ոսկրացած պրակտիկան։ Նրա մահվանից հազիվ տասը տարի անց, 574 թ. Տիբերիոս կայսրը ստիպված էր մի նոր օրենք հրապարակել պետական պաշտոններն ստանալու նման պրակտիկայի դեմ (ինչպես դրանից քառասուն տարի առաջ Հուստինիանոսը), ելնելով այն բանից, որ ինքը «հոգ է տանում պրովինցիաների բարեկեցության մասին», «նրանց անվտանգության մասին» և որ կարևորն է, «պետական հարկերի անխափան գանձման մասին» (Նովելլա 161, գլ. 2)։ Ոչ միայն աշխարհիկ պաշտոններն էին վաճառքի առարկա։ Բյուզանդական պետության փտածությունը հասել էր այն աստիճանի, որ նույնիսկ հոգևոր բարձր պաշտոնները դարձել էին վաճառքի առարկա։ Հուստինիանոսը իր 123-րդ նովելլայով հրամայում էր, որ այսուհետև ոչ ոք չձեռնադրվի եպիսկոպոս ոսկի վճարելով։ Կաշառակերությունը և նրա հետ կապված բոլոր օրինազանցությունները մուտք էին գործել պետության այնպիսի մի հիմնարկության մեջ, որը կոչված էր օրենքները պաշտպանել, դատարանում։ 544 թ. Հուստինիանոսը փորձում է խափանել դատավորների կաշառակերությունը (Նովելլա 124)։ Բայց ինչպե՞ս նա կարող էր այդ գործը գլուխ բերել, երբ ինքը Հուստինիանոսը մի կողմից քարոզում էր, թե «արծաթասիրությունը չարիքների մայրն է», բոլոր պրովինցիաների ղեկավարներին առաջարկում էր «ձեռքերը մաքուր պահել», մյուս կողմից ինքն էր կաշառքներ ստանում։ Այդ մասին հոյակապ էջեր են գրված Պրոկոպիոս Կեսարացու «Գաղտնի պատմության» մեջ (գլ. 14, 21)։ —167։

42. Պրոկոպիոս Կեսարացու մոտ այդ տեղանունը նշված է Φαράγγιον ձևով։ Խնդրո առարկա ոսկեհանքերը գտնվում էին Թորթումի ավազանը զատող Ղազան լեռնաշղթայի արևմտյան փեշերի վրա, ուր սկիզբ էր առնում Ճորոխը, Սպերի դեմ առ դեմ։ Այս լեռները այժմ էլ հռչակված են իրենց հանքերով։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Ֆարանգիոն հենց «հանք» է նշանակում, հայ-իրանական «հրահանգ» բառի հետ կապելով (պարթևերեն՝ frahang)։ (Տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանի ոսկեհանքը, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 206—222)։—169։

43. Ակակիոսը Հայաստանի գերագույն զորահրամանատարն էր magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes: Ակակիոսին էր ուղղված Հուստինիանոս կայսեր 21-րդ նովելլան՝ հայոց ժառանգական իրավունքի մասին։ Ակակիոսն այնտեղ անվանված է «Հայաստանի գերապայծառ անթյուպատոս»։—169։

44. Սիտտասը (աղբյուրներում նրա անվան գրության ձևերը բազմապիսի են Σίττας, Τζίττας, Ζίττας, Ζτίττας) նշանավոր բյուզանդական զորավար էր, ծագումով հայ։ Ըստ Ն. Ադոնցի Սիտտաս նրա կոչումն էր, իսկ իսկական անունը Ուրսիկիոս էր։ 528/529 թթ. Հուստինիանոսը նրան նշանակեց magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et gentes: Նա առաջին անձնավորությունն էր հայերի այն երկար շարքում, որոնք նրանից հետո բազում դարեր և՛ ռազմական, և՛ քաղաքական ասպարեզում հսկայական դեր խաղացին Բյուզանդիայում։ Սիտտասը խնամիական կապերով կապված էր Հուստինիանոսի արքունիքի հետ։ Իր կինը Թեոդորա կայսրուհու քույր Կոմիտոն էր։ Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 138; E. Stein; Histoire du Bas-Empire, t. II, p. 290:—170:

45. Այս Ներսեսը եղբայրն էր Արատիոսի և Իսահակի, որոնք լքելով պարսից տիրապետությունը, անցան Բյուզանդիայի կողմը։ Սեն-Մարտենը Արատիոս անունը համարում է հայկական Հրահատ անվան բյուզանդական արտասանությունը։ Տե՛ս նրա 2-րդ ծանոթությունը Lebeau-ի Histoire du Bas-Empire նոր հրատարակության 8-րդ հատորի, 43-րդ էջում։ Ն. Ադոնցը այս երեք եղբայրներին համարում է Կամսարական ընտանիքին պատկանող, որպես կռվան ունենալով այն փաստը, որ վերոհիշյալ անձնավորությունների ապրած ժամանակաշրջանից մոտ կես դար առաջ գործած Արշավիր Կամսարականի երեք որդիները կոչվում էին նմանապես Ներսեհ, Հրահատ և Սահակ (տե՛ս Ղազար Փարպեցի, Գ. 68, Գ. 90)։ Տե՛ս E. Stein, Histoire du Bas-Empire, t. II, Paris-Bruxelles-Amsterdam, 1949, p. 292, n. 1: Վերոհիշյալ Ներսեսին չպետք է շփոթել մի այլ նշանավոր Ներսեսի հետ, որ նույնպես հայազգի էր, կայսեր գանձապահը և նշանավոր ներքինի զորավար, որը Իտալիան նվաճեց գոթերից։—176։

46. Միայն Պրոկոպիոս Կեսարացին հիշատակում է 17-ից ոչ պակաս հայ զորավարների անուններ, որոնք փայլել են իրենց քաջագործություններով, ծառայելով բյուզանդական կայսրությանը։ Եվ դա շատ տրամաբանական էր։ Իրենց պետականության վերացումից հետո հայ պետական և ռազմական գործիչները գործունեության ասպարեզ փնտրեցին հարևան երկրներում՝ Պարսկաստանում և Բյուզանդիայում։ Հայկական զորամասերը ծառայության մեջ մտան այդ երկրներում և ամենուրեք աչքի ընկան իրենց արիությամբ և քաջագործությամբ։ Հայ և օտար աղբյուրները դժբախտաբար հիշատակում են միայն նրանց ռազմական գործունեությունը, անտեսելով նրանց ունեցած կուլտուրական և առևտրական խոշոր դերը։ Բյուզանդական կայսրները 5-րդ դարում այնքան բարձր էին գնահատում հայ ռազմիկներին, որ իրենց պալատական գվարդիայում գլխավորապես հայ զինվորներին էին ընդունում։ Միայն Զենոն կայսեր ժամանակ, երբ վերջինս սկսեց կասկածել նրանց հավատարմության վրա, ցրեց այդ գվարդիան։ Բայց դրանից հետո էլ բյուզանդական կայսրները բարձր էին գնահատում հայ զորահրամանատարներին և ռազմիկներին և առիթ չէին փախցնում նրանց օգտագործելու։ Հայերի զինվորական տաղանդը փայլեց հատկապես Հուստինիանոս 1-ին կայսեր ժամանակաշրջանում։ Նա այնքան էր արժեքավորում հայ զորահրամանատարներին, որ նույնիսկ խնայեց իր դեմ մահափորձ նյութած հայ զինվորականներին, չուզենալով զրկվել նրանց ապագա ծառայություններից։

Բյուզանդիայում հայ խոշորագույն դեմքերից էր կայսերական գանձապահ Ներսեսը, որ միաժամանակ տաղանդավոր զորահրամանատար էր։ Նա մթագնեց նույնիսկ Բելիսարիոսի նման մի զորավարի փառքը։ Ներսեսի զինվորական տաղանդը փայլեց Իտալիայում, գոթերի դեմ մղած պայքարում։ Նա վերացրեց կայսրության համար անելանելի վիճակն այնտեղ, որ ստեղծվել էր Բելիսարիոսի զորավարության ժամանակ։ Ներսեսը այնքան մեծ ժողովրդականություն էր վայելում Իտալիայի բյուզանդական զորքերի մեջ, որ նրանց բացարձակ մեծամասնությունը ուզում էր կռվել միմիայն Ներսեսի հրամանների ներքո։ Ներսեսն իր շուրջն էր հավաքում հատկապես հայերին։ Նրա թիկնապահներից էր հայազգի Անզալասը (հայերեն Ընջյուղ, այդ մասին տես ծանոթ. № 47), որը ևս փայլեց իր քաջագործություններով Իտալիայում։ Իտալիայում գոթերի դեմ մղված պատերազմներում իրենց մտավոր և ֆիզիկական առավելություններով աչքի ընկան բազմաթիվ այլ հայ զինվորականներ։ Պրոկոպիոս Կեսարացին հիշատակում է զորահրամանատար Վարազին, եղբայրներ Ներսես, Հրահատ և Սահակ (Կամսարականներին)։ Այնտեղ աչքի ընկավ իր առասպելական քաջությամբ հռչակված հայազգի Արտավազդը, որ զոհվեց կռվում. Նրա մահը, գրում է Պրոկոպիոս Կեսարացին, «սասանեց հռոմայեցիների բոլոր հույսերը»։

Իտալիայում իր արիությամբ փայլեց նաև Գիլակիոսը (Գլակ), որը «հայկական զորք» էր գլխավորում։ Պրոկոպիոսի վկայությամբ նա «ոչ հունարեն գիտեր, ոչ լատիներեն, ոչ գոթերեն, ոչ մի այլ լեզու, այլ միայն հայերեն»։ Երբ նա ընկավ գոթերի ձեռքը, վերջիններս «հարցնում էին նրան, թե ով է։ Նա ոչինչ չկարողացավ պատասխանել, այլ ասաց միայն, որ ինքը զորավար Գիլակիոսն է, որովհետև աստիճանի անունը, որ կայսրից էր ստացել, բազմիցս լսել էր ու սովորել» (Պրոկոպիոս Կեսարացի, Գոթական պատերազմի մասին, գիրք Գ, գլ. 26)։

Խոշորագույն հայ ռազմական գործիչներից էր Արտավան Արշակունին: Նա նախապես ծառայում էր պարսկական բանակում և անձնապես սպանել էր մարտում բյուզանդական երկու նշանավոր զորավարների, այն է՝ Հայաստանի կառավարիչներ, ծագումով հայ, Սիտտասին և Ակակիոսին: Բայց ուրիշների նման նա ևս հետագայում անցավ Բյուզանդիայի կողմը և հսկայական դեր խաղաց Աֆրիկայի նվաճման գործում. փաստորեն նա էր, որ կայսրությանը միացրեց ամբողջ հյուսիսային Աֆրիկան։ Հետագայում Արտավանը ակտիվ մասնակցություն ունեցավ պարսիկների դեմ կայսրության մղած պատերազմում։

Արտավանի եղբայր Հովհաննեսը սպանվեց Լիբիայի համար մղված մարտերից մեկում, «հանդես բերելով անչափ քաջագործություն»։ Արտավանի հետ Լիբիայում կռվում էր նաև նրա եղբորորդի Գրիգորը և իր նիզակակիր Արտաշիրը:

Պարսիկների դեմ մղված կռիվներում աչքի ընկան հայազգի զորահրամանատարներ Արշակը, որ սպանվեց Սուրոն քաղաքի պաշարման ժամանակ, ինչպես և Հայաստանի բյուզանդական կառավարիչ, հայազգի Ակակիոսի որդի Ադոլիոսը: Շատ բարձր էր գնահատում Պրոկոպիոս Կեսարացին հայազգի երկու այլ զորահրամանատարների, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան Պարսկաստանի դեմ մղվող պատերազմներում, այն է Թովմային, որ բյուզանդացիների համար բազմաթիվ ամրոցներ կառուցեց Լազիկայում և նրա որդուն Հովհաննեսին՝ Գուզես մականվանյալին, «անչափ քաջ պատերազմողին»։ Հովհաննեսն սպանվեց Լազիկայում, պարսիկների դեմ մղված մարտերից մեկում։

Հետագայում ևս հայերը ժամանակ առ ժամանակ ապաստան էին գտնում Բյուզանդիայում՝ կա՛մ բախտ որոնելու համար, կա՛մ էլ որպես քաղաքական փախստականներ։ Այսպես, օրինակ, 571 թ. պարսիկների դեմ բարձրացված հայերի ապստամբության բազմաթիվ մասնակիցներ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ և հայոց կաթողիկոսի և այլ նախարարների ու եպիսկոպոսների ուղեկցությամբ ապաստան գտան Կոստանդնուպոլսում։ Վարդանը մուտք է գործում բյուզանդական բանակում, իսկ մնացած հայ փախստականները հաստատվում են Պերգամոն քաղաքում, որտեղ դեռևս 7-րդ դարում հիշատակվում է հայկական գաղութ։ Ահա այդ գաղութից էր 711—713 թթ. կայսերական գահին տիրացած Վարդանը, որ թագավորեց Փիլիպպիկոս անվան տակ։

Ինչպես կարելի է պարզ պատկերացում կազմել աղբյուրների տվյալների հիման վրա, 6—7-րդ դդ. հայերը Բյուզանդիայում չէին կորցրել իրենց ազգային դեմքը։ Նրանք շատ լավ գիտակցում էին իրենց ազգային պատկանելիությունը, գիտակցում իրենց հայրենիքի վիճակի ծանրությունը Բյուզանդական կայսրության լծի տակ և առիթ չէին կորցնում փորձեր կատարելու հայրենիքի փրկության համար։

Հայերի գործունեությանը Բյուզանդիայում նվիրված է հույն պատմաբան Պ. Խարանիսի մի կարևոր ուսումնասիրությունը (տե՛ս P. Charanis, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963. Ունի հայերեն թարգմանություն, կատարված Հ. Պերպերյանի կողմից, «Հանդես Ամսօրեայ», 1964, թիվ 1 և հտ.)։—178։

47. Միայն Պրոկոպիոսի մոտ է այս հայազգի զորավարի անունն հիշատակվում, Անզալաս ձևով (տե՛ս «Գոթական պատերազմի մասին», գիրք Դ, գլ. 31)։ Մ. Չամչյանը ենթադրում է, որ Անզալաս անունը համապատասխանում է հայկական Ընձուղին։ Չամչյանին է հետևել և Լեոն։ Հ. Աճառյանը, ելնելով այն բանից, որ նման անուն հայկական աղբյուրներում հիշատակված չէ, գտնում է, որ այն կարող է Ընջուղ եղած լինել, որ նշանակում է «երինջ»։ Եղիշեն հիշատակում է Վասակի կողմնակիցների թվում և ոմն Ընջուղի (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, Երևան, 1944, էջ 239—240)։—183։

48. Արտավան Արշակունու մասին Ն. Ադոնցը հրատարակել է մի գիտամատչելի հոդված (տե՛ս Ն. Ադոնց, Արտավան Արշակունի, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 297—319)։—184։

49. Շատ հետաքրքրական է այն պատասխանը, որ Արշակ Արշակունին տվեց իր ազգական Արտավանին Հուստինիանոսին ահաբեկելու կապակցությամբ։ Այդ մեջ է բերել Պրո-

Կոպիոս Կեսարացին իր գրքում և ավելորդ չէ տալ այստեղ դրա թարգմանությունը. «Այժմ, երբ իր հայրենիքը ամուր կապանքների մեջ է առնված, երբ նրա վրա դրված են անօրինակ ծանր հարկեր... երբ իր ամբողջ ցեղակից ժողովուրդը ստրկացված է և ցրված ամբողջ հռոմեական երկրով մեկ, ինքը (Արտավանը) վախեցած ու անարի նստել է» (Գոթական պատերազմի մասին, գիրք Գ, գլուխ 32)։—186։

50. Բյուզանդական աղբյուրներում այս գործիչը կոչվում է «Թովմայի որդի Հովհաննես, Գուզես մականվանյալ»։ «Հովհան Թովմայան Քոշ կամ Գուշազ» ձևը ենթադրաբար տալիս է Մ. Չամչյանը, որին հետևել է Լեոն։ Հ. Աճառյանը չի փորձում մեկնաբանել Գուզես մականունը (տե՛ս նրա Հայոց անձնանունների բառարանը, հատ. Գ, Երևան, 1946, էջ 543, № 34)։—186։

51. Պետրան համապատասխանում է ժամանակակից Ցիխիձիրի քաղաքին։—186։

52. Դավիթ Անհաղթը 5—6-րդ դարերի ականավոր փիլիսոփա է, նորպլատոնականության հետևորդ։ Հիմնական աշխատությունն է «Սահմանք իմաստասիրութեան» (հրտ. Մ. Արևշատյանի, Երևան, 1960)։ Բացի այդ թողել է մեկնողական բնույթի աշխատություններ. «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիւրի»։ Ըստ Մ. Արևշատյանի նրան է պատկանում նաև «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի» աշխատությունը (տե՛ս Давид Непобедимый, Толкование Аналитики Аристотеля, Ереван, 1966):

Դավիթ Անհաղթի մասին (տե՛ս В. Чалоян, Философия Давида Непобедимого, Ереван, 1946):—191։

53. Տե՛ս ծանոթ. № 13։—48։

54. «Կուսակցություն» արտահայտությունը Լեոյի մոտ օգտագործված է խմբակցության իմաստով։ Եղիշեն հարում էր որոշակի խմբակցության՝ Մամիկոնյանների կուսակիցներին, որոնց ձգտումները նա արտահայտում է իր «Պատմության» մեջ։—196։

55. Տե՛ս վերը, ծանոթ. 13։—48։

56. Հայոց ապստամբության, Սուրեն մարզպանի սպանության և Վարդան Մամիկոնյանի ու նրա կողմնակիցների Կոստանդնուպոլիս ապաստանելու մասին վկայում է նաև Narratio de rebus Armeniae խորագիրը կրող մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր, որի հունարեն թարգմանությունն է միայն հասել մեզ։ Տե՛ս Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 465։—205։

57. Մորիկը «անհայտ, հասարակ ծագում ունեցող ընտանիքի որդի» չէր։ Նրա հայրը Բյուզանդիոնի սենատի նախագահն էր։ Տե՛ս հաջորդ ծանոթությունը։—209։

58. Լեոն միանգամայն ճիշտ կերպով է ժխտում լայն տարածում գտած այն կարծիքը, որ Մավրիկիոս կայսրը ծագումով իբրև թե հայ է եղել։ Բայց որովհետև ամենահայտնի կայսեր հայկական ծագման մասին առասպելը դեռևս գտել է իր պաշտպաններին վերջին ժամանակներս էլ (տե՛ս N. Adontz, Les légendes de Maurice et de Constantin V empereurs de Byzance, H. Grégoire, Maurice le Marcioniste, empereur arménien et „Vert.", Byzantion, t. XIII, 1938, pp. 395—396; R. Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, p. 247), ավելորդ չէ այդ հարցի վրա ավելի հանգամանորեն կանգ առնել։ Հայկական սկզբնաղբյուրներից Մավրիկիոսի ծագումով հայ լինելու ավանդությունները հիշատակում են Կեղծ Շապուհ Բագրատունին, Ստեփանոս Տարոնացին և Կիրակոս Գանձակեցին։ Վերոհիշյալների տվյալները չեն համընկնում միայն կայսեր ծննդավայրի հարցում։ Միայն Գանձակեցին է ճիշտ նշում նրա ծննդավայրը Կապադովկիայի Արաբիսոս քաղաքը, այն էլ աղբյուր ունենալով Միքայել Ասորու «Ժամանակագրությունը»։

Նատ դժվար է որոշել հայկական ավանդությունների հորինման ժամանակը։ Համենայն դեպս, նրանք դժվար թե մոտ լինեն Մավրիկիոսի ապրած ժամանակաշրջանին։ Սեբեոսը, որը ժամանակագրական տեսակետից առավել կամ պակաս չափով ամենից մոտն է, ոչ մի խոսք չի ասում Մավրիկիոսի հայկական ծագման մասին։ Ժամանակակից ասորի պատմիչ Հովհան Եփեսացին նույնպես գաղափար չունի Մավրիկիոսի հայկական ծագման մասին։ Վերջինիս տվյալների համաձայն Մավրիկիոսի հայրը Բյուզանդիոնի սենատի նախագահն էր։ Նույնպես ժամանակակից Թեոփիլակտոս Սիմոկատտասը վկայում է, որ նրա հայրը Կոստանդնուպոլսում էր գտնվում և նույնիսկ տալիս է նրա անունը՝ Պավղոս, այնինչ ըստ Կեղծ Շա-

պուհ Բագրատունու և Կիրակոս Գանձակեցու պահպանած ավանդության՝ Մավրիկիոսի հայրը Տարոնիզպան էր և կոչվում էր Դավիթ։ Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է ցույց տանք, որ կան ոչ հայկական աղբյուրներ էլ, որոնք Մավրիկիոսին համարում են հայ։ Օրինակ, 9-րդ դարի բյուզանդական պատմիչ Գեորգ Վանականը Մավրիկիոսին համարում է հայ (Georgii Monachi Chronicon, ed. C. de Boor, t. II, Lipsiae, 1904, p. 656, 662)։ Նույնը բանն է ասում նաև Յոելը (Μετὰ δὲ Τιβέριον ἐβασίλευσε Μαυρίκιος Αρμένιος· αἱ γαμβρὸς αὐτοῦ ἔτη κ. Ioelis Chronographia compendiaria, Bonnae, 1836, p. 45)։ 13-րդ դարի բյուզանդական մի ձեռագրում ասված է, որ Տիբերիոս Թրակացի կայսրից հետո թագավորեց Մավրիկիոս հայը (A. Wirth, Aus orientalischen Chroniken, Francfort, 1894)։

Այժմ կանգ առնենք միջնադարյան այն օտար սկզբնաղբյուրների վրա, որոնք Մավրիկիոս կայսեր տալիս են ոչ հայկական ծագում։ Այդ բոլոր աղբյուրները—հույն, լատին, ղպտի, ասորի — Մավրիկիոսի ծննդավայր են համարում Կապադովկիայի Արաբիսոս քաղաքը։ Խնդրո առարկա հարցի լուսաբանման համար ամենաարժեքավորն է Եվագրի եկեղեցական պատմությունը, որի հեղինակը անձնապես ծանոթ էր կայսեր։ Եվագրը Մավրիկիոսին ծագումով համարում է հռոմայեցի, բայց որպես նրա ծննդավայր ցույց է տալիս Արաբիսոս քաղաքը Կապադովկիայում, որտեղ հաստատվել էին նրա ծնողները (Χειροτονεῖ δὲ ἑῴας στρατηγὸν Μαυρίκιον, ἕλκοντα μὲν γένος καὶ τοὔνομα ἐκ τῆς πρεσβυτέρας Ῥώμης, ἐκ δὲ τῶν προσεχῶν πατέρων, Ἀραβισσὸν πατρίδα ἐπιγραφόμενον τοῦ Καππαδοκῶν ἔθνους, Evagrii Historia Ecclesiastica, Migne, Patrologia graeca, t. 86, col. 2832). Հակառակ դրան լատին պատմիչ Պողոս Սարկավագը նրան համարում է հույն, առաջին հույն կայսրը, որ նստավ Կոստանդնուպոլսի գահի վրա (Historia gentis Langobardorum. Hannover, 1887, p. 100). Ասորի ժամանակակից պատմիչ Հովհան Եփեսացին նույնպես նրան հույն է համարում։ Այսպիսով, Մավրիկիոսին ժամանակակից և ոչ մի աղբյուր նրան հայ չի համարում։ Մավրիկիոսի հայ լինելու վարկածը ժխտվում է և կողմնակի փաստերով։ Նրա ընտանիքի անդամներից և ոչ մեկը չէր կրում հայկական անուն։ Այսպես, Մավրիկիոսի հայրը, ինչպես տեսանք, կոչվում էր Պավղոս, մայրը՝ Հովհաննա, մորեղբայրը՝ Ադելփիոս, եղբայրը՝ Պետրոս, քույրերը՝ Գորդիա, Թեոկտիստե, Դամիանե, որդիները՝ Ֆլավիոս Թեոդոսիոս, Տիբերիոս, Պետրոս, Պավղոս, Հուստինոս, Հուստինիանոս, դուստրերը՝ Անաստասիա, Թեոկտիստե, Կլեոպատրա, Սոպատրա, Մարիամ։

Մավրիկիոսի ծագման մասին միանգամայն հավանական է Պ. Գուբերի տված բացատրությունը։ Արաբիսոս քաղաքը գտնվում էր Կապադովկիայում, որն աշխարհագրական տեսակետից Հայաստան էր կոչվում. Հիերոկլեսի Սինեկդեմոսում (9-րդ դար) ցույց է տրված, որ Երկրորդ Հայքում են գտնվում հետևյալ քաղաքները. Մելիտինե, Արկա, Արաբիսոս, Կուկուսոս, Կոմանա և Արիարաթիա. Hierocles Synecdemus et Notitia episcopatuum accedunt Nili Doxapatri Notitia Patriarchatuum et Locorum nomina, immutata ex recognitione Gustavi Parthey, Berolini, 1866. p. 38. Հմմտ. Նեղոսի Դոքսապատրի կարգագրութիւն պատրիարքական աթոռոյն, հրտ. Ն. Ֆինկ, Վաղարշապատ, 1902, էջ 30. Հմմտ. նաև Յովհաննես կաթ., էջ 68. «Իսկ զԿապադովկիայի, յորում մայրաքաղաքն է Կեսարիա՝ և Երկրորդ Հայք նախ անուանիւր»։ Դիոկղետիանոսի ժամանակ այն կոչվում էր Երկրորդ Հայք։ Հուստինիանոսի օրոք հայերի ներթափանցումը Կապադովկիա անչափ ուժեղանում է, և այդ շրջաններն այնքան են հայացվում, որ պաշտոնական տեսակետից նրանք Հայաստան էին կոչվում (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 3). Կապադովկիան նրա օրոք սկսեց կոչվել Երրորդ Հայք։ Աղբյուրներում սովորական բան է, երբ մի երկրի վարչական-աշխարհագրական անունը տարածվում է նաև այդ տերիտորիայի վրա ապրող բնակչության վրա։ Մավրիկիոսը, ամենայն հավանականությամբ, ծագումով հռոմայեցի էր, բայց ծնվել էր Կապադովկիայում հաստատված և հունախոս դարձած ընտանիքում (P. Goubert, Maurice et l'Arménie. Note sur le lieu d'origine et la famille de l'empereur Maurice, Echos d'Orient, 38 (1941—1942); Idem, Byzance avant l'Islam, I, Byzance et l'Orient, Paris, 1951)։—209։

59. Թեոփիլակտոս Սիմոկատտասի «Պատմությունը» մոտ անցյալում լույս տեսավ ռուսերեն թարգմանությամբ (տե՛ս Феофилакт Симокатта, История, перевод Кондратьева, Москва, 1957):—218։

60. Մուշեղ Մամիկոնյանի Կոստանդնուպոլսում քաղկեդոնական ծեսով հաղորդվելուց հրաժարվելու մասին շատ հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Narratio de rebus Ar-

meniae վերնագրված սկզբնաղբյուրում (էջ 466—467)։ Այնտեղ ի միջի այլոց ասված է. «Մուշեղը, ժամանելով Կոստանդնուպոլիս, պատվական խաչի մեծ տոնի օրը, իր ուղեկիցների հետ հրաժարվեց հաղորդությունից։ Կայսրը հարցրեց և իմացավ պատճառը։ Մուշեղն ասում էր, որ (չի հաղորդվում) Քաղկեդոնի ժողովի պատճառով, և որովհետև դուք ի վերա մեր տեր Հիսուս Քրիստոսի խոստովանում եք երկու բնություն։ Կայսրն ասաց. «Ձեր նախորդ Վարդանը, նրա ազատները և նրանց վարդապետները գրավոր համաձայնություն տվեցին խոստովանել երկու բնություն»։ Մուշեղը պատասխանում է. «Նրանք այդ արեցին կամ անգիտության պատճառով և կամ էլ վախից դրդված...»։—221։

61. Բյուզանդական «կուրատորը», բառացի նշանակում է անչափահասի խնամակալ, հետագայում կուրատորները դառնում են կայսերական կալվածների վերակացուներ։—225։

62. Դարա, հունարեն Δάρα կամ Δάρας. Բյուզանդական տերիտորիայում, Մծբինից մի քիչ հյուսիս և նրա դիմաց գտնվող մի փոքր աննշան վայր էր, որ Անաստասիոս կայսեր կողմից 507 թ. վերածվեց ամրացված քաղաքի և ստացավ Անաստասիուպոլիս անունը։ Այդ քաղաքի ավերակների վրա այժմ գտնվում է մի փոքր գյուղ, որ կոչվում է Դարա կամ Կարա-դերե (տե՛ս Collinet, Une ville neuve byzantine en 507: La fondation de Dara (Anastasiopolis) en Mesopotamie, Mélanges offerts à G. Schlumberger, Paris, 1924, I, 55; W. Ensslin, Zur Grundunsgeschichte von Dara—Anastasiopolis, Byzantinische-Neugriechische Jahrbücher, V, 1927, S. 324—347)։—233։

63. Շահր-Վարազը անուն չէ, այլ տիտղոս և նշանակում է «կայսրության վարազ»։ Նրա իսկական անունն էր Ֆարուխան, որ կոչվում էր նաև Ռոմեզան։ Շահենի մականունն էր «Վահմանզադագան». նա Արևմուտքի «պատգոսպանն» էր (տե՛ս A. Christensen, L'Iran sous les Sassanides, p. 448)։—243։

64. Հերակլ կայսեր պարսկական արշավանքի ընթացուղին մանրամասն քննության է առնված ակադ. Հ. Մանանդյանի կողմից։ Տե՛ս նրա Маршруты персидских походов императора Ираклия, Византийский Временник, том III, 1950, стр, 133—153։ Կա այդ հոդվածի հայերեն թարգմանությունը. «Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացուղիները (մարշրուտները)» հետևյալ ժողովածուում. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության (հատոր Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 141—172)։—245։

65. Բյուզանդական և պարսկական բանակում հատուկ պահվում էին լրտեսներ։ Նրանց ծախսը հոգում էր պետությունը։ Այդ մասին շատ հետաքրքրական վկայություն ունի Պրոկոպիոս Կեսարացին իր «Գաղտնի պատմության» մեջ (գլ. 30)։ «... Հետախույզների մասին, ասում է բյուզանդական պատմիչը, կասեմ հետևյալը. պետությունը դեռ վաղուց բազմաթիվ մարդկանց էր պահում, որոնք գնալով թշնամիների մոտ, լինելով պարսից արքունիքում, կամ առևտրի, կամ էլ այլ պատրվակով, ճշգրիտ կերպով ամեն ինչ հետախուզում էին, վերադառնում էին հռոմայեցիների երկիրը և թշնամիների բոլոր գաղտնիքները հաղորդում իշխանություններին։ Վերջիններս, նախօրոք տեղյակ լինելով, ապահով էին և ոչ մի անակնկալի չէին հանդիպում։ Այս սովորությունը դեռ վաղուց գոյություն ուներ նաև մարերի (իմա պարսիկների) մոտ։ Խոսրովը (խոսքը Խոսրով Անուշիրվանի մասին է), ինչպես պատմում են, ավելի բարձր ռոճիկներ տալով հետախույզներին, մեծ օգուտներ քաղեց նրանցից։ Նա ամեն ինչ իմանում էր, ինչ տեղի էր ունենում հռոմայեցիների մոտ։ Իսկ Հուստինիանոսը նրանց վրա ոչ մի դրամ չծախսելով, հռոմայեցիների երկրից վերացրեց հետախույզների անունն անգամ, որի պատճառով շատ սխալներ թույլ տրվեցին և Լազիկան գրավվեց թշնամիների կողմից, որովհետև հռոմայեցիները ամենևին չգիտեին, թե պարսից արքան զորքով երկրի որ մասում է գտնվում...»։—247։

66. Խազարների մասին վերջերս լույս է տեսել մի արժեքավոր մենագրություն (տե՛ս М. И. Артамонов, История хазар, Ленинград, 1962)։—248։

67. «Մողոքը» Ամոնիտների և Մոաբիտների աստվածն էր, որին մարդկանց էին զոհաբերում։ Այստեղ փոխաբերական իմաստով է գործածված։—248։

68. «Հեղուկ կրակի» հեղինակ է համարվում Կալլինիկոս անունով մեկը, որ ծագումով Ասորիքից էր։ Այն կոչվում էր նաև «ծովային կրակ», իսկ հետագայում՝ «հեղուկ կրակ», «մարական կրակ» նաև «հունական կրակ»։ Պատրաստվում էր դյուրավառ նյութերից՝ ծծմբից, կուպրից, նավթից և այլն։ Նրա պատրաստումը Բյուզանդիոնում պետական գաղտնիք էր։

«Հեղուկ կրակի» մասին գաղափար ունի դեռ Պրոկոպիոս Կեսարացին։ Նա վկայում է, որ բյուզանդացիները պարսիկների դեմ էին շպրտում «կավե ամաններ՝ լի ծծմբով և կուպրով և մի հեղուկով, որ մարերը կոչում էին նավթ, իսկ հույները՝ Մեդեյայի յուղ» («Հեղուկ կրակի» մասին տե՛ս հետևյալ ուսումնասիրությունները. C. Zenghelis, Le feu grégeois et les armes à feu des byzantins, Byzantion, 7 (1932), p. 265 sqq.; A. Dain, Appellations grecques du feu grégeois, Mélanges A. Ernouf, 1940)։—250։

69. Վեհ-Արտաշիր քաղաքը համապատասխանում է Սելևկիային, դա վերջինիս պարսկական անվանումն է։ Տե՛ս A. Christensen, op. cit., p. 493։—253։

70. Բյուզանդական կայսրության և սասանյան Պարսկաստանի միջև 629 թվի հաշտությունը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի համար։ Պաշտոնապես սոսկ վերականգնվել էր 591 թվից գոյություն ունեցող սահմանը, այսինքն՝ Հայաստանի մեծ մասը դարձյալ անցնում էր կայսրությանը, սակայն, ըստ էության, չէր կրկնվում այն քաղաքական գոյավիճակը, որը նախկինում ստեղծվել էր Հայաստանի բյուզանդական հատվածում։ 591 թվի դաշնագրից հետո Մավրիկ կայսրը պարզապես ձգտում էր Հուստինիանոսի օրինակով ոչնչացնել հայկական նախարարական տները։ Պատմական աղբյուրները մեզ ոչ մի վկայություն չեն տալիս այն մասին, թե արդյոք բյուզանդական Հայաստանը, որպես ինքնուրույն վարչական միավոր, ունե՞ր տեղական կառավարիչ։ Սա հավանաբար հետևանք էր կայսրության կողմից բյուզանդական Հայաստանը որպես ինքնուրույն միավոր չճանաչելու ձգտմանը։

Հայ նախարարների դիմադրությունը և մանավանդ սասանյան Պարսկաստանի հաղթական արշավը (թեկուզ ժամանակավորապես) զգաստացրեց կայսրերին, որոնք փոխեցին իրենց վերաբերմունքը և հրաժարվելով հայ նախարարությունները ոչնչացնելու հին քաղաքականությունից, բյուզանդական Հայաստանին, որպես ինքնավար վարչական միավորի, տվեցին հատուկ կառավարիչ, որը կոչվում էր «իշխան Հայոց» (Հայոց իշխանի մասին տե՛ս № 77 ծանոթագրության մեջ)։ Բյուզանդական Հայաստանն ընդգրկում էր հիմնականում Տուրուբերան նահանգը և Բարձր Հայքի ու Այրարատի որոշ մասեր։—254։

71. Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության վերջին հրատարակությունը իրականացրել է պրոֆ. Աշ. Աբրահամյանը (տե՛ս Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941)։—255։

72. Մանուկ Աբեղյանը ցույց է տալիս, որ Հովհան Մամիկոնյանը «կարող է ապրած լինել ամենավաղը 8-րդ դարի սկզբներում» (տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1944, էջ 405)։—259։

73. Իսլամի մասին տե՛ս Reuben Levy, The social structure of Islam (second editon of the sociology of Islam), Cambridge, 1962; H. Lammens, L'Islam, Beyrouth, 1941; E. A. Беляев, Мусульманское сектанство, Москва, 1957։ Իսլամի մասին բազմաթիվ մասնագիտական հոդվածներ կան նաև «Իսլամի համառոտ հանրագիտարանում»։ Shorter Encyclopedia of Islam, H. A. R. Gobb, J. H. Kramers. Leiden, 1953։—269։

74. Հերակլ կայսեր առաջ քաշած նոր դավանանքը հայտնի է գիտության մեջ «մոնոթելիտիզմ» (միակամություն) անվան տակ։ Նրա համաձայն Քրիստոսը ուներ աստվածային և մարդկային բնություն, բայց որովհետև այդ երկու բնությունները միացած էին մեկ անձի մեջ, նա ուներ մեկ կամք, աստվածայինը, որը կլանել էր մարդկային կամքը։ Այս դոգմայի հեղինակը Ասորիքի պատրիարք Սերգիոսն էր (610—638 թթ.)։ Նրա գաղափարներին հարեցին Ֆասիսի եպիսկոպոս Կյուրոսը, նույնիսկ պապ Հոնորիոսը։ Այդ դավանանքն էր, որ Կարինի 633 թ. եկեղեցական ժողովում պարտադրվում էր հայերին։ 634 թ. Սերգիոսը Կոստանդնուպոլսում հրապարակեց նշանավոր «Εκθεσις»-ը, միակամությունը հաստատող կարգադրությունը։ Հերակլիոսը առաջ քաշելով միակամությունը, նպատակ ուներ վերացնել միաբնակների և երկաբնակների միջև բացված անդունդը, կամրջել այն, որովհետև վերջիններիս միջև գնացող վեճերը շատ էին թուլացրել կայսրության դիրքերը Փոքր Ասիայում, նամանավանդ արաբական վտանգի նախօրյակին (տե՛ս G. Ostrogorsky, Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956, p. 138—139; K. 'Αμάντου, Ἱστορία τοῦ Βυζαντινοῦ Κράτους, τ. A., Ἀθῆναι, 1963, σελ. 291—293)։—300։

75. Եզր կաթողիկոսի և Հերակլ կայսեր միջև կայացած համաձայնության մասին շատ

հետաքրքրական տեղեկություններ է տալիս Narratio de rebus Armeniae-ն։ Այնտեղից իմանում ենք, որ Եզրը ոչ թե Ասորիք գնաց՝ Հերակլի մոտ, այլ Մեծ Հայք՝ Թեոդոսուպոլիս քաղաքը, որտեղ եկեղեցական ժողով էր հրավիրված։ Այդ սկզբնաղբյուրը ցույց է տալիս, որ «Խոսրովի մահվան Դ(4) տարին և Հերակլի թագավորության ԻԳ(23) տարին (Հերակլը) գալով Մեծ Հայք, հրամայեց Թեոդոսուպոլսում մեծ ժողով գումարել՝ բոլոր եպիսկոպոսների և վարդապետների, կաթողիկոս Եզրի և բոլոր ազատների մասնակցությամբ, քննելու և եզրակացության հանգելու համար Քրիստոսի՝ մեր աստուծո երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցի շուրջը։ Երեսուն օր նրանք քննեցին այդ հարցը և հայերը համոզվեցին (սուրբ հայրերի) գրքերից և իրենց ձեռքով ստորագրեցին ու երդվեցին այլևս այդ մասին երբեք չհակաճառել»։ Նույն այդ աղբյուրի վկայությամբ Հայաստանում համոզված էին, որ Եզր կաթողիկոսը «կայսեր երկյուղից էր, որ շեղվեց ճշմարիտ ճանապարհից» այսինքն՝ համաձայնության եկավ կայսրության հետ (տե՛ս Բանբեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 468)։—300։

76. Բյուզանդական պատմիչ Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրության» մեջ հայարաբական դաշինքի մասին աշխարհի արարչագործության 6143 թվականի տակ գրված է հետևյալը. «Այս թվականին կայսեր դեմ ապստամբվեց հայոց պատրիկ Պասագնաթեսը և դաշինք կնքեց Մավիայի հետ, տալով նրան և իր հարազատ որդուն։ Կայսրը, իմանալով այդ մասին, եկավ մինչև Կապադովկիայի Կեսարիա (քաղաքը), բայց Հայաստանից հույսը կտրած վերադարձավ» (տե՛ս Theophanis Chronographia, Bonnae, 1839, t. I, p. 527)։ Այս փաստի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Մ. Չամչյանը (Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 354) և Պասագնաթեսը համարեց հայկական Վասակ անունը, ենթադրելով, որ հայ իշխանների շարքում կա և ոմն Վասակ, որ հաջորդել է Մժեժ Գնունուն, կայսր Կոստանդի հրամանով։ Այդ բանն ընդունում է նաև Հ. Աճառյանը, կրկնելով Չամչյանի առաջ քաշած միտքը (տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, էջ 45—46, № 16)։ Եվրոպացի բյուզանդագետ Պետերսը (տե՛ս նրա հոդվածը Πασαγνάθης Περσογενής, Byzantion, t. VIII, fasc. 2 (1933), p. 405—423), ենթադրում է, որ Πασαγνάθης -ի տակ թաքնված է Թեոդորոս Ռշտունին։ Գ. Աբգարյանը համամիտ լինելով Պետերսի հետ, առաջ է քաշում այն միտքը, որ Πασαγνάθης -ը հունարեն παραβάτης (նշանակում է դավաճան, ուրացող) բառի աղավաղված ձևն է, որ Թեոփանեսը Թեոդորոս Ռշտունուն համարում է դավաճան, ուրացող, որովհետև նա ի վնաս Բյուզանդիայի անցավ արաբների կողմը, և որ այդ παραβάτης բառը գրիչների մեղքով աղավաղվել է և դարձել հատուկ անուն (տե՛ս նրա «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 195, ծանոթ. 19)։—312։

77. Հայաստանի պատմության մեջ 7-րդ դարը առանձնահատուկ տեղ ունի, որը դժբախտաբար մեր պատմագրության մեջ (և հենց Լեոյի մոտ) արժանի արտացոլում չի գտել։ Արշակունյաց թագավորության կործանումից հետո սա մի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանը քաղաքական, տնտեսական և մշակութային ասպարեզներում այնպիսի բարգավաճման հասավ, որ ընդհուպ մոտեցավ անկախ թագավորության, սակայն արաբական խալիֆայության ուժեղացումը և վերջնական ձևավորումը ընդհատեց սկսված բուռն զարգացումը։

Այս ժամանակաշրջանում, որ հիմնականում ընկած է 629—693 թվականների միջև, Հայաստանը կառավարվում էր միայն հայ տիրակալների կողմից, որոնք կոչվում էին «Իշխան Հայոց»։

Հայոց թագավորությունը Արշակունյաց ժամանակաշրջանի սահմաններով վերականգնելու խոստում էր արել հայ նախարարներին դեռ Վահրամ (Բահրամ) Չուբինը (Մեհրևանդակ) 571—591 թվերի դեպքերի ժամանակ։ Լավ իմանալով հայերի անկախության ձգտումները, նա առաջարկում էր «...եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն զո՛ր և դուք կամիք՝ արասջիք ձեզ թագաւոր», ապա տալիս է Հայոց թագավորության սահմանները իր 15 պատմական նահանգներով (Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939, էջ 39)։ Այս 15 նահանգները հայերի գիտակցության մեջ այնքան ուժեղ տպավորվել էին որպես մեկ ամբողջություն, որ 7-րդ դարի նշանավոր Աշխարհացույցը նույն մեծությամբ նկարագրում է Հայաստանը (Ս. Երեմյան, Հայաստանը ըստ աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 105—112)։

Հայաստանի անկախությունը վերականգնելու ձգտումը շոշափելի կերպարանք ստացավ 591 թվի դաշնագրի կնքումից հետո, երբ Հայաստանի մեծ մասին տիրացած բյուզանդական կայսրությունը։ Հայոց զինված գնդերը փոխադրում էր Թրակիա, ձգտելով ջլատել երկրի ուժերը։ Համոզված լինելով, որ միայն Հայկական թագավորությունը կարող էր փրկել երկիրը ավերածությունից և բռնի արտագաղթից, հայ նախարարները որոշում են ապստամբվել և իրենցից մեկին ընտրել թագավոր՝ «ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն

Հայոց և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր» (Սեբեոս, 56)։

Հայոց անկախ թագավորությունը թեև չվերականգնվեց, այնուամենայնիվ դեպքերի բնական զարգացումը անխուսափելիորեն հանգեցրեց Հայաստանի քաղաքական որոշ ինքնուրույնության գոյացմանը, որն արտահայտվեց հանձին Հայոց իշխանի։

591 թվից հետո պարսկական Հայաստանն ունեցավ միայն հայ մարզպաններ, ինչպես Սմբատ Բագրատունին և Վարազ-Տիրոցը։ Կարծվում է, որ այստեղ առաջացավ Հայոց իշխանի պաշտոնը Очерки Истории СССР III—IX в. в., Москва, 1958, стр. 224), որը ռազմական հարցերով զբաղվող Հայոց մարզպանին առընթեր վարում էր քաղաքական գործերը։ Այս տեսակետը հենվում է Դավիթ Սահառունու մասին Ստեփանոս Ասողիկի մի տեղեկության վրա, թե պարսից թագավորը «ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս լ» (Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 86)։ Սա այն տպավորությունն է ստեղծել, թե որոշ ժամանակաշրջանում մարզպանին առընթեր եղել է իշխան Հայոց կոչված բարձրաստիճան պաշտոնյան։ Սակայն այս տպավորությունը փարատվում է, երբ նկատի ենք առնում, որ Ասողիկը Հայոց իշխան է կոչում նաև 6-րդ դարում Հայոց մարզպան Մժեժ Գնունուն և նույնիսկ 4-րդ դարում Հայոց Արշակ արքայի դեմ ապստամբած Մերուժան Արծրունուն։ Ամենայն հավանականությամբ Դավիթ Սահառունին եղել է մարզպան, Սմբատ և Վարազտիրոց Բագրատունի մարզպանների միջև ընկած տարիներին։

Գոյություն ունեցող պատմական տեղեկությունների հիման վրա առայժմ դժվար է ցույց տալ հստակ կերպով «իշխան Հայոց» պաշտոնի սկիզբը։ Այս տիտղոսը պատմիչների մոտ առաջին անգամ տրվում է 7-րդ դարում Մժեժ Գնունուն և Դավիթ Սահառունուն, որպես բյուզանդական Հայաստանի կառավարիչների։ 629 թվի դաշնագրի կնքումից հետո Հերակլ կայսրը Հայոց իշխան է նշանակում Մժեժ Գնունուն, որին, սակայն, սպանում և հաջորդում է Դավիթ Սահառունին։ Վերջինիս կառուցած Մրենի տաճարի 639 թվի արձանագրության մեջ հիշվում է «...յիշխանութեան Դաւթի ամենագով պատրկի կուրապաղատի և սպարապետի Հայոց և Ասորւոց...» (И. Орбели, Избранные труды. Ереван, 1963, стр. 401)։ Այս վիմագիր տողերը հաստատվում են Սեբեոսի «Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ամենայն աշխարհացն և տայ նմա պատիւ կիւրապաղատութեանն» (էջ 104), ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցու «Հերակլ զԴաւիթ Սահառունի կուրապաղատ արարեալ իշխան Հայոց կացուցանէր» (Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1853, էջ 47) խոսքերով։

Հայաստանը կայսրության նահանգի վերածելու նկրտումները անհաջողությամբ պսակվեցին։ Քաղաքական իրադրությունը ստիպեց Հերակլին ճանաչել Հայոց իշխանի կամ պատրիկի իրավասությունը որպես Հայոց մարզպանի մի տարբերակը։ Հայկական լեռնաշխարհի վաղեմի տերերը՝ նախարարները, դարերի ընթացքում ունեցել էին իրենց ներքին կազմակերպությունը, որի հիմնական օղակը նախ Հայոց թագավորն էր, ապա մանրացած ձևով Հայոց մարզպանը և վերջապես 7-րդ դարում այդպիսին դարձավ Հայոց իշխանը։

Ծոխ և բովանդակալից կենսագրություն ունի Դավիթ Սահառունու հաջորդը՝ Թեոդորոս Ռշտունին, որը նախապես պարսկական Հայաստանի սպարապետն էր, իսկ մարզպան Վարազտիրոց Բագրատունու հեռանալուց հետո մարզպանի դերն էր կատարում։ Դեռ 628 թվականին նա այնքան ազդեցիկ էր, որ կարողացավ իր կամքը թելադրել կաթողիկոսական ընտրության հարցում, պաշտպանելով Տեր-Քրիստափորին (Սեբեոս, 98)։ Քադիսիայի ճակատամարտում (637) Սասանյան Պարսկաստանի պարտությունից և մանավանդ Դավիթ Սահառունու մահվանից հետո (639) Ռշտունյաց տերը Հայաստանի երկու (բյուզանդական և պարսկական) հատվածները միացնելով իշխեց ամբողջ Հայաստանում։ Ուստի նա առաջին հայոց իշխանն էր բառիս բուն իմաստով։

Սեբեոսը 640 թվի արաբական արշավանքի մասին խոսելիս թեև նրան կոչում է «իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն» (էջ 110), սակայն նա պաշտոնապես պատրիկ (իշխան) տիտղոսը կայսրից ստացավ միայն այդ արշավանքում արաբների դեմ ցուցաբերած կորովի և արիության փոխարեն, «իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն հանդերձ պատրկութեան պատուով» (էջ 110)։

Հայոց իշխանը բյուզանդական կայսրությունից մեծ մասամբ ստանում էր պատրիկ և կուրապաղատ բարձրաստիճան տիտղոսները։ Նա ուներ ոսկեղեն և ոսկեթել դրոշ։ Թեոդորոս Ռշտունին, օրինակ, արաբական խալիֆայությունից ստացավ «հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս և վառ մի նորին աւրինակաւ» (Սեբեոս, 146)։ Նրա հաջորդ Համազասպ Մամիկոնյանը, իշխանության աստիճանի ու կուրապաղատության տիտղոսի հետ ստացավ «Գահոյս արծա-

թիս»։ Եթե նկատի առնենք, որ արաբական շրջանի Հայոց և Աղվանից իշխանները պատրիկության թագ էին կրում, ապա առավել ևս հավանական պիտի համարել նման թագի օգտագործումը 7-րդ դարի Հայոց իշխանի կողմից։

Համազասպ Մամիկոնյանի օրոք հայկական տերության հետ միաձուլվեց նաև Սյունիքը, որը մի քանի տասնամյակ գոյություն ունեցավ որպես առանձին նահանգ (շահր)։ Այսպիսով, Հայաստանի Միջնաշխարհը և շրջակա նահանգների որոշ մասեր համախմբվեցին Հայոց տերության սահմանների մեջ։ Բացի Հայաստանից, Մուավիան Թեոդորոս Ռշտունու օրոք Հայոց իշխանի իրավասության տակ դրեց նաև Վրաստանն ու Աղվանքը, մինչև Կովկասյան լեռներն ու Ճորա պահակը (Եւ իշխանութիւն ետ նմա զՀայս և զՎիրս և զԱղուանս և զՍիւնիս մինչև ցԿապկոհ և զպարհակն Ճորայ, Սեբեոս, 146)։

Յոթերորդ դարի Հայոց տիրակալների մեջ ամենանշանավորը Գրիգոր Մամիկոնյանն էր, որը հայ նախարարների կողմից ընտրվելուց հետո իր իշխանության հաստատումը (Դրասխանակերտցի, 51) ստացավ Մուավիա խալիֆայից։ Նրա իշխանության օրոք Հայաստանը մոտավորապես քառորդ դար քաղաքական հզորացման և տնտեսական բարգավաճման ու մշակութային վերելքի մի շրջան ապրեց։

Հայոց իշխաններից Գրիգոր Մամիկոնյանը և մանավանդ նրա հաջորդ Աշոտ Բագրատունին գրեթե լիակատար անկախություն էին վայելում, հայկական աղբյուրները հեռու չեն նրանց թագավոր համարելուց։ Հենց Գրիգոր Մամիկոնյանի տիկինը՝ Հեղինեն թագուհի էր կոչվում (կդշխոյն Հեղինէ զտիկինն Հայոց Մեծաց, Պատմութիւն Աղվանից, Մոսկվա, 1860, էջ 137)։

Հայոց իշխանի դիվանագիտական հարաբերությունները չէին սահմանափակվում արաբական խալիֆայության հետ դաշինք կնքելով կամ բյուզանդական կայսրության հետ բանակցություններ վարելով, այլ հասնում էին մինչև հեռավոր խազարաց երկիրը։ Գրիգոր Մամիկոնյանը, Սահակ կաթողիկոսը և Աղվանից իշխան Վարազ Տրդատը մի պատվիրակություն ուղարկեցին հոների երկիրը, քրիստոնեություն հաստատելու միջոցով նրանց բարբարոս արշավանքները չեզոքացնելու նպատակով։

Հայոց իշխանին ենթակա էին սպարապետը, կաթողիկոսը և բոլոր նախարարները։ Հայոց տերությունը հարկատու չէր ո՛չ կայսրությանը, ո՛չ էլ խալիֆայությանը, այլ երբեմն տարեկան որոշ ընծա էր ուղարկում խալիֆաներին։

Հայաստանի մայրաքաղաքը թեև Դվինն էր, այնուամենայնիվ, Հայոց իշխանն այնտեղ չէր նստում։ Ոստան գավառը նախապես պատկանել էր Արշակունի թագավորներին և քանի որ յոթերորդ դարում Հայաստանում դեռ չկար թագավորական ժառանգական իշխանություն, ուստի ամեն մի Հայոց իշխան նախընտրում էր մնալ հիմնականում իր տոհմական տիրույթների մեջ։ Թեոդորոս Ռշտունին նստում էր Աղթամարում, Գրիգոր Մամիկոնյանի նստավայրը Արուճն էր, որտեղ կառուցել էր փառահեղ տաճար և պալատ, իսկ Աշոտ Բագրատունին մնում էր Դարույնք ամրոցում։

Ճիշտ չէ Լեոյի այն տեսակետը, թե յոթերորդ դարում Հայաստանն ընդհանրապես աննպաստ վիճակում էր։ Բնականաբար արաբների և բյուզանդացոց ընդհարումները, ինչպես նաև խազարաց արշավանքները երկրին վնաս էին հասցնում, սակայն պետք չէ մոռանալ Արևելքում ստեղծված քաղաքական նպաստավոր իրադրությունը, որը հնարավորություն էր ստեղծել Հայաստանում անկախ պետական կյանք կերտելու համար։ Սասանյան Պարսկաստանը կործանվել էր, Բյուզանդական կայսրությունը իր տարածության կեսից ավելին կորցրել ու քայքայվել էր, իսկ արաբական խալիֆայությունը դեռ չէր կազմավորվել։ Այս դրությունը տևեց մինչև դարի վերջը, որի շնորհիվ յոթերորդ դարի երկրորդ կեսում Հայաստանը քաղաքականապես ու տնտեսապես բարգավաճեց, իսկ մշակութային տեսակետից աննախընթաց բարձր աստիճանի հասավ, որի պերճախոս վկաներն են հարուստ մատենագրությունը և մանավանդ դասական կատարելության հասած ճարտարապետությունը (Զվարթնոց, Հռիփսիմե և այլն)։—313։

78. Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» մեջ խազարների հարձակումը Անդրկովկաս թվագրված է 685 թվականով։ Այնտեղ գրված է. «Յուստինիանոս, որդի Կոստանդնի, ամս երկուս։ Ի սորա առաջին ամին տիրեցին հիւսիսային ազգն, որ ասին Հազիրք՝ Հայոց, Վրաց և Աղուանից. և սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց և Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր տասն էր ամսոյն, ի ՃԼԴ թուականին Հայոց» (տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 398)։—320։

79. Աշոտ Բագրատունու և Ներսեհ Կամսարականի մասին որոշ շփոթություն կա այստեղ, որը միջնադարյան պատմիչների կողմից Ասողիկի մի տեղեկությունը սխալ հասկանալու հետևանք է։ Ասողիկը հիշում է, որ Հուստինիանոս կայսրը յոթերորդ դարի վերջում նվաճելով Հայաստանը նշանակեց «զՆերսեհ Շիրակայ տէր կոմս Կապոյտիրոց Հայոց իշխան...», ապա

մի քանի տող ստորև շարունակում է. «Եւ Ներսեհ Կամսարական եկաց իշխան Հայոց ամս Դ..»
(էջ 101)։ Շիրակի տեր Ներսեհը և Ներսեհ Կամսարականը բնականաբար նույն անձնավորու-
թյունն են, բայց քանի որ Ասողիկը նրա մասին իր տեղեկությունը երկու մասի է բաժանել,
ապա նրան հաջորդող պատմիչները և մանավանդ Սամվել Անեցին կարծել են, թե խոսքը եր-
կու Ներսեհների մասին է։

Սամվել Անեցին հետևյալ շարքն է տալիս.

ՌՁԴ Ներսեհ Շիրակացի իշխան եկաց Հայոց՝ ամս Գ

ՌՁԶ Հայոց Աշոտ՝ ամս Գ...

ՌՁԹ Հայոց Ներսեհ Կամսարական՝ ամս Գ (Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84)։

Սակայն, քանի որ Ներսեհից առաջ եղել է Աշոտ Բագրատունին, Լեոն այս խառնաշփո-
թությունը փորձում է լուծել, ենթադրելով, որ Աշոտն ու Ներսեհը երկուական անգամ են իշխել։
Անվանի պատմաբանն, իհարկե, մի քայլ առաջ է գնում, նկատելով վերահիշյալ երկու Ներսեհ-
ների նույնությունը, սակայն պետք է հենվել բուն սկզբնաղբյուրի՝ Ասողիկի վրա, որի մոտ
Աշոտն ու Ներսեհը միայն մեկական անգամ են իշխում։

Այս առթիվ հարմար է տալ յոթերորդ դարի Հայոց իշխանների ժամանակագրական տախտակը.

Մժեժ Գնունի	629—635
Դավիթ Սահառունի	635—639
Թեոդորոս Ռշտունի	639—654
Համազասպ Մամիկոնյան	654—661
Գրիգոր Մամիկոնյան	661—685
Աշոտ Բագրատունի	685—689
Ներսեհ Կամսարական	689—693

(Տես Ա. Տեր-Ղևոնդյան, Հայոց իշխանը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2)։—322։

80. Աղվանից իշխան Վարազ-Տրդատի՝ խազարների հետ ունեցած փոխհարաբերություննե-
րի մասին առանձին ուսումնասիրություն է նվիրել Ս. Երեմյանը (տե՛ս Моисей Каланкатуй-
ский о посольстве Албанского князя Вараз—Трдата к хазарскому хакану Алп—Илит-
веру, Записки Института Востоковедения Академии наук СССР, т. VIII, 1939)։—331։

81. Մարքսիստական պատմագրությունը պավլիկյան շարժումը չի համարում զուտ «մտա-
վորական շարժում», այլ սոցիալ-դասակարգային, մի շարժում, որ իր սուր կողմով ուղղված էր
ֆեոդալական շահագործման դեմ, իսկ հայ պավլիկյանների համար, նաև Հայաստանը օտար
լծից ազատագրելուն։ Լեոյի մոտ պավլիկյան շարժումը շատ համառոտ է շարադրված, այն էլ
այնպիսի մի աշխատության հիման վրա (խոսքը Բ. Սարգսյանի «Ուսումնասիրություն Մանի-
քեա-Պավլիկյան Թոնդրակեցիներու աղանդին», Վենետիկ, 1893, մասին է), որ ակադեմիկոս
Աշոտ Հովհաննիսյանի դիպուկ բնորոշմամբ «հանդիսանում է գիտական թյուրիմացությունների
և սանձազերծ նշավակումների մի շեղջակույտ (Դրվագներ հայ ազատագրական մտքի պատ-
մության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 341)։ Վերջերս պավլիկյան շարժման մասին մեզ մոտ և
դեմոկրատական երկրներում լույս են տեսել մի շարք ուսումնասիրություններ, շրջանառության
մեջ են մտել մի շարք նոր սկզբնաղբյուրներ և նրանց թարգմանությունները, որոնք թույլ են
տալիս ավելի ճիշտ պատկերացում կազմել միջնադարի այս հուժկու սոցիալական շարժման
մասին։ Անվան ծագման կապակցությամբ Լեոյի հիշատակած առասպելը, թե այն կապված է
Պող անունով արարատցի մի հայի անվան հետ, հայի, որին առևանգել էր Պարսկաստանը
եկած Շեթի անունով մի կին, որևէ պատմական հիմք չունի։ Մի առասպել էլ պահպանված է
բյուզանդական սկզբնաղբյուրներում, որի համաձայն պավլիկյան անունը կապված է ինչ-որ
Կալլինիկե անունով մի կնոջ երկու որդիներից մեկի, Պողոսի անվան հետ։ Ուսումնասիրող-
ների մոտ էլ միասնական կարծիք չկա այդ կապակցությամբ։ Ոմանք ենթադրում են, որ այն
ծագում է 8-րդ դարի առաջին կեսին ապրած պավլիկյան աղանդապետ Գեղնեսիոսի հայր Պո-
ղոս հայի անունից։ Պավլիկյանները անչափ շատ էին հարգում Պողոս առաքյալին և, ըստ
երևույթին, ճիշտ են այն ուսումնասիրողները, որ պավլիկյան անունը կապում են Պողոս առաք-
յալի անվան հետ, նամանավանդ, որ պատրիարք Փոտը վկայում է, որ պավլիկյանները իրենց
համարում են Պողոս առաքյալի անվանակիրներ (տե՛ս Photii, Patriarchae Constantinipoli-
tani, Sermo II contra Manichaeos, Migne, Patrologia graeca, t. 102, col. 109)։

Պավլիկյան շարժման բնօրրանն է Մանանաղի գավառը Արևմտյան Հայաստանում, որի

հայ բնակչությունը տնքում էր բյուզանդական հարկային, ազգային և կրոնական ճնշման տակ։ Աշխատավոր մասսաների ընդվզումը այդ ճնշման դեմ հանդես եկավ պավլիկյան աղանդի քողի տակ։ Պավլիկյան շարժման սկզբնավորության ժամանակի մասին միակ հաստատ տվյալները տալիս են բյուզանդական աղբյուրները։ Նրանք նշում են, որ բյուզանդական կայսր Կոստանդին 2-րդի ժամանակ (641—668 թթ.) հանդես եկավ ոմն Կոստանդին, ծագումով հայ, որը սկիզբ դրեց աղանդին։ Կոստանդինը, որն ստացավ Պողոս առաքյալի աշակերտներից մեկի, Սիլվանոսի անունը, գործեց ամբողջ քսանյոթ տարի և ի վերջո կայսերական հրամանով մահվան դատապարտվեց։ Կայսեր հրամանն իրականացնողը պալատական ոմն Սիմեոն էր։ Կոստանդինին մահվան դատապարտելուց հետո պալատական Սիմեոնը, ըստ կայսեր հրամանի, աղանդապետի աշակերտներին տալիս է եկեղեցուն «դարձի գալու» համար, բայց նրանք, ինչպես վկայում են աղբյուրները, «անդարձ մնացին, նախընտրելով մեռնել աղանդավոր, քան թե ապաշխարությամբ ձեռք բերել աստուծո ողորմածությունն ու հավիտենական փրկությունը»։

Կոստանդինի մահից հետո պավլիկյան շարժումը գլխավորում է նույն այն պալատական Սիմեոնը, որը ձերբակալված պավլիկյաններին քննելու ժամանակ հարեց աղանդին։ Այնքան վարակիչ էին պավլիկյան շարժման գաղափարները, որ նույնիսկ պալատական մի բարձրաստիճան գործիչ աղանդավորներին քննելու ընթացքում ընկնում է նրանց վարդապետության ազդեցության տակ։ Սիմեոնը գործում էր բյուզանդական կայսր Հուստինիանոս Բ-ի ժամանակ (685—695, 704—711 թթ.) ընդամենը երեք տարի և իր նախորդի պես ունենում է ողբերգական վախճան. նա իր աշակերտների հետ խարույկի զոհն է դառնում։ Հակառակ բյուզանդական կառավարության փորձերին հենց խանձարուրում խեղդելու պավլիկյան շարժումը, նրան այդ միանգամայն չի հաջողվում։ Կայսրության տարբեր շրջաններում բոնկվում են աղանդի նորանոր օջախներ։ Շարժումը մուտք է գործում նաև Արևելյան Հայաստան և Աղվանք։ Այնքան հուժկու էր պավլիկյան շարժումը 8-րդ դարի սկզբում, որ հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին անհրաժեշտ է գտնում առանձին ճառ գրել աղանդավորների դեմ։ Շարժումն ահաբեկում է նաև Աղվանից հոգևոր և աշխարհիկ ղեկավարներին։ Բացի ընդհանուր կարգի ճառերից, շահագործող դասակարգերը արդեն դիմում են կոնկրետ միջոցառումների։ Աղվանից Միքայել կաթողիկոսի ժամանակ, 702—705 թվականների միջև գումարվում է ժողով միջոցներ մշակելու, աղանդավորների առաջքն առնելու համար, որոնց մեջ հիշատակվում են և պավլիկյանները։ Ետ չի մնում Հովհան Օձնեցին։ 719 թ. Դվինի եկեղեցական ժողովում նա ևս քննում է նրանց հարցը։ Ընդունվում է նրանց դեմ ուղղված որոշում, որն աչքի էր ընկնում իր ծայրահեղ դաժանությամբ. Դրությունը տարբեր չէր Արևմտյան Հայաստանում, Բյուզանդական կայսրության արևելյան շրջաններում։ Կայսրությունից հալածանքի ենթարկված պավլիկյանները ոմն հայազգի Պողոսի գլխավորությամբ ստիպված փախչում են շարժման սկզբնական օջախներից մեկը՝ Պոնտոս։

Լևոն Իսավրացի կայսեր ժամանակ (717—741 թթ.) պավլիկյան շարժումը գլխավորում էր Պողոս հայի որդի Գեղեոնեսը, որը մահանում է ժանտախտից 747 թ.։ Գեղեոնեսի մահից հետո պավլիկյան շարժումը գլխավորում է վերջինիս որդեգիրը՝ Հովսեփը և որդին՝ Զաքարիան։ Սրանց ժամանակ է, որ շարժումը բացի իր դասակարգային բնույթից հանդես է բերում նաև ժողովրդա-ազատագրական պայքարի բովանդակություն։ Երբ Հայաստանում 748 թ. բարձրացավ Գրիգոր Մամիկոնյանի ապստամբությունը արաբների դեմ, պավլիկյանները փորձեցին մասնակցություն ցուցաբերել։ Բայց հայ իշխող դասակարգերի վերաբերմունքը նրանց հանդեպ միանգամայն այլ էր։ Հայ նախարարների հիմնական նպատակն էր քաղաքական ինքնուրույնության նվաճումը, նրանք չէին ուզում պայքարին մասնակից դարձնել ժողովրդական լայն խավերին, առավել ևս պավլիկյաններին, որոնցից իրենք ավելի շատ էին վախենում, քան թե արաբներից, քանի որ առաջինների պայքարը անխուսափելիորեն ստանալու էր դասակարգային բնույթ, ուղղվելով հենց իրենց նախարարների դեմ. այդ պատճառով նախարարները Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ թույլ չտվեցին պավլիկյաններին միանալու ապստամբներին և ձեռնարկեցին նրանց հալածանքը։

Արաբական խալիֆաթի ներսում բռնկված գահակալական կռիվները փորձեց օգտագործել նաև Բյուզանդիան։ Կոստանդին 5-րդ կայսրը ձեռնարկեց մի խոշոր արշավանք, որի հետևանքը եղավ երկու սահմանամերձ քաղաք-ամրոցների՝ Թեոդոսուպոլիս-Կարինի և Մելիտինեի գրավումը։ Այդ գործին մեծապես նպաստեց նշված քաղաքների հայ և ասորի բնակչությունը։ Բայց կայսրը, համոզված լինելով, որ չի կարող իր ձեռքում երկար պահել այդ քաղաքները, հիմնահատակ խորտակում է նրանց պարիսպները, իսկ բնակիչներին, որոնք ծագումով հայեր էին և ասորիներ, տեղափոխում է Թրակիա, որտեղ նրանք տարածեցին պավլիկյան աղանդը։

Աղանդապետ Հովսեփի մահից հետո որպես պավլիկյան աղանդի ղեկավարներ հանդես են

գալիս երկու հոգի՝ Սերգիոսը և Վահանը, որոնց միջև գնում է սուր ու երկարատև պայքար, որը արտահայտությունն էր շարժման մեջ առկա հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների։ Սերգիոսը 801 թ. սկսած ամբողջ 34 տարի գլխավորեց պավլիկյան շարժումը, հասցնելով այն աննախընթաց հզորության։ Նիկեփոր կայսեր հաջորդ Միքայել Ա և Լևոն Ե Հայկազնը (813—820 թթ.), «տեսնելով, որ քրիստոնյաների մեծ մասը վարակվել է այդ աղանդից, հռոմեական երկրի բոլոր շրջանները հրաման արձակեցին, կոտորել այս աղանդի հետևորդներին»։ Հալածանքները լայն չափեր են ստանում։ Բյուզանդիայի տերիտորիայի վրա ապրող պավլիկյանները ի պատասխան այդ հալածանքների, մասնակից են դառնում Թովմա Գաժիրացու ապստամբության՝ ընդդեմ կայսրության։

Թեոփիլոս կայսեր ժամանակ (829—842 թթ.) և հատկապես Թեոդորա կայսրուհու ժամանակ (842—856 թթ.) հալածանքները ստացան շատ մեծ ծավալ։ Թեոդորան առանձին պատժիչ արշավախումբ կազմեց, որը ամենաանմարդի ձևով կոտորեց, ըստ աղբյուրների տվյալների, մինչև հարյուր հազար աղանդավոր։ Ինչքան էլ չափազանցեցված լինեն թվական այս տվյալները, այնուամենայնիվ, մի բան պարզ է, որ հալածանքները ստացան շատ մեծ չափեր։ Պավլիկյաններին մնում էր անցնել բյուզանդական սահմանը և ապաստան գտնել արաբական տիրապետության տակ։ Այդ տեղի ունեցավ 9-րդ դարի 30-ական թվականներից սկսած, նախ Սերգիոսի գլխավորությամբ, ապա շարժման ռազմական ղեկավար Կարբեասի։ Նրանց ընդունեց Մելիտինեի ամիրա Օմար-իբն-Աբդալլահ ալ-Ակտան և բնակության համար առանձնացրեց Արգաուս-Արգովան քաղաքը, որտեղից պավլիկյանները սկսեցին ասպատակել Բյուզանդիան։ Պավլիկյանների խոշորագույն աղանդապետ Սերգիոսը 835 թ. Արգաուսում զոհ է դառնում ահաբեկման, որի մեջ դժվար չէ տեսնել Բյուզանդիայի ձեռքը։ Նրա մահից հետո պավլիկյանները իրենց նոր աղանդապետ չընտրեցին, ըստ երևույթին, համոզված լինելով, որ նման իրադրության պայմաններում այդ հարցը կարող էր ներքին պայքարի առիթ տալ։

Բյուզանդիայից Արգաուս հոսող պավլիկյանների թիվը այնքան մեծ էր, որ քաղաքը նեղ է գալիս։ Կարբեասը ստիպված նոր քաղաք է հիմնադրում, Տիվրիկը, ուր և բնակեցնում է իր աղանդակիցներին։ Տիվրիկը դառնում է պավլիկյան աղանդավորների կենտրոնը, որտեղից նրանք արաբական զորքերի հետ դաշնակցած սկսում են մի պատերազմ Բյուզանդիայի դեմ, որը տևեց շուրջ չորս տասնամյակ։ Կայսրությունը բազմիցս մեծաքանակ զորքեր ուղարկեց արաբներին դաշնակցած պավլիկյանների դեմ, բայց միշտ ծանր կորուստներ կրելով ստիպված եղավ նահանջել։

Կարբեասի մահից (863 թ.) հետո պավլիկյանների զինված պայքարը կայսրության դեմ գլխավորեց նրա փեսա Խրիսոքիրը։ Նա այնքան հզորության հասցրեց պավլիկյան զինված ուժերը, որ նույնիսկ մի արշավանքի ժամանակ հասավ մինչև Նիկիա և Նիկոմիդիա, մինչև Եփեսոս քաղաքը, որտեղ սուրբ Հովհան Աստվածաբանի եկեղեցին ախոռի վերածեց։

Մակեդոնական հարստության հիմնադիր հայազգի Վասիլ Ա կայսրը վճռեց ամեն գնով լուծել պավլիկյանների հարցը։ Ինքը անձամբ 871 թ. գլխավորեց բյուզանդական զորքը ընդդեմ Տիվրիկի, բայց ծանր պարտություն կրելով, հազիվ կարողացավ փրկվել գերի ընկնելուց։ Հաջորդ 872 թ. Խրիսոքիրը ասպատակելով բյուզանդական շրջանները հասավ մինչև Անկյուրա և մեծ ավարով վերադառնում էր Տիվրիկ, երբ ճանապարհին ընկավ թշնամու դարանը և պարտության մատնվելով սպանվեց մարտում։ Խրիսոքիրի գլուխը կտրում ուղարկում են Վասիլ կայսեր, որը երեք նետ է գամում նրա վրա։ Նույն տարին գրավվում է Տիվրիկը և բազմաթիվ քաղաք-ամրոցներ։ Պավլիկյանների ապստամբության ճնշումից հետո աղանդավորների հոծ զանգվածներ միանում են թոնդրակյան աղանդավորներին, որոնց շարժումը սկիզբ էր առել 9-րդ դարի կեսերին։—332։

82. Պավլիկյան դուալիզմը չի կարելի համարել զրադաշտականության հետ քրիստոնեությունը միացնելու փորձ։ Պավլիկյան դուալիզմը ուներ խոր սոցիալական և ոչ աստվածաբանական բովանդակություն, այն ուղղված էր աշխարհում գոյություն ունեցող անհավասարության, անօրինականության, չքավորների կեղեքման ու շահագործման (չարի) դեմ։ Սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու պավլիկյանների գաղափարախոսության մասին և ավելորդ չէ այստեղ համառոտ գծերով կանգ առնել այս հարցի վրա ևս։

Պավլիկյանների առաջին և գլխավոր թեզն այն էր, որ գոյություն ունի երկու աստված, բարի աստված և չար աստված։ Չար աստծուն, որն իշխում է տեսանելի աշխարհում և միաժամանակ մարդկանց արարիչն է, պավլիկյանները անվանում էին սատանա։ Նրանք ասում էին, որ «տաճարները, տները չար աստուծո ձեռքի գործն է»։ Սրանից պարզ է դառնում պավլիկյան աղանդի միանգամայն աշխարհիկ բնույթը։ Պայքար հողի համար, այն հողի, որ կուտակ-

վել է շահագործող դասակարգերի ձեռքում, այն ժամանակ, երբ աշխատավոր գյուղացիությունը դրա սուր կարիքն էր զգում, ահա այդ էր պավլիկյան շարժման հիմնական շարժիչ ուժը։

Սոցիալական անհավասարությունն ու ճնշումը, աշխատավոր խավերի կեղեքումն ու աղքատացումը, վերջապես, աշխարհում տիրող անօրինականությունն ու անարդարությունը չէր կարող պավլիկյանների մոտ այն համոզմունքը չառաջացներ, որ այդ բոլորը աստուծո, բարի աստուծո գործը լինել չէր կարող։ Այդ էր պատճառը, որ նրանք պայքար էին մղում այդ անհավասարության դեմ, համոզված լինելով, որ պայքար են մղում չար աստուծո արարչագործության դեմ, նրա ստեղծած կարգ ու կանոնի դեմ, որ իրենց պայքարը կմոտեցնի այն օրը, երբ աշխարհում կտիրի բարի աստվածը, երկնայինը։ Պավլիկյանները իրենց էին համարում իսկական քրիստոնյաներ։ Քրիստոսին նրանք համարում էին երկնային աստուծո որդի և ոչ երկրային աստուծո, արարիչ աստուծո։ Նա երկնային աստուծո մի հրեշտակն էր, որ օգնեց բարի աստուծուն ընդունելու մարդկային սերմնը, հետևաբար նրանք մերժում էին Մարիամին որպես աստվածածին։ ««Աստվածաշունչ» գրքերից պավլիկյանները ընդունում էին միայն նոր կտակարանը, բացառությամբ Պետրոս առաքյալի երկու տիեզերական թղթերի։ Նրանք ամբողջությամբ մերժում էին հին կտակարանը, մարգարեներին անվանում էին ավազակներ և մոլորեցնողներ։ Բացի նոր կտակարանից, պավլիկյանները շատ էին հարգում իրենց խոշորագույն աղանդապետ Սերգիոսի նամակները։ Նրանք մերժում էին եկեղեցին և հոգևորականների դասը, նույնիսկ նրանց անունից էին խորշում։ Իրենց հավաքատեղիները նրանք աղոթարան էին անվանում, փոխաբերաբար նաև ուղղափառ եկեղեցի։ Պավլիկյանները չէին ընդունում սրբերին, հետևաբար և սրբապատկերները, պատկերապաշտներին մեղադրելով կռապաշտության մեջ։ Պավլիկյանները մերժում էին մկրտության և հաղորդության հոգևոր խորհուրդները։—333։

83. Բարսեղ Սարգսյանի ենթադրությունը (որ ընդունված է և Լեոյի կողմից), թե պավլիկյանները անհրաժեշտ էին գտնում երկրպագել և չար սկզբունքը, «որպեսզի նա խղճա մարդկանց և չարություն չանի», չի հաստատվում աղբյուրների տվյալներով և Բ. Սարգսյանի երևակայության արգասիքն է (տե՛ս նաև ծանոթ. 81)։—333։

84. Պավլիկյանները այլաբանորեն խաչ էին համարում Քրիստոսին, իսկ խաչափայտը մերժում էին որպես մահապատժի գործիք։—333։

85. Պավլիկյանները չէին ընդունում եկեղեցու նվիրապետությունը, բայց իրենց մոտ այնուամենայնիվ կար որոշակի հիերարխիա։ Պավլիկյան համայնքը և ընդհանրապես ամբողջ շարժումը գլխավորում էր աղանդապետը, այսինքն՝ գաղափարական ղեկավարը։ Աղանդապետի պաշտոնը ընտրովի էր և նրա ընտրության գործում մասնակից էին դառնում ոչ բոլոր աղանդավորները, այլ վերջիններիս ղեկավար կորիզը, որոնք կոչվում էին սինեկդեմոսներ-ուղեկիցներ։ Սինեկդեմոսներին անմիջականորեն ենթարկվում էին, ինչպես ասում են աղանդավորների թշնամի հեղինակները, «ավելի ցածր աստիճանի պիղծեր», որոնք կոչվում էին նոտարներ և նշանակվում էին սինեկդեմոսների կողմից։ Նոտարների, ինչպես և սինեկդեմոսների պարտականությունն էր պավլիկյան գաղափարների ճշգրիտ իրականացումն ու տարածումը։ Բացի սինեկդեմոսներից և նոտարներից աղանդապետն ուներ նաև աշակերտների մի խումբ, որոնք աղբյուրներում կոչվում են «աստատներ», որոնք ի տարբերություն առաջինների, որ զբաղվում էին գաղափարական հարցերով, պավլիկյանների տարբեր համայնքներում թշնամիների դեմ զինված պայքարի կազմակերպողներն էին։ Բացի աղանդապետից, աղանդի գաղափարական ղեկավարից, պավլիկյաններն ունեին նաև իրենց զինված ուժերի ղեկավարին։ Նա շատ մեծ ուժ ուներ և կարող էր կարևոր դեր խաղալ պավլիկյան համայնքի ներսում ծագած բազում հարցերի լուծման գործում։ Մեզ հայտնի են երկու ռազմական ղեկավարների անունները, Կարբեասի և նրա փեսա Խրիսոքիրի։ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյան համայնքի կազմակերպության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1958։ Պավլիկյան շարժման մասին վերջերս լույս տեսած աշխատություններից նշում ենք հետևյալները.
(Е. Э. Липшиц, Очерки истории византийского общества и культуры. VIII—первая половина IX века, Москва-Ленинград, 1961, К. Н. Юзбашян, К истории павликианского движения в Византии в IX веке. Вопросы истории религии и атеизма, т. IV, 1956, M. Loos, Deux contributions à l'histoire des Pauliciens, Byzantinoslavica, № XVII, fasc. 1, 1956, № XVIII, fasc. 2, 1957; Idem, Le mouvement Paulicien à Byzance, Byzantinoslavica, № XXIV, fasc. 2, 1963, № XXV, fasc. 1, 1964; Idem, Où en est la question du mouvement Paulicien? Българска Академия на науките, Известия на Института за история, том 14—15, 1964; 'Ιωαν. 'Αναστασίου, Οἱ Παυλικιανοί. 'Η ἱστορία καὶ ἡ διδα-

σκαλία των ἀπὸ τῆς ἐμφανίσεως μέχρι τῶν νεωτέρων χρόνων, 'Αθῆναι, 1959; Р. М. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961)։—333։

86. Պավլիկյանների և հայ երևութականների դաշինքի մասին աղբյուրներում որևէ փաստ չկա և այդպիսի հարցադրումը ճիշտ չէ։ Պավլիկյան շարժումը իր բնույթով միանգամայն տարբեր էր երևութականների շարժումից։ Երևութականների շարժումը եկեղեցու ծոցում և շահագործող դասակարգի մեջ ծավալված մի շարժում էր, դա դասակարգային բնույթ չուներ։—335։

87. Ճիշտ չէ այն միտքը, որ պավլիկյան համայնքներում իրականացված էր նախնական կոմունիզմի սկզբունքը, որի գլխավոր հատկանիշներից մեկը, ըստ Լեոյի, կանանց համայնացումըն էր։ Այս միտքը, որ Լեոն վերցրել է Բ. Սարգսյանից, չի հաստատվում աղբյուրների տվյալներով, ինչպես և այն, թե պավլիկյանները անխտիր խառնակվում էին իրենց մայրերի և քույրերի հետ անգամ։ Դա պարզապես մի սովորական զրպարտություն է, որ իշխող դասակարգերին պատկանող միջնադարյան հեղինակները ներկայացնում են բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս շահագործողների դեմ։—336։

88. Սեբեոսի մասին տե՛ս վերը, ծանոթ. 14։—48։

89. «Սեբեոսի պատմության» «կենտրոնական դեմք, հերոս» համարել Հերակլիոսին ճիշտ չէ։—339։

90. Մեզ է հասել Անանիա Շիրակացու ինքնակենսագրության երկու տարբերակ՝ համառոտ և ընդարձակ։ Ք. Պատկանյանի, ինչպես և Ղ. Ալիշանի հրատարակածը համարվում է համառոտը։ Հ. Տաշյանը հրատարակել է ընդարձակ տարբերակը, որը վերահրատարակվել է պրոֆ. Աշ. Աբրահամյանի կողմից (տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 206—209, նրա ուսումնասիրությունը նույն տեղում, էջ 31—42)։ Վերջերս Անանիա Շիրակացու ինքնակենսագրության ընդարձակ տարբերակի ֆրանսերեն թարգմանությունը իրականացրեց բանասեր Հ. Բերբերյանը (տե՛ս Autobiographie d'Anania Širakac'i, Revue des Etudes Arméniennes, t. I, 1964, p. 191—194)։ *Ինքնակենսագրության պատմական փաստերը լուրջ ուսումնասիրության են ենթարկվել Պ. Լըմերլի կողմից (տե՛ս* P. Lemerle, Note sur les données historiques de l'autobiographie d'Anania de Shirak, Revue des Etudes Arméniennes, t. I, 1964, p. 195—202)։—341։

91. Պրոֆ. Աշոտ Աբրահամյանը ցույց է տվել, որ Անանիա Շիրակացին ծնված պիտի լինի 6-րդ դարի վերջերում և ամենաուշը՝ 7-րդ դարի սկզբներում (տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 38)։ Նույն եզրակացության է հանգել նաև Պ. Լըմերլը։ Նույն տեղում, էջ 202։—341։

92. Անանիա Շիրակացու աշխատությունների ժողովածուի հրատարակությունը իրագործել է պրոֆ. Աշ. Աբրահամյանը։ Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944։—342։

93. «Յաղագս ամպոց և նշանաց» աշխատությունը սխալմամբ է վերագրվել Անանիա Շիրակացուն։ Այն հայերեն թարգմանությունն է հույն պոետ Արատոս Սոլացու մի աշխատության։ Այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան, Արատոս Սոլացու Διοσημεῖα *կամ* Προγνωστικά *աշխատության հին հայերեն թարգմանությունը, Բանբեր Մատենադարանի, № 7, 1964։*

94. Պատկանյանի ենթադրությունը, որ «Աշխարհացույցը» պատկանում է Անանիա Շիրակացու գրչին, ընդունվել է նաև Աշ. Աբրահամյանի կողմից (տե՛ս նրա «Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցի» հեղինակի հարցի շուրջը», Երևան, 1940, էջ 6 և այլուր, նույնի Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 152, և այն տեղ գտավ Շիրակացու ամբողջական երկերի ժողովածուի մեջ (էջ 336—354)։ Ակադ. Հ. Մանանդյանը համոզված էր, որ «Աշխարհացույցը» պատկանում էր Մովսես Խորենացուն, որին սակայն նա համարում էր 9-րդ դարի հեղինակ (տե՛ս նրա Когда и кем была составлена „Армянская география", приписываемая Моисею Хоренскому, Византийский Временник, том 1, 1947)։ *Նորագույն ուսումնասիրողներից ակադ. Ս. Երեմյանը (տե՛ս նրա «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» (փորձ 7-րդ դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 12) մերժում է այդ գործը Անանիա Շիրակացու գրչ-*

չին պատկանելու մասին կարծիքը։ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքի և հարևան երկրների քարտեզը պարունակող ընդարձակ բնագրի գլուխների հրատարակությունը աշխարհաբար թարգմանությամբ տե՛ս Ս. Երեմյանի նշված աշխատության մեջ, էջ 100—115։—344։

95. Անանուն «Ժամանակագրությունը», որ Գր. Խալաթյանցը (տե՛ս Հանդես ամսօրյա, 1904, էջ 46—48) և Բ. Սարգսյանը («Անանուն ժամանակագրություն», խմբագիր յօրինեալ ԷԷ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 1904), ապա նաև Աշ. Աբրահամյանը (Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 142 և հտ.) վերագրել են Անանիա Շիրակացու գրչին, իրականում չի պատկանում նրան։ Մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այս գործը չէր կարող պատկանած լինել Շիրակացուն։ «Ժամանակագրությունը» մեծ մասամբ հունարեն բնագրից կատարված թարգմանություններ են, իրենց տվյալներով միանգամայն հակասող անկասկած Շիրակացուն պատկանող երկերի ոգուն ու սկզբունքներին։ «Ժամանակագրության» ամենահավանական բանաքաղը Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է, Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական Պատմության» թարգմանիչը։ Այդ մասին մանրամասն տե՛ս Հր. Բարթիկյան, «Անանիա Շիրակացուն վերագրվող «Ժամանակագրության» և նրա բանաքաղի հարցի շուրջը» (Բանբեր Մատենադարանի, № 8, 1967)։—345։

96. Narratio de rebus Armeniae-ում ցույց է տրված, որ Սյունյաց եպիսկոպոս Մաթուսաղան հարել էր Եզր կաթողիկոսին, երբ վերջինս անցավ Հերակլ կայսեր կողմը (տե՛ս Բանբեր Մատենադարանի, № 6, 1962, էջ 468)։—345։

97. Հակառակ այն բանի, որ անգամ վերջերս եղել են փորձեր Մովսես Խորենացուն 5-րդ դարից շարժել հասցնել մինչև 9-րդ դարը (տե՛ս օրինակ Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934), նույնի Когда и кем была составлена "Армянская география", приписываемая Моисею Хоренскому, Византийский Временник, т. I (XXVI) 1947), այնուամենայնիվ այդ բոլոր փորձերը վերջացել են անհաջողությամբ։ Այժմ վիճելի չի համարվում Մովսես Խորենացու 5-րդ դարի պատմիչ լինելը (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ XI և հտ., նաև Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 8)։ Հայագիտության զարգացումը, հատկապես հնագիտության նվաճումները օրեցօր հաստատում են Մովսես Խորենացու տվյալների արժանահավատությունը։—346։

98. Մովսես Խորենացու ժամանակագրության հարցերին է նվիրված Գ. Սարգսյանի նորագույն ուսումնասիրությունը. «Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը» Երևան, 1965։ Հեղինակը հանգել է այն եզրակացության, որ Խորենացու ժամանակագրությունը ներկայանում է «ներքուստ անթերի, ներքին հակասություններից բացարձակապես զուրկ...։ Բազմատեսակ, տարարնույթ ու հաճախ իրարամերժ ժամանակագրական նյութի հիման վրա այդչափ ներքուստ սլացիկ ու կատարյալ...» (էջ 7—8)։—348։

99. Հայ պատմագիրների երկերի աշխարհաբար թարգմանության մատենաշարի առաջին գիրքը դա Մովսես Խորենացու երկասիրությունն էր. «Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ դոկտոր Ստ. Մալխասյանի, Երևան, 1940, վերահրատարակվել է 1961 թ.։—351։

100. 1955—1956 և 1959 թթ. Էջմիածնի Մայր տաճարում տեղի ունեցան հնագիտական պեղումներ, որոնք հարստացրին մեր գիտելիքները շենքի ճարտարապետության, ժամանակի ընթացքում նրա կրած փոփոխությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Պարզվեց, որ տաճարի ժամանակակից խաչաձև պլանը հանդես եկավ ոչ թե 7-րդ դարում, ինչպես կարծվում էր մինչև վերջերս, այլ 5-րդ դարում և դա ապացույցն է այն բանի, որ արդեն 5-րդ դարում ստեղծվել էր խաչաձև կենտրոնագմբեթ շինություն։ Պեղումները հնարավորություն տվեցին պնդելու, որ դրանից առաջ Էջմիածնի տաճարը ուներ թաղակապ բազիլիկայի ձև։ Պեղումների ժամանակ գտնվեցին խճանկարի և որմնանկարների մնացորդներ, որոնք թվագրվում են 5-րդ դարով, ինչպես և ուրարտական կոթող, որով հաստատվեց, որ Էջմիածնում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում եղել է բնակավայր (տե՛ս А. А. Саинян, Новые данные об архитектурном облике Эчмиадзинского собора. XXV Международный конгресс Востоковедов, Доклады делегации СССР, Издательство Восточной Литературы, Москва, 1960)։—352։

101. Զվարթնոցի տաճարի վերաբերյալ նորագույն ուսումնասիրությունները պատկանում են Ս. Խ. Մնացականյանին. տե՛ս նրա «Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը», Տեղեկագիր, № 2, 1958, Նույնի «Զվարթնոցի վերակազմության նախագծի հարցի շուրջը», Տեղեկագիր, 1959, № 4։ Տե՛ս նաև Ակնարկներ հայ արվեստի պատմության, գիրք 2, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության (Երևան, 1964, էջ 152—163)։—352։

102. Մաշտոցյան Մատենադարանում պահվում են մագաղաթյա առանձին թերթեր, որոնք գրված են երկաթագրով և թվագրվում են 5—6-րդ դարերով (տե՛ս Գ. Աբգարյան, Մատենադարան, Երևան, 1962, էջ 14—15)։—360։

103. Հայաստանի և հարևան երկրների վարչական կազմի մասին շփոթ տեղեկությունները (Լևոյի և այլոց մոտ) այն բանի հետևանք են, որ արաբական խալիֆայության մեջ գոյություն ուներ բարդ և փոփոխական համակարգ, որը թյուրիմացության մեջ է գցել շատ ուսումնասիրողների։ Հարցի ճիշտ պարզաբանումը կախված է ամբողջ արաբական խալիֆայության վարչական բաժանումների, ինչպես նաև բուն արաբ պատմիչների տեղեկությունների ուսումնասիրությունից։

Բանն այն է, որ Հայաստանը արաբական խալիֆայության մեջ առանձին նահանգ չի եղել, այլ Աղվանքի (Առան) և Արևելյան Վրաստանի (Ջուրզան) հետ կազմել է մեկ վարչական միավոր, որը կրել է Հայաստան անունը՝ Արմինիա։ Արմինիայի ոստիկանի նստավայրն էր Դվինը, սակայն ութերորդ դարի վերջից Դվինի կողքին ոստիկանն ունեցավ նաև երկրորդ նստավայր՝ Պարտավը։ Ղևոնդ պատմիչը վկայում է, որ Սուլայման ոստիկանը (789 թվին) նստեց Պարտավում և ահա սա էլ համարվում է Դվինի կողքին Պարտավի երկրորդ մայրաքաղաք դառնալու սկիզբը։

Արմինիան թեև վարչական (մանավանդ հարկային) տեսակետից միաձույլ էր, այնուամենայնիվ, նրա բաղկացուցիչ երեք երկրները ունեին տեղական կառավարիչներ, որոնք իշխան (օրինակ, իշխան Հայոց) կամ պատրիկ (արաբերեն բաթրիք) էին կոչվում։

Ռազմական և այլ նկատառումներով արաբ խալիֆները Արմինիան միացնում էին հարևան նահանգների հետ։ Օմայանների օրոք Արմինիան, Ատրպատականը և Վերին Միջագետքը (Ջազիրա) կազմում էին մեկ փոխարքայություն, որը վարչական (մանավանդ հարկային) տեսակետից ամբողջություն չէր կազմում։ Այս երեք նահանգների (պայմանականորեն կոչում ենք՝ Արհյուսիսային փոխարքայություն) փոխարքան ուներ սոսկ ռազմական իրավասություններ։ Աբբասյանների ժամանակաշրջանում (750-ից հետո) այս փոխարքայության կազմը որոշ փոփոխության ենթարկվեց և մեծ մասամբ Արմինիան ու Ատրպատականն էին իրար հետ միացվում։

Հարկավոր է հատկապես ընդգծել, որ շատ հաճախ նույն անձնավորությունը միաժամանակ լինում էր փոխարքա և տեղական ոստիկան, որի հետևանքով Արմինիայի կամ մյուս նահանգների ցուցակներում շփոթությունը մշտական է։

(Հայաստանի արաբական ժամանակաշրջանի մասին տե՛ս J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919)։—361։

104. Արաբական ժամանակաշրջանում Արմինիայի (Հայաստան, Վիրք և Աղվանք) կառավարիչը հատուկ անուն չի ունեցել, իսկ պատմագրության մեջ իշխող այն կարծիքը, թե նրանք 7—9 դարերում ոստիկան են կոչվել, սոսկ թյուրիմացության արդյունք է։

Հարցի ճշտման համար անհրաժեշտ է դիմել հենց այդ դարերի հայ պատմիչներին, որոնցից ոչ մեկը Արմինիայի արաբ կառավարչին ոստիկան չի կոչում, այլ յուրաքանչյուրն իր նախասիրած բառն է օգտագործում։ Ղևոնդը (8-րդ դար) նրանց կոչում է պարզապես հրամանատար (հրամանատար աշխարհիս Հայոց) կամ զորավար, իսկ նրանց պաշտոնը՝ հրամանատարություն։ Թովմա Արծրունին արաբ կառավարիչներին կոչում է վերակացու, մեծ հազարապետ կամ զորավար, իսկ նրանց պաշտոնը՝ վերակացություն կամ զորապետություն։ Աղվանից պատմության մեջ նույնիսկ իշխան բառն է գործածված։

Բանն այն է, որ հենց իրենք՝ արաբները խալիֆայության նահանգների կառավարիչների համար հաստատուն և որոշ անվանում չունեին։ Օգտագործվում էր «ամիր»-ը (իշխան, հրամանատար), որը նույնիսկ հայ պատմիչներին ծանոթ բառ էր։ Ստեփանոս Ասողիկը Եգիդ իքն Բուայդին կոչում է «Իգիդն Հայոց ամիրայ», էջ 143։ Շատ տարածված էր նաև «ամիլ» (գործակալ) բառը, որը միաժամանակ գործածվում էր նաև ոստիկանին ենթակա բարձրաստիճան պաշտոնյաների (գլխավոր հարկահան, փոստի վերակացու) համար։ Վերջապես կառավարիչը կոչվում էր նաև «Ուալի» (վերակացու)։

Անունների այս բազմազանությունը հետևանք էր խալիֆայության նահանգների, որպես վարչական միավորների փոփոխական վիճակի, քանզի տարբեր նահանգներ, ըստ օրվա խալիֆայի հայեցողությանը, կարող էին միացվել ու անջատվել։ Ուստի արաբական ժամանակաշրջանում Արմինիայի արաբ կառավարիչը հաստատուն անուն չի ունեցել թե՛ արաբերենում և թե՛ հայերենում։

Հայ մատենագրության մեջ առաջին անգամ ոստիկան բառը սույն իմաստով օգտագործված ենք գտնում Հովհաննես Դրասխանակերտցու մոտ (10-րդ դար), որն արաբական ժամանակաշրջանի պատմությունը շարադրելիս Արմինիայի արաբ կառավարիչներին համառորեն ոստիկան է կոչում։

Ոստիկան բառը իրանական փոխառություն է հայերենում, որը նշանակել է արքունի հավատարիմ որևէ բարձրաստիճան պաշտոնյա, լինի դա վերակացու, թե կառավարիչ։ Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ ևս ոստիկանն օգտագործված է վերակացու իմաստով։

Այս բառը արաբ կառավարչի նեղ իմաստն ստացավ սոսկ Դրասխանակերտցու, ինչպես նաև նրան հաջորդող հայ պատմիչների մոտ։ Այս նոր իմաստը վերջնականապես ամրացավ պատմագիտության մեջ Միքայել Չամչյանի կողմից նրա նշանավոր «Հայոց Պատմության» մեջ, որից հետո նույնիսկ եվրոպացի հայագետներն սկսեցին այն օգտագործել և այժմ մեր պատմագրության ամենահարազատ բառերից մեկն է (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Դիտողություններ ոստիկան բառի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1962)։—361։

105. Նախճավանի և Խրամի եկեղեցիներում զոհված հայ նախարարների մասին արժեքավոր տեղեկություններ է պահպանել նաև բյուզանդական ժամանակագիր Թեոփանես Խոստովանողը։ Նա գրում է. «Հայաստանի իշխանները ապստամբվեցին սարակինոսների դեմ և կոտորեցին Հայաստանում գտնվող սարակինոսներին։ Նրանք իսկույն պատգամավորություն են ուղարկում Ապսիմարոսին (նկատի ունի բյուզանդական կայսր Տիբերիոս 3-րդին) և հռոմայեցիներին բերում են իրենց երկիրը։ Մուհամեդը արշավում է նրանց դեմ և շատերին կոտորում։ Նա Հայաստանը ենթարկում է սարակինոսներին, իսկ հայոց մեծամեծներին մի տեղ հավաքելով ողջակեզ է անում»։ (Տե՛ս Theophanis Chronographia, t. I, Bonnae, 1839, p. 570։—375։

106. Ութերորդ դարի առաջին կեսում (Օմայան շրջան) Հայոց իշխանի գոյության և նշանակության մասին թյուր կարծիքներ կան մեր պատմագիտության մեջ։ Տիրում է այն տեսակետը, որ արաբական նվաճումից հետո առժամապես վերջ գտավ հայոց իշխանի գոյությանը և միայն 732 թվականին նորից վերականգնվեց Աշոտ Բագրատունու օրոք։

693 թվականին, երբ արաբները վերսկսեցին պայքարը Բյուզանդիայի դեմ հանուն Հայաստանի նվաճման, Հայոց իշխանն էր Սմբատ Բագրատունին։ Սա հիմնադիրը դարձավ Բագրատունյաց այն իշխանական ճյուղին, որը ժառանգաբար իշխեց արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։ Բյուզանդիայի պատմիչ Թեոփանեսը նրան կոչում է՝ Սմբատ պատրիկ Հայոց։

Տեսնելով հույների անզորությունը և նենգությունը Սմբատը նախընտրեց օմայանների կողմն անցնել։ Ըստ որոշ պատմական աղբյուրների, նա Սահակ կաթողիկոսի հետ գերի տարվեց Դամասկոս, համենայն դեպս 703 թվի դեպքերի և Վարդանակերտի կռվի ժամանակ նա Հայաստանում էր և արաբներին հաղթելուց հետո անցավ Տայք, իսկ Դրաշպետի անհաջող ընդհարումից հետո հաստատվեց Եգերաց աշխարհի Փոյթ (Փոթի) քաղաքում, որն ստացել էր կայսրից, որպես պարգևական տիրույթ։

Նախճավանի և Խրամի արյունալի դեպքերից հետո, երբ Աբդ ալ-Ազիզ ոստիկանը կոչ արեց վտարանդի հայ նախարարներին վերադառնալ հայրենի գավառները, վերջիններս համաձայնեցին, բայց քաղաքից հեռանալիս իրենց հետ վերցրին հունական եկեղեցիների արժեքավոր սպասքները։ Այլ տվյալների հիման վրա հաստատ կարելի է եզրակացնել, որ վերադարձողների մեջ էր նաև Սմբատ Բագրատունին, սակայն Ղևոնդը, որպես Բագրատունի տան ջատագով, չի կամենում նրան հիշել վերոհիշյալ նախարարների շարքում, պարզապես նրա անունը անախորժ դեպքերի հետ չկապելու նպատակով։ Ղևոնդի այս լռությունը պատճառ է դարձել Սմբատ Բագրատունու իշխանության ժամանակաշրջանի մասին սխալ կարծիք գոյանալուն։

Սմբատ Բագրատունու իշխանությունը, ի հեճուկս Ղևոնդի լռության, շարունակվել է նաև հայ նախարարների վերադարձից հետո։ Ստեփանոս Ասողիկը (էջ 103) հստակ կերպով նշում է, որ Մանազկերտի ժողովը (726 թվին) տեղի ունեցավ Սմբատ Բագրատունու իշխանության

օրոք (Յաւուրս Սմբատայ իշխանութեանն)։ Երբ Հովհանն Օձնեցի կաթողիկոսը խալիֆայի մոտ էր, վերջինս «հրաման ետ ձեռագրով իւրով և առաքեաց առ Կուրապաղատն Հայոց Սըմբատ...» (Յայսմաւուրք, ապրիլ 17)։

Սմբատ Բագրատունու մահվան տարին է, ըստ Աղվանից պատմության, «թւին Հայոց հարիւր եօթանասուն և հինգ», այսինքն՝ 726 թվականը։

Արդ, 732 թվականին ոչ թե վերականգնվեց Հայոց իշխանի պաշտոնը, այլ պարզապես այդ տարում Աշոտ Բագրատունին հաջորդեց Սմբատ իշխանին, մի քանի տարվա ընդհատումից հետո։

Արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում (8-րդ դարի սկզբից մինչև 9-րդ դարի կեսերը) Հայաստանը միշտ ունեցել է իր հայ կառավարիչները՝ Հայոց իշխանները կամ պատրիկները, որոնց ցուցակը հետևյալն է.

Սմբատ Բագրատունի	693—726	Աշոտ Բագրատունի	775—781
Աշոտ Բագրատունի	732—748	Տաճատ Անձևացի	781—785
Մուշեղ Մամիկոնյան	748—753	Աշոտ Մսակեր	մոտավորապես 790—826
Սահակ Բագրատունի	753—770	Բագարատ Բագրատունի (իշխանաց իշխան)	826—851
(Սմբատ Բագրատունի մինչև 775)		(Սմբատ Բագրատունի	մինչև 855)

Աշոտ Բագրատունի 855—862-ից՝ իշխանաց իշխան, 884-ից՝ թագավոր Հայոց։

Փակագծերի մեջ ցույց են տրված այն սպարապետները, որոնք նախորդող Հայոց իշխանի մահվանից հետո կառավարել են երկիրը։

(Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Հայոց իշխանը արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 2)։—380։

107. «Որդիք յանցանաց» անվամբ հանդես եկող մարդիկ, որոնք հիշատակվում են Ղևոնդի կողմից և Լևոյի կողմից բնորոշվում որպես «հասարակության տականքներ» և «սրիկաներ», ոչ այլ ոք են, քան պավլիկյան աղանդավորները։ Ղևոնդը նրանց մասին գրում է հետևյալը։ Երբ Հայաստանում 748 թ. Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբություն բարձրացավ արաբների դեմ և հայոց ապստամբ զորքը գտնվում էր Պոնտոսում, վերջիններս սկսեցին հարել այնպիսի մարդիկ, որոնք բնորոշվում են որպես «որդիք յանցանաց»։ «Ու ամենայն որդիք յանցանաց,—գրում է Ղևոնդը,—երթեալք խառնէին ի գունդ ապստամբութեան, որք ոչ ճանաչէին զերկիւղն Աստուծոյ և ոչ զահ իշխանաց և ոչ ըզպատիւ ծերոց, այլ իբրև այլազգի և օտարացեալ ապատակ սփռեալ զերէին զեղբարս և զազգակիցս իւրեանց և բազում աւարառութիւնս առնէին, խոշտանգանաւ և գանիւք տանջանս ածեալ ի վերայ եղբարց իւրեանց»։ Ղևոնդի այս արժեքավոր տեղեկությունից կարելի է անել մի շարք կարևոր եզրակացություններ։ Նախ և առաջ կասկածի ենթակա չէ, որ «որդիք յանցանաց» հայեր են, նրանք չունեն Աստուծո վախը և չեն ենթարկվում ոչ հոգևոր, ոչ էլ աշխարհիկ իշխանություններին։ Հայ իրականության մեջ 8-րդ դարի կեսերին այդպիսիք կարող էին լինել միայն ու միայն պավլիկյանները։ Այդ հաստատում են նաև բյուզանդական աղբյուրների տվյալները։ Պետրոս Սիկիլիացին ցույց է տալիս, որ պավլիկյան աղանդապետ Գեգնեսիոսի մահից հետո, որ տեղի ունեցավ Մանանաղիում, նրա հաջորդները՝ Հովսեփն ու Զաքարիան Մանանաղիի պավլիկյանների գլուխն անցած փորձում են գաղտնի փախչել արաբական տիրապետությունից, անցնել սահմանը և ապաստանել Պոնտոսում։ Պետրոս Սիկիլիացին նշում է նաև, որ արաբներն իմանալով այդ մասին, հալածում են պավլիկյաններին և սարսափելի կոտորածի ենթարկում Զաքարիային և նրա հետևորդներին։ Հազիվ ազատվում է Հովսեփը և իր հետևորդներով անցնում բյուզանդական սահմանը և ապաստանում Պոնտոսի էպիսպարիս վայրում։ Հասկանալի է, որ Ղևոնդի «որդիք յանցանաց» և Հովսեփի գլխավորած պավլիկյանները միևնույն մարդիկն են, որոնք, ըստ Ղևոնդի, խառնվում են հայ ապստամբների զորքին, որ նույնպես Պոնտոսում էր գտնվում։ Հայ պատմիչը այնուհետև ցույց է տալիս, որ հայ նախարարները հալածում են այդ հանցանաց որդիներին։ Դա հաստատում է նաև Պետրոս Սիկիլիացին, ցույց տալով, որ Հովսեփին և պավլիկյաններին հալածում է մի տեղացի իշխան, որի անունն էր «Կրիկորակես», որը նույնանում է հայ նախարար Գրիգոր Մամիկոնյանի հետ (այդ մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյան շարժման մի քանի աղբյուրների գնահատման շուրջը, Տեղեկագիր, № 6, 1957)։—383։

108. Կոնստանդին 5-րդ կայսրը, գրավելով Կարին և Մելիտինե քաղաքները, նրանց բնակիչներին գաղթեցրեց Թրակիա, ավելի կոնկրետ՝ Ֆիլիպուպոլիս քաղաքը։ Միայն բյուզանդական սկզբնաղբյուրներն են ցույց տալիս, որ հայերից և ասորիներից բաղկացած այս բնակչությունը Թրակիայում տարածեց պավլիկյան աղանդը (տե՛ս Theophanis Chronographia, t, I. p. 662)։—385։

109. Հայաստանի արաբական ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման համար շատ կարևոր է նկատի ունենալ արաբա-բյուզանդական սահմանային գոտու դերը, մի պարագա, որը շատ հաճախ վրիպել է հայագետների ուշադրությունից։

Նվաճելով Բյուզանդիայի արևելյան նահանգները (Ասորիք, Միջագետք և այլն), արաբները թեև կանգ առան Տավրոսյան լեռնաշղթայի առջև, այսուամենայնիվ, երկու հզոր տերությունների միջև կայուն սահման չձգվեց։ Տավրոսից մինչև Կարնո քաղաքը տարածվում էր սահմանային ամրությունների գոտին (Իկլիմ ալ-սուղուր), որը արաբ մատենագիրների մոտ երկու հատվածի է բաժանվում՝ Ասորիքի (Շամ) և Վերին Միջագետքի (Ջազիրա) սահմանային գոտիներ։

Ասորիքի սահմանային գոտին ընդգրկում էր հիմնականում Կիլիկիան, որի գլխավոր քաղաքը Տարսոնն էր։ Պատմիչների մոտ հաճախ են հիշվում նաև Ադանա, Մոփսուեստիա (Մսիս), Անազարբա (Այն Զարբա) Հարունիյա և Մարաշ քաղաքները։ Վերին Միջագետքի ամրությունների գոտին ընդգրկում էր նախկին բյուզանդական Երրորդ Հայքը, ինչպես նաև Սամոսատի մերձակա Եփրատյան շրջանները։ Գլխավոր քաղաքն էր Մելիտինեն (Մալաթյա), իսկ ռազմական կարևոր նշանակություն ունեին Տեփրիկեն, Սոզոպետրան, Հիսն Մանսուրը, Բեհեսնան և Հադասը։

Վերին Միջագետքի սահմանային գոտու մեջ էին մտնում նաև Մեծ Հայքի որոշ արևմտյան գավառներ։ Բարձր Հայք նահանգից կային Մուզուր, Եկեղյաց, Դարանաղի և այլն, իսկ Չորրորդ Հայքից՝ Արածանիից հյուսիս (օրինակ, Դեգիք) և հարավ ընկած (Անձիտ և այլն) գավառներ։ Ռազմական անվերջ ընդհարումների կենտրոն էր Կամախ ամրոցը, որը բազում անգամներ ձեռքից ձեռք էր անցել։

Ընդհանրապես ամբողջ սահմանային գոտին երեք դար (7—10-րդ դարեր) կովախնձոր դարձավ արաբների և հույների միջև։ Յոթերորդ դարում արաբները մեծ առաջխաղացում ունեցան և միայն ժամանակավորապես կանգ առան դարի երկրորդ կեսում ներքին ապստամբության պատճառով։ Դարի վերջում և 8-րդ դարի սկզբին նրանք ավելի ուժեղ գրոհով միխրճվեցին Փոքր Ասիա, սպառնալով նույնիսկ Կ. Պոլսին։

Հարուն ալ-Ռաշիդի և Մամունի օրոք ամենամյա (մանավանդ ամառային) հարձակումները սովորական երևույթ դարձան, այնպես որ վերոհիշյալ շրջանները համատարած ավերածության ենթարկվեցին։ Ամբողջ Կիլիկիան, Փոքր Հայքը և Կապադովկիան գրեթե ամայացան, զրկվելով հիմնական բնակչությունից։ Այս երևույթը ճակատագրական նշանակություն ունեցավ Փոքր Ասիայի պատմության համար, մանավանդ սելջուկյան արշավանքներից հետո, երբ ներխուժող սելջուկ հրոսակները աստիճանաբար հաստատվեցին այս երկրում։—385։

110. Արմինիայի ոստիկան Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին մոր կողմից հայ էր։ Նրա մայրն էր Սիսականի իշխանի դուստրը, որին առևանգել էին արաբները Մուհամմադ իբն-Մըրվանի արշավանքների ժամանակ (693—701)։

Սուլայմ ցեղը (կամ սուլամիներ), որը պատկանում էր արաբական Կայս մեծ ցեղին, նվաճումների ժամանակաշրջանում գործոն մասնակցություն ունեցավ Մեծ Հայքի արևմտյան նահանգներում Բյուզանդիայի դեմ մղված մարտերում։ Այս ցեղը աչքի ընկավ նաև Դերբենդի կողմերում խազարների դեմ մղված կռիվների ժամանակ։ Աբբասյանները իրենց իշխանության հենց սկզբից առաջ քաշեցին սուլամիներին, որոնցից առաջինը Արմինիայի ոստիկան Եզիդ իբն Ուսայդն էր, որից հետո նույն պաշտոնին նշանակվեցին որդիները՝ Խալիդը (794) և Ահմադը (796—797)։ Վերջինիս որդին՝ Աբդալ-Ալան երկու անգամ իշխեց Արմինիայում (825—826, 829)։—386։

(Արաբական ցեղերի մասին տե՛ս ծանոթագրություն № 112)։—395։

111. Հայաստանի (նաև Աղվանքի ու Վրաստանի) հարկերի մասին տեղեկություններ կան հայ և մանավանդ արաբ պատմիչների ու աշխարհագետների մոտ, սակայն վերջիններս խոսում են հիմնականում Աբբասյան ժամանակաշրջանի մասին։

Յոթերորդ դարում, երբ Հայաստանը կիսանկախ տերություն էր, խալիֆայությանը ոչ թե կանոնավոր հարկ էր վճարում, այլ սոսկ տարեկան փոքրիկ գումար էր ուղարկվում Հայոց իշխանի կողմից որպես ընծա։ Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև 652 թվին կնքված դաշնագրով հայերին առաջարկվում էր վճարել «որչափ և դուք կամիցիք» (Սեբեոս, 140)։ Ըստ Ղևոնդի այդ գումարի չափն էր 500 ոսկեդրամ (Պատմութիւն Ղևոնդեայ, ՍՊԲ, 1887, էջ 14), որը Հայոց իշխան Աշոտ Բագրատունու օրոք Հայաստանը նույնիսկ մերժեց վճարել։

Արաբական տիրապետության տակ ընկնելուց հետո արդեն Հայաստանը Աղվանքի ու Վրաստանի հետ կանոնավոր հարկ էր վճարում Օմայան խալիֆաներին։ Ըստ Սամվել Անեցու, վճարվում էր գլխահարկ ամեն երդից 4 դիրհեմ (արծաթ դրամ) և բնահարկ՝ ցորեն, պաքսն, ձիթապտուղ և ձեռնոց։ Դավանափոխ լինելու դեպքում քրիստոնյան գլխահարկից ազատվում էր, սակայն հողահարկը, որը խարաջ էր կոչվում, բոլորից անխտիր գանձվում էր։

Հիշամ խալիֆայի օրոք (724—743) կատարված աշխարհագրից հետո, հարկերն ավելացան Արմինիայում։ Ոստիկան Հերթը (Հարիս), ըստ Ղևոնդի ու Ասողիկի, հարկերը ծանրացրեց։ Աղվանից պատմության մի վկայությունից պարզվում է, որ երդից գանձված գլխահարկը սկսել էին վերցնել ըստ անձի, իսկ հողահարկը ենթակա էր ավելացման ըստ հողամասի տարածության և որակի։

Սակայն Օմայան ժամանակաշրջանում հարկերը դեռ համեմատաբար տանելի էին, մանավանդ որ հիշատակում չկա արաբ հարկահանների ձեռքով տուրքեր հավաքելու մասին։ Նախորդ դարում Հայոց իշխանը և հայ նախարարներն էին նշանակում հարկահաններին (հարկապահանջս ոսկւոյ և արծաթոյ, Սեբեոս, 150) և այս սովորությունը, ինչպես երևում է, շարունակվեց ութերորդ դարի առաջին կեսում։

Դրությունն արմատապես փոխվեց Աբբասյանների օրոք, երբ հայ ժողովրդի կեղեքումը աննկարագրելի չափերի հասավ։ Ղևոնդի մի ակնարկից (էջ 135) երևում է, որ գլխահարկը ըստ շնչի գանձելու սկզբունքը հետևողականորեն և խիստ կերպով կիրառվել է հենց առաջին Աբբասյանների օրոք և չվճարող շինականների պարանոցին կապարե կնիք էին դրոշմում։

Ութերորդ դարի երկրորդ կեսում Արմինիայի տարեկան հարկը կազմում էր 13 միլիոն դիրհեմ, որի մոտավորապես կեսը բնականաբար Հայաստանն էր վճարում։ Ծանր էր նաև բնահարկը, որը բաղկացած էր հետևյալ տեսակներից. 20 գորգ, 580 լիտր (ռաթլ) զարդարուն գործվածքեղեն, 10 հազար լիտր աղած (սուրմահի) ձուկ, 10 հազար լիտր տառեխ ձուկ, 200 ջորի և 30 բազե։—388։

112. Արաբական ցեղերը Հայաստանի որոշ գավառներում հաստատվեցին հենց արաբական նվաճումից անմիջապես հետո։ Առաջին հայկական նահանգը, որն այս բախտին արժանացավ, Աղձնիքն էր։ Աղձնիքը վարչականորեն մաս էր կազմում Միջագետքին (Մեսոպոտամիա) և դրա նվաճումից հետո (639—640) արաբական Շայբան ցեղը հաստատվեց այս նահանգում։ Շայբանը պատկանում էր արաբական ցեղերի հյուսիսային խմբի Ռաբիա ենթախմբի մեջ մտնող Բաքր մեծ ցեղին, ուստի նրա տիրապետության տակ ընկած երկիրը կոչվեց Դիար Բաքր (Բաքրի երկիր կամ տուն)։

Դիար Բաքրի կենտրոնն էր Ամիդ քաղաքը (այժմ Դիարբեքիր), որն առևտրական սերտ հարաբերությունների մեջ էր բուն Հայաստանի հետ այնպես, որ քաղաքի չորս դարպասներից մեկը կոչվում էր Հայոց դուռ (Բաբ ալ-Արման)։ Աղձնյաց Նփրկերտ քաղաքը արաբները կոչում էին Մայյաֆարիկին, իսկ կարևոր գյուղաքաղաքներից էին Արզնը և Բաղեշը, ինչպես նաև Անգղը (արաբերեն Անհիլ), Հանին, Սղերդն ու Խիզանը։ Այդ ժամանակաշրջանում Աղձնյաց նահանգի բնակիչներն էին հայեր, ասորիներ և արաբներ։

Շայբանի ամիրայական տունը աչքի ընկավ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի և նրա հաջորդների օրոք, տալով Արմինիայի մի շարք ոստիկաններ։ Նրանցից առաջինը Եզիդ Իբն Մազյադը իր ոստիկանության շրջանում արաբ գաղթականներ բերեց Արմինիա, որոնք, ըստ երևույթին, Շիրվանում հաստատվեցին։ Եզիդի մահվանից (801) հետո հաջորդեցին որդիները՝ Ասադը և Մուհամմադը։ Վերջինս տիրելով Շամախի ամրոցին, հաստատվեց Շիրվանում և այն դարձրեց ժառանգական տիրույթ։ Երրորդ որդին՝ Խալիդը չորս անգամ Արմինիայի կառավարիչ նշանակվեց (813—845), իսկ նրան հաջորդեց որդին՝ Մուհամմադը (845—849)։

Իններորդ դարի առաջին կեսում Շայբանիներն արդեն երկու ճյուղ ունեին։ Առաջինը ժառանգաբար իշխեց Շիրվանում, որոնցից Հայսամը կրում էր Շիրվանշահ տիտղոսը, իսկ նրա հաջորդներն իշխեցին մինչև 1027 թվականը։ Շայբանիների մյուս ճյուղը մնաց Աղձնիքում. նշանավոր էր Իսա Իբն ալ-Շայխը, որին հաջորդեց որդին՝ Ահմադը։ Այս ճյուղը իշխեց մինչև դարի վերջը։

Սակայն մինչև ութերորդ դարի երկրորդ կեսը արաբ տարրը չկարողացավ անցնել Հայկական Տավրոսից այս կողմ և նույնիսկ Աղձնիքում սոսկ քաղաքներում (Նփրկերտ, Արզն և Բաղեշ) էին հաստատվել։

Արաբ ցեղերի անցումը Տավրոսից այս կողմ և ներխուժումը բուն Հայաստան սկսեց 774—775 թվերի ապստամբության ճնշումից հետո և ուներ ռազմական ու քաղաքական նպատակներ։ Բյուզանդիայի դեմ հաջող պայքարի համար անհրաժեշտ էր արաբա-բյուզանդական ամրությունների գոտուն զուգահեռ Հայաստանի արևմտյան գավառներում տեղավորել արաբ բնակչություն, որը կապահովեր վերոհիշյալ գոտու թիկունքը։ Շատ հատկանշական է, որ Հայաստանում հաստատվեց հենց Սուլայմ ցեղի մի հատվածը, որն արաբա-բյուզանդական սահմանային գոտում մղված մարտերում վճռական մասնակցություն ուներ և տեղափոխվեց Հայաստանի այն գավառները, որոնք սահմանամերձ էին Բյուզանդիային՝ Բաղեշից մինչև Կարնո քաղաքը։

Արաբ ցեղերի գաղթին նպաստեցին Սուլայմ ցեղի արաբ ոստիկանները, որոնք Հարուն ալ-

Ռաշիդի օրոք (786—809) Հայկական Տավրոսից այս կողմ բերեցին իրենց ցեղին պատկանող արաբներին։ Աղձնիքը դարձավ այն կամուրջը, որի վրայով արաբական հյուսիսային խմբին պատկանող ցեղերը մուտք գործեցին բուն Հայաստան։ Աղձնիքում, ինչպես տեսանք, հաստատվել էին Բաքր ցեղին (Ռաբիա ենթախմբից) պատկանող շայբանինները։ Հավանաբար նրանց ցեղակից էին նաև Արզնում հաստատված Զուրարիկները։ Նույն Ռաբիա ենթախմբից էին նաև Տաղլիբ ցեղից սերող Համդանյանները (Մոսուլի կողմերում), որոնք հանդես եկան հետագայում՝ 10-րդ դարում տարածվելով դեպի Կորճայք։

Հյուսիսային ցեղերի երկրորդ ենթախմբից՝ Մուդարից էին սերում Սուլայմ ցեղին պատկանող արաբները՝ Կայսիկներ և Ութմանիկներ, որոնք ներթափանցեցին Տուրուբերան նահանգը։ Կայսիկները Ապահունիք գավառը խլեցին Ապահունի իշխաններից, իսկ Ութմանիկները Գնունիների ձեռքից գրավեցին Աղիովիտը (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 85, 122)։

Պետք է նշել, որ արաբների գաղթին զուգընթաց տեղի էր ունենում հայ իշխանական տների արտագաղթ դեպի Բյուզանդիա, որը խիստ աղետալի հետևանքներ ունեցավ Հայաստանի համար։—395։

113. «Արմենիակոն» բանակաթեմի սահմանները Լեոն գծում է, հետևելով, իհարկե, Գելցերին (տե՛ս վերջինիս աշխատությունը, Սկզբնավորութիւնք բյուզանդյան բանակաթեմերու դրության, թարգմ. Գ. Գարանֆիլյանի, Վիեննա, 1903, էջ 11—14)։ Արմենիակոն բանակաթեմը այս սահմաններն ուներ իր կազմավորման ժամանակ, շուրջ 622 թ.։ Այդպիսին էր նա ամբողջ 7-րդ և 8-րդ դարերում։ 9-րդ դարում նա արդեն բաժանված էր մի քանի բանակաթեմերի։ 863 թ. նշված տերիտորիայի վրա արդեն հանդես են գալիս բացի Արմենիակոնից նաև Խարսիանոնը, Խաղտիքը և Կողոնիան։ Շուրջ 910 թ. կազմավորվեց Սեբաստիայի բանակաթեմը, նույնպես նախապես Արմենիակոնին պատկանող հողերից (Առաջին Հայքի շրջանը)։ Երկրորդ Հայքի շրջաններից կազմավորվեց Լիկանդոսի բանակաթեմը։ Արմենիակոն բանակաթեմի մասին մանրամասն խոսում է բյուզանդական կայսր Կոստանդին Ծիրանածինը իր «Բանակաթեմերի մասին» աշխատության մեջ, ուր գրված է. «Երկրորդ բանակաթեմ, որ կոչվում է Արմենիակոն։ Արմենիակոն կոչված բանակաթեմի անունը սեփական չէ, այդ հին էլ չէ։ Նա իր անունը պարտական է սահմանակից և տեղում ապրող հայերին։ Ես ենթադրում եմ, որ այդ անունն ստացավ անցյալում, Հերակլիոս կայսեր ժամանակ։ Ստրաբոնը չի հիշատակում այդ անունը,՝ հակառակ որ ծագումով կապադովկացի էր, Ամասիա քաղաքից, ոչ ամբողջ աշխարհի ասպարեզաչափերը շարադրող Մենիպպոսը, ոչ էլ կարյանդեացի Սկյուլաքսը, դամասկացի Պավսանիասը, ոչ էլ որևէ այլ պատմիչ։ Այս անվանումը նոր է թվում, այն չի հիշատակում ոչ Պրոկոպիոսը, ոչ Ագաթիասը, ոչ էլ Իլլյուստրիոս Հեսիքիոսը, որոնք ժամանակագրություններ գրեցին Հուստինիանոս կայսեր ժամանակ։ Հները Կապադովկիան երեք մասի էին բաժանում՝ Կատաոնիա, որն սկիզբ է առնում Մելիտինեից, Տավրոսի՝ Տավրիկե կոչվածի և Միջերկրյայի, որտեղ է գտնվում Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիան։ Հները Կապադովկիան երկուսի են բաժանում՝ Մեծ և Փոքր Կապադովկիայի։ Մեծը, որ սկիզբ է առնում Կեսարիայից և Տավրոսից մինչև Պոնտական ծովը, արևմուտքից նրան սահման է Ալիս գետը, իսկ արևելքից՝ Մելիտինեն. սա Մեծ Կապադովկիան է։ Ասածիս վկան է Հռոմեական պատմությունը գրող Պոլիբիոսը և նա է, որ սահմանագծում է Կապադովկիան Տավրոսից և Լյուկաոնիայից մինչև Պոնտական ծովը, որովհետև հենց Նեոկեսարիան, Կողոնիան և ամբողջ Մելիտինեն Կապադովկիա է կոչվում և այդ անունը պարսկական է։ ...Կողոնիայի շրջանը բնակեցված է հայերով, Միջերկրյայքը, ուր գտնվում են Ամասիան և Դազիմոն կոչվածը՝ Լևկոսիրոս (սպիտակ ասորիներ) կոչվածների կողմից, սակայն բոլոր կապադովկացիներին, այդ թվում և մինչև Պոնտական ծովը բնակվողներին Հերոդոտոսն անվանում է Լևկոսիրոսներ, ի տարբերություն այն ասորիների, որոնք բնակվում են Տավրոսից այն կողմ և Կիլիկիայում, և կոչվում են Մելանոսիրոսներ (սև ասորիներ)։ Փոքր Կապադովկիան այժմ իրենից մի բանակաթեմ է ներկայացնում և սահմանակից է Լյուկաոնիային և հասնում է մինչև Կեսարիա, նա ձգվում է մինչև Բուկելլարիոն բանակաթեմի սկիզբը, իսկ արևելյան մասում վերջանում է Հաղենդոսում և Լուլոս կոչված բերդի և նույն այդ Պոդենդոսի մոտ։ Նրանից այն կողմ Կիլիկիայի շրջաններն են՝ սկսած Տարսոնից, Մոպսուեստիայից և Ադանայից։ Այս էլ ահա Փոքր Կապադովկիան է, որն այժմ կազմում է բանակաթեմ։ Անցյալում Հուստինիանոսի կամ մի այլ կայսեր կողմից Կապադովկիան երեք մասի բաժանվեց, միջերկրյա շրջանը կոչվեց Խարսիանոն,... ցածր մասը և դեպի ծովը նայողը կոչվեց Արմենիակոն, այն պատճառով, որ սահմանակից է հայերին, իսկ վերևի մասը և լյուկաոնացիներին ու Տավրոսին սահմանակից եղողը կոչվեց Փոքր Կապադովկիա, որն, ինչպես ասացինք, կազմեց մի բանակաթեմ։ ... Արմենիակոնն ունի յոթ քաղաք, Ամասիա, Իբորա, Զալիքոս, Անդրապա, Ամինսոս, Նեոկեսարիա, Սինոպե»։—401։

114. Փիլիպիկոսի հայերին Բյուզանդիայից արտաքսելու մասին հիշատակում է Թեոփանես խոստովանողը։ Նա գրում է. «Փիլիպիկոսը իր երկրից վռնդեց հայերին և ստիպեց հաստատվել Մելիտինեում և Չորրորդ Հայքում» (Theophanis Chronographia, t. I, p.) Բյուզանդագետ Լըբոն այս փաստի հիման վրա եզրակացրեց, որ Փիլիպիկոսը Փոքր Հայքի պաշտպանության համար հայերին Մեծ Հայքից հանեց և բնակեցրեց Մելիտինեում և Չորրորդ Հայքում (տե՛ս Ch. Lebeau Histoire du Bas Empire, t. XII, p. 382)։ Հասկանալի է, Լեոն հետևում է Լըբոյին։ Բայց Փիլիպիկոսը չէր կարող նրանց Մելիտինե և Չորրորդ Հայք բնակեցնել պարզ այն պատճառով, որ այդ շրջանները արդեն արաբների ձեռքում էին գտնվում։ Բայց ինչո՞ւ էր Փիլիպիկոսը հայերին արտաքսում Բյուզանդիայից։ Դրա պատասխանը տալիս է նույն Թեոփանեսը։ Խոսելով Կոստանդին 5-րդի կողմից Մելիտինեից Թրակիա գաղթեցված հայերի մասին, նա ցույց է տալիս, որ նրանք պավլիկյան աղանդավորներ էին։ Պարզ է, որ Փիլիպիկոսը հալածում էր ոչ թե պարզապես հայերին, այլ հայ աղանդավորներին, այսինքն՝ նա շարունակում էր նրանց նկատմամբ իր նախորդի՝ Հուստինիանոս 2-րդի քաղաքականությունը։ Ինչպես վկայում է Միքայել Ասորին (Michel le Syrien, Chronique, t. II, éd. J.-B. Chabot, Paris, 1901, p. 482) այդ հայերը դաշինք կնքեցին արաբների հետ ընդդեմ Բյուզանդիայի։ Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին հենց նույն ժամանակները գրում է, որ պավլիկյանները դաշինք կնքեցին արաբների հետ ընդդեմ կայսրության (տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1933, էջ 46)։ Բազմալեզու աղբյուրների տվյալների նման համընկնումը մի անգամ ևս հաստատում է այն ենթադրության ճշմարտացիությունը, որ Փիլիպիկոսի հալածած հայերը պավլիկյան աղանդավորներ էին (Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Р. М. Бартикян, К вопросу о павликианском движении в первой половине VIII века, Византийский Временник, т. VIII, 1956, стр. 127 и сл.)։—402։

115. Սովետական պատմագրությունը խոր ուսումնասիրության է ենթարկել պատկերամարտության պրոբլեմը և համոզիչ կերպով ապացուցել, որ պատկերամարտությունը պարզապես եկեղեցու շրջանակներում հանդես եկած մի շարժում չէր, նրա նպատակը սոսկ սրբապատկերների ժխտումը չէր։ Շարժումն ուներ ավելի խոր արմատներ և դրդապատճառներ. դա կայսեր և աշխարհիկ իշխանությունների պայքարն էր հոգևորականության ազդեցության, վերջինիս ունեցվածքի սահմանափակության համար, պայքար էր ընդդեմ վանականության (պատկերամարտության մասին մանրամասն տե՛ս М. Я. Сюзюмов, Проблемы иконоборчества в Византии, Свердловск, 1948; Е. Э. Липшиц, Очерки по истории византийского общества и культуры VIII в. первой половины IX в., Москва—Ленинград, 1961, стр. 170—212)։—402։

116. «Հայկական գոդի» տակ, իհարկե, ենթադրվում է Արմենիակոն բանակաթեմի գունդը։—406։

117. Ոչ թե «Ապստամբ հայ», այլ «նենգ արմենիակոս»։ Համա. նախորդ ծանոթությունը։—408։

118. Արևելքի հրամանատար Լևոնի (հետագայում բյուզանդական կայսր Լևոն 5-րդ) Արծրունիներից սերած լինելու մասին մենք որևէ փաստ չունենք։ Լևոն հենվում է Կ. Տեր-Սահակյանի աշխատության վրա (Հայ կայսրք Բյուզանդիոնի, հատ. Ա, Վենետիկ, 1905, էջ 155), որտեղ ոչ մի աղբյուր չի վկայակոչված այդ մասին։ Լևոն 5-րդի մասին ուսումնասիրություն ունի Ն. Ադոնցը (տե՛ս N. Adontz, Sur l'origine de Léon V, empereur de Byzance, Armeniaca 2 (1927), p. 1—10 —409։

119. Թովմա Գաղիրացու ծագման մասին տեղեկություններ է տալիս բյուզանդական պատմիչ Գենեսիոսը։ Նա նրան հիշատակում է երկու անգամ, ընդ որում մի անգամ անվանում հայ, իսկ մյուս անգամ՝ սլավոն։ Թովմայի ապստամբ բանակի կազմը շատ խայտաբղետ էր։ Նրա մեջ հիշատակվում են նաև հայեր և պավլիկյան աղանդավորներ։ Կա առանձին ուսումնասիրություն նվիրված այդ ապստամբությանը (տե՛ս Е. Э. Липшиц, Восстание Фомы Славянина и византийское крестьянство на грани VIII—IX вв., Вестник Древней Истории, 1939, № 1, стр. 352—365; Նույնի Очерки истории византийского общества и культуры, стр. 212—228)։—420։

120. Հովհաննես Գրամատիկոսը (Քերականը) Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ 837—843 թթ. և ծագումով հայ էր. հայրը կոչվում էր Բագարատ, իսկ եղբայրը Արշավիր (տե՛ս Theophanes Continuatus, Bonnae, 1838, p. 606)։ Հովհաննեսը 815 թ. պատկերամարտու-

թյան վերականգնման աստվածաբանական հիմքերը դրեց։ Նա ժամանակակիցների մոտ հռչակված էր որպես անտիկ գիտության մեծ գիտակ և պատկերամարտ կայսր Թեոփիլոսի ուսուցիչն էր։ Հովհաննեսն էր, որ Կոստանդնուպոլսում բացեց Մագնավրայի հռչակավոր համալսարանը (Հովհաննեսի կյանքի և գործունեության մասին տե՛ս Ն. Ադոնց, Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում, Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 512—522։ Նաև Е. Э. Липшиц, Очерки истории византийского общества и культуры, стр. 296—301; P. Charanis, The Armenians in the Byzantin Empire, Lisboa, p. 27)։ Վերջին աշխատության հայերեն թարգմանությունը, իրականացված Հ. Պերպերյանի կողմից, տե՛ս Հանդես Ամսօրյայում, 1964, № 4—6, էջ 205)։—422։

121. Մինչև իններորդ դարը արաբը մշակութային այնպիսի ցածր մակարդակի վրա էր գտնվում, որ նրա և այլոց միջև մատենագրական առնչությունների մասին խոսք լինել չի կարող։ Սակայն արդեն իններորդ դարի առաջին կեսում արաբական մատենագրությունն ի վիճակի էր հետաքրքրություն արթնացնելու և մոտավորապես այդ ժամանակվանից են սկսում մեր առաջին տեղեկությունները հայ-արաբական մատենագրական առնչությունների մասին։

Հայոց իշխան Աշոտ Մսակերի օրոք Հայաստան էր եկել ասորի երկաբնակ քարոզիչ Թեոդորոս Աբու Կուրրան, որին հակաճառելու համար հրավիրվեց ասորի Նանա սարկավագը և բանավեճի մեջ հաղթեց Թեոդորոսին։ Աշոտի որդու՝ Բագարատի խնդրանքով Նանան գրեց Հովհաննու Ավետարանի մեկնությունը արաբերեն, որը հետագայում Սմբատ սպարապետը թարգմանել տվեց հայերեն։ Այս թարգմանությունը թեև մեզ հասել է, այնուամենայնիվ, չգիտենք այն արաբագետ վարդապետի անունը, որն, ըստ երևույթին, առաջին քայլն էր արել այս ասպարեզում։

Անհրաժեշտ է ընդգծել, որ, ըստ էության, հայ-ասորական վաղեմի հարաբերություններն էին շարունակվում սոսկ նոր ձևով արտահայտված։ Արաբացած ասորին էր, որ հանդիպման եզրեր էր գտնում իր կրոնակից հայի և ցեղակից արաբի միջև։

Արաբ նշանավոր մատենագիրներից անձամբ Հայաստան են այցելել իններորդ դարում Յաքուբին, իսկ տասներորդ դարում՝ Մասուդին։ Վերջինս, հավանաբար Վասպուրականի կողմերում, լսելով Արա Գեղեցիկ և Շամիրամ հինավուրց հայկական զրույցը, գրի է առել իր պատմական աշխատության մեջ (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արա և Շամիրամ առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուդու մոտ, Պատմա-բանասիրական հանդես, № 4, 1965)։ Հետաքրքրականն այն է, որ եթե ըստ Մովսես Խորենացու Հայաստանը պարտվեց Ասորեստանից, ապա Մասուդու մոտ Հայոց թագավորները ի վերջո ոչ միայն հաղթեցին Ասորեստանին, այլև հարկատու դարձրին նրանց թագավորներին։

Բագրատունյաց ժամանակաշրջանում Հայաստան է այցելել նաև մատենագիր Աբու Դուլաֆը, որի տեղեկությունները հայ եկեղեցական երաժշտության մասին բացառիկ արժեք ունեն. «Նրանց ձայները Ավետարանի ընթերցումների ժամանակ և նրանց եղանակների չափը ավելի հաճելի է և թախծոտ, քան քրիստոնյա այլ խմբերի ձայները,—գրում է նա և ապա ավելացնում,— նրանց երգեցողությունը եկեղեցիներում ավելի հաճելի է, զգայուն և ուշադիր մարդու համար»։

Բագրատունյաց օրոք Հայաստանում ծանոթ էին արաբական բժշկությանը։ Արաբ բժիշկները հաճախ այցելում էին Հայաստան՝ բժշկական բույսեր ուսումնասիրելու նպատակով։

Հայերն արաբական մշակույթով հետաքրքրվեցին մեծ մասամբ խալիֆայության ատելի տիրապետության վերացումից հետո։ Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում Հայաստանում ծանոթ էր «Հազար և մեկ գիշերներ» հայտնի ժողովածուն իր նախնական ձևով (վերջնականապես խմբագրվել է Մեմլուքյան Եգիպտոսում)։ Թեև ընդհանրապես տիրապետող կարծիքն այն է, որ հազար և մեկ գիշերների մասը կազմող պղնձե քաղաքի պատմությունը հայերեն է թարգմանվել Առաքել Անեցու ձեռքով 13-րդ դարի սկզբին, այնուամենայնիվ, վերջերս հանգուցյալ Ն. Ակինյանը Հռոմում հայտնաբերել էր այդ պատմության մի ձեռագիր, որի մեջ հիշված է, թե թարգմանությունը կատարված է Տայոց Դավիթ Կուրապաղատի օրոք, այսինքն՝ 10-րդ դարի վերջում (Ն. Ակինյան, Զրույց Պղնձե քաղաքի, Հանդես Ամսօրյա, 1958, 1—4)։ Համենայն դեպս, այս հարցը դեռ ուսումնասիրման կարոտ է։

Հայ մատենագրությունը միայն չի վերցրել, այլ շատ բան էլ տվել է արաբներին։ Ագաթանգեղոսի պատմությունը, ինչպես նաև նրա մեզ չհասած խմբագրությունը (Վարք) թարգմանվել են արաբերեն, ունենալով հունարեն միջանկյալ թարգմանություն։

13-րդ դարից ոչ շատ ուշ արաբերեն է թարգմանվել նաև Վարդան Այգեկցու Աղվեսագիրքը, որն իր ժամանակին տարածում էր գտել քրիստոնյա աշխարհում և թարգմանվել նաև վրացերեն։ Աղվեսագրքի արաբերեն թարգմանությունը ծանոթ է մեկ ձեռագրով, որը գրված է ասորատառ արաբերեն։ Н. Марр. Сборники притч Вардана, СПБ. 1899։—456։

122. Դվինի ժողովում, ճիշտ է, խիստ միջոցներ ձեռք առնվեցին պավլիկյանների դեմ, բայց շարժումը ամենևին էլ չնահանջեց, ընդհակառակն, էլ ավելի բորբոքվեց։—457։

123. Լեոն Սմբատ Զարեհավանցու վարդապետությունը ոչ ճիշտ կերպով համարում է վերադարձ դեպի հին պաշտամունքը և թոնդրակեցիների շարժումը, ինչպես դրանից առաջ պավլիկյանների, որակում որպես զուտ դավանաբանական պայքարի արտահայտություն։ Մարքսիստական պատմագրությունը թոնդրակյան շարժումը ևս, ինչպես և պավլիկյան, բնորոշում է որպես հայ աշխատավոր ժողովրդի պայքարը ընդդեմ ֆեոդալական շահագործման։ Ինչպես և պավլիկյան շարժումը, թոնդրակյան շարժումը ևս բյուզանդական ագրեսիայի ժամանակաշրջանում ստացավ նոր գունավորում և դասակարգային պայքարի արտահայտություն լինելով մեկտեղ, վերածվեց ժողովրդա-ազատագրական պայքարի ընդդեմ օտար նվաճողների։ Այդ պարզ կերպով երևաց 11-րդ դարում, Անիում, երբ բյուզանդական զավթիչները կանգնել էին մայրաքաղաքի պարիսպների տակ։ Սմբատ Զարեհավանցու հանդես գալու ժամանակի շուրջը հայագիտության մեջ սկսած դեռևս Մ. Չամչյանից եղել են սուր վիճաբանություններ, որոնք մինչև օրս էլ վերջ չեն գտել։ Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ նա հանդես է եկել 9-րդ դարի առաջին կեսին, Հովհաննես Ովայեցի կաթողիկոսի (833—855 թթ.) և Սմբատ Բագրատունի սպարապետի (822—855 թթ.) ժամանակ։ Մյուս մասը գտնում է, որ նա հանդես է եկել Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (897—929) և Սմբատ Ա Բագրատունի թագավորի ժամանակ (890—913 թթ.)։ Լեոն Սմբատ Զարեհավանցու հանդես գալու ժամանակը դնում է 9-րդ դարի առաջին կեսի վերջին տասնամյակում։ Մոտավորապես նույն կարծիքն է հայտնել այժմ և ակադ. Աշ. Հովհաննիսյանը և այդ ենթադրությունը նա հաստատում է նորանոր, մինչև այդ հարցի լուծման համար շրջանառության մեջ չդրված փաստերով։ Հակառակ դիրքերում է կանգնած պրոֆ. Ս. Պողոսյանը, պնդելով, որ Զարեհավանցին հանդես եկավ 9-րդ դարի վերջերին։ Տվյալ հարցի վրա որոշակի լույս կարող է սփռել Ապահունիքի կայսիկ ամիրա Աբու-լ-Վարդի հիշատակությունը Գրիգոր Նարեկացու թոնդրակեցիների մասին գրած «Թղթում» (տե՛ս Գիրք թղթոց, էջ 498, 500. Աշ. Հովհաննիսյանի ամենաուժեղ կռվաններից մեկը հենց այս տվյալն է), որտեղ ամիրան հանդես է գալիս որպես թոնդրակեցիների հալածող և Սմբատ Զարեհավանցուն մահապատժի ենթարկող։ Աբու-լ-Վարդը Ապահունիքում տիրել է 860-ական թվականներից (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 98) և 890 թ. նա արդեն վաղուց վախճանված էր, որովհետև 890 թ. Ապահունիքի ամիրա էր Աբու-լ-Վարդի հաջորդը։ Հետևաբար, Սմբատ Զարեհավանցին կարո՞ղ էր հանդես եկած լինել Հովհաննես Ովայեցու ժամանակ, այսինքն՝ 9-րդ դարի առաջին կեսում և ոչ Դրասխանակերտցու, որն աթոռակալել է, ինչպես տեսանք, սկսած 897 թ. (այդ մասին ,ինչպես և թոնդրակյան շարժման մասին ընդհանրապես տե՛ս հետևյալ նորագույն ուսումնասիրությունները. Աս. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, Տեղեկագիր, № 3, 1954։ Аш. Иоаннисян, Движение тондракитов в Армении (IX—XI вв.), Вопросы истории, № 10, 1954; Նույնի Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակն ու ժամանակակիցները, «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 7—30. Նույնի Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957. Նաև Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1956. Նույնի Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում, 9—13-րդ դդ., Երևան, 1958)։—461։

124. Բ. Սարգսյանի երկասիրությունը («Ուսումնասիրություն մանիքեա-պավլիկյան թոնդրակեցիներու աղանդին») շատ է օգտագործված Լեոյի կողմից։ Պավլիկյանների աղանդապետ Սերգիոսին, որ սպանվեց 835 թ. Արգաուսում, Բ. Սարգսյանը առանց որևէ հիմք ունենալու, նույնացնում է թոնդրակյան աղանդապետ Սմբատ Զարեհավանցու հետ, որն, ի միջի այլոց, 835 թ. շատ հետո էլ դեռ կենդանի էր։ Բ. Սարգսյանը իր այդ մի սխալը խորացնելով, բյուզանդական աղբյուրների այն տվյալները, որոնք վերաբերում են պավլիկյան աղանդապետ Սերգիոսին, կամայականորեն տարածում է Սմբատ Զարեհավանցու վրա, թույլ տալով պատմական մեծ սխալ։ Լեոյի աշխատության 463-րդ էջի Սմբատին բնորոշող ընդարձակ մեջբերումը Պետրոս Սիկիլիացուն է և այն վերաբերում է ոչ թե Սմբատին, այլ Սերգիոսին։ Բացի փաստական աղաղակող սխալներից, Բ. Սարգսյանը թույլ է տվել և բազմաթիվ այլ անճշտություններ ու կոպիտ խեղաթյուրումներ, որոնք միանգամայն աղավաղել են թոնդրակյան շարժման իրական

պատկերը։ Լեոն, դժբախտաբար, քննադատաբար չի մոտեցել Բ. Սարգսյանի ուսումնասիրությանը և իր գրքում մեջբերել վերջինիս հերյուրանքները թոնդրակեցիների հասցեին, թե նրանք իբր «ոչնչականներ» էին (նիհիլիստներ), «ընկերվարականներ» (սոցիալիստներ), «վերջին ժամանակաց Սոկինյանության նախածնող և նախագաղափարը», «մասոնության... նախկին ներկայացուցիչ» և այլն։—462։

125. Լեոն 19-րդ դարի «թոնդրակեցիների» տակ նկատի ունի 1826—1828 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Խնուսից Շիրակի Արխվելի գյուղը գաղթած մի խումբ գաղթականների, որոնք իրենց հետ էին բերել և մի գիրք, գրված քահանա Հովհաննեսի կողմից, և վերնագրված «Բանալի ճշմարտության»։ Այս աղանդավորների մասին, որոնց սխալմամբ թոնդրակեցի համարեցին, լույս տեսան առանձին հոդվածներ և ուսումնասիրություններ (տե՛ս Աղ. Երիցյան, Թոնդրակեցի հայք մեր օրերում, «Փորձ», Թիֆլիս, 1880, № 10, նույնի հոդվածը Труды V археологического съезда в Тифлисе, Москва, 1887 ժողովածուում, F. C. Conybeare, The Key of Truth, a Manual of the Paulician Church of Armenia, Oxford, 1898։ (տե՛ս նաև Վ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Հովհաննես Երեցի մասին, «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 333—344)։ Այս աղանդավորները ամենայն հավանականությամբ բողոքական-բապտիստներ են եղել։—465։

126. Հովհան Օձնեցու կազմած կանոնագրքի մասին մանրամասն տե՛ս Վ. Հակոբյանի «Կանոնագիրք Հայոց»-ին կցած առաջաբանը (Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964)։—466։

127. Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքների տեղադրման հարցով զբաղվել են բազմաթիվ ուսումնասիրողներ։ Վերջերս Հնագիտության ինստիտուտի մի խումբ աշխատողներ պրոֆ. Բ. Ն. Առաքելյանի գլխավորությամբ բազմիցս եղան այդ քաղաքների ենթադրյալ շրջանում և եկան այն եզրակացության, որ Երվանդաշատը գտնվում էր Արաքսի ձախ ափին, Ախուրյանի՝ Արաքսին խառնվելու տեղում, Խերբեկլու և Բախչալար գյուղերի միջև բարձրացող բլուրի վրա, որտեղ պահպանվել են քաղաքի պարսպի մնացորդներ։ Ինչ վերաբերում է Երվանդակերտին, ապա նույն հետազոտողների կարծիքով այն տարածվում էր Ախուրյան գետի երկու ափերում էլ, Բախչալար գյուղից հյուսիս, այնտեղ, որտեղ մինչև այժմ սխալմամբ տեղադրում էին Երվանդաշատը (տես Բ. Ն. Առաքելյան, Որտե՞ղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները, Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1965, էջ 83—93)։—488։

128. «Ասպետ» նշանակում է «ձիավոր ազնվական, հեծյալ իշխանավոր»։ Բառը իրանյան փոխառություն է (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 557)։—491։

129. «Իշխանաց իշխան» տիտղոսը նոր չէր Հայաստանում, քանի որ առաջին անգամ այդ պաշտոնին նշանակվել էր Բագարատ Բագրատունին՝ Աշոտի հորեղբայրը։

Թեև Բագարատի իշխանաց իշխան դառնալը կարևոր իրադարձություն էր Հայաստանի և ամբողջ Արմինիա ոստիկանության համար, այնուամենայնիվ, Հայոց պատմիչները, որոնք ընդհանրապես համակրանքով չեն խոսում նրա մասին, այդ փաստը հազիվ են նշում։ Հովհաննես Դրասխանակերտցին ի միջի այլոց հիշեցնում է, որ նա «հրամանատար և իշխան իշխանացն Հայոց» էր (էջ 65)։ Մյուս պատմիչների համար նա պարզապես «իշխան Տարունոյ» է (Թովմա, էջ 107)։ Այս հակակրանքի պատճառը ամենայն հավանականությամբ Միջագետքում նրա հավատափոխ լինելու պարագան է։ Յուսուֆ ոստիկանի կողմից ձերբակալվելուց հետո Բագարատ Բագրատունին Սամարա ուղարկվեց, հավատափոխ եղավ և թլփատվելով այնտեղ մնաց։ Թովմա Արծրունին նրա հասցեին պարսավանքի ամբողջ էջեր է նվիրել (էջ 158), որտեղ նրան պատասխանատու է համարում նաև այլ իշխանների, մանավանդ Աշոտ Արծրունու, հավատափոխության համար (եղև աստուածուրաց և երաց զպղոտայն լայն և ընդարձակ կշաւիղն կորստեան...), իսկ Ասողիկը հայոց իշխանների ցուցակում նույնիսկ չի հիշում նրան, փոխարենը դնելով եղբորը՝ Սմբատին։

Տարաբախտաբար, Բագարատ Բագրատունու նկատմամբ եղած հակակրանքի պատճառով մեր պատմիչները քիչ են խոսում կամ գրեթե չեն խոսում իշխանաց իշխանի պաշտոնի ու նրա նշանակության մասին։

Բագարատ Բագրատունու մասին որոշ տեղեկություններ են տալիս օտար աղբյուրները։ Արաբ պատմիչ Թաբարին նրան կոչում է Բաթրիկ ալ-Բաթարիկա, որը պատրիկների պատրիկ է նշանակում։ Հույն ժամանակագիր Թեոփանեսի շարունակողը նրան իշխանաց իշխան է կոչում, իսկ Բալազուրին նշում է, որ նա տիրույթներ ուներ նաև Շիմշաթի կողմերում (Չորրորդ Հայք)։ Նրա հեղինակությունը մեծ էր ոչ միայն ամբողջ Արմինիայում, այլև հարևան երկըր-

ներում։ Ըստ արաբ պատմիչ Աբուլ-Ֆարաջ Բարհեբրեոսի, երբ Ամիդի մեծ եկեղեցին վառվեց, քաղաքի մեծամեծները նրա օգնությանը դիմեցին և ստացան 3000 զուգա դրամ և մեծ քանակությամբ փայտ։

Իշխանաց իշխան կոչումն ստանալուց հետո Հայոց իշխանի հեղինակությունը մեծապես ավելացավ։ Եթե նախապես նա գահերեց իշխան էր միայն Հայաստանի նախարարների նկատմամբ, ապա այժմ նրա հեղինակությանը ենթակա էին նաև Վրաց ու Աղվանից իշխանները։

Այդ ժամանակ Վրաստանում իշխում էր Բագրատունյաց մի ճյուղը, որն, ըստ հայ պատմիչների, սերում էր ութերորդ դարի կեսերին Հայաստանում իշխող Աշոտ Բագրատունու որդի Վասակից, իսկ Աղվանքն, ըստ ամենայնի, ենթակա էր հայ եկեղեցու իշխանությանը և հայոց լեզվի հարաճուն ազդեցությանը։ Աշոտ Մսակերի և Բագարատ Բագրատունու նպատակն էր համախմբել ոչ միայն Հայաստանի, այլև Արմինիայի տարբեր մասերը, որն իրոք որոշ ժամանակ հաջողությամբ պսակվեց։

Հայ պատմիչների տեղեկությունները Աշոտ իշխանաց իշխանի մասին ավելի հստակ են։ Թովմա Արծրունին վկայում է.«Քանզի հաստատեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց զՎրաց և զԱղուանից որ եղև իսկ» (Թովմա, էջ 206)։ Բյուզանդիայի կայսր և պատմիչ Կոստանդին Ծիրանածինը նույնպես վկայում է, որ իշխանաց իշխան Աշոտը տիրում էր Արևելքի բոլոր կողմերին, որի տակ պետք է հասկանալ Հայաստանը, Վիրքը և Աղվանքը։—496։

130. Վասիլ Ա կայսեր «Արշակունի» ծագման մասին առասպելը հորինվել է Վասիլի վարկը բարձրացնելու համար։ Իհարկե, նա ոչ մի առնչություն չունի Արշակունիների հետ։ Վասիլ Ա-ի մանրամասն կենսագրությունը գրել է իր թոռ Կոստանդին Ծիրանածին կայսրը (տե՛ս Theophanes Continuatus, lib. V)։ Ուսումնասիրություններից շահեկան են Ն. Ադոնցի գործերը։ N. Adontz, L'âge et l'origine de l'empereur Basil I-er, Byzantion, VIII, 1933, p. 478 և հտ. նույնի, Վասիլ Հայազն, Պատմական Ուսումնասիրություններ, էջ 452—500։—504։

131. Բագրատունի թագավորների տիտղոսի հարցը շատ հետաքրքրական է։ Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանին դեռ նախքան պաշտոնապես թագավոր օծվելը, Հայաստանում թագավոր էին համարում, իսկ նրա տիկինը Գառնիի 879 թվի արձանագրության մեջ կոչվում էր Կատրանիդե Հայոց թագուհի (Гарни, Ереван, 1951, 1, էջ 84)։

Հայ նախարարների առաջարկով Աբբասյան խալիֆան ստիպված եղավ ճանաչել իշխանաց իշխանին որպես թագավոր Հայոց, որից հետո Աշոտ Բագրատունին հանդիսավոր կերպով օծվեց Բագարանում Գևորգ կաթողիկոսի ձեռքով և միջազգային ասպարեզում ճանաչվեց որպես թագավոր։ Արաբները նրան և հաջորդներին կոչում էին «Մալիք ալ-Արման», որը հայերեն թագավոր Հայոց տիտղոսին բառացիորեն համապատասխանում է։ Աբբասյան Մուտամիդ խալիֆան Աշոտ Բագրատունուն ուղարկել էր «թագ թագաւորական... և այլ ևս զգեստս թագաւորականս և պարգևս և պատիւս» (Դրասխանակերտցի, էջ 78)։

Այսուհանդերձ Բյուզանդական կայսրությունը, ըստ էության, հրաժարվեց Հայոց թագավոր տիտղոսն ընդունելուց։ Չկամենալով այս տխուր փաստն արձանագրել Հովհաննես Դրասխանակերտցին անորոշ ձևով նշում է, թե հունաց Բարսեղ կայսրը մտերմական հարաբերություններ հաստատեց Աշոտ Բագրատունու հետ, նրան կոչելով «որդի սիրելի»։ Հետագայում Վարդան պատմիչը (13-րդ դար) մի ամբողջ զրույց է պատմում այն մասին, թե Վասիլ կայսրը հիշելով իր Արշակունի լինելը, Նիկիտ անունով ներքինուն ուղարկեց Աշոտ Բագրատունու մոտ, խնդրելով որպես թագադիր ասպետ իրեն թագավոր ձեռնադրել (Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 116)։

Բյուզանդական սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ կայսրությունը Հայոց Բագրատունի տիրակալներին պաշտոնապես թագավոր չի կոչել, թեև սիրաշահելու քաղաքականությունից չի հրաժարվել։ Կոստանդին Ծիրանածինը Աշոտ Առաջինին և Սմբատ Առաջինին կոչում է պարզապես «իշխանաց իշխան», դեռ ավելին, նույն պատմիչը տալով Հայոց թագավորներին դիմելու պաշտոնապես ընդունված ձևերը, հստակ կերպով Հայոց թագավորին անվանում է «իշխանաց իշխան Հայոց Մեծաց» (De Cerimoniis, 686), այսինքն՝ այն տիտղոսը, որը կրում էին Բագրատունիները Բագարատ Բագրատունու և հաջորդների ժամանակ։ Բնականաբար այս վերաբերմունքի պատճառն այն է, որ Բյուզանդական արքունիքի հասկացողությամբ քրիստոնյա աշխարհում (մանավանդ Արևելքում) թագավոր կարող էր կոչվել միայն իրենց կայսրը։

Աշոտ Բագրատունին թագավոր էր ճանաչվել ամբողջ Արմինիայի (Հայաստան, Վիրք և Աղվանք) վրա ճիշտ այնպես, ինչպես իշխանաց իշխանի իրավասությունն էր տարածվում ամբողջ Արմինիա նահանգում։ Հենց այս առումով է, որ հայկական վիմագիր արձանագրու-

թյուններում հայոց թագավորները կոչվում են «Թագավոր Հայոց և Վրաց» (վիմական տարեգիր, էջ 13, 20)։ Նույն ձևը գտնում ենք նաև արաբ պատմիչ Իբն Զաֆիրի մոտ՝ «Մալիք Արմինիա ուա Ջուրզան» Թագավոր Հայաստանի ու Վրաստանի (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 152)։ Մի ուրիշ արաբ պատմիչ (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 477) Աշոտ 3-րդ Ողորմածի մասին գրում է. «Վրաստան նահանգի և Արմինիայի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշոտ որդի Աբասի (Աշութ իբն ալ-Աբբաս) և կրում էր Շահինշահ տիտղոսը»։

Բացի «Թագավոր Հայոց» և «Թագավոր Հայոց և Վրաց» տիտղոսներից, Բագրատունի տիրակալները կոչվում էին նաև Տիեզերակալ։ Թեև այս տիտղոսով ծանոթ է ընդհանրապես Սմբատ 2-րդը, սակայն մի ձեռագրի հիշատակարանում (Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 135) Տիեզերակալ է կոչվում Սմբատ 1-ինը, որը շատ հավանական է։ Հետագայում Բագրատունի թագավորները ստացան նաև Շահինշահ տիտղոսը։—506։

132. Իշխանաց իշխան Աշոտի և Դերենիկ Արծրունու միջև լարված և թշնամական հարաբերությունները, որոնց մասին վկայում են Թովմա Արծրունին և Հովհաննես Դրասխանակերտցին, վերջերս նոր եզրակացությունների առիթ են տվել։ Բանն այն է, որ իշխանաց իշխանի Արծրունյաց գահերեցի նկատմամբ ունեցած խիստ դժգոհ վերաբերմունքի մասին խոսելուց անմիջապես հետո պատմիչը նկարագրում է Հերի Ապլբերս (Աբու-լ-Ֆարիս) ամիրայի ձեռքով Դերենիկի չարանենգ սպանությունը։ Սա հիմք է տվել եզրակացնելու, որ Դերենիկի սպանությունը պարզապես Աշոտ Բագրատունու կողմից էր սարքված, իր ըմբոստ փեսային ասպարեզից վերացնելու նպատակով (տե՛ս Վ. Մելիքյան, Վասպուրականի մեծ իշխան Դերենիկի սպանության պարագան, Անդաստան, Փարիզ, 1953, № 3)։

Անտարակույս, այստեղ որոշ չափազանցություն կա։ Ըստ Թովմա Արծրունու, երբ Դերենիկ Արծրունին պատրաստվում էր ձմեռանոց գնալ, Հեր քաղաքի միջով, նրա մերձավորները զգուշացրին, թե «շրջաբերական թղթով դարան գործել էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի» (Թովմա, էջ 226)։ Սակայն Դերենիկը չանսաց նրանց և ճանապարհին սպանվեց։

Արծրունյաց պատմիչի ակնարկը հստակ չէ։ Ամենայն հավանականությամբ ըմբոստ իշխանին սանձելու նպատակով ձերբակալելու մասին է խոսքը և հենց այդպես էլ հասկացել է Լեոն Թովմա Արծրունուն։

Եթե իրոք Աշոտ Բագրատունին նպատակ է ունեցել սպանել իր փեսային և այդ մասին Արծրունիներն իրազեկ էին, ապա ինչպե՞ս կարող էր նա Դերենիկի սպանությունից հետո անձամբ գնալ իր դստեր մոտ մխիթարելու նպատակով։ Չէ՞ որ նման դեպքում նա կարող էր իր որդուն՝ Շապուհին ուղարկելով բավարարվել և անձամբ չերևալ մի այնպիսի նահանգում, որի հզոր և ըմբոստ իշխանները տեղյակ էին նրա սադրանքներին։—507։

133. Դվինը և Ոստան գավառը արաբական տիրապետության ժամանակաշրջանում գտնըվում էին արաբ ոստիկանի անմիջական իրավասության ներքո, սակայն, երբ իններորդ դարի սկզբին Աշոտ Մսակերը Բագրատունիների տիրույթները տարածեց մի կողմից Արշարունիք և Շիրակ, իսկ մյուս կողմից Տարոն, ապա Հայաստանի սիրտը կազմող Արարատյան դաշտավայրը չվրիպեց նրա ուշադրությունից։ Բագրատունիները տիրացան նախ Արագածոտն և Մասյացոտն գավառները և հասան արքունի տիրույթ Ոստան գավառը։ Աշոտ 1-ին թագավորի օրոք Ոստանն ու Դվին քաղաքը արդեն մտնում էին նրա անմիջական կալվածների մեջ։

Աշոտ 1-ինի օրոք Դվինի գոյավիճակի շուրջը մեր պատմագրության մեջ երբեմն թյուր կարծիքներ են հայտնվել։ Դա հետևանք է մեծ մասամբ արաբ աշխարհագետ Իբն Հաուկալի և այլոց խոսքերի Կարաուլովի կողմից սխալ թարգմանվելուն։ «(Դվինը) հին ժամանակներում,—գրում է պատմիչը,—պատկանում էր Սինբաթ իբն Աշութին՝ բոլոր հայերի թագավորին և նրա նախնիներին և այդպես էլ մնաց նրանց մեծամեծների ձեռքում»։ Իսկ Կարաուլովին թվացել է, թե Դվինը մնաց քաղաքի մեծամեծների ձեռքում և այստեղից էլ ոմանք եզրակացրել են, թե քաղաքում եղել է երիցանի և այլն։ Արաբ աշխարհագետը հստակ կերպով վկայում է, որ Դվինը գտնվել է Բագրատունիների ձեռքում։—514։

134. 1918 թ. հայտնաբերված «Պատմությունը» հրատարակիչներ Գ. Տեր-Մկրտչյանն ու Մ. Տեր-Մովսիսյանը համարել են Շապուհ Բագրատունու կորած երկասիրությունը։ Թ. Ավդալբեգյանն իր հոդվածում (տե՛ս «Կարծեցյալ Շապուհը», Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի, գիրք Ա—Բ (1921—1922), էջ 244—254) եկել է այն եզրակացության, որ հրատարակված սկզբնաղբյուրը չի կարող Շապուհ Բագրատունու գրածը լինել։ Ըստ Ն. Ակինյանի (տե՛ս նրա Շապուհ Բագրատունի և յուր պատմությունը, Մատենագրական հետազոտություններ, հատոր Ա, էջ 222—223) այս «Պատմությունը» գրված է շուրջ 11-րդ դարում և նրա հեղինակն է Հովհաննես վարդապետ Տարոնեցին, Կոզեռն մականվանյալը։—515։

135. Արծրունիների ծագման հարցը քննության առարկա դարձավ Ս. Բարխուդարյանի կողմից։ Նա եկավ այն եզրակացության, որ Արծրունի նախարարական ընտանիքը ծագում է «Արծունիունի» ցեղից, որն ուրարտական ժամանակաշրջանում ապրում էր Վանա լճից հարավ և ի վերջո հաստատվեց պատմական Աղբակում (տե՛ս С. Г. Бархударян, Урартское происхождение армянского нахарарского рода Арцруни, "Исследования по истории культуры народов Востока", Сборник в честь академика И. А. Орбели, Москва-Ленинград, 1960, стр. 29—38)։—539։

136. Մեզ են հասել Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն և թագավոր Սմբատին ուղղված երկու նամակների հունարեն բնագիրը ևս։ Նամակներից մեկի (№ 101) հասցեատերը հիշատակված չէ։ Բյուզանդագետ Ջենկինզը (տե՛ս նրա հոդվածը. R. J. H. Jenkins, Letter 101 of the Patriarch Nicolas Mysticus, Byzantion, t. XXXI (1961), fasc. I. p. 75—80) ուսումնասիրության ենթարկելով այդ թուղթը, գտնում է, որ ամենահավանական հասցեատերերն են Հայոց Աշոտ Բ թագավորը և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ Բայց ըստ երևույթին 101-րդ թղթի հասցեատերը միայն Հովհաննես Դրասխանակերտցին է։ Այս թղթից երևում է, որ Աշոտ Բ-ն ցանկացել է Բյուզանդիայից ստանալ իր ճանաչումը որպես թագավորի և նրան կայսրը ընդառաջ է գնացել. «Մեծ և աստվածապսակյալ կայսրը,—գրում է պատրիարքը,—ձեր խնդիրքին ուշիուշով ունկնդիր լինելով, ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վստահված է ձեր իշխանությունը, տվեց»։ Այս նամակը պետք է որ գրված լինի 914—915 թթ. ընթացքում, ավելի ճիշտ 915 թ., Աշոտ Բ-ի Կոստանդնուպոլսից բյուզանդական ուժով վերադառնալուց անմիջապես հետո, և ոչ 922 թ., ինչպես կարծում է Ջենկինզը։ 922 թ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունները արտակարգ սրված էին և նման նամակ 922 թ. գրվել չէր կարող։

Նիկողայոս պատրիարքի մյուս նամակը (№ 139) ունի հասցեատեր. նա կոչվում է «Իշխանաց իշխան», մի տերմին, որի տակ ենթադրվում է հայոց թագավորը։ Ջենկինզը այդ նամակն էլ է թվագրում շուրջ 922 թ. և հարցի վերջնական լուծումը թողնում հայ մասնագետներին։ 139-րդ նամակից երևում է, որ Հայաստանը գտնվում էր արտակարգ ծանր վիճակում։ Այդ է պատճառը, որ հույն պատրիարքը հայոց թագավորին գրած նամակում համարձակվում է երկաբնակությունը համարել «ավելի լավ» դավանանք, իսկ հայոց միաբնակությունը՝ «հին չարափառություն», «կեղծիք», ինչպես և այն, որ հայոց արքան համաձայնվում է, թեկուզ առերես, որ հայոց կաթողիկոսը օծվի Բյուզանդիոնում երկաբնակ պատրիարքի կողմից, ինչպես պարզվում է այս նամակից։ Այս նամակը հավանաբար գրված է 912—913 թթ. ընթացքում և ուղղված պիտի լինի Սմբատ թագավորին։—553։

137. Այստեղ Լեոն լավատես է բյուզանդական օգնության հարցում։ Ձեռքի տակ չունենալով Կոստանդին Ծիրանածնի երկերը, նրա ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, թե ինչպիսի ծրագրեր ուներ բյուզանդական կայսրությունը դժվար կացության մեջ գտնվող Հայոց թագավորության նկատմամբ։ Սմբատ թագավորի սպանությունը հարմար առիթ էր Բյուզանդիայի համար իրեն ենթարկելու Հայաստանը, սակայն շնորհիվ Աշոտ 2-րդի զգույշ քաղաքականության, կայսրությունը կարողացավ իրեն ենթարկել Հայաստանի միայն մի մասը՝ Չորրորդ Հայքի և Բարձր Հայքի՝ Հայոց թագավորության մեջ մտնող գավառները և Տուրուբերան նահանգի մեծ մասը Խլաթ, Արճեշ և Մանազկերտ քաղաքներով։ Տարոնի Բագրատունիները և Մանազկերտի կայսիկները իրենց հարկը արդեն վճարում էին ոչ թե հայոց թագավորին, այլ բյուզանդական կայսեր։ Այս առթիվ Կոստանդին Ծիրանածինը նրանց հարկատվությունը պատճառաբանում է նրանով, որ իշխանաց իշխան Աշոտը (այսինքն՝ Աշոտ 2-րդ թագավորը) իր իշխանությունը իբր բյուզանդական կայսրությունից ստացած լինելով, համարվում էր նրա հպատակը և «ծառան»։

Բնականաբար, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը դեռ Հայաստանից չհեռացած կանխազգում էր, թե ինչ պահանջներ կային թաքնված հունաց պատրիարքի սիրալիր նամակի ետևում՝ կրոնական տեսակետից քաղկեդոնականություն, իսկ քաղաքականապես՝ հպատակություն։ Ոչ թե միաբնակ Դրասխանակերտցին էր նեղմտություն անում (ինչպես թվում է) և կամ էլ չէր ուզում քաղկեդոնականի ոտքը գնալ, այլ ընդհակառակն, լավ էր զգում նախապատրաստված ծուղակը։

Թեև Հայոց կաթողիկոսն իր նամակում ակնարկում էր կայսրության հովանավորության տակ մտնելու պարագան (Դրասխանակերտցի, էջ 53), այնուամենայնիվ Աշոտ 2-րդը հենց որ վերադարձավ Բյուզանդիայից, խիստ զգույշ դարձավ հույների նկատմամբ և նույնիսկ մարտնչող

Բյուզանդիայի դեմ, երբ վերջինս 922 թվին ներխուժեց Հայաստան և հարձակվեց Դվինի վրա։—555։

138. Աշոտ Երկաթի Բյուզանդիոն ժամանելու մանրամասնությունները արձանագրված են «Թեոփանեսի Շարունակող» անվան տակ հայտնի նշանավոր ժամանակագրության մեջ։ Այնտեղ ասված է. «Այն ժամանակ քաղաք (իմա Կոստանդնուպոլիս) ժամանեց ֆիզիկական ուժով հռչակված Աշոտը, իշխանաց իշխանի որդին, որի մասին պատմում են, թե նա երկաթե ձողը երկու ծայրից բռնելով, անչափ ուժով ծռում էր և շրջանաձև դարձնում. երկաթը տեղի էր տալիս նրա ձեռքերի ուժին։ Ժամանողին մեծ պատվով ընդունեց տիրուհին (նկատի ունի Զոե կայսրուհուն, Կոստանդին Ծիրանածինի մորը — Հ. Բ.) և այնուհետև նորից իր երկիրը ճամփու դրեց։ Սեպտեմբեր ամսին, 3-րդ ինդիկտիոնում, հայազգի Պագրատուկասը Ադրիանուպոլիսը հանձնեց Սիմեոնին» (տե՛ս Theophanes Continuatus, p. 387; Symeonis Magistri Annales, p. 722—723; Georgii Monachi, Vitae imperatorum recentiorum, p. 879—880)։

Պատմիչները չեն տալիս Աշոտի Կոստանդնուպոլիս գնալու թվականը, բայց կողմնակի փաստը (Ադրիանուպոլիս քաղաքի գրավման թվականը՝ 3-րդ ինդիկտիոնի սեպտեմբեր ամիսը (914 թ.) հնարավորություն է տալիս այդ դեպքը թվագրել 914 թվականի սեպտեմբեր ամսից անմիջապես առաջ (տե՛ս N. Adontz, Ašot Erkat ou de fer roi d'Arménie de 913 à 929, Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales, t. III (1935), p. 13—14)։—558։

139. Սևորդիների ծագումը դեռ մնում է անորոշ։ Որոշ պատմաբաններ այն կարծիքին են, թե դրանք ուգրոֆիննական (հունգարներին և ֆիններին ցեղակից) ծագում ունեն և գաղթել են Հայաստան Հյուսիսային Կովկասի կողմերից (տե՛ս V. Minorsky. Studies in Caucasian History, London, 1953, p. 26)։

Այս տեսակետը հիմնվում է Կոստանդին Ծիրանածնի մի տեղեկության վրա, որը Ուտիքի «Սևորդիներին» կոչում է «սավարդյաններ» (Const. Porph., De administ. imperio, c. 38 և De cerimoniis. p. 687)։ Սավարդ անունը պատմաբանները կապում են Սավիրի հետ, որը 5—6-րդ դարերում Կասպից և Ազովի ծովերի միջև ընկած տափաստաններում թափառող ուգրոֆիննական ցեղերի անունն է (М. И. Артамонов, История Хазар, Ленинград, 1962, стр. 69)։ Ըստ նրանց Սավարդ անունը հայկական ձևով դարձել է Սևորդիք։ Համենայն դեպս 9-րդ դարում նրանք հանդես են գալիս որպես հայեր և նույնիսկ տվել են քրիստոնյա մարտիրոսներ։—558։

140. Սասանյանների Շահնշահ (արքայից արքա) տիտղոսը ետարաբական ժամանակաշրջանի Պարսկաստանում (10—11-րդ դարեր) շատ էր տարածված։ Օրինակ, Ֆիրդուսին իր ժամանակի Ղազնևի սուլթանին Շահնշահ է անվանում։ Ամենահետաքրքրականն այն է, որ Բաղդադի Աբբասյան խալիֆների մոտ այնքան հեղինակություն վայելող Բույիները (կամ Բուայհինները 935—1055) նույնպես կրում էին Շահնշահ տիտղոսը։

Աբբասյան խալիֆները իրենց շահերից ելնելով այդ տիտղոսը շնորհեցին Աշոտ Բագրատունի թագավորին՝ կամենալով վերջ տալ այն խառնաշփոթ վիճակին, որը քայքայեց ոչ միայն Հայոց թագավորությունը, այլև վնաս հասցրեց հենց արաբական խալիֆայությանը։ Սմբատ 1-ի մահվանից հետո Հայաստանում կային երեք տիրակալներ, որոնք թագավոր էին համարվում, իսկ այս խառնաշփոթությունից օգտվեց միայն բյուզանդական կայսրությունը։ Աշոտ արքայորդուն ցուցաբերած փոքրիկ օժանդակության փոխարեն նա իրավունք էր վերապահում ոչ միայն Հայոց թագավորությունը ընդհանրապես հպատակ համարելու, այլև իրեն ենթարկեց գրեթե ամբողջ Տուրուբերան նահանգը և այլ գավառներ։ Ինչպես տեսանք, Տարոնի Բագրատունիները և Կայսիկները Սմբատ 1-ի մահվանից հետո կայսրությանը հարկատու էին դարձել։

Այս հողերը վերջինիս համար խիստ անհրաժեշտ էին գլխավորապես իբրև ռազմական հենակետ արաբական խալիֆայության դեմ մղված կառավարի գոտեմարտում և ահա այս է, որ ահ պատճառեց Աբբասյան խալիֆներին, որոնք փորձեցին կայունություն մտցնել Հայոց թագավորության մեջ, նախապատվությունը տալով օրինավոր գահաժառանգ Աշոտին (Սմբատի որդուն)։ Շահնշահ տիտղոսն ստանալուց հետո, երբ Աշոտ 2-րդի ախոյաններից մեկը՝ Աշոտ Շապուհյանը լրիվ ասպարեզից հեռացավ, իսկ Գագիկ Արծրունին, թեև թագավոր մնաց, սակայն արդեն վերջնականապես հրաժարվեց ամբողջ Հայաստանի թագավոր դառնալու երազից։ Նրա հաջորդները դեռ նույնիսկ որոշ չափով ենթակա դարձան Հայոց Բագրատունի թագավորներին։—561։

141. Բյուզանդական աղբյուրներում նա կոչվում է Մելիաս և համապատասխանում է Մլեհ անվան։ Այս Մելիասը հետագայում դարձավ Լիկանդոս բանակաթեմի առաջին զորավարը։ Նա 925—926 թթ. արշավեց Մելիտինեի վրա, իսկ 934 թ. մայիսի 19-ին մի այլ հայազգի զորավարի՝ Հովհաննես Կուրկուասի հետ գրավեց վերոհիշյալ քաղաքը արաբներից։ Մելիասը այնքան նշանավոր գործիչ է եղել, որ նույնիսկ տեղ է գտել բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսում (Մելեմենձիս անվան տակ, որը հայերեն Մլեհ Մեծն է)։ (Նրա մասին տե՛ս N. Adontz, Les fonds historiques de l'epopée byzantine Digenis Akritas, Byzantinishe Zeitschrift, Bd. XXIX—XXX (1929—1930); H. Grégoire, Notes épigraphiques, VII, Mélias le Magister, Byzantion, t. VIII, 1933, p. 79—88)։—573։

142. Բագրատունյաց Հայաստանի բոլոր արաբական ամիրայությունների մեջ Մանազկերտի Կայսիկների ամիրայությունը ամենամեծն է եղել։ Կայսիկների պատմության հետաքրքրական շարադրանքն է տալիս Կոստանդին Ծիրանածինը, որը հատուկ գլուխ է հատկացրել այս նյութին։

Արաբական Սուլայմ ցեղին պատկանող Կայսիկները թեև գաղթել են 8-րդ դարի վերջում, այնուամենայնիվ նրանք Ապահունիք գավառին տիրացան ամենայն հավանականությամբ Բուղայի արշավանքից հետո։ Աշոտ Բագրատունին իր իշխանապետության տարիներին ճանաչել էր Աբու-լ-Վարդ կայսիկի իշխանությունը Ապահունիքի վրա, որի հինավուրց նախարարական տունը քայքայվել էր։ Ըստ Կոստանդին Ծիրանածնի Աշոտ իշխանաց իշխանը Աբու-լ-Վարդին (ըստ Թովմայի՝ Ապլբառ) տվել էր բացի Մանազկերտից նաև Արճեշ և Բերկրի քաղաքները։ Սակայն հայտնի է, որ Բերկրին ոչ միայն Աշոտի, այլև նրա որդու՝ Սմբատ թագավորի օրոք դեռ Ութմանիկների ձեռքում էր, ուստի մնում է ենթադրել, որ Ծիրանածինը գիտակցաբար աղավաղում է փաստերը։ Բանն այն է, որ Կայսիկները Սմբատ թագավորի սպանությունից հետո ենթակա էին դարձել Բյուզանդիային և վերջինս բնականաբար պիտի ձգտեր իրեն ենթակա իշխանին ավելի շատ տիրույթներ վերագրել։

Հայագիտական ժամանակակից գրականության մեջ Թոնդրակյան շարժման մասին խոսելիս հաճախ են անդրադարձել այս Կայսիկի անձնավորության հարցին, Թոնդրակյանների մասին Գրիգոր Նարեկացու մի թղթի մեջ (Գիրք Թղթոց, էջ 498) ասվում է «Կոտորեալսն ի սրոյ վրիժախնդիր հեթանոս ամիրային Ապլվարդայ, որ արդարև դաւազան սրտմտութեան ի ձեռն Տեառն Յիսուսի»։ Ապա ստորև հիշում է, որ այս ամիրան սպանել էր Թոնդրակյանների հիմնադիր Սմբատ Զարեհավանցուն։ Աբու-լ-Վարդը բացասական դեր խաղաց նաև Աշոտ իշխանաց իշխանի դեմ արաբ ամիրաների կազմակերպած դավադրական շարժման մեջ։

Նրան հաջորդեց որդին՝ Աբդ ալ-Համիդը, որին Թովմա Արծրունու անանուն շարունակողը կոչում է Աբդռահման։ Սա կարճատև իշխեց և նրան հաջորդեցին երեք որդիները, որոնք իրենց միջև բաժանեցին նրա տիրույթները։ Կայսիկները Հայոց Բագրատունի թագավորներին հարկ և զորք էին տալիս, սակայն Սմբատ 1-ի և Ատրպատականի Սաջյան ամիրայի միջև մղված կռվի ժամանակ Կայսիկ երեք եղբայրները 902 թվին ապստամբվեցին, մերժելով կատարել իրենց պարտավորությունները։ Նրանց օգնում էին Բյուզանդիայի դեմ գնացող մահմեդական գնդերը, սակայն Կայսիկները չարաչար պարտվեցին և նորից պարտավորվեցին նախկին ձևով հնազանդ լինել Հայոց թագավորին։

Երեք եղբայրներից ավագի՝ Աբու Սավադայի տիրույթներն էին Մանազկերտը, Կորո Ձորը և Հարքը, երկրորդը՝ Աբու-լ-Ասվադը ստացել էր Արճեշը, Խլաթը և Արծկեն, իսկ երրորդը՝ Աբու Սալիմը ստացավ Սերմանց լեռան շրջանը (Խնուսիս)։

Սմբատ 1-ի սպանությունից հետո Կայսիկ եղբայրները թեև հարկատու էին դարձել Բյուզանդիային, սակայն Տուրուբերան նահանգը մեծ մասամբ անորոշ դրության մեջ մնաց։ Հայոց Բագրատունի թագավորներն ի վիճակի չէին վերանվաճել այս հողերը, Բյուզանդիան դեռ լրիվ չէր նվաճել այն, իսկ խալիֆայությունը ձգտում էր կառչած մնալ նրանից (մանավանդ Կարնո քաղաքը), լավ գիտակցելով նրա ռազմագիտական մեծ նշանակությունը։

Տասներորդ դարի սկզբին Կայսիկների տիրույթներն ընդարձակվել էին։ Նրանք խլել էին Բերկրին քայքայվող Ութմանիկներից, որոնք հավանաբար ցրվեցին կամ միաձուլվեցին նրանց հետ, իսկ Բաղեշ քաղաքը Կայսիկները վերցրել էին քայքայվող Շայբանիներից։ Այսպիսով, Կայսիկների տիրույթները ընդգրկեցին հիմնականում հետևյալ գավառները՝ Ապահունիք, Կորի, Հարք, Վարաժնունիք, Աղիովիտ, Խորխոռունիք և Բզնունիք։

Կայսիկները և ընդհանրապես Հայաստանի արաբ ամիրաները հաստատվում էին քաղաքներում, քանի որ նրանց միակ հենարանը քաղաքաբնակ արաբ տարրն էր, որը հիմնականում ռազմիկներից էր բաղկացած և փոքրաթիվ էր (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, «Կայսիկները» ենթագլուխը, էջ 143—149)։

Կայսրիկների ամիրայությունը վերջ գտավ 964 թվականին և նրանց հողերը ժամանակավորապես անցան Համդանյաններին։—575։

143. Աշոտ թագավորի բոլոր ձեռնարկումների մեջ առաջինը մշտական մայրաքաղաքի հարցի լուծումն էր։ Մինչև նրա իշխանության գլուխ անցնելը, Բագրատունի թագավորները երեք մայրաքաղաք էին փոխել՝ Բագարան, Երազգավորս (Շիրակավան) և Կարս։ Հասկանալով մշտական և կայուն մայրաքաղաքի անհրաժեշտությունը, որպես պետության միասնականությանը նպաստող մի կարևոր օղակ, Աշոտ Գ-ն իր գահակալության հենց առաջին տարում միջոցներ ձեռք առավ ազատագրելու Դվինը օտար տիրակալների ձեռքից և հավանաբար հենց այն էլ դարձներ մշտական մայրաքաղաք։ Այս արշավանքի մասին այսօր մեզ հայտնի է միայն մեկ աղբյուրի շնորհիվ՝ Մունաջջիմ Բաշիի մեզ արդեն ծանոթ հատվածից, ուստի ավելորդ չենք համարում պատմիչի խոսքերը ամբողջությամբ մեջ բերել թարգմանաբար։ «Վրաստան նահանգի և Արմինիայի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշոտ որդի Աբասի (Աշութ իբն ալ-Աբբաս) և կրում էր Շահինշահ տիտղոսը։ Սա որոշեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել։ Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից 30 հազար մարդկանց և իջավ նրան (Դվինին) մոտիկ մի վայրում, որը կոչվում էր Նասարգ։ Նա ցրեց իր զորքը, որպեսզի այրեն բերքը և քանդեն շենքերը։ Լուրը հասավ Մուհամմադ իբն Շադդադին, որն անտեղյակ նստած էր մի խումբ մարդկանց և մերձավորների հետ։ Ուստի մի հնարամտություն մտածեց այս ուժեղ թշնամուն ետ մղելու։ Նա հրամայեց բոլոր քաղաքում գտնվողներին՝ տղամարդկանց և կանանց, նստել անասունների վրա, ինչպես էշերի, կովերի, ձիերի և ջորիների վրա և այդ վիճակում քաղաքից դուրս գալ ու կանգնել քաղաքին մոտիկ վայրում, որպեսզի թշնամին տեսնի նրանց հոծ բազմությունը և լսի նրանց աղաղակն ու բացականչությունները (և սպասել), մինչև Մուհամմադը հրամայի նրանց շարժվել և առաջ խաղալ։ Այդպես էլ արեցին։ Նա մի խումբ ձիավորների ու քաջերի հետ, որպես առաջապահ, գնաց նա թշնամու կողմը, որը եղածից անտեղյակ ցրված էր ստվերոտ տեղերում, պատսպարվելով սաստիկ շոգից։ Նրանք չսթափվեցին, մինչև որ մահմեդականները հարձակվեցին կատաղած առյուծների նման և ամեն կողմից սրախողխող արեցին նրանց։ Երբ կռիվը սաստկացավ, Մուհամմադ իբն Շադդադը նշան արեց քաղաքի մոտ հավաքված խմբին, որը գոռաց բարձրաձայն և մոտեցավ թշնամուն տեսանելի լինելու չափ։ Թշնամին, երբ տեսավ նրանց լեռնանման հոծ բազմությունը, նրա աչքին ավազի հատիկներից ավելի շատ թվացին։ Ալլահի օգնությամբ և օժանդակությամբ նա պարտվեց» (տե՛ս V. Minorsky, Studies in Caucasian history, London, 1953, բնագրի հայերեն ամբողջական թարգմանությունը «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 474—486)։—577։

144. 894 թվականից սկսած, երբ Սաջյանները Ոստան գավառն ու Դվինը խլեցին Սմբատ թագավորից, անկայուն գոյավիճակ ստեղծվեց Հայոց հինավուրց մայրաքաղաքի համար։ Հատկապես Սաջյանների անկումից մինչև Ատրպատականում Սալարյան ամիրաների իշխանության հաստատումը (929—941) Դվինն անորոշության շրջան ապրեց։ Այդ տարիներից հայտնի է 931 թվականը կրող մի արաբական դրամ «Արմինիա» մակագրությամբ (Հայաստանի Պատմության պետական թանգարանում), որն աներկբայորեն Դվինի փողերանոցում է կտրվել (Х. Мушегян, Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, стр. 143—144)։ Դրամը կրում է Յուսուֆ իբն Դիվդադ անունը, ուստի կարելի է եզրակացնել, որ Դվինն այդ ժամանակ գտնվում էր Ատրպատականի հետ որոշ հարաբերություն ունեցող օտարների ձեռքում, որոնք հին կաղապարներով դրամ էին թողարկում իշխանությունից ընկած Սաջյանների անվամբ։

Ատրպատականում այդ տարիներին իշխում էր Մուֆլիհը (Սաջյան համարված), որը Բյուզանդիայի դեմ արշավանքներ կատարելու պատրվակով ասպատակում էր հայոց թագավորությունը և մանավանդ Վասպուրականը։ Ըստ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայության Մուֆլիհը 931 թվականին մտավ Վասպուրական և մեծ վնասներ պատճառելուց հետո վերադարձավ։

Մոտավորապես 937 թվականից սկսած Ատրպատականում իշխանությունը վերցրեց Դայսամ իբն Իբրահիմը, որի անվամբ մի արծաթյա դրամ է գտնվել Դվինում թողարկված։ Այս դրամը 1938 թվականին մի անհատական հավաքածուից անցել է Լենինգրադի Էրմիտաժ թանգարանին և խղճամիտ քննարկման ենթարկվելով դրամագետ Ա. Բիկովի կողմից, պարզվեց, որ հազվագյուտ նշանակություն ունի (А. Быков, Даисам ибн Ибрахим ал-Курди и его монеты, Эпиграфика востока, 1955, X)։

Դրամի մակագրությունն է՝ Դայսամ իբն Իբրահիմ, թողարկման վայրը՝ Արմինիա (այսինքն՝ Դվին), իսկ թվականը հիջրի 330, այսինքն՝ 941—942։ Սա ցույց է տալիս Դայսամի իշխանության վերջը, քանզի նույն տարում Սալար Մարզուբանը իշխանության տիրացավ։

Սակայն 948-ին Մարզուբանը գերի ընկավ և Դվինին տիրացան Ֆադլ իբն Ջաֆար Համդանին և Իբրահիմ ալ-Դաբբին, որոնք շուտով դուրս մղվեցին Ատրպատականում նորից իշխանության համար պայքարող Դայսամի կողմից։

951 թվականին Դվինը գրավեց Մուհամմադ իբն Շադդադը, որն, ըստ երևույթին, առանց դժվարության տիրացավ քաղաքին։ Շուտով Դվինի վրա հարձակվեց Վայոց Ձորի Սյունի իշխանը («Տէր Մոզայ», արաբերեն «Դիր Մուս»), որը գ․ր․ք էր հավաքել հայերից և նույնիսկ լեզգիներից, սակայն անհաջողության հանդիպեց։

Նման հարձակումներից պաշտպանվելու նպատակով Մուհամմադ իբն Շադդադը բնակիչների աշխատանքով քաղաքից դուրս գտնվող մի բլրի (հավանաբար Տիկնունի) վրա ամրոց կառուցեց։

Սակայն, երբ Դեյլեմիկներից ու քրդերից բաղկացած զորքով Դվինի վրա հարձակվեց հենց ինքը՝ Իբրահիմ իբն ալ-Մարզուբանը, քաղաքի պաշտպանները գավաճանեցին և Մուհամմադ իբն Շադդադը խույս տվեց Վասպուրականի կողմերը։ Հաղթական զորքը մտավ Դվին և սկսեց հարուստ քաղաքի ավազակային կողոպուտը, որի հետևանքով մեծամեծների մի պատվիրակություն աճապարեց նրա մոտ, խնդրելով վերադառնալ քաղաք և այն փրկել կողոպուտից ու ավերից։

Ահա այս ժամանակ էր, որ Դվինի վրա հարձակվեց Աշոտ 3-րդ Ողորմածը, սակայն հաջողություն չունեցավ։ Հայոց թագավորի հարձակումը բնականաբար թուլացրել էր Դվինի ամիրայի դիրքերը և երբ 954 թվականին Ատրպատականի Սալար Մարզուբանը (բանտից նոր ազատված) նորից բանակ ուղարկեց Դվին, Մուհամմադ իբն Շադդադը նորից փախավ քաղաքից, դիմելով Վասպուրականի կողմերը։—580։

145. Հովհաննես Ձմշկիկի իրագործած հայերի նոր գաղթեցման մասին հիշատակում է բյուզանդական կին պատմիչ Աննա Կոմնենան։ Նա գրում է. «Պավլիկյանները ամենավայրենի են, բիրտ և վտանգներից չվախեցող։ Հովհաննես Ձմշկիկը, այն հռչակի կայսրը, նրանց պատերազմում հաղթելուց հետո, գերեվարելով Ասիայից, այն է՝ Խալյուբներից և հայկական վայրերից, Թրակիա տեղափոխեց և ստիպեց բնակվել Ֆիլիպպուպոլսի շրջակայքում։ Այսպիսով նա... նրանց հեռացրեց այն ամենաանառիկ ամրոցներից ու բերդերից, որոնց նրանք տիրում էին բռնությամբ...» (Annae Comnenae, Alexias, Migne, Patrologia graeca, t. 131, col. 1097)։ Աննա Կոմնենայի «Ալեքսիականը» հենց վերջերս լույս տեսավ ռուսերեն թարգմանությամբ (տե՛ս Анна Комнина, Алексиада, Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, Москва, 1965, стр. 395)։

Տիվրիկի՝ պավլիկյան շարժման կենտրոնի կործանումը և պավլիկյան շարժման ճնշումը տեղի է ունեցել Վասիլ Ա կայսեր կողմից 872 թ.։ Դրանից հետո պավլիկյանները հանդես են գալիս որպես աղանդավորներ բառիս բուն իմաստով, և ոչ թե որպես մարտիկներ հանուն սոցիալական հավասարության։ Հետևաբար չի կարող չզարմացնել և մտածել չտալ այն փաստը, որ մի ամբողջ հարյուրամյակ հետո հանկարծ պավլիկյաններ են հիշատակվում Խալյուբներում և հայկական վայրերում։ Նրանք ոչ միայն խաղաղ կերպով իրենց աղանդն են դավանում, այլ և տիրում են ամրոցների և բերդերի, զինված դիմադրում են բյուզանդական զորքերին, որոնց առաջնորդում էր Հովհաննես Ձմշկիկը։ Ձմշկիկի բռնագաղթեցրած «պավլիկյանները», ամենայն հավանականությամբ, թոնդրակեցիներ են, որոնք իսկապես որ 10-րդ դարի երկրորդ կեսում հսկայական ուժ էին ներկայացնում և իսկապես որ դիմադրում էին բյուզանդական ագրեսորներին Հայաստանում։ Թոնդրակեցիները բյուզանդական աղբյուրներում չեն հիշատակվում և դա չի կարող չզարմացնել, որովհետև թոնդրակյան շարժման մասսայական տարածման ժամանակ է, որ սկսվում է Բյուզանդիայի հափշտակողական քաղաքականությունը Հայաստանում, որին դիմադրում էին աղանդավորները։ Թոնդրակեցիների անվան բացակայությունը բյուզանդական աղբյուրներում կարելի է բացատրել միայն այն հանգամանքով, որ բյուզանդացիները թոնդրակեցիներին համարում էին և անվանում պավլիկյաններ (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը ըստ հին բուլղարերեն մի ձեռագրի, Տեղեկագիր, № 1, 1957, էջ 88—89)։—586։

146. Բոգոմիլների շարժումը իրենից ներկայացնում էր աշխատավոր գյուղացիության հակաֆեոդալական պայքարը։ Աղանդավորների մասին առաջին հիշատակությունները վերաբերում են 10-րդ դարի առաջին կեսին։ Բոգոմիլները դեմ էին սեփականության և կոչ էին անում իրենց հետևորդներին հրաժարվել նրանից։ Նրանց իդեալն էր ունեցվածքի հավասարություն։

Բոգոմիլության մեջ հանդես էին գալիս երկու ուղղություն, ավելի ձախը, որ կողմնակից էր զինված պայքարի ընդդեմ շահագործողների։ Սրանք իրենց անվանում էին «կատարյալ բոգոմիլներ»։ Մյուս ուղղությունը ավելի հաշտվողական էր և նրա կողմնակիցները հիմնականում պատկանում էին հոգևորականության ստորին շերտերին։ Բոգոմիլները, ինչպես և մանիքեցիները, մեսսալիաններն ու պավլիկյանները, ընդունում էին երկու, իրար հակոտնյա սկզբունքների գոյությունը՝ բարու և չարի։ «Սուրբ» գրքերից ընդունում էին միայն Նոր Կտակարանը, մերժում հոգևոր խորհուրդները, սրբապատկերները, խաչը և սրբերի մասունքների պաշտամունքը։ Չէին ընդունում եկեղեցու նվիրապետությունը։ Բոգոմիլությունը, բացի իր դասակարգային բովանդակությունից, ուներ նաև ժողովրդա-ազատագրական պայքարի բնույթ, ուղղված Բյուզանդիայի դեմ։ Բոգոմիլները ակտիվ մասնակցություն ունեցան կայսրության դեմ բարձրացված 1040 և 1072 թթ. ապստամբություններին։ Աղանդավորները դաժան հալածանքների ենթարկվեցին իշխող դասակարգերի կողմից։ 14-րդ դարում նրանք արդեն աղանդավորներ էին բառիս բուն իմաստով և ոչ թե անհավասարության դեմ մղվող պայքարի մարտիկներ։ Մարքսիստական գրականության մեջ դեռևս վիճելի է այն հարցը, թե Ֆրանսիայում և Իտալիայում հանդես եկած կատարների և ալբիգոյցիների աղանդավորական շարժումների վրա բոգոմիլներն ազդել են, թե ոչ։ Որոշ մասնագետներ գտնում են, որ այս վերջին շարժումները ծագել են տեղական հողի վրա և չեն կրել արտաքին ազդեցություններ, որ դրանք իրենց միջավայրի ծնունդ են (բոգոմիլության մասին մանրամասն տե՛ս հետևյալ աշխատությունները. D. Obolensky, The Bogomils, A Study in Balkan Neo-manichaeism, Cambridge, 1948; Д. Ангелов, Богомилството в България, Второ основно преработено о допълнено издание, София, 1961։ Կա այս գրքի ռուսերեն թարգմանությունը, առաջին հրատարակությունից կատարված. Д. Ангелов, Богомильство в Болгарии, Москва, 1954։ Տարբեր աղանդների բոգոմիլության վրա ունեցած ազդեցության մասին, այդ թվում և պավլիկյանության, տե՛ս նույն հեղինակը հետևյալ գործը. Влияния на чужди ереси върху богомилството, Известия на семинарите при Историко-филологическия факултет на университета "Св. Климент Охридски" в София, кн. 1, 1942, стр. 145—180)։—586։

147. Տաղանդավոր Տրդատ ճարտարապետը, հավանաբար, և քանդակագործ էր։ Գագկաշեն տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերված Գագիկ թագավորի արձանը վերագրվում է Տրդատ ճարտարապետին (Տրդատի մասին նորագույն աշխատություններից տե՛ս К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, նաև Ս. Գ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 35—38)։—592։

148. Թոռնիկ աբեղայի գործունեությանը Ն. Ադոնցը նվիրել է մի ծավալուն ուսումնասիրություն (տե՛ս N. Adontz, Tornik le Moine, Byzantion, vol. XIII, fasc. I, 1938, p. 143—164)։—596։

149. Ակադ. Աշոտ Հովհաննիսյանը նշված ժամանակաշրջանի աղբյուրներում հաճախ հիշատակված այդ «ավազակների» տակ տեսնում է թոնդրակյան աղանդավորներին, և որ փաստը վկայությունն է այն բանի, որ թոնդրակյան շարժումը մասսայական բնույթ է կրում և լուրջ վտանգ ներկայացնում իշխող կարգերի համար (տե՛ս Аш. Иоаннисян, Движение тондракитов в Армении (IX—XI вв.), Вопросы истории, № 10, 1954, стр. 105)։

Շիշմանը համարվում է դինաստիայի (Շիշմանիդների, ինչպես ընդունված էր գրել) հիմնադիր, բայց այժմ ապացուցված է, որ այդպիսի մարդ գոյություն չի ունեցել, և որ դա 18-րդ դարում թույլ տրված մի սխալի արդյունք է (տե՛ս St. Runciman, A History of the first Bulgarian Empire, London, 1930, p. 211—221)։—600։

150. Կոմսաձագ բառը հունարեն Κομητόπουλοι -ի թարգմանությունն է, նշանակում է «կոմսի որդի»։ Կոմսաձագը ազգանուն չէ։ Պատմաբանների մեծագույն մասը այժմ չի ընդունում Ասողիկի վկայությունը, թե բուլղարական ցար Սամուիլը (980—1014 թթ.) դերջանցի հայ էր, թեև կան և այդ թեզը պաշտպանող ուսումնասիրողներ (տե՛ս N. Adontz, Samuel l'Arménien, roi des Bulgares, Bruxelles, 1938: Հմմտ. Հ. Վ. Ի(նգլիզյան), Հանդես Ամսօրյա, 54 (1940), էջ 250—251)։—601։

151. Լեոն թուրքեր ասելով, նկատի ունի ընդհանրապես թուրքական ցեղերին, որոնք հնագույն ժամանակներից ապրել են Ասիայի միջին մասերում։ Նրանք օգտագործվել են որպես

վարձկան զորք Սասանյան Իրանի և մանավանդ Աբբասյան խալիֆայության կողմից, միշտ ձգտելով դեպի Առաջավոր Ասիա։ Եթե խազարները Կասպից ծովի հյուսիսային մասերով մտել են Հյուսիսային Կովկաս, ապա օղուզները 11-րդ դարում Կասպից ծովի հարավից հասան մինչև Փոքր Ասիա։ Թեև Աբբասյան զորքի մեջ կային թուրք վարձկան խմբեր, որոնք կռվում էին Փոքր Ասիայում Բյուզանդիայի դեմ, այնուամենայնիվ նրանց հաստատումը այս երկրամասում սկսում է միայն սելջուկյան արշավանքներից հետո (տե՛ս Р. А. Гусейнов, Тюркские этнические напластования XI—XII вв. в Закавказье, Тезисы. Семинар по проблеме происхождения и формирования Азербайджанского народа, № IX, Баку, 1966)։—624։

152. Վասպուրականի Սենեքերիմ թագավորը Վասիլ կայսեր տալով իր երկիրը և նրա փոխարեն ստանալով Սեբաստիան, չէր շարունակում մնալ թագավոր, նա դառնում էր բյուզանդական մի նահանգի սովորական կառավարիչ։ Այդ իմաստով ճիշտ չէ Լեոն, երբ գրում է, թե «Սենեքերիմը չէր զրկվում իր թագից», որ նա «տեղափոխվում էր կայսրության ներսը՝ այնտեղ ապահովապես թագավորությունը շարունակելու համար»։ Սենեքերիմի մասին շատ հատկանշական են Կեկավմենոսի «Ստրատեգիկոն» աշխատության հետևյալ տողերը. «Սենեքերիմը, որ հին թագավորներից էր սերում, ցանկացավ իր երկիրը տալ տեր Վասիլ Ծիրանածին կայսեր և դառնալ նրա ծառան։ Կայսրն ընդունեց և որպես շնորհակալություն նրան պատվեց մագիստրոսի աստիճանով և ոչ ավել, թեպետև նա թագավոր էր և հին թագավորների հետնորդ»։ (տե՛ս Cecaumeni Strategicon et Incerti scriptoris De Officiis regiis Libellus, ediderunt B. Wassiliewsky et V. Jernstedt, Petropoli, 1896, p. 96)։—633։

153. Լեոն Սենեքերիմի գաղթը Սեբաստիա թվագրում է 1022 թ.։ Հայագետների մեջ ավելի է ընդունված 1021 թ.։ Վերջին կարծիքին է և Վ. Վարդանյանը, որ Վասպուրականի Արծրունյաց թագավորության պատմությանը նվիրել է մի մենագրություն (տե՛ս В. М. Варданян, Социально-экономические и политические отношения в Васпураканском царстве, IX—XI вв., Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1965, стр. 18։ Գաղթեցման 1022 թ. պաշտպանում է Վ. Իսկանյանը (տե՛ս նրա հոդվածը. «Արծրունյաց արտագաղթի մասին», Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1965, էջ 67—82)։—634։

154. Աղբյուրների տվյալների հիման վրա կարելի է կազմել Վասպուրականի բյուզանդական կառավարիչների (կատապանների) ցուցակը (1021—1060 թթ.)։ Այսպես.

1. Վասիլ Արգիրոս
2. Նիկեփոր Կոմնենոս
3. Նիկոլաոս Խրիսելիոս Բուլղար
4. Նիկիտաս Պեգոնիտես
5. Գեորգիոս Մանիակես
6. Կոստանդին Կավասիլաս
7. Ստեփանոս Լիխուդես
8. Գրիգոր Մագիստրոս Պահլավունի
9. Ահարոն Բուլղար՝
10. Բագարատ Վխկացի։—634։

155. Գառնիի լեռներում հայտնաբերված «վիշապները» (ձկան ձևի քարե հսկայական արձաններ), ոչ մի առնչություն չունեն «վիշապազունների» (այսինքն՝ մարերի, ինչպես գրում է Լեոն) հետ։ Նման քարակոթողներ շատ լայն տարածում ունեն և հայտնաբերվել են նույնիսկ Միջին Ասիայում և կապ ունեն ջրի պաշտամունքի հետ։ Նրանց շուրջ բազմաթիվ վեճեր են առաջացել (Վիշապների մասին տե՛ս М. Я. Марр—Я. И. Смирнов, Вишапы, Труды гос. Академии Истории Материальной Культуры, т. 1, 1931; Б. Б. Пиотровский, Вишапы, Каменные статуи в горах Армении, Ленинград, 1939։ Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941։ Гр. Капанцян, О каменных стеллах на горах Армении, Ереван, 1952)։—637։

156. Բյուզանդական աղբյուրները քրդերին հիշատակում են նաև 9-րդ դարում։ Հետաքրքրական է Թեոփանեսի Շարունակողի ժամանակագրության մեջ արձանագրված մի փաստ։ Վասիլ Ա կայսրը արշավանք է կատարում արաբների դեմ և մեծ հաջողությունների է հասնում հատկապես Տավրոսի շրջանում։ Վերադարձին ժամանում է Կեսարիա քաղաքը, որտեղ իմանում է, որ իր մի այլ զորաբաժին հաջողությունների է հասել Կոլոնիայում և Լուլոնում։ Այդ լուրին հետևում են և փաստական ապացույցները, հսկայական քանակությամբ ռազմավար և ռազմագերիներ, որոնք ձեռք էին բերվել Տարսոնի բերդում և պավլիկյան աղանդավորներին պատկանող քաղաքներում։ «Այստեղ (Կեսարիա) բերվեց և քրդերի (Κούρτων)

մի մեծ ամբոխ. (Վասիլը) հրամայեց նրանց կոտորել»։ Տե՛ս Theophanes Continuatus, Bonnae, 1838, p. 283։—638։

157. Միքայել Իասիտեսը Իբերիայի (այսինքն՝ Բյուզանդիային ենթակա Վրաստանի) դուքսն էր, իսկ Բագրատունյաց թագավորության վերացումից հետո դարձավ Հայաստանի և Իբերիայի կատապանը։—676։

158. Անիի (կամ Հայաստանի) բյուզանդական կառավարիչները (կատապաններ կամ դուքսեր) 1045—1064 թթ. հետևյալներն են.

1. Միքայել Իասիտես
2. Կատակալոն Կեկավմենոս
3. Ահարոն Բուլղար
4. Հովհաննես Մոնաստիրիոտես
5. Բագարատ Վխկացի։—683։

159. «Սպաթար կանկիտոսը» դա բյուզանդական սպաթարոկանդիդատ աստիճանի խեղաթյուրումն է։ Հետաքրքրական է նշել, որ սպաթարոկանդիդատի հնագույն հիշատակությունը պահպանել են հայկական սկզբնաղբյուրները։ 645 թ. դեպքերի կապակցությամբ Սեբեոսը գրում է. «եւ ընկալաւ (Կոստանդին կայսրը) ... իբրև... զորդի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանտիտատ» (Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, Երևան, 1939, էջ 116։ Հմմտ. J. B. Bury, The Imperial Administrative System in the ninth century, London, 1911, p. 26—27)։—684։

160. Սուրբ Մարիամ, Ամպեր և սուրբ Գրիգոր բերդերը հիշատակում են միայն բյուզանդական աղբյուրները։ Սուրբ Մարիամը համապատասխանում է Սուրմառիին (այժմ Սուրմալու), Ամպերը Լեոն միանգամայն ճիշտ նույնացնում է Ամբերդի հետ, իսկ սուրբ Գրիգորի բերդի տակ ենթադրվում է Խոր Վիրապը, Դվինից հարավ (այդ մասին տե՛ս P. Peeters-ի հոդվածը (Byzantion, t. VI, 1931, p. 435—440); նաև E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinichen Reiches von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935)։—686։

161. Խելիդոնիոն բերդը նույնանում է Ծիծեռնակաբերդի հետ (Խելիդոնիոն հունարեն նշանակում է ծիծեռնակ) (տե՛ս P. Peeters, նշվ. աշխ. Ռ. Գրուսեն նրա տակ տեսնում է Երևանի բերդը։ Տե՛ս R. Grousset, Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, p. 584)։—686։

162. Բագարատ Մագիստրոսի հայկական ծագումը հաստատում են և բյուզանդական աղբյուրները, անվանելով նրան 'Αρμένιος։ (Georgios Cedrenos, Historiarum Compendium, t. II, Bonnae, 1839, p. 652—653; Michaelis Attaliotae, Historia, Bonnae, 1853, p. 80)։ Անիում թողած մի արձանագրության մեջ նա իրեն անվանում է Վխկացի, այսինքն՝ Վխիկ վայրից։ 1006/1007 թթ. կրող մի հունարեն արձանագրության մեջ, որ գտնվում է Թորթումի Էգրեկ գյուղում, հիշատակված է «Ստրատեգիկոն»-ի հեղինակ Կեկավմենոսի պապը և նրա հայր Սմբատը, որ նույնպես Վխկացի է անվանված։ Այսպիսով, պարզվում է, որ Բագարատ Վխկացին պատկանում էր Կեկավմենոսների ընտանիքին, և որ այդ ընտանիքը ծագումով հայկական էր (այդ մասին տե՛ս Հ. Բարթիկյան, Արևելից կատապան մագիստրոս Բագարատի և Կեկավմենոսների ազգաբանության հարցի շուրջը, Revue des Etudes Arméniennes, t. II, 1965)։—690։

163. Անիի հարկերի մասին խոսում է Ահարոն Մագիստրոսը իր արձանագրության մեջ, որ փորագրված է Անիի մայր տաճարի պատի վրա և թվագրվում է 1055/1056 թթ.։ Խոսքը «պախտ տանց» և «թաստակ» կոչված հարկերի մասին է, որ քաղաքի բնակիչները ութ լիտր (այսինքն՝ ոսկե լիտր, 576 ոսկեդրամ, դահեկան) չափով վճարում էին կայսրությանը։ Ահարոն Մագիստրոսի միջնորդությամբ Բյուզանդիան հրաժարվեց այդ հարկը գանձելուց։ Արձանագրության մեջ խոսվում է նաև «գլուտ» կոչված հարկի մասին, որ Անիի մութասիբը (քաղաքապետը) երկու լիտր (144 դահեկան) չափով վճարում էր Անիի կառավարչին։ Այդ հարկը ևս, համաձայն արձանագրության, վերացվում էր (տե՛ս Հ. Բարթիկյան, Ահարոն Մագիստրոսի արձանագրության (1055—1056 թթ.) մեջ հիշատակված հարկերի մասին, Պատմա-բանասիրական հանդես, № 4, 1959, էջ 168—178)։—690։

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաս Ա թագավոր 549, 557, 559, 560, 574—576, 578, 579
Աբաս Բ, Մուշեղ թագավորի որդին 600, 601, 607, 611
Աբաս Բագրատունի, սպարապետ 492, 496, 502, 510, 512
Աբաս, կաթողիկոս Աղվանից 239
Աբբաս, Մուհամմեդ մարգարեի հորեղբայրը 296
Աբբասյաններ 387, 397, 424, 425, 428, 496, 533
Աբբասյան խալիֆայություն 571
Աբբասյան հարստություն 296—298, 455
Աբբասյան տոհմ 382
Աբգար թագավոր 574
Աբդ-էլ-Մելիք, արաբական խալիֆ 321, 323, 374, 375
Աբդիշո եպիսկոպոս 159
Աբդլա, Բուղա Շահարիի դեսպան հայերի մոտ 441
Աբդլա (նաև Աբդուլլահ) Մուհամմեդ. իբն-Մերվանի տեղապահը Հայաստանում 325, 371
Աբդռահիմ, արաբ զորավար 304, 305
Աբդուլ-Ազիզ, ոստիկան 376—379
Աբդուլլահ 424
Աբդուլ-Մալիք-իբն-Ջահհաֆ (Ջահապ) 395, 412, 413, 417
Աբլասադ 446
Աբլբատ 503
Աբլհաճ. Ատրպատականի էմիր 599
Աբլհաճ էմիր Բուվեյհյան հարստությունից 598
Աբլխարիբին 598
Աբխազ (այժմյան Ղուբա) քաղաք 369, 370
Աբրահամ Ամիրխանյանց 269
Աբրահամ եպիսկոպոս 153
Աբրահամ կաթողիկոս Աղբաթանցի 231, 232
Աբրահամ Խոստովանող 17, 82, 86, 87, 134—135
Աբու-Բեքր, արաբ խալիֆ 274, 280, 293, 294, 298
Աբուլ-Աբբաս (Արնախում) արաբ խալիֆ 383, 384
Աբուլվար 649, 664, 674, 677, 680, 684, 686, 703
Աբուլ-Ֆեդա 587
Աբու-Խանիֆա 274
Աբու-Խաֆս 573
Աբու-Ջաֆր Արծրունի 450
Աբու-Մկդեմ 441, 450
Աբու-Մուսե տե՛ս Եսայի Աբու-Մուսե
Աբու-Մուսեի թագավորական տոհմ 613
Աբու-Ջաֆար ալ-Մանսուր, արաբ խալիֆ 383, 384, 386, 388, 395, 396, 399
Աբուսակր Վահունի 537
Աբուսահլ իշխան, Գագիկ Ա թագավորի քեռորդին 611
Աբուսահլ, Վասպուրականի Սենեքերիմ-Հովհաննես թագավորի որդին 657, 668
Աբուսահլ-Համազասպ, Վասպուրականի թագավոր 629
Աբուսեթ (Աբու-Սայիդ) 428, 430, 431
Աբուտլուփ 598, 599
Ագաթանգեղոս 28, 29, 31, 32, 138, 139, 347
Ագարակ բերդ 536
Ագրակ գյուղ 353
Ադանա 583
Ադրբեջան 361, 362, 366, 367, 369, 370, 380
Ադրիանապոլիս քաղաք 504, 687
Ադրիատիկ ծով 617
Ազատ գետ 12[illegible], 219, 222, 6[illegible]5
Ազերմիդուխտ թագուհի 264, 265
Աթենք 17, 162, 174, 466
Աթիկ 111
Աժդահակ 637
Ալազան գետ 143, 145, 151
Ալաման գյուղ 353, 360, 489
Ալամունդար 172
Ալանաց դուռ, տե՛ս Դարիալի կիրճ
Ալարոդ ժողովուրդ 143
Ալբանիա, տե՛ս Աղվանից աշխարհ
Ալեքսանդր, բյուզանդական կայսր 546
Ալեքսանդր Մակեդոնացի 245, 284, 303, 346
Ալեքսանդրիա, քաղաք Եգիպտոսում 95, 101, 191, 244, 334, 346
Ալեքսանդրիայի եկեղեցական աթոռ 97—101
Ալթին-դաղ լեռներ 619
Ալ-Իսթահրի (էլ-Ստահրի) 361, 364—368
Ալ-Մուկադդասի 361, 362, 367
Ալ-Յակուբի 361
Ալ-Վազկի, երկրորդ Հայաստանի մասում 366
Ալի, արաբ զորավար 416
Ալի-Իբն Յահյա (նաև Արմանի) 859 թ. 496
Ալի, արաբ խալիֆ 294—298, 318
Ալի իմամ, Հուսեինի որդի 298
Ալի Ռիզա 298
Ալտայան լեռներ 619, 620, 624, 628
Ալևոր 599
Ախայանք գյուղ 560
Ախուրյան գետ 233, 359, 482, 483, 488, 577, 591, 592, 670, 678, 591

Ակակիոս պրոկոնսուլ 169, 170
Ակեացի նախարարական տոհմ 442
Ակոռի գյուղ 114, 352, 372
Ահմադ (Ահմաթ), ամիրա 520—522
Ահմադ Իբն-Խալդի 501, 502
Ահմատան, քաղաք 235
Ահմեդ էլ-Մոթավդ, արաբ խալիֆ 505
Ահմեդ իբն-Վասըլ Իսպահանի 363
Աղան (Խուլ մականունով) 695, 696
Աղան Արծրունի 17, 60, 104
Աղան եպիսկոպոս Արծրունի 136
Աղբակ գավառ 429, 431, 451, 524, 535, 563, 640
Աղթամար կղզի 303, 314, 316, 565, 566
Աղիովիտ գավառ 247, 316, 413
Աղձնյաց (Աղձնիք) աշխարհ 335, 428, 429, 431, 432, 455, 520, 566, 581, 638, 639
Աղստև գետ 549
Աղստևի ձոր 613
Աղվանիստան 628
Աղվանից դաշտ 223
Աղվանից աշխարհ (Աղվանք, Առան) 12, 63, 64, 73, 74, 88, 90, 91, 106, 110, 142—147, 154, 155, 200, 211, 229, 244, 246, 248, 249, 260, 261, 264, 309, 311, 314, 316, 320, 322, 324, 326, 328—332, 335, 339, 341, 361, 362, 364—367, 369, 370, 378, 379, 386, 399, 446, 496, 500, 506, 520, 522, 543, 553, 555, 580, 612, 639, 663, 664, 703
Աղվանից թագավորություն 612
Աղվեն «հովոցի տեղ» Արցախում 154
Ամատունիներ, Ամատունյաց նախարարական տոհմ (տուն) 111—112, 393, 427, 442
Ամարաս 152, 419
Ամբերդ (Ամպեր բերդ) 675, 686
Ամիդ (տե՛ս նաև Դիարբեքիր) քաղաք 133, 134, 135, 137, 210, 211, 248, 304, 520, 587, 588, 639
Ամյուկ բերդ 499, 536, 537
Ամր 392, 393, 395
Ամրական ժայռ 540
Ամրան (Ցլիկ) 562
Ամու-Դարիա (Օքսուս) գետ 198, 621, 624, 628, 691
Այծյաց բերդ 588
Այնիյան ցեղ 485
Այսրկովկաս 211, 250, 311, 320, 324, 361, 364, 434, 485, 505, 565, 609, 636
Այրևանք (Գեղարդ) 567
Այրից վանք 426
Անակ 487
Անահիտ աստվածուհի 256
Անահիտի տաճար, Աշտիշատում 354
Անանիա եպիսկոպոս 17, 64, 466
Անանիա Մոկացի, կաթողիկոս 579, 580, 651
Անանիա Շիրակացի (Անեցի) 323, 341—344
Անաստաս, Բյուզանդիայի կայսր 131, 132, 141, 156
Անաստաս կաթողիկոս Հայոց 330, 345, 352
Անաստաս կաթողիկոս Վրաց 161
Անաստաս վարդապետ 240
Անաստաս, հունաց պատրիարք 403, 404
Անատոլ 14, 77
Անգեղտուն, գավառ 164
Անգղ բերդ, Արածանի գետի վրա 175, 234
Անդեկան, պարսից մարզպան Հայաստանում 129
Անդովկ (Անդոկ), Սյունյաց իշխան 54—56
Անդրկովկաս 144, 249, 250, 261, 264, 529
Անի, քաղաք (ամրոց, բերդ) 112, 341, 353, 357, 359, 426, 481, 485, 489, 492, 525, 532, 534, 577, 578—580, 591, 592, 598, 600, 605, 618, 634, 642, 643, 645—649, 652—654, 657, 658, 660, 661—664, 668—671, 673—682, 683, 684, 686, 687—690, 693, 695, 700, 701
Անտիոք, քաղաք 101, 163, 174, 234, 236, 303, 584, 594
Անուշվռամ 60, 103, 104, 136
Անիի թագավորություն 579, 580, 606, 617, 645, 648
Անհուշ բերդ 30, 131, 252, 253
Անձիթ գավառ, տե՛ս Հանզիթ գավառ
Անձևացյաց գավառ, աշխարհ 48, 429, 563
Անձևացյաց նախարարական տոհմ 114, 442
Աննա, Արսվեղան տոհմի իշխան Բուտի կինը 353
Աննա, Իսավրացի բյուզ. կայսեր դուստրը 402
Աշոտ Արծրունի (Աշոտ իբն-Համզա) 426, 427, 429—431, 435, 437—439, 442, 451, 494, 498, 500, 501
Աշոտ իշխանաց իշխան, ապա Աշոտ Ա Բագրատունի թագավոր 436, 492, 493, 494—498, 499—507, 509, 510, 513—515, 517, 518, 520, 523, 526, 528, 551, 678
Աշոտ Բ Երկաթ 543—545, 548, 549, 550, 553, 555—562, 566—570, 575, 578
Աշոտ Գ Ողորմած Բագրատունի 577—581, 588—591
Աշոտ Ե Բագրատունի 646—650, 655, 662, 663
Աշոտ Բագրատունի, Հայաստանի կառավարիչ 353
Աշոտ Բագրատունի, Աշոտ Մսակերի թոռը 431, 433, 435, 460, 464
Աշոտ Բագրատունի Մսակեր, Հայոց սպարապետ (806—807, 825—826 թթ.) 320—322, 345, 395, 411—414, 416—418, 426, 459, 489, 492
Աշոտ Բագրատունի, պատրիկ Հայաստանի կառավարիչ, Վասակ Բագրատունու որդին 380—384, 389
Աշոտ Բագրատունի, պատրիկ Սահակ Բագրատունու որդին 391, 392
Աշոտ Բագրատունի, Սմբատ Բյուրատյան Բագրատունու եղբայրը 372
Աշոտ Բագրատունի, վրաց կյուրապաղատ 391, 416, 492
Աշոտ Գնթունի 557
Աշոտ իշխան, Գրիգոր Մագիստրոս Տարոնեցու որդին 617
Աշոտ Կամսարական 84
Աշոտ Շապուհյան, Սմբատ Ա թագավորի եղբայր՝ Շապուհի որդին 526, 529, 535, 543, 555, 557, 562, 567, 569, 575
Աշոտ-Սահակ Վասպուրականի թագավոր 629
Աշոտ, Սյունյաց Փիլիպպե իշխանի որդին 444
Աշոցք գավառ 413, 481, 482, 530
Աշոցքի լեռներ 483
Աշտատ Հեզդահար 234, 235
Աշտարակ գյուղ 159
Աշտիշատ 34, 255, 309, 354
Աշուշա բդեշխ 64, 66, 102, 103, 136
Ապահունյաց գավառ (Ապահունիք) 247, 257, 464, 515, 597, 599, 603, 607, 608, 610, 660
Ապար աշխարհ 86
Ապարան գյուղ 103
Ապիրատ իշխան 648
Ապլղարիպ Ապաղամբենց 643
Ապրսամ, Արծրունի 84
Ապողամր 642
Ապուղամրենց տոհմ (տե՛ս Պահլավունիների իշխանական տոհմ)
Ապումայա Արծրունի 427
Ապումչուր 390
Ապունճեպ 390
Ապուպելճ Արծրունի 427
Ապուչափր Արծրունի 427
Առան 151
Առանձար Ամատունի 84
Առանշահիկ (Եռանշահիկ) 151, 327, 419
Առաջին Հայք 164, 167, 401
Առուստոմ Գնունի 114
Առավան Աղբերակցի 127
Առավան Անձևացի 84
Առաքելոց եկեղեցի Անիում 616, 642
Առեստավան գավառ 213
Առնակ Ամատունի 84, 91
Առոն (Ահարոն) Մագիստրոս, Անիի բյուզանդական կառավարիչ 689, 690, 696, 699, 701
Ասանեթ 471, 472
Աստղիկ աստվածուհի 256
Աստղիկ տաճար Աշտիշատում 354
Ասիդ 684
Ասորեստան 87, 251, 290, 303
Ավան գյուղաքաղաք 220, 221, 235
Ավարայր գյուղ, դաշտ 76, 79, 81, 85, 115, 195, 196
Ավարայրի ճակատամարտ 76, 81, 83, 93, 94, 105, 115, 129, 194
Ավնիկ բերդ 710
Ատատ Խոռխոռունի 223, 225, 226
Ատլանտյան օվկիանոս 162, 360, 623
Ատոմ Անձևացի 563
Ատոմ Գնունի 84, 113
Ատոմ, Վասպուրականի Սենեքերիմ-Հովհաննես թագավորի որդին 657, 668
Ատիլլա 76, 77, 624
Ատրներսեհ, Խաչենի բերդի տերը, Սյունյաց տոհմից 419, 424
Ատրներսեհ, Վասակ Սյունեցու որդին 66, 71
Ատրներսեհ, վրաց թագավոր 391, 446, 510—512, 524, 532—535, 543, 544, 549, 553, 554, 560
Ատրներսեհ-Փուշտիպանան-Սալար պարսից զինվորական 115
Ատրորմիզդ-Արշական, Հայաստանի մարզպան 82, 83
Ատրպատական 111—112, 121, 125, 131, 215, 233, 246, 263, 264, 287, 304, 306, 314, 414, 419, 424, 431, 438, 461, 495, 505, 516—518, 523, 524, 526, 528, 530—533, 536, 537, 550, 555, 556, 562—564, 568, 580, 629, 636, 637, 639, 671, 693, 704
Ատրվշնասպ-ի-Տապյան 115
Ատրվշնասպ Հողմանդյան 110, 112
Արաբական թերակղզի 266
Արաբիա 266, 267, 269, 271, 273, 274, 280, 292, 298, 303, 365, 375, 412, 455, 504, 513, 700
Արագած լեռ 138, 147, 481, 489, 516, 686
Արագածոտն գավառ 135, 230, 352, 465, 481, 516, 531
Արա Գեղեցիկ 31
Արալյան լիճ 619, 620
Արածանի գետ 34, 234, 247, 259, 394, 484, 491, 695
Արահեզ գյուղ 105
Արամանա գյուղ 69
Արամոն գյուղ 400
Արարատյան երկիր (դաշտ, աշխարհ, նահանգ) 23, 24, 52, 73, 121, 135, 138, 146, 175, 209, 219, 233, 247, 251, 305, 309, 314, 352, 362, 366, 392, 426, 444, 451, 481—483, 485, 500, 515, 531, 549, 552, 557, 562, 575, 578, 591, 639, 674
Արարատյան թագավորություն 646
Արաքս գետ 52, 108, 112, 113, 127, 143, 145—147, 162, 210, 212, 247, 263, 305, 311, 322, 362, 368, 369, 372, 419, 481,

483, 487, 496, 528, 540, 575, 635, 637, 641, 700
Արգամ 637
Արգինա գյուղ, Շիրակում 234, 580, 592, 614, 648, 651, 689
Արդաբիլ 366, 370, 566
Արդելկերիր, արաբ զորավար 399
Արդեշիրխատ քաղաք 36
Արեզ քաղաք 471
Արձն կամ Արզն, գավառ 210, 217, 367, 573
Արիստակես Լաստիվերտցի 596, 605—606, 650, 653, 654, 666, 667, 670, 673, 678, 679, 682, 684, 687, 695—697, 699, 700, 702—704, 706—708, 710
Արիստոտել 8, 189, 191, 192
Արժակ, վայր Վասպուրականում 667
Արծափ բերդ 307, 308
Արծկե, բերդ 711
Արծն գավառ 208, 304
Արծն քաղաք 682, 688, 700—703, 706
Արծրունիներ, Արծրունյաց նախարարական տոհմ (տուն) 52, 60, 103, 114, 128, 393, 398, 426, 427, 435, 437, 442, 450, 493, 517, 519, 524, 527, 538, 539, 635
Արծրունյաց թագավորություն Վասպուրականում 536, 668
Արհմն 40—43
Արձան 17
Արձնի գյուղ 393
Արճեշ 247, 309, 367, 393, 413, 575, 609, 639, 679, 695, 707
Արճուճ ամրոց 429, 536
Արմայիլ Գարգմանի իշխան 327
Արմիհր Առանշահիկ 327
Արյան լիճ 440, 442, 443, 450
Արշակ Բ, Հայոց թագավոր 30, 54, 165, 171
Արշակ իշխան 185, 186
Արշեն երեց 82
Արշակունիներ, Արշակունյաց տոհմ (Հայ) 151, 288, 487, 491, 504, 506, 589
Արշակունյաց թագավորություն 12, 16, 37, 54, 57, 165
Արշավիր Կամսարական 60, 69, 70, 75, 79, 84, 85, 88, 103, 643
Արշավիր, պարսից արքա 486
Արշարունյաց գավառ (Արշարունիք) 123, 411, 413, 481, 488, 489, 492, 496, 506, 549, 601, 697
Արովրիդ 184, 185
Արջո-Առիճ (այժմ Ալաջա), լեռնաշղթա 482, 489
Արսեն Ընծայնոց 80, 195
Արվաստան 213
Արտագերս բերդ 390, 486, 547
Արտազ գավառ 76, 116
Արտակ Մոկացի 64, 66, 79
Արտակ Պալունի 80, 195
Արտակ Ռշտունի 64
Արտաշատ 49, 52, 64, 86, 112, 122, 400, 401
Արտաշես Ա, թագավոր 103, 143, 147
Արտաշես Գ, թագավոր 11, 13, 14
Արտաշես Մամիկոնյան 82, 103, 105
Արտաշեսյան հարստություն 143, 146, 150, 345, 350
Արտաշիր, պարսից արքա 261, 264, 291, 486
Արտաշիր զորավար 184, 185
Արտաշիր, Գանձակի էմիր Փադլունի որդին 704
Արտավազդ Ապահունի 235
Արտավազդ, Բյուզանդիայի կայսր 402—404
Արտավազդ, հայ զորավար Բյուզանդիայում 180
Արտավազդ Մամիկոնյան 64, 369
Արտավազդ Ընտրունի 427
Արտավազդ վարդապետ 469
Արտավան Արշակունի 174—178, 184, 186
Արտեն Գաբեղյան 82
Արտոս սար 565
Արցախ 81, 143, 145—146, 151, 154, 223, 247, 331, 339, 365, 370, 419, 423, 446, 452, 613
Արցախի լեռներ 452, 545, 703
Արուճ, գյուղ (այժմ Թալիշ) 310, 358, 360, 390, 531
Արուսյակ 418
Արփա լիճ 482
Արփայս բերդ 315
Արփաչայի հովիտ 642
Աքեմենյաններ, Աքեմենյան հարստություն 224, 243, 288
Աֆրիկա 99, 179, 217, 219, 236, 238

Բ

Բաբ-Ձեյրուզ-Կուրդադ 366
Բաբելոն 87, 280, 288, 290
Բաբերդ 573, 709
Բաբեկ-Բաբան (նաև Բաբ) 416, 418—424, 446, 461
Բաբիկ, Սյունաց իշխան, Անդոկ իշխանի որդին 55, 91
Բաբիկ նախարար, Ռոփսենից տոհմից 84
Բաբիկ, Վասակ Սյունեցու որդին 66, 71
Բաբգեն կաթողիկոս 136, 137, 140, 156, 159
Բաբգեն, Սյունի իշխան (5-րդ դար) 56, 84, 112, 113, 115, 117
Բաբգեն Սյունեցի իշխան (9-րդ դարի կեսերին) 436
Բաբգեն Սյունեցի իշխան (10-րդ դար) 566, 567, 569
Բագարատ 490, 491
Բագավան, գյուղ 15, 121, 308, 352, 390
Բագար 388
Բագարան 353, 360, 508, 509, 529, 567, 577
Բագրար, արխազների թագավոր 610, 665, 680
Բագրատ սպարապետ 405
Բագարատ Բագրատունի, Աշոտ Մսակերի որդին (9-րդ դար) 411, 426—431, 434, 438, 494
Բագրատ Բագրատունի, Տարոնի իշխան (10-րդ դար) 594, 608
Բագարատ իշխան, Գրիգորիս Բագրատունու որդին, պատրիկ 575
Բագրատ Մագիստրոս 690
Բագրատունիներ, Բագրատունյաց տոհմ 53, 58, 64, 112 228, 320, 352, 359, 391, 392, 394, 395, 411, 416, 418, 427, 431, 487, 489—492, 496, 498, 508, 538, 549, 561, 562, 574, 578, 596, 670, 673, 675, 676, 680, 686, 687, 698
Բագրատունյաց թագավորություն 486, 510, 523, 576, 578, 580, 591, 611, 642, 659
Բագրևանդ գավառ 34, 72, 121, 175, 206, 210, 247, 366, 383, 390, 393, 395, 411, 451, 474, 493, 521, 524, 549, 608, 611, 695
Բագե 127
Բալահովիտ գավառ 164
Բալաշ, տե՛ս Վաղարշ
Բալթիկ ծով 625
Բալխաբ, վայր 370
Բալխաշ, լիճ 619
Բալկանյան թերակղզի 217, 248, 585, 601, 602, 704
Բակուր 56, 64
Բահրամ Գոռ (Վռամ Ե), պարսից թագավոր 11, 14, 15, 35—37, 65, 291
Բաղաբերդ, Սյունիքում 54
Բաղասական թագավոր 55
Բաղաց աշխարհ 419
Բաղաց թագավորություն 613
Բաղդադ 296, 297, 367, 395—397, 404, 413, 422, 424, 425, 428, 429, 431, 453, 455, 461, 494, 495, 503, 526, 530, 537, 546, 556, 571, 587, 588, 590, 591, 597, 602
Բաղեշ 304, 314, 428, 430, 566, 575, 639, 711
Բանա գյուղ (Արդահանի գավառ) 357
Բաշղ Վահևունի 115
Բաչունեյս 366
Բասենի գավառ 69, 210, 234, 305, 314, 321, 394, 423, 481, 515, 575, 597, 610, 617, 656, 696, 697, 699, 706, 710
Բասրա քաղաք 282, 505
Բավաց ձոր, գյուղ 598
Բատ («Քուրդ»), Խլաթի և Նփրկերտի էմիր 599, 602, 607, 610, 639
Բատ, սար 414
Բարգուշատի լեռնաշղթա 146
Բարձր Հայք 147, 175, 185, 407, 482, 649
Բարսեղ Կեսարացի 21
Բարսեղ, Լևոն Ե Հայկազն, Բյուզանդիայի կայսեր որդին 410
Բարսեղ Սարգիսյան 461
Բարտումա (Բարծումա) 109, 194
Բաքու 364, 367, 369
Բել 31
Բելագորի 303, 308
Բելիսարիոս 157, 173, 179, 181, 184
Բեյլական (Բայլաքան) 311, 366, 369, 417
Բեր 576
Բերդաայի երկիր 363, 365, 367, 368
Բերդիչեն, քաղաք 311
Բերդկունք, գյուղ 72
Բերդենչ նաև Բերզանչ, քաղաք 369, 370
Բերզես, վայր 370
Բերկրի նաև Բերկերի 305, 367, 413, 429, 444, 450, 503, 536, 667, 679, 707
Բերձոր գավառ 419
Բզնունյաց գավառ (Բզնունիք) 210, 309, 316
Բըշր (Բեշիր) 566, 568—570
Բիբի-Շեհերաբանու 294
Բիտլիս 367
Բլրակին գյուղ 499
Բլուր գյուղ 34
Բյուզանդական Ասիա 601, 606
Բյուզանդական Հայաստան 74, 122, 161, 163, 165, 166, 169, 174, 176, 177, 187, 217—220, 222, 223, 225, 233, 248, 264, 299, 314, 374, 400, 420, 586, 594, 601, 606
Բյուրեղ տիկին 254
Բյուրական գյուղ 567, 569
Բոգոմիլ, բուլղար քահանա 586
Բոլորապահակ, վայր Բասենում 210
Բողբերդ, բերդ Բասենում 124
Բողդոս-էրմեն 640
Բոսխա 280
Բոսֆոր, նեղուց 82, 198, 280, 584, 678
Բորան (Պուրանդուխտ) 264
Բորդո, քաղաք 238
Բորիս, թագավոր Բուլղարիայի 586, 601
Բջնի, ավան 641—644, 661, 662, 675, 679, 693
Բրինդոս 583
Բրոսսե 430
Բիքիշո, կաթողիկոս 13, 14
Բուզ 171
Բուլղարիա 407, 585, 586, 601, 606, 617, 618, 690
Բուխարա 629
Բուղա Շարաբի 434—453, 464, 477, 492, 493, 498, 503, 539, 619, 630

Բուֆուրուչան 366
Բուվեյհյան հարստություն 571, 598
Բուտ Արավեղյան 353

Գ

Գաբրիել, բժշկապետ 242
Գաբրիել, Տայոց զորաբանակի հրամանատար 608
Գագ գավառ (այժմ Ղազախ) 612, 613
Գագիկ Ա, թագավոր 591, 600, 604—607, 613, 614, 616—618, 634, 646, 651, 680
Գագիկ Բ, թագավոր 670, 671, 673, 680
Գագիկ Գ, թագավոր 672—682, 684, 687, 693, 709
Գագիկ Աբումրվան (Ապումրվան) 439, 507, 509, 518—521
Գագիկ, Աղվանից Վարազ-Տրդատ իշխանի որդին 331
Գագիկ Արծրունի 385, 386
Գագիկ, Գրիգոր-Դերենիկի որդին 504
Գադիշո Խորխոռունի 64, 90, 107, 112
Գազավոն Կամսարական 15
Գազրիկ Ապուհարազ 427
Գազրիկ, նախարարական տոհմ 442
Գամառ-Քաթիպա (Ռափայել Պատկանյան) 197
Գամիրք, նահանգ 401
Գայանեի վանք՝ Վաղարշապատում 352
Գայլատուք, բերդ 234
Գայլ Վահան 256—260, 476
Գանգես, հովիտ 360
Գանձակ (Շակաշեն, Ջանղա, Քանզա) 144, 246, 512, 703
Գանձակի էմիրություն 617
Գանձակ Շահաստան (այժմ Թավրիզ) 211, 246, 251, 253, 254
Գառնի (Ջորնի) 306, 310, 686
Գառնիի ձոր 468
Գարգարացիներ, ցեղ 145, 148
Գարդման, գավառ 148, 151, 247, 327, 445, 446, 558, 578
Գարդմանացիներ 145, 148
Գարդմանի բերդ 327, 561
Գարդմանի լեռներ 545
Գարեգին Սրվանձտյան, նախարար 80, 195
Գարիքպետ 254
Գարջույլ Խորխոռունի 113
Գդիհոն Սյունի 112, 113, 115, 123, 124
Գելցեր 586, 658, 666
Գեղա, բերդ 569
Գեղարքունի 52, 418, 423, 545, 560, 568
Գետն, ավան 540
Գերանա դաշտ 130
Գերմանիկոս, քաղաք 404
Գերմանոս 186
Գիբբոն 99
Գիգ Բագրատունի 228
Գինթ (Գնիթ) եպիսկոպոս 17
Գինտ (Գյուտ) 17
Գիորգի (Գուրգեն), վրաց թագավոր (982—989 թթ.) 559—561, 591, 599, 604, 608, 610, 611, 648—650, 654, 656, 665
Գիս, ավան 152
Գլիձոր 591, 592
Գյուղիկ, գյուղ 122
Գյուտ կաթողիկոս 105, 106, 109
Գյուտ Վահևունի 64
Գնունյաց նախարարական տոհմ 413, 427, 442
Գոբի (կամ Շամո) մեծ անապատ 620, 625
Գողթան (Գողթն), գավառ 136, 305, 566, 580, 635
Գոնթար, հռոմ զորավար 184, 185
Գորգ Հարմացի 427
Գորիս, քաղաք 247
Գորոզա բերդ 419
Գրիգոր Արծրունի 376, 427, 494, 499, 536
Գրիգոր, Արտավան Արշակունու եղբորորդին 184
Գրիգոր իշխան, Բագրատունյաց տոհմից 574, 594, 603
Գրիգոր Բակուրյան, Անիի կառավարիչ 690
Գրիգոր, իշխան Գարդմանի 561
Գրիգոր Գնունի 427
Գրիգոր թագավոր 601, 617
Գրիգոր իշխան, Թեոդորոս Վահունու որդին 315
Գրիգոր Լուսավորիչ 13, 28, 29, 31, 34, 49, 51, 60, 89, 140, 142, 152, 342, 347, 487, 555, 614, 643, 651
Գրիգոր Լուսավորչի տոհմ 487, 489
Գրիգոր, Գրիգոր Լուսավորչի թոռը 152
Գրիգոր Մագիստրոս (Բջնեցի) 363, 461, 609, 617, 643, 645, 646, 651, 660, 661—662, 669, 671, 673—676, 678—682, 685, 686, 692, 699
Գրիգոր իշխան, Մամիկոնյան տոհմից 128, 317, 319, 320, 330, 353, 404, 452, 493, 523
Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի վանք 159
Գրիգոր, Մոկացի իշխան 546
Գրիգոր Նազիազանցի 21, 190
Գրիգոր Նարեկացի 461, 464
Գրիգոր, Սյունյաց իշխան 303, 452
Գրիգոր Սուփան 401, 436, 504, 542, 544, 545
Գրիգոր Քաջբերունի 427
Գուարամ 498, 502
Գուգարաց աշխարհ (Գուգարք) 102—105, 145, 147, 151, 219, 229, 416, 502, 509, 510, 514, 522, 532, 542, 543, 549, 553, 557, 558, 611—614
Գուգարքի լեռներ 104, 481, 483

Գուկանս գյուղ 373
Գուրգեն Աբու-Պելճ 452, 494, 495, 497—499
Գուրգեն, Անձևացյաց իշխան 519
Գուրգեն Արծրունի 427, 429, 438, 439—443, 451, 494, 611
Գուրգեն Բագրատունի 520
Գուրգեն մարզպան, Գրիգոր-Դերենիկի որդին 517—519, 521, 524, 535, 541, 544, 563
Գուրգեն-Խաչիկ, Վասպուրականի թագավոր 629
Գուրգեն, Վրաց թագավոր, տե՛ս Գիորգի
Գևորգ Ակեացի 440
Գևորգ (Մարզպետունի), Աշոտ Երկաթի զինակիցներից 568
Գևորգ Բ կաթողիկոս 503—506, 509, 511, 512, 516
Գևորգ, Պահլավունի Վասակ Հոլումի զինակից 645
Գևորգ Պիսիդեա 467

Դ

Դադոյի վանք 419
Դամասկոս 280, 296, 316—319, 321, 330, 332, 374, 377, 380, 383, 386, 458
Դանան 17
Դանուբ գետ 76, 77, 217, 222, 256, 624, 704
Դաշնակ Վահան, Գնունյանց տոհմից 394
Դաստակերտ 251
Դաշտակարան 315
Դավթակ, աղվան բանաստեղծ 340
Դավթուկ, եպիսկոպոս Արծն քաղաքի 702
Դավիթ Անհաղթ Հարքացի 191—193, 467
Դավիթ Անհողին 611—614, 663, 664, 670, 674, 680
Դավիթ Ա կաթողիկոս, Արամունցի (728—741) 400
Դավիթ Բագրատունի, Աշոտ Մսակերի որդին 411
Դավիթ Բագրատունի, Բագարատի որդին 411, 433, 435, 503
Դավիթ Բագրատունի, Սմբատ Ա թագավորի եղբայրը 522, 526
Դավիթ Բագրատունի, Տայքի կյուրապաղատ 596—598, 603, 604, 607—609, 610, 616, 632, 633, 652, 655
Դավիթ Գունդսաղար 427
Դավիթ կաթողիկոս 418
Դավիթ Հյուպատ 467
Դավիթ Մամիկոնյան 380—383
Դավիթ մարգարե 490
Դավիթ Սահառունի 302, 353
Դավիթ Սեպուհ 427
Դավիթ, Վասպուրականի թագավոր 631, 632, 634, 654, 655—657, 667
Դավիթ փիլիսոփա, Բագրավան գյուղից 308, 312, 316, 336, 345
Դավիթ փիլիսոփա, հակաքաղկեդոնիկ 336
Դավմիս, վայր 370
Դատ Առավեղյան 84
Դատուան 501
Դարա, բերդ 210, 233, 234, 282, 573
Դարանաղի (Դարանաղյաց), գավառ 165, 314, 407, 485
Դարեհ Գոդոման 36, 143, 284, 303
Դարիալի կիրճ (Ալանաց դուռ) 89, 532, 558
Դարյունք (Դարյունս, Դարոնք) 235, 321, 322, 353, 381, 392, 411, 489, 562
Դեմետր 612
Դեբիլ 309
Դենշապուհ 200
Դերբենդ (Բաբ-ուլ-Աբվաբ երկաթի դռներ) 145, 158, 311, 324, 362, 366, 369, 370, 613, 703
Դերբենդի անցք (Չողա կամ Ճորա պահակ) 12, 88, 327
Դերենիկ-Աշոտ 629
Դերջան գավառ 165, 310, 314, 555, 604, 709
Դիարբեքիր, տե՛ս նաև Ամիդ քաղաք 133, 304, 573, 639, 692, 695
Դիզակ գավառ 446
Դիզափայտ 152
Դիզափայտի լեռներ 446
Դիզֆուլի կամուրջ 287
Դիլիջանի կիրճ 102, 146
Դիոնեսիոս Թրակացի 192
Դիոնիսիոս Աղեքսանդրացի 21
Դիոնիսիոս Արիսպագացի 467
Դիոսկորոս արքեպիսկոպոս Ալեքսանդրիայի 97—100
Դիոսկորոս կաթողիկոս 662, 682
Դմանիք, քաղաք 611
Դողս, գյուղ 516
Դոմենդիոլոս 218
Դվին (Դաբիլ, Դեբել) 49, 53, 112—114, 121, 124—126, 128, 129, 135, 140, 141, 159, 160, 161, 175, 200, 202—204, 210, 213, 219—221, 227, 228—231, 233, 264, 301, 305, 309, 310, 313, 315, 316, 319, 324, 352, 366—368, 370, 377, 389, 390, 392, 398—400, 417, 444, 445, 455, 456, 459, 466, 493, 496, 497, 500, 501, 505, 514—516, 523, 524, 531, 542—545, 547, 548, 550, 553, 555, 557, 560, 561, 567—569, 580, 598, 599, 612, 635, 539, 642, 649, 684—686, 693, 700, 701
Դրաշպետ, գյուղ 375
Դու, գյուղ 117, 234, 710
Դուլեֆ 425
Դուլեֆյան հարստություն, Համադանում 425

Դուստր (Դստրիկ), Վարդան Մամիկոնյանի կինը 34
Դեգաղ 524, 526, 530

Ե

Եգերիա (Եգերացոց աշխարհ, Մինգրելիա) 375, 389, 514, 523, 532, 562
Եգիպտոս 95, 191, 236, 243, 247, 274, 300, 302, 307, 311, 383, 384, 397, 424, 471, 505, 546, 707
Եդեսիա, քաղաք 18, 133, 282, 574, 588, 590
Եզդ 292
Եզիդ (Յազիդ) Արաբ խալիֆ 295, 296, 320
Եզիդ Բ, արաբ խալիֆ 380
Եզիդ Գ, արաբ խալիֆ 381
Եզիդ, արաբ ոստիկան Հայաստանում 384—386, 388, 391, 398
Եզնիկ (Եզնակ) Կողբացի 17, 23, 24, 38—47, 50, 62, 135, 138, 273
Եզր կաթողիկոս 300—302, 305, 334, 345, 352
Եթովպիայի թագավորություն 172
Եկեղյաց գավառ 165, 314, 354, 660, 709
Եղիա կաթողիկոս 378
Եղինդ գյուղ 127
Եղիշե եպիսկոպոս 632
Եղիշե վարդապետ 11, 36, 48—51, 56, 57, 67, 72, 73, 77—81, 84, 85, 91, 92, 194—197, 291, 347, 349, 545
Եղվարդ գյուղ 233, 319, 353
Եմեն 266
Եմենիկ (կամ Համանիկ) Մահմեդ. տե՛ս Մուհամմեդ էբյուլվեր
Ենովք 17
Եսայի Աբու-Մուսե Եռանշահիկ 420, 424, 446—450, 452, 453, 477
Եսայի կաթողիկոս 399
Եվդոկիա կայսրուհի 98, 101
Եվդոկիա, Կոստանդին Ը կայսեր դուստրը 665
Եվսեբեոս եպիսկոպոս 97, 98, 100
Եվսեբիոս Կեսարացի 22
Եվտիքես վարդապետ 97—100, 102, 137
Եվփրասիոս, պատրիարք Անտիոքի 162
Եվփրոսիմե 574
Երազան, գյուղ 497
Երազգավորս (Շիրակավան) 341, 460, 506, 510, 529, 531, 534, 543, 559, 576, 577
Երասխաձոր 482, 488, 489, 531, 546, 547, 549
Երեզ գյուղ 123
Երեմիա եպիսկոպոս 17
Երեմիա սարկավագապետ 34
Երեմիոս Երեց 17
Երերուք (Երերույք), գյուղ 355, 489
Երզնկա 610
Երինե (Իրինե), կայսրուհի 404, 406, 408, 420
Երկրորդ Հայք 164, 167, 401
Երնջակ, բերդ 522, 542, 548, 566, 580
Երվանդ 488
Երվանդակերտ, քաղաք 488
Երվանդաշատ, քաղաք 488
Երրորդ Հայք 167
Երուսաղեմ 101, 152, 161, 235—244, 246, 280, 282, 283
Եփեսոս 97—99, 106
Եփրատ գետ 164, 168, 207, 246, 254, 268, 280, 281, 284, 303, 362, 386, 482, 590, 692
Եփրեմ պատրիարք Անտիոքի 162
Եփրեմ Խուրի, Ասորի հեղինակ 21

Զ

Զար (Զավ), գետ 251, 441
Զանգակ երեց 75
Զանդաղան Ոստանիկ 72, 73
Զապետրա, քաղաք 423
Զառմիհր Հազարավուխտ 110, 121, 122, 125
Զավրակ Կամսարական 204
Զարավանդ 36, 125
Զարեհ 126, 128
Զարեւանդ գավառ 76, 114, 251, 385, 438
Զափրանիկ, Մոկաց իշխան 594
Զաքարիա կաթողիկոս Զագեցի 453, 460, 497
Զաքարիա, պատրիարք Երուսաղեմի 242
Զենդ-Ավեստա 26, 27, 87, 188
Զենոբ Գլակ 476
Զենոն, բյուզանդ. կայսր (474—491 թթ.) 141, 157, 164
Զինջան, քաղաք 284
Զոյե 665—667, 674
Զողայլ, բերդ 48
Զվարթնոց եկեղեցի 352, 353, 356—360, 367, 460, 616
Զրվան 40—42
Զուարեն Անձևացի 84

Է

Էլ-Բելաձորի 361, 365
Էլիաս իմաստասեր 192
Էմին 339
Էջմիածին 134, 192, 193, 337, 352, 355, 357
Էրզրում, տե՛ս Կարին քաղաք
Էրնեստ Ռենան 267

Ը

Ընձուղ 183
Ընտրունի, նախարարական տոհմ 427, 442

Ըազման Խոռյան 234
Ըսրուք կամ Նըսըր (Նասիր) ոստիկան 561, 566—569

Թ

Թաբասարան աշխարհ 571
Թադիկ (Թոդիկ) 17
Թադեոս Ակեացի 519—521, 536
Թաթ Կամսարական 84
Թաթիկ, Բասենի եպիսկոպոս 82
Թաթուլ Դիմաքսյան 84
Թաթուլ Վանանդացի 79
Թալին գյուղ 343, 392, 648
Թալինի եկեղեցի 322, 353, 360
Թահիր, Խորասանի կառավարիչ 425
Թահիր, ոստիկան Հայաստանում 417
Թահիրյան հարստություն 425
Թավրիզ 211, 284, 608, 695, 705
Թարթառ (Տրտու գետ) 146, 151, 262
Թեշ (Թեշա), վանք 447
Թեոդոս Փոքր, կայսր 55, 74, 76, 77, 96—99, 171
Թեոդոս, Լեոն Ե կայսեր որդին 410
Թեոդոս, Հերակլ կայսեր եղբայրը 254
Թեոդորա, Լեոն Ե կայսեր կինը 410
Թեոդորա, Կոստանդին Ը կայսեր դուստրը 665
Թեոդորա, Հուստինիանոս կայսեր կինը 163, 178, 185
Թեոդորոս Աբուկուրա 459
Թեոդորոս, Մորիկ կայսերի որդին 213, 218, 223, 234
Թեոդորոս Խորխոռունի 234
Թեոդորոս, հայ գնդի հրամանատար 406, 407
Թեոդորոս, Հոգյաց վանքի վանահայր 499
Թեոդորոս Ռշտունի 265, 298, 299, 301, 303, 305—309, 311—318, 330, 335, 459
Թեոդորոս Վահունի 315
Թեոդորոս Վարազխ 427
Թեոդորոս Տրպատունի 223, 225
Թեոդորոս Քթենավոր 345, 465, 466
Թեոդուպոլիս, տե՛ս Կարին քաղաք
Թեոփանես Մոնդես, պատրիկ 403
Թեոփանո 582, 584, 585
Թեոփիլակտոս Ավաստակսոս Լեկաբենոս 572, 574
Թեոփիլակտոս Սիմոկատուս 218
Թեոփիլես 575
Թեոփիլոս կայսր 421—423
Թիֆլիս 103, 213, 229, 230, 250, 261, 310, 361, 367, 369, 370, 435, 445, 446, 453, 514, 522, 523, 543, 549, 557, 611
Թորաղ 311
Թոմա ապստամբ 420, 421
Թոնդրակ (Թոնրակ), գյուղ 460—462, 464
Թոնդրակեցիներ (թոնրակեցիներ) 460, 463—465
Թոռնավան 671, 672
Թոռնիկ, աբեղա 596, 597
Թոռնիկ, իշխան 575
Թով գյուղ 440
Թովմա Արծրունի, մատենագիր (9—10-րդ դդ.) 48, 57, 83, 424, 426, 430, 432—443, 446, 449, 450, 477, 495, 500, 502, 507, 517, 520, 521, 523, 524, 526—528, 535—537, 539, 540, 564—566, 570, 630, 633, 664
Թորամանյան Թորոս 353, 356
Թրակիա 217, 218, 222, 223, 225, 585, 586, 686
Թուխ գյուղ 521, 522, 527
Թուխարք ամրոց 374
Թումա 307
Թունավորող-կուրացնողների աղանդ 149, 150, 153
Թուրան 198, 624, 627, 628
Թուրքեստան 177, 619—623, 627, 628
Թևտոս, ափխազների թագավոր 599

Ի

Իբերիա 693, 694, 705
Իբն-ալ-Ֆակիհ-ալ Համադանի 361, 363—365, 369
Իբնդոկե 399, 400
Իբն-Խաուկալ (Հաուկալ) 361, 369, 370, 529
Իբն-Խորդադբե 361, 366
Իբն-Ռուստե 361
Իբրահիմ, Դվինի ոստիկան 493
Իբրահիմ, Նախճավանի կառավարիչ 451
Իբրահիմ Ինալ 697, 699, 701—704
Իգաձոր 592
Իգնատիոս Աստված-ազգյաց 21
Իգոր, ռուսաց մեծ իշխան 573
Իլարիոն, եպիսկոպոս վրաց 609
Իլլոս զորավար 164
Իշխանաձոր 460
Իշխան գյուղ 316
Իշխան Արծրունի 672
Իշխանիկ Բագրատունի 451
Իշոյաս կաթողիկոս 254
Իսահակ իբն-Իսմայիլ 445, 453
Իսահակ իբն-Մեսլիմե 381, 382
Իսրայել, Աղվանից եպիսկոպոս 331
Իտալիա 158, 173, 179, 181—184, 217
Իրան 12, 26, 35, 36, 59, 63, 65, 66, 71, 84, 87, 88, 125, 173, 188, 198, 199, 208, 212, 226, 231, 235, 251, 253, 261, 274, 281, 284—286, 288—294, 296, 297, 303, 326, 624, 627—629, 691, 703, 704, 705
Իրաք 280, 368, 383

Լ

Լասուբ 363
Լազիստան (Լազիկա) 187, 211, 246
Լալվար լեռ 103, 104
Լենկանդրոսի ճակատամարտ 594
Լենինական (Ալեքսանդրապոլ) 389, 481
Լիպարիտ Աբդլա 413
Լոռի 103, 614
Լևոն Ա, կայսր 106
Լևոն Ա, Հռոմի պապ 98, 99
Լևոն Թոռնիկ (կամ Թոռնիկոս), զորավար 686, 687
Լևոն Իսավրացի, կայսր 402
Լևոն Դ, կայսր 404
Լևոն Ե Հայկազն, կայսր 409, 410, 416, 420, 421
Լևոն Զ Իմաստասեր, կայսր 513, 514, 535, 546, 574
Լևոն սարկավագ 585
Լևոնտիոս, բյուզանդական զորավար, ապա կայսր 164, 321—324

Խ

Խադիչա 268
Խազմ (Քաղըմ) 398
Խաթուն 386
Խաղաղ օվկիանոս 625
Խաղխաղ, ավան 75
Խաղտիք (Խաղտյաց), գավառ 122, 218, 596, 697, 705, 709
Խաղտո Առիճ, բերդ 688
Խաղտոյառիճ, գավառ 597
Խայլանդուրների երկիր 88
Խանուռ, քաղաք 369, 370
Խաչատուր Աբովյան 195, 296
Խաչեն 151, 152, 419, 424, 446, 600, 606, 613
Խաչիկ Բ, կաթողիկոս 688, 689
Խաչիկ-Գագիկ, Վասպուրականի թագավոր 517—521, 524, 527, 535—545, 546, 547, 550, 556, 562—566, 570, 629, 667
Խաչիկ Դադյան 353
Խաչիկ (նաև Խուլ Խաչիկ) 671, 672
Խաչիկ կաթողիկոս (973—992 թթ.) 592, 599, 634
Խաչիկ կաթողիկոս Արշարունի 651
Խառան, քաղաք 374
Խարատանեք, քաղաք 656
Խարբերդ 594
Խարս, գյուղ 390
Խելիդոնիոն ամրոց 686
Խլաթ (Խիլաթ) 304, 309, 366, 367, 392, 393, 503, 575, 599, 639
Խլաթի լիճ, տե՛ս Վանա լիճ
Խողհեյֆա, արաբ զորավար 284
Խոզաբերք գյուղ 450
Խոշակունիք 328
Խոյամ (նաև Շահր-Վարազ) 243, 247, 243, 263, 264
Խոռոխ-Որմիզդ 264, 265
Խոսրովակերտ անտառ 122
Խոսրովանուշ, Աշոտ Դ Ողորմած թագավորի կինը 512
Խոսրով, Ակեացի 427
Խոսրով Անուշիրվան կամ Նուշիրվան (նաև Անոշակ-Ռվան) 157, 158, 160, 162, 173, 174—176, 184, 185, 187, 188, 197—200, 202—209, 289
Խոսրով Արշակունի, թագավոր 58, 486, 487
Խոսրով Գաբայեղյան 440
Խոսրով Գողթնացի, Գողթան գավառի իշխան 377
Խոսրով Բ Պարվեզ 213, 215, 216, 219, 222—226, 231—236, 241—246, 248—254, 256—261, 268, 286, 288, 300, 341
Խոսրովիդուխտ, բանաստեղծուհի 468
Խոսրովիկ, թարգմանիչ 17, 138, 469
Խորագույն Հայք 219
Խորասան 263, 284, 368, 388, 392, 423, 453, 629, 691
Խորասանի լեռնաշղթա 619
Խորեն երեց 87
Խորեն Խորխոռունի 79, 80
Խորխոռունյաց նախարարական տոհմ 58
Խոր Վիրապ 352
Խորձյան (Խորձենի), գավառ 165, 615, 708
Խտրիկ իշխան 667
Խրամ, ավան 322, 325, 375, 376
Խրյուսապոլիս (այժմ Յուսկուտար) 483
Խուզիմա 400
Խուժիկ, սիրիացի նեստորական 159
Խուշուշ 629, 646
Խուրամյան (կամ Քուռամյան) աղանդական վարդապետություն 414, 416, 422, 461
Խույթք (կամ Խութ), գավառ 432, 433, 435

Ծ

Ծալեհ (Սալեհ) 385
Ծաղկանց լեռներ 73
Ծաղկաձորի ջուր, թափվում է Ախուրյան գետը՝ Անիի մոտ 577
Ծաղկաջուր 210
Ծաղկոցաձոր 592, 616, 642, 670
Ծաղկոտն գավառ 115, 563, 607, 611
Ծամնդավ, քաղաք 656
Ծանարք (Ծանարների երկիր) տե՛ս Կախեթ
Ծար, ավան 363
Ծխնկերա բերդ 234
Ծղուկ գավառ 247, 418
Ծմբո գյուղ 608
Ծովափի Ալայ 429
Ծոփաց աշխարհ (Ծոփք) 123, 164, 615

Կ

Կազվին (Ղազվին, Կզվին) քաղաք 284, 493
Կազա իբն-Կանդաման 370
Կալիսթենես 366
Կալկազուս 370
Կալոն-Պեղասոն, քաղաք 681
Կախեթ (Ծանարք) 177, 445, 446, 450, 452, 460, 514, 559
Կահիրե, քաղաք 590
Կաղանկայտու, գյուղ 246, 339
Կաղզվան 496, 523, 524
Կամախ քաղաք 165
Կամսար, Պերոզամատի տղան 486—488
Կամսարականներ 60, 74, 103, 104, 128, 136, 322, 324, 359, 412, 486, 487, 489, 643
Կայան, բերդ 559, 560
Կայսիկ (Քայսիկ), արաբական ցեղ 412, 413, 417, 444, 496, 501, 503, 507, 527, 575, 639
Կանգուար, բերդ 499
Կաշմ (Կասըմ) 375, 377
Կապադովկիա 156, 209, 214, 235, 245, 323, 422, 693, 705
Կապուա, քաղաք 182
Կապուտոււ բերդ 703
Կասպից ծով (Խազարների ծով) 12, 109, 124, 143, 144, 147, 177, 209, 211, 224, 248, 284, 305, 311, 362, 363, 505, 571, 619, 620, 624
Կավակերտ բերդ 400, 418
Կավասիլոս 667
Կավատ (Կորատ), Պերոզի որդին 109, 130—134, 156, 157, 169, 414
Կավատ Բ 252, 253, 260, 263
Կարակալոն-Կեկոմինոս (Կամենաս, Կամեն) 686, 687, 696, 699, 701
Կատրանիդե 613, 615, 616
Կարա-Կում (Սև ավազ), անապատ 620
Կարապետ եպիսկոպոս 338
Կարապետ վարդապետ Շահնազարյան 339
Կարբի գյուղ 230
Կարեն պարսիկ 486
Կարենյան Պահլավի տոհմ 486, 487
Կարթագեն, քաղաք 185, 241
Կարին (Քալիքալա, Էրզրում, Թեոդուպոլիս) քաղաք, բերդ 14, 123, 133, 165, 166, 169, 203, 204, 207, 225, 235, 254, 256, 301, 308, 315, 341, 370, 383, 384, 390, 391, 393, 394, 400, 494, 514, 575, 578, 611, 697, 700, 701, 710
Կարինի գավառ 165, 597
Կարլոս Մեծ 405
Կարմիր գետ 540
Կարմիր ծով 172, 266, 267
Կարս բերդ, քաղաք 511, 522, 523, 525, 576, 578, 598, 649, 652, 670, 680, 704
Կարսի թագավորություն 616
Կարրիետ 346
Կաքավաքար բերդ 562, 568
Կեչառուք եկեղեցի 679
Կեսարիա, քաղաք 151, 235, 244, 394, 656, 705
Կերասուս, քաղաք 167
Կերնե 368
Կըթնի գյուղ 210
Կիզիլ-Կում (Կարմիր ավազ), անապատ 620
Կիլիկիա 177, 313, 323, 490, 583, 590, 594, 609, 634, 666
Կիլ-Կու 370
Կիպրոս կղզի 217
Կիրակոս Գանձակեցի 458
Կիրակոս քահանա 657, 658
Կիրկեսիոն քաղաք 213
Կիրմիզ 310
Կղարջք գավառ 416, 460, 514, 543
Կղեսուրում գավառ 597
Կյուրեղ Աղեքսանդրացի 21, 96, 467
Կյուրեղ Երուսաղեմացի 21
Կյուրիկյան (կամ Գուգարքի) թագավորություն 591, 611, 612
Կյուրիոն, կաթողիկոս վրաց 227, 229—232
Կոգովիտ գավառ 235, 306, 307, 310, 392, 489, 491, 563, 601
Կոլոնիա, բերդ 166
Կող գավառ 399
Կողբ գյուղ 23, 300, 392, 557
Կողքիս 246
Կոմիտաս կաթողիկոս (615—621 թթ.) 242, 299, 337, 352, 356
Կոռնակաշ ավան 419
Կոստանդիանոս Մեծ 177, 355
Կոստանդին Գ (Կոստանդ Բ) 306, 307, 314, 316, 318, 319, 336, 383
Կոստանդին Ե Կոպրոնիմոս 384, 385, 402, 403
Կոստանդին Զ 404—407, 420
Կոստանդին Է Ծիրանածին (Պորփյուրոգեն) 544, 572, 582
Կոստանդին Ը 657, 665
Կոստանդին Թ Մոնոմախ 674, 676, 678—680, 684, 686, 687, 693, 695, 699, 703—706
Կոստանդին Արտաշիր 407, 408
Կոստանդին (Սմբատ) 391, 410
Կոստանդին Կուրտ 686
Կոստանդին, Հերակլի որդին 245
Կոստանդին, Մինգրելիայի թագավոր 532, 535
Կոստանդին, Ռոմանոս Բ կայսրի որդին 585, 593, 608
Կոստանդին, Վասպուրականի թագավոր Սենեքերիմի որդին 657

Կովկաս 246
Կոտայք (Կոտեից գավառ) 219, 307, 400, 445, 561
Կոտիտ Ամատունի 223
Կոտոր բերդ 518, 519
Կորդվաց աշխարհ 83, 547, 550, 563, 638, 639
Կորդվաց լեռներ 550
Կորեյշ (Խուրեշ) 695
Կորյուն, Արծրունի իշխան 376
Կորյուն, եպիսկոպոս 17—24, 31, 32, 38, 56, 138, 140, 151, 196, 339
Կորճեք նահանգ, տե՛ս Քրդիստան
Կ. Պոլիս 16, 17, 74, 76, 77, 82, 95, 97, 99, 101, 102, 157, 175, 178, 179, 181, 184, 185, 199, 201, 203, 205, 209, 216, 218, 220—222, 226, 236, 239, 243, 245, 248, 250, 253, 254, 256, 264, 280, 299, 300, 302, 307, 308, 316, 320—322, 324, 331, 342, 403—407, 410, 411, 420—422, 466, 467, 513, 555, 571—575, 583, 584, 586, 588, 590, 595, 601, 603, 610, 614, 617, 632, 634, 646, 651, 656, 657, 659, 665, 668, 673, 677, 678, 680, 686—688, 693, 699, 704, 706
Կովակք գյուղ 113
Կտրիճ, իշխան Գարդմանի 445
Կրետե կղզի 421
Կուբադ 366
Կուդամա 361, 362
Կու-էն-Լուն, լեռնաշղթա 620
Կումայրի (Գյումրի) գյուղ 389
Կուր գետ 75, 102, 116, 143, 144, 146, 147, 152, 223, 247, 311, 327, 330, 362, 367, 386, 514, 522, 558, 576, 600
Կուրկուասների տոհմ 582
Կուր Սերե 370

Հ

Հաբանդ գավառ 419
Հաբիբ իբն-Մեսլեմե 308—311, 313, 317
Հադամակերտ (Ադամակերտ) 429, 431, 497, 524, 526, 539
Հազդ իշխան 121
Հազկերտ Բ 37, 38, 51, 57, 59, 62—66, 70—72, 74, 81—88, 102, 103, 153, 195, 494
Հազկերտ Գ 265, 281, 283, 285, 286, 292, 294, 328
Հազր գյուղ 383
Հալեպ քաղաք 303, 666
Հալիս գետ 573, 597
Հակարի ավան 419
Հակոբ քահանա 230
Համադան քաղաք 284, 422, 425, 629
Համազասպ Արծրունի 385, 386, 392, 393, 398, 427
Համազասպ Մամիկոնյան 137, 225, 316, 318
Համազասպ, Շմավոն իշխանի քեռորդին 169
Համազասպյան Վարդան, Մամիկոնյանի եղբայրը 80, 84
Համամ, թագավոր Աղվանից 506
Համամ Ճապուհ, Ամատունի իշխանի որդին 399
Համդուն 581
Հայկ Նահապետ 31, 32, 140, 338, 490
Հայկական Բարձրավանդակ 52, 146, 147, 152, 220, 247, 398, 302, 303, 308, 332, 400, 435, 505, 518
Հայկական հարստություն (դինաստիա), Բյուզանդիոնում 656, 657, 665
Հայկական Տավրոս 432, 637
Հանձիթ գավառ 123, 164, 708
Հաշկուր Արծրունի 127
Հաշտյանք (Հաշտենից) գավառ 123, 164, 697
Հասան, Ալի խալիֆի որդի 294, 298
Հասան, արաբ ոստիկան Հայաստանում 389, 390, 395, 398
Հասան իշխան 438
Հասան իշխան, Գնթունյաց տոհմից 522, 523
Հասան իշխան, Սմբատ Ա թագավորի պալատական 534
Հասան, քուրդ ռայիս (ռես) 672
Հասան Բին-Սահալ, արաբ զորավար 415
Հասանիկ (Հասան) Արծրունի 503, 567, 525—527, 671, 672
Հասանվեյհ 639
Հավճիչ լեռ 610
Հարչլանք (Հերչելիա) գավառ 148, 311
Հարք (Հերեք) գավառ 305, 309, 515, 588, 597, 660
Հարուն էլ-Ռաշիդ 398, 404, 415, 416
Հարուն էլ-Վաթիք Բիլլահ 425, 427
Հաքեմ 649
Հեթիթական (Հաբեթական) ցեղեր 144, 145, 148, 636, 638
Հելուպուր քաղաք 691
Հեղինե, ափխազների Գեորգի թագավորի որդի՝ Բագրատի կինը 665
Հեղինե, Գրիգոր Մամիկոնյանի կինը 330
Հեղինե կայսրուհի 237—239
Հեղինե, Կոստանդին է Ծիրանածին կայսրի կինը 572, 582
Հենոտիկոն 131, 141
Հեչադ 266, 267
Հեր գավառ 76, 114, 126, 127, 251, 385, 438, 518, 672
Հեր քաղաք (այժմ Խոյ) 507, 656
Հերակլ, Աֆրիկայի կուսակալ 236
Հերակլ, բյուզանդ. կայսր 211, 241, 243—

255, 259, 263, 264, 280, 299—302, 334, 339, 345
Հերի, արաբական իշխանություն՝ Եփրատ գետի վրա 268
Հերոդոտ 143, 144
Հեփթաղներ 59, 87, 109, 114, 115, 124—126, 131
Հըզատվշնասպ 88, 107
Հին Իրան 284, 285, 291, 292
Հիշամ, արաբ խալիֆ 380, 381
Հիսե (Իսա Շեյխի որդին) 499, 500, 505
Հիսե (Իսա), Շերեփի որդին 519
Հիրա 281
Հիունգ-Նու 624, 625
Հմայակ Ապահունի 235
Հմայակ Դիմաքսյան 80, 195
Հմայակ Մամիկոնյան 17, 35, 60, 74, 82, 83, 102—105
Հոբի գիրք 19
Հողչեթ-Ուլլահ 298
Հոլ 418
Հոհան Թովմայան (Քոչ կամ Գուշադ) 186, 187
Հոհան, Ռոփսենից տոհմից 84
Հոնաստան 331
Հոռոմոսի վանք 591, 598, 618, 647
Հոռոմոց Մարգ 400, 401
Հորդանան գետ 237
Հորդրու գյուղ 234
Հովհան Անձևացի 114
Հովհան Եկեղեցացի 17
Հովհան Խոստովանող 17, 38
Հովհան Խուլեցի 433, 435, 494
Հովհան եպիսկոպոս Մամիկոնյան 216—217, 255, 259, 476, 477
Հովհան վարդապետ Մայրագոմեցի (Մայրավանեցի) 135, 301, 334, 335, 337, 338
Հովհան Մանդակունի 122, 134, 135
Հովհան, Մոկաց իշխան 114
Հովհան Ոսկեբերան 21
Հովհան Օձնեցի 379, 380, 456—459, 465, 466, 470
Հովհաննավանք 230
Հովհաննես, Աղվանից կաթողիկոս 580
Հովհաննես Արշակունի 171
Հովհաննես Բագրևանդցի 220, 235
Հովհաննես Բ, Գաբեղենցի կաթողիկոս 175, 200—202, 205, 220, 239
Հովհաննես, Բյուզանդիացի Միքայել կայսրի եղբայրը 667
Հովհաննես, Գագիկ Գ թագավորի որդին 690
Հովհաննես Գրամատիկոս 422
Հովհաննես Դ կաթողիկոս, Կոտայեցի 426
Հովհաննես եպիսկոպոս 219, 239
Հովհաննես Եփեսացի 162, 190
Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի 49, 83, 319, 373, 380, 397, 412, 418, 437, 444, 453, 492, 503, 514, 515, 517, 520, 523, 525, 527, 528, 531—534, 541—544, 546, 549, 551—555, 557—562, 564, 567—570, 572
Հովհաննես Կոզեռն, վարդապետ 661
Հովհաննես Կուրկուաս (Ջմշկիկ) 572—575, 581—591, 593—595, 601, 634
Հովհաննես Հովհաննիսյան, բանաստեղծ 138
Հովհաննես, Հռոմի պապ 157
Հովհաննես Մկրտիչ 590
Հովհաննես պատրիարք 282
Հովհաննես պատրիկ, բյուզանդական զորավար 211, 213, 218
Հովհաննես-Սմբատ, հայոց թագավոր 611, 646—649, 652, 655, 657, 659, 661—664, 668, 669
Հովնաթան քահանա 17
Հովսեփ, Աղվանից կաթողիկոս 662, 663
Հովսեփ Գեղեցիկ 472
Հովսեփ Երեց 17, 60, 63
Հովսեփ կաթողիկոս 82, 87, 89, 105, 400
Հովսեփ Պաղնացի 17, 18
Հովսեփ Սուչիգովսկի 353, 358
Հովսեփ քահանա 446
Հռավեննա քաղաք 181
Հռիփսիմե, Աշոտ Մսակեր Բագրատունու աղջիկը 411, 426, 431, 441, 443, 494, 495
Հռիփսիմյան կույսերի վկայարան (վանք) 336, 356, 360
Հռոմ 95, 97, 100, 101, 132, 144, 157, 179, 181, 182, 184, 237, 268, 287, 424, 466, 488, 578
Հրազդան գետ 219, 220, 233, 418, 642
Հրահատ Կամսարական 103, 111, 115—117, 120—124, 134, 178
Հրահատ մարզպետ 210
Հրանուշ տիկին 439
Հրաչյա 490
Հրարդին Դասան 210
Հրեաստան 236, 237, 239, 240, 491
Հրև (այժմ Հերաթ) քաղաք 87, 88, 103
Հնդկական օվկիանոս 266
Հնդկաստան 35, 243, 290, 360, 370, 593, 615, 622, 628
Հուլիանյան (կամ Հուլիանիա) վարդապետություն 334—336, 459
Հուլիանոս Հալիկառնացի 334
Հունական Հայաստան 14, 68, 77
Հունաստան 107, 144, 303
Հուսեին, Ալի խալիֆի տղան 294—296, 298, 320
Հուստինիանոս Ա 156—158, 161, 165, 166—170, 172, 173, 175—179, 181—187, 197, 205, 209, 217, 219, 282, 300, 400
Հուստինիանոս Բ 321, 323, 324, 331, 332, 375, 402
Հուստինիանուպոլիս 166

Հուստինոս Բ 156, 157, 176, 183, 186, 198, 201, 203, 204, 207, 239

Հուստինոս, հունաց զորահրամանատար 203, 204, 209

Ձ

Ձկնավաճառ գյուղ 544—546, 558

Ձոր 431

Ձորա գետ 578

Ձորագետ գավառ 558

Ձորափոր գավառ 560

Ձվիկ տիկին 60, 103—105, 130

Ղ

Ղազարապատ գյուղ 482

Ղազար Փարպեցի 14, 17, 36, 48, 51, 58, 60, 62, 66, 68, 69, 77, 78, 80, 84—86, 89—91, 104, 105, 116, 125, 130, 134, 135—140, 195, 196, 322, 349, 545

Ղազնի քաղաք 628, 691

Ղազնի սուլթանություն 691

Ղազնևի թուրքական ցեղ 628

Ղեղաշ գյուղ 483

Ղըրղզ ցեղ 621, 625

Ղուկաս ավետարանիչ 334—335

Ղևոնդ Ալիշան 196, 197

Ղևոնդ Երեց (կամ Ղևոնդես Վանանդեցի) 17, 62, 69, 73, 79, 84, 87, 105

Ղևոնդ վարդապետ պատմագիր 304, 305, 317, 324, 325, 372, 376, 379, 380, 382—386, 388, 389, 391, 394, 395, 396, 398, 399, 401, 405, 475

Ղևոնդ վարդապետ (Պանտալեոն բժիշկ փիլիսոփա) 588—590

Ճ

Ճահուկ բերդ 507

Ճիհովր-Վշնասպ, տե՛ս Սուրեն մարզպան

Ճնճղուկ Արծրունի 671, 672

Ճորոխ գետ 654, 709

Ճվաշռոտ գավառ 540

Ճուաղ գավառ 598

Ճուրմանայնու դաշտ 116

Մ

Մայաֆարինկին (Մուֆարղին) քաղաք 367

Մազանդարան, տե՛ս Թաբարաստան

Մազդակ, Մազդակյաններ 130—132, 152, 414

Մաղքութներ 88

Մաթուսաղա 345

Մակեդոնիա 217, 222, 601

Մակեդոնական հարստություն 572

Մակու (բերդ, կիրճ) 219, 562, 392

Մահմուդ, Ղազնիի թագավոր 628, 629

Մահմեդ, Դվինի կառավարիչ 514

Մահմի, Արհիմի դևերից մեկը 43

Մամակ Մամիկոնյան, նախարար 223

Մամիկոնյաններ, Մամիկոնյանների նախարարական տոհմ 29—31, 49, 51—53, 58, 59, 60, 64, 69, 70, 74, 102—135, 107, 111, 112, 123, 126, 138, 200, 215, 216, 257, 392, 394, 395, 402, 412, 417, 487, 489—491

Մամլուն 607—609, 642

Մամուն, արաբ խալիֆ 417, 421, 474

Մանազկերտ 413, 459, 470, 499, 501—503, 527, 539, 587, 599, 607, 611, 635, 639, 679, 693, 705, 707, 710, 711

Մանազկերտյան (կամ Աղրիանոսյան) հոգևոր դինաստիա 89, 90

Մանանաղի գավառ 165, 314, 660

Մանեճ Ապահունի 64

Մանի, Մանիի վարդապետություն 61, 130, 332, 461

Մանոստես 585

Մանվել Ապահունի 235

Մանվել Մամիկոնյան 30, 200, 204, 421, 422

Մանվել, հույն պատմագիր 574

Մանվել ճարտարապետ 566

Մառ ակադեմիկոս 142, 353

Մառական ավան 507, 540

Մասիս սար 113, 138, 213, 637

Մասյացոտն գավառ 481, 562

Մասուդի 361

Մավրակի ջուր (գետ) 482

Մավրիանոս զորավար 317

Մատնահատների աղանդ 149, 150, 153, 339

Մատթեոս Ամատունյաց եպիսկոպոս 242

Մատթեոս Ուռհայեցի 587—590, 607—609, 630—632, 634, 644, 647, 652, 655, 657, 660, 663, 664, 668, 670, 673, 674, 681, 687, 689, 694, 701, 702, 706, 707, 711

Մարաբա Մծուրնացի 31, 140, 338, 348

Մարակերտ 637

Մարաղա քաղաք 366

Մարանդ 637

Մարասպան գավառ 311

Մարաստան 38, 144, 209, 246, 251, 283

Մարգ դաշտ 233

Մարդաղի (Մարդալա) գավառ 165, 309, 597

Մարդաստան գավառ 431, 497, 536

Մարիամ, Աշոտ Բագրատունու աղջիկը, Սյունյաց Վասակ Գաբուռի կինը 498, 542, 545

Մարիամ, աբխազների թագավոր Գեորգիի կինը 665, 680

Մարիամ, Կոստանդին կայսրի կինը 405, 408

Մարիամ, Դավիթ Բագրատունու կինը 503

Մարիամ, Հովհաննես Զմշկիկ կայսրի կինը 585

Մարկիանոս կայսր (457—474 թթ.) 77,

99—102, 106

Մար-Հոհան 666

Մարմաշենի վանք 642, 644, 646, 665, 669, 686

Մարվիռոտ գետ 59

Մարութա, Սիրիայի եպիսկոպոս 135

Մաքենացոց վանք, Սևանի լճի հարավ-արևելյան կողմում 419, 466

Մեդացիներ (մարեր) 637, 638, 640

Մեդինա (նաև Յաթրիբ), քաղաք 269, 270, 283

Մելեշ 704

Մելիտե կաթողիկոս 90

Մելիտինե քաղաք 165—167, 207, 423, 457, 573, 587, 588, 666

Մեծամոր գետ 400

Մեծիրանք գավառ 148, 152, 311

Մեծկվանք 148, 311

Մեծ Հայք 163—167, 169, 219, 402

Մեծ Մասիս (ալ-խարիս) 362, 372

Մեծ Պերեսլավլա քաղաք 586

Մեհմեդ 458

Մեհրուժան Արծրունի 84, 395, 398, 412, 427

Մեղվի գյուղ 145

Մենանդր, բյուզանդացի, հույն պատմագիր 198, 204, 206

Մենչելես 310

Մենուաս 539

Մեսրոպ երեց 631

Մեսրոպ Թաղիադյան 139

Մեսրոպ Մաշտոց 16—18, 24, 25, 27, 31, 33—35, 56, 58, 60, 105, 140, 142, 143, 152, 346

Մետրիս 370

Մերանդ, քաղաք 366

Մերվ, քաղաք 59, 285, 691

Մեքքա 267, 269, 271, 273, 295, 296

Մժեժ Գնունի 156, 175, 264, 299, 300, 302

Միափորի գավառ 545

Միլի (կամ Ղարաբաղի) տափաստան 146

Միհրան, Աղվանից Միհրանյան տոհմի հիմնադիր 326

Միհրան Միհր և Անդակ Վահրամ Մեհրևանդակ, Բեհրամ Չուբին (Վեհրամ Չուբին) 116—121, 126, 204, 206, 211, 212, 213, 215—217, 256

Միհրան, պարսից սպարապետ 256—258

Միհրանյան, պարսից տոհմ 326—329, 419, 446

Միհրավան քաղաք 327

Միհր-Արտաշիր 201

Միհր-Վշնասպ 126

Միհրներսեհ (Հեզարբենդե, Հիրպատան Հիրպատ) 36—38, 40, 47, 52, 57, 63, 73, 75, 82, 86

Միհրշապուհ 79

Մինգրելիա, տե՛ս Եգերիա

Միջագետք 12, 17, 37, 83, 87, 109, 133, 147, 207—210, 233, 246, 248, 251, 268, 282, 303, 304, 309, 324, 354, 362, 370, 515, 520, 525, 558, 573, 589, 591, 639, 679, 692, 693, 700

Միջերկրական ծով 387, 623

Միջին Ասիա 147, 198, 284, 298, 354, 360, 387, 619, 621, 622, 627, 628, 630, 692, 695, 700

Միջնաձոր, վայր 460

Միքայել Ա Ռանգաբե 409

Միքայել Բ Թլվատ 409—411, 420, 421, 451, 494

Միքայել Բուրգես (նաև Ալբուրջի) 584, 594

Միքայել Իասիտաս 676

Միքայել Նալբանդյան 139

Միքայել Պաֆլագոնացի 657, 666—668

Մլեհ 587

Մծբին, քաղաք 31, 210, 213, 264, 282, 573, 588

Մծղնեից աղանդ 61

Մկնառինճ գյուղ 117

Մոգեստ, Երուսաղեմի պատրիարքական տեղապահ 241

Մոզան գյուղ 468

Մոթամիդ-Բիլլահ 505, 512

Մոխանք գավառ 148

Մոկաց աշխարհ (Մոկք նահանգ) 58, 436, 438, 492, 518, 638

Մոկաց լեռներ 194

Մոկաց նախարարություն 114

Մոհամմեդ-Աֆշին 423, 424, 512—519, 522—526, 528, 530, 531, 537, 545

Մոնղոլիա 621

Մոնղոլիայի լեռնադաշտ 619

Մոսխե 143

Մոսուլ, քաղաք 251, 571, 629

Մովան մոգպետ 86

Մովսես Բ, Եղվարդեցի կաթողիկոս 220, 221, 227

Մովսես եպիսկոպոս, Սահակ-Մաշտոցյան դպրոցի սան 17

Մովսես եպիսկոպոս, Ցուրտավ քաղաքի եպիսկոպոսական աթոռապետը 229, 231

Մովսես կաթողիկոս 90, 105

Մովսես Խորենացի 14, 15, 17, 31, 56, 151, 177, 339, 344, 346—351, 485, 486, 488, 490

Մովսես Կաղանկատվացի 144—146, 148, 149, 151—153, 244, 248, 250, 252, 253, 260—264, 324—329, 331, 339—341, 358, 424

Մովսես, Ուտի նահանգի իշխան 558, 559

Մովսես փիլիսոփա 137

Մովսես Քերթող (Քերթողահայր) 346

Մորիկ (Մավրիկ կամ Մավրիկոս) 207—210,

213, 215—226, 229, 234, 236, 253, 256, 260, 299, 634
Մռավ լեռնաշղթա 246, 262, 340
Մսիս, քաղաք 583
Մրհնի եկեղեցի 302, 353, 360
Մցխեթ, քաղաք 142
Մուավիա (Մոավիա) արաբ խալիֆ 294, 308, 316—320, 330
Մուկան, քաղաք 369
Մուհամմեդ, Ալիի որդին 298
Մուհամմեդ Բեն-Օքբայ 374—376
Մուհամմեդ Իբն-Միրվան (Մրվան) 323—325, 371, 380—383
Մուհամմեդ Էբյուլվեր 500
Մուհամմեդ էլ-Մահդի (կամ Մահմեդ Մահադի) 396, 398, 404
Մուհամմեդ էլ-Մոթասիմ 422—425
Մոհամմեդ մարգարե 268—275, 280, 283, 293—295, 297, 304, 313, 412, 640
Մուհամմեդի վարդապետություն 269, 270
Մուղանի դաշտ 143, 311, 369
Մունթասիր 495
Մուշ Դիմաքսյան 75
Մուշ, քաղաք 430, 431, 588, 589, 599
Մուշե 82
Մուշե (Մուշեղ) եպիսկոպոս Սահակ-Մաշտոցյան դպրոցի սան 17
Մուշե եպիսկոպոս Սյունեցի 136
Մուշե Տարոնցի 17
Մուշեղ-Ալեքս, հայ իշխան 406—408, 422
Մուշեղ Անձևացի 498
Մուշեղ Արծրունի 427, 438, 439
Մուշեղ Բագրատունի 436, 449, 477, 492, 544, 558
Մուշեղ, Կարսի թագավոր 578, 598, 600
Մուշեղ Մամիկոնյան, Պապ թագավորի զորավարը 30
Մուշեղ Մամիկոնյան 450—451 թթ. ապստամբության մասնակից 84
Մուշեղ Մամիկոնյան 481—484 թթ. ապստամբության մասնակից 121, 122, 256, 259, 314, 316, 389, 393—395, 398
Մուշեղ Մամիկոնյան, Մորիկ կայսրի ժամանակակիցը 214, 215, 221, 256
Մուշեղ Մամիկոնյան, Դավթի որդին (7-րդ դար) 303
Մուշեղ Մամիկոնյան 772—775 թթ. ապստամբության ղեկավար 390, 393—395, 398
Մուշեղ Վահնունի, իշխան 438
Մուշի դաշտ 34, 434, 435
Մուշկան Նիսալավուրտ 76, 80, 81, 82
Մուսա, արաբ զորավար 498
Մուսա իբն-Զուրաթ 428—431
Մուսա էլ-Հադին 398
Մուսա-իմամ 298
Մուսե, արաբ զորավար 386
Մուսե, հարավային Արցախի իշխան Եսայու որդին 446
Մուսթային խալիֆ 495
Մուրգաբ գետ 285
Մուրց գետ 210

Յ

Յակտանի (այժմ Աղդամ) 368
Յակուբ, Սաֆֆարի որդին 505
Յաքուբի 424
Յարմուկ գետ 280, 303
Յունան, վայր 370
Յուսուֆ (Հովսեփ) 431, 432, 434, 441
Յուսուֆ իբն-Աբու-Սաջ Դևդադ 526, 530—535, 537, 538, 541—551, 555—557, 561—563, 566, 568—570

Ն

Նաբուգոդոնոսոր 490
Նախճավան (Նաշավա) քաղաք 49, 223—225, 247, 305, 310, 325, 367, 375—377, 515, 516, 518, 527, 538, 542
Նախճավան, գյուղ Շիրակում 353
Նախճրաձոր գյուղ 531
Նանա, Հակոբիկ սարկավագ 459, 460
Նապոլեոն Ա, ֆրանսիական կայսր 504
Նեհավենդ գյուղ 284, 292, 305, 425
Նեղոս գետ 178, 302, 584
Նեմեսիոս 467
Նեստոր 95, 96, 102, 109, 138, 160, 300
Ներշապուհ Արծրունի 64, 79, 84
Ներշապուհ, պարսից Միհրանի եղբայրը 127
Ներսեհ Բարսեղցի 179
Ներսեհ, Գարիթայանքի, իշխան 452
Ներսեհ Երվանդունի 114
Ներսեհ Կամսարական 450—451 թթ. ապստամբության մասնակից 84
Ներսեհ Կամսարական, Արշավիրի որդին, 481—484 թթ. ապստամբության մասնակից 103, 111, 115, 116, 120, 122—124, 127, 128, 134
Ներհես Կամսարական, Հայաստանի կառավարիչ, (680 թ.) 391
Ներսեհ Կամսարական պատրիկ (692— 695 թթ.) 322, 343, 345, 353
Ներսեհ Կամսարական (8-րդ դարի վերջերին) 405
Ներսեհ Սյունեցի 419
Ներսեհ Քաջբերունի 79, 80, 195
Ներսեհապատ գյուղ 115
Ներսես Մեծ կաթողիկոս 15, 29, 631, 633
Ներսես Բ կաթողիկոս Աշտարակեցի 159, 175
Ներսես Գ կաթողիկոս («Շինող») (641—661 թթ.) 302, 306, 308, 314, 316, 318, 319, 335, 338, 352, 356, 357, 379, 476

Ներսես, բյուզանդ. զորավար 178—184, 209, 211, 213, 234
Ներսես սեպուհ, Վահեվունյան տոհմից 225
Նիգ գավառ 544, 641, 644
Նիժ գյուղ 145
Նիխոր Վշնասպդատ 126—128
Նիկիա քաղաք 96, 403, 595
Նիկետ 403
Նիկեփոր կայսր 409
Նիկեփոր Ծովիզ 655, 656
Նիկեփոր Փոկաս 541, 583
Նիկեփոր պատրիարք 410
Նիկիփոր, կարգաթող քահանա և ներքինի հրամանատար 703, 704
Նիկողայոս Կուրտ 676, 677, 684
Նիկողայոս պատրիարք Կ. Պոլսի (912—925 թթ.) 553
Նինվե քաղաք, այժմյան Մոսուլի մոտ 251, 253, 386
Նկան բերդ, Վասպուրականում 386, 438, 518, 519
Նյուշապուհ (այժմ Նեշափուր) քաղաք 86, 87
Նոման իբն-Մուխարիս 284
Նոննոս 190
Նորայր Բյուզանդացի 24
Նվարսակ գյուղ 125—128, 136
Նոխի գավառ 145
Նփրկերտ (նաև Ջրիկ, Մուֆարղին) քաղաք 248, 335, 587, 639

Շ

Շաբիրան, քաղաք 369
Շաթ 250, 261, 262, 263
Շահակ կաթողիկոս 151
Շահապիվան 61, 62, 72, 137
Շահեն 235, 243, 247, 248
Շահնամե 35, 37, 158
Շահրմար, քաղաք Ատրպատականում 59
Շաղագոմք, գավառ 122, 123
Շաղատ, գյուղ 418
Շամախի 369, 370
Շամրաթ 490
Շամիրամ 31, 565
Շամշույլդե բերդ 557, 561, 611, 613
Շամուել (Շմուել) կաթողիկոս 14, 15
Շամքոր, քաղաք 311, 365, 369, 370, 514
Շահապ 496, 500
Շապուհ, Շերեփի որդի, Ակեաց տոհմից 535
Շապուհ Ամատունի 399, 427
Շապուհ, Աշոտ Բագրատունի Ա թագավորի եղբայրը 501
Շապուհ, Արծրունի իշխան 438
Շապուհ Բ, պարսից թագավոր 30, 37, 54, 135, 288
Շապուհ Բագրատունի, պատմագիր 515
Շապուհ, Մայմուկի որդի 536
Շապուհ Մամիկոնյան 395
Շապուհ Միհրանյան 122—126
Շապուհ, Սմբատ Ա Բագրատունի թագավորի եղբայրը, սպարապետ 502, 509, 520, 523, 526, 535
Շապուհ, Սմբատ Բագրատունի սպարապետի որդին, Աշոտ Մսակերի եղբայրը 395, 411, 417, 418, 491, 492
Շապուհ, Վասպուրականի սպարապետ 530, 632
Շավասպ Արծրունի 48, 49, 84
Շատբերդ 460
Շատիկ բերդ 598, 648
Շարա 484, 485
Շարիաթ 274, 275, 277, 279
Շարուր 219, 524
Շարուրի դաշտ 528, 637
Շաքի քաղաք 369
Շաքշին (Շակաշեն) 311
Շեդդադյան տոհմ, հարստություն 612. 639, 641, 703
Շեթի 333
Շեխետի ցեղ 536
Շեմքուր քաղաք 311
Շեքիենե (Շեքի) բնակավայր 311
Շիրազ, քաղաք հարավային Պարսկաստանում 292
Շիրակ 136, 155, 233, 302, 314, 323, 341, 352, 353, 359, 389, 413, 427, 436, 444 481—485, 487, 489, 492, 506, 510—512, 517, 524, 530, 531, 534, 538, 548, 559, 577, 578, 579, 591, 598, 615, 644, 647, 648, 651, 653, 663, 664, 668—672, 676, 677, 681, 682, 683, 690, 697
Շիրակավան 210, 233, 341
Շիրակի գետ 482, 483
Շիրակի դաշտ 110, 482
Շիրակի թագավորություն 646, 658, 670, 674, 676, 678, 679, 684, 692
Շիրիմ, վայր 601
Շիրին թագուհի 243, 252
Շիրո, ալվանից հրամանատար 203
Շիրո, պարսիկ մոգպետ 49
Շիրվան (Շարուան) 158, 327, 329, 366, 369, 370
Շիռոյե-Կորադ 252
Շլյումբերժե Գյուստավ 583, 590, 674, 684
Շղիա, վայր 656
Շմավոն Անձևացի 64, 84, 169, 195
Շնոմշապուհ 88
Շոյա գյուղ 124
Շումր 295
Շուշան 373
Շուշան տիկին, Սյունյաց Սմբատ իշխանի մայրը 542, 550
Շուշանիկ (կամ Շուշիկ) Պահլավունի Գրի-

գոր Համզեի կինը 642
Շուշանիկ. Վարդան Մամիկոնյանի դուստրը 109, 230
Շուշի քաղաք 347, 368
Շուշիկ տիկին, Աղվանից Վարդի դուստրը 327
Շուաթերի կամուրջ 287
Շուփհաղիշա 154

Ո

Ոպսիկա 402
Ոստան 194, 219, 451, 494, 499, 524, 565, 631, 640
Ովբեդլա (Ուբեյդուլլահ) (788—789 թթ.) 399, 400
Որդի Դիմաքսյան 122
Որմիզդ 40, 41—43
Որմիզդ, պարսից թագավոր Խոսրովի որդին 208—212
Որմիզդ թագավոր, պարսից Հազկերտ Բ-ի որդին 87, 109
Որմիզդ, Խոսրով Բ Պարվեզ պարսից թագավորի թոռը 264
Ողջնհաղ գյուղ 82
Որսիրան գավառ 440
Որսիրան գյուղ 444
Որսիրանից ձոր 524

Չ

Չաղար ս. Նշանի վանք 194
Չարաբերդ ամրոց (նաև (Ջրաբերդ կամ Ջերմուկ) 262
Չարմայրին գավառ 597
Չաքար բեկ 629, 691
Չինաստան 619, 623, 624, 627
Չինեդ 284
Չմշկածագ քաղաք (Հիերապոլիս), Հովհաննես Չմշկիկ Բյուզանդիայի կայսեր ծննդավայրը 582
Չորդուանել Մագիստրոս, Վարդ Փոկասի զորավար 604
Չորտուանել 645
Չորրորդ Հայք 123, 167, 168, 341, 401, 610

Պ

Պահլավ ասպետ 210
Պահլավի (Բահլ) 486
Պահլավունիների նախարարական տոհմ 641—644, 670, 672, 674
Պաղակացիս լիճ (այժմ Չըլդըր) 650
Պաղեստին 236, 240, 247, 253, 281, 282, 300, 303, 490, 492
Պաղնատուն գավառ 615
Պաճույ նախարար 127
Պամիրի լեռնաշխարհ 619, 621
Պապ Ոստանիկ 115
Պատրիկ Անձևացի 427
Պարգև Արծրունի 84
Պարթևներ, Պարթևական հարստություն 224, 286, 486
Պարխարյան լեռներ 82, 707
Պարծկանք գավառ 148
Պարսից (Պարսկական) ծոց 266, 280, 282
Պարսկական Հայաստան 14, 132, 133, 155, 159, 161, 171, 177, 178, 188, 202, 203, 206, 207, 211, 220, 222, 223, 264, 288, 299, 306, 518, 535
Պարտավ (Բերդաա) 146, 148, 153, 246, 313, 321, 327, 329, 331, 339, 366—370, 379, 381, 399, 417, 452, 455, 500, 501, 515. 523
Պատկանյան Քերոբե 329, 339
Պետրա բերդ 186, 187
Պետրիցիոն վանք 690
Պետրոս Ա Գետադարձ, կաթողիկոս (1019—1059 թթ.) 651, 653, 654, 657, 659—662, 668, 671, 677, 678, 680—682, 687—689, 706
Պետրոս եպիսկոպոս 189, 190
Պետրոս Երկաթի քահանա 75
Պերգամոն քաղաք 401
Պերճ Պռոշյան 139
Պերոզ (Փիրուզ), պարսից թագավոր 87—90, 102, 105—109, 111, 114, 115, 117, 118, 122, 124, 125, 127
Պերոզմատ Կարենյան 486
Պերսեպոլիս քաղաք 265
Պիանք ղավառ 148
Պիզու քաղաք 681
Պիղատոս 27
Պիտակ դարձնողների աղանդ 149, 150, 153
Պողոս առաքյալ 274
Պողոս, Անտիոքի պատրիարք 162
Պողոս (Պող) 332
Պողունք գյուղ 392
Պոմպեոս 166
Պոնտոս 167, 383, 401, 573
Պորփյուր 191
Պոռկոպ 305
Պտղոմեոս 485
Պրիսկոս 236
Պրոկոպիոս Կեսարացի 161, 164, 166, 169—171, 175
Պուղան բերդ 403
Պուղքերիա 76, 77, 98—101, 106

Ջ

Ջահապ, տե՛ս Աբդլ-Մալիք Իբն-Ջահաֆ
Ջամասպ 131
Ջասար-Աամուր 370
Ջավախքի գավառ 227, 522
Ջավետան-բին Սահակ կամ Սահլ (նաև «Մահդի») 414—416
Ջահիր (Ջաֆր) էլ-Մոթավաքիլ, արաբ խալիֆ 427, 428, 431, 434—436, 442, 443, 445, 449, 452, 453, 493—495
Ջաֆար էլ-Մոքթադիր արաբ խալիֆ 533
Ջաֆարիա 495
Ջաֆար էս-Սադեք 298
Ջերու խաքան 249. 251, 261, 264
Ջենովա 9
Ջերմաձոր գավառ 325
Ջերմոց բերդ 225
Ջղմար բերդ 451
Ջնիկան մայպետ 86
Ջոջիկ 304, 597
Ջորչան 310
Ջվանշիր 303, 328—331, 340
Ջրվեժ գյուղ 122
Ջուան-Վեհ 233
Ջուղա 305, 322
Ջունգարյան լեռնաշղթա 619, 623
Ջուրզան 366

Ռ

Ռաժ Թարխան, խազիրների զորավար 386
Ռեյ, քաղաք 224, 284, 368, 555, 556, 563, 705
Ռշտունյաց գավառ 48, 194, 200, 438, 518
Ռշտունյաց նախարարական տոհմ 58, 114, 299
Ռոհ 398
Ռոմանոս Արգիրոս 665, 666
Ռոմանոս Լեկապենոս Ա 572, 574, 686
Ռոմանոս Բ 582, 583, 585, 593
Ռոմանոս, Վարդ Սկլերոսի որդին 595, 602
Ռոստոմ, արաբ զորավար 419
Ռոստոմ, պարսիկ զորավար 264, 265
Ռստոմ Վարաժնունի 499
Ռուբինյան Մլեհ 313
Ռուհ 386
Ռուսաստան 358

Ս

Սաադ իբն-Աբի-վաքքաս 281, 283
Սաթենիկ թագուհի 637
Սալարի 605
Սալմաստ 366, 530, 672
Սակ (կամ Շակ), ցեղ 144
Սահականույշ 34
Սահակ Անձևացի 304
Սահակ Արծրունի 385, 386, 398
Սահակ Բագրատունի, Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանի որդին 499, 543, 550
Սահակ Բագրատունի, Հայաստանի մարզպան 112, 114—116, 121
Սահակ Բագրատունի, պատրիկ 384, 389, 391, 394
Սահակ Բագրատունի, Մովսես Խորենացու մեկենաս 490
Սահակ Բագրատունի սպարապետ, Աշոտ Մսակերի որդին 411, 415, 416
Սահակ Բագրատունի, սպարապետ (5-րդ դար) 58
Սահակդուխտ 468
Սահակ Կամսարական 127, 135, 176, 179
Սահակ եպիսկոպոս 568
Սահակ կաթողիկոս Ձորափորեցի 322, 324, 345, 374
Սահակ Ձայնող 75
Սահակ Մանդակունի 84
Սահակ Պարթև 13—15, 23, 25, 27, 33—35, 58, 60, 105, 346, 356, 643
Սահակ Ռշտունյաց եպիսկոպոս 82
Սահակ Սեպուհ 427
Սահակ Սյունի 418, 528, 545, 566, 567, 569
Սահակ Սևադա 557—558, 560, 561
Սահլ (կամ Սահլ-իբն-Սմբատ) 424, 446
Սամառա 429, 431, 434, 435, 439, 443, 453, 455, 494, 495
Սամ Գնթունի 55
Սամցխե գավառ 389
Սամոսատ (Շիմշատ) քաղաք 366, 423, 630
Սամուել Անեցի 634, 681
Սամուել, Բուլղարիայի թագավոր 602, 617
Սամուել եպիսկոպոս 17
Սամուել Կամձաձոր 601
Սամուել Մամիկոնյան 394, 412
Սամուել Վահևունի 233—235
Սամուել քահանա 82, 86
Սանահնի վանք 558, 580
Սանատրուկ թագավոր 31
Սաչյան հարստություն 512
Սասանյաններ (Սասանյան դինաստիա) 11, 40, 62, 71, 132, 210, 213, 214, 217, 243, 285, 286, 288—290, 292, 294, 297, 298, 303, 326, 493
Սասանյան Իրան 40, 285, 287, 289—291, 628
Սասանյան Պարսկաստան 177, 253, 260
Սասանյան պետություն 12, 47, 263
Սասպեյր 143
Սասուն (Սանասում, Սասունք) 156, 426, 432, 435
Սատո Դիմաքսյան 84
Սատրապական Հայաստան 164, 165, 168
Սարգիս-Աշոտ, Արծրունյաց իշխանապետ, 509, 517—519, 521, 522, 524, 526—528, 535, 537
Սարգիս Դիմաքսյան 235
Սարգիս կաթողիկոս 613, 651
Սարգիս Մայրավանեցի 335

Սարգիս սեպուհ, Վահեվունյաց տոհմից 225
Սարգիս վարդապետ Անիում 675
Սարգիս վարդապետ, Սևանի առաջնորդ 676
Սարգիս Տայեցի 235
Սարգիս Տրպատունի 235
Սարդուր 539
Սարի, Ապիրատի զորավար 649
Սափի 524
Սեբաստիա (այժմ Սվազ), քաղաք 167, 218, 610, 634, 635, 654, 659, 668, 689, 706
Սեբեոս եպիսկոպոս 31, 48, 130, 140, 155, 199, 204, 206, 210, 211, 215, 218, 220, 222, 223—235, 243, 244, 252, 255, 264, 300—302, 303, 306—308, 313—315, 317, 338, 339, 348, 356
Սեբերիանոս Գաբաղացի 21
Սեբոխտ 203, 204
Սեդա 518, 519
Սելման (էլ-խայիլ մականունով) 309, 311
Սելևկիա քաղաք, Տիգրիս գետի ափին 282
Սենեքերիմ Հովհաննես 611, 617, 629, 631—635, 646, 654, 657, 667, 671, 672, 689
Սենեքերիմ, Փառիսոսի թագավոր 601
Սեն-Լավրենտ եկեղեցի Միլանում 357
Սեն-Մարտեն 175
Սերգիոս, պատրիարք Կ. Պոլսի 245, 300, 301
Սերկևիլ սար 645
Սիբիր 622
Սիդդա 171, 173
Սիկիլիա կղզի 186, 421
Սիմ լեռ 432, 433
Սիմեոն կաթողիկոս Երեվանցի 138
Սիոնի մայր եկեղեցի 230
Սիջիստան 284
Սիսական (Սիսաջան) տե՛ս Սյունիք
Սիսիջի, Սիսիջան, ժողովուրդ 365
Սիրաչ-Տայր 366
Սիր-Դարիա (Յաքսարտ) 621, 628
Սիրիա 99, 106, 109, 157, 162, 174, 189, 211, 213, 219, 234, 236, 247, 253, 268, 271, 274, 278, 280, 281, 283, 300, 302—306, 307, 308, 311, 316—318, 323, 325, 334, 354, 381, 383, 391, 421, 423, 432, 459, 490, 500, 571, 587—590, 594, 609, 634, 649, 707
Սղերդ գավառ 304, 428
Սմբատաաար, բերդ 698
Սմբատ Ապահունի 427
Սմբատ, աբխազների թագավոր 599
Սմբատ Ա Բագրատունի 509, 535, 537, 538, 541—551, 557
Սմբատ Բ Բագրատունի 591—593, 597—600, 604, 605, 614, 615, 647
Սմբատ Բագրատունի «Խոստովանող» 492, 494, 495, 510
Սմբատ Բագրատունի, Մանվելի որդին 218, 219
Սմբատ Բագրատունի, Սմբատ Ա թագավորի եղբայրը, Սահակի որդին 545, 547, 550
Սմբատ Բագրատունի, Սմբատ Ա թագավորի հորեղբոր որդին 523
Սմբատ Բագրատունի, Սմբատ սպարապետի որդին, Աշոտ Ա թագավորի եղբայրը 492
Սմբատ Բագրատունի սպարապետ, Աշոտ Մսակերի որդին 411, 413, 418, 426, 427, 436, 437, 440, 444, 445, 447, 448, 450—453
Սմբատ Բագրատունի, Հայաստանի կյուրապաղատ, Վարազտիրոց Բագրատունու որդին 307, 317
Սմբատ Բագրատունի (Քչկանորդի) 224, 228, 231, 235, 242, 260
Սմբատ Բյուրատյան Բագրատունի 372, 374, 375, 394, 395, 411, 412
Սմբատ գյուցազն, Գայլ Վահանի որդին 258—260
Սմբատ Զարեհավանցի 460, 461, 463, 464
Սմբատ իշխան Թոռնեցի 588
Սմբատ, Կյուրիկյան Գուրգեն թագավորի որդին 592
Սմբատ Մագիստրոս 608
Սմբատ Մամիկոնյան 218
Սմբատ Մարացյան 427
Սմբատ, Սյունյաց իշխան 528, 538, 542, 559, 566, 569, 613
Սմբատ, Վասպուրականի իշխան 372, 376
Սղունիս գյուղ 535
Սյավ-Քար բերդ 688
Սյունիք (Սյունյաց աշխարհ, Կապան) 52—56, 59, 62, 75, 82, 84, 136, 146, 147, 151, 201, 211, 223, 229, 240, 310, 314, 316, 365, 366, 370, 419, 423, 444, 466, 515, 527, 542, 545, 549, 550, 563, 663
Սյունաց դպրոց 189, 192, 345, 465, 466, 635
Սյունաց թագավորություն 613
Սյունաց նախարարական տոհմ 419, 565, 566
Սողանլուղի լեռներ 482, 483
Սողոմոն 19
Սողոմոնի տաճար 282
Սովամ տափաստան 621
Սորմեն 221
Սոփի, Գագիկ Ա թագավորի դուստրը 646
Սոփի, Գրիգոր-Դերենիկի կինը 498, 507, 509, 517
Սոփի, Սմբատ Սյունի իշխանի կինը 542, 550, 566
Սոփրոնիոս պատրիարք 282
Սոֆյա կայսրուհի 184, 207
Սպահան 224, 284, 425, 705
Սպրամ, Վարազ-Տրդատի կինը 379
Սպրամ, Վարազ-Տրդատի դուստրը 419
Սպեր գավառ 53, 165, 314, 451, 491, 492, 697
Սվյատոսլավ, ռուս մեծ իշխան 585
Ստավրակիոս, բյուզանդ, Երինե կայսրուհու ներքինի, պատրիկ 404, 407
Ստեփանոս Ասողիկ 156, 576, 581, 582, 591, 594, 596, 599—601, 604—609, 612, 615
Ստեփանոս Լիխուրես 695, 696
Ստեփանոս կաթողիկոս (788—790 թթ.) 400
Ստեփանոս Կոն 446, 494
Ստեփանոս Միհրանյան (նաև Աբլասադ) 419
Ստեփանոս Իմաստասեր Սյունեցի 466—468, 470
Ստեփանոս Սյունի 223
Ստեփանոս Օրբելյան 54, 301, 376, 467, 613
Ստրաբոն 143, 145, 149, 150, 485, 640
Սրինգ բերդ 451, 494
Սրմանց (Բինգյոլի) լեռներ 362
Սուբաշի 628
Սուգդաբիլ 366
Սուլեյման, արաբ զորավար 399
Սուլեյման, արաբ ոստիկան 417
Սուլեյման, հրոսակախմբի առաջնորդ 385
Սուկավ լեռ 608
Սուրբ Գևորգի մատուռ 591
Սուրբ Գրիգորի եկեղեցի, Անիում 642
Սուրբ Գրիգոր եկեղեցի-բերդ 686
Սուրբ Գրիգորի եկեղեցի Դվինում 200, 231, 315
Սուրբ Գրիգորի վանք, Բագրևանդում 325
Սուրբ խաչ վանք, Մցխեթում 142, 228
Սուրբ խաչ վանք, Աղթամար կղզում 566
Սուրբ Կարապետի վանք 256, 258, 259, 476, 676
Սուրբ Հովհաննեսի վանք (կամ Յուշքիլիսե) Բագավանում 352, 356
Սուրբ Հովհաննեսի վանք, Բագրևանդի գավառի Բյուր գյուղում 34
Սուրբ Մարիամ եկեղեցի (բերդ) 686
Սուրբ Նշան վանք, Հաղպատում 580
Սուրբ Նշան վանք, Սեբաստիայում 635
Սուրբ Սոֆիայի տաճար, Կ. Պոլսում 205, 253, 403, 614
Սուրբ Փրկչի եկեղեցի, Անիում 642, 643
Սուրբ Փրկչի եկեղեցի, Մուշում 434, 599
Սուրեն մարզպան 200, 204
Սուրեն Պահլավ 115
Սուրեն, պարսից արքա, Արշավիրի եղբայրը 486
Սուրենյան Պահլավիկ տոհմ 486, 487
Սուրմակ կաթողիկոս 13
Սուրմառի բերդ 673
Սևադա (Սավադ-բին-Աբդուլ-Համիդ Ջահհաֆի) 412, 417, 418
Սևան բերդ, Վասպուրականում 503, 507, 518, 519, 527
Սևանա լիճ 52, 146, 147, 151, 223, 247, 264, 363, 545
Սևանի կղզի 325, 545, 567—569
Սևաստոպոլիս բերդ, Կիլիկիայում 323
Սև լեռներ, Կիլիկիայում 666
Սև ծով 186, 218, 514, 565, 573, 650, 651, 654, 700
Սևուկ Անձևացի 114

Վ

Վադի-էլ-Ահրաբ (Ազնվաց Ջոր), գավառ 310
Վալերիանոս 175
Վախթանգ, պարսից հրամանատար 258
Վախթանգ, վրաց թագավոր 110, 114, 116, 122
Վահագն 27, 256
Վահագնի տաճար 354
Վահան Ամատունի 17, 35, 58, 60, 64, 72, 74, 84
Վահան Արծրունի 49, 57, 194, 427, 429, 430, 438, 439, 494, 499
Վահան Արշակունի 184
Վահան Բագրատունի 575
Վահան Գնունի 80, 195
Վահան Գողթնացի 377, 378, 469
Վահան Մամիկոնյան 82, 102, 103, 105, 108, 109—117, 119, 121—140, 355, 356, 491
Վահան Կամսարական 115, 259
Վահան Հավնունի 427, 429
Վահրամ Չուբին, տե՛ս Միհրան Մեհրևանդակ
Վահրամ Պահլավունի 608, 609, 642—644, 646, 648, 669—671, 675—678, 685
Վահրամ սեպուհ 438
Վահրամ Տրունի 438
Վահրիճ Անձևացի 48
Վահևունի նախարարական տոհմ 442
Վաղարշ (Բալաշ) պարսից թագավոր 125, 126, 128—130
Վաղարշակերտ (այժմ Ալաշկերտ) 546, 607, 611
Վաղարշապատ 15, 34, 35, 53, 134, 136, 142, 240, 319, 344
Վաղարշավան գավառ 515
Վաղինակ Սյունյաց նահապետ 55
Վայկունիք 148
Վայոց Ձոր 53, 310, 600, 606, 613
Վան քաղաք 359, 500, 507, 518, 521, 522, 524, 525, 539, 540, 635, 640
Վանա լիճ, ծով 145, 194, 213, 219, 248, 305, 309, 314, 363, 372, 413, 444, 455, 499, 501, 502, 520, 539, 565, 575, 587, 611, 635, 639, 667, 693, 695
Վանանդ գավառ 62, 206, 210, 314, 373, 375, 423, 481, 483, 485, 510, 511, 577, 600, 611, 650, 699, 704, 705, 709

Վանանդի դաշտ 482
Վանանդի լեռներ 482
Վառգոշ Գնթունի 113
Վասակ Ամատունի 113
Վասակ Արծրունի Կովակեր 235, 427, 451
Վասակ Բագրատունի 391, 393
Վասակ, Գեղարքունու իշխան 559—561
Վասակ Գնթունի 557, 561
Վասակ-Հոլում 643—645
Վասավուրտ Կարքացին 127
Վասակ Մամիկոնյան, նախարար 30, 54, 73, 78, 82, 103, 105, 111, 113, 116, 121, 200
Վասակ Սյունի Գարուռ 498
Վասակ Սյունյաց թագավոր 613
Վասակ Սյունի մարզպան 37, 50, 55—59, 62, 64, 66, 69—75, 78, 80—82, 84—86, 90, 103, 104, 195, 201, 437
Վասակ Սյունի (9-րդ դ. սկիզբ) 418, 419
Վասակ Իշխանիկ, Սյունյաց տոհմից 444, 446, 504
Վասակ Սյունի մեծ իշխան 519
Վասակ Սյունի իշխան (10-րդ դ. սկիզբ), Սմբատի որդին 542, 566, 587
Վասդեն (կամ Վազգեն) 103, 110
Վասիլ Ա կայսր 504, 593
Վասիլ Բ կայսր 585, 593, 601—604, 606, 609—611, 614, 617, 618, 632—634, 649—658, 665, 668, 693
Վասիլ ներքինի 585, 590, 593—595
Վասիլ բյուզանդ. զորավար 710, 711
Վասպուրական (Բասֆուրաջան) 219, 310, 316, 381, 385, 386, 392, 395, 412, 424, 426, 427, 429, 431, 435, 437, 440, 443, 444, 450—453, 492, 494, 495, 497—500, 503, 504, 507, 508, 517—522, 524—527, 533, 535—539, 541, 542, 547, 549, 550, 562—564, 566, 567, 570, 578, 580, 599, 600, 608, 629, 630, 632—636, 640, 641, 646, 647, 651, 654—656, 661, 667, 668, 671, 672, 679, 693, 695, 696, 705
Վասպուրականի թագավորություն 535
Վասպուրական Համարակար 223—224
Վարագա վանք 630, 635, 647
Վարագի լեռներ 540
Վարագի սար 499
Վարազ-Գնել Գնունի 302
Վարազ Գրիգոր 327, 328
Վարազդեն 84
Վարաժնունի, նախարարական տոհմ 442
Վարազկերտ գյուղ 113
Վարազման 327
Վարանդա գավառ 446
Վարազ իշխան 169
Վարազ, պարսից զորավար 258
Վարազ-Ներսեհ սեպուհ Վահևունի 225
Վարազ-Ներսեհ, Դաշտկարանի տեր 315
Վարազ-Շապուհ Ամատունի 112, 376
Վարազ-Շապուհ Արծրունի 235
Վարազշապուհ Պալունի 82
Վարազվաղան 62, 63, 66, 86
Վարազ-Վզուր 210
Վարազտիրոց Բագրատունի 261, 264, 265, 281, 299, 302, 307
Վարազտիրոց, զորավար 404
Վարդ, աղվանից իշխան 327
Վարդ, Արծրունի իշխան 408
Վարդ, Թեոդորոս Ռշտունու որդին 317, 372
Վարդ Մամիկոնյան 104, 108, 111, 115, 133, 140, 156
Վարդ Սկլերոս 593—598, 601—603
Վարդ Փոկաս 595—598, 603, 622
Վարդանակերտ գյուղ 371, 372, 375, 376
Վարդան Միհրանյան աղվանից իշխան 327, 328, 331
Վարդան Գաբայեղեն 427
Վարդան Մամիկոնյան, Ավարայրի հերոսը 15, 17, 47—50, 57—60, 62—66, 69—83, 85, 103, 104, 115, 129, 130, 138, 194—196, 231, 643
Վարդան Մամիկոնյան (6-րդ դար) 199—207, 209, 214
Վարդան, բյուզանդական արևելյան բանակի հրամանատար 408
Վարդան վարդապետ Բարձրբերդցի 49, 395, 413, 417, 424
Վարդաշեն գյուղ 122, 145
Վարդենի (կամ Շուշանիկ) 60, 103
Վարդիկ (կամ Ակնիկ), Մոկաց իշխան 308
Վարձա Կամսարական 84
Վարշակի ջերմուկներ (այժմ Դիադինի տաք աղբյուրներ) 116
Վաչագան, Աղվանից թագավոր 107, 149, 150, 153, 154
Վաչե, Աղվանից թագավոր 88, 89, 90, 106
Վեհ-Անտիոք Խոսրով քաղաք 174
Վեհ-Արտաշիր քաղաք 253
Վեհդենշապուհ Համբարապետ 86
Վեհմիհրշապուհ մարզպան 11, 37
Վեհ-Վեհնամ 110, 127
Վենետիկ 9, 181
Վեներա 237
Վեստ-Սարգիս 660, 668—670, 673—675, 677, 678, 680, 681
Վերին խաչեն 419
Վերսան քաղաք 369, 370
Վին-ի-Խոոյան 115
Վիշապազունների երկիր 637
Վիրո, Աղվանից կաթողիկոս 261—263, 339
Վլադիմիր, ռուս մեծ իշխան 603
Վլիթ (Վելիդ), արաբ խալիֆ 375, 376, 379, 381
Վլիթ, արաբ ոստիկան Հայաստանում 379
Վնդո 49, 212, 213, 224

Վոլգա գետ 624
Վոն պատրիկ 245
Վռամ Գողթնացի 235
Վռամ Ե, տե՛ս Բահրամ Գոռ
Վստամ Ապահունի 235
Վստամ, պարսիկ 212, 213, 224, 225
Վստամ, սեպուհ, Վահեվունյաց տոհմից 225
Վրեն Վանանդեցի 115, 128
Վրեն Տաշրացի 84
Վրթանես եպիսկոպոս 201
Վրթանես Քերթող 221, 228—231, 345, 477
Վրիվ 108
Վրկան աշխարհ 86, 177, 224, 228, 231, 235
Վրնջունիք գավառ 247
Վուրկ 75

Տ

Տաբարի 37, 308, 424, 435
Տաբարիստան 284
Տագին, վայր Իտալիայում 181
Տիրայր 17
Տակիտոս 139
Տաճատ Անձևացի 404, 405, 407
Տաճատ Արծրունի 84
Տաճատ Գնթունի 80, 195
Տաճատ Ռշտունի 48
Տամ Խոսրովիկ 210
Տայ գյուղ 398
Տայոց աշխարհ (Տայք) 82, 83, 104, 105, 112, 117, 122, 147, 219, 306, 307, 316, 374, 375, 383, 399, 413, 460, 491, 522, 524, 534, 543, 575, 595—598, 610, 616, 649, 654, 656, 690, 693, 697, 709
Տաշիր գավառ (այժմ Լոռի) 229, 465, 530, 534, 543, 549, 558, 613
Տավրոս 207, 247, 482, 588, 638
Տավուշ (այժմ Թովուզ) գյուղ 558, 560, 562
Տարոն (Տարուն) գավառ 24, 35, 53, 59, 206, 254—256, 259, 260, 264, 304, 305, 362, 412, 415—417, 424, 426—430, 432, 434, 438, 476, 491, 592, 498, 503, 515, 520, 555, 574, 588, 599, 603, 604, 610, 634, 676, 679, 693, 697
Տարսոն, քաղաք 583, 634
Տափաս ավան 419
Տեկոր, գյուղ (Բեշքիլիսե) 659
Տեկորի եկեղեցի 134, 354—356, 360, 489
Տեկորի ջուր (գետ) 482
Տեյսան 181
Տեշթյուլվերք (Տասնավորք) գավառ 309
Տեր եպիսկոպոս Խորձենացի 17
Տիբերիոս Գ կայսր (698—705 թթ.) 207, 209, 324, 374
Տիգրան Մեծ 102, 147, 490, 578, 637, 638
Տիգրանակերտ ավան 247
Տիգրիս գետ (Շատ-էլ-Արաբ) 12, 38, 104, 212, 251, 280, 282, 283, 289, 296, 304, 362, 383, 386, 573, 584, 692
Տիզրոն 37, 38, 54, 55, 103, 107, 115, 121, 125, 128, 202, 212, 213, 224, 228, 235, 241, 251, 254, 260, 263, 265, 281, 283, 284, 287, 289, 294, 303, 383
Տիմոթեոս Կուզ 193, 337
Տիրան Կամսարական 259
Տիրան Մամիկոնյան 304
Տղմուտ գետ 76
Տմորիք գավառ 82, 83, 638
Տյան-Շան 619, 620, 623, 628
Տյուքիկոս 342
Տող, գյուղ 447
Տոտիլոս 181
Տրայանոսի Դռներ 602
Տրապիզոն, քաղաք 167, 307, 316, 342, 362, 370, 390, 555, 603, 634, 651, 695, 700
Տրապիզոն գետակ 654
Տրապիզոնի դաշնագիր (1021 թ.) 653, 654, 658, 659, 668, 676
Տրդատ Գ Հայոց թագավոր 27, 239, 347, 486, 488
Տրդատ կաթողիկոս 388
Տրդատ ճարտարապետ 592, 614, 615
Տրտու (այժմյան Թարթառ) գետ 246, 262, 339, 367
Տուղրիլ-բեկ 625, 691, 695, 697, 703—705, 707, 709—711
Տումի գյուղ 446
Տուս գյուղ (այժմ Թաուզ) 446, 514
Տուրուբերան 219, 432

Ց

Ցոր, քաղաք 152
Ցուրտավ, քաղաք 103, 104, 110, 136, 236

ՈՒ

Ուբեյդուլլահ խալիֆ 295
Ութմա, գյուղ 210
Ութմանիկ, արաբ. ցեղ 444, 450, 499, 536, 537
Ուխտիք, Ուխտյաց (այժմ Օլթի) քաղաք, բերդ 598, 617, 650
Ուռյաց ավան 419
Ուռնայր, Աղվանից թագավոր 153
Ուտ (Ուտի, Առանձնակ) գավառ 311
Ուտի (Ուտիք) նահանգ 143, 145—148, 151, 246, 311, 329, 339, 365, 446, 509, 514, 558, 559, 562, 611
Ուրարտական թագավորություն 53, 539
Ուրմիայի լիճ 251, 363, 431, 535, 539

50—Լեո—Երկերի ժողովածու. հ. II

Փ

Փաանձեմ 54
Փայտակարան նահանգ 59, 73, 246, 516, 530
Փապակ Պալունի 115
Փառանդիոս, վայր 169
Փառիսոս գավառ 600, 606, 612, 613, 617
Փավստոս Բյուզանդացի 29, 32, 138, 139, 151, 255, 260, 339, 347—349, 491
Փատլուն, Գանձակի էմիր 612, 617, 703
Փարպի, գյուղ 135
Փարսման Մանդակունի 84
Փափագ Առավեղյան 79—80, 84
Փերսի 608
Փիլիպպե, Վասակ-Հոլումի զինակիցը 645
Փիլիպպե, Սյունյաց իշխան 452
Փիլիպպիկ, բյուզանդ. զորավար 211
Փիլիպպիկ կամ Փիլիկ (նաև Վարդան) բյուզանդ. կայսր (711—713 թթ.) 401
Փիլիպպուլիս, քաղաք 181, 586
Փիլիպպոս, Աղվանից թագավոր 580
Փիլիպպոս, Սյունյաց իշխան 206
Փիլոն Երրայեցի (Ալեքսանդրացի) 191
Փիլոն Տիրակացի 346
Փինիկոն 172
Փիրուզան 281, 284
Փլաբիանոս պատրիարք 97—99
Փգորենտիաս 77
Փյունիկե 589, 590
Փոկաս, կայսր 226, 234, 235, 241, 257
Փոյթ (այժմ Փոթի) քաղաք 375—377
Փոյուգիա 177
Փոտ պատրիարք 460, 492, 496
Փոքր Ասիա 144, 177, 227, 236, 245, 248, 320, 354, 403, 420, 586, 593, 594, 654
Փոքր Կովկաս 146, 558
Փոքր Հայք 163, 165, 175, 362, 402, 457, 573, 681
Փոքր Մասիս (ալ-Խավերիս) 362

Ք

Քաար 267, 270, 273
Քաբալա (այժմ Ղաբալա), վայր 311
Քադեսիա, վայր 281, 284
Քադեսիայի ճակատամարտ (637 թ.) 283, 303
Քաղցեդոն 93, 94, 99—101, 106, 140, 160, 243, 245, 248, 282
Քաջաջ Ամատունի 122
Քարսպառ 509
Քարուն գետ 287
Քերան դաշտ 405
Քերբելա, վայր 295, 296
Քերսոն, քաղաք 324
Քիոս կղզի 595
Քիրման նահանգ 284, 292
Քիրոս լեռներ 446
Քթիշ բերդ 447, 448—450, 452, 453, 477, 492
Քչիկ Բագրատունի 228
Քսենեֆոն 638
Քրիստափոր, կաթողիկոս հայոց 299
Քրիստափոր, մաթեմատիկոս 341
Քրդստան (Կորճեք նահանգ) 83, 440, 535, 635—637, 693
Քրյուսոփիոս 98
Քութլմըշ (Գութլմըշ) 695, 703, 704
Քուշան, քաղաք 284
Քուրդիկ Մամիկոնյան 452
Քուֆ, քաղաք 284, 394, 395

Օ

Օթման (Օսման) 398, 405
Օկում ավան 650
Օձ, քաղաք 257
Օձուն, գյուղ 465, 543
Օղուզ խան 640
Օմայաններ, Օմայան հարստություն 294, 295, 298, 318, 378, 381, 382, 387, 396, 412
Օմար Ա, արաբ խալիֆ 274, 278, 280, 281—284, 294—304
Օմար Բ, արաբ խալիֆ 295, 296, 298, 364, 377—380, 428, 456
Օշական, գյուղ, բերդ 35, 58, 209
Օսման արաբ խալիֆ 294, 298
Օսման (Օթման) Իբն-Աֆֆան, արաբ խալիֆ 309, 312, 313
Օտտոն, Գերմանիայի թագավոր 591
Օքազ, վայր 267
Օքսուզ, գետ 284

Ֆ

Ֆաթմա 293
Ֆաթմյան խալիֆներ 571, 587, 607
Ֆարս նահանգ 286
Ֆիլարետ 405
Ֆիրդուսի 35, 37, 158, 188, 285, 286, 291, 351, 628

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ներածություն — Միջին դարեր 7

Մաս առաջին — Պարսկա-հռոմեական տիրապետություն

Գլուխ առաջին — «Հինգերորդ դար» 11
Գլուխ երկրորդ — Վարդանանք 47
Գլուխ երրորդ — Վահան Մամիկոնյան 102
Գլուխ չորրորդ — Բյուզանդական հարաբերություններ 140
Գլուխ հինգերորդ — Հիսնամյա պատերազմներ 197

Մաս երկրորդ — Արաբա-բյուզանդական տիրապետություն

Գլուխ առաջին — Իսլամ 266
Գլուխ երկրորդ — Իսլամը Հայաստանում 298
Գլուխ երրորդ — Մտավոր կյանք, գրականություն, արվեստ 332
Գլուխ չորրորդ — Ապստամբական շարժումներ 360
Գլուխ հինգերորդ — Քառամյա պատերազմներ 434
Գլուխ վեցերորդ — Արաբական շրջանը 453

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Մաս առաջին — Գավառական անկախություններ

Գլուխ առաջին — Սկզբնավորություն։ Աշոտ Ա 481
Գլուխ երկրորդ — Սմբատ Ա 510
Գլուխ երրորդ — Արաբական տիրապետության վերջը 548
Գլուխ չորրորդ — Անիական շրջան 577
Գլուխ հինգերորդ — Անկում 618
Գլուխ վեցերորդ — Սելջուկյան արշավանքներ 691

Ժամանակագրություն 713
Ծանոթագրություններ 716
Հատուկ անունների ցանկ 764

Լ Ե Ո

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 10 ՀԱՏՈՐՈՎ

Հայոց պատմություն

Հատոր II

Միջին դարեր

Տեքստը պատրաստեցին՝
ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ., ԹՈՓՉՅԱՆ Ս., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՀԱՆՅԱՆ Ա.

Հրատ. խմբագիր՝
Ս. Հ. Ումառյան

Նկարիչ՝
Ռ. Ս. Բեդրոսյան

Գեղ. խմբագիր՝
Ան. Վ. Գասպարյան

Տեխ. խմբագիր՝
Օն. Ս. Փանիկյան

Վերստուգող սրբագրիչ՝
Ռ. Մ. Հովսեփյան

Տիրաժ 30 000

Հանձնված է արտադրության 4/VIII—1966 թ.։
Ստորագրված է տպագրության 8/VI—1967 թ.։
Պատվեր 1740։ Թուղթ՝ տպագրական № 2, 70×108 1/16, հրատ. 62,3 մամ., տպ. 49,25 մամ.=67,47 պայմ. մամ.։
Գինը՝ 2 ռ. 69 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն
Երևան—9
Տերյան 91։
Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան № 65։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
37	10 վ.	(438—547)	(438—457)։
261	2 ն.	յամենէսին	յամենեսին
741	12 ն.	1964.	1964—343։